





Լ Ե Ռ


ԵՐԿԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍԸ ՀԱՏՈՐՈՎ



Երևան
«Այս և այն և այն և»
1987

(47 925)
ձ-38
հշ.



Լ Ե Ռ

ԵՐԿԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԵՅԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

5771



Երևան
«Այս և այն և այն և»
1987



Խմբագրական կոլեգիա՝ ՆԵՐՍԻՍՅԱՆ Մ., ԹԱՄՐԱԶ-
ՅԱՆ Հ., ՄՈՒՂՆԵՅՅԱՆ Գ., ՅԵԼԵՔՅԱՆ Հ., ՂԱԶԱՐ-
ՅԱՆ Հ., ՍԱՄՎԵԼՅԱՆ Խ., ՕՀԱՆՅԱՆ Ա.

Կազմողներ՝ ԹՈՓՉՅԱՆ Ս., ՍԱՄՎԵԼՅԱՆ Խ., ՕՀԱՆ-
ՅԱՆ Ա., ՎԱՐԳՆՅԱՆ Ռ.

Խմբագիր՝ Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ



Արեւիանոս Դապարչանց



Գլուխ առաջին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I

Նոր պատմական շրջան Կովկասում: Ինչ էր բերում նա. Ալեքսանդր I-ի հրովարտակր: Անցյալի ժառանգությունը: Հայերի և վրացիների մտավոր դուրսությունը: Հայոց դպրոցները: Հայ հոգևորականությունը:

Ռուսաց տիրապետությունը Անդրկովկասում պաշտոնապես հաստատվեց 1801 թվականի փետրվարի 16-ին: Այդ օրը մեր լայնատարած, գեղեցիկ երկրի մի փոքրիկ մասն էր հյուսիսային մեծ պետության սեփականություն դառնում— Վրաստանը: Բայց և այդպես, իրողությունը ահագին նշանակություն ուներ ամբողջ Կովկասի համար:

Թիֆլիսում հաստատվելը առաջին քայլն էր. ռուսաց տիրապետությունը սկսեց տարածվել և մի 25—30 տարվա ընթացքում նրա ձեռքին էր գանվում ամբողջ Անդրկովկասը:

Ի՞նչ էր բերում այդ տիրապետությունը:

1801 թվականի սեպտեմբերի 12-ին հրատարակված հրովարտական Ալեքսանդր I-ին կայսրը այսպիսի խոսքերով էր դիմում Կովկասյան լեռնաշղթայի հարավային ստորոտներում ապրող իր նոր հպատակներին. «Թող ձեր մեջ հաստատվի խաղաղությունը, արդարագատությունը, անձի և զույքի ապահովությունը» թող խզվեն կամայականությունները և դաժան տանջանքները. ամեն մեկը թող նվիրվի սեփական և հասարակական լավագույն օգուտներին, ազատ և անարգել վարժվելով երկրագործության, արհեստների, առևտրի, ձեռագործների մեջ՝ ամենքին հավասար կերպով հովանավորող օրենքների պաշտպանության տակ»:

Կովկասը շատ տիրապետողներ էր տեսել, բայց նրանցից ոչ ոք այսպիսի խոսքեր չէր արտասանել: Տասնյակ դարերի ընթացքում այստեղ հաստատված էր արյունի, հափշտակությունների իրականությունը: Տասնյակ դարերի ընթացքում այստեղ Ասիան էր բռնացած: Ռուսաց կայսրի այս խոսքերը բոլորովին նոր էին, դեռ չլսված այս դժբախտ ու արնաքամ կողմերում. այս խոսքերը գալիս էին աշխարհի ազատ ու քաղաքակիրթ կողմից՝ Եվրոպայից: Եվ նրանք միանգամից կերպարանափոխեցին ասիական խեղճ ու խավար միջավայրի հազարամյա ճակատագիրը:

Սկսվեց մի նոր շրջան՝ խաղաղ զարգացման, մտավոր և կուլտուրական առաջադիմության շրջանը: Ռուսաց զենքը ոչ միայն բերում էր խաղաղություն և հանգստություն, այլ և կապում էր մի կամուրջ այնքան դժբախտություններ անտաժ մեր երկրի և եվրոպական քաղաքակրթության մեջ: Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդները այլևս ոչ մի հոգս չէին կարող ունենալ բացի մտավոր և կուլտուրական առաջադիմությունից: Ընդմիջտ վերջացել էին քաղաքական հարցերը. Կովկասը ոչ ոքին չպիտի պատկաներ, բայց միայն Ռուսաստանին: Եվ ազգաբնակչության մեծ մասը էր թոթափել իրանից հնություն շղթաները, զնալ առաջադիմող ազգերի և հանրամարդկային իդեալների ևսեղից ու այդպես գտնել իր երջանկությունը:

Գա մի ստիպողական պահանջ էր, կյանքի և մահվան հարց: Տասնիններորդ մեծագործ դարը հենց իր առաջին քայլերից իր բարերարություններն էր խոստանում և Արևելքի այս խեղճ ու կտրած կտորին էլ. միայն պահանջվում էր աշխատել, գործել:

Սակայն ի՞նչ ուժերով, ի՞նչ ընդունակություններով և պատրաստությամբ էր ներկայանում Անդրկովկասը ռուսաց տիրապետության հետ եկած այս նոր ժամանակին: Ի՞նչ ունեւր նա:

Շատ խղճալի բան, համարյա ոչինչ: Նրա վրա ծանրացած էր ստրկության դարերի մի երկար շարք: Քրիստոնյա ազգաբնակչությունը, որ ամենից շուտ պիտի արձագանք տար նոր շրջանի պահանջներին, արնաքամ դառած մի մարմին էր, որ հաղիվ էր շունչ պահել մինչև իր ազատության օրը: Ամբողջ ժամանակ նա տարուբերվում էր մի քառսի մեջ: Հայաստանը մատնված էր թուրք խաների կամայականություններին, Վրաստանը տանջվում էր իր ներքին ցավերից և պարսիկների, թուրքերի, կովկասյան լեռնաբնակների հարձակումներից: Ստրկությունը սոսկալի կեղտեր է ծնեցնում: Ստրկ ժողովուրդը սովորել էր այն մտքին, որ պետք է մի կերպ պահպանել իր գոյությունը: Շատ արատներ էին մտել նրա արյան մեջ, շատ կողմերից էր թունավորված նրա մարդկային արժանավորությունը: Արտասուքների, հառաչանքների հայրենիքում, անզուսպ բարբարոսությունների ասպարեղում, չէին կարող, իհարկե, զարգանալ այնպիսի հիմնարկություններ, որոնք կրթեին այդ ժողովրդի սիրտն ու հոգին: Եվ նա տգետ էր, խավար և ոչինչ բարոյական ու նյութական ուժ չունեւր իր դժբախտությունը բուժելու համար:

Այսպես էին կովկասյան երկու բնիկ քրիստոնյա ազգերը՝ հայերը և վրացիները: Մենք հետևենք հայերին:

Պետք էր ենթադրել, որ հայերը այնքան անօգնական ու դժբախտ չպիտի լինեին մտավոր առաջադիմության կողմից: Տասնութերորդ դարում հայության արևմտյան բաժինը բավական նշանավոր, աչքի ընկնող գրական և կրթական արժու էր ցույց տալիս: Այդտեղ էին Կ. Պոլսի և Վենետիկի նման կենտրոնները, ուր մշակվում էր գրագիտությունը, ուր գործում էին տպարանները: Ավելի նշանավոր էր Վենետիկը: Ս. Ղազարի կղզին արդեն աստղի պես փայլում էր հայկական սև հորիզոնի վրա: Նրա բարեկարգ դպրոցը, նրա ծաղկած մատենագրությունը շատ կարող էին օգնել տգետ ու խավար հայրենիքին: Բայց արևելյան Հայաստանը մասնակից չէր այդ գրական, մտավոր շարժման և շատ ու շատ ետ էր մնացել արևմտյան հայությունից:

Նույն 1801 թվականին, երբ ռուսները հաստատվում էին Քիֆլիսում, հայ վարդապետներից մեկը ներկայացրեց զենեքալ կազարեին մի զեկուցում հա-

յերի կրթական գործի մասին*: Այդտեղից մենք իմանում ենք, որ էջմիածնի, Սանահնի և Հաղբասի թեմերում գոյություն ունեին ընդամենը երկու հատ դըպրոց, որոնցից մեկը Քիֆլիսում, Մոզնու եկեղեցու բակում: Ահա այդ երկու տեղերից էր լույս ստանում ամբողջ այն հայ ժողովուրդը, որ բնակվում էր Վրաստանի սահմաններում: Եվ հետաքրքրականը, իհարկե, այնքան դպրոցների թիվը չէ, որքան այն, թե ի՞նչ էին այդ դպրոցները:

Հասկացողություն կարող է մեզ տալ այն դպրոցը, որ գոյություն ունեւր Քիֆլիսում 1814 թվականին, երբ Ներսես Աշտարակեցին առաջնորդ էր այստեղ: Կար այդ ժամանակը մի հայոց դպրոց, գուցե նույն Մոզնու դպրոցը, որ միակն էր Վրաստանի մայրաքաղաքում: Նրա կառավարիչն էր ժամկոչ Եղիազարը, որ Քիֆլիսի առաջին հայերենագետն էր համարվում: Մի խանութի մեջ, որ այդ դպրոցի շինությունն էր, վարժապետի առաջ շքած էին 13 հոգի: Ուսումը, թեև ուղ հենց այսպիսի մի ուսուցչի ավանդած ուսումը, այն ժամանակ միայն հոգևորականների սեփականություն էր համարվում. և ժամկոչ Եղիազարից իմաստություն սովորողները բացառապես նրանք էին, որոնք քահանայանալու միտք ունեւին: Թուղթ էլ չկար այդ խեղճ աշակերտների համար. նրանք գրել սովորում էին տավարի ոսկորների (թիակ) վրա: Խանութ-դպրոցը հասարակաց «թամաշայի» տեղ էր: Փողոցով անցնողները կանգ էին առնում և նայում էին, թե ինչպես է վարժապետը ծեծում աշակերտներին, ինչպես է խրատում: Այդ աշակերտները ոչ միայն վարժապետի, այլև նրա ծանոթների և ոչ ծանոթների ծառաներն էին: Մեկը ուզում էր բաղնիս զնալ և մարդ էր ուղարկում մանկավարժ ժամկոչի մոտ, խնդրելով մի երկու աշակերտ տալ՝ շորերը բաղնիս տանելու և ետ բերելու համար: Աշակերտները ուղարկվում էին ծանոթ-բարեկամի կտուրը կոխ տալու, երբ անձրև էր գալիս և կտուրը կաթում էր. աշակերտը զնում էր երեսայի օրորոցը օրորելու, երբ մայրը զբաղված էր լինում տնային գործերով**:

Այսպես էր կրթության տաճարը, այսքան դասն գործ է նույնիսկ մի կտոր գրագիտություն սովորելը: Եվ այսպես միայն Քիֆլիսում չէր, այլ ամեն տեղ և ոչ միայն հայերի մեջ***:

Գեո պետք է ասել, որ ժամկոչ Եղիազարների դպրոցը ավարտելու բախտը ամեն մեկին չէր տված: Շատերը քահանա էին դառնում նույնիսկ այդ դըպրոցի երեսը շտեսած, անգրագետ լինելով անգամ: Քահանաներ կային, որոնք կարգալ իսկ չգիտեին և ժամասացությունը բերանացի էին սովորում: Քիչ քահանաներ կարող էին հայերեն տառերով ստորագրել իրանց անունները. մեծամասնությունը միայն վրացերեն գիտեր. իսկ ի՞նչ գիտեին Վրաստանից դուրս գտնվողները:

Եվ այդ հոգևորականությունն էր ժողովրդին կրթություն հայթայթողը: Միայն քահանայական դասակարգը չէր այդ դրություն մեջ: Բարձրերում, կուսակրոն հոգևորականության մեջ էլ, շատ հազվագյուտ էին լեզվին տիրապետող, գրքի սիրահար անհատները: Պահանջ չկար. խլացած էր հոգևորը, մտավորը: Գիտությունը ոչինչ չէր տալիս հոգևորականին, մինչդեռ տգիտությունը թույլ էր տալիս, միջոցների խտրություն չճանաչելով, հասնել փառքի, իշխանության, հարստության: Մահմեդական տիրապետությունը միայն ան-

* Акты Кавказ. Археогр. Коммис., т. I, № 660.
** Ա. Երեցյան — «Պատմ. Ներս. դպր.», էր. 30—31:
*** Այս հին «խալիֆայական դպրոցը» ինչպես հայտնի է, երկար ժամանակ գոյություն ունեւր մեզանում և իր բոլոր սարսփներով մանրամասն շատ անգամ է նկարագրված մեր գրականության մեջ:

իրարոյակաճանացնող գաղափարներ էր նվիրագործում: Միակ միջոցը, որով կարելի էր լինում մեղմացնել տիրող խանութի և փաշաների խիստ սիրտը, այն էր, որ աշխատում էին հլու կամակառուարութեամբ շողոքորթ լեզվով, կաշառքներով ապրելու և գործելու իրավունք գնել:

Հայ հոգևորականը, իբրև ժողովրդի պաշտոնական առաջնորդ, հայ վաճառականը, իբրև իր հասարակութեան առաջադէպ անդամ, ամենից շատ հայկավորութիւն ունեին իշխողների բարի տրամադրութիւնը գնելու Եվ այդ պատճառով այդ երկու դասակարգերը առաջացնում էին շատ բացասական, անպատեխ վիպեր, որոնք իշխել և կեղեքել էին սիրում և հենց այդ նպատակով էլ հաճախ միանում էին իրար հետ: Օրինակ կարող են համարվել հարկերի կապալառու հայերը: Կ. Պոլսի ամիրաները մասնում էին որևէ փաշայի հովանավորութեան տակ, փող էին տալիս նրանց և ապա, իրանց տվածը հա ստանալու համար, կեղեքում էին այն հասարակութեաններին, որոնք հարկ պիտի վճարեին կառավարութեան: Հայ հոգևորականների փառամոլութեան և ապիկարութեան օրինակներով լի է վերջին դարերի մեր պատմութիւնը. ավելորդ է— և անհնարին էլ է— բերել այդ օրինակները. միայն Կ. Պոլսի պատրիարքական աթոռի պատմութիւնը որքան զգլեւի էջեր է բաց անում մեր առջև:

Անարգարութիւն կլինեն հոգևորականների տգիտութիւնն ու անպետքութիւնը միայն նրանով բացատրել, թե կար մահմեդական բռնապետութիւն, որ չէր թույլ տալիս նրանց ուրիշ կերպ լինել: Պակասում էին սրտացավ, ընդունակ, ազնիվ գործիչներ: Իսկ թե մահմեդական բռնակալութեան տակ էլ կարող էին լինել այդպիսի գործիչներ, այդ ցույց են տալիս մի շարք անուններ— Ռսկան վարդապետ Երևանցի, Թովմա Եպիսկոպոս Վանանդեցի, Մխիթար Մեբաստացի, Միմեոն կաթողիկոս, Հովսեփ կաթողիկոս Արղութեան և այլն: Այդ հոգևորականները հանդիսացել են մի մի հերոսներ, իրանց տոկուն, համառ ջանասիրութեամբ կարողացել են այնքան շատ բան անել, այնքան երախտիք տալ մեզ, որ ուղղակի հրաշագործներ են թվում մեզ, երբ մենք նկատի ենք առնում նրանց ժամանակը, նրանց տանջանքները: Դժբախտաբար, շուտ շուտ չէին երևում այդպիսի անհատները մեր ողբալի իրականութեան մեջ:

Պետք է շատ շնորհակալ լինել ճակատագրից, որ տասնիններորդ դարի սկզբում, այն խորհրդավոր միջոցին, երբ ժամանակը իր անողոք պահանջներն էր ներկայացնում հայերին, երբ ուսաց տիրապետութիւնը նոր, ժպտուն հորիզոններ էր բաց անում, մեր հոգևորականութեան մեջ երևան եկավ մի նոր հերոս, որ յաջորդեց Հովսեփ Արղութեանին և շարունակեց նրա գործը ավելի մեծ եռանդով:

Այդ հերոսը ներսես Աշտարակեցին էր:

II

Կրթութեան կտրիփ: Ռուս կառավարութեան ձեռք առած միջոցները: Ազնվականների դպրոց Քիֆլիսում: Կովկասցի առաջին համալսարանականները: Ներսես Աշտարակեցին Քիֆլիսում: Կրթական հոգսեր: Մխիթարյան միարևութեան օրինակը: Լազարյան դպրոց Մոսկվայում: Ներսիսյան դպրոց Քիֆլիսում: Այդ դպրոցների նպատակը և ուղղութիւնը:

Այսպես ահա, նոր ճանապարհի վրա դրված ժողովրդին հարկավոր էր ուսում, կրթութիւն: Ապահովվել էր կյանքը. այժմ առաջին անհրաժեշտութիւնը գիրքն էր: Ուրիշ կերպ կովկասցին չէր էլ կարող հասկանալ, թե ինչ է իր

պատմութեան նոր շրջանը, ինչ պետք է անել ինքը՝ օգտակար, բարեկեցիկ քաղաքացի դառնալու համար:

Դպրոցներ, ինչպես տեսանք, չկային: Պետք էր բաց անել դպրոցներ: Ժողովուրդը իր միջոցներով չէր կարող այդ անհրաժեշտ պահանջն իրագործել. նա չէր էլ հասկանում, թե ինչու պետք է դպրոցներ բաց անել: Մնում էր, որ կրթական հոգսերը իր վրա վերցնէ ուսաց կառավարութիւնը:

Բայց կառավարութիւնը, Վրաստանի միացումից հետո, երկար ժամանակ զբաղված էր քաղաքական այնպիսի բարդ հարցերով, որոնք չէին թույլ տալիս ուշադրութեան դարձնել նոր հպատակների մտավոր պահանջների վրա: Հարկավոր եղավ պատերազմական գործողութիւններ սկսել հարևան խանութիւնների դեմ: Վրաստանում տեղի ունեին վտանգավոր խլրտումներ, Պարսկաստանը և Թուրքիան չէին ուզում հաշտվել այն մտքի հետ, որ Կովկասը ուսաց հող պիտի դառնա. բացի այդ տեղական հանգամանքներից, Եվրոպայում սկսվել էր նապոլեոնի պատերազմների շրջանը, և Պետերբուրգի կառավարութեան ամբողջ ուշադրութիւնն էին խլել: Այդ պատճառով էլ կրթական գործը Անդրկովկասում XIX դարի առաջին քառորդում շատ ողորմելի դրութեան մեջ էր:

1802 թվականին կառավարութիւնը Քիֆլիսում բաց արեց ազնվականների դպրոց, որ երկար ժամանակ ուսաց միակ դպրոցն էր Անդրկովկասում: Բայց դա էլ մատչելի էր միայն ազնվական դասակարգին և այնքան փոքր էր, որ 45 աշակերտից ավել չէր ընդունում: Թե որքան շնչին էր ուսման պահանջը վրաց ազնվականութեան մեջ, ցույց է տալիս այն հանգամանքը, որ կառավարութիւնը աշակերտները գրավելու համար հարկադրված էր ռոճիկ տալ նրանց: Դպրոցի աշակերտները վրաց ազնվականների ամենանշանավոր տոհմերի զավակներն էին: Բայց շնայած կառավարութեան ձեռք առած խրախուսական միջոցներին, ուսման սերը չէր դարգանում արտոնված դասակարգի մեջ: Ազնուբնական աշակերտները շատ հաճախ փախչում էին դպրոցից, և այդ երևույթը իշխան Յիցիանովը բացատրում էր նրանով, որ տեղական ժողովրդի բարբերը «անսովոր են և վայրենի»: Արժանավոր հոգևորականներ պատրաստելու համար՝ ազնվականների դպրոցում սկսեցին ընդունել և վրացի քահանաների որդիներին, թվով 10 հոգի, մինչև որ 1817 թվին Քիֆլիսում բացվեց հոգևոր սեմինարիա օրթոդոքս դավանութեան համար:

Եվ այսպես, մենք տեսնում ենք, որ ուսաց կառավարութիւնը սկզբում կարողանում էր հոգալ միայն վրաց ազնվականութեան և հոգևորականութեան կրթական պահանջները, թեև հասկանում էր, որ հայերն էլ պիտի իրանց մասն ունենան մտավոր առաջադիմութեան մեջ: Այդ բանը նկատվում է 1803-ին կայացած կայսերական հրամանի մեջ, որով առաջարկվում էր ընտրել հայերից և վրացի ազնվականներից 12 ընդունակ աշակերտներ և ուղարկել նրանց Մոսկվայի համալսարանը՝ պետական հաշվով ուսում ստանալու համար: Այդ կարգադրութեան նպատակն էր բժիշկներ պատրաստել Կովկասի համար: Առաջին երիտասարդներն էին դրանք, որ մեր երկրից գնում էին համալսարանական բարձր ուսում ստանալու: Բայց համալսարանն էլ ոչինչ գրավիչ բան չունէր կովկասցիների համար: Զգիտե՛ք ինչպես էին հայերը, բայց պաշտոնական թղթերի մեջ կարգում ենք, որ վրացի իշխանները և մանավանդ իշխանուհիները չէին թույլ տալիս իրանց որդիներին հեռանալ հայրական տնից և գնալ Ռուսաստան:

Հայերը, շունենալով ազնվականների մեծ դասակարգ, պիտի զրկված մնային փոքր ի շատե կանոնավոր դպրոցներից, եթե չկարողանային իրանց սե-

փակեան միջոցներով հոգալ այդ կարիքը: Գործը, իհարկե, վերապահված էր անհատներին. ժողովրդական գիտակցութեանը այնքան թույլ էր, որ ինքնաբերաբար ոչինչ չէր կարող անել: Բարեբախտաբար, այդ ժամանակ հայերի մեջ երկու մեծագործ անհատներ կային, որոնք իրանց ազգի բարեարարներ հանդիսացան:

1800 թվականի հունվարի 4-ին կոմս Հովհաննես Լազարյանը* գրեց իր նշանավոր կտակը: Իր մեծ հարստութիւնը նա տալիս էր իր կրտսեր եղբայր Հովակիմ Լազարյանին, որովհետեւ ինքն անժառանգ էր: Միևնույն ժամանակ նա կարգադրում էր, որ իր մահվանից հետո Հովակիմը մտցնէ Մոսկվայի կնամակարական ետրհուրդը 200,000 ուրբի թղթադրամ, որպեսզի ժամանակով այդ գումարից ստացված տոկոսներով մի օրինավոր դպրոց կառուցվի հայ աղքատ երեխաների համար ի հիշատակ իր միակ որդի Հարությունի, որ վախճանվել էր ծաղիկ հասակում: Կոմս Հովհաննես Լազարյանը, այն անմոռանալի մարդը և լավագույն հայր, վախճանվեց Պետերբուրգում 1801 թվականի հոկտեմբերի 24-ին:

Հովակիմ Լազարյանը սրբութեամբ կատարեց իր եղբոր վերջին կամքը: Դպրոցին հատկացրած փողը նա մտցրեց նշանակած տեղը: Բայց այդքանով չբավականացավ: Հովհաննեսի միտքը շատ մտախի էր և այդ բարեսեր, հակացող, հասարակաց բարիքին նվիրված մարդու սրտին: Նա ինքն էլ շատ լավ էր հասկանում, թե որքան կարոտ է իր խեղճ ազգը մի լուսատու հիմնարկութեան, ուստի շտապեց, որ նվիրված դրամադրուսք տոկոսներ բերե ցանկացած շահով: Հովակիմը բաց արեց իր սակը և 200,000 թղթադրամ ուրբի էլ իրանից դնելով, 1814 թվականին սկսեց Մոսկվայում մի շինք կառուցանել, որի մեջ պիտի տեղավորվեր ծրագրված դպրոցը: Մեծ խելք և հեռատեսութիւն ցույց տվեց նա մանավանդ դպրոցի համար տեղ ընտրելու գործում: Մոսկվան թեև հետո էր հայերի բնակութեան տեղերից, բայց իբրև Ռուսաստանի մտավոր առաջնակարգ մի կենտրոն, կարող էր մի բարեկարգ դպրոցի բոլոր հարմարութիւնները տալ: Շինութիւնը ավարտվեց 1816-ին, իսկ հաջորդ տարին բացվեց «Լազարյան հայկական ուսումնարանը»: Այսպես էր նա կոչվում սկզբում:

Միևնույն նպատակովոր պայմանների մեջ չէր գտնվում Ներսես եպիսկոպոս Աշտարակեցին, որ համարյա միաժամանակ հղացել էր մի բարեկարգ դպրոց հիմնելու միտքը: Նա կարծում էր, թե այդպիսի մի դպրոցի համար ամենահարմար տեղը պիտի լինի Էջմիածինը, որ հայոց հոգևոր կառավարութեան կենտրոնն էր և, հետևաբար, մտավոր դարգացման կենտրոն էլ պիտի դառնար: Ներսեսը մինչև իսկ պատրաստութիւններ տեսնել էլ սկսեց, բայց շուտով իմացավ, որ իզեալը իրագործելու տեղը Էջմիածինը չէ: Ամենայն հայոց Մայր Աթոռը պարսիկների տիրապետութեան տակ էր գտնվում. և բացի դրանից, այնտեղ դեռ շարունակում էր թագավորել նույն այն տգետ ու հալածատու կղերականութիւնը, որի ձեռքից փախել էր Մխիթար Սեբաստացին:

Մի ապահով, հարմար տեղ էր որոնում Ներսեսը: Եվ այդ տեղը ամբողջ Անդրկովկասում կարող էր լինել միայն Թիֆլիսը: 1814 թվականին նա նշանակվեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ: Տեսնելով շրջապատող սոսկալի տգիտութիւնն ու խավարը, նա առաջին անհետաձգելի գործ համարեց դպրոցը և իրան հատուկ կրակոտ եռանդով կայավ այդ գործին: Միջոցներ նա շուտով, ինչպես Լազարյաններն ունեին: Պետք էր ժողովրդի աջակցութեան դիմել,

և Ներսեսը մի քանի կանգ շառնելով, դիմում է նրան: Ծագում է հակառակութիւն, Ներսեսը ոչ մի տեղ թշնամիների պակասութիւն չէր տեսել: Պետք էր հետաձգել մեծ, բարեկարգ դպրոցի միտքը: Մինչև հարմար ժամանակ գտնելը, Ներսեսը 1815-ին բաց արեց մի ժամանակավոր դպրոց՝ քահանայացիներ պատրաստելու համար:

Դպրոցը կար, այժմ պետք էր ուսուցիչներ գտնել: Երկու տարուց հետո միայն Ներսեսին հաջողվեց Ղարաբաղից բերել տալ հայկաբանի հուշակ վայելուղ դարագաղցի Պողոս վարդապետին: Դա արդեն առաջադիմութիւն էր Ներսեսի դպրոցի համար, թեև իր մանկավարժական սիստեմով գիտնական վարդապետը շատ չէր գնահատվում ժամկոչ Եղիազարից: Պողոս վարդապետն իր աշակերտներին ավելի ծեծ էր տալիս, քան ուսում: Նրա երկաթե գավազանի տակ ուսուցման միակ առարկան հայկաբանութիւնն էր. և աշակերտները օր ու գիշեր զուլիս էին կտարում Չամչյանի քերականութեան, Աղոնցի ճարտասանութեան և Թևսավրոսի «Բարոյական իմաստասիրութեան» վրա*: Եվ սակայն այս շոր ու ցամաք դասատուութիւնը այն ժամանակ նշանավոր բան էր համարվում: Ապացուցն այն, որ Խաչատուր Աբովյանցը, Էջմիածնում մոտ վեց տարի աշակերտելուց հետո, 1821 թվականին գնում է Թիֆլիս և մտնում է Պողոս վարդապետի դպրոցը՝ կատարելագործվելու համար:

Այդ դպրոցումն էր և Ստեփանոս Նազարյանցը:

Պողոս վարդապետի գիտնականութեամբ գոհ էին ամենքը: Դժգոհ էր միայն Ներսեսը: Այդպիսի հիմնարկութիւն չէր նրա ուզածը. մի մեծ ուսումնարան, ուր ավանդվեր ժամանակակից գիտութիւնը, օտար լեզուները— ահա ինչ էր նա որոնում: Եվ նորից նա գիմեց ժողովրդին, նորից նվերներ խնդրեց: Այս անգամ նրան հաջողվեց մի լավ գումար հավաքել: Գործը զուլիս եկավ: Ներսեսը սկսեց դպրոցի շինութիւնը և 1824-ին հանդիսավոր կերպով բաց արավ իր սիրած ու փայփայած կրթական տաճարը:

Այսպիսով ահա Ռուսաստանի և Անդրկովկասի հայերը ստանում էին երկու բարեկարգ կրթարաններ, որոնք պիտի առաջնորդեին նրանց դեպի նոր ժամանակի պահանջները, պիտի պատրաստեին մարդիկ:

Նշանավոր է, որ այս դպրոցական հաստատութիւնների անհրաժեշտութիւնը զգացնելու մեջ մեծ դեր է կատարել Մխիթարյան միաբանութիւնը, թեև ոչ անմիջապես և ուղղակի: Բնական է, որ դարավոր քնից արթնացող հային ամենից առաջ գրավեր ս. Ղազարի լույսը: Նա ավելի մոտիկ էր արթնացող հային, հարազատ, ավելի շատ բան էր ասում նրա սրտին, քան մի օտար կրթարան: Ամենից առաջ կար այն հանգամանքը, որ Մխիթարյանները հայ վարդապետներ էին և մեծ եռանդով աշխատում էին հայերենը հարստացնել: Ապա գալիս էր այն, որ Մխիթարյանները իրանց գիտութեամբ անշափ բարձր էին հայ հոգևորականներից, ուրեմն և անհամեմատ ուժեղ: Հենվելով այդ ուժի վրա, նրանք իրանց հեղինակութիւններով, թարգմանութիւններով կաթողիկոսական տենդենցներ էին մտցնում հայերի մեջ: Չնայած դրան, Մխիթարյանների գիտնականութիւնը, բարեկարգ դպրոցը այնքան գրավիչ էին ուսման ծարավ հայերի համար, որ ակամա մոռացվում էր կրոնական խտրութիւնը: Խաչատուր Աբովյանցը, չնայած որ ջերմ սիրով կապված էր Էջմիածնի և հայ եկեղեցու հետ, մի տենչանք է ունենում՝ գնալ Վենետիկ, այնտեղ լրացնել իր ուսումը: Ս. Ղազարի կղզուն նա նայում էր իբրև մի ավետյաց երկրի: Այսբան հաղթահարող է լույսը:

* Տ. իմ «Հովակի կաթողիկոս Արղության», Թիֆլիս, 1902:

* «Հիստորիա», 1858, № 2—10:

Չի կարելի ասել, թե հայ հոգևորականությունը շէր դարձնում Մխիթարյանների մտաւոր գերազանցութեան անհարմարութիւնը: Կար դժգոհութիւն, կար դիմադրելու ցանկութիւն: Բայց պահասում էր ուժ: Դիմադրողները հաւատարմութեամբ շունչեղին: Այս իրողութեան վրա ուշադրութիւն էր դարձրել կոմս Հովհաննես Լազարյանը, ինչպէս վկայում է Հովակիմ Լազարյանը 1820 թվականին հրատարակած իր մի շրջաբերականի մեջ*: Նա հասկացել էր, որ կաթոլիկ վարդապետների դեմ մրցելու համար պէտք է նրանց պես ուսումնական հոգևորականներ պատրաստել: Եվ այս միտքը դարձրել էր մի լավ դպրոց բաց անելու շարժառիթներից մեկը: Իր եղբոր հետ համաձայն էր և Հովակիմ Լազարյանը: Արժանի գովեստներ տալով Մխիթարյանների ջանասիրութեան, ուսումնականութեան, Լազարյան ճեմարանի երկրորդ հիմնադիրը շեշտում էր, որ նրանք բաժանված են հայ եկեղեցուց և ասկզբից մինչև այժմ աշակույր ճարտարութեամբ տքնում են փոքր առ փոքր մեզ էլ օտարացնել մեր սուրբ ուղղադավան եկեղեցուց: Եվ նրա հիմնած գպրոցը հենց այդ պատճառով էլ ամենից առաջ և ամենից շատ նկատի ունեւ հայոց լեզուն, գրականութիւնը, հայոց եկեղեցու շահերը:

Մխիթարյաններին է աչքի առաջ ունեցել և ներսես Աշտարակեցին: Իր նամակներից մեկում** նա խոստովանում է, որ դեռ 20-ամյա հասակից նա հափշտակված էր Մխիթար Սեբաստացու օրինակով և մտածում էր վենետիկում հիմնած նրա ուսումնարանի վրա: Վերջապես հիշատակենք և այն, որ քսանական թվականներին էջմիածնի միաբաններից մի երկուսի մեջ միտք է ծագում ս. Ղազարի միաբանութեան նման մի գրական-վանական ընկերութիւն հիմնել Հայաստանում: Ընտրվում է նույնպիսի մի կղզի— Սևանի կղզին. այդտեղ ուղում էին հին ձեռագիրներ հրատարակել և գրականութիւնը զարգացնել***: Բայց այդ մտքի հեղինակ Շահաթունյան վարդապետը մոռանում էր, որ նույն այդ Սևան կղզում էր ամենից առաջ ուղում հաստատվել Մխիթարը և սակայն ոչինչ հաջողութիւն չէր ունեցել: Եթէ Սևանն ու ս. Ղազարը աշխարհագրական միևնույն անունն ունեին— կղզի, Ասիայի այն խավար կտորը, ուր բնութիւնը ղետեղել էր Սևանը, ոչինչ նմանութիւն չունեւ իտալական հողի և երկնքի հետ, իհարկե, այդպիսի ձեռնարկութիւնների հաջողութեան տեսակետից: Հայրենի դառն իրականութիւնը ցույց էր տալիս, որ պէտք է դեռ սովորել, կամաց կամաց առաջանալ լուսավորութեան ճանապարհի վրա:

Լազարյան դպրոցը սկզբում, մինչև 1825 թվականը, մի մասնավոր ուսումնարան էր, առանց իրավունքների և արտոնութիւնների: Մերուսի Հովակիմ Լազարյանը սիրում էր իր ձեռքի գործը գթառատ հոր պես և ոչինչ չէր խնայում, որ դպրոցը կոչման բարձրութեան վրա կանգնած մի կրթարան լինի: Նա դիմում էր Մոսկովայի համալսարանի պրոֆեսորներին, խորհուրդներ էր հարցնում, խնդրում էր ղեկավարել ուսումնական գործը: Դպրոցը ուներ երեք դասարան, լրթ-ութ տարվա դասընթացքով և համարյա համապատասխանում էր այն ժամանակվա գիմնադիաներին: Հիմնադիրը աշխատում էր, որ դպրոցը հայերի համար դառնա համալսարան մտնելու հարմարութիւններ տվող մի հիմնարկութիւն: Ավանդվում էին հայոց, ռուսաց, լատինական, ֆրանսիական,

գերմանական լեզուները, աշխարհագրութիւն, պատմութիւն, իրավագիտութիւն, վիճակագրութիւն, դժագրութիւն: Սկսած 1821 թվականից, ամեն տարի միջին թվով 10—12 աշակերտ էին ավարտում դպրոցը:

Հիմնադիրների գլխավոր նպատակը, ինչպէս տեսանք, հայերենագիտութիւնը զարգացնելն էր: Դպրոցը հայկական էր, բացված էր հայերի համար: 1825-ին նա ճանաչվեց կառավարութեան կողմից իբրև միջնակարգ դպրոց և ստացավ «Լազարյան հայկական ճեմարան» անունը: Լազարյանների հաշվով 30 գիշերօթիկ աշակերտներ, հավաքված դանազան հայաբնակ տեղերից, ուսում էին ստանում: Բայց հայկական դպրոցի կերպարանք տալը այնքան էլ հեշտ բան չէր Լազարյանի համար: Կար մի շատ դժվար հարց և դա ուսուցիչների հարցն էր: Որտեղից վերցնել պատրաստված, լավ հայերենագետ ուսուցիչներ, որոնք իրանց զարգացման աստիճանով համապատասխանեին համալսարանական կենտրոնում բացված նոր ձևի մի բարեկարգ դպրոցին: Ավելորդ էր մտածել անգամ, թե այդպիսի մարդիկ կարող են գալ Հայաստանից: Եվ Հովակիմ Լազարյանը դեպի այդ կողմը չէ էլ նայում: Նա դիմում է վենետիկ, մոռանում է նույնիսկ, որ իր դպրոցը ս. Ղազարի դեմ մրցող մի հիմնարկութիւն պիտի լինի, խնդրում է Մխիթարյան միաբանութիւնից երկու վարդապետ ուղարկել ուսուցչութիւն անելու համար: Վենետիկը մերժում է. այն ժամանակ Լազարյանը դիմում է վիեննայի Մխիթարյաններին, բայց դրանցից էլ մերժում է ստանում:

Ահա թե որքան դժվար էր հայկական դպրոց ստեղծելը: Եվ ծերունի Լազարյանը անշուշտ շատ նեղ դրութեան մեջ կմնար, եթէ չլինեին երկու կաթոլիկ վարդապետներ: Դրանցից մեկը Սերուբե վարդապետն էր, որ լուսավորչական էր դարձել և գտնվում էր էջմիածնում: Լազարյանը բերել է տալիս նրան: Մյուս վարդապետը Հոռոմում էր դաստիարակվել և պատկանում էր կիրանանի Անտոնյան միաբանութեան. նրա անունն էր Հովակիմ: Գալով Ռուսաստան, այդ վարդապետը Հովակիմ Լազարյանի ուշադրութիւնն է գրավում, մտնում է լուսավորչական եկեղեցու ծոցը և ստանում է Միքայել վարդապետ անունը (Սալլանթյան): Երկու վարդապետներն էլ, իբրև եվրոպական կղերական կրթութիւն ստացած մարդիկ, կարող էին փոխարինել Մխիթարյաններին: Նրանք շատ հմուտ էին հայերենի մեջ, հեղինակական ձիրք էլ ունեին*: Նշանավոր է մանավանդ Սալլանթյանը. երկար ժամանակ նա մի շատ կարևոր դեր կատարեց Լազարյան ճեմարանում իբրև հայերենի ուսուցիչ և առհասարակ իբրև հայերենագիտութեան գլխավոր ղեկավար:

Նշանակում է, որ Լազարյան ճեմարանի միջոցով արևելյան հայերի մեջ մուտք էր գործում ոչ թե մի նոր, ինքնուրույն հայերենագիտութիւն, այլ այն, ինչ արդեն գոյութիւն ուներ արևմուտքում: Եվ որովհետև արևմուտքում հայոց լեզվի և գրականութեան տերերը Մխիթարյաններն էին, ուստի կարելի է ասել, որ ռուսահայերի մեջ հաստատվողը ս. Ղազարի մի ճշուղն էր, այն դանազանութեամբ, իհարկե, որ այդ ճշուղը Հոռոմին չէր նայում, այլ էջմիածնին: Մխիթարյանների գրական դպրոցը գլխավորաբար, ամենից առաջ, կրոնական ուղղութիւնն ուներ. հնութիւններ լույս հանելը նա համարում էր առաջնակարգ գործ: Մշակում, ճոխացնում էր գրաբար լեզուն, արհամարհանքով վերաբերվելով աշխարհաբարին: Փրուն, ուսուցիկ ճառերի, ներբողների, կեղծ կլասիկա-

* Մ. Մանուկյան— «Յիշատակարան կենաց և գործոց Լազարեան տոհմի», Մոսկվա, 1856, էր. 56:

** «Պատմ. ներսիս. դպրոց», էրկ. 25:

*** Արխատակես Եպիս. Սեդրակյան— «Յովհաննէս Եպիս. Շահաթունեանցի կենսագրութիւնը». Պետերբուրգ, 1898, էր. 27:

* Սերուբե վարդապետը 1819 թվին ապագրեց Մոսկվայում «Մաղիկ գիտութեանց» անունով մի գիրք, որ դանազան գիտութիւնների համառոտութիւնն է: Իսկ Սալլանթյանի հեղինակութիւնները շատ են:

կան զեղումների դարն էր. Մխիթարյաններն այնքան եռանդուն էին, այնքան ընդունակ հանդիսացան այս ուղղութիւն մեջ, որ ամբողջ մտածող հայութիւնը նրան հետևելն էր միայն հասկանում: Նույն այդ ոգին, նույն այդ ուղղութիւնն ու հասկացողութիւնները մտցրեց Սալլանթիանը կաղարջան ճեմարանի մեջ:

Մխիթարյաններին նմանվելու, Մխիթարյաններին դիմադրելու ցանկութիւնն այնքան մեծ էր, որ 1823 թվականին կաղարջանների դպրոցում կազմվեց հայկական հնութիւն սիրողների Ընկերութիւն: Նրա նպատակն էր ուսումնասիրել Հայաստանի հնութիւնները և այդ ուսումնասիրութիւնների արդյունքները տպագրվել ուսերեն լեզվով: Դիմելով ձեռնհաս մարդկանց, ընկերութիւնը խնդրում էր ուղարկել իրան հին ձեռագրեր, թղթեր, հրովարտականներ և այլ այսպիսի բաներ: Հարկավոր էր ունենալ և սեփական տպարան, ինչպես ունեին Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանները: Հովակիմ կաղարջանի ժառանգները մի հարուստ տպարան էլ նվիրեցին իրանց ճեմարանին (1829): Թե որպիսի խնամք և հոգացողութիւն ունեին նրանք հայերի և հայոց լեզվի մասին, երևում է նրանից, որ 1829-ին Հովակիմի որդի Հովհաննես կաղարջանը, որ ճեմարանի դիրեկտորն էր, դիմեց ուսաց կառավարութիւնը, խնդրելով հայոց լեզվի ամբիոն բաց անել Մոսկվայի համալսարանում: Իր բացատրութիւն մեջ կաղարջանն ասում էր, թե մի այսպիսի ամբիոն կբարձրացներ հայոց լեզվի նշանակութիւնը Ռուսաստանում և հայ ազգի համար կլիներ մի նոր նշան, որ ցույց կտար ամենքին, թե ինչպես ուսաց կառավարութիւնն իր շնորհներն է թափում ազգի վրա: Համալսարանական ամբիոնը հայոց լեզուն կմտցներ այն լեզուների թիվը, որոնք մատչելի են դառնում Ռուսաստանի երիտասարդութիւնը: Ցույց տալով, թե ինչ քաղաքական նշանակութիւն կունենար այդ հանգամանքը, կաղարջանը հանձն էր առնում հարկավոր դրամական նպաստները տալ իր միջոցներից և գտնել հայագետ պրոֆեսոր ամբիոնի համար: Կառավարութիւնը, սակայն, անկարելի համարեց կատարել այդ խընդիրքը: Այդ ժամանակ արդեն վճռված էր բաց անել Պետերբուրգի համալսարանում արևելյան լեզուների բաժին, ուր պիտի դասախոսվեր և հայերենը:

Կաղարջան ճեմարանի պես էր, բայց իհարկե, նյութական ավելի փոքրիկ միջոցներով, և Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում: Ներսեսը մեծ ծրագրեր ուներ: Նրան թվում էր, թե կարելի է այդ դպրոցական հարկի տակ հավաքել 800 աշակերտ: Դասատուների հարցը նրան էլ էր շատ նեղում: Դժվարութիւնը մանավանդ այն էր, որ Ներսեսը վստահութիւն չուներ կաթողիկոսութիւնից վերադարձած հայ վարդապետների վրա: Սալլանթիանը առաջ նրան առաջարկեց իր ծառայութիւնները, բայց մերժում ստացավ: Վերջը Ներսեսը հրավիրեց Մոսկվայից Հարութիւն քահանա Ալամդարյանին և սրան հանձնեց իր դպրոցի ղեկը: Ալամդարյանը լավ հայագետ էր և շնորհալի բանաստեղծ: Նա ուսուցչութիւն էր անում կաղարջան ճեմարանում, որի կարգերն էլ մտցրեց Ներսիսյան դպրոցի մեջ: Պետք է ասել, որ Հովակիմ կաղարջանը մեծ ուրախութիւնով աջակցում էր Ներսեսին: Ներսիսյան դպրոցը ստացավ նրանից 7000 ռուբլու մի գումար. կաղարջան ճեմարանի աշակերտները ուսուցչութիւն էին անում Ներսիսյան դպրոցում: Երկու հիմնարկութիւնները, իրար ձեռք տված, կրթում էին հայ երեխաներին:

Ներսեսն էլ մտածում էր ս. Ղազարի միաբանութիւնն անան մի գրական և հրատարակչական ընկերութիւն հաստատել իր դպրոցի շուրջը: Կաղարջաններից շատ վաղ նա զգաց մի հայերեն տպարանի անհրաժեշտութիւնը: Այդ բանի մեջ նրան օգնեց վանեցի հարուստ վաճառական Գեորգ Արծրունին,

որ եվրոպայում կատարած իր մի ճանապարհորդութիւն ժամանակ գնեց Ամստերդամում եղած մի հայերեն տպարան և ընծայեց Ներսիսյան դպրոցին: 1819 թվականին այդ տպարանն արդեն Թիֆլիսումն էր, բայց սկսեց կանոնավոր գործել 1823-ից: Ներսեսը սպասում էր, որ տպարանն ու դպրոցը, միմյանց ձեռք տված, կզարգացնեն հայոց գրականութիւնը: Եվ նա չէր սխալվում: Դպրոցի տպարանը, ապա և կաղարջան ճեմարանի տպարանը ահագին դեր կատարեցին մեղանում մինչև 1870-ական թվականները: Դրանց շուրջն էր գործում ուսահայերի ամբողջ գրականութիւնը:

Կարելի է համարձակ կերպով ասել, որ եթե մեղանում չլինեին կաղարջանները և Ներսես Աշտարակեցին, ուսահայերը դեռ շատ երկար թաղված կմնային ասիական խավարի մեջ: Նրանց դպրոցներն էին մեզ կյանքի հրավիրողները. այդ դպրոցներից էր, որ հայի խավար հորիզոնի վրա էլ բացվեց գարնանային առավոտը: Դրանք երկվորյակներ էին, միատեսակ էին մտածում, գործում: Երկուսի դավանանքը միևնույն էր, երկուսն էլ միևնույն ճանապարհով էին ընթանում:

Կաղարջան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի ուղղութիւն, ոգու մեջ եղած միութիւնը մեզ ցույց են տալիս երկու ժողովածուներ, որոնք հրատարակվեցան 1828—1829 թվականներին, մեկը՝ Թիֆլիսում, մյուսը՝ Մոսկվայում: Ներսիսյան դպրոցի վարչութիւնը, կամենալով ցույց տալ հասարակութիւն, թե ինչ առաջադիմութիւն են անում աշակերտները, հրատարակեց նրանց գրավոր աշխատութիւնները «Ներսիսյան դպրոցի» անունով: Այդ օրինակին հետևեց Միքայել վարդապետ Սալլանթիանը, հրատարակելով Մոսկվայում «Մուզայք Արարատեան» ժողովածուն, կազմված կաղարջան ճեմարանի աշակերտների աշխատութիւններից:

Մանթիանայով այդ աշակերտական գործերի հետ, մենք ծանոթանում ենք և երկու դպրոցների ոգու, ուղղութիւն հետ: Մենք տեսնում ենք, որ ամենից առաջ տիրում է թունդ կրոնական ուղղութիւն: Աշակերտները ճառեր, ոտանավորներ են գրում կրոնական զանազան առարկաների վրա. դրանք աշակերտական նստարանի վրա նստած կրոնավորներ են, որոնք ճոռոմաբան ոճով, ճարտասանական արհեստաբանութիւնով խոսում են մեղքի, հոգու փրկութիւն, սուրբերի, քրիստոնեական առաքինութիւնների մասին: Իսկ կաղարջան ճեմարանում բանը այն տեղին է հասնում, որ աշակերտները գրում են մի ահագին վիճարանական գրութիւն (157 էրես), որի միտքն է ապացուցել, որ Հոռմի պապը քրիստոնեական եկեղեցիների զուլսը չէ, ինչպես կաթողիկոսներն են ասում: Այս գրվածքի մեջ մանավանդ շատ պարզ է, թե ինչ ոգի էր ներշնչում Սալլանթիանը: Նորադարձ դավանափոխի եռանդով նա պաշտպանում էր Հայոց եկեղեցու ուղղափառութիւնը, կրոնական վեճեր էր մղում Մխիթարյանների դեմ, նույնիսկ պատրաստ էր լատիներեն լեզվով ապացուցանել կաթողիկ աշխարհին, որ հայերը հերձվածողներ չեն:

Կրոնական-աստվածաբանական ջերմեռանդ խոհերից հետո աշակերտական շարադրութիւնների մեջ գալիս էր հայերենասիրութիւնը, որ նյութ էր ստանում լոկ Հայաստանի անցյալից: Այս տարրը համեմատաբար շատ աննշան էր կրոնական նյութերի մեջ: Հայերը այն ժամանակներում ազգասիրութիւն սովորում էին Մխիթարյաններից, իսկ սրանք ազգասիրաբար վկայում և հաստատում էին, որ իրանց ազգը մի բացառիկ անուշ բախտ է ունեցել, իբրև աստծու ընտրյալ ազգ, իբրև ամենահին ժողովուրդը, որի լեզուն գործածական էր նույնիսկ Ադամի դրախտում:

Շատ են, համարյա անթիվ, ներբողական գրվածքները. դրանք ճառեր են



և ոտանավորներ, նվիրված կաղարջաններին, ներսեսին, Հայոց կաթողիկոսին, ուսուցիչներին, մանավանդ Սալլանթյանին: Գովասանքների և փառաբանությունների ճոճուան արտահայտություններ են դրանք, մեծ մասամբ արհեստական, ողորմելի բովանդակությամբ, մեծահնչյուն բառերի և կեղծ բացականչությունների կույտեր: Ներբողների, ճառերի ժամանակ էր դա: Նշանավոր է, որ կան մի քանի թարգմանություններ ուսերենից, բայց ամենքն էլ կրոնական բովանդակություն ունին և վերցրած են կրոնավոր հեղինակների աշխատություններից:

Ահա Մոսկվայի և Քիֆիսի հայկական դպրոցների ոգին: Ինչպես տեսնում եք, հայերենագիտությունը, այսինքն այն գլխավոր առարկան, որի վրա առանձին ուշադրություն էր դարձվում և որ հայ աշակերտների կրթության գլխավոր հենարանն էր, դրված էր այդ դպրոցներում այնպես, ինչպես մեր հին վանքերում: Եվ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. ամենքի համար օրինակ էր Մխիթարյան միաբանությունը, իսկ սա իրապես մի ուրիշ բան չէր, եթե ոչ մեր վանականության մի բարձր զարգացումը: Թարմ հոսանքներ, եվրոպական մտքի կտորներ մենք չենք տեսնում աշակերտական գրվածքների մեջ: Գինին նույնն էր, հինը, բայց ածած նոր ամանների մեջ: Մենք շարունակում էինք տիրացուական կրթություն ստանալ, թեև միաժամանակ սովորում էինք օտար լեզուներ, գիտություն: Այս օտար լեզուները, այս գիտությունը Մխիթարյան միաբանության էլ մատչելի էին, դեռ ավելի լայն շահերով, և սակայն արգելք չէին լինում, որ միաբանությունը մնա հոգով ու մարմնով զուտ կղերական-վանական հաստատություն:

Կաղարջանների և ներսեսի հիմնած կրթարանները իրանց այս ոգով և ուղղությամբ ազգային դպրոցի տիպ դարձան մեզ համար կես սխոլաստիկական, չոր ու ցամաք, կյանքից ու ժամանակի պահանջներից ետ մնացած մի դպրոցի տիպ, որ մի քանի տասնյակ տարի գոյություն պահպանեց մեզանում իր մեծախոս ճառերով, խրթին գրաբարով: Հեռու գնալ այդպիսի մտավոր պաշարով չէր կարելի, եթե երևան չգար մեզանում մի երևույթ, որ հեղափոխություն առաջացրեց մեր աշխարհայացքների ու հասկացողությունների մեջ:

Այդ հեղափոխող երևույթը ծնողները դարձյալ նույն դպրոցներն էին: Որքան էլ հին, անժամանակակից լինեք նրանց ոգին, կար այն խոշոր հանգամանքը, որ դրանք եվրոպական սիստեմով բացված կրթարաններ էին, գտնվում էին մեծ քաղաքներում, ենթարկված էին հասարակական կյանքի հոսանքներին, ժամանակի ազդեցություն: Այս հզոր գործոնների շնորհիվ կաղարջան ճեմարանում սկսում է մշակվել մի պարզ, հանրամատչելի աշխարհաբար լեզու: Սկիզբը դրեց Հովակիմ կաղարջանը. ապա նրա գործը շարունակեցին ճեմարանի ուսուցիչները: Աշակերտներ հավաքվում էին զանազան երկրներից. ամեն մեկը բերում էր իր երկրի խոսակցական հայերենը, գավառաբարբառը: Ուսուցիչները հետևում էին նրանց խոսակցություններին, մաքրում էին լեզուն գավառաբանություններից, օտար բառերից և մշակում էին մի հարազատ հայերեն, որ գրաբար չէր, բայց գավառաբարբառ էլ չէր, այլ բոլոր տեղերից եկածներին հասկանալի մի լեզու*:

Աշխարհաբար կար և ներսեսյան դպրոցում. այդ լեզվով էին կազմվում դասադրքերը ստորին դասարանների համար: Ահա այդ սաղմերը աճում, զարգանում են աստիճանաբար և զնում են մեր առջև դպրոցի և գրականության ոգին փոխելու անհրաժեշտությունը: Սկսվում են մեծամեծ ջանքեր: Այդ ան-

հրաժեշտության շուրջը բացվում է մի մեծ պայքար. առաջ են գալիս վերանորոգող, համարձակ տարրեր, սրունց դեմ խմբվում է պահպանողական մի մեծ կուսակցություն: Նյութը, մրցողները նույն երկու դպրոցներից էին դուրս գալիս: Նորերը և հնեերը, միմյանց հետ ընդհարվող, միմյանց դեմ կռվող սերունդները մեծ մասամբ կաղարջան ճեմարանի և ներսեսյան դպրոցի սաներն էին:

Նորերի ամենանշանավոր ներկայացուցիչը Ստեփանոս Նազարյանցն էր:

Գլուխ երկրորդ

ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ
(1812—1841)

I

Խոյեցի Տեր-Եսային: Ստեփանոսի բնավորությունը: Ընտանիք և ընտանեկան կրթություն: Նազարյանցը ներսեսյան դպրոցում: Խաչատուր Արովյանցի հետ մտերմանալը: Ի՞նչ տվեց դպրոցը: Պրոֆեսոր Պարբոտ: Արովյանցը նաև ապարհ է բաց անում դեպի գերմանական համալսարան: Նազարյանցը՝ ներսեսյան դպրոցից դուրս գալուց հետո: Դեպի Դուբա:

Ռուսաց տիրապետությունը Անդրկովկասում երկար չմնաց այն սահմանների մեջ, որ տվել էր վրաց թագավորությունը: Իրերի բնական ընթացքը իսկույն ևեթ ընդհարումներ առաջացրեց նրա և մահմեդական տիրապետության մեջ: Պետք էր նվաճել անդրկովկասյան խանությունները: 1804 թ. սկզբում իշխան Ցիցիանովը արյունահեղ պատերազմից հետո, նվաճեց Քիֆիսին մոտիկ Գանձակը և ոչնչացրեց այնտեղի խանությունը: Շտապելով օգուտ քաղել այդ հաղթության գործած տպավորությունից, Ցիցիանովն առաջարկեց Ղարաբաղի և Շիրվանի խաներին, որ հպատակվեն ուսներին առանց դիմադրության, և խաները կատարեցին այդ առաջարկությունը: Պարսկաստանը, տեսնելով իր հպատակ խաների կորուստը, շտապեց զենք բարձրացնել ուսների դեմ: 1805 թվին Ցիցիանովը մոտեցավ Արաբսի հովիտին, և ռուսաց զորքերը պաշարեցին Երևանը: Այդ ժամանակն էր, որ Խոյի և Սալմաստի կողմերից հայ գաղթականություն եկավ, անցավ ռուսաց հողը, որպեսզի ազատ լինի պարսկական տիրապետությունից: Գաղթականների մեջ էր խոյեցի Եսայի քահանայ Նազարյանցը, որ բնակվեց Քիֆիսի Հավլաբար թաղում:

1812 թվականի դեկտեմբերի 25-ին այդ քահանայի ընտանիքում ծնվեց շորրորդ զավակը, որին տվին Ստեփանոս անունը: Նրանից առաջ ծնվել էին Դիմիտրիոսը, Հովսիսիմեն և Մարտիրոսը:

Մենք ունեինք այդ ընտանիքի կենցաղավարության պատկերը, որ թողել է Ստեփանոս Նազարյանցը: Այդ պատկերը մեր առաջն է հանում մի նահապետական հայ ընտանիք, մեկը հարյուրավոր և հազարավոր այդպիսի ընտանիքներից: Հայրը, Տեր-Եսային, հարուստ չէ, հարստություն չէ էլ որոնում, բավականանալով մի համեստ և շահավոր ապրուստով: Նա իր ժամանակի լավ հոգևորականներից մեկն է. գոնե գիտե գրել ռեալական ընտիր հին

* «Արարատ» լրագիր, 1850, № 2:

* «Հիսուսափայլ», 1864, № 5:

հայկաբանութեամբ», այնքան գրասեր է, որ հաճուցրով ընդօրինակում է դանազան գրչագիր և տպած գրքեր: Տարածված խմորատախտակի վրա, ջանասեր քահանան շարունակ արտագրում էր գրքեր գեղեցիկ, շատ պարզ ձևերով:

Միևնույն ժամանակ դա մի սիրող, պարտաճանաչ ծնող էր: Իր երեխաներին կրթում էր մի խնամատարութեամբ, որ այդպիսի մարդուն է հատուկ: Երեխաներին սիրելը նրա սրտի առաջին գործն էր. չկար մի անմեղ զվարճություն, որից նա սիրտ աներ զրկելու իր փոքրիկներին: Սիրում էր հաճախ զբոսանքներ կատարել նրանց հետ սարերում, ձորերում, դաշտերում: Ինչ ասել կուզի, որ այդ զբոսանքների ժամանակ հոր և երեխաների մեջ տեղի էին ունենում սրտադին, քաղցր խոսակցություններ: Նազարյանցը ասում է, որ այդ թափառումները «կատարյալ հարսանիք» էին երեխաների համար:

Տեր-Յսային, ինչպես երևում է, նախապես ինքն էր դաս տալիս իր երեխաներին: Լինելով իբրև հայր սրտաբաց, սիրող, քնքշասիրտ խնամակալ, նա խստապահանջ էր, նույնիսկ անգուժ իբրև ուսուցիչ: Չպետք է կարծել թե այս երկու հատկությունները հակասական էին մի հոր մեջ: Եվ եթե փայփայող հայրը շատ անգամ էր դիմում զավազանին և ծեծին, դրա պատճառն այն էր, որ նա, իբրև իր ժամանակի զավակ, խորապես համոզված էր, որ առանց ծեծի կրթություն չի լինի, որ ծեծը նույնքան անհրաժեշտ է երեխաների մտավոր կրթության համար, որքան մոր կաթը նրա կյանքի առաջին տարիներում: Հենց նույն ծնողական սերը հարկադրում էր ծեծով հասկացնել այն, ինչ երեխան չէ ուզում կամ չէ կարողանում հասկանալ ինքն իրան: Այդ մանկավարժական սիստեմի բոլոր բարիքները լիովին վայելել է Ստեփանոսը իր հոր տանը, նախքան դպրոց մտնելը:

Ստեփանոսը մի «խաղաղասեր երեխա» էր, ինչպես ինքն է ասում: Միևնույնը հաստատում են և նրան ճանաչողները, ավելացնելով, որ նա բացի դրանից շատ խելոք էր և աշխատասեր*: Այդ բոլորի հետ միասին նա մի «կրակոտ ասիական մանուկ» էր: Գա ցույց է տալիս, որ այդ աշխատասեր, հանդարտ մարդը ուներ վառվռուն սիրտ, որ նրա մեջ չէր կարող լինել սառնություն, անտարբերություն զեպի շրջապատը: Մի կրակ էր դա, որ ոչ միայն ուշադրություն է ստեղծում, այլ դնում է սրտի մեջ ազնիվ կիրք, կովոզի, հարձակվողի, դիմադրողի եռանդն է անշեջ պահում:

Տան ստացած կրթությունը, իհարկե, այբուբենն էր, Սաղմոսը և ապա Կտակարանը: Ստեփանոսը անգիր էր անում սրբազան պատմվածքները, բայց բոլորովին մեքենաբար, չհասկանալով անգիր արածի միտքը: Գրաբար լեզուն միանգամայն անհասկանալի էր նրան, ինչպես և ամեն մի հայ երեխայի, որ սկսում էր ուսում ստանալ մայրենի լեզվով: Մեռած, տաղտկալի սիստեմը, աշակերտի մեջ ոչինչ հետաքրքրություն, ոչինչ աշխույժ չստեղծելով, միայն տանջանք էր պատճառում նրան, ուստի և ուսումը մի վերին աստիճանի ծանր, մաշող լուծ էր, որին ամեն մի երեխա չէր կարողանում դիմանալ: Ամեն անգամ, երբ Տեր-Յսային ցերեկով պառկում էր քնելու, Ստեփանոսը, վանդակից ազատված թռչունի նման, վազում էր դուրս իր խաղերի ետևից: Մանավանդ շատ սիրում էր նա փոռան արձակել կտուրից և այդ խաղի մեջ, ինչպես ասում են, նա առանձին հմտություն ուներ: Բայց մանկական անմեղ զվարճությունը շատ թանկ էր նստում նրան: Հայրը, քնից զարթնելով, տեսնում էր, որ որդին գրքի վրա չէ խոնարհված, որոնում էր, գտնում նրան, կապտում էր և «փառավորապես» պատժում, այսինքն խրատում ու խելքի բե-

րում նրան: Եվ հոր այդ դաժան խրատների ժամանակ երեխաների պահապան հրեշտակ էր հանդիսանում մայրը:

Այս կինը, որի անունն էր Մանուշակ, նահապետական իսկապես մի հայուհի էր, ընտանիքի սիրտ, անսահման, խելացնոր սիրով կապված իր երեխաների հետ, իր ամուսնու աջ թևը և սրտակից բարեկամը: Նա, ինչ ասել կուզի, անգրագետ էր, բայց ուներ բնական հասկացողություն, կարողանում էր ըմբռնել և հարգել ամեն խելացի միտք: Նազարյանցը վկայում է, որ շատ ղեպքերում տիկին Մանուշակը ավելի հեռատես էր, ավելի պայծառ հայացքների տեր, քան իր քահանա ամուսինը: Երկուսի մեջ բնավորության տարբերություն էլ կար. հայրը փորձառու էր, բայց փոքր ինչ կրքոտ, մինչդեռ մայրը համբերող էր, մեղմ: Այս գծերը ժառանգել էր Ստեփանոսը: Բայց այդ հակասությունները այնքան զորեղ չէին, որ կարողանային խանգարել նահապետական օջախի հանգստությունը: Զիջողությունը, համբերողությունը՝ նահապետական առաքինություններ, որոնց ամենամեծ բաժինը, անշուշտ, հայ կնոջ վրա էր ընկած, հաստատում էին ընտանեկան հարկի տակ ամուսնական մի խաղաղ ու հաշտ կենակցություն: Ավելորդ է ասել, թե այդ ընտանեկան կացությունը որպիսի բարերար ազդեցություն էր անում երեխաների վրա, որոնք իրանց ծնողներին են նայում և իրանց առաջին կրթությունը իրանց օջախի մոտ են ստանում:

Նազարյանցը ճիշտ է նկատում, որ երեխաները «քաջ հսկող և նուրբ նկատող» աչք ունին: Նրա այդ աչքը, սակայն, ծնողների կյանքի մեջ անբնական, գայթակղեցնող բան չէր տեսնում: «Հրամայողություն, տեր ու աղախին» — այսպիսի ամուսնական դիրք չկար Տեր-Յսայու և տիկին Մանուշակի մեջ: Երեխաները միշտ համոզված էին, որ իրանց հոր ու մոր կամքը մի է և անպայման հնազանդվում էին նրանց: Ընտանեկան այսպիսի դպրոցը, որքան էլ անշուք ու աղքատ, որքան էլ տոգորված հին նախապաշարմունքներով ու ավանդություններով, մի գեղեցիկ միջոց է երեխաների սրտի մեջ տան, ընտանիքի սրբազան գաղափարը վառ պահելու համար: Եվ նազարյանցը սրբություններ պահեց այդ գաղափարը մինչև իր կյանքի վերջը, լինելով պարտաճանաչ ամուսին և օրինակելի հայր: Հիշենք տիկին Մանուշակի մի այլ հատկությունը՝ երկյուղած աստվածասիրություն, բարեպաշտություն: «Ոչ մի կարոտյալ դատարկաձեռն հեռացել չէ նրա տան շեմքից, ոչ մի աղքատ զուրկ չէ մնացել նրա հացից ու սեղանից, ոչ մի օտարական և պանդուխտ նրա քրիստոնեական հյուրասիրությունից», ասում է նազարյանցը: Մենք հետո կտեսնենք, որ իր, Ստեփանոսի մեջ, միշտ ապրում էր այդ բարի և մարդասեր մայրը:

Զգիտենք թե որքան ժամանակ նազարյանցը գրագիտություն սովորեց իր հոր մոտ: Այսքանն է հայտնի, որ հայրը նրան և Մարտիրոս որդուն հանձնեց Պողոս վարդապետին, որ, ինչպես վերև ասացինք, Ներսես Աշտարակեցու բացած դպրոցի ղեկավարն էր: Այստեղ Ստեփանոսը սովորում է հայկաբանություն Չամչյանի քերականության վրա, որի մի հատը վարդապետը ծախել էր Տեր-Յսայուն 10 ոտբուրով: Ավելի ծեծ ուտելով Պողոս վարդապետից, քան ուսում ստանալով, նազարյանցը իր մյուս դասընկերների հետ 1824-ին տեղափոխվեց իսկական Ներսիսյան դպրոցը: Վարդապետի դպրոցը փակվեց, բայց նրա աշակերտները այնքան առաջադեմ էին հայկաբանության մեջ, որ մի տարուց հետո Ներսեսը նրանց ավարտման վկայականներ տվեց:

Պողոս վարդապետի դպրոցում, ինչպես ասացինք, նազարյանցը ընկերապալ խաշատուր Աբովյանցի հետ: Այս հանգամանքը շատ նշանավոր է և պետք

* Երիցյան — «Ստեփանոս նազարեանց», «Փորձ» ամսագիր, 1879, № 11:

է շեշտվի առանձնապես: Երկու նշանավոր մարդիկ, որոնք այնքան մեծ դեր են կատարել մեր կյանքի մեջ, մտերմանում են իրար հետ աշակերտական նրատարանի վրա, պատանեկական հասակում: Դա ապացույց է, որ երկուսի բնավորությունների մեջ միանման, ընդհանուր գծեր շատ կային: Ուսման ծարավ, աշխատասեր, քնքույշ սրտի ու զգացմունքների տեր Աբովյանցը ամենից ավելի նազարյանցին կպավ, գտնելով նրա մեջ նույն հատկությունները: Բարեկամությունը միայն դպրոցում չկապեց երկու պատանիներին, այլև հետո, երբ երկուսն էլ ծառայեցին նույն գործին, երկուսն էլ միևնույն աչքով էին նայում հայրենի իրականությունը: Բայց գլխավոր, հիմնական գծերով այդքան մոտիկ լինելով միմյանց, Աբովյանցն ու նազարյանցը, իհարկե, մի խնձոր չէին միջից կես արած: Խառնվածքի առանձնահատկությունները, ինչպես կտեսնենք զանազան ճանապարհներ ցույց տվին երկու ընկերակիցներին՝ միևնույն գաղափարին ծառայելու համար:

Հիշատակության արժանի է և այն, որ Պողոս վարդապետի մոտ նազարյանցի դասընկերն էր և Առաքել Արարատյանը, որ հետո դարձավ նազարյանցի խիստ, թեև բթամիտ, հակառակորդը:

Ներսիսյան դպրոցում նազարյանցն ու Աբովյանցը մի տարի իրար հետ ընկերություն արին: Նրանք երբեք, բարձր դասարանումն էին և 1826 թվի փետրվարին նրանք դպրոցի առաջին ավարտող 18 աշակերտների մեջն էին: Հետևյալ տարուց բացվում էր շորթորդ դասարանը, ուստի ավարտողներից 11 հոգի ցանկացան մնալ դպրոցում՝ ուսումը շարունակելու: Դրանց թվումն էր և նազարյանցը: Իսկ Աբովյանցը չմնաց, նա գնաց Հաղբատի վանքը, ուր գտնվում էր Եփրեմ կաթողիկոսը, որպեսզի խնդրե, որ իրան ուղարկեն Վենետիկ: Թիֆլիսում ստացած ուսումը բավականություն չէր տվել վառվռուն երիտասարդին: Մի տարուց հետո, 1827 թ. փետրվարի 4-ին, նազարյանցն էլ հեռացավ ներսիսյան դպրոցից, վերջացնելով ուսումը:

Ի՞նչ էր նա տանում այդ նոր հիմնարկությունից: Իհարկե, ավելի շատ բան, քան կարող էր տալ հենց Պողոս վարդապետի դպրոցը: «Բացի մի կտոր հայերենից փոքր ի շատև ուսերեն, պարսկերեն, վերջումը և ֆրանսերեն»՝ այսպես է որոշում նազարյանցը ներսիսյան դպրոցից դուրս տարած իր պաշարը: Չքանակները ներսիսյան դպրոցում 1827 թվից դաս էր տալիս պրոֆեսոր Շահան-Ջրպետը, որ Պարիզից էր եկել ներսիսյան հրավերով: նազարյանցը մոռանում է, որ իր տարած պաշարի մեջ կային և գիտելիքներ թվաբանությունից, աշխարհագրությունից, նկարչությունից և պատմությունից: Իսկ սրանք նորություններ էին հայ աշակերտի համար: Ընդհանրապես, փոքր, անբավարար էր պաշարը, նա չէր կարող տալ այն ամենը, ինչ հարկավոր էր կյանքի մեջ ինքնուրույն, անկախ դիրք ստեղծելու համար: նազարյանցն էլ ունի երկու աշակերտական աշխատություն «Երախայրիք ներսիսյան Դպրոցի» ժողովածուի մեջ. մեկը արձակ գրվածք է՝ «Կական Իսրայելի» անունով, մի թունդ կրոնական գործ, թարգմանված ուսերենից, իսկ մյուսը ոտանավոր է, մի ներբող, որի մեջ փառաբանվում է ներսիսը: Երկու գրվածքներն էլ ոչնչով ավել կամ պակաս չեն մյուս աշակերտների շարադրություններից: նազարյանցի դասընկերները այդ տեսակ պաշարով կյանքի մեջ մտնելով, դարձան կամ վաճառական կամ քահանա կամ պաշտոնյա պետական ծառայության մեջ: Եվ կթե նազարյանցն ու Աբովյանցը չգնացին այդ սովորական ճանապարհով, պատճառն այն է, որ դպրոցը ուրիշ կերպ ազդեց նրանց վրա:

Նազարյանցը ասում է, որ իր ժամանակ մի քանի անհատների մեջ առաջացան «մի քանի կենդանի սերմեր, մի ազնիվ ձգտողություն դեպի ուսումն»:

Դպրոցը սկիզբ դրեց, նա չէր կարող լիովի բավարարություն տալ աշակերտների պահանջներին, նա ցույց տվեց ճանապարհը, արժարժեց սեր դեպի գիտություն, դեպի բարձրագույն ուսում: Այդ կենդանի սերմերն էին, որ տանում էին Աբովյանցին կաթողիկոսի մոտ՝ Վենետիկ գնալու թույլտվություն խնդրելու համար: Վենետիկը չէ աջողվում և ուսման ծարավ երիտասարդը ստիպված էր տեղափոխվել իր հայրենիքը: Բայց այդտեղ, երեք տարուց հետո նրա առջև բացվում է մի բոլորովին նոր, անսպասելի ճանապարհ. նա գնում է այդ ճանապարհով դեպի իսկական լույսը և տանում է իր ետևից իր սիրելի ընկեր նազարյանցին:

Այստեղ ծագում է մի հետաքրքրական հարց. ի՞նչ էր ներսիսյան դպրոցը մեր ժողովրդի համար:— Անկասկած, մի լուսատու ջահ, առաջադիմական մի խոշոր քայլ: Թե որքան խավար էր այդ դպրոցը շրջապատող իրականությունը, ցույց է տալիս նազարյանցի հետ պատահած հետևյալ դեպքը, որ պատմում է նրա մասին խոսողներից մեկը*:

Ներսիսի կարգադրությամբ դպրոցի բարձր դասարանի աշակերտներին կիրակի օրերը ուղարկում էին եկեղեցի քարոզ խոսելու համար: նազարյանցը մի անգամ քարոզում էր Հավլաբարի Զորաբաշի եկեղեցում: նա խոսեց հինգերորդ դարի կրոնական պատերազմի մասին, հիշատակեց վարդանին և նրա զինվորներին և մի քանի անգամ կրկնեց «բաշ», «բաշեր» բառերը: Ժամավորներից մեկը, հավլաբարցի Սոսին, որ թաղի հարուստն էր և առաջին մարդը, այլևս չկարողացավ համբերել և, ընդհատելով քարոզչին, բարկացած ասաց. «Այ Տեր-Եսայու տղա, դու թե կարաս, հոգուց խոսիր, թե չէ՝ այս սուրբ եկեղեցու մեջ, հեռի մեղանից, բաշքերն ու դեերը ի՞նչ բան ունին»:

Բնորոշ դեպք: նազարյանցը իր կյանքի ընթացքում, համարյա միշտ, հավլաբարցի Սոսու նման քննադատների էր հանդիպում: Դեռ այստեղ, Զորաբաշի եկեղեցում, իբրև ապագայի պատկեր, երևան էր գալիս նոր, թարմ, գեղեցիկ իրողությունը. ժամանակը, վերջապես, մեղանում էր էր ստեղծում հայրերի և որդիների սերունդներ: Հայրերը սկսում էին չհասկանալ որդիներին: Դա ցույց էր տալիս, որ նոր օրը հեռու չէր մեղանից:

Թե ինչ էր անում նազարյանցը իր ուսումը ավարտելուց հետո— մեզ ճիշտ հայտնի չէ: ներսիսյան դպրոցից դուրս գալուց հետո սկսվում է նրա կյանքի մի շրջանը, որի մասին տեղեկություններ չեն մնացել: Գիտենք միայն, որ նա ուսումը ավարտելուց հետո էլ հաճախում էր դպրոց՝ Շահան-Ջրպետից ֆրանսերեն դասեր առնելու համար: 1828 թվականի սեպտեմբերին նազարյանցը Զրպետի այդ տեսակ աշակերտների թվում է նշանակված**:

Թե ինչ եղավ այնուհետև մինչև 1832 թվականը— հաստատ հայտնի չէ: Եվ մենք այդ անձանոթ ժամանակամիջոցը փոքր ի շատև լուսաբանելու համար պիտի դիմենք Խաչատուր Աբովյանցին:

Ռուս-թուրքական պատերազմից հետո, 1829 թվականի ամառվա վերջին, Կովկաս է գալիս Դորպատի համալսարանի պրոֆեսոր Թ. Պարրոտը: Այս գիտնականը հինգ հոգուց բաղկացած մի արշավախումբ ուներ իր հետ և Կովկասում զանազան գիտական հետազոտություններ էր կատարում: Գլխավոր նպատակներից մեկն էր Արարատի գլուխը բարձրանալը: Այդ նպատակը տանում է գիտնական գերմանացուն էջմիածին: Մառայելով գիտությունը, Պարրոտը կատարեց և մի այնպիսի գործ, որ մեծ բարերարություն էր հայերի համար:

* Երիցյան, «Փորձ», 1879, № 11:

** «Պատմ. ներսիս. դպր.», կր. 170:

Նա դարձավ այն միջնորդը, որ մտքրեց հային գերմանական գիտութեան տա-
ճարը և այդ բավական չէ՝ նաև գերմանական ընտանիքի մեջ:

Գուցե առաջին անգամն էր, որ հետախուզող, վերլուծող գիտութեանը
այդքան նշանավոր ուսումնականի միջոցով ներկայանում էր էջմիածնում, մի
տեղ, ուր ամեն ինչ հնադարյան է, հիմնված ավանդութունների, նախապա-
շարմունքների վրա, ուր ծուլութունը, անուսումնասիրութունը սպանում էին
հոգին ու միտքը: Գորպատի գիտնականները ուսումնասիրում էին էջմիածնում
եղած բոլոր հնութունները, հարց ու փորձ էին անում մեծ ուշադրությամբ,
մանավանդ որոնում էին հին պատմվածքներ Մասիսի մասին: Որքան զար-
մանք պիտի պատճառած լինեն էջմիածնի վարդապետներին. նրանք գնում
են պատարագի, բայց երեսներին խաչ շեն հանում, պատարագից հետո բաց
անել են տալիս բոլոր մասունքները, բայց ոչ թե նրանց համբուրելու, նրանց
երկրպագելու համար, այլ պարզապես տեսնելու, զննելու և ցուցակագրելու
համար: Անհավատ, զրքից խենթացած մարդիկ պիտի երևային Պարրոտը և
իր ընկերները վանքի միաբանութեան աչքում: Բայց կար այդ միաբանութեան
մեջ մի սարկավազ, որ այդպես չէր նայում օտարազգի հյուրերին: Եվ դա
Աբովյանցն էր: Պարրոտը ուշադրութուն է դարձնում այդ ուշիմ երիտասար-
դի վրա, որ մի բացառիկ երևույթի նմանութուն ուներ էջմիածնի մթնոլոր-
տում և վերցնում է նրան իր հետ իբրև թարգման և ուղեցույց:

Պարրոտի ճանապարհորդութունը դեպի Մեծ Մասիսի գագաթը գիտնա-
կան տարեգրութունների մեջ հռչակված է նրանով, որ դա հին ավանդու-
թյուններով սրբազործված հսկա սարի գագաթին հասնելու առաջին հաջող
փորձն էր: Ճանապարհորդութունը տևեց 18 օր: Այդքան ժամանակ արշավա-
խումբը կատարում էր գիտնական հետազոտութուններ, հավաքում էր բույ-
սեր, քարեր, միջատներ, նկարում էր Արարատի տեսարանները: Աբովյանցին
դրա հետ միասին և գուցե դրանից էլ ավել գրավում էր Պարրոտի և նրա ըն-
կերակիցների մտերմական վերաբերմունքը դեպի իրեն: Գիտութեան, կրթու-
թեան տենչանքով լցված երիտասարդը որքան պիտի ոգևորվեր, ականատես
լինելով, թե ինչպես այդ մարդիկ մի զարմանալի անձնազոհութեամբ, արհա-
մարհելով բոլոր վտանգները, ձգտում են հասնել իրանց նպատակին: Նա աղա-
չում է, որ իրան շթողեն ճանապարհի կեսին, տանեն մինչև սարի գագաթը:
Նրա մեջ, իհարկե, խոսում էր ջերմ հայրենասիրութունը, որ միշտ և ամեն
տեղ նրա հետ էր: Տեսնել սրբազան Մասիսի կատարը՝ նշանակում էր տես-
նել այն խորհրդավոր կետը, որի հետ այնքան հին, նվիրական ավանդութուն-
ներ են կապված:

Այդ ավանդութունները պատմում էին, թե ծեր Մասիսի խորխորատնե-
րում դեեր և քաջքեր են ապրում, թե նրա գլուխը բարձրանալ չէ կարելի, թե
ս. Հակոբը կամենում էր հասնել տապանին, բայց չէր կարողանում և հենց որ
քնում էր, հրեշտակը վերցնում էր նրան և էլի ցած տանում, մինչև որ խղճաց
սրբին և տապանից մի տախտակ բերեց ու տվեց նրան, ցույց տալով, որ
Արարատի գագաթի վրա չէ կարող մարդկային ոտ լինել:

Եվ ահա եվրոպական գիտութունը գալիս էր ոտնակոխ անելու այդ դա-
րավոր առասպելներն ու ավանդութունները: Հայրենի երկրի սերից ավելի
հզոր ու մեծագործ չէ՞ր նա, այդ քաջամարտիկ գիտութունը, որի մարդը այն-
քան նահատակութուններ էր հանձն առնում Աբովյանցի աչքի առաջ, շոշա-
փելի, դրական ճշմարտութուններ գտնելու համար: Եթե Արարատի վրա չկա-
յին առասպելների դեերն ու քաջքերը, եթե ս. Հակոբի հրեշտակը ետ ու ետ
չէր հալածում գիտնական գերմանացիներին, դրանց փոխարեն 16,000 ոտնա-

չափ բարձրության վրա կային իրական սարսափներ. ձյունախառն բուքեր և
հավիտենական սառնամանիքներ, որոնք յուրաքանչյուր քայլափոխում մահ
էին սպառնում: Սակայն Պարրոտը անձնազոհ գիտնականի հաստատակամու-
թեամբ գնում էր այդ իրական սարսափների դեմ, պատռում էր նրանց իր կրթ-
քով և մշուշների ու ձյունների թագավորութունից փաստեր էր հանում գիտու-
թեան համար: Որպիսի օրինակ: Հայրենի տղետ երկիրն էլ լուսավոր ուսում-
նասիրողի և այսպիսի համառ, տոկուն, անձնազոհ ծառայութունների էր կա-
րոտ: Աբովյանցը հասկանում էր այդ մեծ ճշմարտութունը, նրան տված էր
այդ սքանչելի կարողութունը: Եվ նա բաց է անում բերանը, բաց է անում
իր ամբողջ տոչորված սիրտը և հայտնում է համակրելի պրոֆեսորին, թե
ինքն էլ ծարավ է գիտութեան, բայց միջոց չունի գիտութեան տաճար մըտ-
նելու...

Բավական էր այսքանը: Մնացածը շատ լավ գիտեր Պարրոտը: Նա տե-
սել էր այդ տոչորվող երիտասարդի հայրենիքը, գիտեր թե ասիական խավա-
րը, բռնակալութեան դարերը և խոր ու թանձր տգիտութունը որքան սոսկալի
կապանքներ են դրել այս խեղճ երկրի վրա, որքան է նրան հեռացրել այն տե-
ղերից, ուր ինքն էր ապրում և գործում: Ոչ ոք այդ երկրում չէր հասկանում,
թե ինչ է կամենում այդ երիտասարդ սարկավազը. ամենայն հայտն կաթո-
ղիկոսն անգամ չգիտեր, թե ինչ ասել է գիտութուն, լույս: Հասկացավ միայն
Պարրոտը: Նա սսկի սիրտ ուներ. մարդկային բարօրութունը այդ սրտի ամե-
նաթունդ զարկերից մեկն էր: Եվ նա խոստանում է Աբովյանցին տանել իր
մոտ Գորպատ:

Այդ բոլորը կատարվում էր՝ Արարատի վրա: Հայոց հինավուրց հսկա սա-
րը ինքը, հայութունն էր. անշարժ ու մշուշապատ, անմատչելի, նախապա-
շարմունքների և առասպելների մեջ թաղված: Գարերի այդ սֆինքսը լուսա-
վորելու համար հեռվից գալիս է գիտութունը: Նրան չէ դիմանում նույնիսկ
Արարատի վիթխարի, սառցապատ, թանձր մարմինը: Եվ գիտութունը ոչ մի-
այն պատռում է դարավոր անհայտութունն ու աղջամուղջը, այլև մի փոքրիկ,
բայց պայծառ ճրագ է վառում մութի մեջ: Եթե մի բանաստեղծ այսպիսի
պատկեր հնարեր, մենք չէինք հավատա: Բայց սա անհերքելի փաստ է, որ
խավար Արարատի խավար որդի Աբովյանցը հենց այդտեղ էլ, իր խավար
մոր մարմնի վրա, գտավ լույսի ճանապարհը, վառվեց իբրև ճրագ...

Պարրոտի հայրը նշանավոր գիտնական էր և մեծ ազդեցութուն ուներ
Պետերբուրգում, հայտնի էր նույնիսկ Նիկոլայ կայսրին: Ուսումնական ճա-
նապարհորդի համար դժվար չէր Աբովյանցին Գորպատ տանելը: Ժողովրդա-
կան լուսավորութեան միջոցով հարգում է պրոֆեսորի խնդիրքը, և Աբով-
յանցին գանձարանից խոստացվում է, թե ճանապարհածախս մինչև Գորպատ
և թե երեք տարվա ապրուստի փող:

1830 թվականի ամառը Աբովյանցը ճանապարհվում է Պետերբուրգ, որ
այնտեղից անցնե Գորպատ: Բայց հեշտ էր մի այդպիսի գործ կատարելը:
Այն ժամանակների հաղորդակցութեան ճանապարհները այնպես էին, որ օտա-
րութուն գնացողը գերեզման գնացողի էր նմանվում: Մանավանդ հայ ժողո-
վուրդը երկար դարերի ընթացքում անհամար դառն փորձերով գիտեր, թե որ-
քան ավերիչ ու սգալի դժբախտութուն է պանդխտութունը, գիտեր, որ մեծ
մասամբ հեռանալը մոռանալ էր նշանակում: Հասկանալի է, որ Աբովյանցի
պանդխտութեան հակառակ պիտի լիներ ամենից առաջ նրա հայրական տունը:
Բայց կար և ուրիշ արգելք: Աբովյանցը սարկավազ էր և գտնվում էր էջմիած-
նի իշխանութեան տակ: Եվ իբրև կաթողիկոսը երկար ընդդիմանում էր այդ ճա-

նապարհորդութեանը գլխավորապես այն պատճառով, որ հավատացած էր թե Աբովյանցը գերմանացիների մեջ հավատափոխ կդառնա: Ահա ինչ էր հայոց եկեղեցու գլխի աշխարհայացքը: Եվ մենակ նա չէր այսպես: Նրանից հետո էլ, երկար ժամանակ, հայերի հին սերունդը խորշում էր Աբովյանցից և Նազարյանցից, որովհետև չէր հավատում, թե նրանք գերմանական միջավայրում ապրելուց, գերմանուհիների հետ ամուսնանալուց հետո կարող էին հայ մնալ...

Աբովյանցը, սակայն, հաղթեց այդ բոլոր արգելքները, անտես արավ ծնողական արտասուքները, ծերունի կաթողիկոսի հայրական խրատները, այնքան սաստիկ էր գիտություն ծարավը նրա մեջ:

Ի՞նչ էր անում այդ ժամանակ Նազարյանցը:

Պետերբուրգից 1830 թվի օգոստոսի 20-ին գրած մի նամակում Աբովյանցը խոսում է մի Ստեփանոսի մասին*, որին անվանում է իր սիրելին և մանկության բարեկամը: Արդյոք սա Նազարյանցն էր:— Հազիվ թե նա լիներ, քանի որ Աբովյանցի մանկության բարեկամ Ստեփանոսը, ինչպես երևում է, զինվորական դպրոցումն էր գտնվում, որովհետև Աբովյանցը գրում է. «Մառաշլովի կորպուսի իւրում ի Միխայելով զամիէն ոչ կարաց առ ժամայն ընկալնուլ զիս»: Մյուս կողմից էլ Լազարյան ճեմարանի աշակերտների ցուցակի մեջ մենք գտնում ենք «Ստեփան Նազարեանց» անունը**: Եթե ընդունենք, որ դպրոցը վերջացնելուց հետո Նազարյանցը գնացել էր Ռուսաստան, այն ժամանակ պետք է անել մի այլ ենթադրություն, որ Դորպատ գնալուց առաջ նա վերադարձել է Քիֆլիս՝ իր մորը տեսնելու համար, որովհետև նա շատ պարզ է ասում, թե Դորպատ ճանապարհով է Քիֆլիսից 1832-ին: Գուցե, ընդունելով այս ենթադրությունը, հասկանալի դառնան Նազարյանցի այս խոսքերը. «Բայց թե կրկին տեսություն ժամերը— մանավանդ երկարատև րացակայությունից յետոյ, որպիսի տարապայման շարժողությունը սովոր էին հարուցանել նորա (այսինքն մոր) մեջ, դժվար է ինձ նկարագրել»***:

Բայց ինչպե՞ս էր, որ Նազարյանցն էլ Դորպատ գնաց:

Մոսկվայի գերմանական պատուր Լաչնրիխ Վեոլերը, Նազարյանցի մտերիմ բարեկամներից մեկը, իր հիշողությունների մեջ**** ասում է, թե Ներսիսյան դպրոցում Նազարյանցին տեսավ նույն պրոֆեսոր Պարրոտը, որ խորհուրդ տվեց նրան գնալ Դորպատ: Որ Նազարյանցը կարող էր տեսած լինել Պարրոտին, մանավանդ Քիֆլիսի վրայով նրա Ռուսաստան վերադառնալու ժամանակ, հենց նույն Աբովյանցի հանձնարարությամբ, այդ անհավանական չէ կարող լինել. այդ տեսակցությունը կարող էր տեղի ունենալ նույնիսկ Ներսիսյան դպրոցում, ուր, երևի, հաճախ գնում էր Նազարյանցը: Բայց նրան Դորպատ տանողը իսկապես Աբովյանցն էր:

Աբովյանցի հիշատակարանի մեջ գրված է, որ 1832-ին նրա գերմանացի բարեկամներից մեկը, Շվեբա, խոսք է բաց անում հայերի մասին և ասում է Աբովյանցին. «Արդյոք ձեր հայերից չկա՞ մի ուրիշը, որ գա մեզ մոտ սովորելու. շատ ցանկալի է, որ դուք, իբրև մի նշանավոր հին ազգի ժառանգներ և ընդունակ ժողովուրդ, ավելի շատ թվով գալիք մեզ մոտ ուսանելու»: Աբովյանցը պատասխանում է. «Կա այդպիսի մեկը, Ստեփանոս անունով, որ նույնպես շատ սեր ունի սովորելու. անցյալ տարի շատ աշխատեցի բերել այստեղ,

բայց չկարողացա»: Գերմանացի հայասերը առաջարկում է Աբովյանցին գնալ Պետերբուրգ և միջնորդել այդ Ստեփանոսի համար, խոստանում է տալ ծախսերը: Բայց Աբովյանցը անհամար է համարում իր գնալը և խնդրում է, որ նա ինքը մի բան անե: Շվեբան, մինիստրի օգնության չդիմելու համար, խոստանում է իր սեփական միջոցներից հոգալ Ստեփանոսի ծախսերը:

Այստեղ արդեն Ստեփանոսը՝ Նազարյանցն է: Աբովյանցի և Նազարյանցի մեջ, ինչպես երևում է, մի բնկերական ուխտ կար՝ միասին բարձր ուսում ստանալու: Աբովյանցը տեղ հասնելուց հետո հենց առաջին տարին աշխատում է իր ընկերի համար և վերջիվերջո պատճառ է դառնում, որ Նազարյանցն էլ գնա Դորպատ*: Ինքը Նազարյանցն էլ, իհարկե աշխատում էր, և նրան օգնեց բժիշկ Սոլոմոն Տեր-Ղուկասյանցը, որ հանձն առավ հոգալ նրա ծախսերը**:

Հայրական տանից դուրս գնալիս՝ Նազարյանցի ոտներին էլ փաթաթվել են թանկագին, սիրելի արգելքները: Նրա հայր Տեր-Սուսային մեռած էր: Նահապետական ընտանիքի սրբազան օրենքն է, որ ժրագլուխ տանտիկինը իսկույն բռնում է վախճանված տանտիրոջ տեղը: Այդպես էր և Նազարյանցի մայրը: Նա իր շուրջն է հավաքում երեխաներին և նրանց մեջ պատկառանք և սեր է վառ պահում դեպի իրանց հոր հիշատակը, դեպի սրբազան օջախը: Ստեփանոսը, հրաժեշտ տալիս ականատես է լինում մի այսպիսի ցնցող տեսարանի: Մայրը վերջին բոպկին, համբուրելով իր որդուն, մերկացնում է իր ծիծը և գնելով դեղերի վրա, երզվեցնում է որդուն, որ նա շմոռանա իր որդիական պարտքը, շմոռանա իր մորը: Այդպիսի «ախտաբորբոք» սերը հատուկ է ասիացի մայրերին— ասում է Նազարյանցը: Այո, ճիշտ է: Եվ գուցե այդ բացառիկ հատկությունը ունի իր տեղական, եթե կարելի է ասել՝ ասիական պատճառը: Արևելքի մթնոլորտը— ընդհանրապես կոշտ ու հեղձուցիչ— մի կապարյա ծանրություն է մանավանդ կնոջ համար: Հայ կինը ավելի ևս ծանր պայմանների մեջ է ապրել. սուրբ, բռնությունը, պանդխտությունը դարերի ընթացքում խլում էին նրա որդիներին: Բնական է, որ ճնշված, անխոս տանը և դրսում ստրուկ ասիացի կնոջ մեջ մայրական սերը այդքան «ախտաբորբոք», այդքան ծայրահեղ զարգացած լինի...

II

«Նոր իմացական մկրտության ավագանը»: Առաջին կրթաբանը— գերմանական բնագավառի: Աբովյանցը իբրև նոր, կուլտուրական մարդ: Նագաբանցը համալսարանում: Գերմանական համալսարանը. նրա ազդեցությունը Ռուսաստանի վրա: Գրական և հասարակական բուռն հոսանքներ Գերմանիայում: Փիլիսոփայության կանդիդատը: Ինչպե՞ս մտնել կյանքի մեջ: Պատրաստություններ Պետերբուրգում: Աբովյանցը և Նագաբանցը տեղ շունին հայկական իրականության մեջ:

Խաչատուր Աբովյանցը մնաց Դորպատում մինչև 1836 թվականը: Արդեն 25—26 տարեկան երիտասարդ էր նա, երբ գնաց Դորպատ. և սակայն այդ

* Ն. Տեր-Կարապետյան— «Խաչատուր Աբովյան», Քիֆ., 1897, եր. 31:

** Մսեր Մազիստոս— «Յիշատակարան տոհմին Լազարեանց», Մ. 1856:

*** «Հիստորիա», 1864, № 5:

**** Զեռագիր, հատկապես գրված է մեզ համար պ. Ս. Շահազիզի խնդրանքով:

հասակում պետք էր սկսել մի նոր դպրոցական կրթություն: Ոչ հասակը, ոչ պատրաստությունը չէին թույլ տալիս նրան մտնել համալսարան, ընտրել մի որոշ մասնագիտություն: Դրա փոխարեն նա հիմնավոր կերպով սովորեց գերմաներենը, դասեր էր առնում Պարրոտից և նրա ընկերներից, հաճախում էր համալսարան, լսում էր դասախոսությունները իբրև ազատ ունկնդիր:

Դորպատից նա դուրս տարավ մի ընդհանուր կրթություն և, որ ամենագլխավորն է, հիմնավոր բարոյական դաստիարակություն, որոշ աշխարհայեցողություններ: Մտնելով գերմանական այդ փոքրիկ, բայց շատ նշանավոր քաղաքը իբրև մի ասիացի մարդ, էջմիածնի տիրացու, նա վեց տարվա ընթացքում այնքան շատ բան սովորեց և յուրացրեց, որ հայրենիք վերադառնալիս զգում էր, թե այլևս չէ կարող առաջվա նման լինել, ուստի առաջին գործն է դարձնում տիրացուությունից պաշտոնապես հրաժարվելը: Այդ վերածնությունը շատ գեղեցիկ կերպով պատկերացնում է Ստեփանոս Նազարյանցը, ասելով. «Կեցությունը, ուսումը և նկատողությունը Դորպատյան գիտուն և բարեմիտ մարդերի մեջ մի նոր իմացական ավազան դարձավ նորա հոգու համար, և վերստին ծնավ նորան»*:

Այդ պատկերավոր համեմատությունը շատ ճիշտ է: Դորպատը մի ավազան էր, բայց ոչ միայն Աբովյանցի համար: Այնտեղ մկրտվեց և ինքը Նազարյանցը. այնտեղ նույն հոգևոր մկրտությունն ընդունեցին և մի շարք հայ երիտասարդներ, որոնք մեր վերածնության արշալույսի երգիչները դարձան: Դորպատը ռուսահայերի բարերարն էր:

Նազարյանցը ավելի երկար մնաց Դորպատում, ավելի հիմնավոր կերպով ուսում ստացավ: Ութ տարի տևեց նրա դորպատյան կյանքը: Համալսարան մտնելու համար պետք էր երկար պատրաստվել, քննություն տալ: Եվ եթե մենք հիշենք, թե որքան խեղճ ու թեթև պաշարով էր նա գնացել Դորպատ, հասկանալի կլինի, թե ինչ հսկայական աշխատանք պիտի նա գործադրած լինի՝ համալսարանական ուսանողին անհրաժեշտ գիտական պատրաստությունը ձեռք բերելու համար:

Այդ պատրաստություններն այն օգուտն ունեցան, որ Նազարյանցի մկրտությունը իմացական ավազանում ավելի երկարատև էր: Կարծես ճակատագիրը դիտմամբ այնպես էր տնօրինել, որ հայերին առաջին անգամ եվրոպական լույս և անդադար առաջադիմություն քարոզող մարդը երկար մնայ այդ լույսի շրջաններում և կյանքի այնպիսի պայմանների մեջ, որոնք միանգամայն պարզ և շատ անհրաժեշտ պիտի դարձնեին նրա համար եվրոպական մտքի բարիքները: Այնքան համոզված, մոլեռանդ քարոզիչ դառնալու համար պետք էր մինչև ոսկորների ծուծը սողորվել եվրոպական գաղափարներով, վերածընվել անձամբ, կյանքի առաջին նպատակ դարձնել այն ամենը, ինչ առաջարկվում էր ուրիշներին: Նազարյանցը անդիր արած ճշմարտություններ չէր քարոզում. ինչ նա ասում էր, կարդացածից և լսածից չէր միայն վերցնում, այլ այն ամենից, ինչ ինքն էր անձամբ ընդունել:

Ահա որքան հրաշալի էր իմացական մկրտության նոր ավազանը: Մենք պետք է ներկա լինենք այդ մկրտությանը, պետք է տեսնենք, թե ինչպես էր կատարվում մեր առաջին գործիչների վերածնությունը: Դա մի սուրբ տեսարան է: Դժբախտաբար, շատ աղքատիկ են տեղեկությունները Նազարյանցի դորպատյան կյանքի մասին: Եվ մենք դարձյալ պիտի դիմենք Աբովյանցին:

Տեսնելով նրա կյանքը Դորպատում, մենք տեսած կլինենք և Նազարյանցի կյանքը: Երկու մտերիմ ընկերները, միևնույն հողի ծաղիկներ, միևնույն իրականության զավակներ, միևնույն երազներով ու տենչանքներով վառված, միատեսակ պիտի մկրտվեին այդ նոր անծանոթ միջավայրում, գիտության և քաղաքակրթության մաքուր ավազանի մեջ:

Իզուր չէ Նազարյանցը, խոսելով Աբովյանցի իմացական ավազանի մասին, նախ դնում կեցությունը Դորպատում և ապա միայն ուսումը, իբրև տարրեր, որոնցից կազմվեց այդ ավազանը: Մեր երիտասարդների առաջին կրթարանը այն միջավայրն էր, ուր նրանք ապրում էին— գերմանական ընտանիքը: Բավական չէ, որ մի տեղ լինի համալսարան. հարկավոր է, որ այդ տեղում լինեն և այնպիսի պայմաններ, որոնք համալսարանի հետ ձեռք ձեռքի տված տանում են երիտասարդությունը դեպի մարդկայնություն: Այդ կողմից դորպատյան այն շրջանը, որի մեջ ընկավ Աբովյանցը, ուղղակի հրաշագործ էր:

Պրոֆեսորները, նրանց ծանոթները Աբովյանցին ընդունում են գրկաբաց, մի հազվագյուտ սիրալիր բարեկամությամբ և մտերմությամբ: Նրան տալու են, հղկում են, ընտելացնում են քաղաքակրթված կյանքին, հոգ են տանում նրա մտավոր պիտույքների մասին, և այս ամենը այնպես բարեկամաբար, այնպիսի քաղցրությամբ, այնպիսի մայրական քնքշությամբ, որ հեռավոր երկրի ծնունդ անտաշ երիտասարդը ոչինչ անհարմարություն չէ զգում, ոչինչ վիրավորանք իր ինքնասիրության համար: Ընդհակառակն, նա մի առանձին սիրով, մի հափշտակությամբ է վերաբերվում իր ուսուցիչներին, ուզում է շատ բան տեսնել, իմանալ, լցվում է իր ասիականության կեղևը հանելու և նոր, լուսավոր կյանքի ամբողջ ոգին յուրացնելու տենչանքով: Անշուշտ, այստեղ դեր կատարողը միայն Աբովյանցին հատուկ ուշիմությունը չէ, ուսման, գիտության ծարավը չէ միայն: Կա և այն, որ նա այս օտար ազգի մեջ մի մարդ է, մարդու բոլոր սրբազան իրավունքներով: Նրա ծագումը, նրա ազգությունը, հայրենի ավանդություններն ու դավանանքները ոչ մի արգելք չեն, որ գերմանական ընտանիքը մտերմանա նրա հետ, մեծարելով նրա ազգը, նրա կրոնական հայացքները, նրա գաղափարները:

Հրաշալի է մանավանդ այն կրոնական համբերողությունը, որ նա հանդիպում է գերմանական կրթված ընտանիքի մեջ: Պարրոտի մոտ էր ճաշում Աբովյանցը, և նրա կինը պաս օրերում պասվա կերակուր էր պատրաստում Աբովյանցի համար: Այստեղ ապա մարմին և արյուն էր ստանում բարոյական այն ծանրակշիռ դասը, թե կրոնական խտրությունները կարող են և մի կողմ մնալ, երբ մարդիկ լցված են միմյանց հետ եղբայրաբար ապրելու ցանկությամբ: Միևնույն ժամանակ դա մի ահագին հաղթանակ էր, որ տանում էր լուսավորված միտքը, հափշտակելով և հնազանդության բերելով այնպիսի անկիրթ մտքերը, որոնք մեծացել էին նեղ աղանդավորական ֆանատիկոսության մեջ, որոնք սովոր էին հարազատ եղբորն անգամ ատել և հալածել, եթե նա տարբեր կրոնական հասկացողությունների է հետևում: Հարգելով և ամեն կերպ մեծարելով իր աշակերտի ներքին, նվիրական հասկացողությունները, պրոֆեսոր Պարրոտը հասկացնում էր նրան, որ բոլոր մարդիկ, իհարկե, իր նման չեն, և խրատում էր ծանոթությունների մեջ լինել ընտրող, ծանոթանալ անկեղծ, շիտակ մարդկանց հետ, երբեք չհեռանալ ազգային կրոնից, լավ իմանալով, որ բոլոր քրիստոնյաները, չնայած տարբեր դավանություններին, մի են:

* «Հիսթորիա», 1858, № 2, եր. 145:

Եվ, երևի, Աբովյանցիին հաջողվում էր հենց այդպիսի շիտակ և ազնիվ մարդկանց շրջանում ապրել ամբողջ ժամանակը. նրա գործատույան հիշողությունները դրախտի նման մի բան տեսած մարդու հափշտակությունն են հիշեցնում: Տեսնում է նա իր շուրջը ազատ կյանք, փոխադարձ սեր, համերաշխություն, և նրա գրչի ծայրից ինքն ըստ ինքեան մի համեմատություն է բղխում իր տգետ ազգի և այս կրթված ժողովրդի մեջ: «Տես, իմ քաղցր հայրենակից,— ասում է նա,— տես ինչպես պետք է վարվել, ինչպես են քաղցրաբարո գերմանացիները սիրում օտարականներին, տղամարդիկ և կանաչք առանց որևէ զանազանություն: Կարծում եմ, որ եթե պատահեր մեզ մի տգետ մարդ, ինչպես ես եմ, և մեր ազգը լիներ այս լուսավոր գերմանացիների տեղ, այն ժամանակ ոչ միայն չէր թողի նրան խառնվել իր հետ, այլև ծաղրի առարկա կդարձներ նրան»:

Ասիացի տղամարդի սիրտը կրթելու, նրա կոշտ բնավորությունը մեղմացնելու համար Պարրոտը մոտեցնում է Աբովյանցիին իր քենուն, օրիորդ Յուլիային: Աբովյանցը հասկանում է այդ խորհուրդը: «Իրավ,— ասում է նա,— սա միակ միջոցն է, որ եթե մեկը կամենում է մեղմացնել իր բարքը, որքան նա ծանոթություն և բարեկամություն մոտենա կանաչի սեպին, այնքան կկրթվի, կազնվանա նրա բարքը»: Այս խոստովանությունը գեղեցիկ է մի մարդու բերանում, որ ծնված ու սնված լինելով մի այնպիսի շրջանում, ուր կինը անխոս էակ է, մի իր, ճխլված-կամքից զուրկ մի արարած, հանկարծ ընկնում է մի այնպիսի աշխարհ, ուր կինը ազատ խոսում է, մտածում, ոգեվորում, ուր նրան էլ հասնում է բաժին ընդհանուր կրթությունից: Նա, որ իր հայրենի Երևանում, կանանց մեջ, պիտի համարվեր ամենագետ և ամենակարող լոկ այն պատճառով, որ տղամարդ էր, Դորպատում դասեր է առնում երկու գերմանացի օրիորդներից: Գեղեցիկ են սրանք. բայց այդ գեղեցկությունը ասիացի երիտասարդի մեջ ախտաբորբոք հակումներ չէ զարթեցնում, այլ մի խորին երախտագիտություն, մի սուրբ հիացմունք: Նա շնորհակալություն է մատուցանում իր ուսուցչուհիներին, բայց սրանք ասում են, թե աշակերտը իր երախտագիտությունը կարող է ցույց տալ ոչ թե այդպիսի շնորհակալություններով, այլ նրանով, որ իր ստացածը կտա իր խեղճ ազգին, որ անցյալում այնքան մեծ դեր կատարելուց հետո այժմ թաղված է տգիտության խավարի մեջ:

Հասկանալի է, թե ինչ ոգևորություն պիտի արծարծեին այսպիսի կանաչք Աբովյանցի սրտում: Եվ նա բացականում է. «Որքան կցանկար իմ սիրտը ունենալ մի իրավի սիրելի ամուսին գերմանուհի, որ իր ամուսնական կենցաղավարությամբ օրինակ դառնա մեր աշխարհի համար»: Բայց այստեղ այդ տենչանքին արգելք է հանդիսանում հայրենասիրական զգացմունքը, և նա ասում է, թե չի դավաճանի հայ ազգի: Այնուամենայնիվ, այդ բանաստեղծական զեղումը հաղթահարվում է, երբ նա վերադառնում է հայրենիք: Այդտեղ նա ամուսնանում է գերմանուհու հետ. ուրիշ կերպ չէր կարող լինել, Աբովյանցի հայուհիների մեջ չէր կարող ընտրել իր սրտի ընկերուհի: Այդպես էր և նազարյանցը:

Եվ այսպես, ամեն տեղ վերածնության գործ՝ թե ընտանիքում, թե դպրոցում: Հասարակական գործունեության համար առողջ և լուսավոր սկզբունքներ է ընդունում Աբովյանցը: Հիշենք ամենից առաջ այն, որ Աբովյանցի պրոֆեսորներից մեկը, Վալդեր, ներշնչում է նրան միտք՝ գործ ածել աշխարհաբար լեզուն և բացատրում է, թե որպիսի մեծ նշանակություն կունենար ժողո-

վրդի համար աշխարհաբար Աստվածաշունչը*: Պարրոտը միշտ խրատում էր նրան նվիրվել ժողովրդական կրթության գործին և շարունակ կրկնում էր «դպրոց, դպրոց հայ մանուկների համար»: Միևնույն ժամանակ, ատելով կրոնական երկպառակությունները, որոնք քանդում են մի ազգի տունը, լուսամիտ պրոֆեսորը, երևի դեռ էջմիածնից իմացած լինելով, որ Աբովյանցի իղբալն է Մխիթարյան միաբանությունը, խորհուրդ է տալիս նրան չհետևել Մխիթարի օրինակին, այսինքն՝ կրթական նպատակով չգիմել կրոնափոխություն: Առհասարակ, Պարրոտի դաստիարակչական սիստեմն էր՝ անձեռնմխելի պահելով իր աշակերտի կրոնական-ազգայնական առանձնահատկությունները, հաղորդակից անել նրան էվրոպական լուսավորության, հարուցանելով նրա մեջ սեր զեպի մտավոր վերածնություն, դեպի առաջադիմություն:

Այդ սիստեմը ամենից գովելին էր: Ոչինչ չկոտրելով, չոչնչացնելով աշակերտի սրտի հիմնական կազմի մեջ, նա դնում էր այդ սրտի մեջ սկզբունքներ, զարգացնում էր նրանց սիրով, թույլ տալով, որ ապագայում գործ կատարէ այդ սկզբունքներով զեկավարվող աշակերտը, որ իհարկե, կարող կլիներ հասկանալ իր ազգի պակասությունները և կսովորեր մտածել նրանց մասին: Թե որպիսի հայրական խնամքով էր պահում Պարրոտը իր ձեռքն ընկած այդ վայրենի ծաղիկը, երևում է նրանից, որ մի օր, փողոցով անցնելիս, նա տեսնում է օտարական մի արևելցու և կարծելով թե դա հայ է, հարց ու փորձ է անում, որպեսզի եթե ճշտվի նրա հայ լինելը, տանե նրան Աբովյանցի մոտ: Կավ գիտեր պրոֆեսորը, թե իր աշակերտին որպիսի հայրենասիրական կարոտ է այրում այս հեռավոր հյուսիսում և կամեցավ իր հարգանքը մատուցանել այդ սուրբ զգացմունքին, առիթ տալով, որ հայրենիքը երազողը տեսնե գոնե իր հայրենակցին: Օտարականը ճիշտ որ հայ էր, մի աղքատ պարսկաստանցի. Պարրոտը աբարավ նրան իր մոտ, ուր և Աբովյանցը սրտի կարոտն առավ, տեսնելով մի հայի, խոսելով նրա հետ:

Մենք պետք է երևակայենք, թե յուրաքանչյուր այդպիսի դեպք, յուրաքանչյուր խրատ և լայն մարդասիրական վարմունք որքան պիտի բարձրացնեին հայ կրակոտ երիտասարդի հոգին, որքան պիտի ազդեին նրա քնքույշ, տպավորվող սրտի վրա: Մենք պիտի երևակայենք ժամագրքի, Պղնձի քաղաքի պատմության, Յոթն իմաստասիրաց գրքի վրա ուղեղ մաշած երիտասարդին Գյոթեի և Շիլլեր կարդալիս, ըմբռնելիս: Բայց բացի Գյոթեից ու Շիլլերից, քանի քանի ուրիշ գեղեցիկ գրքեր կային: Նրան, այդ ուսումնածառավ մարդուն, տվել էին մտավոր գանձերի մեծ պահեստի բանալին,— գերմաներեն լեզուն: Նա արդեն հոգով կապված էր փիլիսոփաների և բանաստեղծների հայրենիքի հետ: Այնուհետև նա կարող էր ապրել այն աշխարհի մեջ, ուր նրան մտքերը կր բարերար գերմանացու ձեռքը: Նրան մնում էր աշխատել իր սեփական ուժերով:

1836 թվականին դորպատցի բարեկամները ճանապարհ էին դնում Աբովյանցիին զեպի հայրենիք: Ի՞նչ էր նա տանում իր հետ:

Նա մի հանձար չէր, մի տիտանական ուժ չէր, որ կարողանար ստեղ-

* Նշանավոր է, որ գերմանացիները մեղանում ոչ միայն քաղցրեցին կենդանի աշխարհաբարի անհրաժեշտությունը, այլև իրանք եղան առաջինը, որ իրականացրին այդ միտքը: 1820-ական թվականների կեսից Կովկասում հաստատված բազելյան միսիոնարները, Գիտրիխ և Զաբեմբա, հրատարակեցին մեր առաջին աշխարհաբար գրքերը, առաջին անգամ թարգմանելով ինչ Ավետարանը և ապաքելով լույսին Մոսկվայում, 1834-ին: Թյուրքիայում էլ բողոքական միսիոնարների էին, որ աշխարհաբարին մեծ զարկ տվին Ջմյուռնիայում տպագրած իրանց բազմաթիվ կրոնական գրքերով:

հոշակ վայելող գիտնականները պրոֆեսորներ էին (Պարրոտ, Արիս, Ստրուվե և ուրիշներ), այդտեղ պատրաստվեցան շատ անվանի պրոֆեսորներ ուսաց համալսարանների համար: Համալսարանի դրադարանը և ֆիզիկական կարի- նետը շատ հարուստ էին, իսկ երևանական թվականներին բացված աստղա- քաշխական դիտանոցը երկար ժամանակ առաջին տեղն էր գրավում Ռուսաս- տանի դիտանոցների մեջ:

Ուսանողները Դորպատում հին ավանդական կարգ ու կանոններին էին ենթարկված: Նրանք կազմում էին կորսուրացիներ, որոնք ներկայացնում էին ուսանողական մի տեսակ ինքնավարություն: Այդ ինքնավարությունն ունեւ հատուկ ընտրված դատարան, որ քննում էր ուսանողների վարքն ու բարքերը, դատում էր, դատապարտում էր, և ամենքը անպայման հնազանդվում էին նրա վճիռներին: Կորսուրացիների կանոնադրության առաջին պայմանն էր, որ ուսանողը շախտի դեպքի քաղաքական հարցերով, պահանջվում էր անրիծ ազնվություն, հարգանք դեպի կանայք, քաղաքավարություն ընկերների և կողմնակի մարդկանց հետ ունեցած հարաբերությունների մեջ: Գոյություն ունեւր և մենամարտը: Համալսարանը պահանջում էր ուսանողներից խիստ կարգապահություն:

Բավական չէ դնել ընթերցողի առաջ դորպատյան իմացական ավազանի այս արտաքին նկարագրությունը: Պետք է առանձնապես ուշադրություն դարձ- նել և այն ժամանակի վրա, երբ այդ ավազանը ընդունել էր իր մեջ հայ երի- տասարդներին: Դա մի շատ նշանավոր ժամանակ էր, որ մարդկային մտքի պատմության մեջ միշտ կպահպանեն իր թարմ, դեղեցիկ կերպարանքը: Մի ժամանակ էր դա, երբ Գերմանիայում սկսվեցին և զարմանալի աշողություն արաջ գնացին նոր մտավոր հոսանքներ, որոնք մի ամբողջ հեղափոխություն մտցրին գրականության և գիտության մեջ: Այդ նոր շարժումը մեծ ազդեցու- թյուն ունեցավ և Ռուսաստանի վրա: Բավական է ասել, որ ռուս երիտասար- գությունը, վերջացնելով համալսարանական ուսումը, պարտք էր համարում գնալ Գերմանիա՝ այնտեղի համալսարաններում սովորելու, կրթության պա- կասը լրացնելու համար: Նրեանական թվականներին, երբ գերմանական միտքը նոր ճանապարհներ էր հարթում, երբ հին սերունդը կովի դաշտը նոր սերուն- դին էր թողնում, Գերմանիայի համալսարանական կենտրոններում խմբված էր ռուս ուսանողություն, որ, իհարկե, ականատես էր զազափարական պայ- քարին, ընդունում և յուրացնում էր նոր սկզբունքներ, աշխարհայեցողություն- ներ: Այդ երիտասարդության վիճակված էր մի շատ նշանավոր դեր կատարել իր հայրենիքի մտավոր վերածնության գործում. նրա մեջ էր Տուրգենևը, ապա- դա հոշակավոր միսյագրողը, այնտեղ էր Գրանովսկին, ոչ պակաս նշանավոր պրոֆեսորը, որ առաջադեմ մտքերով ոգևորված մի ամբողջ համալսարանական սերունդ ստեղծեց:

Մենք էլ ունեցանք մեր փոքրիկ, համեստ բաժինը այդ վերանորոգչական շարժման մեջ: Եվ դա մեր նազարյանցն էր: Ճիշտ է, նա գերմանական հողի վրա չէր համալսարանական դասախոսություններ լսում, բայց Դորպատը Ռու- սաստանի հողի վրա, ինչպես տեսանք, գերմանական ուսման մի բեկորն էր պահպանում: Անկարելի է ենթադրել անգամ, որ ժամանակի ուժեղ զազափա- րական հոսանքները ոչինչ ազդեցություն արած չլինեն Դորպատի հայ ուսա- նողի վրա: Ընդհակառակն, նազարյանցի հրապարակախոսական գործունեու- թյան մեջ մենք շատ զոներ ենք գտնում, որոնք ուղղակի վերցված են Գերմա- նիայում երեսնական և քառասնական թվականներին տեղի ունեցած շարժու- մից: Ուստի շատ հարկավոր է, որ մենք իմանանք, թե ի՞նչ շարժում էր դա,

ի՞նչ մտքեր և ձգտումներ ունեւր, ի՞նչ պահանջների տեր էր: Նազարյանցը մեզանում մի նոր դարապլուխ է ստեղծել: Բայց նա իրանից չէ ստեղծել այդ դարապլուխը, նա հանդիսացել է միջնորդ, նա ունեւր մի մեծ դաստիարակ, որ նրան առաջնորդում էր:

Ո՞վ էր և ի՞նչ էր այդ դաստիարակը:

1830 թվականի հուլիսին անալիսկալ կերպով պայթեց Պարիզում հեղա- փոխություն, որ խորտակեց Կարլ X-ի գահը: Դա մի փոթորիկ էր, որ շար- ժումներ առաջացրեց նաև Ֆրանսիայից դուրս. հեղափոխությունն անցավ Բել- գիա, Գերմանիայի մի քանի տեղերում էլ ձողովրդական ապստամբություններ ծագեցին: Եվրոպայի քաղաքական գրությունն այնպես էր, որ հուլիսյան հե- ղափոխությունը բոլոր ազատամիտ շրջաններում ոգևորություն տարածեց: Գերմանական հոշակավոր բանաստեղծ Հայնեն ծովային լողարաններում էր գանվում, երբ ստացավ հեղափոխության լուրը, և ահա ինչ էր գրում նա. «Եվրոպայից ստացվեց լրագիրների մի հաստ ծրար՝ այրող, տոթային-ջերմ նորություններով: Դրանք արեգակի ճառագայթներ էին, փաթաթված թղթի մեջ, և այդ ճառագայթները իմ հոգու մեջ գոյացրին մի ամենավայրենի հըր- դեհ: Ինձ թվում էր, թե ես կարող եմ վառել ամբողջ օվկիանոսը մինչև հյու- սիսային բևեռ ոգևորության և խելացնոր ուրախության այն կրակով, որ բռ- ցավառված էր իմ մեջ: Ես խելագարի նման վազվում էի տան մեջ»:

Հասկանալի է այդ անզուսպ ուրախության պատճառը: Ֆրանսիական առա- ջին կամ մեծ հեղափոխությունը (1789—1793) հաշտարարել էր ամբողջ աշ- խարհին ազատության և հավասարության սկզբունքները: Նա դարձավ մի ահավոր սպանալիք միապետական կարգերի դեմ, ուստի Եվրոպան միացրեց իր ուժերը այդ սպանալիքի դեմ: Առաջացավ մի խավար ռեակցիա: Վիեննայի վեհաժողովը, երեք միապետների մեջ կազմված «սրբազան դաշնադրությունը», ավստրիական միսիստր Մետտերնիխի ստեղծած երկաթի սխտեմը ճնշում էին ազգերը, թույլ շտալով, որ նրանց մեջ ազատասիրական զազափարները արմատ բռնեն: Ճիշտ է, Սպանիայում, Իտալիայում և Հունաստանում տեղի ունեցան հեղափոխություններ, բայց դրանք մեծ հետևանքներ չառաջացրին Եվրոպայի համար և հանդիպեցին միախմբված «սրբազան դաշնադրության» արգելքներին. միայն Հունաստանն էր, որ առանձին բախտ ունեցավ:

Եվ ահա այդ միջոցներում Ֆրանսիան հուլիսյան հեղափոխության միջո- ցով հիշեցրեց աշխարհին 1789-ի ավանդությունները: Բայց հուլիսյան հեղա- փոխությունն էլ, որքան և հուզիչ էր Եվրոպայի համար, առաջացրեց քաղա- քական ճնշումներ, ավելի սաստկացրեց ռեակցիան: Այնուամենայնիվ, նա, իբրև ազատական մի շարժում, ազդեց ազգերի մտավոր գործունեության վրա և հաղորդեց նրան նոր գույն, նոր ուղի: Գերմանիայի մեջ հուլիսյան հեղափո- խության ազդեցության տակ սկսվեց արմատական ուղղություն ունեցող մի նոր գրական և գիտական շարժում: Հեղափոխությունը մի հարված էր, որ ունեցրեց այն ամենը, ինչին երկրպագում էր Գերմանիան. նա տապալեց նախկին կուռքերը և բարձր պատվանդանի վրա հաստատեց նոր պաշտամունք- ներ:

Մինչև երեսնական թվականները գերմանական գրականության մեջ տիրում էր մի ուղղություն, որ հայտնի է անվանաբար անունով: Ռոմանտիզմը իրա- կան կյանքից հեռու էր կանգնած, երկրպագում էր միջին դարերին, նրանց զազափարներին և կուլտուրական սկզբունքներին: Ներկան, ժամանակակից կյանքը իր հարցերով, իր խլրտումներով այդ գրական ուղղության տեսակե- տից չափազանց հասարակ, առօրյա բան էր, անարժան այնպիսի մարդկանց

ուշադրութեան, որոնք ապրում էին մտավոր բարձր շահերի համար: Գերմանիայում ուսման տեղը դարձավ մի սաստիկ հետադիմական ուղղութիւն, որ միանգամայն հաշտ ու համերաշխ էր քաղաքական դրութեան հետ: Իդեալացւում էր միջնադարյան քրիստոնեութիւնը, որ միացրել էր պետութիւնը, եկեղեցին, ժողովուրդը, գիտութիւնը, արվեստը և կյանքը: Ամեն ինչ, որ վերաբերում էր այդ միամիտ միջին դարերին, փառաբանվում էր. նույնիսկ կաթոլիկութիւնը, որի երկաթե ճանկերից գերմանացիների մի նշանավոր մասը ազատվել էր Լյութերի ջանքերով, անվանվում էր «կորցրած հայրենիք»: Անցածը կորուսյալը պաշտելը գերմանական գրականութեան միտքն ու հոգին դարձավ և երկար ժամանակ հեղեղում էր գրական ասպարեզը բազմաթիվ անկենդան, իրականութեան հետ ոչինչ կապ չունեցող գործերով*:

Գերմանիայի մեջ ամենից շատ հարգված և ծաղկած գիտութիւնը՝ փիլիսոփայութիւնը վերացական, իդեալիստական էր և եթե մի մի անգամ ամպերի բարձրութիւնից ցած էր իջնում՝ աշխարհային գործերով դրադվելու համար, այդ միայն այն մտքով էր, որ արդարացնէ շրջապատող իրականութիւնը: Եվ որովհետև շրջապատողը հետադիմական էր, խավար, ուստի փիլիսոփայութիւնը հետադիմութեան գործիք էր դարձել: Իրավագիտութեան մեջ տիրում էր «պատմական դպրոց» անունով հայտնի ուղղութիւնը, որ խիստ պահպանողականութիւն էր ուսուցանում: Եվ ահա այդ երեք գործոնների՝ ուսման տեղի, փիլիսոփայութեան և «պատմական դպրոցի» ազդեցութեան տակ գերմանական հասարակութիւնը քնածի պես էր, և միայն հուլիսյան հեղափոխութիւնը զարթեցրեց նրան:

Հեղափոխութիւնը բոլորովին անսպասելի էր գերմանացիների համար. նրանք կարծում էին, որ եվրոպական ամբողջ կյանքը մտել է մի անշարժութեան մեջ, որի առաջալսներն էին գրականութիւնը, գիտութիւնը: Բայց ահա հուլիսյան դեպքերը վերջ տվին այդ անշարժութեանը: Բնէ քաղաքական ճշմաները ավելի սաստկացան, բայց նրանք անկարող եղան կանգնեցնել նոր հոսանքները, որոնք միանգամայն հակառակ էին մինչև այդ տիրող մտքերին: Գրականութեան մեջ գլուխ բարձրացրեց այն ուղղութիւնը, որ հայտնի է «Երիտասարդ Գերմանիա» անունով. հռչակավոր պրոֆեսոր Հեգելի փիլիսոփայական դպրոցում հերձված տեղի ունեցավ, առաջ եկավ «Երիտասարդ Հեգելյաններին» կուսակցութիւնը**։ «Երիտասարդ» անունը, որ իրացրել էին գրական և գիտական նոր ուղղութիւնները, ինքնուտինքյան բնորոշում է, թե ինչ էին դրանք:

«Գրական Երիտասարդ Գերմանիա» ուղղութեան նախահայրերն էին երկու տաղանդավոր հրեաներ՝ Լյուդվիգ Բյոռնեն և Հենրիխ Հայնեն: Բյոռնենն դեռ 1819 թվականից էր սկսել իր հրապարակախոսական գործունեութիւնը: Իսկ մի կրակոտ տաղանդ էր, որ անդադար քարոզում էր վերածնութիւնը, ազատութիւնը: Նրա հանճարեղ գրչից թույն էր կաթում, նա ծաղրում էր գերմանացիների պակասութիւնները, անողորմ կերպով մերկացնում և մտրակում էր գերմանական կառավարիչների բթամտութիւնը, անշարժութիւնը: Այդ սարսափելի կծու, ոչնչացնող ծաղրը կրնում էր նրա յուրաքանչյուր գրվածքի մեջ. դրաքննական խստութիւնները ահագին խռընդոտներ էին հարուցանում նրա

դեմ, բայց նա կարողանում էր անցկացնել իր մտքերը գրական ըննադատութիւնների մեջ:

Բյոռնեն միակողմանիութեան հասնող քաղաքական և հասարակական գործիչ էր, անտես էր անում գեղարվեստի պահանջները կամ երկրորդական նշանակութիւնը էր տալիս նրանց: Եվ այդ կողմից նրա հակապատկերն էր Հայնեն: Սա որքան մեծ երգիծաբան էր, այնքան էլ մեծ բանաստեղծ էր և իր քաղաքական գործունեութեան մեջ հաճախ ենթարկվում էր գեղադեպի ոգևորութեան, մի բան, որ հաշտատուն կուսակցական ուղղութիւն չէր թույլ տալիս, հարկադրում էր հակասութիւնների մեջ ընկնել: Շիտակ, անընկճելի Բյոռնեի և բանաստեղծ Հայնեի մեջ այս պատճառով սառնութիւն առաջացավ, որ վերջերս փոխվեց նույնիսկ թշնամութեան: Հայնեն, որ տաղանդով անհամեմատ բարձր էր Բյոռնեից, նույնպես գործում էր թույնով և մտրակով. նրա նման կծու, անողորմ երգիծաբան աշխարհը չէ տեսել վերջին դարում:

Հենց որ տեղի ունեցավ հուլիսյան հեղափոխութիւնը, Բյոռնեն շտապեց գնալ Պարիզ: Քիչ հետո նրա օրինակին հետևեց և Հայնեն: Շուտով Գերմանիայում հրատարակվեցան Բյոռնեի հռչակավոր «Պարիզյան նամակները»: Տպավորութիւնը ահագին էր: Գերմանիան հափշտակութեամբ կարդում էր այդ հիանալի նամակները, որոնց մեջ Բյոռնեն գրել էր իր հուժկու տաղանդի ամբողջ ուժը, ամբողջ կրակը: Գերմանական իրականութիւնը անողորմ ծաղրի և խայտառակութեան ենթարկելով, Բյոռնեն բարձրացնում էր, պաշտում ֆրանսիական գաղափարները: «Երիտասարդ Գերմանիան» ֆրանսիական գործիչների դպրոցից էր քաղում իր ոգևորութիւնը, եռանդը: Իբրև վերածնութեան մոլեռանդ քարոզիչ, Բյոռնեն պախարակում էր ծուլութիւնը, հետամնացութիւնը, տգիտութիւնը, ազգային սնապարծութիւնը: Առաջադիմութիւնը նա հասկանում էր իբրև հանրամարդկային մի գործ և ընդհանուր եղբայրութեան, ընդհանուր ազատասիրութեան կոչ էր անում:

Գերմանական կառավարութիւնները, սաստիկ վախենալով այն ահագին հաջողութեանից, որ ունեցան «Պարիզյան նամակները», արգելեց այդ գիրքը: Իսկ պահպանողականները սկսեցին աղմուկ հարուցանել Բյոռնեի դեմ: Այնուամենայնիվ, երբ Բյոռնեն 1832-ին գնաց Գերմանիա, նրան ընդունեցին ամենաջերմ ոգևորութեամբ և համակրական մեծ ցույցերով: Այդ ընդունելութիւնը հարկադրեց նրան շարունակել իր նամակները, առաջվա պես թափելով նրանց մեջ իր սրախ ազնիվ հուզմունքները:

Բյոռնեի քաղաքական դավանանքների հիմնաքարը, ինչպես ասացինք, հանրամարդկային բարօրութիւնն էր: Բայց նա իր հայրենիքի հարազատ, սիրող զավակն էր և ուզում էր տեսնել այդ հայրենիքը առաջավոր, ազատ հոսանքների գլուխն անցած, սրբված իր հին կեղտերից, տոգորված մարդկութեան, արդարութեան և ազատութեան ոգով: Եվրոպայում սկսված ազգայնական շարժումները շունչին համամարդկային բարօրութեան նպատակ լայն ու մեծ հասկացողութիւններ, ընդհակառակն, թթու ազգասիրութիւնը, շովինիզմը, ստեղծել էր ցեղային նախապաշարմունքներ: Ամեն մի ազգ կարծում էր, թե ինքն է երկնքի ընտրյալը, ամենից լավը, հետևաբար ինքն է միայն, որ արժանի է աշխարհի բարիքները վայելելու: Բյոռնեն այդ տեսակ ազգային կուրուքի անխնա հակառակորդն էր. շովինիզմը, անկասկած, մեծ հետադիմական մի գործ, ատելի էր նրան, քանի որ չէր թույլ տալիս ազգերի միաբան առաջադիմութիւն, այլ, ընդհակառակն, մեջ էր բերում փոխադարձ կույր ատելութիւն, նախանձ, մրցութիւն:

* Шерр — «История Всеобщ. литературы», Спб., 1880, т. II, стр. 262—263.

** Кареев — «История Западной Европы в новое время», т. V, стр. XV.

Իդեալ դարձնելով քաղաքական աղատությունը ռամկավարական ձևերի մեջ, Բյուրենն համակրություն էր վերաբերում քրիստոնեության, որի հիմքն էր եղբայրասիրությունը: Քրիստոնեությունը նա համարում էր գեմոկրատիայի և մարդասիրության կրոն, հասարակ ժողովրդի կրոն: Թեև դավանական տեսակետից նա հավատացող մարդ չէր, բայց և այնպես, չէր համակրում քրիստոնեությունը մերժողներին: Իր կյանքի վերջին տարիներում Բյուրենն գրեց «Ֆրանսական Մենցել» անունով նշանավոր պատասխանը, որի մեջ իրան հատուկ սրամտությամբ, իր սրտի ամբողջ կրակով պաշտպանում էր «Երիտասարդ Գերմանիան» խավարապաշտ ազգամոլության և պահպանողական ազմուկների դեմ: Մենցելն այդ բանակի բնորոշ ներկայացուցիչներից մեկն էր: Սկզբում ազատամիտ գրող, Մենցելն անցավ հետադեմների բանակը և մի խիստ, անաղնիվ արշավանք սկսեց մանավանդ Բյուրենի դեմ, ծաղրելով նրա հրեական ծագումը: Շատ հետաքրքրական են մեզ համար այդ բանակովի մի քանի կետերը: Բյուրենն և նրա հետևողները ծաղրում էին այն ճահալի հանդարտությունը, որի մեջ թաղված էր գերմանական ժողովուրդը, այն քունը, որի մեջ անշարժացած էր հասարակությունը: Մենցելը դրա դեմ պատասխանում էր. «Այժմյան հանգստությունը լիապես համապատասխանում է գերմանական բնավորությանը, գերմանացիները լիապես բավական են նրանով: Բյուրենն այդ դրությունը քուն է անվանում, թող այդպես լինի, բայց դա մի առողջ քուն է, և երանի նրան, ով քնում է հանգիստ»: Այսպիսի դատողությունների վրա հույս դնել չէր կարելի և Մենցելն ավելի կտրուկ միջոցի էր դիմում՝ մատնության: Այսպես, նա ասում էր, թե «Երիտասարդ Գերմանիան» աշխատում է ոչնչացնել քրիստոնեությունը և միապետությունը, վերացնել ամուսնությունը, ընտանիքը, անբարոյականացնել հասարակությունը և այդպիսով քայքայել ու ոչնչացնել ամեն ինչ:

Բյուրենից էլ խիստ ու անողոր էր իր ծաղրի մեջ բանաստեղծ Հայնեն: Կրակ ու փրփրած թույն էր նրա գրիչը, և նա ոչինչ չէր խնայում ջարդելու, ոչնչացնելու համար: Ռոմանտիզմի հոգեհան հրեշտակը դարձավ նա: Նա էր, որ ցույց տվեց հին պաշտոնական աշխարհի ամբողջ սնանկությունը և զարթեցրեց ձգտումը դեպի նորը, ազատությունը: Նոր ժամանակի մարգարեն էր նա, գինված շանթերով, թույնով, սլաքներով: Պահպանողականությունը իր վայնասունով, իր մատնություններով հասավ իր նպատակին. գերմանական կառավարությունների դաշնակցությունը 1835-ին մի որոշում հրատարակեց, որով հրավիրում էր բոլոր գերմանական կառավարությունները քրեական օրենքներով, արգելքներով, ոստիկանական միջոցներով հալածել «Երիտասարդ Գերմանիայի» գրվածքները հրատարակողներին և տարածողներին: Բայց այդ միջոցը միայն գրգռեց նրանց, որոնց դեմ ուղղված էր: Բանտերը, աքսորը անողոր էին. արմատական ուղղությունը գերակշռող հանդիսացավ և տարավ իր հաղթանակը մինչև հիսունական թվականները:

Գրական թարմ, վերանորոգող հոսանքին միացավ և գերմանական փիլիսոփայությունը, որ կամաց կամաց սկսեց հրաժարվել վերացական մետաֆիզիկայից ու մոտենալ իրական կյանքին, սկսեց հետաքրքրվել ոչ միայն բարձրաթիշ դատողություններով, այլև օրվա քաղաքական հարցերով: Հեգելի մահից (1831) հետո, նրա բազմաթիվ աշակերտները կուսակցությունների բաժանվեցին. «ճախակողմյան» կամ «երիտասարդ» հեգելյան կողմնակիցները միացան գրականության մեջ գործող արմատական կուսակցության հետ, իսկ «աջակողմյանները», ընդհակառակն, պահպանողական հայացքների էին հետևում: Զախակողմյանների մեջ շուտով փիլիսոփայությունը հիմնվեց պատ-

մական կրիտիկայի վրա. Դավիթ Շտրաուսը գրեց «Հիսուսի կյանքը», որի մեջ կրոնական հասկացողությունները ենթարկեց գիտական կրիտիկայի: Հին և նոր աշխարհայեցողությունների ընդհարումը, կոիվը նոր գաղափարների և անցած գնացած համոզմունքների մեջ՝ մի կենդանի հետաքրքրություն ծնեցրեց: Գերմանական բանաստեղծությունը նոր ոգու թարգման հանդիսացավ և ժողովրդականացրեց այն հայացքները, որ փիլիսոփայության արմատական ուղղություն էր քարոզում:

Այս մտավոր եռանդուն շարժումը, որ մենք նկարագրեցինք ընդհանուր դեկրով, անշուշտ արձագանք էր գտնում և Դորպատում իբրև մի ուսումնական կենտրոնում, որ ամեն ինչ ստանում էր Գերմանիայից: Ստեփանոս Նազարյանցը իր բաժինը վերցրեց այդ շարժումից: Սա անկասկած է: Առանց սրան չէ կարելի գաղափարական անվախ մարտնչող նազարյանց երևակայել: Որքան նմանություններ պիտի գտնենք նրա գործունեության և «Երիտասարդ Գերմանիայի» ուղղության մեջ: Որքան նման է նրա կոիվը հայկական պահպանողականության դեմ՝ այն կուլին, որ տեղի ունեցր Գերմանիայում նրա ուսանողության ժամանակ...

Նա ընտրեց այնպիսի ֆակուլտետ, ուր ամենից շատ պիտի նկատվեր գրականության, մտավոր շարժման ուժը. դա պատմության և լեզվագիտության բաժանմունքն էր:

Իր մեղմ բնավորությամբ և զարմանալի աշխատասիրությամբ նազարյանցը սիրելի էր դարձել իր ընկերակիցներին և նույնիսկ համալսարանի ռեկտորին: Ռեկտորը և նրա կինը եղել են նրա համար այն, ինչ էին Պարրոտը և նրա կինը Աբովյանցի համար: Շաբաթվա որոշ երեկոները ռեկտորի տանը լինում էին հանդեսներ, բայց «այդ հանդեսների խորհուրդը ոչ կերուխում էր, և ոչ թղթախաղ, այլ մատենագրական և գրասիրական զրույցներ»*: Այդ գրական երեկույթներում, ինչ ասել կուզեք, արժարժվում էին և քննվում այն գրական հարցերը, որոնք այդ ժամանակ հուզում էին գերմանական միտքը: Մի այնպիսի հմուտ ղեկավար, ինչպիսին էր առաջնակարգ համալսարանի զլխավորը, իհարկե ավելի մեծ հետաքրքրություն և ավելի հանդարտ ու անկողմնապահ լուսաբանություն պիտի հաղորդեր հարցերին ու վեճերին: Գուցե հենց այս է պատճառը, որ նազարյանցը կատարելապես նոր ուղղությունը չյուրացրեց. ուսմանտիկ ուղղության շատ հետքեր էլ մնացին նրա մեջ, բայց այդ հետքերը այնքան ուժեղ չէին, որ թույլ չտային նրան հաստատ քայլերով գնալ նոր ուղղության ճանապարհով: Դա անցողական շրջանի մի մարդ էր. ուսմանտիկ և ռեալական ուղղությունների մեջ էր կանգնած, բայց ավելի հակված դեպի վերջինը, ավելի վերջինի առաքյալ, քան առաջինի:

Նազարյանցը աղքատ ուսանող էր, ապրում էր մի աղքատ գերմանուհուց վարձած մի սենյակում և պիտի բավականանար այն փոքրիկ թոշակով, որ տալիս էր նրա բարերարը: Գտնվում էին, սակայն, բարեսեր մարդիկ, որոնք օգնում էին չբավոր հայ ուսանողին. այսպես, մի անհայտ բարեգործ դորպատցի հաճախ ուղարկում էր նրան փող և սպիտակեղեն: Նշանավոր է, որ նազարյանցի բարերարների թվում էր և ժողովրդական լուսավորության միսիստր կոմս Ուվարովը: Համալսարանի ռեկտորը գրել էր նրան աշխատասեր, հուսատու հայ ուսանողի մասին, և կոմսը երեք անգամում ուղարկեց նրան 350 ռուբլի ինքնագիր նամակներով: Իսկ երբ մի անգամ գնաց Դորպատ, հիշեց նազարյանցին և հարցրեց ռեկտորից. «Ո՞ր է ձեր սեաշյա նազարյանցը, որի

* «Հրատար. Չայն», էր. 10:

մասին գրել էիք: Եվ երբ ունկտորը ներկայացնում է նազարյանցին, մինիստրը
ասում է նրան. «Բարեկամս, դու պիտի լինես Արեւիկի լուսավորիչը»:

Դորպատում նազարյանցը վերջացրեց իր ուսումը 1840 թվականին: Բայց
«Դորպատյան բարեմիտ մարզերի» շրջանից չկարվեց նա, երբ պիտի հետա-
նար իրան հյուրընկալած քաղաքից՝ կյանքի մեջ տեղ բռնելու համար: Այդտեղ
նա նշանվեց մի գերմանացի օրիորդի հետ, ապա դնաց Պետերբուրգ, ուր մնաց
երկար և վերագարձավ նորից Դորպատ՝ ամուսնանալու համար: Ամուսնացել
է, ինչպես երևում է, 1842-ին:

Այժմ սկսվում է մի նոր հարց: Դորպատը պատրաստել էր երկու հայ երի-
տասարդ, որոնք լցված էին գործելու եռանդով: Բայց արդյոք հայկական իրա-
կանությունը սպասում էր նրանց, կարո՞ղ էր տեղ տալ նրանց իր ծոցում:

Պատասխանը բացասական է:

Գլուխ երրորդ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ (1843—1858)

I

Ի՞նչ էր սպասում ուսում առած երիտասարդներին: Արովյանցի իղձեր-
ևրա նամակը Հովհաննես կարողիկոսին: Ինչպե՞ս քնդունեցին ևրան հայրե-
նիքում. խավարամիտ ֆանատիկոսություն: Նազարյանցը Պետերբուրգում. ևս
տեղ չէ գտնում: Արևելյան լեզուների ուսումնասիրություն: Պաշտոն կազմելի
համալսարանում: Ցանկություն գործելու հայերի մեջ. դիմումն ներսե սկա-
րողիկոսին: Առաջին մատենագրական փորձեր:

Եվրոպական կրթության տաճարը, եվրոպացի մարդկանց ընտանեկան և
հասարակական կարգերը, համարակերպ առաջին հայ երիտասարդներին, եր-
ջանկություն ճաշակել տալով նրանց, ներշնչեցին նրանց մեջ սեր և եռանդ և
միևնույն ժամանակ մի վեհ և բարեբար զգացմունք արմատացրին նրանց հո-
գու մեջ՝ անբավականություն հայրենի իրականությունից: Դորպատը մի պայ-
ծառ ու լուսատու բարձրություն էր, որի գագաթից պարզ երևում էր խավա-
րում նստած հայ ազգի ամբողջ դժբախտությունը: Անհրապույթ, ողբալի տե-
սարան: Բայց նա չէ վախեցնում մեր երիտասարդներին, հուսահատություն չէ
պատճառում նրանց: Գիտեն այդ երիտասարդները, որ ճարը գտնված է: Հի-
վանդությունը անբուժելի չէ: Գիտեն նրանք և մի ավելի խրատուսիչ բան. գի-
տեն, որ իրանց կհավատան, որ իրանց սպասում են և պիտի հարցնեն. թե
ինչպես պետք է բժշկվեն: Եվ բժշկության միջոցը լավ հայտնի է, բավական է
լինել Դորպատում, աշակերտել, սովորել, յուրացնել:

Դա մի հպարտ, երիտասարդական ինքնավստահություն է: 1832 թվակա-
նին Արովյանցը մի երկար նամակ է գրում նոր կաթողիկոսացած Հովհաննես
կարբեցուն: Այդ նամակի մեջ Արովյանցը, իր անհուն հայրենասիրական զե-
ղումները թափելով, իր ուրախությունն է հայտնում կաթողիկոսի գահակա-
լության առիթով, ամենախոնարհ որդիական զգացմունքներ է հուշանում նրան
և միևնույն ժամանակ պարտք է համարում դարձնել նրա ուղադրությունը այն
խավարի վրա, որ պատել էր հայերին: Շատ մեծ էր խեղճ երիտասարդի վիշ-

տը. նա տեսնում էր, որ իր շուրջը աշխատում են բոլոր ազգերը, ուսման և
գիտության ետեք են ընկել, և միայն հայ ազգն է, որ ընկղմված է խոր
թմրության և անշարժության մեջ: Թողնելով եվրոպական ազգերը, Արով-
յանցը ցույց է տալիս օրինակներ հայերին ավելի մտալի ազգերից: Թուրքաց
սուլթանը, ապում է նա, իր անձը դրել է իր վայրենացած ազգը լուսավորելու
համար. և ավելացնում է. «Երպիսի՞ նահատակություն»: Եգիպտոսի փաշան,
բացի իր երկրում բազմատեսակ բարեկարգություններ մտցնելուց, Պարիզ
ուղարկեց 40 արաբացի երեխաներ՝ ուսում և գիտություն սովորելու. որպիսի
ազնիվ ձեռնարկություն: Սերբիայի իշխանը, որ նոր ազատեց իր ազգը թուր-
քերի ծառայությունից, նույնպես երեխաներ ուղարկեց Եվրոպա: «Մե՞նք միայն
չպիտի հետեւենք այս բանին,— հարցնում է Արովյանցը:— Մե՞նք պիտի միշտ
նայենք մեր ազգի վատաբախտության և մերժենք նրան մեր օգնությունը...:
Լուսավորությունից է կանգնում մի ազգ, լուսավորությունից են դուրս դալիս
ամեն բարեկարգություններ, լուսավորությամբ է հաստատվում հպատակների
կապը իրանց իշխանավորների հետ, սեր դեպի հայրենիք, սեր դեպի բարե-
կամները, հնազանդություն կայսրին, երախտագիտություն դեպի երախտա-
վորները, հայրենիքի պաշտպանություն»: Եվ վշտալի երիտասարդը երեսի
վրա ընկած՝ աղաչում-սլաղատում է կաթողիկոսին վերացնել ագիտության լա-
վարը:

Սրանք երիտասարդական ցնորքներ էին, որոնք ցնդվեցին օդի մեջ, հենց
որ Արովյանցը ոտք դրեց հայրենի հողի վրա: 1836-ին նա, ազնիվ իղձերով
և սուրբ հավատով չի, ներկայանում էր Հովհաննես կաթողիկոսին: Հայտնի
է, որ այս հոգևորականը ներկայացնում է փառամուլ, կարճամիտ կղերականի
ամենաթանձր տիպերից մեկը: Արովյանցին նա հանդիպեց «հավատից հե-
ռացած» խոսքերով և ասաց. «Դու լավ կարող ես խմորել անմեղներին միտքը,
իսկ կրթել նրանց՝ թո գործը չէ»: Արովյանցը ուզում էր կատարել իր ուխտը,
որ տվել էր նախքան Դորպատ գնալը. ուզում էր կուսակրոն քահանա դառնալ
և նվիրվել կրթական գործին: Սակայն մոլեռանդ կղերք բացի ի բաց մերժեց
նրան: Արովյանցը տարի ու կես մնաց Թիֆլիսում՝ օրական հացի կարոտ:
Նրան առաջարկում էին պետական ծառայություն, բայց նա դեռ հույս ուներ
իր ազգին ծառայելու: Բարձրաստիճան պաշտոնյաներ միջնորդեցին, խնդրե-
ցին նրա համար, բայց իզուր. գերմանական ուսում ստանալը, գերմանական
ընտանիք սիրելն ու հարգելը ամենայն հայտը կաթողիկոսի աչքում լյուծե-
րական դառնալ էր համարվում. իսկ դա նշանակում էր լինել դավաճան, վատ
հայ: Այդքան վիրավորական կերպով դուրս վաճառվելով այն շրջանից, որ պիտի
ընդուներ, հասկանար մի ուսումնական երիտասարդին, Արովյանցը վերջիվեր-
ջո հարկադրված եղավ մտնել պետական ծառայության մեջ և ստանձնեց
Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի պաշտոնը: Այդ քայլը նա ստիպված էր
անել շքավորությունից, ինչպես ինքն է խոստովանում: 1839-ին ազատվելով
հոգևոր կոչումից, նա ամուսնացավ գերմանուհու հետ և այդպիսով բոլորովին
կտրվեց հայ եկեղեցականներից: Բայց առանց կղերի աշակցության էլ նա կա-
րողացավ նվիրվել հայ երեխաների կրթության, բաց անելով գիշերօթիկ դըպ-
րոց, ուր աշակերտները, ինչպես վկայում է գերմանացի ճանապարհորդ Վալ-
ները, գեղեցիկ կարգում էին Գյոթեն ու Շիլլերը:

Այդ տխուր դրությունն էր կանգնած և նազարյանցի առաջ, երբ նա փի-
լիսոփայական գիտությունների կանդիդատի դիպլոմը ծոցում ուզում էր ստ-
պարել գտնել իր համար: Նրա ձգտումն էր ուսուցչության պաշտոն ստանալ,
բայց ո՞ր: Արովյանցի օրինակը նրան, իհարկե, պիտի լավ խրատեր: Միակ

հայ դպրոցը Կովկասում ներսիսյան ուսումնարանն էր, որ 1837-ի Պոլտոսկիի հիման վրա անվանվում էր սեմինարիա, բայց նա էլ դառնում էր շատ ողորմելի դրություն մեջ: Հովհաննես Կարբեցին, իբրև ներսեսի թշնամի, աշխատում էր խլել դպրոցի կալվածները. բացի դրանից դպրոցը, նրա ծրագրով, միմիայն հողերականների զավակների համար պիտի գոյություն ունենար: Կովկասի մասին նազարյանցը չէր էլ կարող մտածել, գոնե մի այդպիսի կաթողիկոսի ժամանակ: Մնում էր կաղարյան ճեմարանը:

Գորպատից նազարյանցը գնաց Պետերբուրգ, ուր մնաց երկու տարի: Ի՞նչ էր անում այդտեղ:— Պաստոր Վյուրերն ասում է, թե նա ուսումնասիրում էր արևելյան լեզուները: Դա շատ հավանական է: Միևնույն ժամանակ նազարյանցը աշխատում էր տեղ ստանալ կաղարյան ճեմարանում: Պետերբուրգում էր ապրում ճեմարանի հոգաբարձուն՝ Հովակիմ կաղարյանի որդի Հովհաննեսը: Նրան դիմեց նազարյանցը: կաղարյան ճեմարանի թղթերում պահվել են նազարյանցի երկու գրաբար ուսանավորները, որոնք գրված են «Պետրոսաշեն (Պետերբուրգ) քաղաքում» 1841 թվականի մարտի 30-ին և ապրիլի 19-ին*: Դրանք ներբողներ են, նվիրված կաղարյան տոհմին (երկրորդը հատկապես Հովհաննես կաղարյանին): Մարտի 30-ի ուսանավորը գրված է զատկի առիթով. երևում է, որ նազարյանցը գնացել էր շնորհավորելու կաղարյանների զատիկը և, ինչպես սովորություն էր, մատուցեց նրանց այդ ուսանավոր ուղերձը: Ահա, ի միջի այլոց, ինչ էր ասում նազարյանցը այդտեղ.

Թէ ոմն Հայս արժանաւոր անմահութեան
Ստոյգ արդեամբք, ընտիր զահիւք ի շահ ազգի
Այդ վեհ մատուց քաջ վայել է ո՞ր այլ անուան,
Թէ ոչ Ձերում, Տեարք կաղարեան, շքեղ տոհմի:

Ուրախ լերուք, ուրախ լերուք, զՁեզ Աստուած
Կոչեաց լինել փառք եւ պարծանք Հայաստանի,
Այն Մոսկովիան Աթէնք Հայոց որո՞յ ստեղծուած,
Այո մտաց, սրախ ձերոյ ազգաբարի...

Մյուս ուսանավորը չգիտենք ինչ առիթով է գրված և նվիրված: Բայց մեզ համար հետաքրքրականն այն է, որ այդտեղ նազարյանցը վկայում է, որ շատ բարիքներ է վայելել կաղարյան ընտանիքից:

Մի՛ տարազեպ թուեսցին Քեզ ազգի պաշտպան
Շնորհաճանաչ սրտի զեղմունք, նուազ արդար.
Քանի՛ արդեն առատ բարիք աղբերացան
Ցիս բազաւորս Քո լընտանեաց գերամեծար:

Ձքեզ այսօր դովեմ երգեմ,
Իմ Յովհաննէս աստեղաղարդ,
Կեցցե՛ս Դու լոյս Հայոց մաղթեմ
Կեցցես անշէջ, փայլե՛լ զուարթ:

Բայց այս ներբողները հետևանք չունեցան: Հովհաննես կաղարյանը չկամեցավ կամ չկարողացավ պաշտոն տալ նազարյանցին ճեմարանում: Ո՞ր գնալ: Ժողովրդական լուսավորության միջնատրը չգիտեր, թե ուր տեղավորեր նրիտասարդին: Չկարողանալով գտնել մի հարմար պաշտոն, նազարյանցը

* Այս ուսանավորները և մի քանի այլ թղթեր կաղարյան ճեմարանի արխիվից արտագրել է և ողարկել է մեզ ճեմարանի ուսուցիչ պ. ի. Հովհաննիսյանը:

մատնվեց հուսահատության և անց էր կացնում Պետերբուրգում «սև և անիծյալ» օրեր*:

Վերջապես, միևնույն կարողանում է մի տեղ գտնել կամ, ավելի ճիշտ ասած, ստեղծել նազարյանցի համար: Կաղանի համալսարանում բացվում են հայերենի դասեր, և նազարյանցը ստանձնում է դասատուի պաշտոնը՝ 2300 ռուբլի ուճիկով: 1843 թվականի սկզբում մենք տեսնում ենք նրան Կաղանում: Նրա աշակերտներն են ընդամենը չորս հոգի. երկու ուս համալսարանում և երկու երեխա առաջին դիմնադիայում: Դրանց համար նա կազմում է քերականություն և բերել է տալիս վեներտիկում տպված հայերեն գրքեր, որոնց համար համալսարանը տվեց նրան 410 ռուբլի թղթադրամ:

Սկզբում կյանքը Կաղանի նման մի ետ ընկած քաղաքում շատ ծանր էր նազարյանցի համար: Իր մի նամակի մեջ նա նկարագրում է, թե ինչպես Կաղան հասնելուց յոթ օր հետո քաղաքը հրդեհի ճարակ դարձավ: Երեք ամսից հետո գիշերը հրդեհ պատահեց այն հյուրանոցում, ուր ապրում էր նա իր կնոջ հետ: Սարսափելի իրարանցման մեջ նազարյանցը կիսամերկ դուրս է վազում և աշխատում է աղատել տնային իրերը կրակից. այդ իրերով բռնաավորված՝ նա գնում է օթևան գտնելու: Այդ պատահարները ավելի ևս դառնացնում են երիտասարդին, և Ավետարանի «Մարգարեն իր գավառում պատիվ շունի» ասացվածքը դառնում է նրա համար մի տանջող իրականություն: Նա շարունակ գանգատվում է իր վիճակից, համարում է իրան իր տղետ հայրենակիցների անուշադրության զոհ: Այդ դառնությունը, այդ գանգատը մնաց նազարյանցի գրվածքների մեջ մինչև նրա մահը: Իհարկե, նա շատ իրավունքներ ուներ այդպես գանգատվելու: Դեռ երիտասարդ հասակից էր խոցոտվում նրա սիրտը, որ լի էր այնքան ազնիվ ձգտումներով: Զգալով իր մեջ գործելու պատրաստակամություն և ուժ, նա տեսնում էր իրան հեռացրած, ետ մղված. և, իհարկե, միայն ցավել, միայն դառնանալ կարող էր, մանավանդ որ անարժան մարդիկ հեշտություն էին առաջ գնում և խրախույսներ ստանում: Գանգատների հիմքը, ընդհանրապես, արդարացի էր: Բայց գանգատները շատ անգամ էին հասնում շարժանքությունների: Նազարյանցի մեջ բուն գրեց մի կասկածոտություն. շատ դեպքերում նա նույնիսկ չէր նկատում իր գործի ազդեցությունը, նրա առաջացրած ոգևորությունը և գանգատվում էր այն ասիական բարբարոսությունների վրա, որոնք հալածում էին նրան:

Բայց գանգատները, մշտական դժգոհությունները չէին հուսահատեցնում նրան, չէին հարկադրում մոռանալ այդ անպարտաճանաչ ազգը, հեռանալ նրանից: Աշխատել պետք է այդ ազգի համար, ահա ինչն է նազարյանցի խորին համոզմունքը: Եվ սկսում է աշխատել Կաղանում. աշխատում է գանգատվել, աշխատում է դժգոհություններ հայտնելով, բայց աշխատում է անդադար, շինաշխույժ ոչինչ ջանք ու զրկանք: Այսպիսի աշխատավոր էր նա երկար տարիների ընթացքում:

Արդեն 1843-ին, շնայած Կաղանում կրած իր շարժարաններին, նա պատրաստել էր «Ընդհանուր պատմության անցքերի համառոտությունը՝ սկզբից մինչև մեր օրերը» հայերեն լեզվով: Այդ աշխատությունը տպագրելու համար նա դիմում է Հովակիմ կաղարյանի միս որդուն, նաչատուրին, որ կաղարյան ճեմարանի հոգաբարձուի օգնականն էր: Նազարյանցը լսել էր, որ նաչատուր

* «Առմայն հանդես, Քիֆիս, 1898, դ., էր. 270, II դ. էր. 253: Ավելորդ կրկնություններից խուսափելու համար հայտնում ենք, որ նազարյանցի նամակների մի նշանավոր մասը տպված է Քիֆիսի «Առմայն» և Մոսկվայի «Հանդես գրական և պատմական» ժողովածուների մեջ, որոնցից էլ մենք օգտվել ենք:

Հազարյանը միտք ունի հրավիրել նրան ճեմարան՝ խորհրդի անդամի պաշտոնով: Ուստի նույն 1843-ին ուղարկում է Հազարյանին ուսանել լեզվով գրված մի ճառ, որի մեջ խորհուրդներ էր տալիս, թե ինչպես պետք է կարգավորել ճեմարանը և թե առհասարակ ինչ կարելի է անել հայերի կրթության համար: Սակայն լուրը չճշտվեց, երկար ժամանակ պատասխան չստանալով Հազարյանից, Նազարյանցը մի նոր առիթ է գտնում հուսահատական մտքերին դիմելու և հաստատվում է այն կարծիքի մեջ, թե հայերը իրանց աշխատավորներին ճանաչել և գնահատել չգիտեն:

Բայց այդ միջոցին ծագում է մի նոր հույս: Հովհաննես Կարբեցին վախճանվել էր: 1843 թվականին կաթողիկոս ընտրվեց Ներսես Աշտարակեցին, որ նույն տարվա վերջին Քիշինեից գնաց Պետերբուրգ և երկար մնաց այդտեղ: Նազարյանցը մի շնորհավորական ուղերձ ուղարկեց Ներսեսին և մի նամակով էլ հայտնեց նրան իր իղձերը և ղգացմունքները: Ներսեսը Հովհաննես Կարբեցի չէր: Ահազին ժողովրդականություն վայելող այդ հոգևորականը, որ այնքան լավ հասկացել էր իր ազգի կրթական կարիքները, հավատ էր ներշնչում Նազարյանցին, թե այժմ կարելի է տեղափոխվել Հայաստան և գործել այնտեղ մի այդպիսի կաթողիկոսի հովանավորության տակ: Այդ պատճառով նա առաջարկում էր Ներսեսին բաց անել էջմիածնում մի ճեմարան՝ հոգևորականների կրթության համար: Հայրենիք փոխադրվելու ցանկությունը ավելի ստատկանում է նրա մեջ մանավանդ այն ժամանակ, երբ ծնվում է նրա անդրանիկ որդին, և Կազանում չի ճարվում հայ քահանա, որ մկրտեր երեխային: Ծարահատված, խեղճ հայրը հարկադրված է լինում ինքը կատարել մկրտության արարողությունը երկու վկաների ներկայությամբ, մինչև որ հայ քահանա կպատահեր, որ կկատարեր մկրտության ամբողջ ծեսը:

Բայց դիմելով Ներսեսին, առաջարկելով նրան իր ծառայությունները, Նազարյանցը կանգ էր առնում մի հարցի առաջ. արդյոք Ներսեսը կկարողանա՞ գնահատել եվրոպական ուսում ստացած մարդկանց: Արժվանցի օրինակը հաստատեց, որ գնահատություն անկարելի է սպասել մանավանդ հոգևորականների կողմից: Արդյոք Ներսեսը կարո՞ղ կլիներ բացառություն կազմել և այս հարցի մեջ: Գծբխտաբար, այդ եռանդուն, խելոք և հեռատես հոգևորականն էլ բացառություն չկազմեց, և Նազարյանցը նրա ուշադրության և խորխույսներին շարժանացավ: Ներսեսը Արժվանցի վրա էլ ուշադրություն չդարձրեց: Որքան էլ բարձր կանգնած լիներ նա իր դասակիցների մեջ, նախապաշարմունքը, որ հատուկ է այդ դասակարգին, թույլ չտվեց նրան ճանաչել և մեծարել համարձակախոս, ազատ գաղափարներով սնված հայ երիտասարդներին: Դա էջմիածնի մի ընդհանուր պակասությունն էր, և Նազարյանցի դավանանքներին հետևող շատ մարդիկ խորթ, անհարազատ ճանաչվեցան էջմիածնի կողմից:

Նվ այսպես, Նազարյանցին մնում էր բավականանալ արքունական ծառայությամբ: Վեց տարիները, որ նա անցկացրեց Կազանի համալսարանում, ավելորդ չէին: Համալսարանում այդ ժամանակ ծաղկած էին արևելյան լեզուները, մանավանդ արաբերենը և պարսկերենը: Արևելյան լեզուների ֆակուլտետը այնքան անուն հանեց և այնքան գրավիչ էր, որ ուսանողները թողնում էին մյուս ֆակուլտետները և գալիս էին այդտեղի դասախոսությունները լսելու: Դա շատ նպաստավոր հանգամանք էր Նազարյանցի համար. համալսարանում նա, իհարկե, ավելի ուշադրության կարժանանար իր լեզվագիտությունից և ավելի ընդարձակ միջոցներ կունենար արաբերենն ու պարսկերենը ուսումնասիրելու համար:

1843 թվականին Ստեփանոս Նազարյանցը պրոֆեսորական մի շրջանի մեջ կարդաց մի համառոտ դեկուցում հայոց հին գրականության մասին: Հաջորդ տարին այդ աշխատությունը հրատարակվեց համալսարանի պաշտոնական օրգանի մեջ*, որ տպագրվում էին պրոֆեսորների աշխատասիրությունները, առավելագույն արևելագիտության վերաբերվածները: Սա Նազարյանցի առաջին տպագրված աշխատությունն է, որ գրվում է 49 փոքր ության էրես: Նրա վերնագիրն է. «Беглый взгляд на историю Гайканской литературы до конца 13 столетия» (Համառոտ ակնարկ հայկական գրականության վրա մինչև 13 դարի վերջը): Գրվածքը բոլորովին համապատասխանում է վերնագրին, չունի մի գիտնական հետազոտության հանգամանքը: Կասենք ավելին, դա նույնիսկ մի ինքնուրույն գործ չէ, այլ վերցրած է Հ. Սուրիաս Սոմալյանի գրած հայոց գրականության համառոտ պատմությունից, որ հրատարակվեց Վենետիկում իտալերեն լեզվով 1829 թվին: Իսկապես դա պատմություն էլ չէ, այլ հայ հեղինակների մի ցուցակ՝ շորթորդ դարից սկսած: Հետաքրքրություն ներկայացնում է Նազարյանցի գրած առաջաբանը, ուր, ի միջի այլոց, կարդում ենք հետևյալ տողերը.

Ճիշտ է, հայոց գրականությունը չունի արարական, պարսկական, հնդկական և շինական գրականությունների ոչ հետաքրքրությունը, ոչ հարստությունը, բայց իր գանձերով, որոնք դեռ չեն գնահատված պատմագրի և լեզու հետազոտողի կողմից, նա արժանի է ուշադրության: Գիտության զանազան ճյուղերին վերաբերվող գրողների մի անընդհատ շարք, IV դարի սկզբից մինչև մեր ժամանակները, գոյություն ստացավ Հայաստանում, որ ուներ շատ սահմանափակ միջոցներ, զրկված էր քաղաքական ինքնուրույնությունից, ենթարկված էր ճակատագրի հազարավոր հարվածներին:

Այսպիսով Նազարյանցը ցույց էր տալիս, որ գիտն արժանի մեծարանքներ մատուցանել անցյալ գործիչներին: Բայց միևնույն ժամանակ նա չէր ըստնում անցյալի գրական հարստություններից, իր ժամանակակից հայ գիտնականների նման ինքնագոհությամբ խունկ չէ ծխում ազգասիրության, բարձրացնելով և փառաբանելով մեր հին գրականության արժեքը, եղածը բավական համարելով ժամանակակից հայի կրթության և առաջադիմության համար: Նա հարկավոր է համարում մի գրական վերածնություն, իսկ դրա համար անհրաժեշտ է ունենալ նոր, ամենքին հասկանալի լեզու: Միայն այդ լեզվի միջոցով հայոց գրականությունը կդառնա մի կենսունակ ու զարգացող գործ:

Այս հայացքները Նազարյանցի գրական գործունեության զլխավոր հենակետերն են. այնպես որ նա հենց առաջին քայլից միանգամայն պարզ ցույց էր տալիս իր գրական դեմքը: Նոր լեզվի հարցը նա դնում էր հրապարակում ամենից առաջ: Ճիշտ է, այդ լեզվի մասին Նազարյանցից առաջ խոսել էր Արժվանցը, բայց նրա «Վերջ Հայաստանին», որ գրված էր դեռ 1841-ին, լույս տեսավ շատ ուշ, ամբողջ 17 տարուց հետո, 1858-ին: Մենք հետո նորից պիտի վերադառնանք այս հարցին: Առայժմ շարունակենք մեր պատմությունը:

* Այսպիսիների թվումն էր և կոմս ևե Տոլտոյցը, որոնց այժմյան աննահաշակավոր գործը

* «Ученые записки, издаваемые Императорским Казанским университетом», 1844, кн. 1.

Համալսարանի գիտնական հրատարակության մեջ տպված այդ փոքրիկ աշխատությունը, իհարկե, շատ չէր կարող տարածվել հայերի մեջ, թեև նազարյանցը ուղարկեց իր ժանտիներին նրա առանձին հրատարակություններից մի քանի հատ: Ինչպես երևում է, նազարյանցը չկարողացավ սկսել իր դրական գործունեությունը հայերեն աշխատություններով ամենից առաջ այն պատճառով, որ նյութական միջոցներ չուներ: Մենք պետք է քիչ կանգ առնենք այս հանգամանքի վրա, որպեսզի հասկանալի լինի նազարյանցի գործունեության մեջ մի գիծ, որ այնքան քիչ էր համապատասխանում նրա բնավորության և դավանանքներին:

Աչքի առջև ունենանք նախ ժամանակը: Այդ ժամանակի համար են բանաստեղծի իրավացի և բնորոշ խոսքերը.

Գեո չի գրած՝ առաջ դու լա՛ւ միտք արա,
Ո՞վ է խեղճիդ գրուածքները առնողը*:

Հայերեն գիրքը ընթերցող չունենք. գիրք տպագրելը քաջություն էր համարվում: Մեր խոսքը, իհարկե, մասնավոր, մանավանդ անհայտ մարդկանց մասին է: Գրական հրատարակի գլխավոր տերերը Մխիթարյաններն էին. նրանք էին համարձակ կերպով տանում հրատարակչական գործը և տալիս էին գրքեր, որոնք մեծ մասամբ համապատասխանում էին այն ժամանակվա ունեվոր ընթերցողի մտավոր պահանջներին: Վենետիկյան գրքերը հայտնի են իրանց թանկությունը. և եթե, չնայած այդ արգելադրի հանգամանքներին, նրանք իրանց ոսկեգոծ կազմերով հայերի գրադարաններն էին դարձրել, այդ մեծ մասամբ պետք է վերագրել այն հեղինակության, որ ձեռք էին բերել Մխիթարյանները իրեն հեղինակներ և հրատարակիչներ: Եվ սակայն Մխիթարյաններն էլ չէին կարող աջողեցնել իրանց գրքերի տպագրությունը, եթե չլինեին մեկենասները: Մեկենաս հանդիսանում էին սովորաբար հարուստ վաճառականները կամ ունեւոր պաշտոնյաները: Տպագրական ծախսը հայթայթողը դառնում էր բարերար և շատ անգամ այդ բարերարին ձեռնվում էին գովասանական ուղերձներ գրքի սկզբում: Դա արդեն սովորություն էր:

Բարերարների օգնությունը դիմելը անխուսափելի անհրաժեշտություն էր և նազարյանցի համար: Գրականությունը այնքան ստորացած էր, որ յուրաքանչյուր մարդ բաժանորդ գրվելով մի գրքի, պահանջում էր, որ իր անունը անպատճառ տպվի: Այդ պահանջի տգեղությունը հասկանում էր նազարյանցը: Տալ «մեկ ու կես դահեկան» մի գրքի տպագրության համար և պահանջել, որ իր անունը տպագրությանը անմահանա, — դա մի երեխայական բան էր թվում նազարյանցին, և նա գիտեր, որ այդպիսի լոկ դատարկ փառասիրությունն է խոսում: «Հայերը, — գրում է նա, — փոխանակ սիրելու և փառավորելու նրանց, որոնք ազգի կրթության համար ճիգ են թափում, իրանք են ուզում գովաբանվել մի քանի շնչին փողերի համար, որ ծախսում են հենց իրանց շահի և օգտի համար. ա՛հ, դա մի անբժշկելի մոլորություն է, որի նմանը լուսավոր ազգերի մեջ չէ նկատվում»:

Բայց ի՞նչ կարելի էր անել: Նազարյանցը հանձն չէ առնում բժշկել այդ մոլորությունը, այլ հասնում է այն եզրակացության, որ պետք է «տկարների հետ տկար լինել հանուն ազգի և նրան օգնելու տենչանքի»: Եվ ահա այդ նպատակով նա կարելի է համարում մեկենասներին և բաժանորդներին խրատել այն եղանակով, ինչպես նրանք են կամենում, այսինքն՝ տպելով նրանց

* Գամառ-Չարիբյա, «Բարի Խրատ»:

անունները և նույնիսկ ներբողներ նվիրելով նրանց: Այս բանը դեռ այնքան խորթ ու անհասկանալի չէր լինի, եթե պատշաճավոր շափ պահպանվեր: Բայց նազարյանցը մի քանի դեպքերում չափազանցությունների մեջ ընկավ, շուրջ լելով իր բաժանորդների հասցեին այնպիսի գովասանքներ, որոնց գրողը, համենայն դեպս, նազարյանցի պես մի մարդը չպիտի լիներ:

Սակայն ինչպե՞ս դատապարտենք դրա համար նազարյանցին: Մենք գոնե սիրտ չենք անում դատապարտողի դեր կատարելու. պետք է մտքով տեղափոխվել այն ժամանակը, պետք է իմանալ մի հայ գրողի դրությունը: Ահա մի փաստ: Կազան հասնելուց հետո համարյա ամբողջ երեք տարի նա նամակագրություն ունի Պետերբուրգում գտնվող Եփրեմ վարդապետ Ալթունյանցի հետ և այդ գրությունների նյութն է այն դրամական օժանդակությունը, որ պիտի հասցնեին նրան Պետերբուրգի՝ մի գիրք տպագրելու համար: Երեք տարի չէր լուծվում այդ գորդյան հանգույցը... նազարյանցը ստիպված էր աղաչական նամակներ գրել և կազարյաններին, որոնք էլ, վերջապես, օգնեցին նրան առաջին հայերեն աշխատությունը տպագրել, բայց արդեն 1851 թ., այսինքն համարյա 8 տարուց հետո: «Տկարների հետ տկար լինել» — սա մի ցավալի սկզբունք է, կոմպրոմիսի սկզբունք: Եվ եթե հաշտվում ենք այն բանի հետ, որ այդպիսի խոսքեր արտասանողը Ստեփանոս նազարյանցի շրջանում չենք են, պատճառն այն է, որ դրանք նրա գրավոր վաստակների միայն արտաքին, հրատարակչական մասին էին վերաբերվում: Եվ վերջապես մի՞թե հենց այժմ էլ գոյություն չունի այդ միևնույն դրությունը...

II

Հայոց գրականության պատմության երկրորդ մասը: Այդ աշխատության արժանավորությունները: Նագարյանցի բնագրատությունը. անցյալը, Մխիթարյաններ, ներկան: Նոր ժամանակ պահանջները: Նոր լեզվի անհրաժեշտությունը: Ի՞նչ պիտի լինի գրականությունը հայերի համար: Մագիստրոսի աստիճան: Գրքի բողոք տպավորությունը:

1846 թվականին նազարյանցը ներկայացրեց Կազանի համալսարանին իր գրած գիտերտացիան՝ հայ-պարսկական դպրության մագիստրոսի աստիճան ստանալու համար: Դա Հայոց գրականության պատմության երկրորդ մասն է, XIV դարի սկզբից մինչև 1840-ական թվականները*։ Երկրորդ մասը չէ էլ կարելի համեմատել առաջին մասի հետ, այնքան հետաքրքրական է կազմված, ավելի մշակված, ավելի ընդարձակ. դա իսկ որ մի քննական տեսություն է:

Եվ այսպես, իր երկու աշխատություններով նազարյանցը տվեց մեր գրականության ամփոփ պատմությունը, առաջին փորձը ուսերեն լեզվով: Մեզ համար, իհարկե, այնքան մեծ չէ այդ նշանակությունը, որքան այն, որ նազարյանցը նորագույն պատմության մեջ դրել է իր հոգին, իր դավանանքները, իր ամբողջ ծրագիրը: Իբրև մի գիտնական աշխատություն, այս պատմությունը գուցե այնքան արժեք միայն ունենա, որ տալիս է ուսերեն լեզվով հայոց գրականության պատկերը հաջորդաբար, դարից դար: Բայց նա մեզ համար շատ կարևոր է այն հայացքների պատճառով, որ հայտնում է նազարյանցը: Այստեղ մենք մի շոր ու ցամաք գիտնական հետազոտություն չենք գտնում, այլ

* Ահա այդ աշխատության վերնագիրը. «Обозрение истории Гайканской письменности в новейшие времена».

հրապարակախոսի լայն, վառվռուն սիրտ, որ դուրս է գալիս նյութի նեղ սահմաններից, քարոզում է իբրև նոր ժամանակի մարգարի: Այստեղ նազարյանցը մեր առաջին գրական քննադատն է, որին ղեկավարում են հասարակական որոշ իդեալներ: Եվ որովհետև այդ դերը նազարյանցի ամբողջ գործունեության հիմնաքարն է, մենք պարտավոր ենք հենց այժմից, առաջին քայլից, մանրամասն կերպով ծանոթանալ նրա հայացքների հետ: Չմոռանանք և մի շատ կարևոր հանգամանք. այս գործից ճանաչեցին հայերը նազարյանցին. այս գործն էր, որ հայտնի դարձրեց նրա անունը, կրքեր ու թշնամություն հարուցեց մեր հին սերունդի մեջ:

Նազարյանցը այսպիսի առաջաբանով է սկսում իր գործը.

«Ազգերը, ժամանակի և տարածության մեջ, ծագում են, ծաղկում են և ընկնում են կամ վերջնականապես կամ թե մի քանի դար ժամանակով, մինչև որ մարդկության հանճարը, ավելի նպաստավոր հանգամանքների մեջ, վերածնվում է իր դարձոր դագաղից և վերանորոգված ուժերով դնում է այն ճանապարհով, որ նախագծել է նախախնամությունը երկրագնդի ցեղերի համար: Ազգերի կյանքի երևույթների այս անընդհատ տեղատվությունն ու մակընթացությունը, ինչպես մի մեծ հայելու մեջ, պարզ արտահայտվում է լեզուների և գրականությունների պատմությամբ, որոնք, ինչպես ազգային կեցության անփոփոխ հավատարիմ ուղեկիցներ, գնում են նրա հետ որորոցից մինչև գերեզման»:

Գլխական այն շրջանը, որից նազարյանցը սկսում է իր տեսությունը, անկման, գերեզմանի մի շրջան է հայերի մեջ: Դա կաթոլիկացած հայերի (ունիթորներ) դարն է: Ունիթորները աղավաղեցին հայոց լեզուն, ամեն ջանք գործ էին դնում լատինացնել նրան, տալով նրան լատինական ձևեր: Այդ բավական չէ: Նրանք էին, որ մտցրին Հայաստանի մեջ Եվրոպայի սխոլաստիկան, թարգմանելով այնպիսի հեղինակություններ, որոնք, ինչպես ասում է նազարյանցը, «այնքան անօգուտ, այնքան աննշան են իրանց էությունը, որ նույնիսկ նրանց վերնագիրները հազիվ պահպանվել են մի քանի տեղերում»: Ունիթորների հակառակորդ տաթևյանները հափշտակությամբ կարդում էին այդ թարգմանությունները, «կարծես թե դրանք ամենահռչակավոր կլասիկների ստեղծագործությունները լինեին և լույս էին հանում աշխատություններ, որոնք հենց միայն իրանց բարբարոսական ոճի պատճառով արժանի են հավիտենական մոռացման»:

Առաջ տանելով իր տեսությունը, նազարյանցը քաջ առ քաջ հետևում է գրողներին և գրականությանը: «Հայոց գրականությունը, — ասում է նա, — XIV դարից սկսած ավելի ու ավելի թեքվում էր դեպի անկում: XVII դարի ընթացքում դուր էին ճգնում ազգի մի քանի ընտրյալները, ինչպես Բարսեղ Բիթլիսեցին, Հակոբ Էջմիածնեցին և Կոլոտ Գ. Պոլսեցին*, վերականգնել նրան: Ապագա ժամանակներին էր թողնված գրականության երկրորդ ծաղկման վկա լինելու փառքը և մի ուրիշ մարդուն էր վիճակված լինել հայերի հոգևոր վերածնության ստեղծողը: XVIII դարը պիտի դառնար ազգային կյանքի այդ բարեբախտ հեղափոխության արժանահիշատակ ժամանակը և Մխիթարը՝ այդ հեղափոխության գործիքը, նախախնամության ընտրյալը»:

Մխիթարի և Մխիթարյանների գործունեության մասին նազարյանցը եր-

* Բարսեղ վարդապետ՝ Բաղեշի դպրոցի ծաղկեցնողը. Հակոբ Էջմիածնի կաթոլիկոսն էր. իսկ Կոլոտը — Կ. Պոլսի պատրիարքը, բայց ոչ թե XVII, այլ XVIII դարում:

կար է խոսում և միշտ մի առանձին հիացմունքով: Նա հերքում է այն միտքը, թե Մխիթարը հաստատել է իր միաբանությունը՝ հայերին Հոռոմի գիրկը մտցնելու համար: Իհարկե, կար և կրոնական նպատակ, բայց նա առաջնակարգը չէր:

«Թողնենք կրոնական կողմը: Հայկական գրականության պատմությունը պիտի նայն Մխիթարյան միաբանությանն որպես մի գիտնական Ակադեմիայի, որի անդամները, ինչպես արամադրում էին սահմանված կարգերը, պարտավոր են գրադվել գիտությունները մշակելով, փոխադարձաբար հաղորդելով միմյանց իրանց հետազոտությունների արդյունքը»: Եվ ահա ինչ է այդ Ակադեմիան: «Մխիթարյանների Ակադեմիայի երեան գալը հայոց մտավոր կյանքի ամենանշանավոր դեպքն է: Հայ ժողովուրդը մինչև այդ ընկզմված էր խորին արհեստական մեջ, իսկ նրա լեզուն՝ կատարյալ բարբարոսական գրության մեջ: Մխիթարը, որ իրավացի կերպով անվանվում է հայերի նոր լուսավորիչ և երկրորդ Մեսրոպ, իր միաբանության հիմնադրությամբ մի անխորտակելի պատվար կանգնեցրեց գրական խանգարման սաստիկ հեղեղումների դեմ»: Եվ զիմելով իր ասածները հաստատող փաստերին, նազարյանցը արժանավոր դոկտորներով է մեծարում Մխիթարյաններին: Այսպես, խոսելով Մխիթար Աբրահի մեծ բառարանի մասին, նա ասում է. «Այժմյան սերունդը սրբազան ակնածությամբ է նայում այն անսովոր աշխատությունը, որ ծնունդ առավ մի այնպիսի ժամանակ, երբ Եվրոպան էլ դրանից լավ բան չուներ այս ճյուղում: Այս սրբազան ակնածությունը դառնում է հիացմունք, երբ մտածում ենք, որ հայերը այս աստղահղում չունեին ոչ մի նախորդ»: Մխիթարի ամենաընդունակ աշակերտների մեջ նա հիշատակում է շատերին. Հ. Ադոնց Գյումրիին անվանում է «փայլուն խելքի և բազմակողմանի գիտնականության տեր մարդ», իսկ Հ. Գաբրիել Ավետիքյանի մասին ասում է. «Ս. Ղազարի վարդապետների մեջ ապրած արժանավոր գործիչների շարքում հավիտենական դաշար փառքով ծաղկում է Հ. Գաբրիել Ավետիքյանի անունը»:

Իսկ իր ժամանակակից Մխիթարյանների մասին նազարյանցը ավելի բարձր կարծիք ունի: «Մխիթարյան Ակադեմիան ոչ մի ժամանակ այնքան կոանդով չի մշակել գիտության հոգը, ինչպես մեր ժամանակներում: Ակադեմիան կարողություն ունի ցույց տալ նույնիսկ այնպիսի մարդիկ, որոնք իրանց խելքով, գիտնականությամբ և աշխատասիրությամբ կարող էին պատիվ բերել ամեն մի գիտնական ընկերության: Եվրոպայում: Մենք միայն կանվանենք Մոմալին, ավագ Ավգերյանին, կրտսեր Ավգերյանին, վերջապես Ղուկաս Ինճիճյանին, որ Հայաստանի գրական ամենամեծ աստղերից մեկն է»: Արժանավոր մեծարանք է մատուցանում նազարյանցը Մխիթարյանների մանավանդ մի գործին.

«Հայկական գրականության տարեդրությունների մեջ դարագլուխ է կազմում նոր բառարանը*, որ երևան եկավ երկու վիթխարի հատորներով in 4, ավելի քան 2200 երեքստունյան մանրատառ երեսներ: Այս գործը իսկապես մեծ Մխիթարի նվիրական մտքի իրագործումն է՝ նրա երեք հաջորդների անդույ աջակցությամբ, այն է՝ Ստեփանոս Մելքոնյանի, Ստեփանոս Ազոնցի և Սուրիաս Սոմալյանի. սկսված է 1784 թվին երեք Մխիթարյանների ձեռքով, որոնք են Գաբրիել Ավետիքյան, Խաչատուր Սյուրմելյան և Մկրտիչ Ավգերյան. զանազան տեսակ խոչընդոտների և փոփոխությունների հանդիպելով, բառարանը վերջացավ 1834-ին: Հայր, կարող ենք ասել համարձակ, պիտի հպարտությամբ նայն իր մայրենի գրականության այդ փառքուն հուշարձանին, կա-

* «Բնագիրը Հայկական Ազոնի»:

վելացնենք նաև— համեմատական բառարանագրութիւնը շրջանում եղած այս բարձր քաջագործութեան, որ իր նմանին է որոնում Եվրոպայում:

Գալով ուսահայերին, նազարյանցը, իհարկե, այսպիսի եզրույթով գովասանքների առիթ չէ գտնում: Ռուսահայերի գրականութիւնը այդքան մեծամեծ արդիւնքներ չունի: Եվ պատճառը հասկանալու համար նազարյանցը վերցնում է էջմիածնի վանքը: Իրով, եթե հայ վանականութեանն էր վերադասւում հայոց մատենագրութեան մշակութիւնը, պետք էր որ էջմիածինը, իբրև հայ եկեղեցու վարչական կենտրոն և նախապատիւ ակնու, ցույց տված լիներ մի ստեղծագործական եռանդ: Բայց ահա ինչ է ասում նազարյանցը.

«էջմիածնի վանքի վարդապետների գրական գործունեութիւնը քիչ միտքարական է: Այս երևույթը, որ կարող է միակողմանի, հետևաբար և անարդար գիտողին թույլ տալ անսպասան կերպով դատապարտել այդ վարդապետներին, արդարացուցիչ պատճառներ է գտնում այն բազմատեսակ թշվառութիւնների մեջ, որոնք այնքան դարերի ընթացքում ծանրացած էին այս նախաթոռ վանքի վրա: Մի ժողովրդի մեջ, որ հազիվ նոր է սկսել ազատ շունչ քաշել, մի ժողովրդի մեջ, որի պատմական բոլոր հիշողութիւնները, հոգևոր բարոյական ամբողջ գիտակցութիւնը, բացի կրոնից և լոկ ֆիզիկական գոյութիւնից, խեղդված էին և պիտի խեղդվեին ասիական քունապետութեան ճնշող լուծի տակ,— այդպիսի մի ժողովրդի մեջ մենք իրավունք չունենք ենթադրելու մի բուսական ծաղկման հնարավորութիւն: Չկան թոյլերներ ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր աշխարհում: Ամեն ինչ հետևում է անհրաժեշտ հաջորդականութեան օրենքին, ամեն նոր դարգացում ժամանակ է պահանջում և, այսպես ասած, բարեբառով հանգամանքների շունչ: Մենք դիտմամբ ենք բերում այս մանրամասն քաղվածքները: Սրանք շատ պարզ վկայում են, որ նազարյանցը գիտեր արժանապես գնահատել անցյալը, տեղյակ էր այն բոլոր հանգամանքներին, որոնց ազդեցութեան տակ կազմվել է մեր ազգի պատմական ճակատագիրը: Տեսնում ենք, թե ինչպես է նա պատկառանքով և երախտագիտութեամբ մեծարում հին գրականութիւնը, գրաբար լեզուն և նրա նոր մշակողներին, Մխիթարյաններին: Անհրաժեշտ է, որ ընթերցողը լավ հիշէ այս բոլորը, որովհետև նազարյանցի հակառակորդները միշտ այն վայնասունն էին բարձրացնում, թե նա անարգում է հայոց հարուստ գրաբար լեզուն, անարգում է ազգի անցյալը, հարազատ հայ չէ և այլն:

Այժմ տեսնենք, թե նազարյանցը, անցյալին իր պատիւը տալուց հետո, ինչ պահանջներ ունի ներկայից: Մենք կբերենք նրա այդ աշխատութեան վերջաբանը թարգմանաբար, մի քանի տեղ համատեղելով նրան:

«Մի հետադարձ հայացք գցելով այն ճանապարհի վրա, որ մենք անցանք հայոց նոր և նորագույն գրականութեան շրջանում, մենք հանդիպում ենք այստեղ անսպասուի տխուր, անկենդան պատկերին, ուր գիտողի աչքի առաջ մեն մի անգամ բացվում է մի օվազիս. որպեսզի դարձյալ անհետանայ և տեղի տա անսպասուի, միանման ձանձրացուցիչ տարածութիւններին, մինչև որ վերջապես հանդես է գալիս մեր առաջ անուշահոտ ծաղիկներով ծածկված դաշտերի և հովիտների տեսարանը: Մի խոսքով, մենք տեսնում ենք այստեղ մարդկային կյանքի խաչտաբղետ պատկերը— մահ և վերածնութիւն իրանց անվերջ կրկնութիւնների մեջ, նայած բարոյական պայմաններին, որոնց բերում է ժամանակը:

«Շայնաստանը, խոր դիշերով դարերից հետո, սոսկալի բարբարոսութեան դարերից հետո, իհարկե, արդեն ներկայացնում է իր մտավոր վերածնութեան առավոտը. նա կարող է այժմ ցույց տալ գիտնական հայերի մի ամբողջ շարք,

որ անխոնջ գործում է մայրենի գիտութեան շրջանում: Բայց այս ամենը, որքան էլ ցավալի լինի այս խոստովանութիւնը, չունի և չէ կարող ունենալ ազգային նշանակութիւն հայերի ամբողջութեան համար: Ընդու է, Մխիթարյանները հայ ժողովրդի հանճարին են պատկանում, նրանք հայեր են, իրանց երանիսկ համարում են հայ-գրիգորյան եկեղեցու բնածին զավակներ, կաթոլիկ գալիսի տակ, բայց, մեր կարծիքով, քանի որ այժմ ամբողջ սերունդը չունի իր մեջ գիտակցութիւն, թե ինչ է գոյացրել անցյալը և ինչ է գոյացնում ներկան մասավորի կողմից, մինչև այդ նա, այդ սերունդը, չէ կարող նրան իր սեփականութիւնը համարել: Գտապարտել հայերին անպայման կերպով կնշանակիր չիմանալ ժամանակակից եվրոպացի մարդու զարգացման պատմութիւնը և պահանջել հայերից այն, ինչ օրինակներ չունի աշխարհի մյուս ազգերի կրթութեան տարեգրութիւնների մեջ:

«Կատարյալ հարգանք մատուցանելով հայկական Ակադեմիայի փայլուն աշխատութիւններին, կատարելապես հասկանալով եվրոպացիների գիտնական այն ուսումնասիրութիւնների գինն ու արժանավորութիւնը, որոնք վերաբերվում են հայ ժողովրդի անցյալ կյանքի լուսաբանութեան, մենք այստեղ չենք կարող խլացնել մեր ներքին համոզմունքի ձայնը, որ Մխիթարյանների և եվրոպացի անհատների այդ ամբողջ ազնիվ ձգտումը, բավարարութիւն տալով մեծ մասամբ լոկ գիտնական կարիքներին, կարող է գնահատութիւն գտնել հայերի մեջ միայն գիտցողների շատ սահմանափակ մի թվի կողմից, բայց չէ կարող նոր կյանք ներշնչել հայ ժողովրդի ժամանակակից մարմնին: Հին ձեր, որ այլևս չէ համապատասխանում նոր ծագած կեցութեան, որ, խորթ լինելով ժողովրդական կյանքին և հասարակաց գործածութեան, կորցրել է իր նշանակութիւնը, չէ կարող կրթական գործիք դառնալ ներկայի զավակների համար: Այդ հին ձեր* անհրաժեշտորեն պիտի վերածնվի, մի սերտ, բարեկամական դաշն պիտի կապե միշտ երիտասարդացնող կյանքի հետ և ամեն կերպ պահպանե նրան: Մի խոսքով, պահանջվում է զարգացում մի նոր ազգային գրականութեան, որ համապատասխաներ մեր դարի պահանջներին: Այս նշանակութիւնները, որոնց վաղուց է ճանաչել Եվրոպան և որոնք շատ անգամ են իրագործվել ամեն տեղ ժողովրդական լեզուների և դպրութիւնների վերածնութեամբ, մինչև այժմ մեր ազգի ներկայացուցիչների համար գաղտնիք են մնում: Մխիթարյանների Ակադեմիան, իր ամբողջ ուշադրութիւնը եվրոպայի համարյա բացառապես հին կյանքին, շատ քիչ բան է արել մինչև այժմ՝ գիտութիւնը կենդանի հասարակական կյանքի շրջանը մտցնելու համար. իսկ Ռուսաստանի հայերը այս մասին չեն էլ մտածել: Այս տեսակ փորձերի ամեն մի առաջարկութիւնն անգամ այստեղ գրգռում է թշնամական կատակ, որպես թե խոսքը այն մասին է, որ ինքնիշխան կերպով տապալվի ինչ հայոց լեզվի փառահեղ շենքը և նրա փոխարեն դնվի պակաս ազնիվ, գոհճիկ բարբառը: Մյուս կողմից նկատվում է մի օտարոտի հայացք: Անօգուտ են համարում հորինել գրքեր հայերի ժամանակակից կրթութեան համար, որովհետև հայերը ընդունակ չեն հասկանալ նրանց: Եվ այլևս ոչ մի քաջ գնալի առաջ: Որքան անհիմն է այն երկյուղը, որ իբր թե ժողովրդական դպրութեան երևան գալուն սրես գրաբարը կկորչէ, այնքան էլ շարամիտ, անարժան բան է երևում պահանջելը, որ հայ ժողովրդը կորստյան մատնվի, որովհետև նա հնամաշ, արդեն մեռած ձերի մեջ ընդունակութիւն չունի հնանկալ եվրոպական քաղաքակրթութեան:

* Խոսքը որսորդ լեզվի մասին է:

«Հայաստանի գիտությունը դեռ կրում է իր վրա միջին դարերի կնիքը: Ծագելով, դարգանալով, ծաղկած դրություն հասնելով հոգևորականության վճռական ազդեցության տակ, այդ գիտությունը մինչև այժմ էլ դեռ եկեղեցականների բացառիկ սեփականությունն է կազմում. ժողովուրդը, իսկապես, շատ քիչ մասնակցություն է ունեցել և շատ քիչ ունի իր գրականության ճակատագրի մեջ: Դա բնական է և ուրիշ կերպ չէ կարող լինել: Մինչև որ ազգը չէ հասել իր մտավոր շարժանունին, մինչև որ նրա մեջ չեն զարթել ինքնաճանաչություն, գիտակցություն և այն միտքը, թե նա անկողնապատի իրավունք ունի իր սեփական լեզուն սրբազործելու, — մինչև այդ ժողովրդական կրթության դեկլարատիվ արհեստը պաշտոնյաները: Եկեղեցու գիտատարական ազդեցությունից հոգևոր ազատվելու առաջին ուրախառիթ սկզբնավորությունը մենք արդեն տեսանք թուրքաց իշխանության տակ գտնվող հայերի մեջ*:

«Մինչդեռ մեր օրերում մարդկային մտքի հաջողությունները, որոնք ձեռք են բերվում հոգու և բնության շրջանում, հազարավոր ձայներով հայտնաբերվում են Եվրոպայի ազգերին, մինչդեռ Եվրոպայում լուսավորության ճառագայթները, մարդկության բարեկամների աջակցությամբ, մտել են և ավելի ու ավելի մտնում են, այսպես ասած, երկրագործի խրճիթը և հասարակության բոլոր խավերը, հայերը, միասին վերցրած, հազիվ կարող են ցույց տալ երկու պարբերական հրատարակություն ժողովրդական լեզվով («Բազմալեզու» և «Արշալույս Արարատեան»): Ժողովրդական գրականություն բոլորովին չկա: Ռուսահայերի մեջ, որոնք իրանց աշխարհագրական դիրքով ծածկված են արևմուտքից, ինչպես նաև հեռացած են ուսուցիչ քաղաքակրթական կենտրոններից, դրությունը ներկայացնում է ամեն մի հոգևոր շարժման կատարյալ բացակայություն: Նրանք չունեն նույնիսկ լավ դպրոց. և սակայն չէ կարելի ասել, թե միջոց չունեն, որովհետև շատերը վաճառական են և հարուստ: «Բայց ինչ պակասում է հայերին և ինչ պահանջվում է այժմ ամենից շատ — լուսավոր, փորձառու հայացքի տեր մարդիկ են, մարդիկ, որոնք անկեղծաբար համակրեն իրանց ժողովրդի դարի պահանջներին»:

«Հայ ազգի, որպես արևելքի ամենազլխավոր քրիստոնյա մի ազգի կոչումը պատմության մեջ ուրիշ մի բան չէ կարող լինել, բայց միայն այն, որ ճանաչել իր անցյալը, իմանալ, թե ինչ հարաբերություններ ունի դեպի ներկան և, ընդունելով իր մեջ եվրոպական կրթության ծաղիկները, նորից մշակել նրանց իր կերպով և այդպիսով իր խավերի մեջ ժողովրդական կեցության պայմանները կյանքի հրավերի: Բայց ի՞նչ ճանապարհներով մեր դարի հայը պիտի հասնի իր հնության հիշատակարանների ըմբռնմանը, երբ գրա բանավի կորած է ժամանակի հեղեղների մեջ: Ինչպե՞ս ժողովրդական գրականություն ծնվի մի տեղ, ուր դեռ ընդհանուր լեզու գոյություն չունի, ուր չկան հանրամտչելի խոսքեր՝ գաղափարներ և զգացմունքներ արտահայտելու համար: Դժվար է երևակայել զարգացում մի ժողովրդի մեջ, որի բանաստեղծը և իմաս-

* Նաղարչանցը առանձին հանություն արձանագրում էր, որ թուրքահայերը ուսանողներից ավելի առաջադեմ են, հիմնել են բարեգործական և կրթասիրական ընկերություններ: Իսկ այստեղ նա նկատի ունի Եկուտարի ճեմարանը Կ. Պոլսում, ինչպես նաև այն դպրոցական հաստատությունները, որոնք հիմնվում էին աշխարհականների, գլխավորապես կրթասեր ընկերությունների ձեռքով: Նշանավոր է, որ պոլսեցի հայերը դեռ 1830 թվականից բաց արին օրթորական դպրոցներ, իսկ քառասնական թվականների սկզբում գործում էին գրական և կրթական ընկերություններ, որոնցից մեկը հասարակաց գրադարան էլ էր բացել:

տասերը հարկազրկած են իրանց հոգու պատկերները սովորական, կենդանի լեզվից մեռած լեզվին փոխադրել, երբ հարկավոր է մտքից անցնել ձևին»:

Այս պատճառով նաղարչանցը առաջարկում է մշակել մի ժողովրդական լեզու, հիմք ընդունելով արարատյանը, իսկ մյուս բարբառներից փոխ անել բոլոր ազնիվ տարբերը: Նա դեմ է այն մտքին, թե պետք է նախ քերականություն կազմել: Քերականությունը լեզու չի ստեղծվի. երբ կհաղմակերպվի լեզուն, ապա կգա և քերականությունը:

Ամենից առաջ հարկավոր են, իհարկե, դպրոցներ: Հայերի պատմության, աշխարհագրության և հնությունների վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել. դրանց հետ կլինեն և ուրիշ զարգացուցիչ առարկաները:

Ռուսաստանում հայ դպրոցների համար անպատճառ պարտավորություն պետք է դարձնել, եվրոպական լեզուների լեզուն, սլավոնական-ուսական լեզվի, Ռուսաստանի աշխարհագրության և պատմության խոր ուսումնասիրությունը, միայն այս պայմանով կարելի է հոգևոր-բարոյական մերձեցումը Ռուսաստանի և նրա հպատակ հայերի մեջ»:

Դասավանդության լեզուն պիտի լինի պարզ ժողովրդական հայերենը՝ գաստիարակության գործը հեշտացնելու համար:

Սեմեն մի զգացմունք, ամեն մի մտապատկեր, ամեն մի գտղափար, ոչ աղգային կեղևի մեջ զցվում է պատանի հայի հոգու մեջ, կարող է և պարտավոր է այնտեղ խոր արմատներ տարածել: Լեզուն և գրականությունը իսկույն մտունդ կառնեն, երբ հայ գրագետները կսկսեն գրել կենդանի ներկայի համար, յուրաքանչյուր այն անհատի համար, որ ունենալով առողջ միտք, կարողություն ունի կարդալ և հասկանալ որևէ գիրք: Սակայն նկատի առնելով երիտասարդության կարիքները, մենք կկամենայինք որ նախ կազմվի հասկացող մարդկանց մի ընկերություն, որ ժողովրդական լեզվով դասագրքեր մշակեր գիտության զանազան ճյուղերին վերաբերյալ»:

Բացի դպրոցներից, նաղարչանցը անհրաժեշտ է համարում մի պարենական հրատարակություն, զոր տար իր էջերի մեջ հոգվածներ ընդհանուր պատմությունից, աշխարհագրությունից և վիճակագրությունից (մանավանդ հայոց և ուսուցիչ), հետաքրքրական տեղեկություններ բնագիտությունից, նույնպես և տեղեկություններ հայերի ներկա դրության մասին զանազան պետությունների մեջ, եվրոպական ազգերի քաղաքական և եկեղեցական դրության մասին, գյուտերի մասին և այլն: Իր խորհրդածությունները նաղարչանցը վերջացնում է հետևյալ խոսքերով.

«Սյուպես է մեր կարծիքը ներկայի պահանջների մասին, այն չափազանց կարևոր խնդրի մասին, որ դրել է ուսանողների առաջ մեր XIX դարի լուսավորողները: Ամեն ինչ, որ գոյություն ունի ժամանակի մեջ, մի տեղ գրավելու և պահպանելու համար, անհրաժեշտորեն պարտավոր է հետևել իր դարի շարժման, մասնակցել մարդկության աջողություններին, անդադար վերածնվել, անպարկաշու կատարելագործել իրան, ապա թե ոչ, իբրև հակասություն ժամանակակից ոգուն, իբրև մի բան, որ տեղ չունի կյանքի մեջ, նա մահվան պատիժ է արտասանում ինքն իր վրա և վաղ թե ուշ պիտի դառնա շատակեր ծերունի կոտորածի անբարբառ զոհը: Այսպես է ժամանակի պատգամախոսությունը Ռուսաստանի հողի վրա ապրող հայկազյան սերունդների ապագայի մասին. կամ զեպի առաջ՝ դարի հետ, կամ քարացում և հոգևոր-բարոյական մահ: Հայ ժողովրդի աղքատները, մենք հույս ունենք, — եթե սա կենդանի երևակայության ցնորք չէ կամ ազնվությամբ բռնկված հոգու պատրանք — ահանջ կդնեն խորհրդավոր կերպով աղաղակող ժամանակի ձայնին և գործի կկաշեն, ան-

գրողին հավատ ունենալով Ամենաբարձրյալի օգնութեան վրա և հաստատապես համոզված լինելով, որ սրաազիւն ողջուն կոտանան բարեմիտ, լուսավորութիւն սիրող, ամեն մի օգտակար ձեռնարկութեան մեծահոգութեամբ խրատուող սուսաց կառավարութեան կողմից: Sapiienti sat!»: Ինչպես տեսնում եք, սա միայն հետազոտութիւն չէ, դիւերտացիա չէ, այլև դրոշակ, ծրագիր, հրատարակախոսութիւն: Այստեղ նազարյանցը նախ և առաջ մանրամասն ծրագիր էր մշակում իր համար. այստեղ է ամփոփված «Հիւսիսափայլի» ոգին, այստեղ ենք տեսնում այն սաղմերը, որոնցից կազմվեցան նազարյանցի հրատարակած հայերեն գրքերը, նրա Ալբրենարանը, «Հանդէս նոր Հայաստանի» վերջապես այստեղ մեր առջին է ապագա հայ հրատարակախոսը իր վերանորոգչական-առաջադիմական գործունեութեան սկզբունքներով: Այստեղ այդ սկզբունքների ամփոփումն է: Ապագայում նազարյանցը միայն պիտի զարգացներ, լայն կերպով բացատրեր այդ սկզբունքները, պաշտպաներ նրանց իր կրծքով: Այն, ինչ այստեղ խոսում է ժամանակի ոգու, պահանջների, ժողովրդական կրթութեան և գրականութեան մասին, նազարյանցը կրկնել է շատ անգամ, համարյա միևնույն բառերով: Այնպես որ նազարյանցը դեռ 1846 թվականին «Հիւսիսափայլի» խմբագրի դերումն էր:

Ինչպես նկատեցինք՝ նազարյանցի ամբողջ ծրագրի էությունը, ծուծը, կորիզը աշխարհաբար լեզվի և գրականութեան դատն է: Եթե մենք վերցնենք նրա գրական ամբողջ գործունեութիւնը, սկզբից մինչև վերջ, կտեսնենք, որ այդ գրական ամբողջ գործունեութեան սկզբունքները, որոնք ծրագրում ենք ամենախոշորը, ամենաթանկագինը, ճիշտ որ, մայրենի լեզվի, մայրենի գրականութեան դատն ոգևորված, տաղանդավոր պաշտպանութիւնն ու ժողովրդականացումն էր: Տեսնենք այստեղ, թե ի՞նչ էր աշխարհաբար լեզվի հարցը և ի՞նչ տեղ ունի նազարյանցը այդ հարցի մեջ:

Եղել են մարդիկ, որոնք, անչափ ոգևորվելով նազարյանցի գործունեութեամբ, ասել են, թե նազարյանցը ստեղծեց աշխարհաբար լեզուն: Սխալ և անհիմն է այս դատողութիւնը: Աշխարհաբար լեզուն միայն մի ստեղծող ունի, և դա հայ ժողովուրդն է: Նազարյանցից շատ առաջ էլ դոյութիւն ունեւ աշխարհաբար լեզուն մեր գրականութեան մեջ: Կասենք ավելին — նազարյանցը չէր, որ հարուցեց աշխարհաբարի հարցը. նրանից առաջ կային մեզանում մարդիկ, որոնք պնդում էին, թե գրաբարը մեռած լեզու է, պետք է զարգացնել աշխարհաբարը: Ոչ. գրավոր և ժողովրդական լեզուների հարցը մեզանում զարավոր հարց էր, որ բարելոյն ու դժվարացել էր մեր պատմական կյանքի ընթացքում:

Մեր գրականութիւնը սկսվում է հինգերորդ դարից: Այդ դարում մենք տեսնում ենք մի կանոնավոր հարուստ գրական լեզու: Բայց դա ժողովրդի լեզուն չէ: Այս լեզվի հետքեր գտնում ենք նույնիսկ հինգերորդ դարի գրաբար լեզվի մեջ: Ժամանակի ընթացքում գրաբարը ավելի և ավելի հեռանում է ազգի ընդհանրութիւնից, անհասկանալի է դառնում նրան: Ժողովրդական լեզուն աշխատում է բռնել նրա տեղը գրքի մեջ, բայց իզուր. գրաբարը նվիրագործված էր իբրև եկեղնցական լեզու, գրականութեան միակ տերերը հոգևորականներն էին և նրանք էլ պահպանում էին այդ արհեստական դարձած, մեռած լեզուն: XIII դարից ժողովրդական լեզուն ավելի մեծ շանքեր է անում, որ նվաճել իր իրավունքները, դառնա միջնորդ գրքի և ժողովրդի մեջ: Բայց նրան արհամարհում են, անտես են անում: Քանի որ տգիտութիւնը, համատարած խավարը գրականութեան կատարյալ անկումն էր պատրաստում, կենդանի բարբառը սկսում էր ավելի ևս զարգացնել իր տիրապետութիւնը և եթե վերջնա-

կանապես հաղթել իր բախտավոր ախոյանին չէր կարողանում, գոնե աղճատում ու ալլանդակում էր նրան իր խառնուրդով: Կարելի էր կարծել, թե վերջիվերջո գրաբարը կլուծվի աշխարհաբարի մեջ: Բայց ահա հիմնվում է Մխիթարյան միաբանութիւնը, որ փրկում է գրաբար լեզուն: Աշխարհաբարը նորից ընկնում է, նորից ամփոփվում է ժողովրդի մեջ և իր այդ խոնարհ ու ցած դիրքից ականատես է լինում, թե ինչպես գրաբարը աճում, ծաղկում, զարգարվում է: Հին լեզուն հարութիւն առավ, վերակենդանացավ. բայց դրանից չփոխվեց հին պատմական իրողութիւնը. դարձյալ չկար մեզանում ժողովրդական գրականութեան, դարձյալ հայերեն գիրքը անհասկանալի էր ընդհանրութեան: Փառահեղ գրաբարը ակամա ստիպված էր խոստովանել իր անկարողութիւնը: Հարկ էր դիմել աշխարհաբարին:

Բայց այդ դիմումը չէր նշանակում, թե գրաբարը պետք է գերեզմանի մեջ թաղվի: Գրաբարը թաղելը մի սոսկալի սրբապղծութիւն էր համարվում հին ժամանակներից: Զկարողանալով լուծել երկու լեզուների բարդ հարցը կամ ավելի ճիշտ ասած՝ անկարող լինելով հասկանալ ժողովրդական գրականութեան ահագին նշանակութիւնը, մեր նախնիքները միայն այսպես էին վարվում. գրքի լեզուն միայն գրաբարը պիտի լինի, ռամկորները (աշխարհաբարը) վայրենութիւն է և նրան կարելի է տանել միայն իբրև մի անհրաժեշտ շարիք: Իսկ անհրաժեշտ էր այդ շարիքը այն պատճառով, որ շատ անգամ և շատ դեպքերում էր հարկավոր լինում դիմել ժողովրդին: Այդ դեպքերում էլ կարելի էր գրել այնպես, որ ռամիկ ամբողջ հասկանա: Այսպես ահա մենք տեսնում ենք բժշկարաններ, տնտեսական խրատներ, որոնք թարգմանվում կամ գրվում են համարյա աշխարհաբար լեզվով, որովհետև հասարակ ժողովուրդը պիտի կարդար: Նույնիսկ եկեղեցին էլ, չնայելով որ գրաբարը դարձրել էր կանոնական լեզու, ստիպված էր մի երկու-երեք դեպքում տեղի տալ անողոք պահանջին և գործածել աշխարհիկ լեզուն: Այսպես է, օրինակ, այն հարց ու փորձը, որ անում է քահանան պսակի ժամանակ. այսպես են «գանձ» անունով հայտնի այն ողբերը, որոնք երգվում են գերեզմանի վրա, սգավորներին լացացնելու համար:

Նույն այդ հայացքը մնաց և գրաբարի վերածնութեան ժամանակ: Մխիթար Սեբաստացին հասկանում էր, որ գրաբարով ժողովուրդը դաստիարակելի չի լինի. ուստի նա կազմեց և աշխարհաբարի քերականութիւնը, գրեց իր «Քրիստոնեականը» աշխարհաբար լեզվով: Նրա աշակերտներն էլ մեղք չէին համարում հաճախ թողնել հարուստ գրաբարը և գործածել իրանց գրքերի մեջ խեղճ ու աղքատ աշխարհաբարը: Այդ փորձերը վրդովմունք չէին պատճառում հայ գիտնականներին, որովհետև աշխարհաբարը նպատակ չէր, այլ միայն միջոց: Ժողովրդին պետք էր գրքեր տալ հասկանալի լեզվով. և հայ գրողներին մնում էր ակամա գործածել ժողովրդի լեզուն իբրև միջոց գրքերը սիրել տալու, նույնպես և իբրև միջոց ժողովուրդը դեպի գրաբարը տանելու: Եվ աշխարհաբարը, ծառայելով այդպիսի մի երկրորդական նպատակի, չէր մշակվում, չէր հարստացվում, այլ վերցնվում էր այնպես, ինչպես կար ժողովրդի մեր Ավելորդ էր մշակելը, նույնիսկ վնասակար. չէ որ այդ դեպքում գրաբարը պիտի թուլանար, գուցե սաստիկ վտանգվեր:

Այսպես էին վճռել Մխիթարյանները, իսկ նրանց վճիռը արդար և պարտավորական էր ամբողջ ազգի համար: Վենետիկում XIX դարի սկզբում բավական թվով աշխարհաբար գրքեր լույս տեսան: Երբ հարկավոր եղավ պարսկական հրատարակութեան սկսել, Մխիթարյանները, առանց երկար մտածելու, ընտրեցին աշխարհաբար լեզուն: Բայց նպատակը միևնույնն էր: Ահա

ինչ էր գրում հայտնի գրադատ և ուսումնական Հ. Ինճիճյանը «Մեղանակ-Քի-
ղանդեան» պարբերական հրատարակության մեջ:

«Որովհետև մէկ մեծ պատճառն ալ, որ կարողալէն ետ կը կենայ մեր ազգը՝
է գրաբառ լեզուն չի հասկընալը, հարկ է վարպետներուն մէկ դիրին (լաւալ)
եղանակ մը կերպ մը գտնալու. հարկ է և ծնողքներուն՝ որ իրենց տղոցը վրայ
սէր (հալես) ցցենն գրաբառ լեզուն սորվեցընելու, ու անշափ ատեն թողան
դպրատան մեջ, որչափ որ պէտք է մէկ տղի մը: Ինչ դարձանալի բան է, կը
տեսնանք ժողովրդեան մէջ երկու տարվան մէջ հոռմերէն կամ ֆոանկերէն խո-
սիլ կը սորվին. իսկ մեր գրաբառ լեզուն միայն հասկընալը հազիւ մէկ քանի
հոգին կրնան սորվիլ, ան ալ մէկ քանի տարվան մէջ: Ասոր պատճառը աւ է
որ՝ լեզու մը սորվիլ կըլլայ մէջը մտնելով, չի նայելով որ մէկէն աղէկը սոր-
վիմ, սխալ չի բանեցնեմ: Մեր գրաբառ լեզուն գրեր են մտլընին որ դժար է
սորվիլ, անկէց յայտնին կտրելով սեր չեն ձգէր սորվելու. սորվողներուն քով
սէր չըլլալով, սորվեցնողներն ալ սէր չեն ունենար սորվեցնելու. անով գրա-
բառ լեզուն մնացեր է հետու օտար լեզու մը, թէպէտ և է մեր լեզու: Հասար
առաջ իր լեզուն կը սորվի, ետքը տաճկերէն և ֆոնէկերէն. մեր ազգը ունի
ջանք ամմէն լեզու սորվելու, միայն իրեն լեզուի վրայ հոգ չսնի: Որչափ
ամօթ է որ օտար ազգ հիմա սկսաւ հայերէն սորվիլ, իսկ մեր ազգը ձգեր է
իր լեզուն, օտարինը կսորվի... Հիմակվան ատենը մեր ազգին մէջ միայն գրա-
բառ հասկընալ պէտք է՝ որ գրքերը հասկընան»...

Մյուս նշանավոր Մխիթարյան հայագետը Հ. Մկրտիչ Ավգեյանը, գրում
էր 1842-ին իր «Դեղ կենաց» գրքի վերջաբանում.

«Անանկ է նէ՝ մեր ազգին մէջն որ կուզենք Աստուծով ծաղկեցնել զնե-
քին և զարտարին գիտութիւնն, էն առաջ պիտ որ ջանանք գրագիտութեան
դուռը բանալ, դուռը գոց է նէ, ինչով կըբացուի. յա՛յտ է թէ բալլիքով. գրոց
գիտութեան բալլիքը որն է. յայտ է թէ գրոց լեզուն, որ է ասել գրաբառ կամ
գրաբարբառ... Եվ սակայն ցաւալի փորձը՝ ցաւին կէօրէ զեզ տալը հարկաւոր
տեսնալով՝ հարկաւորեց մեզ որ շատ բան չէ թէ միայն պարզ և դիւրիմաց
գրաբառ ընենք, հասպ նաև աշխարհաբառ գրքեր ալ հանենք... Թան հասկը-
ցող մարդը կը հասկընայ՝ որ ժողովուրդին հալը հասկընալէն կուզայ սանկ
բան ընելը. բայց մէյմ ալ ինձի հարցընելու ըլլան նէ, ուրիշ բան ալ կլսեն.
աղէկ, աղէկ, ամմա ինչուան կ'որ ազգերնիս անգրագետ մնայ ու մեղ ասանկ
բանի պարտաւորէ, և չի թողու որ աւելի առաջ երթայ ամեն գիտութիւն և իմաս-
տութիւն ազգին մէջ»:

Եվ այսպես, Մխիթարյանները ստիպված էին գրել աշխարհաբար: Գրա-
բարի այնքան նուրբ, գեղեցիկ մշակումը օգուտ չբերեց. ժողովուրդը չգիտեր
լեզուն, մնում էր գանգատվել այս իրողութեան վրա և ճարահատալ աշխար-
հաբար գրել: Մինչդեռ հայոց գրականութեան առաջնակարգ ներկայացուցիչ-
ներն այսպես էին անում, Զմյուռնիայում 1839-ին բողոքական միսիոնար-
ները հիմնեցին «Շտեմարան Պիտանի Գիտելեաց» ամսագիրը, որի առաջին
համարում հայտարարում էին.

«Մեր Շտեմարանը աշխարհաբառ լեզուաւ պիտի ըլլայ: Գրաբառ լեզուն
գերադանց ճոխութեանը և գեղեցկութեանը վրայ մենք տգէտ չինք: Բայց
քանի որ ան ազնիւ լեզուն ազգին մեծ մասը չի հասկընար, և քանի որ ճշմա-
րիտ մարդասիրութիւնը միշտ շատերուն օգուտին կը նայի՝ քան թէ քիչերուն
բաղձանքը կատարելու, արժան դատեցինք որ մեր Շտեմարանը ուսմիօրեն
ըլլայ: Ատելի է մեղի գիտութիւնը կղպաքի տակ զնել, որ աղքատը և տգէտը
չի կրնայ առնել անոր համը: Ասիկա ջուրը և օդը անոնցմէ արզիլել է: Սակայն

չենք ըսեր թէ գրաբառը բոլորովին հալածական պիտի ընենք մեր Շտեմարա-
նէն»:

Բողոքականների այս գործը ազնիվ մրցութուն առաջացրեց: 1840 թվա-
կանին Զմյուռնիայի հայ երիտասարդութունը սկսեց հրատարակել «Արշա-
լոյս Արաբատեան» լրագիրը, որ նույնպես աշխարհաբար էր, բայց և գրաբարը
բոլորովին հալածական չէր անում: Իսկ 1843-ին սկսվեց Վենետիկում «Բագ-
մավէպի» հրատարակությունը: Գաբրիել վարդապետ Այվազովսկին էր խմբա-
գիրը և նա լավ մշակված, գեղեցիկ արևմտյան աշխարհաբար մտքից այդ
ամսագրի մեջ: Բայց ի՞նչ էր դա նշանակում: Այվազովսկին բացարձակ կեր-
պով հայանում էր, որ պէտք է աշխարհաբարը հետզհետե մշակել, մոտեցնել
գրաբարին և ձուլել նրա հետ:

«Մեր միացը, — ասում է նա, — ոչ միայն գրաբառ լեզունիս ետ ձգել, կամ
աշխարհաբար գրոց լեզու դարձընել չէ, հասպ ընդհակառակն՝ գրաբառը դի-
րաւ ծաղկեցընելուն հնարքը գտնել ու սորվեցնել է»: Ի վերջո խորհուրդ է
տալիս օտարիկներու և տղոց համար պէտք եղած գրքերէն դատ՝ ուրիշ ամեն
գիրք մեր բուն հայրենի ազնիւ և պատուական լեզուովը շարադրել, որ է գրա-
բառը»:

Մեր բերած այս կտորների մեջ երևում է ազգի այն ժամանակվա ընդ-
հանուր կարծիքը աշխարհաբարի մասին: Աշխարհաբար գրելը այն ժամանակ
հանցանք էր համարվում, ինչպես կարծում են ոմանք մեզանում: Ընդհակա-
ռակն՝ նա թույլատրվում էր, բայց մի հայտնի նպատակով: Հենց այդ էր պատ-
ճառը, որ երբ 1830-ական և 1840-ական թվականներին Մոսկվայում լույս տե-
սան մի շարք կրոնական գրքույկներ աշխարհաբար լեզվով, ոչ ոք աղմուկ ու
աղաղակ չբարձրացրեց: Տպվեց մի մեծ աշխատություն քրիստոնեական և
մահմեդական կրոնների մասին, տպվեց ավետարանի թարգմանությունը,
տպվեցին բողոքականներ, և ամենքն էլ ընդունելություն գտան ժողովրդի մեջ:

Եթե մի երկու քայլ էլ առաջ անցնենք, կտեսնենք, որ քառասնական թվա-
կանների վերջերում և յիսունականների սկզբում առաջ է գալիս աշխարհաբար
բանաստեղծությունը. Գամառ-Քաթիպան սկսում է երգել, նրա հայրը «Արա-
բատ» լրագիրն է հրատարակում մաքուր աշխարհաբարով: Գարձյալ չկա կսիվ
ու դիմադրություն: Ինչո՞ւ: Որովհետև գրաբարը շարունակում էր մեծարվել,
ոչ ոք նրա տիրապետության դեմ չէր: Ռուսահայերի մեջ էլ այն կարծիքն էր
տիրում, որ պէտք է աշխարհաբարը կամաց-կամաց մոտեցնել գրաբարին:
Նույնիսկ Խաչատուր Աբովյանցն էլ երազում էր մի այսպիսի ապագա. նա
երանի էր տալիս այն ժամանակին, երբ «մեր ազգը քիչ-քիչ կարողանայ էս
կարած գանձը գտնել»: Նա սկսում է իր «Ջանգիլն» աշխարհաբարով և վեր-
ջացնում է գրաբարով: Կարծողներ կան, թե նա այդպես արավ, որպեսզի կա-
րողանա աշակերտներին աստիճանաբար մոտեցնել գրաբարին**:

Այսպես ահա տեսնում ենք, որ շատերն էին գրում աշխարհաբարով և
այինչ մեղք գործած չէին համարվում: Իսկ նազարյանցը նույն աշխարհաբարի
պատճառով դառնում է թշնամի, հարուցանում է իր զեմ հալածանքներ, ևն-
թարկվում է ամենախիստ հարձակումների:

Ինչի՞ց էր սա:

Եվրոպական մտքին, ազգերի պատմության լավ ծանոթ այս գործիչը շատ
լավ գիտեր, որ գրաբարը մեռած է և երբեք այլևս հարություն չի առնի, որ-

* 1843, № 7:

** «Կոստիկ», 1861, էջ. 545:

քան էլ աշխատեն նրան կոկեղ և զարգարել: Որ նա անկարող է գործածական լեզու դառնալ— դա մի անհասկանալի քմահաճույք չէ, մի հանելուկ չէ, այլ մի բավական շատ հասարակ երևույթ: Այդպես է եղել բոլոր աղգերի մեջ, այդպես պիտի լինի և հայերի մեջ: Լեզուն վերանորոգվում է, լեզուն պիտի կենդանանա ժամանակի պահանջներին համաձայն. սա նույնքան բնական է և օրինավոր, որքան այն, ինչ կատարվում է երկնքի տակ՝ բնության սահմանած օրենքներով:— Նազարյանցը ուներ իր առջև համանման երևույթների մի ամբողջ շարան: Ահա հունական լեզուն. — նա այլևս Հոմերոսի և Ստրաբոնի լեզուն չէ: Ահա լատիններենը. քանի՞ նոր լեզուներ են ծնվել նրանից: Հայերի վիճակակից մի քանի ազգություններ՝ սերբերը, չեխերը, իրանց վերածնության հենց առաջին օրերում զգացին, որ պետք է դեն դնել հին, անհասկանալի լեզուն, գործ ածել ժողովրդականը: Այդ հիմքի վրա վերածնվեց ռուսաց գրականությունը: Նույնիսկ այնպիսի երկրներում, ուր վերածնության հարց չկար, լեզվի վերանորոգումը դարձյալ պահանջ էր: Ապացույց՝ Ֆրանսիական լեզուն XVII դարում. հղկված, մշակված, նրբացրած էր նա, մի շատ փարթամ ծաղիկ էր, բայց անհոտ ծաղիկ, որովհետև բուսցրած էր անբնական, արհեստական կերպով: Եվ Մալհերը ասում էր, թե գեղեցիկ, արտահայտիչ լեզու սովորելու համար չպետք է դիմել ֆրանսիական Ակադեմիային, այլ պետք է դնալ առևտրական հրապարակները և լսել ժողովրդի բարբառը: Եվ ֆրանսիական լեզուն էլ ապագայում վերանորոգվեց ժողովրդական տարրերի օգնությամբ:

Հարց էր. հայերը պիտի բացառություն կազմեն: Նազարյանցը վրդովվում էր, լսելով իր շուրջը՝ «այո»: Նա պահանջում էր, որ գրաբարը համարվի ընդամիշտ գերեզման մտած: Ոչ միայն չէ կարելի նորից հանել գերեզմանից այդ թանկագին դիակը, այլև ավելորդ է, զուր ժամավաճառություն է: Աշխարհաբարը այդ դիակի ստրուկը շարտի լինի, այլ անկախ, կենդանի լեզու. առանց նրան չկա առաջադիմություն, չկա վերածնություն. ընդհակառակն, գրաբարը պիտի ծառայի նրան, պիտի տա նրան իր հարստությունները և ինքը մի կողմ քաշվե իբրև հնադարյան հանգուցյալ: Նոր ժամանակը նոր պահանջներ է բերել. պահանջվում է ժողովրդական լեզուն՝ գիտությունները, առաջադիմության լույսը ժողովրդականացնելու համար: Քաղաքակրթությունը չէ ներում, որ ազգերը կանգ առնեն, անշարժանան: Ով չէ քայլում, նա պիտի ետ մնա, մահանա: Այդ ստիպողական անողոք պահանջը դրված է և հայերի առաջ. կամ դեպի առաջ, դեպի կենդանություն, կամ քարացում: Դեպի առաջ տանողը աշխարհաբարն է. գրաբարը քարացում է:

Ահա նազարյանցի իսկական դերը աշխարհաբարի հարցի մեջ: Ոչ որ մինչև այդ չէր խոսել այդպես: Դարերի ընթացքում ժողովրդական լեզուն լոկ-մնջիկ այդ էր ասում. նա բաղխում էր խուցերի դռները, խնդրում էր իրան ներս ընդունել: Բայց նրան չէին լսում, մանավանդ չէին հասկանում: Եթե լինեին հասկացողներ, եթե աշխարհիկ լեզուն իր իրավունքները ստացած լինեք գեթ Մխիթար Սեբաստացու ժամանակից, հայի մտավոր աշխարհը այն չէր լինի, ինչ էր XIX դարի սկզբում, հայն էլ կունենար ընդհանուրից սիրված հանրամատչելի կոկ լեզու, այդ լեզվով իր ազգային հանձարը կարտահայտեր, կդաստիարակվեր: Բայց ազգերի կյանքի մեջ, ինչպես ասում է նազարյանցը, թո՛ղքներ չեն լինում: Պետք էր սպասել երկար ժամանակ, մինչև որ գուրս կգան մարդիկ, որոնք կտապալեն աշխարհաբարի շուրջը կուտված և նրան խեղդող նախապաշարմունքները, լայն ճանապարհ կհարթեն նրա առջև: Այդպիսի մարդկանցից առաջինը մեզանում Ստեփանոս Նազարյանցն էր:

Նրա ուժեղ, սուր, ծակող ձայնը մի ցնցող նորություն էր այն բազմություն համար, որ խորապես համոզված էր, թե գրաբարից պետք էր սպասել և՛ գիտություն, և՛ լույս, թե աշխարհաբարը մի ժամանակավոր, անցողական բան է, մի անկող ու գոհիկ հյուր, որին կարելի է մի-մի թույլ տալ գրքի մեջ մտնել, երբ հարկավոր է ստորին, աամիկ ամբոխի հետ խոսել: Բնական էր, որ ցնցող նորությունը համարվեր մի անլուր սրբապղծություն, մի սոսկալի հայհոյանք: Այդպես էլ եղավ:

Իր աչք դիտարտացիայի համար նազարյանցը ստացավ հայ-պարսկական դպրություն մագիստրոսի գիտական աստիճանը: Գրվածքը թեև ռուսերեն լեզվով էր և լույս տեսավ փոքր քանակությամբ, բայց վրդովմունք և զայրույթ պատճառեց հայ «գիտնականներին»: Գիտնական անունով այն ժամանակ, ինչպես հայտնի է, պատվում էին նրանց, որոնք լավ գիտեին գրաբար լեզուն ու գրականությունը, ուսուցանում և գրում էին խրթին լեզվով: Նազարյանցի հակառակորդներից մեկը մի առանձին հպարտությամբ շարում է այն գիտնականների անունները, որոնք ռուսահայերի պարծանքն էին: Դրանք են, Սարգիս Կախկոպոս Զալալյանց, Մսեր Մսերյանց, Ստեփանոս քահանա Մանդինյանց, Գրիգոր քահանա Տեր-Ավագյանց (շուշեցի), Արեւ վարդապետ, Հակոբ Կարինյանց և այլն*:

Այն խիստ լեզուն, որ գործ էր ածել նազարյանցը հայկական գիտնականության, նրա պաշտած կուռքի և գրաբար գրականության դեմ, բորբոքեց հին սերունդը: Նազարյանցի դիմին թափվեցան հանդիմանություններ: Դժգոհ էին ամենքը, դժգոհ էր նույնիսկ ներսես կաթողիկոսը**։ Մի վարդապետ և մի աշխարհական պատրաստվում են դուրս գալ նազարյանցի դեմ, ցույց տալ նրա սխալները և սաստել, որ նա այլևս չլստահանա այդպիսի ձեռնարկություն սկսել***։ Երևում է, որ նազարյանցը իր բարեկամների նամակներից իմանում է, թե ինչ ընդունելություն է արժանացել իր գործը, ատամների ինչ կրճատոց է պատճառել: Եվ ահա 1847 թվի փետրվարի 23-ից Հովհաննես Կախկոպոս Շահաթունյանցին գրած իր մի նամակում նա թափում է իր սրտի ամբողջ թույնը.

«Թող,— ասում է,— պատվական Հայրապետը (Ներսես) դատապարտե ինձ սրբան կամենում է: Օտարների բարեբարությունը ես ուսում ստացա օտար աշխարհում. և այժմ էլ իմ երեսի քրտինքով վարում եմ իմ պաշտոնը և իմ ընտանիքի հետ կերակրվում եմ ռուսաց կայսրի դռան մոտ. հայերին ես չեմ կարոտում և հայերը անկարող են իմ դատավորը լինել. այլ ինչ կամենում էի անել և կամենում էի անձնուրաց հայրենասիրությամբ, ոչինչի տեղ դնելով իմ հայրենիքի անպիտան վարմունքը դեպի ինձ, կարող եմ և շանել, որովհետև անասնամիտ մարդիկ, խափանելով իմ բոլոր քայլերը, չեն թողնում ինձ առաջ գնալ: Կաշխատեմ եվրոպացիների համար, կգրեմ լատինական, գերմանական, ֆրանսիական և անգլիական լեզուներով՝ այս ազգերի համար, որոնք հայերից լավ գիտեն պատվել հայկական դպրությունը»:

Դարձյալ նրան դառնացնում է «մարգարեն իր գավառում պատիվ չունի» իրականությունը: Բայց այն խոսքերը, թե նա այլևս չի աշխատի հայերի համար, լոկ վրդովված սրտի մի ըոպեական բռնկում էին: Նա պիտի աշխատեր, այդպիսի մարդիկ չեն կարող լուռ ու մունջ մնալ, շաշխատել: Այս բանը երե-

* Արարատյան — «Մխիթարց գրոցն Վարդապետարան Կրօնի», Թիֆլիս, 1858, եր. 12:

** «Շահաթուն. կենսագր.», եր. 197:

*** Արարատյանց — «Դիմադ.», Թիֆ., 1858, եր. 21:

Բայց ինչ էլ լինի, Նազարյանցի Կյանքի մեջ տեղի ունեցավ մեծ հրոփոխություն: Նա պրոֆեսորի պաշտոնով տեղափոխվեց Մոսկվա և այստեղ կարող էր աշխատել հայերի համար: Թե ինչպես ազնորիչ ազդեցություն ունեցավ նրա վրա այդ տեղափոխությունը, երևում է հետևյալ հանգամանքից:

Դեռ 1847-ին նա պատրաստել էր մի գրվածք հոգեբանության մասին: Դառնացած այն վատ, նույնիսկ թշնամական ընդունելությունից, որ գտավ նրա հայկական գրականության պատմությունը, նա ուղարկեց իր այդ աշխատությունը Շահաթաբադյան եպիսկոպոսին իրրե նվեր, ափսոսալով, որ այդ բանը գրել է հայերի համար: Սակայն Մոսկվայում նա անհրաժեշտ պետք է զգում գրել այդ իսկ հայերի համար. ուստի հարկավոր է համարում հրատարակել ամենից առաջ այդ իսկ «Հոգեբանությունը», ավելացնելով մի ընդարձակ առաջաբան: Այդ առաջաբանն ավելի խիստ էր, քան Կազանում հրատարակած ուսերեն գիրքը. նույն ցավեցնող հարցերն էին լեզվի, նոր գրականության, առաջագիծության մասին:

Փորձով գիտեր նազարյանցը, թե ինչ տրամադրություն է տիրում հայ գիտունների մեջ իր այդ հայացքների վերաբերմամբ, ուստի միջոցներ է ձևոր առնում, որ այդ աշխատությունը կարելի լինի անփոփոխ հրատարակել: Տպագրելու թույլտվություն պետք էր ստանալ հայոց թեմական առաջնորդից: Նազարյանցը ուղարկում է ձեռագիրը Պետերբուրգ, այնտեղի հոգևոր կառավարության գլխավոր Եփրեմ վարդապետին, որ իր բարեկամն էր և խնդրում է նրա հոգացողությունը: «Թեև, ասում էր նա, խնդիրքի և պաղատանքի տեղ չկա այնտեղ, ուր խոսվում է անկաշառ արդարության բերանը, բայց մեր հայերի մեջ միշտ անդուրեկան են արդարախոսի խոսքերը, նախամեծար պաշտվում և վարձատրվում են կեղծավորությունը, ստախոսությունը և շողորթությունը, մինչդեռ արդարախոս ու ճշմարիտ ազգասերը ոչ միայն անվարձ է մնում, այլև բամբասվելով, հալածվելով և անարգվելով դատապարտվում է»: Ուրեմն և հարկավոր է բարեկամների պաշտպանությունը, որ ճշմարտությունը գոնե հրապարակ դուրս գա, որպեսզի ընթերցողներին մնա նրան ընդունելը կամ չընդունելը: Ենչ խոսել եմ առաջաբանի մեջ, մերայիններից շատերի սուտ անձնասիրությունը պիտի խոցոտե, — շարունակում է նազարյանցը նույն նամակի մեջ, — բայց մեր խիղճը անարատ է Աստուծու և մարդկանց առջև: Ինչ ասել եմ, ազգը սիրելով և նրա բարին ցանկանալով եմ ասել և ոչ թե թշնամի լինելով նրան»:

Հենց այդ իսկ առաջաբանը փրկելու համար էր, որ նազարյանցը իր ձեռագիրը ուղարկեց Նաշատուր Լազարյանցին, խնդրելով նրա աջակցությունը: Այդ իսկ պատճառով էր, երևի, որ գիրքը նվիրված էր Լազարյանի փոքրիկ որդի Հովհաննեսին, Լազարյանների վերջին ժառանգին, որ վախճանվել էր մանուկ հասակում, սոսկալի վիշտ և հուսահատություն պատճառելով ծնողներին: Լազարյանի անունը, վախճանված մանուկի հիշատակին նվիրված ուղերձը, որ գրել էր նազարյանցը իր գրքի սկզբում, ապահովություն էին, որ աշխատությունը հոգևոր իշխանության գրաքննության կողմից վտանգի չէր ենթարկվի: Գլխավորը, իհարկե, բուն «Հոգեբանությունը» չէր, այլ առաջաբանը: Ինքը նազարյանցն էլ խոստովանում է այդ:

Արգելքներ չեն լինում, գիրքը թույլատրվում է ամբողջովին և 1851 թվականին Մոսկվայում լույս է տեսնում նազարյանցի առաջին հայերեն աշխատությունը, մանր տառերով տպված մի բարակ գիրք, «Ծաղաղս Փորձական Հոգեբանութեան ճառ» վերնագրով:

Առաջին բանը, որ դարձանում է մեզ այդ գրքի մեջ, այն է, որ նա գրված

է մի ժամեր, արհեստական գրաբարով: Նազարյանցը գրաբարով էր հանդես գալիս. առաջաբանն էլ, որ աշխարհաբարի դասն է պաշտպանում, գրաբար է: Ինչու է այդպես: Նազարյանցը շտապում է պատասխանել թե ինչու: Նա կամեցել է ցույց տալ հայերին, թե ինքն էլ գիտե գրաբար: Ահա՛ ինչու է գրաբարը ընտրել՝ հայերին հոգեբանության պես մի առարկայի հետ ծանոթացնելու համար: Միամիտ էր նազարյանցը: Հենց առաջին քայլից նա սխալ էր գործում: Նա գրաբարից քննություն էր տալիս հասարակության, և ահա գտնվեցան մարդիկ, որոնք ցույց տվին թե նա, ճիշտ որ, չգիտե գրաբար լեզուն, այսինքն այնպես չգիտե, ինչպես գիտեն նրանք, որոնց նա տգետ էր անվանում:

Պետք է, իհարկե, հավատալ նազարյանցի անկեղծության: Բայց մենք, հեռվից գիտողներս, տեսնում ենք և ուրիշ պատճառ, որ գուցե նա չէր էլ զգում: Բանն այն է, որ նազարյանցը, պաշտպանելով աշխարհաբարի դատը, ինքը չէր գործ ածում աշխարհաբարը. նրա բոլոր, մեզ հայտնի, նամակները մինչև 1850—1852 թվականները գրված են գրաբար լեզվով: Եվ եթե մենք ուզում ենք հասկանալ այս տարօրինակ երևույթի պատճառը, պետք է դիմենք իրան, նազարյանցին: Նա մեզ ասում է, թե առաջագիծությունը թուրքերով չէ կատարվում: Ահա այդ նույն օրերն էլ խոսում էր նրա մեջ: Ժամանակի սգույց, նախապաշարժումներից միանգամից չեն ազատվել մեր առաջին գրական գործիչները: Նախանդանը, Գամառ-Քաթիպան էլ գրաբար են գրել, լավ զգալով, որ դա շարտի լինի իրանց լեզուն: Հետաքրքրական է, որ Միքայել Նախանդանն էլ գրել է մի գրաբար «ճառ»՝ աշխարհաբար լեզվի առավելությունները և իրավունքները ցույց տալու համար*:

«Փորձական Հոգեբանությունը» մի համառոտ կոմպլիքսից էր և զանազան հեղինակներից: Փոքրիկ, սեղմված հոգեբանությունը, գրաբար անմարս ոճով գրված, ապահովապես անհասկանալի պիտի մնար բազմության համար: Նազարյանցը, ժողովրդի մտավոր շահերը պաշտպանելով, ժողովրդական գրականություն պահանջելով, այդ գրքով գալիս էր ցույց տալու, թե ամենից առաջ ինքը չէ հասկանում թե ինչ պահանջներ ունի ժողովուրդը: Մի քանի խելոք բան, օրինակ մայրենի լեզվի նշանակության մասին, կարելի էր, իհարկե, քաղել այդ գրքից: Բայց ովքե՞ր պիտի քաղեին: Գրաբար իմացողները, այսինքն, ինչպես ինքը, նազարյանցն էր ասում, մի փոքրիկ դասակարգ:

Բայց թողնենք բուն գիրքը, բավական է այն, որ կազմողը խոստովանում է, թե իր աշխատության օգուտը և կարևորությունը այնքան հոգեբանության մեջ չէ, որքան առաջաբանի մեջ: Դիմենք այդ առաջաբանին:

Նազարյանցը իրավունք ուներ զգուշություններ ձևոր առնելու, ազդեցիկ միջնորդներին դիմելու՝ այդ առաջաբանը անվնաս պահպանելու համար: Այդտեղ նազարյանցը առաջին անգամ բռնում է հարձակողական գիրք. այդ առաջաբանը նրա առաջին բանակալից է հակառակորդների դեմ: Դա մի ամբողջ մեղադրական ճառ է, որ շարտվում էր կեղծ, անգործ, ինքնագոհ աղաքսերների դեմքին:

Վե՞ր բուրբում է նույն հիմնական հարցի շուրջը — աշխարհաբարը իրրե ժամանակակից գիտություն և կրթության գործիք, գիտակցական վերանորոգում կենդանի լեզվի միջոցով: Այդ հարցին մենք այլևս չենք դիմի, քանի որ մտերամասն խոսել ենք նրա մասին վերևում: Հետաքրքրականը այստեղ ինքը, վե՞ն է: «Кавказ» լրագրի 1850 թվականի համարներից մեկում Սիլվիցկի անունով մեկը աշխատում էր ջրել նազարյանցի հայացքները գրաբարի մա-

* «Հանդես Գրականական և Պատմական», 1895, № 6.

տին: Այլիցեղիկն, թէն օտարազգի, հայկական պահպանողականութեան դադար-
փարսերն արտահայտիչն էր, և նրա բերանով խոսողները հայ գրարարյան-
ներն էին: Եվ ի՞նչ էր ասում այդ բերանը:

Ի դէպքս են կարծում, ասում էր Այլիցեղիկն, թէ գրարարը մեռած է, այդ
մշակված, հարուստ լեզուն կարող է և գործածական դառնալ: Ապացուց՝ կալ-
կաթաչի հայոց գարոցը, որի շնորհիվ կալկաթացի հայերի բարձր դասակարգի
գործածական լեզուն գրարարն է: Ի դէպքս են ասում նույնպես, թէ գրքերը ժո-
ղովրդի համար չեն, որովհետեւ գրված են գրարար լեզվով: Այստեղ Այլիցեղիկն
հիացած է հայ ազգի վրա: Ընդ որ ասում են հայերը, այնտեղ երևան է գա-
լիս նրանց ինքնուրույն ազգային բնավորությունը, որի բնորոշ հատկությունն
է առևտրական և մտավոր գործունեությունը: Հիացած է նա մանավանդ այն
սիրոյ վրա, որ հայն ունի գեղի իր գրքերը: Կիսագրագետ մանրավաճառն ան-
գամ, ասում է նա, գնում է հայերեն գրքեր, դարսում է իր տանը: Հարցնում
եք, թէ ինչ գրքեր են սրանք. և հայը խորին ակնածությամբ ասում է. սա
Մովսես Լորենցի է, սա Չամչյանն է, սա Նդիշեն է: Ի՞նչ է պակասում հա-
յերին: Ըստ երևույթին. ոչինչ. նրանք երեւի վաճառականներ են, ունեն բա-
րեկարգ դպրոցներ կալկաթայում, վենետիկում, ունեն ապարաններ, գրքեր:
Նազարյանցը խիստ, կտրուկ պատասխաններ է տալիս հակառակոր-
դին: Այդ պատասխանների մեջ կան մտքեր, իրողություններ, որոնք առաջին
անգամ էին մատուցվում հայերին իրրե դառն դեղահատներ:

Հնդկաստանցի հայերի վերաբերմամբ նա ասում է, թէ այդ մի բուն գաղ-
թականությունը չէ կարող օրինակ դառնալ. եվրոպական գիտության ապա-
ցուցած ճշմարտություններին պետք է հավատալ և ոչ թէ կալկաթայի հայե-
րին: Ո՞ր է այդ հայերի լուսավորությունը. ո՞ր են այն գիտնական մարդիկ,
որոնց սրայն թէ պատրաստել է կալկաթայի դպրոցը:

Գալով հայերի վաճառականության, նազարյանցը դրա մեջ էլ հիացմուն-
քի արժանի բան չէ գտնում:

«Հայերը,— ասում է նա,— կորցնելով թագավորական թագը, ցան ու ցիր
պանդխտելով, անտուն և անհայրենիք, ծառա և ստրուկ բոլոր ազգերի Ասիա-
յում, Եվրոպայում և Աֆրիկայում, նյութական կենդանության մի միակ հնարը
վաճառականության մեջ էին գտնում»: Սակայն հայերի վաճառականությունը
գնալով հետամնաց դառավ, որովհետեւ եվրոպացիների վաճառականության
պես չէր, որ աճել է և ծաղկել քաղաքակրթության զարգացման հետ զուգըն-
թաց: Հայ վաճառականները լուրջ միջնորդներ են, առևտր-ծախողներ, իսկ իրանք
չունեն վաճառաշահական նյութերի գործարաններ, որովհետեւ զուրկ են գի-
տությունից: «Հայերի մեջ չկա վաճառականների ընկերություն, որով կարելի
է լինում միլիոններ խաղացնել գործի մեջ և միլիոններ աշխատել, այլ ամեն
մեկը իր գումարի շարժումն է և ծախում. այս առանձնությունը և ընկե-
րական օգուտ պահպանությունը նույնպես հետևանք են այն բանի, որ ազգը ան-
կիրթ է, լուսավոր չէ: Միանգամայն կասեմ. հայոց վաճառականությունը չէ
հաստատված բարոյական հիմքերի վրա, այլ հայերից որդիներին անցնելով
ժառանգությամբ և սովորությամբ, պաշտվում է իրրե ավելի հեշտ ճանապարհ
նյութական բարեկեցություն ձեռք բերելու համար: Եվ սա է պատճառը այն
տիրուր և ողորմելի տեսարանի, որ համարյա ամբողջ ազգը վաճառականներից
է բաղկացած, իսկ մի հատ գիտնական չկա, որովհետեւ գիտությունը հարգ
չունի, ուրեմն և գիտություն որոնողներ չկան. քանի որ լուրագրանչուր արժա-
նավորություն դրամով է չափվում և դրամն է, որին նվիրվում է ամեն մի ուխտ
և փափաղ: Հայոց վաճառականությունը մենք ամեն արդարացի պարծանքից

անմաս ենք համարում և ավելի նախատինք, քան թէ փառք հայկական անվան
համար:

Ասում են, թէ հայերը հարուստ ազգ են: Բայց ինչո՞վ է ճանաչվում մի
ազգի հարստությունը. չէ՞ որ այն մեծագործություններով, որոնք լինում են
ազգի օգտին: Բայց ո՞ր են այդ մեծագործությունները. ո՞ր են այն մեծա-
մեծ գանձերի ստուղներն ու արգասիքները, որ այնպիսի շտապով և տագնա-
պով հաղթում և կուտակում են հայ վաճառականները: Միայն մի հատ բա-
ցառություն կա՝ կազարյանների տունը. սակայն մի ծաղկով գարուն չէ լինում:

Ապա անցնելով հայերի գրասիրության, նազարյանցը այստեղ էլ շար-
դում է գրարարյաններին: Ի՞նչ օգուտ,— ասում է նա,— որ հայերը գնում են
դեղեցիկ ապած, ոսկեզօծ գրքեր, դարսում են իրանց տանը, բայց չեն հաս-
կանում, թէ ինչ կա նրանց մեջ: Ընդ որ ասում է թէ գրքերի մեջ ամփոփվածը
անիմանալի է գրքերի տերերի համար, ուրեմն և չէ կարող որևէ կերպով դառ-
նալ լուսավորության առիթ խավարի մեջ նստածների համար:

Իր այդ առաջին պայքարի մեջ նազարյանցը շատ անգամ է հարձակվում
իր ժամանակի ազգասիրության վրա: «Ճանաչել և սիրել հայրենի ազգը ոչ թէ
անպտուղ և սնուտի շատախոսությամբ— որ մի դժվար բան չէ, քանի որ անձի
դրկանք չէ պահանջում հօգուտ մարդկության,— այլ կենդանի և ճշմարիտ ար-
դյունքով, այն է հետախուզող մտքով քննելով իր ազգի պետքերը և փութով
գարման գանելով— այսպիսի գիտակցական ազգասիրություն չկա ուսաստա-
յերի մեջ, որոնց համար շատ և շատ երջանկություն է, եթե ամեն մեկը կա-
րողանա վաչելի մարմնական բարեկեցություն»: Ահա ինչ լեզվով գիտեր խո-
սել նազարյանցը: Չմոռանանք. նա մենակ էր այդ ժամանակը. ճանապարհ
բացողը, ճանապարհ հարթողը նա էր մենակ: «Հայություն առանց հայաբար
մտածելու և խոսելու մենք բարբարոսություն ենք համարում», բացականչում
է նա:

Եվ այս անգամ նա, իհարկե, ավելի շատ լսողներ ուներ, քան առաջին
անգամ, երբ խոսում էր իր գիտնական դիտարկացիայի էջերից: Այդ լսողը հենց
այն դասակարգն էր, որի դեմ ուղղված էին նրա հարվածները: Կարգացին գրա-
րարյանները, ավելի ևս կատաղեցան: Չկարգաց ժողովուրդը, որ կարողանար
դատ անել երկու կողմերի մեջ: Իսկ չկարգաց այն պատճառով, որ այդ բոլորը
գրարար էր գրված: Իր հետագա նամակներից մեկում նա ասում էր, թէ «Հոգե-
բանություն» հրատարակելով նա հասավ իր նպատակին. գիրքը ցույց տվեց,
որ, ինչպես ասված էր առաջաբանի մեջ, հին լեզվով գրված գրքերը անօգուտ
են ժողովրդին, որովհետեւ ոչ ոք նրանց չէ հասկանում: Եվ նա այլևս չկրկնեց
ապարդյուն փորձը: 1853 թ. լույս տեսավ նրա երկրորդ հայերեն աշխատու-
թյունը, որ միևնույն ժամանակ նրա առաջին աշխարհաբար գրվածքն է:

Չենք զարմանում այդ երևույթի վրա: Աշխարհաբար գրելը մեղանում ար-
դեն սովորություն էր դառնում, երբ նազարյանցը հրատարակեց իր այդ գոր-
ծը: Ուրիշ բան որ չորոնենք, բավական է և «Արարատ» շաբաթաթերթը, որ հա-
մարյա մի տարի հրատարակվեց Քիֆլիսում, սկսած 1850 թվականից. այդ-
տեղ տպվեց, օրինակի համար, Գամառ-Քաթիպայի «Ջարմաչր նահապետի
մահը», մի բանաստեղծություն, որ միևնույն ժամանակ աշխարհաբարի կա-
տարյալ հաղթանակն էր իր գեղեցկությամբ: Ամբողջ տարբերությունը այն էր,
որ միևնույն ուրիշ աշխարհաբար գրվածքները անցնում էին առանց աղմուկի,
նազարյանցի այս մի գործն էլ մի ամբողջ փոթորիկ հարուցեց:

Այդ աշխատությունը կոչվում էր «Վարդապետարան կրոնի, հասարակաց
հայախոսություն»: Ամենից առաջ մեր ուշադրությունը գրվում է այս հան-

վում է հենց նրանից, որ միննույն 1847-ին նա համաձայնություն է տալիս Արթուրյանցին դեռալ Քիֆիս, ուր ինքը, Արթուրյանցն էլ, պիտի գար Երևանից՝ միասին գործելու «ազգագրու նպատակով»: Եվ եթե այդ համադրությունը շաջողվեց, պատճառն այն էր, որ Արթուրյանցը հարկադրված է լինում Երևան վերադառնալ Քիֆիսից, չկարողանալով, խռիբայի պատճառով, շարունակել իր ճանապարհորդությունը դեպի Պետերբուրգ: Իսկ հաջորդ տարին Արթուրյանցը անհետ կորչում է:

Հետաքրքրական պիտի լինեն տեսնել երկու վաղեմի բարեկամներին միասին գործելիս: Երկուսն էլ նույն գաղափարով տոգորված, բայց տարբեր կերպով գործելիս,— ինչպե՞ս պիտի միաբանվեին: Արթուրյանցը քնքշասիրտ, լացող բանաստեղծ էր: Մինչև իսկ մայրենի լեզվի անհրաժեշտությունը ցույց տալու համար նա ազաչում, պաղատում էր նորահաս երիտասարդներին, մեռնում էր նրանց անունին, զուրբան էր դնում նրանց արևին: Նա գիտեր, որ իր աշխարհաբար գրվածքների համար իրան պիտի անվանեն տգետ, բայց հանձն էր առնում այդ նախատիները ի սեր ժողովրդի: Մինչդեռ նազարյանցը սառն, անողորմ պահանջող էր, ղինված խիստ դատապարտություններով, սուր սլաքներով: Նա ապացուցանում էր, որ տգիտությունը գրաբարամուլությունն է և ոչ թե աշխարհաբար գրելը: Իբրև մի հմուտ, հասկացող բժիշկ, նա առանց հաճոյարանությունների ցույց էր տալիս հիվանդությունը և հայտարարում էր, թե փրկությունը դանակի և խիստ դեղերի մեջ է...

III

Նոր դիսերտացիա: Ֆիրդուսի և պարսկական բանաստեղծության ուսումնասիրությունը: Պրոֆեսորական պաշտոն կազարյան ճեմարանում: «Փորձական Հոգեբանություն»: «Վարդապետարան Կոնի»: «Առաջին հոգեղեկ կերակուր»: «Հանդես նոր Հայաստանի»: «Գյուլստան»: «Պավլոս և Վիրգիլիա»:

Հայկական գրականության նվիրված ուսումնասիրությունից հետո նազարյանցը սկսեց պատրաստել մի նոր դիսերտացիա՝ արևելյան լեզուների գոկտորի աստիճան ստանալու համար: Գիտերտացիայի պաշտպանությունը տեղի ունեցավ 1849 թվի սկզբում, և նազարյանցը ստացավ դոկտորի աստիճան. իսկ դիսերտացիան տավեց Կազանում նույն թվին:

Այս անգամ նազարյանցը իր ուսումնասիրության առարկան էր դարձրել հայերի դրացի, հայերի վրա դարերի ընթացքում ահագին ազդեցություն արած պարսիկների գրականությունը: Նա վերցրել էր միայն պարսկական բանաստեղծությունը. գլխավոր նյութն էր աշխարհահռչակ Ֆիրդուսին և նրա անմահ «Ծահ-Նամեն»: Բայց այդ առիթով նա տալիս էր և պարսկական բանաստեղծության համառոտ պատմությունը ամենահին, մազդեղական ժամանակներից մինչև XV դարի վերջը*:

Մի կողմ թողնելով այդ ուսումնասիրության բովանդակությունը, որ ինքնբարձրության հետաքրքրական է իբրև մի անձանոթ գրականության պատմություն, մենք, նազարյանցի աշխարհայացքները պարզելու համար, երկու խոսք կասենք նրա ներածության մասին: Այդտեղ հեղինակը փառաբանում է XIX

դարի չաչն մարդկայնական ոգին: Նա ասում է, թե այժմ այլևս այն ժամանակը չէ, երբ համաշխարհային պատմությունը արհամարհում, անտես էր անում եվրոպական աշխարհից դուրս գտնվող ազգերը, կարծես թե դրանք գիտության ուշադրության անարժան բաներ են, մարդկության կորած դավակներ: Գիտությունը ամբողջ մարդկության է պատկանում և մարդկային բոլոր ցեղերը պիտի տեղ ունենան նրա մեջ, գրավեն նրա ուշադրությունը: «Արևելյան քաղաքակրթության անսահման գույնզգույն» պատկերներից մեկը այդ համամարդկային ոգուն իր կարողության չափով ներկայացնելու համար էլ նազարյանցը գրել է իր այդ աշխատությունը:

1849 թվականի փետրվարի 23-ին գրած իր մի նամակով նազարյանցը գիտում է խաշատուր կազարյանին, հավատացած լինելով, որ նա հետաքրքրվում է իր, նազարյանցի, ցույց տված առաջադիմություններով: Այդտեղ նա պատմում է, թե ինչպես ինքը պաշտպանեց իր դիսերտացիան, ովքեր էին պաշտոնական ընդդիմախոսները, ինչպես համալսարանը վճռեց հասկացնել նրան գոկտորական աստիճանը, որ գիտնական ամենաբարձր աստիճանն է: Այնուհետև նա կարող էր պրոֆեսորի պաշտոն ստանալ: Նազարյանցը գանգատվում է, որ իրան առհասարակ առաջ չեն քաշում, և այդ բանի վրա նա չէ էլ զարմանում, քանի որ հայերն էլ սառն են դեպի իրանց ուսումնականները: «Իմ կամքն ու խորհուրդները լավ հայտնի են իմաստուն իշխանիդ,— ասում է նազարյանցը.— բայց ձեր կամքն ու խորհուրդները ինձ անձանոթ են և տարակուսական են մնում մինչև այսօր: Բայց ես կրկնում եմ այստեղ, մեր ազգի շինությունը և կործանումը քաջափայլ իշխանիդ կամքից ու խոհականությունից է կախված. վարձկանների ձեռքը, օտարների ձեռքը, որոնց սիրտն ու միտքը միայն ձեր հայկական արծաթի վրա են մեխված, չպիտի շինեն հայի տունը, այլ արժանավոր և սրտացալ հայերի ձեռքը, ես խոսում եմ այն հայերի մասին, որոնք եվրոպայապես կրթված են և հայապես զգում են»:

Պարզ է այս ակնարկությունների միտքը: Նազարյանցը նորից փորձում էր պաշտոն ստանալ կազարյան ճեմարանում: Այս անգամ նա հաջողություն է գտնում: Նույն 1849-ի ամառը նազարյանցը, իր ընտանիքը ուղարկելով Գորպատ, կնոջ ազգականների մոտ, ինքը գնում է Պետերբուրգ, ուր ապրում էր խաշատուր կազարյանը: Այդտեղ նա նորից սկսում է աշխատել, որ տեղ ստանա կազարյան ճեմարանում: Վերադառնալով Մոսկվա, նա իջնում է կազարյանների տանը և սիրավեր հյուրասիրություն է գտնում այդտեղ: Խաշատուր կազարյանը համաձայնվում է տալ նրան պարսիկ և արաբական դպրության դասերը, ինչպես նաև լատիներենը, նշանակելով տարեկան ոտճիկ 1360 ռուբլի:

Նազարյանցը ուրախությամբ է ընդունում այդ առաջարկությունը: Կազարյանի կյանքին նա շտովորեց վեց տարվա ընթացքում. ամենազխալոր հրատարակող, որ ձգում էր նրան Մոսկվա, այն էր, որ այդտեղ կար հայկական շրջանի Համականալի է, որ այս հրատարակողի դիմաց ոչինչ էր ոտճիկի պակասությունը: Նազարյանցը հույս ուներ, թե պակասը կլրացնեն կողմնակի միջոցներով: Որպիսի քաղցր տպավորություն է նա ստանում, տեսնելով իր արյունակից եղբայրների պայծառ և ուրախ դեմքերը: Նա ինքն էլ ուրախանում է անկական անկեղծությամբ և գրում է. «Այժմ ատելությունը թող վերանա և մեր մեջ տարածվի սիրոյ և հայրենասիրության ոգին. այսպես և ոչ թե մի ուրիշ կերպով մեր խոցոտված ազգը դարման ու դեղ կգանն իր համար»: Դեռ չարգազույն էր իրականությունը այդ իդեալիստ մարդու համար: Երկար չէր անցել, և նա կտաններ, որ իրան շրջապատողներից շատերը երես պիտի դարձնե իրանից:

* Ահա այդ աշխատության վերնադիրը. «Абул-Касум Фердуси Тусский, творец книги царей, известный под названием Шах-Наме».

դամանքը. նազարյանցը, աշխարհական, ժողովրդական կրթութեան քարոզիչ, սկսում է այդ ժողովրդական գրականութիւնը մի կրօնական գրքով: Ի՞նչ կարիք կար: Ինչպե՞ս էր, որ մի աշխարհական մարդ կրօնի դասագիրք էր կազմում, աստվածաբանական հարցերի մեջ էր մտնում:

Այս հարցերը շոշափում են նազարյանցի ստացած կրթութեան մի գլխավոր հատկութիւնը: Նախ և առաջ նկատենք, որ նազարյանցը խոր հավատացող քրիստոնյա մարդ էր: «Մեր նոր հայախոսութիւնը սկսանում ենք մի սուրբ առարկայով, որպէս քրիստոնեական կրօնի վարդապետութիւնն է,— ասում էր նա «Վարդապետարանի» առաջաբանի մեջ:— Կրօնը ամենայն ազգերի մեծ դաստիարակիչ մայր լինելով, այլև հիմն ամենայն ազգային լուսավորութեան, մենք ևս արժան տեսանք այն փոքրիշատե լույսը, որ մեր նվաստութեան միջնորդութենովը կարող էր հասանել մեր ընկերներին, հիմնել և հաստատել կրօնի ուսման վրա»: Եվ սա նազարյանցի ծրագրի հիմնաքարն էր մինչև նրա կյանքի վերջը: Ինչպե՞ս կազմվեց նրա մեջ այս համոզմունքը:

Հիշենք նրա ստացած կրթութիւնը Ներսիսյան դպրոցում, ամբողջովին կրօնական, ամբողջովին հիմնված հոգևոր գրքերի վրա: Այնուհետև նա ունում է ստանում գերմանական դպրոցում, մեծանում է գերմանական ընտանիքի մեջ: Կրօնական հիմքը չպիտի թուլանար, այլ, ընդհակառակն, ավելի ևս պիտի դարգանար մի այդպիսի միջավայրում, ուր բողոքական ջերմեռանդութիւնն էր տիրում: Ինչպէս երևում է, նազարյանցը առանձին սեր ունեւր դեպի աստվածաբանութիւնը. իր նամակներից մեկում նա ասում է, թե գերմանական ճոխ աստվածաբանութեան հետ լավ ծանոթ է ինքը և շատ է կարդում հայտնի աստվածաբանների գործերը: Այսքանը բավական է, որ մենք հասկանանք, թե ի՞նչն էր ստիպում նրան առաջին և երկրորդ մտնել եկեղեցու դավանական հարցերի մեջ:

Գարձալ գրքի սուղաբանն է, որ գրավում է մեր ուշադրութիւնը: Նազարյանցը, մինչև սեփական ամսագրի ունենալը, գրքերի առաջաբանների միջոցով էր իր մտքերը քարոզում: «Շոգեբանութեան» առաջաբանի մեջ մենք տեսանք, որ նա պաշտպանում էր ազգայնութեան գլխավոր հիմք կազմող լեզուն: Այժմ այստեղ նա գիմում է երկրորդ հիմքին կամ, ինչպէս նա է ասում, «հոգեկեն անոթին»՝ կրօնին: Ահա ինչ է ասում նա.

«Եվրոպացի բանագետ և իմաստուն մարդերի բերանից ուսանում ենք, թե մի ազգի համար յուր լեզուն, կրօնը և յուր քաղաքականութիւնը այն մեծախորհուրդ անոթները (ամանները) են, որ ընդունելով յուրյանց մեջ աստվածեղենը և մարդկեղենը՝ պիտո է աճեցուցանելին, ծաղկազարդելին և պողպարի շինելին: Հայերը՝ ինչպէս նոցա ներկա գրութիւնն է՝ ունին միայն երկու հոգեղեն անոթ՝ լեզուն և կրօնը. քաղաքական անոթը՝ արդարև մի անշարժի մեծակշիռ անոթ, յուր և օտարի մեղքովը ոչնչացել է և չկա այժմուս: Ուրեմն հայերի իմացական և բարոյական գործակատարութեան հանգեք մնացել է լեզուն և կրօնը»:

Գիտենք ինչպէս էր նա նայում լեզվին: Մնում է տեսնել, թե արդյոք կրօնի հարցում էլ նազարյանցը ունի՞ նոր խոսք, ունի՞ անբավականութեան պատճառներ:

— Ունի, այո: Քննութեան և վերլուծութեան վրա հիմնված բողոքական աստվածաբանութիւնը այս անգամ էլ նրա ուղեցույցն էր, լուսավորում էր հայերի մեջ աննկատելի մնացած պակասութիւնները:

Հայերը հոշակված էին իբրև կրօնասեր ժողովուրդ: Գարեթի ընթացքում նրանք, ընայած սոսկալի տանջանքներին, հավատարիմ էին մնացել իրանց

ազգային եկեղեցուն: Սրանից էլ ի՞նչ մեծ ապացույց, որ այդ ժողովուրդը ամբողջապէս լցված է քրիստոնեութեան գաղափարներով: Բայց նազարյանցը մտնում է այդ ժողովրդի մեջ, որոնում է դիտակցութիւն զոնե կրօնի վերաբերմամբ, և չէ դանտում: Կա ծես, կա քրիստոնեական արտաքին կնիք,— իսկ հոգի՞ն: «Արդարև,— ասում է նա դառնութեամբ,— հեշտ և ամենահեշտ էր քրիստոնեի անուն կրել յուր վրա, արտաքին արարողութիւններով ընկերանալ քրիստոսաշեն եկեղեցուն, բայց այդպիսի քրիստոնեութեանը ոչ մի ալլ բան չէր, եթե ոչ մեքենապաշտութիւն և անձնախարհութիւն»:

Կենդանի լեզուն իբրև կամուրջ եվրոպական լուսավորութեան և ժողովրդի մեջ, իսկ կենդանի կրօնը իբրև կամուրջ քրիստոնեական բարոյականութեան և ժողովրդի բարբերի մեջ— այս է նազարյանցի հավատամբը: Ուրիշ խոսքերով՝ նա կամենում է, որ իր ազգը լուսավորված լինի և բարոյական: Ինչպէս լեզվի հարցում նա անհաշտ թշնամի էր ամեն մի մեքենայականութեան, ամեն մի արհեստականութեան, այնպէս էլ կրօնի հարցում նա պահանջում էր կենդանութիւն, իրական, անմիջական շփումն քրիստոնեական վարդապետութեան հետ: Քրիստոնյայի պարտավորութիւնը ծեսերի և արարողութիւնների մեքենայական կատարումը չէ. գաղափարը ինքնբարեբախտի պիտի մատչելի լինի հավատացողին, պիտի կատարվալ գիտակցութեամբ պաշտովի, որպէսզի արդյունքներ ցույց տա, պտղատու լինի:

Բայց ի՞նչ անել քրիստոնեութիւնը այդպէս ժողովրդականացնելու համար: Նազարյանցը ասում է. «Չենք և չենք մոռանում մեր սուրբ թարգմանչաց հրաշալի հայկաբանութենով մեզ պարզեցած աստվածաշունչ գիրքը, որ մեր քրիստոնեութեան ազրյուրն է, թեպետ՝ ցավ է աւել՝ աղբիւր ծածկեալ և թագուցեալ, ըստ որում անհասկանալի է ժողովրդին»: Այստեղից նազարյանցը, առաջին անգամ մեզանում, հանում է իր այն պահանջը, որ պետք է աշխարհաբարի թարգմանել ս. Գիրքը: Այդ պահանջը նա ավելի պարզ դնում է «Վարդապետարանի» մեջ. «Աստուածաշունչը,— ասում է նա,— պիտոյ է լինի առաջին գիրք ամենայն հայ քրիստոնէի տան մէջ. նորա դռները պիտոյ է բաց և արձակ լինէին մեծի և փոքրի համար, և ոչ թէ միայն տասն ու քսան հին լեզու իմացող հայի համար»:

Սա արդեն մի պահանջ էր, որի հետ երբեք չէր հաշտվի հայկական պահանջողականութիւնը: Նազարյանցը նոր ազմուկի և իրարանցման առիթ էր տալիս «տասն կամ քսան հին լեզու իմացողներին»: Բայց նա ոչ միայն չէր քաշվում այդ «գիտնականներից», այլև իր պարտքն էր համարում մերկացնել նրանց հասարակութեան առաջ: Նա ասում է.

«Հայոց խղճալի ազգը, երկար ժամանակ անուսում մնալով, շատ փոքր կամ ամենեւին ոչինչ ծանոթութիւն չունենալով եվրոպական բազմօրինակ լուսավորութեան մասին, այլև բոլոր ազգի ուսումնասիրութիւնը փակված մնալով արեղայական խցերի մեջ և քանի մի միակողմանի գիտնականների ձեռքում, կարծիք է հառաջացել ազգի մեջ, որպէս թե Քերականութիւն և Ճարտասանութիւն մի այնպիսի գերազանց ուսումն է, որով պիտո էր շարժել և կշռել ամենայն գիտութիւն, մինչև որ հայոց հասարակ մարդը ևս՝ քերականութեան և ճարտասանութեան անունը տալով կամ լսելով, մտածում է, թե ինչ իմաստութիւն կա և չկա աշխարհիս վերա՝ նոցա մեջ է պարունակված»: Բողոքելով այդ հին, քարացած մեթոդի դեմ, նազարյանցը ցույց էր տալիս, թե հայ գիտունները որքան ետ են մնացել ժամանակից: Հայ երևխան, ասում է նա, քաղցած ու ծարավ է, նա ուրիշի հացի մտրացկան է դարձել: «Հայութիւն բարոզելով, հայութիւն հրամայելով, հայութիւն պահանջելով, ոչինչ բան չի

հառաջանա. աշխատող հարկավոր է գործ, գործ մեծ և հոգաբարձութուն միաբան: Ահա այդ գործի տեսակետից նազարյանցը բնորոշում է, թե ինչ պիտի լինի մի հայ գործիչը: «Այսպիսի արդար հայրենասիրական գործի մեջ հարկավոր չէր փառասիրություն. օգուտը, ազգի ճշմարիտ օգուտը, պիտո է լինի ամենայն խելոք և արժանի հայի առաջին և վերջին նպատակը»: «Եվ ազգի օգուտը յառաջ տանելու համար, — շարունակում է նա հետո, — ոչ ով ծառայ չէ, ոչ ով պարոն չէ. այլ ամենեքյան պարտական են մշակ լինել, արդար և ջերմեռանդ մշակ, մեծատունը իր առատ արծաթովը և գիտնալորը՝ յուր աշխատասեր գրչովը»:

Մշակ լինելու պահանջը ամենից առաջ ինքը, նազարյանցը իրագործեց իր օրինակով: Արևելյան լեզուների դոկտոր, կազարյան ճեմարանի պրոֆեսոր, նա սկսեց մի շարք այնպիսի մանր-մունր աշխատություններ, որոնց մի ուրիշը նրա տեղ անվայել կհամարեիր կատարել: Նազարյանցին քննադատողների մեջ եղել են այնպիսիները, որոնք ջանք չէին թափել ասպացուցանելու, թե նա գիտնական չէր և գրանով ուղեցել են նսեմացնել նազարյանցի նշանակությունը: Բայց ասպացույցների կարողություն չկար: Եթե գիտնականը միայն նա է, ով իր առանձնասենյակից դուրս չէ գալիս, կյանքի հետ կապ չունի և աշխատում է իր մասնագիտության համար միայն, պարզ է ուրեմն, որ նազարյանցը գիտնական չէր, թեև կարող էր լինել: Արաբական և պարսկական հարուստ գրականությունները կարող էին բաց անել նրա առջև հետազոտությունների մի լայն ասպարեզ. և թաղվելով այդտեղ, նա կարող էր իր համար անուն ստեղծել, անուն, որ միայն մի նեղ շրջանում հայտնի կլիներ, թեև ավելի պատվավոր տիտղոսով:

Սակայն նազարյանցին գիտնականի փառքը չէր գրավում: Նա տեսնում էր, որ հայ երեխան այբբենարան շունի, տեսնում էր, որ դպրոցում տիրում է հին տիրացուական գիտությունը, որ ոչ ոք տեղեկություն չունի բնական գիտություններից, որ գրական հրապարակում չեն երևում գեղարվեստական երկեր: Նույն միջոցին երբ նազարյանցը այսպիսի մտքեր էր քարոզում, նույն կազարյան ճեմարանում կար և հայ գիտնականի տիպը: Գա Մկրտիչ էմինն էր, որ 1849-ին հրատարակեց «Ընտիր հատվածք» և 1850-ին իր սեփական հետազոտությունը՝ «Վէպը հնոյն Հայաստանի» — գրաբար լեզվով: Նա հռչակվեց իբրև հայագետ, եվրոպական գիտնականների մեջ անուն հանեց: Բայց ի՞նչ արավ հայ ժողովրդի համար: Ոչինչ: Իր գիտնականությամբ հանդերձ նա մնաց Սալլաթյանի հարազատ աշակերտը, գրում էր գրաբար, հակառակ աշխարհաբարին, հակառակ էր նազարյանցին: Նա մշակ չէր:

Մշակը նազարյանցն էր, համեստ կոչումով մի աշխատավոր, ավելի պարզ և ամենքին մատչելի ցանկություններով: Նա գիտնականներին անժանոթ մնաց, բայց դրա փոխարեն շատ լավ հայտնի դարձավ իր ազգին, որին ծառայեց իր բոլոր ուժերով և որի համար բաց արեց նոր ժամանակի դուռը:

«Մշակ, արդար և ջերմեռանդ մշակ», — ուրիշ պաշտոն նազարյանցը երբեք չէ էլ ցանկացել: Ինչո՞ւ, ասում են, նա գրեց «Վարդապետարան Կրօնի», չլինելով աստվածաբան, հոգևորական: — Հենց այն պատճառով, կպատասխանենք մենք, որ ցույց տա, թե ինչպես կարող է գիտության տեր մարդը, իր դարի լուսավոր զավակը, հասկանալ քրիստոնեությունը, և Գիրքը: Եվ իրավ, այս աշխատության մեջ մենք տեսնում ենք մի մարդու, որ աշխատել է հաշտեցնել բիրտիական պատմությունները ժամանակակից գիտության հետ, որ ազատ հայացքներ է դրել այնտեղ, ուր կույրը սխալաստիկական աստվածաբանությունը դարերից ի վեր անշարժ, քարացած հասկացողություններ է դրել,

թույլ շտալով, որ իր ասածների դեմ որևէ առարկություն անե բանականությունը, առողջ դատողությունը, վերջապես գիտությունը: Հին հասկացողություններ սրբացրած կրոնը նոր ժամանակի մարդու համար համոզիչ լինել չէր կարող: Նազարյանցը, հավատացող քրիստոնյա լինելով, իբրև գիտության մարդ, պարտավորական չէր համարում քարացած մնալ հրեական տարեգրությունների և միջնադարյան աստվածաբանների վրա: Այսպես, հետևելով Նարատաի հայացքներին, նա հրաշքները չէր հասկանում տառացի մտքով, այլ աշխատում էր գտնել նրանց մեջ այլաբանություն և այդպես էլ բացատրել շատ պատմվածքներ: Հակառակորդների համար մի շլացնող նորություն էր և այն, որ նազարյանցը դուրս է եկել եկեղեցական հայրերի ընդունած տեսություններից և տեղ տեղ դիմել է ընդհանուր պատմության, բնական գիտություններին: Այսպես, չէին կարողանում ներել նազարյանցին, որ նա համարակալվել էր ասել, թե կարելի է ենթադրել, որ մյուս մոլորակների վրա էլ ապրում են բանական էակներ: Եվ ի՞նչ էին բերում դրա դեմ: Այն, որ եկեղեցական գրականության մեջ չկա մի այդպիսի բան*:

«Իմ խորհուրդը, — ասում է նա իր նամակների մեջ, — այն էր միայն, որ այդ կրոնական և բարոյական գիրքը, որ պարունակում է յուր մեջ Քրիստոսի ավետարանի ոսկի հատիկները և ոչ թե Հայոց հիմար արեղանների ծոմած աստվածային բանը, տարածվի ժողովրդի մեջ»: Իսկ մի ուրիշ տեղ նա բացատրում է, թե ինչ է հրեական պատմությունը: «Աստվածաշունչ մատչանք է ոչ միայն մի կրոնաուսույց և բարոյախոս մատչանք, նա է միանգամայն և մի հոյակապ, անզին յիշատակարան մարդկության նախնի վիճակի, ուր ժողոված ու ամփոփված են հազարավոր դարերի փորձեր, զննությունը, ծանոթությունը և իմաստությունը, և այս պատճառով կարոտ փիլիսոփայական բազմահայաց տեսություն, և թե արժան էր մեզ վերահասու լինել նորա ճշմարտություններին, որ բոլորը վարագուրած են ասիական ծաղկավետ երևակայության գեղեցիկ պատկերների, առականների, հայելի օրինակների զգեստով, որ միակ ոճն է ասիական ազգերի դաստիարակության և իմաստության: Այս պատկերները մերկացնել, այս ստվերը դեպի լույս փոխարկել՝ ահա ճշմարիտ քրիստոնեական գիտության լուծանակի խնդիրը»:

Ահա «Վարդապետարանի» արժանավորությունները: Ահա թե ինչու այնքան էլ ավելորդ չէր, որ նազարյանցը գրեց այդ գիրքը: Պետք է խոստովանել, որ նազարյանցը, գտնվելով բողոքական աստվածաբանության ազդեցության տակ, իր այդ գրքում ցույց է տվել համակրանք բողոքական եկեղեցու սկզբունքներին: Հասկանալի է, թե ինչ սարսափ պիտի պատճառեր այդ հանգամանքը հայ գիտուններին: Մինչև այդ՝ նազարյանցը հայոց լեզվի, հայոց անցյալի թշնամին էր համարվում: Այդ դեռ ներելի կլիներ: Բայց ահա գտնում են, որ նա հայոց եկեղեցու թշնամին էլ է: Այդ մեկն արգեն ներելի չէր լինի: Արդևետև կրոնը ամեն ինչ էր հայի համար: Մինչև իսկ հայրենիքի հասկացողությունը գոյություն չունի մեր կրոնասեր հայ գիտունների համար: Առաքել վարժապետ Արարատյանը, «Վարդապետարանի» դեմ հրատարակած իր մի գրքուկի մեջ, բորբոքվում է նազարյանցի այն խոսքերից, թե հայերը անտուն անտեր են: «Առած է, — ասում է վարժապետը, — թե իմաստունները հանգիստ են սիրում, հիմարները՝ հայրենիք: Աստծուն է պատկանում ամբողջ երկիրը, աշխարհը և նրա բոլոր բնակիչները: Ապա ուրեմն որտեղ էլ լինենք, այնտեղ էլ մեր տունն է և մեր հայրենիքը, և բարեկամները, և ազգականները և սիրե-

* «Ճառագղ», 1859, կր. 174—182.

լինեցրը*։ Ահա այսպիսի թշնամիներ էին դուրս գալիս Նազարյանցի դեմ։ Եվ դրանց ձևորում ամենաթունդ զենքը, ինչպես կտեսնենք, այս «Վարդապետարան» էր։

Դեռ թողնենք թշնամիներին։ «Վարդապետարանը» Նազարյանցի առաջին աշխարհաբար աշխատությունն է, և մենք պարտավոր ենք մի քանի խոսք ասել այդ աշխարհաբարի մասին։

Մեր նոր լեզուն այժմ էլ վերջնականապես մշակված չէ, չէ ընդունել ամենքի համար անվիճելի, պարտավորական կազմակերպություն։ Եթե չափազանցություն լինի ասելը, թե յուրաքանչյուր հայ գրող ունի իր առանձին կանոնները, գոնե անհերքելի կմնա այն, որ համարյա յուրաքանչյուր գրող ունի իր առանձին հասկացողությունը լեզվի կանոնավորության մասին. շատ քիչ կարելի է գտնել մեզանում մարդիկ, որոնք աշխատած չլինեն բարենորոգիչ հանդիսանալ լեզվի հարցում։ Նազարյանցը, իբրև մի մարդ, որ առաջին անգամ դրեց աշխարհաբար գրականության ստիպողական հարցը և առաջիններից մեկն էր, որ սկսեց գործադրել այդ լեզուն, իհարկե պիտի լեզվի կանոններ և ձևեր էլ մշակեր իր համար։ Չենք կարող ասել, թե նա սկզբից ևեթ անսխալ կերպով ըմբռնեց նոր լեզվի հարստության, ճկունության գաղտնիքը։ Հասկանալով, որ դա պիտի լինի ժողովրդական լեզու, նա, այնուամենայնիվ, ավելի գրաբարին մոտ մնաց, քան գործածական լեզվի ձևերին։ Ինչ ասել կուզի, որ դրա մի գլխավոր պատճառն էլ այն էր, որ Նազարյանցը հեռու էր ժողովրդից, նրա խոսակցական լեզվի ազդեցություն տակ չէր գտնվում։ Հայրենիքից հեռու մի տեղ, հայկական մի փոքրիկ գաղթականության մեջ, որպիսին էր Մոսկվան, լեզուն հեշտ կարող էր զրկվել իր հյուսիսից, չորանալ։ Բուն Հայաստանում չկար գրականություն աշխարհաբար լեզվով։ Արտվյանցի «Վերջ Հայաստանին» դեռ չէր հրատարակված, Մոսկվայում դեռ նոր էին սկսել հրատարակել մեր ժողովրդական հրգիչների՝ Սայաթ-Նովայի և մյուս աշուղների երգերը։ Այսպիսի հանգամանքների մեջ Նազարյանցը չէր կարող միանգամայն ազատվել գրաբարի խնամակալությունից և ստեղծել մի բոլորովին պարզ ու կենդանի լեզու։

Ասենք այդպիսի բան անհարին էլ էր կատարել. լեզուն էլ, ինչպես և ամեն մի կենդանի օրգանիզմ, ենթարկված է հաջորդաբար զարգանալու օրենքին։ Նազարյանցը լավ էր հասկանում այս բոլորը։ Նա չէր ասում, թե ինքն է առաջին և վերջին խոսքի տերը նոր լեզվի մշակման գործում։ Նրա կարծիքով, գրաբարը պիտի տեղի տա աշխարհաբարին, բայց մի աշխարհաբարի, որ ժողովրդի գործածական լեզուն չէ։ «Վարդապետարանի» առաջաբանի մեջ նա ասում է.

«Եռոսելով մի նորահայ լեզվի վերա՝ որ կարող էր լինել այժմյան յուսավորության հարմար ճանապարհ, ոչ մտածել ենք երբեք և ոչ մտածում ենք, որպիս թե այդ նորախոս լեզուն պետք է լիներ այն գոհակական ուսմակախոսությունը՝ խանգարված ամենայն տեսակ այլազգի բառերով, ամենևին աչ աչ աղավաղյալ և վայրենացյալ լեզվովը չէ կարելի ոչինչ գործ հառաջ տանել, այլև ոչ մի առողջամիտ կրթյալ անձը՝ խոսելով յուր ընկերի հետ՝ արժան կհամարեր ծառայանալ տգետ խառնիճաղանձի լեզվին։ Ամենայն ազնվամիտ հեղինակ, կամենալով օգուտ բերել յուր ազգին և ձեռնտու լինել նորա լեզվի շինությունը՝ պարտական էր տղմի մեջ կորած ընկերը դեպի յուր կողմը վեր քաշել և ոչ թե ինքը ցած իջանել նույնիսկ ապականություն մեջ»։

* Սխալանք, Եր. 181

Այս արհամարհական վերաբերմունքը դեպի ժողովրդի գործածական լեզուն պատճառներից մեկն էր, որ Նազարյանցը, ինչպես ցույց է տալիս և մեր այստեղ բերած կտորը, ավելի գրաբարի ձևերին կպատվ, քան թե աշխարհաբարի ոգուն, հիմքերին։ Եվ նրա լեզուն մնաց միշտ մի տեսակ շինծու, արհեստական, կարինետային, այսինքն՝ զուրկ հայրենի հողի և օդի ազդեցությունից, կենդանի նյութից։ Յուրաքանչյուր վերանորոգիչ մի հայտնի շափով միակողմանի աղանկավոր է։ Եվ Նազարյանցը, իբրև աշխարհաբար գրող, ուներ այդ հիմնական պակասությունը։ Ոչ միայն ինքը մնաց իր ընտրած ուղղության հավատարիմ, այլև ազդեց ուրիշների վրա էլ, իբրև խմբագիր ուղղելով և իր կանոններին ենթարկելով ամեն մի գրվածք։ Այնպես որ մեր աշխարհիկ լեզվի զարգացման պատմության մեջ Նազարյանցի լեզուն գրավում է մի բավական աչքի ընկնող շրջան, որը հարմար կլիներ անվանել «Մոսկվայի շրջան»։ Մոսկվայի ենք ասում, որովհետև ուրիշ տեղ նա գոյություն չուներ և մեր աշխարհաբարը սկսեց մոտենալ ժողովրդական լեզվին միայն բուն հայաբնակ տեղերում, Անդրկովկասում։

Նազարյանցի աղանդավորության մի նշան էր և այն, որ նա աշխատում էր թարգմանել այնպիսի օտար բառեր, որոնց համանիշը չկա հայերենի մեջ, թեև միևնույն ժամանակ ընդունում էր, որ օտար բառեր պետք է մտցնել հայերենի մեջ և ինքն էլ մտցնում էր։ Հիշենք միայն նրա գիտնական տիտղոսը. «զրկտոր» բառը նա համառությամբ թարգմանում էր «վարդապետ» և այդ պատճառով էլ երբեմն նույնիսկ սրամիտ ծաղրի էր ենթարկվում իր հակառակորդների կողմից, որոնք ցույց էին տալիս այդ սխալը, անվանում էին նրան «անվեղար վարդապետ» և այլն։

Նույն 1853 թվին Նազարյանցը հրատարակեց իր «Առաջին Հոգեղեն Կերակուր» անունով աշխատությունը։ Դա առաջին աշխարհաբար դասագիրքն է մեզանում*, սկսվում է այբբենարանով և պարունակում է իր մեջ երեխայի առաջին տարիների ընթերցանության նյութերը։

Այս գրքի մասին երկար խոսելու կարիք չկա։ Հարց կարող է լինել միայն այն մասին, թե որքան նա համապատասխանում էր իր ժամանակի մանկավարժական հասկացողություններին, որքան Նազարյանցը կարողացել է հեշտացնել դասատվության եղանակը։ Քննել այդ հարցը այժմ դժվար է, որովհետև հիսունական թվականների մանկավարժական իդեալները շատ հեռու են մեր ժամանակի հասկացողություններից։ Մեզ համար բավական կլինի համեմատական շափը. ի՞նչ ունենինք մենք և ի՞նչ տվեց Նազարյանցը։

Բուն այբբենական մասում, որ պիտի տառագիտություն սովորեցնեք երեխաներին, Նազարյանցը այնքան էլ չէ կարողացել հեռանալ հին մեթոդից, երբեք, բէ, բբ վարժությունները, նույն միավանկ, երկու, երեք, չորս և ավելի վանկեր ունեցող բառերի կույտեր։ Նորությունն այն էր, որ երեխան այբուբենից հետո շափտի ամիսներ մաշեցնեք սաղմոսը վանկերով կարդալու վրա, մի բնական, կատարելապես մեքենայական աշխատանք, որ նվիրագործել էր հին մեթոդը, այլ պիտի անցնեն պարզ ու հասկանալի լեզվով գրածի մասին, որ պարունակում է իր մեջ աղոթքներ, բարոյական խրատներ, առակներ։ Բայց այստեղ Նազարյանցը, խույս տալով մի ծայրահեղությունից, ընկել է մի ուրիշ ծայրահեղության մեջ։ Այսպես. «Քանի մի ընտիր խոսքեր» վերնագրի տակ

* 1850 թվին Վենետիկում Հ. Արսեն Բադրասունին հրատարակեց «Նոր Այբբենարան», որի մեջ բացատրություններ և մի քանի վարժություններ աշխարհաբար լեզվով էին։

շարժած են բազմաթիւ հին մարդկանց ասածները, և երեխան անդադար պիտի հանդիպի Պղատոն, Քեմիստոկլես, Սկիպիոն, Ապոլոգորոս և այլ այսպիսի անունների, լիմանալով, իհարկե, թե ինչ են դրանք և թե ինչու ինքը պիտի իմանա այդ խորթ անունները: Ստացվում էր դարձյալ նույն մեքենականութունը:

Նազարյանցը դգում էր, որ հայ ժողովրդի կրթութեան նվիրված մարդը պիտի լինի հանրագիտակ, էնցիկլոպեդիստ: Այդ ժողովուրդը ոչինչ չգիտեր և նրան պետք էր սովորեցնել ամեն ինչ՝ բնական պատմություն, ֆիզիկա, աստղաբաշխություն, քիմիա, աստղագիտություն, քաղաքաբանություն: Ահա այդ բոլորն էլ նա մտցրել է իր այս դասագրքի մեջ: «Ճանկալի էր մեզ, պատվելի հայ ծնողներ, սրանից ավելի բաներ զննել ձեր երեխաների առջև, — ասում է նազարյանցը գրքի վերջաբանում, — բայց կասկածելով, թե միգուցե ծանրաբեռնի նոցա միտքը, և իմ փոքր գիրքս փոխանակ օգուտ բերելու՝ ձանձրության պատճառ լինի, բավականացա փոքր ի շատե տեղեկություն տալով այն առարկաների մասին, որոնց վերա հիմնված է մեր ժամանակի լուսավորությունը»: Նպատակը լավ է, բայց կազմողը չէ կարողացել շափ ճանաչել և այն բանը, որից նա վախենում էր, այսինքն՝ «ձանձրության պատճառ» լինելը, ինքնըստինքյան կար գրքի մեջ, որ եթե «փոքր գիրք» է կոչվում, պատճառն այն է, որ տպված է շատ մանր տառերով: Չափազանցության մի օրինակ կարող է դառնալ հենց այն, որ նազարյանցը դնում է հայ երեխայի առաջ այն 33 պետությունների անունները, որոնցից կազմված էր Գերմանական դաշնակցությունը, մինչդեռ հայաբնակ քաղաքներից մի քանիսի անուններն են միայն դրված: Երեխան այդ դասագրքից համարյա ոչինչ չպիտի իմանար իր ազգի հայրենիքի և պատմության մասին: Դա ավելի օտար լեզվից թարգմանված մի դասագրքի է նման: Նշանակենք մի սրտառուչ հանգամանք. հիշատակելով Դորպատի անունը, նազարյանցը գրում է. «Այս քաղաքում էր յուր կրթությունը ստացել հաշտուր Ապոլյան՝ երևելի Հայկազունը, որ ափսոս՝ շուտով թառամեցավ իր ազգի համար»: Դասագրքի մեջ մտցրած այս խոսքերը ցույց են տալիս, թե նազարյանցը որպիսի սրբազան պատկառանքով էր վերաբերվում իր հոշակավոր ընկերին: 1853 թվականին Աբովյանցը դեռ հայտնի չէր հայ ազգին. առաջին անգամը նազարյանցն էր նրան անվանում երևելի հայ, թեև դուցե չգիտեր էլ թե Աբովյանցը գրած ունի «Վերք Հայաստանի»:

Վերջացնենք մեր խոսքը այս գրքի մասին, աչքի առաջ ունենալով նույն համեմատական չափը: «Առաջին Հոգեղեն Կերակուրը» եթե անաշուղ էր իբրև դասագիրք, շատ օգտակար, խելոք մի բան էր առհասարակ իբրև ընթերցանության գիրք: Նա ամբողջապես մի նորություն էր հայ ընթերցողի համար: Եվ այդ նորությունը իր ազգին տալու համար խեղճ նազարյանցը սրբան աշխատած պիտի լինի, որքան դես ու դեն ընկած: Երբ արևելյան լեզուների պրոֆեսորը կազմում է թվաբանություն, աշխարհագրություն, բնական պատմություն, մենք պետք է իմանանք, որ նրան ղեկավարում էր մի անհուն սեր դեպի իր ազգի լուսավորության գործը:

Բայց այդ սերը պիտի արտահայտվեր ավելի մեծ գործի մեջ: Դասագիրքը տարրական հասկացություններ կարող էր տալ: Նազարյանցը միաժամանակ աշխատում է պատրաստել ավելի ընդարձակ նյութեր հայ ընթերցողի լայն զարգացման համար:

Այս դարձանակի աշխատասիրության արդյունքն էր «Հանդէս Նոր Հայաստանի» ստվար գործը, բազկացած երկու հատորից, որոնք լույս տեսան 1857 թվականին: Գործի միայն ծավալը բավական է ցույց տալու, թե որքան

ջանք ու աշխատանք է թափել նազարյանցը. երկու հատորները միասին կազմում են 1005 երես, մեծ ութաժառ, տպած մանր տառերով*: Աշխարհաբար լեզուն աստահայերի մեջ դեռ շտեմնված մի հաղթանակ էր տոնում: Նազարյանցը այժմ, իսկ որ, ապացուցանում էր, որ նոր լեզուն կարող է և պիտի լինի լուսավորության, կրթության գործիք:

Մարդիկ, որոնք չէին կամենում, որ նազարյանցը մի լավ բան արած լինի, որոնք ամբողջ սրտից ցանկանում էին նրան ոչնչություն և անհայտություն, երկու հատոր «Հանդէս»-ի դեմ այն էին գտնում գլխավորապես, որ դրանք դասագրքեր են երեխաների համար, իսկ իբրև դասագիրք՝ դրանք բոլորովին անպետք բաներ են: Դասագիրք՝ այո՛, այս անունը կարելի է ընդունել «Հանդէսի» նկատմամբ. բայց դասագիրք ոչ թե երեխաների համար, այլ ամբողջ ժողովրդի համար: Բժախնդրություն և աններելի բժախնդրություն է այդ ստվար հատորները համարել փոքր երեխաների ընթերցանության համար նշանակված գրքեր, հիմնվելով, երևի, այն բանի վրա, որ մի քանի հոգվածներում կազմողը դիմում է ընթերցողին «մանուկներ», «երեխաներ» բառերով, որ «Հանդէսի» մեջ կան մանկական ընթերցանության հարմար կտորներ էլ, այդ չէ կարելի ուրանալ: Բայց դատելով գործի ամբողջությունից, դա «Առաջին Հոգեղեն Կերակուր»-ի ծրագրով կազմված մի ընդարձակ ժողովածու է, որի մեջ ընթերցանության օգտակար նյութեր կային թե երեխաների, թե երիտասարդների և թե չափահասների համար:

«Մեր խորհուրդը այն լինելով, — ասում է նազարյանցը, — որ մի հարմարավոր ընթերցանության գիրք տայինք ազգին, թե արժանապես ժամանակ անցուցանելու և թե յուրյանց միտքը ճոխացնելու այսպիսի ծանոթություններով, որ հարկավոր էին մեր ժողովրդի փոքր ի շատե կրթյալ հայ մարդուն, այլև յուրյանց սիրտը և զգացողությունը ազնվացնելու գեղեցիկ գաղափարներով թե բարոյական և թե կրոնապաշտական մասին. մեր խորհուրդը այն լինելով, որ տայինք ազգին մի բազմօրինակաբար դաստիարակիչ և առաջնորդող գիրք, որ լցուցաներ նոցա իմացական և հոգևոր պիտույքը, ընտիր-ընտիր եվրոպական աղբյուրներից հանեցինք զանազան իմաստալից գրույցք»:

Նպատակը հայտնի է ու պարզ — տալ հայ ընթերցողի ձեռքը զրական և գիտական մի ժողովածու, որ լինի մի տեսակ էնցիկլոպեդիա ինքնակրթության համար: Եվ իբրև այսպիսի նպատակի ծառայող մի աշխատություն՝ «Հանդէսը» շատ բազմակողմանի է և հարուստ: Ի՛նչ ասեք, որ նախատեսած չինի նազարյանցը: Նա տալիս է թեթև ընթերցանության նյութ առականների, պատմվածքների ձևով, տալիս է բնագիտություն, աշխարհագրություն, պատմություն, բուսաբանություն, բանաստեղծություն, կենսագրություն, հանքաբանություն և այլն, և այլն: Կարելի է առարկություններ անել այս կամ այն հոգվածի դեմ, կարելի է համաձայնվել, որ մոռացված են բաժիններ, օրինակ, որ պակասում է եվրոպական գեղեցիկ գրությունը, որի տեղը բռնել են արևելյան գրույցները: Բայց ընդհանուր առմամբ, առհասարակ, պետք է զարմանալ, հիանալ նազարյանցի համառ, տեղուն աշխատասիրության վրա, որ այսպիսի պատկառելի գործ է տվել: Նկատվում է նազարյանցի դաստիարակչական բարձր ձգտումը — ծանոթացնել հայ ընթերցողին բնության, մարդկության հետ: Սա

* Թե ինչ տպավորություն է թողել ծավալը ժամանակակիցների վրա, երևում է նրանից, որ Արարատյանը իր «Դիմադրա» գրքույկի մեջ ասում է, որ եթե «Հանդէսի» առաջին հատորը մեծ տառերով տպված լինի, կդառնար Յայաստանի շափ մի բան և այն ժամանակ «վայ գեղեցիկ և ընթերցողին»:

մի ահագին ծառայություն է, եթե նկատի ունենանք մի շարք սերունդներ, կրթված և սնված միջնադարյան աստվածաբանության, կեղծ կլասիկական բանաստեղծությունների, ճարտասանության, կովդինի փիլիսոփայության վրա: Ասլլանթյանների դարը անցնում էր. նրա փոխարեն մեր գրականության մեջ էր մտնում տասնիններորդ դարը, բնագիտության, հետազոտության, գրական ուսումնասիրությունների դարը:

Չենք ասում, թե նազարյանցն էր բերում հայերին այդ դարը: Պարտավոր ենք արձանագրել, որ գերմանական ուղղությունն էր այդպես կերպարանափոխում մեր մտավոր աշխարհը. իսկ գերմանական կրթությունը ամենից առաջ արտահայտություն է գտել մեզանում Վիեննայի Մխիթարյան միաբանության միջոցով: Նազարյանցից շատ առաջ, 1840-ական թվականների սկզբից, մենք գտնում ենք Վիեննայի հայ վանքում մի դարմանալի եռանդուն և օգտակար դործունեություն. կրոնական ուղղությունից անկախ, այնտեղ ծաղկում է գիտական ուղղությունը: Հրատարակվում է տարիների ընթացքում մի ամբողջ գիտական գրադարան. այդտեղ կա ընդարձակ ֆիզիկա, կենդանաբանություն, բուսաբանություն, տիեզերագրություն, օդերևութաբանություն, հողագործություն, վաճառագիտություն, արհեստագիտություն. հրատարակվում են առանձին մենագրություններ ընդհանուր պատմությունից, թարգմանվում են և հեղինակվում են վանական տեսակետին համապատասխանող վիպական և թատրոնական գրվածքներ: Եվ այս բոլորը աշխարհաբար լեզվով:

Նազարյանցը առաջինն էր ռեթե հայոց գրականության մեջ, այլ ուսահայերի մեջ, որ այդ նոր ուղղության առաջնորդը հանդիսացավ: Մի հատմարդ, առանց օգնականների, առանց հարմարությունների, շունենալով ձեռքում մշակված հարուստ լեզու, նա շարասյանց դավարություններից և 1000 տպագրած մեծադիր նրևների վրա տվեց իր ազդին այն, ինչ կարողացել էր քաղել եվրոպական շքեղ գրականությունից: Ուր են այդպիսի տոկուն աշխատավորներ, ազնիվ, եռանդոտ մշակներ: «Հանդէսը» ունի հոդվածներ, որոնք այժմ էլ հետաքրքրությամբ կկարդացվեն. Քրիստափոր Կոլումբոսի և Մարտին Լյութերի կենսագրությունները այժմ էլ կարող են այդպիսի ժողովածուների դարդ կազմել: Նազարյանցի օրերից շատ ժամանակ է անցել, պատմական գիտությունը ահագին առաջադիմություն է գործել. բայց կարո՞ղ ենք ցույց տալ մեր գրականության մեջ ռեֆորմացիայի մի այնպիսի մանրամասն, առաջավոր գաղափարներով տոգորված պատմություն, որպիսին տվել է նազարյանցը «Հանդէսի» երկրորդ հատորում...

Իրավունք ունի Միքայել Նալբանդյանը, գրելով «Հանդէսի» առաջին հատորի թողած տպավորության տակ, հետևյալ տողերը. «Այս րոպեիս մեր սիրտը լցված է մի հոգեպայծառ ուրախությամբ: ...Ահա մեր նոր մատենագրությունը խելով մի հնացած ու վատտակած ծերունու ձեռքից՝ դորա կարգից դուրս երկարատև քաղաքական իրավունքը, որպես ժամանակի հարազատ որդի, հառաջ է խաղում մեծ մեծ քայլերով և տանում է յուր հետ միասին և մեր ընթերցող ազգը»: Դեռ շատ քչերն էին այսպես մտածողները: Բայց այս քչերի համար որպիսի մեծ մխիթարություն էր գործելը: քրտինք թափելը: Նրանց սուրբ ջանքերով ոչ միայն գոյություն իրավունք էր ստանում նոր լեզուն, այլև ստեղծվում էր նոր գրականություն: Դեղեցիկ ժամանակներ: Եվ այդպիսի ժամանակներում «Հանդէսի» պես մի հսկա գործ կատարողը չէր կարող չոգևորել իր դեռ սակավաթիվ կողմնակիցներին: Այդ ոգևորության արտահայտություն

կարող ենք համարել Նալբանդյանի այս խոսքերը. «Հեղինակը (Նազարյանցը) կարող է մխիթարվել, որ յուր աշխատությունը, յուր տարիներով շարժարանքի վաստակը դարձած է այս րոպեիս մի հավիտենական դեղեցիկ արձան, որով պիտո է անմահանա նորա միշտ դեղեցիկ անունը»: Երիտասարդական ոգևորության մեջ ներկի են և շափաղանցությունները. «Հանդէսը» մենակ չէր կարող անմահացնել նազարյանցի անունը: Եվ այդ բաները մեզ համար միայն այն նշանակություն ունին, որ ցույց են տալիս, թե որքան հիացած էին այն երիտասարդները, որոնք հասկանում էին նազարյանցին:

Իսկ ինքը՝ նազարյանցը, նա էլ ոգևորվեց և շափաղանցությունների մեջ ընկավ: Երկու խոշոր հատորների տպագրության հանգամանքները վերին աստիճանի խրախուսական էին: Գործը պահանջում էր խոշոր ծախսեր. բայց նազարյանցին օգնեցին. Մոսկվայում և այլ քաղաքներում փող հավաքեցին տպագրության ծախսերի համար. միայն Պետերբուրգի հայերը առաջարկեցին նազարյանցին 1500 ռուբլի օժանդակություն: Եվ ահա նազարյանցը, խրախուսված ու ոգևորված, առաջին հատորի առաջաբանում փառաբանում է գրքի բարերարներին: Այստեղ այլևս դառնացած, գանգատավոր նազարյանցը չէ: Այժմ նա հավատում է, որ ուսահայերն էլ զգում են իրանց օգուտը, գիտեն խրախուսել իրանց գործիչներին: «Այսուհետև տգետ և խաբեբա հոգիքը չեն կարող ճնշել ու շեղուցանել պայծառացյալ ճշմարտության հաղթող լույսը», ասում է նա և բերելով իր գլխավոր մեկենասների անունները, գրելով այդ անունները «հայրենակիցների սրտի տախտակի վրա», նա հասնում է այն աստիճանին, որ ասում է. «Հայոց ազգը թող ճանաչե յուր բարերարքը, թող մխիթարվի տեղաներով, թեև յուր հասարակության մեջ կա առաքինություն, կա պատրաստականություն ընծայարներ լինել մարդկության հոգեզնն օգտի համար: Թող քաղցրանա նորա սիրտը տեսանելով քանի մի վարդեր և մանուշակներ կանաչած այն հողի վերա, ուր մինչև այժմ բուսանում էին փուշ և տատակ»:

Անշուշտ, շափաղանցություններ են սրանք, սաստիկ ոգևորության զեղումներ: Տկարներին հետ տկար լինել էր որոշել նազարյանցը իր ազգի օգտի համար: Այստեղ այդ թուլությունը համարյա ծայրահեղության էր հասնում: Բայց մենք դարձյալ չենք կարող դատապարտել այդ ոգևորությունը. այդ շափաղանցությունը, որովհետև երևակայում ենք այն անկեղծ, մաքուր հափշտակությունը, որ տիրած պիտի լիներ նազարյանցի սրտին, իր բազմամյա աշխատանքները այդպես պսակված տեսնելիս: Երևակայեցե՞ք դուք էլ. երևակայեցե՞ք հայ հեղինակին կես դար սրանից առաջ, նրան շրջապատող հանգամանքները, նրա դեմ հարուցած թշնամությունը, աղմուկը և հանկարծ այսպիսի ուշադրություն հասարակության կողմից: Անկարելի էր չհափշտակվել: Այդ հափշտակությունը, եթե կամենում եք, շատ էր հարկավոր. «Հանդէսի» տպագրությունը ցույց էր տալիս, որ կարելի է և ամսագիր հրատարակել, և մենք համոզված ենք, որ նազարյանցը հենց այդ միջոցին հաստատապես վճռեց «Հիստորիայի» սկիզբը դնել: Իրականությունը, ճիշտ է, այնքան էլ վարդազույն չէր և շուտով, շատ շուտով նազարյանցը էլի բողոքավորի դիրքում պիտի լիներ: Բայց այս տեսակ անհրապույր իրականության մեջ հարկավոր է ոգևորություն, հափշտակություն մի պատահական երևույթից, մի խրախուսիչ հանգամանքից: Ուրիշ կերպ գործ ու գործիչ չեն առաջանա այդպիսի հասարակության մեջ:

Մատենագրական տեսակետից շատ հետաքրքրական կլիներ որոշել, թե ինչպես է կազմել նազարյանցը իր այդ երկու սովոր հատորները. արդյոք

* «Հյուսիսագիտություն», 1858, № 1:

բոլոր հողվածները թարգմանութուններ են, թե ինքը նաղարյանցն էլ ունի իր սեփական աշխատությունը իբրև հեղինակ կամ կոմպիլյատոր: Դժբախտաբար, այս հարցը չէ կարելի լուծել. նաղարյանցը հարկավոր չէ համարել ցույց տալ, թե որտեղից է վերցրել և ինչպես է վերցրել հողվածները (միայն մի երկու հողվածի տակ կան հիշված աղբյուրները): Եվ սա բնորոշ է այն ժամանակվա գրական բարձրի տեսակետից: Միայն նաղարյանցը չէր այսպես մյուսներն էլ օգտվում էին ուրիշների գրվածքներից, թարգմանում էին, բայց հարկավոր չէին համարում հիշել աղբյուրները:

Ի վերջո մենք դարձյալ պիտի հիշատակենք նաղարյանցի հակառակորդներին: Որքան լավ էին դնում նրա գործերը, որքան հայտնի էր դառնում նրա անունը, այնքան ավելի կատաղում էին հայոց հնացած «գիտունները». նրանք գործում էին եռանդով, աշխատում էին ասպարեզ շտալ նաղարյանցին: Մենք հետո կտեսնենք, թե ինչ և ինչ պատրաստություններ էին տեսնվում նույն 1857 թ. Քիֆլիսում: Այստեղ միայն կհիշատակենք այն, ինչ անմիջապես վերաբերվում է նաղարյանցի աշխարհաբար գրքերին:

Քիֆլիսում կազմակերպված հակառակությունը հանեց նաղարյանցի դեմ Առաքել վարժապետ Արարատյանցին: Մենք գիտենք արդեն, որ նա մի ժամանակ նաղարյանցի ընկերն էր ներսիսյան դպրոցում, ապա և ուսուցիչ: Ահա այդ մարդը 1858-ին երկու գրքույկ հրատարակեց նաղարյանցի դեմ: Մեկը, որ կրում էր «Իմագրաւ ընդդէմ սատան յարուցելուց ամենապատուական լեզուիս հայոց» վերնագիրը, պիտի ոչնչացնէր նաղարյանցի աշխարհաբարը, իսկ մյուսը՝ նրա «Վարդապետարան Կրօնին»: Մի քանի փաստեր բավական են, որ ցույց տան, թե ինչպիսի ոչնչացնող էր այդ վարժապետը:

Նաղարյանցը գրում է աշխարհաբար, Արարատյանցը պատասխանում է, ուղղում է գրաբարով: Նաղարյանցը գրում է. «Բարձրացալ մի սաստիկ պատերազմ. բարձրացալ մի սաստիկ մրրիկ», Արարատյանցը ուղղում է. «Պատերազմ և մրրիկ ոչ անկանին ի վայր, զի բարձրացին. չէ՛ այդ ոճ հայոց: Հարազատութիւն լեզուին պահանջէ ասել. եղև պատերազմ մեծ. Յարեաւ մրրիկ սաստիկ»: Նաղարյանցի «Նրեխաների ձեռքը գավազան գրեց» խոսքերը Արարատյանցը այսպես է ուղղում. «Նրեխայոց ձեռքը փէտ տուուց»: Ինչո՞ւ: Որովհետև, ասում է վարժապետը, «գավազան ասելով հենց կիմանան թե վարդապետի կամ տերտերի գավազան է, և ոչ ձեծելու փետ»: «Նալերի համար կերակուր պատրաստել» — ասել է նաղարյանցը: «Նալը կերակուր ոչ ուտեն. պարտ է ճշտութեամբ ասել՝ նաւորդաց համար», պատասխանում է Արարատյանցը: Բայց կա ավելի հրաշալին: Նաղարյանցը պատմում է լուսնի մասին, գիտություն վերջին գյուտերի համաձայն: Արարատյանցը վրդովվում է. «Պավղոս (առաքյալը), ասում է, մինչև յերրորդ յերկինս յափշտակեցաւ և լուսանդ բանս անճառս զոր ոչ է պարտ՝ ասէ, մարդոյ խօսել: Որպիսի գաղտնիք է, որ միայն վարդապետին նաղարեանց յայտնեցաւ, և այլոց սքքոց և ծառայից ոչ երբէք»:

Ահա ինչպիսի բուր ու ժանգոտած դենքեր էր հանում հայկական հնամուլ ինքնագոհությունը այն մարդու դեմ, որ հարվածում էր նրան եվրոպական գիտության դենքերով: Սա գիմագրություն չէր, սա պատին սեղմած անշարժության հուսահատական աղմուկ էր: Նաղարյանցը, իհարկե, ուշադրություն չդարձրեց իր այդ ողորմելի հակառակորդի վրա, որ աղաչում պաղատում էր ուղղակիորեն հայերին ղգուշանալ այդ նոր մարդուց, չկարգալ նրա գրքերը, որովհետև նա ազգի տուն քանդող է, լուրբերական է և այլն:

Նաղարյանցի բոլոր տպագրած գրքերը հիշատակած լինելու համար ասենք և այն, որ նա թարգմանեց պարսկերենից ռուսերենի՝ հռչակավոր պարսիկ բանաստեղծ Մաադիի «Գիւլիստանը»: Այդ աշխատության վրա էլ նաղարյանցը, ինչպես ինքն է խոստովանու՞մ, աշխատել է երկար, ուսումնասիրելով պարսկերեն բնագիրը և նրան վերաբերված բացատրությունները թուրքերեն լեզվով: Առաջաբանի մեջ նաղարյանցը բացատրում է «Գիւլիստանի» բանաստեղծական-բարոյական նշանակությունը, թե ինչպես Շիրազի երգիչը հայտնի դարձաւ Արևմտյան Եվրոպայում: Մինչև այդ՝ ռուսաց գրականության մեջ չկար «Գիւլիստանի» ամբողջ թարգմանությունը, և նաղարյանցը դարձանք է հայտնում, որ ռուսները, «նստած լինելով Արևելքի դռների մոտ, անդադար հարաբերություններ ունենալով Ասիայի հետ, դեռ այնքան քիչ են կարողացել ուսումնասիրել այդ կուսական աշխարհը, նրա ավանդությունները, նրա գիտությունը, նրա շատ նշանավոր բանաստեղծությունը»:

1858-ին լույս տեսաւ նաղարյանցի մի նոր աշխատությունը: Դա Բեռնարդեն դը Սան-Պիեռի հռչակավոր «Պավլոս և Վիրգինիա» վեպի թարգմանությունն էր, որին կցած էր նույն հեղինակի ոչ այնքան հայտնի «Հնդկական խուլ» անունով փոքրիկ պատմվածքը: Գրքի մասին երկար խոսելու կարիք չկա: Հայտնի է, որ Բեռնարդեն դը Սան-Պիեռը, XVIII դարի ֆրանսիական հեղինակ, հռչակվել էր իր այդ գործով, որ մի շքնաղ հովվերգություն է, ուր բնությունը, նրա ծոցում ապրող նահապետական մարդը, մի երիտասարդի և մի օրիորդի փոխադարձ սերը նկարագրված են վերին աստիճանի պարզ գեղեցկությամբ: «Պավլոս և Վիրգինիան» իր ժամանակին մեծ ժողովրդականություն ստացավ, կարգացվում էր ամեն տեղ, թարգմանվեց բազմաթիվ լեզուներով: Հայերն էլ անտեղյակ չէին այդ հովվերգությանը: Մինչև նաղարյանցի թարգմանությունը «Պավլոս և Վիրգինիան» թարգմանվել և տպվել էր երեք անգամ՝ Մադրասում, Վենետիկում և Պարիզում: Վենետիկի տպագրությունը նույնիսկ աշխարհաբար էր, բայց նաղարյանցը, բավական չհամարելով այդ, նորից թարգմանեց ֆրանսերենից:

Թարգմանական վեպն էլ այն գրական նորությունն էր, որ մտցրին ռուսահայերի մեջ նաղարյանցը և նրա աշխատակիցները: Ավելորդ է ասել, թե պեղարվեստական գրականության այդ ճյուղը որքան մեծ նշանակություն ուներ մեզ նման մի ազգի համար: Դեռ հինգերորդ դարից հայկական գրականության մեջ ամենակարևոր տեղը բռնում էին թարգմանությունները: Եվ սա շատ բնական ու հասկանալի է. աղքատիկ գրականությունը մի ազգի մեջ, որին չէ տված հանձարներ ծնելու բախտը, որի արտագրած տաղանդներն էլ շատ չեն թվով, մեծ մասամբ փոխառություններով, իհարկե, պիտի ապրե: Մինչև նաղարյանցը և Նալբանդյանցը ռուսահայերի մեջ չկային թարգմանություններ կլրոպական գեղեցիկ գպրությունից: Եվ եթե ի նկատի ունենանք, որ տասնիններորդ դարը մինչև հիսունական թվականները տվել էր մեզ միայն Կարինյանի «Ի մահն Աբէլի» խղճուկ գրվածքը, Ռասինի «Գոթոդիան» գրաբար թարգմանությամբ, «Ծաղկաքաղ յառակացն Քոփլուլի, Տմիթրիեվի և Խեմնիցերի» նույնպես գրաբար, մենք կտեսնենք, որ ռուսահայերը ընթերցանության գիրք համարյա չունեին: Նաղարյանցը, Նալբանդյանցը, ապա և ուրիշները աշխատում են լրացնել այս մեծ պակասությունը և կարճ միջոցում առաջ են բերում մի հարուստ թարգմանական գրականություն: Սա ինքնըստինքյան մի այնպիսի խոշոր ծառայություն է, որ թարգմանական գործերի ընտրության հարցը կարող է արդեն երկրորդական համարվել:

Ընտրութեան վերաբերմամբ մենք այստեղ այնքանը կարող ենք ասել, որ նազարյանցը, իբրև ծնունդ մի ժամանակի, երբ գրականութեան մեջ կլասիկական, ռոմանտիկական և ռեալիստիկական ուղղութիւններ մրցումն էր կատարվում, չէր էլ կարող մի հայտնի ուղղութեան, մի որոշ գաղտնի սահմաններում պահվել: Ուղղութիւնները չեն հետաքրքրում նրան, այլ գրվածքի բովանդակութիւնը, բավական է որ դա լինի բարոյական, դաստիարակիչ, միևնույն ժամանակ հետաքրքրաշարժ:

«Պովլոս և Վիրգինիայի» ընտրութիւնը ցույց է տալիս, որ նազարյանցը ամենից առաջ նկատի ունի եվրոպական գրականութեան գլուխգործոցները: Նա, ինչպես և հազարավոր ու բյուրավոր ուրիշ ժամանակակիցները, հիացած էր ֆրանսիական այդ վեպի վրա, թեև քննադատող միտքը այլևս չէր բավականանում նրանով, նույնիսկ բացասական կողմեր էլ էր գտնում նրա մեջ:

«Եվ ես, ով հրաշափառ բեռնարդեն,— բացականչում է նազարյանցը,— կամիմ այս փոքրիկ աշխատութեանովս պատվասիրել քո աշխարհահռչակ դրովածքը, կամիմ հայկական ավելի մաքուր և արժանի զգեստով նվիրել քո հոգու շնաշխարհիկ ծնունդը Հայաստանի զավակներին. կամիմ որ և սոքա, նույն մարդկութեան որդիք, որ միշտ անխտիր սիրելի էր քեզ, սեղանակից լինին քո քաղցր, հոգեպայծառ վաստակին, ուսանին ճանաչել և սիրել քեզ և մեծարել քո կրանելի հիշատակը»:

Եվ սակայն այս «շնաշխարհիկ» գործի մեջ, որ իսկապես մի աննման իդիլիա է, երևում է մի հեղինակ, որ դժգոհ է ժամանակի քաղաքակրթութիւնից, որ առաջադիմութեան մեջ երջանկութիւն չէր գտնում: «Մի մարդ էր դա— ասում է Հետտներն իր «Տասնութերորդ դարի գրականութեան պատմութեան» մեջ, որ հոգնել էր կուլտուրայից և նվրոպայից» ու հավատում էր, որ մարդկութիւնը երջանկանալ կարող է վերադառնալով հին նահապետական կենցաղին: Ատելութիւնը դեպի եվրոպական լուսավորութիւնը խիստ աչքի է ընկնում մանավանդ «Հնդկական Խուզի» մեջ, որի առաջին թարգմանիչը մեզանում նազարյանցն էր, այն նազարյանցը, որ քարոզում էր, թե առանց եվրոպական կրթութեան և գաղափարների չէ կարող կյանք լինել:—

Հետաքրքրական է, որ 1856 թվականին Փարիզում տպագրված նույն վեպի թարգմանութեան առաջաբանում Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանը ասում էր, թե Բեռնարդեն զը Սան-Պիեռի գիրքը հարկավոր է, որովհետև ցույց է տալիս քաղաքակրթութեան պակասութիւնները և առաջնորդում է դեպի բարի դաստիարակութիւն: Հետաքրքրական է և այն, որ նազարյանցը իր թարգմանութիւնը կատարել է Աստրախանի առաջնորդ Մատթեոսի առաջարկութեամբ: Եվ սակայն առաջադիմութեան, քաղաքակրթութեան հարցերի վերաբերմամբ նազարյանցը որքան հեռու էր մեր հոգևորականներից:

Առանց դիտարկութեան մենք չենք հիշատակում այս հանգամանքը: Իր տեղում մենք կտեսնենք, որ նազարյանցը և նրա աշխատակիցները վիպագրութեան վերաբերմամբ բավական թեթև պահանջներ ունեին. մեծ մասամբ թարգմանվում էին աննշան գրվածքներ, ուսաց վիպագրութիւնը իր ռեալիստիկական-ազգային ուղղութեամբ աննկատելի է մնում նրանց համար...

Մի ընդհանուր ակնարկ ցցելով նազարյանցի մատենագրական գործունեութեան վրա, ի՞նչ կտեսնենք:

Այդ գործունեութիւնը ինքնըստինքյան այնքան նշանավոր չէ, որ կարողանանք նրան հարստութիւն համարել մեր գրականութեան համար: Այն, ինչ տվել է նազարյանցը իր գրքերում, ոչ մի առանձին ինքնուրույնութիւն ունի,

ոչ մի առանձին տաղանդի կնիք է կրում իր վրա, եթե մի կողմ դեննք այնքան սղմուկ հանած նրա երկու առաջաբանները: Այդ «Վարդապետարանները», «Հանդէսները», «Պովլոս և Վիրգինիաները» մեզ ասում են, որ նազարյանցը բարի ցանկութիւններով տոգորված, զարմանալի շանասեր մի կուլտուրական մարդ էր, որ իր ազգի համար ազնիվ բանվորի պաշտոն էր հանձն առել:

Եվ նազարյանցը շուտ կմոռացվեր, եթե միայն այդ լինի տված: Բայց նա չէ մոռացվել և չպիտի մոռացվի, որովհետև տվել է նաև «Հիստորիայը»:

«Հիստորիայի» նազարյանցը մի խոշոր անձնավորութիւն է մեր գրական վերածնութեան արշալույսին:

Այժմ տեսնենք «Հիստորիայի» նազարյանցին:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

Հեղինակը քաղցր պարտականություն ունի հրատարակով իր խորին շնորհակալությունը հայտնելու այն անձանց, որոնք շատ սիրալիք պատրաստականությամբ աջակից հանդիսացան այս գործի մեջ: Առանց այդ աջակցության անհնարին կլինեք հեղինակի համար գլուխ բերել մի աշխատություն, որ կարելիին շափ լիակատար ներկայացնել հանգուցյալ նազարյանցի կյանքը և գործունեությունը:

Գլուխ չորրորդ

«ՀՅՈՒՍԻՍՍՓՍՅՈՒՆ» ՇՐՋԱՆԸ
(1858—1865)

I

Վարսունական թվականների շրջանը: Մտավոր գործունեություն ուսանելի մեջ: Հայ երիտասարդություն. նազարյանցը այդ երիտասարդության ներկայացուցիչ: Հայերեն ամսագրի պահանջ. «Հիսիսափայլ»: Առաջին հայտարարություն: Հասարակության վերաբերմունքը դեպի նոր ամսագիրը: Թիֆլիս. բշնամություն նազարյանցի դեմ. «Մեղու Հայաստանի»: Դժվար դրություն. դիմումն Կովկասյան փոխարհային: «Հյուսիսափայլը» իբրև նոր սեուները բերան: Ի՞նչ էր նա բերում: Աշխատակիցներ. հակառակորդներ:

1856 թվականի մարտի 30-ին կնքվեց Պարիզի դաշնադրությունը, որ վերջ էր դնում Ղրիմի երկարատև և խիստ արշունահեղ պատերազմին: Ռուսաստանը, որ այդ պատերազմի մեջ հսկայական ջանքեր էր գործ դրել շորս պետությունների միացած ուժերին դիմադրելու համար, նշանավոր զիջողություններ պիտի տներ, որպեսզի Պարիզի կոնգրեսը կարողանար համաձայնության կետեր որոշել: Այդ զիջողություններից շատերը խիստ վիրավորական էին Ռուսաստանի համար:

Արյունը դադարեց, հրազենը լռեց, Ռուսաստանը նոր արթնացավ քնից, սկսեց իր ներքին ցավերն ու խոցերը դնել: Հասարակական կազմակերպության պակասությունները, ժողովրդի հետամնացությունը ավելի խիստ գծերով էին երևան եկել ա՛նավոր պատերազմի ժամանակ: Այժմ, ավելի քան երբևիցե, ասիպոզական էր դարձել բարենորոգումների սուր պահանջը: Եվ Ռուսաստանի վրա ծագեց նոր կյանքի արշալույսը:

Գահի վրա բազմած էր երիտասարդ Ալեքսանդր II կայսրը, որ տոգորված էր մարդասեր, լուսամիտ դադափարներով: Նա կամեցավ, և Ռուսաստանը մի եռանդուն գործունեություն սկսեց: Վերացավ այն մոռյլ հետադիմությունը, որ տիրել էր Ռուսաստանում 1848-ի եվրոպական հեղափոխություններից հետո և խեղդելով 1840-ական թվականների մտավոր շարժումը, առաջացրել էր մի վաղընացում: Նորից լույս և ազատություն եկավ, հայրենիքի նշմարիտ բարեկամները կարողություն ստացան խոսելու բարոյական և մտավոր վերածնության մասին: Մամուլը, գրականությունը կենդանացան, առաջ եկավ այն փառավոր շրջանը, որ ուսաց նորագույն պատմության ամենագեղեցիկ էջերն է գրավում «վաթսուական թվականներ» անունով: Այդ շրջանը մի տասնամյակ է, որ սկսվում է 1855 թվականից: Հասարակական բարիքը, ժո-

դովորող՝ ահա նշանաբանը, այն իդեալը, որին սկսեցին հռանդով և անձնվիրութեամբ ծառայել առա գործիչները: Ազատամարտի շարժումը էր դա. թե՛ հասարակութեանը և թե՛ գրականութեանը տոգորված էին ազատամարտ գաղափարներով, հետադիմական օրգաններ համարյա չկային:

Ամենից շատ այդպիսի ժամանակներում ոգևորվում էր, իհարկե, ուսանող երիտասարդությունը. և նա, ինչպես պատմում են ակամատեսները, նույնիսկ իր համալսարանական պարապմունքները թողնելով, նվիրվել էր նոր, թարմ հոսանքին: Այդ գաղափարական ուսանողության մեջ կային և հայերի բնական է, որ սրանք էլ, իրանց շուրջը եռացող շարժման ազդեցություն-տակ, մտածելին իրանց ազգի, իրանց լեզվի մասին:

Եվ հայ ուսանողության ամենանշանավոր կենտրոնը նույն Գորպատեն է: Քառասնական թվականների վերջերսում կազարյանները իրանց ճեմարանի ընդունակ աշակերտներին սկսում են իրանց հաշվով ուղարկել Գորպատի համալսարանը: Եվ ահա գորպատյան այդ նոր շրջանում, անվանենք նրան երկրորդ շրջան, մայրենի լեզուն սկսում է երգի լեզու դառնալ, որ երգում է ուսանողական կյանքը, գինի, ուրախություն, սեր, հայրենիք: Ուժեղ, առողջ և ուրախ է այդ երգը, նա ցույց է տալիս, որ որսահայերի մեջ ասպարեզ է գալիս մի նոր գործո՞ն՝ համալսարանական երիտասարդություն հասարակական գաղափարներով:

Երգը, իհարկե, բավական չէր: Պահանջվում էր ավելի հիմնավոր, տևողական գործ ժողովրդի համար: Եվ այդ պահանջը զգում և իրագործում է նազարյանցը, որին հայ երիտասարդությունը արդեն իր պարծանքն էր համարում:

Անտարբեր մնալ մանավանդ մի այդպիսի գեղեցիկ ժամանակ չէր կարող նազարյանցը: Նա օգտվեց ժամանակի բարեհաջող հանգամանքներից և փորձեց իրագործել այն, ինչ առաջարկել էր դեռ 1846 թվին իր «Обозрение Армянской литературы» աշխատության մեջ, այսինքն՝ հիմնել մի ամսագիր (կամ, ինչպես ստում էին այն ժամանակ, օրագիր) եվրոպական գիտության լույսը հայերի մեջ տարածելու համար: Այս մտքով նա 1856 թվականի մարտի 19-ին ուղարկեց ժողովրդական լուսավորության միևնույն նորովին մի խընդիրը, որով խնդրում էր թույլ տալ իրան հրատարակել Մոսկվայում մի ամսագիր «Հյուսիսսփայլ» անունով: «Այժմուս, — գրում է նազարյանցը իր մի ծանոթին՝, — նոր թագավորի քաղցր շնորհից և ողորմությունից մի փոքր ավելի ազատություն և համարձակություն լինելով, և ես սաք խաղացուցի և գրեթե բարձրացրի, մի հայկական օրագրի պրոծեկտ գրելով և մի նամակի հետ ուղարկելով ազգային լուսավորության նախարար նորովին: Կարծիք ու հույս կա, որ այս մարդը բարի լինելով և ժամանակը ևս ձեռնառու լինելով, թույլ տա ինձ տպել այդ շատ հարկավոր օրագիրը»:

Կառավարության բարի տրամադրություն մասին կրակած չկար: Միակ արգելքը, որ կարող էր հանդիսանալ այս գործում, այն էր, որ Մոսկվայում չկար հայերեն լեզվի ցենզոր: Նախատեսելով այդ արգելքը, նազարյանցը իր խնդրագրի մեջ առաջարկում էր, որ եթե կառավարությունը չէ կարող հատուկ ցենզոր նշանակել Մոսկվայում և ուժեղ տալ նրան, այդ դեպքում նա ինքն հանձն է անում հոգալ այդ պաշտոնյայի առձեռն, միևնույն ժամանակ ցույց էր տալիս մի հայ աստիճանավոր, որ համաձայն էր վարել ցենզորի պաշտոն

* Ար. Եսեֆյան — «Միջազգյ նախնական», Մոսկվա, 1896, էր. 56:

առանց ուժեղի: Մասնավոր կերպով էլ դիմումներ է անում նազարյանցը ազգեցիկ մարդկանց, խնդրելով նրանց աջակցությունը:

Անցնում է ուղիղ մի տարի: 1857 թվի մարտի 17-ին Ալեքսանդր կայսրը համաձայնություն է տալիս, որ թույլատրվի Մոսկվայում հայ ամսագրի հրատարակությունը. այդ մասին նազարյանցին իմաց է տրվում ապրիլի վերջերին: «Հյուսիսսփայլը» ենթարկված էր Պետերբուրգի գրաքննական ատյանին: Դա մի մեծ անհարմարություն էր. ամսագրի հոդվածները Մոսկվայից Պետերբուրգ պիտի ուղարկվեին ցենզուր համար:

Ամսագիրը կար: Բայց կա՞ր և պատրաստություն, կար և հարմար հող այդպիսի մի գործ կանոնավոր կերպով տանելու համար: Եթե տարին կամ երկու տարին մի անգամ հեշտ էր պատրաստել մի գիրք և գրել նրա համար մի կիսու առաջարան, կարո՞ղ էր նույնքան հեշտ լինել մի եվրոպական ամսագրի հրատարակությունը, այսինքն՝ մի գործ, որի պահպանողը հասարակության համակրությունը միայն չպիտի լիներ, այլև զարգացած, ընդունակ աշխատակիցների մի խումբ: Մենք արդեն ասացինք, որ «Հանգես նոր հայաստանի» հատորների տպագրության հանգամանքները հասարակական համակրանքի և արակցություն լավ նշաններ էին, որոնք վստահություն տվին նազարյանցին ամսագրի մասին մտածելու: Հող, հետևաբար, կար և նազարյանցին ներկա էր հույսիսկ մի քիչ էլ չափազանցություն հասնել իր ոգևորություն, ակնկալությունների մեջ:

Մնում էր աշխատակիցների հարցը: Բայց այդ կողմից էլ նազարյանցը կարող էր հույսեր դնել աջակցողների վրա, թեև հայերը ո՛չ գրականություն անեին, ո՛չ էլ գրական ուժեր: Դեռ նոր պիտի գուրս գային գրական աշխատավորներ, լցված նոր ժամանակի ոգով, բմբռնած նրա պահանջները: Այն շրջանը, որ պիտի տար այդպիսի աշխատավորներ, համալսարանական երիտասարդությունն էր: Հայ ուսանողներից մեկը, Միքայել Նալբանդյանը, 1857-ին տպագրած իր «Թագավորական հրեա» թարգմանությունը նվիրում է նազարյանցի «միշտ գեղեցիկ անվան»: Այն խոսքերը, որ երիտասարդը ուղղում է նազարյանցին, արդեն մի գեղեցիկ վկայություն են, թե որպիսի հեղինակություն և պատիվ ուներ վերջինս ուսանողության մեջ. «Թող, — ասում է Նալբանդյանցը, — քաղցրանա քո աղնիվ աչքը այս փոքրիկ գործի վերա, և քաջալեր լինի ինձ դեպի առավելը և ավելի արժանավորը մեր շատ սիրելի հայկական եղբայրակիցների օգտի համար»:

Եվ նազարյանցը չէր կարող չհավատալ երիտասարդությանը: 1857 թվականի մայիսի 30-ին նա հրատարակում է մի հայտարարություն «Հյուսիսսփայլ» ամսագրի բաժանորդագրության մասին: Այդտեղ նորից և նորից շեշտակով կենդանի լեզվի նշանակությունը և կատարելի դերը, նազարյանցը բացատրում էր, թե ինչ պիտի անե «Հյուսիսսփայլը» հայերի մեջ: Ամսագրի առաջին պարտքը կլինի ժողովրդականացնել գիտությունը:

«Մեր օրերումը գիտությունը չունի այլևս ոչինչ նվիրական, ծածկած ու վարագուրած գաղանք, որ պահած լինեին մի քանի առանձին եզրագոտայան քորմերի համար», նորից կրկնում է նա: Եվ հայերը պարտավոր են հասկանալ իրանց պարտականությունը: «Ենյապիսի օրհնությունը լի ու առատ դարս թաղաքակից հայր ինչպե՞ս կարող էր ամենևին ստոր մետալ, ինչպե՞ս կարող էր փակել յուր աչքը և սիրտը. կամ թե ուրանալ յուր կյանքի խորհուրդը, և լուսավորության աղբյուրի մոտ նստած, միշտ ծարավի գտանվիլ: Ո՞ր հայը կարող է այսուհետև մտածել, թե նա հարազատ արդի էր տասն և իններորդ դարու, առանց մասնակից լինելու դրա հոգեղեն բարոյականներին, պաշտելով

միայն յուր մարմնավոր օգուտը, ուսելով, խմելով, փառավորապես ապրելով, որպես թե աստված ստեղծել էր մարդս նյութական բարեկեցութեան համար»:

«Հյուսիսափայլի» ծրագիրը ամբողջ մի ժողովածուի ծրագրին էր նման: Դա նույն ծրագիրն էր, որ ուներ իր մեջ «Հանդես նոր հայախոսութեան» ժողովածուն: Չկա հատուկ տեղ հրատարակատեսության համար, օրվա կյանքը մտացված է նրա մեջ: Դրական և գիտական մի ամսագիր է դա, որ գաստիարակի պաշտոն ուներ: Նայրանդյանցը իր մի նամակի մեջ գրում էր. «Մեր ցանկությունը այն է, որ կարողանանք ժողովրդին մտանցնել փոքր ինչ դպրության հետ, նյութ ու սնունդ դնել հայկական շոր ու ցամաք դպրության մեջ, և ինչպես մի կողմից լեզուն, մյուս կողմից և նույն ինքյան դպրության հողին ու ուղղությունը որքան կարելի է շինենք ժողովրդական, ազատելով արեղայականությունից»: Համեստ ու տարրական էին նոր ամսագրի ձգտումները, բայց նա այդ դերի մեջ փակված չմնաց, ալլ ավելի լայն թափչք անեցավ կյանքի մեջ:

Նազարյանցը նկատի ուներ կազմակերպել գործը եվրոպական եղանակով, մտածում էր աշխատակիցներին վարձատրելու մասին և այդ պատճառով հայտարարում էր, թե ամսագիրը մեծամեծ ծախսեր է պահանջում, ուստի կսկսե հրատարակվել այն ժամանակ, երբ 600 բաժանորդ կունենա: Ի վերջո՝ նազարյանցը հրավեր էր կարդում հայ գրագետներին: «Շատ սիրելի կլինի մեզ տեսանել, որ մեր բանագետ հայրենակից կըրարք գործակից էին մեզ յուրյանց գրվածքներով, որ մեծ հաճություն կընդունե օրագրի հրատարակողը, միայն թե լինեին դոքա արժանի բաներ և հատուկ լեզվով գրած»: «Հյուսիսափայլի» ծավալն էր 8—10 թերթ, բաժանորդագինը 8 օտարչե, ճանապարհածախսով 9 1/2 ուրբի:

Հիմա տեսնենք, թե ինչ էր պատասխանում նազարյանցին հայկական իրականությունը: Այդ հայտարարությունները ամեն տեղ ցրվելուց հետո նազարյանցը ամառը գնում է Դորպատ: Այստեղ շրջապատում են նրան հայ ուսանողները, որոնց մեջ էին Վահան Ասկարյանը, մի աշխատասեր, լավ հույսեր տվող երիտասարդ, և Դեորգ Դոդոխյանը, «Միծեռնակ» կրգի հեղինակը: Խոսք ու զրույցը, իհարկե, պտտում էր նոր ամսագրի շուրջը: Վերադառնալով Մոսկվա, նազարյանցը իր այդ երիտասարդ բարեկամներին հաղորդում է, որ «Հյուսիսափայլի» բաժանորդագրությունը հուսատու չէ: Եվ ահա՛ հայ ուսանողները, թվով շորս հոգի, համակրական նամակ են գրում նազարյանցին, խնդրում են, որ նա չվախենա ժամանակավոր դժվարություններից և շարունակե սկսած գործը:

«Ծավալի է մեզ համար, — ասում են նրանք, — և միանգամայն ամոթալի խոստովանել, թե Ռուսաստանի բազմաթիվ հայ ժողովրդի մեջ օրագրի պես հասարակօգուտ մի բան մինչև օրս հույս չունի գեռես կենդանություն ստանալու, թեև նույնիսկ ժողովուրդը հրատարակչին յուր այժմյան պարծանքներից մինն է համարում: Հոգվով շափ ցանկանում ենք, որ մեր տգետ ժողովուրդը այս յուր՝ այժմյան դարումը աններելի անտարբերությունը վերջապես թողնի, յուր ճշմարիտ օգուտն ու վնասը, բարեկամն ու թշնամին լավ ճանաչի և յուր ցանկալի վերակենդանության ժամանակը անմեղ տեղը իրանից չհեռացնի»:

Սրանք միայն բարի ցանկություններ էին: Նազարյանցը, դեռ ամսագրի հրատարակությունը չսկսած, տեսնում էր, որ հայերից շատ բան սպասել չկարելի: Բաժանորդագրությունը համեմատաբար լավ էր Ռուսաստանի հա-

յաքնակ քաղաքներում՝ Մոսկվայում, Նոր-Նախիջևանում, Աստրախանում, Ղզլարում: Իսկ Անդրկովկասի հայությունը համարյա միանգամայն անտարբեր մնաց դեպի «Հյուսիսափայլը»: Պատճառը միմիայն ժողովրդի տգիտությունը չէր. գործում էր և այն սաստիկ թշնամությունը նազարյանցի դեմ, որ ծնվել էր վաղուց: Եվ այդ թշնամության բույնը Քիֆլիսն էր: «Քիֆլիսի հայերը, — գրում էր նազարյանցը Դորպատի ուսանողներին, — ամենայն զազանական կերպով գրահավորվելով ընդդեմ իմ օրագրին և այլ գրվածքներին, հազիվ թե կարողացել էր իմ գործակատար Փոնդոյանը 10 օրինակի ստացողը գտնել բոլոր Քիֆլիզի մեջ, ուր կային գոնյա 30 000 հայ»:

Այսպիսի վերաբերմունքը արդեն ցույց էր տալիս, որ անկարելի պիտի լինի գործը կանոնավոր հիմքերի վրա դնել: Տարեկան ծախսերի համար հրատարակչին հարկավոր էր մոտ 5000 ուրբի, իսկ նայելով ամսագրի գործակալների հաղորդած տեղեկություններին, կարելի էր հույս ունենալ, թե բաժանորդագրությունից կստացվի այնքան փող, որ բավական կլինի միայն 3—4 ամիս գործ տեսնելու համար: Դրությունը անհուսալի էր: Բայց նազարյանցը չհրաժարվեց իր սկսած գործից: Նա համոզվեց, որ «մեր հայերի բարոյական հոժարակամության վերա դեպի բարին՝ բան հիմնել ու յառաջ տանել անկարելի է. դոցա համար աղգասիրական խոսքը ոչինչ է, որովհետև դոցա սրտումը չկա ոչինչ ազգ, գոնյա բանական ազգի գաղափար ոչ»: Հոժարակամություն չկա, պետք է, ուրեմն, դիմել հրամանին, վճռում է նազարյանցը. «Պիտո էր մեզ դիմել դիպի գավազնի ոտքը և գրա միջնորդությունը ջանալ ներդրածել մեր հայերի կամքի վերա», — ասում է նա: Ու նամակով դիմում է կովկասյան փոխարքա իշխան Բարյատինսկուն և նրա դիվանատան կառավարիչ Կրուզենշտերնին, խնդրելով, որ աջակցեն իրան «Հյուսիսափայլը» տարածելու:

Հայտնի է, թե իշխան Բարյատինսկին որպիսի բարյացակամություն ուներ դեպի հայերը և որքան աշխատում էր նրանց բարոյական և հոգևոր շահերի համար: Ուստի զարմանալի չէ, որ նա ուշադրություն դարձրեց նազարյանցի խնդրերի վրա և կարգադրեց, որ Մոսկվայի հայ ամսագրի տարածման գործին մասնակցեն տեղական իշխանությունները: Այդ մտքով էլ նա հրամաններ է ուղարկում նահանգապետներին: Դիվանատան կառավարիչ Կրուզենշտերնը մասնավոր նամակով հավատացնում էր նազարյանցին, որ ինքը ամեն կերպ կաջակցե նրան «Հյուսիսափայլը» տարածելու գործի մեջ: Հաղորդելով այս մասին Դորպատի հայ ուսանողներին, նազարյանցը ավելացնում է.

«Այսպես ահա լուսավորչալ բարեմիտ աշխատքին ավելի օգնական է և բարյացակամ, քան թե մերայինը, թե՛ ամբոխ և թե՛ բանիմաց առանձնական: Դուք և շատերը մեր հայերից միշտ գանգատավոր են եղած օտարներից. բայց ճշմարիտը պիտո է ասել, ամենամեծ արջուճարբու թշնամին հայոց ինքյանք հայրն են, այս անբարոյական և ամբողջ ժողովուրդը»: Այս դառն խոսքերը, որոնք, իհարկե, ամբողջ աղգին չէին վերաբերվում, այլ այդ ազգի առաջավորներին, նազարյանցին արտասանել էր տալիս այն հանգամանքը, որ Քիֆլիսեցիները ավելի ևս կատաղել էին, լսելով, թե նա դիմել է իշխանավորների օգնությանը: Ուրեմն Քիֆլիսեցոց կամքն էր, որ մի բարեմիտ հեղինակ հայոց ոչ հայերից և ոչ օտարներից օգնություն չգտաներ, այլ միայն կապած սառած մար և հուսահատվեր ու մեռաներ, և այդպես ոչնչանար ամենայն առաքինություն նույնիսկ խանձարուրբի մեջ, որովհետև հարկավոր չէ առաքինությունը, ոչ միայն արծաթ, կրկին արծաթ և դարձյալ արծաթ: Աստված, աստված,

հալիս արծաթը և ջերմ-ջերմ թափես դոցա կեկորդի մեջ, ինչպես Պարթևացիք արած են հողմայեցոց կրասոսի հետ»:

Ար հայերի արծաթամուրթունը արծաթի էր մի այդպիսի պատժի, այդ չէ կարելի ուրանալ, կարծես և այժմ: Բայց որ նազարյանցն էլ սխալվում էր, դիմելով «գավազանին», այդ էլ հասկանալի է ինքնըստինքյան: Գրականության մեջ «գավազանը» տեղ չունի. նահանգապետների աշակցությունը կարող էր նազարյանցին շատ արծաթ հասցնել, բայց դա չէր լինի նշան, թե հասարակությունը անտարբեր չէ դեպի նրա ամսագիրը: Հուսահատական, սառցնող ու մեղմող էր այդ անտարբերությունը: Բայց նրա դեմ կալոզը գավազանը չպիտի լիներ, այլ նույն ինքն գործը, արագրական այն խոսքը, որ այնքան արհամարհված էր հայերի մեջ: Այդ պետք է ասել, որ «գավազանը» շատ էլ չօգնեց նազարյանցին. նա ուղում էր 600 բաժանորդ, բայց առաջին տարին միայն դրա կեսն ունեցավ:

Պետք էր անել այնքան, որքան թույլ էին առաջն տխուր հանգամանքները: Հասարակությունը միջոցներ չէր տալիս, բայց նազարյանցը ձևերը չծալեց, կտ շկանգնեց, այլ հույս դնելով գլխավորապես իր անձնագրություն, աշխատասիրության վրա, ետևդով կպավ գործին: Նա ինքն էր իր ամսագրի ամենագլխավորը և ամենանախնորսն աշխատակիցը. ինքն էր սրբազրում, ինքն էր նյութեր ընտրում և պատրաստում, մի խոսքով աշխատում էր որ ու գիշեր, մաքառելով հարյուր ու մի դժվարությունների, պակասությունների դեմ: Ամսագիրը, իհարկե, ոչինչ նյութական օգուտ չէր տալիս բազմաշաբաթ խրմբազրին, ընդհակառակն, մի-մի անգամ պարտքի մեջ էլ էր գցում նրան: Չպետք է մոռանանք, որ նա դասատու էր կազարյան ճեմարանում, հեռավար ամսագրին կարող էր նվիրվել միայն իր ազատ ժամերը. չպետք է մոռանանք և այն, որ նա ընտանիքի տեր մարդ էր և պարտավորված էր իր հարազատների բարեկեցությունը մի հայտնի շափով զոհ բերել իր գործին:

1858 թվականի հունվարից սկսում է հրատարակվել «Հյուսիսսփայլը»: Ամսեամիս լույս էին տեսնում բավական հաստ, մաքուր ու գեղեցիկ տպագրված տետրակներ: Ամսագիրը տպվում էր Բարձրենհեթի տպարանում. հայերեն տառերը Վիննայից էին բերված, ինչպես երևում է նազարյանցի խոսքերից, Աստրախանի առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոսի և նորնախիջևանցի վաճառական Հայրապետյանցի հաշվով: Նույն Հայրապետյանցը ուրիշ օր-նություններ էլ է հասցրել նազարյանցին: Սա այն Հայրապետյանցն էր, որ նոր-նախիջևանում մի ամբողջ կուսակցություն պարագլուխ դարձավ և կոչում էր այն կուսակցության դեմ, որի պարագլուխն էր Խալիբյան ուսումնարանի հիմնադիր Հարություն աղա Խալիբյանը: «Հյուսիսսփայլը», ինչպես կտեսնենք, Հայրապետյանցի կողմն էր պաշտպանում:

Կանոնավոր հրատարակվող ամսագիրը մի մշտական ամբիոն էր, որտեղից նազարյանցը կարող էր քարոզել իր մտքերը: Բայց այդ ամբիոնի նշանակությունը այնքան ազդեցիկ չէր լինի, եթե նազարյանցը միակը լիներ, եթե նրա դիմաց նույն տեսակ մշտական ամբիոններ չլինեին նրա հակառակորդների համար: Այդ պակասությունը չկար «Հյուսիսսփայլի» համար. նրա հետ միասին ծնվեց և նրա առաջին հակառակորդը. նույն 1858 թվականի սկզբից Թիֆլիսում սկսեց հրատարակվել «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը, որի խմբագիրն էր Ստեփան քահանա Մանգինյանցը: Դա Թիֆլիսի «ամենայն դազանական կերպով դրահավորված» ընդդիմության արտահայտությունն էր: Մեզ համար նշանակալից պիտի լինի այն հանգամանքը, որ 1858 թվականից առսահայերի մեջ երևան եկած հրատարակախոսությունն ունի իր բոլոր

արք ու կարգը: Դա միակողմանի գործ չէ. հենց առաջին օրից գործում են երկու անհրաժեշտ ձայրերը՝ ազատամիտ, առաջադիմական ուղղությունը և նրա դեմ կանգնած պահպանողական հնապաշտ ուղղությունը: Կան հարձակվողներ, կան և գիմադրողներ. միմյանց վերք են տալիս, միմյանցից վերք են ստանում: «Օրհնյալ է պատերազմը», բացականչում է «Հյուսիսսփայլի» պիտավոր աշխատակից նախանշանցը. և պատերազմը կատարյալ է: Չէ մտապել նույնիսկ մի բնորոշ հանգամանք: Սովորաբար առաջավոր, նոր ուղղությունը մենակ է լինում կովի դաշտում, բազմաթիվ թշնամու դիմաց: Այդպես էր և մեղանում: «Հյուսիսսփայլը» օրհնում էր պատերազմը, թեև այդպես նա իր դեմ ուներ շորս թշնամի:

Միայն «Մեղու Հայաստանին» չէր նրա կատաղի հակառակորդը: Նույն 1858-ին, այսինքն՝ դարձյալ «Հյուսիսսփայլի» հետ միասին, նույն Մոսկվայում սկսեց հրատարակվել «Ճառքաղ» անունով ժողովածուն, որի հրատարակիչներն էին կազարյան ճեմարանի կրոնուսույց Մսեր Մսերյանցը և նրա որդի Պարմայր Մսերյանցը: «Ճառքաղը» այդ տարին վեցամսյա հրատարակություն էր և լույս տեսավ երկու փոքրիկ տետրակի ձևով: Հետևյալ տարին, 1859-ին, նա ամսագիր դարձավ և ուներ թունդ կրոնական-հնապաշտ ուղղություն: Տպագրում էր հին գրաբար, գլխավորապես կրոնական գրվածքներ, իսկ աշխարհայրար բաժնի կողմից «Ճառքաղը» Մանգինյանցի «Մեղուի» ընկերն էր: Խրմբագիրներից մեկը, Չայրմայր Մսերյանցը «Մեղուի» թղթակիցն էր և մեծ մասամբ նազարյանցի դեմ էր գրում: «Ճառքաղը» իսկույն իր էջերը լայն բաց արավ «Հյուսիսսփայլի» հակառակորդների համար:

1860 թվին այս երկու դաշնակիցների թվին ավելացան երկու զինակիցներ էլ՝ «Մասյաց աղալինի» կիսամսյա հանդեսը, որ Փարիզից փոխադրվել էր թեոզոսիա և Գաբրիել վարդապետ Այվազյանի ղեկավարությամբ էր հրատարակվում, և «Կոռնեկ հայոց աշխարհին» նոր ամսագիրը, որ լույս էր տեսնում Թիֆլիսում Մարկոս Աղաբեկյանի խմբագրությամբ: Նայելով «Հյուսիսսփայլի» այդ շորս ախոյանների բաժանորդների ցուցակին, մենք տեսնում ենք, որ հասարակության համակրանքը դրանց կողմն էր: Ամենքն էլ «Հյուսիսսփայլից» շատ բաժանորդ ունեին. նույնիսկ խզճուկ «Ճառքաղ» ամսագիրը իր հրատարակության առաջին տարին ուներ 405 բաժանորդ, մինչդեռ նազարյանցը, չնայած որ իրան աշակցող «գավազան» էլ ուներ, նրբեք այդ թվին չհասավ:

Պետք է բացատրել այդ երևույթի պատճառը: Նազարյանցը կծու քննադատություններ էր անում, մերկացնում էր ազգի պակասությունները, իսկ նրա հակառակորդները ինքնագոհ ազգասերներ էին, որոնք հաճելի կերպով շոյում էին հայի ինքնասիրությունը, զովում էին նրա բարեմասնությունները և ոչինչ պակասություն չէին տեսնում նրա մեջ: «Հյուսիսսփայլը» նոր պիտի ընթերցողներ նվաճեր, նոր պիտի գոյություն իրավունք ստանար կովով:

Խոսելով «Հյուսիսսփայլի» թշնամիների մասին, մենք պիտի հիշատակենք և նրա բարեկամներին: Բարեկամներ էլ կային, բայց Ռուսաստանի ամենամանկներից դուրս: Այսպես էր Մվաճյանի «Մեղուն», որ հրատարակվում էր Կ. Պոլսում. այսպես էր Փարիզի «Արևմուտք» կիսամսյա թերթը, որի խմբագիրն էր հայտնի հայ հրատարակախոս Ստեփան Ռսկանը: Վերջինս, սակայն, երկար լիարողացավ իր զենքը միացնել նազարյանցի զենքի հետ, որովհետև հարկազրված էր 1859-ին թողնել իր գործը:

Այսպես ուրեմն, նազարյանցը մենակ էր Ռուսաստանում:

«Հյուսիսափայլի» հրապարակախոսությունը: Մրա հատկությունները: Կյանքը և «Հյուսիսափայլը»: Նազարյանցի վերաբերմունքը ժամանակակից գեղեցիկին: Գաստիարակազական ձգտումը մոռացնել է ապիս շարքը: Հրապարակական հարցեր: Հրապարակախոսական կրիտիկա: Կամս էմմանուել: Նրա «Հիշատակարանները»: Իրանց նշանակությունը «Հյուսիսափայլի» համար: Առաջին տարի:

«Հանդես նոր հայախոսություն» մեծ ժողովածուն, ինչպես նկատեցինք, այն նախագաղափարն էր, որ ցույց էր տալիս, թե նազարյանցը ինչպես է հասկացել հայ ազգի մտավոր կարիքները: Այդ «Հանդեսի» և «Հյուսիսափայլի» ծրագրերը համարյա միևնույնն է: Այստեղ էլ նազարյանցի առաջին և ամենազլխավոր նպատակն էր մոտեցնել հայերին եվրոպական գիտություն: «Հյուսիսափայլը» կոչվում էր «Օրագիր ընդհանուր ազգային լուսավորության և դաստիարակության», նրա դավանանքը պարզված էր նազարյանցի հետևյալ խոսքերի մեջ, որոնք առաջին տարին տպագրվում էին բոլոր տետրակների վրա.

«Այսուհետև ոչինչ Եգիպտոսյան խորամանկ քուրմեր, որ կամենին լինել գիտություն միայնակ պահպանողք, այսուհետև ոչինչ Չինական պարիսպ, որ պիտո է փակել լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի բարեկոնյան գերաթիկնից»:

«Մեր ժամանակի հայերը համարյա թե ամենայն բանի մեջ անփորձ երեխայք են», — այսպես է բնորոշում նազարյանցը հայ ընթերցողին: Չկա մեղանում աշխարհական գրականություն. ինչ տալիս են արեղաները, այն է միայն հայի մտավոր կերակուրը. իսկ արեղաների տվածը այնպիսի բան է, որ հային հարկավոր չէ զալիս գործնական կյանքում: Հայ ուսումնականները, արեղայական գրականության այդ սպասավորները, տալիս են ազգին «անուստի և անմարսելի նյութեր, բայց ոչինչ ժամանակին հարմար սնունդ»: Եվ ահա այդ պատճառով ընկել է գրքի նշանակությունը հայերի մեջ. նրան ոչ ոք չէ կարողում, որովհետև նա ավելորդ է համարվում: Հայը հավատացած է, որ գիրքը միայն արեղայի համար է, որ միայն արեղան պիտի գիրք կարդա: Եվ հասկանալի է, թե ինչ կլինի մի ժողովուրդ, որ իրական, աշխարհիկ գրականություն չունի, որի գրքերը ոչինչ կապ չունեն ժամանակակից կյանքի հետ: Նազարյանցը դանդաղում է, որ կոպիտ նյութապաշտություն է տիրում հայ ժողովրդի մեջ, որ արծաթամուրթները մի տեսակ պաշտամունք է դարձել:

«Ցավելի, հազար անգամ ցավելի ազգ», — բացականչում է նազարյանցը: Այդպիսի ազգը կարոտ է դաստիարակության, որ պետք է սկսել այբուբենից, դաստիարակություն նոր սկզբունքներով, դաստիարակություն, որ գիտություն մշակած գեները պիտի տա հայ գյուղատնտեսի, հայ արհեստավորի, վաճառականի ձեռքը: Եվ «Հյուսիսափայլը» իր վրա է վերցնում այդ դաստիարակությունը. նա մոռանում, երեսի վրա է գցում շատ բան և առանձին ուշադրություն է նվիրում բնագիտության: Հայտնի է, թե ինչ ահադին հեղափոխություններ է առաջացրել բնագիտությունը մարդկանց հասկացողությունների մեջ, մասնավոր XIX դարում: Նազարյանցը, իբրև այդ դարի զավակ, լավ ըմբռնում է այդ գիտության մեծ խորհուրդը և իր ամսագիրը դարձնում է մի դասագիրք, ուր հայ ընթերցողը կարող էր իրան մատչելի, տարրական դասեր առնել աշխարհագրությունից, մարդակազմությունից, տնկարանությունից և այլն: Ինքը, նազարյանցը, իր ամսագրի գոյությունը ընթացքում, ամենից շատ

է պատրաստել այդպիսի դասեր: «Հյուսիսափայլը» ավելի մի հանրագիտական ժողովածուի էր նման, քան մի գրական-հասարակական ամսագրի: Ի՞նչ կասեց էր անել նազարյանցը: Այժմ էլ հայ մամուլը պիտի տարրական գիտելիքներ տա, ամեն ինչ սկսե այբուբենից, որովհետև նրա ընթերցողը զարգացած գիտակարգ չէ, այլ հասարակ ժողովուրդը:

Բայց եվրոպական գրականությունից վերցրած գիտական և գրական գրքերը մի ժողովածուն չէր կարող այնքան կրթական նշանակություն ունենալ, եթե մնար առանց դեկավարող սկզբունքների, առանց ուսուցանողի: Նազարյանցը, մենք այդ տեսանք, սկզբից ևեթ ցույց էր տվել, որ զգում է իր մեջ զեկավարողի, ուսուցանողի կոչում: «Հյուսիսափայլի» մեջ էլ նա հավատարիմ մնաց իր կոչման: Եվ եթե «Հյուսիսափայլը» «Հյուսիսափայլը» է, դրա պատճառը այն չէ, որ նա հանրագիտական մի ժողովածու է, այլ այն, որ նրա մեջ կա նազարյանցի հրապարակախոսությունը:

Հայկական հրապարակախոսության հիմքը դրվեց այն ժամանակ, երբ հայերն էլ հասկացան կյանքի երևույթները քննադատելու անհրաժեշտությունը: Երկանում իսկական հրապարակախոսներ հանդիսացան այն անհատները, որոնք, տոգորված լինելով լայն առաջադիմական հանրամարդկային գաղափարներով, բարձրացրին բողոքի ձայն հայրենի անշարժության, հնամուրության դեմ: Բողոքող խոսքը հայ պարբերական հրատարակության մեջ առաջին անգամ հանդես եկավ Հնդկաստանում 1848 թվականին («Բանասեր» լրագիր). այստեղ նա շատ կարճ կյանք ունեցավ, որովհետև մերկացնող, մտրակող էր, իսկ հայերը դեռ սովոր չէին տեսնել ճշմարտությունը մերկանդամ, ուստի շտապեցին խեղդել նրան: Գրանից հետո 1855-ին Պարիզում հրապարակախոսության ասպարեզ իջավ զմյուռնացի Ստեփան Ոսկանը, որի հիմնած «Արևելք» թերթը, կծու քննադատության այդ նոր օրդանը, նույնպես շատ կարճ կյանք ունեցավ: Երրորդ տեղը բռնում էր արդեն «Հյուսիսափայլը»: Սա իր նախորդների վերաբերմամբ անհամեմատ բախտավոր եղավ ոչ միայն այն պատճառով, որ ավելի երկար կյանք ունեցավ, այլև այն պատճառով, որ շատ ազդեցիկ էր, մի ամբողջ ուղղության հիմնադիր եղավ, մի ուղղության, որ պարզապես ավելի ևս զարգացավ, ամրապնդվեց, ահագին հեղինակություն ստացավ:

Ահա թե որքան կարևոր դեր կատարեց մեզանում նազարյանցի հրապարակախոսությունը: Բայց այդ հրապարակախոսությունը աչքի էր ընկնում իր անանձնահատկություններով, իր պակասություններով:

Նախ և առաջ նրա վրա ազդում է գործունեության տեղը: Հետո էր նազարյանցը հայկական կյանքից. «Հյուսիսափայլը» հրատարակվում էր մի հեռավոր տեղ, ուր մի շատ փոքրաթիվ հայ գաղութ էր ապրում: Հեռավորությունը նազարյանցի աչքից խլում էր շատ բան, մշուշի մեջ էր թաղում մեր իրականությունը և նրա մեջ տեղի ունեցող երևույթները իրանց իսկական նշանակությամբ չէին ներկայանում նազարյանցին: Այդ է պատճառը, որ նրա հրատարակախոսության մեջ մենք չենք նկատում կյանքի անմիջական հզոր ազդեցությունը:

Հարմանալի՝ երևույթ. «Հյուսիսափայլը» չունի ժամանակակից հայ կյանքի տարեգրություն, նա չէ նկատում հասարակական շատ երևույթներ, նա նազարյանցի կյանքից չէ վերցնում նյութ, չէ արձանագրում մեր շարն ու բարիս: Այդ կողմից «Հյուսիսափայլը» ես էր մնում նույնիսկ «Ճառքաղի» պես մի խեղճ ամսագրից, որի մեջ, այնուամենայնիվ, ավելի մեծ արձագանք էր գտնում ժամանակակից կյանքը:

եմ չէ էլ կարելի ասել, թե ժամանակակից դեպքերը այնքան աննշան էին, որ արժանի չլինեին ուշադրութեան: Երբ սկսեց հրատարակվել «Հյուսիսափայլը», էջմիածնի կաթողիկոսական աթոռը թափուր էր. մոտ մի տարի առաջ վախճանվել էր Ներսեսը, այն մարդը, որի մասին այնքան շատ բան կարելի էր ասել: Պատրաստվում էր նոր կաթողիկոսական ընտրություն, որ կայացավ 1858 թվի մայիսի 20-ին: «Հյուսիսափայլը» մեջ այս բոլորի մասին ոչինչ հիշատակություն չկա. նազարյանցը չէ փորձում հասարակական հարց դարձնել կաթողիկոսի ընտրությունը, հասարակաց կարծիք ստեղծել և ղեկավարել:

Կյանքը, այո՛, հեռու էր կանգնած «Հյուսիսափայլի» խմբագրից: Վերին աստիճանի բնորոշ է նազարյանցի մի խոստովանությունը: «Հյուսիսափայլի» հայտարարության մեջ, ինչպես տեսանք, նա դիմում էր ձեռնհաս մարդկանց և խնդրում էր նրանց աշխատակցությունը: Այդ հրավերը ապարդյուն չանցավ, մեր հասարակության մեջ գտնվեցան մարդիկ, որոնք գրեցին «Հյուսիսափայլի» համար: Այդ մարդիկ ճանաչում էին նազարյանցին, գիտեին, որ նրա դավանանքն էր շծածկել արատները, այլ մերկացնել նրանց, ցավեցնող դեղերով, հիպոկրատյան կրակով բուժել վերքերը: Այդ սգով էլ գրվում են թղթակցություններ Կովկասի զանազան կողմերից: Բայց նազարյանցը չէ հրատարակում դրանց, որովհետև «շատերի մեջ բանախոսությունը ցուցանում էր ամենին մերկանդամ ճշմարտություն», — ասում է նա՞: Բայց ինչո՞ւ հենց այդ մերկանդամ ճշմարտությունը չպիտի հրատարակվեր «Հյուսիսափայլի» մեջ: Նազարյանցը, ի միջի այլոց, պատճառ է բանում ցենզուրան: Սակայն ավելի բնականը հետևյալ բացատրությունն է թվում.

«Արդարև պիտո է ինձ խոստովանել, որ մի քանի բան այդ գրվածքների մեջ որպես ծանոթությունք, թե ինչ վայրենամիտ կերպով դաստիարակվում էին հայոց մանկունքը քրիստոնեական ուսման մեջ և թե ինչպես ասիական բռնակալությամբ և անխիղճ սրբապղծությամբ վարվում էին հոգևոր անձինք ժողովրդի հետ քրիստոնեական կյանքի զանազան դիպվածների մեջ, զուգուրով և կողոպտելով քսակները, խոստովանում եմ, այդպիսի տեղեկություններ մի անշնչելի տխուր տպավորություն գործեցին իմ վերա, և ես անարժան համարեցի հրապարակով երկրորդել այն բանը, ինչ որ ժողովուրդը օր հանապազ տեսնում է յուր աչքի առջև, ուրեմն և շատ լավ անդյակ էր դորան»:

Մի խոստովանություն է սա, որ ցույց է տալիս, թե նազարյանցը կյանքի մեջ կոլոզների առջևից գնալու համարձակությունը չունի, որ կյանքի շատ պահանջների վերաբերմամբ նա պահպանողական էր և ավելի լավ էր համարում թաքցնել իր հիպոկրատյան հուրը: Ո՞ւմ կարող էր համոզել այն պատճառարանությունը, թե հրապարակախոսը չպիտի քննադատե շատ անճոռի երևույթներ միայն այն պատճառով, որ դրանք շատ լավ հայտնի են ժողովրդին: Ընդհակառակն, դա ցույց է տալիս, որ նազարյանցը, շատ ճիշտ է, նոր առաքյալի, առաջնորդողի հաստատ ու տոկուն բնավորություն ունի, բայց մի առաջնորդ, մի առաքյալ էր դա, որ շատ չէր սիրում դուրս գալ իր առանձնասենյակից. նա ավելի թեոթիայի, ընդհանուր սկզբունքների մարդ էր, քան կյանքի մեջ նետվող զինվոր:

Ինչո՞ւ էր այսպես: Գուցե նազարյանցը ավելի խրատական ու հրահանգի համարում էր եվրոպական կյանքը և միայն նրա վրա էր ուշադրություն դարձնում: Բայց այդ դեպքում պետք էր, որ «Հյուսիսափայլի» մեջ գտնե արևմտյան կյանքը լիակատար արտահայտություն գտնելու: Այդ էլ չենք տեսնում:

* «Հյուսիսափայլ», 1859, № 7, էր. 568.

ճիշտ է, «Հյուսիսափայլը» մի-մի անգամ մեզ մտցնում է իր ժամանակի եվրոպայի մեջ, բայց այդ բանում էլ մենք տեսնում ենք պատահականություն, անհաջորդականություն: Այսպես, 1858-ին նազարյանցը հանկարծ տալիս է նապոլեոն III-ի դեմ սպանություն փորձ կատարած Օրսինիի դատի ամենամանրամասն նկարագրությունը, որի մեջ չէ մոռացված ոչ մի փոքրիկ դեպք անգամ. իսկ 1859-ին, երբ Իտալիան հերոսական պատերազմ է սկսում Ավստրիայի դեմ, նազարյանցը ոչինչ չէ գրում այդ պատերազմի մասին, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունն էր գրավել:

Բերելով այս փաստերը «Հյուսիսափայլի» կյանքից, մենք չենք ուզում ասած լինել, թե նազարյանցը իր հրապարակախոսությունների մեջ միանգամայն անտես էր անում ժամանակակից կյանքը, բոլորովին չէր հետաքրքրվում նրա առօրյա երևույթներով: Ո՛չ, անարգարություն կլինեք մի այդպիսի բան ասելը: Նազարյանցը ոչինչ տպավորություն չէր թողնի իր ժամանակակիցների վրա, եթե վերացական աշխարհում միայն պտտեր, եթե օդի մեջ կախված հրապարակախոսության հետևեր: Մենք միայն ուզում ենք շեշտել այստեղ, որ իրականությունը շատ թույլ կերպով էր ազդում նազարյանցի վրա, որ նա քարոզում էր իր սիրած գաղափարները, մեծ ջանք չգործադրելով հիմնել այդ քարոզությունը կյանքի փաստերի քննադատության վրա:

Եվ մենք շատ լավ հասկանում ենք այդ պակասության պատճառը: Չմոռանանք, որ մերկացնող հրապարակախոսությունը նոր էր սկիզբ առնում մեզանում. դա դեռ մի սերմ էր, որ տնկվում էր հայության կոշտ ու անպտղաբեր հողի մեջ: Միանգամից ծլել ու ծաղկել նա չէր կարող: Յուրաքանչյուր սկզբնավորություն ունի իր մեջ թուլություն, անկատարելության հանգամանքներ: Հարկավոր է ժամանակ՝ աստիճանաբար զարգացման, բարեշրջման համար: Եվ այդ զարգացման պատկերը մենք հենց «Հյուսիսափայլի» վեց տարվա կյանքի մեջ կարող ենք նկատել: Հետզհետե առաջ գնալով, նազարյանցը, ինչպես կտեսնենք, սկսում է ավելի և ավելի մոտենալ ժամանակակից իրողություններին, նույնիսկ թողնում է օլիմպիական արհամարհանքը իր հակառակորդների վերաբերմամբ, բանակոխվ է մղում նրանց դեմ: Առաջադիմությունը այդ ուղղությամբ այն տեղին է հասցնում, որ վերջիվերջո նազարյանցը սկսում է հետաքրքրվել և թուրքահայերի գործերով, մի բան, որ գոյություն չունի «Հյուսիսափայլում», թեև թուրքահայերի կյանքի մեջ այդ ժամանակները շատ խոշոր դեպքեր էին տեղի ունենում:

Շատ մեծ չէ նազարյանցի հրապարակախոսական հորվածների թիվը: Լինելով «Հյուսիսափայլի» ամենաեռանդուն, բեղմնավոր աշխատակիցը, նա համեմատաբար շատ քիչ ինքնուրույն հորվածներ է գրել, նվիրված հասարակական հարցերին: Նայելով այդ տեղուն և անխոնջ աշխատավորին, մենք տեսնում ենք, որ նա ավելի թարգմանիչ է, քան ինքնուրույն գրող: Կարծես նրա ուղքն ու միտքը կլանել է այն հանգամանքը, որ հայ ընթերցողը չունի կարողալու նյութ, ուստի աշխատում է տալ միանգամից սրբան կարելի է շատ սրբան կարելի է բազմակողմանի բան: Թարգմանում է նա բնագիտական գրույցներ, վեպիկներ. «Հյուսիսափայլը» ունի շատ տեսարաններ, որոնք լցված են միայն և միմիայն նազարյանցի գրվածքներով: Որպիսի՞ սիրով և հետաքրքրությամբ նա թարգմանում է Կիկերոնի ճառերը, Ներսես կամբոնացու ասենարանությունը, համոզված, թե հայ ընթերցողի համար դրանք են երկկային մանանան. և միևնույն ժամանակ որպիսի՞ տարօրինակ լուծություն է պահպանվում այդ էջերի վրա Զեյթանի անցքերի, թուրքահայերի ազգային սահմանադրության մասին: Ամեն ինչ չէ կարելի հանդամանքներին վերագրել:

մենք պետք է, ի միջի այլոց, նկատի ունենանք և հրապարակախոսի բնավորությունը, խառնվածքը: Մի օրն է կրոնական հարց ավելի էր հետաքրքրում նազարյանցին, քան վառուղի ծուխով պատած Ձեյթունը: Սա շատ բնորոշ է մեր հրապարակախոսի դեմքը գծագրելու համար:

Բայց և այդպես, այն, ինչ գրել է նազարյանցը իր հրատարակախոսական ինքնուրույն հոդվածների մեջ, մի կատարյալ հայտնագործություն էր մեր այն ժամանակվա հասարակության համար: «Հյուսիսսփայլը» մի մեծ, լուսավոր երևույթ էր. նրան սուսում էին ոչ միայն բարեկամները, այլև թշնամիները: «Մեղուի» թղթակիցը Մոսկվայից շտապում էր հաղորդել «Հյուսիսսփայլի» ամսատետրակների բովանդակությունը նախքան նրանց տպարանից դուրս գալը: նազարյանցը ժամանակի ամենաազդեցիկ առաջավոր մարդն էր: նա միտք էր շարժում, վեճեր էր հուզում. նրան քննադատում էին անխնայ, հայհոյում էին, նրանից ահագին պահանջներ էին անում, նրա նույնիսկ թեթև թեթևություններն էլ ուռցնում էին:

Չարմանալի ազդեցիկ էր նազարյանցի խոսքը: Եատերից մի օրինակ: Լեզվագիտությունը գտել էր, որ հայոց լեզուն սանակրիտից է ծագում: նազարյանցը, հիմնվելով այդ գյուտի վրա, ասում է, որ, ուրեմն, առասպել է այն ենթադրությունը, թե հայոց լեզուն Ադամի և Նոյի լեզուն է: Բարձրանում է ահագին աղմուկ և աղաղակ. նազարյանցը հայտարարվում է օտարացած հայ, գավաճան, որովհետև խլում է ազգից նրա լեզվի փառքը: Ոչ ոք չէ ուզում սոչադրություն դարձնել, որ դա նազարյանցի գյուտը չէ, որ նազարյանցը միայն կրկնում է գիտության խոսքը: նազարյանցից առաջ նույն բանը կրկնված էր Վիեննայում տպված մի հայերեն գրքի մեջ*: Այդ էլ ոչինչ. հայ ազգասերների ձեռքով քարկոծվողը միայն նազարյանցն էր...

Նվ այդպիսի մի մարդ շատ հարկավոր էր այն ժամանակներում: Ամբողջ Ռուսաստանը զարթնում էր խոր քնից. զարթնում էին և հայերը: Ժամանակակից նոր ու լայն, ազատամիտ գաղափարներով լի մի այդպիսի ետուն պատմական ընդհանր կատարյալ անեծք կլիներ հայ ժողովրդի համար, եթե նրա մեջ ամեն ինչ շարունակվեր հին կարգով, եթե նրա առաջնորդներն ու խրատողները Արարատյանների, Մանդինյանների և Մսերների նման մարդիկ լինեին: Ոչինչ չգտնելով հայրենի իրականության մեջ, հայ երիտասարդությունը պիտի շվարած և անգլուխ մնար, չիմանալով ինչ անել: նազարյանցը այդ խորհրդավոր ժամանակում այն խոշոր անձնավորությունն էր, որ կենտրոնացնում էր իր շուրջը մտածող, առաջադիմող մարդկանց գաղափարներն ու հույսերը:

Իսկապես, նազարյանցը «Հյուսիսսփայլի» շրջանում շատ չէ մշակել այնպիսի հարցեր, որոնց մասին նա խոսած չլիներ մինչև այդ, իր առանձին աշխատությունների մեջ: Մի տեղ հավաքելով այն նյութերը, որոնց վրա կատարված են նազարյանցի հրատարակախոսական հոդվածները, մենք հիմնականի մեջ տեսնում ենք միևնույնը, ինչ տեսանք առաջ՝ մայրենի լեզու և նրա հետ կապված ազգային գոստիարակություն, գրականություն, լեզվից հետո առաջնակարգ նշանակություն է տրվում եկեղեցուն, և այստեղ նազարյանցը նույնն է, ինչ Եվարդպետաբան կրոնի» գրքի առաջաբանում:

Այն, նոր ու լայն հորիզոններ նա չէ բաց անում «Հյուսիսսփայլի» մեջ: Բայց դա մեծ նշանակություն չունի: Ժամանակն այնքան մանրամասն ծրագրած վարդապետությունների չէր կարող, որքան որոշ գրողակի: Զգացվում էր հնություն անկարողությունը, լուսավոր առաջադիմության անհրաժեշտու-

* Հ. Հովհանյան — «Մարդկային լեզուի քննություն», 1857:

թյունը. հարկավոր էր նշանաբան՝ առաջ գնալու համար, կալի, մրցության համար, պահանջվում էր մտքերի ընդհարում, իսկ այդ բոլորը կարելի էր համարել այն հարցերի շուրջը, որոնք արդեն նոր չէին նազարյանցի համար, բայց որոնց կրկնությունները նոր և նոր առիթներ էին տալիս, որ նոր միտքը, ժամանակի ոգին մի քաջ առաջ տանել իր հաղթական ընթացքը:

Կրկնություններ ասացինք, բայց կրկնությունները պակասություն չեն մի հրատարակախոսի համար: Մայրենի լեզվի հարցով սկսեց նազարյանցը իր գրական գործունեությունը. նույն հարցն էր, որով սկիզբ դրեց նա իր հրատարակախոսության՝ «Հյուսիսսփայլի» մեջ: Դա մի ընդարձակ հոդված է, որի մեջ նազարյանցը ապացուցանում է լեզվի կարևորությունը առաջադիմության գործում: Այնուհետև էլ նա հաճախ վերադառնում էր այդ առարկային: Հետևել այդ մանրամասնություններին ավելորդ կլինի մեզ համար, քանի որ մենք գիտենք արդեն, թե որքան փայլուն կերպով նազարյանցը պաշտպանում էր ժողովրդական հանրամատչելի գրականության դատը:

Գեղեցիկ են այդ հոդվածները, գեղեցիկ են մանավանդ հայերի պես մի ուղղի համար: Մի թեթև ակնարկ գցելով մեր պատմության վրա, մենք կգտնենք բազմաթիվ խառն ու խոշոր փաստեր, որոնք ցույց են տալիս, որ հայի լեզուն մայր խորթ զավակն է եղել, արհամարհված շատ և շատ դեպքերում, զոհված ոչ միայն կուլտուրայով ավելի բարձր ազգերի հարուստ լեզուներին, այլև այնպիսի լեզուներին, ինչպես են, օրինակ, քրդերենը, թաթարերենը, լիբերերենը: Մի այսպիսի ազգի մեջ լեզվի նշանակության նվիրված հոդվածները, որքան էլ առատ լինեն նրանք, որքան էլ շատ կրկնություններ ունենան իրանց մեջ, երբեք չպիտի ավելորդ համարվեն: Համարյա կես գար է անցել նազարյանցի այդ հոդվածների վրայով: Բայց այսօր էլ նրանք թարմ ու տպավորիչ են, որովհետև ունեն իրանց մեջ խոր, իրական ճշմարտություն, որովհետև այսօրվա համար էլ հրատարակ, կյանքի և մահվան հարց է այն, ինչ այնպիսի անստատ համոզմունքով, գեղեցիկ պատճառաբանություններով ապացուցանում էր նազարյանցը: Այսօրվա սերունդն էլ պիտի կարդա այդ հոդվածները, ոչ իբրև անցյալի գրականություն, ոչ թե պատմական հետաքրքրության համար, այլ իբրև ներկայի առաջնակարգ պահանջի արտահայտություն...

Մասնավոր հետաքրքրություն ներկայացնում է և հետևյալ հարցը:

Հիսունական թվականներից ռուսահայերի գրականության հաստատուն լինելն է դրվում: Դա մի շատ խոշոր երևույթ է մեր ամբողջ պատմության մեջ: Ինչպես որդի դարից մինչև տասնիններորդի կեսը մի և ընդհանուր էր հայկական գրականությունը, և ոչինչ ապրեբություն չենք գտնի այն գրքի մեջ, որ հեղինակվում էր նազարյանցից: Հիսունական թվականներից տեղի է ունենում բաժանում. երեւան են գալիս գրականության երկու մեծ հատվածներ՝ արևելյան և արևմտյան: Դա արտաքին, ճեղքան, աշխարհագրական բաժանում չէ. բաժանողը ոչինչ է, ուղղությունն է: Բաժանողը լեզուն էլ է: Ինչպես էր նայում այդ բաժանման «Հյուսիսսփայլը», որ ռուսահայերի գրական ուղղության առաջին, ամենահեղինակավոր ներկայացուցիչն էր:

Նազարյանցը ոչինչ վտանգավոր բան չէր գտնում այդ բաժանման մեջ: Թե հակառակն, նա պահանջում էր ռուսահայերի համար կատարյալ ինքնուրույնություն, անկախություն լեզվի զարգացման մեջ: Արևմտյան հայերը արևելյաններից շատ կանուխ էին պրական գործունեություն սկսել և արդեն ունեին իրանց աշխարհաբարը, որ բավական կոկոված ու մշակված էր: Բայց դա չէր նշանակում, որ ռուսահայերը, իբրև ավելի աղքատ լեզու ունեցողներ, ենթարկ-

վեն արևմտյան լեզվին: Երկուսն էլ պիտի իրանց բնական ճանապարհով առաջ գնան, մինչև որ կհասնի իրար, ասում էր Նազարյանցը: Թող զարգանա և կատարելագործվի թուրքահայերի լեզուն, մենք ժամանակին կզգուցենք նրանից: Բայց ինչ իրավունք մենք տալիս ենք Թուրքիայի հայերին, նույն իրավունքը, արդարության օրենքով, պահանջում ենք նրանից, այսինքն, որ նրանք թույլ տան մեզ զարգացնել մեր լեզուն: «Մեզ ի՞նչ վնաս կա, մի ծաղիկի տեղ երկու ծաղիկ ունենալ ազգի մեջ», — ասում է նա:

Գեղեցիկ նմանություն: Բայց թուրքահայերը դեռ այն ժամանակներից տեղային ազգասիրություն էին ցույց տալիս լեզվի հարցի մեջ: Ռուսահայերի լեզվին նրանք նայում էին իբրև մի օտար լեզվի, նայում էին բարձրից, մի տեսակ արհամարհանքով, համոզված լինելով, որ իրանց լեզուն է հարուստ, գեղեցիկ: Նազարյանցը բողոքում էր այդ շովինիստության դեմ, որ սպառնում էր չինական պատ քաշել ազգի երկու մեծ հատվածների մեջ: Նա պահանջում էր, որ ռուսահայերի աշխարհաբար գրքերը տարածվեն թուրքահայերի մեջ այնպես, ինչպես նրանց գրքերը տարածվում են մեր մեջ: «Մենք Ռուսաստանի հայերս, — ասում է նա, — ունենք մեր իրավունքը և կարող չենք ծառայանալ նոցա (թուրքահայերի) անպատշաճ, բռնավորական պահանջություններ. մենք մեղավոր չենք, եթե նոքա ուսել չեն դեռևս հարգել օտարի իրավունքը, եթե չգիտեն, որ երկու կողմից կանգնած են իրավունքներ միմյանց հանդեպ»:

Երկու ծաղիկների հասկացողությունը, պետք է խոստովանել, մինչև այժմ էլ ռուսահայերի մեջ է ավելի հաստատված, անհերքելի ճշմարտություն դարձած: Թուրքահայ գրականությունը մեզ համարյա նույնքան ընտանի և հարուզատ է, որքան մեր գրականությունը: Մինչդեռ պոլսական շովինիզմը դեռ չէ հաշտվել այն մտքի հետ, որ երկու ծաղիկների կարող են մեծանալ միմյանց կողքին, և մենք շատ անգամ ենք տեսնում, որ պոլսեցիները մեր գրքերը թարգմանում են իրանց լեզվով, կարծես թե մենք հայերեն չենք գրում...

Հրապարակախոսությունը «Հյուսիսսիսիայի» մեջ միայն հատուկ հոգևածներով չէր հանդես գալիս, այլ և կրիտիկայի ձևով:

Գրական լուրջ քննադատության սկիզբն էլ մեզանում դրել է «Հյուսիսսիսիայի»: Նրանից առաջ մենք հասկացողություն չունեինք կրիտիկայի մասին: Բայց սկիզբ դնելուց ավել նազարյանցի ամսագիրը մի բան չկարողացավ անել: Այդ բաժինը սաղմնային դրություն մեջ էլ մնաց մինչև «Հյուսիսսիսիայի» վերջը: Ամբողջ 1858 թվականին նա միայն երեք գրքի քննադատություն տվեց, իսկ հետեյալ տարիներում այդքանն էլ չարավ: Նույնիսկ «Վերք Հայաստանի» վեպի նման մի գիրքը «Հյուսիսսիսիայի» մեջ իր արժանավոր տեղը չգտավ, և միայն Նալբանդյանցը մի ծանոթության մեջ երկու խոսք ասեց նրա մասին:

Առաջին քննադատությունը գրեց Նալբանդյանցը. նա նվիրված էր «Հանդես նոր հայախոսության» ժողովածուի առաջին հատորին: Քննադատը հիացած է այդ գործի վրա և թեթև նկատողություններ անում է միայն լեզվի մասին: Երկրորդ քննադատությունը, դարձյալ Նալբանդյանցի գործ, խոսում է Գամառ-Քաթիպայի թարգմանած «Ռոբինզոնի» մասին: Իսկ երրորդը գրել է արդեն Նազարյանցը Նալբանդյանցի «Քաջահայկան հրեայի» մասին: Այս հոգևածը կիսատ էլ մնաց: Խմբագիրն էլ իր գլխավոր աշխատակցի գործի վրա էր հիացած: Իհարկե, այդ փոխադարձ հիացմունքը շինծու չէր, անհիմն չէր, բայց շատ անպատշաճ ու անտեղի էր մի ամսագրում, որի տերերն էին այդ միմյանց գովող մարդիկ:

Հարցը սակայն այս չէ: «Հյուսիսսիսիայի» կրիտիկան էլ հրապարակախոսություն էր: Գրում են քննադատություն ոչ թե գրքի մասին, այլ գրքի առի-

թով: Իր երկար հոդվածի մեջ Նազարյանցը «Քաջահայկան հրեայի» գրական և գեղարվեստական արժանավորությունները մասին չէ խոսում, այլ դարձյալ արժարժում է այն հարցերը, որոնք հայկական նոր գրականության զարգացման են վերաբերվում: Նրան այդպես խոսեցնել է տալիս Նալբանդյանցի գրած առաջաբանը, որի մեջ նույն հարցերն են շեշտվում: Առհասարակ «Հյուսիսսիսիայի» այդ երկու ղեկավարներին հետաքրքրում է միայն քարոզչությունը, միայն տենդենցիան: Նալբանդյանցը թարգմանել է «Քաջահայկան հրեայի» գլխավորապես այն պատճառով, որ ցույց տա, թե ինչ է կաթոլիկությունը և մանավանդ եզրվիստությունը: Իսկ սա հարկավոր էր Նալբանդյանցին՝ Մխիթարյաններին հարվածելու համար: Իր առաջաբանի մեջ նա Մխիթարյանների հասցեին այն մեղադրանքն է ուղղում, թե նրանք չթարգմանեցին «Քաջահայկան հրեայի» այն պատճառով, որ իրանք էլ եզրվիստների կրոնակից և համամիտ են: Եվ նազարյանցը իր կրիտիկայի մեջ միամտաբար կրկնում է այդ մեղադրանքը, մոռանալով, որ մի կաթոլիկ միաբանություն իրավունք ունի ազատ լինել իր համակրությունների և հակակրությունների մեջ, որ պահանջել նրանից էոթեն Սյուրի վեպի թարգմանությունը նույնքան կարող է իրավացի լինել, որքան պահանջելը, որ նույն Մխիթարյանները թարգմանեն, դիցուք, Եստրաուսի «Հիսուսի կյանքը»:

«Քաջահայկան հրեայի» առիթով գրած քննադատության մեջ Նազարյանցը կանգ է առնում մի նոր հարցի վրա, որ նույնպես սերտ կերպով կապված է գրականության հետ: Դա գրավաճառության հարցն է: Հայանի է, որ առանց կանոնավոր կազմակերպած գրավաճառության չէ կարող առաջ գնալ գրականությունը: Քրտինք ու աշխատանք է թափում հայ հեղինակը, մի կերպ միջոց է գտնում իր այդ գառն աշխատանքի պտուղը հրատարակելու, բայց հետո մնում է շվարած, չգիտե, թե ինչպես տարածել իր գրքերը: «Քաթարներ» — ասում է Նազարյանցը, — յուրյանց 10 000 թաթարների համար ունին վաղանումը գրավաճառության խանութ և յուրյանց կրոնի ուսման գրքերը տարածում են յուրյանց հավատակիցների մեջ. մի՞թե քրիստոնյա հայերը թաթարներից վատ են»:

Մենք հիշատակում ենք գրավաճառության այս հարցը հատկապես այն պատճառով, որ Նազարյանցը մի շատ բնորոշ փաստ էլ է բերում այն գրությունից, որ ստեղծել էր Քիֆլիսի հակառակությունը նրա դեմ: Ինչպես պարզ երևում է նրա ակնարկություններից, Քիֆլիսում արգելքներ էին հարուցվում Մոսկվայի այն գրքերի տարածման դեմ, որոնց մեջ ազատ խոսքն էր երևում: Գրանք, իհարկե, Նազարյանցի և Նալբանդյանցի գրքերն էին: Առևտրական լուսկան այդ գրքերի առջև փակողը այն ձեռնումն էր, որ գործ էին գնում ազատ խոսքից վախեցողները, նրա անխնա մերկացումների մեջ իրանց պատկերը անանողները: Քիֆլիսում մի հատ հայ գրավաճառ կար, բայց նա ծախում էր անտարբեր գրքեր, Վենեսիկի, Կ. Պոլսի և այլ աղբի հրատարակությունները. իսկ Մոսկվայի «հայտնի» գրքերը նա չէր կարողանում կամ չէր վստահում տարածել: Քիֆլիսը, իբրև հայաշատ կենտրոն, այդ ուղղությամբ մեծ ազդեցություն ուներ և շրջակա քաղաքների վրա: «Այս բանը լավ գիտեն խավարի բարեկամները. բայց թող և լուսավորության բարեկամքը անփութ չանեն», — ասում է Նազարյանցը և խորհուրդ է տալիս Քիֆլիսի բարեմիտ հայերին միջոցներ ձեռք առնել այդ շարիքի դեմ:

Կրիտիկան առհասարակ «Հյուսիսսիսիայի» ամենազնահատելի հատկությունն է: Եթե նա շատ թույլ էր արտահայտվում գրական-գեղարվեստական

բաժնում, դրա փոխարեն իր ներկայությունը խիստ զգացնել էր տալիս ուրիշ տեղերում, մասնավորապես պատմության վերաբերյալ հողվածներում: Նազարյանցը առաջինն էր մեղանում, որ գործադրեց պատմական քննադատությունը: Նա բավական չէր համարում տալ շոր ու ցամաք պատմություն, այսինքն՝ դեպքերի և դեմքերի նկարագրություն. նա դնում էր քննական հայացք, վերլուծում էր անցյալի հանգամանքները և լուսաբանում էր նրանց որոշ դաժափարները և հայացքների տեսակետից:

Այդ լուսաբանությունների մեջ ցոլանում են Նազարյանցի քաղաքական և հասարակական դավանանքները: Եվ այս կողմից նշանավոր է նրա մի հողվածը, որ տպվեց «Հյուսիսափայլի» առաջին տարվա տետրակներում և որի առարկան ընդհանուր պատմության ամենախոշոր երևույթներից մեկն է՝ «Չրանսիական Ռևոլյուցիայի պատճառքը»: Դա մեծ հեղափոխության փաստական պատմությունը չէ, այլ քննադատություն, թե ինչ պատճառներից առաջացավ այդ ահավոր քաղաքական հրդեհը: Չգիտենք ինչ ազդեցություններով է առաջնորդվել Նազարյանցը, նույնիսկ չգիտենք՝ ինքնուրույն հողված է դա, թե ոչ, բայց փաստն այն է, որ այդտեղ վերաբերմունքը դեպի ֆրանսիական հեղափոխությունը բացասական է: Նազարյանցը դուրս է գալիս այստեղ իբրև միապետության կողմնակից և հանրապետական գաղափարները անվանում է կորստաբեր: Մասնավորապես անխնայ է նա տասնութերորդ դարի փիլիսոփաների վերաբերմամբ. էնցիկլոպեդիստները, Վոլտերը նրա համար ավելի շարագործներ են, քան մարդկային միտքը լուսավորողներ: Այդ ատելության մեջ երևում է գալիս հավատացող քրիստոնյա Նազարյանցը, որին վրդովում է տասնութերորդ դարի փիլիսոփայության անհավատությունը: Եվ այդ վրդովմունքի մեջ Նազարյանցին չէ կարելի դանազանել մի հոգևորականից: Հայտնի է, որ հեղափոխության դարի մշակած քաղաքական իդեալն այն էր, որ իշխանությունը ժողովրդից է բխում և ոչ թե Աստուծուց: Նազարյանցը ապստամբվում է և այս մտքի դեմ, ամեն կողմով վնասակար համարելով այդ վարդապետությունը:

Այնպես որ, դատելով այս վերաբերմունքից, Նազարյանցը եվրոպական աշխարհայեցողությունների տեսակետից մի շատ շափավոր ազատամիտ էր, որին արմատական գաղափարները վախեցնում էին նույնքան, որքան կղերական խավարամիտ պահպանողականությունը: Այդպիսի մարդը վտանգավոր չէր համարվի նույնիսկ այնպիսի ժողովուրդների մեջ, որոնց կառավարողը հետադիմական ուժերն է: Բայց եկեք ու տեսեք, որ մեղանում Նազարյանցը համարվում էր մի անտանելի արմատական, մի կարմիր հեղափոխական, որ եկել էր քարոզանդ անելու հայրենի բոլոր կարգերը: Այս հանգամանքը շատ պարզ ցույց է տալիս, թե որքան հետամնաց ժողովուրդ էինք մենք, որքան սաստիկ էր տիրում մեր մեջ լուսավախությունը:

Նազարյանցը ձեռնարկում է դրել և հայոց պատմություն, բայց տալիս է միայն այս պատմության նախաբանը, այն է Հայաստանի աշխարհագրությունը: Դատելով «Հյուսիսափայլի» հետագա տարեշրջաններում տպված մի քանի հողվածներից, որոնց մեջ գտնում ենք Նազարյանցի հայացքները մեր պատմական մի քանի հարցերի վերաբերմամբ, մենք կարելի ենք համարում ասել, թե շատ հետաքրքրական կլինեք այդ հայոց պատմությունը, գոնե նա նման չէր լինի այն ժամանակները և հենց մեր ժամանակներն էլ գոյություն ունեցող պատմություններին: Նազարյանցը կգնար ընդհանուր հոսանքի, ընդհանուր հասկացողությունների դեմ և շատ ինքնուրույն, լուրջ հայացքներ կտար մեզ:

Չգիտենք ինչու Նազարյանցը բավականացավ նախաբանով և չգիտեց բուն պատմություն: Այդ նախաբանը ոչինչ արժանավորություն չունի: Կամենալով կազմել Հայաստանի աշխարհագրությունը, Նազարյանցը չէ հանձն ասել աշխարհագրություն դիմելու այլ և այլ հայ թե օտար աղբյուրներին, այլ, ինչպես ապացուցված է*, վերցրել ու թարգմանել է մի ուսու սննդան հեղինակի գրվածքը: Այդ կիսատ-պոստ թարգմանության մեջ մենք, իհարկե, ոչինչ չենք որոնի: Բայց Նազարյանցը իր այդ գործին կցել է մի գեղեցիկ առաջաբան, որի հետ ծանոթանալ արժեն:

Այդտեղ նախ և առաջ շատ սիրուն կերպով բացատրված է ազգային պատմության նշանակությունը: Նազարյանցը չէ հասկանում մի ուսուցած, դարգարած պատմություն, որ ազգային սնամիտությունը պիտի շոյե, այլ մի պատմություն, որ անաչառ կերպով մերկացնում է անցյալը՝ ապագա սերունդները դաստիարակելու, կրթելու համար: «Ամենայն ազգ, թե նորա պարծանքը և թե նորա ամոթը, հետևանք է նորա պատմության», — ասում է Նազարյանցը: Այս հիմնական հասկացողությունը արդեն մի ուղեցույց է, թե ինչպես պիտի մշակեր Նազարյանցը մեր ազգային պատմությունը: Երկրորդ հետաքրքրական հարցը, որ շոյափված է այս առաջաբանում, հայ մատենագիրների թարգմանությունն է: Այստեղ Նազարյանցը սաստիկ պախարակում է մի երևույթ: Հայերը չունեն իրանց հին մատենագիրների աշխարհաբար թարգմանությունը, իսկ հայ ուսումնականները թարգմանում են այդ պատմագիրները ռուսերեն լեզվով:

Հարվածը ուղղված էր Մկրտիչ էմինի դեմ, որ այդ ժամանակները հրատարակել էր Մովսես Խորենացու պատմության ռուսերեն թարգմանությունը: Ահա ինչ էր ասում Նազարյանցը այդպիսի ուսումնականներին.

«Խոսք չունինք, եթե ֆրանսիացին կամենում է մեր Հայոց պատմությունը ֆրանսերեն տալ ֆրանսիացոց ազգին. խոսք չունինք, եթե մեր գիտնականքը Ռուսաստանի մեջ ուսուներեն թարգմանում են մի հին հայոց պատմագիրը այն խորհրդով, որ Ռուսաց ուսումնականներին տեղեկություն տալին հայոց ազգի պատմությանը. բայց հայոց պատմությունը ֆրանսիական և ռուս լեզվով տալ հայոց ազգին և հայոց մանուկին, երևում է մեզ մի անբնական, կարգից ու արևելից դուրս, մի այլանդակ բան»: Կարելի է այդպիսի օտարոտի երևույթը, հարցնում է Նազարյանցը, և պատասխանում. «Այո, կարելի է, երբոր տգեղ կամակորությունը և սրտի խարդախությունը և հիվանդոտ պատրույթունը ամենին կուրացնում են ուսումնականների միտքը ընդդեմ ազգի ներկա պիտույքներին և կարոտությունը. և դրա փոխանակ հասկանալի լեզվով խոսելու ազգի հետ, ավելի լավ են համարում կամ լուր մնալ, կամ թե ուսուներեն խոսել Հայոց ազգի հետ»:

Հետաքրքրական է, թե ինչպես է բացատրում Նազարյանցը գիտնականների (էմինի) այդ կամակորությունը: Պատճառն այն է, ասում է նա, որ այդ գիտնականները չեն քարոզել աշխարհաբար լեզվի նշանակությունը, այլ մի ուրիշը: Եվ որովհետև ուրիշի բերանից է դուրս եկել ճշմարտությունը, ուստի հենց այդ պատճառով էլ նրանք չեն ընդունում այդ ճշմարտությունը:

Սակայն էմինը, ապա և Քերովը Պատկանյանը կարող էին ասել, որ իրանք հայ պատմագիրները թարգմանում են գլխավորապես ռուս գիտնականների համար: Հիշատակություն արժանի հանգամանքն այն է, որ հայ պատմա-

* Երիցյան, «Մտեփանոս Նազարյանցի գրական գործունեությունը», «Փորձ» ամսագիր, 1879, № 11:

գիրներն աշխարհաբար թարգմանութեան պահանջը մինչև այսօր էլ չէ կատարված բավարար կերպով: Ընդհանուր է, կան մի քանի պատմագիրներն թարգմանութունները, բայց դրանք կցկտուր բաներ են, պատահական երևութիւններ շատ կասկածելի արժանավորութիւններով: Մեր առաջադիմութեան դանդաղատութիւնը ավելի ևս հուսահատական է դառնում, երբ սկսում ենք շարժել, թե ինչ ժամանակի ընթացքում ենք կարողանում կատար անել սլարդ, ամենքիս համար անուրանալի դարձած պահանջներն անգամ:

Նախքան «Հյուսիսափայլի» առաջին տարվա գումարները փակելը, մեզ վրա պարտք կա խոսել նրա մի աշխատակցի մասին, որի հրապարակախոսութիւնը ավելի ազդու և ժողովրդական է եղել, քան Նազարյանցի հրապարակախոսութիւնը:

Այդ աշխատակիցը Կոմս Էմմանուելն է:

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Կոմս Էմմանուել անվան տակ ծածկվում էր Միքայել Նալբանդյանցը: Քսաներեք տարեկան կրիտասարդ էր նա, երբ եկավ Մոսկվա, մոտեցավ Նազարյանցին: Նա շուններ Նազարյանցի դարգացումը, գիտնականութիւնը: Միայն հայերեն լավ գիտեր, չէր ստացել կանոնավոր կրթութիւն, տիրացու էր Նոր-Նախիջևանի եկեղեցում: Մոսկվայում նա Նոր-Նոր պիտի կրթութիւն ձեռք բերեր, և սկսում է պարապել, ինքնակրթութիւնը լրացնել իր ստացած ուսման պակասութիւնները և պատրաստվել համալսարան մտնելու համար:

Բայց Նալբանդյանցը ուներ մի մեծ առավելութիւն, որից զուրկ էր Նազարյանցը: Նա անմիջական հայկական իրականութիւնից էր դուրս եկել, նա կովի մեջ էր եղել, հալածվել էր, փախստական էր դարձել: Կրքոտ, տաք էր այն կռիվը, որ Նոր-Նախիջևանում բորբոքված էր երկու հակառակ կուսակցութիւնների մեջ. Նալբանդյանցը այդ կովի մեջ քաջ զինվոր էր եղել, դրա համար էլ հալածանքը նրա դեմ անխնա էր եղել: Ներսես կաթողիկոսը ուստիկանութեան միջոցով էր ուզում պատժել ըմբոստ տիրացուին: Փախչելով Մոսկվա, Նալբանդյանցը ընկնում է ազատամիտ շրջանների մեջ. Նազարյանցը նրա ամենամտտիկ բարեկամն էր: Այդտեղ ահա տիրացուն կերպարանափոխվում է և դառնում է ազատութեան և առաջադիմութեան կրակոտ քարոզիչ:

Բնութիւնը տաղանդի հետ տվել էր Նալբանդյանցին կրքոտ բնավորութիւն: Եվ նա դառնում է «Հյուսիսափայլի» խմբի առաջապահ մարտնչող, ձեռք է բերում մեծ ժողովրդականութիւն, տիրում է մտքերի վրա:

Այստեղ Նալբանդյանցի գրական գործունեութեան մասին մանրամասն խոսելու, այդ գործունեութեան խոշոր արժանավորութիւնները, ինչպես նաև շատ աչքի ընկնող պակասութիւնները ցույց տալու տեղը չէ, քանի որ մենք Նազարյանցի մասին ենք գրում: Այստեղ միայն այն պետք է շեշտել, որ «Հյուսիսափայլի» հրապարակախոսութիւնը այնքան ազդու չէր լինի, այնքան խոր ու հիմնավոր տպավորութիւն չէր գործի մեր հասարակութեան վրա, եթե միայն Նազարյանցի հոգւածների մեջ ամփոփվեր, եթե չլիներ Կոմս Էմմանուելը:

«Հյուսիսափայլի» առաջին տարվա շորթորդ ամսատետրակից Նալբանդյանցը սկսում է ամսական տեսութիւնների մի շարք՝ «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրական թերթերից» վերնագրով: Դրանք հասարակական ֆելիետոններ էին, ուր ծաղրը, խստութիւնը, թույնը միացած էին աշխույժ, տաղանդավոր գրչի հետ: Նալբանդյանցը այդ բաժնում կատարյալ տեր էր: «Հիշատակարանները» լրացնում էին, թեև ոչ լիակատար շարժվել, Նազարյանցի

հրապարակախոսութեան պակասութիւնները: Սկզբունքները, դավանութիւնները, իհարկե, միևնույնն էին. խմբագրի և գլխավոր աշխատակցի մեջ ոչինչ գաղափարական անհամաձայնութիւն չէր կրկնում: Այն, ինչ Նազարյանցը հայտնում էր իր լուրջ ու ծանրախոհ, բարձր ոճով և հաճախ կարինետային ոգով գրած հոգւածներում, Նալբանդյանցը ժողովրդականացնում էր իր թեթև ու վառվռուն գրչով: Գրելու գեղեցիկ շնորհք էր տված նրան: Պատմել, խայթել, երգել նա շատ լավ գիտեր, և ամեն տեղ՝ ֆելիետոնի թե լուրջ հոգւածի, զոդարիկ ոտանավորի թե անաչոզ վեպի մեջ երևում էր երկնային կայծը, նոր ժամանակների առաքյալի հրային շունչը:

Կոմս Էմմանուելն էր, որ մոտեցնում էր հրապարակախոսութիւնը կյանքին: Գրականութիւնը կյանքի հայելին է, ասում էր նա. իսկ կյանքը միևնույն է առանց պատերազմի, առանց մրցումների և ընդհարումների: Եվ իրավ, նրա գրվածքները ցուցնում են իրանց մեջ կյանքը, կռիվը. այնտեղ մենք տեսնում ենք ժամանակակից դեմքեր և դեպքեր: Կոմս Էմմանուելն էր, որ Նոր-Նախիջևանի հասարակական հարցերը մացրեց «Հյուսիսափայլի» էջերի մեջ, էջեր, որոնց չէին սիրում բեռնավորվել այդպիսի ընթացիկ տարեգրութիւններով: Նույն այդ ակադեմիական էջերի մեջ առաջին անգամ Կոմս Էմմանուելն էր, որ ծանոթացրեց ընթերցողներին արտասահմանի հայութեան հետ:

Մի հասարակական ամսագրի տեսակետից չէ կարելի միանգամայն բավարար համարել այդ բոլորը: Ինչո՞ւ, օրինակ, միայն Նոր-Նախիջևանն էր արժանանում այդ ուշադրութեան, մինչդեռ ամբողջ Հայաստանը շարունակում էր մի անհայտ երկիր մնալ «Հյուսիսափայլի» ընթերցողների համար: Իհարկե, անկարելի պիտի լինի պահանջել Նալբանդյանցի, որ նա շատ հայաբնակ տեղերին վերաբերվեր այնպես, ինչպես վերաբերվում էր իր հայրենի Նոր-Նախիջևանին: Բայց այստեղ, անշուշտ, պատճառը միայն դժվարութիւնը, միայն միջոցների պակասութիւնը չէ: Իբրև կրքոտ մարդ, իբրև կովի մարդ, Նալբանդյանցը շատ անգամ էր ընկնում ծայրահեղութիւնների մեջ, շատ էր սիրում դիմել գրական այնպիսի միջոցների, որոնք դատապարտելի պիտի լինեն մանավանդ նրա պես լուսամիտ, տաղանդավոր գրողի համար: Մի շարք պատճառներ, որոնց մասին այստեղ չենք կարող երկար խոսել, ճակատագրական կերպով հարկադրում էին նրան մնալ նեղ, մանր-մունր հարցերի մեջ: Նա հրապարակ էր հանում այս կամ այն մասնավոր անձի ընտանեկան կյանքը, չէր քաշվում պասկվիլներին, նրա հարձակումների մեջ մեծ դեր էին կատարում անձնական հաշիվները:

Մրանք աչքի ընկնող թերութիւններ են: Բայց և այնպես, Նալբանդյանցը իր ժամանակի գրական աստղն էր, ամենատաղանդավորը հայ գրողների մեջ: «Ամսի սկզբին,— ասում էր նրա կենսագրողը,— ամեն բաժանորդ անհամբերութեամբ սպասում էր «Հյուսիսափայլի» նոր համարը դուրս գալուն, որ կարգա Կոմս Էմմանուելի հիշատակարանը կամ մյուս հոգւածները»:

Եվ դա հասկանալի է: Նալբանդյանցի գրվածքները այժմ էլ կարդացվում են մեծ հետաքրքրութեամբ: Կա մի առանձին հրատուր Նազարյանցի գրչի տակից դուրս եկած տողերի մեջ. լայն ու լուսավոր հայացքները, մանավանդ սուր քննադատական կարողութիւնը հափշտակում են ձեռ միտքը: Դուք զգում եք, որ այդ տողերը թղթի վրա շարել է լուսավորութեան և ազատութեան դիմարտի ձեռքը: Որպիսի ուժգին թափով նա բանակցել է մղում հակառակորդ-

* «Ղազար Փարպեցու թուղթը», Պետերբ., 1868, եր. XII:

ների դեմ, հարվածում է խավարամիտների, «օրսկոյրանտներին» բանակը, մերկացնում է մեծատունների արատները:

Քննադատական փայլուն կարողության մի ապացույցն էլ նրա «Մխիթար և Մխիթարյանք» ուսումնասիրությունն է, որ տպվեց «Հյուսիսափայլի» առաջին տարվա համարներում: Թեև այդտեղ աչքի է ընկնում մի կանխակալ նախապաշարմունք Մխիթարյան միաբանության դեմ, թեև փաստերի լուսաբանությունը միակողմանի է, և հեղինակի վերաբերմունքը ոչ բուրբուխ անաշատ, բայց և այդպես, մի ուսումնասիրություն է դա, որ մեր քննական գրականության լավագույն էջերից մեկն է կազմում իբրև լայն հայացքների և կտրուկ ու խիստ պահանջողության արտահայտություն:

Գծրախտաբար, այդ տաղանդավոր գրողը և անխոնջ մարտնչողը երկար շաշխատեց «Հյուսիսափայլի» և առհասարակ հայոց գրականության մեջ, և նրա թողած գրական ժառանգությունը շատ էլ մեծ չէ: 1858 թվականի վերջերին նա գնաց արտասահման, ուր մնաց մի տարի: Այդտեղից էլ նա շարունակում էր եռանդով աշխատակցել «Հյուսիսափայլին»: Բայց Ռուսաստան վերադառնալուց հետո նրա այդ եռանդը թուլանում է: 1860 թվականին նա շատ քիչ բան է գրում, 1861-ին նրա մի հատ ոտանավորն է (նշանավոր «Մեր Հայրենիքը») տպվում «Հյուսիսափայլի» մեջ. և այնուհետև գծրախտ հանգամանքները լուսնում են նրան, մինչև որ թոքախտը վերջ է դնում նրա երիտասարդ հասակին (1866): Չխոսելով ուրիշ պատճառների մասին, մենք պիտի դառնություններ խոստովանենք, որ այդ վաղահաս մահը փութացողներից մեկն էլ այն էր, որ հայոց գրականությունը չկարողացավ այդպիսի մի տաղանդի համար մի փոքրիշատե վայելուչ կեցություն ապահովել: Նախանդանցը ամբողջ ժամանակ ձրի էր աշխատում...

Ձրի աշխատող էր և Նազարյանցը: Մենք տեսնք, թե ինչպիսի ենթագրություններ ունեն նա ամսագրի գործը կազմակերպելու մասին և ինչպիսի պայմանների մեջ հարկադրված եղավ սկսել այդ գործը: Առաջին կիսամյակը լրացնելուն պես նա շտապեց տպագրել իր բաժանորդների անունները և շնորհակալություն հայտնել իրան օգնողներին: Այդ բաժանորդների հասցեին նազարյանցը շոտում է հաճույական խոսքեր, իբր թե բաժանորդ գրվելով «Հյուսիսափայլին», դրանք ցույց են տվել, որ կամենում են մի բան սովորել, հասկանալ իրանց ազգի դրությունը և այլն: Հետաքրքրական այդտեղ այն է, որ նազարյանցը զոհ է իր հայրենի Թիֆլիս քաղաքից: Թիֆլիսը, ասում է նա, թեև ուշ, բայց «ճանաչեց յուր ուսումնական որդու ձայնը և ետ դնելով ամենայն թերահավատություն և պաշտություն, որ սովոր է գոյանալ այնտեղ, ուր լինում են մոռացությունը, խառնակիչ ազդեցությունը վատթար մարդերի ձեռքով — և իմ հայրենի Թիֆլիսը անմասն ու անբաժին շմանց այն պարծանքից, որ կցորդ է մի ազգասիրական գործի հառաջատարության»:

Այդ «պարծանքը» Թիֆլիսը ստանում էր իր տված մոտ հիսուն բաժանորդների փոխարեն: Բայց այդ հիսունից քանի՞սն են նազարյանցի մոտ գնացել «գավազանի» ստիպմամբ: Որքան քիչ բան էր հարկավոր նազարյանցին ոգևորելու համար...

Այդ ոգևորությունը ստատիկ է մասնավանդ տարվա վերջին, երբ Նազարյանցը փակում է «Հյուսիսափայլի» առաջին շրջանը և կանգնած է երկրորդի հանդեպ: Նորից նա տպում է իր բաժանորդների ցուցակը: Բայց այս անգամ դիմում է նրանց մի շատ գեղեցիկ ճառով:

Հայտնելով, որ «Հյուսիսափայլը» իր ընթերցողների հետ ձեռք ձեռքի տված անցել է տարեկան ճանապարհորդ, նազարյանցը մի առ մի թվում է, թե ինչ տեսան ընթերցողները այդ ճանապարհին և բերում է իր հրապարակաստության գլխավոր հարցերը և իր դավանանքը. «Մի ավելի մեծ ու հոյակապ քննա կարող չէ մի մարդ անել յուր ընկերին, եթե ոչ ասելով նորան ճշմարտությունը»: Այդ ընծայով է «Հյուսիսափայլը» մեծարել իր ազգը: Հաճույախոսությունների և շողոքորթությունների ետևից չէ ընկել նա: «Մեղրոտ խոսքերից, որ այդքան սիրելի էին ազգի մեջ գտանված կարճամիտներին, որ և փուտ ապրանքի պես շատ դուրեպիս են, միայն թե գնողը լինեն, «Հյուսիսափայլի» հրատարակողը միշտ հեռի է պահել յուր գրիչը, միտ դնելով քաղցր խոսքերի թունավոր ներգործությունը, միտ դնելով յուր սուրբ պարտականությունը դեպի յուր ազգը, հարգելով յուր անձը և յուր ընկերի անձը»:

Չէ մոռանում նազարյանցը, որ ճշմարտության դառն խոսքը ատամներին կրճտոց և խիստ հարձակումներ է հարուցել իր դեմ: Նա ասում է. «Փույթ չէ հրատարակողին, որ չէ գրավել նա այս և այն մասնավոր մեծատունի սիրտը, անուշահոտ խունկ ծխելով նոցա քթին, բարի մարդիկ լինելով նոցա առջև: Այդ պարծանքը թողել է նա հայկական եզվիտներին, որ պատրաստ են ազավաղել ամենայն բարոյական հիմունք մարդկային կյանքի, պղտորել և մոռացիլ ամենայն ճշմարտություն, միայն թե կարողանային հասանել յուրյանց եպատակին, որ է իշխանություն և հրաման ազատ հոգիների վերա»:

Տարվա վերջին հաշիվ ու համար տալով հասարակությանը իր արածների մասին, մեր խմբագիրը հետևյալ գեղեցիկ խոսքերն է ուղղում իր բաժանորդներին.

«Շնորհակալ եմ ձեզանից ձեր բարեսիրտ ընկերակցության համար, իմ ծանր և քարքարուտ ճանապարհորդության մեջ: Ձեզ, իմ սրտի սիրածները, ունեկալով իմ հետ, քաղցր էր ինձ շատ դժվարությունը հանձն առնուլ, ճանապարհ կտրել սարերի ու ապառաժների միջից, որ ու գիշեր անքուն աշխատելով ուսանել ինքս և ուսուցանել ձեզ, ուսուցանել ձեզ առողջաբար մտածել ձեր օգուտը և բարին, ձեր ազգի հասարակաց բաղդավորությունը, ճանաչել ձեր կյանքի խորհուրդը իբրև մարդ և քաղաքացի այժմյան լուսավոր դարուս և հատաչ խաղալ մարդկային հառաջդիմության ասպարիզի մեջ: «Հյուսիսափայլը», ինչքան կարելի էր մի տարեգնացքի մեջ, բացեց ձեր առջև, պատվելի պարոններ, հայկական ազգի քար ու քանդ եղած կյանքը. նա համարձակ ձեռքով ետ քաշեց վարագույրը, որ շատերի աչքից թաքուցանում էր հայկական իրողությունների ստույգ դրությունը, ցույց տվեց ազգային տան սարսափելի փլատակները և վերաշինության հնարավորությունը, քաջ շեշտելով այն մեծ, մինչև այժմ անտես ու անփույթ արած ճշմարտությունը, թե մարդուս կարողությունը, մեծագործական դրությունը բխում է ընկերական միաբանությունից, և թե ինչ որ մասնավոր ձեռքեր անկարող էին հառաջացնել, հեշտ է պսակել միաբան ներգործող դրությունների միջնորդությամբ»:

Իվերջո նազարյանցը հույս է հայտնում, որ բաժանորդները «ամենայն կերպով խնամատար կլինեն օտքի վերա պահպանել մի ազգային օրագիր, որ եսցա իմացական փառքն ու պատիվն է թե Ռուսաստանի և թե եվրոպական ազգերի առաջև»:

Վերջին խոսքերը, ինչպես և ուրիշ տեղերում պատահող ինքնազովությունները, վատ տպավորություն են թողնում ընթերցողի վրա, թեև նա պատրաստ է խոստովանել, թե դրանք միանգամայն ճշմարիտ են: Լավ կլիներ տեսնել նազարյանցի պես մի մարդու մեջ ավելի համեստություն իր կատարած գոր-

ծերի վերաբերմամբ. լավ կլիներ, որ նա ինքը իրան վկայականներ չտար: Բայց այս թույլությունը հատուկ էր նազարյանցին և ոչ միայն նրան, այլ աս-հասարակ մեր այն նշանավոր գործիչներին, որոնք մի ծայրահեղ սեր ու հա-վատ ունեին զեպի իրանց գործը, որոնք շատ լավ տեսնում էին իրանց հա-կառակորդների ամբողջ ոչնչությունը: Նազարյանցը իր նամակների մեջ էլ, նույնիսկ նախքան հայ հասարակությանը հայտնի դառնալը, խոսում էր իր մասին այդպիսի եղանակով: Եվ մենք ակամա հաշտվում ենք դրա հետ, քանի որ համոզված ենք, որ դատարակ ու անհիմն սնապարծություն չէր դա, որ նա ճիշտ էր ասում, որ նա անձնուրաց, անխոնջ աշխատող էր:

Համարձակ, շիտակ ու անկեղծ խոսքերով իր հաշիվը ներկայացնելով հա-սարակությանը, նազարյանցը, ավելի թևավորված, ավելի հուսալից, մտնում է երկրորդ տարեշրջանը:

III

Երկրորդ տարվա հաջողությունները: Խոչընդոտներ: «Հայերի կոչումը մարդկության մեջ»: Կրոն և ազգություն: Էջմիածնի դերը: Հայկական քառ-րոն: Հասարակական կյանք չկա: Հայ վաճառականի տիպը: Մաաբեոս կարո-ղիկոսի հաստատությունը և հանապարհորդությունը: «Մաաթոզ հայերի հույ-սերը»: Մաաբեոսի բնավորությունը: Բողոքականությունը Շամախում: 1860-ի առաջին հոգիվածը. փոփոխված հայացք: Արշավանք կղերականության դեմ: «Հյուսիսափայլի» երրորդ տարին: Լայն ծրագիր. նազարյանցը օգնություն է խնդրում: Աշխատակիցներ. Հակոբ Մելիք Հակոբյան: Նորից հայոց պատմու-թյան փորձ և «Թարգմանիչների դարը»:

«Հյուսիսափայլի» երկրորդ տարին ավելի հուսատուն էր: Նազարյանցը ստանում էր խրախուսական նամակներ. ամսագրի հեղինակությունը ավելի մեծանում է, հասարակությունը հետզհետե սկսում է իր համակրանքը ցույց տալ և գործով. բաժանորդների թիվը հասնում է արդեն համարյա 340-ի: Բայց դա դեռ բավարար թիվ չէ. դրն 400 բաժանորդ էր ուզում նազարյանցը, որ-պեսզի կարողանա փոքրիշատե վարձատրություն տալ իր աշխատակիցներին:

Ամսագրի աջողության հետ առաջ էին գնում և խոչընդոտները: Հարձա-կումները, խիստ մերկացումները իրանց գործն էին տեսնում: Խայթվողները, գլխավորապես, իհարկե, հոգևորականները, ջանք չէին խնայում նազարյան-ցին տապալելու, նրա գործը ոչնչացնելու համար: Բանակոխվել գնալով տաք և աղմկալի էր դառնում. «Մեղուն» և «Ճուաքաղը» ձեռք ձեռքի տված՝ սուտ, վնասակար, ազդակործան են հայտարարում այն լուսավորությունը, որի անու-նից խոսում էր նազարյանցը:

Բայց այդ աղմուկը, իհարկե, բավական չէր թշնամիների համար: Նրանք սկսում են գործել և ուրիշ միջոցներով: Նազարյանցը բացարձակ կերպով ասում է, որ հայ արեղանները ամեն տեղ քարոզում են, նույնիսկ հրամաններ են արձակում, որ «Հյուսիսափայլի» տարածման խոչընդոտ հանդիսանան*:

Եվ այդ քարոզները, հրամանները իրանց ազդեցությունն էին անում: Հիշա-տակության արժանի փաստ է, որ «Հյուսիսափայլը» առաջին տարին բաժա-նորդ շուներ թուրքիայում, և այնպիսի լավատեղյակ լրագիր, ինչպիսին էր

* Այդ տեսակ հոգևորականներից նազարյանցը իր նամակներում հիշում է Սարգիս Կպիս, Ջալալյանցին և Գարրիել վարդապետ Ալվաղյանին:

Ջմյուռնիայի «Արշալույս Արարատյանը», ասում էր, թե ինքը չէ տեսել Մոսկ-վայի ամսագրի այդ առաջին տարին: Միայն 1859 թվականին «Հյուսիսափայ-լը» մուտք է գործում Թուրքիա, թեև խիստ սահմանափակ թվով, եթե համե-մատենք «Մասյաց աղալնի» և «Կոունի» պարբերականների հետ:

Երկրորդ շրջանը նազարյանցը սկսում է մի հոգիվածով, որի միտքն էր ցույց տալ հայերի կոչումը մարդկության մեջ:

Ի՞նչ է այդ կոչումը:

Կինեղ Ասիան լուսավորելու միջնորդ: «Հայոց ազգը, վերաբերությամբ դե-պի Ասիա, ունի մի մեծ և հույակապ կոչումն. նորան կարելի է համարել այն խմորը, որ դրած է Ասիայի եռացող նյութերի մեջ, որ հոգեղեն կյանքի հա-մարյա թե մեռած ծիլերը մյուս անգամ զարթեցնեն և կենսագործեն»: Բայց ինչո՞ւ անպատճառ հայերը պիտի վերցնեն իրանց վրա մի այդպիսի ահադին կու-տուրական դեր: Որովհետև այդ ցեղը ունի ընդունակություն, ձիրք յուրացնե-լու քաղաքակրթությունը և տարածելու իրան շրջապատող ազգերի մեջ: Այս-պես է ցույց տալիս նրա ամբողջ պատմական անցյալը:

Մի թեթև թուխքով չափելով այդ անցյալը, նազարյանցը մի շատ ինքնու-րույն և հետաքրքրական հայացք է անցկացնում: Հայաստանի աշխարհագրա-կան դիրքը ստեղծել է հայերի համար այն ճակատագրական վիճակը, որ նրանք ոտնակոխ լինեն շատ աշխարհակալ ազգերից: Փոթորիկներ շատ անցան այդ երկրի վրայով, սակայն հայերը կարողացան պահպանել իբրև քրիստոնյա մի ազգ: Բայց դա քիչ է: «Հայք Քրիստոնյայք են հավատով. այդ շատ փոքր բան է՝ մի ազգային անուն, մի ազգային պատիվ ունենալու աշխարհի երեսին, ազգերի մեջ», — ասում է նազարյանցը և շատ ճիշտ կերպով նկատում է, որ չէ կարելի ցույց տալ աշխարհի վրա, որ «լուսավորյալ», քաղաքացյալ, հզոր ու հրամայող» լինի մեկը միմիայն կրոնի զորությունը, առանց քաղաքական կյանքի:

Այսպես նայելով իրերին, նազարյանցը բնական հետևողականությամբ շեշտում է այն պատմական շատ խոշոր երևույթը, որ հայերը չէին հասկա-նում քաղաքական անկախության նշանակությունը և այդ անկախությունը զոհ էին բերում կրոնական անկախության: Նազարյանցը դատում է, որ հայերը չպիտի թշնամանային հույների հետ, «վեհանձնությամբ տանելով Հունաց կրո-նական նեղսրտությունը և տեղիք չտալով մի քանի դավանական տարբերու-թյունների, որ կային Հունաց և Հայոց մեջ»: Այս տեսակետը, որ քարոզվում էր մի հայի կողմից, եթե բոլորովին նոր չէր, բայց շատ համարձակ էր և միան-գամայն հակառակ էր ազգի մեջ դարերից ի վեր կազմված հասկացողության:

«Հյուսիսափայլի» հակառակորդները այստեղ պիտի տեսնեին մի նոր ասպարույց, որ նազարյանցը հարազատ, հայրենասեր հայ չէ: Չէ՞ որ այդ միևնույնը քարոզում էին երկար ժամանակներից ի վեր կաթոլիկները և հույ-ները: Բայց մեծ անիրավություն էր նազարյանցի այդ հայացքը նմանեցնել կաթոլիկ և հույն կղերականների հայացքներին: Նազարյանցը կրոնական հան-գամանքներ չունեի ի նկատի. նրա դատողությունը լոկ քաղաքական իշխա-նության շահերի շուրջն էր պտտում: Մի բոպե դեն դեննք այն հարցը, թե որ-քան ճիշտ էր այդ հայեցակետը իբրև պատմական իրողություն: Ի՞նչ կտես-նենք այն ժամանակ:

Դարերի ընթացքում հայերի մեջ նվիրագործվել էր այն հասկացողությու-նը, թե հայը իր եկեղեցական անկախությամբ է պահպանել իրան: Բայց նա-զարյանցը բավական չէ համարում այդ բանը: Մի ազգի ինքնուրույն կեցու-թյան և դարգացման ամենամեծ նեցուկը նրա քաղաքական իշխանությունն է:

«Թագավորութիւնն, քաղաքական կյանք, ազգային պատիվ ու փառք ասած բաները չեն միայն սնոտի, արտաքին աշխարհական փառաբանութիւնն, որից և կարելի է հրաժարվել անվնաս. ոչ, այդպէս չէ. Թագավորութիւնն ասած բանն է մի ազգի խելք ու բանականութիւնը տեսանելի և զգալի կացուցած նորա քաղաքական կարգերի մեջ, նորա օրենքների, կառավարութեան և դաստիարակութեան եղանակի մեջ»: Մի խոսքով նազարյանցը կատարյալ չէ համարում այն ազգային կյանքը, որ միայն կրօնի վրա է հիմնվում: Այդ տեսակ կյանքի մեջ չէ կարող լինել լայն աշխարհիկ կրթութիւն, գրականութիւն, նշուփական և իմացական բախտավորութիւն: Ահա այս տեսակետից նա հասնում է այն եզրակացութեան, որ հայերը առաջին կարևորութիւնը պիտի տալին իրանց քաղաքական իշխանութեան:

Ոչինչ զարմանալու բան չկա, եթե այդպիսի հայացքներով զեկալարվող մարդը մի բոլորովին նոր միտք հայաներ հինգերորդ դարի կրօնական պատերազմի մասին: Հազկերտի ժամանակ հայերի ցույց տված ընդդիմութիւնը, իհարկե, արժանի է մեծարանքի: Եվ նազարյանցն ասում է, որ հայերը «անվեհեր քաջութեամբ իմացել են թափել յուրյանց արշունք, հանձն առնուլ նահատակութիւնն ու մարտիրոսութիւնն յուրյանց հավատի համար, բայց չեն իմացել պահպանել յուրյանց կյանքը յուրյանց հայրենիքի պահպանութեան համար. կրօնը ազգի համար էր և ոչ թե ազգը կրօնի համար. պահպանվելով ազգը, կպահպանվեր ու կպաշտպանվեր և կրօնը»: Սա մի նոր, անակնկալ հարված էր հայ ազգասերների համար: Հինգերորդ դարը պաշտամունքի առարկա էր դարձել այն ժամանակներում, երբ նազարյանցը գրում էր այս տողերը: Կրօնական պատերազմը համարվում էր հայ ազգի գերագույն իմաստութեան, լուսավորութեան և հայրենասիրութեան մի հրաշալի գործ: Իսկ նազարյանցը խլում էր այդ լուսատու պատմական երևույթից նրա ամբողջ փառքն ու պարծանքը: Դավաճանութեան, օտարացման մի նոր ապացույց: Բայց նազարյանցի լայն ու մեծ իդեալը այնքան բարձր էր եկեղեցական ազգասիրութեան նեղ հորիզոնից, որ ուրիշ կերպ չէին էլ կարող հասկանալ նրան:

Սակայն շպետք է կարծենք, որ նազարյանցը միանգամայն ճիշտ էր որոշում այն նշանակութիւնը, որ կարող էր ունենալ հայերի եկեղեցական միութիւնը հույների հետ: Որ այդ նշանակութիւնը մեծ կլիներ, հազիվ թե կարելի լինի որանալ. բայց որ նա շատ երկարատե չէր լինի, Հայաստանի փրկութեան խարխալը չէր դառնա շատ երկար ժամանակով, օրինակ հենց մինչև տասն և հինգերորդ դարի վերջերը՝ դա էլ հաստատ է: Ահա Սերբիան, Բուլղարիան կրօնակից լին Քրիստոսեցիական հետ. և սակայն մենք չենք տեսնում այդ երեք կրօնակիցների մեջ մի սերտ եղբայրական միութիւն քաղաքական բարեբախտութեան համար: Ընդհանրապէս, սլավոնական անկախութիւնները ահալոր հարվածներ էին ստանում Քրիստոսեցիականից: Կրօնը բավական չէ ազգերի մեջ կատարյալ համերաշխութիւն հաստատելու համար. անշատող են ոչ միայն դավանաբանական տարբերութիւնները, այլև ցեղական առանձնահատկութիւնները, լեզու: Եվ վերջապէս ինքը, Քրիստոսեցիական էլ, վերջիվերջո ոչնչացավ թուրք ցեղի հարվածների տակ: Իհարկե, Արևելքի դժբախտութիւններն այնքան ահռելի չէին լինի, եթե արաբական և հետո թաթարական իսլամի արշավանքների դեմ դուրս գար մի միաբանված քրիստոնէութիւն, բայց դրա համար հարկավոր էր, որ ժամանակը մի քիչ լուսավոր լիներ, և մարդիկ հասկանային, թե քրիստոնէութիւնը ծեսերն ու արարողութիւնները չեն, թե դրանցից դուրս կա հիմնավոր, մեծ գաղափար, որ ընդունում են ամենքը: Ցավն էլ հենց այն էր, որ ինքը Քրիստոսեցիական, իբրև խոշոր, կենտրոնացնող ուժ, որ կա-

րող էր մի աշխարհի միութիւն ստեղծել, այնքան թաղված էր ֆանատիկութեան մեջ, որ լուսավոր մտքի տեղ էլ չէր մնում...

Բայց թողնենք անցյալը: Ինչպե՞ս հայ ազգը պիտի կատարեր իր կոշումը, իր քաղաքակրթական դերը ներկայում: Իհարկե, նա նախ և առաջ ինքը պիտի ընդունէ իր մեջ եվրոպական լուսավորութիւնը և ապա միայն լուսավորութիւնը: Եվ նազարյանցը նորից հանդես է բերում իր սիրած ծրագիրը, որ վաղուց հայտնի է մեզ՝ դաստիարակութիւն ազգային լեզվով և ոգով: Այդպիսի դաստիարակութեան գլխավոր գործոններն են դպրոցը, գրականութիւնը: Ընդհանուր խոսքերով են շոշափվում այդ գործոնները. նազարյանցը չէ ասում, թե ինչ պակասութիւններ ունեն գոյութիւն ունեցող դպրոցները, օրինակ, ներսիսյան դպրոցը: Ինչպէս կտեսնենք հետո նրա պահանջը մի դիմապիտ է, որ պիտի պատրաստէ հայ երիտասարդներին գերմանական և ռուսաց համալսարանները մտնելու համար: Հարկավոր է, — ասում է նա, — և մի տպարան, հայոց գրականութիւնը զարգացնելու համար:

Բայց ո՞վ պետք է այդ գործերի նախաձեռնող հանդիսանա: Նազարյանցը ցույց է տալիս էջմիածինը: «Մի ազգային միաբանութիւն, գործակից ընտրելով յուրյան մի տպարան, սրտացալ հոգևոր գլուխ, կարող է մեծ վաստակներ վաստակել և լուծանել այն խնդիրը, որ ժամանակը և նախախնամութիւնը դրել է հայոց առաջ և Ռուսաստանում»: Կար և այդ գլուխը. դա Մատթեոս կաթողիկոսն էր, որ այդ ժամանակ Կ. Պոլսում սպասում էր իր հաստատութեանը ռուսաց կառավարութեան կողմից: Նազարյանցը մեծ հուշեր ուներ Մատթեոսի վրա. մենք շուտով կտեսնենք, թե ինչի էր նա սպասում նորընտիր կաթողիկոսից և որքան սխալված էր: Առաջիմ հիշատակներ և այն, որ այդ ծրագրի մեջ նազարյանցը առաջին անգամ հարց է բարձրացնում մի կրթական ընկերութեան մասին, մի հարց, որ այստեղ միայն հիշվում էր և որին նազարյանցը վերագրածաւ պապալուսում ավելի մանրամասն ծրագրով: Մնում է ավելացնել և այն, որ նազարյանցը իր ծրագրած գործերը հարմար էր համարում սկսել Թիֆլիսում, որ Կովկասի ամենախոշոր կենտրոնն էր:

Սրանք գատողութիւններ էին, նոր տարվա առթիվ հայտնած բարի կանխողութիւններ: Բայց հայկական կյանքը գործնական հարցեր էլ էր դնում նազարյանցի առաջ: 1859 թվականի հունվարին Մոսկովայի հայ օւսանողները մի ներկայացում տվին: Դա հայկական առաջին ներկայացումն էր Ռուսաստանում: Ներկայացումը տեղի ունեցավ մի մասնավոր տան մեջ, բայց ընդհանրապէս լավ տպավորութիւն թողեց: Այս առիթով նազարյանցը տպագրում է «Նկատողութիւնը» վերնագրով հոդվածը, որ մեջ ցույց է տալիս թատրոնի անհրաժեշտութիւնը հայերի համար:

Այդ անհրաժեշտութիւնը հայերը նազարյանցի հոդվածից չիմացան: Նա ինքնուրուից ծնվել էր ժամանակից, կենդանութիւն էր ստացել նախ Կ. Պոլսում, ապա անցել էր ռուսահայերի մեջ: Արդեն այն հանգամանքը, որ հայ օւսանողները ներկայացում էին տալիս, մանաւանդ այն, որ ներկայացրած պիեսներից մեկը նոր էր գրված և վերջրած էր Թիֆլիսի հայոց կյանքից, մի լավ ապացույց էր, որ պահանջը ոչ միայն զգացվում էր, այլև իրագործվում: Նազարյանցը իր հոդվածի մեջ բացատրում է բեմի կրթիչ նշանակութիւնը. դա կյանքի հայելին է, որի մեջ հասարակութիւնը տեսնում է արատները և ոպկորող գաղափարները:

Բայց մեզ համար հետաքրքրականը այն ընդհանուր գատողութիւնները չեն, որոնք խոսում են բեմական արվեստի, բեմական գրվածքների մասին: Նազարյանցը մի այդպիսի հոդված էլ գրեց 1860 թվականին, երբ հայ օւսա-

նողները նորից մի ներկայացում ավիին: Հետաքրքրականը հասարակական կյանքի այն քննադատությունն է, որ դեռևս է նազարյանցը, երբ թատրոնի ընդհանուր կրթական նշանակությունից անցնում է այն հարցին, թե ինչ կլինի թատրոնը հայերի համար:

Հասարակական կյանք հայերի մեջ, բառի բուն նշանակությամբ, գոյություն չունի: Հանրային շահերի հասկացողությունը չկա մեզանում, մենք ունենք անհատներ, որոնք մտածում են իրանց փոքրիկ և բարեկեցության մասին, բայց չունենք հասարակություն, որի առջև դրված լինելին համայնական գաղափարներ: Նազարյանցը հիշատակում է արհեստավարական միությունները, համբարությունները և այդ ընկերությունների մեջ էլ չէ պտնում մտավոր-բարոյական առաջադիմությունը նպաստող մի կազմակերպություն: Ոչինչ չեն տալիս այդ համբարությունները, ոչ ուսումնարան, ոչ ժողովրդական գրադարան, ոչ ընթերցանություն և այլ մտավոր գործունեության ժողովներ:

Հայ հասարակության բացասական հատկությունների մեջ նազարյանցը շեշտում է մանավանդ կնոջ դրությունը: Կինը արտաբերված է հասարակությունից: Մի որևէ ժողովում չէ կարելի հանդիպել հայ կնոջ:

«Շատ-շատ, մի քանի պառավ մայրիկներ կարելի էր տեսանել ընկերական ժողովի մեջ, և մի քանի շոր ու ցամաք բառ խոսել նոցա հետ և մխիթարվիլ նոցա բարեսրտությամբը միայն, որովհետև մի այլ զեղեցկություն և գրավիչ բան չէ կարելի դատենել նոցա մեջ, պատճառ, որ ոչինչ դաստիարակություն ու կրթություն չեն ստացել դոքա, և կրթյալ հայոց տղամարդը այդպիսի պառավների հետ չգիտեր ինչից խոսք սկսաներ և ինչ նյութով հառաջ տաներ խոսքը»:

Բայց ինչո՞ւ միայն պառավները: Հայ աղջիկներն էլ այդպես են. հասարակության մեջ երիտասարդը ջահել աղջիկ հետ չէ էլ կարող խոսել ու խոսելու ի՞նչ նյութ կա. նույն տգիտությունը, նույն անկրթությունը: Հայտնի է, թե ինչ վնասներ է ստանում հասարակությունը կնոջ այս դրությունից:

«Եվրոպացոց բարք ու վարքի ազնվացուցիչքը եղել են միշտ կանանց ընկերությունը, և առանց սոցա մնալու էին նոքա նույնպես կոպիտ ու սոպրո, ինչպես ասիական բարբարոսքը: Եվ ինչ ազգի մեջ կանայք շունին ազատություն, և ընկերական կյանքը զուրկ է յուր համեղացուցիչ աղից, և ոչինչ բարոյական հարակցությունը կարող չեն հառաջանալ տղամարդի ու կնամարդի մեջ, այնտեղ իհարկե բավական նեղանում է թեատրոնական բեմի ասպարեզը»:

Առաջ տանելով հայերի հասարակական կազմակերպության վերլուծությունը, նազարյանցը մատը դնում է մի իսկապես անճոռնի խոցի վրա: Դա այն է, որ հայը ամբողջապես նվիրված է անհատականության և նրան հասկանալի է միայն անհատական բարեկեցությունը:

«Հայ ազգը (խոսքը, իհարկե, այդ ազգի քաղաքացի դասակարգի մասին է) «համարյա թե բոլորովին վաճառական է, ունի միայն նյութավոր առևտրական կապակցություն օտարի կամ յուր ընկերի հետ. մի այլ հազորակցություն, իմացական առևտուրը չգիտեն հայք. որովհետև բոլոր խոսելիքը այդ ազգի մեջ լոկ արծաթի ու շահաստացության վերա է, և ամեն մարդ ունի յուր առանձին ու ջոկ օգուտը, ուրեմն և ամեն մի հայ առանձնացած ու օտարացած յուր մտքով ու սրտով, նստած է մի անկյունում, անկարոտ մի այլ հազորակցություն յուր ընկերի հետ, որ հնարավոր էր միայն լուսավորությամբ և ընդհանուր գաղափարներով ազգի և մարդկության մասին»:

Հայ հասարակության այդ ճիշտ և արդարացի քննադատությունը նազարյանցը վերագրանում է իր մի նամակում, որ տպված է «Հյուսիսային»

նույն տարվա 11-րդ համարում: Նրանից հարցրել էին, թե ինչո՞ւ ընթերցանությունը չէ տարածվում հայերի մեջ, և նա իր փայլուն պատասխանի մեջ նորից քրքրում է, թե ինչ տարրերից է կազմված հայ հասարակությունը և թե այդ տարրերի ամենազգալիները, վաճառականությունը, ինչ աստվածության է երկրպագում:

Հայ վաճառականը, ասում է նա, Ռուսաստանում հարարություն ունի միայն երես ցած և անկրթ վաճառականների հետ: Ի՞նչ կարելի է սովորել դրանցից: Բայց էլի ուրախալի կլիներ, եթե հայ վաճառականը ուսուց օրինակ վերցնեք: Ռուս վաճառականը «վերջին ժամանակներս բավական հառաջադեմ է լուսավորության մեջ, գիտե բավական հստակ և գեղեցիկ խոսել յուր լեզուն, ուրեմն և մտածել, որ ընթերցասիրության և գրասիրության միայնակ հետևանքն է»: Մինչդեռ հայը հետո է փայտում գրքից:

«Ասեա թե հայերի համար օրինակ չէ օտար ազգի լավ բանը, լավ ուտել, լավ խմել, փառավոր և հարմար ապրել, այս բաները շատ արագ և շատ քաջ առանում են մեր հայերը եվրոպականացած ուսուցից, բայց մի հոգևոր շնորհք, մի ազնիվ սովորություն, մի գովանի եռանդն ուսանելու, ընթերցանությամբ լայնացնելու յուր հայկական տեսության շրջանակը, քավ լիցի. այդ հայի համար չէ. հայը պիտո է միշտ տգետ մնալ»:

Մարմնական պետքերը լրացնելը՝ ահա իմաստության սկիզբը և վերջը հայ վաճառականի համար: Բայց այդպիսի իմաստությունը կատարելապես մատչելի է և անատենին: Մարմնական բարօրությունը մարդու համար միջոց է և ոչ նպատակ. նպատակը հոգու պահպանությունն է, աճելությունը, կատարելությունը: Հայերի մեջ այդ միջոցն ու նպատակը վերիվայր են դարձել և այն, ինչ միայն միջոց պիտի լինի, պաշտվում է իբրև նպատակ: Փողավորը հասարակության մեջ արժանավոր մարդ է դառնում, թեև իմացականությամբ միանգամայն չբավոր է: Տխմար կարծիք, բացականչում է նազարյանցը և ապա ասում է.

«Չէ՛, ազնիվ բարեկամ. իմ կարծիքս այսպես է, որ ամենայն մարդ, թե՛ հայ, թե՛ ռուս, թե՛ գերմանացի, թե՛ ֆրանսիացի, ինչ ազգից ևս կամի թող լինի, այն ժամանակ միայն ունի իրավունք պատիվ և հարգություն պահանջել մեղանից, եթե նա զարգարված է մի լուսավոր իմացականությամբ»:

Գեղեցիկ խոսքեր, գեղեցիկ պատկերացում մեր անմխիթար իրականություն: Ահա այդ ետամուլ, անձնապաշտ, կղզիացած անհատներից կազմված հասարակության մեջ ահագին պաշտոն ունի կատարելու այն ընկերական կրթարանը, որ կոչվում է Թատրոն:

«Մեր կարծիքը այս է, որ եթե մի ազգային ուսումնարան պիտո է կարող ու ոճով ավանդեր հայկական մանուկին այժմյան ժամանակի ուսումնական գիտելիքը, ապա թեատրոնաբեմը լինելու է մի իմացական ու բարոյական դպրոց բոլոր ազգի համար, մեծի ու փոքրի, կնամարդի ու տղամարդի համար»:

Բայց ո՞րն է հայ բեմի պարտավորությունը: Այն, ինչ համապատասխանում է նրա կոչմանը՝ իրականության պատկերը ներկայացնել: Եվ նազարյանցն ասում է, որ հայ բեմի վրա պետք է հանել հայերի բարքն ու վարքը, նրանց դատողություններն ու հայացքները աշխարհային բաների վրա, նրանց թերություններն ու կատարելությունները: Շատ գեղեցիկ ըմբռնած մի առողջ ու իրական պահանջ: Բայց անհասկանալի է, որ այդ տեսակ բեմը, նազարյանցի կալծիքով, դեռ ազգային չէ. և ազգայնացնելու համար պետք է ներկայացնել նրա վրա և պատմական դրամաներ: Սակայն շոտոսանք, որ այդ տո-

դերը գրվում էին այն ժամանակ, երբ պատմական դրաման էր արժույթ մեղանում, և կենցաղական պիեսը դեռ չէր բաց արել իր հարստությունները...

1859 թվականի կեսին հայոց կյանքի խորը և քրեական էր նորոգելը Մատթեոս կաթողիկոսի ճանապարհորդությունը Կ. Պոլսից էջմիածին:

Մատթեոսը հաստատվեց Արևածինը II-ի հրովարտական այդ տարվա մարտին: էջմիածնի Միսոպի կողմից հոգևորական պատվիրակություն զննած կաթողիկոսին հրավիրելու: էջմիածինը սուսաց տիրապետության տակ մշտնելուց հետո Մատթեոսը առաջին թուրքահայ հոգևորականն էր, որ ամենայն հայոց կաթողիկոսի դահն էր բարձրանում: Կաթողիկոսի փոխարքա իշխան Բարյատինսկին, մուսուստանի քաղաքական ազդեցությունը թուրքիայում և Պարսկաստանում ավելի ուժեղացնելու համար, առանձին նշանակություն էր տալիս հայոց կաթողիկոսության: Ուստի նա էլ իր կողմից պատվիրակ ուղարկեց Կ. Պոլսի՝ Մատթեոս կաթողիկոսին ուղևորելու համար: Այդ պատվիրակը գնեցրալ Լորիս-Մեկիցովն էր, որ հետո այնքան հաջողակ իրրե գորավար և պետական գործիչ: Նրա հետ էր հայ օֆիցեր Միքայել Միանսարյանցը, որ բարի հիշատակ է թողել մեր դրականության մեջ:

Մատթեոսը չէր շտապում Կ. Պոլսից ճանապարհվելու: Երկար ժամանակ Կողկասից զննած պատվիրակությունները շքեղ հյուրասիրություն էին գրանում Կ. Պոլսի հայերի մեջ: Ազդեցության ժամանակներ էին: Մատթեոսը սպասեց մինչև որ մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչը իր ճանապարհորդության միջոցին Կ. Պոլսի գնաց: Մեծ իշխանը սիրալիր կերպով ընդունեց կաթողիկոսին և մի հատուկ շոգենավ նշանակեց նրան Փոթի հասցնելու համար: Գեղեցիկ ընդունելություն գտավ կաթողիկոսը Կողկասի սահմաններում: Իսկ Ռիֆլիս մուտք գործելը փառավոր էր: Իսկույն, տեղ հասնելուն պես, Մատթեոսին աչքերը ընկան տվեց իշխան Օրբելյանին, որ Բարյատինսկու բացակայության պատճառով կողկասյան փոխարքայի պաշտոնակատարն էր: Թե որքան մեծ նշանակություն էին տալիս Մատթեոսի ընտրության, երևում է փոխարքայի դիվանատան գլխավորի, Կոռուկնշտերնի, իշխան Բարյատինսկին գրած նամակի հետևյալ տողերից. «Կան մարդիկ, որոնք ասում են, թե (կաթողիկոսի) ներկա ընտրությունը մուսուստանի համար մի խաղաղ հաղթություն է, որ իր նշանակությամբ գուցե բարձր է այն ամենից, ինչ ձեռք է բերել մուսուստանը զենքով»:

Բնական է, որ մի այսպիսի ժամանակ հայերի մեջ ծագելին լավ-լավ հույսեր և ակնկալություններ: Նազարյանցը արձագանք է տալիս ժամանակի տրամադրությանը մի հողվածով, որի վերնագիրն է «Մտածող հայերի հույսերը և արդարացի ակնկալություններ ներկայումս»: Փառահեղ հանգեսներեց չէ շտանում նազարյանցը, թողնելով հանդեսներով ուրախանալը «տղետ և վայրիվերո աչքով նայեցող ամբոխին»: Նա ուղում էր իր ժամանակի առաջավոր դատարարի զգացմունքների անխարդախ թարգման հանդիսանալ:

Հայտնի են այդ զգացմունքները: Հայր տասնիններորդ դարում է, կանգնած է կիրոպական մարդկության դեմ ու դեմ: Նախախնամությունը բավական է համարել այն հարվածները, որոնց թափել է հայերի վրա և որոնցով պատրաստել է նրանց հասկանալու և ըմբռնելու լուսավորության և առաջադիմության անհրաժեշտությունը:

Բայց ի՞նչ դրություն մեջ է հայոց եկեղեցին մի այսպիսի ժամանակ: Գնն

Ռուսաստանում նա սեղել է մինչև այժմ մի արտաքին կարգի պահպանության լուր հոգաբարձություն, ոչ թե մի դպրոց քրիստոնեական դաստիարակության և լուսավորության ազգի համար, այլ մի ամբողջ տղետ և անուսումն բարձր-թողի արած պաշտոնյաների, որ քրիստոնեության արտաքինը միայն լցուցանելով, ծես, ավանդություն և արարողությունը միայն կատարելով, պահպանել են քրիստոնեության շուր ու ցամաք սկրեղեն կերպարանքը և հոգին, որ միայն կարող է կեցուցանել: Այդ պատճառով առաջացել է հայերի մեջ նյութապաշտություն. հոգևոր դասը, որ պիտի համեմոզ աղ լիներ, անմահացել է և ժողովուրդը կամաց կամաց կրթվելով առաջ է գնում դարի հետ. իսկ հոգեվարականությունը մնում է տգիտության և խավարի մեջ: Այդպիսով ավելի և աղելի լայնանում է այն խտրոցը, որ բաժանում է հոգևորականներին և աշխարհականներին: Խավարի կողմից պատերազմողների շարքում են հոգեվարականները: Ողբալի՜ հակասություն այն պաշտոնի դեմ, որ ունեն նրանք:

Եվ սակայն եկեղեցին պիտի լինի իմացական և բարոյական կրթության առաջնորդը և պարագլուխը: Եկեղեցին պիտի գնա ժամանակի հետ, գիտության հետ առաջանա:

«Հարազատ քրիստոնեական եկեղեցին, — ասում է նազարյանցը, — պիտո է հարկավորապես ուրախանա ամենայն իմացական հասաղաղիմության վերա, որ տալու է նորան հատկապես ամբողջուն և հաստատուն հիմք: Այն եկեղեցին, որ ունի պատճառ վախենալու հոգու լուսավորութենից, այն եկեղեցին, որ ամենայն ջանք և հնարք գործ է դնում պահպանել մարդկությունը մի ցած և ստորին աստիճանի վերա, ուրեմն կամի կործանել մարդկության բոլոր նպատակը և նորա ձգողությունը հասանելու աչք նպատակին, այնպիսի եկեղեցին, աստուածաբանական մտքով, չէ եկեղեցի»:

Ահա ինչպիսի լեզվով խոսել գիտեք նազարյանցը, ահա որքան պարզ ու անողջ էր լուսավորության նվիրված, խոր համոզմունքի տեր մարդու պահանջը: Բայց վերջիվերջո ի՞նչ էր սպասում նա Մատթեոս կաթողիկոսից՝ մեք ույդ արդեն գիտենք: Նորից նազարյանցը ձևակերպում է իր ակնկալությունները այնպես, ինչպես «Հայերի կողմը մարդկության մեջ» հողվածում և նորից կրկնում է, որ կաթողիկոսը պիտի լինի բոլոր դպրոցական, գրական և բարեսիրական համախմբումների առաջնորդը:

Սակայն նազարյանցը սխալվում էր: Մատթեոս կաթողիկոսը նրա ուղած հովվապետը չէր: Նախքան կաթողիկոսանալը նա ունեցել էր Կ. Պոլսում պատրիարքական գործունեություն և այդտեղ էլ ցույց էր տվել իր ամբողջ գույնը: Դա մի բարի մարդ էր, շատ ժողովրդասեր, հայոց եկեղեցուն նվիրված: Այդ եկեղեցու շահերը պաշտպանելու համար նա ուներ մի բեղմնավոր գրիչ, հեղինակում էր աստվածաբանական գրվածքներ և զավանաբանական վիճաբանություններ: Միևնույն ժամանակ նա ուներ խոշոր պակասություններ. նեղահայաց էր, անհամբերող, սաստիկ ավանդապահ: Թուրքիայում մի ամբողջ հալածանք հարուցեց բողոքական հայերի դեմ, որոնք ստիպված եղան բոլորովին բաժանվել և առանձին, անկախ կրոնական համայնք կազմել. այնպես որ իրավացի կերպով Մատթեոսին են համարում բողոքականության պատճառ թուրքիայում:

Գալով էջմիածին, նա, իհարկե, շփոխվեց: Նրա վարչությունը թույլ էր, աննշան: Միայն մի բանի մեջ մեծ է Մատթեոս կաթողիկոսի մատուցած ծառայությունը: Նա է, որ ժողովրդականացրեց մեր դպրոցները, հանձնելով նրանց կառավարությունը ժողովրդի ներկայացուցիչներին: Դպրոցների առաջադիմության և ապահովության համար սրտնից լավ միջոց գտանել չէր կարելի. և

* Зиссерман — «Фельдмаршал Кн. Барятинский», М., 1891, հատ. III, էր. 86:

ապագայում էջմիածնի կաթողիկոսները ոչ միայն չկարողացան մի նոր լավ բան ավելացնել այս շատ համարելի սկզբունքի վրա, այլև հեազհետե սկսեցին ոտնակոխ անել նրան, կրճատել:

Սակայն Մատթեոս կաթողիկոսի այս նշանավոր ծառայությունը չպիտի մոռացնել տա այն ճշմարտությունը, որ մյուս բաներում նա ցույց չափեց մի վերանորոգչական եռանդ: Կաթողիկոսական դասի վրա էլ նա շարունակեց մնալ անհամբերող, միակողմանի աստվածաբան, որ ավելի իր գրքերով և կրոնական վեճերով էր զբաղված, քան ընդհանուր եկեղեցական-վարչական բարեկարգությունը: Էջմիածնում էլ նա բավական գրքեր գրեց և գրանց մեջ պաշտպանում էր հին ավանդությունները, ցույց էր տալիս, որ հայոց եկեղեցին ամեն կողմով կատարյալ է և ոչինչ վերանորոգչության կարոտ չէ: Ծամախու հայերի մեջ բողոքականություն սկսվեց. Մատթեոսը, ինչպես և Կ. Պոլսում, համոզելու, խրատելու փոխարեն խիստ միջոցների գիմեց. նա բանագրեց բողոքականության համակրող հայերին, և կովկասյան բարձր իշխանությունը իրագործ էր ջանք գործ դնում, որ նա վերցնե այդ բանադրանքը ու հասկացող, արժանավոր հոգևորականների միջոցով գրավե շամախեցիներին միտքը, հաշտեցնող վարմունքով վերջ դնե վեճերին ու կոխիչներին: Եկեղեցուց դուրս վնասված շամախեցիները ստիպված եղան մտնել լյութերական եկեղեցու ծոցը և այսպիսով ոռուսահայերի մեջ էլ պաշտոնապես հաստատվեց բողոքականությունը:

Ծամախեցիներին վերաբերմամբ գիշող չէր կարող լինել Մատթեոս կաթողիկոսը, քանի որ նա նույնիսկ Գաբրիել վարդապետ Այվազյանի ուղղափառությունն էլ չէր հավանում, իսկ երբ Ծուշում սկսվեցան խոտուխություններ թեմական դպրոցի տեսուչ Ծանշյանցի դեմ, որին համարում էին լյութերականություն տարածող, կաթողիկոսը շղջապանեց Ծանշյանցին, և սա ստիպված եղավ հրաժարվել իր պաշտոնից:

Եթե մի անգամ էլ նայենք նաղարյանցի համարձակ առաջարկություններին, մենք կտեսնենք, որ Մատթեոս կաթողիկոսը այն իսկ մարդն էր, որ ամենից շատ այդ առաջարկություններին հակառակ պիտի լիներ: Այդ բանը շատ շուտ պարզվեց նաղարյանցի համար:

Եվ ահա 1860 թվականի «Հյուսիսսփայլի» առաջին համարում նաղարյանցը, նոր տարվա առիթով գրած իր հոդվածի մեջ, միանգամայն փոխել է իր հայացքը: «Արեղաններին գործ չկա այսուհետև ազգային խնդիրների մեջ, — ասում է նա. — ժողովուրդը կարոտ է այժմ ա՛յլ ուսուցիչների քան թե կարող էր տալ նորան խուցերի մեջ փակած, մարդկութենից ամենևին օտարացած մի հասարակություն»: Այդ հոդվածը առհասարակ գրված է տաք և կտրուկ ոճով. նրա մեջ նաղարյանցը թափում է իր հայրենասեր սրտի ամբողջ ազնիվ դաշրույթը և նրա հարվածները ավելի խիստ են, անխնա: Երկու տարի գործելով հայկական հրապարակախոսության ասպարեզում իբրև բացարձակ, ազնիվ, ազատ խոսքի սպասավոր, նա «ուրախ կլինեի չուր ճանապարհի վերա հանդիպել պատվավոր հակառակորդների, վերջ հասուցանել և վերջ ստանալ բաց ու արձակ պատերազմի մեջ»: Բայց նրա դեմ դուրս եկողները են «այնպիսի հակառակորդներ, որոնց զենքն են բռնակալություն, դարանագործություն, արեղայական նզովք և բանադրանք, խավար դարերի խավար մնացորդը, բայց մեր ժամանակի դատողությամբ մի ակնհայտի թուլության և տկարության նշան»: Եվ նաղարյանցը միայն արհամարհել կարող էր այդպիսի հակառակորդներին:

Հայոց հոգևորականությունը ցույց էր տալիս, որ ընդունակ չէ ժամանակի

ոգին և պահանջները հասկանալու, որ միայն խոչընդատ պիտի հանդիսանա ազգի առաջադիմություն ճանապարհի վրա: Ի՞նչ պետք էր անել: Նաղարյանցը չէ էլ տատանվում. նա հրավիրում է, որ ազգը ինքը հոգա իր կրթական պիտույքները, առաջ գնա, այլևս չսպասելով կղերին: Կարելի է գործել և ինքնաբերաբար, «միայն թե ազգի հայրենասեր բնագետ մարդիկը գոտեորվեն քաջությունը, եսային հոգով, ժողովին յուրյանց բարոյական զորությունը մի աղբասիրական ընկերության մեջ և պատվի ասպարեզ բանային ազգի շնորհալից երիտասարդների առաջ»: Պետք է սովորել աշխատանքի: «Զոհաբերությունը պիտո է սկսանի ամենայն ազգաշինություն, զրկանքի հանձնառությունը պիտո է զնվի ամենայն ազգային հառաջադիմություն», — ասում է նա:

Անպարտաճանաչ հոգևորականության դերը ավելի պարզ որոշելու համար նաղարյանցը հերքում է հայ արեղանների այն գլխավոր առարկությունն էլ, թե հոգևորականություն է եղել ազգություն պահպանողը: Անցյալի վերաբերմամբ նա ասում է, որ ճիշտ է, հայ հոգևորականությունը մինչև 14-րդ դարը իր գրասիրությամբ, իր գործունեությամբ կարողացել է մի արտաքին միություն պահպանել հայերի մեջ. բայց այդ միությունը եղել է մեքենական, որովհետև ժողովրդի իմացական առաջադիմության վրա չէ եղել հիմնված: XIV դարից դրությունը փոխվում է: «Այդ ժամանակից հետո վայրենացել են և հոգևորականք և ժողովուրդը նոցա հետ միասին»: Եվ վերջապես, առաջագիմ մարդկանց դանդաղ հո անցած գնացած դժբախտ ժամանակների մարդկանց դեմ չէ, այլ նրանց դեմ, որոնք ներկա ժամանակներում զինվում են լուսավորության դեմ:

«Այժմյան» արեղայական սերունդը անարժան է մեր հարգության և դոցանից, եթե չկամեն դոքա ուղղել յուրյանց անձը, այսօր կամ էգուց կբաժանվի ազգը, ինչպես այդ բանը եղած է Եվրոպայի մեջ, որովհետև նա պիտո է յառաջ շնա և այսուհետև հո մնալ կարող չէ, բայց երկուքը ընկերակից լինել միմյանց նույն շավղի վերա կարող չեն, ըստ որում մինը հառաջաշարժ և մյուսը ետամնաց»:

Սրանք մարդարեական խոսքեր էին: Նաղարյանցը մնալով իր հիմնական ծրագրի վրա անշարժ, այդ ծրագիրը քարոզելիս այնքան էր առաջանում ազատախոսության և մերկացումների մեջ, որ վիճը նրա և արեղայական դասակարգի մեջ զնալով խորանում էր, թշնամությունը՝ սաստկանում: Այդ թշնամությունը պայթեց նույն 1860 թվականի վերջերում, երբ հրատարակվեց «Հյուսիսսփայլի» 10-րդ համարը, որ շրջանող հարվածի ազդեցություն արավ: Բայց այս նշանավոր դեպքին մենք առանձին գլուխ կնվիրենք: Առաջմ հետևվենք նաղարյանցի մյուս հոդվածներին:

Երկու տարվա ընթացքում նաղարյանցը, ինչպես ինքն է խոստովանում, ձեռք բերեց հավատ, որ ճշմարտությունը հաղթող է: Այդ հավատը ներշնչում էր նրան այն համակրանքը, որ կազմվել էր հասարակության մի որոշ մասի մեջ դեպի «Հյուսիսսփայլը»: Ինչ ավելի մեծ բարոյական վարձատրություն մի խմբագրի համար, քան այն, երբ նա տեսնում է, որ իր ամսագիրը «մտավոր և բարոյական խմորում» է առաջացնում. դա մի նոր, կենսական շարժում է, և նաղարյանցը շատ լավ տեսնում էր նրան: Բայց ոգևորությունը, անձնվիրությունը չէր կարողանում ծածկել իրողությունը: Դա այն ծանր դրությունն էր, որի մեջ դրված էր «Հյուսիսսփայլի» գործը: Խմբագիրը, որքան էլ բարոյապես վարձատրված, որքան էլ աշխատելու ցանկությամբ լցված, մենակ պիտի տաներ ամսագիրը: Նախադրյալները հեռու էր Մոսկվայից, առաջիկա պես չէր կարողանում աշխատել. իսկ նաղարյանցը բացի նրանից չունեի մի

այլ մշտական, ամենամոտիկ աշխատակից: Պետք էր, որ նա ինքը կատարեր այն ամենը, ինչ այդպիսի գործի մեջ կատարվում է հավաքական ուժերով: Իսկ դա անհնարին բան էր:

«Հյուսիսսփայլի» այդ գրությունը դնելով հրապարակում, նազարյանցը օգնություն էր խնդրում: «Հրատարակողը,—ասում է նա,— ստիպված է գրեթե միայն տանել յուր ուսերի վերա հրատարակության բոլոր ծանրությունը, ոչ թե միայն շարադրելով բոլոր տպելի գրվածքը, այլև ինքնին սրբագրելով շարած թերթերը տպարանի մեջ»: Չեն հիշվում, իհարկե, մյուս հոգսերն ու կարգադրությունները: Եվ սակայն, նազարյանցը ազատ մարդ չէ. նա ունի ուսուցչական պաշտոն, մեծ ընտանիքի հայր է: Ուստի նա նորից դիմում է ձեռնհաս մարդկանց, խնդրելով աշխատակցել «Հյուսիսսփայլին»: Եվ նա հրահանգներ է տալիս գրել ցանկացողներին: Այս անգամ լայն է նրա ծրագիրը. խորհուրդ է տալիս գրել ժողովրդական կյանքի զանազան երևույթների մասին, ուշադրություն դարձնել ընթացիկ հարցերի վրա: Խոստանում է վարձատրել աշխատակիցներին, եթե բաժանորդների թիվը կհասնի 400-ի: Մենք չգիտենք, ստացավ նազարյանցը մի այդպիսի թիվ թե ոչ. 1860 թվականից նա այլևս չէ տպագրում իր բաժանորդների ցուցակը, թողնում է այդ բաժանորդներին ազգասեր, պարծանք աթողոսներով մեծարելու ցավալի սովորությունը:

Դատելով «Հյուսիսսփայլի» տեսարակներից, այդ հրավերը ազդեցություն ունեցել է և աշխատակիցների թիվը, գոնև առժամանակ, մեծացել է: Մի գեղեցիկ նորություն, որ տեսնում ենք 1860-ի «Հյուսիսսփայլի» մեջ, թուրքահայերի իրականության տխուր, հուսահատական նկարագրությունն է: Եստ հայերի նշանավոր է մանավանդ այն, որ այդ նկարագրության մեջ Կ. Պոլսի հայերի մասին չէր խոսքը, ինչպես սովորություն էր այն ժամանակ, այլ իրական Հայաստանի, գավառի, այն էլ մի այնպիսի հեռավոր գավառի մասին, որպիսին է Վանը: Նկարագրությունը ուղարկված էր Սալմաստից. նրա հեղինակը մի նոր մարդ էր՝ Հակոբ Մելիք-Հակոբյան, ապագայի Բաֆֆին: Որպիսի՜ մոռյալ գույներով էր նա նկարագրում Ախթամարի հողերականներին, ժողովրդի տգիտությունը: Դա զգայուն, բանաստեղծականատեսի հեծեծանքն էր: Այդ նկարագրությունից մենք ի միջի այլոց, տեսնում ենք, որ նազարյանցի անունն ու ձայնը թուրքաց Հայաստանի այդ խուլ և հեռավոր անկյունն էլ էր հասել:

1860-ին նազարյանցը նորից սկսում է հայոց պատմությունը, նորից կիսատ է թողնում նրան, գրելով միայն մի փոքրիկ առաջաբան և Հայաստանի թեթև աշխարհագրությունը: Այդ աշխատությունից մեզ հարկավոր է հիշատակել երկու կետ: Մեկն այն է, որ նազարյանցը Հայկի գաղթը դեպի Հայաստան անվանում է առասպել. սա էլ մի փաստ էր, որ թշնամիները անվանեին նրան անհարազատ հայ, ազգային փառքի թշնամի: Երկրորդ կետն այն կարծիքն է, որ նա հայտնում է հայոց պատմագրության մասին: «Հայոց նոր պատմագրությունը մինչև այժմ գտանվում է խրջած տղայական կոշիկների մեջ, որովհետև դորա հեղինակը մինչև այսօրս եղած են արեղա մարդիկ և այն, պատական եկեղեցու արևադարձ. և այդ է պատճառը, մեր կարծիքով, որ Հայոց մարդը մինչև այժմ ոչինչ ուսած չէ մեր պատմությունից»: Սա մի շատ ճիշտ եզրակացություն է. և մինչև մեր ներկա օրերն էլ այդ պատմությունը մնում է արեղայական, ոչինչ չէ ուսուցանում հայ մարդուն: Մինչև այժմ էլ մեր պատմության միակ հեղինակավոր աղբյուրը Չամչյանն է: Նազարյանցը պատկառանքով է խոսում այդ վարդապետի գրած երեք խոշոր հատորների մասին, բայց ասում է, որ այդ աշխատությունը «կարող էր համարվել հավաքածու զանազան պիտանի

տեղեկությունների հայոց պատմության մասին, քան թե պատմական հոգով և սնով գրած գործ»:

Չկարողանալով մի սխտեմաբար գրված հայոց պատմություն տալ, նազարյանցը գրեց մի առանձին մեծ հոդված «Հայոց ազգի լուսավորության, կամ սուրբ Քարգամանիչների դար» վերնագրով, որ նույնպես կիսատ մնաց: Գործի սկզբում նա մի համեմատություն է դնում Սահակի և Մեսրոպի դարի և ներկա դարի հողերականության մեջ և, իհարկե, ողբում է ներկա ժամանակը: Քարգամանիչների մասին խոսում է մեծ հիացմունքով: Դա հինգերորդ դարի գրական շարժման պատմությունն է, որի մեջ, սակայն, մենք չենք տեսնում ինքնուրույն, առանձին հատկություններով աչքի ընկնող ուսումնասիրություն: Ամենաշատը մի կոմպիլյացիա է դա, որ, իհարկե, չէր արգելում նազարյանցին իր սեփական հայացքներն էլ արտահայտել: Եվ այդ հայացքների մեջ գլխավորապես երևան է գալիս մի հրապարակախոս, որ թեև խոսում է հեռավոր անցյալի մասին, բայց աչքի առջև ունի ներկան: Հենց այդ ներկայի համար էլ նա խոսեցնում է անցյալը, որպեսզի խոշոր փաստերով ցույց տա պապերի ուսումնական գեղեցիկ վաստակները և թոռների տգիտությունը, լուսավախությունը, ծուլությունը...

IV

Խոսվում են Կ. Պոլսում մի բողոքական հայի պատճառով: «Հյուսիսսփայլի» 10-րդ տետրակը: Ռեֆորմ հայոց եկեղեցու համար: Թշնամությունը բոբոբովում է: Նազարյանցի հակառակորդները: Հովսեփ Չերեքյան: Սոս հակառակորդի տիպ: Չերեքյանի դիմումը հայոց կաթողիկոսին: Նազարյանցի պատասխանը: Մաքեռոսի վերաբերմունքը: Սինդի վեհար: Նազարյանցին պաշտպանում է գրախոսական ասյանը: Պետերբուրգի հայերի բողոք: Պատասխան «Կոունկին»: Նալբանդյանցի բացատրությունը: Նոր եռանդ և նազարյանցի պահանջը հասարակությունից: Բարբառուական դեպք Եստիտում:

Երբեմն ինչ անհշան դեպքերից ահապին հարցեր են ծագում...

1860 թվականի հուլիսի 2-ին Կ. Պոլսի թաղերից մեկում մեռնում էր Կարապետ անունով մի հայ բողոքական: Հոգեվարքի մեջ նա ցանկություն հայտնեց, որ իրեն թողնեն հայոց գերեզմանատանը: Դա մի օտարոտի ցանկություն չէր, բողոքականները մինչև այդ հայոց գերեզմանատանն էին իրանց վերջին անդամացան տեղը գտնում: Բայց Կարապետը ֆանատիկոս բողոքական էր. իր կենդանության ժամանակ նա սաստիկ հակառակ էր հայոց եկեղեցուն: Եվ ահա այդ պատճառով թաղի հայերը վճռում են թույլ չտալ, որ նա իրանց գերեզմանատանը թաղվի: Երբ Կարապետի մարմինը տանում են թաղելու, մոտ երկու հարյուր լուսավորչական հայեր թափվում են գերեզմանատուն և շեն թույլ տալիս թաղում կատարել: Բողոքականներն էլ համառում են, մեռելը չեն թաղում, դաժնաբանում են թույլը կառավարությունը: Հարցը բարդվում է, քաղաքական կերպարանք ընդունում: Հայոց պատրիարքը գերեզմանատան սեփականության հարց է հարուցանում. Անգլիայի և Ամերիկայի դեսպանները միջամտում են և պահանջում, որ մեռելը բողոքականներին ուղած տեղը թաղվի:

Հայոց պատրիարքը քաղաքական ճնշման տակ համաձայնություն է կառուցում գերեզմանների հետ: Բայց ժողովուրդը համառ դիմադրություն ցույց

տվեց: Գերեզմանատունը դիմադրական բանակի կերպարանք ստացաւ: Արքանի հազար հոգուց բաղկացած ամբոխը գիշերներն անդամ չէր հեռանում գերեզմանատնից և պատրաստ էր մինչև վերջին շունչը դիմադրել: Իսկ զբոբախտ մեռելը, ինչպէս հաղորդում էին եվրոպական լրագրերը, ամբողջ հինգ օր ընկած էր փողոցում, բաց երկնքի տակ և ամեն կերպ խայտառակում էր լուսավորչականների ձեռքով:

Քորք կառավարութունը ստիպված եղաւ դիմադրական ուժի դիմել: Պատերազմական միջոցառումներ փաշան անձամբ երեք հազար հետևակ և ձիավոր զորք տարաւ գերեզմանատուն: Ժողովուրդը, այնուամենայնիւ, չզիջեց: Տեղի ունեցաւ ընդհարում. զորքը և ամբոխը իրար վրա հարձակվեցան, հայերի կողմից մոտ 30 հոգի վիրավորվեցան: Արյունահեղութունը ավելի մեծ շափեր կրնդուներ, եթէ հայոց պատրիարքը մեջ չընկնէր և չզազաբեցնէր տար պատերազմը: Վերջապէս կարելի եղաւ թաղել բողոքականի մարմինը հայոց գերեզմանատան ծայրում և այդպիսով վերջ տալ ցամաքի խռովութուններին:

Այդ արյունոտ դեպքը մի շատ տխուր երևույթ էր, որ ամենից առաջ ցույց էր տալիս, թէ որպիսի սոսկալի թշնամութուն կարող էր առաջացնել կրոնական անհամբերողութունը նույնիսկ արյունակից եղբայրների մեջ: Եւ սակայն Կ. Պոլսի հայութունը միանգամայն անձանոթ չէր այն սկզբունքին, թէ ազգութունը այս կամ այն կրոնին չէ պատկանում, թէ հայը հայ է մնում, ինչ կրոն էլ նա դավաներ: Դեռ 1840-ական թվականներից էր, որ հայ կաթողիկոս համայնքի առաջավոր մասը սկսեց քարոզել այս սկզբունքը և Շաշազադայի քարեգործական ընկերութունը իր գեղեցիկ, լայն ծրագրով և ազատամիտ սղով պիտի իրականացներ կյանքի մեջ ազգայնութիւն, ընդհանուր համեմատութիւն գաղափարը, հավաքելով իր շուրջը անխտիր բոլոր հայերին՝ հայ ազգի մտավոր և բարոյական պահանջներին նվիրվելու համար: Բայց դա մի սիրուն գործ էր, որ վեճեր և կեղտոտ կրքեր հարուցեց և չկարողացաւ կենդանանալ, զարգանալ: Կրոնական հալածասիրութիւնը դեռ մի դժբախտ անհրաժեշտութիւն էր հայ հասարակութիւն համար: Թեև եղբայրութիւն, համեմատութիւն գաղափարը շարունակեց ապրել գրականութիւն մեջ (Պեշիկթաշլիան), բայց ազանդավորական ֆանատիկոսութիւնը գերակշիռ հանդիսացաւ:

Այդ ֆանատիկոսութիւն ծայրահեղ արտահայտութիւնը հուլիսի 2—6-ի դեպքերն էին: Այդ հրապարակական դատաստանը մի անշունչ դիակի վրայ այդ համառութիւնը երկու կողմից, այդ պատերազմը թուրք զորքի դեմ, որի պատճառը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հայածանք արյունակից եղբոր դեմ, շատ տխուր փաստեր էին հայ ազգի կյանքից: Անգլիական դեսպան Բուվըրը հայոց պատրիարքին ուղղած մի նամակում ասում էր.

«Ավելի այն պատճառով եմ ցավում եմ այս ողբալի դեպքի վրա, որ ինձ հասած տեղեկութիւններին նայելով՝ տեսնում եմ, որ այս արյունահեղութիւն առաջին օրինակը դժբախտաբար եղել է ձեր եկեղեցիք քահանաներից միեր: Երբ ընդհանրապէս կարող է կոտորվել արեւելքի բրիտաններից անունը:

Ահա այս պատճառով կամենում եմ Ձեր Բարձր Սրբազնութիւնը զրոյց կրկնել այն՝ ինչ որ անցյալ օրն բանիւլ բերանտ ասացի և ցանկանում եմ, որ այս տերութիւն մեջ բնակող բոլոր հույն, հայ և կաթողիկոս ժողովուրդներն իմանան: Այսինքն, թէ՛ Անգլիո կառավարութիւնը, որո վերահսկողը և ազգի մեծագույն մասը բողոքական են, օսմանյան հողում բնակված բրիտաններից վիճակին միշտ կարեկցել է: Նա խոսացել է ո՛չ ի նպաստ բողոքականների, ո՛չ

կաթողիկոսների, ո՛չ գրիգորյան հայերի և ո՛չ որեւէ բրիտանյա դավանութիւն, այլ ի նպաստ առհասարակ ամեն բրիտաններից միանգամայն:

Արդ՝ պետք է բացահայտ կերպով իմանանք, թէ արդյոք գրիգորյան հայերը ուղձ են ընդունել այս համեմատութիւնը, բողոքականներին համարձակ են իրանց հետ բրիտանյա, թէ, ընդհակառակն, իրանցից շատ ստոր և էպպես անջատված և մինչև անգամ մահվանից հետո ևս, ուր աշխարհիս ամեն խտրութիւններն հավասարվում են, անկարելի են համարում իրանց մոտ հանգչելու ներքեք ինձ ասել Ձեր Բարձր Սրբազնութիւնը, որ եթէ բողոքականները ձեր դավանութիւն բրիտանյաններից համակրութիւն չգտնեն, մեր ազգի համար էլ շատ դժվար կլինի համակրութիւն ունենալ ձեզ հետ, և ներքեք ինձ այս ևս ավելացնել, որ աշխարհիս ամեն կողմն գտնվող բողոքականների համար ևս շատ դժվարին կլինի եղբայրանալ այն սուտ եղբայրների հետ, որ մերժում են նրան և թշնամանում մինչև անգամ դազաղի առջև, ուր բացի սիրո կնիքը պետք է լռեին մարդկային բոլոր կիրքերն:

Միացյալ Նահանգաց դեսպանը ևս, որոյ կառավարութիւնը խիստ ընդհանուր և խիստ լուսավորյալ ներողամտութիւն օրինակ է ցույց տալիս, այս կերպով խոսեցաւ մեր վերջին տեսակցութիւն ժամանակ:

Համոզված եմ, որ Պոլսի, Եվեզի, Հոլանդացի տերութիւններն և Եվրոպայի բողոքական մասն բոլորն պետք է արձագանք լինին մեր ասած խոսքերին:

Մինչև անգամ համարձակվում եմ ասել, որ կաթողիկոսներն ևս, որոնց մեջ ցողովո աղնիւլ ազգն ամեն հնարքներով իրան արժանի կրոնական ազատութիւն է ցույց տալի, ինձանից պակաս սոսկումով չպետք է տեսնեն այս նողկալի և բրիտանեական ոգուն անպատվութիւն բերող տեսարանի պատմութիւնը, որ այս վերջին օրերումս երևեցաւ հասարակութիւն մեջ մահմեդական քաղաքումս*:

Սարգիս պատրիարքը, պատասխանելով այս նամակին, նախ և առաջ ասում էր, թէ ցավալի դեպքը տեղի է ունեցել ազգային սեփականութիւնը պաշտպանելու համար: Հայոց եկեղեցին աշխարհիս ամենաազատամիտ եկեղեցիներից մեկն է: Հայ ազգի համար եկեղեցին և ազգութիւնը միևնույն են, կրոնական բաժանումները միայն քանդում են մեր ազգը և ցանկալի է, որ այս հասկանան մյուս բրիտանյա եկեղեցիները: Ամբոխի գրգռումները պատրիարքը արդարացնում էր նրանով, որ բողոքական Կարապետը իր կյանքում շատ էր հայհոյել իր նախնիքների կրոնը:

Բայց ոչ սեփականութիւն իրավունքը, ոչ մեռածի անձնավորութիւնը, ոչ հայոց եկեղեցու համբերող ոգին չէին կարողանում հերքել դեսպանի նկատույթութիւնները այն անհաշտութիւն, այն «նողկալի տեսարանի» մասին, որոնք քաղցրեցան մի դազաղի առաջ: Կարելի էր սեփականութիւնը պաշտպանել օրինակով միջոցներով, կարելի էր հայոց եկեղեցու համբերող ոգին ցույց տալ գործնականապէս հենց նրանով, որ դիակի վրա այդպիսի վայրենի դատաստան չէր կատարվի, այլ նրան մի փոքրիկ անկյուն կշնորհվեր հողի ծոցում: Փաստը, թուրքական սվիների և արյունահեղութիւն փաստը ցույց էր տալիս, որ հայոց եկեղեցու ոգին մեռած տառ է մնացել, իսկ իրականութիւնն այն էր, որ բրիտանյա եկեղեցուն պատկանող ազգակիցները պատրաստ են ձվալի միմյանց դավանական տարբերութիւնների պատճառով: Այս ցավալի իրողութիւն մեջ լուսավորչական հայերի ամենամեծ զենքն այն էր, թէ եկե-

* «Կոստանի» ամսագիր, 1860, էր. 660:

դիցին՝ դա ազգութիւնն է, և դավաճանել կկեղեցուն նշանակում է դավաճանել ազգութեանը:

Այն ժամանակվա հայոց պարբերական մամուլը թե՛ Քուրթիայում և թե՛ Ռուսաստանում, ընդհանուր առմամբ, շատ բնական և արդարացի էր գտնում հուլիսյան արշուճում դեպքերը: Մի քանի հոգովածներում մենք նույնիսկ գտնում ենք այնպիսի մտքեր, թե այդ դեպքերը ազգային ինքնաձանձառութեան հայտարարներ են, թե հարազատ հայր պիտի պարծենա պուստիկների արածով: Մեզանում «Կոտնկը», «Մեղուն», «Մասշայ աղալիքին», «Ճոռաքաղը» միանգամայն համամիտ էին այս հարցի մեջ:

Միայն «Հյուսիսսփայլը» բացառություն կազմեց, մի սիրուն բացառություն, որ պատիվ էր բերում հայկական ազատ ու անկախ մտքին:

Կյանքի եղելությունը խոսեցնել տվեց Ստեփանոս Նազարյանցիին: Մենք տեսանք, որ շատ չէին այն դեպքերը, երբ նրան կյանքի առօրյա երևույթներն էին խոսեցնում. կյանքի թելադրածը ավելի ուժեղ պիտի լիներ: Եվ այդպես էլ եղավ: Կ. Պոլսի դեպքերի մասին Նազարյանցը խոսեց 1860-ի «Հյուսիսսփայլի» 10-րդ ամսատետրակում: Եվ այդ 10-րդ համարը հռչակավոր դարձավ առաջացնելով մեր գրականության պատմության մեջ մի անօրինակ երևույթ:

Դա մի անկախ հոդված չէր, այլ մի հավելված: Նազարյանցը «Մենդիստոն, Լեսինգ և Լավատեր» հոդվածի մեջ այդ երեք մարդկանց կյանքից վերցրած փաստերով ցույց է տալիս, թե տարբեր կրոնական հայացքների տեր մարդկանց մեջ որպիսի հրաշագործ ազդեցություն է թողնում փոխադարձ ներողամտությունը, համբերողությունը, թե ինչպես հրեա փիլիսոփան հաղթում է քրիստոնյա հոգևորականին իր լայն հայացքներով, իր սիրո ուժով: Այս անցնում է Կ. Պոլսի դեպքերին:

Նախ և առաջ նա իրան հրատարակում է իր եկեղեցու «անվեհեր պաշտպան և ջատագով» և շտապում է հայտարարել, թե անկիրթ բազմության ֆանատիկոսական հալածասիրության համար պատասխանատու չէ հայոց եկեղեցին, որ սկզբունքով ներողամիտ է, համբերող: Օրինակ է բերում, որ Պարսկաստանում շատ կաթոլիկներ և բողոքականներ թաղվում են հայոց գերեզմանատներում: Քրիստոնեական եկեղեցին չէ կարող այդպիսի արգելքներ հարուցանել: Կազանում հայ լուսավորչականները թաղվում են ռուսաց և գերմանական հանդստարաններում, իսկ Մոսկվայում կաթոլիկների և բողոքականների գերեզմանատները մի է:

Քրիստոնեությունը ազատության օրենք է և ոչ ծառայության, սիրո օրենք է և ոչ առեղծություն: Մրանից դուրս օրենք չկա և ոչ ոք չէ կարող մի ուրիշ կերպ բացատրել քրիստոնեությունը: Այստեղից արդեն պարզ է, որ ոչ ոք իրավունք չունի հալածել իր նմանին միայն այն պատճառով, որ նա ուրիշ կերպ հավատացող քրիստոնյա է: Գալով այն մտքին, թե կրոնը ազգություն պահպանն է, Նազարյանցը ասում է. քրիստոնեությունը ազգության վրա չէ հիմնված և նրա համար մի են բոլոր ազգերը: Կրոն և ազգություն չոկ չոկ բաներ են: Լուսավորչական հայր, դառնալով բողոքական, մնում է մեր երբայր թե ազգաբար և թե քրիստոնեաբար, ազգաբար՝ այն պատճառով, որ բողոքական դարձած հայի մեջ չէ փոխվում հայկական արյունը, իսկ քրիստոնեաբար այն պատճառով, որ Քրիստոսը բողոքականին էլ է պատկանում, լուսավորչականին էլ: Ազգությունը աշխարհային խորհուրդ ունի, մինչդեռ կրոնը գործ ունի ուղղակի մարդու խղճի և աստծու հետ: Այդտեղ լուսավորչական, կաթոլիկ և բողոքական հայերը միշտ մնում են արշուճակից եղբայրներ, մի

ազգի որդիներ, մի լեզվի կցորդներ, մի ազգային պատմության ժառանգորդներ:

Ազգություն պահելու համար անպատճառ պետք չէ այս կամ այն կրոնին պատկանել: Աստված կամեցել է, որ հայք լինի հայք, այսինքն մի առանձնախոս ազգ. թո՛ղ և այդպիսի մնան գոքա, անշարժ և անփոփոխ, թո՛ղ նոքա լինեն հայրենասեր, շմիավորվին ոչինչ ազգի հետ, ոչ հույնի, ոչ գերմանացու, ոչ ֆրանսիացու հետ»: Բայց կրոնով հայերը կարող են միշտ տարբերվել միմյանցից: Եվ դրանից վնաս չկա ազգության համար: Ապացույց՝ Գերմանիան, որ կաթոլիկները և բողոքականները ապրում են իրար հետ հաշտ, ձեռք ձեռքի տված զարգացնում են հայրենասիրությունը, ազգային առաջադիմությունը:

«Այսպես ևս պարտ և արժան էր մեր հայերին նայել միմյանց վերա, և հրամարվել կրոնական վեճերից, ջանք դնել քրիստոնեական եղբայրասիրությանը բժշկել ազգային մարմնի մեջ եղած ճեղքը, քան թե հալածասիրությանը օրեօր ավելի լայնացնել դորան և օրեօր ավելի հեռի բաժանել միմյանցից սրտերը և հոգիքը: Ազգը միապես պատկանում է և լուսավորչականին և կաթոլիկականին և պրոտեստանտին. ուրեմն թող այդ երեք ազգային բաժինները յուրյանց դրոշի վերա արձանագրեն միապես այս երեք բառս որպես եացա կյանքի թանկագին առածք, որպես նոցա աչքի բիրք. եղբայրասիրություն, հայրենասիրություն, միաբան անձնագոհություն հասարակաց հայրենիքի վամար»:

Կրոնական պառակտումների մասին Նազարյանցը խիստ և որոշ կարծիք է հայանում: Նա դեմ է օտար պրոպագանդիստներին հայերի մեջ, հիշեցնում է, թե երբ և ինչպես մտան կաթոլիկությունն ու բողոքականությունը մեր մեջ և ավելացնում է. «Մոտերումս և Ռուսաստանի մեջ մի քանի վատթար, կարելի է ասել, անկրոն հայեր, փառասիրության և օգտասիրության պատճառով աշխատում են և կցանկանալին օր մի յառաջ հայոց եկեղեցին տեսանել միացած հույն եկեղեցու հետ»: Կաթոլիկ և բողոքական պրոպագանդիստների արարքները նա չէ հավանում, բայց հասկանում է, որ դրանք «պատմական իրավունքով վարվում էին հայերի հետ այնպես, ինչպես աշխարհը վարվել է միշտ այն բանի հետ, որ ասվում է Resnullius, այսինքն՝ մի անտեր բան, որ և ամենայն մարդ կարող է ձեռք ձգել, սեփականել, եթե ուներ կարողություն և հնարագիտություն»: Այդ սկզբունքը Նազարյանցը դատապարտում է իրեն մի անբարոյական, անխիղճ գործ:

Այդտեղ, հայոց եկեղեցին կեղեքվում է անտերությունից, սեփական թուլությունից: Ահա այդ կողմի վրա պետք է ուշադրություն դարձնել. պետք է բարեկարգել այդ եկեղեցին, որպեսզի նա կենսունակ ու ուժեղ մի մարմին դառնա ինչպե՞ս պիտի կատարվի այդ բանը: Նազարյանցը պատասխանում է.

«Մեք մտածում ենք այսպես. եթե հայոց եկեղեցին պետք է այս մեր կյանող ժամանակին դիմանա, պահպանվի, ապա անպատճառ պիտո էր նորան նորոգել յուր հնացած և մաշված կենդանությունը, միտ դնելով հառաջադեմ մարդկության պիտույքներին: Հայոց եկեղեցին պիտո է մի ձեռքով առներ արքից մինչև գլուխ, այսինքն մի ազգու վերանորոգություն Ավետարանի հաստատմամբ հիման վերա. իհարկե, ներգործելով արմատից դեպի վեր, ժողովրդի և հոգևորների դաստիարակությամբ և կրթությամբ մեր օրերի լուսավոր հոգու վամեմատ: Հայոց եկեղեցին գիտությամբ պայծառանալով, ժողովուրդը ճանաչելով քրիստոնեության իսկությունը, շինվելով և հաստատվելով ավետարանական բանի վերա, այնուհետև ոչ մի հայ տեղիք ունենալու չէր վազելու յուր եկեղեցուց դեպի մյուս եկեղեցի, բայց որում նույն երանությունը, որ խընդ-

րում էր նա օտարի եկեղեցու մեջ, ունի արդեն յուր մայրենականի մեջ: Հիմար ու անխորհուրդ ուրացողներ, փառամոլ և շահախնդիր մարդիկ ամեն աղղի մեջ և ամեն ժամանակ եղած են. և հայերի մեջ կարող են այդպիսիք գտանվիլ: Գոցա հետ գործ չունի հայոց եկեղեցին. թող դոքա, այդ փառած հայերը, օր մի հառաջ դնան, կորչեն, միանան որոնց հետ կամին. մեր հոգսը չէ: Բայց հայոց եկեղեցին, մեր ամենասիրելի մայրը, որ ծնել է մեզ յուր սուրբ ավագանից, թող ինքը նախ և յառաջ նորոգվի կենդանությունամբ, զալարանա, ծաղկի և դարդարվի արժանի պատուհերով. այնուհետև այդ ծառի մի քանի ցամաքած ու անպիտանացած ճյուղերը թող բաժանվին նորանից և միավորվին մի օտար ծառի հետ: Գորա վերա ցալելու պատճառ չունի ոչ ոք:

Այս հատվածը մի անօրինակ աղմուկ և խրարանցում գցեց հայերի մեջ: Կրոնը աղգությունից բաժանելու սկզբունքը նոր չէր բարոգվում մեր մեջ: Գա մի սկզբունք էր, որ, ինչպես սասցինք, նույնիսկ գործադրության փորձեր էր անում կյանքի մեջ (Կ. Պոլսում, «Համազգաց» ընկերություն), քարոզվում էր առաջադեմ մամուլի մեջ (Պարիզի «Արևմտաքր»)։ Բայց հայոց եկեղեցու վերանորոգության հարցը բոլորովին նոր էր, և առաջին անգամ նրան հրապարակ էր հանում նազարյանցը: Ահա այդ հարցն էր, որ ումբի պես պայթեց, շարժեցնելով «Հյուսիսամիայի» հակառակորդներին: Այստեղ հարկավոր է մի քանի խոսք ասել այդ հակառակորդների մասին:

Մինչև այժմ մենք հիշատակեցինք այդպիսիներից մեկին միայն՝ Առաքել վարդապետ Արարատյանցին, և իմացանք, որ «Հյուսիսամիայի» դեմ կանգնած էին ամբողջ շորս պարբերական հրատարակություններ՝ «Մեղու Հայաստանի», «Ճոռքաղ», «Մասյաց աղավնի» և «Կոռնկ»: Արդարությունը պարտք է դնում խոստովանել, որ «Կոռնկը» հակառակորդների թվում կանգնած էր լոկ իր դավանած սկզբունքներով. նա բանակով չէր մղում նազարյանցի դեմ, ընդհակառակն, հարգանքով էր վերաբերվում նրան, խոստովանում էր նրա մատուցած մեծ ծառայությունները: Միայն 10-րդ ամսատետրակն էր, որի առիթով «Կոռնկն» էլ, ինչպես կտեսնենք, արշավանք սկսեց նազարյանցի դեմ: Այդ կողմից «Կոռնկը» իրան ավելի շատ վայելուչ էր պահում, քան նույնիսկ «Մասյաց աղավնին»: Գարբիել վարդապետ Ավուղյանը աշխատում էր հետո պահել իր օրդանը բանակովներից, տալ նրան մի լուրջ պարբերականի կերպարանք: Դեռ Պարիզում նա ոչ մի պատասխան չէր տալիս Ստեփան Ոսկանի սուր ու անխնա հարձակումներին, որոնք ուղղված էին նրա անձնավորության դեմ: Բայց Քեղոսիայում նա այլևս այն չէր, ինչ Պարիզում: «Հյուսիսամիայի» հարվածներին նա պատասխանում էր հարվածներով, ինչպես և բաց էր անում իր թերթի էջերը այնպիսի հարձակումների համար, որոնք պատիվ չէին բերում «Մասյաց աղավնուն»:

Այստեղ մենք չենք կարող հիշատակել այն բոլոր մարդկանց, որոնք այդ հրատարակությունների մեջ գրել են նազարյանցի դեմ: Եվ դա շատ անհետաքրքրական էլ կլիներ, քանի որ այդ գրվածքների մեծագույն մասը արժանի չէ լուրջ կրիտիկայի ուշադրության: Եթե նազարյանցի բոլոր հակառակորդների մեջ կա մեկը, որ անուն է հանել գոնե իր եռանդով, դա Հովսեփ Չերքեզյանն է: Այդ մարդը «Հյուսիսամիայի» հենց առաջին քաղերից նրա անհաշտ թշնամին հանդիսացավ: Դրանով էլ նա կապեց իր անունը նազարյանցի անվան հետ, այնպես որ նազարյանցի մասին խոսողը չէ կարող լռություն պահպանել Չերքեզյանի մասին: Բացի դրանից, Չերքեզյանը հետաքրքրական է իբրև գրական հակառակորդի տիպ: Հայ պահպանողականության նոր ձևի ներկայացու-

թին ու նախահայրն էր նա. և նրա հարադատ սերունդները այսօր էլ կենդանի են մեր գրականության մեջ:

Չերքեզյանի մասին մենք շատ տեղեկություններ չունենք: Գիտենք միայն, որ նա առարայանցի էր և կազարյան ճեմարանի առաջին աշակերտներից մեկը: «Մուղաչք Արարատյանի» մեջ, որ հրատարակվեց 1829-ին, նա ունի երկու ստանալորներ, որոնցից մեկը նվիրված է նրա ուսուցիչ Սալլանթյան վարդապետին: Չերքեզյանը մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց Սալլանթյանի սկզբունքներին, թեև չբավականացավ կազարյան ճեմարանի տված կրթությամբ: Վերջացնելով ուսումը այդտեղ, նա մտավ Մոսկվայի համալսարանը: 1833-ին նա, դեռ համալսարանի ուսանող, հրատարակեց «Սկզբունք քրիստոնեական վարդապետության» անունով գրքույկը, մեծ մասամբ քաղվածք ուսանողներից և Սալլանթյանի կրոնագիտությունից: Այս գրքույկը ինքնըստինքյան բոլոր լավ է բնորոշում այդ համալսարանական ուսանողին:

Համալսարանից դուրս գալով, Չերքեզյանը, ինչպես երևում է, մնաց Մոսկվայում, Սալլանթյանի անփոփոխ բարեկամն էր և ուսուցչություն էր տեսնում գոցեց հենց նույն կազարյան ճեմարանում: Կոմս էմմանուելն իր մի «Նիշտակարանի» մեջ խոստովանում է, որ Չերքեզյանը երկար ժամանակ կայրի մեջ լուրջ, լավ կրթված մարդու համբավ ուներ: Կային, — ասում է նա, — մի քանի մարդիկ, որոնք քիչ էր մնում Չերքեզյանին կիսաստվածների կարգը դասելին: «Գոցա մեջ էր գտանվել և մեր բարեկամներից մինը, որ, 1833 թվականից սկսած, շատ անգամ գովելով մեզ այդ անզուգական գիտնականը հորդորում էր մեզ մոտենալ դրան. բայց մեք, վաղուց արդեն հասկացած լինելով մեր բարեկամի գովասանած մարդու որպիսությունը, հրաժարվելով հրաժարվել էինք առաջադրվածի առաջարկությունից»:

Այդպես էր Չերքեզյանը, քանի որ լուռ ու մունչ էր, քանի որ նրա գրավոր վստաակը միմիայն «Քրիստոնեական վարդապետություն» էր: Բայց նազարյանցը նրան հրապարակ հանել տվեց, և նա մերկացրեց ինքն իրան, թույլ տվեց, թե ինչ է ինքը: Նազարյանցին, ինչպես տեսանք, հակառակվում էր հին սերունդը, որ, շունենալով ուսում և կրթություն, երեսայական բաներ էր գրում նրա դեմ: Այդ սերունդը հարկադրված էր խոստովանել նազարյանցի գիտնականությունը և իր համար փրկություն որոնում էր հայկական ավանդություններին, հին եկեղեցական հեղինակությունների մեջ: Ահա այդ տեսակ թույլ ու անկարող հակառակության մեջ երևան է դալիս արդեն կրթություն ստացած, համալսարանական մարդը: Ուժերը, գոնե ձևականապես, համահավասար են: Չերքեզյանն իր գրվածքների մեջ նազարյանցի գիտնականությունից բնկնվող չէ, այլ տեղյակ մարդու ինքնավստահությամբ է խոսում. գիտե լեզուներ, համարձակ վճիռներ է կարդում նազարյանցի ընդունակությունների և պատրաստություն մասին:

Բայց համալսարանական ուսումը արդևք չէր, որ Չերքեզյանը շատ փոքր բաներով զանազանվի հին սերունդի ներկայացուցիչներից, արարատյաններից, մանդինյան քահանաներից: Ընդհակառակն, նա միանգամայն ձուլվում է գրանց հետ և հայացքներով, դավանանքներով նույն այդ մարդկանցից մեկն է: Ուշադրության արժանի հանգամանք: Մեզանում էլ հաստատվում էր համատարած երևույթը. համալսարաններից դուրս էին գալիս թե՛ աղատամիտ և թե՛ լեռապետ ուժեր: Բարձրագույն ուսումը դեռ երաշխավորություն չէր, թե տիրապետական տգիտությունը միմիայն հին սերունդին է պատկանում:

Բացի «Քրիստոնեական վարդապետությունից» Չերքեզյանը ունի և հայոց պատմության մի դասագիրք, որ սպվեց Քեղոսիայում 1862 թվին: Բայց դա

էլ, ինչպիսիս և առաջինը, նրա սեփական աշխատանքի պատուը չէ. սրտամո-
թյունն էլ Չամչյանից է համառոտել Չերքեզյանը: Այսքան բազմա գրական աշ-
խատութիւններն մեզ Չերքեզյանը մի անսովոր եռանդ է ցուցց տալիս հաս-
կապես Նազարյանցին հայհոյելու և վատարանելու մեջ: Նա գրում էր հա-
ճախ, գրում էր երկար. կամ «Մեղուի» մեջ էր երևում, կամ «Ճառագայթ» կամ
«Մասյաց աղավնու» մեջ:

Կարգալով այդ գրվածքները, մենք տեսնում ենք, որ Չերքեզյանը ոճն էր
և հիմնավոր դիտողութիւններ Նազարյանցի լեզվի, հայագիտութեան դեմ:
Պատահում են և այնպիսի տեղեր, ուր նա աջող կերպով ցուցց է տալիս Նա-
զարյանցի տեսութիւնների խախտում կողմերը: Բայց այս փոքրիկ գրական
կողմերը միանգամայն կորչում, ոչնչանում են այն ընդհանուր ձեւի, այն ուղ-
ղութեան պատճառով, որին հետևում էր Չերքեզյանը:

Կատարի, ախտորոշող թշնամութիւնը միանգամայն կորացնում էր
նրան, և «Հյուսիսային» հակառակվելու համար նա պատրաստ էր, ինչպիսի
երևում է, սեփն սպիտակ ասելու: Ոչինչ, կատարելապես ոչինչ արժանիք նա չէր
տեսնում Նազարյանցի մեջ, նա չէր ընդունում, որ Նազարյանցը մազի շափ
օգուտ բերած լինի. ընդհակառակն, համարում էր նրան մի սոսկալի շարիք
թե՛ հայ գրականութեան և թե՛ առհասարակ ժողովրդի համար: Հայհոյակուն
բառեր դորձածելու մեջ չէր սիրում որևէ շափ, սահման ճանաչել: Նազարյանցը
նրա համար և՛ ապուշ էր, և՛ տգիտ, և՛ դավաճան, և՛ Հուդա կամ վասակ:

Բայց այդ բոլորը զեռ ոչինչ, համեմատած Չերքեզյանի մշուս հատկու-
թիւնների հետ: «Երանի» էր մեզ, — բացականչում է կոմս Էմմանուելը, —
եթե ունենայինք խնայցի հակառակորդը. բայց որպէս հայ, պիտի մենք ներ-
կայումս այդ պարծանքից: Եվ սա ճիշտ է: Չերքեզյանը, որի հասցեին էին
ուղղված այս խոսքերը, մի վատ, ստոր հակառակորդ էր: Նրա անբարեխղճու-
թիւնը այն աստիճանին էր հասնում, որ ոչինչ հրատարակելով Նազարյանցին,
նա իսկական գիտնականների դասն էր մտցնում Առաքել Արարատյանցին,
Մանդինյանց քահանային: Եվ երբ այդպէս բան կարդալիս դուք մտաբերում
էք, որ գրողը մի համալսարանական մարդ է, այն ժամանակ ավելի խիստ եր-
զգում, թե ինչեր կարող է անել կրթութիւնը, միացած սանձարձակ
անբարեխղճութեան հետ: Նա հաճախ թողնում էր բուն հարցը, ծաղրում էր
Նազարյանցի ստացած գիտութիւնը, գոկտորական աստիճանը, նույնիսկ նրա
ընտանեկան հանգամանքներն էր հրապարակ քաշում: Այսպէս, վիճելով կրոնի
մասին, նա, իբրև Նազարյանցի օտարացման նշան, բերում էր այն փաստը, որ
Նազարյանցի գիմնադիտ սորին եկեղեցում, պատարագի «ողջույնի» ժամա-
նակ շիմացավ ողջուն տալ իր հորը...

Քննական յուրաքանչյուր ակնարկ Հովսեփ Չերքեզյանի համար նշանակում
էր նախատինք, անպատվութիւն: Նազարյանցը ասել էր, թե հայ երեսման գրա-
բարի անհասկանալի լինելու պատճառով չէ կարողանում բան սովորել: Չեր-
քեզյանը ասում էր, թե դրանով Նազարյանցը նախատում է հայ երեսման
րին: Հայ ուսանողների առաջին թատրոնական ներկայացման առիթով «Հյու-
սիսային» մեջ տպված էր մի համակրական հոդված, որի մեջ, սակայն, մի
քանի աննպաստ խոսքեր էլ կային: Եվ Չերքեզյանը ասում էր, թե Նազարյան-
ցը անպատվել է ուսանողներին: Մանավանդ սաստիկ կատաղում էր նա, երբ
Նազարյանցը այդ իսկ կերպով «անպատվում էր» այն մարդկանց, որոնց նա
իսկական գիտնականի անուն էր հատկացնում, այն է՝ հայ պահպանողա-
կաններին:

Հիշենք, վերջապես, և մի ուրիշ ստոր և անազնիվ գործ: Չերքեզյանը,
համառաւով Նազարյանցի անկեղծութեանը, անշահասիրութեանը, մտնում էր
նրա հոգու մեջ, դատաւոր էր հանդիսանում նրա զգացմունքների վրա և բարձ-
րաձայն աղաղակում էր, թե Նազարյանցը լյութերական է և ուղում է լյութե-
րականութեան տարածել մեր մեջ: Անբարեխիղճ, քմահաճ բացատրութիւն տալ
հակառակորդի խոսքերին, նրան վնասելու համար հրեշտակով մտքեր և ան-
հոռնի հանցանքներ վերագրել նրան՝ ահա թե ինչպիսի էր Չերքեզյանը վիճում,
ուպացուցանում: Մաքրութիւն, ազնվութիւն, օրինավորութիւն չկար նրա հա-
մար: Որքա՞ն բարձր էր Նազարյանցը իր այս կատարի հակառակորդից: Նա
չստ թիչ էր ուշադրութիւն դարձնում Չերքեզյանի վրա և դարձրած ժամա-
նակն էլ խոսում էր ինչպէս վայել է ազնիվ, սեփական արժանավորութիւնը
մանաւոր մարդուն:

Չերքեզյանը, ճիշտ և ճիշտ ինչպիսի մի Արարատյանց, պաշտպանում էր
ազգային բոլոր ավանդութիւնները: Նա ասում էր, թե սուտ է ասում Նազար-
յանցը, որ հայոց լեզուն սանկրիտի մի ճյուղն է. եվրոպացի գիտնականնե-
րին, որոնք այդ գլուտն էին արել, նա էլ ճանաչում էր, բայց պահանջում էր,
որ համատ ընծայվի Չամչյանին և Ինճիճյանին, որոնք հաստատել են, թե
այդ լեզուն Ադամի լեզուն է: Նազարյանցի այն խոսքերը, թե Հայկի պատմու-
թիւնը առասպել է երևում, Չերքեզյանը համարում էր ազգային դավաճա-
նութեան մեծ նշան: Իսկ հայոց եկեղեցու վերաբերմամբ նա թույլ չէր տալիս
նույնիսկ ամենաթեթեւ ըննական ակնարկ:

Հասկանալի է, թե ինչ ազդեցութիւն թողած պիտի լինի նրա վրա «Հյու-
սիսային» 10-րդ ամսատետրակը: Նա, իհարկե, հրապարակ է նետում,
գրում է հերքում, լավ հայհոյում է Նազարյանցին: Նա տեսնում է, որ ազմուկ
և բարձրացրել ամենքը: Նույնիսկ «Կոտնկը» շկարողացավ պահվել իր բռնած
գիրքում, և Գ. Մուրադյանը (այժմ Մելիքսեդեկ արքեպիսկոպոս) մի մեծ հոդ-
ված տպագրեց այնտեղ, որի մեջ պախարակում էր Նազարյանցին, ասում էր,
թե հայոց եկեղեցին կարոտ չէ ոչինչ վերանորոգութեան, որ օտարազման
Հայկի համար հայութեան միակ նշանը իրանց մայրենի եկեղեցու դիրկը վե-
րադառնալը կարող է լինել:

Այսքանը բավական չէր Չերքեզյանի համար, և նա դիմեց մի միջոցի,
որ մի մեծ արատ էր ամեն մի օրինավոր մարդու համար, ուր մնաց մի մար-
դու, որ համալսարանում էլ էր եղել:

1860 թվի դեկտեմբերի 26-ին նա մի խնդրագիր է ուղարկում Մատթեոս
կաթողիկոսին, մի օտոր մատնութիւն, Նազարյանցի դեմ: Այդ գրութեան մեջ
նա հայտնում է, թե «Մտեփանոս ոմն Նազարյանց» իր գրքերի մեջ («Վարդա-
պետարան կրոնի» և «Հանդես նոր հայախոսութեան») քարոզում է լյութերա-
կանութիւն, իսկ «Հյուսիսային» 10-րդ տետրակում ուղղակի պարզում է իր
միտքը, պահանջելով, որ հայոց եկեղեցին մի անփոքր անն արմատից դեպի
վեր: Դա նշանակում է, թե նա կամենում է բոլորովին փոփոխել մեր եկեղե-
ցական արարողութիւնները, ծեսերը, մեր ամբողջ զավանդութիւնը: Թեև այդ
գրվածքի գեմ հերքումներ գրվեցան, և գրողներից մեկն էլ ինքն է, Չերքեզ-
յանը, բայց մասնավոր անձինքների խրատներն ու համոզումները չեն կարող
վերացնել ամեն տեղ տարածվող ազգակործան մոլորութիւնները. հարկավոր
է որ մի բարձրագույն իշխանութիւն իր պաշտպանութեան տակ առնե մեր
ավազը: Ուստի Չերքեզյանը, իբրև հայոց եկեղեցու հարազատ դավակ,
թեղում է ժողով ասպարէն դրարձրագույն տնօրէնութիւն առ ի փութով ժո-
ղովի զամենայն օրինակս 10 համարին «Հյուսիսային» օրագրի այսր 1860

ամի և դամենայն հատորս «Վարդապետարանին կրօնի» վերալիշեալ Մաթեմատիկոսի նազարեանց և հրոյ ճարակ տուեալ դայնս՝ արդիւլու առ յառաջն զտուգարութիւն «Հիւսիսափայլ» օրագրի և զորոյ և իցէ մատենի, յորում լինիցին բանք զհաւատոյ Հայաստանեայց մերս եկեղեցւոյ առանց նախազննին տեսութեան և հրամանի սրբոյ Աթոռոյն էջմիածնի և իւրաւորչական սրբազան սինոդոսին»:

Այս խոսքերը բացատրելու և լուսաբանելու կարիք չկա: Հարցի միջնորդարյան ֆանատիկոս Չերքեզյանին չէ այնքան վերաբերվում, որքան էջմիածնին: Իր խավար առաջարկութեամբ, որի ամենագորշելի կետը ազատ մտքի համար հավատաքննական խարույկ պահանջելն էր, այդ մարդը թե՛ հայոց բարձր հոգևորականութեան և թե՛ մասնավորապես Մատթեոս կաթողիկոսի առջև դրված մի փորձաքար էր. իր վերաբերմունքով էջմիածնինը պիտի ցույց տար, թե ճիշտ էր նազարյանցը նկարագրում եկեղեցականութեան վիճակը: Թե չափազանցնում էր, զրպարտում էր: Եվ էջմիածնինը ցույց տվեց, որ միանգամայն արդարացի ու ճիշտ էին նազարյանցի դառն խոսքերը:

Մատթեոս կաթողիկոսը անձամբ ավելի անհամբերող գտնվեց, քան սինոդի անդամները: Ինչպես երևում է, նա, նախքան Չերքեզյանի գրութեան ստացվելը, կոնդակ էր ուղարկել Մոսկվա, զուցե հենց իրան նազարյանցին և այդ կոնդակի նույն շարաբաստիկ 10-րդ ամսատետրակն էր: Գոնե այսպես է ենթադրել տալիս նազարյանցի մի նամակը՝ Մատթեոս կաթողիկոսին: Մատթեոսը, ինչպես երևում է, իր կոնդակում անվանել էր նազարյանցին «պաշտպան անհարազատից մերումս առաքելական, ամենաբարեպաշտ եկեղեցւոյ»: Եվ նազարյանցը համարձակ կերպով բացատրում է կաթողիկոսին, որ իր արածը հիմնված է իր դավանանքների վրա:

Դա ժամանակի գիտութեան դավանանքն է: Գիտութեանը, — ասում է նա, — չէ կոչված տգետներին հաճոյանալու և թե անհատները, թե բազմութեան անհանկան ախտերը քաղցր խոսքերով շողոքորթելու: Նա պիտի ասե ճշմարտութեանը, ինչ էլ լինի դա: Գիտութեանը եղբայրատյաց չէ, այլ եղբայրասեր է և մարդասեր: Քննադատութեամբ հասարակաց վերքերը մերկացնելը հատուկ է եվրոպական գրականութեանը, և նազարյանցը ցույց է տալիս կաթողիկոսի և ռուսաց մամուլը, որ նույն սկզբունքներին է հետևում: Ազգի թշնամիները գիտութեան մարդիկ չեն, այլ նրանք, որոնք չեն գալիս դեպի լույսը, որ շխալ տառակվեն. այդ լուսավախներն են, որ զրպարտում են նազարյանցին և նրա «Հյուսիսափայլը»:

Եկեղեցու վերաբերմամբ նազարյանցը դարձյալ կրկնում է, որ ինքը ճիշտ մարիտ քրիստոնեական և առաքելական եկեղեցի ընդունում է այն եկեղեցին, որ ոչ միայն քարոզում է, այլև իրապես գործադրում է ընդհանուր քրիստոնեական եղբայրասիրութեանը: Գալով Կ. Պոլսի դեպքերին, նազարյանցը ընդունում է, որ իրան մասամբ կարող են սխալեցրած լինել այն աղբյուրները, որոնք տվել են նրան տեղեկություններ (այսինքն՝ գերմանական լրագրերը): Բայց և այդպես, չպետք է մոռանալ ավետարանական պատվերը, որ հրամայում է սիրել թշնամիներին: Այստեղ նազարյանցը ուզում է ակնարկել, որ եթե մի բողոքական թշնամի լինի լուսավորչական եկեղեցուն, այդ դեռ պատճառ չէ, որ մենք էլ նրա թշնամին դառնանք և հալածենք նրան:

* «Լուսաբան» հանդես, 1896, № 1: նամակը թվական չունի և այդ պատճառով նրա մասի կարելի է միայն ենթադրություններ անել:

Այս տեսակ բացատրություններ լսողը Մատթեոս կաթողիկոսը չպիտի լինի, մանավանդ երբ հարցը բողոքականների վերաբերմամբ լայն համբերություն ցույց տալու մասին էր: Կաթողիկոսը 1840-ական թվականներին թուրքիայում մեծ հալածանքներ էր հարուցել բողոքականների դեմ. նա ասում էր այդ բողոքականներին և իր «Բարի մարդ և բարի քրիստոնեա» գրքում կոթերին և բոլոր բողոքականներին ոճրագործներ էր հռչակել: Հալածանքները ոչինչ արդյունք ցույց չտվին, ընդհակառակն, տարածեցին բողոքականությունը: Բայց այդ դառն փորձից Մատթեոսը չխրատվեց: Այդ իսկ ժամանակները բազմաթիվությունը բույն էր դնում Շամախում. և կաթողիկոսը սիրելի բան չէր գտնում դրա դեմ, բացի այն միջոցից, որ գործադրել էր թուրքիայում, իր պատրիարքության ժամանակ: Կրոնական համբերողություն, եկեղեցական բարեկարգություն քարոզող նազարյանցը թշնամի մարդ էր համարվում: Հայ հոգևորականությունը ընդունակություն չունի հասկանալու երևույթի պարզ պատճառը. նա չէր տեսնում, որ Շամախում տգետ, արհեստավոր դասակարգն էր բողոքականության ետևից գնում, որովհետև նա ծավալ էր կենդանի խոսքի, հասկանալի քարոզի, ուզում էր կարգալ և հասկանալի ավետարանը: Իսկ հայ հոգևորականները շնորհք ու կարողություն չունեին այդ պահանջը լրացնելու: Նրանք հարկավոր էլ չէին համարում բողոքական քարոզիչներին զենքով գործելու, որպեսզի պահպանեն իրանց հոտի ամբողջությունը. նրանք հույսերը դրել էին իշխանական պատիժների, նզվառների վրա: Եվ այն ժամանակ, երբ շամախեցի արհեստավորը վազում էր լսելու բողոքական քարոզչին, Շամախու առաջնորդ Գեորգ եպիսկոպոսը մի-մի անգամ էր բարեհաճում քարոզ խոսել վերացական, անհասկանալի բաների մասին: Նա էր, որ գրեց Մատթեոսին, թե անհրաժեշտ է բանադրել բողոքականներին:

Կաթողիկոսը իսկույն գործադրեց այդ՝ իրան լավ հայտնի միջոցը: Եվ թե՛ թվականին երկու խավար գործեր կատարվեցան էջմիածնում: Ապրիլի 16-ին Մատթեոսը կոնդակ գրեց, որով բողոքականության համակրող հայերը բանադրվում էին, արտաքսվում հայոց եկեղեցուց: Այդ կոնդակը պատճառ էր գտնում, որ Շամախում հաստատվի լյութերական հայերի պաշտոնական եկեղեցի: Այնուհետև այդ ուղղությամբ մի քայլ էր մնում Չերքեզյանի պահանջին թուրքարքայություն տալու մասին: Եվ այդ քայլն էլ արվեց: Մի քանի ամսից հետո, հուլիսի 8-ին, Սինոդը, կաթողիկոսի կոնդակի հիման վրա, դատապարտեց «Հյուսիսափայլը» վերջնական կորստի:

Ռուսահայերի մամուլի պատմության մեջ դա եզակի և անօրինակ մի դեպք է: Ռուսի արժե ամբողջովին բերել այդ վճիռը, որ շամախեցիներին բանադրող կոնդակի արժանավոր եղբայրն է:

Ահա այդ դոկումենտը*.

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց և լուսավորչական Հայոց Սինոդի սրբոյ էջմիածնի՝ հոգևոր կառավարութեան Հայոց Մոսկուայու: Ըստ Հրամանի Նորին Կայսերական Մեծութեան, ի Սինոսի լուսն նախ՝ զխնդրագիր Կուլեթսքի Սեկրետար և ազնուական Յովսէփայ Կարաբեան Չերքեզեանց ի բարձրագոյն անուն ի 26 դեկտեմբեր 1860 ամի. յորում յառաջ բերեալ զգրուածս պարտն նազարեանցի ի 10-րդ ամսատետրա-

* «Առաջադր» Արարատեան, 1862, թիվ 667:

կի «Հիւսիսափայլ» օրագրի նորա յէջն 312—313 հակառակ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ, զորնս նորա տպագրեալս ի «Վարդապետարան կրօնի» անուանեալ գրքի ընդդէմ եւ ին խորհրդոյ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ և այլն, խնդրէ արգելել տալ գտագորութիւն «Հիւսիսափայլ» անուանեալ օրագրի նորա: Երկրորդ՝ գիտնորակ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն հայոց ի 29 յունվարի ներկայ ամի թիւ 27, որով յատուցարէ իստառ խափանել գտագորութիւն «Հիւսիսափայլ» վնասաբեր օրագրի, որ ի լոյս ընծայի ի գայթակղութիւն ազգիս լրութեան: Եւ երրորդ՝ զյայտարարութիւն վերադննչաց գրուածոց Ստեփանոսի Նազարեանց Դանիէլ, Բարդուս և Ծալի վարդապետաց ի 28 ապրիլի տարւոյս, յորում գրեն թէ՛ «համաձայն բանաւոր հրամանի Տեարց ատենակալաց Դորին վերադննեալ զզանազան գրուածս պարոն Ստեփանոսի Նազարեանց, որչափ ի ձեռս մեր անցին, ի Վարդապետարանի կրօնի և յամաստետրակս «Հիւսիսափայլ» գտաք զբազում յօդուածս գրուածոց հակառակ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց առաքելական ամենամարտը սուրբ Եկեղեցւոյս և եօթն խորհրդոց նորա, և Առաքելական և Հայրապետական կանոնադրութեանց, զորս ցուցակազրեալ առանձին առանձին հատուածովք՝ ընդ այսմ խոնարհաբար շնորհ ունիմք մատուցանել ի պարտուպատշաճ տնօրէնութիւն Դորին»: Ըրամայեցին. ետի՛ զվերոգրեալ և յառաջ բերեալ թէ՛ ի խնդրագրի պարոն Չէրքէզեանցի, և թե յառաջի արարեալ քաղուածի վերադննչաց «Վարդապետարան կրօնի» անուանեալ գրոց նազարեանցի բանս գտեալ բաւական յայպացոյց գրուածոց նորա հակառակ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ և եօթն խորհրդոց նորի և առաքելական և հայրապետական կանոնադրութեանց, և համաձայն կոնդակի Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց, առ ի առաջ ունելոյ վնասաբեր գրուածոց նազարեանցի ի գայթակղութիւն պարզամտաց ազգիս՝ խնդրել զմիջնորդութիւն տեառն փոխարքային Կովկասու, զի ընդ ձեռն տեառն նախարարին ներքին գործոց խստիւ արգելցէ նմա այժմէն իսկ գտագորութիւն «Հիւսիսափայլ» օրագրի և զորոյ և իցէ մատենի՛ յորում լինիցին բանք հաւատոյ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ առանց նախազննին տեսութեան և հրամանի Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց և Սինոդիս էջմիածնի, և զհետեանացն խնդրել զձանօթութիւն: Երկրորդ՝ ընդհանրօրէն հրամանադրութեամբք պատուիրել վիճակաւորաց Հայոց (ի թիվս որոց և հոգեւոր կառավարութեանդ Հայոց Մոսկուայու) զի ընդ ձեռն տեղական քաղաքական իշխանութեան փութով ժողովեալ զամենայն օրինակս 10-րդ հատորոյ «Հիւսիսափայլ» օրագրի 1860 ամի և զամենայն հատորս «Վարդապետարանի կրօնի» վերոյիշեալ նազարեանցի, առաքել ի յետագայ տնօրէնութիւն Սինոդիս: Եւ երրորդ՝ որովհետև տպագրութիւն «Վարդապետարան կրօնի» անուանեալ մատենին նազարեանցի եղեալ է թույլտուութեամբ և հրամանաւ նախկին վիճակաւորի Հայոց Բենսարաբիոյ (այժմեան թեմակալ առաջնորդի Հայոց Աստրախանայ) Մատթեոս արքեպիսկոպոսի, յորում որպէս տեսանի ի մակագրութենէ նորա՝ չէ՛ գտեալ որպէս թէ բանս ինչ ընդդէմ հաւատոյ կամ վարոց և այլն, ուստի և յաղաքս այս օրինակ անուշադրութեան նորա առնել նմա զսատիկ յանդիմանութիւն, սաստկապէս պատուիրելով որպէս նմա, նոյնպէս և միւս վիճակաւորաց Հայոց, այսուհետև առանց կանխազննին վերաքննութեան և հրամանի Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց և Սինոդիս շէրտահանալ թույլատրել գտագորութիւն որոյ և իցէ մատենի՛ յորում գտանիցին բանք զհաւատոյ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ: Եւ չորրորդ՝ զվերոյ գրեալ

տնօրէնութեանց Սինոդիս յայտնել և խնդրագործ պարոն Չէրքէզեանցին ընդ ձեռն հագնար կառավարութեանդ Հայոց Մոսկուայու:

Ի սուրբ էջմիածին, 8 Յուլիսի 1861:
Անդամ Սինոդի, Գէորգ արքեպիսկոպոս Յովբեանց.
Պաշտօնակատար ատենադպրի, Ս. Մուշեղեանց.

Քայց էջմիածինը մտապել էր իր իրավասութեան սահմանները, և Նազարեանցը իմացալ ինչպէս պաշտպանել իր իրավունքները: Տեղական իշխանութունը առաջարկում է նրան հաղորդել իր բաժանորդների ցուցակը, բայց ստանում է այսպիսի պատասխան. «Հիւսիսափայլ» ամսագիրը, հրատարակվելով առևանգ գրաքննական կանոնադրութեան ընդհանուր օրենքների հիման վրա, գտնվում է Ս. Պետերբուրգի գրաքննական Ատյանի հսկողութեան տակ, և ետևաբար չէ նմանակում որևէ հսկողութեան հայոց հոգևորականութեան կողմից: Այդ պատճառով ևս պարտական չեմ տեղեկություն տալ իմ բաժանորդներին»:

Միևնույն ժամանակ Նազարեանցը դիմում է Պետերբուրգի Յենդուրական կոմիտեին և խնդրում է նրա պաշտպանությունը: Այստեղ նա ստանում է, որ Հովսեփ Չերքեզյանը իր անձնական ոխերիմ թշնամին է, և Սինոդի կարգադրությունը հիմնված է մի այդ տեսակ մարդու գրութեան վրա: Եվ Սինոդի վարժուհիք միանգամայն անհասկանալի չէ. «Մի այսպիսի ընդդիմադրություն տեսական հետադեմների կողմից, որոնց պատկանում է և հայ հոգևորականությունը, վաղ թե ուշ երևան պիտի դար»: Եվ ահա այդ ընդդիմադրության դատակերը:

«Որքան էլ,— շարունակում է Նազարեանցը,— բնական է այն կոխիքը, որ լինում է հին ու նոր կարգերի մեջ, խավարի ու լուսո մեջ, ասիական անշարժություն մեջ համառությունը դեպքերով և այն սակավաթիվ հասարակության մեջ, որ պայծառ կերպով հասկանում է ժողովրդի կյանքի ժամանակակից խնդիրները և անհրաժեշտությունը Ռուսաստանի իսկական մտավոր շարժման շարժվելու վերա կանգնելու, սակայն, ցավալի է ասել, հայոց բարձր հոգևորականությունը, որին քանիցս ոգևորված կերպով հրավիրել է «Հիւսիսափայլը» արագալույս հանդիսանալ հայերի ժամանակակից լուսավորության գործում, միայն խուլ ու մուգ է մնացել: Այդ իսկ հոգևորականությունը միշտ հալածել է թե՛ ակնբեկ և թե՛ ծածուկ դիմադրություններով «Հիւսիսափայլ» ամսագիրը, իսկ այժմ, sit vena dicto, հանձն է առնում կատարել ամոթալի դեր՝ ինչպէս գործիք գառնալ մի մասնավոր մարդու՝ պ. Չերքեզյանի ձեռքում, մի կարգու, որ իմ սխերիմ թշնամին է, որ բարեմիա հայերի կողմից դատապարտված է արհամարհանքի»:

Ի պատիվ հայ հասարակության պետք է ասել, որ էջմիածնի այդ ամոթալի քայքայ դժգոհություն պատճառեց գոն նրա մի փոքրիկ մասին, այն է՝ Պետերբուրգի հայերին, որոնք մի բողոքով դիմեցին Մատթեոս կաթողիկոսին, որոյ տալով նրան, թե որքան վատ բան է ազաա խոսքը խնդրելու: Բողոքողները մի շարք օրերոն խրատներ էին տալիս կաթողիկոսին:

«Սրբազնասուրբ Հայր,— ասում էին նրանք,— օրագրական հատվածը գտնվում է օրագրերով, գիրքը, որ օրենքի թույլտվությամբ հրատարակվել է, գտնվում է ընտելությամբ (կրիտիկայով). սոցա ընթերցողը վճռում են, թե որոնք ինքն իրավացի և ընդունելի Այս է բնական կարգը տպագրական աշխարհի մեջ, որ և ընդունած են բոլոր լուսավորյալ ազգերը»: Ուստի բողոքողները խնդրում են Մատթեոսին ետ կանգնել այդ ուղղությունից: «Հայաստա-

նեայց եկեղեցին անխախտ է մնացել ոչ անաթեմայի և նշովքի քուլաներով, ո՛չ հրով և սրով և ո՛չ արգելական կարգադրութիւններով. նա պահպանուել է միայն ազատութիւնով և խրատով. նա, իբրև կրօն Քրիստոսի, զերծ է այն հնարներից, որք անարժան են ճշմարտութեան»:

Մատթեոս կաթողիկոսին շաջողվեց դադարեցնել «Հլուսիսափայլը»: Գլխաթողիկոսը, — գրում էր նազարյանցը իր նամակներից մեկում, — ոչինչ իշխանութիւն չունի ո՛չ կապելու և ո՛չ արձակելու «Հլուսիսափայլը» օրագիրը, թեպետ նա շատ է ցանկացել դորան և ամենայն կարելի հնարք գործ է դրել խտփանկու, բայց իզուր»: Դրա փոխարեն նա ջանքեր էր գործ դնում, որ «Հլուսիսափայլը» շտարածվի ժողովրդի մեջ: Իսկ թե որքան հաջողութեան ունեցավ այդ բանի մեջ՝ հետո կտեսնենք: Համենայն դեպս, փաստ է, որ 10-րդ ամսատետրակը «Հլուսիսափայլի» կյանքում մեծ դեր խաղաց: Մենք առայժմ թողնենք նրա հարուցած ազմուկը, կղերական հալածանքները և տեսնենք, թե ինչպես էր «Հլուսիսափայլը» հասկանում իր առաջարկած եկեղեցական ռեֆորմը:

Միանգամայն անտես անելով Չերեքյանի հայհոյանքները, «Հլուսիսափայլը» 1861 թվականին մի երկար փաստալից հոդվածով շարդեց «Կոտնիկ» առարկութիւնները*: Մենք երկար կանգ չենք առնի այդ պատասխանի վրա: Հիշենք միայն, որ հակառակորդներին ցնցում պատճառողը այն էր, որ հայոց եկեղեցու կենդանութիւնը անվանված էր հնացած և մաշված: Այս երկու բաները, որոնց հետևում էր ռեֆորմ բառը (ռեֆորմ ոտքից մինչև գլուխ), համարյա ամենքը հասկացել էին այնպես, թե նազարյանցը հայոց եկեղեցու վերաբերմամբ էլ ընդունում է նույն դրութիւնը, որ գոյութիւն ունեւր կաթողիկոս եկեղեցու մեջ կյութի ժամանակ և նրա պահանջն էլ հենց ռեֆորմացիան էր: Այսպես հասկացել էր և «Կոտնիկ» աշխատակիցը: Սակայն սարսափահար պահանջողականները չէին նկատում, որ նազարյանցը հենց տեղն ու տեղը բացատրել էր «ռեֆորմի» միտքը, ավելացնելով, որ այդ ռեֆորմը գլուխ կզստողովրդի և հոգևորականների դաստիարակութեամբ և կրթութեամբ: Այժմ, հիշեցնելով այդ մոռացված խոսքերը, «Հլուսիսափայլը» նորից կրկնում էր, որ իր պահանջած ռեֆորմը ուրիշ մի բան չէ, եթե ոչ «ժողովրդի և հոգևորների դաստիարակութիւնը և կրթութիւնը, ինչպես բարձրաձայն պահանջում են մեր լուսավոր օրերի պիտույքը. այս է ահա նորա խնդրած ռեֆորմը ոտքից մինչև գլուխ (ժողովուրդ և հոգևորներ)»:

Գալով «հնացած և մաշված» խոսքերին, «Հլուսիսափայլը» նմանեցնում է քրիստոնեութիւնը մի կենդանի ծառի և ասում է.

«Եթե այս կենդանի ծառը աճում չէ, որովհետև նորա ջուր տվողը չկա, եթե այդ անսպառելի ճոխութիւնը թաղած է հողի տակ, մշակվում չէ, որ դարդարե մի ազգի կյանքը աստվածահաճո վաստակներով, եթե մի ազգ ունի ավերարան, բայց չգիտն նորա բովանդակութիւնը, որովհետև այդ ազգի մեկ չկա քրիստոնեական դաստիարակութիւն, ուսումն և գիտութիւն՝ ահա դորան է ասում նազարյանցը հնացած և մաշված կենդանութիւն»:

Պարզ է և հասկանալի: Ուրեմն նազարյանցը մի նոր բան չէր ասում, այլ կրկնում էր այն, ինչ ասել էր իր գրական գործունեութեան սկզբից: Նույն ծրուգիրն էր, բայց ուրիշ ձևի մեջ դրված և հասարակական խոշոր մի երևույթի ատկերացում:

* «Հլուսիսափայլում» գրողը մի օմն Հակոբ Ալիշանյան էր, Քիֆլիսից, բայց նկատարում էին, որ այդ անունը մոտացածին է, և հերքումը պատկանում է իրան, նազարյանցին: Եվ քան միանգամայն ճիշտ է երևում մեզ:

թով արտահայտված. ահա՛ ինչու էր նա այդքան սաստիկ աղմուկ հանել «Հլուսիսափայլի» այդ հոդվածում միանգամայն պարզ չէ արտահայտված պահանջի էությունը: Ուստի, ոչինչ թյուրիմացութիւն չթողնելու համար, դիմենք նախնորդացին, որ ատ զեղեցիկ կերպով բացատրել է նազարյանցի ռեֆորմի նշանակութիւնը իր «Երկու տող» բրոշյուրի մեջ*: Ահա ինչ էր գրում նա.

«Իրավունք չունի՞ր արդոք «Հլուսիսափայլը» Հայոց եկեղեցու ոտքից մինչև գլուխ «ռեֆորմը» պահանջելու:

Այո, մի տեսակ մարդիկ, կարծելով, թե «Հլուսիսափայլի» խնդրած վերափոխութիւնը վերաբերվում է դավանաբանութեան, թե առին ու թոան, օ՛հ, օ՛հ, «Հլուսիսափայլը» բողոքականութիւն է խնդրում դռնելով:

«Հլուսիսափայլը» կրօնական օրգան չէ և դավանաբանութեան հետ բնավ վերաբերութիւն չունի: Նորան հերիք է, և յուր պարտքը լի կշռով կատարած պիտի համարի, եթե կարողանա երկրայինը միայն քարոզել, աստղերից վեր չկա «Հլուսիսափայլ»: Ուր թողունք, որ «Հլուսիսափայլը» ասած էր, թե հարկավոր է, որ այս ռեֆորմը կատարվի ինքնուրույնաբար, հետի մնալով պապական և բողոքական եկեղեցիներից:

...«Հլուսիսափայլի» խնդրած ռեֆորմը վերաբերվում էր եկեղեցական կառավարչութեան, ռեֆորմ, որով պիտի սանձահարվեին ոչ միայն Պողոսը և Նիկողոսը, որոնց մասին «Հլուսիսափայլը» բողոքած է ժամանակ առ ժամանակ, այլև շատերը... այլև Երուսաղեմի միաբանութիւնը:

...Այո՛, ռեֆորմ խնդրում ենք այն սկզբունքների մեջ, որոնցից կախված են հոգևոր մարդերի որևէ պաշտոն ստանալը:

Ռեֆորմ պահանջում ենք եկեղեցու տնտեսական կառավարութեան մեջ, որպեսզի այսուհետև զեթ եկեղեցական գանձերը չհափշտակվին, չզողացվին և եկեղեցական ոսկի և արծաթի սպասքը հրեա ոսկերիչների քուրանների մեջ չլավվին...

Ռեֆորմ պահանջում ենք հոգևոր իշխանների և առհասարակ եկեղեցականների զեպի ազգը ունեցած հարաբերութեան մեջ: Պարտակա՛ն են նոքա աղվել յուրյանց ընթացքը. մինչև այժմ, վարձկան պորտաբույծ և ոչ հովիվ կատարույծ, մինչև այժմ նոցա համար բողոքել է մարգարեն. «Ո՛հ, հովիւք, որք զանձինս արած էք և ոչ զխաշինս»:

Ռեֆորմ պահանջում ենք եկեղեցականների կրթութեան և դաստիարակութեան մեջ: Քահանա ունինք, որ կարգալ շղիտե. քահանա ունինք, որ հայերեն չկարող խոսել:

Ռեֆորմ պահանջում ենք եկեղեցականների ձեռնադրութեան պայմանների մեջ, մինչև այժմ «Առ մեզ անպէտ առ ամենայն կացութիւն մարդ, պիտանալու դաստի առ հոգևորականութիւն», մինչև այժմ սիմոնիականութիւնը վերջին տեղը չունի...

Ռեֆորմ պահանջում ենք առհասարակ եկեղեցական կառավարութեան մեջ, որ խառնիխուռն և անկարգութեամբ հառաջանալով, մեծ մասով պատճառ է եղել ազգի դարավոր թշվառութեան:

Ահա ինչպիսի կենսական, կարևոր հարցեր էին տեսնում իրանց առաջնայ ազգի առաջադիմութեան և ինքնաճանաչութեան պիտաներները. Եվ այդ պահանջներն այսօր էլ նույնքան անհասկանալի են մնում մեր հոգևորականութեան համար, նույնքան մոռացվում և հալածվում են, որքան քառասուն տարի առաջ...

* Պարբ. 1861, եր. 23:

Ամսագրի գլուխը եկած այս փորձանքների մասին նազարյանցը չկամեցավ կամ, ավելի ճիշտը, չկարողացավ մանրամասն հաշիվ տալ հասարակության: Սակայն 1861-ի հոկտեմբերին բաց անելով եկող տարվա բաժանորդագրությունը, նա խոսում էր այնպիսի ակնարկներով, որ ընթերցողը պիտի ենթադրեր, թե մի բան պատահել է:

Այդտեղ նա հիշեցնում էր իր թշնամիներին, որ մեր օրերում ասում էր սով հարձակվել ճշմարտության վերա դուր և անօգուտ ջանք է: Եթե հայերը շունեն սեփական օրենքներ, թող գոնե այն հասկանան, որ նրանք հպատակ են մի պետության, ուր դատապարտվողը դատվում է «քննությանը և վերահաստությանը և ոչ թե այն ասիական օրենքով, որ իսկույն հրամայում է. «Ջարակեցեք զլիսին»: Նազարյանցը սիրով ընդունում է, որ իր անձը և գրական գործունեությունը կարող են դուր չգալ այս կամ այն հային, ինչպես իրան է դուր չէ գալիս այս կամ այն հայր: Բայց անձնական ատելությունը գործիք դարձնել և իր ազգակից եղբորը մատնել մի «այլազգի տերության մեծավորներին», — դա անբարոյական քայլ է:

«Հյուսիսսահայի» թշնամիքը, — շարունակում է նա, — կարող են այսօր, ինչպես միանգամ Հրեից անմիտ ամբոխը, ձայն տալ. «Ենա՛ չ հան զդա, իսա՛ չ հան զդա»: բայց թո՛ղ շմոռանան դոքա, որ այս մեր 19 դարու ոսուական ատենի դատավորը չէ թուլամիտ պոնդացի Պիդատոսը, այլ քաջամիտ, արդարասեր, բանագետ Աղեքսանդր Նիկոլաևիչը: Եվ այսպիսի դատավոր ունենալով յուր վերա հրատարակիչը կարող է յուր մաքուր խղճի բարձր գլխի տակ դրած հանգստանալ ինքնազուստի և ձայն տալ հայերին, յուր ամենասիրելի բարեմիտ եղբայրը, թե «Հյուսիսսահայի» օրագիրը ավարտելով յուր շորեքամյա ընթացքի շրջանը, մի քանի թույլ շունչ կառնու, կծողովե յուր գործությանը, որ գալուց 1862 տարու շրջանը սկսանն դարձյալ»:

Եվ նա այնքան թևավորված է իր աչքություններ, որ պահանջներ է անում հասարակությունից: Նորից նա հիշեցնում է, որ ամսագրի ամբողջ ծանրությունը մի մարդու ուսերի վրա է ընկած: Պետք է թեթևացնել այդ մարդու աշխատությունը և ոչ թե «արորելով սղոցելով» անպետք դարձնել նրան: Այդ մեծակ մարդը մտավոր աշխատանքի մարդ է. հասարակության օգուտն է կարողություն տալ նրան շարունակելու գործունեությունը, ավելի պաշարի դարձնել նրան և ոչ թե մի կատարյալ մեքենա: Հարկավոր է աշխատանքի բաժանում. հարկավոր են աշխատակիցներ, որոնք հանձն առնելին որոշ վարձատրություն (գոնե 18 ուրբի թարգմանության և 25—30 ուրբի ինքնուրույն աշխատություն*) համար գրել հոդվածներ: Հարկավոր են թղթակիցներ, որոնք նույնպես պիտի վարձատրություն ստանան: Նազարյանցը ցավելով է խոստովանում, որ ամսագրի բաժինները մոռացված են, չկան. ցավում է մանավանդ կրիտիկական բաժնի բացակայության համար: Բայց ի՞նչ անել. մի հատ մարդը չէ կարող բոլորը կատարել: Հարկավոր է աջակցություն: Եվ նազարյանցը դարձյալ 500 բաժանորդ է խնդրում:

Ավելորդ է բացատրել, թե որքան արդարացի է համեստ էին արդյունավոր խմբագրի պահանջները: Կան բաներ, որոնք ինքնուրույնության հասկանալի են: Բայց մեր ողբալի իրականությունը մի դառն ժաղը էր պատրաստում անհավասար պայքարից հաղթանակով դուրս եկած և այդ հաղթանակով ոչևոր:

* Թե որքան է մեր գրականությունը առաջ դնացել նազարյանցի ժամանակից, կարելի է դատել հենց նրանից, որ մեր օրերում էլ վարձատրության շարք, եթե միայն տրվում է վարձատրություն, այդ քանակությունից թիլ է և ոչ թե շատ:

ված գրական մշակի համար: 1862 թվականին սկսվեց «Հյուսիսսահայի» հոգեվարքը. նա պիտի մեռներ միջոցների պակասությունից:

Եվ սակայն որպիսի՞ ինքնավստահություն էր նազարյանցը, դեռ շտեմած արդ որհասական տարին, գրում. «Հյուսիսսահայի» հառաջ կտարվի և այսուհետև, նա հաղթությանը ոտք կկոխե 1862 թվականի մեջ, ինչքան ևս լաց և ողբ առնելին նորա թշնամիքը, կոծելով յուրյանց կուրծքը: Աստված այդպես է պատժում շարախնդացներին, այրելով և տանջելով դոցա սիրտերը յուրյանց հասուցի նախանձու և ատելության դժոխային կրակի մեջ»:

Այդ շարախնդացները կրոնամոլության հերոսներն էին: Դրանց մի բարբարոսական արարքն էլ մերկացնելու առիթ ունեցավ «Հյուսիսսահայի» նույն 1861-ի վերջին համարում: Բժիշկ Դավիթ Ռոստոմյանը (Բաքվի Հայոց Մարգարեական ընկերության հիմնադիրը) նկարագրում է այն դեպքը, որ տեղի էր ունեցել Շամախում օգոստոսի վերջերին և որ Կ. Պոլսի դեպքի կրկնությունն էր:

Մեռնում է երկու կամ երեք տարեկան մի հայ երեխա, որի հայրը բողոքական էր համարվում: Քահանան հրաժարվում է թաղել երեխային, հիմնվելով Մատթեոս կաթողիկոսի բանադրական կոնդակի վրա: Շամախու առաջնորդ Գեորգ արքեպիսկոպոսը, նա, որի խորհրդով էր կաթողիկոսը եկեղեցուց հեռացրել ավետարան կարգացող շամախեցիներին, այդ միջոցին գտնվում էր Սաղիանի վանքում: Բժիշկ Ռոստոմյանը նամակ է գրում նրան, հայտնում է, որ երեխայի հայրը շատ լավ լուսավորչական հայ է, ուստի պետք է քահանային նշանակել թաղման կարգը կատարելու: Եթե այդ հայրը նույնիսկ լյութերական էլ լինի, շարունակում է բժիշկը, բայց կա երեխայի մայրը, որ Լյութերի անունն անգամ չէ լսել, դառն արտասուքով լվանում է սրբազանի ոտները, խնդրելով թույլտվություն, որ իր միակ օրդին թաղվի հայրենի կարգով: Եվ վերջապես, ծնողները թող մի կողմ մնան. ինչո՞ւ է մեղավոր ինքը. հանգուցալը. նա մի փոքրիկ երեխա է, մկրտված է հայոց եկեղեցում և չէ կարող պատասխանատու լինել իր ծնողների հանցանքների համար և պատժվել նրանց փոխարեն:

Արքեպիսկոպոսը պատասխանում է, որ ինքը ի սեր Ռոստոմյանի միայն թույլ է տալիս թաղել, այն պայմանով, որ երեխայի հայրը գրավոր խոստում տա, թե չի շարունակի իր ազանդավորությունը: Միևնույն ժամանակ տգետ և անմարդասեր կղերականը, հիմնվելով հին հրեական իրավունքի վրա, ասում է, թե որդիները, այո՞, պատասխանատու են իրանց ծնողների մեղքերի համար:

Սակայն երեխայի հայրը իր համար մեծ անպատվություն է համարում մի այդպիսի ստորագրություն տալը, ասելով, թե երբևէ լյութերական չէ եղել և այդպիսի մի թուղթ տալը կնշանակեր հանձն առնել մի բան, որ չէ եղել երեխան մնում է անթաղ: Այնուհետև բժիշկ Ռոստոմյանը բերում է իր ստացած նամակի մի սրտառուչ կտորը: Ահա ինչ էր գրում երեխայի թաղմանը մասնակցողներից մեկը.

«28-ին առավոտ մին կվարտանիկ (թաղադետ աստիճանավոր), երկու լասավուլ ձի նստած ընկան առաջներս. լուռ քաղաքիս միջով անցանք անմեղ ևնչեցյալի մարմինը հասցնել հողի: Լալայով, Ներսեսով, Կաճկաճով և ուրիշ շատ իշխաններ, որոնք մի քանի տարի սորանից յառաջ Աստուծո պատիժ էին Շամախու առաջնորդների համար և այժմուս հաշտ լինելով մեր խեղճ առաջնորդի հետ, եկեղեցու պաշտպանողներ են դարձել, գնում են կնյաղի (քաղաքապետի) մոտ, շատ աղաղակ են գործում, և իրանք իրանց կողմից բազար-»

նիկ Գեորգ Մատթեոսովին, երկու յաստիւով ուղարկում են շասպով մեր ետեւից, թե հանգստարանումն չթաղեն ննջեցյալն: Բարի է, ասացինք, որտեղ թաղենք, ցույց տվեք: Թաղեցեք, ասացին, փոքր դուրս հանգստարանից: Երկրորդ անգամ փորեցինք հանգիստը, Տիրոջ անվամբ գրեցինք գերեզման, հողը ընդունեց, գոհութիւն Աստծու, հուանք և ինքն ընդունի նորա հոգին իրան խոստման պես երկնքի արքայութեան մեջ»:

Շամախու ֆանատիկոսութիւնը ճիշտ նույնն էր, ինչ Կ. Պոլսում՝ ամբոխի կույր հալածատիրական բնագոյր, հովանաւորված խաւարամիտ կղերականութեան կողմից: Եվ իզուր այդ կղերականութեան կողմնակիցները պաշտպանում էին պոլսեցիներին, մեջ բերելով գերեզմանատների սեփականութեան պատրվակը: Շամախում այդպիսի հարց չկար. և Շամախու աղաները դուրս շարտեցին անմեղ երեսային գերեզմանատնից լուկ իբրև պղծութիւն...

Այս քստմենելի դեպքի առթիւ նազարյանցը առանձին հողված չգրեց: Ի՞նչն էր պատճառը: Մեղ թվում է, թե նրան թույլ չտվին գրել: Շամախու մեջ հարուցած կրոնական հալածանքների առիթով նա մի խիստ և շատ արդարացի հողված էր գրել դեռ 1860 թվին, բայց այդ հողվածը տպուկաց նրա մահից տասը տարի հետո*:

«Օ՛հ,— բացականչում էր նազարյանցը այդ հողվածում,— ինչ տեղ է հասել մեր թշվառութիւնը, հոգևորների վայրենարար տգիտութեամբ և անամոթութեամբ. Քրիստոսը և Քրիստոսի ավետարանը այսօր հայհոյվում է մեր մեջ որպես հերձվածողութիւն, հալածվում է որպես վնասակար ուսումն, պատմվում է որպես խոտորումն ուղղահալատ քրիստոնեական եկեղեցուց»:

Դեպքերը իրանք-իրանք հեռացնում էին նազարյանցին հայ հոգևորականութիւնից: «Հյուսիսափայլի» հայացքների մեջ արմատական փոփոխութիւն է տեղի ունենում նրանով, որ նազարյանցը այլևս ոչինչ հուշ չունի այդ դասակարգի վրա: Մի ժամանակ նա հավատացած էր, որ հոգևորականութիւնը կարող է առաջնորդ հանդիսանալ ժողովրդի կրթութեան և վերածնութեան գործում: Այժմ նա համոզվում էր, որ պետք է մի կողմ թողնել այդ հետամնաց, անշարժ, լուսի թշնամի դասակարգը: Ժողովուրդն ինքը պիտի հասկանա իր օգուտն ու փրկութեան միջոցները: Բայց ժողովուրդն էլ, ինչպես այժմ կտեսնենք, միայն հուսահատեցնել կարող էր իր առաջավոր, ազնիւ գործիչներին:

V

Կյանքի փորձը: Չկա գրականություն առանց դպրոցների: Նազարյանցի մասնավոր գիտնական և գործնական դպրոցը: Հրավեր հայ ճնողներին, բայց անպտուղ: Չեմբեգյանի նոր ստորությունը: Նազարյանցի բաց նամակը: Երկու տիպեր մամուլի գործիչների մեջ: Անբարեխղճությունը արհամարհված: Գիմում հասարակական դատարանին: Չկա այդ դատարանը: «Հյուսիսափայլի» դրությունը: Պահանջներ հասարակությունից, դարձյալ ապարդյուն: Բարեգործական ընկերության ծրագիր: Հասարակական գործակցության գաղափարը: «Հյուսիսափայլի» առաջարկության անմիջական հետևանքները: Ընկերություններ Բախվում և նոր-նախընկանում:

«Երկար ու ձիգ տարիների կենսամաշ փորձով,— գրում էր նազարյանցը

* «Հանդէս Գրականական և Պատմական», 1889, № 2, էր. 276:

իր մի բարեկամին,— վերահասու եղա ես, որ մատենագրութիւնը մի ազգի մեջ կարող չէ հառաջագնի լինել, ուր չկա գրագիտութիւն, չկա դպրոցական դաստիարակութիւն, չկա ուսումնական կրթութիւն, մի խոսքով ուր ներկա սերունդը պատրաստված չէ մատենագրութեան համար»:

Առաջ դպրոցներ են հարկավոր. պետք է նախ և առաջ ընթերցող հասարակութիւն պատրաստել դպրոցներով: Ի՞նչ միտք ունի գրականութիւնը այնտեղ, ուր գիրք կարդացող չկա: Հեղինակը գրքեր տպագրում է իր տան ծակ ու ծուկերում գարսելու և մկների կերակուր դարձնելու համար:

Նախ դպրոցներ: Եվ նազարյանցը վճռում է մի օրինակ տալ, թե ինչ տեսակ դպրոցների և կրթութեան է կարոտ հայ հասարակութիւնը. վճռում է մի մասնավոր դպրոց բաց անել Մոսկվայում: Ստանալով հարկավոր թույլտվութիւնը, նա 1861 թ. «Հյուսիսափայլի» երրորդ համարում հրատարակում է այդ դպրոցի ծրագիրը և հրավեր է կարդում, որ աշակերտներ ուղարկեն: Ինչպես երևում է, նա վճռել էր թողնել կազարյան ճեմարանը և առհասարակ փոխել իր գործունեութեան եղանակը: «Ես կրակի մեջ նստած ահա 10 տարի այրվեցա, ոչնչացա,— գրում էր նա նույն նամակի մեջ,— Չէ՛, «Հյուսիսափայլի» հրատարակողը, ինչպես գրեցի պիտո է փոխել յուր ասպարեղը: Անպատճառ: Հայոց ազգը մտածում է, թե ամեն բան կարելի է ամեն պայմանների մեջ: Գուք, որ փուշ ու տատասկ կսերմանեք, վարդ ու մանուշակ բուսանել կարող չէ»:

Նազարյանցի ծրագրած դպրոցը մի մասնավոր գիմնադիա էր, որ պիտի պատրաստեր աշակերտներ՝ համալսարան մտնելու համար: Բայց նազարյանցը միայն այդ շունքի ի նկատի: Ամենքը շեն կարող և շեն ուղում բարձրագույն կրթութիւն ստանալ. շատ են և այնպիսիները, որոնք կկամենային հենց այդտեղ, միջնակարգ դպրոցում, պատրաստվել կյանքի մեջ մտնելու համար: Այդպիսիների համար նազարյանցի դպրոցն ուներ հատուկ «գործնական բաժանմունք», ուր պիտի ավանդվեին, բացի ընդհանուր զարգացողական առարկաներից, վաճառականական գիտելիքներ:

Առանց բացատրութիւնների էլ հասկանալի է, թե նազարյանցի այդ ձեռնարկութիւնը որքան նպատակահարմար էր: Մի մասնավոր գիմնադիա, որի առաջին նպատակն էր պատրաստել համալսարանական սերունդ, նա շատ ցանկալի էր համարում ամենից շատ այն պատճառով, որ նրա մեջ մեծ տեղ էր բռնում հայոց լեզվի ուսումնասիրութիւնը: Ծիշտ է, դպրոցը զուտ հայկական չէր. այնտեղ կարող էին մտնել անխափր բոլոր ազգերի երեսաները: Բայց ծրագիրը ցույց էր տալիս, որ դա առավելապես հայ երեսանների համար է: Բացի կրոնից և հայերեն լեզվից, այդտեղ մի քանի առարկաներ էլ հայերեն լեզվով պիտի ավանդվեին: Գործնական կյանքի կամ, ավելի ճիշտ ասած, վաճառականական պարագամունքների համար պատրաստվողներն էլ պիտի գուրս տանեին մի հիմնավոր հայերենագիտութիւն: Հետաքրքրական է, որ նազարյանցը գործնական գիտելիքներից ընտրեց միայն վաճառագիտութիւնը: Անշուշտ նա համոզված էր, որ հայերին ամենից շատ այդ ճյուղն է հարկավոր, քանի որ հայերը մեծ մասամբ վաճառականներ են: Սխալ էր այդ եզրակացութիւնը, հային հարկավոր էին և ուրիշ շատ գործնական գիտելիքներ, քանի որ այդ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը հողի վրա նստած էր, մշակ, երկրագործ, արհեստավոր էր: Բայց այդ պահանջների վրա այն ժամանակները մեղանում ոչինչ ուշադրութիւն չէր դարձնվում. ժողովուրդ չկար մեր գրականութեան մեջ, կային միայն վաճառականներ: Եվ բացի դրանից, հո չէ՛ր կարելի նազարյանցից պահանջել մի բազմաբնույթ դպրոց: Ո՛ւր էին միջոց-

ները: Հայ հասարակութիւնը հնարավորութիւն չտվեց, որ նա նույնիսկ իր այդ համեստ դիտարկութիւնն իրագործէ:

Մրազիրը ծրագիր էլ մնաց. և նազարյանցին վիճակված չէր բաց անել իր դպրոցի դռները: Ինչի՞ց էր դա: Ամենից առաջ կար այն անհարմարութիւնը, որ դպրոցը շատ էր հեռու հայկական կենտրոններից: Բայց դա, նազարյանցի կարծիքով, արգելք չպիտի դառնար: Նույն Մոսկվայում, զանազան մասնավոր դպրոցներում, սովորում էին կովկասի զանազան կողմերից բերած հայ երեխաներ: «Այդտեղ,— ասում էր նա,— ինչպես տեսանում ենք և ինչպես կարելի է սպասել, հայկական լեզուն հանդիպում է մի խորթ մոր հոգաբարձութեան. մեր մանկու՞նքը կամ մոռանում են յուրյանց հայրենական լեզուն, կամ շատ շատ, մի չքաղորդ երկրորդական կերպով ուսանում են նորան այն լեզուն, որ մեր ազգային հարազատութեան գլխավոր հիմքն է»: Այս պատճառով նա կարծում է, որ հայ ծնողները իրան կհանձնեն իրանց երեխաներին: Մի հավելվածական հայտարարութիւն էլ տպելով, որի մեջ ասված էր, թե դպրոցը կունենա նաև նախապատրաստական դասարան 3—10 տարեկան երեխաների համար, նազարյանցը ավելացնում էր.

«Գուցէ ոմանց ծնողների սրտին մի փոքր ծանր կլինեն յուրյանց զավակները այնպիսի քնքուշ հասակում արձակել ծնողական տանից, բայց այդ ծնողներին կարող ենք հիշեցնել այսքան, որ նոցա զավակները օտարութեան մեջ գտանելու են մի երկրորդ սիրող, սրտացալութեամբ հոգաբարձու հայր, որ ինքը լինելով բնականից և զավակների տեր, կաշխատեւր ամենայն կերպով քաղցրացնել նոցա կյանքը»:

Բայց ապարդյուն էին այդ հույսերն ու ակնկալութիւնները: Աշակերտներ չտղարկվեցան: Ինքը, նազարյանցը, այսպես է բացատրում դրա պատճառը: Ցանկութիւնն ունեցող ծնողները սպասում էին, որ դեռ դպրոցը բացվի, աշակերտներ ընդունեն, ապա և իրանք կուղարկեն իրանց որդիներին: Ամենքը սպասողներ էին և ոչ ոք սկսող չեղավ:

Բացի դրանից գործում էր և թշնամութիւնը: Որքան կարելի է դատել նազարյանցի նամակներից, Մոսկվայի թշնամիները, որոնց մեջ և մի քահանա, նամակներ էին գրում զանազան տեղեր դպրոցի գործը խափանելու համար: Այս ուղղութեամբ աշխատում էր, իհարկե, և Հովսեփ Չերքեզյանը: Մածուկ դարանները բավական չէին և ահա առաջ եկավ նաև ապականված տպագրական խոսքը՝ հրապարակով նազարյանցի ձեռնարկութիւնը կասկածելի դարձնելու համար: Այս ապականութեան հերոսը դարձյալ նույն Չերքեզյանն էր:

1861 թվականի ամառը, ինչպես տեսանք, նազարյանցը աշխատում էր վերացնել այն վտանգը, որ սպառնում էր «Հյուսիսսիսային» Չերքեզյանի մատնութեան պատճառով: Ահա այդ իսկ ժամանակ «Ճոթաբաղը» իր երկու տետրակներում տպեց Չերքեզյանի մի հոդվածը, որի նյութը նույն 10-րդ ամսատետրակն էր, նույն «Ռեֆորմ» բառը: Այս անգամ մի նոր անբարեխղճութիւն էլ ավելացավ այն կեղտոտ զենքերի վրա, որոնցով Չերքեզյանը կրփում էր նազարյանցի դեմ: Այս անգամ նա բացարձակ կերպով հայտարարում էր, թե նազարյանցը մի բողոքական միսիոնար է, որ գերմանացիների կողմից ուղարկված է հայերին կրօնափոխ անելու համար: Եվ ահա այդ միսիոնարը խաբուկութեան մի նոր միջոց է գտել: «Հյուսիսսիսային» միջոցով չկարողացավ խաբել, այժմ դպրոցի միջոցով է ուղում նույնն անել:

«Մ'ր ուղղագատ և հարազատ հայր,— հարցնում էր Չերքեզյանը,— կհանձնես յուր որդոցը այնպիսի մի մարդու դաստիարակութեանը, որ գիշեր և ցե-

րիկ այնք է քարոզել նոցա լուսեւրական կրօնի ուսումն՝ լուսավորութեան անուհով, պետք է ցանկ ռեֆորմացիայի սերմերը մատաղ սրտերի մեջ»: Դա արդեն լուսավորութեան էր նույնիսկ Չերքեզյանի պես մարդկանց համար: Կարգալով այդ տողերը, նազարյանցը, իհարկե, աչքի առաջ ուներ և այն սուր մատնութիւնը, որի հեղինակն էր Չերքեզյանը, բայց որ հայանի չէր հայ հասարակութեանը: Երկու անբարեխղճ արարքները, երկու մատնութիւնները հարկադրում են նազարյանցին հրապարակ գալ իր սխերիմ թշնամու դեմ: Եվ նա «Հյուսիսսիսային» սեպտեմբերի համարում տպում է մի բաց նամակ ուղղած Չերքեզյանին և հայ հասարակութեանը:

Ազնիվ զայրույթով բնկված այդպիսի խիստ ու ազդու գրվածք նազարյանցը շատ շունչ: Նա, իհարկե, չէ վիճում Չերքեզյանի հետ: Հակառակորդներ կան, որոնց պատասխանել անկարելի է: Չերքեզյանը շունչը բարոյական կանոններ, գրական գործի սրբութիւնը չէր ըմբռնում, նա ծոռում, ազավաղում էր հակառակորդի խոսքերը, արատավորում էր իր գրիչը այնպիսի տխուր քաղաքործութիւններով, որոնցից կարելի է միայն երես դարձնել: Եվ նազարյանցը, հիշատակելով նրա այդ «անբարոյական ընթացքը», ասում է, թե նրա անծայր ու անվերջ աղճատումները չեն կարող մի բոպե անգամ խախտել իր ինքնահարգութեան հավասարակշռութիւնը: Հարգելով ինքն իրան, ճանաչելով իր պատիւը, նազարյանցն ասում էր, որ ավելի հեշտ է դահիճի ձեռքով իրան կտոր կտոր անել տալ, քան անպատվութիւն հանձն առնել և արժանացնել նրան պատասխանի, քանի որ նա այդպես անարժան է:

«Պարո՛ն,— շարունակում էր նազարյանցը,— չեմ կարող շնոստովանել հրապարակով, որ ես առ ի սրտե արհամարհում եմ ձեզ, և այս պատճառով մինչև այսօր անարժան եմ համարել իմ գրչի տակ առնուլ այն մարդու անուհը, որ իմ համար, կարծեմ և մյուս շատերի համար, վաղուց բարոյապես մեռած ու գեանին տակ խոր թաղած էր... Եթե փողոցում հանդիպելի մի անառակ կնոջ կամ թե մի արբեցած մարդու, դոցա բերանից լսելի ամենայն տեսակ պիղծ հիշոցներ, ես սովոր եմ, միտ դնելով բանականութեան խրատին և իմ աչքական պատվին, լուսեւրամբ անցանել դոցա մտքից և ոչ թե վեճ բանալ, հաշիվ ու համար պահանջել մի թշվառականից, որ յուր բանական և բարոյական ազատութիւնը կորուսել էր վերայից, որ աստուծո պատկերը յուր մեջ, անարգել էր գարշելի արատներով»:

Եվ այսպես ահա մեր մամուլի հենց առաջին օրերից որոշվում ու պարզ գծագրվում են երկու տիպեր: Մեկը վերաբերվում է տպագրական խոսքին իբրև մի սրբութեան և գրողի պաշտոնը ընդունում է իբրև սրբագործութիւն, միևնույն ժամանակ մյուսը սանձարձակ է, բարոյական պարտավորութիւններ չէ ճանաչում և կեղտոտում է տպագրական խոսքը սուր շահատակութիւններով: Մեկը պրակտիկ, ազնիվ, շիտակ, օրինավոր գործիչն է, մյուսը ներկայացնում է մամուլի մեջ այն փողոցը, ուր ամեն բոպե կարելի է ենթարկվել նազարյանցի հիշած անբարոյական կնոջ կամ հարբած մարդու հիշոցներին: Նազարյանցը առաջինն էր, որ մատով ցույց տվեց փողոցային հերոսութիւնը գրականութեան մեջ. և առաջինն էր, որ խրատեց, թե պետք է անտես անել այդ հերոսութիւնը, արհամարհել այդ հերոսներին, սեփական պատվի, գրական սրբութեան տեսակետից ստորութիւն համարել նրանց ուղղորդութեան արժանացնելը:

Այսպես դեն շարտելով իր հակառակորդին, նազարյանցը դիմում էր հասարակական դատաստանին, նրա վճիռն էր խնդրում: Չերքեզյանը ասում էր, թե նազարյանցը լյութերական պիտի դարձնէ հայ երեխաներին, մինչդեռ նա-

զարյանցի հայտարարության մեջ պարզ ասված էր, թե դպրոցի կրօնուսույցը կլինի Մոսկովայի հայոց եկեղեցու քահանաներից մեկը: Դպրոցում պիտի ընդունվեն անխտիր ամեն ազգի երեխաներ, սակայն Չերքեզյանի ասելով պետք է ենթադրել, որ Նազարյանցը լյութերական պիտի դարձնե և ուսու երեխաներին: Դնենք թե Նազարյանցը լյութերական է: Մի՞թե մի լյութերականի դպրոցում սովորելը անպատճառ լյութերական դառնալ է նշանակում: Եթե այդպես է, պետք է, ուրեմն, որ ուսանելի և բողոքականների դպրոցներում սովորողները հունադավան կամ բողոքական դառնալին: Դառնալով հայ երիտասարդներին, որոնք ծնված լինելով ուսաց հողի վրա, դաստիարակվել են ուսաց դպրոցներում և համալսարաններում ուսու ուսուցիչների ձեռքով, նազարյանցը հարցնում է. «Ո՞րը ձեզանից մինչև այսօր դարձած է հունադավան, ասացե՛ք»:

Անհեթեթությունը ավելի քան պարզ է: Եվ դատաստան պահանջող նազարյանցը դիմում է այսպիսի եռանդոտ խոսքերի.

«Եվ ի՞նչ է Չերքեզյանի ցանկության կամքը. ասացինք ահա, որ նա, ինչով միայն ձեռնհաս է, վնասեր, փշրեր և խորտակեր յուր ատելի թշնամին, նազարյանցը. գազանական կատաղություն, որի մեջ արդեն վերջանում է ամենայն բանականություն և ամենայն բարոյականություն: Պ. Չերքեզյանցը մտածել է, թե հայոց տխմար ամբոխին ամեն բան կարելի էր հաւատալի կացուցանել. նազարյանցը օրագիր է տպում, կամի լութերականություն տարածել». գպրոց է բաց անում հայոց մանուկների դաստիարակության համար, «կամի լութերականություն տարածել». քարոզում է ազգին դաստիարակություն և կրթություն ավետարանի հոգով, «գարձյալ կամի լութերականություն տարածել». մի խոսքով, ինչ որ նազարյանցը մտածում է, խոսում է և գործում է, բոլորը լութերականություն է: Դատեցե՛ք, հայեր, աստված ձեզ բանականություն է տվել. ասպ թե ոչ, պարտական կմնաք աստուծոյ և մարդկության առաջն»:

Բայց դատող չկար: Գոյություն ունեւ հասարակական կարծիք: Եթե նա մեռած չէր, բայց ոչնչով չէր էլ արտահայտվում: Եվ վերջիվերջո ստացվում էր մի այսպիսի դրություն, որ նկարված է նազարյանցի սամուկներից մեկի մեջ.

«Մեր թշնամիքը ամենայն տեսակ ապականություն թափում են նազարյանցի վերա, բայց մեր բարեկամները մտածում են, թե նոցա պիտո էր լուսմնալ. և եթե ձեզ պես աշխարհական մարդիկ ջատագով ու պաշտպան դուրս գային մեզ, այդ ևս հարկավոր չէր ընդունել. ասել է՝ նազարյանցին պիտո է հայհոյե ամենայն մարդ, թշնամին յուր խոսելով և բարեկամը յուր լուսմնալով համաձայնել նորան»:

Հասարակական կարծիքը իր դատաստանը պիտի աներ գոնե նրանով, որ միջոց ու հնարավորություն կտար նազարյանցին բաց անել իր դպրոցը: Բայց այդտեղ էլ նա մի շատ վիրավորական վերաբերմունք էր տեսնում: Աշակերտներ չկային, նշանակում էր, որ Չերքեզյանը և նրա նմանները հասան իրանց նպատակին: Ասել է, թե նազարյանցը մենակ մարդ էր: Եվ եթե մենք աչքի առաջ այդ իսկապես մենակ մարդու դրությունը 1861 թվականին, երբ մի կողմից ամսագիրը փակելու հարց էր հարուցված, իսկ մյուս կողմից դպրոցական ձեռնարկությունն էր ոչնչանում անտարբերություն պատճառով, հասկանալի կլինի այն դառնությունը, որ երևում է նրա այդ ժամանակվա նամակներում: Առանց այդ էլ նազարյանցը սկզբից ևեթ գանգատավորի բողոքողի

կերպարանքով էր մտել հայկական կյանքի մեջ: Այժմ հասարակության անտարբեր վերաբերմունքը ոչ միայն խոցոտում էր նրա սիրտը, այլև թուլացնում էր նրա հավատը դեպի իր գործը, և նա հետզհետե գալիս էր այն եզրակացության, որ հայերի մեջ ոչինչ լավ բան անել չէ կարելի:

Դառնացած սրտի թուլան է նա թափում մի աստրախանցի հայի ուղղած իր նամակներում: Բարեկամական են այդ նամակները, նրանց ստացողը նազարյանցի կողմնակիցներից մեկն էր. բայց խիստ հանդիմանությունները, թունալից գանգատները պատահում են յուրաքանչյուր տողում: Խոսքը դպրոցի մասին է, խոսքը և այն դատաստանի մասին է, որ նա պահանջում էր հասարակությունից իր և Չերքեզյանի վերաբերմամբ:

«Ձէ՛, ասում է նա, այժմ պիտի դուք բանաք, արձակեք և հնչեցնեք ձեր փակած բերանը, եթե կամիք, որ ձեր սերունդը չթքեն ձեր գերեզմանի վերա, ինչպես վատթար նախնիքի գերեզմանի վերա: Այսուհետև դուք եք իմ դատավորը և ոչ թե ձեր վատթար, անբարոյական ուսումնականը»:

Բայց այդ դատավորներից էլ գոհ լինելու պատճառ չունեւ նազարյանցը: Նա տեսնում էր համակրություն, բայց ոչ էական, շոշափելի օգնություն: Հակերը ուզում են,— այսպես է հասկանում նազարյանցը,— որ դպրոցի գործն էլ այնպես տանվի, ինչպես «Հյուսիսափայլի» գործը, այսինքն՝ առանց դրամական աջակցություն: Հայերը սպասում են, որ նազարյանցը 10—20 աշակերտ ունենա, որ իրանք էլ ուղարկեն իրանց որդիներին:

«Այդ ինչ տեսակ մարդիկ եք դուք, պարոններ, նազարյանցը ինչպե՞ս անե, որ 10, 20 աշակերտ հավաքե յուր մոտ, եթե ոչ մինչև ձեզանից չկամի նորան յուր զավակը հանձնել: Խնդրեմ ասել, այդ ի՞նչ հրաշք եք դուք պահանջում նազարյանցից. մի՞թե այդքան անմտությունը պատժել է ձեզ աստված, որ չեք կարող հասկանալ», թե նախ պետք է աշակերտներ տալ, որպեսզի դպրոցը բացվի: Հայերը այդ չեն մտածում, այլ այն, որ նազարյանցը մի քանի հազար ծախսե, տուն վարձե, դասատուներ գտնե, առանց, սակայն, մի ծնողից մի աշակերտ ստանալու: Դա մի անմիտ պահանջ է, որ հավասար է մերժողության: «Գուցե Հովսեփ Չերքեզյանցը լավ ներգործել է ընդդեմ ինձ, իսկ հովանա սիրտը, գոնյա հայերի անմտությունը, և Չերքեզյանցի շարախոսությունը լավ հանդիպում են միմյանց: Եվ ավելի բան»:

Պետք էր թողնել դպրոցի միտքը: Մնում էր դարձյալ «Հյուսիսափայլը»: Չտեսնելով ապագայում որևէ հուսատու հանգամանք, այդքան խոցոտված լինելով, նազարյանցը, ինչպես տեսանք անցյալ գլխում, բաց արեց 1862-ի բաժանորդագրությունը, հայտնելով, որ իրան հարկավոր են առնվազն 500 բաժանորդ, մի թիվ, որ երբեք նա չէր ունեցել: Իհարկե, նա ինքն էլ չէր հավատում, թե «Հյուսիսափայլը» այդպիսի աջողություն կունենա իր հրատարակության հինգերորդ տարում: Բայց և այդպես, նա ինքն էլ, երևի, չէր սպասում այն կատարյալ հիասթափման, որ բերեց 1862 թվականը:

1861 թվականը հաղթանակի տարի էր «Հյուսիսափայլի» համար: «Փարիսիցոց քահանայապետը,— գրում էր նա իր մասնավոր նամակում,— մատնեց ինձ աշխարհական իշխանության ձեռք. բայց իսրայելցոց: Հրեից ժամանակը անցած է՝ խայտառակվեցավ դարձյալ ինքը, հաղթության արմավենով դուրս գնաց պատերազմից փոքրիկ նազարյանցը»: Այդ իսկ հանգամանքը պիտի հույս տար, թե հասարակությունը կխրախուսե «փոքրիկ նազարյանցին»: Բայց գուրս էր գալիս հակառակը:

Տարվա սկզբից բաժանորդագրությունը այնպես վատ էր գնում, որ նազարյանցը վճռեց մի առ ժամանակ էլ սպասել և եթե դրությունը այդպես շա-

րունակվի, վերադարձնել բաժանորդագրերը և դադարեցնել ամսագիրը: Արդին մարտ ամիսն էր, բայց «Հյուսիսսփայլը» չէր հրատարակվում, և Նազարյանցը չգիտեր, թե ինչպես պետք է գուրս դալ դժվար դրությունից՝ «լաբիրինթոսից», ինչպես նա էր ասում:

Այդ անկանկալի դրությունը հարկադրում է նրան նախատեսել ընդունել երկու հայերից (բժիշկ Նադիրյանց և Մ. Սանասարյանց), թեև այդ նպատակ էլ մի մեծ բան չէր՝ ընդամենը 450 ուրլի: Ապրիլի սկզբներում նա տեսնում է, որ կարելի է առաջ տանել հրատարակությունը, փոքրացնելով ամսագրի ծավալը: Նախկին հինգ թերթի տեղ այժմ երեք թերթից է բաղկացած «Հյուսիսսփայլը»: Շատ էր ուզում Նազարյանցը, որ հայերը, վերջապես, հասկանային, թե «հեղինակ մարդիկ օրից միայն չէին ապրում, այլ ամենայն ազամորդու պես ունեին յուրյանց մարմնավոր կարիքը», թե «և նոցա՞ արժան էր ուտել, խմել, հագնել, մի խոսքով մարդկորեն ապրել», բայց ի՞նչ աներ, երբ շատ էր գրում, իսկ լսող ու հասկացող չկար:

Սակայն ի՞նչն էր, որ «մարդկորեն ապրելու» փոխարեն գալիս էր վարձատրելու Նազարյանցին և քարոզելու, որ միայն հացով չէ ապրում մարդը: Այն գիտակցությունը, թե նա կատարում է մի ազնիվ, գեղեցիկ պարտականություն: «Անողորմի արդարության ու ճշմարտության սուրը դեպի աջ ու դեպի ձախ շողեցուցանել, կարմրացած երկաթով այրել փտած ու նեխած վերքեր ու սուր դանակով կտրել ու բաց ձգել», — ահա ինչն էր փոխարինում նրա հացը: «Ո՛չ եկի խաղաղություն արկանել, այլ հուր, — ասում է նա, — ուրեմն ինձ հանդիպել է, ինչ որ պիտի հանդիպեր հարկավորապես. ոչինչ ավելի և ոչինչ պակաս: Ես անմխիթար շեմ այդ մասին, այլ ինչ որ արեցի, և կյանքս ցած գնելով արեցի, դորա վերա շատ ուրախ եմ»:

Այդ գիտակցությամբ վառված նա վճռում է գրիչը վայր չլինել և 1862 թվականին, թեև շրջապատված էր տխուր, հուսահատեցնող հանգամանքներով:

Եվ նա խոսքը, նրա քարոզը միևնույնն էր՝ առաջադիմություն, ինքնաճանաչություն, քաղաքակրթություն, լույս և գիտություն: Մենք չենք ուզում ամեն անգամ մանրամասն պատմել այն հոգվածների բովանդակությունը, որ Նազարյանցը սովորաբար դնում էր «Հյուսիսսփայլը» յուրաքանչյուր տարվա առաջին համարում: Իրանք գեղեցիկ, լուսամիտ խորհրդածություններ էին, որոնց մեջ փառաբանվում էր եվրոպականությունը և դատապարտվում ու անիծվում էր ասիական խավարը, անշարժությունը իբրև մայր ամեն շարիքների: Նազարյանցը երբեք չէր մոռանում հիշեցնել հայերին, որ երկու ճանապարհ կա նրանց առջև. մեկը դեպի լույս և առաջադիմություն, դա դժվար փշոտ ճանապարհն է, իսկ մյուսը՝ դեպի հետադիմություն և մեռելություն, որ մեծամասնության սիրած ճանապարհն է, որ քաղցր, ցանկալի է ծուլ ու անկենդանության դատապարտված աղգերին: Ամեն մի դեպքում նա իր պարտքն էր համարում հարվածել և խայտառակել այն մարդկանց, որոնք ազգը տանում են այդ հետադեմ ճանապարհով: Մենք արդեն գիտենք, և այն, որ նա քարոզում էր, թե փրկությունը աշխարհական կրթության մեջ է, հոգևորականությունը չէ կարող առաջնորդել ժողովուրդը, որին խուցերի դատարակությունը այլևս բոլորովին հարկավոր չէ: Այդ միտքը նա 1860 թվականից շատ անգամ է կրկնել:

Ընդհանուր առաջադիմական գաղափարներ քարոզելով, Նազարյանցը 1862 թվին մի լուրջ փորձ արավ մշակելու հայկական իրականության համար

մի այնպիսի ծրագիր, որ կարողանար մեծ զարկ տալ հայերի առաջադիմության: Այդ փորձի հետևանքը իսկույն երևաց կյանքի մեջ, մի հանգամանք, որ ցույց է տալիս թե Նազարյանցը որքան լավ ըմբռնել էր հասունացած կարիքը: Մենք խոսում ենք այն հոգվածի մասին, որ դետեղեց Նազարյանցը «Հյուսիսսփայլի» 7-րդ համարում և որով առաջարկում էր հայերին կազմել մի մեծ կրթական ընկերություն:

Այդպիսի մի ընկերության անուն նա տվել էր դեռ 1859-ին «Հայերի կուլուր մարդկության մեջ» հոդվածում: Բայց այդտեղ նա միայն հիշել էր ընկերության անունը, միայն մի թուղթիկ միտք էր հայտնել: Այժմ նա ավելի մանրամասն կերպով, ավելի համոզիչ պատճառաբանություններով ցույց էր տալիս ընկերության անհրաժեշտությունը, բացատրում էր նրա կազմակերպությունը, նպատակները, գործունեության եղանակը:

Գեղեցիկը այդ հոգվածի մեջ այն է, որ Նազարյանցը շատ պերճախոս փաստերով ցույց էր տալիս, թե որքան ահագին նշանակություն ունի համայնական համերաշխությունը, հավաքական ուժերով գործելը: Մարդը ամենադժբախտ անասունը կլիներ աշխարհում, եթե նրան տված չլիներ ընկերական կյանքի հասկացողությունը: Այդ ընկերությունից առաջացավ մարդկային ցեղի անդադար ուժեղանալը, կատարելագործությունը: Մեկը ոչինչ է, բայց երբ հավաքվում են մի քանի այդպիսի ոչինչ մեկեր, կազմվում է ուժ: Ահա ամեն երջանկության, ամեն առաջադիմության հիմքը: Իրա վրա են տեղի ունեցել զանազան համախմբումներ՝ ընտանիք, համայնք, ցեղ, պետություն:

Հայերի մեջ սաստիկ թույլ է, համարյա գոչություն չունի համայնական գաղափարը: Եվ դա հետևանք է նրանց ողբալի անցյալի: Նազարյանցը շատ գեղեցիկ կերպով պատկերացնում է այդ անցյալի հոգեբանությունը: Ասիական բռնակալության թունավոր շունչը փտեցրել է մարդկությունը:

«Բռնակալությունը երբեք սիրող չէ հպատակների միաբանության և մոտավորության միմյանց հետ. քանի որ դոքա անմիաբան, ջոկ-ջոկ, առանձնացած լինեին իրենարից, այնքան ևս ձեռնաու է մի բռնակալ կառավարության, լցուցանելու յուր հաճույքը: Այստեղ ամեն մարդ յուր համար է, ամեն մարդ յուր գլխի հոգսում. եթե մինին զարկում են, մյուսը փոխանակ օգնական լինելու յուր ընկերին, փախչում է. հավելացրու մի այսպիսի կացության վերա շատ անգամ աղքատություն և միշտ տգիտություն և անկրթություն, որոնց մեջ հայը երկար դարեր ապրել է, առանց կարողանալու երբևիցե բարձրացնել յուր գլուխը և զգալ յուր մարդկային արժանավորությունը»:

Այս տեսակ տխուր պայմանների մեջ հայը յուրացրել է միայն խորամանկություն և խարդախություն: Հատկություններ են սրանք, որոնք հատուկ են յուր այն աղգերին, որոնք ապրել են թունավոր բռնակալության լծի տակ: Խորամանկությունն ու խարդախությունն են եղել այն միակ զենքերը, որոնցով մի ստրուկ աղգ պաշտպանվում էր իրան տանջող ու կեղեքող բռնակալությունից: Ամեն մեկը մտածել է իր ցավի մասին, իր գլուխը ազատելու մասին:

«Բավական էր, կարծել են, ամենայն մարդու յուր թշվառության շափը, ստանց բեռնավորվելու հոգսերով յուր ընկերի թշվառության վերա. երբեք մտաբերել չեն նոքա, թե միաբանությամբ կարողացած կլինեին յուրյանց հասարակաց թշվառությունը թեթևացնել»: Այստեղից ահա հայերի կոպիտ անձկասպառությունը. ասիացին այսօր էլ չէ կարողանում հասկանալ, որ մարդը ծնվում է ընկերության, իր ազգի կամ ժողովրդի համար: Եվ եթե Ասիայում սղղիբը կարողացել են փոքրիշատե հասարակ օգուտ գործեր առաջացնել,

դրանց բոլորի աղբյուրը եղել է միայն կրոնական ֆանատիկոսութիւնը: «Կրոնը այստեղ եղել է միշտ ժողովրդի միակ և լոկ կյանքը. իսկ կրթութիւնը, քաղաքական իրավունք և ազատութիւն, մի խոսքով բարեկարգութիւն ընկերական կացութեան, դոցա վերա երբեք մտածել չէ Ասիան»:

Ասիայի զավակներից մեկն է և հայը: Ահա փոխվել են քաղաքական համայնքները: Նա մտել է ուսաց տիրապետութեան տակ, վայելում է քաղաքացիութեան իրավունքներ, կյանքի և դուլքի ապահովութիւն: Բայց նրա մեջ մնացել է հին արյունը. դարձյալ նա անձնապաշտ է, դարձյալ նա մեծակ ու կղզիացած ապրել է սիրում, և նրա համար չկա հասարակական գաղափար, ընդհանուր բարիքի հասկացողութիւն: Բոլոր հարցերը մասնավոր են, անձնական ընտանեկան, ամեն մեկը թող հոգա իր գլխի ցավը, փող վատտակե, և պրծավ զնաց: Ահա մեր իդեալը: Եվ ոչինչ հասարակական կրթական կամ ուսումնական ձեռնարկութիւն գոյութիւն չունի այդ անձնապաշտների մեջ:

«Աստված իմ, — բացականչում է նազարյանցը, — մինչ ե՛րբ պիտի տեսնեմ հայերի մեջ այս բարբարոսութիւնը, մինչև երբ պիտի մեք ականատես լինինք այս անմխիթար կացութեանը հայերի, մինչև ե՛րբ պիտի երեմիայի ողբերը ողբանք և ցավով ու տրտմութեամբ գերեզման իշանենք: Ես կարծում եմ, որ լցվել է մեր հայկական թշվառութեան բաժակը, մեր ժողովրդական ցավերը հասել են արդեն մի անտանելի մեծութեան: Ժամանակն է, մեր վերայից պահական մարգարայց առանձնասիրութեան անձնապաշտութեան լուծը բաց ձգել, դուրս գալ հանդես, սիրողապես մոտավորիլ միմյանց, ճանաչել ընդհանուր ժողովրդական, դեպի երկինք բողոքող ցավը, մեր ընկերի նյութական ու իմացական բարին համարել մեր սեփականը, մեր սեփական բախտավորութիւնը չբաժանել նորա բախտավորութենից, ինչպես մինչև այժմ եղել է մեր խտկութեամբ, մեր անմտութեամբ, մեր անմարդասեր տգեղ բարքով: Ժամանակն է հասկանալ վերջապես, որ մեք այլապես կարող չենք առջև ուրախ լինել, եթե մեր մարմնի այս և այն անդամքը հիվանդ և ցավազար են, կարող չենք մեր անձը բախտավոր դալ, միշտ և հանապազ մեր աչքի առաջ ունենալով մի թշվառացած, բարձի թողի արած ժողովրդական կացութիւն»:

Այս բոլորից հետո նա առաջարկում է հիմնել մի մեծ բարեգործական ընկերութիւն «հայերի նյութական և բարոյական կյանքը բարեկարգելու համար»: Աղքատներին, տնանկներին դրամական նպաստ տալը, ողորմութիւն տալը նա համարում է երկրորդական, անկարևոր բան: Կարևորը, առաջնակարգը այն է, որ աղքատի ձեռքը զիտութիւնը դրվի իբրև ամենալավ միջոց հաց աշխատելու: Ոչ թե կերակրել աղքատութիւնը, այլ վերացնել նրան աշխատելու միջոցներ հայթայթելով: Ասպարեզը շատ լայն է. պատվավոր հացի ճանապարհ կարելի է բաց անել, ծանոթացնելով «ձեռագործ արվեստների, երկրագործութեան, բնութեան բերքերի յառաջածութեան և դոցանից վաճառելի ապրանքի պատրաստութեան կերպի և եղանակի հետ, այլև կրթելով հայոց զավակներից պոլիտեխնիկոսք, հմուտ վաճառականք հաշվետների մեջ, աջողակ գործակատարք և գրապահք»: Ընկերութիւնը ընտրում է ընդունակ և տաղանդավոր շքավորներին, ուղարկում է նրանց ուսաց համալսարանները, որպէսզի նրանցից ուսումնականներ, ուսուցիչներ պատրաստվեն: Համալսարանը ավարտողներից երկու երեք հոգի ընկերութեան հաշվով ուղարկելու են տրտասահման՝ կատարելագործվելու զիտութիւնների մեջ. աչք բանը, բացի կրթական նշանակութիւնից, կունենա և այն բարերար ազդեցութիւնը, որ ասիացի երիտասարդները աշխարհ կտեսնեն, կծանոթանան քաղաքակրթի ազգերի կյանքի հետ: Վերջապես ընկերութիւնը հովանավորում է գրականու-

թեան, հատկապես մի այնպիսի լրագրի կամ ամսագրի գոյութիւնն է ապահովում, որի հրատարակութիւնը ցանկալի է նրա ուղղութեան տեսակետից:

Ընկերութիւնը շատ լայնարձակ ծավալ ունի. նրա մեջ մտնում են Ռուսաստանի բոլոր հայերը: Կենտրոնը Մոսկովայումն է, իսկ բոլոր հայաբնակ տեղերում գտնվում են նրա գործակալները: Ենթադրվում էր, որ ընկերութիւնն առաջին տարին կհավաքէ 100 000 ռուբլի, մի գումար, որ շատ մեծ չէ, ի նկատի ունենալով, որ Ռուսաստանում ապրող հայերի թիւը կես միլիոնի է հասնում: Այնուհետև կարելի է ընկերութեան ծրագիրը ներկայացնել թագավոր կայսրի հաստատութեան: Ընկերութեան անունը պիտի լինէր. «Ընդհանուր հայկական ընկերութիւն վասն բարեկարգելու Ռուսաստանի չքավոր հայոց նյութական և բարոյական կյանքը»:

Դրամագլուխը տոկոս կբերէր տարին 8—10 հազար ռուբլի և այդ գումարը բավական կլինէր ընկերութեան նպատակները իրագործելու համար: Անդամները շորս տեսակի են. 1) «հիմնարկու», տարեկան 500 ռուբլի տվողները, 2) «օրինավոր», որոնց տարեկան վճարն է 250 ռուբլի. 3) «պատվավոր», 125 ռուբլի վճարով և 4) «լոկ մասնակից», տարեկան 5 ռուբլի վճարով: Չայնի իրավունք ընդհանուր ժողովներում ունենի միայն առաջին երեք կարգի անդամները:

Դա նախագիծ էր, վերջնական, մանրամասն կանոնադրութիւն չէր, և նազարյանցը հրավիրում էր քննել, բարեփոխել, ավելի հարմար ձևի մեջ դնել գործը: Գլխավոր հարցը այդ չէր, այլ այն, որ պետք է մի այդպիսի ընկերութիւն ստեղծել: Եվ նազարյանցը կնքում էր իր հոգովածը հետևյալ եռանկան գործ կատարել, այդ միայն այդպիսի բարեգործական ընկերութեան միջոցով կարելի է անել:

Երկու եթե հայերի մեջ մեռած է ամենայն ընկերական հոգի, ամենայն գործութիւն կամքի, ամենայն գործողական կարողութիւն, ամենայն բարոյական և իմացական կյանք, այնուհետև պիտի մեք մեռածների ականջում խոսած լինինք. այնուհետև ոչինչ չէ մնում մեզ ասելու հայերին եթե ոչ, թող դուք հոգան յուրյանց համար դազադներ, ամփոփելու նոցա մեջ յուրյանց և տանելու ձգելու փոսը. պատճառ, այն կյանքը, որտ մեջ չկա շարժողութիւն, չկա բարոյական գործ, չկա հառաջադիմութիւն, մահ է, մեռելութիւն է, և մեռածների կացարանը՝ դազադ ու գերեզման»:

Բարեգործական ընկերութիւնների միտքը նոր չէր հայերի մեջ: Թուրքիայի հայերը, մանավանդ Կ. Պոլսում և Ջմյուռնիայում, դեռ տասնիններորդ դարի սկզբից էին հասկացել ընկերութիւններով գործելու մեծ խորհուրդը և այնտեղ կազմվել էին զանազան անուններ կրող, զանազան նպատակների ծառայող ընկերութիւններ: Ծիշտ է, դրանք բոլորը երկարատե կյանք և աչքի բնկնող լայնածավալ կազմակերպութիւններ չունեին, բայց և այդպես, մի-մի եջաններ էին, թե հասարակութիւնը որքան գեղեցիկ կերպով ըմբռնել է ընկերական սկզբունքը: Աչքի անցկացնելով թուրքահայերի բարեփոխական ընկերութիւնների ցուցակը, մենք մի գեղեցիկ տպավորութիւն ենք ստանում այն բազմաթիւ նպատակներից, որոնց հետևում էին այդ մարմինները: Մեկը հատկապես գրքեր է հրատարակում, մյուսը օրիորդաց դպրոց է բաց անում, երրորդը զավանդներում գրագիտութիւն տարածելն է նպատակ ընտրում, մի ուրիշը դրագարան է բաց անում և այլն: Կան նույնիսկ կանանց ընկերութիւններ:

Գաղափարը այնքան էր ժողովրդականացել արևմտյան հայերի մեջ, որ այն ժամանակ, երբ Նազարյանցը գրում էր այդ հոդվածը, ընկերություն կառուցված և վանի պես ետ ընկած քաղաքում: Կասենք այլե՞լին: Հասարակական ինքնագործունեության հորիզոնը այնքան էր լայնացած թուրքահայերի մեջ, ժամանակի կարիքները այնքան լավ էին ըմբռնված այնտեղի առաջավոր շրջաններում, որ այն ժամանակ, երբ Նազարյանցը իր ծրագրի մեջ միայն հարեանցի կերպով էր հիշատակում երկրագործությունը իբրև համաքանկյան ուժերով դարգացնելու և կատարելագործելու արժանի մի ճյուղ, 4. Պոլսում արդեն կազմված և պատրաստ էր ճարտարական ընկերություն հայոց» անունով մարմինը, որի դավանանքն էր, թեև ազգի երջանկությունը հողի մեջն է, ուստի պետք է պատրաստել ժիր, գիտության պաշարով դրժված հողագործներ:

Սակայն այս հանգամանքը չէ նվազեցնում Նազարյանցի առաջարկության նշանակությունը: Միայն բոլորովին նոր էր ուսահայերի համար: Այստեղ չէր զգացվում ընկերական ոգու անհրաժեշտությունը. թուրքահայերի հետ համեմատած՝ ուսահայերը շատ ետ էին մնացել հասարակական գործունեության ասպարեզում: Այդ է պատճառը, որ Նազարյանցի գեղեցիկ կերպով պատճառաբանված, ուժեղ և համոզիչ թափով գրված առաջարկությունը շատ լավ տպավորություն գործեց հասարակության վրա: Այդ տպավորության մի սիրուն արտահայտություն կարող ենք համարել այն ընդարձակ հոդվածը, որ լույս տեսավ «Կոունկի» նույն տարվա նոյեմբերի համարում:

Նախ և առաջ ուշադրության արժանի է այն ազդեցությունը, որով հոգվածագիրը խոսում է առհասարակ Նազարյանցի և նրա գործունեության մասին: Այստեղից մենք իմանում ենք, որ Նազարյանցին «ճանաչում են և ցանկանում են ճանաչել մինչև անգամ մեր այրուբեն կարգացող երեխայքը»: Եվ այստեղ շափաղանցությունը շատ չէ: Մենք ուրիշ վերջություններ էլ ունենք, որոնք հավաստիացնում են, թե Նազարյանցի անունը հայտնի էր յուրաքանչյուր տեղ, ուր կային կարգացողներ: «Դա, — շարունակում է հոգվածագիրը, — է հայոց համար (եթե բոլորի համար չէ, գոնե ուստիաբանակ հայերի համար) մի զարթուցիչ մեքենա, մի այնպիսի հարվածք այլոց գործունեության, որ աշխատում է սթափեցնել հայերին յուրյանց քաղցր, անհոգության քնից»: Այս տեսակ համակրական ցույցեր անելով, հոգվածագիրը քննում է Նազարյանցի առաջարկությունը և մի քանի հիմնավոր առարկություններ անելով ծրագրի մանրամասնությունների դեմ, թախանձում է հայերին սթափվել, լսել այդ ձայնը և գործադրել նրա առաջարկությունը:

Սակայն նախքան այդ հոդվածի երևալը՝ Նազարյանցի առաջարկությունը արձագանք էր գտել կյանքի մեջ: Ամբողջ Ռուսաստանի հայերի մասնակցությունը մի բարեգործական ընկերության մեջ դժվար էր և ցանկալի էլ չէր: Մնում էր սպասել, որ միտքը իրագործվի առանձին առանձին տեղերում: Այդպես էլ եղավ: Նազարյանցի այդ հոդվածի ազդեցության տակ երկու ընկերություններ կազմվեցան. Նոր-Նախիչևանի բարեգործական ընկերությունը և Բարվի հայոց մարդասիրական ընկերությունը: Վերջինիս հիմնադիրն էր բժիշկ Գավիթ Ռոստոմյանցը, որին մենք տեսանք «Հյուսիսային» էջերում բողոքելիս Շամախու կրոնական հալածանքների դեմ:

Այսպես, հրապարակախոսությունը սկսում էր մեղանում էլ պտղունի

տալ, թեև կաշկանդված էր, թեև ահագին մեծամասնության համար դեռ անհասկանալի մի բան էր: Եվ անշուշտ «Հյուսիսային» ազգու ձայնը կամաց-կամաց կթափանցեր մեր հասարակական գիտակցության մեջ, ինչպես ջրի կաթիլը, որ ծակում է քարը. բայց տարօրինակ ճակատագիր, հենց այստեղ էլ, այս հուսատու հանգամանքների մեջ, մենք տեսնում ենք այդ հրապարակախոսության հոգեվարքը, օրհասը...

VI

Անհաջողության տարի մեր մամուլի համար: Նազարյանցի հայտարարությունը «Հյուսիսային» դադարեցման մասին: Գաղափարն պատճառներ: Իրանի միայն արձեստական շեն: Մյուս պարբերական հրատարակությունների վիճակը: Նազարյանցի վերջին ցանկությունները: «Հյուսիսային» վերակենդանացում: Կ. Պոլսի «Մեդուսի» հոդվածը: Թիֆլիսի «Մեդուսի»: Պանպանդակյան և ուրիշը հաշված Նազարյանցի հետ:

Վերևում «Կոունկի» հոդվածից մենք իմացանք, որ Նազարյանցին ճանաչում են և ուզում են ճանաչել այրուբեն կարգացող երեխաներն անգամ, որ դա մի «չարթուցիչ մեքենա» է Ռուսաստանի հայերի համար: Բայց ահա նույն այս Նազարյանցը, «Կոունկի» այդ հոդվածից մի ամիս առաջ հայտարարում էր «Հյուսիսային» մեջ, որ եկող 1863 թ. ամսագիրը շափաղ հրատարակվի բաժանորդների քշության պատճառով:

Ինչպե՞ս բացատրել այս տարօրինակ երևույթը: Մի մարդ, գոնե շատերի կողմից, համարվում է պարծանք. խոստովանում են, որ այդ մարդը XIX դարի երկրորդ կեսում ամենաարդյունավոր հայ մատենագիրն է, որ նրա անունով պիտի գարգարվի մեր գրականության պատմությունը, որ երեք-չորս տարվա ընթացքում նրա արածները մի ուրիշը չէր կարող կատարել 8—10 տարվա մեջ: Եվ հանկարծ այդ մարդը այնքան ընթերցողներ չէ գտնում հայերի մեջ, որ կարողանա շարունակել իր գործը: Տարվա վերջում հրատարակած ծանուցումից երևում է, որ «Հյուսիսային» 1862-ին ուներ ընդամենը 170 բաժանորդ...

Կես միլիոն ժողովրդի տված այդ ընչին, ողորմելի թիվը վերին աստիճանի հուսահատական մի երևույթ էր: Նա ցույց էր տալիս, որ հայ ազգը իր մայրենի գրականության վերաբերմամբ խիստ անբարեխիղճ է: Նազարյանցը մի քանի խոսքերով նկարագրում է հայ խմբագրին մաշեցնող տանջանքները: Հինգ տարի էր, նա ամսագիր էր հրատարակում, բայց երբեք չէ տեսել մի լավ օր: Ամեն տարի նա բացատրել է, թե հարկավոր է բաժանորդների ավելի մեծ թիվ, որպեսզի կարելի լինի այնպես առաջ տանել գործը, որ խմբագիրը չնահատակվի: Այդ թիվը ոչ միայն երբեք չտացվեց, այլև եղած փոքրաթիվ բաժանորդներն էլ ժամանակին չէին հասցնում փողը, այնպես որ «Հյուսիսային» յուրաքանչյուր տարվա առաջին համարները, անորոշ դրույթյան պատճառով, շատ ուշ էին հրատարակվում:

Ձուր և անօգուտ եղան մեր բոլոր բանական խոսք ու զրույցը հայերի հետ, — ասում էր Նազարյանցը իր հայտարարության մեջ: — Մեր բարեմիտ այրենասիրական աշխատավորությունը շինեցին մեր համար մի հանցանք և ձգեցին մեզ մի կատարյալ տանջարանի մեջ. փոխանակ թևեր տալու մեջ, քրիտ ավելի ազատություն դեպի վեր թռչելու, ամենայն կերպով կտրատե-

* Ա. Գալսեանց, «Պատմական համառոտ տեսություն Բագրատ Հայ. մարդ. ընկեր.», Բագրատ, 1891, եր. 4:

ցին մեր թեկերը, ջարդեցին մեր զօրութիւնները, անտար ու անձեռք անդամալուծ շինեցին մեզ, սողալով գետնի վերայ»:

Ո՞վ էր այդ թեկեր կտրատողը:

Ամեն անգամ, երբ ուշանում էր «Հյուսիսսփայլի» հրատարակութիւնը, ընթերցող հասարակութեան մեջ լուր էր տարածւում, թե նա արգելւած է հոգեվոր իշխանութեան կարգադրութեամբ: Այսպէս հասկացվեց և 1863-ի դադարումը: Բայց սա ճիշտ չէ: Ինքը, նազարյանցը, իր մի նամակի մեջ անվարում է այդ լուրը «սուտ և խաբեբա խոսք»: Մատթեոս կաթողիկոսը արդեն մի անգամ փորձով տեսել էր, որ իր գործը չէ մի ամսագրի մասին վճիռներ կայացնելը և երկրորդ անգամ չկրկնեց այդ փորձը: Եվ ի՞նչ կարիք կար այդպիսի ենթադրութիւններ անելու, քանի որ նազարյանցը բացարձակ կերպով հայտարարում էր, որ «Հյուսիսսփայլի» դադարման իսկական պատճառը հասարակութեան անտարբերութիւնն էր: 170 բաժանորդ՝ սա մի լավ ապացույց էր, որ ամսագիրը պիտի գաղարե, չէ կարող շարունակվել:

Մնում էր բացատրել այդ անտարբերութեան պատճառները: Թե իր հայտարարութեան և թե իր նամակների մեջ նազարյանցը հասկացնել էր տալիս, ինչպէս և նախընթաց տարիները «Հյուսիսսփայլի» մեջ, որ այդ անտարբերութիւնը ստեղծվում է արհեստական միջոցներով, թշնամիների իշխանական հրամաններով: Այդ խոսքերն ասելով, նա նկատի ուներ հոգևոր իշխանութիւնը, որ, նրա ասելով, ամեն տեղ աշխատում է արգելք հանդիսանալ «Հյուսիսսփայլի» տարածման դեմ: Որքա՞ն ճիշտ էր այս պատճառաբանութեանը:

Մենք կասկածելու առիթ չունենք, թե հոգևոր իշխանութիւնը և առհասարակ հայկական պահպանողականութիւնը դիմում էր այդպիսի միջոցների՝ «Հյուսիսսփայլի» ազատ ու համարձակ ծայրը լռեցնելու համար: Այո՛, շատ և շատ հավանական է, որ գործադրվում էին ամեն հնարավոր արգելքներ: Նազարյանցը, համենայն դեպս, առանց փաստերի չէր խոսում: 1862-ի վերջերում, ցենզուրայից արգելված մի հոդվածի առիթով նա գրում էր այդ հոդվածի հեղինակին. «Ընչպէս հայտնի երևում է, կաթողիկոսը պիտո է առանձին կերպով խնդրագործ եղած լինի ցենզուրյան կոմիտեայում, թույլ չտալ որևէ կրոնական հայացքով բան տպել «Հյուսիսսփայլի» մեջ, խառնելով դորան, ինչպէս սովոր են մեր հայերը, դավանաբանութեան հետ, որովհետեւ այդպէս միայն կարող են յուրյանց խալար շարյացակամութիւնը լցուցանել»:

Այդ իրողութիւնը, — եթե միայն իրողութիւնն է, — լցնում է նազարյանցի սիրտը մեծ դառնութեամբ: Արգելված հոդվածը՝ նա խորհուրդ է տալիս ուղարկել Կ. Պոլսի «Մեղունի», որովհետեւ ուսաստանների մյուս պարբերական հրատարակութիւնները՝ «Կոտնկը» (որի խմբագիր Աղաբեկյանին նա անվանում էր «ախմար») և «Մեղու Հայաստանին» (սրա նոր խմբագիր Միմոնյանցին անվանում էր «թույլ») չեն վստահանա տպագրել այդ գրվածքը, «մանավանդ որ, — ասում էր նա, — Տեր Բարան, պաշտպանը Չերքեզյանցի, կանգնած էր նոցա դեմուղեմ: Ինչ ճշմարտութիւն, ինչ ավետարան, ինչ նազարյանց. Տեր Բարան այսպէս կամի, ուրեմն և այսպէս պիտի լինի»:

«Դուք կարող եք հասկանալ, — շարունակում էր նազարյանցը, — թե ինչ դրութեան մեջ է իմ սիրտը նաչելով մեր հայերի այս որպիսութեանը, ես անհույս եմ այսուհետև և անմխիթար, քանի որ պիտի տեսանեի և լսեի այս խալտառակութիւնները, այս բարբարոսութիւնը մեր ազգի, այս բարոյական մեղք»:

* Պետք է ասել, որ հոդվածը գրված էր նազարյանցին անիրավ հարձակումներից պաշտպանելու համար:

լութիւնը մեր մեջ»: Թեև այսքան դանդաղում է նազարյանցը իր թշնամիների մեքենայութիւնների դեմ, բայց հաստատապէս կարելի է ասել, որ այնքան այդ մեքենայութիւնները չէին «Հյուսիսսփայլի» կործանման պատճառը, որքան ժամանակը, հանգամանքները: Բավական է մի թեթե ակնարկ գցել այն ժամանակվա մեր մամուլի վրա, և մենք կտեսնենք, որ նազարյանցը մենակ չէր գոնե այս բանի մեջ:

1862 թվականը մի դարմանալի տարի էր ուսաստան մամուլի համար: Հայ հասարակութիւնը, ինչպէս դիտենք, հինգ պարբերական հրատարակութիւններ ուներ: Ապրում էին դրանք, մի քանիսն էր նույնիսկ բավական զոհ: Բայց 1862 թվականը ծանր հարվածներ է բերում համարյա ամենքի՛ համար: Հանկարծ հայտնի է դառնում ամենքին, որ շարունակել այլևս անկարելի է, որ հրատարակական անտարբերութիւնը անհաղթելի է: Եվ ահա ինչ փոփոխութիւններ են առաջանում դրանից: 1862-ի ամառը վերջնականապէս դադարում է «Ճոթաբաղը», պահելով իր «Համբավաբեր Ռուսիո» թերթը միայն: Նույն հոկտեմբերին, երբ նազարյանցը հայտարարում էր, թե «Հյուսիսսփայլը» չի հրատարակվի, «Կոտնկի» հրատարակիչ Հ. Էնֆիաճյանը հայտնում է ամսագրի մեջ, թե ինքն այլևս չէ կարող իր վրա վերցնել հրատարակութեան վնասները, որոնք առաջանում են այն հանգամանքից, որ ընթերցող չկա, որ հայ հասարակութիւնը չէ սիրում կարգաւ մայրենի լեզվով տպված բաները, թեև կարող էր հազարավոր բաժանորդներ տալ ամսագրին կամ լրագրին: Այդ պատճառով Հ. Էնֆիաճյանը, մնալով անունով հրատարակիչ, ամսագրի ամբողջ գործը հանձնում էր խմբագիր Մարկոս Աղաբեկյանին, որ մի անապահով մարդ էր և իհարկե չէր կարող իրանից փող դնել ամսագրի հրատարակութեան համար: Դա արդեն պարզ նշան էր, որ «Կոտնկն» էլ չի ապրի. և իրավ շատ քիչ նա դրանից հետո ապրեց:

Ավելի վատ էր «Մեղունի» դրութիւնը: Եթե ճիշտ էր, որ հոգևորականութեան ջանքերն էին «Հյուսիսսփայլին» վնասում, պետք էր, ուրեմն, ենթադրել, որ այդ հոգևորականութեան սիրելի «Մեղուն» մեղր ու կարագի մեջ էր ապրում: Իր հրատարակութեան առաջին տարին, 1858-ին, «Մեղուն» ուներ 600 բաժանորդ: Բայց ահա ինչ էր գրում Ստեփան քահանա Մանդինյանը նույն լարաբաստիկ 1862 թվականի վերջում.

«Ահա տարին վերջանում է, և լրագրի փողն դեռ շատերից չենք ստացած, և այս քանի շաբաթ է, որ տպագրութիւնը ետ է ընկնում. և պատճառը ծախսի փող չունենալն է, որ գոնե տպարանի և թղթի փողը տալ: Դեռ տարեկան փողը չտվողներին թե Թիֆլիզ և թե դուրսը թուղթ գրելով դադրեցա, Թիֆլիսումը մարդ ուղարկելով բեղաբեցա, շատացա շվճարողներից, ահա այս է խմբագրիներին նոցա օգնական լինելն. ահա երևում է մեր ազգի եռանդի սառած լինելն, որ ոչինչ ազգային գործ առաջ չէ գնում, իտալիանակի օպերա պետք է, որ լուծեր առնեն, և ոչ թե լրագիր կամ օրագիր ազգային հառաջադիմութեան: 1858 թվից սկսել եմ մինչի այսօր, որ է հինգ տարի, և հինգ տարվան էլ նիսիք կան, մանավանդ 1861 և էս 1862 թվերումը. տեսա ազգի սերն ու եռանդը և ձեռք քաշեցի, միայն կիսնորեմ, կաղաչեմ, կպաղատեմ, որ մնացած նիսիքը ուղարկեն»:

Ճգնաժամը, ուրեմն, ընդհանուր էր. նա միատեսակ խեղդում էր թե ազգի արատները հարվածողին և թե ազգի հակումները շողոքորթողին, թե բարձր գիտնականութեան, եվրոպականութեան անունից խոսողին և թե վերահիշյալի պէս գրողին և մտածողին: «Մեղուն» անցավ «Կոտնկի» հրատարակիչ Էն-

Ֆիսիկականներն, նոր խմբագիր և աշխատակիցներ ունեցավ, բայց մնաց նույնը և եթե պահպանում էր, պատճառը մեծ մասամբ այն էր, որ տպարանատեր հրատարակիչ ուներ:

Ինչպիսիք, Նազարյանցը վերջ էր դնում իր հրատարակատեսակի գործունեությանը: Ահա ինչ խոսքերով էր նա հրատարակում տալիս իր ընթերցողներին.

«Հյուսիսսփայլի» պաշտոնը հայերի մեջ կվերջանա շուտով, խաղաղություն տալու յուր հարգելի բարեկամներին, խաղաղություն տալու յուր թշնամիներին, խաղաղություն տալու յուր հատուկ բաղձալարչար անձին: Հրատարակողը չկամեր այսուհետև ընդունել այն հայրենասիրական գրկանքը յուր բարեկամներից, որ մինչև այժմ հանձն էին առել նոքա, փոքրիշատե օգնելով հրատարակողին, առանց թեթևացնելու այն բևեռը, որ միշտ ծանրացել է մի հատ մարդու ուսերի վերա: Յուր թշնամիներին, օ՛հ, յուր մոլորված սիրելիներին, թշնամիք շունի «Հյուսիսսփայլի» հրատարակողը, կամեր նա խաղաղություն տալ այդ խղճալի մարդերին, որ մինչև այժմ յուրյանց մի հատ պարծանքը որոնել են այն բանի մեջ, որ հրատարակողի ամենայն խոսքը, ամենայն գաղափարը թյուր մեկնեն, կեղտոտեն և աղավաղեն տկարամիտ ժողովըրդի առաջև, խոտվություն ձգեն դորա մեջ, դորան հարուցանեն ընդդեմ հրատարակողին, որպես և արդարև հարուցին իսկ մի մասնով, բայց ամոթ և խայտառակություն հնձելով թե ինքյանք և թե յուրյանց պարագլուխքը: Փառք և պարծանք Ռուսաստանի արդարությունը»:

Գնելով իր գործունեության գումարները, նա ասում է, որ աշխատել է իր ազդի առաջադիմության համար, աշխատել է «գոնյա մի բանի կենսական կայծեր ներս փչել նորա պաղած ու սառած երակների մեջ»: Եվ եթե նա, այնուամենայնիվ, չէ հասել իր նպատակին, այդ նրա մեղքը չէ: Այժմ նա հեռանում է, տանելով իր հետ այն միջնարությունը, որ իր հոգու և սրտի ամբողջ զբոսնամբ օգտել է մի գեղեցիկ նպատակի՝ հավատացել է, հուսացել է և սիրել է: «Եթե այսուհետև կարող չէ նա յուր սիրելի ազգի համար աշխատել, գոնյա կամի նորա վերա աղոթել»:

1863-ին «Հյուսիսսփայլ» չկա. և Նազարյանցի մտածումներն իր մասին մեզ տեղեկություններ տալիս են նրա մի երկու նամակները: Նա, իհարկե, դառնացած է, նրա գրչի ծայրից թույլ է կաթում: Եթե չէ կարելի ապրել ազգի համար այնպես, ինչպես ինքն է ցանկացել, այսուհետև նա կապրի իր համար, իր անձնականի, իր զավակների, իր ընտանիքի համար: Եստ ուրախ կլինեմ նա, եթե այն, ինչ անկարելի եղավ նրա համար, կարելի և հնարավոր լինի ուրիշների համար: Թո՛ղ Նազարյանցին վիճակված լինի հայոց գրականության մեջ փուշ ու տատակ քաղել, իսկ ուրիշներին վիճակվի վարդեր քաղել:

«Թող վերանա միջից Նազարյանցը, որ մինչև այսօր քար գայթակղության է եղել հայերի մեջ, թող այլք քարոզեն այսուհետև ազգին մի ճշմարտություն, մի ազգային օգուտ և շահ, որ «Հյուսիսսփայլը» մինչև օրս քարոզել չէ. գուցե այդպես հաշտվի հայերի միտքը և սրտերը մեր հետ, վրեժխնդիր լինելով մեր նոցա հասունացած անիրավությունը և վնասին: Կամ թե միևնույն ճշմարտությունը քարոզվելով այլ մարդերի բերանով, գուցե գտանելու էր ավելի լսող և ընդունական սրտեր, քան թե Նազարյանցի ատելի և դալրացուցիչ գրչից»:

Մի ուրիշ նամակագիր հարցնում էր նրան, թե կաթողիկոսը ինչ հիման վրա է խափանել «Հյուսիսսփայլը»: Նազարյանցը, հերքելով այդ լուրը, ասում էր.

«Մեզավորը դո՛ւք եք, հայ ժողովուրդը, և ապա ձեր կաթողիկոսը. մինդ մյուսին արժանի: Ի՞նչ առնե ողորմելի հեղինակը ձեր պես ժողովրդի մեջ. եթե ամեն մի ազգես և հիմար շարժացական մարդ կարող է ձեզ մոլորեցնել, ճանապարհից հանել, ձեր սիրտը և հավատը խլել ձեր հայրենասեր աշխատավոր հեղինակից, այս ձեր հեղինակը որոց ուսերի վերա պիտի գործ կատարե: Դուք շունիք պատճառ գանգատավոր լինելու ձեր կաթողիկոսից, ձեր արյունարբու թշնամին ձեր տգիտությունն է, ձեր բարոյական և մտավոր մեղությունը. և այդպիսի դրություն մեջ ոչ թե մի կաթողիկոս, այլ նորանից տասնապատիկ ավելի փոքր մարդ կարող է ձեզ վնասել յուր կոնդակներով և ձեզանով ևս ինձ»:

Այստեղ Նազարյանցն արդեն հայտնում է, որ «Հյուսիսսփայլը» պատրաստ է ամեն ժամանակ նորից լույս աշխարհ գալ, եթե հասարակական ձեռնավություն լինի:

Այդ ձեռնավությունը եղավ, բայց միայն մի բանի անհատների կողմից: «Հյուսիսսփայլին» դեռ մի տարի կյանք էլ էր վիճակված: 1864-ին Նազարյանցը նորագեց իր ամսագրի հրատարակությունը, սկսելով բաժանորդագրական տարին նախընթաց 1863-ի դեկտեմբերից, որ, ինչպես ասում էր նա «ունեն յուր առանձին խորհուրդը»:

Մի տարվա լույսությունը բավական զգալի էր եղել ընթերցող հասարակության համար, այնպես որ, երբ Նազարյանցը 1864-ի հունվարի 20-ին լույս հանած ծանուցումով հայտնեց, թե նորից սկսում է իր հրատարակական գործունեությունը, լավեցին անկեղծ ուրախության ձայներ: Կ. Պոլսի «Մեղուն», «Հյուսիսսփայլի» այդ անփոփոխ բարեկամը, ավետելով այդ լուրը, ավելացնում էր, թե նոր «Հյուսիսսփայլին» առաջվա պես պիտի աշխատակցե Միքայիլ Նալբանդյանցը: Բայց այդ լուրը չճշտվեց. Նալբանդյանցը այդ միջոցին չէր էլ կարող մասնակցել ամսագրին: Տպագրելով Նազարյանցի վերոհիշյալ ծանուցումը, «Մեղուն» այսպես էր ողջունում «Հյուսիսսփայլի» երևան գալը մեր հորիզոնում.

«Պ. Նազարյանցը, հայ ազգին հաղվազյառ անդամներից մեկը իր հմտություններովը, տաղանդովը, ճշմարտասիրությամբն ու հայրենասիրությամբը՝ հրատարակատեսության ասպարեզն իջնելեն ի վեր նվազ տառապանք, նվազ ցավ չկրեց իր հարազատ եղբայրներեն, անոնց մատնությունը ենթակա եղավ, սակայն ազգին սերը չվհատեցուց զինքը այս վատ թշնամիներուն առջև և պարծյալ կեղևի իր ծառայությունը ազգին աննկուն և անհողողդ արիությանը համոթ և ի հուսահատություն այն անհոգի հայերուն, որոնք իրենց խելքին կարծությունը և տեսության տկարությունը ազգին կյանքն ու փրկությունը հին գաղափարներու իշխանություն մեջ կկարծեին: Պ. Նազարյանցը ասոնց ամեն ճգանց ամեն թշնամությունց հակառակ պատուց լուսո դեմ ձրգված տգիտության սև վարագույրը և այսօր գեթ Ռուսիաբնակ հայազգիք երախտագիտության խոստովանությունն ի բերան դեպի լուսավոր աղբյուրը կգիմեն՝ միշտ առաջնորդ խնդրելով դանի՝ որ զիրենք մութեն լույսը հանեց, անգիտութենէ ի գիտություն առաջնորդեց անոնց»:

Կ. Պոլսի «Մեղուն» պակաս համակրանքով չվերաբերվեց Նազարյանցին և ...Թիֆլիսի «Մեղուն»: Ժամանակը այդքան կարճ միջոցում մի այդպիսի հրաշագործություն առաջ բերեց. այնտեղ, ուր մի երկու տարի առաջ Հովսեփ Գերբեզյանի շահատակություններն էին աեղի ունենում, այժմ խունկ էր ծխվում Նազարյանցի անվան: Ի՞նչ էր պատահել:

1863-ին Ստեփան Բահանա Մանդիկյանցին հաջորդել էր Պետրոս Սիմեոն-

յանցը: Դավանութիւններով նույն Մանդինյանց, նոր խմբագիրը, այնուամենայնիւ, Էրկայացնում էր պահպանողականութեան թարմ սերունդը: Պ. Միմենյանցը նույնպէս Դարպասի ուսանողներից էր և համակրում էր Նազարյանցի: 1863 թվականին Միմենյանցի «Մեղուն» գրում էր. «Շատերին մեծ ցամ պատճառեց «Հյուսիսափայլ» պատվական օրագրի խափանվիլը այս տարին»: Իսկ երբ Նազարյանցը վերսկսեց ամսագրի հրատարակութիւնը, նույն Միմենյանցը շտապեց հայտարարել, թէ ինչն էլ ընդունում է «Հյուսիսափայլի» բաժանորդագրութիւնը: Միևնույն ժամանակ նա տպում էր հետևյալ տողերը «Ամենից ավելի փառնեցաւ հայոց գրականութեան հորիզոնի վերա «Հյուսիսափայլը» իբրև ճշմարտախոս և ավելի ազատամիտ օրագիր»:

Այսպիսի վերաբերմունք կարելի էր սպասել մի գաղափարակից խմբագրից. բայց Պետրոս Միմենյանցը իր գրական գործունեութեան երկուր ժամանակամիջոցում ցույց տվեց, որ նա չէ ընդունում Նազարյանցի սկզբունքներից և ոչ մեկը: Եվ եթէ կարելի է հասկանալ այս տարօրինակ համակրութեան պատճառը, այդ հնարավոր է միայն մի ենթադրութիւն անելով. պահպանողական նոր սերունդը հաշտվում էր առաջագնծ ուղղութեան նահապետի հետ: Բայց երբ առաջ եկավ այդ առաջագնծ ուղղութեան նոր սերունդն էլ (Գրիգոր Արծրունի), նույն այդ պահպանողական սերունդը զինվեց նրա դեմ ամենայն կատաղութեամբ...

VII

Վերջին տարին: Անհատական ձեռնտվություն և ժողովրդական ընդհանուր գործակցության գաղափար: «Հյուսիսափայլի» ուղղությունը: «Ազգային մտածություն»: Դարձյալ լեզվի, կրթության, դպրոցական կազմակերպության հարցեր: Գրական կապ: «Ազգային բովանդակություն»: Կ. Պոլիսը, Սանմանադրությունը, արդարությունը: Երկրորդ կիսամյակ, մանվան նշաններ: Եիլլերի «Կասանդրան» իբրև «Հյուսիսափայլի» վերջաբան: Վերջին հառաչանք: Աշխատակիցներ հրապարակախոսական բաժնում: Հակոբ Մելիք-Հակոբյան. «Ազրամարա կղզին»: Միքայել Միանսարյան. դպրոցական սանմանադրություն, ժողովրդական կրթություն, մանկավարժական հարցեր:

«Հյուսիսափայլը» վերանորոգվեց անհատական ձեռնտվութեամբ: «Փառք և պատիվ մի քանի ազնվամիտ և լուսավոր հայերի հոգաբարձութեան», — ասում էր Նազարյանցը իր հայտարարութեան մեջ: Այդ «մի քանիսները» քաջակերական հրավեր են կարդում, օգնում են Նազարյանցին, և նա նորից լսեցնում է իր ձայնը:

Հասարակական ձեռնտվություն դարձյալ չկա. անհատների օգնությունը այնքան նշանավոր չէ, որ «Հյուսիսափայլի» գրությունը բարեփոխվի: Ամեն ինչ նույն կարգով է գնում: Քաջալերութեան արժանացած Նազարյանցը ոչնչով չէ դանազանվում 1862-ի Նազարյանցից: Նա դարձյալ մենակ է. դարձյալ գործի ամբողջ ծանրութիւնը նրա ուսերի վրա է: «Հյուսիսափայլի» համարները դարձյալ վտիտ են, լցվում են մեծ մասամբ Նազարյանցի թարգմանութիւններով. ամսագրական բաժինները դարձյալ չկան: Մի խոսքով՝ ոչինչ բարեփոխումն: Ամեն ինչ ցույց է տալիս, որ գործը նույն անբնական դրութեան մեջ է և չէ կարող երկարատև լինել...

Անհատական ձեռնտվությունը, որի շնորհիվ, լավ թե վատ, մի տարի էլ ապրեց «Հյուսիսափայլը», առիթ է տալիս Նազարյանցին արժարձելու այն

միտքը, թե վերութիւն սպասել միայն հայ հարուստներից՝ անմտութիւն է. տեսապահով դասակարգերը միահամուռ գործակցութեամբ կարող են ավելի շատ և արդունավոր գործեր կատարել քան այս կամ այն մեծատունը: Բացտարվում է ժողովրդի ինքնագործունեութեան մեծ սկզբունքը: Ազգային լուսավորութիւնը պիտի նեցուկ ունենա ժողովուրդը:

Հարուստ դասակարգը անպարտաճանաչ է, մեռած է հասարակաց բարիքի համար: Բայց «մի» թե դորանից հետևում է, որ և հասարակը պիտի հուսահատվի, ձեռքը զոգումը դնել և բերանը բացած ասե միշտ. եթէ մեծատունը, որ կարող էր, չկամի բարեգործութիւն, չկամի ճանաչել ազգային օգուտը, ուրեմն մեք աղքատ մարդիկս, ո՛վ և ինչ կարող ենք առաջացնել մեր թույլ կարողութեամբ: Ամենևին սխալ դատողութիւն: Մի ազգի գլխավոր ուժը և զորութիւնը հասարակի մեջ է, որովհետև հասարակի բազմութիւնը հարյուր հազարավոր, իսկ մեծատունների թիվը տասն ու քսան է. բացի դորանից, աշխարհիս բոլոր ականավոր գործերը, իմաստութեան և ճարտարութեան մեջ, առաջացած են ժողովրդի միջակ և չքավոր դասակարգերից. աշխարհաշեն գյուտերը և հայտնագործութիւնը արած են ժողովրդական կարգի մարդերի ձեռքով, որովհետև դոցա մեջ են ամփոփված մի ազգի երևելի քանքարը և շնորհքները»:

Ժողովրդական այսպիսի գեղեցիկ մտքերով է Նազարյանցը սկսում իր հրապարակախոսութիւնը 1864 թվականին: «Հյուսիսափայլը», այժմ, ուներ նոր-նոր ասելիքներ: Հինգ տարվա գործունեութիւնը նրան հասունացրել էր, ավելի մեծ փորձառութիւն էր տվել նրան. հաջող հանգամանքների մեջ նա կարող էր այնքան առաջ գնալ, որ միանգամայն կմոտենար կյանքի առօրյա հարցերին և կմշակեր նրանց ավելի բազմակողմանի կերպով: Նազարյանցի հրապարակախոսութեանը պակասում էր երկարատևութիւնը. այդ պատճառով էլ մենք նրա մեջ տեսնում ենք գեղեցիկ սկզբնավորութիւններ, փայլուն, բայց չզարգացրած կետեր...

Այն հոգիվածը, որից մենք բերում ենք այս խորհրդածութիւնները, կրում է «Ազգային մտածութիւնը» վերնագիրը: Նա շատ ընդարձակ է և տպվեց «Հյուսիսափայլի» շրջ համարներում: Հետաքրքրական է այն վերաբերմունքը, որ այդտեղ Նազարյանցը ցույց էր տալիս դեպի մյուս պարբերական հրատարակութիւնները: Խաղաղութեան և հաշտութեան խոսք է նա ասում իր եղբայրակիցներին: «Թո՛ղ շտրտմին դոքա ափական նախանձով. ինչ եմ ասում, թող հյուրասեր մտքով և եղբայրական ողջունով հանդեպ գան նորան»: Ո՛չ որին վնասել չէ ուզում «Հյուսիսափայլը». ընդհակառակն, նրա ձգտումն է իր եղբայրակիցների հետ մի շարքում կովել տգիտութեան և արատների դեմ: Կարծիքների տարբերութիւնը չպիտի խանգարե, թշնամացնի: «Ամենայն ծագիկ ունի յուր գույնը և յուր հոտը, ամենայն ծառ յուր տերևները և յուր տեսակ-տեսակ համով պտուղները, և ամենեցուն համար բավական տեղ ու օդ կա սաստածոյ լաչն ու արձակ աշխարհի վերա»: Տեսակների, համի, հոտի այդ տարբերութիւնները հարկավոր են, բնական են: Բայց ի՞նչ է դա նշանակում: Մի՞թէ այն, որ լավ է ամեն ինչ, մի՞թէ այն, որ ամեն տեսակ տարբերութիւն, ամեն տեսակ հակառակութիւն բարեբար ու օգտակար է:

Ո՛չ, ասում է Նազարյանցը: «Հյուսիսափայլը» կշարունակե իր ուղղութիւնը: Նա պատրաստ է ընդունել հակառակ ուղղութիւնների օրինավորութիւնն էլ: Բայց ի՞նչ դեպքում: «Մտածող մարդերի կարծիքի զանազանութիւնը հարկավոր և օգտակար է գիտութեան մեջ, եթէ դա հիմնաւորվում է օրինավոր փաստերի և պատճառների, և ոչ սղտոր անձնական ախտերի կամ թն

հասարակ ամբոխի վերկվերոյ տեսութեան վերա: Ամբողջ հարցը հենց այն հանգամանքի մեջ է, որ մեզանում կարծիքի զանազանութունը թշնամական աստ է դառնում: Նաղարչանցի վերաբերմամբ դրա ապացույցը Չերքեզյանցն էր:

Սկսելով իր «Աղգային մտածութիւնները» ընդհանուր խորհրդածութիւններով, նաղարչանցը զանգատներէց ու պախարակումներէց անցնում է գործնականին: «Այժմ,— ասում է նա,— տխուր խորհրդածութիւններն ժամանակ չէ. մեր ժամանակը կարոտ է ուրիշ բաների, քան թէ ողբի և արտասուքի մեր աղգային անբախտութեան վերա»: Պետք է դեղ գտնել այդ անբախտութեան դեմ: Իսկ այդ դեղը ուսումն է: Եվ նաղարչանցը երկար ու մանրամասն բացատրում է մի «կենտրոնական մայր դպրոցի» անհրաժեշտութիւնը, տալիս է այդ դպրոցի ծրագիրը, առանձին-առանձին խոսելով ամենուրեքի գլխավոր առարկաների մասին:

Կարիք չկա, որ մենք դիմենք այդ ծրագրին: Մեզ հայտնի են արդեն նաղարչանցի գաղափարները դպրոցական կազմակերպութեան մասին: Միջնակարգ մի դպրոց՝ կլասիկական լեզուներով, հայերեն դասավանդութիւն, ուսուցիչներն առանձին լուրջ ուսումնասիրութիւն, բնական գիտութիւնների ուսուցում լայն շախմատով՝ ահա այդ «մայր դպրոցը»: այդպէս է միշտ ներկայացրել նաղարչանցը ժամանակի կրթական անխուսափելի պահանջը և մենք, որ հետեւել ենք նրա գրվածքներին սկզբից, կարող ենք հեշտ եզրակացնել, որ «Աղգային մտածութիւնները» մանրամասնութիւններ շատ են պարունակում, բայց նորութիւն՝ ո՛չ: Ավելացնենք միայն այն, որ աղգի փրկութեան միակ միջոցը համարվող այդ «մայր դպրոցը», նաղարչանցի կարծիքով, պետք էր բաց անել նոր-նախիջևանում: Ինչպէս երևում է, նաղարչանցը այդ տեղերի վրա հուշ շունք: Գպրոցի առանձին թշնամին կլինէր ասիականութիւնը և այդ կողմից նոր-նախիջևանը, երևի, նման չէր հայաբնակ մյուս տեղերին: Որքան լավ կլինէր, եթէ նաղարչանցը ճանապարհորդած լինէր հայաբնակ տեղերում: Այն ժամանակ նա ավելի լավ տեղյակ կլինէր ժողովրդի իրական կարիքներին: Բայց դուցե «մայր դպրոցը» պետք էր նախիջևանում բաց անել հատկապէս այն նպատակով, որ նա լինի թեոքոսիայի Խալիբյան դպրոցի հակակշիռը, մի դպրոցի, որի ղեկավարն ու կազմակերպութիւնը նաղարչանցի համարութիւնները վայելել չէին կարող:

Ինչևհից: «Աղգային մտածութիւնները» նաղարչանցը վերջացնում էր այսպիսի խոսքերով.

«Եմ վերջին խոսքը առ մերայինքը, այսպէս է. ժամանակը դրել է հայերի առաջև կրակ և ջուր, մահ և կյանք. որին կամին, թո՛ղ մխեն յուրյանց ձեռքը: Հայերի առաջև դրած է այսօր մի երկճյուղ հերակլեսյան ճանապարհ, դեպի առաքինութիւն և արատ, դեպի փրկութիւն և կորուստ: Թո՛ղ ընտրեն, որը հաճո է նոցա: Մեք անպարտ ենք»:

Սրանք, ճիշտ որ, նաղարչանցի վերջին խոսքերն էին ուղղած հայերին «Հյուսիսասիայի» էջերից, նրա, այսպէս ասած, գրական կտակը: Հրատարակախոսական հոգիված աղգի ցավերի և կարիքների մասին նա այլևս չգրեց: Բայց այդ կարապի երգից առաջ նա ուներ մի այլ հոգիված, որ արժանի է խորին ուշադրութեան: Դա տպված է փետրվարի համարում և կրում է «Աղգային թշնամութիւն» վերնագիրը: Այդ թշնամութիւնը այն դրութիւնն էր, որ ներկայացնում էին թուրքահայերի գործերը:

«Հյուսիսասիայի» կյանքի մեջ առաջին անգամն էր, որ նաղարչանցը այդ-

բան պարզ ու երկար խոսում էր թուրքահայերի մասին: Մենք իր տեղում նկատեցինք այն տարօրինակ հանգամանքը, որ նաղարչանցի համար, կարծես, գոյութիւն չունէր թուրքիայի հայութիւնը, մինչդեռ «Հյուսիսասիայը» հրատարակվում էր մի այնպիսի ժամանակամիջոցում, երբ թուրքահայերի մեջ կատարվում էին խիստ նշանավոր պատմական դեպքեր. Չեյթունի ապստամբութիւնը, Աղգային սահմանադրութեան հաստատվելը, և այդ առիթով բարենկված կատաղի մաքառումները այն աստիճան նշանավոր երևութիւններ էին Արևելքի կենտրոնում, որ նույնիսկ եվրոպական լրագրութեան առանձին ուշադրութեան առարկա էին դարձել: Սահմանադրական երիտասարդութիւնը, սկսելով 1848-ի Ֆրանսիական հեղափոխութեան սկզբունքներով, ժողովրդի վահագնական իրավունքներն էր պաշտպանում, մոռացված ու հարստահարված գաղափարների ձայնն էր հնչեցնում. այդ երիտասարդութեան դեմ դուրս էին եկել խավար ուժերը, որոնք մատնութիւնների, աղմուկների միջոցով ուղում էին սպանել սկսված գործը: Եվ Մոսկովայի հայկական ազատամիտ ամսագրի համար գոյութիւն չունեին այդ բոլոր անցքերը: Կարծես զգալով այդ աններելի պակասութիւնը, նաղարչանցը հենց հատկապէս իր սխալը ուղղելու համար էր, որ 1864-ին վերսկսեց իր ամսագրի հրատարակութիւնը: Եվ արժեք հենց միմիայն այդ «Աղգային թշնամութիւն» հոգիվածի համար հրատարակել:

4. Պոլսի Հայոց սահմանադրութիւնը, ինչպէս հայտնի է, դեռ հազիվ ձեռնդ առած ենթարկված էր վտանգների: Հետագեմ, հնամուլ տարրերի ուժը արքան բարձրացել էր, որ աղգային ինքնավարութիւն ստեղծողները հարկադրված եղան զիջումներ անել, որովհետեւ թուրք կառավարութիւնն էլ սահմանափակումների կողմն էր: Ահա այդ կատաղի պայքարին էր նվիրված նաղարչանցի հոգիվածը: Մի հոգիված, որի նմանը չեք գտնի նաղարչանցի գրվածքների մեջ: Ժողովրդական իրավունքի, ազատութեան և առաջադիմութեան սկզբունքները աշտեղ նկարագրված և պաշտպանված են մի անսովոր եռանդով ու դեղեցիկ արամաբանութեամբ: Նույնիսկ ոճն էլ այստեղ ուրիշ է, և նաղարչանցի լեզվին, գրելու ձևին վարժ մարդը գծավարութեամբ է կարողանում հավատալ, թե այդ հոգիվածն էլ պատկանում է նրա գրչին, այնքան թեթև է նա, աղգու իր կարճ նախադասութիւններով, իր խստութեամբ, ոգևորութեամբ: Այստեղ ալևա անորոշ, վերացական հրատարակախոսութիւն չէ. այստեղ կան անուններ, դեպքեր, որոնց վերաբերմամբ նաղարչանցը բռնում է որոշ դիրք, կամ պաշտպանում է կամ հարձակվում:

Ահա ինչպէս է նա նկարագրում հայ ժողովրդի դրութիւնը թուրքիայում.

«Մեք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անշքացած, անապատացած ախարհի վերա, ուր երբեմն փողփողում էր Արշակունյաց հաղթակիր դրոշակը, ուր այժմ մեր խեղճ, անտեր և անօգնական ժողովուրդը միլիոնավոր բազմութեամբ թշնամութեան, հարստահարութեան և հուսահատութեան մինչև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից. երբ լաց է լինում, և ուր, դարձյալ, հայակերպ և գիշերադեմ վամպիրները տակավին չեն կշտանում անմեղ զոհի՝ խեղճ ժողովրդի, արյունը ծծելուց:

Մանր և համբաշարժ էր աղգային լուսավորութեան ընթացքը Տաճկաստանի մեջ, և այդ ընթացքն էս անհիմն և սայթաքելի. հայտնի է, թե այն թշնամ հանգամանաց մեջ ուրիշ կերպ չէր կարող լինել: Դարեր անցան, շատ և շատ սերունդներ ա՛հ ո՛հ քաշելով եկան գնացին, շատ իրավունք ոտնակոխ

եղան, մինչև որ սորանից մի քանի տարի յառաջ «սահմանագրութիւն» բառը մեր ազգայինք արտասանեցին:

Սահմանագրութիւն,— կրկնեց հարստահարված և կիսաշունչ ժողովուրդը: Սահմանագրութիւն,— լավեցավ եգիպտական բուրգերից մինչև Վարադա սարը, Սահմանագրութիւն,— ազադակեցին և հրճվեցան կենդանի երթաւսարդները:

Այդ սահմանագրութիւնը հաստատվեց, ժողովուրդը իր իրավունքների տերը դարձավ: Բայց կառավարութիւնը չվերացավ, ազատութիւնը իր պատշաճավոր հարգանքը չդատավ: Ազգային վարչութիւնն առաջին գործերից մեկը եղավ Կ. Պոլսի «Մեղու» ազատախոս և համարձակ թերթի բերանը կապելը: Որովհետև նա քննադատում էր գործիչներին, մերկացնում էր արատները, ցույց էր տալիս սահմանագրութիւնն պակասութիւնները: Ազգային վարչութիւնը խնդրեց թուրք կառավարութիւնից փակել «Մեղուն»: «Փառք աստուծոյ, ի՞նչ է եղեր, օրեօր ազգերնիս կհառաջագիմե կոր, քիչ մը պակասութիւնք կան եղեր... ո՞ւր տեղ չկա, անոնք ալ կամաց կամաց կշտկվին... հիմակու հիմասա չափով գոհ ըլլալու է, խոհեմութիւնը անանկ կպահանջէ»: Ահա ինչպես էր մտածում ազատ քննադատութիւնն բերանը փակող վարչութիւնը: Բայց Բ. Դուրը ազգային վարչութիւնից ավելի համբերող և ազատամիտ եղավ, և «Մեղուն» շարունակեց իր գոյութիւնը...

Ահա այս առիթով էր նազարյանցը բարձրացնում իր ձայնը վամպիրների, լուսավախութիւնն, ազգային ինքնագոհութիւնն դեմ: Սահմանագրութիւնը նա հարգում, փառաբանում էր, բայց ի՞նչ օգուտ մի օրենքից, որ մեռած տառ է մնում: Նազարյանցը խոսում է «Մեղուի» փաստերով և «Մեղուի» հետ միասին, իր ամբողջ կարողութեամբ պաշտպանելով «Մեղուն»:

Դավաճների դրութիւնը նկարագրեց «Մեղուն», Վասպուրականի անայցել թշվառութիւնը ստորագրեց «Մեղուն», Իգնատիոսի դիմակը վերայից հանեց «Մեղուն», Տորոսի խոսվութիւնը պատմեց «Մեղուն», արժ. Խրիմյան Մկրտիչ վարդապետին պաշտպանեց «Մեղուն», նորա վերա գիշերային լուսութիւնն մեջ, հրացան դատարկողների ընդդեմ բողոքեց «Մեղուն», գավառ շթողեց, քաղաք շթողեց, գեղ շթողեց, թաղ շթողեց, ամեն ծակ ու ծուկ մտավ ելավ «Մեղուն», թո՛ղ մեռնի «Մեղուն»:

Ազգի զավակները սրիկաների մատնված, սրախողխող են լինում յուրյանց մահիճների մեջ, Իգնատիոս եղ ծախելու շահավետ առևտրով է պարագում, նորա արբանյակը շինականի վերջին եզին առաջ ձգած դեպի Իգնատիոսի ազարակն է գնում: Քաղաքական ժողովը «Մեղուի» քամակից ընկած միջոց չունի այն արյունաշաղախ տեսարանների վերա մի ըսպե յուր աչքը ձգելու, «ազգերնիս կհառաջագիմե կոր»:

Ազգի ազգիկները և կանայք կտառապին և կրոնաբարոյին անօրինակ և անլուր ժպրհութեամբ. «ազգերնիս կհառաջագիմե կոր»: Մի քանի կին, մի քանի աղջիկ «կտառապին եղեր... ի՞նչ կլլա եղեր... ասդին ալ մխիթարական տեսարանք պակաս են մի. Շողեր հանմը, Դորոթիա տուտուն թցւղթն ու թավլուն առջնին առած իրենք զվարճանալեն զատ, ուրիշներուն էլ դաս կուտան»...

Այո՛, ասում է «Մեղուն», մշեցոց կարավանը հառաջ է գնում:

Այո՛, ասում է «Մեղուն», թշվառութիւնն և հարստահարութիւնն երեսից ստիպվելով, զաղթական այրին հաց չունի յուր լացող որդեկին տալու և արագ լին է երանի տալիս, որ նորա ձագերը կուշտ են.

Մամիկ, պատա մի հա՛ց...
— Հողցա, հի՛նչ տեղից քըզ հացիկ ճարեմ..
Մերիկը թաղես, վա՛հ, անթի կա...
Արզի՛ւ, հորի՛ն, զթևերդ թափ տվիր,
Հորի՛ն գիմ Մոսոն քնից զարթ տվիր,
Արզի՛ւ, բու ձագեր կուշտ են ու հանգիստ,
Մոսոն հաց կուշ. չկա... կբաղվի՛ հողիս:

Ասացին լացին, լացին ասացին... վեր կացին երեսներն խաչակնքեցին. Աստված կանչեցին, ձեռք ձեռքի բռնեցին, սկսան քալել կարավանի ճամփով: Ազգերնիս կհառաջագիմե կոր»:

Ահա ինչ տեսակ լեղվով էր խոսեցնում թշվառութիւնը: «Սուրբ բռնութիւն», այսօր այս խոսքն ենք մորմոքվելով տեսանում ազգային վարչութիւնն որոշի վերա», — ասում է նազարյանցը և բացականչում. «Ազգերնիս կհառաջագիմե կոր»:

Այդ մորմոքն է հաղորդել նազարյանցի գրչին այնքան անսովոր սրութիւն, հեզնանք, սուրբ և ազնիվ վրդովմունք: Ինչի՛ր չէր անի այդ գրիչը, եթե շարունակեր աչքպես շարժվել:

Բայց շարունակել չկա: Անցնում է «Հյուսիսափայլի» առաջին կիսամյակը: Երկրորդ կիսամյակում այլևս չէ կարելի ճանաչել մեր նազարյանցին: Նա այլևս չէ նայում մեր իրականութեանը. միակողմանի ու անտարբեր են ամսագրի տետրակները, ավելի ևս նիհա՛ր, փոքրացած: Խմբագիրը նման է մի մարդու, որ պարտավորութիւն ունի հանձն առած և շտապում է մի կերպ կատարել, վերջացնել այդ պարտավորութիւնը: Բաժանորդագրութիւնն ժամանակն է գալիս, բայց նա մի բառ անդամ չէ ասում հաջորդ տարվա մասին: Այլևս ոչ գիմում, ոչ ակնկալութիւն: Հայտնի է, որ ոչինչ չի լինի: Այս մի տարին գրա մի ավելորդ ապացույցն էր:

Հրատարակվում է 1864-ի նոյեմբերի համարը, վերջինը: Եվ այդտեղ, վերջերում, նազարյանցը դնում է Շիլլերի «Կասանդրա» բանաստեղծութիւնն իր կատարած թարգմանութիւնը, բայց իրանից ավելացնում է նոր վերնագիր՝ «Վերջաբան «Հյուսիսափայլի»»: Վեց տարի ամսագրի գործը տանելով, նազարյանցը ավելորդ համարեց վերջին հրատարակած խոսքը ասել իր ընթերցողներին: Շիլլերը պիտի ասեր այդ խոսքը: Եվ սրտառուչ, տխուր ու միանգամայն իրավացի էր մեծ բանաստեղծի այդ խոսքը:

Հեշտ կարելի է հասկանալ, որ Շիլլերի բանաստեղծական հանճարը «Կասանդրայի» մեջ գրել է նազարյանցի նման մարդկանց վիշտն ու գանգատները: Հին հունական պատմութիւնից է վերցրած այդ քրմուհի աղջկա անձնավորութիւնը: Կասանդրան գուշակող էր, մարգարեուհի. տեսնում էր հո հայրենիքի կորուստը, ասում էր, քարոզում, բայց ոչ ոք չէր լսում նրան: Եվ նա գափնիների անտառում գանգատ է անում աստվածներին: Շուրջն անտարբերութիւն, իսկ նա պարզ տեսնում է զալոց օրերը: Չեն լսում, դրանից ավելի վատ բան են անում.

Եվ այդ մարդիկ հոյհօյում են իմ ողբ ու լաց,
Արհամարհում ցավ և կսկիծ ճնշված սրտիս.
Դեպ անապատ պիտի տանեմ, առանձնացած,
Իմ ասնջված սիրտ, իմ վիրավոր, անհույս հողիս:

Եվ հեծում է նրա սիրտը, վիրավորված անողոր ճակատագրից: Ինչո՞ւ է տված այդ ճակատագիրը, ինչո՞ւ նա էլ ուրիշների պես չէ:

Քո պատգամը քարոզելու, է՞ր ձգեցիր
Դու ինձ քաղաք այս հավիտյան, միշտ կուշտերի,
Ի՞նչ աչքը բաց, հոգին արթուն և կամքս միր,
Մարգերի մեջ, անմտությամբ ապրողներին:
Է՞ր ավեցիր ինձ տեսություն ապագայի,
Որ չեմ կարող դարձուցանել ոչինչ կերպով:
Ճակատագիրը այսօր էդուց պիտի լցվի,
Զարհուրելին մտանում է շտապ քայներով:
Ի՞նչ օգուտ է վերացնել քոթ թագնություն,
Երբ մտահաս է սոսկալի ճակտորդություն:
Մարդուս կյանքը մոլորություն է լոկ, միայն,
Եվ մեռուցիլ մահ է նորան դիտակցություն:
Վե՞ր կալ, վե՞ր կալ պայծառություն այն արտմական
Եվ իմ աչքից այն արյունոտ, խիտտ երևույթ:
Մի ահավոր պաշտոն է Քո ճշմարտության
Մահկանացու և հողեղեն լինել անոթ:

Ի՞նչ կուրություն տո՞ր ինձ դարձյալ, ով դու Պյության,
Եվ դորա հետ իմ խնդամիտ մտալլ հոգի:
Երբեք տաղեր չերգեցի ես ուրախության,
Քանի որ ես ձայն բարբառող եմ Քո կամքի:
Դու ապագայը ավեցիր, գալոց օրեր,
Բայց խլեցիր դու ինձանից բուսն ներկա,
Դու խլեցիր կյանքի մին մին զվարճ ժամեր,
Քո սուտ պարզե, միայն ցավեր, վե՞ր կալ ահա:

Հրածեղտի, այո՛, մի աննման խոսք: Եվ նազարյանցին մնում էր մի բան ավելացնել: Խոսելով դրանից հետո բանաստեղծ Ս. Շահազիզի նոր հրատարակած «Լեոնի վիշտը» գործի մասին, մի գործ, որի մեջ Լեոնը պատկերանում է մեր խավար իրականության դեմ բողոքող, նազարյանցը ասում է. «Աստված տա, որ այդ սուրբ հոգեզմայլությունը չափշտակված բանաստեղծի բարբառը չլիներ դարձյալ ձայն բարբառոյ յանապատի, ինչպես հազարավոր այդպիսի ձայներ մինչև օրս անլսելի ցնդված են հայկական կյանքի տրտում անմխիթար անապատի մեջ»:

Աստված տա՛... Դա հորիզոնից անհետացողի վերջին հառաչն էր: Այդպես հառաչեց «Հյուսիսափայլը» և հավիտյան փակեց իր աչքերը...

Մենք վերջացրինք «Հյուսիսափայլի» հրատարակախոսության տեսությունը: Բայց այստեղ մեզ վրա պարտք կա գոնև մի բանի խոսքով հիշատակելու ամսագրի այն աշխատակիցներին, որոնք աջակցել են նազարյանցի հրատարակախոսության բաժնում:

Շատ քիչ են այդպիսիները. վեց տարվա ընթացքում մենք հազիվ հանդիպեցինք մի երկու-երեք մարդկանց, որոնք անկախ կերպով մշակել են հասարակական հարցեր: Դրանց մեջ գլխավորը, առաջնակարգը, իհարկե, նալբանդյանցն է: Մենք այստեղ, սակայն, չենք խոսի նրա մասին: Այնքան նշանավոր է նրա գործունեությունը այդ ասպարիզում, որ պետք է առանձին, մանրամասն խոսել նրա մասին: Բավականանանք, ուրեմն, այնքանով, ինչ մինչև այժմ ասել ենք նալբանդյանցի վերաբերմամբ և անցնենք մյուս աշխատակիցներին:

Մենք հնարավոր ենք համարում վերցնել «Հյուսիսափայլի» փոքրաթիվ աշխատակիցների շարքից միայն երկու անուն՝ Հակոբ Մելիք-Հակոբյան և Միքայել Միանսարյան: Մելիք-Հակոբյանին մենք արդեն հիշատակել ենք

մնում է այստեղ ծանոթանալ այն հրատարակախոսական տարրերի հետ, որոնք կոնվուս են նրա առաջին գրվածքում: Քե՛ Մելիք-Հակոբյանը և թե՛ Միանսարյանը աչքի են ընկնում «Հյուսիսափայլի» էջերում գլխավորապես այն պատճառով, որ երկուսն էլ իրականության հարցեր էին շոշափում իրանց գրչով: Թացի գրանից, երկուսն էլ «Հյուսիսափայլից» հետո էլ հետքեր են թողել մեր գրականության մեջ, մեկը հռչակված իբրև Բաֆֆի, իսկ մյուսը իբրև համեստ աշխատավոր:

Հակոբ Մելիք-Հակոբյանը, ինչպես հայտնի է, Սալմաստի Փայաջուկ գյուղից էր, վաճառականի որդի: Ծակատագիրը այնքան բարեհաճ եղավ դեպի երան, որ նա պատանեկության հասակում բախտ ունեցավ դուրս գալ Պարսկաստանի խավարից և մի կտոր կրթություն ստանալ Քիֆլիսում: Հայրն էր երան Քիֆլիս բերել իր վաճառականական ճանապարհորդության ժամանակ: Հայրը համաձայնվեց թողնել նրան Քիֆլիսում մոտ ութ տարի. նույն հայրն էլ յթողեց, որ Հակոբը վերջացնել ուսումը Քիֆլիսի դիմնագիտյում և 1856-ին կանչեց նրան իր մոտ, Սալմաստ, առևտրական գործերով զբաղվելու համար: Բայց այդ երիտասարդ վաճառականը այլևս կորած չէր. դպրոցը բաց էր արել նրա աչքերը, ծանոթացրել էր եվրոպական հորիզոնների հետ և, որ գլխավորն է, վառել էր նրա մեջ բնատուր տաղանդը: Ահա այդպիսի կայծեր կրելով իր մեջ, նա 1858 թվականին առևտրական գործերով գնում է Քուրջիա, ճանապարհորդում է Վասպուրականի կողմերում:

Հայկական այդ հին, այնքան նշանավոր նահանգի չքնաղ բնությունը, անցյալի բազմաթիվ անվանի հիշատակարանները, պատմական վայրերը, ուր դեռ շարունակում էր ապրել մի սովոր նահապետական ժողովուրդ, հափշտակում են երիտասարդ վաճառականին, վառում են նրա սրտում հայրենասիրություն, որ հետո այնքան զեղեցիկ կերպով պիտի պատկերանար «Կայծերի» մեջ: Նա տեսնում է, զգում է, բայց ամեն ինչ պահում է սրտի մեջ: Ինքնագոհ հայրենասերներից չէր, որոնք հրճվում են մի որևէ հռչակավոր վանքի, հին բերդի տեսքից և միայն դրա մեջ էլ տեսնում են հայրենասիրության վախճանական նպատակը: Մելիք-Հակոբյանին տանջում է ներկան, որ մի անշունչ դիակ էր ներկայացնում: Ո՞ր խոսել այդ դիակի, այդ վերքերի մասին: 1859 թվին նա ստանում է «Հյուսիսափայլը», մեծ հաճություն է զգում: «Երկար ժամանակ փափագում էի տեսնելու մի այդպիսի օրագրի հրատարակություն, որի մեջ ճշտությամբ պատկերանային հայոց ազգի վերքը և նոցա բժշկության համար գործադրելի հնարները», — ասում է նա:

Եվ ինքն էլ գրիչ է վերցնում, նկարագրում է այն հեռավոր, դեղեցիկ, բայց գծրախոտ երկրում իր աչքով տեսած վերքերը, ուղարկում է «Հյուսիսափայլին»: «Աղթամարա վանքը»՝ այսպես է կոչվում Մելիք-Հակոբյանի այդ առաջին գործը: Նրա մեջ արդեն բավական որոշ երևում է ապագա Բաֆֆին. բնության սիրուն նկարագրություններ, կես վիպական պատմվածք: Բայց Մելիք-Հակոբյանին այդ գրավիչ, թեթև ոճը, նկարագրական տաղանդը շնորհված էին ոչ թե զեղեցկություն և վայելչություն երգելու, այլ քարոզելու, բողոքելու համար: Դա մի տաղանդավոր հրատարակախոս էր՝ վիպագրողի, բանաստեղծի մեջ կոտած:

«Աղթամարա վանքը» լոկ նկարագրություն չէ, այլև խորհրդածություն «ազգային լուսավորության վերա»: Որքան թանձր գույներով է նկարագրում Մելիք-Հակոբյանը այն դժբախտ դրությունը, որի մեջ թաղված էր Վասպուրականը: Խաղար և խավար ամեն տեղ. երիտասարդ ճանապարհորդը պատմում է իր խոսակցությունը Աղթամարի գլխավոր վարդապետի հետ, և դուք հուսա-

հատուցութիւն եք զգում այդ հոգևորականի դատադատութիւններէն: Վարդապետի հետ են մի քանի տեղացիներ, որոնց միասին, խեղճ աշխարհաչացքները սգալի են: Չորս կողմում դուք լուսի նշույլ չեք տեսնում: Միայն երիտասարդ վաճառականն է, որ հնութեան այդ մութ ավերակներէ վրա հնչեցնում է առաջադիմութեան, քաղաքակրթութեան, գիտութեան խոսքը: Նա պաշտպանում է նրիմյան վարդապետին, որ այդ ժամանակ լուս էր ուզում վառել Վասպուրականում և հենց այդ պատճառով էլ հալածվում էր տգետ հոգևորականներից: Դա ժամանակի ամենանշանավոր հարցերէնց մեկն էր: Եւ Մելիք-Հակոբյանը, դատապարտելով հոգևորականութեան արատները, գիտութիւն և լուսավորութիւն կանչելով, ի վերջո իր սրտի թախիծը հանձնում է Ազխամարի ծովին: «Ձայն տուր, ո՛վ ծովա՛կ» բանաստեղծութեան մեջ, որ այժմ շատ տարածված երգ է...

Այդպիսի գրվածքներ Մելիք-Հակոբյանը շատ շուրջ «Հյուսիսափայլի» ընթերցողներին, թեև կարող էր՝ նրա ճանապարհորդութիւնները Պարսկաստանում և Թուրքիայում՝ ժողովրդի կեցութիւնը նկարագրելու գեղեցիկ միջոցներ էին: Հաջորդ 1861 թվականին «Հյուսիսափայլի» մեջ տպվում է նրա մի նամակը, որի մեջ տեղեկութիւններ է հաղորդում Պարսկաստանի ասորիների մեջ գործող կաթոլիկ և բողոքական միսիոնարներէ մասին: Հետաքրքրականը այդտեղ այն է, որ նրա համակրութիւնը բողոքականների կողմն է, որովհետև այս քարոզիչները Մալմաստում հիմնել էին բարեկարգ դպրոց, տպարան ասորիների համար:

«Հյուսիսափայլի» մյուս աշխատակիցը՝ Միքայել Մեսրոպյան Միանսարյանցը, մի շատ ինքնուրույն, հետաքրքրական դեմք է մեր գրականութեան մեջ: Միանսարյանցը օֆիցեր էր. բայց զինվորական ծառայութիւնը չէր արգելում նրան լինել մի ազգասեր հայ, տոգորված առաջադիմական գաղափարներով: Հայոց գրականութիւնը, հայ ժողովրդի կրթութիւնը այն նվիրական գործերն էին, որոնց ծառայելու համար նա շինայեց իր համեստ գրական ընդունակութիւնները և անշեջ եռանդը:

Միանսարյանցը, որքան մենք գիտենք, սկսեց գրել «Մեղուի» մեջ: Բայց այդտեղ էլ, Մանգիւնյան քահանայի հնապաշտական շրջանում, նրա գրվածքի մեջ երևում է թարմ, առաջավոր հոսանքների ազդեցութիւնը: «Հյուսիսափայլի» մեջ Միանսարյանցը տպեց նախ մի գեղեցիկ հոգված հրատարակախոսութեան մասին: Այդտեղ նա անգլիական ազատ մամուլի օրինակով ցույց էր տալիս, թե որպիսի մեծ նշանակութիւն ունի քաղաքակրթութեան գործում անկախ և համարձակախոս հրատարակական քննադատութիւնը: Մերկացնող ուղղութիւնը այն փրկութիւնն է, որ պետք է սպասել մամուլից, մերկացնել ազգի պակասութիւնները չէ նշանակում անպատվել, կործանել ազգը, այլ ծառայել նրան ազնվութեամբ, բարյացակամութեամբ:

1861 թվականին Մատթեոս կաթողիկոսը հաստատեց ներսիսյան դպրոցի այն կանոնադրութիւնը, որ մշակել էին Թիֆլիսի հայերը գեներալ Երեմիա Արծրունու ղեկավարութեամբ: Կանոնադրութիւնը ստեղծում էր դպրոցական ինքնավարութիւն, հիմնված ժողովրդական ընտրութեան վրա: Դպրոցի ղեկի հանձնվում էր հոգաբարձական մարմնին, որ ընտրվում էր ժողովրդի քվեով: այսպիսով, ինքը, ժողովուրդն էր հանգիստանում դպրոցի տերը և հոգևոր իշխանութեանը մնում էր վերահսկողի դերը: Նույն այդ սկզբունքը Մատթեոս կաթողիկոսը մտցրեց և մյուս հայ դպրոցների կառավարութեան մեջ: Դա մի շատ խելացի և կենսաառ կարգադրութիւն էր. նոր կազմակերպութեան շնոր-

հիվ մեր դպրոցների համար բացվեց զարգացման և առաջադիմութեան փայլուն շրջան:

Միանսարյանցը կաթողիկոսի այդ կարգադրութեան անիթով տպագրեց «Հյուսիսափայլի» մեջ մի ուրիշ գեղեցիկ հոգված, որ բացատրում էր դպրոցական սահմանադրութեան մեծամեծ բարիքները. ժողովրդի մասնակցութիւնը դպրոցների վարչութեան մեջ նա համարում էր կրթական գործի հարատևութեան ամենալավ գրավական և խորհուրդ էր տալիս ավելի ևս զարգացնել այդ բարերար սկզբունքը, բաց անելով ժողովրդական դպրոցներ, տարածելով գրագիտութիւնը ամբոխի մեջ: Մի ժողովուրդ, ասում էր նա, դրանով միայն կարող էր իր կենդանութիւնը պահպանել. չպետք է մոռանալ, որ, ինչպես ասել է մի նշանավոր անգլիացի, «վարժապետի այբուբենը ավելի կարող ու գորավոր են, քան թե պատերազմողների նիզակները»:

Բայց «վարժապետի այբուբենը» այդքան հրաշագործ լինել կարող են այն դեպքում միայն, երբ դպրոցը համապատասխանում է ժամանակի պահանջներին և ազգի պետքերին: Եւ Միանսարյանցը ուշադրութիւն էր հրավիրում երկու դիտարկ գործոնների վրա՝ դասագիրք և մանկավարժ: Լավ դասագրքեր պատրաստելու և տարածելու համար նա առաջարկում էր կազմել մի ընկերութիւն, որ հարկավոր դրամը կհավաքեր, և մի հատուկ հանձնաժողով, որ դասագրքերի ընտրութիւն կաներ և կհրատարակեր: Թե Միանսարյանցը որքան ահագին նշանակութիւն էր տալիս դասագրքերին, այդ երևում է նրանից, որ նա հարկավոր էր համարում հույս չդնել գործի գլուխ անցածների սեփական ուժերի վրա, այլ առաջարկում էր, որ հանձնաժողովը դիմումներ անելով քաղաքական հայտնի համալսարանների պրոֆեսորներին և խնդրել նրանց խորհուրդները: Իսկ մանկավարժներ պատրաստելու համար Միանսարյանցը առաջարկում էր հայ երիտասարդներ ուղարկել Եվրոպա՝ հատկապես մանկավարժութիւն ուսումնասիրելու և ապա բաց անել մի դպրոց, որի նպատակն ռեկոնստրուկցիոն կլինէր ուսուցիչներ պատրաստել ժողովրդական դպրոցների համար:

Ահա թե ինչպիսի լուսավոր մտքերի և դավանութիւնների մարգ էր հեծելազրբի կապիտան Միքայել Միանսարյանցը, որ ուներ և համալսարանական կրթութիւն: «Հյուսիսափայլում» նա երկար շախատեց, բայց այդ համակրելի գործիչի պատկերը մենք կկամենայինք այստեղ ամբողջացնել մեր ընթերցողների առաջ, ավելացնելով, որ նա վախճանական թվականների երկրորդ կեսից Պետերբուրգում սկսեց հրատարակչական և մատենագրական մի գործունեութիւն, որ այժմ էլ շատ գեղեցիկ տպավորութիւն է թողնում իր հատկութիւններով: Գնելով հայերեն տառեր, նա մի շարք գրքեր տպագրեց: Մ'ամ չէ հայտնի նրա «Քնար հայկականը»: Նա թարգմանեց Լաբուէլի «Ազգային կրթութիւնը», Կոմբի «Խնամատարութիւն մանկանց», կանոնավոր և վախճան գրութեան ձեռնարկներ հրատարակեց և իր այդ բոլոր աշխատութիւնների մեջ դրեց հետաքրքրական և խելացի հոգվածներ նվիրված ժամանակակից գրական-հասարակական հարցերին. յուրաքանչյուր գրվածքի մեջ նկատվում է ձգտում մի բան սովորեցնել ժողովրդին, մի օգտակար տեղեկութիւն հաղորդել նրան: Ավելացնենք այդ բոլորի վրա նրա կազմած «Bibliographie»-ն, մի լուրջ աշխատութիւն է, որի մեջ հավաքված են այն բոլոր գրվածքների անունները, որոնք վերաբերվում են Կովկասին և Անդրկովկասին:

Հասարակական գաղափարների այս եռանդոտ, փայլուն ժամանակի մի գեղեցիկ երևույթն էլ այդ զինվորականն է, որ նվիրված է իր ազգի մտավոր վերածնութեան գործին: Միքայիսի երևույթ մեղանում շատ քիչ է տեղի ունե-

«Հյուսիսափայլը» իբրև գրական ամսագիր: 1. Քարգմանական գրականություն: Նազարյանցի մասնակցությունը. տարօրինակություններ ընտրության մեջ: Կիկերոն, Ներսես Լամբրոնացի, Բակ: Սիրոպական զուլսագրոնցներ. Երվեյ, Շատորիան, Քալդեոն, Ալֆիերի: Քարգմանիչ աշխատակիցներ. Նալբանդյանց, Համասփյուն, Ռափայել Պատկանյան, Գեորգ Բարխուդարյան, Մանուկ Սաղարյան: 2. Ինֆեռուայն գրականություն: Վեպ «Մեռելանարցուկ» Նալբանդյանցի, «Տեր Սարգիս» Գ. Տեր-Հովհաննիսյանցի: Քաներազություն. «Հայոց ազգի լուսավորիչը» Ա. Սուլբան-Շահի: Բանաստեղծություն. Նալբանդյանց, Բեստեն, Սմբատ Շահագիզ, Գ. Բարխուդարյան: Եզրակացություններ:

«Հյուսիսափայլի» գլխավոր ուժը հրապարակախոսության մեջ էր: Գրանով էր նա զարթեցնում քնած միաբեր, հասարակական և քաղաքակրթական գաղափարներ հուզում, ազգային ինքնաճանաչման հիմքը դնում: Բայց «Հյուսիսափայլը» կարևոր դեր է կատարել մեզ համար և իբրև եվրոպական ոգով խմբագրվող մի հրատարակություն: Հրապարակախոսությանից անհամեմատ մեծ տեղ բռնում էր նրա մեջ գրական-գիտական բաժինը. Նազարյանցը անդադար այս բաժնի վրա էր աշխատում, այնքան շատ, որ վեց տարվա ընթացքում նրա տվածը կարելի է հարստություն անվանել:

Գիտական բաժնի վերաբերմամբ մենք այստեղ այնքանը կասենք, որ դա շատ լավ հասկացված մի պահանջի արտահայտություն էր: Ժողովրդականացնել բնական գիտությունները, մարդկային ազգի պատմությունը, դա մի գործ էր, որ դեռ չէր տեսել ուսահայր և որին նա կարոտ էր իբրև լուսավոր ժամանակի մի բոլորովին անպատրաստ դավակ: Չէ կարող լուսավորություն լինել առանց ժողովրդականացրած գիտության. և եթե մինչև այժմ էլ մեզանում շատ քիչ բան է արված այդ ուղղությամբ, պատճառը պարզապես այն միայն կարող է լինել, որ Նազարյանցի պես մշակներ են պակասում մեզ:

«Հյուսիսափայլի» գիտական բաժնի մեջ կարելի է գտնել և շատ թերություններ: Գտնելով մեր այժմյան պահանջների տեսակետից, այդ բաժնի նախ և առաջ հանրամատչելի չէր. ժողովուրդը նրան հասկանալ չէր կարող: Շատ տեղերում մենք տեսնում ենք, որ «Հյուսիսափայլը» խոսում է, կարծես ոչ մի կասկած չունենալով թե ընթերցողները պատրաստված են, ծանոթ են շատ բաների և կհասկանան գիտական բացատրությունները առանց դժվարություն: Դա սխալ էր. հայ ամսագիրը պիտի ի նկատի ունենար, որ իր ընթերցողներն են և կարող են լինել ամենամեծ մասամբ այնպիսիները, որոնք ոչինչ պատրաստություն չունեն, որոնք միայն հայերեն են կարդում և հետևարար կարոտ են այբուբենական ճշմարտությունների: «Հյուսիսափայլը», այո՛, այս դրությունը մոռանում էր: Բայց կան նրա համար և շատ արդարացուցիչ հանգամանքներ. ի նկատի ունենանք գործի նորությունը, հայերեն անմշակ լեզվի աղքատությունը, վերջապես հենց այն, որ գիտությունը ժողովրդականացնելու համար էլ մասնագիտական տաղանդ է հարկավոր: Մեծ պատիվ է նրա համար և այն, որ նա բազմակողմանի կերպով հայացրեց գիտությունը: Այդ մեծագործության նշանակությունը հասկանալու համար, բավական է, օրինակի համար, տեսնել, թե ինչ բաների մասին է խոսել «Հյուսիսափայլը»: Բացք ամսագրի 1858 թվականը. այդտեղ դուք կտեսնեք Նալբանդյանցի մի հոդվածը:

որ խոսում է տիեզերքի կազմության մասին: Դուք այդտեղից տեղեկություններ կք ստանում մամոնտի, մաստոդոնի, մեգաթերիոնի և այլ հանքային (հողի տակ գտնված) նախնական կենդանիների մասին: Փակեցեք այնուհետև «Հյուսիսափայլը» և մտքով առաջ եկեք մինչև մեր օրերը: Գիտությունը 1858 թվականից ինչ հսկայական առաջդիմություններ արավ, ինչ լայն հորիզոններ բացեց: Բայց մեր գրականության մեջ ոչինչ չկա այդ մասին: Եվ եթե այսօր հարկավոր լինի ցույց տալ հայ ընթերցողին մի աղբյուր, որից նա կարող լինի իմանալ, թե ինչ է իսթիտոսալրոսը կամ պլեզիտոսալրոսը, դուք ուրիշ բան չեք ունենա ձեռքի տակ, բացի Նալբանդյանցի այդ հոդվածից:

Այո՛, կես դար առաջ մարդիկ հասկանում էին, թե ինչպես պետք է կրթել ժողովուրդը: Նրանք շատ լավ էին ըմբռնել, թե ինչ պետք է տալ, և նրանց մեղք չէ, եթե նրանց տվածը շատ չէր, սխտեմով չէր, շատ քիչ կարգացողներ ունեի: Չմոռանանք այդ ժամանակները: Մենք ունեինք մի ժողովուրդ, որի մեջ դեռ նոր պետք էր տարածել ընթերցանության սերը: Ընթերցողը չունի իսթիտոսալրոսի մասին խոսողը: Եվ նրա վրա պարտավորություն կար ոչ միայն պատմել, թե ինչ են հանքային ահագին կրիաները, այլև գրավել գրագետներին դեպի գիրքը, դեպի ամսագիրը: Իսկ դրա միակ միջոցն էր տալ ժողովրդին թեթև ընթերցանություն նյութ, գեղարվեստական գրականություն: Մեզանում չկար և չէր կարող լինել այդպիսի բան, ուստի պետք էր դիմել թարգմանություններին: Այդպես էին անում թուրքահայերի մեջ շատերը, այդպես էր անում և «Հյուսիսափայլը» մեզ համար: Նազարյանցը մեծ ուշադրություն է դարձնում և թարգմանական վեպի վրա: Նա է այդ ասպարեզում ամենից շատ աշխատողը: Վեց տարվա ընթացքում նա թրթրում էր եվրոպական գրականությունը, ընտրություններ էր անում իր թարգմանությունների համար:

Մեծ տարօրինակություն է երևում այդ ընտրությունների մեջ: Շատ են այնպիսի պատմվածքներ, վեպեր, հոդվածներ, որոնց Նազարյանցը կարող էր և չպիտի թարգմաներ: Բայց կան և այնպիսի թարգմանություններ, որոնք ավելորդ չեն ոչ մի գրականության մեջ: Մարդ զարմանում է, մոտիկից ծանոթանալով «Հյուսիսափայլի» թարգմանությունների կույտի հետ: Մեր առջև երևան են գալիս այնպիսի գործեր, որոնք կարող են մեզ ուղղակի թելադրել, թե Նազարյանցը գրական ոչինչ ճաշակ չունի. ապա հանդիպում ենք այնպիսի գործերի, որոնք ցույց են տալիս, թե Նազարյանցը ոչինչ հասկացողություն չունի իր ընթերցողի պահանջների մասին: Սակայն գալիս են և այնպիսի գործեր, որոնք պարզ ապացուցում են, որ Նազարյանցը շատ լավ ծանոթ էր եվրոպական գրականության և գիտեր պատվաբեր ընտրություններ անել նշանավոր հեղինակություններից:

Այս հակասությունները իսկ որ զարմանալի են: Չարժեր թարգմանել, օրինակի համար, «Շեյխը և նրա դուստրը» (1858, № 1) և դրա նման ուրիշ շատ բաներ, որոնք ցրված են «Հյուսիսափայլի» տետրակներում: Գրանք ճաշակի պակասություն են ցույց տալիս: Ընթերցողների պահանջները չհասկանալու արդյունք են այնպիսի ահագին թարգմանություններ, ինչպես են «Մարկո Տուլիոս Կիկերոնի ատենական ճառերը ընդդեմ Լ. Կատիլինայի», «Ատենարանություն Կիկերոնի վասն Ամերիացի Սեբոստ Բոսկիոսի», «Կիկերոնի լեկոսը կամ վասն բարեկամության ճառ», «Ներսես Լամբրոնացու ատենական խոսքը Տարսուսի Տիեզերական (?) ժողովի մեջ»: Գրանք մեռած ու անպտուղ նյութեր էին, ոչ ոքի հետաքրքրություն չարժել չէին կարող և ապահովապես գտաապարտված պիտի լինեին անուշադրության, թեև այնքան մեծ տեղ էին զբաղում «Հյուսիսափայլի» նիհար տետրակների մեջ: Բայց ահա այդպիսի

անպտուղ թարգմանությունների շարքում ձեր աչքին են ընկնում Շիլլերը, Ալֆրիդին, Քալդերոնը, և դուք խնայե՛ք, որ նազարյանցը գլխական լայն զարգացում ունի, գոթարներ ընտրել էլ գիտե՛ք:

Փորձենք բացատրել այս տարօրինակությունների պատճառը: Ինչո՞ւ այդքան վայրիվերո են թարգմանությունները, ինչո՞ւ այդքան պատահական բնավորություն են կրում, և թուրքը աննշանից դեպի լավը, հարկավորից դեպի անպետքը այնքան աչքի ընկնող է:

Այս հարցերը լուծելու համար մենք պիտի ի նկատի առնենք մի շարք հանգամանքներ: Ամենից առաջ հիշատակենք այն, որ անպտուղ թարգմանությունները պատահում են «Հյուսիսամերիկյան» առաջին տարիներում, երբ նազարյանցի հրապարակախոսությունն էլ ավելի վերացական բնավորություն ունի, ավելի ընդհանուր քարոզչական կնիք է կրում առանց կյանքի փաստերին շատ մոտենալու: Հետզհետե առաջ գնալով նազարյանցը, ինչպես տեսանք, մոտենում էր ժամանակակից հարցերին. աշխարհայեցողության զարգացում էր դա, որ ազդեց և թարգմանությունների վրա: Եվ մենք տեսնում ենք, որ ներսես Լամբրոնացու թարգմանիչը 1864-ին տալիս է կտորներ Բեկի «Պատմություն քաղաքակրթության Անգլիայում» հռչակավոր գործից: Այդ գեղեցիկ գիրքը մինչև այսօր էլ անծանոթ է մնացել հայ ընթերցողին. և միայն նազարյանցն է մեղանում, որ գոնե մի քանի բան թարգմանել է նրանից: Աստիճանաբար զարգացման, դեպի ժամանակակից կյանքը դիմելու նշաններ են և ժամանակակից հերոսների՝ կոմս Կավուրի և Գաբրիելի կենսագրությունները, որոնք տպագրվեցին «Հյուսիսամերիկյան»:

Գեղարվեստական գրվածքների ընտրության մեջ նազարյանցը դեկավարվում էր այսպիսի սկզբունքով. տալ նախ և առաջ այնպիսի գրվածքներ, որոնք կարող են ավելի հասկանալի լինել հայերին. այս է պատճառը, որ նազարյանցը ավելի ուշադրություն էր դարձնում արևելյան կյանքից վերցրած գրույցների և պատկերների թարգմանության վրա: Բացի արևելյան լինելուց, այդ գրույցներն ու պատկերները նազարյանցի համար այն առանձին նշանակությունն էլ պիտի ունենային, որ դրանց մեջ սովորաբար դրված է լինում բարոյական-խրատական տենդենցիա: Նազարյանցը իր ամբողջ գործունեությամբ ցույց էր տալիս, որ գրողի առաջին պարտքն է այդպիսի տենդենցիաներ տարածել լինելով խիստ պահանջների տեր, լինելով մանավանդ և ամենից շատ մի քրիստոնյա մարդ, նա վարդապետել, կրոնի հզոր ազդեցությունը բարձրացնել էր սիրում: Սաստիկ դատապարտելով ֆրանսիական մեծ հեղափոխությունը այն պատճառով, որ նրանից առաջ և նրա ժամանակ «անաստվածություն» էր քարոզվում, նազարյանցը, բնականաբար, պիտի մեծ համակրությամբ վերաբերվեր հեղափոխությունից հետո երևան եկած այն գրականության, որ ձգտում է մարդկային միտքը նորից տանել դեպի հինը, ավանդականը, մանավանդ բարձրացնել քրիստոնեության նշանակությունը: Եվ նա թարգմանում է Շատոբրիանի «Աթալան», «Բենեն», թեև հռչակավոր ֆրանսիացու՝ կաթոլիկությունը և քրիստոնեությունը դրվատող այս գործերից առաջինն արդեն երեք անգամ թարգմանված էր հայերենի:

Քրիստոնեական բանաստեղծության ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկն էր սպանիացի կաթոլիկ հոգևորական Քալդերոնը, որ ապրում էր XVII դարում: Նրա բազմաթիվ հեղինակությունների մեջ շատ նշանավորներից մեկն է «Հաստատամիտ արքայազն» ողբերգությունը, որի մեծ մասը նազարյանցը թարգմանել է ոտանավորով: Ուշադրության արժանի է հետևյալ խիստ բնորոշող հանգամանքը: Ընդհանուր գրականության պատմության հայտնի

հեղինակ Շերրը, խոսելով Քալդերոնի այդ երկի մասին, բերում է գերմանացի Շաքբի կարծիքը, թե այդ զարմանալի ողբերգության պես մի բարձր բան դեռ չի տվել քրիստոնեական բանաստեղծությունը: Շերրը համաձայն է այդ կարծիքի հետ, թե «քրիստոնեական բանաստեղծություն» անունը հասկացվի ինչպես հարկն է: Նազարյանցն էլ բերում է Շաքբի կարծիքը, բառացի կրկնում է (սակայն իբրև սեփական դատողություն) Շերրի խոսքերը, որոնք կարող են ընդունվել իբրև անպայման գովասանություն: Մինչդեռ Շերրը բոլորովին այդպես չէ վերաբերվում սպանիացի բանաստեղծին. նա բացատրում է և այն, թե ինչպես պետք է հասկանալ «քրիստոնեական բանաստեղծություն», ասելով. «միայն հատուկ կաթոլիկական բանաստեղծությունը կարող է գեղեցիկ և բարձր համարել այն, որ հաստատամիտ արքայազնը իր հավատի պատճառով ողբ-ողջ փոռում է աղբակույտի վրա»: Այդ տեսարանը նա ուղղակի անվանում է «զղվելի»: Նազարյանցը ոչ միայն բաց է թողել Շերրի այդ բացատրող խոսքերը, այլև թարգմանել է «զղվելի տեսարանը», ցույց տալով, որ ինքը համաձայն չէ ողջամիտ քննադատության հետ և, ընդհակառակն, շատ գեղեցիկ է համարում այն, ինչ զղվելի է գերմանացի նշանավոր պատմաբանի համար: Ձե՞ որ աղբակույտի վրա ողջ-ողջ փոռող արքայազնը քրիստոնեական գաղափարն էր բարձրացնում:

Բացի Քալդերոնից, ոտանավորով թարգմանություններ արել է նազարյանցը և ուրիշ հայտնի հեղինակություններից: Այսպես, նա ունի հայտնի իտալական բանաստեղծ Ալֆրիդիի հայտնի ողբերգություններից մեկը, «Փիլիպպոս Սրկորդ», ինչպես նաև քիչ հայտնի Քաստիի (նույնպես իտալացի) «Նոստուն անասունքը», մի այլաբանական գործ, որ տեղ է գտել գրականության պատմության մեջ, իբրև մարդկային բացասական հատկությունների հաջող պատկերացում: Ալֆրիդիի և Քաստիի այդ գործերն էլ ամբողջովին չեն թարգմանված, ոտանավորը անհանգ է:

Գերմանական երկու հռչակավոր բանաստեղծները՝ Գյոթեն և Շիլլերն, իհարկե, ամենից շատ պիտի սիրելի լինեին նազարյանցին: Նա տալիս է հոգվածներ այդ երկու մեծ բարեկամների մասին, բայց Գյոթեից ոչինչ չէ թարգմանվում «Հյուսիսամերիկյան» մեջ, մինչդեռ Շիլլերը մեծ տեղ ունի այնտեղ: 1859-ին նազարյանցը տալիս է Շիլլերի «Թուրանդոթը»: Բայց դա Շիլլերի սեփական հեղինակությունը չէ, այլ մշակություն իտալացի Գոցցի անունով հեղինակի մի գրվածքի: Տալ հայ ընթերցողին միայն այդ փոխառությունը կլինի մի վիրավորական անուշադրություն դեպի գերմանացի հանճարը, որ այնքան գեղեցիկ գործեր ունի ստեղծագործած: Եվ նազարյանցը այդ վիրավորանքը չէ հասցնում ազատության մեծ երգչի հիշատակին: 1861 թվականի հունվարի համարում նա, սովորականի պես, նոր տարվա գրույց է սկսում իր ընթերցողների հետ, գրույց, որ ինչպես և միշտ, հրավիրում էր նրանց առաջ գնալ, քաղաքակրթվել: Բայց այս անգամ նա կարճ է կտրում իր խոսքը և ասում է. «Չեմ կարող արձակել ձեզ իմ մոտից, առանց մեծարելու ձեզ, իմ սրտի սիրածքը, մի եղբայրասիրական ընծայով»: Եվ այդ ընծան Շիլլերի «Մեսինական հարսն» է, թարգմանված ամբողջովին, ոտանավորով: Արժանավոր ընծա: Նորից նազարյանցը խոսում է Շիլլերի և հատկապես իր թարգմանած երկի մասին, խոստանում է շուտով տալ Շիլլերի ամենագեղեցիկ գործն էլ, «Վիլհելմ Տելլը», բայց այդ խոստումը չէ կատարում:

Այդ ոտանավոր թարգմանությունների արժանիքների հարցին դիմելով, մենք աչքի առաջ ենք բերում այն, որ նազարյանցը բանաստեղծ չէր, որ նա

առհասարակ ունեւր մի ծանր, արհեստական լիզու, սիրում էր երկար, ման-
վածապատ նախադասութիւններ և պարբերութիւններ, նույնիսկ արձակ թարգ-
մանութիւնների մեջ էլ շատ էր ենթարկւում բնագրին, շատ էր հետևում բա-
ռացիութեան: Այդ բոլոր անաշոյ հանգամանքների մեջ մենք նրա ոտանավոր
թարգմանութիւնները համարում ենք բավական աշոյղած: Շատ են այնպիսի
տեղեր, որ Նազարյանցը ավելի պարզ, հասկանալի, ավելի ազդու ու ապա-
ւորիչ լեզու ունի, քան նույնիսկ արձակ ինքնուրույն գրութիւնների մեջ: «Մե-
սինական հարսի» առաջաբանի մեջ Նազարյանցը խոստովանում է, որ ինքը,
գոնե առայժմ, անկարող է շափուլ, հանգամանակաւ ոտանավորով թարգմանութիւն
կատարել և այդ բանը թողնում է իրանից ավելի ճարտարներին: Բայց ավելի
ճարտարները չեղան մեզանում մինչև այսօր. կլասիկները թարգմանվել են և
պիտի թարգմանվեն նույն արձակ ոտանավորով. մեր լեզվի աղքատութիւնը
երևի չէ էլ կարող թույլ տալ բանաստեղծական մեծ գործերի հանգամանակաւ թարգ-
մանութիւնը: Նույնիսկ անհամեմատ հարուստ ու կանոնավորված գրաբարը
ձեռքի տակ ունեցող այնպիսի մի տաղանդ, որպիսին էր Հ. Արսեն Բագրատու-
նին, Միլտոնը թարգմանում էր «Հայկական շափուլ», առանց հանգերի:

Եթե չենք մոռանում այն հանգամանքը, որ «Հյուսիսամերիկայի» առաջին
աշխատակիցը ինքը, Նազարյանցն էր, եթե աչքից չենք զցում, որ ամսագրի
շատ տետրակներ միայն և միայն Նազարյանցի հոգովածներից էին կազմվում,
այն ժամանակ կտեսնենք, որ ոտանավոր թարգմանութիւնները, որոնց վրա
պետք էր ահագին աշխատանք գործ դնել, ավելորդ զարդեր էին այդ զարմա-
նալի աշխատավորի համար: Նույն այդ հանգամանքները արդարացում, հաս-
կանալի են դարձնում նրա տարօրինակութիւնները գեղարվեստական երկերի
ընտրութեան գործում: Մարդը չէր կարող բավականաչափ ազատ ժամանակ
ունենալ ավելի լավ ընտրութիւններ անելու համար. Քաղերանի, Շատորբիա-
նի, Շիլլերի, Ալֆիերիի գործերը լավ ապացույցներ են, որ նա կարող էր լավ
ընտրութիւններ անել, բայց հնարավորութիւն չուներ անելու. ամսագիրը
հրատարակվում էր, պետք էր նյութ հասցնել նրան, իսկ հասցնողը գլխավո-
րապես նա էր. էլ ե՞րբ և ինչպե՞ս ընտրութիւն անել: Կիկերոնի թարգմանու-
թեան համար Նազարյանցը շատ անգամ է հանդիմանութիւններ լսել*. բայց
պարզ չէ, որ եթե նա տվել է Կիկերոն, պատճառն այն է, որ լատիներենի
ուսուցիչ էր կազարյան ճեմարանում. աշակերտների հետ անցածը նա, երևի,
թարգմանում էր ձեռաց հայերենի— 1864 թվականին համարյա բոլորովին
մենակ մնալով, կորցնելով հույսը, թե կարող պիտի լինի շարունակել ամսա-
գիրը, Նազարյանցը սկսում է մեծ թարգմանութիւններ տալ Ֆրանց Հոֆմանից,
Մենք հիշեցինք այստեղ և կարող էինք հիշել միայն գլխավոր թարգմա-

նական գործերը, այնպիսիները, որոնք իրավ որ արժանի են ուշադրութեան:
Ձանց ենք անում ուրիշ բազմաթիւ թարգմանական հոգովածներ, կենսագրու-
թիւններ և այլն, որոնք վկայում են Նազարյանցի անգուլ աշխատասիրութեան
մասին: Ի միջի այլոց, կհիշատակենք այստեղ մի սիրուն գործ էլ՝ «Ամենայն
ինչ ստութիւն և խաբուսութիւն (անցած ու ներկա օրերից առած պատկերներ)»:

* Պատասխանելով մի այդպիսի հանդիմանութեան, Նազարյանցն ասում է, թե Կիկերոնի
ճառերը հոյակապ են և «ընտիր արվեստահայտութեան բանախոսութեամբ» էլ կրթվում, դաստիարակ-
վում է մի ժողովրդի սիրտը: Խնդիրը, սակայն, ճառերի հոյակապ և կրթիչ լինելու մասին չէ
այլ այն մասին, որ դրանք ավելորդ, անհասկանալի էին մի ժողովրդական ամսագրում...

որի մեջ կյանքի բազմաթիւ տխուր ու ողբալի հակասութիւններն են պատ-
կերացած բանաստեղծական ոճով*:

Այժմ քիչ էլ խոսենք թարգմանիչ-աշխատակիցների մասին:
«Հյուսիսամերիկայի» մեջ թարգմանիչ հանդիսացողները թվում, բնականա-
բար, ավելի շատ էին, քան ինքնուրույն գրողները: Մենք կհիշենք դրանցից
մի քանիսին:

Միքայել Նալբանդյանցը թարգմանական գործով օգնել է ամսագրին մի-
այն առաջին տարում («Գրքունի գր-Շերեղ», արտատպւած և առանձին գրք-
քով): Նույն առաջին տարում հանգես է գալիս իբրև թարգմանիչ Ստեփան Ստե-
փանոսյան անունով մի ուսանող. դա հետո «Հայկական աշխարհ» ամսագրի
խմբագիր և հայտնի հոգևորական Խորեն Ստեփանեն էր, որ աչքի ընկնող
մասնակցութիւն ունեւր թե «Հյուսիսամերիկայի» հետագա տարիներում և թե
«Կոունկ» ամսագրի մեջ (բացի թարգմանութիւններից դրում էր ոտանավոր-
ներ էլ, երբեմն «Իշխան Բագրատունի» կեղծ անունով):

«Հյուսիսամերիկայի» աշխատակիցների թիւում էր և Ռաֆայել Պատկանյանը
(«Միքայել Վայելլյան» կեղծ անունով). նա տվել է տաղանդավոր գրող Հաու-
րի «Ուխտավորք» վեպի թարգմանութիւնը, որ հետո լույս տեսաւ և առանձին
հրատարակութեամբ. բացի դրանից, Վայելլյանը տպագրեց և Նասյունեն մեծի
մանրամասն կենսագրութիւնը:

1859 թվականին Նազարյանցն ստանում է Հին-Նախիջևանից իրան անծա-
նօթ մի մարդուց մի քանի ոտանավորներ, որոնցից երկուսը թարգմանութիւն
էր իրերից: Անծանօթ պարոնը, Գեորգ Բարխուդարյան անունով, հայտնում էր
իր նամակի մեջ, որ իր բանաստեղծական փորձերը տպել էր «Մեղուի» մեջ,
բայց այժմ այնքան զղված է այդ լրագրից, որ կարծում է, թե ոտանավորներ
գրելու կամ թարգմանելու շնորհք չունի հենց միայն այն պատճառով, որ «Մե-
ղուն» է նրանց տպագրում: Ուստի ուղարկում էր նոր բանաստեղծութիւնները
Նազարյանցին, խնդրելով նրա դատաստանը, որից կախված կլիներ այն հար-
քը, թե պե՞տք է շարունակել, թե ոչ: Եվ Նազարյանցը արդար դատաստան է
անում: Հրատարակելով այդ բանաստեղծութիւնները, նա պարտք համարեց
հատարակութեան ուշադրութիւնը հրավիրել «այդ մտածող և քանքարավոր
հայի վերա»: Խորհրդավոր էր Նազարյանցի համար մանավանդ այն, որ այդ
հայը գրում էր Հին-Նախիջևանի պես մի հեռավոր ասիական անկյունից: Բայց
Գեորգ Բարխուդարյանը այդ քաղաքից չէր. նա Դորպատի ուսանողներից էր
և Հին-Նախիջևանում գտնվում էր ուսուցչութեան պաշտոնով: Ինչևիցե, Գեորգ
Բարխուդարյանը այնուհետև դառնում է «Հյուսիսամերիկայի» երկրորդ
աշխա-
տակիցներից մեկը, իսկ ապագայում անուն է վաստակում իբրև Շիլլերի և
Կոստի գործերի թարգմանիչ:

1864 թվականի «Հյուսիսամերիկայի» գեղարվեստական բաժնի դարձը կապ-
վում է կերմոնտովի շքանալ «Դե» պոեմի ամբողջական թարգմանութիւնը: Մի
փոքրիկ առաջաբանի մեջ Նազարյանցը ցավ էր հայտնում, որ «Հյուսիսամերի-
կայի» մինչև այդ չէ կարողացել ծանոթացնել իր ընթերցողներին ուսաց գրա-
կանութեան հետ: Եվ իրավ, դա մի մեծ պակասութիւն էր. եթե չհաշվենք կա-

* Թարգմանութիւնների թիւում ենք դնում այս գործը, թե չէ հիշված, թե դա թարգմա-
նութիւն է: Պետք է նորից շեշտել, որ Նազարյանցը և նրա ուրիշ ժամանակակիցները միշտ չէին
լույս տալիս, թե այս կամ այն գրվածքը թարգմանութիւն է. այնպես որ շատ դեպքերում ըն-
թերցող տարակուսանքի մեջ է ընկնում և ինքը պիտի հավանականորեն որոշեր, թե որն է թարգ-
մանութիւն և որը՝ ինքնուրույն գրվածք:

րամիջինի «Թշվառ Եղիսաբեթը», ամսագրի էջերում տեղ չգտավ այն գրականությունը, որ ուներ Տոլստոյը, Տուրգենևը, Գոստոևսկին, Գոնչարովը, Օստրովսկին: Այդ պակասությունը լրացվում էր այժմ կերմոնտովի պես մի նշանավոր բանաստեղծի ամենագեղեցիկ գործերից մեկի թարգմանությամբ:

Թարգմանիչը մի շնորհալի երիտասարդ էր, Մանուկ Սաղաթյան, Մոսկվայի կազարյան ճեմարանից: Կերմոնտովի այդ վերին աստիճանի վսեմ բանաստեղծական երկի թարգմանությունը Սաղաթյանը կատարել է այնպիսի մեծ շնորհքով, որ կարելի է մի գեղեցիկ հաղթանակ համարել մեր լեզվի համար: Այսօր էլ այդ թարգմանությունը լավագույնն է համարվում մեզանում, թեև «Դևը» ունի մի քանի հայերեն թարգմանություններ: Ափսոս որ մահը վերջ դրեց այդ հուսատու երիտասարդի ծաղիկ հասակին. նա վախճանվեց 1866 թվականին Երևանում:

Այս գեղեցիկ գործի հիշատակությամբ էլ վերջացնենք «Հյուսիսափայլի» թարգմանական մասը և դիմենք ինքնուրույն գեղարվեստական գրականության:

Տեսնում ենք այդ գրականության երեք ճյուղերն էլ՝ վեպ, թատերագրություն և բանաստեղծություն: Վեպը բոլորովին նոր բան էր մեզանում և իր առաջին քայլերն էր անում «Հյուսիսափայլի» էջերում, մինչդեռ բանաստեղծությունը վաղուց գոյություն ուներ, իսկ թատերագրությունը սկիզբ էր առնում «Հյուսիսափայլից» դուրս:

Ասելով վեպի մասին, թե նա բոլորովին նոր էր, առաջին քայլն էր անում, մենք չենք ուզում ասել, թե «Հյուսիսափայլից» առաջ վեպեր չկային: Մենք մի բոսպի անգամ չենք մոռանում Աբովյանի «Վերջ Հայաստանին», որ գրված էր 1840-ական թվականների սկզբում և տպագրությամբ լույս տեսավ 1858-ին: Զենք մոռանում նաև Մեսրոպ Թաղիադյանի վեպերը, որոնք հրատարակվեցին Հնդկաստանում, ինչպես չենք մոռանում և այն, որ Վիեննայի Միլիթարյաններն էլ մի քանի ինքնուրույն վեպիկներ էին տպագրել: Բայց ի՞նչ բաներ էին դրանք:

«Վերջ Հայաստանին» առաջին հայկական վեպն է ժողովրդական լեզվով, դա անկասկած է: Բայց շմոռանանք և այն, որ իսկական վեպ լինելուց առաջ Աբովյանի երկը «հայրենասերի ողբ» է: Այս բաները ինքնուրույն քայլն էր լավ բնորոշում են գրվածքը: Աբովյանը վերցրել է հայ ազգի պատմական սեփականագրից մի սև գիծ և դրա վրա թափել է իր սրտի ամբողջ կրակը, ամբողջ զգացմունքները: Իբրև իր հայրենիքի ցավերով տոչորվող մի մարդու հառաչանքներ, «Վերջ Հայաստանին» աննման է: Նա զուտ ժողովրդական մի արտահայտություն է: Ժողովուրդն ասում է. «Դարդ ունեցողը աշուղ կկտրի»: Այս ասացվածքի մեջ մի նահատակ ազգի ամբողջ հոգեբանությունն է գրած: «Աշուղ կտրել» նշանակում է խոսել, անվերջ խոսել ու կրկնել, նկարագրել մի ցավ, մի արկած, սրտի մի գործ: Եվ Աբովյանը ճիշտ որ մի այդպիսի աշուղ էր: Գերագույն համաշխարհային մի առարկա ունի նա, և այդ առարկան՝ արյունոտ, հարստահարված, դարավոր խեղճությունից թշվառացած ժողովուրդն է:

Այդ առարկան խոսեցնում է Աբովյանցին մի տարերային ուժով. նա պատմում է երկար, անվերջ, նկարագրում է, պայծառ, բառեր է կուտակում, ժողովրդական շափաղանցությունների է դիմում: Բազմաթիվ են այն էջերը, որոնք շատախոսություն են ներկայացնում, մի շատախոսություն, սակայն, որ կրակոտ զգացմունքների բուռն արտահայտություն լինելով, ավելորդ չէ համարվում ընթերցանության ժամանակ: Ով մի անգամ կարդա «Վերջ Հայաստանին», նա չի մոռանա սրտի արյունով գրած այդ պատմությունը: Բայց մի անգամ կարդալ նրան ծայրեծալը, այնքան շատ են ավելորդությունները: Գեղարվեստական համաշխարհային շեղումները, լեռնային հորդ վտակի պես ոչինչ արգելք ու սահմանափակում չճանաչելով, ողողել են երկար էջեր, կուտակել շատ ավելորդաբանություններ, աշուղական ազատություն, շեղումներ:

Մեզ համար դրանք թանկ են, որովհետև հոգու խորքից են բխած և մեր հոգու խորքն են թափանցում, մեր սեփական զգացմունքներն են: Բայց գեղարվեստի պահանջների տեսակետից դրանք արդեն թուլություններ են, միաժամուռու անտեղի ավելորդություններ, որոնք իզուր ծանրաբեռնում են պատմվածքը, վնասում են ամբողջությունը: Եթե «Վերջ Հայաստանին» իր բոլոր պակասություններով հանդերձ ոգևորում ու հուզում է, դրա պատճառն այն է, որ նրան ստեղծողը գտնվել է իսկական համաշխարհային մեջ, ամբողջովին գերի իր մարդու, սքանչելի հայրենասիրական զգացմունքներին, որոնք տարածվել, լայնանալ, ծովանալ են ուղեցել և դարձել են այնքան երկարաբան, կրկնություններով, բառակույտերով այնքան հարուստ: Համաշխարհային արտահայտություն՝ ահա դուրսով ուժը: Բայց դա մի գրություն է, որին միշտ չէ արժանանում ստեղծագործողը: Ապացույց՝ Աբովյանի մյուս վեպը, «Օմսաննա»: Դժվար է հավատալ, թե այդ խեղճ ու կրակ գործը Աբովյանի գրչից է դուրս եկել. այդտեղ կրակված սիրտ չկա, այդտեղ ամեն ինչ սարքված է. թեև բառերը, նկարագրությունները միևնույն են, բայց տպավորություն չեն գործում:

Եվ այսպես, «Վերջ Հայաստանին» իր ամբողջության մեջ դեռ իսկական վեպ չէ եվրոպական մտքով, այլ հայրենասիրական զեղումների մի եռացող խորձանք է, դարերով լացած մի ժողովրդի ողբն ու կոծը, որի համար հարկավոր էլ էր շատախոսությունը, քանի որ անհուն տառապանքները մի ասիական ժողովրդի բերանում չեն կարող կարճ լինել, առանց շափաղանցությունների, առանց խիտ գույների: Գա մի կրակված մետեղ էր, որ հանկարծ երևաց մեր հորիզոնում և այլևս չկրկնվեց: Չէր էլ կարող կրկնվել, որովհետև այնպիսի բարձր, սրբազան համաշխարհային, որ թելադրեց Աղասու պատմությունը, շատ հազվագեպ, շատ բացառիկ երևույթ է. նա մյուս անգամ չայցելեց նույնիսկ Աբովյանին, ո՞րք մնաց թե ուրիշներին: Իբրև այդպիսի բացառիկ գրության արգասիք, «Վերջ Հայաստանին» մինչև այժմ էլ մի հատիկ է մեր գրականության մեջ՝ բանաստեղծական մի ըմբոստ զեղմունք, որ կայրե միշտ իր պակասությունների հետ, բայց իբրև գեղարվեստական գործ՝ անմշակ ու թույլ կմնա:

Գալով Թաղիադյանցին և Վիեննայի Միլիթարյաններին, որոնք մի քանի վեպեր կամ գոնե վիպական գրվածքներ հրատարակեցին Աբովյանի վեպի օգնությամբ առաջ, մենք դժվարանում ենք դրանց մեջ որևէ ինքնուրույնություն գտնել: Նախ և առաջ դրանք բոլորը, առանց բացառության, վերցրած են պատմական հեռավոր, մութ, շուտամոռասիրված անցյալից և երկրորդ՝ գրված են հատուկ ազգասիրական նպատակով. լի են երկար ու բարակ, արհեստական մեծախոսություններով, շինծու, անհետաքրքրական գրություններով: Թաղիադյանցը, բացի դրանից, գրում էր գրաբար լեզվով:

Ահա թե ինչու ենք ասում, որ «Հյուսիսափայլի» մեջ մեր վիպագրության առաջին քայլերն ենք տեսնում: Թույլ, դողդոջուն են այդ քայլերը. վեպ տարվա ընթացքում «Հյուսիսափայլը», շնայած որ իր շուրջն ուներ մեր այն ժա-

մանակիւ կրթված, առաջալոր երիտասարդութիւնը, տվեց երկու վեպ, երկուսն էլ կիսատ: Առաջինը տպվեց 1859 թվականին, դա Միքայել Նալբանդյանցի «Մեռելահարցուկն» էր:

Նշանավոր է, որ առաստախերի մեջ ժամանակակից վեպի սկիզբը դնողը Նալբանդյանցն էր: Դեռ 1857 թվականին, երբ «Վերք Հայաստանին» չէր հրատարակված, Նալբանդյանցը տպագրել էր տալիս «Մինին խոսք, մյուսին հարս» վեպը, որի նյութը վերցրած էր Նոր-Նախիջևանի ժողովրդական կյանքից: Նա լավ էր ըմբռնել, որ վեպի համար պետք է դիմել ժողովրդին և դիմեց, նկարագրելով նրա սովորութիւնները: Բայց այդքանը բավական չէր. Նալբանդյանցը վիպական ստեղծագործութիւն ընդունակութիւն չունեւ և «Մինին խոսք, մյուսին հարս» գործը շատ թույլ դուրս եկավ, այնպես որ ոչ մի քննադատութիւն չէր դիմանա: Նույն փորձը արավ նա երկու տարուց հետո, բայց նրա «Մեռելահարցուկը» ավելի ևս թույլ ու աննշան մի բան էր:

Վեպի արտաքին նշաններ, այո՞, տեսնում ենք. կան նկարագրութիւններ, խոսակցութիւններ, կա ինտրիգա, մի քանի կտորներ ցույց են տալիս, թե հեղինակը միտք է ունեցել ժամանակակից քաղաքային կյանքից պատկերներ հանել: Բայց դրանք բոլորը խաբուսիկ նշաններ են, ամբողջութիւնը մի վայրիվերո գրվածք է, որ արժանի չէ վեպ կոչվելու: Զարմանալի է, որ ոտանավորի, Ֆելիետոնի մեջ տաղանդ ունեցող Նալբանդյանցը բոլորովին բռբրել էր վիպագրութիւն մեջ. տաղանդը չկարողացավ գոնե ծածկել այն խոշոր պակասութիւնները, որոնց նկատելու համար բավական էր լինել մի շատ կարողացած, զարգացած մարդ: Գործողութիւնը անվերջ ձգձգված, անկապ, բաղամաթիլ շեղումներով և մանրամասնութիւններով ձանձրալի դարձրած: Զգիտենք ու՞մ և ինչի համար ամբողջ գլուխներ են նվիրված կախարդական գործերի նկարագրութիւններին, երկար դատողութիւններ են դրված փիլիսոփայական քարի, ալիսմիայի մասին: Հեղինակը հրապարակախոս է և յուրաքանչյուր քաջափոխում հասարակական երևույթներին, ազգային պակասութիւններին վրա երկար ու բարակ ճառեր է կարդում:

Ընդհանուր տպավորութիւնը այնպես է, որ միշտ մարտնչող, միշտ վառվրտուն հոգու տեր Նալբանդյանցը կամեցել է վեպի միջոցով էլ մերկացնել մեր կյանքի արատները, բայց ոչինչ հաջողութիւն չէ ունեցել. և այն մարդը, որ հրապարակախոսութիւն մեջ այնքան ինքնավստահ էր, այնքան ուժեղ իր գնեքերով և բարձր՝ իր հակառակորդներից, վեպի մասին ունի վերին աստիճանի միամիտ-երեխայական հասկացողութիւն. նա կարծում է, թե աչքտեղ կարելի է խոսել և երգի մասին, և Աբովյանի ու նրա վեպի մասին, ինչպես նաև դեռ Մեսրոպ Թադիստի կենսագրութիւնը, շնայելով, որ ոչինչ կապ չկար այդ առարկաների և վեպի մեջ: Պակասը լրացրել է այն, որ Նալբանդյանցը չէ կարողացել զսպել իր կրքերը և նկարել է իր վեպի մեջ կենդանի դիմքեր: Այսպես, մենք տեսնում ենք Մոսկվայի մի հայտնի հայ հարուստի ընտանեկան կյանքը, ներկայացրած ամենավատ գույներով: Հայկական վիպագրութիւնը, դեռ իսկական գեղարվեստի ծաղիկներ չտված՝ աճեցնում էր պակավիլի որոմները: Հայ մեծատունը, իհարկե, անտարբեր չմնաց. նա էլ իր ճիրմաները սրեց «Հյուսիսամիայի» դեմ: Նազարյանցի մի քանի ակնարկներից սպար կարելի է հասկանալ, որ Հովսեփ Զեքեղյանցը այդ հարուստի գործիքն էր:

«Մեռելահարցուկը» կիսատ էլ մնաց, չվերջացավ: Ոչինչ կորուստ չունեւ դրանից հայոց աղքատիկ գրականութիւնը: Քաղաքային կյանքից վերցրած վեպը կատարելապես անաջող էր. մնում էր գլուխկանկար կյանքին դիմել: Գյու-

ղայան վեպի ճանապարհը բավական հարթել էր Աբովյանը: Եվ այդ ճանապարհով առաջին գնացողը Պերս Պոռչյանցն էր, որ 1860-ին «Կոտնիկ» մեջ տպեց իր «Սոս և Վարդիթերը»: Այդ «ազգային վիպասանութիւնը» լավ ապացուցանում է այն, ինչ վերևում ասացինք, «Վերք Հայաստանի» մասին: Պոռչյանցը հետևում էր Աբովյանին, բայց դա մի վտանգավոր ճանապարհ էր: Աբովյանին նմանվելու համար պետք էր լինել Աբովյան, այն էլ «Վերք Հայաստանի» Աբովյան: Իսկ աշակերտը չունելու ուսուցչի հափշտակութիւնը, հայրենասիրական բռուն, կրակոտ տենչերը: Աբովյանը իր հիմնական, մեծ գաղափարը՝ ազատասիրութիւնը զարգացրել էր գլուխկանկար աշխարհի մեջ, որը նկարագրել էր մանրամասնորեն, իբրև միջավայր: Պոռչյանցը կարծեց, թե ամենաաղիստվորը հենց այդ միջավայրն է և մի կողմ թողնելով իր ուսուցչի զլխավոր, կենտրոնական գաղափարը, սկսեց ամենայն բարեխղճութեամբ նկարագրել գլուխկանկար նիստուկացը, սովորութիւնները, հավատալիքները: Այդ շատախոսութիւնն է միակ նմանութիւնը Աբովյանին: Եվ մեր վեպը գարձավ ազգագրութիւն ստրուկ: Զուտ վիպականը մի ողորմելի աղքատիկ սիրահարական միամիտ արկած է, որի վրա բեռնավորված է ժողովրդի կյանքի մանրամասն տարեգրութիւնը: Մանր է այդ բնույթ, ոչինչ կապ չունի վեպի հետ, և ընթերցողը մի խեղճ Սոսի սիրահարական պատմութիւնը իմանալու համար պիտի կուլ տար այդ բարեկենդաններին, վարդավառներին երկար, մեծ պասից էլ երկար նկարագրութիւնները...

Ժողովրդական վեպը մի շատ ցանկալի ու գեղեցիկ երևույթ էր, բայց նա պետք է լինել վեպ և ոչ ազգագրութիւն, գեղարվեստ և ոչ արվեստական վարպետութիւն: Գյուղի կյանքը տալիս էր տիպեր, բնավորութիւններ, երևույթներ, որոնց նկարագրութիւն վրա պիտի կենտրոնանա գրողի ուշադրութիւնը: Այդ կողմից առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում «Հյուսիսամիայի» 1861 թ. համարներում տպված «Տեր Սարգիս» վիպասանութիւնը, հեղինակութիւն Գաբրիել Տեր-Հովհաննիսյանցի: Մի ուսանող էր այս հեղինակը, գյուղից դուրս եկած մի երիտասարդ: Եվ որպիսի՞ պարզութեամբ, որպիսի՞ խորք հումորով է նկարագրում նա գլուխկանկար աշխարհը:

«Տեր Սարգիսը», իսկապես, վեպ չէ, այլ պատկերների մի շարք, որոնք պատում են գյուղի քահանայի և ժամկոչի շուրջը: Այդ կենտրոնական անձինքը նկարագրված են շատ լավ: Տեր Սարգիսը մի տգետ, ծուլ գլուխկանկար քահանա է, որի համար այս աշխարհում ուրիշ շահ ու ձգտում չկա, բացի ուտելուց, խմելուց և փող գլխուց: Եվ այդ որովայնային իգևալը պաշտվում է ամեն տեղ և ամեն հանգամանքների մեջ: Հեղինակը տալիս է բոլոր փաստերն ու պոփրը գլուխկանկար այդ տիպը ամբողջովին հասկանալու համար: Ամենագնահատելի հանգամանքն այն է, որ հեղինակը երկար ու բարակ դատողութիւնների մեջ համարյա չէ ընկնում, նա միայն նկարագրում է հեղինակութեամբ, շատ չէ շեղվում պատմութիւն թելից: Տերտերից լավ է դուրս եկել գլուխկանկար ժամկոչ Միտուլին, մի ճարպիկ փորապաշտ, որ, շնայած իր ստոր պաշտոնին, իր մարմնական արատին, կարողանում է մի լավ ապրուստ ստեղծել գլուխկանկար աշխարհում: Նայելով այս երկու մարդկանց, որոնք ամբողջ գյուղի մեջ միակ են իրրև գրքի և գիտութիւն ներկայացուցիչներ, նայելով նաև միամիտ, տգետ ու հավատացող ժողովրդին, որ այս երկու մարդկանց նախիրն է կազմում, ցույց հուսահատական տպավորութիւն եք ստանում այդ գլուխկանկար պարզ, անփոխան անփոփոխ իրականութիւնից:

Գծրախոտաբար, հեղինակը իր ուշադրութիւնը միայն հոգևորականութիւն վրա է կենտրոնացրել. գյուղի աշխարհականները սովորի մեջ են մնացել:

եթե չլիներ այս պակասությունը, մենք «Տեր Սարգիս» վեպի մեջ պիտի ողջունեինք առաջին հայերեն իրական վեպը: Չէ կարելի այժմ էլ վառ հետաքրքրությունը չկարգալ գործակալի գյուղ գալը: Այդ առիթով հեղինակը բաց է անում մեր առջև այդ փոքրիկ իշխանավորների մի շարք քաջագործությունները: Ամեն տեղ հեղինակի ծաղրն է ընդգծում այլանդակությունները. ամբողջ գրվածքը տողորված է «Հյուսիսսփայլի» ոգով. խիստ աչք ծակող, խիստ խայտառակ գուններով են մերկացած հոգևորականության պակասությունները. որքան հրեշտավոր շախմատ է հասցրած ձրիակերությունը, որքան շատ կաշառքներ են ուտում, որքան անգթություն է մեծը իրանից ստորին ճնշում: Այն տեսարանները, ուր գյուղական միամիտ ու տգետ, բայց միևնույն ժամանակ կյանքի փորձից խորամանկություն, ստություն, հաճոյախոսություն և գողություն սովորած քահանա տեր Սարգիսը հանդիպում է իր իշխանավոր գործակալին, նկարագրված են զարմանալի գեղեցիկ ու բնական կերպով. երևում է, որ այդտեղ շատ քիչ է մտացածինը, որ անմիջապես իրականություն է եղել թելադրողը:

«Տեր Սարգիս» էլ, ինչպես ասացինք, չէ վերջացրած: Եվ շատ ամսուս նա ցույց էր տալիս, որ հայկական վեպն էլ պիտի գտնե բնականության, գեղարվեստական ճշմարտության ճանապարհը: Գաբրիել Տեր-Հովհաննիսյանցը ոչ միայն չվերջացրեց այդ «ազգային վիպասանությունը», այլև այնուհետև էլ, որքան մենք գիտենք, շիրտը շարունակել այսպիսի գրվածքներ: Այլապես իր ուսումը և գավառական բժշկի պաշտոնով ման գալով մեր երկրի շատ կողմերը, նա գրեց «Ճանապարհորդական տպավորություններ», որոնք, Քաջերունի ստորագրությամբ, տպագրվեցին մեր պարբերական հրատարակությունների մեջ. այդտեղ շատ հետաքրքրական և գնահատելի տեղեկություններ կան ժողովրդի կացության, մեր հնությունների մասին: Այսքանն էր «Տեր Սարգիս» վեպի հեղինակի գրական գործունեությունը*:

Գծվար, ծանր էր զարգանում մեր վիպագրությունը. գլխավորապես ազգագրական նպատակներին ստրկացած մնալով, նա երկար տարիներ քարջ էր տալիս մի խղճուկ ու անփառունակ կյանք, մինչև որ երևաց հայկական վեպի իսկական ծնող Բաճիկին:

Ավելի լավ բախտի տեր էր գեղարվեստական գրականության մյուս ճյուղը՝ թատերագրությունը: Նա անհամեմատ շուտ զարգացավ, իր հաջողություններով մոռացնել տվեց նույնիսկ վեպը: Սկզբից ևեթ թատերագրությունը սուսահայերի մեջ ընտրում է իր իսկական զարգացման ճանապարհը, շինծու անբովանդակ պատմական ողբերգությունների հետ ոտքի է կանգնում և առաջ է ընկնում կենցաղական կատակերգությունը. ժողովրդական կյանքից նա ընտրում է ծաղրելի և ծիծաղեցնող փաստեր ու հանգամանքներ, որոնք շոշափում են հասարակական և կուլտուրական հարցեր. հայր թատերագրության մեջ ավելի սուր դիտող էր, ավելի ընդունակ վերարտադրող, քան վիպագրության մեջ:

Այդ ճյուղից «Հյուսիսսփայլը» միայն մի գրվածք է տվել՝ «Հայոց ազգի լուսավորիչը», գործ Ա. Սուլթան-Շահի: Գրվածքը անվանված է «ազգային կյանքից առած նկարագիր». հեղինակը, նույնպես մեկը առաջադիմական գաղափարներով ոգևորված ուսանող երիտասարդներից**.

* Ներկայումս նա շարունակում է ծառայել իբրև գավառական բժիշկ:
** Անանիա Սուլթան-Շահ, բժշկություն սովորելով, մտավ կյանքի մեջ իբրև «Հյուսիսսփայլի» գավառականներին նվիրված հասարակական համակրելի գործիչ: Մինչև կյանքի վերջին ևս հաստատ մնաց իր համոզմունքների մեջ: Վախճանվեց Ղզարում երկու տարի առաջ:

ասում է, թե իր գործի մեջ ոչինչ մտացածին բան չկա, յուրաքանչյուր անձնավորություն սմաքուր խղճմտանքով առված է բուն ազգի անդամներից, որոնց ձեռքում էր այս բոլորի մեր ազգի գավառների կրթությունը: Տարաբախտաբար, այդ «սմաքուր խղճմտանքով առվելը» այնքան պարզ և ճիշտ է կատարված, որ ներկա ժամանակներում էլ ոչ մի գծվարություն չկա իսկույն հասկանալու, թե այդտեղ Սուլթան-Շահը նկարագրել է Գաբրիել վարդապետ Այվազյանին, նրա հիմնած Խալիբյան ուսումնարանը:

Մեզ հայանի է, թե «Հյուսիսսփայլի» խումբը որքան հակառակ էր այդ նախկին Մխիթարյան վարդապետին: Հակառակությունը, իհարկե, բխում էր գաղափարական հիմքերից: Այվազյանի կղերական-փառասիրական հակումները չէին կարող դուր գալ ազատ ու անկախ հայացքների տեր նոր սերունդին: Պարիզում նրա դեմ գինված էր և անողորմ արշավանքներ էր մղում Ստեփան Ռսկանը. Ռուսաստանում նույն անհամակրությունը, հակառակությունը յուրյց էր տալիս «Հյուսիսսփայլի» խումբը: Բայց Ռուսաստանը Ֆրանսիա չէր. այստեղ Այվազյանը ուներ դիրք, ուժ և կարողանում էր թույլ շտալ, որ իր հակառակորդները ազատ կերպով խոսեն իր մասին: Նա հայերեն գրքերի գրաքննիչ էր Թեոդոսիայում. այս պաշտոնը արդեն բավական շատ հարմարություններ էր տալիս նրան Պետերբուրգում, «Հյուսիսսփայլի» գրաքննության վրա ազդելու: Միքայել Նալբանդյանցը իր «Երկու տող» բրոշյուրի մեջ բացարձակ կերպով հայտարարում էր, թե ինքը Այվազյանի կողմից քանի անգամ ամբաստանվել է ներքին գործերի մինիստրի առջև «որպես անկրոն, որպես անբարոյական, որպես ապստամբ և խռովեցուցիչ ժողովրդյան»: Բացի դրանից նա խնդրել է կառավարությունից դադարեցնել «Հյուսիսսփայլը», և սա, ավելացնում է Նալբանդյանցը, մի հայտնի իրողություն է: «Հյուսիսսփայլի» այն հողվածները, որոնք վերաբերվում էին Այվազյանին, խիստ քննությունների էին ենթարկվում, մինչդեռ ինքը, Այվազյանը, ազատ էր գրել ինչ կամենում է: Մնում էր արտասահմանի մամուլի այն մասը, որ համակրում էր «Հյուսիսսփայլին». բայց դրա դեմ էլ միջոցներ էր ձեռք առնում Այվազյանը: Իր նամակներից մեկում, պատմելով, որ Կ. Պոլսի «Մեղուն» շատ գծվար է հասնում Ռուսաստան, այն էլ իբրև կոնտրաբանդ, Նալբանդյանցը ավելացնում էր. «Փա՛ռք և պարծանք Այվազյան վարդապետի ջանասիրությունը...»:

Հասկանալի է, որ այսպիսի մի հակառակորդի դեմ կռվելը «Հյուսիսսփայլի» խմբի համար պիտի լիներ այնքան կարևոր մի բան, որ նույնիսկ միջոցների խտրության մասին երկար ու բարակ մտածելն էլ ավելորդ էր: Անանիա Սուլթան-Շահի այդ գործը կռվի միջոցներից մեկն էր. այդտեղ հյուսիսսփայլականների համար այնքան ատելի կղերականը դուրս էր բերված ուրիշ անվան տակ: Գործը նվիրված էր Միքայել Նալբանդյանցին:

Եթե մոռանանք այս խոշոր պակասությունը, «Հայոց ազգի լուսավորիչը» կերկայանա մեզ իբրև մի բավական հաջող պատկերացում կղերական կրթության սիստեմի: Անկասկած, Գաբրիել վարդապետ Այվազյանը այն ժամանակվա մեր հոգևորականության մեջ մի խոշոր դեմք էր, որ աչքի էր ընկնում իր հոռուցով, զարգացմամբ: Մխիթարյան միաբանության մեջ էլ նա շատ հայտնի էր իբրև գրող, մանավանդ իբրև հայերենագետ. ուրեմն որքան մեծ պիտի լիներ նրա համբավը մեր լուսավորչական հոգևորականության մեջ, որ սոսկասարակ մտավոր անապատ էր ներկայացնում: Այդ բոլորը, սակայն, չէ արգելում ասելու, որ Այվազյանը, իբրև կաթոլիկ վանքում կղերական ոգով կրթված մարդ, իր գրական և դպրոցական գործունեության մեջ հետադեմ մտքեր էր դավանում: Խալիբյան դպրոցը նա ենթարկեց համարյա նույն կա-

Հիսունական թվականների սկզբում, Շահազիզյանը, դեռ 10 տարեկան երեխա, իր հայրենի Աշտարակ գյուղից գնում է Մոսկվա, մտնում կազարյան ճեմարանը, ուր ուսումը ավարտում է 1862 թվականին: Դեռ դպրոցական նրա տարանի վրա նա սկսում է գրել ոտանավորներ: Սկզբում թունդ գրաբարական էր, և նրա առաջին ոտանավորները, որոնք տպագրվեցին 1859-ի «Ճոթաբաղի» մեջ, գրաբար էին: Բայց այդ սկզբնական մեղքից շուտ ազատվեց Շահազիզյանը, թողնելով թե գրաբարը և թե մանավանդ «Ճոթաբաղը»: Առաջին աշխարհաբար ոտանավորների մեջ կային շատ թուլերը, բայց «Հանգիստ իմ անուշի» պես երգը ցույց է տալիս, որ երիտասարդի մեջ կա աստվածային կայծ: Այդ կայծը հետզհետե արժարժվեց. 1864 թվականը բանաստեղծի գեղեցիկ շնորհի առատության տարին էր, որ, ավա՞ղ, այլևս չկրկնվեց: Այդ տարին Շահազիզյանը գրեց բազմաթիվ մեծ ու փոքր ոտանավորներ, ինչպես նաև «Լեռնի վիշտը» պոեման:

Բանաստեղծը գրավում է հաստատ, մնայուն տեղ մեր գրականության մեջ: Դա մի ինքնուրույն դեմք է, ունի իրան միայն հատուկ բանաստեղծական արտահայտության ձևը. նրա ոտանավորն ունի իր առանձին համն ու հոտը և կատարել է մի դեր, որ շատ բանաստեղծությունների չէ վիճակված:

Իսկ ի՞նչն էր նրա քնարի հոգին: Ինքը Շահազիզյանը ամենից լավ է բացատրում, թե ինչ է ինքը: «Նախ քաղաքացի և ապա՞ պոետ», ասում է նա «Քաղցր մեղկության և անգործության», գինու և սիրո երգիչ չէ նա, այլ «բաժանորդ է ազգի ցավի հետ»: Այսպես էր այն ժամանակը, այսպես կարող էր լինել այն շրջանների բանաստեղծը: Եվ ահա ինչ է անում այդ «նախ քաղաքացի և ապա պոետը»: 1864-ին լռում է նազարյանցի ձայնը. վաղուց լռել էր և Նալբանդյանցը: Գրական փայլուն համաստեղության մի երրորդ ներկայացուցիչը, Գամառ-Քաթիպան, ժամանակավոր դադար է առնում, և նրա քնարը այլևս առաջվա նման չէ հալածում մտավոր խավարը, չէ ծաղրում տգիտությունը և բարոյական անկումը: Մեր արշալույսը, կարծես, արագ խավարում էր: Ահա այդ միջոցին Շահազիզյանը լույս է հանում իր «Լեռնի վիշտը»: Նազարյանցի վերջին խոսքը, ինչպես տեսանք, այդ բանաստեղծության մասին էր. նա անհետացավ ասպարեզից, «Լեռնի վիշտը» հանձնելով հայ ազգին իրրեկտակ:

Եվ իրավ. դա «Հյուսիսափայլի» ամբողջ գործն էր, ծրարված բանաստեղծական գեղեցիկ հյուսվածքի մեջ: Այդտեղ պիտի ապրեր նոր միտքը թուլության, անշարժության այն շրջանում, որ եկավ առ ժամանակ տիրելու մեր մտավոր ասպարեզում՝ «Հյուսիսափայլի» մեռնելուց հետո: Մեր վերածնության, ինքնաճանաչության գաղափարը չկարողացավ ապրել առօրյա հրապարակախոսության մեջ, որպեսզի կարողանա միշտ սթափեցնել, միշտ կայծի արժարժել. սխուր հանգամանքները հարկադրեցին, որ այդ գաղափարը առ ժամանակ հեռանա, լռե, բայց նա երգ դարձավ, մտավ ժողովրդի մեջ. դա «Լեռնի վիշտն» էր: Եվ փոքրիկ ճրագը, որ վառվել էր հայրենի տունը լուսավորելու համար, շմարեց այդ «վշտի» ծոցում:

Մեր հասարակական կյանքի զարգացման պատմությունը դրա համար շնորհապարտ կմնա «նախ քաղաքացի և ապա՞ պոետ» Շահազիզյանի մուսային...

Ահա «Հյուսիսափայլը»:

Մենք աշխատեցինք որքան կարելի է լիակատար կերպով ներկայացնել նրա պատմությունը, մի պատմություն, որի մեջ արժանավորությունների հետ

պակասություններն էլ դրված լինեին: Կարելի էր ավելին անել. — «Հյուսիսափայլի» ամբողջ բովանդակությունը, բոլոր աշխատակիցները, մենք այս խոստովանում ենք, չկարողացան և չէին կարող տեղ գտնել այս կենսագրության մեջ: Մենք բավական համարեցինք տալ ամենազլխավորը, այն ամենը, ինչ, մեր կարծիքով, արժանի էր ուշադրության և հիշատակության: Եվ այժմ, պատրաստվելով փակել «Հյուսիսափայլի» պլուսը, ի՞նչ եզրակացություններ կարող ենք անել:

Ժամանակը պահանջներ էր անում հայ հասարակությունից: Այդ պահանջները հասկացան հասարակության առաջավոր, երիտասարդ ուժերը, որոնք սկսեցին գործել: Առաջ եկավ «Հյուսիսափայլը». նա պետք է առաջ դար, եթե մեր հասարակության մեջ կար կենսունակություն: Ժամանակը ստեղծեց նրան, եվրոպական միտքը նրա միջոցով գալիս էր մեզանից տեղ ու հպատակություն պահանջելու: Բայց մենք դեռ պատրաստ չէինք նրան հասկանալու, մենք շուրջեցինք հպատակվել: Ու սկսեցինք պատերազմը: Ուժը ժողովրդի պահպանողականության կողմն էր, և նա չուզեց եվրոպական մտքին ապրելու, զարգանալու միջոց ու հնարավորություն: Նոր-նոր էր սկսել մեղանում փայլ տալ հանրամարդկային ազատ առաջադիմության փոքրիկ բոցը, և ահա հայրենի տեսպատներին բարձրացած փոքրիկները հանգրդին նրան, թողնելով, որ փոքրիկ կայծեր մնան նորից տիրած խավարի մեջ: Բացվեց մի սև դերեզման, որի մեջ իջավ «Հյուսիսափայլը»: Անժամանակ, ցավալի գերեզման: Նա իր գործը կատարում էր մի այնպիսի ժամանակ, երբ դեռ նոր-նոր էր թևավորվում «Հյուսիսափայլը», նոր-նոր էր փորձ ու հմտություն ձեռք բերում: Հարկավոր էր այդ նախապատրաստական շրջանը. չէ՞ որ նրանից առաջ ոչ ոք ուսահայերի մեջ փորձ չէր արել, հետքեր չէր թողել, որոնց հետեւելով զնար «Հյուսիսափայլը»: Նա ինքը պիտի ճանապարհ բանար փշոտ ու մացառոտ դաշտում, մեռակ, անպաշտպան, բոքիկ ոտներով: Մահը վրա հասավ կես ճանապարհին, երբ դեռ միայն ուղղությունն էր որոշվում, երբ դեռ շատ բան կար անելու այդ ճանապարհը պնդացնելու և հարթելու համար:

Այսպես է «Հյուսիսափայլի» ճակատագիրը: Նա սկսեց և սկզբում էլ մահացավ: Նա միայն թեթև նվաճումներ արավ. պատերազմի դաշտը դեռ անձուկ էր: Փառավորվեց նազարյանցի անունը, բայց նեղ շրջաններում. նրա գործը լայն ժողովրդականություն չգտավ: Սակայն այդքանն էլ մեծ գործ էր, և մեր գրականությունը երբեք չի մոռանա նրան: Զի մոռանա այն պատճառով, որ ինքը հենց այդտեղից է սկսվում. չի մոռանա այն պատճառով, որ «Հյուսիսափայլի» դավանանքների վրա է դրել իր հիմքերը:

Եվ «Հյուսիսափայլի» հիմնադիր-խմբագիրը միշտ կպահպանե իր փայլուն, ոգևորիչ դեմքը երախտապարտ սերունդների հիշողության մեջ: Շատ են այնպատեղի խել նրանից այդ նախանձելի փայլը և դրա համար ահագին պահանջներ են դրել ու այդ պահանջների տեսակետից նսեմացրել են այդ անմոռանալի երախտավորի գործունեությունը: Բայց կա արդարադատության կշիռը: Կարող են ապացուցանել, որ նազարյանցը ամենագետ չէր, որ նա շատ բան մոռացել է ասել, որ նրա արածը կարող էր անել մի ուրիշը: Բայց խնդիրը չէր դրա մեջ չէ: Ոչ ոք չի որոնի պատմության մեջ հրաշքներ, որպեսզի միայն նրանց երկրպագե: Կա՞ն արդյոք հրաշագործներ: Եվ ի՞նչ է հրաշքը, եթե ոչ երկաթի կամք, անհողողող համոզմունք, սեր, անհուն սեր դեպի գործը, շարժություն, գրկանքներ հանուն գաղափարի:

Այդ բոլոր հատկությունները մենք գտնում ենք նազարյանցի մեջ: Նա մի սկա աշխատող էր. նրան չէր վախեցնում աշխատությունը ամենածանր, հու-

սահատական հանգամանքների մեջ անգամ: Այո՞, այդ մարդը գիտեր, որ գրական աշխատավորը օգուտ չպիտի կերակրվի, բայց և այդպես, աշխատում էր օր ու գիշեր, հույս չունենալով նույնիսկ աղքատիկ, գրոշանոց վարձատրութեան վրա: Նա գիտեր, որ բարեկեցութիւնը ձեռք է բերվում մարդկանց հաճոյանալով, բայց շարունակում էր կռվել, կեղեքվել գաղափարի համար: Եվ նրա անձնագոհութեան, նրա սուրբ սիրո, անսահման հավատի պտուղը մեր առջև է. մի ամսադիր, որի մեջ մենք գտնում ենք մեր նոր գրականութեան բոլոր ճյուղերի սկզբնավորութիւնը՝ հրապարակախոսութիւն, գիտութիւն, վիպագրութիւն, բանաստեղծութիւն: Վարդեր չէին փռված նրա ճանապարհի վրա. փշերն էին ծակոտում, ցավեցնում նրա զգայուն սիրտը, մեծ խորհուրդներով լի հոգին: Գա մի նահատակութիւն էր: Բայց յուրաքանչյուր նահատակութիւն մի որևէ գաղափարի հաղթանակ է: Նազարյանցի ետևում կանգնած էր ինքնաճանաչութեան ճանապարհը մտած, աշխատելու կորովով լի սերունդը:

Հենց այդ էլ ուզում էր նազարյանցը. հենց այդ սերունդն էլ միակ դեղիցիկ վարձատրութիւնն էր նրա համար...

Գ Լ Ո Ւ Խ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

«ՀՅՈՒՄԻՍՏՈՓՈՅԼԻՑ» ՀԵՏՈ
(1865—1879)

I

Հրածեշտ գրականության: Գործունեության նոր ասպարեզ: Ղզարցիների նամակը: Նազարյանցի ցանկությունները: Ճանապարհորդություն դեպի Քիֆիլիս: Գեորգ կարդիկոսը Մոսկվայում: Ընտանեկան դժբախտություն: «Լապտեր Հայաստանի»: Նազարյանցը Քիֆիլիսում: Քիֆիլիսը իբրև հայաբնակ Լադախ: Ներսիսյան դպրոց: Բարեկարգություններ և հիասրափումներ: Վերադարձ Մոսկվա:

Թողնելով հրապարակախոսութեան ասպարեզը նազարյանցը շփոթեց իր ժողովրդին ծառայելու գաղափարը:

«Հյուսիսափայլը» դադարեցնելը միևնույն ժամանակ մի հրածեշտ էր, որ նա տալիս էր հայոց գրականութեան: Ծիշտ է, ինչպես շուտով կտեսնենք, նա մի քանի անգամ փորձեց նորից վերագտնել իր թողած ասպարեզը, բայց այդ փորձերը նրբեք չիրագործվեցան: Նույնիսկ առանձին գրքեր հրատարակելն էլ այլևս չհաջողվեց նրան: Մենք տեսնում ենք, որ մի մարդ է դա, որ կամենում է, բայց չէ անում, ունի նույն եռանդը, բայց գործադրելու հարմարութիւն և հնար չէ գտնում: Մի ինչ-որ բան, կարծես, կոտրվել էր նրա միջև Միջին մաքառումները, ճիշտ որ, տապալել էին այդ հաստատամիտ իրական լիստ մարդուն:

Ո՛չ, իդեալը, հասարակական գործի իդեալը, դեռ անխորտակելի էր նրա մեջ: Բայց «Հյուսիսափայլից» հետո նազարյանցը ուրիշ ասպարեզ է ընտրում իր գործունեութեան համար: Նրա նոր ձգտումները մենք իմանում ենք այն նամակից, որ նա գրել է Ղզարցի հայերին:

Հայ հասարակութիւնը կամ գոնե նրա մի մասը շուտ շմոռացավ իր քաջարի հրապարակախոսին: Թեև լուր էր նազարյանցը, բայց նրա հեղինակութիւնն ապրում էր մտածող հայերի մեջ. «Հյուսիսափայլի» խմբագիրը առաջավոր, լավագույն, բազմակողմանի զարգացած հայն էր համարվում: 1866 թվականի սկզբում Ղզարի հայերը դիմում են նրան մի նամակով, որի մեջ իրանց շնորհավորութիւններն են մատուցանում տոների առիթով և իրանց հարգանքն են հայտնում վաստակավոր գրական գործչին: Համակրողները խոստովանում են այն մեծ ծառայութիւնները, որ 1848 թվականից նազարյանցը մատուցել է հայ ժողովրդին իր գրական երկերով, որոնց մեջ շարունակ արժարժվում էր մտավոր վերածնութեան գաղափարը: «Եվ այս պատճառով, — ավելացնում են ղզարցիները, — ձեր փառավոր և քաղցր անունը մնալու է մեր և մեր հայկական սերունդի սրտերի մեջ հավերժ անմահ, հաղթած փառավոր և տոնելի»:

Պատասխանելով այդ նամակին, նազարյանցը ասում էր ղզարցիներին, իր «սիրելի և մեծարելի հայերին», հետևյալը.

«Իմ պարծանքս մինչև այսօր եղած է, և այսուհետև լինելու է այն, որ ես փորձելուս կարողացել եմ և այսուհետև կարողանայի պիտանի լինել հայկական հասարակութեանը, իբրև մատակարար աշխարհաշեն գաղափարների, իբրև վարող և մշակ ազգային լուսավորութեան գործի: Որովհետև, նույն շափով միայն կարող է երջանիկ լինել իմ սիրտը, որչափով ես կարող էի օգտակար լինել մարդկութեանը, և նախ և յառաջ, այն մարդկային ընկերութեանը, որո մեջ նախախնամութիւնը կամեցել է դնել իմ մանկութեան օրորոցը»:

Այսպես, մի անգամ էլ օգուտ քաղելով առիթից, նազարյանցը հայտնում է իր ազգին, թե ինչ է ինքը և ինչ պիտի լինի ամեն մի ազնիվ գործիչ: Մտալի ընդհանուր մարդկութեան՝ իր ժողովրդին ծառայելու միջոցով՝ ահա առաջին գործը, նպատակների նպատակը: Մինչև այժմ նազարյանցը ծառայել էր այդ համամարդկային գործին գրականութեան միջոցով. բայց «Հյուսիսափայլի» գոյութեան ընթացքում եկել էր այն համոզմունքին, որ գրականութիւնը դեռ պիտի թողնվի, որ անհրաժեշտը, անհետաձգելին ժողովրդի կրթութեան գործն է, որ առաջ պետք է զարոց հիմնել և ապա գիրք տպել: Նույն այս միտքը նա հայտնում է ղզարցիներին, ավելացնելով, որ ինքը վճռել է նվիրվել հայ սերունդի կրթութեան գործին:

Մենք արդեն գիտենք, որ նոր չէ և այս վճիռը: Նազարյանցը հենց այս մտքով էլ կամենում էր դպրոց բաց անել Մոսկվայում 1861-ին: Բայց նորութիւնը այժմ այդ վճռի գործադրութեան մեջն էր: Մինչև այդ՝ նազարյանցը լի ուզում հեռանալ Մոսկվայից, թեև ամեն մի դեպքում տեսնում էր, որ հեռավոր Մոսկվայում պակասում են շատ և շատ առաջնակարգ հարմարութիւններ՝ գործ կատարելու համար: Այժմ նազարյանցը պատրաստ էր հեռանալ Մոսկվայից, գնալ մի որևէ հայաբնակ տեղ և նվիրվել դպրոցական գործին:

1867 թվականին լրանում էր նրա պետական ծառայութեան 25 ամյակը: Այդ բանը իրավունք էր տալիս նրան թողնել պրոֆեսորական պաշտոնը Լազարյան ճեմարանում, ստանալով կենսաթոշակ: Եվ նազարյանցը վճռում է թողնել իր պաշտոնը, միայն թե կարողանար տեղ գտնել մի որևէ հայաբնակ քաղաքում: Այդպիսի տեղ պատրաստելու համար նա 1866-ի դարնանը ճանապարհորդում է դեպի Կովկաս: Ճանապարհին նա այցելում է Նոր-Նախիջևան, Ղզար և խորհրդակցում է իր նպատակի մասին: Նոր-Նախիջևանում այդ

միջոցին արժարժվում էր գիմնադրա բաց անհու հարցը. դրամական միջոց-
ներից մեկն էլ այն գումարի տոկոսներն էին, որ բերել էր նախաճանաչող
Հնդկաստանից: Նոր-Նախիջևանի քաղաքագլուխը գիմում է նազարյանցին և
խնդրում է կազմել գիմնադրայի համար ծրագիր, նկատի ունենալով տարեկան
20 000 ուրլի ծախս: Նազարյանցը կատարում է այդ առաջարկությունը, բայց
գիմնադրան չէ բացվում*:

Հուլիս ամսին Նազարյանցը հասնում է Քիֆլիս: «Վաճառական» շաբաթա-
թերթը այսպես էր հայտնում նրա գալուստը. «էս մեկ քանի օր առաջ եկավ
Մոսկովից Քիֆլիս մեր ժամանակակից հայոց զբաղանդների կատարելագոր-
ծելու համար գիշերը ցերեկ անող և ցերեկը գիշեր անող մտավոր մշակը: Մեր
խոսքն է պ. Ստեփաննոս Նազարյանցի վրա, որի գրականական աշխատու-
թյունները հիշելիս կամա ակամա մեկ առանձին գլխաթուխուն է գայիս նրա
հարգը իմացող մարդկանց»: Իր հայրենի քաղաքում Նազարյանցը լավ ընդու-
նելություն գտավ: Հուլիսի 20-ին նրան հարգողները մի հանդիսավոր ճաշ սնու-
քեցին Օրթաճալայի ալգիններում: Նազարյանցը ճառ ասաց, որի մեջ հայտնեց,
թե ինքը պատրաստ է նորից վերսկսել իր գրական գործունեությունը:

Այս խոսքերից երևում է, որ նրան շահաշողից Քիֆլիսում դպրոցական
գործունեության ասպարեզ գտնել իր համար: Խոսք կարող էր լինել, իհար-
կե, միայն Ներսիսյան դպրոցի մասին. բայց այդ դպրոցն այդ ժամանակ վար-
չական անորոշ դրություն մեջ էր գտնվում: Լրացել էր հոգաբարձության լիա-
զորության ժամանակը, բայց նոր հոգաբարձական ընտրություն չէր նշանակ-
վում. Մատթեոս կաթողիկոսը վախճանված էր, սպասում էին նոր կաթողիկոսի
ընտրության: Ուստի և հոգաբարձությունը, իբրև մի ժամանակավոր մարմին,
հաստատուն տեսուչ չէր նշանակում, այլ բավականանում էր տեսչի պաշտո-
նակատարությունը այս կամ այն անձին հանձնելով:

Նազարյանցը չէր կարող այդ խախտա գրություն վրա հույս դնել: Վերա-
դառնալով Մոսկվա, նա շարունակում է իր պաշտոնը Լազարյան ճեմարտ-
նում, հաջորդ տարին 25 ամյա ծառայության համար ստանում է կենսաթո-
շակ, բայց դարձյալ թողնվում է ճեմարանում իր պաշտոնի մեջ:

1866-ի սեպտեմբերին կաթողիկոս է ընտրվում Գեորգ շորթորդը: Նոր կա-
թողիկոսը 1867-ին իր ճանապարհորդության ժամանակ մտավ Մոսկվա և այդ-
տեղ փառավոր ընդունելություն գտավ: Գեորգը Մատթեոսի պես չվերաբերվեց
Նազարյանցին. ընդհակառակն, նրան մատեցրեց իրան, խորհրդակցում էր նրա
հետ մանավանդ այն ճեմարանի մասին, որ նա կամենում էր բաց անել էր
միաձնում: Ի պատիվ կաթողիկոսին արված ճաշկերույթի ժամանակ Նազար-
յանցը արտասանեց մի ճառ, որ վերջացրեց հետևյալ խոսքերով.

«Վեհագույն Տեր, այս ըոպելիս Գու կանգնած ես մի Հերքյուլյան երկճյուղ
պողոտայի վերա. մինը տանում է դեպի անջան վայելք և հեշտություն, մյուսը
դեպի վաստակ և ճգնություն առաքինության հանդեսի մեջ: Բայց քո ոսկի
շրթունքը Աստուծո տաճարի մեջ այս մայրաքաղաքումս առաջին անգամ բաց
վելով հնչեցուցին դեպի մեր սկանչը այսպիսի խոսքեր. «Ես չունիմ այսու-
հետև մի սեփական կյանք, իմ կյանքս պիտի նվիրված լինի իմ ազգի բարե-
տավորության հոգաբերին»: Ահա դույն այդ խոսքերը գործով և արդյամբք լլու-
ցանելով, կարող ես դու քո մահկանացու մարդկությունը անմահացուցանել
քո սեփական ազգի պատմագրության վերա և քո անունը ոսկի տառերով դրո-
մել հասարակաց մարդկության բարեբարներին տախտակի վերա»:

* Գիմնադրայի փոխարեն բացվեց թեմական դպրոց, որի համար էլ շատ աշխատել
Նազարյանցը:

Չափազանցություններ այս ճառի մեջ չենք գտնի, եթե հիշենք, թե որ-
քան մեծ նշանակություն էր տալիս Նազարյանցը կրթված և արժանավոր
հոգևորականությանը: Այդպիսի հոգևորականություն պիտի պատրաստեր էջ-
միաձնի ճեմարանը, մի դպրոցական հիմնարկություն, որի անհրաժեշտության
և կազմակերպության մասին Նազարյանցը, ինչպես գիտեք, գրում էր ներսե-
սին՝ դեռ նրա կաթողիկոսության առաջին տարին: Ճեմարանը էջմիաձնում
ուշ բացվեց, և Նազարյանցը շտեմավ նրա տված պտուղները. բայց նա միշտ
հոգևորությամբ էր խոսում այդ կրթարանի մասին, քանի նա դեռ նույնիսկ են-
վադրություն էր, ծրագիր միայն:

1868 թվին Նազարյանցին հարվածեց ընտանեկան մի շատ ծանր դժբախ-
տություն. մեռավ նրա Յրիգերիկ որդին երիտասարդ հասակում: Այդ իսկ տա-
րին Յրիգերիկը վերջացնում էր Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլ-
տետը և արդեն պատրաստվում էր դոկտորական քննություն տալու, բայց
հիվանդանոցում պարապելիս վարակվեց տիֆով և մեռավ փետրվարի 18-ին:
Այդ մահը վիշտ պատճառեց ոչ միայն ընկերակից ուսանողներին, այլև պրո-
ֆեսորներին. Յրիգերիկը հայտնի էր իբրև մի շատ ընդունակ և հուսատու երի-
տասարդ: Հուշարկավորությունը մասնակցում էին բժշկական ֆակուլտետի
հինգերորդ կուրսի բոլոր ուսանողները, ի պատիվ հանգուցյալի այդ օրը ֆա-
կուլտետում դասախոսություններ չկային:

Իսկ թե ինչ կլինեիր Նազարյանցի պես մի քնքույշ որդեսեր հոր դրություն-
եր, բացատրելու կարիք չկա: Եկեղեցում այդ վշտահար ծնողը մի անօրինակ
գործ է կատարում. նա ճառ է արտասանում իր որդու վրա: Ճառեր, մանա-
վանդ դամբանական ճառեր, շատ էր սիրում Նազարյանցը. սիրում էր և տպա-
գրել դրանց: Բայց դա, իհարկե, մի արհեստ չէր Նազարյանցի համար. խո-
սում էր նա դիվանագրապես երիտասարդ հասակում մեռածների, ուսանողների
մասին: Իր մի այդպիսի ճառի մեջ նա բացատրում է մահվան խորհուրդներից
մեկը: Մահը, ասում է նա, լուսապայծառ կերպարանքով պայծառացնում է
մեռածին կենդանի մնացողների սրտում: «Մեք աշխատում ենք ավելի խոր և
խոր տպավորել մեր սրտի մեջ այն նազելի պատկերը, որ թևեր առած փախ-
յում է մեր աչքի տեսությունից. այո, մեք աշխատում ենք դարձյալ ջերմաց-
նել մեր սիրոյ գրկախառնության մեջ այն պաղ մարմինը, որ երբեմն շնչա-
վորված և հոգևորված, դմալիցնում էր մեր բոլորեցուն սիրտը, խոսելով,
մտածելով և զգալով մեր հետ միասին»:

Այս հզոր հանգամանքները հարկադրում են Նազարյանցին ճառ խոսել
Յրիգերիկի վրա: «Երբ ուրիշները,— ասում է ականատեսը*,— առաջարկում
էին, որ յուրյանք կարդան այդ ճառը, նա ասում է. «Ո՛ր, իմ սիրելիք, դուք
յունեիք այն հոգին, որ ես ունիմ»:

«Եվ ահա սզավոր բազմության առաջ Նազարյանցը մոտենում է գրքա-
կային, դողդոջուն ձեռներով հանում է ծոցից երկու երես գրած ճառը և սկսում
է յուր ատենախոսությունը: Խորհրդավոր ըոպե և զարմանալի տեսարան.
Նազարյանցը այն խոսքերն է ասում, որ աշխարհը մարդուս միտքը չէ՞ գալիս.
ում սիրտը այն ըոպեին կարող էր դիմանալ, որ շճաբեր. ահա մի փոքր ևս՝
ե կարծում էինք, որ հայրը կթուլանա. բայց նա, թեև արդարև շունչը կտրված,
գոյում է. «Որ մի երիտասարդ դուրս է խլվում այս կյանքի միջից առանց վճա-
րելու հասարակությանը յուր կրթության պարտքը, առանց կաշողանալու շա-

* Ս. Շահազիզ, «Հրատարակախոս ձայն», եր. 21:

Հեցնել յուր մտավոր և բարոյական քանքարը: Եվ ապա լսում ենք նրա բերանից. «Եվ դու, ի՞մ հավերժացած զավակ, ընդունիր իմ շնորհակալութիւնը այն որդիական սիրո և մեծարանքի փոխարեն, որով դու զարդարած ես քո ծնողների կյանքը: Բարյա՛վ մնաս մինչև ցկրկին երանավետ տեսութիւնը մի ավելի լավ հանդերձալ աշխարհում»: Միայն այստեղ,— շարունակում է ականատեսը,— բնութիւնը պահանջում է յուր իրավունքը.— որդեկորույս տղամարդի աչքերը լցվում են դառն արտասուքով, և Նազարյանցը մորմոքելով ընկնում է յուր սիրասուն զավակի դագաղի վերա»:

Տպաւորութիւնը շատ խոր էր. հայրական ճառը արտասունքներ կաթեցրեց շատ ուսանողների աչքերից: Նազարյանցը սուտերեն լեզվով շնորհակալութիւն հայտնեց այն սուս ուսանողներին, որոնք անքուն գիշերներ էին անցկացրել իրանց ընկեր Յրեղեբիկի մահվան անկողնի մոտ: Այդ սարսափելի դժբախտութիւնը առիթ եղավ, որ հայ երիտասարդութիւնը իր սերն ու երախտագիտութիւնը հայտնե Նազարյանցին: «Հայկական աշխարհ» սե շրջանակի մեջ գրում էր հետևյալ տողերը.

«Ձեզ հետ, սգազգաց և սրտակիզված հայր, կողբան «Հայկական աշխարհ» և Քիֆլիսի երիտասարդները հայկական երիտասարդի մահը: Այս Ձեր կորուստը մեր ընդհանուրի կորուստն է: Բայց տվեց աստված և աստված առավ, ուստի եթե իմաստուն որդին պիտի ուրախացնե հօրը, Քիֆլիսի երիտասարդները կհամարձակվեն մխիթարել Ձեզ, հայր առաքինի, հիշեցնելով Ձեզ, որ նոքա աշխատում են և աշխատելու են անդադար սիրելի որդուդ հիշատակն ևս սրբութեամբ պահելու, միշտ իրագործելով, որպես հայերիս սրբազան ավանդ, այն մտքեր և ցանկութիւններ հօգուտ ազգիս և մարդկութեանը, որ սիրել է միշտ զարգացնել յուր մեջ և Ձեր ազնիվ ծնունդը՝ ազգիս զավակը»:

Ինչպես տեսնում եք, ինքը, տարաբախտ հայրը, ողբում է իր դառն կորուստը հասարակական բարիքի տեսակետից, և նրան էլ մխիթարում են հենց նույն այդ գաղափարով: Նազարյանցի համար հարվածը սարսափելի էր ավելի այն պատճառով, որ իր որդին շկարողացավ ծառայել իր ազգին: Այս զգացմունքը նա շատ լավ շեշտել է իր այն պատասխանի մեջ, որ ուղղած է Պետերբուրգի հայ ուսանողներին, որոնք նամակով իրանց ցավակեցութեան էին հայտնել Յրեղեբիկի մահվան առիթով: Այդ նամակը այնքան լավ բնորոշում է Նազարյանցին թե իբրև հօր և թե իբրև հասարակական գաղափարներով լցված մի մարդու, որ մենք բերում ենք նրան ամբողջապես: Ահա ինչ էր գրում Նազարյանցը*.

«Հայազնչա աշակերտք Ս. Պետերբուրգյան համալսարանի, իմ ազնիվ բարեկամներ.

Անշնորհակալութիւնը չէ իմ բնավորութիւնը. մանավանդ առ այնպիսի քաղցր, առ ի սրտե ցավակեցական նամակը, որով դուք մեծարում եք այս բոսպիս մի գերօրինակ ցավից խոնարհեցուցած հայրս: Վասն որոյ շտապում եմ հատուցանել ձեզ երախտագիտութեան պարտքը և ասել ձեզ, որ ես հոգեպայծառ սրտով ընթերցա և դարձյալ ընթերցա ձեր նամակը ոչ թե այն պատճառով, որ դուք քաղցրացուցած էիք իմ հայրական պատվասիրութիւնը, գովելով իմ հավերժացյալ զավակը և վշտակից լինելով իմ անձնական ցավին, այլ որ ձեր մեջ սաստիկ զորութեամբ դարթած է այն ազնիվ ընկերսիրութեան և հղբայրսիրութեան աշխարհաշեն հոգին, որով դուք ձեր յուրաքանչյուր արջիվ և պիտանի ընկերակցի վաղաճաս վախճանը համարում եք և արտասովում

եր իբրև մի ընդհանուր հայկազնի գերդաստանի զավակի վախճանը, իբրև մի ցավ և սրտանք, որ չէր պատկանում միայն մի առանձնական հօր, այլ բոլոր բարեմիտներին ազգի լուսավոր հասարակութեան մեջ: Եվ այս հայացքով ես չեմ անձնասիրապես արտասովում իմ ծաղկափթիթ երիտասարդի վաղաթախամ վերջը, որովհետև ես, հայրս, կորուսած էի դորանով իմ ծնրութեան հեցուկը, այլ որ հավերժացյալը հրաժարվեցավ այս աշխարհից առանց հատուցանելու հասարակութեանը յուր կրթութեան պարտքը, առանց ճաշակելու կյանքի պատվականութիւնը, առանց սուուգելու փորձով, որ կյանքը գործ ու աշխատութիւն է, որով միայն կարելի էր բախտավորել թե յուր անձը և թե յուր ընկերքը: Նա չեղավ ոչ ինքը բախտավոր և ոչ յուր ընկերի բախտավորութեանը ձեռնաու, ահա՛ իմ անմխիթար ցավի ազբյուրը: Հոգեղեն վաստակը և ստացվածքը, որ մնացին կյանքի համար անպտուղ և անարգուն, կենդանութեան նավը, մեծագին բարութեամբ բեռնավորված, լայնատարած ծովի ալիքների հետ հողթողապես պատերազմելով և արդեն մոտենալով, այո, դեմ հանդիման կանգնած ցանկալի նավահանգստի առաջն, որո մեջ փոքր մի ևս՝ և պիտի ներս վազեր, և ահա՛ հանկարծակի, պայծառ երկնակամարից մի կատաղի փոթորիկ հարձակվելով նավի կայմի վերա, ջախջախում է զդա, ավեր ու անապտո դարձուցանելով երիտասարդի բազմամյա ստացվածքը, հողի մեջ բնակեցնելով նրա երկնաքաղաքացի մանկական հույսերը և ակնկալութիւնները ապագա օրերի գործնականութեան հանդեսի մեջ:

Այս առաջին հասարակաց կորուստը չէ, որ ողբում եմ ես. այդպիսի շատերը լացին և ողբացին իմ սիրող աչքերը մինչև շատօրյան օրս. և ես այդ արջիվ հայկազնի վաղաթախամ պատանյակների գերեզմանի վերա այս բոսպիս դաղարեցնելով իմ հայրական և բարեկամական արտասովոր աչքը, իմ սուրբ արածութեամբ սգավոր մտածութիւնը, միակ բան ունիմ խնդրելու ձեզանից, իմ մանուկ հայազնչա բարեկամներ, իմ որդիք և զավակներ, դուք ծաղիկներդ և հույսերդ հայկական կյանքի, միակ բան եմ խնդրում ձեզանից, որ և լցուցանել զժվարին չէ, միայն թե կամեիք. երդվեցեք ձեր վաղամեռիկ ազնիվ եղբայրակիցների սուրբ գերեզմանով սիրել զմիմյանս, պատվել զմիմյանս, օգնել միմյանց ամենայն ընկերսիրութեամբ և անարատութեամբ, և սորո ամենալավ ծաղիկներն են, որով դուք, ազնիվասիրտ եղբայրքդ, կարող էիք զարդարել ձեր հանգուցյալ հայրենակիցների գերեզմանքը: Դարձյալ ասեմ ձեզ, թեպետ և դուք աշխարհիս բոլոր զպրութիւնքը ուսած լինեիք, թեպետ և դուք հրեշտակի լեզու խոսեիք, ոչինչ ե՛ք առանց սիրո առ ընկերը, առ մարդկութիւնը: Այլ հրտակ շունի ձեզ կտակելու ստրանից ավել սուրբ և սրբազան, ձեզ սիրող-հայր, բարեկամ

Ս. Նազարյանցը:

1868, մարտի 10-ին»:

Այսպես վերաբերվելով իրան վիճակված դառն վշտին*, Նազարյանցը չուսահատվեց, չկորցրեց աշխատելու հոռնողը: Հենց այդ ժամանակները նա վճռում է նորից հրապարակախոսութեան ասպարեզ իջնել, հիմնելով մի նոր ամսագիր: Չգիտենք, ինչո՞ւ այս միտքը միտք էլ մնաց. արդյոք Նազարյանցին չհաջողվե՞ց թույլտվութիւն ստանալ, թե կար այդ թույլտվութիւնը, բայց

* Նազարյանցը ամուսնացել է երկու անգամ: Երկրորդ կնոջից նա ունեցավ մի արու զավակ, որին ավել էմմանուել անունը: 1870 թվին նա Քիֆլիսից հետևյալի էր գրում իր բարեկամ Ս. Եահազիզին այդ նորածին էմմանուելի առիթով. «Միշտ մտածում եմ ես մի բանի վերա. մի էմմանուել (խոսքը Յրեղեբիկի մասին է) իբրև հավերժացած, իբրև պայծառակերպված պատկեր իմ հօրու առաջն, մյուս էմմանուել իբրև թանձրացյալ կենդանի պատկեր իմ աչքի առաջն.

* «Մշակ», 1879, № 83:

ամսագիրը չհրատարակվեց որիչ պատճառներով, այդ մեզ հաստատապես հայտնի չէ: Մնացել է նոր ամսագրի հրատարակութեան այն հայտարարութիւնը*, որով նազարյանցը կամենում էր դիմել հասարակութեան՝ բաժանորդագրութիւն բաց անելու համար: Ամսագիրը պիտի կրեր «Լատեր Հայաստանի» անունը:

Ի՞նչ ունեն Նազարյանցը ասելու այս անգամ:

«Չորս տարի է, — ասում է նա այդ հայտարարութեան մեջ, — ինչ լռել է «Հյուսիսափայլի» ձայնը: Թե ինչ էր այդ ամսագրի հիմնադրութեանը, որ դեռեզման տարավ նրան, նազարյանցը չէր ուզում բացատրել: Նա միայն հայտնում էր, որ ինքը չէ հուսահատվել: Ի՞նչ կլինի մի մարդ կամ ժողովուրդ, որ մի սաստիկ թնդունից զարթնում է երկար ժամանակի քնից, սկսում է ուշքն ու միտքը հավաքել, ետ ու առաջ նայել: Այդ մարդը կամ ժողովուրդը չէ կարող երկար միջոց արթուն մնալ, որովհետեւ «նոր լուսացած աշխարհի սաստիկ տպավորութիւնները յուրյանց բազմութեամբ և բազմօրինակութեամբ հեղեղի պես թափվելով նորա վերա, անտանելի են նորան. նոքա պիտի ճնշեն, բթացուցանեն, թմրեցուցանեն նորա թույլ շիղերը, դարձյալ դեպի քուն գլորեն նորան»:

Սա, իհարկե, հայ ժողովրդի պատկերն է: Ի՞նչ պարտք ունի այսպիսի մի ժողովրդի մեջ ուսուցիչը, քարոզիչը, գրողը: Պետք է մի մի ձայն տալ, քնածներին դուրս հանել այդ վիճակից, «որովհետեւ շափազանց երկարաձիգ քունը վնասակար է առողջութեանը, ապականում է մարդու կենդանական հոսիքը, մանավանդ երբ որ արեղակը բարձրացած հորիզոնի վերա մտեցնում է միջօրեական շրջանին»: Ահա այդ է ուզում անել նազարյանցը:

Չորս տարի լուսութիւնը բավական է համարում նա և ասում է. «Չափազանց երկար քունը վնասակար է. ուրեմն և մեզ հայերիս ժամն է արդեն զգաստանալ և գոտին պնդած մեջքին դիմել դեպի դաշտը, ուր սպասում են մեզ վար ու ցանք, վաստակելու մեր օրավաստակը, մինչև երեկոյացած չէր մեր կյանքի օրը»: Սրտառուչ է այն հանգամանքը, որ նազարյանցը զգում էր, թե ինքը արդեն ծեր է, որի տարիքը «օրեցօր հիշեցնում են նորան, թե անտեղի էր հապաղելը»:

Բայց միայն ծերութիւնը չէր, որ կյանքի կարճութեան խորհուրդը հասկացնելով հարկադրում էր նրան նորից հրապարակ գալ իբրև խմբագիր: Կարավելի ուժեղ շարժառիթ, որը նա շատ գեղեցիկ կերպով նկարագրում էր իր մտտիկ բարեկամներ Հովհաննես Քուչուրեկյանցին** գրած մի նամակում (1868, հունիսին):

Երկուքն ևս մի անկողնուպի սեփականութիւն հայրական սրտին. մինը համատար սրտի երկնքում, այլ երկինք չկա, մյուսը այս հողեղեն-հողեղեն աշխարհումս: Եվ որպիսի՞ զգացմունք մի օր պիտի շարժվին և ալեկոծվին երկրորդ էմմանուէլի սրտում, երբ որ նա մի օր հանդիպի յուր անվանակից եղբոր առաջին էմմանուէլի գերեզմանին վազանկովսի գերեզմանատնում: Դուք կենեք ինձ, հորս, այսպիսի մտածութիւնք. պիտո էր լինել հայր, որ հասկանալին կյանքի խորհուրդը՝ մարդկային սրտի ցավերը, կյանք ու մահ, այս երկու խորհուրդներ ամուրքը, որ միև մյուսը լրացուցանելով և պսակելով, այ՞ պսակելով, կացուցանում են կյանքը նորա լիովին մտքով: Ինչպես երևում է, Ֆրիդերիկը անվանվում էր և էմմանուէլ:

* «Հանդես Գրականական և Պատմական», 1889, երկրորդ գիրք, էր. 282:

** «Հյուսիսափայլի» աշխատակից Ղզարում: Գրում էր գլխավորապես ոտանավորներ, որոնք հետո տպագրվում էին «Մեղուի», «Հայկական աշխարհի» մեջ: Հանգուցյալ Քուչուրեկյանցին գրած նամակները մենք ստացանք, դժբախտաբար, բավական ուշ, պ. Հմայակ Մամիսյանից Արմավիրից:

«Եմմանուէլը հարկեցուցիչ է, — բացականչում է նազարյանցը, — ազգի հրատարակը ամենևին դատարկ է մնացել: Կո՛ւտ են աշխարհականք, և հոգեվոր դատու անբանութիւնը կամի կուսակալ տգիտութեան և ստրկութեան շղթայք մեր ժողովրդի համար: Ես վաղուց և շատ վաղուց ասած եմ Ձեզ իմ վերջին վեճական կարծիքը, թե վա՛յ այն ժողովրդին, որո կրթութեան և լուսավորութեան հույսը դրած է յուր հոգևոր դատու և եկեղեցական իշխանների վերա. նույն կարծիքի վերա կամ և մնամ այսօր իսկ հաստատ. և իմ օր ըստ օրն անմիջական փորձերը ասում են ինձ, որ մեր ազգային և ժողովրդական լուսավորութեան շափուղն ու ընթացքը ա՛յլ է և ա՛յլ պիտի լինի, քան թե կամենին մեր տգեա հոգևորականք յուրյանց տգետ և անուս պարագլուխներով դժադրել մեր առաջև: Ոչինչ խորհուրդ չունի իմ աչքում այն կոսպաշտական մեծարանքը, որ մի ասիացի ժողովուրդ սովոր է ցուցանել միշտ յուր նորընտիր մեծաւորներին, առանց քննութեան տակ ձգելու դոցա մտավոր և բարոյական արժանաւորութիւնը: Այդտեղ մեծարողը և մեծարվածը հավասարապես թըշվառ և արհամարհելի են. մեծարողը, որ դիտե միայն պատիվ զնել արտաքին մեծութեանը առանց աչք ու հասկացողութիւն ունելու ներքին մեծութեան համար, իսկ մեծարվածը, հիմարութեամբ մտածելով, թե բոլոր մարդկային արժանաւորութիւնը պարունակված էր արտաքին մեծութեան, արտաքին փառահեղութեան և ամպ հովանիքի մեջ:

Ի՞նչ ասեմ, իմ ազնիվ որդի, իմ պատվական եղբայր Քուչուրեկյանց: Ինչո՞ւ համար մեր մեջ մի օրինավոր բան չէ ծնանում, չէ աճում, չէ զարգանում, չէ ծաղկում, չէ պտղաբերում. դորա պատճառը շատ բացահայտ են. այնուամենայնիվ ոչ ոք ժողովրդականներից չէ տեսնում զնոսա: Ո՞հ մարդկային կուրութիւն, դատապարտելի հեղափոխութիւն և անխորհուրդ պատիվ ու պաշտոն անարժանների: Այդ կարգը, իբրև անկարգութիւն, պիտի ամենեւին փոխվի, եթե մեր ազգի մեջ ցանկալի էր, որ բան հառաջանա: «Լատեր Հայաստանին» կկառուցանվի Արարատի գագաթի վերա, Ռուսաց արծաթի թեկերը հովանավորելով նմա. բայց թե նորա ճառագայթները որչա՞փ տարածութիւն մեր հայկական կյանքի մեջ լուսավորելու էին, կցուցանե քեզ և ինձ իրական փորձը»:

Եվ այսպես խոսողը այն մարդն է, որ զգում է արդեն ծերութեան լուծը: Որքան նախաձեռնի ծերութիւն. նա հանգստութիւն չէ որոնում, նա անպտուղ զանգատներ չէ անում, անշարժութեան սիրահար չէ, այլ գործ, ծանր, դաժան, զրկանքներով, հուսահատական դժվարութիւններով լի գործ է կանչում: «Ասպարեզը դատարկ է մնացել... սա հին, փորձված դինվորի ազադակն է, վինվորի, որ մինչև գերեզմանի ափը ճանաչում է իր պարտականութիւնը՝ ծառայել, միշտ ծառայել, ինչպես էլ լինի ծառայել գործին»:

Սա՛րբ ոգևորութիւն: Դեռ նկատի ունեցեք, որ այս տողերը նա գրում էր իր Ֆրիդերիկի մահվանից երեք ամիս միայն անցած: Դեռ սևեր հագած, դեռ արտասուներն աչքերում՝ նա կարծես հանկարծ նկատում է, որ ասպարեզը դատարկ է մնացել, և դուրս է նետվում հասարակութեանը ծառայելու...

Եվ սակայն նույն այդ նազարյանցը ինչ էր ասում դրանից մի երեք տարի առաջ նույն Քուչուրեկյանցին: «Հյուսիսափայլի» վերջին օրերն էին: Խրմբագիրը, դառնացած, շվարած այն գերեզմանական սառնութիւնից, որի մեջ պիտի թաղվեր իր վեց տարվա սիրելի գործը, գրում էր իր մտերիմ բարեկամին հետևյալը.

«Այդ ճառի մեջ* դուք նվիրել եք մի քանի երեսներ իմ իբրև թե արդյունադործությունս հայոց նոր դպրության հանդիսում: Իբրև թե, տաքցի, որովհետև մի վայրենի ազգի մեջ մի անխորհուրդ բան է որևիցև այրական առաքիլություն. հասկացողն ո՛վ, գնահատողն ո՛վ, պահպանողն ո՛վ: Երկրորդ, Ձեր գրվածք Ձեր տխմարների աչքում պիտի երևի մի բարեխոսություն իմ համար ամբողջի առաջև, որ պահպանելին «Հյուսիսամերիկայի», բայց դա կարող չէ այսուհետև պահպանվիլ, այլ հավիտյան կվերջանա և կմեռանի ներկա տարուս հետ: Փորձածք դարձյալ փորձել, կրկին փորձել, մեք վեց անգամ փորձեցինք, հիմարություն է:

...Ես չգիտեմ, թե ինչ գեղեցիկ նյութով, ինչ հոյակապ գաղափարներով կարելի էր տևողական տպավորությունք գործել այդ մարդերի վերա, ինչ որ այսօր ազնիվ ու պատվական էր, էգուց թույլ ու չքացալ, այնպես որ նորա հետքը չէ մնում: Այս բանիս փորձը «բազում մասամբք և օրինակք» առաջ ես «Հյուսիսամերիկայի» գործում. և այդ տխուր փորձերի հիման վերա պիտի միշտ ստեղծ, որ պրոգրեսը անկարելի և անմտածելի բան է մեր հայերի մեջ:

«Հյուսիսամերիկայի» կվերջանա. նորա լեզվախոսությունը և նորա գաղափարները նույնպես գերեզման կերթան, միտ դնելով ասիական ազգերի կյանքի այն պայմանին, որ միշտ մի հատ մեծ և զորավոր մարդ հանկարծ վեր կենալով այդտեղ, առ ժամանակ մի խառնել է փտած ու նեխած կյանքի ջուրը: մի տեսակ կյանք է հառաջացուցել, բայց հետո թատրոնական բեմից ոտքը ետ դնելով ազգերը դարձյալ մտել են յուրյանց ոչնչության և մեռելային կյանքի գերեզմանի մեջ: Այսպիսին է Ասիայի ճակատագիրը. հայերինը ևս կարող չէ այլապես լինել, իբրև ասիական հողի ծնունդների: Տխուր և անմխիթար խոսքեր. բայց ի՞նչ օգուտ մեզ մեր անձը խաբելուց անհիմն գեղեցիկ հույսերով: Թող մեր ազնվամիտ, մեր մի քանի շատ սակավաթիվ ընտիր եղբայրք մտածեն և հոգան յուրյանց փրկությունը ընդհանուր հայկական նավարկության փորձանքի մեջ, որ այսօր, էգուց անյեղի բնական և բարոյական օրենքով պիտի վերա հասնեն, թե ինչպե՞ս, այդ գուշակելու հարկավոր չէ մի մարդարեական հոգի»:

Այսքան մտալ հուսահատությունը, ըստ երևույթին, այլևս բոլորովին չպիտի թույլ տար այդ մարդուն երևալ հասարակական գործերի ասպարեզում: Դուք տեսնում եք, թե որքան խոր համոզված է նա, որ ոչինչ չի լինի, որ ավելորդ ու անպտուղ բան է հայերի համար աշխատելը: Նույն նամակի սկզբում նա ասում է.

«Դուք, ես և մի քանի այլ ազնվամիտ և փոքրիշատե բանագետ եղբայրք կարող են գեղեցիկ գաղափարներ շատ, ազնիվ ցանկություններ անհամար հղանալ յուրյանց մեջ և այս կամ այն ոճով բացատրել թղթի վերա, խոսել ամբողջի հրապարակում, բայց դոքա բոլորը դուր և անօգուտ բաներ են, որովհետև մեք հայերս այն քաջ շինող ճարտարապետը (չենք), որ շինության առաջարկությունը աչքի հանդես պահելով, և հասկանալով ազգաշինության հոյակապ խորհուրդը, վճռաբար, կատարյալ սրտով ու կամքով ձեռք տար գործին... Բայց ի՞նչ ունինք մեք ավելի, քան թե մի բարեխոսյան խառնակ տգետ և անբարոյական ամբողջ. ի՞նչ ունինք մեր աչքի առաջև ավելի, քան թե լոկ տրգելք, խափանք, հալածողք և թշնամիք ամեն ազնիվ բանի: Վերականգնողություն, վերանորոգություն, հառաջխաղացություն ամենևին անկարելի բաներ

են այնպես, որ չկա կյանք, կյանք ընկերական և հասարակաց, որ յուրաքանչյուր անձն յուր վերա միայն մտածելով, արջի պես ապրում է յուր վայրենություն մեջ:

...Դուք սխալվում եք ձեր ազնիվ և գեղեցիկ մտածությամբ, որպես մինչև այսօր սխալվել է «Հյուսիսամերիկայի» հրատարակողը, որովհետև նա միշտ ազնվաբար մտածել ու զգացել է, գեղեցիկ գաղափարներով և հույսերով սնել է, առանց միտ դնելու դոցա իրագործության պայմաններին ասիական կյանքի մեջ, բայց այսօր պիտի անհույս կորնչի: Եվ ինչ խորհուրդ ունին գեղեցիկ մտավորական գաղափարներ, այն՝ երկնաքաղաքացի հույսեր, եթե նոցա իրագործելու, կատարման հնարավորությունը չկա մեր կյանքի, հայկական կյանքի պայմանների մեջ: Մա՛րդն է, որ յուր այրական հոգով և յուր այրական քաջագործությամբ շինում է և զարդարում է աշխարհը. մարդկային ընկերությունն է, որ յուր ամենակարող բարոյական գործությամբ անհնարինը առանձնականի համար, հնարավոր է կացուցանում հասարակաց գործությամբ: Բայց հայերի մեջ ոչ մարդը կա և ոչ մարդկային ընկերությունը: ...Մի՞թե այսպիսի հանգամանքի մեջ կարելի է հուսալ որևիցև հառաջխաղացություն, որևիցև ազնիվ բանի իրագործություն մեր մեջ: Նախ պիտի վարել հողը, ապա թե կարելի է ցանել նորա վերա: Բայց ասիական կյանքի և մարդերի կեցության ներկա պայմանքը փոխել աստված ևս կարող չէր, ուր մնաց դու և ես»:

Եվ այս սարսափելի վհատությունը բոպեի ազգեցությունից չէր: «Հյուսիսամերիկայի» մահից մի տարի էր անցել, և նաղարյանցը դեռ կարծում էր, թե ինքը հարկավոր չէ հայոց ազգին և հենց այդ պատճառով է, որ հաջողություն չունի: Եվ նա գրում էր Քուլուրեկյանցին, թե ինչ է մնում իրան անել.

«Կամ իմ աշխատությունքս նվիրել իմ ազգի օգտին, այսինքն՝ եթե դուրան հաճա էր արժանավոր կերպով գրավել ինձ յուր գրողակի տակ զինվոր լինելու, կամ թե ամենևին հեռանալու մեր հայերից, որովհետև անօգուտ և անշահ էի նոցա: Իմ կյանքիս բախտավորության պայմանքը ես արդեն բաղահայտել եմ Ձեզ. դոքա դրած են իմ համար այն օգտաբերության մեջ, որ ես տակավին կարող էի հասուցանել հայերին, դոցա հատուկ կամելով և օգնականությամբ. բայց անօգուտ և մեռած լինելով հայերի համար, որովհետև դոքա չկամեին ճանաչել յուրյանց պիտանի մարդը, այնուհետև իմ կողմից ևս չկար ոչինչ խելացի պատճառ մնալու այնտեղ, ուր ես ավելորդ էի, գուցե շատերին գայթակղության քար ևս»:

Ահա այսպիսի ժամեր էլ են գալիս մենակ մնացած, իրանց միսիայի, իրանց առաքելության մասին պարզ հասկացողություն չունեցող գործիչների վրա: Նաղարյանցն ինքն իրան չէր ճանաչում: Որքա՛ն միամիտ էր նա, որքան սխալված, կարծելով, թե ազգը պիտի կանչեր նրան: Այդպիսի օրինակներ ո՞ր ազգի պատմության մեջ էր նա գտնում: Լինել ժողովրդի արատների դեմ մարտնչող մի զինվոր, սուր և կրակ ունենալ ձեռքում հասարակաց միտքը զարթեցնելու համար, անողք ճշմարտությունը, կծու արդարությունը դնել դատավորի սեղանի վրա ու այդպես դատել, և ապա պահանջել, որ իրան ընդունեն ամենքը, որ հասարակությունը թեթևացնեն իր փշոտ ճանապարհը... Ո՞ր էր, եթե մարդկությունը այսպես եղած լիներ, այն ժամանակ աշխարհում ինչո՞ւ պիտի թափվեր նահատակների, մարտիրոսների արյունը...»

Նաղարյանցը հուսահատվել զիտեր. և հուսահատությունը բոպեններին մոռանում էր, որ իր ամբողջ ուժը, իր ամբողջ նշանակությունը հենց այդ մեակությունն էր, հենց այդ տանջանքներն էին, որ կրում էր նա իր սրտի մեջ

* Խոսքը մի հոգիով մասին էր, որ ուղարկել էր Քուլուրեկյանցը տպագրելու և հետո նաղարյանցի խորհրդով, տպվեց «Մեղուի» մեջ 1865 թվին:

իրրև արհամարհովոյ զինովոր, մի զինովոր, որ կանգնած էր հայկական կյանքի անապատում և նայում էր իր շուրջը, լավ զգալով, որ իրան չպիտի լսեն, որ ինքը անհարկավոր է ներկա ըստեին...

Հուսահատութիւնը, մենք այս շատ անգամ տեսնք, հոտուկ էր նազար- յանցին սկզբից ևնթ: Բարեբախտաբար, այդ հուսահատութիւնը չէր կարողանում խլացնել նրա ներքին կոշտը. և գանգատների, հառաչանքների մեջ նազարյանցը շարունակում էր լինել նույն լուսավոր մշակը, նույն մտքոնշողը: Այսպես էր և այս դեպքում: «Հյուսիսափայլի» մահը մի սարսափելի հար- ված էր, որ իջնում էր այդ զգայուն, սիրող սրտի վրա: Հարվածի ազդեցութեան տակ նրա համար այլևս ոչ մի կասկած չկա, որ իղուր և ապարդյուն է գործ շարունակելը հայրի մեջ, որ ոչինչ չի լինի, պետք է թափ տալ ձեռքը և մի կողմ քաշվել: Բայց անցնում են ամիսներ, անցնում է կարճ ժամանակ, և նա- զարյանցը մոռանում է ամեն ինչ, եռանդով, երիտասարդական ոգևորութեամբ նորից հրապարակ է իջնում: Ասպարեզը դատարկ է... Եվ նա շտապում է իր «Լապտեր Հայաստանին» դնել Արարատի գագաթի վրա...

«Լապտեր Հայաստանին» նույն ծրագիրն ուներ ինչ «Հյուսիսափայլը», միայն նա ավելի էր շեշտում ժամանակակից հրապարակախոսութիւնը և ման- կավարժութիւնը: Նազարյանցը այս անգամ ավելի մեծ ուշադրութիւն պիտի նվիրեր հայկական կյանքին և դպրոցական հարցերին: Նոր ամսագրի կոշտն էլ, «Հյուսիսափայլի» պես, ամենից շատ աշխարհաբարի մշակման գործը պի- տի լինել: Մենք պետք է ասենք, որ Նազարյանցը, ինչպես ցույց է տալիս և այդ հայտարարութիւնը, հետզհետե ավելի էր հակվում դեպի գրաբարի ձեռ- րը. նրան չէր հաջողվում մի պարզ ու կանոնավոր աշխարհաբար մշակել իր համար: Բայց և այդպես, նա սաստիկ վրդովվում էր ուրիշների գործածած աշխարհաբարի դեմ: Ատելով ատում էր նա մանավանդ գավառաբանութիւն- ները: Եվ պետք է խոստովանել, որ նա, ժողովրդական հանրամատչելի լեզվի այդ եռանդուն պաշտպանը, բավական արդեն ետ էր մնացել աշխարհաբարի մշակման գործում: Լեզուն այժմ կազմվում էր ոչ թե Մոսկվայում, այլ Թիֆ- լիսում: Այստեղ հայ մամուլը, գրականութիւնը ընդունում էր բազմաթիվ ոճեր ու դարձվածներ թե բուն ժողովրդից և թե ուսաց լեզվից: Նազարյանցը հա- կառակ էր այդ բոլորին և ասում էր, թե իր «Լապտերով» պիտի զինվի «ավե- րագործ հայազգի վանդալներին» դեմ:

Չէ կարելի ուրանալ և այն, որ Թիֆլիսի վերանորոգիչները չափազանցու- թիւնների, և հաճախ անհեթեթ չափազանցութիւնների մեջ էին ընկնում: Դրա ամենապարզ ապացույցն է Ստեփանեի «Հայկական աշխարհը», որի ընդունած ուղղագրական ձևերը, կետագրութիւնը (մանավանդ 1867-ին) ուղղակի ան- կարելի էին դարձնում ընթերցանութիւնը: Նազարյանցը թեև չէ տալիս ժայ- կական աշխարհի» անունը, բայց ակնարկութիւններով պարզ հասկացնում է, որ իր կոնվեր զլսավորապես լինելու է այդ «վանդալի» դեմ: «Ոչ նորութիւնը, նոր կետագրութիւնը, նորանշան շեշտեր և նոր կանոնք, կամ ուղիղ ևս ասել, անկանոնք հարմարագրութեան, որպիսի անօգուտ, վնասակար իսկ բաներ էին, հավանեցավ այս կամ այն անձը օտարուստ ներս մուծանել հայկական լեզվի մեջ, այլ վերանորոգութեան մի քանի հին ձևերի, որ տալու էին աշխարհա- բարին ավելի համառոտութիւն, ավելի որոշութիւն և նշտութիւն՝ ավելի պատ- վականութիւն»: Ահա նազարյանցի դավանութիւնը: Ժողովրդից հեռու ապ- բող մի մարդ, նա արհամարհում է ժողովրդի ստեղծագործական ուժը և հին ձևեր վերանորոգելով է ուղում նոր լեզու սարքել: Սա էլ մի մեծած ձգտում

էր, ինչպես «Հայկական աշխարհի» ձգտումը՝ կանոնավորել լեզուն եվրոպա- կան կետագրութեան միջոցով: Հետաքրքրական է, որ նազարյանցը խոստանում էր գործածութեան մեջ մտցնել թուրքահայ բարբառի մի քանի ձևերը:

Եթե «Լապտերին» վիճակված լիներ լույս աշխարհ գալ, մենք կտեսնեինք, թե նազարյանցը ինչպես է կատարել իր խոստումները: Բայց «Լապտերն» էլ, իր ծրագիրն էլ, ինչպես ստացինք, լուր չի տալորութիւն մնացին: Մի քանի տեղեկութիւններ էլ այդ շփոթած ամսագրի մասին, և մենք կվերջացնենք:

Նազարյանցի աշխատակիցներն այս անգամ պիտի լինին Գեորգ Քա- նանյանց (Լազարյան ճեմարանի տեսուչ), Կարապետ Եզյան, Սմբատ Շահա- զիզ: Սրանց մեջ միայն Շահազիզն էր հայտնի իր որոշ գույնով, դավանու- թիւններով. Գեորգ Քանանյանցը իր կյանքի ամբողջ ընթացքում ցույց չտվեց, թե ինչ սկզբունքների տեր է, ոչ էլ գրեց հայերեն լեզվով: Իսկ Կարապետ Եզ- յանը ապագայում հայտնի դարձավ իբրև անհաշտ թշնամի այն սկզբունքների, որոնց քարոզում էր նազարյանցը: Կա այդ աշխատակիցների թվում մի անուն էլ, որ նույնպես զարմանք է հարուցանում: Դա Մսեր մագիստրոսն էր, այն իսկ Մսերը, որ կոչվում էր «Հյուսիսափայլի» դեմ, Չերքեզյանցի կեղտոտ գրու- թիւններին տեղ էր տալիս, իսկ Արարատյանցին հանճար էր անվանում. «Հյուսիսափայլն» էլ անվանում էր Մսերին տգետ, անհասկացող: Այժմ նա նազարյանցի հետ էր: Ի՞նչ էր սա նշանակում: Եվ ի՞նչ պիտի լիներ «Լապ- տեր Հայաստանին» այդպիսի աշխատակիցների հետ: Դժբախտաբար, բայց պուցե և բարեբախտաբար, մենք այդ չգիտենք...

II

Տեսչական պաշտոն ներսիսյան դպրոցում: Թիֆլիսը, նրա թողած տպա- վորութիւնը: Նազարյանցը չէ կարողանում գործել: Ի՞նչ էր նրա տեսչութիւ- նը դպրոցի համար: 1869-ի դպրոցական հանդեսը: Դժգոհութիւններ: Նազար- յանցի կազմած դասագիրքը: Հրածեղտ Թիֆլիսին, վերադարձ Մոսկվա: Գրա- կան ծրագիր: Վերջին գրվածք: Ճանապարհորդութիւն դեպի Եվրոպա. Գե- մանիայի թողած տպավորութիւնը: Մահ:

Ներսիսյան դպրոցի համար նոր հողաբարձութիւն ընտրվեց 1868-ի դար- նանը: Ընտրվածները առանձին ուշադրութիւն դարձրին դպրոցի դրութեան վրա: Աննախանձելի էր այդ դրութիւնը թե՛ տնտեսական և թե՛ ուսումնական կողմերից: Պակասել էին դպրոցի արդյունքները, և նոր հողաբարձութիւնը կարգ ու կանոն հաստատեց, վերանորոգեց դպրոցի հին, խաբխուլ շինու-

* 1868 թվի մայիսին նազարյանցը նամակով խնդրում էր Գեորգ Քանանյանցին աչքի անց- կացնել «Լապտեր Հայաստանի» ծրագիրը և հայտնել իր կարծիքը. ուրախութիւն հայտնելով, որ Քանանյանցը պիտի աշխատակցե ամսագրին, նազարյանցը գրում էր. «Ես մինչև այժմ աշ- խատած, ջրտնած և տապալկված եմ միայն մեր ազգի մտավոր և բարոյական օգուտների հա- ժար: Այդ փոքր է և շատ փոքր, և միշտ մնալու է անհաջող, գոնյա անտնողական, որովհետև մի հատիկ մարդ, որչափ ևս քանքարաշատ լիներ նա, անբավական է տանել բոլոր ծանրու- թիւններին այնպիսի մի ձեռնարկութեան, որպիսին է հրատարակութիւնը մի արժանավոր օրա- գրի. բայց միացալ և միարանջալ զորութիւնը, ընկերութեան ուժը, որո մեջ պարունակված է և մարդու մեծագործութեան կարողութիւնը, ինչպես քաջ հայտնի է խոհականիդ, սովոր են հեշ- տացնել ամենայն զմիարկութեան, այդ հնարավոր կացուցանել այն բանը, որ անհարին է անանկական անհատներին»:

թյունը, ամիլացրեց անշարժ կալվածների և այլ նյութական աղբյուրների շահավետութունը:

Բայց ամիլի սղրալին ուսումնական մասի դրությունն էր: Մենք տեսանք, որ դպրոցը կառավարվում էր ժամանակավոր տեսուչների ձեռքով: Պաշտոն վարողների դրությունը այնքան անհաստատ էր և խախուտ, որ ոչինչ բարեկարգություն չկար դպրոցի մեջ: 1868 թվի մայիսին ուսուցչական ժողովը, նկատի առնելով աշակերտների պատրաստության չափը, լճուկի բոլոր աշակերտներին թողնել միևնույն դասարաններում, բացառութեամբ մի քանիսի, իսկ բարձր, հինգերորդ դասարանի աշակերտներին իրավունք տվեց մի ասորի էլ մնալ: Ամիլորդ համարվեց նույնիսկ տարեկան հարցաքննություններ նշանակել: Հոգաբարձությունը չհամաձայնվեց այս որոշումների հետ. նա կամենում էր հրապարակական հարցաքննությունների միջոցով պարզել դպրոցի ուսումնական մասի դրությունը: Հարցաքննությունները տեղի ունեցան և ամիլ շատ ողորմելի հետևանքներ. դպրոցից արձակվեցին 53 աշակերտներ, ետ տարվեցին 12, պատրաստականից և առաջին դասարանից փոխադրվեցին 14 աշակերտ միայն. մյուս դասարաններից փոխադրվողներ չեղան*:

Դժգոհությունը ընդհանուր էր. «Հայկական աշխարհը» մերկացնում էր դպրոցի այդ թշվառությունը, պահանջում էր բարեկարգություն: Հոգաբարձությունը վճուկի մի փորձված տեսուչ հրավիրել և կանգ առավ նազարյանցի վրա: Գեորգ կաթողիկոսը իր հավանությունը տվեց, և հոգաբարձությունը բանակցություններ սկսեց նազարյանցի հետ: Նոր տեսչի ընտրությունը, ինչպես իմանում ենք «Հայկական աշխարհից», կայացել էր դեռ 1868-ի վերջերում, բայց բանակցությունները ձգձգվեցին մինչև հետևյալ տարվա օգոստոսը: Նազարյանցին առաջարկվում էր տեսչական ոռճիկ 1600 ուրբի և դասերի համար առանձին 400 ուրբի: Ընդունելով այդ պայմանները, նազարյանցը 1869-ի սեպտեմբերին, թողնելով իր պաշտոնը Մոսկվայում, տեղափոխվեց Թիֆլիս:

Նրա վաղեմի տեսչանքը իրագործված էր: Գեո Կաղանից գրած իր նամակների մեջ նա անդադար գանգատվում էր, թե մարդարեն իր գավառում պատիվ չունի, թե հայերը չեն իմանում հարգել իրանց ուսումնականներին: Այժմ այդ գանգատները վերանում էին. նազարյանցին տրվում էր գործելու լայն ասպարեզ: Եվ նա այժմ այն շէր, ինչ Կաղանում. անհայտ մի երիտասարդ, որ նոր էր մտնում կյանքի մեջ: Այժմ նա ուներ պատկանելի անուն, հեղինակություն: Ներսիսյան դպրոցը, հայ աղքատ դասակարգին ծառայող այդ կրթական հիմնարկությունը, կարող էր մի անձնվեր, հասկացող ղեկավարի. նա թշվառ էր իր անմխիթար դրությամբ և նրան պետք էր փրկել, կենդանացնել:

Ոչ ոք չէր կասկածում, թե նազարյանցը այդպիսի մի փրկիչ կլիներ. նրա վրա մեծ հույսեր էին դրված: Դպրոցի կարգերը անխնա քննադատող «Հայկական աշխարհը» գրում էր «Մեծ. պ. նազարյանը ուսումնարանի տեսուչ ընտրվեցավ ձայների բաղմությամբ և երբ հայ քաղաքացին կընդունեն հրավերը և շնորհ կբերեն զեպի մեզ, ուսումնարանի նոր ժամանակամիջոց (էպոք) սկսվելու է, այո»**:

Նազարյանցի Թիֆլիս դալը, իհարկե, միայն Ներսիսյան դպրոցի տեսուչի տից չունեի նշանակութուն: Պակաս նշանավոր չէ այն հանգամանքը, որ նա իբրև գրական գործիչ, իբրև հասարակության արատները և պակասությունները

մերկացնող, բնակություն էր հաստատում Թիֆլիսի պես մի հայաշատ կենտրոնում, ուր թանձրացած էր հայկական իրականությունը և ուր միայն հնարավոր էր կազմակերպել այդ իրականության դեմ կռիվը, նրան ղեկավարելու և բարեկարգելու գործը: Կար մրցության մեծ դաշտ, կար հասարակական և գրական ձեռնարկությունների մեծ պահանջ: Նազարյանցին վերապահված էր մի աչքի ընկնող դեր: Բայց նա չկատարեց այդ դերը, չկարողացավ իր դպրոցի սահմաններից դուրս գալ: Ապրելով Թիֆլիսում համարյա երկու տարի, նա բավականացավ միայն իր պաշտոնով:

Թիֆլիսը ճնշում էր նազարյանցին: «Շատ բան հեռվից տեսած, պսպղուն և գրավիչ է,— գրում էր նա Գեորգ Քանանյանցին՝ Թիֆլիս հասնելուն պես,— բայց որ մոտից քննում ես և շոշափում ես, ոսկի կարծեցածդ ստուգվում է մի շատ հասարակ մետալ: Եվ այսպիսի դառն հուսախաբություն պատճառողը մի օտար, անսովոր տեղ չէր, այլ այն քաղաքը, ուր նա ծնվել և մեծացել էր: Տասնյակ տարիներով հայրենիքից հեռու ապրած մարդը ընկնում է հայկական կյանքի մեջ, նայում է նրա կերպարանքին և զգում է, որ դա իր տեղը չէ, զգում է, որ ոչինչ չէ կարելի անել այդտեղ: Ահա ինչ է նա գրում 1870 թվին իր նախիջևանցի բարեկամին»:

«Ահա մի տարի է, որ Թիֆլիսում եմ, բախտի անհաջող բերմամբ ընտրելով ինձ ասպարեզ գործունեության մի հեռավոր ասիական աշխարհ, որ թեպետ և իմ հայրենիքն է, բայց այս բոպիս, փոքր ինչ մոտուց տեսնելով և քննելով իրը, ամենևին անհավանելի է երևում ինձ: Ձեր քաղաքում արդարև մարդիկը, ժողովուրդը, ամիլի տգետ են, քան թիֆլիսյան հայերի լուսավորությունը մի ամենևին օտար բան է. լեզուների հետ և սիրտն ու միտքը փոխված, ոչ հայկական, այլ այլազգական միանգամայն: Ձեր քաղաքում չտեսա փողոցում կյանք ու շարժողութուն, մինչ այստեղ Թիֆլիսում երևելի, եվրոպական փառավորությամբ շինած մաղաղիներ և զեղեցիկ հագնված մարդիկ ամենայն անդ հանդիպում են ձեզ, մանավանդ նոր քաղաքում. բայց այս բոլոր կյանքը և շարժողությունը մի շատ նյութական և էգոիստական բան է. հայրենասիրություն, հասարակաց հոգի և կյանք չկա, ամենայն ինչ օտար և հեռի է իմ սրտի ցանկացածներից: Հայերը ունին այստեղ փառավոր տներ, ոմանք դոցանից ասիական փառահեղությամբ զարգացած, բայց ձեր տները, ինչպես եկատեցի ես, ամիլի հարմարությունք և կոնֆորտ ունին, քան թե թիֆլիսյանքը: Հասարակ ժողովուրդը աղքատության անդունդքի մեջ կորած ապրում է ամենևին թշվառաբար, հին պապական և մայրական շավիղներից ոչ մի քայլ առաջ չկանցած: Այստեղ կան մի տեսակ աղքատք, որ գրեթե մերկ ման են առնում փողոցի մեջ: Ոչ, թիֆլիսյան հարստությունը կարող չէ կաշառել իմ աչքը, մինչ ժողովուրդի թշվառ կյանքը զգվանք է բերում մարդու վերա, երբոր կաթկցությունը ամենօրյա կրկնությամբ թուլացած էր»:

Շարունակելով համեմատությունը Թիֆլիսի և նոր-Նախիջևանի մեջ, նազարյանցը գտնում էր, որ ազգի առաջադիմության գործը կարող է ամիլի նոր-Նախիջևանում հարմար և նպաստավոր պայմաններ գտնել: Ահա թե ինչու

«Ձեր մեջ,— ասում է նա,— մարդիկ անմխաբան են և հակառակ միմյանց, բայց հասարակական գործի մեջ, պիտի ասել արդարությամբ, և վասն ձեր պարտաբերի, դուք կարող եք փոքրիշատե մոռանալ ձեր անձնական ախտերը և կիրթի: Բայց այդպես չէ Թիֆլիսում, այստեղ ազգային օգտի հոգաբարձուք բաղ-

* Ստ. Մայիսյանց, «Համառոտ պատմ. Ներսիս. դպրոցի», էր. 128:

** 1868, № 11:

մագլխանի շար վիշապներ են, ու նրանց միայնակ շանքը և հաճութիւնը այն է, որ միշտ հակառակ դուրս գան մինը մյուսին և այդպէս ոչինչ խնդիր չուծումն շատանա, ամենայն բան մնա անորոշ և տարտամ: Սարսափելի միմեակ է իրերի, որոշ մեջ ոչինչ բարի գործ հառաջ գնալ կարող չէ, և իմ ամենաշաղ գաղափարքը դորավոր կամքի հետ միասին իզուր ջախջախվելու են այստեղ և արդարև ջախջախվում են: Ինչ որ այս պարտնները երեկոյին վճառած ու կնքած էին, վաղվան առավոտումն արդեն մերժած ու քայքայած է, ոչ մի բանի վերա հաստատութիւն և դադար չկա, մի օր այսպէս, մյուս օր այլպէս, օվ խեղք ուներ, պիտի խելակորույս լիներ սրանց հետ և այդպէս գործը հո մնար միշտ»:

Այսպէս էր իրականութիւնը: Եվ նա, ինչպէս տեսնում եք, չէ լցնում նազարյանցի սիրտը գործելու, ուժեր լարելու ցանկութեամբ, այլ, բոլորովին հակառակը, հուսահատեցնում է նրան հենց առաջին քայլերից, վախեցնում է, փախցնում: Մի ժամանակ կար, երբ այդ գործիչը բոլորովին իրավացի հպարտութեամբ ասում էր. «Ոչ եկի խաղաղութիւն արկանել, այլ հուր»: Այժմ նա յարախառն անհաջող բերմունք էր համարում այն, որ ընկել էր մի տեղ, ուր հենց այդ աստվածային հուրն էր հարկավոր, ուր հունձքը այնքան առատ էր, բայց մշակները սակավ:

Մի ուրիշ նամակի մեջ նա այսպէս էր նկարագրում Թիֆլիսի հայերին. «Վաճառականութիւնը շատ ծաղկած է այստեղ և հայոց ձեռքում գրեթե միայն... Մի բան իսկույն գրավում է այստեղ մարդու ուշադրութիւնը. ճոխութիւնը և հարստութիւնը և ամարդի ազահութիւնը այս տեղի մարդերի խիղճ, պատիվ, կարեկցութիւն, աղնիվ զգացողութիւն ոչինչ նմանապիսի բան չկա այստեղ: Ձեզ պիտո էր տեսանել, թե ոմանք հարուստ հայեր որպիսի շքեղազարդ տներ ունին այստեղ, ոսկեզարդ, կես մի ասիական և կես մի եվրոպական ճաշակավոր փառահեղութեամբ, կարասիքով և այլն, և այլն»:

Նազարյանցի նկարագրած իրականութիւնը մեզ վրա հենց այն տպավորութիւնն է թողնում, որ այդտեղ, Թիֆլիսում էր նրա տեղը, որովհետև, նազարյանցը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ բողոք ու մտրակ, կռիվ ու պահանջ: Բայց դրա փոխարեն մենք տեսնում ենք նրա մեջ կատարյալ հուսահատութիւն. դեռ Թիֆլիսում մի բան չարած՝ նա արդեն մտածում է նախիջևան տեղափոխվելու մասին: Եվ կարելի չէ կասկածել, որ այնտեղ էլ նա պիտի դտներ նույն հուսահատեցնող, հեռու փախցնող իրականութիւնը:

Ինչպե՞ս հասկանանք նազարյանցի այս անկարողութիւնը: Ամենից առաջ նկատի ունենանք մի հանգամանք. նազարյանցը իր նամակներում հաճախ է խոսում իր ծերութեան մասին: Տարիները իրանցն էին պահանջում. և նրանք, իհարկե, չէին կարող թույլ տալ նազարյանցին նորից նոր սովորել վաղուց թողած ու մոռացված հայրենի միջավայրին, ապրել նրա հետ, համառ ու տոկուն մաքառողի դիրքը բռնել: Դրա համար արդեն ուրիշ հասակ էր պահանջվում: Բացի դրանից, այստեղ էլ խոսում էր նազարյանցի հին պակասութիւնը, այն, որ նա իրականութեան մարդ չէր, կյանքի հետ ամբիջական չէր շփվում: Ավելի թեորիայի, վերացականութեան մարդ, քան կյանքի ասպարեզում կռիվող զինվոր, նրան ճնշում էր մանավանդ այն, որ Թիֆլիսում մի անկախ դիրք չունէր գրաված, այլ հպատակված էր հասարակութեան, և նրա պաշտոնը, ինչպէս կտեսնենք, իրավունք էր տալիս ամեն մեկին դատավոր հանդիսանալ նրա վրա: Ոչ, այդ իրականութեան համար ուրիշ տեսակ մարդիկ էին հարկավոր: Հենց այդ իսկ ժամանակ Թիֆլիսում գործում էր «Հայր կական աշխարհի» խմբագիր Ստեփանեն: Նույն աննպաստ հանգամանքները

խեղդում էին նրան. նա էլ ուսուցչութեամբ էր մի կտոր հաց աշխատում իր համար, բայց շնորհիվ իր եռանդի՝ խմբագրում էր մի ամսագիր, որ այն ժամանակվա մեր կյանքի միակ փոքրիշատե միտթարական երևույթն էր:

Մի կողմ թողնելով հասարակական գործունեութեան ասպարեզը, մենք տեսնում ենք, որ նազարյանցը դպրոցական գործում էլ առանձնապէս աչքի ընկեցող, խոշոր բան չկարողացավ անել:

Ներսիսյան դպրոցի դրութիւնը նա այսպէս է նկարագրում իր նամակներին մեջ. «Իմ տեսչութեանը հանձնած ուսումնարանը տակավին շատ պակասավոր դրութեան մեջ է. շինութիւնը և դասատուները կեղտոտ և անկարգ: Վարժապետները լավ մարդիկ են և աշխատում են աղքատիական ջերմեռանդութեամբ, բայց ստանում են փոքրիկ վարձատրութիւն. 50 մանեթ տարեկան դասին, որ շատ փոքր է Թիֆլիսի պէս թանկ տեղում: Միակն ուսումնարանները, որ էին պատրաստողականքը դպրոցի համար, ամենեին բարձի թողի տրած. ուսումնական հնարները, դպրոցական մատչանք և դիտնական հանգերձանք գրեթե չկան ամենեին»:

Իր գալուց հետո նա անմիջապէս հանդիսավոր ակտ կատարեց (հոկտեմբերի 12-ին), որի ժամանակ մի թեթև հաշիվ ներկայացրեց ժողովականներին հոգաբարձութեան կողմից: Նույն այդ հանդեսում ուսուցիչներից երկուսը և ինքը, նազարյանցը, կարգացին ճառեր դանազան առարկաների մասին: Նազարյանցի ճառն էր «պատմութիւն պեղագողիկայի, որպէս դա կերպարանագործված է համաշխարհական պատմութեան մեջ և ներքին, օրինապատշաճ կերպով շաղկապված է ազգերի կրթութեան հետ», մի գործ, որ թարգմանված էր գերմանացի Եմիլի «Մանկավարժութեան պատմութիւն» հայտնի աշխատութիւնից: Այդ բոլոր հաշիվները և ճառերը նազարյանցը հրատարակեց Թիֆլիսում 1870 թվականին մի մեծագիր տետրակի մեջ, կցելով նրան նաև այն դամբանական ճառը, որ արտասանել էր ինքը հոկտեմբերի 18-ին դպրոցի հոգաբարձու բժիշկ Տեր-Գրիգորյանի զագաղի վրա: Տետրակի վերնագիրն էր. «Մանախոսութիւն և համարատվութիւն ներսիսյան ազգային հոգևոր դպրոցի հանդիսավոր գործողութեան մեջ 1869 թվականի հոկտեմբերի 12-ին»:

Սակայն չէ կարելի ասել, թե նազարյանցի տեսչութիւնը բոլորովին անկատելի անցավ ներսիսյան դպրոցում: Քայքայված հիմնարկութիւնը մի շարք ներքին բարեկարգութիւններ ստացավ իր նոր տեսչի ձեռքից: Սկզբից եկի նազարյանցը կազմակերպեց և կանոնավոր հիմքերի վրա դրեց մանկավարժական ժողովը, որ մինչև այդ անունով գոյութիւն ուներ, մոռացված ու քայքայված էր: Այդ մարմինը, որ ամենից մոտ ծանոթ էր դպրոցի կարիքներին, սկսեց կանոնավոր նիստեր ունենալ, քննել հիմնարկութեան պակասութիւնները, որոշումներ կայացնել, որոնց իրագործումը նազարյանցը հաջողեցնում էր հոգաբարձութեան նիստերում: Հիշենք այդ որոշումներից մի քանիսը. զննել կարևոր գրքեր և կազմել ֆիզիկական կարիներ, բերել տալ ուսուցիչների ընթերցանութեան համար լրագիրներ և ամսագրեր ուսերեն և եվրոպական լեզուներով, աշխարհաբարի դասատուութիւնը մտցնել դպրոցի առաջին և երկրորդ դասարաններում, իսկ գրաբարը սկսել նորոգից: Միևնույն ժամանակ, ի նկատի առնելով, որ Թիֆլիսի զանազան եկեղեցիների մոտ ըացված թիակն դպրոցները համարվում էին ներսիսյան դպրոցի նախապատրաստական դասարաններ, մանկավարժական ժողովը վճռում է եկեղեցիները նրանց իր սեփականութեանը: Դպրոցը չունէր վեցերորդ դասարան, և որովհետև նա չէր բացվում միջոցներ պահպանութեան պատճառով, ուստի նազարյանցը 6 ուսուցիչ-

ների հետ դիմում է հոգաբարձութեան, խնդրելով բաց անել վեցերորդ դաստ-
բան. նա և ուսուցիչները առաջարկում էին ձրի դասեր վերցնել այդ դասարան-
նում: Բայց հոգաբարձութեանը չընդունեց այդ առաջարկությունը:

Ուսուցչական խումբը գործում էր համերաշխությամբ, և դպրոցի առաջա-
դիմությունը արդեն զգալի էր, թեև «Հայկական աշխարհը» շարունակում էր
զժգոհ մնալ ուսումնական մասի դրությունից և քննադատում էր նրա պակա-
սավոր կողմերը: Նազարյանցն աշխատում էր անգաղար, և եթե նրա բոլոր
դիտավորությունները չէին իրագործվում, դրա մեջ մեղավորը նա չէր: Ահա
ինչ էր նա գրում իր նամակներից մեկում.

«Մենք հայերս Թիֆլիզում ունինք ուսումնարան, բայց ոչինչ ուսումնա-
կան անոթ, ոչինչ ուսումնական լեզու, ոչինչ դպրոցական մատյանք. պիտո է
ուսուցանել, բայց ոչինչ ուսանելի նյութ մշակած չկա, որպեսզի դա ըմբռնելի
և տպավորելի լինի ուսանողի մտքում: Գեոգրաֆիայի և բարեխոսական
խառնակության մեջ կորած է բոլոր դպրոցը, ասողը խուժ և լսողը դուժ: Ես
այս ողբալի վիճակը իրերի մի սաստիկ ճառախոսությամբ հոգաբարձական
ժողովի մեջ ազդեցի մեր պարոններին. վճիռ հաստատվեցավ տարին 1000 ման,
կարգել տպագրելի դպրոցական մատյանքի համար. ուստի պիտի հոգացվին
վարձատրություն և տպագրություն գրվածքների, 25 ման. տպած թերթին նշա-
նակելով. այս արծաթով կարելի է միայն 20 թերթ բան, ոչ ավելի, 500 ման.
վարձ գործին և 500 ման. տպագրությունը. դիրքը դառնում է սեփականություն
հոգաբարձական ժողովի»:

Սակայն պետք է խոստովանել, որ այս միտքը նազարյանցին չէր պատ-
կանում և ներսիսյան դպրոցի հոգաբարձութեան համար նորություն չէր գրա-
րոցի հաշվով դասագրքեր հրատարակելը: Դեռ 1865-ին ներսիսյան դպրոցը
հրատարակել էր Ս. Պալասանյանի «Պատմություն հայոց գրականության»,
տալով հեղինակին վարձատրություն 150 ուրբլի, իսկ 1868-ին նույն Պալա-
սանյանը և Ստեփան քահ. Մանգինյանը դիմել էին հոգաբարձութեան, առա-
ջարկելով տպագրել իրանց կազմած դասագրքերը: Իր «սաստիկ ճառախոսու-
թյան» ազդեցության տակ կալացրած հոգաբարձական որոշումից օգտվողը
ինքը, նազարյանցը եղավ: 1870 թվի հունիսի 18-ից նա գրում էր Ս. Շահա-
զիզյանին:

«Թիֆլիսը այրվում է այժմ կրակի տոթի մեջ և մեք, տեսուչ և վարժա-
պետքս ճենճերվում ենք բարխունյան հնոցի մեջ հարցաքննելով աշակերտքը,
հարցաքննությունը շատ անազան սկսան մեր ուսումնարանում և ավարտելու
են ոչ հառաջ քան թե 25 ամսուս. մեր հոգաբարձուք այսպես կամեցան, որպես
թե չկամենալով մեզ անգործ թողուլ՝ խելոքներ»:

Իմ կյանքի մասին ինչ գրեմ Ձեզ. դա անպարագրելի է. աշխատություն,
ճգանք, քրտինք և դարձյալ քրտինք, ճգանք և աշխատությունք, աչք բանալ
կարելի չէ. եթե փոքրիշատե վաստակը պիտի պատրաստվին դալոց ուսում.
նական տարվո համար՝ դպրոցական մատյանք, որովք մեք ամենևին ազրատ
և չքավոր եմք, ապա կա մեր ձեռքում երկու ամիս և ինչ կարելի էր այդպիսի
կարճ միջոցում վճարել, թեև առավոտից մինչև երեկո մեքենա դարձած, գրելի

* Պետք է սակայն նկատել, որ Ս. Ստեփաննի այդ տեսակ վերաբերմունքը մի քիչ էլ ան-
նական հանգամանք ունի: Երբ նազարյանցը Թիֆլիս եկավ, Ստեփաննն նրան ցանկություն
հայտնեց մտնել դպրոցը ուսուցչի պաշտոնով, բայց նրա այդ ցանկությունը չկատարվեց: Այդ
ժամանակից «Հայկական աշխարհի» մեջ մենք նկատում ենք մի սառն վերաբերմունք առհաս-
րակ դեպի նազարյանցը:

և թարգմանեիր. թշվառ աղզ, թզվառ աշխատավորք. մանավանդ մեր ապե-
րախա, տղևա և անմիտ մարդերի մեջ, որ աստված ևս կհայհոյին յուրյանց
անտանձ բերանով, ո՛ր թե մարդ»:

Այս առդերից մենք նկատում ենք, որ նազարյանցի մեջ կենդանի է հին,
թանկագին հատկությունը՝ աշխատասիրություն: Չնայած ամառվա տոթերին,
ես պատրաստում վերջացնում է առաերեն լեզվի մի մեծ դասագիրք և սեպ-
տեմբերին ներկայացնում է հոգաբարձութեանը: Գիրքը հանձնվում է մանկա-
վարժական ժողովին, որ ցննում է և հավանություն տալիս, այնուհետև հանձ-
նվում է տպագրության. իսկ նազարյանցը ստանում է 500 ուրբլի վարձա-
տրություն, գուցե միակ վայելուչ վարձատրությունը նրա ամբողջ գրական
գործունեության ընթացքում: Այդ դասագիրքը տպվեց Թիֆլիսում 1871 թվա-
կանին և կրում է «Տեսական և գործնական առաջնորդ ուսու լեզվի» անունը:
Մի բավական սովոր հատոր է դա, բաղկացած 320 էրեսից: Բայց այդ դա-
սագիրքը ընդունելություն չգտավ մեր դպրոցական աշխարհում: Նկատենք
իրև հետաքրքրական փաստ, որ նազարյանցը այդտեղ իր աշխարհաբար հա-
յրենի մեջ ընդունել է գրաբարի շատ ձևերը և նույնիսկ հոլովները (Նմա,
գայս և այլն):

Հազիվ էր ներսիսյան դպրոցը մի տարի խաղաղ կյանք վարել, հազիվ էր
սկսել կամաց կամաց իր պակասությունները դրստել, և ահա երկրորդ տա-
րում սկսվում են մեր դպրոցներին այնքան հատուկ անկարգությունները:

Սկզբից եթե նազարյանցի և դպրոցի հոգաբարձութեան մեջ հաստատվեց
մի հարաբերություն, որի մասին նազարյանցը այսպիսի վկայություն է տա-
լիս իր նամակներում.

«Թեպետ իմ առաջարկությամբք և խթանմամբ ոտքը ու ձեռքը հոգաբար-
ձաների սկսած են շարժվել և արիանալ, բայց մեր հասարակությունը դեռևս
ստացած չեն այն բարյացակամական և հարգողական ուղղությունը, որ կա-
րելի լինի ինձ այժմ շատ պողաբերություն հառաջացնել: Ես չկամեի ըսել
վարձկան լինել, բայց նոքա, ինչպես երևում է, չեն հասկանում այդ բանը և
այդ պատճառով չկամին վերահասու լինել իմ նեղյալ կացությանը և օգնել
ինձ վասն յուրյանց հատուկ օգտին»:

Բայց այդպիսի «բարյացակամական» հարաբերություններ ստեղծել ան-
կարելի եղավ և նազարյանցը, ինչպես երևում է, միշտ զգում էր, որ դպրոցում
իրքը մի վարձկան է: Ուստի նրա զժգոհությունը դնալով ավելի և ավելի սաստ-
կանում է, և նազարյան ճեմարանի տեսուչ Գեորգ Քանանյանցին գրած նա-
մակներում նա անգաղար խնդրում է, որ էլի իր նախկին պրոֆեսորական պաշ-
տոսը տան իրան: Ահա ինչ էր գրում նա 1870 թ. սեպտեմբերին.

«Ես ամենևին սխալվեցա, հղանալով անգամ այն խորհուրդը, թե կարելի
էր որևիցև օգտակար գործ յառաջ տանել Կովկասի մեջ, մեր սիրելի ասիամիտ
կարերի հետ, հանուն ազգային դաստիարակության և լուսավորության: Ես
սխալվեցա հանձն առնելով այդպիսի, ահադին զրկանքով լի տեղափոխություն
և կենսակցություն այնպիսի մարդկան, որ ինքյանք լինելով յուրյանց թշնամիք,
ամենևին ազեա և անփութ ժամանակի հառաջաշարժ ընթացքին (պրոգրեսին)
ամենայն քայլափոխում և զիս կալ և կապ կաշկանդելով, ոչնչացնում են իմ
բոլոր ուժը և գորությունը, այնպես որ ստիպված եմ վստահություն մե
սովորությունը, ասել Ձեզ, թե ես խաղալիք եմ դարձած այս անմիտների
և անբարոյականների անմտությանը և անբարոյականությանը: Եվ այսպես
ես կարելի չէ մի հոգաբարձական ժողովի մեջ, ուր նստած է տասներկու գլխա-
րի վիշապ, մի գլխանի վիշապակետով: Եվ սոցա ջանքը և փույթը այն չէ, որ

ազգի մանկուցը ժամանակ հետ հառաջ գնան, այլ վայրիվերո, անկարգ ուսմամբ անմտանան միանգամայն: Իմ հայրենասիրությունը, օ՛հ, իմ հայրենասիրությունը, որով միայն մոլորված և հափշտակված ես, ձգեցի իմ անձն այս խորխորատի մեջ, իմ հայրենասիրությունը ոչինչ է. ունայն է այստեղ, որովհետև հանդիպում է մի անմիտ և թշնամական հայրենատեցության: Մի սարսափելի անմիաբանություն, մի բթամիտ անհոգություն տիրապետած է այստեղ. ոչ մի խնդիր, ոչ մի առաջարկություն իմ կողմից, պատկանյալ ուսումնարանի թե արտաքին և թե ներքին բարեկարգությանը, մինչև այժմ գտած չէ ուշադրություն. վայրիվերո շատախոսություն և վիճարանություն և կորուստ ժամանակի շատ, բայց վճիռ որոշումն և գործավճարություն ոչ մի: Ոչինչ հաստատուն բան. որչափ գլուխք, այնչափ կարծիք. հոգաբարձուների ժողովումը շատ անկանոն. երկուքը կան, չորսքը պակաս են, չորքը կան, ութը պակաս են. և ատենապետը (председатель) գրեթե միշտ բացակա: Ահա Ձեզ, համառոտիվ, այս մեր հայկական ուսումնարանի կառավարության պատկերը, ողբալի պատկերը. և ես, անբախտ քաղաքացիս եվրոպական լուսավոր հասարակության, ես, անբախտ աշակերտս եվրոպական դպրոցի, ամենայն շաբաթ ունիմ ականատես լինելու այս տմարդի խառտիկական անմիտ տեսարանիս»:

Այս բոլորի վրա շուտով ավելացան և անձնական վիրավորանքները: 1871 թվի մարտին հոգաբարձու Իզմիրյանը հոգաբարձությունը մի գրավոր հայտարարություն տվեց, որի մեջ քննում էր ուսուցիչների գործունեությունը և շատ պակասավոր էր գտնում տիրող կարգերը, իսկ դպրոցի կառավարությունը առհասարակ շատ թույլ էր համարում: Հոգաբարձությունը վճռեց նկատողություն անել ուսուցիչներին և տուգանքի ենթարկել նրանց՝ բաց թողած դասերի համար: Նազարյանցը լուծվածք տարավ այդ կարգադրությունը. նա մինչև իսկ շմասնակցեց այն բողոքին, որ ուսուցիչների մեծամասնությունը ներկայացրեց հոգաբարձությունը այդ վճռի առիթով և որով ապացուցանում էր իր բարեխղճությունը: Մի կերպ շտկվեց այդ միջադեպը, ծանր ապավորություն թողնելով նազարյանցի վրա:

Բայց ահա ավելացավ երկրորդ հարվածը, այս անգամ օւղջված տեսլի դեմ: Նազարյանցը դաս էր տալիս հինգերորդ դասարանում հայոց լեզու և մատենագրություն: Տարեկան քննություններից հետո մի այլ հոգաբարձու, իշխան Մ. Բեհրուդյան, զեկուցում տվեց հոգաբարձության և այդտեղ, ի միջի ալոց, հայտնեց, թե հայերեն լեզուն 1—4 դասարաններում գերազանց է եղել իսկ նազարյանցի դասարանում, հինգերորդում, ոչ համապատասխան: Նազարյանցը, լսելով այդ նկատողությունը, իսկույն հրաժարական տվեց*:

Այս ընդհարումը, սակայն, թշնամություն չէ գցում հրաժարված տեսլի և հոգաբարձության մեջ: Նազարյանցը սպասում էր այսպիսի ելքի, մենք դիտենք, որ նա դեռ 1870 թվին էր որոնում մի այլ տեղ, ուր չէր լինի Թիֆլիսի իրականությունը: Բացի դրանից, նա, իբրև մեղմ և խաղաղասեր բնավորության տեր մարդ, քրիստոնեական ներողամտությամբ վերաբերվեց իրան վիրավորողներին և Թիֆլիսից հեռացավ իբրև բարեկամ: Հոգաբարձությունը վերադարձվեց մի քանի ամիսներից մեկում հրաժեշտի ճաշ տվեց նրան: Այդտեղ նազարյանցը մի բարեկամական ճառ ասաց, իր շնորհակալությունը հայտնեց հոգաբարձուներին, անվանելով նրանց իր «ազնիվ բարեկամներ, ընտրյալք և ծաղիկներ հայկական հասարակության Թիֆլիսի»: Բայց այդ բարեկամական խոսքերի մեջ

* «Համ. պատմ. ներսիս. դպր.» էր. 138:

ընտացավ քաղաքավարի, անուշ խոսքերով երևան հանել այն բացասական հասարակությունները, որոնք նրա հրաժարականի պատճառ էին դարձել:

«Այս բուպիս,— ասաց նա,— այս եղբայրսիրական աղուհացը վայելելով Ձեր հետ, ես ունիմ կտակելու Ձեզ մի սուրբ կրակ և կամիմ հուսալ, թե Գուր լինելու եք ինձ հավատարիմ կտակակատարները: Արծաթ և ոսկի չունիմ Ձեզ կտակելու, և դուք կարոտ իսկ չեք դոցա, որովհետև այդ մասին ամենեքանդ քան զիս հարուստ եք: Իմ կտակս առ ձեզ այս է. մոտեցեք միմյանց, որոնեցեք զմիմյանս, սիրեցեք զմիմյանս, հարգեցեք իրեար, եթե կամիք որով և իցե յափով շինել և բարեկարգել այն ազգի տունը, որ տնտեսությունը այս բուպիս հանձնած է ձեր հոգաբարձությունը: Հակառակասիրության հոգին, որ մեր հին ազգային կործանական ախտերից մինն է եղած, և որո տխուր հետևանքը արյունոտ տառերով դրոշմած են մեր ազգային պատմության տախտակների վերա, հակառակասիրության հոգին, որո թունավոր շնչից թառամում է, ցամաքում է, մեռանում է ամենայն աղնիվ առաջարկություն և գործ, թող հեռի մեա ձեզանից. այդ շար վիշապի գլուխը դուք աշխատեցեք ջախջախել մի լուսավոր այրական հասկացողությամբ, մի մաքուր և զորավոր կամքով: Հասարակաց խնդիրների մեջ եղի՛ք ազգասեր ավելի քան թե անձնասեր: Ձեր միակ պատվասիրությունը և փառասիրությունը թո՛ղ լինի հառաջագեմ կացուցանել հասարակաց բարին: Հաղթեցե՛ք ձեր անձնական ախտերին, որովհետև այդ հաղթությունը ամենագեղեցիկն է բոլոր հաղթությունների մեջ»:

Այդ դասը ավելի ևս զգալի են դարձնում ճառախոսի հետևյալ խոսքերը. «Խնդրե՛մ ներել ինձ, եթե ես իբրև հասարակաց գործակատար, հանուն իմ սուրբ պաշտոնիս, հանուն գիտության, անաշուստ ծառայելով իմ խղճիս. ստիպված եմ գտանված ընդդիմախոսել ձեզ և հարուցանել ձեր ահաճությունը իմ վերա»:

Թողնելով Թիֆլիսը, նազարյանցը այլևս չփորձեց մի ուրիշ հայաբնակ քաղաքում գործել, այլ նորից բնակություն հաստատեց Մոսկվայում և ստանձնեց իր նախկին պրոֆեսորական պաշտոնը կազարյան ճեմարանում:

Այսպես վերջացավ ժողովրդի մեջ և ժողովրդի համար գործելու կարճատև փորձը: Մեր կյանքն իսկույն դուրս շարտեց նազարյանցին իր միջից, որովհետև նազարյանցը սովոր չէր նրան, շուտ սկսեց խնդրվել նրա իրականությունից, որովհետև նազարյանցը, «անբախտ քաղաքացի եվրոպական լուսավոր հասարակության», մեր ասիականության մեջ միայն այն դգաց, որ ապրելով այդտեղ անկարելի է և պետք է շտապով թափ տալ ոտների փոշին ու հեռանալ: «Նախախնամության կամքն էր,— գրում է նա,— տալ ինձ և այս փորձը փորձել, առ ի ճոխացնելու իմ կենսական փորձերի գլուխը (կապիտալը)»: Բայց արդեն sat est superyne! Հարկավոր է ինձ մտածել փոքր ինչ շունչ տանուլ իմ ծանրաբեռնած ծերության օրերում և իմ մոսկովյան բարեկամների գրկում»:

Ազատվելով «փորձանքից», նորից ընկնելով Մոսկվա, նա համարյա այլևս ոչ մի հասարակական գործով ցույց չտվեց իր գոյությունը: Մենք սրանով չենք ասում, թե նազարյանցը իսպառ մոռացել էր հայոց գրականությունը և հասարակական հարցերը: Ո՛չ, դրանք կային նրա համար և կարևոր էին մինչև կյանքի վերջը: Բայց նա չերևաց հրապարակում, չհրատարակեց որևէ գրական աշխատություն, չմասնակցեց մեր մամուլին: Ահա ինչ ենք ուզում ասել:

Բացառություն այդ կողմից կազմում է 1876 թվականը, երբ նազարյանցը մի քանի անգամ ընդարձակ հոգված գրեց ժամանակակից հայ պարբերական մա-

մովի մասին: Սակայն այդ գործը տպագրվեց նրա մահից ինն տարի հետո՝ 1872 է ասում նա այդտեղ:

«Հյուսիսամերիկայի» մահից տասը տարի էր անցել: Հայ մամուլը բավական առաջ էր գնացել, բավական զարգացել էր, նոր երևույթներ էր ներկայացնում. նա բաժանված էր բանականների, պայքար էր մղում որոշ գաղափարների, որոշ գրողների շուրջը, վերջապես բովանդակում էր իր մեջ մեր համարյա ամբողջ գրականությունը: Նազարյանցը այս բոլորի մասին ոչինչ չէ խոսում, կարծես անկարևոր է համարում այդ երևույթները: Քննում է նա մեր ամսագրերն ու լրագրերը վերին աստիճանի հարևանցորեն, հազիվ մի քանի խոսք նվիրելով նրանց բովանդակության: Հոգվածք երկու նպատակով է գրված. նախ՝ պաշտպանել «Հյուսիսամերիկայը» և երկրորդ՝ նորից արծարծել աշխարհաբար լեզվի հարցը:

«Հյուսիսամերիկայը» պաշտպանելու համար Նազարյանցը մի խիստ բանակորի է մղում «Գլորիոս» ամսագրի խմբագիր Վահան վարդապետ Բաստամյանցի դեմ, որ ասել էր, թե Նազարյանցն էլ, մյուս հայ խմբագիրների նման, չէր հասկացել ժողովրդի և ժամանակի պահանջները և սպանել էր իր գործը Շիրիների, Կիկերոնի և այլ այդպիսի թարգմանություններով: Հերքելով այդ կարծիքը, Նազարյանցը, ի միջի այլոց, ասում է. «Հյուսիսամերիկայը» պատերազմից յուր պատերազմը, հաղթության արձաններն ստացավ, և այդ հաղթության պատուըը այժմուս վայելում է մանուկ սերունդը, յուր ծնողին անարգող սերունդը: Այս խոսքերը ցույց են տալիս, որ ուսանալ հրապարակախոսության նահապետը իր կատարած դերի գիտակցությամբ էր հեռանում ասպարեզից:

Գիմելով ապա մեր մամուլի գործածած հայերեն լեզվին, Նազարյանցը հայտարարում է, որ հայ գրողը չգիտե իր մայրենի լեզուն, և մի շարք գեղեցիկ խորհրդածություններ է անում մեր աշխարհիկ լեզվի կանոնավոր մշակման և զարգացման մասին: Սկզբունքով այդ խորհրդածությունները ճիշտ են, բայց գործադրության միջոցներին գալով, Նազարյանցը բնկնում է սխալ և միակողմանի տեսությունների մեջ: Մենք արդեն մի քանի անգամ նկատեցինք, որ ինքը, Նազարյանցը, հետևելով իր տեսություններին, բավական աղճատել էր իր, առանց այդ էլ ծանր, աշխարհաբար, առատությամբ ընդունելով գրաբարի ձևերն ու հոլովները: Հետաքրքրական է, որ նա չէր հավանում «Արարատ» ամսագրի լեզուն հենց այն պատճառով, որ դա մի գրաբարախառն լեզու էր: Օտար բառերի գործածության դեմ էր Նազարյանցը, որովհետև, ասում էր նա, հայոց հին լեզուն ունի բառերի այնպիսի մի հարուստ պաշար, որ մենք հարկավորություն չունենք դիմելու օտար բառերին: Այս կարծիքը այսօր էլ կա մեր գրականության մեջ և, ինչպես հայտնի է, մասամբ միայն ճիշտ է:

Նազարյանցի այս գրվածքը, որ ունի վերնագիր՝ «Հայոց ժողովուրդը, նոր այժմյան լեզվի և մատենագրության վիճակը Ռուսաստանում, համառոտ տեսությամբ», որքան մենք գիտենք, վերջինն է, որ դուրս եկավ նրա գրչի տակից: 1872 թվականին գրած նրա մի նամակից մենք իմանում ենք, որ նա մտադրություն ունի թարգմանելու Ջոն Վիլյամ Գրեյի հայտնի աշխատությունը՝ «Պատմություն քաղաքակրթության Եվրոպայում», և թե հայերը տան գրամական միջոցներ: Իր աշխատանքի վարձատրություն նա հաշվում էր 4000 ռուբլի: Եվ իրավ, նա սկսել էր այդ թարգմանությունը, բայց այդպես կիսատ էլ մնաց:

* «Հանդ. գրակ. և պատ.», 1888, Գ. ա. կր. 234:

Նույն 1876 թվի ամառը Նազարյանցը ճանապարհորդեց դեպի Եվրոպա: Եվրոպական երկրներին, իհարկե, Գերմանիան էր, որ ամենից շատ հետաքրքրում էր գերմանական գաղափարներով և ողով կրթված Նազարյանցին: Բայց նախքան այդ ճանապարհորդության մասին խոսելը բերենք մի հետաքրքրական իրողություն, որ պատմում է Նազարյանցի հարգողներից մեկը, պ. Փ. Վարյանյանը՝

Նազարյանցը ճանապարհվեց Պետերբուրգի վրայով: Այդտեղ պ. Վարյանյանը և նրա մի երկու ընկերները ճաշի հրավիրեցին Նազարյանցին: Սովորաբար նա ուրախ և զվարթ սեղանակից էր: Բայց այդ անգամ, — ասում է պատմողը, — ուրախ չէր նա, այլ տոչորված օրտով գանգատ էր անում, որ «Հայոց ազգը ապերախ գտնվեցավ դեպի նա, մոռացավ նրան, և նորա սևաթույր տրտմությամբ թելադրված ճառի լեզուն հատու էր իբրև սուսեր»: Պ. Վարյանյանը պատասխանում է նրան մի ճառով, որի մեջ հայտնում է, թե «շարի լեզուն ինքնուրուիքյան կապականձվի այն ընդհանուր հարգանաց առջև, որ մտածող հայերի բազմությունը օրըստօրե ավելի ընծայում է ձեր անվանը»: Այս ճառը «այն աստիճան ազդեց Նազարյանցի վրա, որ նա արտասվեց և պատասխանեց մեղ մի հոգեշունչ ճառով: «Շատ է ինձ մտածող հայերի բազմությունը, — ասաց նա հեկեկալով, — հերիք է, որ գեթ երկու, երեք մարդիկ ինձ սիրեին»: Սիրո կարոտ էր այդ ազնիվ հոգին», ավելացնում է պատմողը:

Նազարյանցը նախ գնաց Գանիա, ապա Գերմանիա և Շվեյցարիա: Պատար Վյուլերն իր հիշողությունների մեջ ասում է, հիմնվելով Նազարյանցի համակների վրա, թե այդ երկրներից ամենալավ տպավորությունը թողել է Գանիան: Այդտեղ Նազարյանցը գտավ սիրալիր հյուրընկալություն գիտնականների շրջանում: Մինչդեռ Գերմանիան, նրա սիրած ու պաշտած Գերմանիան, շատ աննպաստ, կարելի է ասել հիասթափեցնող տպավորություն գործեց նրա վրա: Այդտեղ Նազարյանցը չգտավ մտերմություն, սրտաբաց հյուրընկալություն: Բայց այդ բանը, իհարկե, չփակեց նրա աչքերը, և նա հիացավ գերմանական քաղաքակրթության, կուլտուրայի վրա:

Այս ճանապարհորդությունը Նազարյանցի կյանքի մեջ հայտնի վերջին գեղար է: Անցավ մոտ երեք տարի, և հեռագիրը հաղորդեց, որ Նազարյանցը վախճանվեց: Այդ տխուր իրողությունը տեղի ունեցավ 1879 թվականի ապրիլի 26-ին:

Նազարյանցի վերջին օրերը և վերջին ժամերը նկարագրել է նրա ամենամտակ բարեկամ Ս. Շահազիլը: Տխուր, վշտալի պատկեր է ներկայացնում այդ նկարագրությունը:

Մահից մի ամիս առաջ Նազարյանցը բոլորովին փոխվել էր: Նախկին փիլիսոփայական վերաբերմունքը դեպի կյանքը նրա մեջ տեղի էր տվել մի լուսահատ դրություն: «Խավարված որպես երկինք, անծիծաղ որպես Ղազարոս, նա տարուբերվում էր յուր բարեկամների տներում, բայց կարծեմ, ուրախությունը նորան թողել էր հավիտյան. նույնպես ալեկոծ, նույնպես մտահույզ որպես երեկ և մյուս օրը: Երբ նա խոսում էր յուր ընտանիքի, յուր բազմաթիվ զավակների մասին, նորա ձայնը հնչում էր որպես որդեկորույս ծնողի հառայանքը. կրք ծիծաղում էր, ասես, արտասուք էր թորում ծիծաղից, թեև երբ չէր երևում երեսին. նորա հոգին, նորա սիրտը և գլուխը արդեն ողողած փոխվում էին արտասուքի ծով»:

Ի՞նչ էր պատճառը: Ընտանեկան անհամաձայնությունները թունավորել

* «Մշակ», 1879, № 83:

էին խեղճ մարդու կյանքի վերջը: Այդ անհամաձայնություններն էին պատճառ, որ Նազարյանցի բարեկամները այլևս չէին լինում նրա մոտ: Մենակ ու վըշտալի ծերունին մի անօրինակ խնամատարութեամբ պահպանում էր իր երեխաներին: «Վազ առավոտուց մինչև խոր գիշեր կամ մինչև մյուս առավոտ նա պիտո է հոգար, փայփայլել յուր մատաղահաս դավակները. նա դոցա համար է հայր էր և մայր. մեկին հաց, մյուսին ջուր, երրորդին լվանալ, չորրորդին ուտուցանել, և այսպես ամենայն բան պատրաստակամ զնում էր դոցա առաջ»:

Կսելով, որ Նազարյանցը հիվանդացել է, պ. Շահազիզը ապրիլի 24-ին այցելում է նրան: Եվ ահա ինչպես է նա նկարագրում հիվանդի կացությունը.

«Մի փոքրիկ սենյակ սածեն ու կես կամ երկու սածեն երկայնութեամբ և լայնութեամբ, որ վարագուրով բաժանված էր առանձնարանից, հանգուցյալը նշանակել էր յուրյան ննջարան. դորա մեջ տեղավորված էին և երկու փորբազույն մանուկների մահճակալները (հանգուցյալը սիրում էր և գիշերը մոտ լինել յուր երեխաներին): Եվ որովհետև պատուհանները բավական հեռու էին և կապուտակ վարագույրը վայր թողած, ննջարանի լույսը միշտ խավարային էր: Այդ դրություն մեջ ես տեսա Նազարյանցին, անկողնում պառկած և ծածկոցը գլխին քաշած: Մի խորին գերեզմանական լուսություն տիրել էր ամբողջ տան մեջ: Հիվանդի մոտ ոչ ոք չկար»:

Այցելուն խոսեցնում է Նազարյանցին, որ հայտնում է, թե բավական սաստիկ մրսել է:

— Զարմանալի բան է, օրերը այնքան ցուրտ չեն,— ասում է պ. Շահազիզը:

— Այո՛, — պատասխանում է Նազարյանցը, — մանուկ ուժերը դոցա կարող են դիմանալ, բայց մեր քայքայված ու զառամած մարմինը չէ տանում է՛հ, եղբայր, իմ բոլոր գեղեցիկ իղևալներս այս կյանքում փլատակվեցան, ինձ մնում է միայն մեռանել. ես իմ օրերով փորձեցի այն, որ ոչ մի մահկանացու չէ փորձել: Այո՛, ինձ մնում է մեռանել: Կարծում ես դու, որ ես մահից երկյուղ ունիմ. ո՛չ, իմ ազնիվ ընկեր. դա մի բնական հարկավորություն է: Բայց այն սիրելիության կապերը, որ կապում էին միմյանց հետ երկու սիրող սրտեր, այն քնքուշ հարակցությունները, որ կային երկու անձնանվեր բարեկամների մեջ, եթե իմանալիք որքա՛ն դառնություն եմ զգում, երբ մտածում եմ, որ այդ կապերը, այդ հարակցությունները պիտի քայքայվեին:

«Այս վերջին խոսքերը այնպես շեշտեց, որ ձայնը կտրվեց, բայց ասող կազդուրվելով շարունակեց.

— Ի՞նչ նորություն կա աշխարհիս երեսին:

Ժամանակի նորությունը թուրքիայի հայերի դրությունն էր: Բեռլինի վեհաժողովում լսող Բիկոնսֆիլդը ցույց էր տվել հայերին և մյուս քրիստոնյա ազգություններին, որ թուրքիան բաժանելու համար չէ գումարված այդ վեհաժողովը: Հայերին շնորհվեց մի թղթի կտոր, որի վրա գրված էր «ռեֆորմ»:

Եվ այնուհետև այդ բառը ծեծվում էր պառլամենտական ժողովներում, իսկ հայերը սպասում էին այն օրվան, երբ «ռեֆորմը» կզար իրանց համար դժոխքից դուրս գալու ճանապարհ բաց անելու: Լորդ Բիկոնսֆիլդը իրան ուղղած հարցապնդումներին պատասխանում էր իրան հատուկ ձարկություններով:

Պ. Շահազիզը, մի այդպիսի բիկոնսֆիլդյան ձեռնածուխյան ազդեցության տակ պատասխանում է Նազարյանցի հարցին.

— Նորությունը, որ ես գիտեմ, ալեկի հին է, քան նույն աշխարհը:

— Ի՞նչ է:

— Անգլիայի արյունեղակ քաղաքագիտությունը, — ազատահայաց կուսակցությունը աղաչում է ատենակալներից թուրքիայի ռեֆորմների քարտեզը պատկանեցնել սեղանի վերա դնել և տեղեկություն տալ. արդյոք որ շափով դոքա իրագործված էին առիական նահանգներում և թե Անգլիան յուր կողմից ունի՞ շնորհել այն նահանգներին յուր մեծ հովանավորությունը:

— Ի՞նչ են պատասխանում ազնիվ լորդերը:

— Ազնիվ լորդերը պատասխանում են, որ թուրքիան միշտ պատրաստ է եղել բարեկարգել այդ նահանգները, միայն այժմ շատ կարոտ է արծաթի, սպասել հարկավոր է...

Նազարյանցը, ընդմիջելով նրա խոսքը, ասաց.

— Մինչև որ վերջին հայր, նվուրելով և թուրքիան և Անգլիան, դուանե ճանգիստ գերեզմանում: Ես կամեի հարցանել այդ քաղաքագիտական պարտններից, դոքա ի՞նչ բանով ավելի էին քան թե նույն տաճիկ փաշաները և բուրդները, որ անպատուհաս պղծում են մեր եկեղեցիները, մեր կանայքը... բայց վա՛յ լուսավորության, որ փոխանակ մարդասիրության՝ մարդասպանություն է բերում:

— Անգլիացիք պաշտպանում են յուրյանց ինտերեսը:

— Բայց կանկթեմուրը, բայց Աթիլը չէի՞ն պաշտպանում յուրյանց ինտերեսը: Ինտերես և դարձյալ ինտերես, տո՛, եղբայր, ո՛վ շունի ինտերես. բոլոր աշխարհը տակն ու վրա պիտի անենք:

Բայց մեռնողի այդ կծու բողոքը մարդկային շահամոլության դեմ կիսատ է թողնում երկու տարեկան մանուկը, որ այդ բոպին ներս մտնելով, ուրախության ճիշերով մոտենում է իր հոր մահճակալին: «Քաղցր ժպտաց գթառատ հայրը, կալավ ձեռից և սկսավ սիրողաբար շփել երեխայի հրաշեկ մազերը:

— Շահազիզ, տեսնում ես իմ լուսավոր աստղիկս, — ասում է ինձ Նազարյանցը, բայց խոսքը առաջ տանել չէ կարող:

Դա Նազարյանցի վերջին խոսակցությունն էր: Պ. Շահազիզը հեռանում է, ոչինչ երկյուղ չունենալով հիվանդի մասին, որ առողջ խոսում էր, առողջ գառում:

Սակայն մյուս օրը, երեկոյան տասը ժամից, թոքերի բորբոքումը սաստկացավ: Տանեցիները զանց արին իմաց տալու Նազարյանցի ծանոթներին և բժշկական օգնություն էլ, ինչպես երևում է, չեղավ: Երեք-չորս ժամ շարունակվում է տագնապը:

«Եվ ահա վերահասավ չորրորդ ժամը, — ասում է պ. Շահազիզը, — ժամ խորհրդավոր և սոսկալի: Այստեղ սկսում է մահվան բուն տագնապը և պատերազմը, և իմ սիրտը արյուն է կաթում, նկարագրելով այն ամայությունը, որ այդ բոպին թագավորում էր մեռնողի բնակարանի մեջ: Նազարյանցը, այն մարդասեր Նազարյանցը, միայնակ ընկած է անկողնում, զրկված և նոցանից, որոնք խաշով ավետարանով երդվել էին պահպանել նորա կյանքը. բայց քաջաբար հանդիպում է յուր թշնամուն, քաշում է, ձգում է յուր մարմնից բժշկության սպեղանիքը. աչերը այս կամ այն կողմ տանելով, ոչ ոք չէ տեսնում մերձավորներից, տեսնում է միայն սև մահը առաջին կանգնած. և ապա մի արդարացի բարկություն կանչում է. «Где мои друзья, где мои приятели?»: Երևի ողորմելին մտածում էր. — Այ ազնիվ հայեր, ո՛ր եք դուք, դոնե քայիք իմ վերջին շունչս ու օրհնությունս հայերեն ավանդելի ձեզ, իմ հավիտենական ցավը՝ յոթն գառնուկ երեխաներս հանձնելի ձեր հոգաբարձության: Երկու անգամ բերանաբաց ներս քաշեց տան օդը, երկու անգամ լսելի եղավ

նորա շնչառութիւնը... Եւ մինչդեռ արշալույսը յուր նվազ նշույնները սփռել էր արեւելքում, մեր արշալույսը, կատարելով յուր դժվարին ճանապարհը, արդեն մայր էր մտնել համարտան: Եւ նա, որ միշտ ձեռք պարզած դեպի վատարայտը, այնքան առողջ և հիւսնող մարդիկ մխիթարել էր յուր կյանքում, ինքը մեռավ անմխիթար, անօգնական»...

Մահվան լուրը վաղ առավոտին, ամենից առաջ, իմանում է նազարյանցի վաղեմի մտերիմ Մելքոն Փանյանցը*։ «Դնացի և ես, ահագին ցավից խեղդված,— ասում է պ. Շահաղիզը,— և մինչդեռ մտել էի հանգուցյալի նախասենյակը, պ. Փանյանցը միանգամայն գունաթափ, ձայնեց. «Արի տես, ի՞նչ դրութեան մեջ է մեր Ստեփան Իսայիլը»... Երեք շորս ամբողջ, միմյանց մոտ շարած, պահպանում էին դիակը: Բայց որքա՞ն վսեմութիւն տակաւին նըշմարվում էր երեսի վերա. բարկութեան հետքերը այնքան թանձրացած էին, որ մի մի առաջ էին բերում նորա քաշած տառապանքը կյանքի մեջ: Ես միայն կարողացա նորից ստուգել իմ կարծիքս, որ մարդ ծնալ և իրրե ևս գերազույն մարդ հեռացավ մեզանից. ծերութեան հասակում նորա հոգևոր ուժերը շնվազեցին. հիվանդութեան անկողնում մեռավ որպէս զվարթ երիտասարդ, դառնութեան բաժակը, որ երանավետ սիրով պիտի ծաղկեր, քամեց մինչև վերջին կաթիլը: Բնութեան տարեքը այնպէս էին խառնված նազարյանցի մեջ, որ ամեն մի շարժը երակներին շարժում էր նորա սրտում ազգի ցաւը և ուրախութիւնը»:

Քաղումը կատարվեց մի շքեղ հանդեսով, որի նմանը դեռ չկար Մոսկվայի հայոց եկեղեցու տարեգրութիւնների մեջ: Հավաքվեց ահագին բազմութիւն, եկեղեցին շտեղավորեց իր մեջ ամենքին: Ներկա էին պաշտօնակիցները, կազարյան ճեմարանի աշակերտները, ուսանողութիւնը, կանայք, Մոսկվայի հայ գաղութը: Դագաղը կորած էր ծաղիկների և պսակների մեջ: Եկեղեցում ճառեր ասացին: Ապա հուշարկավորութեան հանդեսը ճանապարհ ընկավ դեպի գերեզմանատուն: Դագաղը ամբողջ ժամանակ իրանց ուսերի վրա տանում էին ուսանողները, երիտասարդութիւնը. եկեղեցուց մինչև գերեզմանատուն ու՛ր վերստ տարածութիւն է:

Գերեզմանատանն էլ ճառեր արտասանվեցին: Կարգը կատարվեց, հողը իր գրկի մեջ առավ մեր անխոնջ մշակին և պատկառելի երախտաւորին: Հավիտենական բնակարանի դուռը կնքելուն պէս, ուսանողութեան խնդիրքով հոգեւորականութիւնը այդ թարմ գերեզմանի վրա հոգեհանգիստ կատարեց հաշատուր Աբովյանցի և Միքայիլ Նալբանդյանցի համար: Գեղեցի՛կ միտք: Աբովյանց, նազարյանց, նալբանդյանց... Որքա՞ն բան է ասում մեր սրտին այս փայլուն երրորդութիւնը...

Փակենք այս գլուխը պ. Շահաղիզի հետեւյալ ոտանավորով, որ հյուսված է նազարյանցի դագաղի վրա.

«Անձնագործ դու մահարձան քեզ կանգնեցիր,
Ո՛չ հողանյութ, որպէս երկաթ կամ որձաբար.
Հրդոր գրչով, սուրբ վաստակով ու անձանձիր,
Շունչ կենդանի և ետ մահվան հանդիսացար»

* Մելքոն Փանյանցը, ազգւնցի մի վաճառական, վաղուց ի վեր բնակութիւն էր հաստատել Մոսկվայում և նազարյանցի ամենամտերիմ բարեկամն էր: «Հյուսիսափայլի» մեջ տպված են այն դամբանական ճառերը, որ ասել է նազարյանցը Փանյանցի կնոջ և աղջկա դագաղների վրա: Մելքոն Փանյանցը վախճանվեց Ազուլիսում անցյալ տարի: Ասում են, որ նրա մոտ են գտնվում նազարյանցի բոլոր թղթերը:

Ահա նոր Աղզ և նոր Լեզուդ յուր ձիթենին,
Քո ջրով բուսած, քնդ է բերում, սվ Ստեփանոս,
Խաղաղ մեա՛, մի՛ վրդովվիր, քոնն է դափնին,
Խավարի մեջ լույս մեզ ծագող Պոսմեթևոս

Աշխարհ՝ ծնար և աշխարհիս դարձար մշակ,
Բայց շտեար այս աշխարհից անդորրութիւն.
Աշխատավոր մարդկան բաժին է փշյա պսակ,
Ա՛հ քրտնաշան ոսկրների՛ց խաղաղութիւն:

Նազարյանցի գերեզմանի վրա Մոսկվայի հայ հասարակութեան հաշվով գրված է գերեզմանաքար, որ ներկայացնում է մի բարձր սյուն, պսակված խաչով: Սյունի արեւելյան երեսի վրա փորագրված է Ս. Շահաղիզի վերոհիշյալ ոտանավորը, արեւմտյան կողմից այդ ոտանավորի ուսերին թարգմանութիւնը: Հյուսիսային երեսի վրա կա հետեւյալ լատիներեն արձանագրութիւնը.

Nationis amico humani
tatis inter populares consiliori
Stephano Nazarians
Grati eives*.

Հարավային կողմի մահարձանի վրա կարդացվում է.
«Զատաբիւնութեանն զոստո քրտամբք և աշխատութեամբ, Պղատոն ասաց՝
թուսանել» (Մ. Խորենացի):

Ստեփանոս նազարյանցի
երախտաւորտ սրտով
Հայոց հասարակութիւնը

Մն. 1812 թ. վախճ. 1879 թ. 26 ապրիլի:

III

Գծեր նագարյանցի բնավորությունից: Գեանատություն մանից հետո: Հոգեհանգիստներ: Գրիգոր Աբծրուս: հողվածը: Երիցյանը նագարյանցի մասին: Պատասխաններ: նագարյանցի հիշատակը մեր գրականության մեջ: Վերջին խոսք:

Հասարակական խոշոր դեր կատարած անհատների մասնավոր կյանքն և հետաքրքրական և ուսանելի է: Իր խելքով, իր ընդունակութիւններով հարթավորների ու հաղարավորների մեջ մի հատիկ դարձած գործչի մարդկային անհատութիւնները մի առանձին խորհուրդ են ստանում նրան հարգող բազմութեան համար: Մանոթանալով այդպիսի մարդու գործերի հետ, մենք կամենում ենք իմանալ և այն, թե ինչպէս էր նա ինքը, գաղափարի քարոզիչը, ի՞նչ քարոյական սկզբունքներ ունէր իր մեջ և ինչպէս էր ինքը կատարում այն, ինչ պաշարկում էր ուրիշներին կատարելու:

Ստեփանոս նազարյանցի վերաբերմամբ, դժբախտաբար, մենք շատ բան չգիտենք, այնպիսի բան, որ պատկերացնենք նրա անհատական բնավորութիւնը: Երա մասնավոր կյանքը: Եւ, պետք է ասել, մեր համարյա բոլոր գործերի շնորհաւարտ ազգայինները:

* Աղզի բարեկամ, աղջայինների մեջ քաղաքակրթութիւն սերմանող Ստեփանոս նազարյանցի շնորհաւարտ ազգայինները:

ծիշներն են այսպիսի վիճակի ենթարկված: Չկան նրանց ծանոթները, նրանց հետ դործ ունեցած մարդկանց հիշողություններ, որոնք այնքան հարկատու են գործը կյանքի պատմությունը կազմելու համար: Պատմությունը գրողը ունի իր առջև միայն այն, ինչ տվել է գործիչը: Եվ սակայն դա բավական չէ. շատ և շատ անգամ է պատահում, որ այս կամ այն կողմը մոռնի է մնում, չէ պարզվում, և պատմությունը գրողը ստիպված է լինում կամ ենթադրություններով դիմել, կամ հենց այդպես էլ մոռնու անորոշ թողնել այս ինչ կամ այն ինչ կետը: Էլի պետք է շնորհակալ լինել պ. Շահաղիզյանից, որ իր «Հրապարակետու ձայնի» մեջ տվել է մեզ մի քանի գծեր նազարյանցի բնավորությունից: Այսօր, որքան էլ ցավալի է, մենք միայն այդ տեղեկություններն ունենք հաղորդելու մեր ընթերցողներին:

Խիստ բարոյականություն, կենդանի քրիստոնեություն քարոզող նազարյանցը իր անհատական կյանքի մեջ մարմնացնում էր նույն դադափարները: Գա մի բարի, մարդասեր, սրտացավ անձնավորություն էր, մի օրինակելի հայր, մի մարդ, որ պարզամիտ էր և ոչ խորամանկ, որ խարվում էր և ոչ խորում: Իր հարաբերությունների մեջ նա քաղցրաբար էր, առանց խարսխան էր նայում մարդկանց վրա, ինչ դասակարգի և դիրքի էլ պատկանելիս լինելն նրանք: Կարեկցող, ցավակից սիրտ ուներ նա, և նրա դուռը բաց էր ամենի առջև, մանավանդ երբ նրան դիմողը կարոտություն ուներ: Չնայած որ մեծ ընտանիքի տեր էր, չնայած որ ուժեղ և պարզ մարդ էր, նա իր լուծման չէր խնայում այնտեղ, ուր կարոտություն կար:

Մանավանդ շատ հոգս էր անում նա չքավոր հայ ուսանողների մասին: «Դոքա են մեր թարմ ծիլերը և ընձյուղները. դոքա են իմ առաջին սիրելիքը»: ասում էր նա: Եվ աղքատ ու կարոտ ուսանողի համար նա միշտ պատրաստ էր առանց հոգնելու ման գալ իր ծանոթների տները, դիմել վաճառականներին և փող հավաքել: Այդպես անում էր նա հիսնական թվականներից մինչև յոթանասնական թվականները:

Ահա մի քանի դեպքեր, որոնք պատկերացնում են նազարյանցի բնավորությունը:

Մի օր, ասում է պ. Շահաղիզյանը, ես և նազարյանցը հրավիրված էինք մի տուն. այդտեղ էր և մի հայ վաճառական: Նազարյանցը աչքերը կիսով չափ փակած (դա նրա սովորությունն էր), մոտենում է նրան և հարցնում.

- Պարո՛ն, դուք վաճառակա՞ն եք, ի՞նչ է ձեր ապրանքը:
- Բամբակ և ապրշում, — պատասխանում է վաճառականը:
- Ձեր տեղում կա՞ն դպրոցներ:
- Այո՛, ընտեղ սավրում են:
- Դուք լսա՞ծ եք, որ հայոց վեհափառ կաթողիկոսը կամի շինել ձեր հա-

* Մեր մանկավարժ և ժողովրդական գրող Ղ. Աղայանցը իր «Եմ կյանքի գլխավոր դեպքերը» հիշողությունների մեջ վերին աստիճանի կոպիտ, անբաղաճավարի, քարասիրտ և գործ բերում նազարյանցին, այդ պատճառով էլ լավ հայհույում է խեղճ նազարյանցին, անվանելով նրան անանական էգոիզմին հասած մարդաստաց և այլն: Աղայանցի այդ ինքնակենսագրությունը մեր աչքում ընդհանրապես այնքան քիչ արժանավորություն ունի, որ մենք չենք կարող նշանակություն տալ նրա վկայություններին: Այդտեղ ամեն ինչ շարժանքառ է, մանավանդ ինքնագրությունը: Աղայանցի պատմած այն դեպքը, որի մեջ նազարյանցը դուրս է բերվում իր անհոգի էգոիստ, մեզ շատ անբնական է թվում. երևի այդտեղ պատմողը չէ ուղեցի աչքից պես պատմել, որ իր արարքն էլ միանգամայն պարզ լինի: Նազարյանցը դուրս է արել Աղայանցին իր տանից, բայց ինչո՞ւ — Առանց պատճառի, ասում է Աղայանցը: Ահա այդ չենք հասկանում...

մար մի փառավոր Ակադեմիա, ուր պիտի պատրաստվեն ուսումնական քաճառաներ, վարդապետներ, եպիսկոպոսներ...

Վաճառականը փսփսում է Ակադեմիա բառը. հայտնի է, որ չէ հասկանում, թե ինչ բան է դա: Իսկ նազարյանցը շարունակում է.

— Այո՛, մեր վեհափառ կաթողիկոսի դիտավորությունը գովելի է. նա կամի լինել արժանավոր ժառանգորդ Գրիգոր Լուսավորչի:

Վերջապես վաճառականի լեզուն մի քիչ բացվում է, և նա հարցնում է նազարյանցին.

— Ստեփան Խայրիչ, հայոց կաթողիկոսը կաթոլիկ է, թե հայ, ախր ի՞նչ օրմին է...

— Տա՛, եղբայր սիրելի, ինչպե՞ս կարելի է այդպիսի բաներ խոսել, — ասում է նազարյանցը և մեծ քայլերով դիմում է դեպի սեղանը, որպես թե գրույցը շատ լավ վերջացավ:

Քաղցրաբար ու մեղմ էր նազարյանցը ընդհանրապես: Բայց ահա ինչպիսի վարվեցողություն էլ դիտեր նա: Վաթսունական թվականների մի հարուստ մարդ, թիֆլիսեցի, հայոց ազգային ուսումնարանի հոգաբարձու, Մոսկվայում գնում է տեսնելու նազարյանցին: Վերջինս դիմավորում է նրան նախասենյակում և հարցնում է.

- Ի՞նչ կամիք, պարոն:
- Տեսնել ձեզ, — պատասխանում է հոգաբարձուն:
- Դուք ա՞յն հոգաբարձուն եք, որ աշակերտները հրապարակ քաշեցիք և պոլիցիայում ծեծեցիք... Ներեցե՛ք, ես ձեզ տեսանել չկամիմ, և ճանաչել խի ս՛չ:

Ասում է, դուրս աստիկություն փակում ու մտնում իր սենյակը: Դրանից հետո հոգաբարձուն, պատահելով իր բարեկամին, ասում է.

— Ձեր նազարյանցը կապովի գիծ է...

Պետերբուրգում, արտասահման գնալիս, նազարյանցը երկու օր ապրում է Չ... ազգանունով մի ուրիշ տան: Մի տարուց հետո այդ ապրոնը, կորցնելով իր բուրբ գույքը, տնով տեղով գալիս է Մոսկվա և այդտեղ ամբողջ հինգ ամիս ապրում է նազարյանցի տանը, ստանալով նրանից նույնիսկ հագուստը, ուտելիքը: Այդ բավական չէ, Չ... առնում է նազարյանցից և 475 ռուբլի: Երկար ժամանակ նազարյանցը թաքցնում է պարոնի վարմունքը նույնիսկ բարեկամներից, բայց վերջը ստիպված է լինում պատմել նրանց ամեն ինչ: Եվ երբ բարեկամները ասում են, թե ամենքը խաբում են նրան, նա պատասխանում է. «Է՛հ, ազնիվ բարեկամներ, փառք ասածու, որ ես չեմ խաբում, այլ ինձ են խաբում. ես կարող չէի ոտաբորիկ արձակել այն ընտանիքը իմ ասնից»:

Նա իդեալիստ էր, հավատացող էր և կյանքի մեջ: Պատմության դասաստանից շատ էր վախենում, յուրաքանչյուր մարդու պարտականությունն էր համարում մի որևէ բարի հիշատակ թողնել, ապրել այնպես, որ մի լավ բան արած լինի: Վարձատրություն նա չէր պահանջում. ինքը, գաղափարը ամենամեծ վարձատրությունն էր: Բայց նազարյանցի բնավորության մեջ կային և այնպիսի գծեր, որոնց չէ կարելի պակասություն չհամարել: Այսպես, մենք տեսնում ենք նրա նամակների մեջ մի մշտական գանգատ այն մասին, թե իրան չեն դնահատում, թե ինքը չարչարվում, տանջվում է այն պատճառով, որ հայերը անհասկացող են, անբարեխիղճ են և այլն: Մի առաջավոր մարտնչողին չէր սաղում այսպիսի լալկանությունը: Նազարյանցը չէր ուզում,

որ իր ճանապարհին փշեր լինեն, մինչդեռ հենց այդ փշերն էին նրա փառքը կազմում: Նկատելի է նրա նամակների մեջ և այն, որ նա սիրում էր շեշտել իր սեփական արժանավորությունները:

Բացասական հատկությունները, ինչպես տեսնում ենք, շատ աննշան էին: Այնպես որ առաջին ուսումնական ճիւղում հրապարակախոսի մասին կարող ենք վստահությամբ ասել. «Նա մարդ էր», մարդ՝ այս բառի լավագույն, նվիրական մաքուր...»

Նրա մահը ցավ պատճառեց ամեն տեղ: Հասարակությունը հիշեց իր հին երախտավորին. ամեն տեղ հոգեհանգիստներ կատարվեցին: Այդ հոգեհանգիստներով հայաց եկեղեցին ցույց էր տալիս, որ Հովսեփ Չերքեղյանները և նրան ձայնակցող հոգեհոգեկանները չեն իր ոգու արտահայտիչները, եկեղեցին դրանով ընդունում էր, որ նազարյանցի պես մարդը իր հարազատ, սրտացավ դավակն է հենց այն պատճառով, որ կովել է իր պաշտոնյաների արատների դեմ, բարձրացրել է իդեալական, լուսամիտ, մարդասեր եկեղեցու անունն ու նշանակությունը:

Մեր պարբերական մամուլն էլ արժանի հարգանքներ մատուցեց հանդուցյալին: Գրիգոր Արծրունին իր «Մշակի» մեջ* մի ընդարձակ և կրակոտ հոդված տպեց, որ զբված էր սև շրջանակների մեջ: Հաղորդելով համառոտ կենսագրական տեղեկություններ նազարյանցի մասին, մեր նշանավոր հրապարակախոսը այսպես էր բնորոշում նազարյանցի գործունեությունը և հայ հասարակության վերաբերմունքը դեպի նրան.

«Կարող ենք ասել, որ նազարյանցը, ինչքան էլ մեծ գործ կատարեց հայ գրականության համար իր «Հյուսիսափայլ» ամսագիրը հրատարակելով, բայց նա ավելի գիտնական մարդ էր, քան ժողովրդական գործող, քան թե պուրիցիստ: Գորան ամենալավ ապացույց այն կարող է լինել, որ զգվելով հասարակական գործունեության մեջ պատահող դժվարություններից, նազարյանցի մինչև իր կյանքի վերջը չկարողացավ շարունակել պուրիցիստական գործունեությունը: Անհերքելի է, որ նա հուսահատվեց, ընկճվեց հալածանքների, ինտրիգաների և թշնամության հարվածների տակ:

Իսկ մամուլի մեջ գործողի հատկությունն է, ինչքան էլ դժվարություններ, արգելքներ լինեին, երբեք շթուանալ, մինչև որ ֆիզիկական ուժերը չսպառվեն, երբեք չենթարկվել, չխոնարհվել անաշուղ հանգամանքների առջև... Եվ ահա այդ պատճառով հայտնվեցավ մի դարձանալի, անսովոր երևւմույթ: Գործողը, կենդանի մարդը, իր հասարակական ասպարեզը թողած, մոռացվում է ամենքից... Նա կենդանի է մնում երկար տարիներ, բայց ամենքի նրան մոռանում են...»

Եվ միայն, երբ նազարյանցի մահվան լուրը կտարածվի հայերի մեջ, թե ուսաստանցի և թե թուրքիացի հայերը կհիշեն նրան, կհասկանան, որ նազարյանց մեծ կովողներից մեկն էր, որ նա հայոց ժամանակակից գրական ասպարեզում վերանորոգիչ էր և հեղափոխիչ:

Այժմ, մտքով, ուղղությամբ, գիտնական զարգացմամբ, տոկունությամբ նա վերանորոգիչ էր, բայց իր համեստ, մեղմ, փափուկ բնավորությունը հակառակում էր իր գործունեության...

Կովողի համար, վերանորոգիչ, հեղափոխիչ լինել ցանկացողի համար հարկավոր է ունենալ ավելի զորեղ, ավելի համարձակ, ավելի հանդուգն բնավորություն, որպեսզի այդ տեսակ գործողը կարողանա դիմանալ կյանքի ամեն

տեսակ արգելքներին, մարդկանց ամեն տեսակ կեղտոտություններին և իր հասարակական գործունեության կես ճանապարհի վրա շկանգնի, շիջնի իր ասպարեզից, դեռ կենդանի ժամանակ, մահից շատ տարիներ առաջ, մեռած համարվի այն ազգի մեջ, որի մեջ գործել է, որի հնացած գաղափարների դեմ երկար ժամանակ կովել է:

Կյանքի ժամանակ իջնել ասպարեզից, նշանակում է իր թուլությունը խոստովանել, նշանակում է իրան դատապարտել հասարակական մահվան, նշանակում է իրան հաղթված խոստովանել...

Իսկպես Ստեփանոս Նազարյանց վախճանվել է հայության համար ոչ թե 1879 թվին, այլ արդեն 1864 թվին:

Թո՛ղ հայոց հասարակությունը ինքն իրան մեղադրի, որ իր ձեռքերով սպանում է իր սեփական գործողներին, իր անտարբերությամբ և թշնամությամբ իր գործողների ամենալավերին, դեռ նրանց կենդանության ժամանակ, դատապարտում է հասարակական մահվան:

Ընթերցողը, աչքի առաջ բերելով նազարյանցի ամբողջ գործունեությունը, կտեսնե, որ Գրիգոր Արծրունու այս խոսքերի մեջ կա անհերքելի ճշմարտություն: Մենք էլ մեր պատմության ընթացքում տեսնեք, որ նազարյանցը, ունենալով անհողողող կովողի բոլոր հատկությունները, հաստատամտություներ, անխորտակելի համոզմունքներ, ուժեղ կամք, զուրկ էր հարատև համառությունից, ֆանատիկոսությունից: Նա, ճիշտ որ, հուսահատվեց, ընկճվեց, հեռացավ ասպարեզից: Բայց նրա ժամանակակից առաջադեմ հայ հրապարակախոսներից ոչ մեկն էլ չունեւ այն, ինչ պահանջում էր Արծրունին. ո՛չ Ստեփան Ռսկանը, ո՛չ Նալբանդյանցը, ո՛չ Սվաճյանը չկարողացան անընկճելի մեռլ մինչև ֆիզիկական ուժերի սպառվելը: Զորեղ էին այդ մարդիկ, բայց անաշուղ հանգամանքները նրանցից ավելի զորեղ հանդիսացան և տապալիցին նրանց: Այդպես էլ պիտի լինեւ, ուրիշ կերպ չէր կարող պատահել. առաջիններից էին նրանք: Եվ Արծրունին՝ կովողի, հեղափոխիչ, վերանորոգիչ համար պահանջելով ավելի զորեղ, ավելի համարձակ, ավելի հանդուգն բնավորություն, իր սեփական պատկերն էր մեջտեղ դնում, իր բնավորության հատկություններն էր ձեռակերպում: Նազարյանցի սկսած գործը անցավ մի ուղղությամբ բնավորության ձեռքը. դա ինքը, Արծրունին էր, որ առաջ տարավ այդ գործը մեծ հաղթանակով: Արծրունին ուղում էր, որ ամեն մեկը իր նման լինի, բայց դա անհնարին է. Արծրունիները բացառիկ երևույթներ են կազմում...

Նազարյանցի մահը ողբացին և այնպիսի տեղերում, ուր նրա անունը մի ժամանակ անեծք և ատամների կրճտոց էր հարուցանում: «Ծոռաքաղի» խրմբադիրներից մեկը, Զարմայր Մսերյանց, այդ ժամանակ «Փարոս Հայաստանի» հանդեսն էր խմբագրում. նա տպեց նազարյանցի պատկերը և հայտնեց, որ մեր բոլոր հայերիս լավ ծանոթ գիտնական ուսուցչապետ Ստեփանոս Եսայուն նազարյանց՝ որպես հայտնի է՝ առանձին դարկ տվավ մեր աշխարհիկ լիզվին և աշխատեցավ նորա կատարելագործության վերա»⁶: Մեծ զովասանքներ տպագրեց և «Մեղու Հայաստանին», «այն «Մեղուն», որ Ստեփան քահանա Մանդինյանի, Հովսեփ Չերքեղյանի գաղափարներից չէր հեռացել, բայց փառաբանում էր համարձակ վերանորոգիչին, որովհետև խմբադիրը նազարյանցի բարեկամն էր: Եվ միևնույն ժամանակ «Մեղուն» սաստիկ դիմադրում էր «Մշակին», որ «Հյուսիսափայլի» սկզբունքներն էր պաշտպանում:

* «Փարոս Հայաստանի», 1879, տետր Ա, եր. 33:

Գերեզմանի առաջ խոնարհվել էին, կարծես, ամենքը. կարծես բոլորովին մարել էին կրքերը և գոնե այն տասն և հինգ տարիներից հետո, որանք անցել էին «Հյուսիսփայլի» մահից, թվում էր, թե հայ հասարակության միաբան համակրությունը եկել էր արժանի մեծարանք մատուցանելու անմասնատի վաստակավորին: Բայց հենց այդ ընդհանուր երախտագրտական դրացմունքի արտահայտության ժամանակ «Փորձ» ամսագիրը վեր է կենում ցույց տալու, որ Արարատյանների ոգին դեռ չէ մեռել: Ալեքսանդր Երիցյանը, որ մինչ այդ լուկ հնագիտության և պատմագրության մեջ էր փորձում իր գրիչը, հանձն է առնում գրական-հասարակական ծանրակշիռ հարցերի քննադատի պաշտոն և մի ընդարձակ հոդված է տպում Նազարյանցի գործունեության մասին*:

Հոդվածի նպատակն էր ցույց տալ, որ Նազարյանցը իսկապես մի ոչնչություն էր, որ նա գիտնական չէր, իբրև խմբագիր վատ էր, անընդունակ, գիտեր միայն հայհոյել, վնասակար ուղղության էր հետևում և հանցավոր է իր ազգի և եկեղեցու առաջ:

Անաչառությունը պարտք է դնում մեզ վրա ասելու, որ Երիցյանը ցույց է տվել Նազարյանցի մի քանի պակասությունները, օրինակ այն, որ նա իր մի քանի գրվածքները թարգմանել է ուսերենից, չհիշելով աղբյուրները: Բայց նույն անաչառության հետևելով, մենք իր տեղում խոստովանեցինք և այն, որ Հովսեփ Չերքեզյանի գրվածքների մեջ էլ հիշատակություններ կային: Հարցը այդ չէ: Մի հրապարակախոս, այն էլ ուղղակի, պատերազմող հրատարակախոս, անկարելի է, որ չունենա թերություններ, և անսխալականություն վերագրել մի գործչին, նշանակում է ուղղակի անարգել մարդկային բնությունը, որի մեջ սխալներն էլ հարկավոր են, անխուսափելի: Հարցը այն չէ, որ ցույց տրվեն մասնավոր պակասությունները: Կա գլխավորը՝ վերաբերմունքը, ոգին, բմբռնողությունը: Այս կողմից Երիցյանի գրվածքը մի նորություն չէր նույն հին պահպանողական մտավախությունն էր, որ նրա յուրաքանչյուր առդից աղաղակում էր, թե Նազարյանցը վնասակար գործիչ էր: Նույն կանխակալ, նեղ հայացքն էր, որ թելագրում էր պատմական անցքերին այնքան շատ տեղյակ Երիցյանին ասել, թե Նազարյանցն էր, որ կրոնական անխտրություն բարոզելով՝ Շամախու բողոքականության պատճառ դարձավ: Արարատյանի և Չերքեզյանի մեղադրանքները համարյա միևնույն ձևի տակ կրկնում էր և Երիցյանը. նրա քննադատական փաստերը շատ ողորմելի տպավորություն են թողնում: Նազարյանցի համարձակ ոճը, խիստ դարձվածքները Երիցյանին էլ նույն սարսափն են պատճառում, ինչ Արարատյանին: Այսպես, նա բողոքում է, որ Նազարյանցը «ժանգոտած» է անվանել գրաբար լեզուն, դա, Երիցյանի կարծիքով, հայհոյանք էր: Նույն Երիցյանը 1866-ին «Վաճառական» լրագրի մեջ ընդունել էր, որ «կյանքի խնդիրների հասկացող առաջինը էլավ «Հյուսիսփայլը»»: մեզ շրջապատող բնութենին ծանոթացնելով, պ. Նազարյանցը մեկ քանի տարվա մեջ բավականին խնդիրներ շարժեց ու իր կողմից իր հայեցվածքին համեմատ էնքան գործ կատարեց, որքան որ արժանի էր մեկ հասկացող մարդուն*:

Այժմ, 1879-ին, Երիցյանը ուրանում էր, որ Նազարյանցը որևէ դրական գործ կատարած չի: Մի խոսքով, «Փորձը» Նազարյանցի վերաբերմամբ կատարյալ «ճռաբաղ» էր...

* «Փորձ», 1879, № 11 և 1880, № 1:

** «Վաճառական», 1866, № 11:

աշխատությունը միայն պատասխան չէ, այլև մի մանրամասն տեսություն նազարյանցի գրական գործունեության: Ծիշտ որ շատ անգամ շարիքից բարիք էլ է ծնվում. Երիցյանը պատճառ դարձավ այդպիսի մի գործի, որից հասարակությունը կարող էր միայն օգուտ տեսնել: Շահագիղյանի կտրուկ, խիստ սուր, զորեղ ու համարձակ դատողությունները, առաջադիմական գաղափարները շատ լավ տպավորություն գործեցին ամեն տեղ, և Գրիգոր Արծրունին մի փոքրիկ ատիճանի համակրական հոդվածում* ասաց, թե «Հրապարակախոս մայնը» հափշտակությամբ է կարդացվում: Այդտեղ էլ, նորից խոսելով նազարյանցի մասին, Արծրունին գրում էր. «Առաջադեմ ոգին Թուսաստանի հայ գրականության մեջ մտցրած է եղել Ս. Նազարյանցի ձեռքով և նրանք, որոնք այժմ պատկանում են այդ ուղղությանը, հպարտությամբ կարող են իրանց անվանել Նազարյանցի աշակերտներ»: Շահագիղյանի գործը նա անվանում է հերոսություն: Այդ գործը «թանկագին է մեզ համար և այն պատճառով, որ արդուսիք է մի շատ հազվագյուտ հատկության մեր մեջ: Հայի մեջ ներստություն ասված զգացմունքը շատ քիչ է պատահում. հայը հակված է ամեն բարձր, հարգելի, մաքուր, պայծառ երևույթ աղտոտելուն, քան թե հերոսաբար պաշտպանելուն»:

Երիցյանը նույն «Փորձի» մեջ պատասխանեց Շահագիղյանին, վերջինս էլ պատասխանեց նրան «Մշակի» մեջ: Բանակոխվել այդ երկուսի մեջ սրանով էլ վերջացավ. բայց դրանից հետո Նազարյանցի բարի անվան գործի պաշտպան հանգիստացավ Արծրունին: Իր ֆելիետոնների մեջ նա շատ անգամ էր վերադառնում Երիցյանի գործին, շատ անգամ էր այդ առիթով հարձակվում Կազեմի վրա, անվանելով նրան Նազարյանցի գերեզմանափոր:

1886 թվականին Արծրունին նորից մի ընդարձակ հոդված գրեց Նազարյանցի մասին: Գերմանացի Արթուր Լեյս «Armenische Bibliothek» անունով իր գրքերից մեկի մեջ (որոնց հրատարակիչն էր նախկին «Փորձի» և այդ ժամանակ «Արձագանք» շաբաթաթերթի խմբագիր Աբգար Հովհաննիսյանը) ասել էր, թե Նազարյանցի գործունեությունը բացասական էր և միայն դժգոհություն արտացոլեց հայերի մեջ: Արծրունին նորից բացատրեց, թե ինչ էր Նազարյանցը Թուսաստանի համար և անվանելով Լեյստին «վարձկան» գրող, իր հարվածները ուղղեց հրատարակչի դեմ, որի «Փորձը» արդեն ցույց էր տվել, թե ինչպես է նա վերաբերվում «Հյուսիսփայլի» խմբագրին:

Հետզհետե լռեցին Նազարյանցին անպետք, վնասակար անվանող ձայները: Ժամանակը ոչնչացնում է թշնամական մանր մունր բծախնդրությունները, վեր է հանում իսկական գործը, փայլ է տալիս նրան: Նազարյանցը գարավ մի գեղեցիկ, անբիծ հիշատակ մեր գրականության մեջ: «Փորձի» և «Armenische Bibliothek»-ի հրատարակիչը 1891-ին արդեն տպագրում է Նազարյանցի պատկերը և նրա ու Նալբանդյանցի գովասանքն էր անում, թեև նրա համար ենթարկվեց «Մշակի» հարձակումներին: Եվ այսօր էլ «Մեղուի», «Թուրքաղի», Չերքեզյանների հարազատ թոռները իրանց համար մեծ պատիվ են համարում երկրպագել Նազարյանցի նվիրական հիշատակին, ամենևին անգամ չանկելով, որ գրանով տակն ու վրա են անում իրանց նախահայրերի մատցված գերեզմանները:

Այսօր Նազարյանցի հաղթանակը կատարյալ է...

* «Մշակ», 1881, № 89:

Վիթխարի տաղանդը չէր, որ Նազարյանցին այսքան բարձր պատվանդանի վրա դրեց մեր մտավոր աշխարհում: Քրքրենք նորից նրա բոլոր գրվածքները, և դրանց մեջ մեծ ստեղծագործություն չենք գտնի, չենք ասի, թե մի արտակարգ շնորհք էր դա, որ երկնքից շնորհվում է միայն հազվագյուտ ընտրյալներին: Համեստ է մեր Նազարյանցը, և եթե մենք հեռացնենք նրան մեր հողից, դնենք ուրիշ ազգերի մեջ հռչակված գործիչների կողքին, այդտեղ նա հազիվ թե նկատելի լինի:

Ի՞նչ է սա ցույց տալիս:

— Այն, որ մեր ազգին կարելի է մեծ բարերարություններ անել, չունենալով և խոշոր տաղանդ: Փոքր ենք մենք, խեղճ, կարոտ ենք սրտակից, բարեկամ ուսուցիչներին: Այդպիսի ուսուցիչ էր մեզ համար Նազարյանցը: Ունենալով զգալուն, սիրող սիրտ, լցված մի ազնիվ, բյուրեղյա հայրենասիրությամբ, նա իբրև լուսավորված մարդ, լայն, աշխարհաշեն գաղափարների ջերմ հավատացող երկրպագու, հասկացավ ժամանակի խորհուրդը, դարձավ նրա մարգարեն: Նա աշխատեց, լավ աշխատեց:

Եվ այդ սուրբ աշխատանքի արդյունքը այսօր մեր առջև է: Նազարյանց՝ դա մեր հերոսն է: Նա մարմնացրեց մի նոր, մեզանում դեռ չտեսնված տիպ, հասարակությունը առաջնորդող գրողի տիպը: Նրանով գրական գործիչը հաստատուն, պատվավոր տեղ գրավեց մեր հասարակության մեջ: Տանջվեց նա, երկար մաքառեց, բայց կարողացավ հոյակապ շենքի հիմքերը դնել քարի վրա. այդ շենքը նոր գրականությունն էր, հասարակական գրականությունը, նա, որ կրթում է, սովորեցնում է, խրատում է, որ գաղափարներ է ցույց տալիս, որ ղեկավարում է ձգտումները, բաց անելով նրանց առջև լայն հորիզոններ:

Մինչև Նազարյանցը կային գրողներ, բայց չկային գրական նահատակներ: Առաջ գրում էին սոսկ զվարճացնելու համար, իսկ Նազարյանցը պատեհ բազմում էր գրելով: Նահատակվել այդ պատերազմի մեջ, դափնիներ վառտակել, գրավել հասարակության համակրանքը, դառնալ հասարակության պաշտամունքի առարկան, նրա սուրբը՝ ահա ինչ էր այդ հերոսը:

Դժբախտ չէր հայ ազգը: Նրա մեջ հայտնվում էին մտավոր հերոսներ: Եվ Նազարյանցը դրանցից առաջինն էր: Նա այսօր էլ ոգևորում է հեռու անցյալից, հավիտենականության գրկից:

Միայն թե լինեին ոգևորվողներ...



Գրիգոր Արծրունի



Անմտանալի ուսուցիչ.

Այն բոլորից, երբ իմ մեջ միտք ծագեց գրել և կենսագրությունը, և գրական գործունեության ամբողջ պատմությունը, ինձ վրա ծանրացած է այն գիտակցությունը, թե որքան դժվար, պատասխանատու գործի եմ ձեռնամուխ լինում: Քո գործունեությունը... բայց դա մեր կյանքի պատմությունն է 25 տարիների ընթացքում: Եղե՛լ է դեպք, երևույթ, որի մեջ կամ որի առիթով լսված լինի և հզոր ձայնը: Եվ արդյո՞ք կարո՞ղ կլինեմ ես արձանագրել այդ բոլորը այնպես, որ գործս արժանի լինի և միշտ գեղեցիկ, միշտ սիրելի անվան:

Զգում եմ իմ պակասությունները: Ես մեկն եմ ևս երախտապարտ աշակերտներից, մեկը այն մարդկանցից, որոնք ևս ուժեղ ձեռքով դուրս բերվեցին գրական հրապարակ: Կինե՛լ ևս վերաբերմամբ կողմնակի, սառնասիրտ դիտող ես չեմ կարող, քանի որ ևս վարած հսկայական, անընդհատ կոփվր էն աշակերտների համար մի սխալմանի հերոսություն է, որի առջև կարելի է միայն խոնարհվել, ծունր դնել: Եվ երբ այսպես է, կարո՞ղ եմ ես լինել ևս կյանքի պատմաբանը: Արդյո՞ք միակողմանի չե՞մ լինի ես, արդյո՞ք մարդիկ, կարգալուծ աշխատությունս, չե՞ն ասի թե դա պատմություն չէ, դա ներքող է հիացած աշակերտի կողմից՝ իր մեծ ուսուցչին նվիրված:

Բայց ես չեմ վախում այդպիսի դատաստանից:

Դու, սիրելի ուսուցիչ, ավանդեցիր մեզ գործ, դրոշակ, դրա հետ և այդ ավանդին ծառայելու պարտավորություններ. ազնվություն, շիտակություն, անկեղծություն: Ահա ինչն է ինձ թե տալիս, վստահություն տալիս իմ այս ծանր գործի մեջ: Կրկեր, աղմուկը, շարախոսությունը կորչում են. փաստերն են միայն մնում: Իմ սրբազան պարտքը կլինի միայն փաստերով ղեկավարվել: Ես կլսեմ ոչ միայն հեզ, այլ և անթիվ թշնամիներիդ: Պատկերացնելով ևս մղած պատերազմը, ես նկատի կունենամ պատերազմի ամբողջ դաշտը, կովոդների բռնած դիրքերը, կովոդների զենքերը:

Գրողի հայացքները, համոզմունքները անձեռնմխելի են, անբռնաբարելի են: Մնում է խոսքը, կարծիքը ամբաստանել փաստերով, մնում է անդադար իրողությունները լուսաբանել և ոչ լոկ բռնելով օրհնել կամ անիծել...

Ահա ինձ ղեկավարող սկզբունքը: Վստահ լինելով նրա վրա, ես սկսում եմ գործս և նրան իմ սրտի խորին հիացմունքի հետ նվիրում եմ ևս, սիրելի ուսուցիչ, անման հիշատակին այսօր, երբ բոլորվում է ևս ողբալի մահվան առաջին տասնամյակը:

Գ լ ու ի ս ա ո ա ջ ի ն
ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՂՄԸ

I

Գեորգ աղա Արծրունի: Թիֆլիս գաղթելու պատճառները: Վանի իրակա-
նությունից: Տոհմագրություն: Գեորգ աղա և ներսես Աշտարակեցի: Ճանա-
պարհորդություն Եվրոպայում: Ամսաբերդամի տպարանը: Հակոբ Շահան-Ջր-
պետ: Ներսեսի աֆոսը, Արծրունու գործունեությունը: Շինություններ Թիֆլի-
սում: Գեորգ աղայի բնավորությունը: Գրասիրություն: Մահ:

1813 թվականին Վան քաղաքից Թիֆլիս եկավ մի հարուստ հայ վաճա-
ռական: Նա աշխարհ տեսած, շատ ճանապարհորդած մի մարդ էր, առևտրա-
կան գործերով եղել էր Թուրքիայի զանազան կողմերում, Պարսկաստանում,
Կ. Պոլսից անցել էր հարավային Եվրոպա: Բոլոր այդ տեղերում նա առևտրա-
կան էր, որ կարգադրում է իր գործերը ու հետո հեռանում: Իսկ Թիֆլիս եկել
էր մի դիտավորությամբ: Սովորական երթևեկողներից մեկը չէր նա, այլ մի
նշանավոր անձնավորություն. ներկայացավ Վրաստանի կառավարչապետ գե-
ներալ Ռոտշչևին և հայտնեց, որ կամենում է ընտանիքով բնակություն հաս-
տատել Թիֆլիսում, ընդունել առևտրական հպատակություն: Կառավարչապետ
Ռոտշչևը, տեղեկանալով հանգամանքներին, խոստացավ իր հովանավորու-
թյունն ու աջակցությունը և նույն տարվանից Թիֆլիսի բնակիչ դարձավ այդ
ժաղամուկ և հարստությամբ նշանավոր օտարականը:

Դա Գեորգ աղա Երան-Արծրունին էր:

Երան-Արծրունիների տոհմը շատ հին էր Վանում և իրան համարում էր
Վասպուրականի հին տերերի, Արծրունի իշխանների շառավիղ: Մահմեդական
իշխանության տակ հայերը կորցրին ազնվականության իրավունքները: Որ-
քան հայտնի է, Արծրունիները վերջին ժամանակներում վաճառականներ էին
Այդպես էր և Գեորգի հայր Երեմիան: Ինքը՝ Գեորգը ծնվել էր Վանում 1771
թվականին: Ամուսնացած էր Եղիսաբեթ անունով աղջկա հետ, որ, ինչպիսի
երևում է, նույն Արծրունիների տոհմից էր, բայց այլ ճյուղից: Այդ ճյուղը
կոչվում էր Պաշավյան-Արծրունի՝ և նույնպես նշանավոր էր իր հարստու-
թյունով:

¹ Այս անունը մենք հանում ենք գեներալ Արծրունու ձեռքով գրված մի ուսերեսի թղթի
Տարբախտարար, մեզ չհաջողվեց իմանալ ճիշտ հայերենը:

Ներսիս: Գեորգը ունեցավ միայն երկու որդի. Մարիամ, ծնված 1793 թվին՝ և
Արեմիա՝ 1804 թվին:

Նոր գաղթականը Վրաստանի մայրաքաղաքում հուշակից իրրև մի մարդ,
որ անհուն հարստություն էր բերել իր հետ: Դա մասամբ հշմարիտ էր: Միայն
վաճառականությունը չէր, որ հարստացրել էր Գեորգ Արծրունուն: Նրա տոհմը
Վանում ուներ կալվածներ և վայելում էր «հիսար-յուղաշի» արտոնությունը:
«հիսար-յուղաշի» նշանակում է բերդի եկամուտների ընկեր. Երան-Արծրունի-
ները որդուց որդի ստանում էին Վանի բերդի եկամուտների մի մասը: Գալով
անշարժ կալվածքներին, Երան-Արծրունիների հողային սեփականությունների
վրա ազելացան Պաշավյան-Արծրունիների սեփականությունները, երբ Գեորգը
ամուսնացավ Եղիսաբեթի հետ: Վերջինիս հայրն էր Մահեստի-Հակոբ Ամի-
րան, որ ուներ մի եղբայր՝ Մահեստի-Ավետ Ամիրա անունով:

Այդ երկու տոհմերի կալվածները, որոնք Գեորգ Արծրունու և նրա ժառանգ-
ների սեփականությունն էին կազմում, հետևյալներն էին. 1) հողային մեծ
տարածություններ Մոկս և Շատախ գավառների լեռներում, ուր կային հարուստ
ձանրեր, որոնց մեջ հայտնի էր մանավանդ «զոնեխը»². 2) Վանի լճի վրա Մար-
տիտ դյուղի ձկնորսարանը. ինչպես հայտնի է, Վանի հուշակալոր տառեխը մեծ
մասամբ այդ դյուղի մոտ է որսվում. 3) Վանի Արաք թաղը, ուր Պաշավյան-
ներն ունեին տուն և այգիներ. 4) տներ և խանութներ Վան քաղաքում:

Ի՞նչը հարկադրեց Գեորգ աղային թողնել իր հայրենիքը, այդքան հարու-
ստությունները և տեղափոխվել Ռուսաստան:

Բուն պատճառը մեզ հայտնի չէ: Բայց կարող ենք առանց տատանվելու
ասել, որ Թուրքիայից հեռացող բոլոր մարդկանց համար զարբերից ի վեր մի
բնիկանուր պատճառ է գոյություն ունեցել և դա թուրքական իրականությունն
է: Այդ իրականությունն այնպես էր, որ նույնիսկ հայտնի, նշանավոր մարդիկ
էլ ոչ մի կերպով պաշտպանված չէին հարստահարություններից, բանաբարու-
թյուններից: Արծրունիների տոհմային թղթերի մեջ³ մենք հանդիպեցինք մի հա-
մատոտ տեղեկություն, որ հաստատում է մեր ասածը: Բանից դուրս է գալիս,
որ Պաշավյան շորս եղբայրներն սպանվել էին և նրանց կալվածները, Գեորգ
Արծրունու Ռուսաստան տեղափոխվելուց հետո, հարբունիս գրավվեցան: Այս
գիտյրը մասամբ պարզում է, թե ինչը հարկադրեց Գեորգին մի նոր հայրեն-
իք որոնել:

Ասում ենք մասամբ է պարզում, որովհետև ինքը՝ Գեորգը «Դարաստան
երատուց» անունով իր գրքի մեջ, որ տպվեց Թիֆլիսում 1830 թվականին,
ասում է թե զեռ քսաներկու տարեկան հասակից էր հասկացել, որ այլազգի-
ների մեջ ապրելու ճար չկա և բնակության տեղ էր որոնում: Այդ փոքրիկ ոտա-

¹ Մարիամը ամուսնացավ երեսնցի Սարգիս Սանասարյանցի հետ. նրա որդին էր Սանա-
սարյան դպրոցի հիմնադիր Մկրտիչ Սանասարյանցը:

² Գեներալ Երեմիա Արծրունին Կ. Պոլսի ուսաց դեսպանության միջոցով դառ սկոնց
սեզանավոր Ալլահվերդի-օղլուի դեմ, պահանջելով նրանից մոտ 2,5 միլիոն ուսրլի: Ալլահվերդի-
օղլուն Պաշավյան-Արծրունիների գործակառարն էր և վաճառել էր Մոկսի և Շատախի ձանրերից
երես ուղարկված զանեխը: Նա խոստովանեց այդ հանգամանքը թուրքաց կառավարության և
ուսաց դեսպանի առաջ, հանձն առավ վերջացնել հաշիվը Երեմիա Արծրունու հետ, պայման
գեղյով, որ վերջինս գնա Կ. Պոլիս և անձամբ վերահասու լինի իր պահանջին: Արծրունին գնաց
Կ. Պոլիս 1844-ին, բայց երկար չկարողացավ մնալ այնտեղ, այնուհետև նա պահանջում էր, որ
Ալլահվերդի-օղլուն հավատարմատար ուղարկի Թիֆլիս, բայց այդ պահանջը չկատարվեց:

³ Այդ թղթերի մի շատ աննշան մասն է մնացել. Գեորգ աղայի թղթերը այրվել են 1855-ին
կրա կարավանաբայի հրշեհի ժամանակ:

նավոր հիշատակարանի մեջ Գեորգ աղան միայն համառոտ ակնարկություններ է անում: Հայրենիքում շատ փորձանքներ, նեղություններ է տեսել, այնտեղ անցքեր են անցել նրա գլխով:

Ինչպես տեսնում եք, նոր հայրենիք նա որոնեց ամբողջ քսան տարի, մինչև որ գտավ Քիֆլիսը: Իհարկե, չի կարելի ասել, թե նա իր ճանապարհորդությունների միակ նպատակը տեղ որոնելն էր դարձրել: Գեո երիտասարդության օրերից զգալով թուրքական տիրապետության ամբողջ ծանրությունը, նա մեկն էր բյուրավոր դժգոհներից: Առևտրական ճանապարհորդությունները միայն սաստկացնում էին նրա դժգոհությունը, մանավանդ երբ Պարսկաստանից ու թուրքիայից նա տեսնում էր եվրոպական աշխարհը, տեսնում էր, թե ինչ է խաղաղ զարգացումը, լուսավորությունը: Զքնաղ, բայց խավար ու զրժեքախտ Վասպուրականից միանգամից հեռանալը հեշտ շէր նրա համար. հարենիքի հետ կապում էին նրան ոչ միայն նախնիքների գերեզմանները, այլև խոշոր տնտեսական շահեր: Եվ դժգոհությունը քսան տարիների ընթացքում այնքան կիտվեց նրա մեջ, որ նա վերջ ի վերջո հեռացավ Վանից:

Ոչ օրի համար չի կարող անխորհուրդ համարվել այն հանգամանքը, որ Գրիգոր Արծրունին, «Մշակի» խմբագիրը, Վանում ծնված մի հայի որդին էր: Գրիգոր Արծրունու ամենախոշոր ծառայություններից մեկն էլ այն էր, որ նա մոտեցրեց ուսահայերին և թուրքահայերին և իր հզոր գրչով երկար ժամանակ արծարծում էր թուրքահայերի դատը: Այստեղ նա երևան է գալիս իրրե վանեցու նոր սերունդ, իրրե այն ժողովրդի զավակ, որ դարերով կրել է իր ուսերի վրա թուրքական ռեժիմը: Նրա մեջ խոսում էին նրա պապերն ու նախահայրերը: Եվ այդ պատճառով կարևոր է այստեղ գոնե թոուցիկ կերպով ներկայացնել Վանի իրականությունը այն ժամանակ, երբ նրա սպալը, մի շափահաս դժգոհ, և հայրը, ինը տարեկան երեխա, հեռանում էին այնտեղից մի լավագույն հայրենիքի հույսով: Պետք է իմանալ, թե ինչ ժառանգություն կարող էր ավանդել Վանի հին սերունդը նոր սերնդին:

Վան քաղաքը և նրա շրջակա գավառները պատկանում էին քրդերին. Վանում նստում էր քուրդ փաշա, իսկ շրջակայքում իշխում էին քուրդ բեյերը, որոնք հպատակվում էին այդ փաշային¹: Վասպուրականն էլ ուրեմն մի կտոր էր քրդական այն ընդարձակ թագավորությունից, որ շատ տեղերի հետ տարածվում էր և Բաղեշի ու Մուշի վրա և որ շարունակ քարուքանդ էր անում այդ երկրները: Քրդական թագավորությունը պաշտոնական անուն չէր այն ժամանակներում. պաշտոնական անուններն էին Վանի փաշայություն, Բաղեշի խանություն, որոնք օսմանյան պետության մի մասն էին կազմում: Բայց դա թագավորություն էր, այն էլ քրդական, իբրև իրականություն: Իսկ թե ինչպես էին թագավորում քրդերը, կարելի է իմանալ հենց նրանից, որ Բաղեշի 25000 տուն ժողովրդից մի կարճ միջոցում մնացին 5000 տներ: Եվ այստեղ շատ էլ դարձանալու բան չկա. այդ դժբախտ երկրում ապրած Հովհաննես Կոլոտ պատրիարքը գրում է, թե քրդերը «ծծում էին մեր արյունը, գիշատում էին մեզ, փախցնում էին ծմակները ու ժայռերի ծերպերը և այդտեղ մաշում էին մեր կշանքը»²:

Վանի մեջ ապրում էին 15 հազար տուն մարդիկ. դրանցից միայն 2000 տունն էր հայ: Թուրք ժողովուրդը համարյա ամբողջովին զինվորական դասակարգ էր կազմում և կոչվում էր զուլ: Այդ զուլերի ապրուստի համար սահ-

մանված էր առանձին հարկ, որ տալիս էին բացառապես թե վանի և թե շրջակաների հայերը, այսինքն ազգաբնակչության այն մասը, որ զենքի հետ գործյուններ և դրա փոխարեն վարող ու հերկող էր, արհեստավոր էր: Այդ փոքրիկ իրավազուրկ մասը այդպիսով հարկատու էր մեծ մասին: Մի երկրում, ուր քրդերի, կարգի, իշխանության ներկայացուցիչները վայրենի քրդերն էին, հայտնի է թե ինչ կլինեին տիրող զինվորականների հարաբերությունները դեպի իրանց հարկատուները:

Բայց Վանի իրականությունը այդ շէր միայն, բացի այլևայլ հարկերից, փաշան անում էր իր համար առանձին տեսակի հարկեր, որոնք կոչվում էին իմդաղի և այլըզ: Ահա դրանց տակ էր ծովում ժողովրդի վիզը: Փաշան առնում էր երբ և ինչպես կամենում էր, ստանում էր ամբողջ տարվանը միանգամից, և մի երկու ամսից հետո հետագա տարվանը, դարձյալ մի քանի ամսից հետո մյուս տարվանը, և այսպես շարունակ: Հարկահանությունների ժամանակ դործադրվող բռնությունները նկարագրելու կարիք չկա. ժողովուրդը և զլխավորապես, իհարկե, քրիստոնյա ժողովուրդը անխնա կեղեքվում էր: Սահմանված կարգը, նույնիսկ թուրքիայի պես մի երկրում սահմանված կարգը, ոտնակոխ էր արվում, մեծամեծ տառապանքներ պատճառելով ժողովրդին:

Կային դրանից դուրս և այլ տանջանքներ: Թուրք ազգաբնակչությունը, այսինքն զինվորները, զուլերը, Վանում և Վանից դուրս տիրող քուրդ իշխանավորները մշտական կոիվների, արյունահեղ ընդհարումների դյուրավառ նյութ էին ներկայացնում և այդ տեղերում տիրում էր մշտական պատերազմական դրություն: Ուժեղը հաղթահարում էր թուլին, քրիստոնյա ժողովուրդը շփոտեր, թե իշխանության, տիրապետության համար կոլոզներից ո՞րին պետք է հնազանդվել: Այդ դրությունը բավական պարզ պատկերացնում է այն համառոտ տարեգրությունը, որ տպված է Սրվանձտյանի «Մանանա» գրքի մեջ³: Դա Վան քաղաքի մարտիրոսագրությունն է, որի հասարակ, անարվեստ ոճը իրականության հարազատ պատկերացման ամենալավ նշանը պետք է համարել: Պատմությունը մանրամասնաբար արձանագրում է մի ամբողջ դարի անցքերը, XVII դարի վերջից մինչև XVIII դ. վերջը: Նրա մեջ բազմաթիվ էջեր նկարագրում են հարստահարություններ, կեղեքումներ, ավերանք և կոտորած, կանանց և աղջիկների առևանգում: Դրանք գավառական պատմության արյունոտ էջեր են և սովորաբար չեն մտնում ընդհանուր պատմության մեջ, որովհետև շատ են մասնավոր, շատ են առօրյա, սովորական: Բայց անենք այդ էջերից մեկը պատահաբար: Ահա Վանի նշանավոր կառավարիչներից մեկը, Թամուր փաշան:

«Ի ՌՃՁԲ (1733) զնաց ի վերայ Սալմաստու Մայիս ամսոյն, և կողոպտեաց զնա,— ասում է տարեգրությունը,— էառ զԱխրակ, 3—400 մարդ սուր քաշեց և դարձեալ եկն ի Վան. իմդաղի սափաբիա (իրան հատկացրած հարկ) ժողովեաց քան զԿ (60) քիսայ աւելի, ի Մայիսի Ի, և և զնաց ի վերայ Թաւրիզոյ և էառ:

Ի սոյն թիւ եկն աղղ մի թաթար, որ մարդակեր էին, զնացին ի Թաւրիզ առ Թամուր փաշայն և փաշայն ի զնջիլ եղած գուղասաղներաց (բանտարկյալներ) օր 15 մարդ թալին տար նոցա, որք մորթէին և ուտէին: Ի սոյն ամի գարձավ Թամուր փաշայն ի Թաւրիզոյ և եկն ի Սալմաստ. իսկ Վանայ զուլն... և այլ մեծամեծ աղաչք խորհուրդ արարին թէ փաշայն ոչ թողումք որ ի քա-

¹ Ինճիկյան, «Աշխարհագրություն», հատոր Ա, վեներտիկ, 1806, եր. 136:

² Տե՛ս իմ «Հայկական տպագրություն», հատոր 2, 144:

դաքս մտանէ. եւ Վանայ Մուսալիմ-Ալի աղայն իմացալ, մարդ յղեաց առ փաշայն ի Սալմաստ. եւ նա մեկ օր Սալմաստու եկն ի Խօշար Իսկ Վանայ Հայք եւ Տաճիկք ի յահէն դողային. և դիմեալ ի բաղաքն՝ նորա շինած դարաղաջնոր ու շանգալներ ջարդեցին. փաշան երեք օր նստալ ի Խօշար թէ գան ի դեմն, սակայն ոչ գնացին, այլ դարգահներ գործեցին եւ թուանքչիք ի բաղան լցին փաշայն իմացալ որ կոուել կամին, ի Խօշարայ եկն ի Ղուրբաշ գիւղն, և դուրս եղած ամեն քրիստոնեայ ուսէն գնացին ի մօտն. երկնչէին թէ թալանէ դինքեանս. եւ նա յուսադրեաց զնոսա ասելով թէ՝ Մի՛ երկնչիք, երթալք, նստարուք միամիտ ի ձեր տեղին»:

Փաշան առանց պատերազմի մտնում է բերդը, կախել է տալիս ենիչարներին գլխավորին, բայց ինքն էլ կանչվում է Կարս, ուր Ասնավուտ փաշան կտրել է տալիս նրա գլուխը:

Քիւ ՌՄԳ (1754). Ղարսցի կոյր Ուտֆ փաշեն հետ ղուլին կուտան, մտուցին սարայն, էլան Մաշիթ, բռնեցին թուանքի յառաջ: յղեաց Խոշարայ մարդ բեր, էլան դեմ շթողին, գիշերով գաղտ դռնէն ելեալ փախաւ:

Քիւ ՌՄԳ (1755) Մարտի Ա. եկն... նստալանց գիւղ, նստաւ, քաղաք դալ շթողին. Իսա աղէն ասքար էառ գնաց դէմ, շատ մարդիկ մեռան, գիւղացիք ամեն փախեան, ցանքեր կերցուցին, յետոյ Եէնգիլար աղասին ևէնգիլարեօք, Ղազեօք առին Իսա աղէն տարին մօտ փաշայն. Մարմետ գիւղ ևտ աղային, ինքն մանդուլ եղեւ, գնաց:

Քիւ ՄՌԺԸ (1769) Դեկտեմ. ամսոյն, յետ մեռանելոյ Խալիլ աղային՝ Քամուր աղայն կամէր լինել սօլ աղասի (ղուլերի գլխավոր), ոչ ետուն. վասն որոյ մեծ խռովութիւն եղեւ ի մեջ նոցա... Յաւուր միող վստահացեալ հարին փրշտօյով զկոր (կոյր) մուֆթին, որ Գասրմ աֆանդի ասէին, և սպանին. մեծ ոմն էր. ապա սկսեան կոուել ուսմազանն (ամիս) մինչ ի գլուխ. շուկայք դատարկեցին և բոլոր փակեցին ի յահէ թալանելոյ. և մարդ ոչ կարէր ելանել ի տանէ յահէ գուլուլայիցն (գնդակ), որ այնչափ հարկանէին միմեանց, ես առաւել գիշերն. յետ Մազրըբին, քանիցս անգամ երիշ արարին (հարձակվեցան) ի վերայ միմեանց, և ողջ ուսմազանին մինչ ի բայրամն կոխ արարին, մինչև խաբար առին թէ Գամաթ Հուսէն փաշան գալոց է տեղս»:

Այդ փաշան գալիս է, կովով ու թնդանոթներով վերջ է տալիս Վանի խռովութիւններին:

ՔՄՄԻԸ (1779) Դեկտեմբեր. Այս Քամուր փաշայն՝ Միթիթարենց Բարանիկն Արով, որ գիշեր կոր Գաղկէ աղջկայ տուն բռնեցին եօթն անուանի կնիկ ևտ դնել ի նաւ քշել, որ ևն այսօրիկ. կոր Գաղկէ աղջիկ, քուլխանչու Եղիսէն. Խանթուման, Քաչալ աղջիկ, Ատաբաշու կնիկ, Ղազանչու կնիկ, Նորշինցու կնիկ պղծեալք»:

Ահա այսպիսի աշխարհի ծնունդ էր Գեորգ Արծրունին, այսպիսի իրականութիւնն էր, որ հարկադրեց նրան հեռանալ Վանից:

Հարուստ, ազնվական վաճառականի համար ամենից շատ գրավիչ պիտի լիներ Քիֆլիսը մի քանի պատճառներով: Նախ Ռուսաստանի համբալը, հայերի այն ընդհանուր հույսը, թե Անդրկովկաս մտնելուց հետո ուսաները պիտի ազատեն Հայաստանը մահմեդական լուծից: Գեորգ Արծրունին այնպիսի հայ չէր, որի համար նշանակութիւն չունենար ազգութիւնը. ինչպես կտեսնենք, դա դեպի իր ազգը բարի ցանկութիւններով լցված մի մարդ էր: Այդպիսի մարդու համար գրավիչ պիտի լիներ հայ ժողովրդի մեջ ապրելը: Քիֆլիսը հայութեան կենտրոնն էր, որ վայելում էր ուս կառավարութեան բարի ուշադրութիւնը: Գեորգ Արծրունին, իբրև վաճառական, չէր կարող չնկատել

որ Քիֆլիսում հայերը շատ ազդեցիկ դիրք ունեն և ամբողջ առևտուրը նրանց ձեռքին է: Ռուսաց կառավարութիւնն էլ ընդունում էր, որ այդպես է և աշխատում էր ամեն կերպ խրախուսել այդ վաճառականներին: Ահա ինչ է գրում Ալեքսանդր I կայսրը իշխան Յիցիանովին.

«Հայերը, իբրև մի արդունագործ ժողովուրդ, որ իր ձեռքերում ունի Ասիայի այս մասի ամբողջ առևտուրը, արժանի են ձեր առանձին ուշադրութեան և պաշտպանութեան, որովհետև, նկատի առնելով, որ նրանց նեղում են Պարսկաստանում, կասկած չի կարող լինել, որ այդ ժողովրդի բաղմութիւնը կհաստատուի Վրաստանում, հենց որ նրանք իրանց ապահովված կհամարեն կառավարութեան բավականաչափ բարեկարգութեամբ»¹:

Այս հանգամանքին մեծ կարևորութիւն էին տալիս ուսաները Անդրկովկասում նոր հաստատվելու ժամանակ: Երկիրը շինացնելու համար հարկավոր էին արդունագործութեան, առևտրի մարդիկ: Եվ այդ պատճառով ուսաները ոչ միայն հովանավորում էին տեղացի հայերին, այլև աշխատում էին դրսից էլ, Պարսկաստանից ու Թուրքիայից, գրավել հարուստ, վաճառական հայերին: Այդ է պատճառը, որ կառավարչապետ Ռտիշչեն այնքան լավ ընդունելութիւն ցուց տվեց Գեորգ Արծրունուն: Այդպիսի մի հարուստ հայը մի կատարչալ պատ էր Քիֆլիսի համար, որ անկերպարան դրութեան մեջ էր, շունք լավ շինութիւններ, աչքի ընկնող արևտուր:

Քիֆլիսում հաստատվելուց հետո Գեորգ աղայի առաջին գործը եղավ իր ազնվական ծագումը վաւերացնել տալը: 1814 թվականին նա ներկայացրեց իր ձեռքով կազմած տոհմագրութիւնը գեներալ Ռտիշչենին: Այդտեղ գրված էր Երան-Արծրունիների ճյուղագրութիւնը, որ սկսվում է 1530 թվից: Երան-Արծրունիները, նախած այդ թղթին, ծագում են Արծրունի թագավորների տոհմից: Տոհմագրութիւնը, սակայն, չէր վաւերացված հին դոկումենտներով, նրա ճշտութեան միակ վկանները Վանի պատվավոր հայերն էին, նույնպես և էջմիածնի Սփրեմ կաթողիկոսը և մի քանի եպիսկոպոսները: Հասկանալի է, որ այդ վկանները կարող էին կրկնել միայն այն, ինչ տեղական ավանդութիւններն էին ասում, իսկ ավանդութիւնները դեռ բավական չէին մի այդպիսի նշանավոր ծագումը անկասկածելի դարձնելու համար:

Այդպես էլ նայեց գործին ուսաց կառավարութիւնը: Նա շտվեց Գեորգ Արծրունուն իշխանական տիտղոս, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ իշխանական ծագումը կարելի է ապացուցանել միայն թագակիր անձերի տված վկայականներով: էջմիածնի վկայութիւններն էլ մի առանձին նշանակութիւն չունեցան և չէին էլ կարող ունենալ, քանի որ կառավարութիւնը նկատել էր, որ այդ տեսակ վկայութիւններ տրվում են ամեն մեկին, որ ուզում էր իր ազնվական ծագումը ապացուցանել, այնպես որ վերջ ի վերջո հրամանագրվեց ընդունել հայոց հոգևոր կառավարութեան վկայականները այդպիսի գործերում, իսկ Քիֆլիսի առաջնորդ ներսես եպիսկոպոս Աշտարակեցին մի խիստ կամակ որեց էջմիածին, պահանջելով դադարեցնել այդ տեսակ անհիմն վկայականներ տալը:

Չնայած իր խնդրագրի մերժման, Գեորգ Արծրունին շարունակում էր իրան իշխան անվանել. 1818 թվականին գրված մի կալվածագրի մեջ նա անվանված է «Վանից գաղթած հայոց իշխան»: Երբ գեներալ Ռտիշչեն տեղ Վրաստանի կառավարչապետ նշանակվեց հայանի գեներալ Երմոլովը, Արծրունին նորից սկսեց խնդրել, որ ճանաչվի իր ազնվականութիւնը: Քիֆլիսի բարեկարգութեան

¹ Акты Кав. Археогр. Ком., т. 11.

համար այնքան ջանքեր արած Երմոլովը անտես շարավ հարուստ հայի խնդրանքը. գնահատելով Արծրունու գործունեությունը, նա փորձեց գրական օգնություն տալ այն հարցին, որ մի անգամ աշդեն մերժվել էր նրա նախորդի օգնությունը. Ալեքսանդր կայսրին ուղարկված իր զեկուցման մեջ Երմոլովը նոր պատճառաբանություններ էր բերում ապացուցանելու համար, որ Արծրունուն կարելի է ընդունել ազնվականների շարքում: Նա ասում էր, թե Արծրունիների իշխանական ծագումը ապացուցելու դոկումենտներ չէին էլ կարող մնալ, քանի որ, ինչպես հայտնի է, Հայաստանը ենթարկվել է բազմաթիվ հեղափոխումների և ավերանքների:

«Օսմանյան պետության մեջ, — գրում էր Երմոլովը, — ամենևին չկա սովորություն շնորհել ունեիցէ ազնվականության դրվագներ և հրովարտական Սակայն կասկած չկա, թե Հայաստանում, որ այժմ թուրքաց տիրապետության տակ է գտնվում, կարող են լինել տիրող և ուրիշ՝ հնումը երեկի եղած ցեղերի պայազատներ, որոնց հաշվում հավանական է կարծել և Արծրունուն: Սա ավելի ևս հաստատվում է նրանով, որ նա թողել է իր հայրենիքում իր սեփական գյուղերը և եկամուտները, Վանի բերդի մի մասով հանդերձ, որ շնորհել է օսմանյան կառավարությունը նրա ցեղին ժառանգաբար, երևի, որպես հավանական է ենթադրել, այն պատճառով, որ նրա նախնիքներն են եղել բերդի շինողներն ու տերերը»:

Գեորգ Արծրունին Երմոլովին տված իր խնդրագրի մեջ ասել էր, թե «զոհելով հայրենի աշխարհը և իր բոլոր անշարժ կալվածները և հուսալով խաղաղ կյանք վայելել նորին կայսերական մեծության արդարադատ օրենքների տակ, նա մնում է այժմ անարգված, որովհետև հավասարեցված է ստորին դասի մարդկանց հետ»: Համաձայն լինելով, որ այս այսպես է, Երմոլովը խնդրում էր նկատի առնել Գեորգ Արծրունու արած ծառայությունները թիֆլիսի բարեգործության համար և շնորհել նրա տոհմին ազնվականություն: Երմոլովը շեշտում էր մանավանդ այն, որ Գեորգ Արծրունուն պատվելն ու խրատուսելը կդառնա թուրքիայում և այլ տեղերում ապրող նրա հարուստ հայրենակիցներին դեպի Կովկաս գրավելու մի լավ միջոց: Եվ նա բերում էր այսպիսի մի դեպք. «1818 թվականին, երբ ես բացակա էի Վրաստանից, եկան այստեղ Կ. Պոլսից երկու անձինք, որպես երեսփոխաններ այնտեղի մի քանի ամենահարուստ հայ ընտանիքների, որպեսզի տեղեկանան թե կարելի՞ է արդյոք գաղթել Վրաստան և ի՞նչ օգուտ կարող են ունենալ գաղթելով այստեղ: Սակայն տեսնելով իրանց հայրենակցի, նույն այս Արծրունու, օրինակը և հայտնի չլինելը, թե ինչ արտոնություններ կարող են ունենալ նրանք այստեղ, փոխեցին իրանց մտադրությունը և հետ գնացին, ոչինչ առաջարկություն անգամ չանելով մեր կառավարության»¹:

Այս թուղթը Երմոլովը գրեց 1820 թվականին: Պատճառաբանությունները հիմնավոր էին և Ալեքսանդրը նույն տարվա սեպտեմբերի 8-ին Վարչախոսից հրամանագրեց Կառավարիչ Սենատին ընդունել Գեորգ Արծրունուն ժառանգական ազնվականության մեջ և տալ այս մասին հրովարտակ:

Անկարող լինելով ստուգել և ասել թե որքան ճիշտ էր, որ Երան-Արծրունիները հին հայոց իշխանական տոհմից էին սերված, մենք միայն այն պիտի ասենք, որ Գեորգ Արծրունին թիֆլիս մտնելու օրից ապրում էր իբրև արևելյան մի բեկ կամ աղա: Փողոցում նրա ետևից միշտ գնում էին երկու վանեցի

¹ Ա. Երիցյան, «Գրիգոր Արծրունու և նրա 25 տարվա գրական գործունեության ատիթով» թիֆլիս, 1890, էր. 16—18: Այս գրքույկից մենք շատ քաղվածքներ ենք անում այստեղ:

ժառանգներ, իսկ երբ ձի հեծած էր փողոց դուրս գալիս, այդ ժառանգներից մեկը ձիու աջ կողմից էր գնում, մյուսը ձախ կողմից, մի երրորդ ծառա էլ առջևից էր գնում՝ բռնած ձիու գլուխը, որ զարգարված էր թանկագին պաճուճանքներով: Փողոցում անցնելիս՝ ամենքը ոտքի էին կանգնում և ձեռքները գլխին դրած պրոխ էին տալիս, իսկ Գեորգ ազան պատասխանում էր ձեռքը ճակատին դնելով և թուրքական կերպով «սալամ» տալով: Միևնույն ժամանակ դա մի սակավախոս, բայց խոր մտածող, հասկացող մարդ էր: Կախարդող ազդեցություն էր անում թիֆլիսեցիների վրա մանավանդ նրա հարստության համար: Համոզմունք էր կազմվել, որ Գեորգ ազան անհուն քանակությամբ ոսկիներ է բերել Թուրքիայից: Իսկ թե որքան մեծ նշանակություն ունեւր այդպիսի հարստությունը, մանավանդ այն ժամանակվա թիֆլիսում, երևում է այն ընդունելությունից, որ գտավ Արծրունին Ռաիշլի և Երմոլովի մոտ: Ռուսաց կառավարության այդ երկու բարձր ներկայացուցիչները Անդրկովկասում հավատացած էին, որ Գեորգ ազայի հարստությունը մեծ օգուտներ պիտի տար թիֆլիսին և այդ պատճառով էլ հայտնում էին բարձրագույն կառավարության, թե նա ծառայություններ է մատուցել և պիտի մատուցանե, ուստի արժանի է խրատույնների:

Եվ իրավ, Գեորգ Արծրունին մատուցել է իր ազդին և նոր հայրենիքին այդ ընկնող ծառայություններ:

Հետևելով ժամանակագրական կարգին, մենք ամենից առաջ պիտի հիշատակենք նրա ճանապարհորդությունը Եվրոպայում 1817 թվականին: Տեղափոխվելով թիֆլիս, Արծրունին մտերմացավ հայոց առաջնորդ Ներսես Աշտարակեցու հետ: Հայտնի է թե այդ ժամանակ ինչ մտքերի վրա էր հայրենասեր Ներսեսը: Նրա տեսչանքներից ամենապայտուկը էր բաց անել թիֆլիսում մի մեծ բարեկարգ դպրոց հայ երեխաների համար: Այդ դպրոցի հետ նա կապում էր լայն ու գեղեցիկ ծրագրեր. ուզում էր իր դպրոցի շուրջը կենտրոնացնել գրական գործունեություն, ուզում էր ազգը լուսավորել զրքեր հրատարակելով: Սակայն նրա վառ ոգևորությունը, անսպառ եռանդը դարձնում էին հայ ազգի վրա ընկած և նրան անողորմ կերպով ճնշող բարձր ու հին ժայռերին՝ տգիտության, անհասկացողության, նախապաշարմունքների: Ներսեսը կարոտ էր նյութական միջոցների, իսկ թիֆլիսի հայերը սկզբում մի սառն անտարբերությամբ, նույնիսկ թշնամությամբ էին վերաբերվում նրան:

Այդպես չէր Արծրունին: Ներսեսի մեջ նա գտավ իր սրտին ու հոգուն շատ մոտիկ հատկություններ: Նա ինքն էլ մի շատ գրասեր մարդ էր. երիտասարդ հասակում, զեռ չամուսնացած, նա երազում էր Վանի ծովափի Աղթամար կղզին դարձնել ս. Ղազարի կղզու նման մի բան, այսինքն բաց անել այնտեղ տպարան, հիմնել մի ուսումնական միաբանություն: Հոր առետրական գործերը թույլ չավին իրագործել այդ միտքը: Այժմ, տեսնելով Ներսեսին նվիրված այդ տեսակ կրթական և գրական գաղափարներ, նա անկեղծ սիրով և համակրությամբ կատրվեց նրա հետ և մինչև իր կյանքի վերջը Ներսեսի կողմնակից և աջակից մնաց:

Քաղաքակրթված երկրներում կատարած ճանապարհորդությունը մի անգամ էլ ցույց տվեց Գեորգ Արծրունուն լուսավորության և տգիտության մեջ եղած ահազին տարբերությունը: Նորից նա զգաց, ինչպես ինքն է ասում, «մեր ազգի աղետը, թե որքան աղքատ ենք ուսման մեջ, միմյանց ատում ենք շար կախանձով, ուրիշներին հարազատ ենք, մերը ատող»: Փարիզում Գեորգը ծանոթացավ եղեսպցի Հակոբ Շահան-Ջրպետի հետ, որ այդ ժամանակ բավական հայտնի անուն ուներ իր հայադիտական աշխատություններով և իբրև հայի-

րենի ուսոցի՜ Փարիզի արևելյան կենդանի լեզուների դպրոցի մեջ: Շահան-
Ջրպետը մի առանձին գիտնական համալսարան շուներ, բայց զոնե այն ար-
դունքը ցույց տվեց, որ հայերեն լեզվի դաստիարակչությունը մուսուլմանացի Գրանսիայի
մայրաքաղաքում և ունեցավ մի քանի հատ աշակերտներ, որոնցից մեկը նշա-
նավոր հանդիսացավ իրրև հայագետ: Այդ գիտնական հայի հետ Գեորգ Արծ-
րունին բարեկամացավ և վերջը պատճառ դարձավ, որ ներսեսը բերել տա
նրան Քիֆլիս՝ Ներսիսյան դպրոցի համար:

Շահան-Ջրպետից նա իմացավ, որ Ամստերդամ քաղաքում գոյություն
ունի մի հին հայերեն տպարան, որ փակված է: Նա հիշեց իր երիտասարդա-
կան տարիների մտադրությունը, հիշեց, որ իր բարեկամ ներսեսը շատ էր
ուզում տպարան բաց անել Քիֆլիսում և վճռեց դնել Ամստերդամի տպարա-
նը, նվիրել ներսեսի դպրոցին:

Գա մի նշանավոր նվեր էր, եթե ի նկատի ունենանք այն ժամանակվա
հանգամանքները: Տպարան ձեռք բերելը այժմ է հեշտացել, իսկ մի 80—100
տարի առաջ դա մի կատարյալ մեծագործություն էր: Հայերեն տպագրության
պատմությունը ցույց է տալիս, թե ի՞նչ մեծամեծ տանջանքներ են կրել այն
հայերը, որոնք նվիրույալի զանազան կեղծերում մամուլ էին կանգնեցնում՝
հայերեն գրքեր տպագրելու համար: Ամենամեծ դժվարությունը, որ շատ ան-
գամ վհատեցնում էր հայկական տպագրության հերոսներին, այն էր, որ օտար
աշխարհներում հեշտ չէր կարելի գտնել այնպիսի վարպետներ, որոնք կա-
րողանային հայերեն ճաշակավոր տառեր փորագրել: Եվ կանոնավոր ու գեղե-
ցիկ տառեր ձեռք բերելը մի կատարյալ դյուտ էր այն ժամանակներում: Այդ-
պիսի մի գյուտ էր և այն հայերեն տպարանը, որ գտնվում էր Ամստերդամում
և որը գնել էր ուզում Գեորգ Արծրունին:

Ամստերդամը, Վենետիկից հետո, հայկական տպագրության առաջին
ամենահարուստ հայրենիքն էր: Այդտեղ էր, որ հռչակավոր Ռսկան վարդապետ
Երևանցին բաց արավ տպարան, այստեղ էր, որ Ռոմա եպիսկոպոս Վանան-
դեցին հիմնեց իր ոչ պակաս հռչակավոր տպարանը: Սովորություն է դարձել
կրկնել, թե Գեորգ Արծրունու գնածը հենց այդ Ռսկանի և Վանանդեցու տպա-
րանն էր¹: Բայց դա կատարելապես սխալ է: Ռսկանի տպարանը վաղուց էր
տարվել Լիվորնո, Մարսել, Կ. Պոլիս, և Ամստերդամում նրանից ոչինչ չէր
մնացել, իսկ Վանանդեցու տպարանը գնել էր Մխիթար Աբրահամ և փոխադրել
էր ս. Ղազար կղզին: Գեորգ Արծրունու գնած տպարանը ուներ իր առանձին
պատմությունը:

1755 թվի դեկտեմբերի 16-ին Առաքել Պողոսյան անունով մի հայ Ամս-
տերդամում պայման կապեց Միքայել Ֆլեյշման անունով հայտնի փորագրիչի
հետ այն մասին, որ վերջինս հանձն է առնում պատրաստել հայերեն տառերի
500 հայրեր և մայրեր, յուրաքանչյուրը երեք ֆլորինով: Ֆլեյշման աշխատում
էր էնշեդե նշանավոր ձուլարանական և տպարանական ֆիրմայի արհեստա-
նոցում²: Նա 1756—1757 թվականների ընթացքում պատրաստեց շորս տեսակ
հայերեն տառեր և հանձնեց Առաքելին: Տառերը շատ գեղեցիկ էին այն ժա-

¹ Երեցյան՝ Ներսիսյան դպրոցի պատմության և «Գրիգոր Արծրունի» բնագրի մեջ

² Մեր ձեռքում գտնվում են էնշեդեի ձուլարանի նմուշները, որոնք տպագրված են 1768
թվականին: Այդտեղ կան Առաքելի հայերեն տառերի նմուշներն էլ (Տե՛ս «Պատմություն Հայկա-
կան Տպագրության», Վենետիկ, 1895, եր. 179) և մենք տեսնում ենք, որ դրանք հենց այն տա-
ռերն են, որ գնել է Արծրունին: Մինչև օրս էլ Արծրունիների տնային կալի մեջ գտնվում է
Ֆլեյշմանի ձեռքով փորագրած հայրերի մի մասը:

ժամակվա համար: Ռսկանի և Վանանդեցու տառերը միևնույն տեսակի էին,
իսկ Ֆլեյշմանի պատրաստածները արդեն նոր ձև էին ներկայացնում:

Առաքել Պողոսյանը, որքան հայտնի է, գրքեր չտպագրեց, նրա պատրաս-
տել տված տառերը մնացին առանց գործադրության: Երբ Սիմեոն կաթողի-
կոսը վճռեց տպարան հաստատել էջմիածնում, նա գրեց Ամստերդամի հայոց
կեղեցու տեսուչ Հովհաննես վարդապետին, որ Առաքելի տառերն ուղարկվեն
էջմիածին: Բայց Առաքելը չտվեց տառերը և Սիմեոն կաթողիկոսը ստիպված
եղավ ուրիշ կերպով տառեր ձեռք բերել իր տպարանի համար: Թե ինչ եղավ
սխալուհետև Առաքելը, չգիտենք: Գիտենք միայն, որ նրա տառերից կազմվեց
Խաղաղությանի տպարանը Պետերբուրգում, որ հետո Հովսեփ արքեպիսկոպոս
Արքայությունի ձեռքով փոխադրվեց Նոր Նախիչևան և Աստրախան:

Ահա այդ Առաքելի տպարանն էր, որ գտնվում էր Ամստերդամում և կրնք-
ված էր նապուլեոն Բոնապարտի հրամանով, ինչպես վկայում է Ներսիսյան
պայքի տպարանում տպված Չամչյանի «Քերականության» հիշատակարանը:
Գեորգ Արծրունին դնեց այդ տպարանը թե պատրաստի տառերով, թե մայ-
րերով և ձուլարանական պարագաներով և ուղարկեց Քիֆլիս, ուր տպարանը
գաղմ ու պատրաստ էր 1819 թվականին: Գա մի մեծ նորություն էր Քիֆլիսի
համար, ուր չկար փոքրիշատե հարուստ տպարան: Կովկասյան մայրաքաղա-
քում գործում էր միայն զինվորական շտաբի փոքրիկ մամուլը, այն էլ միայն
պաշտոնական թղթեր տպելու համար: Գեորգ Արծրունու բերած այդ նորու-
թյունն այնքան աչքի ընկնող էր, այնքան նկատելի, որ Երմուզը Ալեքսանդր
Երևանցին գրած իր այն թղթի մեջ, որով խնդրում էր ազնվականություն տալ Արծ-
րունուն, հիշատակում էր, իբրև նրա մատուցած առանձին ծառայություն, «Հո-
ւանդիսյում նշանավոր գումարով առած ամենապատվական հայերեն տպաքա-
ղաք, որ այժմ ընծայեց այստեղ կառուցվող հայոց ուսումնարանին»:

Տպարանի գլխավոր հարստությունը տառերն էին: Ներսեսը գնեց մեկ մա-
մուլ, ավելացրեց ուսերեն և ֆրանսերեն տառերի մայրեր, բայց տպարանը
միշտ մնաց Գեորգ Արծրունու անունով: Մինչև 1860-ական թվականները ներ-
սեսյան դպրոցի տպարանը շատ նշանավոր դեր կատարեց Քիֆլիսում. դա
միակ հարուստ հայերեն տպարանն էր, ուր տպվում էին համարյա բացառա-
պես բոլոր հայերեն գրքերն ու պարբերական հրատարակությունները: Թուրք
տպագրությունների վրա նշանակվում էր. «Ի Տպարանի Ուսումնարանի Հայոց
ընծայեցից յԱզնվական Գեորգայ Երեմեան Արծրունուց»: Ներսեսը իր դպրո-
ցի շափ սիրում և խնամում էր այս հիմնարկությունն էլ: Հեռատես առաջնոր-
ք սխալված չէր, նրա ակնկալություններն սկսեցին իրագործվել, տպարանը
բացվելուց հետո Քիֆլիսն իր անունը մտքից մեր գրականության պատմու-
թյան մեջ, կարծես Ներսեսը զգում էր, որ Կովկասի մայրաքաղաքը պիտի
զանառ ուսահայերի գրական գործունեության ամենագլխավոր կենտրոնը:

1824 թվականին բացվեց Ներսիսյան դպրոցը: Հիմնադիրը երկար աշխա-
տել էր անգաղար, շինություններ էր կառուցել իր այդ կրթական հաստատու-
թյանը նյութապես ապահովելու համար: Բայց դրանով ամեն ինչ չէր վեր-
ջացել, նոր բացված դպրոցը պահանջում էր մեծամեծ ջանքեր՝ մի կանոնա-
վոր, բարեկարգ, իր կոչման բարձրության վրա կանգնած հիմնարկություն
առանալու համար: Ներսեսը կրկնապատկում է իր եռանդը. ուսուցիչներ է հրա-
վիրում, դասադրքերի, ներքին կարգ ու կանոնի մասին է հոգ տանում: Նրա
փոսկանները, նրա բազուկները գլխավորապես երկուսն են՝ դպրոցի տեսուչ
Արքայություն քահանա Ալամդարյանը և Գեորգ աղա Արծրունին:

Արծրունու խորհրդով էր, որ ինչպես ասացինք, Ներսեսը Փարիզից հրա-

վիրեց Շահան-Ջրպետին թիֆլիս: Փարիզից վերադառնալուց հետո Գեորգ ազան մեծ զովասանքներով էր խոսում այդ մարդու մասին, նկարագրելով նրան որպես մի հայտնի գիտնականի: Ներսեսը հավատաց. նամակագրութիւն սկսվեց նրա և Ջրպետի մեջ: Ներսեսյան դպրոցի բացվելուց հետո, երբ պատարաստված, գիտուն ուսուցիչների այդքան մեծ պակասութիւն էր զգացվում, Ջրպետի թիֆլիս գալը և դպրոցի դասատու դառնալը ինքնըստինքյան մի վճռոված հարց պիտի լիներ: Ո՞վ պիտի ավելի հարմար ղեկավար դառնար դպրոցում քան այդ մարդը, որ գիտնականի համբավ էր վայելում Փարիզի պես մի քաղաքում: Նա մի կատարյալ գյուտ պիտի լիներ դպրոցի համար: Ներսեսը ծախսեր չէ խնայում, հրավիրում է Ջրպետին. միայն ճանապարհածախս, Փարիզից թիֆլիս գալու համար, ներսեսը վճարեց 10,400 ֆրանկ: Ջրպետը մի վաթսուամյա ծերունի, թիֆլիսում գեղեցիկ ընդունելութիւն գտավ: Բայց շուտով հայտնի դարձավ, որ զանգակի ձայնը հեռվից է լավ գալիս և այդ գիտնականը այն չէր, ինչ կարծում էին:

Ներսեսը չկարողացավ թիֆլիսում ականատես լինել իր հրավիրած գիտնականի գործերին: 1827 թվականին, երբ Ջրպետը դեռ հիվանդ պառկած էր, սկսվեց ուս-սյարսկական պատերազմը: Հայտնի է, թե ներսեսը ինչ մեծ դեր է կատարել նախընթաց պատերազմներում, ուս զենքի գործը հեշտացնելու համար: Այս անգամ պատերազմական բեմը Արարատյան երկիրն էր, որ ամենայն հայոց Մայր Աթոռը դեռ հեծում էր պարսկական իշխանութիւն տակ: Ներսեսը, հայ կամավորների գունդ կազմելով, ճանապարհվեց պատերազմի դաշտը, դպրոցի կառավարութիւնը հանձնելով իր մտերիմներին՝ Ալամդարյանին, Արծրունուն և Հարութիւն Շերմազանյանին: Սրանք ամենայն եռանդով շարունակեցին հոգատարութիւնը, այնպես որ դպրոցը համարյա վնաս չէր կրում իր հիմնադրի բացակայութիւնից: Կարգադրողը, ցուցմունքներ տվողը, իհարկե, էլի ներսեսն էր. պատերազմի դաշտումն էլ նա բավական ժամանակ էր գտնում իր դպրոցին նվիրվելու համար: Ալամդարյանը և Արծրունին շարունակ նամակներ էին գրում նրան, տեղեկութիւններ էին տալիս և հրահանգներ խնդրում: Արծրունու հոգածութիւն գլխավոր առարկան հիվանդ Ջրպետն էր: Նա էր տալիս նրա ծախսերը, ամսական ոտճիկը: Ներսեսը դեռ որոշ ոտճիկ չէր նշանակել, բայց ստանալով Արծրունու հաշիվներն ու տեղեկութիւնները, հանձնարարում էր նրան ծախս չխնայել հիվանդ ծերունուն խնամելու համար: Սակայն Արծրունին շուտ համոզվեց, որ այդքան խնամքի և ուշադրութիւն արժանացած մարդը միայն ստանալ գիտե, արդյունք չի ցույց տալիս և շիտակ մարդ էլ չէ:

Պարսկական պատերազմը շուտ վերջացավ. մի քանի ամսվա ընթացքում ոչ միայն ամբողջ Արարատյան երկիրը անցավ ուսաների ձեռքը, այլև Թավրիզը վերցվեց: Բայց ներսեսը այդ պատերազմում ցույց տված իր մեծ ծառայութիւնների փոխարեն հալածանքի ենթարկվեց Պասկևիչի կողմից:

Պատերազմի սկզբում զենքերալ Պասկևիչը Կովկաս էր ուղարկված՝ Երմուլովի հետ միասին գործելու: Բայց փառասեր, նախանձոտ Պասկևիչը տեղ հասնելուն պես սկսեց ինտրիգներ լարել Երմուլովի դեմ և կարողացավ տապալել նրան: Այնուհետև պատերազմական հաղթութիւնները հերոսացրին նրան, փառքի հասցրին, բայց նա չմոռացավ իր քինախնդրութիւնը, և հալածանքները ուղղեց Երմուլովի բարեկամների դեմ, որոնց մի-մի հեռացրեց Կովկասից: Դրանց թվումն էր և ներսեսը: Պատերազմը վերջացավ, ներսեսը այլևս հարկավոր չէր Պասկևիչին և սա հայտնեց Պետերբուրգի կառավարութիւն:

թե ներսեսը վատահալի անձնավորութիւնն չէ, թե նրան Կովկասում պահելը ավելորդ է, վտանգավոր:

Հերոսի այս ցանկութիւնն էլ անտես չարվեց Պետերբուրգում: Երմուլովի պես մի մարդուն Պասկևիչի քմահաճութեանը զոհ բերելուց հետո առանձին մի դժվարութիւն չէր ներսեսին զոհելը, թեև դա հայ հոգևորականութեան ամենակշանավոր, ազդեցիկ ներկայացուցիչն էր: Եվ ահա ներսեսը հրաման ստացավ անմիջապես գնալ Քիշինև և ստանալ Բեսարաբիայի առաջնորդի պաշտոնը: Կա մի պատվավոր աքսոր էր: Ներսեսի դեմ դժգոհութիւն ունեցողները, իսկ պրանց թիվը փոքր չէր, գլուխ բարձրացրին, տոնում էին իրանց հաղթանակը:

1828 թվականի ամառը ներսեսը թիֆլիսումն էր. այստեղ միայն երկու ամիս կարողացավ մնալ: Նա դեռ չգիտեր, թե պետք է պաշտոնով մնա Քիշինևում, կարծում էր, թե շուտով դարձյալ պիտի վերադառնա թիֆլիս, ուստի բերանացի կարգադրութիւններ արավ թեմական գործերի և իր դպրոցի մասին: Վերջինիս տնտեսական կառավարութիւնը նա հանձնեց էլի Գեորգ Արծրունուն և Շերմազանյանին, իսկ Ջրպետին նշանակեց տեսուչ և որովհետև սա շարունակ գանգատվում էր, թե Արծրունին չէ տալիս իր ամսական ոտճիկը, ներսեսը խնդրեց Արծրունուն այնպես վարվել Ջրպետի հետ, որ սա գանգատներ չանէ: Ուսումնարանի հոգսը ամենագլխավորն էր. պետք էր նրան պահպանել ներսեսի բացակայութեան ժամանակ: Իսկ թե որքան եռանդով էր Արծրունին կայած այդ գործին, ցույց է տալիս նրա հետևյալ գրութիւնը, որ ուղղված էր ներսեսին.

«Որովհետև Արթուրովի Ձեր յետ միջոց ժամանակի հեռանալոց էք քաղաքէս, դիտումն ծառայիդ յայտնեմ վասն վարժարանի եւ տպարանին: Արթուրովի Ձեր թո՛ղ որպէս եւ կամի օրինագրել, կանոնաւորէ զգործս եւ ղկացութիւնս վարժապետաց եւ որոշէ ղամենայն իրս կարելորս, ղի որպէս կախեալ կայ ի կամաց սրբոյ Տէրութեանդ: Յետ ամենայնի՝ արժան համարեմ քացայայտել եթե կարելի եւ օգտակար համարես, ընտրեա՛ ղերկուս կամ ղերիս անձինս հայրենասէրս՝ որք լինիցին վէթիլ, այսինքն վերատեսուչ ամենայն գործոց վարժարանի եւ տպարանի՝ թէ եկամտից եւ թէ ծախսից եւ յայլ ամենայն իրս, զորս լինի օգտակար եւ պայծառացուցիչ վարժարանի եւ ազգիս:»

Ներսեսը, սակայն, բավականացավ իր բերանացի կարգադրութիւններով և շտապեց ճանապարհ ընկնել դեպի Ռուսաստան: Բավական էր նրա հեռակալը, և թիֆլիսում սկսեցին ղանազան տեսակ լուրեր պատել: Ներսեսը աքսորված է, շուտով կաքսորվեն և նրա բարեկամներն ու կողմնակիցները, որոնց անունները գաղտնի արձանագրված են ոստիկանութեան մեջ: Ահա ինչ էին խոսում թիֆլիսում. և սարսափը գնալով սաստկանում էր: Դպրոցի ուսուցիչները երկյուղից հրաժարվեցին իրանց պաշտոններից. Արծրունին և Շերմազանյանն օտարված էին միառժամանակ հեռանալ դպրոցից, որովհետև լուրեր էին տարածվել, թե նրանց էլ շուտով պիտի սև կառքի մեջ նստեցնեն և արսորեն: Դպրոցը փակվեց, 400-ի շափ աշակերտները արձակվեցան և ցրվեցին:

Քաջբայվում էր ներսեսի ձեռակերտը: Բարեբախտաբար շուտով հայտնի դարձավ, որ սարսափահար լուրերը սուտ են: Ներսեսի սակավաթիվ բարեկամները նորից շունչ են քաշում և նրանց առաջին գործն է լինում վերակենդանացնել սուտ լուրերի պատճառով փակված հիմնարկութիւնները՝ դպրոցը և տպարանը: Նրանք դիմում են Գեորգ Արծրունուն և վերջինս մի ժողով է կազմում Ջրպետի մասու: Այդտեղ Արծրունին հանձն է անում գործերի ղեկավարը դառնալ և առաջարկում է միաբան գործողութեամբ խնամել երեսի

վրա ընկած գործերը: Երեք հանգամանք կային, որոնք, ինչպես գրում էր Արծրունին Ներսեսին, հարկադրեցին նրան առաջ անցնել և աշխատանք շինասյու, առաջինը Ներսեսի պայծառ անունն էր, երկրորդը՝ աշակերտների ցրվելն էր և դպրոցի ու տպարանի փակվելը, իսկ երրորդն այն էր, որ նա ինքն էլ երախտիք ուներ դպրոցի վրա: «Այս պատճառով, ասում է նա, ես շարժվեցա բարի նախանձից և դեպի իմ հայրենիքն ունեցած ջերմեռանդությունից, որ չէ թույլ տալիս ինձ բարի, աղօղոտ գործերի վերաբերմամբ անհոգացող լինել, որքան կենդանի եմ»:

Եվ իրավ, Գեորգ Արծրունու եռանդուն գործունեության շնորհիվ Ներսիսյան դպրոցը նորից կենդանանում է: Արծրունին իր վրա է վերցնում դպրոցի և տպարանի տնտեսական կառավարությունը և համաձայնվում է ամեն օր մի ժամ գնալ դպրոցը և վերահասու լինել գործերին: Այլամդարյանը նորից ստանձնում է ուսումնական մասի կառավարությունը: Եվ այսպիսով դպրոցը, մոտ 20 օր փակ մնալուց հետո, վերաբացվում է օգոստոսի 27-ին: Արծրունու գործունեության մասին Այլամդարյանը այսպիսի վկայություն էր տալիս Ներսեսին գրած իր նամակում. «Աղա Գեորգ Արծրունին, այդ ազնվական մարդը, մի շտեմնված ջերմեռանդությամբ աշխատում է բարեկարգել ուսումնարանի ներքին և արտաքին կառավարությունը»:

Գոհ և բավական էին ուսումնարանին և տպարանին նվիրված այդ մի քանի մարդիկ: Բայց խաղաղ ու համերաշխ գործունեությունը երկար չտևեց. Ներսեսի թշնամիները քնած չէին: Զրավականանալով, որ այդ անձնվեր գործիչը հեռացված էր թիֆլիսից և Կովկասից, թշնամիները, որոնք բաղկացած էին, իհարկե, թե աշխարհական և հոգևորական հայերից, ոչինչ ջանք չէին խնայում, որ վնասեն Ներսեսի բարեկամներին, և դրանով ոչնչացնեն Ներսեսի անվանն այնքան պատիվ բերող հիմնարկությունները:

Սև նախանձը, շարակամությունը, հայի դժբախտության այս շար հրեշտակները, դրդեցին այդ թշնամիներին շահագործել Պասկևիչի ունեցած ատելությունը Ներսեսի դեմ: Նրանք շարունակ գրգռում էին գոռոզ և ամբարիշտ Պասկևիչին այն երեք-չորս անձինքների դեմ, որոնք Ներսեսի գործերի և գաղափարների արթուն պահապաններն էին: Եվ այդ բանը հաջողվեց նրանց: Այլամդարյանի, Գեորգ Արծրունու և սրանց երկու ընկերակիցների դեմ խիստ հալածանքներ սկսվեցան: Այլամդարյանն ու Արծրունին ոստիկանական հսկողության ենթարկվեցին: Շուտով Ներսեսի թշնամիները մի նոր դաշնակից էլ դտան: Եվ դա ուրիշ ոչ ոք չէր, եթե ոչ Հակոբ Շահան-Ջրպետը, այն մարդը, որ այնքան բարեբարություններ էր տեսել Ներսեսից...

Ներսիսյան դպրոցին Ջրպետը կպել էր պարադիտի պես: Ստանալով, շնայած դպրոցի դրամական նեղ դրության, բավական մեծ ոտճիկ, վայելելով թիֆլիսում մեծամեծ պատիվներ, այդ «գիտնականը» համարյա ոչինչ չէր ցույց տալիս. նրա գործն էր շարունակ գանդատվել, թե քիչ է ստանում կամ ժամանակին չէ ստանում ոտճիկը: Գեորգ Արծրունին, Ներսեսի աքսորից հետո դառնալով դպրոցի գլխավոր ղեկավարը, շատ դեպքերում էր զգալ տալիս Ջրպետին, որ նա իր ստացածի և համբավի չափ արդյունք չէ ցույց տալիս: Այդ արդեն բավական էր, որ եղեսացի հայր գլխավոր Ներսեսի թշնամիների գիրկը: Եվ նա, շարունակելով ապրել դպրոցի շինության մեջ, ստանալով ոտճիկ, դառնում է Պասկևիչի և նրա հովանու տակ աշխատող թշնամիների գործիք: Սակայն Արծրունին այնքան թույլ ու խեղճ մարդ չէր, որ անտարբեր ու լուռ մնար այդ պիսի ստոր արարքի դիմաց. նա խոշոր ընդհարում ունեցավ Ջրպետի հետ, որին շուտով արձակեցին դպրոցի տեսչությունից:

Կոնվեր սաստկացավ: Ջրպետը ցույց տվեց իր հոգու ամբողջ տգեղությունը. նա շարունակում էր ապրել դպրոցի շինության մեջ, ոտճիկ ստանալով այդպես, Ներսեսի մտերիմները, ազդեցիկ և հարուստ Գեորգ աղայի ղեկավարությամբ, ստիպված էին մի կողմից պաշտպանվել հակառակորդների պղծելի մասնություններից, մյուս կողմից պատժել Ջրպետի նման մարդկանց: Բայց երկու մրցակից կողմերի ուժերը խիստ անհավասար էին: Պասկևիչի մարդիկ իրանց կողմն ունեին իշխանությունը, մինչդեռ Ներսեսի մարդիկ ոչ մի պաշտպան չունեին և պաշարված էին սաստիկ երկյուղից:

«Գիշերները, — կարդում ենք Ներսիսյան դպրոցի պատմության մեջ, — վաղի պարսպի շուրջը ծպտյալ ոստիկաններ էին պտտում և դիտում, թե ով է գալիս-գնում Առաջնորդարան, ուր բնակվում էին Սիմեոն արքեպիսկոպոսը և Այլամդարյանը: Սոցա գրած կամ հանուն սոցա եղած նամակները փոստում բռնվում էին»:

Գեորգ Արծրունին և Շերմազանյանը վախենում էին տանից դուրս գալ, բայց շարունակում էին գործել հօգուտ դպրոցի: Արծրունին նամակներ էր գրում Ներսեսին, տեղեկություններ էր հաղորդում նրան:

Օգտվելով այդ սարսափահար-գրությունից, Ջրպետը կամեցավ մի անգամ էլ հարստահարել այն դպրոցը, որ դժբախտություն էր ունեցել նրան Փարիզից հրավիրելու այն հույսով, թե օգուտ պիտի տեսնե նրանից: Գպրոցը տվել էր նրա ճանապարհածախսը Փարիզից թիֆլիս, այժմ Ջրպետը կարծում էր, որ դարձյալ դպրոցը պիտի տա ճանապարհի ծախսը՝ թիֆլիսից Փարիզ գնալու համար: Պասկևիչի միջոցով նա այդպիսի պահանջ արեց դպրոցից: Ահա ինչ էր գրում Գեորգ Արծրունին Ներսեսին. «Յայտնեմ վերջին յուսահատությունից, դի պատվելի Ջրպետն, ըստ յորդորից Բաստամովին եւ այլ բանի մի իւր նման բարի անձանց, Աւագ երեքշաբթի, այսինքն Չարչարանաց յարաթի, համեմատեալ իւր նախորդին², խնդիր է մատուցեալ գրաֆին Նրեւա-նայ³ գանդատանս ի վերայ սրբազնութեանց, Սիմեոն արքեպիսկոպոսին, եւս տոսովել ի վերայ Յարութիւն վարդապետին⁴ եւ ծառայիդ: Բացի ամենայն գոեգատից, նա պահանջէ զիւր ոտճիկ ըստ կամաց իւրոց... եւ ի Գաղղիոյ բնակալ գրեանք եւ այլ ինչ վասն վարժարանին — գինն նոցա, պահանջէ նաեւ գալստեան եւ գնալոյ ճանապարհի ծախսն եւ ասէ թէ «Ես երեք տարի ծախանակաւ եկեալ եմ եւ պարտիմ գնալ ժամանակին իմոյ ծառայութեանս ի Փարիս եւ թէ հաշիւ տեսանելոց եմք»:

Ի դուր դպրոցի վարչությունը ապացուցանում էր, որ Ջրպետը ստանալի չունի, որ նա նույնիսկ ավելի է ստացել քան հարկավոր էր: Թիֆլիսի նախկին Ջրպետը հարկադրեց տալ ճանապարհածախս, և դպրոցը 1250 ու տվեց, բայց դրա փոխարեն գոնե այն օգուտն ունեցավ, որ պահանջեց Ջրպետից հեռանալ իր շինությունից: Այդպես էլ եղավ. Ջրպետը մոռացավ Փարիզ գնալը, մնաց թիֆլիսում և երկար ժամանակ կատարում էր իր դերը Պասկևիչի մոտ: Թիֆլիսում էլ մեռավ նա:

Ահա այս տեսակ ծանր հանգամանքների մեջ էին Ներսեսի չորս մտերիմները պահպանում Ներսիսյան դպրոցի գոյությունը: Հալածանքները, մատնությունները չէին վախեցնում գրանց: 1829 թվականի հուլիսին Գեորգ Արծրու-

¹ Երեցյան, «Պատմ. ներսիսյան դպրոցի», եր. 175:

² Ակնարկում է Հուզային:

³ Պասկևիչ:

⁴ Ներսես Այլամդարյանին վարդապետական կոչում էր տվել:

նին հայտնում էր ներսեսին, որ դպրոցի համար նոր կալված են առել: Իր հորձվանքը այդ առիթով նա հայտնում էր այսպիսի խոսքերով. «Արքայուն Տեր, այնքան ուրախ եմ, որ համարիմ իբրև սևիական կալված իմ»: Գործողների այսպիսի անկեղծ ոգևորությունն էր պատճառը, որ ներսեսի ուսումնարանը նույնիսկ այդ տեսակ հանգամանքների մեջ, բարեկարգվեց, սկսեց կանոնավոր կյանք վարել: Եվ այսպես շարունակվեց մինչև 1830-ի ամառը, երբ խոյերան վերջ դրեց Արծրունու կյանքին, իսկ Ալամդարյանին Պասկեֆը հեռացնել տվեց Քիֆլիսից: Դպրոցը առժամանակ փակվեց:

Պետք է ասել, որ վերջերում Արծրունու և Ալամդարյանի մեջ էլ գծտություններ ծագեցին: Եթե Արծրունին համառ, իր ասածի մարդ էր, Ալամդարյանն էլ պակաս չէր նրանից իր բնավորության պակասավոր կողմերով: Բայց կա այն հանգամանքը, որ այդ գծտություններից չվնասվեց դպրոցը, ընդհակառակն, Արծրունին, ինչպես երևում է մահից երեք-չորս ամիս առաջ նախկին կաթողիկոսին գրած իր մի նամակից, խոստովանում էր Ալամդարյանի արժանավորությունները, խնդրում էր վարձատրել նրան և թույլ չտալ, որ նա հեռանա գործերից, որովհետև, ասում էր նա, չկա այնպիսի անձն, որ կատավար է զամենայն, և ուրեմն մնալ մեզ հետ հայրենասիրացս ապարդիւն այսքան վաստակարեկութիւն՝ մանավանդ յայս ոսկեդար ժամանակիս... և մեք լինիմք անպիտան և ծաղր ի մէջ ամենայն ազգացս:

Մեր պատմածներից արդեն շատ պարզ երևաց, թե որքան վառ էր հայրենասիրությունը Գեորգ Արծրունու մեջ և որքան շատ էր նա լցված բարի ցանկություններով դեպի իր ազգը: Ավելացնենք մի երկու փաստ էլ:

1824 թվականին Քիֆլիսում էր գտնվում վանեցի վաճառական Մահտեսի Գասպար Չարուխչանցը. նա ամուսնացած չէր և լավ կարողություն ուներ Արծրունին, տեսնելով, որ իր հայրենակիցը հափշտակված է ներսեսի գործերով, համոզում է նրան բարեգործական կտակ կազմել: Չարուխչանցը համաձայնվում է և իր կտակի մեջ, ի միջի այլոց, 4600 ուրլի է հատկացնում ներսեսյան դպրոցին, որպեսզի այդ գումարով գրքեր տպագրվեն նրա տպարանում: Կտակակատարներ նշանակվեցան ներսեսը, Արծրունին, Շերմաղանյանը: 1826 թվին կտակակատարները տպագրեցին այդ փողով Չամչյանի մեծ քերականությունը: Վերջապես հիշենք և այն, որ Արծրունին, ներսեսի մյուս բարեկամներին հետ, 10.000 ուրլի հավաքեց և ուղարկեց էջմիածին՝ վանքի պարտքերը տալու համար:

Եվ այսպես, վանի դժբախտ իրականությունից դուրս եկած այդ վաճառական մարդը, որ մի առանձին գիտություն չէր ստացել և իր մասին ասում էր, թե չունի «գրականական գիտություն», բնատուր խելքով այնքան լավ բերքնում է ժամանակի պահանջները, ժողովրդի կարիքները, որ քաջությունով կանգնում է իր ժամանակի փոքրաթիվ առաջավոր մարդկանց շարքում և մի զարմանալի սիրով կապվելով ներսեսի նման փայլուն գործիչի հետ, նրա գրողական տակ կռիվ էր մղում խավար ուժերի դեմ հանուն իր ազգի առաջադիմության:

Այժմ տեսնենք, թե ուրիշ ինչ բաներով անուն հանեց Արծրունին և որոնք են նրա մատուցած ծառայությունները, որոնց մասին ակնարկում էր Նրմուլովը իր թղթերի մեջ:

Քիֆլիս գալուց հետո Գեորգ աղան սկսում է կալվածներ առնել: Ամենից առաջ, այն է՝ 1818-ին նա գնում է իշխան Օրբելյանովների այգու մի մասը 1700 ուրլով: Դա այն կալվածն է, ուր ապագայում շինվեց Արծրունու հայտնի գալերեան: Գեորգը այդտեղի վրա մեծ ուշադրություն չդարձրեց: Նրա միտքը

էր կառուցանել մի մեծ առևտրական կարավանսարայ: Քիֆլիսի առևտուրն այն ժամանակներում կենտրոնացած էր Միոնի եկեղեցու մոտերքում: Այդտեղ, Քուսի ափին, ուսաց եկեղեցական վարչությունն ուներ մի հին, ավերակ կարավանսարայ: Վրաստանի էկզարխը ձեռնտու համարեց ծախել այդ կալվածը. անուրդ նշանակվեց 1821 թվականին և ամենաբարձր գինը՝ 20.000 ուրլի, առաջարկեց Գեորգ Արծրունին: Անմիջապես նա սկսեց կառուցանել այդ ընդարձակ հողի վրա մի մեծ, հույակապ կարավանսարայ, որ հույակեց նրա անունը և դարձավ Քիֆլիսի ամենանշանավոր զարգերից մեկը: Գեներալ Երմուլովը առանձին հոգս էր տանում ավերակ և աղքատ Քիֆլիսը շինացնելու, զարգարելու մասին. Արծրունու պես կարող, ունևոր մարդուն նա ամեն կերպ խրախուսեց այդ ձեռնարկությունը առաջ տանելու համար և, ինչպես տեսանք, հենց այդ նպատակով էլ նա միջնորդեց, որ Արծրունուն ազնվական կոչում տրվի, ի նկատի առնելով այն, որ նա քաղաքին օգուտներ է տալիս:

Կարավանսարայի շինությունը ցույց է տալիս, թե ինչպես կազմվեց Գեորգ աղայի ժողովրդական հույակը Քիֆլիսում, միևնույն ժամանակ դուրս է բերում նրա բնավորության մի քանի տիպական գծերը: Ուստի ավելորդ չպիտի լինի մի քանի մանրամասնություններ առաջ բերելը:

Ահագին շինությունը Արծրունին սկսեց առանց ճարտարապետի, իր ծրագրած մակարդակով: Պատմում են, որ Վրաստանը երկու անգամ տարել է ջրի կողմից բարձրացրած պատը, բայց Արծրունին, իր դործը լավ հասկացող մարդու հաստատակամությամբ, շիտոց իր ծրագրերը և երրորդ անգամ սկսեց գեոլոգի րուդեր բարձրացնել: Այդ աշխատություններին Քիֆլիսը նայում էր դարմանքով. մի կողմից նա համոզվում էր, որ Գեորգ աղան իր ասածի մարդ է. արգելքների առաջ կանգ չի առնում, մյուս կողմից առասպելներ էր հորինում նրա հարստության մասին: «Գեորգ աղի օսկիքը դիժ Քոնին էլ խելքացրին», ասում էր ժողովուրդը: Կուր տարածվեց, որ եթե գետն այլևս չի կարողանում քանդել պատերը, դրա պատճառն այն է, որ բուրգերի մեջ ոսկով չի պարկեր և դարսել Գեորգ աղան: Գտնվեցան նույնիսկ այդ ոսկու պարկերին տիրանալ ցանկացողներ. գետի մյուս ափից նավակներով մոտեցան նոր շինության պատերին, սկսեցին ծակծակել պատերը, բայց շուտ թողեցին, համոզվելով, որ ոսկու պարկերը պահող պատերը շատ են ամուր:

Պատմում են և հետևյալ բնորոշ դեպքը: Արծրունին շատ հավանում էր արմնաղիր Կիկոլիին, որ շատ լավ հասկանում էր շինության գործը և հենց այդ պատճառով էլ նոր շինվող կարավանսարայի վրա հսկում էր իբրև Արծրունու օգնական: Մի օր, ասում են, հմուտ վարպետը և կալվածատերը իրար մետ վեճի բռնվեցին, կռվեցին. Կիկոլին գտնում էր, որ Գեորգ աղան սխալ է հասկանում և շինությունը պետք է շարունակել այնպես, ինչպես ինքն է ասում: «Քանի որ ասածս չես հավանում, արա քո իմացածը, տեսնենք ինչ դուրս կգա», — ասաց Արծրունին, խռովեց, տուն գնաց և բարկությունից հիվանդացավ: Կիկոլին շարունակեց ինչպես ինքը գիտեր: Անցավ երկու ամիս. Արծրունին չէր գնում տեսնելու շինությունը, բայց տալիս էր բոլոր ծախսերը: Վերջապես, երբ Կիկոլին արել պրծել էր իր իմացածը, Գեորգ աղան գնաց տեսավ նրա գործը, շատ հավանեց, համբուրեց հմուտ արհեստավորին, մինչև իսկ լինձա տվեց նրան: Բայց մյուս օրը հրամայեց քանդել Կիկոլիի շինածը և սկսել այնպես, ինչպես ինքն էր ասում: «Սա տեսա քո շինածը և հավանեցի, հիմա կուզեմ, որ դու տեսնես իմ շինածը», — ասաց նա վարպետին: Ուժեղ կամքի տեր Արծրունին, որ հավատում էր իրան, զգում էր, որ ինքն էլ լավ գիտե,

հասկանում է, ոչինչ համարեց մեծ ծախսերը, որպեսզի ցույց տա որմնադիր կիկլոլին, թե ինքը իզուր չէ իր ասածի մարդ:

Այս հատկությունը, ինչպես կասեմենք մեր այս գործի ընթացքում, ժառանգական էր Արծրունիների տոհմի մեջ: Գեորգ աղան այնպիսի մարդկանցից չէր, որոնք մի բան դնում են մտքում և չեն կատարում. դա մի սովորյալ մարդ էր, որ հետևում էր իր հաստատ կամքին և անպատճառ հասնում էր իր նպատակին: Ծիտակ բնավորություն ուներ, ատում էր սուտը, չէր սիրում ընկերությունների և խնջույքների մեջ ժամանակ անցկացնել, պարապ մարդկանց հետ զվարճախոսություն անելու սովորությունը չուներ: Ներսեսի գործերում նրա կատարած դերը արդեն մի շատ լավ ասպացույց է, թե որքան նա հաստատ, անդրդիլի էր իր համոզմունքների մեջ: Ում մի անգամից չէր սիրում, նրան երբեք իր մոտ չէր թողնում և երբեք չէր ներում նրա արած սխալը: Առատաձեռն մարդ էր, սիրում էր օգնել կարոտներին, բայց գիտեր հաշիվ պահանջել իր տված օգնության մասին և սաստիկ բարկանում էր, երբ իրան խաբված էր տեսնում: Սաստիկ ինքնահավանությունը խիզախություն էր տալիս նրան. նա չէր սիրում հակաճառություն, կամենում էր, որ իր ասածը կատարվի:

Վանեցի վաճառականի այս ինքնուրույն, ամբողջացրած բնավորությունը հանեց նրան սովորական, առօրյա մարդկանց շրջանից և կատարել տվեց նրան բավական նշանավոր հասարակական դեր, որքան այդ հնարավոր էր այն ժամանակներում մի վաճառականի համար: Մնում է ավելացնել այդ նշանավոր մարդու հատկությունների վրա և նրա սաստիկ զբաղմունքները:

Տեսանք, որ զեռ Վանում, երիտասարդության օրերում, նա կամենում էր նվիրվել գրականության: Տեսանք նույնպես, որ այդ գրասիրության արդյունքն էր ներսիսյան դպրոցի համար Ամատերդամի տպարանի դնելը: Բայց Գեորգ Արծրունին միայն ուրիշներին չէր խրախուսում գրականությանը պարապելու, նա ինքն էլ ուներ գրելու, հեղինակելու շնորհ: Մահվան տարին, 1830-ին, ներսիսյան դպրոցի տպարանից լույս տեսավ նրա մի աշխատությունը հետևյալ վերնագրով. «Գարաստան խրատուց, քաղեալ ի գրոց իմաստասիրաց շանիւք Ազնուական Գեորգայ Արծրունեոյ ի վայելա Մանկանց Հայաստանի»:

Առաջարանի մեջ Գեորգ աղան խոստովանում է, որ շունի այնքան գրական գիտություն, որ կարողանա իրանից մի գիրք հեղինակել, ուստի հավաքեց հին փիլիսոփաների գրվածքներից զանազան օգտակար խրատներ և ահա նվիրում է դրանց ժողովրդի ընթերցողներին: Հետաքրքրական է, որ Արծրունին իր այդ աշխատությունը հրատարակել է ոչ թե իհարկե, գիտնականների համար, այլ «նորուսումն մանուկների և ուրիշ շատ թերավարժ հայրենակիցների համար»: Արդեն այդ ժողովածուն ցույց է տալիս, թե Գեորգ աղան որքան շատ կարդացած մարդ էր և ինչպես կարողանում էր լավ ընտրություն անել իր կարդացածներից: «Գարաստան խրատուցը» խոսում է մարդկային պարտավորությունների մասին, բերում է օրինակներ հին մեծ մարդկանց կյանքի: Արծրունին այդ կտորները մեծ մասամբ արտագրել է զանազան գրքերից (օրինակ, Թեսալոսի «Իմաստասիրություններից»), այնպես որ մեզ չպիտի զարմացնե նրա ժողովածուի ողորկ, վարժ գրաբարը, մինչդեռ Արծրունին, ինչպես երևում է նրա նամակներից, քաջ հայկաբան լինելուց շատ հեռու էր:

Վերջաբանության մեջ Գեորգ աղան ասում է, որ իրան պետք է անվանել ոչ թե գրագետ, այլ գրասեր: Եթե, ասում է նա, մի բոլորովին անուս մարդ, որ բացի դրանից տարիքով էլ է, հանձն է առնում հրատարակել մի այդպիսի

իմաստասիրական գիրք, դրա պատճառն այն է, որ նա կամենում է բարի նախանձ գրգռել, օրինակ հանդիսանալ ավելի կարող մարդկանց համար: Գանդատվում է, որ հայերի մեջ արհամարհված է ուսումը և «մեր ազգի մեջ ուսանողների թիվը շատ նոսր է». ծնողները, կուրորեն խաբվելով մասնավոր շահերից, որ ձեռք են բերում նրանց որդիները անարգ աշխատանքով, զրկում են նրանց ուսման բարիքից:

«Գարաստան խրատուցը» այն միակ գիրքը չէր, որ պատրաստել էր Գեորգ Արծրունին: Նա ուներ և երեք հատորից բաղկացած մի պատմություն, որի մեջ կար Հայաստանի և Վասպուրականի, ինչպես նաև Ասորեստանի անձանոթ գավառների քարտեզը. բացի դրանից, այդ հեղինակության մեջ մտնում էին և Արծրունու ճանապարհորդությունները և նա խոստանում էր այդտեղ տալ իր տեսած տեղերի և բնակիչների նկարագրությունը: Այս հեղինակությունը, որ անշուշտ, հետաքրքրական պիտի լիներ, Արծրունին չկարողացավ տպագրել տալ. պատճառը Ալամդարյանի հետ ունեցած գժտություններն էին: Ինքը՝ Ալամդարյանը ներսեսին տված իր զեկուցագրի մեջ ասում է, որ Արծրունին կամենում էր «Գարաստանից» հետո տպագրել իր կյանքի պատմությունը և էր աննպարհորդությունը, բայց այդ բանը շնույլատրվեց նրան: Երևի հենց այդ արգելքն էր այնքան բարկացրել Արծրունուն, որ նա հետ վերցրեց իր տպարանի մայրերի մի փոքրիկ մասը, որ և մնաց նրա տանը:

1830 թվականի ամառը Թիֆլիսում տարածվեց խուլերա հիվանդությունը, որ մեծ կոտորածներ արավ: Քաղաքը դատարկվեց, բնակիչները փախան շրջակա լեռնային գյուղերը: Ալամդարյանը փակեց ներսիսյան դպրոցը և Հաղպատի վրայով ճանապարհվեց էջմիածին: Գեորգ Արծրունին շուրջ հեռանալ Թիֆլիսից. ապահովության համար նա բնակվեց իր կարավանսարայի ներքին տարի մի սենյակում, որի պատուհանները բացվում էին Քուռ գետի վրա: Բայց այստեղ էլ վրա հասավ խուլերան: Օդոստոսի 6-ին Արծրունին հիվանդացավ և մի քանի ժամից հետո մեռավ խուլերայից, Թիֆլիսում այդ ժամանակ միայն նրա կինն էր գտնվում: Նրա միակ որդի Երեմիան, որ զինվորական ծառայության մեջ էր, այդ միջոցում ռուսաց դեսպան իշխան Գուգորովի հետ զնացել էր Թեհրան, որտեղից նա վերադարձավ նույն տարվա վերջերում միայն:

Գեորգ Արծրունու մահը զգալի կորուստ էր հայերի համար: Ներսեսը իր թղթերի մեջ անվանում էր նրան «հարազատն հայրենի ազգի և մեր», «հայրենասեր» և այլն: Երևանի նահանգապետ իշխան Վասիլ Բեհրությունը, որ ներսեսի, հետևաբար և Արծրունու հակառակորդն էր, 1830 թվականի հոկտեմբերին Պասկևիչին գրած իր մի թղթի մեջ, հիշատակելով այն խնդրագիրը, որ արգրվել էին Թիֆլիսի հայրերը Եփրեմ կաթողիկոսին՝ Ալամդարյանին եպիսկոպոս ձեռնադրելու մասին, ասում է հեզնական ձևով. «Այդ գրության մեջ վճարար հայտնում են, որ Թիֆլիսում հայոց ազգի զարգը միայն կրկու մարդ են եղել՝ Գեորգ Արծրունին և Ալամդարյան վարդապետը: Առաջինի (Արծրունու) մահով քանդվեցին Թիֆլիսի հայոց ապագա բարօրության հույսերը և երանք տրամության մեջ ընկղմվեցան»:

Որքան էլ թշնամական հեզնությունը խտացրած լինի այս թղթի մեջ Արծրունու հատկացրած նշանակությունը, անհերքելի պիտի մնա, որ Թիֆլիսի հայ հասարակությունը, իրավ, անկեղծ ցառվ զգաց, զրկվելով Գեորգ Արծրունու զին մի սրտացավ, բարյացակամ և գործունյա անդամից:

Երեմիա Արծրունի: Հայրական կտակ, մայրական ժառանգություն: Յուրացի ծառայության: Մոսկվայում բնակություն հաստատելը: Ընտանիք: Գրիգորի ծնունդը: Կալվածական գործեր. կարավանսարայի հրդեհը: Վերադարձ թիֆլիս: Երևաբարական մեծ ձեռնարկություններ. գալլերեա: Դատաստանական գործեր: Հասարակական գործունեություն. ներսիսյան դպրոց, Թիֆլիսի Լուսավարչություն: Երկաթուղի մինչև Հնդկաստան: Երեմիայի բնավորությունը: Ընտանեկան կյանք: Երեխաների կրթությունը: Գրիգոր և Անդրեաս Արծրունիներ նրանց ուսումը թիֆլիսում:

Երեմիա Արծրունին, ինչպես տեսանք, ինը տարեկան էր, երբ հոր հետ տեղափոխվեց թիֆլիս: Գեորգ աղան, իհարկե, հոգ տարավ իր միակ արագ զավակի և ժառանգի կրթության մասին: Երեմիան լավ գիտեր հայերենը. հայրը տվեց նրան թիֆլիսի ազնվականների դպրոցը, ապա ուղարկեց Պետերբուրգ, ուր նա, ինչպես վայել էր հարուստ և ազնվական մի երիտասարդի, մտավ գինվորական դպրոց: Այստեղից նա անցավ Գվարդիայի հեծելազորքը և 1826-ին ստացավ օֆիցերական առաջին աստիճանը, որից հետո տեղափոխվեց Կովկաս:

Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ կորսնետ Արծրունին մասնակցություն ունեցավ Սարդարապատի, Աբասապատի և Երևանի կռիվների մեջ 1828 թվին նա կռվում էր ռուս զորքերի շարքում իր նախկին հայրենիքի, օսմանյան պետության դեմ, բայց այս անգամ ոչ թե Կովկասում, այլ Դոնայի բանակում: 1829-ին իշխան Դուրդուրովը Պարսկաստան դեսպան ուղարկվեց խաղաղության դաշնագիր կնքելու համար. նրա սվիտայի մեջ էր Երեմիա Արծրունին, որ ներկա էր Թուրքմենչայի դաշնագրության, ապա ներկայացավ պարսից շահին Համադանում: Երբ նա վերադարձավ Պարսկաստանից, Գեորգ աղան, ինչպես գիտենք, արդեն վախճանված էր:

Դառնալով հարուստ կալվածատեր, Երեմիա Արծրունին շթողեց զինվորական ծառայությունը, որ չէր արգելում նրան անձնատուր լինել տնային գործերին: Իր հոր պես նա էլ ուներ շինարարական տաղանդ, բայց գերազանցեց նրան խոշոր ու բարդ ծրագրեր կազմելու և նրանցով երկար զբաղվելու տարօրինակ հակումներով, որոնք ապագայում այնքան քայքայեցին նրա գործերը:

Գեորգ Արծրունին թողել էր կտակ, որի մեջ իր հեռատեսությունն ու գործնական խելքն էր ցույց տվել: Նա ուներ երկու կալված, որոնցից մեկը քաղաքի հին մասում, մյուսը նոր մասում: Դրանք հավասար արժողություն չունեին և կարող էին ժառանգների համար անհամաձայնությունների պատճառ դառնալ: Ուստի Գեորգը կտակում էր իր ժառանգներին երբեք չծախել այդ կալվածները շքաժանել: Կարավանսարան և փոխարքայի տան մոտ գտնվող տունը միջոցառումի անվանվեին Գեորգ Արծրունու կալվածներ, իսկ նրանցից ստացվող եկամուտները միայն կարելի էր բաժանել ժառանգների մեջ: Առանձնապես Գեորգ Արծրունին պարտավորեցնում էր իր ժառանգներին մնալ հայ լուսավորչական¹:

Հայրական կալվածների վրա ավելացավ և մայրական ժառանգությունը:

¹ Այս տեղեկությունները մենք հանում ենք Երեմիա Արծրունու կտակից, որ գրված է 1827 թվին:

Թեև այս վերջինից Արծրունիները երբեք օգուտ չստացան: 1833-ին Երեմիան պաշտոնապես վաճառեց իր մորից նրա բոլոր իրավունքները Վասպուրականում մնացած Պաշավյան-Արծրունիների կալվածների վրա: Դրանց մասին մենք տեղեկություններ տվինք վերևում: Եվ եթե հիշատակում ենք այստեղ նորից, պատճառն այն է, որ Երեմիան այդ հեռավոր մեծ կալվածների համար էլ սկսեց դատ, մեկը այն երկարատև, մեծ և սպարդյուն դատերից, որոնք նրա ամբողջ ուշադրությունն էին գրավում և միայն մեծամեծ ծախսեր էին պատճառում:

Համարձակ, ձեռնարկող ոգու տեր էր Երեմիան: Հոր ժառանգությունը ստանալուց հետո նա իր մտածմունքների առարկա է դարձնում այդ կալվածները մեծացնելը: 1832 թվին նա կարավանսարայի վրա շորթորդ հարկը ավելացրեց և մի քանի այլ շինություններ: Եվ միևնույն ժամանակ նա մասնակցում էր լեռնաբնականների դեմ սկսված մի պատերազմական արշավանքին: Առանձին սեր ունենալով դեպի ֆինանսական և առևտրական հարցերը, Երեմիան, շարունակելով մնալ գինվորական ծառայության մեջ, 1836-ին փոխվեց անգլիական աստիճանով փոխվեց ֆինանսների մինիստրությունը: Պարսկաստանում եղած ժամանակ նա լավ ուսումնասիրել էր այդ երկրի դիրքը և տեղական հանգամանքները, ուստի ստացավ ֆինանսների մինիստրից հանձնարարություն հետազոտել Կովկասի առևտուրը Պարսկաստանի հետ: Միաժամանակ նրան հանձնվեց Անդրկովկասի բոլոր մաքսատների գլխավոր կառավարությունը:

Պետական ծառայությունը չէր խանգարում նրան կազմել մեծամեծ ծրագրեր: Այսպես, 1838-ին նա մի քանի թիֆլիսեցի վաճառականների հետ կազմում է մի մեծ առևտրական ընկերություն, որի նպատակն էր տարածել ռուսաց ապրանքները Պարսկաստանի հյուսիսային կողմերում և փոխարենը դուրս բերել այդ տեղերից հում մթերքներ և մշակել նրանց ընկերության սեփական գործարաններում, որոնք պիտի շինվեին Կասպից ծովի ափերին: Այս պատճառով ընկերությունը խնդրում էր ռուսաց կառավարությանից տալ իրան կասպիական ափերում հազար դեսյատին հող: Ընկերության դրամագլուխը պիտի լիներ երկու միլիոն ռուբլի թղթադրամ: Բացի պարսկական առևտրից, ընկերությունը նպատակ ուներ շահագործելու Բաքվի և Շիրվանի նավթահանքերն ու աղի լճերը, ուստի և խնդրում էր, որ կառավարությունը կապալով իրան տա այդ բնական հարստությունները: Ընկերության ծրագրած գործունեությունը շատ կարևոր և ցանկալի երևաց կառավարության. կանոնադրությունը հաստատվեց նիկոլայ կայսրի կողմից, եղան սկզբնական ծախսեր, բայց ընկերությունը վերջ էր վերջո չկայացավ:

Հենց այդ ժամանակներում էլ, երեսնական թվականների վերջին, Երեմիա Արծրունին ստացավ գնդապետի աստիճան և նշանակվեց Կովկասյան բանակի գլխավոր ինտենդանտ: Այդ կարևոր պաշտոնի մեջ Արծրունին ցույց տվեց մի հազվագյուտ ազնվություն և անշահասիրություն: Պետական ահազան գումարների ծախսող այս հիմնարկության մեջ նա խիստ կարգ ու կանոն մտցրեց, գույքի ծառայողներին, հանդիսանալով գանձարանի շահերի անկաշառ պահպան. և այդպես նա կառավարեց մի քանի տարի, մինչև պաշտոնից հեռանալը:

Երեմիա նույն երեսնական թվականներին էր, որ Երեմիա Արծրունին ամուսնացավ իշխան Դավիթ Նազարյանի աղջկա հետ, որի անունն էր Ազրիպպինա: Նազարյան իշխանական տոհմի մասին հաստատ տեղեկություններ չկան. ենթադրվում է, որ նա Անդրկովկասից Ռուսաստան գաղթած հայ ընտանիքներից

մեկն էր: Կարևոր է նկատի ունենալ, որ թեև Գալիթ նազարյանը Ռուսաստանից թիֆլիս եկավ և այդտեղ բնակություն հաստատեց, բայց նրա տոհմը արդեն համարյա բոլորովին օտարացել էր: Նրա երկու որդիները Մոսկվայում ամուսնացել էին ռուս աղջիկների հետ և բոլորովին ռուսացան, ստանալով իշխան նազարով ազգանունը: Այդ ամուսնությունից Երեմիան ունեցավ, որքան հայտնի է, շորս աղա և շորս աղջիկ: Տղաներից անդրանիկն էր Գևորգը, որ մտավ զինվորական ծառայության մեջ և մեռավ երիտասարդ հասակում:

Քառասնական թվականների առաջին կեսում գնդապետ Արծրունին հրաժարվեց ծառայությունից և հեռանալով թիֆլիսից, բնակություն հաստատեց Մոսկվայում, երևի կնոջ պատճառով, որի եղբայրներն ու ուրիշ ազգականները այնտեղ էին ապրում: Այդտեղ Արծրունու ընտանիքը մնաց երկար, մինչև հիսնական թվականների համարյա վերջը: Հաստատվելով Ռուսաստանի մայրաքաղաքում, Արծրունին ստանում էր թիֆլիսի իր կալվածների արդյունքները և նրա ընտանիքը վարում էր արիստոկրատ դասակարգին հատուկ ճոխ կյանք, թեև ինքը՝ Արծրունին սիրում էր առանձնակեցությունը և ապրում էր, ինչպես գրում էր իր նամակներից մեկում, ճգնաժամի պես: Անշուշտ, Արծրունու տան արիստոկրատական շուք տվողը տիկին Ազրիպպինան էր, ծնյալ իշխանուհի նազարյան:

Ահա այդտեղ, Մոսկվայում, այդ արիստոկրատ ընտանիքի մեջ, 1845 թվի փետրվարի 27-ին ծնվում է Գրիգորը, իսկ 1847-ին նրա եղբայր Անդրեասը: Գրիգորը Երեմիա Արծրունու երրորդ արու զավակն էր. նրանից առաջ ծնվել էին վերահիշյալ Գևորգը, ապա Սարգիսը, որ նույնպես վախճանվեց պատանի հասակում:

Հայտնի է, թե ինչպես պիտի լիներ երեխաների դաստիարակությունը մի այդպիսի ընտանիքում: Ծնված օտար երկրի տակ, մի այնպիսի շրջանում, որ համարյա ոչինչ կապ չունի հայության հետ, երեխաները մեծանում էին օտար դաստիարակչուհիների ձեռքին, շրջապատված օտարազգի տնային ուսուցիչներով: Բուն Հայաստանից դուրս եկած, հայերենը, մանավանդ գրաբարը, շատ լավ իմացող Երեմիայի առաջին սերունդը արդեն միանգամայն օտարացած է: Ընտանիքի լեզուն ֆրանսերենն է. Գրիգոր Արծրունու առաջին նամակները (11—12 տարեկան հասակում) ֆրանսերեն են գրված: Ինքը՝ Երեմիան, որ որդի Գևորգի հետ նամակագրություն ուներ ռուսերեն լեզվով և այդ նամակների մեջ մենք մի հատ հայերեն բառի չենք հանդիպում: Ո՞վ կարող էր կարծել, թե հենց այդպիսի մի ընտանիքից պիտի դուրս գար այն մարդը, որ 27 տարի շարունակ պաշտպանեց արհամարհված մայրենի լեզվի դատը...

Երեխաների դաստիարակության պատկերը ավելի պարզելու համար ասենք և այն, որ Երեմիա Արծրունին վաղ զրկվեց իր ամուսնուց. Գրիգորը ութ-ինը տարեկան երեխա էր, երբ վախճանվեց նրա մայր Ազրիպպինան: Երեմիան նորից շամուսնացավ. նա աշխատում էր փոխարինել երեխաների մորը և այդ պատճառով միանգամայն նվիրվեց իր ընտանիքին: 1854 թվին, երբ սկսվեց Ղրիմի պատերազմը, Արծրունին Մոսկվայում ստացավ զինվորական մինիստրից հեռադիր, թե նա, Նիկոլայ կայսրի հաճությամբ, նշանակվում է Ղրիմում գործող բանակի ընդհանուր ինտենդանտ: Որքան էլ պատվաբեր լիներ այդ բարձր ուշադրությունը, Երեմիան չկարողացավ ընդունել այդ կարևոր պաշտոնը: Նա շտապեց Պետերբուրգ և անձամբ աղաչեց զինվորական մինիստրին ազատել իրան այդ պաշտոնից: Գլխավոր պատճառը, որ բերում էր նա, այն էր, որ նա ութ երեխա ունի, որոնց չի կարող թողնել առանց խնա-

մատարի: Նրա խնդիրը հաջովեց և նա նորից վերադարձավ իր ընտանիքի ծոցը:

Բայց Գևորգ Արծրունու որդուն չէին տված մի գթաստ, քնքշասիրտ մոր հատկությունները: Իբրև հայր էլ նա ավելի նման էր իր պարտավորությունները վերին աստիճանի բարեխղճությանը կատարող մի զինվորի: Նա պատրաստ էր իր ընտանիքի համար ամեն տեսակ զոհողություններ անել. նա անպատականի կյանք էր վարում, չէր լինում հասարակության մեջ, նրա աշխարհը միայն իր տունն էր, որ նա կարգադրում էր, ղեկավարում էր, հսկում էր: Բայց դա մի սպարտացի հայր էր, իր երեխաների համար ավելի մի բանկամ, քան հայր: Բնորոշ են մի քանի տողերը, որ նա գրում էր իր որդի Գևորգին, երբ նա գտնվում էր Լեհաստանում գործող զորքերի հետ: Հարուստ ընտանիքի զավակ, համալսարանական կրթություն ստացած Գևորգը, բնակաւարար, մի քիչ էլ խտացրած գույներով էր նկարագրում այն զրկանքները, որոնք անպակաս են զինվորականի կյանքում, մանավանդ արշավանքների մասանակ: Նրա ընկերները, որոնք նույնպիսի նամակներ էին ստանում նրանից, ամսոսանք էին հայտնում այդ զրկանքների, շարժարանքների պատճառով: Բայց ահա ինչ էր գրում նրան հայրը. «Տղամարդը պիտի ամրապնդվի աշխատանքների, զրկանքների և հոգսերի մեջ: Քնքշացած տղամարդը իմ աշքում կնոջից էլ վատ է»:

Նվ ինքը՝ հայրը համարյա ոչ մի առիթ չէր տալիս որդուն կարծելու, թե հայրական սիրտը կարող է երբեքն մոռացնել տալ այդպիսի համոզմունք ունեցող մի դաստիարակի պարտավորությունները: Մեր ձեռքում գտնվում են նրա բազմաթիվ նամակները, բոլորն էլ ուղղած Գևորգին: Այդ կույտի մեջ չէ կարելի գտնել մի տող անգամ, որի մեջ ծնողական սիրտը խոսեր ջերմ զգացմունքի, ջերմ սիրտ լեզվով: Դրանք կիսապաշտոնական գրությունների ձև ունեն: Կարճ ու կարուկ են, խոսում են միայն գործի մասին. ոչ մի զեղմունք, ոչ մի քնքշություն: Հայրը ցույց է տալիս որդուն, թե ինչպես պետք է ծառայել, ինչպես պետք է վերաբերվել գլխավորներին, փող է ուղարկում նրան, թուրքական ծխախոտ, վերամակներ, թաշկինակներ է ուղարկում, հոմեոպատիկան ղեղատոմսեր է գրում փորացավի դեմ, հատկապես որդու համար Պետերբուրգ է գնում, որ նրա մասին գնդի վարչությունից գրված թղթերին ընթացք տալու մասին միջնորդել: Բայց մենք նրա նամակների մեջ չենք տեսնում նույնիսկ այնքան սովորական «սիրելի» բառն անգամ: Նամակներն անփոփոխ սկսվում են «Իմ բարեկամ Գևորգ» և վերջանում են «Ե. Արծրունի» խոսքերով:

Այսպիսի հայր էր Երեմիա Արծրունին և այսպես էր նա վերաբերվում իր որդիներին: Հոր և որդիների մեջ չկար սերտ մտերմություն, սրտաբացություն: Գևորգի ռուս ծանոթներից մեկը իր նամակում պատմում էր նրան մի այսպիսի բան: Երբ այդ ծանոթը հայտնում է Երեմիային, թե Գևորգից ստացել է երկու թղթի վրա գրած մանրամասն նամակ, Երեմիան չէ թաքցնում, որ նախանձում է այդ ծանոթին, որ երկար նամակ է ստացել Գևորգից: Բայց արդյոք մեզավորը Գևորգն էր, որ պատասխանում էր հոր կիսապաշտոնական գրություններին նույնպիսի նամակներով:

1855 թվի ամառը Գևորգ աղայի կարավանսարան սարսափելի հրդեհի ճարակ դարձավ: Կրակն սկսվեց զորեցի վաճառական Տեր-Ստեփանյանի փակ խանութից և արագ տարածվեց, ոչնչացնելով ամեն ինչ: Անկաշելի եղավ մի բան ազատել այն բազմաթիվ խանութներից, որոնք տեղավորված էին այդ հսկա շինությունից մեջ: Վաճառականների վնասը հասնում էր 5 միլիոնի, ինչ-

պես գրում է Երեմիան: Ստանալով աղետի լուրը, Արծրունին Մոսկվայից թրու-
շում է Պետերբուրգ, որպեսզի խնդրե բարձր կառավարութունից, որ ամենա-
խիստ քննութուն նշանակվի՝ հրդեհի պատճառները պարզելու համար: Կա-
կածներ կային, որ շարամասթյան գործ է. այդպես էին վկայում Արծրունու
ստացած նամակները, որոնք ասում էին, թե հրդեհը, երևի, հարկավոր է եղել
մեկին՝ իրան սնանկ հայտարարելու համար: Այդ մեկն էլ մասամբ հայտնի
էր Արծրունուն. դա նույն Տեր-Ստեփանյանն էր, որի խանութից սկսվել էր
կրակը: Դեռ Պետերբուրգում Արծրունին գրում էր, թե նա «մաքուր մարդ չէ»:

Պետերբուրգից Երեմիա Արծրունին գալիս է Թիֆլիս, մնում է այստեղ մի
քանի ամիս: Վնասները մեծ էին, բայց ոչ անդամանելի: «Գետրգ աղայի հե-
ռատեսության շնորհիվ,— գրում էր նա,— կարավանսարան քաջաբար դիմադ-
րել է կրակին, որի մեջ հավել էին նույնիսկ պղինձն ու արծաթը»: Ամենայն
եռանդով Երեմիան ձեռք զարկավ կարավանսարայի վերաշինության գործին և
կարողացավ 4—5 ամսվա մեջ հասցնել նրան նախկին դրության: Բայց ծախ-
սերը այնքան շատ էին, որ Երեմիան սկսեց պարտք անել: Այդ ժամանակից
են սկսվում նրա խոշոր պարտքերը: Միևնույն ժամանակ նա քրեական գործ
սկսեց Տեր-Ստեփանյանի դեմ, որին մեղադրում էր կարավանսարան դիտմամբ
հրդեհելու հանցանքի մեջ: Նա հույս ուներ, որ Տեր-Ստեփանյանից կստանա իր
վնասները և կվճարե պարտքերը, իսկ վնաս նա պահանջում էր մոտ 400 հազար
ռուբլի: Սակայն այդ դատը տասնյակ տարիներ ձգձգվեց, երկու կողմերին էլ
ահագին ծախսեր պատճառելով. վերջը մեղադրվողը արդար ճանաչվեց:

Բայց մենակ կարավանսարան չէր Երեմիայի հոգածության առարկան:
Դեռ 1854-ին, գործերի պատճառով Թիֆլիսում եղած ժամանակ, նա տեսավ,
որ բազմաթիվ մեծամեծ շինութուններ են կառուցվում: Իշխան Վորոնցովի
ժամանակներն էին: Այդ աշխուժ և հեռատես փոխարքան ամեն կերպ խրա-
խուսում էր քաղաքացիներին, որ գեղեցիկ ու մեծ շինութուններով զարդարեն
քաղաքը: Երեմիան տեսավ այդ շինարարական տենդը և ինքն էլ վարակվեց:
Նա սկսեց խանութներ շինել տալ փոխարքայի պալատի մոտ գտնվող կալ-
վածի վրա: Կարավանսարայի հրդեհից հետո նրա համար պարզվեց, որ կա-
րելի է կալվածը շատ արդյունավոր դարձնել, եթե այնտեղ մեծ շինութուններ
կառուցվեն: Եվ նա վճռում է շինել մի առևտրական գալերեա կամ ինչպես ինքն
էր թարգմանում «գալերեա» բառը՝ «վաճառահեմելի»:¹ Դա մի մեծ ծրագիր
էր, որ կարող էր գլուխ գալ երկար ժամանակի ընթացքում և պահանջում էր
Արծրունու ներկայութունը Թիֆլիսում: Եվ Արծրունին վճռում է տեղափոխվել
Թիֆլիս:

Բայց նախքան տեղափոխվելը, 1857 թվականին, Արծրունին տանում է
իր աղջկան Փարիզ՝ բժշկելու համար, իսկ մնացած երեխաներին Գետրգի հեռ-
ուղարկում է Գերմանիայի Կրեյցնախ քաղաքը, որի հանքային ջրերը շատ օգ-
տակար էին գղձախտով հիվանդ երեխաներին: Ինքը՝ Երեմիան ստիպված եղավ
շուտով վերադառնալ արտասահմանից, բայց նրա ընտանիքը Կրեյցնախում
մնաց մոտ մի տարի և այդտեղ Գրիգորն սկսեց լատիներենի և գերմաներենի
դասեր առնել: Առհասարակ իր որդիների կրթության համար Երեմիան ոչինչ
չէր խնայում: Եվ երբ 1858 թվականին երեխաները եկան Թիֆլիս, նա ուսու-

¹ Երեմիա Արծրունու նամակներից երևում է, որ երեխաները անգլիական հիվանդութուն-
ունենին Ռուչյես վկայում է բժշկապետ Յ. Գասպարյանցը («Մշակ», 1892, № 147), «դեռ երեխա
ժամանակ անգլիական ոսկրացավից Գրիգորի կմախքը ենթարկվել էր սաստիկ կերպարանոթ-
խության»:

ցիչներ վարձեց, որ Գրիգորին և Անդրեասին պատրաստեն դիմնագիւ մըտ-
նելու: Այդ ժամանակ շնորհակց և հայերենը: Երկու եղբայրները հայերենի
դասեր էին առնում նախ Գրիգոր քահանա Տեր-Բարսեղյանից, ապա և «Մեղու
Հայաստանի» լրագրի խմբագիր Պետրոս Սիմեոնյանից:

Ինքը, Երեմիան, օր ու գիշեր զբաղված էր իր «վաճառահեմելիքի» շինու-
թյամբ: Դեպի խոշոր ձեռնարկութուններն ունեցած սերը նրան այստեղ այն-
քան հափշտակեց, որ նա մոռացավ ամեն զգուշութուն և մի շատ մեծ գործ
սկսեց: Գետրգ աղայի պես նա էլ ճարտարապետներին շղիմեց, այլ ինքը ծրա-
գրեց շինութունը, ինքը ղեկավարում էր վարպետներին: Գետրգ աղայի գնած
հողը բավականութուն չէր տալիս. Երեմիան երկու անգամ դիմում է փոխար-
քային, գնում է նրա այգուց մոտ 400 սածեն տարածութուն 12 հազար ռուբ-
լով: Գնում է հող նաև մյուս հարևանից, դինվորական շտաբից և այսպիսով
ընդարձակելով կալվածը, կարողանում է ազատութուն տալ իր դիտավորու-
թյուններին և նախագծերին: Մեծ գործի համար մեծ միջոցներ են հարկավոր:
Այստեղ էլ կանգ չէ առնում Երեմիան. գրավ դնելով կարավանսարան և գալե-
րեան Անդրկովկասյան Պրիկազում, 200 հազար ռուբլուց ավել պարտք է վերց-
նում և տարիների ընթացքում գլուխ է բերում շինութունը այնպես, ինչպես
ինքն էր ցանկանում:

Շինութունը, իսկ որ, փառավոր էր: Մի ահագին վաճառանոց էր դա,
քաղաքի առաջնակարգ փողոցի վրա, բազկացած էր բազմաթիվ խանութնե-
րից և սենյակներից: Նա այսօր էլ կա և դարմացնում է տեսողին: «Հայկական
աշխարհը» 1867 թվին գրում էր. «Ժեներալ Արծրունու նոր քարավանսարան
հիանալի եվրոպական շինութուն, քաղաքիս զարդն է դառնում. Պետերբուրգի
պասածը գուցե սորա անհավասար հակառակորդ լինի»: Ահա ինչ էր անում
այդ դինվորականի կամքը, համառ բնավորութունը:

Սակայն շինարարական տաղանդի հետ Երեմիա Արծրունին ցույց տվեց
և այն, որ վատ կալվածատեր է: Գեղեցիկ շինութունը պատրաստ կանգնած
էր, բայց խանութները երկար ժամանակ դատարկ էին, որովհետև տերը պա-
հանջում էր այնպիսի վարձ, առաջարկում էր այնպիսի պայմաններ, որ վաճա-
ռականները չէին կարողանում վարձել: Կալվածը այդպիսով քիչ արդյունք էր
բերում, իսկ ահագին պարտքի սոկոսները կուտվում էին իրար վրա: Եվ այդ
հանգամանքը ոչինչ էր Երեմիայի համար. նա համառ, իր ասածի մարդ էր
ավելի մեծ շահերով, քան իր հայր Գետրգը: Զիջել չգիտեր նա:

Գալերեայի շինության ժամանակ, 1860-ին, Երեմիան նորից մտավ դին-
վորական ծառայության, բայց առանձին պաշտոն չստացավ: 1861-ին նա
ստացավ գեներալ-մայորի աստիճան:

Բացի շինութուններից, Արծրունուն ահագին ծախսեր էին պատճառում
այն բազմաթիվ, մանր ու խոշոր դատաստանական գործերը, որոնք այնքան
մեծ տեղ են բռնում նրա կյանքի մեջ և որոնցով նա զբաղվում էր իրան հա-
տուկ համառությամբ: Մենք արդեն տեսանք, որ նա Կ. Պոլսում Ալլահվերդի-
ոզլուց պահանջում էր 2,5 միլիոն գումար, ինչպես նաև այն, որ թուրքաց կա-
ռավարութունից պահանջում էր, որ իր հայրական և մայրական կալվածները
վաստորականում իրան վերադարձվեն: Թիֆլիսում, ինչպես ասացինք, նա
տասնյակ տարիներով գործ էր վարում Տեր-Ստեփանյանի դեմ: Բացի այդ
ամենից, նա պահանջում էր ռուսաց դինվորական մինիստրութունից 160 հա-
զար ռուբլի իր մի կալվածի համար: Դատարանում կար և մի գործ, որով Արծ-
րունին պահանջում էր մի քանի ռուս վաճառականներից 15 հազար ռուբլի:
Աննշան պահանջները, որոնք մեծ թիվ են կազմում, զանց ենք առնում: Պա-

հանջները մեծ մասամբ անվիճելի փաստերի վրա չէին հիմնված և որքան էլ Երեմիան համոզված էր, թե իրավունքը իր կողմն է, որքան էլ աշխատում էր եռանդով, բայց համարյա ոչ մի աչքի ընկնող գործ չտարավ, այդ մեծ գումարներից ոչ մեկն էլ չստացավ: 60-ական թվականներին նա ստիպված եղավ դարձյալ խոշոր պարտքեր վերցնել Պրիկազից, շարունակելով միևնույն ժամանակ իր խիստ պայմաններով հեռու փախցնել խանութները վարձել կամեցողներին...

Բայց այդքան մասնավոր դրադմունքները միանգամայն չհեռացրին Երեմիային հասարակությունից և նրա գործերից: Նա ունի մի քանի գործեր, որոնք ցույց են տալիս, որ նա կարող էր հասարակական ասպարեզում օգտակար ուժ դառնալ, եթե այդ տեսակ գործունեությունն էլ այնպես վերաբերվեր, ինչպես վերաբերվում էր իր մասնավոր ընտանեկան գործերին:

1860 թվականին Քիֆլիս եկավ Վարագի վանքի վանահայր Խրիմյան վարդապետը (այժմ ամենայն հայոց կաթողիկոս), որպեսզի ռուսահայերից նվերներ հավաքե իր բացած ռուսամարանի և տպարանի համար: Երեմիան այդ գործի գլուխ անցավ, ինքն ստորագրեց մի խոշոր գումար և աջակցեց նվիրատուից: Զանազան արգելքներ առաջ եկան այդ ժողովարարության դեմ, Խրիմյանն ստիպված եղավ շուտով հեռանալ Ռուսաստանից, բայց և այդպես, Արծրունու ջանքերով կարելի եղավ մի գումար ուղարկել Վասպուրականի կրթական պետքերի համար: Նշանավոր է, որ դա առաջին հավաքական օժանդակությունն էր, որ ռուսահայերը տալիս էին իրանց թուրքահայտակ եղբայրակիցներին. նույն այդ գործում առաջին անգամ ամենամեծ նվիրատուություն հավաքողը Երեմիայի որդի Գրիգոր Արծրունին էր:

Նույն 1860 թվին Քիֆլիսում միտք ծագեց հիմնել հայերեն գրքերի մի հասարակական գրադարան: Այդ գործին առաջին համակրողը Արծրունին էր, որ ամենից առաջ էլ հիմնադիր անդամ գրվեց: Գրադարանը, սակայն, չբացվեց: Բայց ավելի նշանավոր է այն դերը, որ Երեմիա Արծրունին կատարեց Ներսիսյան դպրոցի պատմության մեջ:

Ներսես կաթողիկոսը իր դպրոցի կառավարությունը հանձնել էր երեք հոգաբարձուներին, որոնց ինքն էր նշանակել իրրե իր փոխանորդ և ներկայացուցիչ: Այդ հոգաբարձուությունը անփոփոխ կառավարեց դպրոցը տասը տարի (1851—1861), բարեկարգեց նրան, նյութապես հարստացրեց: Ներսեսի մահից հետո դպրոցում տեղի ունեցան անկարգություններ: Աշակերտների և հասարակության առանձին համակրանքը վայելող տեսուչ Շանշյանը արձակվեց պաշտոնից, թե առաջնորդը և թե հոգաբարձուությունը ոչինչ ուշադրություն չդարձրին ժողովրդի պահանջների վրա: Հոգաբարձուությունը մերժեց հասարակության հաշիվ տալ, ասելով թե ճանաչում է միայն ամենայն հայոց կաթողիկոսին և հաշիվ կտա միայն նրան:

Հոգաբարձուության մեջ ամենաազդեցիկ մարդն աստիճանավոր Ալեքսանդր Քալիբյանցն էր: Հայտնի է Քիֆլիսցիներին, որ այս մարդը չէր բավականանում հոգաբարձուի պաշտոնով, այլ աշխատում էր վճռող դեր կատարել մեր եկեղեցական գործերի մեջ: Կաթողիկոսական ընտրությունների ժամանակ նա, միացած Քիֆլիսի առաջնորդ Մարգիս Կալիսկոպոս Զալալյանցի հետ, այնպիսի դեր կատարեց, որ Քիֆլիսի հասարակության առաջավոր մասի զայրույթը գրգռեց: Քալիբյանցն էլ ուներ իր կուսակցությունը: Կաթողիկոսական ընտրությունից հետո այդ կուսակցության դեմ մաքառումը շարունակվեց և կենտրոնացած էր գլխավորապես Ներսիսյան դպրոցի շուրջը: Թե ինչ հայացքների

տեր էր Քալիբյանցը, երևում է նրանից, որ Արուսյանցին, Նազարյանցին, Շանշյանին և առհասարակ բոլոր համալսարանական երիտասարդներին, մանավանդ գորսպատցիներին, նա համարում էր հերետիկոս, բողոքական, ազգի տունը քանդող և այլն:

Ահա այդ խավարապաշտ ուժի դեմ մաքառում էր նոր երիտասարդությունը, աշխատելով ոչ միայն հեռացնել Քալիբյանցին դպրոցից, այլև առհասարակ մշակել մի այնպիսի դպրոցական սահմանադրություն, որի մեջ լավ պաշտպանված լինեին ժողովրդի իրավունքները: Այս հակաթափախ կուսակցության պարագլուխը հանդիսացավ գեներալ Արծրունին: Սա իրան հատուկ եռանդով առաջ էր տանում պայքարը և ժողովների մեջ իր խելոք ճառերով պարզում էր, թե ինչ կազմակերպություն պիտի ստանա դպրոցի կառավարությունը: Քալիբյանցը, իհարկե, քնած չէր. նրա կուսակցությունն էլ իր ծրագիրն ուներ: Հակառակ կուսակցությունը ավելի կտրուկ միջոցների դիմեց: Նա հրավիրեց ժողովրդի ներկայացուցիչներին և մշակելով դպրոցական կառավարության գլխավոր հիմքերը, վճռեց ներկայացնել այդ հիմքերը Մատթեոս կաթողիկոսին մի հատուկ պատգամավորության ձևով: Այդ պատգամավորներից մեկը, հայտնի գործիչ Միքայել Միանսարյանցը գրում էր «Հյուսիսափայլի» մեջ¹. «Հիմքերը կամ թե խնդիրքը, որ առաջադրված են ծայրագույն պատրիարքին և կաթողիկոսին, հաստատելու նրանց, և բոլոր խնդրագիրը գրած ու առաջադրված են Երեմիա Գեորգյան Արծրունու ձեռքով և առանց ընդդիմախոսության ընդունված են բոլոր ազգային երեսփոխաններից, բացի երկուքից, որ արել էին ընդդիմախոսությունը»:

Ահա Երեմիա Արծրունու խմբագրած հինգ գլխավոր հիմունքները.

1. Ներսիսյան դպրոցի այն արդյունքները, որոնք ստացվում են դրամագլուխներից, ընծայարեթություններից, կտակներից և այլ աղբյուրներից, պիտի մշտապես մնան անձեռնմխելի և գործադրվեն հայ երիտասարդների կրթության համար:

2. Դպրոցում սովորող աշակերտների և ավանդվող առարկաների շրջանը պետք է ընդարձակվի համաձայն եկամուտների չափի ընդարձակման:

3. Բոլոր հայ երեխաները, որոնք մտնում են Ներսիսյան դպրոցը, ուսում պիտի ստանան ձրիաբար, իսկ անտերունջ որբերը, առավելապես եկեղեցականներից, պետք է դրա հետ սնունդ էլ ստանան դպրոցում: Այդ որբերից նրանք, որոնք ավարտում են ուսումը լավ վարքով և գերադասեց ընդունակություններով և կամենում են շարունակել ուսումը բարձրագույն դպրոցներում, ստանում են դպրոցի գումարներից օժանդակություն որքան կարելի է:

4. Դպրոցի աշակերտներից միայն նրանք են հոգևոր կոչման մեջ մտնում, որոնք իրանց բնավորությամբ և ներքին կոչումով կարող են արժանավոր սպասավոր լինել եկեղեցու մեջ և որոնք հոժար կամքով ցանկություն կհայտենն, առանց որևէ ստիպման:

5. Դպրոցը լիակատար կախում ունի ամենայն հայոց կաթողիկոսից: Քիֆլիսի առաջնորդը դպրոցի կառավարության խորհրդարանի առաջին հոգատարն ու նախագահն է, իսկ այդ խորհրդարանի մյուս անդամները պետք է ընտրվեն քաղաքի հասարակությունից, առանց զանազանիլու հոգևորականներին և աշխարհականներին:

Մատթեոս կաթողիկոսն ընդունեց այդ հիմնական սկզբունքները և 1861 թվականի հունիսի 9-ի իր կոնդակով առաջարկեց Քիֆլիսի հասարակության

¹ 1861, № 9:

կազմել դրանց համեմատ ընդարձակ կանոնադրություն և ներկայացնել իրան: Միքայել Միանսարյանցը «Հյուսիսափայլի» վերահիշյալ համարում տպագրած իր գեղեցիկ հոդվածի մեջ¹ ասում է. «Այժմ, երբ որ այս սահմանադրությունը գրեթե պատրաստ է արդեն, մեր սուրբ պարտականություն ենք համարում հայ մարդու համար, հրատարակել, թե գնե՞րալ-մայր Երեմիա Գեորգյան Արծրունու իմացականությունը, շատ սրտացավական գործակցությունը, փորձառությունը և բանագիտությանը շնորհապարտ ենք այն մասին, որ այս գործը ստացել է այդպիսի բարեհաջող և բախտավոր ուղղություն:

Հայտնի ու ծածուկ թշնամիք շատ կային, որ անփութ շեղան գործ դնել ամենայն տեսակ շատ ու շատ նախատելի հնարներ խափանելու այս գործը և վնասելու այն մարդերին, որոնց մի հատիկ մեղքը այն է, որ ցանկացող էին յուրյանց հայրենակիցների օգտին և բարությունը, բայց աստված անտես չարեց մեզ»:

Այս մաքառումը հանուն հայրենակիցների օգտի և բարություն, այս տոկուն գործունեությունը պարզում է Արծրունիների տոհմին հատուկ մի նշանավոր հանգամանք, որը չպետք է մոռանալ: Երեմիա Արծրունին, ուրեմն, բոլորովին նման էր իր հորը: Ոչ մեծ հարստությունը, ոչ աղայական-արիստոկրատական հակումները, ոչ ինքնահավանությունն ու համառությունը շարգելեցին նրան հետևել ժամանակի լուսամիտ առաջավոր հոսանքներին, գործել ժողովրդի անունով և ժողովրդի համար: Ներսիսյան դպրոցն ստանում էր լայն նպատակի ծառայող կրթական հաստատության կերպարանք՝ սահմանադրական կառավարությամբ: Դա մեր դպրոցական ինքնավարության սկիզբն էր. միանման կառավարչական ձև ստացան և մեր մյուս դպրոցները: Հայտնի է, որ ներսիսյան դպրոցի այդ կանոնադրությունը գոյություն է պահպանում մինչև մեր օրերը, բայց ահա շատ տարիներ են, ինչ նա անխնա ծվատվում է խավարասեր տարրերի ձեռքով իբրև չափազանց ազատամիտ, չափազանց ժողովրդական մի օրենք: Եվ ներկայի այս հանգամանքը մեծ պատիվ է բերում Երեմիա Արծրունու և նրա հետ գործող կուսակցության հասկացողություններին ու ձգտումներին: Մենք տեսանք, որ նույն պատվաբեր կերպարանքն ունենր և Գեորգ աղայի հասարակական գործունեությունը: Հայր ու որդի իրավունք են տալիս մեզ ասելու, որ Արծրունիների տոհմը հայ մեծատունների մեջ մի զարմանալի բացառություն էր կազմում. նրա արյան մեջ, եթե կարելի է այսպես ասել, կար ժողովրդասիրությունը, կար ժամանակի ոգու առաջավոր ըմբռնումը: Եկավ ժամանակը, և այդ տոհմը առաջ բերեց իր այդ հատկությունների ամենանշանավոր մի ներկայացուցիչ: Երեմիայի որդի Գրիգորը տոհմային հարստությունների միջից դուրս եկավ տոգորված ազգական գաղափարներով, թշնամի դասակարգային խտրություններին: Ծատ հազվագյուտ են այսպիսի զարմանալի տոհմերը...

Ներսիսյան դպրոցի նոր կանոնադրությունը գործադրության մեջ մտավ, նշանակվեցին հոգաբարձական ընտրություններ, բայց Երեմիա Արծրունին չկամեցավ շարունակել իր գործունեությունը և հրաժարվեց հոգաբարձու ընտրվելուց: Տունը, կալվածները ամբողջապես կլանում էին նրա ուշադրությունը և 1864 թվին նա վերջնականապես հրաժարվեց ղինվորական ծառայությունից:

Նույնպես կարճատև էր Երեմիայի գործունեությունը և քաղաքային ինքնավարության մեջ: 1866 թվին Քիֆլիսում մտցվեց քաղաքային կառավարու-

թյան նոր կանոնադրությունը. առաջին քաղաքագլուխ ընտրվեց Արծրունին և այդ ընտրությունը գոհություն պատճառեց քաղաքացիներին, որոնք նախընթաց տարիներից արդեն լավ ճանաչել էին նրան իբրև շիտակ, կամքի տեր մարդու: «Քիֆլիսի ժողովուրդը, — գրում էր «Հայկական աշխարհը», — գիտե, որ պ. Արծրունին է մի գործունյա և ազնիվ մարդ, և այս արդեն բավական է. պ. Արծրունու ընտրության օրից ազնիվ ծանոթները միմյանց պատահելով շնորհավորում էին, որ պ. Արծրունին ընտրվել է քաղաքագլուխ»¹: Սակայն այսպիսի համակրանքի արժանացած քաղաքագլուխը մի կարճ միջոցից հետո, 1868-ին, հեռացավ պաշտոնից և ապագայում երկար ժամանակ բավականապես էր ձայնավորի պաշտոնով:

Երեմիա Արծրունին էլ ունի մի գրավոր վաստակ: 1872 թվականի ապրիլին նա Տեխնիկական ընկերության մի նիստում կարգաց մի գեկուցում, որի մեջ հայտնում էր, թե անհրաժեշտ է Անդրկովկասից երկաթուղի տանել մինչև Ղեղկաստան: Այդ գեկուցման հայերեն թարգմանությունը նա հրատարակեց նույն 1872-ին մի առանձին բրոշյուրով, որի վերնագիրն էր «Խնդիր երկաթե ճանապարհի վերա դեպի Ղեղկաստան»: Գրքույկի մեջ երևում է Երեմիայի գործնական խելքը, նրա մտտիկ ծանոթությունը Քուրբիայի և Պարսկաստանի գրություն հետ: Արծրունին հետամուտ էր եղել և Ղեղկաստանի գրություն և կարծում էր, որ անգլիացիների ձեռքից հնդկական առևտրի մեծ մասը խլել կարելի է, անցկացնելով երկաթուղի Պարսկաստանի վրայով դեպի Ղեղկաստան: Նրա ծրագրով երկաթուղին պիտի սկսվեր Բաքվից, անցներ հյուսիսային Պարսկաստանով դեպի Մեշեդ, Հերաթ և Քարս: Այդ ուղղությունը ցույց էր տրված հայերեն քարտեզի վրա, որ կցված էր բրոշյուրին:

Հայտնի է, թե մանավանդ մեր ժամանակներում որքան ահագին քաղաքական և տնտեսական նշանակություն ունեն երկաթուղային այդպիսի ձեռնարկությունները: Ղեղկաստանին մոտենալու միտքը շատ վաղուց գոյություն ուներ Ռուսաստանում և գնե՞րալ Արծրունին մի նոր բան չէր ասում: Հետաքրքրական է նյութի մշակությունը և այդտեղ Արծրունու գրվածքը ունեն որոշ յափով ինքնուրույնություն, քանի որ նա անձամբ ճանաչում էր Պարսկաստանը և առանձնապես ուսումնասիրել էր նրա տնտեսական և առևտրական հանգամանքները: Իր հոր պես Երեմիան գրաբար էր գրում, բայց այս բրոշյուրի մեջ ստիպված է եղել դիմել աշխարհաբարին: Դա մի շատ խամ լեզու է, խառն գրաբարի հետ, հետաքրքրական իր առանձին, ինքնուրույն դարձվածքներով և ձևերով:

Մինչև այստեղ մենք բերինք շատ փաստեր, որոնց մեջ երևան է գալիս գեկուցում Արծրունու բնավորությունը: Մենք տեսանք, թե ինչպիսի հայր էր նա, ինչ կանոններով էր ղեկավարվում իր հարաբերությունների մեջ: Ավելացե՞նք այստեղ և մի քանի ուրիշ գծեր:

Գիտենք արդեն, որ Երեմիա Արծրունին սիրում էր առանձնություն և դժուր սովորված անվանում էր իրան ճգնավոր, անապատական: Քիֆլիսում էլ նա մեծ մասամբ նույնպիսի կյանք էր վարում, հասարակությունից հեռու, մենավոր, իր սակավաթիվ բարեկամների հետ միայն տեսնվելով: Ընտանիքից դուրս նա հրապույր, զվարճություն չէր գտնում: Եվ պետք է ասել, որ նրա տան նման մի գեղեցիկ անկույտ հազիվ թե շատ լիներ Քիֆլիսում: Երեմիան ապրում էր գալերեայի հետևում գտնվող այգու մեջ շինված տանը: Այդ այգին իր հարուստ բուսականությամբ մի կատարյալ գրախտ էր ներկայացնում: Նրա մեջ

¹ Կրում է «Ազգային կրթություն և դպրոց» վերնագիրը և նվիրված է «Գնե՞րալ-մայր Երեմիա Գեորգյան Արծրունուն»:

¹ 1866, № 8—9:

շինված էր հովանոց, որ ծածկված էր դալար բույսերով: Ահա այդտեղ էր օրեր անցկացնում Երեմիան: Հովանոցի աջ կողմում երևում էին երկու գերեզման: մեկի մեջ թաղված էր Գեորգ աղան, իսկ մյուսի մեջ Երեմիայի մի աղջիկը որ մեռել էր ծաղիկ հասակում:

Պարզ էր Արծրունու կյանքը: Վեր էր կենում վաղ առավոտյան, զբաղվում էր ծաղիկներով ու բույսերով, ապա նստում էր հովանոցում. այդտեղ էր նա պարապում իր գործերով, ընդունում էր մարդկանց, ճաշում էր: Իբրև վանեցի, նա չէր մոռանում մածունը և նրանից շինած բրդուշք նրա ամենօրյա կերակուրն էր: Արևելյան շուքով ապրող այդ մեծատունը և բարձրաստիճան զինվորականը հայտնի էր ամենքին իր խիստ ու խրոխտ բնավորությամբ. նա պահանջող էր, քինախնդիր, բարկացկոտ: Սիրում էր, որ ամեն բանի մեջ իր կամքը կատարվի, համառ էր ու կրքոտ: Բայց միևնույն ժամանակ դա մի շիտակ ու ազնիվ մարդ էր, մեծահոգի, բարի ձգտումներ ուներ և ճշմարտասեր էր: Ահա մի դեպք, որ բնորոշում է թե ինչ հասկացողություններ ուներ Արծրունին: Նրա որդի Գեորգի ընկերները ասել էին, որ եթե Երեմիան դիմե աշխույժ հրամանատար զինեակին, վերջինս կհրամանագրե այն գնդի հրամանատարին, ու ծառայում էր Գեորգը, առաջարկելով նրան, որ ներկայացնե Գեորգին՝ օֆիցերական աստիճան ստանալու: Գեորգը այս մասին գրում է հորը: Մի ուրիշ հայր կգնար, կխնդրեր: Բայց Երեմիան այդպիսի հայր չէր: Նա շուղեց, որ իր որդին աստիճան ստանա բարձրից եկած հրամանով, խաթրի համար և պատասխանեց Գեորգին, թե չի անի այդ քայլը, որովհետև ունի իր հասկացողությունները պատվի մասին և խորհուրդ է տալիս այնպես ծառայել, որ գնդի հրամանատարը ինքնաբերաբար գրե նրա մասին բարձր իշխանություն, թե արժանի է աստիճանի:

Ահա մի այսպիսի խիստ, միշտ տանը նստած հոր աչքերի առաջ էին մեծանում և դաստիարակվում Գրիգորն ու Անդրեասը: Ինչ խոսք, որ հայրը սիրում էր իր որդիներին, բայց մեներ տեսանք, թե ինչպես էր նա այդ սիրո արտահայտության մեջ: Երեմիաները փակված կյանք էին վարում. միայն հայտնի ժամերին նրանց թույլատրվում էր զբոսնել այգու մեջ: Մնացած ժամանակը նրանք ծանրաբեռնված էին իրանց դասերով, որոնք ավանդվում էին հենց այդտեղ, տանը: Գրիգորի և Անդրեասի ընկերներն էլ շատ չէին. մի քանի հասակակիցներ ունեին, որոնք մի-մի հյուր էին գալիս և որոնց հետ նրանք զբոսնում էին իրանց այգում: Թեև հայրն ու որդիները փակված էին միևնույն անձուկ աշխարհում, բայց այդ կեցությունը միևնույն հարկի տակ չմտնեցրեց նրանց: Ընդհակառակը, հոր և որդիների մեջ հաստատվեց մի տեսակ պաշտոնական հարաբերություն. որոշակի նշանակված էին և այն ժամերը, երբ երկու եղբայրները կարող էին լինել իրանց հոր մոտ: Եվ այսպես, Գրիգորի և Անդրեասի որբությունը բավական անմխիթար էր: Չկար, իհարկե, որևէ պակասություն խնամքի, հոգատարության կողմից, բայց պակասում էր ծնողական կրակոտ սերը. չկար մայր, իսկ հայրը չէր սիրում քնքրություններ և նրա ընդունած դաստիարակչական սիստեմը միայն սառնություն և պաշտոնական ձևականություն էր հաստատում որդիներին և հոր մեջ:

Սակայն եղբայրների համար խորթ, անհասկանալի շմեաց հարազատներին սերը: Նրանք իրար հետ կապվեցին եղբայրական քնքուշ զգացմունքներով: Մենք շատ քիչ տեղեկություններ ունենք Գրիգորի և Անդրեասի պատանեկան կյանքից: Միակ մարդը, որ թողել է իր հիշողությունները նրանց մասին, հանդուցյալ հնագիտ Ալեքսանդր Երիցյանն է և մենք այդ միակ վկային էլ կրիմենք:

Ընտանեկան կյանքն էլ իր վերջն ունեցավ: Երկու եղբայրները պատրաստվել էին գիմնազիա մտնելու: Նրանք հաջող քննություն տվին, ընդունվեցին և այդպիսով լույս աշխարհ դուրս եկան: Վանդակից ազատված թուղունների պես էին նրանք. հայրական աշխարհի անձուկ հորիդոնը չբացել էր, տեղի տվել ավելի լայն աշխարհայնցողություն: Բայց ի՞նչ էին նրանք այդ դպրոցական հասակում:

«1863 թվի հունվարից,— պատմում էր Երիցյանը,— Արծրունու «Փալե-րեայի վերին հարկում պ. Ի. Տեր-Մելիքյանի և իմ ընկերությունը բացվեց մի գրավաճառանոց ամեն ազդի գրքերի: Հայերեն բաժինն էլ հարուստ էր և շատ նորություններ էր բովանդակում իր մեջ: Արծրունի եղբայրները, որոնք արդեն գիմնազիա էին հաճախում, իրանց ազատ ժամանակն անց էին կացնում մեր գրավաճառանոցում, և այդպիսով ես միջոց ունեցա ի մոտո ծանոթանալ նրանց հետ: Գրիգորը մոտ 18 տարեկան էր, նիհար, բարկացկոտ և ջղային: Անդրեասը մոտ 16 տարեկան էր՝ խարտյաշ գանգուր մազերով, երեսխայական համակրելի անմեղ պատկերով և հանդարտ բնավորությամբ: Կրթության եղբայրը միանգամայն մեծի ազդեցություն տակ էր գտնվում: Բայց շնայելով, որ գրեթե օրորոցից սկսած սրանք միատեղ և միատեսակ էին սնվել և դարգացել, երկուսի բնավորությունները բոլորովին տարբեր էին: Գրիգորը սիրում էր սրախոսություններ անել, ծիծաղել և մինչև անգամ ծաղրել, Անդրեասը լռությունով լսում էր, ժպտում և մինչև ականջները կարմրում: Նրանք ուսերեն էին խոսում միմյանց հետ, հոր հետ և մեղ հետ: Երբ հայերենի վրա խոսք էր լինում, նրանք հեզնական ժպիտով պատասխանում էին, որ թեև չեն խոսում, բայց փոքր ինչ հասկանում են և այնքան, որքան գիմնազիայի համար պետք է, գիտեն: Գրիգորը սիրում էր ծաղրել Պոլսից մեր բերած այնտեղի հայոց դերասանական խմբի պատկերները՝ «Հայք—թատրոն», Հայք—թատրոն» բացականչելով և ծիծաղելով: Ծիծաղում էր, երբ տեսնում էր մեր ձեռքին որևէ լրագիր՝ «Մեղուն» կամ «Մասիսը». շտապ կանչում էր նա Անդրեասին, հեզնական ժպիտով տալիս էր թերթը նրա ձեռքն ու ապա բարձրաձայն ծիծաղում. «Տե՛ս, հայք լրագիր էլ են ունեցել, երևակայում եմ, թե ինչեր են տպում...»:

Գրիգորը և Անդրեասը հենց այդ 1863 թվականին էլ վերջացրին ուսումը Քիֆլիսի գիմնազիայում: Բայց այստեղ առաջ եկավ մի արգելք, որ շատ վշտացրեց եղբայրներին: Անդրեասը կարող էր հասունություն վկայական ստանալ միայն տարի ու կեսից հետո, երբ 18 տարեկան կդառնար:

«Գրիգորը,— շարունակում է Երիցյանը,— պատրաստվում էր գնալու բարձրագույն ուսումն ստանալու համար, և եղբայրները առաջին անգամն էր, որ պիտի բաժանվեին: Գրիգորը ծաղրում էր Անդրեասի «անշափահասությունը», Անդրեասի խոշոր աչքերը լցվում էին արտասուքով: Գնե՛րալ Երեմիան նախ կամենում էր ուղարկել Գրիգորին Չրանսիա, ապա փոխեց միտքը և 1863 թվի ամառը ճանապարհեց նրան Մոսկվա:

Անդրեասը մնաց մենակ, եղբոր բացակայությունը նրա համար շատ զգալի էր: Գրիգորը նույն՝ 1863 թվի սեպտեմբերին մտավ Մոսկվայի համալսարանի բնագիտական ֆակուլտետը: Այստեղ, ինչպես երևում էր, նա քաշում էր Անդրեասի կարոտը և շուտ-շուտ նամակներ էր գրում վերջինիս: Բարի Անդրեասը, ստանալով եղբոր գրությունները, ուրախ-ուրախ ներս էր վազում մեր գրավաճառանոցը և կարգում մեզ: Գրիգորը հպարտությամբ նկարագրում էր համալսարանական կյանքը և իր պարապմունքները: Մի անգամ ևս, լավ հիշում եմ, շատ հեզնորեն գրել էր Մոսկվայի հայ ուսանողների «ժողովի» մա-

սին: Մի ինչ-որ ժողով ունին, մտաավորապես գրել էր նա, ուր կարդում, վիճում և խոսում են միմիայն հայերեն, կասես էլ ուրիշ լեզու չկա աշխարհի վրա. ինձ ևս հրավիրեցին զնալ և մասնակցել, բայց ես հրաժարվեցի...»:

Հետևյալ 1864 թվին Գրիգորը Մոսկվայից տեղափոխվեց Պետերբուրգ, ուր մտավ համալսարանի նույն՝ բնագիտական ֆակուլտետի երկրորդ կուրսը: Այդ տարին Անդրեասն էլ գնաց Պետերբուրգ:

«1864 թվի ամառը,— գրում է Նրիցյանը,— ես գնում էի Պետերբուրգ: Գեներալ Արծրունին առաջարկեց ինձ տանել հետս Անդրեասին: Օգոստոս ամիսն էր, երբ մենք հասանք Ռուսաստանի մայրաքաղաքը: Գրիգորը մի քանի օր առաջ տեղափոխվել էր Մոսկվայից... Բայց Անդրեասին չհաջողվեց իսկույն մտնել համալսարան. նրան առաջարկեցին սպասել դարձյալ վեց ամիս, մինչև որ կլրանա իր 18 տարեկան հասակը: Եղբայրները բնակվեցին միասին և բավականաչափ փող էին ստանում հորից՝ շափավոր, բայց առանց պակասության, կյանք վարելու: Նրանց առաջին սիրած զվարճությունը եղավ մայրաքաղաքի իտալացոց օպերան, ուր և հաճախում էին ստեպ-ստեպ»:

Հայրական երկաթե խնամակալությունից ազատվելը երեք աստիճան ուներ. առաջինը տանից զիմնադրա մտնելն էր, երկրորդը՝ Թիֆլիսից Մոսկվա տեղափոխվելն էր, բայց Մոսկվայում էր ազատությունը կատարյալ չէր. այդ տեղ ապրում էին Նրեմիայի աներորդիները, որոնց հսկողությունն էր նա հանձնել Գրիգորին: Երրորդ աստիճանը Պետերբուրգն էր, բայց այդտեղ էլ Նրեմիան իր ծանոթների միջոցով կարող էր հսկել իր որդիների վրա: Ինչպես կտեսնենք, հարկավոր էր շորորդ աստիճան էլ՝ կատարյալ ազատության հասնելու համար: Կատարյալ ազատությունը ահագին նշանակություն ուներ երիտասարդի համար: Ինքը՝ Գրիգորը սեփական փորձից խրատված, իր առաջին իսկ հողավածներում զինվեց ընտանեկան խնամակալության դեմ և պահանջում էր, որ հայ երիտասարդները բարձրագույն կրթություն ստանան իրանց ընտանիքներից շատ հեռու տեղերում, ուր նրանք կարող են միանգամայն ազատ լինել իրանց ծնողների կաշկանդող խնամակալությունից...

Գ Լ Ո Ւ Խ Ե Բ Կ Բ Ո Ր Դ

ՌԻՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ
(1864—1871)

I

Ժամանակը: Հայ ուսանողությունը Մոսկվայում և Պետերբուրգում: Գրիգոր Արծրունու առաջին հոդվածները: Տեսակցություն Միֆայել Նալբանդյանցի հետ: Հիվանդություն և ուղեորություն արասահման: Նիցցա, շվեյցարական համալսարաններ: Ինֆեանանաչողություն: «Իմ խոստովանությունը»: Մի ուրիշ խոստովանություն. կորած սեր, «էվելինա»: Ինչպես էր Գրիգորը հասկանում հայ ուսանողի պարտավորությունները:

Գեներալ Նրեմիա Արծրունին մնաց Թիֆլիսի իր փառահեղ առանձնությունն մեջ: Եվ որդիները զնացին գիտության տաճարներում կազմակերպվելու իրրե մարդ: Նրանց առաջին դաստիարակը ժամանակն էր, որ բոլորովին այն ուղ-

ղությունը շտվեց մեծատան զավակ երկու եղբայրներին, ինչ կկամենար նրանց զննելու, բարձր շրջաններում ապրած հայրը:

Այդ ժամանակը մենք արդեն ճանաչում ենք՝ վաթսուհակաթ թվականները, մտքի ազատագրություն տարիները, որոնց ընդհանուր պատկերը ներկայացրել ենք մի ուրիշ տեղում¹: Այստեղ մեզ մնում է միայն ավելացնել, որ վաթսուհակաթ թվականները մի միապաղաղ և միանման ժամանակամիջոց չէին ներկայացնում, և այն տարիները, որ անցկացրեց Գրիգոր Արծրունին իրրե ուսաց համալսարանի ուսանող, արդեն պատկանում էին վաթսուհակաթ թվականների առաջ եկած երկրորդ, նոր սերունդին:

Ազատարար ռեֆորմները, գրական շարժումը առաջացրին քառասունական թվականների գաղափարներով սնված մարդիկ: Նրանք իդեալիստներ էին, նրանց կրթողը մետաֆիզիկան էր (բնազանցությունը): Բայց ահա Ռուսաստան են մտնում նոր հոսանքներ. թարգմանվում են ժամանակակից եվրոպացի ռեալիստ գիտնականների հեղինակությունները և հրապարակ է իջնում նոր սերունդը: Սկսվում է անհաշտություն հնի և նորի մեջ և այդ գրությունը նկարագրված է Տուրգենևի «Հայրեր և որդիներ» վեպի մեջ: Հենց այդ անուններով էլ կնքվում են երկու սերունդները: Հայրերը սկսում են չհասկանալ որդիներին: Նոր սերունդը ռեալիստ է, մտավոր գործունեության մեջ տեսնում է ոչ թե վերացական ձգտումներ, այլ հասարակական օգուտ: Մինչդեռ հայրերը հետևում էին ընտանեկան և անձնական բարոյականության հին, ավանդական կանոններին, որդիները առաջ են քաշում անձնավորության, անհատի կատարյալ ազատությունը, ընտանիք, հիմնված փոխադարձ սիրո, համերաշխության, համահավասարաբարության սկզբունքների վրա: Երկու սերունդները նման են միմյանց ընդհանուր ձգտումով, որ առաջադիմական է: Այո՛, համաձայն են, որ պետք է առաջադիմել, պետք է բարեփոխել կյանքի ձևերը: Բայց ի՞նչ միջոցով: Այստեղ ահա ճանապարհները բաժանվում են, այստեղ արդեն հայրերն ու որդիները միմյանց չեն հասկանում:

Նորերի, որդիների ամենատաղանդավոր ներկայացուցիչը գրականության մեջ 23—24 տարեկան մի երիտասարդ էր, Կ. Պիսարև, որի գրվածքները (նա գրում էր բանտի մեջ) այդ ժամանակ հափշտակությանը կարողում էր ամբողջ ինտելիգենտ Ռուսաստանը: Պիսարևը մի հերոս ուներ, մտածող, առաջադիմող ռեալիստ. այդ հերոսի ամբողջ ձգտումն է անհատի կատարյալ ազատագրությունը, նա պիտի կատարելագործվի, զարգանա գրական գիտությունների դեկավարությանը: Եվ այդ պատճառով Պիսարևը վերին աստիճանի ոգևորված եղանակով հրավիրում էր գրողներին ժողովրդականացնել պատմական և բնական գիտությունները և ինքն էլ միևնույն ժամանակ իր գործունեության գլխավոր մասը նվիրում էր այդ գործին:

Պիսարևը չէ ճանաչում հեղինակություններ. նա կրկնում է՝ «մենք աղքատ ենք և հիմար» ու պահանջում է կրթություն, գրական կրթություն, և ամեն բան, որ միտք չունի ռեալական կյանքի տեսակետից, նա համարում է ապագայուն, անհասկանալի: Հարկավոր է խելացի, օգտակար աշխատանք: Աշխատանք և աշխատանք: Թող անկախ ու ազատ լինի անձնավորությունը, թող ես ինքը որոշե իր ուժերը, և այն, թե ինչպես և ինչ ասպարեզում կարող է գործադրել նրանց: Այսպիսով յուրաքանչյուր մարդ նախ և առաջ կտնտեսի ուժերը: Իսկ ուժերի տնտեսելը մի մեծ սկզբունք պիտի լինի մարդկության համար:

¹ Տե՛ս իմ «Ստեփանոս Նաղարյանց», 1902:

Ահա ինչ հոսանքներ էին տիրում վաթսուներկու թվականների երկրորդ կեսում, ահա ինչ մտքեր էին հափշտակում այն ժամանակվա երիտասարդութունը: Մեր Գրիգոր Արծրունին այդ իսկ ժամանակվա արդյունքն էր: Նա Պրասարևի ուղած հերոսներից մեկն էր՝ մտածող, առաջադիմող ռեալիստ:

Շատ և շատ ցավալի է, որ մենք չունինք Գրիգոր Արծրունու ուսանողական տարիների մանրամասն պատմությունը: Այս հանգամանքը մեզ այսօր թույլ չէ տալիս տեսնել, թե ինչպես մշակվեց նրա մեջ մտածող ռեալիստի տիպը, ինչ շրջանակներից, ինչ ազդեցություններից նա քաղեց այն սկզբունքները, որոնք այնուհետև հաստատվեցին նրա մեջ, ձուլվեցան նրա գոյություն հետ:

Միայն այնքանը գիտենք, որ Գրիգորը Պետերբուրգում մտավ հայ ուսանողության շրջանը: Երբ գործ ենք անում «հայ ուսանողական շրջան» անունը, չպիտի մոռանանք, որ դա նշանակում է գլխավորապես աղաքանական հողի վրա գոյություն ունեցող մի համախմբում: Հայ երիտասարդների այդ տեսակ համախմբում մենք առաջին անգամ, քսանական թվականների վերջից, տեսնում ենք Դորպատում: Ահա նա «Հյուսիսսփայլի» ժամանակներում գոյություն է ստանում Մոսկվայում, իսկ այստեղից անցնում է և Պետերբուրգ: Պետերբուրգյան հայ ուսանողի ամենահեռանդոտ, անխոնջ նախատիպը Ռափայել Պատկանյանն էր: Մինչդեռ հիսնական թվականներին նա, համարյա մենակ, հայերեն տպագրություն սկսեց հյուսիսային մայրաքաղաքում և շատ բան տվեց, գլխավորապես իր ամենազիջեցիկ ուսանավորները: Այդ գործունեությունը հետզհետե գրավում է հայ երիտասարդներին և Պետերբուրգում սկսվում է մի գրական փոքրիկ ժամանակամիջոց, որ չէ կարող մոռացվել մեր պատմության մեջ:

1859 թվականին Պետերբուրգում երկու աղաքանական հիմնարկությունների միտք է ծագում. մագիստրոս Կարապետ Եզյանց ուղում է բաց անել մի դպրոց՝ հատկապես հայ երիտասարդներին օտարացումի վտանգից ազատ պահելու և նրանց ազգային կրթություն տալու համար, իսկ Մ. Բուզադյանց հայերեն լրագիր հրատարակելու թույլտվություն է խնդրում, բայց չէ ստանում: Հայերեն լրագրի միտքը Պետերբուրգում իրագործում է Ռափայել Պատկանյանը, որ ուսումն ավարտելուց հետո բնակություն է հաստատում մայրաքաղաքում, բաց է անում սեփական տպարան, տպագրում է գրքեր, իսկ 1864-ից սկսում է «Հյուսիս» լրագիրը: Պետերբուրգի հայ գաղութը ունեւ այդ ժամանակներում բավական աչքի ընկնող գրական գործիչներ: Այդտեղ էր երիտասարդ գիտնական Քերովը և Պատկանյանը, այդտեղ էր Ռափայելի հայրը, բահանայական աստիճանից զրկված Միքայիլ Միանսարյանը: Հայ ուսանողությունը այդպիսով ուներ շատ հարմարություններ՝ իր ազգի ցավերի մասին մտածելու և նրա մտավոր շահերին նվիրվելու համար:

Հանգուցյալ Երիցյանը պատմում է, որ բացի հայ ուսանողական ժողովից, Պետերբուրգում կրթվող երիտասարդները ունեին և մի այլ շրջան, Կարապետ Եզյանցի ընտանիքը, ուր նրանք գտնում էին սիրալիր հյուրասիրություն և ուր խոսքն ու գրույցը պատում էր հայության շուրջը: Այստեղ էին լինում և Արծրունի եղբայրները: Գրիգորը, որ դեռ գիմնազիայում հայտնի էր իբրև տարու վառվառն երիտասարդ, սկսում է առանձնապես հետաքրքրվել հայոց հասարակական և գրական հարցերով: Նրա ընկերակիցների մեջ ոչ ոք նրա պես տոգորված չէր վաթսուներկու թվականների երկրորդ սերնդի գաղափարներով: Հանրամարդկային, ընդհանուր առաջադիմական իդեալները գտնում են նրա մեջ մի շերտնուսեց երկրպագու, բայց այդ երկրպագուն չէ մնում աղաքանական գաղափարներից դուրս, կոսմոպոլիտ, այլ մասնավորում է իր գործը:

կոսմոպոլիտ, նվիրելով նրան ամբողջապես իր ազգին. նա գտնում է հանրաժողովրդային առաջադիմական ձգտումները ազգայնացնող, դառնում է մտածող և առաջադիմող ռեալիստ, հատկապես հայերի համար:

Երիցյանի վկայությունից մենք տեսանք, որ Մոսկվայում, 1864-ին, Գրիգորը հեռու էր պահվում հայ շրջաններից և դարձանում էր, որ ուսանողական ժողովը հայերեն չեզոք է գործածում, կարծես թե աշխարհի մեջ չկա մի այլ լեզու: Միջոց չունենալով ստուգելու, թե որքան ճիշտ է սա, մենք, այնուամենայնիվ, թույլ ենք տալիս մեզ կարծելու, որ հանգուցյալ հնագետի այդ խոսքերի մեջ կա շափաղանցություն: Եվ այսպես վարվելու մեզ իրավունք է տալիս այն հանգամանքը, որ հենց հաջորդ տարին, 1865-ին, Գրիգորը ոչ միայն այդպես չէ վերաբերվում հայերենին, այլև գրում է երկու հոդված հայ լրագրում: Այդքան կարճ միջոցում այդպիսի խիստ փոփոխություն, շատ հասկանալի չէ: Ամենևին չհերքելով, որ շրջանը կարող էր վճռական ազդեցություն անել, արմատապես փոխել աշխարհայացքները, մենք, այնուամենայնիվ, ուզում ենք հավատալ, որ այդ կերպարանափոխության սկիզբը դրվեց Մոսկվայում, այն ժամանակից, երբ Գրիգորը, ազատվելով իր նախնական դաստիարակության կապանքներից, իր արիստոկրատ ընտանիքի նախապաշարժունքներից, ոտք դրեց ուսանողական աշխարհում իբրև հասունացած երիտասարդ, իբրև տպավորվող, ժամանակի ողին հեշտությամբ ըմբռնող մարդ:

Մակայն դա այնքան էլ կարևոր չէ: Փաստը այն է մնում, որ Արծրունին իր ուսանողության երկրորդ տարուց սկսում է գրել հայերեն: Առաջին հոդվածը տպվեց «Մեղու Հայաստանի» լրագրում 1865-ի ապրիլին (№ 13 և 14) և ունի այսպիսի վերնագիր. «Բնական գիտությունների նշանակությունը դաստիարակության մեջ»: Իբրև բնական գիտություններ սովորող, բայց մանավանդ իբրև հարազատ զավակ իր ժամանակի, երբ Ռուսաստանում լուրջ և առողջ ռեալիզմը առանձին ողևորությամբ ուսումնասիրում էր բնական գիտությունները, Արծրունին, իհարկե, այդտեղից պիտի սկսեր: Այս առաջին իսկ քայլում խոստով է նրա մեջ կյանքի, գրական պահանջների մարդը: Իսկույն երևում է, որ մեր սկսնակ գրողը «Հյուսիսսփայլի» ուղղության մարդ է. նա պարզանցի ամսագիրը, ինչպես գիտենք, առանձին ուղղություն էր դարձնում բնական գիտությունների վրա: Մանավանդ որքան «Հյուսիսսփայլական» շեշտեր ենք գտնում Արծրունու հետևյալ տողերի մեջ. «Մենք էլ ունինք լատիներեն լեզվի նման մի լեզու՝ մեր գրաբարը, ունինք նաև Աստվածաշունչ, բրիստոնեական հրահանգ և այլն, որոնք թեպետ շատ հետաքրքիր և օգտակար առարկաներ են, բայց երեխանց համար անհասկանալի և ուրեմն վերադարձի ենք ճշմարիտ, ամենին մեղանից հայտնի է, ինչ դժվար է և ձանձրալի ելելիս համար գրաբարի հոլովմունքներ և խոնարհմունք սովորել, կամ թե Սահրի գրքով Աստված բառի նշանակությունը մեկնել»:

Երկրորդ հոդվածը, որ տպվեց գրանից քիչ հետո նույն «Մեղուի» մեջ, անվանված է «Երկու խոսք աղջկերանց դաստիարակության վրա»: Այստեղ Արծրունին ցույց է տալիս տապալ գործունեության ամենանշանավոր ճշուգրից մեկը՝ կանանց կրթության և ազատագրության պաշտպանությունը: Այս մասին մենք մի քիչ հետո կխոսենք: Այժմ բերենք մի կտոր, որի մեջ քսան տարեկան ուսանողը հանդես է գալիս իբրև մայրենի լեզվի շերտ պաշտպան: «Մայրաքաղաքներումը, — ասում է նա, — մեր տնային կրթության մեջ կա մի ուրիշ անպիտան կողմն էլ: Երեխերը մոռանում են իրանց մայրենի լեզուն, երբեմն զրկվում են իրանց զարգացման բնական միջոցից. կորցնում են սերը գեպի իրանց ազգը և շատ անգամ էլ ատում են իրանց հայրենակիցներին»:

եմ միևնույն ժամանակը ինչպես հայրերը, նույնպես և որդիքը, շափազանց հպարտ են և ինքնահավան, երևի չնգուր, որ շունին ոչ ազգ, ոչ կրոն, ոչ լեզու, ոչ էլ առողջ միտք»:

Շատերն են մինչև այդ գրել այսպիսի դառն ու ճշմարիտ խոսքեր: Բայց այս խոսքերը մեզ համար առանձին նշանակություն են ստանում, երբ դուրս են գալիս Գրիգոր Արծրունու բերանից: Չէ՞ որ նա ինքն էլ ընտանեկան այդ տեսակ կրթության զոհերից մեկն էր, չէ՞ որ նա էլ «հպարտ և ինքնահավան» էր հենց այն պատճառով, որ շուներ «ո՛չ ազգ, ո՛չ կրոն, ո՛չ լեզու»: Այստեղ մեր առջև կանգնած է օտար ու խորթ կրթության պտուղներից մեկը, որ հակացել է դրության անբնականությունը և խոստովանում է իր ծնողների մեղքերը:

Դուրս գալով հայկական իրականությունից, Գրիգոր Արծրունին հենց իր առաջին քայլերից ներկայանում է նախ և առաջ իբրև սաստիկ, անխնա բողոք այդ իրականության այլանդակությունների դեմ: Եվ նրա բողոքի առարկան ամենից առաջ այն շրջանը պիտի լիներ, որ ամենից շատ էր նրան ճնշել, արսինքն ընտանիքը: Իր ուսանողության երկրորդ տարում նա արդեն կանգնած է այն ճանապարհի վրա, որ նրա ամբողջ կյանքի փայլուն ճանապարհը պիտի դառնար: Արդեն յուրացրել էր որոշ, հաստատուն աշխարհայեցողություններ, հասկացել էր մայրենի լեզվի նշանակությունը, բողոքողի դերը քնած ու նախապաշարված հասարակության մեջ: Նա գիտե, թե ինչպես է ծառայել մի այդպիսի ժողովրդին և իր առաջին հորվածի համար նշանաբան է առնում Գյոթեի խոսքերը. «Դու չես կարող մի մեծ բան շինել ու ահա սկսում ես փոքր բանից»: Սա դրոշակ է, սա գործունեության մի ամբողջ ինքնուրույն ծրագիր է: Արծրունին իր ամբողջ կյանքում նկատի ուներ, որ այդպես է հայ ժողովուրդը և այդ պատճառով ամեն ինչ սկսում է այբուբենից, տարրականից, բոլոր հարցերը նա քննում է վերին աստիճանի պարզ, հանրամատչելի կերպով, բազմաթիվ անգամ կրկնում է իր ասածները, լուսաբանում և արծարծում է իր գաղափարները: Իր դաստիարակչական դերը կատարելու համար նա բնութագրից ստացել էր մի անգին զարգ` պարզ ու կտրուկ խոսելու շնորհ: Այդ երկնային շնորհը նա ցույց է տալիս իր առաջին գրվածքներից:

Արծրունին զգում էր իր կոշտը: Եվ այդ պատճառով նա շքամկանացով «Մեղուիկն» աշխատակցեցրելով: Մի անկախ և ըմբաստ բնավորություն, նա չէր կարող բացվել, ստեղծել, եթե շունենար խոսքի սեփական, անկախ գործիք: Եվ մենք տեսնում ենք, որ նա դեռ նույն 1865-ին սկսում է մտածել սեփական լրագիր հիմնելու մասին:

Պատմում են, որ Արծրունին մի առանձին սեր ուներ դեպի լրագիրը պե՛տ մանկությունից: Դեռ Մոսկվայում, ասում են, փոքրիկ Գրիգորը խմբադրու՞մ է ֆրանսերեն լեզվով մի լրագիր, որի ընթերցողներն ու բաժանորդները նրա փոքրահասակ քույրերն ու եղբայրներն էին: Այս երեխայական գործից մեկ ուշինչ եզրակացություն հանել չենք ուզում. գուցե դա մի զվարճություն էր միայն, որի իսկական միտքը նա չէր էլ ըմբռնում: Բայց ահա 1865-ին նա, համալսարանական ուսանող, արդեն հայ գրող դարձած, լրագրական գործի նվիրվելու միտքն է հաստատում իր մեջ: Այստեղ արդեն չենք կարող ուրանալ կատարյալ գիտակցությունը. այստեղ արդեն Արծրունին հանդես է գալիս իբրև իր ապագա գործունեության որոշ ծրագիր կազմած մի երիտասարդ:

Եվ լրագիրը հրատարակելու միտքը նա ծածուկ չէ պահում իր մեջ: Մի օր նա հանդիպում է Միքայիլ Նալբանդյանցին: «Մեր հայրենիքի» և «Ազատ աստվածի» հեղինակը նոր էր դուրս եկել բանտից: Նա Երեմիա Արծրունու լավ

մտնողն էր դեռ Մոսկվայից. իսկ երբ գնում է էջմիածին, Թիֆլիսում հաճախ այցելում էր Երեմիային և ճանաչում էր նրա երեխաներին: Խոսակցություն էր Գրիգորը հայտնեց Նալբանդյանցին, թե դիտավորություն ունի մտնել հայ հասարակախոսության ասպարեզը: Նալբանդյանցը խրատուսում էր նրան, խախտություն էր տալիս այդ մտքին, միևնույն ժամանակ հարկ է համարում խրատներ տալ նրան, խրատներ, որոնք հիմնված էին նրա փոթորկալից կյանքի փորձի վրա: Նա ցույց է տալիս իրան: Մարսափելի հիվանդությունը արդեն բոլորովին կրծոտել էր այդ կրակոտ մարդուն. «Հյուսիսափայլի» աշխատակիցը մի քանի ամսվա հետո էր այս աշխարհում: Բացատրելով իր պոլիսն եկած փորձանքների պատճառը, Նալբանդյանցը խորհուրդ է տալիս Արծրունուն գործել բացարձակ, օրինական ճանապարհի վրա, հեռու մնալ ռուս հեղափոխական գործիչներից: Եվ Արծրունին պատմում էր, որ իր վրա խոր տպավորություն գործեց Նալբանդյանցի այդ խրատը: Եվ իրավ, նա իր ուսանողության տարիներում չհափշտակվեց ժամանակի քաղաքական շարժումներով: Թացի Նալբանդյանցից, Արծրունին ուրիշ ուսանողներին էլ հայտնել է իր այդ միտքը:

Պետերբուրգում Գրիգորը երկար ապրել չկարողացավ: Նույն 1865 թվականի վերջերում նա սաստիկ հիվանդացավ, սկսեց արյուն թքել: Այնքան ռաստիկ էր հիվանդությունը, որ մի անգամ, երբ նա գնում էր բժշկի մոտ, փողոցով անցնողների ուշադրությունը գրավեց: Այնքան հաճախ հազում և արյուն էր թքում նա, որ անցուդարձ անողները զարմացած նայում էին ձյունի վրա կազմվող արյան բծերին և գլուխները շարժելով, շարունակում էին իրանց ճանապարհը: Գրիգորը դիմում է Պետերբուրգի նշանավոր բժիշկներին, բայց ամենքն էլ հայտնում են, որ նա չի ապրի: Նույն այդ վճիռն է արձակում և Նալբանդյանցը բժշկապետ պրոֆեսոր Բոտկինը, որին ի վերջո դիմել էր Արծրունին: Բոտկինը Գրիգորի մեծ եղբայր Գեորգի համալսարանական ընկերն էր, ուստի և մեծ սիրով ընդունեց հիվանդին, քննեց ամենայն խնամքով, անկեղծ կերպով ցանկանում էր օգնել իր մտերիմ ընկերի եղբորը: Բայց հմուտ պրոֆեսորն էլ գալիս է այն եզրակացության, որ ազատել երիտասարդի կյանքը անհնարին է: Գրիգորը պահանջում է, որ բժիշկները իր երեսին հայտնեն ամբողջ ճշմարտությունը, ասելով թե ինքը չէ վախենում մահից: Եվ երբ լսում է սարսափելի դատավճիռը, չէ հուսահատվում, այլ վճռում է գործ զննել վերջին լիցյաները:

Բժիշկները ասել էին, որ նա երկու ամսից ավելի չի ապրի: Հաղորդելով այդ բանը իր հորը, Գրիգորը հայտնում էր նրան, թե ինքը լավ է համարում անցկացնել իր կյանքի այդ վերջին ամիսները Փրանսիայի Նիցցա քաղաքում, որ հայտնի է իր տաք կլիմայով: Երեմիան թույլ է տալիս գնալ և Գրիգորը անմիջապես ճանապարհվում է Նիցցա, ուր և բնակություն է հաստատում:

Նիցցան Արծրունին նկարագրել է իր «Էվելինա» վեպի մեջ, որի գլխավոր լեռան էլ, ի դեպ ասած, ինքն է: Զմեռը հրաշալի է Նիցցան և այդտեղ նա գալիս Եվրոպայի զանազան կողմերից կրծքի հիվանդություն ունեցողները: Միջերկրականի ծովափը շատերի համար է դառնում գերեզման, բայց երիտասարդ հասակը, առողջապահական կանոնների համաձայն կյանք վարելը բարերար ազդեցություն են անում Արծրունու վրա: Նա ապրում է Նիցցայում լի լի ամիս և կենդանանում է: Այդ յոթ ամսվա ընթացքում նա մի բառ չէ արտասանել, որովհետև բժիշկները արգելել էին խոսել: Նա պառմում էր, որ էր հյուրանոց էր դնում ճաշելու և ծառան բերում էր կերակուրների ցուցակը, եւ, որպես համր, մատը դնում էր ուղած կերակուրի վրա և այդպես ցույց

տալիս, թե ինչ է ուզում ուտել¹։ Վտանգը, շնորհիվ այդպիսի կեցութեան և տաք ու մեղմ կլիմայի, անցնում է։ Գարնանը նա բոլորովին առողջ էր։ Սկսվեցին նիցցայի անտանելի տաքերը։ «Բժիշկների խորհրդով պետք է փախչի նիցցայից, — կարգում ենք «էվելինայի» մեջ։ — Գաղաքը թողնելուց առաջ ելուզեցի հանել տալ լուսանկարս, որպեսզի իմ կենդանագիրս ուղարկեմ Կ. Պոլիս² ծնողներին, նրանց ցույց տալու համար, թե առողջացել եմ։ Բայց երբ ստացա լուսանկարս, դարմացած մնացի... Մի՞թե ես այդ աստիճան չաղայի էի... Ես աչքերիս չէի հավատում...»։

Մահից ազատվելով, նորից ստանալով իր երիտասարդական ուժերն ու եռանդը, Արծրունին շտապում է վերանորոգել իր պարապմունքները, որոնց ընդհատել էր սարսափելի հիվանդությունը։ «Ուրեմն ես կատարելապես առողջ եմ, մտածեցի ես, ուրեմն և կարող եմ այստեղ՝ արտասահմանում շարունակել և ավարտել համալսարանական ուսումս», — ասում է «էվելինայի» հերոսը Պետերբուրգ վերադառնալու մասին, իհարկեպէս էլ կարելի մտածել։ Նա մնում էր Եվրոպայում, հեռու, շատ հեռու իր ընտանիքից և հայրենի հասարակությունից։ Նա ճաշակեց այնքան հեռավորության տված բարիքները և այնուհետև իր հոգվածներում պնդում էր, թե ամեն մի երիտասարդ հայ, որ կամենում է ազատ և բազմակողմանի զարգանալ, չուրացնել եվրոպական քաղաքակրթությունը, պիտի շատ և շատ հեռանա իր տանից ու քաղաքից։

«Բժիշկը խորհուրդ էր տվել ինձ երկու շաբաթից հետո գնալ Շվեյցարիա և այնտեղ անցկացնել ամառը։ Ես վճռել էի գնալ Ցյուրիխ, որտեղ կարող էի համալսարանական դասախոսություններին հետևել»։ Այդպես էլ անում է նա Բնակություն հաստատելով Շվեյցարիայում, նա ուսանող է գրվում Ցյուրիխի համալսարանում, սկսում է եռանդով պարապել։ Միևնույն ժամանակ վերանորոգում է իր դրական գործունեությունը, որի սկիզբն էր դրել Պետերբուրգում։ 1866 թվի ընթացքում Թիֆլիսի հայոց պարբերական մամուլի մեջ լույս չտեսավ Արծրունու և ոչ մի հոդվածը։ Բայց հետևյալ տարվանից նա սկսում է կանոնավոր կերպով աշխատակցել գլխավորապես «Հայկական աշխարհ» մամուլին, երբեմն-երբեմն հոդվածներ ուղարկելով նաև «Մեղուին»։

Առաջին գրվածքը, որ Արծրունին ուղարկեց «Հայկական աշխարհին» մի գեղեցիկ հոդված էր «Աշխատենք» վերնագրով, քաղվածք էր մտնող Արծրունու «Le Progrès» անունով գրքից։ Այդ հոդվածը, որի մեջ այնքան սիրուն կերպով բացատրված է աշխատանքի նշանակությունը, Արծրունին կազմել էր փնջվում 1866-ի նոյեմբերին։

Ցյուրիխի համալսարանում Արծրունին երկար չէ մնում, այնտեղից տեղափոխվում է Փնև, բայց շուտով այդ տեղն էլ է թողնում։ 1867-ին նա անցնում է Գերմանիա և այդտեղ ուսանող է մնում Հելդերբերգի համալսարանի Ցյուրիխում և Փնևում նա գլխավորապես լսում էր քաղաքական և քաղաքատնտեսական գիտություններ, իսկ Հելդերբերգի համալսարանի փիլիսոփայությունից ֆակուլտետում՝ քաղաքատնտեսության պատմությունը, ֆինանսները և առհասարակ քաղաքատնտեսական գիտությունները, միաժամանակ գրվել էր և բնագիտական բաժնի մի քանի դասախոսություններին։ Այդ բոլոր առարկաներից դասախոսում էին այնպիսի նշանավոր պրոֆեսորներ, ինչպես Է. Բլունչի, Ռաու, Տրեյկե, Կնիս, Հելմհոլց, Վոնդ։ Եվ Արծրունին ընտրեց զինքն

ությունն այդ ճյուղերը, նկատի ունենալով իր նպատակը՝ հայերեն լրագիրը արտարակելը։

Համալսարանական պարապմունքները չէին մոռացնել տալիս Արծրունուն հայոց մամուլը և նա մեծ եռանդով շարունակում էր իր աշխատակցությունը։ Երազրվածքները աննկատելի չէին անցնում, ընդհակառակը՝ գործում էին խոր ապավորություն և փոքրաթիվ ընթերցող հասարակության մեջ ստեղծում էին համակրանք դեպի երիտասարդ հեղինակը։ Այստեղ մենք դեռ այդ գրվածքների մասին չենք խոսում։ Հետաքրքրականը այստեղ այն է, թե ինչպես Արծրունու մեջ կազմակերպվեց որոշ աշխարհայեցողություն, որոշ ու խիստ ուղղություն։

Մենք տեսնք մեր եռանդոտ ուսանողին Ռուսաստանում, տեսնք, որ ես վաթսուական թվականների երկրորդ կեսի մարդ էր, այսինքն մտածող աշխատանքի քարոզիչ։ Այդ պաշարով նա անցավ Եվրոպա։ Քաղաքակիրթ, ազատ երկրների մեջ նա ավելի ևս հարստացնում է այդ պաշարը, ավելի ևս այն հորիզոններ է տեսնում, դրական գիտությունների մեջ հմտանում է, կրթվում։ Հիմնավորապես դաստիարակվում։ Նրան դաստիարակում էր ոչ միայն բարձրագույն դպրոցը, այլև կյանքը իր բազմաթիվ երևույթներով, հասրուստ դրականությունը։

Հետաքրքրական է պատկերացնել Արծրունու ուսանողական կյանքը, տեսնել, թե ինչ էր անում, ինչպես էր աշխատում, ինչ տպավորություններ էր վերցնում ուսանողական միջավայրերից։ Քանի որ շկան այդ մասին տեղեկություններ, մենք դարձյալ պիտի գիմենք «էվելինային», շմոռանալով որ այդ վեպի հեղինակը «ես» անունով գործող անձի մեջ իրան է նկարագրել։ Ահա ինչպես է նկարագրում իր կյանքը Ցյուրիխում. «Ես կատարելապես առողջացած էի զգում ինձ և պարապում էի մեծ եռանդով, ուսանողական գործունեյա կյանքը կլանել էր ինձ իր մեջ ամբողջապես։ Այդտեղ գրավում էր ինձ և մի նոր երևույթ, նոր ոչ թե միայն ինձ համար, բայց և ամբողջ Եվրոպայի համար... Ուղիղ այդ ժամանակ երևացին Ցյուրիխի համալսարանում երկու ուսանողներ, Եվրոպայի համալսարանների առաջին ուսանողներ, կանանց բարձրագույն կրթության մարմնացած կարապետներ... Ես շտապեցի ծանոթանալ նրանց հետ և այն օրից հափշտակվեցա հասարակական նոր խղիչներով։ Այդ երկու կանանց շուրջը խմբվում էինք մենք՝ այլևայլ ազգությունների պատկանող ուսանողներս. նրանք, այդ կանայք էին, որոնք կազմում էին ուսանողների այդ բոլոր տարբեր խումբեր իրար մեջ կապող օղակը...»։

Այդ ուսանողների մասին Արծրունին մի հոդված ունի «Հայկական աշխարհի» մեջ (1869)։ «Հասարակական նոր խղիչներ», որոնց յուրացնում է պամարդը կնոջ ազդեցության տակ, այս մասին շատ է գրել Արծրունին, այս ելույթի վրա է հիմնված նրա «էվելինան»։ Կինը, ինչպես վկայում է ինքը՝ Արծրունին, 1891 թվականին գրված իր մի առաջնորդող հոդվածում, մեծ դեր է կատարել նրա մտավոր աշխարհի մեջ, նրա հասարակական խղիչների կազմակերպելու, ամբանալու մեջ։ Եվ հենց այդ է պատճառը, որ Արծրունին մեղանում կնոջ իրավունքների, կնոջ զարգացման, ազատագրության ամենատեսիլն էր և ամենաջերմ կողմնակիցն է եղել սկզբից մինչև վերջ։

«Առավոտները, — շարունակում է «էվելինայի» հեղինակը, — ես լսում էի դասախոսությունները համալսարանում, ճաշից հետո պարապում էի մասնագիտությանս՝ քաղաքատնտեսության վերաբերյալ ընթերցանությամբ, իսկ երեկոյանները փորձում էի իմ թույլ ուժերս հայրենիքիս, Կ. Պոլսի հայոց լրագիրը»։

¹ «Մշակ», 1892, № 147։

² Վեպի մեջ Արծրունին, իր անձնավորությունը քողարկելու համար, անվանում է իր պոլսեցի։ Դա միակ կենսագրական անճշտությունն է վեպի մեջ։

ներին թղթակցութիւններ գրելում... Գրվածներս սկսում էին ավելի հաճախ
երևալ Կ. Պոլսի պարբերական մամուլի էջերում: Ես ուզում էի գրել, միշտ պրի-
անընդհատ կերպով գրել:

Սա ճիշտ է, սրա ապացույցն է «Հայկական աշխարհի» և «Մեղուի» մեր
փոխած հոդվածների բազմութիւնը: Հայրենիքը երբեք չէր մոռացվում, չէր
դադարում նրա մտածմունքների առարկան լինելուց: Բայց ինչպե՞ս էր նա
ճանաչում իր հայրենիքը, ի՞նչ գաղափար էր կազմել իր ազգի մասին: Ուսա-
նողական տարիները թե՛ Ռուսաստանում և թե՛ Եվրոպայում մտցրել էին նրան
հանրամարդկային լուսավոր, առաջադեմ գաղափարների մեջ: Նա մկրտվեց
այդ ավազանում, ուխտեց իր ամբողջ ուժերը նվիրել իր ժողովրդին: Այժմ
շատ կարևոր է իմանալ, թե ի՞նչ էր տեսնում նա այդ ժողովրդի մեջ և նրա
ուխտը ի՞նչ էր պարունակում իր մեջ:

Բարեբախտաբար, այս նշանավոր հարցի վերաբերմամբ Արծրունու կեն-
սագրութիւնը գրողը չի խարխափի ենթադրութիւնների, հավանականութիւն-
ների մեջ: Ինքը՝ Արծրունին, գրել է այդ մասին 1880 թվականին, այն ժամա-
նակ, երբ նա կրակոտ եռանդով բանակով էր մղում կրոնական հարցի առի-
թով: Գրվածքը անվանված է «Իմ խոստովանութիւնը»¹: Եվ որովհետև այդ
խոստովանութիւնը չափազանց կարևոր է Արծրունուն ճանաչելու համար, ուս-
տի մենք կբերենք նրա իսկական խոսքերը, կարելի եղածին չափ ընդարձակ:

«Ապրելով,— ասում է նա,— նախ Ռուսաստան, այն է Մոսկվայի և Ս. Պե-
տերբուրգի և հետո արտասահմանի մտավոր շրջաններում, ես ակամա սկսեցի
ուշադրութիւն դարձնել ինձ շրջապատող երևույթների վրա: Ռուսը աշխա-
տում է իր ուսու ազգի համար, գրում է, դպրոցում դասատուութիւն է անում,
գրքեր է հրատարակում, համալսարանի մեջ դասախոսութիւններ է անում
ուսու հասարակութիւնը համար:

Ես թողեցի Ռուսաստանը տկարութիւնս պատճառով և գնացի արտասա-
ման: Այնտեղ այնպիսի մտավոր կենտրոններում, ինչպես Յուրիխ, Փնև, Հելդ-
բերգ, Վիեննա և Փարիզ, որտեղ ես կացել և ուսում եմ առել, ես ավելի էի
համոզվեցա, թե ամեն ազգութիւնը պատկանող անհատը գործում է կամ
պատրաստվում է գործել իր ազգի համար:

Գերմանական համալսարանները լի են, բացի գերմանացիներով և այլազ-
գի ուսանողներով՝ ամերիկացիներով, շվեդացիներով, հուլիներով, դանիացի-
ներով, շվեյցարացիներով, ֆրանսիացիներով, չեխերով, բուլղարացիներով...
Եվ այդ ազգերին պատկանող յուրաքանչյուր անհատը ուսում էր առնում, ցի-
տութիւն էր սովորում, որպեսզի ժամանակով պիտանի լինի իր ազգութիւնը:

Երբ ես խոսում էի այդ այլևայլ ազգութիւններին պատկանող ընկերու-
րիս հետ, ես նախանձում էի նրանց, որովհետև նրանցից յուրաքանչյուրը
խոսում էր իր ազգութիւն, իր հայրենիքի, իր մայրենի լեզվի մասին: Ընկեր-
ներիս հետ խոսելով ես երբեք չէի հարցնում, թե ինչ կրոնի է պատկանում
նրանցից յուրաքանչյուրը, այլ ինչ ազգութիւն է պատկանում նա: Եվ միայն
անգամ բուլղարը, ռումիացին, չեխը, սերբացին, որոնք անկախ քաղաքական
կյանք չունեն, այնուամենայնիվ խոսում էին իրանց հայրենիքի, իրանց ազ-
գութիւն, իրանց մայրենի լեզվի, իրանց դպրոցների, իրանց հայրենի գրակա-
նութիւն ու մամուլի մասին:

Միայն մենք, սակավաթիվ հայերս, նույնը ասել չէինք կարող մեր մա-
սին, որովհետև չունեինք դեռ այն ժամանակ մայրենի լեզու, գրեթե չունեինք

գրոցներ, չունեինք նոր գրականութիւն, չունեինք մամուլ, չունեինք վեր-
տոյիս ազգութիւն վրա գաղափար, չունեինք ազգային ինքնաճանաչութիւն:

Եվ ահա ինչ էր երիտասարդ հայի գրութիւնը, ինչ էր մանավանդ երի-
տասարդ հայ գրողի գրութիւնը, որ գրիչը ձեռքին, փորձ էր փորձում ինքն
է օգտավետ հանգիստանալ իր մայրենի գրականութիւն ու լրագրութիւն ասպա-
րեզում, փորձ էր փորձում ինքն էլ պատրաստվել, հմտութիւններ ընդունել,
պապազում իր ազգին օգտավետ լինելու համար, և միևնույն ժամանակ իր
տղի ազգութիւն չէր տեսնում, այլ տեսնում էր մի կրոնական աղանդ:

Ինչպե՞ս գործեմ ես իմ ազգութիւն համար, ասում էի ես ինքս ինձ, երբ
որ պարզ տեսնում եմ, թե մի որոշ ազգութիւնը չեմ պատկանում, իսկապես
այնչ ազգութիւն չունիմ, այլ պատկանում եմ միմիայն մի կրոնական աղան-
դի, պատկանում եմ մի ցեղին, որ գուցե մի ժամանակ եղել է մի ազգութիւն,
բայց այժմ այլևս ազգութիւն չէ, չունի ազգային ինքնաճանաչութիւն, այլ
միայն մի աղանդ է:

Ես ակամա սկսում էի հիշել իմ մանկութիւն և պատանեկութիւն ժամա-
նակ ինձ շրջապատած երևույթները, սկսում էի հոգեբանապես քննել և զննել,
թե ինչ բան է հայը:

Երբ սկսում էի հիշել, թե երբ որ մարդը հարցնում էր լուսավորված հա-
յին, թե նա ո՞վ է, նա շատ անգամ ամաչում էր խոստովանել, թե հայ է, իսկ
այն պատասխանում էր թե հայ է, իրան այդ անունը տալով չէր հասկանում
այդ բառով ազգութիւն գաղափարը, այլ միայն այսինչ եկեղեցուն պատկա-
նելու: Հայը այն պատճառով հայ չէր, որ հայոց ազգութիւն էր պատկանում.
այլ այն պատճառով հայ էր, որ հայոց եկեղեցուն էր պատկանում: Ուրեմն
նրա մեջ չկար դեռևս ազգային ինքնաճանաչութիւն, այլ միայն կրոնական
մի աղանդին պատկանելու համոզմունքը: Եվ այդ խոսքը՝ «ես հայ եմ», հայը
մեծ մասամբ արտասանում էր մի որևէ օտար լեզվով, որի այբբենարանը ան-
չամ նրան ծանոթ չէր:

Նույնը, երբ հարցնում էի մի ռամիկ հային, թե դու ո՞վ ես: «Հայ քրիս-
տոնյա եմ»,— լսվում էր պատասխանը:

...Հայը իր ազգութիւնը ազգութիւն մեջ չէր տեսնում, նրան անհայտ էր
ազգային գաղափարը, այլ տեսնում էր իր հայ լինելը միմիայն աղանդի,
եկեղեցու մեջ: Պարզ է, որ փոխելով կրոնը, նա կարծում էր, որ փոխում է և
ազգութիւնը, կաթոլիկ դառնալով նա այլևս հայ չէր լինում, այլ նա դառնում
էր ֆրանկ, բողոքական դառնալով նա դառնում էր Գեմեց, մահմեդական դառ-
նալով նա դառնում էր բուլբ կամ պարսիկ և այլն...

Կաթոլիկ հային չէր կարելի մեղադրել, որ նա իրան ֆրանկ է անվանում,
բողոքական հային չէր կարելի մեղադրել, որ նա իրան նեմեց է անվանում,
բովհետև հայ-լուսավորչական եղած ժամանակ նույն հայը նույնպես իրան
հայ չէր համարում հայրենիքով և լեզվով, այլ միայն կրոնով հայ:

...Ես հիշում էի նույնպես, որ հայ լինելու համար բոլորովին ավելորդ էր
հայրենի իմանալ ոչ թե միայն կյանքի մեջ, այլ նույնիսկ եկեղեցու խորհուրդ-
ները կատարելու ժամանակ... Թո՛ղ հայրենիքը, թո՛ղ պատմական, հայրենի
նուր, մոռացի՛ր մայրենի լեզուդ, ինչ փուլթ, դու դարձյալ հայ ես, եթե հա-
րութիւն նշուն էլ չպահելով, կերթաս Հնդկաստան, Չինաստան և այնտեղ կշա-
րեմական քեզ հայ-լուսավորչական կոչել:

Եվ ահա հայ երիտասարդ գրողը, հափշտակվելով այն օրինակով, որ
տեսնում էր իր շուրս կողմը, տեսնելով, որ հույնը գործում է իր հույն ազգի

¹ «Մշակ», 1880, № 164:

համար, բուլգարացին՝ իր բուլգար ազգի համար, և այլն, երբ կամենում էր նույնն անել և իր ազգության համար, հանկարծ նկատում էր, թե իր ոտքերի տակ գետին չկա, թե իր առաջ չկա մի մարմին, որ ազգություն կարող է համարվել:

...Կարող եք երևակայել արդյոք այն բարոյահան, հոգեկան տանջանք, որ զգում էր երիտասարդ հայ գրողը, հասնելով այդ անմխիթար եզրակացությունը. «ես ոչ մի ազգության չեմ պատկանում, ևս կրոնական մի սեկտայի, մի աղանդի անդամ եմ միայն, ուրիշ ոչինչ, ուրեմն հենց որ իմ ցեղակիցներս այս կամ այն պատճառով կսկսեն մեծ բազմություններ կրոնափոխ լինել ազգություն այլևս չի լինի, որովհետև հիմա էլ չկա, որովհետև հիմա էլ հայությունը հիմնվում է ոչ թե տեղական անփոփոխ հիմունքների՝ հայրենիքի ցեղի ու մայրենի լեզվի վրա, այլ մի պրինցիպի վրա, որ ամեն տեղ, մարդ կային պատմության ամեն ժամանակներում համարվում էր, համարվում էր կհամարվի մի փոփոխական, անցողական, անձնական համոզմունքից կախված, և ոչ թե ցեղի, ազգության հետ անխզելի կապ ունեցող մի սկզբունք»:

Եվ ահա երիտասարդ հայ գրողը իր կյանքի, իր գրական ամբողջ գործունեության նպատակը պետք է համարեր իր ամբողջ ջանքերը նվիրել իր ժողովրդի և հասկացնել աղանդի և ազգության տարբեր լինելը, նրանց ազգության գաղափարի հասկացնելը, ազգի մեջ ազգային ինքնաճանաչության գաղափարի սերմանելը:

Եվ այդ արեցի ես»:

Խոստովանությունը, ինչպես տեսնում եք, վերին աստիճանի բնորոշ Արծրունու ամենազխալուր դավանությունը հասկանալու համար: Բայց թե հիմնվենք միայն այս խոստովանության վրա, միակողմանի գաղափար կարող ենք կազմել մեր գործչի մասին: Գրիգոր Արծրունին ազգայնությունը հրեա չէ հասկացել նեղ, շովինիստական մտքով: 1890 թվականին, իր գրական գործունեության 25-ամյա հոբելյանին, Արծրունին նորից դրեց հասարակության առաջ իր դավանանքների ամփոփ ու ամբողջացրած պատկերը: Դրանց նա գին, էություն է «անհատականության զարգացումը»: Ահա ինչ է նշանակում այդ միտքը. «Մարդու անհատական զարգացումը նշանակում է կատարյալ անարգել զարգացում նրա բոլոր բնական, ֆիզիկական, մտավոր և բարոյական ընդունակությունների, նրա բոլոր ձիրքերի, բոլոր հակումների, բոլոր մարդկային անձնական առանձնահատկությունների»:

Անհատականապես զարգացած անձնավորությունը առաջ է բերում բնական անհատական զարգացումը, ընտանիքների բազմությունը կազմում է համայնք, համայնքների բազմությունը՝ հասարակություն: Ապա այդ համագումարումներից գալիս է ազգությունը, բայց ոչ իբրև մի վախճանական հասկացողություն, այլ իբրև համայն մարդկության մի մասնիկ, մարդկային ընդհանուր ցեղի մի բաղկացուցիչ մաս: Ահա այսպես, անձնավորությունը ընտանիքը, հասարակությունը, ազգությունը, զարգանալով իբրև իր անձնական հատկություններն ունեցող անհատներ, ի վերջո գալիս, հասնում է իրանց նպատակին, այն է լինել պիտանի անդամ մարդկության, ծառայել համարակալին բարօրության: Այդ պատճառով էլ զարգացող անհատները պիտի ղեկավարվեն հանրամարդկային մշտնջենապես սուրբ և անխախտի զգալի արժեքներով: Եվ Արծրունին քարոզում էր այդ գաղափարները: Քարոզում էր, ինչպես ինքն է վկայում, քսան տարեկան հասակից, այն ժամանակից, երբ դեռ ուսանող էր:

Այսպես ահա մենք տեսնում ենք, որ Արծրունին մտավ հայոց գրականության ասպարեզը միանգամայն կազմակերպված իբրև հրապարակախոս, իբրև հասարակական որոշ իդեալներ ունեցող և այդ իդեալները իր մեջ մարմնացրած մի գործիչ: Մենք, իհարկե, չենք ասում, թե իր գործունեության ընթացքում նա չկատարելագործվեց, չզարգացրեց իր հայացքները: Ո՛րք Այստեղ, բնի որ մենք ծանոթանում ենք հրապարակախոսի առաջին քայլերի հետ, խոսք կարող է լինել միայն սկզբունքների, հիմնական կետերի մասին: Իսկ քանի որ անփոփոխ մնացին Արծրունու մեջ մինչև գերեզման: Ուսանողության արժեքներում նա վերցրեց, յուրացրեց դավանանքներ, կազմեց հաստատ համոզմունքներ և այդպիսի երևան եկավ մեզանում:

Մենք տեսանք Արծրունու խոստովանությունից, թե ինչ դասեր էր տալիս իրան կյանքը: Բայց Արծրունին ունի և մի այլ խոստովանություն, որ նույնպես շատ բնորոշ է և որի մասին չէ կարելի մի քանի խոսք շասել:

Դա «էվելինա» վեպն է:

Իր կյանքի նախավերջին տարիներում Արծրունին հիշեց իր երիտասարդության սերը, հիշեց, թե կինը ինչ դեր է կատարել իր կյանքում և գրեց այդ «էվելինա» վեպը: Ահա այդ գրվածքի բովանդակությունը մի քանի խոսքով: Երիտասարդ ուսանողը նիցցայում ծանոթանում է մի ֆրանսիացի աղջիկի հետ, սիրահարվում է, փոխադարձ սիրո ապացույցներ է ստանում: Երբ է այդ սերը. նա ամբողջապես գերում է ուսանողին, տիրապետում է նրա կյանքին: Սերը մի լուսատու աստղի պես առաջնորդում է նրան մտքի, զգացմունքների աշխարհում, նրա ազդեցության տակ երիտասարդը սկսում է ըմբռնել շատ բարդ հարցերի միտքը, սկսում է ավելի մեծ եռանդով նվիրվել իր պարսպամունքներին: Վերջացնել ուսումը, ամուսնանալ սիրած աղջկա հետ և վերադառնալ հայրենիք, ահա ինչ սիրուն ապագա է ծրագրել երիտասարդը:

Բայց սերը դավաճան է: Ֆրանսիացի օրիորդը հրապարակում է մի ուրիշ պատմարդով, և մեր երիտասարդը համոզվում է, որ նրա սիրտը այլևս իրան չ'պատկանում: Մերժված սերը սկսում է ջարդուփշուր անել երիտասարդի սիրտը, բայց այդ ճգնաժամին օգնության է հասնում բուժիչ գաղափարը: Մի անգամ սերիմ բարեկամ հասկացնում է հուսահատված սիրահարին, որ դեռ ամեն ինչ կորած չէ, որ կյանքը դեռ չէ կորցրել իր միտքը և դեռ կարելի է կրթնություն ճաշակել այս աշխարհում: Ծիշտ է, վիրավոր սիրտը գուցե կրկին այլևս չի վերակենդանանա՝ նորից մի կին անսահման սիրելու համար, բայց նա կարող է մոռանալ իրան հասցրած մահացու հարվածները, եթե լայն մեջ բաց անե իր մեջ մի ուրիշ, ավելի վսեմ, ոչ եսական զգացմունքի համար՝ որ կեպի տանջվող մարդկությունը:

Այս բարձր գաղափարն էլ դառնում է մեր երիտասարդի համար փրկության խաբիս, նրա անձնական դժբախտությունը դառնում է մի պատվանդան, որի վրա բարձրանում է ընդհանուր բախտավորության գաղափարը: Երկանը, անհատականը տեղի է տալիս սքանչելի մարդասիրության:

Սառայել տանջվողներին... Այս է ուզում հասկացնել ռուս բարեկամը, որ անցնելով անբախտ սիրահարին մի մահամերձ, օտարական հիվանդի մոտ և գոտավիրելով խնամել, պահպանել նրան: Դյուբակյան բալասանը գտնված Արտարեկ երիտասարդը զգում է, որ դառնալ ուրիշների համար «եղբայրանք» տանջանքի մեջ՝ մի գեղեցիկ, ոգևորիչ անձնազոհություն է: Եվ այդ ընդունակությունից հետո-նրա մեջ պատրաստվում է մի ամբողջ հեղափոխություն: Եվ այդ կոչման ևստից, դառնալ գթություն եղբայր մարդկության համար, նա ինչ է ստանում տանջված սիրտը իր թանկագին կորուստի փոխարեն:

Եվ սիրտը բախտավորվում է, նորից թարմանում է, բարախում է նոր, ուժգին եռանդով, ընդամիշտ պինդ գրկելով մարդկայնությունը վե՛հ գաղափարը: Կինը իր սիրո հետ մտադրվում է, հետ է քաշվում: Երիտասարդը շնում է Հեյդը, իր ուսումը շարունակելու:

Եվ շարունակում է շատ լավ, ուղեորված իր նոր ապագայով, այն երկ պաշտոնով, որ կանչում է նրան հեովից՝ հիվանդապահի պաշտոնով: Կինը են մահամերձ անհատներ, բայց կան և այնպիսի հասարակություններ, որոնք նույն օրհասական վիճակն են հիշեցնում: Արծրունին ճանաչում էր այդպիսի մի հասարակություն: Ահա նա ավարտել է համալսարանը, ահա նա փիլիսոփայության գոկտոր է: Մինչդեռ պատրաստվում է վերադառնալ հայրենի ծանր հիվանդի մոտ, անակնկալ կերպով նամակ է ստանում իր նախկին կուրսից, իր էվելինայից: Կինը գալիս է նորից փաթաթվելու նրա ոտքերին: Երբ տասարդի տատանումը, թուլությունը այդ նամակի առջև բուրբանակալ է, նրա «խոցված, վիրավորված սիրտը սաղացել բուժվել էր», այդ բժիշկը նրա մոտ էր և նա թելադրում է մի ժամանակվա վառ սիրահարին հետևելու տղային: «Այս երկու տարվա ընթացքում ես շատ աշխատեցի, սաստիկ պարասպեք բանի որ մտավոր կյանքով ապրելը դարձել էր ինձ համար կյանքի միակ միջ թարություն: Ուրիշ որևէ զգացմունք այժմ այլևս մատչելի չէ իմ սրտին, սիրտը իսպառ ցամաքել է, մեռել է այդ ժամանակամիջոցում: Ես հրաժարվեցի իմ առաջվա ապարդյուն ցնորքներից, ես հիմա լավ համոզվեցա, որ ոչ մի կերպ չէ կարող ինձ սիրել անսահման և հարատև կերպով... Եվ ցամաքած սրտով մեջ ամփոփված սիրտ վերջին բեկորները ես այսուհետև, մինչև մահս, պետք է նվիրեմ ոչ թե կնոջ զգացմունքին փոխադարձը տալուն, այլ միմիային ազգի քաղաքակրթական գործի առաջադիմության ծառայելուն»:

Այսպիսի ստան, հպարտ վճիռ ստորագրելու համար պետք էր լինել մարդ, որ զինվոր էր գրվել ուրիշ պարտավորությունների: Կինը չկարողացավ տիրանալ նրան, նվաճել ամբողջովին: Մենք պետք է տեսնեինք մի խեղճ գործին մերժված սերը դարձնում է մարդատյաց, հոռետես, կյանքի մեջ ոչ մի հույս չունեցող: Բայց այս մի զոհը մի երջանիկ բացառություն կազմեց: Կինը սրտից ավելի մեծ, ավելի անհուն մի պաշտամունք գտավ նա՝ մարդկությունը: Հենց այսպիսի մի սքանչելի գյուտի համար էլ պետք էր շնորհակալ լինել կնոջը, իբրև պատճառի, իբրև դրողի: Եվ երիտասարդի մեջ չկա ատելություն դեպի մերժող կինը: Ընդհակառակն, նա պահում է իր անբախտ սիրտ աստիճանաբար մասին մի սիրուն, ոգևորիչ հիշատակ, նրան է նայում ամեն անգամ, երբ գաղափարական կովի դաշտում հոգնած՝ նեցուկ ու խրախուսյալ որոնում նոր ուժ ու եռանդ ստանալու համար...

Եվ այսպես, գաղափարականը գերակշիռ է հանդիսանում Գրիգոր Արծրունու կյանքի մեջ նույնիսկ մի այսպիսի վճռական, զուտ անձնական հարցում: Գաղափարի համար էր նա ծնված: Եվ գաղափարականը նրա հետ էր ամեն տեղ՝ թե համալսարանում, թե ընկերական շրջաններում: Նույնիսկ ուսանողական խնջույքների մեջ անհոգություն, անտարբերություն չկա դեպի բարձր մտքերը: «Ես,— ասում է «էվելինայի» հերոսը,— ամբողջ սրտով մասնակցում էի նրանց (ուսանող ընկերների) ուրախ խոսակցություններին, երբ լուրջ վիճարանություններին, նրանց հետ միասին, գինու կամ զարեցրի բաժակը ձեռքս, ճառում էի մեր յուրաքանչյուրի ապագա հասարակաց գործունեության մասին... Այդ ճառերումն էին արտահայտվում մեր հույսերը մտքով կուսությանը պիտանի լինելու, մեզանից յուրաքանչյուրի հույսերը իր ազգի կարողության շափ օգտավետ լինելու մասին...»:

Արծրունին այդպես էլ մնաց իր ամբողջ կյանքում: Նա մի մտալի ասկեսա լի սիրում էր շրջաններ, խոսակցություն, վերին աստիճանի սրամիտ, վառ-վրում խոսակցի էր, բայց գասարակարանություններից ուղղակի զզվում էր և անհավան զվարճություն էր ստանում այնպիսի խոսակցություններից, որոնց կյանքն էր որևէ հասարակական կամ գիտական հարց: Վիճարանությունների մեջ մանավանդ Արծրունին տաք էր, առանձին ուժ, ոգևորություն էր ցույց տալիս: Արծրունու ալրոմում գտանք մի լուսանկար, որի վրա պատկերի տերը գրել էր հետևյալ բնորոշ խոսքերը. «Մնաս բարև, Նիցցա, և մեր բոլոր գրավիչ խոսքերը, որոնց ժամանակ իմ ամենասիրելի Գ. Ե. Արծրունին այնքան թունդ լինում էր, ոչ թե ինչպես նրա համեստ, խոնարհ ծառա Վ. Բեզեկիրսկին. է մայիսի, 1866»:

Եվրոպական հասարակական կյանքի, դրականության, համալսարանի, ընկերական շրջանների արած ազդեցության վրա ավելացնենք և գերմանական լուսանիքը: Արծրունի, նազարյանցի նման՝ Արծրունին էլ անսահման երախտակցությամբ է վերաբերվում նրան: «Մնաս բարև և դու, գերմանական նախապետական հյուրասեր ընտանիք,— ասում է Արծրունին,— դու, որ լայն մարդասիրական զգացմունքով ներշնչված՝ ամեն ջանք էիր անում, որքան կար է, սիրալիր և ջերմ կերպով ընդունել, հյուրասիրել օտարազգի ուսանողին, նրան մոռացնել տալու համար իր հեռավոր հայրենիքի և ընտանիքի ժամանակավոր բացակայությունը»:

Մենք պետք է ավելացնենք, որ Գրիգորի համար չկա ընտանիքի բացառություն: Նրա սիրելի Անդրեասը շմնաց Պետերբուրգում, նույնպես տեղափոխվեց արտասահման և Հեյդը բերգում երկու հարազատները միասին էին: Միասին էլ նրանք ոգևորվում են իրանց հայրենակիցներին ծառայելու մտքով: Անդրեասը դեռ Գրիգորից առաջ է մտքում դնում վարժվել հայերենի մեջ Մխիթարյանների մոտ: Այս նպատակով նա 1868-ին դնում է Վենետիկ և այդտեղ գտնել է առևտու Շ. Ալիշանից: Անդրեասն էլ հողվածներ է ուղարկում «Հայկական աշխարհին», ուր նրանք տպագրվում են Ա. Ա. ստորագրությամբ: Միևնույն ժամի երկու հարազատ ճյուղեր, միևնույն տեսակ կրթություն ստացած, միևնույն դադափարով տոգորված, այդ երկու եղբայրները, սակայն, միևնույն լին իրանց խառնվածքով, իրանց ներքին կոշումով: Անդրեասը շատ հետ մնաց էր եղբորից հայկական հրապարակախոսության մեջ և փայլեց ուրիշ ասպարեզում: Գրիգորը կյանքի, կովի մարդ դարձավ, իսկ Անդրեասը՝ եվրոպացի փոստական պրոֆեսոր:

Գրիգոր Արծրունին, ապրելով Եվրոպայում, չէր բավականանում միայն նրանում ստանալով և իր իմացած ճշմարտությունները տպագրության միջոցով իր ազգին հաղորդելու: Նա միևնույն ժամանակ հետևում էր մեծ ուշադրությամբ, թե Եվրոպայում ինչ են ասում, ինչ են գրում հայերի մասին: Եվ յուրաքանչյուրի և հարավային Գերմանիայի փոքրիկ համալսարանական քաղաքներում գոյություն ունեին հասարակական հարուստ գրադարաններ «Մուղեում» անունով: Այդտեղ կենտրոնացած էր ամեն ինչ, որ վերաբերվում է գիտության և գրականության և այդպիսի տեղերում պարասպողը ամեն հարմարություններ Եվրոպայի մտավոր կյանքի բոլոր ճյուղերին հետևելու: Արծրունին անհամ է դառնում այդ գրադարաններում և հատկապես ջոկում ու դասավորում է այն ամենը, ինչ վերաբերում է հայերին և այն մահամեղական պետություններին, ուր նրանք ապրում են:

Այսպիսով, նա բաց արավ «Հայկական աշխարհի» մեջ մի շատ հետաքրքրական, բազմակողմանի բաժին, ուր հավաքված էին արտասահմանյան

օրվա տեղեկությունները հայերի մասին: Այս բանի վրա ուշադրություն չէր դարձվում մեր այն ժամանակվա մամուլի մեջ: Ճիշտ է արտասահմանյան թղթակցություններ մենք տեսնում ենք դեռ «Հյուսիսսփայլի» մեջ, բայց դրանք պատահական երևույթներ են, քնդհանուր բնավորություն չեն կրում և հայերի մասին շատ քիչ են խոսում: Գրիգոր Արծրունին, սխտեմ դարձնելով հայերին վերաբերվող տեղեկությունները մի տեղ հավաքելը, մոտ երկու տարի կարողացավ շատ հետաքրքրական տարեգրություններ տալ, որոնք «Հայկական աշխարհի» մեջ աչքի են ընկնում իբրև խիստ բաղձակողմանի, թարմ նյութեր: Հեռանալով արտասահմանից, Արծրունին ցանկություն էր հայտնում, որ հայ ուսանողները շարունակեն իր սկսածը: Բայց արտասահմանյան ուսանողության մեջ չգտնվեցան երիտասարդներ, որոնք նրա պես հասկանալի հայ ուսանողի պարտավորությունները: Եվ միայն Անգրեսա Արծրունին էր, որ մնալով Եվրոպայում, բավական երկար ժամանակ շարունակում էր այդպիսի բրնձիկագրի պաշտոնը:

Այսպես էր արտասահմանում կազմակերպվում մեր ապագա հզոր մտքերը: Ի՞նչ էր գրում և ինչպե՞ս էր նա գրում արտասահմանից: Տեսնենք նախ և առաջ, թե ինչ էր մեր մամուլը այն ժամանակ:

II

Ս. Նագարյանցի նամակից: Գեղեցիկ սկսված, լոկ առաջաբան: Շատ նակողմ: Հայ մամուլը Կովկասում. «Մեղու»: Երկու տեսակ կրթություն. նամակաբանական և Մխիթարյանների: Մուրադյան վարժարան: Մարկոս Աղաբեկյան և նրա «Կոունկը»: Ազգայնամուլ ուղղություն: Ներսիսյան դպրոց: Արամբոզոված «Մեղու»: Նոր խմբագրության անկախությունը: Նմուշներ: Անտաղիմականի պատկերը, նկարված «Մեղուի» ձեռքով: Ս. Ստեփանե և «Հայկական աշխարհ»: Ջանեբ և հետեանեներ: Գավանեներ, արժանավորություններ, պակասություններ: Ռեֆորմ ուղղագրության մեջ: Այդ ռեֆորմանցյալը: «Վանառական» լրագիր և «Գարուն» ամսագիր:

Իր մահից մոտ հինգ տարի առաջ Ստեփանոս Նագարյանցը իր մասնավոր նամակներից մեկում գրում էր հետևյալ տողերը. «Այսպես դադարեցում ու վերջացավ մեր գործունեությունը, որ ես կհամարեմ միայն իբրև մի գեղեցիկ սկսված, մի լոկ առաջաբան, ոչինչ ավելի»¹: Գեղեցիկ սկսված, լոկ առաջաբան... Ավելի ճիշտ անուններ Նագարյանցի գրական գործունեության համար չէ էլ կարելի գտնել: Համեստ են թվում այդ անունները, փոքրիկ: Բայց գո՞րծը, որ այդ անուններով է երևան գալիս: Հեշտ է երևում նա հեռվից նայողին, մանավանդ նրան, որ թեթև կերպով վերաբերվում իրերին, որ երևույթների ու հանգամանքների կշռադատություն մեջ չէ խորասուզվում: Դժվար մեծագործություններից էր այդ առաջին քայլը մեզանում, մեր վերակենդանության այդ առաջաբանը: Մենք այդ տեսակ իր տեղում: Տեսանք, թե որպիսի մեծ ջանքեր էին հարկավոր, որպիսի անձնաբացություն պետք էր կոչվել հանուն առաջին խոսքերի, սկզբնական քայլի: Եվ ահա այդ քայլը արված է, այդ առաջաբանը գրված է: 1865-ին, երբ «Հյուսիսսփայլը» բոլորովին լռեց, այդ գեղեցիկ իրողությունը մեր ճակատ

-Աստված. կագարյանց, «Ընտիր հատվածներ», Թիֆլիս, 1889, եր. 207.

գրի սեփականությունն էր դարձել: Հետո՞: Պե՞տք էր կանգ առնել առաջին քայլի, առաջին բառի վրա, պե՞տք չէր առաջ գնալ, առաջարանից բուն գործին անցնել: Այս հարցերն էր տալիս ժամանակը, այս հարցերը կենսական նշանակություն ունեին նոր արթնացող, շարժումի անհրաժեշտությունը նոր զայցող ժողովրդի համար, երբ մեր գրական հորիզոնի վրա երևաց Գրիգոր Արծրունին: Նա գալիս էր պատասխան տալու, գալիս էր առաջաբանը շարունակելու:

Այստեղ մենք դեռ պարտավոր ենք նկարագրել այն ասպարեզը, ուր սկսեց գործել Արծրունին: Ի՞նչ կար այդ ժամանակ մեզանում, ի՞նչ էր ներկայացնում հայոց մամուլը:

Նախ ուշադրություն դարձնենք տեղի վրա: «Հյուսիսսփայլի» հետ վերջացավ Մոսկվայի փոքրիկ հայ գաղթականության առաջնակարգ նշանակությունը մեր գրականության տեսակետից: Քանի կար այդ ամսագիրը, քանի նապարյանցը դեն չէր դրել իր գրիչը, Մոսկվան էր այն տեղը, որ հայերի համար մի «զարթուցիչ մեքենա» էր, ինչպես ասում է այն ժամանակվա գրողներից մեկը. Մոսկվայից էին սպասում նոր խոսքի, այնտեղից եկող համարձակ, թարմ, անողորմ մտքերն էին հուզում մարդկանց:

Առաջին քայլը Մոսկվան էր. այնտեղ գրվեց նոր հայության գաղափարի առաջաբանը: Գուցե սա մի ճակատագրական անհրաժեշտություն էր, գուցե այդ մեծագործությունը անկարելի էր կատարել հայ ժողովրդի բնակության տեղում, քանի որ պահանջվում էր այնքան սաստիկ կոնֆլիկտ: Նազարյանցը ուժեղ էր և նրանով, որ կոչվում էր հեռվից, որ չէր ենթարկված իր հայրենիքի ճնշող զայմաններին: Բայց նույն այդ հեռավորությունը լավ չէր առաջադիմության արթնի տեսակետից: Օտար երկրի տակ մնալուն հող չէր կարող գրավել հայրենական հրապարակախոսությունը: Նա պիտի մոտենար բուն ժողովրդին, պիտի մոտենար նրա մեջ: Լուս է նազարյանցը և իրողություն է դառնում, որ հայոց գործերական մամուլը ոչ Մոսկվայում պիտի ապրե, ոչ Պետերբուրգում, ոչ էլ Ռուսաստանում: Նրա համար ամենահարմար տեղը Թիֆլիսն էր, որ թեև երկրպես գաղթականություն էր հայերի համար, բայց մի գաղթականություն, որ նախ շատ խոշոր էր և երկրորդ՝ շատ մոտիկ էր հայի հայրենիքին:

Ինչպես հայտնի է, Թիֆլիսում էր սկսվել հայոց մամուլը: Առաջին շաբաթաթերթերը՝ «Կովկաս» և «Արարատ», զանազան պիտանի և անպիտան ավածքների և տեղեկությունների անկապ, վայրիվերո ժողովածուներ էին, որոնքն պատկանում էին այն տիպին, որ հաստատվեց մեր մամուլի մեջ՝ երբ սկզբնավորության օրից: Կրագիրը տպում էր այն, ինչ ձեռքն էր ընկնում, ինչ խմբագրություն, այս բառի իսկական նշանակությամբ, չկար դավաճանել, ուղղություն: Երրորդ շաբաթաթերթը՝ «Մեղու Հայաստանին» դարձյալ մի այդպիսի ժողովածու էր, և եթե չլինեք «Հյուսիսսփայլը», չլինեք «Մեղուի» անկառակությունը նրա դեմ, Մանդինյան քահանայի օրգանը ոչ հարկավորություն, ոչ էլ առիթ կունենար հայտնելու իր պաշտամունքը, իր հավատամքը: Միայն «Հյուսիսսփայլի» դեմ ուղղած գրվածքների մեջ կարելի էր տեսնել, թե ինչ է ուզում Թիֆլիսի շաբաթաթերթը, ինչն է նրան ուրախացնում և վրշտացնում: Մնացած ժամանակներում նա գեսից-գեսից հավաքած հատվածներ էր խառնարան էր, առանց որևէ ընտրության, առանց խմբագրական որևէ խորհրդի:

1860 թվականից Թիֆլիսի այդ տեսակ մամուլի մեջ նկատվում է բարեփոխություն: Այդ թվից հրատարակվում է «Կոունկ Հայոց աշխարհի» ամսա-

գիրը, որի խմբագիրն էր Կ. Պոլսից Թիֆլիս եկած Մարկոս Աղաբեկյանը: Ամսագիրը առաջինն էր Թիֆլիսում, որ ուներ որոշ ուղղութիւն, քարոզում էր, մտքեր էր արձարծում: Ի՞նչ ուղղութիւն էր դա:

Ստեփանոս Նազարյանցի կենսագրութեան մեջ¹ մենք բացատրեցինք, թէ ինչ ուղղութիւն ուներ այն կրթական շարժումը, որ սկսվեց ռուսահայերի մեջ XIX դարի առաջին քառորդից: Այդտեղ մենք տեսանք, որ այդ շարժումը մի ինքնուրույն բան չէր, այլ ընդօրինակում՝ գլխավորապէս Մխիթարյան միաբանութեան ստեղծած կրօնահայրենասիրական կրթութեան սիստեմի: Այդ սիստեմը մեր դպրոցական հիմնարկութիւնների հոգին դարձավ երկար ժամանակ Արովյանցը և Նազարյանցը, դուրս գալով այդ դպրոցներից, օտար բարձրագույն դպրոցներ դնացին և այդտեղ միայն նրանց առջև բացվեցին նոր ու լայն հորիզոններ: Նրանք հասկացան քաղաքակրթութեան, հանրամարդկային առաջադիմութեան էութիւնը և դարձան մեղանում անբավական, բողոքող, պահանջող ուժ: Նրանց հետևեցին ուրիշ երիտասարդներ: Եվ մեր աշխարհայեցողութիւնների, մեր գրականութեան մեջ հաղթող հանդիսացավ օտար բարձրագույն կրթարաններից դուրս բերած առաջադիմական շարժումը:

Թուրքահայերի վրա Մխիթարյանների կրօնական-ազգայնական նեղ ուղղութիւնը ավելի խոր, ավելի երկարատև ազդեցութիւն թողեց: Բայց այնպէս էլ, թեև փոքր չափերով, նկատվում էր նույն երևույթը: Եվրոպայի համասարաններում կրթութիւն ստացած երիտասարդութիւնը լայն կերպով էր բերընում ազգութեան գաղափարը, քաղաքակրթութեան պահանջները: Դրա փայլուն ապացույցն է մեր նշանավոր հրապարակախոս Ստեփան Ոսկանը, ինչպէս նաև երիտասարդները, որոնք 1848-ի հեղափոխութեան գաղափարներով սնվեցին և ապա Կ. Պոլսում առաջ բերին մի վերանորոգչական շարժում, որի պտուղներից մեկն էր թուրքահայերի Սահմանագրութիւնը:

«Կոռնկի» խմբագիրը Մխիթարյան կրթական սիստեմի աշակերտներից էր: Քառասնական թվականներից Մխիթարյանների դպրոցական գործի մեծ տեղի է ունենում մի մեծ փոփոխութիւն: Նրանց դպրոցներից մեկը՝ Մուրադյան վարժարանը, տեղափոխվում է Փարիզ: Թեև Տրանսիայի մայրաքաղաքում էլ օ. Ղազարի վարդապետները ամեն կերպ աշխատում էին իրանց դպրոցը մի փակ, վանական կրթարանի դրութեան մեջ պահել, բայց շրջապատը, միջավայրը այսպէս թե այնպէս ազդում էր, այնպէս որ եվրոպական լուսավորութիւնը կարողանում էր իրան ցույց տալ Մուրադյան վարժարանի շէմքից ձայն դպրոցի լավագույն ժամանակները հենց այն տարիներն են, երբ երգտնվում էր Փարիզում: Այդ ժամանակամիջոցում Մուրադյան վարժարանից դուրս եկած մի խումբ աշակերտներ (Պեշիկթաշլյան, Հեքիմյան, Մամուրյան Երշմանյան) մեծ դեր կատարեցին թուրքահայերի մեջ: Վանական կրթութեան ավելի լայն հիմքերի վրա էր կանգնել. մնալով իր էութեամբ խիստ կրօնական, նա այլևս այնքան նեղահայաց չէր, ընդունում էր եվրոպական մտքի լուսավորվելու անհրաժեշտութիւնը: Միևնույն ժամանակ վանական դպրոցը սաստիկ դարգացրել էր և իր երկրորդ իղեալը՝ ազգասիրութիւնը: Դա նույն հին ազգասիրութիւնն էր, հիմնված շովինիստական սնապարծութեան վրա՝ ամբողջովին ոգևորվող միայն պատմական անցյալով: Գաղափարները, աշխարհայեցողութիւնները նույնն էին, բայց դրանց արտահայտողները ավելի զարգացած էին, հետևաբար ավելի ազատ էին անհեթեթութիւններից, ավելի ոգևորված էին և ճառական ավելի մեծ ընդունակութիւններով օժտված:

¹ Եր. 28—39:

Նշանավոր է, որ Մուրադյան վարժարանի լավագույն ժամանակների սաները երկու տեսակ ուղղութիւն էին ներկայացնում ազգասիրութեան ասպարեզում: Կաթոլիկները (օր. Պեշիկթաշլյան, Հեքիմյան) աշխատում էին միութիւն ստեղծել հայերի մեջ ազգայնական հիմքի վրա, այսինքն, մի կողմ թողնելով դավանական հարցերը, աչքի առաջ ունենալ այն մեծ իրողութիւնը, որ հայերը, ինչ կեղեցու էլ պատկանեն, եղբայրներ են իրար հետ: Մինչդեռ լուսավորչականները (օր. Մամուրյան, Աղաբեկյան և կաթոլիկութիւնից վերադարձած Երշմանյան) խստութեամբ զինվեցին կաթոլիկութեան դեմ, իրանց ուսուցիչ Մխիթարյանների դեմ և հայոց կեղեցին հրապարակեցին ազգութեան ամենագլխավոր հիմք: Եկեղեցական ազգայնութեան ոսկեդարն էր. մեր ազգասերները օտարադավան հայերի համար փրկութեան մի միակ ճանապարհ գիտեին՝ վերադարձ մայրենի կեղեցու ծոցը:

Կարդալով Մարկոս Աղաբեկյանի երկար ու ձիգ հոդվածները, մանավանդ «Կոռնկի» առաջին տարում տպվածները, դուք հաղիվ եք կարողանում շնորհալի, որ գրողը կեղեցու պաշտոնյա չէ, այլ մի աշխարհական մարդ է: Աղաբեկյանը հայտարարեց հայոց ազգը մի «կրօնական ընկերութիւն»: Լուսավորութիւնը, դաստիարակութիւնը, առաջադիմութիւնը նա միայն հոգեվարականներից էր սպասում և անդադար կրկնում էր, որ այդ միջոցից դուրս լիա փրկութիւն: Հայը իր անելիքը իմանալու, իր առջևի ճանապարհը ճանաչելու համար միշտ պիտի հետ նայե, աչք չվերցնե իր նախնիքներից, գաղափարական առաջնորդ ընտրե նրանց և ոչ ուրիշ մեկին: Բավական է, ասում էր նա, մի լավ կեղեցական պատմութիւն, բավական է, որ ներկայի հայը շատ մոտիկուց ճանաչե իր հին հայրապետներին, իշխաններին, եպիսկոպոսներին, վարդապետներին ու սրբերին, և նրան այլևս անելու շատ բան չէ մնում: Իր դավանանքը նա խտացնում էր հետևյալ տողերի մեջ. «Ըստ իմ կարծեաց, ճշմարիտ հայ քրիստոնյան նա է, որ իր նախնայց հավատո հոգին ունի և իր բարքն ու վարքն էլ ըստ այն հոգւոյն է ուղղել: Այս հոգին մի հայ մարդ չի կարող ստանալ այսօր մեր մեջ, մինչև որ մեր նախնիքը քաջ շնանաչ, լզգա, թե նրանք ինչպէս քրիստոնյա էին և այս միայն մի խորին հայկական ուսմամբ և կրթութեամբ կլինի. մի լուսավոր մտքով և ոչ Մխիթարյանց ձեռքով նրանց զրքերը կարդալով հայանալ»:

«Կոռնկի» ազդեցութիւն ունեցավ. նա ավելի շատ էր կարգացվում, քան նույնիսկ «Հյուսիսափայլը», մանավանդ շատ էր տարածված նա Թիֆլիսից դուրս, գավառներում և առաջին տարին ուներ 440 բաժանորդ: Եկեղեցական ազգասիրութիւնը նրա մեջ հասավ իր ամենամեծ զարգացման: Աղաբեկյանը բողոքող չէր, ընդհակառակն, դիմադրում էր բողոքներին, օրինակ «Հյուսիսափայլին»: Նա անխնա դատաւիետող չէր, այլ գրվատող երգող, լացող, աղաչող: Կարելիով պատմական անցյալով և ուրիշներին էլ խրատելով այդպէս ապրել, «Կոռնկի» մեր հնութիւնից դուրս էր բերում միայն փառք ու պարծանք: Նրա համար չկար մի այլ ազգ, որ հայի շափ իրավունք ունենար պարծենալու իր երկրատակութիւններով, իր կեղեցուով: Չկա մեր ազգի պատմական կյանքի մեջ ընդհանուր ազգային պակասութիւն. կային միայն դավաճանութիւններ: Երկայի զժբախտութիւններն ու ցավերը առաջացել են նրանից, որ չկա հայերի մեջ սեր, միաբանութիւն, որ հոգևորականները կրթված չեն: Ազգային միաբանութեան համար պետք է թողնել կուսակցութիւնները, հակառակու-

¹ «Կոռնկի», 1862, Եր. 889:

թյունները: Ի՞նչ գաղափարական կոռիւմներ, ի՞նչ անհամաձայնություններ են հարկավոր, երբ կա մի միակ ճշմարտությունը՝ եկեղեցին իբրև մատակարարող ազգային-բարոյական լուսավորության: Մի սերտ միավորություն ժողովրդի և հոգևորականութեան մեջ, միավորություն՝ պատմութեան հովանու տակ, և հայությունը երջանիկ էլ կլինի, առաջագնի էլ:

Հեշտ է եզրակացնել, թե որքան մեծ է տարբերությունը «Կոռնկի» կրոնաազգայնամտական ուղղութեան և «Հյուսիսափայլի» վերանորոգչական-հանրամարդկային իդեալների մեջ: Իբրև ազգասիրական օրգան, «Կոռնկը» մեզանում հանդիսանում էր Մեսրոպ Թաղիադյանցի «Աղգասեր» շաբաթաթերթի՝ ուղղակի ժառանգորդ: Կովկասի սահմաններից դուրս ինքնագոհ, երգող, ողբացող ազգասիրութեանը ուներ մի ամբողջ մամուլ. այսպես էր «Արծիվ Վասպուրականին», այսպես էր «Արշալույս Արարատյանը»: «Ռուսահայերի մեջ «Մեղուն», «Ճոռաքաղը», «Մասյաց աղավնին» էին նույն դերը կատարում: Բայց պետք է խաստովանել, որ «Կոռնկը» այդ օրգաններից ոչ մեկի նման չէր, նա մի քանի քայլ առաջ էր գնացել: Դա պահպանողականութեան նոր սերունդն էր, որ չէր վախենում եվրոպական լույսից, առաջադիմութեան էր կանչում, սակայն մի առաջադիմութեան, որ հարմարեցրած էր հայ ազգի հանգամանքներին: Մենք պետք է շեշտենք «Կոռնկի» և մի այլ հատկութեանը, իր մյուս դասակիցների նման նա չէր վարակված մի կույր թշնամութեամբ նազարյանցի և նրա «Հյուսիսափայլի» դեմ. իր ամբողջ ուժով հակառակվելով նազարյանցին եկեղեցական վերանորոգութեանների հարցում, «Կոռնկը» ընդունում էր և այն, որ նազարյանցը հարգանքի և երախտագիտութեան արժանի դործիչ է: Առհասարակ, Թիֆլիսի առաջին հայ ամսագիրը բռնում էր մի տեսակ միջին տեղ առաջադեմ և պահպանողական կուսակցութեանների մեջ: Այսպես են ասում մեզանում: Մենք կհամաձայնվեինք այս կարծիքի հետ, եթե նրա վրա ավելացվեր անպատճառ և այն, որ մեջտեղ կանգնած ամսագիրը, իբրև միջտ գեպի հետ նայող, ավելի սիրում էր ետևում կանգնածներին, հետադիմականներին, ավելի դրանց հետ էր հարազատ, համախոհ և սրտակիր:

Աղաբեկյանի ուղղութեան հաջողութեանը հասկանալու համար մենք պետք է անպատճառ նկատի ունենանք և այն խոշոր հանգամանքը, որ Թիֆլիսում նա գտավ պատրաստ հող: Եվ հող պատրաստողը ներսիսյան դպրոցի այն շրջանն էր, որ հայտնի է «Շանշյանի դար» անունով: Այդ դարը նոր էր ավարտվում, երբ երևաց «Կոռնկը»: Սկսվել էր նա դեռ ներսես կաթողիկոսի օրով 1852 թվականից: Պետրոս Շանշյանը, մի կրթված, ազնիվ մարդ, բարեկարգից դպրոցի ուսումնական մասը, հանեց նրան հին մանկավարժական հասկացողութեանների տիրապետութեան տակից և մոտեցրեց նոր պահանջներին: Շանշյանն էլ ջերմ կրոնասեր մարդ էր. Ռուսաստանում ստացած իր համալսարանական կրթութեանը (եղել էր բժշկական, իրավաբանական ֆակուլտետներում) լրացնելու համար գնաց արտասահման և Սորբոնում լսեց դասախոսութեաններ աստվածաբանութեանից: Ներսիսյան դպրոցում նա ավանդում էր կրոն իր կազմած դասագրքերով, որոնք հետո տպագրվեցին Թուրքիայում, միտ հայերեն գրքերը, որ հեղինակել էր իր կյանքում Շանշյանը: Կրոնական իր մեծանդութեան հետ դպրոցում ծաղկում էր և հայերենագիտութեանը: Այստեղից ահա պարզ է, որ ներսիսյան դպրոցի աշակերտները պիտի համակրեին «Կոռնկի» ուղղութեան: Եվ նրանցից շատերը դարձան «Կոռնկի» աշխատող

կիցներ, արժարժում էին Աղաբեկյանի կրոնաազգասիրական հայացքները և դավանութեանները:

Հետաքրքրական է, որ պահպանողական հին սերունդը վերաբերվեց իր նոր սերնդին այնպես, ինչպես վերաբերվում էր «Հյուսիսափայլի» դպրոցին: Հին սերունդը հալածանքներ հարուցեց Շանշյանի դեմ, որ հենց նոր, թարմ մարդ լինելու պատճառով եկեղեցի քանդող, պրոտեստանտ, հերետիկոս էր համարվում: Ինքը՝ Շանշյանը հոգևոր իշխանութեանն ուղղած իր դիմումներով, իսկ նրա աշակերտները մամուլի միջոցով, ինչպես նաև կյանքում, կռիվ էին մղում հին սերնդի դեմ հանուն ազգային առաջադիմութեան, բարեկարգ կրթութեան: Այդ հալածանքների մեջ հին սերնդի ծայրահեղ լուսավախութեանն էր երևում: Որ Շանշյանը ոչ պրոտեստանտ էր, ոչ էլ հերետիկոս, նույնիսկ այն չափով, ինչ էր հին սերնդի աչքում նազարյանցը, դրա ամենալավ ապացույցը այն է, որ 1866-ի կաթողիկոսական ընտրութեանների ժամանակ լուրջ պիտավորութեան կար Շանշյանին նստեցնել ամենայն հայոց կաթողիկոսական աթոռի վրա: Որդիները կռվում էին հայրերի դեմ, համարելով նրանց չափազանց հնացած և նախապաշարված: Ահա հնապաշտ, ավանդապահական ուղղութեան մեջ երևան եկած այս առաջադիմութեան ներկայացուցիչն էր «Կոռնկը»:

«Հյուսիսափայլից» հետո դա երկրորդ պարբերական հրատարակութեանն էր ուսահայերի մեջ, որ ուներ խիստ որոշված, խիստ աչքի ընկնող գույն և դրական արժանավորութեանների կողմից էլ բավական բարձր էր կանգնած: Եթե «Հյուսիսափայլը» եվրոպական մտքով առաջադիմական շարժման դպրոցը (աստատեց մեզանում, «Կոռնկն» էլ թթու ազգայնամտութեան, եկեղեցասիրական-պահպանողական մտածողութեան ամենանոսրուն արտահայտիչը դարձավ: Եվ այս բանը Աղաբեկյանին հաջողվեց մի համեմատաբար կարճ միջոցում, այն է՝ երեք տարվա ընթացքում: Նայելով այդ հաջողութեան, նախելով համակրողների բազմութեան, պետք էր ենթադրել, թե ազգայնական ուղղութեան հետևող ամսագրի դրութեանը միանգամայն ապահովված պիտի լինի ժողովրդի գիտակցական վերաբերմունքով:

Բայց այդպես չէր դրութեանը և մենք շատ հետաքրքրական բաներ ենք իմանում այն խոստովանութեանից, որ հրապարակ բերեց «Կոռնկի» հրատարակիչ Համբարձում Էնֆիանճյանը 1862-ի սեպտեմբերին: Ավա՞ղ, ջերմ, արվատող, շոյող հայրենասիրութեանն էլ չէր կարողանում փրկել մամուլը հրատարակութեան գերեզմանային անտարբերութեանից: Հրատարակիչը երեք տարվա ընթացքում մեծ վնասներ էր արել: Եվ ի՞նչ դառն, բայց ճիշտ եզրակացութեանների էր հասել այդ միջոցում:

«Ցավելով պետք է խոստովանենք, թե մեր և մեր պաշտոնակիցներու կողմանե,— ասում է նա,— որ այժմ Ռուսաստանի մեջ սկսված և շարունակված ազգային շրջանավոր հանդեսները ո՛չ ազգի գիտակցութեան և նորա անկախանջելի բազմանքներու ծնունդներն են և ո՛չ նոցա կյանքը պահպանելու լավ, չեմ ասում քանի մի հազար, այլ թե քանի մի հարյուր կարեկից ընթերցողներ են գտնում: Այս ճշմարտութեան դառն փորձը առանք մենք ինքնին այս երեք տարվա միջոցումը և նույնը նկատեցինք մեր պաշտոնակից մյուս հրատարակութեանց վերա: Մինչդեռ ուրիշ ազգաց մեջ օրագիր պահպանելու ժամոր քանի մի հազար բաժանորդք հազիվ բավական են համարում, մենք նայիրեն հրատարակութեան ձեռնարկողներս հազիվ թե երկու կամ երեք հարյուրից ավելի ունեցել ենք, և որ արժանին է ուշադրութեան, այս շնչին թիվն անգամ մեզ կարելի է եղել ձեռք բերել բարեկամաց և սակավաթիվ բարե-

նախանձ համազգի եղբարց միջնորդությունը: Թո՛ղ ներվի մեզ պարզարար ասել, որ ազգային օրագրերու բաժանորդագրությունը մինչև օրս հրատարակչաց կողմանն առավել մուրացկանություն է նմանել, քան թե մի ինքնահո- ժար և փոխադարձ առևտրի»:

Այս ողորմելի դրությունը հարկադրում է հրատարակչին ամսագիրը ամբողջովին հանձնել խմբագիր Աղաբեկյանին, ինքը մնալով լուկ սեփականատեր: Թողնելով «Կոունկը», էնֆիաճյանը մի այլ հրատարակչական ձեռնարկու- թյուն է սկսում: Մանդինյան քահանայի «Մեղուն» հոգեվարքի մեջ էր. խմբա- գիրը խնդրում էր ազգասերներին ազատել իրան ծանր բեռից, որովհետև բա- ժանորդներ չկան, ազգը այլև չէ պահպանում ազգային լրագիրը, մինչև իսկ չի ուզում վճարել անցյալ տարիներից մնացած ապառիկները: Էնֆիաճյանը չկամենալով, որ կորչի լրագրի իրավունքը, ձեռք է բերում «Մեղուն» և Ման- դինյան քահանան հեռանում է ասպարեզից, վերջին անգամ աղաչելով, որ իր «նիսիքը» ուղարկեն:

Իր «Կոունկով» Համբարձում էնֆիաճյանը հանդես էր բերել Մարկոս Աղա- բեկյանին: Այժմ վերանորոգված «Մեղունով» նա հասարակության առաջ էր հանում մի նոր մարդու, որ մինչև այդ անհայտ էր: Այդ նոր մարդը Պետրոս Սիմոնյանցն էր, նորնախիջևանցի, որ եղել էր Դորպատի համալսարանում, բայց չվերջացնելով ուսումը, եկել էր Թիֆլիս և ուսուցչությունը էր պարապում: Սիմոնյանցը հանձն առավ խմբագրի պաշտոնը: Մշտական աշխատակիցներ էին Ստեփան Պալասանյան և Գևորգ Տեր-Աղեքսանդրյան: Այս նոր ուժերով «Մեղուն» սկսեց հրատարակվել 1863 թվականից: Ի՞նչ էին բերում այդ նորերը:

Առանձնապես աչքի ընկնող ոչ մի բան: 1862-ի վերջում տպված մի հայ- տարարությունը հրատարակիչ էնֆիաճյանը բացատրում էր ընթերցող հասարակության, թե ինչ պիտի լինի վերանորոգված «Մեղուն»: Մի հատ դավա- նանք ուներ խմբագրությունը, այն էլ փոխ առած Ստեփանոս Նաղարայանից: Դա այն էր, թե հայերի կոչումն է դառնալ միջնորդ եվրոպական քաղաքակրթու- թյան և ասիական խավարում նստած ազգերի մեջ. մի կոչում, որ պարտք է դնում հայերի վրա կատարելագործվել, կրթվել և զարգանալ: «Մեղուն» ուզում էր ծառայել այդ գործին: Բայց ինչպե՞ս, ի՞նչ ուղղություն, ի՞նչ գունդ պիտի ունենար: Այդ մասին նոր խմբագրությունը չէր կարողանում մի որոշ բան ասել: Հայտարարությունն էլ վկայում էր, որ վերանորոգվածը նույն «Մեղուն» պիտի լինի, բայց մի քիչ բարեփոխված: Ահա ինչ էր ասում նա. «Մեղուն Հա- յաստանի» լրագրային բովանդակությունը (программа) և շափը թեպետ է մնում է միևնույնը, բայց նյութերու ընտրությունը և սահասարակ նրա ներ- քին ուղղությունը նոր հրատարակչի, նոր խմբագրի և նոր աշխատակցաց սպ- ղեցություն տակ ընկնելով, անտարակույս մի նոր եղանակով ներկայացնելու է գալ տարի ընթերցասիրաց առջև: Էս մասին մեր կողմանն հենց սկզբից որե- վից է խոստովանքներ առաջ բերել ավելորդ ենք համարում և թողնում ենք, որ հայ կարգացողները ժամանակին իրանք գնահատեն էս հանդիսի ավելի կամ պակաս արժանավորությունը»:

«Մեղունի» ծրագիրը երեք մաս ուներ. «Քաղաքական, Բանասիրական, Զրոսարան»: Մի կարող և ընդունակ խմբագիր այս նեղ սահմանների մեջ էր բավական գործ կարող էր կատարել: Բայց «Մեղուն» մի երևույթ չէր մեկու- նում, գոնե «Կոունկի» պես երևույթ: Ունենալով քաղաքական-հասարակական մի օրգանի անհրաժեշտ հանգամանքները, նա շատ հեռու մնաց այդպիսի օր- գան լինելուց. դեկավարելու, հոսանք ստեղծելու ընդունակություն նա ցույց չտվեց: Համոզմունքներով, հայացքներով դա «Կոունկի» ետևից քարշ ընկնող

մի արբանյակ էր, ուրեմն պահպանողական բանակի նոր սերունդից էր:

Նոր խմբագիրը, իբրև բարձրագույն դպրոցում եղած մի մարդ, չէր կա- րող Թիֆլիսի իրականության մեջ աչքի չընկնել նրանով, որ մի քանի հարցերի վերաբերմամբ նոր հայացքների էր հեռուում: Այսպես, նա գործում էր հին աղայական դասակարգի դեմ կալուղ կուսակցության մեջ. Ջալալյան եպիսկո- պոսի և Թայիրյանի կուսակցության հակառակորդն էր նա և ժողովրդական սկզբունքի պաշտպան: «Հյուսիսօսիայի» համակրողն էր, բայց երբեք չկարո- ղացավ նրա համարձակ, որոշ գունդ ունեցող հրատարակախոսություն նման- վել: Պ. Սիմոնյանցը բացի հրատարակախոսական հոգեվածներից ոչինչ չէր գրում. բայց նրա հրատարակախոսությունը վերին աստիճանի թույլ էր, ջրա- լի: Նա չէր կարողանում պարզ ու կարծի կերպով պահանջներ դնել, վրդովել, հուզել ընթերցողին: Լինելով մի նոր ու թարմ մարդ, որ մտնում է մամուլի ասպարեզը մի այնպիսի ժամանակ, երբ հասարակությունը քնած էր, երբ նրան կարող էր ցնցել յուրաքանչյուր ուժեղ հարված, Սիմոնյանցը հենց առա- լին քայլերից շարունակում հետք թողնել, փոքր ի շատե նկատելի ակոս անց- կացնել: Նա կոչվածներից չէր, շունք պաշար, շունք խոսքով բորբոքելու երկնային շնորհքը:

Եվ «Մեղուն» կենդանանալ չէր կարողանում: Մանդինյան քահանայի և նրա հաջորդի մեջ տարբերությունը այնքան քիչ նկատելի էր, որ հազիվ թե կարելի լինի երկար խոսել դրա մասին: Մի բան ճիշտ է. վերանորոգված «Մե- ղունի» մեջ չէին երևում Մանդինյանի ժամանակների թույլ, երեխայական, ծի- ծաղաղարժ հոգեվածներն ու ստանալորները: Բայց բավական էր այդքանը: Մի լրագրի հոգին կյանքն է, հրատարակախոսությունն է, իսկ Սիմոնյանցի հոգ- վածներում հոգի չկար: Դրանք պաշտոնական, սառն երկարաբանությունը ձանձրացնող քարոզներ էին: Եվ ինչպես քարոզչի կոչում շունեցող, բայց ան- պատճառ քարոզիչ դառնալ կամեցող քահանան կամ վարդապետը ունի իր համար մի միանման ձև, որով դիմում է «օրհնյալ ժողովրդին», այնպես էլ Պ. Սիմոնյանցը անշափ սիրում էր դուրս գալ իր լրագրի էջերում՝ «հայտնի է ամենքին», «բազմիցս կրկնել ենք», կամ՝ «քանիցս մենք պատիվ ենք ունե- ցել հայտնելու պատվելի հասարակությանը» խոսքերով¹:

Առաջին տարվա ընթացքում վերանորոգված «Մեղունի» մեջ մի առանձին բացառություն կարելի է համարել Պալասանյանի գրական-քննադատական հոգեվածները, որոնց մեջ երևում է հեղինակի զարգացումը, քննադատական ընդունակությունը: Բայց այդ հոգեվածները երկրորդ տարուց սկսեցին շերտալ «Մեղունի» մեջ և լրագիրը այլևս աչքի չընկնող գրական ուժեր շունքը: Խմբագրի գատողությունները պատում են օդի մեջ, վերացական բնավորություն ունեն, կյանքի երևույթների վրա չեն հիմնված, ամեն ինչ գրվում էր այնպես, որ կրթեր շահույթներ, որ հարվածը խիստ ընդհանուր բնավորություն ունենա, լցավեցնեն:

Մշտական բաժիններից ամենահարուստը քաղաքականն էր: Եվ սա հաս- կանալի է. այդտեղ աշխատանքը եվրոպական և ուսու լրագիրներից քաղած կարողների թարգմանությունն է: Բայց չէ կարելի ասել, թե նոր խմբագրու- թյունը այդ կողմից մի առանձին երախտիք ունենա իր ընթերցողների առաջ. քաղաքական բաժին ուներ և Մանդինյանի «Մեղուն» և այդ բաժինը անհամե- մատ հարուստ էր 1861 թվականին, երբ լրագրի գլխավոր աշխատակիցը Մի-

¹ Կա և ավելի լավը. — «Թե «Մեղուն» և թե «Կոունկ» լրագիրը (?) քանիցս անգամ պատիվ ցուցան հրատարակելու իրանց թերթերի մեջ...», (1863, № 21):

քայլի Պատկանյանն էր: «Աղգային» կոչված բաժինը արդեն խմբագրության ամբողջ անկարողությունն է պատկերացնում: Այդտեղ նյութերը, բացի խմբագրության գատուություններից և Կ. Պոլսի հայ լրագիրներից վերցրած արտատպություններից, համարյա միմիայն եկեղեցիների, դպրոցների գրամական հաշիվներն են. գնալով «Մեղուն» ճառերի անդուսպ սիրահար դարձավ և լցնում էր իր էջերը զանազան հանգեսների և թաղումների ժամանակ արտասանած երկար ու անհամ ճառերով:

Բնորոշ է, որ հենց առաջին տարում «Մեղուի» նոր խմբագրությունը ընդհարվեց հասարակական պահանջների հետ և չգիտեր, թե ինչպես տանն գործը, որ լավ լինի: «Բարի խորհուրդ» հոգվածի մեջ՝ խմբագրությունը պատմում է այսպիսի բան. «Այսպես ահա՛ շատ անգամ պատահել է և «Մեղուի» խմբագրությանը լսել զանազան բարի խորհուրդներ, որոնք բոլորովին միմյանց հակառակ լինելով, չէ գիտակցել, թե ո՞րը նրանցից ավելի ընդունե ու նրամով վարվի, որ ավելի կարողանա հասնել իր նպատակին, այն է ընթերցողներին օգտավետ լինել, տալով նրանց այն կերակուրը, որն որ նորա հասկացողության ու պահանջողության համեմատ լինի, ուստի և մարսական ու սննդարար: Ահա՛ պատմենք այս զանազան խորհուրդները, որոնք խղճուկ «Մեղուն» մի քանի ժամի մեջ այլեպէլ բարենպաստ և բարեկամ անձինքներից միջոց է ունենում լսելու Մեր պատմելու գիտավորությունը այն է, որ հետո դառնանք բոլոր ընթերցողներին և խնդրենք, որ ամենքն էլ հայտնեն իրանց միտքը, որ մենք էլ նոցա համեմատ վարվենք, տալով նոցա այն, ինչ որ իրանք կպահանջեն մեզանից. տանք այն հարկը, որն որ պարտականություն կպահանջե, հիշելով ավետարանի՝ «տո՛ւք զկայսերն կայսեր և զԱստուծոյ Աստուծո խոսքերը»:

Այս դիմումը ընթերցողին, այս հարցումը, թե ի՞նչ կկամենաք և ինչպե՞ս կկամենաք, արդեն ապացույց է, որ խմբագիրը շուներ իր սեփական որոշ գաղափարը իր ստանձնած պաշտոնի մասին: Նա ինքը չպիտի ղեկավարեր ընթերցողին, այլ, ընդհակառակը, ընթերցողը պիտի ղեկավարեր նրան, պիտի ծրագիր տար նրան: Բայց կարո՞ղ էր տեղի ունենալ ընթերցողների պլեբիսցիտ, կարո՞ղ էր կայանալ մի համայնական վճիռ, որ որոշեր, թե Պետրոս Միմեոնյանցի «Մեղուն» ինչ պիտի անե, որ օգտավետ լինի: Այսպիսի հարցերը ընթերցողը չէ վճռում, այլ հասարակական օրգանի ղեկավարը, եթե նա ունի կոշում, տաղանդ, ժամանակի և ժողովրդի հանգամանքների մեջ թափանցելու ընդունակություն: Եվ պատահեց այն, ինչ պետք է պատահեր: Հայ բնթերցողը ոչինչ չասաց և «Մեղուն» շարունակեց գնալ այնպես, ինչպես սկսել էր: Խմբագրությունը ընդունակություն էլ չուներ բավարարություն տալու բնթերցողի պահանջներին: Ահա մեկը Մոսկվայից գրում է, որ ցանկալի է տեսնել «Մեղուի» մեջ թղթակցություններ գավառներից: Ինքը՝ Միմեոնյանցը չհասկացավ այդ անհրաժեշտությունը և նրան ցույց տվին: Բայց ի՞նչ արավ նա: Տպագրեց այդ նամակը, իր կողմից ավելացրեց, թե ինքն էլ շատ լավ հասկանում է, որ թղթակցությունները շատ են հարկավոր. աստված ողորմած է, դրանք էլ կլինեն: Եվ «Մեղուի» մեջ այնուհետև, տարիների ընթացքում, եթե մի-մի պատահում էլ էին թղթակցություններ, դրանք համարյա միմիայն «աղգային» նյութ էին պարունակում. դպրոցական այսինչ տոնը, այսինչ առաջնորդի կատարած հանգեսը, արւսասանած ճառը և այլն: Ժողովուրդ չկար:

որովհետև լրագիրը չէր առաջացնում ժողովրդի կյանքն ուսումնասիրելու պահանջ, չէր տալիս ծրագիր թղթակիցներին, մտքեր չէր շարժում:

Անտարբերությունը այսպիսի հանգամանքների մեջ մի բնական երևույթ է: «Մեղուն» ճիշտ որ «խղճուկ» էր, ինչպես անվանում էր նրան խմբագիրը: Հրատարակիչ էնֆիանցյանցի շեշտած այն իրողությունը, թե մուրացկանություն պես մի բան է ամսագիր կամ լրագիր հրատարակելը՝ գուտ ճշմարտություն էր և «Մեղուի» վերաբերմամբ: Նոր խմբագրության երկրորդ տարին, այն է 1864-ին, լրագիրն ուներ ընդամենը 237 բաժանորդ, որոնցից միայն 183 կոպի էին վճարել բաժանորդագինը: Հաջորդ տարին ավելի է ընկնում լրագրի կյանքականը: Այս անգամ «Մեղուն» ուներ 270 անվանական բաժանորդ, բայց մոտ վճարողների թիվը իջնում է 150-ի: Խմբագրությունը մուտք է ունեցել 1000 ուրբի, ծախս 1250 ուրբի:

Ոչինչ չէր օգնում, թեև գործադրվում էին մուրացկանության բոլոր միջոցները: Խմբագրությունը իր թերթը ուղարկում էր և այնպիսի մարզկանց, որոնք բաժանորդ չէին գրվում, երեկ այն հույսով, թե այդ մարդիկ կխղճարվեն և գոնե ամաչելուց բաժանորդ կգրվեն: Բայց դոնեդուն ընկած անպատիվ հայ լրագիրը ոչ խղճահարություն, ոչ հետաքրքրություն էր զարթեցնում, և մարդիկ, երկու կամ երեք ամիս «Մեղուն» այդպես ձրի ստանալուց հետո, սկսում էին հետ դարձնել համարները և հայտնում էին, թե էլ չեն կամենում ստանալ:

Խմբագրությունը աշխատում էր հասկանալ այդ երևույթի պատճառները և ամեն հարմար դեպքում հայտնում էր, թե պատճառը մի է՝ այն, որ «Մեղուն» խայթում է, այսինքն որ թշնամություն կա, հակառակություն կա «Մեղուի» գնմ: Մենք ավելորդ չենք համարում բերել այստեղ այդ բացատրություններից մեկը, որ տպվեց 1864 թվականի վերջում. «Գիտեմ,— ասում է խմբագիրը,— պետք է հարցնեն, բաս ինչո՞ւ «Մեղուն» ինքն էլ չէ սատակում, երբ լսայթում է, որ հատկական է մեղունների բնավորությանը: Մենք կպատասխանենք, որ այս հասարակ Մեղուններից չէ, սա Հայաստանի Մեղուն է, որն որ հեշտ սատակելու ապրանք չէ, թեև խիստ շատերը կան, որոնք կհամաձայնեին նորա թաղման ծախսն էլ իրանց վերա առնելու ու ճոխ դազող էլ շինել կտային նորա համար, եթե միայն նա կամենար փոխիլ առ հարս. բայց մենք կասենք, որ Մեղուն ի միթարություն այսպիսի բարեկամաց ավելի աշխուժությամբ պետք է վարե իր կյանքը, որի համար շատ բան հարկավոր չէ, հերթ է մի քանի ժողովկների հյուսիս էլ, բայց Աստուծո ողորմությամբ Հայաստանը, չնայելով իր ավեր և խոպանացյալ լինելուն, դեռևս ունի այնքան ծաղիկներ, որ կարողանա կերակրել իր մեկ Մեղուին, որ սա սովամահ չմեռնի: Թո՞ղ ուրեմն նորա հիշյալ բարեկամները խնդան միայն նորա վերա, Մեղուն դեռ միայն սովից չէ սատակում, բայց կազդուրել ու զորանալ էլ չէ կարող. միայն թո՞ղ հիշեն նորա այն էլ, որ օրավուր ծաղիկների թիվն էլ ավելանում է, ուստի և նոցա այս արախությունն էլ շատ կարճատև կլինի ու այն ժամանակ Մեղուն նոցա հուսարկավորության համար ներդաշնակ ու բաղցր բզդոցներ կհանն «հիշատակ արգարոց օրհնությամբ եղիցի» ասելով»:

Սա միևնույն ժամանակ մի նմուշ է Պետրոս Միմեոնյանցի հրապարակախոսությունից: Ո՞ւմ վրա աղդեր, ինչպե՞ս աղդեր այսպիսի լեզուն, այսպիսի խոսակցությունը: Եվ դեռ կարծում էին, թե «սովամահ սատակելու» դրու-

թյան հասնելու պատճառը այսպիսի տափալուծությունն ու անհամությունը էլ այլ այն, որ «Մեղուն» շատերին է խայթում:

Ճիշտ է, Հայաստանի Մեղուն առանց խայթի չէր: Բայց ամբողջ հարցը նրա մեջ է, թե արդյոք նրա խայթողները հասնո՞ւմ էին նպատակին, ցավեցնո՞ւմ էին շատերին, թե՛ ոչ: Կարգալուծ նրա հրապարակախոսական հոգևածները, մենք չենք զգում խայթոց, թեև տեսնում ենք տեղ-տեղ բավական խրատություն: Սիմեոնյանցը առաջին տարիներին գիտեր խոսել առաջադիմության անունից, գիտեր եթե ոչ իսկական պատերազմ, գոնե դրա նմանությունն ունեցող մի բան մղել հնապաշտության, անշարժության դեմ: Բայց այդ բոլոր շարժողությունների, ջանքերի մեջ «Մեղուն» մնում էր «Մեղու», այսինքն թույլ, տարուբերվող, անհաստատ: Եթե նա մի որևէ ազգային պակասություն էր երևան հանում, միևնույն ժամանակ իր պարտքն էր համարում ավելացնել, թե այդ պակասությունը հատուկ է ուրիշ ազգերին էլ: Եթե մի-մի հարձակվում էր ազաների վրա, միևնույն ժամանակ աշխատում էր թուլացնել այդ հարձակման նշանակությունը, ավելացնելով, թե, իհարկե, բոլոր ազաները չեն վատ և իր ասածները ամենքին չեն վերաբերվում: «Մեղուն» դժգոհություններ հայտնել գիտեր, բայց անուններ տալ, փաստեր վերլուծել, շարիք իր իսկական անունով ներկայացնել չգիտեր: Ամեն ինչ փոխած ու տարածված էր օդի մեջ, խարխափում էր անորոշության մեջ, վերացական էր, ընդհանուր բառեր:

Փոքրիշատե հաշող, բավարարություն տվող հոգվածներից մենք, նմուշի համար, վերցնում ենք մեկը: Շատ քիչ են այն դեպքերը, երբ «Մեղուն» պարզ ու կտրուկ ոճով արտահայտած լինի իր դավանանքը: Բայց մենք առանձին ուշադրություն դարձնում ենք այդ հոգվածի վրա այն պատճառով, որ «Մեղուն» այդտեղ շատ ճիշտ նկատել է իր սեփական պատկերը, իր ամբողջ ապագան: «Մի քանի խոսք» է այդ հոգվածի վերնազիրը¹. խոսքը առաջադիմ և հետադեմ կուսակցությունների մասին է:

«Այս հակառակ կուսակցությունքը,— ասում է «Մեղուն»,— յուրաքանչյուր ազգի մեջ ծագում են այն ժամանակ, երբ նորա մի մասը առաջադիմության ճանապարհի վերա կանգնելով սկսում է առաջ երթալ ու իր հետ կամենում է տանել թուլամորթ ու ծանրաշարժ եղբարց, որոնք չեն կամենում համաձայնել իրանց սիրած անգործունեության և անշարժության վիճակը թողնելու: Սրանից ծագում է կոիվը երկու կուսակցությանց մեջ, որ միշտ վերջինների անկումովն է վերջանում: Այստեղ առաջադեմները հարձակողական վիճակի մեջ են, իսկ անբարեմիտները կամ անշարժները պահպանողական վիճակ են պահում: Առաջադեմների գեղեցիկ ճակատների վրա գրած են ոգևորող լուսավորություն, գիտություն, մարդկություն, ճշմարիտ քրիստոնեություն և պարզություն սուրբ խոսքերը: Իսկ հետադեմների հին ու փոշիով ծածկված կերպարանքների վրա գրած են. խավար, մոլություն, քսություն, խարդախություն, կեղծ կրոնասիրություն և ազգասիրություն: Այս վերջինները դեմ հանդիման կանոնավոր պատերազմ տալու կարողություն չունենալով գործ են դնում ամեն անազնիվ միջոցներ իրանց ախոյաններուն ճնշելու համար, միտք նոցա ջանքերն էլ իզուր են և իրանց գործ դրած շարիքը իրանց գլխին պետք է հավաքեն: Նոցա գլխավոր զենքերն են միշտ քսությունը, մատնությունը և ժողովրդյան կրոնական զգացմանց լարերը, որոնք աշխատում են լարելու առաջադեմների դեմ: Այսպես ամեն ազգերի մեջ էլ, երբ հինները կամենում էին

հայածել առաջադիմության և լուսավորության զավակներուն, աշխատում էին դնել սոցա վերու անհարադատության կնիքը դեպի իրանց եկեղեցին: Բնականաբար այս երևույթը երևեցավ և մերերի մեջ: Սկզբումն առաջադեմ երիտասարդները բողոքականության անունն ստացան, բայց երբ այս անունը շխարհացավ հաստատել նոցա վերա, հանդես դուրս բերին բարի մարդիկ նաստորականությունը և կարծեմ վերջապես մահմեդականությունը ու կուսապաշտությունն էլ չեն մոռանալ առաջ բերելու: Հայտնի բան է, այս ամենն էլ անարժան միջոցներ են՝ արժանի նրանց գործ դնող անարժան մարդոց»:

Այս տեսության «Մեղուն» նորից վերադարձավ իր № 41-ի մեջ: Այստեղ էլ շեշտվում են նույն հանգամանքները. «Արդեն անբավականությունները հետադեմների և առաջադեմների մեջ սկսած են մեր ազգումն էլ, որովհետև լուսավորության արշալույսն իր շողքը զցել է մեր վերա էլ... Հետադեմները ավելի գործ են անում իբրև զենք քսությունը, բամբասանքը, նենգությունը, խորամանկությունը, դավաճանությունը և մատնությունը, որոնց մեջ կրթվել են իրանք և որոնց առաջնորդությամբ անցրել են իրանց կյանքի ասպարեզը. բայց եթե պատահում էլ է երբեմն, որ կարծես աշկարա հանդես են կամենում դուրս գալ, այս հուսահատության զորությունն է, որ բուպնապես ուժ է տալիս նրանց»:

Ո՞ր առաջադեմ, արմատական թերթը կկարմրեր այս տողերից: Բայց «Մեղուն» իսկական առաջադեմ թերթ չէր: Ո՛չ, հենց այս իսկ հոգվածների մեջ երևում են կղերական պաշտամունքի պոչերը. «Մեղուն» զովարանում էր առաջադիմությունը, օրինական և ցանկալի էր համարում պատերազմը առաջադիմության և հետադիմության մեջ, բայց ինքը նույն առաջադիմության, նույն պատերազմի զինվոր չէր: Ինչպե՞ս բացատրենք այս երևույթը:

«Մեղուն» դեռ երիտասարդական հասակում էր: Երիտասարդությունը սովորաբար լուսասեր է, ունի իր թռիչքները դեպի առաջ, ունի իր լավագույն սկզբնական ընկերները, երբ լույսը, ազատությունը, ճշմարտությունը խոսեցնել են տալիս բարձրաձայն: Կյանքի մեջ անթիվ են այնպիսի անհատներ, որոնք իրանց ծաղիկ հասակում տեսել են զաղափարական գարուն, բայց մի գարուն, որ կարճատև է եղել, միայն մի քանի ժպտուն օրերից կաղծված: Թո՛ղ են այդ օրերը, և կուռքերը կործանված են, սրբությունը պղծված է, իղիալների տաճարը անգութ կերպով ավերված:

Այսպես էր և «Մեղուն»: Երիտասարդական ժամանակի մի քանի հատ ազդու, առաջադեմ դավանանքներ՝ սրանք մի քանի անամպ օրեր են նրա երկարատև կյանքի մեջ: Երկար ապրեց «Մեղուն»: Բայց ինչո՞ւ համար: Ոչ թե այդ սակավաթիվ անամպ օրերի համար, այլ որպեսզի մարմնացնե ճիշտ և ճիշտ այն իսկ հետադիմությունը, որի դեմքը, որի մտավոր ազդատությունը, որի գործած անազնիվ զենքը ճարտար պարզությամբ նկարագրված են վերև բերած տողերի մեջ: Պետրոս Սիմեոնյանցը մարգարե էր իր վերաբերմամբ: Հայոց մամուլի ասպարեզում նրան վիճակված չէր ստեղծագործողի ինքնուրույն դեր: Կեղծ էր այն դրությունը, որ երիտասարդական հասակը տալիս էր նրան, անակրկիտ կերպով հատկացնելով նրան առաջադիմությունը պաշտպանողի պաշտոն: Իսկական դերը առջևում էր, և այդ դերն էր՝ հանդիսանալ առաջադիմության թշնամի, խուլընդուտ: Ահա ժամանակով, երբ Գրիգոր Արծրունին հրապարակ կգա իբրև խմբագիր, մենք կտեսնենք, թե որպիսի զարմանալի հարապատության մեջ Պետրոս Սիմեոնյանցը կմարմնացնե իր սեփական ձևորով դատապարտած հետադիմական տիպը...

¹ 1864, № 38:

Եվ պետք է նկատենք, որ գրական ու հրատարակատեսակական տեսակետից այսքան թույլ ու խեղճ «Մեղուն» միակ լրագիրն էր, որ մնում էր հրատարակի վրա, Թիֆլիսի պես մի հայաշատ կենտրոնում:

Մեր պարբերական մամուլը դեռ խանձարուրի մեջ էր գտնվում, այնպես որ մենք չէինք կարողանում տարբերություն դնել ամսագրի ու լրագրի մեջ: Ամսագիրը ուրիշ պաշտոն ունի, լրագիրը՝ ուրիշ: Մեզանում այդ երկու տիպերը խառնված էին. լրագիրը ամսագրական նյութեր էր տալիս, ամսագիրը՝ լրագրական: Ահա թե ինչու մենք նկատի ենք առնում այն հանգամանքները, որ վերանորոգված «Մեղուն» հենց առաջին տարին ամսագրական մամուլը Թիֆլիսում անկման էր դիմում, հետևաբար և լրագրի համար ասպարեզում ուժեղ մրցակից չկար:

1863 թվականին «Կոունկը» այլևս առաջվանը չէր: Ազգատ են նյութերը, Մարկոս Աղաբեկյանը այլևս առաջվա թեկերը չունի, ազգայնամոլությունը բանաստեղծական աղմուկով չէ առաջ տանում: Մնալով մենակ, առանց ասպահով հրատարակչի, լոկ բաժանորդների տվածին ապավինած, «Կոունկը» քաջ առ քաջ մոտենում է իր հոգեվարքին: Բայց տարվա սկզբին Աղաբեկյանը կարծես նոր ճանապարհի վրա էր, կարծես ուզում էր խոստովանել իր սեփական մեղքերը:

«Լավ գիտենաք, — ասում էր նա հունվարի համարում, — լավ գիտենաք, որ քանի որ մեր մտավոր մշակությունը ոտանավորներ, թեթև-մեթև գրվածքներ առաջ բերելու, վերիվերո ճառեր, ներբողներ հորինելու և այլ շեմ իմանում ինչ տեսակ քամու նման խոսքեր, իմաստներ շարագրելու վրա կկայանա, մեր ուսումնականությունը շինովի զարդու կնմանի, և հաստատուն բան չի լինի և կզանա այն գեղեցիկ կանանց նման, որոնց բոլոր սիրունությունը մի քանի փողի սնգույրով է և այն երիտասարդաց, որոնց բոլոր դաստիարակությունը իրանց արտաքին շորերուն, վայելչության և արժողության մեջն է»:

Ճիշտ այսպես, այո: Երգող, ճառող ազգասիրությունը այսչափարժեք էր հրատարակով: Բայց այդքանը միայն: Սովորությունը օժեղ է հանդիսանում բարի կամեցողությունից, և դրանից հետո էլ «Կոունկը» տալիս է այն, ինչին սովորել էր, այսինքն ճառեր, ներբողներ և «թեթև-մեթև» ոտանավորներ:

Նշանավոր է, որ «Կոունկի» վերաբերմամբ էլ հասարակությունը պահանջներ ուներ: Պահանջում էին, որ ամսագիրը ավելի պարզ, հանրամատչելի լեզվով խմբագրվի, որպեսզի հեշտ լինի նրան հասկանալը: Աղաբեկյանը խոստանում է կատարել իր ընթերցողների այդ պահանջը, բայց, հակառակի պես, 1863-ի «Կոունկը» նախընթաց տարիներից էլ դժվարամարս ու քիչ հասկանալի էր. նրա էջերը այժմ լցվում էին պատմական գրաբար հիշատակություններով: Այստեղ էլ, ուրեմն, նույն անկարողությունը հասարակության մեջ գոյացվող պահանջների առաջ, ինչ տեսանք «Մեղուն» մեջ: Գահավիժումը ճակատագրական էր և «Կոունկի» համար. նա փակում է տարին 260 բաժանորդով, բաց է անում հետևյալ տարվա բաժանորդագրությունը, բայց 1864-ին չէ հրատարակվում և Աղաբեկյանը, թողնելով մի քանի հատ բաժանորդներ, գնում է Պոլիս:

Սակայն «Կոունկը» թողնում էր ժառանգություն: Նրա աշխատակիցների մոտենում են «Մեղուն», որի ուղղությունը արդեն լիովին համապատասխանում է «Կոունկի» ուղղությանը: Այդ ուղղությունը ապագայում ստացավ մեկ վականություն բնորոշ-անունը, թեև ավելի արդարացի կլինեին անվանել կոունկ

կակառություն, քանի որ «Մեղուն» այդ ուղղության ստեղծողը չէր մեղանում, այլ միայն ավանդապահը:

«Կոունկը» իր խմբագրի հետ բոլորովին շանհայտացավ մեր գրական հորիզոնից: 1864-ի հուլիսին հրատարակվեց մի հայտարարություն, որ հայտնում էր, թե «Կոունկը» պիտի շարունակե իր գոյությունը: Գարձյալ մի նոր մարդ էր հանդես գալիս: Հայտարարության տակ դրված էր ստորագրություն՝ «Խմբագրող-Տնօրինող, կանդիտատ Մոսկվայի համալսարանի, ուսուցիչ պատմաբանական գիտությունների, Ս. Ստեփանն»:

Ստեփանոս Ստեփանն (Ստեփանյան), մի գորեցի հայ, որի նախնիքները Թուրքիայից էին գաղթել, նոր էր ավարտել Մոսկվայում իր ուսումը և Թիֆլիսում ուսուցչություն էր անում: Մոսկվայի հայ ուսանողության ամենաեռանդուն անդամներից մեկն էր Ստեփանն, նա դեռ համալսարանում եղած ժամանակն էր սկսել գրել հայերեն և նրա անունը մենք տեսնում ենք «Հյուսիսսասիայի» մեջ՝ հենց այդ ամսագրի առաջին տարուց (1858): Երբ սկսվեց «Կոունկի» հրատարակությունը, Ստեփանն սկսեց գրել և այդտեղ, տպագրելով զլխավորապես ոտանավորներ, որոնց համար երբեմն գործ էր ածում «Իշխան Բագրատունի» կեղծ անունը¹:

Թիֆլիսում Ստեփանն ուզում էր նոր ամսագրի իրավունք ստանալ: Բայց մինչև այդ միտքը իրագործելը նա, Մարկոս Աղաբեկյանի նման, վերցրեց «Կոունկը». այսինքն նա խմբագիր էր, հրատարակության ամբողջ գործը իր վրա էր առնում, իսկ սեփականատեր էնֆիտանցյալ մնում էր լոկ անունով հրատարակիչ: Այս պայմանների մեջ Ստեփանն սկսեց իր գործունեությունը և շուտով տեսավ, թե որքան անհարմար պայմաններ են դրանք, ուստի, այլևս երկար չսպասելով, սկսեց միջնորդել իր սեփական ամսագիրն ունենալու մասին:

Հայտնի է, թե Ստեփանոս Ստեփանն (հետո Խորեն վարդապետ և վերջը Եպիսկոպոս), որքան զարգացած, մանավանդ որքան եռանդոտ մարդ էր: Վաթնական թվականներին նա երևան է գալիս մեղանում իբրև Լուսերից մեկը, որ արդյունավոր կերպով գործում է մանկավարժական ասպարեզում, իսկ մամուլի մեջ հանդիսանում է լայն ու լուսավոր գաղափարների քարոզիչ: Իբրև Մոսկվայի ուսանող և «Հյուսիսսասիայի» աշխատակից, նա գտնվում էր նազարյանցի ազդեցության տակ: Այդ ազդեցությունը այնքան սաստիկ էր, որ Ստեփաննի առաջին գրվածքներում (օրինակ, 1864-ի հայտարարության մեջ) մենք տեսնում ենք Նազարյանցի ոճը, դարձվածքները, նույնիսկ սիրած բառերը: Դա առաջին մարդն էր, որ փորձում էր «Հյուսիսսասիայի» գրական զբաղողը հաստատել Թիֆլիսում, այսինքն մոտեցնել հայկական կյանքին:

Սկզբից ևեթ Ստեփանն կամենում է որևէ կերպով զանազանել իր «Կոունկը» Աղաբեկյանի «Կոունկից»: Ամսագրի անունը նա դարձնում է «Կոունկ Վայկական աշխարհի» (փոխանակ «Հայոց աշխարհի»), փորձում է հեռացնել այդ անունից «Կոունկ» անունը, «որովհետև, — ասում է նա, — կոունկը թուշուհի մեջ հիմարների նշան է», սակայն այդ բանը չհաջողվեց: Բայց «Կոունկ Վայկական աշխարհի» անունն էլ չբավականացրեց Ստեփաննին. լինելով աշխարհաբարի ջերմ պաշտպան, նա ընդունում էր ռուս հայտնի գրող Կարամ-

¹ Միջակել Նարանդյանցը շատ երիտասարդների համար օրինակ դարձավ: Սկսեցին նմանել նրան ոչ միայն գրելու, գաղափարներ արժարծելու մեջ, այլև կեղծ անուններ հնարելու մեջ: Ստեփաննի «Իշխան Բագրատունի» անշուշտ «Կոունկ Էմմանուելի» աղղեչության տակ է կազմվել Վայկական աշխարհը՝ ուներ մի աշխատակից՝ «Գուրս Մանդակունի» անունով:

զինի ասածը՝ «Գրի՛ր այնպես, ինչպես խոսում ես», ուստի հենց առաջին համարից սկսեց անվանել իր ամսագիրը «Հայկական աշխարհի կոունկա»: Երբ ընդ փոփոխությունը, որ նա մտքեց իր ստանձնած գործի մեջ, բաժանորդացի է ժանացնելն էր. փոխանակ 3 ուրբու, նա նշանակեց 5 ուրբու, բայց միևնույն ժամանակ ծավալն էլ փոքրացրեց. այսպես անում էր որպեսզի ամսագիրը զնի կողմից էլ մատչելի լինի և շատ տարածվի:

Նոր «Կոունկը» պիտի հրատարակվեր 1864-ի հոկտեմբերից: Բայց հենց առաջին քալից Ստեփաննի վրա ծանրանում էր մի պակասություն, որ ճակատագրական էր նրա ամբողջ գործունեության ընթացքում. դա այն էր, որ ամսագիրը հրատարակվում էր խիստ անկանոն կերպով: Առաջին համարը հոկտեմբերին հրատարակվելու փոխարեն լույս տեսավ միայն 1865-ի ապրիլին: Միացված էին շորս ամսվա համարները և այնուհետև երկու, երեք ամսվա համարները միացնելը սովորական բան դարձավ Ստեփաննի համար:

Առաջին հայտարարությունը, որով նոր խմբագիրը ներկայանում էր հասարակությանը, բավական երկար էր, բայց և որոշ ու պարզ: Դա նորոգված «Մեղուի» հայտարարությունը չէր: Ստեփաննի հենց առաջին քալից դրոշակ էր պարզում, որի վրա գրում էր «Միտք և քննություն»: Առաջին հայտարարությունը ցույց է տալիս, որ նոր խմբագիրը լավ տեղյակ է իր սկսած գործին ունի որոշ աշխարհայացքներ, որոշ հասկացողություն այն կյանքի մասին, ուր նա պիտի գործեր: Հայկական իրականությունը նրան ներկայանում է իբրև մի ճահիճ. չկա սեր դեպի ընթերցանություն, հրապարակի վրա կանոնած է այն տխուր, հուսահատական իրողությունը, որ «Թիֆլիսում, որ կամենում է հպարտ մնալ ուրիշ հայաբնակ քաղաքների առաջ միայն հայ բնակչության բազմամարդությունը» անկարելի է հայերեն մի հատիկ ամսագիր տպահանգել: Լավ տեղյակ լինելով այս իրողության, Ստեփաննի, այնուամենայնիվ, հուսով և հավատով է սկսում իր գործը, որի նպատակն էր «տարածել հայերի մեջ մտքերը և գաղափարները, որոնք, լինելով եվրոպական լուսավորության և քաղաքակրթության պտուղներ, կազմում են եվրոպական կյանքի պարծանքը»: Յուրաքանչյուր տետրակի ծավալը նա նշանակում էր 2—3 թերթ և ավելացնում էր. «Եթե մի օր ստորագրողների թիվը կհասնի 600—700, մենք խոստանում ենք տալ մեր ստորագրողներին 4—5 թերթեր»: Ահա ինչ ակունկալություն ուներ Ստեփաննի ասպազյի համար:

1865-ի ապրիլին, ինչպես ասացինք, լույս տեսան «Հայկական աշխարհի կոունկը» ամսագրի № 1, 2, 3, 4 մի գրքի մեջ: Նրա ճակատին գրված էր՝ «Օրագիր ուսումնական և գրականական»: Հետևելով նազարյանցի օրինակին, Ստեփաննի էլ ամսագրի յուրաքանչյուր տետրակի վրա դնում էր իր նշանաբանը: Սկզբում դա պորտուգալացի հուշակավոր բանաստեղծ Կամոնիսի «Os Lusitadas» (Լուսիտանականք) պոեմից վերցրած հետևյալ կտորն էր. «Դու կտես նես հայրենիքի սերը ոչ թե շարժված անարգ շահասիրությունից, բայց բարձր և իբր հավիտենական»: Իր ստանձնած գործի պաշտոնը Ստեփաննի հասկանում էր այսպես. «Մեր օրագրի առաջին սրբազան պարտականությունը լինելու է մշակել հայերի առաջնացություն համար միշտ և անդադար: Ազգի առաջնացությունը կախված է ազգ կազմող մասնավոր անձերի առաջնացությունից: Մասնավոր անձերի առաջնացությունը կարելի է միայն բարեկարգված ուսումնարանների և գիտության միջնորդություն, երբ գիտության հետ անպայման դաստիարակվում է, լուսավորվում է և սիրտը: Առանց սրտի և հոգու դաստիարակության գիտությունը չունի գրեթե ոչինչ կատարելու ազգի բարոյական փրկության համար: Գիտությունը կարելի է տարածել միայն ըն-

թերցանությունը: Ուրեմն մեր օրագիրը աշխատելու է անդադար տարածել ընթերցանությունը, այնուհետև հեշտ է իրագործել բոլոր մնացածը: Ընթերցանությունից առաջանալու են բարին, ճշմարիտը և գիտությունը, երեք սկիզբները, որոնք կազմում են մարդի վերջնական և առանց որոնց մարդս առավել մոտ է անասնական դրություն: Ընթերցանություն՝ ահա առաջին ու վերջին խոսք, որ պիտի կրկներ ամենայն ճշմարիտ հայն յուր ընկերին, եթե ցանկանում է նա հայերի բարոյական վերականգնումը, բարոյական փրկությունը... Ինչպի հիշված խնդիրները՝ ուսումնարաններ, կրթություն և լուսավորություն, ազգություն մենք կվերադառնանք միշտ և կմերկացնենք ինչ որ փաթաված մնացել է անիմաստություն մինչև այսօր: Եթե այս կհավանե մեր սիրելի ընթերցողը, ուրախ ենք, եթե կվշտանա (առանց վիրավորվելու ամենևին), ասվելու ուրախ: Եթե նա վայր կզցն տետրակը, անարդար կվարվի, եթե կհասկանա, ապա հույս կա բարոյական փրկության: Հարկավոր չէ երբեք մոռանալ մեր ընթերցողին, որ նախընթաց օրի օտարոտի կարծիքները (պարագայաները) և հասարակ օրի ճշմարտություններ են:

Կարելի է մի օր մեր լապտերի լույսի առաջ մեր ընթերցողը տեսնե այն կտորերի բոլոր անճոռնությունը, որոնց նա երկրպագում է այսօր, կարելի է նույնպես նվազող սովորի հետևից նա նկատե նորա անմահ ժպիտով ճշմարտությունը, ավետարանի դուստրը, արդարության քույրը»:

Այսպես էր նոր խմբագիրը հասկանում հասարակական կարիքները: Եվ կարո՞ղ ենք ասել, թե այստեղ չկա ռեալականություն, նուրբ ըմբռնողություն: Ինչի՞ հարցերը եթե մի կողմ թողնենք, բավական կլինի վերցնել հենց զբլխավոր նպատակը, որ ընթերցանություն տարածելն է: Հայր չէր կարողում. սա միշտ որ ամբողջ գծախտության պատճառն էր: Մեծ բարերար, նույնիսկ իրոս կլինի այն մարդը, որ կկարողանար կտրել հայի այս համառ ատելությունը դեպի գիրքը: Հայր չէր կարողում. սա մի աննշան, ժամանակավոր երևույթ չէր: Դեռ Մովսես Խորենացին իր ժամանակին և իրանից առաջ եղած հայերին հանդիմանում էր, որ չկա սեր դեպի ուսումնասիրությունը, դեպի գիրքը: Ինչո՞ւ էր այսպես: Հին ընթերցասեր հային ոչ ոք չէր հարցնում և մենք չգիտենք, թե ինչ կարող էր նա պատասխանել: Բայց նոր ժամանակների ընթերցողը ուներ պատասխան, և այդ պատասխանը նույնպես մի հարց էր՝ ի՞նչ կարգալ: Այս հարցը արդեն լսվում էր Ստեփաննի ժամանակ: Եվ իրավ ի՞նչ էր տալիս մամուլը, ի՞նչ էր տալիս գրականությունը:

Ահա այդ մեծ պահանջը հասկանում է Ստեփաննի: Հույսերով, աշխատելու պատրաստականությամբ լի մի զարգացած երիտասարդ, նա վստահություն հանձն է առնում ընթերցանության նյութ տալ հայ գրագետին: Մնում էր, որ հասարակությունն էլ իր պարտքը ճանաչեր և միջոցներ տար: Բայց հասարակությունը միևնույնն էր, ինչ «Հյուսիսափայլի», «Մեղուի», հին «Կոունկի» վերաբերմամբ: Նույն այդ առաջին համարում Ստեփաննի հարկադրված էր հետևյալ խոստովանությունն անել. «Մենք կարծում էինք, թե ստորագրողների թիվը հնար կտա մեզ աշխատեցնելու մեր գործի զանազան կողմերի վերա ուրիշ գործող ձևեր և ձևք բերելու զանազան գրողների գեղեցիկ հոգիներ, վճարելով նոցա, առանձին պայմանով, նոցա արժանավորության ամենատ, բայց ստորագրողների ներկա թիվը այնպիսին է, որ կարողանալու է չափվել ծածկել խմբագրական տարեկան ծախսեր, տպելով ամիս-ամիս միայն խոստացված երկու թերթը և այն սեփական աշխատության գործերից:

Մնալով այս պայմանների մեջ, խոստանում ենք կատարել այն, ինչ միայն հնարավոր է այսպիսի ծանր գործերի մեջ միակ մշակին սորա ամենա-

չերմ աշխատութեամբ: Քեկ այժմ այս այսպես, բայց մենք չենք տարակոտում բոլորովին: Սիրելով մեր գործը, կարծում ենք, որ մասնակցով գոցի ստորագրողներն թիվը հնար կտա մեզ հրավիրել մեր գրողներին աշխատակից լինելու մեր գործի մեջ»:

Բայց այս հույսը երբեք չիրագործվեց: Ստեփանեի ամսագիրը մինչև վերջը տառապում էր միջոցների պակասությունից և այդ պատճառով երբեք չհարողացավ զարգանալ: Վերին աստիճանի անկանոն կերպով հրատարակվում էին նիհար, փոքրադիր տեղաբաններ, բնականաբար, դրանք չպիտի կարողանային իրագործել այն ահագին դժվար նպատակը, որ ընթերցանություն տարածելն էր ժողովրդի մեջ: Խմբագիրը պատրաստ էր, բայց ի՞նչ կարող էր անել: Նայենք Ստեփանեի հրատարակած հաշիվին¹: Վեց տարվա ընթացքում նա ստացել է ընդամենը 3637 ռուբլի, ծախսել է 4054 ռուբլի: Եղել է տարի (1867) երբ նա ունեցել է 86 բաժանորդ, 430 ռուբլով պետք էր մի տարի ամսագիր հրատարակել: Սա հրաշքի նման մի բան էր թվում և կարծեմ միայն հայ խմբագիրն է, որ այդպիսի ընդունելություն է գտնում այն հասարակությունից, որին ուխտել է ծառայել իր ամբողջ ուժերով:

Երկու հաջողակ տարի է ունեցել Ստեփանեն և դրանցից մեկն է 1869 թվականը: Բաժանորդների թիվը այնքան է, որ խեղճ խմբագիրը իրան երջանիկ է համարում: Այդ երջանկության մեջ նա հույս է հայտնում, թե եկող տարին էլ (1870 թ.) ամսագրի համար «նույնպես բախտավոր կլինի ստորագրողների թվի կողմից, ինչպես այս տարին»: Եվ երեկ այդ դարձանալի հաջողականությունն էր պատճառ, որ Ստեփանեն տպագրեց այդ «բախտավոր» տարվա բաժանորդների ցուցակը, մի բան, որ նա չէր անում: Նայում ենք այդ ցուցակին և տեսնում ենք, որ ամսագիր ստացողների թիվը հասնում է... 191-ի: Այս էր հայ խմբագրի երջանկությունը: Բայց դա բոլորը չէ. 20 օրինակի գիրք տվել է Ստեփանեի եղբայր Միքայելը, որ զանազան հիմնարկությունների իր կողմից նվեր ուղարկվի: Խմբագրությունն էլ ուներ նվերներ, փոխանակություն լրագիրների հետ, ձրի ուղարկում է աշխատակիցներին: Այդ բոլորը դուրս գալով, մնում է, որ ամսագրին գործակալների միջոցով գրվողների թիվը հասնում է 120-ի: Բախտավորություն էր, այո՛, ստանալ ամբողջ 733 ռուբլի բաժանորդագին, բայց ի՞նչ թշվառ բախտավորություն...

Բայց կրակոտ եռանդը, վառ սերը դեպի գործը չպիտի թույլ տային, որ Ստեփանեն էլ Պետրոս Միմենյանցի նման մի անձար, աննկատելի խմբագիր դառնա: Ի՛նչ, Ստեփանեին հաջողվում է այդպիսի ողբալի պայմանների մեջ և կատրել աչքի ընկնող մի գործ և եթե չլիներ նա, «Հյուսիսափայլի» դադարումից մինչև յոթանասնական թվականների սկիզբը մեր մամուլը կներկայաներ մի կատարյալ անապատ, և նրա միակ զարդը կմնար «Մեղուն»: Արև Ստեփանեն իր ամսագրով չհարողացավ մեծ ազդեցություն անել, խոր հետք թողնել, գոնե այն ծառայությունը մատուցեց, որ վառ էր պահում առաջադիմության թույլ ու փոքրիկ ճրագը: Նրա շուրջը հավաքվում է մի խումբ, որ գրում է մեր և օտար կյանքից: «Մեղուից» պահանջում էին գավառական թղթակցություններ, նա ասում էր, աստված ողորմած է: Ստեփանեն այդպես էլ նա նամակներ է գրում, ամսագրի մեջ հրավեր կարդում, ծրագիր է տպուկ խոստանում է տարին երեք նամակ գրողին ձրի ուղարկել ամսագիրը, և ուղի ջանքերը իզուր չեն կորչում, Ստեփանեն սկսում է թղթակցություններ ստանալ: Ուղարկություն դարձնելով ժամանակակից կյանքի վրա, նա սկսում է կո

նոնավոր ներքին տեսություններ, մի բան, որ նորություն էր կազմում մեզանում, եթե չհաշվենք «Ճոռաքաղի» տկար ներքին տեսությունները: Ստեփանեն այս բաժնում ոչ միայն արձանագրում էր փաստեր, այլև հաճախ քննադատում էր նրանց:

Կենդանություն է ստանում ամսագիրը. գոնե նրա պես կենդանի, աշխույժ մի օրգան չկա ուսահայերի մեջ, այդ պաշտոնը կատարում է «Խմբագրության պատասխաններ» բաժինը, որ շատ հետաքրքրաշարժ էր իրրև խմբագրության հայացքներ և գատողություններ առօրյա զանազան հարցերի վերաբերմամբ: Ստեփանեն ոչինչ չէր խնայում միտք շարժելու, հետաքրքրություն դարձեցնելու համար:

Առաջին տարին նա մեծ դժվարությամբ է վերջացնում. անցել էր 1865 թվականը, բայց խմբագրությունը դեռ բավարարություն չէր տվել իր բաժանորդներին: Երևում է, որ Ստեփանեն հաճախ ընդհարվում էր «Կոունկի» սեփականատեղ էնֆիաճյանցի հետ: Վերջինս թույլ չէր տալիս, որ ամսագիրը տպվի մի այլ տպարանում, իսկ իր տպարանը սաստիկ ուշացնում էր «Կոունկի» տպագրությունը: Ստեփանեն չէր թաքցնում դրությունը և մի խուլ պայքար էր մղում հրատարակչի դեմ հենց ամսագրի էջերում: Այսպես նա, օրհնքով ստիպված լինելով նշանակել և հրատարակչի անունը, ընթերցողին մոլորությունից ազատելու համար, այս կերպ էր մի փոքրիկ նկատողության մեջ բնութաբանում էնֆիաճյանցի դերը. «Երբեմն վաճառական մարդ, զանազան առևտրական հաշիվներով, բոլորովին առանց ամեն մտքի և կարծիքի (պրետենսիայի) օրագրականության գործը հասկանալու, առնում է կառավարությունից օրագրի հրատարակման իրավունքը: Սորանից առանձին պայմանով ստանում է ուրիշ բանիմաց ուսումնականը և վարում է օրագրի ամենատեսակ գործերը թե արտարին և թե ներքին, այսինքն և հրատարակողի և խմբագրողի պաշտոններ... Sapienti sat. Իմաստունին բավական է այսչափ...»

1866 թվականի սկզբում Ստեփանեն հրատարակում է ամսագրի երեք միացած համարները և դրանով փակում է առաջին տարին: Բայց այս անգամ ամսագիրը այլևս «Հայկական աշխարհի կոունկ» չէ, այլ պարզապես «Հայկական աշխարհ»: Սա արդեն նոր ամսագիր է, որի թույլտվությունն ստացել էր Ստեփանեն: «Կոունկը» նա վերագարձրեց էնֆիաճյանին և այլևս հրատարակվեց: Ստեփանեն գոհություն էր հայտնում, որ իր գործը «բոլորովին ազատվեցավ պ. էնֆիաճյանցի... հոգաբարձությունից»: Բայց թե բանի՛-բանի մարդու մունր արգելքների պիտի հաղթեր խմբագիրը՝ իր գործը կանոնավորելու համար, երևում է այն հանգամանքից, որ նա թիֆլիսում չգտավ մի այլ հաշիբեն տպարան, ուր տպեր ամսագիրը: Վերջապես նա 100 ռուբլի է տալիս վրացի տպարանատեր Մելիքովին, որ այդ գումարով հայերեն տառեր է բերել տալիս Մոսկվայից: Բայց դրանով դժվարությունը չէր վերանում, և տպարանի վարքը դեռ երկար շարժարեց Ստեփանեին մինչև որ նա սեփական փոքրիկ տպարան բացավ:

«Հայկական աշխարհը» հրատարակվեց մինչև 1871 թվականի կեսը: Ի՞նչ էր ներկայացնում այդ «գրական և մանկավարժական» օրգանը: «Հայկական աշխարհի» երկրորդ տարուց Ստեփանեն փոխեց Կամոնենսից վերցրած նշանաբանը և այնուհետև տետրակների ճակատին դնում էր հետևյալ լատինական աստվածքը՝ Quod possum facio, faciant meliora potentes. «Ինչ կարող եմ կատարում եմ, թող կատարեն առավել լավ ու կարող է»: Սա ավելի հասկանալի նշանաբան էր, համապատասխանում էր Ստեփանեի ուժերին և նրան չարապատող հանգամանքներին: Ի՞նչ էր նա կարողանում անել:

¹ «Հայկական Աշ.», 1871, № 4—5:

Նայելով «Հայկական աշխարհի» գործունեությունը, շատերի մեջ կարծիք կազմվեց, թե Ստեփաննն ուզում է «Հյուսիսսփայլի» շարունակողը դառնալ։ Այս կարծիքը Ստեփաննն արձանագրել է իր ամսագրի մեջ 1867-ին։ Եվ իրավ, շատ հանգամանքներ կային, որոնք արդարացնում էին մի այդպիսի կարծիք։ Նախ և առաջ այն մեծ պատկառանքը, որով Ստեփաննն խոսում էր Նազարյանցի մասին։ «Հյուսիսսփայլը» նա անվանում էր «լուսաբարոզ» և 1866-ին, Նալբանդյանցի մահվան առիթով, գրում էր. «Միբայել Նալբանդյանի անունը անբաժան է լուսաբարոզ «Հյուսիսսփայլ» օրագրի գեղեցիկ փառքի հետ։ Նալբանդյանի բոլոր հարգողներին շարժի հուսահատեցնե միայն կորուստի ցավը, այլ ամենեքանս պիտի միշտ մտաբերենք, որ մեր առաջ դրված է, որպես գեղեցիկ հիշատակ, նորա ազնիվ և արթուն գրավոր աշխատությունը և նորա անդադար գործունեությունը»։

Բացի սրանից «Հայկական աշխարհի» ուղղությունն էլ միևնույնն էր ցույց տալիս։ Ստեփաննի ամսագիրը գեթ մասամբ վերադարձրեց մեր մամուլին «Հյուսիսսփայլի» հետ անհետացած գեղեցիկ ժամանակը։ Դարձյալ տեսնում ենք հասարակության որոշ վերաբերմունք դեպի ամսագիրը. կան համակրողներ, շատ են և հակառակորդները։ Հայ երիտասարդությունը, գլխավորապես ուսանող երիտասարդությունը, «Հայկական աշխարհի» մեջ երևան է գալիս, ամսագրի լույս տեսնելուն սպասում են անհամբերությամբ։ Բուսահայերի փոքրամթիվ ինտելիգենցիան նրանով է փոքրիշատե հետաքրքրվում։

Որքան նմանություններ «Հյուսիսսփայլին»։ Եվ նմանությունը բոլորովին լրացնելու համար «Հայկական աշխարհը» շարունակ բանակրել է մղում «Մեղուի» դեմ, անվանում է նրան խավարամիտ, հետամնաց։ Այդ կռիվն սկսվեց հենց առաջին տարուց, այն իսկ ժամանակից, երբ Ստեփաննն հրատարակեց «Կոտնկի» առաջին համարը։ Պետրոս Միմեոնյանցը իր իսկական դերի մեջ էր մտնում. «Մեղուն» սովորաբար թույլ, անհետաքրքրական, փոքրիշատե կենդանություն ստանում էր հակառակորդի հետ միճելիս։ Ստեփանն աղքատիկ պաշարը միշտ սպառված էր, բայց դրա փոխարեն որքան շատ կարելի էր խոսել ուրիշների գրվածքների դեմ։ Դա դառնում է ապրելու միջոց. «Մեղուի» հարկավոր էր մի հակառակորդ. շունենալ մեկը, որին պետք էր դիմադրել։ Նշանակում էր մնալ սեփական ընդունակություններին ապավինած, այսինքն ջուր ծեծել, «Բաղմիցս կրկնել ենք» կամ «Քանի անգամ «Մեղուի» խմբագրատունը պատիվ է ունեցել հայտնելու» դարձվածքներով։ Ստեփաննն շատ համառոտ պատասխաններ է տալիս «Մեղուին»։ Բայց դա բարեբաղ էր, որ վերջինս երկար պարապի Ստեփաննի տոհմաբանությամբ, բացատրե, թե ինչպես է Ստեփանյան ազգանունն Ստեփանն դարձել և այլն...

Ահա այսքան հանգամանքներ կային, որոնք կարծել էին տալիս, թե «Հայկական աշխարհը» աշխատում է «Հյուսիսսփայլի» շարունակությունը դառնալ։ Բայց Ստեփաննն բոլորովին այլ տեսակ է վերաբերվում այդ կարծիքին։ 1867 թվականին նա գրում էր. «Ոմանք աննպատակ մարդիկ (բարի նպատակ չունեցողին ես աննպատակ կկոչեմ) կասեն, թե Հայկական աշխարհը մտածում է հին ճշմարտաբարոզ «Հյուսիսսփայլի» գործը կատարելու. սա անմիտ խոսքերից է։ Այս ասողը կյանք, առաջադիմություն չպիտի հասկանա։ «Հյուսիսսփայլը» 1860 թվին էր, իսկ «Հայկական աշխարհը» 1867-ին. 7 կամ 8 տարի բարոյապես վերածնվող ազգի կյանքում մեծ նշանակություն ունի իհարկե։ Բոլորը փոխվում է։ Միայն... և «Մեղ. Հ-ի» այդ կարող էին երբեք չփոխվել վատից դեպի լավ. 8 տարի առաջ ք. Մանդինյանի խմբագրությամբ սույն աննպատակ և հետախաղաց լրագիր էր նա, ինչպես և այժմ պ. Միմեոնյանի

խմբագրությամբ։ 1860 թվին «Մեղ. Հ-ի» կհայհոյեի «Հյուսիսսփայլը», 1867-ին նա կհայհոյե «Հայկական աշխարհը»։ Անմիտ «Մեղ. Հ-ի» բան է՝ միշտ և միշտ, և միշտ ամեն ազնիվ և խելացի գործ հայհոյել. «Հայկական աշխարհը» իհարկե կարող չէ նրանք բավականանալ միայն այնով, ինչ որ կատարեց «Հյուսիսսփայլը»։

Այսպես ահա, Ստեփաննն մի տեսակ վիրավորանք էր համարում «Հյուսիսսփայլի» շարունակություն համարվելը։ Մոռանալով այն խոսքերը, որ մի տարի առաջ ասել էր Նալբանդյանցի մասին, Ստեփաննն այժմ գրում էր. «Իսկ հանգուցած Մ. Նալբանդյանով թող դարձյալ աննպատակ մարդիքը հաիշտակվեն. «Հայկական աշխարհը» յուր կարծիքը ասաց մի օր. Նալբանդյանը, այո, աշխույժ, թեթևագրիչ երիտասարդ էր, բայց իբրև գործունեության կատարելատիպը թող դարձյալ պ. Միմեոնյանը շինե։ Իմաստուն հայն գիտե, որ Նալբանդյանը հաստարմատ ուղղություն մի կարող չէր ունենալ և չունեի, որովհետե գիտությունը (science) ծանոթ չէր»։

Ի՞նչ է սա նշանակում։ Ստեփաննն, իհարկե, Նազարյանցի և Նալբանդյանցի գաղափարներին հակառակ չէր։ Նա միայն ուզում էր ասել, որ «Հյուսիսսփայլը» կատարելություն չէր, որ նա հին է, անկատար։ «Հայկական աշխարհը» նրա կույր ընդօրինակությունը չէր, այլ ուզում է ավելի առաջ գնացած, ավելի դարգացած լինել իբրև հասարակական օրգան։ Յոթը տարին քիչ ժամանակ չէ, յոթը տարուց հետո երևացող մի ամսագիր չպիտի բոլորովին նման լինի նախորդին, եթե մի ազգ առաջադիմում է և ոչ թե կանգնած է անշարժ։

Դատելով անաշառությունը, Ստեփաննի այս խոսքերի մեջ կա ճշմարտություն։ «Հայկական աշխարհը» «Հյուսիսսփայլի» հետ համեմատած առաջադիմություն էր գոնե այն կողմով, որ նրա մեջ ավելի շատ էր ցույնում ժամանակակից կյանքը, որ նա խուսափում էր ծանր, անմարս նյութերի կուտակումից, որ «Հյուսիսսփայլի» թույլ կողմն էր։ Իզուր էր Ստեփաննն վերցնում «Հյուսիսսփայլի» 1860 թվականը, որպեսզի կարողանա ասել, թե Նազարյանցի և իր մեջ 7 տարվա տարածություն կա։ «Հյուսիսսփայլը» դադարեց 1864-ի վերջում, այն ժամանակ, երբ Ստեփաննն արդեն խմբագիր էր. ուրեմն ոչինչ հուսալորություն չկա երկուսի մեջ. Ստեփաննն, ընդհակառակն, անմիջապես նախորդեց Նազարյանցին։ Եվ եթե կա երկուսի գործերի մեջ մեր վերը հիշած տարբերությունը, դա ամենևին տարիների արածը չէ։ «Հայկական աշխարհը» մի քանի քաջ առաջ էր «Հյուսիսսփայլից» հենց այն պատճառով, որ հրատարակվում էր Թիֆլիսում և նրա խմբագիր-հրատարակողը ավելի եռանդուն էր, ավելի հարմար հանգամանքներով շրջապատված։

Բայց «Հայկական աշխարհի» այդ հաջողությունը, համեմատական առաջադիմությունը ավելի արտաքին հանգամանքներ ունեի, ավելի խմբագրի կազմակերպողական ընդունակությունից էր կախված, քան հրատարակատեսակական առաջադիմությունից։ Իբրև հրատարակատեսակ, Ստեփաննն անհամեմատ ցած էր Նազարյանցից։ Նալբանդյանցի վերաբերմամբ էլ Ստեփաննն անարդար էր. նա կարող էր Նալբանդյանցից շատ բարձր լինել իր ուսումով, բայց հրատարակատեսակության մեջ գիտությունը չէ չափը, այլ տաղանդը, մարդկանց սրտի հետ խոսելու ընդունակությունը։ Եվ հենց այդ է պատճառը, որ Ստեփաննն, շնայած որ մրցակից չունեի իր առջև, չկարողացավ Նազարյանցի և Նալբանդյանցի շարքում դասվել իբրև հրատարակատեսակ։

Նա, ճիշտ է, կովում էր, պահանջում էր առաջադիմության, եվրոպական լուսավորության անունով։ Բայց այդ բոլորը արտահայտվում էր մանր-մունր լավերով, գլխավորապես դպրոցական հարցերի շուրջն էր պտտում։ Նազար-

յանցն էլ համարյա միշտ կրթութեան և դաստիարակութեան հարցերով էր հանդես գալիս, բայց միևնույն ժամանակ նա հարուցանում էր ընդհանուր ազգային հարցեր, քննադատում էր մեր հասարակական կարգերը, մեր դատարանները, կոլում էր մեր հետամնացութեան գեմ այնպիսի հարցերով, ինչպես են կրոնական համբերողություն, ազգայնական լայն դադար, հիմնոված ոչ թե եկեղեցական-դավանական առանձնություն, այլ լեզվի և ծագման վրա: Ստեփանեն երբեք չկարողացավ նազարյանցի պես ըմբոսա բողոքողի դեր կատարել, առաջադիմական հանրամարդկային հասկացողությունները շատն «Հայկական աշխարհի» խմբագրականների մեջ այն կրակոտ, ուժգին պաշտպանությունը, ինչպես «Հյուսիսափայլի» մեջ: Նազարյանցի առջև միայն կրթական կարողություն չէր, այլ ամբողջ ազգը իր նախապաշարմունքներով ստրկության երկար դարերում յուրացրած հոգեբանությունը: Նա հարվածում էր հայության հիմնավոր արատները՝ առանձնամոլություն, անհատականություն, համայնական շահերի կատարյալ բացակայություն: «Հայկական աշխարհի» խմբագիրը այսքան լայն ասպարեզ չունեւ. նազարյանցի հետ համեմատած, նա ավելի նեղ մանկավարժ էր, քան մի հրապարակախոս՝ այս բառի ընդարձակ նշանակությամբ:

Ժողովրդին մոտեցող, ժողովրդի կյանքը իր էջերի մեջ առնող մասնավոր չէր կարող անշարժանալ միայն դպրոցական և եկեղեցական հարցերի շրջանում: Ժամանակն էր, որ հայ մամուլն էլ նկատի առնեւ ընդհանուր տնտեսական, կուլտուրական հարցեր, ըմբռնեւ կյանքը իր լայն, բազմազանի պահանջներով: Ստեփանեն այս գործի մեջ չկարողացավ մի քաջ անել դեպի առաջ: «Հայկական աշխարհի» մեջ շատ կա պոլեմիկա, շատ անգամ արդիւնաբերակա՛նով, օրինավորությամբ և արժանապատվության զգացմունքով մղված կոխիվ. բայց հասարակական հարցեր քննադատող, առաջադիմական տեսություններ պարզող և ժողովրդականացնող խմբագրական հոգվածներ համարյա չկան:

Եվ սա բնական է: Ստեփանեն ավելի քարոզիչ էր, դժուրավառ մի մարտնչող, քան կյանքի հարցերը արծարծող, քննադատող: Իր գրվածքների մեջ նա հաճախ է դիմում ատենաբանական, քարոզչական ոճին: Օրինակ. «Այո, ես կաղաղակեմ, կգանգատեմ, կբողոքեմ, կխնդրեմ, կաղաչեմ, մինչև կհասնեմ նպատակիս: Եվ սիրելով անկեղծ սրտով, անհույս չեմ: Հայկական ուսումնարանները կտեսնեմ մի օր բարելավ դրությամբ և հողու հաղթանակով կհայտնեմ ընթերցողներին, կշնորհավորեմ և կհանգստացնեմ նոցա:

Այո, քահանաների հետ հայերին պետք են ուսուցիչներ: Հայկական ուսուցիչները կտեսնեմ մի օր բարելավ պիտի պատրաստվեն ազգին ծառայելու: Մինչ պիտի կրթն անդադար մեծերին, ավետարանը վարդապետելով, մյուս փոքրերին յուրյանց քաղաքացիական պարտքերը ճանաչեցնելով:

...Հայեր, իմ պաշտելի հայեր, բավականացրեք: Կամեցեք թափել մեր վերայից բազմադարյան անեծքը: Սկսեցեք այնպիսի կյանք վարել, որ մարդկությանը ամօթ շինեւ խոստովանելու, թե ահա նորա անդամ է և հայկական ազգը:

Հայեր, իմ ազնիվ հայեր, լինենք այնպես, որ մարդկությունը, կիսն պարծենալով, գոնե ամաչելով չմտաբերե հայերին:

Հայեր, սիրելի հայեր, ժամանակ է: Թող շարժվի և մեղանում ազգային ինքնասիրությունը: Բավականացնենք այն արհամարհանքը, որ վաչելում ենք այսքան ժամանակ օտար ազգերի կողմից:

Հայեր, հայասեր հայեր, ամեն ազգ ունի հունգարական երդի պէս:

...Հայեր, խելացի հայեր, մեր սուրբ օրերը, հայերի բարեբախտության օրերը գալու են, երբ մենք կունենանք բարեկարգ ուսումնարաններ, բանիմաց տեսուչներով և ազնիվ ուսուցիչներով, երբ հայկական եկեղեցի կկազմեն միասին արժանապես պաշտողներ և պաշտոնյաներ, երբ մեր ժողովուրդը անհոգ ամբոխից իմաստուն հասարակություն կգառնա:

Ազնիվ տեսուչներ, ազնիվ ուսուցիչներ, ազնիվ քաղաքացիներ, կրթեցեք նոր սերունդը բարոյական հիմով, Ավետարանի լույսով և ճշմարտությամբ:

Իր ճառական ոճով, ողմանտիկ գեղումներով Ստեփանեն ավելի անցյալին էր պատկանում, քան նոր օրերին, ապագային: Նա էլ, նազարյանցի նման, շատ էր սիրում ճառեր տպագրելը, մանավանդ երբ դրանք դամբանականներ էին մեռած ուսանողների գերեզմանների վրա: Անձնական տարբը մեծ դեր էր խաղում Ստեփանեի համակրանքների մեջ: Այսպես, 1865-ին նա մի ահագին մահացուցակ տպագրեց Գրիգոր Տեր-Մկրտչյանի մասին, որ իր ուսանող ընկերներից էր, մեռել էր թոքախտից, չկարողանալով վերջացնել ուսումը. ոչ միայն մահացուցակը, այլև ամսագրի առաջին երեսը սե շրջանակներով էին պատած: Ստեփանեն հիշատակում էր հանգուցյալի մահվան նույնիսկ տարեգրքները: Եվ սակայն, այդ ուսանողը միայն մի հուսատու երիտասարդ էր և առանձին մի ծառայություն չէր մատուցել իր ազգին: Այնուամենայնիվ, Ստեփանեն ողբում էր այդ մահը իբրև հասարակական դժբախտություն:

Խոսելով Ստեփանեի թերությունների մասին, չի կարելի զանց անել և այն, որ նա հավատացած էր, թե ամսագիրը հրատարակվում է միայն ընտրյալների համար:

«Ո՞վ է համակրում մեր օրագրին և ո՞վ կարող է բնականապես համակրել, սիրել և հետևել նրան, — հարցնում է նա մի տեղ և իսկույն պատասխանում. — Այն ամեն հայն, որ զգում է մտավորական զարգացման կարոտություն, նա, որ ցանկանում է առաջադիմություն, նա, որ հանգիստ և անվրդով բնավ է ճշմարտություն, մի խոսքով նա, որ դուրի չէ առողջ իմաստից: Մեր օրագրի միտքը և ցանկությունը հասկանալու համար հարկավոր է անշուշտ մտավորական զարգացումն, հարկավոր է հասկացողության ընդունակություն անհնալ: Այն հոգվածները, որ մենք հրատարակում ենք, այն լեզուն, որ մենք գործ ենք ածում, այն մտքերը և ճշմարտությունները, որ մեր օրագիրը քարոզել է և մինչև վերջին շունչը պիտի քարոզե, կարող են հասկանալ և համակրել նորա միայն, որոնք ունին մի մտավոր զարգացումն, և որովհետև մտավորապես զարգացածները անբախտաբար մեր մեջ այնքան բազմաթիվ չեն, ուստի օրագիրս պիտի բավականանա սակավաթիվ ստորագրողներով, մինչև կրթման հայկական աշխարհի բախտից մեր հասարակության առավել հասկացողները և զարգացածները, մինչև կավելանան մեր ընտրված անդամները»:

Այստեղ ահա Ստեփանեն բոլորովին չէր հասկանում հայ պարբերական հրատարակության խորհուրդը: Ընտրյալների, զարգացածների համար հայերեն ամսագիր... Բայց մեծ հարց է՝ այդ ընտրյալները կարո՞տ էին «Հայկական աշխարհին»: Ինտելիգենտ, զարգացած հայը չպիտի կարդար Դորբուլուբովից, Պիտարեից թարգմանած կտորները կամ Մասեի «Մի կտոր հացի պատմությունը», որոնք տպվում էին «Հայկական աշխարհի» մեջ. ինտելիգենտ հային հարկավոր չէր Մասեն, իսկ Դորբուլուբով և Պիտարե նա կարող էր կարդալ ինչ կես, հատ. VI

ուսերեն: Այդ դասակարգից շարտի կազմվելը ընթերցողներին այն բանակը որ կարողութուն կտար հայ խմբագրին ավելի բնորոշակել էր գործը: Ընտրյալ հայը կհետաքրքրվեր հայերեն ամսագրերով այն ժամանակ, երբ սրա մեկ կգտներ հայկական կյանքի արտահայտությունը, հասարակական և գրական հարցերի ուսումնասիրությունը: Այդ կողմից «Հայկական աշխարհը» քիչ հետաքրքրական էր, հարուստ չէր:

Ո՛չ, հայերեն ամսագիրը, լրագիրը ուրիշ տեսակ ընթերցող պիտի ունենար, մանավանդ այն ժամանակները, երբ ինքնուրույն աշխարհային գրականությունը դեռ համարյա չկար, երբ հրապարակախոսությունը միայն գալուցական և եկեղեցական կարիքներով էր զբաղված և չուներ իր առջև ալիքի լայն հասարակական հորիզոններ: Սկսելով իր գործը այն բոլորովին անսխալ համոզմունքով, թե հային դեռ պետք է կարդալ սովորեցնել, Ստեփանեն շատ շուտ մոռացավ այդ իրողությունը և սկսեց կարծել, որ եթե իր ամսագիրը փոխանակ սպասած 6—7 հարյուր բաժանորդների մի քանի տասնյակ ընթերցող ունի, պատճառն այն է, որ ընտրյալներ չկան: Ընթերցողներ ստեղծելու ժողովրդական խավերից հետաքրքրվողներ առաջ քաշելու մասին նա չէ էլ մտածում: Կարծես ընտրյալները երկնքից պիտի ընկնեն: Ինչպես եթե ընկնեն էլ, հայերեն ամսագիրը շարտի կարգային: Առհասարակ, վաթսուներկու թվականների մեր մամուլին չէր հաջողվում ընթերցողներին շրջաններ նվաճել. ինչքան մարդիկ կարողանում էր հավաքել բաժանորդագրություն անվավեր մուրացկանությունը, այդքան էլ ընթերցող ունեւր ամսագիրը կամ լրագիրը:

Եվ երբ մի խմբագիր համոզվում է, թե իր ամսագիրը ժողովրդի, ամբողջ համար չէ, թե ինքը միայն զարգացած մարդկանց հետ կարող է գործ ունենալ, հասկանալի է, թե որքան պիտի նա օահմանափակվի, որքան պիտի հեռամնա ժողովրդի գործից, որքան անօգուտ պիտի համարե հոանդը, անպար կատարելություն ձգտելու պահանջը: Հավատալ, թե պետք է մի կերպ անել ամսագիրը ամենաողորմելի դրություն մեջ, մինչև որ ընտրյալները կբազմանան, դա նշանակում էր սպանել գործը, սպանել սեփական հավատը վստահությունը:

Ասացինք, որ Ստեփանեն, մոռանում էր այն, ինչ հաստատ գիտեր գործ սկսելիս: Այս հանգամանքը մենք ուզում ենք առանձնապես շեշտել: Որքան առաջ էր գնում «Հայկական աշխարհը», այնքան Ստեփանեն թուլանում էր իրեն մարտնչող, առաջադեմ հրապարակախոսության ներկայացուցիչ: Եստով մենք կտեսնենք, որ նա չափավորներից էր, համարձակ, արմատական մտքերը նրան էլ վախեցնում էին, ուստի և նա տպագրում էր Գրիգոր Արծրունու մի քանի հողվածները զանազան վերապահումներով: Գա, ուրեմն, նորից չէր, իր ժամանակ ամենաառաջավոր բարոզիչ խմբագիր չէր, մեկը այդ իսկական հրապարակախոսներից, որոնք գնում են զարգացող գաղափարների հետ, շեն հնանում:

«Հայկական աշխարհի» խմբագիրը մեծացավ այն ազատամիտ աշխարհայնացողությունների շրջանում, որոնց ներկայացուցիչը մեզանում «Հյուսիսային» էր. բայց այդտեղ էլ նա չկարողացավ հաստատ պահվել: Ազատամիտ դպրոցը մեծ կարևորություն էր տալիս կրոնական կրթության: Ստեփանեն այս կողմից ավելի առաջ գնաց, քան իր նախորդները: «Ազատություն» բարվոքացնում է բարքը և կրոնասիրություն է տարածում՝ ահա մեր երիտասարդ, համալսարանական խմբագրի դավանանքը: Եկեղեցու և եկեղեցականների վերաբերմամբ Ստեփանենի բռնած դիրքը նամանություն անգամ չունի քիչ դիրքին, որ բռնել էր նազարյանցը:

Վերջիններ հենց մի փաստ: «Հյուսիսային» մարդիկ, Նալբանդյանցի դեկալոգությունը, կուլում էին Գաբրիել վարդապետ Այվազյանի դեմ: Այդ պայմարի հանգամանքները, պատճառը մենք պատմել ենք մի ուրիշ տեղ¹. Հայտնի է նույնպես, որ «Հյուսիսային» անհաշտ թշնամիներից մեկն էլ Այվազյանն էր, որ ամենայն հաճությամբ տպագրում էր իր ամսագրում ամենաանպատկ հարձակումներ նազարյանցի դեմ: Ընդհարումը ուներ իր խոր, օրինավոր պատճառները. Այվազյանը կղերական-վանական դաստիարակության ներկայացուցիչն էր, մինչդեռ «Հյուսիսային» մարդիկ աշխարհական ազատ կրթություն էին պահանջում: Ստեփանեն ոչ միայն ի նկատի չէր առնում այս լուրը, այլև հիացած էր Այվազյանի վրա: Լսելով, որ Երևանի ժողովուրդը սպառնում է Այվազյանին իր առաջնորդ ունենալ, նա գրում էր. «Փառք և պատիվ Երևանի ժողովուրդին... Պարծանք ձեզ, Երևանի հայեր»:

Այսքան հիանալու համար բավական էր այն հանգամանքը, որ Այվազյանը կրթված, գիտուն հոգևորական էր: «Մինչդեռ «Հյուսիսային» խմբի համար պիտի գրե գիտնականությունը չէր, այլ ոգին, ուղղությունը: Այսպիսով Ստեփանեն ավելի Աղաբեկյանի «Կոունկի» դպրոցին էր հարած: Գիտություն անպատճառ հոգևորականություն և այլևս ոչինչ, ամեն ինչ ինքն իրան կգա, կլինի. չէին քննադատվում եկեղեցու վարչական կարգերը, բարեփոխություններ չէին առաջարկվում, մրցություն, կոնիվ չկար: Այս բանի մեջ Ստեփանեն նազարյանցի հաջորդը չէր: Դրա ամենալավ ապացույցն այն է, որ Ստեփանեն չէր շփոթվեցին պահանջողական տարրերը, նրան ազգի և եկեղեցու թշնամի լույսարարեցին և նա առանց դժվարությունների հոգևորական դարձավ:

1866 թվին կաթողիկոսական ընտրություն կար: Մեր մամուլի վերաբերմանը գնալի այդ հարցը այսպես էր: «Մեղուն» հետևյալն էր գրում. «Բայց մի քան այս հայրապետին, Աստծո ծառային և պաշտոնատարին ընտրողները, մարդիկ, թույլ և տկար մահկանացուներ... Ուստի թող բոլոր ազգը և մանավանդ հարգո և սրբազան պատգամավորները խնդրեն առաջ Աստվածին, որ նա չգարձեն իր երեսի նրանցից, «Տեր, մի՛ դարձուճաներ դերեսս ըր յինէն»: Եվ հետո կշռեն, գատեն, քննեն, հասկանան, որ ինչ բարին է, աղոթեն Աստծո, որ ցույց տա իր ընտրյալ Գավթին, ու հետո թափեն սորա գլխին յուղը»²:

Իսկ ի՞նչ ունեւր ասելու Ստեփանեն, որ «Մեղուն» խմբագրին բթամիտ, անամուլ, ոչնշույթուն էր անվանում: Ահա՛ ինչ. «Հույս ունինք, որ թե պատգամավորների ընտրությունը և թե նոցա ձայն տալը կաթողիկոսի համար կլինի այնք սրտով և անարատ մտքով: Հավատում ենք, որ այս գործը ամեն հայի համար սուրբ և մեծ գործ է: Համարձակվում ենք նկատել, որ կաթողիկոս պիտի ընտրվի այն անձն, որ արդեն հանդիսացել է ազգի առաջ յուր գեղեցիկ գործերով ազգաշինության կողմից»:

Ինչպես տեսնում ենք, տարբերություն համարյա չկա ազատամիտ և պահանջողական խմբագիրների մեջ:

Մեր տեսությունը «Հայկական աշխարհի» որպիսության մասին փակում ենք հետևյալ եզրակացություններով: Ստեփանեն մի լավ կրթված մարդ էր, ազատգիտական ձգտումներով, բայց չունեւր հրապարակախոսական տաղանդ: Նա ամենամեծ ծառայությունն այն էր, որ ազատամիտ հրապարակախոսության առաջին փորձը մտքից կովկասում, Թիֆլիսի մեջ: Ինքը չլինելով մեծ լեզունակություններով օժտված մարտնչող, այնքան սեր և համակրություն

¹ «Ստեփանես Նազարյանց», հատոր երկրորդ
² 1866, № 35:

ուներ դեպի երխտասարգութիւնը, դեպի եվրոպական լուսավորութիւնը, որ կարողացաւ իր ամսագիրը դարձնել հայ երխտասարգութեան համար աշխատելու տեղ: «Հարկական աշխարհը» դարադուխ չհաղմեց մեղանում, ինչպէս կազմել էր «Հյուսիսափայլը», նույնիսկ «Կոտնիլը»։ Նա սկսեց ամառադարձական ուղղութեան շարունակութիւնը չէր, ոչ էր մանավանդ զարգացումը։ Այս մեջ պահմում էր առաջադիմական մտքի ընդհանուր ոգին, հաւանտ ճրագը համարակ վերանորոգիչ չէր, մանր-մունր հարցերի վրա էր ստատում ի հռանդր, պայքար էր մղում ավելի անձնավորութիւններին, քան սկզբունքներին, ուղղութիւններին դեմ:

Միայն մի բանի մեջ Ստեփաննէն հանդիսացաւ շատ համարձակ անկողնային մատուր և դրանով էլ բավական ազմուկ հանեց: Այդ բանը ուղղագրութեան էր: Գրիգոր Արծրունին նրա ազդեցութեան տակ յուրացրեց ուղղագրական մի քանի ձևեր և նրա «Մշակը» այսօր էլ հետեւում է այդ կանոններին: Ռուսի մի հարկավոր է մի քիչ մանրամասն խոսել այդ մասին:

Աշխարհաբար լեզուն արդեն քաղաքացիութեան իրավունք էր ստացել ամբողջ հայութեան մեջ: Այդ հաղթանակը ձեռք էր բերվել երկարատև պատերազմից հետո: Բայց հաղթանակողը դեռ շատ սկաւր ու աղքատ մի բան էր: Գրական լեզու դառնալիս՝ աշխարհաբարը ոչ գրական անցյալ ուներ, ոչ մշակված ու կանոնավորված հարստութիւն: Ժողովրդի բերանում ապրած, հարյուր և մի ճյուղերի բաժանված մի բազմադարձ լեզու էր դա, որ հղկվելու, քաղաքակրթվելու պետք ուներ: Եվ նոր լեզուն իր բարեկարգութեան համար աշխատող մշակների պակասութիւն չտեսալ: Իրանց գրական զարգացումով ուսանողներից շատ առաջ անցած թուրքահայերը ավելի ընդունակ և փորձված հանդիսացան այդ գործի մեջ: Նրանց աշխարհաբարը հեշտ ու շուտ կազմակերպվեց: Կանոնավորելով լեզուն, պետք էր ձևանարկել նրա կանոնադրութեան պետք էր սահմանել նրա համար օրենքներ: Այդ գործն էլ առաջ թուրքահայերը սկսեցին:

1848-ի ֆրանսիական հեղափոխութեանը մեծ դաստիարակչական ազդեցութիւն ունեցաւ մի քանի թուրքահայ ուսանողների վրա, որոնք այդ միջոցին գտնվում էին Փարիզում: Փետրվարյան հեղափոխութեանը, որից ծնվեց երկրորդ հանրապետութիւնը, իր ազատական մտխի մեջ կոնց-կոսից հայկական ազատամիտ, հակակղերական, համարձակախոս հրապարակագրութեանը, որի առաջին գորշակակիրը մեկանում էր՝ հեղափոխութեան մասնակցող ուսանողներից Ստեփան Ոսկանյանը: Նույն այդ քաղաքական հրոսակները ներշնչեց իր մի ուրիշ զինվոր ուսանողին, բժշկականութեան ճյուղն ընտրած Նահապետ Ռուսինյանին, արմատական բարեփոխութիւնների անհրաժեշտութեանը:

Ուսումը ավարտելուց հետո Նահապետ Ռուսինյանը վերադարձաւ Կ. Պոլիս: Այդտեղ նրան ընկերացաւ թուրքահայ բարձր դասակարգից մի համարակի գործիչ, Նիկողայոս Պալյան, որ նույնպէս Ֆրանսիայումն էր ուսում ստացել և թեև փետրվարյան հեղափոխութեան անձամբ մասնակցողներից չէր, բայց նրա գաղափարների ամենաշնորհ կողմնակիցներից էր, քանի որ կրթվել էր 1830-ի հուլիսյան հեղափոխութեան առաջացրած ազատական կուսակցութեան գրական գործիչների ազդեցութեան տակ: Այդ երկուսի հետ էր և մի ուրիշ երխտասարգ՝ Գրիգոր Օտյանը, թուրքահայերի մի այլ նշանավոր գործիչը:

¹ Գրիգոր Օտյան երեք ընկերների կատարած դերը գեղեցիկ կերպով բացատրել էր առաջարկի մեջ, որ գրել է Ռուսինյանի կազմած փիլիսոփայութեան դասագրքի համար:

Այս երրորդութիւնը դարձաւ այն կորիզը, որից առաջացաւ թուրքահայերի մեջ այնքան նշանավոր և համակրելի շարժումը հիւսնական իմպականներին: Նահապետ Ռուսինյանը այնպիսի անձնավորութիւններից չէր, որոնք շատ քիչ և շատ հարմար տեղավորվում են կյանքի ստեղծած սովորական, շարժական շրջանակներում: Նա ուզում էր նորութիւններ ստեղծել, բարեփոխող և հեղափոխող կարգեր առաջ բերել: Առաջին գործը, որ նրան ուշադրութիւնը գրավեց, աշխարհաբար լեզուն էր: Ռուսինյանը կանոններ մշակեց նրա համար, այնպիսի կանոններ, որոնք, նրա կարծիքով, պիտի հեշտացնեին լեզուն, միանման ընդհանուր կերպարանք սիտի տային նրան: Այդ նպատակով նա լեզուն հրատարակեց իր «Ուղղախոսութիւնը»: Ապա ձեռք դարկեց օրագրային բարեփոխելուն. ջնջեց ամիսների հոսմեական անունները և, ինչպէս վայել էր մի հեղափոխական գործիչին, ընդունեց ֆրանսիական առաջին հեղափոխութեան ժամանակ մտցրած անունները, թարգմանելով դրանց հայերէն:

Ռուսինյանի նորամտութիւնները, իհարկե, ազմուկ և աղաղակ բարձրացրին Կ. Պոլսում և ընդունելութիւն չգտան: Ավելի բախտավոր գտնվեց Ռուսինյանը իր երրորդ և ամենամեծ ձեռնարկութեան մեջ. դա թուրքահայերի Ազգային Սահմանադրութեանն էր, որ նա հզացաւ և խմբագրեց իր ընկերակիցների և համախոհների հետ, հիմնվելով փետրվարյան հեղափոխութեան սկզբունքների վրա, այն է ժողովրդական զվե, որ սահմանափակում է անհատական իշխանութեանը:

«Ուղղախոսութիւնը» մերժվեց և նույնիսկ պատրիարքի բանադրանքին ենթարկվեց: Բայց նրա մի քանի կանոնները ընդունելութիւն գտան ուսանողների մեջ և ընդունողն ու գործադրողը Ստեփաննէն էր: Պետք է ասել, որ բոլոր ուղղախոսական կանոնները Ռուսինյանը իրանից չէր հնարել. շատ բան երանից առաջ գործ էին անել առաջին անգամ աշխարհաբար գրքեր շարագրած Մխիթարյանները (Ինճիճյան, Բժշկյան). այսպէս, նրանք շատ տեղերում և երկարաբար փոխարինում էին Վ տառով, մանավանդ կրավորական բայերի վերջում (օր. տարվան (տարի բառից), սորվին, մավընին), ող վերջավորութեանը գրում էին օ-ով (ծնօղ, սորվօղ), փորձում էին դեն գցել յ տառը բառերի վերջից, ուր նա չէր արտասանվում և այդ փորձը կատարվում էր վճայ բառի վերաբերմամբ, որ գրվում է առանց յ-ի:

Մեղանում Նաղարյանցն էլ իր գրականական գործունեութեան սկզբում ընդունել էր մի քանիսը այդ ձևերից, բայց նրանց շուտ թողեց: Ստեփաննէն «Հայկական աշխարհի» հենց առաջին տարուց ընդունեց այդ բոլոր ձևերը, ինչպէս նաև Ռուսինյանի նման հոգնակի եւ վերջավորութեանը գրում էր է-ով (գոր-էր, գրքէր, սարէր): Այս բոլորը դեռ ոչինչ: Ստեփաննէն առաջ գնաց և կանոն լեզունելով՝ «գրի՛ր, ինչպէս խոսում ես», սկսեց գրել այնպէս, ինչպէս արտասանվում է տառը, մանավանդ յ-ն, որը շատ տեղերում փոխարինեց ն-ով: Գրավականանալով այսքանով, նա ջնջեց հայկական կետադրութիւնը և մըտքորդից եվրոպականը. մեր միջակետը նրա համար վերջակետ էր, իսկ վերջակետը եվրոպական միջակետ (:), ավելացրեց «կետուստորակետ» նշանը (;), բոլորովին վճռեց հայոց հարցական և բացականչական նշանները, մտցնելով եվրոպական նշանները: Ամենից գվարձալին այն էր, որ Ստեփաննէն այս նորամտութիւնները փաստաբանում էր նրանով, թե այսպէս ավելի հեշտ կլինի թուրքամտութիւններ կատարելը:

Եվ ահա իր կանոններին հավատարիմ մնալով, Ստեփաննեն գրում էր այսպես. «Թիֆլիսում հայկական ներսիսյան ուսումնարանում քննութիւնը կատարվեցավ. Ուսումնարանի հրավերից օգուտ քաղողը չեղավ. Օվ պիտի գնար «վկա լինելու նորա ուսումնական վիճակին», ինչպես հրատարակված էր? Օվ չգիտէ ուսումնարանի ամենաթշվառ դրութիւնը? Օվ չգիտէ, որ ուսումնարանում չկա օրինավոր ուսում? Օվ համոզված չէ, որ ուսումնարանը կարօտ է հիմնավոր հեղափոխութեան?»

Ուսումնարանի աշակերտները դուրի են հայկական լեզվի իմացութեանից (նորա մի օր կարող էին գոնէ հայկական լեզվով պարծենալ), հին հայկականը շատ թույլ կերպով կուսուցանվի, նոր հայկականը ամեննէին չի ուսուցանվի. Հայկական պատմութիւնը չի ուսուցանվի, ուսական պատմութիւնը նոյնպէս, եւ սորա ինչ լինելը չգիտեն սիրելի եւ միանգամայն ցածկալի աշակերտները. այս առարկաների համար ուսուցիչներ չկան Թիֆլիսում, կասէ ուսումնարանի բարեմիտ կառավարութիւնը; նոքա, որոնք կան Թիֆլիսում եւ կարող էին բոլորովին արժանի կերպով ուսուցանել յիշված առարկաները, յարմար չեն եկել ուսումնարանի զոգասէր խնամատարներէ մտքէրին. »

Բարեբախտաբար, Ստեփաննեն այս նորութիւնների մեջ մի համառու կուրս ունեցող մատր չէր: Նախ եւ առաջ, նա չէր բռնանում ուրիշների վրա, փախաթիւ լով նրանց վզին իր ուղղագրութիւնը. երկրորդ, հաճութեամբ լսում էր հակառակ կարծիքները: Նրան ցույց տվին, օրինակ, որ ոչ մի միտք չկա գործածելու եվրոպական հարցականը, քանի որ հայերենը այն առավելութիւնն ունի, որ դնվում է անմիջապէս այն իսկ տառի վրա, ուր հարց կա եւ ոչ թե նախադասութեան վերջում, ինչպէս եվրոպականը: Ստեփաննեն համաձայնվեց եւ հրաժարվեց շատ նորութիւններից, պահպանելով միայն մի քանի բաներ:



Սակայն «Մեղուն», «Կոռնկը», «Հայկական աշխարհը» հայոց մամուլի միակ ներկայացուցիչները չեն 1860-ական թվականներին: Պատկերը լրացնելու համար մենք պիտի հիշատակենք եւ մի քանի երկրորդական հրատարակութիւններ, որոնք ապրում էին այդ ժամանակները թե Թիֆլիսում եւ թե Թիֆլիսից դուրս:

1862 թվականը, մի կատարյալ աղետի տարի, խոստովանելով «Հայոց սիսափայլի», «Մեղուն», «Կոռնկը» խմբագիր-հրատարակիչներին, որ շարունակել գործը այլևս անհնարին է: Մինչդեռ «Հայոց սիսափայլը» դրանից հետո ապրում է էլի մի տարի (1864) եւ ոչնչանում, «Մեղուն» անցնում է ուրիշ մարդկանց, իսկ «Կոռնկը» դառնում է «Հայկական աշխարհ», Թեոդոսիայում Գարբիէ վարդապետ Արլազյանի «Մասաց աղալին», որ արդեն հոգեվարքի մեջ էր, կորցրած իր նախկին նշանակութիւնն ու արժեքը, մեռավ բոլորովին անկատարելի կերպով (1865): Նույն այդ ժամանակ, դարձյալ ոչ ոքից չնկատուած մեռավ Մոսկվայում «Համարավարեր Ռուսիո» թերթը, հանգուցյալ «Ճարտագիտ» այդ ուղեկիցը եւ շարունակութիւնը, որ կատարելապէս ոչինչ դեր չէ կատարել մեր գրականութեան մեջ:

Մեռնում էին միմյանց ետեկից, մեռնում էին լավերն էլ, վատերն էլ: Մեռնում էին զանազան տեսակ առողջութեան տեր հրատարակութիւնները: Մի բնականորէ ցավ սպանում էր սակավարժութիւնը. ընթերցող չկար, ստոն տեսարկութիւնը հուսահատեցնում էր թե երիտասարդական աշխույժով լիված ծին, թե մեռած ծնվածին: Բայց մահերին հետևում էին նոր անուններ:

Հիանալի թվականների լրագրական եւ ամսագրական սերունդը անցնում էր, նրա տեղ երեւան էր գալիս վաթսունական թվականների սերունդը: 1864-ին մտախաչել Պատկանյանն սկսում է իր «Հայուհի» շաբաթաթերթի հրատարակութեանը Պետերբուրգում: Բայց Պատկանյանը խմբագիր չէր, այլ բանաստեղծ: Այս մտալ իրան խորթ, անսովոր ասպարեզի մեջ, որպէսզի ցույց տա իր կատարչական կարողութիւնը: «Հայուհի» ոչինչ աղագրութիւն չարձակ իր ժամանակակիցների վրա: Ռափայել Պատկանյանը հրատարակախոս էր իր ոտանավորների մեջ. այդտեղ նա դառնութեամբ դուրս էր բերում մեր կյանքի այլապէս չկողմերը, հարվածում էր ազգային սնափառութիւնը, մեծամտութիւնը, ծաղրում էր ապականված բարքերը եւ խորտակում էր կուրքերը. բայց «Հայուհի» մեջ այդպիսի ձայն չունի, այլ տպագրում էր «Մովսէսաց Սենդի» հեքիաթական ճանապարհորդութիւնները, գրույցներ պատմութիւնից, զանազան տեղեկութիւններ: Աննկատելի մնաց «Հայուհի» եւ հազիվ մի տարի ապրեց:

Այդպէս օրապակաս էին եւ երկու նոր պարբերական հրատարակութիւններ. Թիֆլիսում՝ «Վաճառական» եւ «Գարուն», որոնք ծնվեցան «Հայկական աշխարհի» հետ: «Վաճառական» մասին արդեն կարելի է մի քիչ երկար խոսել, որովհետեւ դա մի հետաքրքրական երևույթ էր մեր մամուլի զարգացման տեսակետից:

«Վաճառականը» իրան կոչում էր «Թիֆլիսի առևտրական գազեթ» եւ առաջին անգամ լույս տեսավ 1866-ի մարտի 6-ին: Խմբագիրն էր Գևորգ Տեր-Աղեքեանցիանը, գլխավոր եւ համարյա միակ աշխատակիցը՝ Աղեքսանդր Երիցյանը. երկուսն էլ մեծ ուսում չստացած, բայց բարի գիտավորութիւններով զուլ: «Վաճառականը» ժողովրդական լրագրի մի փորձ էր. այդ քիչ է, նա խոսում էր այնպիսի առարկաների մասին, որոնք տեղ չէին գտնում զարոց եւ կենդանի միայն ճանաչող մեր մյուս լրագիրների եւ ամսագիրների մեջ:

«Հայկական աշխարհը» սաստիկ ծաղրում էր այդ նոր թերթը: Բայց թերթը, այդ «Հայկական աշխարհը», երբեք չէր գրում տնտեսական, արդյունաբերական, առևտրական հարցերի մասին: Այդ բանը անում էր «Վաճառականը» թիշտ է, անում էր շատ թույլ, միամիտ կերպով, այնպէս, ինչպէս թույլ էր տալիս նրա խմբագիրների տկար կարողութիւնը մի այդպիսի մեղանում երբ, մասնագիտական պատրաստութիւն պահանջող գործի մեջ: Բայց հո «Վաճառականն» էլ կարող էր յուրաքանչյուր համարի ճակատին գրել «Հայկական աշխարհի» նշանաբանը. «Ինչ կարող եմ, կատարում եմ, թող կատարե առաջ լավ ով կարող է»:

Այլ էլի լավ կատարողներ չկային: Հայ ընթերցողը միշտ պիտի լսեր վարդապետութիւններ, քարոզներ բարձր առարկաների մասին, բայց գործնական տեսքին ծառայող մամուլ չունի: «Վաճառականը» գալիս է այդ պակասը ցուցնելու, նա հայտնում է, թե ինչ դրութեան մեջ է տնտեսական աշխարհը կարողացում, տալիս է Թիֆլիսի շուկայի գները. նա գիտե, որ հայ վաճառականների մեծ մասը արքունական կապալներով է պարապում, ուստի տպագրում է զանազան կապալների եւ աճուրդների հայտարարութիւններ: Եվ չկարող է թե «Վաճառականը» չգիտե լրագրական ուրիշ պարտավորութիւններ: Ո՛չ, ինչպիսի է եւ գրականութիւնը, գրական կրիտիկա, պատկերներ կյանքից, միջոցառում էլ նույնիսկ հասարակական հարցեր էլ է շոշափում: Նա աշխատում է միանգամայն հասկանալի լինել վաճառականին, խոսել նրա հետ նրա լեզուով լեզվով, ուստի բանեցնում է այսպիսի լեզու. «Գասուղարստվեն» ինչ իմուշխտով. Գեպարտաննաում: նշանակաւ է էս մարտի 20-ին Թելավի

ունգրի Օժիո և Խորխելի անունով գեղերի մեջը դառնված երկու եկեղեցակա-
բաղի իջարով տալու տորգը»:

«Վավկազակի Վաննի սկրուզի Վոյնենո Մեդիցինսկի ուպրավլենիումը
նշանակած է ապրիլի 4-ին Թիֆլիսի Աւսպանի ամստեքչալները, տրի-
պանների և կավե ամանների հացքները տորգը»:

Այսպիսի սրտաբաց պարզութիւնը շարաթաթերից հարմարութեամ էր իր ըն-
թերցողների լեզվագիտական կարողութեան նաև իր ուրիշ բաժիններում, որ
խոսքը «տորգերի» մասին չէր, այլ վերաբերում էր տնտեսական և առևտու-
կան կացութեան, գրականութեան: Հարցը, սակայն, սրա մեջ չէ: Իբրև առև-
տրական-գրական շարաթաթերի, «Վաճառականը» շատ քիչ ուշադրութեան է ար-
ժանի և կարելի է ապահով լինել, որ նրա ընթերցող հաջ վաճառականը ոչ
առանձին հարուստ ու բազմակողմանի տեղեկութուններ է ստացել նրանից, ոչ
մանավանդ զարգացել է իբրև վաճառական, որի միտքը ուղում են լուսափո-
րել, որին ուղում են դեկավարել, ցույց տալ, տանել գեպի առաջ:

Իայց մամուլի պատմութիւնն գրողը, կարդալով «Վաճառականի» տուր-
նորդողները, ուրիշ բաժինները, կանգ կառնե մի հանգամանքի առաջ, որ հե-
տաքրքրական երևույթի կերպարանք ունի: Նա կտեսնե ժամանակից ծնվող
պահանջը: Դա այն պահանջն է, որ մամուլը պիտի թողնե իր խրատական
ճառական ուղղութիւնը, ամպերից վայր իջնե և այս աշխարհի հարցերն է
քննե, մարդու, հողի, բնութեան ուժերի, մարդկային հարաբերութիւնների, մի-
խոսքով գործնական, կենդանի կյանքի հարցերը: Այդ պահանջն զդայմում
էր, և մեղավորները «Վաճառականի» խմբագիրները չէին, որ կարողութե-
լուծներն այդ պահանջին բավարարութիւն տալու նրանք կարող էին մի փոք-
անել և անպատճառ անհաջող փորձ: Դա դատող ու ճառող ամսագրական մա-
մուլից առօրյա լրագրութեան անցնելու փորձն էր: Եվ, իհարկե, երկար ապրի-
չէր կարող. հաջորդ տարին նա արդեն մեռած էր, իսկ «Հայկական աշխարհի»
շարախնդաց հեղինակները թաղման մի երկար հանգիս էր կատարում նրա գե-
րեզմանի վրա:

Գալով «Գարուն» ամսագրին, բավական կլինի ասել այսքանը միայն, որ
նրա խմբագիրն էր «Մեղուի» հիմնադիր Ստեփան քահանա Մանդինյանը:
1862-ին «Իմ նիսիեքը» աղերսական աղաղակով մամուլի ասպարեզից փախած
քահանան դարձյալ գալիս էր խմբագրի պաշտօնով: Ի՞նչ ունեւ անկուս
եկեղեցական պատմութիւնը տակու, տերունական աղոթքի մեկնութիւնը
տալու, գեսից-գենից ձեռք բերած հողվածներով զարուն ստեղծելու:

«Մեր ամսագրի անունը կոչեցինք «Գարուն», որ եկեղեցական, կրօնական
ուսումնական և բարոյական գիտութիւնների բուրաստաններից քաղելով ժո-
ղիկներ, փունջ կապենք ամսագրիս միջոցով, և ամեն ամիս ընծայենք մե-
սիբիլի եղբարց, ինչպես գարնան վարդի փունջ»:

Այս էր ասում Մանդինյան քահանան իր ամսագրի առաջին համարում:
Իայց նրա գարունը դուրս եկավ մի շոր, անապատ ու մեռած աշնանավերջ
Թաղվեց «Վաճառականի» հետ:

III

Գրիգոր Արծրունու աշխատակցութիւնը «Մեղուին» և «Հայկական աշ-
խարհին»: Հաստատ ուղղութիւն, ոճ, գրութեան ձև: Հայերեն լեզու: Անկու-
նիկ հողված. դաստիարակութիւն, կանանց հարց: Ստեփանեի վերաբերմունք
իր նոր աշխատակցին: «Գերդաստանի ազդեցութիւն և համալսարան»: «Մեղ-

լած Մարդ» հասկացողութիւնը: Ի՞նչ է զարգացումը: Խառն ուսումնարան-
ների հարց: Ազատութիւնը զարգացման հիմք: Գրական-հասարակական ցա-
փու «Երկուսից ո՞րն է լավը»: Գեղարվեստի նշանակութիւնը: «Գրականու-
թեան շկա»: Օգուտ, ժողովրդի դատը, մասձող սեպիսա: Մի հակառակութիւն:
Արծրունի և Պիսաբե: Հասարակական կարծիքի որոնումն. «Ճարունակե՞նք քե-
զ»: Տնտեսական հարցեր և կրթական բնկերութիւն:

Այդպես էր հայոց մամուլի դրութիւնը Ռուսաստանում, երբ Գրիգոր Արծ-
րունին սկսեց գրել:

Իր առաջին երկու հողվածները, ինչպես տեսանք, նա տպագրեց «Մեղու
լրագրում» լրագրում 1865-ին: Այնուհետև էլ նա մի քանի անգամ երևաց
այդ լրագրում: Սակայն նրա աշխատակցութիւնը ամենից շատ բեղմնավոր
էր Ստեփանեի «Հայկական աշխարհի» մեջ: Այստեղ Արծրունին մի շատ եռան-
դոտ աշխատակից էր, գրում էր իր իսկական ստորագրութեամբ և այնքան շատ
էր լավ, որ շուտով անուն հանեց ամսագրի ընթերցողների շրջանում:

Հենց սկզբից, գրական գործունեութեան առաջին, դեռ նույնիսկ թույլ,
սեպտեմբերից, Գրիգոր Արծրունին երևան է գալիս իբրև մի շատ ինք-
նատու դեմք, մի անկախ բնավորութիւն: Քսան և հինգ տարեկան երիտա-
ւորը արդեն վերջնականապես կազմակերպված է իբրև հասարակական գոր-
ծիչ ունի իր որոշ գույնը, հայտնի և պարզ դավանանքները: Դա նրանցից չէր,
այնքան ասպարեզ մտնելուց հետո սկսում են ճանապարհներ որոնել, ենթարկ-
ել տատանումներին, աչից ձախ և ձախից աչ ընկնել: Գլխավոր սկզբունքնե-
րը հիմնական դավանութիւնների տեսակետից չէ կարելի գտնել այնպիսի
բնավորներ, որոնցից Արծրունին հրաժարվելու կարիք ունենար իր ամբողջ
տարի ընթացքում: Այս պատճառով ոչինչ չէր նշանակում այն, որ նա երկար
ամանակ գրում էր «Մեղուի» պես մի լրագրում, որ հետո դարձավ նրա ամե-
նաթանկ թշնամին: «Մեղուի» մեջ էլ Արծրունին Արծրունի էր, նույն գրական
գործիչը, որ առանց սայթաքելու, առանց շեղվելու գնում էր իր ուղիղ ճանա-
պարհով:

Սա Արծրունու ամենախոշոր, նշանավոր հատկութիւններից առաջինն էր:
Երբորդ նշանավոր հատկութիւնը մտքեր արտահայտելու ձևն էր: Դեռ մի
նախառուսանող, նա ուներ իր սեփական, իրան միայն հատուկ ոճը. կտրուկ,
պակաս, հանրամատչելի: «Մեղուի» և «Հայկական աշխարհի» ճապող ան-
բախի գրվածքների մեջ աչքի է ընկնում այդ սկսնակի ինքնուրույն ոճը, կարճ
տեսակատեթիւններ և պարբերութիւններ, մի աշխույժ հետաքրքրութիւն
արտահայտութիւն, և այդ արտաքին թեթև ձևի մեջ՝ համարձակ միտք,
ձգտելի կերպով պատճառաբանված տեսութիւններ, թարմութիւն, ուժ: Գր.
Արծրունին սիրում էր իր հողվածները բաժանել մանր մասերի, նա սառն կեր-
պով վարդապետող չէր, չէր ճառում, այլ զրույց էր անում ընթերցողի հետ:
Նա պարզ ու հասկանալի, նկատի ունենալ, որ ընթերցողը ոչինչ պատրաս-
ութիւն չունի և կարոտ է տարրական հասկացողութիւնների, խուսափել
վերջ շատախոսութիւններից և երկարաբանութիւններից, խուսափել մի
բնավոր մեջ ամեն բան ասելու մոլութիւնից՝ ահա նրա գրելու ձևը: Ավե-
րակները գրաւորա և մի այլ, միայն Արծրունուն հատուկ ձև՝ կրկնութիւննե-
րի միևնույն միտքը միևնույն բառերով շատ տեղ արտահայտելը. սրանով նա,
այնպես, հալում ածում էր իր գաղափարները ընթերցողի մեջ, ինչպես ասում
էր ժամում, բերանն էր դնում:

Իսկ ի՞նչ լեզվով էր գրում Արծրունին: Մենք արգեն գիտենք, թե ինչպես էր նա վերաբերվում հայերեն լեզվին: Այժմ, ուսանողության ժամանակ, կր հասկացողությունները այնպես արմատապես փոփոխվել էին, երբ նա որոնում էր, թե ուր է իր ազգությունը, առաջ է դալիս լեզուն իմանալու անհրաժեշտություն: Եվ Արծրունին սկսում է սովորել, այնպես սովորել, որ հարողանում է հոգևածներ ուղարկել հայերեն պարբերական հրատարակություններին: Եվ որպիսի կարճ միջոցում...

Գա մի փայլուն օրինակ է: Հայերենը նույնիսկ ընտանեկան-գործածական լեզու չէր եղած նրա համար. նա կրթվել էր համարյա բոլորովին օտարալեզու Բայց ուսանողական առաջին տարիներում վճռելով գրել հայերի համար, դառնալ հայ հրատարակատու, նա, բնականաբար, պետք է սովորեր իր համար գրեթե խորթ, օտար հայերենը: Եվ նա սովորեց, սովորեց՝ որքան կարող էր սովորել մի ուսանող: Շատ շատերը կան մեզանում, որոնք ծնված լինելով ավելի նպաստավոր հանգամանքների մեջ, այսինքն հայտնու ընտանիքներում, հարկավոր են համարում կատարելապես մոռանալ իրանց մայրենի լեզուն և արդարացնում են իրանց անտարբերությունը դեպի հայկական գրականությունը այն ստերեոտիպ խոսքերով, թե հայերեն չգիտեն: Բայց դա արդարացում չէ, այլ ցույց է տալիս միայն թշվառ հասկացողությունների տիրուպետությունը: Մենք շուտով կտեսնենք, թե ինչպես էր Արծրունին ըմբռնում մայրենի լեզվի նշանակությունը. կտեսնենք և այն, որ բավական չհամարելով ինքնակրթությամբ, ուսանողական պարապմունքների մեջ ինքնագովարժություններով ձեռք բերած հայերենագիտությունը, նա գնաց հայերեն դասեր էլ առնելու Կան մարդիկ, որոնք իրանց կողման հետևից գնում են կատարյալ գիտակցությամբ. սակավաթիվ են լինում այդպիսի մարդիկ, և Արծրունին, մեկը այդ սակավություններից, արավ այն, ինչ չեն անում կամ չեն ուզում անել հարյուրավոր նրա նման օտարալեզուները:

Իհարկե, հեշտ չէր միանգամից յուրացնել հայերեն լեզուն: Նա դեռ թույլ էր իբրև հայերեն գրող և խմբագրությունները ուղղում էին նրա լեզուն: Այս բանը կարելի է հեշտ իմանալ, համեմատելով Արծրունու այն հոդվածները, որոնք տպվում էին «Մեղուի» և «Հայկական աշխարհի» մեջ. օրինակ, միևնույն գրչի տակից դուրս եկած գրվածներում մենք մի տեղ տեսնում ենք «Է գուր որ» («Մեղուի» լեզու), մյուս տեղ «այնոր համար» («Հայկական աշխարհի» լեզու): Եվ Արծրունին ոչինչ չունի դրա դեմ. նա մինչև անգամ հրատարակով շնորհակալություն էր հայտնում «Հայկական աշխարհին», որ «նա այնպես գեղեցիկ կերպով ուղղում է իր ոճը»: Լեզվին նա նայում էր ոչ իր նպատակի, այլ միջոցի վրա: Եվ սակայն Արծրունու հակառակորդները միայն այն էին պահանջում, որ նա լեզուն նպատակ դարձնի: Այս առարկային մեծ դեռ կվերադառնանք: Այժմ հետևենք Արծրունու գրվածքներին:

Իր անդրանիկ հոդվածում¹ Արծրունին գիտնում է գոյություն ունեցող գաստիարակչական սիստեմի դեմ: Սերունդ գաստիարակողներն են դպրոցը և ընտանիքը: Դպրոցում տիրում է անօգտակար գաստիարակություն, որ չէ մոռոթացնում գաստիարակվողին բնական գիտությունների հետ, այսինքն չհասկացնում, թե ինչ է մարդը, ինչ է նրա ընդհանուր հայրենիքը— աշխարհին ու օրենքներով է կառավարվում բնությունը, տիեզերքը և այլն:

Գալով երկրորդ գաստիարակչին, այսինքն ընտանիքին, Արծրունին ասում

¹ «Բնական գիտությունների նշանակությունը գաստիարակության մեջ» («Մեղուի» 1906 թ. № 13 և 14):

է, որ ընտանիքը ազատ, խելացի, առաջադեմ զարգացման թշնամին է: Ինքը՝ այդ երիտասարդ ուսանողը ընտանիքի բռնակալ լուծից ազատված միտքն էր: Կենտրոն Արծրունու երկաթե խնամակալությունը Գրիգորին շատ բան էր սովորեցրել, ազդու բողոքի շատ նյութ էր պատրաստել: Կյանքի երկարամյա փորձը այն աստիճան ճշող էր նրա համար, որ նա իր ազատության հենց առաջին քայլերից զինվեց ծնողական լուծի դեմ: Ընտանիքը՝ նախապաշարմունքների բույն. ընտանիքը՝ հին, փտած գաղափարները խստությամբ պահպանող, նվիրագործող. ընտանիքը՝ հավասարության, ազատության սկզբունքը խեղդող և անսահման բռնակալությունը սրբագործող: Ի՞նչ կլինի այդպիսի միևնույնորում մեծացող նոր սերունդը:

Պետք է այդ սերունդը ազատել ընտանիքի խեղդող ազդեցությունից, պետք է նրան միջոց տալ հեռանալու նախապաշարմունքների միջավայրից, կրթվելու ազատ և անկախ, կրթվելու իբրև ժամանակի դավալ, դրական գիտությունների պահանջների համաձայն:

Նայելով հայ ընտանիքի խորքին, Արծրունին տեսնում է այդտեղ դարավոր մեծ անարդարությունը: Տղամարդը դեռ կարող է հեռանալ ընտանիքից, կրթվել նրա ազդեցությունից դուրս: Բայց ի՞նչ անել կինը: Նա չէ կարող հեռանալ, նա պինդ կապված է ընտանիքի հետ, ճնշված է այնտեղ և միշտ տգեղ է, անպատրաստ: Բարեկարգ, լուսավոր ընտանիք, ընտանեկան դաստիարակությունը չէ էլ կարող լինել, քանի որ ընտանիքի և հասարակության մեջ այնքան կարևոր դեր կատարող կինը միանգամայն անպատրաստ է, տգետ: Եվ Արծրունին պահանջում է կնոջ համար էլ օգտակար, իրական և լայն կրթություն՝ տղամարդի հետ համահավասար:

Այսպես, իր առաջին իսկ քայլից Արծրունին հանդիսանում է կանանց հարցի շերտ, պերճախոս պաշտպան: Կինը իբրև լիակատար իրավունքներով մարդ, կինը իբրև հասարակական գործիչ՝ ահա Արծրունու իդեալը այն օրից, երբ նա առաջին անգամ գրիչ վերցրեց իր ձեռքը:

Ահա ինչ է գրում այդ գրիչը. «Ենձ հայոց կանայք կարծում են թե ձեզ համար կարևոր չէ կրթությունը. ձեր հայրեր չեն տվել ձեզ կրթության և չեն տալիս մինչև հիմի: Կարծում են, թե գեղեցկությունը և փողը ազդեցում են ամենամեծ արժանավորություններն են, և այս արժանավորությունների տեր լինելով աղքիկը կարող է մարդու գնալ: Բայց չեն մտածում այն բանի վերա, որ մայր դառնալով նա չէ կարող օրինավոր գաստիարակություն տալ իր որդիներանց, էնդուր որ ինքն տգետ է. չունի մինչև անգամ մի թիվ հասկացողություն մարդու բնության վերա, կյանքի և գաստիարակության վերա: Մարդու բնությունը, կասեն ինձ, մի՞թե կարելի է մի ջահել աղքեկա ձեռքին տալ մի գիրք, որի բովանդակությունը լինի Անատոմիա և Ֆիզիոլոգիա, այսինքն, մարդու մարմնի և կյանքի ուսումը: Մի՞թե այդ ամոթ չէ: Ինչո՞ւ է ամոթ, պատասխան եմ տալիս ես, ինչի՞ եք կարծում, որ աղքեկիք արկտ պետք է լինեն և տղայոց նման չպետք է ուսում առնեն. ինչո՞ւ... Բայց ինձ չեն էլ ուզում լսել և կրկնում են. ամոթ է, ամոթ: Ուրեմն, եթե այդպես է, պատրաստեցեք մի անպիտան սերունդ, անպիտան թե հոգով և թե մարմնով. այս երևի ամոթ չէ»:

Նախապաշարմունքները, պայանական ավանդությունները թույլ չեն տալիս յուրացնել գաստիարակությունը լայն հայացքով: Եվ իր առաջին բողոքը այդ նախապաշարված իրականության դեմ Արծրունին վերջացնում էր Հերշելի հետևյալ խոսքերով. «Առաջադեմության համար հարկավոր է մարդու ոչ թե միայն շատ բաննր ուսանել, բայց և հարկավոր է նրան շատ բաներ մոռա-

նալ»։ Այս գեղեցիկ խոսքերը Արծրունին նշանաբան է դարձնում իր ամբողջ գարծունեության համար։ Նա ալ միայն ինքն է շատ ասն մտաբանում, այլ իր ամբողջ ուժով աշխատում է, որ հասարակությանն էլ մտացունել տա շատ բան։

Նույն այդ դաստիարակության հարցին Պրիգոր Արծրունին վերադառնում է իր կրկրորդ հոգվածում, որ նվիրված էր հատկապես աղջիկներին կրթության։ Ասելով իր առաջին հոգվածի մեջ, թե հայ կինը միանգամայն տգետ է, միանգամայն անպատրաստ, Արծրունին միայն խավար ու անուս մեծամասնությունը շուների նկատի, միայն այն բազմությունը, որ առհասարակ հարկավոր չէր համարում ուսում տալ աղջիկներին։ Ո՛չ, նա խոսում էր ընդհանրապես, աչքի առաջ անենալով և կրթություն ստացող աղջիկներին։

«Մանո՞թ եք դուք մեր աղջկերանց դաստիարակության կանոնների հետ, — հարցնում է նա։ — Այս կանոնները շատ հեշտ է մաքրում պահել։ Ով որ կարողություն ունի, պարտավորություն պետք է համարի սովորեցնել իր աղջկան ֆրանսերեն լեզու, պիանո ածելը, լավ ճաշակ ունենալ շորեր ընտրելու մասանակ և գլխավոր բանը՝ մունջ կենալ։

Ահա մեր կրթության ուղղությունը։ Ահա ամենամեծ կրթության աստիճանը, որին մերերի կարծիքով կարող է հասնել կնամարդը։ Իսկ ես կասեմ, որ այդ տեսակ կրթությանը կրթություն չէ։

Ի՞նչ ենք պահանջում կնամարդուց։ Մենք պահանջում ենք նրանից, որ նա օգուտ բերի հասարակության, իսկ այդ կերպով կրթած կնամարդը երբեք օգուտ չէ կարող բերել, որովհետև նորա ստացած կրթությունը չէ բավականացնում հասարակության պիտույքներին»։

Գարոցական կրթությունը Արծրունին այսպես է նկարագրում. «Բայր ուսման ժամանակը աղջկերք սովորում են մեծ աշխատասիրությունով իրանց դասերը, խոսում են ֆրանսերեն, կորցնում են մեծ մասը իրանց առողջությունը, լցնում են իրանց գլխները գարդակ բաներով և նախապաշարմունքներով, իսկ իրանց մտքի զարգացումը շատ քիչ են առաջ տանում։ Սովորում են բառ առ բառ ձեռնարկության գրքի խոսքերը, շատ անգամ առանց նրանց միտքն էլ հասկանալու, իսկ վարժապետները այսպիսի հանգամանքների մեջ պարտավորություն են համարում իսկական ուղղությունների միտքը շեղել նրանց։ Եվ այն աղջիկը, որ կուզենա այս կամ այն իրողության վերա դատողություն անել, կհամարվի ազատախոս կամ հիմար»։

Եվ ոչինչ հասկացողություն կնամարդի կոչման կամ մոր պարտավորությունների մասին, աղջիկները ոչ միայն սեփական դատողություն անենալու պատրաստություն չեն ձեռք բերում, այլև կորցնում են իրանց ունեցածը իրանց մեջ սպանվում է բնական միտքը։

«Այդ կողմից ցարժր գասի կանաչը մինչև անգամ վեր են այդ տեսակ կրթած կնամարդերից. ցարժր գասի կնամարդը չէ կորցրել գոնյա իր բնական խելքը, իսկ այն կրթյալ կոչվողներին շատ անգամ տիրապետում է մի գարդակ ուղղություն, որ հարուցանում է նոցա մեջ զզվանք դեպի մտավոր և մարմնավոր աշխատանքը, սպանում է նրանց մեջ ուղիղ հայեցվածքը կյանքի վերա, զարթուցանելով միայն սեր դեպի անզազար զբոսանք և գարդակ պնդություն»։

Ու հերքելով այն հին նախապաշարմունքը, թե կին մարդը ուրիշ կերպ չէ էլ կարող լինել, թե նա ընդունակություն էլ չունի մտավոր գործունեության զարգացման մեջ, Արծրունին անցնում է հայ աղջիկների տնային դաստիարակության։

Գարոցյան։ Գարոցը այնպես է, իսկ ի՞նչ է տալիս ընտանիքը. «Մեր տնային դաստիարակությունը հասարակաց դաստիարակությունից (դպրոց) անգամ վատ է ինչն էլ սպանում այնքան մարմին ու հոգի, ինչքան այս դարդակ դաստիարակությունը։ Ինչո՞ւ է այդպես։ Էնդուր, որ մենք չենք հրաժարվել հին սովորություններից, իսկ նոր ուղղությունը չենք ընդունել իսկապես։ Եվրոպական կրթության մենք սեպականացրել ենք մեզ միայն արտաքին կողմը, իսկ կրթության հիմունքը դարձյալ ասիականն են։ Մեկ կողմից երևիսերանց նստացանում ենք ֆրանսերեն խոսել, պիանո ածել, կարդացնում ենք թեթև պարանոթյան անօգուտ գրքեր (օգտավետ գիտությունները շատ քիչ են նստացանում), հազցնում ենք նրանց եվրոպական շորերը. իսկ մյուս կողմից փրկաստանի հայրը նույն ասիական հրամայողն է մնում, որի խոսքը պետք է կատարվի առանց հակառակվելու։ Երևիսերք շունին մտածելու ու գործելու պատուությունը. և այսպիսի ուղղության պատուը ի՞նչ է, անշուշտ թե մարմնական, թե մտավոր չզարգացումն։ Տղայք շուտ են ազատվում այդ ուղղության սովորից, իսկ աղջկերք շատ անգամ բոլոր կյանքը չեն կարողանում ազատվել այս վատ կրթության ներգործությունից»։

Դա հասարակական դժբախտություն է։ Չէ կարող հասարակություն զարգանալ, երջանկանալ, եթե կինը մնա անկիրթ կամ գրսից միայն կրթված։

«Տղամարդը բազմություն է դաստիարակում, կնամարդը անհատներին։ Երկու անհատներից է կազմվում հասարակությունը. ուրեմն կնամարդու նպատակն էլ նույնպես է հասարակության համար օգտավետ անդամներ պատրաստելը։ Նպատակը մի է՝ բերել օգուտ հասարակության։ Որովհետև կնամարդը առանձին անձերի հոգևոր և մտավոր դաստիարակչի պաշտոն է կատարում, ուրեմն նա կարող է ոչ թե միայն իր զավակներին բարոյական ուղղություն տալ, այլ նա նույնպես ընդունակ է և ամեն մարդու վերա, ով որ նա ձեռքի տակն է ընկնում, բարոյական ազդեցություն ունենալ։ Հայտնի բան է, որ ինչքան հաստատ կրթություն կստանան կնամարդիկ, այնքան էլ ավելի կերևա նոցա ազդեցությունը հասարակության մեջ։ Իսկ անկիրթ աղջկերքի մեջ այս ազդեցությունը գրեթե աննկատելի է, ինչպես ընդհանրապես մեր հայերի մեջ էլ։ Մեր կնամարդիկ առհասարակ չեն ստացել կրթություն, ինչպես որ նոցա մեծ մասը միշտ իրանց մարդոց կոպիտ ազդեցության տակն են ընկնում։ Հայր անսահման հրամայող է իր գերդաստանի մեջ, նորա կինը և որդիքը պետք է լսեն նորա խոսքերը առանց հակառակելու։ Այս հանգամանքից հայի մեջ ծագեցան այն աննախանձելի հատկությունները, որոնց արևնավատերը են իշխանասիրություն և կամակորությունը. նորա այս պատկանությունները երևում են նորա ամեն գործի մեջ։ Ավելացրե՛ք այդ պակասությունների վերա և մեր մտավոր զարգացման պակասությունը և ձեզ հասկանալի կլինի, թե ինչու երբեք հաջողություն չկա մեր ընդհանուր գործերի մեջ, թեկուս և գործը ամենահեշտ և չնչին գործ լիներ»։

Ի՞նչ անել, սակայն, որ ընտանիքը կենդանանա, ինչպե՞ս ազատել նրան հրամայող, իշխանասեր և կամակոր» հոր ազդեցությունից։ Արծրունին խնդրի, կանոնավոր, օգտավետ կրթություն է պահանջում։

«Փոխանակ աղջկան զուխը հիմար ու անօգուտ առարկաներով լցնելու, անօթացնելը նրան հաստատ գիտությունների հետ։ Փոխանակ նորա բնական ուսումնասիրությունից ամեն բան թաքցնելու, ամոթ չհամարելը ծանոթացնել նրան բնության հետ, մարդու, մարմնի ու կյանքի ուսման հետ։ Հարկավոր չէ համիշտակել նորա միտքը զանազան առասպելներով, բայց ընդհակառակը։ պետք է աշխատել կազմելու նորա մեջ բնական և ուղիղ հայեցվածք»։

1 «Երկու խոսք աղջկերանց դաստիարակության վերա», № 23։

աշխարհի վերա: Մեկ խոսքով չպետք է սպանել նորա հոգին և մարմինը ասիական դաստիարակութիւնով, այլ նախապաշարմունքները դեն գցելով շանթից: Ենթադրելով նրան իսկական գիտութիւններէ հետ և մտաւայնել նրանց տղամարդոց ընկերութեան, որի զարգացումը աղջկերանց մտավոր զարգացման կարող է մեծ օգուտ բերել և հիմքը դնել մի ուրիշ ուղղութեան, մի ուրիշ կյանքի:»

Այս երկու հոգւածները, ինչպես գիտենք, Արծրունին գրեց Պետերբուրգից: Այնուհետև հիվանդութիւնը տարավ նրան արտասահման և նա համարյա մի տարի ստիպւած էր լոռութիւն պահպանել: Պետերբուրգում դրած սկիզբը ինչպես տեսնում ենք, չէ կարելի վատ անվանել մի հրապարակախօսի համար: Թեև այդ սկսնակը դեռ երկրորդ կուրսի ուսանող էր, դեռ 25 տարեկան, բայց հանդես էր գալիս բավական լուրջ պատրաստութեամբ: Փոքր ինչ խաղութեան գրվածքի մեջ, իհարկեւ, երևում է և չէ կարող չերևալ: Բայց որքան խմբատալից հոգւածներ են, որպիսի՝ վստահութեամբ երիտասարդ հեղինակը դրել է շարժում, որքան կարուկ կերպով լուծում է հարցերը:

Գրիգոր Արծրունու առաջին խոսքը ընտանիքի, անշարժութեան, բռնութեան դեմ էր: Ուսանողական նստարանից նա դատաւիտում էր անօգուտ, վերացական դաստիարակութիւնը, արտաքուստ յուրացրած քաղաքակրթութիւնը: Երեսունհինգ տարուց ավել է անցել այն օրից և դեռ այսօր էլ ճշմարտութիւնը շատ և շատ կա այդ տեսութիւններէ մեջ: Այսօր էլ ընտանիքը միևնույն է, միևնույն է մանավանդ կանանց կրթութիւնը, հասարակութեան պահանջներին անհամապատասխան, պիտանոի, արդուզարդի, պճնամոլութեան մի կրթութիւն: Կինը դեռ դաստիարակիչ չէ այն մտքով, ինչպես հասկանում է Արծրունին:

«Ես այդ կրթութիւնը կրթութիւն չեմ համարում», «հարցնում եմ», «ի՞նչ պատասխան չեն տալիս»... Որպիսի՝ համարձակութիւնը գրական ասպարէզում նոր լույս ընկած մի ուսանողի կողմից: Այդ ինքնապատահութիւնը, համոզված մարդու այդ կորույթը Արծրունու առաջին քայլերի հետ երեացող հիմնական հատկութիւններ են: Դա նրա բնութիւնն էր, նրա բարոյական դեմք էր կազմում: Երկրորդ հոգւածը նա վերջացնում էր այսպիսի կծու հեղինակութեամբ. «Բայց չկարծեք, հարգո ընթերցողներ, որ այն տողերի գրողը նպատակ ուներ խորհուրդներ տալու. ոչ, նա մտադիր էր միայն իր միտքը հարսնել, և երբեք սովորութիւն չունի խրատելու, էնդուր որ նա չէ մտաւայնել մե սիրելի բանաստեղծի՝ գեղեցիկ խոսքերը՝ թե».

Գրիգոր մեջ պարտավանք մի տալ հային,
Հայը խրատ (թեև խելոք) ատում է.
Մի՛ ծիծաղիլ նորա տխմար դործերին,
Որ նա ավանդ հայրենական կարծում է...»

Սկզբից ևեթ պատերազմող, քանդող: Արտասահմանը ավելի ևս զարգացնում է նրա մեջ այս հատկութիւնները: Արտասահմանում նա ավելի ևս համարձակ ու ինքնավստահ է դառնում և նրա գրվածքները, արդեն արծրունական հատուկ ոճով, շոշափում են հասարակական և կրօնական զանազան հարցեր: Նա գրում է անդադար:

«Հայկական աշխարհի» 1867 թվի N 4—5-ի մեջ տպւից «Աշխարհի» հոգւածը: Դա քաղվածք էր ֆրանսիացի գրող Էդմոնդ Արուի «La Progre» (Առաջադիմութիւն) անունով գրքից: Հոգւածի տակ դրված էր. «Գրիգոր Արծրունու»:

1 Գամառ-Քաթիպա:

րունի. — Նոյեմբեր, 1866»: Խմբագրութիւնը ավելացնում էր այդ հոգւածին նաև այլ նկատագրութիւնը. «Այս գեղեցիկ հոգւածը մենք հետո ակզից, ժնկից ստացանք վերջին օրերում մի հայկական ազնիվ երիտասարդից, որը, ինչպես յուր էինք, գնացել էր Զվեհիցարիա յուր առողջութիւնը վերականգնելու: Հասկանալի է, որ հոգւածս առանձին նշանակութիւն ունի մեզ համար և շտապելիք նորան հրատարակելու, մանավանդ սորա գեղեցիկ մտքերը շուտ հարկաւ ընթերցողներին»:

Սա. Ստեփանեան առհասարակ քննչութեամբ և առանձին հիացմունքով էր վերաբերվում ուսանող երիտասարդներին, որոնք գրում էին իր ամսագրում: Այս անգամ էր նրա վերաբերմունքը դեպի Գրիգոր Արծրունին և այս նկատագրութեամբ վերջինք չէ, որի մեջ նա արժանավոր մեծարանք էր մատուցանում իր աշխատակցի ընդունակութիւններին: Այնուհետև էլ մինչև 1871 թվականը, ինչպես կտեսնենք, Ստեփանեան, ամեն հարմար դեպքում, գովասանքներով է խրատակում Գրիգոր Արծրունուն, որ շուտով դարձավ «Հայկական աշխարհի» մեջ մի կենտրոնական անձն, մի ուժ, որ սովորի մեջ էր թողնում նույնիսկ խմբագրին: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Ստեփանեան ուներ մարդկանաչելու ընդունակութիւն. հենց առաջին թարգմանական հոգւածից նա խմբագրով, որ իր նոր աշխատակիցը «հայկական ազնիվ երիտասարդներին» սովորական տիպին չէ պատկանում, որ նա ասելիքներ ուներ:

Առաջին հոգւածը, ճիշտ է, թարգմանական էր, ուրիշի հայտնած մտքերի քաղվածք էր, բայց հենց ընտրութիւնը պարտավորեցնում էր ուշագրութիւնը արձանել բժշկվելու համար արտասահման գնացած երիտասարդի վրա: Էդմոնդ Արուն փառաբանում էր աշխատանքը իբրև միակ անկասկած միջոց մարդկութիւնը բարեբախտութեան հասցնելու համար: Աշխատանքը իբրև ընդամենուր պարտականութիւն, իբրև յուրաքանչյուր մարդու հովատամք. աշխատանք՝ շնայած գործի դժվարութեան, աշխատանք՝ առանց վարձատրութեան, գափնիներ ստանալու ակնկալութեան, աշխատանք՝ մարդու, հասարակութեան պիտի համար: Այդ մտքերը շատ լավ հարմարվում էին Արծրունու բնավորութեան, ուղղութեան: Մի ռեալիստ աշխատավորի հոգին էր խոսում նրանց մեջ: Արծրունին, ինչպես այդ տեսակ աշխատավորի առաջին խոշոր տիպ մեղաւորում, Արուի այդ նույն մտքերով դուրս եկավ հասարակութեան առաջ, երբ հայտարարում էր, թե 1872 թվից պիտի հրատարակե «Մշակ» լրագիրը. «Ե՛նչ լիաս, թող հայտնի չլինի ապագա սերունդներին մեր անունները: Մեզ բավական է, թե մեր աշխատած գործը օգուտ կրեր մարդկութեանը: Թո՛չ կորչէ անունը, բարձր գործը չի կորչի... Աշխատե՛նք»:

Թարգմանութեան հետեցին ինքնուրույն հոգւածներ: Նույն 1867-ին Ստեփանեան տպագրեց Արծրունու երկու հոգւածները՝ «Գերդաստանի ազդեցութիւն և Համալսարան» և «Քանի մի մտքեր»: Դրանց մեջ Արծրունին պտույտ էր անում աջն հարցերի շուրջը, որոնց շոշափել էր 1865-ին «Մեղուի» մեջ քաղված իր հոգւածներում: Մենք տեսնում ենք նրան դարձյալ կովկասի ընտանիքի վատ ազդեցութեան դեմ, դարձյալ կանանց համար ազատ ու օգտակար կրթութիւն պահանջելու:

Առաջին հոգւածում Արծրունին խոսում է թիֆլիսում համալսարան հիմնելու մասին: Յանկալի՝ է այդպիսի մի բան թե ոչ: Եվ առանց տատանվելու, Արծրունին ասում է թե ցանկալի չէ, ինքը չէր կամենա, որ կովկասի մայրաքաղաքը ունենա բարձրագույն դպրոց: Պատճառը միևնույնն է՝ ասիական բռնակալ ընտանիքի գոյութիւնը: Այդ ընտանիքը պիտի ոչնչացնէ համալսարանի կրթականութիւնը, ազդեցութիւնը:

Արեւնք մի քանի կտորներ այդ հողավածից՝ ավելի Գրիգոր Արծրունու գրա-
թյան ձևի, ոճի, դատողութեան եղանակի հետ ծանոթանալու համար, «Աւելնք
Թիֆլիսում համալսարան կա: Աստուք եւ ելեկ ռիմնագիտ էի Թիֆլիսի գիմ-
նադիսում և այսօր միևնույն քաղաքի մեջ ուսանող դարձաւ. փոխվեցա՞վ
արդյոք իմ գրութեանս:

Ամենեին ոչ: Այսօր երեկվա նման ես դասերից հետո տուն եմ գալիս,
նույնպես տեսնում եմ իմ գերդաստանի կյանքը, նույնպես լսում եմ ծնողների
խոսակցութեանը, նույնպես երեխա եմ:

Ուրեմն ձեր բոլոր ցավը, կասեն ինձ, այն է, որ երեխան յուր գրութեանը
չէ փոխում յուր գերդաստանում մնալով: Այո՞, այդ է իմ ցավը և գիտե՞ք
ինչի: Այնոր համար, որ ես կկամենայի, որ մարդիկ լավանան (սա կարծիք
վատ ցանկութեան չէ), բայց լավանալ մարդիկ կարող են միայն փոխելով
յուրյանց գրութեանը:

Մենք լավ մարդիկ ենք, այդ ճշմարիտ է, բայց մեր երեխանք մեղմից
լավ պետք է լինին, իսկ մեր երեխաների երեխաներ առավել ևս լավ կլինին
ինչի՞ է այդպես: Այնոր համար, որ ինչքան զնում են մարդիկ, այնքան շտ-
տանում են գիտութեանը: Գիտութեանը շտտանալու ժամանակ մարդիկ
լավանում են: Շատ մտածելուց լավանալը մարդիկ են մեջ առում են «լա-
զացումը»:

Մենք ամենքս պետք է աշխատենք դարգացնել մեր խելքը, որովհետեւ
այն ժամանակ ավելի հեշտ կլինի մեր հայրենակիցներին օգուտ բերել, ուրեմն
և հետագա սերունդներին ևս առավել լավ կյանք պատրաստել:

Դուք համաձայն եք ինձ հետ, սիրելի ընթերցող՝, որ մենք պետք է աշ-
խատենք մեր խելքը զարգացնելու, բայց ասացեք ինձ, դուք ինչպե՞ս եք կար-
ծում, մենք որտե՞ղ կարող ենք ավելի լավ զարգացնել մեր խելքը՝ գերդաս-
տանում ապրելով, կամ թե մեր ծնողներից հետո մնալով ուսում առնելու
ժամանակ:

Ես ասում եմ, որ երիտասարդի համար ավելի հեշտ է յուր խելքը դար-
գացնել յուր գերդաստանից հետո ապրելով, քան թե յուր ծնողների մոտ մնա-
լով: «Ինչի՞» է այդպես, կասեն ինձ, մի՞թե չէ կարելի սովորել ամեն տեղ:
Այդ ճշմարիտ է, պատասխանում եմ ես, բայց մարդս բացվելու ու առաջ գնա-
լու համար բավական չէ, որ սովորի, հարկավոր է նմանապես, որ նա և շտտ
մտռանա: Եվ մտռանալ մինչև անգամ ավելի դժվար է, քան թե սովորել: Ի՞նչ
է հարկավոր մեզ մտռանալ: Հարկավոր է մտռանալ գերդաստանի մեջ ստա-
ցած թյուր և ցուրտ մտքերը, բարբերի և վարքի կոպտութեանը և երեխայու-
թենից զլխի մեջ արմատացած նախապաշարմունքը:

...Յուր ծնողներից միշտ կախված լինելով, երիտասարդը չէ ուսումնա-
սիրում կյանքը, չէ զարգացնում իր բնութեանը, միշտ անփորձ է մնում կյանքի
մեջ: Ոչինչ չէ զարգացնում այնպես երիտասարդին, ինչպես անկախ կյանքը:
Երբ որ մարդը սովորում է սեփական ընդունակութեանը և բնութեանը գի-
տութեանը հավատ ընծայել, ստիպված լինելով օգնել յուր անձին կյանքի
ամեն դժվարութեանների մեջ»:

Մենք չենք քննի այստեղ այն հարցը, թե որքան ճիշտ էր Արծրունու հա-
յեցակիտը կովկասյան համալսարանի մասին: Կարելի էր առարկութեանը
անել այդ մտքերի դեմ: Կարելի էր, օրինակ, ցույց տալ, որ Թիֆլիսի համալ-

սարանը, մյուս կողմից, այն օգուտը կտար, որ մասշնի կղարձներ բարձրա-
դասն ուսումը մեր երկրի ազգայնակութեան ստորին, անապահով դասակար-
գերին: Կովկասը այն օգուտը կատանար, որ բարձր ուսում ստացած մարդիկ
չսա կունենար: Ինքը՝ Արծրունին, տարիներ անցնելուց հետո, «Աշակի» մեջ
սկսեց քարոզել, թե պետք է բաց անել համալսարան Թիֆլիսում: Այդ ժամա-
նակ նա, հիշելով իր հողավածները «Հայկական աշխարհում», ասում էր, թե
Թիֆլիսը փոխվել է, առաջադիմել է, այժմ կարող է համալսարանական քա-
ղաք դառնալ: Վիճելի է և այդ հանգամանքը: Բայց մենք մի կողմ թողնելով
այդ բոլորը, այստեղ կանգ կառնենք Արծրունու գլխավոր մտքի վրա, որ,
մեր կարծիքով, անհերքելի ճշմարտութեան է ներկայացնում:

Բանն այն է, որ Արծրունին բավական չէր համարում այն ուսումը, որ
տալիս է համալսարանը: Ոչ թե դիպլոմ, ոչ թե պաշտոնապես վկայված կըր-
թութեան, այլ իսկական զարգացում: Անշուշտ, այն ժամանակներն էլ կային
դիպլոմ ստացած շատերը: Բայց մի՞թե դրանք բոլորը իսկապես կրթված, իս-
կապես լայն զարգացման տիրացած մարդիկ էին, որ կարողանային հեղափո-
խութեան առաջացնել մեր կյանքի մեջ: Իհարկե, ոչ:

«Ի՞նչ եք հասկանում լուսավորութեան բանով, — հարցնում էր Արծրու-
նին: — Այն, որ մեր մեջ ավելի կլինին ուսումն ավարտած երիտասարդներ.
այդպես չէ՞: Բայց այդ բավական չէ: Ցանկալի կլինեք, որ բացված մարդիկ
առավել մեծ թվով լինեն մեր մեջ»:

Սա մի շատ կարևոր հայեցակետ է Արծրունու գործունեության մեջ: Այ-
ժմից նա պարզում է այն, ինչ ապագայում ամենակատարի կոնֆլիկտների առար-
կա պիտի դառնար: Արծրունին պատերազմ հրատարակեց ոչ միայն հին սե-
րունդի, հետամնացութեան, խավարասիրության դեմ, այլև համալսարանական
այն ինտելիգենցիայի դեմ, որ չէր կատարում իր դերը, որ ընդունակություն
և պատրաստություն չունեի կյանքի մեջ կուլտուրական, առաջադիմական գործ
կատարելու և, ընդհակառակն, խոչընդոտ էր հանդիսանում, արգելքներ էր
տուայ բերում: Եվ հարվածելով այդ ինտելիգենցիան, Արծրունին ի նկատի չէր
տանում համալսարանական դիպլոմները: Բավական չեն դիպլոմները, հայտա-
բարում էր նա դեռ իր գրական գործունեության սկզբում. հարկավոր են դար-
գացած, «բացված» մարդիկ: Եվ այսպիսի համալսարանական սերունդ պատ-
րաստելու համար, իհարկե, հարմար միջավայր չէր Թիֆլիսը, ուր համալսա-
րանի պատերից դուրս ուսանողը ընդհանուր զարգացողական շրջաններ չէր
գտնի: Արծրունին առաջնակարգ խոչընդոտ համարում էր ընտանիքը: Եվ մի՞թե
կարող էր ուրիշ կերպ դատել հայ ընտանիքից դուրս եկած երիտասարդը: Հի-
շեք Արովյանցին, Նազարյանցին, հիշենք, թե որքա՞ն ահազեցություն
ունեցավ նրանց զարգացման վրա գերմանական ընտանիքը, որի ծոցում ապ-
րում էին մեր առաջին պիոներները: Այնքան մեծ էր տարբերությունը եվրո-
պական և ասիական ընտանիքի մեջ, որ Արովյանցն էլ, Նազարյանցն էլ կտըր-
վեցին իրանց հայրենի ընտանիքներից, գերմանուհիների հետ ամուսնացան:

Համալսարանի փոխարեն Արծրունին խորհուրդ էր տալիս հիմնել Թիֆ-
լիսում հասարակական դասախոսութեանը: Այդ միջոցով գիտութեանը հաս-
կալի կդառնար հասարակության բոլոր խավերի համար: Ուսանող երիտա-
սարգութեանը, իհարկե, դարձյալ կդիմեր օտար երկրներ՝ համալսարան
փակելու համար, որովհետև հասարակական դասախոսութեանը չեն կարող
փոխարինել համալսարանը. նրանք այն օգուտը կտան միայն, որ ժողովուրդը
կփանտվանար գիտութեան հետ, և այսպիսով կամաց-կամաց կդաստիարակ-

1 Ես ասում եմ «ընթերցող», բայց չեմ իմանում լինո՞ւմ են արդյոք ընթերցողներ այդպիսի
հողավածներին (Նեղ. ծան.):

վեր, կդառնար մի այնպիսի հասարակություն, որ այլևս չի լինի համալսարանական կրթության համար մի վերին աստիճանի աննպաստ միջավայր:

Ուրեմն, դեռ 1867 թվին Արծրունին մեր երկրի համար առաջարկում էր ժողովրդական համալսարան, այն մեծագործ հիմնարկությունը, որ այժմ այնքան տարածված է արևմուտքում և քաղաքակրթված ազգերի պարծանքն է կազմում:

Նույնպիսի գեղեցիկ նորություն պարունակում է իր մեջ և «Քանի մի մտքեր» հոդվածը: Ազատ, բնական զարգացման կողմնակից Գրիգոր Արծրունին այստեղ դատապարտում է միակողմանի զարգացումը, խոսում է բարոյականացնող դաստիարակության մասին:

Բարոյականացնող դաստիարակություն... Չկարծեք, թե Արծրունին այնպես էր հասկանում այդ բանը, ինչպես առհասարակ հասկանում էին այն ժամանակները: Բարոյականացնող դաստիարակությունը, տիրող ընդհանուր կարծիքով, ձեռք է բերվում բարոյական-խրատական ուղղությունը, այսպես անվանված՝ հոգեշահ ընթերցանությամբ, կրոնասիրությամբ, մի խոսքով այն բոլոր միջոցներով, որ մշակել է կեսվանական և կեսաշխարհական դաստիարակությունը: Արծրունին այդ բոլոր միջոցների մասին խոսք անգամ չէ ասում, բարոյականացնող դաստիարակությունը նրա համար նույն ազատ, բնական, օգտակար կրթությունն էր:

Բարոյական հասկացողությունն էլ անհատի ստացած կրթության հետևանք է: Եթե այդ կրթությունը չէ եղել միակողմանի, սահմանափակ, եթե մարդը իսկապես զարգացած է, եթե նրա բնական ընդունակություններն են նրա զարգացման հիմք դարձել, նա, ուրեմն, ունի ինքնաճանաչություն, ինքնաքննություն մի հզոր միջոց իր արարքները քննելու և նրանց լավ ու վատը իմանալու համար: Քիչ կրթված, միակողմանի կրթված, մանավանդ անբնական արհեստական կրթություն ստացած մարդը անկարող է հասկանալ, թե ինչ է վատությունը:

Երեխային դեռ դպրոցական հասակից են զրկում այդպիսի բնական, լայն զարգացում ստանալու հնարավորությունից: Երեխան ուղարկվում է այն դպրոցը, ստանում է այն կրթությունը, ինչ որոշում են ծնողները: Ի՞նչ պետք է դառնա երեխան ապագայում՝ այդ վճռում են նրա ծնողները, մինչդեռ վճռող ինքը՝ երեխան պիտի լինի: Եվ այսպես մոռացվում, արհամարհվում է բնական մեծ օրենքը:

«Մարդիկ հավասար ընդունակություններով չեն ծնվում: Մեկ երեխա մի առարկայի ընդունակություն է ցույց տալիս, մյուսը՝ ուրիշ: Եվ եթե չեք իմանում ինչ բանին ընդունակ է երեխան, նորա խելքը շսպանելու համար, սվեք նորան այնպիսի դաստիարակություն, որ նա փոքր թե շատ ամեն առարկաների վերա տեղեկություն ունենա: Ես ասում եմ տեղեկություն ունենա և ոչ թե իմանա: Հարկավոր չէ երեխային առարկաներ իմանալ, բավական է, որ նա նոցա վերա հասկացողություն ունենա, որ նա կարողանա զարգացնել յուր միտքը, այսինքն տեսնել ինչ բանի նա ընդունակ է և ինչ բանի ընդունակ չէ: Այն ժամանակ նա, մեծանալով և հասկանալով, թե ինչ առարկայի ընդունակություն է զգում նա յուր մեջ, կընտրե այն առարկան և կպարսպե նրանով առանձնապես:

Այդ պատճառով կարելի է ասել, թե մարդիկ ւպանում են յուրյանց երեխաների միտքը, երբ դեռ փոքր հասակից, շիմանալով երեխաների ընդունակությունը, ստիպում են նոցա այս կամ այն բանով պարսպել, այս կամ այն

առարկա ընտրել: Մեկին ստիպում են զինվորական լինել, մյուսին՝ վաճառական:

Միտք սպանող այս կրթությունը, այս ստիպողական ուսումը տալիս է հետևանքներ, որոնք աղետալի են դաստիարակվողի համար:

«Երեխան ուրիշ առարկաներ չիմանալով և պարսպելով միշտ ծնողներից եղանակած առարկայով, որի ընդունակություն չունի նա, կորցնում է վերջապես հաշտ դեպի յուր հասկացողությունը: Նա յուրան անընդունակ տղա է համարում, ավելորդ արարած աշխարհիս երեսին: Իսկ երբ որ մարդս յուրակից, յուր հասկացողությունից հույս չունի, նորան մնում է միայն յուրան արհամարհել և անմիտ ու անգործ և անբարոյական կյանք վարել:

Ուրեմն առաջին նա կորցրեց քննականություն, և երկրորդ՝ բարոյականություն:

Ջարգացած խելքը անբարոյականության թշնամին է. զարգացրեք խելքը, և բարոյականությունը, որ մեծ կապակցություն ունի նրա հետ, ինքնըստինքյան կգա:

«Մեծ մասով մարդիկ այն պատճառով վատ են գործում, որ չեն մտածում արած բանի վերա: Ե՞րբ եք տեսել, որ մարդը ուրիշ մարդին վատություն անելու ժամանակ հաստատ իմանար, թե նա վատություն է անում. մարդը վատ գործ ևս անելու ժամանակ կարծում է, թե նա արդար է: Ինչի՞ է այդպես. նորա համար, որ նա կամ առիթ չէ ունեցել, կամ սովոր չէ յուր գործերը խելքով քննելու: Եվ թեպետ նա արդար ևս չէ, նա պատճառ է գտնում, որը նորա կարծիքով, նորան պետք է արդարացնեն ձեռ աչքերում»:

Այդ միտքը հաստատելու համար Արծրունին բերում է մի քանի օրինակներ, որոնցից կվերցնենք մեկը.

«Այնպիսի մարդն ևս շատ անգամ տեսած կլինիք, որը թեպետ և լավ մարդ է, լավ է իմանում յուր գործը, աշխատասեր է և օգտավետ յուր հասարակության համար, բայց յուր գերզաստանում և մասնավոր կյանքի հարթություններում մինչև այն աստիճան անբարոյական է լինում, որ ստորկություն մեջ է պահում յուր կինը, կոպիտ կերպով է վարվում երեխաների հետ, չէ թույլ տալիս յուր աղջկան յուր միտքը զարգացնել, մի խոսքով սպանում է յուր գերզաստանի մեջ ամեն տեսակ մտավոր կյանք: Եվ այդ բոլորը անելով, այն լավ մարդը կարծում է, թե դեռ լավություն է անում յուր երեխաներին և յուր կնոջ, նոցա հետ այդ կերպով վարվելով: Նա կարծում է, թե արդար է, որովհետև առիթ չէ ունեցել յուր կյանքում դաստիարակության վերա մտածելու: Նա լավ է իմանում յուր գործը, բայց ավելի ոչինչ չէ իմանում: Եվ այդ բոլոր մարդիկ ևս կարծում են, թե արդար են, որովհետև առիթ չունեցան կամ սովոր չէին յուրանց կյանքի մեջ, յուրանց վարմունքի վերա մտածելու և յուրանց գործերը քննելու:

Այդ բոլոր մարդիկների անբարոյականությունը միակողմանի ուսումից է ծագում: Իսկ միակողմանի ուսումը, կամ միակողմանի զարգացումը այն ժամանակ է ծնվում, երբ որ մարդիկ առիթ չունին կամ սովոր չեն յուրանց արած գործերի վերա մտածել, նոցա չեն մտածում, բայց ընդհակառակն նոցա իմնում են յուրանց վարմունքը հին արմատացած նախապաշարմունքի և թեզուսած սովորությունների վերա:

Եթե մտադիր եք վատ շանելու, պետք է մտածեք այն բանի վերա, որ մտադիր եք անելու: Ուրեմն ինչքան շատ մտածեք ձեր գործերի վերա, այնքան սակավ վատություն կանեք»:

Իսկ մտածել, սեփական գործերը ըննադատել կարող է այն մարդը, որ զարգացած է բազմակողմանի կերպով: Նեղ, միակողմանի զարգացումից պետք է հեռու մնալ: Միակողմանի նախապաշարմունքներով լի կրթության սխտեմի մի կրկույթ է և այն, որ տղաները և աղջիկները անջատվում են միմյանցից, առանձին-առանձին դպրոցներում են սովորում: Արժրունին ապացուցանում է այդ սխտեմի անբարոյականացնող ազդեցությունը և առաջարկում է խառն դպրոցներ բաց անել:

«Ամենից մեծ անբարոյականությունը փակված ուսումնարանների մեջ է լինում, թե տղաների և թե աղջիկների, — ասում է նա: — Այն ուսումնարանների մեջ, որոնք թեպետ և փակված չեն, բայց դարձյալ բաժանված են, անբարոյականությունը այնքան մեծ չէ: Միայն մեկ հնարք կա անբարոյականությունը հեռացնելու, այդ հնարքը խառն ուսումնարաններն են:

Ոչինչ այնքան անբարոյական չէ, ինչպես այն կասկածը, որ երեխաների մեջ է ծնվում բաժանված ուսումից: Աղջիկներին կրկնում են, թե ամօթ է և լավ չէ տղաների հետ ընկերություն անել, տղաներին ասում են, որ հեռանալ աղջիկներից: Այդ տեսակ անլուծանելի խորհուրդը կասկած է գցում երեխաների մեջ: Այդ կասկածից կարելի է ավելի սպասել վտանգ, քան թե աղջիկների և տղաների շարունակ բնական հարաբերություններից:

Խառն ուսումնարաններն Ամերիկայում կան և մի քանիս ևս Զվեցարիայում: Բայց Զվեցարիայում նոքա միայն սկզբնական ուսումնարաններ են:

Սովորությունը մեծ բան է: Ամերիկայի ուսումնարանների մեջ տղան այնպես սովորում է ամեն օր յուր կողքին աղջիկներ տեսնել, որ վերջապես նոցա հարաբերությունները ընկերական և եղբայրական են դառնում: Երբ նոցա հարաբերությունները բնական են դառնում, խորհուրդավոր կարծիքները կորչում են նոցա գլուխներից:

Մի ուրիշ լավ կողմ ևս կա, ինչպես ես ասացի, խառն ուսման մեջ տղաները աղջիկների հետ ուսումնարանի մեջ լինելով կորցնում են յուրյանց կոպտությունը, որը ավելի կմեծանար, եթե նոքա միշտ յուրանց ընկերների, տղաների մեջ էին մնացել:

Աղջիկներն յուրանց կողմից ավելի խելոքանում են, սովորում են ավելի պարզ դատել, ավելի ազատ վարվել և խոսել:

Բացի սրանից այդ տեսակ ուսումնարանների մեջ աղջիկ և տղան ամեն օր միմյանց տեսնելով, միմյանց հետ բարեկամանում են և բարեկամութենից շատ անգամ դուրս է գալիս սերը:

Ասում են, որ այդ բարեկամութենից ծագած սերը ամենաբախտավոր ամուսնություններ է ծնում:

Առաջարկվում էր հայերին մի այնպիսի նորություն, որ այդ ժամանակ առաջավոր մարդկությունը միայն երկու երկրում էր կարողացել իրազործել կարո՞ղ էր մեզ պես մի ասիական ժողովուրդ այնքան հիմնավոր, ցնցումներ առաջացնող մի մեծ հեղափոխություն ընդունել իր հասկացողությունների միջև: Զարմանալին հենց այն է, որ մեզ պես մի հետ մնացած, խեղճ ժողովրդի մեջ էլ նոր, արմատական միտքը պատվաստվում էր առանց մեծ դժվարությունների: Հարկավոր էին միայն լուսավոր միջնորդներ, ազատ մտքի տեր առաջնորդներ: Խառն ուսումնարանների միտքն իրազործեց թիֆլիսում Ստեփանեն, բաց անելով Հավլաբարում ի: Մարիամյան դպրոցի բաժանմունքը, ուր սղոթ և աղջիկ միասին էին սովորում:

Ի՞նչ էր դա ցույց տալիս: Այն, որ առաջավոր հրապարակախոսը յպիտի ծածկեր իր ազգից լուսավոր մարդկության քաշաճարները լսել այն պատճառով,

որ այդ ազգը դեռ չէ հասել քաղաքակրթված եվրոպական հասարակության երկնքին: Ազգերը աշակերտում են իրար: Եվ ինչպես անհատների կրթության մեջ անպայման հարկավոր էր ազատություն, լայնարձակ համբերողականություն, այնպես էլ մի ազգ համաշխարհային կրթարանում չպիտի անպետ ու սահմանափակված միա քաղաքակրթության հարցերի վերաբերմամբ: Գրիգոր Արծրունին իր գործունեության սկզբից հետևում էր այդ դադափարին: Ես այն տեսակ գործիչներից չէր, որոնք կանգ են առնում «աստիճանաբար», «աջորդաբար» հասկացողությունների առջև: Իր ազգին գաղափարներ քարոզելիս նա դեկավորվում էր այն ճշմարտությունը, որ հայությունը իբրև ազգ, պիտի հետևե ժամանակի մտավոր-հասարակական հոսանքներին, պիտի նույնպես մտածե այն հարցերի վրա, որոնք հուզում են լուսավոր մարդկությանը, պիտի նայե իր կյանքին ու գործերին նորագույն քաղաքակրթության տեսակետից, պիտի ըննե իրան ու իր շրջապատը այնպես, ինչպես եվրոպացի առաջավոր մարդն է քննում:

Այս բացարձակ, անսահմանափակ եվրոպականությունը մեկն էր Արծրունու այն հատկություններից, որոնք այնքան խիստ տպավորություն, մի տեսակ սարսափ էին ազդում հայ հասարակության շատ անդամներին: Գրիգոր Արծրունու դեմ բողոքներ, հայհոյանքներ բարձրացրած մարդկանց ահագին մեծամասնությունն այն զենքն ուներ իր ձեռքին, որ նա ի նկատի չէ առնում այդ ազգի առանձնահատկությունները, չէ որոշում ու կշռում, թե ինչ մտքեր կարելի է քարոզել մեզանում և ինչ մտքեր պետք է թողնել այն պատճառով, որ հայը պատրաստված չէ նրանց ընդունելու և գործադրելու: Բայց Արծրունին հանձն չէր առնում այդպիսի դատավորի, սրբազրոդի, վճռողի դեր:

Եվ կարո՞ղ էր նա մի այդպիսի դեր կատարել, մնալով իր կոչման, իր ամուսնունքների մեջ: Ո՞չ, դա անհնարին էր: Արծրունին ուներ մի գերագույն իշխող՝ համամարդկային առաջադիմությունը: Այդ առաջադիմությունը, հասնելով ընդհանուր մարդկության երջանկության, պահանջում էր, որ բոլոր ազգերը հաղորդակից լինեն իր բարիքներին: Եվ Արծրունին յուրաքանչյուր զարգացած մարդու պարտականությունն էր համարում կատարել համամարդկային առաջադիմության առաքյալի դերը իր շրջանում, իր ազգի մեջ: Սկզբից եթե քարոզելով անհատի ազատություն, կրթության ազատություն, նա չէր կարող սահմանափակումների կողմնակից լինել, և եթե կային ատելի բաներ, որոնցից առաջինը Արծրունու համար այն էր, որ մի տեսակ խնամակալություն է հաստատվում անհատի, ազգի վրա, մի տեսակ ցննչուրայի է ենթարկվում մարդկային միտքը:

Ահա մի ուրիշ փաստ: 1867 թվին Միքայել Միանսարյանցը հրատարակեց «Գեոգրությունը և դուրսից կարույնի երեք հրապարակախոսական դասախոսությունների թարգմանությունը՝ «Ազգային կրթություն» վերնագրի տակ: Գաղափարություններն էին. «Ինքնակրթություն», «Ազգային կրթություն» և «Ազգային գրատուններ»: Վերջին հատվածի առիթով Գրիգոր Արծրունին «Ազգային գրատուններ» վերնագրով մի քննություն տպագրեց նույն 1867-ին «Մեղու լույստանի» լրագրի մեջ: Այստեղ Արծրունին առաջին անգամ ցույց է տալիս իր վերաբերմունքը դեպի մեր գրականությունը, առաջին անգամ հայտնում է իր կարծիքը մեր գրականության մասին: Ինչո՞ւ համար է Միանսարյանցը տպագրել կարույնի դասախոսությունները: Երևի այն մտքով, որ հայերն էլ սկսեն ժողովրդական ազգային գրադարաններ բաց անել՝ ինքնակրթության

գործը իրանց մեջ տարածելու համար: Բայց հայերը բաց կանճառ գրադարաններ: Արծրունին պատասխանում է. «Մեզ մոտ, հայերի մեջ, հարկավոր չէ տանջվել և պատճառը պատել, ինչու մենք գրատուն չենք հիմնում... Հոգս չքաշեք, խնդրե՛մ. ժողովրդական «գահլիճ» կարող եք ունենալ, ժողովրդական «պահարաններ» էլ կարող եք շինել, բայց ժողովրդական «գրատուն» չեք կարող կազմել, այն պատճառով, որ ժողովրդական լեզվով գրքեր գրած չկան»:

Գրականություն չկա, ուրեմն: Արծրունին այդպիսի խոսքերով էր մտնում մեր գրականության մեջ: Այս միտքը նա պարզել և ապացուցել է մի ուրիշ հոդվածում, որին շուտով կդիմենք մենք: Այժմ հարկավոր է մեզ ծանոթանալ «Ազգային գրատուններ» հոդվածի գլխավոր գաղափարի հետ, որի մեջ Արծրունու ազատ հայացքներն են դրված:

Էդուարդ Լաբուլեն, դասախոսություն կարդալով Վերսալում՝ ժողովրդական գրադարան հիմնելու մասին, չէ բավականացել գրադարանների ընդհանուր կրթական նշանակությունը պարզելով, այլ և փորձել է գրադարանների բովանդակության մասին վճիռ տալ: Գրադարանը, ասում է նա, քաղաքական մտքեր տարածելու նպատակ չպիտի ունենա: Դրեք գրադարաններում կրոնական այնպիսի գրքեր, որոնք չեն հուզի մեզ: «Մենք չենք ընդունիլ միայն այնպիսի գրքանք, որոնց մեջ պարունակվում են կրոնական բանականությունը, մենք չենք սիրում վիճարանություն, թեև նա լինի աստվածաբանական, և ցանկանում ենք միայն, որ մեր մեջ թագավորներ խաղաղությունը: Ինչ որ վերաբերում է այն գրքերին, որոնք քաղաքական ներկա հարցերով են պարզված, մենք այդ տեսակ գրքանք էլ չենք ընդունիլ»:

Այս սահմանափակումների, այս արգելքների դեմ ահա Արծրունին բողոքում է: Նա ասում է. «Մի՞թե վիճարանությունները անխաղաղություն պիտի ծնեն, ինչպե՞ս կարելի է առանց վիճարանությունների ինքնակրթության նպատակին հասնել: Խաղաղություն ինքնակրթության մեջ չէ կարող լինել. խաղաղությունը ինքնակրթության մեջ կանվանվի՝ անշարժություն: Մի՞թե պ. Լաբուլեն չէ իմանում, որ կրթությունը մշտնջենավոր կրթություն ու կռիվ է սեպհական տգիտության դեմ: Այբուբեն սովորելու ժամանակ մարդ պիտի կռվի սեպհական տգիտության դեմ, մի ինչևիցե դիրք կարդալու ժամանակ մարդ պիտի կռվի նախապաշարմունքի դեմ, մի ուսում սովորելու ժամանակ մարդ պիտի կռվի իր անհասկացողության դեմ: Երբ որ մարդը քիչ թե շատ բացվի է, կռիվը էլի չէ դադարում. նա էլի պիտի սովորի, որ յուր հասկացողության ընդունակությունը չկորցնե, նա էլի պիտի կարգա, որ յուր ճնշված նախապաշարմունքներին հնար շտա կրկին անգամ տիրապետելու նրան: Նախապաշարմունքը մարդու մշտնջենավոր թշնամին է, որի դեմ եթե մարդը չի պատերազմիլ յուր բոլոր կյանքը, նա վտանգի մեջ կլինի նորա իշխանությունը և նախապաշարմունքն անտեսանելի թշնամի է, որ միշտ աշխատում է մարդու վերա իշխել և եթե բավական ուշադրություն չի դարձնիլ մարդ նորա վերա, նա կհաղթի»:

Նույնիսկ պատահել է և պ. Լաբուլենի հետ:

Կան մարդիկ, որոնք թեպետ և լավ աշխատող մարդիկ են, բայց մտածողների ոչ մի կուսակցության չպատկանելով, շատ անգամ ձգտելով դեպի անհասանելի գաղափարներ, մի ինչևիցե սկզբունք են պաշտպանում և այդ իսկ սկզբունքների դեմ են գործում իրողասպես:

Քարոզելով կրթություն, պ. Լաբուլեն չէ նկատում, որ նա ինքն կրթություն դեմ է գործում, էնդուր, որ ցույց է տալիս անհամբերության (intolérance)

որինակը, արդե՞ք դնելով այնպիսի գրքերին, որոնց նա չէ սիրում, հասարակաց գրատունը մտնելու:

Քարոզելով կրթություն, պ. Լաբուլեն չէ նկատում, որ նա ինքնակրթության արգելք է դնում, էնդուր որ հնար չէ տալիս այս կամ այն տեսակ գրքերին ազգային գրատան մեջ տեղ բռնել, ուրեմն և հնար չէ տալիս ամենևին անարգել պարսպել այն գրքերով, որոնց համար մարդ ընդունակություն կամ համակրություն է զգում: Քարոզելով խաղաղություն, չէ նկատում, որ խռովության օրինակ է տալիս, շրջադարձով այս կամ այն տեսակ գրքեր, որոնք նա չէ սիրում, ուրեմն պատճառ է տալիս և մյուս անգամներին ինչևիցե ուրիշ տեսակ գրքերին արգելք դնել, որոնք նոքա չեն սիրում»:

Ուրեմն դարձյալ նույն հիանալի սկզբունքները՝ ազատ կրթություն, լինի դա դպրոցում թե դուրսը, հասարակության մեջ: Ազատ մտքի դեմ արգելքներ չպիտի դնվի. թող նա արտահայտվի, ազատ քննությունը կարող է զտել, թե ինչն է հարկավոր և անհարկավոր: Այս միտքն ավելի լայն ու պարզ կերպով արծարծված ենք տեսնում Արծրունու մի ուրիշ հոդվածում: Նկատենք այստեղ, որ վերևում բերած մեր կտորի մէջ, բացի ազատ զարգացման սկզբունքից, ուշադրության արժանի հանգամանք է և այն, որ Արծրունին նախ խիստ անհրաժեշտ է համարում կռիվը զարգացման, առաջադիմության համար և երկրորդ խոսում է մտածողների որոշ կուսակցության պատկանելու մասին, իբրև նույնպիսի մի անհրաժեշտության՝ գործողի համար: Բավական չէ լավ աշխատող մարդ լինել. պետք է ունենալ որոշ ուղղություն, պատկանել որոշ բանակի, որոշ կուսակցության: Ինքը՝ Արծրունին սկզբից և եթե խիստ գունավորված հասարակական գործիչ էր և մեղանում բանակների, դրոշակների անհրաժեշտությունը կյանքի մեջ գործադրողը դարձավ:

«Ազգային գրատուններ» հոդվածի առիթով Ստեփանեն գրում էր «Հայկական աշխարհի» դեկտեմբերի համարում. «Հայկական երիտասարդ Գ. Արծրունին, որի գրիչը բավական հայտնի է «Հայկական աշխարհի» ընթերցողներին, «Մեղ. Հ.-ի» լրագրում (№ 49) «Ազգային գրատուններ» անունով հոդված է հրատարակել. Արժե այդ իմաստուն հոդվածը կարդալ: Միայն կցավիմ, որ այդ հոդվածի ոճը նույնպես սիրուն և կանոնավոր չէ, ինչպիսին լինում է «Հայկական աշխարհում» տպված պ. Արծրունու հոդվածներում առհասարակ»:

Այս նկատողությունը առիթ դարձավ, որ Գրիգոր Արծրունին մի շարք խիստ և սուր մտքեր հայտնե մեր գրականության մասին: Ստեփանեն մասնավոր նամակով խնդրել էր նրան հայտնել իր կարծիքը «Հայկական աշխարհի» այդ նկատողության առիթով: Եվ Արծրունին հայտնում է իր կարծիքը մի համարձակությամբ, որ նրա ամենագեղեցիկ գրվածքների զարդն է կազմում: Հոդվածը անվանված է «Նամակ դեպի խմբագրող Նիցցայից» և տպված է «Հայկական աշխարհի» 1868 թ. № 2—3-ի մեջ:

Խոսքը ոճի մասին է և Արծրունին, շնորհակալություն հայտնելով, որ Ստեփանեն այդպես լավ ուղղում է իր ոճը, ասում է, թե ինքը ամենևին արգելք չի դնի որ «Մեղուի» խմբագրությունն էլ իր կարծիքների և կանոնների համեմատ ուղղե իր ոճը: «Թող ամեն օրագիր ուղղե ոճը, ինչպես որ կամենում է... ես սրան մեծ գին չեմ դնում», ավելացնում է նա:

«Ո՞րն է այդ երկու ոճերից առավել կանոնավորը, — «Հայկ. աշխարհի», թե «Մեղու Հայաստանի»: — Ծշմարիտ ձեզ ասեմ, ես չեմ համարձակի դատարար լինել այդպիսի բաներում: Մանավանդ որ կրկնում եմ, ես ոճին մեծ գին չեմ դնում, լեզվին մեծ նշանակություն չեմ տալիս հոդվածի մեջ»:

Թող լեզուն հասկանալի լինի... այդ բավական է:

Առհասարակ կասեմ, ոճը և լեզուն մեծ նշանակություն չեն կարող ունենալ, երբ ազդի գլխավոր պակասությունը — տգիտությունն է:

Երբ որ ձեր նպատակն է ազդին ինչևիցե միտք հասկացնել, ազդին մտածել տալ, մի՞թե միևնույն չէ, ձեր ոճը «Հայկական աշխարհի», թե «Մեղու Հայաստանի» ոճը կլինի. Մի՞թե միևնույն չէ դուք ձեր հոգվածում «մարդուն» կասեք թե «մարդին»:

Սա մի շատ հիմնավոր հարց էր, որ այն ժամանակ հրատարակ էր բերում սեփական օգտի, գործնական առաջադիմության կողմնակից միտքը: Մեր գրողները, խմբագիրները լեզվի մասին խոսում էին, վիճում: Ստեփանեի մտքած ընդհանրությունները ազդել էին հանել. վիճում էին դրան դեմ, պահանջում էին վերացնել, Ստեփանոս նազարյանցը մինչև իսկ ուզում էր «Հայաստանի» հրատարակել լեզուն նորամտություններից ազատելու համար: Հարցը, իհարկե, կարեոր էր: Բայց Արծրունին գալիս էր այդ վեճերի ապարդյուն լինելը ցույց տալու Ապարդյուն, իհարկե, ընդհանուր տեսակետից: Միևնույն չէ: Ունեցեք նույնիսկ շատ լավ մշակված, կանոնավոր լեզու, ի՞նչ օգուտ, երբ ժողովուրդը կարգալու բան չունի: Կեզվի մասին էին վիճում, բայց ո՞ւմ համար, քանի որ ժողովուրդը սեր չունի դեպի գրականությունը, հայերեն չի կարդում: Արծրունին շարունակում է. «Պարոն Ծ. Ս., որը «Հայկ. աշխ.» օրագրին (№ 9) Մասկվայից նույնիսկ էր գրել, այսու է յուր նամակում ձեր օրագրի նորամտությունների պատճառով. «Շատերը հեռացել են, կհեռանան և մնացորդը... ամենքը գոչեցին, բողոքեցին, մեծից մինչև փոքրը... Ժողովուրդին ընթերցանություն է հարկավոր, ընթերցանություն և ոչ այլ, բեն, դիմ նոր ի նորո ուսուցանել: Յունվարը հ-ով գրել, յայտարարությունը կամ յայտությունը հ-ով, ոչինչ առաջադիմություն չի առաջանալ»:

Իմ միտքս այն է, որ եթե արգարև հասարակությունը հարկավորություն է դրացել կարգալ և մտածել, նորան աններելի կլինեն հեռանալ կարգալուց և թողնել միակ օրագիրը միայն այն պատճառով, որ այն օրագիրը թեպետ և գեղեցիկ հոգվածներ է տպում, բայց «Յունվար» հ-ով է գրում, և «վերայ» առանց յ տառի և այլն:

Կարծեմ, որ պ. Ծ. Ս. սխալվում է, ասելով, թե «Ժողովուրդին ընթերցանություն է հարկավոր»: Եթե ժողովուրդին ընթերցանություն «հարկավոր» լիներ (հայերեն լեզվով), Կովկասում երկու օրագիրներից առավել կլիներ, և այդ երկու օրագիրները այնքան աղքատ չէին լինի... Կարծեմ ես հայտնել եմ միտքս սորա մասին շատ անգամ:

Հայերը երբեք ուրախությունը չէին կարդում, երբեք չէին ստորագրվում որևիցե օրագրին, որևիցե նպատակ աչքի առաջ ունենալով. նրա մինչև այժմ ևս չէին հասկանում, թե հարկավոր է օրագիրը մտածելով կարգալ և ոչ թե ամեն գրված խոսքին հավատալ: Մինչև այժմ հայերը մի որևիցե օրագրին ստորագրվելով, «ազգասիրության» պատճառով էին ստորագրվում և ոչ թե օգտի պատճառով, կարգալու նպատակով, խելք զարգացնելու նպատակով:

Հայն շատ կկամենար հրաժարվել օրագրի ստորագրությունից, բայց մինչև այժմ պատճառ չկար, որ հրաժարվեր... Ազգասեր ես, պետք է հայ օրագիր ստանաս:

Բայց այժմ «Հայկ. աշխ.» օրագիրը «վերայ» բան առանց յ գրեց և «յունվար» հ-ով գրեց... ահա պատճառ կա հեռանալու և հրաժարվելու ստորագրությունից... «Դու ի՞նչ ես կարծում, պ. Ստեփանեի: փող տամ, որ նա մեր հին հայկական լեզուն, ազամային լեզուն աղավաղե... չէ... ելքայր, ես ազգասիր

եմ ու ուղեի լավ է ոչինչ չեմ կարդա, հիմար ու տգետ կմնամ, քան թե «յունվար» հ-ով կարդամ և «վերայ» առանց յ տառի...»:

Գուշեցին, բողոքեցին մեծից մինչև փոքր: Տեր աստված... Դուք ի՞նչ արեցիք, պ. Ստեփանե... առաջ հայերը խիստ շատ էին կարդում, այժմ դուք նոցա ազգասիրությունը այնքան միջավորեցիք, որ նոքա վճռեցին, ազգասիրության պատճառով, յուրանց ամբողջ կյանքը տգետ մնալ, բացի օրացույցից ոչինչ չկարդալ...

Ո՛չ, պ. Ծ. Ս., իմ կարծիքով դուք սխալվում եք. ժողովուրդին ամենևին ընթերցանություն հարկավոր չէ:

Գիտե՞ք ինչ կպատահեր, եթե արդարև ժողովուրդին հարկավոր լիներ ընթերցանությունը: Եթե նկատել էր, թե օրագիրը մի այլանդակում է նորա լեզվի ոճը, ժողովուրդը, այո, կգոչեր, կբողոքեր, անբավական կլիներ, բայց որովհետև նա առանց ընթերցանության չէր կարող մնալ, նոր անբավականությունից իսկույն մարդիկներից մեկը օգուտ կքաղեր և կհիմներ մի ուրիշ օրագիր: Փոխանակ գոչելու, հիմնեցեք ուրիշ օրագիր... Չե՞ք կարող:

Այո, ես շատ լավ եմ հասկանում, որ չեք կարող, որովհետև դիտեք, թե ժողովուրդը չէ վարձատրում, չէ ապահովացնում մտավոր աշխատանք. օրագիր հրատարակելը հայերի մեջ նշանակում է յուր անձը քաղցած մահին դո՛հել:

Ո՛չ, մեր ժողովուրդին հարկավոր չէ ընթերցանություն, բայց հարկավոր է մեր ժողովուրդին կարգալ սովորեցնել, նորան ընթերցանությունը սխրել տալ, նորան «մտածել սովորեցնել»:

Ես հայկական լեզվի վերա չեմ նայում որպես նպատակի վերա, բայց ինչպես միջոցի վերա: Ոչ թե «կարդանք հայերեն», որովհետև «հայեր ենք», այլ կարդանք հայերեն, որովհետև հայերեն առավել լավ ենք հասկանում, քան թե ուրիշ լեզու: Օրագիր հրատարակեցեք ոչ թե այն նպատակով, որ ընթերցողներից «հայրենասերներ» և «ազգասիրներ» շինեք, բայց այն նպատակով, որ հայերից «մարդիկ» շինեք:

Մայրենի լեզվի հարցը Արծրունին այստեղ անցողակի կերպով է շոշափում և այդ պատճառով նրա այն ձևակերպությունը, թե հայերեն պետք է կարգալ այն պատճառով, որ այդ լեզուն ավելի լավ ենք հասկանում, քան մի ուրիշը, բավական խախտու և անհիմն է թվում: Սակայն այս նախադասությունից չպետք է դատել, թե ինչ վերաբերմունք ուներ Արծրունին առհասարակ գեպի մայրենի լեզուն: Մենք դեռ մի քանի անգամ առիթ կունենանք տեսնելու, թե որքան խոր պատճառաբանությամբ էր նա հարկավոր համարում, որ մայրենի լեզվին առաջնակարգ դեր և նշանակություն տրվի կրթության գործում:

Եվ այսպես ահա, Արծրունին բոլորովին այլ կերպով էր լուծում այն ահագին, կյանքի և մահվան նշանակություն ունեցող հարցը, որ այնքան տանջում էր մեր խմբագիրներին: Դա օրվա հարց էր. այն երևույթը, որ հայերի մեջ չէ կազմվում ընթերցող դասակարգ, որ ամսագիրը, դիրքը գնող չէ գտնում, սփինքսի պես կանգնած էր գրական մարդկանց առջև և մնում էր անհասկանալի: Աշխատում էին հասկանալ նրան. կարծում էին, թե ընթերցող չկա, որովհետև հայը զուրկ է գիտությունից, որովհետև նա բարբախտ չէ, հասկանալ չէ ուզում, որ գրականությունը հարկավոր է ազգային դեմք, ինքնուրույնություն պահպանելու համար: Մենք տեսանք նույնպես, որ «Մեղուն» ընթերցողների պակասությունը թշնամիներին էր վերադրում, մինչդեռ «Հայկական աշխարհը» կարծում էր, թե հայերեն դիրքը, լրագիրը կտարածվեն այն ժամանակ միայն, երբ կրթվածների, ընտրյալների թիվը կբազմանա:

Գրիգոր Արծրունին մտանում էր այդ տանջող սֆինքսին ուրիշ կողմից։ Նա ասում էր. «Գրադեանությունը չի, ժողովուրդը չէ կարգում, կարգալու պահանջ չունի. պետք է նրան սիրել տալ ընթերցանությունը, պետք է սովորեցնել նրան մտածելը»։ Մինչև այդ խմբագիրների առջև ժողովուրդն էր մեղավոր Արծրունին ասում էր. «Ժողովուրդը մեղավոր է մի հայտնի շափով, բայց մեղք ունին և գրողները»։ Հասկանալով հանգերձ, որ հայերի մեջ լրագիր հրատարակելը նշանակում էր սովամահի զոհ գառնալ, նա, այնուամենայնիվ, ընդունում էր, որ ժողովրդին կարելի է սիրել տալ ընթերցանությունը և պետք է սիրել տալ։ Ստեփանեն էլ մի ժամանակ գիտեր, որ պետք է ընթերցասիրությունը տարածել, բայց մի կարճ միջոցում համոզվեց, որ այդ չէ կարելի անել մամուլի միջոցով, պետք է դեռ սպասել, որ զարգացած մարդիկ շատանան Այսպես դատելով, նա, իհարկե, համոզված էր, որ ինքը, իբրև խմբագիր արել է և անում է այն, ինչ հարկավոր էր և պետք էր անել։ Սակայն Արծրունին ասում էր. Ո՛չ, մամուլը չէ անում ինչ հարկավոր է, մամուլը իր պարտականությունը լավ չէ կատարում։

«Հասարակությունը չէ մտածում, ժողովրդի մեջ հասարակական կարծիք չկա,— ասում է նա:— Գոնե օրագիրը պետք է ուղղություն տար հասարակության կարծիքին»։

Ահա ինչն է մոռացվում, ահա ինչից է այնքան մահամերձ հիվանդ մեր մամուլը։ Եվ Արծրունին այդ պակասությունը ցույց է տալիս մի օրինակով, որ վերցնում է իր մասին եղած գովասանական նկատողությունից, այսինքն նույն «Հայկական աշխարհից»։ «Բայց ի՞նչ ուղղություն են տալիս մեր օրագիրները, հարցնում է նա։

Գրեցեք մի հոդված, օրագիրը կասե. «արժե կարդալ այդ հոդվածը»։ Մի՞թե սա կրիտիկա է։ Ինչի՞ արժե կարդալ այդ հոդվածը։ Ասում է նմանապես. «Իմաստուն հոդված է»։

Ի՞նչ է նշանակում «իմաստուն»։ Մի՞թե այդ բառը հասարակությանը կհասկացնե հոդվածի «ինչ լինելը»։

Օրինակ ես կարդացի մի հոդված և չհասկացա նորան. մյուս հոդվածը կարդացի և չհամաձայնեցի նորա մտքերին։ Մի՞թե այդպիսի և սորա նման խոսքերը «արժե կարդալ այդ իմաստուն հոդվածը» ինձ կհասկացնեն ինչ որ ես չեմ հասկացել, ինձ կմեկնեն այն մտքերը, որոնց հետ ես համաձայն չեմ։

Օրինակ, իմ «Համալսարան» հոդվածի մասին պ. Հայասերը ասաց, թե նա «քաղցր տպավորություն ունեցավ հասարակության վերա»։

Ինչի՞ քաղցր տպավորություն ունեցավ նա հասարակության վերա։ Նորա՞ համար, որ ես հայ եմ և հայերեն հոդված գրեցի կամ նորա՞ համար, որ ես ասացի, թե համալսարանի հիմնելը առավել վնաս կբերի, քան թե օգուտ։ Կամ թե նորա՞ համար, որ ես հասարակական դասախոսությունների միտք տվի... կամ թե նորա՞ համար, որ ես ասացի, թե որքան հեռու փախչենք մեր տգետ ծնողներից, այնքան լավ կլինի։

Հայտնի չէ ինչի նա «քաղցր տպավորություն» ունեցավ։

Մի՞թե այդպիսի խոսքերը կարող են ինչևիցե օգուտ բերել կարգացողին, մի՞թե կարող են մարդին ինչևիցե միտք մեկնել, հոդված հասկացնել, ուղղել հասարակության կարծիք։

Ժողովուրդը չէ մտածում, և օրագիրը պիտի սովորեցնե մտածել...»

Ստեփանեն ոչինչ չպատասխանեց. ընդհակառակն, երբ 1868-ին «Մեղուի» մեջ տպվեց Արծրունու «Շարունակի»-նք թե ոչ» հոդվածը, նա «Հայկական աշխարհում» նորից տպեց մի-այդպիսի նկատողություն, այն զանապա-

նությամբ միայն, որ «իմաստուն հոդված» չէր այս անգամ գրված, այլ «իմաստալից հոդված»։

Հետևելով ժամանակագրական կարգին, մենք «Ազգային գրատուններ» հոդվածից հետո պիտի շարունակենք «Ի՞նչ է կնամարդ» անունով հոդվածը, որը տպվեց «Հայկական աշխարհի» 1868 թ. № 1-ի մեջ։ Այդտեղ Արծրունին նորից կանանց հարցն է պաշտպանում եվրոպական հեղինակավոր մարդկանց վկայությունների միջոցով, մեջ է բերում գիտնական աշխարհի տպացույցները. թե կինն էլ միանգամայն ընդունակ է աշխատանքի, հետևաբար ոչ մի հիմք չկա զրկելու նրան գործելու հնարավորությունից։ Մենք նորից չենք դիմի այդ հոդվածի մանրամասնություններին, քանի որ արդեն գիտենք, թե ինչ հայացքներ ունեն Արծրունին կանանց հարցի վերաբերմամբ։ Կասենք միայն, որ գրելու ձևի, մտքեր քարոզելու, համարձակ, նոր եզրակացություններ բերելու և ապացուցանելու մեջ նա ավելի և ավելի առաջադիմում է։ Օրինակ, որքան գեղեցիկ է այս ձևակերպությունը. «Ոչ վատը ճանաչել արժանավորություն չէ, բայց այն է արժանավորությունը, երբոր մարդս լավն ու վատը իմանալով, լավը վատից կարող է զանազանել»։

Մինչև այժմ Գրիգոր Արծրունին խոսում էր գլխավորապես դաստիարակության մասին, դնելով նրա մեջ հասարակական հարցերի քննադատություն։ Բայց ահա 1868-ին նա տալիս է և գրական քննադատության առաջին փորձը։ «Որևուից ո՞րն է լավը» հոդվածում նա պատասխանում է այն հարցին, թե ինչ են գեղարվեստական ստեղծագործությունները։

Ասում են, թե չպետք է կարդալ այնպիսի վեպեր, որոնց մեջ կյանքի անբարոյական, վատ կողմերն են նկարագրված։ Այդպիսի վեպերի ընթերցանությունը կարող է անբարոյականացնող ազդեցություն ունենալ երիտասարդ սերունդի վրա։ Պիտարեր առհասարակ բացասական վերաբերմունք ունեն դեպի գեղարվեստը, համարելով նրան անօգուտ մի բան։ Դաստիարակության մասին գրած իր մի հոդվածում Պիտարեր սաստիկ դատապարտում էր այն ծնողներին, որոնք թույլ են տալիս իրանց երեխաներին կարդալ Պոլ դը Կոկի, Դյումա հոր և Դյումա որդու վեպերը։ Դրանք ամոթալի դատարկապարտության պտուղներ են, այլանդակ և անբարոյական բաներ։ Գրիգոր Արծրունին հակառակվում է այդ մտքին։ Եվ այստեղ էլ մենք տեսնում ենք ազատ մտածողության, ազատ պարզացման համոզված կողմնակցին։

Նա հարցնում է, թե ի՞նչ նպատակով են գրվում գրական ստեղծագործությունները։ Գրողն իր միջավայրի, իր հասարակության, իր ժամանակի պտուղն է, արտահայտությունն է։

«Որովհետև գրողները միակ, առանձնապես չեն ապրում, իսկ հասարակության մեջ են ծնվում ու ապրում, հասարակության կարծիքներ ու տպավորություններ են բաժանում, ուրեմն նոքա հասարակության պտուղներ են, ոչ թե երկնքից ընկած հրաշքներ։

Հասարակությունն ինչ կարծիքներ, ինչ ձգտողություններ, ինչ կրքեր ունի, որանց լավ և վատ հատկություններով, այդ բոլորը այն հասարակության գրողներ ևս ունին, միայն թե նոցա մեջ կյանքի այդ բոլոր երևույթներն առավել հաստատ ուղղություն ստացան, ընդարձակվեցան նոցա ընդունակության միջոցով, զարգացան և գրականական ձևն ստացան։

...Ուրեմն գրողը յուր դարի պտուղն է, յուր ժամանակի արտահայտությունն է»։

Գրական ստեղծագործությունները գրվում են այն նպատակով, որ սովոր-

րեցնեն հասարակութիւնը մտածել և իր կյանքը քննել, ուրեմն և ձգտել դեպի լավը, դեպի առաջադիմութիւնը:

«Մարդկային հասարակութիւնը կատարյալ չէ, նա անբարոյական է լինում, պակասութիւններ ունի: Ի՞նչ միջոցով կարող է նա յուրան լավացնել: Մտաւոր աշխատանքի միջոցով:

Երկու հնար կա մարդիկներին մտածել սովորեցնելու. այդ հնարներէն առաջինն այն է, երբ գրողն առաջարկում է հասարակութեանը կատարյալ գաղափարներ, կատարյալ մտքեր: Երկրորդը այն է, երբ գրողը ներկայացնում է հասարակութեանը նորա կյանքի պակասութիւններ:

Առաջինը ներկայացնում է յուրանից հնարած լավ օրինակը, կատարյալ գաղափարը, երկրորդը ներկայացնում է իսկական կյանքի մեջ գտնված կոզմը, կամ եթե կարելի է ասել, ներկայացնում է վատ գաղափարը:

Առաջինն առաջարկում է հասարակութեանը ձգտել դեպի «լավը», երկրորդն հրավիրում է հասարակութիւնը քննել բոլոր նորա մեջ գտնված «վատը» Երկուսից ո՞րն է լավը:

Ես կարծում եմ, որ ինչպես առաջին, նույնպես և երկրորդ հնարները լավ են և օգտավետ են:

Հարկավոր է, որ մարդս, ձգտելով դեպի լավը, աչքի առաջ կատարյալ գաղափար ունենա: Բայց նմանապես հարկավոր է նորան և յուր սեփական պակասութիւններ իմանալ և քննել, որ նա հնար ունենա այդ պակասութիւններից բժշկվելու:

Այս հասկացողութիւնը գեղարվեստական երկերի մտքին Գրիգոր Արծրունին պահեց մինչև իր կյանքի վերջը և նրա մահից մի տարի առաջ գրված մի գրական քննադատութեան մեջ մենք տեսնում ենք այս միևնույն վերաբերմունքը դեպի գեղարվեստի մեջ տիրող ուղղութիւնները: Հավասարապես հարգելով այն ուղղութիւնը, որ կյանքի անողորմ մերկացում և վերլուծում է տալիս և այն, որ խուսափում է այդ վերլուծումից և ներկայացնում է կատարելատիպեր և իդեալներ, Արծրունին ինքն անձամբ ավելի համակրում էր այս վերջին, գաղափարական ուղղութեան. դրա ապացույցն է նրա «էվելիինան»: Սակայն նա ընդունում էր մյուս, նատուրալիստական ուղղութեան օրինակաւորութիւնն ու օգտակարութիւնն էլ և ոչ միայն շէր վրդովվում այդ ուղղութիւնից, շատ շատերի նման շէր աղաղակում, թե նա բարբերի կատարյալ ապակասութիւն է առաջացնում, այլ ընդհակառակն, համարում էր նրան անհրաժեշտութիւն, կյանքը ճանաչելու, կեղտերը մերկացնելու մի լավ միջոց: Շարունակելով իր դատողութիւնները, նա ասում էր. «Եվրոպայի հասարակութեան մեջ պակասութիւններ կան, անբարոյականութիւն կա, բայց և կան մարդիկ որոնք այդ պակասութիւնները հայտնում են, անբարոյականութեան երևույթները քննում են:

Մեր ժողովրդի մեջ, հայերի մեջ, մի՞թե պակասութիւններ չկան, մի՞թե անբարոյականութիւն չկա, բայց կա՞ն արդեօք Պոլ դը Կոկի կամ Դյումաների նման գրողներ, որոնք ներկայացնեն հասարակութեան կյանք, պակասութիւններ հայտնեն:

Եվրոպացիների մեջ անբարոյականութիւն կա, բայց միևնույն ժամանակին նրա և գրողներ ունին, որոնք հայտնում են անբարոյականութիւնը: Մեր մեջ, հայերի մեջ, անբարոյականութիւն կա, բայց մենք մեր անբարոյականութիւնը չենք հայտնում:

Երկուսից ո՞րն է լավը:

Իհարկէ, անբարոյականութիւն մերկացնելը: Եվ Արծրունին գտնում է, որ քանի որ մենք չունինք մեր սեփական կեղտերը մերկացնող հեղինակներ, գոնե պիտի օգուտ քաղենք օտար գրականութեան գրքերից, գոնե նրանց պիտի կարգանք, որպեսզի սովորենք առհասարակ մարդկային անբարոյականութիւնը քննել:

«Պոլ դը Կոկը և Ալեքսանդր Դյումա որդին յուրանցից չեն հնարել այն անբարոյականութիւնը, որ նոքա նկարագրում են: Այն անբարոյականութիւնը կա, ուրեմն ոչ ոք իրավունք չունի նորան շիմանալ»:

Իմանալը պարտավորական է, իմանալուց վախ չկա, վտանգ չկա: Ինչպե՞ս: Արծրունին վստահ է քննող, զտող, զարգացած մտքի վրա: Կա այդ միտքը, և մարդն այնքան ուժեղ է, որ անբարոյականութիւնը նրան չի դիպչի, նրան չի վարակի, ընդհակառակն, արիւթիւն կներշնչե նրա դեմ կովելու, երան ոչնչացնելու համար: Եվ ահա որքան գեղեցիկ կերպով է նա ձևակերպում իր անսահման վստահութիւնը դեպի զարգացած, ուժեղ միտքը. «Կամ (գոչն) այնքան փոքր հույս ունինք մեր բնութեան զորութենից, մեր խելքից և մեր բարոյական զորութենից, որ վախենում ենք ոտմաններ կարգալով այն ոտմանների մեջ նկարագրված պակասութիւններից օրինակ առնել...»

Եթե այսպես է, շատ լավ ենք անում, որ չենք կարդում:

Եթե այդպես է, շատ լավ ենք անում, որ մեր երեխաներին ևս կարդալ չենք տալիս այն գրքերը: Եթե մենք մեզ այնքան թույլ, շրջված և անբարոյական ենք համարում, որ երեխաներին չենք իմանում մեկնել գրքերի մեջ նկարագրված պակասութիւնները, առավել լավ կանենք, որ նոցա շտանք այն գրքեր կարդալու: Եթե մենք ինքներս ևս մեզ այնքան թույլ ենք համարում կամ զգում, որ Պոլ դը Կոկի ոտմանը կարգալով, փոխանակ մտածելու նորա մեջ նկարագրված անբարոյական անձից օրինակ կանենք և մենք ևս նորա նման անբարոյական կդառնանք... առավել լավ կանենք, որ չկարդանք»:

Եվ այսպես, Արծրունին այստեղ էլ, ինչպես «Աղագային գրատուններ» հոդվածում, ավելորդ, նույնիսկ վնասակար է համարում սահմանափակումների մեջ դնել ընթերցանութիւնը, պահանջում է, որ ընթերցողն ազատ լինի իր ընտրութիւնների մեջ, որ դաստիարակող լինի կյանքն իր դրական և բացասական կողմերով: Միակողմանի դաստիարակութեան թշնամի լինելով, Արծրունին, իհարկէ, շէր էլ կարող ուրիշ կերպ գատել: Գրքերի բովանդակութիւնն ինչ ուզում է թող լինի. մտքերը, գաղափարները թող հակասական լինեն: Ի՞նչ վնաս: Գլխավորն այն է, որ ընթերցողը լինի պատրաստված: Քննված մարդ, ո՞հա այն գրութիւնը, որի մեջ մարդկութեան յուրաքանչյուր անդամ կարող է և պարտավոր է ամենայն ազատութեամբ և համարձակութեամբ իմանալ շարն ու բարին իրանց ամբողջ մերկութեամբ: Որպիսի՞ հավատ դեպի բաղձակողմանի, լայն զարգացումը: Արծրունին երբեք շնորհակց այդ ջերմ հավատից, երբեք չթուլացած այն պաշտամունքի մեջ, որի մարմնացումը «բացված մարդն» էր:

Մենք տեսանք, թե Գրիգոր Արծրունին ինչպես էր բացատրում այն հանգամանքը, որ հայերի մեջ մամուլը ոչինչ հեղինակութիւն չունի: Մամուլը հասարակական կարծիք չէ առաջացնում, մտածելու նյութ չէ տալիս հասարակութեան, ասում էր նա: Ինքը՝ այդ նոր սկսող հրատարակատու, ունեւ մի ասանձին շնորհք իր գրով աղղելու, մտքեր հարուցանելու, որովհետև գիտեր թարմ, հետաքրքրական հարցեր արծարծել: Այսպես, նրա «Գերդաստանի աղգիցութիւնը և համալսարան» հոդվածը, ինչպես վկայում է ժամանակակից-

ներից մեկը¹, «ձեռքի ձեռք անցավ», տարօրինակ թղթց, «Հայկական ա-
խարհը» վկայեց, որ այդ հողվածը «առանձին քաղցր տպավորություն» թողեց
ընթերցողների վրա: Մենք տեսանք, որ Արծրունին ուղում էր իմանալ, թե
ինչու՞ քաղցր տպավորություն է թողել հողվածը, ուղում էր իմանալ հրապա-
րակական կարծիք իր մտքերի մասին, կրիտիկա: Բայց ոչ ոք չխոսեց մամու-
լի մեջ: Միայն մասնավոր խոսակցություններից իմացավ Արծրունին, որ կան
մարդիկ, որոնք բոլորովին համաձայն չէին նրա հետ, առարկություններ ունեին
նրա դեմ: Ուստի նա մի անգամ էլ վերադարձավ Թիֆլիսում համալսարան հիմ-
նելու հարցին, տպագրելով «Հայկական աշխարհի» մեջ «Կրկին համալսարանի
մասին» հոդվածը: Այդտեղ նա ջրում էր բերանացի առարկությունները, սա-
կայն նա իրողություններ և փաստեր չէր բերում: Մենք արդեն մանրամասն
գիտենք, թե ինչու Արծրունին դեմ էր Թիֆլիսի համալսարանին:

Անշուշտ այդ նոր հողվածն էլ օտարոտի պիտի թվար շատերին: Սա մի
նշանավոր երևույթ է, այս օտարոտի տպավորությունը: Նշանակում էր, որ
հայ ընթերցողը սովոր չէր այդպիսի ինքնուրույն մտքերի, նշանակում էր, որ
Գրիգոր Արծրունին սովորական գրողներից չէր, այլ իր գրվածքներով մտցնում
էր ոչ միայն քաղցր տպավորություն, այլև դարմանք, մի թերահավատ տրու-
մադրություն, որ կարծես հարցնում էր. «Ճիշտ է նա ասում»: Մեր անշար-
ժություն, մեր մտավոր տափակություն մեջ ընթերցողը չէր սպասում այդպիսի
համարձակ նորությունների: Եվ ինչու՞ միայն ընթերցողը: Հայ խմբագիրն էլ
հանկարծակի էր գալիս, շփոթվում էր, շփոթեք, թե ինչ անե Արծրունու գր-
վածքների թողած օտարոտի տպավորության տակ:

Այդ կողմից շատ նշանավոր է Արծրունու «Գրականություն չկա» հոդ-
վածը, որ տպագրվեց «Հայկական աշխարհի» սեպտեմբերի համարում: Ստե-
փանեն դրեց հողվածի սկզբում մի ծանոթություն, որ նրա կատարյալ շվա-
րումն է ցույց տալիս և միևնույն ժամանակ շատ լավ պատկերացնում է այն
տպավորությունը, որ թողնում էր Արծրունին հայկական շրջանների վրա:
Բանից դուրս է գալիս, որ նա ութ ամիս պահել էր հողվածը, չկարողանալով
իմանալ, թե ինչ անել. տպել՞ թե չտպել: Ահա մեր խմբագրի խոստովանու-
թյունը. «Այս հողվածն ստացել ենք հունվար ամսին: Բայց, ցանկանալով
օրագրումս ավելի այնպիսի հողվածներ հրատարակել, որոնց համար պատաս-
խանատու կարող էինք մենք ևս դառնալ և սորան այսպիսի հողվածներից
չհամարելով, դժվարանում էինք հրատարակել: Միևնույն ժամանակ բոլորու-
վին ցանկանում էինք մտածող ընթերցողներին մասնակից կացուցանելու այն
խելացի և միանգամայն օգտավետ մտքերին, որոնք գտնվում են այս հողվա-
ծում: Ուստի մենք ահա հրատարակեցինք այս հողվածը, պատասխանատու-
թյունը նույն ինքն հեղինակին թողնելով»:

Իսկ որ տարօրինակ հանգամանք: Մարդը չէ կարող պատասխանատու-
թյուն հանձն առնել, հետևաբար համաձայն չէ այն մտքերի հետ, որ հայու-
նում է Գրիգոր Արծրունին. բայց միևնույն ժամանակ այդ մտքերն այնքան
գեղեցիկ և օգտակար են երևում, որ խմբագիրը մեղք է համարում թաքցնել
նրանց ընթերցողից: Համաձայն չլինել և միևնույն ժամանակ խոստովանել
մտքերի գեղեցկությունը՝ ահա ինչ վերաբերմունք է ստեղծվում հայկական
իրականության և Գրիգոր Արծրունու մեջ այդքան վաղ ժամանակից: Եվ այդ
վերաբերմունքն էր տեսնում Արծրունին իր ամբողջ կյանքում:

Մակայն արդար լինենք Ստեփաննի վերաբերմամբ: «Գրականություն չկա»¹
հողվածը, իսկ որ, անօրինակ մի երևույթ էր մեր մամուլի մեջ: Պատմել նրա
համառոտ բովանդակությունը կնշանակեր զրկել նրան այն ուժից, այն ինք-
նատրույնությունից, որոնք նրա զարդերն են կազմում: Ուստի մենք կբերենք
համարյա ամբողջ հողվածը, թույլ տալով մեզ համառոտություններ այնտեղ,
որ այդ հնարավոր է:

I

«Ինչի՞ եք սովորում որևիցե լեզու:
Երեք նպատակով. առաջինը, որ կարողանանք մի հասարակության հետ
հարաբերություններ ունենալ, երկրորդը, որ ծանոթանանք այն հասարակու-
թյան գրականության հետ, և երրորդը, որ կարողանաք ինքներդ այն հասա-
րակությանը նորա լեզվի միջոցով ձեր միտքը հայտնել, շարադրություններ
գրելով:

Ինչի՞ ենք սովորում հայկական լեզուն: Միևնույն երեք նպատակով:
Առաջինը, որ կարողանանք հայկական հասարակության հետ հարաբերու-
թյուններ ունենալ... Բայց հայկական հասարակության հետ հարաբերու-
թյուններ ունենալու համար անպատճառ հարկավոր չէ հայերեն իմանալ: Վրաս-
տանի հայերը վրացերեն առավել լավ են խոսում, քան հայերեն. Հայաստա-
նի կողմերի (օրինակ Երևանի) հայերը ոչ թե միայն հայերեն են իմանում,
բայց ամենքը նմանապես և թուրքերեն են խոսում: Վերջապես Ռուսաստանի
հայերը ռուսերեն են իմանում:

Ժողովրդի ստորին դասերը առավել վրացերեն կամ թուրքերեն են խո-
սում, ժողովրդի վերին դասերը, այսինքն ուսում առածները, առավել ռուսե-
րեն են խոսում: Ինձ կասեն, թե նոքա այն պատճառով են խոսում ռուսերեն,
որ ուսում են առել ռուսերեն լեզվով: Հայտնի բան է, սա է պատճառը. ապա
ինչ լեզվով կկամենայիք, որ նոքա ուսում առնեն: Ռուսերեն լեզու մեզ միջոց
է տալիս գիմնազիոններ և համալսարաններ մտնել, իսկ հայերենն այդ միջոց
չէ տալիս, որովհետեւ հայկական օրինավոր ուսումնարան չկա: Ռուսերենը
մեզ հնար է տալիս ուսումնական գրքեր կարդալ, իսկ հայերենը... բայց սորա
մասին հետո կխոսեմ:

Ուրեմն իրողությունը նույնն է մնում, որ հայերի հետ հարաբերու-
թյուններ ունենալու համար հարկավոր չէ անշուշտ հայերեն իմանալ»:

II

Երկրորդ նպատակը, որ մարդս պիտի աչքի առչև ունենա մի որևիցե լե-
զու սովորելու ժամանակ, այն է, որ նա կարողանա հասարակության գրա-
կանության հետ ծանոթանալ: Իսկ գրականության հետ ծանոթանում ենք այն
նպատակով, որ նրանից ինչևիցե օգուտ քաղենք:

Ուրեմն մենք հայերեն ենք սովորում, որ կարողանանք հայկական գրա-
կանության հետ ծանոթանալ:

Հայկական գրականություն... Ի՞նչ հայկական գրականություն... Կա՞ ար-
դյոք հայկական գրականություն: Եվ եթե կա, ինչ օգուտ կարող ենք նորա-
նից քաղել:

¹ Ազ. Երիցյան, «Գրիգոր Արծրունի», էր. 75:

¹ Այս վերնագիրը հիշեցնում է ուսու նշանավոր քննադատ Բելինսկու առաջին մեծ հողվածը,
որ ետևիպես մեծ տպավորություն թողեց ընթերցող հասարակության վրա:

Նոր հայկական գրականությունը չկա: Գոնև ես չեմ կարծում, որ երկու կամ երեք գիրք, չորս կամ հինգ օրագիրներ կարելի էլիններ գրականության անվանել: Հին հայկական գրականություն կա, այդ ճշմարիտ է: Հին հայկական գրականությունը ոչ թե միայն հարուստ է, բայց և ուղղություն ունի:

Բայց ի՞նչ ուղղություն: Հարմար է նա արդյոք մեր այժմյան հարկավորություններին: Կարող ենք արդյոք մեր հին գրականությունից այնպիսի մտքեր քաղել, որոնք կարողանային մեր ազգի բարք ու վարքը նորոգել, և մեր կյանքին ու մեր խելքի ընդունակություններին մի նոր օգտավետ ուղղություն տալին:

Հարկավոր է վերջապես խոստովանել մեր պահանջմունքը. հարկավոր է ասել, թե ի՞նչ է հարկավոր մեզ մեր կյանքը նորոգելու համար:

Կյանքի մեջ երկու կողմ կա. նյութական և մտավորական կողմեր: Այդ երկու կողմերը հարկավոր է զարգացնել:

Նյութական կողմերից մեր ազգին հարկավոր են. երկրագործություն, վաճառականություն, արվեստ, վաճառաշահություն և ճանապարհներ:

Մեր բարոյական կյանքը զարգացնելու համար մեզ հարկավոր են. ուսումնարաններ (աղջիկների և տղաների), գրականություն, օրագիրներ, թատրոններ, հասարակական դասախոսություններ, արհեստ, խելացի և ուսումնական հոգևորականներ:

Մի խոսքով մեզ հարկավոր է հարստություն, նյութական և մտավորական հարստություն: Իսկ հասարակությունը չէ կարող հարստությանը հասնել առանց աշխատանքի: Եվ օրինավոր աշխատանք կազմելու համար հարկավոր է ուսում տարածել երկրի մեջ: Իսկ ուսում տարածելու և ուսում ընդունելու համար հարկավոր է կրկին աշխատանք:

Ուրեմն մեր բոլոր պահանջմունքն ի՞նչ է: «Աշխատանք»՝ մտավորական և նյութական:

Այժմ ես ձեզ հարցնում եմ. կարո՞ղ է արդյոք մեր հին գրականությունը մեր մտավոր և նյութական աշխատանքին օրինավոր ուղղություն տալ, արսինքն այնպիսի ուղղություն, որ մեր այժմյան պիտույքներին հարմար լինի: Չե՞ք իմանում...¹

...Մենք մեր հին գրականությունից կարող ենք ծանոթանալ հին հայերի կյանքի հետ: Մեր հին գրականությունը մեզ ցույց է տալիս հին հայերի հարաբերություններ ուրիշ ազգերի հետ, մեզ ցույց է տալիս, որ հին հայերը զորեղ էին, քաջ էին, որ նոցա բարոյական և հոգևորական զարգացումը մեծ աստիճանին էր հասել, որ կնամարդիկ քիչ թե շատ բացված էին, և վերջապես որ հայերը հին ժամանակներից սկսած երկրագործությամբ և վաճառականությամբ էին պարապում:

Այդ բոլորը նա մեզ ցույց է տալիս, բայց նա մեզ չէ ցույց տալիս, թե մենք մեր այժմյան կյանքին ի՞նչ ուղղություն պետք է տանք, որ մեր այժմյան պիտույքներ կատարենք, որ երկրի մեջ աշխատանք տարածենք:

Հին գրականությունը մեզ ցույց է տալիս, թե «մենք ինչ ենք եղել և ինչ ենք արել», բայց նա մեզ չէ ցույց տալիս, թե «մենք ինչ պետք է անենք»:

Մեր հին գրականությունը պատմագրական ուղղություն ունի և բոլոր սորանից այն ազգասիրությունը, որով ոգևորված էին մեր հին գրողները, կարան բանաստեղծական ուղղություն է տալիս:

¹ Այստեղ Արծրունին հին կյանքի և գրականության մասին վկայություններ է բերում Եղովի «Внутренний быт древней Армении» աշխատությունից:

Կարող է արդյո՞ք այդպիսի ուղղության գրականությունը օրինավոր ուղղություն տալ մեր այժմյան պիտույքներին:

Ուստացի, որ մեր այժմյան պահանջմունքը աշխատանք է, մտավոր և նյութական:

Ասենք, թե դուք մտադիր եք երկրագործությամբ կամ շերամապահությունը պարապելու, կամ մտադիր եք երկաթի հանքեր կառավարելու... Կարո՞ղ էր դուք արդյոք ձեր գործը օրինավոր կերպով առաջ տանել, եթե դուք եվրոպացիներ, արևմտյան գրականության և ուսման հետ ծանոթ չեք: Եթե դուք միայն հին հայկական գրականության հետ եք ծանոթ, կարո՞ղ եք դուք օրինավոր կերպով առաջ տանել ձեր գործը: Ոչ, չեք կարող, այնոր համար, որ հայկական գրականությունը չունի ռեալական, գործնական ուղղություն, այնպես չունի այնպիսի ուղղություն, որից մարդս կարողանար այնպիսի ուսում և տեղեկություններ քաղել, որոնք նրան հարկավոր լինեին իր ամենօրյա պահանջմունքը կատարելու և հարկավոր աշխատանք կատարելու:

Այր ես կամենում եմ երկրագործությամբ կամ շերամապահությամբ պարապել, ես չեմ դառնա դեպի այնպիսի գրականություն, որ պատմագրական և պոետիկական ուղղություն ունի: Կամ երբ ես տեսնում եմ իմ հասարակության տգիտությունը, տեսնում եմ, որ հայրենակիցներս վատ են դատարարվում յուրանց երեխաները, և ես մտադիր լինիմ օրինավոր մանկավարժական ուղղությամբ ուսումնարան հիմնել, ես չեմ դառնա դեպի այն գրականությունը, որը պատմագրական և պոետիկական ուղղություն ունի և որը մի օրինավոր մանկավարժական գիրք չունի...

Կարելի է այն գրքերի մեջ, որոնք վենետիկում, Վիեննայում կամ Կ. Պոլսում են հրատարակվում, կան «մարդկային ամեն գիտություններից առած աշխատանքներ», բայց սոքա միայն թարգմանություններ են և այնքան փոքր թվով են, որ բավական չեն կարող լինել մի ինչևիցե գործ կամ գիտություն ստեղծելու համար:

...Ուրեմն իրողությունը նույնն է մնում, որ մենք հայկական լեզու այն պատակով չենք սովորում, որ մեր գրականության հետ ծանոթանանք և նորակից օգուտ քաղենք... որովհետև գրականություն չկա:

III

Ուստացի, որ երրորդ նպատակը, որ մարդս պիտի աչքի առաջ ունեննի օրենից լեզու սովորելու ժամանակ, այն է, որ նա կարողանա հասարակությանը նորա լեզվի միջոցով յուր միտք հայտնել ինչևիցե հոգվածներ կամ քրեի գրելով:

Սա նմանապես ասացի, որ մենք գրականություն չունինք, որ մենք ոչինչ չենք գրում, իսկ այժմ ես հարցնում եմ ձեզ, ի՞նչ է պատճառը, որ մեր մեջ ոչինչ չէ գրվում:

Պատճառը, որ մեր մեջ ոչինչ չէ գրվում (կամ շատ սակավ է գրվում) այն է, որ մեր հասարակությունը հարկավորություն չէ զգում դեպի ընթերցանությունը:

Ե՞րբ եք տեսել, որ մի որևիցե բան կատարվի, պատրաստվի կամ ստեղծվի մի հասարակության մեջ, երբ այդ հասարակությունը այն բանի հարկավորությունը չէ հայտնում:

Օրինակ, Ֆրանսիայում, ամբողջ օր աշխատելուց հետո, մարդիկ հարկավորություն են զգում գիշերը միասին հավաքվելու, խոսելու, կոֆե կամ գինի

խմելով օրագիրներ կարդալու, կամ բիթրազի խորով մարմինը քիչ վարժելու և հասարակության այն հարկավորութեանը նայելով հիմնում են Զորանօխար ամեն քաղաքների մեջ պանդոկները մեծ թվով:

Մեր մեջ մարդիկ չեն զգում հարկավորութիւնը հավաքելու, օրագիրներ կարդալու կամ խոսելու, ուրեմն և այնպիսի հավաքելու տեղեր ևս չեն հիմնովում մեր մեջ:

Շվեյցարիայում գրքեր կարդալու հարկավորութիւն կա, ուրեմն և գրքի ամեն քաղաքում հասարակական գրատուններ կան, որտեղ ուրախութիւնով օտար մարդին անգամ ձրի ներս են բերում գրքեր կարդալու:

Մեր մեջ հասարակութիւնը հարկավոր չէ զգում գրքեր կամ օրագիրներ կարդալու, ուրեմն և ոչ թե միայն հասարակական գրատուններ չեն հիմնվում բայց և գրքեր անգամ չեն գրվում մեր լեզվով:

Եվ ինչի՞ց պիտի իմացվի, որ մի ինչեքոց բանը ձեզ հարկավոր է, ինչի՞ց պիտի իմացվի, օրինակ, որ ձեզ հարկավոր է հացը, շորերը և այլն:

Նորանից կարող եմ ես միայն եզրափակել, որ ձեզ այդ բաները հարկավոր են, երբ ես տեսնում եմ, որ դուք փող եք մխսում այդ բաներ գնելու համար:

Եթե հարուստ եք, ձեր հարստութիւն մեկ մաս եք տալիս նոցա գնելու համար, եթե հարուստ չեք, կաշխատեք և ձեր աշխատանքից ստացած փողով կգնեք ձեզ հարկավոր բաներ:

Մեր մեջ՝ հայերի մեջ հայկական օրագիրներ հրատարակողներ կամ գրքեր գրողներ չեն կարող այդ աշխատանքով ապրել, որովհետև այդպիսի աշխատանքը մեր հասարակութիւն մեջ չէ վարձատրվում, ուրեմն սորանից կորելի է եզրափակել, որ հասարակութիւնը հարկավորութիւն չէ զգում մտավոր աշխատանքի:

Կամ կկամենայիք, կարելի է, որ գրողը ձեզ համար ձրի աշխատե: Կկամենայիք ձրի ստանալ գրողի աշխատած գրքերը, կամ կկամենայիք, որ ձրի հրատարակվին օրագրներ... Բայց եթե գրողը ձրի պիտի աշխատե, նա, ապահովացրած շինելով, երկար ժամանակ չի կարող աշխատել, որովհետև յուր աշխատանքի համար վարձատրված չի նկատվում, քանի մի ժամանակից հետո կամ պիտի քաղցած մեռնե, կամ պիտի դադարեցնե յուր աշխատանքը և ուրիշ մի բանով պարսպե:

Մի՞թե կամենում եք նմանել այն հարուստ մարդին, որ ուսուցչին յուր տունը կանչելով, յուր որդուն դաս տալու համար, պարծենում է, թե բարեբարութիւն է անում ուսուցչին, որովհետև նորան պարագեցնում է, հոգ է տալիս նորան... Նա չէ կամենում համաձայնել, որ ուսուցիչը նորան նման պես մեծ բարեբարութիւն է անում, որովհետև լուսավորութիւն է տալիս երբայր տղետ երեխային: Բավական չէ, որ ուսուցիչը լուսավորում է տղետ երեխային, հարուստ մարդը կկամենար, որ նա այդ բանը ձրի աներ... Բայց ինչո՞ւ պիտի ապրե ուսուցիչը, եթե նա յուր աշխատանք ձեզ ձրի կառաջարկե: Ուրեմն ինչո՞ւ եք պարծենում, որ դուք նորա աշխատանքը վարձատրում եք:

Կային, իհարկե, մարդկային պատմութիւն մեջ այնպիսի մարդիկ, որոնք զոհել էին յուրանց կյանքը յուրանց ազգ լուսավորելու համար, որովհետև վարձատրված չի նկատվում, ձրի ուսուցանելով, քաղցած կամ սպանված էին մեռնում: Այն ազգերը, որոնք ունեցել են այդպիսի մարդիկներ, կարող էին, այն երևելի ազգեր լինել, բայց նոքա իրավունք չունին յուրանց «հասարակութիւն» անունը սեփականացնել: Ինչի՞: Այնոր համար, որ ազգը կարող է յուր «հասարակութիւն» կանչել միայն այն ժամանակ, երբ նա աշխատանքի է:

կառավարութիւն է զգում առհասարակ և գլխավորապես մտավոր աշխատանքի, որ ամեն ուրիշ աշխատանքների հիմն է և կառավարիչ: Եվ նորանից միայն կարող է մարդու եզրափակել, որ հասարակութիւնը հարկավոր են մտավոր աշխատողներ, երբ նա ապահովացնում է մտավոր աշխատողներին, այսինքն վարձատրում է հեղինակների աշխատանքներ: Իսկ երբ որ ազգը առանց վարձատրելու մտավոր աշխատողներին, սպասում է, որ դարի մեջ գան մեկ կամ երկու մարդիկ, որոնք ձրի նորան կուսուցանեն և հետո քաղցած մեռնեն... այդպիսի ազգը «ազգ» կարող է յուրան անվանել, բայց նա դեռ չէ հասել այն «ստիճանին», որ յուրան «հասարակութիւն» անվանե:

Բայց ինձ կասեն, թե ես սխալվում եմ, թե հայերը, եթե հարկավորութիւն չեն զգում հայ լեզվով գրած գրքերը կարդալու, դա չէ նշանակում, որ նոքա առհասարակ պահանջմունք չունին մտավոր աշխատանքին:

Ընդհակառակն, կան նոցա մեջ այդ պահանջմունքը, միայն թե նոքա հարկավորութիւն են զգում, որ այդ պահանջմունք ուրիշ միջոցով կատարվի, այսինքն, որ գրքեր և օրագիրներ ոչ թե հայ լեզվով գրվեն, այլ արևիցն օտար լեզվով: Սրովհետև նոցա լեզու հնացել է, նոցա համար անհասկանալի, կամ անհասկանալի է դարձել և նոցա հարկավոր է այժմ մի ուրիշ, օտար, լեզվի կենդանի, ավելի հասկանալի, աղելի մշակված լեզու...

Կարելի է, որ սա ուղիղ է, պատասխանում եմ ես, բայց այն ժամանակ կրկուսից մեկը պետք է ընտրեք:

Եթե հայերը մտավոր աշխատանքի պահանջմունք ունին, բայց կամենում են, որ այդ պահանջմունքը ուրիշ որևիցե օտար լեզվի միջոցով կատարվի և ոչ թե յուրանց «սեփական լեզվի» միջոցով, այն ժամանակ հայերը յուրանց «ազգ» չեն կարող անվանել:

Կամ եթե ամենևին հարկավոր չէ հայերի համար մտավոր աշխատանքը, այն ժամանակ նոքա «հասարակութիւն» չեն կարող յուրանց անվանել:

Ուրեմն երկուսից մեկը-

Կամ մենք «ազգ» չենք,

կամ «հասարակութիւն» չենք:

IV

«...Ուրեմն, եթե մենք այն նպատակով հայկական լեզու չենք սովորում, որ հարաբերութիւններ ունենանք, այն նպատակով ևս չենք սովորում, որ կարգանք, ոչ ևս այն նպատակով, որ գրենք, ուրեմն ինչի՞ ենք սովորում հայկական լեզու...»

Վո՞չ... Այդ է պակաս... Հայեր ենք ու հայերեն չսովորե՞նք...

— Ես ձեզ չեմ ասում, թե հայերեն մի սովորեք, բայց ես ձեզ հարցնում եմ ի՞նչ նպատակով եք սովորում հայկական լեզու, կամ ի՞նչ օգուտ եք քաղում այդ լեզու սովորելուց:

— Ի՞նչ է ասում... օգուտը ո՞րն է... հայ ես, պետք է հայերեն սովորես: Սա պատասխան չէ:

* * *

Եվ իրավ, դա պատասխան չէր: Այդպիսի մութ, անորոշ, օղակին պատասխանով չէր լուծվի այնքան կարևոր ու մեծ հարց, որպիսին է մայրենի լեզուն:

1 Այստեղ Արծրունին համառոտ կերպով նորից կրկնում է իր ասածները:

մի ազգի համար: Հայն իր լեզվի վրա ուշադրություն էր դարձնում ազգաօր
րաբար. մինչդեռ անհրաժեշտություն պիտի դարձներ իր համար օգտակար
թյան տեսակետից, պիտի նրան ընտրեր իբրև ամենազորեղ ղեկը իր նյութե
կան և մտավոր հարստության, իր հրջանկության համար: «Ես ձեզ չեմ տա
թե հայերեն մի սովորեք»: Արծրունին, այո՛, այդ չէր ասում: Չէր ասում
այն, թե եթե չկա հայկական գրականություն, դա նշանակում է, որ նա չպիտ
ի էլ լինի, թե ժողովրդի մեջ ընթերցանության պահանջ չկա, չպետք է էլ փորձ
ընթերցանությունը պահանջ դարձնել: Արծրունին ուզում էր միայն հաստ
տել իրողությունը, այն, որ գրականություն չկա: Եվ դուք տեսնում եք, թե որ
պիտի ուժեղ արամաբանությամբ էր նա այդ հաստատում: Հաստատելուց
տո նա դիմում էր հայերին և հարցնում էր. հրե դրությունն այսպես է, ին
եք ուզում անել:

Եվ հարցը այդպես չլուծված չէր թողնում Արծրունին: Ասելով, թե ու
պատասխան չէ, նա ամեն ինչ վերջացրած չէր համարում: Իր հաջորդ հար
վածը, «Իդեալիստներ» վերնագրով, նա սկսում էր այն խոսքերով, որոնք
վերջացրել էր «Գրականություն չկա» հոդվածը:

«Այո՛, սա պատասխան չէ, — գրում էր նա, — կամ ավելի լավ ասեմ, ու
պատասխան է, բայց սա «Իդեալիստներ» պատասխան է»:

Վաթսունական թվականների այն սերունդը, որ պահանջում էր գործ, գրու
կան գիտություն, աշխատանք հասարակաց բարիքի համար, «Իդեալիստ» փոք
ինչ հեզնական անունով էր մկրտում այն մարդկանց, որոնք գաղափարների
երկրպագելն էին համարում առաջադիմության ամենալավ միջոցը: Իդեալիս
տառն անալիստի հակապատկերն էր: Ռեալիստը պահանջում էր մարդու գործու
նությունից, տաղանդից, ընդունակությունից անմիջական, իրական օգու
մինչդեռ իդեալիստը հավատում էր, որ միայն հացով չէ մարդ ապրում: Ար
րունին, իբրև նոր սերունդի ներկայացուցիչ, այս հոդվածի մեջ շատ խիս
տաբանորեն գուրջ էր բերում անալիստի պատկերը, արհամարհանքով վեր
բերվելով դեպի իդեալիստները: Ծիշտ է, մեղանում չկար հարուստ գրակ
անություն, չկար մանավանդ գեղարվեստ, որի շուրջը հաճախ ընդհարվում էին
իդեալիստները և անալիստները, բայց և այնպես, մեղանում էլ շատ թեթև կե
պով գծագրված էր երկու սերունդների, հայրերի և որդիների գոյությունը:
Կային մեղանում շատ իդեալիստներ. դրանք հիսնական և վաթսունական թվ
ականների հասարակական հոսանքների ազդեցության տակ կրթվածներն էին:
Ահա երևան էր գալիս և անողոք անալիստը, որ գալիս էր օգուտ պահանջի
և ժխտելու այն, ինչ օգուտ չէ տալիս: Մեր գրականության մեջ ոչ ոք չէր ներ
կայացրել աշխատավորի, գործնական անալիստի պահանջները: Այդ ան
էր Արծրունին: Եվ որքան սիրուն կերպով. «Գիտե՞ք «Իդեալիստ» ինչ է նշ
նակում, — հարցնում է նա և պատմում.

Ես ծանոթ էի մի նկարչի հետ: Այդ նկարիչը շատ գեղեցիկ կերպով էր
նկարում սարեր, ձորեր, երկինք ու ջուրը:

Մի անգամ նորա պատկերների վերա նայելով, ես հարցրի նորան. «Ինչ
աշխարհիս երեսին ազնիվ ու գեղեցիկ բաները ամեն մարդի համար հավասար
կերպով հասանելի չեն: Օրինակ ձեր գեղեցիկ նկարչությունները, որոնք բն
թյան պատկերներ են ներկայացնում, հասկանալի են միայն քիչ թե շատ
ուսում առած մարդին, բայց ժողովրդի ամեն անգամին, մանավանդ հաս

տեղ մարդին, արվեստավորին՝ օրինակ, հասկանալի չեն: Ձեր պատկերներ,
և՛ կան, — այնպիսի մարդ, որ ավելորդ փող ունի: Ձեր պատկերը, երբ ոչ
պահանջում էր գարսած, ուր ժողովուրդը նորան տեսնելու էր գնում, ձեր պատ
կերը ո՞վ հասկացավ...
Շատ սակավ մարդիկ նորան հասկացան և այնպիսի մարդիկ, որոնք քիչ
թե շատ բացված էին:

Իսկ ժողովուրդը... նորան ի՞նչ, որ դուք գեղեցիկ կերպով սարեր ու ջուր
եր նկարում... Նա ուրիշ հարկավորություններ ունի, նա աղքատ է, նա հար
կավորություն է զգում յուր կյանքը լավացնելու, նա աշխատանքի է կարոտ,
նա անբարոյականության մեջ է, նա մարմնի ու հոգու պակասությունների ունի...
նորան ի՞նչ, որ դուք նկարում եք բնությունը:

«Ես նկարում եմ բնությունը, — պատասխանեց նկարիչը, — որովհետև
բնությունը գեղեցիկ է: Ամեն գեղեցիկ բանի տեսարանը գոյացնում է մար
դիս մեջ բարձր ու ազնիվ զգացմունք, գոյացնում է գեղեցկության ճաշակը և
ձարում է նորա սիրտը կոպիտությունից, կոպիտ զգացմունքից»:

— Շատ գեղեցիկ կերպով եք խոսում, պարոն նկարիչ, բայց մի՞թե դուք
կարծում եք, թե ժողովուրդը ժամանակ ունի (և այնքան զարգացած է), որ
կարողանա ձեր գեղեցիկ նկարչություններից այդ ուսմունք քաղել: Դուք կա
մենում եք նորան կոպիտությունից ազատել, նորա զգացմունքը մաքրել... բայց
ժողովրդի կյանքն ինքն կոպիտ է: Նորան կոպիտությունից ազատելու համար,
նորա կյանքը հարկավոր է փոխել: Իսկ ժողովրդի կյանքը փոխելու համար,
նորան հարկավոր են աշխատանք և ուսում: Նորան հարկավոր է աշխատել,
բայց ճարել, նորան հարկավոր է տգիտությունից ազատվել, մտածելու սովոր
ել, որ նա կարողանա առավել բարոյական լինել:

Ցուր աշխատանքն ես կառավարելու (համար?) ժողովրդին հարկավոր
է մտածելու սովորել... Ես ևս ինձ կատարյալ մարդ չեմ համարում, ես ևս ժո
ղովրդից եմ, ես ևս հարկավորություն եմ զգում մտածելու, որովհետև մտա
ծելն ինձ հնար է տալիս առավել արդար կերպով վարվել մարդիկների հետ,
երեմն մտածելուց ևս առավել բարոյական եմ դառնում: Ես հարկավորու
թյուն եմ զգում մտածելու և կարծում եմ, որ արհեստն անօգուտ չպետք է
մնա, այլ նա ևս պետք է օգնե ինձ մտածելու:

Նկարեցեք այնպիսի բաներ, որ սախպեն ժողովուրդը մտածելու, նկա
րիչի հասարակության կյանքից այնպիսի անցքեր, որոնք մեր վատ դաստիա
րակություն, մեր տգիտության, մեր նախապաշարմունքի հետևանք ու պտուղ
ներ են... Նկարեցեք մեր բարոյական ու մարմնական պակասությունները,
եկարեցեք այն մեր բարոյական պակասությունները, որոնք մեր հասարակու
թյան նախապաշարմունքի պտուղներ են, որոնց մենք տեսնում ենք, բայց
չգտնեց վերա մենք ուշադրություն չենք կամենում դարձնել, վախենալով հասա
րակության նախապաշարմունք վիրավորելու... Նկարեցեք հասարակության
կեղտը... Նկարեցեք...

— Ո՛չ, պարոն, ոչ... երբեք ես այդպիսի բան չեմ անի և երբեք այն նկա
րիչը, որ յուր անձն է պատվում, չպետք է այդպիսի բան անե... Արհեստն
անավանդների գործ է, նորան ո՞վ կհամարձակի ցածրացնել մինչև այն աս
տիճան, որ նորա միջոցով ներկայացնեն հասարակության պակասություններ,

Պետք է ի նկատի ունենալ, որ արհեստ և արվեստ բառերն այն ժամանակ գործ էին ան
ում բոլորովին հակառակ այն նշանակության, որ նրանք ունին այժմ: «Արվեստավոր» այստեղ
գործ է հասկանալ մեր այժմյան «արհեստավոր» մարդ և ընդհակառակն «արհեստ» հիմնիվա
կը պեղարվեստն է:

հասարակութեան կենդանի... Ո՛ր, ես այդ բարձր, աստվածային գործը կենդանի մեջ չեմ ման ածի... Արհեստը պէտք է արհեստի համար ապրե...*

Ընթերցող, հասկացա՞ք դուք ինչ որ ասաց նկարիչը: Եվ ճանաչեցի՞ք արդո՞ք, ինչ մարդ է իմ նկարիչս... Նա «հրեալիստներէց» է:

Իսկ ես իմ նկարչի խոսքերն ամենևին չեմ հասկանում, ճշմարիտ: Ես մի այն այն գիտեմ, որ ես «ժողովուրդ» եմ և կկամենայի, որ անօգուտ բան իրավունք չունենար աշխարհիս երեսին ապրելու: Ես կկամենայի, որ ամեն բան ինձ օգնէր լավանալու, ձգտելու դեպի բարոյականութիւնը, դեպի իմ կյանքի լավացնելը, դեպի առաջադիմութիւնը... Իսկ այնպիսի նկարչութիւնները, որտեղ ներկայացրած է (թեպետ և երևելի մտֆայելի ձևով) գեղեցիկ կնիք տկար մարմինը կամ բնութիւն տեսարանը, սարեր, ձորեր ու ջուրը, սորանից ես խոստովանում եմ ձեզ, սորանից ես առավել բարոյական չեմ դառնում:

Եվ մի շարք այսպիսի «հրեալիստներ»: Ահա մեկը գիրք է կարդում: Հարցնում եք նրան ինչպե՞ս է դուք գալիս գիրքը, նա պատասխանում է՝ «շատ բով է գրած»: Եվ ուրիշ ոչինչ, նա չի պարզի գրքի արժանավորութիւններն ու պակասութիւնները, որովհետև նա գրքից օգուտ քաղելու համար չէ ընթերցանութիւնը պարապում, այլ «կարդում է... կարգալու համար»:

Ահա մի գրող, դիցուք ֆրանսիացի գրող Լամարտինը: Գրել է նա ահագին քանակութեամբ գրքեր: Լեզուն շատ լավ է, կարդում եք մեծ ախորժակով: Բայց միտք շատ քիչ կա այդ գրվածքների մեջ: «Այնպիսի գրքեր մեղ չեն դրդում մտածել, բայց ընդհակառակն սպանում են մտածելու ընդունակութիւնը և ծուռ մտքեր հայտնելով, ոգեւորում են իրանց ձեռի շնորհիվ՝ մարդի զգացմունք ու ցնորք»: Դա, ուրեմն անօգտակար գրող է, դա գրում է գրելու համար:

Ահա մի մարդ, որ շատ սիրում է խոսել, բայց խոսել ոչ թե այն նպատակով, որ մի միտք հայտնե, այլ խոսել այն նպատակով, որ առիթ ունենա «իր սեփական ձայնը լսելու»: Խոսելու ժամանակ նա սիրահարւում է իր սեփական ձայնի վրա: Ուրեմն մի մարդ է դա, որ խոսում է խոսելու համար:

Ահա հարուստի որդին: Ամբողջ օրը ոչինչ չէ անում, իսկ զիջերը թատրոն է գնում: Ինչո՞ւ: «Հասարակութիւն տեսնելու, իր սեփական անձը ցույց տալու համար և բեմի վերա աղջիկներին... ստանք տեսնելու համար»: Նա, ուրեմն թատրոն է գնում ոչ թե օգուտ ստանալու համար, այլ թատրոն գնացած լինելու համար միայն: Մինչդեռ բեմի վրա հեղինակը արծարծում է որեւէ հարց որի մասին վիճելով, մենք կարող ենք մի հայտնի օգուտ ստանալ, մի հայտնի հայացք կազմել հասարակական այս կամ այն երևույթի մասին: Հարուստի որդին, որ թատրոնում գտնում է իրան ցույց տալու և ուրիշներին տեսնելու բավականութիւն միայն, նույնպէս «հրեալիստ» է:

«Առհասարակ,— ասում է Արծրունին,— երբ որ մարդը մի գործ անելով մի առանձին նպատակ կամ օգուտ աչքի առջև չունենալով, այն գործի «գործնականութիւն» մեջ յուր համար բոլոր բավականութիւն է գտնում, աչքպիսի մարդը «հրեալիստ» է»:

Այդպէս որոշելով «հրեալիստի» տիպը, Արծրունին դիմում է հայ ազգի և ասում է. «Մենք հայերս, ամենքս «հրեալիստներ» ենք:

Երբ որ ես ձեզ հարցնում եմ, ի՞նչ նպատակով եք սովորում հայկական լեզու կամ ի՞նչ օգուտ եք քաղում այդ լեզու սովորելուց: Դուք ինձ պատասխանում եք. «Օգուտը ո՞րն է... Հայ ես, պետք է հայերեն իմանաս»:

Մենք «հրեալիստներ» չե՞նք միթե, երբ որ սեփական լեզու այն նպատակով չենք սովորում, որ նորանից օգուտ քաղենք, որ նորա միջոցով մտքը

* Այստեղ «արհեստը» գործ է անված արվեստի իմաստով.— Խմբ.:

այտնենք, հարաբերութիւններ ունենանք, նորա միջոցով դարդացնենք մեր խելքը, գրքեր կարդալով, կամ հայտնենք մեր մտքերը, գրքեր գրելով:

Մենք «հրեալիստներ» չե՞նք միթե, եթե մենք մեր սեփական լեզու սովորելուց ոչինչ օգուտ չենք քաղում, բայց այնուամենայնիվ սովորում ենք երանք:

Մենք «հրեալիստներ» չե՞նք միթե, եթե մենք մեր լեզու միայն այն նպատակով ենք սովորում... որ սովորենք մեր լեզու: «Ո՛ր, մենք ազգասիրութիւն պատճառով ենք սովորում մեր լեզու»:

Հասկանո՞ւմ եք դուք արդո՞ք ինչ է ազգասիրութիւնը:

Ազգասիրութիւնը այնպիսի զգացումն է, որով մարդը պարտավորւում է «օգտավետ» լինել յուր հասարակութիւնը:

Ուրեմն, սա ամենևին ազգասիրութիւն չէ, երբ որ մարդը յուր ազգի լեզու իմանալով, ոչինչ «օգուտ» չէ քաղում այդ լեզվի ուսումից, ուրեմն յուր լեզու իմանալով, ոչինչ «օգուտ» չէ բերում, ուրեմն «օգտավետ» չէ լինում յուր հասարակութիւնը:

Ազգասիրութիւնից մարդը պարտավորւում է «օգտավետ» լինել յուր ազգին: Իսկ նա ազգասիրութիւն պատճառով է սովորում յուր ազգի լեզու: Բայց լեզու սովորելուց նա ոչինչ «օգուտ» չէ քաղում և չէ բերում յուր ազգին: Ուրեմն նորա ազգասիրութիւնը «անօգուտ», աննպատակ ազգասիրութիւն է:

Այն հայն, որ հայերի մեջ ապրելով, երկիր է փորում, թեև նա «ամենևին» հայերեն չէր իմացել, առավել մեծ ազգասեր է (այնոր համար, որ երկիրը փորելով նա «օգտավետ» է լինում յուր հասարակութիւնը), ասում եմ, առավել լիակատար ազգասեր է քան թե այն հայն, որ հայերեն իմանալով, ոչինչ օգուտ չէ քաղում յուր հայերեն դիտենալուց»:

Ահա ինչ գրականութիւն չկար հայերի մեջ: Գրքեր, իհարկե, կային, հեղինակներ, թարգմանիչներ եղել էին և կային: Բայց գրանք «հրեալիստներ» էին: Դաշիս է ռեալիստ մարդը և ասում է գրականութիւն չկա: Նրան չեն հասկանում. չեն հասկանում, որ ռեալիստի համար այդ գրքերը, որքան էլ գեղեցիկ լինեն, ոչինչ են, քանի որ օգուտ չեն բերում ժողովրդին, ոչինչ են, ինչպէս կարչի այն հիանալի պատկերը, որ ներկայացնում է բնութիւնը, բայց որից ոչինչ օգուտ քաղել չէ կարող ժողովուրդը:

Օգուտ, միայն օգուտ: Ինչի՞ս է ձեր մաքուր արվեստը, ինչի՞ս են ձեր ազգասիրական ճառերը, երբ ժողովուրդը տգետ է, անբարոյական հասկացողութիւնների մեջ ընկած, երբ նա հաց պիտի ճարն իր համար, բայց միջոցներ չգիտե: Ես ժողովուրդ եմ, բացականչում է մեր ռեալիստը ինքնավստահութեամբ, պահանջողի խոստովամբ. ես ժողովուրդ եմ, կյանքն ինձ ճնշում է, տապալում է: Ինձ հարկավոր է օգուտ քաղել գիտութիւնից, քաղաքակրթութիւնից և ինձ համար այն ամենը, ինչ իմ անմիջական, իրական օգուտից յուր է, գոյութիւն իրավունք չպիտի ունենա. ես ժողովուրդ եմ, իսկ դուք ինչ եք տալիս ինձ. ազգասիրական ճառե՞ր, խրատնե՞ր, վարդի ու սոխակի պատմութիւն...»

Ժողովուրդը, նրա կյանքը, նրա օգուտը, հողը, արդյունաբերութիւնը և գիտութիւնը, գրական գիտութիւնը՝ ահա ինչ դրոշակով է հրապարակ գալիս լեզունում այդ նոր մարդը: Եվ նրա խոսքն արտասանված է ժամանակին. դա մի խիստ բողոք էր մեր ուղղագրութիւնի դեմ. դա գալիս էր կանգնեցնելու մեր անթոք ընթացքը, հեղաշրջելու մեր հասկացողութիւնները գործի և պարտականութիւն մասին: Արծրունին ոչ միայն հայտնում էր մտքեր, այլև պատասխան էր պաշտպանել նրանց: Բայց նրան չէին հակաճառում, նրա դեմ բա-

նակով չէին սկսում, թեև նա ինքն էր բանակովի հրամարտը և ուր հրավերը մենք տեսնում ենք ուղղած նույն ժամ «Հայկական աշխարհը»:

«Բռնալիստներ» հողվածն էլ Ստեփաննն ապագրեց Վերսալի և համարում էր, որ պատասխանատվությունը հեղինակի վրա թողնելով, այսինքն հայտարարելով, թե համաձայն չէ հեղինակի հետ: Խմբագրական կարճ նկատողություններից դենը Ստեփանն չէր գնում. նա երբեք չհայտնեց, թե ինքն ի՞նչ կարծիքներ ունի, թե ինչո՞ւ համաձայն չէ իր աշխատակցի մտքերին: Արծրունին ինչպես տեսանք, ուզում էր, որ «Հայկական աշխարհը» դուրս գա այդ սնուցողիբից, գոնե ասե, թե ինչո՞ւ է գովում, իմաստուն անվանում նրա հողվածները: Պատասխան չեղավ: «Գրականություն չկա» հողվածին կցած խմբագրական նկատողությունը առիթ դարձավ, որ Արծրունին մի անգամ էլ հրավեր ուղղե Ստեփաննին: «Հայկական աշխարհը» 1869 թ. № 1—2-ի մեջ տպված «Նամակ խմբագրությանը» այդպիսի հրավեր է պարունակում: Այստեղ Արծրունին նորից ապացուցանում է, որ ճիշտ է իր ասածը, թե հասարակությունը կարողալու պահանջ չունի: Եվ ապացույցը հենց ինքը «Հայկական աշխարհը» էր: Խմբագրությունը իր հայտարարության մեջ ասել էր, թե այն ժամանակ նա կկարողանա ընդարձակել իր գործունեությունը, երբ բաժանորդների թիվը կավելանա:

«Ի՞նչ է նշանակում ստորագրողների թվի մեծանալը,— հարցնում էր Արծրունին:— նշանակում է, թե ժողովրդի մեջ ավելի ու ավելի է հայտնվում կարգալու և մտածելու պահանջմունք»:

Ու դիմելով քաղաքական տնտեսության, նա արծարծում է փոխանակության օրենքը, որ միևնույն բանն է հաստատում: Բայց ինչո՞ւ է Արծրունին հրապարակ հանում մի այդպիսի իրողություն: Որովհետև նա հետազոտող իսկ հետազոտողի պարտքն է մերկացնել իրողությունները ամենայն հնարով: Ասելով, թե ժողովուրդը կարողալու պահանջ չունի, նա ամենին մեղադրել մեղադրել ժողովուրդը, հետևաբար և եզրակացնել, թե իզուր է ասել խատել այդ ժողովրդի համար: Մի մասնազևու ուսումնասիրում է մի լեռնային սառցակույտի դիրքը, հաշվում իմանում է, որ սառցակույտը այսինչ ժամանակ պիտի վայր ընկնե և վնաս հասցնե սարի ստորոտում ապրող մարդկանց: «Մի՞թե դուք կասեք, թե այդ իրողությունը հաստատելով, ուսումնասիրողը մեղադրում է բնությունը»,— հարցնում է Արծրունին:

Մենք, իհարկե, այդպիսի բան չենք ասի: Հաստատել իրողությունները նշանակում է որոշել հիվանդության հատկությունները, գտնել հիվանդությունը, նրա դիագնոզը դնել: Հաստատելով իրողությունը, Արծրունին կանգ չէր առնում: Ո՛չ, հաստատելը բավական չէ: Հիվանդը իմանում է, թե ինչ ցավ ունի: Հետո նա, բնականաբար, հարցնում է՝ ի՞նչ է հարկավոր անել: Արծրունին պատասխանում է. «Նամակիս վերջում կասեմ, թե մեզ, հայերիս, հարկավոր է այժմ (և կարելի է ունենալ) միայն երկու ուղղության գրվածքներ: Երկուսն էլ մեզ օգտավետ կարողանային լինել, օգնելով աշխատանքի տարածմանը. նախ այնպիսի ուղղության գրականությունը, որ նոր ժողովրդին առարկա կեր գիտության փաստեր, երկրորդ, որ քննեք հասարակական կյանքի երկվայթները»:

Բայց ահա դեռ ուրիշ ինչ կա իմանալու. «Մա չէ նշանակում, որ այդ երկու ուղղություններին հետևելով բոլոր գրողները միևնույն աչքով պետք է նայեն»:

¹ Պետք է նկատենք, որ «Հայկական աշխարհում» շատ ուրիշ հողվածներ ու նամակներ էին տպվում գրողների պատասխանատվությանը:

ին երևույթների վերա. ամենևին ոչ, այս երկու ուղղություններին ևս հետևելով գրողներից ամեն մեկը կարող է յուր սեփական հայացքով նայել գործի վրա: Բազմակողմանի կերպով քննված երևույթն առավել հասկանալի է հասարակությանը: Զանազան ուղղություններին հետևող գրողներն անշուշտ հարկավոր են գրականության մեջ»:

Մտքերի ազատ փոխանակություն էր ուզում Արծրունին, կարծիքների փոխհարաբերությունը նա շատ ցանկալի էր համարում: Սա շատ բնորոշ է այն մարտի համար, որին շնորհված էր անսպառ եռանդով մտքեր հուզել մեզանում, այդպիսի բանակախմբեր բաց անել, գաղափարական պայքար բորբոքել: Թո՛ղ գրողները նույնպես հայտնեն իրանց կարծիքները: Իսկ մինչև այդ Արծրունին իր սեփական համոզմունքն էր դնում մտածող հայերի առաջ, ուղղելով նրանց «Երկուսը ըմբոստ ու կծու տողները. «Իսկ այնպիսի գրվածքները, որտեղ բարոյականություն, կարգ և ազգասիրություն է քարոզվում... այնպիսի գրվածքները թող գրողը տանե... Բավական են մեզ քարոզողները, մանավանդ ազգասիրության... Հերթ է այս խափանացած (?), հնացած, մաշված ուղղությունը... Մեզ հարկավոր է այժմ աշխատանք, իսկ աշխատանքին կարող է օգնել գրականությունը, միայն այդ երկու ճանապարհներ ընտրելով՝ գիտություն և անուրջյուն»:

Այս տողերը ուղեւ ոչինչ անորոշություն չեն թողնում Արծրունու հրապարակախոսական դեմքը ամբողջովին գծագրելու համար: Ամեն ինչ պարզված և առաջին քայլերը շափազանց խոշոր, ուղղագնաց, անհողողող են: Բայց ինչ կհամենայինք այստեղ մի հիմնական հարց էլ շոշափել: Որքա՞ն ինքնաբերականություն կար Արծրունու մեջ, որքա՞ն սեփական աշխատանք ուներ նա իր աշխարհայեցողությունները մշակելու, յուրացնելու մեջ: Այս հարցը մեզ անհամար է մի հետաքրքրական համեմատության:

Մենք մի քանի անգամ առիթ ունեցանք հիշատակելու մի ռուս գրողի անուն, որի ազդեցությունն այնքան նկատելի էր Արծրունու վրա: Դա Պիսարևն է: Մենք ի՞նչ կապ կա այդ երկուսի մեջ, ի՞նչ էր Արծրունին Պիսարևի վերաբերությամբ՝ արդյոք հետևող թե կրկնող, թարգմանիչ...:

Կարդալով Արծրունու ուսանողական ժամանակների մի քանի գրվածքները (որ. «Բռնալիստներ», կանանց կրթության մասին), մենք իսկույն հիշում ենք Պիսարևին: Անկարելի է չհիշել, որովհետև այդ երկու գրողների մեջ նմանությունը այնքան մեծ է, որ ակամա այսպիսի հարց է ծագում. արդյոք Արծրունին, այդ հողվածները գրելիս, իր սեղանի վրա բացած չունե՞ր Պիսարևի գրվածքները, արդյոք հաճախ չէ՞ր նայում այդ բաց էջերին:

Վաթսունական թվականների նոր սերունդին նվիրված մեր տողերում մենք հիշում ենք Պիսարևի մասին: Երբ Արծրունին մտավ համալսարան, Պիսարևը արդեն անուն վաստակած գրող էր և նրան հափշտակությամբ կարդում էր ամբողջ երիտասարդ Ռուսաստանը: Դեռ 1864-ին նա գրել էր իր «Ռեալիստներ» գրքատվությունը, մի հրապարակախոսական գոհար, որի մեջ նոր սերունդը անգիտ էր բերված իր գաղափարներով, հասկացողություններով, պահանջներով: Մենք արդեն գիտենք, թե ինչ էր այդ նոր սերունդի, այդ ռեալիստների գրքատվությունը: Անձի կատարյալ ազատություն, բնական գիտություն, աշխատանք, իրական օգուտ, դարգացած միտք, մտածող աեալիստ՝ այս բոլոր հասկացողությունները, նոր ժամանակի այս գաղափարները Պիսարևը արծարծել, բացատրել ու վեր է հանել շատ փայլուն կերպով: Դիմենք մի քանի մանրամասնություններին:

Պիսարևը անհաշտ թշնամի էր այն ուղղութիւն, որ կողմնակից էր «արմատական» արվեստի համար»։ Նա պահանջում էր, որ բանաստեղծը լինի յը ժամանակակից արվեստի մարդ, ոչ թե երգի լուսին, ստիակ ու վարդ, այլ մտածելու հրատարակչական ընթացքով, ոչ թե սեփական փորձիկ զգացմունքները, «եւ»-ը հանդիմանաբար, այլ հասարակական հարցերին արձագանք տալու Գրողից նա պահանջում էր օգուտ։ Ով որ օգուտ չէ բերում իր գրվածքներով, նա թերուստ անհասկացող է, տափակութիւն է։ Ահա, օրինակ, ինչ է ասում նա բանաստեղծների մասին. «Իմ կարծիքով, ճշմարիտ բանաստեղծը, որի վերջնական իրան տալիս է խիստ ու պարզ հաշիվ այն մասին, թե դեպի ինչ ընդհանուր նպատակ կլինի ուղղված նրա նոր ստեղծագործութիւնը, ինչ ազատագրութիւն պիտի թողնէ այն ստեղծագործութիւնն ընթացողների մտքի վրա, ինչ ստեղծարարութիւն ցույց կտա փայլուն պատկերներով, ինչ վնասակար մտորութիւն արմատախիլ կաննէ։ Բանաստեղծը կամ մտքի մեծ մարտնչող է, անվաճ և անբիծ «ասպետ ոգու», ինչպես ասում է Հենրիխ Հայնեն կամ թե մի շնորհ պարադիտ, որ զվարճացնում է մյուս շնչին պարագիտներին մանր-մունր մեծ նածութիւններով։ Միջին տեղ չկա։ Բանաստեղծը կամ տիտան է, որ ցնոր է դարավոր շարժի սարերը, կամ թե մի բողոք, որ փորձաքրում է ծաղկի փշին»։

Նախապաշարմունքները զգլիկի էին Պիսարևի համար. դարգացած մտքով, ինչպես Գրիգոր Արծրունին էր ասում, բացված մարդ է հարկավոր նա սարակութիւն կազմելու համար։ Նախապաշարմունքների, սրբացրած սովորութիւնների դեմ Պիսարևը սաստիկ կոչում էր, մանավանդ կանանց հարցի վերաբերյալ։

Կանանց դատարկ ու անմիտ դաստիարակութիւնը միտք ու հոգի սպանող մի բան է։ Աղջկան ասում են, թե նա կրթված, լուսավորված կին պիտի դառնա։ Բայց ի՞նչ են սովորեցնում նրան։ Փոքր ինչ աշխարհագրութիւն, մի քիչ քերականութիւն, հետո պատմութիւնից այսինչ թվականը և անուշահոտ հետո պար։ Ամեն ինչ վայրիվերո, կցկտուր, անկապ։ Ուղեղը ճնշված է, անմանափակ և ամեն միշտ ձեռք է առնվում, որ նա չզարգանա։ Հարստութիւնը, գեղեցիկ շորերը, հասարակութիւնն դուր գալը կյանքի նպատակներ են։ Գրանց համեմատ էլ կինն ստանում է այն, ինչ անհրաժեշտ է։ Կյանքն անուշահոտ է դատարկ իրարանցման մեջ։ Կնոջը միշտ ճնշում են խոհանոցի, կրթությանի և մոդային խանութի մանր-մունր, գրողանոց հոգսերը։

Ռեալիստը պահանջում է ազատել կնոջը այդ սպանող պայմաններից։ Բայց դրա հակառակորդը, որ գեղագետն է (էսթետիկ), բողոքում է, ասելով թե Պիսարևի նման ռեալիստները քանդում են ընտանիքի հիմքերը, բարոյական են անբարոյականութիւն։ Ո՛չ, այդպես չէ, ասում է ռեալիստը։ Ես սպանում եմ, մտածող ռեալիստ և ես պիտի ունենամ ընկեր և բարեկամ կին։ Երկու լծակիցներ, աշխատակիցներ ենք հասարակութիւն մեջ և տանը. մենք գործում ենք միասին, փոխադարձաբար իրար օգնում ենք, մեկի գիտութիւնը փորձը լրացնում է այն պակասը, որ ունի մյուսը։ Վերջապես մենք միասին դաստիարակում ենք մեր երեխաներին և այս պարտավորութիւնը միմեծ մոտեցնում է մեզ, շողկապում է մեր հոգեկան շահերը, մեր գոյութիւնը։ Այսպես մենք միմյանց շատ հարկավոր, շատ անհրաժեշտ բարեկամներ ենք։ Երկու կերներ ենք։ Իմ այսպիսի ընտանիքը կարո՞ղ է քանդվել, կարո՞ղ է տեղափոխական հասկացողութիւններ մտցնել իր մեջ։ Ես և կինս միշտ կախում ենք իրար, երբեք չենք հողմի միասին ապրելուց, միասին աշխատելուց։ Իսկ երբ գեղագետներ, ուսմանտիկներ, որ ընտանեկան բարոյականութիւն պայտառ ենք հանդիսանում, դո՞ւք ինչ հասկացողութիւն ունիք կնոջ մասին։ Նա էլ

ամար վայելչութիւն է, խաղալիք է։ Ահա հենց այդպիսի հասկացողութիւնն էր հիմնված ընտանիքն է խախտւում ու փխրում, որովհետև վայելչութիւնն զգացմունքը շուտ է ձանձրանում մեկի հետ մնալուց, իսկ խաղալիքը, հենց որ կորցնում է իր փայլը աղբանոց գցելու իր է դառնում։

Տեսնո՞ւմ եք որքան նմանութիւններ կան Պիսարևի և Արծրունու մեջ։ Եթե էլ առաջ գնանք, էլ շատ բան կտեսնենք։ Կտեսնենք բառերի, դարձվածքների նմանութիւնն էլ։ Պիսարևը, օրինակ, գրում է. «Մեր հայրենակիցների ընթացասիրութիւնը նպատակ չունի. ողու մարդը ոչինչ չէ որոնում գրքի մեջ, որ մի բանի մասին հարց չէ տալիս, ոչ մի բանի չէ ուղում հասնել»։ Ծիշտ այս միևնույն վկայութիւնը չէ՞, որ տալիս է Արծրունին հայ ընթացողի մասին։ Պիսարևը, խոսելով կանանց կրթութիւնի մասին, դարմանում է, թե ինչո՞ւ էրկան դպրոցում առաջնակարգ տեղ չպիտի բուն բնական գիտութիւնը, ինչո՞ւ ամոթալի, անպարկեշտ բան պիտի համարվի ծանոթացնել աղջկան մարդակազմութիւն և բնախոսութիւն հետ այնպես, ինչպես ծանոթանում են պարսկադիրիկ. ի՞նչ պատճառով պիտի ամոթ լինի, որ կինն իմանա, թե ինչպես է կատարվում մարտողութիւնը։ Հիշո՞ւմ եք, Արծրունին էլ իր առաջին հոգածում ասում էր. «Ինչո՞ւ է ամոթ աղջկա ձեռքը տալ անատոմիա կամ ֆիզիոլոգիա, ինչո՞ւ եք կարծում, որ աղջկերքը պետք է տգետ մնան»...։

Կանգնած այս երևույթի առաջ, մենք մեզ հարց ենք տալիս. ի՞նչ է սա ցույց տալիս։ Ցույց չէ՞ տալիս արդոք, թե Արծրունին արտագրում էր Պիսարևի մտքերը և իբրև սեփական մտքեր մատուցանում էր հայ հասարակութիւն։

Ո՛չ, ընթացող։ Այսպիսի վճիռ կայացնել չէ կարելի։

Մենք կարող ենք ասել, թե Արծրունին կրթվել ու դաստիարակվել է այն ժողովարների ու սկզբունքների վրա, որոնց արտահայտողը եղել է Պիսարևն իբրև այն ժամանակվա երիտասարդութիւնն անկախացուցիչ։ Մենք կարող ենք ասել, որ Արծրունին, իր ժամանակակիցների պես, հափշտակութիւնը կարող էր Պիսարևի գրվածքները, եղել է նրանց ազդեցութիւնն տակ։ Կարող ենք այն էլ ասել, որ այդ ազդեցութիւնը մեծ դեր է կատարել նրա կյանքի ընթացում, երբ նա գաղափարներ և սկզբունքներ էր յուրացնում։ Այս բոլորը շատ ճիշտ կլինի։ Բայց այս բոլորը դեռ չէ նշանակում, թե Արծրունին Պիսարևի ընդօրինակողն էր. նա բոլորովին անկախ, ինքնուրույն մտածող էր։

Ոչինչ տպավորութիւն չէր թողնի Արծրունին, եթե Պիսարևի թարգմանիչը հանդիսանար մեղանում, եթե շունենար իր սեփական դատողութիւնը, փրկութիւնը, պաշարը։ Ինչպես տեսանք և դեռ կտեսնենք, նա խոր տպավորութիւն էր թողնում իր գրվածքներով և այդ՝ գլխավորապես մեր համալսարանական երիտասարդութիւնն վրա, որ, իհարկե, շատ լալ ծառայ էր և Պիսարևի հետ, ուրեմն և կարող էր հեշտ նկատել, թե Արծրունին ուրիշի մըտքերն է կրկնում, առանց սեփականն ունենալու։

Ով մի՞թե հնարավոր է դառնալ մի օտարազգի հրապարակախոսի պատմելու Ո՛չ, դա անհնարին է, որովհետև չէ կարող լինել այնպիսի հրապարակախոսութիւն, որ կապված չլինի այն ազգի կյանքի հետ, ուր նա գործում է, որ լիերակրվի այն իրականութիւնից, որին նա նվիրվել է ուղում։ Բավական չէ, որ մենք միմյանց կողքի դնենք ողու Պիսարևին և հայ Արծրունուն։ Մենք պետք է երկու ժողովուրդներին էլ դնենք իրար մոտ։

Ով ի՞նչ համեմատութիւն կարող է լինել ողու և հայ կյանքի մեջ։ Ռուսների ունեին մեծ գրականութիւն՝ փառալուրծ անունների մի երկար շարքով։ Ունեին համալսարաններ, բարեկարգ դպրոցների մեծ թիվ, հարուստ

մամուլ, աչքի ընկնող գրողների բազմություն, հասարակական և կուլտուրական հարցեր, բանական, ուղղություններ: Իսկ մե՞նք, ի՞նչ ունենինք մենք: Մենք ղեկ սխուլաստիկներ էինք, տիրացու ազգասերներ և մեր անցյալում միայն մի «Հյուսիսստիալ» ունեինք, այն էլ մեր անտարբերության, մեր թշնամության զոհված, կես-կուշա կես-քաղցած «Հյուսիսստիալ»: Գրականություն չունեինք, մեզանում 100—200 բաժանորդով էր լրագիր կամ ամսագիր ապրում:

Այսքան տարբեր հասարակությունների մեջ հրատարակախոսությունը չէր կարող միևնույն նպատակներն ունենալ, միևնույն ճանապարհներն ընտրել: Պիսարևը խիստ քննության էր ենթարկում ուսուցչ համալսարանական կրթությունը: Արծրունին չէր կարող նույնն անել, քանի որ մի ուսուցչ համար մեծ պակասություններ ունեցող համալսարանը հայի համար շատ լավ էր: Եվ Արծրունին, պահանջելով, որ նոր սերունդը ազատված լինի ասիական բռնակալ ընտանիքի սպանող ազդեցությունից, չէր ուզում, որ համալսարան հիմնվի մեր երկրում, որպեսզի երիտասարդությունը դիմն օտար երկրներ, Ռուսաստան և արտասահման, բացվելու, դարգանալու համար: Արծրունին տեսնում էր, որ հայը կարող է մեծ դահլիճ վարձել, պահարաններ առնել, բայց չէ կարող դրանցից ժողովրդական գրողարան կազմել, քանի որ չկա ամենազլխավորը՝ գիրքը: Պիսարևին այսպիսի դժբախտ իրողություն չէր կարող տանջել: Գրականություն չկա՝ հողվածն Արծրունին կարող էր գրել և ոչ թե Պիսարևը, որովհետև միայն հայ հրատարակախոսի առջև էր արձանացած այն հրեշավոր երևույթը, որ մայրենի լեզուն սովորվում է, գործ է անում իբրև ազգասիրության նշան, որ ոչ ոք հարկավոր չէ համարում այդ լեզուն գործ անել, թե սեփական օգտի և թե հասարակաց օգտի համար:

Եվ այսպես մի շարք առանձնահատկություններ: Մեզանում ամեն ինչ ղեկ պետք էր սկսել այրուբներից, տարրականից: Պիսարևը, անշուշտ, կծիծաղեր, եթե նրան առաջարկեին գրել մի այնպիսի հողված, որի մեջ պետք լիներ ապացուցանել, թե երբ 500 հազարից բաղկացած մի ժողովուրդ այնքան բաժանորդ չէ տալիս իր միակ ամսագրին, որ նա կարողանա մի քիչ շունչ քայել ընդարձակվել, դա նշանակում է, որ այդ ազգը կարգալու պահանջ չունի: Ինչո՞ւ կծիծաղեր Պիսարևը: Որովհետև այդ բանը շահազանց տարրական հասկացողություն կհամարեր իր ժողովրդի համար, շահազանց անտեղի ժամովաճառություն: Իսկ մեզանում դա շատ հարկավոր էր. մեզանում այդ իրողությունը հաստատելու համար պետք էր դիմել քաղաքական տնտեսության էլ, բերել այնտեղից օրինակներ՝ փոխանակության էությունը հասկացնելու համար: Եվ մեզ համար դա շատ հետաքրքրական, շատ շահագրգռող նորություն էր: Մեր դրողն ընթերցող չէր գտնում: Եվ եթե նա այդ բանի վրա սկսեր դատողություններ անել, հասկանալի՞ կլիներ դա Պիսարևի համար, այն Պիսարևի վի, որ տեսնում էր իր առջև ոչ միայն սոսկ ընթերցողներ, այլև ջերմ երկրպագուներ, որոնք ոչ միայն կարգում են, այլև համաշտակվում են, միասնաձուլվում են գրողի հետ, ստեղծում են նրա համար հեղինակություն, տիրապետություն...

Ո՞չ, մենք ջոկ էինք և ջոկ պիտի լինեք մեր հրատարակախոսը: Մենք մի առանձին խավարն ունեինք, մեր առանձին ցավերն ու պակասությունները մտքի արտահայտությունն էլ մեզանում պիտի հարմարվեր մեր գործերի թվացրին, նրանց հետ քայլեր:

Այսպես, ուրեմն, ընդհանուր սկզբունքների, ղեկավարող հիմնական գաղափարների շրջանում է Արծրունին այնքան մտածնում Պիսարևին, որ մեզ թվում է, թե նրա մտքերն է կրկնում: Եվ մենակ Պիսարևի՞ն: Կարելի չէ տեսնել

թե Պիսարևը ստեղծեց ժամանակը, այլ պետք է ասել, թե ժամանակը ստեղծեց Պիսարևին: Տաղանդավոր ուսուցիչ երիտասարդը ժողովրդականացնում էր արևելաբան գիտությունը, խոսում էր իր ժամանակի առաջավոր մարդկանց խոսքով: Ահա նա փառաբանում է աշխատանքը. բայց մի՞թե դա նրա սեփական արտոն է, միևնույնը, և ավելի սիրուն ու ուժեղ կերպով անում է ֆրանսիացի երանդ Արուն, և Արծրունին սրան էլ է դիմում: Կանանց կրթության նվիրված զբաղմունք մեզ զարմացնում է Արծրունու նմանությունը Պիսարևին: Բայց մի թե ուշադրությամբ նայեցեք, և դուք կտեսնեք, որ այդտեղ Արծրունին իր տեսությունները հիմնում է Կարլ Ֆոխտի, Բոկլի և ուրիշ հեղինակությունների վրա, այսինքն այն ազդեցությունների վրա, որոնց դիմում էր և Պիսարևը: Նշանաբար է, որ միայն մի տեղ է Արծրունին վկայություն բերում Պիսարևից («Երեսուցի ո՞րն է լավը»), այն էլ նրան հերքելու համար: Ինչպես գիտենք, Պիսարևը պահանջում էր ղեկ գցել Պոլ դը Կակի և Դյուամաների վեպերը իբրև անբարոյականացնող գրքեր: Իսկ Արծրունին ասում էր. «Ո՞չ, չպետք է գեն գցել, արգելել. թույլ տվեք ազատ կարգալ՝ կյանքի բացասական կողմերի հետ ծանոթանալու համար. անբարոյականությունը հեղինակները չեն ստեղծում, այլ կանգնում են: Իսկ մենք պարտավոր ենք ճանաչել կյանքը»:

Այստեղ մենք տեսնում ենք հայացքների հիմնական տարբերություն, գեղարվեստի վերաբերմամբ: Մինչդեռ Պիսարևը շահազանց բացասաբար էր վերաբերվում վիպագրության և հայտնի երգիծարան Շչեդրինի մասին ասում էր, թե նա ավելի օգուտ կտար իր ժողովրդին, եթե թողներ երգիծարանությունը և ժողովրդականացնող գիտությունները, Արծրունին ընդունում էր, որ գեղարվեստը, ընդհակառակն, շատ հարկավոր է, քանի որ նա օգուտ է բերում, մի կողմից ցույց տալով հասարակության այն, ինչ չկա, բայց ինչին պետք է դրան հասնել, մյուս կողմից նկարագրում է այն, ինչ կա, բայց չպիտի լինի կրկն անբարոյականություն, իբրև ապականություն:

Այսպես ուրեմն, կատարյալ ինքնուրույնությունը Արծրունու մեջ անուրապացի է, թեև նրա մի քանի հողվածների մեջ, կրկնում ենք, մի քանիսի մեջ խոսք, երևում է Պիսարևի ազդեցությունը: Քանի որ Արծրունին ուսանող էր Ռուսաստանում, այդ ազդեցությունը և՛ հասկանալի էր, և՛ բնական, ինչպես թե, որ Պիսարևն էլ Չեռնիշևսկու և Դոբրոլյուբովի ազդեցության տակ էր զարգացել: Բայց Եվրոպա անցնելուց հետո, նրան կրթողը այլևս միայն ուսուցչականությունը չէր, այլ եվրոպական միտքն ու գրականությունը: Տիրապետելով եվրոպական լեզուներին (ֆրանսերեն և գերմաներեն), լինելով զարգացած աշխատասեր, արագ ըմբռնող, նա ձեռք է բերում բազմակողմանի զգացում, մկտրվում է եվրոպականության ավազանի մեջ:

Մյուս պատճեն չէր նա, ինքնուրույնությունից, անկախությունից զուրկ մի անհատ. օտար հողի բույս չէր նա: Ծնված մեր իրականությունից, նա հասարակության մտավոր ծաղկանոցից հյութեր հավաքեց և եկավ մեզ մոտ, և մեր կյանքի մեջ իբրև անձնվեր մշակ: Ի՞նչ կզանար նա, եթե, դիմադրելով, ուսուցչականության նման մի միջավայրում աշխատելու լիներ, չգիտեք: Գիտեմք այն, որ նա հայկական ցավերի ու կարիքների համար էր պատրաստված: Նա տեսնում էր ոչ միայն Պիսարևին, այլև սրանից անհամեմատ ավելի բարձր մտավոր գործիչներին և որքան շատ էր տեսնում այդպիսիներին, որքան գերմանական հռչակավոր պրոֆեսորների դասախոսությունները զարմացնում էին հորիզոնները նրա մտքի առաջ, այնքան ավելի խիստ էր նա զարմացնում իր հայրենի երկրի, իր ազգի ամբողջ դժբախտությունը: Նրա աչքից հեռավոր օտարության մեջ էլ չէր խուսափում մեր իրականությունը: Եվ ահա

այդ իրականության ցավերից մեկն է խոստում նրա «Շարունակե՞նք թե ոչ հողվածի մեջ, որ տպվեց 1868-ին «Մեղու» լրագրում (№ 35):

Այստեղ Արծրունին շարունակում է քննադատությունը, հասարակական կարծիք որոնողը մնալ: Որոնում է նա, բայց միայն մնալ ու հուսահատ դատարկություն է գտնում: Շարունակե՞նք թե ոչ, հարցնում է նա: Ի՞նչը: Գրեկը Ահա մի հարց, որ ճիշտ որ պիտի կանգնեցնեք հայ եքրիտասաբղին: Գրեկը բայց ինչո՞ւ, ո՞ւմ համար:

«Չորս տարի առաջ,— ասում է նա,— մենք՝ ուսանողներս, հավարտ էինք մի փոքր սենյակում. խոսակցությունը մեր հայկական օրագրությունների վերա էր: «Ո՛չ պարոններ,— ասաց ուսանողներից մեկը,— ես այժմ տեսնում եմ, որ մենք սխալվեցանք սկսելով հողվածներ հրատարակել հայկական օրագիրների մեջ. միայն այն մարդն ունի իրավունք հողվածներ գրելու, որ վստահ լինելով իր դարգացման վերա, կարող է ժողովրդի հասկացողություն հարմար հողվածներ առաջարկել»:

Ինքնըստինքյան անսխալ չէ այս միտքը: Բայց ցավն այն է, որ այդ խոսքերը շատ հաճախ վարագույր են դառնում, որի ետևում թաքնվում է անկողությունը, ծուլությունը. թաքնվում է շատ հաճախ և այն մտավոր աստիճանը, որ ինքը չէ անում և չէր ուզի, որ ուրիշներն էլ անեն: Արծրունու չէր կարող բավարարություն տալ այդ շարժը: Վստահ լինել իր դարգացման վրա: Բայց ո՞րն է այդ դարգացումը. ինչպե՞ս չափել նրան:

«Ես,— ասում է Արծրունին,— չեմ ընդունում իմ համալսարանական ուսումի ավարտելը ինչպես իմ դարգացման ասպարեզ. ես չեմ կարծում նույն պես, որ ուսումս ավարտելով ես անպատճառ կհամոզվեմ, որ բավական դարգացել եմ, որ հասել եմ վերջապես այն ընդհանր, երբ իրավունք ունիմ գրականական գործունեություն սկսել... Մենք իրողություններ ենք տեսնում, որ հայրենիք վերադարձած ուսումնավարտ երիտասարդներից շատերը, թե բժիշկներ, թե իրավաբաններ, թե բնագետներ՝ այնքան թույլ, երեխայական դարգացում ունին, որ ոչ թե միայն գրել չեն կարող մի օրինավոր հողված, ոչ խոսակցության մեջ ևս չեն կարող որոշ մեկ միտք հայտնել: Նոցա սովորական խոսակցության պարունակությունը անվայելուչ բաներ են կամ հայտնաբերում: Դուք ինքներդ շատ անգամ տեսած կլինեք, ինչպես մեր Քիֆլիսի (սովորյալ մարդիկ, ուսում ավարտածներից կամ չավարտածներից, կրթությունը նոցա հետ ծանր խոսակցություն եք սկսում, դարձնում են էրանց խոսք թեթև և կեղտոտ բաների վերա»:

Այս տողերը շատ լավ ցույց են տալիս, որ Արծրունին դեռ պառանկությունից ճանաչել էր մեր ինտելիգենցիան, գիտեր, թե ինչ են ներկայացնում մեր ուսումնարանները, նույնիսկ համալսարանները: Եվ կարո՞ղ ենք ասել թե նա լավ չէր ճանաչում, քանի որ նրա բերած քծերը իրողություն են ոչ միայն ժամանակի, այլև ներկայի համար:

«Ուրեմն ի՞նչ անենք,— շարունակում է նա:— ...Գրե՛նք և թո՞ղ դատարկությունը: Հասարակություն. ի՞նչ հասարակություն. կա՞րող հայկական հասարակություն: Հասարակություն, որ կազմված է ուսում չափազանցած ուսանողներից, նյութապաշտ, տճաս, անհոգ մարդերից և անուս կամ մարդերից, որոնք կարծել են, թե եվրոպական կրթված կին կոչվելու համար բավական է միայն եվրոպական զգեստներ հագնել: Ի՞նչ հասարակություն: Ե՞րբ ես տեսել, որ մի տպած հողվածի վերա հայն իր միտքը հայտնեց, որ տողություն անե, մտքի մեջ պակասություններ և անարժանավորություններ տեսնե: Փոխանակ կրիտիկայի նա կարող է հայհոյել, այդ նորա բանն է»:

Ուրեմն ի՞նչ է մնում անել մի այսպիսի ժողովրդի մեջ: Մի քանիսներն ասում են, թե իրավունք չունինք գրելու, մյուսները պնդում են, թե ունինք, թո՞ղ ամեն մեկը գրե, թո՞ղ հասարակությունը դատե:

«Ես համաձայն չեմ այն մտքի հետ,— շարունակում է Արծրունին,— թե քոզը պիտի քարոզի լինի: Ո՛չ, թեպետև գրողը պիտի ունենա մի հաստատագրություն, պիտի ունենա իր սեպհական կարծիքը, պինդ-պինդ պաշտպանելու մտքերը, բայց միևնույն ժամանակ նա պիտի հասարակութենից ևս սպասեցություն, կրիտիկա պիտի սպասե, որ հասարակությունը ուղղե, դրսև նոր հողվածների պակասությունը»:

Հասարակական գիտակցություն, հասարակական կարծիք, հրատարակական կրիտիկա՝ ահա ինչ է ուզում Արծրունին հայ ժողովրդից: Նա չէ ուզում քարոզիչ լինել, այսինքն ամբիոնի վրա բարձրացած մի մարդ, որի խոսքերը լսում է բազմությունը առանց քննադատելու, լոկ իբրև ունկնդիր: Այդպիսի քարոզ և այդպիսի ունկնդիրներ լինում են միայն եկեղեցում, մինչդեռ հասարակական մամուլը այն ասպարեզն է, ուր պիտի կարծիքներ փոխանակեն, որ մտքերի ընդհարում պիտի տեղի ունենա:

Բայց չկարծենք, թե Արծրունին, այսպիսի պահանջներ անելով, չէր ճանաչում հայ ժողովուրդը: Ահա նա վերլուծում է ժողովուրդ կազմող տարրերը և գասավորում է նրանց այսպես.

Կարգալ և գրել չիմացողներ (ստորին ժողովուրդը և այլն):

Վաճառականներ և արհեստավորներ:

Երկրորդական ուսումնարանների կամ գիմնազիտների աշակերտներ:

Համալսարանների ուսանողներ, համալսարանի մեջ ուսում ավարտածներ և չավարտածներ:

Անուս կնամարդիկ:

Եվ, վերջապես, եկեղեցականներ:

Այնուհետև նա մի առ մի քննում է այդ տարրերը և հասնում է այսպիսի պակասությունների: Կարգալ-գրել չիմացողը, իհարկե, դատել չէ կարող: Վաճառականներն ու արհեստավորները բացի օրացույցից ու էֆեմերտից ոչինչ չեն կարողում: Մինչդեռ կարգացողը պիտի իմանար լեզուն, պիտի դարձնում լինի, որ կարողանա վճռել, թե հարմա՞ր են արդյոք կամ ընդդեմ են այդ ազգի ոգուն հողվածի մեջ հայտնած մտքերը: Երկրորդական ուսումնարանների և գիմնազիտների աշակերտներից շատերը այսօրանց լեզուն չգիտեց, աշակերտ են, դեռ իրանք պիտի սովորեն: Ուսանողները չեն կարող կարգացողներ լինել, որովհետև չէ կարելի ասել, թե մեր ուսանողները դարձնում մարդիկ լինեին: Ուսում ավարտածները, հայրենիք վերադառնալով, չգիտեցին գործ են գտնում: Եվ գործ տվողը հասարակությունը չէ, «հասարակությունը աշխատանք չէ տալիս ուսում առած մարդերին, ուրեմն կարելի՞ է, որ ուսում առած մարդիկը հասարակական հարցերով հետաքրքրվեն: Հասարակության համար օտար մնալով, յուրանց հասարակությունը ևս յուրանց հարց օտար են համարում»:

Ո՞վ մնաց: Միայն եկեղեցականները: Դրանք ճիշտ որ շփվում են ժողովրդի հետ, ծանոթ են նրա պահանջներին և եթե ավելի դարգացած, հիմնադր ուսում ստացած լինեին, «միակ դասն են հասարակության մեջ, որի անկողությունից վերա գրողը իրավունք կունենա նայել, որպես իր գրվածների բնական գատավորների վերա»:

Պարզացած, չիմանավոր ուսում ստացած: Ե՞րբ պիտի հայ հոգևորականը

հասնել արդ վիճակին: Եվ Արծրունին ավելացնում էր. «Բայց մինչև այն ժամանակ շարունակե՞նք թե ոչ»:

Այս հարցին նա չէ պատասխանում: Բայց հարկավոր է պատասխանել ինքնըստինքյան չէ՞ ստացվում արդյոք պատասխանը:

Արծրունու զծագրած պատկերը դարձյալ միևնույն հանգամանքներն է պարզում: Չկա պահանջների տեր, ըննողի, դատողի դեր ստանձնելու արժանավորությունն ունեցող հասարակություն. չկա դարգացած, ընդունակ, հասարակական շահերին նվիրված ինտելիգենցիա: Բոլոր հանգամանքները արևն ցույց տալիս, որ չպետք է գրեթե Բայց հե՞շտ է մի այդպիսի վճիռ կայացնելը և մասնավոր կատարելը: Ի՞նչ ասել ժամանակի այն պատգամի դիմաց, որ կարգադրում էր «կամ ոչնչանալ անշարժ մնալով, կամ առաջ գնալ և երջանկություն որոնել քաղաքակրթության մեջ»: Գրությունը ցույց էր տալիս, որ մեզ պես մի ժողովրդի վերաբերմամբ դրած հարցին պետք է պատասխանել. «Այո՞, շարունակենք»: Շարունակենք, որովհետև դարգացած, ընկնելու ընդունակ հասարակություն երկնքից չպիտի ընկնե, այլ պիտի ստեղծվի կամայկամաց, աստիճանաբար: Հասարակական իզնալներ, ճիշտ է, չկան, մենք օրոցուցից և էֆեմերալի մարդիկ ենք: Բայց որտեղի՞ց պիտի գային այդ իդեալները, եթե ոչ գրչից ու խոսքից: Շարունակենք, այո՞:

1868 թվին տարված հողավճաններից վերջինը կրում է «Ինչի՞ չենք հիմնում վերնագիրը և զետեղված է «Հայկական աշխարհի» նոյեմբերի համարում: Հիմնելի բանը պիտի լիներ մի մեծ ընկերություն, որի հաշվով բարձրագույն ուսում կառնեին երիտասարդները: Միտքը նոր չէր. նույնը վեց տարի ասուց 1862-ին, առաջարկել էր Ստեփանոս Նազարյանցը «Հյուսիսսփայլի» մեջ: Արծրունին նույնիսկ ընկերության կազմակերպության գործում հեռու չէր գնացել Նազարյանցից. նա էլ կարծում էր, թե կարելի է հայերի մեծամասնությունը անդամ դարձնել այդ ընկերության: Նա հաշվում էր, որ հազարներով կլինեն այնպիսի մարդիկ, որոնք չեն կարողանում իրանց որդիներին բարձրագույն ուսում տալ, բայց այնքան ազբատ չեն, որ տարին 25 ուրլի չկարողանան տալ ընկերության: Այդպիսով կազմվում է մի խոշոր դրամագլուխ, որի օգուտներով արդեն տարին 166 ուսանող կարող են սովորել: Ուսանողներին օգնող ընկերությունը կարող է գրքեր էլ, մասնավոր դասագրքեր տպել:

Հետաքրքրականն այնքան այդ ընկերությունը չէ, որ չիրագործվեց և չէ էլ կարող իրագործվել, որքան այն պատճառաբանությունները, որոնք այդպիսի մի հիմնարկության անհրաժեշտությունն էին ցույց տալիս:

Նազարյանցն իր առաջարկությունը բացատրում էր քաղաքակրթական և դաստիարակչական նպատակներով: Ընկերությունը նախ և առաջ կմարմնացնե ինքնօգնության գաղափարը, որից զուրկ են հայերը և երկրորդ՝ օգուտ կար, պատրաստված գործիչներ կտար մեզ: Արծրունին էլ նույն օգուտներ էր նախատեսում ընկերությունից, բայց նա անհրաժեշտությունը հիմնում էր զլիաժողովրդական անտեսական-արդյունաբերական հողի վրա:

Նա սկսում էր իր հողավճան այն անբնական և ոչ ցանկալի երևույթի, որ հայերի մեջ ամեն բան թողնված է հարուստներին: Մի գործ սկսելու ամար հայերը ստորագրություն են բաց անում: Եվ ո՞վ է ստորագրողը: Միջոց հարուստը: Ամեն դեպքում հարուստը պիտի անե, ամեն անգամ նրան եր դիմում:

«Այդ կերպով հասարակությունը սովորում է հարուստների վերա նայել»:

1 Տե՛ս իմ «Ստեփանոս Նազարյանց», 2-րդ հ. էր. 171:

իդեալն հասարակության ամենահարկավոր անդամների վերա: Եվ աղքատ մարդիկներից շատերը, թեև ընդունակ, ուսումն առած լինելով, աղքատին գործի մեջ հասարակության ավելորդ անդամներ են համարում իրանց»:

Եվ հասարակությունը միշտ հարուստներից է կախված: Հարուստը տալիս է փող, այդ փողն իսկույն ծախսվում է և երբ հարկավոր է մի նոր գործ, մի նոր ժողովարարություն, դարձյալ նրան են դիմում:

«Հարուստները փրվում են, հասկանալով, որ հասարակությունը ոչինչ չէ կարող, կամ ոչինչ չէ իմանում անել առանց նոցա օգնության, իսկ անհոգ հասարակությունը ոչինչ բանի տեղ չգնելով յուր սեփական հասկացողությունից գործությունները, նայում է հարուստների վերա ինչպես յուր փրկիչների, յուր օգնվածների վերա, նոցանից է սպասում ամեն կարելի և անկարելի գործեր»:

Այդպիսի դրություն մեջ երկար չէ կարող մնալ մի հասարակություն: «Այն հասարակությունը, որ միշտ բարեբարություն է սպասում, նա իրավունք չունի յուրան հասարակություն անվանել, բարեբարություն սպասելը նշանակում է մարտ»: Ուրեմն հասարակությունը պիտի գործն ինքնօգնության, հավաքական գործունեության միջոցներով: Առանց այդպիսի ընկերական գործունեության մենք չենք կարող ապրել նույնիսկ իբրև վաճառական, թեև մեր մասին կազմվել է այն համբավը, թե վաճառական ազգ ենք:

Ճիշտ չէ, որ մենք վաճառական ազգ ենք:

«Այո՞, մենք վաճառականությամբ ենք պարապում, մենք առնում ենք և ծախում ենք, վաճառականությունից շահվում ենք, բայց մի՞թե այնպիսի ազգ ենք, որ միայն առնում է և ծախում է, իսկ ինքն ոչինչ չէ արդյունաբերում, կարելի է վաճառական ազգ անվանել»:

Նոր-Նախիջևանի օրինակը բերելով, Արծրունին ասում էր, որ հայերը ստանով կղրկվեն և առևտրական միջնորդների դերից: Նորնախիջևանցին Մոսկվայում ապրանք էր առնում և բերում իր քաղաքը ծախում. այժմ Մոսկվայի արդյունաբերող վաճառականն ավելի ձեռնառու է համարում բաց անել իր պատեմները նոր նախիջևանում, ինքը ծախել իր ապրանքը: Միջնորդներ, ուրեմն, այնքան հարկավոր չեն. հայը պետք է հեռանա ասպարեզից:

«Նույնիսկ կպատահե և կովկասյան հայ վաճառականության հետ»:

Կովկասի բոլոր հարստություններից մենք շատ քիչ օգուտ ենք քաղում: Եվ թե արդյունքների մի քանիսներից օգուտ ենք քաղում, եթե քանի մի արդյունքները պատրաստում ենք, դարձյալ այնքան օգուտ չենք իմանում քաղել, այն կատարելությունը չենք հասնիլ, որքան օգուտ են քաղում և որ աստիճանի կատարելագործությունը օտարազգիներ են հասել, յուրանց արդյունքներ պատրաստելում»:

Այդ իրողությունը նա հաստատում է գերմանացի Պետցոլդի մի հետազոտության մեջ լույս հանած փաստերով, որոնք վերաբերվում էին տորոնի իրակության: Հենց որ տորոնի գինը բարձրացավ Ռուսաստանում, ամենքը փոփոցին այդ գործի վրա: «Զինվորականներ, զանազան աստիճանների պաշտոնյաներ, վաճառականներ, շինականներ, այրի կանաչք, առանց կարողության մարդիկ, ազարակ էին առնում վարձով, գործին հարկավոր գումարը բարիատությունը էին մեծացնում, որ կարողանան մասնակից լինել այն մեծ շահին, որ առաջարկում էր տորոնի գործը»: Հետևանքն այն եղավ, որ արդյունագործությունը շափից դուրս դարգացավ, իսկ պահանջը պակասեց, գներն ընկան և այն բոլոր գործողները, որոնք դրամատերեր չէին, սնանկացան:

«Ուրեմն,— շարունակում է Արծրունին,— մենք տեսնում ենք, որ ոչինչ

բանից օգուտ չենք իմանում քաղել, ամեն գործի մեջ վնասվում ենք մեր տգիտութեան պատճառով:

Գլխավոր պահանջներն է մեզ համար ուրեմն տարածել գիտութիւն մեր մեջ, մեր գործնական աշխատանք օրինավոր կերպով կատարելու համար: Եթե ոչ, երբ կշինվեն մեր երկրում երկաթուղիներ, երբ մեր երկիրն ավելի հայտնի կլինի եվրոպացիներին, նոքա կզան մեր երկիրը, կհիմնեն գործարաններ և գիտնական մարդիկ լինելով, յուրանց գումարներ մեզանից լավ կառավարել գիտենալով, մեր բնական արդյունքները կպատրաստեն առավել մեծ քանակութեամբ, առավել մաքուր, առավել առողջ, վաճառաշահութեան առավել հարմար արդյունքները: Այնպես որ հայերին խնդրակցութիւն (մրցակցութիւն?) կանեն, հայերի ձեռքից գումարները կխլեն: Հարկավոր է ուրեմն աշխատել հայերի մեջ գիտութիւն տարածելու, գործնական աշխատանքի ընդունակ մարդիկ պատրաստելու:

Ահա ինչու է հարկավոր ուսանողներին օգնող ընկերութիւնը: «Այն երիտասարդները, որոնք ձեր ծախսով ուսում կառնեն, երբ հետ կդառնան, ձեր գործին օգուտ կբերեն, ձեր գործանոցները կամ ձեր վաճառականական գործերը, կամ երկրագործութեան արվեստն օրինավոր կերպով կառավարելով»:

Մեր մամուլի մեջ էլ մտնում էր գործնական կյանքը՝ իրական պահանջները, տնտեսական շահերը գլուխ էին բարձրացնում մեր առաջ, ուշադրութիւն էին գրավում, իրանց ահագին կարևորութիւնն էին ցույց տալիս: Այդ նոր հոսանքը բերողը Գրիգոր Արծրունին էր: Նրանից առաջ հայ մամուլը եկեղեցու, դպրոցի, դաստիարակութեան շուրջն էր պտույտներ անում: Բայց դա բավական չէր. մեր քաղաքակրթական առաջադիմութիւնն ուներ ուրիշ շատ խոշոր, շատ առաջնակարգ հարցեր էլ: Հայ ազգի առջև միայն բարոյական վերածնութեան պահանջ չէր դնում ժամանակը: Բարոյականի հետ գործնական տնտեսական կյանքն էլ պիտի առաջ գնար: Մեր աշխարհը փիլիսոփայ բարոյագետների, բանաստեղծների հայրենիք չպիտի դառնա միայն, այլև գիտութեամբ դիմելով աշխատանքի, շահագործող ուժի, տնտեսական մրցութեան ասպարեզ պիտի լինի: Եվ Արծրունին կանչում էր. «Պատրաստվեցե՛ք, կազմակերպվեցե՛ք, թե չէ կգա օտարը, ձեզանից ավելի խելոք, ավելի գիտուն և կխլի ձեր ձեռքի հացը»: Այսպես աղաղակում, նախազգուշացնում էր նա և հետո: Եվ այսօրվա մեր տնտեսական կյանքը շատ լավ ցույց է տալիս, թե որքան խոր ճշմարտութիւն կար Արծրունու այդ նախազգուշացումների մեջ:

Օգտակարութիւն և աշխատանք քարոզող ռեալիստը հետզհետեւ բաց էր անում այն, ինչ ուներ տալու իր ազգին: 1868 թվականի վերջերից նա իր գործունեութեան վրա ավելացնում է և մի նոր ճյուղ: Ամենայն ուշադրութեամբ և բարեխղճութեամբ նա հավաքում էր եվրոպական գրականութեանից և մամուլից հայերին վերաբերող տեղեկութիւններ և ուղարկում էր «Հայկական աշխարհին»: Ակսած այդ ժամանակից ամսագրի «Մեր ներքին գործեր» անունով մշտական բաժինը լցվում էր Գրիգոր Արծրունու հազորգած հետաքրքրական տեղեկութիւններով: Մենք արդեն տեսանք, թե ինչպես էր նա հավաքում այդ տեղեկութիւնները, ինչպես էր հասկանում եվրոպայում գտնվող ուսունոյի պարտականութիւնը: Այժմ պետք է տեսնել, թե ինչ էին այդ տեղեկութիւնները հենց իր, Արծրունու համար:

Տեղեկութիւնները շատ են, մանր-մունր և խոսել բոլորի մասին անհնարին է: Հավաքելով, թարգմանելով տեղեկութիւնները, Արծրունին ոչ միայն հետաքրքրական նյութ էր տալիս հայ ընթերցողին, այլև որ մեր կարծիքով ավելի նշանավոր է, ինքն էլ բազմակողմանի կերպով ծանոթանում էր իր ազգի

հետ, այդ ազգի ոչ միայն ներկայի, այլև անցյալի հետ: Գա մի անհրաժեշտ, կարևոր պաշար էր, որ ստանում էր հայ հրապարակախոսը: Արծրունին իր բոլոր նախորդների համեմատութեամբ այն անբարեհաջող հանգամանքի մեջ էր գտնվում, որ կրթութիւն էր ստացել օտար դպրոցում, մեկն էր այն բաղմամբով հայ երիտասարդներից, որոնք դպրոցական հասակում հաղիվհաղ մի երկու կտոր բան են սովորում հայերենից՝ այն էլ իսկույն մոռանալու համար: Արծրունին, սակայն, բացառութիւն կազմեց, հետզհետեւ վարժվելով հայերենագիտութեան մեջ: Բայց դա բավական չէր, պետք էր ճանաչել ազգը, պետք էր ծանոթանալ նրա անցյալի, նրա գրականութեան հետ: Արծրունին այդ պահանջը լրացնելու համար էլ միջոցներ գտավ: Աշխատող մարդու համար, այն մարդու, որ հասկանում է իր կոչումն ու պարտավորութիւնը, չեն կարող լինել անհաղթահարելի դժվարութիւններ:

Այսպես, մենք նկատում ենք, որ Արծրունին առանձին հետաքրքրութեամբ հետևում էր հայագիտութեան գործին եվրոպայում: Հին հայ հեղինակների հետ անմիջապես ծանոթանալու նարավորութիւն չէր ունեցել նա, դրա համար պետք էր գրաբար սովորել: Բայց ահա հայ մատենագիրները թարգմանվում են ֆրանսերեն, գերմաներեն լեզուներով, եվրոպացի հայագետները հրապարակում են ուսումնասիրութիւնների հայոց պատմական կյանքի և գրականութեան մասին: Արծրունին հետևում էր այդ բոլոր գործերին և մեր ազգայնագետները, զենոնները, Վարդան պատմիչները նրան անհայտ, անհասկանալի բաներ չեն մնում. նա ճանաչում է գրանց, եթե ոչ մանրամասնորեն, գոնե համոտ կերպով, գլխավոր կետերի կողմից: Մինչույն ժամանակ, մոտ լինելով Մխիթարյաններին, Արծրունին հետևում էր Վիեննայի և Վենետիկի վանքերի գրականութեան:

Այդ հետաքրքրական բաժինը Արծրունին վարեց մինչև եվրոպայից հեռանալը: Բայց նույնիսկ թիֆլիսում էլ նա չէր մոռանում հազորդել «Հայկական աշխարհի» ընթերցողներին, թե ինչեր են տպվում եվրոպական թերթերում հայերի մասին:

IV

Համակրական ցույցեր: Համալսարանական երիտասարդների ընթրիք թիֆլիսում: «Կեցցեն Արծրունի եղբայրները»: Գրական հակառակորդների հարցը: Բարոյականությունը ո՞ւմ արտաբերությունն է: Օր. Շուշանիկի նամակը: Ինչո՞ւ լիա հայկական բառոն: Անհատների դերը: Հեյդլբերգը՝ Արեմի: Փիլիսոփայության դոկտոր: Արծրունին Փարիզում և Վիեննայում: Հայերենի դասեր: Վիեննայի Մխիթարյան վանքը: Ֆրանսիացու բնավորությունը: Հին և նոր սեբուսի: Վենեցիայում: Ս. Ղազար: Մերացած ազգ: Հ. Ալիշան: Կարելի՞ է սիրել հայ ժողովուրդը: «Մաքեր հայանելու իրավունք»: Մեր երկրի հարստությունները: Հասարակական կրթության գլխավոր գործերը: Մամուլի պակասությունները: Քրիստոնեություն և մանվեղականություն: «Պուր լա բոն բուշ»:

Որքան էլ անմխիթար լինեն մեր իրականութիւնը, որքան էլ խլացած ու մոռած լինեն մեր հոգևոր պահանջները և որքան էլ հայ գրողը հուսահատութեամբ նայեր իր շորս կողմը, շիմանալով թե ո՞ւմ համար և ինչո՞ւ գրել, կար է այն տխուր հանգամանքը, որ մարդիկ են պակասում մեզ, տաղանդով, եռան-

դով լցված մարդիկ: Կյանք չկար, այո՞, բայց մեր միջավայրը Սահարայի անապատը չէր, որ ամեն մեկի համար պարզ լիներ, թե զուր է կյանք շարժելու որևէ փորձ անելը: Չէին սովորում մեզանում, բայց սովորեցնողները մի՞թե շատ չէին: Ո՞չ, մեզանում էլ կար հետաքրքրություն, մեր մարդիկ էլ լսելու կարողություն ունեին: Այդ մարդիկ, ճիշտ է, շատ չէին, բայց քաղց ու ծարավ զգում էին, պատրաստ էին համակրություններ արտահայտել, ուրախանալ, հրճվել անգամ: Իսկ մի մեռած մարմին, մի սառն դիակ, — եթե հայ ժողովուրդը սառած դիակ լիներ, — չէ կարող այդպիսի հատկություններ ունենալ...

Թե որքան մեծ էր կարողությունը հայ փոքրածիվ ընթերցող հասարակության մեջ, այդ ցույց է տալիս «Հայկական Աշխարհը»: Մի շատ փոքրիկ, բովանդակությամբ աղքատ ու միակողմանի, վերին աստիճանի անկանոն հրատարակվող ամսագիր էր դա: Բայց ի՞նչպես էին սպասում նրան, որքան մեծ հետաքրքրությամբ էին ձեռք առնում այդ վտիտ տետրակները: Մարդ այժմ էլ չէ կարողանում առանց հուզմունքի կարգալ Գերբենտից կամ Մոսկովայի ուղարկած այն տողերը, թե «Հայկական Աշխարհի» ստացվելուն սպասում էին աստանելի ակնկալությամբ», թե «ինչպես սուրբ Սարգսի եղջ պասը ծոմապահության մեջ անցկացնողները հացի վերա կընկնեն, այնպես ևս ես ընկա «Հայկական Աշխարհի» վրա»: Խեղճ ընթերցողներ, ակամա առում եք դուք ձեր մտքում, կլինեիք դուք, շատ կլինեիք, եթե երկինքը մեզ շնորհած լիներ իր կրակով վառված շատ անհատներ: Բայց երկինքը գթառատ չէր մեր վերաբերմամբ...

Մարդիկ, այո՞, կային: Եվ այդ ծարավներն ու պապակողները չէին կարող ուշադրություն չգարձնել Գրիգոր Արծրունու գրվածքների վրա: Ընդամենը մի տարի էր, ինչ երիտասարդ ուսանողը սկսել էր կանոնավոր գրել, այնքան հեռավորությունից քրքրել մեր պակասություններն ու կարիքները, և ահա պատրաստ է նրա համար ընթերցողների համակրությունը: «Հայկական Աշխարհի» 1869 թվի առաջին համարը Արծրունի եղբայրների հասցեին ուղղած մի շարք համակրական ցույցեր է պարունակում իր մեջ:

Ահա Ագուլիսից Մեսրոպ քահանա Փափաղյանը գրում է, թե կարգալով «հայրենասեր պ. Արծրունու «Ինչի՞» շինք հիմնում» իմաստալից հոդվածը: Ինքը հղացել է մի առաջարկություն: Մի խելացի առաջարկություն է դա՞ հիմնել «Շահաբեր» անունով մի ընկերություն, որի նպատակը պիտի լիներ զարգացնել գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը և արհեստները Հայաստանում: Քահանայի հոդվածի վերնագիրն է «Եկե՛ք հիմնենք»:

Մի ուրիշը, «Ռուսաստանում դաստիարակված հայ երիտասարդ» անունով նույն Ագուլիսից ուղարկում է մի պատասխան Արծրունու «Գրականության շկա» հոդվածի դեմ: Պատասխանը չէ տպագրվում «Հայկական Աշխարհի» մեջ¹, բայց խմբագրության ուղարկած նամակից իմանում ենք, որ «Հայ երիտասարդը» շատ դժգոհ է մնացել «Գրականություն շկա» հոդվածից, քանի որ ասում է նա, «այսպիսի համոզմունքը տարածվելով կարող են վնաս պատճառել մեր ամեն տեսակ տարրերից գոյացած հասարակություններին, որոնց մեծ մասը դիտությունները միայն կոպիտ նյութակազմի համար են սիրում»: Սակայն հետո, կարգալով Արծրունու «Իդեալիստներ» հոդվածը, «Հայ երիտասարդը փոխել է իր կարծիքը առաջին հոդվածի մասին և ավելացնում էր իր նամակին հետևյալ տողերը. «Այս նամակով ես շեմ կարող շուղարկել արտասահման իմ անկեղծ շնորհակալությունը պ. Գր. Արծրունուն, որ այսպիսի ճե

¹ Խմբագրությունից անկախ պատճառներով:

տարբեր և էջնդանի հարցեր է հարուցանում մեր աղքատիկ հասարակական կյանքին վերաբերված»:

Արթուր ցույցը ավելի նշանավոր է: 1869 թվի հունվարի 12-ին, երեկոյան, Ասկիճախի համալսարանի նախկին ուսանողները Թիֆլիսում հավաքվում են մի մտանավոր տան մեջ՝ ընկերական ընթերցող համալսարանի տարեդարձը շրջառակելու համար (Տառյանայի օրը): Գրանց միանում են և Պետերբուրգի համալսարանի մի քանի նախկին ուսանողներ. կազմվում է 20 մարդկանց մի ընկերակցություն:

«Թագմած սեզանի շորս կողմը, — գրում է մասնակիցներից մեկը, — արախ-արախ անց էին կացնում ժամանակը, գրուցում էին, վիճում էին և կենաց թասեր խմում... մի խոսքով քեֆ էին անում և սրտերը պարզացրած, — մի կողմը դնելով յուրաքանչյուրը յուր անձնական հատկությունները, — բարեկամաբար հայտնում էին յուրյանց բարի ցանկությունները և ունեցած հույսերը...»:

Այդ դադափարական խոսակցության մեջ երիտասարդ համալսարանականները հիշում էին բացակա եղողներին: «Ուստի ներկա դանվողներից մինչը կենաց թասը առաջարկեց, և ամենքը սիրալիր կերպով ընդունեցին և կեցցե-ները գոռեցին: Այդ կենաց թասը առաջարկվեցավ «Հայկական Աշխարհի» արդյունավոր աշխատակիցների Գ. և Ա. Արծրունիներին...»:

«Այս կենաց թասի թե առաջարկելն և թե ամենքի կողմից սիրալիր ընդունությունը նման չէ այն կենաց թասին, որ առհասարակ մարդիկ առաջարկում են յուրանց ազգականների և մասնավոր բարեկամների հեռանալու պատճառով: Ոչ, մասնավոր բան չէ սա, այլ սակավածիվ ամբողջի մի արտահայտված զգացմունք: Ես կամենում եմ ասել, թե այս մի փոքր բանը ցույց է տալի, որ մեր խեղճ գրականության մեջ աշխատավոր, ազնիվ երիտասարդների գործունեությունը համակրող և պատվոզներն ևս պակաս չեն, թեպետ այդ համակրողներն թիվը քիչ է: Արդարև շատ ախորժելի էր խմել այդ ազնիվ երիտասարդների կենաց լի թասը, նամանավանդ որ նոքա խոստանում են, ինչպես Պարզացիներ օրագրումը, շարունակել յուրանց աշխատակցությունը: Ուրեմն կարող ենք հուսալ, որ այս տարի ևս մտածել պատճառող հոդվածներ և շատ անտարբեր տեղեկություններ եվրոպայում մեզ վերաբերությամբ աշխատողների մասին կլսենք անդադար»:

Այս նամակին «Հայկական Աշխարհի» խմբագրությունը ավելացնում էր հետևյալ ծանոթությունը. «Պ. պ. Արծրունիներից մինն միայն՝ պ. Գրիգորը հոգևոր հրատարակել, որ նա կշարունակե օրագրիս աշխատակցությունը, և մյուսի՝ պ. Անդրեասի մասին ուրախ ենք հայտնել օր մի առաջ, որ նա նույնպես շարունակելու է անդադար աշխատակցություն «Հայկական Աշխարհում», ևս այս առաջին համարներից արդեն իսկ սկսելով իր գեղեցիկ հոդվածով: Թե՛, մեր օրագրականության մեջ (Ռուսիայում) նոր գործ է հեռավոր տեղեկում միևնույն առարկայի մասին մտքեր գրգռել և մտածել տալ: Գոնե Գր. Արծրունին յուր իմաստուն հոդվածներով կապում է մտածության կողմից, ինչպես ընթերցողը կկարդա այս համարներումն ևս, Թիֆլիսի, Հեյդլբերգի, Ագուլիսի, Պետերբուրգի մտածող Հայերին: Այո՞, կեցցեն ուրեմն Անդրեաս և Գրիգոր Արծրունիներն»:

¹ Այդ գեղեցիկ հոդվածն էր «Վան գավառի նկարագիրը», թարգմանություն Ֆրանսերենից: Բնագրի հեղինակը Արծրունի աշխատակցում էր «Հայկական Աշխարհին» թարգմանություն-կազմի:

Նկատենք այստեղ, որ այն ժամանակվա գրողներից ոչ մեկը այսպիսի ցույցերի չէ արժանացել. տարիներ առաջ, երբ հրատարակվում էր «Հյուսիսափայլը», միայն Ստեփանոս Նազարյանցն էր ընթերցողների կողմից հրատարակում համակրանքի և հիացմունքի վկայություններ ստանում: Այսպիսով ընթերցող փոքրաթիվ հասարակության զգացմունքն ինքն էր, որ անսխալ կերպով ցույց էր տալիս, թե մեր հրատարակատեսության մեջ Նազարյանցից հետո Գրիգոր Արծրունին է գալիս իբրև խոշոր, աչքի ընկնող ուժ: Եվ վերահիշյալ բոլոր վկայությունները ասում են մեզ, որ ընթերցող հասարակությունը սկզբի ևնթ ճանաչեց Արծրունու տաղանդի հատկությունները. այստեղ շեշտվում է ամենազխալոր՝ «մտածել պատճառող» գրականություն, «մտքեր գրգռել և մտածել տալ»: Մենք դեռ էլ կտեսնենք այսպիսի ցույցեր: Առայժմ շարունակենք հետևել Արծրունու գրվածքներին:

Հետաքրքրական հանգամանք է, որ 1869-ին Արծրունու գրվածքները «Հայկական Աշխարհում» շոշափում են գլխավորապես մի հարց միայն՝ կանանց հարցը: Այսպես են «Յյուրիսի Համալսարան», ուր խոսքը կին ուսանողուհիների մասին է, «Հայկական քնարի առիթով», «Կանանց աշխատանք Յրասիայում» (Ֆրանսիացի հեղինակների, գլխավորապես Ժյուլ Սիմոն, Լը-Հարպի տեսությունները կանանց աշխատանքի մասին), «Բարոյական արտոնություն» «նաոն ուսումնարանների խնդիր Հեյդըբերգում»: Այդ գրվածքներից մի քանիսը թղթակցության կերպարանք ունեն կամ պարզապես եվրոպացի գրողների մշտրերն են թարգմանում: Մենք կարող ենք վերցնել միայն այնպիսի հոգվածները ուր երևում է Արծրունու սեփական մտածությունը, ուր նա սկզբունքներ է գաղափարներ է պաշտպանում:

Միքայել Միանսարյանցը՝ 1868 թվին հրատարակեց իր «Քնար Հայկական հայտնի, հարուստ երգարանը: Այդ ժողովածուին նա կցել էր մի մեծ տաղարան՝ ազգային երգերի մասին և մի վերջաբան, որի վերնագիրն է «Մտածությունք ազգային լուսավորության մասին»: Իբրև ժամանակի առաջադեմ ոգու հետևող մի համակրելի մարդ, Միանսարյանցը ազգային լուսավորության գործի մեջ ահագին նշանակություն էր տալիս կնոջ կրթության և պահանջում էր որ այդ կրթության վրա մեզանում ամենամեծ ուշադրությունը դարձվի: Բայց Միանսարյանցը իր աշխարհայեցողություններով հայրերի դասակարգին էր պատկանում և Արծրունին չէր կարող համակրել այդ մտքերին, որ հայտնում էր նա կանանց կրթության մասին: Ահա այդ պատճառով էլ նա հերքում է Միանսարյանցի մի քանի հայացքները, անվանելով նրանց հին սերունդի հայացքներ:

Այս առիթով Արծրունին նորից պարզում էր, թե ինչպես պետք է վերաբերվել հակառակ կարծիքներին հրատարակական գործունեության շրջանում: Նորից նա կրկնում է այն, ինչ ասել է այդ մասին և այս անգամ ավելի է պարզ կերպով:

«Մարդը անհատ է, — ասում է նա, — և գրողը մարդ լինելով պիտի իր անհատական (индивидуальный) կարծիք և համոզմունք ունենա: Ոչ միայն չպետք է վախենանք բաղձակերպ կարծիքներից և համոզմունքից, այլև պետք է ցանկանանք, որ զանազան ուղղությունները բազմազան գրականության մեջ որպես և զանազան կուսակցությունները քաղաքական կյանքի մեջ:

Գրողը չպետք է նայի յուր հակառակորդի վրա, ինչպես թշնամու վերջ

Վ Միանսարյանցի մասին տես իմ «Ստեփանոս Նազարյանց», հատ. II, էր. 323:

այլ որպես միևնույն ասպարեզում գործող, թեև ուրիշ ուղղության հետևող լինեցի վերաջ:

Այսպես դատում էր մտքերի փոխանակության, կարծիքների տարբերության մեծ նշանակությունը հասկացած երիտասարդը: Նա կարծիքների կատարյալ ազատության շատագուց էր, նա գտնվում էր նվրոպայում, ուր տեսնում էր, թե ինչպես հակառակ համոզմունքները կալում են գիտության և հասարակական հարցերի ասպարեզում, առաջացնելով կենդանություն, շարժում, նպատակ ունենալով ծառայել ճշմարտությանը: Ապագայում, երբ Արծրունին մտավ մեր իրականության մեջ, երբ կատարի կոխիլ բոլորեց իր շուրջը, նրա հակառակորդները աղաղակում էին, թե նա անհամբերող է ուրիշների ասածների վերաբերմամբ, չէ ուզում կարծիքների տարբերություն, կամենում է, որ ամենքը իր նման մտածեն և հասկանան իրողությունները:

Բայց սա ճիշտ չէ, և «Մշակի» Արծրունուն մենք շենք կարող համարել «Հայկական Աշխարհի» Արծրունու դավանանքները մոռացած մի կալոդ: Կարծիքների տարբերությունը անհրաժեշտ համարելը չէ նշանակում իր սեփական կարծիքները թույլ կերպով պաշտպանել, նրանց չհավատալ: Ազատ համարելով ամեն մեկին իր համոզմունքը արտահայտելու մեջ, Արծրունին իր սեփական օրինակով ցույց էր տալիս, որ ամեն մեկը իրավունք ունի և պաշտպանել իր համոզմունքը, պաշտպանել սաստկությամբ, կրքոտ կերպով, հրաշունչ հռանդով: Եթե մեկը համոզված է, որ իր կարծիքներից ու հայացքներից դուրս փրկություն չկա, որ միայն իր ասածն է ճիշտ, որ միայն իր նման պետք է հասկանալ երևույթները, այդ դեռ չէ նշանակում, թե նա չէ ընդունում, որ դիմացինը կարող է բոլորովին հակառակ կարծիքներ ու հայացքներ ունենալ: Ի՞չ, հակառակորդն էլ կա և նա էլ իրավունք ունի նույն սաստկությամբ իր համոզմունքը պաշտպանել: Եվ այդ է պատճառը, որ Արծրունին միշտ բանակցիվ էր մղում իր հակառակորդների դեմ, մի հանգամանք, որ տեղի չէր ունենա, եթե հակառակորդներ չընդունեի: Ամբողջ թյուրիմացությունը առաջ էր գալիս նրանից, որ այդ հակառակորդներից ոչ մեկը չէր կարողանում այնպես կոպել, ինչպես կոպում էր Արծրունին. շախախաղները իրանց պարտությունը չէին տեսնում Արծրունու ահագին ուժի մեջ, այլ համարում էին նրան հետևանք այն բանի, որ Արծրունին անհամբերող է, չէ ուզում, որ տարբեր կարծիք ունեցող լինի: Միայն այն ժամանակ, երբ հակառակությունը դուրս եկավ գրական վայելչության սահմաններից, երբ համոզմունքներն ու կարծիքները ազնիվ, բարեխիղճ պաշքարի շրջանից հեռանալով փոխվեցան ստոր, անձնական թըշնամության և կեղտոտ փողոցային շահատակությունների, միայն այդ ժամանակ Արծրունին սկսեց արհամարհել, անտես անել այդպիսի հակառակությունը: Իսկ սա դարձյալ չէ կարելի համարել ուրացումն այն սկզբունքների, որոնք լույսնված են «Հայկական Աշխարհի» այս և ուրիշ հոգվածներում:

«Բարոյականության արտոնություն» հոգվածը նվիրված էր հայ կանանց: Արծրունին նորից և նորից կրկնում էր իր մտքերը կանանց կրթության մասին: Բայց չէ կարելի ասել, թե այդ կրկնությունների մեջ չկային նոր, ինքնուրույն մտքեր էլ:

«Քրիստոնեությունը ճշմարտություն է», ասում է Արծրունին: Քարոզելով ճշմարտություն, սեր և հավասարություն, ոչ Քրիստոսը, ոչ էլ նրա աշակերտները տարբերություն չդրին կանանց և տղամարդիկների մեջ: Կիմն էլ հավասար իրավունք ունեն ճանաչել և իրագործել քրիստոնեական վարդապետությունը. եկեղեցական ոչ մի հանդեսին, ոչ մի քարոզին, ոչ մի ժամասացության կրթիք արգելված չէր կանանց ներկա լինելու: Կիմն էլ քրիստոնեության եռան-

դոտ կուսակից հանդիսացաւ: Քրիստոնեական ճշմարտութիւնը գորեզ ու հաղթող հանդիսացաւ այն պատճառով, որ մարդկային երկու սեռերն էլ արհամարհված չէին նրանից, կատարյալ իրավունքներ ունեին նրա առջև: Իսկ երբ ճշմարտութիւնը երկու սեռերի հավասարութեան վրա է հենված, նա ավելի հաստատ հիմք է ստանում մարդկութեան մեջ:

«Եվրոպական գիտութիւնը քրիստոնեական պտուղն է, նորա ազդեցութեան տակ է ծնվել և զարգացել: Նորա նպատակը արդարութիւնն է նմանապես: Նորա միջոցը աշխատանք է (մտավոր և նյութական): Այս աշխատանք խոսքը նշանակում է սեր, հավասարութիւն, ճշմարտութիւն և վերջապես արդարութիւն: Սեր, որովհետև աշխատելով՝ ամեն մի անհատը աշխատում է ոչ միայն իր համար, այլև ուրիշների համար, հասարակութեան համար: Հավասարութիւն, որովհետև աշխատելով՝ հարուստը և աղքատը հավասարվում են հարուստի աշխատանքը աղքատի աշխատանքից առավել մեծ արժանավորութիւն չունի հասարակութեան համար և տգիտութիւնից ազատվելու համար հարուստը միևնույն աշխատասիրութիւն պիտի գործ դնի ինչքան աղքատը: Ընդարձակութիւն, որովհետև ամեն մի անհատի որևէից աշխատանքը օգտավետ է հասարակութեան համար: Վերջապես Երկրորդութիւն, որովհետև աշխատելով մարդը բարվոքում է կյանքը, ուրեմն միջոց է տալիս հասարակութեանը ձգտել զեպի առաջադիմութիւնը, զեպի կյանքի բարվոքումն, ուրեմն և զեպի արդարութիւնը»:

Բայց գիտութիւնը կամ ավելի լավ ասած՝ գիտութեան քահանաները, այսինքն գիտնականները այնպես շահակցան արդարութիւնը, ինչպես հասկացել էր քրիստոնեականութիւնը: «Փոխանակ մարդկութեան նախապաշարմունքի դեմ բացարձակ կռիւնը, փոխանակ քրիստոնեականութեան օրինակ առնելու, մարդկութեան երկու սեռերին ևս հավասարեցնելու, երկուսին ևս, քրիստոնեականութեան օրինակով, ճշմարտութիւնը հավասարապես սովորեցնելով, գիտութիւնը տղամարդիկներին միայն իրավունք էր տալիս լուսավորութեանից օգուտ քաղել: Մարդկութեան կեսը (կանայք) իրավունք չունեին ճշմարտութեան լուսով լուսավորվել»:

Հարկավոր էր երկար ժամանակ, որ գիտութիւնը իր այդ անարդար վերաբերմունքի զոնն մի մասից հրաժարվեր: Մի մասից, որովհետև թեև բացվել են սկզբնական և միջնակարգ դպրոցներ կանանց համար, բայց համալսարաններում կանանց ուսում առնելը դեռ արգելված է:

«Քրիստոնեականութիւնը ճշմարտութիւն է, նա բացարձակ հայտնեց յուր ուսումը մարդին և կնոջ հավասարապես:

Գիտութիւնը ճշմարտութիւն է, բայց նա աշխատեց զարգացնել միայն տղամարդին և արհամարհեց կնոջը»:

Երբ մի ժողովուրդ դեռ տգետ է, երբ մի հասարակութիւն լուսավորութեան մեծ աստիճանի չէ հասել, նա չէ կարող հասկանալ ոչ իր կյանքի պահանջները ոչ էլ իր օգուտները: Հասկանում է հայ հասարակութիւնը իր պահանջների օգուտները: Եթե հասկանար, նա կունենար պատրաստ գումարներ երիտասարդներին և օրիորդներին ուրիշ տեղեր ուղարկելու և բարձր ուսում տալու, ուսումնարաններ հիմնելու, գրականութիւնը զարգացնելու համար:

«Եվ եթե մենք ինչևիցէ հիմնարկութիւններ ունինք, միայն բարեբարութիւններին ենք պարտական, և ոչ թե ժողովրդի ինքնաօգնութեանը հասարակական գործերում»:

Երբ ժողովուրդը դեռ լուսավորված չէ, ժամանակ առ ժամանակ դուրս է գալիս նորա մեջից մարդիկ, որոնք հաջողակ հանգամանքների մեջ լինելով ի

րոտ անգամ ազգատոթիւնն է հաջողակ հանգամանքը, եթե աղքատը կարողացաւ հասնել գիտութեանը, զգալով ժողովրդի թշվառութիւնը, տեսնելով նորա պահանջմունքը, նորա կյանքի արտահայտութիւնն են դառնում: Եվ այն զգացմունքը, կամ այն աշխատանքը, որ բաժանված պետք է լինի հազարների մեջ, նոքա յուրյանց վերա են առնում: Այդ տեսակ մարդիկներին հանձարներ են անվանում»:

Այսպիսով հանձարեղ անհատները մի ազգի մեջ այդ ազգի տգիտութեան կյանքներն են: Արժուինն դիմում է մի այսպիսի խիստ դարձվածքի. «Ամոթ է այն ժողովրդին, որ հանձարներ ունի»: Առաջին անգամից շատ տարօրինակ, անհանդուրժելի է երևում այս միտքը: Բայց Արժուինն հասարակական զարգացման տեսակետից ամոթ է համարում հանձարներ ունենալը:

«Որովհետև, — ասում է նա, — նոքա ապացույց են ամբոխի անբնական գրութեան, ապացույց են նորա սաստիկ տգիտութեան, ապացույց են, որ ժողովուրդը դեռ լուսավորութեան չէ հասել, երբ բարոյական զգացմունքի և գիտութեան բեռը շաղկված է մի անհատի ուսերի վերա: Բայց դարձյալ հարկավոր են հանձարներ ժողովրդի համար, երբ որ նա դեռ մտավոր ստրկութեան, ուսինքն տգիտութեան մեջ է»:

Նույնպիսի անբնական, հիվանդոտ երևույթ է ներկայացնում մի ժողովուրդ, որ ինքնօգնութեան միտքը չէ հասկանում:

«Ամոթ է այն ժողովրդին, որ հարուստների բարեբարութիւններով է ապուստ: Բայց դարձյալ հարկավոր են հարուստների բարեբարութիւնները, երբ ժողովուրդը դեռ չէ հասել յուր կյանքի պահանջմունքի և օգուտների հասկանալուն, երբ յուր հասարակական գործերում նա ինքնօգնութեանը դեռ չէ հասնել»:

Դիմելով կանանց հարցին, Արժուինն կանգ է առնում այն ընթացիկ հասկացողութեան առաջ, որ մարդիկ ունեն բարոյականութեան մասին: Ի՞նչ է պահանջում կնոջից: Որ նա բարոյական լինի: Եվ անա այդ հասկացողութեան համեմատ վարվող կնոջ պատկերը:

Նա ազգի է, հարուստ ընտանիքի զավակ: Թեթև հասկացողութիւն ունի ամեն բանի մասին, ոչինչ գործ կամ գիտութիւն հիմնավոր կերպով չէ ուսումնասիրում, սովորում է զանազան լեզուներ, որոնց չէ գործադրում կյանքի մեջ և այնուհետև պսակվում է, առանց ճանաչելու իր ամուսնուն: Ծանաչել չէ էլ կարող, քանի որ տգետ է, քանի որ մարդ ճանաչելու համար հարկավոր է լինել զարգացած: Նրա կյանքի նպատակը պսակվելն է. ոչ պսակվելուց առաջ, ոչ հետո նա հարկավոր էլ չէ համարում զարգացնել իր մտավոր ընդունակութիւնները, ծանոթանալ գրական գիտութիւնների հետ: Մի գործ, մի պարապտուի է միայն նա ճանաչում՝ լինել բարոյական: Լինել տգետ, բայց բարոյական, որպեսզի իր սերը և կուսութիւնը տա անբարոյական մարդուն, — սա հասարակութեան հասկացողութիւններին համապատասխանող գրութիւն է:

Իսկ աղքատ ազգիկը: Նա ստիպված է աշխատել, բայց չունի կրթութիւն, որ կարողանա նրան օգնել «ամենօրյա հացը աղնիվ կերպով ձարելու»: Ի՞նչ տեսիլ նա նպատակ է դնում շուտով պսակվել մի այնպիսի մարդու հետ, որը թե թե շատ կարողութիւն ունի, որպեսզի կարողանա առանց աշխատանքի օգրել:

Սա էլ բնական է համարվում: Բայց ո՞րքան բարոյական է:

«Բարոյական է միթե այն կինը, որը ինքն չգիտենալով յուր աշխատանքով բավականութիւն տալ յուր ամենօրյա պիտույքին, շտապում է մարդի գնալ, որ կարողանա առանց աշխատանքի ապրել: Բարոյական է միթե այն

կինը, որ տղետ լինելով, չէ կարող ոչ յուր մարդի բարոյականութեան վերահղել, ոչ օրինակոր կերպով դաստիարակել երեխաները»:

Այսպես ահա դուրս է գալիս, որ բարոյական լինելու համար պետք է հարուստ լինել, որ բարոյականութունը հարուստների արտոնութունն է: Իսկ աղքատ աղջիկը, նա, որ հարուստ կամ ունեւոր մարդու գնալ չէ կարող, հետեւաբար պետք է միշտ իր աշխատանքով ապրե, իրավունք չունի բարոյական լինելու:

«Հարուստ աղջիկները կարողութուն ևս ունենալով ուսում առնել և կրթութիւն յուրյանց միակ պարտավորութուն են համարում բարոյական լինել, և չեն հասկանում մի ուրիշ հասարակական պարտավորութուն, այն է յուրյանց ազատ ժամանակը և դրամական միջոցները գործ դնել օրինակոր կերպով փութութուններ ուսումնասիրելու, համալսարաններ և մանկավարժական ուսումնարաններ մտնելու, ժամանակով, ստացած փութութունը ժողովրդի մեջ տարածելու համար, յուրյանց աղքատ, անբարոյական և տղետ հայրենակից բոլորերին օգնելու, մանկավարժական ուսումնարաններ հիմնելով և այդ ուսումնարանները կառավարելով:

Նորա պարծնում են յուրյանց բարոյականութեամբ...»

Այս հողվածը Գրիգոր Արծրունին վերջացնում է հետևյալ դառն խոսքերով. «Բայց ավելորդ է այսքան խոսել... Ավելորդ է ավելի բացատրել մտքերը, որովհետև հայերեն գրված հողվածները բացի օրագրի խմբագրութունից ոչ ոքից չեն կարդվում:

Թեև հայկական կանանց են վերաբերում այս տողերը, ես հավաստի եմ, որ ոչ մի հայ կինը երբեք չի կարդա այս գրվածը... որովհետև հայկական կինը հայերեն չէ իմանում»:

Ոչ մի... Հայկական կանանցից մեկը, Շուշանիկ անունով, դուրս եկավ Գրիգոր Արծրունուն հայտնելու, որ այդ խիստ դատապարտութունը արդարացի չէ: Հայ կինն էլ սկսել էր ոչ միայն կարդալ, այլ նույնիսկ և գրել. «Հայկական Աշխարհի» և «Մեղուի» մեջ երևում էին հայ կանանց ստորագրութուններ:

Ճիշտ է, նրանց գրական գործերը միայն թարգմանութուններ էին, բայց մի՞թե դա էլ նշան չէր, որ նրանց մեջ զարթնում է հետաքրքրութուն գեղեցիկ մայրենի գրականութունը: Ահա Գրիգոր Արծրունին առիթ էր տալիս հայտնիներից մեկին նույնիսկ ինքնուրույն հողված գրել: Ի՞նչ էր ասում օր. Շուշանիկը. «Այս օրերումս ստացա ես ձեր օրագրի 6, 7 և 8 համարները, որոնք սպասում էի անհամբերությամբ: Առաջին կարդացած տողերը կազմի վերստեղ էին. «Բարոյականութեան արտոնութուն, Գր. Արծրունի»: Ես իսկույն դարձրի երեսը և մեծ հետաքրքրությամբ սկսեցի կարդալ պ. Արծրունու գրվածը:

Ես միշտ զվարճությամբ ընթերցասիրած եմ այդ հեղինակի աշխատութուններ, այս անգամ ևս չէի կասկածում բնավ, որ բավականությամբ կստացուանեի այն ժամանակը, մինչև կտներ կարդալս:

Հասկանալի է, որ այդ հողվածը գրվեց ինձ ավելի քան թե պ. Արծրունու ուրիշ գրվածներ, դա արդեն հայկական կանանց է նվիրված: Այդ նվիրված համար բոլոր կանայք կարող են շնորհակալ լինել պ. Արծրունուն, որովհետև նորա շատ սակավ արժանանում են այդպիսի ուշադրութեան:

Քանի շարունակում էի ընթերցանութունս, այնքան ավելանում էր ուշադրութունս. բայց անախորժիկ զգացմունք շարժեցին ինձ, երբ հասա այդ վերջին տողերին. «Թեև հայկական կանանց են վերաբերում այս տողերը, ես հավաստի եմ, որ ոչ մի հայ կին չի կարդա այս գրվածը... որովհետև հայ կական կինը հայերեն կարդալ չէ իմանում»:

Այո, պ. Արծրունին մեծ պատիվ արեց հայ կանանց՝ նոցա յուր աշխատութունը նվիրելով, բայց յուր հողվածի վերջին բառերով մեծ գին ևս վճարելովեց նոցա այդ պատվի համար: Չկարծեմ, որ կարելի լիներ վիրավորել առավել մարդ թե կին, քան թե այն ձևով, որը ընտրել էր պ. Արծրունին:

Եթե հայ կանայք չեն կարդում, այդ դեռ ապացույց չէ, թե նորա կարգալին իմանում, այլ դորա պատճառը այն է, որ կարդալու բան չեն գտնում հայերեն լեզվով: Չէ կարելի սպասել, որ ձեռին ընկած գիրքը վեր առնեն և կարգան առանց որոշելու, թե արժէ՞ արդոք ժամանակ գործածել այդ կարդալու: Ես փաստով ունեմ հավատացնելու, որ կան շատ կանայք, որոնք ուրախ են լայրեն լեզվով բան ինչ ունենան կարդալու և եթե գտնում են մի ընտիր և վայելուչ հողված, միշտ զվարճությամբ առնում կարդում են նորան:

Իհարկե քանի ավելի գրեն և տպեն գեղեցիկ հողվածներ, այնքան ավելի ընթերցողներ կլինեն թե այլ մարդիկների և թե կանանց մեջ»:

Այնուհետև օր. Շուշանիկը բերում էր փաստեր իր ասածը հաստատելու համար: Իր անձնական փորձը, իր ստացած նամակները, «Հայկական Աշխարհի» մեջ տպվող թարգմանութունները բերում են այն եզրակացութեան, թե պ. Արծրունին սխալվում է ասելով, թե հայ կինը կարդալ անգամ չէ իմանում. սակայն վերադառնալով յուր հայրենիքը, կտեսնե, որ չէ ճանաչել մինչև այժմ յուր ազգի կանանց հառաջադիմութունը: Թեպետ սա դեռ փոքր է, բայց կարելի՞ է արդոք սպասել սկզբից կատարելութեան»:

Ցույց տալով, որ կա սկզբնավորութուն, հետևաբար պետք է սպասել ավելի բեղմնավոր ապագայի, օր. Շուշանիկը հետևյալ տողերն էր ուղղում Արծրունու, անշուշտ իբրև փոխադարձ հատուցում. «Շատ կարելի է պ. Արծրունին ուշք չդարձնե այս գրվածիս, որովհետև նա հավատացած է, թե հայ կանայք տղետ են և ի՞նչ հարկավոր է ժամանակ կորցնել տղետների հողվածներ կարդալով: Բայց եթե մի որևիցե պատահմամբ նորա հետաքրքրութունը զարթած լինի և նա կարդա այս տողերս, անշուշտ կազատվեք յուր նախապաշարմունքից, և չկարծեմ, որ պատճառ ունենար տխրելու յուր սխալմունքի համար»:

Արծրունին չպատասխանեց հայ կնոջ այս բողոքին. նա կարող էր շատ բավական մնալ և նրանով, որ հայուհիներից գոնե մեկը վիրավորանք էր հատարում, երբ ասում էին, թե հայ կինը հայերեն կարդալ չգիտե: Եվ չէ էլ կարելի ենթադրել, թե Արծրունին տառացի իմաստով հասկանում էր իր այն խոսքերը, թե ոչ մի՞նչ հայ կանանցից չի կարդա իր հողվածը: Անկարելի էր, որ հայկական իրականութեան մեջ միայն փշեր և տատասկներ բուսած լինեին, որ չպատահեին և հատ-հատ ծաղիկներ: Բանն այն էր միայն, որ մի հատ ծաղիկով գարուն չի լինում, իսկ Արծրունին կատարյալ գարուն էր ուղում: Մեր աչքի գրված է մի ուրիշ փաստ, որ ցույց է տալիս Արծրունու այդ տեսակ վերաբերմունքը:

Հայերը ունեին թատրոնական ներկայացումներ: Իբրև սկզբնավորութուն, կարելի է օր. Շուշանիկի դատողութեան համաձայն, պետք է ապացուցանեին, որ հայերը թատրոն ունեին: Բայց ահա Ստեփանեն «Հայկական Աշխարհի» մեջ ըննադատում է այդ ներկայացումները, դժգոհութուն է հայտնում, պատկերներ է անում, բայց ոչինչ չէ դուրս գալիս: Եվ Ստեփանեն հուսահատված գրում է. «Չէ կարելի հայկական թատրոն գնալ որպես դիտող, քննող, գրող, որովհետև գրողի անկեղծ խոսքերին ուշք չեն կամենում դարձնել... Հողմաշ չի լինում ասելով, որ Թիֆլիսում հայկական թատրոն չկա. տարին երկու-երեք անգամ ընդհատվում են ներկայացումներն չէ կարելի ազգային թատրոնի անուն տալ»:

Եվ Ստեփաննն ալեկացնում էր. «Գ. Արծրունուց կամ անաշառապես մտածող Հայից կսպասեմ, ինչ կասեն այս իմ խոսքիս մասին»:

Արծրունին անպատասխան չէ թողնում իր խմբագրի այս հրապարակական դիմումը: Խմբագրությունն ուղղած նամակում նա առաջին մտքի, այսինքն թատրոն գնացող գրողի դրուժյան մասին ասում է. «Իմ միտքս այն է, որ եթե ուշք չեն դարձնում մեր խոսքերին, սա չէ նշանակում, որ չպետք է շարունակենք քննել, խոսել և գրել: Թող ուշք չդարձնեն, մենք դարձյալ կշարունակենք գրել, խոսել և քննադատել... ով գիտե, կարելի է ժամանակով ուշք կդարձնեն»:

Գալով այն բանին, որ Հայաստանը (Ստեփաննն) «հոգեմաշ է լինում, տեսնելով, որ Թիֆլիսում հայկական թատրոն չկա, Արծրունին ասում էր. «Զգիտեմ ինչի՞ է շարշարվում այսպես պ. Հայաստանը թատրոնի մասին. կարծեմ որ ազգային թատրոնի անբնական դրուժյունը բացառություն չէ Հայերի ազգային հիմնարկությունների թվում»:

Ազգային թատրոն չկա... բայց կա՞ն միթե ազգային ուսումնարաններ, կա՞ ազգային գրականություն, կա՞ն ազգային օրագրեր:

Տարին երկու ներկայացմունքը ազգային թատրոն չէ կարելի անվանել, այս ճշմարիտ է: Բայց մի՞թե ազգի մեջ երկու-երեք ուսումնարանը ազգային կրթություն են ներկայացնում: Մի՞թե օրագրերը, որ երկու կամ երեք ամիսը մի անգամ է երևում, կարելի է ազգային օրագրականություն անվանել: Մի՞թե ժողովրդի վերա մի որևիցե ազգեցություն կարելի է ունենալ օրագրի միջոցով: Երբ որ օրագրի տետրակները կանոնավոր կերպով ամսեամիս անգամ չեն կարող հրատարակվել:

Ցավալի է ասել, բայց այս ճշմարտություն է, որ ժողովուրդը միշտ է ամեն տեղ երեխա է: Եթե դուք նորան հաճախ չեք կրկնի միևնույն մտքերը, եթե դուք նորան ամեն օր ազգային լեզվով գրած թերթը չեք առաջարկի՝ ես մտածել կդադարեմ, նա կմոռանա յուր ազգային լեզուն: Ցավալի է ասել, որ քնած մի ժողովրդի մեջ մասնավոր մարդիկներից է կախված գրգռել և ծել պահանջմունքը:

Ժողովուրդը այնքան տգետ և մտավորապես ստրկացած է, որ ինքն չէ հասկանում յուր պահանջմունքը: Աղքատ, թեև ուսյալ մարդիկներին դժվար է մի որևիցե գործ սկսել, որովհետև նոցա պակաս են դրամական միջոցները, իսկ ժողովուրդը նոցա գործունեությունը չէ համակրում և չէ կարող ևս օգնել: որովհետև պահանջմունք չունի ազատվել խավարից, նախապաշարմունքից, տգիտությունից... նա բավական է յուր մտավոր ստրկությունը, նա բավական է յուր կեղտով և թերությունը... կամ ավելի լավ ասեմ, նա անզգա է:

Իսկ հարուստները...

Ուստի ոչ դերասանական խումբ պետք է մեղադրենք, որ ազգային թատրոն չկա, ոչ խմբագրությունը պետք է մեղադրենք, որ օրագիր չկա, ոչ ուսուցիչներ պետք է մեղադրենք, որ ազգային կրթություն չկա, ոչ ևս ժողովուրդը պետք է մեղադրենք, որ եռանդ, հոգս չկա»:

Եթե չլինեին վերևի այն տողերը, թե անհատներին է մնում գրգռել քնած ժողովուրդը, պահանջներ ծնեցնել, Արծրունու այս վերջին պարբերությունից պետք կլինի եզրակացնել, թե Արծրունին մեկն էր այն մարդկանցից, որոնք շատ լավ հասկանում են ժողովրդի դրուժյունը, բայց շատ լավ գիտեն և ասում որ այդ ժողովրդի համար ոչինչ չէ կարելի անել: Երկրորդ անգամն է, որ Արծրունու հայտնած մտքերը առաջին անգամից կարծես այս տեսակ տպավորություն են թողնում: Բայց ամեն ինչ շատ պարզ է: Լուսաբանելով իրողությունները, Արծրունին, ինչպես մի անգամ արդեն ասել էր, ամենևին չէր մտածում

մեղավորներ գտնել, դատապարտել նրանց: Ասելով, թե հայ կինը հայերեն կարդալ չէ իմանում, նա չէր ուզում մեղադրել հայ կանանց, ինչպես նաև հայկական թատրոնի թշվառ դրուժյան համար չէր մեղադրում հայ դերասաններին: Ոչ, դժբախտությունը, պակասությունը չափազանց բավական է, հասկանալի, երբ չկա արթուն, առողջ հասարակություն, ի՞նչ գործ կարող է բարգավաճել: Եվ հասարակությունն էլ մեղավոր չէ, որ այդպես է: Հարկավոր են գործող, գրգռող անհատներ: Ցավալի է սա, որովհետև զարգացած հասարակությունը ինքը պիտի հասկանա իր պահանջները: Բայց ցավելով բան չի գտնա. ուրեմն գործող, աշխատանք, եռանդ չլինալով անհատներ են հարկավոր հասարակության բարիքի համար: Քնած է ժողովուրդը, անզգա է: Գա նշանակում է, որ աշխատավոր անհատների մեծ կարիք կա:

Այս գեղեցիկ նամակը, որ պարունակում է իր մեջ մի ամբողջացրած աշխարհայեցողություն, մի մեծ ու ընդարձակ ծրագիր, հիացական վկայություն առաջ բերեց «Հայկական Աշխարհի» մի պատահական ընթերցողի կողմից: Գիրքնախից Գեորգ Շահնազարյան դե-Շափուր գրում էր հետևյալը. «Վերջերս մտ շատ քիչ է պատահել ինձ, որ մեր օրագրերը այնպես գրավեն իմ սիրտը և պահանջեն իրանց լիովին կարդալ, ինչպես մեր օրագրի հիշյալ թերթերը. ժանազանոր ազնվամիտ պ. Գրիգոր Արծրունու փափկաշունչ և նյութավոր հոգեվածները: Գորա հեռաստանից հաղորդած ամեն մեկ տող գրվածը ունեցան ինձ վերա մեկ առանձին կենսատու և սփոփիչ ազգեցություն: Զգիտեմ ինչ է պատճառը, բայց Հեյդլբերգը ինձ Աթենք թվեց: Մեծապատիվ օրիորդ Շուշանիկի բողոքը նմանապես մեկ վարմանալի և հաղվագյուտ երևույթ է մեր գրականության: Կմաղթեմ երկնային Ստեղծողից, որ նա պիտի պահի այդպիսիներ մեր ազգի համար»:

Հեյդլբերգը՝ Աթենքը: Սիրուն նմանություն է սա. նամակագիրը ի նկատի ունի այն Աթենքը, որ հինգերորդ դարում լուսավորության գեղեցիկ ճրագ վանեց Հայաստանի մեջ հայ երիտասարդների միջոցով: Բայց Հեյդլբերգում լատ չէին ուսում առնող հայ երիտասարդներ: Հին Աթենքը հիշեցնողը Գրիգոր Արծրունին էր: Եվ ահա «Հայկական Աշխարհի» 1869 թվի վերջին համարում Ստեփաննն հաղորդում էր իր ընթերցողներին մի այսպիսի նորություն. «Հայկական Աշխարհի» աշխատակից և մեր սիրելի բարեկամ Գրիգոր Արծրունին լոկտեմբեր ամսին Հեյդլբերգի համալսարանում ուսումնական քննությունից և յարադրություն պաշտպանելուց հետ ստացավ քաղաքական տնտեսության և իմաստասիրության դոկտորի բարձր աստիճան: Ամեն մտածող Հայի աչքում այս մեծ նշանակություն ունի իհարկե: Գերմանիայում դոկտորի աստիճանին արժանանալ՝ հեշտ գործ չէ, այո: Եվ պ. Արծրունին առաջինն է, որ արժանացավ այս աստիճանին: Ես որպես Հայ պարծենում եմ սորանով»:

Հեյդլբերգից փիլիսոփայության երիտասարդ դոկտորը հայրենիք չվերադարձավ: Նա գնաց Փարիզ, ուր համալսարանում լսում էր քաղաքական տնտեսության դասախոսություններ: Բայց Ֆրանսիայի մայրաքաղաքը երկար չպադից իր մեջ Արծրունուն. գերմանական ուսուցում ստացած երիտասարդը չէր կարող շատ բավական մնալ ֆրանսիական ուսումից: Ինչպես կտեսնենք, նա չէր կամակրում ֆրանսիական ազգի հատկություններին, ուստի շտապեց դարձյալ վերմանական համալսարան գնալ և այդ պատճառով 1870-ի հունվարին անցնում է Վիեննա: Բացի նրանից, որ այդտեղի համալսարանում Արծրունին լսում էր Լորենց Շտեյնի և Շեֆլիի քաղաքատնտեսական դասախոսությունները, վկայություն մայրաքաղաքը տալիս էր մեր երիտասարդին և մի հարմարություն, որի մասին մի քիչ մանրամասն կխոսենք:

Արծրունին բավական չէր համարում այն հայերենագիտութիւնը, որ ձեռք էր բերել սեփական աշխատանքով ուսանողական տարիներում: Մենք տեսնուք թե ինչպես էր նա յուրացրել աշխարհաբար լեզուն: Եթէ հարցը միայն այդ լեզվով գրելը լինէր, Արծրունին գուցե և բավական համարեր իր ունեցած որոշարը: Բայց պատրաստվելով գործնել հայոց գրականութեան մեջ, նա անհրաժեշտ համարեց ավելի փորձ ու հմտութիւն ձեռք բերել հայերենագիտութեան մեջ: Հարկավոր էր դիմել ուսուցչի: Արծրունին ուզում էր ավելի լավ ծանոթանալ գրաբար լեզվի և մեր հին գրականութեան հետ: Ասում ենք ավելի լավ որովհետև արդեն գիտենք, որ նա առանձին ուշադրութիւն էր դարձնում եվրոպական լեզուներով հրատարակվող հայագիտական շարագրութեաների վրա և գրանց միջոցով ուսումնասիրում էր մեր անցյալ կյանքն ու գրականութիւնը: Գրաբար լեզվին ծանոթանալու ձգտումը Արծրունին հայտնել է իր արտասանման լեզուներին մեջ մի քանի անգամ: Այսպես, «Հայկական Աշխարհի» 1869-ի վերջին տետրակում Արծրունին խոսում է այն հայերեն քերականութիւնների մասին, որ կաղմբ են Պետերման, Վինդիշման, Բոպ, և ասում է, թե դրանց միջոցով դժվար է ուսումնասիրել հայերենը: Այդպես չէ այն քերականութիւնը, որ 1869-ին Վիեննայում հրատարակեց դոկտոր Լատեր: Կարգալով այդ քերականութիւնը, Արծրունին ասում էր, թե «այս փոքր գրվածքը (98 էրեսներից բաղկացած) միջոց է ներկայացնում ընթերցողին հայ գրական լեզվի ձևերը թեթև, հասկանալի և կենդանի ոճով ուսումնասիրելու»:

Ահա այս բոլոր ջանքերը բավարար չհամարելով, Արծրունին վճռում է վարժվել հայերենագիտութեան մեջ՝ ուսուցչի ղեկավարութեամբ: Եվրոպայում կային հայերենի հմուտ, հեղինակավոր ուսուցիչներ և գրանք Միխիթարյան վարդապետներն էին: Վիեննայում Արծրունին դիմում է Միխիթարյաններին վանքը: Նա ինքը պատմել է իր հայերենով պարապելու բոլոր հանգամանքները: Եվ մենք կօգտվենք նրա այդ հիշողութիւններից, բերելով հետաքրքրական կտորները, որոնք ներկայացնում են ինքնակենսագրական նյութեր:

Նախապես հարկավոր ենք համարում հայտնել մեր ընթերցողին, որ Վիեննայի Միխիթարյան վանքը այն ժամանակներում անկման և հետամնացութեան շրջանում էր գտնվում: Գեո չէին եկել Հ. Այսոյանի արքայութեան ժամանակները, երբ Վիեննայի միաբանութիւնը զարթնեց և սկսեց մի գեղջիկ դիտական-գրականական գործունեութիւն:

«Վիեննայի Միխիթարյաններին,— ասում է Արծրունին,— ես չհավանեցի նրանք սարսափելի նախապաշարված, հնապաշտք և տգետ մարդիկ երևեցին ինձ և բոլորովին հիշեցրին ինձ մեր տգետ հոգևորականներին: Երբ առաջին անգամ գնացի Mechitharisten-gasse փողոցում գտնվող նրանց հիմնարկութիւնը և մեծ մուրճով բախեցի ահագին դուռը (զանգակ չկար դռան մտնել արեղաններից մեկը զգուշութեամբ բացեց դուռը և զարմացած ու կարծես վախեցած նայեց ինձ վրա... Ես անմիջապես սկսեցի խոսել հայերեն և հարցրի թե կարո՞ղ եմ արդյոք տեսնել արքահորը...»

— Ich verstehe nicht (չեմ հասկանում),— եղավ պատասխանը գերմաներեն լեզվով:

Բանից երևաց, որ արեղան գերմանացի էր... ճարահատված սկսեցի խոսել արեղայի հետ գերմաներեն լեզվով: Նա դուռը նորից փակելով և ինձ փողոցում մենակ թողնելով, գնաց օրապահ վարդապետին իմ գալու մասին իմաց տալու համար, սա էլ ուրիշին, երեկ ավելի մեծին և այլն և այլն, միևնույն ժամանակ:

¹ «Մշակ», 1890, № 49 և 50:

«այտնեցին արքահորը, թե մի օտարական ուզում է տեսնել դռան... Եվ ես այդ ամբողջ ժամանակ փակած դռան մոտ պետք է կանգնեի ու սպասեի...»

Վերջապես, բարեհաճեցին ինձ թույլ տալ կաթոլիկների այդ միջնադարյան սրբավայրը մտնելու: Դուռը բացվեց և այս անգամ մի հայ արեղա խնդրեց ինձ ներս մտնելու:

Անվերջանալի կորիզորներով անցնելով և ոչ ոքին չհանդիպելով (երեկ բոլորն էլ խուցերն էին մտել), վերջապես ես իմ ուղեցույցիս հետ մտանք արքահոր խուցը: Սա ընդարձակ և բարձր սենյակ էր, պարզ և անշուք:

Ես ուղղակի ասեցի, թե ինչ էր իմ նպատակս. ես ուզում էի հայերեն լեզվի պատեր առնել և խնդրում էի, որ արքահայրը վարդապետներից միին նշանակեր ինձ ուսուցիչ:

— Հրամանքդ ո՞վ եք, ո՞րտեղացի եք,— հարցրեց ինձ ծերունի արքայրը, Վարդան եպիսկոպոսը:

Ես ասեցի: Մի տեսակ սարսափ նկատվեց, թե արքահոր և թե երիտասարդ վարդապետի երեսին, երբ հայտնվեց, որ ես կաթոլիկ չեմ, այլ լուսավորչական եմ... Խեղճերը չգիտեին ի՞նչ պատասխան տան... Հայ լուսավորչականի պես է ընդունան աշակերտ կաթոլիկ վանքում...

Մի քանի բռնակների լուսնուկից հետո սրբազանը հայտնեց, թե կառայարկի իմ խնդիրը միաբանութեանը և խորհուրդ անելուց հետո «ինչ որ արկն է» կտնօրինեն ու շորս օրից հետո ինձ կտեղեկացնեն:

Ապա փոխելով խոսակցութեան նյութը, եպիսկոպոսը հարցրեց ինձ ո՞վ է արքա: Ես անմիջապես պատասխանեցի, թե ժենեւալ է, մտածելով, որ այդ տեսակ մարդկանց համար ոչինչ բան այնքան մեծ նշանակութիւն չունի, որքան բարձր պաշտոններ և տիրոջաներ: Ժենեւալի որդի լինելս գուցե կօգներ ինձ վանքում աշակերտ ընդունված լինելու...

— Ո՞րտեղ եք ուսում առել,— շարունակեց ծերունի եպիսկոպոսը:

— Հելդերբերգում, սրբազան,— պատասխանեցի ես:

— Հայտնաբերի, Հայտնաբերի...— կրկնեց նա մի քանի անգամ:

Ես, կարծելով, թե նա չէ հիշում որտեղ է գտնվում Հելդերբերգ քաղաքը, ավելացրի, թե Բազնի դքսութեան մեջ:

— Ի՞նչ առարկա եք սովորել,— դարձյալ շարունակում էր հարցուփորձ անել ինձ եպիսկոպոսը:

— Քաղաքական տնտեսութիւն,— ասացի ես:

Նա զարմացած նայեց վրաս. պարզ էր, որ ծերունին չգիտեր, թե ինչ բան է քաղաքական տնտեսութիւնը: Կարծելով, որ Վիեննայի պես գերմանական քաղաքում ապրելով նա ավելի կհասկանա գիտութեան իմ ճյուղի եվրոպական տնտեսը, ես անմիջապես ավելացրի «National-Oeconomie», «Economie politique»...

Ծերունին շարունակում էր զարմացած նայել վրաս և վերջը մի հառաչանք արձակելով, ավելացրեց.

— Է՛հ, ինչ ասես գիտութիւններ կան այժմս... Թիրլոմասի կրսեն, բրիթիք կրսեն, էգոնոմի կրսեն... ես ինչ գիտեմ... Գիտութիւնները կավելնան մարդկութեան մեջ, սակայն բարոյականութիւնը հետզհետե կընկնի...

Չորս օրից հետո ինձ պատասխանեցին, որ ընդունում են առաջարկութիւնս: Կնշանակեն ինձ մի վարժապետ՝ ուսումնական արեղաններից մեկին, կտնեն ինձանից յուրաքանչյուր գասից 2 գուլդեն և ես կարող եմ սկսել դասերիս առնելը:

եվ ահա ես սկսեցի հաճախել վանքը շաբաթը շորս անգամ: Իմ վարժապետս մի երիտասարդ լեհաստանցի (գալիցիացի) հայ էր, որի աղջանունը ես այժմ չեմ հիշում:

Այդ ժամանակ եկավ Վիեննա և Սեդրակ Մանդինյան: Նա որպես Մանասարյանցի որդեգիր, եկել էր Մանասարյանցի և Եղովի հանձնարարականներով նրան էլ ընդունեցին Մխիթարյանները, միայն նրանից կարծեմ 1 գուլդեն կամ 1,5 գուլդեն էին առնում գասից, որովհետև «նա բարեբարի մը հաշվով կուսաներ» այնինչ ես «ծենեկալի մը որդի էի»...

Մանդինյանին էլ մի վարժապետ նշանակեցին: Մենք երկուսս էլ շատ զժգոհ էինք մեր վարժապետներից: Միայն ես հարմարվում էի, կամ ավելի լավ է ասել ինքս աշխատում էի իմ դասերին ուղղութիւն տալ, բացատրելով վարժապետիս, թե հասակ առած, համալսարանում ավարտած, 24 տարեկան մարդու հետ պետք է բոլորովին ուրիշ կերպ պարապել, քան թե մի մանուկի հետ:

Իսկ Մանդինյան այն աստիճան դայրացած էր՝ հասակ առած մարդկանք հետ պարապելու ուսումնական սուրբ հայրերի անընդունակութունից, որ շաբաթ չէր անցնում, որ նա չգնար եպիսկոպոսի մոտ ու չզանգատվեր իր վարժապետից, խնդրելով, մի ուրիշ վարժապետ նշանակեն: Այդպիսով նա մի ձմեռվա ընթացքում մի քանի վարժապետներ փոխեց և դարձյալ զժգոհ էր:

Ես իմ լեհաստանցի երիտասարդին հավատարիմ մնացի ամբողջ ձմեռը, Մանդինյանի պես անդադար բողոքելը ասպարդյուն համարելով: Խեղճ մարդիկ իրանց ամբողջ հաստատություններ, իրանց աշխարհայեցողություններ, իրանց պահանջարկ մտավոր շրջաններով, մեղավոր չէին... Նրանք իրանց ամբողջ վանքով, ժամանակակից, քաղաքակիրթ, առաջադեմ և զվարճասեր Վիեննայի ամենագեղեցիկ արվարձաններից միում, մի տեսակ անախրոնիզմ էին կազմում... Միջնադարյան մի ուրվական ժամանակակից քաղաքակիրթ Եվրոպայի կենտրոններից միում...»:

Պարապմունքները, ավելորդ է ասել, արգելք չդառան, որ Արծրունին շարունակե կանոնավոր կերպով իր աշխատակցությունը «Հայկական Աշխարհիկ Փարիզից նա երկու նամակ ուղարկեց, որոնցից առաջինում նկարագրում էր Ֆրանսիացուն, իսկ երկրորդի մեջ խոսում էր Ռոջֆորի ընտրության մասին: Հետաքրքրական է առաջին նամակում դուրս բերած գիծը, որ բնորոշում էր Ֆրանսիայում տեղի ունեցող հեղաշրջումը հասկացողությունների մեջ»:

«Ֆրանսիացին,— ասում է Արծրունին,— պաշտում է ինքն յուրան, պաշտում է յուր անցյալը և ներկան... Ֆրանսիացին դասեր էր տալիս ուրիշ աղջերին, իսկ ինքն սովածների փոխարենը դաս չէր առնում:

Այս ուղղությունը հակառակ էր ժամանակակից ոգուն, հակառակ էր տնտեսական օրենքին: Ինչպես աղջերի նյութական կյանքում, այնպես և նոր մտավոր, հոգևոր կյանքում փոխադարձություն պետք է լինի:

Այժմյան ժամանակում մի աղջ կամ պետք է փոխադարձության հիմք ընդունեն, կամ պետք է մեռնեն և շանվանի յուրան աղջ:

Ֆրանսիական աղջն ևս չկարողացավ հետ մնալ առաջադիմության բնագետնուր ընթացքից. նա սկսում էր ուսումնասիրել օտար աղջերի կյանքը և լեզուն սկսում է հաշտվել փոխադարձության տնտեսական գաղափարի հետ, սկսում է հասկանալ յուր պակասությունները, չննել յուր անցյալը և ներկան»:

Փարիզից է գրված և «Նոր Տարի» հոդվածը, որ սպվեց «Հայկական Աշխարհի» 1870 թվի № 1-ի մեջ: Այստեղ Արծրունին պարզում է իր վերաբերմունքը դեպի հին սերունդը: Ահա մի քանի քաղվածքներ այդ հոդվածից.

«Հանգիստ թողնենք հին սերունդը, որովհետև նա յուր պաշտոնը կատարելուց հետո, ինքն կարող է հանգստություն: Բայց մեզ ժառանգություն թողած նորա գործերը և սկզբները խստություններ քննադատենք:

... Նոր տարի չպետք է անիծեն հին տարի, այլ հանգիստ ոգով բողոքեն նորա վնասակար գործերի դեմ, նորա պակասությունների դեմ, և աշխատեն նորա արած փորձերից օգուտ քաղել:

... Հին մարդիկ բարի ծնողներ ևս լինելով, կարծում էին, թե կրեխաներ իրել նշանակում է նոցա հետ բռնավորությամբ վարվել: Մենք կարծում ենք, թե կրեխաներ դաստիարակել նշանակում է դարգացնել նոցա մեջ անհատությունը: Հին սերունդը դեպի կին ունեցած սերին միացնում էր նախանձը՝ մենք կարող ենք սիրել միայն այն կին, որին պատվում ենք: Հին սերունդը կարծում էր, թե կնոջը հարկավոր չէ կրթված լինել, իր պարտավորություն կատարելու համար. մենք պահանջում ենք կնոջ համար այդ մարդին հավասար լուսավորվելու իրավունք: Հին սերունդը միացնում էր քրիստոնեության ուսումը մտավոր և մարմնավոր ստրկության հետ, նոր սերունդը քրիստոնեության գաղափարը չէ զանազանում ազատության գաղափարից:

Հին սերունդի մարդիկ լավ քրիստոնյաներ ևս լինելով, մարդիկներ պատի պես առնում և ծախում էին: Նոցա կարծիքով Բրիտանյա լինել նշանակում էր անհամբեր լինել դեպի ուրիշների հավատը, արդար լինել նշանակում էր այրել այն ամեն մարդիկներ, որոնք նոցանից տարբեր կարծիքներ ունեին: Օգուտ բերել հասարակությանը նշանակում էր ոչնչացնել անհատական կյանքի երևույթները, ինչքան կարելի էր անմշակ թողնել մարդկության մտավոր հողը:

Բայց ոչ թե միայն չպետք է թշնամանանք հին սերունդի հետ, այլև պետ է նորան մեր շնորհակալությունը հայտնենք նորանից մեզ ավանդված գործերի և սկիզբների համար: Բայց ի՞նչ միջոցով: Ահա ինչ միջոցով. խստություններ քննադատելով նորա գործերը և սկիզբները և ձգտելով հեռացնել նոցա մեջ գտնվող սխալներ և պակասություններ, աշխատելով բարվոքել կյանքի ներ և ոգին, մաքրելով սկիզբների էությունը ճշմարտության և արդարության, այսինքն կրթության միջոցով:

... Ժամանակ կլինի, երբ մենք ևս ինչ սերունդ կդառնանք... ուստի բոլոր մի չկորցնելով աշխատենք անդադար բարվոքել մեր կյանքը, որ ինչքան կարելի է մաքուր խղճմտանքով ներկայանանք ապագա սերունդի հասարակական դատաստանին:

Այս է իմ շնորհավորությունը դեռահաս սերունդին նոր տարու պատկառությամբ:

Խիստ քննադատություն իբրև շնորհակալության արտահայտություն դեպի անցած-գնացածը, կատարելագործությունը, առաջադիմությունը իբրև անցած սերունդին երախտապարտություն հայտնելու ամենագեղեցիկ միջոց: Տեսնո՞ւմ եք, ինչպես էր հասկանում Արծրունին այն բաները, որոնք այնքան հարկավոր էին հնության խնամակալությունից ազատվելու և միանգամայն վերանորոգվելու, նորից ծնվելու համար: Խիստ քննադատությունը, անխնա վերաբերմունքը դեպի հին սերունդի գործերը ոչ անհոգ են, ոչ թշնամություն. դրանք արագործություններ են, դրանք նվիրական պաշտամունքներ են: Վախել այդ բաներից՝ դավաճանություն է, թույլ ու տատանվող լինել՝ խղճության, կորստության նշաններ են: Զարմանա՞նք, որ այսպիսի պաշտամունքներով մինչև արևի խորքը առգործված Արծրունին իր ամբողջ կյանքում քննադատություն չ, խիստ, անխնա քննադատություն, որ չգիտե հոգնել, չգիտե կտարվել...

Բայց շարունակենք մեր քաղվածքները Արծրունու հիշողություններով՝ Վիեննայում նա ամբողջ ձմեռը դասեր էր անում Մխիթարյանների վանքում։ «Չմեռվա վերջը ես հիվանդացա,— շարունակում է նա։— Թիֆլիսի բժիշկ Մարկոզով այդ ժամանակ Վիեննայում էր. նա պարապում էր «Allgemeines Krankenhaus» նշանավոր հիվանդանոցում։ Նա ըննեց Խուրճքը և ինքն տարավ ինձ աշխարհահռչակ ծերունի Օպոլցեր բժշկապետի մոտ, որ պեսզի սա էլ բննի կուրծքս։ Օպոլցեր հրամայեց ինձ անմիջապես թողնել Վիեննա և գնալ հարավային երկիր։

Ես վճռեցի ուղևորվել Վենեցիա, որպեսզի մի կողմից կարողանամ կազմել առողջությունս, որը խախտված էր նախընթաց տարվա համալսարանական պարապմունքներիցս, իսկ մյուս կողմից կարողանամ շարունակել հայերենով պարապել։

Այսպիսով Վիեննա թողնելով ես տեղափոխվեցա Վենեցիա։

Ես Վենեցիա արդեն ճանաչում էի. մի երկու-երեք տարի սրանից առաջ ես այցելել էին այդ քաղաքը, մնալով այդտեղ մի երկու ամիս։

Անցել էր մի քանի օր իմ Վենեցիա գալուց հետո. ես սենյակ էի վարձել Սան Մարկո հրապարակից ոչ հեռու և բուն վենեցիացու պես օրվա մեծ մասնաց էի կացնում բաց օդում, Piazza san Marco հրապարակի կաֆեների մեկի առջև նստած լրագիր կարդալով և ազահուստով ներշնչելով ծովային մեղմ և առողջարար օդը։

Վերջապես ժամանակն անցնում էր, պետք է սկսեի պարապմունքները։ Եվ ահա մի գեղեցիկ առավոտ վարձում եմ Piazzetta ասված ծովեզրյա հրապարակից ոչ հեռու, ծովի ալիքների վրա ճոճվող նավակներից մին և ճանապարհ եմ ընկնում դեպի San Lazzaro կղզին, Մխիթարյանների միաբանության վանքը։

Ս. Ղազարն արդեն Վիեննայի միջնադարյան վանքը չէր։ Այնտեղ Արծրունին տեսնում է սիրալիր ընդունելություն, աշխատասիրություն, առաջակց գաղափարներ։ Այս բոլորը այնքան գեղեցիկ տպավորություն է թողնում Արծրունու վրա, որ նա մի առանձին հոգովածով («Մեծ Մխիթարի մահի տարեդարձը սուրբ Ղազարի վանքում») նկարագրում է «Հայկական Աշխարհի» մի իր տեսածն ու զգացածը։

Յուրաքանչյուր տարի ապրիլի 27-ին ս. Ղազարի վանքում տոնվում է Մխիթար Սեբաստացու մահվան տարեդարձը։ Արծրունին տեսնում է այդ հասցեսը, տեսնում է վանքի դպրոցի աշակերտներին, լսում է ճառասացությունները և նկարագրում է այդ բոլորը։ Նկատենք, որ այս հոգվածի մեջ Արծրունիցուց է տալիս նույնիսկ բանաստեղծական տրամադրություն. դա Մխիթարյանների կղզու ազդեցությունն է, այն կղզու, որ Բայրոնին էր ոգևորել։

«Ի՞նչ իրավունք ունի բանաստեղծ այսինչ կամ այնինչ տպավորություն տակ գրած բանաստեղծությունը ձեզ առաջարկել, ձեզ տխրացնել կամ ուրախացնել... Ի՞նչ իրավունքով մի հեղինակ յուր աչքով է նայում այս կամ այն երևույթի վերա, յուր գրվածը շնչավորում է տխուր կամ ուրախ զգացմունքով... Ի՞նչ իրավունք ունի նա ձեզ յուր ցավերի ցավակից անել և յուր ուրախության ուրախակից...»

Այն իրավունքը, որ կա աննատություն, անձնական կազմվածքի պայմաններով, անձնական զգացմունքով, սերով, հասկացողությամբ, ընդունակությամբ, ձգտողություններով...

ձեզինապար առաջարկում է ձեզ յուր կարծիքը յուր համոզմունքից և զգացմունքից բղխած, ձեզանից, ձեր բարի կամքից է կախված ընդունել այն կարծիքը կամ ոչ»։

Այս նախաբանից հետո Արծրունին նկարագրում է Մխիթարյանների ժամասացությունը. «Հայի վերա, որը օտարություն մեջ լինելով, վաղուց լսած էր ազգային ժամասացությունը, մի առանձին սիտփիշ տպավորություն էին տեսնում այս հեռու երկրում ճշտությամբ պահված ազգային եկեղեցական ծեսեր և արարողությունները։ Ի՞նչ վնաս, եթե այն հոգևորականները կաթոլիկներ լինեին... Երգեցողությունը, արարողությունները, բոլոր ժամասացությունը հին հայկական պատմական ճշտությամբ էր կատարվում։

Հինգերորդ դարում պարսիկների դեմ պատերազմում մեր ազգային մարտիկներից երգած սաղմոսները նույն ճշտությամբ և նահապետական ձևով երգվում են և այժմ...»

Աղբիւրի ծովի մի փոքրիկ կղզու վերա, փոքրիկ մի եկեղեցում, որը նորա մեզ հավաքված փոքր խմբի համեմատությամբ շափազանց մեծ էր երևում, մի կողմ ձգելով ամեն տեսակ նախապաշարմունքը, Հայն կարող էր յուրան այն օրը յուր հայրենիքի մեջ կարծել... Հեռու ծովի փոքրիկ մի կղզու մեջ այս խումբը ջերմեռանդ աղոթքով, յուր հնադարյան եկեղեցական երգերում հիշում էր, կարծես, յուր քաղմափորձ պատմության ամենանշանավոր երևույթները... Գրիգոր Լուսավորիչ, Վարդան, կրոնի և ազգի համար նահատակված մարտիկները, այս բոլոր անունները հիշեցնում էին Հային անցած ժամանակները, արուցանում էին նորա սրտում յուր կորած կյանքի բարձր գաղափարները։

Պատարագից ետ Մխիթարյան հայրերը պատահեցին և ընդունեցին մեզ յուրանց սովորական, Ս. Ղազարի կղզում եղած օտարների հայտնի, քաղաքավարությամբ, քաղցրությամբ և հյուրասիրությամբ, որոնք հատուկ են նախապաշարմունք շունչեղ, զարգացած և կրթված մարդիկներին»։

Մեծ դահլիճում սկսվում է ճառախոսության հանդեսը, որին ներկա են միաբանությունը, հրավիրվածները, Ռաֆայելյան վարժարանի և վանական գրքոցի աշակերտները։ Երիտասարդ վարդապետներից մեկը գրաբար մի ճառ է կարդում Մխիթարի մասին։

«Երկար, երկար, մոտ մի ժամ տևում էր այս ճառը... Խրթին գրաբարով, բարձր ոճով էր գրված նա... բացի սորանից ամեն դասական լեզուներին հատուկ փառավոր, անբնական արվեստական ձայնով էր կարդացված։ Առաջին քայլ մարդս աշխատում է հասկանալ, բայց տեսնելով, թե իզուր է նորա բոլոր ջանքը, նա հաշտվում է այն անբնական ձայնի և վաղուց անցած դարերի հիշյունների հետ... և շարունակում է լսել այն ճառը ոչ թե մտքեր հասկանալու նպատակով, այլ որպես մի երաժշտություն։

Ես շատ քիչ հասկացա... հասկացա՞ն արդյոք աշակերտները, սա ինձ անլուծելի հարց է մնացել։ Ես ինձ Հայ զգալով նմանապես ցանկանում էի արողապես հասկանալ Մխիթարի կյանքի և նորա հիմնարկության պատմությունը, ազգի համար այս կենսատու երևույթի պատմությունը... Ինչի՞ մի կենդանարար երևույթը պատմվում է մեռած լեզվով։

Կարելի է Մխիթարյան հայրերը յուրանք չգիտեն մինչև ինչ աստիճանի նորա մեր ազգի հավատարիմ պատկեր են, կարելի է նոքա յուրանք չեն հասկանում մինչև ինչ աստիճանի նոքա մեր ազգային կյանքի ճիշտ արտահայտություն են։

Սլոբ. Գեորգ արքեպիսկ. Հյուրմյուզյան արքահայրը մի փոքրիկ և ազդու խոսով, աշխարհաբար լեզվով, պատասխանեց երիտասարդ վարդապետի ճա-

ուսխոսութեանը: Այս փոքր ճառի մեջ արտահայտվեցա՞վ բոլոր միաբանութեան ոգի, բոլոր հիմնարկութեան ուղղությունը: Նշանավոր էր մանավանդ նորա խոսքի հետագա միտքը. «Հիմնողից տված էր այս միաբանությունը աստվածային և կրոնական ուղղությունը. մենք կարող ենք ընդարձակել, կարողացնել նորանից մեր մեջ դրած ոգին, բայց պահպանեցնել երբեք չենք կարող»:

Այս խոսքերը լսելով ինձ թվում էր, թե պատմական ժերունտ բերանից ես լսում էի ոչ թե միայն Մխիթարյան հիմնարկության, այլև բոլոր ազգային ուղղության նկարագրությունը... աստվածային և կրոնական ոգի...

Այս օրվան բոլոր հանգեսը ընդունակ էր մի խորին և անջնջելի տպավորություն թողնել մարդի սրտի վերա:

Այս հանգեսի մեջ կերպարանավորվում էր բոլոր ազգի կյանքի ոգին:

Բոլոր շրջապատող երևույթները զարմանալի ներդաշնակության հարսբերությունների մեջ էին գտնվում: Դժվար կլինեք ինձ ասել, որ այս բոլոր երևույթներից ավելի մեծ տպավորություն ունեցավ ինձ վերա:

Մեռած լեզվով նկարագրված մեր նոր պատմության միակ կենդանարար երևույթը, սրբ. աբբահոր ճառի ոգին, երեխաների ծանր երեսները, որոնք վերա ամենևին չէին նշմարվում երեխայական զգացմունքը, և կյանքը, որ բոլորը վկայություն էր տալիս ծերացած մի ազգության իրողությունը:

Միայն չէր կարելի. դուք ուշք դարձնելով այս բոլոր երևույթներին, կհամոզվեիք, որ ունիք ձեր առաջ ոչ թե յուր մանկական հասակում գտնվող ազգը, այլ բազմափորձ, հնասեր, ծերացած ազգության ներկայացուցիչները: Ակամա իմ աչքս ընկավ դահլիճի մի անկյունի վերա... այնտեղ, աշակերտների մեջտեղը կանգնած էր նգիպտոսից բերած, և վանքին ընծայված, մի շատ հին եգիպտական գմուլված մաւմիւն...

Հազար և հազար տարիները այն մարմինը, կենդանի ևս չլինելով, մոռնալով, միևնույն գրություն մեջ պահպանվում է...

Վանքից դուրս եկած, կրկին նստելով նավակը, ես նայում էի կզգայափերից կապույտ ծովի հեռավորության մեջ, ազահույթյամբ ծծելով խառն օդը... ծայրահեղ զգացմունքը կոչվում էին իմ մեջ. մի կողմից ես չէի կարող չզգալ ջերմ շնորհակալության զգացմունքը դեպի մեծ Մխիթարի հիշատակը և նորա հիմնարկությունը, իսկ մյուս կողմից՝ տխրություն...

Զգիտեմ ինչի ես հիշեցի երևելի գերմանացի Գյոթեի օրհասական ողբերգակը՝ լույս, լույս... Այն բոստում ես կամենում էի կանչել՝ կյանք, կյանք...

Այս հիանալի նկարագրությունը Գրիգոր Արծրունու անթիվ գրությունների մեջ մարգարիտի պես պիտի փայլե: Ի՞նչն էր այդքան ուժ, թարմություն, իսկ զգացմունք հաղորդում այդ գրության: Զմոռանանք, որ դա առաջին գործն էր որ գրում էր Արծրունին մեր իրականության անմիջական ազդեցության տակ: Թիֆլիսից նա հեռացել էր իբրև օտար կրթության մի հարազատ դասակարգ Մոսկվայում և Պետերբուրգում շատ շմեղելով, անցել էր արտասահման, որ տարիների ընթացքում կտրված էր հայությունից և միայն հիշողությունների պատանեկական ժամանակի տպավորություններով էր պատկերացնում ինքն առջև մեր կյանքը և գրում նրա մասին: Այժմ բոլորովին կազմակերպված և ամբողջացած իբրև զարգացած մարդ և մտածող, նա մտնում է այն հոյակապ վոր վանքը, ուր խտացած էր հայկական իրականությունը: Հանգեսը, հայկական խոսքը, շրջապատող ազդում են երիտասարդի վրա. նա տեսնում է Մխիթարի հիմնարկությունը, հայոց նոր պատմության այդ ամենափայլուն երևույթը, որ հայ մտքի առաջադիմությունն է ներկայացնում: Նայում է նա այդ երես֊թի երեսին, երախտագիտությամբ է լցվում, բայց միևնույն ժամանակ տես

նում է և հայության ոգին՝ հնություն և կրոն: Մերացած է այն ազգությունը, որ այդ վանքի միջոցով նայում է 24-ամյա երիտասարդին: Այլ սա այդ ծերունու երեսին կանչում է. «Կյա՛նք, կյանք»... Իրականությունը որքա՞ն ուժգին է խոսեցնում Արծրունուն: Այստեղ դեռ արտասահման է. դեռ շատ բան կոկված ու հղկված է, և նա դարձյալ այսպես է խոսում: Ի՞նչ պիտի լինի, երբ նա մտնե հայրենի իրականության մեջ, այն կյանքի մեջ, որին չէ գիպել կրթությունը, զարգացումը, հարատև, բեղմնավոր, սերունդից սերունդ անցած աշխատանքը...

«Նազաղություն, տոկուն աշխատանք, անձնվեր սեր դեպի հայրենիքի շրջատակները և միևնույն ժամանակ եվրոպական կիրթ վարմունքն ու լայն ժամանակակից հայացքներ ամեն հարցերի վրա, ահա Վենեցիայի սուրբ հայրերի հատկանիշը» — ասում է Արծրունին իր հիշողությունների մեջ:

«Կղզու վրա գտնվող վանական դպրոցը գործեց ինձ վրա, ինչպես և նկարագրել էի «Հայկական Աշխարհում», անախորժ տպավորություն. երևյալները չիմանդոտ, նիհար, դեղնած, ստրկացած, բթացած դեմքերով... Ներկա գրողներից դպրոցի տարեկան հանդեսին, համոզվեցա, թե դպրոցում տիրում է մեռած գրաբարականությունն ու հնացած սխոլաստիկական մեղցնող ոգին...

Բայց մի բան անուրանալի է, այդ այն է, որ Վենեցիայի Մխիթարյանները սիրահարված են իրանց հայրենիքի հիշատակներին վրա... Ուր և նայես, ուր և գնաս, այդ փոքրիկ աշխարհը, սուրբ Ղազարի կղզին հիշեցնում է քեզ հայրենիքի: Հայոց գրքեր, հայոց ձեռագիրներ, Հայաստանի տեսարանների պատկերներ, եկեղեցում հին հայկական պարզ ծիսակատարություն, այգու մեջտեղ մի մեծ ավազան Վանի ծովակի ձևով շինված...

Արեղանները սիրով ընդունեցին ինձ... Որքան տարբերություն նրանց և Վիեննայի միջնադարյան ուրվականների մեջ...

Մրանց հետ խոսելով, մարդ մոռանում է, թե նրանք կաթոլիկ են, մոռանում է նույնիսկ, թե նրանք արեղաններ են, այն աստիճան լուսավորված մարդիկ են նրանք: Մարդ նույնիսկ առաջին բոսպից ստիպված է նայել նրանց վրա որպես լուսավորված աշխարհականներից բաղկացած համեստ մի ուսումնական ընկերակցության վրա... Միայն հարկավոր չէ խոսել ու վիճել նրանց հետ կաթոլիկության մասին...

Ես հայտնեցի սուրբ հայրերին իմ նպատակս: Նրանք խորհուրդ տվեցին ինձ դիմել հ. Ղևոնդ Ալիշանին, որը այն ժամանակ Ռաֆայելյան դպրոցի տեսուչ էր և կենում էր քաղաքում գտնվող դպրոցի լիսնության մեջ:

Քանի մի օրից հետո ես վարձում էի Սան-Մարկո հրապարակում իտալացի մի ուղեցույց, որը ոտով տարավ ինձ նեղ և ոլոր-մոլոր փողոցներով ու փոքրիկ կամուրջներով դեպի Ռաֆայելյան դպրոցը:

Դպրոցը զետեղված է մի լայն կանաչի վրա գտնվող շքեղ հոյակապ պալատում: Հայր տեսչի հետ տեսակցության իրավունքը խնդրած լինելով, ես քարձրացա մի քանի ընդարձակ, գեղեցիկ կոբիդորներ և շուտով բախում էի որպես հայր Ղևոնդի առանձնասենյակի դուռը:

— Բա՛ց... — լավից սենյակից մի թույլ և խուլ ձայն:

Ես բաց արի դուռը և իմ աչքերիս ներկայացավ հետևյալ տեսարանը: Ահապին, լուսավորված սենյակ, լի գրքերի պահարաններով, մեջտեղ դրած մի մեծ գրասեղանով, որը բեռնավորված էր բազմաթիվ գրքերով և թղթերով, մի քանի գեղեցիկ, թեև հասարակ բաղկավորումներ, և մի դիվան, լայն և բարձր պատահանների վրա մուգ գույնի վարագույրներ, ահա Ալիշանի սենյակը:

Առաջին բոսիսն ես մարդ չէի տեսնում սենյակում... Մի վայրկյան անշարժ կանգնեցի սենյակի շեմքի վրա... Ուղղելով հայացքս դեպի ահագին գրասեղանը, այդ բոսիսն միայն նկատեցի մի շատ նիհար դեմքով մարդկային գլուխ գրքերի ու թղթերի ահագին կույտի մեջտեղ։

Ինչպես երևում է հայր Առնոլդը խորասուզված էր ընթերցանություն մեջ, երբ ես ներս մտա։

Նա անմիջապես տեղից բարձրացավ, մոտեցավ, մեկնեց ի՞նչ իր ձեռքը և ձեռքիցս բռնած՝ տարավ ինձ իր գրասեղանի մոտ, խնդրելով նստել։

Ես ասեցի թե ով եմ։

Ընդունելությունը բուրբուխն ուրիշ էր, քան թե Վիեննայի վանքում։

Ալիշան միջին հասակի, շատ նիհար, հիվանդոտ դեմքով, թույլ կազմվածքով, մոտ 50 տարեկան մարդ էր։ Նա սկսեց խոսել. ձայնը թույլ և խուլ, խոսակցությունը անդադար ընդմիջվում էր շոր, անախորժ հազով։ Խոսելու և պատասխան ընդունելու ժամանակ նա անդադար կարժրում էր, ինչպես մի օբիտորդ, կամ ինչպես մի գերմանացի համեստ պրոֆեսոր...

Ես հայտնեցի, որ կուզենայի նրանից հայերեն լեզվի դասեր առնել։

— Կներեք, չեմ կրնար, կուրծքս թույլ է, բժիշկները արգելած են ինձ շատ խոսել և բարձր խոսել, բայց կհանձնեմ ձեզ մեր դպրոցի օգնականի հայր Իգնատիոսին...

Ես շնորհակալությունս հայտնեցի։ Նա կրկին կարմրեց։

— Հրամանքը ժամանակ առ ժամանակ կգրեք թիֆլիսի լրագիրներում մեջ, — շարունակեց նա։

Խոսակցությունն անցավ մեր մամուլի, մեր գրականության վրա, ապա կովկասյան հայերի վրա...

Ես ասեցի, որ պարապել եմ մի ձեռքով Վիեննայի հայրերի մոտ և ավելաբար, որ կուզենայի վճարել դասերիս համար։

— Հարկ չկա, մենք ստակ չենք վերցնի ձեզմե...

— Բայց, հայր սուրբ, ես կուզեմ վճարել և կարող եմ վճարել...

— Հարկ չկա, — կրկնեց նա։

Ստիպված էի ընդունել և նորից շնորհակալությունս արտահայտել...

Սկսեցի շաբաթը շորս անգամ դասեր առնել տեսչի օգնական հայր Իգնատիոս Կյուրեղյանի մոտ (այժմ արքահայր)։ Հայր սուրբի խուցի մեջ նստած, նիշի, խորենացի կամ մի այլ հայոց կլասիկական գիրքը կարդալով՝ իմ դասերիցս յուրաքանչյուրը մի ժամի տեղ, շատ անգամ երկու, երեք ժամ էր տևում։ Գիրքը թողած՝ շատ անգամ սկսում էինք վիճել երիտասարդ վարժապետիս հետ։

Վեճը մեծ մասամբ եկեղեցու, կրոնի մասին էր, լուսավորչական, կաթոլիկ և բողոքական եկեղեցու մասին...

— Հրամանքը բողոքական երկրում ուսումը ստացած ըլլալով, կնկատե՞մ որ ավելի համակիր եք բողոքականությանը, — ասում էր ինձ մեղմ և ներդաշնակ ձայնով համակրելի վարժապետս...

— Ոչ, հայր սուրբ, ինձ համար միևնույն է, ինչ կրոնի էլ պատկանի հայր. ես ծնվել եմ լուսավորչական ծնողներից և նրանցից եմ ստացել իմ առաջին բարոյական գաղափարներս. բարձրագույն ուսումս և համոզմունքներս՝ բողոքական Գերմանիայից եմ ստացել, իսկ հայոց, մայրենի լեզվի հմտություններովս պարտական կլինեմ ձեզ, կաթոլիկ հայերին... Գուցե այդ պատճառով ես միակերպ եմ վերաբերվում դեպի բոլոր դավանությունների առանց որևէ մոլեռանդ զգացմունքի...

Վարժապետս ժպտում էր իր մեղմ ժպտով, ապա հանկարծ կտրում էր իր վիճաբանությունը.

— Սակայն ժամանակը կանցնե, դառնանք մեր խորենացու։

Ամբողջ վեց ամիս, շաբաթը շորս անգամ դասերս առնելով հայր Իգնատիոսի մոտ, ես դասերիցս հետո կամ պատում էի դպրոցում, կամ մտնում էի հայր Ալիշանի սենյակը։

Դպրոցն ինձ հետաքրքրում էր։ Դպրոցի ամբողջ կազմակերպության և ուղղության վրա տիրում էր հայր-տեսչի, Ալիշանի ոգին։ Դպրոցն ուսումնադիրած լինելով, կարելի էր գաղափար կաղմել և նրա դեկավարի ուղղության, քննությունների ու լայն համամարդկային գաղափարների մասին։ Ալիշանի անխորհուրդ, համակրելի, անկեղծ բնավորությունը, նրա լայն մարդասիրական և հայրենասիրական անձնվեր հանձնարը կերպարանավորվում էր դպրոցի թե ամբողջության և թե նրա յուրաքանչյուր մանրամասնության մեջ։

Ռաֆաելյան դպրոցը նրա ձեռքի տակ այնպիսի բարձրություն էր հասել, որ նա համարվում էր ամբողջ Վենեցիայում ամենալավ միջնակարգ դպրոց։ Իմ ժամանակ կաթոլիկ աշակերտների մեծամասնության մեջ կային և լուսավորչական մի քանի երիտասարդներ և նույնիսկ մի հայ բողոքական աշակերտ։ Անուրանալի է, որ Վենեցիայի Մխիթարյանները թունդ կաթոլիկներ են, բայց երանք այն աստիճան լուսավորված մարդիկ են, որ երբեք չեն փորձում որևէ մեջում դործել իրանց դպրոցում ուսանող այլալորոն հայ երիտասարդների վրա և դարձնել նրանց կաթոլիկ։ Եվ ես համոզված եմ, որ այդ համբերության պատճառով դրոշակակիրը միաբանության և դպրոցի մեջ՝ ինքն հայր Առնոլդն էր։

Երբ ես մտնում էի դպրոցի այն մեծ դահլիճը, որտեղ աշակերտները սրտովում էին նկարչությանը, ես ապշած էի մնում։ Հայր տեսուչը պատվիրել էր նկարչության ուսուցչին, որ աշակերտները մեծ մասամբ նկարեին հայոց պատմության հետ սերտ կապ ունեցող և երեխաների վառ երևակայությանը պատմորապես հայրենիքը հիշեցնող դեմքեր և տեսարաններ... Մի տեղ տեսնում էիք Վարդան Մամիկոնյանի ընդօրինակած կենդանադիրը, մի ուրիշ տեղ Անիի ավերակների տեսարանը և այլն և այլն...

Վեց ամիս շարունակ հայր Իգնատիոսից շաբաթը շորս անգամ դասեր առնելուց հետո, երբ հասավ Վենեցիա թողնելու օրը, ես կրկին դիմեցի հայր Առնոլդ Ալիշանին, խնդրելով, որ դպրոցի օգտին գոնե ընդունե ինձանից դասերիս վարձը։ Բայց բոլոր թախանձանքներս զուր էին, հայր Առնոլդ ոչինչ չկարող չէր ուզում ինձանից փող ընդունել։

Վարժապետով, քաղաքից իմ դուրս գալուց մի քանի օր առաջ, գնեցի քաղաքապետանոցում ֆրանսիական կլասիկների ժողովածուն և ընծայեցի Ռաֆայելյան դպրոցի գրադարանին, որպեսզի գոնե մի կերպ արտահայտեմ երախտագիտությունս սուրբ հայրերին նրանց սիրալիք ընդունելության և վեց ամիս շարունակ ինձ տված դասերի համար։

Ավելորդ է ասել, թե Վենետիկի այս տպավորությունները որքան հարկադիր էին Գրիգոր Արծրունուն, երբ նա, ուսումը Եվրոպայում վերջացրած, քաղաքատեղում էր վերադառնալ հայրենիք և այնտեղ գործել։ Մխիթարյանները, մանավանդ հ. Ալիշանը, որի հետ Արծրունին «բավական մտտիկ ծանոթություն» էր կապել և որի հետ առիթ էր ունենում «մտերմարար խոսել ընդ-ընդարայե» մեզ հետաքրքրող հարցերի մասին» անկասկած ազդել են երիտասարդ գրիգորի աշխարհայեցողությունների վրա իրանց վառ հայրենասիրությունը, լայն զարգացմամբ, իրանց ամբողջ վանքով, ուր այնքան հարուստ ու

ճոխ կերպով ներկայացրած է հայ ազգի անցյալը: Այնտեղ, այն կամարներին տակ, ուր գործել են Մխիթար, Զամյան, Ավգերյաններ, Բաղրատունի, Գրիգոր Արծրունին չէր կարող չներշնչվել, չսփռվել: Եվ նշանավոր Մխիթարյանների պատկերները, որոնք նրա ամբողջ կյանքում գտնվում էին նրա սեղանի վրա, մի-մի վկաներ են, թե ինչ խոր ապավորություն էր ստացել նա ս. Ղազարի կղզում:

Մանավանդ մեծ էր այն հիացմունքը, որ ազդել էր Արծրունուն հ. Ալիշանը: Վեց ամիս մնալով Վենետիկում, Արծրունին Մխիթարյանների ընդարձակ գրականությունից միայն Ալիշանի «Հուշիկը Հայրենաց Հայոց» հայտնի աշխատությունը վերցրեց, խոսեց նրա մասին «Հայկական աշխարհում»: Եվ ինչպես լավ էր նա ղեռ այն ժամանակ ըմբռնել մեր հռչակավոր Նահապետի ոգին:

«Հին հայկական գրողների, մանավանդ հինգերորդ դարի երեկելի պատմիչների հատկանիշ նկարագիրը նոցա բանաստեղծական ուղղությունն է, որը հիմնվում է նոցա ազգասիրական վսեմ ոգու և քրիստոնեական խոր զգացմունքի վերա:

Հ. Ալիշանի գիրքը կարգալով մենք համոզվում ենք, որ հեղինակը չափազանց հմուտ է մեր հին գրականությանը, որովհետև բոլորովին սեփականացրել է յուրան մեր դասական հեղինակների նշանավոր բանաստեղծական ոգին, որ սկիզբ է առնում նորա մեջ ևս երկու (պաղաքեր) աղբյուրներից՝ աղբյուրներից և քրիստոնեական բարձր գաղափարից:

Ես ասում եմ քրիստոնեություն և ոչ թե աստվածաբանություն:

Քրիստոնեությունը վեր է քան աստվածաբանությունը:

Աստվածաբանությունը կարող է փոխվել, տարբերվել, մարդի կազմվածքի և հասկացողության կամ կլիմայի համեմատ: Քրիստոնեության սկիզբները անխախտ են մնում:

Աստվածաբանությունները բազմաթիվ են:

Քրիստոնեությունը մի է:

Քրիստոնեության սկիզբները, այսինքն ազատություն, նավասարություն, եղբայրություն ամեն մարդի, ամեն կազմվածքի, ամեն կլիմայի, ամեն ազգի, ամեն ցեղի, ամեն ժամանակի համար նշմարություն են և կմնան...»

Բերելով այնուհետև մի քանի կտորներ հ. Ալիշանի գրքից, Արծրունին հարցնում է, թե ո՞րտեղից է սկիզբ առնում այդ գրվածքի մեջ Ալիշանի վաղ հայրենասիրական զգացմունքը: Եվ պատասխանում է այսպես. «Մեր հեղինակը հեռու է ապրում մեր հայրենիքից...»

Առնո՞ւմ է արդյոք իր ազգասիրական զգացմունքը՝ դեպի կենդանի հայկական ժողովուրդ ունեցած սերից... Կարելի՞ է արդյոք սիրել մի տգետ, անկիրթ, մոլեռանդ, ողորմելի, հայրենիք չունեցող, երկպառակություն սիրող միության թշնամի մի ժողովուրդ՝ չեմ կարծում... Այդպիսի ժողովուրդի վերախղճալ կարելի է, բայց նորան սիրել... հաղիվ թե...»

Կարելի՞ է միթե սիրել այն ինչ որ սիրելի չէ:

Առավել հավանական է ընդունել, որ հայ հեղինակի ազգասիրական խոր զգացմունքը ծագում է մեր հին կյանքի հասկանալուց և մեր պատմությունից մոտ ծանոթ լինելուց, մեր անդարձ կորած ազգային կյանքի երևույթների նշանավորությունը անկեղծ պաշտելուց:

Որ հ. Ալիշանի հայրենասիրությունը գլխավորապես հին նյութերից պատմական անցյալի տված նյութերից էր իր էրակը ստանում, դա անհերք

թելի է: Բայց չէ կարող լինել այնպիսի սեր, որ միայն հին-հին դարերի սրբությունն ապրել, այնտեղ թաղված մնա: Իր հայրենիքի ավերակները, օղբ, ջուրը երգողը միայն անցյալի պատմիչ չէր. և եթե նրա լեզուն կրակ էր կտրում այդ անցյալի հիշատակներից, կար նրա մեջ և այն շեշտը, որ ներկան էր գրկում, ներկայի հոգսերն էր շոշափում: Ներկայի ժողովուրդը ընկած էր, գժբախտ, ողորմելի: Արծրունին ասում էր, թե չէ կարելի սիրել մի այդպիսի ժողովուրդը, նրան կարելի է միայն խղճալ: Բայց սա մի բառախաղ է միայն: Խղճահարությունն էլ նույն սիրո զգացմունքից չէ՞ դուրս գալիս: Կարելի՞ է խղճալ, շունենալով սրտի մեջ սեր դեպի ընկածը, դեպի դժբախտը: Կա, այո այն սերը, որ զարթեցնում է մեր մեջ կատարելությունը, գեղեցկությունը: Մենք նայում ենք նրան, սիրում ենք նրան մեր ամբողջ սրտով, հիանում, համբարանում ենք: Բախտավորության, կատարելության տիպար ներկայացնող առարկան բարձր ու վեհ է մեր աչքում. մենք նրա վերաբերմամբ մի ուրիշ զգացմունք չունենք, բացի պաշտողի, երկրպագողի զգացմունքից:

Բայց կա և այն սերը, որ հարուցանում է մեզանում թշվառությունը: Ընկած է այդ թշվառությունը, թավալվում է կեղտերի և ցեխի մեջ, նրա մարմինը լափում են հաղար ու մի անճոռնի, զզվելի որդեր: Սիրել նրան՝ այդպիսի դրություն մեջ պահելու համար, անկարելի է: Բայց կեղտերից ու ցեխից հանելու, նրան մաքրելու, նրան բժշկելու, նրան կյանք և երջանկություն տալու համար, ահա այստեղ է իսկական, վեհ սերը, նա, որ եսամոլություն չէ, նա, որ ամբողջովին անձնազոհություն է: Մարդը ընկած է ցեխերի և կեղտատությունների մեջ: Անցնողներից մեկը կանգ առավ, գնաց դեպի ընկածը: Ինչ զգացմունք էր դա: Ցեխն ու կեղտոտությունները զզվեցնում են նրան, բայց նա սիրում է այն գաղափարը, որ դրված է ընկած մարդու մեջ և շտապում է, զսպելով իր զզվանքը, ազատել գաղափարը այդ սոսկալի միջավայրից: Ալիշանը հայ ժողովրդի վատ, բացասական կողմերը չէր սիրում և բոլորովին այդտեղից չէր քաղում իր հայրենասիրական ոգևորությունը, այլ սիրում էր այդ ընկած ժողովրդի գաղափարը, նրա բարձրանալու, նրա երջանկանալու միտքը:

Այդպես էր և ինքը Արծրունին, իր ամբողջ կյանքում: «Սիրել ատելով», այսպես էր ասում նեկրասովը, նայելով իր ժողովրդի անթիվ ցավերին: Այսպես բացատրեց և Արծրունին իր սերը դեպի իր ժողովուրդը: Նա անվանեց հայ ազգը մի պոռնիկ, որին պղծել ու ապականել էին դարերի ընթացքում անթիվ տարփածուներ. բայց նա սիրում էր այդ պոռնիկին, սիրում էր ատելով: Եվ հենց այստեղ էլ ս. Ղազարի կղզուց գրած այս տողերի մեջ էլ, չէ՞ երևում նույն սիրողը: Իր զգացմունքը դեպի ընկած ժողովուրդը նա արտահայտում էր «խղճալ» բառով: Բայց մեզ համար դա էլ նշանակում է սեր, անսահման, վառ սեր դեպի նույն այդ ընկածը...

Վենետիկից Գրիգոր Արծրունին գնաց նորից Հեյդլբերգ, ուր գտնվում էր Թեոդորասը: Երևի նա ուզում էր հայրենիք վերադառնալուց առաջ մի անգամ էլ անսնել իր Alma mater-ը և սիրելի եղբորը: Բայց մենք դեռ պիտի ծանոթանանք նրա մի քանի հոդվածների հետ:

«Մտքեր հայտնելու իրավունք» հոդվածի մեջ Գրիգոր Արծրունին, ինչպես է արդյո տեղեկրում, պաշտպանում է մտքի կատարյալ ազատությունը, ապացուցանելով, որ այդ ազատությունը ոչինչ վտանգ չէ սպառնում հասարակության:

«Մի նոր ուսում հայտնելով ես կարող եմ կամ ուղիղ կամ ծուռ, կամ արտավազ կամ վնասակար գաղափարներ հայտնել: Բայց և վնասակար, ծուռ

մի ուսում հայտնելով, ես ոչ ոքից իրավունք չեմ հասկանում, իրապես արդե՞ր չեմ դնում պաշտպանել հակառակ գաղափարները:

Կարելի՞ է արդյոք հանցանք համարել այն, ինչ որ ուրիշից չէ խորհրդողության իրավունք:

Մի հաստատված ուսման դեմ խոսելով, ես նմանապես կարող եմ կամ ծուռ կամ ուղիղ մտքերը հայտնել, ես կարող եմ հին ուսման պակասությունները ցույց տալ. կամ իմ սահմանափակված զարգացման պատճառով ծուռ կերպով հասկանալ մարդիկներից ընդունված մի պատվական ուսում, և իզուր հարձակվել նորա դեմ:

Դարձյալ այդ դեպքում կարելի՞ է արդյոք իմ գործողությունը որևիցե հանցանքի հետ համեմատել:

Մի՞թե տեսական կերպով հարձակելով մի հաստատված ուսման, մի ճշմարտության դեմ, ես ոչնչացնում եմ նորան, մի՞թե այս իմ գործողությամբ ես այն ճշմարտությունից խլում եմ կենդանություն իրավունքը:

Եթե նա ճշմարտություն է, թող ինքն յուրան պաշտպանեմ:

Մի ճշմարտության դեմ հարձակողը պատժել, նշանակում է այն աստիճանին թույլ համարել այն ճշմարտությունը, որ նա լուրջ խոսքից անդամ բանավոր հարձակումից քանդվում է, նշանակում է վիրավորել այն ճշմարտությունը:

... Հայտնելով մի ծուռ գործնական միտք, ես ոչ ոքին չեմ ստիպում ընդունել նորան... Հայտնելով մի նոր գործնական միտք, ես հին մի հիմնարկություն չեմ ոչնչացնում իրապես, թեև խոսքով առաջարկեի ոչնչացնել նորան:

Իսկ եթե հասարակությունը մի հեղինակ է պատժում նորա խոսքի համար, մի գործնական հանցանքի հավասար, նա սորանով ապացուցանում է որ ինքն մեծ հավատ չէ ընծայում յուր հիմնարկությունների հաստատությունը:

Առհասարակ, երբ մի հասարակություն կանչում է, վախենում է, ազդակում է, պատժում է մի նոր գաղափարի և սկզբի երևալու ժամանակ, ես սորանով ապացուցանում է, որ կամ անընդունակ է հետևաբար մտախոհությանը, ապացույցներով և քննադատությամբ հերքել վնասակար մի վարդապետության ուսումը, կամ անզոր է վնասակար և ծուռ մի գաղափարին կատարյալ արհամարհանքով պատասխանել:

«Հասկանանք վերջապես» հոդվածը նույն հարցերն է արծարծում, ինչ «Ինչի՞ չենք հիմնում» հոդվածը: Արժրունին նորից շեշտում է, որ մենք մի տնտեսական բարեկեցությունը պիտի հիմնենք մեր երկրի բնական հարստությունները կանոնավոր և խելացի կերպով շահագործելու վրա: Կովկասում վերջացել են երկարատև պատերազմները, որոնք հարստացնում էին ծառայող և զանազան կապալներ վերցնող հայերին: Ռուսաց պետությունը հաստատել է մեր երկրում խաղաղություն. կհասկանա՞նք արդյոք, որ այս խաղաղության շրջանը բաց է անում մեր առջև տնտեսական նոր պահանջներ և մեզ կարող ենք ազնիվ ու հեշտ միջոցով հասնել հարստության: Դրա համար ես կավոր է արդյունագործություն սկսել, գործարաններ հիմնել, հում նյութի մշակել:

«Հասկանանք վերջապես», որ մեր գլխավոր ձգտողությունը պետք է լինի մեր երկրի կենդանիների, բույսերի ու մետաղների հարստությունից օգտվելու: Այս նպատակով պատրաստել օտար երկրներում մեր հայրենակիցներից դրական գիտություն և գործնական աշխատանքից տեղյակ մարդիկ, որոնք վերադառնալով հայրենիքը կարող էին մեզ օգնել երկրագործությանը:

գինեգործության, շերամապահության, անասնապահության դրությունը յուրանց բոլոր ճյուղերով բարվոքել, և նոր, մեզ անհայտ, բայց Եվրոպայում փողոց ընդունած միջոցները մտցնել: Աշխատել անտառարանության դրությունը բարվոքել և այլն»:

Հոդվածի վերջում նա բերում էր Անդրեաս Արժրունու նամակը, որի մեջ տեղեկություններ կային, թե ինչ հանքերի մշակություն հարմար է Կովկասում: Անդրեասը հայտնում էր, որ ինքը միանգամայն համաձայն է Գրիգորի հայտնած մտքերին մեր երկրի բնական հարստությունները շահագործելու վերաբերմամբ:

«Հասարակական կրթություն» հոդվածը խոսում է այն մասին, թե ինչ պետք է տալ ժողովրդին՝ ներկա ժամանակի պահանջները լրացնելու համար: Այժմ այլևս հին ժամանակները չեն, երբ ժողովուրդը բաժանված էր դասակարգերի, կաստաների: Այժմ ամբողջ, մի ազգի ընդհանրությունը դրված է այնպիսի պայմանների մեջ, որոնք թույլ են տալիս ամեն մեկին զարգացնել իր բնական ընդունակությունները, գրավել հասարակության մեջ բարձր դիրք, պաշտոններ վարել: Կրթությունն է տալիս մի ժողովրդին զարգանալու, առաջ գնալու միջոց: Հարկավոր է, որ կրթությունը ամենքի սեփականություն լինի: Կրթության բարձր աստիճանին հասած երկրներում ամեն մարդ քաղաքացի է: Քաղաքացու ապագա ձգտումներին և ջանքերին նպաստելու համար մենք պահանջում ենք ազգի բոլոր մանուկների համար ձրի և պարտադիր ուսում:

Այսպիսով ժողովրդական սկզբնական կրթությունը հասարակական կրթության հիմքն է: Սկզբնական ուսում ստանալուց հետո մարդը ընտրում է իր համար մի կոչում և դրա համեմատ շարունակում է իր կրթությունը, մշտնելով համալսարան, մասնագիտական բարձրագույն դպրոց և այլն:

Բայց ամեն մարդ չէ կարող այդպես անել և ժողովրդի մեծագույն մասը, ամբողջ բավականանում է սկզբնական դպրոցում ստացած իր կրթությամբ: Կամ՝ ժողովրդի այդ մեծամասնությունը, զբաղված է նյութական աշխատանքով և նրա ստացած սկզբնական կրթությունը բավական չէ, որ նա մասնակից գումար հասարակական կյանքին, քաղաքացի լինի:

«Հասարակության մեջ անդադար ծնվում են նոր մտքեր, նոր գաղափարներ. հասարակական հարցերը հասկանալու համար, կամ յուր դասի և յուր անձի օգուտները պաշտպանելու համար բավական չէ սկզբնական դաստիարակությունը:

Հարկավոր է մի ընդհանուր կրթություն, որ տարածվեր բոլոր ժողովրդի վերա»:

Հարկավոր է գտնել ընդհանուր գիտություն տարածելու մի զորեղ միջոց, որ մեկներ, պարզեր ժողովրդին հասարակական և քաղաքական երևույթները մի միջոց, որ ուղղություն տաք հասարակական կարծիքին, որը նյութական աշխատանքին նվիրված մարդին անդադար ուղղեր, թույլ տար նորան դաստիարակվել՝ ուսումնարանն ևս թողնելուց հետո»:

Ո՞րն է այդ միջոցը: Արժրունին պատասխանում է. «Գլխավոր (չեմ ասում միակ) միջոցը՝ օրագրությունն է»: Օրագրությունը նա, ինչպես և այն ժամանակ ամենքը, գործ էր անում «ժուրնալիզմ» բառի մտքով:

Հայերը ունեին ընդհանուր կրթության այս գլխավոր միջոցը, ունեին գաղափարական մամուլը: Յուրջ տալով այդ մամուլի ահագին կրթական նշանակությունը, Արժրունին բնականաբար պիտի հատկապես հայ մամուլի մասին էլ խոսեր: Եվ նա դիմեց այս հարցին իր մի ուրիշ հոդվածում, որ զբաղված է մեղադրելից և ունի «Բավական չէ» վերնագիրը:

Մեր մամուլը, ինչպես տեսանք, մի շատ խղճուկ գոյություն էր պահպանում և շարունակ դանդաղում էր, որ ընթերցող շունթի Բայց պետք էր մի քիչ էլ իր պակասությունների վրա ուշադրություն դարձնել: Ահա այդ բանը անող չկար, և առաջին անգամ Արծրունին է, որ դալիս է ցույց տալու, թե ի՞նչ է պակասում մեր մամուլին:

Սկսելով իր տեսությունը այն ժամանակից, երբ ռուսահայերի մեջ գործածական դարձավ աշխարհաբարը, Արծրունին ասում է, որ այդ գործի մեջ առաջին և ամենածանր փորձերից մեկը արել է «Հյուսիսսահայի» հրատարակողը: Այն ժամանակից շարժումը կանգ չառավ և այժմ այլևս անհնարին է վերադառնալ գրաբարին: Սա, անկասկած, առաջադիմություն է, բայց դարձածան մի հայտնի աստիճանին հասնելուց հետո անկարելի է կանգ առնել, անշարժանալ մի կետի վրա: Հայոց մամուլն ու գրականությունը կանգնած, անշարժացած են, նրանք չեն համապատասխանում ժամանակի պահանջներին:

Եվ Արծրունին մատնացույց է անում այն ցավը, որից իսկապես հյուժվում էր մեր գրականությունը: Դա ինքնուրույնության համարյա կատարյալ բացակայությունն էր: Մեր մամուլն էլ, մեր գրականությունն էլ ապրում էր թարգմանություններով:

«Գրականությունը,— ասում է նա,— պետք է դաստիարակիչ-ազդեցություն ունենա ժողովրդի վերա:»

Նա կարող է այս ազդեցությանը հասնել կամ ընդհանուր մարդկային գիտության մտքերը, սկիզբները և գաղափարները ժողովրդի մեջ տարածելով կամ ազգին յուր կյանքի երևույթները վիպասանության ձևով ներկայացնելով:

Առաջին դեպքում նա դրսից պետք է մտցնվի, որովհետև մենք, Հայրենի գիտության ինքնակա մշակությանը դեռ չենք հասել, երկրորդ դեպքում մեզ մնում է ինքնուրույն տաղանդների ծննդին սպասել...

Ցանկալի է մեր գրականության առաջադիմության համար-ինչպես ինքնուրույն տաղանդների ծնունդ, այնպես և գիտնական ճշմարտությունների (գիտության ամեն ճյուղերի) խղճմտաբար մշակությունների երևումնա:

Գիտությունը մի ազգի համար չէ, նա ամենքին է պատկանում: Մենք ուրեմն, կարող ենք վերցնել գիտությունը ուրիշ ազգերից, կարող ենք մեզ լեզվով մատչելի դարձնել նրան մեր ժողովրդին: Բայց ի՞նչպես, թարգմանելով: Ոչ: Մեր հասարակությունը ընթերցանության չէ ընտելացել: «Այդ պատճառով մեզ չէ կարելի մեր միամիտ, ծուլ և տգետ ընթերցողին գիտնական աշխատանքների թարգմանությունները (թեև ժողովրդական լեզվով գրված) գրքի ձևով առաջարկել: Հարկավոր է գիտնական գրվածքներին մի կարճ, ամ փոփոխված ձևը տալ. այսինքն գիտնական եզրվածքները առաջարկել և ոչ թե գրքերը: Այս է պատճառը, որ օրագրությունը մինչև այժմ միակ ձև է, որ բնորոշություն կարող է գտնել մեր ժողովրդի մեջ»:

Սակայն մեր օրագրությունը միայն թարգմանություններով է սնվում: Թարգմանում է նա գիտությունը, թարգմանում է վիպասանությունները: Քանի կա՞ն է սա, կարո՞ղ է այսպիսի ուղղությունը համապատասխանել այն հասարակական պաշտոնին, որ ունի օրագրությունը: Ո՞րն է այդ պաշտոնը:

«— Օրագրությունը պետք է մի կողմից ժողովրդի կյանքի արտասխառնություն դառնա, իսկ ուրիշ կողմից պետք է դաստիարակիչ, կրթող ազդեցությունը ունենա ընթերցողի վերա:

Եթե՛ մենք,— շարունակում է Արծրունին,— միշտ կրավականանաք տար ազգերի կյանքից առաջ վիպասանությունների կամ գիտնական հոգիների թարգմանությամբ, մեր օրագրությունը կհասնե, կարելի է ասել, քաստիարակիչ ուղղությունը, բայց նա ժողովրդի կյանքի արտահայտությունը չկարողանա լինել:

Մեր օրագիրները և լրագիրները խմբագրողները կարծում էին, թե յուրանց պարտավորությունը կատարեցին, երբ մի թերթ կամ տեսրակ առաջին էքսից սկսած մինչև վերջինը թարգմանություններով լցրած՝ ընթերցողին առաջարկել են...

Մեր երիտասարդները և օրիորդները կարծում են, թե մեծ օգուտ են բերում ազգին, երբ որ տարին երկու-երեք անգամ մի որևէ կյանքից առած, մեր հասնեցմունքին անհամապատասխան, ձեռին ընկած առաջին վիպասանության թարգմանությունը օրագրի թերթերի մեջ հրատարակեցին:

Եվ այս անգամնում է ազգային օրագրությունն»:

Ռզորմելի է օրագրության գրությունը: Պատճառները: Առաջին և գլխավոր պատճառը Արծրունին տեսնում է մեր ժողովրդական կյանքին հատուկ պակասության մեջ: Դա այն է, որ հասարակական բոլոր գործերը բարեբաւարյան սկզբունքի վրա են հիմնված և ոչ թե ժողովրդի ինքնօգնության վրա: Քոզմուրդը կարգավու պահանջ չունի, բայց նրան պետք է սովորեցնել: Ո՞վ կա՞ն ժամանակ կորցնե, այսպիսի պաշտոն հանձն առնելով:

Ազատ մարդը, լինի նա նույնիսկ լավ կրթված, դարգացած, ընդունակ, և կարող օրագրությունը իր կյանքի միակ պարապմունք ընտրել, որովհետև թատարակությունը չէ վարձատրում այդպիսի աշխատանքը: Ո՞վ է մնում:— Նա, ով ավելորդ ժամանակ ունի, այսինքն հարուստը: Եվ Արծրունին բացահայտում է. «Ինչպե՞ս է մի՞թե, որ մեր օրագրության մեջ ձայն ունեցող և թատարակական կյանքին ուղղություն տվող մարդիկը միայն հարուստներ են: Եվ այն մարդի ձայնը, որն ինքն աղքատ լինելով, ժողովրդական կյանքի թվականությունները անձնական փորձից ճանաչում է, որը ստիպված է յուր օրը յուր ամենօրյա աշխատանքով ճարել, այն մարդի ձայնը, ասում են, ապրում է հասարակության համար»:

Աերնական է, իհարկե, հասարակաց պաշտոնավարությունը կապված գործի լինի այս կամ այն մարդու հարստության կամ աղքատության հետ: Արդուստը ժամավաճառության համար կարող է գրականության, մամուլի մեջ ընկնել: Բայց կարող են ասել. «Ինքը՝ Արծրունին էլ հարուստ էր և սակայն իր գործով խմբագիր, հասարակական կարծիքին ուղղություն տվող»: Մենք կասե՞նք, նախ և առաջ մենք դեռ կտեսնենք, թե որքան հարուստ էր Գրիգոր Արծրունին: Երկրորդ, հարուստ դասակարգից լինելով, նա այդ դասակարգի ընդառն թշնամին էր և աղքատ ու աշխատավոր դասակարգի անկեղծ բարեկամը, և երրորդ, նա ինքն էր աղքատ, անսպասով դասակարգից հանում ընդունակ մարդիկ, որոնք պաշտպանում էին իրանց դասակարգի դատը և արշաւում էին հարուստ ու հարստահարող դասակարգի դեմ:

Այս է պատճառը, շարունակում է Արծրունին,— որ մեր օրագրությունը իրական թույլ, անհամ, աննպատակ և բոլորովին միակողմանի երևույթ է:

Քարեջարության սկզբին հավատարիմ մեր հեղինակները, հիմնվելով քի սուսական առածի վերա, կարծում են, թե «ընծայած ձիու ատամներին ոչ եայում»: Այսպիսի առածին հետևելով, կարելի է իհարկե, ժողովրդին լինի տեսակ անմարսելի գրվածքներ առաջարկել և հեղինակ կամ թարգմանիչ անաւ ոչ թե միայն մասնավոր մի գիտության հետ ծանոթ լինելով (որ ան-

շուշտ հարկավոր է օրագրութեանը յուրյան նվիրող անձին, բայց և ընդհանուր կրթութեան սկիզբներն անգամ շունենալով: Այնպէս որ մեր դրականութեան ասպարեզում գործող մարդիկը, ոչ թե միայն շարժառաստնալից, այլ շարժառաստնալից գրողներ են:

Իսկ պատրաստութիւնը հարկավոր է. և օրինավոր օրագրութեան անձամանակ կհիմնվի, կրթութեան մեջ աշխատողներին ամեն մեկը գիտութեան մի որեւէ ճյուղին մասնավորապէս տեղյակ կլինի:

Այժմ,— այսպէս էր վերջացնում Արծրունին իր հոգւածը,— դառնալով դեպի այն մեր հասարակական երևույթը, որ յուրան ազգային օրագրութեան փառավոր անունը սեփականացրել է, ես ասում եմ.

Բավական չէ անդադար թարգմանութիւնները առաջարկել աղգային օրագրութիւնը հիմնելու համար: Բավական չէ օրագրութեան մեջ ժողովրդի մի այն հարուստ դասի ձայնը լսել տալ, աղգային կյանքի արտահայտութեան նշանակութեանը հասնելու համար:

Եվ դառնալով դեպի մեր գրողները (օրիորդները և երիտասարդները) ես ասում եմ.

Բավական չէ առերես կրթութիւն ստանալուց հետո, ոչ մի գիտութեան մասնավորապէս տեղյակ չլինելով, բանի մի սովորած օտար լեզուները գործունէ ժողովրդին անհասկանալի և մեր կյանքին օտար գրվածները թարգմանել, հեղինակի պաշտոնը կատարելու համար:

Վերջապէս դառնալով դեպի ազգը, ես ասում եմ.

Բավական չէ դեռևս շատած հասարակութեան նշանակութեանը, շատ կանալով փոխադարձութեան գաղափարը, չըմբռնելով մտավոր աշխատանքի օգուտը և ընթերցման պահանջները, բավական չէ, ասում եմ, որ հոգով դատարկ ազգասիրական զգացմունքով, նվիրել այս կամ այն հեղինակին անհամ գովասանքները, ազգային օրագրութիւնը հիմնելու և նպաստելու համար:

Ինքը՝ Արծրունին էլ մեկն էր այն հեղինակներից, որոնց հայ ընթերցողները գովասանքներ էին նվիրում: Մենք տեսանք այդ գովասանքները: Գրանք Արծրունին անվանում էր «անհամ»: Երիտասարդ գրողը, ինչպէս երևում է այս վերաբերմունքից, գովասանք, գրական փառք, հեղինակութիւն չէր որոնում իր ժողովրդի մեջ: Փոխանակ «անհամ» գովասանքների, նա կկամենար գտնել այդ ժողովրդի մեջ գիտակցութիւն, ընթերցասիրութիւն, առաջադիմութիւն, հասարակական պարտաճանաչութիւն: Նա աշխատանքի, անբեղ հատ աշխատանքի, օգտակարութեան մարդ էր, սեպիստ, անողոք պահանջող ամեն բանի մեջ քննադատութիւն, վերլուծութիւն որոնող: Ի՞նչ օգուտ գովասանքներից: Արդյոք գովասանքները կարող են փոխել իրողութիւնները:

«XIX դարի տրամաբանական (լոժիք) մտախոհութեան ամենահարմար ճանապարհը ոչ թե վերացական ճշմարտութիւններն են, այլ իրողութիւնների վերա հիմնված մտախոհութիւնը. մի խոսքով ոչ թե իրողութիւնը որպէս մտախոհութեան հետևանք, այլ ընդհակառակն՝ մտախոհութիւն որպէս փաստի, իրողութեան հետևանքը»:

Այսպէս էր դրական մարդու դավանանքը: Արծրունու այս խոսքերը մեկ կարգում ենք նրա մի ուրիշ հոգւածի մեջ, որի վերնագիրն է «Կ. Պոլսի երկրորդ կոնգրէս»: Այս իսկ վերնագրով մի ոման Միսմեր Ֆրանսիայի լեզուով մի գիրք է հրատարակել, որի մեջ ուղում է ապացուցանել, թե մահմեդականութեան քրիստոնեութիւնից ստոր աստիճանի վրա չէ կանգնած իբրև հասարակական ուսում: Եվ Արծրունին հերքում էր այդ բանը, առաջնորդ ունենալով քրիստոնեութեանը, թե ամեն ինչ պետք է հիմնված լինի իրական փաստերի և ոչ թե վերացական դատողութիւնների վրա: Առաջին անգամն էր Արծրունին խոսում մահմեդականութեան մասին: Եվ նրան զեկավարողը դատողութիւնները, վերացական փաստաբանութիւնները չեն: «Կա մի անհերքելի իրողութիւն» — ասում է նա. «այն է, որ մինչև այժմ ոչ մի պետութիւն, նորա եվրոպական լատի նշանակութեամբ, չէ հիմնվել մահմեդականութեան դավանող ցեղերի վրա: Մահմեդականութեան հետ միասին մենք միշտ անբաժանելի ենք գտնում անհերքելի բացակայութիւնը, կամապաշտութիւնը, բնավորութիւնը, տգիտութիւնը, գերզաստանի և սեփականութեան բացակայութիւնը և այլն»:

«Եւ այժմ ուրիշ կողմի իրողութիւններից տեսնում ենք, որ պետութեան դարձման մեծ աստիճանին հասել են միայն քրիստոնեութիւնը դավանող ազգերը, մանավանդ այն քրիստոնեական ազգերը, որոնք քրիստոնեութիւնը բառով հասկանում են և ընդունում են գլխավորապէս Քրիստոսի բուն, ճշմարիտ, ինչ ուսումը և նորա բուն խոսքերը, այսինքն Ավետարանը»:

Եվ չէ կարելի, որ ուրիշ կերպով լինէր: Քրիստոնեութիւնը կամ ավելի քան ասեմ Ավետարանը բովանդակում է յուր մեջ երեք մեծ գաղափարներ. թե, հավասարութիւն և ազատութիւն, որոնք ազգերի հասարակական կյանքում ծնել են աշխատանք, օրենք և անհատութիւն»:

Բացի դավանութեան անշարժութիւնից, մահմեդական ազգերի քաղաքական վարդապետը ուրիշ արգելքների էլ է հանդիպում: Եվ այդ արգելքների թիւում Արծրունին գտնում է ի միջի այլոց և այն, որ բոլոր մահմեդական ազգերը գործ են ածում արաբական տառերը, որոնք այնքան շատ անհարմարութիւններ ունեն:

Փրանսիայի հեղինակի տգիտութիւնը ցույց տալու համար Արծրունին գտնում է նրա այն անհեթեթ խոսքերը, թե «քսան տարի առաջ հայերը թուրքեր էին թե վարքով և թե լեզուով. այժմ իրանց մեջ մտցրած ազգային մի պարտեհի շնորհիվ նորա ևս մշակում են իրանց լեզուն, նորա ևս հույների կման ձգտում են դեպի մեծ գաղափարները»:

Սայրահեղութիւն էր, իհարկե, ասելը, թե հայկական այբուբենը նոր հարած մի բան է: Բայց Արծրունին էլ ծայրահեղութեան մեջ էր ընկնում, սեպով դրա դեմ. «Ուրեմն հեղինակը շփոթե, թե մեր այժմյան օրագիրներում արած ածված գրերը նույն են, որոնք 4-րդ դարում մեր Գրիգոր Լուսավորիչն էր գործածում իր աստվածաբանական գրվածներում»:

Այս հոգւածը տպվեց «Հայկական Աշխարհի» 1870 թ. հուլիս-օգոստոս ամիսացած համարներում: Նույն այդ համարների «Մեր ներքին Գործեր» տեսութիւնը Ստ. Ստեփաննի վերջացնում է հետևյալ տողերով:

«Պոլսի լա բոն բուշ (քիմքերը քաղցրացնելու համար) հաղորդում եմ ահա ընթերցողիս, որ այս օրերս եկավ Քիֆլիս «Հայկական Աշխարհի» արդունաբար աշխատակից և իմ հարգելի և սիրելի բարեկամ մեծ. դոկտոր Գր. Արծրունին և յուր հայրենիքում գործելու է այսուհետև մեր ճշմարտասեր երիտասարդ գիտնականը»:

Մենք էլ թողնենք առ ժամանակ Արծրունու գրվածքները և հետևենք այս իրողութեան, այսինքն հայրենիք վերադառնալուն:

Արժուոնին Քիֆլիսում: Տպավորություններ: Գործունեություն: Հաղվածներ «Հայկական Աշխարհում»: Արժուոնու գերմանաօրոյությունը: Եսպոնական Զբանսիան և հանրապետական Զբանսիան: «Աշխարհարարի նորունությունների հասարակական նշանակություն»: Ստանություն Ստեփանեի և Արժուոնու մեջ: Արժուոնին «Մեղուի» աշխատակից: Հինգ հոգված: «Գիտնական անսխալականություն»: «Ընթերցողը և գրողը» միմյանց շնորհալուրենք: Ստանություն «Պեպոն»: Հայի հատկանիշները: Առաջին բշխամություն Արժուոնու դեմ: Եզրակացություններ Արժուոնու գրական գործունեության առաջին շրջանի մասին:

Ուղիղ յոթը տարի Գրիգոր Արժուոնին բացակա էր իր հայրենիքից: 1868 թվին Քիֆլիսից Մոսկվա գիմնոզը մի պատանի գիմնադիստ էր, օտար կրթության պտուղ, լցված մի արհամարհական հեգնանքով դեպի իր մայրենի գրականությունը: Յոթը տարի շարունակվեց այդ պատանու ուսանողական կյանքը: Այժմ, 1870-ի սեպտեմբերին, Քիֆլիս վերադարձողը Եվրոպայում պտտած, դանազան համալսարաններում գիտության ճյուղերից դասախոսություններ լսած, գերմանական համալսարանը փիլիսոփայության զոկտորի աստիճանով վերջացրած 25-ամյա երիտասարդ էր նա, իր ազգի մտավոր շահերը իր համար նպատակ դարձրած, նրա առաջադիմության և վերածնության նվիրված: Այժմ նա մի անհայտ անձնավորություն չէր. այժմ նա անուն ուներ հայ թեթևրդների սահմանափակ շրջանում իբրև մտքեր հուզող, մտածել ավելի հրապարակախոս: Նա, այո, արդեն հրապարակախոս էր որոշ ուղղությամբ, աշխարհայեցողություններով, ամուր դավանանքներով:

Մենք տեսանք, որ օտար աշխարհի մեջ կազմակերպվեց, հասունացավ այդ գրական ուժը: Արժուոնին հայրենիքից իր հետ տարած պատանեկան տպավորություններն ու հիշողություններն ուներ իր առջև, երբ Եվրոպայի զանազան կողմերում նստած՝ քննադատում էր մեր կյանքի երևույթները, մեր հասարակական պայմանները: Այժմ նա գալիս էր մեր ժողովրդի մեջ, այժմ ընկնում էր մեր իրականության անմիջական, զորեղ ազդեցության տակ: Եվ առաջին հարցը, որ ծագում է մեր մեջ այս բույեին այն է, թե ի՞նչ տպավորություն գործեց երիտասարդ գրողի վրա մեր կյանքը, ի՞նչ զգաց նա, տեմիջապես շփվելով մեր իրականության հետ: Վերադառնալով Քիֆլիս, նա հենց առաջին շաբաթներում, քննելով իր շրջապատը, իր տեսածներն ու լսածները, անշուշտ դրազված պիտի լիներ մի շատ հետաքրքրական գործողություններ: Դա վերստուգությունն էր: Արժուոնին քննում, ստուգում էր, թե որքան ինքը հեռվից ճիշտ է ըմբռնել մեր կարիքներն ու պակասությունները, որքան ճիշտ կերպով է որոշել հասարակական ցավերի դիագնոզը: Ի՞նչ էր ասում նրա այդ վերստուգությունը:

Բարեբախտաբար Արժուոնին թողել է մեզ այս հարցերի պատասխանը գրելով իր առաջին տպավորությունները Քիֆլիս հասնելուց հետո: Այդ տպավորությունները նա հրատարակեց «Հայկական Աշխարհի» խմբագրին ուղղված իր նամակի մեջ և նրանք այնքան հետաքրքրական են, այնքան շատ բան են ասում մեր հրապարակախոսի առաջին քայլերի մասին, որ մենք կարևոր ենք համարում բերել այստեղ ամբողջ նամակը. «Ահա հասա ես Քիֆլիս Քիֆլիսից ինձ, պ. խմբագրող, փոքրիկ և անկարգ այս նամակում ներկայացնելով Զեզ առաջին օրերի տպավորություններս...»

Մեծ հանապարհորդությունից հետո, երբ մարդս ոչ իր պարագմունքը չես օրինավոր կերպով կարգեց, ոչ ընտելացավ կլիմային, և առհասարակ բոլոր նրա կյանքը դեռևս իր սովորական շավղին չէ հետևում, նա առաջին օրերը կամ գուցե շաբաթները (կարելի է և ամիսները) անգործության մեջ անցնում է անցնել:

Պատելով թե փողոցներում, տեսնելով այն, ինչ որ արժանի էր տեսնել Եվրոպայում, ես թե հին ծանոթներիս պատահեցի, թե վերջապես և նորերի հետ ծանոթացա, թե մեր նոր ծխական ուսումնարաններին այցելություն արեցի: Ի՞նչ փոփոխություններ կան մեր հայրենակիցների մտավոր կյանքում. ի՞նչ լավ էր կամ դեպի վատ են այդ փոփոխությունները... դժվար կլիներ ինձ պատասխանել այս հարցերին:

Ի՞նչից է բաղկացած մեր սուղ մտավոր շրջանը: Հայկական թատրոն չկա, հասարակական դասեր մեզանում դեռևս երբևէ չեն եղել, կան երկու-երեք օրագիրներ, կան ծխական ուսումնարաններ, երիտասարդական դպրոց...»

Ես թերթեցի «Արարատ», «Հայկական Աշխարհ» և «Մեղու Հ-ի», ես այցելություն արեցի օրիորդական ծխական ուսումնարաններին, ես խոսեցի Երևանի դպրոցի մի քանի վարժապետների հետ:

Ես տեսնելով քանի մի անձների հետ ես հարցրեցի, ինչի՞ աղջիկների և տղաների ծխական ուսումնարանները բաժանված են միմյանցից և սկսեցի ապացուցանել խառն դասատվության օգուտը: Ինձ պատասխանեցին, թե խառն դասատվության օգուտը ամենքը պարզ հասկանում են, բայց ոչ որ հանձն չէ անում իրազործել խառն ուսումնարան մի, որովհետև այս տեսակ դասատվությունը համապատասխան չէ հասարակության մեջ ընդունված սովորություններին:

Պատելով փողոցներում, պատահում եմ հին ծանոթներից միին, որը Երևանից ուսումնարանի մեջ հարցնում է ինձ, թե ինչի՞ գրում եմ ես... «մեզ, համալսարանում ուսում առածներին ձեր գրվածները ոչինչ նոր գաղափար չեն կարող ներկայացնել, իսկ ժողովուրդը հայերեն կարգալ չգիտե»: Ես դժվարացա և չեմ պատասխան տալ այսպիսի հարցին, քաջ զգալով, որ ինձ ինքնիս բախտուն պարզ չէ իմ պարագմունքիս նպատակը: Ես սկսեցի զննել շրջապատող հասարակական երևույթները և համեմատելով նոցա ինձ հետ, համոզվեցա, որ երբևէ ես (թե մարդիկ, թե հիմնարկությունները) ինձ նման անորոշ գրություն մեջ եմ...»

Հետո երկրից (Գերմանիայից) մեր երկրի վերաբերությամբ հոգվածները գրելով, ես կարող էի սկսել և թերի հայացքներ ունենալ մեր ժողովրդի կրթության, մեր հասարակական երևույթների մասին...

Սխալվեցա՞ ես արդյոք կրկնելով, թե մեր հասարակական բոլոր հարաբերությունները կախացած են բարեբարության սկզբի և ոչ թե ինքնաօգնության գործունեության վերա. սխալվեցա՞ ես արդյոք հայտնելով, թե այն ժողովուրդը հասարակության անունին արժանի չէ, որը փոխադարձության տեսակետից գաղափարի ըմբռնելուն դեռևս չէ հասել...

Եվ այս բոլոր ասածս կարո՞ղ է արդյոք վերաբերել մեր հասարակությանը, ունի՞ն արդյոք իմ մտքերս վերաբերություն մեր իրական կյանքին...

1. Խառն ուսումնարան հիմնելու փորձը արեց արդեն պ. Ստեփանեի մի տարի առաջ Երևանի Մարիամյան ուսումնարանում (Հավաքարում): Ուսումնարանի տեսությունը մինչև այսօր անփոփոխ է մնում, որ հանձնեն յուրանց աղաներն օրիորդների հետ ուսում առնելուն:

Գրածեք, խնդրեմ, մեր օրագիրներին և լրագիրներին խմբագրությունները և զուր անտեղ կտեղեկանաք, որ ապա՞ծ նյութերի մեծ մասը անվարձ են հրատարակվում, ուրեմն գրողները ավելորդ ժամանակ ունեցող մարդիկ են, ուրեմն կարողություն ունեցող, ունեւր դասի ձայն է լսվում միայն օրագրության մեջ... ուստի մեր օրագրությունը ժողովրդի արտահայտությունը չլինելով, նորա կյանքը արվեստական է: Կարելի՞ է արդյոք այսպիսի պարբերական հրատարակություններին երկար կյանք խոստանալ, կարելի՞ է վերջապես նորանից պահանջել գործի հասկացողությունը և ուրեմն հասարակության համար օգուտ սպասել:

Գնացեք ծխական ուսումնարանները, և զուր անտեղ ևս միևնույն երկվույթը կտեսնեք. պաշտոնները անվարձ են, վարժապետները կամ ձրի կամ այնպիսի շնչին առճիկով դասեր են տալիս, որ երբեք չեք կարող հուսալ, որ նոքա այս պարապմունքով ապրել կարող են, ուրեմն զանց պետք է անել Եսասարակութեան մեջ ծխական (քաղաքային և գյուղական) ուսումնարանների վարժապետների կազմվող դասը տեսնելու:

Այս հանգամանքները աչքի առաջ ունենալով, եզրափակում եմ, որ օրագրության նման և ծխական ուսումնարանների գոյությունն ևս արվեստական է և կլինի (ուրեմն և երկարատև չի լինի), մինչև որ փոխադարձության գաղափարը մեր ամեն հասարակական հարաբերություններում չիրագործվի:

Ինձ թվում է, թե ուսումնարանների կառավարությունները իրանց կրթողական ներգործությանը մեծ հավատ չեն ընծայում, բայց կրկին շարունակում են իրանց գործունեությունը:

Ամեն տեսակ վարժապետների հետ խոսելով, ինձ երևեց իբր թե նոր հերքում են իրանց պարապմունքի օգտավետ ազդեցություն կատարելությունը, բայց կրկին շարունակում են դասատուություն անել...

Թերթելով մեր օրագիրները և զննելով նոցա ուղղությունը կամ խոսելով խմբագրողների հետ ևս համոզվեցա, որ մեր պարբերական հրատարակությունների խմբագրությունները քիչ թե շատ թերահավատ են դեպի իրանց գրականական գործունեության պտղատու լինելը, բայց կրկին շարունակում են խմբագրել...

Մեր օրագրության մեջ հրատարակվող նյութերի ընթերցանությունը թե վերա այն տպավորությունը թողեց, իբր թե հեղինակները (կամ ավելի լավ ասեմ թարգմանիչները) իրանց մտավոր ծննդի վերա իրանք կասկածով և երկարություններ են նայում:

Արդյոք սոքա առանձնացած երևույթներ են կամ մի խոր, հաստատուն բնական արմատ ունեն հասարակության մեջ... սոքա անցավոր դեպքեր են արդյոք կամ մեր հասարակության ընդհանուր օրենք լինելով, կարո՞ղ են հասարակության հատկանիշ արտահայտությունը կոչվել...»:

Այսպես ահա, տպավորությունները վկայում էին, որ նա չէր սխալվել թեև հեռվից էր նայում մեր իրականության: Վերստուգումը ապացուցեց, որ նա ունի նուրբ հոտառություն, որ նա օդի մեջ է ըմբռնում հարցերն ու կրիքները:

Նա դեռ Գերմանիայում գիտեր, որ մեղանում, իսկապես, ոչինչ չկա: Մեր հիմնարկությունները անբնական, խախտող գրություն մեջ են, որ թե պակասում է հավատ դեպի գործը, պակասում են հասարակական գիտակցություն, համերաշխություն, աշխատանքի վարձատրություն: Թիֆլիսի իրականությունը, որ իհարկև, ամբողջ հայության մի հարազատ կտորն էր ներկայացնում, ցույց էր տալիս, որ նա շատ լավ էր տեսնում արտասահմանի

կյանքի անմիջական զննությունը երևան է հանում մի մամուլ, որ ժողովրդի արտահայտությունը չէ, թեև աշխատում է, բայց ինքն էլ չէ հավատում իր կրթմանը, շփոթե, թե մի բան արդյոք կարողանո՞ւմ է անել, երևան է հանում զպրոցների ձրի ուսուցիչներով, թատրոնի մի այնպիսի գոյություն, որ ավելի շատ ոչնչություն չգոյություն է: Կան, այո՞, հիմնարկություններ, բայց չեղածի նման են, որովհետև չունեն մի առողջ, կենսունակ օրգանի անհրաժեշտ հանգամանքները: Ամեն ինչ ստվերային, ամեն ինչ բարերարություն, ազդասիրություն. չկա իրական օգուտ, կյանքի անխուսափելի պահանջներին էսպես լրացում տալու գիտակցությունը: Մենք դեռ հասարակություն չենք՝ այս բառի նշանակությամբ:

Այս միջավայրում, այսպիսի շրջապատի, «հասարակության» մեջ Արծրունին առաջին անգամ ենթարկվում է թեթև տատանումների. և երբ նրան հարցնում են, թե ինչո՞ւ և ո՞ւմ համար է նա գրում, չէ կարողանում չզգալ, որ իր համար էլ բոլորովին պարզ չէ իր պարապմունքի, այսինքն գրելու նպատակը: Այս հարցը կար նրա առջև և Գերմանիայում. բայց այնտեղ նա գիտեր, որ պետք է գրել, պետք է միշտ և անդադար կրկնել մտքերը, մինչև որ կրմբունեն, որովհետև մեր ժողովուրդը իր տգիտության պատճառով դեռ երեխա է: Թիֆլիսում, առաջին րոպեներում, նա մոռանում է այդ բանը, այնքան ցուրտ ու անհրապույր էր մեր իրականությունը, այնքան նա դեն էր լքում ամեն մի գործունեության միտքը: Բայց դա նոր մարդու, միջավայրին անսովոր մարդու տատանումն է: Անցնում են խրտենցնող ազդեցության րոպեները և նա շարունակում է աշխատել:

Ուսում առած, իր հողվածներով արդեն հայտնի դարձած երիտասարդի առջև բացվում է գործունեության ասպարեզ. նա մտնում է դպրոցական աշխարհը, ստանձնում է Գայանյան և Մարիամյան օրիորդաց դպրոցների տեսչի պաշտոնակատարի պաշտոն: Բայց այդտեղ շատ քիչ է մնում. մանկավարժությունը նրան չէ հրապուրում, բայց դրա փոխարեն գրականությունը շարունակ գրաված է նրան և նա Թիֆլիսում էլ սկսում է աշխատակցել «Հայկական Աշխարհին», տալով թե հողվածներ և թե զանազան տեղեկություններ, զխափարակա նոր գրքերի մասին, «Մեր ներքին Գործեր» բաժնի համար: Հիշենք այնտեղ և այն, որ Արծրունին միաժամանակ հողվածներ ուղարկում էր և Պոլսի «Մասիս» լրագրին, ինչպես և «Петербургские Ведомости» լրագրին, ուր գործ էր ածում «է. Շատ-Իրավացի» կեղծ անունը (Э. Шат-Ир-авиц):

Հետևենք «Հայկական Աշխարհում» տպված հողվածներին:

Նախքան Թիֆլիս գալը Արծրունին ուղարկել էր Ստեփանեին «Ֆրանսիա և Գերմանիա» հողվածը, որի շարունակությունը տպվեց արդեն այն ժամանակ, երբ նա Թիֆլիսումն էր: Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակն էր և համեմատությունը այդ երկու երկրների մեջ անհրաժեշտություն էին դարձնում ահավոր դեպքերը: Արծրունին համեմատում էր և, իբրև գերմանական ուսում ստացած մարդ, համակրություն էր հայտնում հողթական Գերմանիային, որ այդ ժամանակ միացրեց իր անջատված մասերը, կազմեց մի մեծ շտապություն: Պետք է սակայն նկատել, որ համակրությունը դեպի Գերմանիան հիմնված էր այն առելություն վրա, որ տաժում էր Արծրունին դեպի Կոպիլոն երրորդի բռնակալությունը, այնպես որ նրա համար անհամակրելի էր թե թե ֆրանսիական ազգը, այլ կառավարությունը:

«Այժմյան Ֆրանսիայի գրողակը չէ նշանակում ինչպես առաջ ազատություն, այլ նշանակում է բռնավարություն, — ասում է Արծրունին: — Այս այն

դրոշակն է, որի օգնությամբ Ֆրանսիա Մեքսիկայի հասարակապետությունը, ընդդեմ ժողովրդի կամքի, դորով կայսերություն ձևին դարձրեց և պատասխանատու դարձավ Մեքսիկայի կայսրի գծախտ մահին, այն դրոշակը, որի հովանավորության տակ այս օրերս Հոուսի ժողովը հանդգնեց արելային Աստու հատկությունը շնորհել, Հոուսի պապի անխալակաբար հայտնելով:

Եվ ահա այդ Ֆրանսիան կամենում էր արգելք դնել գերմանական տարրի քաղաքական ազատ զարգացման: Պատերազմը բաց արեց մի տեսարան, որի վրա զարմացած է ամբողջ աշխարհը, զարմացած է ինքը՝ Գերմանիան էր առաջնակարգ, զինվորական պետությունը հաղթվում է մի նորահաս, միևնույն ժամանակ համարվող տարրից:

«Մարդկությունը գեոևս այնքան տգետ ու անզարգացած է, որ հարկավոր էին այսպիսի հաղթությունները, այսպիսի ակներև ապացույցները, որ ազգությունների մեծ մասը ճանաչեն գերմանական տարրի առավելությունները:

Տգետ ազգերի աչքում, որոնց կարգում պատիվ ունինք և մենք և զանազան ուրիշ ցեղերն ևս գտնվելու (մանավանդ թուրքիայի վայրերի բռնավորության տակ գտնվող ողորմելի ազգերը), տգետ ազգերի աչքում, ասում են, միշտ առանձին նշանակություն է ստանում այն ազգը, որը պատերազմում հաղթող է եղել...»

Եվ ինչ որ ոչ ոք չէր սպասում, կատարվում է, գերմանացիները՝ բանաստեղծների, գիտնականների, մտածողների ազգը հաղթում է զորեղ, կրեկի զինվորական ազգ մի:

Ֆրանսիայի համար այս օգտավետ է...

Բայց ո՞վ կարող էր իրան երևակայել, որ Ֆրանսիան մինչև այս աստիճան փակ է նապոլեոնի անբարոյական, ամեն ազատություն, անհատություն ոչնչացնող կառավարության տակ: Ֆրանսիան այն աստիճանին ընկել է որ անընդունակ և անբարոյական կառավարության տակ, որ այժմ Գերմանիայի պատերազմը Ֆրանսիայի դեմ կարելի է անվանել ազատության պատերազմ սարկություն դեմ:

Ստեփանեն տագրելով այս հոգվածները, հայտնեց, որ ինքը համաձայն չէ Արծրունու մտքերի հետ: Եվ մի քանի խոսքով հայտնեց, թե ինչու չէ համաձայն: Սա առաջին և միակ զեպն է, երբ «Հայկական Աշխարհի» խմբագիրը պատճառաբանում էր իր անհամաձայնությունը: Եվ այդ պատճառաբանությունը, պետք է խոստովանել, բավական թույլ և անհամոզեցուցիչ էր: Ստեփանեն ասում էր, թե Ֆրանսիան եղել է ազատության և հավասարության սկզբունքի քարոզիչը, բայց այդ բանը չէր ուրանում Արծրունին. Ֆրանսիայի այդ ժամանակվա դրությունը Ստեփանեն համարում էր մի ժամանակվա խավար, բայց հենց Արծրունին էլ վերցնում էր նապոլեոնյան խավար ուժի տակ փտած Ֆրանսիան. Արծրունու առաջ կանգնածը ֆրանսիական ազգը չէ այնքան, որքան կառավարությունը:

Սակայն մենք չենք ուզում ասել, թե Արծրունին միանգամայն ճիշտ էր դատում: Հայրենասիրական բուռն զգացմունքներով հրդեհված Գերմանիայում ապրող, գերմանական կրթությամբ հափշտակված մի երիտասարդի համար ներքևի էր վարակվել գերմանացիների հիացմունքով: Անվանել գերմանացիներին ազատության կոբի մղող ստրկության դեմ, կարող էր, որոշ Հոուսի ամերիկացի, պատերազմական բեմից ոչ հեռու գտնվող գերմանական ուսանողը: Բայց դա գուցե ճիշտ էլ լիներ այն ժամանակ, երբ նապոլեոնի Ֆրանսիայի տերը: Նայում ենք այդ տողերի տակ գրած ամսաթվին և որքան

ապրում ենք Արծրունու, որովհետև նա գրել է այդ բանը օգոստոսի վերջերս, երբ դեռ Մեքսիկայի կայսրը, երբ դեռ նապոլեոնը պրուսացիների գերին չէր: Բայց ահա կատարվում է ահեղ դեպքը: Կայսրությունն ընկնում է Ֆրանսիայում, ժողովուրդը դիմում է հանրապետական կառավարության ձևին և դեմ է վերցնում իր հողը, իր տունը պաշտպանելու համար: Գերմանիան, սակայն, զենքը ցած չէ դնում, թեև հայտարարել էր, որ պատերազմում է նապոլեոնի դեմ և ոչ թե ֆրանսիական ազգի դեմ: Եվ այնուհետև մենք ասում ենք համաշխարհային պատմության մեջ նմանը չունեցող մի ահեղ փրամա: Հաղթություններից հղիացած Գերմանիան առաջ է տանում իր հաղթական արշավանքը, սպանդանոց է դարձնում գծախտ Ֆրանսիան, շրջվելով նույնիսկ այն հանգամանքից, որ իր կանոնավոր, պողպատյա պատեր ներկայացնող դորքերի առջև կանգնած է ոչ թե ֆրանսիական դորքը, այլ շտապով զինված ժողովուրդը... Այստեղ այլևս երկաթի և արշալույս պաշտպաններն է, այստեղ այլևս բիսմարկյան հողին է, գլխի, ստորացնելու, ոչնչացնելու այն հողին, որ գոռոզությամբ մերժում էր հաշտություն կնքելու առաջարկությունները և կրակում էր ֆրանսիական գյուղերը...

Ահա պատերազմի այս շրջանում էլ Գրիգոր Արծրունին, իբրև գերմանական ուսանող, շարունակում էր համակրել Գերմանիային: Հոկտեմբերին դրած իր վերջին հոգվածում նա քննադատում էր ֆրանսիական հանրապետությունը և ասում էր, որ այժմ էլ, երբ Ֆրանսիան հանրապետություն է, համակրել նրան նշանակում է հանրապետություն բառով հափշտակվել «առանց իրան բավական պաշտոնը, մի ժողովրդի մեջ նորա իրագործման հնարավորությունը, մի քանի ժամանակ զրական կերպով հասարակապետության... մի ժողովրդի մեջ զրեմադրության բոլոր պայմանները քննելու...»:

Ֆրանսիական հանրապետությունն էլ, Արծրունու կարծիքով, մի անհավերժի բան է: «Կարելի է արդյոք, — հարցնում է նա, — համակրել այն ազգին, որի վրանից մենք այս սկզբի թեև անդադար ներբողներ ենք լսում, որն իր պատական ընթացքում քանի մի անգամ արդեն փորձել է հարմարեցնել այս ազգափառը իր քաղաքական կյանքին, բայց որի երևակայական փորձերի արդյունքը եղել է միշտ առավել խիստ և անաանելի բռնավորության հպարտություն...»:

Ֆրանսիական հանրապետությունն էլ, Արծրունու կարծիքով, մի անհավերժի բան է:

«Կարելի է արդյոք, — հարցնում է նա, — համակրել այն ազգին, որի վրանից մենք այս սկզբի թեև անդադար ներբողներ ենք լսում, որն իր պատական ընթացքում քանի մի անգամ արդեն փորձել է հարմարեցնել այս ազգափառը իր քաղաքական կյանքին, բայց որի երևակայական փորձերի արդյունքը եղել է միշտ առավել խիստ և անաանելի բռնավորության հպարտություն...»:

Մենք հետագա ճշմարտությունը երբեք չպետք է դադարենք հասարակությանը կրկնելու. ինչքան ընդարձակվում են, բազմանում են մեր իրավունքները, այնքան ավելանում են մեր պարտավորությունները:

Նոր շնորհված... իրավունքների իրան արժանի ցույց տալը նշանակում է իրավունքներին համապատասխան պարտավորությունները կատարել և արդարանալ:

Իսկ քաղաքական պարտավորությունները ճշտությամբ կատարել հեշտ չէ. Պետք է պարտաստված լինել այս կամ այն պարտավորություն կատարելու համար:

Ինչ են Ֆրանսիայի հիմնարկությունները:

Եվ Արծրունին մի առ մի թվում է պակասությունները: Ֆրանսիան ընդհանուր ձայնատվության իրավունք ունի, բայց քվեարկողներն անզրագետ են: Երբ սահմանադրություն ունի նա, բայց բյուրոկրատիայի հայրենիք է և իր պաշտոնյաները տիրում են հասարակության, քաղաքացիների վրա: Երբ անհավերժ լինում են, ինքնուրույնությունից զրկված, տիրում է կենտրոնը:

րոնը, Փարիզը կենտրոնացրել է ամեն ինչ իր մեջ: Ֆրանսիան «հասարակապետություն լինելով, անհատության սկիզբ պետք է պաշտպանե, բայց միշտ տարել է կաթոլիկ մոլեռանդ հոգևորականության անսահման ազդեցությունը հասարակական կրթության վրա, այն հոգևորականության, որի նպատակն է անհատությունը սպանել»:

Այս բոլորը ճիշտ է: Բայց մի՞թե հարցը այն մասին է, թե ինչ պակասություններ ունի մի վարչական սխառնամ: Եվ մի՞թե այդ կողմից Բիսմարկի Գերմանիան բոլորովին անբիծ էր: Մի՞թե Բիսմարկը պրուսական զինվորների հետ հաստատվել էր վերստին այն նպատակով, որ վերացնեն անարդարությունները ֆրանսիական վարչական կարգերի մեջ: Գեպքերը դեռ նոր էին խոշոր պրուսիական ստեղծում: Գեռ հայտնի չէր, թե ինչ պատիժ պիտի դասնա միացած Գերմանիան քաղաքակիրթ աշխարհի համար, պաշտամուկ դարձնելով զինվորական ուժը՝ ստեղծելով ահռելի միլիտարիզմ: Գրիգոր Արծրունուն 1870-ին ներելի էր սխալվել: Եվ ժամանակի ընթացքում, երբ հետզհետե լույս աշխարհ եկան հազիվական Գերմանիայի հատկությունները, նա փոխեց իր հայացքը. նա տեսավ, որ ֆրանսիական հանրապետությունը որքան էլ պակասություն ունենար, ամենահարմար վարչական ձևն է, որ հետադարձություն է տալիս ժողովրդին կռիվ հասարակական ցավերի դեմ, պաշտպանել ազատությունը և վտանգի ժամանակ արտահայտել հերոսական գուրափարականություն: Որքան էլ պակասավոր, որքան էլ հիմնադատ, բայց հանրապետությունը ժողովուրդն էր ներկայացնում և եթե հանցանքները անբան բարձրաձայն, հրապարակական դատապարտության էին ենթարկվում, պատժվում էին, պատճառն այն էր, որ կառավարչական ձևը հանրապետությունն էր:

Այս բոլորն արձանագրեց Արծրունին հետո՝ իր հրապարակախոսական գործունեության ընթացքում: Բայց այստեղ շմոռանանք բերել մի կտոր նրա «Ֆրանսիա և Գերմանիա» հոդվածներից: Այդ կտորը շոշափում է ֆրանսիական և գերմանական կրթության արժանավորությունների հարցը:

«Բախտի բերմամբ, ասում է Արծրունին,— մեզ, Ռուսաստանի հայրի համար, որոնք ավելի առիթ ունինք հիմնավոր դատախարակվելու, քան թե թուրքիայի մեր ողորմելի եղբայրները, պարզ էին միշտ և պատերազմից առաջ ևս, Գերմանիայի արժանավորությունները: «Ապացույց, որ դուք, Ռուսաստանի Հայրի, ավելի զարգացած եք, քան թե թուրքիայի մեր եղբայրները,— ասում էր ինձ անցյալ տարի Փարիզում Մխիթարյան Հայրերից մեկը,— որ դուք ձեր ուսման ասպարեզը Գերմանիա եք ընտրել և մեծ մասամբ այնտեղ են գնում ձեր երիտասարդները ուսում առնելու, իսկ թուրքիայի հպատակները միայն Փարիզ են գալիս, Ֆրանսիայի թեթև առերես կրթությունը նախապատվելով»:

«Հայկական Աշխարհի» խմբագիրը հակառակ էր և այս մտքին. նա, թեպ հակառակն, շատ լավ էր համարում ֆրանսիական կրթությունը: Եվ սակայն գերմանական կրթության գերազանցությունը ընդունվեց ամբողջ աշխարհի կողմից, որ վկայեց, թե պատերազմի մեջ Ֆրանսիային հաղթողը գերմանական ժողովրդական ուսուցիչն էր: Նկատենք, որ Ստեփաննն, ինչպես կատարենք, Արծրունուն հակառակվելու համար էր ոչինչ համարում գերմանական կրթությունը...

1871 թվականին Արծրունին «Հայկական Աշխարհում» տրամադրեց կրթության հարցը:

նոր հոդված: Դրանցից առաջինը կոչվում է «Աշխարհարարի նորաձևությունների հասարակական նշանակությունը»:

Վերնաշրջը պարզ է և թյուրիմացությունների տեղիք չէ տալիս: Արծրունին այդ հոդվածում լեզվական-բերականական հարցեր չէր ձեռնում: Իր տեղում մենք տեսանք, որ Արծրունին լեզուն նպատակ չէր համարում, այլ միշտցու նա առում էր, թե ո՞նք իր համար նշանակություն չունի, բավական է, որ ժողովուրդը կարգա իր գրվածքը և հասկանա: Այժմ էլ նա, թեև արդեն վարժվել էր հայերենագրության մեջ, չէր գալիս այս կամ այն կանոնները թելադրելու, այլ մեր լեզվի մեջ տեղի ունեցող նորաձևությունների հասարակական նշանակությունն էր բացատրում: Լեզուն ժողովրդի արտահայտությունն է և եթե նա մնում է շարունակ անշարժ, խակ, անմշակ ու աղքատ, այդ արդեն կշան է, որ հասարակությունը չէ դարգանում, որ նրա մեջ նորանոր պահանջներ չեն ծագում, որ նա էլ անշարժացած է:

Հայոց լեզուն այդպիսի անշարժության նշաններ չէ ցույց տալիս: Եվ դրա սպառնույցը Արծրունու համար այն նորաձևություններն են, որ մտցրել է «Հայկական աշխարհը»: Մենք խոսել ենք Ստեփանեի նորաձևությունների մասին մանրամասն կերպով, գիտենք, թե որտեղից էին գալիս այդ նոր ձևերը: Արծրունին գործ չունի այդ հանգամանքի հետ. նա նույնիսկ չէ էլ ուզում հաստատել որքան նպատակահարմար, որքան կենսունակ ու հիմնավոր են Ստեփանեի նորաձևությունները: Կա՞ն դրանք, նշանակում է, որ աշխարհարար լեզուն ուզում է ժողովրդի և ժամանակի պահանջներին հարմարվել, ուզում է կենդանի ու ճկուն ձևեր չուրացնել: Եվ դա անհրաժեշտ է, դա խրատությանքի և համակրության արժանի երևույթ է:

Լեզուն պետք է հղկել, մշակել: Բայց ո՞ւմ վրա է գրված այդ պարտքը: Ստեփանեն մի անհատ է, իսկ անհատը չէ կարող այդպիսի հարցերը լուծել: Գուցե Ստեփանեն սխալվում է, գուցե նրա նորաձևությունները քմածին են, ինչ ընդունվի, կկորչեն շուտով: Բայց այդ նորաձևությունների ոգին, ձգտումները հասարակական ուղադրավ երևույթ են կազմում և նրանց պետք է բավարարություն տալ: Ուստի Արծրունին առաջարկում է ընտրել ձեռնհաս անձինքներից մի մնայուն մարմին, որ կվճռե լեզվական հարցերը, ձևերը և կանոններ կմշակե մեր աշխարհարարի համար:

Մենք հաղորդեցինք հոդվածի կմախքը, հիմնական միտքը: Բայց սա բավական չէ: Պետք է ծանոթանալ Արծրունու դատողությունների հետ, լուրջ կայր ուժի հետ: Այս հոդվածը նրա լավագույն գրվածքներից մեկն է, ուստի և մենք կզիջենք Արծրունու սեփական խոսքերին. «Հիշո՞ւմ եք ինչպես Քիֆլիսի հայրը ման են գալիս փողոցներում... Ահա երկու վաճառական մայրով (տրոտուար) են անցնում իրանց առևտրական գործերի վերա խոսելով... Տեսեք ինչպես նոքա ծանրաքաչ կերպով են գնում, ինչպես բարձրաձայն կանչում են խոսելու ժամանակ, ինչ շարժումն են անում ձեռներով, ոտներով, երեսով... և ամեն մի բոպե թղանցքից քաշելով միմյանց կանգնեցնում են, մի որիցն ամենահաւարակ միտք մեկնելու համար:

Հիշում են նմանապես ինչպես մեր ուսուցիչները չեն շտապում դաս տալու, ինչպես գործ ունեցող մարդիկ չեն շտապում իրանց գործերը կատարելու, իսկ օրեցօր ձգում են նոցա:

Հիշում եմ ինչքան ժամանակ հարկավոր է Հային մի ամենահասարակ միտք մեկնելու համար. ինչքան դատարկախոսություն, ավելորդություն հարկավոր է նորան, օրինակ, իր ծառային մի օրեւ ամենահասարակ հրաման տալու համար...

Այս բոլոր երևույթների պատճառը ի՞նչն է:

Մի կողմից ժողովրդի բնավորության այսպիսի արտահայտությունը հատուկ է ամեն հարավային ազգերին, իսկ մյուս կողմից այսպիսի երևույթը մեկնվում է մեր հասարակական գրությունը:

Երկիրը երկար ժամանակ պատերազմական գրության մեջ էր գտնվում, նորա հասարակական կյանքը շարժառիթ էր: Կովկասի բնակիչները այժմ միայն սկսում են շունչ քաշել, աշխատել, դարգացնել: Դեռևս ճանապարհներ և երկաթուղիներ չկան, արվեստագործությունը դարգացած չէ երկրում, վաճառականությունը անհշան աստիճանին հասավ, ուսումնարանները բազմաթիվ չեն, ուսումնական կյանք չկա:

Եվ այս պատճառով Կովկասի բնակիչները քիչ պահանջմունք ունին... Կովկասի բնակիչը ավելորդ ժամանակ ունի, կամ ավելի լավ ասեմ նա չէ գնահատում ժամանակը:

Նա չէ շտապում գործել, գնալ, գալ, խոսել... Նա խոսում է գրեթե երգելով...

Հին հայկական լեզուն արտահայտություն է հին հայկական կրթության, ինչպես և բարձր լինելը այն կրթությունը, նա դարձյալ միակողմանի էր, այն դարերի սուղ պահանջմունքին համապատասխան լինելով: Վերացական դասակարգները տիրապետում էին այն ժամանակի կյանքին և սորա հետևանք է, որ մեր հին լեզուն չափազանց հարուստ է փոխաբերական ոճերով և խրթնություններով:

Իսկ դրական գիտությունները դեռ դարգացած չլինելով, մեր գրարարի մեջ պակաս են բնական, հասարակական, բաղաձայնական և բազմաբնույթական գիտություններին վերաբերյալ ասացվածները:

Հին ազգերի կրթությունը զուրկ էր այն գիտություններից, որոնք արդեն հասարակական կյանքում ամենանշանավոր դեր են խաղում:

Լեզուն արտահայտություն է հասարակական կյանքի:

...Մեր ազգատ, անտաշ աշխարհաբարը նմանապես արդյունք է մեր ազգատ հասարակական կյանքի:

Մեր ազգի հասարակական կյանքի զարգացման ժամանակ զարգանում է և նորա լեզուն:

Երբ ազգի մտավոր և գիտական կյանքը դեռ զարգացած չէ, նորան պակաս են ճիշտ ասացվածները: Երբ ոչ գիտնական, ոչ արվեստագործական, ոչ առևտրական, ոչ ընկերական և հասարակական կյանքը ազգի մեջ զարգացած ման բարձր աստիճանին չեն հասել, մարդիկ ավելորդ ժամանակ ունին, չեն գնահատում ժամանակը, չեն շտապում ապրել, գործել, խոսել, կենսական հարաբերություններ կատարել և լեզուն ևս անշարժության այս գրություններ ենթարկվելով, ոչ թե միայն ասացվածքների և ոճերի պակասություն ունի, բայց և չափազանց ծանր է, անընդունակ է հասարակական գաղափարներ հայտնելու, պարբերությունների դասավորությունը չափազանց նահապետական է, լեզվի կազմության մեջ հնչյունների ավելորդություն կա, բառերը երկար են, այբուբենի մեջ նման տառերի առատություն կա...

Մենք տեսնում ենք, որ մի ազգի հասարակական զարգացման ժամանակ փոխվում են և այն ազգի բարձր ու վարքը... և այս երևույթը ազդեցություն ունի և լեզվի զարգացման վերա... մարդիկ ավելի գործունյա են դառնում, առավել գնահատում են ժամանակը, ավելի կարճ, պարզ և ճիշտ պարբերությունների կազմությանը բնութանում են, սակավ են խոսում ժամանակ

պակասության պատճառով կամ բառերն արագ արտաբերելու պատճառով մեղուկների մի քանիսները կամ ամենևին կորչում են կամ երկու-երեք նույնանման հնչյունները մի հնչյունին են միանում: Ուղղագրությունը փոխվում է, ինչպես օրինակ, ֆրանսիական լեզվի մեջ շարունակ էր փոխվում, կարճատև, հեշտանում կամ եթե միևնույնն է մնում ժամանակով տառերի մի մասը բունների մեջ չէ արտասանվում...

Հերքել չէ կարելի, որ մեր ազգը քանի մի ժամանակից սկսած հրապարակապես զարգանում է, մանավանդ Ռուսահայաստանի և Վրաստանի մեջ, որտեղ ռուսական տարրը եվրոպական կրթության միջնորդ է դարձել:

Հերքել չէ կարելի նմանապես, որ արդեն «Հյուսիսսփայլի» գործունեությունը մեր լեզվին մեծ առաջադիմություն անել տվեց, մշակելով աշխարհաբարի ձևերը և մացնելով բազմաթիվ ասացվածները:

Եվ եթե նա մի քանի բաների մեջ, օրինակ երկար, չափազանց բաղադրյալ բառերը մտցնելով, որոնց գործածության դեմ իրավունքով հարձակում է հ. Պարբերի Այվազյանը («Խնդարմունք Հայկաբանություն»), կարելի է անհետեաբար էր վարվում, «Հյուսիսսփայլը» այս դեպքում ընդհանուր մարդկային հատկություններ ենթարկվեցավ:

...նպատակ չունենալով մի լեզվագիտական քննություն առաջարկել, այլ հատրակական կողմից միայն նայելով խնդրի վերա, ես չեմ կարող պ. Ստեփանի նորաձևությունների արժանավորությունները կամ պակասությունները միտածի քննել:

Երկուսից մեկը, կամ հայկական լեզուն անընդունակ է դարգանալ հասարակական պահանջմունքի համեմատ և ուրեմն ժամանակով բոլորովին չի գործածվի երկրի մեջ, կամ եթե կշարունակե գործածվել Հայերի հասարակական հարաբերություններում, նա պարտավորված կլինի մեծ փոփոխություններին ենթարկվել...

Մի լեզվի գոյության կովի համար հարկավոր են հաջողակ հանդամանքը և պայմանները...

Մեր լեզու հասկացնելու առաջին պայմաններից մեկը պետք է լինի գիտական ասացվածներով հարստացնելը: Բայց պակաս նշանակություն չպետք է ունենան նոր գործածությունը հեշտացնելու փորձը: Այս կողմից նշանավոր են պ. Ստեփանի ջանքերը:

Պ. Ստեփանեն, գուցե և անհետեաբար վարվելով, առաջինն է հղել, որն քերական (կարելի է և ներքին զգացմունքով, բնական ազդամբ, ինստինկտ) լեզվաբանական, աշխարհաբար լեզվի պահանջմունքը ազատել ամեն տեսակ ավելորդություններից, հասարակ, ամենօրյա, հասարակական գործածությանը հասանելի դառնալու համար, աշխատեց դարման տալ այս պահանջմունքին:

Նորա ջանքը և ձգտումները մի խոսքով կարող են սահմանվել՝ համատեսի...

Այս է պատճառը, որ պ. Ստեփանեն ուղղագրությունը փոխել փորձեց, զորս գցելով այն տառերը, որոնք բառերի վերջերում չեն արտասանվում, աշխատեց պակասացնել տառերի թիվը, որոնք միևնույն կամ նույնանման կերպով են հնչվում...

Կարելի է պ. Ստեփանեն անհետեաբար էր վարվում, կարելի է նա շատ բաներում սխալվեցավ, կարելի է նորանից առաջարկված լեզվի փոփոխություններից շատ փոքր թիվը կընդունվի, կարելի է երբեք չի ընդունվի ոչ մեկը, բայց այնուամենայնիվ նորանից առաջարկված նորաձևությունները ժամանակի նշան են, ժողովրդի կենսական պահանջմունքի արտահայտություն են:

Հասարակական կյանքի աղքատ անազադի մութունը կանչում է դեպի մի հնացած աղբը և դեպի նորա դասական, փառավոր, բայց այժմյան կյանքի պահանջմունքին անհամապատասխան լեզվի ավերակները. «Կամ սեւոր է անհետանանք, կամ հիմքից պետք է փոխվենք...»:

Բայց ո՞րքան և ի՞նչպես...

Ահա մի խնդիր, որը անզոր է լուծել մի մարդի ամբողջ կյանքը, մի անսխալ աշխատանքը...

Այս խնդիրը պետք է լուծեն ժամանակը և ժողովրդի գործնական անդամ դար լեզվի մշակութունը:

Բայց և առանձին, մասնավոր անձի այսպիսի նորաձևությունները չպետք է արհամարհենք: Նորա թեև անգործադրելի լինեն, դարձյալ մեծ նշանակություն ունին որպես առաջադիմության և վերանորոգման համար խթան, որպես բողոք անշարժության դեմ...

Վերջացնում եմ մի առաջարկությամբ.

Աշխարհաբարը կարոտ է վերանորոգմանը. այսպիսի աշխատանքը վեր է մի անձի զորությունից:

Հասարակութենից ենք սպասում, որ նա, հասկանալով այդ ճշմարտությունը, աշխատե հայկական լեզվագիտական պարբերական ժողովները հիմնել, որոնց միջոցով կարողանան մշակվել նոր լեզվի ձևերը:

Ժողովին կմասնակցեն հայկական գիտնականները, աշխարհաբար կամ դրաբար լեզվով գիրք հրատարակողները, հայկական օրագրիչների և լրագրիչների ներկայացուցիչները, վեհեցիայից սկսած մինչև Թիֆլիս, ուսուցիչները և այլն:

Հասարակութենից ենք սպասում, որ նորա մեջից շորս, հինգ անդամներից մի մշտական մասնաժողով (կոմիտե) կազմվեր, որի պաշտոն կլինի տարին կամ երկու տարին մի անգամ (ինչպես որ հարմար կլինի և վճարող կլինի առաջին ժողովից) հրավիրել հայ գիտնականները և գրագետները մասու հետո երկիրներից, նշանակված ժամանակին գալ, մասնակցել ժողովին, որի նիստերը մի անգամ Թիֆլիս, մի անգամ Կ. Պոլիս, մի անգամ Երևան և այլն կարող են լինել:

Մասնաժողովի նպատակը և պաշտոնը ժողովի նիստերի բացակայության ժամանակ, կարող են սահմանվել և հաստատվել ժողովրդի վճռով:

Այս հոդվածն էլ Գրիգոր Արծրունու արտասահմանյան գրվածքներից էր և նրա տակ գրված է՝ «Հեղուրեբոզ, 1870»: Մենք ուզում ենք մատնանիշ անել և այն հանգամանքը, որ Արծրունին անդադար ուսումնասիրում էր մեր գրականությունը. այս հոդվածի մեջ նա վկայություն է բերում Հ. Այսոյանի կանությունը. այս հոդվածի մեջ նա վկայություն է բերում Հ. Այսոյանի «Քննական քերականությունից», իսկ հոդվածի ճակատին գրել է Ստեփանոս Նազարյանցի «Փորձնական շեղբանություն» առաջաբանից հետևյալ տողերը՝ «Գյուրին ևս է հարուցանել դմեռեալս ի գերեզմանաց, քան թե միջնորդութեամբ հնոյն լեզուի զնորն լուսաւորել զժողովուրդը»:

1871 թվականն է, «Հայկական Աշխարհի» վերջին տարին: Ամիսներ և անցկացրել Արծրունին իր հաջրենիքում, բայց ընթացիկ հարցերի մասին ոչինչ չէ գրում, եթե չհիշենք մատենագրական մի քանի տեղեկությունները «Մեր ներքին Գործերի» մեջ: Նրա վերջին հոդվածը, որ տպվեց Ստեփանոս ամսագրում, «Աշխատանքի բաժանություն» վերնագիրն է կրում: Գրա մասին մեր ասելիքը շատ քիչ կլինի, որովհետև դա պարզապես մի դաս է քաղաքատնտեսությունից և չէ պարունակում իր մեջ հայկական կյանքի երևույթները քննություն: Զարգացնելով այն միտքը, թե աշխատանքի բաժանությունը ան-

բաժնեշտոնություն է դառնում այնտեղ, որ հասարակությունը զարգանում է, որդ պահանջներն տեր է դառնում, Արծրունին ասում է, որ մասնագետները արհավիրք են առաջադիմության համար, բայց ոչ չոր ու ցամաք, իրանց գործի մեջ միայն հմտություններ ձեռք բերած մասնագետներ, այլ ընդհանրապես լավ զարգացած, բազմակողմանի կրթություն ստացած մասնագետներ:

Հարկավոր ենք համարում ժանտիացնել այդ հոդվածի մի ուրիշ մտքի լեռ էլ: Գաստիարականության հարցերի մեջ, ինչպես տեսանք Արծրունու առաջին գրություններից, կարևորություն էր տրվում երեխայի անհատական հատկություններին. Արծրունին պահանջում էր, որ կրթությունը հարմարեցվի երեխայի անհատական հատկություններին, որ նա զարգացնե աշակերտի ընդունակությունները: Նույն սկզբունքը նա այստեղ գործադրում է և ազգերի վերաբերմամբ, որովհետև ազգերն էլ անհատներ են մարդկության մեջ: Նա ասում է. «Ինչպես մանկավարժության խնդիրը պետք է լինի գտնել, հարուցանել և զարգացնել երեխայի մեջ անհատական հակմունքը և ընդունակությունները, այնպես և, աչքի առաջ ունենալով մարդկության մեջ աշխատանքի բաժանության օգուտը, քաղաքականության խնդիրը պետք է լինի գտնել, հարուցանել և զարգացնել մի ազգի մեջ ևս նորան հատուկ այնպիսի կողմը, որ նորա հոգևոր և տնտեսական կյանքում արդյունավոր գործիչ կարողանար քանակալ»:

Վերջինն է այս հոդվածը, բայց վերջին «Հայկական Աշխարհի» մեջ: Գասպինը, որ Արծրունին «Հայկական Աշխարհում» չէր արժարժում մեր ընթացիկ կյանքի հարցերը: Բայց սա չէ նշանակում, թե նա միանգամայն անարժեք հանգիստես էր Թիֆլիսի մեջ: 1871 թվականի առաջին կիսամյակում նա համարյա դադարեցնելով իր աշխատակցությունը «Հայկական Աշխարհի» սկսում է գրել «Մեղուի» մեջ: Այս շաբաթաթերթում Արծրունին ոչինչ չէր գրել երկու տարի (1869 և 1870 թվականներին). այժմ նա հանկարծ սկսեց աշխատակցել «Մեղուին» և մի շարք հոդվածներ տվեց: Ի՞նչ էր պատահել:

Գծբախտաբար, չգիտենք: Մի բան միայն նկատում ենք՝ սառնություն Արծրունու և Ստեփանեի մեջ: Ուշադրության արժանի հանգամանք է, որ Արծրունին, Թիֆլիս գալուց հետո, ոչինչ ուշադրություն չդարձրեց այն մշտական բանակովի վրա, որ տեղի ուներ «Հայկական Աշխարհի» և «Մեղուի» մեջ: Ստեփանեն համարյա ամեն ամիս հարձակվում էր «Մեղուի» վրա, բանակով էր մղում խիստ լեզվով, կրքոտ էր, անխնայ: «Մեղուն» էլ իր կողմից նա չէր մնում. նա լցնում էր իր էջերը Ստեփանեի անձնավորության և մրտնդոթի դեմ ուղղած հոդվածներով, նա համարյա միայն «Հայկական Աշխարհի» էր ապրում: Մեր աղբատիկ մամուլը միայն այդ երկու ներկայացուցիչների ունեթ Թիֆլիսում և դրանց անվերջ կոիվները չէին կարող աչքի ընկնող խնայթ չկազմել: Արծրունին, որ ստեղծված էր կովի համար, բոլորովին չէր պահվեց, ոչ մի խոսք չասաց: Ինչո՞ւ: Արդյո՞ք այն պատճառով, որ անհավիվը Ստեփանեի և Սիմեոնյանցի մեջ գլխավորապես մանր-մունր, անձնական հարցերի շուրջն էր պատում, չէր շոշափում սկզբունքների, հիմնական սխալ հարցադրությունների հարցեր: Ըստ երևույթին, Արծրունին պիտի Ստեփանեի կողմնակիցը լիներ, որովհետև «Հայկական Աշխարհը» համենայնուցս, «Մեղու» չէր: Բայց իրողությունն այն է, որ բանակովի ամենակատաղի ամենակը, երբ «Հայկական Աշխարհը» մյուս կողմից օր օրի վրա նիհարում, մաշվում էր և ստիպված իր էջերը կրունի դասերով լցնել, Արծրունին չէր գրել «Մեղուի» մեջ, այսինքն ավելի Սիմեոնյանցի կողմը ուժեղացնել:

Չենք կարողանում ճշտությամբ որոշել այս իրողության պատճառը՝ Սկզբունքների, ուղղության ուղիչ հարց չէ կարող լինել, որովհետև Արծրունի «Մեղուի» մեջն էլ նույնն էր, ինչ «Հայկական Աշխարհի» մեջ և Պետրոս Սիմոնյանցի հյուրասիրությունն ընդունել Արծրունու համար չէր նշանակում մազի շափ շեղվել իր դավանանքներից: Մենք տրամադիր ենք բացատրել այս երևույթը ավելի անձնական հարաբերություններով: Գուցե շատ բան հասկանալի կդառնա, եթե ի նկատի առնենք հետևյալ հանգամանքը:

Ստեփանն Տիֆլիսում Մարիամյան օրիորդական դպրոցը և իր ամբողջ ուժերը նվիրեց նրան: «Հայկական Աշխարհը» այդ դպրոցի օրգանն էր, նրան փառաբանողը, նրա կյանքի յուրաքանչյուր, նույնիսկ ամենահասարակ դեպքերը նկարագրողը: Բանն այն տեղին էր հասնում, որ 1869 թվականին Ստեփանն հայտարարում էր, թե «Հայկական Աշխարհի» բաժանորդագրությունը այնքան լավ է, որ նա եկող տարին նույնիսկ արդյունքն էլ սպասում, բայց այդ եկամուտը իր գրականում չափաի գնե, այլ պիտի հատկացնե Մարիամյան դպրոցին:

Իր ձեռքի գործն այդպիսի եռանդով, ինքնահավանությունով պաշտպանող Ստեփանն 1869 թվականին տեսնում է, որ մի քանի մարդիկ, որոնց մեջ էր և Սիմոնյանցը, հիմնում են մի նոր օրիորդական դպրոց, Գաիանյան անունով: Նախանձույ ծնողի անհամբերությունով Ստեփանն հարձակվում է այդ նոր հիմնարկության վրա, անվանում է նրան «Չզգրաշեն», այսինքն իր ջգրու շինած: Բանակովը այս առիթով սաստկանում է: Գրիգոր Արծրունին արտասահմանից վերադառնալուց հետո, ընդունում է այդ «Չզգրաշեն» դպրոցի տեսչության պաշտոնը: Բավական չէ՞ր այս հանգամանքը, որ սանտուկում մաներ Ստեփանեի և Արծրունու հարաբերությունների մեջ:

Ենթադրությունների մեջ ավելի առաջ դնալու նյութեր չունենք: Բավականանալով այսքանով և դիմենք Արծրունու հողվածներին «Մեղուի» մեջ:

Գրանք թվով հինգ հատ են և ամենքի տակ դրված է Արծրունու կեղև անունը՝ նիտր: Երեքը գրված են թատրոնական ներկայացումների առիթով՝ իսկ երկուսը հասարակական-գրական ընդհանուր հարցեր են շոշափում: Քաղաք այդ գրվածքների մեջ ավելի ու ավելի խիստ է նկատվում Արծրունու բնագրական-հարձակողական վերաբերմունքը դեպի հասարակությունը՝ մանավանդ դեպի վաճառական և ինտելիգենտ դասակարգը: Այսպես, «Երկու ներկայացում» հողվածը, տպված «Մեղուի» № 7-ի մեջ, նա սկսում է այսպիսի խոսքերով. «Պ. Ամերիկյանի՝ առաջին խոսքերը ծափահարությունների տրամադանք հարուցին... այդ ի՞նչ է... մեր հասարակությունը իրան անպատված է: Ի՞նչ, մենք այնքան թանկ վճարում ենք դերասանի նվազ ծառայությունը, նորա անշահասիրությունը, եռանդը, ճշմարիտ տաղանդը մենք ծափահարություններով ենք վարձատրում... այդ շատ շատ է:

Ո՞վ է եղել այն սուտ ասողը, որ թատրոնը, որ բնիք աղղում է ժողովրդի վերա... այդ սուտ է: Գերասանը ինքն իր ուրախության համար է ներկայացնում: Գերասանը անգործ մարդ է և հեղինակն ևս, որի սրտաշարժ գրվածքն աշխատում է մեզ իր խաղով մեկնել, նմանապես անգործ մարդ է: Վարձատրելի դերասանները, ի՞նչ հարկավոր է, նոցա համար վարձատրություն է եթե հասարակության քանի մի անդամներու բարեհաճում կնք նոցա ներկայացմանը ներկա գտնվելու...

1 Տաղանդավոր դերասան, որ հետո «Մշակի» առաջին աշխատակիցներից մեկը և ակադեմիկ ֆեյխտոսիսը դարձավ:

Հայերը, որոնք մեծ մասով առևտուրով են պարսպում, դրական ժողովուրդ են: Գործ, գործ, փող, առևտուր... Մենք հերքում ենք արհեստը, հերքում ենք, որ նա մարդի բարոյական և մտավոր զարգացման վերա ազդեցություն ունի, մենք արհամարհում ենք հեղինակը, որը երկար, քրտինքում աշխատում է տարիներով միտք մշակել, ձգտում է արդարությանը, մենք ծիծաղում ենք գերուսանի վերա, որը կամենում է (այն ևս անվարձ) թարգման դառնալ հեղինակից մշակված մտքերի...»:

Բայց հայկական պակասությունների ավելի խիստ քննադատություն մենք գտնում ենք «Գիտնական անսխալականություն» հողվածի մեջ, որի հետ պիտի է արգեն ավելի մանրամասն կերպով ծանոթանալ:

«Երբ անցյալ տարի, — ասում է Արծրունին, — կաթոլիկ սուրբ հայրերը, գումարվելով Հռոմի մեջ, հայտնեցին իրանց ժողովի բերանով և հաստատեցին Պապի անսխալականության վարդապետությունը, ամբողջ եվրոպան ծիծաղով պատասխանեց այդ անճոռնի վարդապետության հայտնությունը»:

Ինչո՞ւ է ծիծաղելի այդ վարդապետությունը, երկար է բացատրում այդ քանի Արծրունին, բայց հետևյալ կտորները այդ բացատրության էական կետերն են. «Ոչ օրգանական և ոչ անօրգանական բնության մեջ չկա անշարժություն»:

Որտեղ որ նայենք, մենք ոչ մի տեղ ոչ բնության, ոչ մարդկային պատմության երևույթների, ոչ կենդանիների կազմակերպության, ոչ ևս անօրգանական (անշունչ) բնության, ոչ մարդի հոգևոր կյանքի մեջ չենք պատահիլ կատարելատիպերի (կատարելագործության), բայց ամեն տեղ կնկատենք ժանդենավոր ձգտումն դեպի կատարելագործությունը:

Գիտությունը, երբեք կատարյալ չլինելով, միշտ ձգտում է դեպի կատարելագործությունը: Անսխալ կարող են լինել միայն կատարյալ գաղափարները, երևույթները: Բայց որովհետև կատարյալ բան չկա ոչ մարդկության, ոչ բնության մեջ, անսխալ իրանց հայտնող սկիզբները իրանք իրանց դատապարտում են անշարժության:

Կարծելով ինձ անսխալ, ես հերքում եմ իմ անձի համար լուսավորվելու, անաջադիմություններ անելու, բարվոքելու ձգտելու պահանջմունքը և հարկավորությունը, ուրեմն ես հասած աստիճանի վերա անշարժ եմ մնում:

Ճիշտ գիտությունն անդադար շարժումի մեջ է գտնվում:

Ճիշտ գիտությունը սովորեցնում է մեզ անխոնջ ինքնաքննություն:

Այս ընդունված միտք է, որ Հայերը երկպառակություն սիրող ժողովուրդ են, որ նոքա զրկված են ընկերանալու ընդունակությունից, որ Հայերի այս կատակությունը մի քանիսների (պատմաբանների) կարծիքով նոցա պատմական ընթացքի ազդեցության հետևանք է, կամ ուրիշների (աստվածաբանների) կարծիքով, երկնային անեծք է...

Եվրոպական կրթության մեծ արժանավորություններից մեկը նորա ձեռք գտնում է ամեն բանին, ամեն մի պակասությանը դեղը (կամ միջոց) պատելու...

Ցանկալի է, որ, օրինակ առնելով եվրոպական ինքնաքննության ոգուց, մենք ևս մտածեինք հայկական տարրի մեջ այդ պակասության գոյության պատմական պատճառների և նորան մեր մեջից վերցնելու հնարավորության մասին:

...Մեր երիտասարդների մեծ մասի վարմունքի և գործունեության առաջնորդող սկիզբը անսխալականությունն է:

Ի՞նչ է սորա պատճառը:

Մեր երիտասարդները այնպիսի շրջաններում են մեծանում, դաստիա-

րակվում և կրթվում, որտեղ անխոնջ աշխատանքի դադափարը դեռևս չէ իրագործվել, որտեղ ճիշտ դիտարկումները, որոնք միշտ իրական են անընդհատ աշխատանքի համար, դեռևս մտքորթ չեն և որտեղ ուրեմն անհայտ է անդադար ձգտումն դեպի ինքնաքննությունը:

Ուշադրություն դարձրեք մեր հասարակության գործերի ընթացքի և նոցա մեջ մասնակցող անձերի վերա (չեմ էլ խոսում ծերերի մասին), և դուք կնկատեք, որ գործող անձերից ոչ մեկը չէ կամենում երբեք մյուսին հասկանալ, չէ կարող երբեք մյուսին գիշումներ անել:

Պատճառը շատ պարզ է:

Մեզանից ամեն մեկն անշարժ է և եթե կամենար ևս, չէ կարող փոխել իր կարծիքը, իր համոզմունքը, ուրիշ ուղղություն տալ իր մտախոհության ընթացքին:

Մեր սկզբնական դաստիարակության և բարձր կրթության մեջ պակաս է ճիշտ տարրը գիտությունների...

Թեև մենք տեսաբար հասկանալիք, թե հասարակությունն օրգանական կազմվածք է, որի գործիչներից ամեն մեկը նշանակված է մի առանձին դեր խաղալ, մի որոշ պաշտոն կատարել ընկերական և հասարակական կյանքում, թեև տեսաբար համոզված ևս լինեինք, որ արձակ (absolu, абсолютный) ճշմարտություն չկա և ճշմարտությունը վերաբերական լինելով պիտի կազմվի տարբեր, ծայրահեղ կարծիքներից, որոնք մեկը մեկին օգնելով, մեկը մեկին քննելով և հավասարակշռելով, ծնում են մի միջակ երևույթ, որ կարող է (հասարակության կարծիք լինելով) միջակ ճշմարտություն կոչվել...

Մենք պետք է հասնենք այն մտքին, որ մարդկային ոչ մի անհատը արհամարհելի չէ (եթե նա անբնական չէ) ընդհանուր օգտի համար, երբ ևս որևիցե աշխատանքի գորուքուն է ներկայացնում: Հասարակության օրգանական ամբողջի ամեն մի կազմող մասը անհրաժեշտ է... միայն թե հասարակության գործիչներից մեկը չպիտի սխալվի իր պաշտոնի վերաբերությամբ և իր վերա պիտի նայե որպես հասարակական ամբողջ մարմնի կազմակերպության մի փոքրիկ մասի վերա:

Իսկ զարգացման այդպիսի աստիճանին հասնելու համար, մեզանից ամեն մեկին հարկավոր է հավասարապես զարգացած լինել:

Ինքնաքննությանը հասնելու համար հարկավոր է անհատին երբեք անշարժ չլինել:

Անդադար չաշխատելով, կամ զարգացման և մտավոր պարապմունքի մի նշանակված կեանք հասնելուց հետո անշարժ մնալով, ուրեմն միշտ ևս չունենալով իր անձն անդադար քննության ենթարկելու, մարդը բավականանում է իր մտավոր զարգացման աստիճանով, ուրեմն ինքնահավան է դառնում: Վա՛յ այն հիմնարկություններին և անհատներին, որոնք ինքնահավանության և անսխալականության համարմունքին են հասնում...

Թո՛ղ պապության ինքնահավանությունը և ինքնապաշտությունը ձկնանսխալականության վարդապետության հրեշավոր երևույթը, բայց գիտության անկեղծ կուսակիցների համար անհարմար, հերքելի և դատապարտելի է թվում անսխալականության սկիզբը:

Թող մեր ծերերը և նոցա հետ ևս մեր նոր սերունդի երիտասարդների մեջ մասը բոլորովին անընդունակ լինելով անընդհատ աշխատանքի, անցնել իրանց կյանքի մնացած տարիները անշարժության, անձնապաշտության, ինքնահավանության ապարդյուն դժգոհմունքների մեջ, թող անսխալականության

կուսակիցները դառնան... Մենք նոցա համարում ենք հասարակության համար կորած մթերք...

Բայց աշխատենք ճիշտ դիտարկումները և նորանից մշակված մտախորհության եղանակը գոնե ապագա սերունդի մեջ մտցնել:

Հետևյալ հոդվածը «Մե՛կ մեկին մեղադրում ենք» վերնագրով, մեր խղճուկ գրականության ցավերին է նվիրված գլխավորապես: Գրող ու ընթերցող փոխադարձաբար դժգոհ են իրարից, մեղանում գրական և կրթական գործ չէ առաջանում, բայց դրա փոխարեն տեսնում ենք գանգատներ, անվերջ գանգատներ. միմյանց մեղադրում են և բանը դրանով էլ վերջանում է: Արծրունու աշխույժ, համարյա վիպական պատմվածքի մեջ մեր կյանքի այդ ամենատխուր երևույթներից մեկը, որ այսօր էլ կա և ապահովապես վաղն էլ կշարունակվի, այսպես է պատկերացած. «— Մի՞թե դու «Մեղու», «Հայկական Աշխ.» կամ «Արարատը» չես կարդում, մի՞թե հայերեն ոչ մի գիրք անգամ չես կարդում,— հարցրեցի ես մեկից...

— Է՛հ... բան չունե՞ս,— պատասխանեց նա:

— Ի՞նչ է պատճառը, որ չես հետաքրքրվում մեր գրականությամբ:

— Գժվե՞լ ես... գրականությամբ հետաքրքրվելը ո՞րն է... Արդյոք հայերեն կարգալու բան կա՞, որ ինձ կարգալ էս առաջարկում... կա՞լ չէ՞, որ ազատ ժամանակիցս օգուտ քաղեմ օտար մի լեզվով գրած բան, օրագիր կամ գիրք կարդալու, քան թե ձեր հայերենը կարդամ... Բան չունե՞ս...

Ես լռեցի:

Նորերումս պատահում եմ մի պարոնի, որը անդովելի սովորությունների ժամանակ առ ժամանակ հայկական օրագրներում հոդվածներ տպելու

— Պարոն,— ասում եմ ես նորան,— դուք հայերեն չգիտեք կամ եթե գիտեք ևս, ձեր ստեղծած հայերենը, ինչքան որ կանոնավոր ու ընտիր լինեք, ժողովրդի գիտեցած հայերենը չէ, դուք ժողովրդի համար անմատչելի, անհասկանալի, շինձու ոճով եք գրում... Բացի սորանից դուք այնպիսի փրկիչ ասիայական, վերացական նյութեր եք ընտրում, այնպիսի բարձր գաղափարներ եք հայտնում, որոնք ժողովուրդը մարսել չէ կարող: Ես գուցե սխալվում եմ, բայց իմ կարծիքս է, որ մեր գրողները և խմբագրողները չեն իմանում իրանց գրվածքներում ժողովրդի հասկացողության հարմարվել: Եվ այդ է պատճառը, որ մեր գրվածքը չեն կարդում:

— Ո՛չ,— պատասխանեց ինքնակուշ հեղինակը,— մեր գրականության թշվառ դրությունը պատճառը ժողովրդի սառնությունն է դեպի մեր աշխատանքը: Միջոց չունենալով լիապես գրականությանը նվիրվելու, ես ինչպես կարող եմ հուսալ, որ երևելի գրող դառնամ... ես գրում եմ, երբ ավելորդ ժամանակ եմ գտնում... Թո՛ղ ժողովուրդը ճանաչե մեր վաստակի գինը, թո՛ղ վարձատրե հեղինակի և խմբագրի աշխատանքը, և այն ժամանակ լենք օրինավոր հոդվածներ կառաջարկենք ընթերցողին... Ժողովուրդն է մեղավոր, որ մենք օրինավոր լրագիր չունինք:

Ես կրկին լռեցի:

Այդ ի՞նչ պատիժ է... Ժողովուրդը մեղադրում է հեղինակին, իսկ հեղինակը մեղադրում է ժողովրդին:

Ո՞վ է արդար, ո՞վ է մեղավորը:

Արձրունին չէ լուծում այս հարցը: Եվ կարելի՞ է լուծել նրան գրականապես: Նա առաջ է գնում և բերում է մի այլ օրինակ: Աղքատը լաց է լինում, թե իր որդին անուսում է մնում, որովհետև հարուստը չէ կատարում իր

պարտքը, դպրոցներ չէ բաց անում, աղքատների ուսման վարձը չէ տալիս: Իմում եք հարուստին և ահա նա էլ ասում է, թե ինքը շատ է տալիս, միայն ժողովուրդը ծուլ է, անշնորհակալ է:

«Հիմա ի՞նչ անենք,— հարցնում է Արծրունին:

Սպասե՛նք, որ ժողովուրդը հասկանալով ընթերցանության օգուտը վարձարի հեղինակին և խմբագրին կամ սպասենք, որ անշահասեր հեղինակը ու խմբագիրը վարձատրված չլինելով այնչափ զարգանան, որ հետաքրքրական, հարմար և օգտավետ գրվածներ առաջարկեն ընթերցողներին:

Սպասե՛նք, որ ժողովուրդն ինքնօգնության սկիզբը ըմբռնի, կամ սպասենք, որ հարուստ դասը իրան նվիրե ժողովրդական լուսավորության հագալուն...»

Ի՞նչ անենք:

Բավական է մեկ մեկին մեղադրել:

Մի՞թե չկա մեր մեջ եռանդի, աղնվության, դեպի առաջադիմություն սիրո, դեպի լույս ձգտման նշույլն էլ, որ բոլոր ազգի մեջ չի գտնվիլ գործունյա մարդիկների մի խումբ, որը հանձն առնելու կազմել մի գումար և նորան շահեցնելով, կարողանար նպաստել գրականության զարգանալուն:

Մի՞թե չի գտնվիլ աշխատողների մի խումբ, որը օգուտ քաղելով այն գումարից, հրատարակելու ինքնուրույն ու թարգմանական գրվածքներ կամ հիմներ օրինավոր օրագիր, որի աշխատակիցները վարձատրված չլինելով, իրանց մտավոր ուժը լիապես նվիրեն մեր նորահաս գրականության մշակելուն...»:

Հարցեր էին սրանք: Հարցեր, որոնք կյանքի իրականության շափ խոշոր էին. նրանք իրանց պատասխանին էին սպասում: Բայց ի՞նչ պատասխան մարդիկ չկային, պակասությունը չէր ցավեցնում, եռանդ չէր բորբոքում: Մեր մեջ եղած մարդկանց նկարագիրը ունինք նախընթաց հողվածում. ինքնահավան, անսխալական իրանց համարող մարդիկ, անշարժացած, առաջ զնալու, աշխատելու, կատարելագործվելու ոչինչ պահանջ չզգացող: Ժամանակը չկար դրանց համար. և սակայն նա ասում էր, թե չկա մի օրինավոր օրագիր կամ լրագիր, խմբագիրը, գրողը չգիտե խոսել ժողովրդի հետ, նրան չեն հասկանում, նրանից խրտնում են: Մնում էր, որ կամ միանգամայն խլանա ժամանակի ձայնը կամ գուրս գա մի անհատ, որ իր բարոյական ուժով, իր տնայն եռանդով և վառվածուն տաղանդով կարողանա իրագործել այն, ինչ սպասվում էր աշխատողների մի խմբից:

Աշխատող խումբը, որ նախաձեռնող հանդիսանար, որ գումար հավաքեր գրականության նվիրվելու համար, չկար, դուրս չեկավ մեր իրականությունից: Բայց կար անհատ և դա ինքը՝ Արծրունին էր: Վերև բերած հողվածի մեծագույն մասը կարելի է համարել «Մշակի» կարագետ, «Մշակի» նախնական հայտարարություն: Այդ խոսքերը ասել էր տալիս ինքը՝ կյանքը...

Կյանքի ուժեղ ազդեցության տակ է գրված և Արծրունու վերջին հողվածի «Մեղուի» մեջ: Մեր խղճալի, արհամարհված գրականության համար ինչ սիրուն տոն էր 1870 թվականի ապրիլի 30-ը, երբ Քիֆլիսում առաջին անգամ հայկական բեմի վրա ներկայացվեց Դարբինի Մունդուկյանի «Պեպոն»: Այդ օրը երևան էր գալիս մի բուրբուխ նոր երևույթ, հայկական գեղարվեստի ցույց է տալիս, թե ինքը կա, պիտի լինի, թե հայ ժողովրդի համար լուսաբերում են նոր օրեր, երբ այդ ժողովուրդը կսկսե հուզիչ լեզվով պատմել իր ցավերն ու ուրախությունները, բաց անել իր հոգեկան կախությունները, ի սիրտը Պեպոն, ժողովրդի ստեղծած հերոսը, իր վիթխարի հասակով, իր մտ-

քուր, անբիծ սրտով, ժողովրդական գաղափարի հրաշալի տոնն էր այդ օրը գրել բեմի վրա: Եվ ահա ինչ տողեր է նա բեմից թելադրում մեր նիւթին. «Հասարակությունը օրգանական մարմին է, որը կազմված է զանազան, մեկ մեկից տարբեր գործոններից (фактор): Մենք մինչև այժմ նայում էինք հասարակության վերա, որպես մի միակերպ մարմնի վերա... Թե հայը, թե օտարագիրն հայի անունը տալով ներկայացնում էր իրան կամ մի հաստափոր հարուստ վաճառական, կամ մի ողորմելի մանրավաճառ: Ամբողջ ազգը կազմված էր վաճառականներից: Ժողովրդի մնացած գործիչները և տարրերը մենք չէինք արժանացնում մեր քննությանը:

Հայը մի տգետ և անկիրթ էակ է, որ թեև շափազանց շատ բնական խելք ունի, բայց որի համար նյութական անկախությանը հասնելու ոչ մի միջոց արհամարհելի չէ... Հայի ընտանեկան կյանքը խիստ է, բայց ոչ թե գերմանական ընտանեկան կյանքի պես խիստ, որտեղ թե հայրը թե մայրը և թե երեխաները ճանաչում են իրանց իրավունքները ու պարտավորությունները, ոչ, հայի ընտանեկան կյանքի խստությունը ծագում է միապետական մի սկզբից: Հայը չգիտե սերն ինչ է նշանակում, նա պակասում է առանց սիրելու: Ամուսին դառնալով նա կնոջ վերա նայում է որպես իր սեփականության վրա, հայր գառնալով նա իր սեփականություն է համարում իր երեխաները: Մի կամք է իշխում միայն ընտանիքի մեջ, հոր կամքը, մի համոզմունք ունի ընտանիքը՝ հոր համոզմունքը, մի խելք՝ հոր խելքը:

Հայը հասարակական էակ չէ: Նորա համար հասարակություն չկա, նա հայ է կանչում իրան միայն այն պատճառով, որ նա հայ գավառության է պատկանում: Նորա ամբողջ կյանքի և գործունեության առաջնորդող զգացմունքը եսականությունն է:

Նա հասարակության համար չէ հոգում, նա չգիտե նվիրել հասարակությանը իր բարոյական աշխատանքը: Նա հոգում է իր անձի մասին, նա ապրում է իր համար:

Ինչպես հոգևոր հանգստությանը, կյանքի բավականությանը հասնելու համար նա իր ընտանիքի մեջ սպանում է կյանքը, ոչնչացնելով կնոջ և երեխաների անհատությունը, այնպես և նյութական անկախությանը հասնելու համար նա չէ վախենում իր նմանների իրավունքները ոտնակոխ անելուց:

Այդ իմ նկարած տարրին պատկանում է Սունդուկյանցի Արուսյունը: Արևմտն նա մեղ հին ծանոթ է, նա հայ է բուն բառի նշանակությամբ:

Բայց ի՞նչ ասեմ Պեպոյի տիպի մասին: Ես միայն այսքան գիտեմ, որ նա մեր բեմի վերա նոր երևույթ է...»:

Այդ նոր երևույթի հատկությունները Արծրունին մի առ մի պարզում է, համեմատելով Պեպոյին Արուսյունի հետ, վերլուծելով նրանց գաղափարները, կրթումները, աշխարհայեցողությունները: Սակայն անպայման աղնիվ Պեպոյից ավելի Արծրունին լավ տիպ է համարում Կակուլին: Պեպոն այն պակասությունն ունի, որ իր քրոջ պատվի համար կռիվ մղելով հոր Զիմզիմովի գեմ, նա չէ տեսնում, որ քույրը այդ կռիվից բախտավոր լինել չէ կարող, քանի որ նա նշանված է մի երիտասարդի հետ, որ նրան չէ սիրում և պատրաստ է զեն գցել նրան, եթե փող չստանա: Սակայն Արծրունին իսկույն ավելացնում է, որ Պեպոն ժողովրդի որդի է և գործ չունի ժողովրդական հասկացողությունների լավությունն ու վատությունը երևան հանելու հետ: Նա միայն պատվի և աղնվության ասպետ է:

Իր հողվածը Արծրունին վերջացնում էր հետևյալ նկատողությամբ. «Ներկայացուցից հետո ես առիթ ունեցա խոսակցություններ լսելու: Արուսյունը

Կիրակոսին նման է, ասում էր մեկը ոչ նա Մարկոսին նման է, պատասխանում էր մյուսը և այլն:

Մի կողմից սա բնական է, որ ժողովրդական կյանքից առնված գրվածի մեջ ներկայացրած ախարը նմանություն ունին ծանոթ կենդանի անձերի հետ: Եթե ոչ, պինասան էլ կենդանի ժողովրդական երևույթ մեզ չէր ներկայացնի, իսկ մյուս կողմից նա ցավելով մտածում եմ այս բանի վերա, թե որքան... և անդարգացած է մեր հասարակությունը (մինչև անգամ հասարակության բարձր դասը), որ նորան այնքան չէ հետաքրքրում գրվածի զազափարը, ինչքան այսինչ մարդի անձնականությունը...

Ապստոս, որ հասարակությունը փոխանակ հեղինակի գաղափարը քննելու և ըմբռնելու, նայում է նորա սանդղածին որպես մի որևէ անձնավորությունը ներկայացնելու միջոցի վերաս:

«Պեպոն» անկասկած մի գրական երևույթ էր: Բայց ի՞նչ ավելացրեց այս երևույթը մեր գրականության մեջ: Բացի Արծրունու այս հողավածից մեք չկան գտնում մի այլ գրվածք, որ նվիրված լիներ նրան: Տաղանդն արծարծում էր կենսական կարևոր հարցեր: Եվ եթե մեզանում լինեին աշխույժ, տպավորվող հասկացող մարդիկ, «Պեպոն» հենց իր առաջին ներկայացման օրից կդառնար մի ամբողջ շարժման գրգիռ: Բայց լուռ ու մեռած էր հայկական միտքը: Եվ միայն Արծրունին ցույց տվեց, թե որքան զգայուն է, որքան ուշադիր դեպի հասարակական հարցեր: Տաղանդավոր գրվածքը ուժգին թափ հաղորդեց նրա գրչին և նա զրեց մեկը իր այն խիստ հողավածներից, որոնց տեղը ապագայում «Մշակը» պիտի լիներ: Այդ զուտ մշակական գրվածքի տեղը այժմ «Մեղուն» էր, այն «Մեղուն», որ հետո ահագին վայնասուններ էր բարձրացնում Արծրունու այսպիսի իսկ խիստ ու անողորմ մտրակումների համար:

Նշանները արգեն երևում էին. գալիս էր խիստ քննադատող խոսքը, անխնա մերկացումը: Փոխվում էր սերունդը: Որպիսի տարբերություն եղած գործիչների և այս նոր մարդու մեջ: Ստեփանեն շարունակ կրկնում էր. «այնիվ հայեր, խնկելի հայեր, տոնելի հայեր», իսկ Արծրունին մերկացնում էր հայի անասնական եսականությունը, ասում էր, թե հայը միայն անձնական բարեկեցության գործում աշխատող է, եռանդ է, իսկ հասարակական հոգսերի համար միանգամայն մեռած է: Ո՞վ էր ավելի խոր նայում կյանքի մեջ: Այն ժամանակ, երբ հայոց բեմը ներկայացնում էր Զիմզիմովին, Ստեփանեն զբաղված էր իր դպրոցական հաշիվներով և մի խոսք անգամ շասաց «Պեպոնի» մասին: Մայիս ամիսն էր, Ստեփանեն վերջ էր տալիս «Հայկական Աշխարհի» հրատարակության: Նախքան «խնկելի ազգին» իր վերջնական հրատարականը տալը, նա առանց պատճառի, մոռանալով առաջներում գրած իր տողերը և փառաբանությունները, տպագրեց մի այսպիսի բան. «Մյուս կողմից նա շատ ցավում եմ, որ ուսաստանցի հայկական երիտասարդների համար ընտրվում է Գերմանիա որպես ուսման և կրթության տեղ: Եթե «Հայկական Աշխարհի» խմբագրողը, հարգելով Գերմանիայի մեջ ուսած յուր աշխատակցի կարծիքը, հրատարակում էր նորա հողավածները, որտեղ Գերմանիային առավելություն էր տրված, «ողորմելի» անկանք նվիրելով մինչև անգամ մեթոդաբանակ իմաստուն Հայերին, որոնք Ֆրանսիայի մեջ են սովորում, եւ ընդհակառակն բախտավոր եմ համարում նոցա, որոնք Ֆրանսիա են ընտրում յուրանց կրթության տեղ: Պրուսական կրթության մեծ պակասություններ չկան միթե անմեղքներ լինել, մեծամտություն (որ կարճամտության նշանն է), միայն անձնական օգրտներ պտուել, գործություն ստացածին պես հարստահարել ստորադրվածներին և այլն: Իսկ ֆրանսիական կրթությունը մանկութենից

կրկնում է աշակերտին, թե նա ծնվել է յուր ազգին և մարդկությանն ազնվաբար ծառայելու, ընկերը սիրելու, արդարության և... իրավունքներ պաշտպանելու և այլն»:

Խորհուրդ տալով հայերին Ֆրանսիա կամ Շվեյցարիա գնալ ուսում առնելու, ինչպես նաև բավական բարձր համարելով և Ռուսաստանի կրթությունը, Ստեփանեն իր ակնարկները ավելի ևս հասկանալի դարձնելու համար ասում էր. «20—25 տարի աշխատում է մարդը Ռուսիայում չէ կարողանում դոկտորի աստիճան ստանալ: Այնինչ Գերմանիայում բավական է 2—4 տարի այս կամ այն պրոֆեսորի դասերին գրվել, մի օր բանախոսություն անել պրոֆեսորների մեջ և դոկտորի աստիճանը պատրաստ է պտուղին առանց որևիցե ուրիշ աստիճաններ ստանալու (բուրժուազիա տարբեր քննություն է լինում, կրթական աստիճան պտուղը տեղում են անկան ծառայության է պատրաստվում): Մայր և այնպես առաջին կերպով վաստակած գիտնականությունը չէ կարող իհարկե հիմնավոր և պտղավետ լինել»:

Ի՞նչպես էր, որ գերմանական կրթության մասին մի այսպիսի հայտնություն հանկարծակի իշավ Ստեփանեի վրա, բացատրելու հնարավորություն չունի: Բայց որ այս տողերի մեջ «Հայկական Աշխարհի» խմբագիրն ի նկատի ունի Արծրունի եղբայրներին, այս ավելի քան անկասկած է: Ահա այս է այն սանձության արտահայտությունը, որի մասին խոսեցինք քիչ վերևում: Պատճառ, իհարկե, կար, դուցե և մի քանի հատ պատճառներ. բայց սա վրիժառություն է, դուք տեսնում եք, որ նրա ձևը երբեք չէ կարելի դնել քաջությունների շարքում: Մանր, խղճուկ, ծածկված վրեժխնդրություն. դա է այն առաջին թշնամությունը, որ հայտնվեց մամուլի մեջ Գրիգոր Արծրունու դեմ:

Սկզբից ևեթ շատ բնորոշ է այդ թշնամությունը: Եթե պետք էր հերքել Արծրունու որևէ գրվածքը, կամ առհասարակ ցույց տալ նրա անընդունակությունը, ի՞նչ հարկ կար այնքան անարգելու գերմանական կրթությունը, ընդհանրապես անվանարկելու նրան: Ի՞նչ մեղք ուներ Գերմանիան, եթե Արծրունու իսկապես մեծամիտ էր, ոչ բազմակողմանի զարգացած և այլն: Բանը, իհարկե, կրթության, դպրոցի, աշխարհագրական անվան մեջ չէր. դրանք թափանցիկ պատրվակներ էին կամ ավելի լավ ասած՝ բամբասանքներ էին, որոնց միջոցով կարելի էր, եթե ոչ հերքել, ապացուցանել մի բան, գոնե կծել, անվանարկել: Բայց դա այրական միջոց չէր, դա գրական կոթիվ չէր, այլ պատվական մի բամբասանք: Արծրունին կարող էր դոկտորության աստիճան ստացած էլ չլինել. նա դոկտոր չէր, ուսանող էր այն ժամանակ, երբ նույն այդ Ստեփանեն նրա կարծիքներն էր հարցնում, երբ գովում փառաբանում էր նրան: Այժմ ի՞նչ միտք ուներ ասել, թե Գերմանիայում շատ հեշտ է դոկտորի աստիճան ստանալը: Բնորոշ անվանեցինք այս թշնամությունը այն պատճառով, որ Արծրունին իր կյանքում մեծ մասամբ այնպիսի հակառակորդների գոյմ էր կանգնած, որոնք փոխանակ փաստերի, փոխանակ հերքումների, ծածկություններ էին անում:

Ստեփանեի վերաբերմամբ մեզ չէ զարմացնում այսպիսի հակասական փակամանքը. այդ եռանդոտ, տաք մարդու կյանքում ծայրահեղությունները քիչ տեղ չէին բռնում: Ահա նա դադարեցնում է «Հայկական Աշխարհը», որպեսզի վարդապետ ձեռնադրվի: Մի բանի տարիներից հետո նա պիտի վերադառնա իր ամսագրի հրատարակությունը, բայց այնպես փոխված, որ «իմաստուն» հողավածներ պիտի գտնեն «Մեղունի» մեջ, այն «Մեղունի», որի գրական և իրատարակախոսական ոչնչությունը, բթամտությունը այնքան իրավացի կերպով մեղադրվում էր տարիների ընթացքում, աշխարհական ժամանակը...

Արժրունին ոչինչ չգրեց այդ քաղաքոված ակնարկութեաններէ զեմ, որով իսկապես պատասխանի էլ չէին արժանի, այլ միայն խղճահարութեան Կասինք ավելին. նա համարյա միշտ կարողացաւ հարգել այդ արժանավոր գեորականին և կրակոտ գործին:



«Սունդուկյանցի Պեպո» հոգովածով Արժրունին զերջ գրեց իր գրական գործունեության առաջին շրջանին: Դա այսպես ասած, նախապատրաստակոտ շրջան էր:

Մենք քայլ առ քայլ հեանեցինք երիտասարդ գրողին այդ սկզբնական շրջանում: Տեսանք, թե ինչպես նրա մեջ հանկարծակի խոսեց հրապարակախոսի կոչումը, ինչպէս նա գնաց այդ կոչման ետեքը և ինչեր-առաց մի կարգ միջոցում:

Վերցնում ենք այն ժամանակների մեր պարբերական մամուլը, մի առ մի ծանոթանում ենք գրողների հետ և նկատում ենք միայն Արժրունուն: Միայն խմբագիրներն են մամուլի գործերով զբաղված, աշխատակիցները պատահական մարդիկ են, մեկ գրում են, հինգ լռում. շատերը մի անգամ են միտք երևում, շատերը գրում են, երկար լռում, նորից երևան գալիս և անհայտանում: Արժրունին է միայն, որ աշխատում է կանոնավոր, անընդհատ. գրել նրա համար պահանջ է: Եվ մեր մամուլի մոխրագույն, անպաճույճ էջերում որպիսի գեղեցիկ երևույթ են կազմում Արժրունու հոգովածները: Ոչ որ անժամանակները չէր կարողանում գրել այնպես. նա բարձր էր նույնիսկ մի խմբագիրներից: Նա ստեղծեց հրապարակախոսական լեզու. նա մտցրեց անբող ոճեր, ձևեր, հատկանիշ բառեր: Մեր հրապարակախոսութեան լեզուն մինչև այժմ էլ չէ կարողացել Արժրունու լեզվից առաջ անցնել: Ասում էին թե նա հայերեն լավ չգիտէ: Մենք ամենևին չենք ասում, թե այդպես չէր Բայց նայում ենք «Մեղուին», «Հայկական Աշխարհին», ջրբոլմ ենք դանդաղան մարդկանց գրվածքները և կարող ենք հանգիստ կերպով վկայել, որ որ որ այն ժամանակները Արժրունուց լավ չէր գրում: Եթե իսկական գրողը պիտի ունենա իր առանձնահատուկ ոճը, մենք կասենք, որ միայն Արժրունին ուներ ոճ և նրա յուրաքանչյուր տողը այժմ էլ կարելի է ճանաչել և դանաղանել:

Բնությունը տվել էր նրան աշխույժ, տպավորվող բնավորություն. կրտսուր հայացքից չէին խուսափում հասարակական հարցերը: Կրթութեանը զարձրեց նրան առաջադեմ, համարձակ, հեղափոխիչ գաղափարների համոզված զինվոր: Եվ նա դուրս եկավ մեր մեջ: Ոչինչ չկարողացավ արգելք դանակ նրա առջև. ոչ մանկությունից ստացած օտար կրթությունը, ոչ մայրենի լեզվին խորթ լինելը, ոչ փակված կյանքը հայրենի տան մեջ և այլա երկար քաղաքացիությունը հայրենիքից:

Նա պատրաստվեց, կազմակերպվեց ընթերցող հասարակության այլ առջև: Մկսեց կրթության և դաստիարակության հարցերով, ուր երկշտությունը, անվարժ երիտասարդի անվճողականությունը էր դատապարտում հայրենի նախապաշարմունքները և քայլ առ քայլ առաջանալով, աստիճանաբար ամբանալով, եկավ հասավ «Սունդուկյանցի Պեպո» հոգովածին, ուր արգելք որոտում է նա հայի եսամոլության, արատների զեմ...

Այժմ նա բոլորովին պատրաստ էր: Այժմ սեփական գործ էր ստեղծում իր համար: Այն ժամանակ, երբ նա գրում էր վերջին հոգովածը «Մեղուի» մեկ պատրաստ ու վերջացրած էր սեփական լրագրի ծրագիրը: «Մշակ» հրատարակելու թույլտվության էր նա սպասում այդ ժամանակ:

Հիմա գալիս է «Մշակի» Գրիգոր Արժրունին...

Գ Լ ո յ ա ո ա ջ ի ն

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐ

I

«Նախապատրաստություններ: Խմբագրություն եվրոպական մտով. ժողովներ: Գրիգոր Արժրունու ճիշտություններից. Հակոբ Մելիք-Հակոբյան: Գրական երեկոներ. դիպլոմավորներ և «ձկնորսներ»: Բաֆֆու ճիշտություններից: «Մշակի» առաջին հայտարարությունը: Ի՞նչ է մշակը: Աշխատանքի փառասունություն»:

Վճռելով իրագործել իր վճառմի միտքը, հիմնել իր սեփական լրագիրը, Գրիգոր Արժրունին նախ և առաջ շրջան ստեղծելու մասին էր մտածում: Նա չէր ուզում և չէր կարող մենակ գործել: Պետք էր նախ և առաջ խմբագրություն, այս բառի եվրոպական նշանակությամբ: Բայց ի՞նչպես կազմել խմբագրություն, ո՞ւր էին պատրաստի, որոշ գույն ունեցող գործիչներ: Արժրունին գիմեց իր ծանոթ երիտասարդներին. դրանցից պիտի առաջ գային աշխատողներ, ուրիշ ոչ մի հույս չինել չէր կարող: Այդ ծանոթներից երկուսի հետ, որոնք էին Վաթիկ Շահվերդյանը և Պողոս Իզմայիլյանը, Արժրունին պատրաստեց իր լրագրի ծրագիրը և ներկայացրեց կառավարությանը:

«Շահվերդյանի և Պողոս Իզմայիլյանի հետ ծանոթանալով, — գրում է Արժրունին, — նրանք ինձ օգնեցին լրագրի պրոգրամը մշակելու և գրելու, քանի որ ես տարիներով արտասահմանում ապրած լինելով au courant չէի ուս լրագիրների պրոգրամների և մասամբ ետ էի սովորել և ուսաց լեզվից, որպեսզի գրեմ լրագրի պաշտոնական պրոգրամը և պաշտոնական խնդիրքը»:

Այստեղ ճիշտ տեղն է, որ մենք դնենք այն հարցը՝ թե ի՞նչը հարկադրեց Արժրունուն գրել այդ տողերը:

1890 թվականն էր. հայ հասարակությունը պատրաստվում էր տոնել Արժրունու գրական գործունեության քսանհինգ ամյակը: Այդ պատրաստությունների ժամանակ քնած չէին Արժրունու բազմաթիվ թշնամիները և նրանցից երկուսը, որոնք 1872 թվին Արժրունու հետ աշխատողներից էին, լրագրության մեջ աշխատում էին հավատացնել թե «Մշակի» հիմնադիրը Գրիգոր Արժրունին չէ, այլ այն խումբը, որի հետ էր նա, և Արժրունին միայն պատասխար է առաջարկվել լրագրի խմբագիր: Այդքանը բավական չէր: Այդ պարտություններից մեկը էր ճիշտությունների մեջ դուրս էր բերում Արժրունուն իրրև

¹ «Մշակ», 1890, № 45.

մի անհայտ երիտասարդի, որը չգիտեի ճանաչելիս թիֆլիսում:
Մենք այժմ հեշտ կարող ենք գնահատել հիշողությունները: Հարկավոր էլ չէ որ հիշենք ինչ 1865 թվականից էր մտքում դրել հայերի նու նախընթաց գրական գործունեությունը: և «Մեղուի» մեջ և որի հետ մենք մանրամասն չին հատարում, ամենալավ ապացույցն է, որ բոլորովին անհայտ երիտասարդ չէր, միայն թե քին ու լեզվին: Ընդհակառակն, այն ժամանակահատված լինելը մի հասարակական օրհրդանուն էր: Նոր շպնոք է սովորեք նա գրել: հայկական կյանքի երևույթները, մերկայացնելով էր որ նրա պես հասկացած ու բացատրած ողորմելի դրությունը: Թշնամությունը կարող է, բայց փաստերը երբեք չեն կորչի պատմության հիշատակը: Արծրունին ներկայացրեց շայտնի է միայն, որ 1871-ի ամառվա վերջերս և սեպտեմբերին հայտարարեց, թե եկող «Մշակ» գրականական և քաղաքական թիֆլիս գալուց, տեղն ու տեղը մեր գրականության հետ ծանոթանալուց հետո Արծրունին գառնեցի դեմ: Գանգատվողներ մենք շատ գանգատվում, գրողը ընթերցողից: Եվ երկուսնում էին: Արծրունին ասում էր, որ բավականին անհայտ էր: Գործ է հարկավոր: Մի՞թե չեն գտնվում մարդիկ, որոնք մի գումար կարողանան ծախսել յեցնելու համար: Մի՞թե չի գտնվում մեզ համար հարաատրակներ, մի օրինակվոր լրագիր գումար հավաքելը լոկ մի առաջարկություն էր: Այդ հարցը լուծելու համար նա դեռ սկսում է պատրաստություններ տեսնել, որոնք լրագրի շուրջը աշխատողների աչքի ընկնող խաղաղ ձեռնարկությամբ գործելու գաղափար էր ընդունում: «Հյուսիսափայլը», «Կոտեմարտական աշխատակիցներ, բայց խսկական պատմական ժողովուրդ միայն Արծրունուն է պատկանում: Կերպարները և, որ հավաքվում է, կանոնակարգում են, որ հավաքվում է, կանոնակարգում են: Միջոցով տնօրինում է տպագրելիս լրագրում, նախքան թույլտվություն ստանալուց:

թե ինչ արժեն այդ խնամակալները ընթերցողին, թե Արծրունին լրագիր հրատարակել: Արծրունին երևաց «Հայկական աշխարհի» ծանոթացանք մեր գործի ասում: Արծրունին 1871 թվականին միայն անծանոթ իր ազգի կյանքի վաղ օրերից ոչ մեկին էլ Արծրունին: Եվ էթե կար մեկը, որ լավ ճանաչեց ինչպես Արծրունին գեղալարելու, դա հենց Արծրունին չպետք է սովորեք վերջում: Այսպես Արծրունին արմատները լրագրում լինելը մեր գրականության հիմք էր: Նոր շպնոք է սովորեք նա գրել: Արծրունին նա ստացել է թույլտվությունը և արվանից պիտի հրատարակել թիֆլիսը կառավարությունը: Արծրունին հարկավոր է թույլտվությունը և նրա մեջ գործող ինչպես գիտենք, խոսեց գանձեցինք: ընթերցողը գրողից էր կորցնում էլ գրանով բավականությունը: Եվ որքան մեղադրեցինք միմյանց: Արծրունին մեղանում ազնիվ, եռանդուն մայրենի գրականությունը: Արծրունին ասում էր, որ բավականին անհայտ էր: Գործ է հարկավոր: Մի՞թե չեն գտնվում մարդիկ, որոնք մի գումար կարողանան ծախսել յեցնելու համար: Մի՞թե չի գտնվում մեզ համար հարաատրակներ, մի օրինակվոր լրագիր գումար հավաքելը լոկ մի առաջարկություն էր: Այդ հարցը լուծելու համար նա դեռ սկսում է պատրաստություններ տեսնել, որոնք լրագրի շուրջը աշխատողների աչքի ընկնող խաղաղ ձեռնարկությամբ գործելու գաղափար էր ընդունում: «Հյուսիսափայլը», «Կոտեմարտական աշխատակիցներ, բայց խսկական պատմական ժողովուրդ միայն Արծրունուն է պատկանում: Կերպարները և, որ հավաքվում է, կանոնակարգում են, որ հավաքվում է, կանոնակարգում են: Միջոցով տնօրինում է տպագրելիս լրագրում, նախքան թույլտվություն ստանալուց:

այսում իր մտ գրական երեկոներ էր կազմում: Թիֆլիսը երեկոներ շատ էր, մարդիկ միմյանց մտ հավաքվել, իհարկե, գիտեին, բայց այդ համարումները ուրիշ նպատակ ունենալ չէին կարող բացի թուղթ խաղալուց, կարծում էր: Արծրունու երեկոները թարմ նորություն էին, հավաքվում էին անհայտ-հասարակական հարցեր արծարծելու և քննելու համար, այն էլ, ո՞վ կարող էր երևակայել, հայերեն լեզվով: «Մշակի» թույլտվությունը ստանալուց հետո այդ հավաքումները ընդունեցին ավելի կանոնավոր կերպարանք, թիֆլիսը կազմակերպություն: Նրանք դարձան խմբագրական ժողովներ: Միջոց էին հավաքվում Արծրունու մոտ: Այն բոլոր երիտասարդները, որոնք սեր ունեին դեպի հասարակական գործունեությունը, դեպի իրանց մայրենի գրականությունը: Խորություն չկար, ուսման աստիճաններ, գիրք, պաշտոն չէին հարցնում: Կային համալսարանական կրթություն ստացածներ, դեպքումներ, ուսուցիչներ, լինումներ, աղքատ երիտասարդներ: Ամենքը իրեն չէին հարցնում էին գեներալ Արծրունու տունը, ամենքը իրավունք ունեին խոսելու, վիճելու, նույնիսկ կովելու: Ամենքը շարտի միշտ լինեին Գրիգոր Արծրունու հետ: Շատերը շուտով պիտի հեռանային այդ հյուրընկալ հարկի տակից և երիտասարդ տանտիրոջ կատաղի հակառակորդները դառնային: Բայց ընտրողը, պահողն ու հեռացնողը՝ գործը պիտի լիներ: Գործը գեռ չէր կատարվում, սկսելուց հետո էլ դեռ մի առժամանակ անորոշություն, տատանում էր պահանջում այդ ժողովների մեջ: Դեռ կարծիքների, հայացքների, ուղղությունների խուլ ընդհարման ժամանակ էր: Գրական փոքր ի շատ է հայտնի անուն ունեցողները շատ չէին: Մատենավոր կարելի էր համբել այդպիսիներին: Առաջինն էր Գաբրիել Սունդուկյանը, որ արդեն «Պեպոլի» հեղինակն էր, Ստեփանոս Պալասանյան, լեզվագետ և գրականագետ, Պերճ Պոռչյան, որ ուներ «Սոս և Վարդիթեր» ազգային վիպականությունը և «Աղասի» նույնպես ազգային ողբերգությունը: Գրական մարդկանց շարքում կարելի էր գնել և Մարտիրոս Սիմեոնեանցին, որ ուսուցիչ էր թարգմանել էր Նիշիեն: Այնուհետև գալիս էին բոլորովին անհայտ մարդիկ՝ Պողոս Իզմայիլյան (վերջում Թիֆլիսի քաղաքագրուխ), Վասիլ Շահվերդյան, Սեդեքերիմ Արծրունի, Գեորգ Եվանգոլյան, Աբգար Հովհաննիսյան, Գրիգոր Իզմիրյան, Ալեքսանդր Քիշմիշյան, հայոց բեմի վրա անուն հանած գերասաններ Միհրդատ Ամերիկյան և Գեորգ Չմշկյան: Այդում ենք առանձին հիշատակել մեկին՝ մի պարսկաստանցի համեստ, անկախ խոս մարդուն, որ հանդարտ նստում էր մի անկյունում և լսում: Այդ մարդը հաշվապահ էր Թիֆլիսի մի հայ վաճառականի խանութում: Բայց արցնողին նա կարող էր հպարտությամբ ասել, թե ինքը «Հյուսիսափայլի» թարգմանից էր: Նրա գրական անցյալը «Հյուսիսափայլում» տպված երկու թղթածից էր կազմված, իսկ ներկան... բայց ներկան ոչ ոք չէր ճանաչում: Կար միայն այն, որ այդ պարսկաստանցին գրվածքներ շատ ունի: Ժողովրդի մեջ թարքնված մի ուժ: Նրան առաջ քաշեցին, նրան ասպարեզ տվին Արծրունու գրական երեկոները և նա, Հակոբ Մելիք-Հակոբյանը, դարձավ Բաֆֆի: Արծրունին նկարագրել է, թե ինչպես ինքը ծանոթացավ Մելիք-Հակոբյանի հետ: Այդ նկարագրությունը միևնույն ժամանակ լավ պատկերացում է «Մշակի» կանավոր խմբագրական ժողովները:

«1871 թվին, — գրում է Արծրունին», — ես արդեն թույլտվություն էի ստա-

«Մշակ», 1883, № 48:

ցել «Մշակը» հրատարակելու և կազմակերպում էի խմբագրությունը, աշխատելով իմ շորս կողմը խմբելու ընդունակ, թեև գրականություն մեջ դեռևս անհայտ երիտասարդներին: Շարաթը մի անգամ լինում էին ինձ մոտ խմբագրական երեկոներ: Այդ ժամանակ այդ երեկոներին լինում էր ուրիշների թվում և պ. Սենեքերիմ Արծրունին: Մի օր պարոնը հրաժիրում է ինձ իր տունը, որտեղ նույնպես գրական երեկո պետք է լիներ: Այդտեղ ամենայն դեպի թացնում է ինձ մի մարդու հետ, որին ինքն կարճ կերպով անվանում էր Հակոբ: Դա պարսկաստանցի Մելիք-Հակոբյանն էր: Մինչև որ ուրիշներ բարձր ձայնով խոսում, վիճում էին, պարսկաստանցի երիտասարդը, որ այն ժամանակ իմ կարծիքով 30—35 տարեկան կլիներ, լուռ նստած էր սենյակի մի անկյունում և գրեթե չէր մասնակցում ընդհանուր խոսակցությունը: Այն ժամանակ նա աննշան ռոճիկով հաշվապահ էր մի ինչ-որ հայր խանութում:

Ընդհանուր ապավորությունը, որ առաջին անգամ գործեց ինձ վրա Մելիք Հակոբյանը, այն էր, որ զգալով ուրիշների, ինտելիգենտ, համալսարանական մարդկանց մտավոր գերադանցությունը, նա քաշվում էր մեք հասարակություն մեջ որևէ վիճարանությունների մեջ մասնակցելուց: Նրա ամբողջ պատկերը մեր շրջանում իրան հետ քաշված, լուռ պահելու կերպը՝ ցույց էր տալիս, որ նա իրան պատահական հյուր էր համարում համալսարանականների շրջանում այդ թուխ, շատ թուխ դեմքով, սև միրուքով, սև գանգուր մազերով, կապույտ ակնոցների միջից կարմրած, հիվանդառ հոգնած աչքերով մեզ վրա խորհրդավոր լայն ճակատի տակից նայող մարդը՝ կարծես մեզ ամենքիս դիտում էր մեզ ուսումնասիրում էր, դեռևս իր ուժերին հավատ չընծայելով իրանից բարեուսում ստացածների հետ որևէ բանակարի մտնելու: Պ. Սենեքերիմ Արծրունի ներկայացրեց ինձ Մելիք-Հակոբյանին, ավելացնելով, որ մարդը բազմաթիվ անտիպ գրվածքներ ունի և կարող է պիտանի լինել նոր ծնվող «Մշակի» խմբագրությունը:

Մելիք-Հակոբյանը սկսեց հաճախել և իմ խմբագրական ժողովները: Ինչպես ես նրան առաջին անգամ տեսա, նա շարունակեց երկար ժամանակ նույն ձևով պահել իրան և իմ խմբագրական ժողովներում. դիվանի մի անկյունում լուռ նստած, նա մի գլուխ պապիրոսներ էր ծխում, լսում էր ուրիշների խոսակցությունն ու վիճարանությունները և գրեթե երբեք չէր մասնակցում այդ վիճարանություններին: Մի օր նա բերեց իր անտիպ գրվածքներից մեկը, որ քան հիշում եմ դա վեպ էր և կրում էր «Երվրայի» վերնագիրը: Ես բացարձակ հայտնեցի միտքս. վեպի նկարագրական տեղերը աննման էին, բայց ամբողջ վեպի հյուսվածքը ես չհավանեցի. ես անհարմար գտա այդ վեպը մի լրագրի այն էլ շարաթը մի անգամ հրատարակվող լրագրի մեջ տպագրելու համար:

Այնուհետև Մելիք-Հակոբյանը սկսեց ինձ հաճախել խմբագրական ժողովներից դուրս օրերին: Մեր խոսակցությունների ժամանակ ես աշխատում էի բացատրել նրան իմ ուղղությունը, իմ պրոգրամը: Ես 26 տարեկան երիտասարդ էի, ես եվրոպական ուսում էի ստացել, բայց ես չէի ճանաչում արևելքը:

— Դուք աշխարհը տեսած մարդ եք, դուք ինքներդ պարսկաստանցիքուն արևելքի եք, պտտել եք և թուրքաց Հայաստանում, տվեցեք մեզ տեղեկություններ այդ երկրների մասին, տվեցեք մեզ հում նյութեր, — անդադար ասում էի ես նրան, — թողեցեք երևակայականը և հաղորդեցեք մեզ իրականը: Այն ինչ որ կա, ինչ որ ինքներդ գիտեք, ինչ որ տեսել եք: Նկարագրեցե՛ք կյանքը Պարսկաստանում ինչպես որ կա...

Այդ մասնավոր խոսակցությունների ժամանակ մշակվեցավ «Պարսկաստանի նամակների» պրոգրամը, այդտեղից էլ ծնունդ առավ Ք ա Ֆ Ֆ ի կեղծատ

անք, որով Մելիք-Հակոբյանն այնուհետև հայտնվեցավ մեր գրական ասպարեզում:

Այն րոպեից սկսած Բաֆֆիի վիճակը կապվեցավ «Մշակի» վիճակի հետ:

Ահա ինչ էին անում Գրիգոր Արծրունու գրական երեկոները: Այժմ տեսե՛ք, թե ինչ էր զգում այդ ժողովներին նույն այդ լուռ, թխադեմ պարսկաստանցին: Բաֆֆին էլ նկարագրել է «Մշակի» խմբագրական ժողովները իր «Երիտասարդությունը»՝ աշխատություն մեջ և նկարագրել է իրան հատուկ խոսուկությունը:

«Ես երբեք մոռանալ չեմ կարող 72 թվականը, երբ սկսվեցավ հրատարակվել «Մշակ» լրագիրը, — գրում է նա: — Ի՞նչ կյանք էր տիրում այն ժամանակ Թիֆլիսում. ի՞նչ գրություն մեջ էր գավառների վիճակը: Ամեն տեղ տիրում էր մի տեսակ անշարժություն, մի տեսակ թմրություն, մի տեսակ թանջություն: Հանկարծ, կարծես մի դյուբական գավազանի հարվածից զարթոցավ կյանքը: Ոչ ոք չէր հավատում, թե այսպես կարող էր լինել: Հավատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբ: Ես հիշում եմ այն գեղեցիկ ասարիները, այն հրաշալի գիշերները, երբ այդ խումբը, հավաքված խմբագրատան մեջ, կարդում էին, ծխում էին և վիճում էին: Մեզանից շատերը անգլերեն շատիկ չունեին, մտնում էին այնտեղ բոլորովին պատառոտած կրիկներով. այնուամենայնիվ, մենք ամենքս էլ ֆատալիստի հույսով հավատում էինք, թե կտիրապետենք մի մեծ ապագայի:

Սկզբում այս լրագրի շուրջը խմբվեցավ համալսարանական դիպլոմավոր երիտասարդությունը: Բայց նրանք շուտով ցրվեցան. կարծես թե, գործը խորթ լինեցավ իրանց: Նրանք չհավատացին այս լրագրի ճակատագրին: Մնացին դիպլոմից զուրկ ինֆուռները, — ինքնակրթությամբ դարգացած մանկտին, ինֆուռությունների տակ ճնշված, ամեն տեղից հալածված, բայց դարձյալ իր վեհությունը պահպանած մանկտին: Ահա այդ ուժերը իրանց ուսերի վրա բարձրացրին «Մշակի» դրոշակը:

...Եվ այսպես, համալսարանականները հեռանալով «Մշակից», ասպարեզը մնաց ինքնուսներին: Այդ լրագրի խմբագիրը խիստ ճիշտ համեմատություն արեց, թե նա թողեց դպիրներին և փարիսեցիներին, և իրան շրջապանից հասարակ ձկնորսներով ժողովրդի շփուցած զավակներով: Բայց պետք է ցույց տալ հասարակությունը, թե այդ դիպլոմից զուրկ ուժերով կարելի էր կազմել մի նոր շկոլա: Գործիչների առջև դրած էին ահագին դժվարություններ. ահագին պարտականությունների հետ: Հողը միանգամայն խոպանացած էր: Աշխատանքի բաժանություն չկար: Ուզում եմ ասել, չկային ուրիշ օրգաններ, որոնց յուրաքանչյուրը հանձն առնելով մշակության մի ճյուղը, սկսեին աշխատել... Եվ այդ պատճառով «Մշակը» ստիպված էր իր թերթերը բեռնազորել ամեն տեսակ նյութերով: Պուրլիցիստիկան և բելետրիստիկան ձեռք բերելով տված էին ընթանում: Վիպասանը նկարում էր պատկերներ ժողովրդի կյանքից, ցույց տալով նրա տգեղ աշխատակությունները: Տնտեսագետը հարձակում էր անխիղճ վաշխառուի և հարստահարիչ կապիտալիստի հարաբերությունները մշակ դասի հետ: Մորալիստը խորտակում էր այն սև նախապաշարմունքները, որ ծանրացած էին ամբոխի հոգու վրա, և մատուցանում էր բարոյական նոր սնունդ: Առողջ խոսքը բխում էր կենդանի աղբյուրից և տալիս էր դեպի ամեն կողմ նոր մտքեր: Կրիտիկական ոգին գործում էր իր

անխնայ անգթութեամբ: նա մտնում էր հեղինակի կարծիքները, վաճառականի խանութը, արհեստավորի զործարարները, ծառայողի սեպանը, բարձրագույն խնայողը, մեծատան սալոնը, վարժարանի դպրոցը, կղերի մեծագույնը: մի խոսքով կյանքի բոլոր ծախքերում պատվում էր նա, և խավարի միջից դուրս էր բռնում, մերկացնում էր այն ամենը, ինչ որ ազնու էր, ինչ որ անարժան էր: Այս բոլորը գործվում էր այն շկայի մեջ, որ հիմնեց «Մշակը», ուր երբեք արդու զուգույնը ուսանում էր և ուսուցանում էր:

Ես երբեք չեմ կարող մոռանալ այն աղմուկից ժողովները, որ կայգում էին այդ լրագրի խմբագրատան մեջ մի քանի տարի առաջ: Եթե ես ունեցի եմ մի քանի ոսկե ռուպլներ, դրանք պատկանում են այն ժամանակին: Ժողովների մեջ ոգևորված և բորբոքված վիճաբանությունները տևում էին շատ անգամ մինչև գիշերվա ժամի երկուսը: Փոքրիկ, բուլբուլ նյութական միջոցների զուրկ, բայց բարոյապես հարուստ խումբը ծրագրում էր հսկայական պրոեկտներ: Այդ դոկտրինային, երեակային այդ տենդային բորբոքումը թեև մասամբ ծիծաղելի էր, բայց դեղեցիկ էր, որպես մանուկի ժպիտը: Արտահայտություն է նոր սկսվող կյանքի: Եղեանների խորին արեքնողությունը մեջ ամեն մի երկրասարդ մոռանում էր իր վիճակի տաժանությունը և մտածում էր, վիճում էր հասարակաց բարօրության մասին: Կես գիշերից հետո նրանք վերջանում էր: Խումբը ցրվում էր գալիս բուլվարների վրա, երբ բոլոր հյուրանոցները փակված էին լինում: Բայց դարձյալ խուլ և անպատասխան փողոցների մեջ շարունակվում էր ընդհատված վիճաբանությունը: Այն ժամին, երբ բախտավոր թիֆլիսեցին հանգստանում էր իր փառավոր քնարածի մեջ, մեր կիսամերկ շրջմուխները Գոլովինսկի պրոսպեկտի սալերը դրոշմում քննադատում էին մի նշանավոր հասարակական հարց: Զյունը, անձրևը, սուր քամին չէր թշուր նրանց դեպի իրանց սղորմելի բնակարանները, այլ ավելի զովացնում էր և ավելի կազդուրում էր տաքացած գլուխները: Նրանք բաժանվում էին միմյանցից, երբ զարկում էր առավոտյան զանգակը. այն ժամանակ զնում էին հանգստանալու, որ մյուս օրը նոր ուժով սկսեն աշխատել:

Հարկ կա ավելացնելու, որ մեր մեռած ու տխուր իրականությունը միակզամայն խորթ էր այսպիսի գաղափարական ոգևորությունը: Ի՞նչպես ծեփել այս հրաշալի երևույթը մեղանում. ո՞րտեղից հանկարծ դուրս եկան այդ արեքնած երիտասարդները:

Հավատք ծնեց, դուրս բերեց այդ ամենը, անսահման հավատք դեպի գաղափարի հաղթանակը, դեպի առաջադիմությունը, վերածնությունը: Մենք պետեինք միայն լաց լինել: Գրեգոր Արծրունին ծաղրեց մեր լավկանությունը, գործ, աշխատանք պահանջեց, ինքը առաջին աշխատավորը դարձավ: Այդ անհրա եռանդի, նրա ներքին կրակի գործը մի կարճ միջոցում: Նա էր այդ ինքնամոռացության հասած, հսկայական ծրագիրներ կազմող, հասարակական ցավերով տառապող խմբի հոգին: Նա էր հրդեհում այդ անսահման ոգևորությունը ազգատ ու անհայտ իր գործակիցների մեջ: Թիֆլիսում հողը պատրաստված էր, Արծրունին ուներ աշխատողների մի խումբ: Կարելի էր և գործ սկսել: Եվ կարող էր մեռած լինել այդ գործը: Դուր տեսնում եք, թե որքան կենդանություն, որքան ուժ ու կրակ կար հավաքված այդ գործի շուրջը նախքան նրա ծնվելը, լույս աշխարհ գալը:

Եվ ահա գաղափարների, ոգևորության այդ կրակված օջախից 1871 թվականի սեպտեմբերին դուրս է գալիս մի անշուք հայտարարություն, ապավին հնաձև տառերով: Դա «Մշակ» լրագրի առաջին հայտարարությունն էր:

«Հարկավոր է,— ասված է այդտեղ,— նախ և առաջ մեկնել ճշտությամբ մենք ինչ ենք հասկանում «Մշակ» բառով: Առհասարակ անվանում են այդ անունով արհեստավորներին, բայց այդ անունի ճիշտ նշանակությունը վերաբերում է այն ամեն անձերին, որոնք աշխատում են հասարակության օգտի մամար, և ոչ թե միայն ֆիզիկապես (մարմնապես) բայց և մտավորապես, որովհետև մտավոր գործունեությունը մարդկանցի արդյունաբերության գործի մեջ դիտարկում էր և խաղում:

Մարդի տիրապետությունը բնության վերա հիմնված է գիտության և արհեստների վրա, որովհետև ճանաչելով բնությունը, մարդս հասնում է նրա տիրապետությանը: Բնական գիտությունների և նոցա տեխնիկական (արվեստական) գործադրության առաջադիմությունն է պարտական մարդկային հասարակությունը, որ մարդիկ մեքենաների միջնորդությամբ ենթարկել են իրանց բնության օրենքներն անգամ:

Աշխատանքը մենք երեք տեսակ ենք բաժանում.

1. Գիտնական հետազոտություն:
2. Նորանից հայտնած ճշմարտությունների կյանքի մեջ գործադրությունների մի արդյունաբերող անձերի միջնորդությամբ:
3. Ինքը աշխատանքի գործադրությունը արվեստավորների միջնորդությամբ:

Բացատրելով այդ երեք ճյուղերի էությունը, հայտարարությունը շարունակում էր.

Ուստի ուսումնականները, արդյունագետները և արհեստավորները, ամենքը մշակներ են: Հասարակության առաջադիմությունը և բարեկեցությունը ծաղում է կամ պայմանավորվում է այդ զանազան գործիչների մեջ փոխադարձ հարաբերության արդարութենից: Առաջնորդել այդ հասարակական գործիչներին իրանց ձգտումների մեջ դեպի փոխադարձ հավասարակշռությունը և արդարությունը, մտավոր աշխատանքի գործն է, ուրեմն գրականության և քրագրության գործն է:

Ապա բերվում են մի քանի խրատներ էդմունդ Աբուի սասաններից, որոնց Արծրունին հավաքել և տպել էր «Հայկական աշխարհի» մեջ 1867 թվին՝ «Աշխատանք» ձեռնագրի տակ:

«Մեղանից չեմ պահանջում հրաշքներ կատարել աշխատելու ժամանակ, բայց ինչևիցե լավություն թողնել, ինչևիցե գործ թողնել ապագա սերունդներին: Եվ այն մարդիկներին, որոնք իրանցից հետո ինչևիցե աշխատանք կամ լավություն են թողել, մենք անվանում ենք առաջադիմության մշակներ: Այն մարդը, որը աշխատում է առաջադիմության համար, անշուշտ մի բան լավացնելու նպատակ ունի կյանքումը:

Քանի լուսավորվում է մարդկությունը, այնքան պետք է շատանան աշխատողները, կամ ինչպես մենք նոցա անվանեցինք, առաջադիմության մշակները:

Քանի կշատանան մարդկության մեջ ուսումնականները և աշխատող մարդիկ, այնքան հաճախ կհնարվեն նոր օգտավետ բաներ, և նոր գյուտի փառքը չի պատկանի մեկին, այլ շատերին:

Եվ աշխատող մարդիկների անունները մեծ թվով լինելով, մեղ անկարելի կլինի աչք բոլոր անունները պահել և իմանալ: Ի՞նչ վնաս: Թող հայտնի

չինի ապագա սերունդներին մեր անունները: Մեր բավական է, եթե մեր աբխասած գործը օգուտ կընեն հասարակութեանը:

Թող կորչի անունը, բարի գործը չի կորչի... աշխատեն:

Հին հայկական մշակ բարբ Խոսեայես նշանագրում է երկրագործ: աշխատող կամ վարել երկիրը, ասվում է օրինակ: Բայց ժամանակով անցնելով հատկապես այդ անունը առհասարակ ժողովրդի ստորին դասի աշխատողներին:

Փոխաբերական կերպով ասվում է մշակել լեզու, կամ մինչև անգամ մշակել միտք: Մեր «Մշակը» պետք նմանապես մշակի...

— Ի՞նչ:

Նախ նա պիտի մշակի միտք՝ թե տեսական, թե գործնական:

Երկրորդ նա պիտի մշակի լեզու:

«Մշակը» շատք է բավականապես մեքենայական կերպով լեզու լուրջ հաղորդելով:

«Մշակը» կաշխատի մի կողմից ընթերցողի ընթերցասիրությունը գրավելու մեր ժողովրդական, թե օտար կյանքից վիպասանությունները առաջարկելով:

«Մշակը» կաշխատի առողջ գատողության վրա հիմնված կենսական իրեն զիրենքի քննադատությունները առաջարկել:

«Մշակը» պետք է տեսարար առաջարկի եվրոպական գիտությունից մշակված ուսման ամեն ճյուղերից առած մտքերը:

«Մշակը» կառաջարկե ընթերցողին գիտություն ամեն ճյուղերից, թե առողջապահությունից, թե մանկավարժությունից, թե բազմարվեստյան գիտություններից, թե ազգային, և թե գյուղային տնտեսությունից, թե վանականությունից և այլն... այնպիսի գործնական մտքերը, որոնք կարողանալին նպաստել ժողովրդական կյանքի պայմանների բարելավացնելուն...

Մի խոսքով, «Մշակի» խնդիրն է՝ թե՛ գվարճություն պատճառել, թե՛ օգուտ բերել ընթերցողին...

Դուք կկարգաք, թե ոչ:

Նոր լրագրի ծրագիրը, ինչպես տեսնում եք, անորոշություններ չի պարունակում իր մեջ, ճառական ոճ չունի, համեստ աշխատավորի պարտավորություններ է վերցրել: Բոլորովին բացակայում է ազգասիրական շեշտը, առանց որի ոչ մի խմբագիր չէր կարողանում դիմել հայ հասարակությանը: «Զվարճություն պատճառել և օգուտ բերել ընթերցողին», — այս խոսքերի մեջ էր նոր լրագիրը խտացնում իր ամբողջ ձգտումը: Ընթերցողը այստեղից չէր կարող ելքակացնել, թե դա լինելու է մի մարտնչող լրագիր, հիմքեր տալով մի օրգան: Բայց այդ հայտարարության արժանավորությունը հենց այն է, որ մեծամեծ խոստումներ չկան նրա մեջ: Մենք առաջադիմության մշակներ ենք, ասում էր Արծրունու խումբը: Յուրաքանչյուր մշակ պարտավոր է որևէ օգուտ բերել հասարակությանը: Ուրեմն աշխատենք:

«Մշակը» պիտի հրատարակվեր շաբաթը մի անգամ. բաժանորդագիրն էր տարեկան 7 ուրբի: Հաստատված ծրագիրը ուներ հետևյալ բաժինները. 1. «Տերություն կանոնադրությունները». 2. Դատաստանական ժամանակագրություն. 3. «Ներքին տեսություն՝ ամենանշանավոր ժամանակակից երևույթներ մեր հայրենիքի կյանքում». 4. «Արտասահմանյան տեսություն». 5. «Բանասիրական և զանազան հոգվածները (ինքնուրույն և թարգմանական) գիտությունների զանազան ճյուղերից». 6. «Մատենագրություն. հայկական, ուսական և մի քանի օտար լեզուներով հրատարակվող գրքերի քննադատությունները». 7. «Տեղիտոն». 8. «Առևտրական ժամանակագրություն». 9. «Հայտարարություններ»:

7. «Տեղիտոն». 8. «Առևտրական ժամանակագրություն». 9. «Հայտարարություններ»:

Նախքան նոր լրագրին դիմելը պարզենք մի քանի հարցեր էլ:

Հայոց մամուլը 1871-ին. «Մեղու», «Արարատ»: «Մեղուի» օրհասը. նրա խոստովանությունը, հառաչանքները: «Մշակը» դարագլուխ մեր մամուլի պատմության մեջ: Միջավայր: Նագալյանց և Արծրունի. մի փոքրիկ համեմատություն: Ապահովված խմբագիր: Երեմիա Արծրունու վերաբերմունքը իր օրգանի նկատմամբ. «հայերեն զագեր». Լրագրի նյութական ապահովության հարցը: Աշխատանքի բաժանում. բղբակցություններ: Խմբագրի veto-ն:

Կրիզոս Արծրունին իր գործունեության ընթացքում շատ անգամ է կրկնել, որ 1872 թվականից ուսահայ մամուլի համար բացվեց մի նոր շրջան, և «Մշակը» այդ շրջանի դարագլուխն է կազմում: Այս խոսքերը զայրացնում էին նրա հակառակորդներին, որոնք ուրիշ բան չունեին պատասխանելու, բայց միայն՝ թե Արծրունին փառասեր է, ինքնագովության համար է իրան հատկացնում այդպիսի մի մեծ դեր: Տեսնենք ինչ են ասում փաստերը:

Ինչպես գիտենք, 1871 թվականի մայիս ամսին դադարեց «Հայկական խորհուրդ» ամսագիրը: Մեր խղճուկ մամուլի համար դա միակ փոքր ի շատե կենդանի քննադատող պարբերական օրգանի մահ էր, մի մահ, սակայն, որ անփորձական էր մեղանում: Ստեփանեն շտեպով ընթերցողների մի մեծ թիվ վերջին տարում, 1871-ին, նրա ամսագիրը ներկայացնում է կատարյալ ուժաշատության պատկերը, նիհար ամսատետրակների աղքատությունը դարմատել է, խմբագիրը ուշադրություն էլ չի դարձնում իր գործի վրա. նրան ուրիշ միտք է կլանել, և վերջ տալով «Հայկական Աշխարհին», նա գնում է էջմիաթին՝ վարդապետ ձեռնագրովելու:

Թիֆլիսում մնաց միայն «Մեղուն»: Իսկապես դա էր ուսահայ մամուլի միակ ներկայացուցիչը, որովհետև թեև էջմիածնում 1868-ից հրատարակվում էր «Արարատ» պաշտոնական ամսագիրը, բայց նա գրական և հրատարակատեխնիկական արժանավորություններից զուրկ մի հրատարակություն էր և առանձին, նույնիսկ աչքի ընկնող դեր կատարել մեր մամուլի մեջ չէր կարող: Տարօրինակ հանգամանք. «Արարատը» իր հիմնարկության սկզբից հանդիսացավ մեղանում իրրե ամենից շատ տարածված և ամենից լավ ապահովված պարբերական. նրան ստանալը պարտագիր էր բոլոր հայ հոգևորականների համար և 70-ական թվականների սկզբում նա ուներ 2000 բաժանորդ, մի թիվ, որ մեր բոլոր խմբագիրներին կարող էր միայն հառաչանք պատճառել... Բայց լավանորդները, թեև ակամա բաժանորդների այդ ահազին թիվը դեռ թալանալից չէր, թե ամսագիրը կարդացվում է, թե էջմիածինը իր արեղաներով կարող է մի երևույթ դառնալ մեր պարբերական մամուլի մեջ: «Արարատը» բավական հայտնի է ամեն մեկին և հարկ չկա ապացուցանելու, թե նրա վերաբերմամբ չէր էլ կարելի կրկնել հայտնի ասացվածքը, թե «մի ծաղկով գարուն չի լինի»: էջմիածինը իր կրոնական-բարոյական, հնախոսական և ներբողական ժողովածուով շատի դեկավարներ ընթերցող հասարակության միտքը: Իսկ անհարին բան էր: Ուրեմն ոչ մի կերպով մեղանշած չենք լինի մեր մա-

մուլի պատմութեան դեմ, Լիթ «Արարատի» գոյութեանը միանգամայն աննկատելի թողնենք:

Մնում էր, այո՞, «Մեղուն» միայն: Բայց ի՞նչ էր այս շարախաթերթի գոյությունը: 1863 թվականից, այսինքն՝ այն ժամանակից, երբ նա Մանգրիսիան քահանայից անցավ Պետրոս Սիմոնյանցին, շարունակվեց միևնույն անմխիթար, օրհասական գրությունը: Տարիներ ընթացքում «Մեղուն» շունեցավ մի փայլուն շրջան, չկարողացավ տիրել մարդկանց մտքին, 100—150 բաժանորդից ավել չկարողացավ գրավել, կիսակենդան գոյություն էր քարշ տալիս Մենք տեսանք «Մեղունի» խմբագրական հաշիվները առաջին տարիներում: Ահա եկել է, անցնում է 1869 թվականը և գարձյալ նույն հուսահատական գրությունն է, որ տեսնում ենք այդ տարվա հաշիվ մեջ: Մենք կարդում ենք հետևյալը.

«Մեղունի հաշիվ... Ի՞նչ հաշիվ, ո՞ւմ և ինչո՞ւ համար, մի՞թե ծիծաղելու համար գրենք մեր հաշիվը: Հաշիվը այնտեղ կլինի, որտեղ գումար է շարժում և ծախք է լինում, բայց ուր մարդիկ ստիպված են առանց դրամի գործ կատարելու, էլ ի՞նչ հաշիվ կմնա անելու. կարծյոք ոչինչ: Իրավ է միայն ծախքը կարելի է ցույց տալ, բայց ոչ արդյունքը, որ իսկապես բնավ չէ եղել: Մեղովի ծախքը հայտնի է, որ յուրաքանչյուր տարի մոտ 1200—1300 ռուբլի է և կարծում ենք, որ սրանով Մեղովի այս տարվա հաշիվը վերջացրինք, իսկ արդյունքը շատ հեշտ է որոշել, հարկավոր է միայն վերոհիշյալ ծախուց գումարի առաջ դնել մի —¹ և կանխ —1200: Ահա այս է մեր մի ազդային լրագրի վիճակը այսօր. անշուշտ նույնն է և այլ հայ լրագրերի և օրագրիչների վիճակը ըստ մեծի մասին: Ի՞նչ արած. կլինի մեր պատասխանը, այդ մեր ճակատագիրն է: Ասածո կամքն է մեզ համար այսպես»:

Եվ հնազանդվելով այդ ճակատագրին, այդ աստվածային կամքին, պ. Սիմոնյանցը վաղուց մտքում դրել էր բոլորովին փակել «Մեղուն»: Ոչինչ չի լինում, ազգասիրությունը պիտի պահպաներ հայոց միակ լրագիրը, ինչ էլ լինեք վերջինս, բայց ազգասիրությունը չկա հայերի մեջ: Եվ ահա ինչ էր հայտարարում խմբագիրը 1869 թվականի վերջում «Մեղունի» մի քանի համարների մեջ.

«Ահա մերձենում է տարվա վերջը և Մեղունի համար կսկսվի նոր տարեգարձ, որ մեր խմբագրությանը ութերորդն է կատարում: Ինչպես շարունակ մի քանի տարի, այնպես և այս տարի մտադիր էինք դադարեցնել նրա հրատարակությունը, միայն քանի մի բարեկամաց և հասկացող բարեմիտների ցանկությունը հետևելով հանձնառու եղանք շարունակելու նրա հրատարակությունը առաջիկա 1870 թվականին ևս»:

Մի քանի բարեկամներ, մի քանի բարեմիտներ ազգասիրական զոհ էին պահանջում խմբագրից. և խեղճ խմբագիրը առաջ է տանում իր հոգեվարք լրագիրը: Ի՞նչպես: Երևի իր անձնական միջոցները ծախսելով: Բայց ի՞նչ դուրս կգար այդպիսի գործավարությունից: 1870 թվականի առաջին համարը հրատարակվեց միայն մարտի 7-ին, և այդ տարին «Մեղուն» ուներ 150 բաժանորդ: 1863 թվականից ոչ մի քալ դեպի առաջ, ընդհակառակն ավելի ևս

¹ Միևնույն:

անկում: Եկավ 1871 թվականը, բայց նա էլ ցույց տվեց խեղճ խմբագրին, որ իզուր են ազգասիրական գանգատները, անձնագոհությունը: Հասարակությունը սառույց էր կտրել «Մեղունի» վերաբերմամբ. օրհասը ավելի քան ակներև էր: «Մեղունի» 1871 թվականի № 48-ը դուրս եկավ 1872-ի հունվարի սկզբում, № 49-ը՝ հունվարի 15-ին, իսկ № 50-ը՝ հունվարի վերջին: Այդ ժամանակ արդեն կանոնավոր կերպով հրատարակվում էր «Մշակը»: Եվ իր թերթի № 49-ի մեջ Սիմոնյանցը հայտարարում էր.

«Հայտնի է մեր բոլոր ընթերցողներին, որ վերջին տարիները միշտ տարվան վերջին վճռած ենք եղել դադարեցնել «Մեղունի» հրատարակությունը: Եվ սորա պատճառը եղած է աշխատանաց ծանրությունը... Նույնը պատահելու էր և այս տարի, մանավանդ որ «Մշակի» երևելովը Հայկական գրականության հորիզոնը թափուր մնալու չէր դոնե մի հայ հրատարակությունից»:

Խեղճ խմբագիր. նրա ջանքն էր գոնե մի հատ հայերեն հրատարակություն պահպանել մեր գրական հորիզոնում, պահպանել թեկուզ ուժասպառ մի դիակ, պահպանել մի կերպ, շունենալով ոչինչ միջոց: «Մշակի» երևալը արդեն մի նշան էր, որ նա կարող է ազատվել իր ազգասիրական ծանր պարտականությունից: Բայց նրան էլի թույլ չտվեցին հեռանալ: «Մեր վճիռը էլի ստիպվեցանք փոխելու», — ասում է նա: Ստիպողը գարձյալ հասարակությունը չէր, այլ մի քանի անհատներ (Մարտիրոս Սիմոնյան, Ջաքար Գրիգորյան, Արշակ Սահապետյան, Գևորգ Տեր-Աղեքսանդրյան): Այս անգամ ստիպողները համեմատաբար ավելի մեծ թիվ էին կազմում. կային և այնպիսիները, որոնց անունները չէին հիշատակված: Եվ այս անգամ «Մեղուն» պիտի ապրեր, որովհետև այդպես էր պահանջում «Մշակը»: Գրիգոր Արծրունու լրագիրը միշտ անխուսափելի անհրաժեշտություն է դարձրել հակառակ լրագրի գոյությունը: Եվ «Մեղուն» առաջինն էր, որ սկսեց ապրել այդ պահանջի պատճառով: 1872 թվականը նա սկսեց մարտ ամսից: Դա մի նոր շրջան էր «Մեղունի» համար, մի շրջան, որի ընթացքում նա պիտի կամա ակամա առաջ գնար, նմանվեր «Մշակին», մրցեր նրա հետ: Այդ շրջանը մենք դեռ կտեսնենք:

Իրողությունն այն է, որ 1872-ի սկզբում այն ժամանակ, երբ սկսվեց «Մշակի» հրատարակությունը, պարբերական մամուլ մեզանում համարյա չկար. չէ կարելի մամուլի կենդանի օրգան համարել օր օրի վրա վերջին շրջինն մոտեցող «Մեղուն», իսկ «Արարատի» գոյությունը չէր փոփոխում իրողությունը: — Բաֆֆին իր «Հայ երիտասարդության մեջ» ասում է. «Հին «Մեղուն» այն ժամանակ նմանվում էր մի մաշված և ջարդված սայլակի, որին ճոնչելով քարը է տալիս մի ուժաթափ ձի: Սայլավարը բոլորովին հուսահատված, մոլորված և կես ճանապարհի վրա կանգնած, մտածում էր. «հիմա դեպի որ կողմը քշեմ»: Եվ շգտնելով ոչինչ պատասխան, մենակ, անօգնական, դուխ կորցրած սայլավարը փրկություն որոնում էր սայլակը մի կողմ դնելու, հավիտյան նրանից բաժանվելու, հավիտյան լռելու մեջ: Նա արդեն այդպես էլ արել էր, նա այլևս գոյություն չուներ. բայց երևաց «Մշակը», կենդանություն բերեց ոչ միայն իր համար, այլև այդ ջարդված սայլակի համար...»:

Ահա թե ինչու 1872 թվականը ճիշտ որ-մի շատ նշանավոր տարի էր մեր մամուլի համար: Ճիշտ որ այդ ժամանակից սկսվում է մեզանում մի նոր շրջան, նոր դարձագրություն: Եվ այս պատմական փաստը անուրանալի դարձնողը միայն այն հանգամանքը չէ, որ «Մշակի» սկզբնավորության ժամանակ գո-

յության շուներ հայոց մամուլ: Մշ. երևույթը դրանից ավելի խոշոր էր, ավելի նշանավոր հատկություններ ուներ:

Գա այն էր, որ 1872 թվականից իսկական հրատարակատուները իր անխնա քննադատող, մերկացնող, մտքակոշ խոսքով հաստատվում էր հայկական իրականության սրտում: «Հյուսիսսփայլը» պատմությունը մի կենդանի վկա է, թե որքան դժվար է այդ գործը: «Հյուսիսսփայլը», մեր հրատարակատուության անդրամիկ, փայլուն օրինակը, ցույց տվեց, որ մերկացնող ուղղությունը մի ճշմարիտ բարեք է հայ ազգի համար. նա արթնացնում, հուզում էր մտքերը, գիտակցության, ինքնաճանաչության սերմեր էր սփռում, հերոսացնում էր գրողին, բայց միևնույն ժամանակ յուրացնում էր սաստիկ ընդդիմադրություն, ահեղ պատերազմ: Այդ գաղափարական մարտը մղվում էր հայությունից հեռու մի անզիջ. բայց մեր իրականությունը այդքան հեռավորության վրա էլ կարողացավ իր սպանիչ ազդեցությունը գործադրել, կարողացավ զլորել «Հյուսիսսփայլը» անժամանակ գերեզմանի մեջ: «Հյուսիսսփայլից» հետո «Հայկական Աշխարհը» ծնվեց Թիֆլիսում և իր ծրագրի հիմնդրունեց նազարյանցի դավանությունները: Բայց մենք տեսանք, թե որքան թույլ էր արտահայտվում նրա մեջ գաղափարական լայն պատերազմը, որքան քիչ բան էր կարողանում կատարել նրա խմբագիրը:

Թե որքան աննպաստ ու ճնշող էր մեր իրականությունը կիրառական ազատ մտքի համար, այդ ցույց է տալիս նազարյանցի կարճատև պաշտոնավարությունը Թիֆլիսի ներսիսյան դպրոցում: Թիֆլիսի մթնոլորտը հուսահատեցրեց նրան մի շատ կարճ միջոցում. նա շատ շուտ զգաց, որ ասիականության մեջ ոչինչ գործ կատարել չի կարելի. ամբողջ երկու տարի նա ողբում է հառաչում էր, զգալով իր կատարյալ անկարողությունը մրցելու շրջապատող անշարժության, խավարի դեմ: Ինքը քաղաքը իր եսամուր, անասնական հակամենքին նվիրված, օտարացող հասարակությամբ հուսահատություն էր պատճառում նրան և հարկադրում էր որքան կարելի է շուտ հեռանալ այդտեղից: փախչել, ազատվել՝ հոգու հանգստություն գտնելու համար...

Այսպես էր այն միջավայրը, ուր գործունեություն սկսեց նույնպես կիրառական մտքերով տոգորված, նույնպես գերմանական լուրջ ուսում ստացած, նույնպես առաջադեմ, քննադատող ոգուն երկրպագող մի այլ հայ՝ Գրիգոր Արծրունին: Եթե նազարյանցը հայկական ճահապիս անշարժությունը վրդովում էր հեռավոր Մոսկվայից, Արծրունուն վիճակված էր գործել հենց այդ ճահիճների մեջ, ճակատ առ ճակատ ընդհարվել այն խավար, հետադեմ ուժերի հետ, որոնց հալածանքը, կատաղությունը այնքան զգալի կերպով թունավորում էին նազարյանցին հեռվից: Պատերազմը այստեղ, հայկական իրականության սրտում, իհարկե, ավելի կատաղի, ավելի անողորմ պիտի լիներ, մանավանդ, որ Գրիգոր Արծրունին նազարյանց չէր: «Հյուսիսսփայլի» խմբագիրը մի մեղմ ու հեղ, կրոնասեր, խաղաղություն ու ընդհանուր համաձայնություն երազող քարոզիչ էր. մինչդեռ Արծրունին մի կրակոտ բնավորություն էր, մի ըմբոստ ուժ, ազնիվ կրքերով լի մի մարդ, որ կովի մեջ ցույց էր տալիս անհուն եռանդ, չէր վախենում ուժերի անհավասարությունից, մենակ էր դուրս գալիս ամբողջ հասարակության դեմ: Նազարյանցը բացարձակ հրատարակական կովի մեջ էր գլխավորապես «Հյուսիսսփայլի» հրատարակության բեթացքում, այսինքն՝ իսկապես վեց տարի, մինչդեռ Արծրունին ամբողջ բազմաթիվ տարի էր կովում և միայն մասը խլեց նրա ձեռքից գրիչը և պատերազմը դաշտը: Նազարյանցը իր ամենախիստ հարձակումները դնում էր նամակների

մեր Արծրունին նամակներ չունի. ինչ գրել է, ինչ մտածել է, այդ բոլորը պղել է իր լրագրում...

Արծրունին մինչև կյանքի վերջը մեծարում էր նազարյանցին. նրա անբիծ վիշտակի, նրա գեղեցիկ անվան հզոր պաշտպանն էր: Նա իրան և առհասարակ առաջադիմական ամեն մի գործչի համարում էր նազարյանցի աշակերտ: Ի՞նչ գա ճիշտ է: Նազարյանցի շարունակությունը, անմիջական հաջորդը Արծրունին է. նազարյանցի հիմնական գաղափարները, պաշտպանած դատը ամբողջապես մտավ Արծրունու ծրագրի մեջ: Բայց և այնպես, նազարյանցը և Արծրունին հավասար ուժեր չեն. միանման մեծություններ չեն:

Գրանք սերունդներ են՝ հայր և որդի: Հայրը ուրիշ տեսակ ժամանակների արդյունք էր, որդին՝ բոլորովին ուրիշ: Հայրը ճառական ուղղության ներկայացուցիչն էր, ազգասիրության անունով էր պահանջում գրական և կրթական վերածնություն. որդին ավելի մեծ պաշարի, ավելի խոշոր տաղանդի տեր էր, լուսերի ու քարոզների տեղ նա գործ էր պահանջում, մայրենի լեզուն ու գրականությունը ազգասիրություն չէր համարում, այլ անհրաժեշտ պահանջ, ռեալական գործ: Հայրը իդեալիստ էր և մի սահմանափակ շրջանում մի քանի տարիների շուրջն էր պտտում. որդին ռեալիստ էր, գործում էր ոչ թե հեռվից, այլ կյանքի մեջ, անհամեմատ շատ հարցեր էր մշակում, անհամեմատ մեծ քննադատներ էր առաջացնում: Բաֆֆին իր վերոհիշյալ աշխատության մեջ այսպես է բնորոշում այդ երկու սերունդները.

«Եթե ընդունենք այն ընդհանուր պայմանը, թե յուրաքանչյուր 25 տարեկան հետո ամեն մի երկրի երիտասարդությունը փոխվում է, այն ժամանակ երկուսն էլ 72 թվականները խորհրդավոր նշանակություն կստանան մեզ համար: Երկուսն էլ որոշ ժամանակամիջոցներ ներկայացնում են երկու որոշ երիտասարդություն, մեկը իդեալական, մյուսը ռեալական: Առաջինը ծնունդ է «Հյուսիսսփայլի», իսկ երկրորդը ծնունդ է «Մշակի»: Ես հիշում եմ երկու պերիոդներն էլ: որովհետև երկուսի մեջ էլ գործել եմ: «Հյուսիսսփայլի» ժամանակ հայտնվեցան բանաստեղծներ, իսկ «Մշակի» ժամանակ պուբլիցիստներ: Բացառությունները շատ աննշան են»:

Քսան և հինգ տարին իբրև մի անփոփոխ շրջան, որ անսխալ կրկնվում է, ընկելով երիտասարդության փոփոխություն, մենք ընդունել չենք կարողություն կային կյանքի դարգացման մեջ չէ կարելի որոշ շրջաններ, թվանշանների փոփոխություն պատկեր կրող ժամանակամիջոցներ սահմանել: 58-ից մինչև 72 թվականները միայն 15 տարի էր անցել: Այն էլ կա, որ Արծրունին 65—67 թվականներում արդեն միանգամայն կազմակերպված էր իբրև որոշ աշխարհայեցողությունների տեր գրող: Մշ, քառորդ դար չէր բաժանում այդ երկու սերունդները, և մենք չգիտենք, թե ինչպես է հաշվել մեր տաղանդավոր վիշտագրողը, որ ստացվել է 25 տարեկա շրջան: Կարևորը, սակայն, այդ չէ. Բաֆֆին ինչպես 58-ի և 72-ի ականատես և գործիչ, ճիշտ է անվանում երկու սերունդները. «Հյուսիսսփայլը» բանաստեղծների ծնող, «Մշակը»՝ հրատարակատուների ծնող: Բայց շատ է կարծենք, թե մեր գրականության մեջ այդ երկու անունները շատ են տարբերվում իրարից: Ամենևին այդպես չէ. թե «Հյուսիսսփայլի» բանաստեղծին և թե «Մշակի» պուբլիցիստին ոգևորում էր մեծությունը՝ առաջադիմություն, վերածնություն: «Հյուսիսսփայլի» բանաստեղծը մի ճյուղը միայն ճանաչող թռչուն չէր, մի երգիչ, որի համար միևնույն ժամանակ չէր լինում կա շորս կողմում, ինչ է կատարվում և ինչ պիտի կատարվի. դա մի երգիչը չէ, որ սիրո և վայելչության ձայն է հնչեցնում ամառ և ձմեռ: Միայն այդ բանաստեղծների մեջ ամենից շատ աչքի ընկնողը, ամենից նշա-

նախորդ Ս. Շահազիզն է, և նա ասում է. «Նախ քաղաքացի և ապա պոետ»:

Չանազանությունը երկու սերունդների մեջ, ուրեմն, ձևն է և ոչ գաղափարը. «Հյուսիսսփյառի» բանաստեղծը բայրոնական մեղամաղձառությունը սոցորված ոտանավորով էր հայտնում, որ հայ հոգևորականը անկիրթ է պարտաճանաչ չէ, փողովրդի իսկական հովիվ չէ. իսկ «Մշակի» իսկական ռեալիստը այդ միևնույն միտքը արծարծում էր ոչ իբրև բանաստեղծություն, այլ իբրև կյանքի երևույթ, որը պետք էր լուսաբանել հրապարակախոսական հոգվածի մեջ՝ զննողի, վերլուծողի սառնասրտությամբ: Այնտեղ էլ, այստեղ էլ նույն հրապարակախոսությունն է, կամ ավելի լավ ասած՝ նույն տենչանքը լուսավորելու հայրենի խավար իրականությունը, բուժելու մեր շափազանք հնացած և՛ շափազանց վտանգավոր դարձած վերքերը:

Սարեր ու ձորեր, այո՛, չկային մեր առաջադիմական բանակի սերունդների մեջ, չկար սառնություն, ոչ էլ արհամարհական վերաբերմունք նոր սերունդի և անցածի մեջ, ինչպես այդ նկատվում էր, օրինակ, ռուսաց կյանքի մեջ: Եվ պատճառը շատ հասկանալի է: Մեր կյանքը շարժվում է կրիայի բարձրով. մենք այնքան զանդազդու ենք, այնքան ծուլ ենք ինքնաքննությունից մեջ, այնքան դժվար ենք յուրացնում վերանորոգության անհրաժեշտությունը, որ մեզանում նույնիսկ ամենատարրական, ամենապարզ պահանջները անկատար են մնում տասնյակ տարիների ընթացքում: Սերունդը հաջորդում է սերունդին և ի՞նչ է տեսնում: Պատերազմ գաղափարների համար, բայց ոչ մի առաջադիմություն, ոչ մի կատարված անհրաժեշտ պահանջ: Հասկանալի է որ նորը պիտի շարունակե անցյալի գործը, պիտի նորից մտցնե իր ծրարքի մեջ այն, ինչ քարոզում էր նախորդ սերունդը: Բայց այս հանգամանքը, կրկնում ենք, ապացույց չէ, թե հայրերն ու որդիները բոլորովին միևնույնն են: Աշխարհայեցողությունների մեջ նրանք հարստացանք են, իրար շատ են մոտենում, շատ հաճախ են իրար հետ ձուլվում. բայց էվոլյուցիայի օրենքը միշտ կա և որդիներին մենք տեսնում ենք շատ հեռու գնացած: Գրիգոր Արծրունու գործունեությունը այնքան լայն է, այնքան ընդարձակ, որ նախորդ սերունդի գործունեությունը միայն սաղմնային դրություն, միայն սկիզբ, կամ ինչպես ասում է նազարյանցը՝ առաջաբան կարող ենք ընդունել:

Անկասկած, Արծրունու կատարած գործի մեջ առաջին, գլխավոր դերը կատարել նրա խոշոր տաղանդն է, նրա պողպատե բնավորությունը, անխորտակելի եռանդը: Բայց այստեղ պետք է հիշատակենք և այն բախտավոր հանգամանքները, որոնք թեև առաջնակարգ նշանակություն չունեն, բայց գործի մի հայտնի շափով շատ նպաստավոր ներգործություն ունեին:

Իբրև խմբագիր, Գրիգոր Արծրունին խիստ զանազանվում է իր նախորդներից նախ և առաջ նրանով, որ նյութապես անկախ դիրք ուներ, ստիպված չէր ապրուստի միջոցների մասին մտածել: Չենք ասում, թե նա այդպես էր իր կյանքի ամբողջ ընթացքում. ո՛չ, ո՛ւմ չէ հայտնի, որ նա իր կյանքի վերջ տարիներում ապրում էր իր գրչով: Վերջին տարիներում, այո՛. իսկ սկզբնական տարիներում, այն երկար շրջանում, երբ նա հզորապես կոչվում էր, քաղաքացիական պայքարներ էր անում, այդ ժամանակամիջոցում, գոնե մինչև 30-ական թվականների սկիզբը, նա բոլորովին ապահովված և անկախ գործիչ էր: Գրիգոր Արծրունին առաջին հայ խմբագիրն էր մեղանում, որ հնարավորություններ սկզբից ևեթ ամբողջովին նվիրվելու իր գործին: Այդ շտեմնված գիրքը նրա համար ստեղծել էր այն հանդամանքը, որ նա հարուստ մարդու որդի էր կարող էր գոնե անձնական ապրուստի մասին չմտածել, կողմնակի պտրտությունների ետևից չընկնել: Սա շատ մեծ նշանակություն ուներ. սրա շնորհիվ

էր, որ Գրիգոր Արծրունին միայն գրող էր, միայն գրականության մեջ էր գտնում գործելու ապարնը:

Ուշադրություն դարձրեք և մի հետաքրքրական հանգամանքի վրա: Նայենք մեր պարբերական հրատարակությունների ցուցակին. կտեսնենք, որ սկզբից, «Վաղատից» և «Արարատից» մեր խմբագիրները, աշխարհական թե հոգևորական, ուսուցիչներ էին: Գրական գործունեությունը երկրորդական բան էր նրանց համար. գլխավոր պայապմունքը, ուսուցչությունը, ազդում էր նրանց մտածողության վրա, և նրանք իրանց հրատարակությունների մեջ միակողմանիություն էին մտցնում, գլխավոր ուշադրությունը նվիրելով դպրոցական հարցերին:

Այսպես, մենք տեսնում ենք, որ «Հյուսիսսփյառի» հրապարակախոսության միջուկը, էությունը դպրոցն է, և մնացած հարցերը պտտում են նրա շուրջը: Նազարյանցը այն աստիճան ուսուցիչ էր իր հայացքների մեջ, որ հասավ այն մտքին, թե լրագրություն, գրականություն չէ կարող լինել հայերի մեջ, պետք է նախ և առաջ դպրոցներ բաց անել, գրագիտություն տարածել, թեթևագոյնը պատրաստել: Որ դպրոցը ընթերցողներ է պատրաստում, այդ, իհարկե, անուրանալի է. բայց որ գրականությունն էլ պիտի զուգընթացաբար զնա դպրոցի հետ, որ նա էլ, նույնիսկ դպրոցից անկախ, ընթերցող հասարակություն է պատրաստում, այս կարծեմ մոռացվում էր և ապացուցվեց Գրիգոր Արծրունու ձեռքով: Մանկավարժ-խմբագրի միակողմանիության ամենալավ օրինակը Մտեփանեն էր: Դպրոցներից դուրս նրա համար գրեթե այլև չարք չկար: Գրիգոր Արծրունին մանկավարժ չէր¹, ուստի իր նախորդների միակողմանիությունից ազատ մնաց և դաստիարակության հարցի շափ նրա համար կարևոր էին և կյանքի բազմակողմանի պահանջներն ու հարցերը:

Արծրունին, ասացինք, ապահովված մարդ էր, ուրեմն և միանգամայն անկախ խմբագիր: Հարց է առաջ գալիս, թե այդ ապահով գրությունը որքան էր նպաստում «Մշակի» գործին: Չմոռանանք, որ Արծրունին, խոսելով մեր մամուլի ընկած դրության մասին, շարիքներից գլխավորը այն էր համարում, որ գրողները վարձատրություն չեն ստանում: Եվ շատ լավ իմանալով, որ խայրի մեջ լրագիրը կամ ամսագիրը չէ կարող օրինավոր գոյություն պահպանել ընթերցողների տված վճարով, առաջարկում էր ընկերություն կազմել, գրամագուլիս հավաքել՝ գրքեր և լրագիր հրատարակելու համար: Այժմ սկսելով լրագրի գործը մենակ, կարող էր նա հույս ունենալ թե կվարձատրե աշխատակիցներին և եթե ուներ, ո՞րն էր այդ հույսը՝ իր անձնական հարստությունը թե բաժանորդագրությունը: Անձնական հարստության հանգամանքը իմանալու համար մենք դեռ պիտի դիմենք զենբալ Արծրունուն, որին թողնեմք թիֆլիսի իր փառահեղ առանձնության մեջ:

Կեներալը, իհարկե, հետևում էր իր որդիների կրթության, հետաքրքրվում էր նրանց ցույց տված առաջադիմությամբ: Մենք գիտենք, որ իր հայրական գարտավորությունները նա կատարում էր ամենալայն բարեխղճությամբ: Անկասկած, նա գիտեր, որ Գրիգորն ու Անդրեասը գրում են հայոց մամուլի մեջ, կարգում էր նրանց գրվածքները: Բայց ի՞նչ էր մտածում այդ մասին: Դժբախտաբար, այս չգիտենք մենք. իր որդիների գրած նամակներից մի հատն էլ չէ մնացել:

¹ Մի քանի ամիս Գայանյան և Մարիամյան դպրոցների տեսուչ լինելը, իհարկե, առանձին կտեսնենք իրենց շրջանում:

Բայց ահա Գրիգորը վերադառնում է հայրենիք: Յոթը տարի սովորել է նա Ռուսաստանում և արտասահմանում, աշխարհ է տեսել և առաջինն է հայրենի մեջ, որ ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտնական աստիճանը գերմանական համալսարանից: Այդ բոլորը շատ լավ: Բայց գեներալ Երեմիայի համար փիլիսոփայության դոկտորը նույն «Գրիշան» է, որ գտնվում էր հոր խնամատարության տակ, քանի չէր հեռացել Քիֆլիսից: Նա սովոր չէր իր որդիներին որևէ մեկի վերաբերմամբ ընդունել, թե նա այնքան արդեն զարգացել է, շահահաս մարդ է դարձել, որ կարող է ապրել իբրև անկախ մարդ: Ինչ էլ եղած լինի, Գրիգորը պետք է շարունակեր մնալ իր հոր մոտ նախկին փոքրիկ «Գրիշան», և հայրը պիտի շարունակեր ավելի խելոք, ավելի լավ հասկացող, ուղղություն ցույց տվող, ղեկավարող լինել: Երեմիա Արծրունին, ինչպես հայր, ուրիշ կերպ լինել չէր կարող: Եվ նրա մեծ որդին, Գեորգը, մինչև կյանքի վերջը անպայման հպատակված էր հոր կամքին ու կարգադրությանը:

Սակայն Գրիգորը այդպես չդուրս եկավ: Նա ժառանգել էր տոհմային հատկություններից շատերը՝ շիտակություն, համառություն, անկախության զգացմունք: Եվ հոր ու որդու մեջ առաջանում են ընդհարումներ: Երեմիան ուզում է հպատակեցնել, խնամակալ լինել: Գրիգորը բացարձակապես մերժում է հպատակությունն էլ, խնամակալությունն էլ: Եվ ի՞նչ է անսնում այն հայրը, որ իր ընտանիքի մեջ անսահման հրամանատարի դեր էր կատարում: Նրա որդին շնորհիվ իր զիրքի, իր կապերի, իր ստացած կրթության, կարող էր փայլուն ասպարեզ ընտրել իր համար, գրավել հասարակության մեջ բարձր դիրք: Բայց նա այդ մասին չէ էլ մտածում, նրա միտքն է լրագիր հրատարակել:

Դա մի այնպիսի անակնկալություն էր, որին ազա Երեմիան, հաստատ կարելի է ասել, ամենևին չէր էլ սպասում: Ի՞նչպես, գեներալ Արծրունու որդի գազեթ հրատարակել, այն էլ հայերեն: Պետք է կարգալ Երեմիայի նամակները, գրած Գևորգին, պետք է տեսնել, թե որպիսի ոգևորությամբ ու ակնածությամբ է նա խոսում պետական ծառայության, աստիճանների մասին, որ պեսզի հասկանալի լինի, թե որքան ապշած պիտի լինեք այդ բարձրաստիճան գինավորականը իր որդու հաստատ վճռից: Ի՞նչպես մեղադրենք, երբ նույն այդ հայացքը հատուկ էր Քիֆլիսի ամբողջ բարձր դասակարգին: Հայ լրագիրու Դա մեծամասնությունը անհայտ մի բան էր, դա այնպիսի մի խղճուկ հասկացողություն էր, որ նրա վրա սիրահարված մարդուն Քիֆլիսի բուրժուա-դասակարգը միայն խղճալ կարող էր: Հայերեն լրագրի պահանջ չկար. հիշենք «Մեղուն» իր 150 բաժանորդներով: Եվ Գրիգոր Արծրունին Քիֆլիսի իր առաջին տպավորությունների մեջ («Հայկական Աշխարհում» տպված) պատմում է, որ կրթված մարդիկ իրան ասում էին. հայերեն լրագիր հրատարակելը միտք չունի. կրթված դասակարգը օտար լեզուներով է կարգում, իսկ ժողովուրդը հայերեն կարգալ չգիտե: Պատմում են, ասում է Գրիգոր Արծրունու մասին գրողներից մեկը¹, որ բարձր շրջանի մի ռուս կին, լսելով, որ Արծրունին լրագիր է ուզում հրատարակել, ասել է. «Բայց ասում էին, որ գեներալ Արծրունու որդին խելոք երիտասարդ է, մինչդեռ նա ուզում է լրագիր հրատարակել...»:

Եվ գեներալը փորձեց դիմադրել իր որդուն, նա պահանջեց, որ Գրիգորը թողնի իր մտադրությունը: Բայց որդին չփոխեց: Եվ երկուսի հարաբերությունը

ներք լարվեցին, ընդունեցին պաշտոնական կերպարանը: Բանը այնտեղը հասավ, որ Երեմիան նշանակեց Գրիգորին ամսական ուժեղ, որ շատ էլ մեծ չէր՝ ընդամենը հարյուր ռուբլի: Ահա այս էր Գրիգորի ամբողջ հարստությունը: Գրիգորի ընթացքում, հայրական այդ ուժեղից է նա ծածկում իր լրագրի փոփոխությունը:

Մի կանոնավոր շաբաթաթերթ հրատարակելու համար, չհաշված աշխատակիցների վարձատրությունը, հարկավոր էին ավելի մեծ միջոցներ, քան որքան ուներ Գրիգոր Արծրունին: Ծիշտ է, «Մշակը» առաջին իսկ տարվանից մի անօրինակ հաջողություն ունեցավ, ճիշտ է, առաջին տարում լրագիրը արգել 500 բաժանորդ ուներ, բայց տպարանային ծախսերը շատ էին, տպատիկների մնացին, այնպես որ առաջին տարվանից Գրիգոր Արծրունին հարկադրված էր իր գրպանից լրացնել եկամտի պակասը: Այս հանգամանքների մեջ նա տխրված էր մի կողմ թողնել աշխատակիցներին վարձատրելը, մի սկզբունք, որը նա շարունակ պաշտպանել էր, թե «Հայկական Աշխարհի» և թե «Մեղուի» մեջ: Այս ցավալի հանգամանքը իրականության անողորմ պահանջներից էր բխում: Եվ եթե «Մշակի» շուրջը միշտ խմբված չլինեք ոգևորված երիտասարդությունը, անվարձ աշխատությունը կարող էր շատ վատ ազդել լրագրի վրա: Երիտասարդությունը այնքան սիրում էր Արծրունու գործը, այնքան սովոր էր իր սեփական գործը համարել նրան, որ ձրի աշխատելը զրկանք չէր համարում, և Արծրունին մինչև իր կյանքի վերջը շրջապատված էր այդպես աշխատելու պատրաստակամություն ունեցողներով:

Եվ այսպես, նյութական միջոցների հարցը, որ այնքան մեծ կարևորություն ունի պարբերական մամուլի առաջադիմության գործում, վճռվում էր մասամբ միայն: Լրագիրը կպահպանվեր, բայց դրա համար հարկավոր էր անվարձ աշխատության սկզբունքն ընդունել: Գրիգոր Արծրունին իր նախորդ խմբագիրների դրությունից մեջ չէր: Նա ստիպված չէր շարունակ գանգատվել նյութական միջոցների պակասության վրա: Բաժանորդների թվի կողմից «Մշակը» առաջադիմական մի մեծ քայլ էր ներկայացնում. պակասը լրացնելու համար պատրաստ էր խմբագրի համեստ ամսականը: Մյուս կողմից էլ քաղաքական ոգևորությունը, կատարյալ հափշտակությունը, որ բռնկվել էր ձրի երիտասարդության մեջ, ձրի նյութ էր տալիս «Մշակին»:

Այժմ մի քանի խոսք խմբագրական կազմի մասին: Արծրունուն հաջողից կազմակերպել խմբագրություն, հիմնել գործը աշխատանքի բաժանման սկզբունքի վրա: Դա առաջին օրինակն էր մեղանում: Լրագրի սրբագրողն էր քաղանդավոր դերասան Միհրդատ Ամերիկյանը: Միայն սա էր, որ իր այս աշխատության համար ստանում էր Արծրունուց մի շատ շահավոր ուժեղ: Բայց Ամերիկյանն էլ, ուրիշների նման, ուներ իր ձրի աշխատությունը. նա գրում էր սուր և վառվռուն ֆելիետոններ, որոնց տակ գնում էր Չաքուն կեղծ

¹ Պատմում են հոր և որդու հարաբերությունների մասին շատ բան: Երեմիան հաճախ վեճի էր քննվում Գրիգորի հետ գանազան հասարակական և քաղաքական հարցերի առթիվ. երբեք չուժանալովելով որդու հետ, նա, այնուամենայնիվ, «Մշակի» ընթերցողն էր և բաժանորդ էր լրագրում ամեն տարի: Ասում են, որ մի տարի նա ուշացրեց իր բաժանորդագիրը հասցնելը, և Միայն չէր ուղարկվում նրան, մինչև որ փողը լիովին շտապվեց խմբագրության մեջ: Եվ պետք է ասել, որ հայր ու որդի խող չէին միմյանցից, ընդհակառակն, միասին էին ճաշում: Գրիգորը լրագրի ձայնավոր էր. քաղաքագրուխ ընտրելու համար երկու կանդիդատներ կային՝ գեներալ Պրոկոփի և Ղիփիանի: Գրիգորը, չհամակրելով իր հոր ուղղության, գիմադիր կուսակցություն կազմեց, ձայնավորների նախապատրաստական ժողովներ գումարեց՝ Ղիփիանիի թեկնածությունը սրբապանելու համար: Եվ այդպես էլ եղավ. քաղաքագրուխ ընտրվեց Ղիփիանին:

¹ Խ. Մալումյան, «Մտքի Մշակը», Քիֆլիս, 1900, էր. 49:

անունը: ներքին տեսութեան համար հողվածներ գրում էր Վասիլ Շահվերդյանը, համալսարանի առաջին կուրսում եղած և ուսումը կիսատ թողած մի երիտասարդ: Արտաքին տեսութեան մեջ աշխատում էր Շահվերդյանի ընկեր- նույնպէս համալսարանի առաջին կուրսից հեռացած Պողոս Իզմայիլյանը: Սա մի տաղանդավոր, շատ զարգացած երիտասարդ էր, «մնացածներից ավելի եվրոպացի», ինչպէս վկայում է Արծրունին: Գծախտաբար, Իզմայիլյանը հայերեն չգիտեր և հայ լրագրի մեջ կարող էր աշխատել միայն թարգմանի միջոցով: Եվ նրա թարգմանը մեծ մասամբ Արծրունին էր, որ հայերենի էր վերածում նրա գրվածքները:

Ավելի դժվար էր թղթակցութիւնների հարցը: Մի օրինավոր հասարակա- կան օրգան չէր կարող գոյութիւն ունենալ առանց պատրաստված, որոշ ուղ- դութեան և ծրագրի հետևող թղթակիցների: Անցյալում այդպիսի թղթակիցներ պատրաստելու շատ փորձեր չէին եղել: Մենք տեսանք, որ «Մեղուի» խմբա- գրին առաջարկում էին դարգացնել թղթակցութիւնների բաժինը, իսկ նա- անկարող լինելով կատարել այդ պահանջը, պատասխանում էր, թե աստիճան- ողորմած է: Տեսանք նույնպէս, որ այդ դործում ավելի բախտավոր եղավ «Հայկական աշխարհը»: նա առաջարկեց ծրագիր, ամեն միջոց գործ գրեց թղթակիցներ գրավելու համար և մասամբ հասավ իր նպատակին. թղթակցու- թիւններ էր ստանում զանազան քաղաքներից:

Գրիգոր Արծրունին չէր կարող սպասել, որ «Հայկական աշխարհի» թղթա- կիցները իրան նշուէին ուղարկեն: նախ որ դրանց մեծ մասը պատահական թղթակիցներ էին, երկրորդ, որ «Հայկական աշխարհի» ծրագիրը ավելի եղ- էր, սահմանափակ, ավելի դպրոցական գործն ուներ ի նկատի, մինչդեռ գո- վառական թղթակցութիւնների մեջ, «Մշակի» պահանջների համաձայն, պի- տի արտահայտվեր ժողովրդի կյանքը իր բոլոր կողմերով: Ինչ անել, վճար- են առժամանակ խմբագրութեան մեջ կազմել թղթակցութիւններ: Գրեցին օրինակ և ուղեցուց կտրվեր դավաճներից գրել ցանկացողներին: Այդ աշխո- տանքն էլ բաժանվեց այսպէս. Վասիլ Շահվերդյանը կազմում էր թղթակցու- թիւններ Թելավից, Սղնախից և առհասարակ Վրաստանի զանազան կողմ- րից. Պերճ Պոռչյանը՝ Երևանից, Հակոբ Մելիք-Հակոբյանը՝ Պարսկաստանից: Մաժակ-Գանձակից: Թղթակցութիւնները, իհարկէ, չէին հնարվում, նրանք կազմվում էին մասնավոր նամակներից: Ինքը, Արծրունին, կազմում էր թղ- թակցութիւններ Կ. Պոլսից, հիմնվելով լրագիրների և մասնավոր նամակների վրա: Վաղուց էր մեր մամուլը ձգտում մոռենալ թուրքահայերին, արձան- գրել նրանց կյանքի երևույթները: Առաջին խոշոր քայլը այս գործում պատ- կանում է «Կոտնկից». նրա խմբագիրը թուրքահայ էր և նրա համար յո- դժվար չէր գրավել իր հայրենակից գրողներին, ստանալ սեփական թղթա- կցութիւններ Կ. Պոլսից: «Կոտնկից» հետո «Մեղուն» և «Հայկական աշխար- հը» շարունակեցին նույնը, բայց սեփական թղթակիցներ չունենալով, տալի- էին մեծ-մեծ արտատպութիւններ Կ. Պոլսի լրագիրներին: Արծրունին սկզբից ըմբռնեց, թե որքան մեծ կարևորութիւն ունի Կ. Պոլսի հետ մշտական կապ հաստատելը լրագրի միջոցով: Մինչև Կ. Պոլսում մշտական թղթակի- յունենալը, նա ինքն էր կազմում թղթակցութիւններ: Սա սկիզբն էր: Թուրք- հայերին մոտենալու գործում ոչ ոք մեղանում չէր կարողացել անել այն, ինչ արավ Արծրունին:

Մեզ մնում է խոսել «Մշակի» մի այլ աշխատակցի մասին: Դա Ստեփանոս Պալասանյանն էր, ուսմանցի հայ, որ ուսում էր տալ Փարիզի Հայկա- յան դպրոցում և ուսուցչութիւն էր անում Թիֆլիսում: Պալասանյանն արգ- յանք վրա էր դրել իր անունը:

հայտնի էր իր աշխատութիւններով իբրև հայերենագետ: նրան հանձնվեց «Մշակի» բանասիրական բաժինը. բացի դրանից վճարված էր, որ նա հսկէ «Մշակի» լեզուի վրա և ուղղէ թե Արծրունու և թե ուրիշների ոճը: Բայց Պա- յասանյանը երկար չմնաց «Մշակի» խմբագրութեան մեջ և իբրև աշխատակից մի առանձին բեղմնավորութիւն ցույց չտվեց: Առաջին տարվա ընթացքում նա գրեց մի քանի հողվածներ, որոնց երկուսը առաջնորդողներ էին, մեկը երրորդն տեսութեան հողված, մեկն էլ՝ մասնագրութիւն: Ինչ վերաբերում է լեզուն ուղղելուն, նա ավելորդ էր համարում այդ բանը մանավանդ Արծրունու նկատմամբ: Արծրունու ոճը նա գտնում էր այնքան շատ ինքնուրույն, առանձ- նահատուկ, որ հարկավոր չէր համարում որևէ սրբագրութեան ենթարկել նրան և Պոռչյանին էլ չէր թույլ տալիս ուղղել:

Այսպէս էր բաժանված աշխատանքը «Մշակի» խմբագրութեան մեջ: Իսկ ինչն էր մնում խմբագրին: Ամենազխալորը, ամենակարևորը՝ լրագրի հոգին: Արծրունին գրում էր գլխավորապէս առաջնորդողներ և հսկում էր լրագրի բոլոր բաժինների վրա: Աշխատանքի բաժանումը չէր նշանակում առանձին, միանգամայն ինքնազուտ տերերի հանձնել լրագիրը: Արծրունին լավ նկատել էր, որ խմբագրական հարկի տակ հավաքվածները ուղղութեամբ, աշխարհա- լիցողութիւններով միմյանց նման մարդիկ չեն: Պետք էր այնպէս տանել գործը, որ լրագիրը իր բաժինների մեջ ուղղութեան մի ամբողջութիւն ներ- կայացներ: Աշխատակիցներից ոչ մեկին, — ասում է Արծրունին, — ես երբեք չեմ թույլ տվել երևակայելու թե նա կատարյալ տեր է նույնիսկ իր բաժնում, ապացուց այն կոնիվը, որ ունեի Շահվերդյանի հետ, երբ նա ուղեց մտցնել երրորդն տեսութեան մեջ մի հողված, որի ուղղութեան հետ ես համաձայն չէի: Ես ամբողջ խմբագրական ժողովի առջև պատասխանեցի նրան, թե զուր է նա կարծում, որ կատարյալ տեր է ներքին տեսութեան բաժնում, և թե այն- պիսի հողված, որի ուղղութեան հետ ես համաձայն չեմ, ես երբեք չեմ տպա- գրի: Այո՛, լինում էին անգույն հողվածներ, բայց վստահ կարող եմ ասել, որ իմ ուղղութեան դեմ ո՛չ մեկը երբեք չէ տպվել «Մշակի» մեջ, խմբագրական ժողովների ամբողջ տևողութեան ժամանակ:

Խմբագրի veto-ին ենթարկված աշխատակիցների մի խումբ՝ ահա՛ «Մշա- կի» խմբագրական կազմվածքի կերպարանքը: Ինչ տեսակ մարդկանց համար այդ veto-ն կարող էր համարյա գոյութիւն չունենալ: Այդպիսի մի մարդ եղել է «Մշակի» խմբագրատանը և դա Պողոս Իզմայիլյանն էր:

Արծրունին հավաստիացնում է, որ Իզմայիլյանը զգուցե միակն էր, որ լիա- զոր տեր էր իր բաժնի: Ինչո՞ւ «Եթե խմբագրական ժողովներում ես մեծ մասամբ միշտ ավելի համաձայն էի Իզմայիլի, քան ուրիշների հետ, այդ պի հասարակ պատճառով էր, որ նա բոլոր մնացածներից ավելի եվրոպացի էր, ազատ նախապաշարմունքներից, մտավորապէս ավելի զարգացած»: Ահա՛ խմբագրի veto-ից չվախենալու ամբողջ գաղտնիքը, ահա՛ թե ինչու էր Արծրու- նին խիստ հսկում լրագրի բոլոր բաժինների վրա:

Այսպիսի կազմակերպվածութեամբ, գործելու այսպիսի ծրագրով Արծրու- նին մտավ 1872 թվականը:

Առաջին համարները: Առաջնորդող հողված: «Երեկ, Այսօր և էգուց»: Կոնի- վալ ինտելիգենցիայի դեմ: Անխնա քննադատութիւն. ո՞րն է մեր իդեալը: Ան- լիզուսականութեան հերոսներ: Պետք է մտրակել: Արշավանք հին սերունդի դեմ:

Ո՞վ մնաց. ժողովուրդը: Հարձակողական ուղղության առաջին պատուհները, գոտում «Մշակի» խմբագրական կազմի մեջ: «Մեղուի» վերակենդանությունը: Առաջին պոլեմիկա: Ներսիսյան դպրոց, հոգաբարձական բնութագրում: Կուսակցական պայքար և հաղթություն: Արտասանմանի և Ռուսաստանի ուսանողներ: «Մեղուի» հարձակումները. «Կոսմոպոլիտներ»:

«Մշակի» առաջին համարը հրատարակվեց 1872-ի հունվարի 1-ին, շաբաթ օր: Խմբագրությունը հայտնում էր, որ այս համարը բացառություն է, «Մշակը» պիտի լույս տեսնի հինգշաբթի օրերը:

Նախ նոր լրագրի տեսքի մասին: Դա փոքր դիրքով մի թերթ էր, յուրաքանչյուր երեսը շորս սյունակից: «Մեղուն» Մանդինյան քահանայի ժամանակ միայն մի տարի (1862-ին) էր ընդունել այդպիսի զուտ լրագրական կերպարանք. մնացած տարիները թե՛ նրա և թե Սիմոնյանցի օրով շաբաթաթերթը հրատարակվում էր մեծ քառածալ թերթի դիրքով: Առհասարակ Արծրունին իր լրագրի արտաքին ձևի, հոգվածները դասավորելու մեջ օրինակ ուներ ֆրանսիական լրագրիները: Մի անգամ ընտրած դիրքը, տառերի ձևը նա անփոփոխ պահպանեց մինչև իր կյանքի վերջը բացի միայն վերնագրից, որ փոփոխության ենթարկվեց 1874 թվին և այնուհետև մնաց անփոփոխ: «Մշակը» ուներ մի գրական-քաղաքական լրագրի բոլոր բաժինները, բացի հեռագիրներից, առաջնորդող հոդված, ներքին տեսություն, բաղկացած ինքնուրույն հոդվածներից, թղթակցություններից և լուրերից, արտաքին տեսություն, որ նույնպիսի կազմվածք ուներ, բանասիրական (շորս երեսի վրա), լիսան լուրերի, ֆելիետոն:

Ավելորդ չպետք է համարվի հիշատակել այստեղ և այն, որ Արծրունին, ինչպես և ուրիշ գրողներն ու հրատարակիչները, նեղվում էր տպարանական անհարմարություններից, որոնք այն ժամանակներում ուղղակի անտանկի էին: Թիֆլիսը դեռ նույնիսկ տեխնիկական հարմարություններ չէր տալիս հայերեն գիրք ու լրագիր տպողներին: Ապացույց այն տանջանքները, որ կրում էր Ստեփանեն «Հայկական աշխարհի» հրատարակության ամբողջ ընթացքում. այդ տանջանքների մանրամասն նկարագրությունը Ստեփանեն դարձրել էր իր ամսագրի ներքին տեսության մի համարյա մշտական բաժինը: Միակ փոքր ի շատ օրինավոր, հայերեն տառերով հարուստ տպարանը էնֆիանձյանցիներն էր, այնտեղից դուրս, ուրիշ տպարանում գործ ունեցողը պիտի տանջվեր անկարգությունների ձևերին: Արծրունին ընտրեց վրացի Ծերեթելի տպարանը, որ մի շատ խղճուկ հիմնարկություն էր. շինարարությունը աշխատանք և ու ավելորդ ծախսեր, նա կարողացավ այդ աղքատ տպարանում կանոնավոր հրատարակել շաբաթաթերթը և բավական մաքուր տպագրությամբ, խնամքով սրբագրված: Այդ հատկությունները «Մշակին» հատուկ մնացին մինչև վերջ:

Ի՞նչ էր բերում նոր լրագիրը:

Մի շարք թարս ու սիրուն նորություններ միմյանց կտակից: Վերջնակա հենց առաջին հինգ համարները, աչքի անցկացնենք նրանց սյունակները և ահա ինչ հետաքրքրական ցուցակ կստանանք:

Ահա՛ առաջին համարում, գծի տակ, Չաքունը դրել է իր անդրանիկ ֆելիետոնը, նվիրված նոր տարուն: Ներքին տեսության մեջ Վ. Ծ.-ի (Վասիլ Ծահվերդյանի) մի ծրագիր-հոդվածն է, որ բացատրում է, թե ի՞նչ նյութեր ու հարցեր են հարկավոր այդ բաժնի համար. դրան հետևում է Պահլավունու (Պերճ Պոռոյանի) նամակը Երևանից: Արտաքին տեսությունը բաղկացած է

«Համայնքը Ծրանսիայի մեջ» ինքնուրույն հոդվածից: Բանասիրական բաժինը չորրորդ երեսի վրա է և այնտեղ տպված է «Կալատող Սահակ» անունով բաղկացած միասնական պատկերը, հեղինակություն Գ. Զ.-ի (երևի Գեորգ Չմշկյանի):

Երկրորդ համար: Այստեղ ֆելիետոնի բաժնում արդեն ուրիշ աշխատակից է՝ Համալը, որ ընտրել է իր զբաղմունքների համար «Համալի մասլահաթ» ընդհանուր վերնագիրը: Համալը Գաբրիել Սունդուկյանցին է, Թիֆլիսի բարոստով Թիֆլիսի բարոյական այլանդակությունները մերկացնողը: «Պեպոի» հեղինակը միայն բնի վրա չէր հանում անխիղճ գաղանային հարստահարությունների պատկերներ: Նույնը նա անում էր իր ֆելիետոնների մեջ էլ, և այս առաջին գրվածքում Համալը պատմում էր իր «Մշակ ախպորը» մի հարստահարության դեպք, որին ենթարկվում է համալը, այդ բեռնակիր երկոտանի գրաստը: Կոկ ու գեղեցիկ է գրվածքը, մշակված՝ Սունդուկյանցին հատուկ հմտությամբ: Ներքին տեսությունը մի ընդարձակ հոդված ունի «Առևտրական խնդիր Թիֆլիսում» վերնագրով. նա շարունակվում է և երրորդ համարում և թեև ստորագրություն չունի, բայց պարզ է, որ պատկանում է Արծրունու գրչին: Հոդվածը արժարժում է անտեսական ծանրակշիռ հարցեր: «Վրաց թատրոն» վերնագրի տակ գրված է մի բեցենդիա վրացերեն մի ներկայացման մասին. մի բան, որ շտեմնված նորություն էր հայոց մամուլի մեջ: Արտաքին տեսության բաժնում այս անգամ երևան է եկել «Մշակի» անդրանիկ և բեղմնավոր թղթակիցը արտասահմանից, Անդրեաս Արծրունին:

Երրորդ համար: Ընդարձակ մատենագրություն Ա. Պ.-ի (Ստեփան Պալասանյան). «Հայկական թատրոն ի Բաքու»՝ Վահան Խոտխոտունի ստորագրությամբ. «Առաջին նամակ Պարոն Բաֆֆիի ուղևորությունից Պարսկաստանում»: Թե ինչպես առաջ եկան այդ շատ հետաքրքրական նամակները, այդ արդեն իմացանք Արծրունու պատմածից: Պարսկաստանի նամակները քսանից ավել էին. նրանք տպվեցան 1872 և 1873 թվականների համարներում: Առաջին նամակի տակ գրված էր ստորագրություն «Թո Ալեքսանդր Բաֆֆի»:

Չորրորդ համար: Դարձյալ Չաքունը իր կծու ֆելիետոնով, Պալասանյանի մի ընդարձակ հոդվածը, որի մեջ հարձակվում է մեր գրականության մեջ տիրող ճառական ուղղության դեմ և հայտարարում է, թե «Մշակը» ամեն ջանք գործ պիտի դնի ժողովրդի կյանքից վերցրած վեպերով ընթերցանության սեր առարածելու: Ներքին տեսության մեջ՝ «Ղզլարի այցելու»: Դատաստանական ժամանակագրություն՝ «Իշխան Մեղիքովի գործը»: Արտաքին տեսություն՝ «Ամենահին արձանները Հայաստանի մեջ»: Բանասիրական՝ նոր պատմվածք Գ. Զ.-ի «Մագթաղի հարսները»:

Հինգերորդ համար: «Հայկական թատրոն», «Հայկական արհեստը Տիֆլիսում. նրա անցյալը և ներկան» Վ. Ծ.-ի:— Բաֆֆիի երկրորդ նամակը:

Այս փոքրիկ պատկերը ցույց է տալիս, որ «Մշակը» բոլորովին նոր բան էր մեղանում: Եվ այդ նորության արժեքը հասկանալու համար բավական է համեմատել նրան «Մեղուի» մի քանի ամսվա համարների հետ: Բայց օտարի բոլորը չէ, ինչ տալիս էր «Մշակը»: Ամենագլխավորը մենք թողնեցինք. լրագրի հոգին ու շունչը, նրա առաջնորդողները: «Մշակը» յուրաքանչյուր համարում տալիս էր առաջնորդող հոդված, ուր քննվում էին հատարական դատական հարցեր: Մեր մամուլի պատմության մեջ «Մշակից» առաջ դուր չեք

¹ Ասում են, որ իր կեղծ անունը Բաֆֆին վերցրել է արաբական լեզվից: Գուցե ավելորդ է իր հիշատակել, որ 60-ական թվականներին Թիֆլիսի իտալական օպերայի դերասանուհիներից մեկի ազգանունն էր Բաֆֆի:

գտնի ղեկավարող հողվածների այսպիսի առատություն, այսքան կանոնավորություն: Առաջնորդողները, ինչպես գիտենք, շատ չնչին բացառություններով, Արծրունին էր գրում: Նա չէր ղեկավարում ստորագրություն այդ հողվածների տակ, մինչդեռ ուրիշների գրած առաջնորդողները համարյա միշտ ունեին ստորագրություն: «Մշակը» առաջին իսկ քայլից պարզում է իր գույնը, առաջին իսկ քայլից ցույց է տալիս, որ ինքը մի պատերազմող, հարձակվող, տապալող օրգան է: Ահա՛ մեր առջև է «Մշակի» անդրանիկ առաջնորդողը. նա ունի վերնագիր՝ «Երեկ, այսօր և էգուց»։ Ի՞նչ էր մեր երեկը, ի՞նչ է այսօրը և ի՞նչ պիտի լինի էգուցը:

I

«Կար ժամանակ, երբ մենք Հայերս բավականացնում էինք մեր ազգային փառասիրության զգացմունքը, հիշելով մեր փառավոր անցյալը, մեր առասպելական ավանդությունները... Մեր ազգի վերաբերյալ ուսումնասիրություններ լրումն էինք տալիս ժամանակ առ ժամանակ կարդալով կամ թերթելով մեր հին կյանքի մասին պատմական հետազոտությունները:

Հասարակության բարձր դասին պատկանող անձից (մարդ թե կին) այսքան էլ չէր պահանջվում... նորանից պահանջվում էր միայն մեր հին պատմությունից մի նշանավոր անուններ գիտենալ, որ նա ժամանակ առ ժամանակ ուրիշների առաջ անգիր էր ասում, պահանջվում էր, որ նա գուցե լեզու էլ չիմանալով, տարվա այն ինչ տոներին եկեղեցի գնար... Նա պարծենում էր իր ազգի պատմությամբ, բայց աշխատում էր իր երեխաների հետ երբեք մայրենի լեզվով չխոսել: Նա հպարտ էր իր հայրենիքի անցյալը հիշելով, բայց հանցանք էր համարում ժամանակակից հայրենակիցներին մտավոր կամ նյութական որևէ օգնություն հասցնելու... Նա ատում էր իր հայրենակիցները, նոցա մեջ մեծ պակասություններ գտնելով, և իրան բարոյապես իր հայրենակիցներից բարձր զգալով, չէր կամենում մտածել նոցա այդ պակասություններից բժշկելու միջոցների վերա:

ժողովուրդը տգետ և մոլեռանդ էր: Նա հայերեն չգիտեր, բայց եկեղեցի հաճախելով ջերմեռանդ ազդեցում էր: Նա հայ էր ասում իրան, բայց կույտի անգամ խնայում էր իր երեխայի համար հայերեն մի գիրք առնելու:

Նա ոչինչ չէր արդյունաբերում հայության համար, չէր հոգում հայության մասին, բայց վրդովված հալածում էր այն երիտասարդին, որը... հեռանում էր հայության ավանդություններից... Նա չախ քաշելով ամեն օր գանգատվում էր իր հայրենակիցների պակասությունների վրա, բայց միևնույն ժամանակ անզգույշ և վնասակար անձ էր համարում նրան, ով օրագրական կամ բնամական գրվածքում այդ պակասությունները ներկայացնում էր... Նա անզու՞ էր իր դրությամբ, բայց անձնական թշնամի էր համարում նոցա, որոնք վերստին նորոգություն էին առաջարկում:

II

Երեկվա օրը անցավ:

Այսօր ամեն տեղ սկսում են փոքր ի շատն հայերեն սովորել:

Հիմնվում են տարրական ուսումնարաններ, ժողովուրդը իր երեխաները ուսումնարան է ուղարկում, բարձր դասը ուղարկում է իր որդիները համալսարան... Գրաբառը և հնության հիշատակները երկրորդական դեր են խաղում

այսօր մենք ունենք կենդանի լեզվով գրած օրագիրներ և գրքեր: Ամեն մի հայ երևում է իբր ազգասիրական ոգով վառված:

Մի կողմից երևացին ազգասիրական բանաստեղծություններ, մյուս կողմից՝ հայրենական պատմությունից առած բնական գրվածքներ:

Վերականգնվեց լեզու, նոքա այնպիսի ուսման ճյուղ են ընտրում իրանց համար, որ առանց ձանր աշխատանքի կարողանային ապահովել իրանց սպասար:

Էլի ի՞նչ...

Մենք վերջապես սկսում ենք ըմբռնել ժամանակի պահանջմունքը, սկսում ենք թե մեր ամեն գրվածքներում և թե բեմի վրա ցույց տալ ուրիշների (մալապանդ առևտրական դասի) պակասությունները... Մենք հափշտակմամբ նորմավում ենք ժերերի դեմ, նոցա միակողմանի դարգացման, հասարակական անընդունակության և տգիտության պատճառով: Մենք հասկացանք մեր քառասիրականության թերությունները և ամենքս սկսեցինք (գոնե այսպես ենք կարծում) մանկավարժությամբ պարապել...

III

Բայց էգուցվա օրը մոտենում է:

Այն երիտասարդները, որոնք բարձր ուսում ստանալուց հետո վերադարձան իրենց հայրենիքը, որոնք մեր հնացած հասարակության մեջ լուսավորության ներկայացուցիչներ են համարվում, կատարեցին՝ արդյոք իրենց պարտավորությունը:

Նոցա դրոշակի վրա գրված է լուսավորություն խոսքը, բայց դժբախտապես մենք պետք է խոստովանենք, որ նոցա պակաս է լուսավորության առաջնությունը համար ամենանշանավոր գործիչ՝ այն է աշխատանք:

Նոքա քննադատում էին ժողովրդի առևտրական դասը, բայց իրանց գործունեությունը և վարմունքը ոչ ոք մինչև այժմ չքննադատեց: Նոքա հարձակվում էին ծերերի դեմ, բայց նոցանից ոչ մեկը չմտածեց որոշել հասարակության մեջ նորերի պարտավորությունները:

Ես ասեցի, XIX դարի լուսավորության գործիչը աշխատանքն է: Այդ գաղափարը ժողովուրդը չէ ըմբռնում, իսկ լուսավորության ներկայացուցիչները, թե՛ մոտ օգուտ քաղելով նրա տգիտությունից, հավատացնում են նրան, որ լուսավորությունը նրա համար անմատչելի, անըմբռնելի գաղափար է... որ իր կրթությամբ նա վերացական գաղափար է, իսկ արտաքին կյանքումը նա արտախախտվում է գեղեցիկ հագուստով և թղթի վրա գրած վկայագրով... Ոչ, նոքա, որոնք լուսավորություն են քարոզում քեզ, բայց իրանք չեն ընտելանալ աշխատանքին, մեղավոր են իրանց խղճմտանքի առաջ...

Կգա ժամանակ, երբ նոքա, որոնք պարտավորություններ ունին, բայց չեն կատարել այդ պարտավորությունները, կենթարկվեն ապագա սերունդի քառասիրական դատաստանին:

Էգուցվա օրը պահանջում է փոքր սերունդի համար տարրական ուսում, ժողովրդի համար ժողովրդական գիտություն, ուսում առածների համար ճիշտ գիտության ծանոթություն, հասարակության համար ճիշտ գիտությունների լուս հիմնած մտախոհության եղանակ, — ամենի համար աշխատանք:

էգոցիւմ օրը պահանջում է բարձր ուսում ստացածներից ոչ թե միայն ժողովրդի ամեն դասերի կենսական երևույթների խոր քննադատություն, այլև իրենց սեփական անձի խղճմտաբար անխոնջ անձնաքննությունը:

IV)

Իրենց մենք կտակարանական ազգ էինք.

Այսօր մենք ազգասիրներ ենք.

էգոցի մենք պետք է աշխատողներ դառնանք».

Անդադար աշխատանք, ժողովրդի համար օգտավետ գործ պահանջող Արծրունին մեզ արդեն վաղուց ծանոթ է «Հայկական աշխարհից»: Այդ աշխույժ հողավածը, որ այնքան գեղեցիկ կերպով պատկերացնում էր մեր անցյալի և ներկայի ազգասիրությունը, ինչպես տեսնում եք, գրված է նույն ոճով և ազդու, եռանդոտ շեշտով, ինչպես Արծրունու նախկին շատ հողավածները: Իրեն հրապարակախոսական ծրագիր բացատրող մի հողաված, այդ անդրանիկ առաջնորդող բավական պակասավոր է, քանի որ որոշ ու բացարձակ կերպով չէ հայտնում թե ի՞նչ ուղղություն պիտի հետևե «Մշակը», ինչ հարցերի պիտի ուշադրություն նվիրի: Բայց այս պակասությունը, եթե, իհարկե, համարվի եր որ պակասություն է դա, առանձին մեծ նշանակություն չունի: Արծրունի սովորություն չունի ասելու, թե ինչ պիտի անե, բայց միշտ պատմում էր, թե ինչ է առել: Սակայն այս առաջնորդող ունի իր նորությունը, իր հատուկ նշանակությունը: Արծրունին այլևս ընդհանուր գատողություններով չէ բավականանում. այժմ նա որոշում է հարձակման կետերը: Եվ առաջին կետը տեղ պարտաճանաչ ինտելիգենցիան էր:

Ամենից առաջ Արծրունին կռիվ էր հայտարարում հայ ինտելիգենտների դեմ: Եվ այդ կռիվը ընդունում է երկարատև, սիստեմական հալածանքի կերպարանք: Ինչու՞ էր նա այդպես վաղ և այդպես սաստիկ թշնամություն մղում կրթված երիտասարդության դեմ: Պատճառները մասամբ տեսանք վերևում բերած հողավածում: Բայց ահա՛ երկրորդ համարի առաջնորդողն էլ, «Գուց և մենք» վերնագրով, նույն հարցին է նվիրված, և Արծրունին այսպես է ամրապնդում հակակրեթի հայ ինտելիգենտի տիպը:

Շատ անգամ, ասում է նա, պատահել է մեզ խոսել ձեզ հետ հասարակական պակասությունների մասին: Մենք հարձակվում էինք, դատափետում էինք, իսկ դուք, մի թեթև ժպիտ պահելով ձեր դեմքի վրա, վերջ էիք տալիս մեր երկարաբանության, ասելով թե մեր խոսակցության մեջ նորություն չկա: Թե դուք ինքներդ էլ լավ գիտեք այդ բոլորը: Եվ դուք սկսում էիք ձեր սեփական նկարագրությունները, որոնք գերազանցում էին մեր ասածները: Կարծում էինք, թե մի նոր միտք էինք հայտնում ձեզ, բայց տեսնում էինք, որ ձեռքով համար դա հին իրողություն է. կարծում էինք, թե ձեր ուշադրությունը դարձնում ենք ձեզ անհայտ մի հասարակական պակասության վրա և համկարծում ենք ձեզ անհայտ մի հասարակական պակասության վրա և համկարծում ենք դուրս էր գալիս, որ դուք ձեր ապացույցներով և ունեցած փաստերով ավելի ընդարձակում էիք մեր տեսությունը, ավելի խտացնում էիք մեր տված գույները:

Մենք հակակրություն էինք հայտնում դեպի այն ազգը, որ կամակրորդությամբ աշխատում է մոռանալ իր մայրենի լեզուն՝ դուք համաձայն էիք: Մենք զզվանք էինք ուզում դեպի այն ընտանիքը, որ կարծես դիտմամբ արգելում է մայրենի լեզուն իր ընտանիքի մեջ, և դուք արդարադի էիք գտնում մեզ զզվանքը: Ասում էինք ընթերցասիրությունը և ուսումնասիրությունը պակաս

ասում են մեզանում՝ համաձայն էիք: Հայ ընտանիքում տիրող բնակալուծյան վեժ էինք խոսում՝ դուք հաստատում էիք: Հասարակության մեջ անտարբերություն է տիրում դեպի ամեն մի բարի սկզբնավորություն: Դուք արդարացիում էիք մեր հուսահատական բողոքները այս առիթով: Հասարակական կյանք չկա մեզանում: Աշխատանքի չէ ընտելացել հայը: Կրթությունից դուրի է նա: Անշարժ ու հեամու է նա: Դուք ոչ մեկը չէիք հերքում, դուք ամեն բանի մեջ համաձայն էիք մեզ հետ:

Եվ մենք կարմրում էինք, մենք ամաչում էինք, որքա՞ն միամիտ ենք եղել, ասում էինք, որ խոսում էինք ձեզ հետ այնպիսի բաների մասին, որոնք ձեզ էլ շատ լավ հայտնի էին: Ի՞նչ հանդգնություն մեր կողմից սովորեցնելու ձեզ այն, ինչ դուք էլ գիտեք: Մի կողմից ամաչում էինք, որ այսքան միամիտ ենք, մյուս կողմից ուրախ էինք, որ կան մեր հասարակության պակասությունները ճանաչողներ, որ մենք համախոհներ ունենք, որ կյանքի մեջ գոյություն ունի բողոք:

Մեր ուրախությունը այնքան անսահման էր, մենք այնքան երջանիկ էինք, որ մի կողմ թողնելով ամոթի զգացմունքը, մենք մեկնեցինք ձեզ մեր ձեռքը և, ձեզ մեր ընկերակիցը համարելով, առաջարկում էինք միասին գործել, այս ինչ միջոցները գործադրել տգիտության և անշարժության դեմ:

Այստեղ ահա մեզ սպասում էր մի ուրիշ տեսակ անակնկալություն: Դուք գանգատվում էիք, թե ձեր երեխաները չգիտեն մայրենի լեզուն: Հանձնեցեք երանց կրթությունը հայ ծխական դպրոցներին, ասացինք մենք: Դուք ժպտում էիք: Դուք ասում էիք, որ հայը, այո՛, առատաձեռն է, երբ պիտի դո՛հացում աս իր փառասիրությանը, իսկ այնտեղ, ուր նա պետք է իր հայրենակիցների մտավոր առաջադիմության օգնություն հասցնե, նա սաստիկ ժլատ է: Մենք համարեցինք ձեր անձը մի բացառություն, հանդգնեցինք ձեզանից օգնություն խնդրել մի ծխական դպրոցի համար... Բայց դուք հեռացաք մեզանից և նստեցիք թուղթ խաղալու, ուր մեր պահանջած օժանդակությունից ավելի պիտի ստանու տալիք: Շատ լավ գիտեք, այո՛, որ հասարակական կյանք չկա մեզանում: Ուրեմն գործենք, ասում ենք մենք, զարթնեցնենք հասարակական կարծիքը, տպենք գրքեր, հրատարակենք լրագիր: Բայց դուք հայտնում էիք մեզ, որ ոչինչ չեք կարող անել: Լուսավորություն չկա, ուսումնարաններ հիմնենք: Եղբուր է... — պատասխանում եք դուք: — Հասարակական ընդհանուր շահեր չկան, ուրեմն զարթնեցնենք հասարակական պահանջները, որ թուղթ խաղալու երամբասելու տեղ հասարակական հարցերով զբաղվենք: Բայց դուք թերահավատությամբ վեր եք քաշում ձեր ուսերը և հեռանում: Ընթերցասիրություն չկա, ասում եք դուք, որովհետև մի կողմից հայը դեռ չէ ընտելացել մտավոր աշխատանքին, իսկ մյուս կողմից՝ կարողալու բան չկա: Ծիշտ է, ասում ենք մենք, ուրեմն եկեք գրենք, հիմնենք մի պարբերական թերթ, որ հայը սովորի մտածել, աշխատել: Բայց դուք ծիծաղում եք և քիչ է մնում որ մեզ խելագար համարեք...

Եվ այսպես մենք և դուք հասկանում ենք, որ հասարակությունը պակասություններ ունի: Մենք փաստեր ենք բերում, դուք մեզանից շատ փաստեր ասելիք: Մենք գանգատվում ենք, որ հասարակությունը մեռած է, դուք էլ եք գանգատվում այդ միևնույն առիթով:

Բայց մենք և դուք՝ միևնույն ենք: Մենք գանգատներով չենք ուզում բավականանալ, կամենում ենք օգնության հասնել ժողովրդին: Մեր պակասությունները տեսնելով, մենք ուզում ենք գործել նրանց դեմ. իսկ դուք, որ երանգիկա տեսնում եք այդ միևնույն պակասությունները, թերահավատությամբ

վեր եք քաշում ձեր ուսերը: Մենք ձեր բողոքները լսելով, ձեզանից օգնություն ենք խնդրում հասարակական կյանքի մեջ օգտավետ աշխատանքը առաջ տանելու համար, իսկ դուք, պատասխան չտալով մեզ, նստում եք թուղթ խաղալու: Մենք շենք բավականանում զանգատներով, մենք ուզում ենք և գործել, դուք միանգամայն բավական եք համարում զանգատվելը:

«Դուք խելագարված եք համարում նոցա, որոնք ներգործել են կամենում պակասությունների դեմ, — մենք մեր կողմից հասարակության անպետք անդամներ ենք համարում նոցա, որոնք իրանց պարտավորություն չեն համարում ներգործելու»:

Եվ մեր անպարտաճանաչ, թույլ ու անկարող ինտելիգենցիայի այս հիանալի բնորոշումը Արծրունին վերջացնում էր հետևյալ երկտողով:

«Մենք դիտենք՝ ով ենք մենք:

Գիտե՞ք արդյոք ով եք դուք»:

Բայց այս դեռ բոլորը չէ: Արծրունին շուտ-շուտ վերագառնում էր այս տիպին և մերկացնում էր նրան զանազան կողմերից: Հետևենք այդ մերկացումներին:

№ 5-ի առաջնորդողը «Անե՞նք թե լինենք» վերնագիրն ունի. «Զարգացած մարդիկներին հատուկ է, — ասում է նա, — նախ ըմբռնել իրավունքները, և ապա հասնել և պարտավորությունների հասկանալուն, այն էլ մի որևէ արտաքին հարվածի ազդեցության տակ»: Փորձիկ տղան, փողոցում տեսնելով զինվորականին, մտածում է. երբ ես կմեծանամ, զինվորական կդառնամ: Փոքրիկ աղջիկը, նայելով փողոցով անցնող իր ամուսնու հետ թև թևի տված տիկնոջը, ասում է. երբ ես կմեծանամ, նույնպես իմ ամուսնու հետ թև թևի տված կանցնեմ փողոցով: Երեխաները ըմբռնում են, որ պետք է մի բան դառնան. նրանք հասկանում են, որ իրանց իրավունքն է մի բան դառնալ, իսկ թե կան և պարտավորություններ նրանց համար, այդ անհասկանալի, անմատչելի է մնում:

Եվ երեխաների ծնողները միայն իրավունքների գիտակցությունն և զարգացնում նրանց մեջ: Ե՞րբ եք տեսել, որ մի հայր կամ մայր խոսեր իր երեխայի հետ ապագա պարտավորությունների, կյանքի ծանր պարտքերի մասին: Մայրը, գրկելով իր երեխային, չէ ասում, «երբ մեծանաս, պիտի աշխատես» կամ այս ինչ պաշտոնին կամ գիրքին հասնելու համար պետք է տանջվես, շատ շարձարվես: Դրա փոխարեն նա ասում է. «երբ մեծանաս, երեխիկ կլինես» կամ «երբ հասակ առնես, կհարստանաս» կամ «կմեծանաս, բարձր աստիճանավոր կդառնաս»: Երեխայությունից մեզ ասում են՝ «դու պետք է այս ինչ բան դառնաս, բայց չեն ասում «դու պետք է այնինչ բանն առնես»: Եվ երեխայությունից այդ ուղղությունն արմատանում է մեր մեջ:

— Դուք սովորո՞ւմ եք, — հարցնում ես մի երիտասարդից:

— Այո՛, ես գիմնազիստ եմ: — պատասխանում է նա:

— Դուք ուսանո՞ւմ եք, — հարցնում ես ուրիշից:

— Այո՛, ես ուսանող եմ...

— Դուք ծառայո՞ւմ եք:

— Այո՛, ես այսինչ երկրորդ կամ շորրորդ աստիճանի պաշտոնյա եմ...

— Դուք ուսումը ավարտե՞լ եք:

— Այո՛, ես կանդիդատ եմ:

Եվ այլն...

Մեզ այնքան չէ հետաքրքրում մի բան անելը, որքան մի բան լինելը: Երեխայությունից մեզ տված ուղղությունը սովորեցնում է մեզ ոչ թե գործել, այլ լինել: Մեկի հետ ծանոթանալով, մենք շենք ուզում իմանալ, ինչ է անում նա, այլ հետաքրքրվում ենք, թե ինչ է նա: Հասարակության անդամները մեզ համար մարդիկ չեն, քաղաքացիներ չեն, այլ կանդիդատներ, ուսանողներ, աստիճանավորներ, քահանաներ, զինվորականներ... Երեխայությունից մեզ անում կազմվում, հասունանում է մի կատարելատիպ, մի իդեալ, այն է դառնալ: Իսկ անելը երկրորդական բան ենք համարում:

«Երիտասարդը գնում է համալսարան: Նորա ձգտողությունը մի բառով է նկարագրվում՝ դառնալ կանդիդատ:

Նորա տենչացած գաղափարն է՝ ավարտել, որ դառնա:

Եվ ոչ թե սովորել, որ իմանա:

Հիմա երեակայացեք այդպիսի մի ավարտած և մի բան դարձած երիտասարդին: Նա չէր ուզում սովորել, որ միշտ սովորե, իր ամբողջ կյանքում ձգտե կատարելագործվելու: Ո՛չ, նա ուզում էր միայն ավարտել, որ մի բան դառնա: Եվ ահա դարձավ: Նա հասել է իր նպատակին: Նա դարձավ, և այլևս կատարելագործվելու հարկավորություն չունի. նա դարձավ և տենչացած նպատակին հասել է: Հասել է, ուրեմն և կարող է անշարժ մնալ: Եվ ահա հասարակության մեջ երևում են երկու տեսակի մարդիկ. նրանք, որոնք մի բան դարձան և կրանք, որոնք չդարձան: Փորձեցեք գործ ունենալ այդ երկուսի հետ:

Դուք, օրինակ կառավարում եք մի դպրոց, ուր ուսուցչություն են անում դարձածները: Դուք նկատում եք այդպիսիներից մեկին, որ նրա ընտրած մեթոդը մի քիչ հնացել է, որ պետք է հետևել այս ինչ նոր ուղղության: «Դարձած երիտասարդը չէ կարող, իրավունք չունի ձեզանից խրատ ընդունելու... Նա իր ուսումը վերջացրած է, ուրեմն մտավոր կատարելագործության նշանակված տիպին հասած է: Նա չէր կարող փոխվել, նա իրավունք չունի... Նա պարտավոր է անշարժ մնալ, որովհետև նշանակված կատարելագործության հասել է»:

Ուրիշ օրինակ: Դուք խմբագիր եք. բերում են հոդված, դուք առաջարկում եք փոփոխություններ: Բայց բերողը դարձածներից է: Նա չէ կարող փոխվել, ուրեմն և չէ կարող փոխել իր ստեղծագործությունը:

Բոլորովին ուրիշ բան է շղատածը: Նա լսում է, նա անում է «որովհետև ես ոչինչ չդարձած, և ոչինչ չդառնալով, սահման, շափ չունի իր մտավոր առաջադիմության և կատարելագործության մեջ»: Թե դպրոցում և թե գրականության մեջ նա պատրաստ է առաջ գնալ, կատարելագործվել անդադար...

Եվ ահա Արծրունու եզրակացությունները.

Մեկը ոչինչ չէ դառել կյանքի մեջ...

Մյուսը դառել է:

Առաջինի իրավունքն է կատարելագործվել...

Երկրորդի գլխավոր պարտավորությունն է միշտ անշարժ մնալ:

Շարժումը մեր պարտավորությունն է:

Անշարժությունը ձեր իրավունքն է:

Մի ուրիշ տեղ, «Անընդունակության հերոսներ» առաջնորդողում (№ 9) Արծրունին գործ է ածում «մեր բարձր ուսում ստացած տղետ երիտասարդությունը» բառերը: Բայց այդպիսի երիտասարդության դեմ ուղղած ավելի սուր հարցանք մենք կարգում ենք «Երիտասարդներին խրատ» հոդվածում (№ 20): Այդ խրատը նա ուղղում է այն երիտասարդներին, որոնք վերջացրել են միջնակարգ դպրոցը և գնում են շարունակելու իրանց ուսումը բարձրագույն

դպրոցներում: Դա ճանապարհ դնելու, ողջերթի խոսք է, բայց որքան դառն ու կծու:

«Եթե դուք, սիրելի երիտասարդներ, ուսում առնելուց հետո դիտավորություն չունեք վերադառնալ ձեր հայրենիքը, ես գործ չունիմ ձեզ հետ... ասում եմ գործ չունիմ ձեզ հետ, որովհետև այդ դեպքումը հասարակությանը փոշի չէ, դուք ի՞նչ ուղղություն եք ընտրելու»: Իսկ նրանք, որոնք պիտի դառնան հայրենիք, պարտավոր են պատրաստվել այնպես, ինչպես հասարակությունն է պահանջում»:

Բայց ի՞նչ է պահանջում հասարակությունը: Ահա՛ ծնողները ճանապարհն դնում իրանց որդիներին: «Եթե դուք հասարակության ստորին կամ միջին դասին եք պատկանում, ձեր հայրը ձեզ ճանապարհ գցելով ասում է ձեզ, «գնա լավ ուսում առ, աշխատիր, առեստատ ստացիր, որ մարդ դառնաս, պատիվ ունենաս մարդիկների մեջ»: Եթե դուք հասարակության բարձր դասին եք պատկանում, ձեր հայրը ձեր հասցեին միևնույնը ասելով, կարելի է փոքր ինչ ավելի ծաղկած ոճով, ավելացնում է մեկ երկու խոսք հասարակության մեջ նշանակությանը հասնելու պարտավորության մասին»:

Եվ ահա այդ պահանջները կատարելու խրատներ: Աշխատեցեք ծանոթանալ ծույլ ու անգործ ուսանողների հետ: Ամենևին հարկավոր չէ գիտությունը պարապել, բավական է քննությունից առաջ մի երկու ամիս դասեր սերտել և հիանալի կերպով քննություն կտաք: Ուրախ անցկացրեք ձեր ժամանակը Դուք ձեր խղճմտանքի առաջ էլ արդար կլինեք, մանավանդ որ ձեր ստացած վկայագիրը լիովին բավականացնում է ձեր ծնողներին: Աշխատեցեք հետ մնալ օտար շրջանից, որպեսզի այնտեղ շփոթանաք նոր մտքերի հետ և ստիպված չլինեք ձեր հետ տարած հրեշավոր նախապաշարմունքով լի ուղղությունը փոխել: Մնացեք ձեր հայրենակիցներին նեղ, սահմանափակ շրջանում այդպիսով դուք ապահով կլինեք, որ հայրենիք վերադառնալով, դուք ձեզ ձեռքերեք միևնույն նախապաշարմունքը, միևնույն պակասությունները, միևնույն կրքերը, հակումն դեպի ինտրիգները, ատելություն առաջադիմության, ամեն բարի սկզբունքի դեմ: Մտածեցեք զխավորապես ձեր նյութական ապահովության մասին, դատարկախոս համարելով նրանց, որոնք հավատացնում են ձեզ, թե ամեն մարդ իր հասարակական սուրբ պարտավորությունը պիտի մարտնչելով իր հասարակական սուրբ պարտավորությունը պիտի մարտնչելով իր հասարակական սուրբ պարտավորությունը պիտի մարտնչելով իր հասարակական սուրբ պարտավորությունը:

Դուք վերադարձաք հայրենիք: Այստեղ աշխատեցեք հետո պահել ձեզ ձեր հայրենակիցներից, ոչինչ գործ չունեք նրանց հետ Բայց եթե կամենում եք որևէ գործով կապվել նրանց հետ, մի վճռական քաղ անելուց առաջ լավ մտածեցեք, որ հարմարվեք նրանց բնավորությանը: Ահա՛ հին սերունդը և անսխալական է իրան համարում. նա ասում է, որ մարդն այն ժամանակ միայն կարող է օգտավետ լինել հասարակությանը, երբ նրա ուղեղը ծերությունից այլևս ընդունակ չէ մի նոր միտք բնորոշելու, մի նոր, անսովոր գործողության ենթարկվելու: Նա ասում է. «Ամեն մարդ խելոք է իր ուղեղը, եթե մինչև անգամ հայրը տգետ լինեք, իսկ որդին գիտնական ու աշխատասեր: Ուրեմն իզուր է գիտությանը ծանոթանալ, իզուր է աշխատել, որովհետև ինչքան և աշխատեք, ինչքան և թափեք ձեր ճիգն մտավորապես զարգանալու դուք դարձյալ ոչ թե միայն ձեր հորից խելոք չեք կարող լինել, բայց և երբ հավասար չեք կարող լինել, միայն այն պատճառով, որ նա ձեռք բերել է իր դուր նորա որդին»:

Թողնենք, սակայն, հին սերունդը, քանի որ այժմ բարձր ուսում ստացող երիտասարդությունը:

«Ճշմարիտ է, որ նոքա մեք ծերերից ավելի գիտություն ունին, բայց նոքա բնավորությունը շատ չէ զանազանվում հին սերունդից... այդպես հեշտ չէ պարելուր հատկությունները չնշել: Եվ ինչի՞ չնշել... կրք հասարակությունը բավական է իր նոր, առաջադեմ սերունդի մտավոր գրությունը:

Մեր երիտասարդներից յուրաքանչյուրը իրան անսխալական է կարծում, ինչպես և մեր ծերերը, միայն այն զանազանությամբ, որ ծերը բացի իր անձից, ուրիշ հեղինակություն չէ ճանաչում, իսկ երիտասարդը բացի իր անձից, որ նորա համար ամենաբարձր հեղինակությունն է, անպայման ենթարկվում է մի որևէ գիտնական հեղինակությանը»:

Հայրենիք վերադառնալուց հետո աշխատեցեք որքան կարելի է անմատչելի երևալ, աշխատեցեք աչքին թող փշել: Եթե գիտության նշույլ էլ չունեք, պիտի չափազանց գիտնական ձևացնեք ձեզ, եթե փոքր ինչ հմտություն ունեք, ձեռք վերցրեք համեստությունից: Եթե համեստ կլինեք, ձեզ անպատճառ տղետ կհարձեն: Համեստությունը պակասություն է: Համեստությունը տգիտության նշան է: Ավելորդ է, որ դուք նվիրեք ձեզ անխոնջ աշխատանքին: Սակայն ցույց տվեք, որ իբր թե անզազար աշխատում եք: Եթե իսկապես աշխատեք, ձեզ չեն գնահատի: Գնահատել ուրիշի ամենափոքր աշխատանքն անգամ կարող են միայն նրանք, որոնք սովոր են իրանք աշխատելու:

«Վերջապես,— ասում է Արծրունին,— եթե ճշմարիտ կամենում եք օգուտ բերել ձեր հայրենակիցներին, աշխատեցեք նոքա համար հեռվից... Այդպես նոքա առաջ ամեն օր շերտալով, դուք նոքա աչքերումը ավելի նշանակություն կստանաք:

Իսկ ամենից շատ նոքա աչքումը նշանակություն կստանաք և տալանդավոր մարդ անգամ կհռչակվեք, երբ կմեռնեք...»:

Դիմենք այժմ Արծրունու մի այլ հոգվածին. «Լսել են, թե Ալին մեռել է, բայց չեն իմացել, որ Ալին...» (№ 30): Ի՞նչ են լսել: Լսել են, որ «ամեն երկրի, ամեն հասարակության մեջ երիտասարդությունն է կազմում ազգի մտավոր, փիզիկական և բարոյական ուժը»: Այո՛, դա միանգամայն ճիշտ է: Մարդը երիտասարդության հասակում է գործում, պտղաբերում. այդպես են ցույց տալիս երկրիսկ նշանավոր մարդկանց կենսագրությունները: Մինչև երիտասարդության հասակը մարդու կյանքի առաջաբանն է, երիտասարդությունից հետո եկող հասակը՝ կյանքի վերջաբանն է: Ուրեմն իսկական, բուն կյանքը երիտասարդությունն է: Նրան շատ է տված և նրանից շատ էլ պիտի պահանջվի:

Եվ ահա մեր երիտասարդությունը գիտե, որ ամեն տեղ երիտասարդությունը ազգի բարոյական և մտավոր ուժն է, բայց չգիտե, որ այս բնական արտաբնության հետ «կապված են և անձնական պարտավորությունները՝ աշխատանք, գիտություն, աշխատասիրության մեջ հաջորդություն և տեսողություն»: Դուք կամենո՞ւմ եք, որ ձեզ պատվեն իբրև ուժ, աշխատեցե՞ք ուրեմն:

«Աշխատեցեք սեփականացնել ձեզ երիտասարդության հափշտակի՝ կողմերը, աշխատանք, սեր դեպի գիտություն, թողեցեք ինտրիգաները, ամեն լուսավոր երևույթի առջև սե, կեղտոտ նախանձը, ձեր խորին տգիտությունից առաջ եկած ինքնահավանությունը, դատարկախոսությունը և դարտակազրությունը»:

«Բայց պահելով այդ անպիտան հատկությունները, դուք պահանջում եք, որ ձեզ պատվեն. զարմանալի պահանջկոտություն:

Նա ասացի. երիտասարդությունը միակ հասակն է, երբ մաքուր գործող է: Բայց եթե երիտասարդությունը հասարակության համար ապարդյուն կերպով անգործության մեջ է անցնում իր ժամանակը, իրավունք ունի նա վերաբերել

իրան այն հատկութիւնը, որ ինքն շունի, պարծենալ ուրիշների արժանաւորութեամբ:

Ամեն տեղ երիտասարդներն են եղել առաջնորդող մաս հասարակութեան ասում եք դուք, ուստի նոցա պիտի պատուէի...
Բայց դուք ինչի՞ չկարողացաք դառնալ հասարակութեան առաջնորդող ուժ. ուրեմն կարծեմ պատեառ չկա ձեզ պատուելու»:

Այսպիսի լեզու դեռ ոչ ոք չէր գործածել մեր մտմուլի մեջ. այսքան խոր բազմակողմանի մերկացումներ ոչ ոք չէր արել: Արշավանքը երիտասարդութեան դեմ այնքան խիստ է, այնքան անողորմ, որ դուք առաջին անգամից կարծում եք, թե Արծրունին չէր կամենա, որ երիտասարդութիւն լինի հայերի մեջ: Բայց դա, իհարկե, սխալ տպավորութիւն կլինէր: Կարիք չկա, որ մենք նորից բացատրենք, թե ինչու էր Արծրունին հարձակվում երիտասարդութեան դեմ. մեր բերած կրակոտ հողավածների յուրաքանչյուր տողը շատ պարզ ցույց է տալիս, թե ինչ էր պահանջում Արծրունին: Իրական ապշեցնող ճշմարտութիւններ են նստած նրա այդ համարձակ, աներկյուղ տողերի մեջ, այն անհաշտ պատերազմի մեջ, որ նա հայտարարեց «բարձր ուսում ստացած, բայց սղոտ» ինտելիգենցիայի դեմ: Եվ հարձակողական այդ խստութիւնը չինսպելու այդ ահագին եռանդը բխում էին Արծրունու այն խոր համոզմունքից թե՛ «Մարակով չխփես, բան դուրս չի գա»:

Այդ խոսքերը նրա մի առաջնորդողի վերնագիրն են կազմում (№ 16): Այդտեղ Արծրունին բացատրում է, թե ինչ է մտրակողական ուղղութիւնը, թե ինչ օգուտներ է բերում հարձակողական, անխնա մերկացնող, հարվածող հրապարակախոսութիւնը:

Անգլիացի երևելի գիտնական Ջոն Ստյուարտ Միլը,— այսպես է նա սկսում այդ հոդվածը,— իր գրածներից մեկի մեջ ասում է. «Կենսական միջոցների հեշտութիւնը չէ, որը ծնում է շարժում, այլ կյանքի դժվարութիւնները, կյանքի մեջ պատահող արգելքները առաջացնում են ինքնուրույնութիւն և հնարագիտութիւն»: Այս խոսքերը ճշմարտութիւն են, թե անհատի և թե ամբողջ հասարակութիւնների վերաբերմամբ: Եվ Արծրունին մի շարք ապացույցներ է բերում Եվրոպայի և Ամերիկայի քաղաքական կյանքից: Ավստրիան մի բռնակալ պետութիւն էր: 1859 և 1866 թվականների պատերազմները, որոնց մեջ նա հաղթվեց, այն հարվածներն էին, որոնք ուշքի բերին այդ բռնակալութիւնը, և նա դարձավ ազատամիտ, սահմանադրական պետութիւն: Հյուսիսային Ամերիկան պատերազմ սկսեց Հարավայինի դեմ, որովհետև վերջինս չէր ուզում լսել անգամ նեգրերի ազատութեան մասին: Պատերազմը ահաւոր էր, համառ, արյունահեղ: Հարավը սաստիկ պարտութիւն կրեց և այդ ահեղ հարվածի ազդեցութեան տակ հայտարարեց հալածարարութիւն նեգրերի և սպիտակների իրավունքների մեջ: Բայց ավելի խրատական նորագոյն, թարմ օրինակն էր: Մինչև պրուսական պատերազմը Յրանսիան իրան անսխալական էր համարում քաղաքական գործերի մեջ. իր զորքը, իր զորավարներին անհաղթելի էր կարծում: Ազգային սնամիտութիւնը այն աստիճան զարգացած էր, որ ամեն բանի մեջ Յրանսիան բոլոր ազգերից բարձր էր համարում իրան. նրա համար կատարել էր իր ժողովրդական դպրոցը, գրականութեան մեջ նա միայն իրան էր ճանաչում, իր երկրի երևույթներն էր ուսումնասիրում, ապարդյուն և ամոթ համարելով ուրիշ երկրների գիտութիւնից և գրականութիւնից, ուրիշ ազգերի փորձից օգուտ քաղելը: Եկավ սարսափելի պատերազմը, Յրանսիան շարաշար հաղթվեց, սոսկալի ցնցումների ենթարկվեց: Այդ հարվածից նա սկսեց կերպարանափոխվել. մտքերը հան-

րապետութիւն, սկսեց դասեր առնել ուրիշ ազգերից, բուժել իր ներքին վնասները:

Ազգերի վերաբերմամբ այս անսխալ օրենքը անսխալ է հասարակութեան ստանձին դասերի վերաբերմամբ: «Ինչպես մի տերութիւնը գաղութ է առաջադեմ, վերանորոգում է իրան, ազատում է ստրուկներին, երբ պատերազմի մեջ հաղթված է լինում, երբ սաստիկ հարված է ստանում, այնպես էլ ժողովրդի մի ամբողջ դաս գաղութ է ազատամիտ, դիմում է անկախ աշխատանքին, երբ կորցնում է իր հնազարդան իրավունքները»:

Թողնելով քնդհանուր մտքերը, մի հայացք գցենք մեր հայ կյանքի ներքին գործերի վրա. այստեղ էլ միևնույն երևույթը կտեսնենք: «Ամեն բան անշարժ է մեղանում. մեր օրագրութիւնը ննջում է քաղցր քնով, ուսումը հին, փտած մեթոդով է դաս տրվում, բարձր ուսման երիտասարդները բանի մի տարի է, որ վերադարձել են հայրենիքը, բայց չեն մտածում ժողովվել, մի խումբ կազմել, օրագիր հրատարակել: Մի տարի առաջ հայտնում են, թե խմբագրութիւն են կազմել, բայց ոչ մի խթան չունենալով, կրկին խմբագրութիւնը քանդվում է և նոքա, որոնք խոստացել են ժողովրդին լուսավորել, իրանց համար հանգիստ նստում են պանդոկներում և սկսում են թուղթ խաղալ»:

Խթան չկա, սթափեցնող հարված չկա: Եվ Արծրունին շարունակում է.

«Ինձ թվում է, թե մի տեսակ մարդիկներից հետագա խոսքեր եմ լսում. «Մենք անշարժ ենք, մենք հանգիստ ենք, որովհետև մեզ հանգիստ են թողնում: Բայց լինեք խթան մեզ համար, հարձակվեցեք մեզ վերա, հայհոյեցեք մեզ, և մենք գործ կշինենք: Հայհոյեցեք մեզ, մենք ուսումնաբան կհիմնենք, հարձակվեցեք մեր պակասութիւնների վերա, և մենք խմբագրութիւն կկազմենք, և լրագիր կհրատարակենք»:

Մեր հասարակութեան մեջ երկու անշարժ տարրեր կան, որոնք պահանջում են խթան. մեր ծեռերը և մեր պառավ երիտասարդութիւնը:

Ցավալի է խոստովանել, որ մարդկային հասարակութեան մեջ կան երկույթներ, որոնց մեջ շարժում առաջացնել կարելի է միայն բարոյական մտքի ազդեցութեամբ:

Մի հիմնարկութիւն կա միայն աշխարհիս երեսին, որի դեմ անգոր են ամեն տեսակ բարոյական մտրակները, այդ Հոուսի անսխալական պապի իշխանութիւնն է:

Աշխատենք երբեք չնմանվել նորան»:

Ցավալի է խոստովանել, որ բարոյական մտրակի ազդեցութեամբ է շարժում առաջանում: Եվ Գրիգոր Արծրունին երկու համարից հետո ստիպված էր մի այդպիսի ցավալի խոստովանութիւն անել: «Ի՞նչ անենք» (№ 18),— հարցնում է նա:— Հարձակվում ենք երիտասարդութեան վրա, ասում են, թե բավական է որքան հարձակվեցաք. գրում ենք ուրիշ նյութերի վրա,— չեն կարգում,

նա բերում է «Մշակի» պատմութիւնը, իր պատմութիւնը: «Հայկական աշխարհի» մեջ 1870-ին տպված իր տպավորութիւնները, ինչպես գիտենք, ունենին մի կետ: Բարձր ուսում ստացածներից մեկը ասել էր Արծրունուն. «Ի՞նչ նպատակով եք դուք հայերեն գրում. ստորին ժողովուրդը հայերեն չգիտե, իսկ մենք, բարձր ուսում ստացածներս, հարկավորութիւն չունենք ձեր կրթածքները կարդալու, որովհետև ինչ որ դուք գիտեք, մենք էլ գիտենք, դուք մեզ նոր բան սովորեցնել չեք կարող: Բայց եթե մենք նոր բան սովորել կկազենանք, կդիմենք ուրիշ լեզուներով հրատարակող գրքերին ու լրագիրներին»:

Հայ գրողը, ասում է Արծրունին, հուսահատվեց, կամենում էր թողնել գրելը, սկսեց համոզվել, թե ինքը խելագարված է: Մշուս կողմից էլ հայ խմբագիրներն ասում էին. «Դու իզուր նեղություն ես քաշում հոգվածներ գրելու, որովհետև նոր բան առել չես կարող, բոլորը արդեն ասվեցավ. «Հյուսիսափայլ», «Կոունկ» և «Մեղուն» ամեն բան ասացին, ամեն բան գրեցին, ուրեմն քո գրվածքները կրկնություն կլինեն»:

«Հայ գրողը սպասեց, ծանոթացավ հասարակության հետ, մտածեց, նվ հասկացավ, որ գուցե նա խելագարված չէ, որ գուցե նոր բաներ էլ ասել կարելի է. նա իմացավ, որ երիտասարդությունը, որը պարծենում է, թե ամեն բան գիտե, ոչ թե միայն հայերեն չէ կարողում, բայց և առհասարակ չէ կարողում: Եվրոպական լեզուները նորա մեծ մասին այնքան ծանոթ են, որքան մեզ չինական լեզուն. միակ լեզուն, որին նա հմուտ է, ռուսերենն է, և այդ լեզվով էլ բարձր ուսում ստացածները երբեք բան չեն կարողում...»

Սպասեցե՛ք... ասաց գրողը, որի գլխումը հանկարծ ծնվեցավ մի նոր միտք: Դուք ասում եք, թե հարկավորություն չունեք կարդալու, որովհետև ամեն բան գիտեք, և այդ ճշմարտության մեջ համոզված լինելով բոլորովին ոչինչ և ոչ մի լեզվով չեք կարողում... սպասեցեք, ես ձեզ կստիպեմ կարդալու, ես ձեզ կնկարագրեմ հոգվածներին մեջ, ձեզ, որ երևում եք անմատչելի, անսխալական, որ ձեր անշարժության մեջ մնալով ձեր սեփական աչքի և հոսարակության առաջկատարյալ էիք երևում... ես ձեզ կստիպեմ կարդալու:

Գրողը սկսեց նկարագրել երիտասարդությունը, և սկսեցին կարդալ այդ հոգվածները: Բայց գտնվեցան մարդիկ, որոնք ասացին. «Բավական է հարձակվել երիտասարդության վրա. գրեցեք ուրիշ բաների մասին»: Գրողը թողնեց իր հարձակումները, սկսեց գրել տնտեսական հարցերի մասին: Բայց երիտասարդությունը հասկանո՞ւմ է իր պարտավորությունները: «Կարելի՞ է հուսալ, որ նա կկարդա այնպիսի հոգվածներ, որտեղից իր մտավոր զարգացման համար օգուտ քաղելով, նա կբավականանա սառն դատողություններով, և երեխայի պես չի սպասի մի այնպիսի գրված, որ լինեք խթան՝ ընթերցասիրելու համար»:

«Մշակը» արդեն տվել էր մի շարք հոգվածներ, ուր արժարծվում էին տնտեսական, դպրոցական և այլ հարցեր: Կարդացի՞ն այդ հոգվածները: Ո՛չ: «Ուրեմն գրողը չէ սխալվել... Մինչև որ նոցա վերա չհարձակվեք,— ես քեզ չեն կարդա»: Ստեղծվում է մի գրություն, որ այսպես է ձևակերպում Արծրունին.

«Գրենք նոցա դեմ,— աղաղակում են...
Չգրենք նոցա դեմ, այլ ուրիշ նյութի վերա խոսենք,— չեն կարդում.
Հիմի ի՞նչ անենք»:

Մնում էր անել երկուսն էլ. թե հարձակվել և թե գրել ուրիշ նյութերի վրա: Մենք առ այժմ հարձակումներին ենք հետևում, ուստի դեռ թողնենք ուրիշ նյութերը: Հարձակվել և շարունակ մի կետի, մի դասակարգի, միայն երիտասարդության վրա հարձակվել, արդյոք միակողմանիություն չէ՞ր սա, անարդարություն չէ՞ր: Արծրունին, իհարկե, այդպիսի բան չէր անի: Նրա հարձակումների առարկան միայն երիտասարդությունը չէր: Ահա ինչպես է նա սկսում «Ո՞վ մնաց» առաջնորդողը (№ 24).

«Երբ «Մշակի» մեջ հրատարակվեցավ հոգվածների մի շարք, որտեղ քննության տակ էր ձգվում մեր ուսյալ երիտասարդությունը,— գուցե շատերը ուրախացան, մանավանդ նոքա, որոնք պատկանում էին հին սերունդին...»

Երիտասարդները աղաղակեցին, իսկ ծերերը անշուքի բավական էին, որովհետև չէին սպասում, որ կգա նոցա հերթը:

Հերթը հասավ և նոցա»:

Եվ իրավ, հին սերունդը պակաս չէր հալածվում Արծրունու գրչից: Այն իսկ հոգվածներում, որոնք ուղղված էին անպատրաստ երիտասարդության դեմ, ինչ սերունդն էլ ենթարկվում էր նույն անողորմ դատապարտության (օրինակ, «Երիտասարդներին խրատ» հոգվածում): Բայց կան հատկապես այդ սերունդի համար գրված հոգվածներ էլ: Այսպես, «Նոքա» հոգվածում (№ 12) նա նորից հարձակվում է ծնողական բռնության վրա, որի մասին այնքան շատ գրել էր և «Հայկական աշխարհում»: Գլխավորապես ի նկատի են առնվում այդտեղ լինող ծնողները, որոնք բարձր ուսում են տալիս իրանց որդիներին և հետո ցարժանում են, վրդովվում են, որ որդիները իրանց պես չեն մտածում:

«Ի՞նչ... ես քեզ դաստիարակեցի, ես քեզ կրթություն տվեցի, ասում են նոքա, ես քեզ համար շինաչեցի իմ գրամը, ես կարելի է զրկվեցա իմ անձի համար անհրաժեշտ միջոցներից, և դու համարձակվում ես իմ պես շմտածել, իմ պես շխտանել, աշխարհի բոլոր երևույթների վերա ինձ նման հայացքներ յունենալ... Ես քեզ օտար երկիրներ ուղարկեցի իմ փողովս, իսկ դու իմ գաղափարները չես հավանում, ինձ հակառակում ես...»:

Տարօրինակ երևույթ: Նրանք պատճառ են դարձել, որ իրանց որդիները կրթվեն օտար, հեռու տեղերում, ազատամիտ շրջաններում դաստիարակվեն և ապա զարմանում են, որ իրանց որդիները ազատամիտ, առաջադեմ դուրս եկան: Նրանք վրդովվում են, որ երիտասարդը լուսավորվեց, սկսում են հասածել նրան, աշխատում են ոչնչացնել նրա մեջ ամեն մի լուսավոր միտք: Եթե այդպես է, էլ ինչո՞ւ են ուղարկում իրանց որդիներին լուսավորվելու: Ավելի լավ չէ՞ր լինի, ավելի հետևողական չէ՞ր լինի զրկել նրանց ուսումից, թողնել անշարժ ու անկիրթ:

Ո՛չ, այդպես էլ չեն կարող անել ծնողները: Ես ուրիշների առաջ պիտի ցույց տամ, թե սիրում եմ լուսավորությունը, թե հասկանում եմ ուսման կարևորությունը, պատվում եմ գիտությունը, առաջադեմ եմ, ուստի և ուղարկում եմ իմ որդիներին արտասահման կամ Խուսաստան: Իսկ տան մեջ ինձ տեսնող լիա. այնտեղ ես կեղծելու կարիք չունեմ, հարկավոր չէ, որ ես երևամ այն, ինչ որ չեմ... ես կարող եմ այնտեղ բռնավոր լինել, հալածել, ճնշել, ատել երիտասարդը:

«Դուրսը ես ազատամիտ եմ, տանը՝ բռնավոր, դուրսը առաջադեմ եմ, տանը՝ հնամուլ, դուրսը ես բողոքում եմ ըստ սկզբին ամեն բռնավորության դեմ, տանը՝ ճնշում եմ, հալածում եմ, ոչնչացնում եմ, մեռցնում եմ ինձ շրթապատող կյանքը: Դուրսը ես համբերող եմ դեպի ամեն համոզմունք, տանը՝ միակ համոզմունքը, որ ճանաչում եմ, իմ սեպհական համոզմունքս է... Տանը ոչ ոք չէ տեսնում մեզ... ուրեմն հալածենք, ճնշենք, բռնադատենք, հայհոյենք, անձնապաշտ լինենք մինչև խելագարություն, հոռմեական պապի պես տանք մեր ոտները պաշ անելու... ամեն անհատական միտք ոտնակոխ անենք... մեզ ոչ ոք չէ տեսնում, մենք տանն ենք»:

Բայց ահա հին սերունդը ասում է. դու հերքեցիր ամեն բան, գոնե պատվիր մի բան, այն է անցյալը:

«Դուք մեզանից պահանջում եք պատիվ դեպի անցյալը, պատասխանում եմ ես... Շատ գեղեցիկ... Ուրեմն ավելցեք մեզ իրավունք ձեզանից պահանջելու և անհավ լինելու անցյալը»:

Անցյալը նոցա էր պատկանում, նոքա էին կառավարում հասարակութունը, նոքա էին ուղղութիւն տալիս հասարակական կարծիքին, նոքա էին խաղում գլխավոր դեր, նոքա էին գործող անձինք: Բայց անցյալը անցավ: Ապագան մեզ է պատկանում... Նոքա պատիվ են պահանջում իրանց համար, որովհետև նոքա անցյալ են, իսկ մենք պատիվ ենք պահանջում մեզ համար, որովհետև մենք ապագա ենք:

Ինչ կամենան ասեն, ինչ կամենան անեն, ապագան մեզ է պատկանում: Նոքա մեր ձեռքերից շնն կարող խլել նորան: Նա մեզ է պատկանում իր բոլոր առաջադեմ ձգտումներով, իր իրավունքներով...

Այդ իրավունքներից մինը պիտի լինի և այն, որ մենք նոցա ամեն արած գործերը պիտի բննադատենք, օգուտ քաղելով թե՛ նոցա պակասութիւններից, թե՛ արած սխալներից: որ կարողանանք նոցա ենթարկելու ապագա սերունդների հասարակական դատաստանին»:

Ահա՛ մի քանի գծեր էլ հայի բնավորութիւնից, նկարագրված «Անընդունակութեան հերոսներ» առաջնորդողում: Այստեղ Արծրունին մտրակում է մի իսկ որ անճոռնի աշխարհայեցողութիւն: Գրողը քննում է զանազան հարցեր, այսօր նա մի մանկավարժական պահանջ է առաջարկում, վաղը քաղաքական դրութիւն է բննադատում կամ մի տնտեսական-առևտրական հարց է դնում: Մի՞թե կարելի է ասել, թե գրողը դրանով նպատակ ունի մանկավարժ դառնալ, քաղաքական դիրք բռնել կամ պաշտոն ստանալ: Մեզանում այդպես են դատում: Բայց մի՞թե մեղք է, որ մի մարդ, ընդունակութիւն ցույց տալով մի բանի մեջ, առաջանա, ստանձնէ այդ գործի ղեկավարութիւնը: Այդ էլ չի լինի մեր մեջ: Յուրաքանչյուր ազգ իր հատկութիւնն ունի. բայց կա մի ընդհանուր հատկութիւն, որ բոլոր ազգերն ունեն, այն է՝ պարծենալ իրանց փոքր ի շատե հայտնի մարդիկներով, ուրախանալ իրանց հասարակութեան մեջ հայտնվող առաջադիմութեան նշույլներով: Միայն մի ազգ կա, որ այդ հատկութիւնից զուրկ է, և դա հայ ազգն է:

«Մեր ազգի մեջ մի որևէ բանով հայտնվել, նշանակում է անհաճելի լինել իր հայրենակիցներին: Յուրաքանչյուր հայը իր անձնական քշեամբն է համարում այն հայրենակցին, որը հասարակական գործունեութեան ասպարեզի մի որևէ ճյուղի մեջ հայտնվում է»:

Ինչո՞ւ է այսպես: Ամեն էակ, տգետ թե լուսավորված, գոյութեան կոնիվ է մղում: Լուսավորվածը կոչում է կատարելագործելով իր անձը, հարմարվելով ժամանակի պահանջին և առաջադիմութեան ընթացքին: Տգետը այդպես չէ կարող անել, մինչև որ չլուսավորվի: Իսկ մնալով տգետ, նա միայն մի կերպով կարող է գոյութեան կոնիվ մղել, այն է արգելելով ուրիշներին առաջ գնալու:

«Եթե ես ինքս միջոց և ընդունակութիւն չունիմ առաջ գնալու, օս գոնե կարգելեմ ուրիշի առաջադիմութիւնը: Սա ինձ համար կենսական խնդիր է:

Ես ընդունակ չեմ առաջ գնալու, փոխվելու, կատարելագործվելու, բայց ինձ հարկավոր է դարձյալ ապրել, ինձ հարկավոր է ուտել, խմել... թուղթ խաղալ... Իսկ այժմյան ժամանակը պահանջում է, որ ես միայն այն պայմանով ապրեմ, որ կարողանամ փոխվել, կատարելագործվել, աշխատել:

Բայց այս բոլորը ես չեմ կարող անել, ուրեմն պիտի զրկվեմ ապրելու իրավունքից, կտոր հացից... թուղթ խաղալու սովորութիւնից...»

Հետևապես ես պիտի ատեմ այն մարդին, որը ինձ առաջարկում է վերանորոգութիւն, դեպի կատարելագործութեան ձգտումը, կամ այն մարդին, որը

ինձ առաջարկում է մի նոր միտք: Այսպիսի մարդին ես պիտի համարեմ իմ անձնական թշնամի:

Ինձ առաջարկում եք փոխվել, իսկ ես չեմ կարող փոխվել: Ուրեմն, եթե փոխվեմ, պիտի ձեզ տամ իմ տեղը հասարակութեան մեջ, պիտի զրկվեմ ապրելու իրավունքից...

Բայց բնութեան օրենքի համեմատ, ես պիտի կոչվեմ գոյութեան համար... Ուրիշ միջոց չկա... Ես ոչ թե միայն պիտի ատեմ, այլև պիտի վնասեմ առաջադիմութիւն քարոզող մարդին, այն ատելի առաջադիմութիւնը... որը ինձ համար անհասանելի է...»:

Այդ դիմադրութեան, այդ ատելութեան մեջ հայը հերոսութեան կարող է հասնել: Բայց ի՞նչ տեսակ հերոս է նա: Անընդունակութեան հերոս:

Այդպես ահա, Արծրունին միայն երիտասարդութեան դեմ չէր արշավանք սկսել: Նա հարվածում էր և մյուս դասակարգերը: Ի՞նչ էր դուրս գալիս: Դուրս էր գալիս, որ նա հայութեան մեջ ոչինչ լավ բան չէր գտնում: Այդ հարցովն է նա զբաղվում վերոհիշյալ «Ո՞վ մնաց» հոդվածում, հոդված, որ Արծրունու լավագույն գրվածներից մեկն է և որի հետ արժե շատ մտախիկից ծանոթանալ:

Երբ հարվածում էին երիտասարդութիւնը,— ասում է նա,— ուրախանում էր հին սերունդը: Բայց երբ հերթը հասավ և հին սերունդին, երբ նրա պակասութիւններն էլ անողորմ կերպով սկսեցինք մերկացնել, լավեցին նրա կողմից ձայներ. «Երիտասարդութեան վրա հարձակվել շատ բնական է, որովհետև նա մի բան չէ. բայց նրա վրա հարձակվելուց հետո մեզ վրա էլ հարձակվել, ոչինչ չճանաչել, ամեն բան հերքել... թե հներին և թե նորերին բնադատել... էլ ո՞վ մնաց: Միևնույն կերպով դատում է և երիտասարդութիւնը: «Մերերի անպիտանութիւնը ցույց տալ, այդ հասկանալի է, բայց մեզ էլ բանի տեղ չդնել... էլ ո՞վ մնաց», ասում է նա:

Ո՞վ մնաց: Ահա՛ այս հարցը փայլուն կերպով վերլուծում է Արծրունին, բացատրելով նախ և առաջ, թե ովքեր են այդպես ասողները:

«Երբ իր պատմական ընթացքում հայը զանազան անհաջողութիւնները և շարժարանները կրելուց հետո, մահմեդական տարրի անողորմ և բարբարոս բնավորութեան ձեռքից վերջին հարվածը ստանալուց հետո կորցրեց մինչև անգամ իր մայրենի հողի վրա ապրելու իրավունքը, նա սկսեց խմբովին գաղթել զանազան ուրիշ երկրները: Նա, որ մնում էր իր հայրենիքում, ստրկանում էր և բթամտանում էր մահմեդական ազդեցութեան տակ, նա որ գաղթում էր թույլ և անպաշտպան օտարութեան մեջ, բնականապես ընտելանում էր այն ոգուն, որ հատկանիշ է դժբախտութեան մեջ մեծացած և զանազան հալածմունքներին ենթարկված գաղթական մարդիկներին»:

Հայրենիքում մնացողները, ճիշտ է, մահմեդական լուծի տակ ճնշված էին, բայց դարձյալ իրանց մայրենի հողի վրա և իրանց հասարակութեան մեջ էին ապրում, ուստի պահեցին մի թանկագին հատկութիւն՝ հասարակական ոգի: Նրանք ստրկանում էին, այդ ճշմարիտ է, բայց վիճակը ամենքի համար մի էր. նրանք իրանց հայրենիքի և հայրենակիցների հետ կապված մնալով, բաժանում էին ընդհանուր վիճակը, ընդհանուր դժբախտութիւնը:

«Իսկ գաղթականը, որ փախչում է ստրկութեանից և հալածանքներից, բնականապես կոչում է իր գոյութեան համար: Նա մտածում է միայն իր անձի վերա, նա հոգում է միայն իր մասին: Նորան պակաս է ուրեմն քաղաքացու գլխավոր հատկութիւնը՝ հասարակական ոգին: Նա դառնում է եսական, փուլթ չէ նորա համար իր նմանների գոյութիւնը, իր հայրենակիցների վիճակը: Նա նոցանից փախչում է, որ փրկե իր անձը: Նա իր հայրենիքից միայն իր

ընտանիքը իր հետ է առնում: Այդ է պատճառ, որ հրեաների, հայերի, հույների և ապա նման գաղթականների մոտ հայրենիքը նշանակություն չունի: Իսկ ընտանիքը մեծ դեր է խաղում:

Գեպի իր հայրենակիցները նա բնակաճապես դառնում է տնտարբեր, նա կորցնում է հասարակական ոգի. դեպի օտարները, որոնք արհամարհում են նորան, նա դառնում է խոնարհ, պահելով հայրենիքից իր հետ բերած ստրկության հատկությունը և իրան անպաշտպան դտնելով օտարության փեշ: Նորած ամեն տեղ արհամարհում են, նա էլ փոքր առ փոքր ընտելանում է այն համոզմունքին, թե նա արհամարհելի է... Նա սկսում է իրան արհամարհել: Նա սկսում է հասկանալ, թե նշանակությունը հասնելու համար մի միջոց կա միայն, այն է փող, հարստություն հավաքելը: Հետևապես նորան ամեն մի ջոցները ներելի են հարստությունը հասնելու համար:

Կավ հասկանալով, որ նա արհամարհելի է, նա սկսում է արհամարհել ատել այն մնացած երևույթները, որոնք չեն տանում դեպի հարստություն: Նա արհամարհելի է, նա այդ գիտե, բայց նորա պատմությունն էլ, նորա մարբենի լեզուն էլ արհամարհելի են օտարների համար, և նա ինքն սկսում է իր բոլոր ավանդությունները, իր բարոյական գանձը ատելով ատել...

Միակ բան, որին նա հավատարիմ է մնում, այդ կրոնական-եկեղեցական ավանդություններն են և այն էլ ոչ թե հասկանալով կրոնի նշանակությունը, ոչ թե գնահատելով աստվածապաշտությունը, այլ այն պատճառով, որ նրան տիրում է գոտիքի երկյուղը, հավիտենական պատիժների սարսափը...

Ոտքից մինչև գլուխը նա դառնում է ստրուկ, բոլոր ստրկային հատկություններով, նա դառնում է, ինչպես ամեն ստրուկները, ըննավոր տան մեջ, ճնշում է կնոջը, սպանում է բարոյապես երեխաներին:

Երեխաները մեծանում են միևնույն ազգեցություն տակ: Իրանց ծնողների մեջ նոքա տեսնում են հետագա օրինակ. խոնարհ՝ զորեղների առաջ, հանդուգն՝ ստորադրյալների հետ: Նոքա նկատում են, որ հայրը և մայրը արհամարհում են այն ամեն բաները, որոնց արհամարհում են և օտարները... հայրը և մայրը ամոթ են համարում, հալածում են անգամ երեխաներին, եթե սոքա իրանց մայրենի լեզվով են խոսում իրանց մեջ և երեխաները ընտելանում են այդ արհամարհական զգացմունքներին դեպի իրանց մայրենի լեզուն: Ծնողները ատում են և ցնորք են համարում ամեն հասարակական հատկություն, ամեն աշխատանք, որ նպատակ չունի անմիջական նյութական հարստության հասնելու, և երեխաները դառնում են եսական: Ծնողները ինքնատեր են, անձնապաշտ են, բռնավոր են, անհամբերող են, մոլեռանդ են, և երիտասարդները միևնույն են դառնում...»:

Առաջ տանելով այդ նմանության կետերի քննությունը, Արծրունին համարյա ոչինչ զանազանություն չէ գտնում ծնողների և որդիների, նույնիսկ բարձր ուսում ստացած որդիների մեջ. նույն անհամբերողությունը դեպի ուրիշների անհատական համոզմունքը, նույն ստրկական հատկությունը՝ խոնարհ լինել զորություն առաջ և հանդուգն՝ ստորադրյալների հետ: «Ծճմարիտ է,— ասում է նա,— կարծես թե որդիները այնքան չեն ամաչում իրանց ազգությունից, իրանց մայրենի լեզվից, որքան ծնողները,— բայց այդ զգացմունքը անցավոր է և ժամանակավոր: Այդ լինում է մինչև այն ժամանակ, երբ երիտասարդը կարողանում է հասնել նյութական ապահովությանը կամ պատենին: Մի անգամ հասած լինելով, նա սկսում է հալածել իր ընտանիքի մեջ իր մայրենի լեզուն. ստրկային զգացմունքը իրն է առնում»:

Իմ այս բոլորից հետո եզրակացությունը ինքն ըստ ինքյան է գալիս: Ահա ինչ եզրակացություն.

«Ինչի՞ այդ կեղծավոր թշնամությունը, ո՞ւմ եք խաբում: Դուք երիտասարդները և դուք ծերերը մի եք... Ի՞նչ իրավունքով ծերերը արհամարհանքով խոսում են երիտասարդների մասին, կամ ինչի՞ երիտասարդները հարձակվում են ծերերի վրա: Դուք մի տարբ եք: Հաշտվեցեք միմյանց հետ, գրկեցեք սիրով միմյանց: Ձեր ուղղությունը մի է, ձեր նպատակները մի պիտի լինին: Դուք ձեռքին տվեցեք, և փոխադարձ օգնությամբ հալածեցեք ամեն նոր, լուսավոր անհատական, ազատ երևույթ...»:

Բայց այս վճիռը հուզիչ է: Ամեն կողմից աղաղակ, բողոք է լսվում. «Դուք ինքներդ ո՞վ եք... Դուք, որ հերքում եք ամեն բան: Հիները ոչինչ, նորերը ոչինչ... էլ ո՞վ մնաց»:

Ո՞վ մնաց: Եվ Արծրունին պատասխանում է.

— Մնաց ժողովուրդը:
— Մի՞թե մենք ժողովուրդ չենք,— բողոքում են երկու կողմից ծերերը և երիտասարդները:— Մի՞թե մենք նույն ժողովրդի կազմող մասերը չենք... Մի՞թե մեզանից, այսինքն՝ ծերերից և երիտասարդներից դուրս կա դարձյալ ժողովուրդ:

— Ոչ թե միայն մեզանից դուրս կա ժողովուրդ, բայց դուք, որ ձեզ ժողովրդի կազմող մասեր եք անվանում, մեր ժողովրդի թե պատմական ընթացքին, թե նորա արդյան պահանջներին նայելով, արհեստական, խորթ արդյունք եք, օտարոտի ծնունդ եք:

Ահա՛ մի ամբողջական աշխարհայեցողություն, ահա՛ Արծրունու համակրությունների և հակակրությունների խտացումը: Իզուր էին կարծում, թե այդ նոր, անհանգիստ, կրակոտ մարդը մեր կյանքի մեջ միայն հերքողի, միայն ուշիացնողի դեր է ուղում կատարել: Ո՛չ, նա ուներ մի անշափ մեծ, բարձր ու վե՛հ պաշտամունք՝ ժողովուրդը: Այս անունը չկար մեղանում. ժողովուրդը մոռացված էր, կորած էր: Եվ Արծրունին դեն է քշում «արհեստական, խորթ արդյունքները», «օտարոտի ծնունդները», որպեսզի առաջ գնա այդ մոռացված, մոլի մեջ նստած մեծությունը: Դեռ իր ուսանողության ժամանակ նա անդադար կրկնում էր. ժողովուրդ, ժողովրդի օգուտ: Այժմ, հասարակական կարծիքի ղեկավարը հանդիսանալով, նա իր առաջին քայլերից անողորմ պատերազմ է հրատարակում այն դասակարգերի դեմ, որոնք այնքան անհիմն կերպով ժողովուրդ էին իրանց անվանում, մինչդեռ իսկապես նրանք բուն ժողովրդի ցավերն էին կազմում: Հարվածել այդ դասակարգերը, նշանակում էր, գոնե այդպես էին ուղում հարվածողները, ոչինչ համարել ամբողջ հայությունը, շտեմանել այդ ազգի մեջ ոչինչ դրական, ոչինչ հուսատու բան: Բայց Արծրունին ասում էր. ո՛չ, հայությունը դուք չեք, կա ժողովուրդ, տգետ, անօգնական, նախապաշարված ժողովուրդ, որ սակայն հասարակություն կազմելու, դիտակցության հասնելու բոլոր գրավականներն ունի, իբրև հողի տեր, մայրենի լեզուն սրբություն պահող մի բազմություն: Աշխատենք նրա համար: Դա գո՛վար, ծանր աշխատություն է, բայց նրանից դուրս չկա կենդանի գործ: Մեռած ու փշացած տարրերի համար շարժել աշխատել...»



Այս խիստ արշավանքը պիտի առաջ բերեր դիմադրություն: Կանոնավոր կերպով, անընդհատ ուժեղացող ընթացքով և նվազող թվաքանակով հե-

րոսները», այդ «պառազէր երիտասարդութիւնը» և հին սերունդը կամ պիտի ծածկվեն ծաղրի, սուր սլաքների տարաբնույթ տակ, կամ պիտի ցրտախնայ օր իրանք էլ գիտեն խոսել, հերքել, ծաղրել: Լուս ու ան արբեր շմանցին հեղուկները: Նրանք հրապարակ դուրս եկան, և Արծառնու աստղը ավելի է պայծառացավ. երիտասարդ հրապարակախոսը այլևս անապատում ծայրահեղներ: Ինչի՞ նման կլինենք, եթե նա տպագրական խոսքի մենաշնորհը վաշխիք եթե նա շարունակ հարձակվելու, շունենալով իր առջև դիմադրողները, հարվածները ետ դարձնողներ: Գիմադրելու անհրաժեշտութիւնը բաց է անում Արծառնու առաջ մի այլ ասպարեզ՝ պոլեմիկա, բանակոխիչ: Հարձակվել և պաշտպանվել, վերք հասցնել և թուլը շտալ, որ դիմացինը վերք տա. ճակատամարտը կատարյալ է, և այդ մուխի մեջ կազմակերպվում, ամբողջում է Արծառնու այսպես ասած՝ պողպատվում է:

Ի՞նչ արավ դիմադրելու անհրաժեշտութիւնը:

Նա գերեզմանից հանեց «Մեղու Հայաստանի» լրագիրը և ուղի կանգնեցրեց նրան: Անբավականութիւնը Արծառնու դեմ միայն դրսում չսկսվեց. նրա խմբագրական ժողովներին հավաքվողները մի հավատի և մի համոզմունքի տեր մարդիկ չէին: Ետները նրանցից համաձայն չէին, որ Արծառնու այդպես անխնա հարձակումներ գործե. այդ հարվածները, երևի, նրանց էլ էին դիպում: Եվ սկսվեց խլրտումը, կամ ավելի ճիշտ ասած՝ գտումը «Մշակի» խմբագրութեան հարկի տակ: Անբավականները կամաց-կամաց հեռանում էին և խմբում Պետրոս Միմոնյանցի շուրջը. իսկ համակրողները մնում էին Բաֆֆիի գրվածքից մենք արգեն գիտենք, թե ովքեր էին մնացողները: Գիտումավոր երիտասարդութիւնը գնում էր, նա պիտի գնար, քանի որ Արծառնու այնպես էր վերաբերվում նրան. մնում էին անդիպումները, թերուտները:

«Մշակի» խմբագրութեան այս կերպ վերակազման ճիշտ ժամանակը մենք չենք կարող որոշել: Պատմողներից ոչ մեկը չէ ասում, թե երբ տեղի ունեցավ այդ բանը: Բայց նայելով «Մշակի» թերթերին, մենք պիտի ասենք, որ այդ շուն «Մշակից» դեպի «Մեղուն» միանգամից տեղի շունեցավ, այլ ամենաբնական «Մշակի» առաջին տարվա ընթացքում, դուրս և երկրորդի առաջին կեսում: Մի մասը հեռացավ «Մշակի» հենց առաջին երկու ամիսներում և կենդանացրեց «Մեղուն». մի մասը, որ հետո պիտի հեռանար և Գրիգոր Արծառնու երդվյալ թշնամիների շարքը մտներ, դեռ երևում էր «Մշակի» մեջ 1872-ի վերջերում: Չնայած այս հանգամանքին, մենք հենց այստեղ, դուրս և գտնելով ժամանակագրական կարգը, կղնենք այն պատկերը, որ ցույց է տալիս թե ինչեր էին տեղի ունենում «Մշակի» խմբագրական ժողովներում, և գտնուի ինչպես կատարվեց: Ինքը Արծառնին այսպես է պատմում բոլորը¹:

Անհամաձայնութիւնները ծագում էին, իհարկե, հիմնական հարցերի հողի վրա: Արծառնին համարյա միշտ իր դեմ էր տեսնում խմբագրական ժողովը. միայն Պողոս Իզմայիլյանն էր, որ միշտ Արծառնու հետ էր լինում: Եվ ահա մնացածները գոտում էին, թե այդ երկուսը կոսմոպոլիտ են, արմատական են, օտարասեր են, ազգախնայ մարդիկ են: Վեճեր էին սկսվում Արծառնու համոզմունքների դեմ: «Ես,— ասում է Արծառնին,— իմ մտքերը երկուսու բարակ բացատրելուց, ամբողջ դասախոսութիւն կարգալուց հետո, երբ տեսնում էի, թե դա ապարդյուն աշխատանք է, ուղղակի ասում էի. «Պարտեններ, ես ձեզ մի ժամվա մեջ չեմ կարող բացատրել այն, ինչ որ սովորական համար ես գործ եմ դրել իմ կյանքի կեսը. այն, որի վրա հիմնված են իմ ամեն

¹ «Մշակ», 1890, № 45:

ախարհ համոզմունքները և որից բխում են իմ հոգվածները...» Եվ երբ մի օր ամենքը սկսեցին պահանջել, որ Արծառնու առաջնորդողները ենթարկվեն քննարկութեան, և նրան տպագրելը վճովի ձայների առավելութեամբ, Արծառնին հետևյալ պատասխանը տվեց ամենքին. «Եթե դուք կփորձեք արգելել ինձ իմ գաղափարներն արտահայտելու, ես ձեր բոլորիդ վրայով կանցնեմ և դարձալ կշարունակեմ իմ գաղափարները հայտնելու»:

Այս հայտարարութիւնը արդեն վճռում էր ամեն ինչ: Արծառնին այնպիսի մարդկանցից չէր, որ ընկճվեր, ետ քաշվեր: Հանգամանքը պահանջում էր, և նա առանց տատանվելու ձեռք էր վերցնում իր համակրած սկզբունքից անգամ, խմբովին աշխատելու սկզբունքից: Համակրելի է՞ր, այո, այդ սկզբունքը. բայց կարելի՞ էր սեփական խոր համոզմունքները դո՛հել խմբական սկզբունքին, մանավանդ երբ պարզ էր, որ խումբը հակառակ է համարյա բոլոր հիմնական գաղափարներին:

«Իմ մտքակող, մերկացնող ուղղութիւնը դուք գրեթե բոլորդ վնասակար էիք համարում,— ասում է Արծառնին,— իմ մտքերը, թե ազգի մեջ կարող են լինել այլևայլ դավանութիւնների մարդիկ, դուք վնասակար էիք համարում. դուրսկան փոխատու-խնայողական ընկերութիւնների մասին գրելը և այդ ընկերութիւնների օրինակելի կանոնադրութեան «Մշակում» տպագրելը, դուք, մանավանդ դուք, պ. Չմշկյան, օտարամուտ, վնասակար բան էիք համարում և այդ օրը գլխարկները վերցնելով, դուրս էիք եկել ժողովից. վաճառականութեան դեմ հարձակվելը և նրա տեղ երկրի ինքնուրույն արդյունաբերութեան զարգացում հորդորելը, դուք գրեթե խմբովին վնասակար էիք համարում,, պնդելով, որ հայոց ազգի գոյութիւնը, բացի եկեղեցուց, հիմնված է և վաճառականութեան վրա, և այլն...»:

Ենթադրել անգամ կարելի չէ, որ այսպիսի տարրերից կազմված խմբագրութիւնը կարողանար երկար ու համերաշխ մնալ: Ավելացնենք այս բոլորի վրա և այն, որ խմբագրութիւնը պահանջեց Արծառնուց դրամական հաշիվները. բայց Արծառնին կտրական կերպով պատասխանեց. «Եթե ուզում եք, որ ես ձեզ հաշիվ տամ «Մշակի» նյութական օգուտի մասին, ուրեմն բարեհաճեցեք և բաժանել ինձ հետ նյութական վնասներն էլ, եթե այդպիսիներ կլինեն»: Այդ էլ մի առիթ էր, որ տարածաշնորհութիւնը պառակտում առաջացնեց: Ընկերական-խմբական սկզբունքով գործ առաջ տանելու այս անդրանիկ փորձը հայերի մեջ չհաջողվեց: Մեղադրել որևէ մեկին, իհարկե, անհեթեթութիւն կլիներ. մարդիկ հավաքվեցին միասին, բայց չհամաձայնեցան և էլի հեռացան: Անբնական բան չկա այստեղ. և միայն հարց կարող է լինել այն մասին, թե ինչու՞ Արծառնին հենց սկզբից այնպիսի մարդիկ չընտրեց, որոնք կարողանային հաշտվել իր ուղղութեան հետ: Բայց այս հարցն էլ անտեղի է, եթե եկատի առնենք այն ժամանակները: Մեղանում դեռ չկային որոշ գրական բանակներ, կուսակցութիւններ: Կային, ճիշտ է, հատ-հատ առաջավոր մարտնչողներ, բայց նրանք կուսակցութիւններ կազմելուց շատ հեռու էին: «Հյուսիսափայլն» էր սկսել որոշ բանակի հիմք դնել, բայց երկար կյանք չունեցավ, և գրական կուսակցութիւններ չկազմակերպվեցին: Արծառնուն էր վերապահված այդ գործը. նա էր, որ հենց «Մշակի» առաջին տարվանից հիմք դրեց ուղղութիւններով, դավանանքներով տարբերվող կուսակցութիւնների: Երբ ղեկավարութեամբ, նրա նախաձեռնութեամբ աշխարհ եկավ մշակական կուսակցութիւնը: Գրա հակառակ կուսակցութիւնն էլ անուն ստացավ, երբ վերանորոգվեց «Մեղուն». նա հոչվեց մեղավական:

Իր առաջին համարի մեջ, որ լույս տեսավ 1872-ի մարտի 4-ին, երբորդ կերպարանափոխութեան ենթարկվող «Մեղուն», մի ակնաբեկ գցելով իր անցյալի վրա, ասում էր. «Մեղուն» յուր տասնամյա ժամանակաշրջանում մքունում է այժմ յուր նոր շրջանը. նոր ենք ասում, որովհետև նրա բեռն ու ծանրությունը, որ մինչև ցայժմ միայն մեր վրա էր, ընկնում է այսուհետև մի ամբողջ ընկերության վրա, որ անտարակույս ավելի հաջողություն կունենա թե ժամանակի հանգամանքների պատճառով և թե աշխատանքի բաժանմամբ: Մի խելքը լավ է, իսկ երկուսը ավելի լավ, ասում է առածը: Մինչև ցայժմ մեր մեջ չէ եղած այսպիսի մի ընկերություն. ընկերական հոգին միշտ հեռու է եղած հայրից. ինչ որ անկարող է գործել մի անձն, դուրսին է ընկերության համար»:

Անկասկած: Ընկերական կազմակերպությունը գոնե այն առավելություն ունի «Մեղուի» վերաբերմամբ, որ լրագիրը հայտնի չափով ապահովված էր անհամեմատ հարուստ ու բազմակողմանի էր անցյալի հետ համեմատած: Սակայն մի հարց. ո՞րքան ինքնուրույնություն կար «Մեղուի» ընկերության մեջ, ո՞րքան նա կարողացավ շարաթաթերթին տալ իր ստեղծած տիպը, կերպարանքը:

Նայում ենք վերանորոգված «Մեղուին» և առաջին իսկ հայացքից երևում է, որ դա մի ընդօրինակություն է: Ինքնուրույնություն չէր էլ կարող լինել քանի որ շարաթաթերթը վերստեղծվում էր ամենից առաջ «Մշակին» դիմադրելու, նրա նման դեր կատարելու համար: Եվ մենք տեսնում ենք մի շարք նմանություններ. նույն դիրքն ու մեծությունը, սյունակների նույն թիվը. «Մեղուն» էլ նույնպես արժե 7 սյունի. նույնիսկ հայտարարությունների գիևր որոշված է «Մշակի» բառերով. «10 միջակ տառերի համար 1 կոպեկ»: Այսօր քանը արտաքինի կողմից, իսկ ներքինը: Այդտեղ էլ պատրաստություններ են տեսնված: Խմբագիր Սիմոնյանցը առաջներում հագիվ ամիսը, երկու ամիսը մի անգամ էր դուրս գալիս Քանիցս պատիվ ենք ունեցել հայտնելու հարցը հասարակության» սկիզբ կրող հոդվածներով, այժմ արդեն ստիպված է յուրաքանչյուր համարում գրել առաջնորդող: Այժմ կան և ուրիշ բաժիններ. «Ազգային» բաժինը ներքին տեսության հոդվածներ, լուրեր է տալիս. բանասիրական բաժնում այլևս երկար ու ձիգ թարգմանություններ չեն գետնադրվում, ինչպես առաջ, այլ բազմաթիվ ինքնուրույն պատկերներ ժողովրդական կյանքից: Մի խոսքով, «Մեղուի» ընկերությունը, որքան էլ ինքնուրույնությունից զուրկ լինի, բայց աշխատում էր: Արժրուներ գրելու ձևն անգամ ընդօրինակվում է. տեսնում ենք հոդվածներ, բաժանված մանր գլուխների, ինչպես սիրում էր անել Արժրուներին:

Աշխատասիրությունը, այո, անուրանալի է: Հարցը միայն այն է, թե ի՞նչ էր դուրս գալիս այդ աշխատասիրությունից: Գլխավորը, ոգի ներշնչողը դարձյալ հինն էր՝ Սիմոնյանցը: Ընդհանր է, նա այժմ շատ էր գրում, ճիշտ է, նյութեր էր գտնում իր առաջնորդողների համար, բայց աշխատասիրությամբ տաղանդ չէ ձեռք բերվում. աստվածային կայծը բացակայում էր նրա գրվածքներից, և «Մեղուն» իր էությունը մնում էր նույնը, ինչ էր առաջ: Տաղանդ, այսինքն ընկնող ընդունակություն չերևաց և խմբագրին շրջապատող մարդկանց մեջ: Գրողներն էին, գրում էին, նրանց գրվածքները, զարմանալու բան չկա սրտ մեջ, համապատասխանում էին հասարակության մի որոշ մասի տրամադրության, հայացքներին: Բայց հայկական մտքի մեջ մի հեղաշրջում առաջացնելու մի փոքր ի շատե աչքի ընկնող շրջան կազմել նրանք չէին կարող: Իբրև ընդհանրապես, նրանք ամենից շատ պիտի սովորեին հերքել իրանց հակասու-

կարգին, ամբողջ ժամանակը վախ հայտնել, հակասություններ, ճիշտ շարժում քառեր որոնել, պաշտպանել, միշտ պաշտպանել, ինչպես էլ լինի՝ պաշտպանել մեր ավանդությունները, մեր կեցությունը ծայրահեղ մտքերից, ազգայնաբեկ հասմոպոլիտությունից, վնասակար ու տնաքանդ աղատամտությունից: Այո նեղ ու մանր հոգսերի, վախերի ու զգուշությունների մեջ սովորական, միջակ միտքը չէր կարող ստեղծագործող լինել, լայն ու խոր հայացքներ տեսնալ, հուզել, գյութել, կրակել և կրակվել: Եվ մենք տեսնում ենք, որ բանակրիվներից, ընդդիմադրությունից դուրս «Մեղուն» չափազանց ջրալի է, չափազանց աննշմարելի:

Ընդհարումը սկսվեց իսկույն, «Մեղուի» հենց երկրորդ համարից: Ամենից առաջ արդարանում էր Արժրուներ հարվածներին ենթարկված երիտասարդությունը: Եվ արդարանում էր ոչ թե իր կատարած գործերով, որոնք չկային էլ, ոչ ողորմելի պատճառաբանություններով: Գուք հարձակվում եք ուսում ասած երիտասարդի վրա, ասում եք, թե նա փոխանակ գործ կատարելու, լստ ու զոմինտ է խաղում: Բայց դիտե՞ք որ դրա պատճառը հայ ընտանիքն է: Ինչ ավանդության հետևող մեր ընտանեկան կյանքը մեղ չէ ներկայացնում է: մի ղվարճություն, որ նա մեղ համար օտար է, որ նա չէ առաջարկում մեղ մի բարոյական ապաստան: Հետո դուք ծաղրում եք մեր գրողների ճառական ուժը. բայց դիտե՞ք որ ճառերով, քարոզներով է քրիստոնեությունը մտել Հասարակության մեջ:

Նիդրեն կարճ պատասխան տվեց «վերանորոգվող Մեղուին»: «Շատ հեշտ է — ասում էր նա, — իր պակասություններից արդարանալ ուրիշին մեղադրելով: Ես անշարժ եմ, բայց ես մեղավոր չեմ որ անշարժ եմ... ընտանիքն է մեղավոր... Ընտանիքը մեղավոր է, որ դուք անշարժ և անգործ եք, դուք այդ խոստովանում եք, շատ բարի: Բայց դուք մեղավոր չե՞ք արդյոք, եթե մինչև ի՞նչ չէք մտածել այդ անշարժությանը ընդդիմադրություն անելու, մի ընտանիքի հնացած ուղղության դեմ ներգործելու, մեղավոր չե՞ք արդյոք, որ նորապեղյալ սիրությունը, նորա բարոյական անտարբերությունը տեսնելով, դուք էք մտածել ձեր մեջ մի այնպիսի ընկերություն կազմելու, որտեղ զարմանալով ձեր հոգևոր պահանջներին, դուք չբավականանալիք ձեր մեջ հասարակական կապ և հարաբերություններ պահպանել միայն դոմինո-լոտո և թղթախաղի միջոցով»:

Գալով քրիստոնեությունը մտցնելուն, Արժրուներ կրկնում էր այն հանրաձայն պատմական փաստը, որ քրիստոնեությունը մի երկրի մեջ մտցնողը եղել է ոչ թե արևդայի քարոզը, ճառը, այլ գլխավորապես այս կամ այն երկրի թողավորի, իշխանի կամքը, նրա սուրբ: «Մեղուն» չբավականացավ, իհարկե. մի կողմ թողնելով ընտանիքի մեղավորությամբ պաշտպանվելու անհաջող փորձը, նա կպավ քրիստոնեության հարցին: Առաջին իսկ ընդհարման մեջ «Մեղուն» ցույց տվեց, որ չէ կարող առանց աղավաղելու բանակրիվ մղել: Ես ասաց, թե «Մշակը» հայտնում է, որ քրիստոնեությունը տարացրվել, ժողովրդականացրել է սրի միջոցով, մինչդեռ «Մշակը» խոսել էր այդ կրոնը մի երկրում պաշտոնապես մտցնելու մասին: Ի՞նչ հեշտ էր հեղաշրջումներով պատասխանելը: Նիդրեն գրել էր, թե ճառը, քարոզը չէ մտցրել քրիստոնեությունը Հայաստանի մեջ, և իբրև ապացույց ավելացրել էր. «Մովսես Խորենացին իր գրվածքներով չէ մտցրել և տարածել քրիստոնեությունը, որովհետև ես արդեն մտցված էր, Եղիշեն երբ գրում էր, Վարդան Մամիկոնյանը իր գործով արդեն նահատակված էր քրիստոնեության գաղափարի համար»: Այդ խոսքերը «Մեղուն» կրկնում էր, միայն ուրիշ կերպով. Նիդրեն ասել է, թե

վարդանանց պատերազմը եղել է եղիշեից և Խորենացուց առաջ, թե Եղիշեի և Խորենացու գրվածքներն են միայն, որ մարմնացրել են ըրխտոնեական դադափարը:

Գնում ենք այս մանրամասնությունները ոչ թե այն պատճառով, որ մի առանձին կարևորություն ենք տալիս այդ բանակալին: Առաջին ընդհարումն է երկու լրագիրների մեջ, սկիզբը այն երկարատև ու համառ պատերազմի, որ տևեց երկար տարիներ: Մենք ուզում էինք այստեղ իսկ, առաջին քայլում, ցույց տալ, թե ինչ միջոցներով էին պինդում երկու կողմերը, ինչ հանգամանքների մեջ էր կատարվում ընդհարումը: Այս առաջին բանակալի բավական ընդարձակվեց. մեջ մտան «Մշակի» և «Մեղուի» աշխատակիցները: Մեղուի գաղեն (Բաֆֆին) այստեղից սկսեց իր գինակցությունը Արծրունու հետ՝ «Մշակի» թշնամիների դեմ կռվելու համար: «Մեղուն» մեծ եռանդ էր ցույց տալիս. իր № 10-ի հետ նա տվեց մի մեծ հավելված, որի մեջ Սենեքերիմ Արծրունին, «Մշակի» խմբից հեռացածներից մեկը, խոսում էր մեր պարբերական մամուլի, բայց գլխավորապես «Մշակի» մասին, քննում էր Արծրունու առաջնորդողները և համարյա ոչ մեկի մեջ չէր գտնում համակրության արժանի մի միտք: Այդ հավելվածը ավելի ևս սաստկացրեց բանակալի վր. ինքը, Արծրունին ուղղակի շատասխանեց, բայց Չաքուճը գործի գցեց իր ֆելիստոնական նշտրակները, նույնիսկ գավառներից էլ սկսեցին գրել այդ առիթով: Բանակալի էություն մեջ շենք մտնում, որովհետև «Մեղուի» հավելվածը թեև մեծ էր, բայց իմաստի, փաստերի կողմից շատ աղքատ էր¹:

Բայց մենք կանգ կառնենք մի ուրիշ բանակալի առջև, որ ունի նշանաթյուն՝ երկու մարտնչող կողմերի բարոյական հատկությունը լավ հասկանալու համար: Այդտեղ արդեն սկզբունքների ընդհարում էր, որ տեղի ուներ մի կենդանի գործի շուրջը. այդտեղ Արծրունին երևան է գալիս ոչ միայն իրրև գրչի մարդ, այլ և իրրև հասարակական գործիչ, որ կռիվը մամուլի էջերից անց է կացնում անմիջապես կյանքի մեջ:

Երբ «Մշակը» սկսեց հրատարակվել, Ներսիսյան դպրոցում հաստատված տեսուչ չկար: Ստեփանոս Նազարյանցի հեռանալուց հետո դպրոցի հոգաբարձությունը տեսչի պաշտոնակատար նշանակեց «Մեղուի» խմբագիր Պետրոս Սիմոնյանցին. բայց հոգաբարձության պաշտոնավարության ժամանակն էլ էր լրացել և 1872-ին պետք է կատարվեր հոգաբարձական նոր ընտրություն: Արծրունին սկզբից եթե ուշադրություն դարձրեց այդ հանգամանքի վրա: Իրրև հասարակական օրգանի ղեկավար, նա պարտք համարեց հրապարակով պարզել, թե ինչ պաշտոն ունի կատարելու Ներսիսյան դպրոցը և ինչ է պահանջվում այդ միակ ապահով միջնակարգ դպրոցի վարիչներից: Միմյանց ետևից նա երեք առաջնորդող հոգված նվիրեց այդ հարցին (№№ 6, 7 և 8):

Առաջին հոգվածը տպվեց փետրվարի 10-ի համարում և կրում է «Ինչի՞ մենք մեկ մեկի շենք հասկանում»:

«Ուշադրություն դարձրեք,— ասում է նա,— մեր ժողովրդի զանազան դասերի մեջ փոխադարձ հարաբերության վերա, և դուք կհամոզվեք որ մեր ազգի դասերի մեջ գրեթե չկա հասարակական կապ: Գասերից ամեն մեկը բոլորովին առանձնապես և այլակերպ է զարգանում: Միակ գործիչը, որ մեզ կապում է մեկի հետ, մեր դավանությունն է»:

¹ Սենեքերիմ Արծրունին իր տեսության մեջ խոսել էր, ի միջի այլոց, և «Հյուսիսափայտի մասին: Ստեփանոս Նազարյանցը իր մասնավոր նամակի մեջ անվանեց այդ դատողությունների քցանցառամիտ»:

Այդ կապը բավական չէ: Հասարակական կրթությունը կարող է կապել, միասին ձուլել ազգի առանձնացած դասերը: Իսկ հասարակական կրթության գլխավոր գործիչներն են. դպրոց և մամուլ: Սակայն մամուլը կարող է ժողովրդին հասկանալի դառնալ դպրոցի միջոցով: Հնուց մենք ունեինք գրականություն, բայց արդյոք ժողովուրդը հասկանում էր գրքի լեզուն: Հայտնի չէ, որ մեր գրաբարը երբեք է եղած լինելու ժողովրդի գործածական լեզու: Արդյոք լինելու դարի հայերենը միայն գրական լեզու էր, թե այս լեզվով խոսում էր և հայ մարդը: Վճռել այս հարցը անկարելի է: Հինը անցավ: «Այժմ մենք առանց սխալվելու կարող ենք հաստատել, թե ժողովուրդը գրականական լեզուն չէ հասկանում: Գուր կարծում եք, որ ես միայն գրաբարի մասին եմ խոսում, ո՞չ: Մեր նոր գրականական լեզուն, աշխարհաբան էլ հասկանալի չէ ժողովրդին: Ինչքան դար շարունակ ժողովուրդը հայոց ժամասացություն էր լսում եկեղեցիներում, և եկեղեցիներից դուրս գալով և ընտանեկան կյանքը մանկելով, կրկին խոսում էր կամ վրացերեն, կամ թուրքերեն, կամ հունարեն: Վերջին ժամանակները մենք աշխատում ենք հայի հետ նոր, կենդանի անվանված գրականական լեզվով խոսել... Բայց իզուր... Մեր գրվածները շեն կարդում...»:

Մեզ չէ հասկանում ժողովուրդը, որովհետև նա պատրաստված չէ, չունի կրթություն: Մեզ ժողովրդի հետ կապողը պիտի լինի տարրական դպրոցը: Առանց այդ միջնորդի՝ մամուլը կմնա ժողովրդի համար «ձայն բարբառո, յախապատի»: Ո՞վ են, ո՞ւր են ժողովրդական ուսումնարանի ուսուցիչները: Պետք է ուսուցիչներ պատրաստել: Իսկ ո՞վ կարող է նրանց պատրաստել՝ Ներսիսյան դպրոցը:

«Ներսիսյան դպրոցը թիֆլիսում պիտի հասկանա վերջապես, որ նորա նշանակությունն է պատրաստել ժողովրդի համար ուսուցիչներ, այսինքն՝ կրթյալ քահանաներ»:

Եվ ծխական ուսումնարանների համար վարժապետներ»:

Երկրորդ հոգվածը վերաբերվում է տեսչի ընտրության հարցին: Կարևոր հարց. դպրոցի ուղղությունը, առաջադիմությունը տեսչից է կախված: Հարկավոր է, ասում էր Արծրունին, որ ուսումնարանը մի որոշ ուղղություն ունենա: Եվ հոգաբարձությունը, կամենալով տեսուչ ընտրել, պետք է ինքն իրան հարցնու, թե արդյոք ինքը վճռել է, թե ի՞նչ ուղղություն է հարմարվում դպրոցին: Եվ եթե նա ունի որոշ ծրագիր, ի՞նչպես պիտի վարվի, որ իր ընտրելի տեսուչը համապատասխան լինի այդ ծրագրի պահանջներին: Ասենք, թե դպրոցի նպատակն է քահանաներ և ուսուցիչներ պատրաստել: Գա արդեն հոգաբարձության ծրագրի էական մասն է: Այս դեպքում ի՞նչ պիտի պահանջե հոգաբարձությունը տեսչից, ի՞նչ ծրագիր, ի՞նչ առարկաներ պիտի անհրաժեշտ համարվեն: Կալ է, եթե հոգաբարձությունը ճանաչում է մի անձ, որին ընդունակ է համարում տեսչի պաշտոնը վարելու, հիմնելով իր կարծիքը այդ անձի անցյալի վրա: Կալ, եթե այդ անձը «իր հին գործունեությունից հետո որքան տարի է անցել դարձյալ հետևում է միշտ ժամանակին և չէ հնանում: Նորա մանկավարժական մեթոդը հրաշքի պես տարիներին դիմանում է, և միշտ ժամանակի պահանջներին համապատասխան է»: Սրանք մասնավոր դեպքեր են, մինչդեռ խնդիրը ավելի ընդարձակ և ընդհանուր կերպով պետք է դնել: Խնդիրը արդար կերպով լուծելու համար Արծրունին առաջարկում է դիմել այն միջոցին, որ գործադրվում է Եվրոպայում գիտնական ընտրությունների ժամանակ, մի միջոց, որ «ինչքան կարելի է, սանձ է դնում ողորմելի ինտրիգաներին և անձնական կրքերին»: Այդ միջոցը մրցութայինն է, կոնկուր-

սր: Քո՞ղ հայտարարվի մրցութիւն, թո՞ղ առաջարկվի, որ ամեն մեկը ու ուղում է տեսնել լինել, ներկայացնեն իր ծրագրի նախագիծը, ցույց տա, թե ինչպէս պետք է տանել դպրոցի գործը: Հոգաբարձութիւնը կքննէ բոլոր ներկայացրած նախագիծերը և համախոսութիւն կտա այնպիսիներին, որ ավելի համապատասխանում է նրա ծրագրին ու ցանկութեաններին: Եթէ այդ նախագիծերից ոչ մեկն էլ կատարյալ չլինի, դարձյալ կա այն առաջնութիւնը, որ մրցութեան միջոցով հոգաբարձութիւնը ծանօթանում է զանազան կարծիքների հետ և կարող է օգուտ քաղել խելացի ցուցմունքներից: Արդարացի է այս միջոցը և այն պատճառով, որ ուսումնարանի վարչութեան հարցը, ծրագրերը կշփվի հասարակական կարծիքի հետ: Արժրունին խորհուրդ էր տալիս, որ ներկայացրած ծրագրերն իրենք և մամուլի քննութեան առարկա դառնան:

«Հայր, իր բնավորութեամբ, փառասեր, ինքնասեր և ինքնահավան էակ է: Փորձեցեք փողոցում առաջին պատահած փոքր ի շատն ուսում առած հային, օրինակ, մի ուսումնարանի տեսչի տեղ առաջարկելու (մանավանդ ուճիկով), և նա առանց ներկայութեան, մեծ ուրախութեամբ կհամաձայնվի և կընդունի ձեր առաջարկութիւնը: Բայց պահանջեցեք միևնույն անձից գրավոր մի պրոգրամա... և այն ինքնահավան հանճարը, կարելի է, իսկույն ետ կքաշվի... Միևնույն մարդը, որ ամեն տեսակ պաշտոն ուրախութեամբ հանձն կաննի (այն պայմանով, որ նրա անձը քննութեան չենթարկեն), անշափ կգծվարանա գրավոր պրոգրամա ներկայացնելու... Խեղճ մարդ... նորանից գաղափար են պահանջում, իսկ նորան, կարելի է առհասարակ մատչելի չեն որևէից գաղափարները»:

Այսպէս դպրոցը կազատվի անընդունակներից: Բայց կարող են պատահել և այնպիսիները, որոնք սովոր են սիրուն, գեղեցիկ ոճով ամբողջ հատորներ գրել, բայց մի հատ առողջ միտք չհայտնել: Պետք է, սակայն հուսալ, որ հոգաբարձութիւնը չի խաբվե այդպիսի գրվածքներից, ուր միտքը զոհված է ձեռին:

«Գյուղական քահանայ» առաջնորդողում Արժրունին նորից վերադառնում է ներսիսյան դպրոցին: Նախ և առաջ նա բացատրում է քահանայի նշանակութիւնը գյուղում: Գյուղական աղքատ, տղետ, բայց շատ հավատալից ժողովուրդը իր կյանքի բոլոր դեպքերում խորհրդատուի, առաջնորդողի հարկավորութիւն է զգում և միշտ դիմում է քահանային: Քահանան նրա համար միայն եկեղեցական ծիսակատարութիւնների պաշտոնյա չէ, այլ պիտի կարողանա և բավարարութիւն տալ նրա բոլոր հարց ու փորձերին, որոնք վերաբերվում են նրա տնտեսութեան, նրա առողջութեան, նրա զավակների կրթութեան: Համապատասխանում է արդյոք քահանայի կրթութիւնը ժողովրդի պահանջներին: Եթէ քահանան ուսում ստացել է տարրական ուսումնարանում, նա, ուրեմն, կարող է միայն իմանալ հայերեն և ռուսերեն լեզուները, քրիստոնեական ուսում և թվաբանութիւն: Այս պաշարով, ավելորդ է նույնիսկ ասել քահանան չէ կարող շատ տարբերվել իր ժողովրդից, շատ բարձր լինել նրանից:

Ենթադրենք, թէ մեզանում բացվեց մի հոգևոր բարձր ճեմարան, որ ավանդում են հոգեբանութիւն, աստվածաբանութիւն, զանազան լեզուներ, ընդհանուր և հայկական եկեղեցական պատմութիւն: Այդտեղից դուրս են գալիս քահանայացուներ: Կարելի է նրանց ուղարկել գյուղերը: Ո՞չ: «Նա թե՛ միակողմանի, բայց շափազանց բարձր ուսում է ստացել որ կարողանա մատչելի լինել ժողովրդին»: Նա գործնական կյանքի մարդ չէ, նա վերացու-

կան ուսում է ստացել և բոլորովին տեղ չունի գյուղում: Ինչ է գյուղի պահանջը:

«Ամեն տղետ էակին հատուկ է հրաշք պահանջել այն անձերից, որոնց նա իրանից վեր է համարում: Գյուղացին անշափ պատվում է քահանային, որ շատ անգամ նորան դիմելով, նա պահանջում է այն, ինչ որ նորա կարողութիւնից վեր է:

Գյուղացու երեխան կամ կինը հիվանդացավ... նա դառնում է դեպի քահանան, նորանից խրատ ուղելով, իսկ քահանան, որ բարձր, վերացական, լիզվագիտական կամ աստվածաբանական կրթութիւն է ստացել, անկարող է նորան յուր խրատով օգնելու, որովհետև նա բժշկութեան ամենատարրական հմտութիւն անգամ չունի:

Գյուղացին տղետ է: Նա չգիտե իր հողը բարվոքել... Նորա բնակեցրած երկիրը անհարթ և աղքատ է, գյուղի շորս կողմը շկան անտառներ, նա ստիպված է փայտի տեղ աթար իր տանը գործածելու, նա վառում է ուրեմն այն նյութը, որ հարկավոր է հողը բարվոքելու:

Այս և սորա նման դեպքերում որքա՞ն օգուտ կարող էր բերել քահանան... Եթէ նա օրինակ միջին կարգի ուսումնարանից դուրս եկած լինելով փոքր ի շատն տեղեկութիւն ունենա տարրական բնագիտական ճշմարտութիւնների վերա, փոքր ինչ տեղյակ լիներ գյուղային տնտեսութեան:

Միայն այն ժամանակ նա կարողարացնի ժողովրդի կողմից նորան ընծայած անսահման հավատարմութիւնը, երբ միջին կարգի մի հոգևոր դպրոցում ընդհանուր կրթական դաստիարակութիւնը ստանալով, նա միջոց կուրենա ժողովրդի տնտեսական և հոգևոր աննախանձելի դրութեան էութիւնը բարձրելու և իր գործնական ազդեցութեամբ կարողանա նպաստել այն դրութեան բարվոքելուն»:

Այստեղից արդեն պարզ է, թէ ներսիսյան դպրոցը Արժրունու ծրագրով ի՞նչ պիտի լիներ: Մի հոգևոր միջնակարգ դպրոց, որ նկատի է առնում կյանքի գործնական պահանջները: Այդ դպրոցի տված քահանան մի կրթված, տեղյակ մարդ է, որ գնում է ժողովրդի առջևից և գիտե իր հոտի բոլոր հարցերին բավարար պատասխան տալ: Չնայած որ այս հանգամանքը ավելի քան պարզ է ամեն մի մարդու համար, չնայած որ Արժրունուց հետո շատերը մեզանում կրկնեցին նույն միտքը, մեր թեմական դպրոցները երբեք չկարողացան այնքան լայն հիմքերի վրա դրվել, այնպիսի ծրագիր գործադրել, որ հոգևոր պաշտոնյան, ուսում ստանալով այնտեղ, կարողանար լինել ժողովրդի իսկական բարեկամը, իսկական օգնականը և հոգու և աշխարհի գործերի մեջ:

Այսպէս ահա՛ Արժրունին որոշ ծրագրով, որոշ պահանջներով էր վերաբերվում ներսիսյան դպրոցին: «Մշակի» ներքին տեսութեան մեջ զանազան մարդկանց կողմից քննվեցան դպրոցի պահանջները: Այդ բոլոր գրվածքների միտքը մի էր՝ ռեֆորմ: Այսպէս, Ն. Լ. ստորագրութեամբ մի հոգևածի մեջ քարոզվում էր այն միտքը, թէ պետք է վերացնել որդեգրութիւնը ներսիսյան դպրոցում. նախ այն պատճառով, որ որդեգիրների վրա ծախսած գումարով կարելի էր ավելի մեծ գործ կատարել դպրոցում, երկրորդ, որ որդեգիրների փակված կյանքը վատ է ազդում նրանց առողջութեան վրա: Այս առիթով «Մեղուն» դարձյալ բանակոխի սկսեց, կամենալով ցույց տալ որդեգիրներ պահելու անհրաժեշտութիւնը:

Հարցեր արծարծել բավական չէր: Հարկավոր էր, որ ներսիսյան դպրոց ունենար այնպիսի վարչութիւն, որ կարողանար իրագործել ցանկալի ռեֆորմները: Սեպտեմբերի սկզբին նշանակված էին հոգաբարձական ընտրու-

թյուններ, և Արծրունին առաջ բերեց ընտրական մի ամբողջ պայքար, հիմնարկած սկզբունքների, որոշ ծրագրի վրա:

Ընտրական պայքար... Սա այն խոշոր նորությունն էր, որ մտնում էր մեր կյանքի մեջ 1872 թվականից: Գրանից առաջ հայ ժողովուրդը նույնիսկ կաթողիկոսներ էր ընտրել, Թիֆլիսում երկու անգամ հոգաբարձական ընտրություններ էին կայացել: Մենք ունեինք մամուլ, բայց նա կամ անտարբեր էր դեպի ընտրությունները, կամ բավականանում էր երկու ջուխտ խոսք ասելով: Եվ ի՞նչ էր այդ խոսքը: Մեր խմբագիրները կամ Աստուծու օգնությունն էին կանչում ընտրողների վրա կամ ընդհանուր պլատոնական ցանկություններ էին հայտնում, որ ընտրվեն լավ մարդիկ: Գրիգոր Արծրունին որոշ կուսակցություն կազմեց, ազիտացիա սկսեց, իր խմբով ընտրություններին մասնակցեց: Առաջին անգամն էր մեղանում, որ ընտրությունները դառնում էին գաղափարների ընդհարման ասպարեզ. առաջին անգամն էր, որ տպագրական խոսքը պայքարի ղեկավար էր հանդիսանում: Ահա՛ ինչ էր ասում Արծրունին իր «Ընտրողներին» առաջնորդողում, որ լույս տեսավ օգոստոսի 31-ի համարում.

«Մենք կրկնում ենք, ամեն ժողովուրդ ամեն տեղ սովորություն ունի հավատ շնչածալելու իր սեփական ուժերին, դիմել իրանից բարձր դասին պատկանող մարդիկներին, որոնցից մի քանիսը հարստություն կամ աստիճաններ ունին, մյուսները դիպլոմ: Նշանակություն ունեցող մարդիկը իրանց կողմից օգուտ քաղելով ժողովրդի տգիտությունից, հավատացնում են նրան, թե առանց այսինչ հաստատիոր վաճառականի, այնինչ հաստադրուխ տղայի, այսինչ դատարկագլուխ բարձր ուսում ավարտածի, ինքը ժողովուրդը ոչինչ չէ կարող անել»:

Այդ հին նախապաշարմունքի դեմ պետք է գնալ: Պետք է իմանալ, որ մեծ սխալ և անարդարություն է արտոնված կաստաներ ստեղծել և նրանք հանձնել մեր գործերը: Հարստությունը, աստիճանները, դիպլոմը մոլորեցնում են մարդկանց և այնքան ճնշում, որ անկարելի է լինում հասկանալ, թե այդ արտոնված կաստաներից դուրս էլ կարելի է ընտրելու արժանի մարդիկ գտնել:

«Ենդ՞ ժողովուրդ, որքան խաբում են քեզ, և դու այդ բանը չես նկատում: Շատ անգամ դու կարդում ես լրագիրը և կարծում ես, որ նա իմաստությունը լի է, բայց վերջը տեսնում ես, որ ոչինչ չես հասկանում տպածիցը և մի կողմ ես դնում թերթը, քեզ ու քեզ ասելով. «Երևի այնքան խելոք բան է, որ ես չեմ հասկանում»:

Բայց խեղճ, դու չգիտես, որ այն մարդն էլ, որ գրել է հոդվածը, նա էլ չէ հասկանում՝ ինչ է գրել, որովհետև նա ինքն չէ շարունակում իր սեփական մտավոր դարգացման վերա հոգալ... որովհետև... ժամանակ չունի... իսկ քեզ սովորեցնել է հանդգնում»:

Թեև անուններ չկան, բայց պարզ է, որ այս խոսքերը ուղղված են «Մեղուի» և նրա խմբի դեմ: Այս հանգամանքը ի նկատի առած, հասկանալի են դառնում և հետևյալ տողերը.

«Ժողովուրդ, կամենում ես մի կուսակցություն կազմել, որ քեզ կծառայի և կհոգա քո օգուտները, ընտրե մարդիկ ամեն դասից, ամեն պարապմունքից, ամեն վիճակից»:

Հավատա՛, որ ընկերական ոգի իսկ այդ է նշանակում, բայց ոչ թե այն, որ քարոզում են մարդիկ, որք իրանք ընկերակցական ոգու ամենամեծ թշնամիներ են, թույլ շտալով ոչ մի շարժում, ոչ մի մրցումն, որ դուրս է իրանց սահմանափակված համբարի օգուտներից, խեղդելով իրանց նախանձի մեջ

ամեն նոր օգտավետ ազգային երևույթը, որովհետև իրանք ընդունակ չեն նույնը իրագործել:

Ընտրողներ, աշխատեցե՛ք շրջապատել ձեզ ազնիվ, ուսյալ, բայց ժողովրդին անկեղծ բարեկամ մարդիկներով»:

Նորից ժողովուրդը, նրա շահերը, նրան ծառայելը: Մինչև այդ ո՞վ էր ուշադրություն դարձրել այդ ժողովրդի վրա, ո՞վ էր դիմել նրան: Մինչև այդ գիտեին միայն, որ պետք է ընտրել մեծամեծներին, աղա, իշխան, հարուստ մարդկանց: Այժմ քարոզվում էր ազատ ընտրություն, հանձնարարվում էր կաստային նախապաշարմունքները ոտնակոխ անել և ընտրել անխտիր այն ամենքին, որոնք կարող են ծառայել ժողովրդի գործին:

Այս սկզբունքների վրա առաջ տանելով ազիտացիան, երիտասարդությունը ընտրության օրը հաղթանակ տարավ: Եկեղեցիներից ընտրված պատգամավորների մեծամասնությունը «Մշակի» մարդկանցից էր բաղկացած. ընտրվեց ինքը, Արծրունին, ընտրվեցին Բաֆֆին, Իզմայիլյանը, Սունդուկյանը և ուրիշները: «Մշակը» այժմ էլ ընտրված պատգամավորներին դիմեց, իրանց ցույց տվեց, թե ինչ է սպասում հասարակությունը նրանցից: Ներսիսյան դպրոցին նա հատկացնում էր ահազին դեր: «Այդ դերը, քահանաներ և ժողովրդական ուսուցիչներ պատրաստելը, միայն Թիֆլիսի համար նշանակություն չունի, այլ բոլոր առաջայների համար»: Թիֆլիսի հայերին վիճակվել է այդ բարոյական ուժերի առաջնորդը հանդիսանալու բախտը, ապա ուրեմն, Թիֆլիսը պիտի արդարացնե ընդհանուրի ակնկալությունները:

«Ամբողջ հայությունը նայում է մեզ վերա. ցույց տանք, որ մենք արժանի ենք մեզ ընծայած հավատարմության: Թույլ շտանք ոչ ոքին ասել, որ մենք անհոգ ենք ազգային գործերի վերաբերությամբ և արժանի չենք նոցա»:

Թիֆլիսի ժողովուրդ, քեզանից և միայն քեզանից կախված էր ընտրել այնպիսի պատգամավորներին, որք ազնվաբար կլրացնեին իրանց պարտքը, քեզանից կախված էր ընտրել այնպիսի մարդիկներին, որք իրանց անձնական օգուտները և հակումները թողած, իրանց աչքի առաջ ունենային միմիայն ընդհանուր օգուտը»:

Իր կողը «Մշակը» վերջացնում էր, պատգամավորներին ուղղելով այսպիսի խոսքեր.

«Մի՞թե մեր մեջ չի զարթնի ինքնասիրության զգացմունքի նշույլը, մի՞թե մենք և այս անգամ ընդհանուր գործի մեջ առաջվա տարիների պես մեզ անընդունակ կհայտնենք»:

Ո՛չ, այդ լինելու չէ: Մենք պիտի ցույց տանք, որ մենք գիտենք ուղղել մեր սխալները և անկեղծ սրտով խոստովանելով նոցա, չենք ընտրելու այն տեսակ մարդիկներին, որոնց առաջ ընտրում էինք, այլ կընտրենք ընդհանուր գործը առաջ տանելու ընդունակ անձերին, նոր ուժերով, նոր մարդիկներին, ժողովրդին և ժողովրդական գործին անկեղծ համակրող մարդիկներին»:

Սեպտեմբերի 10-ին սկսվեցին պատգամավորների պարապմունքները, որոնք տևեցին երեք օր: Ընտրությունները նույն հետևանքները տվին. Գրիգոր Արծրունին և նրա հետ աշխատող մի քանի մարդիկ հոգաբարձու ընտրվեցին: «Մշակը» հաղթություն էր տոնում: Իսկ «Մեղուն»... Հետաքրքրական է այժմ «Մեղուին» նայել:

«Մշակի» մեջ մենք չենք տեսնում ընտրությունների նկարագրությունը: «Մեղուն» է, որ «Հունար հունար իշուն» հոդվածի մեջ ներկայացնում է ծխական ընտրությունները ծաղրական դրություն մեջ: Ինչպես երևում է, բավական ուժեղ ու աշխույժ է եղել երիտասարդության ազիտացիան: Եվ «Մեղուն» ծանր

հառաչում է, դանդառներ է անում: Ճարը կտրածի պես նա ծաղրում է Արև
բունու արտասանությունը, դնելով նրա բերանում այսպիսի խոսքեր.

«Բարձրագույն ուսումը և կրթությունը արտասահմանյան կարող էին
առանց գնահատվելու. հասկացան կնահատեցին: Եվ ինչպես կարող էր այս
պես կատարվել. բանը վաղուց սարկված էր այն անմիտ պատճենների և սո-
ղարկապաշտիների դեմ»:

«Մեղուն» կանչում էր, թե ընտրությունները սարքված էին, թե կուսակ-
ցություն է կազմվել: Նա պարտք էր համարում զգուշացնել, խրատել, և ասում
էր. «Հոգաբարձու ընտրվողը պետք է հոգավով ճշմարիտ հայ մարդ լինի: Մ.
Ֆրանսիացին, ո՛չ գերմանացին հոգավով, ևս ավելի համաքաղաքացին (կո-
մսպոլիտ), որքան էլ իրրև մարդ լավ լինի, օգտակար չէ հայ դպրոցին հեռա-
բար և հայ ժողովրդյան ներկա պարագաներում»: Իսկ Սենեքերիմ Արծրունի
որ մասնագիտություն էր դարձրել «Մշակի» դեմ արշավանք մղելը, գրում էր.

«Ո՞ւմը հայտնի չեն այն խայտառակ միջոցները, որոնք մենք գործ գրի ենք
պատգամավորներ և հոգաբարձուներ ընտրել տալու համար, այսինքն ներ-
կայացուցիչներ ազգային կամ ժողովրդական համոզմունքների՝ այսպիսի
մարդկանց, որոնք ըստ մեծի մասին Հայոց եկեղեցիների (Տփլիսի) կը ու-
մուտքը շփտեն, որոնք վաղուց է, որ կտրել են իրանց միության կապը ազգի
հետ և որոնք ձգտում են դեպի օտարին և մեր այժմյան դրություն մեջ մեզ
վնասակար համաշխարհականությունը, շկամենալով մինչև անգամ հասկանալ
ազգություն բառի նշանակությունը»:

Նշանավոր է այս բանակոխվող մի քանի կողմերով: Հայ պահպանողակա-
նությունը կռվելու մի նոր միջոց չէր գտնում, թեև կռվում էր վաղուց: Արև-
յանցին, Նազարյանցին, Նալբանդյանցին և առհասարակ բոլոր նորերին մի
ժամանակ անվանում էին լյութերական, աղանդավոր: Անցավ այդ ժամանակը.
Այժմ այլևս կրոնով չէր կարելի վախեցնել. և պահպանողականները իրանց
հակառակորդներին անվանում էին կոսմոպոլիտ, հոգով օտարացածներ: Գու-
միկնույն հին երգն էր, որի մեջ բառերն էին փոխվում ժամանակի հետ: Կու-
սությունը, դիմադրելու զենքը միևնույնը մնաց մինչև այսօր էլ: Սենեքերիմ
Արծրունին պահպանողականության ամենամեծ իմաստությունն էր արտահայտ-
ում, բարդելով հակառակորդների վրա այն ահավոր մեղադրանքը, թե նրանք
եկեղեցի չեն գնում, եկեղեցու դռները չեն ճանաչում: Դա նշանակում էր, որ
միայն եկեղեցի գնացողներն ունին իրավունք լավ, հասկացող հայ լինելու
եվ այդ ողորմելի զենքը մնաց պահպանողականների ձեռքում և դրանից հետո,
երկար ժամանակ, երբ հարց էր լինում ընտրությունների կամ առհասարակ
ազգային-վարչական գործերի մեջ ձայն ունենալու մասին:

Կուսակցություն, կանչում էին «Մեղուի» մարդիկ մի տեսակ սարսափով
կարծես կուսակցությունը մի հրեշ էր, որ պիտի զողացներ նրան մեր մեզ
բերող երիտասարդներին: Գրիգոր Արծրունին «Մեր կուսակցությունների
առաջնորդողով բացատրում էր, որ կուսակցությունը ոչ միայն սարսափ ազ-
դող մի բան չէ, այլ անհրաժեշտություն կյանքի մեջ:

«Ով ծանոթ է փոքր ի շատե պատմության հետ, պիտի ճանաչէ, թե կու-
սակցությունները կազմվում են միայն այն ժամանակ, երբ հասարակությունը
քաղաքակրթվում է: Կուսակցությունները մի հասարակության մեջ կյանքի
նշան են: Կուսակցություն բառը (partei) լատինական pars բառից, նշանա-
կում է մաս կամ կազմ: Նա ուրեմն ժողովրդի մի խումբ է (մի մաս է), որ մի
տեսակ ուղղություն ունի: Կուսակցությունը միշտ կարող է առանց սխալվելու
հպարտությամբ ասել. ես ազգի մի մասն եմ կազմում:

Այն երկրներում, որտեղ բոլորովին ճնշված է քաղաքական և հասարա-
կական կյանքը, որտեղ տիրում է կատարյալ անտարբերություն զեպի հասա-
րակական գործերը, որտեղ արգելված է մի խումբ մարդիկներին ժողովել,
գատել, խոսել, այնտեղ չկան կուսակցություններ: Բոլոր այն ազգերի մեջ,
որոնք քիչ շատ քաղաքական կյանքին ընդունակ են, հեշտությամբ կազմվում
են կուսակցությունները:

...Չպատկանել ոչ մի կուսակցության, բոլորովին պատիվ չէ բերում ոչ
մի քաղաքացու: Ոչ մի կուսակցության չպատկանել, նշանակում է ավելի
եսական, կենդանական կյանք վարել և ոչ թե հասարակական»:

Բացատրելով այնուհետև կուսակցությունների բնավորությունը, Արծրու-
նին դալիս դիմում էր մեր կյանքի մեջ նկատվող շարժումներին:

10—15 տարի առաջ, ասում է նա, Քիֆլիսի հայ հասարակական կար-
ծիրը «հին, ամենափտած սերունդի» սեփականությունն էր: Ժողովուրդը նա-
խապաշարված էր ամեն մի նորության դեմ: Ռուսաց համալսարանները
ավարտած երիտասարդները փոքր առ փոքր սկսեցին հավաքվել իրանց հայ-
րենիքում, փորձեցին կազմել կուսակցություն և գործել պառավների դեմ:

Երիտասարդներին անվանում էին լիբեր, պրոտեստանտ, ազգ քանդող,
ազգատյաց, աշխատում էին նվազեցնել նոցա պատիվը հասարակության մեջ:
Երիտասարդները կատարյալ իրավունքով վրդովվում էին այդ մեղադրանքների
պատճառով. նոքա ասում էին՝ մենք ցանկանում ենք միայն առաջադիմություն
և ավելի ուղիղ... նոքա իրավունք ունեին, և շատ լավ արեցին, որ խլեցին
պառավների ձեռքից հասարակական կարծիքի իշխանությունը:

Ժամանակն անցավ. հասարակական կարծիքը, դպրոցները, օրագրու-
թյունը այդ մարդիկների ձեռքում են այժմ, նոքա բռնեցին պառավների տե-
ղը... բայց ի՞նչ արեցին նոքա այն ժամանակ... նոքա հանգստացան իրանց
հաղթությունից հետո, այն օրից ետ նոցանից ոչ մինք իր ձեռք շառավ ոչ մի
գիրք, ոչ մի օրագիր, որ շարունակե կարգալ, զարգանալ: Դասերը տալիս էին
գպրոցներում դրամական վարձատրություն էլ ստանալով, բայց ոչ մի գիրք
էլ չէին կարդում դասատուության նոր մեթոդների վերա, ոչ մի խրատ չէին կա-
մենում ընդունել այսինչ կամ այնինչ վերանորոգության վերա: Գիշերները
անքուն անցկացնելով թուղթ խաղալու մը, նոքա հավատացած էին, որ ինչպես
որ լինի, մյուս օրը հորանջելով դաս կտան և կստանան իրանց ոտճիկը, հա-
վատացած էին, որ հասարակական կարծիքի վրա ազդել չէ կարող ոչ մի նոր
խումբ, նոցանից չէ կարող խլել հասարակական կարծիքի մենավաճառը...

Հանկարծ կազմվեցավ ժողովրդական մարդիկներից մի կուսակցություն...
եմանապես իրանց հայրենակիցներին լուսավորելու նպատակով, և ի՞նչ է ներ-
կայանում մեր աչքերին... Միևնույն մարդիկը, որք կատարյալ իրավունքով
վրդովվում էին, երբ պառավները նոցա հալածում էին... միևնույն մարդիկը
այժմ, նշանակությունը հասնելուց հետո, մոռանալով իրանց անցյալը, միև-
նույն անամոթ միջոցներն են գործ դնում նոր կազմված կուսակցության վե-
րաբերությամբ... սուտ լուրեր, բամբասանք, հայհոյանք, ամենակեղտոտ
ինտրիգներ, գիտություն գաղափարի պախարակելը, առաջադիմության նշույլ-
ների ոտնակոխ անելը...

Մեր այս գործի առաջին հատորում մենք մանրամասն նկարագրել ենք
վախժանական թվականների մեր այն երիտասարդությունը, որ գործում էր
Քիֆլիսում: Դա Մոսկվայի հայ երիտասարդությունը չէր, առաջադիմական,
կիրոպական քաղաքակրթության երկրպագու Քիֆլիսը մեր պահպանողակա-

նության նոր կերպարանափոխությունն էր ներկայացնում վաթսուներկան թվա-
կաններին. դա նույն ազգամուկ-կրոնական ուղղությունն էր, բայց ավելի կրթի-
ված, դարդացած: Եվ այս պատճառով զարմանալի չէ, որ այդ սերունդը հա-
լածում էր «Մշակի» մարդկանց: Արծրունին այդ սերունդը շարունակողը չէր,
այլ Մոսկվայի ազատամտության զարգացումը հայկական հողի վրա: Այս
հանդամանքը, այս պատմական հոսանքների հաջորդականությունը, Արծրու-
նին, իհարկե, չէր նկատում իր առաջին իսկ քայլերից: Հետո պարզվեց ամեն
ինչ: Բայց նշանավոր է, որ Արծրունուն այնպես էր թվում, թե ընդհարվում են
Քիֆլիսում՝ ոչ այնքան մեղանում գոյություն ստացած հոսանքները, որքան
կրթության սխտեմները: Ռուսաստանում ուսում ստացած երիտասարդությու-
նը անհաշտ է արտասահմանյան կրթություն ստացածների հետ, այսպես էր
ձևակերպվում թշնամությունը: Գուցե այդ իսկ ժամանակներում շատ փաստեր
կային, որոնք այդպես էին թելադրում. բայց արտասահմանյան և ռուսական
կրթության փոխադարձ թշնամություն՝ դա մշտական, հաստատ, անխուսա-
փելի երևույթ չդարձավ մեղանում և չէր էլ կարող դառնալ: Այսպես թե այն-
պես, Արծրունին արդեն ազանդավորի հիացմունքով էր վերաբերվում արտա-
սահմանյան և մանավանդ գերամանական կրթությանը: Եվ իր վերահիշյալ
հոգվածը վերջացնում էր այսպես.

«Զգուշը կացեք, պարոններ, եթե ոչ ժամանակով կփոշմանեք: Կամ հե-
տևեցեք մեզ, կամ սուս կացեք... Տեսնո՞ւմ եք արևմուտքում կվրոպական
լուսավորության նշույնները: Այս փոքրիկ սև բիծը կարող է դառնալ մի սար-
սափելի ամպ: Եվրոպայից վերադարձած, լուսավորության աղբյուրի մոտ
ուսում առած, ճշմարիտ գիտական և աշխատասեր մարդիկների թիվը օրեցօր
կշատանա: Այսօր երկու երեք են, վաղը կլինեն տասը մեկ էլ օրը քսան...»:

Դրանից առաջ էլ Արծրունին «Լուսավորության նվիրակները» հոգվածում
(№.15), որ նվիրված էր Գերմանիայում ուսում առնող երիտասարդներին, իր
ամբողջ հույսը դնում էր արտասահմանցիների թվի ավելանալու վրա:

«Մեզ մնում է,— ասում էր նա,— թե՛ հիների, թե՛ հասարակության, թե՛
նորերի հետ գործը փորձելուց հետո, ասել մեաք բառ և մտքումը ավելացնել՝
առհավիտյան... Օտար երկրումը ձեր ճանապարհը բաց է, ձեզ առաջարկվում
են պաշտոններ և պարապմունք... Բայց որովհետև ձեզ մոտ խոսքը և գործը
համաձայն են, դուք պիտի գաք, որ կովեք: Փոքր թվով լինելով, դուք կհաղթի-
վեք, որովհետև տգիտության տարրի ընդդիմության ուժը դեռևս շատ զորեղ
է... Միայն բազմաթիվ լինելով, կամ գոնե մի խումբ կազմելով, լուսավորու-
թյան նվիրակները կարող են հուսալ, թե կոհվը հաջողակ կլինի»:

Այսպես էր թվում առաջին քայլափոխում, այսպես էր խոսեցնում ան-
սահման հավատը դեպի արտասահմանյան կրթությունը: Փորձ դեռ չկար,
բայց փորձը կլիներ շուտով, և Արծրունին կհամոզվեր, թե որքան ինքը սխալ-
ված է եղել իր ջերմ հավատի մեջ: Արտասահմանը բացառություն չէր. այն-
տեղ էլ պատրաստվում էին զանազան տեսակ մարդիկ և դրանցից շատերը
պիտի գային հայրենիք ոչ թե կովելու հնություն դեմ, այլ ուղղակի այդ հնու-
թյան, հետամնացության շարքերը մտնելու համար...

Իսկ մինչև այդ, Արծրունին մեր ցուրտ ու անհրապույր իրականություն
մեջ ոգևորվում էր այն հավանականությամբ, թե Եվրոպայում գինվորներ են
պատրաստվում և մինչև նրանց գալը նա ինքը, համարյա մենակ, կոհվ էր
հայտարարել և առաջ էր տանում նրան: «Էլ չենք հավատում» առաջնորդողի
մեջ նա մի զարմանալի ուժեղ ոճով դատափետում է հակառակորդներին և
ցույց է տալիս, որ այլևս ոչինչ համերաշխություն չի եղել չէ կարող:

«Մենք հավատում էինք ձեզ, որ դուք ուսումնական, գիտնական, առաջա-
գիտ, գործունյա մարդիկ եք, բանի որ հեռվից էինք նայում ձեզ վերա, բանի որ
ինքներս այնքան զարգացած չէինք, որ ձեզ քննադատենք»:

Այժմ է՛լ չենք հավատում:

Մենք միամտաբար հավատում էինք, որ դուք օրագրության վերաբերու-
թյամբ ձեր կարողության չափ արդյունաբերում եք նոր մտքեր, առաջ եք
բերում նոր կենսական պահանջներ... բայց դժբախտապես համոզվեցանք, որ
ձեր գործունեությունը ոչ թե օգտավետ չէ եղել, ոչ թե ապարդյուն է անցել,
այլ վերին աստիճանի վնասել է, որովհետև զգվանք է ծնել ժողովրդի մեջ
դեպի տպած խոսքը առհասարակ և դեպի լրագրությունը մասնավորապես:

Այժմ է՛լ չենք հավատում:

Մենք կարծում էինք, որ դուք ընդունակ եք կենսական պահանջների վե-
րաբերությամբ ծանր ու օգտավետ հետազոտություններ անել, բայց անդադար
պատահելով Բարոզների և ոչ մի հետազոտություն, ոչ մի նոր ինքնուրույն
միտք չգտնելով, համոզվեցինք, որ ձեր գրվածքների մութ լինելու պատճառն
է մի բարի ցանկություն մտքերի ազդատությունը լեզվի ձևերով ծածկելու:

Այժմ է՛լ չենք հավատում:

Բարոյականության վերա ձեր քարոզները կարդալով, մենք հավատացած
էինք, որ իրանք քարոզիչներն էլ պիտի բարոյական լինեն: Բայց մաքուր
խղճմտանքով հրապարակապես անվանում ենք ձեզ անբարոյական, որովհետև
ձեր խոսքի և գործի մեջ միշտ անհամաձայնություն և հակառակություն ենք
տեսնում: Դուք գասատվություն անելով, նոր գիրք չէիք կարդում, հոգվածներ
և քարոզներ գրելով ինքներդ չէիք հետևում գիտության առաջադիմությանը,
քարոզում էիք լույս, լուսավորություն, առաջադիմություն, բայց հասարակու-
թյան մեջ նոր հայտնվող ուժերը ձեր նախանձի մեջ ատելությամբ խեղ-
յում էիք:

Այժմ է՛լ չենք հավատում:

Դուք ձեզ նորանով կարդարացնեք, որ այդ նոր հայտնվող ուժերը փո-
խանակ ձեզ հետ բարեկամանալու, հենց սկզբից պատերազմեցին ձեզ հետ,
հակառակեցին ձեզ... Բայց մի՞թե դուք երկխալի միամտությամբ կարծեցիք,
որ նոր միտքը կարող է չպատերազմել հինի հետ:

Մենք ձեզ այդքան միամիտ չէինք կարծում և համոզված էինք, որ դուք
տակալանում եք այս տարրական ճշմարտությունը:

Այժմ է՛լ չենք հավատում:

Մենք միայն մի բանի դեմ մինչև այժմ չհամարձակվեցանք խոսել, այն
է ձեր լեզուի հմտության վերա: Բայց երբ համոզվեցանք, որ լեզուի գիտցող-
ները մութ, անհասկանալի, ձանձրալի են գրում, երբ ձեր գրվածքները շարու-
նակ կարդալով, ոչինչ չսովորեցանք և ոչինչ չհասկացանք, երբ կարդացող
ժողովրդից ձեր լեզուի հմտության գովասանություններ լսելով հետաքրքրե-
ցանք հարցնել, թե ինչպես է հավանում նա միտքը և պատասխան ստացանք,
որ միտքը չեն հասկանում:

Այժմ է՛լ չենք հավատում:

Եվ այս կուսակցությունը, որի դեմ ուղղված էին այս համարձակ, անխնա
մեղադրանքները, աշխատում էր պաշտպանվել, հակահարվածներ տալ: Բայց
ինչպես: Հայ կոսմոպոլիտների, հայ եկեղեցու դոնները շնանաղո նորերի դեմ
կազմած իր ահագին մեղադրական ճառի մեջ «Մեղուի» սյուններից մեկը,
Սենեքերիմ Արծրունին, ասում էր. «Մենք հայերս չենք կարող լինել մեր կար-
ծիքների մեջ ծայրահեղ, որովհետև մենք ոչինչ չունենք զոհաբերությանց

համար, ոչինչ, բացի մեր անհատական գոյությունը: Սրանից դենը այլևս չէ կարող գնալ պահպանողական անշարժությունը և մտավախության այդ քվինտ-էստինցիան շատ լավ ապացույց էր, որ Արծրունին իրավունք ուներ խփելու պահպանողականության դեմքին՝ «Այժմ է՛լ չենք հավատում»: Չպետք էր հավատալ, չէր կարելի հավատալ: Եվ պահպանողականության այդ հիմնական դոս հարձակումները մի-մի առիթ էր Արծրունու համար՝ դուրս բերել մեր ազգային վատ հատկությունները հրապարակի մեջ:

Այսպես, հոգաբարձական ընտրությունների միջոցին Պետրոս Սիմոնյանցը տպեց «Մեղուի» մեջ մի նամակ, որ պարունակում էր ինչ-որ մտքականարկներ Արծրունու տեսչության մասին Մարիամյան և Գայանյան դպրոցներում: Այդ ակնարկներից կարելի էր հետևեցնել, թե Արծրունին ինչ-որ շահամուլ ձգտումներ է ունեցել: Արծրունին պատասխանեց Սիմոնյանցին: Բայց բանը այդ պատասխանը չէ: Երևույթը առիթ տվեց նրան գրել՝ «Արի՛ խայտառակներ» գեղեցիկ առաջնորդողը: Այդտեղ նա խոսում էր ազգային արատների մասին: Ասում են, թե ստոր հատկությունները՝ խաբեբայությունը, անազնվությունը, խարդախությունը հատուկ են քաղաքակիրթ ազգերին. չկարգացած, նահապետական ազգերը պարզամիտ են: Սա ընդհանուր համոզմունք է, բայց անհիմն համոզմունք:

«Շատ հեշտ է մի բանի մեջ համոզված մնալու, ասում է Արծրունին, հարկավոր է միայն փակել աչքերը ու բամբակ կոխել ականջների մեջ, և դուք հավաստի կարող եք ասել, որ ձեր համոզմունքին հավատարիմ կմնաք...»

Ամբողջ մարդկությունը այդպես էր գործում պատմության ամբողջ ընթացքում ամեն նոր, առաջադեմ, լուսավոր, նորոգիչ երևույթի վերաբերությամբ: Ես չեմ կամենում լսել, և չեմ լսի. չեմ կամենում տեսնել, և չեմ տեսնի...»:

Հին և միջնադարյան մարդկության պատմությունից վկայություններ բերելով, որոնք հաստատում են, թե ստոր հատկությունները, ընդհակառակն, հատուկ են տգիտության և անզարգացած մտքին և հետզհետե չբանում են, երբ մի ազգ քաղաքակրթության աստիճաններով բարձրանում է, նա բերում է մի այսպիսի համեմատություն.

«Լուսավորված, մանավանդ ռամկապետական ոգով կրթված ազգությունները ուրախանում են, երբ իրանց մեջ նոր երևույթ են տեսնում, նոր ուժ են նշմարում, աշխատում են ամեն միջոցներով օգնել, նպաստել այդ նոր հայտնիվող հասարակական զորության, պարապեցնել, բարձրացնել, գործ գնել նորան, որ ոչ մի հասարակական թարմ գործիչ կորած, անպետք չմնա մարդկային հասարակության համար:

Մեղանում, ընդհակառակն, այն որ հին է, սպառված է, անպետք է, այն որ ցած է, անազնիվ է, նա լավ է, օգտավետ է համարվում, որովհետև մեծ ինքնեբար լի ենք պակասություններով և կարող ենք միայն մեզ նման գործության հետ հարմարվել:

Նոր հայտնվող, թարմ, կենդանի, զորեղ երևույթը ձեր մեջ նկատելու պես, իսկույն ծնվում է ձեր մեջ հետագա գովելի զգացմունքը, — աբի՛ խայտառակներ այսինչ նոր մարդին, կամ այսինչ նոր երևույթը...»:

Այնուհետև Արծրունին տալիս է մի պատկեր, որ, հավանաբար, իր կյանքից է վերցրել: Ինչպես երևում է, Թիֆլիս վերադառնալու առաջին ժամանակը, Գայանյան և Մարիամյան ուսումնարանների իր տեսչության հանգամանքներն են խոսում հետևյալ տողերի մեջ.

«Նախ և առաջ բարեկամանում են այն անձի հետ, շողորթում են նորան, ցույց են տալիս, որ կամենում են անպատճառ նորանից օգուտ քաղել... Քեզ գրավում են, գովում են, տալիս են պարապմունք, գուցե պաշտոն, միևնույն ժամանակ քեզ վերա բարձում են անթիվ պարտավորություններ և չեն տալիս ոչ մի իրավունք... Որ դու իրավունքները չես ստացել ունենալով շատ պարտավորություններ, այդ դու ուշ ես նկատում, դու պահանջում ես քեզ համար իրավունքներ... աղաղակ, աղմուկ, անբավականություն. «մենք հավասարություն սիրող մարդիկ ենք, մենք չենք կարող տանել միապետական ազդեցությունը»: Քեզ կտան պաշտոն, քեզանից կպահանջեն պարտավորություններ, և միևնույն ժամանակ կաշխատեն վիրավորել, անբավականություն պցել, մինչև որ կզղվես: Այն ժամանակ նոքա իրանց նպատակին հասած են, այդ մարդը անընդունակ է: Քեզ կտան մի պարապմունք, կհանձնեն մի հիմնարկություն կառավարելու, բայց միևնույն ժամանակ չեն տա նյութական ոչ մի միջոց: Նյութականից զրկված դու իհարկե ոչինչ չես կարողանա անել, և նորա իրավունք կունենան ասել, նա անընդունակ է... մենք սխալվեցինք»:

Սրանք, այո՛, մեր բարբերն են: Եվ այդ բարբերի ամբողջ դառնությունը անձամբ, թեև շատ կարճ ժամանակով, փորձած Արծրունին այսպես էր վերաջանում իր այդ հոգվածը.

«Եկե՛ք, եկեք նոր մարդիկ, եկեք ձեր ուսմամբ, հմտություններով, բերե՛ք այստեղ ձեր անխոնջ աշխատանքով համբերողությամբ վաստակած գիտությունը, ազնվությունը, բերե՛ք Եվրոպայից վսեմ մարդասիրական մտքերը, ձեր սրտերի մեջ հավատ դեպի լուսավորության առաքելությունը. եկե՛ք որդիք ձեր ծնողների մոտ, մտե՛ք ձեր քաղցր ընտանիքը, վերադարձե՛ք ձեր վայրենիքը, ձեռք մեկնեցե՛ք ձեր սիրելի հայրենակիցներին... մենք գիտենք ինչ կանենք... Մենք միմյանց արդեն տված ունենք մի կախարդական խոսքը, որի դեմ չէ կարող դիմանալ ոչ մի բարոյական ուժ... աբի՛ սրան էլ խայտառակներ»:

Այսպես ահա, բանակոխվր Արծրունուն միայն օգնում էր հասարակական պակասություններ գտնելու և նրանց հրապարակում դատափետելու համար: Բայց չէ կարելի ասել, թե Արծրունին գոհ կարող էր մնալ իր հակառակորդների գործ դրած միջոցներից: Ինչպես «Հայկական աշխարհում» նա շարունակ պահանջում էր, որ մտքերի փոխանակություն տեղի ունենա մեղանում, որ մի գրողի մտքերը քննադատե մյուս գրողը, այնպես էլ «Մշակի» մեջ նա շատ անգամ էր կրկնում, որ բանակոխվր հարկավոր է, որ նա անհրաժեշտ է՝ ճշմարտություններ պարզելու համար: Լինելով այդպես, լինելով մի ուժ, որ մտքերի ընդհարում էր առաջացնում, մի ուժ, որի վերաբերմամբ չէին կարողանում անտարբեր մնալ ժամանակակիցները, Արծրունին, իհարկե, չէր ասում, թե կոխվր կարելի է մղել բոլոր միջոցներով. նա պահանջում էր, որ հակառակորդը լինի ազնիվ, խոր ու լուրջ մտածող, որ դատողության և քննության ձևը լինի շիտակ: «Մեղուն» այդպես չէր կարողանում մարտնչել «Մշակի» դեմ և հարձակումը, բանակոխվր հասկանում էր անձնական վիրավորանքի, հայհոյանքի մտքով: Մենք տեսանք, որ նա ծաղրում էր, օրինակ, Արծրունու արտասանությունը. ֆելիետոնիստ Չաքուճի խայթոցներին նա պատասխանում էր, բերելով այն, որ նա բնական պակասություն ունի, այն է, որ նրա մի ոտը կարճ է: Այդպիսի բաների դեմ Արծրունին հարկավոր էլ չէր համարում խոսել: Նա կովում էր ավելի այն միջոցների դեմ, որոնցով հակառակորդները աշխատում էին ծուռ մեկնություն տալ իր մտքերին, աղավաղել,

արճատել իր ասածները: Պոլեմիկական անբարեխղճության օրինակները նա բացատրում է՝ «է՞դ էր պակաս» առաջնորդողի մեջ (№ 41):

Ամբողջ 1872 թվականի ընթացքում «Մեղուի» էջերից «Մշակի» դեմ կոպելու ամենամեծ եռանդը ցույց էր տալիս փաստաբան Սենեքերիմ Արծրունին: Նա նոր էր սկսել գրել և իրան հայտնի դարձնել ուզում էր համարյա միմիայն բանակուլի մեջ, ուրիշ նյութեր նա չունեց: Եվ ահա Գրիգոր Արծրունին այդ հոդվածով դալիս էր ցույց տալու, թե մի նոր շարիք էլ է ավելացել հայոց մամուլի մեջ: Կային մինչև այդ երկու շարիք: Մեկը բարոյականության քարոզն էր, մյուսը փտած ճարտասանական մեթոդը: Իսկ ո՞րն էր այդ երրորդ նոր շարիքը:

«Ընթերցող,— ասում էր Գրիգոր Արծրունին,— դուք գիտե՞ք ինչ է փաստաբան (ազդեցիկատ): Դուք մի քրեական գործ ունեք կամ մի քաղաքական վեճ. դուք գալիս եք փաստաբանի մոտ և խնդրում եք նորան դատաստանի առաջ պաշտպանություն ձեր հակառակորդի դեմ: Ձեր հակառակորդը նույնն է անում: Երկուսն էլ համոզված են, որ արդար են, կամ գոնե ձևանում են իրանց այս բանի մեջ համոզված: Մինը ասում է սև, մյուսը՝ սպիտակ, և փաստաբաններից մինը պիտի աշխատե ասպացուցանել, թե գործը սև է, մյուսը՝ թե նա սպիտակ է:

Բայց որովհետև միևնույն բանը չէ կարող թե սև, թե սպիտակ լինել, ուստի փաստաբանին մնում է ասպացուցանել, որ նա ոչ սև է, ոչ սպիտակ, թեև սև է, բայց միևնույն ժամանակ սպիտակ է, կամ ավելի լավ ասենք, թեև սպիտակ չէ, բայց սև էլ չէ և այլն»:

Սա փաստաբանական մեթոդ է: Ինչո՞ւ է այդպես: Ծիշտ գիտության մեթոդը այն է, որ նախ կատարվում են հետազոտություններ, ապա միայն դրանցից հանվում են եզրակացություններ, հետևանքներ: «Փաստաբանը ընդհակառակն, նախ և առաջ իրան մի նպատակ, մի հետևանք է նշանակում և հետո նոր սկսում է պտռել, որոնել ասպացույցներ, այն հետևանքին հասնելու համար»: Այս իսկ փաստաբանական մեթոդը գործադրվում է և գրականության մեջ:

«Ասենք թե ես հանձն եմ առել կրիտիկայի մեջ պաշտպանել «Մեղուի» «Մշակի» դեմ, ես փաստաբան լինելով, ակամա ենթարկվում եմ իմ սովորական մեթոդին. ես չեմ կարող հետազոտել «Մեղուի» և «Մշակի» արժանատիությունները ու պակասությունները, որովհետև ես հետազոտելու նպատակով չեմ հանձն առել կրիտիկը, այլ այն նպատակով, որ ասպացուցանեմ, թե «Մեղուն» լավ է, քան թե «Մշակը»... Վաղը գուցե քամին փոխվելով, ես նույն ճարտարությունը կսկսեմ ասպացուցանել, թե «Մշակը» լավ է «Մեղուից»...»

Ազդեցիկատ կրիտիկոսին հարկավոր է ասպացուցանել, որ մեզանում չէ կարող հաստատ ուղղություն մի կուսակցություն կազմվել, նորա համար իր գործը աանելու համար, անպատճառ հարկավոր է այդպիսի բան ասպացուցանել: Նա չէ կարող հետազոտել, որովհետև, եթե ճիշտ մեթոդը գործ դնելով, նա սկսեք հետազոտել, գուցե կգտնեք, թե կարող է կազմվել կուսակցություն, և գուցե կտեսնեք, որ արդեն կազմվեցավ, բայց նորան անպատճառ հարկավոր է ասպացուցանել, որ չկա... ուստի նա իր դատողությունը նորանով է սկսում, որ մեզանում եղած ուսումնարանները և կրթությունը չէին կարող այնպիսի մի հաստատ ուղղություն տալ, որ կազմվեն համոզմունքները, բայց որովհետև միևնույն ժամանակ կուսակցություն կազմելու համար պիտի շատ մարդիկ լինին, ուրեմն ոուս համալսարաններից դուրս եկած մարդիկը

կարող են կազմել մի հաստատ կուսակցություն, ավելի բազմաթիվ լինելով, քան թե արտասահմանից եկածները:

Նա չէ ասպացուցանում, թե կա կամ չկա... բայց նա ասպացուցանում է, որ չէ կարող լինել, որովհետև հարկավոր է նորան ասպացուցանել, որ չկա... և այլն...»:

Այդ հոդվածին Սենեքերիմ Արծրունին պատասխանեց մի ահագին հոդվածով, որ բռնում էր «Մեղուի» բանասիրական բաժնի ամբողջ շորս երեսները: Բայց ի՞նչ էր նա ասում: Այն, որ ամենահին ժամանակներից եղել են փաստաբաններ, որոնք ճաներ էին ասում բարձր ոճով, որ փաստաբանների մեջ եղել են երևելի գործիչներ, գրողներ, որ փաստաբանները դատարաններում այս էին անում, այն էին անում: Հարցը գրականության մեջ գործադրվող փաստաբանական մեթոդի մասին էր, իսկ նա փաստաբանական դասակարգի մասին էր խոսում, կարծես հարց կար փաստաբանների լինելու կամ չլինելու մասին, կարծես ասված էր, թե փաստաբանը չէ կարող լավ գործիչ, երևելի գրող լինել: Եվ «Մշակը» շնորհակալություն էր հայտնում Սենեքերիմ Արծրունուն, «որ նա իր հոդվածով հաստատեց մեր ասածը ազդեցիկատական գրականության մեթոդի վերա»: Եվ այդ նկատողությունը «Մշակը» վերջացնում էր մի ուսեսրին ասացվածքով՝ «Мы про печку, он про свечку»: Եվ իրավ, «Մեղուի» դազմագիտական հմտության ամենամեծ մասը նման էր այս ասացվածքին, որի բառացի թարգմանությունն է. «Մենք վառարանի մասին ենք խոսում, նա՛՛ հրագի մասին»...»:

IV

Ոչ միայն բանդել, այլև շինել: Ի՞նչ է խմբագիրը: Հետազոտություն և ոչ լարոգ: Ներգործական լրագիր: Մայրենի լեզուի հարցեր: Մի ուսերեն բողջուր մեծ և փոքր ազգերի մասին: Արժույթի պատասխան: Բանակոթիվ ուս լրագիրներին դեմ: Հայի բշեամին: Ինքնաբերական մեծ սկզբունք: Հայ կինը: Անհատի զարգացման օրենքը: Թատրոն: Ինքնուրույն գրականության պահանջ: Կրթիկական և ռեալական ուսում: «Մեր տեղեկական ասպագայ»: Հայերի վաճառականական դերը: Փոխադարձ ինքնօգնության սկզբունք: Գյուղացին, վաշխատություն, սպառողական ընկերություններ, փոխատու-խնայողական գանձարաններ: «Ներքին տեսություն» բաժինը: Վաճառականություն, գործարանական կյանք, մանր արդյունաբերություն, պրոլետարիատ, օտար դրամազուլսներ, մրցության ուժը:

Մինչև այստեղ մենք տեսանք Գրիգոր Արծրունու գրվածքների մի կողմը միայն՝ պատերազմ այն ամենի դեմ, ինչ փտած է, անշարժ է հայոց կյանքի մեջ, ինչ խոչընդոտ է հանդիսանում առաջադիմության, քաղաքակրթության գործում: Պատերազմը առաջին իսկ քայլից հայտարարվում է, ինչպես տեսանք, այն տարրերի դեմ, որոնք հասարակության մեջ դեր են կատարում, բայց անբարեխիղճ են, պարտավորություններ չեն ճանաչում, հետևաբար և կատարում են միայն բացասական դեր: Ո՞վ էր, որ դուրս էր մնում այդ պատերազմից. ո՞վ էր, որ հարվածների չէր ենթարկվում: Այդ էլ մենք տեսանք՝ բուն ժողովուրդը: Ժողովուրդը մեղավոր չէր. նրա արատները շատ էին, բայց առաքինություններն էլ շատ էին. նա տգետ էր, անպատրաստ, տնտեսական վատ պայմանների մեջ ճնշված, ահա՛ նրա արդարացումը: Նա պահանջում էր

ծառայութիւն կարող մարդկանց կողմից, կարող էր օգնութիւն: Եւ որ չէր ծառայում նրան, ով կարող էր օգնել, բայց չէր օգնում, նա այն փտած ու վնասակար ուժն էր, որի դեմ Արծրունին պատերազմում էր:

Սակայն միայն պատերազմը, միայն հարձակումներն ու բանակախուզ շփոթումները գործը: Քշնամիներն ասում էին, թե նա քանդում է ամեն ինչ: Նշանակում էր, որ նրանք միայն մի կողմն էին տեսնում: Քանզի ու միայն ավերակներ փռել և բավականանալ դրանով, լինում են, այո՛, այդպիսի գրական գործիչներ էլ: Բայց Արծրունին այդպիսիներից չէր: Շարունակելով հետեւել նրա առաջնորդողներին, մենք ահա այժմ կտեսնենք, որ նա միայն կախի չէր մղում, այլև մտքեր, գաղափարներ էր արձարծում:

Ամենից առաջ տեսնենք, թե ինչպես էր Արծրունին հասկանում խմբագրի պաշտոնը («Ինքնակոչ խմբագիր», № 3):

Կինելով մի լրագրի խմբագիր, նշանակում է մի հասարակական պաշտոն հանձն առնել: Հասարակական պաշտոնը երկու ճանապարհով է ձեռք բերվում, կամ հասարակութունն է ընտրում, կամ իշխանութունն է նշանակում: Իսկ խմբագիրը... ո՞վ է նրան ընտրում, ո՞վ է նրան նշանակում: Ոչ ո՞ք: Խմբագիրը ինքն է դուրս գալիս հասարակական պաշտոն ստանձնելու: Նա, ուրեմն, ինքնակոչ է: Բայց ի՞նչ է այդ ինքնակոչ պաշտոնյան: Կարծում են, թե նա հասարակության դաստիարակիչն է: Բայց դա մի ծիծաղելի հավակնութուն է: «Այդպիսի մարդից ես կհարցնեի. Արդո՞ք ո՞վ է իրավունք տվել քեզ ժողովրդի դաստիարակչի պաշտոնը սեփականացնելու»:

Խմբագիրը, հասարակական այդ ինքնակոչ պաշտոնյան, դաստիարակիչ չէ: Ապա ի՞նչ է: Եթե հիշում եք, Արծրունին «Հայկական աշխարհի» մեջ էլ հարեանցիորեն շոշափել է այդ հարցը: Այն ժամանակ նա խմբագիր չէր, բայց իբրև գրող ասում էր, որ իր դերը հետազոտողի դեր է: Նույն այն սկզբունքը նա արձարծում է այժմ իբրև խմբագիր:

«Մեր դարում առաքյալներ և մարգարեներ չկան: Մեր դարը աշխատողների դար է: Մարդիկ, որոնք հավատում են իրանց բարձր կոչմանը, կամ ինչպես ասվում է, իրանց գործունեության մեջ ուղեկից են համարում իրանց բարի աստղը, այդպիսի մարդիկ ծիծաղելի են թվում տասն և իններորդ դարի համար: Այժմ հարկավոր են մեզ այնպիսի մարդիկ, որոնք ոչ թե երկնային ոգով շնչավորված գալիս քարոզելու խավարը փարատելու համար, այլ մշակույթ, որոնք աշխատելիս հարմարվելով ժամանակակից պահանջներին»:

Ո՛չ, հասարակական դաստիարակչությունը պետք է սարսել նույնիսկ հասարակությունից. նա ինքը պիտի դաստիարակվի, և մասնավոր մարդը, խմբագիրը, պետք է ուրիշ կերպ հասկանա իր պաշտոնը: Խմբագիրը հասարակական ասպարեզում պիտի լինի նույնը, ինչ է բնագետը բնական հարստությունների հետազոտության ասպարեզում: Ինչպես բնության մեջ, այնպես էլ հասարակության մեջ կան քնած մտավոր ուժեր, քնած զորություն, քնած հարստություն, մտավոր անմշակ, հում նյութ:

«Գրագետից, լրագրի խմբագրից պիտի պահանջենք, որ նա հետազոտի հասարակական հողը, քննի նորան կազմող մասերը, զարթեցնի քնած մտավոր զորությունը, հարուցանի մտավոր հարուստ հանքերի արդյունաբերությունը...»

Ամոթ է այն խմբագրությանը և խմբագրին, որ երկար ժամանակ հրատարակելով մի պարբերական գրված, չկարողացավ զարթեցնել ընդունակություններ, իր շորս կողմը կազմել տաղանդներ, կրթել գրողներ:

Ողորմելի է այն օրագիրը, որը տասը տարիից ավելի հրատարակվելով, կարողացավ հետազոտել հասարակական հողը և նրա մտավոր հանքերի խորքից յուրացնել ինքնուրույն արդյունքներ, զարթեցնել ինքնուրույնություն»:

Այս տողերը, որոնք լույս տեսան այն ժամանակ, կրթ. «Մշակը» քսան տարեկան մի ծնունդ էր, չափազանց նշանավոր են: Երիտասարդ խմբագիրը որքան գեղեցիկ կերպով հասկացել էր նախ և առաջ իրան: Չէ եղել մեղանում մի մարդ, որ նրա պես քնած ուժեր զարթեցնել, տաղանդներ առաջ քաշել, ինքնուրույնություններ յուրացնել իմանար: Այդ գրվածքի մեջ Արծրունին, գուցե և ահամա, գուցե միայն իր անսահման հավատի դեռ անորոշ գիտակցությամբ, նկարել է «Մշակի» խմբագրին՝ նրա քսան տարվա գործունեության ընթացքում: Առաջ տանելով այդ դարմանալի հողվածի ընթերցանությունը, մենք դեռ էլ շատ մարգարեական ցուցմունքներ ենք տեսնում:

Լրագրի հիմնողը, ասում է Արծրունին, շատ անգամ լինում է մի անհայտ անձ, ծանր, անհամ, անուճ, անմարսելի գրող: Բայց նա ընդունակություն է ունենում ճանաչել մարդ, «ճանաչել ծնվող տաղանդ, հետազոտել հասարակության մեջ քնած հարստություն, շրջապատել իրան ընդունակ մարդիկներով, ուղղություն տալ ամենքին, հասկացնել վերջապես ամենքին իրանց ընդունակության հարմարվող գրական ստեղծվածի ձևը»: Աննշան ոտանավորներ գրողին խմբագիրը դարձնում է վիպասանության ձևին և նա, որ առաջ անհայտ էր և ազդեցություն չունեւր ընթերցողի վրա, դառնում է նշանավոր ոտանախոս: Միջակ արժողության դրամաների, կոմեդիաների հեղինակը դառնում է, ուրիշ հանգամանքների և շրջանի պատահելով, տաղանդավոր ֆելիետոնիստ... և այլն:

Եվ այսպես, հետազոտիչ և ոչ քարոզիչ: Քարոզների դարը անցավ: Խմբագիրը պետք է պահանջ, ինքնուրույնություն զարթեցնող լինի: Վերջապես կա և ամենանշանավորը.

«Խմբագիրը պիտի կազմի խմբագրություն, որտեղ աշխատե միացնել մտավոր ուժ... որ երբ ինքը կհեռանա, կթողնե ասպարեզը, հասարակությունը կարողանա ապել, թե նորա գործունեությունը ապարդյուն չմնաց, որովհետև նա իրանից հետո մտավոր զորք թողնեց, որ սկսած ուղղությամբ և անընդհատ աշխատանքով պիտի շարունակե լուսավորության համար պատերազմելու»:

Ահա՛ ինչ է հասարակական այն ինքնակոչ պաշտոնյան, որի անունն է խմբագիր: Միայն Արծրունին էր մեղանում այդպիսի խմբագիր, որ ոչ միայն լավ գիտեր, թե ինչպես պետք է մտնել այդ պաշտոնի մեջ, այլև առաջին քայլերից մտածում էր ասպարեզից հեռանալու, մտավոր զորք թողնելու մասին: Այսպես բացատրելով խմբագրի էությունը, կամ ավելի ճիշտն ասած՝ իր էությունը, Արծրունին մի ուրիշ հողվածում («Օրագրության նշանակությունը», № 39) բացատրում էր, թե ի՞նչ պիտի լինի լրագիրը կամ ավելի ճիշտն ասած՝ «Մշակը»:

Հրապարակախոսությունը մի գլխավոր և առաջին հատկություն ունի՝ առաջադիմություն: «Շարունակ առաջ գնալ, զարգանալ, հետևել նոր մտքերին, մարդկային մտքի զարգացման... Առանց այս առաջին և անհրաժեշտ հատկության, լավ է, որ օրագրությամբ պարապել հանձն առնողը կոշկակարությամբ պարապե... բայց մի՞թե կոշկակարը կարող է հուսալ, որ միշտ

* Այսպես էր Բաճիկին: Նա սկսեց ոտանավորներով, բայց նրա տաղանդը բանաստեղծության այդ ձևի մեջ չէր: Իբրև ոտանավորների հեղինակ նա աննշան կմնար. բայց թողնելով ոտանավորը, գարձավ նշանավոր վիպագրող:

առնող կունենա, եթե նա կոշիկներ կարելու ձևը երբեք չի փոխի, չի կատարել լազործի, այլ կսպասարաստե իր վաճառքը հին, նահապետական ձևով»:

Իսկ լրագիրը պիտի հասարակության մեջ ներգործական դեր կատարել Կան եվրոպական լրագիրների մեջ կրավորական դեր էատարողներն էլ, բայց նրանք նախ և առաջ քիչ են, երկրորդ՝ հասկանալի, օրինական երևույթ է եվրոպական կյանքի մեջ, մինչդեռ մեզանում բոլորովին անտեղի ու անհարկավոր են: Բայց ի՞նչ են ներգործական և կրավորական լրագիրները:

«Մեծ մասը ներգործական են, այսինքն նոցանից ամեն մինը մի տեսակ հայտնի, որոշ ուղղություն ունենալով, նպատակ ունի ազդել ընթերցողների վրա, մտցնել նրանց մեջ իր ուղղությունը, կրթել և կազմել մի հայտնի ուղղության կուսակցություն: Կրավորական լրագիրները շափից շատ տարածվելով, իրավունք չունեն սահմանափակվել մի նեղ, կուսակցական հայացքների և համոզմունքների մեջ, այլ նոցա հիմնական ուղղությունը և սկզբունքի բավականացնել ամեն տեսակ կուսակցությունների, ամեն ուղղության մարդկանցի պահանջներին: Ուստի նոքա իրանց էջերի մեջ տպում են ամեն ուղղության հոդվածները»:

Կրավորական լրագիրների թիվը ամենից շատ է անգլո-սաքսոնական երկրներում՝ Անգլիայում, Ամերիկայում և Գերմանիայում: Պատճառն այն է, որ այդտեղ հասարակությունը շատ է զարգացած, կուսակցությունները շատ են: «Պետք է մարդը արդեն զարգացած լինի, պետք է կուսակցություններ որոշված լինեն, պետք է նաստատ, անխախտ համոզմունքներ ունենան, թե մասնավոր մարդիկը, թե կուսակցությունը, որ լրագրի մեջ պատահելով ամեն տեսակ ուղղության, ամեն տեսակ համոզմունքների և հայացքների արտահայտությունը, նորա շփոթվեն, շեփառեն, շխառնվեն, այլ զանազան, ամենատարբեր մտքերին անդադար հանդիպելով դարձյալ կարողանան դուրս բերել իրանց համար մի որոշ ուղղություն, իրանք կարողանան իրանց համար մշակել սեփական, անհատական համոզմունքներ և հայացքներ...»:

Իսկ այն երկրներում, ուր չկա այդպիսի զարգացում, ուր կուսակցությունները շատ քիչ են, շատ թույլ են, կրավորական լրագիրները ոչ միայն չեն կարող հաջողվել, այլև օգուտ անգամ չեն կարող բերել: Այնտեղ, ուր մարդիկ դեռևս չունեն իրանց համար մի որոշ ուղղություն, ուր նոր են սկսում տարբեր մտածել և հասկանալ, այնտեղ հարկավոր են խիստ և որոշ ուղղություն ունեցող ներգործական լրագիրներ, որոնցից յուրաքանչյուրը, մի տեսակ ուղղության արտահայտություն լինելով, կազդե ընթերցողի վրա, ուղղություն կմշակե նրա մեջ, կուսակցություն կկազմե: Գալով հայերին, երկու տեսակ պատասխան չէ կարող ունենալ այն հարցը, թե արդյոք ներգործական լրագիրներ են մեզ հարկավոր: Այո՞, անպատճառ հարկավոր են:

«Մեզ համար,— գրում է Արծրունին,— դեռևս վաղ է, վնասակար է և անիրագործելի է կրավորական քաղաքական թերթը: Բայց թե մեզանում պատահամար խմբագիրների կրթության պակասության կամ լրագրության նշանակության վերա կատարյալ տգիտության պատճառով, կազմվի կրավորական մի թերթ, նա չի լինի ընդհանրական, բնագրական, ազնիվ, բարի նշանակությունամբ կրավորական, այլ շատ շատ կլինի միայն անդույն, իսկ դեպքերի մեծ մասամբ հիմար»:

Հետագոտող խմբագիր, ներգործական լրագրի ղեկավար. սա մի երբ հիմք էր, որի վրա դրվում էր հայ լրագրությունը 1872 թվականից: Հետագոտող խմբագիրը ուժեղ, տպավորիչ է մտնում մեզ իր մի հատկությամբ. ետ գիտե ժամանակին յուրացնել հարցեր, գիտե օրվա խնդիրները, այժմ էություն

ներկայացնող երևույթները ըմբռնել, արձագանք տալ նրանց, քննության հանել: Արծրունու այս զարմանալի ընդունակությունը արտահայտվեց մայրենի լեզուի հարցի մեջ:

1872 թվականի փետրվարի սկզբներում Թիֆլիսում պետական միջնակարգ դպրոցների կառավարիչների (գիրեկտորների) ժողով կար, որ քննում էր զանազան դպրոցական հարցեր: Ի միջի այլոց դրված էր տեղային լեզուների դասատվության հարցը, և ժողովը հասավ այն եզրակացության, որ տեղական լեզուների դասատվությունը պետական դպրոցներում անօգուտ է: Ակրունքի մի շատ լուրջ հարց էր արձարծվում: Արծրունին «Լեզու և կյանք» առաջնորդողի մեջ (№ 11) բացատրեց, թե ի՞նչ նշանակություն ունի յուրաքանչյուր ազգի համար նրա մայրենի լեզուն:

Հայ հրապարակախոսի համար միշտ առանձին կարևորություն է ունեցել այդ հարցը, քանի որ շատ քիչ կլինեն այնպիսի ազգեր, որոնք հայերի նման անփույթ, անբարեխիղճ, ուղղակի թշնամի լինեն իրանց լեզուի վերաբերմամբ: Հայ հրապարակախոսը միշտ հարկադրված է կրկնել հային, թե պետք է սովորել մայրենի լեզուն: Նազարյանցի կենսագրության մեջ մենք տեսանք, որ այդ խոշոր երախտավորի խոսքի, քարոզի, դատողության սկիզբը և վերջը լեզուն էր: Արծրունին էլ, մենք այս էլ տեսանք, իր առաջին իսկ գրվածքներից այս հարցն էր շոշափում և մինչև այդ շարունակ նրան էր վերադառնում: Նազարյանցը ասում էր, որ լուսավորության, առաջադիմության միակ ապաստարանը դործիքը կարող է լինել մայրենի լեզուն: Արծրունին, հաստատելով այս միևնույնը, ուրիշ, ավելի խոր ու հետաքրքրական պատճառաբանություններով է ամրացնում այդ ճշմարտությունը, հիմնվելով գերմանացի գիտնական Կարլ Ֆոխտի հայտնած մի մտքի վրա:

Ֆոխտը ասել է, որ լեզուի կերպարանավորությունը կապ ունի մարդու փիլիսոփայական կազմվածքի հետ, այսինքն, որ այսինչ կամ այնինչ լեզուն համապատասխանում է այսինչ կամ այնինչ ազգի մարդկանց կազմվածքի առանձնահատկություններին: Հազիվ է պատահում, ասել է Ֆոխտը, որ մի մարդ օտար լեզվի միջոցով կարողանա արդյունաբերել մի ինքնուրույն միտք: Արծրունին գերմանացի գիտնականի այդ միտքը զարգացնում է այնպիսի բացատրություններով, որոնք ցույց են տալիս, թե մի լեզուն կազմվել է մի ազգի առանձնահատկությունների, ինքնուրույն տիպի, ֆիզիկական և բարոյական կազմվածքի հետ միասին և, հետևաբար, միակ հարմար, բնական, արդյունավոր միջոցն է զարգանալու, ստեղծագործելու, ընդունակություններ արտահայտելու համար:

«Արդյոք չէ՞ կարելի ընդունել, որ երբ մի ազգի լեզուն կազմվում է, նա, հետևելով բնական օրենքին, ազգի հատկությունների և առանձնությունների համապատասխան ձևեր, կազմակերպություն, ուժ և ոգի է սեփականացնում»:

Եթե իմ լեզուն հետևանք է իմ բարոյական առանձնահատկություններին, որոնք իրանց կողմից կախված են իմ մարմնի, տիպի կազմվածքի հատկություններից, ուրեմն ինձ համար մայրենի լեզուն ոչ թե միայն այն պատճառով թանկ պիտի լինի, որ ես իմ ազգը սիրում եմ, բայց զլսավորապես այն պատճառով, որ նա բոլոր ուրիշ լեզուներից ամենից հարմար է իմ ուղեղի մտավոր աշխատանքին, որ նա իմ ուղեղի կազմությանը ամենահարմարագույնն է, որ նա իմ ուղեղի կազմակերպությունից անբաժանելի է, որ նա իմ մտավոր զարգացման համար անհրաժեշտ է:

Եթե այդ այդպես է, ուրեմն իմ ազգային լեզվով ինձ ավելի մատչելի է իմ անձնական, անհատական, իմ անձին սեփական, ինքնուրույն մտքերը

հայտնելու, քան թե օտար լեզվով, որը կազմվել է ուրիշ երկրում, ուրիշ կլիմայի ազդեցության տակ, ուրիշ պատմական և հասարակական պայմանների է ենթարկվել:

Կենդանի օրինակներով այս դատողությունը ապացուցանելու համար Արծրունին վերցնում է Ֆրանսիերեն և գերմաներեն լեզուները: Ֆրանսիացին աշխույժ, հափշտակվող, շուտ ըմբռնող, տաղանդավոր բնավորություն ունի. այդպես է և նրա լեզուն, մինչդեռ գերմանացու ճիշտ և ծանր բնավորության միանգամայն համապատասխանում է նրա ծանր լեզուն իր սմինչև հրաշք հասցրած ճիշտ և եթե կարելի է ասել, մաթեմատիկական ասացվածներով և ձևերով»:

«Մի ազգ մոռանալով իր մայրենի լեզուն, կորցնում է իր բնական միջոցներին մեկը, ուրեմն կապակասի, կեղծադի նրա բնական զարգացման, նորա անհատական հատկությունների, նորա ինքնուրույնության, ուրեմն նորա՝ հասարակաց օգտի համար արդյունաբերության ուժը: Եթե Ֆրանսիացին չիմանա Ֆրանսիական լեզուն, ուսը՝ ուսաց լեզուն, հայր՝ հայոց լեզուն, վրացին՝ վրաց լեզուն, Ֆրանսիացին չի լինի կատարյալ Ֆրանսիացի, գերմանացին չի լինի կատարյալ գերմանացի, ուսը՝ կատարյալ ուս, հայր՝ կատարյալ հայ: Կորցնելով իր մայրենի լեզուն, ուրեմն իր բնական գործիչներից (օրգաններից) մեկը, թե ուսը, թե գերմանացին, թե Ֆրանսիացին, թե հայր կզրկվեն իրանց կազմվածքին և բնավորությանը հատուկ բնական ընդունակությունների մի նշանավոր մասից»:

Արդյոք դրանից մարդկությունը օգո՞ւտ կստանար, թե վնաս: Իհարկե վնաս, — պատասխանում է Արծրունին: Յուրաքանչյուր ազգ մարդկության մի կարևոր մասն է կազմում: Մարդկության բոլոր մասերը, բոլոր անդամները պիտի առաջադիմեն՝ զարգացնելով իրանց առանձնահատուկ ընդունակությունները: Բայց ինչպե՞ս կարող է մի ազգ ինքնուրույնաբար առաջ գնալ, եթե կկորցնե իր լեզուն, կամ ուրիշ խոսքերով՝ կսպանե իրան:

«Սպանել իրան նշանակում է անձնասպանություն գործել, բայց բացի սորանից նա նշանակում է հանցանք գործել ամբողջ մարդկային հասարակության առաջ, զրկելով նորան մի անհրաժեշտ անդամից»:

Ահա՛ թե ինչ ահագին, կենսական նշանակություն ունի մայրենի լեզուն մի ազգի համար: Հիշենք այստեղ, որ Արծրունին նույն այս տեսությունը, ավելի ընդարձակ, օրինակներով ավելի ճոխացրած, արժարժեց 1881 թվականին հայոց ուսուցչական առաջին ժողովում, մի դասախոսության մեջ, որ խոր տպավորություն գործեց:

«Լեզու և կյանք» հոդվածից քիչ հետո «Кавказ» պաշտոնական լրագրի հետ բաժանվեց մի անանուն հեղինակի բրոշյուրը՝ հետևյալ վերնագրով. «О существе национальной индивидуальности и образовательном значении крупных народных единиц». (Ազգայնական անհատականության էությունը և խոշոր ազգերի կրթական նշանակության մասին): Նա էլ նվիրված էր մայրենի լեզուի հարցին և Արծրունու տեսության հակառակ հայացքներ էր պաշտպանում, կարծես գրված էր «Մշակի» հոդվածին պատասխանելու համար: Ի՞նչ էր ասում ուս անանուն հեղինակը:

Նրա համար էլ մայրենի լեզուն ամենակարևոր, առաջնակարգ նշանակություն ունի: Լեզուն, ասում է նա, ինքն ազգն է: Ազգության հոգին, ամբողջ ուժը, ամբողջ ինքնուրույնությունը միայն լեզուի մեջ է: Բայց կա պատմության օրենք, կա պատմական անհրաժեշտություն: Դա այն է, որ փոքր ազ-

գրի լեզուն ուժեղ չէ, դիմացկուն չէ, զարգանալ, բարգավաճել չէ կարող: Ինչո՞ւ: Որովհետև քանակության հետ կապված է և որակը: Խոշոր ազգերը զարգացնում, կատարելության են հասցնում իրանց լեզուն, որովհետև թվով ավելի շատ մտավոր աշխատողներ ունեն. մինչդեռ մանր ազգերը չունեն այդ ուժը, ուստի և նրանց լեզուն պիտի մնա թույլ ու աղքատ: Այդ թուլությունից էլ առաջ է գալիս այն պատմական անհրաժեշտությունը, որ փոքր ազգերի լեզուն մեռնում է, մեռնում են, ուրեմն, և իրանք, փոքր ազգերը, մեռնում են, իհարկե, ոչ ֆիզիկապես, այլ իբրև ինքնուրույն ժողովուրդ զարգարում են գոյություն ունենալուց և ձուլվում են այն խոշոր ազգի հետ, որ ավելի զարգացած, հարուստ լեզու ունի:

«Ցեղի առանձնահատկությունը, — գրում է բրոշյուրի* հեղինակը, — ցեղի առանձնահատկությունը, որի մեջ արտահայտվում է նրա ամբողջ դեմքը, նրա լեզուի առանձնահատկությունն է: Լեզուն՝ դա ինքը ցեղն է, որ համանիշ է լեզուին: Լեզուն այն գործիքն է, որի միջոցով արտահայտվում է մարդու մտավոր ուժերի գործունեությունը: Լեզուն, լինելով հասարակության մտավոր ուժերի գործունեության գործիք, դրա հետ միասին, նրա մտավոր հարստությունների գանձարանն է»:

Այստեղից է առաջ գալիս այն երևույթը, որ հասարակության կազմվածքի կատարելության աստիճանի հետ զուգընթաց գնում է և լեզվի, իբրև կրթական գործիքի, զարգացման աստիճանը: «Մարդկային ընտանիքի մեջ մի ցեղի գոյությունը, նշանակությունը կախված է նրա լեզվի կատարելությունից, հարստությունից, ուրիշ խոսքերով՝ մտավոր նյութի այն պաշարից, որ ցեղը կարող է ձեռք բերել իր լեզուի միջոցով»:

Այսպիսով մեր առջև նկարվում է պաշարի մի ասպարեզ, ուր, ինչպես ամեն մի պաշարի մեջ, հաղթությունը պատկանում է կատարելագործվածին: Փոքրիկ ազգերի լեզուն չէ կարող կատարելագործվել այն աստիճան, որ նա գտնա համամարդկային քաղաքակրթության գործիք: Եվ ի՞նչ է առաջ բերում այս անկարողությունը: Պատմական օրենք՝ թույլը, անկատարը պիտի ոչնչանա, տեղի տալով ուժեղին, կատարյալին: Մարդը միշտ ձգտում է դեպի առաջադիմություն. փոքր ազգերը, իրանց այդ ձգտման մեջ, ստիպված պիտի լինեն ընդունել ավելի կատարյալ կրթական գործիք, քան իրանց սեփական լեզուն: Փոքր ազգերի լեզուի մահը անխուսափելի է. դա բնական է, և իրանց լեզուն կորցրած փոքրիկ ազգերը պիտի ընդունեն մեծ ազգերի լեզուն, այն ազգերի, որոնց հետ կապել է նրանց պատմությունը: Հեղինակը մինչև իսկ եկարում է, թե ինչպես է կատարվում այդ մահը: Նա միանգամից, հանկարծակի չէ գալիս, այլ աստիճանաբար. տիրապետող լեզուն հեշտությամբ դուրս է մղում մայրենի լեզուն նախ հասարակության բարձր, կրթված խավերից, ապա և առևտրական ու արդյունաբերական կենտրոններում ապրող ազգաբնակչության միջից: Ավելի երկար մայրենի լեզուն մնում է գյուղական, հասարակ ժողովրդի մեջ, և եթե մայրենի լեզուն այնքան դեռ կրթական ուժ ունի, որ կարողանում է ժողովրդի մտավոր պահանջներից մի քանիսին գոնե բավարարություն տալ, այդ դեպքում նա համառ պահվում է: Բայց վերջ ի վերջո նույն պատմական անխուսափելի օրենքն է՝ փոքր ազգերի լեզունների ոչնչացում, որ նշանակում է այդ ազգերի, իբրև անկախ մարմինների անհետացում:

«Մշակը» մանրամասն քննադատության չենթարկեց այդ բրոշյուրը:

* Այս բրոշյուրը երկրորդ անգամ հրատարակվեց Պետերբուրգում 1873-ին և բաժանվեց «Русский мир» լրագրի բաժանորդներին:

«Գրականական խանութ» առաջնորդողի մեջ (№ 33) նա տկար և անհիմն համարեց հեղինակի փրկիստփայական եղբայրացույթունները փոքրիկ ազգերի դերի և ճակատագրի մասին: Գլխավոր սխալը, որ ուզում էր ապացուցանել «Մշակը», այն էր թե փոքրիկ ազգերը իրանց սեփական լեզուի միջոցով չեն կարող զարգանալ, մարդկությունը օգուտ բերել: Պատմությունից մի շարք փաստեր բերելով, Արծրունին պնդում էր հակառակը, այսինքն՝ որ փոքր ազգերը կարող են ինքնուրույնաբար զարգացնել իրանց ընդունակությունները: Ի՞նչ փաստեր են դրանք:

Հին աշխարհը հույն փոքրամիջ ազգն ունի իրրե օրինակ: Փոքր էր ժողովուրդը, բայց ինչևիցե մարդկությանը: Եվ ընդհանուր պատմության մեջ դա բացառիկ երևույթ է: Չեխ ազգն էլ փոքրիկ էր, բայց նա առաջին անգամ սկիզբ դրեց բողոքականության, բայց արավ առաջին համալսարանը: Լեհական փոքրիկ ազգից դուրս եկավ Կոպերնիկի պես մեծ խելքը: Շվեդացիները ունեցան Տորվադսենի նման հռչակավոր քանդակագործը. փոքրիկ Հոլանդիան այնպիսի նշանավոր նկարիչներ տվեց, որ մի ժամանակ ամբողջ Եվրոպայի համար նկարչության ուսուցիչ էր հանդիսանում:

Եվրոպայից անցնելով Ասիա, Արծրունին ապացուցանում էր, որ աշխարհի այս մասում էլ նույն երևույթը շատ օրինակներ ունի: Փոքր էր հրեական ազգը, բայց նա աշխարհին տվեց Հին Կտակարան, որ դարերով մնում է աշխարհի բոլոր ազգերի համար կրոնական իմաստության աղբյուր. նույն փոքրիկ ազգն էր, որի մեջ ծնվեց քրիստոնեությունը, մի վարդապետություն, որ այնքան բարձրացրեց մարդուն:

«Ասիական ազգերից ովքե՞ր ընդունեցին նախ և առաջ քրիստոնեությունը և միակ էին նորան պաշտպանելու Ասիայում, արդոք չէի՞ն երեք փոքր ազգեր. հայեր, ասորիներ և վրացիներ: Գարեբ անցնում էին դարերի ետևից, և այդ ազգերը իրանց հերոսական ջանքերով ամեն առաջադիմություն մեղցնող մահմեդական տարրի հետ շարունակ պատերազմելով, իրանց արչունով պահեցին Կովկասը և Փոքր Ասիան մարդկային կրթության համար: Եվ այդ բոլորը կատարվում էր փոքր ազգերի միջնորդությամբ, շնայելով, որ նոցա լեզուն չունեն ընդհանուր կրթողական նշանակություն»:

Այսպես ջրելով ուս հեղինակի այն գլխավոր հիմքը, թե փոքր ազգերը չեն կարող ինքնուրույնաբար զարգանալ, Արծրունին նորից դիմում է մայրենի լեզուի ստեղծագործական նշանակության: Նա ասում է.

«Անհետացավ լեզուն, անհետացավ և ազգությունը, մնաց միայն մարդիկներ մի հայտնի թիվ, որք առանց մայրենի լեզուի անընդունակ են մտավոր գործունեության: Բայց ի՞նչ է այդ բնական օրենքի պատճառը, և ինչի՞ նա արգելք է լինում ազգությունների կործանման, սա ունի երևի իր օրգանական հիմքը բնության մեջ, որոնց խախտելը բախտավորապես վեր է պատվելի հեղինակի կարողությունից: Նա մոռանում է, որ ազգության լեզուն մշակվում է ոչ թե միայն դարերով, բայց մի ազգություն շրջապատող բոլոր հանգամանքների շնորհով: Նա չգիտե, երևի, որ օրինակ, Աֆրիկայի նեգրերի մեջ գործածվող լեզուն, երբեք չէր կարող մշակվել հեռավոր հյուսիսում: Կամ լեոնարնակ մի ազգի լեզուն, տափարակ երկրում չէր կարող գոյանալ»:

«Մշակի» այս վերաբերմունքը դեպի այդ՝ «վերնագրով համակրելի, բայց բովանդակությամբ հակակրելի» բրոշյուրը բանակոչի առիթ դարձավ: «КАВКАЗ» լրագրում ոմն Պավել Զալեսկի հարձակվեց «Մշակի» վրա, ասելով, թե նա չէ հասկացել բրոշյուրի միտքը: «Մշակը» հեղինակը պատասխանեց

նրան իր № 40-ի ներքին տեսության մեջ, հասկադնելով, որ բրոշյուրի մեջ ամեն ինչ պարզ է ասված:

«Մեր պատվելի բնիչը, — գրում է Արծրունին, — աշխատում է իրան զարմացած ձեացնել, արտագրելով մեր հողվածից մի տեղ և շարելով նորա մեջը անթիվ հարցական և բացականչական նշաններ: Իսկ այն տեղը շատ հասարակ և անմեղ է: Այդ այն տեղն է, որտեղ մենք ասում ենք, թե մայրենի լեզուն անհրաժեշտ պայման է ինքնուրույն մտավոր գործունեության համար, որովհետև, այժմ էլ այդպիսով ենք, մայրենի լեզուն, հարմարեցրած լինելով մարդի կազմվածքին, հեշտացնում է նորան իր կողմից հարմարեցնել իրան շրջապատող պայմաններին: Այդ միտքը, Կարլ Ֆոխտից հայտնած, ունի շատ ազգակցություն և Գարվինի վարդապետության հետ»:

Առհասարակ, «КАВКАЗ»-ի հողվածագիրը ներկայանում էր «Մշակին» իրրե բարկացած, որտե և կայծակ թափող Արամազդ: Սակայն այդ բարկությունը սարսափելի չէր «Մշակի» համար, ընդհակառակն, նա միանգամայն արդարացնում էր հայտնի ասացվածքը. «Արամազդ, դու բարկանում ես, դու, ուրեմն, մեղավոր ես»: Այս խոսքերով էլ «Մշակը» վերջացնում էր իր կիսահեղինակական պատասխանը: Բայց այսպիսի դիրք չբռնեց Արծրունին, երբ բանակոչի անցավ Պետերբուրգի «ГОЛОС» լրագրի էջերը: Ինչու լրագիրը մի ընդարձակ առաջնորդող նվիրեց «Մշակին» և նրա պաշտպանած հարցին, բայց այնքան հեռու գնաց իր եզրակացությունների մեջ, որ Արծրունուն մնում էր ընթերցողին թողնել լրագրի վարմունքի դատապարտությունը:

«ГОЛОС»-ը, իր պաշտպանության տակ աննելով ուսերեն բրոշյուրի հեղինակին, ասում էր, թե «Մշակի» դիտողությունները շարժե ուշադրության աննել, թե ինքը բանակոչի չի սկսի հայ լրագրի դեմ, քանի որ վերջինս արձագանք է մի որոշ կուսակցության, մի որոշ ուղղության, որ ավելի և ավելի հայտնի է դառնում Կովկասի տեղական բնակիչների մի քանի դասերի մեջ: Հենց այս կետի վրա էլ ծանրանում էր մայրաքաղաքի ուս թերթը: Ավելորդ համարելով հերքել Արծրունու բերած պատճառաբանությունները, մոռանալով, որ հարցը ուրիշ ոչինչ է, եթե ոչ լրագրական մի բանակոչի, հրապարակական բնության առարկա դարձած մի հասկացողություն, «ГОЛОС»-ը ասում էր, որ ուսերեն բրոշյուրի հեղինակը գալով այն եզրակացության, թե փոքր ազգերի լեզուները պիտի ոչնչանան, «բնականապես հակառակում է ցնորքներին «Մանուկ Հայաստանի» կուսակցության, որ մտածում է հայոց ազգի վերածնելիության մասին: Այդ իսկ կուսակցությունը գլխավորապես ապստամբեցավ կովկասյան ուսումնարաններում տեղացի լեզուների դասավորության վերացնելու դեմ: Այդ մանուկ երեակայողներին գործիքին (օրգան), Թիֆլիսում հրատարակվող հայ «Մշակ» լրագրին, խիստ բնական է, որ հաճելի չէին լինելու տետրակի հիմնական դրությունները, և այդ լրագիրը ջանք է գործ դնում հաստատել նոցա անստուգությունը»:

Եվ մայրաքաղաքի լրագիրն իր կողմից ամեն ջանք գործ է դնում հասկացնելու, որ պետական լեզուի նշանակությունը չէ հասկանում «Մշակը», որ պետական լեզուն անհրաժեշտ է սովորել և այլն: Բայց պետական լեզուի մասին ոչ մի հարց չկար և չէր էլ կարող լինել, քանի որ ոչ ոք չէր էլ մտածել անգամ որ այդ լեզուն շարք է սովորել: Մայրենի լեզուի պաշտպան նազարյանցը ամեն անգամ ասում էր, որ հայը իր մայրենի լեզուի հետ հավասար չափով պիտի սովորե պետական լեզուն: Արծրունին էլ միևնույնն էր կրկնում: «Հայկական աշխարհի» մեջ տարված իր հողվածներից մեկում նա ասում էր, որ ուսաց պետությունը, խաղաղություն հաստատելով Կովկասում, մի մեծ պար-

տավորութիւնն է գրեթէ մեզ վրա՝ քաղաքակրթիւնը, առաջադիմելի՝ եւ մենք հան-
ցավոր կլինենք, եթէ ամեն ջանք գործ չդնենք կառավարութեան մեզ վրա դրած
պարտավորութիւնը կատարելու համար: Ինչպէ՞ս պիտի կարողանանք կա-
տարելու Իհարկեմ, ուսում աննկողմ, կրթիւնը: Եւ այդ ուսումը, կրթութիւնը
դարձյալ Ռուսաստանը պիտի տար մեզ:

«ГОЛОС» լրագիրը այսպիսի բաներ չէր ուզում իմացած լինել, նա միայն
ասում էր, թէ պետական լեզուի նշանակութիւնը այս է, մի բան, որ ամենքի
համար շատ ու շատ պարզ էր: Արժրունին սուս լրագրի այդ վարմունքի առի-
թով այսքանը գրեց:

«Մենք հասարակութեան դատողութեանն ենք թողնում վճռել, որքան
անհիմն են այդ տեսակ խոսքերը: Երևի «ГОЛОС» լրագրի պատվելի խմբա-
գրութիւնը չէ իմանում, որ լրագիրները նորա համար են հրատարակվում, որ
լուսավորեն մարդիկներին, և ոչ թէ մի ազգութիւն վերականգնեցնելու նպա-
տակով: Եթէ լրագիրների ու գրքերի հրատարակութեամբ կարելի կլիներ ազ-
գութիւնները վերականգնեցնել, այն ժամանակ ընկած ազգութիւնները ամեն
օր կվերականգնեին»:

Որքան էլ ցաւալի լինէր սուս լրագիրների այս վերաբերմունքը, կար
այն նշանավոր հանգամանքը, որ հայերեն լրագիրը խոսեցնել էր տալիս իր
մասին, հարկադրում էր, որ իր հայացքներն ու դատողութիւնները ի նկատի
առնվեն, թարգմանվեն, քննադատվեն: Այս նոր երևույթը անշուշտ հայերեն
լրագրի օգտին էր խոսում: Նշանակում էր, որ հայ հրատարակախոսութիւնը
այնքան ամրացել է, այնքան արդեն ուժ է ստացել, որ նրան աննկատելի
թողնել այլևս կարելի չէր: Գրիգոր Արժրունին, այս ուժի, այս լրջութեան առա-
ջին և ամենանշանավոր ներկայացուցիչը, այնուհետև էլ շատ առիթներ ունե-
ցավ բանակով մղելու սուս լրագիրների դեմ, հարկադրելով, որ իր հայերեն
հոդվածները թարգմանվեն և քննվեն: Սա մի նոր հաղթանակ էր մեր մայրենի
լեզուի համար:

Հարցը, սակայն, այս բանակով մեջ էլ չամփոփվեց, չվերջացավ: Մայ-
րենի լեզուի վիճակին Արժրունին նորից դիմեց «Հայոց լեզու» առաջնորդողի
մեջ (№ 46), որ, ի դեպ ասենք, նվիրված էր Անդրեաս Արժրունուն: Հետա-
քրքրական է այստեղ այն թուղթիկ տեսութիւնը, որի մեջ հայոց գրակա-
նութեան անցյալն է երևում: Հինգերորդ դարից մինչև տասնևչորսրորդի վերջը
մենք ունեինք հարուստ գրականութիւն. նա միակողմանի էր, վերացական էր,
որովհետև այդ ժամանակամիջոցում չկային դրական, ճիշտ գիտութիւնները:

Այնուհետև ամբողջ երեք դար՝ 15, 16 և 17-րորդը, ներկայացնում են կա-
տարյալ անապատ. դա հայոց մտքի կատարյալ անկման շրջանն էր: Տասնու-
թերորդ դարի սկզբում հայտնվում է Մխիթար Սեբաստացին, որ հիմնում է
Ս. Ղազարի միաբանութիւնը:

«Այդ փոքրիկ կղզին 18-րդ դարից սկսած դառնում է հայոց մտքի միակ
ապաստան: Ամեն կողմից հալածված, ոչ թէ միայն ինքը հայը, բայց և նորա
որդին, նորա պանդուխտ, թափառական միտքը վաղուց կոշնջանար, կանհե-
տանար աշխարհի երեսից, եթէ նա չունենար մի հարուստ անցյալ, տասն
անգամ հարշուր տարվա անցյալը:

Հեշտ չէ ոչնչանալը մի ազգութեան կամ մի լեզուի, որ ունի արդեն իր
հարուստ գրականութիւնը»:

Մխիթարյանների կատարած մեծ դերը ուրվագծելուց հետո Արժրունին
դիմում է հայ ընտանիքներին և նրանց կատարած դերին: Մինչդեռ կաթողիկ
արեղաները և նույնիսկ եվրոպացի գիտնականները ուսումնասիրում էին հայ-

լոց լեզուն ու գրականութիւնը, ի՞նչ էր անում հայ ընտանիքը, որ միշտ պար-
նենում է իր սաստիկ բարոյականութեամբ: Նա ատելութեամբ հալածում էր
իր միջից մայրենի լեզուն: Խոսքը, իհարկեմ, միջին և բարձր դասակարգերի
մասին էր. Արժրունին շատ լավ գիտեր, որ հասարակ ժողովուրդը առայժմ
վարակված չէ այդ ախտով: Բայց կարգ է, որ ամեն հասարակութեան մեջ
միջին և բարձր դասերի ուղղութիւնը և ոգին տիրապետում է փոքր առ փոքր
և ամբողջի վրա»: Այդպես պիտի լինէր և մեզանում: Բայց մի բախտավոր
հանգամանք ուղղակի փրկիչ հանդիսացավ մեզանում: Ի՞նչ էր դա:

Այն, որ մայրենի լեզուն ատող ծնողների որդիները պարտավորութիւն
համարեցին կուրորեն հնազանդվել իրանց ծնողներին: Եթէ հնազանդված
լինին, նրանք էլ պիտի ատենին մայրենի լեզուն և նա կորած կլիներ: Եւ
հնազանդվողները արական սեռի սերունդն էր, որովհետև «մեր քույրերը, որք
փակված կյանք վարելով, բոլորովին ենթարկվեցան ծնողների բնավորու-
թյանը», նույնպես ատում են իրանց սեփական լեզուն:

«Մեզ փրկեց և կփրկի այն, որ մենք մեր ընտանիքին հակառակ ենք վար-
վում: Նա ասում է. մենք ունեցանք մեր անցյալը, մեր գրականութիւնը, մեր
փառավոր ժամանակը, ուրեմն էլ ի՞նչ հարկավոր է աշխատել. ժամանակակից
այլ ընդունակ չէ որևէ արդյունավոր աշխատանքի:

Մենք ընդհակառակն ասում ենք. մենք ունեցանք մեր անցյալ հարուստ
փառավոր կյանքը, սուտ իրավունք չունենք չշարունակել նորա արդյան մշա-
կութիւնը:

Մենք հաղթեցինք, և սորանով բավականանում ենք»:

Հաղթեցին, ճիշտ է: Դա մի նշանավոր հաղթանակ էր, որ տանում էր
եռանդով լցված, պարտաճանաչ սերունդը հին հայացքների դեմ: Բայց դա
էր նշանակում հնութեան կատարյալ պարտութիւն, նրա հայացքների կա-
տարյալ ոչնչացում: Եռանդուն սերունդի հաղթական արշավանքի առջև հայ
ընտանիքը չկանգնեց. նա տեղի տվեց, քաշվեց: Բայց երբ ասպարեզից անհե-
տացով եռանդուն, պարտաճանաչ սերունդը, մեզանում տիրեցին նախկին
անուշադրութիւնը, ատելութիւնը դեպի մայրենի լեզուն, հայ բուրժուա ըն-
տանիքը դարձյալ մտավ իր դերի մեջ, սկսեց իր օրինակով ազդել հասարակ
ժողովրդի վրա: Եւ ժամանակակից նոր սերունդը այլևս փրկութիւն չէ որո-
նում ընտանիքի վարմունքին հակառակվելու մեջ: Այժմ նոր ու հին սերունդ-
ները կատարելապես համաձայն են իրար հետ..

Եւ այն եռանդոտ, պարտաճանաչ սերունդի տարած հաղթանակը մի պա-
տահական, անհասկանալի հաջողութիւն չէր, այլ ունէր իր խոր ու հաստատուն
պատճառները: Հին, շատ հին ժամանակներից է, կարծեմ, կազմված այն
ուսացվածքը, թէ հայի ամենամեծ թշնամին ինքը հայն է: Այս անողորմ
էմպարտութեանը դուք կգտնեք ամեն տեղ. մեր ամբողջ պատմութիւնը շարու-
նակ աչք է կրկնում. մեր մատենագիրները, մեր ողբացողները, մեր քարո-
սիչները շարունակ հայի այս հատկութիւնն էին ընդգծում, հարվածում, անի-
նում: Մեր նորագոյն հրատարակախոսներն էլ իբրև մի սուրբ, անուրանալի
էմպարտութիւն այդ սարսափելի խոսքերն էին խփում մեր հասարակութեան
մակատին: Ահա՛ Արժրունին էլ միևնույն ճշմարտութիւնն էր դարձնում իր
առաջնորդողներից մեկի (№ 40) բովանդակութիւնը: «Մեր ամենամեծ թշնա-
միները», այսպես է վերնագիրը. և կարդալով միայն այդ վերնագիրը, չդիմե-
լով հոգվածի բովանդակութեան, դուք իսկույն կասեք, թէ այդ թշնամիները
իրանք, հայերն են: Որովհետև դա մի հանրացած միտք է, դա հասարակաց

խոսք է: Հետաքրքրականը այստեղ այն է, թե Արծրունին ինչպե՞ս է ձևակերպում այդ ազգային հին ասացվածքի ճշմարտությունը:

Երևակայեցե՛ք, — ասում է նա, — որ ձեք ծնողները ամբողջ օրը, առավոտից մինչև գիշեր, կրկնում են ձեք ափանջում, թե զուք ունեցել օք հարուստ ու երեկի նախնիքներ, թե նրանց փառքին սահման չկար, թե նրանց պատվում էին ամեն տեղ: Ի՞նչ դուքս կզա:

«Երեխան այդ տեսակ բաները լսելով կփրվի, կհարտանա, բոլոր իրան շրջապատող մարդիկների վրա արհամարհանքով կհայե... Կորած անցյալի ցնորքների ետևից ընկնելով, նա միշտ չի ունենա ներկան քննելու, նա չի նկատի իր ներկայի պակասությունները ու իր դրությունը թշվառությունը, նա կմեծանա սարսափելի ինքնաճաղանջության մեջ:

Հետևանքը կլինի մտավոր և բարոյական անշարժություն:

Մեծանում է այդպիսի կրթությունը ստացած երեխան, սկսում է փորձվել ճանաչել շարժում ու բարին, հարաբերություններ ունենալ աշխարհի հետ. նա սկսում է քննել իրան և հանկարծ նկատում է, որ ամբողջ մանկության ընթացքում ցնորքների ետևից ընկնելով, հափշտակված էր երևակայական գաղափարներով: Իրականությունը ցույց է տալիս նորան փոխանակ իր նախնիների փառավոր անցյալի ու իր սեփական անձի հյուսած գեղեցիկ ապագայի, — միմիայն մի թշվառ, ողորմելի ներկան»:

Այս միևնույնը պատահել է և հայ ազգի հետ: Եվ այստեղ Արծրունին դատապարտում է ինքնագոհ ազգասիրությունը, որ հիմնված է անցյալի միակողմանի, ուռցրած պատմության վրա:

«Մեզ ամեն բան վատ կերպով են սովորեցրել, բայց մանավանդ անպիտան կերպով սովորեցրել են մեզ մեր ազգային պատմությունը: Նա մեզ համար դարձել է մեր բարոյական և մտավոր ներկա դրությունից համար կորստյան պատճառ:

Հափշտակվելով անցյալով, մենք մեր ներկա դրությունն էլ անցյալի լուսփող ենք չափել: Մեզ ասում էին, թե հայր քաջ է եղել, և մենք չէինք նկատում, որ արդեն հայր ստրկային բնավորություն ունի. մեզ պատմում էին, որ հայր միշտ եղել է անձնվեր, և մենք չէինք նկատում, որ այժմ նա պատրաստ է ընդհակառակն, իր ամենամոտիկ հայրենակցին հարստահարել, վնասել, որ նա միայն մի բարոյական ուղեկից է ճանաչում՝ վայելել կյանքը, որ նորան միայն մի աղնիվ զգացմունք է հայտնի՝ հուսությունը:

Մեզ մեր պատմությունը թերի կերպով սովորեցնելով ամենամեծ վնաս բերեցին, որովհետև փրեցին և միայն մեր ինքնահավանությունը և ոչ մի քննադատական հայացք չգցեցին պատմած իրողությունների վրա»:

Այդ է պատճառը, որ երբ մեզանում սկսվեց քննադատող ուղղությունը, շատերը չէին ուղում լսել, կատարյալ արհամարհանքով էին պատասխանում: «Բայց ժամանակն իրենն առավ. ինքնաբերականությունը, իր սեփական պակասությունների մեղադրելը բանի գնում է, ավելի ու ավելի տարածվում է»: Հայր սկսել է ինքն իրան մեղադրել, թե գրականության մեջ, թե բեմի վրա: Ի՞նչ է զա, ինչպե՞ս պետք է դնահատել այդ երևույթը: Արծրունին բերում է հետևյալ խոսակցությունը:

«— Դուք միշտ մեղադրում եք, ամեն բան վատ կողմից եք ներկայացնում, բոլորովին հուսահատեցնում եք ընթերցողին, — ասում էր ինձ մի պարոն, — գոնե մի պայծառ բան ցույց տվեցե՛ք մեզ մեր կյանքում...»

— Որ պայծառ երևույթ չկա, պարոն, ես ի՞նչ անեմ:

— Այն ժամանակ հնարեցե՛ք, բայց մի՛ ցույց տվեք մեզ միայն մեր վատ կողմերը...

— Ես իրավունք չունեմ հնարելու, — պատասխանեցի ես:

Իմ պարոնը դժբախտաբար մի պայծառ բան չնկատեց, այն է՝ անողորմ ինքնաբերականությունը, որ մեր այժմյան հայերի մեջ միակ ուրախացուցիչ երևույթն է:

Սաստիկ անողորմ անձնաքննությունը թե՛ գրականության, թե՛ ուսումնարանի մեջ, թե՛ բեմի վրա, նշան է, որ ազգը ընդունակ է փոխվել, հրաժարվել իր պակասություններից, առաջադիմություն անել:

Միայն նոքա, որք ընդունակ չեն մաղի շափ անգամ փոխվելու, ընդունակ չեն կատարելագործվելու, միայն նոքա թշնամի են այդ փրկարար հասարակական միջոցին՝ անձնաբերականությունը:

...Վերջապես պետք է հասկանաք, որ այն հասարակությունը, որ հրաժարվում է ինքն իրան քննության տակ գցել, նա ինքն իրան դատապարտում է հավիտենական անշարժության, ուրեմն հասարակական մահվան»:

Մեր ամենամեծ թշնամիները մենք ինքներս ենք: Ի՞նչ անենք մեր այդ թշնամուց ազատվելու համար: Պետք է ինքներս քննադատենք մեզ, քննադատենք սաստիկ, անողորմ կերպով: Դա է մեր փրկությունը: Կատարելագործվել, առաջ գնալ, մեր վերքերից ու կեղտերից մաքրվել կարող ենք միայն այդ միջոցով:

Եվ ինքը, Արծրունին, բաց է անում մեղանում ինքնաքննության մի ոսկեդար: Սկզբը դրել էին Ստեփան Ոսկանը, «Հյուսիսափայլի» մարդիկ, Կ. Պոլսի «Մեղուի» խմբագիր Սվաճյանը, բայց միայն Արծրունուն էր վերապահված դարձնել այդ ուղղությունը տիրապետող մեր հրատարակախոսության մեջ: Ինքնաքննությունն էր, որ վայրիվեց արավ շատ հասկացողություններ մեղանում. նա յուրաքանչյուր հետադադարության հիմքը դարձավ, նա նոր ուղղություն, նոր կերպարանք հաղորդեց մեր վիպագրությանը, գտնելով նրա տաղանդավոր ներկայացուցիչ Բաֆֆիի մեջ իր ամենաեռանդուն երկրպագուներից մեկը: Եվ նրա տված օգուտները շատ և շատ են: Ծիշտ էր ասում Արծրունու խոսակից պարոնը, թե այդ ուղղությունը հուսահատական է: Այո՛, շատ բան մոռալու ու հուսաբեկ դրություն մեջ էր երևան գալիս մեր առջև: Բայց դա թույլություն բերող հուսահատություն չէր, նա չէր ասում, թե պետք է ձեռքերը կախ գցել, վճիռ կայացնել, թե ոչինչ չի կարելի և չպիտի անել: Հուսահատական դրությունը եռանդ, գործունեություն, շարժում էր առաջացնում: Արծրունին չէր սխալվում, ասելով թե հայերի մեջ միակ միսիթարական, միակ պայծառ երևույթը ինքնաքննությունն է: Նրա հակառակորդները ինքնաքննություն հասկանում էին թշնամության մտքով և հայտարարում էին, թե Արծրունին և նրա կողմնակիցները ազգի թշնամիներ են: Բայց ո՞ր լավ գործիչը մեղանում այդպիսի անուն չէ ստացել: Պատմությունը պատասխանում է մեզ, որ ոչ մեկը...

Հարվածելով հայ բնույթի բացասական կողմերը, Արծրունին, բնականաբար, չէր կարող առանց ուշադրության թողնել կանանց հարցը, մի հարց, որ, ինչպես գիտենք, նրա գրական գործունեության առաջին իսկ քայլերից եղել է նրա համար ամենակարևորներից մեկը և որին նա վերադարձել է շատ անգամ: «Մշակի» առաջին տարվա ընթացքում Արծրունին միայն մի առաջնորդ է հատկապես նվիրել մեր կանանց («Կանանց ստրկության հետևանքը», № 13):

Տխուր է կնոջ ճակատագիրը պատմության ընթացքում: Կինը միշտ կախված է մարդուց. նրա դրությունը շարունակ ընդունում է աչք կերպարանքը, որ համապատասխանում է տղամարդու զարգացմանը: Երբ տղամարդը վայրենի է, կինը գրաստ է. կամաց-կամաց կնոջ դրությունն էլ փոխվում է, երբ տղամարդը վայրենությունից դուրս գալով, սկսում է հետզհետե բարձրանալ քաղաքակրթության աստիճանով: Կնոջ պատմական ճակատագրի մեջ ահագին հեղափոխություն գործողը քրիստոնեությունն էր, առաջին հասարակական վարդապետությունը, որ երկու սեռի բարոյական հավասարությունը քարոզեց: Քրիստոնեությունն էր, որ կերպարանափոխեց կնոջ դրությունը և մեզ մասնաշատանում: Առաջին խոշոր երևույթը հինգերորդ դարն էր, երբ հայ կինը հանդիսացավ տղամարդու հավասար մարդ և մասնակցեց թե՛ կրոնական և թե՛ ազգային շարժման:

Բայց քրիստոնեությունը չէ կարողանում մեզ մոտ առաջ գնալ, դարձանալ. նա մահմեդականության ստրուկն է դառնում: Հայը քրիստոնյա մեջլիսի, իր կենսական երևույթների, իր բարք ու վարքի, իր հասկացողությունների մեջ ենթարկվում է մահմեդական ոգուն, յուրացնում է նրա դադափարներն ու ըմբռնումները. նա դառնում է սրտնավոր ընտանիքի մեջ, մոլորանդ և անհամբերող՝ հասարակության մեջ, կորցնում է եռանդ դեպի շարժում և նորություն, հուսահատվում է, դառնում խոնարհ... կինը կրկին ստրկանում է»:

Բայց ահա գալիս է նորագույն ժամանակը, եվրոպական լուսավորության առաջին նշույլները թափանցում են հայերի մեջ, և ստրկության հետևանքը առաջ են գալիս իրանց ամբողջ դառնությունը: «Մարդ և կին տգետ, հասարակությունը անպատրաստ կրթությունը ընդունելու, տղամարդը այնքան անկիրթ, որ դեռ երկար ժամանակ ընդունակ չի լինի, իր կողմից կրթությունը ընդունելուց հետո, ազդել մյուս սեռի մտավոր զարգացման վրա»: Եվ դրա հետևանքն այն եղավ, որ հայ կինը սկսեց սովորել, կրթվել, բայց ոչ թե իր ազգի մարդիկների ձեռքով, այլ անմիջապես դրսի տարրերի ազդեցության ենթարկվեց: Կրթությունը եվրոպական լեզվով էր, եվրոպական ոգով:

«Մարդու կամքի դեմ, եվրոպական լուսավորությունը սկսեց ազդեցություն ունենալ կնոջ վերա... և կինը հեռացավ մարդից, կարծես այլևս չէր հասկանում նորան: Կինը օտար դարձավ մարդի ձգտումներին, հասկացողություններին, նպատակներին: Մարդը հայության վերա էր խոսում, կինը չէր հասկանում նորան: Մարդը հայերեն էր խոսում, կինը ծիծաղում էր: Նա հայ է, բայց իր ուղղությամբ նա տարբերվում է հայոց հասարակությունից: Նորան ծանոթ չէ հայության հին անցյալը, նորան ծանոթ է միայն հայի մոտիկ անցյալը, որը նորա համար անտանելի ստրկություն էր:

Նա, կարծես, կենդանի բողոք է հայ մարդի անընդունակության, աղվի պատմական անցյալ թշվառության, պատմական պայմաններից առաջացած այն ստրկության դեմ, որին նա երկար ժամանակ ենթարկված է եղել...

Հայ կինը, կարծես, ասում է հայ մարդին. այն քիչ մաս լուսավորությունը, որ ես տացել եմ, վատ թե լավ ըմբռնելով նորա տարրական սկիզբները, ես ստացա եվրոպական տարրից, և ոչ թե քեզանից...

Ամեն տեղ մարդը զարգանալով, մտավորապես ազդում է կնոջ վերա: Հայ արդյան հասարակության մեջ այդպես չէ: Մարդի կամքի դեմ, առանց մարդի միջամտության կնոջ և լուսավորության աղբյուրի մեջ, հայ կինը անմիջապես սկսում է լուսավորություն ստանալ եվրոպական աղբյուրից:

Մարդը ուշացավ իր բնական պաշտոնը կատարելու մեջ... նորա տեղը բռնած է: Ուրիշ, ավելի զարգացած տարրը նորա պաշտոնը կատարում է:

Եվրոպական լուսավորությունը, ինչպես ամեն ճշմարտություն, անուղորմ է...

Հայ կինը հափշտակվեցավ մեր անշարժության գրկից... Մեր սեփական հանցանքն է, եթե կինը դառնում է մեզ օտար, նա դառնում է մեր հակառակորդը...»:

Ուրիշ մի քանի տեղերում էլ Արծրունին շեշտում է հայ կնոջ այդ դրությունը, այսինքն այն, որ հայ ընտանիքի մեջ օտարացում, խորթություն մտցնելու ամենաազդու գործիքը հայ կինն է դառնում: Եվ դա, իսկ որ, կենսական մի մեծ երևույթ էր: Հայի նահապետական ընտանիքում կինը՝ զրկված լինելով որևէ ուսումից, կրթությունից, լինելով մի անլեզու ստրուկ, սաստիկ կապված էր հայրենի ավանդությունների, ընտանեկան սրբությունների հետ: Այդ ստրուկը կենտրոնացնող, իր շուրջը հավաքող մի ուժ էր. նրա վրա էր պահվում ամբողջ տունը և նրա հերոսական ջանքերը ընտանեկան սկզբունքի, սրբության, ավանդությունների ու նախապաշարժունքների հզոր, անխորտակելի պաշտպաններն էին: Բայց փոխվեցին հանգամանքները, հայ կինը սկսեց կրթվել, և դարձավ ընտանիքի մեջ բոլորովին հակառակ դեր կատարող մի ուժ: Նա սկսեց օտարացում մտցնել ընտանիքի մեջ, նա սկսեց քայքայել այն, ինչ դարերի ընթացքում պահել-պահպանել էր իր անօրինակ մարտիրոսություններով: Արծրունին բացատրում էր այդ երևույթը այն կրթությամբ, որ ստանում էր հայ կինը. նա ասում էր, որ հայ կնոջը հայությունից խլեց եվրոպական ուսումը: Սրանով նա, իհարկե, չէր ասում, թե հայ կինը եվրոպական ուսում չպիտի ստանա: Ո՛չ, ամբողջ հարցը ուսում ստանալու միջոցին ու կղանակին է միայն վերաբերում: Ինչպե՞ս պետք է լինի այդ կրթությունը, ի՞նչ պետք է անել, որ եվրոպական կրթությունը այդպես ոչնչացնող չլինի:

Այստեղ մենք կանգնում ենք Արծրունու աշխարհայեցողության հիմքերի տառը: Արդեն տեսանք, որ սկզբից եթե Արծրունին ամեն բանի մեջ անհատի ազատ զարգացման կողմնակից է, այդ սկզբունքն է համարում միակ ճշմարիտը, միակ արդարն ու բեղմնավորը մարդկային երջանկության համար:

Անհատ ասելով, նա միայն մարդուն չէր հասկանում: Մի հատ մարդը անհատ է իր հասարակության մեջ, բայց ընդհանուր մարդկության մեջ անհատ է ամեն մի ազգ: Եվ ինչ հարկավոր է ամեն մի մարդուն անհատապես զարգանալու համար, որպեսզի նրանից օգուտ տեսնի հասարակությունը, նույնը հարկավոր է և ամեն մի առանձին ազգին, որպեսզի նա օգուտ բերե ամբողջ մարդկությանը:

Հատկապես անհատի նշանակությունը և դերը բացատրելու համար Արծրունին 1872-ին գրել է երկու հոդված. «Կաթոլիկ եկեղեցի և անհատություն» (№ 22) և «Ի՞նչ է անհատություն» (№ 25): Առաջին հոդվածում նա բնորոշում է պապականության էությունը: Դա մի պատմական տեսություն է, հիմնված առաջավոր, լուսամիտ հեղինակների (Գրեյերի և ուրիշների) հայացքների վրա: Մենք ամենքս գիտենք, թե ինչ է պապականության ոգին. նա վախում է ազատությունից, անհատական իրավունքներից, մարդու մեջ անհատականության զգացմունքի զարգանալուց: Մի շարք դարեր իրանց գործերով, մաքատումներով ցույց են տալիս, թե ինչպես կաթոլիկ եկեղեցին ձգտում էր սպառնալ անձնավորությունը, դարձնել նրան եկեղեցական իշխանության ստրուկ: Մինչդեռ քրիստոնեությունը անհատի զարգացման սկզբունքն էր դրել իր հիմնարկության օրից: Եվ Արծրունին այդ ճշմարտությունը պարզող մի օրինակ համարում է հինգերորդ դարի Հայաստանը:

Հինգերորդ դարի հայր քարոզում էր անհատի անկախ ինքնաճանաչությունը: Լուսավորչական եկեղեցին քարոզում է, որ եկեղեցին «հավատացյալների ժողով է» և ոչ մի տեղ մեր դավանությունը դրա հակառակ բան չէ ասում, օրինակ այն, թե հավատացյալները պիտի անալոգիան, առանց իրանց խղճից խորհուրդ հարցնելու, հպատակվեն եկեղեցուն: Եվ հինգերորդ դարի գաղափարական շարժումը Արծրունին համարում է հենց այդ իսկ անհատական զարգացման գործը: Ահա՛ ինչ է նա ասում.

«Հինգերորդ դարի, Զրազաշտի զենի դեմ սաքսափելի կոիվների ժամանակ, երբ անհատներից ամեն մեկը, մարդ թե կին, դեպի հայրենիք և կրոն ունեցած խոր սիրով գինավորված, զոհում էին իրանց անձերը, եկեղեցին, որպես հիմնարկություն, կարծես թե ետ քաշվեցավ և կովի վճռողական բուսկում թույլ տվեց ուրիշ հասարակական գորությունը առաջնորդել ազգային շարժմանը... այն գորությունը անհատություն էր: Եվ ինչպես ասում է մեր Եղիշեն, մարդիկներից ամեն մեկը իր անձամբ ներկայացնում էր եկեղեցին, մեզանից ամեն մեկը եկեղեցի էր»:

Օրինակը այս է հաստատում, որ երբ հասարակության մեջ չէ սպանված անհատականությունը, երբ անձնավորությունը զարգացած է ինքն իր մեջ, գիտակցաբար, այդպիսի հասարակությունը կարող է գաղափարական, առաջադեմ շարժումներ գործել, շարժումներ, որոնք այդ հասարակության պարձանքն են մնում դարերով: Մինչդեռ պապականությունը, դարերով ջանք գործադրելով, որ չի նի անհատականություն, այլ կլինի կույր հնազանդություն, ստրկություն, երբեք չկարողացավ ազատ, առաջադիմական շարժումներին զրդիչ հանդիսանալ:

Ինչո՞ւ է անհատականության սկզբունքը այդպիսի առողջ, գեղեցիկ երկվությունը առաջացնում: Այդ բանը Արծրունին բացատրում է իր երկրորդ հոդվածում, հիմնվելով բնական գիտությունների վրա: Բնությունը կենդանի մարմինների ստեղծագործության մեջ զրել է մի մեծ, անփոփոխելի սկզբունք. դա այն է, որ կենդանի մարմինը բազկացած է գանազան գործարաններից, դանազան օրգաններից, որոնց նշանակությունն է ամբողջ մարմնի համար անհրաժեշտ այլևայլ պաշտոնները կատարելը: Եվ յուրաքանչյուր օրգան հարմարեցրած է կենդանի մարմնի տեսակին, բնավորության, կյանքի եղանակին: Կովի ատամները բուսական կերակրով ապրող անասունի համար ամենահարմար գործիքներն են. մարդը միայն բուսեղեն չէ ուտում, և նրա ատամները ուրիշ կազմվածք ունեն:

Օրգանական մարմնի համար անհրաժեշտ են այն բոլոր մասերը, որոնցից կազմված է նա: Օրգանական մարմինը իր բոլոր գործիքներով կազմում է այն, ինչ որ գիտությունը անվանում է անհատ: Հիմա զրկեցեք այդ անհատը նրա օրգանների մեկից: Ի՞նչ կլինի: Ամբողջ մարմինը կկորցնի իր օրգանական ամբողջությունը, իր անհատականությունը: Զրկել անհատը իր մի օրգանից, նշանակում է վնասել նրան:

Հասարակությունը կազմվում է անհատներից, իսկ մարդկությունը՝ ազգերից: Ազգությունն էլ անհատ է մարդկային մեծ ընտանիքի մեջ: Ամեն ազգություն իր անհատական ինքնությունը հատկություններն ունի, դրանք նրա գործարաններն են և պիտի ապրեն, որպեսզի ազգն էլ ապրե իր անհատական կյանքով: Եվ դա անհրաժեշտ է ոչ միայն այդ անհատին, այլ ամբողջ մարդկությունը:

«Եթե պահպանել մարդի անհատությունը նշանակում է հասարակությանը օգուտ բերել, նորան հարստացնել, նորա համար նոր ուժ մշակել, ուրեմն և

պահպանել ազգությունների անհատական հատկությունները, նշանակում է օգուտ բերել ամբողջ մարդկությանը»:

Մենք տեսանք, որ Արծրունին մայրենի լեզուի մասին ծաղած պայքարի մեջ անհատականության այս օրենքի վրա էր հիմնվում: Ահա նույն այդ սկզբունքից առաջնորդվելով, նա գրում է՝ «Քատրոն հարկավոր է, թե ոչ» առաջնորդողը (№ 31): Եվ ահա ինչպես է նա պատասխանում այդ հարցին:

Փորձեցեք 12 տարեկան մի երեխայի ձեռքը վերացական փիլիսոփայություն պարունակող մի գիրք տալ, և նա, երևի, ոչինչ չի հասկանա: Բայց պատրաստեցեք այդ երեխային հասկացնել նույն այդ ծանր վերացական մտքերը աստիճանաբար, ավելի թեթև և մատչելի ընթացքով: Երբ ժամանակի ընթացքում հասկանալի կդարձնեք նրան այն փիլիսոփայական գիրքը: Փորձեցեք երեխային նախ և առաջ նրա մայրենի լեզուն շտկորեցնել, այլ հենց սկզբից ավանդել նրան բոլոր առարկաները օտար լեզվով, երեխան մեծ դժվարություն, մեծ արգելքներ կզգա կանոնավոր կերպով մտավորապես զարգանալու համար: Իսկ եթե դուք նախ և առաջ մայրենի լեզվով պարթեցնեք երեխայի մեջ հետաքրքրություն, սկիզբ դնեք նրա մտավոր գործունեությանը, կտեսնեք, որ երեխան ժամանակով ինքը կզգա օտար լեզուների դիմելու անհրաժեշտությունը՝ իր մեջ զարթած ուսումնասիրությանը լրումն տալու համար:

Մի ուրիշ օրինակ: Երիտասարդը կարդում է մայրենի լեզվով գրած մի գիրք. նրա մեջ հարուցվում են նոր մտքեր, որոնց լրում տալու համար նա պահանջ է զգում դիմելու երկրորդ, երրորդ, չորրորդ գրքին: Նրա հարցասիրությունը ավելի և ավելի ընդարձակվում է, իսկ մայրենի գրականությունը այնքան աղքատ է, որ չէ կարողանում բավարարություն տալ նրան: Եվ նա ստիպված է լինում դիմել օտարազգի գրականությունը:

«Ահա մտավոր զարգացման համար բնական և կանոնավոր ընթացքը, պարթեցնել մարդի մեջ բնական ձգտումն աստիճանաբար կրթվելու, հետզհետե և ինքնաճանաչության մեջ գնալու»:

Այս բնական և կանոնավոր ընթացքը պիտի թատրոնական գործում էլ պարտավորական լինի: Ահա հայի առաջ ներկայացնում են օտար կյանքից վերցրած կամ օտար կյանքի մեջ ամենաերևելի համարված դրաման: Ընդունեցեք, թե այդ հայը դեռ չէ գնահատում կամ հասկանում իր մայրենի լեզվով գրված պիեսները: Եվ ի՞նչ կտեսնեք: Կտեսնեք այն, որ հայը չի հասկանա և օտար կյանքից վերցրած պիեսը:

«Բայց շարժեցեք նորա հետաքրքրությունը շարունակ ներկայացնելով նորան իր մայրենի լեզվով այնպիսի գրվածքները, որք անված են իր շրջանից, ժողովրդական կյանքից, և նա իր շրջանի երևույթներով հետաքրքրվելուց հետո, փոքր առ փոքր պահանջ կզգա՝ ընդարձակել իր հորիզոնը և ապա դիմել և օտար երևույթներին»:

Թիֆլիսը արդեն սկսել է մեծ կենտրոններին հատուկ կյանք վարել. նա ևս իտալական օպերա, ռուսաց թատրոն, գիտական ընկերություններ, գրական երեկոներ, հրապարակական գասախոսություններ և այլն: Այդ բոլորը, անկայն, մատչելի չէ ժողովրդի ստորին դասին կամ մինչև իսկ միջին դասի մի մասին:

«Մտորին դասը շարունակում է ազատ ժամանակը նվիրել կամ կոիվներին (մուշտի կոիվ) կամ զանազան ուխտագնացություններին: Միջին դասը թույլ խաղալուն, կանայք թուղթ և լոտո խաղալուն, գիտնականները բամբասելուն և այլն...»:

Երևակայինք, թե բնմի վրա ներկայացնում են Օստրովսկու պիեսները նրանք շատ լավ են, նրանց մեջ հանճարեղ գրող է նկարված ուս կյանքը: Բայց հայ-վրաց հասարակության համար, որ գեա սովոր չէ իր մայրենի լեզուով դատել Օստրովսկու դուրս բերած հասարակական երևույթների մասին, այդ պիեսները չեն կարող կրթողական նշանակություն ունենալ: Եվ մեր հասարակությունը չէ էլ գնում այդ ներկայացումները տեսնելու:

Ի՞նչ է մնում անել: Ո՛չ Օստրովսկու հիանալի գրվածքները, ո՛չ ընդհանուր մարդկային նշանակություն ունեցող Շեքսպիրի կամ Եյլլերի գրամաները գեա մատչելի չեն: Մնում է գրավել հասարակությունը Օֆենբախի և ուրիշների գործերով, դանազան «Գեղեցիկ էլեններով» և Ֆրանսիական ճաշակով գրված այնպիսի պիեսներով, որ երևում են սովոր կուրծքերով, օտներով ու ձեռքերով ներկայացնող, պար եկող, իրանց մեջ պաշարվող, գայթակղեցուցիչ դերասանուհիները: Բայց գրավելու այս միջոցը անկիրթ, դեռ իր սեփական ազգային, ինքնուրույն բեմական արվեստ չունեցող ժողովրդի համար անարդյակ է, վերին աստիճանի մնասակար և նույնիսկ վտանգավոր...

Մնում է դիմել այն մեթոդին, որով մենք փիլիսոփայությունը մատչելի դարձրինք երեխային: Այն է՝ սկսել մայրենի, սեփական գործից և նրա վրա կրթելով ժողովուրդը, տանել դեպի օտարը, դեպի հանրամարդկայինը:

«Հարկավոր է ամեն միջոցներով նպաստել ժողովրդական, ազգային բեմական արհեստի զարգանալուն, որ մեր հայ-վրաց հասարակությունը, նախ և առաջ գրավելով իր սեփական շրջանի հասարակական կյանքով, այնքան հետաքրքրվեր առհասարակ կենսական գաղափարներով, որ ժամանակով ազգային, սեփական մտավոր կյանքի արդյունքը նորա համար նեղ երևալով, նա ազամա ստիպված լիներ ընդարձակել իր մտավոր հորիզոնը և դիմել օտար լեզուներով գրված և օտար կյանքից առնված բեմական ստեղծվածներին:

Ահա մտավոր զարգացման կանոնավոր ընթացքը»:

Այս ընթացքը միանգամայն համապատասխանում է այն սկզբունքին, որի վրա հիմնում էր Գրիգոր Արծրունին իր ուղղությունը, այն է՝ անհատական զարգացման: Բայց չէ կարելի շխտատվանել, որ նա չափազանց խտրաբնույթ էր գույները, պահանջելով, որ ժողովուրդը նախ և առաջ դաստիարակվի սեփական կյանքից վերցրած, ինքնուրույն գրվածքների վրա և ապա միայն ծանոթանա օտար բեմի հետ: Այս, ճիշտ էր միանգամայն, որ թատրոնը կարող էր գրավել հասարակությունը տեղական, հարազատ կյանքի արտահայտություններով, բայց կարող էինք մենք ունենալ այնքան պատրաստություն որ միայն մեր սեփական ստեղծագործություններով կերակրենք ժողովուրդը: Մեր գրական աղքատության մեջ հարկավոր էր և օտարը, թարգմանական բուսուցանելու, գրողներ, կատարողներ ու գնահատողներ պատրաստելու համար: Սակայն պետք է ասել, որ Արծրունին անհաշտ թշնամի շմնաց թարգմանական օտար գրվածքներին. նա էլ հասկանում էր դրանց անհրաժեշտությունը: Եվ եթե այնպես խիստ կերպով էր ինքնուրույնության պահանջը դնում պատճառն այն էր, որ ինքնուրույնություն մեզանում շատ քիչ կար, բայց անհրաժեշտ էր, որ շատ լիներ:

Ինքնուրույնություն Արծրունին պահանջում էր ո՛չ միայն բեմական գրվածքների վերաբերմամբ, այլ գրական գործունեության բոլոր ճյուղերում: Մամուլից նա պահանջում էր ինքնուրույն տաղանդներ ծնեցնել, իսկ «Ո՛վ մեղավոր» առաջնորդում (№ 14) ասում էր.

«Մենք զգվեցինք օրագրութենից, որովհետև մեր օրագրողները, չճանաչելով ժողովրդի պահանջները, մտավորապես պատրաստ չլինելով հանդես գալու

դալ, չկարողանալով իրանց մտքերը հայտնել, ինքնուրույն մտավոր արդյունքը ծնել, լցնում էին թերթի էջերը ամեն ստացած անհամ նամակներով, դամբանական ճառերով, անխորհուրդ բանաստեղծություններով...

...Ինքներս գրելու նյութ չունենալով, մենք ստիպված էինք մեր լրագիրների էջերը և օրագիրների երեսները կամ անհասկանալի թարգմանություններով լցնել կամ գավառներից առաջին պատահած անհամ նամակներով, որ չվիրավորենք այսինչ կամ այնինչ քաղաքում նշանակություն ունեցող կիրակոսյանի կամ Մարտիրոսյանի անձնական զգացմունքը, նորա ինքնասիրությունը»:

Ինքնուրույն միտք, ինքնուրույն ստեղծագործություն որոնելը մեր կյանքի առաջացրած անհրաժեշտությունից էր բխում. և Արծրունուն ներելի էր ժամանակի ստիպողական պահանջի ազդեցության տակ մի քիչ միակողմանի էլ լինել՝ այդ անհրաժեշտությունը ցույց տալու համար:

Անհատական զարգացման սկզբունքը երևում է և Արծրունու մի այլ հոդվածում. «Պետության զանազան տարրերը» (№ 48): Պետությունները կարող են կազմված լինել զանազան ազգություններից, որոնց միացնում է ընդհանուր քաղաքական օրենքը: Բացի ազգություններից մի պետություն կազմող մասերը կարող են հետևյալ տարրերը լինել. զանազան, միմյանցից տարբեր լեզուները, միմյանցից տարբեր կրոնները, և վերջապես քաղաքական կուսակցությունները:

Պետության համար անհրաժեշտ է իր բաղկացուցիչ բոլոր տարրերի միություն, բայց ոչ միակերպություն: Եթե միություն բառով մենք պետք է հասկանանք միակերպություն, այն ժամանակ պետք է տեսնենք այսպիսի դրություններ քաղաքական աշխարհում. Ավստրիան, որ գերմաներեն լեզուներով խոսողները բազմաթիվ են, քան թե զանազան ուրիշ լեզուներով խոսող խմբերը առանձին վերցրած, պիտի ստիպե իր բոլոր հպատակներին գերմաներեն խոսել. Ֆրանսիան, որ բազմությունը կաթոլիկ եկեղեցուն է պատկանում, պիտի ստիպե բողոքականներին ընդունել կաթոլիկությունը: Անգլիան, որ փրայպետող կրոնը բողոքականությունն է, պիտի ստիպե, որ կաթոլիկ Իրլանդիան բողոքականություն ընդունե:

Բայց այդպես չէ, միությունը միակերպություն չէ նշանակում և դրա ամենալավ օրինակը Շվեյցարիան է, որ կազմված է միացած, բայց ոչ միակերպ ազգություններից:

Շվեյցարիայի հանրապետությունը հասնում է կատարյալ միությանը ոչ թե խիստ միակերպության միջոցով, այլ բազմատեսակ և միմյանցից բոլորովին տարբեր, պետության մեջ գտնվող տարբեր մեջ ընդհանուր հավասարակշռություն մտցնելով»:

Ամենամեծ ուղարկություն նվիրելով տեղային, մասնավորապես հայ ազգին վերաբերող հարցերին, «Մշակը» աչքից չէր զցում և ժամանակակից առաջնակարգ հասարակական, օրենսդրական և քաղաքական երևույթները: Այսպես, «Մշակը» խոսեց ընդհանուր դինվորագրության, կրասիկական ուսման մասին: Հետաքրքրական է, որ Արծրունին ընդհանուր դինվորագրությունը համարում էր մի երկրի մտավոր և նյութական զարգացման արդյունք: Ընդհանուր դինվորագրությունը մի պարտավորություն է. բայց որտե՞ղ կարող է այդ պարտավորությունը սիստեմ դառնալ, իրագործվել: Այնտեղ, որ կա իրավունքներ ունեցող քաղաքացի: Մի պարտավորություն ճշտությամբ կատարելը հեշտ բան չէ: Հարկավոր է զարգացած լինել՝ պարտավորություն կատարելու համար: Իսկ զարգացած լինելու համար պետք է կատարյալ իրավունք ունե-

նալ զարգանալու՝ թե մտավորապես, թե նյութապես: Այս սկզբունքից առաջ-
նորոգելով, Արծրունին չէր համատուժ: որ ընդհանուր դիմադրագրությունը
այնպիսի երկրներում, ինչպես են Քուրքիան և Պարսկաստանը, կարողանա
հասարակական օգուտներ տալ:

«Այն երկրներում, որտեղ չկա մտավոր հիմք, որտեղ չկա ժողովրդական
կրթության կազմակերպված սխտեմ, որտեղ ամենքին տիրում է մոլեռան-
դություն, որտեղ զեռես ժողովուրդը վարժված չէ ոչ աշխատանքի, ոչ քաղա-
քական իրավունքի և ինքնակառավարության մեջ, որտեղ մահմեդականը
անհամբերող է դեպի քրիստոնյան, հայ լուսավորչականը դեպի հայ կաթո-
լիկը, հույնը դեպի հրեան, հայը դեպի հույնը, մահմեդականը շիա դավանու-
թյան՝ դեպի մահմեդականը սուննի դավանության... որտեղ գյուղական աղ-
գարնակությունը ողորմելի է մի կողմից, որովհետև ավազակությունը դեռևս
ազնիվ արվեստ է համարվում, ու մյուս կողմից՝ որովհետև հարկատվությունը
և պաշտոնյաների կառավարությունը կամայականության վերա է հիմնած...»:

Գալով կլասիկական ուսման հարցին, նկատի ունենալով Արծրունու հող-
վածները «Հայկական աշխարհի» մեջ, կարող ենք հեշտ եզրակացնել, որ նա
հակառակ պիտի լիներ այդ ուսման, նա չէր կարող հակառակ շինել, քանի
որ սեփական ուղղության ներկայացուցիչ էր, պահանջում էր ճիշտ, դրական
գիտությունների տիրապետությունը թե՛ դպրոցի և թե՛ գրականության մեջ:
Այդ հարցին «Մշակը» նվիրել է երկու առաջնորդող, որոնցից մեկի մեջ քննում
էր հին, կլասիկական աշխարհի հասկացողությունները: Հետաքրքրության
արժանին այդտեղ այն է, որ Արծրունին կլասիկական ուսման հետևանք էր
համարում սոցիալիզմը և կոմունիզմը: Դրանք ներկայանում են իբրև վնասա-
կար վարդապետություններ, որոնցից ազատվելու համար պետք է թողնել
կլասիկական ուսման սխտեմը և դիմել սեփական ուսման: Այստեղից պարզ
է, որ Արծրունին իր ուղղությամբ, դավանանքներով պատկանում էր ազա-
տամտության, լիբերալիզմին, այս բառի ընդարձակ և լավագույն իմաստով...»:

Իբրև սեփական, իբրև գործնական, ճիշտ գիտությունների դարի զավակ,
Արծրունին, իհարկե, առանձին մեծ ուշադրություն պիտի նվիրեր մեր երկրի
տնտեսական հարցերին: Մենք այդ տեսանք նրա այն հողվածներում, որոնք
գրվեցին մինչև «Մշակը»: Սկսելով սեփական լրագրի հրատարակությունը,
Արծրունին ավելի միջոց և հնարավորություն ուներ զարգացնելու իր գործու-
նեության այդ կողմը: Իր մի շարք առաջնորդողներում, որոնցից մի քանիսը
կրում են «Մեր տնտեսական ապագա» ընդհանուր վերնագիրը, Արծրունին
հայ ընթերցողի առաջ բաց է անում մի բոլորովին նոր, անծանոթ աշխարհ-
Բացի առաջնորդողներից, «Մշակի» ներքին տեսությունը համարյա ամբող-
ջովին նվիրված էր տնտեսական-արդյունաբերական բազմակողմանի հար-
ցերին: Եվ «Մշակը» իր առաջին տարվա մեջ այդ կողմից պարունակում է
այնպիսի մի մեծ հարստություն, որի նմանը նույնիսկ տեղական ուրիշ լեզու-
ներով հրատարակվող թերթերին էլ հայտնի չէր նույն չափերով:

Մենք, իհարկե, չենք կարող քալ առ քալ հետևել այդ բոլոր հողված-
ներին: Կվերցնենք միայն մի քանիսը Արծրունու առաջնորդողներից, որպեսզի
իմանանք, թե տնտեսական ինչ սկզբունքներ էր նա առաջարկում սխտապարհ-
վերացական կրթության և հասկացողությունների մեջ անշարժացած հային:

«Մեր տնտեսական ապագա» հողվածների շարքը սկսվում է (№ 19) ան-
տանների նշանակության և նրանց ոչնչացնելու հարցով: Բայց կարևոր այդ
չէ: 1872 թվականին վերջանում էր Փոթի-Քիֆլիսյան երկաթուղին: Առաջին
անգամն էր, որ շոգեկառքը պիտի շարժվեր Անդրկովկասում: Հայտնի է, թե

քաղաքակրթության այդ հրաշալի սեփականությունը ինչ ահագին փոփոխու-
թյուններ է մտցնում մի երկրի մեջ, մանավանդ այնպիսի երկրի, որ դարավոր
անշարժության է ենթարկված, որի ժողովուրդը ոչինչ պատրաստություն չու-
նի՝ քաղաքակրթության պահանջները հասկանալու և իրագործելու համար:
Արծրունին զեղեցիկ, կրակոտ առաջնորդողում (№ 23), ուշադրություն հրա-
վիրելով մեր երկիրը մտնող այդ նոր հսկայական ուժի վրա, ասում էր, թե
ինչ պիտի լինի երկաթուղին մեզ համար:

Ի՞նչ պիտի լինի: «Եվրոպական լուսավորությունը անողորմ ուժ է,—
ասում է նա:— Կամ բոլորովին չպետք է հետևեք նրան, և համառությամբ
նրա ոչ մի սկզբնական միտքը չընդունեք, կամ եթե առաջին քայլ արեցիք,
այլևս չեք կարող ետ կանգնել և ընդդիմանալ նորա ընթացքի զորությունը»:
Պայիս է երկաթուղին: Նա մի զորեղ խթան կլինի մեր ինքնահավան անշար-
ժության դեմ: Եվ եթե դուք դարման չտաք նրա բերած պահանջներին, ուրիշ-
ները կկանգնեն ձեր տեղը և ձեզանից կխլեն զործելու միջոցները: Շուտով
չոգեկառքը կսուլե մեր երկրում: Սիրելի՛ կլինի ձեզ համար այդ սուլոցը: Ո՛չ,
դուք պետք է ատեք նրան: Եվ Արծրունին մարդկային լեզու է դնում այդ սու-
լոցի մեջ, խոսեցնում է նրան:

«Նա կդառնա ձեզ համար ատելի, ծաղրական ձայն, որը եթե կթարգման-
վի մարդկային լեզվով, հեկյալ միտքը կունենա. «Դուք համառությամբ մնա-
ցիք ձեր անշարժության մեջ, հիմի ուշ է, ձեռ իշխանությունը անցավ: Դուք
համառությամբ պաշտպանելով սուրբ անշարժությունը, սրբապղծություն
համարեցիք թե՛ եկեղեցու, թե՛ հասարակության մեջ կենդանի լեզվով ամբոխի
հետ խոսելու, այլ շարունակեցիք մեռած գրաբարը ձեր հասարակության մեջ
գործածելու, հիմի դուք պիտի կորցնեք ձեր լեզուն, դուք չկարողացաք ազդել
ձեր կանանց վերա կրթողական կերպով, ստրկացրիք նոցա և չկրթեցիք նոցա.
կներ հափշտակվեցավ ձեր գրկից, դուք նորա համակրությունը կորցրիք: Դուք
ձեր սրդիներին կրթություն տալուց հետո չուղեցիք նոցա ստացած գիտությու-
նից օգուտ քաղել և զործ դնել նոցա հասարակության ծառայությանը, մինչև
30 և 40 տարեկան հասակը նոցա տգետ և անփորձ համարելով, և ձեր ուսյալ
երիտասարդների տեղը օտարազգի գիտնական երիտասարդները գործ կկա-
տարեն: Ձեր երիտասարդության մեծ մասը ձեր անշարժությանը ենթարկվե-
լով, և չգիտենալով ձեր ամեն բան մեղցնող ազդեցության դեմ բողոքել,
տնցնում էր անգործության և թուղթ խաղալու մեջ տարիները օրերի նման, և
նոքա պիտի կորցնեն բնական իրավունքը ազդեցություն ունենալ հասարա-
կության վերա: Դուք հափշտակվեցաք առևտրական գործունեությամբ, որին
համարեցիք ամենից հեշտ միջոց շուտով հարստանալու, արհամարհեցիք
երկրագործական պարապմունքը, արհամարհեցիք առհասարակ արդյունաբե-
րությունը, բավականացաք միայն առևտրական միջնորդությամբ: Դուք ձեր
սրբար և անարդար միջոցներով հավաքած հարստություններն էլ գործ չդրիք
արվեստագործության, երկրագործության, տնտեսության դարգացման նպաս-
տելուն, չհիմնեցիք գործարանները, չբովագործեցիք երկրի հանքերը, չբար-
ձրեցիք երկրագործությունը, գինեգործությունը, շերամապահությունը, և այդ
բոլոր պիտի կատարեն ձեր տեղը օտարազգիները, որովհետև դուք ուշացաք,
ինքնահավանությամբ կրկնելով «զեռես վաղ է»:

Դուք արդյունաբերությունը արհամարհեցիք, ընտելացած շինելով աշ-
խատանքին և խմբովին դիմեցիք ձեր բոլոր ուժը գործ դնելով պաշտոնական
տառայության, և դատապարտեցիք ձեզ ինքներդ շննել նոր մտավոր կամ նյու-
թական արդյունքը, այլ միայն եղած գրությունը պահպանել...»:

Շոգեկառքի սուլոցի այս մեղադրական ակտի մեջ երևում է Արծրունու տնտեսական ծրագրի ամբողջ մանրամասնությունը: Ահա՛ նա հետևյալ հոգի վածում շոշափում է վաճառականության հարցը:

Հայերի վաճառականությունը շահագանց հայտնի է աշխարհին և նրա մասին շատ խոսել են եվրոպական դանազան հեղինակներ էլ: Միայն առևտրի շրջանում հայը կարողացավ համաշխարհային հռչակ ստանալ. և դա ազգային միակ պարծանքն էր, քանի որ հայը Արևելքի վաճառականության առևնանշանավոր տերն էր: Պարծանք էր այն, որ հայը ոտի տակ է տալիս ամբողջ Արևելքը, որ նրա քարավանները անհասն տարածություններ են կտրում անցնում, և նա Եվրոպայի բոլոր վաճառաշահ նավահանգիստներում ունի իր սահաստները: Բայց ահա XVIII դարում Արևելքի վաճառականական ասպարեզում հայերի մրցակից են հանդիսանում եվրոպացիները՝ անգլիացի, ֆրանսիացի, հոլանդացի վաճառականներ: Հայը ստիպված է տեղի տալ այդ մրցակիցներին, որովհետև նրանց պես պատրաստված ու լուսավորված չէ: Զրկվելով ինքնուրույն, անկախ գիրքից, հայ վաճառականը զրկվում է և շահից: Հայտնի է դառնում, որ հայը իսկապես մի առևտրական միջնորդ է, որ նա ինքը ոչինչ չէ արդյունաբերում, այլ միայն անում և ծախում է պատրաստ ապրանքը: Այս հանգամանքը շեշտում են դեռ XVIII դարի հեղինակները:

Մեզանում առաջին անգամ Ստեփանոս Նազարյանցն էր, որ հայտնեց թե ոչ մի պարծանք չէ հայի հռչակված վաճառականությունը, քանի որ նա առևտրական միջնորդության կերպարանքն ունի և արդյունագործություն չէ առաջացնում մեր երկրում: Գրիգոր Արծրունին էլ, այդ տեսակետից նայելով վաճառականության վերա, ասում էր, որ եկել է կամ կգա ժամանակը, երբ հայը իբրև միջնորդ էլ դուրս կըջվի հրապարակից: Հայի միջնորդությունը հարկավոր էր, քանի որ մեր երկիրը դժվարություններ էր ներկայացնում օտարների համար. կովկասյան պատերազմները, հարմար և արագ հաղորդակցության բացակայությունը ձեռնառու էին միջնորդ հայերին, որոնք երկրի հում նյութերը ուրիշ երկրներ էին արտահանում և դրսից էլ ապրանքներ ներմուծում: Այժմ Կովկասը խաղաղացավ, հաղորդակցությունը ապահով և արագ է դառնում: Կմնա՞ն հայերը միջնորդներ:

Այո՛, գուցե միառժամանակ կմնան, մինչև որ օտարազգիները կմտնեն մեր երկիրը, լավ կճանաչեն նրան: Սկզբում նրանք էլի կդիմեն հայերի միջնորդությանը, մինչև որ իրանք կհաստատվեն. իրանց ձեռքը կառնեն ամեն ինչ: «Ի՞նչ կմնա հային, — հարցնում եմ ես, — եթե նա համառությունը կշտրունակի առևտուրը իր հասարակական գործունեության միակ ճյուղը համարել... Ի՞նչ կմնա, միայն մանրավաճառությունը կամ օտարազգիներին ծառայել որպես կոմիսիոներ»:

Ոչ մի երկիր չկա, որի բնակիչների մեծ մասը, երկրի բնական հարստությունը թողած, պարապեր միայն առևտուրով: Սա անբնական դրություն է և Եվ Արծրունին, ցույց տալով ապագան, առաջարկում էր թողնել հին հասկացողությունները և սկսել երկրի բնական հարստությունները շահագործել: Դեռ ամեն ինչ կորած չէ, եթե ժամանակին խելքի գաք, զգուշացնում էր նա:

Հայի վաճառականությունն այդպես է: Բայց հայը միայն վաճառական չէ ազգի մեծամասնությունը հողի վրա է նստած, երկրագործությամբ է պարապում: Սակայն հողագործությունն էլ ոչ մի հուսատու ապագա չէ խոստանում: Նկատելի է մի ցավալի երևույթ, որ գանգատների առիթ է տալիս մտածող և հասկացող մարդկանց: Դա այն է, որ հայ ժողովուրդը, դարերից ի վեր լինելով երկրագործ, քիչ հակում ունի դեպի երկրագործությունը: Գյուղը ձգտում է

պետի քաղաք: Մարդիկ թողնում են իրանց պարապմունքը և քաղաքներ տեղափոխվում: Երկրագործ հայի իդեալն է վաճառական դառնալ և հենց որ նա փող է ձեռք դրում, աշխատում է խանութ բաց անել:

Ամեն տնտեսական երևույթ իր խոր պատճառներն ունի: Երկրագործությունը մեղադրում չէ դարդանում, որովհետև մեր երկրում միջոցներ, գումարներ չեն գործադրվում նորան բարվոքելու համար: Արծրունին վերցնում է եվրոպական երկու երկիրներ՝ Անգլիան և Շվեյցարիան, որոնք երկու հակառակ բևեռներ են կազմում երկրագործության մեջ: Երկու երկրներում էլ հողագործությունը շատ ծաղկած դրություն մեջ է. բայց ի՞նչ ճանապարհով են նրանք հասնում այդ դրության: Անգլիայում հողը պատկանում է խոշոր կալվածատերերին, որոնք մեծ գրամագույններ են ծախսում երկրագործությունը բարվոքելու, կատարելագործելու համար: Շվեյցարիայում, ընդհակառակն, հողը մեծ մասամբ բաժանված է մանր կտորների, որոնց տերերը իրանք հողագործությունը անդադար առաջադիմում է: Բայց որտեղի՞ց է այդ գրամագույնը: Գյուղացիները, առանձին-առանձին վերցրած, շատ հարուստ չեն, սուտի նրանք միանում են, ընկերակցություններ են կազմում, և ահա հավասարական գործակցությունը պատրաստում է նույն անհրաժեշտ ուժը հողագործությունը զարգացնելու համար գրամագույնը:

Մեր երկրում չկան ոչ Անգլիայի հարուստ կալվածատերերը, որոնք մեծ գումարներ ծախսեին, ոչ էլ Շվեյցարիայի գյուղական ընկերությունները: Եվ ահա մեզանում հողագործությունը մի պարապմունք է, որ ապուստի շատ եվազ միջոցներ է տալիս ազգաբնակչությանը: Երբ տարվա բերքը հաջող է, մեր գյուղացին դեռ կարող է ապրել առանց դժվարությունների: Բայց լինում են բնական դանազան պատահարներ, վերջապես ինքը, գյուղացին դանազան պատճառներով չէ կարողանում հերկել իր դեռիներ: Այս տնտեսական ձախորդության մեջ նա ալլևս չէ կարող ինքնագույն ապրել. դիմում է վաշխառուին, մեծ տոկոսներով տակ է ընկնում: Երկրագործական գործիքները նահապետական դրության մեջ են, փող չկա նորերը, կատարելագործվածները ձեռք բերելու համար, փող էլ լինի, հասկացողություն չկա, թե որքա՞ն օգտակար են պրանք:

Ի՞նչ անել: Լոկ բարոյական քարոզներով բան չի դառնա, որքան ուզում եք, ասացեք, թե լավ են կատարելագործված գործիքները, թե պետք է հող մշակել, բայց գյուղացին ընկճված է նյութական-տնտեսական հանգամանքների տակ: Զկա խոշոր հողատիրական կապիտալը, չկա ընկերակցական կոոպերատիվ սկզբունքը, ժողովուրդը ինքնօգնության գաղափարը չունի, գյուղական էժան կրեդիտը գոյություն չունի: Ահա ինչ դրության մեջ է գյուղացի ժողովուրդը:

«Եվ նա անդադար և անդադար գաղթում է քաղաքները, թողնելով ապուստը երկրագործական պարապմունքը, հաշտվելով մի անբնական հրեշավոր զգացմունքի հետ, ընտանիքի և հայրենիքի հավիտենական կորուստը»:

Ճիշտ որ հրեշավոր երևույթ: Մամուլը, սակայն, չպիտի բավականանար երևույթը արձանագրելով. նա պիտի ցույց տար և այն գործնական միջոցները, որոնք կարող են օգնել ժողովրդին քարուքանդ, անհայրենիք լինելու դեմ: «Մշակը» կատարում է այդ պարտականությունը. նա ցույց է տալիս, թե որն է փրկությունը: Այդ փրկությունը Արծրունին, իբրև հեռատես տնտեսագետ-խաղաղակախոս, գտնում էր ընկերակցությունների, կոոպերատիվ կազմակերպությունների մեջ: Բացատրելով («Ընկերակցության միտքը», № 47), թե

ինչ է արդյունաբերութիւնը և սպառումը, նա գալիս էր Շուշե-Քոն-Դելիշի և Ֆերդինանդ Լասսալի առաջարկած միջոցներին: Առաջինը մշակ, աշխատավոր դասի ինքնօգնութիւնը հիմնում էր ընկերակցութիւնների վրա, երկրորդը պահանջում էր, որ պետութիւնը փոխ տա մշակներին հիմնական գրամուս- գլուխ՝ մատչելի տեղումներով:

Ո՞ր ձևն է լավը. Արծրունին թողնում է այս հարցը, նա միայն ասում է, որ առայժմ ավելի հարկավոր են արդյունաբերական կոոպերացիաները, առանց գրանց՝ սպառման ընկերակցութիւնները շատ շնչին օգուտ կրեանն: Եվ նա խորհուրդ է տալիս գլուխը փոխատու և խնայողական ընկերու- թիւններ հիմնել: Այս ընկերութիւնների օգուտը, նշանակութիւնը, կազմա- կերպութեան եղանակները «Մշակը» շատ անգամ է բացատրել իր գանազան հոդվածներում, իսկ 1873 թվականին իր մի քանի համարներում տպագրեց գլուխական փոխատու-խնայողական գանձարանների նորմալ կանոնադրու- թիւնը: Սկիզբը, ոգին, հիմքը հասարակական ինքնօգնութիւնն է, Արծրունին շարունակ, անդադար այս փրկարար գաղափարն էր ժողովրդականացնում, գանազան ձևերով, չէր բավականանում մի անգամ, երկու անգամ կրկնելով: Այն ժամանակները, երբ նա սկսեց այդ կազմակերպութեան անհրաժեշտու- թիւնը քարոզել մեզանում, ընկերակցութիւնները Եվրոպայում արդեն պարզ հասկացված, գործադրվող ուժեր էին: Աշխատավոր դասակարգը իր կեցու- թիւնը բարձրացելու համար շարժումներ էր գործում, ձևեր էր մշակում: Հարկ չկա ասելու, որ այդ շարժումների նույնիսկ ամենահեռավոր արձագանքները չէին հասնում մեր երկրին: Մենք դեռ քնած ու անշարժ, անհոգ էինք, բայց ժամանակը մեր առջև էլ պիտի դներ նույն անհրաժեշտութիւնը: Արծրունին զգում էր այդ կարիք չկար, որ նա հայ ընթերցողին մտցնէր Արևմտյան Եվրոպայի շարժումների մանրամասն նկարագրութիւնների մեջ: Նա վերցնում էր ամենակարևորը, ամենատարրականը: Ամեն բանի հիմքը ինքնօգնութիւնն էր, արդյունագործողների և սպառողների համախումբը փոխադարձ աջակցու- թեան սկզբունքով: Եվ նա այս կորիզը շատ էր աշխատում տնկել մեր հողի մեջ:

Բայց չենք կարող ասել, թե նրա քարոզութիւնները առանձին գործնական հետևանքներ ունեցան: Հայերը միայն կարդում էին, միայն իմանում էին, որ օգտակար հիմնարկութիւններ կան աշխարհիս վրա, իսկ իրագործել իրանց մեջ այդ հիմնարկութիւնները, այդ անհնարին եղավ, այնքան մեծ էր մեր ասիական ավանդապահութիւնը: Ներկայումս ընկերակցութիւնների, կոոպե- բատիվ գործունեութեան անհրաժեշտութիւնը ահագին նվաճումներ է արկ- մարդու տնտեսական կյանքի համարյա բոլոր բաղմաթիվ, գանազան կերպու- բանքներ ունեցող ճյուղերում և հրաշքներ է գործում: Միայն մեզանում, հայ- յերի մեջ, դեռ շարունակվում է հին առանձնասիրութիւնը, միակ ու անջատ գործելու դժբախտ համառութիւնը: Սակայն ո՞վ է մեզավորը: Մի անգամ էլ նայենք այն թվականին, երբ Արծրունին սկսեց բացատրել մեզ ընկերակցու- թիւնների ահագին ուժը, հասարակական նշանակութիւնը: Երեսուն տարի է անցել այն օրից, երեսուն տարի շարունակ կրկնվում էր այդ միտքը, և սակայն նրա գործադրութիւնը այսօր էլ նույնքան հեռու ու անհավատալի է թվում որքան երեսուն տարի առաջ...

Տնտեսական հարցերը ի միջի այլոց չէին քննվում, այլ այն խորին համոզ- մունքից առաջնորդված, որ դրանք մեզ համար կյանք և մահ են, լինել և չլինել պիտի վճռեն: «Մեր թղթակիցներին» հոդվածի մեջ Արծրունին առաջար- կում էր հում նյութեր հավաքել գլուխների, քաղաքների տնտեսական հանդա-

մանքների, տեղական պայմանների մասին: Նախ տպել այդ նյութերը և ապա նրանց քննել, նրանցից եղրակացութիւններ հանել: Երևութիւնները պետք է ուարզաբանել, հիմնվելով ճիշտ փաստերի վրա, միանգամից հավատացած լինելով, որ յուրաքանչյուր երևույթ իր պատճառներն ունի:

Եվ թղթակիցները, մի կողմ դնելով հանդեսների ուռուցիկ նկարագրու- թիւնները, ազգասիրական զեղումները, տալիս էին փաստեր, ուղարկում էին նյութեր: Դրանց միջոցով Արծրունին շատ երևույթներ բացատրում էր տնտե- սական պատճառներով: Այսպես է, օրինակ, «Հայերի շատ շրագմանալու պատճառները» հոդվածը (№ 50): Այդ երևույթը տնտեսական պատճառ ունի: Եվ Արծրունին առաջին անգամ մեզանում բացատրում էր, թե ինչ անմիջական կապ կա ժողովրդի աճեցման և տնտեսական պայմանների մեջ: Այս հանգա- մանքը շատ լավ հայտնի է ամեն մեկին, ուստի մենք երկար կանգ չենք առնի- նրա վրա: Առանձին-առանձին քննելով հայ ազգը կաղմող դասակարգերը, Արծրունին նրա տնտեսական պայմանների մեջ էր գտնում այն հարցի լու- ծումը, թե ինչու հայերը շատ չեն բաղմանում: Գլուխացին մշտական առատու- թիւնն չէ ստանում, շարունակ գաղթում է քաղաքները: Առևտրականը երկար ժամանակ չէ կարողանում ամուսնանալ, որովհետև դեռ պիտի փող աշխատե. նա թափառական կյանք ունի: Արհեստավորը աղքատ է, կատարելագործված գործիքներ չունի, լուսավորված անունով դասի մեջ թե երիտասարդը և թե օրիորդը չեն կարողանում իրանց անձնական ուժերի գործադրութիւն գտնել. ազատ պրոֆեսիաները մեզանում դեռ այնքան չեն զարգացած, որ ապահովեն կյանքը: Բայց ավելի հետաքրքրական է այն դատողութիւնը, որ անում է Արծրունին հարուստ դասակարգի մասին:

Մեզանում հարուստ դասակարգը ավելորդ է համարում իր որդիներին անկախութիւն տալ: Ամերիկայում հարուստ հայրը, հենց որ որդին վերջաց- նում է ուսումը, տալիս է նրան իր կարողութեան մի մասը և որդին սովորում է անկախ ապրել, գործել իր համար: Իսկ մեզանում հարուստ դասակարգի որդին պիտի սպասե իր հոր մահվան. «և այնուհետև պարզ է, որ հարուստ հոր մեռնելուն պես, որդին դառնում է իր հորից ժառանգած հարստութեան ամենամեծ քչնամին ու շատ ժամանակ չէ անց կենում մինչև բոլոր հարստու- թիւնը վատնած է»:

Այսպես, ահա, մեզանում էլ հասարակական երևույթները ուսումնասիր- վում և պատճառաբանվում էին այնպես, ինչպես պահանջում են ճիշտ, դրա- կան գիտութիւնները: Բարոյախոսական քարոզների դարը անցնում էր, «Հանցավորներ և հասարակութիւն» առաջնորդողի մեջ (№ 17) Արծրունին ասում էր, թե հանցանքների դեմ կովելու համար բավական չեն ո՛չ բարոյա- կան քարոզները, ո՛չ պատիժները, ո՛չ դպրոցները: Հանցագործութիւնները բարդ երևույթներ են և բաղմաթիվ պատճառներից են առաջանում, որոնց մեջ գլխավոր տեղը բռնում են տնտեսական պատճառները: Ընկերակցութիւնները շատ դեպքերում կաննեին հանցանքների առաջը: Դրա հետ պետք է փոփոխել սոցիալական պայմանները, լավ օրենսդրութիւն տալ և այլն...

Քանի որ խոսքը տնտեսական հարցերի մասին է, մենք պիտի գուրս գանք «Մշակի» առաջնորդողների բաժնից և մի համառոտ ակնարկ ոցնենք նրա «ներքին տեսութիւն» բաժնի վրա: Այդտեղ էլ արժարժվում էին շատ կարևոր տնտեսական և արդյունաբերական հարցեր: Ինչպես գիտենք, ներքին տեսու- թեան բաժնում աշխատում էր Վասիլ Շահվերդյանը. ինքնուրույն հոդվածնե- լից մի քանիսը կրում են նրա ստորագրութիւնը, բայց ավելի շատ են այն- պիտի հոդվածները, որոնք տպվում էին ինչպես առաջնորդողները, առանց

ստորագրութեան: Ո՞ւր են պատկանում ներքին տեսութեան անստորագիր հոգ-
վածները, շքիտենք: Բայց որ Գրիգոր Արծրունին այդանոց էլ ունեք իր բաժինը,
դա անկասկած է. շատ հոգվածների մեջ մենք դռնում ենք Արծրունու ոճը,
համարձակութունը, գեղեցիկ պատճառարանութունը, քննական մեծ ուժը:
Շատ հոգվածներ մի-մի առաջնորդողներ են, տպված ներքին տեսութեան
բաժնում: Մենք գլխավորապես այդ հոգվածները կունենանք ի նկատի, հա-
մողված լինելով, որ միայն Արծրունին կարող էր նրանց գրողը լինել:

«Մշակի» երկրորդ և երրորդ համարում տպված է մի ընդարձակ հոգված՝
«Առևտրական խնդիր Քիֆլիսում» վերնագրով: Այդանոց խիստ քննութեան են
ենթարկված հայ վաճառականական հին իմաստութունները, որոնք այժմ ոչ
միայն որևէ օգուտ բերել չեն կարող, այլև քայքայում են վաճառականու-
թյունը: Ո՞րն է ամենագլխավոր թշնամին, որ քանդում է հայ վաճառականնե-
րին: Տգիտութունը, որ ավելի վնասակար է, երբ ինքնահավանութեան հետ է
միանում: Այդ տգետ ինքնահավանութունը չէ թույլ տալիս տնտեսական երե-
վույթների իսկական պատճառներն իմանալ: Դրա փոխարեն վաճառականը
գիտն փանդատվել: Առևտուր չկա, գործերը վատ են դնում, և հայ վաճառա-
կանը գիտն այն միայն, որ այդ ճգնաժամը կանցնի ինքնըստինքյան, մի
բարեհաջող հանգամանքի աղոթելով: Երբ կանցնի զորքը, կգա մի
բարձրատիճան անձնավորութուն, և առևտուրը կկենդանանա: Ուրիշ պատ-
ճառների մասին նա մտածել անգամ չէ կարող: Մինչդեռ երևույթը պետք է
հասկանալ տնտեսական գիտութեան սահմանած օրենքների տեսակետից:

«Ամեն հասարակութուն, ամեն հասարակական հարաբերութուն, ամեն
հասարակական-տնտեսական երևույթ, եթե մի կողմից հիմնված է մեցուրյակ
վերա, մյուս կողմից անպատճառ հիմնվում է և փոխադարձ պատասխանա-
տվույթան վերա»:

Ինչպես հայը, իր բոլոր հասարակական հարաբերութուններում հայրե-
նակիցների հետ, փոխադարձ պատասխանատվության թշնամի է, այնպես է
վաճառականութեան մեջ նա ըմբռնել է միայն մեցուրյակ օգուտը, այն դարու-
թյան օգուտը, որը հավասարակշռված չլինելով բնկերակցության ոգով, կամ
փոխադարձ պատասխանատվության պարտավորութեամբ, դառնում է վայրե-
նի, անհասարակական, ավերեցուցիչ գործություն:

Այդ ավերող գործության, այդ վայրենի մրցության դեմ վաճառականական
դասակարգը պիտի դուրս բերի փոխադարձ աջակցության գաղափարը, հիմ-
նելով բանկեր, փոխադարձ վարկի ընկերություններ, որոնք միջոց կտան վա-
ճառականին հարմար և ձեռնտու պայմաններով կրկնիտ ձեռք բերել, այսինքն
միմյանց օգնել, պահպանել, կարողություն տալով ամեն մեկին դիմադրել
աննպաստ պայմաններին: Առհասարակ վաճառականների համար պահանջ-
վում էր զարգացողութուն, գիտութուն: «Մշակը» առաջարկում էր հիմնել
Քիֆլիսում կուրսեր, ուր վաճառականները կարող լինեին օտար լեզուներ
սովորել:

Ավելի մեծ էր «Մշակի» հոգացողութունը բուն ժողովրդի, այսինքն՝ երկ-
րագործ, արհեստավոր, բանվոր դասակարգերի մասին: Առաջին անգամն էր
որ գյուղը երևան էր գալիս մեր մամուլի մեջ իր ցավերով, իր անօգնական
դրությունը: Դա այն աշխարհն է, որ շարունակ հարստահարվում է, կողոպտ-
վում է, բայց որի համար ոչինչ չեն ուզում անել: Գյուղական և առհասարակ
ստորին ժողովրդական խավերի մեջ տարածված են զանազան ֆիզիկական և
բարոյական արատներ. կարծում են, թե դրանց դեմ կովելու համար բավական
է բարոյախոսութունը, բայց չեն իմանում, որ բարոյական քարոզներով չ

վերացվի դժբախտության ամենագլխավոր պատճառը, որ աղքատությունն է:
Ասում են, թե ժողովուրդը կորստից ազատելու միակ միջոցը կրթությունն է և
կանչում են շարունակ՝ «ուսումնարաններ, ուսումնարաններ և միշտ ուսում-
նարաններ»: Բայց դրանք օրացին բառեր են և կլսե՞ ժողովուրդն այդ խոսքե-
րին: Ահա՛ նա ունի առած. «Սոված փորիս ուսումն էր պակաս»: Սա տնտե-
սական մի մեծ ճշմարտություն է: Այնտեղ, ուր չկա տնտեսական ապահովու-
թյուն, ուր մարդը կատարելապես կուշտ չէ, չէ կարող դպրոց և ուսում դար-
գանալ: Հաշակավոր Բոկլը ասում է. «Առանց հարստության չկա ազատ ժամեր,
առանց ազատ ժամերի չկա գիտություն»: Ժողովուրդը քաղցած է, կարո՞ղ է
նա կրթության մասին մտածել: Նա քրտինք է թափում և աղքատանում է:
Քրտինք թափելը աղքատություն, քաղցածություն է նշանակում մեզ մոտ. իսկ
ի՞նչ պետք է անել հարստանալու համար: Պետք է ծծել, ինչպես ծծում են
վաճառականները, պետք է հարստահարել, ինչպես հարստահարում են նրանք:

Ո՛չ, կամենում եք ուսումը անհրաժեշտություն դարձնել գյուղացու հա-
մար, բարվոքեցնել նրա տնտեսական դրությունը, հարստացրեք նրան: Հարըս-
տացնել կարելի է, միջոց տալով երկրագործ ժողովրդին զարգացնելու իր
պարագմունքները, ավելի արդյունավոր դարձնելու նրա աշխատությունը:
Վստա՛հ եղևք, որ երբ գյուղացին կունենա իր հացը, երբ նրան անողորմ կեր-
պով չի տանջի ապրելու հարցը, այն ժամանակ նա կսկսի և մտավոր գործի
մասին մտածել: Եվ գյուղացուն այդ դրության հասցնողը պիտի լինին փոխա-
տու ընկերությունները, իբրև գյուղատնտեսությունը զարգացնելու ամենալավ,
փորձված միջոց:

Մեր տնտեսական կյանքը դեռ նահապետական է, դեռ սուր արտահայ-
տություններ չէ ստացել, ուստի պետք է հենց այժմից պատրաստվել, հենց
այժմից խելացի կերպով լուծել այն հարցերը, որոնք այսօր սաղմնային դրու-
թյան մեջ են, բայց վաղը պիտի դառնան մի-մի ահավոր երևույթ: Ահա՛
այժմից իսկ երևում են «առաջին ծաղիկները»: Մեր երկրում էլ սկսվում են
գործարաններ բացվել, որոնք կառաջացնեն բանվոր դասակարգ, պրոլետա-
րիատ: Դեռ չկա մեղանում գործարանական մշակների դասակարգը. սա նշա-
նակում է, որ եվրոպայի հետ համեմատելով, մեր հասարակական կյանքի
մեջ մի վատ կողմը պակաս է: Բայց ինչ որ չկա, կարող է լինել: Բարվում
սկսել են գործարաններ հիմնել. Քիֆլիսում գոյություն ունեն կտավի գործա-
րան, ուր արգեն մի քանի հարյուր մարդ են աշխատում, և մոմի գործարան,
որ առաջինից ավելի փոքր է:

Նկարագրված է մոմի գործարանը: Ուշադրություն է դարձրած, որ մշակ-
ները հակաառողջական պայմանների մեջ են աշխատում. նրանց սենյակնե-
րում չկա բավականաչափ լույս, օդափոխություն չէ կատարվում: Եվ այդ նկա-
րագրությունը «Մշակը» վերջացնում է այսպես.

«Մենք ոչինչ չէինք ասելու մեր գործարանների արդյունաբերության դեմ,
թե նորա մտցնելը երկրի մեջ պիտի բարվոքեր աշխատողների դրությունը,
բայց ոչ թե լցնել դրամատերերի այնպես էլ (ուրիշի աշխատանքով) լի գըր-
պանները... Մենք հիմնում ենք ֆաբրիկաները, գործարանները, բաղամացնում
ենք մշակների թիվը, շնորհալով նոցա նյութական ապահովության վերա և
մոռանում ենք կամ չենք իմանում, որ ստրանով պատրաստում ենք մեզ ապա-
դայի համար այնպիսի անհաղթելի արգելքները, որոնք եվրոպայի գումարա-
տեր հասարակության համար պատճառ են դառնել անլուծելի և արյունահեղ
խնդիրներին»:

Եվ ազատվել այդ խնդիրներից չէ կարելի, ասելով թե մեր երկրում գոր-

ծարանական կյանք չի սկսվի: Ո՛ր, այդ կյանքը պետք է սկսվի, նրան անպատ-
ճառ հարկավոր է սկսել. ուրիշ կերպով մենք տնտեսական առաջադիմություն
չենք ունենա, մենք միայն օտարների հարկատուն կամանք: Նայեցեք Կովկա-
սին, տեսեք որքան հարստություններ ունի նա: Չշահագործել այդ հարստու-
թյունները, կնշանակեր մեռելություն դատապարակ իրան:

«Արդյոք հարկավոր է խոսել նորա վերա, որ գործարանները մեզ օգուտ
են: Ահա ինչ է ասում ինձ մի վաճառական. «Տե՛ս էս սուփրեն, սորա մեջ կա
մի գրվանքա բուրդ, որ արժե մեկ արասի. բայց ի՞նչ եք կարծում, ի՞նչ եմ
տվել սորան... վեց մանեթ»: Այս խոսքերը շատ պարզ ցույց են տալիս մեզ,
թե ինչ կնշանակե կրկին համար իր սեփական գործարաններ շունենալը:
Մեկ արասու և վեց մանեթի մեջ զանազանությունը, այդ մի սարսափելի
հարկ է, որ մեր կրկինը վճարում է օտար ազգերի արվեստագործությունը»:

Գործարաններ հիմնելու մի հարմարություն էլ այն է, որ մեզանում
գործող ձեռքերը էժան են: Բայց թո՛ղ ընթերցողը չկարծե, թե պետք է, ուրեմն,
որ դրամատերերը որքան կամենում են օգուտ քաղեն այդ էժանությունից,
հարստահարեն մշակ դասակարգը: Ո՛ր, եթե հարկավոր է գործարանական
կյանքի զարգացումը մեզանում, դրա գլխավոր նպատակներից մեկն էլ այն
պիտի լինի, որ գործավոր դասակարգը միջոց ունենա ավելի լավ վարձատրու-
թյուն ստանալու, իր թշվառ դրությունից ազատվելու:

«Կարող է ուշ լինել» հողվածում արծարծվում է պրոլետարիատի հարցը:
Սեփականություն շունեցող այդ դասակարգը դեռ բազմաթիվ չէ մեզանում,
բայց նա կատարանա, երբ մեր կրկինը էլ կզարգանա խոշոր արդյունաբե-
րությունը, որ գործից կզրկե, կստրկացնե մանր արդյունաբերողներին և այս-
պիսով պրոլետարիատի բանակը կմեծացնե: Քանի որ խոշոր արդյունաբերու-
թյունը դեռ իր սկզբնական քայլերն է անում մեզ մոտ, ժամանակ է ձեռք
առնել այնպիսի միջոցներ, որոնք կազատեն մեզ պրոլետարիատի սպառնացող
շարժումից: Դրա համար հարկավոր է պահպանել մանր արդյունաբերությունը:
Ուժ տալով խոշոր արդյունագործության, մենք օգնած կլինենք դրամատերե-
րին, որ նրանք իրանց ձեռքի մեջ կենտրոնացնեն կրկին ամեն տեսակ ար-
դյունաբերությունը: Եվ այն ժամանակ մշակները կդառնան կենդանի մեքե-
նաներ, որոնց հարկավոր է այնքան պահպանել և խնայել, նրանք չփշանան,
իսկ նրանց մարդկային հատկությունների վրա ոչինչ ուշագործություն ոչ որ չի
դարձնի: Բայց շմոռանանք, որ այսպես գնալով, մենք կհասնենք այն տեղին,
որ ապագայում անհաշտ թշնամի կպատրաստենք մեզ համար՝ աշխատողների
պրոլետարիատը:

Փրկությունը նրա մեջ է, որ նպաստենք մանր արդյունաբերության՝ ըն-
դարձակելով նրա շրջանը և մանր արդյունաբերողների թիվը: Դրա համար էլ
պետք է գոյություն ունենա նույն հիմնարկությունը, որ այնքան մեծ դեր կա-
րող է կատարել գյուղատնտեսության մեջ, այն է էժան, մատչելի կրեդիտը:
Աշխատողները, արհեստավորները ուրիշի համար են գործում. նրանք ստա-
նում են վարձ, որ հարկավոր է նրանց ապրուստի համար, իսկ նրանց աշխա-
տանքը ուրիշին, այսինքն՝ վարձ տվողին շահ է բերում: Այդ շահին կարող
էին մասնակից լինել իրանք, աշխատողները, արհեստավորները, եթե փոխա-
տու գանձարանը օգներ, որ նրանք իրանց համար կտարեին այն գործը, որ
ուրիշների համար են կատարում: Այսպիսով կպահպանվեր մանր արդյունա-
գործությունը, և աշխատավոր մարդիկ գործատուների ստրուկը չէին դառնա:

Տեղային տնտեսական կյանքի մեջ առաջ էր դալիս և մի հերթական
հարց. օտար դրամագլուխների հարցը: Փոթի-թիֆլիսյան երկաթուղին դեռ

պատրաստ չէր, երբ հայտնի դարձավ, որ նա մեր կրկինը կթափե արտասահ-
մանյան գյուղագլուխներ՝ բնության հարստությունները շահագործելու հա-
մար: Արդեն Թիֆլիսում մի ֆրանսիացի բաց էր արել գրասենյակ, որ պիտի
միջնորդ հանդիսանար օտար դրամատերերի և մեր կրկինը մեզ: Եհ հագործու-
թյան առարկան առաջ ու առաջ հանքերը պիտի լինեին: «Մշակը» բնական էր
համարում օտար կապիտալների արշավանքը դեպի մեզ, բնական և օգտավետ:
Նրա մեջ ինքներս չենք կարող ընկերական սկզբունքով մեր կրկինը արդյու-
նաբերությունը զարգացնել, բնականաբար պիտի ենթարկվենք այն օրենքին,
որ ավելի լավ պատրաստված օտարը գա և մեր հողերի վրա գործ սկսե: Բայց
ի՞նչ պետք է անենք մենք, ինքներս, երբ օտարները երևան կգան մեր մեջ
իրրև արդյունագործներ: Մենք ոչ թե պիտի բավականանանք մեր հանքերը
օտարներին ծախելով կամ կապալով տալով, այլ պիտի աշխատենք ընկերա-
նալ նրանց հետ, բաժին ունենալ արդյունագործության մեջ: Անգործ նստել
ու սպասել հարկավոր չէ:

«Մենք ուշացանք, մենք տգետ ենք, այդ ճշմարիտ է, բայց այդ չէ նշա-
նակում, որ մենք հուսահատված պիտի դիմենք կատարյալ անգործությանը:
Մինչև մտավոր զարգացման մի հայտնի աստիճան, մինչև մի հայտնի հասակ,
մարդս կարող է ուրիշի խնամակալությամբ տակ գտնվել. բայց ի՞նչ կասեիք,
եթե աշակերտը վարձատրվի խնամակալության տակ մտնելուց հետո էլ չէր
ուզենա դուրս գալ այն խնամակալության տակից»:

Այսքանը բավական համարենք իբրև «Մշակի» տնտեսական բաժնի
պատկերացում: Ավելացնենք այն, որ լրագիրը խոսել է և քաղաքային տնտե-
սության մասին, հողը պարարտացնելու միջոցներն է ցույց տվել, առաջին
անգամը մեզանում մատնացույց է արել, թե տնտեսական ինչ սոսկալի ցավ
է մեր գյուղերում այնքան տարածված վաշխառությունը և այլն... Որտեղի՞ց
հանկարծ դուրս եկան այսքան կենսական, կարևոր հարցերը և ո՞ր էին նրանք
մինչև «Մշակի» հրատարակվելը: Նրանք, իհարկե, գոյություն ունեին մեր
կյանքի մեջ, մի-մի խոշոր երևույթ էին. «Մշակի» անմիջական, մեծ գործը
այն էր, որ նկատեց նրանց, առաջ քաշեց, ցույց տվեց նրանց ահագին կարևո-
րությունը մեր կյանքի մեջ: Իր քաղաքատնտեսական դավանանքները նա ամ-
փոփում էր «Աշխատանք և աղքատություն» գեղեցիկ հողվածի մեջ (№ 38),
որի համառոտ բովանդակությունը հետևյալն է:

Մարդու ամենագլխավոր հարկավորություններից մեկն այն է, որ հար-
կադրում է նրան սնուցանել իր անձը: Այդ կողմից մարդը նման է անասուն-
ներին, որոնց նման ուտելու, սպառելու հարկավորություն ունի: Նմանությունը
շատ ակնհիշ է. երբ մենք կուշտ ենք, առատության մեջ ենք ապրում, մենք
բարոյական ենք դառնում, բայց երբ գալիս է սովը, մենք մոռանում ենք
ամեն ինչ և պատրաստ ենք ամեն տեսակ ստոր ու խաբերա միջոցներից օգուտ
քաղել՝ մեր մարմինը պահպանելու համար: Կերակրվելու անհրաժեշտությու-
նից դուրս է գալիս անբարոյականություն, հանցանք: Բայց կա մի բան, որ
թույլ չէ տալիս մեզ միշտ այդ միջոցով վճել մեր կյանքի պահպանության
հարցը: Դա այն է, որ մենք գիտենք օգնություն խնդրել մեր մարմնի և մտքի
գործածումից՝ աշխատանքից և հետագա փոթորից: Որքան կերակրվելու ան-
հրաժեշտությունը մեզ նմանեցնում է անասուններին, այնքան աշխատանքի
օրենքը ազնվացնում, բարձրացնում է մեզ:

Ամեն ինչ, որ ձեռք ենք բերել մենք, աշխատանքի պտուղն է: Առանց
աշխատանքի ո՛չ գիտություն կա, ո՛չ արհեստ, ո՛չ հարստություն: Բայց աշ-
խատանքն էլ ունի իր շահն ու սահմանը: Զի կարելի աշխատել անդադար,

առանց հանգստանալու: Աշխատանքը ծնվում է ապրելու պահանջից. և աշխատանքի հետևանքը մի բանի, մի մթերքի արդյունաբերությունն է: Այդ արդյունքով նա բավարարություն է տալիս իր պահանջներին. իսկ ինչ ավելանում է, նա մթերում է այդ ավելորդը ապագայի համար և դա կոչվում է հարստություն հավաքել: Հարստությունը պայմանական հասկացողություն է: Մի միլիոն փողը հարստություն է, բայց մի սալ փայտն էլ նույնպես հարստություն է: Երբ մարդը մենակ է օգուտ քաղում բնության բերքերից, երբ նա մենակ է սպառում իր արդյունաբերածը և չունի իր շուրջը արդյունաբերող, մթերք հավաքող մարդիկ, նա հարուստ է: Երբ շատանում են մարդիկ, երբ սաստկանում է մրցությունը, այն ժամանակ բնակիչների մի մասը ստիպված է լինում օրվա ապրուստ հայթայթող աշխատանքով բավականանալ, շմտածելով մթերքի պաշար կազմելու, այսինքն հարստություն ժողովելու մասին:

Անմխիթար է աղքատության վիճակը: Բայց նա բարոյական և տնտեսական մեծ հետևանքներ է առաջացնում: Մի կողմից նա աշխատանքի անհրաժեշտությունն է վառ պահում, իսկ դա մի խթան է բարոյական ուժը անդադար թողնելու պահելու համար: Մյուս կողմից, աղքատ, մշակ դասակարգին արդիված չէ ձգտել դրամադուխտ կազմելու և իրան ապահովելու. այստեղից ծնվում է տնտեսական այն գաղափարը, որ հնար է տալիս աղքատ դասակարգին իր այդ ձգտումը իրագործելու: Եվ այդ տնտեսական գաղափարը արդյունաբերական, սպառման, խնայողական ընկերակցություններն են...

Մենք այստեղ չենք ուզում քննել, թե որքան դործնական էին «Մշակի» այս դատողություններն ու ծրագիրը: Ուշադրություն ենք դարձնում միայն մի հանգամանքի վրա: Բանվորական հարցը, պրոլետարիատը մեր երկրում գեթ ապագայի գործեր էին, դեռ չէին հասունացել մեղանում: «Մշակը» առաջարկում էր օգուտ քաղել հենց այդ հանգամանքից և այժմից իսկ կարգադրել այդ հարցերը այնպես, որ ապագայում ցուցումների և բարդությունների տեղ չմնար: Նա, ուրեմն, ուզում էր, որ մեր հասարակությունը մի սքանչելի կանխատեսություն ունենա, առաջուց պատրաստե անհունը, որով պիտի անցնեք ապագա գետը: Բայց հնարավոր էր դա: Կարելի՞ է այդքան մեծ իմաստություն սպասել մեր իրականությունից, երբ և՛ վրոպական ազգերն էլ չեն ունեցել այդ կանխատեսությունը: Մեծ հարցերը այդպես չեն վճռվում. նրանք գեթ ծնվում են, աճում, իրականություն են դառնում, ահավոր պահանջներ են երկայացնում և այդպես հարկադրում են լուծում տալ իրանց: Առանց կոպիտառանց մրցության հաջողություն ձեռք չէ բերվում: Այսպես է օրենքը:

Բայց այդ օրենքը, իհարկե, չէր արգելում, որ «Մշակը» քննե նոր կրեակեկող, ապագայի պատկերը ներկայացնող երևույթները: Մեղանում տնտեսական նոր կյանքի պահանջներ էին. իսկական, զգայուն հրապարակախոսությունը պարտավոր էր արձագանք տալ նրանց, լուսաբանել, ճանապարհներ, ուղղություններ ցույց տալ, ապագան գուշակել: Եվ այս պարտականությունը «Մշակը» կատարում էր մի լրջությամբ, որի նմանը դեռ չէր եղել մեր մամուլի էջերում...

V

Հայերը և նրանց հարևան ազգերը: Հայ-վրացական հարաբերություններ: Գիւրգի Մերեբեյիի հարը: «Մշակ» և «Դրոբա»: Արաբիկ տեսություն: Թուրքահայեր. գավառը և Կ. Պոլիսը. կրթական պակասություն: Պարսկաստան:

տան, Բաֆֆիի համակները: Թղթակցություններ Գերմանիայից. Անդրեաս Ածրունի: Գրական բաժին: Մեր վեպիկներն ու պատմվածքները: Մելիքազիի առաջին փորձերը: Եզրակացություններ «Մշակի» առաջին տարվա մասին: Երազ և աշխատանք:

Երեմյով աչժմ հասարակական այն երևույթներին, որոնք արձագանք գտան «Մշակի» առաջին տարվա ընթացքում՝ նրա ուրիշ բաժինների մեջ, մենք ամենից առաջ կանգ ենք առնում Գրիգոր Արծրունու մի ուրիշ մեծ գաղափարի տեսք. դա նրա վերաբերմունքն է դեպի կովկասյան այլացեղ և այլակրոն ազգությունները:

Շատ կարևոր էր այդ հարցը: Հայերը ապրում էին խառն ուրիշ ազգությունների հետ: Հարևանությունը շատ էր մոտիկ, առօրյա շփումները տնտեսական և մտավոր հողի վրա այնքան խոշոր երևույթներ էին առաջացնում, որ անտես անել պատմական այդ իրողությունը, կնշանակեր արհամարհել երկրի առաջադիմության ամենամեծ գործոններից մեկը: Արծրունին խաղաղ կուլտուրական զարգացման քարոզիչ էր. նա պահանջում էր առաջադիմություն, պահանջում էր առաջադիմության համար ոչ միայն շատ բան սովորել, այլև շատ բան մոռանալ: Մոռանալ պետք էր մանավանդ այն նախապաշարմունքները, որոնք խոչընդոտ են հանդիսանում մեր առջև, վերանորոգության, կատարելագործության ճանապարհին: Զինվելով ազգային սնապարծության, լավինիզմի դեմ, պահանջելով լուրջ, անդադար աշխատանք իրեն բարօրության հասնելու միակ միջոց, նա չէր կարող չզինվել այն փոխադարձ նախապաշարմունքների, ատելության դեմ, որ գոյություն ունեն գանազան տարբեր ազգությունների մեջ: Եվ նա հենց առաջին իսկ քայլերից ազգերի եղբայրակցության ջերմ պաշտպան հանդիսացավ:

Կովկասը նրա առջև ներկայացնում էր մի այսպիսի երևույթ: Ռուսաց փրակապետությունը հաստատել է քաղաքական խաղաղություն. երկիրը այլևս գատերազմի դաշտ չէ և նրա մեջ ապրող ազգերը միայն մի նպատակ, մի կրթում պիտի ունենան՝ գնալ առաջադիմող մարդկության ետևից, յուրացնել եվրոպական լուսավորությունը, ապրել քաղաքակիրթ ազգերի կյանքով: Մենք անսանք, թե ինչպես էր Արծրունին հասկանում ազգերի առաջադիմության խորհուրդը. ազգերը անհատներ են և նրանցից յուրաքանչյուրը, պահելով իր ինքնուրույնությունը, իր հատուկ կերպարանքն ու բնավորությունը, պիտի գորգանա անդադար: Այստեղից առաջանում է կատարյալ հարգանք դեպի ամար ազգերի ինքնուրույն սեփականությունները, դեպի նրանց լեզուն, պատմությունը, կրոնը: Ահա՛ այդ փոխադարձ հարգանքի վրա էլ պիտի հիմնվի ամբողջ ազգությունների համերաշխությունը, նպատակ ունենալով ընդհանուր հայրենիքի առաջադիմությունը: Կովկասը պետք է դուրս գա իր նահապետական դրությունից. նա ահագին ջանքեր պիտի անե մի բարեկիրթ, կուլտուրական զարգացած երկիր դառնալու համար: Սա մի պարտավորություն է, որ պիտի է տեղաշին ազգաբնակչության վրա ռուսաց փրակապետությունը: Եվ այս մեծ գործի մեջ հարկավոր է բոլոր ազգությունների միաբան, ազնիվ աշխատակցությունը: Յուրաքանչյուր ազգ պիտի մտցնե իր բաժինը. ոչ մի ազգ, աշխատելով առանձին, անջատված, չէ կարող միայն իր սեփական միջոցներով դուրս բերել այն ահագին գործը, որ պիտի կատարե ամբողջ երկիրը: Եվ առաջադիմության գործը մեղանում հաստատ ու տնտեսական չի լինի, եթե մի ազգ առաջ գնա, մյուսը մնա անշարժ, մեկը դեպի առաջ քաշն սայլը, մյուսը դեպի ետ: Հարկավոր է միաբան, ընդհանուր գործակցություն:

Գրիգոր Արծրունին թիֆլիսում մտաենում է վրացիներին և համերաշխությամբ է հաստատում երկու հարևան ազգերի երիտասարդության մեջ: Բայկերախտաբար, մենք ունենք մի վրացու վկայությունը, որ պատմում է, թե ինչպես հաստատվեցան եղբայրական հարաբերությունները հայ և վրացի երիտասարդության մեջ: Այդ վրացին այժմ հանդուցյալ Գիորգի Մերեթելին է, մի ազնիվ, առաջադեմ և լուսամիտ գրական դործիչ: 1892 թվականի գեղեցիկ 27-ին, երբ ահագին, շտեմնված բազմությունը եռոցիվանքի գերեզմանատանը հավաքված էր Գրիգոր Արծրունուն թաղելու համար, ճառախոսների տեղը բարձրացավ Գիորգի Մերեթելին և հուզված ձայնով, որ խոր տպավորություն թողեց ամբողջ բազմության վրա, արտասանեց հետևյալ խոսքերը*.

«Ես և Արծրունին առաջին անգամ ծանոթացանք միմյանց հետ 1877 թվին, երբ նա սկսեց հրատարակել իր «Մշակ» լրագիրը և իր կենդանի մտքերով ու նոր գծած ճանապարհով սթափեցրեց հայ հասարակությունը: Այդ ժամանակ մեր մեջ հաստատվեց մի բարեկամական կապ: Ես և իմ ընկերներս այն ժամանակ աշխատում էինք «Գրոսերա», «Կրեթուլի» և «Սաստիսո գազեթի» լրագիրներում: Գրիգոր Արծրունին իր կտրուկ մտածողությամբ և եվրոպական գիտնականների մոտ ճոխացրած խելքով շատ շուտով մոտեցրեց իրան այն ժամանակվա վրացի գրողների փոքրիկ շրջանը:

«Վրացի եղբայրներ,— ասում էր Արծրունին,— մեր և ձեր վիճակը՝ թե ուրախության և թե վշտի կողմից միշտ մեկ է եղել նույնիսկ հին ժամանակներից: Մենք դրացի և ազգակից ժողովուրդներ ենք եղել, իսկ այսօր, մեր անխելքության պատճառով, մենք մոռացել ենք միմյանց և ոչ թե միայն բարեկամ չենք, այլ և միմյանց թշնամի ենք դարձել: Շատ կան մեր և ձեր մեջ այն տեսակ մարդիկ, որ իրանց անձնական օգտի համար վիրավորում են արդար մարդուն: Դրանց մեջ կան այնպիսի վրացիներ, որ նեղացնում են հայերին, և այնպիսի հայեր, որ հարվածում են վրացիներին: Բայց ինչո՞ւ պետք է մենք մի երկու երեք անխելճ մարդկանց պատճառով ատենք միմյանց: Մյուս պետք է մենք, որպես մամուլի ներկայացուցիչներ, քարոզենք ու զարթնեցնենք վրացիների ու հայերի մեջ սեր և եղբայրություն, որովհետև մենք անկարող ենք առանց փոխադարձ բարեկամության հասնել մեր կատարելության: Ես գիտեմ, եղբայրներ, որ միությունը ուժ է, իսկ բաժանությունը՝ թուլություն:

Ահա՛ այսպիսի բաց և անկեղծ խոսքերով Գրիգոր Արծրունին մոտեցրեց մեզ իրան: Նա բացեց մեր առաջ իր խմբագրատան դռները, և երբեմն մենք էինք գնում նրա մոտ, երբեմն նա էր գալիս մեզ մոտ: Այդ ժամանակներին այնպիսի մի հասարակօգուտ բան չէ պատահել, որի մասին համերաշխությամբ ու երկու հարևան ազգերի համար հավասարապես օգտավետ կերպով դրած չլինենք մենք՝ մեր լրագիրներում ու ամսագրերում, իսկ նա՛ իր «Մշակում»: Նա սովորեցնում էր մեզ Հայաստանի պատմությունը, իսկ մենք նրան վրաց ժողովրդի պատմությունը:

Սա առաջին լուսավորված հայն էր, որ քարոզում էր վրացիների և հայերի համերաշխությամբ գործելու մասին: Սա էր, որ առաջին անգամ քարոզեց մեզ և իր մասին հետո էլ կտակեց այն ոսկի տառերով գրոշմվելու արժանի խոսքը, թե «միությունը ուժ է, իսկ անմիաբանությունը թուլություն է»:

Այդ եղբայրական համերաշխության արտահայտությունն էր, որ երբ հրատարակվեց «Մշակի» հայտարարությունը, «Գրոսերա» լրագիրը հետևյալ տողերը նվիրեց նրան.

«Ողջունում ենք և երկար կյանք ենք ցանկանում համանման պարտավորություն ունեցող մեր եղբայրակցին: Սրա հետ ցանկանանք, որ այս նոր հայերեն լրագիրը առաջիկա հրատարակություններից առավել համակրություն ցույց տար ամեն բանի մեջ, որովհետև միասին ապրելով, մենք միևնույն թշնամիներով և բարեկամներով ենք շրջապատված, վրացիներս և հայերը»:

Գրիգոր Արծրունին «Մշակի» առաջին իսկ համարում այսպես պատասխանեց այդ ողջունին.

«Մենք մեզ պարտավորություն ենք համարում պատասխանել վրաց «Գրոսերա» օրագրին, որ մեր կարծիքն էլ չի տարբերվում նորա հայտնած մտքից: Կովկասը թեև զանազան ազգություններով է բնակեցրած, որոնք այլ և այլ մեկ մեկից տարբեր զավանությունների են պատկանում, բայց իր տեղագրական և աշխարհագրական դրություն պատճառով դառնում է այդ բոլոր ազգերի համար ընդհանուր հայրենիք և միջոց է տալիս նոցա ձգտելու ընդհանուր համանման օգուտներին: «Մշակը», ոգով հայ մնալով, միևնույն ժամանակ ուրախությամբ մեկնում է համակրության ձեռքը դեպի վրաց լրագիրը, անվախ խոստովանելով, որ վրաց «Գրոսերայի» պես հայտնած լուսավորչալ մտքերը նա չի գտել արդյան ոչ մի հայկական պարբերական հրատարակության մեջ»:

Այսպես միմյանց ձեռք տալով, երկու լրագիրները համերաշխությամբ առաջ են գնում՝ միմյանց օգնելով, միմյանց ուժ տալով հասարակական հարցեր լուծելու մեջ: «Մշակում» տպված անդրանիկ թատրոնական ռեցենզիան (№ 2) վրաց թատրոնին է վերաբերվում. երկու լրագիրները միմյանցից քաղվածքներ են անում, և հայ-վրացական մտավոր և բարոյական շահերը պաշտպանում են ազնիվ զինակիցների եռանդով: Ամեն տեղ, ուր խոսք էր լինում տեղական լեզուների, գրականության, թատրոնի մասին, Արծրունու համար միայն հայ ազգը չկար, այլ նրա հետ միասին և համահավասար՝ վրաց ազգը: Այդ գաղափարական զինակցությունը շարունակվեց մի քանի տարուց ավել և ներկայացնում էր ընդհանուր, միատեսակ կուլտուրական գաղափարներով սողորված երկու տարբեր ազգերի երիտասարդության միաբանությունը: Նախելով այդ երևույթին, կարելի է հպարտությամբ ասել, որ քաղաքակրթությունը վերացնում է և ցեղական ու զավանական նախապաշարմունքները՝ խմբելով ազգերը մի մեծ ընտանիքի մեջ, ուր փոխադարձ համակրանքներն ու հարգանքներն են տիրում դարավոր ատելություն, անմիաբանության տեղ: Բայց, ավա՛ղ, շատ երկարատև չէր «Մշակի» և «Գրոսերայի» եղբայրակցությունը: Իր տեղում մենք կտեսնենք, որ փոխվեց վրաց լրագրի խմբագրությունը և դրա հետ էլ փոխվեցին հարաբերությունները: Մակայն Գրիգոր Արծրունին մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց իր իղեալին և հավասար հարգանքով էր վերաբերվում կովկասյան ազգերին:

«Մշակի» շատ կանոնավոր, հարուստ և հետաքրքրական բաժինն էր և արտաքին տեսությունը, ուր աշխատում էր, ինչպես գիտնեք, Պողոս Իզմայլյանը: Այդ բաժնում արտահայտվում էր արտասահմանյան կյանքը իր ամենախոշոր երևույթներով, որքան այդ հնարավոր էր մի շարաթաթերի մեջ: Ամենազխավորը այն էր, որ այդտեղ տպագրվում էին ինքնուրույն, խմբադրական հոգվածներ, որոնց մեջ արտահայտվում էր լրագրի որոշ ուղղությունը. այնպես որ արտաքին տեսությունը լրացնում, ամբողջացնում էր այն ամենը, ինչ «Մշակը» տալիս էր առաջնորդողների և ներքին տեսության մեջ: Արտահամանյան կյանքի այնպիսի երևույթները, ինչպես են բանվորական շարժումները, կանանց քաղաքական իրավունքներ տալու հարցը, կրթական սիս-

* «Տարազ» շաբաթաթերթ, 1892, № 50:

տեմները, արձագանք են գտնում «Մշակի» մեջ, լուսաբանվում են առաջադիմական տեսակետից:

Քաղաքական աշխարհի ամենախոշոր իրողությունը ֆրանս-պրուսական պատերազմի բերած հետևանքներն էին: Պատերազմը վերջացել էր և երկու ախոյանները, հաղթողը և հաղթվողը, սկսել էին մեծ եռանդով իրանց ներքին կյանքը կանոնավորել: Հերոսական ջանքեր էր գործ դնում մանավանդ Ֆրանսիան. պատերազմական ահռելի տուգանքը վճարել, երկիրը նորից դարգացման ճանապարհի վրա դնել, բուժել թշնամու ահեղ հարվածներից գոյացած վերքերը, կռվել հանրապետական ռեժիմի հակառակորդ տարրերի դեմ, — ահա որքան գործ կար Ֆրանսիայում: Գերմանիան էլ գործում էր, նա քնած չէր իր վաստակած դափնիների վրա: Այն գերմանասիրությունը, որ Գրիգոր Արծրունին ցույց էր տվել դեռ «Հայկական աշխարհում», շարունակվեց և «Մշակի» մեջ: Արժանի մեծարանքները մատուցանելով Ֆրանսիայում կատարվող առաջադիմական ջանքերին, «Մշակը» միշտ առանձին ուժով էր շեշտում Գերմանիայի առավելությունները: Ոչինչ հիմք չունենալով համակրելու կղերական ուղղության, «Մշակը» մեծ հաճությամբ արձանագրում էր այն կոնկրետ, որ Գերմանիայում սկսել էր Բիսմարկը կաթոլիկ եկեղեցականության դեմ (կուլտուրկամֆ): Մենք արդեն տեսանք, որ պապականությունը «Մշակի» համար խիստ անհամակրելի մի սկզբունք էր, իբրև անհատական զարգացման թշնամի մի հիմնարկություն: Գերմանիան իր պատերազմով պապականության մահացու հարվածներ տվեց. նա ոչնչացրեց նապոլեոնին, որ Հռոմի պաշտպանն ու հովանավորն էր, նա թույլ տվեց, որ իտալական զորքերը գրավեն Հռոմը և միանգամայն վերջ դնեն պապի աշխարհական իշխանության: Պատերազմից հետո էլ Գերմանիան աշխատում էր ընկճել պապականության ուժը իր սահմանների մեջ: Ահա թե համակրանքի որքան առիթներ կային «Մշակի» համար:

Պապականության խորտակումը օգուտ տվեց և հայերին, ասում էր «Մշակը»: Ինչպես հայտնի է, հենց այդ ժամանակներում Կ. Պոլսի հայ-կաթոլիկ հասարակության մեջ սկսվեցին հասունյան և հակահասունյան վեճերը: Հակահասունյանները, պաշտպանելով ազգային իրավունքները, դիմադրելով լատինամուկ հասունյաններին, օգուտ էին քաղում քաղաքական այն դրությունից, որ ստեղծել էր ֆրանս-պրուսական պատերազմը: Չկար այլևս նապոլեոնը, որ պեսպի կարողանար ճնշումներ գործադրել Կ. Պոլսում, պատիկանը թույլ էր, հեղինակություն չունեի իբրև քաղաքական մարմին, և ահա հայ-կաթոլիկ հասարակությունը համարձակ պահանջում է, որ իր ազգային ծեսը, ազգային լեզուն պահվի իր եկեղեցու մեջ:

Արտաքին տեսության մեջ էր և այն բաժինը, որ պիտի խոսեր Ռուսաստանի սահմաններից դուրս ապրող հայության մասին: Թուրքիայի և Պարսկաստանի հայերը պատշաճավոր տեղ են բռնում «Մշակի» մեջ: Սակայն Թուրքիայի հայերի վերաբերմամբ «Մշակի» առաջին տարվա տվածները համեմատաբար աղքատ են: Տեղեկությունները քաղվում են եվրոպական և թուրքահայ լրագիրներից, սեփական թղթակցություններ չկան: Միայն մի հատ խմբագրական ինքնուրույն հոդված ենք գտնում, հատկապես Թուրքահայերին նվիրված: Բայց այդ հոդվածի մեջ շատ որոշ, աչքի ընկնող պարզությամբ է արտահայտվում «Մշակի» վերաբերմունքը դեպի թուրքահայերը, մի վերաբերմունք, որ ապագայում այնքան մեծ տեղ պիտի բռնեի թե մեր և թե «Մշակի» կյանքի մեջ:

Հենց առաջին իսկ քաղերից «Մշակը» Թուրքիայի հայության մեջ դանազանում է երկու մաս. զավառներ և Պոլիս: Եվ այս երկու մասերը միմյանց հետ նմանություն չունեն. թուրքահայերը արտոնություններ են վայելում, իրանք ունեն սահմանադրություն, բավական ազատ մամուլ: Բայց այդ արտոնությունները մայրաքաղաքի հայերին են պատկանում:

«Թեև այս արտոնությունները առաջմաս այնքան իրական չեն, թեև Փոքր Ասիայի զավառներում տիրում է կատարյալ կամայականություն, հայերին հարածում են, պղծում են նոցա եկեղեցիները, անպատվում են նոցա կանանցը, բռնադատում են քաղաքացիներին, բայց այնուամենայնիվ այսօր օրենքի մեղած հոգվածները վաղը կարող են իրականություն ստանալ, թղթի վրա հիշված իրավունքները կարող են կենդանանալ:

Կ. Պոլսում, որպես կենտրոնում, որտեղ 300 000 հայերի հասարակական կյանքը ավելի զարգացած է, որտեղ օրագրության և գրականության ազատ քննադատություն կա, որտեղ նիստ ունի ազգային քաղաքական ժողովը, այդպիսի դեղձումներին տերություն պաշտոնյաների կողմից ավելի դժվար է պատահել: Կ. Պոլսում ավելի միջոցներ կան կրթվելու, զարգանալու, ազատ, անկախ լուսավորությանը ձգտելու, քան թե Թուրքիայի զավառներում, որտեղ մարդի իրավունքը գեղեկ ոտնակոխ է արած...»:

Համեմատաբար անզատ Կ. Պոլսը այդ պատճառով էլ ծաղկեցրել է իր մեջ ժողովրդական կրթության գործը, բայց ծաղկեցրել է ոչ թե կատարելության հասցնելով նրան, այլ միայն նրանով, որ միջոցներ ունի ուսումնարաններ բանալու, բարոյական ազատության ձգտելու: Պատրիարքարանի հրատարակած տեղեկագիրը ցույց էր տալիս, որ կան բավական թվով ապահովված դպրոցներ, բայց չկան պատրաստված ուսուցիչներ: Այդ առիթով «Մշակը» հայտնում էր, որ առհասարակ Թուրքահայերի ստացած կրթությունը, լինելով ֆրանսիական, օգտակար չէ:

«Սորանից դեռ մեկ երկու տարի առաջ մայրաքաղաքի պրեսսայի ամենանշանավոր լրագիրներից մինը, խոսելով Գերմանիայի վերա, անվանեց այն երկիրը բարբարոս, և այն ազգը, որ հիմնեց և զարգացրեց մանկավարժության ուսումն, այսինքն մարդի անհատական զարգացման և ազատության գործին ամենամեծ ծառայություն արավ, դրոշմեց բարբարոս ազգ անունով: Մեզ ծանոթ է Կ. Պոլսի միայն մի օրագիր, այն է «Երկրագունա», որ 1871 թվին քանի մի ուշադրության արժանի հոդվածներով բողոքեց այդ վայրիվերո, ֆրանսիական թեթև և միակողմանի կրթությունից առաջացած թերի կարծիքի դեմ»:

Այս տողերի մեջ երևում է գերմանական ուսանող Արծրունին: Նա պապականություն էր համարում, որ թուրքահայերը խորշում են գերմանական կրթությունից և ասում էր.

«Միայն մի բան պակաս է դեռևս Թուրքիայի հայերի ժողովրդական կրթության: Երկու գիտություն և մանկավարժության հետ ծանոթությունը, որոնց աղբյուրը Գերմանիա չճանաչելու համար հարկավոր է կատարյալ կույր կամ զոնն սաստիկ կարճատես լինել»:

Որքան հիմնավոր էր այդ նկատողությունը: Իրանք, թուրքահայերը այժմ խոստովանում են ֆրանսիական կրթության պակասությունները և ասում են, որ եթե ուսահայերի գրականությունը ավելի կրթիչ, ուժեղ ու դաստիարակիչ է, դրա պատճառն այն է, որ ուսահայ գործիչները գերմանական կրթության ազդեցությունն են կրում իրանց մեջ: Եվ իրավ, Կ. Պոլսում չէր հաջողվում

րուն ժողովրդական, իրական գրականություն հիմնել, գրականություն, որի նպատակը լինելու կյանքի լուրջ ու բազմակողմանի ուսումնասիրությունը:

Թուրքիայից անցնելով Պարսկաստան, կտեսնենք, որ վերջինս ավելի մեծ տեղ է գրավում «Մշակի» արտաքին տեսության մեջ, ավելի մանրամասն է բազմակողմանի կերպով է ներկայացրած: Այստեղ համարյա չկան քաղվածքներ օտար լրագրիչներից, այստեղ ամբողջ նյութը սեփական է, ինքնուրույն: Դրա ամենագլխավոր պատճառն այն է, որ «Մշակի» խմբագրության մեջ էր Պարսկաստանում ծնված ու մեծացած Բաֆֆին: Բաֆֆիի նամակները «Մշակի» 1872 թվականի արտաքին տեսության գլխավոր հարստությունն են կազմում: Նրանք մանրամասն, գրավիչ կերպով նկարագրում են պարսկական իրականությունը, և այն հայ ժողովուրդը, որ ապրում է Ռւմիայի և Սալամաստի կողմերում, դուրս է գալիս ձեր առջև իր բոլոր հոգսերով ու ցավերով, իբրև իրավադուրի, մշտապես հարստահարվող մի բազմություն, որի ճակատին գրված է աշխատել, քրտինք թափել, արդյունաբերել, բայց չվայելել դասն աշխատանքի պտուղները: Բաֆֆին նկարագրում է և հայերի հարևաններին ասորիներին, քրդերին: Առաջին անգամն է, որ մեր գրականության մեջ խոսք էր լինում այդ ցեղերի մասին. շատ հետաքրքրական է մանավանդ ճանապարհորդությունը դեպի Ճուլամերկ և Մար-Շիմոնին ներկայանալը: «Հյուսիսփայլում» Բաֆֆին իր ճանապարհորդության ժամանակ տեսածների մի փոքրիկ մասն էր նկարագրել՝ Աղթամարը: Այժմ «Մշակի» մեջ նա ներկայացնում էր այն ամենը, ինչ նա տեսել ու իմացել էր Պարսկաստանում և Թուրքիայում: Եվ նրա նկարագրությունները այնքան գրավիչ ու վերին աստիճանի հետաքրքրական էին, որ, ինչպես հաղորդում էին «Մշակին», արտասահմանի հայ ուսանողները, ուզում էին թարգմանել այդ նամակները գերմանական լեզուով:

Բացի այդպիսի ինքնուրույն գրվածքներից, որոնք պատրաստվում էին խմբագրության մեջ, «Մշակը» գնալով ավելի ու ավելի հաճախ էր տալիս թղթակցություններ: Ինչպես գիտենք, լրագրի հրատարակությունը սկսելիս թղթակցությունների դործը այնքան անորոշ ու անհուսալի էր, որ հարկադրված էին խմբագրության մեջ թղթակցություններ կազմել՝ ուրիշներին օրինակ տալու համար: Եվ այդ օրինակը շուտ ներգործեց. խմբագրությունը հարկադրված չէր երկար ժամանակ տանը թղթակցություններ կազմել, թխել. թղթակիցներ շուտ պատրաստվեցան, և մենք «Մշակի» հենց առաջին տարվա ընթացքում տեսնում ենք թղթակցությունների բաժնի անդադար զարգացումը: Խմբագրությունը ղեկավարում էր, «Մշակի» առաջնորդողները գրում էին. և ահա գավառների կյանքը սկսում է հետզհետե երևան գալ լրագրի էջերում, այնպես որ խմբագրությունը հնարավորություն ունի իր թղթակիցների հաղորդած տեղեկությունները և երևույթները քննության ենթարկելու իր հոգվածների մեջ:

Թղթակցությունները միայն ներքին դավառներից չէին գալիս, այլև արտասահմանից: Առաջին անգամից Գերմանիան է, որ ամենից շատ թղթակցություններ է տալիս «Մշակին»: Եվ սա հասկանալի է. Գերմանիայում էր ապրում Անդրեաս Արծրունին: Գերմանիայից հետո Պարսկաստանն էր. թղթակցություններ ստացվում էին մեծ մասամբ Թավրիզից, Թեհրանն էլ մի երկու բան տվեց: Թավրիզից գրում էր Համբարձում Առաքելյանը: «Մշակի» անդրանիկ թղթակիցներից մեկն է Առաքելյանը. նա միակն է կենդանի մասնատաններից, որ այսօր էլ շարունակում է գրել «Մշակի» մեջ, երեսուն տարվա ընթացքում հավատարիմ մնալով նրա դրոշակին:

«Մշակի» առաջին տարվա տեսությունը վերջացնելու համար մեզ մնում է մի թեթև ակնարկ գցել նրա գրական բաժնի վրա: Արծրունին ասում էր՝ ան-

չնորհք ու անկարող է այն խմբագիրը, որ ինքնուրույն տաղանդներ չէ առաջ բերում, որ իրան շրջապատող գրողներին ուղղություն չէ տալիս, չէ որոշում թե նրանցից ո՞րը ինչ ճշուգի մեջ կարող է հաջողություն ունենալ իբրև ստեղծագործող: Ի՞նչ կարողացավ անել նա այդ ուղղությամբ առաջին տարվա ընթացքում:

Գրական բաժինը բազկացած էր փոքրիկ պատմվածքներից: Գրանց թիվը բավական մեծ էր, բայց դրանք դեռ մի առանձին հարստություն չեն կազմում, մանավանդ եթե նկատի ունենանք, որ «Մեղուն» էլ մեծ քանակությամբ այդպիսի վեպիկներ էր տալիս: Մեր վիպագրությունը առհասարակ շատ դանդաղ կերպով էր զարգանում. Արծրունից հետո երեք տասնյակ տարիներ էին անցել, բայց մեր վեպը շարունակում էր խանձարուրքի մեջ փաթաթված մնալ: Վախճանական թվականներին Պոռչյանցի ազգագրական վեպին* հետևեց Աղայանցի «Արություն և Մանուելը», բայց դա էլ վեպ չէր, դրա մեջ էլ չկար գեղարվեստ, թեև առատ էին կյանքի տեսարանները: 1872 թվականին «Մեղուն» առանձին գրքով տվեց իր բաժանորդներին նույն Աղայանցի «Երկուրույրը», բայց այդ գյուղական հովվերգությունը նույնպես ոչինչ չէր ավելացնում եղածի վրա:

Մենք մի քանի անգամ տեսանք, որ Արծրունին մեծ նշանակություն էր տալիս վիպական գրականությանը: Ինքնուրույն վեպն էր, որ պիտի օգուտ բերեր հայ ընթերցողին, մի կողմից պատկերացնելով նրա առջև նրա սեփական կյանքը, իսկ մյուս կողմից զարգացնելով և տարածելով ընթերցանության սեր: Բայց ինչպե՞ս ստեղծել գրականության այդ կարևոր ճյուղը, ի՞նչ կար մեղանում «Մշակի» հրատարակությունից առաջ: Եթե շահավենք Պոռչյանցի և Աղայանցի գրվածքները, կմնան այն փոքրիկ պատմվածքները, որոնք տպվում էին «Մեղուի» մեջ 1863 և հաջորդ թվականներում: Այդ պատմվածքները այն միակ արժանավորությունն ունեին, որ փորձում էին մոտենալ քաղաքային կյանքի մի քանի կողմերին: Միմիայն այդ ձգտումն է ուշադրության արժանի, որովհետև պատմվածքները գրական արժանավորություններից զուրկ էին, սպավորություն թողնել չէին կարող: «Հայկական աշխարհը», չնայած որ իրան անվանում էր գրական ամսագիր, միանգամայն ամուլ հանդիսացավ նույնիսկ խեղճ ու կրակ պատմվածքների կողմից. նա ոչինչ չտվեց: Մեղանում դեռ թատերագրություն էր ռեալական գեղարվեստի ներկայացուցիչը. նա արդեն տվել էր «Պեպոյի» նման սիրուն գոհարը, իսկ վիպագրությունը մնում էր փոքրիկ տեսարաններ ցույց տվողի խղճալի դերում:

Այդ կերպարանքով էլ վիպագրությունը 1872 թվին մտավ «Մշակի», հետո և կերպարանափոխված «Մեղուի» մեջ: Նա տալիս էր պատկերներ, բայց արվեստ չուներ, լեզու չուներ, չափ չուներ և երկու լրագրիչների մեջ տպված պատկերների բազմությունից հաղիվ թե կարողանանք գտնել մի երկուսը, որոնց այժմ էլ կարելի կլիներ կարդալ առանց զարմանալու նրանց միամիտ, սղքատ կազմվածքի վրա: «Մշակի» մեջ այդպիսի պատմվածքներ տալիս էր գլխավորապես Գևորգ Զմշկյանը: Զբաղվել նրա պատկերներով ավելորդ է, բայց պետք է ասենք, որ նա «Մշակում» սկսեց իր թատրոնական հիշողությունները, որոնք հետաքրքրությամբ են կարգացվում: Ավելացնենք և այն, որ «Մշակի» աշխատակիցներին առանձնապես գրավում էր ֆելիետոնական սեր, և մենք տեսնում ենք պատկերներ, որոնց մեջ ֆելիետոնիստի հեզնու-

* Տե՛ս իմ «Մտերիանոս նազարյանց», հատ. II, էր. 260:

Յյունը մի առանձին ուժով է ընդգծում աշխարհի անարդարությունը: Այսպես է, օրինակ, «Կոշակարի խրճիթից» անունով սիրուն պատկերը:

Արդարացի կլինե՞ր, եթե մենք այս ընդհանուր և համառոտ դիտողություններով էլ վերջացնեինք «Մշակի» գրական բաժնի տեսությունը: Բայց մեր առջև կա այն հանգամանքը, որ այդ բաժնում աշխատում էր և Բաֆֆին: «Մշակի» մեջ զարգացած այդ գրական խոշոր ուժը պարտավորեցնում է մեզ հետեւել նրան՝ առաջին իսկ քայլերից:

Հակոբ Մելիք-Հակոբյանը միայն Պարսկաստանի նամակներն էր ստորագրում Բաֆֆի անունով. իսկ մնացած գրվածքների համար նա ուներ մի կեղծ անուն՝ Մելիքզաղե: Մելիքզաղեի ստորագրությունը մենք հաճախ ենք պատահում «Մշակի» առաջին տարվա մեջ. դա ցույց է տալիս, որ Մելիք-Հակոբյանը շատ բան ուներ ասելու, որ նա Արծրունու ամենաեռանդուն աշխատակիցն էր: Նա գրում էր զանազան բաներ՝ կենսագրություն, քննադատություն, պոլեմիկական հոդվածներ: Մինչև իսկ փորձեց ֆելիետոն գրել և ֆելիետոնի վերնագիրը ճիշտ և ճիշտ այնպես էր, ինչպես Նալբանդյանի ֆելիետոնների վերնագիրը «Հյուսիսափայլում»: Նմանվելով Կոմս էմանուելին, Մելիք-Հակոբյանը գրում էր «Հիշատակարան Պ. Մելիքզաղեի օրագրություններից»: Բայց Մելիքզաղեի իսկական կոշումը այն տեղն էր, ուր նա առաջին անգամ երևան եկավ «Մշակի» № 21-ի մեջ: Դա բանասիրական բաժինն էր, և այդտեղ տպվեց Մելիքզաղեի «Գեղեցիկ Վարդիկը»:

Իր պատկերների համար Մելիքզաղեն նյութ վերցնում էր իր հայրենիքի Պարսկաստանի կյանքից: Այսպես են նրա «Կուսագրությունը», «Սոսքը», «Անբախտ Հոփսիմեն»: Այդ առաջին պատկերները իսկապես շատ բանով չէին զանազանվում այն պատկերներից, որոնք այդ ժամանակ երևում էին մեր լրագիրներում. բովանդակությունը աղքատ, միամիտ, նյութի մշակումը շատ թույլ: Բայց այդ անարվեստ պատմվածքների մեջ երևում է և նորությունը. Մելիքզաղեն բնության սիրուն նկարագրություններ է տալիս, ունի հարուստ երևակայություն: Բացի դրանից, նրա գրվածքների մեջ արդեն լսվում է մի հզոր շեշտ՝ հարստահարված, իրավազուրկ հայը մահմեդական աշխարհում: Պարսիկ տիրողների կամայականությունը արտահայտվում է հայ աղջիկներ հափշտակելու մեջ, իսկ հայ կտրիճ երիտասարդները դիմադրում են, խլում են զոհերին նրանց ձեռքից, ահա՛ Մելիքզաղեի սիրած սյուժետը: Մնված և մեծացած բնության աշխարհում, պարսկաստանցի երիտասարդը իր առաջին քայլերից պատրաստվում էր դուրս գալու իբրև մի տաղանդ, որի ամենամեծ ուժն էր՝ բողոք բնության դեմ: Բայց նա դեռ թույլ էր իբրև վիպագրող, նրան դեռ պակասում էր իսկական ոգևորությունը, նրա առջև դեռ մարմնացած, միուու արյուն ստացած գաղափար չկար: Եվ նա իր Վարդիկների, Հոփսիմենների դժբախտությունն էր նկարագրում, դեռ չիմանալով, թե ինչպես պիտի մահմեդական լուծի տակ տափախած հայը փրկություն որոնե իր համար:

Ինչպես երևում է, Մելիքզաղեն այդ ժամանակ շատ վիպական գրվածքներ ուներ, բայց դրանց մեջ հաջողվածները շատ չէին: Այսպես, «Մշակի» մեջ տպվածներից մենք մատնացույց կանենք միայն «Սոսքը», մի պատկեր, որ շատ ազդու տպավորություն է թողնում իբրև սովի և դաղանացած մարդու նկարագրություն: Մելիքզաղեն ուներ և մեծ վեպեր, օրինակ, «Ջահրումարը», որ գրված է այդ ժամանակներից և հրատարակվեց նրա մահից հետո: Արծրունին իր հիշողությունների մեջ ասում է, թե 1872-ին Բաֆֆին բերեց իր «Սոսքը վրիկ» վեպը, բայց ինքը չհավանեց այդ գրվածքի բովանդակությունը, թեև նրա նկարագրական մասերը աննման էին: Այսպես է և «Ջահրումարը»: Նրա

մեջ կան շատ նոր մտախմբեր, որոնք դեռ անհայտ էին մեր վիպագրության, նրա մեջ գեղեցիկ կերպով նկարագրված են բացասական երևույթներ, դեմքեր, բայց դա, այնուամենայնիվ, մի անհաշող վեպ է, թույլ՝ իբրև գեղարվեստական ստեղծագործություն, անբնական շատ տեղերում:

«Մշակի» խմբագրության հետ իր վիճակը կապելուց հետո, — ասում է Արծրունին, — Բաֆֆի տաղանդի սահմանները և այդ տաղանդի ձևը հետզհետե որոշվեցան: Եվ սա ճիշտ է. 1874 թվականին Բաֆֆին հրատարակեց առանձին գրքով իր «Փունջի» երկրորդ հատորը, որի մեջ տպված վեպիկները արդեն ցույց են տալիս, որ հեղինակը շատ է առաջ դնացել այն դրությունից, որի մեջ գտնվում էր «Գեղեցիկ Վարդիկը» գրելիս. նա հետզհետե զարգանում էր, ավելի հմտություններ էր գործադրում իր նկարագրական շնորհքը, ավելի ռեալիստ էր դառնում, գեղարվեստական շափը ավելի լավ էր ըմբռնում:

Դեկտեմբերի 28-ին հրատարակվեց «Մշակի» 1872 թվականի վերջին, 51-րդ համարը: Արծրունին այդ համարի առաջնորդողի վերնագիրը գրեց երկու թվանշան՝ «1871 և 1872»: Դրանք երկու տարիներն էին, մեկը «Մշակից» առաջ, մյուսը՝ «Մշակի» առաջին տարին: Համեմատվում էին այդ երկու տարիները. ի՞նչ կար և ի՞նչ կա: Թողենք, որ Արծրունին ինքը պատմեց այդ, նա շատ լավ է պատմում:

«1871 թվին Կովկասում կային հայերեն լեզվով լրագիրներ: Այդ լրագիրները հրատարակվում էին անորոշ ժամանակամիջոցներով, անկանոն կերպով... ոչ ոք չէր իմանում մեջը ինչ էր գրված, ոչ ոք չէր կարդում, շատերը հայերից (մասնավորապես բարձր շրջանի հայերը) տեղեկություն էլ չունեին նոցա գոյություն մասին: Ով որ գիտեր հայերեն կարդալ, կգտներ թերթի մեջ հեռույալ բովանդակությունը: Քանի մի անկապ քաղաքական լուրեր ռուս լրագիրներից և «Մասիսից», անձանոթ մարդու երկար կենսագրություն, երկար նամակ հարգույալաբար խմբագրին պատվական լրագրի, որտեղ ասում էին, թե մեր ազգը շատ հոտ է մնացել մյուս ազգերից, բայց այսուհետև նա պիտի բնթանա հսկայական քայլերով դեպի լուսավորության ասպարեզը, որովհետև մեծապատիվ... Կիրակոս աղա Մարտիրոսյանը ընծայել է 50 ռուբլի 2... քաղաքի նորաշեն ծխական ուսումնարանին... երա՛նի մեր բոլոր հայրենակիցները հետևեին այդպիսի պայծառ օրինակին. օ՛հ, ինչո՞ւ մեր ազգը իր բարևարներին չէ ճանաչում և այլն: Թերթի վերջը գալիս էր մի թարգմանություն աշխարհագրության դասագրքից... և շատ անգամ, երբ նյութը պակասում էր վերջին երեսը կամ սպիտակ էր մնում, կամ մի որևէ պատկերը դատարկ տեղ էր բռնում»:

Եկավ 1872 թվականը:

«Հունվարի մեկն էր... Թիֆլիսի հասարակության մեջ, ինչպես միշտ, թուղթ էին խաղում, խոսում էին Կրուժոկի, պարահանդեսների, այս կամ այն մասնավոր անձի, մասնավոր կամ ընտանեկան գործերի վերա... Հանկարծ մեկն ասավ. «Գիտե՞ք վաղը դուրս գալու է նոր հայացք լրագրի առաջին համարը»: Մի քանիսն արդարություն չդարձրին խոսողի վերա, մյուսները արհամարհանքով ժպտեցին, երրորդները ծիծաղեցան, մեկերն արդար խոսողից հեռացան, կարծես թե նրանց ականջին դիպավ անախորժ մի ձայն, վերավորական մի խոսք, կամ նրանց աչքերին ներկայացավ մի զարշնի տեսարան... Թռան տեղից ու հեռացան...»

...Ահա փոստից եկավ մի նամակ. «Պատվելի պարոն, շատ ցավում եմ,

որ մեր հայաբնակ քաղաքում 4 բաժանորդներից ավելի չգտնվեցա՞վ: Ձեր լրագիրը գուցե շատ օրինավոր կլինի, բայց մենք այնքան զգվեցանք մեր հայ լրագրությունից, լրագրություն սկսողը բոլորովին պատրաստ չլինելով այդ գործունեությունը, որ մենք այժմս էլ չենք հավատում, թե հայերեն լեզվով կարելի է մի օրինավոր լրագիր հրատարակել...

Այս հուսահատ դրություն մեզն էր մեր հայ հասարակության կարծիքը 1871 թ. մայրենի լրագրության վերաբերությամբ, այդպես սկսվեցավ 1872 թիվը...

Ահա հրատարակվեցավ նոր լրագրի առաջին համարը... Ինչպե՞ս եք գտնում, վատ չէ... Բայց պետք է խոստովանած, որ ամեն լրագիրների առաջին համարը լավ է լինում... Տեսնենք ինչ կլինեն հետևյալները... Մի ամիս չի անցկենա, և նրանք ստիպված կլինեն լցնել իրանց էջերը թարգմանություններով:

Բայց անցել էր ոչ թե մի, այլ ամբողջ տասն երկու ամիս: Եվ Արծրունին, կանգնած երկրորդ տարվա շեմքին, հետաքրքրական էր համարում իմանալ այժմ ինչ կարծիք կա հայ լրագրության մասին:

Կարծիքը, իհարկե, պիտի փոխվեր, բայց ոչ այդքան շուտ: Եթե հասարակական անտարբերությունը երկար ժամանակ ամրացած մի ժայռ էր, իսկ Գրիգոր Արծրունու հրապարակախոսությունը մի կաթիլ ջուր, պետք էր, ուրեմն, որ այդ կաթիլը երկար ժամանակ ընկներ ժայռի վրա, որպեսզի կարողանար նրան ծակել: Մեր հասարակությունը առանձին դուրազագացություն չունի, որ իսկույն հասկանա, իսկույն ցնցվի: Երևույթը դեռ իր սկզբնավորության մեջ էր, այնքան մոտ էր կանգնած տեսողներին, որ միանգամից դնահատել, ամբողջովին հասկանալ, շատ դժվար էր: Կային, իհարկե, շատերը, որոնք զգում էին, թե մեղանում մի նոր բան է սկսվում: «Մշակի» բաժանորդների թիվը այդ էր ցույց տալիս: Բայց հաղթանակը այդպես շուտ չէ ձեռք բերվում. մի տարում շատ բան չէ կարելի անել, մանավանդ մեզ պես հասարակության մեջ, այնպիսի մի ասպարեզում, ուր յուրաքանչյուր քայլը պատերազմով պետք է նվաճել:

Հարկավոր էին երկար տարիներ: Բայց այս առաջին տարին ցույց էր տալիս, թե ինչ պիտի լիներ այդ երկար տարիների շարքը: Մենք, այսօրվա մարդիկս, ավելի լավ և հարմար դրություն մեջ ենք, քան այն հասարակությունը, որին Արծրունին հարց էր տալիս, թե այժմ ինչ կարծիք ունի նա հայ լրագրության մասին: Այսօր մեզ այդ առաջին հարցից բաժանում է երեսուն տարիների տարածությունը. հեռվից դիտողի հանգստությունը զինված ընթերցողը կարող է այսօր իր վճիռը արձակել անկողնապահ կերպով, աչքի առջև ունենալով փաստերը միայն: Հենց այդ պատճառով էլ մենք այսքան երկար կանգ առանք «Մշակի» առաջին տարվա վրա, քայլ առ քայլ հետևեցինք Արծրունուն և նրա լրագրին: Կանգնեցնելով ընթերցողին մի մեծ շինության առաջ, մենք պարտք համարեցինք ծանոթացնել նրան այդ շինության հիմքերի հետ, ցույց տալ, թե ինչ նյութերից են կազմված նրանք, ինչպես է նրանց դարսել, պնդացրել ճարտարապետը: Եվ մենք տեսնում ենք, որ Արծրունու կառուցած շինությունը հիմքից մինչև վերջը միատեսակ է տարված, առանց տատանումների, առանց շփոթության: Դա մի ձեռք է, որ դողալ չգիտեր, մի միտք, որ շեղումներ անել չէր կարող: Ծարտարապետը միևնույնն է, թե հիմքի մոտ, թե շինության ծայրին:

Նա մեր մեջ երևան է գալիս միանգամայն պատրաստված: «Մշակի» առաջին տարին լրակատար կերպով պարզում է Արծրունու հրապարակախոս

անկան դեմքը. ոչինչ չէ մոռացված, ոչինչ թերատ դժեր չկան: Նա կովի մարդ է, նա տափակ մտքերի անհաշտ թշնամին է, նա պահանջում է, որ յուրաքանչյուր մտածող մի հայտնի գույն ունենա, նա հարկադրում է, որ կուսակցություններ կազմվեն մեղանում, բաժանում է աշակողմյաններին և ձախակողմյաններին, որոշում է դիրքերը և այդպես բաց անում կովի դաշտը: Վրդովում, տակն ու վրա է դառնում այն խաղաղ ճահիճը, որ հայկական կյանքն էր ներկայացնում: Խիզախ, համարձակ, ազատ միտքը առաջին իսկ քայլերից փոթորիկ է հարուցանում: Մենք լսում էինք ու սարսափում: Մենք գիտեինք, որ խաղաղ ու միաբան ապրելը իմաստության ծայրն է, իսկ կուսակցությունները դժբախտություն են. Արծրունին գաղափարական կուսակցության սկիզբն է դնում և ասում է, որ մեռած է այն կյանքը, ուր կուսակցություններ չեն առաջանում: Մենք գիտեինք, որ պետք է սիրով ու խաղաղ ապրենք, Արծրունին պարտավորություններ էր դնում մեր առջև և ասում էր. «Մտրակով չխփես, բան չի դուրս գա»: Տպագրական խոսքը մեղանում շտեմնված մի ուժ էր դառնում. նա խարազանում էր, նա հուզում էր, հարկադրում էր շարժվել, ականջ դնել: Հայ հրապարակախոսությունը պատվավոր դիրք էր բռնում և նրան լսում էին նույնիսկ օտարները:

Անցնում էր հին, բարեմիտ ազգասիրության դարը: Մեղանից պահանջում էին ուսումնասիրել մեր իրական կյանքը, հետազոտել մեր տնտեսական երևույթները: Փոխանակ ինքնագոհ ազգասիրության՝ մեր առջև դրվում էր ազգային լեզուի նշանակությունը. փոխանակ հին, անցած գնացած հերոսների՝ մեր աչքի առաջ էին հանվում վաշխառուի ճանկերում տանջվող գյուղացին, արհեստավորը, պրոլետարիատը: Աշխատել դրանց համար, գործ կատարել դրանց օգնելու, դրանց կյանքը ապահովելու, տնտեսական դրությունը բարվորելու համար, ահա՛ իդեալը. աշխատող, ներկայով ապրող և ապագա պատրաստող սերունդ էր հարկավոր և ոչ թե անցյալի համար դատարկ ախ ու վաշ անողներ: Հարվածելով մեռած, անպիտան, խանգարող ուժերը, Արծրունին ցույց էր տալիս գործունեության լայն ասպարեզ. որքա՞ն գործեր կային ճշմարիտ աշխատողների առաջ, որքան կարևոր կենսական հարցեր կային կախված մեզ վրա, և մենք նրանց չէինք նկատում: Նա անդադար կանչում էր, նրա ձայնը ազդու էր, խոսքը ամենքին մատչելի: Եվ նա իր հետ բերեց մի շարժում: «Մշակը» դեռ մի քանի ամսական էր, բայց արդեն օտարներն էլ նկատում էին, որ նա երիտասարդության պարագլուխն է...

1872 թվականը դարագլուխ է կազմում մեր լրագրության, մեր գրականության պատմության մեջ: Այդ դարագլուխը բերեց «Մշակը»: Սա լուկ խոսք չէ. անթիվ ու առատ փաստերը այս պատմական իրողությունը հաստատում են ամենադրական կերպով: 1872-ից մեղանում տիրապետում է նոր ուղղությունը և հինը անցնում է ավանդությունների կարգը: Մեղանում սկիզբ է առնում իսկական լրագրությունը, մենք սկսում ենք զբաղվել մեր կյանքով, մեր սեփական հարցերն ենք ստեղծում, հրապարակական քննադատությունը լայն ու հաստատ հիմքերի վրա ենք դնում:

Առաջադիմությունը մեր մտավոր խեղճ աշխարհի մեջ փայլուն էջեր է բաց անում: Նա միանգամից խուժեց մեր կյանքի մեջ, միանգամից բաց արավ իր դրոշակը: Մնում է, որ նա երկարատև լինի, գործե անընդհատ համառություն, տոկունություն: Եվ կարելի էր ապահով լինել, որ այդպես էլ կշարունակվի, որովհետև այն մարդը, որ այսպիսի մի շրջան բաց արավ մեղանում, չէր նայում իր վրա իբրև մի դյուցազնի, մի մարգարի, մի հրաշագործ ուժի վրա: Ո՛չ:

«Մենք հրաշք չենք գործել,— ասում է Արծրունին իր առաջնորդողներից մեկում։— Մենք անդադար կրկնել ենք, թե հրաշքների դարը անցավ և այժմյան դարը՝ անընդհատ, տոկուն աշխատանքի դար է։ Նույնիսկ մեր այդ համոզմունքի խոստովանությունը ապացույց է, որ մենք մեր գործունեությունից սպասել չէինք կարող հրաշքների, ոչ կրկու, ոչ էլ տասը տարվա ընթացքում։ Ճշմարիտ է, աշխատանքի հետևանքը շատ անգամ ուշ է բերում շոշափելի պտուղներ, բայց նրա գոյությունը բոլորովին անտես անելու անկարող է հասարակությունը։ Մի անգամ հայտնած միաքր ոչնչացնելու՝ մարդկային հասարակության ուժից վեր է... Այժմյան դարում որևէ փոփոխություն դեպի լավը կարելի է սպասել միայն անընդհատ գործունեությունից, հրաշք սպասել կարելի է միայն երկարատև և տոկուն աշխատանքից»։

Ահա՛ ամբողջ զաղտնիքը։ Եվ մենք, մանրամասն կերպով ժանոթանալով Գրիգոր Արծրունու երկարատև, տոկուն աշխատանքի սկզբնավորության հետ, այժմ առաջ կգնանք ավելի համառոտած տեսություններով, արձանագրելով այն, ինչ նա ավելացնում էր իր գրած հիմքի վրա։

VI

Երկուրդ և հետևյալ տարիները։ Բաժանորդագրություն առանց գործակալների։ Մի ետ ուժ «Մշակի» մեջ՝ Ասիացիներ իր ֆելիետոններով։ Քաղաքային տնտեսության հարցեր. զինակցություն «Դռներայի» և «Тифлисскаий Вестник»-ի հետ։ Գյուղատնտեսական լրագիր ժողովրդի համար։ Արծրունին և բուրժուերը. «Աֆինջի» լրագիրը։ Գավառական մամուլ։ Եկեղեցի և հոգևորականություն։ Վերադարձ դեպի նախնական եկեղեցին։ Միսիոնարություն։ Կրոն և ազգություն։ «Արարատը» և «Մեղուն» «Մշակի» դեմ։ Տեսչական հարց ներսիսյան դպրոցում։ Անդրեաս Արծրունու բնութագրությունը։ Կղերական կամայականություններ։ Պայքար տեղափոխվում է Կ. Պոլիս։ Դասախոսություններ Քիֆլիսում։ Առաջին գրական դատ։ Արծրունի և երիցյան։ «Кавказ»։ Արծրունու առաջին դասախոսությունը։ Կտակներ։ Աշխարհական արեղայություն։ Նոր աշխատակիցներ։ «Գաղթենկ, միշտ գաղթենկ»։

Հրատարակության երկրորդ տարին «Մշակը» արդեն մոտ 700 բաժանորդ ունի։ Հաջողությունը աստիճանաբար ավելանում է, այնպես որ երկրորդ տարվա սկզբում Արծրունին արդեն 1000 բաժանորդի հույս ունի և մտածում է «Մշակը» շաբաթը երկու անգամ հրատարակելու մասին։

Ի՞նչ էին ցույց տալիս բաժանորդների՝ մեզանում դեռ շտեմանված այդ խոշոր թվերը։ Արծրունին ասում էր, թե դրանք ապացույցներ են, որ հայ լրագիրը այժմ կարողանում է կապ հաստատել հասարակության հետ։ Եվ պատճառը այս էր, որ լրագիրը ժողովրդի տնտեսական կյանքի վրա մեծ ուշադրություն է դարձնում. գյուղերն էլ սկսեցին լրագիր ստանալ, իսկ օր օրի վրա բազմացող թղթակցությունները, որոնց զլխավոր առարկան ժողովրդի կեցությունն է, վկայում են, որ լրագրի բռնած ուղղությունը միանգամայն համապատասխանում է ազգարևակության էական կարծիքներին ու պահանջներին։ Մնում էր ավելի ևս մատչելի դարձնել լրագիրը ժողովրդին։ Եվ Արծրունին թանկ համարելով 7 ուրլի բաժանորդագինը, երկրորդ տարվանից իջեց

* «Մշակ», 1874, № 1.

ևում է նրան 5 ուրլու «Մեղուն», որ մրցության գործում ոչինչ չէր խնայում, որիչ միջոցի դիմեց. անփոփոխ թողնելով 7 ուրլի բաժանորդագինը, նա մեծացրեց իր դիրքը, որ թույլ էր տալիս նրան «Մշակից» ավելի նյութ տալ թեթեքողին։ Սակայն հաջողությունը «Մշակի» կողմն էր, եթե աչքի առաջ առնենք մանավանդ հետևյալ հանգամանքները։

Մեր մամուլի պատմության մեջ դեռ չէր եղել դեպք, որ մի լրագիր կամ ամսագիր բաժանորդագրություն սկսեր առանց գործակալների։ Խմբագիրը ժանտներ ուներ զանազան քաղաքներում. դիմում էր նրանց, խնդրում էր բաժանորդներ հավաքել։ Իսկ հավաքել նշանակում էր դիմել այս կամ այն տնային, խեղրել, թախանձել, գրել տալ բաժանորդ։ Կամավոր բաժանորդագրություն մեղանում համարյա թե չկար. մի լրագրի կամ ամսագրի նյութական դրույթունը ամբողջապես կախված էր այն հարցից, թե որքան եռանդոտ, ազդեցիկ են նրա գործակալները։ Այդ դրույթան շնորհիվ մամուլի վիճակը ազդեցիկ անհատների ձեռքում էր գտնվում. կուգին այդ ազդեցիկները, և լրագիրը կամ ամսագիրը բաժանորդներ կունենար, չէին ուզի, բաժանորդներ չէին լինի, կամ այնքան քիչ կլինեին, որ խմբագիրը հուսահատության մեջ կընկներ։ Պարզ է, որ բաժանորդագրության այս պայմանների մեջ մեղանում չէր կարող դորդանալ անկախ, ազատախոս մամուլը։ Ապացույց՝ «Հյուսիսափայլը»։ Լրագիրը կամ ամսագիրը պիտի խունկ ծխեր, շողբորթեր, քծներ։ Նազարյանցը փորձեց այդ սովորությանը դեմ գնալ, բայց այնպիսի դիմադրություն տեսավ ազդեցիկ անհատների կողմից, որ հարկադրված եղավ դիմել Կովկասյան փոխարքա իշխան Բարեատինսկուն, խնդրելով, որ նա տեղական իշխանությաննների միջոցով տարածե «Հյուսիսափայլը»։ Պարբերական հրատարակություն ստանալը համարվում էր ազգասիրություն. հանուն ազգասիրության՝ խմբագիրները կամ նրանց գործակալները անդորրագրեր էին ուղարկում դոնե-զոն. գտնվում էին «ազգասիրներ», որոնք ընդունում էին այդ անդորրագրերը և բարենիսիղձ էին փող վճարելու մեջ. շատերը կամ վերագրանում էին անդորրագրերը կամ ստորագրում էին պարբերական հրատարակությունը, առանց երբևէ մտածելու փողի վճարման մասին։ Դա իսկապես մուրացկանություն էր, ինչպես իրավացի կերպով նկատում էր «Կուունի» հրատարակիչ էնֆիանյանցը իր մի հայտարարության մեջ։

Ակսելով «Մշակի» հրատարակությունը, Գրիգոր Արծրունին էլ ենթարկված էր գործակալներին դիմելու տխուր անհրաժեշտությանը։ Խմբագրությունը իր առաջին հայտարարության մեջ առաջարկում էր ցանկացողներին՝ գործակալ լինել «Մշակը» տարածելու համար. 10 բաժանորդ գտնողը մի օրինակը կթի էր ստանում, 20 բաժանորդ գտնողը՝ երկու օրինակ և այլն։ Բայց Արծրունին շատ շուտ զգաց լրագիրը գործակալների միջոցով տարածելու ամբողջ անհարմարությունը, վատությունը։ Երբորդ տարվա բաժանորդագրությունը րոպե արավ առանց գործակալների միջնորդության և միանգամից փայլուն նատանքների հասավ։ Մինչև հունվարի վերջը նա արդեն 500 կամավոր բաժանորդ ուներ, ուստի «Մշակի» մեջ հայտնեց, որ երբեք չի դիմի արհեստական միջոցների՝ լրագիրը տարածելու համար։

«Մենք մեր կողմից խոստովանում ենք,— ասում էր նա,— որ մենք միշտ զգումք ունեինք այդ տեսակ միջոցներից և միայն առաջին տարի ստիպվեցանք այդ միջոցները գործ դնելու, որովհետև հայերը չէին էլ ուզում հավատալ, ու մայրենի լեզուով կարելի է մի փոքրիշատև օրինավոր լրագիր հրատարակել, այնքան զգված էին նրանք մեր լրագիրներից։ Երկրորդ տարուց

սկսած մենք ուղարկել ենք միայն այն անձանց մեր լրագրի տաժարակները, որք իրանք էին խնդրում ու առաջարկում գործակատար լինելու:

Բայց այժմ այլևս այդ ստիպողական միջոցները չեն գործադրվի: Ավելի լավ է ունենալ 500 բոլորովին կամավոր բաժանորդ, քան 1000 ստիպողական, որովհետև այն հինգ հարյուրը «տարից տարի կաճեն և ժամանակով կդառնան 1000 կամավոր ստորագրող և ավելի, կդառնան մայրենի ճշմարիտ լրագրական գործունեության համար հաստատ արժանոք»: Մահայն կարող է պատահել, որ առանց գործակալների օգնության բաժանորդների եղած թիվն էլ կպակասե: Արծրունին գրանից չէ վախենում: Նա ասում է.

«Քանի որ մեր բաժանորդների թիվը կնվազվի, այնքան մենք պակաս գործ գնելու ենք, որի է ստիպողական միջոցները...»

Իհարկե, շատերը կասեն մեզ՝ բայց ձեր լրագիրը այդպիսով անշուշտ կընկնի, մեր հայրը ժողովուրդը ոչինչ չէ անում առանց ստիպողական միջոցների:

Թող ընկնի... բան չկա... այդ էլ կփորձենք... այն ժամանակ հավատացած կացեք, որ մեր վերջին համարը հրատարակելով, կասենք հայերին՝ հայենի, դուք ոչ ազգ եք, ոչ հասարակություն, որովհետև դուք անընդունակ եք այն անընդհատ առաջադիմության, որին ընդունակ է ամեն մարդկային հասարակությունը, մինչև անգամ վայրենիները...

Եվ կտարած սրտով կթողնենք այդ երկիրը...»:

Հավատարմով իր գործին, հավատարմով, որ կենդանի, իրական ուղղության հետևող գրականությունը անկախ, կամավոր ընթերցողների մի դասակարգ կստեղծե մեզանում, Արծրունին այսպիսի խիստ խոսքերով էր կտրում իր կապը արհեստական, ստիպողական միջոցներից, որոնց դիմել էին և այսօր էլ դեռ դիմում են բոլոր հայ պարբերական հրատարակությունները: Եվ զուր չէր Արծրունու այդ վառ հավատը: Ճիշտ է, վերահիշյալ խոսքերից մի քանի տարի անցած, նա, դարձնելով «Մշակը» ամենօրյա, ստիպված եղավ, գործի կատարյալ նորության պատճառով, դիմել արհեստական միջոցի, բայց գրանից հետո նա երբեք այլևս չկրկնեց այդպիսի փորձեր: Եվ նրան, միայն նրան հաջողվեց պատվով, առանց մուրացկանության, առանց ստորացումների, տանել լրագրի հրատարակությունը, գրավելով իր կողմը մշտական, կամավոր ընթերցողների մի բազմություն: Մյուս թերթերը, ամսագիրները հեղեղում էին զավառները իրանց անորոքագրերով, ամեն ջանք գործ էին դնում բաժանորդներ որոնելու համար, բայց Արծրունին մրցություն չէր սկսում անորոքագրերի դուռն դուռն ման ածողների դեմ, և նրա բաժանորդները այն մարդիկ էին, որոնք իրանց կամքով, գիտակցաբար ընտրություն կարող էին անել այս կամ այն լրագրին գրվելիս: Ուրիշները խնդրելով, աղաչելով, շողորթելով էին բաժանորդներ գտնում, դռնով էին իրանց հրատարակությունները ընթերցողի շիրիմին փաթաթում, իսկ Արծրունին միայն գաղափարի, ուղղության, տաղանդի ուժով էր գրավում բաժանորդներին: Նա միայն կարող էր պարծենալ, որ ունի գիտակից, ազատ, հասկացող ընթերցողներ: Եվ ոչ մի խմբագիր չէ եղել նրա այդ նախանձելի գրության մեջ. վկա թող լինի մեր մամուլի պատմությունը: Հայերեն տպագրական խոսքի պատիվը բարձրանալու, այդ խոսքը մտավոր անհրաժեշտ կերակուր, պահանջ դարձնելու մեջ Արծրունու չափ մեծ ծառայություն ոչ ոք չէ ցույց տվել: Եթե կան մեր իրականության մեջ փայտն ընկածներ, երբ մեր լրագիրը, մեր գիրքը մի թշվառ մուրացկան չէ, դուրսի տակ, փողոցների անկյուններում ուշագործություն և բարերարություն հայացող մուրացկան, — դրանք վերաբերվում են միայն Արծրունու գործունեության: Նա

էր, որ ստեղծեց մեր դժբախտ բարբերի մեջ անկախ, իսկապես բարձրագույն, հպարտ, իր արժանապատվությունը ամեն ինչից բարձր դասող մամուլ...

Եվ այսպես, «Մշակը» հենց առաջին տարվանից սկսում է սերտ կապ հաստատել իր և հասարակության մեջ, սկսում է փրկապետել Մեծխության, անշարժության թշնամի, նա անգագար նորություններ է մտցնում իր մեջ, գրավում է նոր ու թարմ ուժեր: «Մշակի» պատմության համար ամենախոշոր նորությունը, որ երևան է գալիս երկրորդ տարվա ընթացքում, այն է, որ Գրիգոր Արծրունին սկսում է ֆելիետոններ գրել:

Ֆելիետոնը մեր հրատարակատնության սկզբից եղել է այն գրական ձևը, որ սիրել են մեր գրողները և որ առանձնապես սիրելի է դարձել հայ ընթերցողի համար: Թեթև, վառվառն ոճը, համեմատ ծագրի հետ, ահա՛ այն միջոցը, որով ավելի հեշտ ու ազգու է եղել մեր բարբերի, մեր պակասությունների մերկացումը: Ծանր, լուրջ հրատարակատնությունը ամբողջապես եվրոպական հողի պտուղ էր և մեզ համար խորթ մի բան էր, օտար երկրից բերած մի պատվաստ. մենք դեռ պիտի սովորեինք նրան: Մինչդեռ ֆելիետոնական ձևը մեզ համար այնքան խորթ լինել չէր կարող. որևէ սրամիտ պատմության, առակի ձևով պակասություններ ծաղրելը մեզ էլ հայտնի էր հին ժամանակներից, և մեր ժողովուրդը ամենամեծ հաճությամբ է պատմում ծաղրածոների պարբերները, կրկնում նրանց ասածները: Ֆելիետոնը, որի գլխավոր տարրը նույն ծաղրն է, ամենից մատչելի, ժողովրդական ձևն էր մեզանում և նա սկզբից ևեթ մեծ հաջողություն ունեցավ: Միջայել նախանդանցը ընթերցողներին գերում էր իր ֆելիետոններով: Նրանից հետո ֆելիետոնական գրվածքներ երևում էին «Կռունկի» և «Մեղուի» մեջ, բայց Թիֆլիսում ֆելիետոնը դարձավ գավառաբանություն, նա գրվում էր միայն Թիֆլիսի բարբառով: Ճիշտ է Թիֆլիսի բարբառը աննման ճկունություն ունի խիստ ծաղր արտահայտելու համար, բայց կար այն պակասությունը, որ նա թիֆլիսեցուն էր միայն ծանոթ և Թիֆլիսից դուրս մեծ հաջողություն ունենալ չէր կարող: Բացի գրանից, գրական յուրաքանչյուր ձևով, բայց մանավանդ ֆելիետոնը, պահանջում է առանձին, ինքնուրույն տաղանդ:

«Մշակը», ինչպես տեսանք, առաջին իսկ համարից մտցրեց գրական լեզուով գրված ֆելիետոնը: Չաքունը բավական աչքի ընկնող ընդունակություն էր ցույց տալիս այդ բաժնում. մանավանդ բանակափնների մեջ թունալից ֆելիետոնը արտահայտում էր իր ամբողջ ոչնչացնող ուժը: Վերանորոգված «Մեղուն» առաջին տարին շուններ ֆելիետոն, նույնիսկ պակասություն էր համարում ծաղրական ոճով գրելը: Բայց Չաքունի սուր սլաքները հարկադրեցին, որ նա էլ մտածե այդ բաժնի մասին: 1873 թվականի «Մեղուի» առաջին համարը արդեն գծի տակ ունի ֆելիետոն, ստորագրված Քաղքցի կեղծ անունով: Քաղքցին խմբագիր Պետրոս Միմոնյանցն էր, նա սկսեց հաճախ երևան գալ և նրա սրախոսությունների և ծաղրի առարկան, իհարկե, «Մշակն» էր: Չաքունը սկսել էր շատ ուշ-ուշ երևալ «Մշակում», և մերիկյանը շուտով հեռացավ Թիֆլիսից և թեպետ ուղարկում էր իր ֆելիետոնները հեռուից, բայց գրանք, իհարկե, այլևս ուղմական նախկին նշանակություն ունենալ չէին կարող:

Եվ ահա «Մշակի» 1873 թվականի № 6-ի մեջ մի նոր ֆելիետոնիստ է երևան գալիս, որ այսպիսի վկայություն է տալիս իր մասին.

«Սովորություն կա, որ նոր ֆելիետոնիստը պիտի անպատճառ իրան ներկայացնե պատվելի հասարակությանը, բայց ես ավելորդ եմ համարում այդ ամեն տեղ ընդունված քաղաքավարությունը, որովհետև կամենում եմ անհայտ մնալ մեր ընթերցող հայ հասարակությանը:

Այսքան իմացեք միայն, իմ սիրելի ընթերցող, որ ես ասիացի եմ, Ասիացում ծնվել եմ և մեծացել, բարձր ուսում ստացած չեմ, ոչ Պետերբուրգի համալսարանից դիպլոմ եմ ընդունել, ոչ գերմանական մի համալսարանում փողով դիպլոմ եմ առել, սարսափելի իրողություն, որ Քիֆլիսի «Մեղու Հայաստանի» լրագրի խոսքերին նայելով, ամեն օր կատարվում է կրթված Պետմանիայում:

...Կրկնում եմ, որ ես մի հասարակ, անտաշ ասիացի եմ, ու կարող եմ միայն այն բանի վրա խոսել, որ իմ շորս կողմն եմ տեսնում, միևնույն ժամանակ անագեիվ համարելով, առհասարակ խոսել այն բաների վրա, որոնց մասին ոչինչ տեղեկություն չունեմ»:

Այս համեստ հանձնարարականն էր ներկայացնում իր մասին Գրիգոր Արծրունին, Ասիացի անվան տակ թաքնվելով իբրև նոր Ֆելիետոնիստ: Բայց հանձնարարականները ավելորդ էլ էին: Այստեղ գծի տակ էլ, ծաղրի բաժնում, Արծրունին շուտով ցույց տվեց իր ամբողջ տաղանդը: Լինելով խիստ խոսքի տեր, լուրջ, տաք ու կրքոտ բնավորություն, հեռու պահելով իրան թղթախաղից, խմիչքից, զվարճություններից և քեֆերից, Արծրունին կյանքի մեջ մի մտալի պսակտ չէր, մի ճզնավոր չէր, այլ մի վերին աստիճանի ախոքթելի խոսակից, որ կարողանում էր մեծ հետաքրքրություն մտցնել խոսակցության մեջ՝ համեմելով նրան սրախոսություններով, հանաքնեքով, զվարճալի անեկոտաներով: Ֆելիետոնիստի կայծը կար նրա բնավորության մեջ և այդ բաժնում գրելը նրա համար նույնքան ոգևորիչ էր, որքան լուրջ հրապարակախոսական բաժնի մեջ: Նրան տված էր ծաղրով ջարդելու, ոչնչացնելու երկնային շնորհքը: Եվ անողորմ ծաղրը հնչում էր գծի տակից ամեն անգամ, երբ բավական նյութ էր հավաքվում Ասիացու Ֆելիետոնի համար:

Շատերն են գրել Ֆելիետոններ, Պետրոս Միմոնյանցը իբր լրագրի էջերը լայն բաց արավ ամեն մի գրություն համար, որի ճակատին գրված էր «Ֆելիետոն»: Հետևելով նրա և Գրիգոր Արծրունու օրինակին, մեր մյուս խմբագիրներն էլ գրում էին Ֆելիետոններ: Բայց Ասիացին մի հատ էր մեղանում. ուստի սահման գրողների մեջ նա ամենատաղանդավոր երգիծարանն էր: Երգիծարանությունը նա պահպանեց տպագրական խոսքի բարձրության վրա. ունենալով ծաղրելու, ծիծաղեցնելու շնորհք, նա երբեք, իր հակառակորդների նման, չստորացրեց իրան՝ դիմելով անմիտ ծամածռությունների, էժանագին հանաքչիությունների: Այդտեղ էլ նա պահվում էր գրական վայելչության սահմաններում, գիտեր թե ինչն է թույլատրված և ինչն է արգելված գրական էթիկայի կանոններով: Եվ թույլատրվածի սահմաններում նա անողորք էր, խնայել չզիտեր, առողջ, բարեկարգիչ ծաղրը, այն ծաղրը, որի միջով, ինչպես ասում են, արտասույթներ են երևում, պատկերացնում էր հասարակական փայտերը, հասարակական գործիչներին: Հասարակական ասպարեզն էր ճանաչում Ասիացին. նրանից դուրս, մասնավոր, քնտանեկան հանգամանքները, հակառակորդի անհատական կյանքը գոյություն չունեին նրա համար: Լուրջ, կրակոտ, հարձակողական, պատերազմող հրապարակախոսության մեջ անխոնջ Արծրունին անխոնջ էր ծաղրի բաժնում. Ասիացին ապրեց մինչև այն օրը, երբ Գրիգոր Արծրունու հետ մտավ դազադ: Նա «Մշակի» ամենասարսափելի խայթն էր և գծի տակից միանում էր այն ուժեղ հարվածներին, որոնք ճայթում էին գծի վերևում, առաջնորդողների և այլ հողվածների մեջ: Ասիացու Ֆելիետոնները, որոնք մոտ քսան տարի զարգարում էին «Մշակի» էջերը, մեր հասարակական կյանքի հայելին են. յուրաքանչյուր փոքրիշատե աչքի ընկնող դեպք արձագանք է գտել այդտեղ, յուրաքանչյուր հասարակական հարց արձանագրվել է

այնպես, ինչպես պարտավոր է արձանագրել կոչման բարձրության վրա կանգնած, լուսամիտ գաղափարներով տոգորված Ֆելիետոնիստը: Ասիացու Ֆելիետոնների ժողովածուն մի կայելչոսկուպ է, որի մեջ մեր կյանքի իրողությունները իրար հաջորդում են իրանց բազմակողմանի պատկերներով ու զեմբերով...:

Մենք դեռ առիթներ շատ կունենանք Ասիացու մոտ գնալու: Տեսնենք առայժմ, թե ինչ էր տալիս «Մշակի» հրապարակախոսությունը 1873 թվականին և հաջորդ երկու տարիները:

«Մշակի» առաջին տարվա առաջնորդող հողվածների ամենամեծ մասը բնիհանուր բնավորություն է կրում, ավելի ծրագիր է, սկզբունքների և աշխարհայեցողությունների լայնածավալ բացատրություններ: Երկրորդ տարվանից հրապարակախոսության նյութը զգալի կերպով տեղական, մասնավոր, առօրյա կերպարանք է ստանում: Միմյանց ետևից հաճախ երևան են գալիս Քիֆլիսի բազաբային հարցերը (ջրանցք, գաղի լուսավորություն, արհեստագիտական դպրոց), Քիֆլիսում նոր բացված առևտրական հիմնարկությունները (առևտրական բանկ, փոխադարձ վարկի բնկերություն) և այլն: Բայց Քիֆլիսի գործերն ու շահերը, իհարկե, մոռացնել չեն տալիս ընդհանուր կուլտուրական և ազգային շահերը:

Մենք պետք է այստեղ նկատենք, որ Քիֆլիսի տեղական հարցերը բացի նրանից, որ առհասարակ շոշափում էին բարեգործության և ինքնագործունեության շատ հետաքրքրական սկզբունքները, ունեին և այն կարևոր նշանակությունը, որ իրանց շուրջն էին կենտրոնացնում զանազան լեզուներով հրատարակվող լրագիրների համերաշխ գործակցությունը: «Մշակի» և «Դրոսբայի» գիտակցության մասին մենք խոսեցինք: Մնում է ավելացնել, որ 1873 թվականին ավելացավ մի նոր գիտակից էլ և դա «Тифлисский Вестник» լրագիրն էր:

Ռուսաց պարբերական մամուլի միակ ներկայացուցիչը Քիֆլիսում «Кавказ» պաշտոնական լրագիրն էր, որ իր ուղղությամբ, իր կոչումով չէր կարող համապատասխանել մի հասարակական անկախ քննադատող օրգանի պահանջներին: Պակասում էր մասնավոր մի լրագիր, և այդ պակասը լրացրեց մի հայ, իշխան Կոստանդին Բեհրուտով, «Тифлисский Вестник»-ի հիմնադիրը և խմբագիրը: Առաջին տարին նա լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ և դեռ բոլորովին կազմակերպված չէր իբրև հրապարակախոսական օրգան. ունեւ աղքատ բովանդակություն, իր էջերը լցնում էր մեծ մասամբ դատաստանական գործերի մանրամասն հաշիվներով: Սակայն նոր լրագրի մեջ զնահատելին այն էր, որ նա իր ուղղությամբ մոտենում էր «Մշակին» ու «Դրոսբային» և սրանց հետ ձեռք ձեռքի տված էր գնում: Նրա մեջ արձագանք էին գտնում այն հարցերը, որոնք հարուցվում և քննվում էին հայ և վրացական երկու լրագիրների մեջ և այդպիսով ռուս հասարակությունն էլ էր ծանոթանում տեղական լեզուներով հրատարակվող օրգանների հետ: Այդպիսի մի խղճմտավոր միջնորդ շատ հարկավոր էր: «Մշակը» շուտով էլի բանակուլի բռնվեց «Кавказ» լրագրի հետ: Առիթներից մեկը էլի դարձյալ մայրենի լեզվի հարցն էր: «Մշակը» — «Դրոսբա» ցանկալի էին համարում, որ նոր բացված քաղաքային արհեստագիտական դպրոցում դասատուությունը լիներ տեղական լեզուներով, որպեսզի աշակերտները կարողանան իրանց ստացած գիտությունը տարածել ժողովրդի մեջ, իսկ «Кавказ»-ը համարում էր այդ միտքը հանցանք պետական լեզուի գեմ: Բանակուլի մյուս առիթը հայոց դպրոցների հարցն էր: «Кавказ»-ը ծուռ ու գունավորված տեղեկություններ էր տվել այդ դպրոցների մասին, «Մշակը»

րողութեց զրա դեմ: Ահա՛ այդ ընդհարումների միջոցին «Тифлисский Вестник»-ը արձանագրում էր իր էջերի մեջ «Մշակի» և «Դրոներայի» գրվածքները: Արժրունին հաճախ գրում էր և սուս լրագրի մեջ:

Հայ-վրացական համերաշխությունը արտահայտվում էր համարյա ամեն մի քաջում: Զրանցքի և լուսավորության հարցերում «Մշակն» ու «Դրոներան» ընդդիմադիր կուսակցություն կազմեցին, սկսեցին միասին մերկացնել քաղաքային վարչության սխալները: Մի ոմն Ռուկո արտասահմանյան ինչ-որ ընկերությունների անունից բանակցություններ էր սկսել քաղաքի հետ՝ ջրանցքի շինությունը և փողոցների լուսավորությունը վերցնելու համար: «Մշակն» ու «Դրոներան» սկսեցին մերկացնել Ռուկոյին և իրանց ասածները հաստատելու համար միասին հեռագրով դիմեցին Լոնդոն և պատասխան ստացան, թե Ռուկոյի ցույց տված ընկերությունները գոյություն չունեն: Տպավորությունը ահագին էր, և թեև քաղաքային ինքնավարության մեջ գործող մի բարձրաստիճան մարդ ասել էր, թե չպետք է ուշադրություն դարձնել «Մշակ»-«Դրոներայի» վրա, որովհետև զրանց խմբագրողները «малышкы» (երեխա) են, բայց այդ համերաշխ արշավանքը կատարյալ հաղթանակ բերեց, և քաղաքը շքնկավ Ռուկոյի սարքած թակարդի մեջ:

Երկու լրագրերն էլ շարունակ իրար էին դիմում, իրարից քաղվածքներ էին անում, իրար օգնում էին՝ տնտեսական երևույթները բարեխղճությամբ և արդյունավետությամբ լուծելու մեջ: Թե համերաշխությունը, փոխադարձ անկեղծ բարյացկամությունը ինչ գեղեցիկ հետևանքների էին հասցնում, այդ ցույց է տալիս «Մշակի» և «Դրոներայի» վերաբերմունքը վաշխառության հարցին: Մեր այժմյան օրերում, երբ ազգայնամոլությունը այնքան կուրացրել է վրացի գործիչների մի մասը, հայերի դեմ համարյա խաշակրաց արշավանք է բարոզվում, և այդ ատելությունը հայերի դեմ վրացի ազգայնամոլները հիմնում են այն իրողության վրա, որ Վրաստանում վաշխառու են մեծ մասամբ հայերը: Մի քանի վաշխառուների պատճառով ատելություն քարոզել մի ամբողջ ազգի դեմ, համարել բոլոր հայերին հարստահարիչ, վաշխառու, այս է մեր օրերի վրացական հայրենասիրության ամենամեծ արտահայտությունը առաջավոր դասակարգի մի հայտնի շրջանում:

Այսպես չէր այն ժամանակ, երբ «Մշակն» ու «Դրոներան» եղբայրացած էին: Այն ժամանակ էլ, իհարկե, գոյություն ունեւր, և անշուշտ անհամեմատ մեծ շահերով, տնտեսական այն սոսկալի դժբախտությունը, որ կոչվում է վաշխառություն: «Դրոներան» իր մի հոդվածի մեջ ասում էր, որ իրողություն է, թե հայերն են գլխավորապես վաշխառությամբ պարսպում և այս հանգամանքը առիթ է տալիս անզարգացած վրացի ժողովրդին վաշխառու համարել բոլոր հայերին, ուրեմն և ատել ամբողջ հայ ժողովուրդը: Բայց դա մի սխալ հասկացողություն է. վաշխառությունը կապ չունի ազգայնության հետ, նա տնտեսական մի երևույթ է և գոյություն ունի բոլոր ազգերի մեջ: Վաշխառության դեմ պետք է կռվել տնտեսական խելացի միջոցներով և այդ դժբախտությունից ազատվելը պիտի աչքի առաջ ունենա ժողովուրդը և ոչ թե ազգայնական հարց դարձնել նրան:

Արժրունին, ծանոթացնելով ընթերցողներին իր դաշնակից լրագրի հայացքների հետ, մի առաջնորդողի մեջ նույնպես պարզեց վաշխառության էությունը և հասկացրեց, թե որքան մեծ արատ է բերում վաշխառությունը հայ ազգի անվան:

«Մինչև որ մենք աշխատում ենք հասկացնել երկու հարևան ազգությունների մեջ բարոյական կապերի, փոխադարձ օգնության, եղբայրասիրության,

ընդհանուր շահերի օգուտը, — մեր հայրենակիցների մի խումբ (որք պատիվ չեն անում մեր ազգությունը) իրանց հարստահարող վարմունքով ոչ միայն հեռացնում են մեզանից վրաց գյուղական ազգաբնակչության համակրությունը, բայց և իրանց վնասակար գործունեությամբ հասնում են բոլորովին հակառակ հետևանքին՝ նրանք թշնամացնում են կովկասյան վրաց ազգաբնակչությունը դեպի հայոց տարրը, ատելի են անում հայոց անունը հարևան և նույն օգուտներ ունեցող ազգի մեջ...»

Ծրբ պիտի հասկանանք, որ հայը ամեն տեղ, թե՛ ընտանիքի, թե՛ հասարակության մեջ ինքն իր ամենամեծ թշնամին է, որ եթե նրան չեն սիրում, այդ այն պատճառով է, որ նա չէ իմանում իրան սիրելի անել... Հայը դարմանում է, որ նրան չեն սիրում, բայց չէ մտածում, որ նա մինչև այժմ ոչինչ չէ արել, որ իրան սիրել տար (№ 26, 1873):

Հայ-վրացական այս համերաշխությունը բավական երկար տևեց: 1876 թվին տոնվում էր «Դրոներայի» տասնամյակը: Տոնին մասնակցում էին և հայ երիտասարդները: Արժրունին ճաշի ժամանակ դիմեց «Դրոներայի» խմբագիր Մեսխիին մի փոքրիկ ճառով, որի մեջ ասում էր, թե մինչդեռ եվրոպայում լրագրությունը մի շահավետ գործ է, մեզանում նա զրկանքների և արգելքների հետ է կապված:

«Այդ հանգամանքը, — շարունակեց Արժրունին, — լավ հայտնի է և իմ բարեկամ Ս. Մեսխիին, որ իր լրագրի հաջողությամբ պարտական է ոչ թե միայն իր խելքին և ընդունակությանը, բայց և այն հանգամանքին, որ նա լավ հասկացել է հասարակության բարոյական ցավերը և տանջանքները, ինքն սովորած լինելով զրկանքներին և տանջվելուն: Զարմանալի է, որ ունևոր մարդիկներին երբեք վիճակված չէ առաջ տանել մտքի պրոպագանդայի գործը, բայց այդ վիճակված է միշտ աղքատ մարդիկներին: Ես կվերջացնեմ իմ խոսքերը մի ցանկություն հայտնելով, որ թեև ձեզ կերևա զուցե անտեղի, բայց որ ես համարում եմ ճշմարիտ և արդար՝ ես ցանկանում եմ ձեզ, իմ բարեկամ, միշտ տանջվել, որ միշտ հասկանաք, ինքներդ զգաք հասարակության բարոյական ցավերը և նրա բարոյական տանջանքները»:

Բայց այս գեղեցիկ համերաշխությունը ընդհատվեց, երբ «Դրոներան» անցավ ուրիշ մարդկանց ձեռք, որոնք սկսեցին ատելություն քարոզել հայերի դեմ: Արժրունին ցավելով էր արձանագրում այս հանգամանքը «Մշակի» մեջ: Նա ինքը անփոփոխ մնաց իր համոզմունքի մեջ ազգերի փոխադարձ համերաշխության և եղբայրակցության վերաբերմամբ: Այդ լայն, հանրամարդկային գաղափարը Արժրունուն միայն վրացիներին չմոտեցրեց: «Մշակի» խմբագիրը չէր կարող մոռանալ, որ մեր երկրի ազգաբնակչության մի ահագին մասն էլ թուրքերն են կազմում: Թուրքերի վերաբերմամբ էլ նա ուներ իր համակրությունները, բարի կամեցողությունը:

1873 թվականի սկզբում Արժրունին բարձրացրեց ժողովրդի համար գլուխատնտեսական լրագրի հրատարակելու հարցը: Նա Կովկասյան գյուղատնտեսության ընկերության անդամ էր և առաջարկություն մտցրեց, որ ընկերությունը ձեռնամուխ լինի մի այդպիսի լրագրի հրատարակության: Իր պատաստած գրավոր զեկուցման մեջ Արժրունին ասում էր, որ գյուղատնտեսական լրագիրը, ժողովրդին բոլորովին մատչելի լինելու համար, պիտի խմբագրվի տեղական լեզուներով: Այս լեզուներից նա առաջիմ մատնացուցց էր անում երկուսը՝ հայերենը և վրացերենը: Յանկալի էր և թուրքերին լեզուն մտցնել լրագրի մեջ, բայց դժբախտաբար, այդ լեզուներով հրատարակվող մասնավոր պարբերական թերթեր չկան և հայտնի չէ՝ ունի՞ թուրքերենը այնքան հարստու-

թյուն, որ հայերենի կամ վրացերենի նման կարողանա մի գիտական-ժողովրդական լրագրի լեզու դառնալ:

Գյուղատնտեսական ընկերությունը չկարողացաւ իրագործել Արծրունու այս առաջարկությունը միջոցների պակասության պատճառով: Բայց ընդունելով տեղական լեզուների կարևորությունը՝ գյուղատնտեսական գիտելիքներ տարածելու մեջ, որոշեց հրատարակել գյուղատնտեսական թերթը միայն վրացերեն լեզուով: Այն ժամանակ Արծրունին հայտնեց «Մշակի» մեջ, որ ինքը կաշխատե լրացնել Գյուղատնտեսական ընկերության թողած պակասը՝ տպագրելով իր լրագրի մեջ այնպիսի հոդվածներ, որոնք կձանձրացնեն հայ ընթերցողին գյուղատնտեսության դանազան հյուղերի հետ: Եվ իրավ, «Մշակը» իր գոյություն ընթացքում առանձին ուշադրություն էր դարձնում գյուղատնտեսության վրա: Նա տալիս էր բազմաթիվ գրվածքներ ոչ միայն գյուղատնտեսական ընդհանուր գիտելիքների մասին, այլ և մասնավորապես գյուղական տնտեսության դանազան հյուղերի մասին: Այսպես, 1874 թվականին մենք տեսնում ենք մի շարք մասնագիտական հոդվածներ, որոնք, ըստ երևույթին, տեղ չպիտի ունենային մի գրական-հասարակական լրագրի մեջ: Հայերեն գյուղատնտեսական մի թերթի պարտավորությունները «Մշակը» կատարում էր երկար տարիների ընթացքում և Արծրունին մինչև վերջը համարում էր այդ հյուղը իր լրագրի կարևոր բաժիններից մեկը:

Իսկ զեկուցումը կարգալուց մի քանի ամիս հետո Արծրունին լսում է, որ Բաքվում մտադրություն կա մի թուրքերեն լրագիր հիմնելու: Եվ ահա ինչ է գրում նա «Մշակի» մեջ.

«Մենք լսում ենք, որ թուրք երիտասարդ Հասան-բեկ Մելիքովը, որ գիտավորություն ունի հրատարակել մի թուրքաց լրագիր Բաքու քաղաքում, արդեն ներկայացրած է խնդիրքը: Անհամբերությամբ սպասում ենք նոր թերթի առաջին համարը: Կովկասյան ազգաբնակչության մեջ թուրքերը այն մասն էին կազմում մինչև այժմ, որք միշտ ետ էին մնում ընդհանուր շարժումից, չէին մասնակցում մեր ձգտումներին: Հույս ունենք, որ մեր թուրք եղբայրները հասկացան այժմ որքան վնասակար է երկրի բնակիչները լինելով, իրանց օտար համարել երկրի մեջ: Հույս ունենք, որ հայոց և վրաց լրագիրները ոչ թե միայն խոսքով, բայց և գործով կօգնեն նոր թուրքաց թերթին (№ 25, 1873):»

Դա թուրքերեն առաջին լրագիրն էր, «Աքինչի» անունով: Մինչև թուրքական ստանալը, թուրքերեն տառեր պատրաստելը անցավ երկու տարի եվ այդ ժամանակամիջոցում Արծրունին մի քանի անգամ առիթ ունեցավ իր համակրանքներն ու բարի ցանկությունները հայտնելու թուրքերեն լրագրի առիթով, այնպես որ խմբագիր Հասան-բեկ Մելիքովը 1875 թվին «Մշակի» մեջ մի նամակ տպեց, որով իր շնորհակալությունն էր հայտնում Արծրունուն և ասում էր, թե «Աքինչին» եղբայրարար ձեռք է մեկնում թե՛ «Մշակին» և թե՛ մյուս լրագիրներին: Ահա ինչ հրաշքներ էր սկսել ցույց տալ մեր բազմապեղ երազմալեզու երկրում հանրամարդկային եղբայրակցության գաղափարով տողորված խաղաղ քաղաքակրթական շարժումը: Որքա՞ն գեղեցիկ տեսարան մի երկրի համար, ուր դարերով ազգերն ու լեզուները ապրել էին փոխադարձ կատաղի ատելություն, արյունահեղ թշնամություն մեջ: Նրանց այժմ միացնում էր ընդհանուր շահը՝ առաջադիմությունը քաղաքակրթության շավղի վրա: Այս այժմ այդ եղբայրական համերաշխությունը երեք ազգերի երիտասարդության րերանով էր քարոզվում և միայն լրագրության մեջ էր արձագանք գտնում: Դա մի սերմ էր դեռ, բայց դրված ամենից վստահելի, ամենից պտղատու հողի մեջ: Մնում էր ցանկալ, որ ժիր, արթուն ու եռանդոտ մշակներ շպակասեն՝ այլ

սերմը պահելու, խնամելու և աճեցնելու համար: Գծախտարար, մեր երկիրը այդպիսի մշակներ շատ չունեցավ:

Այդ սրտաշարժ համերաշխությունը չէ՞ր ցույց տալիս արդյոք, թե որքա՞ն լավ էր հասկացել Գրիգոր Արծրունին առաջադիմության էությունը: Պահանջելով անհատի ազատ զարգացում, համարելով ազգերը նույնպիսի անհատներ մարդկության ընդհանուր ընտանիքի մեջ, պահանջելով, որ այդ ազգ-անհատները չզրկվեն առանձնապես զարգանալու, իրանց առանձնահատկություններով ապրելու և առաջադիմելու իրավունքից, նա տեսնում էր, որ այդ գաղափարը արդեն իր պտուղներն էր ցույց տալիս կյանքի մեջ. ազգերի ասպարեկից վերանում էին նախապաշարմունքները, ցեղային ատելությունները և դրանց տեղ հաստատվում էր փոխադարձ հարգանք, համերաշխություն: Հասկանալի էր գառնում, որ յուրաքանչյուր ազգի համար բավական տեղ կա մեր աշխարհում՝ աշխատելու, երջանիկ լինելու համար:

Անհատական զարգացման նույն սկզբունքը ցույց էր տալիս Արծրունուն և մեր մոռացված գավառները: Հասարակության հավաքական մասնիկներ կազմող այդ գավառները նույնպես պիտի ինքնուրույնաբար զարգանային: Եվ այդ ինքնուրույնությունը Արծրունին պահանջում էր, ապացուցանելով, որ գավառներում էլ պիտի սկսվի և զարգանա լրագրությունը:

Լուր կար, որ Բաքվում հիմնվում է մի նոր հայերեն լրագիր, իսկ Վանում ուղում են վերանորոգել «Արծիվ Վասպուրականի» ամսագրի հրատարակությունը: Այս առիթով Արծրունին այսպիսի խորհրդածություններ էր անում: Հայ լրագրությունը սկսվեց հայկական հեռավոր գաղթավայրերում. մի ժամանակ հնարավոր և հասկանալի էր, որ Վենետիկում կամ Մոսկվայում հրատարակվեն այն պարբերականները, որոնք պիտի առաջնորդեին հայ ժողովուրդը: Այդքան հեռավոր տեղերից հայ խմբագիրները չէին կարող ուսումնասիրել հայկական կյանքը, նրանք միայն կարող էին քարոզել: Այժմ հայ լրագիրները հրատարակվում են արդեն հայրենիքի շատ մոտիկ գաղթավայրերում՝ Քիֆլիսում և Կ. Պոլսում: Բայց դա վերջնական նպատակ չէ. իր իսկական կոչումը հայ լրագրությունը կարող է կատարել ժողովրդի մեջ, բուն հայրենիքում: Բայց դա առայժմ անկարելի է: Մնում է, որ մեր գավառներում հիմնվեն տեղական լրագիրներ, որոնք նյութ կտան Քիֆլիսի և Կ. Պոլսի լրագիրներին: Այդ տեղական թերթերը հում նյութ մատակարարողներ կլինեն. նրանք կներկայացնեն իրանց գավառների հարցերն ու կարիքները, իսկ կենտրոնական քաղաքների լրագրությունը կմշակե այդ նյութերը:

Պետք է առենք, որ Արծրունին չէր էլ ընդունում թե առհասարակ լրագիրը պիտի մշակե նյութերը, մանրամասն, խնամքով կատարված ուսումնասիրություններ տա: Այդ պաշտոնն արդեն պետք է թողնել ամսագրին: Ամսագրի վերաբերմամբ Արծրունին պահանջում էր, որ նա չլինի պատահական անկապ հոդվածների մի ժողովածու, այլ որոշ ուղղությամբ ու ծրագրով հրատարակվող մի պարբերական օրգան, որ հավաքում, դասավորում է լրագիրների տված նյութերը, լուսարանում է նրանց: Հայերի մեջ իսկական ամսագիր, այս բառի կիրառական նշանակությամբ, դեռ չէր եղել¹:

Հանդիսանալով մեր դորձերի, գործիչների, հին ու նոր սերունդների, հիմնարկությունների քննադատ, նրանց պակասությունները խարաղանող ու մեր-

¹ Գրիգոր Արծրունու փայտաշած մտքերից մեկն էր՝ հրատարակել «Մշակի» հետ և մի ամսագիր: Այս ցանկությունը նա հաճախ հայտնում էր մասնավոր իր կյանքի վերջին տարիներում: Բայց նա չկարողացավ այդ գիտավորությունը իրագործելու փորձեր էլ անել:

կացնող, Արծրունին, քնականաբար, չէր կարող աչքից գցել մեր ազգային հին և կարևոր հիմնարկությունը՝ եկեղեցին, և «Մշակի» երկրորդ տարվանից առանձին ուշադրություն է դարձնում եկեղեցու և եկեղեցականների վրա: Ինքնաբերական պարզ է, որ Արծրունու պես մի մարդը չէր կառուցում մեր եկեղեցու ներկա դրությունը: Այդ բանը բավական էր, որ նրա հակառակորդները աղմուկ բարձրացնեին, թե նա եկեղեցու թշնամին է, ուղում է քանդել ոչնչացնել եկեղեցին, անհավատություն տարածել և այլն: Բայց այս աղմուկը մի նոր բան չէր մեղանում: Տարիներ առաջ նույն աղմուկը բարձրացրած էր Ստեփանոս Նազարյանցի դեմ այն պատճառով, որ նա կամենում էր տեսնել իր մայրենի եկեղեցին բարեկարգված, ժամանակի պահանջներին համապատասխանող, ուրեմն և մի ուժեղ հաստատություն:

Արծրունին, լինելով Նազարյանցի կրոնական համոզմունքների կողմից, Նազարյանցի պես մեծ կարևորություն էր տալիս հայոց եկեղեցուն, համոզված էր, որ եկեղեցին մեզ պես մի ազգի համար չէ կարող իր դերը վերջացրած համարել: Ամբողջ հարցը նրա մեջ էր, թե եկեղեցին որքան պատրաստված կլինի իրեն դաստիարակող, հովվող հիմնարկություն, որքան կարող կլինի հայ ժողովրդի հոգևոր պահանջներին բավականություն տալու: Նազարյանցի պես Արծրունին էլ ոչինչ մխիթարական բան չէր տեսնում մեր եկեղեցու վարչական կազմակերպության մեջ, և նա էլ պահանջում էր հիմնավոր վերանորոգումներ: Բայց Նազարյանցը վերանորոգումների որոշ, մանրամասն ծրագիր չէր առաջարկում. նա միայն ցույց էր տալիս անհրաժեշտությունը, ընդհանուր սկզբունքները, պախարակելով եկեղեցականների անշարժությունը, ծիսականության տիրապետությունը և ոգու բացակայությունը: Այնինչ Գրիգոր Արծրունին հենց սկզբից որոշակի է դնում իր պահանջները, անվանադիր հիշատակում է, թե ինչեր պետք է փոփոխել:

Կարևոր է, որ մենք փոքր ինչ մանրամասն կերպով ծանոթանանք այս հարցի հետ, քանի որ Գրիգոր Արծրունու գործունեության մեջ շատ նշանավոր տեղ է բռնում եկեղեցին, քանի որ այդ հաստատության շուրջն էր, որ նա մղել է իր ամենախիստ պատերազմները և վաստակել է թշնամիների բանակներ:

Իր այն հոգվածներում, որոնք տպվեցան «Հայկական աշխարհի» մեջ և «Մշակի» առաջին տարվա մեջ, Արծրունին շատ անգամ շեշտել է, որ ժամանակակից քաղաքակրթությունը քրիստոնեության արգասիքն է, որ քրիստոնեական վարդապետությունը հիմնված է մարդկային այն ամենամիտքական, ամենաբարձր գաղափարների վրա, որոնք են ազատություն, հավասարություն և եղբայրություն: Բայց միևնույն ժամանակ Արծրունին հասկացնել էր տալիս, որ ինքը քրիստոնեությունը չէ շփոթում աստվածաբանության հետ: Այլ է քրիստոնեությունը, այլ է աստվածաբանությունը: Եկեղեցին, ահ համաշխարհային պատմության մեջ ապացուցված տարրական ճշմարտություն է, այն չէ, ինչ էր այն ժամանակ, երբ աստվածաբանությունը չկար, երբ առաջին դարերի քրիստոնյաները, պարզ ու համահավասար մարդիկ, աշխատում էին իրագործել Ավետարանի վարդապետությունները: Եկեղեցին ընկավ փառքի, իշխանության, տիրապետության ետևից և հեռացավ առաջին դարերի քրիստոնեությունից. փառքի, զարդերի, տիրապետության ներկայացուցիչ հոգևորականության բոլոր ձգտումների և իդեալների խտացումը պապականությունն է, որ 1870 թվականին սեփականացրեց իրան նույնիսկ մի այնպիսի հատկություն, որից զուրկ է մարդը՝ անսխալականությունը:

Այստեղից արդեն պարզ է, թե ինչ վերաբերմունք պիտի ունենար Արծրունին դեպի եկեղեցին: Բայց մինչև 1873 թվականը նա դուրս չէ դալիս այս

ընդհանուր դատողությունների շրջանից: Մինչև 1873 թվականը նա իր դեմ ունեւր հին սերունդը, «սպառնալից երիտասարդությունը», բայց եկեղեցականությունը դեռ առիթ չունեւր նրա հակառակորդը լինելու: Էջմիածնի «Արարատը» 1872 թվականին գտնում էր, որ «Մշակի» «ցարդ հրատարակյալ մի բանի թերթից պարունակությունը կապացուցանեն, որ օգտավետ և արդյունավոր կարող է լինել Ազգիս համար»: Բայց ահա «Մշակի» մեջ Արծրունին տպում է «Հոգևորականություն և ժողովուրդ» առաջնորդողը (№ 9): Այդտեղ նա նորից կրկնում է, որ եկեղեցին շատ է հեռացել առաջին դարերի քրիստոնեությունից, որ անբնական կուսակրոնությունը հետո է մտցվել նրա մեջ: Գիմելով հատկապես հայոց եկեղեցուն, նա հայտնում էր, որ այդ եկեղեցին էլ բացառություն չէ կազմում, որ նա շեղվել է իր նախնական դրությունից:

«Մի՞թե նա (եկեղեցին) նույն է, որ Լուսավորչի ժամանակն էր, — հարցնում է Արծրունին: — Մի՞թե մեր այժմյան հոգևորականները նույն խորին հարգանք և պատիվ ունեն ժողովրդի մեջ, ինչպես հինգերորդ դարի հայ հոգևորականները, որք սուաջնորդում էին իրանց հզոր ձեռքով ժողովրդական շարժմանը Զրադաշտի հետևողների դեմ... Մի՞թե նրանք ժողովրդական են, ինչպես առաջ...»

Թնությունը համեմատ ընտանեկան կյանքից հետո, ժողովրդական փողերը վատնող, խռովություն գցող, ինտրիգներ վարող, փառքի պատվանշաններին հետևող, անգործ, անշարժ, տգետ, մոլեռանդ, ժամանակակից գիտությունից և ճշմարտությունից հտ մնացող, ժողովրդական կրթությունը խոսքով քարոզող, բայց գործով նրա զարգացմանը արգելող, ամեն նորություն և լուսավորության ընդդիմադրող մարդիկ... Սրանք են ժողովրդական հոգևորականների մեծ մասը...

Եվ զարմանալի չէ, որ քանի գնում է, հայոց եկեղեցու ծոցից, Սուրբ Լուսավորչի ջանքերով մաքուր հիմնած, բայց մեր արեղաներով և քահանաներով սկզբնական մաքրությունը չպահպանված եկեղեցուց, անդադար անջատվում են և թշնամանում են մեր եղբայրները՝ մինը բողոքական է դառնում, մյուսը՝ կաթոլիկ:

Միմոնականությունը, սրբավաճառությունը, կաշառակերությունը այնքան դարգացած են, այնքան բացարձակ կերպով են գործադրվում, որ ժողովուրդը վաղուց հեռացած կլինեւր եկեղեցուց, եթե այնքան պինդ կապված չլինեւր նրա անցյալի հետ, եթե նա պաշտելիս չլինեւր Լուսավորչի հիմնած եկեղեցին:

«Աստված տա, որ ժողովուրդը այնքան դարգանա, որ հասկանալով ձեր անիրավությունները ու հարստահարությունները, մեղադրի միայն ձեզ, պաշտոնյաներին, բայց ոչ թե իսկույն անջատվի, գնա բողոքական կամ կաթոլիկ դառնա, վրեժխնդիր լինելով ձեր ճնշող վարմունքից... որ լուսավորվելով, սովորի զանազանել սկիզբը գործադրությունից, սովորի պաշտել մեր եկեղեցու մաքուր հիմքը հոգևորականների անմաքուր վարմունքից...»

Այն ժամանակ զգույշ լինեւր... դուք կկորցնեւր ձեր ժողովրդականությունը: Եվ այն ժամանակ ժողովուրդը զարգանալով և ոգով հայ մնալով, չի ընդունի բողոքականություն, կաթոլիկություն, կամ այլ կրոնք, — ոչ, նա կհանդիսանա սլաշտպան Լուսավորչի եկեղեցու մաքուր և սկզբնական դադափարի, ընդդեմ նրա անարժան ժամանակակից պաշտոնյաների»:

Սա՛ առաջին հարվածն էր: Ինչպես միշտ, չհասկացան, թե ինչ է այդ հարվածի միտքը. ինչպես միշտ, հոգևորականությունը սկսեց բացատրել

* «Մշակ», 1872, № 1:

այս պարզ, հանրամատչելի պահանջները այն մտքով, թե Արծրունին անպատվում է մեր եկեղեցին, ուզում է ոչնչացնել նրա հեղինակությունը, անջատել ժողովուրդը իր հոգևոր հովիվներից: «Մշակը» իր ուրիշ հազվածներում էլ պարզ ձևակերպեց իր պահանջները: Վերադառնանք, ասում էր նա, մեր եկեղեցու նախնական պարզ ձևին, վերակազմենք մեր եկեղեցին այնպես, ինչպես նա գոյություն ունի քրիստոնեության առաջին դարերում. թո՛ղ չլինի կուսակրոն հոգևորականություն, թո՛ղ եպիսկոպոսները, վարդապետները ամուսնացած մարդիկ լինեն, ինչպես ամուսնացած էին Գրիգոր Լուսավորիչը և նրա ժառանգները: Գլխավոր ուշադրությունը դարձնելով քահանաների վրա, «Մշակը» պահանջում էր, ինչպես տեսանք, որ քահանան լավ պատրաստված լինի ժողովուրդը առաջնորդելու, նրա ցավերն ու կարիքները ամոքելու համար: Աստվածաբան քահանաներ չեն մեզ հարկավոր, այլ կրթված, ժողովրդից իրանց գիտությունը բարձր կանգնած հովիվներ: Հեռացնենք կղերականության ոգին, թո՛ղ մեր եկեղեցում միայն մի բան լինի հիմք, խարիսխ՝ ժողովրդակա- նություն: Մենք ցավում, արտասվում ենք, որ օտար քարոզիչները, միսիոնար- ները գալիս են, հանում հային իր եկեղեցու ծոցից: Բայց ցավելով, արտաս- վելով ի՞նչ դուրս կգա: Կազմակերպվենք և մենք. պրոպագանդային հակա- գրենք պրոպագանդա. օտար միսիոնարների դեմ հանենք մեր միսիոնարներին, որոնք քարոզեն, թույլ շտան կրոնափոխություն:

Մանրակշիռ, կարևոր հարցեր էին սրանք, կարոտ ամենալուրջ ուշադրու- թյան: Կարելի չէր պահանջել, որ եկեղեցականները և նրանց կուսակիցները անպատճառ համաձայն լինեին Արծրունու հետ այս հարցերի մեջ. բայց պա- հանջվում էր, որ այդ առաջարկությունները գոնե քննվեն լրջությամբ, որ հակառակորդները իրանց ծրագիրները առաջարկեն՝ գոյություն ունեցող և ամենքի համար անուրանալի պակասությունները վերացնելու համար: Այդ տեսակ վերաբերմունք տեղի չունեցավ. դրա փոխարեն լավեց էլի նույն հին կրգը. առաջ քաշվեց աստվածաբանությունը, բայց ավելի կարևոր համարվեց բարձրացնել վախասուն եկեղեցին քանդողների, օտարություն մտցնողների դեմ: «Արարատը» 1874-ին արդեն կիսատ-պոստ ակնարկներով խոսում էր օտարներին վաճառված մարդկանց մասին, հասկացնում էր, որ հարազատ հայը չէ կարող և չպիտի խոսե իր եկեղեցու պակասությունների մասին:

«Մեղուի» համար հո երկնքից իջած մանանա էր «Մշակի» բռնած այս ուղղությունը: Այժմ հո կարելի էր ապացուցանել, որ վերանորոգություններ պահանջող «Մշակը» եկեղեցու, ուրեմն և ազգության հիմքերը փորող մի թշնամի է: Եվ այդպես անողը այնիսկ «Մեղուն» էր, որ խոսել էր ծխում Ստե- փանոս նազարյանցի առջև, որ «Հյուսիսափայլի» ամենամոտիկ բարեկամն էր ձեռնում: Նրա համար ոչինչ նշանակություն չունի, որ «Մշակը» կրկնում էր «Հյուսիսափայլի» պահանջները. հարկավոր էր հակառակության նյութ, և «Մեղուն» ջուխտ ձեռքով գրկեց եկեղեցու բարեփոխության հարցը, որպեսզի ցույց տա, թե ինքն է հարազատ հայ, իսկ իր հակառակորդը օտարացած է կոսմոպոլիտ է, ֆարմասոն է և այլն: «Մեղուն» մտավ այն դերի մեջ, որ ինքն էր իր ձեռքով դատապարտել վախճանական թվականներին: Մեր ներկա գործի առաջին հատորում մենք ցույց տվինք, թե ինչպես լավ էր «Մեղուն» նկարա- գրել այդ ժամանակ իր ապագա կերպարանքը:

Չենք կարող այստեղ հետևել այն բանակովին, որ ծագեց «Մշակի» հա- րուցած այս հարցերի առիթով: Մենք դեռ ապագայում էլ շատ պիտի տեսնենք այսպիսի բանակոխվածներ: Արձանագրենք այստեղ այն փաստը, որ «Մշակի» երկրորդ տարեշրջանից մեր հոգևորականությունն էլ կանգնած է նրա թշնամի-

ների շարքում և տեսնենք, թե սկզբունքի ուրիշ ինչ հարցեր էր դնում Արծրու- նին եկեղեցու վերաբերմամբ:

Հոգևորականների սովորությունն է ասել, թե իրանք են կազմում եկեղե- ցին, թե իրանք են պահում-պահպանում եկեղեցին: Դա մեծ սխալ է. եկեղե- ցին կազմում են ժողովուրդը և հոգևորականները: Մի ժամանակ, օրինակ, հինգերորդ դարում, հոգևորականներն էին առաջնորդում աշխարհականներին, որովհետև նրանք աշխարհականներից շատ էին դարգացած: Այժմ այդպես չէ: Այժմ գիտությունը, կրթությունը աշխարհականների ձեռքին է, և հոգևորակա- նությունը առանց աշխարհականների ոչինչ չէ կարող անել: Եկեղեցու պաշ- տոնյաները չեն կարող մնալ առանց ուսման, առանց գիտության, իսկ այդ բանը նրանց կարող է տալ միայն աշխարհական դասը. հետևաբար, ինչպես և կարող հոգևորականները եկեղեցու պաշտպան հանդիսանալ, միայն իրանց սեփականացնել եկեղեցին պաշտպանելու իրավունքը՝ առանց աշխարհական- ների օգնություն: Հարկավոր է, ուրեմն, սերտ կապակցություն այդ երկու տար- րերի մեջ, հարկավոր է հասկանալ, որ հոգևորականը առանց աշխարհականի ոչինչ է:

Կան բթամիտներ, որոնք մեղադրում են, թե «Մշակը» հոգևորականության թշնամի է,— ասում է Արծրունին և շարունակում է.

«Այո՛, մենք թշնամի ենք տգիտության, ուրեմն և հոգևորականության տգետ ներկայացուցիչների:

Մենք թշնամի ենք հարստահարության, ուրեմն և այն հոգևորականների, որոնց մեջ նշմարում ենք այդ հակաընկերական և հակաքրիստոնեական հատ- կությունը...

Բայց կարո՞ղ ենք մենք արդյոք թշնամի լինել նոցա, որք իրանց պաշ- տոնը կատարում են ճշտությամբ, որք հասկացել են իրանց կոչումը, որք ար- ժանի են այդ կոչման:

Իհարկե, ո՞չ:

Այժմ հարցնում եք՝ ի՞նչ ենք պահանջում հոգևորականությունից:

Նախ պահանջում ենք, որ նա թե մտավորապես, թե բարոյապես բարձր լինի մնացած հասարակությունից, եթե ոչ՝ նրա գոյությունը հասարակության մեջ ոչինչ նշանակություն չունի, նա բոլորովին անօգուտ է: Եթե ես ոչխար եմ, իսկ դուք իմ հովիվ, պետք է այնքան բարձր լինեք ինձանից՝ թե՛ ձեր բարո- յականությամբ, թե՛ ձեր ուսումով, որ ես կամա ակամա ենթարկվեմ, խո- նարհվեմ ձեր առջև: Ես ժողովրդի մարդ լինելով, պետք է ձեր բարոյականու- թյունից օրինակ առնեմ, ձեր քարոզներից մտավորապես շահվեմ: Եթե ոչ, ի՞նչ դուրս կգա...

Դուրս կգա, որ վարժապետը ավելի տգետ է, քան թե աշակերտը... Իհար- կե, աշակերտն էլ նորանից ոչինչ սովորել չէ կարող:

Չարմանալին այն է, որ այդքան պարզ, այդքան հասկանալի, տարրական պահանջը վիճելի էր համարվում և այժմ էլ համարվում է, երբ խոսքը մեր հոգևորականության է գալիս: Արծրունին իբրև մի նմուշ վերցնում էր էջմիած- նի «Արարատը»:

«Ով չէ հավատում մեզ, որ մեր հոգևորականությունը հայերեն, այսինքն կենդանի, կանոնավոր աշխարհաբար շգիտե, որի միջոցով միայն կարելի է այժմ խոսել և հասկացնել իր մտքերը, թե՛ լրագրի, թե՛ ուսումնարանի, թե՛ բարոզի մեջ, թող վեր առնի «Արարատ» ամսագրի, մեր հոգևորականության այդ օրգանի մի համար, և կտեսնե, թե ինչ խայտառակ լեզուով է գրվում այդ ամսագիրը՝ ո՞չ գրաբար, ո՞չ աշխարհաբար, ամեն տեղ ոչ թե միայն հայոց

լեզուի ոգու, բայց և ընդհանուր մարդկային առողջ դատողության դեմ լեզուի լողիկական սխալներ:

Իսկ հմտությունները թե՛ աստվածաբանական, թե՛ բնագիտական, թե՛ աշխարհագրական, թե՛ պատմական, աստված ազատե:

Եվ սրա՞նք պետք է մեզ բան սովորեցնենք:

Հարցը այնքան պարզ է, որ ամեն մեկը միայն բացասական պատասխան կարող էր տալ: Բայց հոգևորականներն ու նրանց կուսակիցները երկար ու բարակ մտածելիք չունենին. կար պատրաստ պատասխանը, և դա այն էր, որ «Մշակը» եկեղեցու երդվյալ թշնամին է: Եվ երբ այդպես էր այս պարզ ու անպաճույճ հարցի մեջ, հասկանալի է, թե ինչ կլինեին այն դեպքերում, երբ «Մշակը» ցնցող, արմատական պահանջներ էր դնում: Այդպիսի պահանջներից հիշենք ժամասացության լեզուի հարցը: Արժրունին ասում էր, որ ժողովուրդը եկեղեցում ոչինչ չէ հասկանում, որովհետև ժամասացության գրաբար լեզուն նրան միանգամայն անմատչելի է: Նա պահանջում էր, որ եկեղեցական գրքերը աշխարհաբարի թարգմանվեն: Եվ ամենից առաջ թարգմանել հարկավոր էր ս. Գիրքը: Այս պահանջը շատ վաղուց, դեռ 1850-ական թվականների սկզբում գրել էր Ստեփանոս Նազարյանցը: Բայց այժմ էլ, 20—25 տարուց հետո էլ, այդ պահանջը անհասկանալի, անգործադրելի էր համարվում հոգևորականների կողմից, և Գրիգոր Արժրունին ստիպված էր հոգվածների մի շարք նվիրել այդ հարցին, նույնիսկ թարգմանել կտորներ ս. Գրքից՝ ապացուցանելու համար, թե թարգմանել կարելի է և հեշտ է:

Խոսելով կրոնի և եկեղեցու մասին, Արժրունին չէր կարող առանց ուշադրության թողնել և մի մեծ հարց, որ գոյություն ունեւ մեզանում վաղուց: Դա կրոնի և ազգության հարցն էր: Մեզանում, ինչպես հայտնի է, կորել էր ազգության ճշմարիտ միտքը, նա դարձել էր կրոնի կամ եկեղեցու հասկացողություն: Հայր նա էր, ով պատկանում էր լուսավորչական եկեղեցուն. հեռանալ այդ եկեղեցուց, նշանակում էր հեռանալ հայությունից:

Գրիգոր Արժրունուց առաջ շատերն էին աշխատել ցույց տալու, որ կրոն և ազգություն տարբեր բաներ են: Ստեփանոս Նազարյանցի կենսագրության մեջ մենք դրինք այդ նոր շարժման պատմությունը: Շարժումը սկսվեց Կ. Պոլսում, իսկ ուստահայերի մեջ Նազարյանցը առաջինն էր, որ սկսեց քարոզել, թե լուսավորչական եկեղեցուց դուրս էլ հայը շարունակում է հայ մնալ: Արժրունին նույն այդ հարցին դիմեց «Մշակի» հրատարակության երկրորդ տարին (№ 24): Նա էլ, իհարկե, կրկնեց այն, ինչ ասել էին մեր լավագույն գործիչները: Բայց այստեղ մենք կրավականանաք լոկ այս իրողությունը հիշատակելով: Մենք շուտով կտեսնենք, որ Արժրունուն վիճակված էր այս հարցի առիթով մի երկարատև, ահագին կռիվ սկսել: 1873-ի այս առաջնորդողը այդ մեծ պայքարի առաջաբանն էր:

Այո՛, այսպիսի հարցերը մեզանում մեղք, սրբապղծություն էին հրատարակվում: Անմիտ հակառակությունը ուրանում էր ամեն մի, նույնիսկ համատարած ճշմարտություն: Եվ Գրիգոր Արժրունին իր տեսություններից մեկի մեջ (№ 1, 1875) ասում էր.

«Մենք սկսեցինք հրատարակել մեր թերթը, սկսեցինք ամենքին մեր կարծիքն ուղիղ երեսին ասել... հին ու նոր սերունդ, հոգևորականներ, կանայք, մանկավարժներ, գյուղացիներ, ամենքը, որք անցան մեր գրչի տակով, մի՞թե սպասում էին, որ մենք լրագիր ենք սկսում հրատարակել այն նպաստակով, որ շողոփոքենք...»

Մեր այդ բոլոր հասարակական տարրերից երեք ամենատուժող, ամենապահանջար տարրեր մեզ առելով առեցին, դարձան մեր անհաշտ թշնամիներ... Հին սերունդ՝ բարոյականության ներկայացուցիչ:

Նոր սերունդ, ուսումնական երիտասարդություն՝ գիտության ներկայացուցիչ:

Հոգևորականներ՝ կրոնի ներկայացուցիչներ:

Այդ երեք, մեր հասարակության մեջ ամենանշանավոր, ամենամեծ հեղինակություն ունեցող գործիչները ինչպե՞ս վարվեցին մեզ հետ...

Առաջինը սկսեց բիրանացի անեծքներ թափել մեր գլխին:

Երկրորդը, որ առաջ երբեք չէր մտածում կարգալու, գրելու և մտավորապես պարապելու, կազմեց մեզ դեմ մի հակալրագիր, մեր ամեն շարժմունք, ամեն մեկ խոսք լրտեսելու և ազավազած կերպով ներկայացնելու համար:

Երրորդները փորձեցին հանդես դուրս գալ, ինչպես նրանց սովորությանը վայել է, մասամբ գրականության մեջ, մասամբ զանազան այլ զաղտնի միջոցներով...

Արդյոք վախեցա՞ք, արդյոք կատաղեցի՞ք, արդյոք վրդովվեցա՞ք...

Չգիտենք, բայց գիտենք թե սաստիկ առեցիք երեքդ էլ...

Այդ գիտենք, տեսնում ենք և զգում...

Ի՞նչ էր պատճառը:

Արդյոք ձեզ կատաղեցրե՞ց մտքերի նորությունը, խոսքերի նշմարտությունը կամ գաղափարների ազատությունը...»:

Երեք պատճառներն էլ, իհարկե, կային: Այնքան առատ ու անողորմ էին այդ պատճառները, որ երեք տարվա ընթացքում Արժրունին արդեն տեսնում էր և զգում սաստիկ առեցիկություն իր դեմ: Դեմ էր հայոց ամբողջ մամուլը, դեմ էր ինտելիգենցիայի մեծ մասը: «Մշակը» մենակ էր, հայերի մեջ զինակից չունեւ: Այդ մենակությունը հարկադրում էր Արժրունուն հուսահատական մտքեր հայտնել: Այսպես, նա ասում էր, թե հայ երիտասարդները սխալվեցան, որ գնացին Եվրոպա գիտություն սովորելու: Նրանք նախ պետք է գնային արհեստներ սովորելու, որպեսզի վերադառնալով Եվրոպայից, սկսեին կամացկամաց պատրաստել հասարակությունը: Ուսում առած, գիտնական երիտասարդներ չէին հարկավոր մեզ, այլ նախ և առաջ՝ կոշկակարներ և այլ արհեստավորներ: Մենք ոչինչ չկարողացանք սովորեցնել, բացականչում էր Արժրունին. մեր գրվածքները ոչինչ չփոփոխեցին մեր կյանքի մեջ. այսպիսի հասարակության վրա մենք հույս չունենեք:

Բայց այդ խոսքերը մենակ մարտնչողի մաղձոտ տրամադրությունն են ցույց տալիս. Արժրունին չէր վախենում իր մենակությունից, նա հայտնում էր, որ մինչև վերջին շունչը պիտի հրատարակե իր լրագիրը, պիտի գրե անդադարի և թե ժամանակակից հասարակությունը ոչինչ հույս չէ ներշնչում, նա իր հույսը գրել է ապագա սերունդի վրա:

Մենք, սակայն, պետք է ասենք, որ հասարակությունը լսում էր նրան, ուշադրությամբ էր լսում: «Մշակը» կարդացվում էր. նա հարկավոր էր ամենքին, հարկավոր էր մանավանդ նրա թշնամիներին: Չէ՞ որ կովկասյան հայոց մամուլի մեջ հատկապես նրանով և նրա համար էր ապրում մի հակալրագիր: Այդ անունը Արժրունին տալիս էր «Մեղուին»: 1872 թվականին, երբ հակառակությունից ծնվեց այդ լրագիրը, մենք տեսանք մի թունդ բանակով: Երկրորդ տարվա առաջին կեսում Արժրունին շատ քիչ էր ուշադրություն դարձնում հակալրագրի վրա, որի պաշտոնն էր «լրտեսել» իր յուրաքանչյուր շարվածքը, յուրաքանչյուր քայլը և ներկայացնել ազավազած կերպով: Ընդհարումները

մի-մի տեղի էին ունենում ֆելիետոնների և գավառական թղթակցութիւնների մեջ: Բայց ամառվանից էլի բորբոքվեց բանակախիւր: Եվ պատճառը ներսիսյան դպրոցն էր. այդտեղ Արծրունին հոգաբարձու էր, իսկ Պետրոս Սիմոնյանցը՝ տեսչի պաշտոնակատար:

Ներսիսյան դպրոցի այն հոգաբարձութիւնը, որ ընտրվեց 1872 թ. և որի մեջ էր և Գրիգոր Արծրունին, իր պաշտոնավարութեան սկզբից նախ տնտեսական հարցերին նվիրեց իր ուշադրութիւնը: Ուսումնական մասը բարեկարգելու համար հոգաբարձութիւնը իր միջից հինգ հոգուց բաղկացած մի մասնաժողով ընտրեց, որի առաջին գործը եղավ պատրաստական դասարան բաց անելը: Այդ դասարանի համար դանազան ծրագիրներ առաջարկվեցան, բայց լավագոյն ճանաչվեց «Մշակի» աշխատակից Վ. Շահվերդյանի առաջարկածը. ինքը Շահվերդյանն էլ ուսուցիչ հրավիրվեց. նրա «Նկատողական ուսումն» գիրքը հրատարակվեց դպրոցի ծախսով: «Մշակը» ուրախութեամբ էր արձանագրում այդ իրողութիւնները:

Հոգաբարձական մասնաժողովը, պատրաստականի հարցը լուծելուց հետո, պիտի անցներ բարձր դասարանների հարցին. բայց հայտնեց, որ չէ կարողանում շարունակել իր պարապմունքները, քանի որ դպրոցը շունի տեսուչ, որ տա մասնաժողովին հարկավոր նյութերն ու տեղեկութիւնները: Տեսչի պաշտոնակատարին մասնաժողովը անտես էր անում. միայն այսքանը բավական էր, որ Պետրոս Սիմոնյանցը հասկանար հոգաբարձութեան տրամադրութիւնը: Տեսչական հարցը դրված էր հոգաբարձական սեղանի վրա. բայց նա զեռ չէր լուծում: Սկսվեցին դպրոցի տարեկան քննութիւնները: «Մշակը» մի քանի անգամ շեշտեց, թե որքան անբավարար է ուսումնական մասը, կրօնի փոխարեն ավանդվում էր միջնադարյան սխոլաստիկա, մյուս առարկաների քննութեան մեջ ավելի ուսուցիչների գիտնականութիւնն էր երևում, քան աշակերտների պատրաստութիւնը:

«Մեղուն» չէր կարող լուռ մնալ. նա դարձյալ սկսեց իր արշավանքը կոսմոպոլիտների դեմ, իր ամբողջ ուժով ընկավ «Մշակի» վրա: Բանակախիւր բորբոքվեց դեռ ամառվանից, երբ հոգաբարձութիւնը դեռ որոշ չէր բռնել տեսչական հարցի մեջ: Հայտնի էր, որ հոգաբարձութեան անդամների մեծամասնութիւնը «Մշակի» մարդիկ են, ուստի պետք էր ցույց տալ, որ այդ կոսմոպոլիտները չեն կարող մի ազգային դպրոց կառավարել, որ նրանք ճշմարիտ հայեր չեն և այլն: Արծրունին էլ սկսեց մերկացնել «Մեղուի» դավանանքներին հեռու մարդկանց: Նա անխնա քննադատում էր նրանց աշխարհայեցողութիւնները, անընդունակութիւնը:

Սովորել են բառեր գործածել, բայց իրանք էլ չեն հասկանում իրանց գործածած բառերի միտքը: Կոսմոպոլիտ... Բայց ի՞նչ է կոսմոպոլիտը. մի՞թե նա իրավ այնքան սարսափելի բան է: Կոսմոպոլիտը ի նկատի ունի ամբողջ մարդկութեան բարիքը, բայց նա չէ կարող ծառայել ամբողջ մարդկութեանը, ուստի ծառայում է այն ազգին, որին ինքն է պատկանում, համոզված լինելով, որ դրանով նա ծառայում է մարդկութեանը: Ինչպե՞ս է կոսմոպոլիտը կատարում իր ծառայութիւնը: Նա գիտե, որ ազգերը չեն կարող զարգանալ, եթե կղզիանան իրանց մեջ, եթե չհասկանան փոխառութեան օրենքը: Չէ կարող լինել մի ազգ, որ իր մեջ ունենա բոլոր մտավոր պաշարները. յուրաքանչյուր ազգ մարդկութեան գանձարանի մեջ մտցնում է իր մի հարստութիւնը, այլ գանձարանից էլ ազգերը փոխ են առնում այն ամենը, ինչ հարկավոր է իրանց երջանկութեան համար: Քրիստոնեութիւնը աշխարհը փոխ առավ մի փոքրիկ Հրեաստանից: Մի ժամանակ Հունաստանն էր լուսավորութեան հայրենիքը:

այնտեղ էին դիմում հինգերորդ դարի հայերը, որպեսզի սովորեն, վերադառնան իրանց հայրենիքը և սովորածը տարածեն հայ ժողովրդի մեջ: Մի՞թե նրանք էլ այն կոսմոպոլիտներից էին, որոնցից այնքան վախենում է «Մեղուն»:

Իսկ եթե կան կոսմոպոլիտներ, որոնք ամենեկին չեն ճանաչում իրանց ազգը, չեն աշխատում նրա համար, այդ միայն ցույց է տալիս, որ նրանք անբարեխիղճ մարդիկ են: Եվ այդ երևույթը կարելի է նկատել ոչ միայն կոսմոպոլիտների մեջ: Մի՞թե բոլոր վարժապետները լավ են. մի՞թե միապետական կոչվողները մի գլուխ բռնավորներ են, կամ ազատամիտ կուսակցութեան պատկանողները մաքուր, ազնիվ մարդիկ են:

Դուք հարկավոր եք համարում պահպանել հայի վատ կողմերը, հայի պակասութիւնները միայն նրա համար, որ նրանք հայի պակասութիւններ են, — և ազադակ եք բարձրացնում, կոսմոպոլիտ եք կանչում նրանց, որք իրանց կարողութեան շափ օտարների նոր գաղափարները աշխատում են հայացնել...

Հիշեցեք մեր խոսքերը՝ մի տաս տարի չի անցկենա, և մեղուական խոսքը կզատնա մի ածական, որ կնշանակե խավարասեր և ետադեմ:

Այդ մարգարեութիւնը Արծրունին դուրս էր բերում այն առատ փաստերից, որ տալիս էին մեղուականները: Որտեղի՞ց եկան դրանք և ի՞նչ բերին իրանց հետ: Մի քան տարի առաջ, ասում է Արծրունին, հայ ժողովուրդը քնած էր, անշարժ, նա մոռանում էր իր մայրենի լեզուն, պահանջ չէր դրում կատարելագործվելու իբրև ազգ, հասկանալու իր շարն ու բարին: Այդ գրութիւնից սթափեցնելու համար գուցե հարկավոր էր մի ծայրահեղ ուղղութիւն, հարկավոր էր գուցե ոչ միայն ազգասիրութիւն, այլև ազգամոլութեան գաղափարը տարածել: Այդպես էլ արին այն մարդիկ, որոնք վերադարձան համալսարաններին: Ժողովրդին զարթեցնելու համար նրանք հայութեանից դուրս ոչինչ չէին տեսնում և ուղղակի քարոզում էին. «Լավ է հայ լինել և անկիրթ, քան թե լուսավորված մարդ և հայութիւնը կորցրած լինել»: Այդ գաղափարը գուցե և հարկավոր էր մի ժամանակ, բայց դա մի ուղղութիւն է, որ Արծրունին կնքում էր «տիրացուական» անունով: Տիրացուների կրթութեան դարը անցավ, ասում էր նա: Դուք այլևս չեք կարող ազդել հասարակութեան վրա, դուք այլևս չպիտի կրթեք նոր սերունդը ուսումնարանների մեջ:

Ազգամոլութեան արատներից մեկն էլ այն էր, որ կաղմում էր «Մեղուի» ուղղութեան գլխավոր հատկութիւնը: Մի համեմատութիւն դնելով «Մեղուի» և «Արարատի» մեջ, Արծրունին ասում էր, որ վերջինը, որքան էլ դատարկ լինի, որքան էլ արժանավորութիւններից զուրկ լինի, ունի այն առավելութիւնը, որ մի հայտնի գույնի, մի որոշ ուղղութեան է պատկանում: Կարելի է նրան չհամակրել, բայց չէ կարելի արհամարհել նրան, զգվել նրանից: Մինչդեռ «Մեղուն» ամեն երևույթի, ամեն հարցի վերաբերմամբ երկու տարբեր շափ ունի: Օտար երկրներում տեղի ունեցող երևույթների համար ուրիշ շափ կա նրա ձեռքին, մեր կյանքի համանման երևույթների համար՝ ուրիշ: Այն, ինչ վատ է, ատելի է, ետադեմական ու խավար է ուրիշ երկրներում, շատ հաճելի է դանում, երբ մեղանում է տեղի ունենում: Մի խոսքով՝ նա ազատամիտ է, երբ հարցը ուրիշ երկրներին է վերաբերվում և պահպանողական ու ետադեմ, երբ պետք է մեր մասին խոսել: Սա ոչ միայն «Մեղուի», այլև առհասարակ մեր պահպանողական ամբողջ մամուլի մի հարազատ պատկերն է:

Դուք, ասում է Արծրունին, սպանեցիք հայ լրագրութիւնը ձեր անընդունակութեամբ: Դուք այն դրութեան հասցրիք տպագրական խոսքի վիճակը, որ ոչ ոք նրան չէր հավատում, ոչ ոք չէր ուզում նայել նրան: Ձեր լրագրութիւնը

այլմ էլ արժանի չէ իր կոչմանը. փոխանակ ամբոխի մտավոր մակերևույթից ձեզ բարձր պահելու, դուք շողոքորթում եք նրա բուրբ վառ կրթերին, որ բաժանորդ շատ ունենաք: Եվ կրք ալոպես է, «մենք չենք վախենա ասել, որ այդ տեսակ լրագրի գոյությունը մենք վնասակար ենք ճանաչում, և մեզ պարտավորություն պիտի համարենք մեր բոլոր ջանքը գործ դնել՝ նրան ոչնչացնելու համար»:

Հիշենք այստեղ, թե ինչպես էր Գրիգոր Արծրունին իր ուսանողության մամանակ վերաբերվում համոզմունքով և ուղղությունը տարբերվող մամուլին: Այն մամանակ նա ասում էր, թե տարբեր ուղղությունները անհրաժեշտ են, թե հակառակ ուղղություն ունենալը չէ նշանակում թշնամություն: Այժմ իջնելով կովի դաշտը, տեսնելով, թե ինչ զենքերով են գործում իր հակառակորդները, նա թողնում է քնքրությունը դեպի այդ հակառակորդները և չուրացնում է այն համոզմունքը, թե վատ, իր սրբազան կոչման դավաճանող մամուլը մի շարիք է, որը պետք է ոչնչացնել և այնուհետև, մինչև իր կյանքի վերջը, նա նույն այդ համոզմունքն էր պաշտպանում: Անշուշտ, նա այդպես ասում էր ոչ թե այն պատճառով, որ կա հակառակ մամուլ. ոչ, հակառակ մամուլի գոյության անհրաժեշտությունը նա ընդունում էր միշտ: Բայց ոչնչացնելու արժանի էր համարում տպագրական անազնիվ խոսքը, այն մամուլը, որ չէր կարողանում իր կոչման բարձրության վրա մնալ:

Բերենք մի օրինակ: «Էլի իրանց էշն են քշում» առաջնորդողի մեջ (1873, № 41) Արծրունին նորից վերադառնում էր այն հարցին, թե ի՞նչ է կոսմոպոլիտը: Նա գրում է այդտեղ մի այսպիսի նախադասություն. «Հազար անգամ ենք մեկնել, որ կոսմոպոլիտը ընդհանուր մարդկության երջանկությունը աշխատանք անելով, աշխատում է և այն ազգությունը, որին պատահամբ ինքն էլ պատկանում է, օգտավետ կացուցանել մարդկության համար»: Ահա այդ «պատահամբ պատկանում է» բառերը առիթ են տալիս «Մեղուին» աղաղակելու, թե Արծրունին իր հայությունը պատահական բան է համարում: Ընթերցողը տեսնում է, որ այդտեղ Արծրունին իր մասին չէ խոսում, այլ միայն բացատրում է, թե ինչ է կոսմոպոլիտությունը: Բայց «Մեղուի» համար այդ «պատահամբ» բառը փրկության խարիսխ է դառնում և տարիների ընթացքում չէր դադարում կրկնելուց, թե Արծրունին իսկական հայ չէ, այլ միայն պատահական: Նա գրում էր, թե «Մշակն» ասում է, որ «շարժած կոսմոպոլիտական զգացմունքից ծառայում է հայ տգետ հասարակությանց (ազգին), որին պատահամբ ինքը պատկանում է»: Կամ թե՛ «կոսմոպոլիտական զգացմունքից զրգած ծառայում է ազգին, որին կարծես ցավում է, որ պատկանում է պատահամբ»: Ի՞նչ ազնիվ բացատրություն. Արծրունին նույնիսկ ցավում էր է, որ հայ է ծնվել: Եվ ոգևորված իր այդ աննման քաջագործությամբ, նա վեհաբար ասում էր, որ հայոց ազգը մեծ անհատներ է ունեցել, որ այսօր էլ շատերը կան ազգասեր և ազգի մասին մտածողներ: «Մի՞թե, ասում էր, պատվական «Մշակին» պատիվ չէր պատկանելու ի թիվս այսպիսիացս Հայ ազգին, որ թե իր անցյալ տառապանքներով և ներկա վիճակով կարեկցության և հարգանաց է արժանի և ոչ անարգանաց: Մի՞թե չհիշեց ազնիվ «Մշակը», որ որևիցև ազգի դեմ անարգանք արտահայտելը սրբապղծություն է ամեն հասկացող, բարեխիղճ և ազնիվ անհատի աչքում»:

Ահա մինչև ուր էր գնում հակառակորդի անազնվությունը: Զարմանա՞նք, որ Արծրունին ասում էր, թե պետք է ոչինչ ջանք չխնայել այսպիսի մամուլը ոչնչացնելու համար: Եվ նա անխնա մերկացնում էր, թե ինչ էր իր հակառակորդների ազգասիրությունը: Այդ բանակուլից ամիսներ առաջ Ասիացին իր

Ֆիլիստոնում տվել էր «Մեղուի» ծաղրական նամակները, ասելով, թե ինքն էլ պիտի հրատարակե լուր Հայաստանի, լրագիր անշարժական և ոչխարային» թերթը: Իսկ այդ բանակուլի միջոցին բացատրում էր, թե ինչ է նշանակում «Մեղուի» ազգային և ներքին» բաժինները:

«Ընթերցող, հասկանո՞ւմ եք ինչ դանազանություն կա ներքին և ազգային բաժինների մեջ...»

Չանազանությունը այն է, որ ներքինը ներքին է, իսկ ազգայինը ազգային է, կամ պարզելով մեր միտքը՝ ներքինը ազգային չէ, իսկ ազգայինը ներքին չէ...

Օրինակ, դուք շատ անգամ կարգալույս «Մեղու Հայաստանի» լրագիրը, պատահած կլինեք միևնույն համարում երկու նամակ միևնույն քաղաքից, — որոնցից մինը տպվում է ազգայինի մեջ, իսկ մյուսը ներքին բաժնի մեջ... Ինչո՞ւ է այդպես: Որովհետև մինը խոսում է այս կամ այն արեղայի, եպիսկոպոսի հրաշագործությունների վրա կամ ծխական ուսումնարանի հարցաքննությունների վրա՝ այդ ազգային է, — իսկ մյուս նամակը նույնտեղից խոսում է, օրինակ, այն բանի վրա, թե այս տարվա երկրի անբերրիության, կամ այլ պատճառով, հիշյալ հայաբնակ քաղաքի մեջ առաջին պիտույքի, հացի թանկություն է կամ հարկավոր մթերքի պակասություն է, սաստիկ աղքատություն է, — այդ ազգային երևույթ է: Ուրեմն երբ հայը աղոթում է, ուսում է առնում, ուսումնարան է կառավարում, — այդ ազգային է, իսկ երբ հայը քաղցած է, — այդ ազգային չէ...

Բացի սրանից նույն երևույթը, նայելով թե որտեղ է պատահում նա, լինում է կամ ազգային, կամ ներքին... Օրինակ, երբ մի հայ ծխական ուսումնարանի փողերը կամ եկեղեցու փողերից է գողանում, — այդ ազգային է, իսկ եթե մի հայ քաղաքի փողերից օրինավոր գումար իր ջիբին է նվիրում, — այդ ներքին է...

Վերջապես ցույց տանք մի շոշափելի օրինակ. եթե մի էջ զուտ լինի մի որևէ վանքապատկան այգում, — այդ ազգային է, իսկ եթե նույն խելացի կենդանին ձայն հանելիս լինի հիշյալ այգու պարիսպներից փոքր-ինչ դուրսը, այդ անշուշտ ներքին է...»:

Իր հակառակորդների թուլությունները, անկարողությունը այսպիսի կծու ծաղրի ենթարկելու ընդունակություն ունեցող հրապարակախոսը, այն՝ իրավունք ունի ինքնավստահությամբ ասել. «Մենք կոչնչացնենք ձեզ»: Մեր դարում, մտավոր գործի մեջ, ոչնչացնողը այն ողորմելի, երեխայական ազմուկը չէր կարող լինել, թե Արծրունին իրան պատահական հայ է համարում, այլ տաղանդը, հոգեկան այն մեծ կարողությունը, որ հարվածում է տախակությունը, ստեղծագործում է, ըմբռնում է հաղթանակի ամբողջ գաղտնիքը:

Այս ընդհարումների մեջ էին երկու լրագիրները, երբ ներսիսյան դպրոցում հաստատուն տեսուչ ունենալու հարցն էր արժարժվում «Մեղուն» գիտեր, թե ինչ բան է պատրաստվում և ավելի ու ավելի սաստկացնում էր իր հարակումները գերմանական դոկտորների դեմ: Արծրունին դեռ շարունակում էր գերմանական և ոչ գերմանական կրթություն ստացածների կողմ համարել մրցությունը առաջադիմական և ետադիմական տարրերի մեջ: «Մեղուն» ասում էր, թե գերմանական դոկտորները անընդունակ հանդիսացան, թե ժողովուրդը զգվել է նրանցից և բարդում էր նրանց վրա դանազան մեղադրանքներ, սակայն բավականանալով մութ, անանուն ակնարկություններով: «Մշակը» ասում էր, թե պատրաստ է նույնիսկ երդվել, որ այդ մեղադրանքները անհիմն են:

Գեկտեմբերի 8-ին տեսչի ընտրություն էր նշանակված: Պետրոս Սիմոնյանցը դրեց իր թեկնածությունը՝ քվեարկեցին, և նա ընտրվեց: Ապա ձայների ահագին մեծամասնությամբ (8-ով 1-ի դեմ) տեսուչ ընտրվեց Անդրեաս Արծրունին: Մի քանի օրից հետո Սիմոնյանցը տեսչի պաշտոնակատարությունից հրաժարական տվեց: Պետք է ասել, որ Գրիգոր Արծրունին սկզբում ասպետաբար վերաբերվեց իր հակառակորդին. հայտնելով «Մշակի» մեջ Անդրեասի ընտրության մասին, նա շատաց, որ Պետրոս Սիմոնյանցը քվեարկվել է և սևացել:

Պետք էր սպասել կաթողիկոսի հաստատության: Բայց այդտեղ միջամտեց կղերական կամայականությունը: Թիֆլիսի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը ներկա չէր եղել այն նիստին, ուր ընտրվել էր Անդրեաս Արծրունին: Պատրվակ ստեղծվեց նոր ընտրություն նշանակելու համար. և հոգաբարձությունը երևի հաստատ համոզված լինելով, որ նոր ընտրության հետևանքն էլ նույնն է լինելու, կամա-ակամա համաձայնություն տվեց նոր նիստ նշանակելու: Այդ նիստը տեղի ունեցավ 1874-ի հունվարի 12-ին: Եվ ահա ինչ ենք կարգում դպրոցի պատմության մեջ*.

«Մակար արքեպիսկոպոսը եկավ ժողով, հետքերելով հայրապետական կոնդակ, որով իրան հրահանգ էր տրվում տեսուչ ընտրելու մասին, և հայտարարեց, թե ինքը եկել է ժողով ոչ իբրև նախագահ հոգաբարձության, այլ իբրև վիճակի առաջնորդ, և համաձայն է տեսչի ընտրություն կատարելու քվեարկությամբ, միայն այն պայմանով, որ հոգաբարձուները խոստանան շքարել Անդրեաս Արծրունուն, ավելացնելով, թե «Անդրեաս Արծրունին ըստ սուսման և բարոյականության արժանավոր անձն է, սակայն ինքը չկարև համաձայնել առ ընտրություն նորա ըստ հայտնի ինքյան պատճառանաց»: Հոգաբարձությունը, առանց ընտրություն կատարելու, կազմեց այս մասին օրագիր «ի տեղեկություն ապագային» և ստորագրելով օրագիրը՝ ցրվեց»:

Անկարելի եղավ կոխել շարունակել օրինական հողի վրա, և ահա առաջ քաշվեց հոգևոր իշխանությունը: Նա ոտնակոխ արեց դպրոցի կանոնադրությունը, խեղդեց ազատ ընտրության սկզբունքը, որպեսզի ցույց տա, թե ինքը համամիտ է «Մեղուի» հետ և նույնքան վախենում է «կոսմոպոլիտ հայերից», որքան Պետրոս Սիմոնյանցը: Սա առաջին դեպքն է, երբ պահանջողականությունը իր շահերը պաշտպանելու համար, մտնում էր կղերականության փնջի տակ և հատկացնելով նրան միապետական իրավունքներ, քանզում էր սահմանադրական կարգերը: Մարգիս եպիսկոպոս Զալալյանի և Ալեքսանդր Թալիբյանի միապետական կամայականություններից դպրոցը ազատելու համար մի ամբողջ շարժում սկսվեց Թիֆլիսում և այդ շարժման մեջ, որ քվեով պաշտոնյաները ընտրելու սկզբունքը մտցրեց, բուռն մասնակցություն ունեցավ Պետրոս Սիմոնյանցը: Այժմ նա ինքն էր քանդում այն գործը, որի համար մի ժամանակ մարտնչում էր: Պատճառն այն էր, որ երևացել էր նոր երիտասարդ կուսակցություն: Մակար արքեպիսկոպոսի կամայական վարմունքը արդեն մի ապացույց էր, որ Գրիգոր Արծրունին մի վախեցնող ուժ էր դարձել: Նա հարձակվում էր հոգևորականության վրա, մերկացնում էր նրա տգիտությունը, նրա արատները: Եվ նրան պատասխանում էին՝ ապօրին կերպով արգելելով նրա եղբոր ընտրությունը: Բայց դա մի նոր զենք էր, որ տալիս էին Արծրունու ձեռքը:

Հունվարի 12-ի կամայականության դեպքը շատ վատ տպավորություն

* Ս. Մալխապյան, «Համառոտ պատմ. ներքին. դպրոցի» եր. 147:

գործեց հոգաբարձուների վրա: Գեո հույս ունեին, որ կարելի կլինի վերականգնել հոգաբարձության ազատ իրավունքները. Անդրեաս Արծրունին եկավ Թիֆլիս, սպասում էր, թե ինչ էլք կստանա հարցը: Ամառն էլ հասավ, բայց դեռ տեսչի ընտրություն չէր կատարվել: Վերջապես, օգոստոսին, հոգաբարձությունը այլևս ավելորդ համարեց դիմադրությունը, ընդունեց վիճակավոր առաջնորդի կամայականությունը և տեսուչ ընտրեց Սեդրակ Մանդինյանին: Սա էլ գերմանական կրթություն ստացածներից էր, բայց «կոսմոպոլիտների» շարքում չէր դասված, ուստի անմիջապես տեսուչ հաստատվեց:

Հետաքրքրական է, որ Գրիգոր Արծրունին էլ համակերպողներից մեկն էր և շարունակեց հոգաբարձու մնալ: Ծիշտ է, նա բողոքեց «Մշակի» մեջ, ցույց տվեց, թե ինչ պիտի լինի կոլեգիալ հիմնարկության նախագահը, ինչ է տրամադրում դպրոցի կանոնադրությունը և ինչպես պիտի հասկանալ ընտրողական իրավունքը, բայց այդ բոլորը քիչ էր. Արծրունին դեռ չգիտեր կովել իրավունքների պաշտպանության համար այնպես, ինչպես կովեց իր կյանքի վերջին տարիներում:

Լրագրական պայքարը շուտով անցավ Կ. Պոլիս. Պետրոս Սիմոնյանցը իր կրած պարտության վրեժը հանեց «Մասիս» լրագրի մեջ՝ հարձակվելով հոգաբարձության վրա: Միայն այդ ժամանակ Արծրունին հայտնեց, որ Սիմոնյանցը տեսուչ էր ուղում ընտրվել, բայց չընտրվեց: Մի կողմ թողնելով նրան, Արծրունին իր հարձակումները ուղղեց «Մասիսի» դեմ այն պատճառով, որ նա, առանց հանգամանքների ծանոթ լինելու, բռնել էր Սիմոնյանցի կողմը: Այս դեպքը առիթ դարձավ, որ Արծրունին Կ. Պոլիսի հայոց մամուլի պակասություններն էլ մերկացնե: Բայց չպետք է կարծել, թե առիթը և պատճառը միայն տեսչական բանակոխվեց էր: Իրանից առաջ էլ նա մի քանի անգամ անվանել էր Կ. Պոլիսի լրագրությունը «ողորմելի» և մատնացույց էր արել, որ թեև Թուրքիայում մամուլը համեմատաբար ազատ է, բայց հայերը, շնորհիվ այն հանգամանքի, որ ֆրանսիական թեթևամիտ կրթություն են ստացել, անկարող են հանդիսանում մի լուրջ, ազդեցիկ լրագրություն ստեղծելու:

Մանդինյանի տեսչությունը ներսիսյան դպրոցում խոտվությունների մի շրջան բացեց: Մակար արքեպիսկոպոսը տեսչի ընտրության հարցում արդեն ցույց էր տվել, որ ինքը կոչման բարձրության վրա կանգնած նախագահ լինել չէր կարող, այլ իր գործողությունները հարմարեցնում է մեղուական կուսակցության շահերին: Անելով մի քայլ, նա այլևս ավելորդ համարեց կանգ առնել, և կամայականությունները օրենքի ու կարգի տեղը բռնեցին: Գրիգոր Արծրունին և Մուշեղ քահանա Տեր-Ղևոնդյանը, իբրև հոգաբարձուներ, գրավոր բողոքներ տվին տեսչի դեմ՝ պահանջելով հեռացնել նրան, բայց այդ բողոքները առանց հետևանքի մնացին: Դպրոցի տերերը երեք հոգաբարձուներ էին, որոնք միացած էին առաջնորդի հետ. նրանք կայացնում էին վճիռներ և ուղարկում էին այդ վճիռները մյուս հոգաբարձուներին, որ ստորագրեն: Տասնևչորս աշակերտներ բողոքեցին տեսչի դեմ, բայց արձակվեցին դպրոցից: Մուշեղ քահանան շարունակ բողոքում էր թե դպրոցում և թե «Մշակի» մեջ: Մակարը նրան պատժեց իր առաջնորդական իշխանությամբ: Թիֆլիսի կոնսիստորիան հրաման արձակեց, որով հեռացնում էր այդ քահանային հոգաբարձությունից և նույնիսկ զրկում էր նրան քահանայագործությունից: Իր հրամանի մեջ նա բացարձակապես հայտնում էր, թե քահանայի հանցանքն այն է, որ նա հարձակվել է կարծիք հայտնել, որ դպրոցի տեսուչը իբրև թե անհարմար է և անընդունակ է: Ահա թե որտեղին էր հասել փաշայական կամայականությունը,

ահա ինչ միջոցներ էին գործադրում «իրանց մարդուն» պահպանելու համար: Եթե դպրոցում ասիական բնութիւնը այսպէս ոտքի տակ էր տալիս ամեն կարգ ու օրենք, կար բարեբախտաբար ազատ մամուլ, որ մերկացնում էր այդ արարքները: «Մշակը» արշավանք սկսեց տեսուչ Մանդինյանի դեմ և, ուշադրութիւն չդարձնելով մեղուականների վայնասունի վրա, հրապարակ էր հանում այն ամենը, ինչ ասում էին դպրոցի կարգերից դժգոհները: Ինչպէս վայել է այն մարդկանց, որոնց ղեկավարողները սկզբունքները չէին, այլ անձնական հաշիվները, մեղուականները աղաղակում էին, թե «Մշակը» կարգապահութիւնը խախտում է՝ տպելով աշակերտների բողոքները: Կարծես առաջնորդի գործ դրած կամայականութիւնները, կաթողիկոսից հաստատված հոգաբարձուին հեռացնելը շատ կարող էին նպաստել, որ դպրոցում գոյութիւն ունենա որևէ հաստատա հասկացողութիւն օրենքի, իրավունքների և պարտավորութիւնների մասին:

Մակար արքեպիսկոպոսը հոգաբարձական կոչումը ոչնչացնել էր ուզում, բայց Գևորգ կաթողիկոսը ցույց տվեց նրան, որ նա իր իշխանութիւնից և իրավունքներից վեր բաներ է անում. կոնսիստորիայի հրամանով արձակված Մուշեղ քահանային կաթողիկոսը նորից հաստատեց հոգաբարձուի պաշտոնի մեջ: Բայց բարձր իշխանութիւն այս կարգադրութիւնը բավական չէր կամայականութիւնները սանձահարելու համար: Հոգաբարձուների մի մասը, որոնց թվում և Գրիգոր Արծրունին, գործերից հեռու մնացին, մինչև որ Մակարը հեռացվեց առաջնորդութիւնից և նրա տեղը նշանակվեց Գաբրիել արքեպիսկոպոս Այվաղյանը: «Մշակը» Մակարին ճանապարհ գրեց մի հոգվածով, որի մեջ ցույց էր տալիս նրա պակասութիւնները*: Այվաղյանի գալուստը (1876-ից) այնքան խաղաղացրեց մարդկանց, որ հեռացած հոգաբարձուները նորից իրանց գործին գնացին: Բայց նրանց պաշտոնավարութիւնն ժամանակը լրացել էր, և նոր ընտրութիւններ նշանակվեցին: Արծրունին այլևս հոգաբարձու չընտրվեց:

Միայն մեղուականութիւնը և ազգային հարցերը չէին բանակովի դաշտ բաց անում Արծրունու համար: 1874 թվականի մեծ պատերազմի տեղի ունեցան մի շարք հրապարակական դասախոսութիւններ ուսերեն լեզվով: Դասախոսութիւններ կարդացողներն էին Ալեքսանդր Երիցյան, տիկին Սիմոնովիչ, Սկորով, Ստադլին, Լիխաշով, Պալիբին, Մուլանով: Արծրունին «Մշակի» մեջ հայտնեց, որ դասախոսներից միայն Սիմոնովիչն ու Սկորովն են տիրապետում իրանց ընտրած առարկաներին, իսկ մնացածների կողմից «անասելի հանդգնութիւն» էր հասարակութիւնն առաջ դուրս գալ ուսուցանողի դերում: քանի որ նրանցից ոչ ոք չունի հիմնավոր պատրաստութիւն: Խոսելով մի առանձին հոգվածում հատկապես Երիցյանի մասին, որի դասախոսութիւնն առարկան էր հայ կնոջ դրութիւնը անցյալում և ներկայում, Արծրունին ասում էր, թե Երիցյանը չունի քննական կարողութիւն, թե նյութը մշակել նա չէ իմանում: Ընդունելով, որ դասախոսը «ընդարձակ բնական ընդունակութիւնների տեր մարդ է, և դուցե նրան պակաս չէ ահագին աշխատասիրութիւնը»:

* Այդ պակասութիւններից «Մշակը» շեշտում էր մանավանդ այն, որ Մակարը, իբրև առաջնորդ և հոգաբարձութիւնն նախագահ, չէր կարողանում կուսակցութիւններից բարձր պահել իրան, ինչն էր կարգի և օրենքի խիստ պաշտպան: 1874 թվին էֆենդյանցի հոգեհանգստի ժամանակ Գրիգոր Արծրունին կամեցավ, իբրև հոգաբարձու, մի քանի խոսք ասել եկեղեցում, բայց Մակարը թույլ չտվեց: Այս աստիճանին էր հասցրել արքեպիսկոպոսը իր կուսակցական անհամբերողութիւնը:

Արծրունին գտնում է, որ «գիտութեան սիստեմական ուսումը, որևէ կրիտիկական հայացք, որ անհրաժեշտ է մեծ հասարակական դասախոսութեան մեջ, պակաս է պարոնին... Ամեն երկրում գիտութեան ամենաբարձր հատկութիւնը՝ համեստութիւնն է, իսկ մեր երկրում նա ընդունված չէ»:

Մյուս դասախոս Ստադլինը անտեղի հարձակումներ էր գործել անգլիացի նշանավոր գիտնական Բոկլի դեմ: Արծրունին մի քանի կծու տողեր գրեց այդ առիթով, Ստադլինը պատասխանեց «Кавказ» լրագրում, ծաղրելով Արծրունուն, անվանելով նրան երեխա և այլն: Այդ հարձակումների դեմ Արծրունին գրեց մի մեծ հոգված, որի մեջ նախ ցույց տվեց Բոկլի գրքի նշանակութիւնը և ապա ուղղեց Ստադլինի հասցեին հետևյալ խոսքերը.

«Մի բան խորհուրդ կտայինք միայն պ. Ստադլինին շնորհակալ. վատ թե լավ լինի մեր գործունեութիւնը՝ մենք ժամանակավոր չենք եկել այստեղ, մենք մեղ նպատակ չենք կարող դնել բանակութեան բռնվել մի որևէ բախտախնդիր թափառական, ինքնակոչ կրթողի հետ... Նրա պես շատերը եկան ու գնացին... մեզ այլևս այս տեսակ անդրժողիւն է ժամ փիլիսոփայութիւններով և խելոք հիմարութիւններով զարմացնել չէ կարելի... վիրավորել մեզ ինքնահավան տգիտութեամբ նմանապես չէ կարելի...»:

Ստադլինը դիմեց դատարանին՝ մեղադրելով Արծրունուն վիրավորանքի և զրպարտութեան համար: Առաջին անգամն էր մեղանում, որ հայ խմբագիրը կանչվում էր դատարան՝ իր գրվածքը այնտեղ պաշտպանելու համար: Գործը քննվում էր հաշտարար դատավորի մոտ 1874-ի մայիսին. երկու կողմերն էլ սկսեցին ապացուցանել, որ հաշտարար դատավորը ձեռնհաս չէ այդ գործը քննելու: Դատավորը առաջարկեց այդ վեճը հաշտութեամբ վերջացնել, և երբ կողմերը համաձայնութիւն չտվին, նա դադարեցրեց գործը: Բայց թե որքան Արծրունին իրավացի էր հարձակվում Ստադլինի վրա, կարելի է եզրակացնել նրանից, որ մայրաքաղաքի պարբերական թերթերից մի քանիսն էլ խիստ քննադատեցին Ստադլինի դասախոսութիւնը, որ տպված էր առանձին գրքով. իսկ «Неделя» շաբաթաթերթն ասաց, որ թիֆլիսը չպիտի թույլ տար այդպիսի վայրիվերո և անմիտ դասախոսութիւն:

Մնում էր Երիցյանը. Արծրունին ֆելիետոնների մեջ էլ ծաղրում էր նրան՝ անվանելով նրան «պառաված գիմնագիտ»։ Եվ Երիցյանն էլ կարողացավ իր վրեժն առնել Արծրունուց: «Кавказ» լրագրի գլխավոր աշխատակիցներից մեկն էր Երիցյանը և այդտեղ էլ նա մաքրում էր իր հաշիվները Արծրունու հետ իբրև հարազատ մեղուական: Ահա այդ վրեժխնդրութեան մի փոքրիկ պատկերը:

1875 թվականի սկզբում Անդրեաս Արծրունին թիֆլիսում կարգաց մի դասախոսութիւն ծծումբի մասին: Երիցյանը «Кавказ» լրագրում մի ընդարձակ հոգված տպագրեց և մոռանալով, որ ինքը մասնագետ չէ, ոչնչութիւն հրատարակեց ամբողջ դասախոսութիւնը, թեև մի վրացի, էրիսթով ազգանունով, նույն «Кавказ»-ի մեջ ցույց տվեց Երիցյանի սխալները և Անդրեաս Արծրունու տեսութիւնների ճշտութիւնը: Այս դեռ ոչինչ: Կարելի էր հաշտվել այն մտքի հետ, որ հնագիտութեամբ պարապողը քննադատում էր մի մասնագետի գրվածքը: Երիցյանը, խոսք սկսելով դասախոսութեան մասին, պարտք էր համարել ծանոթացնել ընթերցողներին Անդրեաս Արծրունու հետ: Եվ որպիսի՝ բարեխղճութեամբ: Նա ասում էր, թե Անդրեասը «Մշակի» խմբագրի եղբայրն է, թե Գրիգոր Արծրունին միջնորդում էր, որ կողորդ տեսուչ նշանակեն ներսիսյան դպրոցում, բայց հայոց հոգևոր իշխանութիւնը շատ խելացի վարվեց՝ մերժելով նրա այդ միջնորդութիւնը: Եվ ոչ մի խոսք ներսիսյան

դպրոցի կանոնադրության մասին, ոչ մի խոսք այն մասին, թե Անդրեասին ընտրել են դպրոցի հոգաբարձուները 8 ձայնով՝ ընդդեմ մեկի...

Վրիժառույթյան մի քայլն էր դա: Շուտով «Кавказ» լրագիրը մի արշավանք սկսեց «Մշակի» դեմ. ֆելիետոնիստ Nemo-ն, որ եթե Երիցյանը չէր, անշուշտ Երիցյանի ցուցմունքներով էր ղեկավարվում, կրկնեց Արծրունու դեմ այն ամենը, ինչ ասել էր «Մեղուն»: Դուրս գջելով «Մշակի» զանազան հոդվածներից այս կամ այն կտորը, նա աշխատում էր ցույց տալ, որ Արծրունին երեք տարվա ընթացքում ոչինչ հասարակական հարց չէ արժարժել, աչքի ընկնող ոչ մի բան չէ գրել, այլ միայն և միմիայն գովել-փառաբանել է իրան, իր եսին է երկրպագել, իր անձնական հաշիվներն է տեսել: Մի բան միայն չէր ուրանում ռուս լրագրի ֆելիետոնիստը, այն, որ «Մշակը» 1872 թվականից չէ դադարում գրական աշխարհը տակն ու վրա անելուց: Հայոց կյանքի մեջ նա մտցնում է վայրենի և անգործնական գաղափարներ, որոնք հակառակ են հայի նահապետական կյանքին և սովորություններին: Հողավածագիրը խոտանում է փաստեր բերել՝ քայլ առ քայլ քննելով երեք տարվա «Մշակը», բայց չէ կատարում իր խոստումը, արդարանալով նրանով, թե Արծրունին շատ է վիրավորվում իր գրվածքներից և ինքը խղճում է նրան: Բայց բերած մի քանի փաստերն էլ բավական են իմանալու համար, թե ինչ տեսակ գրական հակառակորդ էր այդ Nemo-ն: Մենք կրեքնեք միայն մի նմուշ: «Մշակի» այդ քննադատը, կրկնելով մեղուականների այն խոսքը, թե Արծրունին հայերեն բոլորովին չգիտե, իբրև ապացույց բերում էր մի բառ. հայոց լեզվի մեջ գոյություն չունի «ազգագրություն» բառը և նրան հնարել է Արծրունին. այդ բառը «Кавказ»-ի աշխատակիցը թարգմանում էր «нациография» և ծաղրում էր Արծրունու ագիտությունը հայերենի մեջ: Սարսափելի ապացույց էր, չէ՞: Դրանով հողավածագիրը իր սեփական տգիտությունն ու անբարեխղճությունն էր ցույց տալիս:

Արծրունին միայն մի քանի խոսքով պատասխանեց «Кавказ»-ի այդ ընդարձակ հողավածների: Վիրավորվելու մի առանձին առիթ չունեք նա, քանի որ միևնույն բաները նա միշտ տեսնում էր «Մեղուի» մեջ: Ռուս լրագրի աշխատակիցը ցույց էր տալիս իր ով և ինչ լինելը նրանով, որ Թիֆլիսում հրատարակվող լրագիրներից հավանում էր միայն «Մեղուն». նրա համար «Մշակի» չափ վատ և վնասակար էին և «Тифлисский вестник» ու «Դրոներ» լրագիրները: Կարո՞ղ էր Արծրունին վիրավորվել այդպիսի մի քննադատի գրվածքներից...

Բայց Երիցյանը դեռ իր բոլոր վրեժը չէր հանել: 1876 թվականին Թիֆլիսում պիտի կատարվեր միօրյա ժողովրդագրություն: Արծրունին «Մշակի» մեջ մի շարք հողավածներով բացատրեց, թե ինչ է ժողովրդագրությունը, ինչ նշանակություն ունի նա: Չբավականանալով այդքանով, նա 1875 թվականի նոյեմբերի 16-ին Թիֆլիսի կլասիկական գիմնադիպլոմի դահլիճում կարդաց հայերեն լեզվով մի դասախոսություն, որ նվիրված էր նույն առարկային: Դա առաջին հայերեն դասախոսությունն էր մեղանում: Ունկնդիրների մեջ կային շատ աշակերտներ և Մարիամյան դպրոցի աշակերտուհիները, որոնց Արծրունին ձրի տոմսակներ էր տվել: Մի քանի ժամանակից հետո նա կրկնեց այդ դասախոսությունը Հավլաբարում. Թիֆլիսի այն թաղում, որ թեև կպած է քաղաքին, բայց նրա խորթ զավակն է՝ մանավանդ կրթական հիմնարկությունների կողմից: Այդտեղ ապրում է հասարակ ժողովուրդը, և Արծրունին գնաց նրա մոտ՝ կենդանի խոսքով մի բան հասկացնելու համար:

Իր առաջնորդողներից մեկում Արծրունին ասում էր, որ գիտությունը հանրամատչելի պիտի լինի, և այն գիտությունը, որ ծածուկ է պահվում ժողովրդից, գիտություն չէ: Հետևելով իր այդ հայացքին, նա ամեն բանի մեջ վերին աստիճանի պարզ, հեշտ հասկանալի լեզու էր գործածում: Այսպես էր նա և իր գասախոսության մեջ: Բայց Երիցյանը, «Кавказ»-ի մեջ հաշիվ տալով այդ դասախոսության մասին, ամենամեծ պակասությունը համարում էր այն, որ նրա մեջ ամեն ինչ շատ էր պարզ, շատ էր տարրական, ինքնըստինքյան հասկանալի: Գլխավորապես այդ «պակասության» պատճառով էլ նա ծաղրում էր Արծրունուն, գործածելով համարյա նույն խոսքերը, որ Արծրունին ասել էր իր՝ Երիցյանի դասախոսությունների առիթով: Բայց այդ երկուսի մեջ կար հիմնավոր տարբերություն. Արծրունին, քննադատելով Երիցյանին, ինչպես տեսանք, հայտնի արժանավորություններ էլ էր գտնում նրա մեջ, մինչդեռ Երիցյանը ոչինչ արժանավորություն չէր տեսնում Արծրունու մեջ:

«Кавказ» լրագրի թշնամությունը «Մշակի» դեմ շարունակվեց, քանի որ նրա գլխավոր աշխատակիցը Երիցյանն էր, իսկ խմբագիրը՝ Ստալինսկին: Վերջինս շոտացավ Արծրունու հարվածները և այն ժամանակ, երբ հեռացել էր Թիֆլիսից: 1878-ին նա խարկովում հրատարակում էր «Харьков» անունով լրագիրը, որի մեջ հարձակվում էր «Մշակի» վրա:

Թողնե՞ք առայժմ բանակոխների դաշտը. շուտով մենք կտեսնենք, որ տեղական ուրիշ ռուս լրագիրներ էլ վեճի բռնվեցին Արծրունու հետ: «Մշակը» խոսեցնել էր տալիս ամենքին, և Արծրունին շատ լավ էր բնորոշում այն դերը, որ կատարում էր իր լրագիրը: Նա ասում էր, թե «Մշակը» ունի ջերմ երկրպագուներ, ունի կատաղի թշնամիներ, բայց չունի անտարբեր վերաբերվողներ: Նրան կամ պաշտում են, կամ ատում, բայց երբեք անտես չեն անում, երբեք չեն մոռանում նրա գոյությունը:

Եվ այդ զարմանալի հատկությունը բխում էր նրա խմբագրի անսպառ տաղանդից: Դա մի անհանգիստ ուժ էր, որ գործում էր միանման վառ եռանդով: Շատ քիչ են «Մշակի» այնպիսի համարները, ուր նա առաջնորդող հողաված կամ մի այլ գրվածք չունենար: Ամեն տեղ նա կարողանում էր զետեղել այնպիսի կտրուկ, ազդու տողեր, որոնք անպատճառ մի միտք էին հարուցանում, այսպես կամ այնպես ցնցում էին: Նրան մեղադրում էին, նրան ատում էին՝ նրա անփոփոխ, մշտական խստությունների համար: Բայց ինչո՞ւ էր նա խիստ ու անողոք, ինչո՞ւ նրա գրիչը միշտ թաթախված էր թուշի մեջ:

Նրան ներկայանում էր մի հիվանդ, անդամալույծ, վերքերով պատած հասարակություն, և նա կամենում էր մի օր առաջ ցույց տալ այդ անդամալույծին նրա անկումը, նրա սարսափելի հիվանդությունը: Ասում են, թե նա շոյելով ու գգվելով պիտի բժշկե վերքերը: Բայց կարելի՞ է այդպիսի պահանջ դնել: Գրողը, եթե նա մի ողորմելի միջակություն չէ, եթե ներկայացնում է մի ամբողջացրած ինքնուրույնություն, մանավանդ եթե վերևից ստացած է մի առաքելության կոչում, ունի իր հատուկ բնավորությունը, խառնվածքը, իր խոսքն ու խոսելու եղանակը: Համաշխարհային գրականության մեջ փառավորված մեծ երգիծաբաններն ու մերկացնող հրապարակախոսները կարող էին իրանց ժամանակի պահանջներին ենթարկվել, բայց եթե ենթարկվեին, էլ ինչպե՞ս կլինեին Սվիֆտներ, Բյոռնսեններ, Հեյնեններ: Արծրունու դավանանքն էր՝ «Դժգոհությունը առաջադիմության մղողն է» (1875, № 34): Եվ ինքը, իբրև առաջադիմության դիմվոր, հայտնում էր իր դժգոհությունը ամենախիստ կերպով: Ահա մի քանի տողեր Ասիացու ֆելիետոնից (1875, № 49).

«Չէ, պետք է հրաժարվել հայերի մեջ հանճար լինելուց: Այդ ազգի մեջ հանճար լինել անհնարին է, այդ ազգը ազգ չէ, դա մի տեսակ հանելուկ է: Նրան ուսումնասիրել, ճանաչել, ըմբռնել՝ դժվար է և մինչև անգամ անհնարին է...»

Ի՞նչ անենք, ո՞ր ջուրն ընկնենք...

«...Եվ ինչպե՞ս կարելի է այն ազգին ուսումնասիրել, ճանաչել, ըմբռնել, որ ոչինչ որոշ բնավորություն, ոչինչ որոշ բարոյական պատկեր չունի, որ չունի իդեալներ, ձգտումներ, կատարելատիպեր...»

Նրա կատարելապատկերը, նրա իդեալը երկու բան են, որ կյանքի ամեն քայլափոխում նրա միակ շափ ու կշիռք են՝ մի առշին և մի ոտլիխ...

Գուցե միայն այն ժամանակ հանճար կհամարվես այդ ազգի մեջ երբ որ զանազան աններելի միջոցներով կհարստանաս...»:

Կրակոտ, անհամբեր, ըմբոստ բնավորությունը գործ է սիրում, բարեկարգություն, պարտաճանաչություն է պահանջում, իսկ նրան շրջապատած է մոխրագույն, հիվանդոտ իրականությունը: Եվ նրա գրչի ծայրից այսպիսի թույլ է թափվում: «Ո՞ւմ ենք խաբում», — հարցնում է նա. հարցնում է այն մարդկանցից, որոնք առաքինություն են համարում ազգային պակասությունների ծածկելը: Խաբենք մե՞զ՝ աչք փակելով, կույր ձևանալով, թե՞ խաբենք օտարներին՝ ցույց տալով նրանց, որ հայը պարտաճանաչ է, միաբան է, կարող է իր հոգեկան պահանջների, իր մտավոր շահերի համար մոռանալ իր նյութական բարեկեցությունը: Ո՞չ, մեզ կամ օտարին խաբելուց օգուտ չկա: Խաբելով մենք ոչինչ չենք բժշկի մեղանում, ոչինչ չենք փոխի: Դժգոհությունը առաջադիմության մղողն է. դժգոհ լինենք մեզանից, որպեսզի փրկվենք:

Ինքնագոհությունը, ազգասիրական լուրջությունը օտարների առաջ՝ երբեք մեզ չէին թույլ տա քննադատության սուր նշտրակը խրել մեր հասարակական մարմնի մեջ, դուրս բերել մեր ետամնացության, մեր դժբախտ անշարժության հատկանշանները: Եվ Արծրունին իր այդ սուր դժգոհության, մերկացնող ընդունակության շնորհիվ որքա՞ն ազգային բնորոշ գծեր դրեց հրապարակում, որքա՞ն դառն ճշմարտություններ գտավ, որոնք մինչև այդ շատ բնական, արդար ու ցանկալի երևույթներ էին համարվում:

Վերցնենք «Հայի տնտեսությունը» հոդվածը (1873, № 27): Հայը հայտնի է իբրև տնտեսող, իբրև դիզող: Խնայողությունը տնտեսական կյանքի մեջ կատարում է ահագին դեր: Բայց երջանի՞կ է նա իր այդ հատկություններով: Ո՞չ, երջանիկ լինել չէ կարող:

«Հայը հավաքում է, այո՞, հարստություններ, դիզում է նյութերը, — բայց անհաշիվ. և նրա հավաքած հարստությունը բոլորովին անձնական է և չէ անցնում ապագա սերունդին: Նրա աշխատանքը մի ապարդյուն աշխատանք է: Ինչպես մրջյունների ծիծաղելի ջանքերը: Ոչ մի հարստություն կովկասյան հայերի մեջ չէ տեսել մի սերունդից ավելի:

Հայը հավաքում է, այո՞, բայց հավաքում է միայն նրա համար, որ սնդուկներում պահի իր հավաքածը... Նրան պակաս է այն հատկությունը, առանց որի խնայողությունը դատարկ խոսք է՝ նա զուրկ է իր հավաքածը մի որևէ ձեռնարկության գործ դնելու հատկությունից: Նա զուրկ է անձնավստահության հատկությունից:

Նա հավաքում է, բայց չէ գործ դնում, նա հավաքում է, բայց չէ մտածում այնպես կրթել նոր սերունդը, որ շահեցնի իր հավաքածը:

Այդ է պատճառը, որ կան մեզանում հայերի մեջ հարուստ անհատներ, բայց չկա հարուստ հայ առերը»:

Հայ հարուստների այդ պատկերացումը Արծրունին շարունակում է մի քանի համարից հետո՝ «Մահվան հերոսներ» հոդվածի մեջ (№ 39): Այդտեղ խոսքը կտակների մասին է: Հին ժամանակներից մենք պարծենում ենք մեր հարուստների կտակներով: Կտակը նվիրագործում է հարուստ հայի հիշատակը, սրբացնում է նրան հասարակության աչքում, ազգային մեծ բարերարների շարքն է անցկացնում նրան: Սակայն ահա ինչ էր տեսնում Արծրունին այդ վաղուց սրբացրած կտակի մեջ:

Կենդանության ժամանակ հայը, — ասում է սա, — մարմնացած եսակա- նություն է, մտածում է միայն իր մասին, ապագան նրա միտքը չէ զբաղեց- նում: Նա ոչ միայն ինքը չէ օգուտ քաղում իր դիզածից, այլև թույլ չէ տալիս, որ ուրիշները իրանց ուժերը գործադրեն հասարակության օգտին: «Հասարակաց օգուտը» նրա համար անհասկանալի մի խոսք է:

«Բայց հանկարծ մոտենում է նրա մահվան բուպեն և նույն մարդը պահանջում է, որ իր մահից հետո հրաշքի պես փոխվեին հանգամանքները դեպի լավը, շնայելով, որ ինքը ոչինչ չէ արել, կարողության շափ, իր գործը աջողեցնելու նպատակով հարմար արդյունաբեր մի հող պատրաստելու համար»:

Կենդանության ժամանակ միայն մի հոգս ուներ նա՝ դիզել և դիզել, ինչ միջոցներով էլ լինի՝ դիզել, այդ դիզածը երբեք գործադրության մեջ չմտցնել: Ինչպես որ դիզած գումարը նրա կենդանության ժամանակ մի մեռած դրամա- գլուխ է, այնպես էլ նա անգործադրելի է համարում գիտությունը. ուսումը նրա համար մեռած դրամագլուխ է: «Նրա որդին մի կենդանի կտակ է, որ այժմս գործ դրվելու չէ, այլ պահվելու է մի անորոշ ժամանակի համար»: Մեռնում է այդ հայը, և հանկարծ ի՞նչ է հայտնվում:

«Այն մարդը, որ իր կենդանության ժամանակ երբեք մտածած չէ ապագայի վրա, — պատրաստ ունի մի կտակ, որով նա իր բոլոր կարողությունը կամ նրա մասը կտակում է ապագա սերունդի օգտին, բարեգործական նպատակով, ի նպաստ մտավոր զարգացման իր ազգի նոր սերունդի, — որի մտավոր զարգացման բարոյական, օգտավետ և գործադրելի լինելը նա իր կյանքի ժամանակ հերքում էր...»

Բայց մեռնողը չի մտածում, որ իրանից հետո մնացած հայրենակիցները ամենքն էլ իրան նման են, ամենքն էլ նույն բնավորությունն ունին, նույն ուզողության են հետևում:

Հանգուցյալը հանձնում է իր կտակի կատարումը իրան նմաններին, իրանցից նշանակված կտակակատարներին... նրանք էլ մտածում են՝ ինչի՞ ինք- ներս օգուտ չքաղենք կտակած գումարից, որ նրան պահենք... ինչի՞ համար գործ դնենք գումարը, — ավելի լավ չէ՞ պահենք ու էլի դիզենք... խո մեռնելու ժամանակ կարող ենք, եթե ոչ բոլորը, գոնե մի մաս կտակել բարեգործական, ազգային նպատակով...»:

Եվ փաստերի այս գեղեցիկ վերլուծումից Արծրունին դալիս-հասնում է այսպիսի եզրակացությունների.

«Մինչև որ հայը իր կենդանության ժամանակ բարի գործ չգործե, մինչև որ իր կենդանության ժամանակ հասարակական ոգի իրան չսեփականացնե, — հասարակությունը երբեք առաջ չի գնա...»

Հայը իր կյանքի ժամանակ հասարակությունը չէ ծառայում, նրա ոչ ոք օգուտ չէ բերում, չէ գործ դնում ձեռքին ունեցած բարոյական և նյութական միջոցները, — բայց պահանջում է, որ իր մահից հետո հայրենակիցները իր կտակը կատարեն... սպասում է ուրեմն նրանցից այն հասարակական ոգին,

այն հասարակական արժանավորութիւնները, որ ոչ թե միայն նորա շեն կարող ունենալ, բայց որ նա ինքն էլ շուներ:

Եթե մենք ինքներս մեր կյանքի ժամանակ ոչ թե միայն բան չենք անելու, բայց և հակահասարակական ընթացքը կպահպանենք, և հետո կպահանջենք, որ մեր կտակատարները այն ամեն, ինչ որ մենք ինքներս ընդունակ չլինք անելու, հավատացեք, որ մեր հույսերը միշտ խաբւած կլինեն...

Առաջադիմութիւնը մարդկային հասարակութեան մեջ կտակների միջնորդութեամբ չէ կարող ընթանալ, այլ միայն հասարակութիւնը կազմող յուրաքանչյուր անհատի անձնական աշխատակցութեան օգնութեամբ:

Այսպէս, ահա, Արծրունին մեր ավանդական սուրբ հասկացողութիւններից մեկի ամբողջ աննպատակահարմարութիւնն էլ էր ցույց տալիս: Մենք սովորել ենք հարուստ աղաների կտակների վրա աչք տնկել, նրանցից սպասել մեր փրկութիւնը. բայց Արծրունին ասում էր. կտակներով առաջադիմութիւն չի լինի, աշխատեցե՛ք ամենքդ, աշխատեցե՛ք ձեր կենդանութեան ժամանակ, հասկացե՛ք հասարակաց օգուտը այն ժամանակ, երբ դուք ապրում եք, կարող եք ձեր անձնական գործակցութեամբ նպաստել հասարակական գործին:

Տեսնելով այս անընդհատ հարձակումները մեր պակասութիւնների դեմ, այս մշտական բողոքները, այս անխնա քննադատութիւնները, մենք կարող ենք կարծել, թե Արծրունին, ուրեմն, ոչինչ առաջադիմութիւն չէր տեսնում մեր երկրի մեջ: Ո՛չ, նա տեսնում էր, նա ուրախութեամբ էր արձանագրում ամեն մի երևույթ, որ առաջ գնացող քայլի նշան ուներ: Թե որքան էր նա նշանակութիւն տալիս մեր կյանքի մեջ տեղի ունեցած փոփոխութիւններին, երևում է նրանից, որ 1873-ին նա արդեն ընդունում է, որ Քիֆլիսում կարող է բացվել համալսարան: Հինգ տարի էր անցել այն ժամանակից, երբ նա բոլորովին ապարդյուն էր համարում բարձրագույն դպրոցի գոյութիւնը Կովկասում: Բայց մի՞թե այդքան կարճ միջոցում Քիֆլիսը այնքան փոխվեց, որ կարող էր համալսարանական կրթութեան վայր դառնալ: Արծրունին գտնում էր, որ փոխվել է Քիֆլիսը: Իհարկէ, ժողովուրդը նույնն էր, իհարկէ, տեղացի ընտանիքը շարունակում էր իր դերը կատարել: Բայց կար և այն հանգամանքը, որ այժմ, հինգ տարուց հետո, բավականաչափ ինտելիգենցիա կա հավաքված Քիֆլիսում. այժմ շատացել են բարձր ուսում ստացածները, և Արծրունին ասում էր. «Հիմի ժամանակ է» (№ 31), կարելի է համալսարան ունենալ, արդյոք պատրաստ է ժողովուրդը այդպիսի մի հիմնարկութիւն պահպանելու:

Տղամարդկանց կրթութիւնը Արծրունին այսքան առաջացած էր համարում: Բայց կանանց կրթութեան վերաբերմամբ նա այսքան մխիթարական եզրակացութեան հասնելու առիթ չունի: Համեմատում էր հայ կանանց վրացուհիների հետ և տեսնում էր, որ վերջիններս ավելի բացված են, ավելի շատ են նվիրված հասարակական գաղափարներին, անհամեմատ բարձր են հայուհիներից նրանով, որ սիրում են իրանց մայրենի լեզուն, դրականութիւնը: Հայ կինը շարունակում էր դեռ սառն, խորթ մնալ իր ազգի մտավոր պահանջների վերաբերմամբ: Իսկ առանց նրա օգնութեան չէ կարող լինել առաջադիմութիւն հայերի մեջ: Հայ կնոջ այդ դրութիւնը այնքան հուսահատական է, այնքան վատ ազդեցութիւն ունի մեր մտավոր շահերի տեսակետից, որ Արծրունին, մի ճար գտնելու համար հայտնում էր մի շատ ինքնուրույն միտք: Նա ասում էր, թե լավ կլինի, որ գաղափարներին ծառայող երիտասարդը շամուսնանա:

Արեղալուսիւնը հարկավոր էր քրիստոնեւորութեան առաջին դարերում, երբ պետք էր տարածել այդ կրօնը: Նա հարկավոր է մեր հասարակութեան պէս մի հասարակութեան մեջ էլ:

«Մերել կլին, սիրել ընտանիք և միևնույն ժամանակ սիրել մի գաղափար սիրել մարդկութիւնը, — մին մյուսին արգելում է: Մինը խլում է մարդից այն ուժը, այն եռանդը, որ հարկավոր է գործ դնել մյուսի վրա...»

Վառված լինելով մի նոր գաղափարով, սգեւորված լինելով մի նոր վարդապետութեան քարոզութեամբ և հասարակութեան մեջ նորան ընդունել տալու և արմատացնելու մտքով — մարդը լիպսոս նորանով հափշտակվելով, իր ամբողջ հոգին նրան նվիրելով, ստիպված է հեռանալ, փախչել կնոջից, ընտանիքից, որ մասամբ կիսին նրանից նրա հափշտակված, վառված եռանդը...»:

Յրանսխացի գրող Պրուդոնը իր գրվածքներից մեկում ասել է, որ նոր հասարակական, սոցիալական գաղափարներ տարածելու համար հարկավոր է անպսակ, կույտ կյանք, որ մարդը կարողանա ամբողջովին նվիրվել իր գաղափարներին: Արծրունին գտնում էր, որ այդ խորհուրդը մանավանդ օգտակար կլինի հայերի համար, քանի որ կինը մեղանում չէ մասնակցում մեր մտավոր շարժմանը:

«Մտավոր կյանքով ապրող, նոր հասարակագաս գաղափարներ քարոզող հայը, պսակվելով ժամանակակից կրթված հայ աղջկա հետ, չէր գտնի նրա մեջ արժանաչանք իր այն մտքերի, որք կազմում են նրա համար ամբողջ կյանքի նպատակը, այլ կգտներ նրա մեջ միայն սառնութիւն, անտարբերութիւն դեպի իր իղեալը:

Ժամանակակից հայ երիտասարդը, որ զբաղված է իր հայրենակիցների բարոյական և մտավոր վերանորոգման գաղափարի քարոզութեամբ, պսակվելով ժամանակակից կրթված հայ աղջկա հետ, կպատահեր նրա մեջ մի ապարդյուն ուժ, մի անտարբեր սառնութիւն դեպի իր ամենասիրելի գաղափարները, և այդ հակառակ և սարսափելի անտարբերութիւնը միանգամից կսպաներ նրա մեջ կամ փոքր առ փոքր կմեղոցներ նրա այն բոլոր ամենաթանկագին իդեալները, որ նա տարիներով մշակել է, իր սրտում օրորել է, հայտնել է, քարոզել է, որոնց տարածելը, որոնց հասարակութեան մեջ սերմանելը եղել է նրա համար ամբողջ կյանքի միակ և վերջնական նպատակ... (1875, № 27):

Բայց ինչպե՞ս հասկանանք այն, որ առանց կնոջ համակրութեան, առանց նրա աջակցութեան՝ հասարակութեան մեջ առաջադիմական գաղափարներ չեն տարածվի: Մի՞թե հակասութիւն չէ. պետք է կնոջ համակրութիւնը գրավել, բայց միևնույն ժամանակ շամուսնանալ կնոջ հետ՝ համարելով նրան արգելք, խոչընդոտ, սպանիչ ուժ: Արծրունին մի համարից հետո ասում է, որ իր ասածների մեջ հակասութիւն չկա: Եվ ահա ինչպէս.

«Երբ որ մի նոր վարդապետութիւն քարոզողը ունի այդ գորեղ դաշնակցին, որի ուժի առջև ամեն բան հպատակում է — կնոջ համակրութիւնը — նա կարող է վստահ լինել, որ իր վարդապետութիւնը հիմք ստացավ, կընդունվի, կիրագործվի և երկար կյանք կունենա:

Բայց իսկ այն պատճառով, որ այդ մարդը, այդ անկեղծ համակրութիւնը, այդ գորեղ, այդ անհաղթելի դաշնակցութիւնը այնքան թանկագին է քարոզչի համար, — նա պետք է առհասարակ կանանց սրտին դիմել, և ոչ թե գրավել մի կնոջ սիրտը մասնավորապէս...»

Եվ մինչև անգամ մի կնոջ սրտի գրաված սերը պետք է զոհվի ընդհանրութեան օգուտի համար:

Այդ է նշանակում կույտ մնալ, այդ է նշանակում զոհել կնոջ, ընտանիքի,

գավակներին սերը՝ գաղափարը սիրելու համար. այդ է նշանակում կենտրոնացնել իր ուժերը՝ իր ամբողջ ներքին զորքը հարկադրաբար նախապես մտավոր արդյունաբերողը իրավունք չունի ինքը բախտավոր լինելու:

Հնդհանուրի օգտի մասին մտածողը իրավունք չունի մտածել և իր անձնական բախտավորության վրա:

Վերացական գաղափար, հասարակական վերանորոգություն քարոզողը վերջապես մտավոր արդյունաբերողը իրավունք չունի ինքը բախտավոր լինելու: Նա կարող է ձգտել բախտին, բայց երբեք չպետք է հասնի նրան:

Գուցե բախտը կսպաներ նրա մեջ դուրազագացությունը դեպի ամբողջ կարիքը...»:

Գատելով տեսականապես, ճիշտ է այս բոլորը: Գաղափարի քարոզողը ամբողջապես գաղափարին պիտի նվիրվի, ոչինչ չպիտի խանգարե նրան իր առաքելությունը կատարելու համար: Արծրունու համար այս տեսակ գործիչի մի իդեալ էր. «էվելինայի» մեջ էլ նա բարձրացրել է գաղափարական գործունեությունը մասնավոր, անհատական զգացմունքից. ջարդված ետական կրօնականություն հասարակաց բարիքի համար, — սա այն ղոհարերությունն էր, որ Արծրունին պահանջում էր իսկական գործից: Ինքը անձամբ զոհեց իր անձնական բարօրությունը, իր բարեկեցությունը՝ հասարակական շահերին ծառայելու համար: Բայց պահանջելով անպսակ մնալ, արեղայական սկզբունք գործադրել գաղափարական առաքելության համար, Արծրունին մոռանում էր մի բան, — որ դա հակառակ է մարդկային բնության: Եկեղեցու վերանորոգությունների հարցում նա պահանջում էր, որ եպիսկոպոսներն ու վարդապետները ամուսնացած լինեն, կուսակրոնությունը համարում էր հակաբնական երեւոյթ: Ինչպե՞ս էր, որ աշխարհական վարդապետության համար նա պահանջում էր կուսություն, հրաժարումն ընտանիքից, կնոջից, երեխաներից:

Եվ այդպիսի անձնուրացություն, այդպիսի ծանր ղոհարերության քանիսնե՞րը կարող էին ընդունակ լինել: Կարող էին, ճիշտ է, լինել անհատներ, բայց դրանց հերոսներ պետք է համարել: Մտավոր քարոզությունը, գաղափարական գործունեությունը այն իսկ հողն է, որի վրա շատ հաճախ բռնկվում է սեր քարոզողի և ունկնդրի կնոջ մեջ: Արծրունին պահանջում էր խեղդել այդ սերը՝ ղոհել նրան: Չենք վիճում, գաղափարի այդքան վիթխարի հերոսներ գուցե և հաճախ պատահեն, բայց օրինք դարձնել այդ բանը, ընդհանրության համար պարտադիր մի կարգ, — այդ անկարելի էր: Եվ մենք պետք է ընդունենք, որ Արծրունին այսքան խիստ պահանջներ դնում էր՝ ճնշված իրականության տակ: 1891 թվականին նա խոստովանում էր, որ մի ժամանակ հայ կնոջ դրությունն այնպես էր, որ հրապարակախոսը նրա վերաբերմամբ քնքուշ լինելու հարկավորություն չէր զգում. հետո էր հայ կինը մտավոր գործունեությունից, նա չէր կարողում, չէր հետաքրքրվում: Եվ հրապարակախոսը, ենթարկված շինելով նրա մեղմացնող ազդեցության, խիստ էր գրում, իր պահանջների մեջ անողոր էր: Բայց հայ կինը միշտ այդ դրություն մեջ չպիտի մնար: Նա սթափվեց, սկսեց առաջադիմել, հասկանալ ու սիրել հայ գրականությունը, հասարակական գաղափարները: Եվ հրապարակախոսը պիտի փոխեր իր կարծիքը նրա մասին:

Մենք, սակայն, պիտի նկատի ունենանք այս հանգամանքը: Անպսակ կույս գործիչների պահանջի մեջ Արծրունին պաշտամունքի՞ կույտի աստիճանին էր հասցնում հասարակական գաղափարները: Գլխավորը, թանկագինը այս է: Մեզ պես մի ազգի մեջ, ուր սկզբից ևեթ թույլ ու հաշմանդամ է եղել հասարակական, ընդհանրական շահերի հասկացողությունը, Արծրունու պես մի գործիչի, հասարակական իդեալների այդ ֆանատիկոսի երևան գալը արդեն մի բախտ էր մեզ համար...

Մշակի» երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների ընթացքում աշխատակիցների, թղթակիցների թիվը գնալով ստվարանում է: Հարստանում է մանավանդ գավառական բաժինը, և Գրիգոր Արծրունին հաճախ դիմում էր գավառներից գրողներին, նրանց ուշադրությունը հրավիրում էր տնտեսական երեւոյթների վրա, ազգաբնակչության կարիքները ուսումնասիրելու ծրագիրներ էր տալիս: Ներքին տեսության մեջ տեսնում ենք Արծրունու բազմաթիվ հողվածները, բայց այս բաժինը այլևս այն ակադեմիական կերպարանքը չունի, ինչպես առաջին տարում, երբ տպագրվում էին ընդհանուր սկզբունքներ բացատրող քաղաքատնտեսական և այլ հողվածներ: Այժմ հողվածներն ավելի մասնավոր, առօրյա, տեղական բնավորություն էին կրում: 1873 թվականի մայիս ամսից «Մշակի» մեջ իբրև թղթակից սկսում է գրել Ալեքսանդր Քալանթարը՝ «Մշակի» այժմյան խմբագիրը: Նա բնակվում էր Բաքվում և իր թղթակցությունների մեջ գլխավորապես ուշադրություն էր դարձնում նավթային արդյունաբերության վրա, որ այն ժամանակները դեռ նոր էր սկսել զարգանալ: Ինքից անցնելով Մոսկվա՝ ուսում շարունակելու համար, Ալեքսանդր Քալանթարը այնտեղից սկսում է ավելի մեծ եռանդով աշխատակցել «Մշակին», մանավանդ յոթանասունական թվականների վերջից:

Նոր աշխատակիցների թվում էր և Հովհաննես Տեր-Գրիգորյանը, որ «Մշակի» երկրորդ տարվանից սկսում է գրել պատկերներ Քիֆլիսի կյանքից: Այդ ժամանակ նա մոտ էր «Մշակի խմբագրությանը, բայց ուսուցչի պաշտոնով գնալով գավառները, թղթակցություններ էր գրում զանազան տեղերից. յոթանասունական թվականների վերջերում, երբ «Մշակը» դառնում է ամենօրյա, Տեր-Գրիգորյանը խմբագրության մեջ աշխատող գլխավոր աշխատակիցներից մեկն է դառնում՝ գրելով գլխավորապես ներքին տեսության հողվածներ, թատրոնական ռեցենզիաներ, երբեմն նաև վիպակներ: «Մշակի» մի քանի առաջնորդողների տակ մենք տեսնում ենք նրա ստորագրությունը:

Նոր աշխատակից էր և Սողոմոն Եղիազարյանը, որ «Մշակի» մեջ զետեղեց մի քանի պատկերներ գավառական կյանքից (նա Երևանյան նահանգի Դավալու գյուղից էր):

Արտաքին տեսության բաժինը նույնպես գնալով հարստանում է: Ծիշտ է, այժմ այլևս այնքան առատ չեն առաջին տարվա խմբագրական տեսությունները, բայց դրանց փոխարեն երևան են գալիս մի շարք թղթակիցներ: Պողոս Իզմայիլյանը Քիֆլիսում չէր, գնացել էր արտասահման և թղթակցություններ էր ուղարկում Փարիզից: Բայց նա երկար շաշխատակցեց «Մշակին»: Նրա տեղ Փարիզից սկսեց նամակներ ուղարկել Հարոն, որ դասախոսություններ էր լսում հայագետ Գյուլտերի մոտ: Նա գրում էր հաճախ, գրում էր շատ, գրում էր ոչ միայն ֆրանսիական կյանքի, այլև մեր ներքին կյանքի հարցերի մասին: Հարոն քանի արտասահմանում էր, մեծ եռանդով էր աշխատակցում «Մշակին», պաշտպանում էր «Մշակի» գաղափարները, Արծրունու արձարձած հարցերին արձագանք էր տալիս իբրև առաջադիմական գրող: Վերադառնալով Քիֆլիս, նա շարունակեց աշխատել «Մշակի» մեջ, թեև ոչ առաջվա եռանդով, մինչև 1878 թվականը:

Արտասահմանյան աշխատակիցների մեջ մեր հիշած ժամանակամիջոցում աչքի է ընկնում և Փիլիպպոս Վարդանյանը, որ գրում էր Շվեյցարիայից: Հաճախ թղթակցություններ գրում էր և բժշկագետ Գ. Քոչարյանը:

Բայց «Մշակը» իր աշխատակիցների թվում ուներ և օտարներ: Քիֆլիսում մի քանի հողվածներ տվեց ուսուցիչ Կարլ Հան, ազգով գերմանացի: Իսկ Գերմանիայից մի ժամանակ թղթակցություններ գրում էին Մյուլլեր և դոկտոր

Յան-Կրիկեն: Վերջինս Արծրունի եղբայրների ուսանողական ընկերն էր և կապված էր նրանց հետ բարեկամական անկեղծ սիրով: Յան-Կրիկեն երկար շաշխատակցեց «Մշակին»։ Նա մեռավ 1875-ին, ծաղիկ հասակում: Նրա մահացուցակը, որ գրեց էր Անդրեաս Արծրունին, «Մշակը» զետեղեց առաջին կրեսի վրա, սև շքանակների մեջ (1876, № 17): Գրիգոր Արծրունին իր կողմից հետևյալ տողերը նվիրեց իր աշխատակցին.

Այս համարը հրատարակելով, մենք գտնվում ենք մի շատ տխուր տպավորության տակ: Մեր սիրելի բարեկամ և աշխատակից Յան-Կրիկենի մահվան անսպասելի լուրը հարուցեց մեր մեջ հետևյալ տխուր մտածմունքները: Մի՞թե նորերը, իրանց պատերազմը չվերջացրած, պիտի գնան, պիտի թողնեն աշխարհը... Մեր ազնիվ բարեկամը, օտար լինելով, հետաքրքրվեց մեզանով, ուզեց օգնել մեզ, սկսեց աշխատակցել մեր նոր լրագրությանը: Եվ նա դեռ շատ երիտասարդ էր, նա գեա կարող էր երկար ժամանակ իր տաղանդը արդյունավոր անել մարդկությանը...»:

Այսքան ջերմ համակրությունը գեպի մի օտարազգի երիտասարդ, որ մի քանի հոգվածներ էր տվել «Մշակին», դարձյալ հասկանալի և բնական է երևում, երբ մենք աչքի առաջ ենք բերում այն հանգամանքները, որոնք շքապատում էին Արծրունուն: Օտարները համակրում էին, սիրում էին, իսկ հայերը: Ինչպես երևում է, հենց այդ տարին էր, որ «Մշակի» շուրջը հավաքված մարդկանց վերջնական գտումը տեղի ունեցավ, հեռացան և նրանք, որոնք դեռ չէին հեռացել: Եվ Արծրունին, ինչպես պետք է ենթադրել, նրանց հասցեին էր ուղղում իր «Դավաճաններ» հոդվածը (1875, № 43): Այդտեղ նա նկարագրում էր մի նոր մարդուն, որ վերջացնելով ուսումը, սկսում է մի գործ և տեսնելով, որ իրան համակրում են համամիտ մարդիկ, սկզբում ուրախանում է: Բայց որքան զարմանում և զայրանում է նա, երբ տեսնում է, որ այդ համամիտները դիմակավորված մարդիկ են, որ փոխանակ նոր ուղղության կուսակից լինելու, նրանք հտադիմական գաղափարներ են պաշտում և հին սերունդից էլ վատ հատկություններ ունեն: Դրանց Արծրունին անվանում էր դավաճաններ: Հիներին պետք է հարվածել, բայց կարելի է գատել: «Իսկ նոր սերունդի դավաճաններին մենք ատելով ատում ենք, և երգվում ենք նրանց միշտ ատելու և մեր բոլոր ուժից հարվածելու և հալածելու»: Եվ նա վերջացնում էր այդ հոդվածը հետևյալ տողերով.

«Հիներից մենք ոչինչ չենք սպասում և ոչինչ չենք էլ սպասում, իսկ զոցանից՝ նորերից սպասում էինք...»

Դիմակներդ լավ չեն ծածկում ձեր երեսը, գիտության, հավիտենական ճշմարտության, ազատամտության և նոր ուղղության դավաճաններ...

Հիներին մենք խղճում ենք, իսկ ձեզ, դավաճաններ, ատելով ատում ենք»:

Եվ իրավ, Արծրունին երբեք չխնայեց դավաճաններին, երբեք չդադարեց նրանց հալածելուց: Նա գիտե՞ր անողորմ կերպով դուրս շարտել ամեն մեկին, որ դավաճանում էր իր դրոշակին, իր ուղղությանը: Այս առիթով էլ շատ ու շատ զանգատներ են լսվել մեզանում: Բայց կարելի՞ է մեղադրել Արծրունուն: Հիշենք քիչ վերելում նրա բերած պահանջները: Հասարակական գործունեության նվիրված մարդուց նա պահանջում էր կատարյալ անձնազոհություն. նա չէր թույլ տալիս, որ հասարակական գործիչը իրավունք ունենա անձնական երջանկության մասին անզամ մտածելու: Այսքան վեհ, այսքան սրբազան բարձրության վրա դնելով հասարակական օգուտը, նրան ծառայելու անհրաժեշտությունը, կարող էր Արծրունին ուրիշ կերպով վարվել դավաճանների

ևս: «Դավաճանները միշտ ավելի ատելի են, քան պարզ թշնամիները», — ասում է նա: Եվ ո՞վ կարող է ուրանալ այս ճշմարտությունը...

Եզած աշխատակիցների, հավատարիմ մնացածների մեջ մենք առանձնապես պիտի խոսենք երկուսի մասին՝ Անդրեաս Արծրունու և Բաֆֆիի մասին:

Անդրեասը, ինչպես տեսանք, Թիֆլիս եկավ 1874-ի սկզբում: Ներսիսյան պարտի տեսությունը չհաջողվեց, և երիտասարդ գիտնականը, մի տարի մնալով Թիֆլիսում, մեծ եռանդով աշխատակցում էր «Մշակին»: Գրում էր նա պիսակորապետ իր մասնագիտության վերաբերված հոդվածներ, բայց միանգամայն խորթ չէր մնում հասարակական ընթացիկ հարցերին: Ամառը Անդրեաս Արծրունին մի երկար ճանապարհորդություն կատարեց Կովկասի գաղափար կողմերում՝ բնական հարստությունները ուսումնասիրելու համար. այցելեց Լոռին, Գանձակի գավառը, գնաց Բաքու, Դաղստան... Իր այցելած յուր տեղերից նա թղթակցություններ էր ուղարկում «Մշակին», որոնց մեջ նկարագրում էր իր հետազոտությունների արդյունքները: Առանձին ուշադրություն դարձրեց նա Ղուբայում տորոնի արդյունագործության վրա: Տորոնը Կովկասի արդյունագործության մեջ շատ խոշոր դեր է կատարել, բայց յոթանասնական թվականների սկզբից սկսել էր սաստիկ ընկնել, որովհետև գտնվել էր ալիզարին անունով դույնը, որ իր էժանությունը դուրս էր մղել տորոնը: Կարգում արդեն տալանապ էր տիրում, և Անդրեաս Արծրունու, իբրև մասնագետի, կարծիքներն ու խորհուրդները մեծ նշանակություն ունեին արդյունագործողներին համար: Եվ Անդրեասը խղճմտավոր հետազոտություններ կատարեց, հայտնեց իր եզրակացությունները «Մշակի» մեջ: Բացի դրանից, նա սպառնեց մի շարք հոդվածներ կովկասյան հանքերի մասին, ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ծծումբի արդյունագործությունը կարող է հարստության մեծ աղբյուր դառնալ Կովկասի համար: Թիֆլիսում, ինչպես տեսանք, նա դասախոսություն էլ կարդաց ծծումբի մասին:

Իր հայրենիքում երիտասարդ գիտնականը շատ օգուտներ կարող էր տալ իր մասնագիտական պատրաստությամբ: Մեր երկիրը այդպիսի ուժերի կարողություն ուներ՝ իր բնական հարստությունները երևան հանելու համար: Բայց Անդրեաս Արծրունին մեզանում տեղ չգտավ՝ չնայած իր պատրաստականության, աշխատելու հոժարության: Եվ չգտնելով իր ուժերի, իր ընդունակությունների գործադրության տեղ և հարմարություն, նա հեռացավ մեր անհյուր-բեկալ երկրից, գնաց աշխատելու քաղաքակիրթ մարդկության մեջ, իր հայրենիք դարձրեց Գերմանիան, ուր նրա համար պատրաստված էր հայտնի գիտնականի փառքը...

Ճանապարհ դնելով իր եղբորը, Գրիգոր Արծրունին իր գառը զանգատները թափեց՝ «Գաղթենք, միշտ գաղթենք» առաջնորդող հոդվածի մեջ (1875, № 10):

«Դարձյալ մի երիտասարդ, եվրոպական ուսում ստացած, թողնում է մեր երկիրը և գնում է օտար երկրներ՝ իր ստացած հմտությունները գործ դնելու համար:

Մեր երիտասարդները գալիս են մի քանի ժամանակով, տեսնում են, որ գործադրություն չկա իրանց հմտություններին, — և կրկին գնում են:

Ո՞վ է մեղավոր...

Իրանք:

Նրանք պիտի գիտենային, որ մեր Լրկրում ոչ թե միայն հարկավորություն կա բուն գիտության, բայց և տեխնիկական արհեստները գրեթե բոլորովին գործադրություն չեն գտնում մեզ մոտ: Մեր երկրում, ինչպես մենք մի անգամ

անացինք, գործ են դրվում միայն ամենաստոր արհեստները՝ դերձակություն, կոշիկարություն... ինչի՞ այդ շտվորեցին...

Եկան գինեգործներ, — ի՞նչ հարկավոր են մեզ գինեգործներ. եկան գյուղատնտեսներ, — ի՞նչ հարկավոր է մեզ գյուղատնտեսություն. եկան բարձր բազմարվեստյան դպրոցում ավարտած երկրագործներ, — ի՞նչ հարկավոր է մեզ երկրագործություն... վերջապես եկան հանքաբաններ, — ինչի՞ն են պետք մեզ հանքաբաններ:

Ուզում եք մնալ ձեր սիրելի հայրենիքում, կամենում եք, որ ընտանիքը ձեզ գնահատեր, որ հասարակությունը ձեզ ընդուներ, — պիտի սովորեիք ամենաստոր արհեստներ, որ ոչ բուն գիտություն, ոչ էլ նրա տեխնիկական գործադրության վրա են հիմնված, — պիտի սովորեիք՝ կոշիկներ կարել, շոր ձել ու կարել, ձի նալել...

Իսկ դուք վերադառնում եք ճշմարիտ գիտությունով, վերադառնում եք տեխնիկական, բազմարվեստյան հմտություններով... ումի՞ց եք սպասում օգնություն... հասարակությունի՞ց, ծիծաղելի բան է: Գուցե, կարծում եք, որ այդ կամ այն աղան, որ այս կամ այն հաստափորը կխոստովանի, որ դուք նրանից ավելի եք հասկանում, որ կտա ձեզ գործ՝ մինը իր խաղողի այգիներին, մյուսը իր ֆաբրիկայի կառավարությունը... սխալվում եք:

Եվ չկա էլ ոչինչ կառավարելու. ամենալավ կապիտալիստները այնպես են կառավարել իրանց կայքը, որ այժմ մեկը չկա, որ գիտենար՝ ինչ ունի, ինչ չունի...

...Չունենք հարստություն, իսկ ունենալով գիտնական, տեխնիկական հմտություններ, ավելորդ եք դեռևս մեզ համար... մի ամենաստոր և ապրուստոր ապահովող արհեստն էլ չգիտեք... պետք է կրեք ձեր արած սխալմունքի պատիժը...

Սխալմունք, — ո՛չ, հանցանք: Այդ հանցանքը նորանումն է կայանում, որ դուք հավատացիք մեր հասարակության խոստումներին, և չգիտեիք, որ խաբված եք...

Գուք սխալվեցաք, պետք է կրեք ձեր արած սխալմունքի պատիժը, — ե պետք է զաղթեք...

Երևի հայի հակատագիրն է գաղթել, անդադար գաղթել... որովհետև հայ հասարակությունը վճռել է մնալ անշարժ, երդվել է հավիտենական անշարժություն գաղափարին...

Իսկ ինչ որ հայտնվում է նրա մեջ նոր, քարմ, առաջ մղող, զարկ տվող, — նա պետք է դուրս գցվի, արտոքվի, ժայթքվի նրա միջից...

Մեր ժամանակակից հայ հասարակությունը կարծում է, որ կարող է հայ մնալ միայն մի պայմանով, այն է՝ անշարժ մնալով: Իսկ եթե մի որևէ շարժում, առաջադիմություն ընդունեց, — նա այլևս իրան հայ չէ համարում...

Այս է հայի պատմական հատկությունը:

Հետևեցեք, հետևեցեք այդ գովելի հատկությանը, գաղթել տվեցեք, ստիպեցեք ձեր վարձուրով գաղթել օտարության մեջ այն բոլորը, ինչ որ բաղաձուրությամբ ձեր մեջ հայտնվում է՝ նոր, քարմ, առողջ, բարոյապես և մտավորապես բարձր...

Բայց շմոռանաք, որ վերջը դուք ինքներդ կպատժվեք այդպիսի հակաընկերական վարձուրի համար...

Գիտե՛ս, հասարակություն, քո վարձուրը քո որդիների վերաբերությամբ ինչպես է անվանվում՝ հասարակական անձնասպանություն:

Այն ժամանակ, երբ Արժրունին գրում էր վրդովված սրտից բխած այս

կծու, բայց վարմանալի ճշմարիտ տողերը, Քիֆլիսից նույն գաղթողի դրությամբ հեռացել էր և «Մշակի» մյուս մշտական աշխատակիցը՝ Բաֆֆին: Վաճառականի խառնություն ծառայելը այլևս անկարելի էր դարձել հուսատու գրողի համար. «Մշակի» շրջանը այն աղղեցությունն էր արել նրա վրա, որ նա թողեց խառնություն: Բայց գրական աշխատանքը դեռ ոչ մի հայ գրողի համար ապրուստի միջոց չէր դարձել. Բաֆֆին ստիպված եղավ ուսուցչության հտեից գնալ և նախապարհակց Քավրիզի ուսուցչի պաշտոնով: Բայց իր կապը չկորցրեց «Մշակից», և Պարսկաստանից էլ շարունակեց իր աշխատակցությունը: Ի՞նչ էր նա տվել մինչև 1875 թվականը:

Վերջացնելով Պարսկաստանի նամակները «Մշակի» երկրորդ տարվա մեջ, Հակոբ Մելիք-Հակոբյանը երկար ժամանակ երևան չէր գալիս լրագրում Բաֆֆի ստորագրությամբ: Դրա փոխարեն մենք հաճախ հանդիպում ենք Մելիքզադեին: Բայց նա երբեք տարվա ընթացքում կարծես չէ զգում իր իսկական կոչումը՝ վիպագրությունը, թեև 1874-ին առանձին գրքով հրատարակել էր «Փունջի» երկրորդ հատորը, որի մեջ կային փոքրիկ գեղեցիկ վեպիկներ: «Մշակի» մեջ նա ամբողջ այդ ժամանակամիջոցում ունի «Մի օրավար հող» պատկերը միայն: Մնացած նրա գրվածքները գրական-հրապարակախոսական բնավորություն ունեին: Թվում էր, թե նա հեռանում էր վիպագրությունից և իր կոշուկը որոնում էր քննադատական և հրապարակախոսական հարցերի մեջ: Նշանակության արժանի է, որ Բաֆֆին այդ ժամանակամիջոցում առանձին ուղադրություն է դարձնում թուրքահայերի գործերի վրա: Մի առանձին աշխույժով նա հետևում էր Թուրքիայի կյանքին և «Մշակի» մեջ ընդարձակ հոդվածներ էր գրում, որոնց նյութը թուրքահայերի ընթացիկ հրատապ հարցերն էին. Հասունյան խառնակությունները, Խրիմյանի պատերաբությունը և նրա շուրջը գործող կուսակցությունները, Վանի տխրահռչակ Պողոս վարդապետը, Սրվանձտյանի գրական աշխատությունները և այլն:

Գեղարվեստական բաժինը «Մշակի» մեջ դեռ թույլ էր: Հովհաննես Տեր-Գրիգորյանի, Սողոմոն Եղիազարյանի և ուրիշների պատմվածքները թույլ են, անմշակ են, շատ-շատ միայն բարբերն են կարողանում պատկերացնել: Վիպագրությունը առհասարակ մեր գրականության մեջ դեռ մտածելու նյութեր չէր տալիս, ունակ էր տիպեր և կյանքի հանգամանքներ չէր լուսաբանում: Դեռ իր առաջնության մեջ էր թատերագրությունը: Սունդուկյանի «Քանդած օջախը» և «Էլի մեկ զոհ» նոր-նոր հայտնություններ էին մեր գրականության մեջ և Արժրունին մեծ հաճությամբ զբաղվում էր տաղանդավոր թատերագրողի ստեղծած տիպերով թե իր առաջնորդողների, թե ֆելիետոնների մեջ: Բեմը մերկացնող հրապարակախոսության դաշնակիցն էր դառել: «Մեր բարձր ուսում ստացած Օսեփներ», «Հին և նոր սերունդի պատերազմը բեմի վրա» առաջնորդողները գրված են «Քանդած օջախի» և «Էլի մեկ զոհի» առիթով:

Նկատենք այստեղ, որ «Մշակի» մեջ առաջին տարվանից առանձին աչքի ընկնող երևույթ է դառնում գրական քննադատությունը: Մատենախոսական հոդվածները բազմանում են մասնավոր հետազոտարիներում: Այդ բաժնում ամենից շատ աշխատում էր Բաֆֆին. նա գրել է քննադատական հոդվածներ և Սունդուկյանցի պիեսների մասին:

Իսկ ոտանավորներ «Մշակը» երբեք չէր տպագրում:

Հասարակական շարժում Ռուսաստանում: Սլավոնական երկիրներ և ազատաբար հոսանք: Նոր շրջան մեր կյանքի մեջ: Բալկանյան դեպքերը: Արժու- նին բուրժուական շարժումի մասին: Ամենքը հարձակվում են Արժուճու վրա: Պատմական տեսություն. գավառների ձգտումը դեպի Ռուսաստան: Պատրիար- քաբանի և ազգային ժողովի գործերը: Արժուճու նշանաբանը՝ լույս միայն Ռուսաստանի վրա: «Մեղուի» հակառակությունը: «Փորձ» հանդեսի դատողու- րյունները: Ի՞նչ է կղերականությունը: Կ. Պոլսի մամուլը Արժուճու դեմ: Գաղ- րականության հարց. «Մենք էլ հրեաներ ենք»: Ներսես պատրիարքի շրջա- րականը, Արժուճու առաջին հարձակումը Ներսեսի դեմ: Կ. Պոլսում սարկված առասպել Կովկասի մասին: «Մասիսի» հողվածը: «Այժմ կամ երբեք»: «ВОСТОЧ- НЫЙ ВОПРОС» բողոշուրը: Թիֆլիսի հայերի ուղերձը: Դեսպանաժողով: «Ազգա- սիրական խաբերայություն»: Վանի հրդեհը: Հայի հոգեբանությունը:

Առաջադեմ ազգերի կյանքը շատ անգամ ներկայացնում է մի պատկեր- որը մենք կարող ենք նմանացնել ծովի մակընթացության և տեղատվության: Տեսնում ենք այդ կյանքի մեջ ամբողջ շրջաններ, երբ բարձրանում, լեռնանում է գաղափարական շարժումը, ողողում է առօրյա մոխրագույն իրականության բոլոր շարքերը, երբ ազգի բոլոր ստեղծագործական ընդունակությունները լարվում են, միանում են մի մեծ պաշտամունքի առաջ և միաբան գործակցու- թյամբ իրագործում են ամբողջ մարդկության համար սուրբ մի միտք: Այս մակընթացություն է, տենդային եռանդի այն լարումը, որ կլանելով ազգի ամ- բողջ ուշքն ու միտքը, տանում է նրան դեպի համաշխարհային մեծագործու- թյունները՝ արհամարհել տալով ամեն մի զրկանք, ամեն մի զոհողություն: Եվ շարունակվում է այդ շարժումը, մինչև որ գալիս է տեղատվությունը, և ուռած գաղափարականությունն իջնում է, ընկնում, որպեսզի դարձյալ առօրյա սովորական կարգը գա տիրելու:

Մենք էլ, ռուսահայերս, մեր կյանքի մեջ ճաշակել ենք այդպիսի մի երկու շրջանների նվիրական ազդեցությունը: Ճաշակել ենք ասում, որովհետև մենք, իբրև մի փոքրիկ ազգ, որ ենթարկված է մեծ ազգերի մտավոր և կուլտուրական ազդեցության, չէինք կարող ինքնուրույն, անկախ, ինքնագլուխ շարժումներ սկսել: Մենք միշտ յուրացնում էինք, միշտ ենթարկված էինք. մեր դասատուն, մեզ ոգևորողը մեզ վրա տիրող մեծ ազգի կյանքն էր: Տասնիններորդ դարում Ռուսաստանը երկու անգամ գաղափարական մեծ շարժումներ է սկսել, և այդ երկու շարժումներն էլ արձագանք են գտել մեր կյանքի մեջ:

Վախժանական թվականների մեծ շարժման հետ մենք արդեն լավ ծանոթ ենք: Ներքին բարեկարգության, ինքնաճանաչության, ժողովրդական դատի այդ գե- ղեցիկ շարժումը քնած հասարակության մեջ հարուցեց գաղափարական գոր- ծիչներ, առաջադիմության առաքյալներ. Նազարյանց, Նալբանդյանց, Գամառ- Քաթիպա, Շահապիզ այդ ժամանակների ծնունդներն են, Գրիգոր Արծրունիի վախժանական թվականների իդեալների վրա ստացավ իր առաջին դաստիար- ակությունը:

Բայց վախժանական թվականներին մենք դեռ նոր-նոր էինք սկսում զգալ, սպրեւել. շարժումը մասնավոր ազդեցություն արավ մեզ վրա: Այդպես չէր երկ- արող մեծ շարժումը, որ սկսվեց Ռուսաստանում 1875—1876 թվականներին: Վախժանական թվականների շարժումը ազատեց միլիոնավոր ճորտերին Ռու- սաստանի խորքերում, իսկ յոթանասունական թվականներին նույն այդ ազատ- ված Ռուսաստանը ցույց է տալիս համաշխարհային նոր պատմության մեջ լույս հազվադեպ մի մեծագործություն. նա ահագին շարժում է սկսում՝ մի բարբարոս պետության լուծի տակ ճնշված ազգերը ազատելու համար: Կանգ- եած համարյա ամբողջ Եվրոպայի թշնամական, կասկածոտ, սառն վերաբեր- մունքի առաջ, նա մենակ, սեփական ուժերի վրա հույս դրած, սկսում է մի ուղիտացիա հանուն արդարության, մարդկային իրավունքների, քրիստոնեա- կան գաղափարի. ռուս ժողովուրդը բորբոքվում է ազատաբար տենչանքներով, Գրապարակ է հանում իր նյութական և բարոյական ուժերի մի ահագին պա- յար, և ալևոր, բարբարոսական Արևելքում նրա ջանքերով տեղի են ունենում ուժավոր դեպքեր, որոնք կերպարանափոխում են շատ փոքր ազգերի պատ- մությունը:

Այդ խոշոր շարժումը ավելի մեծ արձագանք է տալիս մեզանում, և մեր կյանքի մեջ առաջ է գալիս մի շատ նշանավոր, շատ փայլուն շրջան, որ մենք կարող ենք անվանել 1876—1883 թվականների շրջան: Ոչ միայն տասնիննե- րորդ դարում, այլև նրանից էլ առաջ, դարերի մի երկար շարքում մենք չենք կարող գտնել մեր ազգային կյանքի տարեգրությունների մեջ այդքան փայլուն մի յոթնյակ: Այդ ժամանակը մի անկյունաքար է կազմում մեր պատմության մեջ. մեր ժողովրդական կյանքը ստանում է մի նոր ուղղություն՝ ասպարեզ հանելով մեր բոլոր մտավոր կարողությունները: Գրականության, մամուլի, գաղափարական գործի, թատրոնի, հասարակական հիմնարկությունների համար դարգացման, բարգավաճման ոսկե շրջան է դա: Հրապարակախոսությունը ավելի ևս կրակոտ թափ է ստանում, դեղարվեստական գրականությունը մեծ թռիչք է անում. Գամառ-Քաթիպան իր նոր երգերն է գրում, Բաֆֆին մեր նոր վիպադրությունն է սկսում իր «Ջալալեդդինով», «Խենթով», «Դավիթ-բեկով», «Կայծերով»: Մենք հիմնում ենք ամենօրյա լրագրություն, մամուլի նոր օր- դաններ են ծնվում: Հայոց թատրոնը Ադամյանի փառավոր շրջանի մեջ է մտնում: Հիմնվում են բարեգործական և հրատարակչական ընկերություններ, բազմանում են գաղափարները, մանկավարժական հարցերը վեճերի նյութ են դառնում, ուղղություններ են ստեղծում, ուսուցչական ժողով գումարում: Ոչըն- չանում է անջրպետը ռուսահայերի և թուրքահայերի մեջ, և Հայաստանի գա- վառների կրթական գործը դառնում է արևելյան և արևմտյան միացած, մոտե- ցած հայության ընդհանուր սուրբ գործը: Որքա՞ն եռանդ ժողովրդի դարկերակի մեջ, որքա՞ն հյուսիս նրա կյանքի մեջ. գաղափարներ, ձգտումներ, ապագայի վարդապետն հույսեր,— այս եռուն նյութերից էր խմորվում շարժումը:

Հատորներ են հարկավոր այդ յոթնամյակի ամբողջ պատմությունը ներ- կայացնելու համար: Բայց այդ պատմության նույնիսկ համառոտությունն ան- դամ այժմ չէ կարելի տալ օրինավոր կերպով. դեռ ժամանակը չէ եկել, դեռ հանգամանքները չեն թույլ տալիս ազատ ու համարձակ մտնել այդ շրջանի մեջ: Մեր ընթերցողների ուշադրությունը հրավիրելով այս տողերի վրա, մենք կփորձենք, որքան հնարավոր է, գտնել համառոտ կերպով հիշատակել դեպքերը և եղելությունները:

Ապագա պատմագիրը, կասկած չկա, կվկայե անաշուտությամբ, որ այդ նշանավոր ժամանակների ամենախոշոր գործիչներից մեկը Գրիգոր Արծրունին

էր: Եվ այս իրողութիւնը արձանագրելու համար նա կունենա իր առջն փաստերի մի ամբողջ կույտ: Դա «Մշակ» լրագիրն է: Նշանավոր յոթնամյակի ամբողջ պատմութիւնը որքան առատ նյութեր ունի «Մշակի» հատորներին մէջ, այնտեղ արձանագրված է յուրաքանչյուր քալը, յուրաքանչյուր միտք, գիտական վորութիւն, դեպք: Ինքը, Արծրունին, իր հետագա գրվածքներից մեկում^{*} ասում է, որ այդ ժամանակներում «Մշակը» հարուցեց այնպիսի հարցեր, որոնց հետո երբեք այլևս չկարողացավ հարուցանել», որ «առաջնորդող հոգվածը ամենից մեծ դեր էր խաղում և ամենից շատ տեղ էր բռնում «Մշակի» համարներում»: Դա, ասում է Արծրունին, «Մշակի» ամենափայլուն ժամանակն էր:

Հայտնի է, որ Ռուսաստանի շարժումը սլավոնասիրական խիստ զույն ունեւր: 1875 թ. ապստամբութիւն ծագեց Բոսնիա և Հերցեգովինա սլավոնական նահանգներում. թուրքաց կառավարութիւնը, իր վաղեմի սովորութեան հետեւելով, սկսեց արշաւն և գաղանթութիւնների մէջ խեղդել այդ ապստամբութիւնը: Բայց այս անգամ զոհերի ձայնը անլսելի չմնաց, որովհետև սլավոն աշխարհի հզոր պաշտպան հանդիսացավ Ռուսաստանը: Եղելութիւնը քաղաքական մեծ հարցի կերպարանք ընդունեց: Ռուսաստանը դիմեց եվրոպական դիպլոմատիայի աջակցութեան և ամեն ջանք գործ դրեց, որպէսզի հարցը խաղաղ լուծում ստանա և ապստամբութեան տեղերում մտցվեն ռեֆորմներ, որոնք պիտի ապահովեն քրիստոնեաների կյանքն ու ստացվածքը:

Մինչդեռ դիվանագիտութիւնը իր գրագրութիւններն էր սկսել, մինչդեռ առաջարկութիւններ էին անում Թուրքիային և նրանից բացատրութիւններ էին ստանում, Ռուսաստանում սկիզբ առավ և լայն շարժում տարածվեց ապստամբներին օգնութիւն հասցնելու գործը: Կրագիրներում տպագրվեցին Սերբիայից, Չեռնոգորիայից եկած կոչերը, որոնց մէջ սրտաշարժ գույներով նկարագրվում էին ազատութեան համար գեներ վերցրած սլավոնացիների դրութիւնը, երկրի ավերումը, արշունահողութիւնները, թուրքական գաղանթութեանները: Օգոստոսի կեսին Սլավոնական Բարեգործական Ընկերութիւնը սկսեց գործել, նվերներ հավաքել. ազգաբնակչութեան բոլոր խավերի մէջ նա ջերմ համակրանք գտավ և շուրս ամսվա ընթացքում կարողացավ Բոսնիա և Հերցեգովինա հասցնել մոտ 400 հազար ռուբլու օգնութիւն: Այդ օգնութիւնից ավելի կարևոր էր այն, որ Ռուսաստանի մէջ կազմվում էր հասարակական կարծիք, թե չպետք է ոչինչ զոհողութիւն խնայել՝ տանջվող եղբայրներին թուրքաց լուծից ազատելու համար:

Խաղաղասեր Ալեքսանդր Երկրորդը աշխատում էր փոխադարձ համաձայնութիւնների և զիջումների միջոցով կարգավորել արևելյան հարցը, որ սպառնում էր ահապար բռնկումով տակնուվրա անել ամբողջ քաղաքական աշխարհը: Սակայն դիվանագիտական ջանքերը զուր էին անցնում, Եվրոպան սովորել էր կասկածով նայել Ռուսաստանի վրա, ենթադրելով այս անգամ էլ, թե սլավոնասիրական շարժումը ծածկում է ռուսաց փառասիրական-նվաճողական ձգտումները: Անգլիան սկսեց դիմադրել Ռուսաստանի պահանջներին, և թուրքամուր Դիզրայլի կառավարութիւնը ամեն քայլում զգալ էր տալիս սուլթանին, որ նա մենակ չէ և կարող է վստահութեամբ առաջ տանել ձգձգումների, անպտուղ խոստումների քաղաքականութիւնը:

Իսկ դեպքերը Բալկանյան թերակղզում զարգանում էին ճակատագրական ընթացքով և ավելի ու ավելի արժարժում էին այն հրդեհը, որ վառվել էր Բոս-

* «Մշակ», 1889, № 5:

նիա-Հերցեգովինայում: Եկավ 1876 նշանավոր թվականը, նշանավոր այն տեղ ցնցումներով, որոնց ասպարեզը Թուրքիան էր: Ռուսաստանի ետանդուն միջամտութիւնը վառեց մահմեդական ֆանատիկոսութիւնը: Կարնանը եվրոպական Թուրքիան արշունոտվեց: Կ. Պոլսում գահընկեց եղավ և սպանվեց սուլթան Աբդուլ-Ազիզը. սպանվեցին թուրք մինիստրներից երկուսը. Սալոնիկում մահմեդական ամբոխի ձեռքով շարաշար սպանվեցին եվրոպական երկու լուսաւորուհիներ. Բուլղարիայում ապստամբութիւն բարձրացավ, և թուրքերը այնտեղ այնպիսի զարհուրելի գաղանթութիւններ գործեցին, որ սարսափի աղաղակ բարձրացավ Եվրոպայում, և պետական մեծ գործիչ Գլադստոնը սկսեց իր հռչակավոր արշավանքը Դիզրայլի թրքամուր մինիստրութեան դեմ, որ բարբարոս թուրքերի պաշտպան էր հանդիսացել և չէր թույլ տալիս, որ քրիստոնեաները ազատվեն մոնղոլական անիծված լծից:

Արևելքի հրդեհը այլևս ոչ մի կերպով չէր կարելի հանգցնել: Դեպքերը հաջորդում էին իրար շարժեցնող արագութեամբ: Ամառը Սերբիան և Չեռնոգորիան պատերազմ հայտարարեցին Թուրքիային: Աբդուլ-Ազիզի հաջորդ սուլթան Աբդուլհեմիտը նույնպէս գահընկեց եղավ և փակվեց Ստամբուլի պալատներից մեկում իբրև խեղագար: Ռուսաստանի համակրութիւնը դեպի ապստամբված և պատերազմող սլավոնները ահագին շարժեց ընդունեց. հասարակական կարծիքը արման ծայրահեղ աստիճանին հասավ. խումբ-խումբ կամավորներ թափվեցին Սերբիա՝ իրանցարշունը նվիրելու ազատութեան գործին: Դա մի ամբողջ իրաւակրաց արշավանք էր հանուն քրիստոնեութեան, հանուն արդարութեան և ժողովրդային նվիրական իրավունքների:

Որքան էլ եվրոպական պետութիւնների համար ցանկալի էր, որ արևելյան արշունոտ հարցը սուր կերպարանք չընդունէ, չպահանջէ իր արմատական, միակ հնարավոր լուծումը քրիստոնեաների ազատութեան միջոցով, դեպքերը անհամեմատ զորեղ հանդիսացան, և արշան ու արտասուքների իրականութիւնը խլացրեց միջազգային քաղաքական հարցերը, դառնալով ուշադրութեան և ընդհանուր հոգացութեան միակ առարկա: Ռուսաստանը անտարբեր չէր, և ոչ ոք չէր կարող խեղդել արևելյան հարցը: Ալեքսանդր II կայսրը բոլորովին արևակալ էր համարում ծածկել, որ իր կամքն է մարդավայել կեցութիւն ստեղծել Թուրքիայում քրիստոնեաների համար. դա Ռուսաստանի պատվի, հեղինակութեան հարց էր դարձել, և նահանջման ճանապարհ ալլևս չկար: Կայսրը գործում էր համբերութեամբ, նա ամենից առաջ ուզում էր, որ արևելյան հարցի արդարացի լուծումը կատարվի եվրոպական պետութիւնների համաձայնութեամբ. իսկ եթէ եվրոպական համաձայնութիւնը անկարող կլինի իրականացնել քրիստոնեութեան և մարդկայնութեան պահանջները, այն ժամանակ Ռուսաստանը կգործէ մենակ, իր սեփական միջոցներով:

Այս հաստատակամութիւնը, այս բացարձակ, անդառնալի վճիռը այլևս ոչ մի կասկած չէր թողնում, որ արևելյան հարց անունը կրող դարավոր հանգուցը միայն ռուսաց սրով պիտի կտրվի: Թուրք-սերբիական պատերազմի ժամանակ արգեն մի ավելի մեծ, ավելի ահապար պատերազմի հոտ էր փչում՝ ռուս-թուրքական պատերազմի հոտը: Թեև դեռ դիպլոմատիան շարունակում էր ջանքեր թափել, բայց Ռուսաստանը, հույս չունենալով ոչ Եվրոպայի բարյացակամութեան, ոչ էլ Թուրքիայի խոստումների անկեղծութեան վրա, իր պատրաստութիւններն էր տեսնում: Զորքը պատերազմական դրութեան մէջ դրվեց: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը նայում էր այդ մեծ պայքարին, որ մղում էր քրիստոնեական խաչը մահմեդական կիսալուսնի դեմ: Թե որքան մեծ էր հետաքրքրութիւնը, կարելի է եզրակացնել հենց նրանից, որ, ինչպէս

հաշվել էին լրագիրները, երկու տարվա ընթացքում այլևայլ երկրների մուլտյա տեսան մոտ 12,000 բրոշյութներ և գրքեր՝ նվիրված արևելյան հարթի հսկ որբան էին գրում արբերական հրատարակությունները...

Հայ լրագիրներն էլ, իհարկե, արնագանք էին տալիս այդ ընդունալի շարժման: Խոսքը միմիայն բալկանյան սլավոնների մասին էր, Եվրոպայի թուրքիայի սահմաններից դուրս չկար անջվող քրիստոնյաների: ազատության հարց: Եվ ահա ամբողջ հայ մամուլի մեջ «Մշակը» գրավում է մի բացառիկ դիրք՝ բարձրացնելով և արժարժեցնելով թուրքահայերի հարցը: Արժրունին սկսում է իր կրակող առաջնորդողների շարքը, առաջնորդողներ, որոնց նման ահագին դեր կատարած լրագրական հոգվածներ մեղանում չեն եղել և որոնք Արժրունի գրական գործունեության փառքն ու պսակն են կազմում:

1876 թվականին, երբ ամբողջ Արևելքը այնքան խոսեցնել էր տալիս ի մասին, երբ հասունանում էին և իրանց լուծման էին հասնում ազգերի ազատության մեծ խնդիրները, «Մշակը» դեռ շաբաթաթերթ էր: Արժրունին գե հազար բաժանորդի էր սպասում, որ շաբաթը երկու անգամ հրատարակել լրագիրը: բայց այդ թիվը չկար, իսկ ժամանակը այնքան պահանջում էր ավելի հաճախ երևալ, ավելի շատ խոսել իր մասին: Այդ պահանջը շատ լավ էր զգում Արժրունին և նա վճռեց շաբաթը հազար բաժանորդի, այլ հույս գնե անձնական զոհողությունների վրա: Սակայն շաբաթը երկու անգամ կարելի է հրատարակել միայն հաշորդ՝ 1877 թվականից, իսկ մինչև այն պետք էր բավականանալ շաբաթաթերթով: Եվ պետք է խոստովանել, որ շաբաթը մի անգամ խոսելով էլ Արժրունին կարողացավ մեծ ազդուկ և իրարանցում բարձրացնել: Նրա դեմ ղինվեց ամբողջ հայոց մամուլը թե՛ թիֆլիսում, և թե՛ Կ. Պոլսում: բայց նա իր փոքրիկ շաբաթաթերթով առաջ էր տանում մի հասթական պրոպագանդա՝ սաստիկ ազդելով ընթերցողների վրա թե՛ մեզ մոտ և թե՛ թուրքիայում:

Դեռ ապրիլ ամսից Արժրունու ուշադրությունը գրավում էր այն հանգամանքը, որ թուրքիան անբավական տարրերի մի խառնարան է դարձել: Արբավական են ամենքը, անբավական են ոչ միայն քրիստոնյաները, այլև մանդակալանները: Ոչ ոք չէր կարծի, որ երկու փոքրիկ նահանգների (Բուսիս, Հերցեգովինա) ապստամբությունը այսքան խոշոր հետևանքների կհասցնե այսքան պարզ կերպով ցույց կտա աշխարհին, որ օսմանների պետությունը քայքայման է հասել: Բոլոր գրվածների համար ամենահարմար միջոց էր մարդկային իրավունքներ պահանջելու: նույնիսկ Կ. Պոլսի սոֆթաները բարձր կարգություն, սահմանադրություն են պահանջում: Եվ այդ ժամանակ լուս ա անգործ էր միայն մի ազգ՝ հայերը, որոնց թիվը հասնում էր երեք միլիոնի: Սա անբնական էր թվում Արժրունուն. նա միայն այն էր ցույց տալիս, որ հայերը անասնական դրություն են հասել իրանց դարավոր ստրկության միջոցով: Պետք է որ հայերն էլ ձայն բարձրացնեն մյուս քրիստոնյաների նման:

«Մի՞թե վերջապես թուրքահայտակ հայերը չեն հասկանա, որ թուրքիայի այժմյան անմխիթար դրությունը այնքան հարմար է մարդկային իրավունքները պահանջելու համար, որ դուցե դարերով այդ տեսակ հարմար դրությունը դարձյալ պատահելու չէ: Ամոթ կլինի հայերին, եթե նրանք իրանց իրավունքները պաշտպանելու և նոր իրավունքներ սեփականացնելու համար ձայն չեն բարձրացնի, մինչև որ թուրքիային հպատակ այլ քրիստոնյա ազգություններ իրանց անձն են զոհում, իրանց արյունն են թափում ազատությունը մեզ բերելու համար, մինչև որ մահմեդականներն անգամ ոտքի են կանգնում սերունդներից սահմանադրություն պահանջելու համար»:

Թե այն և թե ուրիշ այս տեսակ տողեր նարսափի և դայրոյթի անդադակ բարձրացրին մեր մամուլի մեջ: Արժրունին քարոզում է ապստամբություն, — սուրմ էին մեր լրագիրները: Արժրունին ուզում է կոտորել տալ թուրքիայի լայերին, մինչդեռ նրանք, այդ հայերը, խաղաղ ապրում են իրանց համար, արտոնություններ են վայելում և թեպետ գավառներում նրանց հարստահարում են քրդերը, բայց թուրք կառավարությունը այդ բանի մեջ մեղք չունի, նա բարեացկամ է դեպի հայերը:

Սակայն Արժրունին իր ասածն էր պնդում: Եվ նա իրավունք ուներ, քանի որ նրա տեսակետը միանգամայն ճիշտ էր և համապատասխանում էր իրականության:

Մենք արգեն տեսանք, որ Արժրունին հենց սկզբից թուրքահայերին բաժանում էր երկու մասի՝ Կ. Պոլսի և գավառներ: Ըստ երևույթին, այս երկու մասերը մի ժողովուրդ, մի տեսակ կացություն պիտի ներկայացնեին: Բայց իրապես դրանք միմյանցից սաստիկ տարբերվող մասեր էին: Կ. Պոլսը մի անտված էր, մի գաղութ. այնտեղ, ճիշտ է, հայերը ունեին համեմատական բարեկեցություն, ազատություն: նրանք կրթություն էին ստանում Եվրոպայում, ունեին իրանց դպրոցները, մամուլը, գրականությունը, հարստանում էին վաճառականության և պետական կապալների մեջ, բարձր պաշտոնների էին հասնում: նույնիսկ Ազգային Սահմանադրությունը, որ կոչված էր թուրքիայի ամբողջ հայության փրկիչը լինելու, համարյա միայն Կ. Պոլսի հայերին էր պատկանում, Կ. Պոլսի տեղական մի հիմնարկություն էր:

Բոլորովին ուրիշ աշխարհ էր ներկայացնում գավառը՝ բուն Հայաստանը: Այնտեղ էր իսկական ուշան. նա տգետ ու խավար էր մնում, իրավազուրկ մի նյախիր էր, տնտեսապես քայքայված, մշտական հարստահարությունների մատնված, կյանքի և գույքի ապահովություն չունեցող: նա քրդերի ստրուկ էր և ոչինչ պաշտպանություն չէր գտնում թուրք իշխանությունների մոտ. սանձարձակ կամայականությունների հայրենիք էր նրա երկիրը, ուր տիրողը ում էր: Բայց նրանց չէին նկատում: Կ. Պոլսի հայությունը ծածկում էր նրան: Այդ գաղութի բարեկեցությունը հայաբնակ գավառների բարեկեցությունն էր համարվում: Մի որևէ հայ ամիրայի, տղրուկ կապալաուտի, բարձրաստիճան վիճեղի առատ ու զարդարուն կյանքը ամբողջ ազգի լավ ապրուստի նշան էր համարվում. եթե սուլթանը մի շքանշան էր տալիս մի որևէ եպիսկոպոսի, հայ փառայի, դա նշանակում էր, թե ամբողջ հայ ժողովուրդն է արժանանում սուլթանական բարեհաճության և սերին:

Ահա այս մոլորությունն էր, որ պարծենկոտ հավակնությամբ հակառակում էր Արժրունուն, ասում էր, թե հայության ապագան թուրքիայումն է, և քարոզել, թե թուրքահայն էլ պիտի ձայն բարձրացնե, իր դատը խառնե մյուս քրիստոնյա ազգերի դատի հետ, նշանակում է լինել ազգի դավաճան, օտարների շահամուլ քաղաքական գործիք: Արժրունին հարկավոր չէր համարում երկար ու բարակ բանակով մղել այդ տեսակ հակառակության դեմ: նա միայն պնդում էր, լավ էր զգում, որ հայը թուրքիայում բացառություն կազմել չէ կարող, որ Կ. Պոլսը հայություն չէ, որ գավառների համար մարդկային իրավունքներ պահանջելու ամենալավ, միակ հարմար ժամանակն է:

Ո՞վ էր ճիշտ հասկանում իրերի դրությունը: Մի փոքրիկ պատմական տեսություն այստեղ ավելորդ չպիտի համարվի, որպեսզի մենք կարողանանք անաշառ դատողություն ունենալ այս հարցի մեջ:

Գավառների և Կ. Պոլսի շահերի տարբերությունը նկատելի էր դեռ հին ժամանակից, և մենք XVII դարում անսնում ենք այդ շահերի ընդհարումը:

4. Պոլսի արտոնված, բարեկեցիկ գաղութը ապրում էր իր համար, իսկ դավաճաններին վերաբերվում էր արհամարհանքով, նայում էր նրան բարձրից՝ «երմայրը» արհամարհական անունը, որ տալիս էին պուլսեցիները գաղափարացիներին, ինչպես երևում է, վաղուց գոյություն ունեւր: Մայրաքաղաքը չէր օգնում խավար, հարստահարված գավառներին: Հարուստ ամիրայական դասակարգի համար, որ 4. Պոլսում աղագլին գործերի միակ տերն էր, նույնիսկ շատ ձեռնտու էր գավառների խղճալի դրուժյունը: Ինչպես հայտնի է, ամիրաներից յուրաքանչյուրը դառնում էր որեւէ բարձրաստիճան փաշայի հովանավորութունը վայելող սեղանավոր, փող էր տալիս իր բարերարին և փոխարենը վերցնում էր հարկերի կապալը և կեղեքում էր հասարակ ժողովուրդը՝ փաշայի վայելած գումարները ետ ստանալու համար: Դա, այսպես ասած, փողի արիստոկրատիան էր, և որովհետև փողի համար չկա ազգութուն, կրոնի հարց, այլ նա միայն խոնարհ, հեշտ կեղեքվող մարդիկ է որոնում, ուստի ամիրաները (բացառութիւնները շատ շնն) հայ ժողովրդի պատիժն էին հանդիսանում: Այդ ազդեցիկ, իշխող, հրամայող դասակարգի համար շատ լավ, շատ ձեռնտու էր թուրքական ռեժիմը: Եվ այդ պատճառով 4. Պոլսի հայութունը աչքի էր ընկնում իր թուրքասիրութեամբ:

Դավաճանների հայութունը, մենակ ու անպաշտպան մնացած, կրում էր իր ծանր խաչը: Բայց նրա մեջ չէր մեռել լավ օրերի հուշը: Նա գիտեր, թե որն է իր ծանր դրութիւնից դուրս գալու միջոցը և հարմար դեպքերում գործում էր ինքնազուլիս, առանց 4. Պոլսի հայութունից խորհուրդ հարցնելու:

Հարմար դեպքերը ներկայացնում էին ռուս-թուրքական պատերազմները: Այն ժամանակից, երբ ռուսաց իշխանութունը հաստատվեց Անդրկովկասում և սկսեց զենքի ուժով ոչնչացնել Պարսկաստանի տիրապետութունը, թուրքիայի հայերը նույնպես աչք դարձրին դեպի հյուսիսային քրիստոնյա աղբյւր, նրա մեջ էին տեսնում այն ուժը, որ կարող էր ազատել իրանց թուրքական լծից: 1829 թվականի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, մինչդեռ 4. Պոլսում հայ լուսավորչականներն ու հայ կաթողիկոսները իրար մատնում էին թուրք կառավարության ձեռքը՝ իրար ամբաստանելով պետական դավաճանութան մեջ, Ալաշկերտի հայերը զենք վերցրին, միացան ռուս զորքերի հետ և հետևաբար կոփվ էին մղում թուրքերի դեմ՝ պաշտպանելով ռուսներից գրաված Բայազետը: Պատերազմից հետո մոտ 30 հազար ժողովրդի գաղթականութունը էրզրումից, Ալաշկերտից և Բասենից դեպի ռուսաց հողը շատ պարզ ապացույց էր, որ գավառների հայութունը ձգտում է ազատութան, որ նրա համար անտանելի է թուրքական և քրդական լուծը: 1854—1855-ին նորից պատերազմ սկսվեց Ռուսաստանի և թուրքիայի մեջ: Այս անգամ տեղի շունեցավ մեծ գաղթականութուն, բայց հայ ազգաբնակչութունը դիմավորում էր ռուսներին իբրև աղատողների, և Ալաշկերտում գործող ռուս բանակն էին գալիս Մուշի և այլ տեղերի հայերը՝ խնդրելով գալ և նվաճել իրանց երկիրներն էլ: Ո՛չ 4. Պոլիսը, ո՛չ ուրիշ հայաբնակ կենտրոնները չգիտեին գավառական հայութան իսկական դրութիւնը: Ոչ ոք չէր ուսումնասիրել, ոչ ոք չէր ծանոթացրել այդ թշվառ, ամենքից մոռացված խուլ անկյունները քաղաքակիրթ աշխարհին: Ռուս զինվորականներն էին տեսնում, և ահա ինչ էր գրում նրանցից մեկը՝ զենքերալ կիսուտին.

«Ավերողները դեռ գոյություն ունեն, նույնքան ուժեղ և վայրենի, ինչպես առաջ, քանի որ դեռ պահվում են իրանց երկրի սահմաններում. բայց թե ինչ կլինի հետո՝ հայտնի չէ: Կարելի է, սակայն, ենթադրել բավական ճիշտ կերպով, որ եթե պարսկական և թուրքական իշխանութիւնները ոչ միայն չընկնեն,

այլ մնան թուլութան ներկա դրութան մեջ, այն ժամանակ էլ հետզհետե բնական կդառնա կամ դեսուդեն կհալածվի խեղճ ազգաբնակչութունը, որ կենդանի է մնացել Չինգիս-խանի, Լենկթիմուրի և ուրիշ նվաճողների արշավանքներից հետո, — եթե մի որևիցե կողմնակի ուժ չկանգնեցնե և շարակարգե ավերողներին: Պատերազմի ընթացքում մենք տեսանք, թե որքան հեշտ և վարավոր են այսպիսի անկարգութիւնները, տեսանք հայերի կոտորածը քրդերի ձեռքով, բայց դեռ փոքր շահերով. իսկ երբ տեսնում ես այս տարաութիւնները, ուր բնակեցրած են տակնուվրա անելու և միմյանց ոչնչացնելու պատրաստ ազգերով, այն ժամանակ զգում ես, որ անհրաժեշտ է եվրոպացիների արագ, գործույնյա և իշխանական ազդեցութիւնը, որ կարող կլինի լուսավորել կամ ճնշել այդ վտանգավոր ազգերը և այդպիսով մեծ դժբախտութիւնների առաջը առած կլինելու: Եվ հենց միայն հայերը արժանի են գթութան. նրանք թեև ճնշված ու անզոր են, բայց հեղ են, սովոր են քաղաքացիական կյանքին՝ օրենքների սահմանում, և քրդերից, թուրքմեններից և առհասարակ քոյր մուսուլմաններից ավելի ընդունակ են ավելի շուտով յուրացնելու լուսավորութիւնը, որ բարձրացնում է մարդու և հասարակչութան արժանաւորութիւնը:

...Ազգութիւնների, լեզուների և կրոնների այնպիսի խառնուրդի մեջ, որ գոյութիւն ունի այստեղ, նկատի առնելով և այն, թե որքան ընդհանրապես յորված են հարաբերութիւնները նրանց մեջ, չէ կարելի սպասել, որ կարգն ու կանգատութիւնը իրանք իրանց հաստատվեն այստեղ, որ նվաճվածները կարողանան խաղաղ ճանապարհով ձեռք բերել իրանց իրավունքները և վերադարձնել իրանցից խլված բաներից մի մասը: Ասիական թուրքիայում անհրաժեշտ է մի նոր ուժեղ իշխանութիւն, որովհետև զանազան ազգութիւնների մեջ եղած հարաբերութիւնները փոփոխելը, նրանց արդարութեան շահով հավասարեցնելը դժվար գործ է, որին ընդունակ չէ թուրքական իշխանութիւնը թե իր ընտանիքի և թե ներկա թուլութեան պատճառով: Այստեղ հարկավոր են եվրոպացիներ... Քրիստոնյաների մշտական կոտորածը թուրքիայում կարծեմ սպացույց է, թե որքան ոչինչ է այն ազդեցութիւնը, որ ուղում են ունենալ երկրի վրա եվրոպական զեսպանատները և հյուպատոսարանները թուրքաց կառավարութեան միջոցով: Քրիստոնյաները իրանք պիտի դիմեն իրանց պաշտպանութեան ավելի ուղիղ միջոցին՝ իրանց սեփական զենքին. բայց կասկած չկա, որ ամենքը շնն կարող պաշտպանել իրանց: Ես հավատացած եմ, որ վերջին ժամանակներս քիչ հայեր շնն կոտորվել առանձին-առանձին դեպքերում. այդ մասին շնն կարող տեղեկութիւններ հասնել այս հեռավոր, խուլ տեղիւններից եվրոպական լրագիրների խմբագրութիւններին, իսկ դեսպանատների և հյուպատոսարանների համար, երևի, ձեռնտու է թաքցնել այդ գիպքերը: Քրիստոնյաների պաշտպանութիւնը հնարավոր է ոչ թե խոսքերով, այլ գործով և բանակների ներկայութեամբ: Այս տեղերը գալիս են անհատ եվրոպացիներ առևտրական գործերով, կամ թե կաթողիկ պրոպագանդան, և միևնույն ժամանակ այստեղ կանգնած են ռուսաց ամբողջ բանակներ, մենք այստեղ համարյա մեր տանն ենք»*:

Պատահական այցելուի այս՝ երկու-երեք էջ գրավող դատողութիւնների նմանութիւնն անգամ ունեցող մի բան մենք շնն կարող գտնել մեր այն ժամանակվա ամբողջ գրականութեան, մամուլի մեջ: 4. Պոլիսը ունեւր պարբերա-

* Генерал-майор Лихутин. Русские в Азиатской Турции в 1854—1855 годах. СПб, 1863, стр. 270—272.

կան մամուլ, որ, սակայն, բացի տեղային եկեղեցական հարցերից ոչինչ չէր ճանաչում. Թիֆլիսի հայերի գրությունը ավելի ևս վատթար էր. — այստեղ նույնիսկ լրագրություն էլ չկար և կիս լինեք անգամ: զարձայ նույն հարցերով միայն կարող էր զբաղվել: Եվ Թուրքիայի կորած գավառներում հարստահարվող հայ ժողովրդին մնում էր մի տարերական ձգտում՝ զեպի Ռուսաստանը, մնում էր փաշայակի իր մեջ այն հույսը, թե ուսանեքը երբեքից էլ գան ու կաղտան իրան քրդերի և թուրքերի ձեռքից:

Ղրիմի պատերազմը բերեց իր ետևից գաղափարական շարժման մի նոր դրոմ: Կ. Պոլսի հայության մեջ բուն ժողովրդական շարժումը վաղուց էր սկսվել. շարժում՝ ուղղված ամիրայական դասի բռնակալության դեմ: Սակայն գավառների դատը համարյա ոչինչ տեղ չունեք այդ ժողովրդական շարժման մեջ: Ղրիմի պատերազմի ժամանակ արդեն կար երիտասարդների մի կուսակցություն, որ տողորված էր լավագույն ձգտումներով: Այդ ժամանակ գավառների ազատությունը դառնում է գաղափար, որ երգի մեջ է մտնում. և Պեշիկթաշլյանը ունի շատ էջեր, որոնք ցույց են տալիս ժամանակի արածագրությունն ու հույսերը: Մի ուրիշ վառվռուն երիտասարդ՝ Ստեփան Ոսկանը, փարիզում աշխատում էր, որ եվրոպական քաղաքականությունը ուշադրություն դարձնե թուրքաց Հայաստանի վրա: Բայց դրանք լուկ բարի ցանկություններ էին, լուկ սկզբնավորություն:

Ավելի հիմնավոր բան էր երևում նույն երիտասարդության ձեռքով ստեղծված ազգային սահմանադրությունը: Դա թուրքահայերի ընդհանուր գործն էր, գավառներն էլ մասնակցություն պիտի ունենային եկեղեցական ազգային այդ ինքնավարության մեջ, հետևաբար կարող էին իրանց տեղային ցավերը հրապարակ հանել: Բայց այլ է մի խելացի օրենք խմբագրելը, այլ է այդ օրենքը գործադրելու հնարավորությունը: Սահմանադրությունը, ինչպես ասացիք, պոչական մի հիմնարկություն դարձավ. գավառը շատ թույլ կերպով էր ներկայացնում ազգային ժողովի մեջ, այնտեղ պատրաստված ժողովուրդ չկար: այնտեղից երեսփոխաններ չէին գնում Կ. Պոլս: Եվ գնային էլ, շատ մեծ գործ չէին կատարի: Թուրքիայի պես մի պետության մեջ սահմանադրությունը կարող էր լինել, ինչպես ճիշտ նկատել էր թուրք բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, մի քառակուսի անիվ: Երկար ժամանակ ազգային ժողովը դրած մած էր լույսարդյուն վեճերով, գավառները ոչինչ իրական օգուտ չունեին այդ վիճարանություններից, որոնք մեծ մասամբ վերաբերվում էին սահմանադրության վերաբնույթյան, ներքին վարչական հարցերին: Իրականությունը գավառներում միևնույն էր մնում: Եվ մենք տեսնում ենք, որ 70-ական թվականներին սկզբում վանի մեջ ծագում է մի ամբողջ շարժում, որի նպատակն էր ընդունել ուսաց հպատակություն և այդպիսով ազատվել մշտապես հարստահարվող ռայայի գրությունից:

Սակայն սահմանադրությունը էլի մի քայլ էր դեպի առաջ: Որքան էլ ետքի լինեք բուն ժողովրդի, գավառների ներկայացուցիչ, որքան էլ գավառների գրությունը ազգային ժողովի առանձին ուշադրության չէր արժանանում, կար այն կարևոր հանգամանքը, որ նա գոնե գավառների արձագանքը դարձավ հավաքեց հարստահարությունների փաստերը, կազմեց գավառների տանջանքների պատմությունը:

Առաջին նշանավոր քայլը արդեն իրիմյանի պատրիարքության օրով՝ Մեծ ժողովրդականություն վաչելող այդ եպիսկոպոսի պատրիարք ընտրվելը մի հարմար առիթ էր, որ գավառացի ժողովուրդը ձայն բարձրացնե: Ազգային

ժողովը Միսի կաթողիկոսության, սահմանադրության վերաբնույթյան և այլ առարկայի հարցերի առիթով անվերջ և անպատու վիճարանություններ սունք, բայց և այնպես, պատերազմի պահանջերով, մի քանի նիստ էլ գավառական հարստահարություններին նվիրվեց: Եվ ի՞նչ գուրս եկավ, Տգիտությունից ոչ իսարացած ժողովուրդը կեղծվում էր անդադար. նրան կեղծքում էին հայ վաշխատները, կեղծքում էին քրդերը, կեղծքում էին և թուրք պաշտոնյաները: Ահա ինչպես էր նկարագրում գրությունը գավառում մեծացած, գավառի կյանքին այնքան լավ ծանոթ երիմյան պատրիարքը՝ ազգային ժողովի ասաջ արտասանած իր մի ճառի մեջ.

«Հայաստանի մեջ հարստահարությունը միշտ կա և պիտի շարունակե, քանի որ հոն երկու եղբայր, երկու ժողովուրդ կանակին, որոց մեկին ձեռք ավետարան և մյուսին ձեռք զուրան կու: Ղուրանի հավատացյալը այնպես կկարծե թե՛ նա, որ հավատք չունեյր անոր, արժանի է հարստահարության. իսկ ալեկտարանը կբան՝ ուրիշ իրավունք մը չունիս, այլ պիտի հարստահարվիս մինչ ի գերեզման: Հիմա ինչպե՞ս հաշտեցնելու է այս երկու ժողովուրդը իրարու հետ: Երբ տեղությունը Եվրոպայի լուսավորությունը ընդունեց, Կյուլհանեի արևադրության օրենս օրինադիրք մը չինեց, անսրաք դրավ անունը, և զանի այս երկու եղբայր-տղավ ու ասավ. զուրանը մղկիթին և ավետարանը եկեղեցու մեջ պաշտեցեք, իսկ ձեր ընկերային կյանքին այս օրինագիրքն ըլլա ուղեցուցի: Կառավարությունը զայս ընելով իր պարտքը կատարած է, բայց քուրդը այս օրինագրին երեսն անգամ չնայիք, և թե որ այս վիճակը շարունակվի, անհնար է որ քուրդն ու հայը իրարու հետ հաշտվեն, մանավանդ, որ մեկը քուր ունի և կհարվածի, մյուսն ավետարան ունի միայն և կշարշարվի... Պետք է խնդրել (տեղությունից), որ հավասարության օրենքը, որ կա արդեն և գավառներում մեջ չէ լաված՝ գործադրվի: Իսկ անհավասարության վիճակին մեջ ով որ զուրան ունի ձեռքը, անոր վերապահված է մարդպանի, կուսակալի պաշտոնը. բայց երբ հավասարության սկզբունքը ի գործ դրվի, և՛ քուրդը տեսնե թե քրիստոնեին մեջքն ալ պաշտոնական թուր մը կա կախված և կուսակալի պաշտոն կբարձրանա, իրոք կըմբռնե այն ատեն օրինագրքին ոգին և տերության հրամանը... Տեղություն շնորհիվ քուրդերն ալ կզսպվին, հարստահարություններն ալ կանհետին, բայց առանց ներքին ավերումները բառնալու ամեն ինչ անօգուտ է: Ես կբսեմ, արտաքին աղետները ներքինին հետևանքներն են: Ժողովուրդն անմտունչ ոչխար մը դարձած՝ ոչ իր իրավունքները կճանչե, ոչ պիտույքները կզգա և ոչ օրինաց տեղեկություն ունի: Իսկ աշխարհի արդի գրության համեմատ ով որ տգետ է, պիտի բռնաբարվի, և լույսը միայն ազատություն վաչելն»:

Ահա դարերի իրականությունը, որ երևան էր գալիս 1871-ին Թուրքիայի հայոց պաշտոնական ներկայացուցչի ատենարանության մեջ: Ի՞նչ պետք էր ունել: Այժմ կա սահմանադրություն, կա երեսփոխանական ժողով, ճատեր, վիճարանություններ. ոչինչ չէ մոռացված, սահմանադրությունը խմբագրված է հիանալի կերպով, Եվրոպայի ուսման պետական կարգերը վերցված են ըստությանը, Կ. Պոլսի ժողովուրդը ամեն տարի մաչիսին տնում է այդ ինքնավարության տարեդարձը, «Արիք հայկազունք» է երգում: Բայց որքա՞ն կարողություն և պատրաստություն ունի երեսփոխանական ժողովը իր պատրիարքի ատենարանության մեջ սլարդված իրականության հանդեպ: Միսի կաթողիկոսության նվիրված մի նիստում, երբ վիճարանությունները պատում էին

* «Փորձ» հանդես, 1876, № 6:

այն հարցի շուրջը, թե ո՞վ է կենտրոնական վարչությունը՝ երեսփոխանական ժողովը, թե՞ խառն ժողովը, թրիմյան պատրիարքը ասաց հետևյալ խոսքերը.

«Հոս նստեք եմ ձեր մեջ, բայց ո՞ր պիտե թե իմ երեակայությունս ուր է գնացեր, ո՞ր պիտե, թե որ գավառներու մեջ կգեցեր իմ մասի, որ շարժարյալ ժողովուրդներ, անոք մանկիկներ, վշտահար հարսներ աւ փեսաներ կներկայանային աչքիս, և ակնկառույց մենե գորավիզն կխնդրեն: Մենք հոս անդուզ կվիճարանենք... վիճարանությունը սահման մը պիտի օւնենա...»:

Երեսփոխանական ժողովը ութ հոգուց բաղկացած մի մասնաժողով ընտրեց՝ մի մանրամասն տեղեկագիր կազմելու համար: Մասնաժողովը պատրիարքարանի արխիվը քրքրեց, քսան տարվա տեղեկություններ քաղեց, բացի դրանից դիմեց գավառական առաջնորդներին և իր մի քանի հարցերի պատասխանը խնդրեց: Այդ բոլոր աշխատանքի հետևանքն եղավ մի հարուստ, փաստալից տեղեկագիր, որի մեջ գավառների անմիջի մարությունն էր պատկերացրած: Տեղեկագիրը ուղարկվեց Բ. Դուռը: Դա ազգային ժողովի իրավունքն էր, որ տալիս էր սահմանադրությունը: Շատ լավ իրավունք էր դա՝ սահմանադրության հատուկ հոգվածով գրված այդ կարգը: Սահմանադրությունը բացի դրանից ուրիշ շատ լավ բաներ էլ ուներ: «Ամեն ինչ կար նրա մեջ, — ասում է միջազգային իրավունքի նշանավոր մասնագետ Ռոլեն Ժաքմեն, — ամեն ինչ, բացի մի հողավածից, որի վրա մատնացույց անել կարողանա հայը, որպեսզի թույլ շտա քուրդին իլը իր ոչխարները, բեյին՝ բռնաբարել իր աղջիկներին և քարուքանդ անել իր հողը, հարկահանին՝ երկու կամ երեք անգամ պահանջել միևնույն հարկը. մի խոսքով կար ամեն բան, բացի մի այնպիսի կարգադրությունից, որ իսկական եռաշխարհայնություն լիներ թուրք կառավարության կամայականությունների դեմ»:

Ազգային ժողովի տեղեկագիրը, որ հրատարակվեց 1872-ին, գավառների դրությունը մազի շափ շափաթ բարվոքեր. դրա համար ոչինչ երաշխավորություն չկար: Բայց նա մի թանկագին դոկումենտ էր, որ շատ բնորոշ փաստեր էր պարունակում: Նա ցույց էր տալիս, թե ինչ տեսակ հարստահարություններ մշտական երևույթի կերպարանք են ընդունել. ցույց էր տալիս և այն, որ պատրիարքարանը քսան տարիների ընթացքում գավառից իրան հասած յուրաքանչյուր հարստահարության մասին քաղցիբենե է ուղարկել Բ. Դուռը, բայց այդ պաշտոնական թղթերի մեծ մասը մնացել է առանց հետևանքի, իսկ եթե մի քանի դեպքերում Բ. Դուռից կարգադրություններ և հրամաններ են ուղարկվել հարստահարության տեղերը, դրանք մնացել են անկատար: Հարստահարությունների մի մանրամասն տեղեկագիր էլ ազգային ժողովը 1876-ին հրատարակեց և այդտեղ էլ վկայեց, որ 1872-ի տեղեկագիրը ոչինչ շոշափելի արդյունք չէ ցույց տվել, պատրիարքական «թագրիբներ» նույն վիճակին են ենթարկվել, ինչպես միշտ: Թղթեր գրվում էին, բողոքներ հայտնվում էին, հրամաններ ուղարկվում էին, բայց այդ բոլորը մեռնում էր մեռած առ, թուղթ:

Այսպես էր ահա դրությունը, երբ վրա հասան 1875—1876 թվականների դեպքերը և ահագին կարևորություն ունեցող հարց դարձրին Թուրքիայի հպատակ քրիստոնյաների դրությունը: Հայ գործիչներից միայն Գրիգոր Արծրունին էր, որ իսկույն ըմբռնեց բուսի անշափ կարևորությունը: Ազատության գաղափարը, ինչպես տեսանք, վաղուց ապրում էր ժողովրդի մեջ. Արծրունին շատեղծեց գաղափարը, նա միայն հասկացավ, որ ո՞չ թուրքահայերի գեղեցիկ սահմանադրությունը, ո՞չ Կ. Պոլսի էֆենդիների բարեկեցությունն ու շքանշան-

ները չեն կարող կյանքի, գույթի, պատվի ապահովություն տալ գավառներում ապրող հայություն: Արծրունու կատարած գործի մեծությունը հենց նրանում է, որ նա հասկացավ, թե Բոսնիա-Հերցեգովինայի և Բուլղարիայի արյունոտ դաշտերում գլուխ բարձրացրած սոսկալի իրականությունը մի է Թուրքիայում բռնկվող բոլոր քրիստոնյաների համար, թե ժամանակ է մի կողմ գնել խարուսիկ հույսերը, ժամանակ է իմանալ, թե իրական ինչ արժեք ունեն թուրքաց կառավարության սիրտնիկ խոստումները, սահմանադրություն, ուժիորմ և այլ այսպիսի դարուարուն էտիկետներ կրող գատարկությունները: Ուժ պետք է, որ փոփոխ իրերի դրությունը Թուրքիայում, զինվորական մեծ ուժի կար այդ ուժը և գործում էր անշահասիրությունը: Դա Ռուսաստանն էր, նվ Արծրունին խորապես համոզված էր, որ Ռուսաստանը բարեբարություն կանե և հայերին, որ հույսը միայն Ռուսաստանի վրա պետք է դնել:

Ընթացիկ քաղաքական դեպքերն ու հասանքներն էին այսպիսի ջերմ հավատ ներշնչում Արծրունուն: Դրանից համարյա երկու տարի առաջ Փոքր Ասիայում սով էր, և հայերը սոսկալի տառապանքներ էին կրում: Արծրունին միայն շեշտեց այն իրողությունը, հրավեր կարգաց օգնել սովատանջներին, բայց չզբաղվեց գավառացի թուրքահայերի դրությամբ, շատաց, թե ինչ պետք է անել նրանց գրությունը մշտապես բարեկամելու համար: Նա մինչև անգամ չկարողացավ մի մեծ գումար հավաքել սովատանջների համար, որովհետև բավականացավ մի անգամ հրավեր կարգադրվ և մի քանի արտապումներ անելով այլևայլ լրագրիչներին: Այդ ժամանակ էլ բանակով մղելով «Մասիսի» դեմ ներսիսյան դպրոցի առիթով, Արծրունին խոսք բացեց Կ. Պոլսի հայ ինտելիգենցիայի մասին և հայտնեց, թե որքան շնչին գեր է կատարում նա: Եթե Կ. Պոլսի գրողներն ու գործիչները լավ պատրաստված լինեին, մտավոր մեծ ուժ ունենային, հայոց մամուլը Թուրքիայում կզանար քաղաքական մի հեղինակավոր հիմնարկություն, և Եվրոպան այդ մամուլից կբաղեր տեղեկություններ Թուրքիայի մասին: Բայց հայոց մամուլը ոչինչ լուրջ ուսումնասիրություն չէ տալիս, ազդեցիկ դեր չէ կատարում, և Եվրոպան չէ էլ ճանաչում հայերին:

Այսպիսի գատողություններով էր բավականանում Արծրունին այն ժամանակ, երբ Թուրքիայում սուր քաղաքական հարցեր չկային, երբ արևելյան հարցը, այսպես ասած, մոխրի տակ թաղված կայծի էր նման: Ուրիշ բան էր 1876 թվականը. քաղաքական աշխարհը տակնուվրա դառած, հրդեհը վառված էր. ռուսաց լրագրությունը կրակում էր հասարակության զգացմունքները, անձնվիրությունը, ահագին զոհողությունները միացել էին խոսքի հետ: Կրակվեց և «Մշակը»: Բարկանյան թերակղզի, սլավոններ, այո՞, ճիշտ է, նրանք արժանի են կարեկցության: Բայց հայերը:

Սկզբում Արծրունին այնքան մեծ աշխույժով չէր զբաղվում այս հարցով: 1876 թվականի առաջին կեսում նա իր առաջնորդողները նվիրում էր սովորական հարցերին՝ Ս. Գրքի թարգմանության, կղերականության, և միայն լրագրի արտաքին տեսության մեջ, խոսելով Թուրքիան տակնուվրա անող փոթորիկների մասին, ավելացնում էր մի քանի տողեր, թե հայերն էլ պիտի ձայն բարձրացնեն: Բայց տարվա ուղիղ կեսից թուրքահայերի հարցը նա մտցնում է առաջնորդողների մեջ և այնուհետև մի կողմ է թողնում ավետարանի թարգմանություն, դպրոցների բարեկարգության միտքը, ընդհանուր հարցերը: Նրա ուշքն ու միտքը կլանում է թուրքահայերի դրությունը:

Առաջին առաջնորդող հոգվածը տավեց հուլիսի 1-ին (№ 24) և կրում է «Քրիստոնեություն և մահմեդականություն» վերնագիրը: Այդտեղ Արծրունին բացատրում էր իր հիմնական հայացքները և այն միջոցները, որոնցով թուր-

* «Положение армян в Турции», М., 1896, стр. 9.

քահայր մարդկային իրաւունքների տեր հրատանա: Այդ բոլորի հետ ծանոթանալու համար մենք կրօններ այդ առաջնարդողի ամենանշանավոր մասերը.

«Ամբողջ տարի է արգեն, որ թե՛ կարգապահական հասարակական կարծիքը, թե՛ ընդհանուր քաղաքականութիւնը գրադված են արեւելյան հարցով: Քուրքահայտակ քրիստոնէականի պատերազմը մահմեդականութեան ճնշող սեփղն, քննադատութեան առարկա է դարձել ամբողջ աշխարհի լրագրութեան և գրականութեան համար, հոգսերի և պարապմունքների առարկա է դարձել կրթված աշխարհի դիպլոմատիայի համար... Քրիստոնէյա արգերի անունները, որք ապստամբած են թուրքաց անտանելի լուծի դեմ, հիշվում են յուրաքանչյուր լրագրում. թուրքահայտակ քրիստոնէյա ազգերի անունները, որք այդքան դար ճնշված են մնում մահմեդականութեան անողոր և քաղաքակրթութեան թշնամի տարրի տիրապետութեան տակ, լսվում են ամեն բերաններից. — միայն մի ազգի անունը ոչ մի անդ չենք պատահում՝ ոչ լրագրիներում, ոչ դիպլոմատիկական թղթերում, ոչ էլ առօրյա խոսակցութեան մեջ:

Իսկ այդ ազգը՝ հայերը, փոքր ազգ չեն: Մոտ երեք միլիոն քրիստոնէյա ժողովուրդ՝ թուրքաց տերութեանը հպատակ, նույնքան և զուցե ավելի թշվառ դրութեան մեջ է գտնվում, քան թե պլավոնական աղգերը:

Այդ ազգը դարավոր բարոյական, մտավոր և տնտեսական ճնշման պատճառով դարձել է բոլորովին կրավորական, նա չունի այնքան բարոյական գործութիւն, որ իր ճնշման դեմ բողոք բարձրացնեն անգամ... նա կորցրել է հավատ դեպի իր սեփական ուժերը, նա հաշտվել է այն մտքի հետ, որ ինքն ոչ թե միայն ազգ չէ, այլ որ իր անհատներից յուրաքանչյուրը իրավունք չունի մինչև անգամ մարդի անունը կրելու, իրավունք չունի այն հասարակ ընդհանուր մարդկային իրաւունքները վայելելու, որ վայելում է ամեն մի մարդկային էակ...

Քուրքիայի հայերը ճնշված, ստորացրած են, մինչև այն աստիճան կրավորական են դարձրած, որ իրանց սեփական շրջանից անկարելի է սպասել բռնավորութեան, հալածանքի, ճնշման դեմ բողոք...

...Պետք է մի գրսի հզոր ուժ, գրսի ազդեցութիւն հայտնվի, որ մարդասիրական գութից շարժված մեկներ այդ հոգով ընկած, անդադար բռնաբարութեան տակ հուսահատված և մաշված ազգութեանը իր օգնութեան ձեռքը...»:

Հայերը առաջին քրիստոնէյա ազգն են, 16 դար նահատակվում են քրիստոնէութեան համար:

«Քաղաքակրթված աշխարհի համար այդ քրիստոնէական բարոյական պատերազմող տարրը, քրիստոնէութեան այդ կարապետները Ասիայում՝ պետք է թանկագին լինեն որպես ավետարանի առաքյալները բարբարոսական աշխարհում...»:

Մի՞թե եվրոպան թուրքահայտակ քրիստոնէյա խոսքով հասկանում է միայն սլավոնացիներին և ուղղափառներին, մի՞թե միեկուն չէ ընդհանուր մարդկային օգուտների համար՝ ո՞ր ցեղին և քրիստոնէական եկեղեցու ո՞ր դավանութեանն է պատկանում ճնշված քրիստոնէական այս կամ այն ազգութիւնը, որի կոչումն էր միշտ և պետք է լինի՝ միջնորդ լինել Ասիայում քրիստոնէութեան, ուրեմն և քաղաքակրթութեան լույսի տարածման...:

Եթե այդ կոչումը առաջ անգիտակցակա էր, — նա ապագայում պետք է դիտակցական գտնուի:

Մանավանդ մի եվրոպական պետութեան, այն է՝ Ռուսաստանի ձեռքում, որի կոչումն է տարածել Արևելքում համաշխարհային քաղաքակրթութիւնը, այդ տոկուն, աշխատասեր, քրիստոնէութեան գաղափարներն իրան զոհած ազ-

գութեանը՝ հայերը, կարող էին որպես միջոց ծառայել Փոքր Ասիայում Ռուսաստանի նպատակը իրագործելու համար:

Հայերը կարող էին Ռուսաստանի համար ամենահայտարար միջնորդներ լինել, նպատակով այդ պետութեան նպատակներին և կոչմանը՝ տարածել և մաքրել Փոքր Ասիայում ավետարանի և եվրոպական կրթութեան լույսը, ուրեմն և ընդհանուր մարդկային քաղաքակրթութեանը:

Հետեյալ համարում Արծրունին նորից պարզում է իր հայացքները արևելյան հարցի վերաբերմամբ: Նա ասում է. «Այժմ կամ երբեք» Պետք է օգուտ քաղել դեպքերից, մի ուրիշ անգամ այսպիսի հարմարութեան շպիտի ներկայանա: Հայերը միմիայն Ռուսաստանի վրա պիտի հուշս ղենեն: Անդրիական քաղաքականութիւնը խորամանկ է, նենգալոր. նա ոչ միայն պաշտպանում է թուրքիան, այլև սովորեցնում է նրան նենգալոր, խարդախ միջոցներով խաբել քաղաքակրթ աշխարհը:

«Տավալի է, — ասում է Արծրունին, — երբ տեսնում ենք մի եվրոպական դարեղ պետութիւն՝ Անգլիան, ընդունել է և պաշտպանում է այդ անխղճութեան, այդ անիրավութեան քաղաքականութիւնը:

Մենք ասացինք մեր անցյալ համարում և կրկնում ենք, որ թուրքահայտակ հայերը իրանց թշվառ դրութեանից դուրս գալու համար կարող են օգնութիւն սպասել եթե ոչ անպատճառ նյութական, զոնե բարոյական, միայն մի եվրոպական պետութեանից, այն է՝ Ռուսաստանից:

Միայն Ռուսաստանը կարող է հասկանալ որքան օգուտակա է թե ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան կեանքից, թե իրան ռուսաց պետութեան օգուտների համար որքան նշանավոր է շահել, գրավել՝ կորած, ընկած, հուսահատված քրիստոնէյա տարրը Փոքր Ասիայում»:

Արծրունու այս մտքերի ղեմ ամենից առաջ վայնասուն բարձրացրեց, իհարկե, Քիֆլիսի «Մեղուն»: Պետրոս Սիմոնյանցի լրագիրը խիստ հետևողական էր ամենազլուկորը մի բանի մեջ՝ «Մշակի» դեմ գնալու մեջ: Հանգամանքները շատ անգամ էին ցույց տալիս այդ հակառակութեան անմտութիւնը, բայց ուրիշ կերպ, ինչպես երևում է, անհնարին էր, «Մեղուն» չէր կարող հակառակ լինել «Մշակին»՝ ինչ հանգամանքի մեջ էլ ուզում է լինի: Սակայն մենք պետք է ասենք, որ այդ հակառակութիւնը Սիմոնյանցի անձնական համոզմունքների արդյունքը չէր միայն. ինչպես ուրիշ շատ դեպքերում, այստեղ էլ նա հանդիսանում էր մի ամբողջ հոսանքի արձագանք, մի ամբողջ աշխարհայեցողութեան թարգման: Եվ Արծրունու կատարած դերը լավ ըմբռնելու համար մենք պարտավոր ենք մտախիկից և մանրամասնաբար ծանոթանալ այդ հակառակ հոսանքի հետ: Ինչպես կատեսներ, «Մեղուն» գաղափարները միայն Քիֆլիսում չէին դառնում, այլև, որ ավելի կարևորն է, Կ. Պոլսում:

Ահա ինչ ենք կարդում «Մեղուն» № 27-ի մեջ, որ լույս տեսավ «Մշակի» առաջնորդողից երկու շաբաթ հետո.

«Վերջին ժամանակ, երբ եվրոպական Տաճկաստանի մի քանի գավառներում ծագեցավ ապստամբութիւն, մի քանի հայ երիտասարդներ սկսան կրազել, և առանց հեռատեսութեան և հանգամանքները կշռելու, որոնց մեջ գտնվում է հայ ազգը Տաճկաստանում, աշկարա գրգռել և հայերին զենք առնելու և ապստամբելու»:

Բերելով այնուհետև այն հանգամանքը, որ հայերը մի փոքրիկ ժողովուրդ են, շրջապատված թուրք և բուրգ ցեղերով, որ ապստամբութիւնը հայերին դուր կոտորելու պատճառ կդառնար, լրագիրը շարունակում էր.

«Մենք կարծում ենք, որ նույնիսկ Տաճկաստանի կառավարությունն, որ հայեցվածքներով բարձր է իր մոլեռանդ ժողովրդից, ճանաչում է հայ ազգի նշանակությունը իր տերությունն ապագայի համար, իբրև լուսավորություն տարածելու միջնորդ, ուստի և չէ կարող նրան մոռանալ և ապահովել զյանալուսակ մեր խորհուրդն է. նախ մեր քաջ և քաղաքագետ պուրջիցիստներին, որ նոքա փոխանակ խեղճ և թշվառ եղբարց կյանքի հետ խաղ անելու, լուկ իրանց ազատասեր ցույց տալու համար, մարդոց աչքին փոշի փչելու կամ կուրություն մեր օտարների գործիք լինելու. եթե ձանձրացել են իրանց կյանքից՝ թող իրանք ժողովեն և կազմեն անհաղթելի սրբազան գունդ Մշակի քաջ խմբադրի առաջնորդությամբ և երթան պատերազմ, տեսնենք թե առաջին թնդանոթի ձայնը ո՞ր ծակը կփակցնեն նրանց:

Անտարակույս ենք, որ ահաասրակ զժգոհությունք անհաճո են ամեն բարեկարգ կառավարությանց, որոնց համար թանկագին են իրանց ժողովրդոց ապահովությունն և կանոնավոր զարգացումն, նույնիսկ իրանց ապահովության համար:

Երկրորդ մեր համեստ խորհուրդը մեր սիրելի հայ եղբարց, որոնք ամենուրեք ցրված են, է այն, որ նոքա պահպանելով իրանց պարզ հայկական կյանքը, հեռու մնան շտաբությունից, և զարգանալով մտավորապես և բարոյապես և ապահովելով իրանց նյութապես, դառնան անհրաժեշտ կարևոր խաղաղ քաղաքացիք այն երկիրներում և տերություններում, ուր նոքա բնակվում են և վայելին սիրապետող ազգերի հետ հավասար քաղաքական իրավունքներ, պահպանելով իրանց ազգայնությունը՝ լեզուն և կրոնը, զարգացնելով սոցյալ-ժամանակի պահանջներին համաձայն: Իսկ տաճկահայերի կոշտ մինչև անդամ ավելի լավ է քան այս. թող նոքա ուսմամբ և բարոյապես զարգանալով ջանան և նրանք մեծ կշիռ կատանան այստեղ անշուշտ, վասնզի ժամանակը պիտի պահանջի իր հարկը և՛ տաճկից, և՛ քրդից, և՛ կիսավայրենի թուրքմենից, որոնք այն ժամանակ ակամա պիտի դառնան դեպի հայերը՝ սրանցից ժամանակի պահանջած ուսումն և գիտությունը ստանալու: Հայի այս մտավոր և բարոյական գերազանցությունն անշուշտ ժամանակով կկազմե Տաճկաստանի մեջ երկու զորեղ տարրեր՝ տաճկական և հայկական, որոնց յուրաքանչյուրի կյրացնե մյուսի պակասությունն և այսպես երկուսը միասին ներդաշնակությամբ կկազմեն մի տաճկահայկական քաղաքական մարմին, որպիսի կերպարանք ունեն աշխարհիս երեսին շատ զորեղ քաղաքական մարմիններ:

Մեզրի հետ կարագ էլ էր ծորում «Մեղուի» բերանից: Որքա՞ն հեշտ ու զեղեցիկ էր վճռում նա արևելյան հարցը: Միամտությունը, ինչպես տեսնում եք, այն աստիճանին էր հասցրած, որ եմթաղրվում էր, թե Փոքր Ասիայում հնարավոր է մի թուրքահայկական պետություն՝ հիմնված կուլտուրական եղբայրակցության վրա: Ավելորդ է ասել անգամ, որ այսպես ասոզը բոլորովին ծանոթ չէր երկու ազգերի ցեղական, կրոնական, կուլտուրական հատկություններին ու հակումներին, ծանոթ չէր պատմության, իրերի լոգիկային, աշխարհի օրենքներին: «Մեղուն», այս քաղցրիկ ապագային հավատացած՝ հորդոր էր կարգում թուրքահայերին չլսել «Մշակի» խոսքերին, հանդարտ նստել իրանց տանը, զարգանալ, — իսկ թե ինչպե՞ս զարգանալ, ինչպե՞ս շունչ քաշել, կյանք ու պատիվ պահպանել, այդ «Մեղուի» գործը չէր, մանավանդ որ նա հավատացած էր, թե թուրքաց «բարեխնամ» կառավարությունը ամեն ինչ կհոգա հենց իր սեփական օգուտի համար:

Սա մի հեքիաթ էր, որ ստեղծել էր ազգային ինքնագոհությունը: Եվ փաստերը, հենց «Մեղուի» էջերում արձանագրվող փաստերը, գալիս էին ջախջախ

խելու այդ հեքիաթը: Այսպես, թուրքաց կառավարության բարի խնամքների վրա այնքան մեծ հույսեր դրած լրագիրը իր № 40-ի առաջնորդող հոդվածում ստիպված էր խոստովանել, որ թուրք կառավարությունը թույլատրել է ու թույլատրում է բռնություն հայերի դեմ և խորամիտ կերպով ավելացնում էր. «Նոքա հիմքն էր թողնել քրդին և տաճկին հարստահարելու հային և այլոց, որ սոքա չզորանան»: Ահա՛ այդ իրականության մեջ պիտի հայերը այնքան զարգանային, որ զարգացնեին և թուրքերին ու մի թուրքահայկական միություն կազմեին...

Մի քանի ուրիշ առաջնորդողներ էլ գրեց «Մեղուն», որոնց մեջ շարունակեց աղմուկ բարձրացնել, թե «Մշակը» տնաքանդություն է անում, ուզում է թուրքահայերին կոտորել տալ և այլն: Քաղցրին լավ նյութ էր գտել և մի առանձին հաճություն ծաղրում էր թե ինչպես Գրիգոր Արծրունին բանակ է կազմում ու գնում է պատերազմելու: Հուլիսի վերջերում Արծրունին մի գրական երեկույթում կարգաց իր գրած «Մի պատկերը»: Դա մի փոքրիկ պատմություն էր այն մասին, թե ինչպես մշեցի մշակը, Քիֆիստում տարիներ տանջվելուց հետո, ծանր աշխատանքով վաստակած կոպեկները վերցրած տուն է վերադառնում. քայց տեսնում է, որ տուն չէ մնացել, դուռ էլ չկա: Ամեն ինչ ավերակ է, հարձակվել են քրդերը, քանդել են, տարել ու կոտորել: «Մեղուն» մինչև իսկ այդ անմեղ պատկերից էլ կատաղեց: Նա գրում էր. «Մշակի» 29-րդ համարի մեջ տպված է մի լուրջ, որի անունը ճիշտ դնելու տեղ՝ սխալմամբ պատկեր է դրված: Ոչ մի մշեցի դորա մեջ չի գտնիլ յուր պատկերը, այլ մի հրեշ, որ կարող էր վիժվել միայն խանգարված երևակայությունից: Իսկ լեզուն, լեզուն... կարծես մարախներից կերված արտ լինի»:

Բայց իզուր էր կարծում «Մեղուն», թե Արծրունին իր մի քանի հոդվածներով ոտքի կկանգնեցնե թուրքահայերին, կոտորել կտա: Իր ամենակրակոտ հոդվածներից մեկի մեջ (№ 28) նա ասում էր, թե տեսնելով թուրքաց Հայաստանում տեղի ունեցող հարստահարությունները, դուք կասեք թե հայերը սղիակ են, լեշ են, աղբ են»: Կոտորածը ասիական թուրքիայում «Մշակի» առաջնորդողները չպիտի առաջացնեին, քանի որ կոտորածների ու հարստահարությունների համար հարկավոր էլ չէ եղել, որ հայերը ապստամբվեն:

Բալկանյան թերակղզում տեղի ունեցող անցքերը արձագանք գտան և Փոքր Ասիայի խորքերում: Քրիստոնեությունը ահա՛վոր մենամարտ էր սկսել մահմեդականության հետ. վերջինս գրգռված էր, ֆանատիկոսության և վայրենություն տեսարաններով էր սարսափ աղղում քրիստոնյաներին: Թեև հայերը շատ հեռու էին սլավոնների երկրից, թեև նրանք լուռ ու մունչ նստած էին իրանց տներում, բայց ամառվանից սկսեցին տխուր լուրեր գալ և թուրքաց Հայաստանից. հարստահարությունները, կողոպուտներն ու սպանությունները մեծ չափեր ընդունեցին և «Մեղուի» թղթակիցը գրում էր Կ. Պոլսից հետևյալը. «Մեր տաճկաստանցի հայոց արդի կացությունը խիստ տխուր է, վիճակնիս խիստ վատթար. հանրաժանոթ մոլեռանդությունը կատաղի կերպով գրգռված է քրիստոնեից դեմ. հոս մայրաքաղաքիս մեջ արդեն ցույցեր կըլան ու կխոսվին, մեկ քանի անգամ է որ թուրքերը քրիստոնեից դուները քարի բռնեցին գիշեր ատեն: Իսկ Հայաստանի մեջ սարսափելի վիճակ մը ունին քրիստոնյաք, որք ընդհանրապես հայք են»:

Մի կողմից այսպիսի թղթակցություններ և բազմաթիվ այլ տեղեկություններ, մյուս կողմից ծաղր ու հայհոյանք Արծրունու դեմ, թե ինչու է նա ասում, որ թուրքահայերը լուռ չպիտի մնան: Այո՛, յուրաքանչյուր հրապարակախոսին չէ տված հասկանալ ժամանակի խորհուրդը, լինել նրա ոգու արտահայտություն

Այս դեռ «Մեղան» 1876 թվականի հուլիսից սկսեց հրատարակել Քիֆ-ի սում «Փորձ» անունով եռամսյա հանդեսը, որի խմբագիրն էր Աբգար Հովհաննիսյանը: Թուրքացի մամուլի մեջ ավելանում էր մի նոր օրգան: Բայց «Մշակը» չէր կարող առել, թե դա իր զինակիցն է: Որքան էլ թույլ ու անզույն լինեին այդ հանդեսի այն խմբագրական հոգևածները, որոնց մեջ պիտի երևար նրա ուղղությունը, նույնիսկ ասաջին համարից կարելի էր նկատել, որ «Փորձը» ասում է այն, ինչ ասել էր և ասում էր «Մեղան», և սխալված չէր «Արշալույս Արարատյան» լրագրի թղթակիցը, որ անվանեց «Փորձը» «Մեղուի» արձագանք: Իր անդրանիկ հայտարարության մեջ անվանելով իրան «Հայաստանյայց, ազատության սկզբունքների վրա հիմնված, Սուրբ Եկեղեցվո հարազատ որդի», նոր հանդեսը առաջին համարի «Ազգային տեսությունը» (ներքին տեսություն չկար) սկսեց մի խուլ արշավանք «Մշակի» գեմ:

«Հայոց ազգը,— ասված է այդ տեսություն մեջ,— յուր քաղաքական ինքնուրույն գոյությունը կորցնելուց հետո պահպանել է իր ազգությունը գլխավորապես Սուրբ Գրիգոր Լուսավորչի հիմնած եկեղեցու շնորհիվ. ով որ պատկանել է այդ եկեղեցուն, համարվել է և մինչև այժմ էլ համարվում է հայ, թեև իրոք նա այլ ծագումից ևս լիներ, և մյուս կողմից՝ այն հայը, որ ուրիշ եկեղեցու գիրկն է մտել, դադարել է իրան հայ անվանել, շփոթելով ուրեմն եկեղեցու գաղափարը ազգության գաղափարի հետ»:

Այս նախաբանից հետո՝ եռամսյա հանդեսը գալիս էր ասելու, որ «Մշակը» (անունը չէ տված) նայում է եկեղեցու հարցի վրա ոչ թե պատմության և քաղաքականության տեսակետից, այլ այնպիսի հայացքով, որ կարծես նրա ասածները հայոց ազգին չեն վերաբերում: Մեղանում հոգևորականությունը առանձին դասակարգ չէ կազմում, նա հակառակ չէ գիտության և առաջադիմության:

«Փորձը» ոչինչ նոր բան չէր ասում. այդ բոլորը շատ և շատ անգամ կրկնել էր «Մեղան»: Արծրունին, քննադատելով հանդեսի առաջին համարը, ասաց, որ դա պատահական հողավածների մի ժողովածու է, որի մեջ չկա ներքին կապ, պատահում են լավ հողավածներ, բայց քիչ չեն և այնպիսիները, որոնք ընտանեկան ընթերցանության համար բոլորովին անպետք են: Ուրեմն «Փորձը» ոչ ամսագիր է, այս բառի իսկական իմաստով, ոչ էլ նույնիսկ ընտանեկան ընթերցանության համար պիտանի մի ժողովածու: Մի ընդարձակ առանձին հողավածով էլ Արծրունին պատասխանեց «Ազգային տեսություն» մեջ հայտնած այն մտքին, թե մեղանում չկա կղերականություն:

Այդ բառը՝ կղերականություն, առաջին անգամ Արծրունին էր, որ սկսեց գործածել մեր մեջ: Նա ցույց էր տալիս, որ մեղանում էլ, ինչպես և ուրիշ ազգերի մեջ, կղերական առանձին դասակարգ է կազմում կուսակրոն հոգևորականությունը, որ շունենալով որոշ պաշտոն, ստեղծել է իր համար արտոնություններ և այդ արտոնությունների տեր մնալու նպատակով արգելում է, որքան կարողանում է, որ ազատ մտավոր զարգացումը չլինի ժողովրդի մեջ, որ ժողովրդական իրավունքները բանաբարված լինեն, որ բուն ժողովրդական հոգևորականությունը՝ քահանաները, միշտ նյութապես անապահով դրություն մեջ լինի, միշտ կախված կուսակրոն հոգևորականության կամքից և իշխանությունից: Մեղանում կղերականություն կա, բայց եթե թույլ կերպով է դեռ արտահայտում իր գոյությունը, պատճառն այն է, որ կուսակրոն հոգևորականությունը դեռ տգետ է: Եվ Արծրունին գրում էր հետևյալ՝ խորապես ճշմարիտ և մանավանդ այժմ անհերքելի դարձած տողերը. «Կա տգետ, բայց կա և

քաղաքակրթված կղերականություն... դժբախտաբար մինը մյուսից վտանգավոր է: Մինչև անգամ կարելի է ասել, որ քանի կղերական ուղի ունեցող դասակարգը լուսավորվում է, նա ավելի վտանգավոր է դառնում ժողովրդի ազատ, անհատական, ազգային զարգացման: Տգետ կղերականությունը միամիտ կերպով կարծում է, որ երբեք ժողովուրդը չի դարձնի, և աշխատում է ոչ մի անը չհիմնել ուսումնարաններ, չնպաստել նրանց հիմնելուն և եղածների բարեկարգելուն, ընդհակառակն միշտ արգելում է նրանց բարոյական և նյութական ծաղկմանը: Բայց լուսավորված կղերականությունը հասկանում է, որ եթե ինքը չհիմնե, — ուրիշները կհիմնեն դպրոցներ, ուրեմն լավ է համարում ինքը հիմնել, իր ձեռքից շթողնելով դպրոցները... և հիմնելով, առաջնորդելով, կառավարելով դպրոցները, աշխատում է մտցնել ուսման մեջ սխալաստիկական սահմանափակ ուղղություն, որ արգելի մարդի ազատ, լայն, բնդարձակ մտավոր զարգացման, մտցնում է սահմանափակ ուղղություն, որպես մարդի վրա խիստ հսկելու ամենալավ միջոց, մտցնում է կույր հնազանդություն, սաստիկ դիսցիպլինա, և աշակերտների միմյանց մեջ ու նրանց վերաբերության վարժապետների լրատեսության սխտեմա, մտավոր կյանքի վրա հսկողությունը հասցնում է մինչև լրատեսության երեխաների միմյանց մեջ ունեցած գաղտնիքների...

...կղերականությունը ի բնե և սկզբունքով թշնամի է բարձրագույն կրթության, բայց երբ որ տեսնում է քահանայության մեջ դարձնում է իր իրավունքների հասկացողությունը, սկսում են նրա մեջ բազմանալ կրթված մարդիկ, — կղերական կուսակցությունը իսկույն շտապում է ինքն հիմնել մի հոգևոր աստվածաբանական դպրոց*, բարձրագույն ընթացքով (որ ինքն սկզբունքով սրտի խորքից ասում է), որպեսզի ինքն ներդրություն ունենա քահանաներ պատրաստվող երիտասարդների զարգացման վրա, ձեռն նրանց ուղեղը սահմանափակ, կրավորական կերպով, ինչպես որ ինքն ուզում է: Եվ քանի լուսավորվում է կղերականությունը, այնքան նա ավելի ճարպիկ է լինում այդ տեսակ գործերում: Միայն տգետ կղերական կուսակցության մեջ լավ չեն որոշվում կղերական ձգտումները, կամ շատ անշնորհ և անվտանգ են երևում, որովհետև նա տգետ է... Հենց որ նա մտավոր զարգացման աստիճանը կբարձրանա, նա ավելի և ավելի վտանգավոր կլինի»:

Ահա՛ ինչ բաներ չէր կամեցել տեսնել նորածին եռամսյա հանդեսը: Բայց նա ուրիշ շատ բաներ էլ չէր տեսնում: «Մեղուին» նմանվելը կատարյալ զարձնելու համար նա իր երկրորդ համարում սկսեց նույն երգը երգել թուրքահայերի մասին: Մի ազգ, ասում է հանդեսը, կարող է ապրել իր տոկոս աշխատությանը, իր ինքնուրույն առաջադիմությունները: Օսմանյան պետության այժմյան կազմակերպությունը և քաղաքական դրությունը ամենայն միջոց տալիս է, որ ազգն այդ ճանապարհով առաջ գնա: Հայ ազգի դրությունը բարեփոխելու համար պետք է ուսումնասիրել Հայաստանը, տեսնել թե ինչ պակասություններ կան այնտեղ: Գժբախտության պատճառը գաղթականությունն է: Բայց ինչո՞ւ է գաղթում հայը:

«Գուցե փողը պակաս է՝ երկիրը մշակելու, գուցե ճանապարհներ չկան՝ արդյունքները վաճառահանելու. ուրեմն պետք է գյուղական բանկեր բանալ, ինչի՞ չենք աշխատում ընկերություններ կազմել ճանապարհներ շինելու համար, ինչի՞ չենք դիմում եվրոպական դրամազույսներին, եթե մեր միջոցները սահմանափակ են:

* Արծրունին այստեղ ի նկատի ուներ ելմածնի ճեմարանը:

Մեզ հավատացնում են, թե Տաճկական Հայաստանում մարդու կյանքն ու կայքը անապահով դրություն մեջ են: Բայց մի ոք քննել է թե ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում են պատահում հարձակումները հայոց կայքի և կյանքի վերա: Մենք, օրինակի համար, հաստատ աղբյուրներից լսած ենք, որ քրդերն ու ավաղակները հայ գյուղերի վերա գրեթե միայն աչն ժամանակ են հարձակվում, երբ գյուղի մեջ մնում են ծերեր ու կանայք, իսկ տղամարդիկը գնացած են լինում Թուրքիայի մեծ քաղաքները և Կովկասու կողմերը փող աշխատելու: Գուցե բարվոքելով գյուղերի դրությունը, մենք աննկատելի կերպով հասնենք և այն հետևանքին, որ ոչ միայն դաղթականության առաջն առնենք, այլև դաղթականներին ևս դարձնենք իրանց հայրենիքը:

Մեզադրում են օսմանյան պետություն աստիճանավորներին, փաշաներին, կայմակամներին, որոնք նպաստում են մեր ազգի թուլանալուն: Նախ՝ այդպիսյաց թիվը հաղիվ թե խիստ շատ լինի. երկրորդ, ո՞ր պետության մեջ չեն պատահում գուցե ավելի մեծ հանցանքներ կատարելիչների կողմից: Մենք միայն հավաստի ենք, որ այդպիսիներին ամեն իշխանություն, ուրեմն և Բարձրագույն Գուռը, երբ նոցա հանցավոր գործերին տեղեկանում է, առանց պատժի չի թողնում: Բացի դրանից՝ պիտի ընդունենք, որ այն նեղությունները, որ քրդերն ու ավաղակները պատճառում են քրիստոնյաներին Հայաստանում, նանցա՛նք են, պատժելի արարմունքներ են:

Ահա՛ ինչ տեսակ հասկացողություն ունեն հայ հրապարակախոսները, գրողները իրանց թուրքահայ եղբայրների մասին: Մենք վերևում բերեցինք գեներալ Լիստոտինի գրվածքը և ասացինք, որ հայոց ամբողջ գրականության մեջ չէր կարելի գտնել այդ տողերի պես մի գրություն: Բայց այդ տողերը գրվել էին դեռ 1855 թվականին: Անցել էր այն ժամանակից քսան տարի և հայ գրողը դեռ այս տեսակ վայրիվերո գատողությունների մեջ էր խարխափում, թեև Կ. Պոլսի պատրիարքարանը երկու մանրամասն տեղեկագրեր էր հրատարակել, թեև արևելյան հարցի առիթով գրված անթիվ հոդվածների, գրքերի մեջ պարզվում, ապացուցվում էին թուրքական կառավարության հիմնական, օրգանական պակասությունները: Թե մինչև որ աստիճանին էր հասնում «Փորձի» միամտությունը, երևում է նրանից, որ այդ գրական-հասարակական հանդեսը ասում էր, թե հայերը ինքնապաշտպանության համար կարող են զենք ունենալ, թե հրացան բանեցնելը Թուրքիայում, «գոնե հայերին Հայաստանում» արգելված չէ, մինչդեռ պատմությունը դաս է տալիս, որ դեռ Օսմար խալիֆան սահմանել էր թե մահմեդականի հպատակ այլակրոնը իրավունք չունի զենք կրելու: Ի վերջո «Փորձը» իր դարձանալի գատողություններին ավելի դարձանալի վերջ էր տալիս: Իրավունքը, ասում էր նա, ձեռք է բերվում կովով և իսկույն ավելացնում էր. «Կովի՛ ասելով՝ չենք ուզում հասկանալ հեղափոխական միջոցները, ապստամբությունը և այլն: Հայերի դրությունը Թուրքիայում, նոցա վայելած իրավունքներն ու արտոնությունները դեռ այնքան են, որ առանց ապստամբության դիմելու, կարող են բարվոքել իրանից դրությունը...»:

Պետք է, սակայն, խոստովանել, որ «Փորձը» հաստատ համոզմունք չունի այդ հարցում: Երրորդ համարից նա սկսում է տպել Գամառ-Քաթիպայի «Ազատ կրդերը» — «Բողոք առ Սվրոպա», «Վանեցու Հայր մերը» և այլն, կրդեր, որոնք ոչ միայն արմատապես հակառակ էին հանդիսի խմբագրության վերոհիշյալ թուրքասիրական խոհերին, այլև հարկադրում էին խմբագրությունը քիչ ևս քաշվել, քիչ ուղիղ հասկանալ իրերն ու հանգամանքները:

Գամառ-Քաթիպայի Արծրունուց հետո առաջինն էր, որ ուսահայերի մեջ սկսեց ձայն բարձրացնել Թուրքաց Հայաստանի ժողովրդի մասին: Նա մարգարեբանաստեղծներից էր, դուշակում էր մտտիկ ապագան, տեսնում էր գալուցը, պոում էր:

Այժմ թողնենք Թիֆլիսը, անցնենք Կ. Պոլս: Այսանդ Արծրունու գրվածքները ավելի կատաղի վայնաւուն բարձրացրին. թուրքաց մայրաքաղաքի հայերը, իրանց պատրիարքի հետ, թուրքասիրական ցույցեր արեցին, որպեսզի իմացնել տան, թե չեն ուզում Ռուսաստանի օգնությունը:

Նախ և առաջ հիշատակենք, որ թուրքահայ մամուլը այդ կարևոր ժամանակներում միանգամայն անգիտակ և անհոգ էր: Մինչդեռ իրավունքներին, սկիսական երկրի, ապահովված աշխատանքի հարցեր էին արծարծվում, թուրքահայ գրողները ամենայն հանգստությամբ քննում էին, թե որքան լավ կլինեք, որ հայերը դաղթելին օտար երկիրներ: Ամենից առաջ այդ միտքը պաշտպանում էր գոկտոր Շիշմանյանը, որ հայտնի է Մերենց կեղծ անունով, Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» ամսագրի մեջ: Մերենցի դեմ սաստիկ բողոքեց Բաֆֆին Թավրիզից գրված իր մի հոդվածով, որի վերնագիրն է՝ «Փոստուն»: Իսկ երբ նույն միտքը սկսեց քարոզել և Կ. Պոլսի «Մանղումեի էֆքեար» լուրջ լրագիրը, այն ժամանակ Արծրունին գրեց՝ «Մենք էլ հրեաներ ենք» գեղեցիկ առաջնորդողը: Իբրև ազգային մի արատի վառվուռն պատկերացում՝ նա չէ կարող մոռացություն տրվել, ուստի մենք կրեհենք նրան քաղվածորեն. «Երկրագործությունը, արհեստները, վաճառականությունը իրանց մայրենի հողի վրա թողնելով, հայերը անդադար ձգտում են գաղթել, միշտ գաղթել...»

Հայերի մի փոքրիկ խումբ գաղթում է իր մայրենի հողից մի քանի հազար վերստ հեռավորությամբ, ղետեղվում է մի որևէ մայրաքաղաքի մեջ, շինում է եկեղեցի, — ու սկսում է վաճառականությամբ պարապել...

Հարցնող լինի, թե ինչի՞ են այնքան հեռու գնացել, — իրանք էլ չեն կարողանա պատասխանել...

Այդ խմբի մեջ հանկարծ հայտնվում է մեկը, որ այս կամ այն ճանապարհով հարստանում է՝ կամ սուտ թղթադրամով, կամ թղթախաղով, կամ սուտ, խաբերա վաճառականությամբ, անազնիվ կապալներով... Եվ ահա ամբողջ խումբը սկսում է այդ մարդուն Աստծո տեղ պաշտել, նրան առաջին մարդ համարել ամբողջ ազգի մեջ, — որովհետև այդ գուցե անհնաանազնիվ միջոցներով հարստացած մարդը օտար երկրում ղետեղված այդ հայ վաճառականների խմբին տոկոսով փող է տալիս...

Եվ ահա նա ազգի բարերար դարձավ...

Բայց ի՞նչ օգուտ աղգին օտար երկրում ղետեղված այդ վաճառականների խմբից, որոնց կտրել են իրանց բոլոր հարաբերությունները մնացած ազգի հետ, աշխատող, քրտինք թափող, իրանց մայրենի հողի վրա մնացած բաղմության հետ, արհամարհանքով խոսում են և նայում են իրանց հայրենակիցների վրա, ապարդյուն ուժ են կազմում իրանց ազգի համար և միևնույն ժամանակ օտարազգի հասարակական կարծիքի առաջ ներկայացնում են իրանց անձնական հատկություններով ազգի ամենաստոր, ամենամիսիթար կողմից, կտրելով օտարերկրյա հասարակության աչքում իրանց ազգի անունը...

...Այն ազգը, որ չունի իր մեջ ոչինչ բարոյական հիմունքներ, — այդ տեսակ ազգ գոյություն ունենալ չէ կարող:

Այն ժողովուրդը, որ ներելի է համարում փախչել իր մայրենի հողից, դեռևս հեռու աշխարհներ, թողնել իր հայրենիքը, որ չբաժանե իր հայրենակիցների հետ նրանց բարոյական կամ տնտեսական աննախանձելի դրությունը,

որ քաջութիւնն շունի իր տան մեջ դիմանալ կյանքի այս կամ այն դժվարութիւններին և արդիւքներին, չգիտե, ընդունակ չէ որնէ զսհարերութիւնն անելու, — այդ տեսակ ժողովուրդ՝ որպէս ազգ գոյութիւնն չէ կարող ունենալ...

Կամ է, որ այդ մարդիկը իրանց մայրենի հողի վրա ապրեին, աշխատասեր ու աղքատ լինեին, երկրագործութեամբ կամ արվեստներով պարապեին, քան թե հետո երկրում զետեղվելով, կտրեն իրանց բոլոր հասարակական կապերը իրանց ազգութեան հետ և նախապես աշխատանքի աշխատանքի մեջ համար, աղքի մնացած մասի համար, որ իր հայրենի հողի վրա է մնացել՝ մի կողմէ շարժե...

Այն ազգը, որի անդամները իրանց մեջ շունեն ոչինչ հասարակական կապեր, որոնք անդադար աշխարհի շրջա կողմը ցրվում են, որոնք չգիտեն միասին ապրել, միասին իրանց ցավերը և ուրախութիւնները տանել, — այն ազգը, որ գոհ է լինում, երբ հետո աշխարհում իր հայրենակիցներից կտրված, կարողանում է անաղնիվ վաճառականութիւնն անել, խաբել օտարազգիներին, շահվել, հարստանալ, և միևնույն ժամանակ պարծենալ, թե հավատարիմ է մնում իր ազգութեանը, որովհետև կառուցած ունի իր հայրենիքից հաղարավոր վերստ հետո մի եկեղեցի, թեև մոռացած և արհամարհում լինել իր մայրենի լեզուն, — այդ տեսակ ազգը՝ ազգութիւնն չէ, նա մինչև անգամ հասարակութիւնն չէ, — այլ միայն մի ազգանդ է...

Հրեաներն էլ ազգ չեն, այլ միայն մի ազգանդ...

...Անբարոյական մարդիկ, անհատներ ամեն ազգութեան մեջ կան, — բայց եթե գրեթե ամբողջ ազգը նախանձով է նայում այն մարդու վրա, որ հարստացել է ամենակեղատա միջոցներով, համարում է նրան առաջին մարդ, պաշտում է նրան, երկրպագում է նրան, ներում է նրան իր անցյալը, անվանում է նրան ազգի բարեբառ, այն պատճառով, որ այդ մարդը, ամենամեծը իր միջոցներով հարստանալուց հետո, մի կողմից տոկոսով փողեր է տալիս օտար երկրում զետեղված խաբերա ազգային վաճառականներին, մյուս կողմից կեղծավոր կերպով իրան ազգասեր է ձեռնարկում՝ զողացած փողից մի քանի ավելորդ կոպեկներ ազգային գործերի վրա նվիրելով, — այդ տեսակ ազգ, ցավելով պետք է ասենք, եթե չփոխել իր ընթացքը, կարող է ապագայի համար, որպէս ազգային բարոյական միավոր, որպէս մարդկութեան մի անհատ՝ կորած համարվել:

Գաղթական հայութեան այս պատկերը, ընդհանուր առմամբ, անհատական բացառութիւնները մի կողմ թողնելով, ճիշտ է: Այսպէս է վկայում երկար անցյալը, այսպէս է խոսում և ներկան: Եվ սակայն այսպիսի մի դրութիւնը նախանձելի էին համարում թուրքահայ գործիչները, Մերենցի նման հայտնի գրողները, այն էլ ե՞րբ, — 1876 թվականին, երբ Արևելքը իր ավերակների տակից նոր օրերի, նոր դրութիւնների էր սպասում: Սա ցույց էր տալիս, որ թուրքիայի ամբողջ հայութեան ներկայացուցիչ համարվող Կ. Պոլիսը միանգամայն միամիտ, խիստ ինքնագոհ էր այդ ժամանակներում, շունեն ոչինչ ակնկալութիւններ, և միակ գաղափարը, որ մատչելի էր նրան, թուրքասիրութիւնն էր:

Այդ արամագրութիւնը տիրում էր թե պաշտոնական շրջաններում, թե լրագրութեան մեջ: Թուրքիան ներկայում էր, և Կ. Պոլիսի հայութիւնը ամեն կերպ աշխատում էր այդ ներկայում պետութեան աչքն ընկնել իր հավատարմութեամբ: Թուրք-սերբիական պատերազմի ժամանակ եղան հայեր, որոնք կամավոր զբաղեցին և մտան թուրք զորքերի շարքը: Ներսես պատրիարքը հուլիսի սկզբում մի շրջաբերական հրատարակեց, որով հրավիրում էր թուրքահայերին օգնել

Օսմանյան դահին:

Մի այնպիսի ժամանակ, երբ քրիստոնյա հպատակների հարցը սպառնում էր կյանքի և մահվան հարց դառնալ, թուրքաց կառավարութիւնը ամենայն հաճութեամբ մի քանի բարեկամական ցույցեր էր անում դեպի հայերը, որպէսզի նրանց հավատարմութեան վրա հենվելով, կարողանա ասել Եվրոպային, թե թուրքիայում տանջվող բրիտանիկութեան հարց չկա, այլ միայն պալատական ինտրիգ: Հայոց պատրիարքին խոստումներ էին անում, բանը հասավ այն տեղին, որ մեծ վեզիրը այցելութիւնն տվեց Ներսես պատրիարքին, մի բան, որի նմանը չէր եղել հայոց պատրիարքարանի տարեկանութեան մեջ: Եվ ներսեսը — դեռ դեպքերը չէին խրատել նրան, դեռևս հավատացող էր, նա կարծում էր, թե թուրքասեր քաղաքականութեամբ կարելի է ձեռք բերել այն, ինչ ուրիշ քրիստոնյա ազգեր ուզում էին զենքով ստանալ: Այդ պատճառով նա հրատարակեց վերոհիշյալ շրջաբերականը, որով հորդորում էր հայերին ոչ միայն աղոթքներ կարգալ թուրքական զենքի հաջողութեան համար, այլև զինվոր զբաղել: Դա մի շատ հետաքրքրական դեպքն է. պատրիարքը այդտեղ վկայում էր, թե ճիշտ է այն ընդհանրական կարծիքը, որ հայերի ապագան թուրքիայումն է: Ահա՛ ինչպէս էր փաստաբանվում այդ միտքը. «Այն օրենս ի վեր, — գրում է ներսեսը, — որ հայոց ազգին ամենամեծ մասն Օսմանյան հզոր Տերութեան հպատակասեր քաղցր հովանույն ներքև մտալ, յուր հինգ դարուց պատմութիւնը կցուցանե, թե ի՞նչ մեծամեծ շնորհներ իրեն պարգևած է այս հզոր Տերութիւնը: Եթե այսօր թուրքիո մեջ կտեսնենք Հայ ազգը, որ կարհէ յուր կրոնը, յուր եկեղեցին, յուր լեզուն, յուր Պատմութիւնն ու ավանդութիւնները, վերջապէս եթե այսօր Հայ ազգն կզգա յուր էութիւնը, նույն բարեխնամ Տերութեան շնորհաց արդյունքն են: Այս ճշմարտութեան ամեն Հայու միտք համոզված է և չկա Հայ մը գրեթե որ ասոր դեմ խոսի առանց յուր պատմութիւնն անգիտանալու և Ազգին շահերը չճանաչելու:

Հայոց ազգն ալ յուր այս վայելած շնորհներուն փոխարեն հավատարիմ հպատակութիւնն ցուցած է արդյամբ, և հարատե երախտագիտութիւնն յուր սրտին մեջ կրած է որովոց որդիս: Ինչ ասպարեղ, որ բացված է յուր առջև, հոն բերած արգասավորած է յուր բոլոր մտավորական, բարոյական և նյութական կարողութիւնները և ապացուցած է այսու՛ թե Օսմանյան պետութեան ամենակարևոր տարրն է:

Ստույգ է թեև, որ Հայ ազգը մերթնդմերթ դավաճներու մեջ բարեխնամ Տերութեան կամաց հակառակ հարստահարութեանց ենթակա եղած ալ է, հարըստահարութիւնը, որոնք միայն մարմինը կվնասեն, և հետի են այն տեսակ հարստահարութիւններն՝ որոնք ոգին և մարմինը միանգամայն կվնասեն և ազգին գոյութեանը կսպառնան, սակայն վերջին օրերս ձեռք առնված միջոցներով և մանավանդ վեհափառ Սուլթանի գահակալութեան առթիվ հրատարակված հրովարտակին սկզբանց հենյով՝ մեծ հույս ունինք, որ այնպիսի մասնավոր ճնշմանց ու անկարգութեանց ալ հիմնական բարեկարգութեամբք առաջը պիտի առնվի, և մեր գավառացի ազգային լիովին պիտի վայելեն բարեկամ Տերութեան մեր ազգին վրա ունեցած մասնավոր սիրտ և համակրութեան արդյունքը:

Արդ Հայ ազգն՝ որու ճակատագիրն այսչափ դարերի ի վեր նվիրագործյալ կերպով միացած է օսմանցվուն ճակատագրին հետ, չկրնար անտարբեր մնալ

¹ «Մշակի» թղթակիցը Կ. Պոլիսից հաղորդում էր, որ հայ կամավորների թիվը հասնում էր 40-ի:

Օսմանյան Տերութեան գտնված արգի ծանրակշիռ պարագայից մեջ, այլ պարտավոր է ինչպես ամեն ժամանակ, նույնպես և առավել ևս ներկա ժամանակին մեջ անհեղձ օժանդակութիւն մատուցանել: Այս օժանդակութիւնն ընելով հայրենաստեր Հայք՝ նույնիսկ իր ազգային շահը պաշտպանած կըլլաւ վասնզի Օսմանյան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է նույնիսկ Հայուն կրօնը, գարոցը, ինքը, առնը, ընտանիքը և պատիւն ու կյանքը պաշտպանել ըսել է:

Ուստի խորհրդակցութեամբ խառն ժողովոյ Ազգային Վարչութեան՝ նվիրական պարտք կհամարիմ այսու Երջարեթական կոնդակով հորդոր կարդալ բոլոր Հայ ժողովրդեան, որ ամեն որ յուր կարողութեան սահմանին մեջ հայրենյաց պաշտպանութեան համար պետք եղած օգնութիւններն ընել փութաւ: Նախ աղոթելով հրապարակաւ հատենի Եկեղեցւոյ առ Ամենաբարձրյալն Աստուծոյ, Բագավորն թագաւորաց, որպեսզի յուր նախախնամական հղոր հոլաթեաց պաշտպանութեամբ մեր օգնութեամբ Սուլթան Մուրատ Ե. կայսրն և նորա ամուսն անաստան պահպանե, յուր նախաբարաց և պաշտօնեկից խոհմութիւն և իմաստութիւն պարզեւ, և կաշխերական արիագունգ բանակաց և գինաց հաջողութիւն շնորհե: Նույնպէս աղոթելով այն ամեն ազգի կամավորեցող համար՝ որք հայրենասիրական եռանդով վառված զենք կանուն հայրենյաց թշնամիներուն դեմ:

Երկրորդ՝ ըսա կարողութեան յուրաքանչյուր ուրուք և ըսա հոժարութեան կամաց օգնելով թե նյութական և դրամական նպաստից մասնակցութեամբ և թե անձնական ծառայութեամբ:

Վերջապես ամենքս ի մի բերան և ի մի սիրտ շինայինք մեր Վեհապետին և մեր Հայրենյաց պաշտպանութեան համար որևէ զոհողութիւն և ծառայութիւն, որոնք ներկային և ապագային մեջ մեր ազգին համար փառք և օգուտ կրերենք:

Մի կողմ թողնելով ուրիշ բոլոր հանգամանքները, նկատի առնենք միայն այն, որ Թուրքիայի պես մի մեծ, զինվորական բռնապետութիւն պատերազմ էր մղում երկու փոքրիկ, թուլը նույնիսկ կանոնավոր զորքեր չունեցող սլավոնական իշխանութիւններին դեմ, որ Թուրքաց բանակները, Սերբիայի սահմանները հասնելու համար, պիտի անցնէին Բուլղարիայի արյունոտ դաշտերով, որ զեռ նոր այդ զորքերը կատարել էին այնպիսի գազանութիւններ, որոնցից սարսափահար էր դարձել ամբողջ քրիստոնյա աշխարհը: Միայն այս հանգամանքները աչքի առաջ բռնելով, մենք տեսնում ենք, որ առնվազն շափազանցութիւն էր քրիստոնյա ազգի հոգեւոր ներկայացուցչի կողմից այդպիսի շրջաբերական հրատարակելը: Կարծեմ ո՛չ մի ժամանակ Կ. Պոլսի հայութեանը այս աստիճանի թուրքաւիրութիւն չէր ցույց տվել: Երբ է, հուշներն էլ էին կամավորներ տալիս, գուցե նույնիսկ աղոթում էլ էին իրանց եկեղեցիներում, որ կիսալուսինը ջախջախե Չերսոպոլեան և Սերբիան, բայց հայերի ջերմ թուրքամոլութիւնը մի առանձին, աչքի ընկնող երևույթ էր կազմում:

Միայն մի մարդ փանկեց հայերի մեջ, որ բողոք հրատարակեց Ներսես պատրիարքի այս շրջաբերականի դեմ: Եւ դա Գրիգոր Արծրունին էր: Հրատարակելով շրջաբերականը «Մշակի» մեջ, նա նույն համարում (№ 33) տպեց մի առաջնորդող, որի վերնագիրն էր «Կ. Պոլսի Ներսես պատրիարքի խախտողական ամօթալի շրջաբերականը»: Գա առաջին խիստ հարձակումն էր Ներսեսի դեմ: Այդ շրջաբերականի մեջ Արծրունին տեսնում էր կղերականութեան հաղթանակը:

«Ներսես սրբազանի շրջաբերականը կարդալուց հետո, — ասում է Արծրունին, — մենք սչինչ գանազանութիւն չենք գտնում նրա ամօթալի վարմունքի և Հոսմի անտալակայան հրեշի վարմունքի մեջ թուրքաց տերութեան վերաբերութեամբ...»

Ի՞նչ սքանչելի պատկեր՝ քրիստոնեական առաքելական եկեղեցու հովիւը քարոզում է հրապարակապէս թե ավետարանի պահպանողը իսլամն է, թե՛ «Օսմանյան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է. նույնիսկ Հայուն կրօնը, գարոցը, ինչքը, առնը, ընտանիքը և պատիւն ու կյանքը պաշտպանել ըսել է»:

Մենք միշտ համոզված ենք, որ քրիստոնեութիւնը՝ թե իր բարոյական, թե հասարակական վարդապետութեան կողմից բարձր է՝ քան թե մահմեդականութիւնը, որ միայն քրիստոնեութեան միջոցով կարելի է մարդկութեան հասնել լայն, բնդարձակ՝ բարոյական, հասարակական և քաղաքական դարգացմանը: Մենք միշտ համոզված էինք, որ քրիստոնեութիւնը դավանող ազգը չէ կարող իր բոլոր մտավոր, հոգևոր, տնտեսական և հասարակական կարողութիւնները զարգացնել մինչև որ նեթարկված կլինի մի պետութեան լուծին, որի դավանութիւնը՝ մահմեդականութիւնը սկզբունքով թշնամի է մարդու ազատ, անհատական դարգացման, այն դավանութիւնը, որ իրան երբեք ընդունակ չէ ցույց տվել՝ նպաստել պետական կանոնավոր, հաստատ, դրեզ կազմակերպութեան զարգացնելուն, որ միշտ սկզբունքով թշնամի է եղել լուսնի, առաջադիմութեան, ժամանակակից գաղափարների ընդունելուն...

Բայց Ներսես սրբազանը այսպես չէ կարծում: Այդ քրիստոնյա հովիւը, այդ աշակերտը և առաքյալը Քրիստոսի՝ անհրաժեշտ է համարում քրիստոնեական ազգի գոյութեան տևողութեան համար մահմեդականութեան հովանավորութիւնը, քրիստոնյայի պատիւը նեթարկում է իսլամի պատիւի հովանավորութեանը, ավետարանը ստորադրում է դուրանին... Փրկչի հոտի գոյութիւնը կարտա է համարում Մահմեդի պաշտպանութեան...

Մենք խոսքեր չենք գտնում մեր զարմանքը, զայրացումը, մեր զզվանքը արտահայտելու համար, տեսնելով ո՛րքան ստոր է ընկել բարոյապես մեր հոգևորականութիւնը և որ նրա երարխիական կազմակերպութեան այդքան բարձր աստիճանների վրա բուն է դրել կաթոլիկ կղերականութեան թշվառ ոգին»:

Բայց Կ. Պոլսի թուրքամոլական ցույցները այդքանով չբավականացան: Այդ ցույցերը զավեշտական, ծիծաղելի կերպարանք ստացան Ներսես պատրիարքի շրջաբերականից քիչ հետո: Մի օր Կ. Պոլսի թուրքախոս հայ լրագիրներից մեկը վերցրեց և հաղորդեց թե կովկասում ապստամբութիւն է ծագել ուսաների դեմ: Մի քանի ուրիշ լրագիրներ ազահուլթեամբ ընկան այդ լուրի վրա և սկսեցին նրան ուռցնել, մեծացնել: Հնարվեցին մի շարք առասպելներ: Իրր թե կովկասյան ազգերը միացել են, հայերը 80 հազար մարդ են հանել ուսաների դեմ, կովկասյան փոխարքա Մեծ Իշխան Միխայիլը թագաւոր է հրատարակվել կովկասում, հայոց կաթողիկոսը բանտարկված է, և, որ գլխավորն է, ապստամբները ջարդել են ուսա զորքերը: Այս առասպելներին հավատացին. մի քանի հոգևորականներ նույնիսկ քարոզներ ասացին եկեղեցիներում, հորդորելով հայերին, որ զենք վերցնեն, զնան կովկասում ապստամբվածներին օգնելու: «Մանդումի էֆէնդար» լրագիրը փորձեց հերքել այդ հրեշավոր առասպելները, բայց ժողովուրդը հարձակվեց լրագրի տպարանի վրա. անկարգութիւնները այնպիսի կերպարանք ստացան, որ ուսաց զևսպանութիւնը ստիպված եղավ միջամտել և պաշտպանել «Մանդումի» խմբագրին: Թուրք կառավարութիւնը, իհարկե, հաճութեամբ էր նայում իր հավատա-

րիմ հայատակների այս ցույցին: Առասպելը գոնե այն միտքը կունենար, որ զուր է Ռուսաստանը իրան քրիստոնեություն, ազատության պաշտպան հրատարակում. ահա նրա հայատակներն էլ ապստամբվում են: Եթե այս առասպելին շնամբար Եվրոպան, հա հայ ազգը, որ ապրում էր գավառներում, պիտի համոզվեր, որ զուր է հույս դնել Ռուսաստանի վրա: «Մշակը» եռանդուն ուժն էր բողոքներ հրատարակեց թուրքամուսուլման այդ հիմար ցույցերի դեմ: Նա դատապարտեց Կ. Պոլսի հայ ինտելիգենցիայի թեթևամտությունը և ասաց, որ այդ արարմունքը նպատակ ունի թուրքիայի հայերի միտքը պղտորելու և ժողովրդնելու: Այդպես էլ եզակի իրապես: Երբ թուրք կառավարությունը հարցուփորձի ենթարկեց առաջին անգամ այդ հրեշավար ստությունը հրատարակող խմբագրին, սա պատասխանեց, թե արել է այդ բանը «Մշակի» ջրու: «Մշակը» քարոզում է, որ թուրքահայերը ապստամբվեն, ահա ինքն էլ, դրս փոխարեն, հրատարակ է հանել ռուսահայերի ապստամբության առասպելը:

«Այդ հրեշավար լուրերը, որ տարածեց նորերումս Կ. Պոլսի լրագրությունը Ռուսաստանի վրա, — ասում էր Արծրունին, — պարզ ցույց են տալիս մեզ, թե կա Կ. Պոլսում հայերի մի հայտնի կուսակցություն, որ մեծ հակակրություն ունի դեպի Ռուսաստանը:

...Հիշյալ երկու բանակները սրանք են՝ մի կողմից Կ. Պոլսի սահմանադրական հայերը, բուրժուազական օգուտներ ունեցող, հարուստ հայերը և նրանց հոգևորականությունը, և ուրիշ կողմից՝ հասունյան կաթոլիկները:

Որքան Հայաստանի հայոց ամբողջ, ծառ երեք միլիոն Փոքր Ասիայի մեծ մասամբ երկրագործ և արվեստավոր հայոց ժողովուրդը ցանկանում է միանալ Ռուսաստանին, ապրել հաստատ օրենքների հովանավորության տակ, դուրս գալ այնպիսի դրությունից, որտեղ նա ապրում է անսահման կամայականություն տակ, անպաշտպան լինելով հարստահարությունների, բարբարոսությունների, մահմեդական ամբոխի, ավազակների և թուրք պաշտոնյաների կամայականության դեմ, — այնքան Կ. Պոլսի հայոց հասարակության մեծ մասին ձեռնտու է օսմանյան պետության հովանավորության տակ ապրելը: Կ. Պոլսի հայերը ապրում են օտար հողի վրա, կտրված են հողից, երկրի տնտեսական և բարոյական օգուտներից, պարապում են վաճառականությամբ, կապալանությունով, վաշխառությամբ և շատերը նրանցից կապված են թուրքաց տերություն հետ ավելի սերտ կապերով, օսմանյան տերության պետական ծառայություն մեջ գտնվելով: Հասկանալի է, որ նրանց ձեռնառ է թույլ, միշտ փոփոխական ուղղություն ունեցող կառավարություն...

Բոլոր արտոնությունները, որ ունեն Կ. Պոլսի հայերը, չեն տարածվում գավառների հայերի վրա: Ասիական գավառների հայը, քրտինք թափող հայը կամենում է միայն որ իր անձը, իր ստացվածքը, իր օրական աշխատանքը ապահովված լինեն, նա չէ կամենում հարստանալ: Ընդհակառակն, դանազան անազնիվ միջոցներով հարստացած Կ. Պոլսի հայ էֆենդին կամ ամիրան մտնացել է այն երկիրը, որից դուրս է եկել, նա կտրել է իր կապերը իր ազգություն հետ, նա ավելի բարձր է դասում իր նյութական շահերը, քան թե իր ազգության տնտեսական և բարոյական օգուտները: Նա ունի Կ. Պոլսում եկեղեցական և ուսումնարանական ինքնավարություն, — նրան ի՞նչ փոշի, որ այդ ինքնավարությունը լուր խոսք է գովառների համար և որ տեղական վարչության կամայականության և թուլության պատճառով, այդ երեսկայական ինքնավարությունը չէ կարող ոչ գործադրված, ոչ պահպանված լինել գավառներում: Կ. Պոլսի հայ ամիրան, էֆենդին և հոգևորականը գիտեն, թե քանի գոյություն կունենա թուրքաց պետությունը, նրանց հարկավոր չէ ոչ մեծ

ուսում. ոչ ազգություն, ոչ բարոյական զարգացում, ոչ մասնագիտական կրթություն, ոչ քաղաքացու ժամանակակից արժանավորություններ և հատկություններ, — նրանց հարկավոր է միայն փող, որով նրանք ամեն բան կարող են անել այդպիսի թույլ պետության հետ, իրանց արյունակից գավառացի հային էլ հարկավոր ժամանակ հարստահարելով:

Գալով մյուս կուսակցություն, Արծրունին ասում էր, որ «հասունյան կաթոլիկ եզվիտական կուսակցություն» էլ ձեռնառ է օսմանյան պետության գոյությունը, քանի որ թուրքական թույլ կառավարությունը տալիս է նրան ամեն հարմարություն՝ առաջ մղելու իր պրոպագանդան ինտրիգների, զանազան որոգայթների միջոցով: Եվ որպիսի համերաշխություն է տիրում Կ. Պոլսի հայ և թուրք լրագրողների մեջ: «Նորերումս, — շարունակում է Արծրունին, — «Բասիրի» թուրքաց լրագիրը թուրքիայի հայերին գրավելու համար իր մի համարի մեջ բացականչում է՝ «Թուրքաց պետության կոշումն է ազատել հայերին սուսաց տիրապետության անտանելի լծից»:

Ահա թե ո՞րքան մեծ աղմուկ հանեց «Մշակը», ո՞րքան կատաղի դիմադրություն ստեղծեց իր այն հողվածներով, որոնց մեջ մարդկային տարրական իրավունքների ապահովություն էր պահանջում գավառների հայ ժողովրդի համար: Կ. Պոլսում միայն «Մանդուկ» լրագիրն էր իրան փոքրիշատե օրինավոր պահում: Նույնիսկ «Մասիսը», որ հայոց պատրիարքարանի կիսապաշտոնական օրգանն էր համարվում և լուրջ ու խոհեմ թերթի համբավ ուներ, պարտք համարեց ամենախիստ լեզվով հարձակում գործել «Մշակի» դեմ: Ահա ինչ էր գրում պատրիարքարանի այդ օրգանը. «Բնավ չէր հուսացվեր մայրաքաղաքիս հայ լրագրաց ոմանց մեկ շափազանցության փոխարեն, Թիֆլիզ հրատարակյալ և ամեն մեկ տողը գրաքննիչին սուր քննությանն ենթարկյալ թերթ մը, պուցե անկե առնելով, Թուրքիո Հայոց և զանոնք կառավարող տերություն դեմ նախատինք և թշնամանք տեղա, ոչ թե Հայու, այլ Մոսկովի մը բերնին մեջ վաչող լեզվավ մը... «Մշակը» Թուրքիո Հայերը դիմակ, լե՛շ, ա՛ղբ կկոչի: Մեք ամենքս անոր աչքին առջև մարդ ըսվելու անգամ արժանի չենք եղեր, այլ դրաստ, անբարոյական, ինկած, անշունչ էակներ ենք եղեր: Ասկե վար բան մը կմնա՞՞ զմեզ կոչելու: Եվ եթե պատճառը հարցնելու լինինք, այս է եղեր որ «Թուրքիո Հայերը թուրքերուն և քյուրդերուն սիրտը դանակ չեն կոխեր»... Ի՛նչ մարդասիրական պահանջում:

...«Մշակի» խմբագիրն ի՞նչ փաստ ունի տպացուցանելու թե Թուրքիո Հայն այն աստիճան ընկած է, ինչպես որ կը կարծե. ինչպե՛ս պիտի կրնա տպացուցանել թե Ռուսիո Հայը բարոյապես գերազույն է Թուրքիո Հայեն. ի՞նչ հառաջադիմություն, ի՞նչ լուսավորություն, ի՞նչ ազգային կյանք կրնա ցուցանել Ռուսական Հայաստանի մեջ, որպեսզի Թուրքիո մեջ հայության լեզուը կպահանջե: Որովհետև Փոքր-Ասիո խորերն և Հայաստանի մեջ կպատահին եղեր մասնավոր եղեռնագործություններ հակառակ կայսերական կառավարության կամաց՝ ի վնաս այս կամ այն Հայ անհատին, եղեռնագործություններ՝ որոնց հեղինակներն եթե ձեռք անցնեն, իրենց արժանավոր պատիժը կկրեն, ասոր համար պետք է եղեր որ Հայերն ի զեն գիմեն իրենց կառավարության դեմ և «Մշակի» քարոզած քաղաքական ընթացքը բռնեն իրենց իսլամ հայրենակցաց նկատմամբ, որոնց ամենամեծ մասը սիրով և համակրությամբ վարված են իրենց հետ այսչափ դարերն ի վեր, և այնպես կվարվեն միշտ, մանավանդ ներկա լուսավորյալ դարուս մեջ:

...Ելնել ընկերական պատերազմի և ապստամբության հրավեր կարգալ Հայոց, սուրգիվ՝ եթե ոչ ազգատեցություն, գոնե հիմարության վերջին ծայրն

է. Եթե Հայն յուր ազգային անհատականութիւնը պահած է, կհարցնենք, թե որո՞ւ շնորհիւ է: Ո՞չ ապաքեն այն կառավարութեան պարտի յուր ազգութեան և լեզվին պահպանութեան, որ այժմայի ժամանակէ ի վեր ոչ միայն բնակ չընկալատեց զինքն յուր ազգութեանը փոխելու, երբ ամեն բանի կարող էր այլև պաշտպանեց և տուածնաշնորհութիւններ տվաւ: Նույնիսկ այն դարերուն մեջ՝ երբ թուրքի տակաւին թանգիմաթը գործադրած չէր, երբ եվրոպական տերութեանց ներգաղնակութեան մեջ մտած չէր, Հայերը մեծամեծ շնորհներ կվաչելէին. թուրքիո կումուտքն իրենց ձեռքն էր. վաճառականութեան մեծ մասն իրենք կրնէին, և կայսերական մեծամեծ գործարաններ կրունցնէին: Ահա այս շնորհիւ թուրքիո Հայք կրցած են անթիւ եկեղեցիներ և դպրոցներ կանգնել, իրենց կրոնքը պաշտել և լեզուն մշակել, զարգանալ և աճել:

Եվ Կ. Պոլսի հայութեան շահերի այդ փաստաբանութիւնը լրագիրը վերջացնում էր հետևյալ «խորհմաստ» եզրակացութեամբ.

«Կարծենք Ռուսիո մեջ ալ խելքը գլուխ հալ մը չը կա, որ համոզված չըլլա այս ճշմարտութեանց. ուստի տարակույս չունինք, որ «Մշակի» հոգիածները ճշմարիտ Հայու մը գրչն չեն կրնար ելած ըլլալ, այլ կամ Ռուսի մը կամ ազգութեան մը, որ չգիտենք ի՞նչ նպատակով յուր թուրքիո ազգակիցներն այսպես Ռուսիո փառասիրութեան զոհելու փորձ կփորձեն:

Այս անմիտ ակնարկութիւններն էին միակ զենքը Արծրունու բազմաթիւ հակառակորդների ձեռքում: Թողնելով որ հետագա դեպքերը ապացուցանեն, թե ո՞վ էր ճշմարիտ հայը, ո՞վ էր լավ հասկանում իրերի դրութիւնը, մեկը այստեղ կհիշեցնենք ընթերցողին, որ «Մշակի» հակառակորդները ձեռնառ էին համարում մոռանալ, չեղածի պես համարել նրա ասածների էական, ամենազխալոր մասը և ազմուկ հանել երկրորդական բաների շուրջը: Նրանք մոռանում էին, որ Արծրունին հաստատ կերպով ասում էր. «Այժմ կամ երբեք մոռանում էին, որ Արծրունին, նկարագրելով թուրքական առյուծի ստրկութիւնը, բթացած դրութիւնը, ասում էր, որ նրան կարող է ազատել մի դրո՞ւ մեծ ուժ և այդ ուժը Ռուսաստանն է, որ իր վրա է վերցրել արևելյան քրիստոնյաների պաշտպանութիւնը: Հայերի համար էլ հույսի դուռ է բացվում. «Այժմ կամ երբե՞ք»:

Եվ ահագին ազմուկն ու վաչնասունը շկանգնեցրին Արծրունուն: Նա լիա հանջեց, կեսից հտ շարձավ, այլ շարունակեց իր պրոպագանդան ավելի մեծ եռանդով: «Մշակի» միջոցով նա կարող էր միայն հայերի հետ խոսել, բայց պետք էր ուս հասարակութիւնն էլ ծանոթացնել թուրքահայերի դրութեան հետ: Ռուս լրագիրների մի նշանավոր մասը թշնամարար էր տրամադրված դեպի հայերը: Գլխավոր շարժառիթներից մեկը, իհարկե, այն թուրքամուկական տրամադրութիւնն էր, որ տիրում էր Ռուսիոյի ասիական ասպետի «Կովկասյան ապստամբութեան» մասին հորինված առասպելների ասիթով Պետերբուրգի լրագիրները խիստ հարձակումներ գործեցին հայերի դեմ և Ասիացիին իր ֆելիտոսներէից մեկում տիրութեամբ ասում էր, թե մեզ հայտնում են, անդադար հաշտում են: Անհրաժեշտ էր ուս հասարակութեան ասպարզել իրողութիւնը, այն, որ Կ. Պոլսի հայութեանց դուրս կա հայերի մի ահագին բազմութիւն, որ տանջվում է սլավոնների պես: Բայց ո՞վ պետք է աներ: Արծրունին մի կողմից դարմանք էր հայտնում, որ հայ ուսանողները Պետերբուրգում և Մոսկովայում թարգմանութիւններ չեն անում հայոց լրագիրներից և չեն տպագրում ուս լրագիրների մեջ, մյուս կողմից ինքը աշխատում էր այդ անհրաժեշտ պահանջը իրագործել:

Այս պատճառով նա հուլիսի վերջից սկսեց տպագրել «Тифлисский вестник» լրագրում մի շարք հոդվածներ՝ «Հայերի դրութիւնը թուրքիայում» շնորհանուր վերնագրով: Դա մի բարեխիղճ, մանրամասն ուսումնասիրութիւն էր. հիմնված 1872-ի այն տեղեկագրի վրա, որ հրատարակել էր Կ. Պոլսի լրաց պատրիարքարանը և լուսարանված այն տեղեկութիւններով, որ տալիս էր Կ. Պոլսի հայոց մամուլը: Հոդվածների տակ գրված է Ա. ստորագրութիւն, լրաց ոչինչ կասկած չկա, թե դրանք Արծրունու գրչին են պատկանում, քանի որ այնտեղ ամեն ինչ ներկայացրած է «Մշակի» ոճով և հայացքներով և շատ տեղ նույնիսկ թարգմանութիւններ կան «Մշակից»:

Հոկտեմբեր ամսին, երբ արևելյան հարցի հարուցած ուշադրութիւնը իր լայնահեղ լարման էր հասել, Արծրունին հրատարակեց ուսերեն մի փոքրիկ բրոշյուր՝ «Восточный вопрос» վերնագրով: Վեց փոքրադիր երես գրավող այդ հոդվածը «Մշակի» մի առաջնորդողից մեծ չէր՝ և նրա մեջ Գրիգոր Արծրունին աշխատում էր հիշեցնել մի ահալոր ճշմարտութիւն, որ մոռացվում էր արևելյան հարցի քննութիւնների ժամանակ:

Ամբողջ եվրոպան համոզված էր, որ արևելյան հարցի արդար, բնական լուծումը կլինէր վոնդել թուրքերին եվրոպայից: Նույնիսկ պետական այնպիսի մեծ խելք, ինչպիսին էր Գլադստոնը, իր ձառերի, իր հրատարակած նշանավոր բրոշյուրի մեջ ասում էր, թե թուրքերի եվրոպա անցնելը մի սոսկալի անեծք էր քաղաքակիրթ մարդկութեան համար և այդ անեծքից աշխարհը կազատվի արե ժամանակ, երբ թուրքերը կհավաքեն իրանց ունեցած-չունեցածը և կհեռանան եվրոպայի հողից: Այդ վճիռը շատ վաղուց էր կայացրել քրիստոնյա եվրոպան, դա, իհարկե, հայտնի էր թուրքերին, որոնք և ժամանակավոր հյուսիս էին իրանց համարում եվրոպական հողի վրա: Հայտնի է, որ շատ բարձրաստիճան թուրքեր կտակում էին թաղել իրանց Ռուսիոյի ասիական ասիերի վրա. նրանք գիտեին, որ թուրքի իսկական հայրենիքը, վերջիվերջո, Փոքր Ասիան է: Եվ իրավ, դարերի ընթացքում եվրոպական քրիստոնեութեան ջանքերը ի նկատի ունենին միայն եվրոպական հողի վրա ապրող քրիստոնյաների պատմութիւնը թուրքական լուծից և եթե օսմանյան թագավորները իրանց ամար կամքով անցնէին Ռուսիոյի ասիական ասիո, արևելյան հարց չէր լինի: Արևելյան հարց այդ դեպքում չէր լինի: Բայց որքա՞ն ճիշտ էր դա. Արծրունին իր բրոշյուրի մեջ հենց այդ հանգամանքն էր քննում:

«Արևելյան հարցը, — ասում էր նա, — միայն սլավոնականութեան և օրթոդոքսութեան հարց չէ, նա նույնիսկ միայն քրիստոնեութեան հարց չէ, այլ ավելին. դա կուլտուրական հարց է, կուլտուրական ցեղերի կովի հարց է բարբարոսութեան դեմ, արիական և սեմական ցեղերի կովի հարց բուրանական ցեղի դեմ:

Արևելյան հարցը — դա սլավոնների, հույների, հայերի, ասորիների, վրացիների, հրեաների խուլ, համր, օրհասական կովի հարցն է նրանց ճնշող մոնղոլական լուծի դեմ:

Ահա ինչ պետք է հասկանա եվրոպան: Եթե այդ ցեղերից մի քանիսը կովում են զենքերը ձեռքին, իսկ մյուսները անջվում, արյուն են թափում առանց կովի, մեռնում են անօգնական, — դրանից շտեպ է հետևեցնել թե վերջինները քիչ են տանջվում, քան առաջինները... Ահա, կրկնում եմ, ինչ պետք է հասկանա եվրոպան:

¹ Թարգմանութիւնը տպվեց 1877-ի առաջնորդողներից մեկում:

Արիական և սեմական ծագում ունեցող այս ցեղերը, որոնք հպատակ են թուրքիային, օսմանները պետության մեջ ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունն են կազմում: Իսկ եթե այդ ցեղերին միացնենք թուրքիային այն ազգաբնակչությունը, որ թեև մահմեդական կրոնին է պատկանում, բայց նույն արիական ծագումն ունի, այն է՝ մահմեդական սլավոններին, մահմեդական հույներին, մահմեդական հայերին, մահմեդական վրացիներին և նույնիսկ քրդերին (հին մեդագիներին) և սեմական ցեղին պատկանող մահմեդական հրեաներին և մահմեդական ասորիներին, որոնք մահմեդականություն ընդունել են մոնղոլների բարբարոսական ճնշման տակ,— այն ժամանակ դուրս կգա, որ թուրքիայում կուլտուրական ցեղերը ահապին, ճնշող մեծամասնություն են կազմում, համեմատած սելջուկյան թուրքերի մի բուռն թոռների հետ:

Ահա դարձյալ, կրկնում եմ, ինչ պետք է հասկանա Եվրոպան:

Եթե Եվրոպան ուզում է, որ զարգացման և կուլտուրայի ընդունակ ցեղերը, այն ցեղերը, որոնք ժամանակավորապես ճնշված են, բայց կուլտուրական են, նորից վերագործնվեն կուլտուրային, վերագործնվեն մարդկության, նա թուրքական լուծից պիտի ազատե բոլոր ոչ բուրանական ցեղերը:

Փարիզյան պես քաղաքագետները և Եվրոպայի հասարակական կարծիք այնպիսի ղեկավարներ, ինչպես էմիլ դը-Փիրարդեն, վճռում են արևելյան հարցը շափազանց հեշտ կերպով. բավական է միայն, ասում են նրանք, վճռել թուրքերին Եվրոպայից Փոքր Ասիա — և արևելյան հարցը լուծված է:

Իսկ ի՞նչ պիտի անեք հնդկա-եվրոպական ցեղերի այն միլիոնները, հեռու որոնք բնակված են Փոքր Ասիայում, կուլտուրական մարդկության այդ որրանում:

Եվրոպան մի՞թե այդ ցեղերը մոնղոլական ցեղի կերպ կգործեն, մորեի պես բաց կթողնե թուրքերին Փոքր Ասիա:

Դրանով դուք չեք վճռի արևելյան հարցը, այլ միայն կձգձգեք նրան կբարդացնեք:

Ժամանակ կար, երբ սլավոններն էլ, եվրոպական հույներն էլ չէին համարձակվում կովել թուրքական լուծի դեմ, ինչպես այժմ շեն համարձակված այդ անել Փոքր Ասիայի հույները և հայերը, այլ արյուն էին թափում, կոտորվում էին լուռ, ինչպես այսօր արյուն են թափում և լուռ կոտորվում են Փոքր Ասիայի հայերը և հույները...

Բայց վերջապես սլավոնները միաբան դենք վերցրին:

Ո՞վ կարող էր երաշխավոր լինել, որ Փոքր Ասիայի ազգաբնակչությունն էլ ժամանակով զենք չի վերցնի:

Մի՞թե դրանով կլուծվի արևելյան հարցը:

Ո՞չ, նա միայն կձգձգվի:

Այսօր ապստամբվել են թուրքիայի եվրոպական հպատակները, հին տասը տարուց հետո կապստամբվեն թուրքիայի ասիական հպատակները...

Մի՞թե դրանով կլուծվի արևելյան հարցը:

Եթե Եվրոպան ուզում է պահպանել թուրքական կալվածների ամբողջությունը, թո՞ղ պահանջե թուրքիայից հավասար և լայն մարդկային իրավունքներ նրա այն բոլոր հպատակների համար, որոնք թուրանական ծագում չունեն: Իսկ կարո՞ղ է թուրքիան այդ կատարել, կարո՞ղ է պահել իր տված խոսքը իրագործել խոստացած ռեֆորմները... Երբե՞ք:

Իսկ եթե նա ուզում է ազատել միայն եվրոպական նահանգները թուրքական լուծից և դրանով կարծում է լուծել արևելյան հարցը, այդ դեպքում նա

կարող է համոզված լինել որ հինգ, շատ-շատ տասը տարուց հետո նա նորից կանենա արևելյան հարց և զուցե ավելի հուսահատական, ավելի սարսափելի կալվում...

Կարո՞ղ է Եվրոպան երաշխավոր լինել, որ այն ժամանակ նա կարողություն կունենա խցել իր ականջները և չսել միլիոնավոր մարդկանց հեծեծանքերը միայն այն պատճառով, որ հուսահատական, գուցե և օրհասական կոփված լուծ ենք ոչ թե Եվրոպայում, այլ Փոքր Ասիայում:

Թո՞ղ Եվրոպան լուծե արևելյան հարցը այժմ և եթե, և լուծե արմատական կերպով, թե չէ՝ չպետք է լինել մեծ մարգարե՝ գուշակելու համար, որ մոտիկ ապագայում նրան հարկավոր կլինի լուծել այդ հարցը նորից:

Եթե Եվրոպան ուզում է թուրքիայի կալվածները անձեռնմխելի պահել, պետք է պահանջե նրա բոլոր հպատակների համար հավասար մարդկային իրավունքներ:

Դրանով դեռ չի լուծվի արևելյան հարցը, այլ նա նորից կծագե մի քանի ժամանակից հետո:

Եթե կբավականանա միայն նրանով, որ կվճռե թուրքերին Եվրոպայից Փոքր Ասիա, այդ դեպքում մի քանի ժամանակից հետո նրա առաջ նորից հարույն կառնե արևելյան հարցը՝ իր հեծեծանքներով, հառաչանքներով, պենքը ձեռքին:

Ո՞րն է արևելյան հարցի արմատական լուծումը:

Այն ցեղերը, որոնք ընդունակ չեն պետական կյանքին, ինչպես մոնղոլական ցեղը, պատմության անդառնալի վճռով պետք է զրկվեն պետական կյանքով ապրելու իրավունքից, մանավանդ որ պետական կյանքին անընդունակ ցեղի ձեռքում տանջվում են կուլտուրական կյանքին ընդունակ միլիոններ արիական և սեմական ցեղերից:

Ուզո՞ւմ է Եվրոպան տարածել քաղաքակրթությունը Եվրոպական թուրքիայում և Փոքր Ասիայում, վերագործնել կուլտուրական ժողովուրդները եվրոպական կուլտուրային,— այդ դեպքում նա պիտի հասկանա, որ թուրքական տիրապետությունը մի անհաղթելի արգելք է քաղաքակրթությունը թե սլավոնական ցեղի և թե Փոքր Ասիայի ցեղերի մեջ տարածելու դեմ:

Պատմությունը անողոր է:

Ազգերի գոյության կովի և մարդկության ընդհանուր զարգացման մեջ պատմությունը զրկում է գոյության իրավունքից, որպես պետություն, բոլոր այն ազգերը, որոնք ապացուցանել են պետական կյանքով ապրելու իրանց անընդունակությունը»:

Այս բրոշյուրի վրա ուշադրություն դարձրին մայրաքաղաքի մի քանի ռուս քաղաքիներ: Առհասարակ, ռուսաց մամուլի մեջ, գլխավորապես «Մշակի» և նրա խմբագրի շանքերով, սկսեց փոքր առ փոքր երևան գալ համակրության մի հոսանք հայերի վերաբերմամբ: Ավելորդ է ասել, թե «Արևելյան հարց» բրոշյուրը որքան պատիվ էր բերում մի լուրջ, մտածող հրապարակախոսի քննադատող ինքը կարող է դատել այդ մասին, դատել մանավանդ թե որքան իրավացի նկատողություններ և ճիշտ գուշակություններ էր դրել Արծրունին իր այդ փոքրիկ, բայց աշխույժ ու կտրուկ ոճով գրած աշխատության մեջ: Մենք այստեղ նորից մի փոքրիկ նմուշ կտանք, թե երգվյալ, կույր թշնամությունը, ի՞նչպես վերաբերվեց Արծրունուն և այս դեպքում: Ահա ինչ էր գրում «Մեղու Հայաստանին» իր № 41-ի մեջ. «Ամբողջ տարի է, որ բոլոր Եվրոպան տակնուվրա եղավ Արևելյան հարցի պատճառով, թագավորներ ու կայսրներ անապարհորդեցին, դեսպաններ ամեն տեղ վազեցին, խոսեցին ու վիճեցին,

միլիոններն ծախսեր եղան, գործերը տեղափոխվեցան — դեռ էլի հարցը անվճիռ մնաց, որ ի վերջո «Մշակի» խմբագիր պ. Գր. Արծրունին 5 կապեկով վճռեց — վասն զի նորա «Արեւելյան հարց» ուսմանն բնույթը հինգ կապեկ արժե: Ինչպե՞ս, այնպես որ նվրոպան չգիտեր, թե ինչ պիտի անե և պ. Գրիգոր Արծրունին սովորացրեց նրան: նա պետք է Տաճկաստանի բոլոր հպատակ ազգերին ազատություն տա, որովհետեւ նոքա Իրանական և Սեմիտական ազգեր են, իսկ Տաճկիներին անթարկե նրանց, որ այսուհետեւ նոքա նրանց հարստահարեն, որովհետեւ Տաճկիները Մոզոլյան ցեղին են պատկանում և կուլտուրական ազդ չեն (?):

Ի՞նչ է մնում այլևս նվրոպային. սա, ինչպես և Տաճկաստանը անշուշտ կընդունեն պ. Արծրունու վճիռը:

Նվ աշախիսի ծամածոություններն միջոցով լրագիրը գալիս էր այն եզրակացության, որ Արծրունու բնույթը մանկական բան է և ծիծաղ է հարուցանում հասկացող հասարակության մեջ: Ի՞նչ դատաստան...

Երրորդ գործը, որ ձեռնարկեց Արծրունին «Մշակից» դուրս հողուտ թուրքահայերի, ավելի կարևոր էր: Հեկտեմբերի վերջերում Ալեքսանդր կայսրը Մոսկվայում մի շատ նշանավոր ճառ արտասանեց: Թուրքերը հաղթող էին հանդիսացել Սերբիայում և խեղճ իշխանության վերջը հասած կլիներ, եթե ուսաց կայսրը միջամտած չլիներ. նա պահանջեց թուրքերից զինազաղար և այդ պահանջը թուրքիան անկարող եղավ չկատարել: Օգուտ քաղելով զինազաղարից, նվրոպական դիպլոմատիան վճռեց Կ. Պոլսում դեսպանաժողով կազմել՝ թե թուրք-սերբիական հաշտության պայմանները որոշելու և թե Բալկանյան թերակղզում ռեֆորմներ մտցնելու համար: Ալեքսանդր կայսրը, հայտնելով այդ ճշտին իր ճառի մեջ, ավելացրեց, թե ինքը վճռել է, դեսպանաժողովի անաջողության դեպքում, գործել անկախ և ծայրահեղ դեպքում նույնիսկ զենքի դիմել:

Կայսրի այդ խոսքին արձագանք տվեց ամբողջ Ռուսաստանը. ամեն կողմից ուղերձներ ուղարկեցին թագավորին, որոնց մեջ հայտնում էին ուսու ժողովրդի պատրաստակամությունը ամեն զոհողություն հանձն առնելու, որ քրիստոնյաների ազատության գործը կայսրը տանե այնպես, ինչպես Ռուսաստանի պատիվն է պահանջում: Հայրենասիրական ցույցերը ողողել էին ամբողջ Ռուսաց պետությունը: Թիֆլիս քաղաքն էլ, տեղական ազնվականությունն էլ ուղերձներ էին պատրաստում: Արծրունին, օգուտ քաղելով դեպքից, նախաձեռնող հանդիսացավ, որ մի առանձին ուղերձ էլ Թիֆլիսի հայերը ներկայացնեն: Ամբողջ օրերով նա, կառք նստած, այս ու այն կողմ էր գնում ստորագրություններ հավաքելու: Ուղերձը գրվեց Կովկասյան փոխարքա Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչի անունով. Ալեքսանդր կայսրը, ի թիվս ամենի շնորհակալություն հայտնեց և Թիֆլիսի հայերին, որոնց ուղերձը պաշտոնապես հրատարակվեց բոլոր լրագիրներում: Ահա՛ այդ ուղերձը.

«Ձերդ Կայսերական Բարձրություն.

Բնակվելով Ռուսաց տերության հովանիին տակ և վաղուց արդեն վախճվելով մեզ համար թանկագին պետության հովանավորության տակ հանգստության և խաղաղության պարզեցումը, մենք, Թիֆլիս քաղաքի բնակիչ հայերը, զորովամ լինելով քրիստոնեական մարդասիրության զգացմունքից, չենք կարող անտարբեր մնալ դեպի այն անբեկակալի տանջանքները, որ կրում են ասիական թուրքիայի սահմաններում բնակվող մեր ցեղակիցները և համադավան-

ները, որտեղ ոչ անփականությունը, ոչ քրիստոնյաների կյանքը, ոչ նրանց քեռանիքի, կանանց և աղջիկների պատիվը ոչնչով չէ ապահովված:

Գիտենալով որքան մեր Սիրելի Թագավորը և ամբողջ Ռուսաստանը անսահման համակրում են թուրքահայատակ քրիստոնյաների վիճակին, մենք մեր թե արյունով և թե կրոնքով եղբայրների դրության բարելավացնելու բոլոր նույնը գնում ենք Ռուսաստանի հողը հեղինակության ուժի վրա, և ապավինում ենք միմիայն Ինքնակալ Կայսրին:

Քրիստոնեական մարդասիրության, խոր ցավակցության, ազգականության զգացմունքը դեպի մեր եղբայրները՝ գրեց մեզ դիմել Ձեր Կայսերական Թարձրության Օգոստոսափառ միջնորդությունը և ամենահավատարմարար խնդրել Ձեր Բարձրությունը արկանել Թագավոր Կայսրի ոտներին մեր ամենահպատակ խնդիրը՝ պաշտպանել իր հողը ձեռքով, հավասար թուրքիայի այլ քրիստոնյաներին, մահճեղականությունից միշտ ճնշված հայոց ազգը այն միջոցներով, որ նախախնամությունը հանձնել է նորին Մեծությունը և որ նա ավելի արժար կհամարի»:

Այս ուղերձը, ինչպես հաղորդում էին արտասահմանյան լրագիրները, լիմբ դարձավ, որ Կ. Պոլսի դեսպանաժողովում ուսաց դեսպան Իվնատիևը արց բարձրացնե և թուրքահայերի մասին: Բայց դեսպանաժողովի ժամանակ Կ. Պոլսի հայերն էլ արդեն ուրիշ տեսակ տրամադրություն էին ցույց տալիս: Արագ զարգացող քաղաքական դեպքերը սովորեցնում էին նրանց, որ թուրքաժողովուրդները ոչինչ օգուտ չպիտի տա հայ ցեղին:

Մենք տեսանք թե ո՞րքան երկար ժամանակ Գրիգոր Արծրունին մենակ էր, լրջապատված հակառակորդների բարձրաձայն վայնասունով: Որքան էլ հայոց ամբողջ մամուլը աղաղակում էր, թե միայն դավաճան, ազգուրաց հայր կարող է խոսել այնպես, ինչպես խոսում է Արծրունին, հետզհետե երևան էր զուլիս այն նշանավոր հանգամանքը, որ «Մշակի» ձայնը համակրանք է գրտնում հայ շրջանների մեջ: Կովկասի զանազան կողմերից Արծրունին ստանում էր համակրական նամակներ: Ռուսաստանի հայ ուսանողությունը, որ մինչև այդ համարյա անտարբեր էր դեպի «Մշակը», նույնպես սկսեց համակրանք և գաղափարակցություն ցույց տալ: Արծրունին գոհություն էր արձանագրում այս երևույթը «Մշակի» մեջ: Առաջին օրինակը տվեց Մոսկվայի հայ ուսանողությունը. Արծրունին ասում էր, թե Մոսկվայում արդեն շորս ուսանողներ կան, որոնք գրում են «Մշակի» մեջ: Գրանք սովորական, առօրյա հարցերի մասին չէին միայն գրում, այլ հաճախ դիմում էին և օրվա հրատապ հարցին, արևելյան հարցին: Շատ գրում էր այդ մասին Ալեքսանդր Քալանթարը. Լևոն Կան-Աղյանը, Ներսես Աբելյանը նույնպես հաճախ էին գրում:

Նվ աշախես, Արծրունին, ինչպես բնական էր սպասել, գրավեց իր այդ պրոպագանդայի մեջ նախ և առաջ երիտասարդության համակրանքը: Իր կրթությամբ հողվածներով նա ազդեցություն գործում էր և Կ. Պոլսում մի քանի լրջանների մեջ: Բայց խոսքի ուժը ինքնըստինքյան բավական չէ մի գաղափար արժարժելու, մարմնացնելու համար. ինքը, կյանքը պիտի ապացուցաներ թե այդ խոսքը իրավացի և ճշմարիտ է, թե նրանով արտահայտվող միտքը մեղադրված, հնարած բան չէ: Այդպիսի վավերացում կյանքը շատ էր հաղորդում Արծրունու խոսքերին: Թուրքաց Հայաստանի իրականությունը գալիս էր թուրքասեր հակառակորդներին լռեցնելու:

* «Մշակ», 1876, № 48.

Որքան բազմաձև է քրիստոնյաների հարցը սպառնալից, խնդրող բնավորություն էր ստանում Քուրքիայի համար, այնքան ասիական նահանգներում սաստկանում էր տեղացի մահմեդականների գրգռումը քրիստոնյաների դեմ: Կիսապաշտոնական «Մասիսը», ինչպես տեսանք, հեղինակը էր ասում, թե «Փոքր-Ասիո խորերն և Հայաստանի մեջ կայատահեն եղեր մասնավոր եկեղնազորություններ»: Բայց ահա այդ «կայատահեն եղեր»-ը գառնում է արևալիսի համատարած, դժբախտ իրողություն, որ ինքը «Մասիսը» այլևս չէ կարողանում թուրքամուկական ինքնագոհությամբ հրապարակ գալ, այլ սկսում է լացուկոծ բարձրացնել գաղափարական սանձարձակ հարստահարությունների և գաղանկությունների առթիվ: Կ. Պոլսի մյուս հայ լրագրողներն էլ լցվում են նկարագրություններով, որոնք փոքր չափով հիշեցնում են Բուլգարիան: Թուրքաց կառավարությունը հալածանք սկսեց այդ լրագրողների դեմ, մի քանիսը փակեց. հայերը սկսում էին հատկանալ, որ իրանք բախտավոր բացառություն կազմել թուրքական իրականության մեջ չեն կարող: Գավառները փրանց հրդեհներով, սպանություններով խելքի էին բերում մայրաքաղաքի հայերին: Ավրուպական բաղձաթիվ լրագրողների մեջ սկսեցին ազդել հողմածներ թուրքահայերի մասին և դրոշները մեծ մասամբ հայեր էին: Սեպտեմբերին Արժրուկի գոհությամբ արձանագրում էր, որ Կ. Պոլսի մեջ ընդհանուր տրամադրությունը փոխվեց. հայերը միացել են, մտածում են իրանց դրություն մասին: Ներսիս պատրիարքը ներկայացրեց թուրք կառավարության մի խնդրագիր, որով պահանջում էր հավասարեցնել հայերի իրավունքները իսլամ ժողովրդի իրավունքների հետ:— Իսկ երբ հայտնի գարծաղ, որ Կ. Պոլսում գեսպանաժողով պիտի լինի, Սեթ-Արգարը կազմեց մի փոքրիկ հիշատակագիր հայերի դրության մասին, որ հրատարակվեց առանձին բրոշյուրով: Այդ հիշատակագիրը, ինչպես թուրքահայերի բաղձանք, ներկայացվեց մարկիզ Սոլբերգիին, որ Անգլիայի ներկայացուցիչն էր դեսպանաժողովում:

Այս բոլոր գնալերը և փաստերը իրավունք էին տալիս Գրիգոր Արժրուկուն դիմել այն մարզկանց, որոնք սկզբում այնքան ազմուկ բարձրացրին իր դեմ: «Ազգասիրական խաբեբայություն» առաջնորդողը (№ 45) մի ամփոփում էր, որի մեջ պատկերացած էր մեր տիրացուական ազգասիրության սնունդը կուլությունը:

«Տասնևյոթ տարի է,— ասում էր այդ առաջնորդողը,— որ Քուրքիայի հայերը ստացել են իրանց տերությունից սահմանադրություն: Ահա տասնևյոթ տարի է, որ մենք անդադար լսում ենք, թե հայերը բախտավոր են, երջանիկ են Քուրքիայում, թե նոքա այնտեղ վայելում են ինքնավարություն, ունին մի հաստատ սահմանադրություն իրանց համար...»

Բայց ի՞նչ է այդ երևելի սահմանադրությունը,— ոչ ոք չգիտեր և ոչ ոք չէր կարող բացատրել: Իրանց, Քուրքիայի հայերից որ հարցնելիս լինենք՝ ի՞նչ բան է ձեր սահմանադրությունը,— նոքա մեկնել չեն կարող:

Այստեղ, Ռուսաստանում, հայերի մի բավական տարածված կուսակցություն կա, որ ահա տասնևյոթ տարի է աշխատում էր միշտ հավատացնել մեզ, որ ոչ մի տեղ հայերը այնքան երջանիկ չեն, որքան Քուրքիայում...»

...Քուրքիայի հայերի դրության իսկական պատկերը մեր աչքերից ձուլվելով, այդ պետության սարսափելի վերքերը անդադար բողբոջելով, այդ փտած կուսակցությունը կարծում էր, որ մյուս երկրների հայերին մեծ բարեբախտություն է անում, ազգասիրական գործ է կատարում...»

Նվ այժմ, երբ որ Քուրքիան գտնվում է սարսափելի քաղաքական մի կրիզիսի մեջ, հանկարծ հայտնվեցավ որ Քուրքիայի հայերի դրության վրա մեզ



գտնված բոլոր գեղեցիկ բաները,— առական էին: Կրիզիսի բուսկում հայտնվեցավ, որ հուշակված սահմանադրությունը՝ օգային մի ամբողջ էր, որ կատարված էր մեր տիրացու-ազգասերների գլխներում միայն, այժմ կրիզիսի սկզբին հայտնվեցավ, որ այդ երևելի սահմանադրությունը անդոր է պաշտպանել հայերին տերության կամայականության և բարբարոսության դեմ, անոր է պաշտպանել թուրքահայատակ հայի ամենամահաճեշտ, անբնաբարելի խորհրդային իրավունքը...»

...Նվ ահա Քուրքիայի հայը մոլորված, հուսահատված դիմում է ոչ թե իր տերությունը, որից ոչինչ բավականություն չէ ստանում, այլ ստիպված է դիմել օտար պետությունների օգնությանը...»

Նվ հանկարծ մեր տիրացու-ազգասերների փտած կուսակցությունը, որի լիզն էր Քուրքիա fara da se (Քուրքիան ինքն կանե, ինքն իրան կուսակցություն),— մոլորված տեսնում է, թե իր բոլոր հուշերը դուր էին, կամ որ իր տասնևյոթ տարվա խաբեբայությունը հայտնվեցավ, ներկայացավ...»

Նրան ասում են՝ դուք սխալված էիք,— որ շատերը դուք թշվառ խաբեբայեր եք, որ այսքան ժամանակ աշխատեցիք մոլորեցնել ազգը և հասարակական կարծիքը, բոլոր ջանքեր էիք գործ դնում քնեցնել այն զայրացումը, որ տեղուշտ կհայտնվեր, եթե ներկայացնեիք Քուրքիայի հայերի դրության իսկական պատկերը. դուք օրոր էիք կարդում մեր գլխին, դուք կամ ամենամեծ անյավորներ եք, կամ միամիտ կարճատես, սահմանափակ, ողորմելի գլուխներ եք...»

Բայց փտած տիրացու-ազգասերների հիմար ինքնասիրությունը չէ ներում լրանց սխալը խոստովանել, չէ թույլ տալիս անկեղծությամբ խոստովանել թե ոչ իրան տարի նոքա կամ խաբված էին, կամ խաբում էին:»

Կ. Պոլսի գեսպանաժողովը սկսեց իր նախապատրաստական պարապմունքները նոյեմբերի 10-ից, իսկ պաշտոնական նիստերի շարքը բացեց դեկտեմբերի 11-ից: Թուրքաց կառավարությունը վեց մեծ պետությունների ներկայացուցիչների դիմաց մի բան միայն կարողանում էր անել — քաղաքական արդյունք խաղեր: Նա կամ համակերպվում էր միացած եվրոպայի պահանջներին կամ դանդաղ միջոցներով մերժում էր նրա առաջարկությունները: Դեկտեմբերի 11-ին, երբ պիտի բացվեր դեսպանաժողովի առաջին պաշտոնական նիստը, Բոսֆորի ափերում որոտացին թնդանոթները: Եվրոպական պետությունների ներկայացուցիչներին իմաց տրվեց, թե այդ օրը Քուրքիայում հրատարակվում է սահմանադրություն, որ վերցրած է եվրոպական օրինակներից և սուլթանի բոլոր հպատակների համար բաց է անում երջանկության, ազատության և քաղաքակրթության մի նոր դարապուխ:

Դա նշանակում էր թե դեսպանաժողովը ավելորդ է: Չէ որ նա գումարված է սլավոնական երկիրների համար տեղական ռեֆորմների ծրագիր մշակելու. ահա փոխանակ տեղական մասնավոր բարենորոգումների, սուլթանը իր բոլոր հպատակներին շնորհում է լայն ինքնավարություն:

Շատերը հասկացան, որ թուրքական սահմանադրությունը մի քաղաքական ձեռնածություն է, և ուրիշ ոչինչ: Ի՞նչ սահմանադրություն կարող էր լինել պահանջել Քուրքիայի պես մի պետության մեջ: Գեսպանաժողովը, ինչպես մենայնիվ, շարունակեց իր պարապմունքները: Բայց եվրոպական կոնվերտը շատ էլ միաբան չէր. նա սկսեց զիջողություններ անել, իսկ թուրքերը վեցիկն ալիկի և ալիկի համարձակ կերպով մերժել եվրոպական միջամտությունը: Ալեքսանդր կայսրը վաղուց նախատեսում էր այդպիսի ելքը. նա հա-

մտղված էր, որ դեպքանաժողովը ձգձգումների քաղաքականության միջոցների մեկն էր: Աւստի դեռ դեպքանաժողովի սկզբում նա հրամայեց պատերազմական դիրքի մեջ դնել բանակի մի մասը: Պատերազմը դադարեց անխուսափելի էր դառնում: Ռուսաց զորքերը հալածված էին Եվրոպական Ռուսաստանի սամինական սահմանների վրա, իսկ Անդրկովկասում թուրքական սահմաններ վրա:

Ի՞նչ էին անում Կ. Պոլսի հայ դեկավարող շրջանները: Ներսես պատրիարքը վճռական քայլեր չէր անում, նա տատանվում էր. կամ դիմում էր դեպքանաժողովին, կամ հայտնում էր, որ հայերը գոհ են իրանց գրությունից: Նա հավատում էր թուրքական սահմանադրության և կարծում էր, թե այդ նորքները կարող կլինին վերացնել քրիստոնյաների դժգոհության բոլոր պատճառները: Ազգային ժողովում 1878 թ. հուլիսին արտասանած իր ճառի մեջ Ներսեսը այսպես էր նկարագրում իր գործունեությունը 1876-ի վերջերսում. «Տերությունք ի ժողով գումարեցան ի Պոլիս: Ի՞նչ ըրավ Հայոց ազգը. օրինավորութենեն դուրս չելավ. Հայերը գոհ էին, որ Օսմանյան Տերության ներքե էին. այլ իրենց վիճակեն դառնապես դժգոհ էին. և որովհետև ընդհանուր քրիստոնեից վիճակը բարվոքելու խոսքեր կըլլային, Հայերն ալ ընդհանուր բարեկարգութենեն սպասեցին իրենց վիճակին բարվոքումը:

Չեր Պատրիարքը, գիտեք արգեն, Տեա՛րք Երեսփոխանք, պարապ չկեցավ աշխատեցավ Բ. Դրան քով, աշխատեցավ դեպքանաց քով: Այլ Դեպքանաժողովը փոխանակ ընդհանուր վիճակին բարվոքումը նկատողության առնելու նկատողության առավ միայն Հերսեք-Պոսնայի և Պուլկարաց խնդիրները Ասի անիրավություն մըն էր մնացյալ քրիստոնյա ժողովրդոց, և ներքեք բնեթերևս իմ սահմանեն քիչ մը դուրս ելնելով, Օսմանեան կայսրության այլ բայ քայլումը կը պատրաստեր՝ ապստամբությունը քաջալերելով: Օսմանեան կայսրությունը Դեպքանաժողովին այս որոշումը չընդունեց. և մեք հայքս պատճառ շունեինք որ դժգոհեինք»:

Ներսեսը դեռ խուսափում էր ռուսաց քաղաքականության որևէ համակրություն ցույց տալուց, նա ավելի անգլիական դեպքանի ազդեցության տակ էր գտնվում և գոհ էր օսմանյան սահմանադրությամբ: Եվ մինչդեռ հայ մամուլի մի մեծ մասը Ներսեսի հետ հավատում էր, թե սահմանադրությունը կապրե թուրքիայում և հայերի համար էլ երջանկության շրջան բաց կան: Գրիգոր Արծրունին «Մշակի» մեջ պնդում էր, թե այդ սահմանադրությունը մի խաղ է, թե թուրքիայում չէ կարող լինել սահմանադրական կարգ:

«Զարմանալի տեսարան, — գրում էր նա. — Թուրքաց սահմանադրությունը հրատարակված է, — բայց ոչ Եվրոպան է հավատում թուրքիայի խոստումներին և պահանջում է նրանից ապահովություններ, գարանտիաներ, որ այդ խոստումները լոկ խոսք չմնան, սահմանադրությունը կամ խոստացած արտոնությունները չգառնան անպետք կտոր թուղթ, — ոչ էլ իրանք թուրքահայատակ ազգերը հավատում են իրանց տերության խոստումներին...»

Եվ մի՞թե Անգլիան ճշմարիտ, անկեղծ կերպով հավատում է թուրքիայի խոստումներին և չգիտե թե այդ սահմանադրությունը, ինչպես թուրքիայի բոլոր անցած խոստումները՝ խորամանկ, նենգավոր աշքակապություններ են, ավելի ոչինչ»:

Դեպքերը ցույց էին տալիս, որ թուրքական իրականությունը Եվրոպայի փոխ առած հիմնարկություններից չի փոխվի: Օսմանյան սահմանադրությունը հրատարակում էր, իմիջիայլոց, և մամուլի ազատություն: Բայց հենց այդ միջոցին, երբ խմբագրվում էր այդ օրենքը, երեք հայ խմբագիրներ բանտարկ

վեցին, ծեծի ենթարկվեցին և բռնի կերպով Տրապիզոն քաղաքին այն պատճառով, որ համարձակվել էին տպագրել հայարնակ գյուղերում տեղի ունեցած հարստահարությունները: Գարձյալ նույն այդ դեպքանաժողովի մամանակն էր, նույն այդ սահմանադրության խմբագրելու միջոցին էր, որ վանում տեղի ունեցավ սոսկալի հրդեհ: Գիշերը թուրքերը կրակեցին հայերի խանութները, թվով մոտ երկու հազար հատ, և կողոպտեցին նրանց: «Մասիսի» լեզվով դա նշանակում էր՝ «կան եղեր եղեռնագործություններ». բայց նրիմյան Հայրիկի «Վանգույթը» ցույց էր տալիս, թե ի՞նչ էր այդ եղեռնագործությունը: Վանի հայ աղագրեակությունը մի գիշերում զարձակ մուրացկան: Ներսես պատրիարքին խոստացան քննություն նշանակել, պատժել հանցավորներին և ներսեսը դեռ հավատում էր օսմանյան սահմանադրության...»

Այսպես էր ահա վերջանում 1876 նշանավոր թվականը, ավելի մեծ բարդություններ, կնճոտ հարցեր թողնելով իր հաջորդին: Գրիգոր Արծրունին իր առաջնորդողներից մեկում ասում էր թե այժմ, տարվա վերջին, ինչպես կա սլավոնական հարց, հունական հարց, այնպես էլ կա հայոց հարց: Զորս-հինգ ամիս առաջ չկար այդ հարցը, ոչ ոք հայերի մասին չէր էլ մտածում, բայց սլավոնեան հայերն էլ կկազմեն արևելյան հարցի մի մասը: Այստեղ Արծրունին դնում է մի հետաքրքրական հարց և պատասխանելով նրան, երևան է հանում մի, իբրավ որ, շատ բնորոշ գիծ հայի ազգային բնավորությունից, նրա հոգեբանությունից: Հայերը ապստամբությամբ չհասցրին իրանց ձայնը քրիստոնյա ազգերի ականջին: Ապստամբությունը հայ ազգի բնավորության հակառակ է: Բայց ուրիշ ի՞նչ միջոց կար:

«Հայոց ազգը մի ուրիշ զարմանալի հատկություն ունի և այդ հատկությունը նշմարելի էր նրա մեջ իր ամբողջ պատմության ընթացքում: Նա ուզում է խելքով, մաշվոր զենքով, ապացույցներով, դատողություններով հաղթել իր թշնամուն: Նրան ճնշում են, նրան ծեծում են, վիրավորում են, բանտարկում են, սպանում են, — իսկ նա փիլիսոփայություններ է անում, ապացուցանում է, որ այդ անարդար է, վիճում է իր ճնշողի, իր հալածողի, իր թշնամու հետ... Հայերը այդ միշտ արել են:

Հինգերորդ դարում Զրադաշտի կրոնի պաշտոնները հայերին ճնշում էին, Հայաստանը ավերում էին, ամբողջ քաղաքների, գավառների, գյուղերի բնակիչներին գերության էին տանում, բնակություններին կրակ էին տալիս, կանանց և կույսերին անպատվում, տանջում էին, մարդկանց կտորում, սպանում էին կամ բանտարկում էին, — իսկ հայը իր Եղիշեի կամ Եղիշեի բերանով դատողություններ էր անում, ապացուցանում էր բնակալին նրա դավանած կրոնի անհիմն լինելը և նրան իր կրոնը՝ քրիստոնեությունը քարոզում: Պարսից արքայի հրամանով բանտարկված հայ քաջ նախարարները իրանց բռնակալներին՝ քրիստոնեություն, արդարություն և մարդկային իրավունք էին քարոզում:

Կար մեկ ուրիշ ազգ, հրեաները, որոնք իրանց թշնամիներին աղոթքներով և հրաշքներով էին ուզում հաղթել, բայց հայոց ազգի պես մի առգ, որ սուրբ ձևին կատաղի թշնամու առաջ անզեն կանգնած քարոզեր նրան փիլիսոփայություն, մարդասիրություն, լոկ խոսքով, լոգիկական մատխոհությամբ պահանջեր մարդկային իրավունք, արդարություն, — հայոց ազգի պես մի ազգ հազիվ թե մի ուրիշ կգտնվի աշխարհիս երեսին:

Որտեղի՞ց է մտել հայի մեջ այդ հատկությունը, որ մենք կանվանենք ապագայի քաղաքականություն, — չգիտենք:

Եվ այդ է պատճառը, որ հայը միշտ ճնշված, միշտ հալածված է եղել, որովհետև դինավորված մարդու առաջ անզեն կանգնել և նրան դատողություն

անել, նրան արդարություն բացատրել... զենքի, սրի, հրացանի, թնդանոթի ուժը, պատերազմը՝ լողիկայով, մատվոր ուժով հաղթել, — դեռևս վաղ է, դեռևս մարդկությունը մատվոր զարդացման այդ կետին չէ հասել:

Հայը կանգնում է բարբարոս, կատաղի, մորեռանդ մահմեդականի առջև, ապացուցանում է նրան իր իրավունքը, աղերսներ է տալիս նրան, պահանջում է արդարություն և դուցե վերջը սպանում է նրան, — բայց ինչպե՞ս, ինչո՞ւ... սպանում է, որ եթե շտանա իր պահանջած ամենամահաբաժնի մարդկային իրավունքը, այն ժամանակ ստիպված կլինի զաղթել իր հայրենիքից, որ նվաճված է թուրքերից, որ թուրքաց պետության մի մասն է կազմում... Կարծես թե վայրենի թուրքը մտավորապես այնքան զարգացած է, որ կարող է հասկանալ այդ սպանալիքի բոլոր ուժը, բոլոր նշանակությունը, կարծես կարող է հասկանալ, որ ճշմարիտ իրան էլ վնաս է, եթե աշխատասեր, ընդունակ հայոց ազգի պես ասորը գաղթել իր պետությունից...

Եվ այժմ, արևելյան հարցի մեջն էլ հայը հավատարիմ է մնացել իր պատմական հատկությանը, իր քաղաքական բնավորությանը...

Նա ամբողջ նվրոպան ուզում է համազել, նա թուրքիան ուզում է հաղթել իր սիրած, սովորական միջոցով, հասարակ լողիկայով, մտավոր ուժով:

Ցանկանում ենք մեր ազգին, որ եթե նրան վիճակված է այդ ճանապարհով ընթանալ, կատարելապես աջողվի նրան այդպիսով ստանալ իր մարդկային իրավունքը, ձեռք բերել արդարությունը:

Ճիշտ որ ապագայի քաղաքականություն... Մարդկությունը իր լավագույն հույսերը, իդեալական տենչանքները միշտ ապագայի մեջ է տեսնում: Ապագա — դա անորոշ հասկացողություն է. ո՞վ կարող է ասել, թե ե՞րբ կլինի այդ ապագան, ո՞րքան նա հեռու է ներկայից: Ներկան, այն ներկան, երբ գրվում էին այդ տողերը, պատրաստում էր մի արյունահեղ, երկարատև պատերազմ ուսանների և թուրքերի մեջ: Գեո ոչ մի հարց չէր վճռվել. լողիկան, բանականությունը անկարող հանդիսացան. դիպրոմատիան գրչով և թանաքով շատ աշխատեց, բայց չկարողացավ պատմության էջերից մի տող անգամ փոխել: Այժմ նա պիտի ետ քաշվեր, թույլ տալով, որ խոսեն թնդանոթները, ազգերի համար իրանց կրակով և արյունով պատմություն կազմող թնդանոթները:

Արևելքի հրդեհը ավելի և ավելի սաստկանում էր: Գալիս էին ահավոր դեպքեր. կյանքը Անդրկովկասում և նրա սահմանակից երկրներում անօրինակ եռանդուն շարժման մեջ էր մտնում: Մամուլի կատարելի դերը ավելի բարդանում էր. «Մշակը» չէր կարող այլևս շարաթափերի մնալ...

II

Շարաթը երկու անգամ հրատարակելու նշանակությունը: Եւր աշխատակիցներ: Թուրքահայ գրողներ «Մշակում»: Ընդհանուր հարցեր. «Ամեն ինչ փողի համար», ստուկներ ենք, հասարակական սիրո բացակայություն, հայրնտանիք, կենդանի լեզու: Արևելյան հարցը: Վանի հրկիզյալների համար: Երկրորդ հարձակում ներսե պատերազմի դեմ: Ռուս-թուրքական պատերազմ: Ի՞նչ է պատերազմի խորհուրդը: Ասիացու ֆելիետոնից: Հայաստանի ապագան՝ կախված Ռուսաստանից: Անգլիական խարդախ փողափականություն: Պատերազմը երևան է հանում հայ ազգի հանճարը: Արժույթն և մեր ազգային պակասությունները: Պետ է հայերին ծանոթացնել օտարների հետ: Այլաշխարհի գաղթականությունը: Բարեգործական ընկերության միտք: Թիֆլիսի մաս

համազելը: Գեպեք Կ. Պալեում: Ներսես սուլթան Համիդի մոտ: Թուրքական գրողություններ. Էրստոնյաններից գինվարներ հավաքելու հարցը: Հայերի փնտրությունը: Էֆենդիներ և ժողովուրդ: Ռուսաստանական սաստիկ շարժում: Պալսի հայերի մեջ: Ներսեսի տատանումները, փոխվելը: Արժույթն և մի քանի քաղաքական:

Փոքրիկ ազգերի կյանքի մեջ փոքրիկ երևույթներն էլ նշանավոր են հանդիսանում: Սակայն օտ ընդհանուր օրենք չէ բոլոր փոքրիկ ազգերի համար: Եստ թվով փոքր, բայց հզոր հսկա ազգեր, որոնք մեծագործություններ են կատարում: Մեր խոսքը այն փոքր ազգությունների մասին է, որոնք ճակատարի խորթ զավակներ են եղել դարերի ընթացքում և բնությունից էլ խոշոր ազգեր անելու ընդունակություն չեն ստացել: Մենք մի խեղճ, ցնցոտիներով զուսած զանաճ էինք, երբ պատմական ճակատագիրը վերջապես խղճաց մեզ, մտնեցրեց նվրոպայի քաղաքակրթության և հրամայեց աշակերտել, սովորել: Մենք սկսեցինք քաջեր անել, բայց ո՞րքան խեղճ էին մեր, ասիական գաղանկներին քաջերը:

Մամուլը տասնիններորդ դարում ի՞նչ հսկայական առաջադիմություններ արտա էր դարձանում էր օր օրի վրա, նա իր ուժով յոթներորդ մեծ պետություն հրատարակվեց. լրագրական ձեռնարկությունները վիթխարի շափերի տեսան: Կարելի էր այդ հսկայական կյանքի մեջ նույնիսկ նկատելու արժանի մի դեպք համարել այն շնչին հանգամանքը, որ մի լրագիր փոխանակ շաբաթը մի անգամ հրատարակվելու, սկսում էր լույս տեսնել շաբաթը երկու անգամ: Եվ սակայն մեղանում, մեր խեղճ ու խավար իրականության մեջ, դա մի ամբողջ երևույթ էր, մի դարազրույթ: Երեսուն տարի էր, ինչ ուսահայերի մեջ գոյություն ուներ պարբերական մամուլ. բայց մենք դեռ շաբաթաթիթերից փեր չէինք անցել: Եվ համեմատության համար ինչո՞ւ հեռու զնալ: Թիֆլիսում հրատարակվող ուսերեն երկու լրագիրները 1877-ին ամենօրյա էին գործել. նույնիսկ վրաց «Երոսեբան» էլ նույն թվին սկսեց հրատարակվել ամեն օր Իսկ մե՞նք, Գրիգոր Արժույթնին 1877-ի առաջին համարում ասում էր, որ շաբաթը երկու անգամ լրագիր հրատարակելը (իհարկե հայերի մեջ) «մեծ փոխ է»: Եվ այս խոսքերը արտասանվում էին մի ժողովրդի մեջ, որ մոտ մի միլիոն հոգուց էր բաղկացած: Ահա դեռ ի՞նչ էինք մենք...

Հարց տանք. գոնե այժմ, լրագրի շաբաթական երկու անգամ հրատարակելը նշան էր, որ հայ ընթերցողների թիվը շատացել է: Ո՛չ: Երկու տարուց ավելի Արժույթնին սպասում էր հազար բաժանորդի: Բայց փորձը ցույց տվեց, թե դա մի շափազանց մեծ, անիրագործելի պահանջ էր: Եվ Արժույթնին շաբաթաց. դարձյալ իր սեփական աշխատանքի, իր սեփական ուժիկի վրա դնելով լույսը, նա սկսեց շաբաթը երկու անգամ հրատարակել, ստիպված լինելով փոքրից 7 ուրբի նշանակել «Մշակի» բաժանորդագինը: Կրագրի համարների քիչակատկելն էլ չավելացրեց բաժանորդների թիվը. Արժույթնին խոստովանում էր, որ «Մշակը» առաջին տարին ավելի հեռաքրքրություն զարթեցրեց. լույսը, ասում էր նա, հեռաքրքրվում է մի բանով, քանի որ նա նոր է, բայց լեռո խկույն էլի ստոչում է:

Այդ պայմանների մեջ փոքր բան չէր ձեռնարկել մի գործի, որ դեռ չէր եղել ուսահայերի մեջ: Եվ մենք համաձայն պիտի լինենք, որ իսկապես մեծ փոխ էր այդ տեսակ գործ սկսելը: Այժմ մեզ համար էլ գուցե մի առանձին բան չհամարվի շաբաթական երկու համար հրատարակելը: Այժմ մենք, որքան

էլ շինի, մի քանի քայլ առաջ ենք գնացել: Բայց տեսե՛ք, թե ի՞նչ առաջնորդողով էր Արծրունին սկսում 1877-ի «Մշակը»։ «Ամեն մարդ կրում է իր խաչը, բայց այն մարդկանց, որոնք բացի իրանց մասնաճոր խաչից կրում են և հասարակական խաչը, այդ ծանր բեռը այն ժամանակ միայն թեթև կերևա, երբ նոքա կտեսնեն համակրություն հասարակության կողմից, կստանան իրանց տոկուն աշխատանքի, իրանց գործունեության մեջ օգնություն այն հասարակական տարրերի կողմից, որոնց նվիրել են իրանց նյութական, մտավոր և բարոյական ուժերի ծառայելը»:

Այո՛, ծանր խաչ, որը պետք էր կրել մենակ: Մի կողմ թողնենք նյութական հարցը. ավելի ծանր, ավելի մաշեցնող էր խմբագրի աշխատանքը: Արծրունին ոչ միայն կռվում էր, օրեցօր թշնամիների թիվն էր ստվարացնում, այլև համարյա մենակ էր տանում խմբագրական ամբողջ գործը: «Առանց նյութական օգնության,— ասում է նա նույն առաջնորդողում,— ասանց բարոյական քաջալերության, բարեկամների մի փոքրիկ խմբի համակրությամբ միայն մենք առաջ տարանք մեր գործը հինգ տարի շարունակ, շրջապատված լինելով ամեն կողմից անհաշտ կատաղի թշնամիներով»:

Մանր, հուսահատական էր մանավանդ վերջին հանգամանքը: Մենք տեսանք, որ մանավանդ 1876-ին այդ կատաղի թշնամությունը ավելի ընդարձակ կարելի էր ասել՝ համատարած բնավորություն ստացավ արևելյան հարցի պատճառով: Եվ այնպիսի մի ժամանակ, երբ տպագրական խոսքը թե թիֆլիսում և թե Բոսֆորի ափերում առանց այլևայլության, առանց քաշվելու անվանում էր Արծրունուն ազգի դավաճան, վաճառված մարդ, օտարի գործիք,— արդյոք անտեղի խիզախություն չէ՞ր ձեռնարկել մի այնպիսի գործի, որ ժողովրդի ավելի մեծ աջակցության և համակրության էր կարոտ:

Բարեբախտաբար, Արծրունին ավելի լավ էր ճանաչում հայ ժողովուրդը, քան նրա այն թշնամիները, որոնք խոսում էին այդ ժողովրդի անունից: Ժողովուրդը քնած է, դեռ շատ թույլ կերպով է արտահայտում իր վերաբերմունքը դեպի երկու կողմը կողմերը: Բայց նա կզարթնե, նա դատաստան կանե: Չկան մարդիկ, բայց կլինեն: Միշտ վառ էր այն փաստը, թե ժողովրդի խավերից պետք է և կարելի է համակրող շրջաններ նվաճել և 1876 թվականի գործունեությունը, որ համակրության ցույցեր էր հանել բուն ժողովրդի, ուսանող երիտասարդության միջից, միանգամայն հաստատում էր այդ հավատը:

Ահա ի՞նչն էր առաջ տանում Արծրունուն իր սգևորության մեջ: Այդ ոգևորությունը մոռացնել տվեց նրան բոլոր զրկանքները, դժվարությունները, հուսահայ մամուլի պատմության մեջ երևան եկավ նոր, թարմ երևույթը— շարաթը երկու անգամ հրատարակվող լրագրի: Այն կոչման մեջ, որ Արծրունին ստացել էր բնությունից, դա երկրորդ նշանավոր գործն էր: Նա էր, որ վերականգնեց հայ մամուլի ընկած պատիվը, հեղինակություն տվեց տպագրական խոսքին, ուժ դարձրեց նրան. նա էր, որ դուրս բերեց հայ լրագիրը մուրացկանի, արհամարհված ազգասիրական գործի խաչատառակ դրությունից, նա ստիպեց հային լրագիր կարդալ ոչ թե ազգասիրաբար, այլ իբրև անհրաժեշտություն, լուսավորության և քաղաքակրթության մի ազդեցիկ գործոն: Այժմ պետք էր առաջ գնալ, պետք էր ավելի ևս զարգացնել մամուլի տիրույթը: Շարաթը մի անգամ տեսնվել ընթերցողի հետ մի թերթի սյունակներից՝ դա շատ քիչ էր. ժողովուրդը երեսն է, ժողովուրդը շուտ է մոռանում, հեշտ է մոռանում, պետք է, ուրեմն, ավելի հաճախ տեսնվել նրա հետ, ավելի շատ քան սպել նրան:

Եթե ի նկատի ունենանք, որ մեր գրականությունը մեծ մասամբ ամփոփված է եղել, ինչպես և է այժմ էլ, պարբերական մամուլի մեջ, «Մշակի» շարաթական երկու անգամ հրատարակվելը պետք է համարենք մեր գրականության զարգացման մի մեծ նշան: Որքան շատ տեղ ունի լրագիրը, այնքան նա շատ նյութ է տալիս: Եվ իրավ, 1877-ի «Մշակը» արդեն շատ բանով է տարբերվում անցյալ տարիներից: Հրատարակատուությունը ավելի ևս զարգանում է, բազմակողմանի է դառնում, հասարակական կյանքը ավելի ևս լիակատար կերպով է արտահայտվում լրագրի մեջ: Ինքը, Արծրունին, կրկնապատկում է իր աշխատանքը: Մի կողմ թողնելով լրագրի մյուս բաժինները, նկատի առնենք, որ առաջնորդողները այժմ էլ նրա ձեռքում են և այժմ արդեն շարաթը երկու անգամ պետք է երևան դալ այդ կարևոր, ուժեղ, ազդեցիկ բաժնում: Կենդանանում է և զուտ գրական բաժինը: Այժմ արդեն հնարավոր է համեմատաբար մեծ վիճական, շարունակելի գրվածքներ տալ, ինչպես նաև ժամանակակից ուրիշ կարևոր նյութերի վերաբերմամբ ավելի ընդարձակ ուսումնասիրություններ:

Այսպես խոսելով «Մշակի» մասին, մենք չենք մոռանում, որ նույն այդ ժամանակ թիֆլիսում հրատարակվում էր «Փորձ» հանդեսը: Իրանց գրական անցյալով փոքրիշատե հայտնի ուժերը համարյա բացառապես այնտեղ էին աշխատում: Բայց ի՞նչ էին տալիս նրանք: Երեք ամիսը մի անգամ լույս էր տեսնում մի մեծ գիրք. ընթերցանության զանազան նյութեր, մեծ մասամբ թարգմանական, տալիս էր այդ հաստատիոր հանդեսը, տալիս էր և նյութեր պատմության համար, արձանագրում էր ժամանակակից դեպքերը: Բայց ազդեցություն գործել, ղեկավարել նա չէր կարողանում. ընդհանուր առմամբ դա մի անզույն ժողովածու էր: Արծրունու պես մի մարդու համար այդ տեսակ գործունեությունը մահ, ոչնչություն էր նշանակում: Եվ հայտնի անունների համախմբումը այդ եռամսյա հանդեսի մեջ չկարողացավ խելի Արծրունուց առաջնությունը գրական-հրատարակատուական ասպարեզում. մենակ նա կարողանում էր միշտ լարված պահել հասարակության ուշադրությունը դեպի «Մշակը»: «Փորձն» էլ հասարակության պահանջներին չհամապատասխանող մի գրական ձեռնարկություն էր. նա էլ իր խմբագրի անձնական միջոցներով էր ապրում: Բայց շնայած, որ շրջապատել էր իրան հայտնի անուններով, տալիս էր մեր ամսագիրների մեջ մինչև այն դեռ շտեմանված հաստությունը գրքեր, այնուամենայնիվ, չկարողացավ պահանջ ստեղծել, գոյության իրավունք նվաճել և անհայտացավ իբրև մի արհեստական գործ:

Արծրունին, ինչպես դիտենք, հայտնի անունների ետևից չէր ընկնում, շրջապատում էր իրան «ձկնորսներով», այն զաղափարական անհայտ, համեստ, բայց ոգևորվող երիտասարդություններ, որի նկարագրությունը տվել է Թաֆթին: 1877 թվին «Մշակի» այդ եռանդուն աշխատակիցն էլ թիֆլիսում չէր գտնվում. նա ուսուցչություն էր անում Ագուլիսում և հին, հայտնի անուն ունեցողներից միայն Գաբրիել Սունդուկյանցն էր, որ հանդես եկավ «Մշակի» մեջ իր «Վարինկի վեշերը» մեծ պատմվածքով: Բայց Արծրունին շարունակում էր «ձկնորսներ» գտնել, դրանցից մեկի հետ մենք շուտով կժամոթանանք — Գրիգոր Պապյան, գտնվառացի մի երիտասարդ, որ նոր էր ավարտել ներսիսյան դպրոցը և վիպագրողի շնորհ էր ցույց տալիս:

Ավելացնելով «Մշակի» համարների թիվը, Արծրունին խմբագրության մեջ աշխատողների մի փոքրիկ խումբ կազմեց: Դրանք բոլորը նոր կյանքի մեջ մտնող երիտասարդներ էին, որոնք կրթություն էին ստացել ներսիսյան դպրոցում: Այդ աշխատավորներից մենք կհիշատակենք մեկին. դա Հովհաննես

Տեր-Մարկոսյանն է, որ 1877 թվից մինչև այսօր անփոփոխ անձնատուր եղած է «Մշակին»: Լրագրական գործի մեջ ամենքը չեն հայտնի դառնում հասարակության իրանց անուններով: Այդտեղ կա և վարագույրի հասում համեստ, անանուն աշխատողը, որ սակայն պակաս երախտավոր չէ իր տեղում, անընդհատ, գրկանքներով ու դժվարություններով լի գործունեությունները Հովհաննես Տեր-Մարկոսյանը «Մշակի» այդպիսի երախտավոր աշխատողներից առաջինն է: Արծրունին սկզբից ևեթ մի առանձին սիրով կապվեց այդ երիտասարդի հետ և մինչև մահը նա էր նրա ամենամոտիկ բարեկամը, որի հետ երկար տարիների ընթացքում բաժանել էր թե տաժանակիր աշխատանք, թե ուրախություն և թե վիշտ: Մեծանալով «Մշակի» խմբագրությունից, մնալով Արծրունու գաղափարներով և շարունակ վայելելով նրա մտքի մ բարեկամությունը, Տեր-Մարկոսյանը այսօր էլ «Մշակի» տրադիցիաների հավատարիմ ավանդապահն է, նրա գաղափարների անխոնջ պաշտպանը: «Մշակը» ունեցել է շատ դժվար ժամանակներ, երբ նա չէր կարողանում նյութապես ապահովել իր աշխատակիցներին: Տեր-Մարկոսյանը միշտ ծառայել է նրան անշահասիրություններ, երբեք հարց չդարձնելով նյութականը: Հայոց խմբագրություններից ոչ մեկը չէր տեսել նրա պես մի մարդ, որ ամբողջ քառորդ դար ծառայել լրագրին անձնամոռաց հավատարմությամբ:

Այդպիսի մարդիկ էին Արծրունու նեցուկները: Վարձատրությունը չէր, որ կասում էր ընդունակ աշխատողներին լրագրի հետ. կար ավելի մեծ, ավելի հաստատուն կապը՝ գաղափարը: Այս կողմից Արծրունին ամենաերջանիկն էր հայ խմբագրիների մեջ: Գաղափարով կապված լինելով իր աշխատակիցների հետ, նա այնքան անկախ էր պահում իրան, այնքան խստապահանջ էր, որ երբեք չէր խոնարհվում անվարձ աշխատողների առաջ, չէր ենթարկվում նրանց տրամադրության. ընդհակառակն, հենց որ տեսնում էր թե աշխատակիցներից մեկն ու մեկը դավաճանում է լրագրի ուղղության, ուղում է իր կամքը թելադրել, իսկույն փակում էր նրա առջև իր խմբագրության դուռը: Հեռացածների փոխարեն գալիս էին նորերը և Արծրունին դիմումներ չէր անում, սրան ու նրան չէր խնդրում, որ իրան աշխատակցեն: Բարոյական վարձատրությունը, գաղափարականությունը այսքան ահագին ուժ էր նրա ձեռքում. և առանց այդ ուժի նա չէր էլ կարող տանել լրագրից այն միջոցներով, որ տալիս էր հայ հասարակությունը:

Արևելյան հարցը մի մեծ գրգիռ է դառնում, որ «Մշակը» մոտենա թուրքահայերին: 1876 թվականին առատ թղթակցություններ են տպվում Կ. Պոլսից: Դժբախտաբար, մենք հաստատապես չգիտենք, թե ո՞վքեր էին այն մարդիկ, որոնք այդ ժամանակ այնքան հետաքրքրական, հյուսիսից թղթակցություններ էին ուղարկում թուրքաց մայրաքաղաքից: Նույն թվականին հաճախ են երևում և թղթակցություններ Վանից, որոնց մեջ նկարագրվում էր գավառի իրականությունը: Վանի թղթակցիցը Մկրտիչ Փորթուգալյանն էր, թուրքահայ աչքի ընկնող գործիչներից մեկը, որ մի ժամանակ լրագրի էր հրատարակում Կ. Պոլսում: 1877-ին նա եկավ Քիֆլիս և այստեղ մոտ մի տարի աշխատում էր «Մշակի» խմբագրության մեջ, նյութեր տալով գլխավորապես արտաքին տեսությունների համար:

Սկսելով շաբաթական երկու համարի հրատարակությունը, Արծրունին մեծ աշխույժով, կրկնապատկված եռանդով առաջ է տանում այդ նոր գործը: Որքան շատ էր նա գրում, այնքան սաստկանում էր նրա գրչի թափը: Հարձակումները ավելի աներկյուղ են դառնում, մերկացումները ավելի անխնայ

Մշակագրության ամենագլխավոր առարկան, իհարկե, արևելյան հարցն է, թուրքահայերի դրությունը: Բայց Արծրունին հաճախ թողնում է այդ գլխավոր առարկան, դիմում է մեր ներքին հարցերին: Այսպես, նա արծարծում է քահանաներին մշտական, որոշ ուժեղով ապահովելու հարցը, ցույց է տալիս մեր ընտանեկան և դպրոցական կրթության պակասությունները: Մանոթանանք մի քանի այսպիսի հողմածների հետ, որոնց մեջ դատարինավում են մեր հասարակական բարքերը, ազգային հատկությունները:

«Ամեն բան փողի համար» առաջնորդում Արծրունին խոսում է հայի ծայրահեղ նյութապաշտության մասին: «Գուցե,— ասում է նա,— աշխարհիս վրա չկա օւրիշ մի այնպիսի ազգ, որ հայի պես զուրկ լիներ իդեալներից, նրա յափ խրված լիներ կոպիտ նյութապաշտության մեջ:

Հայի համար չկան վերացական գաղափարներ, բարոյական իդեալներ... Հայը ամեն բանի վրա նայում է փող վաստակելու հայացքից...»

Ուտում, հասարակական գործունեություն, պարագմունք, պաշտոն, կոյում, մասնագիտություն, սեր, ընտանիք,— ամեն բան հայի աչքում համեմատական արժեք ունի, նայելով թե ո՞րքան այս կամ այն գործ, այս կամ այն գաղափար, այս կամ այն երևույթ նյութապես շահավետ է...»

Հայը ամեն բանից սպասում է անմիջական արդյունք, նյութական օգուտ, շահ, տեղոս...

Իհարկե բացառություններ ամեն տեղ կան, ուրեմն կան և մեր ազգի մեջ — բայց մեր ազգի ընդհանուր բնավորությունը՝ շահասիրական նյութապաշտ ոգին է, որ առաջնորդում է հային ամեն տեսակ հանգամանքներում...»

...Եվ ահա՛ այդ նեղ, սահմանափակ, անհասարակական բնավորությունը հայը հպարտությամբ անվանում է գործնական ոգի:

...Հայը ուտում է անում հաշվով, կյանքի մեջ իր գործ դնելու մասնագիտությունը ընտրում է հաշվով, պահվում է հաշվով, մեռնելիս մինչև անգամ կտակ է անում հաշվով, հավատացած լինելով, որ բարեգործական մի բանի կոպեկ կտակելով, նա բաց է անում իր համար դրախտի դռները,— նա մեռնելիս միայն ընդունակ է զոհաբերություն անել, հասարակական մի բարի գործ կատարել, այն էլ անում է շահասիրական նպատակով, իր հոգու համար: Ինչո՞ւ հայը այնքան անտարբեր է դեպի իր սեփական լեզուն: Որովհետև այդ լեզվից նա նյութական շահ չունի:

«Եվ նա արհամարհում է իր ազգային, իր մայրենի լեզուն միմիայն այն պատճառով, որ նրանով հաց չէ կարելի ճարել... Հայը շունի բարոյական բարձր գաղափարներ, նա ամեն բանի վրա նայում է առևտրական կետից, նա իր մայրենի լեզվի վրա էլ նայում է ինչպես մի ապրանքի վրա... ապրանքը լավ չէ ծախվում, հին է,— ուրեմն նրան հարկավոր չէ անել...»

Հայը նայում է իր մայրենի լեզվի վրա, ինչպես մի կոտրած ամանի վրա, ինչպես մի մաշված շորի վրա...

Այո՛, ամեն բան փողի համար...

Բայց եթե մի օր հայը տեսներ, թե իր արհամարհած մայրենի լեզուն սկսում է գին ստանալ, գործադրվել հասարակության մեջ, եթե նա տեսներ թե աղջկան բաժինք, փող տալու տեղ, կարելի է, օրինակ, նրան սովորեցնել իր մայրենի լեզուն, թե մայրենի լեզվով ընտանիքում խոսող և մայրենի լեզվով երեխաներին դաստիարակող հայուհի գրավիչ զորություն ունի հայ երիտասարդի համար,— այն ժամանակ բոլոր հայ ծնողները կսկսեին իրանց աղջկերանց հայերեն սովորեցնել, որովհետև այն ժամանակ հայերեն լեզուն էլ մի շահավետ գործ կդառնար, հաց կտար, այսինքն միջոց կտար նրանց

Այո՛, ամեն բան փողի համար...

Բայց եթե մի օր հայը տեսներ, թե իր արհամարհած մայրենի լեզուն սկսում է գին ստանալ, գործադրվել հասարակության մեջ, եթե նա տեսներ թե աղջկան բաժինք, փող տալու տեղ, կարելի է, օրինակ, նրան սովորեցնել իր մայրենի լեզուն, թե մայրենի լեզվով ընտանիքում խոսող և մայրենի լեզվով երեխաներին դաստիարակող հայուհի գրավիչ զորություն ունի հայ երիտասարդի համար,— այն ժամանակ բոլոր հայ ծնողները կսկսեին իրանց աղջկերանց հայերեն սովորեցնել, որովհետև այն ժամանակ հայերեն լեզուն էլ մի շահավետ գործ կդառնար, հաց կտար, այսինքն միջոց կտար նրանց

իրանց ազգիկերանցից ազատվելու, առանց ազգիան մի որեէ բաժինք տալու՝ միջոց կտայ՝ ծնողներին իրանց ապրանքէր տեղաւորելու, կամ ինչպէս թիֆլիսեցիք ասում են՝ նրան սաղացնելու...»:

Մի ուրիշ հոգիվածում, որի վերնագիրն է՝ «Մենք սարուկներ ենք», Արծրունին պատկերացնում է հայի եսամայութիւնը: Ստրկութեան մեջ դարերով ապրած մի ազգ կորցնում է իր մարդկային ամենաազնիւնը, ամենասուրբ հատկութիւնները, դառնում է ավելի կոշտ, կոպիտ, նյութաւայաշտ: Հայը իր ստրկութեան դարերում կորցրել է մարդկային ազգի ամենաթանկ, ամենանշխարհական զգացմունքը՝ սերը:

«Միրել՝ նշանակում է ապրել. սիրել՝ նշանակում է գործել մարդկութեան համար. սիրել՝ նշանակում է զոհվել իրան նմանների համար:

Մերը հասարակական գործիչ է, նա խթող է ամեն նշանաւոր, կարգի դուրս երևելի գործերի մարդկութեան մեջ:

Եթէ սերը չլիներ, — չէին լինի մարդկային կրօնական և բարոյական վարդապետութիւնները, մարդկութիւնը չէր ծնի փիլիսոփայութիւնը, չէր ունենա քրիստոնէութիւնը... Մերն է, որ եղել է ավետարանի պարզեցող, նա առաջինն է եղել, որ քարոզել է մարդկութեանը՝ աղատութեան, հավասարութեան, եղբայրութեան հասարակական գաղափարները:

Մերն է, որ ստեղծել է հասարակութիւնը: Սիրո զգացմունքի դրամամբ ծնունդ է տեսել մարդկութեան մեջ գիտութիւնը...

Ո՞ր կողմ և նայեք, ո՞ր մարդկային հիմնական գաղափար, ո՞ր հասարակական կազմակերպութիւն և հետազոտեք, — ամեն տեղ կնշմարեք սեր, որպէս զորեղ ստեղծագործական ուժ՝ կրօն, ընտանիք, գիտութիւն, փիլիսոփայութիւն, գրականութիւն, բանաստեղծութիւն, արհեստ, շքեղարվեստ, երաժշտութիւն, մանկավարժութիւն, հասարակական կազմակերպութիւնների ինչպէս ընկերակցութիւններ, աշխատանոցներ, վանքեր, ուսումնարաններ, մշակ դասի փոխադարձ օգնութեան ընկերութիւններ, — բոլոր սկզբնական դրող ուժը, սկզբնապատճառը՝ մարդու դեպի մարդկութիւնը ունեցած սիրո զգացմունքն է...

...Որքան մարդկութիւնը ավելի ազատ է վարգանում, — այնքան սիրո զգացմունքը դառնում է զորեղ և գիտակցական...

Միայն ստրուկ հասարակութեան մեջ իզուր կորոնեք սիրո զգացմունքի հետքերը:

Ինչպէս տեսնում եք, այստեղ ընդգծվում է հասարակական սերը: Մի սեր, որ եսական, անձնամոլ չէ, այլ հասարակաց բարեշինութեան, մարդկային ընդհանուր, համայնական գործին է ծառայում: Մեր ստրկութիւնը նրանով է հայտնվում, որ մեզանում չկա այդպիսի սեր, սեր՝ իբրև հասարակական կյանքի հզոր դրող: Մասնավորելով իր խոսքը, Արծրունին մատնացուցց է անում անասնական սերը տղամարդի և կնոջ մեջ, կամ թե այն, որ հայը կեղծորով է մյուս հային՝ իր անձնական շահերի համար: Բայց այդ երևույթները միայն հայկական չեն. ամեն ազգի, նույնիսկ ոչ ստրուկ ազգի մեջ կան այդ երևույթները: Միրո բացակայութիւնը մեզանում երևան է գալիս հասարակական ուրիշ շատ երևույթների մեջ: Եվ դրանցից մեկը, զուցե ամենապերճախոսը, բերում է Արծրունին իր հոգիվածի վերջում. «Հային օտար է հասարակական սերը: Գուցե ոչ մի ազգ աշխարհիս երեսին այնքան հակումն չունի դեպի գաղթականութիւնը, դեպի միմյանցից ցրվելը, միմյանցից փախչելը, ինչքան հայերը: Հայը լավ է համարում բազմապիսի օտարութեան մեջ, քան թե իր ազգի շրջանում բաժանել իր արյունակիցների հետ նրանց բոլոր ցավերը և ուրախու-

թիւնները: Այդ է եղել միշտ հայի թուլութիւնը, և Հայաստանի, որպէս քաղաքական մարմնի, անկման պատճառը: Հայը վերջապէս չունի սեր դեպի կայրենիք՝ նա առաջին անախորժ դիպվածում փախչում է իր հայրենիքից և հետ միայն հեռվից սկսում է կեղծավոր կերպով անհամ սիրահարական երգեր երգել իր հայրենիքին...»:

Հասարակական արատները քննելիս, պակասութիւնների արմատները մերկացնելիս, Արծրունին նորից և նորից դիմում է ընտանիքին: Մենք արդեն տեսանք, թե ո՞րքան խիստ բողոքներ էր հայտնում Արծրունին հայ ընտանեկան կազմակերպութեան դեմ, ո՞րքան հարկածում էր այդ կազմակերպութեան հիմքը, որ բռնակալութիւնն է: Միևնույն բողոքները, բայց ավելի խիստ լեզուով, նա դնում է մի շարք հոգիվածների մեջ, որոնք խոսում են մեր ընտանիքի մասին: Ինչո՞ւ էր Արծրունին այդքան մեծ կարևորութիւն տալիս ընտանիքին, ինչո՞ւ շարունակ նրա մասին էր խոսում: Ահա՛ ինչու. «Այն ազգերը չունին այինք ապագա, որոնց ընտանեկան կյանքի կազմակերպութիւնը խիստ բարոյականութեան սկզբունքի վրա հիմնված չէ: Այն ազգերը քաղաքականութեան թելուծակ չեն, որոնց ընտանեկան կյանքը կամ շափից դուրս լուծված և զեխ է, կամ շափից դուրս փակ և բռնավոր է: Երկու ծայրահեղութիւնն էլ չեն տանում մարդուն դեպի խելացի, ազատ, համեստ, անհատական բարոյական և մտավոր զարգացումը: Թե ընտանեկան լուծված կյանքը, թե բռնավորութիւնը, — երկուսն էլ անբարոյականութիւն են»:

Հայ ընտանիքը երկրորդ ծայրահեղութիւնն է ներկայացնում — բռնավորութիւնը: Կարիք չկա, որ մենք նորից հետևենք Արծրունու քննադատութեանը, որից դուրս էր բերվում թե ի՞նչ տեսակ կրթութիւն, ի՞նչ սպանիչ ազդեցութիւն է տալիս այդ տեսակ ընտանիքը, մանավանդ հարուստ դասակարգի մեջ: Եկատենք այստեղ միայն այն, որ Արծրունին մեր գյուղական ընտանիքն էլ համարում էր կոշտութեան և վայրենութեան վրա հիմնված մի բան և դարմանում էր, թե ինչպէս շատերը իդեալացնում են այդ ընտանիքը, անվանելով նրան նահապետական:

1877 թվականին էլ, ինչպէս և միշտ, Արծրունին հոգիվածներ նվիրեց կասկանց հարցին, լեզվի նշանակութեան, դպրոցական առաջադեմ, ազատ, ժամանակակից կրթութեան: Մեր գործածական լեզվի վերաբերմամբ այն միտքն էր հայտնում, որ նա չպիտի կազմվի միայն գրաբարից, ոչ էլ միայն գավառական կենդանի բարբառներից, այլ այդ երկուսիցն էլ օգուտ պետք է քաղել, որ կարողանա կազմակերպվել: Բայց այդքանը բավական չէ: Մենք, բացի գրանից, պիտի օգուտ քաղենք արդեն մշակված ձևեր ունեցող օտար, քաղաքակրթված լեզուներից:

«Ծատ անգամ, — ասում է Արծրունին, կողմնակի կերպով պատասխանելով այն մեղադրանքներին, որոնք ուղղված էին իր դեմ, — մենք լսում ենք այս տեսակ դատողութիւններ՝ «այժմյան երիտասարդութիւնը գործ է ածում ուսուսական կամ առհասարակ եվրոպական ձևեր հայերեն գրելու ժամանակ»...»

Բայց այդ ասողները չեն մտածում, որ մեր այդ գործածած նոր ձևերը ոչ ուսուսական են, ոչ էլ ֆրանսիական կամ գերմանական, ոչ էլ եվրոպական, — այլ ընդհանուր մարդկային լոգիկական ձևեր, որոնց ազամա ենթարկվեցան իրանց հասարակական զարգացման մեջ և ուսաց և ուրիշ եվրոպական լեզուները»:

Գրողը պետք է մի որեէ եվրոպական նոր լեզու էլ իմանա, որպեսզի կարողանա զարգացնել նոր լեզուն՝ կանոնավորութիւն, կենդանութիւն տալով

նրան: Անպատճառ եմբոսական, քաղաքակրթված լեզուներին պետք է հետևել: Քն չէ կատարվի աչք, ինչ կրկնում է Կ. Պոլսում:

«Քուրբիայի հայ գրողները, գիտնականները և յամբագիրները մեծ մասամբ շփոթեն ոչ մի եմբոսական լեզու, գիտեն միմիայն մանգոլական թուրքերենը, որի ձևերին ընտելանալով, մտցնում են հնգկա-եմբոսական ծագումնաբան պատկանող հայոց լեզվի մեջ մոնգոլական թուրքերենի ձևերը:

Իսկ եթե գիտեն էլ մի որևէ եմբոսական լեզու, օրինակ, ֆրանսերենը, այն էլ թերի կերպով — նրանք շատ ուշ են սկսում ուսումնասիրել, արդեն ընտելացած լինելով մոնգոլական լեզվի ֆիլոլոգիական ձևերին, պարբերությունների դասավորություններին և մտածելու եղանակին:

Այդ է պատճառը, որ թուրքաց հայերի նոր, կենդանի, գրականական լեզուն ոչինչ ապագա չունի, այդ է պատճառը, որ նա ոչինչ առաջադիմություն չէ անում, անշարժ է մնում, և վերջին ժամանակները նրանց գրողներից շատերը, ներքին ազդմամբ հասկանալով, անգիտակցաբար համոզվելով, թի հույս չկա այդ տեսակ անշունչ լեզվի զարգացումից՝ սկսեցին քարոզել թուրքական կենդանի լեզուն, աշխարհաբար և վերադառնալ գրաբարին...

Ազգուրյան և իր լեզվի մեջ մեծ և սերտ կապ կա...

Ազգությունը, որ դեռևս համոզված չէ արդյո՞ք նա կենդանի է թե մեռնելու վրա է, — այդ տեսակ ազգություն անկարող լինելով հարուցանել մի կենդանի լեզու, սկսում է քարոզել վերադառնալ մեռած լեզվի գործունեությանը:

Անցնենք այժմ օրվա հրատապ հարցին: «Մշակը» այնքան շատ է խոսել արևելյան հարցի մասին, այնքան հարուստ նյութեր է արձանագրել իր էջերի մեջ այդ հարցի ընթացիկ պատմություններից, որ մեզ անհնարին է կանգ առնել յուրաքանչյուր փոքրիշատե աչքի ընկնող հոգվածի վրա: Արդեն լավ ծանոթացած լինելով այն հայացքների հետ, որ ունեւր Արծրունին թուրքահայտակ քրիստոնյաների դրություն վերաբերմամբ, մեզ կմնա համառոտ կերպով հիշատակել այն բոլոր դեպքերը, որոնց արձագանք է տվել «Մշակը», միշտ աչքի առջև ունենալով, որ Արծրունին լարված ուշադրությամբ հետևում էր տեղի ունեցող անցքերին, համարձակ հայտնում էր իր կարծիքը, քարոզում էր, դրդում էր, պահանջում էր, գործունեության ծրագրեր էր առաջարկում:

Տարվա սկզբին «Մշակը» սկսում է նվիրատվություններ հավաքել վանի հրկիզյալների օգտին: Քաղաքական աշխարհը դեռ բանակցությունների մեջ էր թուրքիայի վերաբերմամբ. բայց բանակցությունները որոշ հետևանքի չէին հասցնում: Ռուսաստանի բռնած սպառնական դիրքը տպավորություն չէր գործում թուրքերի վրա, զիջողության միտք չէր ներշնչում նրանց: Կ. Պոլսի դեռ պանաթոզովը իր վերջին ձևակերպած պահանջները հանձնեց թուրք կառավարության, իսկ սա այդ դժվար բոպեին մի մեծ ժողով կազմեց մայրաքաղաքի ազգաբնակչության ներկայացուցիչներից և հարց տվեց նրանց, թե ի՞նչ պետք է անել՝ ընդունել՝ եմբոսայի պահանջները, թե ոչ: Ժողովը պատասխանեց, թե չպետք է ընդունել: Քրիստոնյա ազգությունների ներկայացուցիչներն էլ, որոնք մեջ էր և հայոց պատրիարքի փոխանորդը, այդպես պատասխան տվողների հետ էին. միայն բողոքական հայերի ազգապետն էր, որ հակառակ կարծիք հայտնեց: Բ. Գուրը, հիմնվելով ժողովրդի այդ վճռի վրա, մերժեց դեսպանաժողովի մշակած պահանջները և որպեսզի ցույց տա քաղաքակրթված աշխարհին, թե այդ մերժումը լոկ քմահաճույքի բան չէ, սկսեց գործադրել սահմանադրությունը, պատգամավորներ ընտրել տալ, ազգային ժողովը (պառլա-

մենտը) և սենատը բաց անել: Այդ գործողությունները պիտի ցույց տային, թե ընդհանուր բարեկարգություններ են մտցնվում թուրքիայի մեջ:

Այդ միջոցին Արծրունին երկրորդ խիստ հարձակումը գործեց ներսես պատրիարքի դեմ: Դրա շարժառիթը հետևյալն էր: Կ. Պոլսի «նոր Դար» լրագիրը 1876 թ. դեկտեմբերի 29-ի համարի մեջ հաղորդում էր. «Երեկ հասն ժողովը որոշեց Բ. Գրան ուղերձ մը գրել, նոր սահմանադրության վրա յուր գոհությունն ու շնորհակալությունը հայտնելով, որով Հայագրի օսմանցիությունը, պաշտոնական լեզվին ամեն տեղ ընդհանրապես տանկական լեզուն քլայւր, Պատրիարքարանի լոկ կրոնական խնդրոց վրա իրավասությունը, ազգային և քաղաքական ցավոց ընդհանուր երկրեն ընտրյալ երեսփոխանաց միջոցով հայտնվիլը և ազգային դպրոցաց մեջ կրոնական դավանությանց վերաբերյալ ուսմանց վրա միայն Պատրիարքարանի իրավասություն ունենալը կընդունվի: Այս ուղերձը այսօր պիտի մատուցվի Բ. Գրան հանդիսապես հանուն Պատրիարքարանի, առանց սպասելու Ազգային ժողովի քվեեն անցնելու»:

Այս հաղորդագրության միտքը հասկանալու համար պետք է նկատի առնել, որ օսմանյան սահմանադրության հիմնական մի կանոնն այն էր, որ թուրքիայի յուրաքանչյուր հպատակ կոչվում է օսմանցի և պաշտոնական լեզուն ամեն տեղ թուրքերենն է: Այսպիսով ջնջվում էին առանձին-առանձին ազգությունների անունները: Օսմանցի անունը պիտի մի տեղ ձուլեր այն անթիվ ազգությունները, որոնք ապրում են սուլթանի երկրում: Ներսես պատրիարքը ոչ միայն հաշտվում էր այդ մտքի հետ, այլև այնուհետև ավելորդ էր համարում հայերին շնորհված սահմանադրական առանձին ինքնավարությունը, քանի որ երկրի բոլոր հարցերը պիտի քննե թուրքական պառլամենտը, ուր, իհարկե, պիտի լինեին և հայ պատգամավորներ: Թուրքիայի հայոց պատրիարքը մտնում էր լոկ կրոնական իշխանություն, որ միայն եկեղեցու գործերի վրա ուներ իրավասություն: Ներսեսը այսպիսով, առանց նույնիսկ ստանալու ազգային ժողովի համաձայնությունը, ինքնահոգար կերպով հրաժարվում էր այն դարավոր արտոնություններից, որ ունեին Կ. Պոլսի հայոց պատրիարքները...

Հիմնվելով այս փաստի վրա, Արծրունին գրեց՝ «էլ չկա հայոց սահմանադրություն» առաջնորդող հոդվածը, որի մեջ անվանեց ներսեսին «դավաճան»: Ինչպես գիտենք, Արծրունին մեծ նշանակություն չէր տալիս թուրքահայոց սահմանադրության այն պատճառով, որ նա չէր կարողանում պաշտպանել դավաճանի հայերին հարստահարություններից: Բայց սահմանադրությունը, այնուամենայնիվ, մարմնացնում էր այն արտոնություններն ու իրավունքները, որ ստացել էին թուրքիայի հայերը իրանց կառավարությունից: Եվ ահա այդ արտոնությունները, իրավունքները թուրքահայերը «կորցրին շնորհիվ իրանց հոգևոր հովվի դավաճանության», ասում էր Արծրունին:

Ներսես պատրիարքի այդ քայլը անհեռատեսության, մանավանդ թուրքամոլության մի մեծ նշան էր: Ոչ ոք չէր հավատում, թե օսմանյան սահմանադրությունը մի լուրջ պետական ձեռնարկություն է, որ կարող է երկար ապրել: Եվ ներսեսը շտապում էր հայոց առանձին սահմանադրության վերջ տալ, քանի որ արդեն կար ընդհանուր օսմանյան սահմանադրությունը: Արծրունուն վրդովեցնողը մանավանդ այն էր, որ այդ քայլը արվում էր ինքնազուրի, առանց ժողովրդի ներկայացուցիչների համաձայնություն:

«Եթե ամբողջ ազգը հրաժարվեր իր ունեցած իրավունքներից, մենք թեև այդ վարժունքը հիմարություն կանվանեինք, բայց այնուամենայնիվ պետք է ասեինք, թե դա կախված է ազգի բարի կամքից... բայց ի՞նչ պետք է ասենք

տեսնելով, թե մի որեէ ներսես իրան իրավունք է համարում կամայական կերպով շարժել սուլթանի ոստերի տակ ամբողջ ազգի ամենաթանկագին իրավունքները»:

Արծրունին ներսեսից դժգոհ լինելու ուրիշ պատճառներ էլ ուներ: Եվրոպական լրագիրները հաղորդել էին, որ դեսպանաժողովը դիմել էր նրան և հարց տվել, թե ի՞նչ են ուզում հայերը, իսկ ներսեսը պատասխանել էր, թե հայերը իրանց հույսը թուրքաց կառավարության վրա են դրել և նրանից են սպասում իրանց վիճակի բարելոքումը: Նրևի պատրիարքի այն ուղերձն էլ, որով ջնջվում էր սահմանադրությունը, լուկ մի քաղաքական ցույց էր, որ մի կողմից պիտի մի լավ զենք դառնար նեղ հանգամանքների մեջ խեղդվող թուրքաց կառավարության համար, իսկ մյուս կողմից պիտի ընդգծեր հայերի հավատարմությունը, որով և ներսեսը կարելի էր համարում քաղցրացնել կառավարության աչքը դեպի հայերը: Բայց Արծրունին քացականչում էր. «Մի՞թե թուրքիայի հայերը այդ տեսակ սարսափելի դավաճանությունից հետո պետք է համբերեն, որ ներսես նպիսկոպոսը պատրիարք մնա...»:

Մակայն մենք պետք է ասենք, որ ներսեսը անգործունյա և անտարբեր չէր մի այնպիսի ժամանակ, երբ գավառացիների դժբախտությունները օրեցօր սաստկանում էին: Նա դիմումներ էր անում թուրք կառավարության, աշխատում էր պատժել տալ հանցավորներին: Նրա բռնած ընթացքի հիմքը, ուրեմն, այն էր, որ պետք է միայն թուրքաց կառավարությունը ճանաչել, չխառնվել միջազգային քաղաքականության մեջ: Բայց այդ բարյացկամությունը դեպի թուրքաց կառավարությունը ոչինչ օգուտ չէր բերում հայերին: Գրությունը Հայաստանում գնալով ծանր կերպարանք էր ընդունում, իսկ հայոց պատրիարքի դիմումները լուկ թղթի վրա էին մնում: Ներսեսը ստիպված եղավ պատճառաբանված հրաժարական տալ. բայց մեծ վեղիբը մի կույտ խոստումներ արավ, և նա էլի ետ վերցրեց իր հրաժարականը:

Բայց մոտենում էր արևելյան հարցի ամենավճռական րոպեն: 1877-ի ապրիլի 12-ին Ռուսաստանը պատերազմ հրատարակեց թուրքիայի դեմ: Կովկասյան սահմաններից առաջ արշավող զորքը նորից հարուցեց գավառացի հայ ժողովրդի հին հույսերը. ամեն տեղ եկեղեցական հանդեսներով էին դիմաւորում ռուսներին: Դեպքերը շուտով ցույց տվին, թե ո՞րքան անսխալ էր ժողովրդի բնազդը: Հայերի ահավոր կոտորածը Բայազետում, Շելխ-Ջալալեղլիի արշավանքը, Ալաշկերտից Տեր-Ղուկասովի զորաբաժնի հետ Ռուսաստան գաղթած 3000 հայ ընտանիքները — այդ բոլորը տեղի ունեցավ մի կարճ միջոցում, երկու կամ երեք ամսվա ընթացքում: Իսկ թե ինչե՞ր էին կատարվում թուրքաց Հայաստանի այն տեղերում, որոնք հետո էին պատերազմի բեմից, — հասկացողություն կարող է տալ այն ընդարձակ հիշատակարանը, որ կազմել էր Վանից Թիֆլիս եկած Մկրտիչ Փորթուզալյանը և որ ապագրվեց «Մշակի» մի քանի համարներում:

«Ակզբունքով կարելի է համակրել կամ չհամակրել պատերազմին, — ասում էր Արծրունին ռուս-թուրքական պատերազմի հրատարակության առիթով, — բայց մեկ բան չէ կարելի շխոստովանել, որ կան ազգեր, որոնք ենթարկվում են նոր մտքերին, ընդհանուր մարդկային առաջադիմության անհրաժեշտությունը ընդունում են միայն սրի և հրացանի միջոցով հասցրած լինելով այդ անհրաժեշտությունը: Կան հարցեր, որոնք այլ կերպ չեն կարող վճռված լինել, եթե ոչ պատերազմի միջոցով»:

Թուրքիան պատկանում է այդ տեսակ ազգերին, արևելյան խնդիրը այդ տեսակ դժվար լուծելի խնդիրներից միսն է...

Ցանկանանք մեր զորքերին հաջողություն, որից կախված է արևելքի ազատությունը, նրա բնակիչների խաղաղ, ապահով դրությունը և երկար ժամանակ ճշման տակ մնացած քրիստոնյա ազգերի բարոյական, տնտեսական և մտավոր վերածարգությունը»:

Իսկ մի ուրիշ հոգվածի մեջ նա բացատրում էր առհասարակ պատերազմի խորհուրդը:

«Ի՞նչ զարմանալի փոփոխություններ, ի՞նչ աչքի ընկնող շարժողություններ է առաջացնում պատերազմը մի հասարակության կյանքի թե ընդհանուր ընթացքի, թե նորա ամենափոքր, նեղ շրջանի մեջ անգամ»:

Գուցե այժմյան քաղաքակրթված աշխարհի ինտելիգենցիայի մի մասը համոզված է, որ պատերազմը առհասարակ կործանիչ, վնասակար, առաջադիմությանը արգելք դնող մի երևույթ է, — բայց ուրիշ կողմից չէ կարելի հերքել, որ պատերազմը եղել է միշտ, և կլինի պետության կազմակերպության և իրան հասարակության կյանքի բարոյական, մտավոր և նյութական ուժերի մի խիստ քննություն»:

Մեր կյանքի վերաբերմամբ էլ միանգամայն ճիշտ էր այդ բացատրությունը: Պատերազմը մի դրդիչ էր Կովկասի ներքին, կյանքի համար. նա բերեց կենդանություն, ծնեցրեց մտավոր հոսանքներ, եռանդ, գործունեություն հանդես հանեց հասարակական ասպարեզում: Հայերն էլ, իբրև մեկը կովկասյան ազգերից, առանձին կենդանություն ստացան և պատերազմին հետևած երեք-չորս տարիները մեր կյանքի մեջ մի առանձին թարմ ու փայլուն շրջան են կազմում, որի նմանը հաղիվ թե հետո կրկնված լինի:

Պատերազմի մասին խոսեց և Ասիացին իր առաջին ֆելիետոնում: Դեռ անցյալ տարվանից Ասիացին տխրության շեշտեր էր մտցրել իր ֆելիետոնների մեջ. նա ասում էր, թե հանաք անելու, զվարճանալու ոչ մի տրամադրություն չէ մնացել, քանի որ Փոքր Ասիայից այնպիսի ցավալի լուրեր են գալիս: Իսկ այժմ ահա թե ինչ էր նա գրում. «Այս րոպեիս ուրիշ ի՞նչ բանի վրա կարելի է խոսել, եթե ոչ պատերազմի վրա: Ամենքի բերանից լսվում է պատե՛րազմ խոսքը»:

Եվ կրկին պատերազմի բեմը Հայաստանն է, հին, պատմական Հայաստանն է, որի վրայով այնքան ազգեր են անցկացել, ամենքը նրա հողի վրա իրանց և հայի արյուն են թափել, ամենքը իրանց հետքերը թողել...

Հայաստանը նման է մի կնոջ, որ անթիվ սիրականներ է ունեցել, բայց այդ իր սիրականներից իսկապես ոչ մեկին անկեղծ սիրով չէ սիրել... Արդյոք կսիրե՞ նա մի օր անկեղծ սիրով, կընծայե՞ նա իր սերը մեկին անբաժան կերպով, կընտրե՞ նա վերջապես մեկին, որին ամբողջությամբ կհանձնե իր անձը, այդքան ցրված կյանք վարելուց հետո՝ օրինավոր կին, տանտիկին, մայր դառնալու համար...

Դժվար է նախազուշակել:

Առհասարակ այդ տեսակ կանանց կողմից ժամանակավոր շնորհ վայելելը ամենքը ցանկանում են, — բայց կապվել այդ տեսակ էակի հետ ամբողջ կյանքի համար՝ ոչ ոք չի ցանկանա...»:

Եվ կարո՞ղ է մեկը անկեղծ կերպով սիրել այդ էակին: Ասիացին թողնում

¹ Երկու-երեք տարուց հետո Րաֆֆին էլ իր «Դավիթ-Քեկ» վեպի մեջ ճիշտ այսպիսի նմանություն էր տալիս Հայաստանին... Մա ապացույց է, թե որքան սերտ կապ կար Գրիգոր Արծրունու գրվածքների և Րաֆֆու վեպերի մեջ:

է պատերազմը, այդ հարցն է արծարծում մի անխնա խստութեամբ, որ ցաւ վայել ճշմարտութեան արդարացի պատկերացումն է:

«Յուշ տվեցեք ինձ մի ազգ,— ասում է նա,— մի մարդ աշխարհիս երեսին, որ հայերին սիրելիս լիներ, կամ գոնե խոսեր հայերի մասին առանց արհամարհանքի և ատելութեան:

Այդ տեսակ ազգ, այդ տեսակ մարդ չկա աշխարհիս երեսին: Հայրի ամենքք արհամարհում են և մանավանդ ատում են: Եվ ինչպե՞ս շատեն, երբ ինքն հայր հայերին ատում է...»

Հայր միշտ ամաչում է նայ անվանվել... Ամենամեծ գովասանք, որ կտրող է անել թիֆլիսցի հայ կին (հին սերունդին պատկանող) խոսելով մի ազգի վրա, հետևյալն է՝ «Հետտի շնորքով ազգիկ է, հետտի նստիլ ու վերկեռայ ռուսի, կոսիս վրացի ազգիկ ըլի»...»

Ոչ մի ազգ աշխարհիս երեսին չկա, որ ինքն իրան արհամարհեր սրբան հայ ազգը... երկու հայ փողոցում հայերեն են խոսում, հանկարծ մի ժանտի ռուս կամ գերմանացի նրանց մտով անց է կենում,— իսկույն մեր հայերը թողնում են իրանց մայրենի լեզվով խոսելը և անցնում են մի օտար լեզվին,— չլինի՞ թե օտար մարդը լսի, որ հայերը հայերեն են խոսում...»

Հայերս սովորություն ունենք գանգատվել, թե ոչ մի օտար ազգ մեզ չէ սիրում, ամենքը մեզ ատում և արհամարհում են... Ինչպե՞ս կարող են ուրիշները մեզ սիրել, երբ մենք ինքներս մեզ ատում ու արհամարհում ենք»:

Պատերազմը կլանում է Արծրունու ամբողջ ուշադրությունը: Շատ չեն այն հողավածները, որոնց մեջ նա խոսում էր սովորական, առօրյա հարցերի մասին. թերթերով 1877-ի «Մշակը», մեր առջև պատկերանում է նա, որպիսի մի մարդ, որի մտածմունքը մի առարկայի վրա է կենտրոնացած, բայց որը, միակողմանի շինելու համար, հարկադրված է մի մի ուրիշ առարկաների վրա էլ նայելու, առարկաներ, որոնք, այսպես ասած, սահում, փախչում են նրա գրչի տակից, առաջնությունը, կարևորությունը գլխավոր, կենտրոնական առարկային տալով:

Ի՞նչ պիտի լինի հայերի վիճակը, ի՞նչ պիտի տա պատերազմը թուրքացի Հայաստանին: Արծրունին շատ հաճախ էր կանգ առնում այս հարցի առաջ նրա համար ստիպողական, անխուսափելի էր մնում միևնույնը, ինչ ասել էր 1876-ին. «Այժմ կամ երբե՞ք»: Եվ նա շարունակ կրկնում էր, թե Հայաստանը պիտի միացվի Ռուսաստանին. իսկ եթե այդ անհնարին լինի, այն ժամանակ Ռուսաստանը պետք է իր հովանավորության տակ առնե Հայաստանը՝ տալով այնտեղ ապրող քրիստոնյաներին կյանքի և գույքի ապահովություն: Որքան առաջ էր գնում ռուս բանակը, այնքան Արծրունու համար անհրաժեշտ էր դառնում հարցի այդ տեսակ լուծումը: Արտասահմանյան լրագրիները հաղորդում էին, թե Անգլիան երբեք չի թույլ տա, որ Ռուսաստանը վերցնե Հայաստանը: Արծրունին անխղճություն էր անվանում Անգլիայի այդ քաղաքականությունը: Անգլիան պահպանում է թուրքիան, սովորեցնում է թուրքերին խորամանկություններ՝ Եվրոպան խաբելու և քրիստոնյաների արդար պահանջները խեղդելու համար. Անգլիան դենք և փող է տալիս թուրքիային՝ Ռուսաստանի դեմ կռվելու համար և չէ էլ թույլ տալիս, որ Հայաստանն անցնի ռուսաց ձեռքը: Իսկ ինքը, Անգլիան, ի՞նչ պետք է անե հայերի համար: Ոչինչ: Բանից, ուրեմն, դուրս է գալիս, որ Հայաստանը պետք է թուրքերի ձեռքին մնա, որով հետև այդ շահավետ է Անգլիային: Ի՞նչ անխղճություն: Բայց հայերի հույսը միայն Ռուսաստանի վրա է, միայն Ռուսաստանից են նրանք սպասում իրանց փրկությունը:

Երբ Մուստար-փաշայի զորքը ոչնչացվեց Ալաշայի բարձրությունների վրա, երբ ռուսները հաղթական արշավանք սկսեցին դեպի էրզրում և Ասիական Թուրքիայի վերջին հույսը, Կարսը ընկավ ռուսների ձեռքը, Արծրունին արդեն միանգամայն համոզվեց, որ Հայաստանի ճակատագիրը վերջնականապես կարգադրված է, նա կդառնա Ռուսաստանի մի մասը և այդպիսով կազատվի իր զարավոր գեղախոսություններից: Իսկ եթե բան է, ինքը Ռուսաստանը չկամենա միացնել Հայաստանը իր կալվածներին, ավելորդ համարելով իր առանց այն էլ շատ տարածված սահմանների ընդարձակումը, այդ դեպքում դարձյալ նրան է վերապահված կարգադրել Հայաստանի ճակատագիրը աչնախ, որ հայերը ապահովություն գտնեն, ինքնավարություն ունենան:

Առհասարակ Արծրունին թե պատերազմի ժամանակ և թե հաջորդ երկուերեք տարիներում հավատ չէր ընծայում անգլիական քաղաքականության և ամեն անգամ հաստատ համոզմունք էր հայտնում, թե Ռուսաստանն է միայն, որ անշահասիրություն և անկեղծություն արշատում է արևելյան քրիստոնյաների իրական պաշտպանը դառնալ: 1877-ի ամառը, ինչպես հայտնի է, թուրքացի զենքը աջողություններ ունեցավ թե եվրոպական և թե ասիական պատերազմական բեմերում: Այդ հանգամանքը հարկադրում էր շատերին մտածել, թե արդյոք պատերազմը կբերե՞ սպասած հետևանքը: Արծրունին այդ կասկածների ժամանակ ասում էր, թե միևնույն է, թուրքիան եթե այժմ էլ չջարդվի, պատերազմից հետո դարձյալ պիտի քայքայվի: Բայց ահա թուրքիան միմյանց ետեկից մի շարք ահավոր հարվածներ է ստանում, որոնք նրա վերջնական անկումն են ցույց տալիս: Եվ Արծրունին, հիշելով թե այդ ահեղ հարվածների մեջ մասնակից էին և հայ զորապետներ, գրում է «Ազգության հանճարը» առաջնորդողը:

«Մինչև վերջին ժամանակները,— ասում է նա,— հայոց ազգի մասին ամբողջ աշխարհը համոզված էր, թե այդ ազգը ունի խելք, ընդունակություններ, արդյունազորական, առևտրական ոգի և այլն,— բայց որ հայերը վախկոտ ժողովուրդ են և զուրկ են բոլորովին զինվորական հատկություններից: Այդ տեսակ համոզմունք կազմած ունեի ամբողջ աշխարհը հայոց ազգի հանճարի մասին:

Ներկա թուրքաց-ռուսաց պատերազմը ապացուցեց մեզ հակառակը: Այն ազգը, որ հայտնի էր որպես զինվորական ոգի կորցրած, առևտրական, վախկոտ ժողովուրդ,— հանկարծ արդյունաբերում է անթիվ քաջեր, սկսած հասարակ սոլդատներից, միլիցիայի զինվորներից՝ մինչև զորքի գլխավոր առաջնորդները, մինչև առաջնակարգ զորապետները:

Կարելի՞ է արդյոք որ մի վախկոտ բնավորություն ունեցող ազգից դուրս գային անթիվ քաջեր, կարելի՞ է արդյոք, որ հետևանքը ծնունդ առնե առանց պատճառի, կարելի՞ է արդյոք, որ ջուրը վազի առանց աղբյուրներից դուրս գալու... Անկարելի է:

Այն ազգը, որ հարկավոր ժամանակ ընծայում է այդքան թվով քաջ և ընդունակ զինվորականներ, ինչքան վերջին պատերազմում հայերը ընծայեցին ռուսաց զորքին,— այդ տեսակ նշանավոր, աչքի ընկնող երևույթ ակամա ստիպված ենք համարել մեր ազգի հատկությունը, մեր ազգության հանճարը»:

Այստեղ կանգ առնենք մի հետաքրքրական հարցի առաջ: Մենք շարունակ տեսնում ենք Արծրունուն հարձակվելիս, մտրակելիս, տեսնում ենք, որ նա իր շուրջը վատություն, ապականություն է միայն գտնում: Ի՞նչ է սա ցույց տալիս, արդյոք ա՞յն թե Արծրունին մի անուղղելի հոգևոր էր, թե նա հուսա-

հատվել էր իր ազգից, թե միայն վատ, միայն բացասական հատկությունների ընդունակ էր նա համարում այդ ազգը:

Հատ երևույթին աչապիտի կերպարանք ուներ Արծրունու գործունեությունը, և այդ երևույթից օգուտ էին քաղում նրա հակառակորդները, ներկայացնելով նրան իբրև իր ազգի ուխտյալ, անհաշտ թշնամի: Բայց կարգալուծ Արծրունու ամենախիտ, անողորմ, նույնիսկ շահագանցություն էլ հասցրած հարձակումները, յուրաքանչյուր անկող մարդ կըմբռնե, որ այդ շանթահարող տաղերի միջից երևում է սիրող սիրտը, մի մարդ, որ ուզում է իր ազգի բարեբախտությունը, բայց կրակոտ է, անհամբեր է, միշտ անբավական և ուզում է, որ միանգամից կերպարանափոխվի այդ ազգը, հսկայական քայլերով առաջ գնա: Մի կողմ թողնելով այդ ներքին շեշտը, որ լավում է ամեն տեղ, մենք ցույց կտանք հենց այն, որ ինքը, Արծրունին, խոստովանում էր, որ հայի պակասություններից շատերը հատուկ են բոլոր ազգերին, որ ամեն տեղ կան կեղեքողներ, շահամուլներ: Բայց մի՞թե դա նշանակում էր, թե չպետք է հարվածել այդ պակասությունները հայերի մեջ: Իհարկե, ոչ:

Պատերազմի տարին անհրաժեշտ դարձավ մի հանգամանք: Հայերին օտարները չէին ճանաչում, և Արծրունին սկսում է եռանդուն կեպով քարոզել, որ հայ ինտելիգենցիան ծանոթացնե հայերին օտար ազգերի հետ: Թո՛ղ հիմնեն մի դուռ հայկական օրգան ուստերեն լեզվով, թո՛ղ հայ երիտասարդները գնան եվրոպա, այնտեղ գրեն հայերի մասին, շիտակ և անկեղծ կերպով ներկայացնեն իրանց ազգը քաղաքակիրթ աշխարհին: Եթե Արծրունին շունենար հավատ դեպի իր ազգի բարոյական առավելությունները, եթե նա միայն վատություն տեսներ նրա մեջ, կարո՞ղ էր այդպիսի միտք քարոզել, կարո՞ղ էր համոզված լինել, որ քաղաքակիրթ ազգերի մտալի ծանոթությունը հայերի հետ կվերացնե շատ նախապաշարմունքներ, շատ թյուրիմացություններ, և հայերը միայն օգուտ կստանային այդ ծանոթությունից: «Օտարները և մենք» առաջնորդողի մեջ Արծրունին, խոսելով մի ֆրանսիական թղթակցի մասին, որ նկարագրել էր կովկասյան հայերին, ասում է. «Մերան զարմացավ այդ թղթակիցը, երբ գտավ Անդրկովկասում մի ազգ, որ իր բոլոր պակասությունների հետ միասին այնուամենայնիվ ներկայացնում է արևելքում եվրոպական տարր՝ իր ձգտումներով, իր ոգով, իր բնավորությամբ, իր ընդունակություններով և կյանքի եղանակով:

Նա կարծում էր, որ հայերը միայն վաճառականներ են, — հանկարծ նա իմանում է, նա տեսնում է, որ հայոց ազգի մեծ մասը երկրագործներ են: Նա հեռվից լսում էր, որ հայերը վախկոտ, պատերազմական բոլոր հատկություններից զուրկ ժողովուրդ են, — և հանկարծ համոզվում է, որ հայերը համարվում են ուս զորքի մեջ ամենաքաջ զինվորականների կարգում, իրանց միջից ընդունակ և տաղանդավոր զորապետներ են ընծայել ուսաց զորքին: Նա սպասում էր տեսնել մեզ մոտ խորին տգիտություն, — և հանկարծ տեսնում է հայոց ժողովրդական ուսումնարանների հաշվից, որ դպրոցների և աշակերտների պրոցենտը մեղանում բավական նշանավոր է: Նա սպասում էր պատահել հարեմ, հանկարծ գտնում է եվրոպական ընտանիք և օրիորդական դպրոցներ, որտեղ իրանք կանայք անգամ դասատուություն են անում»:

Եվ այսպես մի շարք առավելություններ — բարձրագույն ուսում, մամուլ, գրականություն, մշակվող լեզու և այլն: Ահա թե ո՞րքան բաներ կային օտարներին ցույց տալու համար: Արծրունին այս բոլորը չէր մոռանում, ընդունում էր, որ դրանք աշխատությամբ ձեռք բերած կուլտուրական առաջադիմություն են: Սակայն այդ դեռ չէր նշանակում լինել միանգամայն բավական և ինքնա-

դուհ, շքանկալ առկալի մեծ առաջադիմություն, շքույր տալ պակասությունները և կրակով շալթել վերքերը:

Բայց վերադառնալու պատերազմին:

Հուլիս ամսին Երևանյան նահանգում տարածվեցին այն հազարավոր թուրքահայ ընտանիքները, որոնք Տեր-Ղուկասովի նահանգող զորքի հետ եկել էին Ալաշկերտից: Երբ ռուսները պարտություն կրեցին Ջիվիխի առաջ և գնեցրալ Տեր-Ղուկասովը, Դրամդաղի նշանավոր ճակատամարտը վատակելուց հետո ստիպված եղավ ետ նահանջել դեպի ուսաց սահմանները, Ալաշկերտի հայ գյուղերը, շատ լավ իմանալով, թե ի՞նչ է իրանց սպասում ուսաց զինվորների հեռանալուց հետո, շտապով հավաքեցին ինչ կարողացան և քրդերից աղատություն որոնեցին՝ փախչելով ուսաց հողը: Քաղթականները, իհարկե, շատ շնչին բան կարողացան բերել իրանց հետ, այնպես որ տեղ հասնելուն պես՝ զգացվում էր մեծ կարիք այդ ահագին բաղմունքները պատսպարելու և կերակրելու համար: Հարկավոր էր շուտ օգնություն հասնել նրան:

Արծրունին սկսում է զբոլ գաղթականների մասին: Թիֆլիսում գումարներ են հավաքվում նրանց օգնելու համար: Բայց այդ կարիքը բաց է անում մեր առջև մի պակասություն, որի մասին Արծրունին գրում է «Ուշ ենք հասկացել» առաջնորդողը: Այդտեղ առաջին անգամ արժարժվում էր Թիֆլիսում մի կենտրոնական բարեգործական ընկերություն հիմնելու հարցը:

«Չէ կարելի չմիտոսալ, — ասում էր նա, — որ մեզ հայերիս առհասարակ հատուկ է միայն այն ժամանակ ձեռք տալ այդ տեսակ բարի գործերին (թշվառներին օգնելու համար փող հավաքելուն), երբ, ինչպես ասում են՝ դառնակը ոսկորին է հասնում...»:

Բացատրելով այնուհետև, որ ժողովրդական դժբախտությունները միշտ կարող են կրկնվել, որ հայերը պիտի իրար օգնության ձեռք մեկնեն, Արծրունին շարունակում է. «Մասածեցեք, ընթերցո՞ղ, ի՞նչպես լավ կլինեք, եթե մենք փոքր առ փոքր, տարիներով հավաքելով գումարները թե նվիրատուության միջոցով, թե անդամակցական վճարքի ձևով, վաղուց արդեն կազմած ունենալինք մի կենտրոնական ընկերություն (օրինակ, Թիֆլիսում), Մարդասիրական ընկերության պես, միայն ավելի լայն, ավելի ընդարձակ պրոգրամայով, որ նշանավոր գումարներ իր ձեռքումն ունենալով, կարող էր հարկավոր ժամանակ օգնություն հասցնել հայոց հասարակության այս կամ այն տառապալ մասին, նվիրել իր մայր գումարի տոկոսներից այս կամ այն տեղի հայ սովատանջներին, կամ հրդեհից վնասվածներին, օժանդակել այս կամ այն օգտավետ ձեռնարկությանը, պահպանել կատարյալ անկումից այս կամ այնինչ ուսումնարան...»:

Վաղուց հարկավոր էր մտածել այդ տեսակ մի ընկերություն կամ մասնաժողով ունենալ. բայց եթե մինչև այժմ ոչ ոք այս բանի վրա չմտածեց, — այդ չէ նշանակում, որ այսուհետև էլ չպետք է մտածենք այդ տեսակ ձեռնարկությունը իրագործելու»:

Դա ժամանակի պահանջն էր, իրերի գրությունից բխող միտք: Արծրունին առաջինը արտահայտեց նրան մամուլի մեջ, իսկ իրագործումը տեղի ունեցավ տարիներից հետո, երբ Թիֆլիսում հիմնվեց Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը: Բայց ալաշկերտցի գաղթականների գրությունը անմիջական օգնություն էր պահանջում. «Толос» լրագիրը զարմանք էր հայտնում, որ Թիֆլիսի հայերը մի հատուկ մասնաժողով չեն կազմում այդ խեղճերի համար: Կարծրունին արձագանք տվեց այդ առաջարկության: Կազմվեց մասնաժողով, որ հաստատվեց կառավարության կողմից և գործի կապով: Մասնաժողովի ան-

դամը և քարաձուլարը Արծրունին էր: Գարն միջոցում բազմական խոշոր գումար հավաքվեց: Մասնաժողովը Ալեքսանդրյան այգում մեծ ժողովրդական գրոսանք սարքեց, որ ահագին բազմություն գրավեց և փառավոր հաջողություն ունեցավ, տալով ընդհանուր մուտք մոտ 4500 սուրբի: Աշխատել էին ազգաբնակչության բոլոր դասակարգերը: Կանայք առանձին եռանդ ցույց տվին այդ գործի մեջ: Մասնաժողովը իր անդամներից մեկին ուղարկեց Երևանյան նահանգը՝ գաղթականներին գրությունը տեղում տեղը սուսմանափորելու համար: Այդ մանրամասն սուսմանափորությունը տպագրվեց «Մշակում»: Մի մասնաժողով էլ Երևանում կազմվեց: Եվ այսպիսով ուստահայեցող ոչինչ չխնայեցին իրանց տանջված եղբայրակիցներին օգնելու և գաղթականության պես մի ահալոր գործի հետ կապված գոթախոտությունները կարելի եղածին չափ թեթևացնելու համար: Երևույթը բոլորովին նոր էր մեղանում: Պատերազմը հարկադրում էր մեզ հասարակական եռանդոս գործունեություն սկսել: Իր արյունոտ հայրենիքից փախած թուրքահայր մեզ վարթեցնում էր:

Այաշկերտի գաղթականությունը միևնույն ժամանակ մեր պատմության մեջ անզաղար կրկնվող դարավոր երևույթներից մեկն էր, երևույթ, որ այնքան ահագին ազդեցություն է արել հայ ազգի ճակատագրի վրա, ազգային բնավորություն է կազմել, ուղղություն տվել մեր հազարամյա կյանքին: Արծրունին այդ թարմ երևույթի տպավորության տակ փորձեց բացատրել մեր գաղթականությունների պատճառները և հետևանքը: Հետաքրքրական է, որ նա գաղթականության պատճառ համարում էր քրիստոնեական կրոնը:

Մի ժամանակ, ասում է նա «Կրոն և Գաղթականություն» առաջնորդողի մեջ, Հայաստանը, իբրև լեռնային մի ապահով երկիր, ամեն կողմից գրավում էր զանազան ազգերի գաղթականություններ, որոնք գալիս էին հաստատվում հայոց հողի վրա և ձուլվում էին բուն ազգաբնակչության հետ: Այդ ո՞ր ժամանակն էր: Այն ժամանակ, երբ Հայաստանում տիրում էր զրազաշտական կրոնը: Դա մի բնական, շոշափելի, մանկական կրոն էր, մատչելի շրջապատող ցեղերի համար: Հայաստանի դիրքը, որ շատ նման է լեռնային Շվեյցարիայի դիրքին, ապահովություն էր տալիս գաղթողներին, իսկ կրակապաշտությունը ձուլում էր գաղթողներին հայերի հետ: Ազգը անզաղար նոր տարրեր էր ընդունում դրսից, բազմանում էր, ուժեղանում: Հեթանոսական Հայաստանը զորեղ էր, բազմամարդ:

Քրիստոնեությունը մուտք է գործում Հայաստան և իրերի գրությունը միանգամից փոխվում է: Հայաստանը սահմանափակվում է իր մեջ, կղզիանում, առանձնանում. քրիստոնեությունը այլևս այն պարզ, դուրամատչելի կրոնը չէր, ինչպես զրազաշտականությունը: Քրիստոնեության բարձր, վերացական, շրջապատող տարրերի համար անմատչելի փրկստփայական սկզբունքները փակում են Հայաստանի դռները դրսի նոր ուժերի առաջ, կամավոր գաղթականությունը դադարում է:

«Անընդհատ հոսանքը ուրիշ ցեղերի, որոնք անզաղար գաղթելով Հայաստան միանում էին հայոց հիմնական ազգության հետ, ձուլվում էին նրա մեջ,— այդ հոսանքը քրիստոնեության մեր երկիրը մտնելուց հետո դադարեց, հա մղվեցավ, նոր կրոնը արգելք եղավ հայոց ազգի անընդհատ մեծանալուն և բազմանալուն... Հայր իր մեջ սահմանափակվեց... ազգի բազմանալուն, մեծանալուն, հասակ առնելուն վերջ գրվեցավ:

Առաջ, կոսպալատության ժամանակ, ով որ Հայաստանումն էր բնակվում, հայոց հողի վրա էր ապրում,— հայ էր: Քրիստոնեությունից հետո՝ նա, որ լու-

սավորչական չէր՝ հայ չէր: Մինչև այժմ էլ հայ-կաթոլիկը, հայ-հունադավանը, հայ-բողոքականը, հայ-մահմեդականը՝ հայեր չեն համարվում...

Եվ ահա այն օրից, երբ հայը ընդունեց քրիստոնեությունը, նա շրջապատված լինելով թշնամիներով, իր կրոնի պատճառով սահմանափակվելով, նեղ շրջանակի մեջ մտնելով, իրան առանձնացած զգալով Ասիայի մեջ,— դարձավ հատկան, դարձավ չափից դուրս անհատական... և զգաց իրան օտար ոչ թե միայն Ասիայում, բայց և իր հայրենիքում...

Այն բուսեցից սկսվեց հայի գաղթականությունը: Նա գաղթում էր, և ուր որ գնում էր, իր հետն էր տանում և իր բարոյական ցանձր, իր սրտումն էր պահում իր հայրենիքը... Այնուհետև Հայաստանը նրա համար երկրորդական հայրենիք էր դարձել, իսկ գլխավոր հայրենիքը նրա համար եկեղեցին էր:

Հազիվ թե կարելի լինի ասել, թե մեր պատմությունը հաստատում է Արծրունու այս տեսության բոլոր կետերը: Գաղթականության պատճառները ավելի բարդ են, բայց չէ կարելի ուրանալ, որ գաղթող հայի համար հայրենիքի պահանջը, սերը այնքան մեծ չէր, որ կարողանար պահել նրան երկրում: Որ Հայաստանի թուլության պատճառներից մեկը և գուցե գլխավորը քրիստոնեությունն էր, այդ ապացուցանում է հենց այն հանգամանքը, որ քրիստոնյա Հայաստանը երբեք չկարողացավ քաղաքական մի այնպիսի միություն կազմել, ինչպես էր հեթանոս Հայաստանը: Մենք չափազանց ծանր զոհեր տվինք եկեղեցուն, մենք, ճիշտ որ, կղզիացանք, թշնամական դիրք բռնեցինք դեպի մեզ շրջապատող բոլոր ազգերը՝ մեր եկեղեցական ինքնուրույնությունը պահպանելու համար: Արծրունին իր այդ հողվածի մեջ չէր շոշափում այն բոլոր պատճառները, որոնք քաղաքական թուլություն և գաղթականական անվերջ հոսանքներ առաջացրին մեղանում, բայց նա շատ ճիշտ էր ըմբռնել գաղթականության՝ եթե կարելի է ասել, հոգեբանությունը: Ճիշտ է, որ հայը օտարության մեջ որք ու անհայրենիք չէր զգում, եթե ունենում էր իր եկեղեցին, ճիշտ է, որ եկեղեցին գաղթականի համար փոխարինում էր հայրենիքը:

Բայց հարց է ծագում. մի՞թե Արծրունին դրանով ասում էր, թե լավ կլիներ, եթե Հայաստանը հեթանոս մնար, եթե քրիստոնեությունը չընդուներ: Այս հարցին նա պատասխանում է իր հաջորդ հողվածում («Ի՞նչ է հետևանքը»): Արծրունին այդպես չէր ասում, չէր կարող ասել: Այլ բան է պատմության փրկստփայությունը պարզելը. հետազոտել պատճառները, դուրս բերել բնական, արդարացի եզրակացություններ չէ նշանակում քմահաճ վճիռներ կարգալ, իր սրտի ուզածը քարոզել: Եթե քրիստոնեությունը զրկեց Հայաստանը քաղաքական ուժից, դա չէ նշանակում, թե քրիստոնեությունը իբրև ուսում, իբրև վարդապետություն անհամեմատ բարձր չէ հեթանոսությունից: Արծրունին այդպես էլ ասում է. «Մեզ համար ամենից բարձր, ամենից սուրբ են քրիստոնեական վարդապետության հիմնական գաղափարների հավիտենական սկզբունքները, քրիստոնեությանը հատուկ հավասարության, եղբայրության և ազատության ոգին, քրիստոնեության հասարակական, քաղաքակրթական նշանակությունը: Բայց նույնիսկ այն պատճառով, որ քրիստոնեությունը անշափ առաջադեմ կրոն է, նրա սկզբունքները անշափ բարձր, վերացական, իդեալական են,— այդ սկզբունքները անմատչելի պետք է լինեին Հայաստանը շրջապատող կոսպալատ, դեռ իրանց զարգացման մանկության մեջ գտնված ազգերին, երբ այդ բարձր փրկստփայական վարդապետությունը ընդունվեցավ հայերից»:

Ինչո՞ւ համար էր Արծրունին այս պատմական երևույթը բացատրում: Նա

պատմագրեր չէր, անքայլով ապրող չէր, այլ ժամանակի, ներկայի, իրականության մարդ: Ինչո՞ւ էր շարժում հնության հարցերը: Լոկ այն պատճառով, որ ընդգծե հայի բնավորության մի հատկանիշը, այն է՝ եկեղեցին փոխարինել հայրենիքը, և հայրենիքի հասկացողությունը թուլացավ, համարյա կորավ: Այս պատճառով հենց որ հայը հեռանում է իր եկեղեցուց, իսկույն դադարում է հայ լինելուց:

Ահա ինչն է սխալը: Այդ սխալի մասին շատ էին խոսել մեր նախորդ առաջավոր հրատարակատուները — Ստեփան Ռսկան և Մտեփանոս Նազարյանց: Արժույթներն էլ նույն կորակացությունն էր հասնում:

«Մեր ազգի մտավոր զարգացման և բարոյական վերանորոգման գլխավոր գործիչը և շարժառիթը պետք է լինի մայրենի լեզուն, — ասում է նա: — Քույրուսումը և կրթությունը իր ամենաբազմակողմանի երևույթներով հիմնվի հայրենի հողի վրա, Հայաստանում, մայրենի լեզվի հաստատ սկզբունքների վրա, — և հայաստանցի հայը չի կլանվի ոչ մահմեդականությունից, ոչ էլ մի որևէ այլ տարրից»:

Այս դավանանքը նոր չէր մեղանում: Բայց ահագին աղմուկ էր հանում ամեն անգամ, երբ հրատարակ էր հանվում մեր մամուլի մեջ: Սակայն ոչ որ այնքան կատաղի, երկարատև կռիվ չէր մղել այդ սկզբունքի համար, ինչպես Արժույթներն: Մենք հետո կտեսնենք այդ կռիվը:

Պատերազմական դաշտում և նրա սահմանակից տեղերում կատարվող եղելությունները, որոնց մի արտահայտությունը Ալաշկերտի մեծ գաղթականությունն էր, իրանց ազդեցությունն ունեցան և Կ. Պոլսի հայության մեջ: Դրանք իրողություններ էին, որոնք շէին կարող խրատական շինել: Սկսում էին հետզհետե հասկանալ իրերի իսկական դրությունը, այն դառն ճշմարտությունը՝ որ սլավոնական շարժումը, պատերազմը, սոսկալի արշավանահյուսությունները ինտրիգների, քմահաճության, փառասիրության գործեր չեն, այլ արևելյան հարցի դարավոր հուզմունքների մի կրկնությունը:

Ամառը, մինչդեռ Հայաստանում քրդերը տանջում էին հայերին, իսկ թուրք զորքերը նեղն էին գցել ուսուներին և պատերազմի կլքը շատ անորոշ, կասկածելի էր երևում, ներսես պատրիարքը հրավիրվեց Ելզըզ-բյուշի պալատը: Սուլթանը անձամբ խոսակցություն ունեցավ պատրիարքի հետ և «Times» լրագրի թղթակիցը այսպես էր արձանագրում այդ խոսակցությունը:

Սուլթանը նստեցրեց ներսեսին և ասաց նրան.

— Ինչպե՞ս է ձեր առողջությունը, ևս վազուց է որ ցանկանում էի ձեզ տեսնել և սպասում էի հարմար առիթի: Ես առանձին համակրություն ունեմ դեպի ձեր անձնավորությունը: Համարեցեք, որ դուք այստեղ ձեր տանն էր գտնվում, և եկեք ինձ մտա, երբ կամենում եք:

— Թագավո՞ր, մենք չենք մտածում մեր մասին, մեր ազգի բոլոր մտածումներն ընդունում են դեպի ձեր մեծությունը և օսմանյան զորքը, և ձեզ համար մենք միշտ աղոթում ենք:

— Ես անկեղծ կերպով ցավում եմ, — ասաց սուլթանը Համիդը, — այժմյան տխուր ժամանակների մասին: Ես որ կամավոր կերպով մի միջատ էլ չեմ սպանի, այժմ պետք է նայեմ ինչպես թափվում է անմեղների արյունը: Բայի աստծուն հայտնի է, որ ես պատասխանատու չեմ այս պատերազմի համար:

— Դուք ճշմարիտ ամենամեծ թագավոր եք, դուք գերազանցեցիք ձեր նախորդներին, որոնք օսմանյան դահի վրա նստած էին ամենածաղկած ժամանակին, որովհետև օսմանյան դրոշակին վառը շնորհիցից այս անսակ դրժվար և տառապանքներով լի ժամանակներում:

— Իմ դահը նստելու ժամից ես մի բույն հանգստություն ունեցած չեմ: — Այ՛ն, գրա մեջ էլ երևում է ձեր մեծության հզորությունը: Ամբողջ ազգը դիշխել և ցեղենի աղոթում է, որ ձեր մեծությունը աչողվեր կատարել ձեր խոստացած վերանորոգությունները, որոնք բովանդակում են ձեր կայսերական փառավոր հրովարտական մեջ՝ երկրագործության, վաճառականության, արդյունագործության և ժողովրդական լուսավորության զարգացումը:

— Ես շատ գոհ եմ իմ հայոց ազգից, — պատասխանեց սուլթանը, — և իմ կողմից շատ շնորհակալ եմ նրանից: Ես ցանկանում եմ, որ դուք հայտնեք իմ կողմից հայոց ազգին գոհունակությունս և հավատացնեք իմ՝ դեպի նրան ունեցած համակրության մասին:

— Ես կարող եմ հավատացնել ձեր մեծությունը, որ ձեր փառավոր սրճմի հայրական կառավարությունը հարուցանում է սեր դեպի ձեր տոհմը ոչ միայն թուրքիայի հայերի մեջ, բայց և ուրիշ երկրների հայերի սրտում:

— Շնորհակալ եմ և կրկնում եմ, որ ես էլ բաժանում եմ այդ զգացմունքները: Ենդրում եմ ձեզ հայտնել այդ իմ զգացմունքը ժողովրդին: Ես նույնպես շատ գոհ եմ այն հայերից, որոնք կառավարչական ծառայության մեջ են. նրանք միշտ հավատարիմ կերպով են ծառայել: Ես գիտեմ, որ հայոց ազգը շատ վնասներ կրեց այս պատերազմից, բայց թո՛ղ նա իմանա, որ կտեսնե սուլթանի երջանիկ օրեր և կքաղե իր հավատարմության պտուղները, որպես վարձատրություն իր կրած զրկանքների համար: Ես սիրում եմ իմ բոլոր հպատակներին, բայց մանավանդ իմ հայոց ազգը, որ այժմյան ծանր հանգամանքներում ցույց տվեց իր անխախտելի հավատարմությունը: Ես տարբերություն չեմ դնում մահմեդականների և քրիստոնյաների մեջ. նրանք բոլորն էլ օսմաններ են: Հավատը աստծուն է պատկանում:

Ներսեսը աղոթք կարդաց, սուլթանը իր ձեռքով տվեց նրան Օսմանիե շրանշանի առաջին աստիճանը իրրև հավաստիք իր սիրո դեպի հայերը: Ներսեսը նույնիսկ սկսեց աղաչել սուլթանին, որ նա գթա այն բուլղարներին, որոնք անհավատարմություն ցույց տվին: Եվ դուրս գալով պալատից, հայոց պատրիարքը եկեղեցում մաղթանք կատարեց բոլոր հոգևորականների և ժողովրդի մեծ բազմության ներկայությամբ:

Այդ տեսակցությունը տեղի ունեցավ օգոստոսի 22-ին: Բայց նույն տարվա վերջում Կ. Պոլսի հայերը արդեն անհավատարիմ և դավաճան էին հրատարակվում թուրք լրագրիների կողմից: Ի՞նչ էր պատահել:

Պատերազմը սպառել էր թուրքիայի ուժերը: Կարսի առումից հետո Ասիական թուրքիայում մի շնչին բանակ էր մնացել և Մուխտար-փաշան ստիպողաբար նոր զորքեր էր պահանջում Պոլսից: Կործանման ծայրին հասած թուրք պետությունը լարեց իր վերջին ուժերը: Նոյեմբերի կեսին հրատարակվեց սուլթանի իրազեկ, որով զենքի էին կանչվում բոլոր քրիստոնյաները 17—45 տարեկան հասակում: Այս կարգադրությունը մեծ հուզմունք պատճառեց քրիստոնյաներին: Հայոց և հունաց պատրիարքարանները հրավեր ստացան աջակցելու կառավարության այս գործի մեջ: Հունաց պատրիարքը կոնդակ հրատարակեց, որ, սակայն, ժողովրդի կատաղությունը գրգռեց և մեծ ցույցերի պատճառ դարձավ:

Ներսես պատրիարքը անձամբ կամենում էր, որ կատարվի կառավարության կամքը, բայց այնքան խոհեմ գտնվեց, որ ինքնազուխ կարգադրություն չարավ և հարցը ենթարկվեց Ազգային ժողովի քննության: Նոյեմբերի 25-ին նշանակված էր Ազգային ժողովի ղեկավար Նիստը, չնայած այդ հանգամանքին, մոտ 6000 հայեր մտան եկեղեցի, որպեսզի տեսնեն, թե ի՞նչ վճիռ է ստանում

հարցը: Առաջին անգամ հանդես էր գալիս ընդհարում թուրքաց ժառանգության մեջ գտնվող հայ պաշտոնյաների և ժողովրդի մեջ: Առաջինները, իհարկե, ամեն ջանք գործ էին դնում, որ ընդունվի կառավարության առաջարկը. մինչդեռ ժողովրդի ներկայացուցիչները, ունենալով իրանց ետևում հազարավոր ամբոխ, գտնում էին, որ քրիստոնյաները զինվոր տալ չեն կարող, քանի որ հավաքել զինվորական կարգերին անտեղյակ մարզկանց և ուղարկել նրանց պատերազմի դաշտը, նշանակում է կոտորել տալ նրանց:

Հարցը վճիռ չստացավ այդ նիստում: Իսկ պատերազմը ադետ ադետի ետևից էր բերում: Ընկավ Պլեմնան և թուրքաց ամենարժեք բանակը գերի ուղարկվեց Ռուսաստան: Մահմեդական ամբոխը Կ. Պոլսում հուսահատության մեջ էր, անկարգություններ էր անում. քրիստոնյաները՝ հույները և հայերը, ընդհակառակն, ուրախ էին և գեղեցիկ հույսեր էին փայփայում: Հաղթական Ռուսաստանը այժմ ամենքի համար սիրելի էր: Ժողովրդի այդ ընդհանուր տրամադրությունը արձագանք գտավ Ազգային ժողովի այն նիստում, որ գումարվեց դեկտեմբերի 14-ին: Ազգային էր այդ ժողովը. հայ էֆենդիները սաստիկ ընդհարում ունեցան երեսփոխանների հետ: Գիմադրության ներկայացուցիչներն էին Խորեն նարպեյ և Մատթեոս Իզմիրլյան եպիսկոպոսները: Նարպեյի ճառը այնքան համարձակ էր, որ էֆենդիները պահանջում էին ներսեռից լուսննել նրան: Իզմիրլյանն ասաց, որ զինվորագրությունը ենթադրում է հպատակների հավասարություն, մինչդեռ այս րոպեին թուրքիայում ամենավիրավորական անհավասարություն է տիրում քրիստոնյաների և մահմեդականների մեջ: Եվ երբ էֆենդիները ցույց տվին օսմանյան սահմանադրությունը, Իզմիրլյանը պատասխանեց. «Մահմանադրությունը մինչև այժմ մեռած տառ է. աստված գիտե, մի անգամ կգործադրվի՞ նա, թե չէ: Ո՛չ, ո՛չ, հավասարություն չկա, մեզ տված խոստումներին հակառակ, սահմանադրության հրատարակած օրից մենք այնքան արտոնություն ունենք, որքան առաջ»:

էֆենդիները, տեսնելով ժողովի տրամադրությունը, գոնե աջողեցրին այն, որ կառավարության առաջարկությունը քվեի շղթվեց: Նուրյան էֆենդին առաջարկեց, որ պատրիարքին հանձնվի եկեղեցական համագումար ժողով կազմել՝ Խառն ժողովի հետ այդ հարցը կարգադրելու և Բ. Գրան պատասխան գրելու համար: Հրավիրվեց այդ ժողովը, բայց նա մերժեց կառավարության առաջարկը այն հիման վրա, որ քրիստոնյա մի եկեղեցուն անվայել է միանալ մահմեդականի հետ և կովել քրիստոնյաների դեմ: Այս էր ամենազլխավորը. հայերը իրանց հույսերը դրել էին Ռուսաստանի վրա, նրանք չէին կարող զենք բարձրացնել Ռուսաստանի դեմ և հարվածել իրանց ակնկալությունները:

Ներսեսը այս շարժման մեջ էլ դեռ շարունակում էր թուրքամուլ մնալ: Համագումար ժողովը պատրաստեց պատասխան, հանձնեց նրան, որ Բ. Գուրտանե: Բայց ներսեսը վախկոտություն ցույց տվեց, նույնիսկ հրաժարական ներկայացրեց: Մեծ վեղիբ էղհեմ-փաշան սաստիկ զայրացել էր հայերի վրա: Անգլիական դեսպան կայսրը համոզում էր զինվոր տալ, ասելով, թե թուրքիան վտանգից կազատվի, եթե քրիստոնյաները զենք վերցնեն: Բայց քրիստոնյաների և զլխավորապես հայերի հուզմունքը օրեցօր սաստկանում էր: Չէին ուզում ուսանելի դեմ պատերազմ դուրս գալ և թուրք կառավարությունը, իհարկե, անկարող եղավ իր կարգադրությունը գործադրել:

Թե որքան մեծ էր զայրույթը հայերի ուսասիրության դեմ, ցույց է տալիս «Stamboul» անունով լրագրի (որի հրատարակիչը անգլիացի էր) խիստ արշավանքը հայերի դեմ: Լրագիրը անվանում էր այդ հայերին ստոր, արհամարհելի, դավաճան, ապերախտ: «Վերջապես, — ասում էր նա, — հայերի այս

տրածը ապստամբություն է սուլթանի դեմ և կառավարությունը իրավունք և պարտավորություն ունի խստիվ պատժել այդ ապստամբությունը: Մենք ավելորդ ենք համարում պնդել այս կետի վրա, թե որչափ պարզելի ապերախտություն է հայերի կողմից պաշտպանել շուղել իրանց հայրենիքը, մի երկիր, ուր ապրում են այսչափ երկար ժամանակից ի վեր, մի կառավարություն, որ այնչափ վեհանձն կերպով ընդունած է նրանց իր վարչական գործերի մեջ, որ իրանց ազգից շատերին միջոց է տված մեծ հարստություններ ունենալու»:

Լրագրին պատասխանեցին երկու հայ թերթեր — «Նոր Գար» և «Մանզումեի էֆթեր»։ Առաջինը իր պատասխանի համար էլ խափանվեց կառավարության կողմից. «Մանզումեն» ավելի մեղմ կերպով խոսեց, ակնարկներով պատասխանեց: Իմիջիպլոց, ահա ինչ էր գրում նա. «Մեզ համար այնչափ հարկավոր չէ պաշտոնատարի անունը Կարապետ կամ Մեհմետ կամ Ճօրճի կամ Ավրամ լինելը, այլ մեզ հարկավոր և հետաքրքրական կետը այն է, որ պաշտոնատարները արժանավոր անձեր լինին: Ի՞նչ օգուտ թե մի բեգի, էֆենդիի կամ փաշայի անուն հայերեն լինի, երբ ինք հայրենիքի կործանումին աշխատի»:

Ահա թե որքան էր փոխվել տրամադրությունը Կ. Պոլսում: «Մասիս» լրագրի «կան եղեր»-ից մինչև այսպիսի խոսքեր արտասանելը ահագին առաջադիմություն էր: Եվ այդ փոփոխությունը ծնեցնում էր ուսանելի հաղթական պատերազմը: Բալկանյան թերակղզում թուրք բանակները հարվում էին ուսեերի առաջ. արդեն Բ. Գուրը իրան հաղթված համարելով, պետությունների միջևորդության էր դիմում, խոսում էին հաշտության պայմանների մասին: Ետև կարևոր, շատ փափուկ ժամանակամիջոց էր. այժմ ամեն ինչ կախված էր հաղթողի թեղադրությունից: Անգլիական դիպլոմատիան, իմանալով, որ սուսները աչք ունեն Հայաստանի մի մասի վրա, աշխատում էր հայերին գործիք դարձնել՝ այդ մտադրության առաջն առնելու համար: Բայց հայերը զգույշ, շրջանկատ էին. նրանք հրաժարվեցին ուսանելի առաջ որևէ արգելք, բարդություն հարուցանելու մտքից: Նրանք ուզում էին, որ հաղթողը միանգամայն սզատ լինի իր գործողությունների մեջ և իրանց հույսը դրել էին նրա վեհանձնության վրա:

Այս ժողովրդական ուժեղ տրամադրությունն էր ստեղծվել Կ. Պոլսի հայերի մեջ 1877-ի վերջերում: Ահա այդ իսկ տրամադրության մեջ ներսես պատրիարքը հղացավ նոր միտք, նոր ուղղության հետևել սկսեց: Նա հասկացավ բուպեի ահագին նշանակությունը, հասկացավ, որ «այժմ կամ երբե՛ք» և սկսեց գործունեության մի նոր շրջան, որ մոռացնել տվեց անցյալը և դարձրեց այդ պատրիարքին քաջ ու աներկյուղ, իր հոտին անձնվեր մի հովիվ, որ պիտի հռչակվեր իբրև հայության ամենանշանավոր, նվիրական գործիչներից մեկը, մեկը այն մարդկանցից, որոնք հազվագյուտ են մեր պատմության մեջ:

Մենք պատմեցինք այս բոլորը, որպեսզի ընթերցողը ավելի լավ կարողանա որոշել «Մշակի» դերը այն անմոռանալի տարիներում: Մենք չենք ասի թե Գրիգոր Արծրունին էր առաջացրել այն շարժումը, որ տիրում էր Կ. Պոլսի մեջ 1877-ի վերջերին: Այդ շարժումը ժամանակի, հանգամանքների արտահայտությունն էր, իրերի ճշմարիտ և արդարացի ըմբռնումը: Բայց նկատի առնենք, որ Գրիգոր Արծրունին դեռ 1876-ից էր քարոզում այն ամենը, ինչ այժմ մի ընդհանուր հասկացողություն էր դարձել. քարոզում էր անվախ, մենակ, շնայելով այն կատաղի թշնամության, որ կնքում էր նրան դավաճան, ազգուրաց և այլ այսպիսի անուններով: Այժմ, երբ տարիուկեսի անընդհատ պրո-

նույն այդ հարցին Արծրունին դիմեց և սեպտեմբեր ամսին, երբ Բագուից գրեցին նրան, թե այնտեղ շատ ցանկալի են համարում, որ «Մշակը» կփոխե ամեն օր, գրե՛ն շաբաթը չորս անգամ հրատարակվեր»:

«Մենք էլ այդ բանը ցանկանում ենք,— գրում էր Արծրունին,— բայց ցանկությունը իրագործելու համար հարկավոր են միջոցներ: Ծշմարիտ է, որ սուրբախյան է թե «Մշակը» ամեն տարի 600-ի շափ կամավոր բաժանորդներ և բազմաթիվ համակրողներ ու կարդացողներ ունի,— բայց մինչև որ բաժանորդների թիվը միշտ 600-ից չի անցնի և մեր լրագրի յուրաքանչյուր համարը տասնհինգ մարդ կկարդան, փոխանակ գրվելու. մենք երբեք չենք կարողանա «Մշակ» լրագիրը ամենօրյա թերթ դարձնել»:

Այդ խոսքերին Արծրունին ավելացնում էր մի շատ ուշագրավ հայտարարություն.

«Ուրիշ բան էր,— ասում էր,— եթե մենք ինքներս կարողություն ունենայինք, այն ժամանակ մենք առաջին տարիները ու ի ս կ կանեինք, մինչև որ հասարակությունը ընթերցանության ճաշակը կառներ»:

Շայ խմբագիրը իր անձնական միջոցներով պիտի ապահովեր իր լրագիրը կամ ամսագիրը: Այդպես էր անողոք իրականությունը մեզանում: Եվ Արծրունին չէր էլ ուզում չհպատակվել այդ իրականությանը. նա էլ պատրաստ էր իր դասակիցների խաչը կրել: Բայց մենք արդեն տեսանք, որ նա «Մշակի» վնասները ծածկելու համար միայն մի միջոց ուներ՝ այն հարչուր ուրլի անսականք, որ նա ստանում էր իր հորից: Այդպիսի մի «կարողություն» վրա հենվելով, չէր կարելի, իհարկե, ամենօրյա թերթի ծանրության տակ մտնել:

Պահանջը պետք էր ակամա անտես անել: Նույն պահանջը ստիպեց Արծրունուն շեղվել իր ընդունած սկզբունքից: Ինչպես տեսանք, նա արհեստական բաժանորդագրություն չէր ընդունում, չէր ուզում լրագիրը գործակալների ձեռքով ընթերցողների վրին փաթաթել: Կամավոր բաժանորդ՝ անհա ինչ էր քրագրի ուժը: Բայց այդ շատ լավ հասկացված ճշմարտությունը 1877-ին բավական խախտված է երևում Արծրունուն: Կամավոր բաժանորդագրությունը հասել էր մի կեսի և անշարժացել: Այդ կախարդված թիվը ավելացնելու համար Արծրունին ուրիշ մի միջոց չի գտնում, բացի իր մերժած արհեստական բաժանորդագրությունից: Մի արհեստականություն, սակայն, որ դեռ մեղանում չէր գործածված: Արծրունին խոսում էր, որ պրեմիաներ տա իր բաժանորդներին՝ պրեմիաներ ոչ թե գրքերով կամ պատկերներով, ինչպես անում էին ուսուցիչ կամ եվրոպական մի քանի հրատարակություններ, այլ ուղղակի փողով:

Սակայն բարեկամները խորհուրդ չտվին նրան դիմել այդ միջոցին, շատ իրավացի նկատողություն անելով, որ քրեականորդների մեծ մասը չեն գրել «Մշակին» միմիայն ընթերցասիրության զգացմունքից դրդված, այլ աչքի տեսնելով ֆակտական շահ ունենալով: Հայտնելով այդ մասին, Արծրունին հրաժարվում էր պրեմիաներ տալու մտքից: Բայց հրաժարվում էր, ինչպես շուտով կտեսնենք, առժամանակ միայն:

Նույնիման ամսին «Մշակը» ներքին լուրերի մեջ հայտնում էր, որ 1878-ի բաժանորդագրությունը սկսվել է: Պայմանները միևնույնն էին մնում: Այդ նախկինում էր, որ «Մշակը» պատրաստվում էր մտնել առաջիկա թվականի մի դարձյալ իրեն շաբաթը երկու անգամ հրատարակվող լրագիր:

Բայց այդ ժամանակ պատահեց մի դեպք, որ ամեն ինչ փոխեց: Նույնիման 15-ին վախճանվեց զենեքալ Երեմիա Արծրունին, թողնելով ամենափոքր մեծ հարստություն և երեք ժառանգներ: Դրանցից մեկը Գրիգոր Արծրունին էր: Այսուհետև, ուրեմն, նա մեծ կարողության տեր պիտի լիներ, հետևաբար

և «Մշակի» ամենօրյա հրատարակությունը ապահովված՝ իր խմբագրի անձնական զոհոգություններով:

Մի բույս զեռ թողնենք այդ հարցը և դիմենք Երեմիա Արծրունուն: Նախնիաց հատորներում մենք բավականաչափ բնորոշել ենք այդ ինքնատիպ, զարմանալի ազնիվ, ժողովրդասեր, արդարադատ, բայց կամակոր, խոժոռ աղայական գեմբը: «Մշակը» իր ներքին տեսության մեջ մի հոգված նվիրեց հանգուցյալին:

«Այս օրերս,— ասում էր նա,— վախճանվեցավ թիֆլիսում մի անձն, գեներալ Երեմիա Գևորգյան Արծրունի, որի կյանքը և հասարակական գործունեությունը կապված էր կովկասյան պատմության հետ»:

Պատմելով զենեքալի համառոտ կենսագրությունը, լրագիրն ասում էր. «Իր գործունեությամբ որպես (թիֆլիսի) քաղաքագլուխ նա անուն ստացավ մեր ազգաբնակչության մանավանդ ստորին, արհեստավոր դասի մեջ, որպես աբաբ մարդ և արհեստավորների դասի, մեր համբարների իրավունքների պաշտպան»:

Նրա թաղումը, որ կատարվեց այս նույնիման ամսի 17-ին, ապացուցեց, որ Ս. Գ. Արծրունին ժողովրդականություն ուներ մեր քաղաքացիների և մանավանդ մեր քաղաքի արհեստավոր դասի մեջ:

Ահագին ամբոխը հետևում էր նրա հուղարկավորության հանդեսին մինչև վերալի գերեզմանատունը»:

Մենք կրկին Երեմիա Արծրունին իր որդի Գրիգորին հանձնեց հրատարակել իր մի նամակը, որ գրված էր ռուսերեն լեզվով և, ինչպես երևում է, պիտի ուղարկվեր «Кавказ» լրագրի մեջ: Գրիգորը կատարեց հայրական հանձնարարությունը. ամիսներով նա զբաղված էր հորից մնացած թղթերով և հաշիվներով և վերջապես կարողացավ ծանոթանալ այն բոլոր հանգամանքներին, որոնց մասին խոսում էր Երեմիան իր նամակի մեջ: Այդ նամակը թարգմանվեց հայերեն և Արծրունին իր բացատրությունների հետ միասին տպեց նրան «Մշակում» 1878 թ. վերջերում, իր հոր մահից համարյա մի տարի հետո: Մենք կարենք ենք համարում բերել այստեղ այդ նամակը, քանի որ նրա մեջ Երեմիա Արծրունու հասարակական գործունեության մի հետաքրքրական կողմն է անարանված և, որ ամենագլխավորն է, մենք այդտեղ ավելի լավ ենք տեսնում, թե ինչպես էր հանգուցյալը վերաբերվում իր հայրենի վան քաղաքին, որ ծնված էր: Կարևոր է մեզ համար այդ վերաբերմունքը մանավանդ այն պատճառով, որ, ինչպես արդեն ասել ենք իր տեղում, Գրիգոր Արծրունին ժողովրդի էր իր հորից ու պապից սեր զեպի իր տոհմի հայրենիքը, զեպի թուրքացի Հայաստանը և այդ սերը նրա գործունեության ամենափայլուն կողմերից մեկի ուղեորդն էր:

Ահա ինչ էր գրում Երեմիան.

«Մատ ժամանակ չէ (1877 թվին) թուրքաց Հայաստանի մեջ գտնվող վան քաղաքը թուրքերը կրակ գցեցին և կողոպտեցին քաղաքի հայ բնակիչներին, որպես որ հարուստ հայոց ազգաբնակչությունը մուրացկանության է հասցրած: Արդհետև թե թիֆլիսի և թե Ռուսաստանի այլ քաղաքների մեջ հայերը նվիրություններ են անում հոգուտ տառապալների, ես պարտավորություն եմ համարում այժմ շտապեցնել այն բարի գործի գլուխ բերելը, որ վաղուց է սկսված թիֆլիսում հոգուտ վանի բնակիչների, բայց որ մինչև այժմ անկատար է մնացել: Այդ պատճառով խոնարհաբար խնդրում եմ ձեզ ապել իր լրագրում գործի հետևյալ հանգամանքները»:

Դեռ 1861 թվի սկզբում Վարացի և Նարեկի հայոց վանքերի վանահայրերը եկած էին Քիֆլիս, որպեսզի խնդրեն Քիֆլիսցիներից օգնել դրամով իրենց վանքերին, այդ վանքերի մեջ եղած դպրոցների պահպանությունը և բարեկարգությունը համար: Այդ վարդապետները ս. էջմիածնի հայոց կաթողիկոսից իրավունք էին ստացած հավաքել հօգուտ հիշյալ դպրոցների դրամական նվիրատուներին Քիֆլիսի և Շուշու հայոց եկեղեցիներում: Վարդապետները դիմեցին ինձ խնդրելով, որ իմ ուժերին շարժեմ նրանց ձեռնարկությունը: Այն ժամանակ ես բաց արի իմ ծանոթ ունեւոր անձերի մեջ մի ստորագրություն, հուշարկով, որ այդպիսով կհավաքվի մի ավելի մեծ գումար, քան թե եկեղեցում հավաքված դրամները, այն նպատակով, որ ձեռք բերած գումարով առնվի վերահիշյալ վանքերի համար մի անշարժ կայք, որի եկամուտով և կապահովվեն դպրոցները:

Մի քանի օրվա ընթացքում ստորագրությունը հասավ հետևյալ դրույթանքներին: Արծրունի 500 ռ., Նիկողայոս Միրմանյանց 500 ռ., Ավետիս Գալստայան Մեր-Մկրտչյանց 500 ռ., Վարզան Արշակունի 500 ռ., Սողոմոն Ղարզանյանց 500 ռ., իշխան Ղարաման Արղունյանց 500 ռ., Մինաս Աղամբյանյանց 500 ռ., Հովսեփի Հովհաննիսյան էֆենդյանց 500 ռ., Ռոմանոս Նադիրյանց 500 ռ., Բարսեղ Արտազյանց 500 ռ., ընդամենը 5000 ռ.: Ստորագրությունը կարող էր դեռ շատ երկար ժամանակ շարունակվել և կարող էր հասնել ավելի էլ նշանավոր գումարների, եթե մի օտարոտի դեպք չկանգնեցներ գործի ընթացքը:

Վարագի վանքի վարդապետին հայոց հոգևոր իշխանությունը թույլ էր տվել կարգալ Քիֆլիսի բոլոր եկեղեցիներում քարոզներ դպրոցի համար գումարներ հավաքելու համար: Նրա ճարտար քարոզները գրավում էին եկեղեցիներում բազմաթիվ ունեկներին: Բայց հանկարծ քարոզներից մեկի ժամանակ քարոզի հետ պատահեց մի դժբախտ դեպք, երևացին հանկարծ մի տեսակ հոգեկան հիվանդության նշույններ, և նա սկսեց անկապ և անմիտ խոսքեր ասել քարոզի մեջ: Մի վայրկյանի մեջ ամբողջ եկեղեցին դատարկվեցավ: Այդ դժբախտ դեպքը սառեցրեց ժողովուրդը դեպի վարդապետի քարոզները և խախտեց նվիրատուների շերտառանդությունը դեպի ստորագրության շարունակելը: Քարոզիչը ստիպվեցավ անհապաղ թողնել մեր երկիրը և վերադառնալ իր հայրենիքը: Տարած նա արդյոք իր հետ եկեղեցիներում հավաքած գումարները, թե՛ ոչ, գո՞րծ դրեց նա արդյոք այդ գումարները միայն իր վանքին, թե՛ երկու վանքերին, ինձ հայտնի չէ: Բայց մյուս վարդապետը Նարեկի վանքի վանահայրը, մի քանի օրից հետո ներկայացավ ինձ, խնդրելով ինձ օգնել նրան փողով, որ կարողանա վերադառնալ իր երկիրը, որով հետև բոլորովին զուրկ էր մնացել միջոցներից: Ես օգնեցի նրան իմ սեփական միջոցներից, որպեսզի նա կարողանա վերադառնալ Վան:

Նրա զնալույց առաջ ես խորհուրդ տվեցի նրան, որ ներկայացնի Վանի ազգային կառավարությունը գործի ամբողջ ընթացքը և զորի նրան շտապել ուղարկել Քիֆլիս մի հավատարմատար, որ կարողանա հավաքել նվիրատու պարտեներին իրանց ստորագրած գումարը: Բայց Վանում չկարողացան կամ շուրջ ցան գործ տեսնել:

Այնուամենայնիվ շկամենալով որ իմ սկսած գործը դադարի, որ ստորագրված գումարը կորչի Վանի ուսումնարանների համար, որ այնտեղի դպրոցները օգուտ քաղեն գոնե այն գումարից, որի վրա կանգ առավ ստորագրությունը, ես վճռեցի արթնացնել Վանի ազգային կառավարությունը իր բնած դրույթունից և հուլիսի 17-ին 1864 թ. ուղարկեցի նրան մի պաշտոնական նա-

մակ իմ անունից, կցելով նրան ստորագրողների անունների և նրանց ստորագրած գումարի պատճենը, առաջարկելով, որ Վանից ուղարկվի Քիֆլիս մի հավատարմատար ստորագրողներից անմիջապես փողերը ստանալու և այդ գումարով Վանի դպրոցների համար մի անշարժ կայք գնելու համար: Բայց Վանի ազգային կառավարության անդամները պատասխանեցին ինձ նույն թվի 23-ը հակահմարմանը գրած հավատարմագրով, որ հասավ իմ ձեռքը 1865 թվի մարտի 2-ին, ստորագրված տասնվեց հոգևորական և աշխարհական անձիկներից, որով նրանք ինձ պատիվ էին անում նշանակել իրանց հավատարմատար փողերը հավաքելու և գործը վերջացնելու համար: Պարոնները պետք է հասկանային, որ ես միայն սկզբնապատճառ էի ստորագրության, ստորագրողներից միև և Վանի հայերի բարեկամ, և նրանց վայել չէր դարձնել ինձ իրանց գործակատար, փողերի հավաքող և նրանց դպրոցների համար անշարժ կայք գնող: Այդ պատճառով ես ստիպված էի պատասխանել նրանց նույն թվի մարտի 19-ին, բացատրելով նրանց՝ որքան անվայել էր նրանց առաջարկությունը և կրկնելով նրանց իմ կարծիքը, որ նրանք շտապեն ուղարկել իրենց հավատարմատարին Քիֆլիս, ես հայտնում էի նրանց իմ միտքը, թե նրանց արածը անհոգություն է և ժամանակի կորուստ:

Չստանալով երկու տարի շարունակ ոչ մի պատասխան իմ նամակին, ես հարկավոր համարեցի դիմել վեհափառ կաթողիկոս Գևորգին, նրա Քիֆլիս անցնելու ժամանակ 1867 թվին, բացատրելով նորին վեհափառությանը ամբողջ գործի էությունը: Նորին սրբությունը պատվեց ինձ նույն 1867 թվի հուլիսի 1-ին մի կոնդակով, որով հայտնում էր ինձ, որ թեև Վանի թեմական առաջնորդ արքեպիսկոպոս Իգնատիոս դիտավորություն ուներ ինքն անձամբ գալ Քիֆլիս, բայց իր դիտավորության մեջ արգելքների պատահելով, հանձնեց Ղևոնդ վարդապետին գալ այստեղ և վերջացնել գործը:

Ղևոնդ վարդապետը, ճշմարիտ, եկավ Քիֆլիս 1867 թվի հուլիս ամսին, ս. էջմիածնից գալով, շտապելով ուղևորվել դեպի Կ. Պոլիս, և խոստացավ շուտով վերադառնալ Քիֆլիս, իրան հանձնած գործը վերջացնելու համար: Բայց էլ չվերադարձավ, և գործը անկատար մնաց:

Տպագրելով այդ նամակը մի այնպիսի ժամանակ, երբ թուրքաց շայատանի կրթական գործը հասարակության առանձին հոգացողության առարկա էր դարձել, Գրիգոր Արծրունին ասում էր.

«Հորս այդ հողվածին ես իմ կողմից ոչինչ չունեմ ավելացնելու, միայն ընթերցողի ուշադրությունը կդարձնեմ այն հանգամանքի վրա, որ նվիրատու ստորագրողներից ոմանք վախճանված են: Ցանկալի է, որ գումարը չկորչի Վանի դպրոցների համար, ցանկալի է, որ կենդանի մնացած ստորագրողները տան փողը իրենց ստորագրության համեմատ, իսկ մեռածների տեղ տան նրանց ժառանգները»:

Իսկ Երեմա Արծրունուց մնացած գրագրությունների առիթով նա ասում էր, թե այդտեղ շատ նյութեր կան պատմաբանի համար, նյութեր, որոնք հարկավոր են մանավանդ մի քանի հայտնի անձինքների անաշտ կենսագրության համար: Հարցը վերաբերում էր գլխավորապես հոգևորականներին: Երեմիայի թղթերը լուսաբանում էին, թե ինչ սև ինտրիգներ, ինչ անտանելի հարաբերություններ կան նրանց մեջ*:

* Ինքը, Արծրունին, կատարեց իր, որպես ժառանգի պարտավորությունը, նա միանվագ 300 ռ. տվեց Մ. Փորթուգալյանի ձեռքով Վանում բացված դպրոցին:

** Տարբախտաբար այդ թղթերից այժմ ոչինչ չէ մնացել:

Այսքանը Երեմիա Արծրունու հասարակական գործունեության մասին Այժմ տեսնենք, թե ինչ էր նա թողնում իր ժառանգներին, որպեսզի իմանանք, թե ո՞րքան հարուստ էր Գրիգոր Արծրունին:

1868 թվին կազմած իր կտակի մեջ գեներալ Արծրունին մանրամասն ցուցակագրել է, թե ինչ հարստություններ է թողնում իր ժառանգներին: Գրանք համարյա բացառապես անշարժ կալվածներից էին կազմված. թեև Արծրունին հիշատակում էր, թե ինչ ստանալիքներ ունի զանազան տեղերից, բայց գրանք անհուսալի ստանալիքներ էին, որոնց մասին մենք այդքան խոսել ենք*: Անշարժ կալվածները գտնվում էին Թիֆլիսի երեք մասերում. 1) Գևորգ աղայի քարավանսարան Ախուրի փողոցում, 2) առևտրական գալերեան Գվորցուլայա փողոցում, 3) հողաբաժիններ Վերայի քաղաքամասում: Բացի դրանից, Արծրունին ուներ և ուրիշ կալվածական վեճեր, որոնց մասին ավելորդ է խոսել, քանի որ նրանք ժառանգների կողմից մոռացության տրվեցին:

Կտակելով այդ բոլոր կալվածները իր Գրիգոր, Անդրեաս և Եղիսարիկ զավակներին, Երեմիա Արծրունին նախ և առաջ ավանդում էր նրանց իր հայր Գևորգի կարգադրությունը, թե ինչպես պիտի պահպանվեն այդ կալվածները**:

Ապա ասում էր, որ թեև կալվածների վրա մեծ պարտքեր կան, բայց եթե ժառանգները բաժան-բաժան շանեն կալվածները, պարտքերը կարելի է տալ տարիների ընթացքում:

Բայց տոհմային ավանդությունները չէին պահպանվում: Ինքը, Երեմիան, առաջինն էր խախտել նրանց: Գևորգ աղայի կամքն էր, որ կալվածները մնան Արծրունիների ընդհանուր սեփականություն, որ ժառանգները հայ-լուսավորչական դավանության պատկանեն, այնպես որ օտարադավաններ չտրեին այդ կալվածներին: Սակայն Երեմիան իր աղջիկ Եղիսարիկին ամուսնացրեց գերմանացի բարոն ֆոն-Բրյուզգենի հետ: Նրա մահից հետո ժառանգները հոծաբարկամ համաձայնությունով բաժանեցին կալվածները, Եղիսարիկ ֆոն-Բրյուզգենն ստացավ Գևորգ աղայի քարավանսարան, իսկ Գրիգոր և Անդրեաս կարյուններին մնացին մյուս կալվածները և հայրական բոլոր պարտքերը***:

Երկու եղբայրներին անցած հարստության մոտավոր արժեքը պարզելու համար կասենք, որ գալերեան 1881 թվականին գնահատված էր 700000 ռուբլի: Իսկ Վերայի հողերի տարածությունն էր 15000 քառակուսի սաժեն, գնահատված 1873-ին 35000 ռուբլի: Այս հողերը կոչվում էին Սլոբոդկա: Մի մասը, բաժանված մանր կտորների, վարձով տրված էր պաշտոնաթող ռուս զինվորներին և քաղաքացիներին՝ տներ շինելու համար:

Առաջին հայացքից թվում էր, թե շատ խոշոր հարստություն էին ժառանգել Գրիգոր և Անդրեաս Արծրունիները: Եվ այդ տպավորությունը ճիշտ էր: Բայց կալվածների այն դրությունը, որ ժառանգում էին Երեմիայի որդիները, հարստություն կարող էր տալ միայն այն դեպքում, եթե կառավարելու և շահագործելու մեծ եռանդ և ընդունակություն լիներ: Գեներալ Արծրունու թղթերը ցույց են տալիս, որ հոյակապ կալվածների հետ ժառանգներին անցնում էին և վերին աստիճանի բարձր, խճճված վարչական հոգսեր: Հարստության վրձ կախված էր և մեծ վտանգ: Երեմիայի համառ ու անհրապույր բնավորության

* S. I հատոր, եր. 4, 70—76:

** S. I հատոր, եր. 57:

*** Ներկայումս էլ Գևորգ աղայի քարավանսարան ֆոն-Բրյուզգենների սեփականությունն է կազմում, ցույց տալով, թե որքան խախտում ու անհատատ են մարդկանց կարգադրություններն ու կամքը:

պատճառով կալվածները քիչ արդյունք էին բերում. երբ նա մեռավ, գալերեան մասամբ դատարկ էր, իսկ Վերայի լայնատարած հողերը տարեկան 100 ռուբլի արդյունք էին բերում: Միայն այդ անխնամ ընկած հողերը ո՞րքան ուշադրություն էին պահանջում իրանց տերերից: Այդ նվազ արդյունավետությունը կարող էր ձեռքից հանել կալվածները, որոնց վրա ժանրացած պարտքերը անհղին տոկոսներ էին տանում: Եվ աղետի առաջն անհելու համար պետք էր որ կալվածատերը ամբողջովին նվիրվեր կառավարչական հոգսերին, ունենար տնտեսագիտական և ֆինանսական հմտություն:

Գեներալ Արծրունու ժառանգներից ո՞չ մեկն էլ չուներ այդ ընդունակությունը: Անդրեասը չկամեցավ հրաժարվել իր սիրած գիտությունից, շահագրավ Գերմանիայից, այլ լիազորություններ տվեց Գրիգորին: Իսկ սա կալվածներ կառավարելու համար չէր ծնված, գործնական կյանքի մեջ վերին աստիճանի միաժիպ էր, հավատացող և այնպես չէր գաստիարակված, որ հաշիվների ու շահների հետևից ընկներ, ամբողջ ուշադրությունը դրամական հարցերին նվիրեր:

Տեղափոխվելով իր հոր փառավոր բնակարանը գեղեցիկ այգու մեջ, ոտանձնելով նրա գերը, Գրիգոր Արծրունին միանգամայն անփորձ ու անպարաստ էր: Հոր գործերի մեջ նա երբեք չէր խառնվել, ապրել էր ինքնազուխ և այժմ նոր-նոր նիտի ուսումնասիրել հարուստ կալվածատիրոջ դրությունը, իմանար, թե իսկապես ի՞նչ է թողել հայրը:

Նրա առաջին գործերից մեկը եղավ նոր պարտքեր անելը: Դա անհրաժեշտ էր՝ կալվածների արդյունավետությունը մեծացնելու համար: Երեմիան Պրիկազում գրավ էր դրել միայն գալերեան. նրա մահից հազիվ մի տարի անցած՝ Գրիգորը նույն տեղում գրավ է դնում և այգին ու նրա մեջ եղած տունը և ստանում է 30 հազար, որից 15 հազարը ծախսում է գալերեայի բախում թատրոն շինելու համար: Բացի արդյունքի ակնկալությունից՝ նա ի նկատի ուներ բարոյական մի մեծ օգուտ. կարծում էր, թե պատրաստ բեժը մեծ զարկ կտա հաշոց թատրոնական գործին:

Ավելորդ համարելով մանրամասնություններին հետևելը, մենք այստեղ կներկայացնենք այն վերջնական պատկերը, որ ստացան կալվածները Գրիգորի կառավարության միջոցին: 1881-ին նա, հանելով գրավը Պրիկազից, անցկացրեց աղնվականների կալվածական բանկը: Այդ ժամանակ Պրիկազի ամբողջ պարտքն էր 320 000 ռ., իսկ կալվածական բանկը տալիս էր գրավով փոխառություն գալերեայի և տան համար 460 000 ռուբլի: Չկարծեք, թե բանկում գրավ դնելուց Արծրունին ստացավ 140 000 ռուբլի, ինչպես ցույց են տալիս այդ երկու թվանշանները: Նրա ստացածը մի համեմատաբար շնչին գումար էր: Միայն բանկի գրավական թղթերի կուրսի տարբերությունը կազմում էր 92 հազար ռուբլի. հաշվելով և մյուս ծախսերը, տեսնում ենք, որ գրավը կալվածական բանկ տեղափոխելը պատճառել է Արծրունուն վնաս ավելի քան 101 000 ռուբլի: Բացի այդ բոլորից, ժառանգություն էին մնացել և մասնավոր մարդկանց պարտքեր:

Եվ ահա հարց. հարո՞ստ էին Արծրունի եղբայրները: Մեծ, հոյակապ կալվածք տեսնողները պիտի ասեին և իրոք էլ ասում էին, թե նրանք նույնիսկ չափազանց հարուստ են: Բայց կալվածի ճակատին ո՞չ գրված էր, թե ինչ ահագին պարտքի տակ է նա ճնշված, ո՞չ էլ պատկերացրած էր, թե ո՞րքան թույլ ու աննպատակահարմար էր նրա կառավարությունը: Այս փաստերը ցույց են տալիս, թե ո՞րքան անբարեխիղճ են նրանք, որոնք ասում են, թե Արծրունին, իբրև հարուստ մարդ, կարող էր շատ առատաձեռն լինել, բայց կարելի

ժլատութիւն էր ցույց տալիս: Հասկանալի է այդ անբարեխղճութիւնը: Արծրունիները տո՛հմը հոշակա՛ծ էր իրրև շափազանց հարուստ: Նույնիսկ առասպելներ էին ստեղծվել Պետրոյ աղայի ունեւորի մասին: Զգիտե՛ն, որ Պետրոյ աղայից հետո ջուր շատ է անցել կամբջի տակով, և նրա կարողութիւնը, պահպանելով արտաքին փառահեղութիւնը, արդեն քայքայման էր հասել:

Ինքը, Պրիգոր Արծրունին էլ, իհարկե՛ն, գիտեր, որ հարուստ է: Նոր պարսքեր անելով, ահագին գումարներ կորցնելով բանկային գործողութիւնների մեջ, նա գիտեր, որ տո՛հմային կալվածք, այնուամենայնիւ, շատ ավել արժեքան բոլոր պարտքերը: Բայց ի՞նչ արավ նա այդ հարստութիւնը: Արդյո՞ր իր անձի՞ն ծառայեցրեց: Մէ՛ջ նա մագի շափ շեղվեց իր նախկին կենցաղավարութիւնից, մնաց զարծյալ ժուժկալ, սեկավապնտ, աշխարհային վայելքներից հեռու կանգնած մի մարդ: Եվ եթե՛ն կար մի բան, որ օգտվում էր նրա հայրական հարստութիւնից, այդ դարձյալ այն հասարակական գործն էր որին այնպիսի ջերմեռանդութիւնով էր Արծրունին: Օգտվողը «Մշակն» էր:

Թաղելով իր հորը, Պրիգոր Արծրունին իսկույն, այլևս ժամանակ չկորցնելով, խնդիրք ներկայացրեց իշխանութիւնը, որ թույլ տան «Մշակը» ամեն որ հրատարակել: Ահա թե՛ ամենից առաջ ի՞նչ էր տալիս գեներալ Արծրունու մաս հը: Արդեն գեկտեմբեր ամիսն էր գալիս, ուշ էր մի լրագրի պայմանները փոփոխելը: Բայց Արծրունին շուտեց սեղանի եկող տարվան, նա բաժանորդագրութիւն բաց շարավ, մինչև որ գեկտեմբերի 26-ին կարողացավ հայտարարել, որ թույլտվութիւն արդեն ստացել է, և «Մշակը» 1878-ից պիտի հրատարակվի ամեն օր, բացի տոն և տոներին հետևող օրերից, ուրեմն շաբաթը հինգ անգամ: Գինը նշանակված էր 10 ռուբլի:

Եվ այսպես, ռուսահայաց մամուլը տեսնում էր իր ամենամեծ տոնը: Նույն Արծրունին, որ որոշ դեմք ու կերպարանք էր տվել նրան, որ բարձրացրել էր նրա բարոյական հեղինակութիւնը, այժմ հասցնում էր նրան զարգացման այն աստիճանին, որ մեղանում դեռ չէր տեսնվել: Դա մի հսկայական գործ էր: Եվ մի ուրիշը կարո՞ղ էր գլուխ բերել այդ գործը: Ծատերին թվում է, թե կարող էր, եթե ունենար Արծրունու հարստութիւնը: Բայց լոկ հարստութիւնը բավական չէր, պետք էր ունենալ և Արծրունու անսահման սերը գեպի հասարակական գործը: Տեսե՛ք, թե Ասիացին ինչ մանկական հափշտակութիւնով էր սկսում իր առաջին ֆելիետոնը ամենօրյա «Մշակի» մեջ:

«Գիտե՞ք ինչ է նշանակում ամենօրյա լրագիր, — հարցնում էր նա: — Դա նշանակում է, որ ազգը այնքան զարգացավ, որ նրան հարկավոր է ամենօրյա մտավոր կերակուր: Բացի սորանից ամոթ չէ՞ մեզ, հայերիս համար, եթե ռուսաց և մինչև անգամ վրաց լրագրութիւնը արդեն ամենօրյա է դարձել, իսկ հայոց լրագրութիւնը դեռ չէ կարող այդ գրութիւնը հասնել»:

Ազգը զարգացավ, կարիք է զգում, ազգի պատիվը պահանջում է, — ահա ամենից առաջ ինչ էր տեսնում Արծրունին իր այն ձեռնարկութիւնն մեջ, որի միակ ապահովութիւնը իր անձնական միջոցները պիտի լինեին: Միայն վառ հավատը կարող էր այդպես կերպարանավորել նոր, կարևոր ձեռնարկութիւնը գաղափարական գործիչի առաջ: Ասիացին նույն ֆելիետոնի մեջ ասում էր, որ թեև դժվար է մրցել «Тифлисский Вестник» և «Обзор» ամենօրյա լրագիրների հետ, որոնք հրատարակվում են ակցիոներական ընկերութիւնների ձեռքով, բայց մենք կփորձենք...

Եվ նա փորձեց ո՛չ միայն զրամական զոհողութիւններ անելով, այլև կրկնապատկելով իր անձնական աշխատանքը:

Հարստութիւնը հաղիվ թե՛ կրկնեց մեղանում այսպիսի տեսարան ներկայացրած լինի: Աշխարհի կարգերին նայելով, պետք էր սպասել, որ հայրական խոշոր ժառանգութիւն ստացած երիտասարդը թուլանար ու ծուլանար, ամբողջովին իր անձնական երջանկութիւնն մեջ թաղվեր և եթե՛ն հարկավոր էր փառքի համար հասարակական մի գործ կատարել, այդ դեպքում կարելի էր գնել ուրիշների աշխատանքը, մեկնաս և բարերար հանդիսանալ: Բայց Արծրունին այդպես չէր: Հարստութիւնը բերեց լրագրի ամենօրյա հրատարակութիւն, բայց հարստութիւնը երբեք մոռացնել չտվեց, որ ինքը, այդ հարուստը, պիտի լինի գործի առաջին աշխատավորը: Գրել հոդվածներ ամենօրյա լրագրի համար, խիստ ընտրութիւն անել նյութերի մեջ, խմբագրել յուրաքանչյուր տող, պահպանել խիստ մտրակողական, ռազմիկ ուղղութիւն ամեն օր, — այսքանը դեռ բավական չէր: Արծրունու վրա էին ընկած և լրագրի հրատարակչական-տեխնիկական հոգսերը:

Իսկ այդ հոգսերը թե՛ թե՛ կրկնեց չէին: Այն ժամանակվա Թիֆլիսում հեշտ չէր ամենօրյա լրագիր հրատարակելը: Գործը նոր էր մանավանդ հայերի մեջ: Պետք էր աշխատել օր ու գիշեր: Եվ հարուստ կալվածատերը գիշերներն անգամ հանգստութիւն չունէր: Ծատ անգամ էր պատահում, որ նա գիշերները լուսացնում էր Մարտիրոսյանի տպարանում: Այսօր էլ կենդանի են վկաները, որոնք նրա հետ քնել են տպարանում, թղթերի կույտերի վրա: Եվ այսպես անողը մի մարդ էր, որ նոր ժառանգել էր կալվածական խճճված, բարդ հարցեր: Միլիոնանոց կալվածները չէին նրան անքուն անում, այլ մի որևէ բանակարի վայս կամ այն լրագրի գեմ, որևէ գաղափարական հարց, որ պետք էր ծածել, ժողովրդականացնել մամուլի միջոցով: Իսկ երբ կյանքի մեջ փորձված մարդիկ ասում էին նրան, թե մի ձեռքով երկու ձեռքով չի կարելի բռնել, թե պետք է թողնել ամեն ինչ և նվիրվել կալվածներին, այսպես նրանք ձեռքից կանան, նա, առանց երկար ու բարակ մտածելու, այդ գործնական խորհուրդները «Մշակի» առաջնորդողի միջից խփում էր հասարակութիւնն ճակատին իրրև ապացույց, թե ո՞րքան վատ, փշացած է այդ հասարակութիւնը:

Դավաճանել «Մշակին», մոռանալ նրան ուրիշ որևէ նպատակի համար՝ մի միտք էր, որ միշտ վրդովմունք էր պատճառում Արծրունուն: Նա վարում էր հայոց մամուլի մեծ դատը: Թիֆլիսում երկու ամենօրյա ռուս լրագիրներ՝ «Тифлис. Вест.» և «Обзор», ակցիոներական ընկերութիւնների ձեռքով էին հրատարակվում: Այդ ընկերութիւնները բաղկացած էին գլխավորապես հայերից, որոնք, սակայն, իրանց մայրենի գրականութիւնն համար մատը մատին չէին խփում: Արծրունին ցույց էր տալիս այդ մարդկանց, որ ինքը մեկնակ, իր ուժերի վրա հենված, կանի այն, ինչ այնպես լավ մոռացել էին ամենքը:

Եվ նրա արածը զարմանալի էլ չէին համարում: Ի՞նչ մեծ բան է, ասում էին. մենք էլ որ հարուստ լինենք, նույնը կանենք: Կարծես հարցը միայն հարստութիւնն էր, կարծես Արծրունին միակ հարուստն էր հայերի մեջ: Կարո՞ղ էր մի ուրիշը, ունենալով այնքան պարտքերով ծանրաբեռնված, այնքան վտանգների ենթարկված մի հարստութիւն, մոռանալ նրա շահերը, նրա պահանջները և ամբողջ եռանդն ու ուշադրութիւնը նվիրել հայերեն լրագրին, որ ամեն տարի մի բանի հազար ռուբլի դեֆիցիտ էր դնում իր տիրոջ սեղանի վրա:

Հայ հարուստների մեջ միայն Արծրունին հանդիսացավ այդքան միամիտ, այդքան անուղղելի գաղափարական: Հոր մահից հետո նա միայն մեջ տարի մնաց խոշոր կալվածատիրոջ կալման մեջ: Եվ այդ մեջ տարին նրա ամենօրյա «Մշակի» վեց տարին էլ էր: Այնուհետև Արծրունին այլևս չկարողացավ ամենօրյա թերթ խմբագրել, քանի որ միջոցներ չունեի գեֆիցիտները ծածկելու համար: Եկավ աղետը, տարավ հույսահաս կալվածները, և Արծրունին այդ փլատակների տակից միայն իր անբեռն «Մշակը» դուրս բերեց, միայն նրան կարողացավ ազատել կործանումից...

Ամենօրյա լրագրի հրատարակությունը կարող էր մեղանում ցույց տալ, ինչպես ասում էր Արծրունին, որ ազգը այնքան զարգացել է, որ նրան հարկավոր է ամենօրյա մտավոր կերակուր: Այդ զարգացումը, այդ պահանջը ինքը հասարակությունը պիտի արտահայտեր ամենօրյա լրագրին բաժանորդ գրվելու միջոցով: Բայց առաջին տարին «Մշակի» բաժանորդների թիվը շատ քիչ ավելացավ: Եվ Գրիգոր Արծրունին նորից սկսեց մտածել արհեստական բաժանորդագրության մասին, այն է՝ բաժանորդներին պրեմիաներ տալու մասին: Արդեն 1878-ի մայիսին նա իր մի առաջնորդողի մեջ խոսելով ձրի աշխատող և դեռ իրանց միջոցներից լրագրի գեֆիցիտները ծածկող խմբագիրներին մասին, բացակայում է.

«Ամո՞թ այն երկրին, որտեղ գինի, քաղցրեղեններ և մոդային շոպյություն ավելի մեծ պահանջ են, քան թե ընթերցանությունը»:

Մի՞թե այդպես կարելի է շարունակել...

Ո՛չ, կամ լրագրությունը պետք է հուսահատվի, խմբագիրները թողնեն գցեն իրանց պարապմունքը, կամ պետք է որոնեն մի միջոց, որ լրագրությունը ինքն իրան ապահովի, մի պահանջ դառնա հասարակության համար:

...Խոսելով մասնավորապես մեր հայոց հասարակության մասին, մենք միշտ կրկնել ենք, որ հային լրագրության գործին հետաքրքրելու համար պետք է, նրան բացի լոկ ընթերցանությունից գրավելուց, ներկայացնել նրան լրագրի հետ և մի որևէ նյութական շահ...

Անցյալ տարի մենք գիտավորություն ունենք մեր բաժանորդներին պրեմիաներ տալու: Այս տարի այդ չհաջողվեցավ: Մենք կարծում էինք, որ ամենալավ պրեմիան այն կլինի, որ մենք ամենօրյա թերթ կառաջարկենք հայերին... Բայց հայերին այդ տեսակ բաներով գրավել չէ կարելի, նրանց կարող է գրավել միմիայն փող, նյութական շահ...

Եկող տարուց մենք գիտավորություն ունենք իրագործել պրեմիաները Ամեն թե՛ թիֆլիսցի, թե՛ գրսի բաժանորդը, գրվելով «Մշակին» ամբողջ տարով, կստանա մի ստացական, որի թիվը նրան իրավունք կտա տարվա ընթացքում մի պրեմիա ստանալու: Պրեմիաները երեք հատ կլինեն՝ մինը 500 սուրբ մյուսը 300 ա., իսկ երրորդը 200 սուրբ գումարի»:

Այդպես էլ արավ Արծրունին: 1879 թվականին «Մշակի» բաժանորդներին մեջ այդ երեք գումարների վիճակահանություն կար: Բայց ի՞նչ արդյունք տվեց այդ շահագանց գրավիչ արհեստական միջոցը: 1879-ի մայիսին Արծրունին դարձյալ գժգո՞ էր: Ավելացել էր բաժանորդների թիվը, բայց ի՞նչ շահով նա նույնիսկ 1000-ի էլ չէր հասնում...

Պրեմիաներն էլ չօգնեցին: Եվ շատ ցավալի կլինեի, եթե օգնեին: Այն ժամանակ ճիշտ որ կարելի պիտի լինեի ասել, թե հայերին միմիայն փողով կարելի է գրավել: Եվ այն ժամանակ էլ ամեն մեկը իրավունք կունենար ասելու Արծրունուն. «Գուր իզուր եք աշխատում այդպիսի մի ժողովրդի համար: Ինչպե՞ս էր, որ Արծրունուն անծանոթ էր մնում այս հարցի մեջ մի տարրա-

կան ճշմարտություն, այն, որ հրաշքներ չեն կատարվում մեր ժամանակ, որ հասարակական գործը միանգամից, մի թռիչքով, չէ կարող հասնել խոշոր առաջադիմական զարգացման, որ հարկավոր են տարիների ջանքեր, որ մտավոր գործունեության մեջ պետք է մարդկանց մտքերը նվաճել և ոչ թե ոսկու փայլով գրավել:

Անհասկանալի է թվում այս վարմունքը մանավանդ այն պատճառով, որ Արծրունին շատ լավ էր ճանաչում մեր հասարակությունը և նրա պես մի ուրիշը չկար, որին այնքան գեղեցիկ կերպով ծանոթ լինեին մեր արատները: Դեռ տարիներ առաջ, «Մշակը» նոր սկսելիս, նա գիտեր, թե ո՞ւմ համար կարող է աշխատել հայ գործիչը: Դա հայ ժողովուրդն էր: Սկսելով ամենօրյա լրագրի հրատարակություն, նա չէր մոռացել, որ կա և մնում է միևնույն իրողությունը: Այդ երևում է «Ռ՞ւմ համար ենք գրում» առաջնորդողից (1879, № 52), ուր Արծրունին, սովորական խստությամբ հարձակվելով անպարտաճանաչ, օտարամուլ ինտելիգենցիայի վրա, առանց այլևայլության, բացակայում էր.

«Թո՞ղ գրողը տանի մեր ինտելիգենցիային, մենք նրա համար չենք աշխատում, նա, որ անտես է առնում, արհամարհում է ժողովրդի կյանքը...

Մենք ամբողջի համար ենք գրում:

Բայց, իհարկե, պետք է համբերություն ունենանք, մինչև որ ամբողջը գրական կդառնա և ընթերցանություն ճաշակը կառնի»:

Բուռն, կրակոտ բնավորություններին հատուկ է անհամբերություն: Կրիալի քաղերով շարժվող հասարակությունը միայն սառնարյուն, տափակ բնավորություններին կարող է հուսահատություն չպատճառել: Արծրունին գիտեր, որ պետք է սպասել, բայց դանդաղ սպասողի բնավորություն չէր տված նրան: Այստեղից ահա այս բուռն տատանումները:

Խոստովանելով, որ պրեմիաներով անգամ անկարելի եղավ ապահովել մի ամենօրյա լրագրի հրատարակչական ծախսերը, Արծրունին ասում էր.

«Ամենքը գիտեն, թե մենք ամեն տարի մեր գրպանից լրագրի գեֆիցիտներ ծածկում:

Հայը, որի բնավորության մեջն է ուրիշին իր համար աշխատեցնել, բնական է գտնում, որ մարդը իր գրպանից լրագրի ծախս է ծածկում, որ իսկապես պետք է պահպանվեր բաժանորդների վճարքով:

Բայց ո՞չ մի հայ չէ մտածում, որ հասարակության մեռցնող անտարբերության դեմ գրեթե անհնարին է տեղական կերպով գործել, ոչ մի հայ չէ մտածում, որ մենք ամենքս մահկանացու ենք:

«Մշակի» խմբագիրը, ինչպես ամեն մի մարդ, մի անգամ կմեռնի, հավիտյան հո չի ապրի... Ուրեմն ո՞վ կծածկի այն ժամանակ լրագրի գեֆիցիտը, եթե ինքը հասարակությունը, իրանք բաժանորդները չեն ապահովացնում լրագրի նյութական գրությունը իրանց ստորագրությամբ: Եթե լրագրի գոյությունը կախված է մի անձի նյութական օժանդակությունից, ուրեմն, երբ այն մարդը էլ չի լինի, լրագիրն էլ կդադարի, որովհետև նյութական միջոց չի ունենա շարունակել իր գոյությունը»:

Ապագան ցույց տվեց, որ զուր էին այդ վախերը: Սուրբ ոգևորությամբ կերչնչված, տաղանդով առաջնորդված ազնիվ, ժողովրդասեր, առաջադեմ լրագիրը տարիների ընթացքում այնքան ժողովրդականություն գրավեց, որ նրա համար այլևս գոյություն չունեի խմբագրի անձնական միջոցների հարցը: Եվ Արծրունին բաց աչքով տեսավ այդ մեծ հաղթանակը: Զրկվելով հայրական հարստություններից, ընկնելով այնպիսի գրության մեջ, երբ այլևս ոչինչ անձնական միջոց չկար գեֆիցիտը ծածկելու համար, Արծրունին ոչ միայն կա-

րողանում էր անվնաս հրատարակել «Մշակը», այլև ապրուստի համեստ միջոցներ էր ստանում նրանից:

Այսպես ստեղծվեց մշտական հուշարձի, անխախտ ապահովությունը՝ բնութեցողների համակրանքը...

II

Երկու եղբայրներ՝ ուղղության մասին: Մեծ հարցը, ռուս-բուրժուական պատերազմի վերջը: Ներսես պատրիարքը Սան-Ստեֆանոյի մեջ: Նրա նախընտրանքը «Մշակի» եռանդուն գործունեությունը: Արժուևու և Ներսես պատրիարքի վերաբերողությունները մասին: Իրական Հայաստան և Սանճանագրություն: Անգլիայի դերը, կոնգրեսի պատրաստություններ: Մշակական վեպ. «Ջալալի» դրամա: Բաֆֆիի անագին հաջողությունը: Գաղթականության հարցը Թուրքիայում: Բեռլինի կոնգրես և Արժուևու վերաբերմունքը դեպի Ներսես պատրիարքը:

Ամենօրյա «Մշակը» 1878-ին բավական ուշացավ. նրա առաջին համարը միայն հունվարի 14-ին լույս տեսավ: Պետք էր պատրաստություններ տեսնել այդ նոր գործի համար, պետք էր իմանալ, թե ինչ հետևանքներ է տալիս այնքան ուշ սկսած բաժանորդագրություններ:

Հետաքրքրական է այդ առաջին համարը՝ Արժուևուի եղբայրների բնավորության, հայացքների տարբերությունը հասկանալու համար: Առաջնորդագրողները էր Անդրեաս Արժուևուին, որն այդ ժամանակ Թիֆլիսում էր գտնվում: Եվ ահա նա այդտեղ հնչեցնում է «Մշակին» խորթ մեղմության ձայնը: Հնգուներով իր եղբոր ուղղության ճշմարտությունը, ընդունելով, որ միայն առաջադիմական գաղափարների մեջ մի ազդ կարող է փրկություն որոնել, Անդրեասը կարելի էր համարում, որ այդ գաղափարների պրոպագանդայի ձևը փոխվի: Արժուևու հայ հասարակությանը հայտնի էր, որ Գրիգոր Արժուևուին քանդող ուղղության է հետևում: Անդրեասն ընդունում էր, որ այդպես էլ հարկավոր էր, բայց ուզում էր, որ այդ ուղղությունը այսուհետև անցյալ դառնա, որ քանդելը բավական համարվի և այսուհետև առաջադիմության քարոզն ուրիշ, ավելի մեղմ ձևով տարվի:

«Մշակը», — ասում էր նա, — անկասկած չէր կարող մնալ վերջին տարիները՝ ինչ որ էր սկզբում: Առաջ կային հարցեր, որոնց նախկին լրագրողությունը ձեռք տված չէր, — «Մշակը» նրանց հարուցեց, նրա հարձակողական հոգիվածները իրանց վրա ուշադրություն դարձրին և անկասկած սովորեցրին ընթերցողներին ոչ թե միայն իրանց անձնական խնդիրներով զբաղվել, այլև ընդհանուր հասարակական և մարդկային հարցերով: Կրթողի առաջին տարիների հարձակողական, անխնայ, դատապարտիչ ուղղությունը գոյություն իրավունք ունի և բոլորովին օրինական առաջաբան էր ավելի ուշ և հանդիսանալ գործունեության համար: Հարձակողական ուղղությունը միայն կարող էր մի գետին պատրաստել հետևյալ հասարակաշեն (եթե կարելի է այսպես ասել) գործունեության համար: Եթե այդ հարձակողական պրիոցը անցել է, — դա բոլորովին բնական է և նրան բռնի, արհեստական կերպով պահպանել կնշտական անբնական և անառողջ ուղղություն մտցնել ժողովրդի մտածմունքների մեջ: Անկասկած պետք էր պակասությունները ցույց տալ, պետք էր անտարբերությունները նախատել և պետք էր ժամանակ առ ժամանակ կրկնել այդ

և այժմ հարկավոր դիպվածներում, — բայց միայն այդ ուղղությամբ շարունակել գործունեությունը անարդար և անհարմար կլիներ:

Ի՞նչ էր սա: Նշանակում էր արդյոք, որ ամենօրյա «Մշակը», եթե ոչ բոլորովին, գոնե շատ նշանավոր չափով հրաժեշտ էր տալիս իր վեցամյա անցյալին: Միևնույն համարում, գծի տակ, Ասիացին գրում էր.

«Եկեք Ֆելիետոն գրեցեք, կծու, շար, ծիծաղաշարժ, թեթև, սիրելի ֆելիետոն գրեցեք այն հասարակության մեջ, որտեղ ձեր շորս կողմ ուրիշ բան չեք տեսնում, եթե ոչ զզվելի, սիրտը խառնող երևույթներ, որտեղ ձեր շորք ուրիշ բան չեք տեսնում, եթե ոչ՝ կեղծավորություն, շահասիրություն, անձնապաշտություն, հիմարություն և այդ բոլորի հետ միացած անընդունակություն և ծուլություն... Ինչպե՞ս շղջվեք, ուրիշ ի՞նչ զգացմունք կարող եք ունենալ այդ տեսակ զզվելի երևույթներ տեսնելով, եթե ոչ զզվանք, արհամարհանք:

Ատեղ կարելի է միայն թշնամուն, պատվելի թշնամուն: Ատելության զգացմունքը ստոր զգացմունքներից չէ: Ատել կարելի է մի ուժ, մի նշանավոր գոյություն, մի նշանակություն ունեցող անձնավորություն կամ երևույթ...

Բայց մեզ, մեր ներքին կյանքում, շրջապատում են այնպիսի փոքրիկ, զզվելի, սղորմելի երևույթներ, այնպիսի շնչին, թշվառ անձնավորություններ, որոնց կարելի է միմիայն խղճալ և որոնցից կարելի է զզվել, բայց որոնք արժանի չեն ատելության զգացմունքի:

Առաջնորդողի և ֆելիետոնի այս տարբեր շեշտերը, տարբեր խառնվածքը, տեմպերամենտը գրողների, երկու եղբայրների, ամբողջ բնավորությունն են պատկերացնում: Մեկը մեղմ, գիտնականի սառը դատողության, հավասարակշռված թեորոտիկ պատկեր, մյուսը կրակոտ, բուռն կրքերի տեր մի հրապարակախոս, որի տեղը գիտնականի առանձնասենյակը չէ, այլ կյանքի միտքը, ամենօրյա պայքարը: Գրիգորը հյուրընկալեց իր եղբորը «Մշակի» ծրագրային առաջնորդողի մեջ ոչ թե, ինչպես ասում են, նավերը այրելու, անցյալը մոռացնելու համար: Այդպիսի բան անել չէր կարող նրա պես մի հասարակական գործիչ: Ահա «Մշակի» երկրորդ համարում նա է գրում առաջնորդողը, որի մեջ խոսում է իր հարձակողական մտրակող ուղղության մասին՝ իբրև մի ամբողջ ստեղծագործական սիստեմի մասին: Մեր կոշտն է մտքեր քարոզել, — ասում է նա: Մտքերը կարող են քանդել հինը, անպետքը, մաշվածը, բայց նրանք ցույց են տալիս այն, թե ինչ պետք է դնել քանդվածի տեղ: Քանդողը միևնույն ժամանակ ստեղծագործող էլ է:

Նա, ուրեմն, համաձայն չէր իր եղբոր հետ: Եվ «Մշակը» շարունակեց իր բնթացքը իր ղեկավարի անհողողող, ուժեղ ձեռքի տակ: Այդ խիստ, այդ բուռն ուղղությունը ձուլվեց ժամանակի մեծ հարցի հետ և մի զարմանալի, դեռ չտեսնված հեղինակություն ստեղծեց «Մշակի» համար:

Այն ժամանակ, երբ լույս էր տեսնում ամենօրյա «Մշակի» առաջին համարը, արդեն սկսվել էին խաղաղության բանակցությունները, որոնք վերջ պիտի տային ռուս-թուրքական պատերազմին: Պետությունները արդեն քննում էին, թե ինչ պայմաններով կարող է հաղթահարված Թուրքիան խաղաղություն ստանալ: Թուրքաց պատգամավորները գնում-գալիս էին, հաղթողի պահանջները քննում էին, աշխատում էին մեղմացնելու վայ հաղթվածին, — այսպես է եղել աշխարհի սկզբից: Թուրքիան նորից մաս-մաս դառնալու անխուսափելի անհրաժեշտության էր մատնված. նա այլևս նախկին պինդ դիմադրողը չէր: Եկել էր այնպիսի մի պատմական ահեղ մոմենտ, երբ օսմանների բռնակալությունը առատ զինուորությունների գնով պիտի ձեռք բերեր իր

փրկութիւնը: Ահա վեր, արդեօք պայքարը քրիստոնէութեան համար էր սկսու-
ված և նրա հաղթանակը նույն քրիստոնէութեան հաղթանակն էր:

Ահա այդ շահագանց կարևոր բնութիւնը ներսեա պատրիարքն զգաց, թե
ինչ մեծ պարտավորութիւնն էր իր վրա: Նա զգաց, որ հայութիւնը շփոթ
մոռացվի այդ բանակցութիւններէ միջոցին: Նախընթաց դեպքերի նկատ-
գրութեան մեջ մենք տեսանք, որ հասարակական մեծ շարժումը Կ. Պոլսում ար-
դեն պատրաստել էր այն հողը, որի վրա պէտք է գործեր թուրքահայերի ներ-
կայացուցիչը: Արհամարհել այդ տրամադրութիւնը, բաժանվել ժողովրդից
ու անտես անել նրա ցանկութիւնը կարող էր մի անուղղելի թուրքամտ, մի
վախկոտ, հակաժողովրդական բնավորութիւն: Ներսէսը վճռական ժամին ցույց
տվեց, որ ինքը այդպիսի գործիչներէն չէ: Նա դադարեցրեց ազգային ժողովի
նիստերը, իր վրա վերցրեց ամբողջ պատասխանատւութիւնը և սկսեց գործել
բոլորովին նոր ուղղութեամբ:

Ռուսաստանի հաղթութիւնը մի ահագին դժբախտութիւն էր ոչ միայն
Թուրքիայի, այլև նրա բարեկամ և աջակից անգլիական պահպանողական կու-
սակցութեան համար, որ այդ ժամանակ իր ձեռքում ունէր կառավարութեան
ղեկը և սպասուած էր անգլիացիներին՝ թուրքասիրական եռանդուն գործունեու-
թեամբ: Կարիք չկա այստեղ պատմելու, թե ինչպէս անգլիական նավատորմը
կանգնեցրեց ռուսների հաղթական արշավանքը Կ. Պոլսի պատերի տակ, ինչ-
պէս Անգլիան տենդային արագութեամբ սկսեց պատերազմի պատրաստվել,
որպեսզի հարկադրի ռուսներին շահավորել իրենց պահանջները: Բիկոնսֆրիդի
կառավարութիւնը շատ լավ էր տեսնում, թե որ կողմերում վտանգված են
անգլիական շահերը: Կ. Պոլսը ազատված էր նրա ջանքերով, այժմ այդ էր
դրված ասիական Թուրքիայի վրա: Այդտեղ էլ պետք էր շեղագցնել ռուսների
հաջողութիւնը և ապտել շեղկաստանի ճանապարհը վտանգից: Եվ անգլիա-
կան կառավարութիւնը առաջին անգամից մտածեց օգտվել հայերի գրութեան
նից: Որովհետև Հայաստանի մի նշանավոր մասը կարող էր ռուսների սևփա-
կանութիւնը դառնալ, ուստի Կ. Պոլսի անգլիական դեսպանը խորհուրդ էր տա-
լիս ներսեսին պահանջել Թուրքիայից հայկական նահանգների ինքնավարու-
թիւն: Թուրքաց կառավարութիւնն էլ հաշտ աչքով էր նայում այս բանին:
Իհարկէ, թե Անգլիայի և թե Թուրքիայի համար ձեռնտու էր, որ Հայաստանը
փոխանակ Ռուսաստանի կալված դառնալու, դառնար մի ինքնավար երկիր
Թուրքիայի իշխանութեան տակ:

Այս հանգամանքները ավելի ևս պիտի խրախուսեին ներսեսին վճռական
քայլեր անելու: Բայց ի՞նչ ուղղութեամբ Կ. Պոլսի հայութիւնը արդեն մի շարք
ցույցերով արտահայտել էր իր կատարյալ հավատն ու վստահութիւնը դեպի
ռուսաց կառավարութիւնը: Նրա մեջ հաստատվել էր այն համոզմունքը, թե
չպետք է դժվարացնել ռուսների գործը, չպետք է բարդութեաններ հարուցա-
նել նրանց դիպլոմատիկական գործողութիւնների մեջ: Միանգամայն հույս
դնելով ռուսների բարեհաճութեան և վեհանձնութեան վրա, պետք էր գործել
նրանց միջոցով, իբրև նրանց կուսակիցներ: Այս ուղղութիւնն էլ ընդունեց
ներսեսը:

Հունվարին դուրս գալով Կ. Պոլսից, նա գնաց Սան-Ստեֆանո, ուր Պապ-
յանների ապարանքում իջել էր ռուսաց զորքերի գլխավոր հրամանատար Մեծ
Իշխան Նիկոլայը: Ներկայանալով նրան, ներսեսը բացատրեց իրերի դրու-
թիւնը Հայաստանում և խնդրեց ռուսների բարի ուշադրութիւնը: Ահա ինչ-
պէս էր ինքը՝ ներսեսը նկարագրում իր գործունեութիւնը այն ճառի մեջ, որ
արտասանեց Ազգային ժողովում 1878-ի հունիսին.

«Օսմանյան ազգը իր ցեղին հատուկ բնազդով ոգևորված՝ պահ մը ետ
մղեց ահագին թշնամին և հապուշ կրթեց զաշխարհ իր արիական դիմադրու-
թեամբ, ու վերջապէս տեղի տվաւ ավելի մեծ զորութեան առջև, և Ռուսիո
հաղթական բանակները մեկ կողմէն մինչև Հայաստանի մայրաքաղաքն եկան
և մյուս կողմէն մինչև բոլոր Թուրքիո մայրաքաղաքն ի Պոլիս: Ժամը հնչեց
խաղաղութեան: Երկու տերութեանց բանակցութեան սկսաւ Քղանլըքի մեջ և
ընդհանուր պայմանները կոնցան հԱղրիանուպոլիս: Անմիջապէս պիտի սկսեր
զաշնադրութեան բանակցութիւնը:

Այս քի կարող է բուռն շորութեան դեմ, մանավանդ երբ բարոյական գո-
րութիւն միայն ունի և ով ալ ըլլա չկրնար փոխել եղելութեանց ընթացքը: Մեծ
խելք և մեծ հեռատեսութիւն պետք չէր տեսնելու համար, թե երկրին վիճակը
կփոխվեր բոլորովին, և անոր հետ նաև անձնվեր քրիստոնյա ժողովրդի գոյու-
թեան պայմաններն ալ կփոխվեին: Մեկ խոսքով վտանգն ակնբեր էր ինձի հա-
մար և ամենուն համար, որ հայոց ազգն պիտի կրնար անհետանալ իբրև ինք-
նաւրույն ժողովուրդ, և եթէ իր գոյութիւնը շամբապնդեր, պիտի ոչնչանար:
Հարստահարութեան խնդրույն կալելանար մեծ քան զայն խնդիր՝ ազգի գո-
յութեան և շղթայութեան խնդիրը:

Այլ ընդհանուր պայմանաց մեջ Հայոց ազգին անունն անգամ չկար և
զաշնադրութեան վիճաբանութիւնը այն պայմանաց սահմանին մեջ միայն
կրնար ըլլալ: Գրեթէ հուսահատելու էր և ես չգիտեմ, թե ինչպէս շուսահատ-
վեցանք: Անկարելի է նկարագրել ազգի մորմոքը՝ զոր թողեք ըսեմ, զգացի
ի սիրտս և ի բովանդակ անձն իմ. միանգամայն զգացի ահեղն այն պատա-
խանատութեան, որ այն հանդիսավոր ժամուն կծանրանար իմ վրաս, զի ազգը
յուր երեցփոխանական ժողովը ազգին խնդիրն ինձ էր հանձնած մասնավո-
րապէս: Հաջողիլ անկարելի էր սովորական միջոցներով, ոչ ալ սպասելը նե-
րելի էր: Կրնայի ի ժողով կոչել զձեզ, և այն ատեն բան մը չընելով ալ ձեր
առջև պատասխանատւութեան ազատիլ, կրնայի գոնէ Քաղաքական ժողովու-
րդները: Պե՞տք էր որ այնպիսի պարագայի մեջ նայել միայն անձնական պա-
տասխանատւութեանց ու ձեր առջև անպարտ ելնելով, խղճիս առջև պարտավոր
մնայի:

Տե՛սք երեսփոխանք, անշուշտ անհետացած չէ ձեր հիշողութեան այն
օրերուն հիշատակը: Օսմանյան ազգը, որ առատապէս հեղած էր իր արյունն է
զաշտ պատերազմաց, այնքան զոհողութիւններն ետքը իր պարտութիւնը տես-
նելով և այսքան շարեաց սկզբնապատճառ քրիստոնէութեան անունը միշտ
հնչելով իր ականջին, բնական էր որ արտաքո կարգի գրգռութիւն մը զգար:
Ավելի քան երբեք պետք էր խոհեմութեամբ և շրջահայեցութեամբ գործել, այլ
նաև ուժով ու ազգու կերպով գործել: Ձեր պատրիարքը մտածեց, խորհրդակ-
ցեցաւ: Իր շուրջը ունէր բոլոր եպիսկոպոսական դասը՝ պատրաստ գործելու
իրեն հետ հանուն ազգին և հանուն ազգին զոհվելու, եթէ պետք ըլլար: Միա-
ցաւ իր սրբազան եղբարց հետ՝ և որոնք արդեն իրենց կոչման օրն առայի
Աստուծո երդվալ էին, նորեն երդվան նվիրել զանձինս ազգին:

Օսմանյան լիազոր դեսպանք դեռ չէին ուղևորած հԱղրիանուպոլիս, ես
ու իմ սրբազան եղբայրակիցներս գործել սկսանք: Ազգին հայտնի էր այն ատեն
ինչ որ ուղեցինք. այն է՝ հայոց հիշատակութիւնը զաշնադրութեան մեջ, և
հայտնի է այսօր թե այս հիշատակութիւնն եղաւ մասնավոր հորվածով: Ար-
դյոք ճիշտ մեր ուղածին պէս եղա՞վ հիշատակութիւնը.— ո՛չ. այլ քաղաքա-
կանութեան մեջ՝ «երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պետք է ընել ինչ որ
կրնաս»:

Պատրիարքական այս ճառի մեջ գեղեցիկ կերպով լուսարանված է մասնավանդ այն օրերի տրամադրությունը, որոնք սկսվեցին Կարսի և Պլեյնայի անկումից: Նշանավոր էին, բուն թափով լցված էին մասնավանդ հունվարի օրերը, երբ սուսաց բանակում վճռվում էր ազգերի ճակատադիրը: Գրիգոր Արծրունին նախատեսում էր ներսեսի ղգացած անհրաժեշտությունը վաղուց: ղեռ 1876 թվականից, երբ նա, կարելի է ասել առանց շափազանցությունների մեջ ընկնելու, մենակ էր հասարակական ասպարեզում, շրջապատված կատաղի թշնամությամբ: Այժմ այլևս նա մենակ չէր: Գաղափարը, որի համար նա մարտնչում էր այնքան անվահեր տոկունությամբ, այժմ ընդհանրացել էր: Կ. Պոլսի հայ լրագրությունը, ինչպես տեսանք, վաղուց արդեն փոխել էր իր լիզուն և հասարակական տրամադրության հավատարիմ թարգման էր հանդիսանում մի քաջ ու ազատ հրապարակախոսություն:

Թիֆլիսում «Փորձն» էլ շուտ փոխեց իր հայացքը, ղեն դրեց իր վարդապետյն լավատեսությունը: Միայն հին «Մեղուն» էր, որ համառությունը շարունակում էր ղիմադրել օրվա հոսանքներին, պաշտպանել իր հայացքները: Քաղցրին 1878-ին իր առաջին ֆելիետոնում ծաղրում էր ոչ միայն Գրիգոր Արծրունուն, այլև Իգմիրլյանին, Նարբեյին, որոնք հանդանություն էին ունեցել պնդելու, թե հայք իրավազուրկ է թուրքիայում, և նրա դրությունը կարող է բարելավության: Ժամանակի ոգին ըմբռնելու այդքան անընդունակություն աններելի պիտի լիներ նույնիսկ «Մեղուի» համար:

Բայց ղեպքերը կամաց-կամաց հաղթահարում էին այդ հնապաշտ պահպանողականին, ինչպես և նրա համախոհներին Կ. Պոլսում և ուրիշ տեղերում: Անկարող լինելով որևէ հոսանք ստեղծել հասարակական կյանքի մեջ, նրանք ընկան իրանց ատած ուժեղ հոսանքի մեջ, ոչ միայն հաշտվեցին նրա հետ, այլև սկսեցին փառաբանել նրան:

Ներսեսի մեծ ջանքերը ապարդյուն շանցան: 1878 թվի փետրվարի 19-ը հայոց ժամանակակից պատմության անկյունքարն է կազմում, որից սկսվում էր մի ամբողջ նոր դարազուրկ: Այդ օրը սուսաց և թուրքաց լիազորները Սան-Ստեֆանոյի մեջ ստորագրեցին խաղաղության սկզբնական պայմանները: Սվերբ մարտի 9-ին պաշտոնապես հրատարակվեց Սան-Ստեֆանոյի դաշնագրությունը, հայերը տեսան, որ, ինչպես ասում էր ներսես պատրիարքը իր ճառի մեջ, իրանք էլ հիշատակված են այդ հռչակավոր պատմական թղթի մեջ: Հաշտության 16-րդ հոդվածը հատուկ պարտավորություն էր ղնում թուրք կառավարության վրա՝ տեղական պահանջների համեմատ վարչական բարեփոխումներ մտցնել Ասիական թուրքիայի հայաբնակ տեղերում և պաշտպանել հայերին քրդերի ու շերքեղների հարստահարություններից:

Հաղթահարված բռնապետությունը համաձայն էր ամեն պարտավորություն ստորագրելու: Բաղկանյան ազգերի լիառատ պտուղներ հնձեցին սուսաց հաղթություններից: Սան-Ստեֆանոյի դաշնագրությունը, ստեղծելով մի լայնարձակ ու մեծ Բուղարիա, համարյա ոչնչացնում էր թուրքիայի գոյությունը: Սվրոպայի հարավ-արևելյան անկյունում: Հայերը այդ կործանումից միայն այն օգուտն ունեցան, որ թղթի վրա ճանաչվեցին նրանց մարդկային տարրական իրավունքները: Ներսեսը շատ լավ հասկանում էր իր ձեռք բերած հաջողության իսկական արժեքը: Իր ճառի մեջ նա ասում էր. «Մեր գործը չէր լմնցած, այլ սկսած էր»: Ու նա կրկնապատկեց իր եռանդը, կանգ շատավ սկսեց լայն ու համարձակ քայլեր անել:

Նոր գործը նոր հերոս էր ծնեցնում: Այնուհետև եկան մի շարք տարիներ, երբ հայության ամբողջ ուշադրությունը բեռնված էր ներսեսի վրա. այդ ժա-

ժամանակամիջոցում նա էր առաջին մարդը, և նոր, եռանդուն երևույթներով շափազանց հարուստ հայկական կյանքը նրանից էր ստանում ղարկ ու ոգևորություն, հույսերի, հուսախարությունների փոփոխականության հաջորդականություն:

Այդ եռուն ժամանակներում, երբ ամեն ինչ պարզ հասկացված էր, երբ քաղաքելու, բացատրելու նախկին մեծ կարիքը չկար, ըստ երևույթին պիտի նվազեր Գրիգոր Արծրունու հրապարակախոսական դերը: Բայց այդպես չեղավ: «Մշակի» առաջնորդողը ոչ միայն ոչինչ չկորցրեց, այլ ավելի ևս մեծ նշանակություն ստացավ, ավելի ազդու էր, ավելի խոր թափանցող իր համարձակությամբ, իր ազատ ու սուր շեշտերով: Լրագրի ամենօրյա հրատարակությունը այն ահագին առավելություն էր տվել Արծրունու գրչին, որ նա ուշացած, հնացած խոսք չէր ասում: Ասորյա կյանքը իր բոլոր երևույթներով իսկույն արձագանք էր տալիս «Մշակի» ղարմանալի ղյուրազգաց, կենդանի հրապարակախոսության մեջ: Արծրունին լարված ուշադրությամբ հետևում էր կյանքին և անսխալ հոտառությամբ ըմբռնում էր այն հարցերը, որոնց պետք էր բնեկ, դատել, ձեռնել: Եվ նրա առաջնորդող ղարձյալ իր առաջավոր, հրամայող ու համոզող ղերումն էր. նա ղեկավարում էր հասարակաց կարծիքը, նոր հոսանքներ էր ստեղծում, նոր կոփվներ էր հարուցանում հաղթական հաջողություններ:

Այսօր, կարդալով այդ առաջնորդողները, մենք նրանց մեջ տեսնում ենք և շատ մանր, ասորյա նշանակություն ունեցող, մի հայտնի ժամանակամիջոցում միայն հայտնի ղափով ուշադրության արժանի հարցեր, տեսնում ենք միևնույն հիմնական մտքի, միևնույն հայացքի կրկնություններ, բացատրություններ ղանազան ժամանակներում, ղանազան առիթներով: Ասորյա հրապարակախոսության մեջ այդ բոլոր մանր-մունր հանգամանքները թե հասկանալի են և թե բնական: Բայց մեղ համար, այս ընդհանուր տեսության մեջ, քայլ առ քայլ հետևել այդ բոլորին և՛ անհնարին է, և՛ ավելորդ: Մենք կվերցնենք խոշոր, հիմնավոր երևույթները, ավելի երկար կանգ առնելով այն գործունեության վրա, որ նվիրված էր թուրքահայերին...

Ամենօրյա «Մշակը» իր գոյության առաջին շորս տարիներում (1878—1882) ամենամեծ ուշադրությունը նվիրվում էր ներսեսի սկսած գործին: Միայն առաջնորդողը չէր այդ գործով ղբաղված: «Մշակը» ամբարում էր իր մեջ այն բոլոր նյութերը, որ հրապարակ էր հանում թե Կ. Պոլսի հայ և թե արտասահմանյան օտար մամուլը. նա տալիս էր և սեփական ահագին նյութեր այն ընդարձակ թղթակցություններով, որոնք ողողում են «Մշակի» տարիները: Եատ հեշտ է այդ նյութերով քայլ առ քայլ հետևել այն ժամանակվա բոլոր խոշոր թե մանր երևույթներին: Բայց մենք, թողնելով այդ անսպառ հարստությունը պատմություն մշակողներին, համառոտ կերպով կխոսենք այն ղեպերի մասին, ուր Արծրունին ղատող է հանդիսացել, ուր նա գործ է ստեղծել և ղաղափարներ է հաստատել:

Երբ հայտնի ղարձավ Սան-Ստեֆանոյի դաշնագրության պաշտոնական խմբագրած ձևը, Արծրունին իսկույն բացատրեց, թե ինչպես է ինքը հասկանում 16-րդ հոդվածը: Դա նահանգական ինքնավարություն է, այսինքն.

«Քրիստոնյա նահանգապետ, սեփական քաղաքային և գյուղական վարություններ, կայքերի և անձնական ապահովություն, կալվածների ազատելը թուրք և քուրդ բեյերի ավատական իշխանությունից, սեփական կամ խառը դատարանները, ղատարանի առջև քրիստոնյաների և մահմեդականների հավասարությունը, ուսումնարանների ազատությունը, ամբողջ երկրից թուրքիա-

լին տրվող տարեկան որոշված հարկը, որ հիմնված լիներ հաստատ և անփոփոխ հիմքերի վրա և ոչ թե կամայականության վրա...

Գաշնագրի կրկրորդ կետին, այն է՝ որ հայերին տրվելու է ապահովություն շերքեզներին և քրդերի դեմ, Քուրքիայի հայերը կարող են հասնել միայն նորանով, որ կպահանջեն Քուրքիայից իրանց սեփական տեղական պահուստի գործ ունենալու իրավունքը:

Մասավորապես միևնույն վարչական ձևի գաղափարն ունեին այլի անայլ և Կ. Պոլսի հայ գործիչները, ինչպես այդ երևում է այն հիշատակագրից, որ ներսես պատրիարքը հատուկ պատվիրակների ձեռքով ուղարկեց եվրոպական պետություններին: Բայց Արծրունին ուներ և մի այլ հայեցակետ, որ միայն ինքն էր պաշտպանում և որ, որքան մեզ հայտնի է, արձագանք չէր գտնում մտածողների և գրողների շրջաններում: Կրկնելով իր նախկին ասածը, նա այժմ մանավանդ հարկավոր էր համարում, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը տեղափոխվի Հայաստան:

Սա Արծրունու սիրած միտքն էր, որը շատ ու շատ անգամ արժարձեց նա թե այդ և թե հետևյալ տարիներում: Գլխավոր պատճառը, որ նրա աչքում անհրաժեշտ էր դարձնում այդ տեղափոխությունը, այն հիմնական, միակամայն ճիշտ, հայացքն էր, որ նա ուներ Կ. Պոլսի և գավառների մասին: Դեռ «Մշակի» առաջին տարիներում, ինչպես տեսանք, նա ընդգծում էր գավառների անտիրական գրությունը, հակադրելով այդ գրության՝ Կ. Պոլսի հայ գաղթականության համեմատաբար բարեկեցիկ վիճակը: Ամեն ինչ կրանում էր այդ ահագին գաղութը. հայ ազգի շահերը նա յուրացրել էր համարյա ամբողջովին, ոչինչ չթողնելով գավառներին: Սահմանադրությունը ապարդյուն էր Կ. Պոլսում, իրական օգուտ չէր հասցնում և չէր էլ կարող հասցնել գավառներին: Բացի դրանից, Արծրունին անընդունակ էր համարում Կ. Պոլսի հայերին, պտնում էր, որ նրանք գործի մարդիկ չեն, միայն խոսել գիտեն, մի բան, որ մանավանդ այն ժամանակներում խոշոր շահով ճշմարտություն ուներ իր մեջ: Իր առաջնորդողներից մեկի մեջ նա շատ գեղեցիկ ձևով էր արտահայտում այդ հայացքը. «Կ. Պոլսը ֆրագա է, Հայաստանը՝ իրականություն»:

Եթե Սահմանադրության տեղափոխության միտքը միայն 16-րդ հոգովածի հրատարակությունից հետո հայտնված լիներ, գուցե կարողանայինք ենթադրել, որ նահանգական ինքնավարության կերպարանքը պարզելիս Արծրունին կամեցել է, որ այդ ինքնավարությունը ժողովրդական լինի, ունենա, այսպես ասած, գավառական պառլամենտի պես մի բան: Բայց քանի որ նա այդ միտքը հայտնել է 1878-ից առաջ էլ, մեծ է հարց տալ, թե ի՞նչ գործնական օգուտներ էր նա սպասում իր այդ ծրագրից:

Դատելով տեսականապես, Ազգային ժողովին հատկացրած իրավունքները կարող էին ավելի պետքական լինել բուն երկրում, ուր շկար իրավական հասկացողություն, ուր տիրում էր սարսափելի տգիտությունը և ժողովրդի շահեր պաշտպանող պիտի լինեին տգետ, նախապաշարված, նյութապաշտ հոգևորականները: Ընդ որ այդպիսի մի անմխիթար իրականության մեջ լույսերի ամբողջ մի խուրձ կլիներ այդ ընդարձակ կենտրոնական հիմնարկությունը իր բազմաթիվ գործադիր մարմիններով, իր համայնական սնդուկով և նշանավոր լիազորություններով:

Բայց կարող էր Սահմանադրությունը պահվել Հայաստանի հողի վրա, — ահա հարց: Կ. Պոլսը Սահմանադրություն ստեղծել էր. Կ. Պոլսն էլ տալիս էր, լավ թե վատ, գործիչներ՝ նրա ղեկը վարելու համար: Այնտեղ կար ինտելիգենցիա, այնտեղ էր հայ բուրժուազիան և բյուրոկրատիան, որոնք և Ազ-

գային ժողովի իսկական տերերն էին: Իսկ ի՞նչ կարող էր Սահմանադրությունը գտնել գավառներում, բացի խավար, նախապաշարված, հարստահարվող ամբոխից: Ասել թե Կ. Պոլսի գործիչները Սահմանադրության հետ կտեղափոխվեին գավառները, — միամտություն կլիներ: Եվ միևնույն շէ՛ր, թե ուր պիտի ճառեր ասեր, գրագրություններ վարեր պոլսեցին՝ Բոսֆորի՞ ափերում, թե՞ մի որևէ էրպրումում կամ Բաղեշում: Եթե գավառները կարողանային էլ սահմանադրական գործիչներ հանել իրանց միջից, դրանք դարձյալ նույն տեսակի մարդիկ պիտի լինեին՝ բուրժուաներ և պետական պաշտոնյաներ, որովհետև բուն ժողովուրդը մոռացված էր, ճնշված այդ դասակարգերի տիրապետության տակ: Ի նկատի ունենանք և այն կարևոր հանգամանքը, որ Կ. Պոլսում էլ հայերի սահմանադրական իրավունքները ոչ մի երաշխավորություն չունեին, Քուրքաց կառավարությունը կարող էր լսել Ազգային ժողովի դիմումները և ոչինչ չանել, ինչպես չէր էլ անում: Ի՞նչ երաշխավորություն կարող էին ունենալ այդ իրավունքները կամայականությունների այն երկրում, որ Ասիական Քուրքիա է կոչվում:

Մենք կանգ առանք այս հարցի վրա այն պատճառով, որ նա շատ բնորոշ մի հանգամանք է այն ժամանակվա շարժումի ամենագլխավոր, հիմնական հատկության տեսակետից: Այդ հատկությունն այն էր, որ մեր գործիչներին շատ հեշտ էր թվում ամեն մի ծրագիր, որ զուտ ուտոպիական, թեև, իհարկե, շատ գրավիչ կերպարանք ուներ: Հասկանում էին այդ գործիչները, թե ինչ է հարկավոր, ինչ է պակասում հասարակական բարեբախտության համար, բայց նրանց առջև չկար իրերի բուն գրությունը, երկրի և մարդկանց խոր ուսումնասիրությունը:

Այդ գրավիչ ուտոպիաներից մեկն էլ այն էր, որ հայերը Ասիական Քուրքիայում պիտի հանդիսանային իրենց բարբարոս հարևան ցեղերի լուսավորիչներ, պիտի կուլտուրայի զենքով նվաճեին այդ ցեղերը, դարձնեին նրանց խաղաղ, աշխատասեր ժողովուրդներ: Այդ տեսակ ծրագիրները թղթի վրա շատ գեղեցիկ են լինում: Գործնական նշանակություն չտալով նրանց, մենք, այնուամենայնիվ, բնական պիտի համարենք այն տարիների միամիտ ուտոպիզմը, ի նկատի ունենալով ժամանակի հոգեբանությունը:

Ամեն ինչ հեշտ էր երևում այն ժամանակվա գործիչներին: Եվ դա լավ էր: Չկար դեռ անողորմ իրականության դառն դասը, մարդիկ լցված էին հույսերով, մարդիկ ջերմ հավատ ունեին մոտավոր ապագայի վերաբերմամբ և դա փրկեց բուն գաղափարը, որ հենց այդ պատճառով կենդանի, ոգևորիչ մնաց: Իսկ դա շատ հարկավոր էր նրա ժողովրդականացման համար: Գալիս էին հուսախաբության դառն բույներ, բայց կենսուրախ տրամադրությունը չէր սպանվում, ուտոպիան կար և չէր թույլ տալիս, որ սառը հոռետեսությունը ջախջախի գաղափարը սաղմի մեջ:

Հայտնի է, որ Սան-Ստեֆանոյի դաշնագրությունը եվրոպական պետությունների դժգոհությունը հարուցեց, ամենքը բողոք հայտնեցին և որովհետև դեռ պատերազմի սկզբում ընդունված էր, որ Քուրքիայի վերաբերմամբ ոչինչ փոփոխություններ չեն կարող լինել առանց Փարիզի դաշնագրությունը ստորագրած պետությունների համաձայնության, ուստի Սան-Ստեֆանոյի պայմանները պետք է դնեին այդ պետությունների առաջ՝ քննելու համար: Այս առիթով դեռ նոր էին բանակցություններ սկսվում, երբ ներսեսը իմաստուն կանխատեսությամբ պատվիրակություններ ուղարկեց՝ հայոց հարցի համար հող պատրաստելու: Խրիմյան Հայրիկը ուղևորվեց Եվրոպա, Խորեն Նարեկը

գնաց Պետերբուրգ, իսկ Մատթեոս Իզմիրլյանը սնցավ էջմիածին՝ Գևորգ կաթողիկոսի հետ տեսակցելու:

Թուրքիայի ամենամեծ պաշտպանը, սլավոնական խոսվածքովներն սկսվելու օրից, Անգլիան էր: Այժմ նա ամեն ջանք գործ էր դնում, որպեսզի Թուրքիան, որքան կարելի է, քիչ քան կորցնի այդ դժբախտ պատերազմի պատճառով: Մարտից Մոսկովյան մարտի 20-ին գրած իր շրջաբերականի մեջ հասկայես հիշատակում էր, որ Անգլիան անբավական է մանավանդ իրերի այն դրուժյամբ, որ ստեղծում էր Սան-Ստեֆանոյի դաշնագիրը Հայաստանում: Պարզ էր, ուրեմն, որ հայոց դատին ամենից շատ պիտի Անգլիան հակառակվեր: Եվ իրավ, ի՞նչ կարելի էր սպասել Թեմզայի ափերից: Այնտեղ կառավարողը թուրքամուլ լորդ Բիկոնսֆիլդի կառավարությունն էր, իսկ Կ. Պոլսում նրա ներկայացուցիչը կեյարդն էր, որին մեր Մերենցը իր մի գրվածքում իրավացի կերպով անվանում է թուրքից էլ շատ թուրքամուլ:

Արծրունին, որ պատերազմի ժամանակ Անգլիայի դեմ էր գրում, այժմ ավելի համոզված կերպով քարոզում էր, թե Անգլիան զոհում է հայերին, թե նրա քաղաքականությունը վերին աստիճանի եսամուռ և անբարոյական է: Դա մի ընդհանուր հայացք էր, և Կ. Պոլսում հայերը նույնպիսի աստիճան էին զգում դեպի անգլիական քաղաքականությունը: Այնտեղ տիրում էր մի սաստիկ ոռոսասիրություն: Հռչակավոր հերոս Սկոբելևը այցելելով Ներսեսին, ասաց նրան, որ, եթե չլիներ անգլիական դիմադրությունը, հայերը նույնպես մեծ բարիքներ ստացած կլինեին ոռոս-թուրքական պատերազմից:

«Գեո ուշ չէ», — ասում էր Բաֆֆին, քննելով ընդարձակ բանասիրական հոդվածների մեջ երկրի դրությունը: Պետք է աշխատել: Նույնը քարոզում էր Արծրունին առաջնորդողում: Ամեն տեղ գիտեին, որ այդպես է: Եվրոպայում և մանավանդ Անգլիայում, հայերը և հայասերները աշխատում էին հասարակական նպաստավոր կարծիք ստեղծել: Աչքի առաջ ունենալով այն հայասիրական շարժումը, որ նկատվում էր Անգլիայում, Արծրունին հույս էր հայտնում, թե գուցե այդ կարծիքի միջոցով կարելի կլինի ազդել և անգլիական կառավարության վրա: Լավ հույսեր էր տալիս և Ռուսաստան ուղարկված պատվիրակությունը: Կ. Պոլսը լցված էր ոռուս գինվորներով, որոնք համակրությամբ էին վերաբերվում հայերին: Ոգևորություն էր տիրում թուրքաց մայրաքաղաքի հայ ազգաբնակչության մեջ: Ավելի մեծ էր ոգևորությունը թուրքաց Հայաստանի մայրաքաղաքում՝ Էրզրումում, որ գրավել էին ոռուսաց զորքերը: Հայերը ցույց էին անում ի պատիվ ոռուսների, հավատացած լինելով, որ թուրքերը այլևս ոչինչ իրավունք չպիտի ունենան իրանց վրա: Թե որքան բարձրացած էր հասարակության տրամադրությունը, երևում է նրանից, որ այդտեղ հայկական թատրոն ստեղծվեց, որ սկսեց մի շարք ներկայացումներ տալ:

Նոր կյանքի հոսանքները ամեն տեղ էին նկատվում: Իսկ դարավոր արյունոտ իրականությունը գալիս էր այդ իսկ ժամանակ ցույց տալու, թե որքան մեծ, որքան ցանկալի է այն դատը, որ այնպիսի անվեհերությամբ սկսել էր և տանում էր Ներսես պատրիարքը: Հայաստանի դանազան կողմերից բարձրանում էին հարստահարությունների, կոտորածների բոթերը: Մի տեղ չերթեկներն էին տանջում հայերին, մյուս տեղերում քրդերը: Ռուսաց մի զորաբաժին հասել էր Խնուսի կողմերը: Հենց որ նա հեռացավ այդ տեղերից, քրդերը թափվեցին հայ գյուղերի վրա, այրեցին, կոտորեցին: Ազգաբնակչությունը լավ զգում էր, որ ոռուսների հեռանալուց հետո ինքը պիտի վայրենի ցեղերի վրեժխնդրության զոհ դառնա այն համակրության համար, որով վերաբերվել էր

ոռուսաց զորքերին: Ուստի պատրաստվում էր մի մեծ, մի ահավոր գաղթականություն:

Այդպես էր գործի դրությունը, երբ մայիսին «Մշակի» մեջ սկսեց տպագրվել Բաֆֆիի «Ջալալեդդին» վիպակը: Դա մի բուրբուլիս նոր երևույթ էր: Ընթերցող հասարակության առաջ դուրս էր գալիս անդրանիկ մշակական վիպագրությունը: Մշակական էր «Ջալալեդդինը» այն պատճառով, որ մի ուրիշ լրագրում չէր կարող տպագրված լինել. նա ամբողջապես շաղախված, շինված էր «Մշակի» գաղափարներից: Այն, ինչ մինչև այդ վերացական քարոզ էր, գատողություն էր, այժմ մարմնանում էր վիպական գեղեցիկ տեսարանների, գործող անձնավորությունների, հերոսների մեջ: Բաֆֆին սկիզբն էր դնում իր այն գործունեության, որ մի ամբողջ հեղափոխություն էր մեր վիպագրության մեջ և որ այնքան պիտի հուշակեր նրան, դարձնելով նրա անունը մեր լավագույն հանրային գաղափարի հետ կապված մի նվիրական հասակացողություն:

Սակայն «մշակական» անվանելով Բաֆֆիի այդ վեպը, մենք չենք ուզում ասել, թե Բաֆֆին սեփական, ինքնուրույն ստեղծագործությունից զուրկ էր և միայն արտագրում էր «Մշակի» գաղափարները: Այսպիսի մի գատողություն վերին աստիճանի անարդարություն կլիներ այդ տաղանդավոր մարդու վերաբերմամբ: Վիպակներ շատ էին տպվում «Մշակի» մեջ մինչև 1878 թվականը: Ինքը, Բաֆֆին էլ, ինչպես տեսանք նախընթաց գլուխների մեջ, ուներ բազմաթիվ այդպիսի գրվածքներ: Իբրև դիտող մարդ, իբրև հոգով բանաստեղծ, նա կարողանում էր կյանքի առօրյա, սովորական տեսարաններից դուրս բերել բունություն, զրկանքների զոհեր: Հասարակական բնազդը խոսում էր նրա մեջ, նա ձգտում էր քարոզիչ, խրատատու դառնալ իր հերոսների ետևում կանգնած: Մե՞ծ էր նրա հաջողությունը: Ոչ, մնալով ստեղծագործական այդ շրջանում, այդ նյութերով շրջապատված, նա ամենաշատը փոքր-ինչ ավելի աչքի կընկներ մյուս վիպագրողների մեջ, որոնց գործերը տպվում էին նույն «Մշակում»:

Այդ գրողներից երկուսին մենք արդեն հիշատակել ենք — Հովհաննես Տեր-Գրիգորյան և Գրիգոր Պապյան: Երկուսն էլ բավական բեղմնավոր գրիչ ունեին, երկուսն էլ զուրկ չէին դիտողության շնորհից և հետաքրքրական թեմաներ էին ընտրում, լուսաբանելով նրանց մշակական առաջադեմ գաղափարների տեսակետից: Բայց այդ բազմաթիվ վիպակներն ու պատկերները ոչ ձևի, մշակության կողմից էին շատ գեղարվեստական, ոչ էլ բառի բուն նշանակությամբ «մշակական» այն մտքով, ինչպես պետք է հասկանալ Բաֆֆիի այնքան աղմուկ հանած վեպերը: Արծրունին մեծ հույսեր ուներ մանավանդ Գրիգոր Պապյանի վրա, որին մի քանի անգամ «Մշակում» նույնիսկ տաղանդ անվանեց: Բայց Պապյանը գուցե ապագայում ցույց տար վիպագրողի իսկական տաղանդ, եթե նրան, այդ երիտասարդին, վիճակված լիներ երկար ապրել և զարգանալ: Նրա գյուղական պատկերները մեծ մասամբ միամիտ, անարվեստ, թեև մանավանդ այն ժամանակի համար հետաքրքրական էին: Ծնորհք, աստվածային կայծ, անկասկած կար, և եթե Արծրունին չափազանցում էր այդ ձիրքը, պատճառն անշուշտ այն տենդենցիան էր, որ Պապյանը անց էր կացնում իր ֆելիետոնական պատկերների մեջ:

Այդպիսի գնահատությունը դարմանալի չէր այն ժամանակներում: Արվեստ դեռ չկար մեղանում, գոնե վիպագրական ճյուղի մեջ: Խոշոր, տաղանդավոր գործեր չէին երևում: Վիպագրությունը մի խղճուկ, ցնցոտիներով պատած կյանք ուներ: Այդ դրությունը վերջ դրեց Բաֆֆին: Եվ վերջ դրեց ոչ թե իր «Կուսագրություններով», իր «Գեղեցիկ Վարթիկներով», ոչ նույնիսկ իր «Հա-

րեմենքով» կամ «Մենմեղ վաճառքներով», այլ իր «Ջալալեղդինով», իր անդրանիկ մշակական վեպով:

Պա այն վեպն էր, որ գալիս էր արծազանք տալու օրվա հրատապ հարցին, որ դեռում էր հասարակական խիստ լարված, խիստ ուշադիր տրամադրություն անաչ: Հրատարակական առաջնորդողը իր ահագին դերն էր կատարում այդ նշանավոր ժամանակում: Այժմ հանդես էր գալիս հրատարակատեսական վեպը, որ նույն, դեռ ավելի խոր, տևողական ազդեցությունը պիտի աներ հասարակության մտքի վրա: Եվ երկու հզոր գործոնները զուրս էին գալիս միևնույն աղբյուրից— մշակականությունից: Բայց նրանք ձուլված չէին իրար հետ. Արծրունին Բաֆֆին չէր, ինչպես Բաֆֆին էլ Արծրունի չէր: Մեկին արված էր հրատարակատեսակ խմբագրի, մյուսին՝ հրատարակատեսակ վիպագրողի տաղանդը:

Արծրունին էլ փորձել է իր ուժերը վիպագրության մեջ: Եվ ի՞նչ: Լինելով իբրև հրատարակատեսակ, վերին աստիճանի զգայուն դեպի կյանքի հարցերը, ըմբռնելով օրվա պահանջը և այդ պահանջին համապատասխանող խոսքի անհրաժեշտությունը, նա միանգամայն կորցնում է այդ հոտառությունը վիպագրության մեջ: Նույն 1878 թվականի սկզբում, երբ օդի մեջ այնքան խոշոր հարցեր էին զգացվում, երբ հայության ճակատագիրը, այնքան դառը հարվածների ենթարկվելուց հետո, կարծես, սկսում էր գտնել իր արդար վճիռը, Արծրունին «Մշակի» մեջ տպագրեց իր «Այնտեղ և Այստեղ» վիպակը: Նյութը վերցրած էր ուսանողական կյանքից: Այնտեղ,— դա նշանակում է համալսարանում, այստեղ՝ մեզանում, կյանքի մեջ: Ի՞նչ են անում ուսանողները այնտեղ և ի՞նչ են անում այստեղ: Կան ուսանողներ, որոնք նվիրվում են գիտության, սովորում են՝ ուշադրություն չդարձնելով նյութական զրկանքների վրա: Բայց քիչ չեն և այնպիսիները, որոնք մի կողմ են թողնում գիտություններն ու գաղափարները և զվարճությունների մեջ են անցկացնում իրանց կյանքը, ոտնակոխ անելով ամեն մի բարոյական հասկացություն: Ահա այդպիսիներից մեկն է հարուստ ուսանող Սալիմյանը, որ շորս տարի ապրում է մի աղքատ աղջկա հետ, երկխաներ է ունենում, բայց ուսումը վերջացնելուց հետո երեսի վրա է գցում այդ աղջկան և ուղևորվում է հայրենիք, ուր ամուսնանում է մի հարուստ աղջկա հետ, մոռանալով, որ հեռավոր հյուսիսում թողել է ոչ միայն իրեն սիրող մի խեղճ աղջկա, այլև իր հարազատ դավակներին:

Իբրև վիպագրական փորձ՝ դա նույնիսկ նորություն էր մեր գրականության մեջ. առաջին անգամն էր մեզանում հրատարակվում մերկացնող վիպակ ուսանողական կյանքից: Բայց նյութը անձանոթ չէր, նորություն չէր կազմում, քանի որ «Մշակի» ընթերցողները տարիների ընթացքում տեսել էին Արծրունու խիստ հարձակումները գաղափարազուրկ ուսանողության վրա: Ինչ ասել կուզի, որ Արծրունին այդ գրվածքի մեջ հավատարիմ է իր հրատարակատեսակությանը: Բայց զուտ մշակական անվանել «Այնտեղ և Այստեղ»-ը կարելի է միայն մի հայտնի շափով: Համենայն դեպս, ուսանողական բարոյականության և անբարոյականության հարցը մշակական ծրագրի մի մասնավոր, երկրորդական կողմն է: «Մշակի» խոշոր, ահագին գործը թուրքահայերի հարցն էր: Այդ կողմից ոչ մի հայերեն պարբերական հրատարակություն չէր կարող համեմատվել նրա հետ: Եվ ահա այդ խոշոր գործը վիպագրության մեջ արտահայտողը միայն Բաֆֆին էր: Այդ պատճառով ենք նրա «Ջալալեղդինը» անվանում առաջին զուտ մշակական վեպ:

«Ջալալեղդինը» ահագին տպավորություն թողեց ընթերցող հասարակության մեջ: Սկսվում էր մեր վեպի փառավոր հաղթանակը: Միանգամից հրատարակ էր նետվում նոր, հրաշալի երևույթը՝ ոգևորվող մասսան, տաղանդի տիրապետությունը մտքերի վրա: Ինչի՞ն պետք է վերագրել այդ անօրինակ հաջողությունը: Վեպը օրվա հարցն էր շոշափում, նրան գրսում սպասում էր հասարակության տրամադրությունը: Սա, իհարկե, առաջին պայմանն է: Հետո գալիս են մի շարք ուրիշ պայմաններ: Քիչ վերևում մենք ասացինք, որ այն ժամանակվա գործիչները շատ լավ գիտեին, թե ինչ է հարկավոր, ինչն է պակասում, բայց չունենալով փորձ, չունենալով լուրջ ու ստուն ուսումնասիրություններ, հաճախ խորասուզվում էին ուտոպիայի մեջ, որը և թույլ էր տալիս նրանց ամենայն հեշտությամբ վճռել ահավոր պրոբլեմները: «Ջալալեղդինը» տոգորված էր այդ հատկություններով: Նրա մեջ կար դառն, անողորմ իրականություն: Բաֆֆին ճանաչում էր թուրքաց Հայաստանը, ծանոթ էր ժողովրդի կացությանը և ամենայն ուշադրությամբ հետևել էր այն դժբախտ անցքերին, որոնք 1877-ին տեղի ունեցան այնտեղ: Բայց կարելի է ասել, որ այդքանը դեռ բավական չէր: Բավական չէր կոտորածների, բարբարոսական անգթությունների ցնցող նկարագրությունը: Պահանջվում էր և ցուցմունք, խրատ: Ի՞նչ պիտի լինի,— ահա մեծ հարցը: Եվ Բաֆֆին պատասխանում էր այդ հարցին իր հերոսների միջոցով: Մշակականությունը ուտոպիաներ էր ստեղծում, բայց նրանց մեջ շոշափվում էր և այն իրականությունը, որ արդեն պատրաստվում էր, որ պիտի գար իբրև վաղվա գործ: Դա այն կոխն էր, որ մարմնացնում էին վեպի հերոսները:

«Ջալալեղդինը» Բաֆֆին ուղարկել էր «Մշակին» Ագուլիսից, ուր նա ուսուցչություն էր անում: Արծրունին շթողեց, որ մի այդպիսի տաղանդ թափառի գավառներում, մատնված աղա-հոգաբարձուների կամայականության: Եվ երբ Բաֆֆին, խիստ ընդհարում ունենալով Ագուլիսի հոգաբարձուներին հետ, թողեց ուսուցչությունը, Արծրունին կանչեց նրան Թիֆլիս, կանոնավոր վարձատրություն նշանակեց նրա աշխատակցության համար: Այնուհետև Բաֆֆին այլևս հարկադրված չէր կողմնակի զբաղմունքներ որոնել. առաջին հայ գրագետն էր նա, որ սկսեց ապրել իր գրական վաստակներով, բոլորովին անկախ, որոշ շափով ապահովված:

Եվ այս առաջին նշանավոր երևույթն էլ Արծրունու ձեռքի գործն էր, մի գործ, որ նա կարողացավ իրականացնել միայն իբրև հարուստ կալվածատեր, բանի որ «Մշակը» այնքան նյութական ապահովություն չէր տալիս, որ նրանով կարելի լիներ վարձատրության սկզբունքը գործադրել:

Բայց ինչ էլ լիներ, վարձատրվող աշխատանքը բարերար սկզբունք հանգիստացավ թե գրողի և թե լրագրի համար: «Մշակի» էջերում Բաֆֆին նվաճեց մի հուշակավոր անուն, մի գրական փառք, որի նմանը հազիվ թե նրանից առաջ և նրանից հետո վիճակված լինի որևէ վիպագրողի: Միմյանց ետևից տպագրվեցին «Մշակի» մեջ նրա վեպերը՝ «Ոսկի աքաղաղ», «Խենթը», «Դավիթ-Բեկը», «Խաչագողի հիշատակարանը» և մի շարք ուսումնասիրություններ, որոնցից գլխավորն է «Խամսայի մելիքություններ» հետաքրքրական աշխատությունը, «Հայ կինը» և «Հայ երիտասարդությունը»:

Գրական փառք ստեղծողը «Խենթը» և «Դավիթ-Բեկը» էին: «Խենթը» «Ջալալեղդինից» էլ ավելի ահագին, հափշտակող տպավորություն թողեց. նրա մեջ «Ջալալեղդինի» Բաֆֆին էր երևում, բայց ավելի հարուստ ֆանտազիայով, ավելի զարգացած նկարագրական տաղանդով և մանավանդ ավելի գրավիչ ու մեծ ուտոպիայով: Մշակականությունը ջախջախիչ հաղթանակն էր դա:

Բաֆֆին շատ անգամ է խոստովանել, որ ինքը «Մշակի» արդյունքն է, խոստովանել է նույնիսկ այն ժամանակ, երբ հեռացած էր «Մշակից»:

Եվ դա մի տարօրինակ, նորատեսակ երևույթ չէր: Նկատենք այստեղ, ինչպես բացատրեցինք իր տեղում, թե ինչ ահագին նշանակություն ունի շրջանը մի գրողի համար: Ռուսահայոց գրականության պատմությունը անհերքելի փաստերով ցույց է տալիս, թե ինչ ուժեղ ազդեցություն է արել ինքնուրույն, առաջադեմ, տաղանդավոր հրապարակախոսությունը ամբողջ գրականության վրա: Երկու փայլուն ապացույցներ ունենք՝ «Հյուսիսամիայլ» և «Մշակ», երկու դարոցներ, որոնց հրապարակ հանած գրական ուժերը պարմանալի բնորոշ, ինքնուրույն դեմքեր ունեն: Երբ 1883 թվին «Մեղուն», սաստիկ բանակավի մեջ կամենալով ոչնչացնել Բաֆֆիի վեպերի նշանակությունը, ասում էր, թե «Խենթի» մեջ ոչ մի նոր միտք չկա և այդ աշխատությունը «Մշակի» ամբողջ տարիների հայտնած մտքերի ի մի հավաքած ամփոփումն է, Բաֆֆին պատասխանեց. «Այդ կարծիքի հետ ես համաձայն եմ» («Մշակ» № 17):

Մենք նորից շնք ապացուցանի, որ Բաֆֆիի այդ պարզ խոստովանության մեջ չկա նրա տաղանդը ստորացնող, ինքնուրույնությունից զրկող որևէ հանգամանք: Բաֆֆին մի անտարբեր գեղագետ չէր, գեղարվեստը լուրջ գեղարվեստին չէր ծառայեցնում. նա խիստ տենդենցիոզ գրող էր, որի ամենագլխավոր ուշադրությունը նվիրված էր օրվա մեծ հարցին: Այդ հարցի վերաբերմամբ երկու տեսակ կարծիք չէր կարող լինել «Մշակում», քանի որ դա սկզբից ևնթ մի հայտնի խիստ որոշ ու պարզ հայացք ուներ թուրքահայերի և նրանց դրություն մասին: Ամեն ինչ կարող էր այդ անխախտ հայացքի շուրջը պտույտ գալ:

Անցքերը հաջորդում էին իրար դարմանալի արագությունը. շարժումը թուրքիայում ընդունում էր շտանգված բարդ ու կարևոր ընթացք. և Արծրունին լարում էր իր ուշադրությունը՝ ոչ մի աչքի ընկնող երևույթ լուրջան շտապում համար: Քրդերի և չերքեզների սովորական անգթությունները, սպանություններն ու թալանը 1878 թվականի այն օրերում, երբ հայը իրեն համարում էր քաղաքական իրավունքների տիրացած, ահագին բողոքների առարկա դարձան: Գավառները այլևս լուռ ու մունջ տանջվողները չէին. նրանք անդադար բողոքագրեր էին թափում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, ավելի բազմապատկելով ներսեսի աշխատանքներն ու ջանքերը: Մի կողմից պատրաստելով նյութեր՝ Եվրոպայի դիպլոմատիային հայերի դատը ներկայացնելու համար, մյուս կողմից նա եռանդուն միջոցներ էր ձեռք առնում գավառների դրությունը բարվոքելու համար:

Օրվա ծանրակշիռ հարց դարձավ թուրքահայերի գաղթականությունը: Գավառները, մանավանդ էրզրումի, Բասենի և նրանց հարևան գավառները, պատրաստվում էին գաղթել Ռուսաստան, որպեսզի ազատված լինեն թուրքերի վրեժխնդրությունից: Այդ շարժումը այնքան մեծ էր ու սպառնալից, որ նույնիսկ ռուսաց կառավարության ուշադրությունը գրավեց: Պատերազմի ժամանակ այնքան հռչակված հայազգի հերոս գեներալ Լազարևը, որ Կարսի բանակի գլխավոր հրամանատար էր նշանակված, հայերեն գրած մի կոչով դիմեց էրզրումի հայերին և համոզում էր նրանց թողնել գաղթելու միտքը՝ նախ այն պատճառով, որ Ռուսաստանում ազատ հողեր չկան և երկրորդ, որովհետև քրիստոնյա ազգաբնակչության ապահովությունը թուրք կառավարության խնամքի առարկան կդառնա և ռուսաց զորքերի հեռանալուց հետո: Այդ կոչը հասավ իր նպատակին: Լազարևը ահագին հեղինակություն էր վայելում էրզրումի և

շրջակաների հայերի մեջ և նրա խոսքը, բնականաբար, պիտի վերին աստիճանի ազդու լիներ: Եվ նա չբավականացավ այդ կոչով, այլևս սկսեց եռանդուն բանակցություններ թուրք իշխանությունների հետ:

Այսպիսով կարելի էր այն շարժման առաջն առնել, որ այն ժամանակ ամենքի համար մի վերին աստիճանի կորստաբեր քայլ էր, մի կատարյալ ինքնասպանություն: Արծրունին առաջնորդողի մեջ մեծ գոհունակությամբ խոսեց Լազարևի այդ գործի մասին: Նա ասում էր, թե գեներալ Լազարևը փառավոր կերպով կատարեց մի կրթված մարդու, մի քրիստոնյայի, պետական գործչի և վերջապես, բուն ազգասեր հայի պարտավորությունները:

Ներսես պատրիարքն էլ անտարբեր չվերաբերվեց թուրքահայերի այդ շարժման: Թե գաղթականության առաջն առնելու համար և թե մանավանդ գավառների դրությունը ուսումնասիրելու և անհրաժեշտ բարենորոգումների էությունը պարզելու համար նա ապրիլի վերջերում երկու վարդապետ ուղարկեց Հայաստան, որոնցից մեկն էր հայտնի գրագետ Գարեգին վարդապետ Սրվանձույանը: Սրա ներկայացրած գեկուցագրից երևում է, թե այն միջոցին որքան հուզված էր գավառական ժողովուրդը: Տիրում էր ընդհանուր անբավականություն, հայը պատրաստ էր նույնիսկ Պարսկաստան, Եգիպտոս գաղթել՝ իր հարստահարված դրությունից ազատվելու համար: Բայց պատրիարքական պատվիրակները հուսադրեցին, խրատեցին և կարողացան ետ կանգնեցնել ժողովուրդը գաղթելու կորստաբեր մտքից: Եվ նրանք բազմաթիվ համոզիչ փաստեր ունեին իրանց ձեռքում՝ ներսես պատրիարքի գործունեությունը, հայ պատվիրակությունը Եվրոպայում, Ազգային ժողովի միաբանությունը: Ժողովուրդը հույսը դրեց այդ նշանավոր երևույթների վրա: Ներսեսի անձնավորությունը դարձել էր մի գրավական, որ ազգի ցավերը այլևս չեն մոռացվի:

Այդպիսի գրավական էր նա ոչ միայն գավառացի ժողովրդի համար: Արծրունին տեսնում էր, թե որքան անսման եռանդ, մեծ քաջություն և գազափարականություն կար այդ հողեռականի մեջ: Մի՞թե դա նույն ներսեսն էր, որին Արծրունին երկու անգամ սաստիկ հարվածել էր «Մշակի» էջերում, անվանելով նրան նույնիսկ գավառացի: Փաստերը ցույց էին տալիս, որ նույն ներսեսը չէ: Նախկին թուրքամուսուլմանը տեղի էր տվել մի կրակոտ, անձնվեր գործունեություն ժողովրդի բարօրության համար:

Հունիսի 1-ին բացվեց Բեռլինի կոնգրեսը և պաշտոնական Եվրոպան սկսեց քննել Թուրքիայի գործերը: Ավելորդ է ասել, թե հայերը որքան մեծ հույսեր ունեին դրած այդ վեհաժողովի վրա, ինչ քաղցր ակնկալություններ էին դուրս գործում իրանց սրտի մեջ: Եվ ահա այդ սպասողության խորհրդավոր օրերում ռուսաց «Միջազգային հեռագրական ընկերությունը» տարածում է մի այսպիսի հեռագիր.

«ГОЛОС» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից հետևյալը. «Բ. Դուռը հայտնեց հայոց պատրիարք ներսեսին իր սաստիկ անբավականությունը այն հուզմունքի առիթով, որ հարուցել է Ս. Պետերբուրգում Թուրքիայի հայերի պատգամավոր կործան նարբեյ լուսինյան, Բեշիքթաշի արքեպիսկոպոսը: Բ. Դուռը խորհուրդ է տալիս ներսես պատրիարքին ետ կանչել կործան արքեպիսկոպոսին Կ. Պոլսի: Պատրիարքը հրաժարվում է հետևել այդ խորհրդին»:

Անցնում է երեք շաբաթ, կոնգրեսի նիստերը արդեն վերջանալու վրա էին, և նույն հեռագրական գործակալությունը այսպիսի մի հեռագիր է հաղորդում.

«ГОЛОС» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, «Նորերումս Բ. Դուռը դիմեց հայոց պատրիարք ներսեսին, պահանջելով, որ նա ետ կանչի Բեռլինից իր

պատգամաւորներին: Այս պահանջը հայտնելու համար պատրիարքարան եկավ պետական խորհրդի անդամ հայ Արրո էֆենդին, որ վաղուց թուրքաց ծառայութեան մեջ էր: Պատրիարքը, Արրո էֆենդիի կարճ ճառը լսելուց հետո, հետևյալ պատասխանը տվեց. «Հայտնեցեք Բ. Գոան, որ նա նախքան ինձ կարողանա ստիպել ետ կանչել հայոց պատգամաւորներին Բեռլինից, պետք է կարգադրել ինձ կախ անել պատրիարքարանի շինութեան առաջ: Հիտունելոթ տարի սրանից առաջ հունաց պատրիարք Գրիգորը բռնվեց նույն իսկ եկեղեցու սեղանի մոտ և քահանայական զգեստով կախվեց տաճարի դռներում: Ես կհետևեմ նրա օրինակին. կերթամ սեղանը, կզգեստավորվեմ և ավելի լավ կհամարեմ անձնատար լինել դահիճներին, քան թողնել իմ հոտը»: Այս հպարտ և վեհանձն պատասխանը շուտով հասավ ռուսաց դեսպանատուն: Ռուսաց դեսպան իշխան Լորանով-Ռոստովսկի, իմանալով ներսես պատրիարքի այս բացասումը, բացականչեց. «Մշ, նրանք շեն համարձակվի մինչև անգամ դիպել նրան»:

Տպագրելով այս հեռագիրը, Արծրունին «Մշակի» հետևյալ համարում իր առաջնորդդի վերնագիրը դնում էր՝ «Դուք ձեր պարտավորությունը կատարեցեք»: Այդ խոսքերը ուղղված էին ներսեսին: Եվ ահա ինչ էր ասվում այդ հոգվածի մեջ.

«Թուրքիայի հայոց հոգևորականությունը արժանի է դառնում ամբողջ ազգի խորին համակրությունը:

Այժմ, երբ ներսես պատրիարքը շողորթում էր թուրքաց տերությունը, անհոգ էր ժողովրդի կարիքների մասին, զոհում էր ազգի շահերը իր անձնական շահերի համար,— մենք նրա վրա անխնա կերպով հարձակվում էինք: Այժմ մենք շենք կարող չհայտնել նրան մեր կատարյալ համակրությունը, մեր հարգանքը, երբ նա իր քաջ վարմունքով, իր վեհանձն պատասխանով կրկին հարուցանում է հայ մարդու հոգու մեջ հինգերորդ դարի հայոց հոգևորականության հիշատակը:

Աշխարհը կհարգի հայերին միայն այն ժամանակ, երբ ամենքը կտեսնեն, որ հայը իր կյանքի գնով պաշտպանում է իր անձը, իր պատիվը, իր ազգի իրավունքները:

Թեև ներսես պատրիարքը իր հերոսական պատասխանով միայն իր պատվաբուրյունն է կատարել,— բայց մենք վաղուց է, որ առիթ չունենալով տեսնել, որ Թուրքիայի հայոց հոգևորականությունը իր պարտավորությունը կատարեք, հիացած ենք սրբազան ներսեսի պատասխանով»:

Արծրունու թշնամիները, որոնք երբեք բարեխիղճ և արդար վերաբերմունքի առաքինությունը չեն ունեցել, մատի փաթաթան շինեցին այս հիացմունքը, որին հակադրելով նախկին հարձակողական դիրքը դեպի ներսեսը, այն եզրակացությունն էին հանում, թե Արծրունին կրքոտ է, առանց աչ ու ձախ նայելու հարվածում է, հետո փոխում է իր հայացքը և այդպիսով փոփոխամտություն է ցույց տալիս: Սակայն դա փոփոխամտություն կլինեք միայն այն դեպքում, եթե ներսեսը անփոփոխ մնացած լինեք, եթե 1878-ին նա շարունակեր նույնը լինել, ինչ եղել էր 1876—1877 թվականներին: Եվ Արծրունին կատարյալ իրավունք ունեք ասելու, որ իր համար այլ է սկզբունքը. այլ է անձնավորությունը: Սկզբունքը անփոփոխ է մնում և միայն նրա տեսակետից վերաբերվելով այս կամ այն անձնավորության, բոլորովին արդարացի է հարձակվել մեկի վրա, երբ նա չի համապատասխանում այդ սկզբունքին և համակրել, երբ նա փոխում է իր դիրքը դեպի սկզբունքը, սկսում է ծառայել սկզբունքին:

Կոնգրեսի ժամանակ էլ «Մշակը» լիուլի բավականություն էր տալիս հասարակաց հետաքրքրություն: Անդրեսա Արծրունին, որ Բեռլինում էր գտնվում, մի շարք նամակների միջոցով ծանոթացնում էր ընթերցողներին այդ միջադեպին բարձր ատյանի պարապմունքների և մանավանդ հայ պատգամավորների ջանքերի, գտած ընդունելություն հետ:

Հայտնի է, որ կոնգրեսի միջոցին Անգլիայի ներկայացուցիչները, լորդ Քիկոնսֆիլդ և մարկիզ Սոլսբուրի, զարմացրին և ապշեցրին դիպլոմատիկական աշխարհը, հանկարծ հրապարակ հանելով այն գաղտնի դաշնագիրը, որ Անգլիան կապել էր Թուրքիայի հետ: Դա տխուր հիշատակության արժանի կիպրոսի դաշնագրությունն էր և դիվանագիտական գաղտնարաններից լույս էր հանվում այն միջոցին, երբ պիտի վերաքննվեք Սան-Ստեֆանոյի դաշնագրության 16-րդ հոդվածը: Այլևս խոսք չէր կարող լինել սրա մասին, քանի որ Կիպրոսի դաշնագրությանը Անգլիան, ստանալով Կիպրոս կղզին, Թուրքիայի հետ պաշտպանողական դաշինք էր կապում Ռուսաստանի դեմ, եթե վերջինս առաջ տաներ իր արշավանքը Հայաստանում. միևնույն ժամանակ Անգլիան երաշխավորություն էր հանձն առնում, որ Ասիական Թուրքիայում բարենորոգումներ կմտցվեն: Կոնգրեսին մնում էր Հայաստանի ռեֆորմների հարցն ընդհանուր ձևով մտցնել իր որոշումների 61-րդ հոդվածի մեջ:

Քիկոնսֆիլդի կառավարության այս վարմունքը մի նոր առիթ դարձավ, որ Արծրունին ավելի ևս խիստ կերպով դատապարտի անգլիական նենգ և եսամուր քաղաքականությունը: Մենք չպետք է մոռանանք, որ նույնիսկ Անգլիայում էլ Կիպրոսի դաշնագրությունը դատապարտվեց, մանավանդ 1895—1896 թվականների սարսափելի անցքերի ժամանակ, երբ այնքան պարզ հայտնի դարձավ, թե ինչ դաժան դեր է կատարել այդ դաշնագրությունը հայերի վիճակի մեջ...

III

Կրթական և կուլտուրական նպատակները բուրժուազ Հայաստանում: Մերձեցում ռուսահայերի և բուրժուազների մեջ: «Արարալյան ընկերություն». Մ. Փոքրուզալյան և Ա. Արփիարյան: Նվիրատվություններ: Ուրիշ կրթական-բարեսիրական ընկերություններ և Արծրունու վերաբերմունքը դեպի նրանց: Արծրունու ազդեցությունը Կ. Պոլսում:

Բեռլինում թուրքահայերին շնորհած 61 հոդվածը բավականություն չպատճառեց ոչ ժողովրդին, ոչ նրա առաջնորդ հանդիսացող գործիչներին: Սպասում էին ավելի մեծ բանի. ներսեսի հիշատակագիրը, որի մեջ նախագծված էր հայկական նահանգների վարչական բարենորոգված սխեմներ, ուշադրության շարժանացավ: Հիասթափությունը, լքումը հաջորդեց ոգևորության, մեծամեծ ակնկալություններին: Բայց ի՞նչ պետք էր անել. ձեռքերը ծալել ու նստել: Արծրունին այդպես չէր դատում: Մի հայացք զցելով երկու տարվա ջանքերի վրա, նա գալիս էր այն եզրակացության, որ այդ ժամանակամիջոցում հայերը այնքան քիչ բան են արել, որ այժմ ստացված հետևանքները պետք է շատ գոհացուցիչ համարել:

«Երկու տարի վայրկյան է մի ազգի կյանքի համար,— գրում էր նա հուլիսի 11-ի առաջնորդողում,— մանավանդ մի այնպիսի հեղափոխության ազդու-թյան համար, ինչպես հայերն են:

...Տարիներով մենք ոչինչ չենք արել և պահանջում ենք, որ երկու-երեք լուսավորված հոգևորականների ջանքերով, որոնց գործունեությունը շատերը մինչև անգամ աշխատում էին վնասել, ազգը հասնի նույն հաջող հետևանքներին, որոնց հասան պլախնայան ցեղերը հարյուր տարվա ջանքերով, աշխատանքով և անթիվ զոհաբերություններով:

Այն հետևանքներն էլ, որոնց մենք հասանք երկու տարվա ընթացքում, պետք է հրաշալի համարվեն...»:

Պատմական իրողությունը կատարվել վերջացել էր, նրան չէր կարելի փոփոխել և մնում էր իմանալ, թե ինչ պետք է անել իրերի ստեղծած նոր հանգամանքների մեջ:

«Հայի նպատակը պետք է այսուհետև լինի,— շարունակում էր Արծրունին,— զարգացնել իր բոլոր ազգային ուժերը իր մայրենի հողի վրա, մտցնել իր ազգի մեջ եվրոպական լուսավորություն, աշխատել բարվոքել իր ժողովրդի տնտեսական դրությունը և ամեն միջոցներով դեպի իրան գրավել շրջապատող վայրերի բարեկամական ցեղերը, մտցնել նրանց մեջ քաղաքակրթությունը, իսկ թշնամի թափառական ցեղերի դեմ զենքը ձեռին պաշտպանվել»:

Այս խոսքերից տասն օր անցած, Ներսես պատրիարքը Ազգային ժողովի մեջ արտասանեց իր նշանավոր ճառը, որից մենք վերևում մի քանի անգամ քաղվածքներ բերինք: Ներկայացնելով հաշիվ իր արածների մասին, Ներսեսը պաշտպանեց իր գործը մեծ ճարտարությամբ, ապացուցանելով, որ ավելի անկարելի էր ձեռք բերել: Ապա, դառնալով օրվա հոռետես տրամադրության, նա սկսեց ապացուցանել, որ չպետք է հուսահատվել, չպետք է ամեն ինչ կորած համարել: Աշխատել,— ահա ինչ է հարկավոր հային այսուհետև

«Իսկ մեք, տեարք երեսփոխանք,— բացականչեց Ներսեսը,— մեք հարատևենք մեր սկսած գործին մեջ: Այսպիսի գործեր ո՛չ մեկ օրվան մեջ, ո՛չ մեկ մարդու ձեռքով կրնան կատարվել: Պատրաստվենք մեր ապագային: Նախ՝ չկենանք հոս, Հայաստան երթանք, Հայաստան զրկենք ինչ որ ունենք ազգիս մեջ բանիբուն, տաղանդավոր, ազգասեր, ուսումնասիր կեկեղեցականներ, Հայաստան երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվոտն երիտասարդներ, Հայաստան երթան մեր արվեստագետներ, վաճառականներ, Հայաստան երթան մեր այնքան դժբախտ պանդուխտներ. ո՛չ ևս պիտի ըլլա հոն սով, սրածություն, ո՛չ ևս հարստահարություն, ո՛չ ևս կենաց և ընչից և պատվո առևանգություն, ո՛չ ևս աշխատության խափանում. ուղիներ պիտի բացվին, ջրանցներ պիտի շինվին. գործարաններ պիտի կառուցվին, Անզղիտ դրամատերք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու. թող երթան մեր դրամատերք ալ, ընկերություններ կազմեն այս օրվան. ընկերություններ ամեն քաղաք ու գյուղ՝ դպրոցներ հաստատելու համար. ընկերություններ՝ առևտրական հարաբերություններ հաստատելու համար, ընկերություններ՝ գործարաններ հաստատելու համար... Եվ այն ատեն՝ թերևս ես ալ ցավագար և անբուժելի հիվանդությամբ վարակեալ ի գերեզման իջած ըլլամ արդեն, այլ տեսնելով այսքան ազգային միասիրտ, միահոգի աշխատության գեղեցիկ արդյունքներ, տեսնելով պսակված մեր այսօրվան բոլոր հույսերը, հոգիս պիտի խայտազերեզմանիս մեջեն և պիտի ընդգրկե մեր սիրելի նախնեաց հոգիները...»:

Դժվար չէ նկատել, թե որքան սերտ համերաշխություն կա Ներսես պատրիարքի և Գրիգոր Արծրունու հայացքների, ծրագիրների մեջ: Ներսեսը նոր էր ամբիոնից քարոզում այն, ինչ Արծրունին վաղուց արծարծում էր «Մշակի» առաջնորդողների մեջ: Մենք տեսնում ենք երկու մարդիկ, հոգևորական գործիչ և հրապարակախոս, որոնք գեղեցիկ կերպով ըմբռնել են ժամանակի խոր-

հորդր: Այն կոչը, որ նրանք անում էին կուլտուրական և քաղաքակրթական առաջադիմության համար, շմնաց «ձայն բարբառո հանապատի»: Ժամանակի տրամադրությունը այդպիսի ձայներ էր պահանջում: Եվ ահա առաջ է գալիս խաղաղ գործունեության մի ուժեղ հոսանք: Հասարակականության ոգին բարձրացած է, հասարակության դարկերակը ուժգին բախումներով է գործում:

Այն նշանավոր երևույթների մեջ, որոնք հետևեցին այդ տարվա պատմական անցքերին, մենք առանձին կարևորություն տալիս ենք մանավանդ մեկին՝ առևտրային և թուրքահայերի մերձեցման, մի գործ, որի մեջ Արծրունին անագին երախտիք ունի: Մերձեցման ամենաազդու, ամենազլխավոր դրդիչներից մեկը «Մշակն» էր:

Մենք հիշատակեցինք այդ խոշոր հանգամանքը հարևանցիորեն, երբ պատմում էինք 1876-ի դեպքերը: Այստեղ պետք է ավելի մանրամասն խոսել նրա մասին, բացատրելով, թե ինչ հանգամանքներ նպաստեցին այդ մերձեցման և սվեբ՝ էին Արծրունու աշխատակիցները Կ. Պոլսում:

Իսկական շարժառիթը մի բարեգործական ընկերություն էր, որ մեծ անուն հանեց մանավանդ 1878—1879 թվականներին: Դա «Արարատյան ընկերությունն» էր, հիմնվել էր պատերազմից առաջ, 1876-ի ապրիլին, Կ. Պոլսում, երեք երիտասարդների ձեռքով: Հիմնադիրներից մեկն էր պ. Արփիար Արփիարյան, որ նոր էր ավարտել Մուրատյան վարժարանը և Կ. Պոլսում տեղ էր գտել մի առևտրական հիմնարկության մեջ:

Թուրքահայերը շատ վաղուց էին հասկացել կրթական-բարեսիրական ընկերությունների նշանակությունը: Եվ այն ժամանակ, երբ առևտրային հասկացողություն չունեին այդպիսի հիմնարկությունների մասին, Կ. Պոլսում և գավառներում կազմվում էին բարեգործական ընկերություններ, որոնցից շատերը իրանց նպատակով ցույց էին տալիս, թե որքան զարգացած է թուրքահայերի մեջ հանրային շահերի գիտակցությունը: Սակայն կար և այն հանգամանքը, որ այդ համակրելի բարեգործական հիմնարկությունները մեծ գործունեություն չէին ցույց տալիս, խոշոր միջոցներ չէին կարողանում ձեռք բերել: Ամեն մեկը ծառայում էր մի փոքրիկ գործի, ծառայում էր իր փոքրաթիվ անդամների հայթայթած օժանդակության շահով:

Այսպես էր, ըստ երևույթին, և «Արարատյան ընկերությունը» իր գոյության սկզբում: Նրա նպատակն էր Հայաստանից երեխաներ տանել Կ. Պոլիս, այդտեղ կրթել նրանց, սովորեցնելով ձեռարհեստ և տալով նախնական կրթություն: Այսպես պատրաստված երիտասարդները պիտի նորից վերադարձվեին Հայաստան և այնտեղ ուսում տարածեին տարրական դպրոցների միջոցով: Այնքան համակրելի այդ նպատակը իրագործելու համար ընկերությունը սկզբում շատ խեղճ նյութական կարողություն ուներ: Առաջին տարվա ընթացքում նրա եկամուտը 70 ոսկի էր (մոտավորապես 6—7 հարյուր ուրլի): Բայց ընկերությունը միշտ այդպես խեղճ չմնաց:

Նրա հիմնարկության օրից քիչ անցած, նույն 1876-ի գարնան վերջերում, վարչության մեջ մտավ ուսուցիչ պ. Մկրտիչ Փորթուզայան, որ հայտնի էր նաև իրրև կառավարության ձեռքով խափանված «Ասիա» լրագրի խմբագիր: Պ. Փորթուզայան միևնույն ժամանակ թրթակցում էր «Մշակին» Կ. Պոլսից: Դա առաջին թուրքահայն էր, որ սկսեց կանոնավոր թրթակցություններ տալ «Մշակին» մի այնպիսի ժամանակ, երբ Թուրքիայի գործերը ամբողջ աշխարհի ուշադրություն էին գրավել: Նրանից առաջ էլ «Մշակի» մեջ տպագրվում

էին պոլսական թղթակցութիւններ, բայց դրանք կազմուեալ էին թիֆլիսում մասնաւոր նամակներից և Կ. Պոլսից եկողների պատմածներէրից:

Իբրև «Արարատյան ընկերութեան» վարիչներից մեկը, պ. Փորթուգալյան 1876-ի ամառը ճանապարհովեց թիֆլիս՝ հատկապես «Մշակի» խմբագրին տեսնելու և «Արարատյանի» մասին նրա հետ խորհրդակցելու համար: Ինքը, պ. Փորթուգալյան, իր տպագրած հիշողութիւնների մէջ խոսել է այդ ճանապարհորդութեան մասին, ուստի ամենից լավ է խոսքը տալ նրան:

«Գ. Արծրունիի հետ երկար խորհրդակցութիւնների հետո, — գրում է պ. Փորթուգալյան, — որոշեցինք որ գործունեութեան կենտրոնը Վան լինի:

Չեմ ուզեր հոս երկար բացատրութիւնների մէջ մտնել ապացուցանելու համար, թե արդարացի պատճառներով մենք այդ որոշման եկանք հանգեցանք: Եվ Վան երթալ ու տարիներով հոն աշխատալես հետո պիտի հաստատուեալ եմ այդ մտքի վրա:

Գ. Արծրունիին հայտնած էի մեր Արարատյան ընկերութեան կազմակերպութիւնը, որ նպատակ ուներ հայաստանցի տղաներ Կ. Պոլսի մէջ պատրաստել, իրենց ուսում և արհեստ սովորեցնելով, և հետո զանոնք Հայաստան ղրկել, որ հոն աշխատին իրենց հայրենիքի համար: Նա, ինչպես արդեն քսած եմ, չէր հավաներ գործելու այդ կերպին. «Դուք Կ. պոլսեցիներդ Պոլիս նրստած կգրեք ու կխոսեք. պետք է ձեր գործ ուղղակի Հայաստանի մէջ կատարեք և առանց ուշացնելու. ինչո՞ւ պոլսեցիներն իրենք Հայաստան շեն երթար աշխատելու և առանց Հայաստանը ճանաչելու, Կ. Պոլսի մէջ կճառեն ու կգրեն Հայաստանի համար» կսեր:

Իրավացի կգտնեի Արծրունիի այդ դիտողութիւնը և իրեն կըսի որ «Կ. Պոլիս վերադարձիս Արարատյան ընկերութեան կառաջարկեմ այդ ծրագիրը և կհուսամ, որ հաջողեմ ընդունել տալ, իհարկե, ես անձամբ կենեմ կերթամ Հայաստան, կրթական գործին հոն աշխատելու համար: Արծրունին պնդեց այդ մտքի վրա և տրամադրութիւն ցուցուց, որ եթե Կ. Պոլսի ուսուցիչ հայ երիտասարդութիւնը հայաստանցիների կրթական գործին համար Հայաստանի մէջ աշխատող ընկերութիւն մը կազմե, ինք ալ ուսաստանցի մէջ կաշխատի, որ աջակցեն Տաճկա-Հայաստանի մէջ ուսում և կրթութիւն տարածելու այդ գործին»:

Եվ որպեսզի այդ աջակցութիւնը ազատ լինի պ. Փորթուգալյանը Արծրունու խորհրդով Կոչոր ամառանոցում ներկայացաւ կովկասյան փոխարքայի օգնական իշխան Ավյատոպոլկ-Միրսկուն, որպեսզի իմանա նրա տրամադրութիւնը դեպի թուրքահայերը: Խոսակցութեան մէջ նա հայտնեց թուրքահայ նախկին խմբագրին, որ ուսաց կառավարութիւնը թուրքահայերի լավութիւնն է ուզում: «Հետեւելով իր ավանդական քաղաքականութեան, — հարեց նա, — ուս կառավարութիւնը չի կարող անտարբեր աչքով նայել թուրքի այլ քրիստոնյաների հարստահարումը վիճակի վրա»:

Այս տեսակցութիւնն արդեն մի գրավական էր, որ ուսաստանցիք անարդի կարող են նպաստել իրանց հարստահարումը եղբայրակիցներին:

«Ես մի քանի շաբաթ միայն մնալով թիֆլիս, — շարունակում է պ. Փորթուգալյան, — վերադարձա Կ. Պոլիս նոր գաղափարներով և մտքիս մէջ նոր ծրագիրներ կազմելով:

Արարատյան ընկերութեան մէջ իմ ամենեն մտերիմ ծանոթն էր այն ժամանակ Տ. Մ. Չերազ: Գիշեր մի ելա գնացի Խասգյուղ իր տուն: Արարատյան ընկերութեան նպատակի գործադրութեան ձևը փոխելու խորհուրդս հայտնեցի իրեն. ինքն ալ համակրեցաւ հայաստանցիներին համար Հայաստանի մէջ

գործելու գաղափարին: Եվ որովհետև ես ընդհանուր ժողովի ատենակցութեան լիակարող չէի կարող վիճարանութիւններ ընել ժողովին մէջ, Մ. Չերազ, որ գործադիր ժողովի ատենակցութեան էր, ինք ներկայացուց և պաշտպանեց առաջիկա ընդհանուր ժողովին մէջ մեր նոր ծրագրի համեմատ առաջարկ մը»:

Այսպիսով Գրիգոր Արծրունու քարոզած գլխավոր մտքերից մեկը գործնական լուծում էր գտնում կյանքի մէջ: «Արարատյան ընկերութիւնը» փոխեց իր գործունեութեան եղանակը, և պ. Փորթուգալյան, ինչպես ասել էր Արծրունու, ինքն անձամբ գնաց Վան: 1876-ի հոկտեմբերին գավառների համար գործող Կ. Պոլսի հայութեան առաջին քայլը հաստատուեց Հայաստանի հողի վրա: Վանի մտտ, Ալյուր գյուղում, բացվեց «Արարատյանի» առաջին գյուղական գործը: Պ. Փորթուգալյան գավառական գարոցների ընդհանուր տեսուչ էր եղանակվել Ընկերութեան կողմից: Բայց նա չկարողացաւ որիշ գարոցներ էլ լսեց անել: Միջոցներ չկային, և, բացի դրանից, նա այնպիսի մարդկանցից չէր, որոնք անտարբեր էին դեպի ազգի վիճակը հարստահարութիւնների, կեղերումների այն ժամանակներում: Նա սկսեց ներկայացնել գավառների տխուր իրականութիւնը՝ մանրամասն թղթակցութիւններ ուղարկելով «Մշակին» և Կ. Պոլսի թերթերին: Այդ թղթակցութիւններից մեկն էլ, որ տպվեց Կ. Պոլսում, պատճառ դարձաւ, որ նա հեռանա Վանից այն ժամանակ, երբ արդեն սկսվել էր սուս-թուրքական պատերազմը: Պարսկաստանի վրայով նա անցաւ թիֆլիս, ուր մնաց համարյա մի ամբողջ տարի և մեծ եռանդով աշխատակցում էր «Մշակին»: Ահա այդ ժամանակ էլ պ. Փորթուգալյան «Մշակի» թղթակցի է դարձնում «Արարատյանի» մէջ գործող իր ընկերներից մեկին՝ պ. Արփիար Արփիարյանին:

Մեր խնդիրքով պ. Արփիարյան գրել է մեզ, թե ինչ հանգամանքների մէջ ես կապվեց «Մշակի» հետ: Եվ որովհետև նա «Մշակի» լույս հանած խոշոր ուժերից մեկն է, մենք այստեղ կարևոր ենք համարում բերել նրա իսկական պատմութեանը:

«Թը մը, — գրում է պ. Արփիարյան, — Փորթուգալյանն նամակ մը ստացա հեռակալ պարունակութեամբ. «Թիֆլիս լուր տարածված է, որ Անգլիան կուզե Հայաստանի իշխան նշանակել տալ թագուհին կրտսեր որդին, էտիմպուրջի գութսը, բայց ներսես պատրիարք կհակառակի եղեր: Ամբողջ թիֆլիս հուզված է, և Արծրունին Փորթուգալյանին վրա վազած է, գոռալով պոլսեցիներուն և ներսես պատրիարքին հիմարութեան դեմ»: Փորթուգալյան ինե տեղեկութիւն կխնդրե: Գրեցի թե այդ լուրը բոլորովին անհիմն է. ոչ առաջարկ եղած է, ոչ մերժում: Ու այս առթիւ քանի մը լուրեր ալ հաղորդեցի: Ու շարունակեցի իրեն հետզհետե գրել Պոլսո գործերու մասին: Իրեն գրած նամակներս կատորագրեի «Հայկակ», որ ինծի քաղցր հիշատակ մըն էր վենետիկեն, երբ Ալիշանին «Հուշիկները» կտպագրվեին ու մենք ալ փորձերը կկարգայինք:

«Մշակ» և Գրիգոր Արծրունի 1876-ին ատենները Պոլիս գրեթե անձանոթ էին. միայն «Մեղուն» լուսած էինք: Ես, վենետիկ աշակերտութեանս, Արծրունի եղբայրները տեսած էի, բայց ով կամ ինչ եղած ըլլալին չէի գիտեր: Փորթուգալյան այդ մտենը իմացուցած էր ինձի:

Օր մըն ալ ծրար մը «Մշակ» ստացա, որոնց մէջ տեսա իմ այն նամակներս, որոնք անհատապես Փորթուգալյանին գրած էի: Ստորագրված էին Հ. տառով: Քիչ ատենեն Փորթուգալյան Պոլիս եկաւ: Իրեն հարցուցի իմ անհատական նամակներու հրատարակման շարժառիթը: Պատասխանեց, թե «Արծրունին հետաքրքիր մնալով Պոլսո լուրերին, անհատական նամակներդ իրենց կուտայի, ու ինքն ալ զանոնք անելով կտպագրեք»: Եվ պ. Փորթուգալ-

յան ավելցուց, թե Արծրունին կհնդրեր, որ շարունակեի իրեն ալ գրել: Առաջարկը ընդունեցաւ, թեև քիչ մը զարմացած, վասնզի գրական ասպարեզի մեջ չէի գտնվեր, և մինչև այն ատեն գրականութիւն ընելու հետամտած չէի:

Սկսաւ գրել, և նամակներս կհրատարակվեին «Հայկակ» ստորագրութեամբ: Այսպես սկսան «Մշակի» հետ այն հարաբերութիւնները, որոնք անփոփոխ բարեկամութեամբ կշարունակվին մինչև այսօր: Այդ թղթակցութեանց հետևի վանքը այն եղաւ, որ ես անզգալարար շեղեցաւ առևտրական ու սեղանավորական ասպարեզին, ուր կատաղանայի, և մղվեցաւ դեպի գրականութիւնն և հանրային կյանք:

Սեղանավորական տան մը մեջ պաշտոն ունենալով, ես միշտ հանգստի ժամերես կպահէի «Մշակին», որով կարող չէի ըլլալ գրութիւններս խնամել այնպես, ինչպես որ պետք էր: Այդ թղթակցութիւնները Պոլսի ուշադրութեան գրավեցին, և թղթակիցը իմանալու հետաքրքրութիւն արթնացաւ: Ես բոլորովին անծանոթ մըն էի, ուստի ոչ ոք կմտաբերեր անծանոթ մը փնտրելու սկզբան Արվանդտայնցին և Մամուրյանցին վերագրվեցան, բայց հետո իմացվեցաւ թե ով էր:

Ահա ինչ պատմութիւն ունի «Մշակի» համար այն շափաղանց կարեւոր իրողութիւնը, որ 1878-ից նրա էջերում սկսեց մեծ տեղ բռնել, հետզհետեւ հարստանալ, զարգանալ թուրքահայերին վերաբերող բաժինը: Կ. Պոլսից ահագին ինքնուրույն նյութ էր ուղարկվում Արծրունուն: Հայկակի պես անխոնջ լավատեղյակ, տաղանդավոր թղթակից երբեք ոչ մի հայ թերթ չի տնայնից Տարիների ընթացքում նա տիրում էր ընթերցողների մտքի վրա: Եթե Արծրունին գլխավոր ղեկավարն էր իր կրակոտ, խիստ ու հատու հրապարակախոսութեամբ, եթե Բաֆֆին նրա առաջնակարգ օգնականն էր և ընթերցողի գրավում էր իր վիպագրական տաղանդով, — երբորդ խոշոր ուժը, որի վրա հիմնվում էր «Մշակի» հեղինակութիւնը, ժողովրդականութիւնը, անշուշտ Հայկակն էր իր մանրամասն, միշտ հետաքրքրական, միշտ գրավիչ թղթակցութիւններով, որոնց մեջ ընդարձակ լուսաբանութեան էին ենթարկվում Կ. Պոլսի և առհասարակ թուրքահայերի բոլոր փոքրիշատե աչքի ընկնող գործերը: Իր երկար բեղմնավոր գործունեութեամբ, համակրելի մշակական գաղափարներով, Հայկակը այն աստիճան գրավեց ուսանողների սերն ու համակրանքը, որ երբ 1884-ի կաթողիկոսական ընտրութեան ժամանակ եկավ Կոնկաս, Թիֆլիսում և Երևանում նրան ընդունեցին խանդավառ ոգևորութեամբ:

Հասկանալի է, որ Արծրունին, այսպիսի մի եռանդուն, շնորհալի կաղամկերպութեան գլուխ անցած՝ պիտի ծանրակշիռ հեղինակութիւն ձեռք բերեր միայն ուսանողների մեջ, այլ և Կ. Պոլսում:

Ներսես պատրիարք, — գրում է մեզ պ. Արփիարյան, — զգաց, թե «Մշակին» որքան բան կպարտեր: «Մշակին» առաջին հարձակումը իրեն մեջ մեծ ցնցում առաջ բերավ. բայց հետո «Մշակին» ուղղութիւնը իրեն զորավիգ ելավ: Ուշադիր կհետևեր ամեն հրատարակութեանցը, և կջանար տհաճելի լրջաբան Արծրունիին: «Մշակին» մեջ իրեն նկատմամբ ունեւ աննպաստ հրատարակութիւն զինքը կվշտացներ, կզայրացներ:

Իսկ հակաանբոսնայանները, որոնց պարագլուխ էին Նուրյան, Փափագյան, Մամուրյան և այլն, սաստկապես կզայրանային «Մշակի» դեմ: Բայց և այնպէս, «Մշակի» արտակարգ կարևորութիւնը զգալով, ամենքն ալ կջանային որևէ միջոցով ազդել «Մշակին» վրա: Իրենց այս տրամադրութիւնը շատ ոգտակար եղավ ինձի, վասն զի կարող կըլլայի ամենն ալ տեղեկութիւն ստանալ, կարծիք լսել, ամեն ինչ գիտենալ: Եվ այսպէս «Մշակին» Պոլսո թրգ

թակցութիւնները ունեին ընդհանրական հանգամանք մը և կատարկապես անկախորեն կգրվեին»:

Ուժեղ շփումը հայութեան երկու խոշոր հատվածների մեջ առաջացնում է սերտ համերաշխութիւն և ընդունում է այնպիսի շոշափելի գործերի կերպարանք, որոնց նմանութիւնը դեռ չէր տեսնված մեղանում:

Պ. Մ. Փորթուզալյանը, 1878-ի ապրիլին ճանապարհով թիֆլիսից, «Մշակի» մեջ հրատարակեց մի նամակ տպեց, որով ուսանողների ուշադրութիւնն էր դարձնում «Արարատյան ընկերութեան» կրթական նպատակի վրա: Արծրունին, հիմք առնելով այդ նամակը, օգնութեան հրավեր կարդաց և այնուհետև իր հովանավորութեան տակ առավ համակրելի ընկերութիւնը: Վանի հրկիզալներին համար հավաքված գումարից խմբագրութեան մեջ մնում էր 1000 ուրլի: Այդ գումարը Արծրունին հատկացրեց «Արարատյանին»: Նրա հրավերը լայն արձագանք գտավ ուսանողների մեջ: «Մշակի» էջերը սկսեցին լցվել զանազան կողմերից ուղարկվող նվիրատվութիւնների ցուցակներով: Այդ ցուցակները, իհարկե, ընթերցանութեան նյութ չէին «Մշակի» էջերում: Բայց նրանք մի նոր, նայնպէս մինչև այդ չեղած, երևույթ էին պատկերացնում: Հանգանակութիւնը բուն ժողովրդական կերպարանք ուներ: Այլևս հարուստները չէին, որ նպաստում էին աղքատին գործին հոգու փրկութեան կամ փառքի համար: Հրապարակ էր դալիս ժողովրդի գիտակցութեան, ինքնաճանաչութեան տուրքը, ամեն դասակարգերից հավաքված շնչին նվերներով, ժողովրդական կոպեկներով կազմվում էին գումարներ: Մինչև 1879-ի վերջերը չէին դադարում նվիրատվութիւնները: Թիֆլիսի մյուս հայ պարբերական հրատարակութիւններն էլ հետեւեցին «Մշակի» օրինակին, բայց ոչ ոք նրա շափ հավաքել չկարողացավ: Ընդամենը Արծրունին 13 000-ից ավելի մի գումար հասցրեց «Արարատյան ընկերութեան»:

Պետք չկա բացատրելու, թե համեստ նվիրաբերութիւնները ինչ մեծ բարոյական մղում էին առաջացնում ուսանող ժողովրդի մեջ: Պակաս մեծ չէր նրանց ազդեցութիւնը և Կ. Պոլսում: Ահա այդ առիթով ինչ է գրում մեզ պ. Արփիարյանը.

«Արարատյան ընկերութեան» և «Մշակին» փոխադարձ հարաբերութիւնները հզորապէս նպաստեցին «Մշակի» ժողովրդականացմանը թուրքի մեջ: Մինչև այդ ատեն շատ քիչ օժանդակութիւն եղած էր Ռուսիային մեր կրթական գործին, կամ բնավ չէր եղած: Պոլսո մեջ ապշութիւնը տիրեց, ինչպէս և բոլոր թուրքի մեջ: Ինչպէ՞ս կարելի էր, որ այնքան գումարները խրկվեին ընկերութեան մը, որուն մեջ և ոչ մեկ ծանոթ անուն կար: Ամենքս ալ 21—27 տարու երիտասարդներ էինք, հրապարակին վրա անծանոթ: «Մշակին» աջակցութիւնը այն հետևանքը ունեցավ, որ թուրքի հայերն ալ սկսան վստահիլ «Արարատյան ընկերութեան», և այսպէս կարող եղանք տարեկան 1500 ոսկիի մոտ գումար մը հատկացնել Հայաստանի կրթութեան»:

Այստեղ էլ, ուրեմն, Արծրունին որոնեց ու գտավ «ձկնորսներին», հասարակ, անհայտ երիտասարդներին, որոնք գործելու եռանդ ունեին: Մշտական հարաբերութիւններ պահպանելով այդ երիտասարդների հետ, նա շատ լավ տեղյակ էր «Արարատյան ընկերութեան» ծրագրին, ձգտումներին, ուստի և համարձակ կերպով հանձնարարում էր միայն այդ ընկերութիւնը ուսանողների ուշադրութեան: «Արարատյանի» գտած մեծ համակրանքը առիթ գարձավ, որ և Պոլսի հայերը ուրիշ առիթներով էլ դիմեն ուսանողների բարեսիրական զգացմունքին: Բայց Արծրունին միմիայն «Արարատյանի» մեջ խմբված անծանոթ երիտասարդներին հավատարիմ մնաց: Բանը հասարակութեան դիմելը չէր:

Հրապարակախոսը, հորդորելով նվերներ տալ, պիտի նախ և առաջ երաշխա-
վոր լինեն, որ նվերները ապահով կգործադրվեն և երկրորդ՝ որ նպաստ ստա-
ցող հիմնարկությունը համապատասխան նրա գաղափարներին: Երբ 1879-ին
Ամբրոսիոս վարդապետ Ռուբինյան եկավ Կովկաս՝ իր ծրագրած երկրագործա-
կան դպրոցի համար փող հավաքելու, Արծրունին ոչ միայն շօգնեց նրան,
այլև ուղղակի հակառակվեց: Գուցե պատճառներից մեկն էլ այն էր, որ վար-
դապետը բուրժուազիայի օգնության դիմեց: Անձամբ շրջելով դանազան հա-
յաբնակ տեղեր, նա հավաքեց բավական խոշոր գումար, ուղղելով իր դիմում-
ները, հաշիվները «Փորձին», որի խմբագիրն էլ նրա կազմած հանձնաժողովի
անդամներից մեկն էր: Բայց հավաքած խոշոր գումարը ոչ մի գործադրու-
թյուն չստացավ և անհայտացավ վարդապետի գրպանում:

Մինչդեռ «Արարատյան ընկերությունը», զլխավորապես Արծրունու աջակ-
ցության վրա հույս դրած, գլուխ բերեց մի գեղեցիկ ձեռնարկություն: 1878-ի
վերջում Մ. Փորթուգալյան գնաց Վան և 1879-ի հունվարի 1-ին, հաղթելով բազ-
մաթիվ արգելքներ, բաց արավ վարժապետանոցը, որի նպատակը հայտնի է
հենց իր անունից:

Վանը թուրքաց Հայաստանի խոշոր հայաբնակ կենտրոններից առաջինն
էր, որ սերտ հարաբերություններ սկսեց «Մշակի» հետ: Կ. Պոլսից հետո գա-
առաջին քաղաքն էր, որ այնքան առատ ու մանրամասն թղթակցություններով
պատմում էր իր հոգսերն ու խղճերը իր վաղեմի հարազատներից մեկի, իր
նշանավոր իշխան Գևորգ ազա Արծրունու հարստությանը պահպանվող և նրա
թոռան ձեռքով խմբագրվող լրագրում: Փորթուգալյանի այնտեղ գնալը ավելի
ևս պիտի առատացներ թղթակցությունները: Այդպես էլ եղավ: Թուրքական
հայաբնակ գավառների ընդհանրապես անհայտ ու խուլ կյանքի տարեգրու-
թյան համար շատ թանկագին նյութեր են պարունակում այդ բազմաթիվ թղթ-
թակցությունները:

«Վարժապետանոցը, — գրում է մեզ Ա. Արսիխյան, — վերածնության
կենդանի մը պիտի ըլլար ամբողջ հայ աշխարհին համար: Հայաստանի և Կի-
լիկիոս ամեն քաղաքն պիտի ընդունվեին աշակերտներ, որոնք Վան հավաք-
վելով և վանեցիներուն հետ կրթվելով, Վանը պիտի ըլլար մտավորական կենդ-
ան մը, ուրկե մեկնող աշակերտները սերտ կապեր պիտի ունենային իրարու
հետ: Բայց այս բավական չէր, վարժապետանոցին մեջ պիտի ընդունվեին
թուրքեր, քուրդ բեյերու տղաք և նեստորականներն, որով ամբողջ երկիրը
պիտի միանար: Այդ ծրագիրը սկսավ գործադրվել, և թուրք աշակերտներ ըն-
դունվեցան դպրոց»:

Այս էլ Արծրունու այն քարոզության հետևանքն էր, որ անդադար կրկնում
էր, թե հայերը պիտի քաղաքակրթություն տարածեն իրանց հարևան ազգու-
թյունների մեջ և այդպիսով անվնաս դարձնեն նրանց: Ափսոս, որ Վանի վար-
ժապետանոցը երկար գոյություն չունեցավ, որպեսզի կարելի լիներ տեսնել
թե որքան կենսունակ էր այդ միտքը, — մի միտք, որ հեշտ է երևում միայն
իրև թղթի վրա գրված թևերի կամ Բաֆֆիի վեպերի մեջ ֆանտաստիկական
գրավչություն ստացած ուտոպիա:

Սակայն անկախ այս հանգամանքից էլ, Վանի վարժապետանոցը մի գե-
ղեցիկ, նմանը չունեցող երևույթ էր թուրքաց Հայաստանում: Նա դարձավ այն
բուրան, որի մեջ ապագայի տոկուն գործիչներ ձուլվեցին: Այսպես ահա, Գրի-
գոր Արծրունին վերակենդանության շարժում մտցրեց իր նախնիքների հայ-
րենիքում: Որ նա է եղել բուն պատճառը, այդ մենք արդեն տեսանք: Բայց

... և ներ մի այլ պաշտոնական վկայություն: Ահա ինչ ենք կարդում «Արարատ-
յան ընկերություն» 1878—1879 թթ. տեղեկագրի մեջ*.

«1878 թ. ապրիլ ամսո մեջ պ. Մ. Փորթուգալյանի առաջարկությամբ՝
կիսիսու «Մշակի» խմբագրապետ պ. Գրիգոր Արծրունի իր առաջնորդող հոգ-
վածներով հրավեր կկարգար Ռուսիո Հայոց իրենց ազդեցությունը շնորհել
Արարատյան ընկերության բարգավաճման. ուրախ եմք որ պ. Գրիգոր Արծ-
րունու հրավերը ոչ միայն անխելի շմնաց, այլև մեծ ընդունելություն գտավ
Ռուսիաբնակ Հայոց մեջ, և քիչ ատենեն Տփլիս, Ալեքսանդրապոլ, Բաքու,
Փոլի, Միսֆերոպոլ, Երևան, Ախալցխա, Մոզդոկ, Մատրաս, Սարատոֆ, Պետ-
րովսկ, Ղուբա, Սլավոնկա, Մեծ Ղարաքիլիսա, Վերին Ագուլիս, Դավալու
և ման գյուղեր, Մոսկվա, Սեն-Բեթերսպուրկ և այլն «Մշակի» էջերն լեցուցին
իրենց նվիրատվությամբ. թատերական ներկայացումներ, գրական երեկույթ-
ներ, ատենախոսություններ, հանգանակություններ թե իգական և թե արական
սեռի մեջ 8000 ասուրիս ավելի արդյունք արտադրեցին: Դպրոցական հարկի
տակ գտնվող պատանիք և աղջկունք Հայաստանի իրենց հասակակից եղբայր
և քրոջ վրձակին վրա խանդաղատյալ՝ եռանդյամբ մասնակցեցան նվիրատ-
վության: Գոհությամբ տեսանք, որ եկեղեցական հարք անտարբեր չգտնվեցան
այս օժանդակության գործուն և կարծես թե Կ. Պոլիս ու Տփլիս, հայության
սրտ երկու մեծ կենդանիները Վասպուրական աշխարհի և Տավրոսի լեռանց լու-
սավարության համար առաջադիմության պայքար մը հարուցին:

Արարատյան ընկերությունը յուր երախտապարտ զգացումները կհայտնե-
ն մեծապ. պարոն Գրիգոր Արծրունի, որ առաջինը եղավ ընկերության հոգ-
վաշտպան հանդիսանալու և երբ ըսենք թե հայ ազգը իր առաջին վարժապե-
տանոցը պ. Գրիգոր Արծրունիով աշխատության պարտական է, լուկ ճշմարտու-
թյուն մը միայն խոստովանած կլինիմք»:

Ժամանակի ընդհանուր ոգևորությունը պատկերացնելու համար այստեղ
կ'իշատակենք, որ Կ. Պոլսում և գավառներում փոքրիկ ընկերություններ կազմ-
վեցին՝ «Արարատյանին» օգնելու համար: Այսպես, մի խումբ պատանիներ
«Ասիական» ընկերությունն են հաստատում՝ Վանի վարժապետանոցի դասա-
գրքերը մատակարարելու համար, իսկ Քաղկեդոնի երեխաները իրանց «Միու-
թյուն մանկանց» ընկերության միջոցով նույն վարժապետանոցի թղթեղենն
են հոգում: Ֆրանսիական դեսպան Ֆուլոնիեի հովանավորության տակ կազմ-
վում է «Արարատյան ընկերության» պարահանդեսը, որ տալիս է 700 օսման-
յան լիբրալից ավելի արդյունք...

Այդ ոգևորությունը, այդ նախանձելի հաջողությունը, բնականաբար, պիտի
զրգեն Կ. Պոլսում գոյություն ունեցող մյուս կրթական-բարեսիրական ըն-
կերություններն էլ դեպի ավելի եռանդուն գործունեություն: «Դպրոցասիրաց»,
«Արևելյան», «Կիլիկյան» ընկերությունները նույնպես նպատակ ունին Հա-
յաստանի զանազան կողմերում ուսում տարածելու: Առաջին երկուսը միացան
խոր հետ և ստացան «Դպրոցասիրաց-Արևելյան» անունը: Այդ հիմնարկու-
թյուններն էլ, իհարկե, իրավունք ունին սպասելու հասարակական օժանդա-
կության: 1879-ին Կովկաս եկավ «Դպրոցասիրաց-Արևելյան» ընկերության
բարտուղար պ. Հովհաննես Շահնազար, որ հետո շատ համակրելի համբավ
տացավ իբրև հիմնադիր և խմբագիր «Հայրենիք» լրագրի: Նա հրավերներ
տվեց «Մշակի» և «Մեղուի» մեջ, բայց աչքի ընկնող հաջողություն չունեցավ:
Արծրունին լիստովեց այդ գործի մեջ, և պ. Շահնազարի ճանապարհորդու-
թյան հետևանքներից մեկն այն եղավ, որ նա մոտիկուց ծանոթացավ Արծ-

* Կ. Պոլիս, 1879, եր. 5—6.

բունու հետ, սկսեց գրել «Մշակի» մեջ երեք աստղ ստորագրութեամբ, ինչպէս նաև Քիֆլիսում մի բանասիրական հոգւած տվեց «Հենց» ստորագրութեամբ: Այդ մերձեցումը անշուշտ շատ հարկավոր եղավ պ. Շահնազարին, քանի որ նա տարիներից հետո գլուխ անցավ մի լրագրի, որ ահագին հաշտութեամբ առաջ տարավ մշակական ուղղութիւնը Կ. Պոլսում:

Պոլսեցի հայուհին շարժման, կենդանութեան այն տարիներում նույնպէս երևան եկավ իր կարողութիւնները գործադրելու համար, նպատակ ունենալով դարձյալ գալառների կրթութիւնը: Թուրքահայ կանայք նույնպէս վաղուց սովորել էին ընդհանուր ուժերով, ընկերակցութիւնների միջոցով հասարակական գործունեության նվիրվել: Եվ ահա կազմվում է «Հայուհեաց ազգանվեր» ընկերութիւնը՝ գալառների համար վարժուհիներ պատրաստելու նպատակով: Ընտրվում էին այդ պաշտոնի համար բացառապէս աղքատ աղջիկներ, որոնք հեշտ կլինէր գալառներն ուղարկել: «Ազգանվեր հայուհիներն» էլ դիմեցին ուսաստանների օգնութեան: Ահա ինչ էր գրում տ. Մարիամ Պիլլորյան Արծրունու ուղղած իր նամակի մեջ.

«Ձեր ազգասիրութեան համբավը մինչև հոս մեր տկանքը հասած է: Երբ այս Տփլիս գտնված ժամանակը ձեզ հետ տեսնվելով ձեր գովելի հանգամանքները մեզի ծանուցած է, որով կհամարձակեմ երկտող գրովս բուն նամակիս նպատակը ձեզ հայտնելու:

Հայուհեաց ազգանվեր անունով ընկերութիւն մը կազմեցաւ Կ. Պոլսի Իսկուտար գյուղին մեջ. այս ընկերութեան բուն փափագն է Հայաստանի մէջ գտնվող խեղճ հայ աղջկանց ուսմունք սորվեցնել: Այս ընկերութիւնը արդ օրեօր տարածվելու վրա է և ամեն գյուղերու մեջ հյուղեր ունի, մասնաձուլումներ կկազմեն:

Արդ, մեծապատիվ տեր, ձեզի կաղաչեմ, որ բարեհաճիք Տփլիսի հայ տիկնայց և օրիորդաց այս ընկերութեան վախճանը ծանուցանելով բաժին տալու դիրենք համոզելու ջանաչիք»:

Արծրունին միայն բավականացավ այս ընկերութեան կանոնադրութեան «Մշակի» մեջ տպելով: Քիֆլիսի հայ կանայք անուշադիր շմեացիին դեպի «Ազգանվեր» և իրանց հավաքած ու ուղարկած նվերների ցուցակը տպագրեցին «Մեղուի» մեջ: Ինչո՞ւ Արծրունին այս անգամ էլ իր կողմից դիմում չարեւ հասարակութեան: Նա մի անգամից հայտարարել էր, թէ նվերներ հավաքում է միայն «Արարատյան ընկերութեան» համար և, ինչպէս տեսանք, հավատ ունի միայն դեպի այն ընկերութիւնը:

Բայց կանքը ցույց էր տալիս այդ վերաբերմունքի միակողմանիութիւնը: Համակրելի ձգտումներ ունեցող ընկերութիւնները բազմաժամ էին, նրանք բոլորն էլ դիմում էին հասարակութեան, կարծես մի տեսակ մրցութիւն էին առաջ բերում. առանձին-առանձին, ջլատված ուժերով գործելու ձգտում էին հանդես բերում: Կանքը ցույց էր տալիս, որ այդ ջանքերը, որքան էլ ինքնուրուիքայան աղնիվ լինեն, չեն կարող առանձին շոշափելի արդյունք տալ, մի արդյունք, որ մանավանդ համապատասխաներ ժամանակի արտադրած մեծ ու լայն պահանջներին: Հասնելով այդ անսխալ եզրակացութեան, Արծրունին «Ձեռք հավատում» վերնագրով մի քանի առաջնորդողների մեջ ցույց տվեց թէ որքան անբավարար են առանձին, անջատ ջանքերը: Եվ պարզեց իր լայն հայացքներով գեղեցիկ տպավորութիւն ազդող մի ծրագիր այն հասարակական գերի և գործունեութեան մասին, որ պիտի ունենան կրթական և մտազար առաջադիմութեան ծառայող հիմնարկութիւնները: Նա պահանջում էր մի կողմ մակերպութիւն, որ կենտրոնացնէր իր մեջ ամբողջ ազգի կարող և ընդունակ

ուժերը, որ ունենար իսկական համազգային կերպարանք և կարողանար գործել նույն այդ ազգի ամբողջութեան համար, առանց դավանական խտրութեանների, առանց կրոնական բաժանումների: Եվ պահանջում էր, որ Կ. Պոլսի բոլոր բարեգործական ընկերութիւնները միանան իրար հետ, որպէսզի կարողանան ավելի լայն ու մեծ ծրագիր իրականացնել ընդհանուր, միացած ուժերով:

Այդ պահանջը շարժացան անտես անել Կ. Պոլսում, այնքան համազգիչ էին նրա պատճառաբանութիւնները: 1879 թվականի վերջերում արդեն սկզբութեամբ կայացել էր երեք ընկերութիւնների միացման համաձայնութիւնը, և 1880-ի առաջին համարներից մեկում «Մշակը» տպում էր Կ. Պոլսից իրան ուղղած հեռագիրը այսպիսի բովանդակութեամբ. «Ձեր ջանքերը պսակվեցան, երեք ընկերութիւնների միութիւնը սկզբունքով ընդունված է պաշտոնապէս»: Ազգունքը գործի փոխվեց: «Արարատյան», «Գարոցասիրաց-Արեւելյան» և «Կիլիկյան» ընկերութիւնները դարձան մի մարմին, որ ստացավ «Միացյալ ընկերութիւններ» անունը: Ինչպէս հայտնի է, երկար ժամանակ գոյութիւն պահանջեց այդ բարեհիշատակ, երախտավոր ընկերութիւնը, մինչև որ հասավ հանրածանոթ մեծ ազեւը, որ խորտակեց ամեն ինչի հետ և «Միացյալ ընկերութիւնները»:

Արծրունու գրիչը, որ այսպիսի երևույթներ էր առաջացնում, տպագրական խոսքի մեղանում շտեմնված հաղթանակն էր: Այդ ուժը տարածութիւնների չի ճանաչում: Պ. Արփիարյան մեզ ուղղած գրութեան մեջ ասում է. «Մեզի համար նոր երևույթ մըն էր, որ Քիֆլիս հրատարակվող թերթ մը այնքան ուժեղնապէս միջամտեց զուտ Թուրքիոյ Հայոց գործերուն. այնպէս որ «Մշակը» կրնար համարվել իբր Պոլիս հրատարակվող թերթ մը: Մուտքը Թուրքիա քաղցր արգելվեցավ, բայց առանց հետևանքի»:

Բայց եթէ Քիֆլիսում «Մշակը» հենց իր առաջին քայլերից առաջացրեց իսկառականութիւն իր դեմ, մի՞թէ Կ. Պոլսը պիտի բացառութիւն կազմեր: Ոչ, այնտեղ էլ առաջ եկավ նույն երևույթը: Մշակական աշխարհայացքը հաստատ հող նվաճեց և Բոսֆորի ափերում: Եվ անպատճառ հարկավոր չէր, որ «Մշակը» միշտ անձամբ գործեր այնտեղ: Թուրքահայ ինտելիգենցիայի մեջ նա ստեղծեց դպրոց, հրատարակախոսական գրոշակ, և տեղական ուժերը անկախ կերպով առաջ տարան այդ գրոշակը: Մշակական ուղղութեամբ լրագրութիւն սկիզբ առավ, որ ամենափայլուն երևույթն է կազմում Թուրքահայ մասուլի պատմութեան մեջ:

Բայց այս երևույթի մասին մենք հետո կխոսենք: Առայժմ շփոզենք մեզ գրադեցնող պատմական մեծ փաստը՝ արեւմտյան և արեւելյան հայութիւնների մերձեցումը:

IV

Հայոց հարցի առաջին փայլերը: Խոսքի ազատութիւնը Կ. Պոլսում: Դավառների ուսումնասիրութիւնը: Դասախոսութիւններ Քիֆլիսում: «Թուրքացիների տնտեսական դրութիւնը»: Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքը դեպի հայերը, ռուսասիրական ցույցեր: Բողոքներ Անգլիայի դեմ: Քրդական շարժման կազմակերպութիւնը:

Քաղաքական հանգամանքների հզոր ազդեցութեան տակ անհրաժեշտութիւն դարձած այդ փաստը չէր կարող լինել մի վաղանցուկ բռնկում, բոպից ծնված և ժամանակի ազդեցութիւնից հնացող ու մոռացվող հասարակական

մի շարժում: Որովհետև նույն քաղաքական հանգամանքները այնպես չդասա-
վորվեցին, որ արագ, վախճանական լուծում բերեն թուրքահայերի դատի հա-
մար: Ընդհակառակն, նրանք երկարատև, ամենաժանր երկունքի կերպարանք
տվին այդ դատին: Ծիշա էր, ներսես պատրիարքը շեշտում էր իր ճատի մեջ,
թե նոր էր սկսվում թուրքահայերի հարցը: Նա հղացավ Սան-Ստեֆանոյի մեջ
և այդ հղությունը պաշտոնապես ճանաչվեց Բեռլինում: Այստեղ եվրոպական
դիպլոմատիան, ստորագրելով միջազգային այն դաշնադրությունը, որի նպա-
տակը պիտի լիներ թուրքական արևելքի խաղաղեցումը, չիմանալով կամ գու-
ցեն դիտմամբ թողեց մի քանի կետեր, որոնք արևելյան հարցի դարձվոր
արյունոտ ասպարեզում կրկան էին հանում նոր նահատակություններ, նոր
ահավոր պաշարներ:

Թուրքիայի հայերը հենց սկզբից զգում էին, որ այդպիսի մի ապագա է
պատրաստվում իրանց համար: Բայց զգում էին և այն, որ պետք է աշխա-
տել, պետք է իրականություն դարձնել մարդավայել ապրելու այն իրավունքի,
որ վավերացված էր պետությունների ստորագրություններով: Եվ հասկանալի է, որ
նրանք անհամբեր էին, ուզում էին, որ իսկույն իրագործվի հատկապես իրանց
համար խմբագրված դաշնագրական հոդվածը: Հուլիսից և հուսիսարևմտյան
ներք հաշորդում էին օր օրի վրա, քաղաքական ծանրաշափը տեսա՛վ-տեսակ
կանակներ էր ցույց տալիս: Բայց կար մի հանգամանք, որ անդադար աշխա-
տելու, գործելու բարեբարություն էր ցույց տալիս: Դա այն ազատությունն
էր, որով թուրքահայը իր տան մեջ խոսում էր իր ցավերի, իր իրավունքների
մասին: Դարերով կաշկանդված լեզուն արձակվել էր իր կապանքներից: Թուր-
քահայը անվախ պահանջներ էր անում իր կառավարությունից:

Եվ կառավարությունն սկզբում չէր համարձակվում ճնշել այդ ազատու-
թյունը: Նոր վերջացած դժբախտ պատերազմը իր ահավոր, ցնցող հետևանք-
ներով այնպես չէր հարվածել օսմանների պետությանը, որ կարելի լիներ
իսկույն կեթ, եվրոպական դիպլոմատիայի դանակի տակից դուրս գալուն պես,
նոր խստություններով, նոր անհաշտ, կոպիտ քաղաքականություններ վրդովել
քաղաքակիրթ աշխարհի միտքը, որի առջև նա աշխատում էր ձեռնալ իրի
մի բարյացակամ պարտական, որ անկեղծ կերպով կամենում է կատարել իր
բոլոր պարտավորությունները: Այդ պատճառով նա աշխատում էր հնար կոպ-
ծին շափ քաղցր ու բարեհաճ տրամադրություններ շահել հայերին և մատնելի
արանքով էր նայում իր հպատակների եռանդուն շարժմանը:

Այդ թուլություն, այդ վախկոտության հետևանքն էր խոսքի այն ազա-
տությունը, որ ասիական բռնապետությունների պատմության մեջ միանգա-
մայն անօրինակ մի բան է: Ներսես պատրիարքը դարձավ քաղաքական այն-
պիսի մի ուժ, որին արհամարհել չէր կարող թուրքաց կառավարությունը:
Առաջին անգամն էր Բոսֆորի ափերում հաստատվում այն իրողությունը, որ
մահմեդական լծի տակ ճնշված մի ազգության ներկայացուցիչը անմիջապես
դիմումներ էր անում եվրոպական դեսպաններին, պահանջելով նրանց աջակ-
ցությունը՝ թուրքաց կառավարության վրա ճնշում գործ դնելու համար: Եվ
նրան լսում էին, նրա հեղինակությունը ճանաչում էին: Կ. Պոլսից ներսեսը
ազգում էր և եվրոպայի հասարակական կարծիքի վրա, հրատարակելով կար-
միր տետրակներ, որոնք պարունակում էին իրանց մեջ հայոց հարցին վերա-
բերող վավերագրեր:

Եվ ներսեսը մենակ չէր: Նրան ձայնակցում էր թուրքահայ ամբողջ մա-
մուլը: Տպագրական խոսքի ազատությունը վերջացրել էր ստրկական վախկո-
տությունը, և մամուլը արձագանք էր տալիս օրվա հրատապ հարցերին, բա-

ցորձակ պահանջներ անելով, լայն տեղ տալով գավառներից թափվող բողոք-
ներին, հուսահատական աղաղակներին և միևնույն ժամանակ մանրամասն
որձանադրելով այն ամենը, ինչ եվրոպայում խոսվում և գրվում էր հայերի
մասին:

Խոսքի ազատությունը միայն մամուլի մեջ չէր: Նա չէր սահմանափակ-
վում և հրապարակական ժողովների մեջ: Թուրքահայերի պաշտոնական ներ-
կայացուցիչ Աղապին ժողովը իր պարապմունքների առարկաների մեջ էր
մտնում և հայկական հարցը: Նա հատուկ հանձնաժողով էր կազմել բարենո-
րագումների հարցն ուսումնասիրելու համար և վիճաբանությունների մեջ ամ-
բիոնից հաճախ լսվում էին ճառեր, որոնց մեջ քննվում էր եվրոպական քա-
ղաքականության բռնած ընթացքը հայերի վերաբերմամբ, նույնիսկ և թուրք
կառավարության վերաբերմունքը: Աղապին ժողովն ուներ մի մեծամասնու-
թյուն, որ պատրիարքի հետ ձեռք ձեռքի տված էր գործում: Ներսեսին զեմ
էր ընդդիմադիր կուսակցությունը, որ թեև գործում էր եռանդով, բայց իր հա-
կառակություններով միայն քաջարի պատրիարքի փառքն էր բարձրացնում:

Այդպես էր Կ. Պոլսը: Անօրինակ կենդանի շարժումն արտահայտվում էր
և հրապարակական հանդեսների, դասախոսությունների մեջ: Ամենքի հոգան ու-
մաժողովները գավառներն էին: Թշվառ, հարստահարված, բուն երկիրը, վեր-
ջապես, դարձել էր մի առաջնակարգ, ամենակարևոր հարց, կյանքի և մահ-
վան հարց: Կ. Պոլսի հայ գաղթականությունը, վերջապես, տեսնում էր, որ
այնտեղ, գավառներում է հայությունը: Նոր-նոր սկսում էր ճանաչել նրան,
և որ-նոր ուսումնասիրում էր իրական Հայաստանը և աշխատում նրա բախ-
տի, նրա ապագայի համար:

Իսկ բուն երկրի գրությունն այնպես էր, որ միայն լարել կարող էր ուշա-
գրությունը, միայն բորբոքել կարող էր սկսված շարժումը:

Մենք արդեն տեսանք, որ Հայաստանի շատ տեղերում սկսվել էին գաղ-
թականության պատրաստություններ: Դա մի ահագին բողոք էր, որ բարձրաց-
նում էր ժողովուրդը տիրող վարչական ռեժիմի դեմ: Թուրք կառավարությունը
չէր ուզում, որ այդ բողոքը եվրոպայի ուշագրությունը գրավի, ուստի ներսեսի
աջակցությունն էր դիմում՝ ժողովուրդը խաղաղեցնելու համար: Դեռ Բեռ-
լին կոնգրեսը չէր հավաքվել, երբ ներսեսը Հայաստան ուղարկեց Գարեգին:
Սրվանձախանց և Վահան Պարտիզակցի վարդապետներին: Պաշտոնապես նրանց
հանձնարարված էր գաղթականության առաջն առնելու հոգսը, բայց նրանց
առաքելության բուն նպատակն էր ուսումնասիրել Հայաստանում տիրող իրա-
կանությունը, հավաքել փաստեր վարչական անկարգությունների, հայերի և
մյուս ազգերի տնտեսական գրություն, թվի մասին...

Մեծ ճշմարտություն կար Գրիգոր Արծրունու այն շարունակ կրկնվող մտքի
մեջ, թե Կ. Պոլսը չի ճանաչում իրական Հայաստանը: Ներսեսի պատվիրակ
վարդապետները բավական պարզեցին այդ իրականությունը, ամիսներով շրջե-
լով երկրի զանազան կողմերը: Նրանց զննություններից երևաց, որ դա ավե-
րանքների, թշվառության, հուսաբեկության իրականությունն էր: Վահան վար-
դապետը այցելեց այն տեղերը, որոնք կամ շատ մոտ էին պատերազմական
բեմին, կամ հենց այդ բեմի շրջանում էին գտնվում: Նա տեսավ ամեն տեղ
և որ, թարմ ավերակների կույտեր, տեսավ կողոպտված, տանջված մի ազ-
գաբնակչություն, որի դաշտերը ամայի էին մնացել, որի տնտեսությունը ոչըն-
չացրած էր: Այդ նոր ավերակների մոտ, ահագին տարածությունների վրա,
այցելուին նայում էին անցյալ ժամանակների ավերակները, որոնք ցույց էին
տալիս, թե ինչպես մաշվել, անհայտացել է հայ ազգաբնակչությունը: Հարյուր-

ներով էին հաշվում յուրաքանչյուր գավառի մեջ ավերակ, հանգած էկեղեցիներն ու վանքերը, ամառի գերեզմանատները»:

Հասկանալի է, որ այդպիսի դրուժյան մեջ բռնալուծ մի ժողովուրդ միանալ գամայն հուսահատված պիտի լիներ: Եվ մյուս պատվիրակը, Գարեգին վարդապետ Սրվանձտյան, զեկուցանում էր Ներսես պատրիարքին, թե ինքը ամեն տեղ տեսավ գաղթելու ընդհանուր տրամադրություն: Գաղթել, բայց ո՞ւր: Ամեն տեղ, ուր կարելի էր՝ Աֆրիկա, Պարսկաստան: Ժողովուրդը տեղերի խտրություն չէր ճանաչում, բոլորովին ճիշտ չէր, թե նրան գրավողը Ռուսաստանն էր: Գրավիչը գաղթականությունն էր, հայրերի, պապերի երկրից հեռանալը: Այնքան հուսահատական էր դրուժյունը:

Եվ նրան հուսադրում են, նրան խրատում են նստել, սպասել: Եվրոպացիացած պատվիրակությունը, Բեռլինի վեհաժողովը, Ներսեսի գործունեությունը դառնում են վառ հույսեր, գրավում են գավառների ուշադրությունը, և նրանք վճռում են նստել, սպասել: Միայն Զեյթունն էր, որ հավատարիմ մնալով իր անցյալին, գաղթելու մասին չէր մտածում, այլ նորից ապաստանություն գործակ էր բարձրացրել իր լեռների վրա:

Ժամանակը հուլիս էր. պահանջները կուտակվում էին և օր առաջ լուծում էին սպասում: Նա դիմումներ էր անում, բայց նրա պահանջները հանդիպում էին խուլ, խնամքով սարքած դիմադրություն: Եվ ահա 1878-ի վերջում, Ռուսիայի վեհաժողովից հազիվ մի քանի ամիս անցած, Ներսեսը ներկայացրեց իր առաջին հրաժարականը: Դա քաղաքագիտական մի քայլ էր, որ նա անում էր բողոք արտահայտելու, ճնշում գործ դնելու համար: Նրա հրաժարականը չընդունեց Ազգային ժողովը: Բ. Դուռն էլ չէր կարող հայ ժողովրդի դժգոհության բռնկում առաջացնել և նույնպես չհամաձայնվեց, որ ահագին ժողովրդական նույնություն վայելող պատրիարքը հեռանա իր պաշտոնից: Քաղաքագիտական քայլին թուրք կառավարությունը պատասխանեց ավելի ճարպիկ քաղաքագիտական ընթացքով: Նա հայկական նահանգները կոմիսարներ ուղարկեց, որոնք պիտի տեղն ու տեղը ուսումնասիրեին բարենորոգումների հարցը և նույնիսկ գործադրեին հարկավոր միջոցները՝ ժողովրդին վստահություն ներշնչելու համար: Թեև հրաժարված՝ Ներսեսը իր կողմից էլ ներկայացրեց ինչպես ուղարկեց կոմիսարներին հետ:

Թուրք կառավարության ճիշտ որ հաջողվեց խաբել ոչ միայն հայերին, այլև դիպլոմատիկական աշխարհը: Կոմիսարները ճանապարհորդում էին մեծ շուքով, անմիջապես հաղորդակցություն ունեին Բ. Դուռն հետ: Գավառներում նրանք լսում էին ժողովրդի գանգատները, խորհրդի էին հրավիրում տեղական գիտցող մարդկանց, ինչպես նաև եվրոպական հյուպատոսներին: 1878 թվականի առաջին կեսում այդ ճանապարհորդող պաշտոնական հանձնաժողովը կարողացավ հույսեր և ինքնավստահություն ներշնչել հայ ազգարհայկություն: Սպասում էին, թե այդ ճանապարհորդությունից մի բան դուրս կգա: Բայց միևնույն ժամանակ լսվում էին լուրեր, թե քրդական մի միություն է կազմվում՝ իրրև հակադրություն հայոց հարցին: Օղի մեջ զգացվում էր հեռավոր սպասելիքի ծանրությունը: Զենքի ու վառոդի հոտ էր գալիս: Գոնե նույն 1879-ի կեսին «Голос» լրագրի թղթակիցը գրում էր, թե սկսվել է քրդական հեղափոխություն, որ կապված է հայոց հարցի հետ: «Հայերը, — ասում էր ռուս լրագիրը, — այժմ զինվորված են: Նրանք իրանց զենքերը գնել են Մուխտար փաշայի փախստական թուրք զինվորներից»: Միևնույն ժամանակ

* Վանան վ. Պարտիզակցի, «Խոսք զհայրենյաց», 4. Պոլս, 1879:

լուրեր էին գալիս, թե Հայաստանը Արևելյան Ռուսիայի ինքնավարությունը պիտի ստանա:

Ահա ինչ տարուբերվող, հուզված դրուժյան մեջ էր հայերի միտքը: Բնական է, որ արգասավոր, եռուն ժամանակի ծնած բազմաթիվ հարցերի մեջ առաջին, ամենակարևոր տեղը բռներ թուրքահայերի գործը: Եվ ռուսահայերը այդ բնական ազդեցության տակ ավելի ու ավելի մոտենում էին թուրքահայերին: 1879-ի գարնանը Թիֆլիսում կազմակերպվում են մի շարք հայերեն գասախոսություններ: Այդ շարքը բաց է անում Գրիգոր Արծրունին իր մի դասախոսությամբ, որի վերնագիրն էր «Թուրքաց հայերի տնտեսական դրուժյունը»: Ինչպես և ամեն մի բան, որ վերաբերում էր թուրքահայերին, այդ գասախոսությունը մեծ ուշադրություն գրավեց. լսել կամեցողների թիվը այնքան շատ էր, որ հարկավոր եղավ նրան մի անգամ էլ կրկնել: Մյուս դասախոսություններից երկուսն էլ վերաբերում էին թուրքահայերին. Արգար Հովհաննիսյան կարդաց «Հայը և Հայաստանը օտարների աչքում», Մերենցը կարդաց «Կիլիկիա»:

Իր գասախոսության մեջ Գրիգոր Արծրունին հավաքել էր այն բոլոր տեղեկությունները, որոնք ներկայացնում են թուրքահայի տնային-տնտեսական կյանքը: Կատարել մի այնպիսի ուսումնասիրություն, որ առարկան պատկերացնեք բոլոր կողմերից լիակատար իրականությամբ, իհարկե, անկարելի է: Թուրքաց Հայաստանը մի անհայտ երկիր էր մեր գրականության մեջ, իսկ այն սակավաթիվ աղբյուրները, որոնք կարող էին նյութեր տալ, ինչպես երեւում է, ծանոթ չեն եղել Արծրունուն: Այնուամենայնիվ, այդ գասախոսությունը շատ հետաքրքրական էր իրրև առաջին փորձ մի համառոտ, ամփոփ տնտեսական, որի մեջ շոշափվում էին թուրքաց Հայաստանի տնտեսական հանգամանքները: Ինքը, գասախոսն էլ խոստովանում էր, որ անկատար է իր ուսումնասիրությունը և հրավիրում էր ուրիշներին լրացնել, առաջ տանել նույն գործը: Նրա ձեռքի տակ եղած տեղեկությունները գլխավորապես հավաքված էին ժամանակակից լրագիրներից և թուրքաց Հայաստանը տեսած ու ճանաչող մարդկանցից: Գասախոսությունը հետո թարգմանվեց գերմաներեն և ռուսերեն լեզուներով և այդպիսով մատչելի դարձավ օտար գրողներին, որոնք և իրանց դատողությունները հիմնում էին Արծրունու այդ բողոքների վրա:

Նկարագրելով Հայաստանի աշխարհագրական և կլիմայական պայմանները, բնական հարստությունները, Արծրունին դիմում էր հայ ազգի կուլտուրական ընդունակություններին, բացատրելով, թե ինչպես է նա շահագործում իրության տված հարստությունները և թե որքան նա բարձր է իր հարեան ազգերից կատարելագործված արհեստներով, աշխատասիրությամբ և տնտեսությամբ: Այդտեղ երևում է Արծրունու ամբողջ ժողովրդասիրությունը: Իր առաջնորդողների մեջ նա անդադար հարվածներ էր թափում, հայությունը ներկայացնում էր ամենամոայլ գույների մեջ: Բայց այդ անխնա մերկացումները ի նկատի ունեին միայն ինտելիգենտ, վաճառական դասակարգերը, հոգեփրականությունը: Բուն ժողովուրդը մեծարվում էր իրրև մի ազնիվ, աշխատասեր, բայց տգիտության և պատմական հանգամանքների շնորհիվ դժբախտ և հարստահարվող մի բազմություն:

Այդ քննությունը, այդ վառ հավատը դեպի ժողովուրդը երևում է մասնավորապես այդ գասախոսության մեջ: Թուրքիայի գավառաբնակ հայ գյուղացուն, արհեստավորին նա անվանում է Ասիայում ապրող եվրոպացի: Մանավանդ մեծ է նրա համակրանքը դեպի տնարար, դարմանալի աշխատասեր և արտարարվեստ հայուհին: Բայց ասիաբնակ այդ եվրոպացին ապրում է

քաղաքական այնպիսի հանգամանքների մեջ, որ մնում է միշտ ստորագրել, միջոց հետո անձնական և համայնական երջանկությունից:

Նրա դրուժությունը պետք է բարձրանա: Դա յուրաքանչյուր կուլտուրական ազգի իրավունքն է: Եվրոպական դիպլոմատիան ասում է, թե փոքրաթիվ ազգ ազգը: Բայց թիվը նշանակություն չունի: Ամենազիջաժողը կուլտուրական կարողությունն է: Այդպիսի կարողությունը հզորապես օժտված մի փոքրիկ ազգություն կարող է իր մեջ ձուլել իրան շրջապատող այն ազգերը, որոնք սեփական կուլտուրա չունեն, որոնք մեռած են հանրամարդկային քաղաքակրթության համար և երբեք չեն կարող իրանց սեփական ուժերով առաջադիմել: Ի՞նչ պիտի լինի Ասիայի խորքերում ապրող եվրոպացի հայի վիճակը:

«Շատ քիչ ցեղերին աշխարհիս երեսին վիճակված է եղել պատմության մեջ ավետել մարդկությանը մի որևէ նոր բարոյական սկզբունք... Գուցե հայերին վիճակված է, թեև ոչ այնքան բարձր, բայց նույնպես մի նոր քաղաքական սկզբունք ավետել մարդկությանը, այն է, որ կարելի է հասնել ազատությանը քաղաքակրթական խաղաղ պատերազմով, առանց ապստամբվելու, առանց զենք բարձրացնելու: Դարավոր տանջանքներով, ամենօրյա այխատանքով, կուլտուրական խաղաղ կոպտի, տոկոն կերպով մարտնչում են հայերը բարբարոսության և կամայականության, տգիտության և ֆանատիկոսության, մի խոսքով բռնավորության դեմ: Գուցե հայերին վիճակված է իրանց բռնած ընթացքով ոչնչացնել այն ժամանակակից բարոյական սկզբունքը, որ մեր լուսավորված տասնիններորդ դարում դեռևս տիրապետում է Եվրոպայում, որ լուսավորված աշխարհի սկզբունքն ու դեկրետ է. «Je m'insurge donc je suis» («Ես ապստամբվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»): Իսկ հայերը կարծես ասում են. «Ես աշխատում եմ, ես տանջվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»: Ահա, կարծես, հայերի նշանաբանը: Եվ ճշմարիտ, որ է ավելի դժվարը, ապստամբվել մի քանի ամիս, զուցե մեկ երկու տարի իր և թշնամու արյունը թափել, թե հազար տարի շարունակ ամենօրյա կուլտուրական պատերազմ վարել ճնշող ուժի դեմ: Գուցե հայերին, արևմտյան լուսավորված Եվրոպայի ժամանակակից անմարդասեր գաղափարի դեմ այդ կենդանի բողոք ներկայացնող ազգությունը, վիճակված է ոչնչացնել այն անբարոյական սկզբունքը, որ պահանջում է ճնշված ազգից, իր գոյությունը ապացուցանելու համար, զենք վերցնել, ապստամբվել, արյուն թափել, ուրեմն գործ դնել ճնշող ուժից, բարբարոսությունից ազատվելու համար նույն զենքերը, որ նույն իսկ ճնշող ուժը, բարբարոսությունն է գործ դնում...»

Եթե թուրքիայի հայերը չկարողանան հաղթող հանդիսանալ, կոչնչանալ կամ կգաղթեն իրանց հայրենիքից, եթե նրանց հայրենիքը կդատարկվի իր բնիկ ազգից,— այն ժամանակ ամոթ այն Եվրոպային, որ շօգնեց նրանց իր գործել մարդկության ապագա քաղաքակրթության սկզբունքը:

Իսկ եթե նրանք, շնայելով բոլոր արգելքներին, հաղթող կհանդիսանան, նրանք կվաստակեն լուսավորված աշխարհին նոր սկզբունք, նոր նշանաբան ավետելու փառքը՝ «Քաղաքակրթական, կուլտուրական աշխատանքի պատերազմ, արյունի պատերազմի փոխանակ»: Այն ժամանակ հայոց ազգը իր օրինակով կամաշացնի լուսավորված և մարդասեր աշխարհը:

Արդյոք կարողություն, համբերություն կունենա՞ թուրքիայի հայը իր հազար տարվա կուլտուրական պատերազմը մինչև վերջը նույն ձևով առաջ տանելու և բախտավոր վախճանին հասցնելու, թե՞ հուսահատվելով, համբերություն կորցնելով, կշեղվի նա իր բնությունը հատուկ բռնած ընթացքից, իր պատմական կոչումից և կդիմե այն միջոցին՝ զենքին, որ ժամանակակից լու-

սավորված աշխարհը միակ դրական և օրինավոր միջոց է համարում մի ազգի համար իր գոյությունը վկայելու...

Պետք է խոստովանել, որ հայը ապացուցեց զեռ շատ հին ժամանակներից, որ հարկավոր դեպքում, երբ պետք էր կամ իր հավատը պաշտպանել, կամ մի պետության հպատակ լինել, հարկավոր էր արյուն թափել՝ մասնավոր այն պետության զորքերի շարքը,— որ իր ձեռքը նույնքան ընդունակ և վարժ է զենք գործ ածել, որքան արորը և բահը: Եվ նույնիսկ այս բոսնիս Զեյթունը արյուն է թափում թուրքիայի դեմ իր մարդկային իրավունքները ձեռք բերելու համար:

Վերջին ժամանակ մեր լրագրերի թղթակիցները հաղորդում են, որ թուրքիայի հայը զրեթե ամեն տեղ սկսում է զինվել: Բայց արդյոք դրանով նա բնագե՞մ է գնում իր բռնած պատմական ընթացքին... Չեմ կարծում: Եթե հայը թուրքիայում զինվում է միայն նրա համար, որ բռնավորության դեմ պաշտպանողական դիրք բռնի միայն, և ոչ թե ճարձակողական, եթե թուրքիայի հայը մի ձեռքով մուրճ, արոր կամ բահ բռնելով, մյուս ձեռքով հրացան կրանի,— այդ գուցե կլինի միակ միջոց թուրքաց տիրապետության տակ ճշնված հայոց ազգի համար պաշտպանել և ապահովել իր ազգային գոյությունը:

Այսքան ահագին նշանակություն էր տրվում կուլտուրական աշխատանքին այն ժամանակ, երբ թուրքաց կառավարությունը զեռ փոքրիշատե համբերատար նայողի դերովն էր բավականանում և երբ, շնայած բազմաթիվ հուսահատական հանգամանքներին ու դժվարություններին, զեռ մեծ հույս կար, թե քրիստոնյա պետությունների ջանքերով կգործադրվի Բեռլինի 61-րդ հոդվածը: Դասախոսության ներկա հասարակությունը հետաքրքրությամբ դիտում էր հատկապես այդ առիթով նկարած աշխարհագրական քարտեզը և թուրքահայի ձեռքով պատրաստված զանազան տեսակի կերպասները, որոնք նրա կուլտուրական և տնտեսական կարողության ապացույցներն էին: Եվ հասկանալի է, թե որքան ոգևորիչ պիտի լիներ այդ ձեռագործների ազդած տպավորությունը. չէ՞ որ ամենքը հավատացած էին, թե այդ է այն ուժը, որ հայերն ունեն ճնշող բարբարոսության դեմ կովելու համար:

Մինչդեռ թիֆլիսում հրապարակական դասախոսությունները գալիս էին ավելի ևս շեշտելու թուրքահայերի մոտենալու բուն բաղձանքը, Կ. Պոլիսում էլ պակաս չէին փոխադարձ համակրանքի ցույցերը: Նույն գարնանը «Արարատյան ընկերությունը» տոնում էր իր շորթորդ տարեդարձը: Շքեղ ճաշկերույթին հավաքվել էին Կ. Պոլիսի հայության բոլոր նշանավոր ներկայացուցիչները, հրավիրված էին և եվրոպական թերթերի թղթակիցները: Տոնախմբության նկարագրության մեջ Հայկակը գրում էր հետևյալ տողերը.

«Երբ Արարատյանի փոխ-ատենապետ պ. Ա. Այվազյան ռուսիաբնակ հայոց և Տիֆլիսի մամուլ երջանկություն կմաղթե, շեմք կարող բացատրել, թե ինչ սրտաշարժ վայրկյան էր: «Գոլոսի» թղթակիցն ապշած էր տեսնելով, թե այս աստիճան սեր կտա՞ծեմք առ մեր հեռավոր եղբարս: Արարատյանը իրենց նրախոսադատությունը հայտնելով առ նոսա, երջանիկ էին, որ հայության երկու մեծ կենտրոններու մեջ հարատև հարաբերություններ հաստատելու րախտն ունեցած են: Մյուս թղթակիցներն իսկ չէին կրնար ըմբռնել, թե ինչպե՞ս հնար է որ երբեք զիրար չտեսած, իրարմ օրերով հեռու հայեր այսպես զիրար սերեն և պաշտեն. սրտաբուխ ցույցերն լավ տպավորություն արին օտարաց վրա»:

Եվ պետք է նկատենք, որ այս եղբայրական մերձեցումը արդյունավոր էր երկու կողմի համար: Եթե ռուսահայերը իրանց ազատ խոսքով, իրանց դրա-

մական նպաստներով ձգտում էին հայ գավառների բարոյական վերածնունդը փութացնել, Կ. Պոլսի հայութունն էլ փոխադարձաբար ազդում էր թիֆլիսի վրա, օրինակ հանդիսանալով կրթական-բարեօրական հիմնարկությունների կողմից և տալով ռուսահայերին այն, ինչ կարող էր տալ: 1879-ին թիֆլիսում կազմվեց հայոց մշտական բեմ: Եվ շնորհքով դերասաններ ու դերասանուհիներ տվեց այդ բեմին Կ. Պոլսը: Դա էլ մերձեցման մի շատ նշանավոր քայլ էր: Բայց թատրոնի և դեպի նրան Արծրունու բռնած դիրքի մասին մենք առանձին պիտի խոսենք: Այստեղ դեռ պիտի շարունակենք մերձեցման, միաբան գործունեության և աջակցության ամենազբաղված գործունեության վերաբերյալ:

Թուրքահայ և ռուսահայ հասարակությունները միացնում էր և այն քաղաքական հանգամանքը, որ Ռուսաստանը շարունակում էր բարոյացական վերաբերմունք դեպի հայոց հարցը, մինչդեռ Անգլիայի պահպանողական թուրքամոլ կառավարությունը համարյա ոչինչ հույս չէր ներշնչում հայերին: Ռուսասիրությունը Սան-Ստեֆանոյից հետո չէր նվազում թուրքահայերի մեջ, ընդհակառակն, ավելի ամրանում էր: Ներսես պատրիարքը չէր քաշվում ռուսասիրական աչքի ընկնող ցույցերից:

Ապրիլի 2-ին Ալեքսանդր II կայսրի պեմ սուլանության փորձ կատարվեց Պեակերբուրգում: Այս առիթով Ներսեսը մի շատ շքեղ եկեղեցական հանդես սարքեց, գոհացողական մաղթանք կատարելով ռուսաց կայսրի ազատության պատճառով: Ինքը, պատրիարքը, պատարագիչ էր: «Ռուսական նավու պատնյաները գիշերն ի բուն հայոց հետ միասին աշխատեցան զարդարանաց եկեղեցու դռները Ռուսիո արծիվներով և դրոշներով պսակված էին», — գրում էր Հայկակը: Ռուսաց դեսպան իշխան Լորանով-Ռոստովսկի (հետո ռուսաց արտաքին գործերի մինիստր) եկավ հայոց եկեղեցին, ուր ընդունվեց մեծ հանդեսով: Ժամասացությունից հետո դեսպանը նույնպիսի հանդեսով առաջնորդվեց թաղական խորհրդարանը, ուր «պարտուպատշաճ պատիվն եղավ, դեսպանն անհուն գոհունակություն հայտնեց, բավական տեսակցութենե հետո մեկնեցավ: բայց կառք մտնելու միջոցին չէր գիտեր ինչ անել, այնքան խուճ էր հայոց բազմությունը: «Լեանդ-Շերալտ» կասե, թե 20,000-են ավելի հայեր էին, որ լեցվեցին էին եկեղեցին, բակը և բոլոր շրջակա փողոցներն, այդ քան հազար բերանները միաձայն «Կեցցե Ալեքսանդր կայսր» կոչվեին. դեսպանը հուզյալ էր»:

Նույն զգացմունքն էր տիրում և գավառներում: Վանի մեջ ռուսաց հյուպատոսություն հաստատվեց և առաջին հյուպատոս նշանակվեց հայազգի պ. Կամսարականը: Այն օրը, երբ հյուպատոսարանի շինության վրա առաջին անգամ բարձրացվեց ռուսական դրոշը, Վանի հայերը ցնծություններով ցույցեր արին ի պատիվ Ռուսաստանի: Ամեն տեղ հայերը իրանց հույսը դրել էին ռուսական բարոյացականության վրա:

Այդ բուն ռուսասիրությունը խիստ կերպով արտահայտվում էր և մամուլի մեջ: Արծրունին իր առաջնորդողներում հարձակվում էր անգլիական քաղաքականության վրա. և նույնիսկ այն դեպքերում, երբ Բիկոնսֆիլդի կառավարությունը նշաններ էր ցույց տալիս, թե պիտի զբաղվի հայկական հարցով, նա ասում էր, թե Անգլիային չպետք է հավատալ: Սակայն Արծրունին գիտեր, իհարկե, որ առանց Եվրոպայի հաճության հայերը ոչինչ չեն ստանալու, ուստի և երկար ժամանակ, տարիների ընթացքում, քարոզում էր այն միտքը, թե պետք է հիմնել մի հայկական օրգան եվրոպական լեզվով, որպեսզի հայերի գործը ժողովրդականացվի Եվրոպայում: Այդ միտքը հետզհետե համակ-

թություն գտավ հայերի մեջ, և եղան առաջարկողներ (Կ. Պոլսից և Մոսկվայից), որ Արծրունին ինքը սկսե հրատարակել մի ֆրանսիական թերթ:

Մկրտում այդ գործը հնարավոր էր համարվում հիմնել թիֆլիսում, և Արծրունին համաձայն էր ստանձնել խմբագրողի պաշտոն: Բայց այդ միտքը ռուսով թողնվեց: Թիֆլիսը անհարմար տեղ էր, պետք էր Եվրոպայում սկսել: Երկու տարուց հետո միտքը իրագործվեց, երբ Վեննայում հրատարակվեց «Journal d'Orient» թերթը հանձն առավ գրել հայերի մասին: Այդ ժամանակ Արծրունին բաժանորդագրություն բաց արեց այդ թերթի համար և բավական նպաստեց նրան:

Հայկական օրգանի անհրաժեշտությունը բացատրելով, Արծրունին միևնույն ժամանակ առաջարկում էր հայ խմբագիրների պարբերական համաժողովներ գումարել զանազան քաղաքներում, օրինակ՝ Էրզրումում: «Գոնե հինգ-վեց տարվա մեջ մի անգամ գումարվել մի քանի շաբաթով այս կամ այն քաղաքում թե՛ լրագրական գործունեության եղանակի և թե՛ նշանավոր ազգային կամ հասարակական խնդիրների մեջ մեր կարողության չափ համերաշխություն մտցնելու նպատակով»:

Ռուսասիրական շարժումը թուրքահայերի մեջ, իհարկե, անգլիացիների ուղղությունից չէր խուսափում: Եվ կարծես այդ շարժման պատասխանելու համար էր, որ անգլիական կառավարությունը էրզրումի իր ընդհանուր հյուպատոսությունը անվանեց Քրդիստանի գավառական հյուպատոսություն: Սակայն այս քայլը ընդհանուր դժգոհություն և զայրույթ տարածեց հայերի մեջ: Կ. Պոլսի Ազգային ժողովը, Ներսես պատրիարքի առաջարկությամբ, բողոք երկայացրեց Բ. Դրան Անգլիայի այդ վարմունքի առիթով: «Γολος»-ի թղթա-կիցը գրում էր. «Ժողովի նախագահ Օտյան էֆենդին բարձրաձայն հայտնեց իր դարմանքը այն սխալի մասին, որ արել է Անգլիան, անվանելով Հայաստանը Քրդստան: Այդ տեսակ աշխարհագրական կոպիտ սխալը Օտյան էֆենդին բացատրում էր նրանով, որ Անգլիան թշնամական մի գաղտնի նպատակ ունի հայոց ազգի գոյության դեմ»:

Ժամանակի ոգին, տրամադրությունը շատ լավ պատկերացնում են այս մեծ ցույցերը, բողոքները: Բայց հազիվ թե ամենից ուղադրվեց այն միտքն ու լ, որ գումարեցին հայերը Վանում: Քրդական շարժումը հետզհետե ուժեղանում էր: Թուրքաց կառավարությունը գաղտնի կանոնավոր հարաբերություններ էր սկսել այդ գիշատիչ ցեղերի հետ՝ նրանց հայերի դեմ հանելու համար: Հարստահարությունները հաճախ էին կրկնվում Վանի շրջակայքում: Եվ ահա հայերը, միտինգ կազմելով, բողոքում են այդ հարստահարությունների դեմ և իրանց բողոքի պատճեններն ուղարկում են թուրք կառավարության, պատրիարքարանին և տեղային հյուպատոսներին: Հասարակական այն եռանդուն շարժման մեջ, որ այդ ժամանակ նկատվում էր Վանում, այդ միտինգը շատ էր տարօրինակ շփոթի լինելու: Երկրագործական դպրոց Վարագի վանքում, յոզենավեր Վանի լճի վրա, ընկերություններ երկու սեռի անձանց մեջ ուսում տարածելու համար, — ահա ինչ ծրագիրներ և գործեր կային Վանում:

Տարվա վերջում առհասարակ լարված դրություն էր տիրում: Սպասում էին դիպլոմատիայի վճիռներին, և Հայկակը գրում էր. «Այսօր մենք կապրենք այնպիսի մթնոլորտի մեջ, որ անհուսալի նորություններով լի է: Մեկ կողմն թուրքերուն դանդաղությունն իրենց խոստումներն ու պարտավորությունները կատարելու մասին, մյուս կողմն Անգլիո կառավարության սաստիկ տենչանքը թոքը Ասիո իր քաղաքական հատակագծին գործադրությունը սկսելու, երկու

կառավարությանց հարաբերություններուն այնպիսի մի գույն տալին, որ պատմը ամեն ոք պատերազմի երկյուղներ սկսավ զգալ: Եվ այս սառնության պատճառ, ըստ երևույթին, հայերն եղած են: Բայց, ավելացնում էր թղթակիցը, հայերը միայն պատրվակ են. Անգլիան ուզում է իր համար օգուտներ ձեռք բերել:

V

1880-ի սուր: Յեցող տեղեկություններ: «Սովելոց հանձնաժողով» և «Մշակի» հավաքած նվիրատվություններ: Արժուճու «Սովը Հայաստանի մեջ»: Գլադստոնի ազատամիտ մինիստրությունը. Արժուճին փոխում է իր վերաբերմունքը դեպի Անգլիան: Ռեֆորմների ամառային ծրագիրները: Մեծ հարց հայերի բվի մասին: «Կրոնական բանակոթիվ»: Քրդական և ասորա-հայկական շարժումներ: Կուլտուրական նվաճման հարց: Շեյխ-Ուրեյդուլլահի աշխատանքը: Հույսեր և հիասթափում: Հավատ դեպի գործը: Թուրքական լսատություններ:

Այս տարտամ սպասողական դրությունը բավական չէր, որ թուրքաց Հայաստանի վիճակը այնքան փափուկ համազգային հարց դարձներ: Երևան եկավ և մի ահռելի դժբախտություն, որ այդ թշվառ երկրի բախտը ավելի հուզիչ, ավելի սրտաշարժ կերպարանքով ներկայացրեց:

Գա սովն էր: Ահավոր գուշը առաջին անգամ բարձրացավ Ալաշկերտի գավառից: 1879-ի հոկտեմբերին այնտեղ արդեն զգացվում էր սաստիկ կարոտություն: Նույն դրության ենթարկված էին և հարևան Բասեն ու Բայազետ գավառները: Սկզբում կարծում էին, թե միայն այդ տեղերն են ենթարկված զարհուրելի աղետին: Բայց հետզհետե հայտնի դարձավ, որ սովը պակաս սարսափելի չէ և Վանի նահանգում, մանավանդ Աղբակի, Բաշկալեի, Նորդուզի, Շատախի և Մոկսի գավառներում: Այս տեղերի ազգաբնակիցները Վան քաղաքից էր օգնություն խնդրում:

Ի՞նչն էր սովի պատճառը: Ամենագլխավորը, ամենքի կարծիքով, ուրաթուրքական պատերազմն էր: Եվ իրավ, միայն դժբախտ Ալաշկերտը որքան ոտնակոխ էր եղել, որքան քարուքանդ էր եղել պատերազմի ժամանակ՝ չի շենք հայերի ահագին գաղթականությունը, ուր և թուրք մեծ բանակների արշավանքները, քրդերի կողոպուտն ու կոտորածները: Այսպես էր և Բասենը: Պատերազմական արհավիրքն անցնելուց հետո, արյունահեղության բեմբեկ տնտեսապես բոլորովին քայքայված, բնականաբար պիտի սովի ճարակ դառնար:

Նույն պատերազմի արձագանքն էր և սովը Վանի նահանգում: Թեև պատերազմական գործողությունները չէին անցել այդտեղ, բայց քրդական արշավանքները պլտկել էին երկիրը, հասցնելով ազգաբնակիցները վերջին ազդեցություն: Վնասվել էին մանավանդ Աղբակի և Բաշկալեի գավառները: Բարբարոս պետության կարգերը չէին խնայել խաղաղ երկրագործ ազգաբնակիցները, և ահա այժմ ավերված երկրի մեջ հաստատվում էր ահռելի սովը, որի հարվածներին ենթարկված էին թե աշխատավոր հողագործները և թե նրանց կեղևքողները: Սովը խորություն չէր դնում: Հայերի, ասորիների հետ քաղցած էին և իրենք՝ քրդերը...

Բայց չէր կարելի ասել, թե միայն պատերազմն էր առաջացրել այդ մեծ աղետը: Բնական պատահարներն էլ միացած էին մարդու գործած աղետների

հետ: Եթե ոչ սով, գոնե սաստիկ թանկություն էր տիրում և Երևանի ու Գանձակի նահանգներում: Նույն թանկությունը սովի դրություն էր առաջացրել և թուրքաց Հայաստանի այնպիսի տեղերում՝ Գիարբեքի, Բաղեշ, Սղերդ, որոնք պատերազմական բեմից հեռու էին: Սովը հասել էր նույնիսկ թուրքաց մայրաքաղաքին:

Անողորմ հարվածին, իհարկե, չպիտի կարողանային դիմանալ մանավանդ այն տեղերը, որոնք տնտեսապես սաստիկ թուլացած էին: Բազրևանդը և Վանի նահանգը այդ տեղերից էին: Թուրք կառավարությունը, սովորականի պես, ոչինչ ուշադրություն չդարձրեց ժողովրդական դժբախտության վրա: Լրագիրները հազորդում էին, որ նա նույնիսկ խոշորոտ էր հանդիսանում, արգելելով հացահատիկների արտահանությունը այն տեղերից, ուր նրանք փոքրիշատե առատ էին: Հայկական շարժման այն տաք ժամանակներում կառավարությունը, անշուշտ, շատ էլ դժգոհ չպիտի լիներ, որ այդպիսի մի բնական պատահար գալիս է քրիստոնյա ազգաբնակիցները ջնջելու: Եվ այդպես էլ հասկացվեց նրա վարժունքը: Գոնե հայերը համոզված էին, որ դա արհեստական սով է շատ հասկանալի նպատակով:

Վրա հասավ Հայաստանի դաժան ձմեռը, և սովը կատարյալ տեր դարձավ անսպաշտպան գյուղերի մեջ: Ահա մի ականատեսի պատմածը Ալաշկերտի գյուղերի մասին.

«Անմիջապես առաջնորդ մը առնելով ինձ, թեև զիշերը վրա կհասներ, այցելեցի 56 տուն՝ կես ժամու մեջ: Ահռելի տեսարաններ կներկայանային հետզհետե, ամեն սեռե ու տեսակե անձինք գետնին վրա տարածված էին անշարժ, անզգա. մահվան թաղուկն իրենց դեմքը կպատեր և միայն նոցա շնչատության շշնկոցն կլսվեր: Ա՛լ սիրտ կուզեր այդ տառապելոց վրա կատարյալ ղենություն ընելու: Ուղևորության ժամանակ շատեր ճանապարհին վրա կմնան կիսամեռ կամ դիակնացյալ. գարշահոտություն կտիրե ամենուրեք, և Պայազիտեն մինչև Վաղարշակերտ ամբողջ դաշտն ծածկված էր դիակներով: Անձամբ տեսա շատեր, որք ետին շունչը կփչեն, մինչև իսկ Վաղարշակերտ քաղաքին մեջ նույնիսկ գայմազամին բնակարանին դռան առջև: Այս սովյալ և խոտակեր մարդոց շատերուն երեսներն, աչքերն, ձեռքերն, փորն ու ոտերը ուռած են և ասոնցմե հիվանդություն մը գոյանալով սկսած է հարուստ և առողջ անձանց ալ աղղել:»

Ավելի սարսափելի էին տեսարանները Վանի փողոցներում, ուր թափվում էին սովամահ գավառները: Ահա ինչ էին գրում այնտեղից.

«Երբ առաջնորդարանի դուռը կբանայինք, տանիքները արդեն լցված կըլլային սովելոց բազմությունը. հաց, դրամ, դեղ-դարման կաղաղակներն, ալ ամենն աղեկտուր վիճակը Աղբակու, Նորդուզա, Շատախու, Մոկաց, Խոշապա, Կեավառի և Կառկառու գաղթականներն ունեին. ամենին գուշը կապար և գրեթե կմախք դարձած, ուժաթափ և համր, հազիվ զիրենք ժողովո սենյակ կձգեին:

Պառավ մամիկ մը կներկայանար մեզ յուր թոռներու հետ թաղիքի ցնցոտիներ շալակած և կտոր մը դառն արմատ կամ մանանա ըսված քարծիլ առած իբրև շոքո հինգ ավուր օրապահիկ... Մեկ տարու տղա մը շոքո ոսկր դարձած հազիվ կշնչեր հորը ցամքած կուրծքին վրա. տղեկի մայր մեռած էր ճամփա՝ և տղեկը ծիծկաթ կուզեր հորմեն, հայրը հաց կխնդրեր մասնաժողովեն... Վաթսուն տարեկան ասորի պառավ մայր մը իր 25 տարու միակ զավակը շալակած կբերեր, և մինչև որ օգնության հասանք, հոգեվարք երիտասարդն իր մոր շալակին վրա հոգին ավանդեց: Աղբակցի մանկամարդ կին մը իր էրիկ և ամ-

բողջ զավակներ կորուսանելն վերջը ինքն ալ կմեռնեն. ամենն փոքրիկը որ հազիվ լոթն ամսական էր՝ կախված էր մոր ցամաքած ծիծերեն և մեռած էր: Աղբակու մեջ բազմաթիվ ծնողք փոքրիկ երեխաներ թողնով գիշերանց խույս տվին, այն հուլիսով, որ անմեղ երեխաներու վրա գուր կունենան մնացողներ: Պմնկերացի Ալի անուն քուրդ կին մը իր դրացի կնոջ հետ համաձայնելով իր դեռ հոգեվարք չափահաս զավակը ի միասին կհողոտեն և կուտեն: Ուրիշ մը գետ կնեան իր տղան, ուրիշ մը փողոցներու մեջ ոսկր կփնտռուաւելու*»:

Սովի ուղեկից տիֆը սկսեց իր կոտորածը. վասպուրականում սովամահ դառածների թիվը հասնում էր 2000-ի: Ընդամենը ամբողջ վասպուրականում սովատանջների թիվը համարում էին 60,000, որոնց կեսը հայեր էին...

Մեր պատմությունը լիքն է այսպիսի նկարագրություններով: Պատմական ճակատագիր: վասպուրականը, Բագրևանդը անշուշտ շատ էին տեսել այսպիսի աղետներ: Շատ տեսան, ավելի սարսափելիները տեսան նրանք և դրանից հետո: Բայց 1880 թվականը ուրիշ էր: Այդ ժամանակ թուրքաց Հայաստանը հոգածություն, խնամքի առարկա էր իր տառապանքների մեջ, ուստի և հաջողոր սովը առաջ բերեց մի շտեմնված, անօրինակ շարժում, օգնության շարժում: Հայություն աչքի առջև մի թանկագին, սիրելի հիվանդ էր, մոտ դիակնանանություն: Եվ սկսվեց մի համատարած աշխատանք:

Սովատանջների ազդակները, իհարկե, դեպի մի տեղ կարող էին ուղղվել, և այդ տեղը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն էր: Ներսեսը անմիջապես գործի կպավ: Չդիմելով կառավարության խնամքին, հույս չդնելով նրա վրա, Ներսեսը աշխատեց կազմակերպել զուտ հայկական ինքնուրույն մի մարմին՝ ընդարձակ չափերով օգնության գործը իրականացնելու համար: Ջրօրհների օրը, 1880 թվի հունվարի 6-ին, նա օրհնեց և հաստատեց այդ կազմակերպությունը, որ սկսեց մեծ եռանդով գործել «Սովելոց խնամատար հանձնաժողով» անունով: Մի այդպիսի մարդասիրական գործն էլ, որ ամենից առաջ օգտակար էր պետության համար, Ներսեսը պիտի պաշտպաներ իրան հատուկ համարձակությամբ, հերոսական ջանքերով: Թուրքաց կառավարությունն արդեն սկսել էր բռնություններով խեղդել հայերի ձայնը: Արգելելով հացի ներմուծումը Ռուսաստանից և Պարսկաստանից, նա արգելեց և Կ. Պոլսի լրագիրներին գրել Հայաստանի սովի մասին, իսկ Կովկասի հայ հրատարակությունների մուտքը Թուրքիա արգելքի տակ դրավ: Սովելոց հանձնաժողովը կասկածների ենթարկվեց: Նրան ոչնչացնելու համար կառավարությունը մի թուրքական հանձնաժողով կազմեց և առաջարկեց հայերին իրանց հավաքած փողերը այդ հանձնաժողովին տալ: Պատճառաբանվում էր այդ կարգադրությունը նրանով, որ հայերը սովի պատրվակով փող են հավաքում մի ինչ-որ գաղտնի ընկերություն կազմելու համար...

Ներսեսը բողոքում էր, պահանջներ էր անում: Սովելոց հանձնաժողովը նա դրեց եվրոպական դեսպանների պաշտպանության տակ և այդպիսով ապահովեց նրա անկախ գործունեությունը: Հանձնաժողովը դիմումներ արավ բոլոր հայերին, բոլոր քրիստոնյա պետություններին: Նույնիսկ թագավոր անձինք շտապեցին իրանց նվերներն ուղարկել սովատանջ հայերին:

Սովի լուրը Կ. Պոլսի հետ համարյա միաժամանակ հասավ և Քիֆիսի: Այստեղ «Մշակը» և մյուս պարբերական հայ հրատարակությունները անմի-

ջապես հանգանակություն սկսեցին և ստացած գումարներն ուղղակի փոխադրում էին վան, որ կազմվել էր մի հանձնաժողով՝ Նրիմյան Հայրիկի նախագահությամբ: Բայց երբ Կ. Պոլսի Սովելոց հանձնաժողովը իր ձեռքն առավ ամբողջ գործը և վանի հանձնաժողովն էլ նրան ենթարկվեց, նվիրատվությունները սկսեցին ուղարկել Պոլիս:

«Մշակը» անդադար հիշեցնում էր ոռոսահայերին, թե ինչ սոսկալի դժբախտություն մեջ են նրանց եղբայրակիցները Թուրքիայում: Առաջնորդողներ գրում էր ոչ միայն Արծրունին, այլև «Մշակի» մի նոր աշխատակիցը՝ պ. Գրիգոր Նիկողոսյան, որ իբրև օֆիցեր ոռոսաց զորքի հետ եղել էր թուրքաց Հայաստանում և գրում էր իբրև այնտեղի հայերի գրությունը լավ ճանաչող մի մարդ: Այդ ժամանակ էլ «Մշակի» էջերում երևան եկավ հայտնի հայ բողոքական գործիչ Աբրահամ Ամիրխանյանը: Եվ ամենքը, թե խմբագիր, թե հին ու նոր աշխատակիցներ, մի գլխավոր հարց ունեին իրանց առջև՝ սովը Հայաստանում:

Նվերները ահագին մեծամասնությունը թափվում էր «Մշակի» խմբագրությունը: Դա հասկանալի էր: Բացի ամենօրյա թերթ լինելուց, «Մշակը» իր ընթերցողներին շարունակ զբաղեցնում էր թուրքահայերի գրությամբ: Նա միայն նվերներ չէր հավաքում, այլև քննում էր աղետի չափերը, հետևանքները: Փետրվարի վերջից, երբ արդեն նվիրատվությունները գալիս էին լայն հոսանքով, «Մշակի» մեջ սկսեց տպագրվել Բաֆֆի «Խեղճը»: Այդ վեպի թողած տպավորությունը ահագին էր, ցնցող, հափշտակող: Այդ բոլոր պատճառներով «Մշակը» մի քանի ամսվա ընթացքում հավաքեց և Կ. Պոլիս փոխադրեց 30,000-ից ավելի մի գումար: «Մշակի» արածները նվիրատվություններ հավաքելու գործում այսպես էր գնահատում Սովելոց հանձնաժողովը իր պաշտոնական հաշվետվության մեջ, որ լույս տեսավ 1885-ին.

«Հանձնաժողովս մեծավ գոհությամբ պարտավոր է հայտարարել, թե իր բոլոր հանգանակությանց մոտ մի երրորդ մասը Ռուսահայոց նվերներե գումարած է, և թե Ռուսահայոց նվերներուն մի երրորդից ավելին ուղղակի «Մշակ» լրագրի էջերուն մեջ բացված հանգանակութենն գոյացյալ է շնորհիվ անխոնջ գործունեության և ազդու գրությանց պատվարժան խմբագրապետին պ. Գրիգոր Արծրունիի: Հանգանակության ատեն մասնավորապես նշանավոր գումարներ ընծայող նվիրատուներ կան, թեև սակայն անհատական աշխատություններ հանգանակող մը չկա, որ պ. Գրիգոր Արծրունիի ավելի գումար հավաքած և հանձնաժողովույս տրամադրության հանձնած լինի ի միխթարություն խղճալի սովելոց, որոնց բարեբարներուն մեջ գլխավոր տեղ մը կզբաղեն ազգասեր խմբագրապետն և հանուրց շնորհապարտության արժանավոր կհանգիսանա» (եր. 27):

Այս «Տեղեկագրից» երևում է, որ «Մշակի» հավաքած և Կ. Պոլիս ուղարկած նվերների գումարը 36,000 ռուբլուց ավելի է. և եթե սա ոռոսահայոց նվերների 1/3 մասն է կազմում, դուրս է գալիս, ուրեմն, որ Ռուսաստանից ուղարկվել է 100,000 ռուբլուց ավել: Այս պատկանելի գումարը այն համերաշխության և համակրանքի շափն է ցույց տալիս, որ տաժում էին ոռոսահայերը դեպի իրանց դժբախտ եղբայրակիցները: Մի համատարած եռանդուն, անձնվեր գործունեությամբ կարելի եղավ այսպիսի շոշափելի գործ կատարել: Մոսկվայում և Քիֆիսում կազմվեցին առանձին մասնախմբեր, որոնք Սովելոց հանձնաժողովի ճյուղերն էին կազմում: Քիֆիսում հայ կանայք առանձին մասնախումբ կազմեցին դրամական և այլ նվերներ հավաքելու համար: Բարի ցանկություններ չէին պակասում: «Մշակում» առաջարկվում էր կազմակերպել

* «Տեղեկագիր Սովելոց խնամատար կենտրոնական հանձնաժողովու», Կ. Պոլիս, 1885, եր. 14, 16.

սովի համաճարակի հետ անխուսափելի կերպով կապված հիվանդությունների դեմ մաքառելու գործ, և բժ. Բ. նավասարդյան, «Մշակի» մեջ ապացուցանելով այդ գործի անհրաժեշտությունը, հանձն էր առնում գնալ Վան և բժշկական օգնություն գործը իր ձեռքը առնել, եթե հասարակությունը միջոցներ կտա Վանի այդ ենթադրվող հիվանդանոցի համար էլ նվիրատվություններ ուղարկվեցին «Մշակին», բայց աչքի ընկնող մի գումար չկազմեցին...

«Մշակի» էջերում բաց արած լայն պրոպագանդան բավական չհամարելով, Գրիգոր Արծրունին պատրաստեց մի դասախոսություն՝ «Սովը Հայաստանի մեջ» վերնագրով: Բայց այս անգամ դասախոսությունը չկայացավ, որովհետև քիչ ունկնդիրներ հավաքվեցին, ուստի և Արծրունին բավականացավ իր այդ գործը «Մշակի» մեջ տպելով:

Գասախոսությունը հարևանցի կերպով էր շոշափում տնտեսական այն պայմանները, որոնք պարբերաբար սով են առաջացնում մի երկրում, ինչպես և այն միջոցները, որոնք քաղաքակիրթ ազգերի մեջ ձեռք են առնվում՝ ազգաբնակչությունը անբերրության և սովի հարվածներից պաշտպանելու համար: Արծրունին տնտեսական աղետների մի գիտական ուսումնասիրություն շուրջներ աչքի առաջ, այլ օրվա մեծ, դժբախտ հարցը: Ուստի իր ուշադրությունը կենտրոնացնում էր օրվա այդ երևույթի վրա: Նա նորից հիշեցնում էր այն պայմանները, որոնց ենթարկված էր թուրքահայը, մանրամասն պատմում էր, թե թուրքաց կառավարությունը ինչ արգելքներով և դժվարություններով է ուզում նպաստել սովի սարսափների տարածելուն և բնականաբար հասնում էր այն եզրակացության, որ թուրքահայի հայրենիքը տնտեսական տագնապներից ազատվել կարող է միայն այն ժամանակ, երբ նա կբարեկարգվի, կստանա արդար օրենքներ:

Մոայլ, հուսահատական պատկեր էր տալիս սովը իրան շրջապատող բոլոր հանգամանքներով: Բայց Արծրունին, այդ պատկերը վերջացնելիս, բերում էր և այն լուսավոր երևույթները, որոնք միսթարական էին այդպիսի մի ժամանակ: Այդ երևույթներն էին. 1) թուրքահայերի և ուսահայերի մեջ մերձեցման, համերաշխության կապերը ավելի ևս ամրացան. 2) սոսկալի աղետը մի անգամ էլ ապացուցեց, որ հայ ազգը ունի ընդհանուր շահեր և հարցեր, որոնց առաջ չքանում են կրոնական խտրությունները, համախմբելով բոլոր դավանություններին պատկանող հայերին այդ հարցերի շուրջը. այդ երևաց այն օգնությունից, որ բողոքական և կաթոլիկ հայերն էլ մասնակցեցին հանգանակության. 3) Անգլիայի քաղաքականության փոփոխությունը:

Գրանք, ճիշտ որ, ուրախալի, միսթարական երևույթներ էին: Կարծես անողորմ ճակատագիրը դառը տանջանքների էր մատնել Թուրքիայի ասիական գավառները այն պատճառով, որ ամբողջ հայության համար ստեղծված մի ընդհանուր հոգան ու տենչանքը ավելի և ավելի ամրանա, ավելի և ավելի մարմնանա իբրև նվիրական գաղափար: Ռուսահայերի և թուրքահայերի հարաբերությունների մասին ավելորդ է նորից խոսել: Սովի աղետը միայն այդ կապերը շամրացրեց: Երկրագնդի երեսին տարածված բոլոր հայերի սրտում խոր արձագանք գտավ ազգային դժբախտությունը: Սովելոց հանձնաժողովը նպաստներ ստանում էր աշխարհի բոլոր կողմերից: Հնդկաստան, Յավա, Պարսկաստանի խորքեր, Ռումինիա, Տրանսիլվանիա, Վիեննա, Փարիզ, Մանչեստր ու Լոնդոն, Ամերիկա, մի խոսքով այն բոլոր տեղերը, ուր մի բուն հայեր էին ապրում, ուղարկեցին իրանց նվերները:

Կրոնական ամենալայն անխտրականությունը, իբրև մի լուսատու, խոշոր երևույթ, միայն նվիրատվությունների մեջ չէր արտահայտվում: Ավելի գեղե-

ցիկ փաստ էր այն, որ սովի և տանջանքների տեղերում օգնություն ստանում էին անխտր ամենքը: Հայ կաթոլիկ հոգևորականությունը իր հավաքած միջոցներն ուղարկում էր: Սովելոց հանձնաժողովին և գավառներում ապրող հայ կաթոլիկ համայնքները անմիջապես նույն հանձնաժողովին էին դիմում օգնություն ստանալու համար՝ նեղ, սահմանափակ շեր մարդասիրական այն գործը, որ կենտրոնացած էր հայ լուսավորչականների ձեռքում: Սովատանջ ասորիները հայերից էին հաց ստանում: Վանի մեջ քրդերն էլ օգնություն և ուշադրություն էին գտնում: Նպաստներ շխնայվեցին և տեղական հրեաներին: Սովելոց Հանձնաժողովն ստանում էր օգնություն խնդրող նամակներ և հեռագրեր, որոնց տակ հայերի հետ թուրքերի ստորագրություններ էլ կային:

Այդ փառավոր գործունեությունը դժբախտության այն դարհուրելի տարում գալիս էր լուսավոր ապացույցներով շեշտելու այն նշանակությունը, որ վիճակված է հայերին իրանց շրջապատող տգետ, անկուշտուրական ցեղերի մեջ: Ամբողջ Ասիական Թուրքիան միայն մի հատ եռանդուն, բուն մարդասիրական գործունեություն էր ճանաչում իր սև օրերում և դրան իրականացնողը այն իսկ հայ ժողովուրդն էր, որին ճնշելը, տնտեսապես թշվառացնելը դարերի մի անվիճելի իրականություն էր և որին այժմ զլանում էին մարդկային տարրական իրավունքներ տալ, թեև այդ, ինչպես ցույց տվեց սովը, ամբողջ իրերի շահերն էին պահանջում: Որքան, ուրեմն, իրավացի էին Արծրունին և նրա նման մտածողները, որոնք պնդում էին, թե հայերի քաղաքական ազատությունը նշանակում է քաղաքակիրթության հաղթանակ Ասիայի այդ խեղճ ու դժբախտ անկյունում:

Գեռ սովը տանջում էր անխտր ամենքին՝ թե հարստահարողներին և թե հարստահարվողներին, երբ քաղաքական խոստացված բարեկարգությունների հարցը նորից մի մեծ զարկ ստացավ նվրոպայում: Ապրիլ ամսին Անգլիայում ընտրությունների ժամանակ տապալվեց Բիկոնսֆիլդի թուրքասեր կառավարությունը, տեղի տալով մեծ հաղթանակ տարած Գլադստոնին, որ ճնշված ու նեղված փոքրիկ ազգությունների վաղեմի բարեկամն էր: Գլադստոնի ազատամիտ միսթարությունը հենց իր կազմվելու առաջին օրից արդեն մի պերճախոս փաստ էր աշխարհի համար, որ նա նշանակում է Անգլիայի արևելյան քաղաքականության փոփոխություն:

Գրիգոր Արծրունին իսկույն հասկացավ այդ: Եվ տպագրելով «Մշակի» մեջ այն հեռագիրը, որ հաղորդում էր, թե Գլադստոնը կառավարության գլուխ անցավ, նա մյուս օրվանից փոխեց իր վերաբերմունքը դեպի անգլիական քաղաքականությունը: Չորս տարի նա անվստահություն էր քարոզել այդ քաղաքականության դեմ և ամեն մի առիթից օգտվելով, կրկնել էր, թե Անգլիայից հայը ոչինչ լավություն չպիտի սպասե, որ անգլիական քաղաքականությունն ուղղակի թշնամական է հայերի վերաբերմամբ: Այժմ նա սկսեց վստահություն քարոզել դեպի Անգլիան, այժմ գտնում էր, որ հայերը Անգլիայի վրա կարող են մեծ հույսեր դնել: Ահա ինչ էր նա ասում այս առիթով գրված իր բազմաթիվ առաջնորդողներից մեկում:

«Մենք հարձակվում էինք Անգլիայի դեմ, քանի որ պահպանողականներն էին կառավարում երկիրը, իսկ այժմ համակրում ենք անգլիական կառավարությանը և սրանից թուրքաց Հայաստանի համար մեծ օգնություն ենք սպասում: Բայց հենց որ կրկին Բիկոնսֆիլդի կուսակցությունը կառավարություն կդառնա, մենք կրկին կշարունակենք հարձակվել Անգլիայի վրա, որովհետև անգլիական պահպանողականները միշտ ամենալնասակար ընթացք են

բնում արևելյան խնդրի և թուրքիայի փոքր ազգութունների վերաբերու-
թյամբ»:

Այդ բոլորը, իհարկե, մի մեծ գաղտնիք չէր, և ազատամիտ կուսակցու-
թյան կառավարությունը վստահություն, լայն քաղաքակրթական-մարդասի-
րական ուղղության մի նշանաբան էր ամբողջ աշխարհի համար: Արժրունու
նախկին անգլատյացությունը և այժմյան անգլասիրությունը, ուրեմն, միան-
գամայն բնական և հասկանալի էին:

Եվ փաստերը շուտով երևան եկան հաստատելու, որ վստահացողները,
հույս տածողները սխալված չէին: Գլադստոնի մինիստրության առաջին գոր-
ծերից մեկը եղավ թուրքական գործերի վրա առանձին ուշադրություն դարձ-
նելը: Թուրքամուլ լեյադը ևտ կանչվեց Կ. Պոլսից, իսկ նրա տեղ դեսպան
նշանակվեց բոլորովին հակառակ հայացքներով ղեկավարվող Գոշեն: Դեսպա-
նական մարմինը Կ. Պոլսում եռանդուն գործունեություն սկսեց, որ ուղղած
էր թուրք կառավարության ճարպիկ խաղերի դեմ: Դեսպանները պիտի հար-
կադրեին թուրքերին կատարել իրանց ստորագրած պարտավորությունները:

Իսկ դրանք մի քանի հատ էին: Բեռլինի դաշնագրով որոշված էր, որ Հու-
նաստանը պիտի ստանա էպիրոսը և Թեսալիան, իսկ Չերնոգորիան՝ Բուլղարիոս
քաղաքը իր շրջականերով: Չզձգումների, խաբեությունների իր ավանդական,
փորձված քաղաքականությամբ Թուրքիան աշխատում էր չզրկվել իր այդ հո-
ղերից: Բայց պահանջատերերն էլ քնած չէին, և խնդիրն ընդունեց այնքան
սուր կերպարանք, որ Գլադստոնի մինիստրությունը վճռեց եռանդուն միջոցնե-
րով վերջ դնել այդ անվերջ խաղերին: Նրա ծրագիրն էր՝ գործել մեծ պետու-
թյունների համաձայնությամբ, ինչպես այդ տրամագրում էր և Բեռլինի դաշ-
նագրությունը: Նույն Բեռլինում գումարվեց մասնավոր կոնֆերանցիա՝ համա-
ձայնության սկզբունքները մշակելու համար: Այս կոնֆերանցիայի առաջ միայն
հունական հարցն էր դրված: Բայց, ինչպես երևում է, խորհրդակցությունների
նյութ էր դարձել և հայոց հարցը: Գոնն հունիսին վեց մեծ պետությունների
դեսպանները միանման հիշատակագրերով պահանջեցին թուրք կառավարու-
թյունից անհապաղ գործադրել Բեռլինի վեհաժողովի վճիռները Հունաստանի,
Չերնոգորիայի և Հայաստանի վերաբերմամբ:

Դա առաջին խոշոր քայլն էր, որ եվրոպական դիվանագիտությունն անում
էր՝ իր ստորագրած միջազգային դաշնագրերը հարգել տալու համար: Հայոց
հարցը նորից հուղված էր՝ այս անգամ ավելի ազդու կերպով, Եվրոպայի հե-
ղինակավոր ձեռքով: Անգլիայում նորից աչքի ընկնող երևույթ դարձավ հայա-
սիրական շարժումը: Հրապարակական միտինգներում ճառախոսները պատմում
էին սովի և հարստահարությունների պատճառած տառապանքները, իսկ պատ-
գամավորների ժողովում հայերի դատի պաշտպան հանդիսացավ Զեմս Բրայ-
սը: Հայաստանի գրությունը և նրան խոստացված բարենորոգումները պառլա-
մենտական խորհրդակցությունների նյութ դարձան, և ինքը՝ առաջին մինիստր
Գլադստոնը, իր ճառերի մեջ հավաստիացնում էր, թե հայկական հարցը կա-
րելի կլինի վճռել Եվրոպայի համերաշխ գործակցությամբ:

Այսպիսի կարևոր մի ժամանակամիջոցում Արժրունին, իհարկե, լուռ չմնաց,
և մենք տեսնում ենք, որ 1880-ի ամառը «Մշակի» առաջնորդողները դարձյալ
հրատապ հարցը արժարժող կրակոտ աշխույժով են գրված:

Այստեղ պետք է նկատենք, որ Գրիգոր Արժրունին համարյա ոչ մի դեպ-
քում չի կարողացել սառն դատողի կերպարանքով մոտենալ իրեն զբաղեցնող
հարցերին: Ազնիվ կիրք, կրակոտ թափ, ուղիղ կտրելու և անցնելու մի անփո-
փոխ ընթացք, — ահա նրա հրապարակախոսական խառնվածքը: Այսքան բարձր

սաստկացրած «տեմպով» գործող գործչի համար բնական պետք է համարել
այն սաստիկ գրգռումը, ներվայնությունը, որ երբեմն երևան է գալիս՝ թու-
լացնելով մի լուրջ, համոզված գաղափարականի գրությունների ուժը: Միայն
այդ հանգամանքով կարելի է բացատրել այն, որ Արժրունին, մանավանդ իր
երիտասարդության տարիներում, երբեմն դուրս էր գալիս վայելչության սա-
մաններից և դիմում էր ծայրահեղ արտահայտություններին:

Այդպիսի երևույթների մենք հանդիպում ենք ամենից շատ 1878.—1881
թվականներին: Հարձակողական թափը սաստկացնելու համար, նա իր դեմ
կանգնածներին, օրինակ, հաճախ մեծարում էր «իդիոտ» անունով: Իդիոտ էր
նրա համար թե Միթհադ փաշան և թե Արեղդին փաշան, որոնք հայերի վերա-
բերմամբ բարյացակամ ընթացք չունեին: Հայերն էլ, իհարկե, այդ տեսակ
հորջորջումների էին արժանանում, և «Մշակի» առաջնորդողներից մեկը ունի
«Կ. Պոլսի և Թիֆլիսի իդիոտներ» վերնագիրը: Կարելի է ասել, որ այդ աննե-
րելի շափազանցությունները մի տեսակ բուսական բուսկումների բնավորու-
թյուն ունեին, բուսկումներ, որոնք նույնիսկ չեն համաձայնվում Արժրունու
ընդհանուր ուղղության հետ: Մեզ մի լավ օրինակ տալիս է Արժրունու վերա-
բերմունքը դեպի Կ. Պոլսի հայերը:

Ճիշտ է, այդ վերաբերմունքը եղել է սկզբից և թե բացասական, ճիշտ է,
Արժրունին բազմաթիվ անգամ է արտահայտել իր հակադրությունը դեպի Կ.
Պոլսի հայությունը, որ ոչինչ չի անում բուն Հայաստանի համար, բայց և
այնպես, Կ. Պոլսը, ինչպես տեսանք, մի արհամարհելի ոչնչություն չէր Արժ-
րունու համար: Եվ հանկարծ, 1879-ին, երբ Արժրունին մի կողմից նվերներ
էր հավաքում «Արարատյան ընկերության» համար, մյուս կողմից աշխատում
էր Կ. Պոլսի և Թիֆլիսի մեջ սերտ կապեր հաստատել, «Մշակի» մեջ տպվում
է Արժրունու մի ընդարձակ առաջնորդողը, որի մեջ կար «Մշակի» ընթերցող-
ներին վաղուց հայտնի մի ճշմարտություն, բայց արտահայտված այսպիսի
ձևով:

«Քանի որ թուրքաց Հայաստանը, կոպիտ, կոշտ, աշխատասեր, հայաս-
տանցիներից բնակեցրած Հայաստանն ինքը չի հոգա իր վիճակի մասին,
քանի որ Հայաստանի վիճակները կկարգադրեն պոլսեցի դատարակախոս, Փա-
րիզի բուլվարներում և Ֆրանսուհի կոկոտների հասարակության մեջ կրթված
հոստոսները, քանի որ փշացած Կ. Պոլիս, բյուզանդական-մահմեդական Պոլիս
կտիրապետի Հայաստանի վրա, — երբեք Հայաստանը չի բարվոքվի, երբեք
չի ապրի իր ինքնուրույն կյանքով»:

Այսպիսի բուսկները կան, այո, Արժրունու գործունեության մեջ: Բայց
նրանք, բարեբախտաբար, շատ քիչ են և լինելով ներվայնության, դայրույ-
թի ու կրքի բուսկական բունկումներ, իհարկե, չեն կարող ազդել զգալուն հրա-
պարակախոսի ընդհանուր աշխատանքի, նրա կատարած ամբողջ գործի վրա:
Լավ է հավասարակշռություն չկորցնելը: Բայց Գրիգոր Արժրունուն վիճակված
էր անավոր կովով առաջ տանել իր գաղափարները: Իսկ մշտական կովի մեջ
գտնվող դինվորին կարծեմ ներելի են սակավաթիվ թուխները դեպի միակող-
մանիություն և շափազանցություններ:

Այս փոքրիկ շեղումից հետո, որ անպատճառ հարկավոր էր անկողմնա-
կալության համար, դիմենք դարձյալ մեր պատմության ընդհատած թելին:

Գրիգոր Արժրունին նույն լարված ուշադրությամբ հետևում էր արևելյան
հարցի այս նոր կերպարանափոխության ընթացքին: Եվրոպայի միահամուռ
պահանջի դիմաց Թուրքիան ղեկի կանչեց իր քաղաքական ամբողջ ճարպիկու-
թյունը: Արտաքին գործերի մինիստրությունը առանձին կարևորություն էր

ստանում, բայց հենց այդ միջոցին այդ կարևոր պաշտոնը հանձնված էր անփորձ Աբեղղին փաշային: Եվ ահա թուրք կառավարությունը նրա օգնական էր նշանակում Հարություն էֆենդի Դադյանին: Շատ փափուկ պիտի լիներ մի հայ պաշտոնյայի դրությունը այնպիսի մի ժամանակ, երբ նա պիտի պաշտպաներ մի կառավարություն, որի առջև դրված էր նրա հայրենակիցներին մարդկային իրավունքներ տալու պահանջը: Բայց հայ բյուրոկրատիան, ուր էլ լիներ նա, երբեք անհարմարություններ չի զգացել փառքի և պատվանշանների ծառայելու՝ անտես անելով իր մարդկային և ազգային պարտավորությունները: Այդպես էր և Հարություն Դադյանը:

Դեսպանները պատասխանի համար 20 օր էին նշանակել, բայց Աբեղղին փաշան նույնիսկ այդ ժամանակից առաջ պատասխանեց: Զուր չէր մի ֆրանսիական թերթ գուշակել, թե այն հանգամանքը, որ արտաքին գործերի մինիստրին հայ օգնական է տրված, մի ապացույց է, որ հայերը լավ բանի սպասել չեն կարող: Թուրք կառավարությունը իր պատասխանի մեջ ընդհանուր խոստումներով էր բավականանում, խոստումներ, որոնք վերաբերում էին դատաստանական և վարչական մի քանի փոփոխությունների: Այդ «ռեֆորմները» Թուրքիան մտադիր էր շնորհել անխտիր իր բոլոր հպատակներին ասիական նահանգներում: Հատկապես հայերի համար նա ոչինչ պարտավորություն հանձն չէր առնում, որովհետև, ասում էր պաշտոնական պատասխանը, հայերը ամբողջ ազգաբնակչության միայն 17% են կազմում:

Այս նոր հարվածն իսկույն ըմբռնեցին և գնահատեցին ժամանակակից գործիչները: Հեռագրական տեղեկության առաջին տպավորության տակ Գրիգոր Արծրունին գրում էր.

«Պարզ է, որ հայերի թիվը դիտմամբ փոքրացրած է թուրքաց մինիստրության կողմից Եվրոպային տված պատասխանի մեջ, որպեսզի Եվրոպան համոզվի, որ հայերը այնքան փոքրաթիվ են, որ այլևս շարժն նրանց մասին հոգալու...»

...Լրագիրները հաղորդում են, որ Եվրոպայի համաձայն գրությունը պատասխանելու պարտավորությունը հանձնված է հայազգի Դադյան Հարություն էֆենդիին: Շնորհավորում ենք, ուրեմն, ազգասեր Դադյան էֆենդիին, որ ամեն ջանք գործ է դնում, որպեսզի դիտմամբ փոքրացնի հայերի թիվը Եվրոպայի աչքում և միևնույն ժամանակ հաճելի լինի Բ. Դրանը: Երևի այդ դավաճան հային խոստացված է մի որևէ թուրք պատվանշան: Ըշմարիտ է ասվում, որ հայի տունը քանդողը միշտ հայն է լինելու...»:

Այնուհետև մի շարք առաջնորդողների մեջ Արծրունին ոչնչացնում էր Աբեղղին փաշայի խոստացած բարենորոգումների գլխավոր հիմքերը, ամենից շատ աչքի առջև ունենալով ամենակարևորը՝ հայերի թիվը: Այս հարցին նա վերադառնում էր հաճախ: Բերելով ձևերի տակ եղած վիճակագրական տեղեկությունները ասիական նահանգների ազգաբնակչության մասին, նա ապացուցված էր համարում, որ հայերի տոկոսը դիտմամբ նվազեցրած է քաղաքական խարդախ նպատակի համար և պահանջում էր, որ Կ. Պոլսի հայերը ամեն ջանք գործ դնեն ճիշտ և հաստատ տեղեկություններով ցույց տալու, որ Աբեղղին փաշան սուտ է խոսում:

Կ. Պոլսում, իհարկե, նույնպես շատ լավ էին ըմբռնել այս գործի ամբողջ կարևորությունը: Եվ ներսես պատրիարքը իրան հատուկ եռնդով դեսպաններին մատակարարում էր նյութեր, որոնք պարզում էին Աբեղղին փաշայի ծրագրի ամբողջ ոչնչությունը: Կ. Պոլսում էլ հավատացած էին, որ հայոց հարցը այդքան ծանր հարված ստացել է Հարություն Դադյանի դավաճանության շնոր-

հիվ: Ուստի մի մեծ բազմություն ցույց արավ հայ էֆենդիի ապարանքի առաջ և սարսափած էֆենդին վազեց ներսեսի մոտ՝ հավատացնելու, որ թուրք կառավարության պատասխանը ինքը չի գրել:

Հուզված հասարակական միտքը հանաքներ անել չէր կարող այն մարդկանց հետ, որոնք ճգնաժամի ընթացքում չեն կարողանում թաքցնել իրանց ստորությունները: Դադյանից ավել այդ ամառը աղմուկ հանեց Թոմաս Պոլյանյան անունով մի հայ, որ հայոց եկեղեցու ժամկոչ էր եղել, ընդունել էր բողոքականություն, ապա անցել էր անգլիական եկեղեցու ծոցը և այդ միջոցին Դիարբեքի մի հայ բողոքական համայնքի հովիվն էր՝ անգլիական եկեղեցու եպիսկոպոսի տիտղոսով: Այդ «պատվելին» մեծ համարում ուներ Փոքր Ասիայի անգլիական հյուպատոսների մոտ, հաճախ նրանց պաշտոնակատարն էր դառնում և նրա պաշտոնական զեկուցագրերը տպվում էին անգլիական «Կապույտ գրքի» մեջ:

Բայց ի՞նչ էր հայկական ազգանուն կրող այս մարդու արածը: Նա հայության կատաղի թշնամի էր հանդիսանում մի այդպիսի ճգնաժամի մեջ: Նա էր, որ էրզրումի անգլիական ընդհանուր հյուպատոս Տրոտտրին համոզեց, որ Հայաստան ասվածը լուր պատմական մի անուն է, որ Վան, էրզրում, Բաղեշ, Խարբերդ, Դիարբեքի այժմ պարզապես Քրդստան են, որովհետև այդ բոլոր տեղերում քրդական լեզուն, քրդական կուլտուրան (!) է տիրում: Այդ ցուցմունքների վրա հիմնված՝ անգլիական հյուպատոսը մի զեկուցում ուղարկեց Անգլիայի աշխարհագրական Ակադեմիային, կցելով և մի քարտեզ, որի վրա, նույն Պոլյանյանի ցուցմունքներով, հայերի թիվը նշանակված էր այնքան աննշան քանակությամբ, որ առաջին իսկ ակնարկից իմացվում է, թե զուր է այդքան փոքրիկ մի ժողովրդի համար ինքնավարություն պահանջելը:

Բայց Պոլյանյանի քաջագործությունները մենակ դրանք չէին: Իրեն հյուպատոսական պաշտոնակատար, նա ուղարկում էր անգլիական կառավարությանը հեռագրեր և նամակներ, որոնց մեջ ամենավատ գույներով էր ներկայացնում հայերին:

Պոլյանյանի բոլոր ստորությունները մերկացրեց Կ. Պոլսի «Մասիսը» մի ընդարձակ հոդվածի մեջ, որ սկսվում էր «Վասակ հայ մ'էր» խոսքերով: Արձագանք տալով այդ հոդվածին, Արծրունին գրում էր իր առաջնորդողի մեջ.

«Եվ ճշմարիտ, ոչ ոք այնքան չի վնասում հայերին և հայությունը, որքան իրանք հայերը: Հայության ամենակատաղի թշնամիները միշտ իրանք հայերն են եղել և մինչև այժմ էլ միշտ իրանք հայերն են լինում:

Հայության ամենաանհաշտ թշնամի հայ Հասունն է, հայության ամենավնասակար դավաճան հայ Պոլյանյանն է, հայության ամենակատաղի հալածողները մահմեդական հայերն են...»

Երբ որ մի օտար անձ, օտար կուսակցություն, օտար աղանդ, օտար պետություն կամենում է վնասել հայերին, — պետք է դիմե նույն իսկ հայերին և անպատճառ հայերի մեջ կգտնվեն բավական թվով դավաճաններ, որոնք ամենամեծ հոժարությամբ հանձն կառնեն վնասել հայությանը:

Գուցե աշխարհիս երեսին ոչ մի ազգություն չկա, որ ներկայացներ դավաճանների այդքան մեծ կոնտինգենտ, որքան հայ ազգությունը. Վասակ, Հասուն, Պոլյանյան, Դադյան էֆենդի իսկ և իսկ հայ ազգային տիպերն են...

Մենք հրաժարվում ենք այդ տեսակ տգեղ երևույթի պատճառը բացատրելուց: Արդյոք դա ազգային հատկությունն է, կամ կրթության պակասության նշանն է մեր ազգի մեջ, ազգային անհամերաշխության նշանն է, — չգիտենք:

Գուցն այդ երևույթի պատճառը այն է, որ հայերիս մեջ ազգային գաղափարը մեր ամբողջ պատմության մեջ իր կատարյալ դարգացման աստիճանին հասած չէր, հայերիս մեջ այնքան զորեղ չէր ազգային համերաշխության զգացմունքը, որքան յուրաքանչյուր անհատի մեջ եսակառույցյան զգացմունքը, որ հասցնում էր հային մինչև հրեշավոր ինքնասիրության և փառասիրության զգացմունքը՝ ի վնաս ընդհանուր ազգային շահերի»:

Սակայն դավաճանությունը, որ և ինչպես էլ արտահայտվեր նա, չկարողացավ, գոնե այս անգամ, թուրքաց կառավարության թիկունքը դառնալու Արեղդին փաշայի պատասխանը չգոհացրեց եվրոպական պետությունների ներկայացուցիչներին: Բանակցությունները դադար չառան, դեսպանները իրանք սկսեցին բարենորոգումների որոշ ծրագիր մշակել: Բայց նախքան այդ նոր քայլը տեսնելը, մենք պիտի դեռ կանգ առնենք Արծրունու հարուցած մի մեծ հարցի առաջ, որի սկզբնապատճառը Արեղդին փաշայի նույն պատասխանն էր:

Բազմակողմանի քննության ենթարկելով այն հարցը, թե ինչ սկզբունքներով պետք է ղեկավարված լինի թուրքաց կառավարությունը հայերի թիվը 17%-ից ավելի չընդունելու համար, Արծրունին գալիս հասնում էր այն եզրակացության, որ անշուշտ հաշվի առնված են միայն այն հայերը, որոնք Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի իրավասության տակ են գտնվում, այն է՝ միայն լուսավորչական հայերը: Դա մեծ անարդարություն էր հայ ազգի ընդհանուր շահերի տեսակետից այն պարզ պատճառով, որ հայ միայն լուսավորչականները չեն: Գալիս էր և այդ պարզ պատճառի հետևողությունը՝ կրոնը ոչինչ նշանակություն չունի մի ազգություն կազմելու համար:

Սա մի գծախառ հին հարց էր մեղանում: Իր տեղում՝ մենք բացատրեցինք նրա անցյալը և տեսանք, որ Գրիգոր Արծրունին էլ, մեր նախկին առաջավոր, լայնահայաց գործիչների նման, նույնպես քարոզում էր, թե կրոնական խտրությունները պետք է հեռացնել բոլոր ազգային հարցերի մեջ: Արծրունին հաճախ էր դիմում այդ սկզբունքին, մանավանդ երբ Թուրքիայում ստեղծվեց այնքան մեծ ազգային հարցը:

Այդ ժամանակ իրականությունն սկսեց բազմաթիվ փաստերով ցույց տալ, թե որքան անմիտ բաներ են այն խտրությունները, որոնք կրոնական նախապաշարմունքներից են բխում և պառակտում, նույնիսկ թշնամություն են տարածում մի ազգի մասերի մեջ: Պատերազմից հետո, երբ ծագում էր հայոց հարցը, Թուրքիայի հայերը, առանց դավանությունների խտրության, միացած էին՝ այդ դատը պաշտպանելու համար: Բայց ավելի պերճախոս էր, ինչպես տեսանք, մանավանդ սովոր: Արծրունին ամեն անգամ մեծ ուրախությամբ արձանագրում էր այդ իրողությունը և ավելի ևս արծարծում էր այն տարրական միտքը, թե ինչ է ազգությունը և ինչ է կրոնը:

Այժմ էլ, Արեղդին փաշայի ծրագրի առիթով, Արծրունին նույն մտքերն էր կրկնում: Բայց այս անգամ նրա քարոզությունը դարձավ սկզբնապատճառ մի կատաղի, երկար բանակովի:

Երկար ժամանակ էր, ինչ Արծրունին ոչինչ ուշադրություն չէր դարձնում «Մեղուի» վրա, որ, սակայն, շարունակ, անընդհատ, «Մշակով» էր զբաղված, ինչպես միշտ նրանով էր ապրում: «Մեղուն», իհարկե, անտես անել չէր կարող դավանական անխտրության հարցը: Արծրունին սկսեց պատասխանել և ահա բորբոքվեց բանակովի շտեմնված լայն շափերով, որ ստացավ «կրոնական բանակովի» անունը:

Ամենանշանավոր հանգամանքն այն էր, որ վեճը երկու խմբագիրների կամ երկու խմբագրությունների մեջ չսահմանափակվեց, այլ անցավ հասարակության մեջ և երկու լրագիրներում երևան եկած աշխարհայեցողությունները պաշտպանվում էին դրսից եկող բազմաթիվ թղթակցություններով:

Այդ բանակովի բոլոր մանրամասնություններին հետևելու կարիք չկա: Հարցը հին էր, վաղուց վճռված, և Արծրունուն վիճակված էր այդ ահագին բանակովի միջոցով նրա վերջնական հաղթանակն ապահովել: Այստեղ մենք միայն կպարզենք, թե ինչ միջոցներով էին կռվում հակառակ կողմերը:

«Մեղուի» զինարանում միայն հին, ժանգոտած ղեկեր էին դարսված, ղեկեր, որոնք մի ժամանակ գործ էին անում Ստեփանոս Նազարյանցի դեմ: «Հյուսիսափայլի» մասին ասում էին, թե նա քանդում է հայոց եկեղեցին: Ընդհանուր առմամբ միտքն ուներ և այն ահագին վայնասունը, որ «Մեղուի» մեջ բարձրացավ «Մշակի» դեմ: Սակայն ահա ինչպես էր ձևակերպում Արծրունին իր գավառները բանակովի սկզբում.

«Հարուցանելով «Մշակի» վերջին համարներում այլադավան հայերի՝ ազգի հետ միանալու խնդիրը, մենք բոլորովին նպատակ չունեինք կրոնական խնդիրը հարուցանելու, այլ նայեցինք խնդրի վրա բուն ազգային տեսակետից:

Մենք ոչ լուսավորչականներին ենք քարոզում թողնել իրանց կրոնը և ոչ էլ բողոքականներին ու կաթոլիկներին ենք քարոզում թողնել իրանց կրոնը և լուսավորչական դառնալ...

Մեզ համար նույնն է, ինչ կրոնի կպատկանի այս և այն հայը, մենք գործ չունենք հայի ներքին համոզմունքների, գործ չունենք կրոնական խնդիրների հետ: «Մշակը» հասարակաց օրգան է, նրա նպատակն է դառնալ ընդհանուր հայոց պաշտպան, հայոց շահերի ընդհանուր օրգան, միջոց տալ բոլոր հայ համայնքներին, ինչ կրոնին և պատկանեն հայերը՝ հարուցանել, հուզել, բացատրել իրանց հասարակական, ուսումնական, տնտեսական ինտերեսները:

«Մշակը» հասարակաց օրգան է, նա աստիճանաբար չի պարապում: Մեզանից հեռու է, մեր գործը չի քննել, թե կրոններից ո՞րը ավելի վատ է: Մեզ համար բոլոր կրոնները հավասարապես լավ ու օգտավետ են: Մենք կրոնի և խղճի հավասարության և ազատության պաշտպան էինք և միշտ կլինենք:

Թող ամեն հայ դավանի այն կրոնը, որի մեջ ծնված է, որին համակրում է, բայց թող բոլոր հայերը ազգային տեսակետից միմյանցից շանջատվեն կրոնի տարբերության պատճառով և ձուլվեն ի մի ազգություն՝ ազգային ընդհանուր հայրենիքի և մայրենի լեզվի միջոցով:

Մենք երբեք ոչ մի կրոնի էությունը չենք քննել և երբեք չենք քննի, բայց երբ ժամանակը կգա՝ մեր մտքերը կհայտնենք, ինչպես անցյալում շատ անգամ հայտնել ենք, եկեղեցու արտաքին վերանորոգությունների անհրաժեշտության վրա:

Կրոնը ներքին հավատ է. կրոնը ուրիշ բան է, եկեղեցու հիմնարկությունը ուրիշ բան:

Կարելի է հարկավոր ժամանակ վերանորոգություններ առաջարկենք եկեղեցու արտաքին ձևի, տնտեսական և վարչական կազմակերպության մեջ, առանց հանդիմանելու կրոնի էական մասերին դիպչելու:

Բայց այժմյան մեր հողավածների շարքի նպատակն էր միմիայն հասարակական ազգային խնդրի հարուցանելը, ավելի ոչինչ»:

Ավելի պարզ ու որոշ գծադրած մի հրապարակախոսական ծրագրի հաղիվ թե կարելի լիներ պահանջել մի լրագրից: Մանավանդ հայտնի էր, և Արծ-

* Տես 11 հատոր, էր. 323:

րունին մի քանի անգամ կրկնել էր այս, որ հարցը հարուցված է հատկապես թուրքահայերի թվի վերաբերմամբ տեղի ունեցած կասկածների առիթով: Ի՞նչ կարելի էր ասել այս բոլորի դեմ:

Ողբալին Արծրունու դեմ գործող թշնամության այն նեղ ու սահմանափակ հոգեկան կարողությունն է, որ այդ բոլորը ձևակերպեց այնպես, որպես թե Արծրունին հավատափոխություն է քարոզում, թե հայոց եկեղեցին նրա համար ոչնչություն է և այլն: Վերահիշյալ հոգվածը տպված էր «Մշակի» առաջին երեսում, շատ խոշոր տառերով: Բայց երբ թշնամական կուրուսթյունը շահակացող է ձևանում, ի՞նչ կարող է անել տառերի նույնիսկ ավելի մեծ աստիճանի խոշորությունը:

Մեղուականներին կատաղեցնում էր մանավանդ այն, որ «Մշակի» սյունակներում հյուրընկալություն էին գտնում այլադավան հայերը, որոնք պաշտպանում էին իրանց ազգային իրավունքները: Գրում էին հայ կաթոլիկները, բայց նրանք այնքան ատելի չէին պահպանողական եկեղեցամուկների համար, որքան հայ բողոքականները: Բանն այն էր, որ «Մշակի» մեջ աշխատակցում էր բողոքական պատեր Աբրահամ Ամիրխանյանը: Նա գրում էր օրվա ընթացիկ հարցերի մասին, մանավանդ Հայաստանի սովի մասին, իսկ «կրոնական» բանակովի մեջ, իհարկե, սկսեց պաշտպանել Արծրունու հայցքները: Մեղուականները չէին ուղում, որ այդպես լինի. նրանց կարծիքով, Ամիրխանյանը իրրև հոգևոր մի որսորդ, իրրև հայ եկեղեցուց հեռացած մի համայնքի կրոնական ներկայացուցիչ, խոսելու և պաշտպանվելու իրավունք չպիտի ունենա:

Կատաղությունը ծայրահեղ լարման հասավ մանավանդ այն ժամանակ, երբ Ամիրխանյանը «Մշակի» մեջ սկսեց տպագրել իր շրջաբերական նամակները բողոքական հայերին: Այդ արդեն մի բոլորովին անհնարին հանդգնություն էր համարվում, և վայնասունը ավելի և ավելի աղմկալից, կրքոտ, հայհոյական դարձավ: Եվ սակայն, եթե մեկը այսօր վերցնի այդ շրջաբերականները (երկու հատ են), նրանց մեջ կտեսնի միայն խրատներ, որ բողոքական հայերը շմոռանան իրանց ազգությունը, որ հալածանք ու ատելություն տեսնելով լուսավորչականների կողմից, իրրև վրեժ կամ հատուցում չհեռանան ազգության սկզբունքներից, այլ համարեն իրանց հարազատ հայեր և կատարեն իրանց ազգային պարտավորությունները:

Մոտ մի քառորդ դար է անցել այդ, կարելի է ասել, փոթորկալից բանակովից: Հայացքները փոխվեցին, հասարակության մի նշանավոր մասը իրացրեց շատ տարրական ճշմարտություններ: Այժմ այլևս այդպիսի վեճ չի կարող լինել մեր մեջ: Կյանքը ամենից լավ դատավոր հանդիսացավ: Ազգային ամենամեծ աղետների մեջ այլադավան հայերը իրանց գործունեությամբ, իրանց արյունով ապացուցեցին, որ հայությունը այս կամ այն եկեղեցուց չի կախված, այլ իրրև անկախ ու առանձին սկզբունք՝ իր դարգացման համար ճանաչում է ուրիշ պայմաններ և հանգամանքներ:

Այսօր այդ ամբողջ «կրոնական» կոնվեր ներկայանում է դիտողին հրրև հին ու մաշված մի մոլորություն, իրրև մի նախապաշարմունք, որին այնքան խոշոր կերպարանք էր տվել մեր պատմական տխուր անցյալը, կազմելով միայն նեղահայաց եկեղեցականության համար ներելի, իսկ բոլոր մյուս կողմերից խեղճ ու դժբախտ, անարգար այն միտքը, թե «հայոց եկեղեցուց դուրս չկա հայություն»:

Եվ այն ժամանակի համար, որ մոլեգնությամբ ուղում էր պաշտպանել այդ խավար սկզբունքը, ազատ, լուսավոր, լուսահայաց մտքի մի-մի գոհարներ էին Գրիգոր Արծրունու այն բազմաթիվ հոգվածները, որոնց մեջ ես բա-

ցատրում էր ազգության սկզբունքները, ազգային կենսունակության խորհուրդները: Այսօր էլ այդ հոգվածները իրանց վրա են բեռում ընթերցողի ուշադրությունը: Այսօր էլ նրանց մեջ շատ ու շատ ուսանելի բաներ կան: Մասնավորապես մենք կհիշատակենք այստեղ երկու գեղեցիկ հոգվածներ, որոնք գետեղված են «Մշակի» 1880 թ. բանասիրական բաժնում՝ «Կրոն և ազգություն» և «Իմ խոստովանությունը»: Վերջին հոգվածից մենք քաղվածքներ բերել ենք Արծրունու ուսանողական կյանքը պատմելիս*:

Մինչդեռ կրոնական բանակովը օրեցօր սաստկանում էր թիֆլիսում՝ հակառակ բանակների շուրջը հավաքելով նոր և նոր մարտնչողներ, այնտեղ, Քուրթիայում, արագ աճում էր այն մեծ հարցը, որից և ծնվել էր կրոնական բանակովը: Արևելյան խնդիրը ավելի մոայլ կնճիոներ էր ավելացնում իր դարավոր արյունոտ դեմքի վրա: Եվրոպական դիպլոմատիան շատ եռանդուն ջանքեր էր անում՝ դժվարությունները խաղաղ միջոցներով շակելու համար: Բայց թուրքական համառությունն անկարելի էր դարձնում այդ ջանքերը: Հունաստանը պատերազմի էր պատրաստվում, Չերնոգորիան չէր կարողանում ստանալ իրան խոստացած Գուլջինիոն: Նեղն ընկած ժամանակ թուրք կառավարությունը հենվում էր իր հպատակ վաչրենի ցեղերի հայրենասիրության վրա: Ալբանական շարժում սկսվեց, որի նպատակն էր թույլ շտալ, որ Գուլջինիոն անցնի Չերնոգորիային: Եվ դուրս էր գալիս այն, որ ինքը թուրքիան շատ է ուզում կատարել իր տված խոսքը, բայց չի կարողանում ազատ գործել, որովհետև ալբանացիները չեն թույլ տալիս:

Այդպիսի մի խաղ էլ Հայաստանի համար էր պատրաստվում: Թուրք փաշաները վաղուց վանում և ուրիշ կողմերում պատրաստում էին քրդերին: Ոչ ոքի համար այլևս զաղտնիք չէր և նույնիսկ լրագիրներում էլ հայտարարված էր, որ թուրքաց կառավարությունը պատրաստվում է 61-րդ հոգվածին պատասխանել քրդական մի շարժումով, որ պիտի լուսնի ամենքին: Մնում էր, իհարկե, առիթներ ստեղծել այդ շարժումը հուզելու համար: Եվ ահա հուլիսի վերջերում Կ. Պոլիսի, ապա և եվրոպական լրագիրներում լուրեր հրատարակվեցին, թե երևացել են դինաված հայ խմբեր, որոնք ընդհարվում են քրդերի հետ:

«Մշակին» այդ լուրը առաջին անգամ հաղորդողը Հայկակն էր: Ահա ինչ էր գրում նա.

«Հուլիսի 28-ին լուր տարածվեցավ, թե Հայաստանի վերաբերյալ կարևոր հեռագիրներ կառավարությունը վար դրեր է. ահա երեկ կիմանամք, «Stamboul» կհրատարակե, «Սեմաֆոտ» և «Վազթ» կհաստատեն, թե «հանուն ազգային վրեժխնդրության հայոց դինյալ գործի խմբեր հարձակեր են վասպուրականի քուրդ գյուղերու վրա և 7 գյուղ այրեր մրրկեր են»: Այս լուրը, որո ստուգությունը ինչ աստիճան լինելն չկարողացանք իմանալ, մեծ ազդեցություն ունեցավ:

Համոզում կա, որ եթե այս դեպքը ճշմարիտ լինի, եվրոպայի վրա խոր տպավորություն մը պիտի ընե և հայկական խնդրույն այնպիսի քայլ մը անել պիտի տա, հորմե շատ և շատ գոհ պիտի լինենք: Այսօր պատրիարքը դեսպանաց այցելության պիտի շրջագայի: Վաղը դեսպանք նիստ ունին հայոց խնդրույն համար. տակավին Հայաստանի վարչական ծրագիրն չեն ավարտած և վաղվան նիստի մեջ այս հարցը պիտի կարգադրեն: Սրբազանը շրջաբերական մը պատրաստեց, զոր այս երեկո պիտի խրկե բոլոր դեսպանաց: Վերջապես հայոց խնդիրն, որ օրերս երկրորդական կերպարանք մը առած էր հու-

* Հատ. 1, եր. 120—124:

նաց և Մանթենեկրոյի հարցերի բաղադրամասը, երկու ավուրց մեջ կերպարանափոխ եղավ, հայոց զինյալ խմբերու արշավանաց լրույն շնորհիվ: Կրսեն, որ այս միջոցին Վանա մեջ ալ շարժում մը տեղի պիտի ունենա: Այն ատեն իրանց վիճակը անհաշվելի կերպով կլավանա:

Հետաքրքրականը այնքան լուրը ինքը չէ, որքան այն տպավորությունը, որ նա գործեց հասարակության վրա: Նա միանգամայն համապատասխանում էր օրվա տրամադրություն: Ծարունակելով հույս դնել եվրոպական դիպլոմատիայի ջանքերի վրա, ամենքը հեռվին կոնգրեսից հետո հետզհետե գալիս էին այն եզրակացության, որ դիպլոմատներին պետք է շտապեցնել, պետք է օգնել զենքի ձայնով: Եթե չլիներ էլ զինված հայերի շարժումը, պետք էր նրան ստեղծել «իրանց վիճակը անհաշվելի կերպով» լավացնելու համար:

Լուրը հավասարաշափ մեծ ազդեցություն արավ և ռուսահայերի վրա: Ընդամենը մի երկու-երեք ամիս էր անցել «Խենթի» վերջանալուց հետո, և ահա կյանքի մեջ երևում էին նրա հերոսները: Ահա ինչ էր նշանակում բանաստեղծի համար ապրել հասարակական շարժումների գաղափարով, ինչ էր նշանակում լինել օդի մեջ կախված իրականությունը գուշակող, ըմբռնող և պատկերացնող գործիչ:

Լուրը, իհարկե, սարսափ պատճառեց միայն «Մեղուին»: «Մշակը», հավատարիմ մնալով իր սկզբունքներին, չէր կարող բացասաբար վերաբերվել իր թղթակցի հազորդածին: Արժույնին սկզբում միայն հարց դրեց, թե ինչպե՞ս պիտի վարվի Քուրբխան զինված հայերի հետ:

«Մինչև որ քրդերը և շերքեղները հարձակվում էին հայերի վրա,— գրում էր նա,— օսմանյան կառավարությունը այդ հարձակումները չէր համարում կառավարության դեմ ապստամբական շարժում, այլ միայն ներքին խռովություն, ներքին ավազակություն: Բայց եթե այժմ թուրքաց կառավարությունը դուրս կուղարկի հայոց զինվորված խմբերի դեմ, գորանով կապացուցանի, որ թույլ չի եղել երկրի ավազակներին զսպելու համար, դորանով կապացուցանի, որ այն, ինչ որ իր հպատակ մահմեդականներին է թույլ տրված, քրիստոնյա հպատակներին թույլ արված չէ, դորանով կապացուցանի, որ քուրդ ու շերքեղ ավազակները իրան՝ կառավարության գաղտնի թույլտվությամբ էին գործում հայերի դեմ»:

Այդ հարցին Արժույնին նորից վերադարձավ մի քանի շաբաթից հետո, սեպտեմբերին: Երկու ռուս թերթեր նույնպես լուրեր տպեցին թուրքահայերի շարժման մասին, իսկ դրանցից մեկը՝ «Новое время»-ն, նույնիսկ մի համակրական առաջնորդող նվիրեց այդ շարժման: «Մշակը» տպեց Իզդիրից ստացած մի հեռագիրը, որ հազորդում էր, թե Վանի հայերի մեջ ապստամբություն է ծագել, սպանված հայերի թիվը 70-ի է հասնում: Արժույնին, ինչպես երևում է, շատ մեծ հավատով չվերաբերվեց իր սեփական թղթակցի հեռագրին: Ուստի, առաջնորդողի մեջ բերելով այդ հեռագրի բովանդակությունը, նա դիմեց և ռուս լրագրողների վկայության և ապա միայն կարողացավ ասել, թե «զինյալ շարժման լուրը հաստատվում է»: Այդպիսի շարժում, որքան մենք գիտենք այժմ, չի եղել և Իզդիրի հեռագիրը, հավանականորեն, հիմնված է եղել այն նույն լուրերի վրա, որոնք անցել էին եվրոպական, թուրք և ռուս լրագրության մեջ:

Ասացինք արդեն, թե որքան լավ էր լուրը համապատասխանում օրվա ընդհանուր տրամադրության: Եվ դարձանալի շափտի լինի, որ նա ուսեցվեց, մի հայտնի աստիճանի շափազանցություն ձև ստացավ:

Այս անգամ Արժույնին արտահայտեց իր վերաբերմունքը դեպի այդ շարժումը: Մենք տեսանք, որ նա զենքը անհրաժեշտ էր համարում իրրե ինքնապաշտպանության և ոչ հարձակողական գործիք: Այժմ նա ասում էր.

«Ինչքան էլ տխուր լինի այն իրողությունը, թե ճնշված ազգերը իրանց իրավունքները ստանալու համար պետք է անպատճառ զենք բարձրացնեն և արյուն թափեն, բայց դժբախտապես ուրիշ ճանապարհ չկա այս տեսակ ազգերին՝ իրանց մարդկային իրավունքները լուսավորված աշխարհի առջև վկայելու համար»: Իսկ մի ուրիշ հոդվածի մեջ նա ավելացնում էր. «Եվրոպայի առջև, եվրոպական դիպլոմատիայի աչքում գին չունի մի տանջվող ազգի լուռ բողոքը,— որքան էլ անտանելի լինի նրա բողոքը,— նրա աչքում գին ունի միմիայն մի ազգի դրական բողոքը, ընդդիմադրությունը ճնշողի դեմ: Եվրոպան սկսում է հարգել մի ազգություն միայն այն ընդդիմաց, երբ այն ազգը զենքը ձեռին սկսում է իր և իր թշնամու արյունը թափել ազգային ազատության համար»:

Մի քանի օրից հետո Իզդիրից մի ուրիշ հեռագիր հաղորդում էր, որ Վասպուրականում զինված հայերը միացան ասորիների հետ, որոնք Մար-Շիմոնի առաջնորդությամբ են գործում: Մուշի կողմում մի քանի քուրդ ցեղեր իրանց օգնությունն են առաջարկում զինված հայերին: Այս առիթով Արժույնին գրում էր.

«Վերջապես թուրքաց Հայաստանի ամբողջ ազգաբնակչության մեջ սկսում են համերաշխության ցույցերը երևալ, Հայաստանի թե հայ, թե ասորի և թե քուրդ ազգաբնակչությունները վերջապես սկսում են հասկանալ, թե բոլորն էլ հայաստանցի են, թե բոլորի շահերը նույնն են, թե ճնշումը, որ նրանց վրա գործում է Քուրբխան, հավասարապես ամենքի վրա է ծանրանում»:

Բնորոշ է բոլոր այդ ազգերին հայաստանցի անունը տալը, բայց ոչ տարօրինակ, եթե մենք միշտ աչքի առջև ունենանք Արժույնու այն հիմնական հայացքը, թե հայերը պիտի կուլտուրական ճանապարհով կլանեն իրանց հարեվան ազգությունները, պիտի հայացնեն նրանց: Մենք պարտավոր ենք ասել, որ այսպիսի մի հայացք ամենից քիչ Արժույնուն վայել պիտի համարվեր, քանի որ նա սկզբից եթե իրան հայտարարել էր ազգերի համերաշխ եղբայրակցության, փոխադարձ աջակցության կողմնակից:

Քննաբար վերաբերվելով այդ երևույթին, մեր առջև ամենից առաջ բացվում է այն հարցը, թե որքան արդարացի էր մի փոքրաթիվ, ճնշված ազգի համար գոյություն իրավունք պահանջել ոչ միայն այն պատճառով, որ նա ինքնըստինքյան այդ իրավունքն ունի, այլև այն պատճառով, որ նա կարող է և պիտի կլանի իր հարևան ազգությունները: Եթե արդարություն էր, որ հայը պիտի ապրի իր ազգային առանձնահատկություններով իրրե մի ամբողջ ազգայնական մարմին, ինչո՞ւ նույն բանը արդարություն չպիտի համարվեր ասորու, քրդի համար:

Արժույնին և այն ժամանակվա մյուս առաջավոր գործիչները հենվում էին այն մտքի վրա, որ կուլտուրական ընդունակություն ունեցող ազգերը ուղեն-չուղեն, պիտի կլանեն ոչ կուլտուրական տարրերը: Բայց այդ դեպքում պետք էր ընդունել և այն, որ հայերից կուլտուրայով բարձր ազգերին էլ պետք է իրավունք տալ, որ նրանք կլանեն հայերին: Եվ սակայն, այդպիսի իրավունքի մասին խոսք էլ չկար:

Այս միակողմանիությունը գալիս հասնում էր նույնիսկ շովինիստության: Արժույնու գրվածքների մեջ մենք հանդիպում ենք տեղերի, որոնք առնվազն տարօրինակ տպավորություն են թողնում իրրե Արժույնու գրչի տակից դուրս

եկած: Այսպես, նա ասում էր, որ կովկասյան ազգերից ոչ մեկը չունի հայերենի նման մի կուլտուրական, կենսունակ, զարգացման ընդունակ լեզու: Երբեմն և հայերենը պիտի առաջնակարգ ու բարձր լինի: Հետո նա խորհուրդ էր տալիս բոլոր մասնագետներին թողնել արարական անհարմար տառերը և գործածել հայերեն տառերը, որոնք ամեն հարմարություններ ունեն նրանց լեզուն ճշտությամբ և հեշտ կերպով արտահայտելու:

Ի՞նչ կարելի էր սպասել այսպիսի քարոզներից, որոնք մոռանում էին, որ յուրաքանչյուր ազգ ունի իր զգացմունքը, իր ինքնասիրությունը: Կ. Պուլսի թուրք լրագիրները աղմուկ բարձրացրին, որ հայերը բուլղարներից էլ վտանգավոր թշնամիներ են, որովհետև բուլղարները ղենք էին բարձրացնում թուրքերի դեմ, մինչդեռ հայերը ուզում են խաղաղ միջոցներով կլանել թուրքին ու քրդին, ձուլել նրանց իրանց մեջ, ոչնչացնել նրանց կրոնը, ազգությունը: Եվ, իհարկե, այդ լրագիրները չէին բավականանում աղմուկ հանելով, գանձատներ անելով, այլև պահանջում էին միջոցներ ձեռք առնել, ճնշել, նույնիսկ կոտորել...

Ինչպե՞ս պետք է վերաբերվել Արծրունու այդ մի քանի մոլորություններին: Պետք է նրանց համարել շեղումներ, որոնք անբնական չեն, եթե ի նկատի առնենք ժամանակը, նրա հուզմունքները, նրա ոգևորությունը: Չէ սխալվում միայն նա, ով ոչինչ չէ անում: Իսկ Արծրունու մասին չէ կարելի ասել, թե նա ոչինչ չանողներից էր: Լինելով մի ամբողջ շարժման գլխավոր առաջնորդներից մեկը, գործելով անդադար, նա, իհարկե, չէր կարող մեքենայի ճշտությունամբ շարժվել: Իբրև ջղուտ, վառվռուն մի քարոզիչ, նա հաճախ պիտի ոգևորության բուռն հոսանքով տարվեր դեպի շափազանցություններ ու շեղումներ: Անցավ անդալիս ժամանակը, կյանքը սովորական շավղի մեջ մտավ, և Արծրունին այնուհետև նեղ ազգայնամտական վաղանցուկ մոլորություններին երբեք չմոտեցավ: Եվ մեր հիշատակած մի քանի դեպքերը դարձյալ չեն կարող փոխել նրա գործունեության ընդհանուր բնավորությունը...

Ասորա-հայկական շարժման լուրերը շուտով վերջացան, և «Մշակի» էջերում թեև խոսք եղավ նվերներ հավաքել վասպուրականի կոիվներում վիրավորված հայերի համար, բայց այդ հրավերը արձագանք չգտավ: Եթե այդ լուրերը հարկավոր էին Կ. Պուլսի դեսպաններին շտապեցնելու համար, պետք է ասել, որ այդ դերը նրանք կատարեցին դեռևս օգոստոս ամսին: Վեց պետությունների ներկայացուցիչները վերջացրին հայկական բարենորոգումների ծրագիրը և հավաքական ծանուցագրի ձևով սեպտեմբերի սկզբում ուղարկեցին թուրք կառավարության, պահանջելով, անհապաղ գործադրություն: Ներսեսը և նրա օգնականները շատ զոհ էին այդ թղթի բովանդակությունից և ոճից: Նորից հույսերը կենդանացան: Բայց դիպլոմատիայի ուշադրությունը շուտով խելց Գուլցինիոյի հարցը: Գլադստոնի մինիստրությունը, թուրքական անվերջ ձրգձրգումներից ձանձրացած, առաջարկեց Բեռլինի դաշնադրությունը ստորագրող պետություններին միասին ուժով ճնշում գործ դնել: Համաձայնություն կայացավ, և եվրոպական միացած նավատորմը, անգլիական ծովային Մեյմուրի առաջնորդությամբ, երևաց Ադրիականի ջրերում:

Եվրոպան ինքն էր վավերացնում, որ խաղաղ ճանապարհով Թուրքիայից ոչինչ ստանալ չի կարելի: Ծովային ցույցը իր ազդեցությունն արավ, և Թուրքիան սկսեց հետզհետե թեքվել դեպի գիշումները: Բայց միմիայն Գուլցինիոյի վերաբերմամբ: Մոտ երկու ամիս եվրոպան սպասում էր պաշարման ենթարկել Զմյուռնիան և ուրիշ նավահանգիստները և այդպիսով միայն կարողացավ հարկադրել թուրքերին կատարել իրանց ստորագրած պարտավորությունը: Եվ

արդյո՞ք մեղավոր էր Թուրքը, որ համոզվել էր, թե կարելի է աներկյուղ խաղաղեցնել եվրոպական դիպլոմատիան: Ո՛չ, եվրոպայի անկարողությունը, անտարբերությունը ամեն օր նրա աչքի առաջ էր: Ազգանացող նավատորմը կարող էր պահանջել թուրքական բոլոր պարտականությունների կատարումը: Բայց չպահանջեց, նրա գործն էր միայն Գուլցինիոն շերտագործներին հանձնելը: Իսկ մնացած հարցերի վերաբերմամբ Թուրքիան հետևեց ժամանակ վաստակելու քաղաքականության: Պատասխանելով դեսպանների հավաքական ծանուցագրին, Աբեդղին փաշան խոսք տվեց չորս ամսվա ընթացքում իրագործել բարենորոգումները Հայաստանում:

Բայց այդ ժամանակի կեսն էլ դեռ չէր անցել, երբ ամենքի համար պարզվեց, թե ճիշտ որ Թուրքիան սկսել է վճռել հայոց հարցը, վճռել վերջնականապես, թուրքական եղանակով: Ասորա-հայկական շարժումը շատ համեստ մի բան էր և ահա նրան փոխարինեց ավելի հաստատ, ավելի ահեղ քրդական շարժումը: Հանկարծ բարձրացավ քրդական մի մեծ բանակ, որի թիվը 20 հազարից պակաս չէին համարում: Եեյխ Ուրեյդուլլահը կրոնական պատերազմ հրատարակեց և տարավ Մարտինի հրացաններով զինված իր բանակը դեպի Պարսկաստան: Սովի մի ամբողջ տարի անցկացրած քրդերը մորեխի պես թափվեցին պարսկական գյուղերը, կողոպտեցին, ոչնչացրին ամեն ինչ: Պարսիկ զորքերը սկզբում չկարողացան զիմադրել, ջարդվեցին, և Ուրեյդուլլահը գրավեց Միանդաբ, Մարաղա, Բինաբ, Սովուջբուլաղ գավառները, պաշարեց Ուրմին և սարսափ տարածեց Թավրիզի վրա: Կրագիրները հաղորդում էին, որ քրդերը այդ տեղերում այրել են մի քանի հազար կանանց և երեխաների, որոնք հավաքված էին մզկիթներում: Հայաստանի մեջ քարուքանդ էին եղել 170 գյուղեր: Քրդական աշխարհում մեծ ոգևորություն էր տիրում: Պատրաստվում էին ավելի մեծ բանակներ կազմելու:

Ավելի մեծ էր ոգևորությունը թուրքաց մայրաքաղաքում: «ГОЛОС» լրագրի թղթակիցը գրում էր հոկտեմբերի վերջերին. «Այստեղ օրվա հարցը կազմում են քրդերը, քրդերը և քրդերը: Քրդերով է զբաղված այժմ թուրքաց ամբողջ հիացած մամուլը, որ եվրոպային ավելի էլ վատթար սարսափներով է սպասում, եթե նա ձեռք չի վերցնի Թուրքիայից: Քրդերով զբաղված է ամբողջ ազգաբնակչությունը, որի մի մասը՝ մասնագետները ուրախությունից բունը կորցրել են, իսկ մյուսը՝ քրիստոնյաները հասել են մահամերձ հուսահատության: Քրդերով են զբաղված պետությունների ներկայացուցիչները, որոնք դեռ ալբանական դժվարությունները չեն վերջացրել և այժմ հանդիպում են նոր անկարգությունների, որ կատարում է Թուրքիան Փոքր Ասիայի մեջ այն նպատակով, որ անզոր դարձնե պետությունները՝ նրա գործերի մեջ խառնվելու փորձերը:

Ահա ինչպես էր Թուրքիան լուծում հայոց հարցը: Եեյխ Ուրեյդուլլահը գործում էր պարսկական հողի վրա, բայց ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ նրա արշավանքը կազմակերպվել է Թուրքիայում, հատկապես իբրև սպասումնք եվրոպայի դեմ՝ հայոց հարցի առիթով: Պարսից կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ Ուրեյդուլլահը անունով է միայն հրամանատար, քրդական բանակի իսկական առաջնորդները թուրք օֆիցերներն են: Սակայն Թուրքիան չքմեղ էր ձևանում, համարելով այդ արշավանքը պարսկահատակ քրդերի ասոսամբություն: Բայց ահա քրդական արշավանքը փախուստի փոխվեց. պարսից զորքերը սկսեցին հաղթել, ջարդել: Արծրունին հասնությունամբ գրում էր այդ առիթով:

«Թուրքիան նրան սխալվեց իր հաշիվի մեջ: Նա կարծում էր, որ քրդերը կազմելով Պարսկաստանում մի զորեղ միութիւն, միշտ միջոց կունենան հարձակվել Հայաստանի վրա, բայց ընդհակառակն, քրդերը այժմ ջարդվում են պարսիկներից, և այդպիսով թուրքաց Հայաստանն էլ ազատվելու է իր անհաշտ թշնամիների բարբարոսական հարձակումներից:

Քրդերի այդ անհաշտութիւնը մեծ բախտ էր թուրքաց Հայաստանի քրիստոնյաների համար: Այո՛, դա բախտ է, որ Թուրքիան դարձյալ սխալվեց իր նենգավոր հաշիվների մեջ»:

Կոտորածներ առաջացնելու մտքի տեսակետից կարելի էր իսկ որ ասել, թե Թուրքիան սխալվեց: Բայց որ սխալ չէին նրա նենգավոր հաշիվները, այդ միայն Արծրունու սուր հայացքից էր խուսափել: Քրդական միութիւն՝ հայերի դեմ ուղղած, իրականութիւն էր, և եթե նա այդ իսկ ժամանակ դեռ չէր գործում, դա դեռ չէր նշանակում, թե ապագայում էլ չպիտի գործե: Ո՛չ Եվրոպան, ո՛չ Թուրքիան դեռ մի կտոր բարենորոգում չէին տվել հայերին, բայց քրդերն արդեն պատրաստված էին դիմադրելու բարեկարգութեան ամեն մի փորձին: Եվ մինչդեռ մենք դեռ թղթի վրա էինք վճռում քրդերին նրանց դավոր անկույտուրական կյանքից հետո քաղաքակրթութեան զենքերով նվաճելու հարցը, թուրք կառավարութիւնը մի կարճ միջոցում կարողացավ նրանց ահեղ գործիք դարձնել իր ձեռքում:

Եվ այս հանգամանքը նույնիսկ թուրքերն էլ չէին թաքցնում: Շեյխ Ուրեյդուլլահ-ը, հաղթութիւնների պատճառած հրճվանքի օրերում «Օսմանլը» թուրք-ֆրանսիական լրագիրը գրում էր. «Տիրապետիւն և Սուլեյմանիեն (օսմանյան Քրդստանի մեջ) մեր ստացած մասնավոր նամակաց խոսքին նայելով, օսմանյան քուրդ ցեղապետները բանակցել սկսած էին, որպեսզի իրենց ազգային կենաց պահպանութեան կամ մանավանդ վերանորոգման համար մեքերնին համաձայնին: Այդ բանակցութիւնը ուրիշ պատճառ չունին, բայց միայն Հայկական կոչված մեքենայութիւնը, որոց միջոցով ինքնակոչ իշխանազուններ կտեսնեն պատրաստ համոզելու զԵվրոպա՝ ի վնաս իրենց սպառնացյալ գոյութեան, և հետևաբար հարկ անհրաժեշտ համարեցան համաձայնել, որպեսզի Արևելյան Բումելիի իսլամաց բախտին վիճակակից չլինին»:

Թուրքական այս մանվածապատ գրութիւնը պարզապես այն էր ասում, որ թուրք կառավարութիւնը քրդերից մի մեծ միութիւն էր աշխատում ստեղծել, հասկացնելով նրանց, թե հայերը պիտի քուրդ ազգի գոյութեան վերջը տան, ուստի հարկավոր է պատրաստվել նրանց դիմադրելու, նուանցից սալապանվելու համար:

Դա անամոթ մոնղոլական քաղաքականութեան հաղթանակն էր. եվրոպական մեծ պետութիւնների առջև պարտավորվել պաշտպանել հայերին քրդերից և շերքեզներից և ապա նույն այդ քրդերին դնել իր հովանավորութեան տակ, նրանց աջակցութիւն ցույց տալ, որ միանան, կազմակերպվեն՝ հայերի դեմ պաշտպանվելու համար: Դիվանագիտական այնքան ջանքեր առաջացրած հայկական հարցը վերջիվերջո վերածվում էր քրդական հարցի: Պաշտպանութեան կարող էին, բնաջինջ դառնալու վտանգին ենթարկված էին ոչ թե հայերը, այլ քրդերը:

Այս քաղաքականութեան թուրք կառավարութիւնը սկսեց հետևել համապատասխան, մինչև որ երկար տարիների ընթացքում հասավ քրդական համիդի գնդեր կազմելու դժոխային մտքին: Եվ այդ բոլորը կատարվում էր բացարձակ եվրոպական դիպլոմատների աչքի առջև:

Ի՞նչ մնաց վեց պետութիւնների հավաքական պահանջներին: «Դարձյալ ստեղծ», — գրում էր Արծրունին դեռ հեղափոխութիւն, դեռ Ուրեյդուլլահի արշավանքի ժամանակ: Այդ իրողութիւնն էր հաստատում ներսես պատրիարքը Քիֆլիսի հայերին գրած իր նամակների մեջ: Պատրիարքը օգնութիւն էր խնդրում: Բայց այդ հրավերը այլևս նախկին ոգևորութիւնը չառաջացրեց. սովի շափերը այս անգամ այնքան ահոնկի չէին, ժողովրդական խոշոր ժողովարարութիւններ այլևս չեղան: «Մշակի» մեջ շատ քիչ էին հրեում նվերների ցուցակներ: Քիֆլիսի հայերը 15 հազար ուրբի հավաքեցին և ուղարկեցին պատրիարքին:

Եվ այնքան մեծ եղելութիւններով հարուստ 1880-ական թվականը վերջանում էր, նորից մոռացութեան մասնելով թուրքահայերի քաղաքական դրութիւնը: Դեպքումները թողին սեպտեմբերյան ռեֆորմների ծրագիրը: Նրանք այժմ իրանց ուշադրութիւնը նվիրել էին թուրք-հունական սահմանային վեճերին, որոնք սուր կերպարանք էին ընդունել:

Նորից պետք էր դիմել համբերութեամբ, սպասել, թե երբ կկարգադրվի հունական հարցը, որպեսզի հերթը դա հայերին: Ներսեսը չէր թուլացնում իր եռանդը: Նա շարունակում էր իր պահանջները, միջնորդութիւնները, դիմադրում էր կառավարութեան կարգադրութիւններին:

4. Պոլսում միայն դիպլոմատիական ճանապարհով հույս ունեին տանել հայկական դատը: Բայց այդպես չէր դավաճներում: Այնտեղ, հարստահարութիւնների, զրկանքների աշխարհում, միացող և պատրաստվող քրդութեան կողքին, հասել էին արդեն այն եղրակացութեան, որ Թուրքիան հոժար կամքով ոչինչ չէր տա հայերին, որ դիպլոմատիան զուր շանքեր է անում, եթե չպիտի կարողանա ստիպողական միջոցներ գործ դնել: Եվ «Մշակի» թղթակիցը վանից գրում էր, թե այդ տխուր եզրակացութեան հասած գավառներում հայերը դադարի հեղափոխական ընկերակցութիւններ են կազմում ինքնապաշտպանութեան համար...

Այդ տրամադրութեանը, իհարկե, լավ տեղյակ էր թուրք կառավարութիւնը, որ սկսեց խստացնել իր ճնշումները մանավանդ գավառներում: Մեծ վեզիր Սալիկ փաշան սկիզբ դրեց այն մտալ ներքին քաղաքականութեան, որ այնուհետև թուրք կառավարութիւնը տարիների ընթացքում սկսեց ավելի և ավելի սաստկացնել, հասցնել զարհուրելի, ճիշտ ասիական բարբարոս բռնակալութեան:

Խստութիւնները 4. Պոլսում ամենից առաջ ուղղվեցին տպագրական, դրպրոցական ազատութեան դեմ: Կրթիչների վրա բարձրացավ վարչական երկաթե ձեռքը, հայոց օրացույցները, պատմութիւնը խիստ հալածանքների ենթարկվեցին: Ազգային պատկերները արգելքի տակ գրվեցին, երգարաններ տպող տպարանատերերը բանտարկվում էին: Դպրոցներում հանդեսներ կատարել չէր թույլատրվում: Հայերը խոստովանում էին, որ իրանց դրութիւնը այժմ ավելի վատ է, քան Բեռլինի կոնգրեսից առաջ:

Բայց հավատը չէր թողնում հայ գործիչներին: «Մշակը» դեռ դեկտեմբերի կեսից էր սկսել Բաֆֆիի «Դավիթ Բեկ» վեպի տպագրութիւնը և մինչդեռ ցուրտ, անհրապույր իրողութիւնն էր տիրում թուրքաց Հայաստանի վրա, «Մշակի» ընթերցողներին տաքացնում էր սյունեցի հերոսը իր քաջագործութիւններով: «Դավիթ Բեկը» պատմական վեպ էր միայն իր սյունեցիով: Բաֆֆին 150 տարի առաջ տեղի ունեցած անցքերի ետևից դարձյալ ժամանակակից հարցեր էր շոշափում, օրվա տրամադրութիւններին էր արձագանք տալիս:

Մշակականությունը Կ. Պոլսում: Տնտեսական բարգավաճման խնդիր բուր-
բաց Հայաստանի համար: Ներսեսի հրատարականները: Փոխված դրություն-
ոճակցի Կ. Պոլսում: Փոփոխություններ ուսաց քաղաքականության մեջ.
«Մշակը այլևս անկարող է նախկին դերը կատարել: «Journal d'Orient»: Գեր-
մանական մի լրագրի հոդվածը Արծրունու մասին: Պոլսական բարձր մե-
կացումներ: 1882—1883 թվականների բույլ գործունեությունը:

Իսկ ի՞նչ էր մտածում Արծրունին: Սկսելով «Մշակի» 1881 թվականը, նա
ասում էր իր առաջին առաջնորդողներից մեկում.

«Անտարակույս հայոց խնդիրը հունաց խնդրից հետո հերթական հարցը
կլինի: Բայց ե՞րբ կլինի դա, մի քանի ամսից կամ մի քանի տարուց հետո,—
այդ դժվար է նախագուշակել:

Իսկ մինչև այդ ժամանակ հայոց մամուլը շտապ է քնած լինի: Նա պետք
է ամեն ջանք գործ դնի խղճմտաբար կերպով մշակելու այդ խնդիրը և նրա
համար հաստատ հող պատրաստելու: Այդ կլինի և մեր պարտավորությունը
ներկա 1881 թվի ընթացքում»:

Եվ այդ պարտավորությունը կատարեց «Մշակը»: Բայց հրապարակախո-
սությունը չէ կարող կենդանի, աշխույժ, ազդու լինել, երբ շրջապատող հան-
գամանքները նպաստավոր չեն: Քաղաքական աշխարհում հայոց հարցը այլևս
առաջնակարգ, կարևոր նշանակություն չունի, իսկ կյանքը հրապարակ չհա-
նեց այնպիսի հանգամանքներ, որոնք հրատապ բնավորություն տալին նրան:

Ընդհակառակն, Կ. Պոլսում, Սալիդ փաշայի վարչական սիստեմի անբա-
րոյականացնող ազդեցության տակ սկսվեց ռեակցիա, որի գործիքներն էին հայ
էֆենդիները, թուրքաց ծառայության մեջ հաց որոնող պաշտոնյաները: Այդ
դասակարգն էր, որ Ազգային Ժողովի մեջ ավելի սաստիկ դիմադրություն առաջ
բերեց Ներսեսի դեմ:

Քաջ, բայց դժբախտաբար հիվանդ պատրիարքը պիտի առաջ տաներ իր
դատը, շունենալով տանը համերաշխություն, ստիպված լինելով հաճախ ընդ-
հարվել ընտանեկան հակառակությունների հետ: Նրան տապալել էին ուզում,
և նա մի քանի անգամ հրաժարականներ տվեց:

Մյուս կողմից, 1881 թվականը այն կետն է, որից Ռուսաստանի ներքին
պայմանները սկսեցին բոլորովին փոփոխվել, այնպես որ Արծրունին այլևս
չէր կարող նախկին ազատությունը նվիրվել թուրքահայերի հարցին: Այս պատ-
ճառով էլ թեև 1881 թվականի ընթացքում «Մշակը» շատ առաջնորդողներ տվեց
թուրքահայերի մասին, բայց նրա մեջ քիչ են այնպիսիները, որոնք ուշադրու-
թյուն գրավեին իրանց նորությունը և թարմությունը:

Մենք, սակայն, պիտի նկատենք այդ թվականի մի առավելությունը: Դա
այն է, որ Կ. Պոլսի թղթակցությունները «Մշակի» մեջ ավելի առատ և ավելի
հետաքրքրական են դառնում: «Մշակի» աշխատակիցներից մեկը՝ պ. Գրիգոր
Նիկողոսյան, գնում է Կ. Պոլսի և այնտեղից անընդհատ թղթակցում է «Մշա-
կին»: Դա էլ մի երևույթ էր թուրքահայերի կյանքի մեջ: Ռուսահայոց խիստ
հարձակողական հրապարակախոսությունը մեծ աղմուկ հանեց Բոսֆորի ափե-
րում: Պ. Արփիարյանը մեզ ուղղած նամակի մեջ ասում է պ. Նիկողոսյանի
մասին.

«Իբր «Մշակի» թղթակից ինքն ալ կգրեր, ես ալ, բայց տարբեր նյութերու
վրա: Իր թղթակցությունները ահագին աղմուկ հարուցին Կ. Պոլիս, վասնզի

ժայրահեղորեն հարձակողական էին: Տակնս վրայություն մը սկսավ, և «Մշա-
կի» դեմ հոսանք մը, զոր Քեչյան նոր սկսած խմբագիր ուժովցուց «Մասիսի»
միջոցով: Ինչ որ ալ ըլլար, բայց և այնպես Նիկողոսյան Պոլիս մեծ ցնցում
առաջ բերավ և մեր գրականության այնպիսիներով: Նիկողոսյան «Մշակին» փող
կատանար. կարծեմ
կրկու կամ երեք անգամ 500-ական ուրբի առավ, Կյուլպենկյանց տան վրա:
Բայց ատեն մը ետքը ցրտացան «Մշակի» և Նիկողոսյանի հարաբերու-
թյուն-
ները և վերջնականապես ընդհատվեցան»:

«Մշակը» արձագանք էր տալիս Բոսֆորի ափերում սկսված այդ «տակնու-
փրայնություն»: Պետք էր զդաջլուծ թուրքահայերի գրությունը ավելի բազ-
մակողմանի, ավելի իրական լուսաբանության ենթարկել: Եվ Արծրունին հինգ
թղթարձակ առաջնորդողների մեջ, որոնց վերնագիրն էր «Լուսավորություն և
տնտեսական ուժ», քննեց, թե ինչու՞մն է թուրքաց Հայաստանի փրկությունը:
Մենք կբերենք այդ հոդվածների ընդհանուր հիմքը, որպեսզի մի անգամ էլ
առիթ ունենանք ծանոթանալու այն ժամանակվա մեր գործիչների աշխարհա-
լիցողությունների հետ:

Երկրի փրկության համար պետք է պատրաստել երկիրը: Իսկ պատրաս-
տելու համար հարկավոր է ոչ միայն ուսում, այսինքն հասարակ գրագիտու-
թյուն տարածել, այլև բարվոքել ազգաբնակչության տնտեսական գրությունը:
Կայն կրթությունը պիտի միացնե բոլոր հայաստանցիներին, առանց կրոնա-
կան և ազգայնական խտրությունների: Նրկու շարիք են գործում Հայաստա-
նում. մեկն այն է, որ երկրի լավ ուժերը անդադար գաղթում հեռանում են,
մյուսն այն, որ տեղական տարրերը հաշտ ու համաձայն չեն իրար հետ: Ի՞նչ
պետք է անել: Գլխավոր գործը Կ. Պոլսի հայությունն է պատկանում:

Այդ հայությունը Արծրունին բաժանում էր չորս դասակարգի. ինտելիգեն-
ցիա, գաղառներից գաղթածներ, վաճառականներ և պաշտոնյաներ:

Ինտելիգենցիան պարտավորություն ունի, փոխանակ ազգային երգեր եր-
գելու, գնալ Հայաստան և գործել այնտեղ: Տնտեսական ծանր պայմանների
ստիպմամբ Կ. Պոլիս գաղթած գաղառացիներին պետք է վերադարձնել հայ-
րենիք և դրա համար պետք է կազմել հատուկ մի ընկերություն, որ դյուրու-
թյուններ ու գրամական օգնություն տար վերադարձողներին:

Վաճառական դասակարգը չի վերադառնա գաղառները և չպետք է էլ
վերադառնա, բայց նրա պարտքը կլինի թե այդ ընկերությունը պահպանել,
և թե զանազան առևտրական ընկերակցությունների միջոցով զարգացնել աղմ-
տեսությունն ու արդյունագործությունը Հայաստանում, պահանջ ստեղծելով
նրա բերքերի համար, արտահանելով նրա արդյունագործությունը ուրիշ եր-
կրներ:

Ասում են, թե երկիրը աշխատություն չունի, բայց մեղավորը դարձյալ
Կ. Պոլսի ինտելիգենտներն են: Պետք է գնալ, սովորեցնել ժողովրդին: Ավա-
զակներ են անհանգստացնում գյուղը,— կսովորեցնեն գյուղացիներին, թե
ինչպես պաշտպանվեն աշխատակների դեմ: Տերություն պաշտոնյաների հետ հա-

* Գրողներ կան, որոնք լավ սկսելով, շուտով հասնում են բարոյական ինքնասպանու-
թյան: Այդպիսիներից մեկն է Նիկողոսյանը: «Մշակի» մեջ նա շարունակ գովում, փառաբանում
էր Գրիգոր Արծրունուն: Բայց մի քանի տարի առաջ Պետերբուրգում հրատարակած «Армяне»
գրքի մեջ պարտեղ անասելի բաներ գրեց Գրիգոր Արծրունու մասին, օգտվելով մանավանդ այն
հանգամանքից, որ իր սանձարձակ հայհույններին ենթարկված մարզը վաղուց էր մեռած և
պաշտպանվել չէր կարող: Բարեբախտաբար, «Армяне» գիրքը իր ամբողջությամբ, իր բովան-
գակությամբ այնպիսի մի այլանշակ վիժվածք է, որի մասին խոսելն անգամ ամոթ է...

րաբերութիւններ ունեցող ժողովուրդը պետք ունի հմուտ իրավաբանի, — և ահա բարձր ուսում ստացածը կարող է ժողովրդին օգնել այդ գործի մեջ: Այն մի պաշտօնյա որևէ կամայականութիւն գործի, — նա իրան զտարած կտեսնէ՝ հանդիպելով գյուղացիների մեջ մի հմուտ իրավաբան տանտեսի և ավելի հարգանքով կ'ըմբռնի գյուղացիների հետ:

Ասում են, թէ Հայաստանը նախ ինքնավարութիւնն՝ ձեռք բերել և ապա իրագործել այդ բոլորը: Լավ կլինի, եթէ տան ինքնավարութիւն, բայց հայերը մինչև այդ էլ պետք է պատրաստվեն: Միանգամից այդ բոլորը անել, իհարկէ, չէ կարելի: Բայց պետք է գործել աստիճանաբար. այսօր մի քանի հոգի կան Հայաստան, վաղը դարձյալ մի քանիսը և հետզհետ, տարիների ընթացքում, կ'իրագործվի ամբողջ ծրագիրը:

Կարիք չկա, որ մենք այստեղ մանրամասն քննութիւն ենթարկենք փրկութիւն այդ ծրագիրը: Արդեն շեշտել ենք, թէ որքան ուսուցիական միամտութիւններով էին ղեկավարվում մեր գործիչները շատ դեպքերում: Կարծել, թէ մի ամբողջ երկրի տնտեսական, արդյունագործական և իրավական դրութիւնը կարելի է փոփոխել բարեգործական հաստատութիւնների միջոցով, մի վաճառականութիւն միջոցով, որին իբր թէ կարելի է ներշնչել ինչ-որ ազգային կամ ազգասիրական ուղղութիւն և գործավարութիւն, — կարելի էր՝ դատելով իբրև մի ժամանակի մարդ, երբ նոր էին ծագում հասարակական ծանր հարցեր և երբ ոգևորութիւնը այնքան թարմ և ուժեղ էր, որ թույլ էր տալիս ամեն ինչ հեշտութիւնով վճռել:

Աղգերի վերածնութիւն պատմութիւնը չէ ժխտում, որ եղել են այնպիսի ուսուցիական շրջաններ համարյա յուրաքանչյուր խոշոր հասարակական շարժումների սկզբում: Մի ուրիշ հոգովածում Արծրունին խորհուրդ էր տալիս կապ մել տնտեսական-բարեգործական մի ընկերութիւն, որ հողեր գներ Հայաստանում և բաժաներ գյուղացիներին: Եվ այսպիսի մեծագործութիւններ, որոնք դրամական ահագին զոհողութիւններ էին պահանջում, պիտի կատարեր մեր այն հասարակութիւնը, որ նույնիսկ չէր կարողանում մի լրագիր ապահովել պիտի կատարեր գլխավորապէս հայ անկուտուրական, համով վաճառականութիւնը...

Այսպէս թէ այնպէս, հարցը դրված էր որոշ կերպով. ուսումը, գրագիտութիւնը բավական չէր համարվում Հայաստանի համար, պետք էր և նրա տնտեսական առաջադիմութիւն մասին մտածել: Եվ որովհետև «Մշակի» ձայնը ազդու էր Բոսֆորի ափերում, գլխավորապէս այդ ձայնի դրդմամբ այնտեղ սկսեցին պատրաստութիւններ տեսնել հիմնելու մի «Տնտեսական ընկերութիւն», որի կանոնադրութիւնը նախապէս ուղարկվեց Արծրունուն՝ նրա կարծիքներն իմանալու համար:

Մինչդեռ հայերը այսպիսի խաղաղ միջոցներ էին որոնում իրանց դրութիւնը բարեկարգելու համար, թուրք կառավարութիւնը իր ուստիկանական ճնշող կարգերն էր զարգացնում, որոնց օգնութիւնով հույս ունէր կատարելապէս անվնաս դարձնել հայկական շարժումը:

Խստութիւնները այն աստիճան սաստկացան, որ ներսեւ պատրիարքն ստիպված էր այժմ էլ դրանց դեմ կռուել: Ապրիլին նա հրաժարական տվեց, պատճառաբանելով իր հեռանալը նրանով, որ թուրք կառավարութիւնը անկատար է թողնում իր դիմումները: Դրանք առաջ էին բերված հրաժարականի մեջ և այլևս չէին վերաբերվում Հայաստանի բարենորոգումներին, այլ ուղղված էին կառավարչական այն կարգադրութիւնների դեմ, որոնք սահմանափակում էին եկեղեցական-ինքնավարական ազատութիւնը:

Բայց ներսեւը շուտով ետ վերցրեց իր հրաժարականը, որովհետև Սալիդ փաշայից դրական խոստումներ ստացավ: Այդ խոստումները կատարելու համար պատրիարքը համաձայն էր սպասել, բայց երկու ամսից ոչ ավել:

Մինչև այդ հունական հարցն սկսեց մոտենալ իր լուծման: Հերթը հասնում էր հայկականին: Եվ ահա այդ միջոցին, երբ այնքան հարկավոր էր անխոնջ պատրիարքի գործունեութիւնը, ներսեւը Սալիդի խոստումներից ոչ մի հետևանք չտեսնելով, նորից հրաժարական տվեց: Արծրունին շարունակ ցավ էր հայանում, որ ներսեւին ստիպում են հեռանալ մի այդքան կարևոր ժամանակ և հարձակվում էր մանավանդ էֆենդիական ընդդիմադիր կուսակցութիւն վրա, որ թուրք կառավարութիւն գործիքն էր դարձել:

Ամառը անգլիական դեսպան Գոշենը թողեց իր պաշտոնը Կ. Պոլսում: Հայոց հարցի վերանորոգումն սպասվում էր Գոշենի հաջորդից՝ լորդ Գրեֆերնից, որ շուտով պիտի գար Կ. Պոլիս: Ահա այդ ժամանակ Աղգային ժողովը պիտի վճռեր ներսեւի հրաժարականի հարցը:

Ընդդիմադիր կուսակցութիւնը պատրաստ էր ընդունել տալ այդ հրաժարականը, մի բան, որ, իհարկէ, շատ հաճելի պիտի լիներ Սալիդին, քանի որ Աղգային ժողովի կողմից ընդունված հրաժարականը այլևս չէր կարող հայերին առիթ տալ դժգոհ լինելու թուրք կառավարութիւնից: Բայց ժողովի օրը տասնյակ հազարներով զավառացի հայեր հավաքվեցին մայր եկեղեցում և հարկադրեցին էֆենդիներին, որ պատրիարքի հրաժարականը չընդունվի ներսեւը, հենվելով այդ մեծ ժողովրդականութիւն վրա, նորից սկսեց իր գործունեութիւնը: Լորդ Գրեֆերնի նախաձեռնութիւնով դեսպանները նորից հայոց հարցը ձեռք առան և սեպտեմբերին թուրքաց կառավարութիւնը մի նոր հավաքական հիշատակագիր ստացավ, որով պահանջվում էր 61-րդ հոգովածի անհապաղ գործադրութիւնը:

Նորից բանակցութիւններ, նորից հույսեր և հուսախարութիւններ: Ձրգձրգումների քաղաքականութիւնը նորից սկսեց թուրքիայի փրկութիւնը դառնալ: Տարին վերջանալու վրա էր, իսկ հայերը գիտեին, որ հարցի լուծումը պետք է հետևյալ տարուց սկսել: Բայց թուրքիան հարցերի և դժվարութիւնների կլասիկական հայրենիք էր: Հայերի այդ սպասողութիւն միջոցին խոսվութիւններ սկսվեցին եգիպտոսում: Ծագում էր եգիպտական հարցը, որ շատ կարևոր նշանակութիւն ուներ մանավանդ Անդրիայի համար: Հայոց հարցը նորից ետ քաշվեց:

Այդ տարտամ ու անդուլն ժամանակներում Արծրունին զոհ մնաց և նրանով, որ մասամբ հաջողվեց Եվրոպայում հայկական օրգան ունենալու գործը, մի գործ, որի մասին նա այնքան գրել էր և որի կարևորութիւնը շատերն էին զգում: Վիեննայում հիմնված «Journal d'Orient» թերթի խմբագիրը հանձն էր առնում առանձնապէս նվիրվել հայկական հարցին, եթէ աջակցութիւն գտնի հայերից: Այդ աջակցութիւնը ուրիշ կերպով հաջողացնել կարելի չեղավ, ուստի Արծրունին դիմեց բաժանորդագրութիւն: Նա ընդունում էր բաժանորդագրութիւնը, տպում էր բաժանորդների անունները «Մշակի» մեջ, թարգմանում էր լրագրի հոգովածները և այդպիսով ժողովրդականացնում էր ձեռնարկութիւնն ու նյութական միջոցներ էր գտնում նրա համար: Թուրքահայերի դրութիւնը, նրանց պահանջները այժմ «Journal d'Orient»-ի միջոցով Եվրոպայի հասարակական կարծիքի առջև էին հանվում: Եվ այս բանը համարյա միայն Արծրունու ջանքերով գլուխ եկավ: Նա ինքն էլ գրում էր այդ թերթի մեջ:

Այստեղ մենք պետք է ծանոթացնենք ընթերցողին մի լրագրական հոգովածի հետ, որ մի կողմից մի նմուշ է, թէ որքան նվրոպացիները լավատեղ-

յակ են հայոց գործերին, իսկ մյուս կողմից ցույց է տալիս, թե Արժրուսու եռանդոտ գործունեությունը ինչ տեսակ վերաբերմունքի էր հանդիպում:

Հուլիսի 31-ին գերմանական «Allgemeine Zeitung» լրագրի մեջ տպվեց մի հոդված հայոց հարցի մասին: Այդ հոդվածը արտատպվեց գերմանական, անգլիական լրագրերների մեջ, ուսաց մամուլի ուշադրությունը գրավեց, իսկ նրա թարգմանությունը երևաց Կ. Պոլսի «Մասիս» լրագրում: Եվ սակայն, այդ հոդվածի մեջ ահա ինչեր կային Արժրուսու մասին.

«Ինտելիգենցիայի գլուխ (Թիֆլիսում) համարվում է միլիոնատեր Արժրուսին, արտաքինով մի տղեղ մարդ, որ իր վիթխարի հարստությամբ հանդերձ միացնում է իր մեջ բազմակողմանի կրթությունը անսովոր եռանդի հետ: Արժրուսին, որ իր կալվածներից և կարավանսարայից տարին 200,000 եկամուտ է ստանում, ամբողջ այդ գումարը և նրանից բխող իր անկախությունը գործադրում է իր ժողովրդի մեջ ազգային զգացմունք զարթեցնելու համար:

Այս նպատակով նա հիմնել է «Մշակ» լրագիրը, որ շնայած ուսաց ցենզուրայի հալածանքներին, հրատարակվում է ամեն օր Թիֆլիսում: Նա նույնպես իր հաշվով բերել է տվել Կ. Պոլսից հայ դերասանական թույլ, որ ներկայացումներ է տալիս նրա, հատկապես այդ նպատակի համար կառուցած, սեփական թատրոնում:

Հայտնի հայերի հետ կապ հաստատելու համար Արժրուսին պատել է արևելքում և ամբողջ Եվրոպայում, գրավելով գիտնական և պետական մարդկանց դեպի ազգային գործը: Այդ ճանապարհորդության ժամանակ գերմանական համալսարաններից մեկը ընտրեց պ. Արժրուսին իր «պատվավոր դոկտոր», իսկ Վիկտոր Հյուգոն, Կաստելյարը և Գարիբալդին ցույց ավին նրան իրանց համակրանքի բազմաթիվ ապացույցները»:

Արժրուսին, իհարկե, շտապեց հերքել այդ հոդվածը: Հերքումը տպվեց Վիեննայի «Գեյտշե Յեյտունգ» լրագրում, ուր նույնպես երևացել էր «Հայոց հարց» հոդվածը: Մի հերքում էլ Արժրուսին տպեց «Մասիս» մեջ, ուր, իմիջիպես, ասում էր.

«Ուղիղն այն է միայն, որ ես հիմնել եմ տասը տարի առաջ և շարունակում եմ հրատարակել իմ սեփական միջոցներով «Մշակ» հայերեն լրագիրը, հրատարակել եմ մի քանի բրոշյուրներ և հոդվածներ ուսերեն և գերմաներեն լեզվով հայոց խնդրի մասին, իմ կարողությունս չափ միշտ նպաստել եմ և մինչև վերջին շունչս պետք է նպաստեմ իմ սիրելի ազգի առաջադիմությանը, ունեմ կառուցած Թիֆլիսում մի սեփական փոքրիկ թատրոն, թեև սխալ է, որ ես իմ հաշվով բերել տված լինեի մի թատրոնական խումբ: Ուղիղ է նույնպես, որ ես իմ կրթությունս ստացել եմ Գերմանիայում և 1869 թվին Հայդլբերգի համալսարանում հարցաքննություն տալով, արժանացա աքդ համալսարանի դոկտորի տիտղոսին: Բայց հիմնովին սխալ է, որ ես ծանոթ լինեի Վիկտոր Հյուգոյի, Կաստելյարի կամ Գարիբալդիի հետ. այդ երևելի անձանց հետ ես երբեք պատիվ չեմ ունեցել ծանոթ լինելու: Նույնպես սխալ է, որ հայրենիքս վերադարձած լինելով՝ ես ենթարկված լինեի քաղաքական դատի, իբր թե որպես պետական մատնիչ: Այդտեղ հոդվածագիրը ինձ երևի խառնել է մի այլ անձնավորության հետ, այն է մեր հայտնի բանաստեղծ և հեղինակ Միքայել Նալբանդյանի հետ...»

Ինչ որ վերաբերվում է իմ նյութական կարողությանս, ես միայն այսքան կասեմ, որ հոդվածագիրը սխալվում է համարելով ինձ միլիոնատեր: Ես միլիոններ չունեմ և շատ ցավում եմ, որ այդքան հարուստ չեմ: Եթե ես այդքան հարուստ լինեի, որքան ինձ կարժում է գերմանական լրագրի հոդվածագիրը,

և ցույց կտայի մեր հարուստներին, թե ինչպես կարելի է գործածել միլիոնները մի թշվառացած ազգին օգնելու համար: Ես գործում եմ իմ կարողությամբ չափ՝ առանց հարստության, բայց եթե ես ճշմարիտ միլիոններ ունեայի, ես կամաշեցնեի մեր հարուստներին նրանց աններելի ետականության, կրանց հանցավոր անտարբերության համար դեպի ազգի կարիքները»:

Ինչ աղբյուրից էր բխել գերմանական լրագրի այդ հոդվածը: Անկասկած, Գրիգոր Արժրուսու թշնամիների բանակից: Այսպես էր համոզված Թիֆլիսում հրատարակվող «Фаланга» ծաղրական շաբաթաթերթը: Բերելով հոդվածից կտորներ, անխնա ծաղրելով նրանց բովանդակությունը, շաբաթաթերթը, այնուամենայնիվ, գտնում էր, որ Արժրուսու հակառակորդ հայ շովինիստները կարող էին մի այդպիսի բան անել և դժուրյուն էր հայտնում, որ ուսաց կառավարությունը ուշադրություն չդարձրեց այդ գրվածքի վրա, որից Արժրուսին կարող էր շատ վնասվել: Ենթադրվում էր, որ դա մի տեսակ վրեժխնդրություն է, ներշնչված հայոց թատրոնի շուրջը հավաքված մի քանի մարդկանցից, որոնք Արժրուսուց գոհ լինելու ոչ մի հիմք չունեին:

Որքան իրավացի էր այդ ենթադրությունը, մենք այժմ չգիտենք, բայց կասենք, որ հավանականություն կա նրա մեջ, քանի որ, ինչպես շուտով կտեսնենք, թատրոնական գործի առիթով Արժրուսու դեմ կազմվեց խիստ թշնամությունը տոգորված մի խմբակ, որ ջանքեր չէր խնայում նրան հասարակական ասպարեզից ետ մղելու համար:

Սակայն պետք է ասենք և այն, որ գերմաներեն հոդվածի շափազանցությունների մեջ ճշմարտությունը բոլորովին սպանված չէր: Ընդհատ էր, օրինակ, այն, որ հայ ինտելիգենցիայի մեջ չէր կարելի ցույց տալ մեկին, որ Արժրուսու չափ գործած լինեի թուրքահայերի հարցի շրջանում: Այդտեղ նա անպայման առաջինն էր, այդտեղ նրա կատարած դերը պատմական մի իրողություն է մեր ազգի նորագույն կյանքի մեջ:

Տեսանք, թե ինչպես սկսվեց նրա գործունեությունը այդ ասպարեզում, ինչպիսի խոչընդոտների վրայով անցավ նրա վառ, կրակոտ քարոզչությունը, ինչպես այդ քարոզը վերջիվերջո, դեպքերի և պատմական իրողությունների ուժով, հաղթանակեց և ինչպես զարգացավ 1878 թվականի անցքերից հետո: Այժմ մենք պիտի տեսնենք այդ գործունեության վերջը, որ սկսվում է 1881-ի վերջերից և աստիճանաբար իջնելով ու թուլանալով, համարյա միանգամայն խլանում է 1883-ի վերջում, և այնուհետև Արժրուսին, մինչև իր կյանքի վերջը, չի կարողանում վերագառնալ այդ եռանդոտ, հոշակավոր գործունեության, թեև զրդիչ հանգամանքները նրբեք չէին պակասում:

Գիմելով այդ երևույթի պատճառներին, մենք տեսնում ենք, որ Արժրուսու կամքը չկա դրանց մեջ: Ամենքին հայտնի է, որ գրողը, մանվանդ հրատարակախոսը, ստիպված է լինում լռել, լռել ակամա, լռել՝ հպատակվելով հանգամանքներին: Այդ հանրածանոթ իրողությունն էր պատճառներից առաջինը, ամենազլխավորը:

1881 թվականի մարտի 1-ին սպանվեց Ալեքսանդր II կայսրը: Ռուսաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը խիստ փոփոխության ենթարկվեց: Մամուլը զրկվեց և այն ազատությունից, որ ուներ մինչև այդ: Ռուսաստանն ուզում էր իր ամբողջ ուշադրությունը իր ներքին գործերին նվիրել, ուստի արտաքին քաղաքականության մեջ աշխատում էր խաղաղասիրական ուղղության հետևել: Հարաբերությունը դեպի Թուրքիան արմատապես փոխվեց: Եվ այս նոր երևույթը առանձնապես շեշտվեց մանավանդ 1885 թվին, երբ Ռուսաստանի ջանքերով ազատված Բուլգարիան ուզում էր ստանալ այն սահման-

ները, որ որոշել էր Սան-Ստեֆանոյի դաշնագիրը, բայց ջնջել էր Բեռլինի կոնգրեսը: Թուսաստանը հակառակվեց Արևելյան Բուլեղի հեղափոխությունը, մինչդեռ Անգլիան, մոտանալով Բիկոնսֆիլդի ժամանակները, ընդունեց այդ իրողությունը: Գերբը փոխվել էին: Խոսում էին նույնիսկ ուս-թուրքական դաշնակցության մասին:

Այդ գրությունն այլևս անհնարին էր դարձնում Արծրունու նախկին գործունեությունը: Պետք էր ամփոփվել ներքին, տեղական հարցերի մեջ: Եվ ահա մենք տեսնում ենք, որ 1882 թվականը «Մշակի» առաջնորդողների բաժնում բավական գունատ է թուրքահայերի հարցի տեսակետից: Արծրունին, նախկին տարիների համեմատությամբ, քիչ է գրում, և նրա հոդվածները մեջ շատ աննշան տեղ է բռնում հայոց հարցը:

Եվ ինքը, այդ հարցն էլ, գնալով կուլ էր սնում քաղաքական աշխարհի անտարբերության մեջ: Համարյա ամբողջ 1882 թվականի ընթացքում ներսևսը հրաժարված էր պատրիարքությունից, քանի որ նրա պահանջները անկատար էին մնացել:

Ռեակցիան Կ. Պոլսի հայերի մեջ ավելի և ավելի սաստկանում էր: Էֆենդիների դասակարգը հասել էր այն իմաստության, որ քանի որ եվրոպական դիպլոմատիան ոչինչ չէ կարողանում ստանալ հայերի համար, ավելի լավ է, որ հայերը նորից հաշտվեն թուրքիայի հետ և նրանից սպասեն իրանց վիճակի բարվոքումը:

Եվ դիպլոմատիան էլ խոստովանում էր իր անկարողությունը: Ծիշտ է, Լորդ Դրֆրենը շարունակում էր պահանջներ ուղղել Բ. Դրան, և հայոց հարցը մի-մի անգամ հրապարակ էր դալիս իբրև հերթական հարց, բայց Գլադստոնի կառավարությունը ստիպված էր խոստովանել պառլամենտում, որ իր ջանքերը Կ. Պոլսում արդյունք չեն առաջացնում այն պատճառով, որ պետությունների մեջ համերաշխություն չկա:

Եվ իրավ, թուրքիան այդ միջոցին ընկավ Գերմանիայի ազդեցության տակ, իսկ գերմանական քաղաքականության հոգին Բիսմարկն էր, որի անունն արդեն մի շատ պարզ հասկացողություն է իբրև բացասումն մարդկայնության, զգացմունքի, արդարության:

Տարվա կեսին անկարգությունները Եգիպտոսում այնքան սպառնալից կերպարանք ընդունեցին, որ անգլիական նավատորմը ուժակոծեց Ալեքսանդրիան:

Այս իրողությունը հույս էր տալիս Արծրունուն, որ հայոց հարցը առողկաբաշվի: Անգլիական ազդեցությունը դարձյալ գերակշիռ էր հանդիսանում Բոսֆորի ափերին, և Ալեքսանդրիայի դեմ ուղղված թնդանոթները պիտի հասկացնեին թուրքիային, որ չէ կարելի հավիտյան անպատիժ մնալ: Բայց Արծրունու այս հույսը անկատար մնաց:

Եվ ո՞վ պիտի խոսեր հայերի մասին, երբ իրանք՝ հայերը, մոռացել էին ամեն ինչ և զբաղված էին մանր ու դատարկ բաներով: Եթե «Մշակը» այլևս չէր կարողանում իր առաջնորդողների մեջ արձագանք տալ ազգային հարցին, դրա փոխարեն նա շարունակում էր լցնել իր էջերը Կ. Պոլսի թղթակցություններով: Այդ կողմից ոչ միայն պակասություն չէր նկատվում, այլև հայտնի առավելություն էլ էր երևում:

Թղթակցների շարքում ավելանում է և մեկը, որ ծածկված էր Մ. Վ. տաների տակ: Նա գրում էր սաստիկ մերկացումներ, դատափետում էր էֆենդիների ստորաքարշ խտրիզները: Կ. Պոլսի մամուլն այլևս չէր կարողանում իր դերը կատարել, ուստի հայերի հույսը դրված էր Թիֆլիսի հայ մամուլի վրա:

զգացվում էր մերձեցման ավելի մեծ անհրաժեշտությունը, բայց Թիֆլիսն էլ, ինչպես տեսանք, անկարող էր շարունակել իր դերը: «Մշակի» և ուրիշ լրագիրների մուտքը թուրքիա նորից արգելվեց:

Տպագրելով պոլսական իրողությունների մերկացումները, Արծրունին նորից գալիս էր այն եզրակացության, որ թուրքաց մայրաքաղաքի հայությունը անբնորոշակ է բուն երկրի համար մի բան անելու: Նա նորից կրկնում էր, որ Կ. Պոլսը ֆրագա է, Հայաստանը՝ իրականություն: Երկու-երեք տարի առաջ իր հայտնած այդ միտքը նա այժմ կատարելապես հաստատված էր համարում:

«Այժմ,— ասում էր նա,— երբ թուրքաց Հայաստանը ունի իր սեփական կյանքը, իր սեփական նեղությունները, իր ցավերը, իր ներքին խնդիրները, իր պահանջները, երբ թշվառացած հայաստանցին քաղցած, ծարավ, աղաղակ է բարձրացնում դեպի կրթված աշխարհը և հուսահատված գաղթում է իր հայրենիքից,— ի՞նչ է անում Կ. Պոլիս, հայրենիքից կտրված, օտար հողի վրա գտնվող այդ հայոց գաղթականությունը: Նա զբաղված է եկեղեցական ապարդյուն վեճերով, պատրիարքական հարցով, ազգային ժողովի խտրիզներով և դիվանագիտական խնդիրներով... Բյուզանդիայի մայրաքաղաքի հայ ինտելիգենցիան զբաղված է խտրիզներով, եկեղեցական երկպառակություններով, գրաբարի և աշխարհաբարի մասին անվերջանալի վեճերով, ազգային ժողովի դատարկախոս ատենաբանություններով, մինչև որ հայաստանցի հայր հաց է մուրում... Եվ նրանք երեակայում են իրանց, որ առաջնորդում են Հայաստանը, որովհետև անմիտ ճառեր են խոսում, անհիմն հոդվածներ են գրում և դիվանագիտական ճանապարհով ներգործում են եվրոպական քաղաքականության վրա, եվրոպական դիպլոմացիայի հետ կապեր ունեն...»

...Հայաստանը այժմ պետք ունի իր մեջ գործող, սրտացավ աշխատողների և ոչ թե հեռվից բղավող, դատարկարան, ամբոխի իրանց առաջնորդ ձևացնողների, որոնք երբեք չեն համաձայնվի փոխել իրանց հարմարվող և սպականված եվրոպական կեցությունը՝ աշխատական, իրական կյանքի վրա, կոշտ, կուպիտ և թշվառ հայրենակիցների շրջանում:

Հայաստանցին պետք չունի թուլամորթ Կ. Պոլսեցի հայի օգնության, այն ստարացած հայի, որ ներկայացնում է ապականված թուրքի, անբարոյական բյուզանդացու և թեթևամիտ ֆրանսիացու աննախանձելի մի խառնուրդ:

Մի կողմ թողնելով այն, որ Արծրունին նախորդ տարիներում մի քանի անգամ կրկնել էր այդ միտքը, մենք տեսնում ենք, որ նույնիսկ ոճի, արտաստությունների ձևի վրա էլ ազդել է ժամանակը: Առանձին մի նորություն ենք գտնում և մի քանի հոդվածների մեջ, ուր Արծրունին խոսում էր նույն թուրքահայերի հարցի քաղաքական ընթացքի մասին: Տարվա վերջերում ներսևսը նորից ստանձնում է պատրիարքությունը սուլթանի կամքով: Հասկանալի է, որ այդ հանգամանքը նոր, ուրախալի հույսեր է դարձեցնում հայության մեջ: Թուրքական խոստումները մի անգամ էլ դուրս են գալիս իրանց դերը կատարելու համար:

Բայց կյանքը այլևս չէր սպասում: Այդ իսկ ժամանակ էր գրումի մեջ կատարության ձեռքն է մատնվում հայկական գաղտնի կազմակերպությունը: Ռեզի են ունենում ծանր անկարգություններ, հարյուրավոր երիտասարդներ ձերբակալվում են, բանտ նետվում, ոստիկանական կամայականությունները ամեն ինչ անում են՝ հայերի թաքցրած զենքերն ու վառոդը գտնելու համար: Դա առաջին հարվածն էր, առաջին քայլը: Բեռլինի 61-րդ հոդվածը այս դռնով ներս էր մտնում մի նոր շրջանի մեջ:

Արծրունին մի առաջնորդող նվիրեց այդ երևույթին և նրա վերնագիրը գրեց՝ «Զենք հավատում»: Նա չէր հավատում, որ հայերի մեջ գոյություն ունեցած լինի գաղտնի հեղափոխական կազմակերպություն: Բայց հետո ստացված մանրամասն տեղեկությունները, որոնք տպվեցին «Մշակի» մեջ, ապացույցեցին, որ իդուր էր այդ վերնագիրը: Արծրունին, ինքնըստինքյան հասկանալի է, չկարողացավ իր իսկական մտքերը, իր համոզմունքը հայտնել այդ նոր հարցի առիթով:

1883 թվականը նրա համար անակնկալությունների տարի էր: Նույն թուրքահայերի գործն էր պատճառը, որ նա կասկածների տակ ընկավ, և «Մշակի» գոյությունն անգամ վտանգված էր: Ապրիլից հետո Արծրունին համարյա այլևս ոչինչ չկարողացավ գրել: Այդ պատճառի վրա պետք է ավելացնել և այն, որ այդ ժամանակներից Արծրունու անձնական գործերն արդեն շատ սպառնական ընթացք էին ստացել: Կալվածների վրա բարդված ահապի պարտքերը իրանց գործն էին տեսնում:

Հայոց հարցն էլ համարյա անհետացավ դիպլոմատիկական ասպարեզից: Ներսեսը, որ այդ հարցի հոգին էր, մտցվեց կաթոլիկոսական թեկնածուների ցանկի մեջ...

VII

Թատրոնական գործը: Արծրունու բատրոնը և բանակով բատրոնական կոմիտեի հետ: Կ. Պոլսից եկած դերասաններ. Արծրունու վերաբերմունքը դեպի նրանց: Ռամանտիկ և ռեալական ուղղություններ: Ի՞նչ է հարկավոր ժողովրդական բատրոնի համար: Նրե՛ք տարվա գումարներ: «Մեղուի» ամենօրյա դառնալը: «Հրատարակչական ընկերություն»: «Հայոց բարեգործական ընկերություն Կովկասում»: Հայուհյաց բարեգործական ընկեր.» Թիֆլիսում: Առաջին ուսուցչական ժողով: Արծրունու ռեֆերատը՝ «Մայրենի լեզուն և նրա նշանակությունը դպրոցում»: Գեորգ կարողիկոսի մանր:

Վերջացնելով 1878—1883 թվականների հասարակական շարժման գլխավոր գրողը հանդիսացած հարցի տեսությունը, այժմ նորից ետ դառնանք այդ շրջանի սկիզբը և տեսնենք, թե ինչ երևույթներով արտահայտվեց նույն այդ շարժումը ուսահայերի տեղական, ներքին կյանքի մեջ: Մենք արդեն հիշատակել ենք, որ այդ եռանդուն, գործունյա ժամանակը մի ամբողջ ստեղծագործական հոսանք առաջացրեց մեզանում, կենդանացնելով գոյություն ունեցող ազգային-հասարակական հիմնարկությունները և կյանքի հրավիրելով նոր կուլտուրական ձեռնարկություններ: Գրականության, մամուլի մասին մենք բավականաչափ խոսեցինք: Այժմ ժամանակագրական կարգով դաշխս է թատրոնը:

Հայոց կանոնավոր մշտական թատրոն գոյություն ունեցավ Թիֆլիսում վասթունական թվականներին: Այնուհետև ձեռնարկությունը կորցրեց կանոնավոր կազմակերպության հանդամանքները: Գերասանական խումբ յոթանասունական թվականներին կար, ներկայացումներ լինում էին, բայց ամեն ինչ հիմնված էր անհատների ջանքերի վրա: Շատ չէին գերասանական ուժերը և նրանց միացնող, համախմբող մի ձեռք չկար: Պատահաբար տրվում էին հայոց ներկայացումներ, բեմի վրա երևում էին գերասաններ և սիրողներ, կարծես, միայն ցույց տալու համար, որ հայերը, վերջապես, պիտի ունենան մրցատական, կանոնավոր թատրոն:

Գրիգոր Արծրունին, ինչպես տեսանք, «Մշակի» առաջին իսկ տարուց անտես չարավ հասարակական այնքան ահագին նշանակություն ունեցող այդ հիմնարկությունը: Իր հոգվածների մեջ նա վերագտնում էր այն հարցին, թե ինչ է պահանջվում, որ թատրոնը դառնա ժողովրդական պահանջ, ապրի կանոնավոր կյանքով: Ամենագլխավորը նրա համար թատրոնական գրականությունն էր, որ պիտի տեղական կյանքի հարադատ-ռեալական նկարագրություններով դաստիարակեր հասարակությունը, գաղափարներ ուսուցաներ երան: Բայց սեպտեմբերի հարցը հաջող վճռելով, չէր կարելի վճռված համարել և թատրոնի ապահովության, հարատևության հարցը: Հարկավոր էին և այլ միջոցներ. թատրոնական համար շինություն, մի ընկերություն, որ հարկավոր դրամագլխով ապահովեր գերասանական կազմակերպված խումբը:

Քանի որ նա միայն գրող էր, բավականանում էր քարոզելով: Բայց հոր ժահից հետո, դառնալով միջոցների տեր, անկախ մարդ, փորձեց կյանքի մեջ գործնականապես կենդանացնել թատրոնի գաղափարը: Շատ հարկավոր էր համարվում, որ Թիֆլիսում, բացի արքունական թատրոնից, որ ամենքին մատչելի չէր և ամեն ժամանակ չէր կարող վարձով տալ իր բեմը, լինեք և մի այլ, ավելի համեստ, մատչելի թատրոնական դահլիճ, հատկապես տեղական, հայ և վրաց, բեմերի համար: Արծրունին 1878 թվին սկսեց իր գալերեի բակում մի այդպիսի դահլիճի շինությունը:

Դա, իհարկե, բարեգործական մի ձեռնարկություն չէր, այլ պիտի որոշորոյունք տար տերերին: Եվ այդ մասնավոր թատրոնը նույնքան արժանի էր նրան մամուլի ուշադրության, որքան և առևտրական գալերեի ամեն մի խառնուրդ, եթե դեպքերը նրան հասարակական նշանակություն շտային, եթե Արծրունին ստիպված չլինեք իր առաջնորդողների, հոգվածների նյութ գարձնել իր թատրոնը: Մենք էլ ստիպված ենք դիմել այդ դահլիճի պատմության, աչքի առաջ ունենալով մանավանդ այն, որ Արծրունու հակառակորդները այդ շինության հետ էին կապում նրա վերաբերմունքը դեպի թատրոնական գործը:

Մինչդեռ շինվում էր թատրոնը, 1879-ի փետրվարի սկզբներում մի մասնավոր ժողովում խոսք եղավ դրամագլուխ հավաքելու մասին: Ընտրված մարդիկ հավաքեցին մոտ 8000 աուրի: Թատրոնի հիմնադիրներ էին փող տվողները: Նրանք ընդհանուր ժողով կազմեցին, ընտրեցին մի մասնաժողով, որին հանձնեցին թատրոնի կառավարությունը: Մասնաժողովի կամ կոմիտեի նախագահ ընտրվեց փաստաբան իշխան Նապոլեոն Ամատունին: Արծրունին էլ կոմիտեի անդամ էր:

Գարնան վերջին թատրոնը պատրաստ էր: Կոմիտեի բանակցություններ սկսեց պայմանների մասին: Եվ ահա այդտեղ հայտնվում է, որ կոմիտեի չի ուզում Արծրունու թատրոնը վարձել, այլ միամամանակ բանակցում է արքունական թատրոնի կապալառու Պալմի հետ: Սա, այնուամենայնիվ, մի այնպիսի հարց չէր, որ հասարակական բնավորություն ստանալու իրավունքն ունենար: Բայց կոմիտեին իր վարձումքով այնպիսի փաստեր տվեց Արծրունու ձեռքը, որ հարցը դարձավ հասարակական: Հայոց թատրոնը մի մասնավոր ձեռնարկություն չէր: Նա պատկանում էր հասարակության, որի նվիրած փողերով էլ պիտի պահվեր: Ուստի հրապարակական հարց է դառնում, թե որքան կոմիտեի կարողանում է պաշտպանել հասարակական հիմնարկության շահերը: Եվ Արծրունին մի առաջնորդող հոգվածով հասարակության առաջ հանեց կոմիտեի բանակցությունները իր հետ: Ահա ինչպես էր նա պատմում եղելությունը:

«Թատրոնի տերերը մեծ զիջումներ արին հայոց բեմին, հայերին իրավունք

տրվեցաւ հինգ տարի շարունակ բոլոր կիրակի օրերը խաղալ, նրանց խոստում տրվեցաւ, որ բացի կոմիտեաի խումբից ոչ մի խումբին, առանց կոմիտեաի համաձայնութեան, չի թույլ տրվի խաղալ նոր թատրոնի բեմի վրա, անբուսից, երբ կոնտրակտը ստորագրված չի կնքուի, կոմիտեաը կսկսի իր գործունեութիւնը: Հայոց խմբից վերցվում էր միայն 20% ընդհանուր մուտքից, բացի սորանից տերերը պարտավորվում էին գնել այն բոլոր դեկորացիաները, որ կպատվիրի կոմիտեաը: Կոմիտեաի անդամները իրանց գոհ ցույց տվեցին այդ պայմաններից և հրապարակապես հայտնեցին, որ կոմիտեաի նախագահ Ն. Ամատունուն հանձնվում է կոնտրակտ կապել թատրոնի տիրոջ հետ: Անցնում է բավական ժամանակ և լսվում է, որ կոմիտեաը բանակցութիւններ է սկսել պ. Պալմի հետ, Ամատունին թատրոնում հայոց ներկայացումներ տալու համար: Կոմիտեաը վերջապես նիստ է կայացնում և կանչելով թատրոնի տիրոջը, հայտնում է, որ նրա առաջարկած պայմանները ծանր են և պահանջում է դիջումներ: Այն ժամանակ թատրոնի տերը հայտնում է, որ համաձայն է մի տարով շաբաթը մի անգամ (բայց ոչ անպատճառ կիրակի օրերը) տալ իր թատրոնը հայոց բեմին անվարձ, բացի երեկոյան 20 ուրբի ծախսից: Միևնույն ժամանակ պարտավորվում է գնել կոմիտեաի պատվիրած դեկորացիաները: Կոմիտեաի անդամները ցույց են տալիս, որ շատ շնորհակալ են թատրոնի տիրոջից, բայց միևնույն ժամանակ շարունակում են բանակցութիւնները պ. Պալմի հետ, դռնելով, որ անվարձ թատրոնն էլ իրանց համար շահավետ չէ...»:

Արծրունին հրաժարվում է կոմիտեաի անդամակցութիւնից և «Մշակի» մեջ ուղղակի հայտարարում է, որ կոմիտեաը հենց սկզբից իր գործունեութեան մեջ մտցրել է ինտրիգ, անձնական կրքեր: Բացի այդ բոլորից՝ նա ուրիշ հողավածներում ասում էր, թե ինքը շինել է թատրոնը՝ հիմնվելով գործի գլուխ անցածների խոստումների վրա, ղեկավարվելով նրանց ցուցմունքներով: Ասում էր նույնպես, որ դրամագլուխ հավաքվելու է հատկապես Արծրունու թատրոնում ներկայացումներ տալու համար, որ թատրոնի հիմնադիրները առաջին ընդհանուր ժողովում վճռել են, որ վարձի Արծրունու թատրոնը:

Այս բոլոր գրվածքները չհերքվեցին, ուրեմն կարելի է ճշմարտութիւն համարել: Ինքը՝ կոմիտեաի նախագահ Ամատունին, 1880-ի ընդհանուր ժողովում խոստովանեց, որ կոմիտեաը չի կատարել առաջին ընդհանուր ժողովի որոշումը Արծրունու թատրոնը վարձելու մասին, որ իրավ, Արծրունին ձրի էր առաջարկում թատրոնը, բայց կոմիտեաը անհարմար գտավ շինութիւնը: Սակայն շինութեան անհարմարութիւնը պատրվակ էր: Արծրունին ցույց էր տալիս, որ իր թատրոնում կոնցերտներ են տալիս նշանավոր երաժիշտներ և երգչուհիներ, իսկ վրացիները իրանց ներկայացումները այդտեղ են սկսել: Ուստի և հայոց խմբի համար չէին կարող լինել այնքան մեծ անհարմարութիւններ, որ նրա ներկայացումները տեղափոխվեին արքունական թատրոն, որ կոմիտեաը առաջին տարին վարձ տվեց 6000 ուրբի, մինչդեռ Արծրունու ձրի թատրոնում այդ գումարի մեծագույն մասը կմնար և առաջին տարին կոմիտեաը 2000 ուրբի դեֆիցիտ չէր ունենա:

Պարզ է, ուրեմն, որ թատրոնի ղեկավարները անձնական կրքերով և կապրիզներով էին առաջնորդվում: Արծրունին հարձակվում էր կոմիտեաի վրա, բայց մեղավորը ո՞վ էր: Մեղուական կուսակցութիւնը Ամատունու անձի մեջ գտել էր մի հովանավոր՝ Արծրունու դեմ կռվելու համար: Եվ նա անդադար աղաղակում էր, թե Արծրունին հասարակական գործը տապալել է ուզում լով այն պատճառով, որ իր թատրոնը չեն վարձել:

Անշուշտ կոմիտեաի այդ վարձումը հայտնի չափով կրքոտութիւն էր հաղորդում Արծրունու հարձակումներին, որոնք, սակայն, հիմնված էին միշտ փաստերի և իրողութիւնների վրա: Բայց պակաս կրքոտ չէր կոմիտեաը, կամ ավելի ճիշտ ասած՝ նրա նախագահը: Ահա մի փաստ: «Մշակը», խոսելով այն ընդհանուր ժողովի մասին, որ գումարված էր առաջին տարվա հաշիվները քննելու համար, ասաց, որ կոմիտեաը հարկավոր չէր համարել հրավիրել այդ ժողովին մամուլի ներկայացուցիչներին: Իշխան Ամատունին, «Մեղուի» մեջ հերքելով այդ բանը, պարծենկոտութեամբ ասում էր, որ հրավիրներ սուղարկված են եղել բոլոր տեղական հայ, ռուս, մինչևիսկ վրաց լրագիրներին, բացի «Кавказ»-ից և «Մշակից»: Թե ինչու՞ աչգպիսի բացառութիւններ, իշխանը բացատրում էր այսպես. ««Кавказ» լրագրի խմբագրին, ճշմարիտ է, չենք հիշել և ներողութիւն ենք խնդրում, իսկ ձեզ, պ. Արծրունի, «Մշակի» խմբագիր, չհրավիրեցինք, որովհետև չկամեցանք առավել ևս վրդովել, երբ դուք արդեն վրդովված էիք հայ թատրոնի մասնաժողովի գործունեութեան դեմ ձեր թատրոնը չվարձելու պատճառով և այդ դրացմունքից ստիպված հրաժարվեցինք հայ թատրոնի ընդհանուր ժողովի անդամակցութիւնից անգամ»: («Մեղու» 1880, № 50):

Երբ մի պաշտոնական հիմնարկութիւն այդ աստիճան կրքոտութեան էր հասնում, իրավունք չունե՞ր Արծրունին հրապարակով պնդելու, թե հասարակական գործին նյութականի կողմից վնասակար ուղղութիւն տալու պատճառը կոմիտեաի անձնական կապրիզներն էին: Սակայն ժողովի չհրավիրելը չէր կարող լռեցնել հրապարակախոսին: «Մշակը» մի ընդարձակ հողավածի մեջ քննադատեց կոմիտեաի առաջին տարվա հաշիվը և թվանշաններով ապացուցեց, թե որպիսի թեթևամիտ շուայութեամբ է նա վարվել թատրոնական գումարների հետ:

Միայն դրամական հաշիվները չէին քննադատութեան տեղիք տալիս: Կոմիտեաը բազմաթիվ առիթներ էր մատակարարում Արծրունուն: Եվ սկզբից ընդունելով դիմադրողի դիրք, սկզբից հայտնելով, թե կոմիտեաը անընդունակ է թատրոնական գործը առաջ տանելու, Արծրունին այդպես էլ շարունակեց իր վերաբերմունքը այն երեք տարիների ընթացքում, երբ գոյութիւն ուներ մշտական թատրոնական խումբ Քիֆլիսում:

Կոմիտեաը և մանավանդ նրա նախագահը, իհարկե, ունեին իրանց պաշտպանները: Ամբողջ մեղուական բանակը սարի պես կանգնած էր նրանց ետևում: «Մեղուն» շարունակ փառաբանում էր իշխան Ամատունուն, ուռցնում էր նրա մատուցած ծառայութիւնները, ներկայացնում էր թատրոնական գործը ամենագեղեցիկ դրութեան մեջ: Արծրունու քննադատութիւնների, հարձակումների դիմաց մեղուականները միայն մի բան ունեին ասելու, — թե պատճառը միշտ և անփոփոխ այն է, որ կոմիտեաը չի վարձել նրա թատրոնը: Երեք տարի շարունակ այս երգն էր երգվում «Մեղուի» մեջ, այդ երգը միալար այն էր կրկնում, թե Արծրունին իր անձնական հաշիվների համար անարգում, ցեխոտում է հասարակական գործը:

Բայց այդ միանման վայնասունը, ինչպես և ուրիշ շատ դեպքերում, մեղուական միևնույն երևույթն էր ներկայացնում: Արծրունին առանց փաստերի չէր խիստ քննադատում, բայց այդ փաստերի վրա ուշադրութիւն դարձնել չէր կարող մեղուականութիւնը, որին միայն մատչելի էր հարցը անձնական տեսակետից լուսավորել, ամեն ինչը շահի վերածել: Կար հայոց թատրոն, և այդ բավական էր: Վատ խոսել նրա մասին, քննադատել նրա պակասութիւնները, — նշանակում էր աղգասեր լինել, քանզի ազգային գործը: Եվ որով-

Հետև մեղուականության շանքը միշտ եղել է իր ատելի հակառակորդին ցույց տալ հասարակության մի եսամոլի, կրքոտ շահասերի և դավաճանի կերպարանքով, ուստի թատրոնական գործի ընթացքում նրա համար երկնքից ընկած մի բարիք էր այն, որ Արծրունին թատրոնական դահլիճ ունի և այդ դահլիճը վարձված չէ եղել հայոց ներկայացումների համար:

Սակայն փաստերը անկախ ուսումնասիրողը հասնում է բոլորովին ուրիշ տեսակ եղբրակացությունների: Եթե Արծրունին ուրիշ կերպ վերաբերված լիներ 1879—1882 թթ. թատրոնական ներկայացումներին, նա դավաճանած պիտի լիներ իր սկզբունքներին, որ սկսել էր քարոզել դեռ 1860-ական թվականներին «Հայկական աշխարհի» մեջ: Բացի ազգային կամ հասարակական մի հիմնարկություն լինելուց, թատրոնը արվեստի տաճար էլ է և նրա մեջ արդ ուղղությունը բոլորովին այնքան աննշան մի հարց չէր, որ նրան կարելի լիներ անտես անել ազգասիրական նպատակով: Արծրունու գլխավոր կռիվը ուղղված էր սեպերտուրի դեմ. դա արվեստի ռեալիստական ուղղության կռիվն էր ոտմանսիվի դեմ, դա առողջ հասարակական հասկացությունների խիստ պայքարն էր ֆրանսիական անպետք, գաղափարազուրկ մեկոդրամների դեմ:

Այդ կռիվի մեջ Արծրունին Արծրունի էր. խիստ, համարձակ, զինված սուր լողիկայով: Մենք պետք է խոստովանենք, որ նա քիչ չէր միակողմանիության մեջ ընկնում, քիչ չէր կանխակալ կարծիքների ճնշման տակ ընկնում: Բայց ընդհանրապես, նրա քննադատական հայացքները աչքի ընկնող տեղ պիտի բռնեն մեր գրական քննադատությունների պատմության մեջ:

Բացասական վերաբերմունք դեպի թատրոնական կազմակերպվող ներկայացումները Արծրունին ցույց տվեց դեռ այն ժամանակ, երբ թատրոնը չէր բացվել: Կոմիտեալը գերասաններ և գերասանուհիներ էր հրավիրել Կ. Պոլսից: Այդ բանին սաստիկ հակառակվեց Արծրունին: Երկու գլխավոր պատճառներ ունի նա: Մեկ այն, որ բեմի վրա պիտի խառնվեն արևմտյան և արևելյան հայերի գրական լեզուները և այդ խառնուրդը Արծրունին մի բոլորովին աներևակայելի բան էր երևում: Ասիացին ծաղրում էր, թե ինչպես պոլսեցի գերասաններն ու գերասանուհիները պիտի իրանց լեզվով խաղան Սունդուկյանցի «Պեպոն»: Մյուս պատճառն այն էր, որ Կ. Պոլսում տիրում էր ֆրանսիական ուղղությունը և հրավիրվող գերասանական մարմինը պիտի մեզ մոտ բերի անմիտ, հրեշավոր մեկոդրամների մի ամբողջ սեպերտուրա:

Այս երկրորդ պատճառաբանությունը միանգամայն արդարացի էր: Բայց առաջին հայացքի մեջ կանխակալություն շատ կար: Առնվազն, Արծրունին պիտի սպասեր և տեսներ, թե ինչ են բերում իրանց հետ Կ. Պոլսի գերասաններն ու գերասանուհիները: Փորձը պիտի ցույց տար, որ իրանց ոտմանսիկ կրթությամբ հանդերձ պոլսեցի հյուրերը տաղանդ, շնորհք ունենին մեզ ցույց տալու, իսկ նրանց լեզուն բազմաթիվ առավելություններ ունի ուսահայերի լեզվից և համենայնդեպս, ավելի ուսահայ գերասանները պիտի նրանցից սովորեն, թե ինչպես պետք է գործածել հայերեն լեզուն:

Նույն փորձը պիտի ցույց տար և այն, որ պոլսեցի հյուրերը միանգամայն անուղղելի չեն գրական դաստիարակության կողմից. ուսահայերի մեջ, գրական ուրիշ տեսակ պահանջների տակ, նրանք պիտի ստանային ուրիշ տեսակ դաստիարակություն:

Միանգամայն անհասկանալի է, թե ինչպես էր, որ Արծրունին, թուրքահայերի և ուսահայերի մերձեցման գործում այնքան ահագին դեր կատարած

հրապարակախոսը, հակառակ էր Պոլսից գերասանական ուժեր բերելուն, որոնք հայկական բեմի վրա պիտի մարմնացնեին, շոշափելի դարձնեին այդ մերձեցումը: Խոսելով Ադամյանի մասին, նա ինքն էր ասում, թե հասարակության վառ համակրությունը դեպի այդ երիտասարդ գերասանը պետք է բացատրել նրանով, որ Ադամյանը մեկն է թուրքահայերից, որոնք հարստահարությունների գոհ են, որոնք մի մեծ դատ են հարուցել քաղաքական աշխարհի առաջ, մեկը այն երիտասարդներից, որոնք Կ. Պոլսում աշխատում են Հայաստանի կրթության համար, որոնք հիմնել են Արարատյանի նման ընկերություններ: Ինչպե՞ս էր, որ նա մոռացավ այդ հանգամանքը, երբ հարձակվում էր կոմիտեայի վրա, թե ինչու նա Կ. Պոլսից է գերասաններ բերել տալիս, մինչդեռ բեմը Թիֆլիսում պիտի լինի զուտ տեղական, ուսահայ, պիտի տեղացիներից ուժեր դուրս հանն:

Արծրունու համար միշտ արդարացում է մնում այն աններելի իրողությունը, որ պոլսեցի հյուրերի պատճառով մեր բեմը ողողվեց ֆրանսիական խոհանոցի փտած արտադրություններով: Բայց, ինչպես տեսանք, այդ վերաբերմունքի մեջ կար որոշ շահով կանխակալություն, նախապաշարմունք: Եվ ահա այդ բաների տակ ճնշված մնաց Արծրունին գոնե առաջին սեզոնի ընթացքում:

Կ. Պոլսից եկողներն էին Ադամյան, օր. Ասողիկ և օր. Սիրանույշ քույրերը: Սեպտեմբերի 3-ին մեծ, շտեմնված ոգևորությամբ բացվեց հայոց թատրոնը: «Նույնիսկ թատրոնի օդը ոգևորությամբ էր լցվել», — գրում էր «Մշակը»: Պոլսեցի հյուրերը սկզբից ևեթ թատրոնասեր հասարակության ջերմ համակրությունները գրավեցին: Նրանց մասնակցությամբ տրված ամեն մի ներկայացում աղմկալի հաջողություն էր ունենում: Սակայն Արծրունին չէր կարող ոգևորվել այդ, ինչպես ինքն էր ասում, էժան հաջողությամբ: Յուրաքանչյուր ներկայացումն մասին նա սեպենդիաներ չէր տալիս: Եվ ավելորդ էլ էր: Խմբի ներկայացրած պիեսները և ծառի պտուղներ էին և նրանց մասին կարելի էր միևնույն բանն ասել: Այդ պիեսները Արծրունին պախարակում, ոտնակոխ էր անում խմբովին: Եվ միայն այդ հեշտ բանով չէր նա զբաղված, այլ և զարգացնում էր ընդարձակ հողավածների մեջ իր հայացքները, թե ինչ պիտի տա թատրոնը, որպեսզի դառնա իսկական հասարակաց կրթարան:

Իր առաջին հողավածի մեջ Արծրունին հիշեցնում էր, թե ինչ է ասել ինքը թատրոնի մասին դեռ 1872 թվին, «Մշակի» մեջ*: Թատրոն — ժողովրդական հիմնարկություն, թատրոն — դեկավար կյանքի մեջ, թատրոն — առաջնորդող դեպի համամարդկային գաղափարական մտքի գանձերը: Հավատարիմ մնալով այդ սկզբունքներին, Արծրունին պատմում էր խմբի ներկայացրած մի քանի անմիտ մեկոդրամների համառոտ բովանդակությունը, ընդգծում էր նրանց մեջ եղած անհեթեթությունները և դիմում էր այն հարցին, թե ինչ տեսակ տպավորություն կարող են նրանք գործել հասարակության վրա: Նա գրում էր.

«Ներկայացրեք մի շարք այդպիսի պիեսներ, շափից դուրս ազդեցիկ ներվերի վրա, շարունակեցեք մի քանի ժամանակ այդ ընթացքը, և այն հասարակությունը, որին թատրոնը պետք է առաջնորդե, պետք է կրթե, այդ հասարակությունը ոչինչ տպավորություն չի ստանա, երբ մի Արուսիկ կհարստահարե մի Պեպոյի, երբ մի Կեկել Արուսիկի անազնվության պատճառով կղրծբախտանա և արտասուքներ կթափի: «Արտուրը»*, կասե հասարակության այն

* Տե՛ս հատ. II, եր.

** «Արյան քիծ» մեկոդրամի մեջ:

մասը, որ պետք է դաստիարակվի, գրեթե վեց անգամ կամենում էր իրան սպանել և ազատվեց, իր կուրծքը սրին դիմադրեց, այնքան տանջվեց, շարձարվեց, իսկ Կեկելը լաց է լինում, որովհետև Արուսիկան անաղնվույթուն գործեց, որովհետև մարդու շգնաց. մե՞ծ բան է:

Ի՞նչ անենք, որ հայրը վատ է վարվում իր որդու հետ, կամ հակառակ, ի՞նչ անենք, որ գործակատարը հարստանում է իր գործատերի հաշվով, ի՞նչ անենք, որ բարձր ուսում ստացած իդիոտ երիտասարդները փողի տոպրակների վրա են պսակվում, ի՞նչ անենք, որ մարդիկ բաժինք ու փող են խոստանում և շեն տալիս, ի՞նչ անենք, որ պարտքով վերցրած փողը ուրանում են, ի՞նչ անենք, որ պսակված մարդիկ, իրանց կանանցը թողած, անբարոյականություն վայրերն են թափառում, իրանց կանանց բերած օժիտը անբարոյական կանանց վրա են վատնում, սրանք թույլ բաներ են, սրանք զգացմունքի վրա այն տպավորությունը շեն թողնի, ինչ տպավորություն թողել է Արտուրը իր սպանություններով, ցիրկի վեց տարեկան երեխան ոտքերից կախ ընկնելով, Կատարինն Հովարդը անդադար մեռածի պես քնելով և արթնանալով:

Խաղում են «Խաթարալա» կամ մի այլ դրա նման պիեսա, Գերասիմը խաբում է, նա պաշտպանում է իր թեորիան: Թատրոնից դուրս է գալիս այն հասարակությունը, որ պետք է կրթվեր, որի վրա պիեսան պետք է ազդեցություն գործեր: Բայց ի՞նչ կար պիեսայի մեջ, որ կարողանար ազդել այնպիսի մի հասարակության վրա, որ սովորել է «Աեր առանց համարման», «Արյան բիծ», «Կատարին Հովարդ» և այլ դրանց նման պիեսաների շոգիներից հարբել և թատրոնական դահլիճը ծափահարություններով զղրոցանել:

Հայկական թատրոնի անցյալն էլ Արծրունու տեսություններն էր հաստատում: Թիֆլիսում հայոց թատրոնը սկսվեց պատմական պիեսներով, որոնք միայն էֆեկտ էին տալիս, միայն ազդում էին ներվերի վրա: Բայց շուտով այդ ուղղության դեմ բողոք բարձրացավ: Թե դերասանները (Չմշկյան, Մանդինյան, Սուքիասյան, Ամերիկյան) և թե թատերագրողները (Տեր-Գրիգորյան, Փուղինյան, Սունդուկյան) հաստատեցին բեմի վրա իրական ուղղություն, ռեալական գեղարվեստի հասկացողությունը: Եվ ուսահայոց բեմը թեկուզ իր անշնորհ դերասաններով անհամեմատ բարձր էր, շնորհիվ այդ ուղղության, թուրքահայոց բեմից, ուր շարունակ տիրում էր նույն պատմական ուղղությունը, նույն ֆրանսիական ոտմանտիկ, սխոլաստիկ արվեստը: Բերելով այդ վերին աստիճանի համոզիչ, անհերքելի իրողությունը, Արծրունին զարմանում էր, որ թատրոնական կոմիտեի անդամների թվում է և 60-ական թվականների ուղղության գլխավոր ներկայացուցիչ Սունդուկյանը, որ, սակայն, այժմ թույլ է տալիս բեմի վրա այն, ինչի դեմ բողոքում էր մի ժամանակ:

«Մեզ հայտնի է, թե ովքեր են այժմյան կոմիտեի անդամները. նրանցից մեկը կարող է լավ ֆինանսիստ լինել, մյուսը լավ վաճառական, երրորդը լավ խմբագիր, ուսումնական ադվոկատ և այլն,— բայց ամբողջ կոմիտեի մեջ Սունդուկյանը մենակ է, որ հասկանում է ինչ է բեմը, ինչ է թատրոնը, ինչ է արհեստը, ինչ է գեղարվեստը, ինչ են բեմի պահանջողությունները... Ուրեմն ուզես շուգես պետք է նրան համարես կոմիտեի առաջնորդ... Ուրեմն այն մարդը, որ վաթսուներորդ թվականներում առաջինն է կոչվել, որ իր ռեալական ընթացքով և պիեսաներով բողոքել է պատմական-սխոլաստիկական ուղղության դեմ, այժմ պարագլուխ է դարձել այն խմբի, որ ջանում է մեր բեմի վրա հնացած ոտմանտիկական ուղղությունը պատվաստելու»:

Բայց ի՞նչ էլք էր ցույց տալիս Արծրունին: Պետք է փոփոխել ռեալությունը: Ավելի լավ է մի ամբողջ տարի ներկայացումներ շտալ և ռեալություն պատրաստել: Հայոց բեմի համար դա թեև հեշտ գործ չէ, բայց անիրագործելի էլ չէ: Հենց նույն ֆրանսիական գրականության մեջ կան և ռեալական ուղղության պատկանող պիեսներ: Շատ են այդպիսիները և ուսաց գրականության մեջ (Օստրովսկի): Առաջարկում էր թարգմանել, փոխադրել այդպիսի պիեսներ: Կոմիտեի պետք է վարձատրություն նշանակի այդ աշխատանքների համար, պետք է բավարար վարձատրություն հայտարարի ինքնուրույն գրվածքների համար: Եվ այն ժամանակ կգտնվեն ոչ միայն աշխատողներ, այլև հեղինակներ:

Ահա թե որքան ուղիղ ու արդարացի էր Արծրունու հիմնական հայացքը թատրոնի վերաբերմամբ: Այդ հայացքից էլ բխում էր նրա վերաբերմունքը դեպի մշտական խմբի ներկայացումները: Եվ նրա սաստիկ անբավականությունը, նրա անխնա հարձակումները ճշմարիտ, իրավացի էին: Ոչ ոք այժմ, կարդալով այդ գրվածքները, չէ կարող ուրանալ, որ իր այդ տեսակ վերաբերմունքով Արծրունին թատրոնի իսկական գաղափարի ամենալավ բարեկամն էր, որ անցողական փայլ ու շքեղություն չէր ցանկանում հայոց բեմին, այլ հարատևություն առողջ ու բնական սկզբունքների վրա: Նրան չլսեցին, նրան չէին կարող լսել կրթով ղեկավարվող գործիչները. և հայոց բեմը մի կարճ ժամանակ միայն գոյություն պահպանեց:

Այսպես վերաբերվելով թատրոնի բնած ուղղության, Արծրունին, բնականաբար, պիտի բացասաբար վերաբերվեր և իր ատած ուղղության ներկայացուցիչներին: Պոլսից եկած հյուրերին նա չէր հավանում կամ, ավելի ճիշտ ասած, թիչ էր հավանում. ոչ Ադամյանը, ոչ Աստղիկը և ոչ Սիրանուշը նրա աչքում տաղանդ չէին: Այստեղ ահա հոտատության հարց է ծագում. ինչպե՞ս Արծրունին չզգաց, թե ինչ պիտի լինի Ադամյանը հայոց բեմի համար:

Այս կարևոր հարցը պարզելու համար Արծրունու գրվածքների մեջ նյութեր մենք գտնում ենք: Պատճառը նույն հիմնական, խոշոր հարցն էր՝ ուղղությունը: Ահա Արծրունու («Նոր ռեցենզիներ») խոսքերը.

«Մենք ինքներս խոստովանում ենք, որ շատ խիստ ենք դեպի պ. Ադամյանը և շարունակության մեջ էլ խիստ կլինենք: Մենք այդպես չէինք վերաբերվի դեպի պարոնը, եթե նրան տաղանդ, հանճար չհամարեին: Այս դեպքում մենք կասեինք, որ հայոց բեմի համար պ. Ադամյանը լավ է, մինչև անգամ շատ լավ է... Բայց գործը ուրիշ պատկեր, ուրիշ ձև է ստացել. մարդիկ վիճում են, որ ոտմանտիկական շկոլա՞ն, թե՞ ռեալական շկոլան լավ է, հավատացնում են, որ այդ հարցը դեռ Եվրոպայումն էլ չէ վճռվել, որ կոմիտեի հարկավոր է համարում առժամանակ ոտմանտիկական պիեսաներ ներկայացնել և որ իբրև ոտմանտիկական շկոլային պատկանող դերասան՝ պ. Ադամյանը հանճար է: Այսինքն դրանով կամենում են ասացուցանել, որ կոմիտեի գիտակցաբար ընտրեց ոտմանտիկական շկոլան և ոչ թե ստիպված էր այդպես անել, որովհետև անհեռատես հայտնվեցավ, շկարողացավ առաջուց ամեն բան պատրաստել: Մի անգամ գիտակցաբար ոտմանտիկական ուղղությունը ընտրելուց հետո նույնպես գիտակցաբար այդ շկոլային պատկանող հանճար բերել տվեց կ, Պոլսից, և ոչ թե այդ նույնպես մի դիպված էր: Այս բաները կարող են պաշտոնական զանազան լրագիրների մեջ երգել, մեզ այդպես խոսելը անվայել կլինի: Ասացեք, որ պ. Ադամյանը լավ դերասան է, շափից դուրս աշխատասեր դերասան է, աշխատասիրության կողմից կարող է օրինակելի լինել, որ ընդունակ է հասարակությանը գրավելու,— և մենք կհամաձայնենք»:

Ուրեմն, ուղղութիւնն էր, որ առաջին ժամանակ կանգնած էր Ադամյանի տաղանդի և նրան գնահատող Արծրունու մեջտեղը: Կոմիտետի գործունեութեան և թատրոնի մեջ տիրող անհամակրելի ուղղութեան վերաբերմամբ դիմադրողի դերը պահպանելու համար էր Արծրունին այնքան խիստ վերաբերվում Ադամյանին: Ավելացնենք և այն, ինչ գրեց Արծրունին դրանից քիչ հետո.

«Քանի որ նա (Ադամյանը) կիսադա արվեստական, օդային, անբնական, իրականութիւնից զուրկ, անհարմարութիւնների լի պիեսաներում, ինձ անհնարին կլինի գնահատել կամ քննադատել նրա և մեր մշտական խմբի բոլոր դերասանների խաղը»:

Պարզ է անբավականութեան պատճառը, պարզ է գոնե մի այնպիսի հրապարակախոսի տեսակետից, որ հենց նույն այդ հոգիվածում ասում էր, թե «Թատրոնը նույնը պետք է անի, ինչ որ անում է ամենօրյա լրագրի առաջնորդողը»: Այսինքն կյանք, իրականութիւն, հասարակական գաղափարներ:

Աչքի առաջ բերելով այս բոլորը, մենք տեսնում ենք, որ Արծրունու վերաբերմունքը դեպի հայ հոշակավոր դերասանը անհասկանալի չէ: Չմոռանանք և այն, որ Ադամյանը Կ. Պոլսից իբրև միանգամից, վերջնականապես կազմակերպված մի տաղանդ չեկավ Քիֆլիս: Այստեղ նրան սպասում էր մի ամբողջ դպրոց, որի մեջ նա մշակեց, կատարելագործեց իր ընդունակութիւնները: Արծրունին արդեն խոստովանում էր դերասանի մի հատկութիւնը՝ նրա շահագրգռեց աշխատասիրութիւնը: Դրանով Ադամյանը հղկեց, փայլեցրեց իր տաղանդը, տվեց նրան նոր ուղղութիւն: Փոխվում է և «Մշակի» վերաբերմունքը: Արծրունին շուտ ըմբռնեց իրողութիւնը և նշանավոր արտիստի մոտիկ բարեկամներից մեկն էր մինչև կյանքի վերջը:

Համարյա միևնույն տեսակ էր վերաբերմունքը և դեպի պոլսեցի դերասանուհիները: Հետևյալ տարին Քիֆլիս եկան Մնակյանը, Գարագաշյան քույրերը, ապա և տ. Հրաչյա: «Մշակը» խիստ էր վերաբերվում, բայց և արդարութիւնը չէր մոռանում: Եվ որպէսզի իմանանք այդ վերաբերմունքի իսկական արժեքը, ավելորդ չի լինի մի երկու խոսքով հիշատակել հակառակ բանակի վերաբերմունքը:

«Մեղուն», ապացուցանելու համար, որ «Մշակը» իր խմբագրի անձնական թշնամութեան պատճառով է կամ անտես անում կամ պախարակում հայոց ներկայացումները, ինքը մանրամասն ունեցնողիաներ էր տպագրում, որոնց մեջ, սակայն, մեղադրամաների անհամ ու տաղտկալի բովանդակութիւնն էր ամենամեծ տեղը գրավում: Քննադատութիւնը բացակայում էր, ավելի հոժարութեամբ զանազան գովասանքներ և կոմպլիմենտներ էին մատուցվում դերակատարներին: Պարբերաբար «Մեղուն» առաջնորդողների մեջ գովում, փառաբանում էր կոմիտետի նախագահ Ամատունուն, նկարագրում էր, թե ինչքան շատ է նա աշխատում հայոց բեմի համար, ինչպես է նույնիսկ իր անձնական միջոցներից խոշոր գոհողութիւններ անում: Իշխան Ամատունին, ճիշտ որ, շատ սեր ուներ դեպի հայոց բեմը, բավական աչքի ընկնող ծառայութիւններ է մատուցել նրան 1879—1882 թվականների ընթացքում: Բայց հենց այն հանգամանքը, որ «Մեղուն» միայն նրան էր գովում, ցույց էր տալիս, որ կոմիտետը համարյա գոյութիւն չունի, որ ամեն ինչ նախագահի անձնավորութեան մեջ է ամփոփված: Իսկ այդ անձնավորութիւնը փառայական իշխանավորութեան հատկութիւններ շատ ուներ:

Ամբողջ դերասանական խումբը նրան էր հպատակեցրած և այդ հպատակութիւնը պիտի լինէր կատարյալ, անսահման*: Տաղանդ, ընդունակութիւն արհամարհվում էին՝ կոմիտետի նախագահի իշխանութիւնը ավելի բարձրացնելու համար: Այդ փառայական միջավայրում, իհարկե, ինտրիգները, անձնական քմահաճութիւնները արգավանդ հող էին գտնում: «Մեղուն», իբրև ամենակարող նախագահի լեյք-օրդան, պաշտպանում էր նրա բոլոր գործողութիւնները, կամայականութիւնները: Ադամյանը նրա համար և՛ թատրոնի զարդ էր, և՛ տաղանդ: Բայց ահա Ադամյանը, դեռ առաջին սեզոնը չվերջացրած, անկարող եղավ դիմանալ կոմիտետի ստեղծած պայմաններին, հեռացավ բեմից: Նույն «Մեղուն» այդ առիթով գրած մի առաջնորդողի մեջ, առանց անուն տալու, ասում էր, թե դերասանը մի քանի անգամ հաջող կատարելով գերը, արդեն իրան երեւակայում է հանձար և տաղանդ. ուստի սորը և կոմիտետը նրանից ավելի լավ կարող են որոշել, թե ինչի է նա պետքական, ուստի պետք է, որ դերասանը ենթարկվի այդ իշխանութեան: Այդ միջոցին գրված մի ուրիշ հոդվածի մեջ Ադամյանի ընդունակութիւնները պարզապես այս ձևակերպութիւնն էին ստանում. «Պ. Ադամյանը լավ դերասան է, նա երիտասարդ է, նա հայ է, նա օգտավետ է հայ թատրոնի բեմի համար» («Մեղուն», 1880, № 37):

Ահա թե որքան անկեղծութիւն կար այն մարդկանց մեջ, որոնք որպէս թե պաշտպանում էին թատրոնն ու դերասաններին Արծրունու «ազգակործան» հարձակումներից:

Եվ վերավորված, զրկված բեմական գործիչները «Մշակի» պաշտպանութեան էին դիմում: Այդպիսի մեկն էր տաղանդավոր, առաջնակարգ դերասանուհի օր. Աստղիկը: Նա հազիվ կարողացավ երկու սեզոն մնալ Քիֆլիսում և 1881-ի առաջին կիսամյակում այնպիսի դրութեան մեջ գրվեց, որ ստիպված եղավ հեռանալ խմբից: Բայց հեռանալիս օրիորդը քաջութիւն ունեցավ «Մշակի» էջերում մանրամասն բացատրելու, թե ինչ կարգեր են տիրում թատրոնական կոմիտետի մեջ, ինչ հանգամանքներով էր շրջապատված նույնիսկ առաջնակարգ դերասանուհին: Ինտրիգների, փառայական կամայականութիւնների այն երկար շարքը, որ գրված է Աստղիկի բացատրութիւնների մեջ, անշուշտ իր տեղը կունենա հայ թատրոնական գործի պատմութեան մեջ:

Վերավորված դերասանուհին, Կ. Պոլիս ճանապարհվելուց առաջ, մի ներկայացում տվեց՝ ճանապարհածախս հայթայթելու համար: Եվ ի՞նչ, նա ստիպված էր այդ ներկայացումը տալ Արծրունու թատրոնում, հայ և նույնիսկ վրացի սիրողների մասնակցութեամբ. կոմիտետի իշխան նախագահի ահը այնքան սաստիկ էր, որ մշտական խմբից ոչ ոք չհամարձակվեց մասնակցել: «Մեղուն» այստեղ էլ քաջաբար պաշտպանում էր իշխան Ամատունուն, և տաղանդավոր դերասանուհին, հայկական բեմի առաջնակարգ աստղերից մեկը, հեռացավ Կովկասից, տանելով անկեղծ շնորհակալութեան զգացմունք դեպի Քիֆլիսի հայ հասարակութիւնը, որ այնքան պատվել էր նրան իր համակրա-

* Նմուշի համար բերում ենք այստեղ մի կտոր այն պայմանագրից, որ կնքված էր իշխան Ամատունու և հայտնի դերասանուհի օր. Աստղիկի մեջ. «Ես Ամբեր Քանթարճյանցս (Աստղիկ) պարտավորվում եմ խաղալ Քիֆլիսում մշտական հայ դերասանական խմբի հետ, համաձայն իշխան Ամատունու կամ նորանից երաշխավորված անձի որոշման կոմիտետի կողմից, օպերետներում, առհասարակ բոլոր դրամատիկական ներկայացումներում բոլոր այն դերերը, որ կհանձնեն ինձ իշխան Ամատունին. բացի այս պարտավորվում եմ ամեն մեկ ամսվա ընթացքում պարտաստել և խաղալ նոր պիեսաներում վեց նոր դերեր համաձայն իշխան Ամատունու որոշման: Նմանապես պարտավոր եմ մասնակցել անտրակտներում, բնգունել երկրորդական դերեր»: Այսպես էր խմբի առաջին դերասանուհու դրութիւնը: Հասկանալի է, թե ինչ պիտի լինէին մյուսները:

կան ցույցերով, տանելով դրա հետ և դառն հիշողութիւններ կոմիտեի մասին: Այդ հիշողութիւնները դառն էին և ուրիշ պոլսեցի հշուրհի համար: «Մշակի» թղթակիցը գրում էր, որ Կ. Պոլիս վերագարձող դերասաններն ու դերասանուհիները ասում էին, թե դժոխքից են ազատվել:

Երեք տարի գոյութիւն պահպանեց կոմիտեի ղեկավարած թատրոնը Թիֆլիսում: Դա մեր բնի ամենալավ ժամանակն էր: Հասարակութիւնը ոգեւորութիւն էր ցույց տալիս, հաճախում էր ներկայացումներին, մեծ միջոցներ տվեց կոմիտեին: Բայց դա մի ժամանակավոր աջողութիւն էր: Բնի ղեկավարները ոչ կարողացան խելացի խնայողութիւն ցույց տալ՝ թատրոնի ապագան ապահովելու համար, ոչ էլ ընդունակ հանդիսացան հայկական բեմը հաստատ, ժողովրդական հիմքերի վրա դնելու: 1882-ի աշնանը Թիֆլիսում այլևս պոլսեցի դերասաններ ու դերասանուհիներ չկային: Տեղական դերասանները ներկայացումներ էին տալիս Արծրունու թատրոնում, բայց հասարակութիւնն այլևս շունք իր նախկին ոգևորութիւնը: Թատրոնի անկումն ակնհայտ էր:

Արծրունին այժմ իրականացած էր համարում իր գոյակութիւնները: Կային շնորհքով դերասաններ, նրանք ներկայացնում էին իրական կյանքից վերցրած պիեսներ, բայց չկար հետաքրքրութիւն: «Թատրոնական կոմիտեի» իշխան Ամատունու հետ, — գրում էր «Մշակը», — անխնա մորթեցին և խոր գերեզմանի մեջ թաղեցին հայոց թատրոնը»: Արծրունին առաջնորդողի մեջ քննում էր, թե ինչով կարող է կենդանի լինել թատրոնը: Նա հիմնված պիտի լինի հասարակութիւն մեծամասնութիւն համակրանքի վրա, պիտի այդ մեծամասնութիւն համար անհրաժեշտ, կենսական, առօրյա մտավոր պահանջ դառնա: Ի՞նչ է հարկավոր դրա համար:

«Զորս բան, կպատասխանենք մենք. 1) հասկանալի լեզու, 2) հասկանալի մատչելի և գրավիչ ռեպերտուար, 3) հասկանալի խաղ և 4) էժան մուտք»:

Այդ շորս պայմանները եթե միացրած լինեն, թատրոնի գործը կարող է հաջողվել ամեն քաղաքում, կարող է ժամանակով դառնալ մեծամասնութիւն համար պահանջ և ոչ թե փոքրամասնութիւն համար խաղալիք կամ շոտալութիւն առարկա, կարող է թատրոնի վարիչների ձեռքում դառնալ ժողովուրդը կրթող միջոց և ոչ թե նույն վարիչների համար ունայն փառքի և անձնական նպատակներին հասնելու մի միջոց:

Բայց անցյալ տարիների հայոց թատրոնը Թիֆլիսում գուրկ էր նույնիսկ մեր վերևում հիշած շորս ամենամանհրաժեշտ պայմաններից որպէսզի ժողովրդական դառնա, հիմնվի քաղաքի հայ ազգաբնակչութիւն մեծամասնութիւն վրա և ուրեմն շարունակի իր գոյութիւնը: 1) Լեզուն հասկանալի չէր, քանի որ պոլսական էր, 2) ռեպերտուարը մատչելի չէր, քանի որ անմատչելի, անբնական, հնացած ֆրանսիական, ռոմանտիական, ահ ու սարսափներով լի, կոմսերով ու մարկիզներով պիեսներից էր բաղկացած, 3) խաղը անբնական, արվեստական, ռոմանտիական էր, միմիայն մի նեղ շրջանի համար այլևայլ պատճառներով դուրեկան, իսկ մեծամասնութիւն համար անհասկանալի, և վերջապէս 4) տեղերը շատ թանկ էին:

Ի՞նչ հիմքեր կային, ուրեմն, որ գործը տևողական լիներ: Ավելացրեք սրան թատրոնական վարիչների անխնայողական և անհաշիվ գործունեութիւնը, հիշեցեք, որ նրանք նախ հավաքեցին 8 հազար ռուբլի հասարակութիւնից, ունեցան բացի սրանից յուրաքանչյուր տարի միջին թվով 20 հազար ռուբլի արդյունք և այդ երեք տարվա ժամանակամիջոցում քամուն

տվեցին անվազն 70 հազար ռուբլի այլևայլ ծախսերի վրա, առանց մի որևէ կապիտալ կազմելու, ոչ փողով, ոչ կոստյումներով, ոչ դեկորացիաներով...

Ավելացրեք սրան, որ նույն նեղ շրջանը, որ այդքան փող տվեց թատրոնը պահելու համար, բացի սրանից հազարներ ծախսեց դերասանուհիների և դերասանների այլևայլ ընծաների վրա, — և ձեզ հասկանալի կլինի, որ այդ նեղ շրջանը դադրած, հոգնած է իր ապարդյուն և անհաշիվ, ջիբերը դատաւկող գործունեութիւնից և այժմ այլևս սիրտ չունի գնալ թատրոն, երբ մանավանդ այդ թատրոնը սկսեց նորից ներկայացնել ավելի համեստ, ավելի բնական պիեսները, և խումբը զրկվեց այն կծու տարրից, պոլսական գեղեցկուհիներից, որոնք ինչպէս թունդ համեմ կերակուրի մեջ, ինչպէս մագնիս գրավում էին մեր սակավաթիվ ինտելիգենտ հասարակութիւնը դեպի թատրոնը:

Բայց ժողովրդական դառնալ, մեծամասնութիւնը գրավել՝ խաղով, ռեպերտուարով, էժան գներով, — մեր թատրոնը երբեք փորձած չէ:

Քանի որ թատրոնը չի աշխատի դառնալ մեծամասնութիւն համար անհրաժեշտ, բայց համեստ զվարճութիւն մի միջոց, նույնիսկ այդ մեծամասնութիւն իրան համար անգիտակցական կերպով մի կրթիչ հիմնարկութիւն, մի դպրոց, այլ կլինի միմիայն մի նեղ շրջանի համար հեշտասիրութիւն և ժամավաճառութիւն տեղ, — թատրոնը երբեք չի դառնա մի տևողական, ինքն իրան պահպանող, հաստատ հիմնարկութիւն»:

Դառն ճշմարտութիւնների այսպիսի մի խիստ անխնա հյուսվածքով էր Արծրունին վերջացնում թատրոնական աղմկալի աջողութիւնների շրջանը: Նա կարող էր ասել, որ այստեղ էլ հաղթեց իր բազմաթիվ թշնամիներին իր սուր հայացքով, իր քննադատական կարողութեամբ: Եվ սակայն, թշնամիների կազմակերպված խումբը ինչե՞ր շարավ նրա ձեռքից հրապարակախոսի առաջնութիւնը խլելու համար: Բանը այն տեղին հասավ, որ հին, անկենդան «Մեղուն» նույնիսկ ամենօրյա լրագրի վերածվեց:

Այդ բանն աջողվեց մի ակցիոներական ընկերութիւն միջոցով: Ովքե՞ր էին ընկերութիւնը կազմակերպողները, — մեզ հայտնի չէ: Բայց «Մեղուն» մեջ շարունակ հայտարարվում էր, թե ընկերութիւն անդամ գրվելու համար պէտք է դիմել իշխան Ամատունուն: Այս անունը, վերելք հիշված հանգամանքների հետ, պարզ ցույց է տալիս, թե որտեղ է ծնվել և ինչ նպատակ ունեցող «Մեղուն» ուժեղացնելու միտքը: 1880 թվականին, երբ մի կողմից կրոնական բանակովին էր բորբոքված, մյուս կողմից թատրոնի գործում «Մշակը» այնքան զորեղ ընդդիմադիր դիրք էր բռնել, մեղուական բանակում անհրաժեշտութիւն պիտի դառնար իրանց օրգանի ամենօրյա դարձնելը՝ Արծրունու գեթ կոփվը ավելի աջող տանելու համար: Այնպէս որ «Մշակի» խմբագիրը մի զորեղ խթան հանդիսացավ, որ հին պահպանողականները թափ տան ծուլութիւն փոշին և ավելի եռանդով գործեն:

Սա էլ մի պարծանք էր Արծրունու համար: Եվ այդ բանը մենք Արծրունու խոսքերից չենք հանում: Ինքը՝ Պետրոս Սիմոնյանցը, Արծրունուն ուղղած բաց նամակի մեջ ասում էր. «Իմացեք, որ դուք ձեր անխոհեմ, մաղձոտ, նախանձող, ագահ, հանդուգն, շար բնավորութեամբ և եսամոլութեամբ, ազգին վնասակար ուղղութեամբ «Մեղուն» ամենօրյա անել ստիպեցիք»:

Այո՞, ճիշտ որ ստիպեց: Հարկադրված, արհեստական, անկենդան մի ծնունդ էր «Մեղուն», որ սկսեց հրատարակվել 1881 թվականի փետրվարից: Նույնիսկ լրագրի արտաբերը փոխ անված էր «Մշակից», նույն դիրքը, նույն բաժանորդագիրը, մինչև իսկ տառերի նույն մեծութիւնը առաջնորդողների

համար: Միակ առաջադիմությունն այն էր, որ մինչդեռ «Մշակը» կիրակի օրերը չէր հրատարակվում, «Մեղուն» տալիս էր կես թերթ: «Մշակի» ամենօրյա հրատարակությունը «Մեղուի» մեջ ծաղրվում էր շաբաթը 5 օր անունով: Այժմ ինքը, «Մեղուն», իր հաշվով շաբաթը 5 1/2 օր էր դարձրել և էլի ամենօրյա էր անվանում իրան:

Երկարատևություն չունեցավ այդ կերպարանափոխությունը: Հետևյալ տարին «Մեղուն» թողեց ամենօրյա անունը: Ակցիոնների և ընկերությունը 2000 ռուբլի էր տվել պահպանողական լրագրին. տեսնելով մի տարվա վնասները, նա թողեց փախավ: Նույնիսկ ամենօրյա հրատարակությամբ էլ «Մեղուն» չկարողացավ շատ բաժանորդներ գրավել: Իսկ սեփական միջոցներից տարեկան դեֆիցիտ ծածկելը ոչ ոք «Մեղուի» բարեկամներից հանձն չառավ:

Թատրոնական նշանավոր եռամյակը, եթե այնքան փայլուն էր, պատճառը, ինչպես տեսանք, հասարակության բարձրացած, եռանդուն տրամադրությունն էր: Այսպիսի մի ժամանակ չէին կարող մեռած մնալ և ուրիշ տեսակ մտավոր, կուլտուրական պահանջները: Պետք էր միայն ղեկավարել տիրող տրամադրությունը, ճանապարհներ ցույց տալ նրան:

1878-ին Արժրունին իր առաջնորդողների մեջ հայտնեց այն միտքը, որ պետք է ուշադրություն դարձնել գրականությանը զարգացնելու վրա: Հասարակությունը իր կողմից կարող է աջակցել այդ գործին կազմակերպված ընկերությունների միջոցով: Արժրունին առաջարկում էր հիմնել մի թարգմանչական ընկերություն, որի նպատակը հենց իր անունից կարելի է իմանալ: Այդ միտքը արձագանք տվեց այն ժամանակվա երիտասարդության մեջ: Կազմվեց իր փոքրիկ շրջան, որ սկսեց թարգմանություններ անել: «Մշակի» միտքն իրագործվեց, — այսպես էր ասում այդ փոքրիկ ընկերության հիմնադիրներից մեկը՝ Գաբրիել Միրզոյան, մի հոդվածի մեջ, որ Արժրունին տպագրեց «Մշակի» մեջ իբրև առաջնորդող: Եվ իրավ, հետևյալ տարվանից ընկերությունն սկսեց հրատարակել «Թավամաղ մեղու», «Կարմիր լապտեր» մանկական գրքերը, թարգմանությամբ օր. նատալիա Տեր-Մարկոսյանի, որ ընկերության հիմնադիրներից մեկն էր և շատ եռանդուն գործունեություն էր ցույց տալիս, իբրև վարժուհի, մեր մանկավարժական աշխարհում:

Այդ գործունեությունը Արժրունին ողջունեց մի շատ համակրական առաջնորդողով: Փոքրիկ ընկերությունը մի կարճ միջոցում վերակազմվեց, դարձավ ավելի լայն նպատակ ընտրած մի հիմնարկություն, վերացնելով թարգմանական անունը, նա եղավ ամեն տեսակ գրքեր հրատարակող մի ընկերություն: 1880 թվին նրա կանոնադրությունը արդեն հաստատված էր, և ընդհանուր ժողովը պաշտոնական մարմինների ընտրություն կայացրեց: Այսպիսով սկիզբ առավ Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությունը, որի համակրելի գործունեությունը ընդհատվեց քսան տարուց հետո, 1900-ին, երբ փակվեց:

Ստեղծել մի հիմնարկություն դեռ բավական չէր. պետք էր նրան դնել կանոնավոր ընթացքի մեջ, տալ նրան համապատասխան ուղղություն: Արժրունին ուշադրությունից չէր գցում այս կարևոր հանգամանքը: Ուստի իր խիստ քննադատություններով երևան էր գալիս հարկավոր ժամանակը, առանց նկատի առնելու գործի նորությունը: Հենց այս պատճառով էլ նա երկու խիստ առաջնորդող գրեց Հրատարակչական ընկերության առաջին ժողովի առիթով, առաջնորդողներ, որոնք չէին կարող հաճելի լինել ընտրված անդամների համար, բայց որոնց մեջ պաշտպանված էր անուրանալի ճշմարտությունը:

Խոսքն ընկերության խմբագրական մասնաժողովի մասին էր: Դա էր այն մարմինը, որ իսկապես պիտի հոգի տար ընկերության՝ ընտրելով գրքեր հրատարակության համար: Առաջին ընդհանուր ժողովի մեջ կայացած ընտրությունները ցույց էին տալիս, որ մեղանում հասարակական պաշտոնի համար ընտրվում են ոչ թե գործելու համար, այլ պատվի համար: Արժրունին այդտեղից էլ բռնեց: Հարձակվելով մանավանդ այն հանգամանքի վրա, որ խմբագրական մասնաժողովի անդամ ընտրվել է մի բանկի կառավարիչ, որ թեև հայ է, բայց հայոց մամուլի և գրականության հետ ոչինչ կապ չունի, նա գրում էր, որ մյուս անդամների ընտրության մեջ էլ ծայրահեղ միակողմանիություն է մտցրված, բոլոր ընտրվածները մանկավարժներ են:

«Խմբագրական մասնաժողովի մեջ ոչ մի անձն չէ երևում, որի անունը հայտնի լիներ ոչ թե որպես մանկավարժ, այլ որպես հայոց ժամանակակից գրականության մեջ դիրք, հեղինակություն ունեցող անձն: Այդ տեսակներին սեպրեց ընդհանուր ժողովը: Թող մանկավարժներ էլ լինեն մասնաժողովի մեջ, բայց հարկավոր է, որ և գրականության մեջ փորձառու, անուն ունեցող անձինք լինեին մասնաժողովի մեջ: Մասնաժողովի խմբագրությունը առաջարկվում է մի գիրք մանկավարժական բովանդակությամբ, — դրան քննում են մանկավարժները: Բայց եթե մի հեղինակություն առաջարկվի, որ իր մեջ մանկավարժական բնավորություն չունի, ո՞վ պետք է քննի այդ տեսակ գիրք, երբ մասնաժողովի բոլոր անդամներն էլ մանկավարժներ են: Ուրեմն այդ ընկերությունը առհասարակ հայերեն գրքերի հրատարակության ընկերություն չէ, այլ միայն մանկավարժական մի ընկերություն է»:

Սկզբունքներ պաշտպանող Արժրունին հարկավոր էր համարում ասել ճշմարտությունը իր ժամանակին, տեղն ու տեղը, շննայելով նույնիսկ իր ծանոթներին և համակրողներին: Բայց սկզբունքը ոտնակոխ չանելու, ճշմարտությունը ծածկելու անհնարավորությունը բացատրում էին նրանով, որ Արժրունին անձնական կրքերով է ղեկավարվում: Այդ բանը երևան եկավ և մի ուրիշ ընկերության սկզբնավորության մեջ, մի ընկերության, որի միտքը ժողովրդականացնելու մեջ էլ «Մշակը» կատարել է աչքի ընկնող դեր:

Այն ժամանակից, երբ թշվառացած թուրքահայերին նյութապես օգնելու անհրաժեշտությունը անխուսափելի դարձավ ռուսահայերի համար, զգացվում էր մի բարեգործական ընկերության կարիքը: Առաջին անգամ այդ մասին խոսեցին ալաշկերտցի գաղթականները. մենք տեսանք, որ դեռ 1877-ին Արժրունին առաջարկում էր այդպիսի մի ընկերություն հիմնել: Այնուհետև նա էլի մի քանի անգամ վերադարձավ այդ հարցին: Թուրքաց Հայաստանի սովը գալիս էր ահավոր փաստերով հարկադրելու, որ ընկերության միտքն իրագործվի: Միևնույն ժամանակ նա ցույց էր տալիս, թե գործողության ինչ դաշտ պիտի լինի ընկերության տրամադրության տակ: Արժրունին ծրագրում էր Կովկասում հիմնված մի ընկերություն, որ իր միջոցներով պիտի օգներ բոլոր հայերին՝ թե Կովկասում, թե Թուրքիայում և թե Պարսկաստանում:

Պահանջը կար: Նրան իրագործողը, կյանքի մեջ մտցնողը եղավ ժամանակի երիտասարդ գործիչներից մեկը՝ բժ. Բագրատ Նավասարդյան: Սովի տարին, 1880-ին, պ. Նավասարդյան «Մշակի» մեջ երկու առաջնորդող գետեղեց, որոնց մեջ պնդում էր, թե բարեգործական ընկերություն հիմնելու անհրաժեշտությունը անհետաձգելի է: Ապա նա անցավ գործնական պրոպագանդային: Ներսես պատրիարքի այն նամակը, որով հրավիրվում էր Թիֆլիսի հայերին շարունակել օգնությունը սովատանջներին, մի զորավոր խթան հասցացավ, և 1881-ի առաջին օրերում արդեն կազմված էր համակրողների մի

փոքրիկ խումբ, որ սկսեց կանոնադրութիւն կազմել: Այդ կանոնադրութիւնը, նախքան կառավարութիւնն ներկայացնելը, ենթարկվեց ընդհանուր ժողովների քննութեան: Առաջին ժողովում Արծրունին առաջարկեց, որ կանոնադրութեան մեջ պարզ ու որոշ հայտնված լինի, թե Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը հիմնվում է բոլոր հայերի համար, առանց դավանական խարութիւնների: Առաջարկութիւնն ընդունվեց, կանոնադրութեան առաջին հոդվածն ստացավ Արծրունու թելադրած խմբագրութիւնը: Բայց երկրորդ ընդհանուր ժողովն իրավունք համարեց վերաքննել նախորդ ժողովի ընդունած վճիռը, փոփոխեց հոդվածը և ջնջեց Արծրունու առաջարկութեամբ ավելացրած բացատրական խոսքերը:

Արծրունին գրիչ վերցրեց այդ իրավազանցութեան դեմ, որի մեջ իրավամբ տեսնում էր թշնամական վերաբերմունք իր դեմ: Նա փայլուն կերպով ասացեց իր հայացքների ճշմարտութիւնը: «Մշակի» էջերում տեղի ունեցավ մի կարճատև բանակոխվ Արծրունու և պ. Նավասարդյանի մեջ: Դա մի նոր առիթ էր, որ Արծրունին պաշտպանեց ալլադավան հայերի ազգային իրավունքները: Կոնվեր ալիսի տաք կերպարանք ընդունեց, որ Արծրունին նույնիսկ առաջարկեց մի ուրիշ ընկերութիւն կազմել, քանի որ, ասում էր, նոր կազմվող ընկերութեան հիմնադիրներն անընդունակ հանդիսացան լայն սկզբունքներով ղեկավարվելու: Ավելորդ է ասել, որ մեղուական բանակում այս առիթով էլի բարձրացավ այն հին երգը, թե Արծրունին իր անձնական կրքերի մեջ ոչինչ սահման չի ճանաչում, թե նա քանդում է ամեն մի լավ սկզբնավորութիւն:

Այսպիսի աղմուկով սկսված ընկերութիւնը հաստատվեց նույն 1881 թվականին, և այդպիսով մեր կյանքի մեջ ավելացավ մի նոր համակրելի հիմնարկութիւն՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութիւնը, որի կարևոր արտոնութիւնն այն էր, որ նա կարող էր ճշուդ բաց անել գավառներում:

Հասարակական եռանդուն շարժումը չէր կարող իր ազդեցութիւնը շտարածել և հայ կանանց մեջ: 1882 թվականին Թիֆլիսում ավելացավ մի նոր ընկերութիւն էլ՝ Հայուհայաց բարեգործական ընկերութիւնը: Այդպիսի մի հիմնարկութեան միտքը տվել էին Կ. Պոլսի հայուհիները, որոնց «Ազգանվեր հայուհայաց» ընկերութիւնը օրինակ դարձավ Թիֆլիսի հայուհիների համար: Մենք արդեն տեսանք Կ. Պոլսի այդ ընկերութեան դիմումը ռուսահայ կանանց, տեսանք, թե ինչպէս Թիֆլիսում կազմվեց կանանց մի շրջան, որ նվիրատվութիւններ էր հավաքում նախ այդ ընկերութեան, ապա և Հայաստանի սովատանջների համար: Այդ գործունեութեանից ծնվեց մշտական մի կրթասիրական ընկերութիւն կազմելու որոշումը:

Արծրունին, որ իր գրական գործունեութեան առաջին քայլերից առանձին ուշադրութիւն նվիրել էր կանանց հարցին, չէր կարող, իհարկե, աչքից զցնել ինքնագործունեութեան այն ձգտումները, որոնք երևան եկան Թիֆլիսի հայուհիների մեջ ոգևորութեան, գաղափարների այն նշանավոր ժամանակներում: Անօրջա հրատապ հարցերը նրան չէին մոռացնել տալիս իգական սեռի բարձր մտավոր շահերը: Հայ կանանց նա խորհուրդ էր տալիս շրջակայանալ տան մեջ պատրաստված կյանքով, որ որքան էլ եվրոպական արտաքին փայլեր ստացած լինի, իր էութեամբ շարունակում է մնալ հարեմական:

Հասարակական ասպարեղներում անկախ դիրք ձեռք բերելու համար հայ կինը պիտի դիմի բարձր կրթութեան: Իրրև մի նոր ասպարեղ, ուր հայ կինը դեռ ոտք չէր դրել, Արծրունին ցույց էր տալիս բժշկականութիւնը: Հայուհայաց բարեգործական ընկերութեան առիթով Արծրունին արժարժում էր այն միտքը, որ կանանց բարեգործութիւնը զլիսավորապէս բարձրագույն կրթութեան տեղ

կին գործիչներ պատրաստելու մեծ կարիքը պիտի նպատակ ընտրե: Սակայն «Մշակի» այդ լայն ու գեղեցիկ գաղափարը չկարողացավ իրագործել հայ կանանց ընկերութիւնը: Նա բավականացավ ավելի համեստ ծրագրով:

Բայց 1877—1883 թվականների հասարակական շարժումը պիտի ունենար և իր ապոթեոզը: Այդպիսի հանդիսավոր վերջաբան հանդիսացավ առաջին հայոց ընդհանուր ուսուցչական ժողովը, որ գումարվեց Թիֆլիսում 1882-ի ամառվա վերջին:

Դպրոցը ռուսահայերի մեջ, ինքնաճանաչութեան առաջին խիստ օրերից, նկատվել է իրրև ահագին կարևորութիւն ունեցող մի հարց, որ բոլոր մեր կուլտուրական-մտավոր պահանջների սկիզբն ու վերջն էր կազմում: Չկար և չէր կարող լինել մի ուրիշ ասպարեղ, ուր հայը իր մայրենի լեզվով կարողանար առաջադիմել, բավարարութիւն տալ իր հոգեկան պահանջներին: Դպրոցներն ու դպրոցական շրջաններն էին, որ մեր գրականութեան, մեր մամուլի, մեր աշխարհաբար լեզվի սկիզբը դրին: Ռուսահայ հրապարակախոսութեան համար առաջին կարևոր, համայնական հարցը դպրոցն էր: Այս կենսատու հիմնարկութեան բարգաւաճումը, անդադար կատարելագործումը, — ահա ինչն էր ամենքին զբաղեցնող հարցը: Մանկավարժութիւնը իրրև գիտութեան, հիմնը ված եվրոպական նորագույն սիստեմների վրա, դառնում էր այն կենսական պահանջը, առանց որի չէր կարելի երևակայել ոչ մի բարօրութիւն, ոչ մի առաջադիմութիւն:

Մանկավարժական հարցերով զբաղվում էր մեր ընդհանուր մամուլը: Բայց դպրոցական պահանջը ծնեցրեց և մասնագիտական մամուլ: «Հայկական աշխարհ» զլիսավորապէս մանկավարժական ամսագիր էր. ապա Վաղարշապատում հիմնվեց «Դպրոց» զուտ մանկավարժական ամսագիրը: Դպրոցական հարցերը, մեթոդները առանձին գրքերի նյութ էլ էին դառնում, մանավանդ երբ Գերմանիայում հատուկ մանկավարժական պատրաստութիւն ստացած մարդիկ մուտք գործեցին մեր դպրոցական աշխարհը: Սկզբնական կրթութեան եղանակը գնալով կարևոր, կենսական նշանակութիւն էր ստանում: Ռուսահայերի շարժումը, որ սկսվեց ռուս-թուրքական պատերազմից հետո, իր հզոր ազդեցութիւնը պիտի թողներ նախ և առաջ մեր դպրոցական աշխարհի վրա: Դպրոցների թիվը բազմանում էր, առաջ էր գալիս մեզանում մի նոր դասակարգ՝ ժողովրդական պատրաստված ուսուցիչների դասակարգը, որ պիտի փոխարիներ, ասպարեղից հեռացներ հին խալիֆայական դասակարգը: Նոր պահանջներին, նոր ձգտումներին արձագանք տալու համար 1878-ին հիմնվեց Թիֆլիսում «Մանկավարժական թերթ» ամսագիրը, ուր առաջին անգամ ժողովրդականացվում էր տարրական դասընթացի սիստեմը:

Դպրոցական շարժումը, աստիճանաբար առաջ գնալով, անհետաձգելի դարձրեց մի մեծ պահանջ, — որ դպրոցական գործիչները պարբերաբար համաժողովներ կազմեն՝ դպրոցի գործերն ու հարցերն ընդհանուր համաձայնութեամբ կարգադրելու համար: Այստեղից ահա առաջին ուսուցչական ժողովը, որ առաջին էլ մնաց:

Օգոստոսի 22-ին հանդիսավոր կերպով բացվեց ժողովը: Ողջույնի և բարեմաղթութիւնների հեռադիրներ էին ստացվել զանազան կողմերից: Ժողովին մասնակցում էին 196 դպրոցական գործիչներ: Դրանց մեջ առանձին ուշադրութեան արժանացել էին գյուղական ուսուցիչները, գավառի այն մարդիկ, որոնցից շատերը իրանց տեղական հագուստով էին եկել Կովկասի մայրաքաղաքը: Կային այնպիսիները, որոնք թափ էին կատարել ճանապարհորդութիւնը գյուղերից մինչև Թիֆլիս:

«Մշակն» էլ, Իհարկն, իր գոյութեան ընթացքում դպրոցական հարցերին առաջին ուշադրութիւնն էր նվիրել, և առաջին ուսուցչական ժողովը նրա համար էլ խոշոր, կարևոր երևույթ էր: Իր հողավածներով նա դեռ 1880 թվականից մասնակցել էր ժողովի նախապատրաստութիւններին: Արծրունին մասնակցում էր ուսուցչական ժողովի պարապմունքներին, քննադատում էր այդ պարապմունքները ղեկավարողների պակասութիւնները: Իսկ սեպտեմբերի 1-ին նա կարգաց ժողովում իր ունեւորածը՝ «Մայրենի լեզուն և նրա նշանակութիւնը դպրոցում», որ իսկույն տպագրվեց և «Մշակի» մեջ: Դասասխոսութիւնը շատ լավ ընդունելութիւն գտավ. նա արժանացավ ծափահարութիւնների և թեպետ մի քանի առարկութիւններ եղան նրա մեջ հայտնվող տեսութիւնների դեմ, բայց ընդհանրապես մայրենի լեզվի ահագին նշանակութեան բացատրութիւնը շնորհակալութեան արտահայտութիւններ գտավ: Այդպիսի շնորհակալութիւններ Արծրունին ստացավ և ուրիշ քաղաքներից, «Մշակի» ընթերցողներից:

Իսկապես այդ դասասխոսութեան հիմնական միտքը նորութիւն չպետք է լիներ «Մշակի» մշտական ընթերցողների համար: Դեռ 1872-ին Արծրունին իր առաջնորդողներից մեկում, որի անունն էր «Լեզու և կյանք»*, հիմնվելով Կարլ Ֆոխտի մի կարծիքի վրա, ապացուցանում էր, որ մայրենի լեզուն մի ազգի համար ֆիզիոլոգիական պահանջ է իբրև ստեղծագործող ինքնուրույնութեան գործիք: Այդ միեւնույն միտքը կազմում էր և ուսուցչական ժողովում կարգացած դասասխոսութեան հիմքը: Այստեղ Արծրունին ավելի երկար ու մանրամասն է բացատրում այդ թեորին, բերելով օրինակներ, որոնցով նա ապացուցում էր համարում, թե մի ազգի անհատը կարող է իր բնական ստեղծագործող ուժերը արտահայտել միմիայն իր մայրենի լեզվի միջոցով: Այդ հայացքի գիտական ճշմարտութիւնը մի առանձին հողավածով բացատրեց «Մշակի» աշխատակիցներից մեկը՝ բժ. Մ. Առուստամյան:

Արծրունու առանձին համակրանքը վայելում էին մանավանդ գավառական ուսուցիչները: Նա շարունակ պահանջում էր, որ գավառներից եկած այդ համեստ աշխատավորներին Թիֆլիսի հայ հասարակութիւնը վերաբերվի սըրտաբաց հյուրասիրութեամբ, որ հայ ուսուցիչներին միջոց տան Թիֆլիսի թատրոնները, մուզիկումը հաճախելու: Բերում էր այն հանգամանքը, որ 1881-ին հավաքվել էր Թիֆլիսում հնագիտական ժողով և այն ժամանակ Թիֆլիսի ժողովարանները, թատրոնները ամեն կերպ աշխատում էին, որ ժողովի անդամները հաճելի ժամանակ անցկացնելու հարմարութիւններն ունենան: Միեւնույն պատրաստակամութիւնը, միեւնույն սիրալիր վերաբերմունքը պիտի վայելեն և հայ ուսուցիչները, որոնք եկել են Կովկասի մայրաքաղաքը բան սովորելու, թարմանալու, տպավորութիւններ ստանալու համար:

Ուսուցչական ժողովը փակվեց սեպտեմբերի 15-ին: Արծրունին առաջնորդողի մեջ այսպես էր գնահատում նրա պարապմունքները.

«Մասնավոր պակասութիւնները թողած, պետք է անկողմնապահութեամբ խոստովանվենք, որ ժողովին բոլոր մասնակցողները հավասարապես լավ աշխատեցին, որքան ներում էր նրանց յուրաքանչյուրի մտավոր և ֆիզիկական կարողութիւնը: Հարկավոր չէ, որ մարդիկ հրաշքներ գործեն, և այդ չէ էլ պահանջվում ոչ ոքից, բայց երբ մարդս իր կարողութեան չափ խղճմտավոր կերպով աշխատում է, իր պարտավորութիւնն է կատարում, նա արդեն գովասանքի արժանի է: Ըշմարիտ է, իր մարդկային պարտավորութիւնը կատարե-

* Տե՛ս II հատոր, էր. 170—174:

լու համար ոչ ոք արժանի չէ դափնյա պսակի, բայց շնորհակալութեան արժանի է:

Ընդհանրապես ժողովը լավ անցավ, ամենքը կատարեցին իրանց պարտքը, ամենքն էլ կարող են այժմ հանգստանալ:

Եվ եթե ժողովին մասնակցողների մեծ մասի համար հաճատանալ նշանակում է կրկին աշխատել, — դարձյալ նրանք կգտնեն բարոյական հանգստութիւնը այն գիտակցութեան մեջ, որ փոքրերը, համեմատելով մեծերի հետ, ամենից շատ աշխատեցին:

Ըշմարիտ է, չլուծվեցավ մեր դպրոցների և ուսուցիչների գոյութեան գըլխավոր, եթե կարելի է ասել, մահվան և կյանքի հարցը, այն է՝ դպրոցների և ուսուցիչների նյութական ապահովութեան հարցը, առանց որի չկա ոչ դպրոցական դաղափար, ոչ մանկավարժական գործի առաջադիմութիւն, — բայց այն էլ մեծ բան է, որ մեր հյուրերը իրանց տեղերը վերադառնալով, իրանց հետ տանում են այն հաստատ համոզմունքը, որ այդ հարցի սերմերն էլ ներկա ժողովում ցանկեցան, ինչպես ցանկեցան շատ ուրիշ հարցերի սերմեր, և գուցե, երբ շորս տարուց հետո մենք կրկին կտեսնվենք, այդ ամենաանհրաժեշտ հարցն էլ կհասունանա մեր դպրոցների պրակտիկայի, մեր հասարակական կարծիքի և մեր մամուլի օգնութեամբ:

Չորս տարուց հետո տեսնվելու հույսը Արծրունին հայտնում էր, ի նկատի ունենալով այն, որ ուսուցչական ժողովը վճռել էր շորս տարին մի անգամ հավաքվել: Հետևյալ ժողովը պիտի լիներ կամ էջմիածնում, կամ դարձյալ Թիֆլիսում: Բայց չգիտեին մեր գործիչները, որ շորս տարում դրութիւնը այնպես պիտի փոփոխվեր, որ ժողովի մասին մտածելն անգամ անկարելի պիտի լիներ...

Դրութեան փոփոխութիւնն սկսեց երևան գալ հենց նույն տարին: Դեկտեմբերի 6-ին վախճանվեց Գևորգ կաթողիկոսը:

«Մշակը» բավականացավ միայն մահվան լուրը տպելով ներքին լուրերի բաժնում, սև շրջանակների մեջ: Ո՛չ մահացուցակ, ո՛չ մի առանձին հողաված, որի մեջ պատկերացրած լիներ հանգուցյալի գործունեութիւնը: Դա մի նոր առիթ դարձավ, որ հակառակորդները սաստիկ հարձակվին Արծրունու վրա: Նրանք ասում էին, որ պետք էր ավելի մեծ սև շրջանակ դնել: Շրջանակի հարցը երկար ժամանակ ծեծվում էր մեր մամուլի մեջ: Արծրունին պատասխանեց, որ «Մշակը» կրոնական լրագիր չէ, որ նա համադրային մի օրգան է, հավասար շափով պատկանում է թե՛ լուսավորչական, թե՛ կաթողիկէ և թե՛ բողոքական հայերին: Այդ պատճառով էլ նա պարտավոր չէ կաթողիկոսի մահվան առիթով այնպիսի դիրք բռնել, ինչ պահանջում են նրանից մեղուականները:

Բայց դա արդարացում չէր: «Մշակը» հարձակվում էր էջմիածնում տիրող կարգերի վրա, մերկացնում էր այն հափշտակութիւնները, որոնց հերոսն էր մանավանդ Մանկունի եպիսկոպոսը: Դա նրա իրավունքն էր: Մեծ, անշեշտ հոնորով քարոզելով կրոնական անխտրականութիւն, պահանջելով, որ այլազան հայերը ազգային բոլոր իրավունքներն ունենան, «Մշակը» կատարում էր ազատամիտ, առաջադիմական լրագրի պարտականութիւնը: Բայց այդ չէր կարող խանգարել, որ «Մշակը», մնալով անկողմնապահ, մնալով «Մշակ», ավելի պատշաճավոր ձևով արձանագրեր իր մեջ այնպիսի մի հանգամանք, ինչպիսին էր ամենայն հայոց կաթողիկոսի մահը: Այդ հակասութիւնն չէր լինի, որովհետև կարելի էր միեւնույն կերպով վերաբերվել և այն խոշոր հան-

գամանքներին; որոնք երևան կգային հայ կաթողիկոսների և հայ բողոքականների կյանքում:

Սակայն մենք կարող ենք երկար շարադրել այս հարցով: Արծրունու գործունեությունն ապագայում մի պարզ ապացույց է, որ այս դեպքում նա, առնվազն, սխալ էր: Դեռ մի տարի շանցած կաթողիկոսի մահից՝ «Մշակը» նվիրվեց կաթողիկոսական ընտրության հարցին, երկար զբաղվեց նրանով, մինչդեռ այդ չպիտի լիներ, եթե հաստատ պահված լիներ այն սկզբունքը, թե «Մշակը» կրոնական թերթ չէ: Վերջապես տարիներ հետո, երբ վախճանվեց Մակար կաթողիկոսը, Արծրունին սև շրջանակով պատած մի մեծ հոդված տպեց «Մշակի» առաջնորդողի բաժնում...

Հայ հասարակության առաջ բացվում էր մի նոր, կարևոր հարց՝ կաթողիկոսի ընտրությունը: Հայ ազգը իր դարավոր կյանքի մեջ շատ ու շատ անգամ էր տեսել իր եկեղեցու բարձրագույն ներկայացուցչի ընտրությունը: Բայց երբեք այդ գործողությունը այն աստիճան մեծ, կարևոր հանրային հարց չէր դարձել, ինչպես այժմ: Դա մի անօրինակ երևույթ էր, որ ամբողջապես մեր պարբերական մամուլի ստեղծածն էր: Եվ այդ երևույթի մեջ առաջին տեղը դարձյալ «Մշակին» էր պատկանում, թեև այդ ժամանակ «Մշակը» զանազան հանգամանքների պատճառով բավական թուլացել էր, և Գրիգոր Արծրունին շատ քիչ էր երևան գալիս նրա մեջ:

Ահա նախ այդ հանգամանքին կդիմենք մենք, այսինքն կտեսնենք, թե ինչպես էր «Մշակն» աղղում, ղեկավարում՝ առանց իր խմբագրի անմիջական մասնակցության:

VIII

Տասնամյակ: Հասարակական ցույցեր: Մշակականությունը իբրև դպրոց: Աշխատակիցներ. հեռացողների տեղ նուրբ. Գասպար Յաղոբյան, Ա. Քախավայան, Ս. Բեգնազարյան, Ս. Գաղյան, Կրոտ, Ա. Աբասյանյան: Ա. Սարգսյանյան: Գաղափարական կուսակցություն. «Մեղուի» հորելյանը:

1882 թվականին լրացավ «Մշակի» տասնամյակը: Եվ դարձյալ շտեմնված մի երևույթ մեր մամուլի պատմության մեջ: Տասնամյակի առիթով Գրիգոր Արծրունին բազմաթիվ շնորհավորություններ ստացավ զանազան կողմերից, շնորհավորություններ, որոնք միևնույն ժամանակ մի տեսակ վկայականներ էին ընթերցող հասարակության կողմից:

Նայելով այդ համակրական ցույցերին, Արծրունին կարող էր պարծանքով ետ դարձնել իր հայացքը, տեսնել այն ճանապարհը, որ տասը տարվա տարածությունն ուներ և որի վրա վարդեր չէին փոխված: Հարատև, կրակոտ եռանդ էր հարկավոր՝ այդպիսի մի ճանապարհ անցնելու համար իբրև մի հրապարակախոս, որ «սուր և հուր» էր բերում իր հետ, որի գործն էր միշտ և միշտ գնալ հոսանքների դեմ, ճեղքել նրանց ամուր համոզմունքների ուժով և ստեղծել նոր հոսանքներ, կազմակերպել նոր բանակ գաղափարական կողմի համար:

Առաջին տասնամյակը գալիս էր վկայելու, որ այդ դժվար ու դժան գործը մեծ մասամբ կատարված է: Տաղանդավոր, անկեղծ, շիտակ խոսքը, որ շատ քիչ էր սայթաքվել, շատ քիչ էր շեղվել միանգամից բռնած իր ուղղությունից, արդեն այնքան հաղթանակող էր, որ «Մշակը» դարձել էր պահանջ հասարակական կյանքի համար: Այդ ուժը այլևս չէր կարող անհետ կորչել:

նա մի որոշ, խիստ պարզված դպրոց էր արդեն, որի պողպատե դիմացկունությունն արդեն փորձված էր շատ պայքարների, շատ ճակատամարտերի մեջ: Եվ այդ վարմանալի դիմացկունությունը ամբողջովին «Մշակի» խմբագրի հոգու ու մտքի մեջ էր ամբարված: Իր կերպարանքը «Մշակը» չէր կարող փոփոխել: Փոփոխվում էին նրա մեջ մտած տարրերը, անփոփոխ իր ուղղական գիրքերի մեջ մնում էր խմբագիրը, որ ուղղություն էր տալիս, որ ամենքից առաջ էր գնում և իր այդ առաջնությունը անպայման տիրապետում էր իր ամբողջ շրջապատի, իր թշնամիների և բարեկամների վրա:

Այս աշխատության երկրորդ հատորի մեջ մենք տեսանք, թե ինչպես էր Արծրունին առաջնորդում իր բանակը, ինչպես էր «Մշակի» հարկի տակ կատարվում նրա գործակիցների դատումը: Գալիս էին մարդիկ, աշխատում էին, հեռանում էին: Խմբագրի veto-ն անողոք էր, ուղղություն, սկզբունքներ պաշտպանելու համար նա, առանց տատանվելու, փակում էր լրագրի էջերը այնպիսիների առաջ, որոնք չէին համապատասխանում մշակական գաղափարին:

Այդ կարգը մշտական մնաց «Մշակի» խմբագրության մեջ: Ինչպես առաջին երեք տարիներում հեռացողները հեռանում էին, իսկ նրանց տեղ երևան էին գալիս նոր, անհայտ, համեստ ուժեր, այնպես էլ շարունակվեց այնուհետև: Եվ հեռացողներն էլ միևնույն տեսակի էին ամեն ժամանակ: Ոմանք հեռանում էին ընդմիջտ լռելու համար, բայց շատերն այնպես էին, որ դուրս էին գալիս «Մշակի» խմբագրությունից, լցված սաստիկ ատելությամբ, թշնամությամբ Արծրունու դեմ և այդ ատելության բավարարություն տալու համար ուղղակի անցնում էին հակառակ բանակը, ամենևին անհարմար չհամարելով, որ մի ժամանակ շեն հավանել այդ բանակը, որ նրա հարձակումներին, ծաղրին ու հայհոյանքներին են ենթարկվել իբրև «Մշակի» աշխատակիցներ: Կարծեմ ոչ մի մամուլ այնքան հարուստ չէ փախստականների, ունեկատնների թվով, ինչպես ռուսահայոց մամուլը: Արծրունու հետ չհաշտվողները երբեք չկարողացան գործով ապացուցանել, որ կարող են անկախ աշխատել, սկզբունքների, գաղափարների մշակումը այնպես տանել, ինչպես իրանք են հասկանում: Նրանք չկարողացան հիմնել մի այնպիսի օրգան, որ առաջադիմություն, զարգացում լիներ «Մշակի» համեմատությամբ: Հակառակություն հասկացվում էր մի ծայրից՝ «Մշակից», մյուս ծայրի՝ «Մեղուի» գիրկն ընկնել: Ուղղությունների հարցը շուտ էր մոռացվում, բավական էր և այն, որ «Մեղուի» կամ նրա նման մի այլ թերթի անկյուններից կարելի էր վրեժ հանել Արծրունուց՝ անդադար հարձակվելով նրա վրա:

Պետք է ասել, որ այդ փախստականները միշտ և ամեն ժամանակի համար գտել էին իրանց արդարացնելու միջոց: Նրանցից յուրաքանչյուրը հավատացնում էր, որ իր հեռանալու պատճառն այն էր, որ «Մշակն» ընկել էր: Մեկի համար այդ անկումն սկսվում էր «Մշակի» հրատարակության երրորդ կամ չորրորդ տարուց, մյուսը յոթը տարի էր որոշում անկման սկսվելու ժամանակը, և այսպես շարունակ, նայած, թե ով երբ է հեռացել Արծրունուց: Այնպես որ, նայելով այդ արդարացումներին, մենք պիտի կարծենք, թե «Մշակը» շարունակ ընկնում էր, շարունակ կորցնում էր իր հեղինակությունն ու նշանակությունը, քանի որ այս կամ այն աշխատակցին հեռացնում էր իրանից:

Բերենք բազմաթիվ օրինակներից մեկը: 1878 թվին «Մշակից» հեռացան պ. պ. Հարո և Յուսիուս (Սպանդար և Սպանդարյան): Հեռացան և իսկույն սկսեցին աղմուկ ու աղաղակ բարձրացնել Արծրունու դեմ, մեկը տեղական ռուս լրագիրներում, մյուսը՝ «Մեղուի» մեջ: Արծրունին ոչինչ ուշադրություն չդարձրեց իր երկու նախկին աշխատակիցների վրա: Միայն հինգ տարուց

հետո, 1883-ին, նա մի բանակով մեջ հրապարակով բացատրեց այդ երկու պարոններին հեռանալու պատճառը: Ահա ինչ էր նա գրում. «Զնայելով մեր նեղ դրությունը, պ. Մայանդարյան պահանջում էր մեզանից 1500 բուրջի տարեկան, այդ գիտե՞լ ամբողջ խմբագրությունը, իսկ Հարո պահանջում էր, որ մենք նրան անմիջապես ուղարկեինք մեր հաշվով Փարիզ»:

Ուրեմն, ուղղության, համոզմունքների հարց էլ չկար: Ամբողջ պատճառն այն էր, որ Արծրունին չափազանց հարուստ մարդ էր համարվում: Ուղղության, անկման, թշվառացման և այլ այսպիսի պատմություններ ու բացականչություններ երկու պարոնները բարձրացրին իրանց հեռանալուց հետո: Պ. Հարոն տեղավորվեց տեղական ուսուցիչ «ՕՃՅՈՒ» լրագրի մեջ, ուր անմիջապես բանակով սկսվեց Արծրունու դեմ: Այդտեղ էլ նույն 1878-ին Հարոն տպագրեց իր մի քննադատական տեսությունը ուսուցչաց մամուլի անցյալի և ներկայի մասին: Դա պատմության պես մի բան էր, որի հայերեն բնագիրն էլ հրատարակվեց նույն տարում՝ «Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ» վերնագրով:

Մի վայրիվերո, թեթևամիտ տեսություն էր դա, առանց խոր ուսումնասիրության հետքերի: Եվ ինչ ասել կուզի, որ հեղինակի համար բոլոր թե՛ հին և թե՛ նոր պարբերական հրատարակությունները այս կամ այն չափով տանելի էին, բացի, իհարկե, «Մշակից», որի վերաբերմամբ ոչ մի արժանավորություն չէր ընդունվում: Փոխանակ փաստերի՝ զանազան ասեկոսներ, փոխանակ վերլուծումների՝ ընդհանուր նախատական բառեր: Միայն իրան չէր մոռացել պ. Հարոն: Քննելով 6 1/2 տարվա «Մշակը», նա միայն իր մի հոդվածից էր քաղվածքներ բերում: Իսկ Արծրունու մտքերը ծաղրելու, ոչինչ հրատարակելու համար բերում էր առանձին-առանձին ֆրագմենտներ հոդվածներից, դուրս գալիս նախադասություններ: Զսպասելով իր այդ գրքի հրատարակությանը, պարոնը մի փոքրիկ բրոշյուր էլ հրատարակեց, որի մեջ արդեն առանց պատմաբանի և քննադատի քղամիդ հագնելու, փառավոր հայհոյանքներ էր թափում Արծրունու վրա է: «Մշակի» վրա էլ, ուր մի քանի ամիս առաջ աշխատում էր հաճություն: Արծրունին ոչինչ պատասխան չտվեց իր նախկին աշխատակցին:

Այսպիսի վերաբերմունք դեպի Արծրունին շատ և շատ անգամ են ցույց տվել նրանից հեռացած աշխատակիցները: Ոչինչ հնարավորություն չկա հետեվելու այդ երևույթին և նրան մանրամասն նկարագրելու: Այս մի օրինակն էլ բավական ենք համարում երկարատև իրողությունը գոնե մասամբ պարզելու համար: Ավելի աչքի ընկնող հանդամանքն այն է, որ «Մշակը» շարունակ նոր և նոր ուժեր էր գրավում, նոր անուններ էր հրապարակ հանում, և հեռացող աշխատակիցները միանգամայն աննկատելի էին մնում, մանավանդ, որ առանձին աչքի ընկնող ընդունակություններ չէին էլ ներկայացնում: Ամենօրյա «Մշակի» էջերում աշխատող բազմությունից մենք այստեղ կհիշատակենք մի քանիսի անունները:

1878 թվից «Մշակի» մեջ հաճախ երևում է Սյուլյուկը (Ռ. Պատկանյան), որ միաժամանակ գրում էր և «Մեղուի» մեջ: Մեր հոշակավոր բանաստեղծը, կարծեմ, միակ հայ գրողն էր, որ կարողանում էր բարեկամ մնալ բոլոր հայ պարբերական հրատարակությունների հետ:

Նրա մոտ, իհարկե, մի բոլորովին անհայտ անուն էր Գասպար Յաղուրյանը, ժամանակի ուսանող երիտասարդություն լավագույն ներկայացուցիչներից մեկը, որ երկար ժամանակ եռանդով աշխատակցում էր «Մշակին» իր

խելացի հոդվածներով, որոնցից մի երկուսը նույնիսկ առաջնորդողներ դարձան «Մշակի» մեջ: Մանավանդ շատ էր աշխատում Յաղուրյանը հայոց հարցի ամենավառ ժամանակներում: Պետերբուրգում բարձր պաշտոններ ստանալով, նա չէր մոռանում իր մայրենի մամուլը: Ունի «Մշակի» մեջ մի վեպ, «Սամե նորատունկյան» անունով:

Այդ ժամանակներում, բայց մանավանդ կրոնական բանակովի միջոցին բավական հայտնի անուն ստացավ և մի այլ ուսանող՝ Ս. Դադյանց, որը բացի հետաքրքրական հոդվածներից, սուր բանակով էր մղում պահպանողական ուղղության դեմ, հարձակվելով «Մեղուի» վրա և քննադատելով Երևանում հրատարակվող «Պասկ» լրագիրը: Կրոնական բանակովի ժամանակ հրատարակեց «Մի գրույց լուսավորչական հայի հետ» բրոշյուրը, որ նվիրված էր Գրիգոր Արծրունուն: Սպասում էին, որ այդ երիտասարդ ուսանողը մի կարևոր ուժ կդառնա մեր լրագրության ասպարեզում, բայց կյանքի մեջ նա թողեց իր նախկին ոգևորությունը և բուրբուրովին անհայտացավ իբրև գրող:

Մեր մանկավարժական աշխարհից «Մշակի» բարեկամներ էին մանավանդ երկու գործիչներ՝ Արսեն Թոխմախյան և Սարգիս Բեկնազարյան: Առաջինը երևան եկավ մամուլի հրապարակում մի շատ կարևոր ժամանակ, երբ ամենքի խոսքի առարկան թուրքաց Հայաստանն էր, բայց նրա մասին որոշ, դրական խոսքի տեղեկություններ համարյա ոչ ոք չգիտեր: Թոխմախյանը, ինչպես երկիրը լավ ճանաչող մեկը, որ նոր էր վերադարձել այնտեղ կատարած ճանապարհորդությունից, տվեց այդ տեղեկությունները մի դասախոսության մեջ, որի անունն էր «Հայրենիքի պահանջներ» և որ տպվեց «Մշակում», որտեղից էլ արտաէր տպվեց առանձին գրքույկով: Իսկ Սարգիս Բեկնազարյանն աշխատակցում էր Երևանից, ուր նա թեմական գաղտնի ուսուցիչ և տեսուչ էր: Վերջը քահանա ձեռնադրվելով, Բեկնազարյանը հաճախ դիմում էր «Մշակին»՝ պաշտպանվելու համար այն հարձակումներից, որոնց ենթարկվում էր իր մշակական ուղղության համար:

Շատ բեղմնավոր աշխատակից էր և գավառական ուսուցիչ և Մառանկոզյան: Իր հոդվածներով, նկարագրություններով հաճախ երևում էր «Մշակի» մեջ և պ. Ավետիք Եզեկյանը՝ Արծրունու անփոփոխ և հավատարիմ բարեկամներից մեկը:

1880 թվականի երկրորդ կեսից «Մշակի» մեջ սկսեցին երևալ Թիֆլիսից գրած «Նամակներ խմբագրին», որոնց տակ գրվում էր «Կըռո» ստորագրությունը: Դա մինչև այդ անհայտ մի թուրքահայ էր, Կարապետ Գյուլումճյան, որ Թիֆլիսում վաճառականական գործերով էր զբաղվում: Խմբագրին ուղղած իր նամակների մեջ Կըռոն գլխավորապես խոսում էր հայոց ներկայացուցիչների մասին և հենց առաջին անգամից ցույց էր տալիս ծաղրելու շնորհք: Նա անողորմ ծաղրում էր Կ. Պոլսի գերասանների ներկայացրած մեղադրամները: Այդ փոքրիկ ծաղրական նամակներից մինչև «Մշակի» ֆելիետոնիստ լինելը մի քայլ էր մնում: Եվ Կըռոն արավ այդ քայլը: Նրա ֆելիետոնները «Մշակում» մեծ հաջողություն ունեցան. Կըռոն իր կծու սրամտությամբ կարող էր հասնել տաղանդավոր երգիծարան Պարոնյանին, և թե շաշխատեր նմանվել ուսուցչաց բարբառին, մի բան, որ թուլացնում էր նրա գրվածքների ամբողջ ուժը: Թիֆլիսից տեղափոխվելով Վիեննա, շնորհալի երգիծարանը այդտեղից էլ շարունակում էր աշխատակցել «Մշակին» թե ֆելիետոններով և թե հոդվածներով ու թղթակցություններով:

Արտասահմանից «Մշակին» աշխատակցողների մեջ, բացի Անդրեաս Արծրունուց, ուշագրություն էր գրավում պ. Ավետիք Արասխանյան, որ Թիֆլիս

վերադառնալուց հետո, մանավանդ կաթողիկոսական ընտրությունների անթի-
թով ծագած պայքարի ժամանակ, շատ մոտեցավ Արծրունուն և շատ հաճախ
երևան էր գալիս այդ հարցին նվիրված իր հոգվածներով «Մշակի» առաջնոր-
դողների բաժնում: 1879 թվականից սկսեց թղթակցել «Մշակին» և պ. Ալեք-
սանդր Մովսիսյան (Շիրվանզադե), որի առաջին վեպիկը՝ «Գործակատարի
հիշատակարանից», տպվեց «Մշակում» 1883-ին: Գավառական թղթակիցնե-
րից շարունակաբար երևում էին «Մշակի» մեջ պ. պ. Աբել Ապրեսյան, Ալեք-
սանդր Աբելյան և ուրիշներ:

Տողերիս գրողը իր անձնական փորձով կարող է վկայել, թե ինչպես էին
ազդում Արծրունու գրվածքները հասարակության խավերի մեջ թաղված ան-
հայտ, համեստ անհատների վրա, ինչպես էին նրանց ոգևորում, հրապարակ
հանում իբրև «Մշակի» թղթակիցներ: 1881 թվականին ամենօրյա «Մեղուի»
գործակալներն ինձ բաժանորդագրական մի անդորրագիր տվին: Ամբողջ տա-
րին ստանում էի այդ լրագիրը, բայց համարյա ոչ մի տպավորություն չէի
ստանում: Հետևյալ տարին ինձ վիճակվեց «Մշակի» ընթերցողը լինել, և Գրի-
գոր Արծրունու առաջնորդողները սկզբից ևեթ այնքան խոր տպավորություն
թողեցին ինձ վրա, որ ես մի կողմ թողեցի իմ թղթակցությունները, որ ուղար-
կում էի Թիֆլիսի մի ռուս լրագրին, և սկսեցի գրել «Մշակում»:

Գեպի «Մշակն» էին ձգվում շատ թարմ, երիտասարդ ուժեր: Այդպիսիներից
էր երիտասարդ ուսանող, ապա ուսուցիչ Լևոն Աթաբեկյանը, մի հուսատու
գրող, որ, տարաբախտաբար մեռավ ծաղիկ հասակում: Հիշատակության ար-
ժանի է և Հովհաննես Ստեփանյանը, որ բավական գրվածքներ ունի «Մշակի»
մեջ:

Վերջապես հիշենք և այն, որ Գրիգոր Արծրունին, անշեշ եռանդով պայ-
քար մղելով, որ լուսավորչական և այլադավան հայերի մեջ ոչինչ խտրություն
չլինի այնտեղ, ուր հարցը համազգային շահերին և իրավունքներին է վերա-
բերում, գրանով գործունեության էր հրավիրում և այդ այլադավան հայերի
մեջ եղած ընդունակ ուժերը, տալով այդ ուժերին միջոց գրելու իրանց հա-
մայքների, ինչպես նաև ընդհանուր ազգային կարիքների մասին: «Մշակը»
կարող է պարծենալ նրանով, որ իր աշխատակիցների մեջ միշտ եղել են և հայ
կաթողիկ, հայ բողոքական գրողներ:

Ամենից կարևոր գրական ուժը, որ տվեց «Մշակին» հայ կաթողիկ հասա-
րակությունը, պ. Առաքել Սարուխանյանն էր, որի հոգվածները սկսեցին տպա-
գրվել 1882 թվականից: Գրիգոր Արծրունու բարոյական մեծ ազդեցության
ուժը հասկանալու համար մենք այստեղ կօգտվենք պ. Սարուխանյանի հետա-
քրքրական հիշողություններից*, ուր նա պատմում է, թե ինչպես ինքը մղվեց
ղեպի «Մշակը»:

Գեռ մի նորալարտ դպրոցական աշակերտ, պ. Սարուխանյանը նոր էր
վերադարձել իր հայրենիքը, Բաթումի նահանգը (Արդանուշ): Ռուսաստանին
նոր միացրած մի երկիր էր դա, որի բնակիչները նոր-նոր պիտի սովորեին
ռուսահայերի հետ շփվել, նրանց լեզվին ընտելանալ, նրանց գրականությանը
հաղորդակից լինել: Եվ առաջին միջոցները հանդիսացան այն հայ պաշտոնյա-
նները, որոնք ծառայում էին այդ նահանգում:

«Ահա այս հայ պաշտոնյաներու քով,— ասում է պ. Սարուխանյանը,—
տեսա առաջին անգամ «Մշակ» լրագիրը: Լեզուն նախ շատ խորթ երևաց,
բայց գտնվելով բոլորովին նոր, կուկասյան շրջանի մեջ, ռուսահայ բարբառին

ընտելանալս երկար ժամանակ կարոտ չեղավ: Կար մի ուրիշ բան, որ առա-
ջին վարկյանն են գրաված էր իմ ուշադրությունը. լրագրի քննադատական հա-
յացքն էր շրջապատող կյանքի, երևույթների վրա. պակասություններով լինի
այդ ժողովրդի թե յուր հովիվներով՝ անխնա մերկացում, ամենալայն հայացք,
նախապաշարումներու դեմ հալածանք և նոր, մինչև այն ժամանակ անսովոր՝
դադարներու տարածում: Եվ այս՝ լրագրի ամեն մի թվի մեջ, երեկ ինչպիս
այսօր, այսօր ինչպես վաղը, միշտ անփոփոխ իր սկզբունքներու վրա: Մտա-
վորապես դեռևս ոչ բոլորովին կազմակերպված պատանիներու վրա այս ուղ-
ղությունը միշտ զորեղ ազդեցություն կունենա, որ կսկսվի տոգորվիլ ատով
և ապա զայն ամբողջապես կյուրացնեն»:

Արծրունին ոչ միայն ուրախությունը տպագրում է պ. Սարուխանյանի
առաջին հոգվածները, այլև մասնավոր նամակով խրախուսում է նրան շա-
րունակել աշխատակցությունը: Ահա ինչ էր նա գրում այդ նամակի մեջ.

«Ես շատ ուրախ եմ լինում, երբ մեր այլադավան հայերը, կաթողիկները
և բողոքականները, մասնակցում են իմ լրագրին: Հայոց ազգը միմիայն հայ
լուսավորչականներին չէ պատկանում, այլ ամբողջ ազգությունը:

Իմ նպատակս էր դարձնել միշտ «Մշակը» ընդհանուր ազգային թերթ:
Ես միշտ ուրախ կլինեմ Ձեր հոգվածները ստանալ, թե որպես հայի, թե որ-
պես կաթողիկ հայի և թե վերջապես որպես հայերեն լավ իմացող գրողի:

Ես ինքս էլ ոչինչ ֆանատիկոսություն չեմ կարող ունենալ. ամեն կրոն
ինձ համար հարգելի են, ամեն համոզմունք ես հարգում եմ: Ես ծնվել եմ հայ
լուսավորչական, հայերեն սովորել եմ հայ կաթողիկ Մխիթարյանների մոտ,
իսկ իմ համալսարանական բարձրագույն ուսումը ստացել եմ բողոքական
Գերմանիայում: Բայց դարձյալ հայ եմ մնացել և միշտ կմնամ, հարգելով
ամեն կրոն:

Այդպիսով կաթողիկ, լուսավորչական, ավետարանական և մահմեդական
հայերը կարող են միմյանցից շատ բան սովորել, միմյանց օգնել և ձգտել
միասին մի ընդհանուր նպատակի,— ազգային բարոյական վերանորոգության»:

Այսպիսի գեղեցիկ մտքերով, այսքան վառ ուշադրությամբ խրախուսված
պ. Սարուխանյանը մի շատ բեղմնավոր և եռանդուն աշխատակից հանդիսա-
ցավ «Մշակի» համար: Նա տալիս էր հետաքրքրական, ընդարձակ ուսումնա-
սիրություններ, որոնց մեջ կոկ լեզվով նկարագրում էր ընտրած առարկան,
միշտ լավատեղյակ, միշտ գրական ճաշակով օժտված: Երբ պ. Սարուխանյան
ընտրվեց Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Բաթումի ճյուղի նա-
խագահ, Արծրունին «Մշակի» մեջ ողջունեց այդ երևույթը իբրև իր քաղաք
սկզբունքների հաղթանակ:

Բացի պ. Սարուխանյանից, կաթողիկ հայերի մասին «Մշակի» մեջ շատ
գրել է և պ. Պետրոս Բեբուրյան: Իսկ բողոքական հայերից «Մշակի» ասպա-
րեզ հանածներն են Աբրահամ Ամիրխանյան, որի մասին վերևում խոսեցինք,
և պ. Սեդրաք Թառայան:

Այսպես ահա անդադար կազմվում, ստվարանում էր աշխատակիցների,
համակրողների այն բանակը, որի վրա կարող էր հենվել Արծրունին և որ իս-
կական ապացույց էր, թե նրա «Մշակը» արդեն մի ամբողջ դպրոց է դարձել
հայ հասարակության համար: Եվ պետք է ասել, որ ուժեր կրթել այդպիսի մի
դպրոցի մեջ հեշտ չէր: քանի որ նրա ղեկավարը խիստ, անողոր պահանջներ
էր անում, պահանջներ, որոնց ամենաէական մասն այն էր, որ պետք է միայն
մի գրողակի, մի հայտնի, պարզ սկզբունքի ծառայել, առանց թուլությունների,
առանց կոմպրոմիսների:

* «Հանդես ամսօրյա», 1903, № 2:

լրագրական ուղղութեան, լրագրական բանակի իսկական, ճիշտ հասկացված պատկերը Արծրունին տվեց 1882-ի վերջում, երբ Քիֆլիսում տոնվում էր «Մեղու Հայաստանի» լրագրի 25-ամյա հոբելյանը: Այդ առիթով կազմված մասնաժողովը Արծրունուն էլ հրավեր ուղարկեց ներկա գտնվելու «Մեղուի» նախկին խմբագիր Մանդինյան բահանայի հոգեհանգստին, ապա և հոբելյանական տոնին: Եվ ահա Արծրունին պատասխանեց այդ հրավերին մի առաջնորդով, որ նրա ուժեղ գրվածքներից մեկն է.

«Կան,— ասում էր նա,— մարդիկ, որոնց հատկանիշը ոչինչ, կամ շատ քիչ, կամ շատ անորոշ համոզմունք ունենալն է: Երևում է, որ մասնաժողովի անդամները դեռ չգիտեն որոշել սկզբունքը անձնական հարաբերությունից: Նրանք կարծում են, երևի, որ կարելի է համոզմունքը փոխել, ինչպես մարդու զգեստներ է փոխում: Նրանք երևի կարծել են, որ այդ հրավիրատուսով «Մշակի» խմբագրին համբերողության դաս են տալիս: Բայց միշտ այսպես է լինում. այն մարդիկ, որոնք զուրկ են համոզմունքից, միշտ ծայրահեղության մեջ են ընկնում և երբեք չգիտեն որոշել այս ու այն գաղափարի սահմանը, չգիտեն որտեղ է վերջանում համբերողությունը և որտեղ է սկսվում համոզմունքի հաստատությունը:

Մենք ընդդեմ չենք, որ մարդիկ տոնեն այս ու այն հիմնարկության հոբելյանը: Պարզ է, որ այն անձինք, որոնք համակրում են «Մեղուի» ուղղությունը, կատարյալ իրավունք ունեն տոնել այդ լրագրի գոյության քսանհինգ ամյակը: Բայց մեզ ուղարկել հրավիրատուսակը ներկա գտնվելու Մանդինյանի հոգեհանգստին և «Մեղուի» հոբելյանին,— դա կամ գործի էություն վերին աստիճանի անհասկացողություն է, կամ ծաղր ու հանդգնություն է: Մենք հազար անգամ տպել ենք բացարձակապես մեր լրագրի մեջ, որ «մենք կցանկանայինք, որ «Մեղուի» փոխարեն քսան ուրիշ հայոց թերթեր հրատարակվեին Քիֆլիսում, բայց ամբողջ սրտից կցանկանայինք, որ «Մեղուն» ուղնչանար, որովհետև նա մոլորեցնում է ամբողջը, շողորթում է տգետ և խավար ժողովրդի ամենաստորին ինստիտուտներին, ֆանատիկոսություն է գրգռում ամբոխի մեջ, պաշտպանում է ամեն հին ու փտած գաղափարներ, ամեն մարդուն, որ մի նոր միտք է առաջարկում, անվանում է «դավաճան ազգի և եկեղեցու» և այլն: Մի՞թե այդ բոլորից հետո մենք կարող ենք գնալ ու ներկա գտնվել այն լրագրի տոնախմբությանը, որին հարատևություն մատուցել մենք չենք կարող, այն լրագրին, որ քահանա Մանդինյանցի օրով ամենատխտիմ թշնամի էր լույսի, առաջադիմության, գիտության, աշխարհաբար լեզվի գործածության, ամեն նորության, ամենակատարի հակառակորդ նազարյանցի և նալբանդյանցի, որոնց գրականական գործունեությունը մի պայծառ դարագլուխ է կազմում հայոց նոր գրականության մեջ, իսկ այժմ Սիմոնյանցի և Սպանդարյանցի օրով, նույն լրագրի ամենատխտիմ թշնամի է «Մշակի», որ իրան պատիվ է համարում ամենազլխավոր կետերի մեջ ամենահավատարիմ աշակերտ լինել «Հյուսիսափայլի»:

...Բայց մենք չենք հասկանում ինչպե՞ս գտնվեցան մարդիկ, որոնք կարող էին երևակայել, թե մենք ներկա կգտնվենք նազարյանցի ոխերիմ թշնամու հոգեհանգստին և մեր ուղղությանը հակառակ կուսակցության հոբելյանի տոնախմբությանը: Մենք մեր համոզմունքները զգեստների պես չենք փոխում: Մենք դիտավորություն չունենք նմանվել այն պարոններին, որոնք առանց հասկանալու, թե ինչ են անում, ներկա գտնվեցան թե նազարյանցի հոգեհանգստին և թե Մանդինյանցի հոգեհանգստին: Եվ նկատեցեք, որ այդ անձինք,

որոնց թվում և մասնաժողովի անդամներն էլ, մեծ մասամբ համալսարանական մարդիկ են, ուրեմն պետք է որ որոշ համոզմունքի տեր մարդիկ լինեն:

Ուրիշ բան է համակրել «Մեղուի» ուղղությանը և ներկա էլ գտնվել նրա 25-ամյա հոբելյանին: Մենք այսպես ենք հասկանում համոզմունքների ազատությունն ու գաղափարների համբերողությունը:

Քաղաքաբանական կուսակցության այսպիսի ճիշտ դավանությունների վրա էր Արծրունին դաստիարակում իր կազմած բանակը: Եվ նա վստահ էր, որ այդ դարոցը կշարունակի իր գործը: Այդ վստահությունն արդարացավ շատ շուտով՝ 1883—1884 թվականների ընթացքում:

IX

Կաթողիկոսական հարց: «Մշակի» եզնածամբ. Արծրունու պամա լուրջությունը: Անկանոն հրատարակություն: 1884-ի սկզբում Արծրունու դառն գանգատները: Մեղուականությունն ուժեղանում է Քիֆլիսում, իսկ մշակականությունը՝ Կ. Պոլսում: Կաթողիկոսական պայքար: Արծրունու կալվածները աճողի են նշանակվում. «Ո՞ւր է հայի ինքնաճանաչությունը»: Ուղևորություն Շվեյցարիա:

1883 թվականը «Մշակի» ամենաթույլ, ամենաանհաջող տարիներից մեկն է: Առաջին շորս ամիսներում լրագրի հրատարակությունը կանոնավոր էր դնում: Բայց Արծրունին շէր կարողանում առաջվա պես աշխատել: Նրա կալվածները գործերը գնալով խճճվում էին, վտանգավոր ընթացք ստանում, և նա ստիպված էր իր ուշադրությունը դրանց նվիրել: Այդ հանգամանքն այնքան զգալի էր մամուլի մեջ, որ նույնիսկ «Մեղուն» հանդիմանում էր Արծրունուն, թե ինչու՞ նա ոչինչ չի գրում կաթողիկոսական հարցի մասին:

Մամուլը, ճիշտ որ, դեռ լուռ էր, մինչդեռ ընթերցողները նշանակված էին հետագա 1884 թվականին: Պետք էր սկսել, և Արծրունին մի շարք առաջնորդողների մեջ սկսեց քննել, թե ինչ է պահանջվում ապագա կաթողիկոսից: Նա առաջ որոշ ծրագիր էր առաջարկում, որպեսզի հետո անցնի այն թեկնածուներին, որոնք իրանց ուղղությամբ համապատասխանում են այդ ծրագրին: Մենք չենք կանգ առնի այդ հոբելածների վրա: Դրանք պահանջում էին ռեֆորմներ եկեղեցու համար, և Արծրունին կրկնում էր այն, ինչ ասել էր այդ առիթով տարիների ընթացքում, այն է՝ վերադարձ եկեղեցու նախնական պարզ վիճակին, երբ շկար կուսակրոն հոգևորականություն, ժամանակի պահանջների ոգով տոգորված վարչական փոփոխություններ, ամուսնական հարցի կանոնավորում, հաստատուն օրենսդրություն, հասարակության վերահսկողություն եկեղեցական գործերի վրա և այլն:

Այդ հոբելածներով բավական նյութ տալով «Մեղուին», Արծրունին դարձյալ լռեց: Անձնական գործերի վրա ավելացավ և լրագրի գոյության սպառնացող մի հանգամանք. Արծրունին կասկածի տակ ընկավ, խմբագրության մեջ տեղի ունեցավ խուզարկություն: Ապրիլի 30-ից հետո «Մշակը» դադարեց մինչև մայիսի 10-ը: Այնուհետև հրատարակվում էր շաբաթը երեք անգամ մինչև հուլիսի 3-ը, երբ հարկավոր եղավ նորից դադարեցնել, այս անգամ 16 օրով, ապա էլի հրատարակել շատ անկանոն կերպով: Հրատարակությունը կանոնավորվեց միայն սեպտեմբերից:

Ամիսներով առաջնորդողներ չէին լինում: Աղքատացել էր և բովանդակությունը: Բաֆֆին իր «Եռաշագողի հիշատակարանը» վերջացնելով, սկսեց թարգմանել Զախեր-Մազոսի վեպերը: Օգոստոսին Անդրեաս Արծրունին, որ եկել էր Քիֆլիս, վերակենդանացնում է առաջնորդողների բաժինը, միանգամայն հաջող կերպով գտնելով այն նյութերը, որոնք կարող էին քննություն և պարզաբանության առարկա դառնալ. դրանք տնտեսական հարցերն էին: Այդ հարցերին Անդրեասը մի քանի հոգված նվիրեց, ապա գնաց ճանապարհորդելու Փանծակի գավառում և վերադառնալով, կարգաց մի դասախոսություն, որի մեջ պատմեց իր տպավորությունները տեսած տեղերի տնտեսական, աղքատագրական և հնագիտական հանգամանքների մասին:

Այդ անարվեստ, թեթև և հետաքրքրական նկարագրությունը առիթ տվեց Գրիգորին խոսելու մեր երկիրը մանրամասն ուսումնասիրելու անհրաժեշտության մասին: Ընդհանրապես այդպիսի ուսումնասիրությունների, տնտեսական հարցերի շուրջն էին պատում նրա սակավաթիվ առաջնորդողները:

Թուլություն, անկերպարանության այդ ժամանակին սաղում էր այն ընդարձակ գրությունը, որ Բաֆֆին, Փավստոս անվան տակ ծածկված, հրատարակեց «Մշակի» մեջ իբրև պատասխան «Մեղուի» մեջ իր «Կայծերի» առիթով եղած երկար և կրքոտ քննադատության դեմ: Թեև Բիֆֆին այդ գրության մեջ շատ չէ հեռացել ինքն իր մասին խոսող մի հեղինակի համեստությունից և օրինավորությունից, բայց և այնպես, վատ էր, որ նա այդպիսի միջոց էր ընտրել իր բավական հիմնավոր առարկությունները իր քննադատի դեմ հանելու համար: Ավելի լավ էր գրել իր սեփական ստորագրությամբ, քան կեղծել մի կողմնակի մարդ, որ խոսում է իր հեղինակության մասին: Եվ Արծրունին էլ տպագրեց այդ բանը, որ համենայն դեպս մի տգեղ կեղծիք էր...

Դեկտեմբերին կաթողիկոսական հարցը նորից երևաց «Մշակի» առաջնորդողների մեջ. բայց այժմ գրողը Արծրունին չէր, այլ Բաֆֆին: Այդ հոգվածների մեջ արդեն դրված էին, թե ինչ հոգևորականներ կարող են կաթողիկոսական թեկնածուներ համարվել: «Մշակի» համար ամենից առաջ երկու անուններ կային՝ Ներսես և Խրիմյան: Արծրունին երկու առաջնորդող գրեց «Մշակի» բաժանորդագրության առիթով և այդպիսով փակեց 1883-րդ ձախորդ թվականը:

Ավելի վատ եղավ հաջորդ տարին: Արծրունին կարծես զգալով մոտիկ ապագայում, մի քանի ամսից հետո, իր գլուխը գալիքը, գրում էր առաջին համարի առաջնորդողի մեջ.

«Հայը նվիրատվություններ, կտակներ է անում դպրոցների համար, իսկ լրագրությունը, որ հասակ առածների համար ղայրոց է, հասարակությունը հարկավոր չէ համարում պահպանել ընդհանուր ուժերով, այլ թողնում է, որ լրագիրը պահպանի իր մասնավոր միջոցներով մի մարդ՝ ինքը խմբագիրը: Եվ որովհետև խմբագիրը անընդհատ չի կարող իր գրպանից փող ծախսել լրագիրը պահպանելու համար, որ իսկապես պետք է պահպանվեր հասարակության բաժանորդագրությամբ, այդ պատճառով հայ լրագիրները հետզհետե, մինը մյուսի ետևից դադարում են, նորեր են ծնվում և նույնպես երկար ապրել չեն կարող»:

Վերջին խոսքերով Արծրունին ակնարկում էր Քիֆլիսի լրագրության մեջ տեղի ունեցած մի երևույթ: Նոր սկսել էր հրատարակվել «Նոր դար» անունով ամենօրյա թերթը: «Մշակի» թուլության ժամանակ աշխարհ եկած այդ ծնունդը, բնականաբար, պիտի կարծել տար, որ բոլոր հանգամանքները միանում են «Մշակի» դեմ՝ նրան տապալելու համար, մանավանդ, որ նոր լրագիրը խոս-

տանում էր լինել թե՛ ազատամիտ, թե՛ պահպանողական՝ նայած տեղին և հանգամանքներին: Սակայն Արծրունին շուտ հասկացավ, թե ինչ բան է դա և երկար մի հոգվածում խոսելով նոր լրագրի մասին, ասում էր, թե դա նույն «Մեղուն» է և ոչինչ նոր բան ավելացնել մեր մամուլի մեջ չի կարող. ամենաշատը նա կարող է «Մեղուի» բաժանորդների մեծ մասը գեպի իրան գրավել և այդպիսով վերջ դնել «Մեղուի» կյանքին: Այդպես էլ եղավ հետո. Արծրունին և ուղիղ էր գուշակել: Նա ընդունում էր, որ նոր լրագիրը կարող է «Մշակի» բաժանորդների մի մասն էլ խլել: Եվ այսպես, ապրելով երկու լրագիրների հաշվին, նա կոծվարացնի թե իր, և թե երկուսի գոյությունը: Այդքան մեծ պահանջակա հասարակության մեջ. մամուլը ունի ընթերցողների մի որոշ քանակություն, հետևաբար նրա օրգանների բաղմանալը առաջ կրերի այն հանգամանքը, որ ոչ մեկն էլ չէ կարող կարգին ապրել: Ուստի նոր լրագրի ծնունդը Արծրունին միանգամայն ավելորդ էր համարում, մանավանդ որ իր ուղղությունը, իր աշխատակիցներով նա՝ ոչինչ նորություն չէ բերում իր հետ:

Մշակականության համար այնքան անպատահան հանգամանքների մեջ մեղուականությունը Քիֆլիսում, անկասկած, ուժեղանում էր: Հասկանալի է Արծրունու հուզմունքը: Սակայն մշակականությունն էլ այդ ուժեղացման դիմաց փոխադարձություն էր ստանում, բայց ոչ թե Քիֆլիսում, այլ Կ. Պոլսում: 1884-ին այնտեղ սկսվեց «Արևելք» մեծ լրագրի հրատարակությունը: Արծրունին ջերմապես ողջունեց նրան իբրև մի երևույթ, որի նմանը թուրքահայ մամուլը դեռ չէր տեսել: Բայց ի՞նչ էր այդ երևույթը: Ահա ինչ ենք կարդում թուրքահայոց գրականության նվիրված մի հոգվածի մեջ, որ տպված է «Բազմավեպ» ամսագրում*.

«Այ անկե հտըրը (այսինքն «Արևելքը» սկսվելուց հետո) «Մշակի» խմբագրությունը իրեն համար բերան մը ուներ Թուրքիո Հայոց մեջ: «Արևելքի» լայնածավալ էջերը բաց էին «Մշակին» վարիչներուն առջև... Ազգային ամեն ինդիր, թե «Մշակի» և թե «Արևելքի» մեջ զաղափարներու կատարյալ համեմատաբար կը բնութագրեն: Զգացումներու և մտածություններու համանմանությունը երևան կու գար հանրային ուրիշ գործերու մեջ ալ:

«Արևելք» մշակականության մղվեցավ ոչ թե հավաքական հավանությամբ, այլ անհատական ազդեցությամբ «Արևելք» կիսբագրվեր վարչական մարմնի մը հսկողությամբ: Երբ 1890 փետրվարի 12-ին վարչական մարմնին մեջ փոփոխություններ տեղի ունեցան, «Արևելք» ալ սկսավ դադարել: «Մշակի» հետ փոխություններ տեղի ունեցան, «Արևելք» ալ սկսավ դադարել: «Մշակի» հետ ուրիշ հանդես հրատարակեցին, վասնզի ժամանակը «երկունքի մեջ էր»: Իսկ 1891-ին «Արևելք» բոլորովին հակամշակական եղավ: Բայց 1891-ին ալ հիմնվեցավ «Հայրենիքը»... Մարտիչող, կտրուկ, զարնող գրականություն մը երևան կու գա «Հայրենիքի» մեջ»:

Եվ որովհետև այսպիսի ուղղությունը բարբարոսական ռեժիմին ամենից շատ է երկյուղ ներշնչում, ուստի «Հայրենիքը» 1895—1896 թվականների սոսկալի փոթորիկների առաջին զոհը դարձավ: Բայց մոտ 12 տարի Կ. Պոլսում տիրապետող հանդիսացած մշակականությունը թուրքահայ մամուլի պատմության ամենագեղեցիկ էջերը դարձավ, էջեր, որոնք այժմ էլ հիշվում են մեծ պատկառանքով:

«Արևելքի» հիմնարկությունը մշակականության շատ ուժեղ նեցուկ դարձավ մանավանդ կաթողիկոսական հարցի մեջ: 1884-ին այդ հարցը ավելի ևս

* 1902 թ., էր. 325:

հրատապ կերպարանք ստացավ, կլանեց հասարակութեան ամբողջ ուշադրու-
թյունը:

Մամուլը օրվա հերոսն էր, նրա մղած պայքարը իւր ու լայն հոսանքներ
էր կազմում կյանքի մեջ: Պայքարը պատում էր ընտրելի թեկնածուների շուր-
ջը: «Մշակի» առաջին ընտրելին, ինչպես ասացինք, Ներսեսն էր, որից հետո
գալիս էր Խրիմյանը: Մշակականութեան տեսակետից դա խիստ հետևողական,
լուրջական մի նշանաբան էր: Թուրքիայի հայոց շարժման հոգին այդ երկու
հոգևորականներն էին, նրանք էլ, ուրեմն, կարող էին հանդիսանալ իբրև այն-
պիսի անձնավորություններ, որոնց վրա հայ ազգը պիտի կենտրոնացներ իր
ամբողջ համակրանքը, վստահությունը: «Մշակի» հետ միանգամայն համամիտ
էր «Արձագանք» շաբաթաթերթը, որ 1882-ից հրատարակվում էր դադարած
«Փորձի» տեղ: «Մեղուն» որոշ ընտրելիներ շուներ և մեղուականության պայ-
քարը կենտրոնացել էր «Նոր դարի» մեջ: Ահա այդ երկու բանակների մեջ
տեղի ունեւ ճակատամարտը: «Մշակը» կովի հրամանատարն էր: Բայց ի՞նչ
զրույթյան մեջ էր նա այդ վճռական, կարևոր միջոցին:

Կանոնավոր կերպով հրատարակվել էլ չէր կարողանում նա: Շաբաթը
հազիվ երկու անգամ էր լույս տեսնում: Արձրունին չէր գրում՝ ամբողջապես
նվիրված լինելով իր կալվածների հարցին: Շատ քիչ էր նա կարողանում գրել
ձեռք վերցնել. ընտրողական պայքարը նրա փոխարեն վարում էին նրա աշխա-
տակիցները: Նախկին անկախությունը կորել էր. «Մշակը», որ ուրիշներին էր
սովորեցնում պարտականություններ կատարելը, այժմ ստիպված էր արդա-
րացնող պատճառներ հրապարակ բերել՝ իր գրությունը բացատրելու համար:
Արձրունին լսում էր գանգատներ, դժգոհություն, և ահա ինչ էր գրում.

«Հենց որ հայը տեսնում էր, որ մի մարդ իրան նվիրել է ժողովրդի ծա-
ռայությանը, այն էլ անվարձ, և այդ ծառայությունը շարունակում է ոչ թե եր-
կու-երեք ամիս, այլ տասներկու տարի, — հայը արգեն համարում է այդ մար-
դուն իր ճորտ, իր ստրուկ և դառնում է դեպի այդ մարդը անասելի պահան-
ջող: Մենք տասներկու տարի հրատարակել ենք «Մշակը», անվարձ աշխա-
տել ենք, ծածկել ենք ամեն տարի լրագրի դեֆիցիտը մեր սեփական միջոց-
ներից, վճարել ենք գլխավոր աշխատակիցներին յուրաքանչյուր տարի, հա-
սարակությունը մեզ այնքան բաժանորդ չէ տվել, որ «Մշակը» ինքն իրան գո-
յություն ունենա, բայց սրանից ամեն տարի նույն հայ հասարակությունը, որ
իբր թե գրվում էր լրագրին, մեծ ապառիկներ էր թողնում, — բայց հենց որ մի
քանի շաբաթ շարունակ խմբագիրը, սաստիկ զբաղված լինելով իր մասնավոր
գործերով, այն գործերով, որոնցից կախված է թե իրան խմբագրի և թե լրա-
գրի վիճակը, քանի որ լրագիրը կախված է խմբագրի անձնական վիճակից,
հենց որ, ասում ենք, խմբագիրը մի քանի շաբաթ շարունակ առաջնորդող հոգ-
ված չի գրում, — հայոց հասարակությունը դժգոհ է լինում:

Լրագիրը պահպանել է տասներկու տարի շարունակ ոչ թե հայոց ազգը,
այլ ինքն խմբագիրը, թող այդ գիտնան հայերը: Գրանից ավելի զգվելի,
ավելի անարդար ոչինչ չկա. ոչինչ շտալ և սաստիկ պահանջող լինելը:

Բանը այն տեղին հասավ, որ տեղական ուս թերթերից մեկն սկսեց հան-
դիմանել Արձրունուն, թե նա հասարակությունից փողեր է ստացել, դրել իր
գրպանում, իսկ լրագիրը, խոստման հակառակ, ամեն օր չէ հրատարակում:
Արձրունին բողոքելով այդ բանի դեմ, գրում էր.

«Այդպես անխնա վերաբերվել դեպի տասներկու տարվա անցած, տան-
ջանքներով, զրկանքներով լի մի գործունեություն, կարող էր միայն մի մարդ,
որին խորթ է տեղական հանգամանքների հասկանալը:

Եվ դառնության, սրտամաշ հոգսերի այդ ծանր օրերում եթե կար Արձրու-
նու համար բարոյական մի մխիթարություն, դա այն էր, որ կաթողիկոսական
պայքարի մեջ վճռական հաղթանակ տանում էր մշակականությունը: Թիֆլիսի-
սի թեմում Արձրունին երկու տեղ ընտրվեց ծխական պատգամավոր: Հեռանալ
Թիֆլիսից, ավելի գործունյա դեր կատարել ընտրությունների մեջ նա չէր կա-
րող, ուստի չկարողացավ Թիֆլիսի թեմական պատգամավորի ընտրությունն
ընդունել: Ընտրվեց «Արձագանքի» խմբագիրը, իսկ Արձրունին բավականա-
ցավ նրա անձնափոխանորդ ընտրվելով:

Մոտենում էր մայիսը, ընտրության գործը հասել էր այն աստիճանին,
երբ ամեն մեկը շնչասպառ սպասում էր նրա հետևանքին: Արձրունին լուռ էր:
Վերջապես եկավ վերջնական հաղթանակի ռուպեն. կաթողիկոս ընտրվեց Ներ-
սեսը, ահագին ոգևորություն տարածելով բոլոր տեղերի հայերի մեջ: Ընդհա-
նուր, անսահման ցնծությունների մեջ Արձրունին չէր կարող անմասն մնալ
և մայիսի 19-ին մի կարճ առաջնորդողով ողջունեց Ներսեսի ընտրությունը:
Սրվա հարցերով ապրող հրապարակախոսի ծանր, աննախանձելի գրությունը
նրանից կարելի է հասկանալ, որ Արձրունու մի առաջնորդողով տպվել էր մար-
տի 24-ին, ապա հետևյալ գրվածքը այդ մայիսի 19-ին տպվածն էր: Եվ այ-
նուհետև նորից խորին լուռություն, շնայած այն մեծ ոգևորության, որ տիրում
էր հասարակության մեջ: «Մշակը» կատարյալ հոգեվարքի էր հասել. նա հրա-
տարակվեց հունիսի 20-ին, 27-ին, 30-ին և ապա հուլիսի 11-ին:

Հուլիսի 11-ի հրատարակված 65-րդ համարը վերջինն էր: Այդտեղ Արձ-
րունին հայտնում էր, որ կորցրել է իր հայրական ամբողջ ժառանգությունը
և էլ չէ կարող հրատարակել «Մշակը»: Պետք է ասել, որ «Մշակի ընթերցող-
ները ոչինչ տեղեկություն չունեին այդ ծանր հանգամանքի մասին: Արձրու-
նին երբեք «Մշակի» մեջ չպատմեց իր անձնական գործերի գրությունը: Մի-
այն «Մշակի» վերջին համարից ամենքն իմացան արդեն կատարված, վերջա-
ցած իրողությունը:

Իսկ իրողությունն այն էր, որ այլևս անկարելի եղավ բանկի վճարումները
ժամանակին տալ և փառահեղ գալիերեան աճուրդի նշանակվեց: Հասկանալի
էր, թե ինչով պիտի վերջանար աղետը: Կալվածի վրա 400 հազար ռուբլուց
ավել պարտք կար և սակայն նա մոտ մի միլիոն ռուբլի արժեք: Բոլորովին
արդարացի կերպով վախում էին, որ կալվածը գնողներ չեն լինի և նա կմնա
բանկին 400 հազարով: Այն ժամանակ, իհարկե, Արձրունին պիտի զրկվեր
բոլոր անձնական միջոցներից:

Մենք աղետ անվանեցինք այդ իրողությունը, որովհետև նա հենց այդ-
պես էլ հասկացվում էր այն ժամանակ: Աղետ ոչ միայն Արձրունու անձնա-
կան բարոյության տեսակետից, այլև «Մշակի»՝ հասարակական մի մեծ գոր-
ծի, գոյության տեսակետից: Փրկության միակ միջոց համարվում էր այն, որ
հայ հարուստները մի ակցիոներական ընկերություն կազմեն և գնեն գալե-
րեան 600 հազարով: Այդպիսով բանկի պարտքը տալուց հետո, կմնար մի
նշանավոր գումար Արձրունուն, հետևաբար և «Մշակը», ապահովելու համար:
Գոնե այդ միջոցն էր առաջարկում «Մ»-ը է հայի ինքնաճանաչությունը» վեր-
նագրով բրոշյուրը, որ այդ միջոցին հրատարակվեց Թիֆլիսում: Ահա ինչ էր
ասում այդ բրոշյուրի հեղինակ պ. Հ. Առաքելյանը.

«Ինքնաճանաչ է այն ազգը, որ գիտե գնահատել իր գործիչներին, որ գիտե
պահպանել այն հաստատությունը գոյությունը, որոնց մասին նա համակրու-
թյան աղաղակներ է արձակում, որ գիտե քաջալերել և խրախուսել այն ան-
ձանց, որոնք իրենց միտքը, գրիչը, փողը նվիրում են հօգուտ այդ ազգի և

որն, ընդհակառակը, դիտել որոշել իր վնասողներին, իր առաջադիմության ընթացքը խանգարողներին:

...Այդ առիթը և պատեհությունը «Մշակ» լրագրի գոյության սպառնացող վտանգն է, նորա խմբագիր պ. Գ. Արծրունու ունեցած ֆինանսական նեղ կացության պատճառով, կացություն, որ ոչ միայն վտանգի է ենթարկում այն թերթը, որ առաջինն եղավ հայերի մեջ, եվրոպական մտքով առած, լրագրի այլ որ սպառնում է ամեն տեղ հարուստ հռչակված խմբագիր պ. Գ. Արծրունուն դժնդակ չքավորության մեջ ձգելու: Մենք կարծում ենք, հասել է ըսպին, որ հայ ժողովուրդը կատարել իր պարտականությունը, որովհետև մենք գրում ենք, որ հայ հասարակության պարտականությունն է օգնել պ. Գ. Արծրունուն պատվավոր կերպով դուրս գալ իր նեղ դրությունից և շարունակել այն գործը, որի մասին այդ հասարակությունը այնքան համակրություն ցույցեր է անում: Կովկասի հայ քաղաքների դանազան անկյուններից: ...Այլապես խիստ հուսահատական եղբայրացության կարող է գալ, որ նա իզուր տեղ այնքան աշխատեց հայերի համար, իզուր տեղ վատնեց իր երիտասարդությունը, իր ասպարեզը, իր ահագին հարստությունը հայ ժողովրդին օգնելու համար, մինչդեռ նա կարող էր հարուստ երիտասարդների նման, հորից ահագին ժառանգությունն ստանալուն պես, ծախսեր այդ բոլորը, փող շինել, վաղեր նվրոպա և այնտեղ իշխանական կյանք վարել, ինքն ևս իր եղբայր Անդրեաս Արծրունու նման հետևեր պրոֆեսորություն և գիտական համբավ ձեռք բերելու:

Հավելվածի մեջ, բրոշյուրի հրատարակիչ Աբել Ապրեսյանը, պատմելով, որ մի քանի հայ դրամատիկների մեջ միտք է ծագել գնել Արծրունու գալերեան և նվիրել ներսեսին, կաթողիկոս ձեռնադրվելու միջոցին, էջմիածնի ճեմարանի պահպանության համար, հորդորում էր շտապել, գլուխ բերել այդ բարի միտքը:

Բայց դիմումները, հորդորանքները ոչ մի ազդեցություն չունեին: Եվ Արծրունին հուլիսի 11-ին տպած «Իմ բացատրությունս» վերնագրով առաջնորդողի մեջ ասում էր.

«Արծրունի եղբայրներս ունեինք թիֆլիսում կալվածներ, որոնք պատկանում էին մեր տոհմին մոտ մի հարյուր տարի, որոնց նման ոչ միայն Կովկասում, այլև Ռուսաստանում չկար և որոնց արժողությունը միլիոնի էր հասնում.— ահագին քարվանսարայ 200 խանութով և թատրոնով, 1300 քառակուսի սաժեն տարածությամբ և ահագին այգի 1500 քառակուսի սաժեն տարածությամբ, սեփական տնով, ջրով և գազի գործարանով:

Երբ ներկա տագնապի ժամանակ այդ կայքերը պետք է ծախվեին պարտքերի համար, որոնք հասնում էին կայքերի իսկական արժողության կեսին միայն, թիֆլիսի հասարակության կողմից խոստումներ եղան մի կողմից ակցիոններական ընկերություն կազմել այդ կայքերը գնելու համար, մյուս կողմից գնել այդ կայքը էջմիածնի համար, երրորդ կողմից քաղաքի համար և այլն: Բայց ոչինչ չաջողվեց: Կայքերը աճուրդի նշանակվեցան ու բանկի վրա մնացին, և այժմ ես զրկված եմ ամեն միջոցներից. նույնիսկ այն պապական տունը այգիով, որտեղ ինքս ապրում էի, ձեռքիցս գնաց:

Այժմ խառն դրության մեջ, երբ ինքս գեռ չգիտեմ ի՞նչ միջոցներով ինքս պետք է ապրեմ, որտեղ կլինի «Մշակի» խմբագրատունը, որտեղ կլինի բնակարանս, ստիպված եմ առժամանակ, գոնե երկու ամսով, դադարեցնել «Մշակի» հրատարակությունը:

Տասնեներք տարվա գրական գործունեությունից հետո հայոց հասարակության համար, այժմ կորցնելով իմ ամբողջ կարողությունս, այս բուպիս ինքն իրան հարց է առաջարկվում թե՛ «Մշակի» գոյության և թե՛ իմ անձնական ապրուստի մասին»:

Բախտի քմահաճույքով դերերը փոխվեցին: Ուրիշ մի միջոց չկար, այժմ «Մշակը» պիտի պահպաներ իր խմբագրին: Բայց Արծրունին այլևս ուժ չունեի նրա հրատարակությունը շարունակելու: Բանկի պարտքը վերջացել էր, բայց մնում էին մասնավոր պարտատերեր, որոնք իրանց պահանջներով հուսահատության էին հասցնում Արծրունուն: Վերջին հուլիսը վերայի հողերն էին: Հոգսերի ու մտածմունքների մեջ Արծրունին քայքայել էր իր առողջությունը: «Մշակը» դադարեցնելուց հետո նրա համար մի ձգտում կարող էր լինել՝ հանգստանալ: Եվ հանձնելով իր բոլոր մասնավոր գործերը իր հավատարմատար փաստաբանին, շտապեց, ինչպես ասվում է, օձիք ազատել՝ հեռանալով թիֆլիսից դեպի արտասահման: «Մշակը» նա սովեց Բաֆֆին, Գարրիել Միրզոյանին և ներսես Աբելյանին այն պայմանով, որ տարեկան 1000 ռուբլի ստանար: Այդ գումարով էլ նա հուլիս ուներ ապրել Շվեյցարիայում:

Փակվեց «Մշակի» և նրա խմբագրի կյանքի մի մեծ շրջանը:

Գլուխ երկրորդ

ՆՈՐ ԳՐՈՒԹՅՈՒՆ

I

Արծրունու կյանքը Շվեյցարիայում: Նրա նամակը Խորեն Վ. Ստեփանին: Ներսես պատրիարքի մահը: Արծրունու վերադարձը թիֆլիս և «Մշակի» վերսկսումը: Նոր պայմաններ նրա գործունեության համար: «Հայտարարության փոխարեն»: Բաֆֆիի հեռանալը: Խ. Մալումյան:

Գրիգոր Արծրունին Շվեյցարիայում մնաց մի տարի: Եվ դա, իհարկե, ուրախ տարի չէր: Հեռավոր աշխարհում, օտար երկրքի տակ, նա պիտի մոռանար իր կրած կորուստը, պիտի հաշտվեր իր նոր դրության հետ: Բայց թիֆլիսում թողած գործերը հանգստություն չէին տալիս նրան և այն հեռաստանում:

Մեր ձեռքում գտնվում են նրա մի քանի նամակները, որոնք գրված են Արծրունի եղբայրների գործերը կառավարող փաստաբանին: Այդ նամակների մեջ նա անդադար խնդրում է շուտով վերջացնել խճճված գործերը, որպեսզի կարելի լինի իմանալ՝ մի բան պիտի մնա՞ եղբայրներին՝ ապրելու համար, թե պետք է ամեն հույս կորցնել: Ինչպես երևում է, փաստաբանը առանձին հույսեր չունեի, և Արծրունին հետզհետե հաշտվում էր բոլորովին առանց միջոցների մնալու մտքի հետ: Այդ դեռ զժվար չէր լինի, եթե պարտատերերը հանգստություն տային, բավականանային ստանալով այն, ինչ դեռ մնում էր Արծրունիների հարստությունից:

Գեկտեմբերին նա գրում է փաստաբանին. «Ես հույս ունեի, թե, մինչև որ գուր կվերջացնեք գործերը, ապրուստի միջոցներ կստանամ իմ «Մշակ» լրագրից, որ ծախել եմ մի քանի երիտասարդների: Բայց այժմ թիֆլիսից տեղեկություն ստացա, որ կառավարությունը ոչ ոքին չէ հաստատում լրագրի խըմ-

բագիր իմ տեղը, և ինձ նորից կանչում են Քիֆլիս, լրագիրը շարունակելու համար: Բայց գալ այժմ, այս ցրտին, ես չեմ կարող: Ես հիվանդ եմ, թույլ եմ, մյուս կողմից էլ գործերը դեռ չեն վերջացել, ես կարողություն չունեմ տանելու պարտատերերի պատճառած անխորթությունները»:

Պարտատերերի կատաղության վրա սաստիկ գանգատվում էր և Անդրեաս Արծրունին՝ նույն փաստարանին գրած իր նամակների մեջ: Մանավանդ անողորմ ու խիստ էր դրանցից մեկը՝ Ալեյովը: Եվ ահա, գլխավորապես դրանց պատճառով, Գրիգոր Արծրունին ստիպված էր մնալ Յյուրիխում՝ նույնիսկ չկարողանալով մտածել իր «Մշակի» մասին:

Այդ տխուր ժամանակների նրա տրամադրությունը արտահայտված է մի նամակի մեջ, որ նա գրել է հանգուցյալ Խորեն եպիսկոպոս (այն ժամանակ դեռ վարդապետ) Ստեփաննին, որ Ախալցխայի հաջորդ էր և հրատարակում էր «Մանկավարժանոց» ամսագիրը: Դնում ենք այդ նամակը ամբողջապես.

Յյուրիխ, 1/13, փետրվարի 85.

Հայրիկ!

Շնորհակալությամբ ստացա ձեր ամսագրի երկու համարը և կարդացի խաչակապի վրա դրած ձեր տողերը «Սպասելով սպասում ենք «Մշակին»»:

Ասեցեք, խնդրեմ, ինչի՞ պետք է սպասեք «Մշակին»: Քանի որ ես սեփական միջոցներ ունեի, ես աշխատում էի ազգի համար: Ես անձնագրություն կարծեմ չեմ անում, եթե ասեմ, որ ես ազգին ծառայեցի ոչ թե որևէ շահերի համար, այլ անկեղծ սրտով զոհեցի նրան իմ ամբողջ երիտասարդությունս, իմ առողջությունս, իմ կյանքս, իմ բոլոր ընդունակություններս: Եվ այժմ, երբ կորցրի իմ ամբողջ նյութական միջոցներս և այստեղ նստած չգիտեմ, թե վաղը կնոջս հետ, ինչով ապրեմ, կարծեմ որ իրավունք ունեմ սպասել ազգից, որ եթե նա ցանկանում է, որ ես նորից նրա համար աշխատեմ, ինձ նյութապես և բարոյապես քաջալերի, որպեսզի ես նորից սիրտ առնեմ նրա համար աշխատելու: Բայց իմ դժբախտության բոլորին ամենքը լուռ կացան, ոչ մի կողմից ես չստացա, չսեցի մխիթարության, քաջալերության մի խոսք անգամ: Ես կարծեմ որ այնքան եմ արել ազգիս համար, որ հիմա, եթե նա դարձյալ իմ մեջ պետք ունի, ամեն բան կորցնելով, իրավունք ունի սպասել, որ այժմ ազգի հերթն է ինձ օգնել, սիրտ տալ, որ ես գործը շարունակեմ:

Ընդունեցեք, հայրիկ, իմ անկեղծ ողջունս:

Ձեր Գրիգոր Արծրունի:

Խորեն Ստեփաննի պատասխանը այս նամակին նույնպես ուշադրության արժանի է: Դրա մեջ ցույց է թե՛ այդ նշանավոր հոգևորականին հատուկ գաղափարական ոգևորությունը և թե՛ այն հավատն ու հարգանքը դեպի Գրիգոր Արծրունին, որ, ինչպես տեսանք այս աշխատության առաջին հատորում, այնքան վառ կերպով արտահայտվում էր դեռ «Հայկական աշխարհում», դեռ այն ժամանակ, երբ Արծրունին մի անհայտ երիտասարդ էր, մի ուսանող: Ահա Ստեփաննի պատասխանը*.

* Այս նամակագրությունը մենք գտանք հանգուցյալ Ստեփաննի թղթերի մեջ, որ մեր տրամադրության տակ էր դրել նրա բարեկամ բժ. Նավասարդյանը: Ստեփաննի պատասխանը

Ազնիվ բարեկամ

Պարոն Գրիգոր

Երեկ ստացա նամակդ: Կարողանում եմ շնչին գումար (70 մանեթ) ուղարկել Ձեզ եվեր Ձեր պանդխտության մեջ իբրև շնչին մխիթարություն, հայասեր անձերից անմոռանալի լինելուդ մասին համոզվելով:

Եկեք շարունակեցեք «Մշակը» և կտեսնեք համակրությունը: Մի՛ մոռանաք, որ հասարակական գործոնը առաքյալ պիտի լինի. տգետների մեջ ենք գործում: Ես իմ հաշվով հրատարակում եմ և անվարձ բաժանում եմ բոլոր հայկական դպրոցներին «Մանկավարժանոցս» և չեմ բողոքում:

Հիշեցեք Հեյնեի այն խոսքը, թե «Ամեն տեղ, ուր մեծ հոգին հայտնում է ճշմարտություն, կա յուր Գողգոթան»: Հասարակական գործոնների մեջ թուլություն պետք է համարել ամեն հոգնածություն, ամեն իրավացի վիշտն անգամ: Նոցա պաշտոնը աշխատությունն է, վարձը աշխատությամբ ձեռնարկած գործի ձեռք բերած հաջողությունն է: Նախախնամությունը չէ կարող այս աշխարհում էական բարիքներ տալ ժողովրդական գործոնին: Այս մոռանալու չէ:

Եկե՛ք և թող «Մշակը» նորից տարածե յուր դրոշակը, որի վրա գրված է. «Եկաք առ իս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք և ես հանգուցից զձեզ»:

Կրկին հրավիրում եմ Ձեզ, եկե՛ք: Հաղար բարեմաղթությունս ազնիվ տիկնոջ:

Ձեզ սրտանց սիրող և հարգող

Խորեն Ժ. Վ. Ստեփանն

Հարկավոր էր, որ այսպիսի մի ձայն հասներ Արծրունու ականջին այնպիսի հուսահատական մի դրություն մեջ: Աշխատել անդադար, աշխատել Գողգոթայի վրա, ոգևորված ոչ թե աշխարհային ականակություններով, այլ գործի վեհությունով, — այս բոլորը նոր չպիտի հասկանար այն մարդը, որ 13 տարի խմբագրել էր «Մշակը»: Բայց նա այդ նահատակությունը կատարել էր մի շատ նախանձելի հանգամանքի մեջ՝ նյութապես կատարյալ անկախություն վայելելով, չունենալով աչքի առաջ հացի խնդիրը: Այժմ չկար այդ հանգամանքը և բնական է, որ անսովոր մարդուն վախեցներ, թուլացներ անհայտ ապագան: Անցյալը պարզ էր. «Մշակը» պահպանվել էր իր խմբագրի անձնական միջոցներով: Հիմա գալիս էր բարդ ապագան. «Մշակը» ոչ միայն ոչինչ չպիտի պահանջեր իր խմբագրից, այլև ապրուստի միջոցներ պիտի տար նրան: Կարելի՞ բան էր: Պետք էր մտածել: Եվ այդ հարցը այնքան աննշան չպիտի լիներ մի դրություն մեջ, երբ միլիոնի արժեք ունեցող կալվածատերը այն տեղին էր հասել, որ մի վարդապետ նրան 70 ուրբու մի գումար էր ուղարկում «ի մխիթարություն»:

Շվեյցարիան մոռացնել շտվեց Արծրունուն, որ նա մի առաջնակարգ հրապարակախոս է իր ազգի մեջ: Այդպիսի մարդիկ լուր չեն կարող, ինչ հանգամանքների մեջ էլ լինեն: Եվ Արծրունին աշխատակցում էր Կ. Պոլսի «Արևելքի» մեջ: Բայց ի՞նչ կարող էր նա տալ Եվրոպայի այդ անկյունից: Հողից կտրված

մենք արտագրում ենք հենց նույն նամակի վրա եղած սևագրությունից, այնպես որ չենք կարող ասել, թե որքան դա ճիշտ է իսկական նամակի հետ, որ, անշուշտ, ուղարկված է եղել Արծրունուն:

էր, հայկական կյանքից դուրս էր մղված, և ահա թուլութեան մի մեծ պատճառ: «Արևելքի» բազմաթիվ աշխատակիցների մեջ Շվեյցարիայի այդ աշխատակիցը միայն իր ստորագրութեամբ էր խիստ աշքի ընկնում, միայն իր անունով էր սովորական գրողներից բարձր կանգնում:

Բայց ահա տեղի ունեցավ մի տխուր իրողութիւն: 1884 թվի հոկտեմբերի 26-ին Ներսես պատրիարքը վախճանվեց: Կաթողիկոսական ընտրութիւններն արդեն պարզ ցույց էին տվել, որ դա մի նվիրական անուն է ամբողջ հայութեան համար: Մահը եկավ ընդհանուր մի կսկիծով ավելի ևս ամբապնդելու այդ իրողութիւնը: Սուրբ համազգային էր՝ այս բառի բուն նշանակութեամբ: Ինչ հողվածներ, ցավակցական ի՛նչ ցույցեր, ի՛նչ ուխտագնացութիւն դեպի եկեղեցու մեջ դրած անշունչ դիակը, հանդեսներ, դամբանականներ և այլն և այլն:

Արծրունին այդ բոլորն իմանում էր «Արևելքից»: Ծանր, անփոխարինելի կորուստը նա էլ ողբաց: Բայց այդ կլիներ մի շատ սովորական, միջակ բան: Նրա վրա բունացած տրամադրութիւնը, որ պարզ պատկերացած է վերև բերած նամակում, արտահայտութիւն է գտնում նրա մի կարճ նախագասութեան մեջ, որ կլասիկական է դառնում: «Հայը իր գործիչներին միայն թաղել գիտե», — գրում է նա Ներսեսին նվիրված իր հողվածի մեջ:

Դա մի նորութիւն չէր նախ և առաջ հենց իր՝ Արծրունու համար: Եստանգամ էր նա բացատրել, թե ինչպես հայերը հալածում, նեղում, բազցածութեան մեջ են պահում իրանց գործիչներին և սկսում են սիրել ու մեծարել նրանց միայն այն ժամանակ, երբ նրանք մեռնում են, երբ այլևս կարոտ չեն համակրանքի: Հայկական այս հին, ալեոր իրողութիւնը ո՛ւմ չէր հայտնի: Բայց իրողութիւնները ձուլել մի կարճ, ազդու, բնորոշ ասվածքի մեջ, — ամեն ժամանակ և ամեն մեկին չէ հաջողվում: Արծրունին իր ծանր կացութեան մեջ գտավ հավիտենական տխուր, ողբալի երևույթի անունը: Ճիշտ այդպես՝ «Հայը իր գործիչներին միայն թաղել գիտե»: Եվ այս ճշմարտութիւնը կատարվեց հենց իր՝ Արծրունու վրա էլ...

Խորեն Ատեփանէն, գրելով իր հին բարեկամին՝ «Եկեք և կտեսնեք համակրութիւնը», խոսում էր ոչ միայն իր, այլև ընթերցող հասարակութեան մի նշանավոր մասի կողմից. «Մշակի» դադարումը շափաղանց ղգալի էր: Պարզ հայտնի դարձավ: որ առանց նրան հայոց մամուլը կողկասում անգույն է, տխուր է, իր կոշտից ցածր: 1885-ին նորից կաթողիկոսական ընտրութիւն էր նշանակված: Եվ նա անցավ համարյա աննկատելի, թեև հասարակութեան մեջ չէր պակասել հետաքրքրութիւնը, թեև թեկնածուների վերաբերմամբ էլի կար գաղափարների ընդհարում: Մանավանդ այդ ժամանակ ղգալի էր «Մշակի» բացակայութիւնը:

Եվ նրան սպասում էին անհամբերութեամբ: Բայց Գրիգոր Արծրունին չէր շտապում, երեւի դեռ սպասում էր, թե երբ կվերջանան իր անձնական գործերը: Թիֆլիս եկավ նա ամառը, աշխատելով այնպես անել, որ օրենքով սահմանված մի տարվա ժամանակը չկորցնի՝ «Մշակի» հրատարակութիւնը վերանորոգելու համար: Ահա ինչ էր գրում ինձ Բաֆֆին 1885-ի հուլիսի 11-ին.

«Պարոն Արծրունին վերագրածով արտասահմանից, գլխավորապես այն նպատակով, որ «Մշակը» կրկին հրատարակի: Բայց ցենզուրական կոմիտեւը թույլ չտվեց, հայտնելով, թե իրավունքը կորցրել է, թեև իսկապես կորցրել չէր: Տուրաքանչյուր խմբագիր, երբ իր լրագիրը դադարեցնում է, մինչև մեկ տարի իր իրավունքը պահպանում է կրկին հրատարակվելու: Բայց «Մշակի» տարին լրացած չէր, երբ պ. Արծրունին նորից կամեցավ սկսել հրատարակու-

թիւնը. այնուամենայնիվ, նրան մերժեցին, ասելով, թե նոր կարգադրութիւն է դուրս եկել և այլն»:

Պետք եղավ բողոք ուղարկել Պետերբուրգ, նորից հրատարակելու թուլութիւն խնդրել: Իսկ մինչ այդ՝ Արծրունին իր համար, ինչպես ասում են, նոր տուն-տեղ սարքելով զբաղվեց: Բոլորովին զրկված նյութական միջոցներից, նա չգիտեր մինչև անգամ, թե պիտի կարողանա՞ փոքրիշատե հարմար բնակարան գտնել: Բազարնայա փողոցի վրա մի փոքրիկ, նեղ, լույսից ու օդից զուրկ բնակարան վարձեց. արդեն հաշտվել էր հայրական գեղեցիկ տանից այսպիսի մի խեղճ օթևան փոխվելու և այնտեղ ապրելու մտքի հետ: Նայած իր դրութեան, նայած անհայտ ապագային, նա նույնիսկ այդ էլ մեծ բան էր համարում:

Եվ ահա, այդտեղ, այդ աղքատիկ բնակարանում, նա նորից խմբագրութիւն կազմեց, ապրեց այնտեղ մինչև կյանքի վերջը, միշտ հուսալով, թե լրագրի բաժանորդագրութիւնը թույլ կտա իրան մտածելու ավելի հարմար ու լավ մի բնակարանի մասին: Այդ հույսը երբեք չիրագործվեց. և Արծրունին այդ շափաղանց համեստ, ուղղակի աղքատիկ օթևանում էր հանգստութիւն և բավականութիւն գտնում, ամբողջապես նվիրվելով իր կյանքի միակ նպատակը դարձած գործին. այդտեղ էլ նա վայելում էր իր բարոյական մեծ հաղթանակների պտուղները, համակրութեան աղմկալի ցույցերը:

1885 թ. հոկտեմբերի 27-ին հրատարակվեց «Մշակի» մի համար, որի ճակատին տպված էր «Հայտարարութեան փոխարեն»: Այդտեղ Արծրունին մանրամասն բացատրում էր, թե ինչ պիտի լինի «Մշակի» ապագա վիճակը: Նա ստացել էր իր լրագիրը ամեն օր հրատարակելու իրավունք, բայց դրա համար, ասում էր նա, հարկավոր է, որ հայ հասարակութիւնը գոնե 1500 բաժանորդ տա: Այլապես անհնարին է հրատարակել մի ամենօրյա թերթ, երբ խմբագիրը այլևս սեփական միջոցներ չունի, որպեսզի նրանցով ծածկե հրատարակութեան դեֆիցիտը:

Գլխավորը նյութական հարցն էր: Այնուհետև «Մշակը» պիտի լիներ նույնը, ինչ եղել էր մինչև այդ, բոլոր հին աշխատակիցները և թղթակիցները խոստացել էին գրել «Մշակի» մեջ: Եվ որովհետև հույս չկար, որ գոնե առաջին տարին բաժանորդների թիվը կհասնի 1500-ի, ուստի Արծրունին համարյա վճռականապես ասում էր, որ 1886-ից նա վերսկսելու է «Մշակը»՝ հրատարակելով նրան շաբաթը երեք անգամ: Այդպես էլ լրագիրը մնաց մինչև նրա կյանքի վերջը. ամենօրյա լրագիր խմբագրելու գործը այլևս չէր վիճակված նրան:

«Հայտարարութեան փոխարեն» համարը ընդունվեց հասարակութեանից խանդավառ ուշադրութեամբ: Ամեն տեղ ուշադրութիւն էր պատճառում «Մշակի» ծանոթ ինքնատիպ վերնագիրը: Թիֆլիսում հոկտեմբերի 27-ին, երեք-չորս ժամի ընթացքում, «Մշակ» հատով ծախվեց 500 օրինակ: Դա, ինչպես գրում էր Արծրունին, մի շտեմանված բան էր Թիֆլիսում. այդպիսի ուշադրութեան չէր արժանացել ոչ մի տեղական լրագիր, ինչ լեզվով էլ հրատարակվելիս լիներ նա:

Անուրանալի է, որ հայ հասարակութիւնը սպասում էր Գրիգոր Արծրունուն: Նրա երկարատև լուրջ միջոցին հայոց մամուլը այնքան թուլացել ու խեղճացել էր, որ «Մշակի» վերանորոգումը ամենայն իրավունքով համարվում էր մամուլի վերակենդանութեան նշան: Եվ Արծրունին տեսավ, որ այդ ակնկալութիւնները շոշափելի գործով են արտահայտվում: «Մշակը» 1886-ի սկզբում ուներ 1150 բաժանորդ: Դա մեծ հաջողութիւն էր, եթե ի նկատի առնենք, որ «Մշակը» իր ամենօրյա հրատարակութեան ժամանակ, 1879—1881

անմտանալի թվականներին, 1300-ից ավել բաժանորդ չէր ունեցել: Չմոռա-
նանք, որ Քիֆլիսում գոյություն ունեւորյա հայոց լրագիր, և երբ շա-
բաթը երեք անգամ հրատարակվող «Մշակը» համարձակ մրցում էր նրա հետ
իր բաժանորդներին թվով, այդ արդեն պարզ ապացույց էր, որ «Մշակի» անդր
ոչ ոք չէր կարողացել բռնել, որ մշակականությունը մեր կյանքի ամենախոշոր
երևույթներից մեկն էր դարձել:

Աշխատելով որքան կարելի է լավ կազմակերպված ուժերով դուրս դալ
հասարակության առաջ, արդարացնել հասարակության հույսերն ու ակնկա-
լությունները, Արծրունին սկսեց գործն այնպես, ինչպես սկսել էր 1872-ին
Նրան շրջապատում էին շատերը հին աշխատակիցներից՝ Հայկակ, Կրոտ, Հա-
մար: Բայց դրանց մեջ չկար մեկը, գլխավորը՝ Բաֆֆին: Նա հեռացավ «Մշա-
կից»: Ահա ինչ էր ինձ պրում հանգուցյալ տաղանդավոր վիպագրողը 1885 թվի
դեկտեմբերի 15-ին:

«Մշակը» առաջիկա հունվարից կսկսվի հրատարակվել, բայց դեռ հայտնի
չէ, արդյոք ես պիտի աշխատակցե՞մ, թե ոչ, որովհետև դեռ իմ և պ. Արծրունու
մեջ համաձայնություն չէ կայացել մեր պայմանների մասին: Նրա այժմյան
վիճակը ի նկատի առնելով, ես առաջարկեցի, որ մի խումբ կազմվի, և ամենքը
ընկերաբար կատարեն լրագրի հրատարակության գործը, այնպես որ, խմբա-
գրատան անդամների իրավունքները և պարտավորությունները որոշված լի-
նեն, և խմբագրատունը իր մեջ ու համերաշխություն ունենա: Բայց նա,
որպես հրեում է, դժվարանում է ընդունել այդ առաջարկությունը, ցանկա-
նում է առաջվա նման ինքը միայնակ լրագրի թե տեք և թե կառավարիչը լի-
նել: Այսպես, իմ կարծիքով, հազիվ թե նա կարող կլինի հասարակությանը
գոհացնել, որովհետև նյութերի մեծ կարոտություն կունենա և ստիպված կլի-
նի դատարկ, անբովանդակ համարներ դուրս տալ և մյուս լրագիրների պես
հասարակությանը զզվացնել: Մի մարդ, առանց հիմնավոր և ուժեղ խմբագրա-
տան, չէ կարող մի օրինավոր լրագիր հրատարակել, որքան էլ ինքը տաղան-
դավոր լինի: Շատ ցավում եմ, որ ես պետք է թողնեմ իմ սիրած լրագիրը, և
ցավում եմ ավելի այն պատճառով, որ նրա համար մի լավ ապագա չեմ տես-
նում...»:

Պարզ է, որ անհամաձայնությունը Արծրունու և Բաֆֆի մեջ չէր բխում
ուղղության, սկզբունքների հարցերից, այլ մասնավոր, կազմակերպական,
նյութական բնավորություն ունեւոր: Արծրունու թղթերում այժմ էլ մնում է
Բաֆֆի երկար նամակը, որի մեջ նա պարզում էր իր պահանջները: Այդ
նամակը Արծրունին պահում էր իրեն մի փաստաթուղթ, որ պիտի արդարաց-
ներ նրան՝ ցույց տալով, որ ինքը չէր մեղավորը: Եվ իրավ, հենց այն ձևը,
որի մեջ Բաֆֆին արտահայտում էր իր առաջարկության պատճառաբանու-
թյունները, թույլ չէր տալիս, որ Արծրունու պես մի մարդը կարողանա համա-
ձայնության մասին բանակցություններ վարել: Այսպես, Բաֆֆին գրում էր,
որ առաջներում, երբ Արծրունին հարուստ էր, փող ուներ, ինքը, այսինքն
Բաֆֆին, հպատակվում էր նրան: այժմ, երբ չկա այդ հանգամանքը, վերաց-
վում է և այն իրավունքը, որով Արծրունին տեր և գլուխ էր խմբագրության մեջ:

Բայց և այնպես, Բաֆֆի առաջարկությունները համակրելի էին: Նա
ուզում էր հավաքական խմբագրական կազմ, այնպես, ուրեմն, ինչպես կար
«Մշակի» հրատարակության առաջին տարիներում: Սակայն Արծրունին կա-
րող էր հավատալ, թե այժմ կիրագործվի այդ սկզբունքը, քանի որ նախկին
փորձը բոլորովին հակառակն էր ցույց տվել: Եվ բացի դրանից, այժմ էլ կա-

լի՞ն նյութական միջոցներ այդպիսի մի սկզբունք իրագործելու համար: «Մշա-
կը» այժմ հազիվ էր իր խմբագրին ապրուստի համեստ միջոցներ տալիս:

Եվ այդ հնարավոր էր դառնում միայն այն պայմանով, որ աշխատող-
ներին մեծ մասը որևէ վարձ չառանա: Արծրունին չէր կարողանում նույնիսկ
խմբագրատան մեջ աշխատողների բավարար թիվ պահել և բավարար վար-
ձատրություն տալ եղածներին: Մնում էր դարձյալ իդեալիստ գործիչներով
բավականանալ: Եվ Արծրունին այդպիսի անարժաթ աշխատողների պակա-
սություն չէր զգում: «Մշակը» այնպիսի մի հասկացողություն չէր, որ նրա
դրժակի տակ ծառայելը կապված լիներ նյութական հարցերի հետ:

Բաֆֆին, թողնելով «Մշակը», սկսեց աշխատել «Արձագանքի» մեջ: Նա
սխալվում էր, ոչինչ լավ ապագա չտեսնելով իր «սիրած լրագրի» համար: Այդ
ապագան, ընդհակառակն, գեղեցիկ էր նույն իսկ անցյալից և ապացուցանում
էր, որ «Մշակի» ուժը Արծրունու հրապարակախոսությունն է կաղմում: Ինքը,
տաղանդավոր վիպագրողն էլ, սխալ քայլ էր անում: «Արձագանքի» մեջ նա
պատմական նյութերի մեջ խորասուզվեց. շրջանը, լրագրական միջնորդը
խակույն ազդեց նրա գրվածքների վրա: Պետք է այն էլ ասել, որ անցել էր մշա-
կական վեպի ժամանակը, այն վեպի, որ Բաֆֆիի իսկական փառքն է կազ-
մում: Այդպիսի վեպեր նույնիսկ «Մշակի» մեջ էլ չէր կարելի հրատարակել:
Բաֆֆին պիտի փոխեր իր ուղղությունը, պիտի իրական, առօրյա կյանքին
դառնար: Բայց ժամանակ էլ չունեցավ: «Մշակից» դուրս նրան միայն երկու
տարի էր վիճակված գրել: Ավելի կյանք, նա, տարաբախտաբար, չունեցավ:

Պետք է արձանագրել «Ենթի» հեղինակի այն հատկությունն էլ, որ նա
հեռանալով «Մշակից», չդարձավ իր սիրած լրագրի թշնամին. ընդհակառակն,
այդ ժամանակ նրա գրած հոդվածների մեջ ջերմ ոգևորությամբ է դուրս բեր-
ված այն մեծ դերը, որ կատարել է մեզանում «Մշակը» իր խմբագրի հետ:

1886 թվականից «Մշակի» խմբագրության մեջ երևան է գալիս մի նոր
աշխատակից՝ Խաչատուր Մալումյան, մեկը այն երիտասարդներից, որոնք
Արծրունու հրապարակախոսության հզոր ազդեցության տակ են կրթվել և Արծ-
րունու ձեռքով էլ հրապարակ են հանվել ժողովրդական խավերից: Դա էլ
«ձկնորսներից» էր. գլուղացի մի երիտասարդ, Ներսիսյան դպրոցն ավարտած,
նա մինչև այդ թղթակցություններ և հոդվածներ էր տալիս «Մշակին»: Մանե-
լով խմբագրությունը, նա սկսեց ջերմեռանդությամբ աշակերտել Արծրունուն,
աշխատում էր եռանդով և կարճ միջոցում կարողացավ յուրացնել մշակական
աշխարհայեցողությունները և և իր ուսուցչից սովորած համարձակությամբ
նեւովեց այն պայքարների մեջ, որոնք այնքան խոշոր տեղ են բռնում Արծրու-
նու գործունեության վերջին յոթը տարիների մեջ: Մալումյանը մշակական
օրթոգոքսության ամենաբնորոշ ներկայացուցիչներից մեկը դարձավ: «Մշա-
կի» խմբագրական տրագիդիաների, ավանդությունների ջերմեռանդ պահպանող
հանդիսացավ նա մասնավոր Արծրունու մահից հետո, երբ թերթը դեկավա-
րողներից մեկը նա էր: Թեթև, կտրուկ, պարզ լեզվով նա Արծրունու հրապա-
րակախոսության հիմքերն էր կրկնում իր բազմաթիվ հոդվածների մեջ:

Հրապարակախոսության դժվարությունները հոր պայմաններում: Ընդհանուր հետադիմության պատկեր: Բայց խմբագրից հրաշքներ են պահանջում: Ներքին առօրյա հարցեր: Բանակոթիվների շրջան: Ադմոնի Կ. Պոլսի հայ լրագիրների մեջ: Տառադարձության հարց: Բաֆֆիի մանր: Կղերական կասալականություն և ժողովրդական եկեղեցու սկզբունքներ: Հոգաբարձական իրավունքների հարց ներսիայան դպրոցում: «Մուրն» ամսագրի վերաբերմունքը դեպի Գ. Արծրունին: Բանակոթիվների նշանակությունը, կուսակցություններ.— Արծրունին Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում:

«Ներկա տարվանից «Մշակը» մտնում է իր գոյության մի բոլորովին նոր, ռեալական շրջանի մեջ»:

Այս խոսքերով էր Արծրունին սկսում իր անդրանիկ առաջնորդողը 1886 թվականին: Ծիշտ որ դա մի բոլորովին նոր շրջան էր, ճիշտ որ նրան պետք էր տալ ռեալական անունը:

Մինչև 1876 թվականը «Մշակը» գլխավորապես թեորիաներ քարոզող էր, գլխավորապես ուղիղ ու առաջադեմ մտածության ճանապարհն էր հարթում: Այդ շրջանում նոր էր կազմակերպվում ընթերցող հասարակությունը, նոր էր պատրաստվում հասարակական կարծիքը: Կրթիչը հասարակական ուսուցչի դեր էր կատարում, ուսուցչի, որ տեղական հարցերը քննելու համար դեռ պիտի ընդհանուր քաղաքակրթական սկզբունքներ ժողովրդականացնեի, այդ սկզբունքների վրա պատրաստեր իր լսարանը:

Նրկորող շրջանը, 1876—1883, իր բացառիկ բնավորությամբ սովորական ընթացքից շատ բարձրացած, շատ խոշոր երևույթներով ցնցվող, շատ նպատավոր հանգամանքների մեջ բեղմնավորություն գտնող կյանքն էր, և «Մշակը», ինչպես տեսանք, տենդային եռանդով, մեծ ազատություն էր գործում:

Իսկ ի՞նչ էր ներկայացնում այս երրորդ շրջանը:

Ամենօրյա «Մշակի» վերջին երկու տարիները,— մենք այդ էլ տեսանք,— արդեն կրում էին իրանց վրա այն խիստ ռեակցիայի կնիքը, որ հաստատվեց Ռուսաստանում 1881 թվականի սկզբից: Երբ Արծրունին վերադարձավ Շվեյցարիայից, այդ ռեակցիան արդեն կացություն և գործունեության որոշ պայմաններ ու հասարակական կարգեր էր ստեղծել: Կյանքը ճնշված էր, ընթանում էր հանդարտ ու դանդաղ, առանց խոր ու ցնցող շարժումների, առանց նույնիսկ հուզիչ խոշոր հարցերի: Մամուլը զգույշ, սակավախոս էր, խաբխափելով, հարմարվելով էր իր գործը առաջ տանում: Տիրում էր հասարակական խոր թմրություն:

Ի՞նչ կարող էր ունենալ իր առաջ հայ հրապարակախոսը: Մակարի կաթողիկոսությունն էր սկսվել, կրոնական-պահպանողական սկզբունքները հետազհետե տիրում էին մեր հարվածված, աղճատված դպրոցների և եկեղեցական վարչությունների մեջ. վարչական կենտրոնացումը կղերական ինքնագլխություն, միապետության խորթ, հակաժողովրդական սիստեմն էր պատրաստում՝ բարեկարգության, առողջացման ոչինչ հույսեր չթողնելով: Կ. Պոլսում ներսեսից հետո ավելի ծանր էր ռեակցիան: Հռչակավոր պատրիարքը արժանավոր ժառանգորդներ չունեի իր ստեղծած գործը նույն եռանդով, նույն համարձակությամբ առաջ տանելու համար: Վարժապետյանի տեղ Հարություն և Ալըզյան պատրիարքներ դուրս եկան: Ծիշտ է, նրանք այլևս շատ բան չէին կարող անել, քանի որ քաղաքական աշխարհը բոլորովին կերպարանափոխվել

էր և բոլորովին ուրիշ շահերի էր ծառայում. բայց եթե չէր կարելի շատ բան անել, գոնե կարելի էր և թուրքաց կառավարության կույր գործիքը շղանալ. կարելի էր թուրք պաշտոնյայի հայացքներով չվերաբերվել ժողովրդին, որի մեջ չէր մեռել շարժումը, որ ձգտում էր ուրիշ միջոցներով հասնել իրան խոստացած բարօրությանը: Այդ հարցերի, այդ շարժումների մասին մամուլը ոչինչ կամ շահագանց քիչ կարող էր գրել:

Ինչո՞ւ պիտի կերակրվեր հրապարակախոսությունը:

Մնում էր միայն առօրյա կյանքը իր մանր-մունր անվնաս հարցերով: Եվ սակայն Արծրունուց ավելի մեծ բաներ էին սպասում: Սպասում էին, որ նա կկենդանացնե մամուլը խոշոր, կենսական ցնցող հարցերով, ինչպես որ նա արել էր նախընթաց շրջանում: Այդ բանը շատ լավ էր զգում Արծրունին. նա պարզ տեսնում էր, որ շրջապատի ակնկալությունները չեն համապատասխանում այն ամենին, ինչ նա կարողանում է տալ: Եվ հենց առաջին տարում պատասխանում էր այդ տրամադրությանը.

«Հայը կարծում է, թե թերթի խմբագրիցն է կախված ստեղծել մեծ-մեծ հարցեր, երբ նրանք չկան կյանքի մեջ: Հայը այն աստիճան միամիտ է, կամ իրեն միամիտ է ձևացնում, որ կարծում է, թե խմբագիրը ամենակարող է, թե նա երբ կուզենա, կարող է այս կամ այն հարցի վրա գրել... Ծճմարիտ է, լինում են ըստենք, երբ սովորականից դուրս, արտաքո կարգի նշանավոր հարցեր են ծնվում այս կամ այն հասարակության մեջ,— և մամուլն էլ խոսում է այդ հարցերի մասին իր ժամանակին: Այնուհետև մեծ հարցեր, որոնք ժամանակավորապես են հարուցվել, շատ անգամ փոթորիկների պես անցնում են, և մարդկային հասարակությունը նորից մտնում է իր սովորական կյանքի խաղաղ ընթացքի մեջ»:

Այդ հասարակ, ուղիղ միաքը, ինչպես երևում է, չէր արմատանում ընթերցող հասարակության մեջ: Կրթիցից շարունակ հրաշքներ էին պահանջում: Եվ Արծրունին ստիպված էր 1887-ին կրկին վերադառնալ այդ հարցին:

«Կարո՞ղ է արդյոք հասարակությունը որևէ բան պահանջել մամուլից, կյանք պահանջել լրագրերից, պահանջել, որ լրագրությունը անդադար հարուցանե հետաքրքիր, այլովող հարցեր, երբ ինքն հասարակությունն անշարժ է, անտարբեր է դեպի որևէ հասարակական կենսական խնդիր... Մամուլի և հասարակության ներգործությունը փոխադարձ է»:

Պետք էր սովորեցնել ընթերցողին, պետք էր սովորական, առօրյա, մանր հարցերի շուրջը հետաքրքրություն դարձնել, որպեսզի ընթերցողը նրանով զբաղվելու տրամադրություն ցույց տար: Այդ էլ հաջողվեց Արծրունուն: Թույլատրվածի սահմաններում, դժգույն, թույլ ու անկենդան կյանքի փաստերից նա շատ հաճախ կարողանում էր այնպիսի հարցեր ստեղծել, որոնք գրավում էին ընդհանուր ուշադրություն, խոսեցնել էին տալիս ամենքին: Այդ հաջողության պատճառները Արծրունու բնավորության այն հիմնական գծերն էին, որոնք երբեք չփոխվեցին: Նա դարձյալ կծու, սուր գրիչ ուներ, դարձյալ հարձակողական գիրք էր բռնում, դարձյալ անխնա էր մերկացումների մեջ և գլխավորը, հրապարակախոսի հոտառությունը, գնալով չէր թուլանում. ըմբռնել օրվա կարիքը, արձագանք տալ այն երևույթներին, որոնք կարող են հասարակական միտքը զբաղեցնել,— ահա նրա ուժը:

Մենք, իհարկե, չենք կարող քայլ առ քայլ հետևել այն բոլոր հարցերին, որոնք Արծրունու առաջնորդողների նյութն են կազմում: Դրանք բազմաթիվ են, դրանց մեծ մասը առօրյա նշանակություն է ունեցել և այսօր կարող է իբրև այս կամ այն տարվա օրերի փաստերի մի հավաքածու ծառայել: Գլխա-

վորը, որի վրա մենք պարտավոր ենք ուշադրություն դարձնել, իրանք այդ հարցերը չեն, այլ Արծրունու վերաբերմունքը դեպի նրանց: Եվ որովհետև մենք արդեն մանրամասն հետևել ենք «Մշակի» առաջին շորս տարիների հրատարակատեսության՝ հատկապես այդ վերաբերմունքը պարզելու, Արծրունու հրատարակատեսական գաղափարները ձևակերպելու համար, ուստի այստեղ մենք միայն կրկնությունների մեջ պիտի ընկնենք, եթե նորից մեր առջև դնենք, թե ինչ է ասել «Մշակի» խմբագիրը, երբ խոսում էր քաղաքային գործերի, մեր երկրի տնտեսական հարցերի և այլ նյութերի մասին: Մենք կրավակա- նանանք մի թեթև ընդհանուր հաշվով և կանգ կառնենք միայն աչքի ընկնող, խոշոր հանգամանքների վրա:

Խիստ հարձակումները, ինչպես և առաջ, մեծ աղմուկներ էին հարուցա- նում: Կրաքրական խիստ բանակոխված «Մշակի» այս երրորդ շրջանի մեջ ավելի խոշոր տեղ են բռնում: Եթե առաջ Արծրունին ուներ իր դեմ մի հատ տխրալ թշնամի՝ «Մեղուն», այժմ կար և երկրորդը, նրա հոգեզավակը, որ իրեն անվանում էր միակ ամենօրյա թերթ: Կարծես դրանք քիչ էին, և ահա 1886-ից հակառակ բանակի մեջ է մտնում և «Արձագանք» շաբաթաթերթը, որ «Մշակի» դաշնակիցն էր համարվում և «Մշակի» պես էր վերաբերվում թե «Մեղուն» և թե նրա արբանյակին, որին համարյա միշտ տալիս էր «Նոր դար» անունը, առանց պարզ ու որոշ հիշատակելու, թե ինչ է այդ լրագրի իս- կական անունը: Պետք է խոստովանել, որ «Արձագանքը», գոնե 1886—1887 թվականներին, դեռ այնքան բացարձակ թշնամություն չէր հայտարարել «Մշակի» դեմ: Սակայն Արծրունու համար այդ բանը նշանակություն չունի, և նա անխնա հարձակվում էր շաբաթաթերթի վրա, երբ հասարակական հարցերը մերկացնում էին որևէ տարբերություն «Մշակի» և «Արձագանքի» աշխարհա- յեցողությունների մեջ:

Այսպիսով կազմակերպվում էր այն հակառակությունը, որի դեմ Արծրու- նին կոչվում էր իր գործունեության վերջին 7 տարիներում:

Հետզհետե այդ բանակը կերպարանափոխվեց: 1887-ին «Մեղուն» ինք- նակամ դադարեցրեց իր հրատարակությունը, որ միանգամայն ավելորդ էր դարձել: Բայց նրա հաջորդն այնպես էր տանում լրագրական գործը, որ Արծ- րունին ստիպված եղավ խոստովանել, թե «Մեղուն», որքան էլ բուր, հե- տադեմ և անպետք լինեք, այնուամենայնիվ, դարձյալ բարձր էր «Նոր դարից»: Բանակոխվ մղել այս վերջինի դեմ բոլորովին անհնարին էր դառնում փոքրի- շատե ազնիվ, մաքրասեր լրագրի համար: Եվ Արծրունին միակ միջոց համարեց կտրել բոլոր հարաբերությունները այդ թերթի հետ, չկարգալ նրան, անտես անել նրա գոյությունը, վունդել նրա անունը «Մշակի» էջերից:

Մնաց միայն «Արձագանքը»: Այդ լրագրի մեջ էլ մինչև վերջը կենտրո- նացավ այն կատաղի, ծայրահեղ թշնամությունը «Մշակի» դեմ, որ, ինչպես առիթ կունենանք տեսնելու, հաճախ բոլորովին անվայել շափեր էր ընդունում: «Արձագանքը» մի որոշ ինքնուրույն ուղղության առաջնորդ չհանդիսացավ մե- ղանում: Նրա մեջ գործում էր նույն մեղուականությունը: «Մշակի» դեմ տա- ծած հակառակությունը հետզհետե տարավ այդ թերթը, նետեց «Մեղուն» և «Նոր դար» գիրկը, մոռացնել տալով մոտիկ անցյալը, երբ այդ երկու լրա- գիրների հետ որևէ առնչություն ունենալու միտքն անգամ վերավորական էր նրա համար:

1886-ին Արծրունին բավական աղմուկ բարձրացրեց Կ. Պոլսում իր այն առաջնորդողներով, որոնց մեջ ցույց էր տալիս նախկին տարիների իր վերա- բերմունքը դեպի Կ. Պոլսի հայությունը, կրկնելով, թե դա հայրենիքից կտրը-

ված մի գաղթականություն է, թե այդտեղ ոչինչ դրական գործ չէ կատա- վում, թե թուրքաց մայրաքաղաքի հայությունը ուրիշ տեղերի հայերից ստա- նում է օգնություն, բայց ինքը երբեք փոխադարձության սկզբունք չէ ճանա- րում: Մշակական «Արևելքը» դուրս եկավ «Մշակի» դեմ մի քաղաքավարի, փաստական պատասխանով, բայց նույն «Արևելքն» էլ Արծրունու պաշտպան հանդիսացավ, երբ դոկտոր Շիշմանյան (Մերենց) «Փունջի» մեջ մի խիստ հայհուդական հոդված տպեց «Մշակի» դեմ: Արծրունին էլ պատասխանեց պո- սեցիներին և նրա պատասխանի մի կետից ծագեց ավելի երկարատև, ավելի լայնատարած մի բանակոխի: Դա տառադարձության հարցն էր, որի վերա- բերմամբ, ինչպես հայտնի է, թուրքահայերն ու ռուսահայերը ճիշտ հակոտ- նյանք են:

Բանակոխվել, երկար կամ կարճ ընդհատումներով, երկու տարի տևեց, նրա մեջ մասնակցում էր ոչ միայն Կ. Պոլիսը, այլև Վենետիկն ու Վիեննան իրանց «Բաղմավեպ» և «Հանդես ամսօրյա» ամսագիրներով: Լեզվական այդ վեճը, որ ավելի մասնագիտական հրատարակություններին էր վայելում, ահագին տեղ էր բռնում վիճող կողմերի օրգաններում: Որքան էլ Արծրունին քիչ հեղինա- կություն ունենար լեզվական հարցերում, բայց նա այնքան հետաքրքրություն մտցրեց այդ բանակոխի մեջ, որ հարցը ընթերցող հասարակության ուշադրու- թյունը գրավեց:

Եվ հարկավոր էլ չէր լեզվաբանական առանձին մասնագիտություն մի այդպիսի վեճ մղելու համար: Իրավունքը ռուսահայերի կողմն էր. նրանք հա- րազատ էին պահպանել հայկական տառերի հին հնչյունները, մինչդեռ թուրքա- հայերը ապշեցնող հակասությունների մեջ էին. նրանք, օրինակ, գրում էին «Պետրոս», բայց երբ բանը գալիս էր նույն այդ անունից գոյացած «Պետր- բուրգ» բառին, գրում էին արդեն «Քեդերպուրկ»: Բայց երկարատև վեճի ար, գլուխը այն եղավ, որ միայն Վիեննայի «Հանդես ամսօրյան» խոստովանեց ռուսահայերի արգարացի լինելը և ընդունեց նրանց տառադարձությունը. իսկ Կ. Պոլիսը մնաց իր համառության մեջ:

Միաժամանակ բանակոխվ էր մղվում Թիֆլիսի հայ լրագիրների մեջ, թե պե՞տք է արդյոք ծածկել աղգային պակասությունները, շմերկացնել նրանց հրատարակով: Վեճը բացվել էր Արծրունու այն հոդվածների առիթով, որոնց մեջ անխնա մտրակվում էին հայի պակասությունները, նույնիսկ շափազան- ցած, սաստիկ խտացրած գույներով: Արծրունու հարձակողական և վիճաբա- նական հոդվածներին հաճախ միանում են Ասիացու ֆելիետոնները, որոնք 1886 թվից ավելի շուտ-շուտ էին երևում, ավելի կծու ու խիստ էին:

Մինչդեռ վեճեր էին պտտվում այդպիսի առօրյա, երբեմն նույնիսկ երկ- րորդական հարցերի շուրջը, 1888-ի ապրիլին վախճանվեց Բաֆֆին: Արծրու- նին արժանավոր մեծարանքը մատուցեց իր նախկին երախտավոր աշխա- տակցին: Մի մեծ հոդվածի մեջ նա շատ գնահատելի տեղեկություններ տվեց այն մասին, թե ինչպես էր Բաֆֆին գրական հրատարակ դուրս եկել «Մշակի» մեջ, ինչպես և ներկայացրեց հանգուցյալի գրական գործունեության ընդհան- րապես ճիշտ բնորոշումը: Այնուհետև նա մի քանի անգամ հոդվածներ գրեց Բաֆֆիի ժառանգներին ապահովելու, նրա աշխատությունների հրատարակու- թյունների մասին, նույնիսկ բանակոխվ ունեցավ «Արձագանքի» հետ Բաֆֆիի մի հոդվածի առիթով, որ տպված էր «Մշակի» մեջ:

1888 թվականը, եթե չհաշվենք այդ տխուր երևույթը, առհասարակ շատ աղքատ էր հասարակական գործունեության տեսակետից, և ինքը, Արծրունին էլ գրում էր, որ այդ տարվա պես մի անգույն ու անպտուղ տարի հաղիվ թե

Եղած լինի: Այդպիսի մի «մեղադրանք» դժվար պիտի լիներ մանավանդ մի առաջավոր, մարտնչող խմբագրի գործը: Նրանից հարցեր էին պահանջում, բայց ի՞նչ էր տալիս կյանքը: Միայն մի երկու աննշան, տեղային հանգամանք, որոնց առիթով, սակայն, Արծրունին եռանդոտ վեճեր բարձրացրեց: Նրան գեղեցիկ կերպով հաջողվում էր կյանքի փոքրիկ երևույթների մեջ գտնել սկզբունքի կարևոր հարցեր. և ահա այդ կողմից լուսաբանելով երևույթները, կարողանում էր հետաքրքրություն շարժել, մասնավորը ընդհանուր հասարակական դարձնել:

Այդպիսի մի հարց էր այն, որ Թիֆլիսի Քամոյենց եկեղեցու երեցփոխը չէր ուզում հաշիվ տալ ծխականներին: Մի հասարակ, շատ սովորական բան մեզանում, որ աննկատելի էլ կանցներ, և թե Արծրունին իր ամբողջ եռանդով չհարձակվեր այդ երևույթի վրա: Բորբոքվեց մի կարգին բանակոխվել: Եվ չէր կարելի ասել, թե նա ավելորդ էր: Ակզբունք էր հայտարարվում, որ հասարակական պաշտոնյան պիտի միշտ հաշիվ տա իր բոլոր գործերի մասին: Երևակայեցեք, այս բանը դեռ վիճելի էր համարվում: Պետք էր կովել, պետք էր ամպացուցանել, հասկացնել: Մշակականության ծրագրի մի էական կետը դարձավ այս հաշվետվության պահանջը: Բայց հակառակ կողմը, հենց միայն մշակականությանը դիմադրած լինելու համար, քաշքշում էր, ժամծմում էր այդ արդար, շատ տարրական պահանջը: Երկար ժամանակ, ուրիշ շատ ղեկավարի առիթով էլ, երևան եկավ այս միևնույն բանակոխվելը:

Այդ բանակոխի մեջ սկսեց պարզ երևալ մի վերին աստիճանի հակակրելի սկզբունք: Ինչպես ասացինք, Մակար կաթողիկոսի հովանու տակ կադմակերպվում էր կղերականություն՝ իբրև դասակարգ, իբրև կաստա: Հայտնի է, որ այս կաստայականությունը ձգտում է միապետական կարգերի, աշխատելով խիստ կենտրոնացման միջոցով ամեն ինչ ենթարկել իր իշխանության, ոչնչացնել ժողովրդական ինքնավարական սկզբունքը: Մակարի այդ ձգտումների օրգան հանդիսացավ «Արձագանքը», որ սկսեց բացարձակ պաշտպանել խիստ կենտրոնացումը: «Մշակը», իհարկե, չէր կարող իր ամբողջ ուժով չդիմել այդ խավար սիստեմի դեմ: Նա, ինչպես և միշտ, ժողովրդի իրավունքների պաշտպան հանդիսացավ, ապակենտրոնացման, ինքնավարության կողմնակից էր և ասում էր, որ հայոց եկեղեցական վարչությունը միայն ժողովրդական սկզբունքի մեջ կարող է իր գոյության իրավունքը պահպանել, որ հայոց եկեղեցուն միշտ խորթ է եղել կղերական առանձնացած կաստայականությունը, միապետական կենտրոնացումը:

Այդ դատը պաշտպանելիս պատահեց մի փոքրիկ դեպք, որ շահազանց բնորոշ է շատ կողմերից: Ներսիսյան դպրոցի հոգաբարձրության վճռով պաշտոնից արձակվեցին երկու ուսուցիչ, որոնցից մեկն էր պ. Ավետիս Արասխանյանց՝ «Մշակի» նախկին աշխատակիցը: Սա, դժգոհ մնալով վճռից, խնդրեց կաթողիկոսին, որ քննություն նշանակվի: «Մշակը» հակառակվեց այդ բանին, պնդելով, որ հոգաբարձությունը իր իրավունքն է գործադրել: Նա ընդունում էր, որ պ. Արասխանյանց լավ ուսուցիչ է, ընդունում էր, որ բոլորովին ցանկալի չէ նրա հեռանալը, բայց անձնավորությունից բարձր դասելով սկզբունքը, ասում էր, որ նույնիսկ լավ ուսուցիչը պիտի զոհվի դպրոցական ինքնավարության անհամեմատ կարևոր ու թանկագին սկզբունքին: Վճիռը կայացած է օրինական կարգով, ձայների բազմությամբ, և պետք է հպատակվել նրան: Գպրոցի կանոնադրությունը ուսուցիչների գործն ամբողջապես հանձնել է հոգաբարձության՝ առանց կաթողիկոսի միջամտության: Եվ երբ միանգամայն օրի-

նավոր կերպով է կատարված գործը, կաթողիկոսի միջամտությունը Արասխանյանցի հարցում կլինի ձայնավորության իրավունքի, ինքնավարության խախտում:

Սակայն այսպիսի սկզբունքների վրա հիմնված վեճի մեջ իսկույն անձնակառ կրքեր խառնվեցին: Պ. Արասխանյանցը մտավ «Արձագանքի» էջերը և այնտեղից սկսեց կրքոտ բանակոխվել «Մշակի դեմ, մոռանալով, որ մի ժամանակ էլ «Մշակի» էջերից էր հարձակվում «Արձագանքի» խմբագրի վրա, կնքելով նրան ամենատղեղ անուններով: Եվ այդ բանը տեղի ուներ այն ժամանակ, երբ պ. Արասխանյանցը պատրաստվում էր հրատարակել իր «Մուրճ» ամսագիրը: Հենց այս պատճառով էլ մենք ուշադրություն ենք դարձնում այն բանակոխի վրա, որովհետև նա բավական լավ լուսաբանում էր մեր գրական բարձրը: Բանն այն է, որ Արասխանյանցը իր այդ բանակոխի մեջ այնտեղի կերպով մտցնում էր իր ապագա «Մուրճի» անունը, իսկ «Արձագանքը» հավատացնում էր, որ Արծրունին հարձակվում է Արասխանյանցի վրա նախանձից, վախենալով, որ «Մուրճը» կարող է մրցել «Մշակի» հետ: Արծրունին, իհարկե, բողոքեց այս մտքի դեմ, բողոքեց սաստիկ, ասելով, որ նախանձի ոչ մի առիթ չկա, քանի որ դեռ հայտնի չէ, թե ինչ պիտի լինի «Մուրճը» և քանի որ մի ամսագիր, ինչ էլ լինի, չէ կարող մի լրագրի դեմ մրցող հանդիսանալ: Սակայն Արծրունու հակառակորդները երբեք կովելու մի ուրիշ գեղեցիկ ընկերակցել նրա դեմ, բացի միայն հարցերը անձնական կրքերի և հաշիվների վերածելուց...

Այսպես էր բանակոխի դրությունը, երբ 1889-ի հունվարին հրատարակվեց «Մուրճի» առաջին համարը: Այդտեղ պ. Արասխանյանցն ասում էր, որ «Մուրճը» գալիս էր մի նոր ժամանակաշրջան բաց անելու, որ նրան սպասում էին, որ ամբողջ հայոց մամուլը իր անցյալում ունեցել է փոքրիշատե փայլուն մոմենտներ, բայց նրա մեջ աշխատողները շուտ սպառվել են, թուլացել են և ահա «Մուրճը» եկել է, որ ամենքին նորից կենդանացնի: Հատկապես «Մշակի» մասին նա ասում էր, թե այդ լրագիրը իր հրատարակության առաջին շորահինգ տարիներում է մի բան ցույց տվել և այնուհետև ընկել է:

Արծրունու քննական սուր հայացքի համար դժվար չէր վերլուծության ենթարկել այդ հոգվածը և պարզ ցույց տալ, որ պ. Արասխանյանց իսկապես նոր բան չէ ասում, այլ միայն կրկնում է ուրիշների ասածները: Այդ բանն ապացուցանելու համար «Մուրճի» խմբագիրը շատ փաստեր էր տվել Արծրունու ձեռքը:

Գեռ 1886 թվին Արծրունին մի գեղեցիկ հոգվածով պաշտպանեց Ստեփանոս Նազարյանցի հիշատակը գերմանացի Արտուր Լեյստի խժբժանքների դեմ, որոնք լույս էին տեսել Գերմանիայում Արգար Հովհաննիսյանի հրատարակությամբ: Այդտեղ գերմանացի հեղինակը այն աստիճանի անհեթեթություն էր հասել, որ Նազարյանցի մեղքերից մեկն էր համարում «շահազանց հակումը դեպի գերմանական գիտությունը», որի պատճառով «Հյուսիսափայլի» խմբագիրը, իբր թե, օտարացած էր հայությունից և, հետևաբար, շատ հաջողություն չունեցավ: Արծրունին գեղեցիկ կերպով հերքեց այդ անհեթեթությունները և ասաց, որ Նազարյանցի անհաջողության պատճառը ո՛չ գերմանական գիտությունն էր, ո՛չ էլ ժամանակի ոգին չհասկանալը, այլ այն, որ մեր հասարակությունը տգետ էր, չէր կարող հաշտվել նոր մտքերի հետ:

Համարյա բոլորովին միևնույն էր կրկնում Նազարյանցի մասին պ. Արասխանյանցը, ինչ ասել էր Լեյստը և նրանից առաջ՝ Նրիցյանը: «Մուրճի» խմբագրի կարծիքով, Նազարյանցը «անընդունակ եղավ ժողովրդի պահանջներն

ըմբռնել և իր միտքը մտցնել ժողովրդի խոր խորշերը: Եվ Արծրունին ստիպված եղավ նույն ծանրակշիռ, ջախջախիչ, թեև տարրական դասը տալ Արասխանյանցին, ինչ տվել էր Լեյստին:

«Մշակի» մասին ասածներն էլ Արծրունին մի հարվածով ջարդեց, ցույց տալով այն անհերքելի իրողությունը, որ յոթանասնական թվականների վերջին և ութսունականների սկզբից «Մշակը» ոչ միայն չէր բնկած, այլ բնդակառակն, իր առաջնորդողներով կատարեց մի այնպիսի դեր, որ այնուհետև երբեք այլևս չկարողացավ կատարել: Եվ առհասարակ, քննադատելով Արասխանյանցի այդ հողավածը, Արծրունին իրան հատուկ համարձակությամբ ասում էր, թե նոր խմբագիրը ստախոսություն, խորամանկություն, տգիտության բավական պաշարով է դուրս եկել: Բերելով մի կտոր այդ հողավածից, որի մեջ ասված էր՝ «Թող կատավարությունը մեր միջոցով ճանաչի հայ ազգը իր կարիքներով, իսկ հայ ազգը մեր միջոցով կռոն կառավարության գիտավորությունները նրա նկատմամբ», Արծրունին բացականչում էր. «Դա ի՞նչ բան է. արդյոք դա անսահման մեծամտություն է, թե խենթություն, արդյոք դա վերին աստիճանի անձնավատահություն է, թե ուղեղի անբուժելի տկարություն»:

Հարվածը խիստ, քայքայիչ էր նոր ամսագրի համար: Այնուհետև էլ պ. Արասխանյանցը շատ առիթներ էր տալիս Արծրունուն՝ այսպիսի անողորմ հարվածներ թափելու, Ասիացու կծու ծաղրին ենթարկելու համար...

Բանակախմբերին Արծրունին մեծ նշանակություն էր տալիս: Բանակախմբերը, ասում էր նա, մի անհրաժեշտ միջոց է ոչ միայն հասարակական հարցեր մշակելու, այլև այդ հարցերի ասպարեզում գործողների դեմքերը, ուղղությունը, դավանանքները պարզելու համար: Այդպես կարելի է ստեղծել գիտակցական վերաբերմունք դեպի հասարակական գործերը, այդ միջոցով կարելի է կենդանացնել հարցերը, առաջադիմական շարժում մտցնել նրանց մեջ:

Այս հայացքից առաջ էր գալիս կուսակցական բաժանումների անհրաժեշտությունը: Եվ դրա մեջ էլ Արծրունին ոչինչ վատություն չէր տեսնում: Ընդհակառակն: Մենք տեսանք, որ դեռ «Մշակի» առաջին տարիներում Արծրունին անհրաժեշտ էր համարում կուսակցությունները: Անտարբեր, անսկզբունք ուղղությունը մեզ պես մի ազգի մեջ միայն ցավ ու դժբախտություն կարելի է համարել: Ամեն տեղ կենդանությունը իրար հակառակ հոսանքների, հակառակ ուղղությունների շփումից է առաջ գալիս:

«Մշակը», ինչպես հայտնի է, միշտ մի որոշ, խիստ պարզ արտահայտված կուսակցություն է ներկայացրել: Բայց այդ կուսակցությունը այժմ միայն կազմակերպվում էր անմիջապես կյանքի մեջ՝ հասարակական ասպարեզում գործելու, պայքար մղելու համար: Այդպիսով նա հարկադրում էր, որ մյուս, հակառակ կուսակցություններն էլ կազմակերպվեն, հանդես գան կյանքի մեջ իբրև դեմադրողներ:

Առաջին փորձը, որ տանում էր մշակական կուսակցությունը դեպի այդպիսի գործնական պայքար, տալիս էր Հրատարակչական ընկերությունը: Այդ համակրելի հիմնարկությունը, անընդունակ ղեկավարների պատճառով, հասել էր անկման այն աստիճանին, որ ուներ ընդամենը 13 անդամ, մինչդեռ նրա գործադիր մարմինները պետք է բաղկացած լինեին 14 հոգուց: Օգտվելով այն հանգամանքից, որ 1889-ին պիտի կայանար ընկերության ընդհանուր ժողովը, մշակական երիտասարդների մի խումբ վճռեց գործնական կոխմը մղողներն այդ ժողովի մեջ՝ մեռած, գրեթե գոյություն չունեցող հիմնարկությունը կենդանացնելու համար: Մեռելություն պահպանողը «Արձագանքի» մարդիկն էին, որի խմբագիրը այդ դժբախտ ընկերության վարչության նախագահն էր:

Մկավեց մի աշխույժ, կենդանի բանակախմբի «Մշակի» և «Արձագանքի» մեջ: Մեկը անխնա հարվածում էր ընկերությունը գործունեությունը, պահանջում էր, որ Հրատարակչական ընկերությունը դուրս դա իր քարացած գրությունից, դրբեր տա հասարակության, մյուսը կառավարման պիտի պաշտպաններ իր ընդունակությունը, գոհացուցիչ համարեր այն ուղղությունը, որի շնորհիվ կարևոր ընկերությունը համարյա ոչ ոքին հայտնի չէր, հրատարակում էր այնպիսի գրքեր, որոնք չէին կարող ոչինչ հետաքրքրություն զարթեցնել:

Այդ բանակախմբերը առաջին քայլն էր: Արծրունին անմիջապես չէր մասնակցում նրան, այլ գլխավորապես ղեկավարում էր իր կուսակցության պայքարը: Ինչպես երևում է «Հասարակությունը և մամուլը» առաջնորդողից, նա նույնիսկ շատ հոռետես վերաբերմունք ուներ դեպի այդ գործնական կոխմը հասարակական ասպարեզում: 17 տարվա փորձը նրան բավականաչափ նյութ էր տվել հուսախաբվելու, կասկածով վերաբերվելու համար: Եվ նա գրում էր.

«Գոնե մեր հասարակական կյանքի ամենավերջին երևույթները մեզ ապացուցին, որ մեր մամուլի համար մեր հասարակության հետ ձեռք ձեռքի տված ընթանալ որևէ հարցում՝ անհնարին է, և «Մշակը» շատ լավ է անում, որ իրան հեռու է պահում ամեն տեսակ հասարակական ընթացիկ հարցերին վերաբերյալ ազդեցիկներից, և մերժում է այդ հարցերին գործնականապես մասնակցելու»:

Բայց սա հաստատ ու անխախտելի մի վճիռ չէր Արծրունու համար: Նա գրել էր այս տողերը, քանի որ, ինչպես ինքն էր ասում, չգիտեր, թե կա՞ հասարակության մեջ մի փոքրիշատե կազմակերպված տարր, որ գնար հրապարակախոսության հետ իբրև հաստատ մի կուսակցություն: Դեպքերը շատ շուտով ցույց տվին, որ կա այդպիսի մի տարր: Այն ժամանակ արդեն Արծրունին ավելորդ համարեց «փառահեղ առանձնությունը» և մտավ գործնական պայքարի ասպարեզը իբրև մի մեծ և ուժեղ կուսակցության առաջնորդ:

1889-ի ամառը պիտի բացվեր Փարիզի համաշխարհային ցուցահանդեսը և այդ ժամանակ էլ պիտի գումարվեր «գրողների միջազգային» կոնգրեսը: Ապրիլին ես տեսնվեցա Արծրունու հետ: Խոսակցության մեջ նա հայտնեց, որ հրավեր է ստացել մասնակցելու այդ կոնգրեսին, բայց Փարիզ գնալու միջոցներ չունի: Իսկ Փարիզում լինելու, միջազգային կաճառին հայոց գրականությունը ներկայացնելու ցանկությունը մեծ էր: Ինձ նա ասում էր, որ հայերը սովոր են իրանց գործիչների դազադի վրա մեծ ծախսեր անելու, պսակներ դնելու, հեռագիրներ, պատգամավորություններ ուղարկելու՝ թաղման հանդիսավորության համար. ինքը, ինչպես մի հայ գործիչ, շատ գոհ կլինեիր, եթե հայերը իր գերեզմանի վրա անելիք ծախսերը այժմ տալին իրան, որպեսզի կարողանար գնալ Փարիզ:

Եվ այս անգամ Գրիգոր Արծրունու այդ միակ ցանկությունը անտես չարին Թիֆլիսի հայերը: Նրանք մի գումար դրին նրա տրամադրության տակ, և նա հասավ կոնգրեսի նիստերին, մի ղեկուցում ներկայացրեց հայերի մտավոր շարժման և քաղաքակրթական ձգտումների մասին: Միջազգային համաժողովը մի գեղեցիկ առիթ էր, որ Արծրունին ծանոթանա շատ նշանավոր մարդկանց հետ:

Հունիսի 27-ին կոնգրեսի վերջին, փակման նիստն էր: Նախագահում էր հռչակավոր պետական գործիչ Ժյուլ Սիմոնը: Այդ նիստում Արծրունին, նախագահի թույլտվությամբ կարգաց իր հետևյալ ճառը.

«Ես արդեն պատիվ ունեցա, պ. նախագահ, ներկայացնել ժողովին իմ կարճ ղեկուցումս ուսահայոց արդյան գրականության մասին, որը և տպա-

գրվեց, այժմ թույլ տվեք ինձ, ժողովի փակման բոսպին, ավելացնել այդ ղեկուցմանը հետևյալ խոսքերը: Մի հայ հրապարակախոս-գրողի ներկայութիւնը ձեր շրջանում ապացույց է, մի կողմից, այն համակրութեան, որը միշտ ունեցել են հայերը դեպի եվրոպական ամեն տեսակ մտավոր շարժում, իսկ մյուս կողմից ապացույց է ձեր համակրութեան դեպի հայերը: Ես արդեն պատիվ ունեցա ասել իմ կարճ ղեկուցման մեջ, որ ինչպես շորթորդ դարում հայերը միակ արևելյան ազգութիւն էին, որը խելք ունեցավ քրիստոնեանութիւնն ընդունելու, այնպես էլ տասնևիններորդ դարում դրանք միակ ազգութիւնն են ամբողջ Ասիայում, որը իր բազմաթիւ դպրոցներով, իր նորահաս գրականութեամբ, իր նորահաս լրագրութեամբ, իր ազգային թատրոնով, եվրոպական նշանավոր գրվածքների իր բազմաթիւ թարգմանութիւններով, խելք ունեցավ հասկանալու եվրոպական քաղաքակրթութեան հարվելու, այդ քաղաքակրթութեան մասնակցելու անհրաժեշտութիւնը: Այժմ Կովկասյան հայերի մի մեծ խմբի անունից, նմանապես հայոց մամուլի մի օրգանի անունից, որը ես ինքս հիմնեցի և ղեկավարում եմ 17 տարի շարունակ, ես պատիվ ունեցա գալ իմ հեռավոր երկրից, որպեսզի ողջունեմ գրողների միջազգային կոնգրեսը, որը գումարված է համակրելի Փարիզում, Յրանսիայի համակրելի նախաձեռնութեամբ, և որին նախագահում է մի հռչակավոր մարդ, որը ոչ թե միայն Յրանսիայում, ոչ թե միայն միջազգային եվրոպական գրականութեան մեջ, այլև մեզ մոտ, հեռավոր Ասիայում, կրում է մի փառավոր անուն: Դուք ինձ պատիվ արեցիք, պարոններ, մասնակցել տալով ինձ կոնգրեսի աշխատանքներում և այժմ, երբ կոնգրեսը փակվելու վրա է, ես կվերադառնամ հայրենիքս, հետո տանելով ամենագեղեցիկ հիշողութիւններ Ֆրանսիական հյուրասիրութեան մասին, հետո տանելով և այն համոզմունքը, որ դուք անուշադիր շեք դեպի հայոց գրականութիւնն ու հայերի մտավոր շարժումը և ես թույլ եմ տալիս ինձ ամենազերմ տենչանքներս հայտնել, որ Ֆրանսիական հանձարը, միացած միջազգային գիտութեան և գրականութեան ամենալավ ուժերի հետ՝ մեզ միշտ ղեկավարե, միշտ փայլե մեզ համար, որպես մի ղեկավարող, մի լուսատու փարոս: Իմ համակրութեան և ղգացմունքներս հայտնելուց հետո, շեմ կարող ձեզ շնայտնել և ընկերակիցներիս, կոնգրեսի օտարազգի անդամների կողմից նույն համակրութեան ղգացմունքները: Կոնգրեսում ներկա գտնվող օտարազգի անդամների անունից էլ ներկայացնում եմ ձեզ մեր բոլորիս երախտագիտութեան ղգացմունքը ձեր հյուրասիրութեան համար և նրանց անունից էլ ջերմ ցանկութիւններ եմ հայտնում մեր ապագա կոնգրեսների հաջողութեան համար»:

Այս ճառի թողած տպավորութեան մասին Արծրունին գրում է.

«Ես բախտավոր եղա տեսնելու, որ խոսքերս մեծ համակրութեամբ ընդունվեցան ժողովականներից, բայց մանավանդ շատ բախտավոր եղա, լսելով նախագահ ժյուլ Սիմոնի բերանից հետևյալ կարճ պատասխանը իմ խոսքերին, երբ ես նորից գրավեցի իմ բազկաթոս դահլիճում.

«Ամեն անգամ,— ասեց ժյուլ Սիմոն,— երբ հայ ազգի ներկայացուցիչներից մեկը Ֆրանսիական որևէ ժողովում ներկա է գտնվել, մենք միշտ արտահայտել ենք նրան մեր համակրութիւնը հայոց ազգի անցյալի և ներկայի վերաբերմամբ և այժմս էլ մեր ամենաջերմ ցանկութիւններն ենք արտահայտում հայերի ապագա մտավոր ղարգացման համար»:

ժյուլ Սիմոնի այս խոսքերը ընդունվեցան ժողովականներից որոտալից ծափահարութիւններով:

Ճաշկերութիւց հետո,— գրում է Արծրունին մի ուրիշ տեղ,— մտանում է ինձ գեղեցիկ և արտահայտիչ դեմքով մի երիտասարդ, տալիս է իր անունը, հայտնելով, որ ինքն իրավաբան և իրավաբանական հայտնի ամսագրի խմբագիր է և դիմում է ինձ հետևյալ խոսքերով.

«Կոնգրեսի այսօրվա փակման նիստին ես ուրախութեամբ լսեցի ձեր ճառախոսութիւնը, որից իմացա, թե դուք արևելցի եք, հայ եք: Դուք, պարոն, պատկանում եք մի արևելյան ազգին, որը կարող է պարծենալ երեք հազար տարվա հնադարյան քաղաքակրթութեամբ, և դուք բարոյապես վերածնվում եք այժմ, իսկ մենք, Ֆրանսիացիներս, թե բարոյապես և թե քաղաքականապես արդեն անկման մեջ ենք գտնվում...»:

Համաշխարհային մայրաքաղաքի ամբողջ կյանքը, մանավանդ ամբողջ երկրագնդի տնտեսական, արդյունաբերական հանձարի այն շքեղ տոնը, որ ցուցահանդեսն էր ներկայացնում, թարմացնող տպավորութիւնները շատ աղբեցին Արծրունուն: Նա ապրեց այդ կարճ միջոցում եվրոպական խոշոր մտավոր կենտրոնում, ճաշակելով քաղաքակրթութեան, ազատութեան բարիքները: Բայց ոչ ետև կյանքը իր անհամար տպավորութիւններով, ոչ բազմաթիւ ծանոթութիւնները եվրոպայի այլևայլ ազգերի ներկայացուցիչների հետ մոռացնել շտվին «Մշակը» և նա միջոց էր գտնում կանոնավոր, մանրամասն, միմյանց հաջորդող թղթակցութիւններ ուղարկել իր լրագրին: Դրանք մի երկար շարք են կազմում՝ «Փարիզից» և «Տպավորութիւններ» վերնագրերով: Ցուցահանդեսը, Ֆրանսիական կյանքի և բնավորութեան արտահայտիչ կողմերը մանրամասն կերպով նկարագրված են այդ մեծ հողվածների մեջ: Սակայն Արծրունին առաջին անգամ չէր այդքան մանրամասն նկարագրում եվրոպական կյանքը: Վերադառնալով Շվեյցարիայից և վերսկսելով «Մշակի» հրատարակութիւնը, նա «Մի տարի Շվեյցարիայում» վերնագրով հողվածների մեջ տվեց շվեյցարական կյանքի մանրամասն նկարագրութիւնը:

Թարմ տպավորութիւններով, ուրախ ու գոհ սրտով նա վերադարձավ Փարիզից և միևնույն եռանդով նվիրվեց իր «Մշակին»: Սեպտեմբերին Քիֆլիսում բացվեց գյուղատնտեսական ցուցահանդեսը. այժմ Արծրունին նույնպիսի ուշադրութեամբ նկարագրում էր այդ համեստ ձեռնարկութիւնը, որի մեջ արդեն մեր երկիրն էր իր գործունեութիւնը, իր կուլտուրան հանդես բերել:

III

Փսանեհիցամյա հորելյան: Հակառակորդների վերաբերմունքը: «Ճարագի» հորելյանական համարը: «Մշակ-աղա»: Մայիսի 6-ի տոնախմբությունը: Պատգամավորություններ և ուղեծներ: Արծրունու նաղը: Քատրոնական ներկայացում: Երիտասարդության նաղը մայիսի 10-ին: Հանապարհորդություն ներկայան նահանգում: «Համակրութեան փվե»:

Փարիզում ճաշակած հոգեկան քաղցր բավականութիւնը, որ արդյունք էր հասարակութեան կողմից գործով ցույց տված համակրութեան, մի նախադուռ էր, որ մտցնում էր Գրիգոր Արծրունուն բարոյական մեծ հաղթանակների ավելի գեղեցիկ, ոգևորիչ մի աշխարհի մեջ: Եկավ 1890 թվականը, որ Արծրունու կյանքի ամենաքաղցր տարին էր:

Ապրիլի 24-ին «Մշակի» մեջ տպված «Բաց նամակ Գևորգ Չմշկյանին» հողվածը Արծրունին սկսում էր այսպիսի տողերով. «Մինչև այժմ մի բան

չեմ կարող ինձ բացատրել. ի՞նչ է պատահել, որ հանկարծ թիֆլիսի հայոց ամբողջ մամուլը իմ վերաբերմամբ սկսել է հին դարմանը քամու տալ: Ասենք շատ էլ դժվար չէր հասկանալ, թե ինչ է պատահել: Պատճառը շատ լավ հայտնի պիտի լիներ, թե Արծրունուն և թե նրա երգվյալ թշնամիներին: Այդ իսկ միջոցում պատրաստություններ էին տեսնում Արծրունու գրական գործունեության 25-ամյա հոբելյանը տոնելու: Դա իսկ որ մի պատահաք էր «Արձագանքի» համար: Եվ լավ զգալով, թե ինչ շահեր պիտի ընդունի այդ գրական տոնախմբությունը, շաբաթաթերթը աշխատում է, զոնն թունավորել, որքան կարելի է, հանդեսը: Պետք էր, զոնն սեփական անձի միջնորդությամբ համար, ցույց տալ, որ Արծրունին մի առանձին բան չէ գրական ասպարեզում: Եվ որովհետև տոնվում էր ոչ թե «Մշակի», այլ նրա խմբագրի 25-ամյակը, ուստի հարկավոր էր հասկացնել հասարակության, որ Գրիգոր Արծրունին ոչնչով հայտնի չէր մինչև «Մշակի» հրատարակությունը և «Մշակին» էլ նա չի հիմնել և առաջին տարիները պահպանել, այլ մի խումբ մարդիկ: Այդ մըտքով էլ պ. Գ. Զմշկյանը հոգիված գրեց «Արձագանքում»՝ վկա կանչելով պ. Պոռչյանին: Միաժամանակ «Արձագանքը» ասում էր, որ Արծրունին մի թզուկ է: Արծրունին խիստ, անողոք ոճով պատասխանեց Զմշկյանին էլ, Պոռչյանին էլ, ապացուցանելով, թե որքան պատվական հեքիաթների հնարել գրտեն նրանք: Բայց առանց այդ բացատրությունների էլ թշնամությունը կատարելապես ոչինչ չկարողացավ անել հոբելյանը խանգարելու կամ նույնիսկ նսեմացնելու համար: Տոնախմբության նախաձեռնությունը պատկանում էր «Տարազ» ամսաթերթի խմբագրությանը. պ. պ. Տիգրան Նաղարյան և Ղազարոս Աղայան գործի կազմակերպության բոլոր հոգսերը հանձն առան: Ընտրվեց մի հատուկ հանձնաժողով, որ հրավերներ ուղարկեց ամեն տեղ: Հոբելյանի տոնախմբությունը նշանակված էր մայիսի 6-ին: «Մշակը» այդ պատրաստությունների մասին կատարյալ լռություն էր պահպանում: Բայց գրականության և մամուլի մեջ սպասվող տոնը արտահայտություն էր գտնում նույնիսկ դեռ շտեմնված շահով: Հոբելյանական օրին հարմարեցրած երկու առանձին հրատարակություններ դուրս եկան, որոնք Արծրունու կենսագրությունն ու գրական գործունեության պատկերն էին ներկայացնում. մեկը գրել էր «Արձագանքի» աշխատակից Ալեքսանդր Երիցյանը, մյուսը՝ «Մշակի» աշխատակից Խաչատուր Մալումյանը: Երիցյանը իր աշխատության մեջ, որի վերնագիրն էր «Գրիգոր Արծրունու և նրա 25 տարվա գրական գործունեության առիթով», մանրամասն տեղեկություններ էր տալիս Արծրունու տոճի մասին և պատմում էր Գրիգորի կյանքն ու գործունեությունը մինչև 1872 թվականը: Իսկ Մալումյանի աշխատությունն ուներ «Մտքի մշակը» վերնագիրը. այդտեղ արդեն Արծրունու ամբողջ 25-ամյա գործունեությունն էր պատկերացրած:

Բացի դրանից, «Տարազի» մայիսի համարը ամբողջապես բաղկացած էր Գրիգոր Արծրունուն և «Մշակին» նվիրած հոդվածներից: Եթե կատաղի թշնամությունը, — միշտ անզոր, միշտ մեռնակ, սահմանափակված նեղ շրջանում, — անվանում էր «Մշակի» խմբագրին թզուկ, ոչնչություն, ընթերցող հասարակության ահագին մեծամասնությունը վաղուց սովորել էր համարել նրան մի հզոր, փայլուն միտք, լույսի և առաջադիմության առաջյալ: Այդ հասարակական տրամադրությունն էին արտահայտում «Տարազի» հոդվածագիրները: Թե ինչպես էին հասկանում «Մշակի» նշանակությունը այն խավերը, որոնք պատրաստվում էին տոնել 25-ամյա հոբելյանը, երևում է «Տարազի» առաջի հոդ-

վածքից, որ, ինչպես կարելի է ենթադրել, պատկանում էր Ղ. Աղայանցի գրչին: Ահա ինչ էր ասված այդտեղ.

«Մի ժողովուրդ, որ հորթի գլուխ պաշտելու շափ ստոր դարգացման վրա է, նրա միտքը Եհովայի բարձրությանը չի հասնիլ, եթե շունենա Մովսեսի պես մարգարե: Ո՞վ պիտի կատարե մարգարեի դերը, ո՞վ պիտի լուսավորե ժողովրդի միտքը, ո՞վ պիտի տա ժողովրդի գիտություն պատգամները, եթե ոչ լուսամիտ հրապարակախոսությունը, եթե ոչ և առողջադատ գրականությունը: Ահա այդ գրականության գլուխ է անցած Գ. Արծրունին շարունակ 25 տարի և ձայն ու եղանակ է տալիս հրապարակական խոսքին: Եթե մենք այսօր չպատվենք Գ. Արծրունուն, ապա սերունդը կպաշտի նրան, համարելով նրան մի լուսամիտ հանճար, իսկ նրա ժամանակակիցներին, որոնք չեն հասկացել նրա արժանավորությունը, խավարամիտ: Բայց ի՞նչ է նշանակում խավարամիտ մամուլը խավարամիտ բառի նշանակությունը ծուռ է ըմբռնում, որովհետև խավարամիտ է: Խավարամիտ մամուլն ասում է. «Ամենայն միտք, որ խավար մտքին մատչելի չէ, նա խաղար է», և ասողը խավարամիտ... Այս խավար տրամաբանությունից դուրս է գալիս, որ Գալիլեյը խավարամիտ էր, որովհետև խավարամիտները նրան չէին հասկանում: Եթե այս աստիճան խավարամիտ չլիներ «Մշակի» հակառակորդ մամուլը, մենք պ. Արծրունուն մինչև երկինք չէինք բարձրացնի: Խավարամիտ մամուլի հրեշտական դատողությունը լսելուց հետո «Մշակի» ամենախոշոր սխալներն անգամ ջնջվում, սրբվում են: Այս առասպելական շարաճճի պիգմեյների համեմատությամբ: Արծրունին հանդիսանում է իբրև մի Հերքուլես և արժանի ամենայն պատվի և փառավորության: Եթե նախքան «Մշակը» և նրա ժամանակակից մի շնորհքով լրագիր ունենայինք, շնորհքով հրապարակախոսություն, «Մշակը» այլևս չէր հանդիսանա այսօր իբրև մի լուսատու արեգակ, որի շուրջը պտտվում է խավարամիտ մամուլը իբրև մի խավար մոլորակ: Պատվում ենք Արծրունուն, որովհետև շնորհքով լրագրություն տվեց մեզ, որով կարող է պարծենալ ամեն մի հայ: Ամենքս կարող ենք ասել, որ ուսահայերս մի հատիկ լրագիր ունենք միայն, մի հատիկ հրապարակախոս. ամենքիս ականջը ուղղված է դեպի այդ լրագիրը, դեպի Արծրունու հրապարակախոսական խոսքը, դեպի նրա տրամադրությունն ու տրամադրելը ժողովրդին այս կամ այն ուղղությամբ: «Մշակը» հայ ուսմիկ դասակարգի և զարգացած լուսամիտ երիտասարդության փափագած և սիրած օրգանն է: Գրիգոր Արծրունին իբրև իր գործին քաջամուտ, իբրև բարեխիղճ, ազնիվ և ժիր մշակ, ահա քսանհինգ տարի է, որ շարունակ մշակում է մեր ազգի բարոյական զարգացման անդամսանը: Գին շղնել այդ աշխատությանը, այդ ջանքին, շխտախուսել, շղեկորել նրան, կնշանակի գոհհիկ և ապերախտ բարբարոս լինել, չհասկանալ ոչ իր պատիվը, և ոչ իր գինը: Եվ ո՞վ կուղենա այդ աստիճան ստորանալ, եթե ոչ միայն խավարամիտը, որ աչք ունի և չի տեսնում, ականջ ունի և չի լսում, և աչք ու ականջ խփած՝ ժողովրդին առաջնորդում է դեպի «խավարն արտաքին», դեպի հորթապաշտություն»:

«Տարազի» մյուս հոդվածներն էլ նույն հանգամանքներն էին շեշտում, նույն ոգևորությամբ էին տողորված: Նույնիսկ մեր հռչակավոր Պետրոս Աղամյանը, չնայած որ հիվանդ պառկած էր Կ. Պոլսում, ուղարկել էր մի ոտանավոր-ուղերձ: Սրտառուչ էր մանավանդ պ. Վ. Փափազյանի «Մշակ-աղա» փոքրիկ գրվածքը: Դա պատկերացնում էր, թե ինչ անուն ու նշանակություն ուներ «Մշակը» թուրքաց Հայաստանի գլուղացի ազգաբնակչության մեջ: Իր ճանա-

պարհորդութեան ժամանակ պ. Փափազյան Բասենի Քչոփրի-քչոյ գյուղի մոտ հանգստանալիս, ձեռքին բռնած է ունենում «Մշակի» մի համարը: Մոտիկ դարբնոցում գտնվող վեց գյուղացիներ ուշադրություն են դարձնում նրա վրա և խոսակցութիւն են սկսում: Մեկը տիրացու էր: Նայում է Փափազյանի ձեռքում գտնվող լրագրին, մի կերպ կարդում է «Մշակ» բառը:

«Հետո,— պատմում է պ. Փափազյան,— հանկարծ մի աղաղակ արձակեց և բռնելով իր մոտ նստող գյուղացու կողքը, գոչեց.

— Աշն, քավո՛ր Սարգիս, աշն, ասիկ ալ անկից է, աշն, «Մշակ» է գրած...

— Հա՛, տո՛, — գոչեցին բոլորը և միմյանց մոտ սեղմվեցան:— Մշակաղայի գրածն է ասիկ...

Ես զարմացա. այդ գյուղացիք որտեղի՞ց գիտեին «Մշակը»:

— Ջանիդ դուրբան, տիրացու,— գոչեց գյուղացիներից մեկը,— ասիկ Մշակ-աղան է տվեր քեզի:

— Հատ մ'ալ Մկլօն ունի. անոր Մշակ-աղան է տվեր,— ասաց մի ուրիշը.— ո՞ր է, Մկլօ, հանե սա հայու բուզնամեն (լրագիր)... անանկ ոնդիկ-ոնդիկ (լավ-լավ) բաներ կան մեջն օ՛ր...

Մկլօն ծանրութեամբ ձեռքը ծոցը կոխեց, հանեց այնտեղից մի կարմիր կապոց, բաց արավ և պատկառանք ինձ պարզեց մի շորս ծալած 79 թվականի դեղնած «Մշակ»:

— Կարդա՛, տիրացու,— խոսեց նա լուրջ դեմքով,— Մշակ-աղան է տվեր ինձի... քեզի ալ ան է տվեր ա՛...

— Արծրունի՞ն է տվեր քեզ:

— Արծրունին ո՞վ է. Մշակ-աղան, ըսի. կարճ բոյով, սանկ երկար մորուքով մարդ է, աչքերուն գոգլուկ (ակնոց)... սանկ խոշոր-խոշոր աչքեր... ես անոր դուրբան...

— Գրիգոր Արծրունին է այդ:

— Չէ՛, ըսի ա՛... Մշակ-աղան է կրսեմ... ա՛յ, պատմեմ լսե՛, տիրացու...»

Բանից դուրս է գալիս, որ գյուղացին եղել է Քիֆլիսում, հիվանդացել է, օգնություն է ստացել Արծրունուց, որ տվել է նրան և մի հատ «Մշակ»: Շարունակե՛ք խոսակցությունը.

«— է,— հարցրի ես,— այդ թերթը ի՞նչ օգուտ տվավ քեզ, ինչո՞ւ ես պահել:

— Ասի՞կ... կարգամ կը, անանկ ոնդիկ-ոնդիկ բաներ կան մեջն օ՛ր... մեզ վրա խոսի կը, մեզի սիրտ կուտա կը... մեռնե՛մ ես ասոր սրտին... Բասենի մեջ ո՞վ չի ճանչնար Մշակ-աղային...

...Ես նրանց փոքր ինչ սկսեցի խոսել «Մշակի» մասին, հետո հանեցի պայուսակիցս պատկերների ալբոմս և ցույց տվի նրանց Գրիգոր Արծրունու պատկերը: Բոլորը շրջապատեցին ինձ. այժմ շուրջ քսան հոգի էին, մինչև իսկ դարբինն իր գործը թողել՝ մոտեցել էր Մշակ-աղայի պատկերը տեսնելու:

— Հա՛... ըշտե ասիկ է Մշակ-աղան,— գոչեց հուզմամբ գյուղացին, հափշտակեց պատկերը, նայեց, երկա՛ր նայեց և զգուշութեամբ ետ տալով ինձ, ասաց...

— Ըշտե ասիկ է որ կա...

— Տո՛,— գոչեց դարբինը գլուխը մի գյուղացու թևի տակից ներս մըտցրնելով,— ասիկ սրբազանի նմանի կը...

— Հասպա՛,— գոռաց տիրացուն,— ես լսել եմ, Հայրիկի աղբոր մանչն է...

— Ի՞նչ կրսես, տո՛,— մեջ մտավ մի ուրիշը,— ասիկ սրբազան է... աշն՛, ի՛նչ մորուք ունի, ի՛նչ աչքեր...

— Կրսես խոսի կը,— ասաց շորքորդը:

Եվ պատկերը երկար ժամանակ ձեռք ձեռք պտտեց, հետո ինձանից խընդրեցին թույլ տալ, որ տանեն գյուղը:

Պատկերը վերադարձնում են մի ժամից հետո: Իսկ երբ պ. Փափազյանը ճանապարհ է ընկնում, մի գյուղացի երիտասարդ վագում է, հասնում նրան և ասում.

«— Ներե՛, տիրացու, գյուղի մեջ ըսին, որ դուն Մշակ-աղային բովը կերթաս կը... Ղուրբան քեզի, Մշակ-աղային ըսե, որ մենք շատ խեղճ ենք, մեզի շա՛տ նեղություն կուտան, մեր հոգին հանեն կը... Ղուրբան քեզի, ըսե որ, սաղ ունեցածնիս կուտանք, շենք խալթսի (աղատվիլ), ըսե, որ մեր հավատը կըքֆրեն (հայհոյում են)... մեզի... ա՛խ, ի՛նչ ըսեմ, տիրացու, ըսե, ինչ որ կը տեսնաս»:

Մենք ունենք մի ուրիշ, ավելի հեղինակավոր վկայություն, որ զարձյալ «Մշակի» զարմանալի ժողովրդականությունն է ցույց տալիս: Այդ վկայությունը Ռաֆայել Պատկանյանի գրչին է պատկանում և տպված է... «Արձագանքում», միայն ոչ թե կույր թշնամության ժամանակների «Արձագանքում», այլ ավելի առաջ, 1887-ին: Ահա մեր նշանավոր բանաստեղծի խոսքերը.

«Ո՞վ չի ճանաչում «Մշակը». ո՞ր հայը դոնե շաքաթը մի անգամ ձեռք չի առնում նորան, ցանկալով իմանալ, թե ինչ է գործվում յուր թեև հեռավոր, բայց հարազատ հայրենիքում. «Մշակն» եմ ասում, որի ազդեցությունը ցայն աստիճան էական է, որ կա մի ամբողջ բաղամարդ ժողովուրդ, որը փոխանակ ասելու հայոց առևելյան կամ արարատյան բարբառ, ասում է «Մշակի լեզու»:

Ահա այսքան մեծ ժողովրդականությունը մի գրավական էր, որ մայիսի 6-ի հոբելյանական տոնախմբությունը մի ընդհանուր ազդային կերպարանք կընդունե: Այդպես էլ եղավ:

«Ժամը 12-ին գնացի «Աղբյուրի» խմբագրատունը,— պատմում է ակադեմիկոս պ. Կ. Տյուրեյանը:— Այցելուաց ահագին բազմություն կվստար և կերթեկեր այնտեղ: ...Խմբագրատունն այն օր ուխտատեղու կերպարանք էր առեր. ամեն կարգի, հասակի և սեռի անձինք կերևային այնտեղ: Դահլիճին սեղաններուն վրա դիզված էին Արծրունուն ուղարկված ընծաները, որոնց թիվը քառասունը կանցներ: Ուղերձները կընկերանային ընծաներուն:

Ճաշի երթալեն առաջ՝ ես պարտավորություն համարեցա առանձին կերպով շնորհավորել պր. Արծրունին իր բնակարանի մեջ և ահագին բազմություն գտա այնտեղ: Այս շնորհավորողներուն շարքին մեջ ամեն դասակարգ ունի իր ներկայացուցիչը*»:

Քիֆլիսի հայ հասարակության կողմից հանդիսավոր ճաշկերույթ էր պատրաստված Ամարային կլուբի այգում: Բաղմաթիվ ցանկացողներից միայն 300 հոգի կարողացան տոմսակ ստանալ: Մի հատուկ պատգամավորություն գնաց Արծրունու բնակարանը և նրան հրավիրեց ճաշի:

«Ժամը 2 1/2-ին արդեն մեծ բազմություն խոնիր էր ամառնային ժողո-

* «Ճանդեմ ամսօրյա», 1890, կր. 188:

** Շնորհավորողների մեջ էին Քիֆլիսի նահանգապետ իշ. Շերվաչիճեն, որ եկել էր իր և կովկասի կառավարչապետի օգնական գեներ. Շերվաչիճենի կողմից, ցենզորական կոմիտեի, նահանգական դատարանի նախագահները և ուրիշ պաշտոնյաներ:

վարանին մեջ: Սեղանակառնները հետզհետե կլսմբովեն: Ճաշկերույթի ընդար-
ձակ դաճիճն զարդարված էր ծաղիկներով և կանաչ ոստերով, որոնց վրա
կպարզվելին «Մշակ» և «25»: Իսկ սեղանի գլխին, դահլիճի ճակատն, կախված
էր Արծրունովո մեծագիր պատկերը՝ ծաղկապատ: Պատկերին տակ փառավոր
թիկնաթոռ մի էր պատրաստված Արծրունովո համար: Ժամը 3-ն էր ճիշդ:
Պարտիզին դռնն մտած ժամանակ՝ Արծրունին իր դիմաց տեսավ 300 հոգի,
որոնք «Կեցցե Արծրունի» ձայնով ողբ կթնդացնեն: Արծրունին մտեցավ և
մի առ մի սկսավ բուրբին ձեռքը սեղմել:

Նստանք սեղան: Արծրունովո աջ կողմը բազմած էր հանձնաժողովուն և
ճաշուն նախագահ պ. Աղ. Անանյան. իսկ ձախ կողմն՝ ազնվականության ներ-
կայացուցիչն՝ իշխան Մաղալով (վրացի): Այնտեղ էին հայ, վրացի և ռուս
լրագրաց խմբագիրներն. ամեն դասակարգ ուներ իր անդամներն: Իսկ ես
նստած էի հրեա հասարակության պատգամավորին՝ Տփիսիսի օրհորին քով:
Հատուկ պատգամավորություններ ուղարկվել էին Բագուից, Բալասանի-
ից, Գանձակից, Շուշուց, Բաթումից, Մոսկվայից: Մտացվել էին 150 շնորհա-
վորական հեռագիրներ զանազան հասարակական հաստատությունների, հոգե-
վորականների, մասնավոր անձանց և խմբերի կողմից: Բացի դրանից՝ բազ-
մաթիվ ուղերձներ: Թանկագին ընծաների թիվը 40-ից անց էր: Ուշադրություն
էր գրավում Վասպուրականցի հայերի մատուցած խորհրդավոր ընծա-
պատկերը:

Պաշտոնական կենացներից հետո սեղանի կառավարիչը (որ իշխան Ամա-
տունին էր... ժամանակները փոխվում են) առաջարկեց հորելյարի կենացը:

«Այս բաժակն էր ամբողջ հանդեսին նպատակը, ընդհանուր սպասված
վայրկյանին և հորելյանին էական կետը: Ամենքը ոտքի վրա էին. բաժակն
ի ձեռին աղմկալի կեցցեններով կղիմեին դեպի հանդիսագիրն հորելյանավոր:
Ոգևորությունն ընդհանուր էր: Արծրունին ի բնե կարճահասակ՝ այժմ կատա-
րելապես ընկղմված էր գինքը շրջապատող շնորհավորողներու խմբին մեջ,
հարյուրավոր բաժակներ կտեղային իր վրա, որոնց դեմ ինքն այլևս մեքե-
նաբար ծափ կուտար յուր բաժակը»:

Կարդացվեցին հասարակական խմբերից, հաստատություններից, խմբա-
գրություններից և այլ աչքի ընկնող անձանց շնորհավորական հեռագիրներն
ու ուղերձները: Հերթը հասավ Արծրունուն: Նա ոտքի կանգնեց, զգացված գեմ-
քով արտասանեց մի ճառ, որի մեջ խտացրեց իր ամբողջ դավանությունը:
Բերում ենք այդ ճառն այնպես, ինչպես նա տպված է «Մշակի» մեջ.

«Արտահայտելով մեր խորին շնորհակալությունը հասարակության ըն-
դունելության և հյուրասիրության համար, թող մեզ ներվի, որպես խոստո-
վանք, բացատրել այն ուղղությունը, որին մենք միշտ հետևել ենք մեր քսանե-
հինգ տարվա գրական գործունեության ընթացքում: Քսանեհինգ տարի առաջ,
երբ մենք սկսեցինք գրել ուրիշ հայոց լրագիրներում, մեր հողվածները, խոս-
տովանում ենք, թույլ էին, անտաշ, անմշակ, — բայց նրանց մեջ հայտնած
մտքերը նույն մտքերն էին, որ մենք շարունակեցինք ավելի մշակված կերպով
հայտնել հետևյալ տարիներում:

Այն ուղղությունը, որին մենք հետևել ենք, կարող է որոշվել երկու բա-
ռով. ձգտում դեպի անհատականության զարգացումը (развитие индивидуаль-
ности):

Մարդու անհատական զարգացումը՝ նշանակում է կատարյալ և անարգել
զարգացում նրա բոլոր բնական, ֆիզիկական, մտավոր և բարոյական ընդու-
նակությունների, նրա բոլոր ձիրքերի, բոլոր հակումների, բոլոր մարդկային

տեճեակաճե առանձնահատկությունների: Դրանով մարդ ավելի պիտանի է
դառնում թե իր անձին, թե իր ընտանիքին, թե համայնքին, թե հասարակու-
թյանը, թե ազգին, թե պետությունը, որի մի մասն ենք կազմում, և թե վեր-
ջապես ամբողջ մարդկությունը:

Պարզ է, որ երբ մարդկային հասարակության կեսը՝ արական սեռը մի-
այն քաղաքակրթվում, զարգանում է անհատապես, իսկ մյուս կեսը՝ իգական
սեռը՝ արհամարհվում, ընտանիքը, որը բաղկացած է մարդուց և կնոջից,
իր գոյություն մեջ չէ կարող հասնել կատարյալ անհատական զարգացման:
Երբ 1865 թվին սկսեցինք գրել մեր առաջին հողվածները կանանց կրթության
մասին, մեր երկրում դեռևս չկային իգական դպրոցներ, բացի Թիֆլիսի օրիոր-
դական ինստիտուտից, չկային ոչ իգական գիմնազիաներ, ոչ պրոգրմնազիա-
ներ, ոչ էլ հայոց ծխական իգական դպրոցներ: Հայ կինը անուսում էր մնում:
Երբ Պետերբուրգից տեղափոխվեցանք Յյուրիխ, այնտեղի համալսարանում
դտանք երկու ռուս օրիորդների, որոնք ուսանողների հետ միասին ուսանում
էին: Նույնիսկ առաջադեմ շվեյցարուհիք սարսափով էին նայում այդ երկու
համարձակ օրիորդների վրա և միայն մի երկու տարուց հետո մի շվեյցարուհի
վստահացավ ուսանող գրվել համալսարանում: Այն ժամանակ մենք գրում
էինք Թիֆլիսի հայ լրագիրներում կանանց բարձր կրթության անհրաժեշտու-
թյան մասին, բայց ո՞վ էր լսում... Արքա՛ն փոխվեցան այժմ ժամանակները,
այսօր մենք ստանում ենք հեռագիրներ Ժնևի և Բեռնի համալսարաններում
ուսանող հայ օրիորդներից:

Ապա անցնելով մասնավորից դեպի ընդհանուրը, ընտանիքի անհատա-
կան զարգացումը առաջ է բերում և համայնքի և հասարակության անհատա-
կան զարգացումը, քանի որ համայնքը ընտանիքների գումարումն է, իսկ հա-
սարակությունը՝ համայնքների գումարումը:

Ավելի ընդարձակելով մեր միտքը, մենք հասնում ենք ազգի անհատական
զարգացման գաղափարին: Ազգի անհատական զարգացման զորավոր գործիչ-
ներից մեկը մենք միշտ մեր բոլոր գրվածներում համարել ենք մայրենի լե-
զուն, որը հատուկ լինելով մարդու բնական ընդունակություններին, ավելի էլ
ընդունակ է դարձնում մեզ անհատապես կատարյալ կերպով զարգանալու,
ուրեմն ավելի պիտանի է դարձնում մեզ թե ընտանիքին, թե հասարակու-
թյանը, թե ազգին, թե ամբողջ երկրին և թե պետությանը: Մտածելով ամբողջ
ազգի անհատական, բարոյական և մտավոր զարգացման մասին, անբնական
կլիններ մասնակից շանել այդ ինքնազարգացման աշխատանքին ազգի բոլոր
անդամներին, ինչ դասակարգի կամ կրոնի և պատկանելին նրանք. ազգի ան-
հատական բնավորությունը կարող է որոշվել միմիայն այն ժամանակ, երբ
ինքնակրթության գործում կմասնակցեն ազգի բոլոր մասերը, ոչ թե միայն
այլևայլ դասակարգերին և դավանություններին պատկանողները, բայց և նույն
ազգին պատկանող տարանակ՝ պարսկարենակ կամ թուրքարենակ անդամները:

Ավելի հեռու գնալով և ավելի ընդարձակելով մեր միտքը՝ կհասնենք
այն եզրակացությանը, որ պետք է ձգտել և մեր ամբողջ երկրի թե բարոյա-
կան, թե մտավոր և թե տնտեսական անհատական զարգացմանը: Այդտեղ ար-
դեն անհրաժեշտություն է զգացվում թե բարոյական, թե մտավոր և թե տնտե-
սական համբարշխություն հաստատել նույն երկրում բնակվող այլևայլ ցեղերի
մեջ, որպեսզի երկիրը, որը ամբողջ պետության մի մասն է կազմում, ընդունի
անհատապես զարգացած միավորի ամփոփ մի կերպարանք:

Պարզ է, որ այդ անհատական զարգացման գաղափարին ձգտելով, հրապարակագրողը չի կարող անտես առնել, որ հասարակական հաստատություններն ու օրենքները, որոնք մեզ, կենդանի մարդկանց համար են ստեղծված, և ոչ թե մենք, կենդանի մարդիկս, նրանց համար գոյություն ունենք, այնպես է իրանց գոյությունը, իրանց կազմակերպությունը նպաստեն մեր անհատական զարգացման ապահովացնելուն: Եվ եթե նրանք այդ բավականաչափ չեն անում, բնական է պահանջել, որ նրանք անընդհատաբար վերանորոգվեն, հարմարվելով մեր պահանջներին, որպեսզի ավելի լավ ծառայեն մեզ, ավելի նպաստեն մեր անհատական զարգացման գործին, մեր երջանկությանը:

Այդպիսով, կամա-ակամա, խղճմտավոր, հրապարակագրողի գործը, տարիների ընթացքում, լինում է հետևյալը. մինչդեռ մի ձեռքով նա առաջ է տանում շինող, ստեղծագործող գործը, մյուս ձեռքով նա ստիպված է առաջ տանել, ինչպես ուզում եք անվանեցեք՝ քանդող, քննադատող, անընդհատ վերանորոգություն պահանջող գործը:

Այդ մեր բոլոր ասածներից մենք եզրակացնում ենք, որ մենք իսկապես իրավունք էլ չենք համարում այսօր վեր կենալ և ասել. շնորհակալ ենք ձեր համակրության համար դեպի մեր գաղափարները. դա մեր կողմից կլինի չափից դուրս մեծամտություն, չափից դուրս ինքնահավանություն, քանի որ մեր գրչով, տարիների ընթացքում այդքան թույլ կերպով արտահայտված գաղափարները ոչ մեզ են պատկանում, ոչ էլ հասարակությանը, այլ պատկանում են ամբողջ մարդկությանը: Մենք իրավունք չենք համարում մեր շնորհակալություն հայտնելու հասարակությանը, նրա համակրության համար դեպի այն գաղափարները, որոնք ոչ մերն են, ոչ նրան են, այլ համամարդկային, մշտնջենական, հավիտենական մտքերն են:

Երբ մենք քսանևհինգ տարի առաջ սկսեցինք գործել, մենք թեև անփորձ էինք դեռևս, բայց կարողության չափ ծառայում էինք նույն մտքերին, որոնց ծառայում ենք և այժմ: Բայց այն ժամանակ մենք ավելի երիտասարդ, 20 տարեկան լինելով, ավելի ուժ, ավելի եռանդ ունեինք: Այժմ՝ իհարկե, այլևս այն երիտասարդական վառ եռանդը չունենալով գուցե մեր ձեռքը թուլացել է, որը բռնել է այսքան տարի նույն դրոշակը: Բայց այսօր հասարակության համակրությունը և հաջողությունը (") տեսնելով դեպի մեր պաշտպանած մտքերը, մենք համոզվում ենք, որ այլևս մենակ չենք, այլ նոր և զորավոր աջակցություն ենք ստանում հասարակությունից, որի հետ միասին մենք մեզ ավելի ուժեղ ենք զգում, և խոստանում ենք այսուհետև ավելի էլ ամուր կերպով բռնել և բարձր պահել այն դրոշակը, որի վրա արձանագրված է՝ մարդու, կնոջ, ընտանիքի, համայնքի, հասարակության, ազգի, ամբողջ երկրի անհատական զարգացումը, որպեսզի ավելի օգտավետ, ավելի պիտանի, ավելի արժանավոր անդամ դառնանք ամբողջ հասարակությանը:

Հանդիսավոր սեղանի վրա տիրած խորին լռության մեջ արտասանված այս ծրագրական պարզ ու որոշ, խորամիտ, համեստության գոհարներով փայլող ճառը բուն ծափահարություններով ընդունվեց: Նույն երեկոյան դերասանական խումբը ի պատիվ Արծրունու ներկայացում տվեց նույն կուրսի շինության մեջ:

«Երբեք կարելի չէ մոռանալ,— գրում է պ. Տյուրյան,— ներկայացում են վերջն ի հանդես դրված «կենդանի պատկերը»: Բեմի վրա կտեսնեինք զԳրիգոր Արծրունի, նույն հասակն, նույն աչքերն, նույն մորուքն, և նույն զգեստը. նա շրջապատված էր տաճկահայ բանվորներով, այսինքն կենդանի մշակներով, և հայազարմ կույսը նորա գլխին դեղեցիկ ծաղկյա պսակ մի կղներ: Պ.

Արծրունի նստած էր առաջին կարգն, դեմ առ դեմ ունենալով իր մարմնական պատկերն այնչափ նման իրեն՝ որ քովի տիկինները ծիծաղելով կհարցնեին՝ թե ո՞ր է իսկական Արծրունին. բեմի՞ն վրա, թե իրենց մոտ: Եվ այս ամենը լուսավորած բենգալյան հրով: Հարկ չէ ասել, որ ծափահարությունները անվերջ էին: Անթա դերասան մի դուրս եկավ, և ի դիմաց հայ բեմի գեղեցիկ ճառով շնորհավորեց պ. Արծրունիին հոբելյանը, հիշելով նորա մատուցած ծառայություններն նույն նպատակի համար, և ընծայեց գեղեցիկ պսակ մը, որոշ մեջ գետեղված էր Արծրունիին կենդանագիրը: Պ. Արծրունի պատասխանեց: Նորա խոսքերը լսելու համար բոլորը վազեցին դեպի բեմ. նա կխոսեր ցածր ձայնով, դողդոջուն՝ այս անգամ: Հայտնի կերևար, թե այնչափ ցուլցերն ի խոր զգածեր էին դինք: Խոսեցավ հայ թատեր կրթիչ բնավորության և նորա մեզ համար ունեցած կարևորության վրա. զգացուց թատերական քննադատության պետքը՝ թատրը միշտ բարձր պահելու համար, և հույս հայտնեց, որ հայ բեմը կկանգնի իր այժմյան անկյալ վիճակին: Հազիվ թե վերջացուցած էր նա իր խոսքերը, կեցցենները և ծափահարություններն սկսան և երկար ժամանակ շարունակեցան: Ի լրումն ամենայնի՝ Արծրունին հանդիսի սրահն զուրս տարվեցավ ձեռքերու վրա և դրվեցավ իր կառքը»:

Այս փառավոր ցուլցերի մեջ ամենից շատ հուզիչն այն էր, որ թուրքահայ մշակներն էլ մասնակցում էին նրանց. նրանք ուղարկել էին ուղերձ և հատուկ պատգամավորություն: Ժողովրդի մարդիկ երախտագիտություն էին հայտնում իրանց դժբախտ հայրենիքի համար այնքան անկեղծ կերպով, այնպիսի կրակոտ եռանդով աշխատած «Մշակ-աղային»:

Մայիսի 6-ի տոնախմբության շարունակությունը կղավ 10-ին, երբ Թիֆլիսի հայ երիտասարդությունը իր կողմից առանձին ճաշկերույթ տվեց ի պատիվ Գրիգոր Արծրունու: Այդտեղ էլ նույն համակրական ցուլցերը, նույն սրտաբուխ մեծարանքները: Ծառեր արտասանվեցին, Արծրունին պատասխանեց և իր կողմից կենաց բաժակ առաջարկեց ի պատիվ Հ. Ալիշանի հոբելյանի, որ պիտի տոնվեր Թիֆլիսում մայիսի 13-ին*: Պ. Տյուրյան գրում է.

«Երկրագործ մշակներն այստեղ ևս ունեին իրենց երիտասարդ ներկայացուցիչները, որոնց մեջն մեկն ոտի ելավ շնորհակալություն հայտնելու մշակաց դասուն համար բարձրացած կեցցեններու մասին, և այն քանի մի խոսքերն, որ պարզ գեղջուկ լեզուով, կցկտուր, բայց ճնշված սրտի ողորձ պատկեր էին, շատ ավելի մեծ ազդեցություն գործեցին, քան եթե արտասանված լինեին մեծագույն ճարտասանի բերնով»:

Մայիսյան այն փառավոր տոնախմբությունները պաշտոնապես հասարակական երևույթ էին դարձնում մշակական գաղափարի շուրջը խմբված մի ուժեղ կուսակցություն, որի շարքերում խտացած էր երիտասարդության մեծագույն մասը: Պե՞տք է ասել, որ Գրիգոր Արծրունու պես մի մարտնչող հրապարակախոսի համար այդ հանդեսները, այդքան ցուլցերը այն դափնիներն էին, որոնց վրա նա ոչ թե պիտի հանդատանար,— ո՛չ, նա երբեք չհանգստացավ,— այլ ավելի ուժ ու վստահություն պիտի ստանար իր ստեղծած ահագին շարժումը դեկավարելու, կյանքի մեջ գործադրելու համար...

* Այդ հոբելյանը սարքել էին հակառակ կուսակցության մարդիկ, «Արձագանքի» խմբի ղեկավարությամբ: Բայց դա էլ Արծրունու մտքի հաղթանակն էր, որովհետև այն մարդիկ, որոնք լուսավորչականությունից դուրս հայություն չէին ընդունում, այժմ տոնում էին մի կաթոլիկ հոգևորականի գործունեության հիսնամյակը:

I

Մակար կաթողիկոսի մանր: Կուսակցական կոիվ Հրատարակչական ընկերության շուրջը: Տեղակալական հարցը: Արժուեին կեոչ ազդեցության մասին: «Էվելինա»:

«Համակրության քվեն» Գրիգոր Արծրունին ստանում էր մի այնպիսի ժամանակ, երբ կյանքի հարցերը պետք է նրան հանեին խմբագրական առանձնասենյակից՝ դրսում, հասարակության մեջ գործելու համար:

Վերջին քվեից հաղիվ վեց ամիս անցած, 1891 թվականի ապրիլի 16-ին, էջմիածնում սրտի պայթյունից վախճանվեց Մակար կաթողիկոսը: Բացվում էր կաթողիկոսական ընտրության հարց, բայց այս անգամ նրա հետ կապված էին էջմիածնի վարչական կարևոր հարցեր, որոնք սաստիկ պիտի հուզեին հասարակության միտքը: Ամբողջ հետաքրքրությունը կենտրոնացած էր, իհարկե, թիֆլիսում:

Կաթողիկոսի մահվան լուրը թիֆլիս հասավ այն միջոցին, երբ մշակական կուսակցությունը խլում էր հակառակ կուսակցությունների ձեռքից Հրատարակչական ընկերության վարչությունը: Այդ բանը կատարվեց օրինական կերպով: Մշակականները մեծ քանակությամբ անգամ գրվելով ընկերության, ապրիլի 13-ին գնացին ընդհանուր ժողովի: Վարչությունը, լավ հասկանալով, թե ինչ ծրագրով է եկել այդ բաղմունքը, փորձեց զանազան պատրվակներով հետաձգել ժողովը, բայց չկարողացավ մի օրինավոր պատճառի վրա հիմնվել և հեռացավ՝ թողնելով իր նախագահին, որ նա պատասխան տա մշակական բաղմունքին:

Ընդհանուր ժողովը կայացավ, Գրիգոր Արծրունին նախագահ ընտրվեց: Այդ երեկո ընտրվեցին պաշտոնատար անձինք, և այդպիսով Հրատարակչական ընկերությունը անցավ մշակականների ձեռքը: Բայց հին վարչությունը չէր ճանաչում այդ ժողովը և հրաժարվեց նոր ընտրված անդամներին հանձնել ընկերության կայքն ու թղթերը: Այն ժամանակ Արծրունին գրեց մի առաջնորդող, որի մեջ ապացուցանում էր իր նախագահության կայացած ընդհանուր ժողովի օրինականությունը, իսկ հին վարչության վարժունքի իրավացիության շափը որոշելու համար առաջարկեց դիմել թիֆլիսի նահանգապետին՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ օրենքով նահանգապետներին է վերապահված բարեգործական և այլ ընկերությունների կանոնադրության վրա հսկելը:

Այդպես էլ վարվեց նորընտիր վարչությունը: Նահանգապետն ընդունեց ապրիլի 10-ի ընդհանուր ժողովի օրինականությունը, և հակառակ կուսակցությունն ստիպված էր հանձնել ընկերությունը մշակականներին: Բայց այդ հարվածը նա, իհարկե, հեշտ կույ տալ չէր կարող: Ըրագրական անվայել հարձակումները, լուստանքները վրիժառույթյան միջոցներ գարձան, բայց նրանք տրպվում էին մեծ մասամբ այն լրաշրույթ, որի գոյությունն անտես էին անում մշակականները և այդ պատճառով էլ պատասխանի չէին արժանանում:

Ամառվա վերջում Արծրունին զնաց ճանապարհորդելու Երևանյան նահանգում: Առաջին անգամն էր, որ նա առիթ էր ունենում տեսնելու հայ ժողովուրդը իր իսկական, դարավոր հայրենիքում: Մնված ու մեծացած հայությունից բավական հեռացած, օտարացած մի շրջանում, նա 25 տարի խոսում, դատում էր հայկական իրականության մասին հեռվից, հիմնվելով գլխավորապես այն փաստերի վրա, որ տալիս էր օտար ազդեցությունների խիստ ճշմաման տակ գտնվող թիֆլիսի հայ գաղթականության քաղաքային կյանքը: Այժմ նա զնաց մտավ հողի մարդկանց, ազգային բուն մեծամասնություն կազմող տարրի մեջ: Տեսավ համարյա ամբողջ արարատյան երկիրը, ճանապարհորդեց գյուղից գյուղ, դիտեց երկրագործ ժողովրդի կյանքը, ապրուստը և իր տպավորություններն ամփոփեց «Երևանյան նահանգում» վերնագրով նամակների մեջ, որոնք միմյանց հտեից տպվեցին «Մշակի» բանասիրականներում:

Խոսելով հայ ժողովրդի տնտեսական կյանքի, քաղաքակրթական ձգտումների մասին, խոսելով տեղն ու տեղը, իբրև վկա և ականատես, Արծրունին գտնում էր, որ իր նախկին դատողությունների մեջ նա չի սխալվել, որ հեռվից էլ նա լավ էր ըմբռնել, թե ինչ է հայ ժողովուրդը իր պատմական հայրենիքում: Դա, անկասկած, կուլտուրական հակամաներով օժտված մի աշխատասեր, առաջադիմելու բոլոր հանգամանքներն ունեցող ժողովուրդ է, որ ամբողջ գլխով բարձր է իրան շրջապատող բոլոր ազգություններից: Բայց միևնույն ժամանակ՝ մի ժողովուրդ, որի վրա դեռ բռնացած են պատմական կյանքի թշվառ հետևանքները: Հայ գյուղացու բնավորության բացասական կողմերը Արծրունին ընդգծում էր առանձին ուշադրությամբ: Բայց միևնույն ժամանակ մատնանիշ էր անում այն հանգամանքի վրա, որ ժողովրդական բարոյակալության արատները ամենից շատ աչքի են ընկնում այն տեղերում, ուր հայերը խառն են ապրում թուրքերի հետ: Զուտ հայաբնակ տեղերի վերաբերմամբ Արծրունին համարյա թե գանգատներ չունեց:

Բուն երկրում էլ Արծրունին բազմաթիվ ապացույցներ տեսավ, թե ինչ ժողովրդականություն էր ստացել ինքը իր գործունեությամբ: Ամեն տեղ նրան ընդունում էին մեծարանքով. Երևանը, Իգդիրը, Աշտարակը ճաշերով, դիմավորումներով պատվեցին նրան: Երևանում հոբելյանի մի թեթև շարունակությունը եղավ. հասարակության զանազան դասակարգերից Արծրունին ընծաներ ստացավ:

Այս բոլորից հետո Արծրունին, հասնելով իր համար այնքան նշանավոր տարվա վերջին, կարող էր ամենայն վստահությամբ ասել, որ հայ հասարակությունը երկու անգամ «համակրության քվե» տվեց իրան:

«Այդ համակրության քվեն»,— գրում էր նա,— արտահայտվեց ներկատարվա ընթացքում երկու անգամ. առաջին անգամ նա արտահայտվեց այս տարվա մայիս ամսին, «Մշակի» խմբագրի գրական գործունեության քսանհինգամյա հոբելյանի տոնախմբությամբ, իսկ երկրորդ անգամ՝ սեպտեմբեր ամսին այն վերին աստիճանի սիրալիր ընդունելությամբ, որ գտավ «Մշակի» խմբագիրը Երևանյան նահանգում իր արած ճանապարհորդության ժամանակ»:

Եվ ահա այսպիսի յարված դրու՞թյան մեջ կաթողիկոսի վարչական իշխանութիւնը անցնում է էջմիածնի սինոդին, որի ավագ անդամ Երեմիա Եպիսկոպոս Գալստայան կաթողիկոսական տեղապահի պաշտոնն է ստանձնում: Սինոդի անդամ Արքեպիսկոպոս Եպիսկոպոս Սեդրակյան կարևոր դերք է բռնում վարչութիւն մեջ՝ գործելով Երեմիա Եպիսկոպոսի հետ միաբան: Փոխվում է էջմիածնի մեջ տիրող սեփմբը: Եվ որովհետև այդ երկու Եպիսկոպոսները պատկանում էին մշակական ուղղութիւն, ուստի «Մշակի» հակառակ լրագիրները շուրջը խմբված կուսակցութիւնները նույնիսկ ամեն շափ մոռացան՝ այդ երկու վույթին դիմադրելու համար: Այդ ժամանակից արդեն ակներև էր, որ այդ երկու կուսակցութիւնները պիտի հետզհետե իրար մոտենան, իրար դիրկն ընկնեն՝ մշակականութիւն ուժին դիմադրելու համար:

«Մշակը» իր առջև միայն մի հակառակորդ էր ճանաչում, որի հետ կարող էր վիճել, որի դեմ կարելի էր համարում մաքառել: Գա «Արձագանքն» էր: Բայց որովհետև մյուս լրագիրը («Նոր դար») առանձին ասելիքներ էլ չունէր, բացի «Արձագանքի» ասածները կրկնելուց, ուստի մշակական կուսակցութիւնը, պայքար մղելով այս լրագրի դեմ, դրանով պատասխանած էր լինում այն բոլոր տարրերին, որոնք ընդհանուր անունով կոչվում են «պահպանողական», կամ, ավելի հաճախ՝ «խաղաղամիտ»:

Առաջին խիստ ճակատամարտը տեղի ունեցավ, երբ հրատարակ եկավ տեղակալական հարցը:

Պահպանողական կուսակցութիւնը, որ միշտ խոսում էր եկեղեցու հեղինակութիւն, հոգևոր իշխանութիւն անխախտելի լինելու մասին, ցույց տվեց, որ այդ սկզբունքները ինքը ամենից առաջ ոտնակոխ կարող է անել, երբ իր շահերը այդպես են պահանջում: Եվ ահա, Երեմիա Եպիսկոպոսին ասպարեզից հեռացնելու համար, նա սկսեց քարոզել, որ այդ հոգևորականը տեղապահ չէ, հետևաբար և նրա կարգադրութիւնները ոչ որի համար պարտավորական չեն: Առաջին անգամ այդ սկզբունքը արտահայտվեց ներսիսյան դպրոցի հոգաբարձութիւն մեջ, որ բաղկացած էր «Արձագանքի» մարդկանցից: Արժրուին ձայն բարձրացրեց, և սկսվեց տաք ու երկարատև մի վիճաբանութիւն: «Մշակը» ոչ միայն ապացուցներ էր բերում, այլև հարձակվում էր, դատափետում: Ասիացի անողորմ կերպով ծաղրում էր «Արձագանքի» աստվածաբաններին: Բանակավի ամենատաք ժամանակը Քիֆիս եկավ իրավաբանութիւն պրոֆեսոր Ղամբարյան: Երկու վիճող կողմերը ցանկալի համարեցին, որ գիտնականը, իբրև հեղինակավոր մասնագետ, իր կարծիքը հայտնե տեղակալական հարցի մասին: Պրոֆեսոր Ղամբարյան «Нов. обозрение» լրագրի մեջ հաստատեց «Մշակի» հայացքները: Եվ իրավ, առողջ լոգիկան ուրիշ կերպ չէր էլ կարող դատել: Կաթողիկոսի ընտրութիւնը պիտի լիներ մի տարուց հետո, նա կարող էր չկայանալ, կարող էր էլի հետաձգվել. բայց մինչև այդ մի՞թե մի ամբողջ եկեղեցու կառավարութիւնը պիտի օղում կախված մնար:

«Մշակը» կարող էր ասել, որ հաղթութիւնը ինքը տարավ: Կամաց-կամաց տեղակալական հարցը, ինչպես շատ հասկանալի մի բան, իջավ հրատարակից: Բայց Արժրուին այդ ժամանակ բանակով սկսեց «Кавказ» լրագրի հետ՝ երդման հարցի առիթով: Ռուս պաշտոնական լրագիրը գտնում էր, որ երդումը պետական լեզվով պիտի լինի, իսկ Արժրուին հաստատում էր, որ յուրաքանչյուր մարդ, որ երդվում է իր եկեղեցու կանոններով, անպատճառ պիտի գործածի այն լեզուն, որով կատարվում են այդ եկեղեցու բոլոր արարողութիւնները: Այդ փափուկ հարցի մեջ դատողութիւնների ազատութիւն ստանալու համար, ինչպես և ուրիշ մի քանի դեպքերում, Արժրուին անձամբ

դիմեց Կովկասի կառավարչական գններալ Շերեմետևին: Կոչոր ամառանոցում, ուր այդ միջոցին բնակվում էր Արժրուին, նրա և բարձրաստիճան ուսու պաշտոնյաների մեջ հաճախ վիճաբանութիւններ էին տեղի ունենում նույն այդ հարցի առիթով: Նույն ամառը, նույն ամառանոցում, Արժրուին ժամանակ է գտնում օրվա պայքարներից քիչ հեռանալու և նվիրվելու մի մտածութիւն, որի առարկան կարող ենք երկու բառով արտահայտել՝ հրատարակախոսը և կիր: Օգոստոսի 31-ին «Մշակի» մեջ միաժամանակ տպվում են Արժրունու երկու հոգւվածները. մեկը՝ առաջնորդող, «Կնոջ բարոյականացնող ներգործութիւնը հրականութիւն վրա», մյուսը՝ բանասիրական, «Երազ» վերնագրով: Երկուսի միտքն էր միևնույնն է: Ահա ինչպես էր Արժրուին, իհարկե, իր սեփական զգացմունքների վրա հիմնված, բնորոշում իր գործունեութիւն մի խոշոր գիծը:

Կար մի ժամանակ, ասում էր նա, երբ մենք գրում էինք միայն տղամարդկանց համար: Հայ կինը լրագիր չէր կարգում: Եվ ահա հրատարակախոսը, տեսնելով իր առջև մարդկութիւն մի կեսը միայն, իր խոսքը, խոսելու ձևը հարմարեցնում էր այդ կեսի հասկացողութիւն և ըմբռնողութիւն:

«Այդ է պատճառը, գուցե, որ սկզբից «Մշակը» գրում էր և ավելի մատչելի չեղով, և տալիս էր իր գաղափարներին ավելի մատչելի կերպարանք ու բնավորութիւն, միևնույն ժամանակ ճանաչելով իր ընթերցողների զարգացման աստիճանն ու նրանց մտավոր թմրութիւնը, գիտնելով, թե նրանց դարավոր անշարժութիւնից մի կերպ սթափեցնելու համար՝ արդար միտքը, ճշմարտութիւնը, առաջագեմ գաղափարը հայտնելու ժամանակ պետք էր ազդել և այդ ընթերցող տարրի արտաքին զգայարանների վրա, — նա ընդունեց մտրակող սիստեմը, խիստ և կտրուկ գրելու ձևը իր հակառակորդների դեմ, որոնց նպատակ ուներ հասարակութիւն աչքում ջախջախել, գործ էր դնում այն, ինչ որ անվանում են հայհոյանք, այսինքն ամեն բան իր հատուկ բառով կնքելու սովորութիւնը: Գուցե այդ գործունեութիւն մեջ կարելի էր նկատել մի-մի անգամ և անզուսպ կիրք, և արդար բարկութիւն, և նույնիսկ շափազանցութիւն ու մասամբ անարդար վերաբերմունք դեպի հակառակորդները: — բայց ի՞նչ արած, ուրիշ կերպ հնար չէր լինի սթափեցնել տիրող ընդհանուր թմրութիւնը, ազդել դարերով մտավորապես անգամալույծ եղած անշարժ հասարակութիւն արտաքին զգայարանների վրա...»:

Բայց ահա տարիների ընթացքում երևան է գալիս կին ընթերցողների մի դասակարգ: Նա ազդում է հրատարակախոսի վրա: Ահա ինչ կերպ.

«Եվ հայ կանանց հավաքական տարրը իր մտքում ամփոփելով մի ընդհանուր իդեալի մեջ, հայ հրատարակագրողը այնուհետև իր աչքերի առջև պատկերացրած կունենա ընդհանրապես հայունուն: Եվ այսօրվանից մոտենալով գրասեղանին և սկսելով գրել, նա կմտածի. «դու պետք է գրես այնպես, որ հայ կինը քեզ կարդա. վաղը, երբ համարը մամուլի տակից լույս կտեսնի, նա քո գրվածքը կկարդա, նա քեզ կքննադատի իր նուրբ քննադատական իմաստով, ուրեմն զգուշ եղիր, ավելի զուսպ եղիր, ավելի անկողմնապահ եղիր, ավելի արդար եղիր նույնիսկ դեպի քո հակառակորդները... Սակայն այդ մեղմացնող, այդ շափավորող, այդ բարոյականացնող ազդեցութիւն տակ մի կորցրու քո ընդունակութիւնը, քո ստեղծագործական աշխատանքին հատուկ վաղեմի ուղղութիւնը... Փույթ չէ, եթե շարունակելով մտրակել վատը և վնասակարը, շարունակելով բանալ հասարակութիւն տգեղ կողմերն ու մերկացնել հայի բարոյական վերքերը, դու առժամանակ, բոսական կերպով գուցե և զղվանք կպատճառես հայ կնոջ նուրբ զգացմունքին, փույթ չէ, ասում եմ, որովհետև հայ կինը իր առողջ խելքով շուտով կհասկանա, որ իր կոշտմն

է, այդ հասարակական զգովելի վերքերը ուսումնասիրելուց, նրանց հետ ծանոթանալուց հետո, — Նույն մեղմացնող, բարոյականացնող ներգործութիւն ունենալ և հայ հասարակութեան վրայ, ինչ մեղմացնող և բարոյականացնող ներգործութիւն նա ունեցաւ և հայոց մամուլի վրայ»:

Մեզ համար ամէլի գնահատելի է այս հոգւածի առաջին մասը, որ Արծրունին պարզ խոստովանում է իր բնավորութեան պակասավոր կողմերն էլ. — մի խոստովանութիւն, որ այրեն ամէլորդ է դարձնում մի կողմնակի մարդու, մի կենսագրողի ջանքերը՝ ասպացուցանելու, թե Արծրունին միայն դրական հատկութիւններէ չէր հշուսված, այլ ունի և պակասութիւններ: Մի ուղղամիտ, շիտակ հրապարակախոսին մեծ պատիվ է բերում այդ խոստովանութիւնը:

Գալով հոգւածի երկրորդ մասին, պիտի ասենք, որ այդտեղ Արծրունու սովորաբար ուժեղ լոգիկան բավական թույլ է: Նա գրված է, ինչպես երևում է, զգացմունքի ազդեցութեան տակ և սառն ու լուրջ դատողութիւնը այդտեղ շատ քիչ է մասնակցել:

Ասել ամենից առաջ, որ Արծրունին շատ ուշ էր զգացել կնոջ մեղմացնող ազդեցութիւնը: Հայ կինը 1891-ից չէր սկսել ընթերցող դասնալ, այլ վաղուց և նրա ազնվացնող ազդեցութիւնը, ուրեմն, վաղուց պիտի երևար: Հետո անհասկանալի է մնում, թե ինչու միայն կինը կարող է հարկադրել մեզմ ու գուսպ լինել, իսկ տղամարդը ընդունակ է միայն կրթութ, շահագանց խիստ, անարդար վերաբերմունք ծնեցնել: Կկամենայինք, որ Արծրունու պես գործիչը մարդկային բոլոր գործերի վերաբերմամբ զանազանութիւն չդնէր կնոջ ու տղամարդու մեջ: Երկունս էլ հավասար են, երկունս էլ մարդիկ են և երկունս էլ պիտի միատեսակ իրավունքներով ու պարտավորութիւններով կանգնեն հասարակական հարցերի և հոգսերի առաջ:

Մակայն Արծրունին, շոյելով քնքուշ սեռը, առանձին մեծ զիջողութիւններ էլ չէ անում. միայն մի քիչ մեղմ, մի քիչ զուսպ լինել: Իսկ այդ մեղմացումը ինքնըստինքյան, իբրև բնական երևույթ, արդեն կար Արծրունու մեջ, անկախ կանանց ազդեցութիւնից: Տարբերութիւնը 1879—1881 թվականների Արծրունու և այս հոգւածը գրող Արծրունու մեջ մեծ է արտահայտութեան ձևի, խստութեան և կրթատմութեան կողմից: Ժամանակը, տարիքը, կրթութիւնը իրանցն են ստանում...

Մի բան շատ ճիշտ էր այդ հոգւածում: Իզուր են կարծում, ասում էր Արծրունին, «որ ոգևորվել կնոջ համակրութեամբ կարող է միմիայն բանաստեղծը, նկարիչը, վիպագրողը... Այդ համակրութեամբ, թեև բոլորովին ուրիշ կերպ, կարող է ոգևորվել և հրապարակագրողը և նույնիսկ քաղաքական գործիչը»:

Ինքը, Արծրունին էլ, հենց այս տեսակ մի ոգևորութեան մեջ էր այդ միջոցին: Դրա ասպացուցն է «Երազ» պատկերը, որի մեջ Արծրունին փորձել է բանաստեղծութեան ձևով արտահայտել այդ առաջնորդողի իմաստը:

Բայց «Երազն» էլ իսկապես մի նախերգանք էր: Անմիջապես նրանից հետո Արծրունին «Մշակի» մեջ տպագրեց և ապա առանձին գրքով հրատարակեց իր «Նվելինա» վեպիկը կամ հոգեբանական էտյուդը: Այդ գործի մասին մենք արդեն մանրամասն խոսել ենք*:

* Հատ. I, եր. 127—133:

«Բաց նամակ Քիֆլիսի քեմի ընտրողներին»: Հունվարի 6-ի աղետը Քիֆլիսում: «Ձեականութիւնը մեզցեց ոգին» առաջնորդողը: Կարողիկոսական ընտրելիներ: «Կենդանագիրներ»: Մարտի 8-ի պատգամավորական ժողովը: Մշակականների բողոքը: Գրիգոր Արծրունին քեմական պատգամավոր: Ընտրական պայքարներ էջմիածնում: Մեծ ազիտացիայի վերջը: Խոլերա: Ռափայել Պատկանյանի մահը: «Աստառ»:

1891 թվի դեկտեմբերի 24-ին «Մշակի» մեջ, առաջնորդողի բաժնում, տպված էր հետևյալը.

«Բաց նամակ Քիֆլիսի քեմի ընտրողներին»

Որովհետև շուտով լինելու են Քիֆլիսի քեմի կաթողիկոսական պատգամավորի ընտրութիւնները, ես պարտավորութիւն եմ համարում բացարձակապես հայտնել տպագրական խոսքի միջոցով, որ ես ուղղակի կդնեմ իմ թեկնածութիւնը, որպես Քիֆլիսի քեմի քեմական պատգամավորի, և առաջարկում եմ այն բոլոր եկեղեցական ընտրողներին, որոնք համակրում են թե իմ 25 տարվա գրական գործունեութիւնը և թե «Մշակի» գոյութեան 19 տարվա լինեցրում զավանած սկզբունքներին, — ինձ քվե տան:

Ուրիշ կողմից անհրաժեշտ եմ համարում բացատրել այստեղ և մի այլ հանգամանք: Քիֆլիսում հանդես են եկել անձինք, որոնք թեև երբեք չեն համակրել իմ ուղղութեանը, բայց իրանք թեմական պատգամավոր ընտրվելու համար աշխատում են այժմ, բացի իրանց կուսակցութեանը պատկանող ձայներից, վստակ կել նոր ձայներ, — և այդ նպատակով ջանում են համոզել հասարակաց կարծիքը, որ իրանք իբր թե համակրում են իմ դավանած երկարամյա սկզբունքներին:

Հրապարակապես հայտնում եմ, որ ես ամենևին համերաշխ չեմ այդ անձանց հետ, երբեք ձեռք ձեռքի տված չեմ ընթանա նրանց հետ, այլ ընդհակառակն անպայման պարտավորութիւնս կհամարեմ դնել իմ քվեաւորը իրանց քվեաւորի դեմ և տոկունութեամբ մրցել նրանց հետ»:

Գրիգոր Արծրունի»

Ընդհանուր դարմանք ու շփոթութիւն պատճառեց այդ հրապարակական դիմումը: Նույնիսկ «Մշակի» կողմնակիցները գտնում էին, որ Արծրունին ձայնահեղութեան է հասցրել՝ ինքն իրան առաջարկելով թեմական պատգամավոր:

Եվ հասկանալի է այդ վերաբերմունքի պատճառը. այդպիսի քաջ մեղաւում ոչ ոք չէր արել, առաջին անգամն էր, որ մի հայ հրապարակ էր դուրս գալիս որոշ ծրագրով. ընտրողական ազիտացիա էր սկսում իբրև մի հայտնի կուսակցութեան ներկայացուցիչ:

Մի եվրոպացի, իհարկե, կծիծաղէր այն վրդովմունքի վրայ, որ առաջացավ մեղանում Արծրունու այդ՝ միանգամայն ազնիվ, գեղեցիկ վարմունքի տոթով: Մեր նահապետական հասկացողութիւններով դա շահագանց անձնասիրութեան, առնվազն՝ անհամեստութեան նշան էր: Հասարակութիւնը ինքը պիտի դնէ սրա կամ նրա թեկնածութիւնը, ինքը պիտի առաջարկէ, ընտրե՛ր Բայց Արծրունին ջախջախեց այդ ավանդականութիւնն էլ, մտցնելով մեր կյանքի մեջ եվրոպական կյանքի առաջնակարգ երևույթներից մեկը, այն, որ

աղբաւ ընտրական ասպարեզում նույնիսկ պետական նշանավոր գործիչները
ազդեցական միջոցով պաշտպանում են իրանց թեկնածուները:

Արծրունին, իհարկե, տեսնում և զգում էր, թե ինչ վրդովմունք է պատ-
ճառել իր այդ քայլով. և մի քանի անգամ բացատրեց, որ ընտրական ազդե-
ցական շատ բնական, ցանկալի, օրինավոր մի բան է: Համենայն դեպս, իր
արածը անհամեմատ ավելի լավ է, քան ասիական եղանակով դռն բացելը ընկ-
նել ծածուկ կերպով, կապերի ու ազդեցությունների միջոցով հաջողություն
պատրաստել:

Այս համարձակ ու անվախ քայլը, իհարկե, առանձին կրքոտություն, կու-
սակցական առանձին խիստ, անխնա պայքար պիտի մտցնէր ազդեցական
մեջ: «Մշակի» խմբագրատունը դարձավ կուսակցությունը կյանքի մեջ դեկա-
վարող մի հիմնարկություն: Այդտեղ էր, այսպես ասած, գլխավոր շտաբը,
որ ընտրողական ցուցակներ էր կազմում, ուղղություն էր տալիս գործիչներին:
Մի գործունեություն էր դա, որ թեև վրդովեցնում էր շատերին իբրև շտեմական
մի նորություն, բայց հիմնված էր նույն ազատ, հրապարակային ընտրական
մրցություն վրա:

Հունվարի վերջից պիտի սկսվեին ծխական պատգամավորների ընտրու-
թյունները. յուրաքանչյուր եկեղեցի պիտի ընտրէր պատգամավորներ, որոնք
հետո պիտի հավաքվեին և ընտրեին թեմական պատգամավոր: «Մշակի» կու-
սակցությունը գործում էր այդ եկեղեցական ընտրությունների ժամանակ. նա
առաջարկում էր իր կանգնեցումներին, որոնց անունները տպված էին առանձին
թերթիկների վրա: Ազդեցական, իհարկե, միայն թիֆլիսի մեջ չէր մասնա-
փակված: Թեմի գավառներում էլ, ուր դարձյալ պիտի ընտրվեին ծխական
պատգամավորներ, նա պիտի շարունակէր նույնպիսի եռանդով:

Հակառակ կուսակցությունները, որոնք խմբված էին «Արձագանք» և
«Նոր դար» լրագրների շուրջը, իհարկե, քնած չէին: Նրանք միացան, չնայած
որ «Արձագանքը» մի ժամանակ իր այժմյան դաշնակցին անվանում էր մի
հոտած լեշ, որին ձեռք տալը զգվելի է: Պետք էր մոռանալ այդ բոլորը. քանի
որ առջևում կար Արծրունու դեմ կուլելու անհրաժեշտությունը:

Այդ միությունը եթե շուներ ժողովրդականություն, բայց զուրկ չէր առանձ-
նապես նպատակավոր հանգամանքներից: Բավական է ասել, որ նրա կողմն էր
տեղային հոգևորականության մեծագույն մասը: Արծրունին ոչ միայն չուղեց
օգտվել այդ ուժից, որ մեծ նշանակություն ուներ մանավանդ եկեղեցիներում
կատարվող ծխական ընտրությունների ժամանակ, այլև հարկադրեց նրան
ամբողջովին ընկնել հակառակ բանակի գիրկը:

Դրա պատճառը մի տխուր, սարսափելի աղետ էր: Հունվարի 6-ին, ջրօրհ-
ների հանդեսի ժամանակ, խորտակվեց Կուր գետի վրա շինած փայտե ժամա-
նակավոր կամուրջը և բազմությունը թափվեց ջրի մեջ. մոտ 45 հոգի խեղդ-
վեցին. իսկ վնասվածների թիվը ավելի մեծ էր:

Կամուրջը շինել էր տվել թիֆլիսի հայոց կոնսիստորիան և շինությունը
կապալով վերցնողը իսկապես թիֆլիսի բահաններից մեկն էր: Հայտնի դար-
ձավ, որ մարդկային այնքան կյանքեր ոչնչացրած աղետը մի դարհուրելի ան-
տարբերության և անհոգության հետևանք էր. կամուրջը շինողները, փող շատ
աշխատելու համար, բարակ ու անպետք փայտեր էին գործածել, իսկ կոնսիս-
տորիան ավելորդ էր համարել մասնագետներ հրավիրել՝ շինությունը քննելու
և նրա դիմացկունության չափը որոշելու համար:

Բացի դրանից, հոգևորականությունը վրդովեցուցիչ անտարբերություն էր
ցույց տվել աղետի զոհերի վերաբերմամբ: Զրից հանված դիակները թափված

էին վանքի եկեղեցու բակում: Հարկավոր էր անհապաղ, եռանդուն օգնություն՝
այդ թշվառներին մահվան ճանկերից խլելու համար. բայց այդ իսկ միջոցին
բահաններն շտապում էին տնօրհների, իսկ թիֆլիսի առաջնորդ Մամբրե
կախկնպասը, որ ապրում էր նույն վանքի բակում, շնորհավորություններ էր
ընդունում քաղաքացիներից՝ ջրօրհների ճոխ սեղանի շուրջը:

«Մշակը» սկսեց խիստ, անողորմ հարձակումներ: Այդ առիթով Գրիգոր
Արծրունու գրածներից ահագին տպավորություն՝ թե թիֆլիսում և թե գավառ-
ներում, գործեց «Ձևականությունը մեռցրեց ոգին» առաջնորդողը, որ տպվեց
հունվարի 11-ի համարում: Դա մի ումար էր, որ պատուկեց հոգևորականության
գլխին:

«Անփույթ կերպով շինած, փտած, խախտ կամուրջը, — գրում էր Արծ-
րունին, — կտրվում, խորտակվում է, անթիվ մարդիկ են զոհվում գետի ալիք-
ների մեջ, — սակայն ոչ ոք մեղավոր չէ այդ բանում. ոչ հոգևոր իշխանությու-
նը, ոչ քաղաքային վարչությունը, ոչ էլ ոստիկանությունը... Վերջը կհայտնվի,
որ այդ բանում ես ու դու եմք մեղավոր, ընթերցող...»

Ո՛չ, մեղավորն այն անհոգի, անսիրտ, չոր ու ցամաք ձևականությունն
է, որը մեր ամեն հասարակաց հաստատություններում մեռցրել է կյանքը,
մեռցրել է նույնիսկ հաստատության ոգին: Եվ այդ ամեն բան մեռցնող, ան-
հոգի, մեքենայական, ձևական վերաբերումը դեպի ամեն կենսական երևույթ-
ները, այդ անսիրտ, անխիղճ չոր ու ցամաք բյուրոկրատական ձևապաշտու-
թյունը դժբախտապես մտել է և մեր եկեղեցական կազմակերպության մեջ՝
խապառ մեռցնելով քրիստոնեական կենդանարար ոգին և նրա տեղը պահպա-
նելով լոկ ծխական արտաքին ձևերը, անշունչ ձևականությունը...

...Այդ բոլորին ի՞նչ պետք է աներ հոգևորականությունը: Դուք այդ չգի-
տեք, հոգևոր հայրեր, — ուրեմն մենք ձեզ կսովորեցնենք ձեր պարտավորու-
թյունը:

Քրիստոսի սպասավորներ լինել չէ նշանակում միմիայն անգիր ասել
աղոթքներ, կատարել արտաքին ձևականություններ, ժողովրդին մոմեր վառել
տալ պատկերների առջև, համբուրել տալ ավետարանի կազմը, առանց շնորհ
ունենալու բացատրելու նրա վեհ բովանդակությունը, հորդորել ժողովուրդը
ոչ թե դեպի եղբայրասիրությունը, այլ միայն դեպի առատ դրամական նվեր-
ներ ձեր անձնական ապրուստի համար, — ո՛չ, դրա մեջ չէ քրիստոնեությունը...

Երբ ժողովրդական մեծ աղետը պատահեց, դուք, ժողովրդական հովիվ-
ներ ձեզ անվանողներ՝ պետք է անմիջապես կանգնեցնեիք թափորը, դադարեց-
նեիք հանդեսը, դադար տայիք ձեր անգիր սովորած աղոթքներին, — և փոխա-
նակ տնե տուն ման գալու տնօրհներ անելու՝ բուրլիներ ժողովելու համար,
պետք է բոլորը մնայիք Կուր գետի ափում ու կենդանի խոսքով, կենդանի օրի-
նակով օգնություն հասցնեիք կենդանի խեղդողներին... Դուք, սրբազան հայր,
պետք է մնայիք գետի ափում և խաչը ձեռքին, ձեռքերը պարզելով դեպի եր-
կինք, պետք է բարձրաձայն աղաղակեիք՝ «Աստված կօրհնե նրանց, որոնք
չուրը կընկնեն իրանց եղբայրներին փրկելու համար»: Դուք պետք է անմիջա-
պես հրամայեիք, որ ոչ մի քահանա այդ օրը տնօրհներ չգնար, այլ ամենքն
էլ մնալով վանքի մայր-եկեղեցու գավթում, զբաղվեն փրկվածներին, ջրից
հանվածներին, ցրտից դողացող կիսամեռ թրջվածներին խնամելով: Դուք,
Քրիստոսի սպասավորներ, պետք է թշվառներին իրանց թաց դգեստներից մեր-
կացնեիք ու չոր դգեստներ հագցնեիք, պետք է ձեր ճոխ ապարանքներում
նրանց պատսպարեիք, պետք է հրամայեիք, որ ձեր ճոխ սեղանից բերեին
գինի, արաղ՝ սառը ջրից հանվածների կիսամեռ մարմինը փոքր-ինչ տաքաց-

նելու համար, արեւք է հրամայել, որ ամենքից անմիջապէս խօսքներն ջրի մեջ չվանեն, սանդղատներ, որպէսզի չողայ իմացող թշուառները գոնե այդ առարկաներից բանեւով կարողանային փրկուիլ ջրից ու ազատուիլ մահից...

...Այո՛, Աստուարանի վեհ բովանդակութեան տեղ՝ թագաւորում է ձեր ձեռքում միմիայն ավետարանի կազմը, քրիստոնէական լուսնի տեղ՝ ռուբլիանոց մոմը, ատվածային գաղափարի տեղ՝ պատկերապաշտութիւնը, որոն տեղ՝ շար ու ցամաք ձեր, բովանդակութեան տեղ՝ ձեռնարկութեան...

Եվ դուք այդ ապացուցեցիք հունվարի 6-ի վարձուքով, մեծ ժողովրդական աղետի ժամանակ... Եվ դեռ երկար, շատ երկար տարիների ընթացքում մեր խոսքերի հշտարտութեան կենցաղի վկաներ կհանդիսանան ձեր առջև որպէս վարձուքի ուրվականներ այն հարցուրովոր սարսափելի ժողովրդական գիտկները, որոնք Վանքի մայր-եկեղեցու կողքին Կուր գետի արագահաս աղբիւնների մեջ գոտան իրանց մշտնջենաւոր հանգստարանը, այն մյուս հանգստարանի կողքին, որտեղ թաղում են խոշոր գումարներ ձեզ ընծայող մեծամեծներն ու հարուստացած երջանկահիշատակ վաշխառուները՝:

Այսպիսի հողվածները պիտի «Մշակի» ժողովրդականութիւնն ամբլացնեն, բայց մյուս կողմից էլ պիտի ավելի ևս վառեն հոգևորականների ատելութիւնը Արծրունու դեմ: Եվ իրավ, «Արարատ» ամսագրի մեջ հետո ապաված պաշտոնական տեղեկութիւններից երևաց, թե ինչ անպատիվ միջոցների էին դիմում հոգևորականները՝ մշակականներին ետ մղելու, տապալելու համար: Եթե ոչ թիֆլիսում, ուր նրանց ինտրիգները սաստիկ դիմադրութեան էին հանդիպում, գոնե թեմի դավաններում: Թիֆլիսի առաջնորդը, որ առաջուց էլ «Մշակի» հարվածներին էր ենթարկւել, քանի դեռ վարդապետ էր և, իհարկե, չէր կարող նրա բարեկամը լինել, այժմ, ջրօրհնների աղետի առիթով եղած մերկացումներից հետո, ավելի էլ պիտի վայրանար մշակականների դեմ և իր ամբողջ իշխանութիւնը գործադրելու ընտրական պայքարի մեջ գոնե Արծրունու հարվածելու համար: Բայց այդ բանը այնքան էլ հեշտ չէր:

Միական ընտրութիւնների ժամանակ մշակական կուսակցութիւնը, շնորհիվ իր ստացած ժողովրդականութեան և եռանդուն ագիտացիայի, նշանավոր հաջողութիւնների հասավ: Այդ ընտրութիւնների նախընթաց օրը Արծրունին հայտարարեց, որ իր համար կաթողիկոսական ընտրելիներ են իր մյուս Հայրիկը և Արիստակես Եպիսկոպոս Սեդրակյանը: «Արծազանքը» որոշ կերպով չէր դնում, թե ինքը ինչ թեկնածուներ ունի. բայց արդեն շատ հանգամանքներից հայտնի էր, որ նրա առաջին ընտրելին Աշրգյան պատրիարքն էր, սաստիկ թուրքամոլ, ներսեսի ուղղութեան հակառակ մի հոգևորական, որ սաստիկ ատելութիւն էր գրգռել իր դեմ ժողովրդի և գաղափարական երիտասարդութեան մեջ: Կ. Պոլսի հայութեանն ուղում էր ազատուիլ նրանից, բազմեցնելով ամենայն հայոց կաթողիկոսական աթոռի վրա, ինչպես երկու տարի առաջ ազատուիլ էր Հարութիւն պատրիարքից՝ տալով նրան Երուսաղեմի պատրիարքական աթոռը:

Ընտրելիների անձնավորութիւններն էլ, իհարկե, ահագին գեր էին կատարում կուսակցական պայքարների մեջ: «Մշակը» անկեղծ կերպով, ինչպես և 1884-ին, հարած էր իր մյուս Հայրիկի թեկնածութեան: Եվ որովհետև իր մյուսը շատ մեծ ժողովրդականութիւն ուներ ազգի մեջ, ուստի հակամշակական կուսակցութիւնը իր գլխավոր առարկութիւնը այդ թեկնածութեան դեմ հիմնում էր այն հանգամանքի վրա, որ իր մյուսը, լինելով մի ժողովրդական

* Ակնարկում է Վանքի բազմաթիւ թաղում հարուստներին:

հոգևոր հովիւ, վարդական ընդունակութիւններ չունի: Արծրունին շատ լավ գիտեր, որ այդ առարկութեանը ճիշտ է: Հենց այդպէս էլ նա ինքը բնորոշել էր իր առաջին ընտրելիին «Կենդանագիրներ» անունով իր հողվածների մեջ, որ նկարագրում էր կաթողիկոսական թեկնածուների պատկերները: Բայց նա գիտեր, համոզված էր, որ այդ պակասութեանը ոչինչ արդելք չի լինի, քանի որ իր մյուսը պես մարդը չէր կարող իր մոտ օգնական չունենալ Արիստակես Եպիսկոպոսի պես մի վարդական մարդուն: Այսպէս, Արիստակես Եպիսկոպոսին նվիրած հողվածը Արծրունին վերջացնում էր հետևյալ տողերով.

«Իր մյուսն մի իղեալիստ է, որը հավատացած է, թե աշխարհը կարելի է հեղափոխել լոկ բարոյական ներգործութեամբ,— Սեդրակյանը որպէս ժամանակակից վարդական մարդ, ընդունելով բարոյականութիւնը որպէս վերջնական նպատակ, հավատացած է, որ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մարդկային հասարակական կողմակերպութեան կերպարանափոխութիւնը:

Ո՞վ գիտե, գուցե շատ լավ կլիներ, եթե այդ երկու անձնավորութիւնները՝ իր մյուսն և Սեդրակյան, միասին գործեին: Մինը մյուսին կլրացներ»:

Իսկ մի առաջնորդում, որ ուղղված էր «Արծազանքի» դեմ, Արծրունին ասում էր.

«Եվ դուք եք իր մյուսն անունը տալիս, դա երկի ձեռք համար եք անում, որովհետև իր մյուսն այն աստիճան մեծ մարդ է, որ նրան շհիշել չեք կարող... Սակայն նրա բազմելը գահի վրա ձեր կուսակցութեանը ամենևին ձեռնտու չէ, բանի որ իր մյուսն ամենամոտ օգնականը կդառնա անպատճառ այն ազնիվ, շիտակ և երկաթե կամք ունեցող մարդը, որը կրում է Արիստակես Սեդրակյան անունը»:

Այս դուշակութեան դեմ հակառակ բանակը ձեռք էր անում միջոցներ, հավատացնելով, ուր որ կարող էր, թե իր մյուսն անունը միմիայն պատրվակ է, թե «Մշակի» իսկական թեկնածուն Սեդրակյան Եպիսկոպոսն է: Ռուսաստանում, աշխարհական հասարակութեան մեջ, այս անունը այնքան ժողովրդականութիւն էր ստացել, որ կաթողիկոսական ընտրելիների ցանկում նրան կրկնորդ տեղ տալը շատ արդարացի էր համարվում և ընտրութիւնն էլ ապահովված: Սակայն հոգևորականութիւնը և հակամշակական կուսակցութիւնը չէին ուղում լսել անգամ այդ անունը:

Եվ ահա խնամքով կազմակերպված մի ամբողջ գործունեութիւն է հրապարակ գալիս՝ հատկապես Սեդրակյանի ընտրութիւնը խափանելու համար:

Այդ գործունեութիւնը կենտրոնանում է Կ. Պոլսում, իսկ գլխավոր դերակատար հանդիսանում է Աշրգյան պատրիարքը: Կովկասից նա հավաստապում է ստանում, թե ինքը կընտրվի կաթողիկոս: Այդպիսով շահագրգռելով այդ փառամոլ և անընդունակ հոգևորականին, նրա պատրիարքական իշխանութիւնը, թուրք կառավարութեան կողմից վայելած հովանավորութիւնը կարելի էր գեղեցիկ կերպով շահագործել մի այնպիսի ժամանակ, երբ թուրքահայ ժողովուրդը զրկված էր իր կամքն ազատ կերպով հայտնելու կարողութիւնից: Եվ Աշրգյանը մի լավ գործիք դարձավ կովկասյան ինտրիգների ձեռքում:

Պետք էր թուրքիստանում ևս փոքր-ինչ հասարակական կարծիք պատրաստել: Այդ պաշտոնն էլ ստանձնեց «Արեւելք» լրագիրը, որ հակամշակականների ձեռքն էր անցել: «Արեւելքը» դարձավ մի տեղ, ուր ամենայն սիրով ամբարվում էին Ռուսաստանից գնացած ամեն տեսակ ստոր ու սուտ ամբաստանութիւններ, ամեն տեսակ հնարված առասպելներ, որոնց նպատակն էր ցույց տալ թուրքահայերին, թե ամենայն հայոց կաթողիկոսութիւնը վտանգի մեջ

է գտնուում, քանի որ Երեմիա և Սեղրակյան եպիսկոպոսներն են էջմիածնում գլխավոր դեր կատարողները: Այդ երկու հոգևորականները հայտարարվում էին վաճառված, դավաճան: Շատ սովորական մի դեպք, որ միշտ իր կրթված է սեղմել սատր, կույր ինտրիգը:

Սակայն լրագրական ստեղծարարն ամբողջովին այդ կույր թշնամության շեք պատկանում: Կար և մշակական «Հայրենիքը», որ պաշտպանում էր «Մշակի» առաջարկած թեկնածուներին, որ եսանգով հերքում էր «Արևելքի» ստույգումները և բարձրացնում էր Սեղրակյանի արժանավորությունները: Վտանգավոր ուժը էր «Հայրենիքը», բայց Աշրգյանի և նրա փեշերի տակ թաքնվածների բախտն էր, որ այդ լրագիրը թուրքական զբաղնություն աչքի փուշն էր դարձել և շատ կասկածելի էր թուրքական բարեմտության տեսակետից: Լուսինի մի այդպիսի թերթ ոչինչ զմեջարություն չէր կարող ունենալ կամայականությունների աշխարհում: Եվ իրավ, «Հայրենիքը» ժամանակավորապես դադարման ենթարկվեց այն միջոցին, երբ կաթողիկոսական հարցը այնքան սուր կերպարանք էր ստացել:

Աշրգյան պատրիարքը ազատ մնաց հրապարակում: Կ. Պոլիսը և առհասարակ ամբողջ թուրքահայ ժողովուրդը լուսնյան էր դատապարտված: Ինչ համեմատություն 1884-ի դրություն հետ: Այն ժամանակ գոյություն ունեւր Ազգային ժողովը, որ կաշկանդված չէր իր դատողությունների մեջ, որ ազատ ընտրական պայքարի բոլոր հարմարություններն ունեւր: Այժմ չկար Ազգային ժողով, թուրք կառավարությունն արգելել էր նրան, և Աշրգյան պատրիարքը չպիտի լինեւր այն իշխանավորը, որ ամեն ջանք գործ դնեւր իր իշխանությունը սահմանափակող այդ ընտրական մարմինը եթե ոչ նորից կենդանացնելու, գոնև միայն այս արտակարգ դեպքի՝ կաթողիկոսական կարևոր հարցի ժամանակ գործի հրավիրելու համար:

Կառավարությունը շթույլատրեց Ազգային ժողով գումարել, և այդ էլ շատ ձեռնտու էր: Աշրգյանն սկսեց իր իշխանությամբ կարգադրություններ անել: Ինչպես Գևորգ կաթողիկոսի ընտրության ժամանակ, այնպես էլ 1884 և 1885-ին թուրքահայերը մասնակցեցին իրանց Սահմանադրության օրինականացրած կարգով: Այդ կարգն այն էր, որ Ազգային ժողովը, իբրև թուրքահայ ժողովրդի ներկայացուցիչ, կազմում էր կաթողիկոսական ընտրելիների ցուցակ, քվեարկում էր ընտրելիներին և արդյունքն ուղարկում էր էջմիածին՝ իր կողմից ընտրած երկու պատգամավորների ձեռքով, որոնք հանդիսանում էին թուրքահայ բոլոր թեմերի ներկայացուցիչ: էջմիածնի ընտրողական ժողովում ընդունվում էր Կ. Պոլսի Ազգային ժողովի կազմած ցուցակը, որ և քվեարկության էր ենթարկվում:

Սակայն այս կարգը չէր ընդունում ուսաց Պոլսի բնիկներ, որի կանոնները պարզապես ասում էին, թե յուրաքանչյուր հայ թեմից մի աշխարհական և մի հոգևորական պատգամավոր պիտի գան էջմիածին և անձամբ մասնակցեն կաթողիկոսական ընտրության: Այս երկու տարբեր տրամադրությունները, որ առաջացնում էին թուրքահայերի Սահմանադրությունն ու Պոլսի բնիկներ, երկար տարիներ վեճի առարկա են դարձել թուրքահայերի համար, որոնք չէին ընդունում Պոլսի բնիկներ՝ իբրև իրանց համար պարտավորական մի օրենք: Անհամաձայնությունը այնքան սպառնալից կերպարանք էր ընդունել, որ թուրքահայերը նույնիսկ մտածում էին ուսացայերից անջատվելու մասին: Եվ եթե այդ անջատումը տեղի չունեցավ, պատճառն այն էր, որ ուսացայ ընտրողները միշտ հարմարվում էին Ազգային ժողովի քվեարկության և այդպիսով

ընդունվում էր այդ ժողովի եթե ոչ իրավաբանական, գոնև բարոյական իրավունքը:

1892-ին Ազգային ժողով չկար, թուրքահայերի ձայնը խեղդված էր, այդ պատճառով էլ մտազգայն մեծ վեճը և թուրքահայերը, առաջին անգամ Սահմանադրության սկզբից, համակերպվեցին Պոլսի բնիկ կանոններին: Յուրաքանչյուր թեմից պետք է պատգամավորներ ընտրելին և ուղարկվելին էջմիածին: Ավանդապահությունը ձայն չհանեց այս նորություն գեմ: Կ. Պոլսի պատրիարքարանը կարող էր իր ազդեցությունը լիովին գործադրել: Այնտեղ որոշված էր, որ ուսացայ ոչ մի եպիսկոպոս չպիտի լինի ընտրելիների ցանկի մեջ: Իսկ Նրիմյանի թեկնածուական վերաբերմամբ կար այն շահագործելի հանգամանքը, թե Նրիմյանը մշակականության համար մի պատրվակ է միայն, և բացի դրանից, չէ՞ որ նա թուրքաց կառավարության կողմից մի արտոնված մարդ է:

Բայց թե որքան անկեղծ էր մշակականության վերաբերմունքը դեպի Նրիմյանը, այդ երևում է այն ներքողներին, որոնք տպվում էին «Մշակի» մեջ, այն կենսագրությունից, որ հրատարակեց «Մշակի» աշխատակից Մալումյանը, վերջապես այն հանգամանքից, որ մշակականներն ուղարկեցին պ. Ղազարոս Աղաջանցին Երուսաղեմ՝ Նրիմյանի հետ անձամբ խոսելու համար: Սակայն այդտեղ իսկ մշակականների պատվիրակը լսեց Նրիմյան Հայրիկից, թե լուր կա, որ իր անունը միայն մի պատրվակ է: Անսահման, վառ ոգևորության մեջ մշակականները ուղարկություն չդարձրին այս հանգամանքի վրա էլ...

Մարտի 8-ին նշանակված էր թեմական պատգամավորի ընտրությունը: Մշակական կուսակցությունն ուներ ապահով մեծամասնություն, բայց և այնպես, չկամեցավ ընտրություն կատարել մարտի 8-ին: Հարցը միայն ընտրվելը չէր, պետք էր ամեն տեղ և ամեն դեպքում լինել սկզբունքների, գաղափարի կուսակցություն: Ահա ինչն էր մարտի 8-ի միջադեպի խորհուրդը:

Մշակականների համար պարզ էր, որ Թիֆլիսի թեմի առաջնորդը իր պաշտոնի բարձրության վրա կանգնած մի շեղոք, անկողմնապահ իշխանության ներկայացուցիչ չէր, այլ հակառակության ոգով տոգորված մի կուսակցական մարդ: Առաջնորդը իր իշխանությամբ զրկել էր Թիֆլիսի կուսավորիչ եկեղեցու պատգամավորներին մասնակցության իրավունքից: Հետո երկու տեղերում նա անվավեր էր համարել ընտրությունները և նոր ընտրություններ էր նշանակել այնպիսի պատճառներով, որոնք այդ երկու տեղերի պատգամավորների կողմից ապօրինի էին համարվել: Ինչ էլ լինեին այդ կարգադրությունները, գլխավորը, կականք այն էր, որ բոլոր այդ երեք դեպքերի առիթով, ինչպես խոստովանեց ժողովի առաջ Մամբրե եպիսկոպոսը, բողոքներ էին ուղարկված էջմիածնի սինոդին, բայց դրանց պատասխանը դեռ չէր ստացված: Մշակական կուսակցությունը հայտարարեց, որ, ուրեմն, ժողովը ապօրինի է և չէ կարող կայանալ, մինչև որ բարձրագույն աստիճանը իր վեճից շարձակե ներկայացրած բողոքների առիթով:

Սա մի այնպիսի տարրական արդարություն էր, որի գեմ, ըստ երևույթին, ոչինչ չէր կարելի ասել: Սակայն առաջնորդը համառոտ և հենվելով հակամշակականների միաբանության վրա, ժողովը օրինավոր համարեց: Այն ժամանակ Գրիգոր Արծրունին հայտարարեց, թե իր կուսակցությունը չէ կարող մասնակցել այս ժողովին, քանի որ նրա «կազմակերպության մի քանի վիճելի հարցերի վերաբերմամբ բարձրագույն աստիճանը դեռևս չէ կայացրել և չէ արտասանել իր վերջնական բարձրագույն վճիռը»: Հայտնելով այդ բողոքը, մշակականները, թվով 45 հոգի, հեռացան ժողովից և իսկույն բողոք ուղարկեցին

էջմիածնի սինոդին: Իսկ ժողովում մնացածները ընտրութեան կայացրին նրանց կողմից պատգամավոր ընտրվեց Արքար Հովհաննիսյանը, իսկ կանոնադրամ նրա նոր դաշնակից լրագրի խմբագիրը:

Առանց այդ էլ Քիֆլիսի ընտրողական ազիտացիան յարել էլ ժողովրդի հետաքրքրվող խավերի ուշադրությունը ոչ միայն Քիֆլիսում, այլև նրանից դուրս ամեն տեղ: Մարտի 8-ի միջադեպը ծայրահեղութեան հասցրեց այդ լուրումը: Լրագրական քանակի վրա երկու հակառակ բանականների մեջ ընդունեց շահագրգիռ խիստ կնքաբանք: «Մշակ» ապացուցանում էր, որ ինքը սկզբունքի պաշտպան է, ապացուցանում էր և այն, որ Գրիգոր Արծրունին, եթե մնար ապօրին ժողովում, դարձյալ ընտրված կլիներ, բայց մնալով ժողովում, նստի տակ ավանդ կլիներ արդարությունը, օրինականությունը: Եվ իրավ, այդ օրվանից «Մշակի» կոնիք դարձավ այդ սկզբունքների կոնիք: այդպես էր հասկացավ հասարակությունը, որ և սկսեց իր համակրանքը հայտնել Արծրունուն նամականերով:

Վերջապես էջմիածնի սինոդն արձակեց իր վճիռը: Նա անվավեր ճանաչեց մարտի 8-ի ժողովը այն իսկ պատճառներով, որ բերել էին մշակականները. և ուղիղ գնահատելով Քիֆլիսի առաջնորդի կատարած դերը, հետաքրքրվեց նրան ընտրողական գործից, իսկ նոր ընտրողական ժողովը, որ նշանակված էր ապրիլի 22-ին, կառավարելու համար ուղարկեց սինոդի անդամ Աղվանյան եպիսկոպոսին, որ եկավ Քիֆլիս, վերին աստիճանի անկողնապահություն կատարեց իր պաշտանք՝ աշխատելով հանգստացնել կուսակցական գրգռված կրթերը:

Ապրիլի 22-ին պատգամավոր ընտրվեց Գրիգոր Արծրունին, իսկ կանոնադրամ Արգար Հովհաննիսյանը:

Պա սկզբունքի, արգար գատի, շիտակ գործունեություն հաղթանակն էր Այդպես հասկացվեց Արծրունու ընտրությունը, և բազմաթիվ շնորհավորական հեռագիրները, որոնք ստացվեցին զանազան կողմերից, գլխավորապես երիտասարդությունից, այդ հանգամանքն էին շեշտում: Մի հաղթանակ, սակայն, որ կատարության ծայրին հասցրեց «Մշակի» հակառակորդներին, որոնք միայն զանազան մտք ու ցած խարդավանանքներով էին հովացնում իրանց սիրար:

Մի քանի օրից հետո Արծրունուն հանդիսավոր ճաշ սվին այդ հաղթանակի առիթով: Իսկ ապրիլի 27-ին նա ճանապարհվեց էջմիածին:

Այդտեղ արդեն հավաքվել էին և պատգամավորները: Հայտնի է, որ թուրքահայ թեմերը ուսաստան թեմերի համեմատությամբ փոքր են և ավելի բազմաթիվ: Այդ պատճառով էլ թուրքահայ պատգամավորները այնպիսի մի ճնշող մեծամասնություն էին կազմում, որ բնականաբար պիտի շատ խիստ ազդեին ընտրության վրա: Էջմիածնի մեջ տեղի ունեցած նախապատրաստական ժողովներում պարզվեց, որ մշակական կուսակցության դրած թեկնածուներից ոչ մեկն էլ չկա թուրքահայերի ցուցակում: Նրանց առաջին ընտելին Աշրգյան պատրիարքն էր, երկրորդը՝ Մատթեոս եպիսկոպոս Իզմիրլյանը:

Պետք էր որևէ համաձայնության գալ, իսկ համաձայնություն, առանց երկուստեք նշանավոր գիշումների, չէր կարող տեղի ունենալ: Պարզ երևում էր, որ Աշրգյան պատրիարքը կազմակերպել, դասավորել էր թուրքիայի հայոց ընտրողական ուժերը իրան հաճելի ուղղությամբ: Քիֆլիսի հակամշակական կուսակցությունն էլ նրա ձեռքում էր: Երբ հայտնի դարձավ, որ Արգար Հովհաննիսյան թեմական պատգամավոր չէ ընտրվել Քիֆլիսում, Աշրգյանը անա-

պարեց նրա համար Թրուսայի թեմի ճաշը սարքել և հետագրով նրան պատգամավորություն ավելց:

Եվ ահա միացած մի ամբողջ մեծ խումբ իր ճնշող ճայնով պատրաստվում էր էջմիածնի գահի վրա նստեցնել Աշրգյանին, մի բան, որ բախրովին պատիվ չպիտի բերեր համազգային ժողովին:

Բանակցությունները ուսաստան և թուրքահայ պատգամավորների մեջ առանձին աջողություն չէին խոստանում: Գրությունը վատացավ մանավանդ այն ժամանակ, երբ էջմիածին հասավ Աշրգյանի ներկայացուցիչ Օրմանյան եպիսկոպոսը:

Էջմիածինը Արծրունին արդեն մի անգամ տեսել էր, երբ ճանապարհորդում էր նրանյան նահանգում: Այժմ, աջ երկրորդ անգամը, նա բավական նշանավոր փոփոխություններ գտավ: Տեղակայության ժամանակ մի շարք բարեկարգություններ էին տեղի ունեցել: Վերանորոգող ձեռքը մաքրություն, հնարավոր շահով բարեշինություն էր առաջացրել: Սակայն տեղակալի գեմ փոփրած թշնամությունը նույնիսկ այդ համակրելի ջանքերն էլ հայտարարել էր եկեղեցու կործանում, դավաճանություն և այլն:

Իր «Տպագրությունների» մեջ Արծրունին պատմում էր, թե ինչպես էին պատգամավորները հասկանում այն գործը, որի համար եկել հավաքվել էին:

«Ապրիլի 30-ին երեկոյան,— գրում է նա,— առաջին անգամ ներկա եմ գտնվել նախապատրաստական մի ժողովին: Զարմանալի մարդիկ են թուրքահայ թե հոգևորական և թե աշխարհական պատգամավորները, առաջին խոսքը, որ ասաց ինձ նիկոմիդիայի առաջնորդ Ստեփանոս Հովակիմյան եպիսկոպոսը, այն էր, թե պետք է կուսակցական կոնիվները թողնել և հաշտվել հակառակորդների հետ... Ստիպված էի նորին սրբազնությունը ամբողջ ժողովի առջև բացատրել, թե ինչ բան է կուսակցությունը...»

Թուրքիայից եկած հայ հոգևորականներից Ստեփանոս սրբազանը զեռ ամենահամակրելին և ամենախելոքն է...

Սրբազանը քարոզում էր ինձ հաշտություն, եղբայրություն, քրիստոնեական ներումն հակառակորդների վերաբերմամբ: «Պա շատ լավ բան է, սրբազան,— ասացի ես,— բայց ոչ թե մամուլի վերաբերմամբ, այն էլ գրպարտող, սուտ խոսող, ամբաստանող, գիտակցաբար մոլորեցնող մամուլի վերաբերմամբ... Հաշտվել այդ տեսակ մամուլի հետ, լուել, երբ նա անամոթաբար զրպարտում է, կլինեք թուլության նշան, կնշանակեք հաղթվել, պարտություն կրել»...

Նույն առաջարկությամբ դիմում էին ինձ թուրքիացի աշխարհական պատգամավորներից շատերը. «Կաղաչեմ ձեզի, թողեք կուսակցական կոնիվները, թողեք կուսակցություն և հաշտություն կայացրեք»...

«Պա անկարելի է, էֆենդի,— պատասխանում էի ես,— դավաճանել կուսակցությանը՝ կնշանակի դավաճանել համոզմունքին, ձեռքից վայր գցել դրոշակը: Դուք երևի կարծում եք, որ կուսակցություն նշանակում է անձնական թշնամություն... Սխալվում եք. կուսակցություն նշանակում է որոշ համոզմունք, որոշ պրոգրամ, որոշ ծրագիր, որից համոզված մարդը երբեք չպիտի շեղվի»:

Առհասարակ թուրքահայ պատգամավորները ավելի հիասթափումն էին պատճառում ուսաստանիին այն համազգային ժողովի մեջ, ուր առաջին անգամ անեղյան և արևմտյան հայության ներկայացուցիչները կողք կողքի նստած վճռում էին ազգային մի նշանավոր հարց: Արծրունին գրում էր.

«Ես, գոնե նրանց մեծ մասի վերաբերմամբ, շատ աննպաստ կարծիք

ստացաւ: Բացի մի հինգ, վեց հօգի աշխարհական պատգամավորներէից, որոնք վերին աստիճանի համակրելի, աղնիմ, անկեղծ և սիրալի անձնավորութեաներ են, — մնացածները, թե հոգևորական և թե աշխարհական՝ համ-մտապարայեան անզարգացած, համ էլ վերին աստիճանի ինքնահավան մարդիկ են: Նրանց մեծ մասի բնավորիչ գիծը անկեղծութեան բացակայութեանն է, և միևնույն ժամանակ՝ համեստութեան բացակայութեանն:

Եվ այս բնորոշումը նա պատգամացանում էր՝ բերելով մի շարք փաստեր թուրքահայ պատգամավորների վարժունքից: Կուսակցական անկեղծ պայքարի գրոշակ պարզած Արծրունին ուզում էր, որ նույնպիսի անկեղծութեամբ, նույնպիսի որոշ ծրագրով, բացարձակ դավանութեամբ երևան գան և մյուս խմբերը: Բայց դրա փոխարեն տեսնում էր կամ քողարկված ծածկամտութիւն, կամ հրապարակային մի պարծենկոտ, բայց սնամեջ վեհութիւն:

Արծրունու համար անտանելի էր մանավանդ այս վերջինը: Եվ նա գրում էր.

«Դեռ ներքին է թուրքահայ հոգևորականին և թուրքահայ աշխարհականին շահականալ ինչ բան է կուսակցութեանը, մանավանդ, որ միխթարականն այն է, որ նրանք բավական շուտ են համոզվում... Բայց ի՞նչ կասեք մեր համալսարանական ինտելիգենցիայի մասին, որի թվում կան և երգվյալ համատար-մատարներ և հաշտարար դատավորներ, բոլորն էլ իրավաբաններ:

— Ես ոչ մի կուսակցութեան չեմ պատկանում, ես կուսակցութեաններից բարձր եմ, — արտասանում է ինքնահավանութեամբ այդ տեսակ ինտելիգենտը...

— Եթե դուք ոչ մի կուսակցութեան չեք պատկանում, նշանակում է, որ ոչինչ համոզվում եմ չունեք, — պատասխանում են նրան:

Եվ իրավ, այդ ինտելիգենտներից ոմանք, այդ համալսարանական իրավաբաններից ոմանք կատարելապես դուրի են որեէ որոշ, հաստատ, հիմնավոր համոզմունքից, ծրագրից, պրոգրամայից: «Ինչ որ թուրքիցի պատգամավորները կցանկանան, ես նրանց ցանկութեանը կենթարկվեմ և ձայն կտամ կաթողիկոսական այն թեկնածուին, որին նրանք կառաջարկեն»...

Եվ այդ տեսակ մարդիկ անվանվում են համալսարանական, կրում են ինտելիգենտի, բարձրագույն ուսում ստացած իրավաբանների անունը... Տարիների ընթացքում լսել են պրոֆեսորների դասախոսութեանները, կարդացած պիտի լինեին և՛ Բրունչի, և՛ Լորենց-Շտեյն, և՛ Ռոշեր, և՛ Միտերմայեր, և՛ Գերվինուս և այլն, մինչև այժմ չեն հասկացել ինչ բան է շկոլա, դպրոց, կուսակցություն:

Շկոլային, դպրոցին, որոշ կուսակցութեան շպատկանել, — նշանակում է դուրի լինել համոզմունքից, որոշ ծրագրերից, որոշ ուղղութեանից:

Ահա ինչ տարբեր էր ներկայացնում էջմիածնի համազգային ժողովրդի Պետք էր այդպիսի մի միջավայրի մեջ կուսակցական սկզբունքներ անցկացնել: Գրոշակ պաշտպանել դեռ կարելի էր, բայց հաղթել, ամենքին ընկճել: Արծրունուն և իր կուսակցից պատգամավորներին մնում էր ամեն ջանք գործ դնել, որ գոնե Աշրդյանի թեկնածութեանը շառաջարկվի: Գրանց աջողվեց մի այսպիսի համաձայնություն կայացնել: Թուրքահայ պատգամավորները, հանուն ազգային համերաշխութեան, զոհում են իրանց առաջին թեկնածուին, այն պայմանով, որ մշակական կուսակցութեանն էլ իր երկրորդ թեկնածուին զոհե: Այսպիսով ստացվում էին երկու ընտրելիների անուններ՝ իրիմյան և Իզմիրլյան:

Բայց սրանով դժվարութեանը դեռ վերացած չէր: Թուրքահայ պատգա-

մաւորները պահանջում էին, որ արդ երկուսն էլ միաձայն ընտրվեն: Արծրունին սաստիկ հակառակվեց այս առաջարկութեանը: Իզմիրլյանի երկրորդ ընտրելի լինելուն նա համաձայնվել էր ակամա, հանգամանքների ճնշման տակ: Իր դավանանքների, իր համոզմունքի և ուղղութեան տեսակետից նա անկարելի էր համարում Իզմիրլյանին ընտրահան քվե տալ, որովհետև Իզմիրլյանը, նրա հայացքով, Ներսեսի և Խրիմյանի ուղղութեան հակառակ մի մարդ էր:

Մենք այստեղ չենք քննում, թե որքան Արծրունին անսխալ էր իր հայացքների մեջ: Դա ավելորդ էլ է մեզ, այսօրվա ապրողներին համար, քանի որ 1892-ից հետո մեր առջև մի ամբողջ պատմութեան կա, որ վաղուց արդեն սրուց է տվել, թե Արծրունու ենթադրութեաններից, հույսերից ու տեղեկութեաններից ոչ մեկն էլ չարդարացավ: Մենք միայն կարող ենք այստեղ հիշատակել, որ այն ժամանակվա առաջադեմ կուսակցութեան վրա ճնշող ազդեցութեան ունեւր թուրքահայաց հարցը, որ Ներսեսի ղեկավարութեամբ այնքան մեծ նշանակութեան ստացավ Սան-Ստեֆանոյի դաշնագրութեան օրից: Այդ հարցը շարունակում էր հայ ժողովրդի լավագույն մասի վեհ իղեալը մնալ և իր ահագին ժողովրդականութեամբ այնքան ուժեղ կերպով ետ էր մղում բոլոր մյուս հարցերն ու հանգամանքները, որ 1892-ի գործիչները ոչինչ նշանակութեան չէին տալիս նրանց:

Մանավանդ Արծրունու վերաբերմամբ շատ բնական էր այդ հարցի ճնշող ուժը. նա, որ այնքան աշխատել էր, նա, որ իր գործունեութեան ամենաեռանդուն միջոցը նվիրել էր թուրքահայաց հարցին, չէր կարող ուրիշ կերպ վարվել, մանավանդ որ իրիմյանը «Մշակի» սկզբնավորութեանից ի վեր եղել էր նրա համար մի իղեալական հոգևորական: Բավական էր, որ Արծրունին 1892-ից հետո մի քանի տարի ապրեր, որպեսզի իրականութեան մեջ տեսներ, թե որքան սխալվում էր. բավական կլիներ, եթե նա տեսներ Իզմիրլյանի փառավոր պատրիարքութեանը, որպեսզի համոզվեր, թե որքան անարդար է եղել դեպի այդ գործիչը 1892-ի ընտրութեան ժամանակ:

Հարկավոր է ավելացնել և այն, որ ուսահայերի ընդհանուր տրամադրութեանն էլ այնպես էր, որ Խրիմյան Հայրիկը միայն կարող էր առաջին ընտրելին լինել: Ինքը՝ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը հրաժարվեց իր թեկնածութեանից, որպեսզի շիանգարե իրիմյանի ընտրութեանը: Գլխավորապես այդ հասարակական տրամադրութեան ճնշման տակ էր, որ թուրքահայ պատգամավորները, որոնք անձամբ տեսել էին, թե ինչ ահագին ոգևորութեան կա իրիմյանի անվան շուրջը, որքան մեծ ժողովրդականութեան ունի նրա կաթողիկոսանալը, վերջիվերջո համաձայնվեցին, որ իրանք ամենքը ձայն կտան իրիմյանին, իսկ ուսահայերի համար պարտավորական չի լինի Իզմիրլյանին ձայն տալը: — Օրենքով պահանջվում էր ընտրելիների քառանուն ցանկ պատրաստել: Թուրքահայերի ճնշման տակ այդ ցանկի մեջ շմուսվ ոչ մի ուսահայ հոգևորական:

Մայիսի 5-ին այդ բոլոր բանակցութեանների, զիջողութեանների և համաձայնութեանների հետևանքն այն եղավ, որ Խրիմյան Հայրիկն ընտրվեց միաձայն (72 ձայնով), իսկ Իզմիրլյան եպիսկոպոսն ստացավ 50 ձայն: Արծրունին կարող էր զոհ լինել, որ իրան և իր կուսակցիցներին աջողվեց գոնե իրիմյանի միաձայն ընտրութեանը դուրս գլխի ընտրողական ժողովի ձեռքից:

Ահա այսպես վերջացավ այն անօրինակ մեծ ազիտացիան, որի հոգին, գլխավոր առաջնորդը Արծրունին էր:

Կաթողիկոսական ընտրութեաններից հետո Արծրունին մի ամսից ավել անցկացրեց Երևանում: Թիֆլիս ճանապարհվեց նա այն ժամանակ, երբ լրա-

գրական պրոպագանդայի մի մեծ կարևորություն էլ էր ծագել, երբ դարձյալ ժողովրդական մի մեծ աղետ, այս անգամ ավելի վատնագավոր, համատարած, — մամուլի ձայնի կարևորությունն էր զգացնել տալիս: Ակավել էր խոսելը:

Երկար ժամանակ էր, ինչ ասիական այդ սարսափելի հյուսիս շեր ալցելի մեր երկիրը: Այդ ժամանակի ընթացքում գիտությունը հայտնագործել էր այնպիսի ճշմարտություններ, որոնք միանգամայն պարզել էին, թե այդպիսի համաճարակների դեմ կարելի է կռվել հասարակական միաբան, գիտակցական լայն գործունեությամբ: «Մշակը» դարձավ այդպիսի գործունեության եռանդուն քարոզիչ: Գրիգոր Արծրունու առաջնորդողների գլխավոր նյութը խոսերան է դառնում. նա թե բացատրում էր առողջապահության, հասարակական կռիվի սկզբունքները, թե հարձակվում էր Բագրի քաղաքային և կառավարչական հաստատությունների վրա, որոնք հանցավոր անտարբերությամբ էին վերաբերվել մոտեցող վտանգին, ոչինչ միջոցներ չէին ձեռք առել, իսկ քաղաքի ազգաբնակչությունը, փոխանակ իր տեղը նստելու և կանոնավոր կռիվ կատարելու ազատի դեմ, սարսափահար դեմուղեն էր փախել:

Պետք է ասել, որ «Մշակի» ընթացողները տարիներից ի վեր բավական լավ պատրաստված էին առողջապահական գիտություն ժամանակակից պահանջները լավ ըմբռնելու համար, — և այդ շնորհիվ «Մշակի» բժիշկ աշխատակիցների: Բժշկապետ Գ. Տեր-Գրիգորյան (Թիֆլիսցի) տարիների ընթացքում «Մշակի» մեջ տպագրում էր իր «Բժշկի գրությունները» վերին աստիճանի պարզ, հանրամատչելի հոդվածները: Այդտեղ էլ նա տպագրեց մի ամբողջ ժողովրդականացրած աշխատություն խոսերայի մասին: Նրան «Մշակի» մեջ հաջորդեց բժշկապետ Վ. Արծրունին, որ նույնպես շատ աչքի ընկնող ընդունակություն ցույց տվեց բժշկական-առողջապահական գիտությունը ժողովրդականացնելու մեջ: Խոսերայի համաճարակի ժամանակ բժ. Արծրունին հաճախ երևում էր «Մշակում» իր հոդվածներով, և Գրիգոր Արծրունին նրա ասածների վրա էր շատ անգամ հիմնվում իր գրվածքների մեջ:

Ժողովրդական սարսափելի դժբախտության մեջ հանկարծ մի մեծ կորստի բռնը տարածվեց: Օգոստոսի վերջերում Նոր-Նախիջևանում վախճանվեց Ռափայել Պատկանյանը: Ազգային ամենանշանավոր բանաստեղծը երկար ժամանակ էր, ինչ տառապում էր թոքախտից: Եվ տառապում էր առանց նյութական միջոցների, ազքատ ու անօգնական: Գրիգոր Արծրունին «Մշակի» մեջ հրավեր կարդաց օգնելու ամենքին սիրելի բանաստեղծին: Հավաքած նվերները նա ուղարկում էր հիվանդին: Իսկ երբ անողորմ հաճը վերջ դրեց Գամառ-Քաթիպայի կյանքին, նա մի գեղեցիկ առաջնորդողի մեջ բացատրեց, թե ինչ է եղել տաղանդավոր բանաստեղծը ռուսահայերի վերածնության գործում:

«Քառասուն տարի շարունակ, — գրում էր նա մահվան բռնի առաջին տպավորության տակ, — մեր մեծ բանաստեղծը հնչեցնելով իր ոգևորված, ներդաշնակ քնարը, մեր ամբողջ մի սերունդի համար ամենաթանկագին ուսուցիչ եղավ, կրթեց մի ամբողջ հայաց սերունդ, սովորեցրեց մեզ սիրել մեր ազգը: Նրա ամեն մի գրած տողը անցավ ժողովրդի բերանը, նրա ամեն մի ոտանավորը դարձավ ժողովրդական երգ:

Որտեղ բարախում է հայի սիրտը, այնտեղ և հայտնի է Պատկանյանի անունը»:

Իսկ մի շաբաթից հետո նա նորից մի մեծ առաջնորդող էր նվիրում բանաստեղծի հիշատակին: Ահա ինչ էր ասում նա այդտեղ.

«Առհասարակ այն ազգերը միայն վկայում են իրանց կենդանության մա-

սին, որոնք իրանց միջից ծնեցնում են հանճարներ ուղիղ այն ժամանակ, երբ անհրաժեշտ պահանջ կա այդ հանճարների մեջ: Անշարժ, անընդունակ, բարոյապես և մտավորապես մեռած ազգերը այդ տեսակի շնորհը չունեն... Ինչպես երաշտ եղանակին մարդիկ անհամբեր սպասում են երկնքի շնորհին, սպասում են, որ ամպերը կաթեցնեն շորացած, ցամաք, ծարավ գետնի վրա զովացնող, կենդանարար անձրևը, այնպես էլ բնական շնորհներից զրկված ազգերը իզուր սպասում են հայրենի հանճարի ծնվելուն, որը կոչված լիներ վերածնեցնել ազգային կյանքը. և սակայն այդ տեսակի հանճար չի ծնվում... Անցնում են դարեր և դարեր, և խեղճ ազգի սպասելիքները ապարդյուն են լինում, ազգային ամուլ կյանքը անընդունակ է լինում շնորհիվ ժողովրդին մայրենի մտավոր դաշտը մշակող մի մշակ, մի մարդ, որը նոր կյանք, նոր շունչ ներշնչելու իր հնացած ավանդությունների մեջ պառաված, հին կյանքի կախարդված շրջանի մեջ փտող ու քայքայվող ազգին...»

Ընդհանրապես, մտավոր և բարոյական կենդանության դրոշմ իրանց ճակատին կրող ազգերը, թեև անգիտակցաբար, շնորհ ունեն անընդհատաբար իրանց միջից ծնեցնել վերանորոգիչ, կենդանարար հանճարներ՝ ուղիղ այն ժամանակ, երբ հարկ է զգացվում հանճարի ներկայության ու նրա կենդանացնող, վերածնեցնող խոսքի մեջ...»

Սակայն այն ազգերը, որոնք ընդունակություն, շնորհ ունեն պատե՛հ ժամանակին իրանց միջից ծնեցնել ժամանակի պահանջին համապատասխանող հանճարներ, միշտ ընդունակ չեն լինում անմիջապես դնահատել իրանց ծնունդը, զնահատել իրանց ծնեցրած հանճարի կարևորության ամբողջ նշանակությունը... Ո՛չ, ընդունակ, տաղանդավոր ցեղն էլ, մշտական կենդանության դրոշմ իր վրա կրող ազգն էլ մեծ մասամբ անգիտակցաբար է ծնեցնում իր ազգային տաղանդներին ու հանճարներին և այդ պատճառով շատ անգամ ինքն ազգը, որն իր ցեղական ընդունակության շնորհիվ ծնեցրել է իր միջից մի արտակարգ տաղանդ, մի հանճար, — ոչ թե միայն երկար ժամանակ անտես է առնում իր շնորհալի դավալի գոյությունը, բայց շատ անգամ նույնիսկ ուրանում է այն մարդուն, որը ուրիշ բան չէ, եթե ոչ ժամանակի պահանջման փալուն արտահայտություն, ազգի հավաքական ընդունակությունների արտահայտիչ, մայրենի երկրի հարազատ դավալ, ազգային հանճարի ծնունդ հանճար...»

Հիսուներորդ թվականների սկիզբն էր, երբ հայերին նոր էր վիճակված չփվել համամարդկային քաղաքակրթության հետ: Այդ տեսակի բոլորներում ամեն ազգի առջև ճակատագրական ձևով, կամ ավելի լավ ասենք, բնական օրենքով դրվում է իր գոյության խնդիրը, առաջարկվում է «լինել կամ չլինել» ստիպողական սարսափելի հարցը... Կամ փոխել, մեռնել՝ հնավանդ, անկենդան, անշարժ անցյալի անդունդի մեջ, — կամ հերոսաբար իրանից թափ տալով հնության փոշին, վճռողաբար և աներկյուղ կերպով ոտք կոխել ժամանակակից քաղաքակրթության լայն և լուսավոր շավղի վրա... Այս դիլեմայից դուրս գալու ստիպողական, անխուսափելի պահանջը, մահվան կամ կյանքի խնդրին անմիջապես պատասխանելու պահանջը չէ կարող զգալ և նրան բավականություն տալ ազգի մեծամասնությունը, ամբողջ ազգի հավաքական մարմինը, ազգի ամբոխը, — բայց եթե ազգը ընդունակ է արտադրել հանճարներ, նրա միջից ծնվող զգայուն անհատները, ընտրյալ անձնավորությունները, որոնց կոչումն է զգալ, մտածել, տանջվել հազարների փոխարեն, ուղիղ այն բոլորին են հանդես գալիս, երբ պահանջ կա դեն գցել նիւթ, վերածնեցնել նորը, թարմ,

կենդանաբար շունչ փչել ազգային մարմնի մեջ, որն իր հնության և անշարժության մեջ արդեն քարանալու վրա էր...

Եվ ահա ուղիղ այն ժամանակ, հիսուներորդ թվականների սկզբներում, երբ հարկավոր էր հայերին վճռել հնի վրա մնալու կամ նոր ճանապարհով ընթանալու դժվար հարցը, հայոց ազգային անսպասելի հանճարը անգիտակցաբար ծնեցնում է իր միջից ազգային վերանորոգիչ մտավոր ուժերի մի ամբողջ փայլուն պլեադը... Եվրոպական ընդհանուր ուսման ներգործութայն տակ՝ նախ Լազարյան ճեմարանում և ապա Դորպատի համալսարանում կազմակերպվում, կրթվում է երիտասարդների մի խումբ, որն ըմբռնելով ազգի ժամանակակից պահանջը, տպավորվելով ազգի ցավերով, իր կողմից ազգի կրթիչ է հանդիսանում, նրա մեջ նոր կյանք ներշնչել է ջանում... Եվ այդ խմբի գործունեության ազդեցության տակ կրթվում է հայերի մի ամբողջ սերունդ: Արովյանց, Նազարյանց, Նալբանդյանց, Ռոստոմյանց, Ասքարյանց, Գոգոխյանց, Պատկանյանց և նրանց հետևողները՝ բոլորն էլ միևնույն ուղղությունն ունեին... Ինչ որ Ստեփանոս Նազարյանցը և Միքայել Նալբանդյանցը քարոզում էին իրանց պրոզայով, իրանց արձակ ոճով, նույնը հնչեցնում էր Ռաֆայել Պատկանյանը իր քնարի լարերի վրա... Հարվածել անցած գնացած հնությունը, քարոզել նորը, պախարակել կիսակիրթ կյանքը և մեծարել բուն քաղաքակրթական գաղափարը, ջախջախել գրաբար լեզուն և ստեղծել նոր, կենդանի, ժամանակակից գրական լեզուն, — ահա ինչումն էր այդ փայլուն խմբակի կոչումը, որի ամենափայլուն հանճարը ներկայացնում էր իրանով Պատկանյանը, քանի որ նրա հանճարի մեջ ամփոփվում էր այդ վերանորոգիչ խմբակի հավատի ամբողջ դավանանքը...

Հայի ու կոսիկն մոռանանք, եղբայրք,
Պափ տանք մեզանից փոշին հնության,
Վերածնենք մեր մեջ նոր կյանք ու նոր բարք...

Ահա Պատկանյանի հավատի դավանանքը, որն իր մեջ ամենից լավ է ամփոփում իր խմբի ուղղության գաղափարների ամբողջ խորությունը... Այդ երեք տողերի մեջ է ամփոփվում և հիսուներորդ թվականների այդ հանճարեղ ազգային աշուղի ու նրա ընկերակից խմբակի ամբողջ գործունեության նշանակությունը, նրա raison d'être, նրա ամբողջ գոյությունը...»:

Մինչդեռ Արծրունին այսպիսի տաղանդավոր տեսություններով մեծարում էր հանգուցյալ ազգային բանաստեղծին, իր անկեղծ հիացմունքն էր մատուցանում «Մայր Արաքսի» հեղինակի հիշատակին, նրա փոքրոգի թշնամիները Պատկանյանի ցավալի մահը մի լավ պատրվակ էին դարձնում՝ իրենց վրեժը հանելու նրանից:

Դեռ նոր էր մեռել բանաստեղծը, դեռ շարունակում էին ողբալ նրա վախճանը, երբ «Արձագանքի» մեջ սկսեց տպագրվել նրա մի թատրոնական գրվածքը՝ «Աստառ» վերնագրով: Դա մի վերին աստիճանի տգեղ երևույթ էր, որ մի կողմից անպատվում էր բանաստեղծի հիշատակը, մյուս կողմից ցույց էր տալիս, թե Գրիգոր Արծրունու թշնամիները ինչ միջոցներով էին հագեցնում իրանց կրքերը: Հայտնի է, որ Գամառ-Քաթիպան ուներ մի թուլություն, որ չէր կարող պատիվ բերել ոչ մի գրողի՝ նա թույլ էր տալիս իրան գրել պամֆլետներ, պարսավներ այս կամ այն անձի վրա: «Աստառ» այդպիսի մի

գրվածք էր, որի մեջ հրեշտավոր գույներով դուրս էր բերված Գրիգոր Արծրունու ընտանեկան կյանքը:

Բանաստեղծի ալիքն, տեղեկանալով, որ «Աստառ» տպվում է, բողոքեց «Մշակի» մեջ «Արձագանքի» անարգ վարմունքի դեմ: Նրա բացատրությունից երևաց, որ «Աստառ» գրված է հղել 10—12 տարի առաջ, որ Պատկանյանը տված է հղել իր այդ գրվածքը «Արձագանքի» խմբագրին՝ կարգալու համար, հետո զգուցել է, որ այդպիսի մի բան է գրել, մահից երկու-երեք տարի առաջ ետ է պահանջել իր ձեռագիրը և ոչնչացրել է, որպեսզի նա երբևէ չտպագրվի: Ինչպես երևում է, «Արձագանքի» խմբագիրը պահել է իր մոտ գրվածքի արտագրությունը. քանի որ կենդանի էր բանաստեղծը, նա, իհարկե, չհամարձակվեց տպագրել այդ պամֆլետը, բայց հենց որ նա վախճանվեց, խմբագիրը, առանց ժառանգների դիտություն, շտապեց տպագրել, իրեւ վրեժխնդրություն այն բոլոր պարտությունների համար, որ նա կրել էր Գրիգոր Արծրունու դեմ մղած կռիվների մեջ...

Բայց դա վրեժ չէր, այլ մի նոր ապացույց, թե Արծրունին որքան բարձր է իր թշնամիներից: Արծրունին չվրդովվեց այդ հանգամանքից: Նա հայտնեց, որ իր համար, ինչպես և յուրաքանչյուր հայի համար, թանկագին, մեծ, սիրելի է բանաստեղծ Գամառ-Քաթիպան և ոչ թե պատկերներ ու պամֆլետներ գրող Սյուլյուկը: Եվ երկու ընդարձակ հողվածների մեջ ապացուցեց միայն այն, որ «Արձագանքի» խմբագիրը ոչ իրավաբանական, ոչ էլ բարոյական իրավունք չունի տպագրելու «Աստառ»: Եվ որովհետև «Արձագանքի» խմբագիրը բանաստեղծի այրուն տված իր պատասխանի մեջ ասել էր, թե ինքը եղել է հանգուցյալի մոտիկ բարեկամը, Արծրունին ամենայն իրավունքով ասում էր, թե միայն թշնամի մարդը կարող էր այդպես արատավորել ազգային մեծ բանաստեղծի դեռ թարմ հիշատակը:

Իր այդ հողվածների մեջ Արծրունին շատ մեղմ էր, սառնարյուն դատող, անհերքելի փաստերով ապացուցանող: Նա, իհարկե, և ոչ մի ակնարկով չէր ցույց տալիս, թե պամֆլետը վերաբերվում է իրան: Սաստիկ բողոքեց «Արձագանքի» վարմունքի դեմ և բանաստեղծի որբերի խնամակալը՝ երզնյալ հավատարմատար Գրիգոր Չախուրչյանը: Նա էլ գտնում էր, որ Գամառ-Քաթիպայի հիշատակը արատավորված է անզուսպ կրքի թելադրած այդ տգեղ, ապօրինի վարմունքով:

Արծրունին այստեղ էլ հավատարիմ մնաց մի մաքուր, ազնիվ գրողի կոչման. կովել թշնամիների դեմ հասարակական հարցերի շրջանում, կովել սկզբունքների և գաղափարների համար՝ անտես անելով անձնական մանր վրեժխնդրությունները, անձի դեմ ուղղված հայհույանքները, — մի միջոց, որ այնքան սիրում էին գործադրել նրա թշնամիները:

III

Վերջին հաշվետվություն: Արծրունու հիվանդությունը: Վերջին շաբաթը: Ինկտեմբերի 19-ը: «Մշակի» երրորդ շրջանի վերջը: Աշխատակիցներ:

Գրիգոր Արծրունին սիրում էր տարվա վերջերս ամփոփ, համառոտ հաշիվ տալ, թե ինչ է արել «Մշակը» տարվա ընթացքում: 1892-ի հաշիվը նա տվեց «Մշակի» դեկտեմբերի 12-ի համարում՝ «Այս տարի ինչ ենք արել» առաջնորդողի մեջ:

«Մշակի» քսան տարվա գոյություն ընթացքում, — գրում էր նա, — մենք

չենք հիշում 1892 տարվա նման մի տեղադրին տարիք: Եվ իրավի Հիշենք միայն այն հերոսական կռիվը, որ տեղի ունեցավ կաթողիկոսական ընտրութիւններէ շուրջը, մի կռիվ, որի վրա բնեւթում էր ամբողջ հայութեան ուշադրութիւնը և որից Արծրունին դուրս եկավ գաղափարական ազնիւ մարտնչազի դասիննեթով պատկանում:

Տարին միևնույն ժամանակ շարաբայտ էլ էր: Զրօրհններն աղետը, խոյն-րան, Ռափայի Պատկանյանի մահը: Արծրունին հիշատակում էր, որ Զրօրհ-ներէ աղետի վնասվածների համար «Մշակը» հավաքեց մոտ 5000 ուրբի, Պատկանյանի ընտանիքի համար՝ 3500 ուրբի: Բայց այդ բոլորը չէր տարվա շարաբայտութիւնների գումարը: Մենք մեր կողմից կավելացնենք և մի քանի փաստեր: Բացի Ռափայի Պատկանյանից՝ 1892-ին վախճանվեցին. երիտա-սարգ, մեծ հուշեր տվող լեզվագետ Սարգիս Սարգսյանը, ետրեն եպիսկոպոս Նարբեյը, Գարեգին եպիսկոպոս Արվանձայանը, թատերագրող Սրապիոն Էն-քիմյանը: Մեր աղքատ գրականութիւնը միմյանց ետեւից ծանր հարվածներ էր ստանում:

Բայց շարաբայտ տարին դեռ չէր վերջացել, երբ Արծրունին գրում էր իր համառոտ հաշիվը: Նա պատրաստում էր մի ավելի դառն, անզուժ հարված, որին դո՛հ պիտի գնար հենց այդ հաշիվ գրողը: «Այս տարի ինչ ենք արել»-ը Գրիգոր Արծրունու վերջին գրվածքն էր, նրա կարապի երգն էր:

Ահա այդ երգի վերջին տողերը.

«Թե որչափ աջողութեամբ մենք տարանք մեր գործը այդ սարսափելի տարվա ընթացքում, որչափ աջողութեամբ առաջ տարանք ընտրողական ամբողջ պայքարը, որչափ աջողութեամբ առաջնորդեցինք հասարակաց կարծիքը ներկա տարվա ծանր աղետների ժամանակ, վերջապես որչափ իր կոչման հա-մեմատ, որպես մամուլի օրդան, «Մշակը» ներկա ծանր տարվա ընթացքում կանգնած էր իր կոչման բարձրութեան վրա,— այդ բոլորը մենք թողնում ենք մեր ընթերցողների անաշու դատողութեանը»:

Եվ դատողութիւնն ու դատաստանը շուտ եղավ՝ մի քանի օրից հետո, երբ հասարակութեան համար ցուրտ ու դաժան իրականութիւն դարձավ, որ այս տողերից հետո Գրիգոր Արծրունուն այլևս վիճակված չէ խոսել ընթերցողների հետ...

«Մշակի» նախընթաց համարում տպված էր և Ասիացու վերջին երգը:

Ասիացին իր սովորական սրամտութեամբ ծաղրում էր իր գրական հակա-ռակորդներին, բայց նրա խոսքերի մեջ էլ կար վերջնական եզրակացութիւն, նա էլ գումար էր տալիս քսան տարվա մշակական գործունեութեան:

«Դուք վերցնում եք,— գրում էր Ասիացին,— մի լրագիր, դիցուք Կ. Պոլսի «Արևելքը», Թիֆլիսի «Արձագանքը» կամ «Անանուն թերթը». սկսում եք ծայրից ծայր կարդալ: Չնայելով, որ այդ լրագիրների էջերը պարունակում են թունավոր բացիլներ, բայց եթե դուք պատկանում եք հասարակութեան մի անողջ կամ արդեն դեղինֆեկցիային, ախտահանութեան ենթարկված շրջանին, և ինքներդ էլ տրամադիր չեք վարակվել այդ թունավոր, վնասակար բացիլներով,— դուք կարող եք, ինչքան ուզենաք, Պետտենկոֆերի պես, կուլ տալ այդ բացիլները, և ամենևին չեք հիվանդանա: Դրանով բացատրվում է, որ այդ տեսակ լրագիրները այլևս ոչ ոքին չեն կարող վարակել, քանի որ ընթերցողների շրջանն արդեն վաղուց մաքրված, ախտահան եղած է» և մարդիկ այլևս կորցրել են այդ լրագիրների բացիլներով վարակվելու արամագրութիւնը... Իսկ երբ որ շրջանը նպաստավոր չէ, ախտը էլ չէ կարող տարածվել: Դրանով բացատրվում է, որ այդ երեք լրագիրները ոչ թե միայն այլևս չեն տարածվում,

բաց և նրանց բաժանորդների թիվը հետզհետե նվազելով՝ շուտով գրոյին կհասնի:

Որքան լավ և դործնական բան էր, ուրեմն, քսան տարվա ընթացքում և անբնդհատաբար արած դեղինֆեկցիան, որը այսուհետև անընդունակ է դարձրել կարգացող շրջանը ախտավոր մտքերն իր մեջ ընդունելու:

Գեղտեմբերի 17-ին «Մշակի» մեջ տպված էր. «Հարկավոր ենք համարում հայտարարել, որ մեր լրագրի խմբագիրը՝ պ. Գրիգոր Արծրունին, երեք օրից ի վեր տկար լինելով՝ չէ ընդունում իրան անձամբ դիմել ցանկացողներին»: Լուրը հուզմունք տարածեց «Մշակի» բարեկամների շրջանում: «Մշակի» խմբագրութեան ղեկավարը շատերն էին ներս մտնում՝ անդեկանալու համար, թե ինչ կա:

Գեղտեմբերի 19-ին «Մշակը» ավելի հուզիչ լուր տարածեց. «Պ. Գրիգոր Արծրունին, որի հիվանդութիւնը թոքերի բորբոքումն էր, բժշկապետ Լ. Գասպարյանի կարգադրութեամբ էլի մի քանի օր չէ ընդունելու իր հետ անձամբ տեսնվել ցանկացողներին»: Բայց մինչդեռ «Մշակը» այդ լուրը տարածում էր Թիֆլիսի մեջ, նույն այդ օրը կտրվեց նրա խմբագրի կյանքի թելը: Նույն օրը Գրիգոր Արծրունին մի անշունչ դիակ էր...

Արծրունին հիվանդացավ գեղտեմբերի 13-ին: Սկզբում շատ թեթև էր հիվանդութիւնը, կարծում էին, որ մրսելուց առաջ եկած մի հասարակ տկարու-թիւն է, որ շուտ կանցնի: Թիֆլիսում առաջնակարգ բժշկի համբավ վայելող Լ. Գասպարյանցը Արծրունու վաղեմի բարեկամն էր և մշտական բժիշկը: Սկզբում բժշկապետ Գասպարյանն էլ համոզված էր, որ հիվանդութիւնը շուտով կանցնի: «Վերջին շաբաթը» հոգվածի մեջ «Մշակի» աշխատակից Խ. Մալումյանը գրում է, որ գեղտեմբերի 14-ին, երկուշաբթի օրը, Արծրունին ասում էր իր խմբագրական աշխատակիցներին. «Կարծեմ կարող կլինեմ հինգշաբթի օրը վեր կենալ, այնպես որ դուք, պարոններ, ստիպված կլինեք այս երկու օրս ավելի շատ աշխատել»:

Բժիշկն արդեն գտել էր, որ սկսվել է թոքերի բորբոքում, բայց հույս ուներ, որ վտանգ չի լինի: Սակայն երկու օրից հետո, 16-ին, հիվանդի դրութիւնը դժվարացավ: Բժ. Գասպարյանը գնում-գալիս էր, իսկ հիվանդի մոտ փոխե-փոխ, օր ու գիշեր հերթապահութիւն էին անում բժշկապետներ Լորիս-Մելիք-յան և Վ. Արծրունի. 17-ին թեև հիվանդութիւնը անդադար իր վարգացման շրջանում առաջանում էր, բայց հիվանդը իրեն լավ էր զգում:

«Երեկոյան,— պատմում է պ. Մալումյան,— երբ բժ. Գասպարյան եկավ, խոսք ընկավ բնակարանի հարմարութեան մասին:

— Դեռ 1886 թվին, երբ դուք արտասահմանից վերադառնալով՝ այդ տունը վարձեցիր, ես ձեզ ասացի, որ շատ էլ լավ չէ:

— Ի՞նչ անենք,— վրա բերեց տխրութեամբ Արծրունին.— միջոցները այդքանն են թույլ տալիս:

— Սակայն չեմ կարող ասել,— ավելացրեց բժիշկը,— թե այստեղ շատ վատ է: Ո՛չ, պայմանները այնքան էլ վատ չեն: Կան այնպիսի տներ, ուր մի փոքրիկ սենյակի մեջ ապրում է մի ամբողջ ընտանիք, և այդտեղ էլ պակաս չէ լինում հիվանդը»:

Այս խոսքերը, իհարկե, ավելի սիրտ տալու համար էին ասվում, թե չէ՞ ի՞նչ միտթարութիւն էր այնքան հուշակված հայ հրապարակախոսի համար, որ իր նեղ, փոքրիկ, օգից զուրկ բնակարանից վատ բնակարաններ էլ են լի-նում: Այստեղ էլ, ուրեմն, այս հայ գործիչի մահվան անկողնի մոտ էլ կրկն-վում էր հավիտյան տխուր, անմխիթար իրողութիւնը. հասարակութիւնը

այնքան միջոցներ չէր տալիս, որ նա, իր նախկին փառալոր կացութիւնից զրկվելուց հետո, կարողանար գոն մի լավ, հարմար բնակարանում ապրել: Ո՞վ գիտե, գուցե մի ուրիշ բնակարանում Արծրունու վաղուց տկար թոքերը կարողանային ավելի երկար դիմանալ, և նրա կյանքը այնքան կարճ չէր լինի:

Զոհ՝ բոլոր հայ գործիչների համար միանձան ճակատագրին, Արծրունին այնքան հպարտութիւն ունեւր, որ ոչ ոքի չէր գանգատվում, մանավանդ ոչ ոքի օգնութեան կարոտ չէր դգում իրան: Ապրում էր նա «Մշակույթ», ապրում էր «Մշակի» հետ և «Մշակի» համար՝ նրա մեջ գտնելով իր կյանքի բոլոր սրբախոյութունները: Այժմ էլ, պառկած անկողնում, նա մտքով մշուս սենյակումն էր, ուր նրա օգնականները շարունակում էին լրագրի խմբագրութեանը: Արդեն վեցերորդ օրն էր, արդեն մոտենում էր կրիզիսի շրջանը: Երեկոյան պ.պ. Տեր-Մարկոսյան և Մալումյան գբազված են «Մշակի» շաբաթ օրվա համարը սրբագրելով, մի համար, որի վրա վերջին անգամ պիտի երևար Գրիգոր Արծրունու ստորագրութեանը:

«Այդ միջոցին,— ասում է Մալումյանը,— դուրս եկավ տիկինը և հաղորդեց, որ Արծրունին խնդրում է ուշագրութեան դարձնել, որ չլինի թե «Մշակի» համարը սխալ դնենք, 146 համարն է,— ասում է նա:

Ես մտա նրա սենյակը և հանգստացրի, ասելով, որ ամեն բան կարգին է և ոչինչ սխալ չի լինի:

...Արծրունին նույնպես հարցրեց, թե ինչպե՞ս է կազմված համարը:

— Ոչինչ, վատ չէ,— ասացի ես:— Որքան որ կարելի է ներկա հուզված միջոցին գրել, գրել ենք:

— Խնդրում եմ ասացեք, թե ինչ նյութեր են մտել:

Ես ուզում էի մի քիչ կոպտութեամբ ասել՝ «Ա՛յ մարդ, հանգստացեք, ձեր անձը խնայեցեք, մի քանի օր հանգիստ մնացեք», բայց տեսնելով, թե ինչպես նրա սիրտը թրթռում է իր սիրած «Մշակի» համար, ես իսկույն բերեցի համարը և հաղորդեցի շաբաթ օրվա «Մշակի» բովանդակութեանը:

— Ոչինչ, լավ է, միակողմանի չէ,— նկատեց նա:— Ցենզորը ոչինչ չէ՞ ջնջել այս համարից:

— Չէ:

— Ինչ է, համարի մեջ ոչինչ հակացենզուրական բան չի՞ եղել, թե խնայել է տկար խմբագրին,— վրա բերեց ժպտալով պ. Արծրունին:

— Երեկոյան հեռագիրները ստացե՞լ եք,— մի քանի րոպեից հետո հարցրեց ինձանից:

— Այո՛, ստացել ենք:

— Չկա՞ ոչինչ:

— Չկա:

Եվ գիտե՞ք, թե ինչի մասին էր խոսքը: Նա ամեն օր, օրը մի քանի անգամ, հարցնում էր խրմիւյան Հայրիկի մասին և ուզում էր իմանալ, թե արդյոք հեռագիրը ոչինչ չէ՞ հաղորդել:

...Հայրիկի վրա խոսելով, նա անցավ ուրիշ հարցերին, տաքացած կերպով սկսեց խոսել Կ. Պոլսի մի քանի դեպքերի, հայոց գրականութեան, «Մշակի» 1893 թվի գործունեութեան, մի քանի լրագրական անցքերի մասին և խոսում էր բոլորովին ստոյգ մարդու լոգիկայով, նրա աչքերի մեջ նկատվում էր կյանք, կրակ...

— Պ. Արծրունի, այդքան չէ կարելի խոսել, բժիշկը խնդրեց, որ չխոսեք:

— Է՛հ, եղբայր, ձանձրացրեց ինձ այսքան պառկելը, մի բան պե՞տք է անել, թե չէ:

— Ես լսել եմ, որ դուք ձեր երիտասարդ ժամանակը, ժնկում, ամբողջ շորս ամիս մի բառ անգամ չեք արտասանել՝ հիվանդ լինելու պատճառով:

— Այո՛, բայց այն ժամանակ ես սարսափելի թոքախտ ունեի. իսկ այժմ ի՞նչ կա որ:

Այսքան նա վստահ էր, որ իր դրութեանը վտանգավոր չէ: Բայց գիշերը սկսվեցին զառանցանքները:

Երբ աչքերը բացավ, ասաց.

— Երբ խոսում եմ, մտքերս շեն շփթվում, խելքս բոլորովին տեղն է, բայց երբ աչքերս փակում եմ, իսկույն միտքս պղտորվում է, և ամեն տեսակ հիշողութեաններ և պատկերներ անցնում են իմ աչքերի առաջ:

— Գուցե հոգնածութեանից է, պ. Արծրունի,— ասացի ես՝ շիմանալով ինչ ասել:— շուտով կանցնի:

— Ա՛յ, մի քանի րոպե առաջ հիշեցի իմ մանկութեանը, իմ կյանքն արտասահմանում, իմ առաջ պատկերացավ «Մշակի» սկզբնավորութեանը, ես տեսա իմ առաջ այնքան տարիների պատմութեանը: Կարծեք գրում եմ...

Այդտեղ Արծրունին կանգ առավ մի քանի րոպե և ավելացրեց.

— Երբ «Մշակը» սկսեցի, Թիֆլիսում հայ գրաշարներ քիչ կային. ես գտա մի լավ գրաշար՝ Ներսես անունով: Նա մի երկու տարի «Մշակի» վրա բանեց: Խեղճը թոքախտ ունեւր, երկար շապրեց: Երբ նա հիվանդ էր, ես գնում էի այցելութեան: Լավ հիշում եմ, որ կյանքի վերջին րոպեներն էին. նա անզգա դրութեան մեջ ձեռքերը շարժում էր այնպես, որ երևակայում էր, թե տպարանում շարում է...

Մի րոպեից հետո կրկին այդ տխուր հիշողութեաններն անցան, և Արծրունին կրկին սկսեց խոսել՝ զլխավորապես «Մշակի» մասին:

Բայց շուտով դրութեանը ավելի վատացավ: Հիվանդն ընկավ մահվան տագնապի մեջ: Եվ այնուհետև նա կամ ուշքի էր գալիս, կամ էլի ընկնում նույն դրութեան մեջ:

Ժամը 10-ին բժ. Գասպարյան նորից եկավ: Նա հիվանդի մոտ մնաց մի տասն րոպե, և ապա դուրս եկավ մշուս սենյակը՝ վերին աստիճանի տխրադեմ:

— Բորբոքումը անցել է աջ թոքը,— ասեց նա համարյա արտասովոր աչքերով,— վտանգը մեծ է, հույս չկա...

Նույնը կրկնեց և նոր հրավիրված մի ուրիշ բժիշկ: Ամենքը կորցրել էին իրանց հույսը, սպասում էին ճակատագրական վախճանին:

Ժամը 12-ին ես կրկին մտա հիվանդի մոտ,— շարունակում է պ. Մալումյանը:

— Ասացեք, խնդրեմ, քանի՞ ժամ է մնում մինչև կրիզիսի անցնելը:

— Բժիշկներն ասում են՝ երկու ժամ:

— Ո՛հ, երկու ժամ. մի՞թե այդքան երկար, ես տանջվում եմ, ես չեմ կարողանա երկու ժամ դիմանալ...

— Ի՞նչ եք ասում, պ. Արծրունի, երկու ժամ չէ, երկու օր էլ կդիմանաք, եթե հարկ լինի. դուք դեռևս այնքան առույգ, այնքան ուժեղ եք...— ասացի ես պոռչներս կրծոտելով:

Հիվանդի դեմքի վրա կարծեք մի ժպիտ փայլեց: Նա հավատաց:

Տագնապի մեջ, բայց բոլորովին խելքը զլխին, հիվանդը անց կացրեց էլի մի ժամ: Ժամը 1-ն էր:

Հերթապահ բժ. Վահան Արծրունի դուրս գալով հիվանդի մոտից՝ հայտնեց, որ աջ թոքի բորբոքումը արագ-արագ առաջ է գնում: Բուպենները համարված էին:

Տիկինը նստած էր հիվանդի անկողնու մոտ: Խմբագրատան սեռյակներու սպասում էին Արծրունու մտայն ծանոթներից շատերը:

Մահվանից երկու րոպե առաջ նա կրկին մտա հիվանդի մոտ:

— Բժ. Գասպարյանն այստե՞ղ է:— Հարցրեց նա:

— Ա՛յ, պ. Արծրունի, նա գնաց, շուտով կգա:

— Մյուս բժիշկներից ո՞վ կա:

— Բժ. Լորիս-Մելիքյանն էլ է գնացել, այստեղ միայն մնում է բժ. Վահան Արծրունի:

— Այնքան վտանգ չկա, երբ բժիշկները շեն մնացել, շուտով կանցնին:

— Կանցնին, պ. Արծրունի, մի փոքր էլ դիմացե՛ք, — ասացի նա, և անկարող լինելով զսպել արտասուքներս՝ դուրս վազեցի սենյակից:

Ամենքս սպասում էինք հարևան սենյակում: Մի րոպե չէր անցել, որ տիկինը դուրս եկավ այլայլված: Նրա գեմքը սարսափ էր արտահայտում:

Ամենքս ներս մտանք:

Կյանքի վերջին վայրկյաններն էին: Արծրունին աչքերը կիսախուփ, բերանը կիսաբաց, հաղիմ նկատելի շնչում էր: Կուրծքը այլևս չէր խփում, ինչպես մի քանի րոպե առաջ, կատաղի այիքի նման...

Բժիշկը իսկույն կաշվի տակից սրտից էֆիր: Բայց անօգուտ: Մի քանի վայրկյան ևս, 1 ժամ 40 րոպեին այլևս նա չկար:

Բժշկապետ Գասպարյանը իր բյուլետենում, որ տպվեց «Մշակի» մեջ, ասում էր. «Ի մեծ ցավ իմ, Նախասահմանության անսահմանելի կամքով, ինձ վիճակված չէր մի անգամ ևս ազատել անփոխարինելի և անհաղթ ժողովրդական ասպետին, իմ բարեկամին և բարյացակամին»:

Նա ասրեց մի առանձին, արտակարգ կյանքով. 48 տարի անցկացրեց նա այս աշխարհում իբրև երկու կողմից վառված մի մոմ: Պայծառ ու արագ այրվեց այդ մոմը, վերջացավ: Եվ մինչև վերջին կայծը նա դեռ հավատում էր, թե վեր կկենա և կշարունակի իր գործը: Պատերազմական առաջավոր դիրքում կանգնած զինվորի մահ: Այդ մահն էր, որ խլեց նրա ձեռքից, գեն պեց նրա այնքան պինդ բռնած, այնքան պատվով ու փառքով գործածած զենքը...

Գեկտեմբերի 19-ին կենդանի աշխարհից հեռանում էր մի իսկական մարդ և իսկական հաղվագյուտ գործիչ՝ տանելով իր հետ մի ամբողջ պատմություն: Դա «Մշակի» քսան տարվա պատմությունն էր: Այնուհետև այդ անվանի լրագրի համար սկսվում էր մի բոլորովին նոր պատմություն, և սկսողը Արծրունու կինն էր՝ տ. Մարիամ Մելիք-Աղամալյան, որին Արծրունին կտակով թողել էր «Մշակը»:

Ինչպես տեսանք, «Մշակի» հրատարակության երրորդ շրջանը, որ սկսվեց 1886-ից, մի ազատամիտ, համարձակ հրապարակախոսության համար շատ աննպաստ ժամանակ էր: Մեր նորագույն կյանքի ամենախոշոր երևույթը՝ թուրքահայերի հարցը, ամբողջ այդ շրջանում հանված էր հրապարակախոսության մատչելի առարկաների շարքից: Բայց անգույն ու անբովանդակ տարիներում էլ Արծրունուն աջողվում էր մեր ներքին, մանր-մունր հարցերից ստեղծել ամբողջ հասարակական շարժումներ: Իսկ թուրքահայերի վերաբերմամբ «Մշակը», այնուամենայնիվ, հնար եղածի չափ նյութեր էր տալիս, ավելի քան մի որևէ ուրիշ լրագիր: Այդ խուլ շրջանում էր, որ «Մշակի» մեջ երևաց երիտասարդ գրող պ. Վրթանես Փափաղյան. նա տեսել էր թուրքաց Հայաստանը, ավելի լավ էր ճանաչում նրան, քան Բաֆֆին: Եվ իր ունեցած հարուստ տեղեկությունները պ. Փափաղյան տալիս էր հասարակության թե

նկարագրական մի երկար շարք նամակների մեջ և թե մանր պատմվածքների ու պատկերների ձևով, որոնք գրվում էին Բաֆֆիի խիստ ազդեցություն տակ, բայց առանց նրա չափ տաղանդ ունենալու: Այդ բոլոր գրությունները մեծ հետաքրքրություն մեծ էին կարգացվում, իսկ Բաֆֆիական ոգով գրված պատկերները նույնիսկ մի քանի անգամ առանձին հրատարակվեցին:

Գալով «Մշակի» այդ շրջանի մյուս աշխատակիցներին, մենք պետք է հիշենք պ. Ա. Արզումանյանին, որ երկար ժամանակ տալիս էր գավառական կյանքի ուսումնասիրություններ, որոնք իրանց լրջությամբ, քննադատական ուժով և խոր իմաստով շատ լավ տպավորություն էին թողնում ընթերցողների վրա: Այնուհետև գալիս է մեր տաղանդավոր նկարիչ պ. Գ. Բաշինջաղյանը: Իբրև բնության սիրահար, որի գեղեցկությունները այնքան սիրուն կերպով արտահայտում է նկարչի վրձինը, նա ամենայն աջողությամբ նկարագրում էր նույն բնությունը և «նկարչի կյանքից» և այլ վերնագիրներ կրող պատկերների մեջ, որոնք տպվում էին «Մշակի» էջերում: Մեր ժողովրդական հայտնի գրող պ. Ղազարոս Աղայան «Մշակի» հակառակ բանակում երկար գործելուց և նույնիսկ Արծրունու դեմ գրելուց հետո, ի վերջո, շատ ուրիշների պես, գրավեց «Մշակի» մաքուր ու ազնիվ հրապարակախոսությունը և հաշտվեց Արծրունու հետ, տալով, իբրև համակրության և հաշտության առհավատչյա, իր «Սերը արտաքսված» վեպիկը, որ տպագրվեց «Մշակի» մեջ: Եվ այնուհետև Աղայանը երկար մարտնչում էր «Մշակի» գրողակի տակ: Պ. Գրիգոր Տիգրանյան հաճախ երևան էր գալիս իր ժողովրդականացրած գիտական հոդվածներով: Երկու աշխատակից բժիշկների՝ Տեր-Գրիգորյանի և Վ. Արծրունու մասին արգեն խոսել ենք:

Մինչև կյանքի վերջին րոպեն Գրիգոր Արծրունին իր ձեռքում բռնած գրչի հետ պահում էր և այն դյուրական ուժը, որ շարունակ գրավում էր դեպի նրա գործը նոր և նոր աշխատողներ:

IV

Մահվան արած տպավորությունը: Թիֆլիսի ֆաղափազլի ևառ: Արծրունու շարաքը: Հեռագիրներ, պատգամավորություններ, պսակներ: Ռուս և հայ մամուլի կարծիքները: Գեկտեմբերի 27-ի օրը: Վանքի մայր եկեղեցում: Թիֆլիսի փողոցներում: Խոջիվանքի գերեզմանատանը: Վերջին հիշատակներ: Եզրակացություն: Գեղաց Արծրունու տոմսի սպառումը:

Մահը մի ակնթարթում հասարակության աչքի առաջ հանեց կորստի ամբողջ մեծությունը: Նա ցնցում առաջացրեց Թիֆլիսում: Եվ այդ ցնցումը մի քանի ժամվա ընթացքում հաղորդվում էր գավառներին էլեկտրական թելերի միջոցով, այն բազմաթիվ հեռագիրներով, որոնք այս ու այն կողմն էին թռչում, տարածում էին սև բոթը:

Մահը կյանքի բոլոր խավերի միջից հանեց, մի տեղ հավաքեց և հրապարակ բերեց այն ահագին ժողովրդականությունը, այն մեծ հուշակը, որ Գրիգոր Արծրունին քսան տարիների ընթացքում նվաճել էր քայլ առ քայլ, դառն մրցությունների, անհողողող կամքի և խոր, պողպատե համոզմունքի միջոցով: Սկսվեց նրա հիշատակի հսկայական մեծարանքը: Սկսվեց մի ամբողջ հասարակական պաշտամունք, մի հանրային սուգ...

Նույն օրը, գեկտեմբերի 19-ի երեկոյան նշանակված էր առաջին հոգե-

Հանգիստը «Մշակի» խմբագրության մեջ: Հայտարարություններ չէին եղել, բայց երեկոյան արդեն «Մշակի» խմբագրության առջև խմբված էր ահաբեկ բազմություն: Եկել էին Արծրունուն մնաս բարով ասելու: Խմբագրատան ներքին փոքրիկ, աղքատիկ, խեղճ սենյակները, նեղ կոթիզորը արագ լցվեցին մարդկանցով: Կնարք եղավ փակել ներսի դռները: Մուտքի առաջ, փողոցում, կատված էր բազմությունը: Այդտեղ խոնկում էին ամեն հասակի, դիրքի մարդիկ, ինտելիգենտ, արհեստավոր, — կանայք և տղամարդիկ, եկել էին և թուրքահայ մշակները իրանց «Մշակ-աղայի» ստոած ձեռքը համբուրելու:

Քաղումը նշանակված էր ութ օրից հետո՝ հետևյալ կիրակի, դեկտեմբերի 27-ին: Եվ այդ ամբողջ մի շաբաթը «Մշակի» խմբագրատունը դարձել էր ոչ միայն Քիֆլիսի, այլև Ռուսաստանի ամբողջ հայության սիրտը, ուխտատեղի: Հասարակական ցույցների երկար, սրտաշարժ շարքը բաց արեց Արծրունու հայրենի Քիֆլիս քաղաքը: Դեկտեմբերի 21-ին, Քիֆլիսի քաղաքագլուխ իշխան Արղուսյան-Սրկայնաբաղուիչը, բաց անելով Դուսաչի իստը, ասաց հետևյալ ճառը.

«Հարգելի պարոններ, շաբաթ օրը, դեկտեմբերի 19-ին, մեռավ Գրիգոր Սրեմյան Արծրունի: Ոչ առանց հուզմունքի հաղորդում եմ այս վերին աստիճանի ցավալի լուրը: Դեռ մոտ օրերս մենք տեսնում էինք Գրիգոր Սրեմյանին առողջ և առույգ, բայց դժնդակ ցավը հանկարծ ձգեց նրան անկողին, և դեկտեմբերի 19-ին կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ քաղաքում տրխրալի լուրը՝ թե նա այլևս չկա: Այդ հանկարծակի մահը խորին վշտով համակեց մեր հասարակության բոլոր խավերը: Երեկ ապրում էր, — այսօր մեռավ, մեռավ ուժերի և տաղանդի ամենածաղկած ժամանակին:

Հանգուցյալն անզուգական անձնավորություն էր: Նրա արդյունավոր գործունեությունը բառի լայն մտքով կատարյալ հասարակական գործունեություն էր: 1875 թվից մինչև 1887 թիվը, այսինքն մի քանի քառամյակ, հանգուցյալը մեր դումայի ձայնավոր էր և իր խորհուրդներով շատ օգուտ էր տալիս քաղաքին: Բայց նա ուներ ավելի լայն ասպարեզ. այդ նրա հրապարակախոսական գործունեությունն էր, նրա աշխատությունը «Մշակ» լրագրում, որի խմբագիր-հրատարակիչն էր 1872 թվից: Նրա գործունեությունը իբրև հրապարակախոսի շատ սերտ կապ ուներ հասարակական գործունեության հետ: Նա մի քարոզիչ էր, քաղաքակրթության սերմանող, կուլտուրայի սերմանող: Նրա «Մշակը», նրա այրող, տաղանդավոր, ազնիվ և շիտակ հողվածները, որոնց մեջ նա շատ անգամ խոսում էր սոցիալական և կրոնական խնդիրների մասին, ընթերցողների և հարգողների ահագին կոնտինգենտ ունեին ոչ միայն Քիֆլիսում, այլև դավառում: Նա սովորեցրեց ժողովրդին կարգալ՝ բացատրելով իր ազնիվ մտքերը վերին աստիճանի հանրամատչելի ժողովրդական լեզվով: Նա թշնամի էր ամեն խտրության, անշարժության, լճացման: Նրա այն հողվածները, որոնց մեջ նա խոսում էր խորին և անկեղծ համոզմունքով, երբեմն հասնում էին մարդկության ամենաբարձր քարոզիչների ոգևորության: Նա նույնպես զնայի ամեն տեսակ թշվառություն սաստիկ զգայուն էր: Նա անձնապես հավաքեց 5000 ռ. հունվարի 6-ի աղետից վնասվածների համար. քիչ շաշխատեց և խոլերային էպիդեմիայի ժամանակ ձրի թեյարանների օգտին: Ընդհանրապես, հարգելի պարոններ, հանգուցյալն այնպիսի մարդ էր, որի հիշատակը դեռ երկար չի ջնջվի, և նրա թողած հոգևոր ժառանգությունը ամբողջապես մեր առանձին ուշադրության արժանի է: Այդ ի նկատի ունենալով, պարոններ, ես առաջարկում եմ հարգել հանգուցյալի հիշատակը ոտքի կանգնելով և նրա դագաղի վրա Քիֆլիս քաղաքի անունից պսակ դնել:»

Տողերիս գրողը, իբրև մեկը դավառական այն բազմաթիվ պատգամավորներից, որոնք այդ օրերում Քիֆլիս էին շտապում մեր երկրի դանազան կողմերից, կարող է որպես ականատես պատմել, թե ինչ էր զեկտեմբերի 19—27 շաբաթը, որ ամբողջապես Արծրունուն էր պատկանում և որին ամենայն իրավունքով կարելի է տալ «Արծրունու շաբաթ» անունը:

Կովկասի մայրաքաղաքում տիրում էր անսովոր կենդանություն: Մեծ փողոցների մագազիններում դրված էին հանգուցյալ հրապարակախոսի պատկերները և նրա դագաղի վրա դնելու թանկագին պսակներ: Ժամերով կարելի էր տեսնել նրանց առջև խոնկած բազմություն: Ամեն տեղ խոսակցության նյութը Արծրունին էր: Յուրաքանչյուր ժամ իբրև նորություն պատմվում էր, թե այսինչ տեղի հասարակությունը, այսինչ խումբը, այսինչ հիմնարկությունը ինչ տեսակ ցույցով է արտահայտում իր համակրանքը զնայի հանգուցյալը:

Շարունակ գալիս էին պատգամավորություններ, շարունակ ստացվում էին հեռագիրներ, որոնցով Քիֆլիսում ապրող անձինք ներկայացուցիչներ էին նշանակվում հիմնարկությունների, հասարակական դասակարգերի և անհատների կողմից: Կազմվել էր մի հատուկ կարգադիր մասնաժողով, որ ընդունում էր պսակները: Հրատարակչական ընկերության գրասենյակի երկու սենյակները արագ լցվում էին պսակներով: Քիֆլիսի մագազիններում պսակների պակասություն էր զգացվում: Քաղման օրը պսակների թիվը հասնում էր 300-ի: Դա մի շտանակած քանակություն էր ոչ միայն Քիֆլիսում, այլև ամբողջ Ռուսաստանում:

Ամեն օր, իրիկնապահին, ժամի 4-ից հետո մինչև 6—7-ը, անկարելի էր մտնել «Մշակի» խմբագրատունը: Դրանք սովորական հոգեհանգիստների ժամերն էին, երբ մեծ բազմությունը, զլխավորապես հասարակ դատակարգերից, կուտվում էին մուտքի մոտ, խիտ առ խիտ լցնում էին բոլոր անցքերը, բոլոր սենյակները: Միաժամանակ ամեն կողմից, Ռուսաստանից և թե արտասահմանից, թափվում էին ցավակցական հեռագիրներ: Դրանց թիվը 400-ից անցավ:

Հոգեհանգիստներ կատարվում էին և սովորական ժամերից դուրս, այս կամ այն դասակարգի, հիմնարկության նախաձեռնությամբ: Այդ տեսակ հոգեհանգիստներից մենք կհիշատակենք Քիֆլիսի հրեա հասարակության կողմից ուբբի կատարած հոգեհանգիստը:

Արծրունիական շաբաթին առանձին վեհություն տվողը այն էր, որ ամսուսանքը, վշտակցությունը, երկրպագությունը ընդհանուր էր, առանց դավանություն, լեզվի և ազգության խտրության: Պատգամավոր էր եկել Երևանի թուրք հասարակության կողմից: Քուրճիսի հայոց եկեղեցում կատարված հոգեհանգիստին ներկա էին վրաց ինտելիգենցիայի և ազնվականության ներկայացուցիչները, իսկ Քիֆլիսի վրաց մամուլը հատուկ պատգամավորներ ուներ թաղման ժամանակ:

Տեղական ռուս մամուլի ներկայացուցիչներն էլ, ինչպես և ցենզուրական կոմիտեի ամբողջ կազմը, եկան խմբագրատուն հոգեհանգիստի:

Նայելով ազգերի և լեզուների այդ միաբան մեծարանքներին, կարելի էր իրականացած տեսնել մեր տաղանդավոր, անզուգական հրապարակախոսի ամենասիրած գաղափարներից մեկը՝ ազգերի համերաշխության, եղբայրակցության գաղափարը: Նրա քարոզությունը գնահատել էին մեր դրացի ազգությունները, որոնք և արտահայտում էին այդ հանգամանքը ոչ միայն լուռ ցույցերով, այլև ճառերի, հողվածների մեջ:

Հասարակության տրամադրությունը բարձրության վրա էր պահպանում տեղական մամուլը, որի ահագին մեծամասնությունը (բացառություն կազմում

էին Արծրունու հակառակորդ երկու հայերեն թերթերը) ամենայն ջանքերով հրապարակում էր հանգուցյալի խոշոր արժանավարտությունները, նրա կատարած մեծ դերը և միաբնորան վկայում էր, թե ի՞նչ մեծ կորուստ է Արծրունու մահը ամբողջ հայության համար:

«Кавказ» լրագիրը գրում էր. «Հայ հասարակությունը և հայոց գրականությունը ծանր և դժվար վարձատրելի կորուստ ունեցան: Մենք պարտք ենք համարում մեր խորին ջամակցությունը հայտնել հայ հասարակության կրած ցավալի կորուստի համար՝ Գ. Արծրունու վաղահաս մահվան պատճառով, Արծրունու, որ տալագրական խոսքի ամենից աչքի ընկնող և ամենահամակրելի գործիչներից մեկն էր Կովկասում»:

«Новое обозрение» լրագիրը. «Պատկանելի հրապարակախոսի կորուստը անկասկած արձագանք կգտնե ամեն տեղ, ուր որ ապրում են հայերը, և մասնավորապես Կովկասում, որի ամենախույզ անկյուններում, մինչև անգամ ազգաբնակչության ստորին խավերի մեջ, Գրիգոր Արծրունին մեծ ժողովրդականություն ունեւ որպէս տաղանդավոր ժուռնալիստ և հասարակության ամենալավ մասի թանկագին գաղափարների անխոնջ թարգման:

Անփոխարինելի հրապարակախոսի մահվան տխուր լուրը հայ հասարակության և մասնավորապես երիտասարդության վրա ամենածանր տպավորություն ունեցավ: Մեր երկրին լավ հայտնի Գրիգոր Արծրունու գործունեությունը, որպէս ժուռնալիստի, այնքան կենդանի էր, որ դժվար է հաշտվել նրա կատարելապես դադարման հետ:

Հանգուցյալը, ինչպէս հայտնի է, հայկական մամուլի ամենազինավոր հիմնադիրներից մեկն էր Կովկասում: Մինչև նրա երևան գալը երբեք հայ մամուլի և հասարակության մեջ գոյություն չուներ այնպիսի սերտ կապ, մինչև նրա երևան գալը հրապարակագրողի ջերմ, համոզված խոսքը չէր հարթում ճանապարհը դեպի ընթերցող հասարակության մասսայի սիրտը:

Հանգուցյալ Արծրունին առօրյա կենսական հոգսերի մեջ խորատուզված հայ հասարակության մեջ նմանվում էր այն արթնացնող ժամացույցին, որ չէ թույլ տալիս հասարակական ինքնաճանաչության քնել և անտես անել հասարակական կյանքի խնդիրները:

Բազմակողմանի կրթված, անկախ, ամբողջապես նվիրված հասարակական գործին, ջերմ պաշտպան իր գաղափարների, Արծրունին շուտ չի գտնի իրան արժանավոր հաջորդ հայ լրագրության աղքատ ուժերի մեջ»:

«Тифлисский листок» լրագիրը ավելի ևս վառ կերպով էր ներկայացնում այդ կորուստը. «Գերեզման իջավ նա, ով քսանհինգ տարի շարունակ արթնացնում էր միտքը, հրավիրում էր իր եղբայրակիցներին դեպի լավագույն ձգտումներ, որ դաստիարակեց մի ամբողջ սերունդ, որի անունը սովորականից դուրս հարգանքով արտասանվում էր հայ հասարակության բոլոր շերտերում:

Հայ հասարակությունը, քսանհինգ տարուց ավելի ղեկավարված լինելով Գրիգոր Արծրունու շիտակ, անկեղծ ու վերին աստիճանի մարդասեր համամարդկային գաղափարներով, կորցրեց իր ամենալավ անդամին, ուսուցչին և հոգատար դաստիարակին, որ իր կարճատև, բայց բազմաշխատ կյանքը նվիրեց ազգի ծառայության, որ իր ժողովրդի բարօրության համար իր անձն ամբողջապես տվեց, որ սիրում էր հայերին և հոգս էր տանում նրանց մասին այնպես, ինչպես միայն սիրել և հոգս տանել կարող է շափազանց սիրող մայրը...»:

Թողնելով տեղական այս երեք լրագիրների բազմաթիվ ուրիշ նկատողությունները, հոգվածները, լուրերը, որոնց մեջ միշտ միևնույն պատկանալիք

ու անկեղծ ցավակցության շեշտն է հնչում, մենք կրթիչներ մի կտոր այն հոգվածից, որ տպվեց Մոսկվայի նշանավոր «Русские ведомости» լրագրում Արծրունու մահից չորս օր հետո:

«Հանգուցյալը, — գրում էր ռուս ազատամիտ թերթը, — մտածեց լրագիր հրատարակել այնպիսի մի ժամանակ, երբ հայերը մամուլ, այս բառի իսկական մտքով, չուներին, երբ լրագրին բաժանորդ գրվելը համարվում էր բարեգործություն և ժուռնալիստի կոչումը շատ էլ պատվավոր չէր: Բայց անօրինակ ետանդը, տաղանդը և անձնատրությունը հասարակական կրթության՝ հաղթեցին բոլոր թե նյութական և թե բարոյական արգելքները:

Նրան աշոգվեց ստեղծել մի հասարակական օրգան, այս բառի եվրոպական մտքով, և դարձնել նրան հասարակության պահանջ: Առանց շափազանցելու կարելի է ասել, թե նա ստեղծեց հայերի մեջ մինչև այդ գոյություն չունեցած հասարակական կարծիք: Իր անփոփոխ ազնիվ և անխոնջ գործունեությամբ Արծրունին գրավեց ամբողջ հայ հասարակության հավատը և խորին հարգանքը:

Ամենալավ ապացույցը այն հազվագյուտ ժողովրդականության, որ վայելում էր հանգուցյալը իր հայրենակիցների մեջ, է այն մեծ ոգևորությունը, որով երկու տարի առաջ տոնվեց նրա հրապարակախոսական և գրական գործունեության 25-ամյա հոբելյանը:

Հանձին Արծրունու գերեզման իջավ հայ ինտելիգենցիայի լավագույն մասի ամենահեղինակավոր ներկայացուցիչը և հայ հասարակության առաջադեմ ձգտումների ամենատաղանդավոր արտահայտիչը»:

Գանք այժմ հայ մամուլին: Արտասահմանի հայ ազգային, նույնիսկ արմատական օրգանները իրանց խորին ցավը հայտնեցին: Կ. Պոլսի հայ լրագրությունը հազիվհազ կարողացավ պարզ լուրերի ձևով հաղորդել Արծրունու մահը: Ավելին ասել նա չէր կարող՝ խեղդված լինելով թուրք գրաքննության ցարբարոսական ճիրանների մեջ:

Ռուսահայ մամուլի մեջ Արծրունուն ամենից շատ մեծարեցին «Աղբյուր» և «Տարազ» հրատարակությունները, որոնք այդ միջոցին նոր խմբագրության ձևով էին անցել: «Տարազը» անվանում էր Արծրունուն «մեր կուռքը»: Իսկ «Աղբյուրի» մեջ նույն խմբագրությունը գրում էր. «Մինչդեռ նրան, իբրև հարուստ ընտանիքի որդի, ամեն կյանքի դյուրություն, հեշտություն էր սպասում, նա մերժում է այդ բոլորը և իրեն երիտասարդությունից՝ 20 տարեկան հասակից նվիրում հասարակության: Նա անում է իր ձեռքը ազգի առաջադիմության ղեկը և օր ու գիշեր աշխատում է նրա մտավոր անդաստանը հերկելով: Նրա գրահավորությունը խիստ պարզ էր. նրա գրչազենը մի երկաթի կտոր էր, իսկ առաջը խոպան անդաստան...»:

...Գրիգոր Արծրունին քարոզում էր առաջադիմություն. նա չէր պաշտպանում փտածը, հինը: Նա կարծեք մունետիկի էր նմանում, որ շարունակ առանց հոգնելու հնչում էր իր ձայնն այնքան, մինչև իրան կլսեին. նա էլ չէր հուսահատվում, որ իր քարոզած սերմերը ապառաժների, քարացած սրտերի վրա են ընկնում, ո՛չ, այդ կնշանակեր փախուժտ տալ իր ընտրած, թեև փշալի, ասպարեղից:

...Թող Գրիգոր Արծրունու, այդ մեծ և անմահ մարդու շիրքը դարդարվի ամենաազնվագույն ծաղիկներով, ինչպես նրա սիրտը ազնվագույն է, մաքուր և անխարդախ»:

«Արարատ» ամսագիրը. «Կորուստը մեծ է: Մեռնում է անհամեմատելի հրապարակախոսը, որի գրչի ուժը ընկերության բոլոր խավերի վրա, որի բա-

բոյական ազդեցութեան գաղտնիքը իր անաշտութեան, անկեղծութեան, շիտակն և ճշմարիտը համարձակ, անեղևօք, առանց պատիպատութեան բացահայտելու մեջ էր: Երկար և ձիգ տարիներ նա կառնում էր խաղաղի և տղիատութեան դեմ և, անընկճելի ախոյան՝ նա մեռնում է հաղթանակը ձեռքին:»

Նույնիսկ «Մուրճ» ամսագիրը, որ մի ժամանակ «Մշակի» ամբողջ գործունեութեան առաջին տարիներում միայն գտնում էր փայլուն մոմենտներ, այժմ գրում էր. «Գրիգոր Արծրունին աստարեկ էկավ և հենց առաջին բազմից ցնցեց հասարակութեան ուշադրությունը: Հում երկաթին մագնիսականություն հաղորդեց, որի հոսանքը իսկույն երկու ուղղությունների ջոկվեց՝ երկու ծայրերում կենտրոնանալով: Եվ հանդուրձալը եղավ մինչև իր մահը մի մագնիսական սլաք հասարակաց կարծիքի մեղանում, հասարակաց ոգին իր մեջ կենտրոնացնելով ավելի քան որևէ մեկը նորա ժամանակակիցներից: Արծրունին ստեղծված էր զորքիցնելու և արթնություն մեջ պահելու հասարակաց կարծիքը, յուր տեսողությունը տարածելով ազգի բոլոր խավերի վրա և կյանքի բոլոր շողերը մի պրիզմայի միջով անցկացնելով: Այդ պրիզման յուրն էր, նորանից ցուցնող գույներով նա գույն տվեց ժամանակի կյանքին, որպես ոչ մեկը նորանից առաջ և նորա կենդանութեան օրերով:»

Դեկտեմբերի 27-ին, կիրակի օրը, հայ հասարակությունը պիտի վերջին մնաս բարևը տար իր՝ իսկ որ մեծ հրապարակախոսին:

Օրն ամպամած էր, բայց ոչ շատ ցուրտ. տեղում էր մանր ձյուն: Վաղ առավոտից խմբազբատան փողոցում արդեն հավաքված էր մեծ բազմություն: Տան կարգը կատարվեց միայն «Մշակի» աշխատակիցների ներկայությամբ: Նրանք դուրս տարան դագաղը, որի վրա դրված էին երկու պսակներ՝ Քիֆլիս քաղաքից և «Մշակի» աշխատակիցներից: Դրսում դագաղը իր ուսերի վրա վերցրեց երիտասարդությունը, և հուղարկավորությունը, որ սկզբից իսկ ապշեցնում էր իր բազմամարդությամբ, դանդաղ կերպով շարժվեց դեպի Վանքի մայր եկեղեցին: Այդտեղ բազմությունը ավելի ևս ստվարացավ:

Մի փոքրիկ մասին միայն հաջողվեց եկեղեցի մտնել, ուր, ինչպես ասվում է, ասեղ գցելու տեղ չկար: Պատարագիչը էջմիածնից նոր ուղարկված Գրիգորիս կաթսկապոս Գառնակերյանցն էր: Նա քարոզ ասաց հանդուրձալի մասին: Նրանից հետո խոսեց Սարգիս քահանա Բեզնազարյանցը:

Խոսեց զգացված, հուզմունքից բեկբեկվող ձայնով, իսկ երբ հասավ այն տեղին, ուր ասում էր, թե այս մեծ հասարակական հարգանքը մատուցվում է Գրիգոր Արծրունուն ոչ թե այն պատճառով, որ գեներալի որդի է նա, Քիֆլիսի մեծատուններից մեկը, այլ որովհետև նվիրված էր հասարակության իր զբրջով, — նա ավելի ևս հուզվեց, և նրա ձայնի մեջ արտասուքների հզոր տիրապետություն լսվեց: Այդ տրամադրությունը էլեկտրական ձայնի պես անցավ լուռ ու անշարժ լսող ժողովրդին, և հեկեկանքները, խուլ ու հանդարտ, անցան շարքից շարք մեղմ շշնջոցների նման: Վայրկյանը վերին աստիճանի վեհ ու ցնցող էր. ողբում էր ծայրեծայր լցված ամբողջ եկեղեցին: Հասարակական այդ ողբը, առջևից գալով, ալիքների պես անցավ ամենքի վրայով, գնաց դեպի ետին շարքերը, դեպի կանանց վերնատունը...

Այնուհետև մի քանի տասնյակ հաղարներից բաղկացած բազմությունը՝ դագաղը շրջապատած, դագաղի առջևից և ետևից երկար ու երկար շարքեր կազմած, սկսեց շարժվել Քիֆլիսի փողոցներով դեպի Խոջիվանքի գերեզմանատունը:

Վաղօրոք որոշված էր, որ հուղարկավորությունը պիտի պնցնի ոստիկա-

նութեան ցույց տված փողոցներով, այսինքն՝ բարձրանալով Բարատիսկայա փողոցով, դուրս չգալ Գոլովինսկի Պրոսպեկտ մեծ փողոցը, այլ ծովել Լորիս-Մելիքովսկայա փողոցով և դուրս գալ Երևանյան հրապարակը: Բայց ահագին ամբողջը չենթարկվեց այդ կարգին. նա կամեցավ տանել իր սիրելի հրապարակախոսին Գոլովինսկի Պրոսպեկտով, Արծրունու գայլերի առջևով: Եվ նա արեց իր ուզածը: Ոստիկանությունը չկարողացավ դիմագրել հոսանքին և մի թեթև ընդհարումից հետո տեղի տվեց, իսկ հանդեսը դուրս եկավ Գոլովինսկի Պրոսպեկտը:

Այդ միջոցին հուղարկավորությունը հասել էր հանդիսավորություն և բազմամարդության ծայրագույն շափերին: Ենթադրում էին, որ մինչև 40—50 հազար մարդ էր իր հետ տանում Արծրունու դագաղը: Ահագին փողոցը լցված էր ծայրեծայր: Գլուխների մի ամբողջ ծով, որի մի ծայրը արդեն հասել էր Երևանյան հրապարակին, իսկ մյուսը դեռ կառավարչապետի պալատի մյուս կողմն էր գտնվում:

Գլուխների այդ ծովի վրա հանդարտ տատանվում էր փոքրիկ դագաղը: Նրան իրանց ուսերի վրա էին տանում թուրքահայ մշակները, որոնք ամբողջ ճանապարհին թույլ չտվին, որ ուրիշները մոտենան իրանց թանկագին բեռին: Ձմեռային պաղ օդի մեջ դագաղակիրներից բարձրանում էր մի բարակ գոլորշի, որ շրջապատում էր դագաղը խոնկի ծխի պես: Տեսարանը վերին աստիճանի հուզիչ էր:

Ամբողջ ճանապարհի երկարությամբ բոլոր պատշգամբները, կտուրները լցված էին մարդկանցով, որոնք նայում էին այդ շտեմնված հանդեսին:

Դվորցովայա փողոցում, Արծրունիների կալվածի առջև, հուղարկավորությունն ընդունեց ցույցի կերպարանք. բարձրացան կեցցեների աղաղակները: Երևանյան հրապարակում պետք էր հոգեհանգիստ կատարել. բայց բազմության հոսանքը այնքան ուժեղ էր, որ անկարելի եղավ կանգ առնել: Երգեցիկ խմբի երգեցողությունը, երաժշտությունը, որ հնչեցնում էր Շոպենի սուգի քայլերգը, չէին լսվում այն ահագին տարածության վրա, որ բռնել էր բյուրավոր հուղարկավորների անօրինակ բազմությունը:

Այդ տարածությունը ավելի ևս երկարացավ, երբ հանդեսը մտավ Միջին փողոցը և նրա շարունակությունը կազմող նեղ փողոցները: Մինչև Հավլաբարի կամուրջը հասնելը նույնպես դրված էր մի սեղան, որի վրա պիտի հանգիստ տային դագաղին, հոգոց ասեին: Բայց այստեղ էլ ժողովրդի հոսանքն անդիմադրելի էր. սեղանը տորովեց ահագին բազմության մեջ, որ լեռնային հեղեղի նման առաջ անցավ: Այդտեղ հանդեսն անցնում էր կանաչներից հյուսած շարանների տակով, որոնցից կախված էին նույնպես կանաչներից հյուսված՝ «Գ» և «Ա» տառերը: Ժողովրդական այդ ցույցերից մեկն էլ Ալյուրի մեյդան ասված հրապարակում երևաց՝ կանաչներից հյուսած մի մեծ կամար:

Բազմությունը կարողացավ կանգ առնել, ամփոփվել միայն Հավլաբարի մեծ հրապարակում: Հոգևորականությունը հոգեհանգիստ կատարեց: Եվ ապա բազմությունը գնաց, մտավ Խոջիվանքի գերեզմանատունը:

Յոթը դիակառքեր ծանրաբեռնված էին պսակներով: Պատգամավորները վերցրին իրանց պսակները և մտան ցանկապատով շրջապատված այն տնդը, ուր փորված էր գերեզմանը: Գերեզմանի մոտ դրված էր սև քողով ծածկված պատմանդան, որի վրա տեղավորվեց դագաղը: Նրանից բիշ հեռու շինված էր ամբիոն ճառախոսների համար:

Սկսեցին խոսել զանազան հիմնարկությունների և հասարակական խմբերի ներկայացուցիչները: Գերեզմանի շուրջը, ահագին տարածության վրա, փռված

բազմութիւնը լսում էր այդ ճառերը խորին ուշադրութեամբ: Ծառախոսներին մի քանիսը համակրական ցուցերի արժանացան: Այսպես էր, օրինակ, վրաց լրագրութեան ներկայացուցիչ Գիորգի Մերեթելի, որի արտասանած ճառի հետ մենք արդեն ծանոթ ենք*: Հայ ճառախոսներից ազգու տպավորություն թողնողներն ա. Թամար Կաճկաճյան, որ խոսում էր Բագրի հայ կանանց կողմից, պ. Ա. Եղեկյան, բայց մանավանդ «Մուրճի» խմբագիր պ. Արասխանյան, որի ճառը համակրական աղաղակների և կեցցենների արժանացավ:

Չմեռային կարճ օրը արագ անցնում էր, ուստի հարկավոր եղավ, որ ճառախոսներից շատերը թողնեն իրանց ասելիքը: Մինչև 15 հոգի կարողացան խոսել: Հոգևորականությունը կատարեց կարգը: Հողի ծոցն իջավ այն մարդը, որ այնքան ահագին շարժում էր մտքերը մեր կյանքի մեջ և որ հրապարակաչին այդպիսի անօրինակ, մեծ պաշտամունքի առարկա էր դարձել: Գեկտեմբերյան օրը միջնելու վրա էր, երբ փակվեց գերեզմանը: Նրա վրա դրված էին թարմ ծաղիկներից շինած պսակները: Եվ երբ բազմությունն սկսեց փոքր առ փոքր քաշվել, այդ պսակները ծվիկ-ծվիկ դարձան մի քանի վայրկյանում, ամեն մեկն ուզում էր գոնե մի թերթիկ վերցնել իր հետ իբրև հիշատակ այդ անմոռանալի օրվա:

Անցավ այդ օրն էլ, բայց երկար ու երկար հասարակության խոսքի, զրույցի, հիացմունքի առարկան այդ շաբաթված թաղումն էր: «Մշակը» թաղման հանդեսի նկարագրությունը վերջացնում էր այսպես. «Ամեն մարդ տուն վերադառնալով, մրմնջում էր ինքն իրան. «Երջանիկ է նա, որ աչսպես է մեռնում. սա մա՞հ է, այլ անմահություն»:

Այո՛, ճիշտ այդպես էր բոլոր այն մարդկանց տրամադրությունը, որոնք տեսել էին գեկտեմբերի 27-ի հանդեսը: Բայց շպետք է մոռանալ մի հանգամանք: Այդ ահագին համակրանքը, այդ աննկարագրելի սերը դեպի թանկագին երախտավորը ավելի մեծ պատիվ բերած կլինեն հասարակության, եթե նրանք հանգուցալի կենդանության ժամանակ շոշափելի նպաստ դարձած լինեին նրա սիրած ու փայփայած գործի աշողության համար: Այդպիսի փառքով թաղվող խմբագիրը, շմոռանանք այս, կենդանության ժամանակ երազի պես անիրագործելի մի բան էր համարում մի լավ բնակարան ունենալը: Նույն այդ խմբագիրը ցավելով ցավում էր, որ այնքան միջոց չունի, որ գոնե իր գլխավոր աշխատակիցներին կարողանա վարձատրել... Եվ իրավունք ուներ Արծրունու հին աշխատակից և բարեկամ պ. Մ. Փորթուգալյանը, երբ գեկտեմբերի 27-ի նկարագրությունների ազդեցության տակ գրում էր իր լրագրում, թե այդ նույն ժողովուրդն էր, որ «Մշակին» այնքան բաժանորդ չտվեց, որ կարելի լիներ նրան ամենօրյա դարձնել: Եվ սակայն ի՞նչ էր Արծրունու պահանջածը: 1500 բաժանորդ...

Ինչ արած, — այսպես էր եղել հայի հատկությունը ամեն ժամանակ:

Մենք վերջացրինք Գրիգոր Արծրունու կյանքի և գործունեության տեսությունը: Աշխատեցինք որքան կարելի է մանրամասն, առատ փաստեր և օրինակներ տալ այդ գործունեությունից, կապելով նրանց մեր կյանքի զարգացման ընթացքի հետ: Այժմ, երբ ընթերցողն ունի իր առջև դատելու և կշռելու շատ ու շատ նյութեր, մենք մեզ թույլ կտանք մի համառոտ եզրակացություններ կայացնել նրան:

Յուրաքանչյուր գործի գնահատությունը հնարավոր է նրա միջավայրի

* II հատ., եր. 251:

չըջանում, այն պայմաններին, կյանքի այն շրջանակներին մեջ, ուր նա ապրում էր: Գրիգոր Արծրունին գործում էր մեր մեջ, մեզ համար: Իսկ ի՞նչ ենք մենք, ի՞նչ ունենք, ի՞նչ ենք կարողացել արտադրել մեր դարավոր կյանքի մտավոր գործունեությամբ: Կա պատմություն, որ պահել է կատարված գործերը: Եթե թողնենք դատողությունները, բաց անենք անաչառ պատմությունը, խորասուզվենք նրա տված փաստերի մեջ, լույսի պես պարզ կերպով կերևա, որ Գրիգոր Արծրունին առաջին մեծությունն է հայկական հրապարակախոսության ասպարեզում սկզբից մինչև այսօր: Ազնիվ, առաջադեմ, իրանց ժողովրդի բարոյական վերածնության գաղափարով ոգևորված, այդ գաղափարի համար հալածվող մի քանի հրապարակախոսներ երևան են եկել թե մեղանում՝ ուսուհայների մեջ և թե արևմտյան հայերի մեջ: Շատ հարգելի, շատ սիրելի անուններ են դրանք: Բայց դրանցից ոչ ոք Գրիգոր Արծրունի չէ իր բեղմնավոր, երկարատև գործունեությամբ, իր անսահման եռանդով, իր տաղանդով, հասարակության և դեպքի վրա ունեցած իր ներգործությամբ, ազդեցությամբ:

Այսպես է ասում և այսպես էլ ապագայում կասի պատմությունը, այն պատմությունը, որ գալիս վերջանում է մեր ներկա օրերով: Ի՞նչ կտա այդ պատմությունը այսուհետև, մենք, իհարկե, չգիտենք: Բայց եթե նա մեզ համար պատրաստած ունի ավելի մեծ, ավելի ինքնուրույն մի տաղանդի կամ մի քանի տաղանդների երջանկությունը, դարձյալ էլի Արծրունին կմնա իր ժամանակի, իր շրջանի խոշոր պատմական անձնավորությունը:

Մարդկային միտքը միշտ և անդադար առաջադիմում է, նոր-նոր փորձերի, անընդհատ քննադատական աշխատանքի միջոցով նոր հոսանքներ է բաց անում մարդկային երջանկության գաղափարի համար: Այդ հարատև, հաղթական առաջխաղացությունը մենք անպատված կլինենք, եթե ասենք, թե Գրիգոր Արծրունին անսխալ և ճիշտ արտահայտել է այն ամենը, ինչ այժմ կամ այսուհետև համարվում է և պիտի համարվի իբրև ճշմարիտ ճանապարհ դեպի քաղաքական և սոցիալական երջանկություն: Մենք մի քանի տեղ ցույց տվինք նրա սխալ հայացքները, մենք տեսանք նույնիսկ, թե ինչ պակասություններ է նա ինքը հանձն առնում:

Այդ բոլորը բնական է, անխուսափելի է: Բայց այդ պակասությունները, այնուամենայնիվ, այնքան զորեղ չեն, որ կարողանան խախտել Արծրունու կատարած խոշոր դրական դերի հաստատությունը: Որքան էլ հնանան ապագայում նրա տեսությունները, հայացքները, միշտ անուրանալի կմնա դիտավորը, էականը, — որ նա հզոր խոսքով, կրակոտ եռանդով տանում էր հասարակական միտքը միմիայն դեպի առաջ, դեպի լույս և իմացականություն...


Մնում է մեզ մի քանի խոսք ասել և Անդրեաս Արծրունու մասին, որի անունը այնպես կապված էր իր եղբոր և նրա լրագրի հետ:

Կարվածների գործը, որ հասցրեց 1884-ի խորտակման, սառնություն մտքից գեներալ Արծրունու երեք ժառանգների մեջ. Անդրեասը ընդհատեց իր հարաբերությունները եղբոր հետ և միայն նրա մահից հետո, գալով Թիֆլիս, մոռացավ ամեն ինչ, հասկանալով, թե որքան անարդար կլիներ Գրիգորին մեղավոր համարելը, որ գործերը այնպիսի ընթացք էին ստացել:

1895-ի ամառը մեռավ տ. Մելիք-Աղամելյան-Արծրունի: Իր կտակով նա «Մշակը» թողել էր Անդրեաս Արծրունուն մինչև նրա մահը, որից հետո լրագիրը պիտի դառնար տիկնոջ քնոդղու և եղբորորդու սեփականություն: Սակայն Անդրեասը չուզեց թողնել իր գիտական ասպարեզը Գերմանիայում և նվիրվել «Մշակին», և պետք է առել, որ տ. Մելիք-Աղամելյանի կտակում

որոշված պայմանները չէին էլ կարող առանձին հրատարակել հանդամանքներ
դառնալ արոֆեսոր Անդրեաս Արծրունու համար: Այս պատճառով նա, մնալով
անունով հրատարակիչ, շարունակում էր սպասել արտասահմանում: Քոթախար
վերջ գրեց այդ համակրելի, բարի գիտնականի կյանքին 1898 թվականի
սեպտեմբերին: Նրա մարմինը Գերմանիայից տեղափոխվեց Քիֆլիս և հավի-
տենական հանգիստ գտավ եզրու գերեզմանի կողքին՝ խոջիվանքի հանգստա-
րանում: Մի քանի ժամանակից հետո մեռավ և նրա քույրը՝ բարոնուհի Գոն
Բրյուզգին:

Այսպես սպանվեց Գեորգ-աղա Արծրունու նշանավոր տոհմը...



ԱՆՍՏՐՈՍՅ ՌԱՊԻԱՊՅԱՆԵ



Գլուխ առաջին

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

1. ԺԱՄԱՆԱԿԸ. Զանգու գետի ժայռոտ և գեղատեսիլ ափին XIX դարի սկզբում, գուցե նույնիսկ միաժամանակ (1803—1804 թվականներին), ծնվեցին երկու նշանավոր հայ մարդ, Արարատյան հայրենասիրության երկու ջերմեռանդ ներկայացուցիչներ, որոնց վիճակված էր խոշոր դեր կատարել հայոց պրականության նոր ժամանակների պատմության մեջ:

Այս մարդկանցից մեկը՝ գուցե մի քանի ամիսներով երիցագույնը, Մեսրոպ Քաղիազյանն էր, որի ծնողները Կարբի գյուղից էին, բնակություն հաստատած Երևանի Չորագեղ անունով թաղում: Մյուսը հաշատուր Աբովյանն էր, որի օրրանը Չորագեղից շատ ու շատ բարձր դիրք բռնած, օղավետ, անհուն հորիզոններ ընդգրկած Քանաքեռ գյուղն էր:

Երկու տաղանդավոր մանուկները աշխարհ էին գալիս մի այնպիսի ժամանակ, երբ Անդրկովկասն առհասարակ և Երևանը մասնավորապես, նշանավոր քաղաքական շարժումների բեմ էին դարձել: Մահմեդական աշխարհը տակնուվրայությունների մեջ էր, որովհետև ռուսները 1801 թվին մտնելով Վրաստան և իրենց տիրապետության հենարան դարձնելով Քիֆլիսը, սկսեցին գործադրել արագ ու անվերապահ նվաճումների մի շատ եռանդուն քաղաքականություն:

Երեք կողմից ատամ էին կրճտացնում այդ նորեկ նվաճողների դեմ. հյուսիսից՝ Կովկասի լեռնականները, հարավից՝ Պարսկաստանը, արևմուտքից՝ օսմանցիները: Կոխն ահագին նշանակություն ուներ տեղացի երկու քրիստոնյա ազգությունների՝ հայերի և վրացիների համար: Հայերը գլխավորապես պարսկական նահանգներում էին բնակվում: Թե ինչ էր պարսկական տիրապետությունը, այդ նկարագրել է հաշատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանի» մեջ վառվռուն գույներով: Հայերը այդ տիրապետությունից ազատվելու համար, սպասում էին ռուսներին իբրև երկնքի հրեշտակներին:

Արագ թափով նվաճողական գործողություններ կատարելու համար հարկավոր էր ռուսական գործին նվիրված, եռանդոտ մի գործիչ: Այդպիսի մեկն էր իշխան Շիցիանովը, որ 1803 թվին ուղարկվեց Անդրկովկաս՝ երկրի կառավարչապետի և զորքերի հրամանատարի լիազորություններով: Դա ծագումով վրացի էր, բայց վաղուց Ռուսաստանում վերաբնակված, ռուսական ոգով դաստիարակված և նույնիսկ իր հարազատ ազգից բավական խորթացած: Ցիցիանովը մի կոպիտ զինվորական էր, որ ամենից լավ գիտեր մի բան միայն—

թիւ ասիացիներին մեջ պետք է գործել Էրկչուդ աղղելով, արհամարհանքով, բարձրից նայելով: Մասնավորապէս նա աչքի էր ընկնում իր հայաստեացութեամբ: Բայց որովհետեւ հայերը հարկավոր էին ուսաց քաղաքականութեան, ուստի նա հայերի համար էր գործում այն դեպքերում, երբ այդպէս էին պահանջում պետական շահերը:

Արագ և ընդարձակ գործողութեաններէ դաշտ այդ միջոցին հարթել էին հայերը և առավելապէս էջմիածնի կաթողիկոսական աթոռը: Ռուս կառավարութիւնը վաղուց էր շատ ճիշտ ըմբռնել Ամենայն Հայոց ընդհանրական աթոռի նշանակութիւնը իր արեւելյան քաղաքականութեան մեջ և այդ պատճառով վաղուց աշխատում էր իր ազդեցութիւնը տարածած պահել այդ համազգային բարձր հոգևոր հաստատութեան վրայ: Այս մի անհրաժեշտութիւն էր դառնում մանավանդ XIX դարի սկզբից, երբ Ռուսաստանը, փոխելով իր նախկին քաղաքականութիւնը Անդրկովկասի վերաբերմամբ, պարզապէս անվերապահ միացման քաղաքականութիւնն ընդգրկեց: Պարսից կառավարութիւնն էլ, իհարկեւ, զգում էր, թե իր տիրապետութեան համար որքան վտանգավոր են ուսական ոտնձգութեանները իր հողի վրա գտնվող էջմիածնում: Այստեղից բնականաբար, առաջանում էր հզոր մրցակցութիւն երկու պետութիւնների ազդեցութեանների մեջ:

Հաղթանակն այս մրցութեան մեջ, սկզբից նեթ, Ռուսաստանին էր պատկանում՝ իբրև ավելի լավ կազմակերպված և ուժեղ կողմին, բայց մանավանդ այն պատճառով, որ նրան էին պատկանում և հայ ժողովրդի բոլոր համակրանքները: Արդեն Ղուկաս կաթողիկոսի մահից հետո, 1800-ին, էջմիածնում այնքան ազդեցիկ էր ուսաստի կուսակցութիւնը, որ կաթողիկոս ընտրվեց ուսաց արքունիքում աչքի ընկնող դիրք գրաված Հովսէփ արքեպիսկոպոս Արղությանցը: Բայց այս նշանավոր գործիչը, որ մոլեռանդութեան հասնող անձնվիրութեամբ աշխատում էր ուսական շահերը միաձուլել հայկական շահերի հետ, վախճանվեց դեռ էջմիածին շահասած: Նրա կողմնակիցները կաթողիկոս ընտրեցին Դավիթ եպիսկոպոսին, որի դեմ, սակայն, շուտով հանվեց Դանիել եպիսկոպոսի թեկնածութիւնը: Վերջինս ավելի ժողովրդականութիւն էր վայելում և ավելի ազդեցիկ կուսակցութիւն ուներ իր կողմը: Դավիթ ընտրութեան մի քանի հանգամանքները թույլ էին տալիս անվանել նրան ինքնակոչ կաթողիկոս:

Ռուսաց քաղաքականութիւնը նախ Դավիթի կողմն էր, բայց շուտով լքեց նրան, գտնելով Դանիելի կուսակցութեան մեջ ավելի ազդու և ուժեղ միջոց իր ազդեցութիւնը տարածելու և իր քաղաքական ծրագիրներն առաջացնելու համար: Սկսվեց մրցութիւն երկու թեկնածուների մեջ: Դավիթն իր հակառակորդից ավելի ուժեղ բնավորութիւն էր: Նա դարձավ պարսկական քաղաքականութեան գործիչ, և հենվելով այն աջակցութեան վրայ, որ ցույց էր տալիս նրան պարսից կառավարութիւնը, անխնա և կատաղի կովի կերպարանք տվեց պայքարին: Դանիելը ենթարկվեց բարբարոսական բռնութիւնների: Նա բանտարկվեց Երևանում. նրա միրուքը սափրել տվեց Երևանի խանը: Որքան սաստկանում էին այս խայտառակութիւնները, այնքան դանիելյան կուսակ-

¹ Դավիթի խորհրդով էր, որ պարսից կառավարութիւնը դիմեց նապոլեոն կայսրին, խնդրելով նրա պաշտպանութիւնը ուսական ոտնձգութեանների դեմ: Այս դիմումի հետեանքով առաջացան այն բանակցութիւնները, որոնք հանգեցին Յրանսիայի և Պարսկաստանի մեջ պաշտպանողական և հարձակողական զաշնագրութեան ընդգծման Ռուսաստանի (E. Driault, «La politique Orientale de Napoleon», Paris, 1804):

ցութիւնն ավելի և ավելի եռանդուն դիմումներ էր անում ուսաց կառավարութեան, ազերսելով նրանից օգնութիւն և հովանավորութիւն:

Եվ սուս կառավարութիւնը ամենայն հոգաբարձեամբ ընդառաջում էր դանիելյան կուսակցութեան ցանկութիւններին: Բանակցութիւններն ավելի հեշտացնելու և արդյունավորելու համար՝ Դանիելին իրավունք տրվեց ունենալ ուսաց կառավարութեան մաս իր հատուկ ներկայացուցիչը կամ հավատարմատարը (վեքիլ): Այդ պաշտոնը հանձնվեց Մոսկովայի լազարյան նշանավոր առհմի անդամներից մեկին, Մինաս աղային: Նա մի տեսակ հայոց դեսպանի դեր էր կատարում, գրադրութիւն ուներ բոլոր կողմերի հայերի հետ և նրան դիմումներ էին անում բոլոր կողմերից: Եվ պետք է ասել, որ ուսաց կառավարութիւնը խոստումների և բերանացի հուսադրութիւնների շրջանակի մեջ չմնաց, այլ իրական գործողութիւնների ճանապարհն էլ բռնեց: Այնքանոր կայսրը հանձնարարեց իշխան Յիցիանովին ամեն միջոց գործ դնել հայոց կաթողիկոսական պայքարին վերջ տալու այնպէս, որ հայ ժողովուրդը բավարարված լինի:

Եվ Յիցիանովը, դեռ Անդրկովկաս չհասած, սկսեց գործել այդ ուղղութեամբ: Առաջ ու առաջ մի խիստ նամակով դիմեց Երևանի խանին և պահանջեց, որ նա ազատեւ Դանիելին բանտից ու վերահաստատեւ էջմիածնի աթոռի վրայ: Խանը բացասական պատասխան տվեց և այս մի շատ լավ պատրվակ դարձավ, որ Յիցիանովը ծրագրեւ մի ամբողջ զինվորական արշավանք՝ Երևանի խանին հարկադրելու համար: Բայց որ այդ արշավանքը սոսկ հայոց կաթողիկոսին ազատելու նպատակ չուներ, այդ պարզ ցույց է տալիս այն հանգամանքը, որ Յիցիանովը որոշել էր Երևան մտնելուց հետո թողնել այնտեղ ուսական բերդապահ զորք, որի ծախսերը խոստացել էին հոգալ Երևանի հայերը: Երևանից ուսաներն իրանց արշավանքը պիտի շարունակեին դեպի նախիջևան, այնտեղից էլ դեպի Շուշի¹:

Այս ծրագիրը, սակայն, փոփոխութեան ենթարկվեց: Հարմարութիւնն ստիպեց Յիցիանովին հարձակվել նախ Դանշայի (Գանձակի) վրայ, որ և նվաճվեց ու միացվեց Ռուսաստանին 1804 թվականի սկզբում: Այնուհետև Յիցիանովը պատրաստութիւններ էր տեսնում դեպի Երևան արշավանք սկսելու համար: Եվ նույն տարվա ամառը նա արդեն Աբարանի բարձրունքներից իմաց էր տալիս երևանցի հայերին, թե ուսական բանակը գալիս է բանտարկված կաթողիկոսին ազատելու համար, իսկ Երևանի խանին առաջարկում էր հանձնել բերդն առանց դիմադրութեան: Հայերը շթաքրին իրենց հրճվանքը: Նրանք արդեն տոնում էին իրանց ազատութիւնը, իսկ մահճակալները խորտակված սրտով դիտում էին գլխավորների ցնծութիւնները²:

Սակայն այս հրճվանքին շուտով հետևեց խոր հիասթափում: Ամառվա անտանելի շոգերին ուսաները պաշարեցին Երևանը և սկսեցին ուժակոծել նրան: Ռազմական ժխորի, թնդունների, ժողովրդական հրճվանքների և վառակնկալութիւնների աղմուկն էր շրջապատում Քաղիաղայանի, գուցե և Արովյանի օրօրոցները: Զանգվի ափերին իբրև ազատութեան խաչ, որ և խորնապես դրոշմվում էր երկու շնորհալի մանուկների սրտերում՝ ապագայում նրանց ամենաչերմ պաշտամունքի առարկան դառնալու համար: Մինչդեռ օր օրի սպասվում էր ահարկու բերդի անկումը, Յիցիանովն անակնկալ կերպով թողեց պաշարումը և շտապով հեռացավ դեպի Վրաստան: Պարենավորման դժվարու-

¹ Дубровинъ, «Закавказье отъ 1803—1806» СПб, 1868, ст. 121.

² Кн. Е. Хубовъ. «Описание достопамятныхъ происшествій въ Арменіи», СПб, 1811.

թյունը բայց մահամահող Վրաստանում ծագած հուղմունքները հարկադրեցին նրան թողնել հայոց կաթողիկոսին ազատելու և միաժամանակ Երևանը նվաճելու միտքը: Հայերի համար ստեղծվեց այնքան անհարմար և վտանգավոր դրություն, որ նրանցից շատերը անկարելի համարեցին մնալ հայրենի կառույթի տակ և գաղթեցին ռուսական սահմանները...

Ավելի վառ էր դժբախտ Դանիել կաթողիկոսի դրությունը: Տաթալի Շահը, որ անձամբ ղեկավարում էր գործողությունները ռուսների դեմ համարելով իրան հաղթող, իր բարկությունը թափեց կաթողիկոսի վրա, որ ռուսական արշավանքի պատճառ էր դարձել, և նրան աքսորեց Պարսկաստանի Մարագաքաղաքը:

Բայց Յիցիանովը իր կրած այս անհաջողության փոխարեն հետևյալ 1806 թվականին վարձատրվեց մի խոշոր հաղթանակով, որ նա ձեռք բերեց առանց մի կաթիլ արյուն թափելու: Այդ՝ Ղարաբաղի և Շեքիի խանություններն էին, որոնք միմյանց ետևից հպատակություն հայտնեցին Ռուսաստանին: Պայմաններն այն էին, որ խաները շարունակում էին կառավարել իրանց երկիրները, ստանալ հարկեր ու տուրքեր, բայց հպատակվում էին ռուսաց կայսրին, վճարում էին տարեկան հարկ...

Ղարաբաղի խանի հետ կապած դաշնակցության մեջ Յիցիանովը ոչ մի հիշատակություն չարավ հայ մեղիքների մասին: Մոռացվում էր նրանց գոյությունը: Եվ սակայն, Ղարաբաղի մելիքներն էին, որ XVIII դարի սկզբից գաշտակցած էին Ռուսաստանի հետ, ռուսական շահերին էին ծառայում և երկարատև պատերազմներ էին մղել հենց նույն Ղարաբաղի խանի դեմ՝ իրենց վաղեմի ժողովրդապետական իրավունքները պահպանելու համար, շարունակ խրախուսվելով ռուս կառավարությունից, շարունակ խոստումներ ստանալով նրանից: Այս կոիվների մեջ, որոնք պիտի փութացնեին ռուսաց տիրապետության հաստատումը Անդրկովկասում, Ղարաբաղի հայությունը մահացու հարվածներ ստացավ, ստիպված լինելով հաճախ գաղթել իր մելիքների հետ դանազան կողմեր, նվազեցնելով իր թիվը և տնտեսական քայքայման հասնելով: Զարդ ու փշուր եղած մելիքություններից մի երկու բեկոր էին մնացել XIX դարի սկզբում, տարագրված իրենց հայրենիքից իրենց ժողովրդի մի մասի հետ: Այսպես, Գյուլստանի քաղաքի Աբովը բնակություն էր հաստատել Քիֆլիսի մոտ, Բոլնիսում, իսկ Վարանդայի Մելիք Զումշուղը՝ Լոռում: Եվ ահա այն ժամանակ, երբ կարգավորվում էր Ղարաբաղի հարցը, Յիցիանովը մոռացության էր տալիս նույնիսկ Մելիք Աբովին, որ իրան ազատել էր վտանգավոր դրությունից Երևանի արշավանքի ժամանակ: Բոլնիսի առյուծը, որի պաշտպանության էր հանձնված հարավային Վրաստանի ամբողջ սահմանը, ծառայել էր ռուսական գործին ամենայն անձնվիրություններով: Եվ Յիցիանովի արարքից խորապես վիրավորված, այդ անպարտելի հերոսը 1806 թվին գրում էր Ռուսաստանի հայոց առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսին (հետո կաթողիկոս) հետևյալ տողերը.

«Արդ՝ ոչ ապաքէն մեք նոյն մարդ եմք, որ բաղում ուրիք բաղմադիմի ծառայութեամբ և քաջութեամբ ցուցաք զանձինս մեր հաւատարիմս և հպատակս նորին կայսերական մեծութեանն և նորին անհաղթ պետութեանն: Զի՞ ապա զի իբրև անարիս և անզօրս անպատուեցաք ի նորին կուսակալ Յիցիանովին և անարգ համարեցաք առաջի թիւր և ախտակեր դատողության նորա: Մեք ամենայն ժամ յայտնեալ եմք զմերս քաջութիւն և զարիւթիւն ընդ մեծագոյն ի սրտէ հաւատարմութեանց ամենուրեք առաջի հզոր տէրութեան մեր ամենազորմ ինքնակալաց պանծալի ազգին ռուսաց, թէ՛ ի ժամանակս Զուպու

վին ի Շուշի, թէ՛ ի ժամանակս նորին Յիցիանովին և թէ՛ յետ նորին զարդիս, որպէս և քարինք կաթեն բարձրարարառ վկայել և բարողել, թող թէ մարդիկ բայց ոչինչ իւրս մխթարեալ և կամ վարձս վաւտակոց և մերոց ջանից և քաջութեանց տեսեալ և բնկալեալ: Եվ փոխանակ պսակաց և պատուոց՝ այլև զանարգանս և զանպատուութիւնս լուծալ և տարեալ. և իբր զտկար և զանարի ոք համարեցեալ, գուցէ և յայլոց:

Առ Զուպուլ զօրագլխաւ և յառաջ բան զնա ևս ցուցեալ մեր յաղթութիւնք և քաջագործութիւնք և ազգի-ազգի հպատակութիւնք առ մշտնջենաւոր փառաց արժանաւորն մայրն հետարակաց թագուհին Ռուսաստանեայց և առ համազգին իմ կուսավորչածին յաղագս հայրենի օրինաց մերոց և քրիստոնէական սուրբ հավատոյ, յայտնիք են ձերումդ բարձր սրբազնութեան և ոչ դարձյալ տալ զձանձրոյթ ձերդ մաքուր լսելեաց կամիմք:

Իսկ առ երախտամոռ և թշնամանասեր Յիցիանով կուսակալաւ՝ երիւք հանգիսացաք ծայրագոյն մտերմութեամբ և արիւթեամբ: Նախ՝ մինչ ինքն Յիցիանովն շրջապատեալ ի թշնամեաց՝ ի Շահէն և ի Շահազալէն և ի հարիւր հազար զօրաց նոցին յոգիմ կայր ապաստան և մերձ ընդ մերձ կեր և կուլ լինել պարսից հանդերձեալ էր, ես էի, որ յիմ միաձին անդրանիկ և քաղցր որդիս ոչ խնայեալ, այլ իբրև բոլորապատուղ ողջակէզ մատուցեալ յանուն քաղցր և ողորմած թագաւորի իմոյ, Աստուածապսակ կայսերն ամենայն, ռուսաց, զնա ինքն զանգրանիկն իմ Ռոստոմ պէկն բարութ և գիւլլային և ամենայն պատրաստութեամբ ի քաղաքէս՝ յերևան առ նա ինքն Յիցիանովն փութացուցի, ի բաց եղեալ զհայրական գութն, որ առ որդիս և զսնտի երկիւզ մարդկանց. և այսպէս օժանդակութեամբ իմով և ձեռնտուութեամբ իմ անդրանիկ որդուս և քաջութեամբ իմային անձանց ապրեցաւ ինքն և ընդ նմա եղյալ խաշակիր զօրքն բարեհամբաւ:

Երկրորդ՝ իբրև զօրացան թշնամիք զօրք պարսից ի վերա Յիցիանովին յանզուշութենէ նորին և զամենայն ճանապարհս և զանցս կալեալ և կապյալ, իսպառ հատին զեկս երթեկեաց և յուսակտուրս զնա արարին, և ի վերա այսր ամենայնի եկյալ ի գաւառն Տաշրաց ի Բամբակաձոր կոչեցեալ տեղին ի գիւղն Ղարաբլիսայ, և սաստիկ մարդ եղյալ ընդ այն, այն ինչ հանդերձեալ էին առնուլ և ի սուր սուտերի մաշել զամենայն զորս ռուսաց և զամենայն բնակիչս և իբրև յամուր տեղի ապաստանեալ ժողովուրդսն նորին, և ոչ ոք էր որ օգնէր նոցա, ոչ ինքն Յիցիանովն և ոչ Քիֆլիս եղյալ զօրապետքն և զօրքն: Անճարացյալ ապա Յիցիանովին, զաղերս էր մատուցեալ իմ որդի Ռոստոմ պէկին, զի ինքնիրով քաջարամբք և սակաւ քաջ զօրօք ռուսաց յօգնութիւն հասանիցի ի Ղարաբլիսայ եղելոցն և անդի դարձյալ հաց, գիւլլա և բարութ հասուցանիցէ ինքնան: Արոց պատահեալ ի ճանապարհին քսան հազար զօրք պարսից և սաստիկ մարտ եղեալ գերիս տիւս և զերիս գիշերս ընդ նոսա, որք էին արք հարիւր և քսան, հուսկ յետոյ ի պակասիլ բարութ և գիւլլայից, ինքեան կամովին գրեթէ անձնատուր էին եղեալ թշնամյաց: Եվ ահա այսու օրինակաւ անկան ի մարտի հարիւր և քսանքն, և իբրև նահատակ բարի եղեալ պսակեցան յերկնատրէ թագաւորին: Իսկ զորդեակս իմ Ռոստոմ պէկն կալեալ և կապեալ կրկին շղթաինք խաղացուցին ի Դարեժ, ուր և հանգյալ ի Տեր՝ կրեալ զպէսպէս վիշտս և զտանջանս, և մատուց զանձն բանաւոր ողջակէզ հանուն ինքնակալին ամենայն ռուսաց և զիս արար խղճալի և որդեմեռ և եթող սուգ անմխիթար և տրամութիւն անփարատելի և զարտասուս մշտնջենավորս վասն իմ:

¹ Նամակը գրված է Քիֆլիսից:

Եվ երրորդ՝ մինչ պարոն Վոլխոնցկին նախարարն քաղաքիս¹ և բոլոր բնակիչք սորին լուծալ զայրախի աղէտս, հանդիպեալս Յիցիանովին և զօրաց նորին յահի և ի տազնապի կային, եի պէսպէս հնարիւք ապրեցուցանել զքաղաքն նախահագային, ես էի որ զամենայն ընտանիս իմ և մարդկանց իմոց բաղեալ ի քաղաքս, և ազգի հաւատարիմ ծառայութեամբ օգնական և ձեռնտու եղեալ նորին յնքյան Վոլխոնցկուն, իմոցին քաջառամբք ուժաւու եղն նմա և պահպանիչ քաղաքիս»²:

Ղարաբաղի հայ մեկիքութեանների կարապի երզն էր այս, որով նրանք անհայտանում էին հայ իրականութեանց: Այսպիսի գանգատ էր գրում և Վարանդայի Մելիք Զումշուտը Աղա Մինաս կաղարյանին: Ընդամենը մի քանի տարի առաջ, 1799-ին, Պալեկ կայսրի հրովարտակի մեջ նա և մյուս մեկիքներն անվանված էին Ղարաբաղի միահեծան տերեր, իսկ այժմ անտես էր անվում այդ տերերի գոյութունը: Դարերի ընթացքում Ղարաբաղի հայութեան ինքնատիպ ազգային կացութեան գլխավոր հենարանն էր կազմում մեկիքութունը: Այժմ նա անհայտանում էր անփառունակ կերպով: Ղարաբաղում ռուսաց տիրապետութեան հաստատվելուց հետո տարագիր ժողովուրդը վերադարձավ իր հայրենիքը, իսկ նրա մեկիքները կամ բալորովին կորցրին իրանց իրավունքները, դառնալով հասարակ հարկատուներ կամ առ առաջելը մտնելով տեղային մանր կալվածատեր ազնուականութեան շարքը:

Կովկասյան ռուս բյուրոկրատիայի այս անարդար վերաբերմունքը, սակայն, շատեցրեց հայերին Ռուսաստանի վերաբերմամբ: Հյուսիսային քրիստոնյա պետութունը, այնուամենայնիվ, շարունակում էր մնալ իբրև միակ իրական երաշխիք՝ պարսկական լուծից ազատվելու համար: Ուստի հայերը շարունակեցին ամենայն հավատարմութեամբ ծառայել ռուսական շահերին: Այս եռանդուն գործունեության կենտրոն շարունակեց մնալ Էջմիածինը: Դավիթ Դանիելյան վեճի մեջ ռուսաց քաղաքականության հաջողվեց վերջնական հաղթանակ տանել Յիցիանովին հաջորդած կոմս Գուդովիչի ժամանակ: Բանակցութունների միջոցով հաջողվեց համաձայնություն կայացնել, որ Շահը ճանաչե Դանիելին կաթողիկոս: Պարսից կառավարությունն էլ եկել էր այն եզրակացության, թե չպետք է արհամարհել իր հայ հպատակների զգացմունքներն այս գործի մեջ:

Դանիելը կամ, ալեկի ճիշտ, նրա կուսակցութունը հասավ, վերջապես, իր նպատակին: Մարաղայի աքսորականը մեծ պատիվներով ուղարկվեց Էջմիածին: Այժմ կոպիտ բռնությունների ենթարկվելու հերթը հասնում էր նրա հակառակորդ Դավթին: Մեծ կշիռ էր ստանում երիտասարդ և զարմանալի եռանդոտ Ներսես վարդապետ Աշտարակեցին, որ Դանիելյան կուսակցության հոգին էր, մի շերմ հայրենասեր, որ աչքի էր ընկնում և իբրև իշխել սիրող: Նա էր, որ Դանիելի վրեժը հանեց, ածիլել տալով Դավթի միտքը:

Բայց Դանիելը հազիվ մի տարի կյանք ունեցավ ամենայն հայոց կաթողիկոսական գահի վրա: Նրա մահը սակայն այլևս ռուս պարսկական մրցակցութուն շառաչացրեց: Ներսեսի ջանքերով կաթողիկոս դարձավ Եփրեմ արքեպիսկոպոսը, Ռուսաստանի հայոց առաջնորդը: Ռուսական քաղաքականության կատարյալ հաղթանակն էր այս: Թույլ և բարի Եփրեմը կառավարելու ընդունակություն չուներ, և կաթողիկոսական իշխանությունը իրապես անցավ Աշտարակեցուն: Այս ժամանակից էջմիածինը, թեև պարսկական տիրապետու-

¹ Քիֆլիսի:

² Մելիք-Արովի նամակը Եփրեմ արքեպիսկոպոսին 1806 թ. մայիս 12-ից (Ձեռագիր):

Մյան տակ գտնվող մի վանք, դառնում էր ռուսական քաղաքականության մի գործակալատար, որ քաղաքական պարսից տիրապետության դեմ էր գործում:

Եթե, հայ ժողովրդի ընդհանուր դրություն մասին մի հասկացողություն կազմելու համար, մի թուղթիկ հայացք նետենք հայության այն խոշոր հատվածի վրա, որ ապրում էր Հայաստանի օսմանյան բաժնում, այդտեղ մեզ կը ներկայանա XIX դարի սկզբում անիշխանության մատնված, ավերումների ենթարկված մի երկիր: Նախընթաց դարում Թուրքաց Հայաստանը հաճախ էր դարձել ապստամբ դերերեյիների, բուրդ իշխանապետների հարուցած ներքին պատերազմների թատերաբեմ: Կամ կառավարություն էր պատերազմում ինքնագլուխ ապստամբների դեմ, կամ այս ապստամբներն էին իրար հետ կռվում: Բուրդ դեպքերում էլ քանդվողը երկիրն էր, քայքայվողն ու սպառվողը՝ ժողովուրդը, մասնավորապես հայ ժողովուրդը, որ իբրև քրիստոնյա բայա, զրկված էր իրավունքներից և ճորտերի գրություն էր ենթարկված բուրդ կալվածատերերի տիրապետության տակ: Ներքին պատերազմները նվազեցրին հայ ազգաբնակչությունը մի քանի տեղերում. կային և այնպիսի շրջաններ, ուր նա բոլորովին սպառվեց:

Եվրոպացի ճանապարհորդները շատ ցավալի դրություն մեջ են ներկայացնում հայերի կյանքը Թուրքաց Հայաստանում: Այսպես, Նապոլեոն առաջինի հանձնարարությամբ Պարսկաստան ուղարկված հայտնի արևելագետ Ժորժեր Բաչադետի գավառում հայերին տեսնում է ահարեկված դրություն մեջ՝ բրդերի ավազակությունների պատճառով: Պակաս զժբայատ շէր գրությունը վանի շրջանում: Ժորժերը տեսնում էր մի դատարկ և ամաչի աշխարհ, որի բնակիչները անհանդուրժելի ազքատության ձեռքից զնում էին Կ. Պոլիս և այլ տեղեր՝ աշխատանք գտնելու համար: Նապոլեոնի մի ուրիշ գեսպանությունը, գեներալ Գարտանի գլխավորությամբ, Ալաշկերտի հովտով անցնելիս ականատես եղավ հայկական կյանքի մեջ շատ սովորական երևույթին: Ղարաբաղի սերմոն Երզնայու հայ գյուղը ենթարկվել էր բրդերի հարձակման: Գյուղը հրդեհվել էր, տղամարդիկ կոտորվել էին, իսկ կանայք իրանց երեխաների ձեռքից բռնած՝ դես ու գեն էին փախչում:

Այսպես էր հայ ժողովրդի դրությունն իր պատմական հայրենիքում: Այդտեղ քաղաքական կացության հոգսերն էին ծանրանում նրա վրա: Մի տեղ (արևելյան ծայրում, Ղարաբաղում) դեռ նոր-նոր էր պարզվում, թե քաղաքական ինչ միջոցառում պիտի ստեղծվի նոր հանգամանքների ազդեցության տակ: Մեջտեղում, հայության սրտի մեջ, որ Արարատյան աշխարհն էր, դեռ շարունակվում էր պայքարը քաղաքական լավագույն ակնկալությունների համար, մի պայքար, որի ելքը, սակայն, դեռ չէր երևում: Իսկ արևմտյան մասում, Թուրքաց Հայաստանում, դեռ չէր ձևակերպվել նույնիսկ որևէ պայքար և ժողովուրդը դեռ տանջվում էր անհույս:

Սակայն միայն քաղաքական ազատագրության տենչերը չէին գործ և շարժում առաջացնում հայ ժողովրդի մեջ: Քաղաքական ազատագրման մեծ գաղափարի հետ համարյա միաժամանակ ծնվել էր և մտավոր ազատագրման ոչ պակաս մեծ գաղափարը: Հայ ժողովուրդն ուզում էր ոչ միայն ազատություն վայելել իբրև հողի վրա ապրող և աշխատող մարդ, այլև սովորել, զարգանալ իբրև կուլտուրական մարդ: XVIII դարը նշանավոր է ազատագրական եռանդոտ շարժումներիով. բայց հենց նույն դարում էլ աճում են կրթական պահանջ-

¹ P. Am Jaubert. «Voyage en Arménie et en Perse».

² J. M. Tancogne. «Lettres sur la Perse et la Turquie d'Asie», t. I. Paris, 1819, p. 94.

ներր, ընդարձակվում է հայ գրականության հորիզոնը, ազատ կյանքի որսահանջները ձուլվում են եվրոպական ձևերի մեջ: Բայց այդ շարժումներն արդեն հայ հայրենիքում չեն ծնվում ու ծաղկում, այլ օտար աստղերի տակ, հայ գաղութների մեջ: Փոքրիկ ու նեղ են այդ գաղթական միջավայրերը, որ հայ մտքի գործն է բեղմնավորվում, բայց այդ փոքրություններն էլ կատարում են իրական հսկայական գործեր:

Այս կողմից առաջնակարգ տեղ են բռնում երկու հեռավոր գաղութներ — Վենետիկ և Հնդկաստան, երկու, կարելի է ասել, հակոտնեաներ, սրունք սակայն իրար լրացնում և ընդարձակում էին: Գրական-կրթական կարողություններ, գիտական ձեռնհասություններ, եռանդով ու մեծ աշխատասիրությամբ ոչ ոք չկարողացավ գերազանցել Վենետիկի Մխիթարյան վանքը, որ և այդ պատճառով դարձավ մեծագույն հեղինակությունը հայ մտավոր աշխարհում, որ ազդում էր բոլոր տեղերի հայության վրա, կատարելով ահագին կրթական առաքելություն: Գա մեր մտավոր կյանքի պատմության այն մեծ շրջանն էր, որ պետք է անվանել «Մխիթարյան դար»: Բանն այն չէր միայն, որ ս. Ղազարի վանքում գործող սակավաթիվ հայ կաթոլիկ վարդապետները խոշոր ու փոքր գրական գործերով ողողում էին հայությունը ծայրից ծայր: Բանն այն էր, որ նրանք իրանց փայլուն օրինակով նախանձ էին հարուցանում, օրինակ էին դառնում և կրթական շարժումների մայր հանգիստանում: Նմանվել Մխիթարյաններին, Ս. Ղազարներ հիմնել այլ և այլ տեղերում — այս է այն բարձր իդեալը, որին ձգտել են ուզում հայ նշանավոր գործիչները XVII դարի վերջերից: Այսպես, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը Նոր-Նախիջևանի Ս. Խաչվանքը երազում էր դարձնել Ս. Ղազարի վանք հայ լուսավորչականների համար և հենց այդ մտքով էլ բաց արավ այնտեղ ապարան: Միաժամանակ հայության մեջ, անշուշտ նոցա օրինակի հզոր ազդեցության տակ, բեղմնավորվում էր բարեկարգ հայագիտական դպրոցներ բաց անելու միտքը: Հնդկաստանցի վաճառականներ՝ Մասեհ Բարաչանյանը, Ռաֆայել Ղարամյանը, Սամվել Մուրատը խոշոր նվիրաբերություններ են անում այդ նպատակով: Իսկ Մոսկվայի կազարյանները, շարունակ աչք դրած Մխիթարյանների վրա, իրենց ճեմարանն են բաց անում 1814 թվին:

Կրթական բարեկարգ հիմնարկությունները ծրագրում էին գլխավորապես գաղութների համար, որոնք ազատ էին Հայաստանը ճնշող բարբարոսական տիրապետությունների հեղձուկ մթնոլորտից: Այդտեղ էլ, այդ հեռավոր վայրերում, գրական և դպրոցական շարժումների հողի վրա և ժամանակակից լուսավոր մարդկության գաղափարների ազդեցության տակ կազմակերպվում էին հայ հասարակություններ, որոնք տարբերվում էին նախկին հայ համայնքներից նրանով, որ մշակում էին հասարակական իդեալներ, որոնց իրագործման համար էլ հետզհետե երևան էին գալիս, իբրև բուրբուլին նոր երևույթներ, հասարակական հիմնարկություններ:

Այս կողմից շատ հետաքրքրական օրինակ էր տալիս Կ. Պոլսի հայ գաղութը: Մխիթարյան վարդապետների անմիջական ազդեցության տակ այդտեղ 1812 թվականին կազմակերպվում է գրական-հրատարակչական մի ընկերություն, որ ստանում է «Արշարունյաց» անունը: Այն ժամանակվա թուրքաց մայրաքաղաքի իրականության մեջ, որի որակման համար բավական է հիշատակել ենիչերությունը, կատարյալ մի հրաշք էր թվում այդ համեստ, բայց ժիր ընկերությունը, որի պահպանությունը գլխավորապես մի քանի հարուստ հայ-կաթոլիկ ընտանիքների վրա էր ընկած: Ընկերության բոլոր հրատարակությունները Վենետիկի Մխիթարյաններն էին խմբագրում և բուրբուն էլ տպվում

էին Վենետիկում: Այդ հրատարակությունների մեջ առանձնապես նշանակալի է «Իրսակ Բյուզանդյան» անունով երկշարաթափերթը, առաջին քաղաքական լրագիրը մեզանում, որ մեծ հետաքրքրություն հարուցեց Կ. Պոլսում և այսպիսով առաջինն էր, որ կազմակերպեց լրագրական ընթերցող հասարակություն: Նույն աչք ընկերության նախաձեռնությամբ էր, որ հասարակական իդեալների գրական պրոպագանդ էր մղվում հասարակաց միտքը դաստիարակելու և նրան որոշ ու պարզ ուղղություն տալու համար:

Իսկապես մի հատ ընդարձակ հասարակական իդեալ կար, որի մեջ մտնում էին բոլոր ուրիշ իդեալները: Այդ մայր իդեալի անունը գտնված էր դեռ նախընթաց դարում՝ քաղցասիրություն: Բարդ ինքը ցույց է տալիս, որ դա պիտի նշանակեր քաղց սիրելը կամ, ինչպես գործ էր ածվում երբեմն «հայրենիք սիրել»: Անկախ վերլուծելով այդ սերը, որ յուրաքանչյուր անհատ պիտի տածեր դեպի ազգը, մենք տեսնում ենք նրա մեջ հասարակական ինքնագործունեության բոլոր տարրերը: հասարակական գաղափարի ամբողջ փիլիսոփայությունը:

Այս տեսակետից իր ժամանակին մի խոշոր երևույթ էր Մխիթարյան նշանավոր վարդապետներից մեկի՝ Հ. Ղուկաս Ինճիճյանի «Ազգասեր» անունով աշխատությունը, որ Արշարունյաց ընկերության հրատարակությամբ տպվեց Վենետիկում 1815 թվին: Գիտնական վարդապետը իր պարզ աշխարհաբարով, որ Պոլսի գավառաբարբառն էր, ժողովրդականացնում էր ազգասիրության հիմունքները բացատրող փիլիսոփայական-հասարակական տեսությունները:

«Մարդս երբոր կծնանի, կծնանի ընկերության մեջ, կմնա ընկերության մեջ, անկեց իրեն վրա պարտք մը կուգա իր ընկերները սիրելու, աս պարտքիս տակը կձգե բնական, քաղաքական, նաև աստվածային օրենքը: Բայց սերը կարգ ունի. պետք է, որ մարդս առաջ իր ծնողը, իր մոտիկը սիրե, ետքը հեռուիները և ինչպես որ պարտեղկան է պինդ առաջ և ամմենեն ավելի իր ծնողը սիրելու, անկեց կուգա իրեն պարտք մը իր ազգը կամ իր հայրենիքը ամմենեն առաջ և ամմենեն ավելի սիրել, վասնզի իր մենծ ծնողը իր ազգն է»:

Այս տեսակետից ամեն մի անտարբերություն, ամեն մի անգործություն կարող են միայն դատապարտելի մեղքեր համարվել: Մարդ կոշումը պարտավորեցնում է. «Դուն, — շարունակում է հեղինակը, — մեծցեր ես, եղեր ես մեկ մարդ մը քու ազգիդ մեջ. թե որ դուն մեկ աղեկություն մը ըրած շունիս մեկի մը, մանավանդ ազգիդ, պարապ տեղը մեծցեր ես, մեկը քենն աղեկություն մը չե տեսած, հապա դուն ուրիշներեն, ազգեն, աղեկություն տեսած վայելած կըլլաս: Անանկենե՛ ազգիդ դիրքեն նայելով՝ դուն անոր բեռ մըն ես եղեր, պարապ տեղը ազգին անգամեն ես եղեր, եկար պարապ, կմեննիս պարապ, ետևիդ մեկը չի կա, որ քենն աղեկություն մը տեսած ըլլալով քեզ հիշե. ազգդ ալ բնավ մեկ աղեկություն մը տեսած չըլլալով, շունի մեկ առիթ մը քեզ հիշելու»:

Միայն ազգասերն է կարող առաքինություններով օժտված մարդ լինել, որովհետև ազգասիրությունն է մայր ամեն առաքինությունների: «Ուր է ազգասիրություն, հոն է ան ամեն առաքինություն, ան ամեն աղեկություն, որ ընկերության մը պետք են: Շատ աղեկ բան է խաղաղությունը. թե որ ճշմարիտ ազգասիրություն կա, ան ազգը, ան ժողովուրդը խաղաղ կը մնա: Շատ աղեկ է արդարությունը. թե որտեղ մը ազգասիրություն կա, հոն արդարություն ալ կա: Աղեկ բան է սրտացավությունը. ազգասերը ամենուն վրա սրտացավ կըլլա: Շատ պատվական բան է աղքատությունը. ազգասիրության մեջն է անիկա: Շատ պատվական է մեծագործությունը. ազգասեր պիտ որ ըլլա ով որ մեծագործ բան մը կընե իր ազգին համար: Ասանկ իմացիր ամեն աղեկության վրա՝

որ ընկերությունը կը շննցընն: Որովհետև հայրենասեր ազգն է, որ շատ ասաց կուզա. անոր համար մեկ հայրենասեր անհատ անձ մը ավելի մեծ բան պիտո որ սեպվի քան թե մեկ յազգնա մը. վասնզի ան հայրենասեր կամ ազգասեր անձը թե որ մենձ է՝ ազգերենցուն կոչնե ասաց կըբերն: Թե որ ողջ է՝ հիմանդ- ներուն կը հասնի: Թե որ տենեթ է՝ շունեորենցուն կողորմի: Թե որ մեկին մեկ փորձանք մը հասեր է, սրտցավ կըլլա կըմխիթարն: Թե որ մեկին մեկ վնաս մը հասեր է նե, ձեռքեն եկածին շափ կաշխատի, ան վնասեն կխախտն: Ա՛յս, ինչ աղեկություն ունի ազգասիրությունը, որուն մեջն է եզրայրասիրությունը, եզրայրասիրության մեջն է աստվածասիրությունը, աստվածասիրության մեջն է հավիտենական կյանքը ու արքայությունը, որ է մեր վերջին վախճանը¹:

Այսքան լայն ու ընդարձակ էր դադափարը: Դա մի տեսակ նոր կրօն էր, որ սակայն, չէր ոչնչացնում հին կրօնը, այլ միանում էր նրան, հենվում էր նրա վրա: Հին կրօնը բոլոր մարդկային և քաղաքացիական առաքինությունները պարտադիր էր դարձնում հոգու փրկության համար, իսկ նոր կրօնը հոգու փրկության գաղափարի շափ բարձրացնում էր ազգի հասկացողությունը, որի սերն ընդունակ է մարդուն տանել մի նոր արքայություն, որ է ազգի վարձատրությունը, ազգի ներշնչած զիտակցությունը, թե նա կատարել է իր պարտականությունը:

Այս նոր հավատքը՝ ազգասիրությունը դառնում է մեղանում էլ նոր ժամանակի կրթական-դաստիարակչական նշանաբանը, գրոջը: Նրանով հետզհետե տոգորվում է հայերեն գիրը, նրա հետ և հայ դպրոցը:

Սակայն չե կարելի ասել, թե այսպիսի նշանաբանով ապրող նոր կրթական գործը միմիայն հեռավոր գաղութներում էր ապրում, հեռու է անջատված բուն հայրենիքից: Դա թեևավոր գաղափար է, որ չեք վախենում նույնիսկ պարսկական և օսմանյան բարբարոս իրականությունների խորքը թափանցել: Ինքը ժամանակն էր այդպես անում: Եվ ահա տեսնում ենք, որ բարեկարգ դպրոցը, բազմակողմանի և բարձր ուսումը տեսնանք են դառնում և հայրենի հողի վրա աշխատող ու տառապող ժողովրդի մեջ:

Այս տեսնանքն արտահայտվում է ընդունակ և գործունյա անհատների միջոցով: Այսպես, վանեցի վաճառական Գեորգ Արծրունին ուզում է Աղթամարի կղզին դարձնել Վենետիկի ս. Ղազար կղզին, բաց անելով այնտեղ դպրոց և տպարան²: Միևնույն միտքը էջմիածնի միաբաններից մեկը երազում է իրագործել Սևանի կղզում³: Այդ տեսնացողներից ավելի հաջողակ է գտնվում Ներսես Աշտարակեցին, որ Թիֆլիս առաջնորդ նշանակվելուն պես սկսում է աշխատել, որ կարողանա իրագործել մի բարեկարգ դպրոց հիմնելու իր վաղեմի միտքը: Արարատյան այս վառվռուն հայրենասերն էլ նկատի ունեն, իբրև նմանության և մրցության առարկա, Վենետիկի Մխիթարյան վանքը: 1811 թվականին Հովակիմ Լազարյանը Պետերբուրգից խորհուրդ էր տալիս Եփրեմ կաթողիկոսին բաց անել էջմիածնում մի փոքրիկ, բայց բարեկարգ դպրոց՝ լավ հոգևորականներ պատրաստելու համար: «Ձմանկտիսն զայնս, — գրում էր նա, — ի քերականութեան և ճարտասանութեան, լեզուի մերում լաւապես կրթել, ի

աստվածաբանութեան, պատմութեան, աշխարհագրութեան և ի տաղաչափութեան, որքան որ յազգի մերում ի լեզուի և ի մատենաս գտանին, համեստ դաստիարակութեամբ, թարց ինք ցասման, բարկութեան դանից պատժոյ հմտեցուցանել, զի բարկութիւն, սպառնալիքն ահացուցանելը և խիստ պատժելն բարբարոսական է, զսրժ, միշտ խոտվեցուցիչ և յուսահասեցուցիչ աշակերտի, նմանապէս և տախտկութիւն ուսուցչիս»¹:

Եվ այսպես, օգի մեջ էր զգացվում նոր դպրոցի, ազգային լավագույն դաստիարակության: Մանկավարժական նոր սկզբունքների անհրաժեշտությունը: Եվ այս՝ անկախ այն քաղաքական դրությունից, որի մեջ գտնվում էր մայր հայրենիքը, այն է՝ շնայած թուրքական և պարսկական տիրապետություններին: Դա մի ամբողջ շարժում է, բայց դեռ սաղմնային դրության մեջ, թույլ, անհատական օրինակներով արտահայտվող: Եվ այդ պահանջին, կազմակերպվող այդ զիտակցության հայ իրականությունն աշխատում է գոհացում տալ, հանելույժ իր միջից լայն կրթական ձգտումներով տոգորված ուսուցիչներ՝ Հարություն վարդապետ Արամբարյան, Հովհաննես վարդապետ Շահխաթունյան, Սերովբե վարդապետ Պատկանյան և այլն:

Ուսումն մատչելի չէ ամենքին: Դպրոցներ դեռ չեն բացվել հայ հայրենիքի նույնիսկ սրտում, որ Արարատյան երկիրն է: Բայց, ինչպես ժամանակի գործիքներ, դուրս են գալիս մեծ որոնողներ, որոնք լավագույն, բարձր դաստիարակություն են որոնում հայկական դեռ խոպան իրականության մեջ: Որոնողներին այդ նոր և մեծագործ սերնդի առաջին շարքումն են կանգնած Մեսրոպ Թաղիադյանը, Խաչատուր Աբովյանը, ապա և Ստեփանոս Նազարյանը և ուրիշ շատերը:

2. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ²: Թաղիադյանի վաղ մանկության մեջ մեծ դեր կատարել է նրա տատը, որ թեև տեղափոխվել էր Ձորագեղից Վաղարշապատ, բայց իր վրա է վերցնում երեխային խնամելու բոլոր հոգսերը: Մեռել էր Մեսրոպի հայր Դավիթը՝ մայրը, որի անունն էր Ձարդար, մի գրագետ հայուհի, ամուսնացավ ուրիշի հետ և չուզեց որ Մեսրոպը բեռ դառնա իր նոր ամուսնու համար: Տատն էր նրան պահում և նույնիսկ, ինչպես հավատացնում է Թա-

¹ Ձեռագիր:
² Մեսրոպ Թաղիադյանի մասին մնացած կենսագրական նյութերը շատ հարուստ չեն: Դիտարարպես ինքը Թաղիադյանն է, որ ինքնակենսագրական տեղեկություններ է հաղորդում իր աշխատությունների մեջ, այն է. 1) «Ճանապարհորդութիւն ի Հայս», հատ. ա. Կալկաթա, 1847. 2) «Ազգասեր» շարաթաթերթ, ալլալ տարիներ, 3) «Պաղեստին» պակալաթերթում գեր. տ. Իիջինալա երբեան եպիսկոպոսի Կալկաթայ. ի հայ ած Մեսրոպ Դաիթեան Թաղիադյանց, Կալկաթայ, 1830: Թաղիադյանի համառոտ կենսագրությունը գրել է Կալկաթայում մի անանուն հեղինակ, որ, սակայն, ամենայն հավանականությամբ տեղի հաշկան հայտնի քահանան էր Այդ կենսագրությունը, 4. Պալսի հայտնի Մկրյան քահանայի խմբագրությամբ և ծանոթություններով տպված է Թիֆլիսում 1886-ին՝ իբրև հավելված «Արձագանք» շարաթաթերթի՝ «Կենսագրութիւն Մեսրոպ Դաիթեան Թաղիադյանց երանցւոյ» վերնագրով: Սակայն այս գործն ունի այն խոշոր պակասությունը, որ Կալկաթացի հեղինակը իր անձնական կրթելին անձնատուր լինելով՝ չափազանցել է Թաղիադյանի անհատական պակասությունները և ձգտել է ցույց տալ Թաղիադյանին իբրև բարոյական մի ճիշտը: Այս հանգամանքը հարկադրել է Թաղիադյանի աշակերտներից մեկին գրել մի հերքում, որ տպված է առանձին գրքուկով («Դիտողագիր Յով. Շահնազար Սարգսեանի ի Բաղալիա ի վերայ կենսագրութեան Մեսրոպ Դ. Թաղիադյանի», 4. Պալսի, 1888) և որ նույնպես հաղորդում է մի քանի հետաքրքրական տեղեկություններ Թաղիադյանի կենսագրությունից: Կան և մի քանի լրագրական հոդվածներ, որ մենք կհիշատակենք իր տեղում: Մեզ մոտ էլ գտնվում են մի քանի ձեռագիր նյութեր, որ մենք հանել ենք էջմիածնի հայրապետական դիվանից:

¹ «Ազգասեր», հր. 1—26:
² Տե՛ս իմ «Գրիգոր Արծրունի», Թիֆլիս, 1902, շ. Ա. հր. 23:
³ Արխատակես եպիսկոպոս Սեդրակյան, «Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը», Պետեր., 1898, հր. 27:

զադրանք, կերակրում էր իր կաթով, շնայած որ նրա ծծերը վաղուց շորացած էին: Հաճախ պատալը իր թոռանը խանձարուրի մեջ կապած, տանում էր Վաղարշապատից Երևան և նորից վերադառնում Վաղարշապատ: Հենց այս ճանապարհին է, ասում է Քաղիադյանը, որ ես ստացա շրջմուխկի հակումներ, որոնք հետո տարան ինձ թափառեցնելու իմ ամբողջ կյանքի ընթացքում աշխարհի բոլոր ծայրերը...

Տասի մահից հետո Մեսրոպը առ ժամանակ մնում է իր մոր մոտ, Երևանում, բայց հետո, ինչպես ցանկացել էր տատը, նա ուղարկվեց էջմիածին, որին և նվիրված էր մկրտության ժամանակից:

Ց— 9 տարեկան էր Մեսրոպը այդ միջոցին, մի շատ ժիր, սուր և հանդուգն երեխա: Նրան տանում են Ներսես Աշտարակեցու մոտ և տեղի է ունենում այսպիսի մի խոսակցություն երկուսի մեջ:

- Կարդալ գիտե՞ս, մանուկ,— հարցնում է Ներսեսը:
- Եթե իմանայի, ինչո՞ւ էի գալիս այստեղ,— պատասխանում է երեխան:
- Բայց ի՞նչ գիտես:
- Այն ամենը, ինչ Երևանը սովորեցնում է անտեր երեխաներին. այսինքն՝ երգ, առակ, առասպել:
- Ապա երգիր:

Մանուկը բնությունից ստացել էր մի անախորժ, զիլ ձայն. սկսում է երգել այնքան վատ, որ Ներսեսն շտապում է լռեցնել նրան:

- Լռիր,— ասում է,— թե չէ Վեհափառն էլ Վեհարանում կը վրդովվի:
- Եթե իմանում էիր, որ կը վրդովվի, ինչո՞ւ երգել տվիր:
- Անունդ ի՞նչ է:
- Մկրտությանս անունն է Ավետիք: պապիս անունով տատս Մեսրոպ էր անվանում, հաճախ և Պապիկ:

Ներսեսը տեսնում է, որ իր առջև կանգնածը մի ուշիմ և շնորհալի երեխա է, վճռում է շթողնել նրան անխնամ: Դիմելով աղային, ասում է:

- Լավ, թող Մեսրոպ լինի անունդ. արի աջս առ:
- Եվ ապա ասում է իրան շրջապատողներին:
- Ափսոս է երեխային դպրոց մտցնելը: Իմ կողմից հանձնեցեք նրան գրագիր Հովհաննես վարդապետին և պատվիրեցեք, որ լավ հետևե նրան, մինչև որ կը տեսնենք:

Այսպիսով Քաղիադյանը կոչվում էր աշակերտության էջմիածնի վանքի մեջ: Այս պետք է ասել, մի առանձին բախտ էր այն ժամանակների համար: էջմիածինն էր համարվում լուսավորության կենտրոն ոչ միայն Արարատյան երկրի, այլ և ուրիշ շատ տեղերի հաշ ժողովրդի համար: Բայց ի՞նչ էին նշանակում Ներսեսի խոսքերը, թե ափսոս է երեխային դպրոց տալը, պետք է հանձնել նրան Հովհաննես վարդապետին: Ինքը Քաղիադյանը բացատրել է, թե ի՞նչ տեսակ կրթական սիստեմ գոյություն ուներ հայոց լուսավորության կենտրոնում, որ և հասկանալի է դարձնում Ներսեսի կարգադրությունը:

Երկու տեսակ դպրոցական կրթություն կար էջմիածնում՝ վարժատան և խցի: Վարժատունը մի հատ էր, այնտեղ միասին հավաքվում էին հարյուրավոր աշակերտներ՝ հինգ տարեկանից մինչև քսան տարեկան և ավել: Ուսուցիչ կարգվում էր ծերունի վարդապետներից մեկը, որ, իհարկե, չէր էլ կարողանում հարցնել ամեն մեկին: Մեծ ու փոքր միևնույն բանն էին սովորում՝ գրավարժություն, փոխեր և շարականներ, աղոթքներ, հատկապես նարեկից: Դպրոցը ենթարկված էր վանական խիստ կարգերին: Ամեն կեսգիշերին սկսվում էր ժամասացությունը, որին ներկա պիտի լինեին բոլոր աշակերտները: Նրանց

վեր էին կացնում քնից և տանում էին եկեղեցի: Ժամասացությունը տևում էր մի քանի ժամ: Ամեն օր կարգում էին երեք կանոն սաղմոս. երեխաները, դեռ նույնիսկ գրագիտություն չվարժվածները, պիտի ոտի կանգնած՝ լսեին անվերջ ընթացքում: Բնությունը, սակայն, իրանն էր վերցնում, և աշակերտները, քնից հաղթահարված, ընկնում էին տաճարում, ով ուր կարողանում էր և քնում: Նույնիսկ ձմեռվա սառնամանիքներին, տաճարի սառած սալահատակը շեք վախեցնում խեղճերին, և նրանք նույնիսկ այդ քարերի վրա էին պառկում: Բայց նրանց, իհարկե, չէին թողնում հանգիստ քնել: Սովորաբար կամ վարդապետ ուսուցիչն էր արագիներով դարձնում քնածներին կամ ավագ աշակերտներն էին այդ պաշտոնը կատարում, հարվածելով քնածներին փայտերով:

Այս դպրոցական կրթությունից անհամեմատ լավ էր համարվում խցի կրթությունը: Աշակերտը դառնում էր մի վարդապետի կամ եպիսկոպոսի փոքրավոր, ապրում էր նրա խցում, ծառայում էր նրան և փոխարենը՝ դասեր էր տանում նրանից: Դաստիարակության այս եղանակը հին ժամանակներից ուներ և իրան հատուկ, բնորոշիչ անունը՝ դաստիարակվելի «առ ոտս» այս ինչ վարդապետի կամ եպիսկոպոսի: Այս դաստիարակության ծավալն ու որակը, իհարկե, կախված էին ուսուցչի անհատական կարողությունից: Տարբեր էին և այն հարաբերությունները, որոնք ստեղծվում էին խցի բնակչի և նրա փոքրավորի մեջ: Կային այնպիսիները, որոնք իրանց ուշադրությամբ, երախտիքներով ամենագեղեցիկ հիշատակ էին թողնում իրանց աշակերտների մեջ: Այդպիսի երախտավորները ոչ միայն իրանք էին անձամբ տալիս աշակերտներին այն, ինչ իրանք գիտեին, այլև ամեն աշակցություն, նաև դրամական անգամ, ցույց էին տալիս որպեսզի իրանց փոքրավորները շարունակեն ավելի ևս զարգանալ ուսմունքների մեջ՝ ավելի լավ պատրաստություն ունեցող ուսուցիչների մոտ: Քիչ չէին, հարկավ, և այնպիսիները, որոնք թե իբրև մարդ և թե իբրև ուսուցիչ անտանելի էին դառնում իրանց աշակերտներին:

Մեսրոպ Քաղիադյանին վիճակված էր ճաշակել այդ երկու խցային տիպերն էլ: Հովհաննես վարդապետը, որին Ներսեսը հանձնարարեց ժիր ու շարաճճի երեխայի դաստիարակությունը, գրագիր էր կոչվում այն պատճառով, որ շատ ճարտար էր գրելու արվեստի մեջ, իսկ այս համարվում էր մեծ առավելություն այն ժամանակներում: Սովորաբար այդպիսի լավ ձեռք ունեցողներն էին մոտ լինում կաթողիկոսներին իբրև նրանց կոնդակները գրողներ («կոնդակագիր») և այս պատճառով էլ վեհարանի աղոթցիկ անձինքներից էին: Բայց Հովհաննես վարդապետը հայտնի էր և իր բացասական հատկություններով: Նա Բագրևանդից էր, ուր քրդեր շատ կան և ինքն էլ հենց ստացել էր «քորդ» մականունը: Դա, ինչպես գրում է Քաղիադյանը, «էր այդ երկայնահասակ և բարակ, շեշտ երեսով, քորձ մօրուք և դեղնագիր աչօք, ամենեին զուրկ յաղատական արուեստից լեզուի մերոյ: Վարք նորա հանգունատիպ գիտութեանն և խառնից երկրի իրում անգութ, խժական, խորամանկ և կասկածոտ միանգամայն»: Այսպիսի մի մարդ չէր կարող լավ հիշատակ թողնել իրան հանձնված երեխայի մտքի մեջ:

«Չամս երկուս,— ասում է Քաղիադյանը,— տուայտեցա ի բերան անուկ ինձ զժամագիրը և զսաղմոս և զամս երկու՝ տուայտեցա ուսանիլ զշարական, որ առ անհարմար լինելոյ ձայնիս՝ եղև առ յապայս կորուստ մեծ ժամանակիս»: Մինչդեռ նա այսպես տարիներով տանջվում էր «Քրդի» ձեռքին, էջմիա-

¹ «Ճանապարհորդություն ի Հայաստան», եր. 5:

ծին է գալիս այն ժամանակների հայտնի ուսուցիչ Պողոս վարդապետ Ղարաբաղցին: Ահանաբոր վանական ուսուցանողի մոտ իսկույն հավաքվում են էջմիածնի տիրացուներից և սարկավազներից շատերը՝ ուսում ստանալու համար: Մեսրոպը, որ այդ ժամանակ հազիվ 12 տարեկան էր, ազաչում պաղատում է Հովհաննես վարդապետին թույլ տալ իրան դասեր առնել Պողոս վարդապետից, բայց անողորմ «Քուրդը» մերժելով մերժում է այդ: Հուսահատված աղան փախչում է գնում Երևան: Բայց այս էլ չէ օգնում. նա արդեն սովորել էր լավ գրել և վեհարանի գրագիր էր: Նրա ետևից խնդրակներ են ուղարկվում, սրունք ետ են բերում նրան էջմիածին, ուր նա ենթարկվում է անողորմ ծնծի: Մեծում էին ոտները և այնքան սաստիկ, որ թափեցին ոտների եղունգները: Բանը հասնում է Եփրեմ կաթողիկոսին: Բարի ծերունին կանչում է տղային իր մոտ:

— Ի՞նչ ես ուզում, — հարցնում է նա:

— Տեր, ուսում եմ ուզում, — պատասխանում է Մեսրոպը հեկեկալով և լաց է լինում:

— Բայց ինչո՞ւ չես ուզում սովորել նարեկը, որ ուզում է քեզ դաս տալ քո վարդապետը:

— Ես գիտեմ նարեկը, և եթե Տերութունդ հրաման անես, կարող եմ հենց այստեղ կարգալ անգիր:

Հովհաննես վարդապետն ասում է թե ինքը նրան նարեկից որևէ դաս չէ տվել, հետևաբար նա սուտ է խոսում իբրև կարբեցի: Եփրեմը հանձնում է իր ատենագիր Ստեփանոս եպիսկոպոսին քննություն անել, և Մեսրոպը քննության միջոցին իրոք ապացուցանում է թե ինքը, ճիշտ որ, անգիր գիտե նարեկի շատ աղոթքները: Գրանից հետո միայն նա արժանանում է իր երազած բախտին: Մնալով դարձյալ Վեհարանի գրագիր և Հովհաննես վարդապետի փոքրավոր, նա թույլատվություն է ստանում աղատ ժամերին դասեր առնել Պողոս վարդապետից: Կաթողիկոսը պատվիրում է, որ վարդապետը առանձնապես ուշադրություն դարձնե քերականության վրա, որպեսզի իր գրագիրը հայերեն լավ իմանա:

Արդեն հենց այս էր և Մեսրոպի փափագը: Ակավում է մի նոր շրջան նրա կրթության մեջ: Պողոս վարդապետը ոչ միայն իբրև մանկավարժ բարձր համարման տեղ էր, այլև իբրև մարդ, և այս կողմից էլ նրա ու Հովհաննես վարդապետի մեջ համեմատություն անգամ չէր կարող լինել: Երախտագետ աշակերտը հրճվանքով պատմում է երկու դեպք իբրև ապացույց, թե որքան բարի էր իր ուսուցիչը և որքան շատ էր սիրում իր խնամքին հանձնված աշակերտներին: Երբ Մեսրոպը տեղափոխվում է Պողոս վարդապետի խուցը, առաջին գիշերը չէ կարողանում քնել: «Քունդ չէ տանում, որդի», — հարցնում է վարդապետը: — Ոչ, — պատասխանում է նա. — արդոք չե՞ս կարող մի բան պատմել, որ քունս տանե: Վարդապետն սկսում է քաղցր եղանակով պատմել Աստվածաշունչից: Պատմությունը այնքան խոր տպավորվում է աշակերտի մտքի մեջ, որ հաջորդ երեկոն նա սկսում է համարյա նույնությամբ պատմել իր լսածը, մեծ գոհություն պատճառելով ուսուցչին, որ այնուհետև էլ այս եղանակով էր ուսուցանում:

Երկրորդ դեպքը, որ պատմում է Քաղիազյանը, նույնպես բնորոշ է: Երեկոները Պողոս վարդապետը տալիս էր Մեսրոպին իր Աստվածաշունչը և պատվիրում էր կարգալ, իսկ ինքը գնում էր այցելելու իր միաբանակիցներին: Բայց, որպեսզի հսկե ընթացանությունը վրա, ստեպ-ստեպ վերադառնում էր իր խուցը, և, եթե տեսնում էր իր աշակերտին գիրքը կարգալիս, գո՛վում ու խրախուսում

էր և էլի գնում. եթե տեսնում էր, որ նա չէ կարդում, խրատում էր մեղմությամբ: Մի երեկո նա ուշանում է. Մեսրոպը գլուխը դնում է բաց Աստվածաշունչի վրա և քնով անցնում: Ծրագն ընկնում է, գիրքը այրվել է սկսում: Պատանին վեր է թռչում սարսափահար այն միջոցին, երբ կրակի բոցը հասել էր իր գլխին: Նրա աղաղակների վրա ներս է մտնում Պողոս վարդապետը: Մեսրոպի սարսափն ավելի գրթի համար էր, որ շատ թանկագին էր: Բայց բարի վարդապետը սիրտ է տալիս նրան, ասելով. «Գու միայն կարդա, Սուրբ Գիրքը քեզ չի պակասի...»: Եվ հանելով անդուկից մի նոր ոսկեկազմ Աստվածաշունչ, տալիս է նրան և ասում. «Առ, իմ աղքատությունը որքան և շատ լինի, դարձյալ ես կարող եմ հոգալ քո հոգևոր անունդ...»: Եվ Քաղիազյանը, բերելով այս խոսքերը, բացականչում է. «Երանի որոց այսպիսի վարդապետի աշակերտեցան դաստիարակութեամբ, առավել ինչ ոչ ասեմ»:

Մի դեպք, սակայն, քիչ էր մնում բաժանե այդ երանյալ աշակերտին իր ուսուցչից: Պողոս վարդապետը բռնվում է ջերմ ու տենդից և թուլություն է ստանում, օգափոխություն համար, հեռանալ էջմիածնից: Իր համար Մեսրոպը մեծագույն դժբախտություն էր համարում այս հանգամանքը: Հեռանալ այդպիսի մի ուսուցչից, նշանակում էր մի վայրկյանում կորցնել այնքան ժամանակների աշխատանքի պատուհները և հոգով ընդմիշտ կուրանալ: Բայց բախտը նրան ժպտաց և այս անգամ: Եփրեմ կաթողիկոսը թույլ տվեց Պողոս վարդապետին վերցնել իր հետ Մեսրոպին:

1816 թ. մայիսի 15-ին ուսուցիչ և աշակերտ դուրս են գալիս էջմիածնից և մի ամսաչափ մնում Երևանում: Մեսրոպն իր մոր մոտ էր ապրում, իսկ վարդապետին հյուրասիրում էին Երևանի հայ իշխանները, որոնցից Մեսրոպը հիշում է Մելիք Աղամալյան հայտնի տան ներկայացուցիչ Մելիք Աբրահամին և նրա որդի Մելիք Սահակին: Այդ ժամանակ Երևանում էր ապրում մի ուրիշ հայ իշխան, որին Մեսրոպն անվանում է Գաբրիել հարյուրապետ (անշուշտ յուզբաշի), տեղ Սիսական գավառին կամ Գեղարքունյաց, որ Երևանի սարգարի առջև մեծ կշիռ ուներ և օգտվելով իր դիրքից, աշխատում էր թեթևացնել իր ազգակիցների դրությունը: Երևի այս յուզբաշին Գեղարքունիքի Մելիք Շահնազարյան մելիքական տոհմից էր: Նրա տան մեջ Մեսրոպին սիրում են, մինչև իսկ Գաբրիել յուզբաշու կինը որդեգրում է նրան:

Երևանից վարդապետն ու Մեսրոպը գնում են դարձյալ այցելելու Սկանի կղզին, այնտեղից դարձյալ Երևան են գալիս և Խոր-Վիրապով գնում են Ս. Հակոբի վանքը, որ շինված էր Մասիս սարի վրա, Ակուռի գյուղի մոտ:

Այս ճանապարհորդությունը Արարատյան երկրի զանազան նշանավոր կողմերում ուներ Մեսրոպի համար կրթական մեծ նշանակություն, զարթեցնելով նրա մեջ հայրենագիտության և պատմական հնագիտության վառ սեր: Պողոս վարդապետն արժարժում էր այդ սերը, բացատրելով նրան ճանապարհին պատահած հնությունների նշանակությունը: Անշուշտ այս մտտիկ ծանոթության շնորհիվ է, որ Մեսրոպն ապագայում, իր մատենագրական գործունեության մեջ, հանդես եկավ իբրև Հայաստանի հին աշխարհագրության քաջածանոթ հեղինակ և մանավանդ սրամիտ էր աշխարհագրական անունների միամիտ ստուգաբանության մեջ, որ սակայն այն ժամանակների լուրջ և պատվավոր գիտություն էր համարվում:

Ակուռին մի խոշոր հայ գյուղ էր (800 տուն, ինչպես հավատացնում է Քաղիազյանը) հայտնի իր գեղեցիկ օղով ու ջրով, որի պատճառով էլ Երևանի

¹ Աստ. եր. 13:

սարդարի ամառանոցն էր: Այդտեղ կառուցված էր սարդարի ամառանոցն պատ-
լատը, իսկ գյուղից քիչ հեռու բարձրանում էր Մարդարաբատ ամուր բերդը,
որ կառուցված էր Արաքսի հովիտը քրդերից և այլ ավազակաբարձ ցեղերից
պաշտպանելու համար: Այս ամբողջ աշխարհը՝ Ակուտին, Ս. Հակոբի վանքը և
բերդը կործանվեցին 1840 թվի հունիսի 20-ի սաստիկ շարժից և թաղվեցին
Մասիսի գագաթից թափված քարերի և լավաչի տակ:

Պողոս վարդապետը մնաց ս. Հակոբի վանքում մինչև սեպտեմբերի կեսը
և Մեսրոպը անընդհատ շարունակում էր իր ուսումը, առանձնանալով վանքի
շրջականերում, հռչակավոր սարի լանջերին: «Շիրիմն փոքրիկ լցեալ մեկանա-
կախեալ զպարանոցէ՝ կրէի՝ հանապազ ի ծոցի իմում և գրիչ՝ փետուր սագի, և
մատիտ ի գտակածալի, իսկ գիրք և տետրակք թղթոց զանթովք իմովք՝ գնալի
ուր և հաճէի. և նստեալ կամ ընթեռնուի, և կամ գրէի»: Բայց մանավանդ
սիրում էր նա առանձնանալ Ս. Հակոբի աղբրի վրա շինած մատուռի մեջ: Մի
օր այդ կողմերում առյուծը երկու մարդ է պատուում: Պողոս վարդապետն իս-
կույն սկսում է որոնել իր աշակերտին, կանչում է նրան՝ ամեն ինչ իղուր: Եվ
հետևեցնելով, թե Մեսրոպն էլ դժբախտութեան է հանդիպել, հուզվում զայրա-
նում է անշափ: Տեսնելով այդ միջոցին հանդարտ վերադարձող աշակերտին,
նա կարողանում է հրամայել նրան, որ կանգնե, իսկ ինքը կատաղած գնում է
փայտ բերում և սկսում անողորմ կերպով ծեծել նրան: «Քարի պէս անմոռնչ
կանգնած եմ նրա առջև, — ասում է Մեսրոպը, — իսկ նա ծեծում է անյագ, մին-
չև որ վանքի պառավ տնտեսուհիս ընկաւ մեր երկուսիս մեջ և դադարեցրեց
ծեծը»: Եվ Մեսրոպը, լսելով իր ուսուցչի բացատրությունը, թե ինչն էր հար-
կադրում նրան այդպես ծեծել, իրավունք չէ համարում նեղանալ նրանից, քանի
որ սրտացալութունն ու հայրական ուշադրությունն էին նրա մեջ փոթորկել
այդքան ահավոր զայրույթ:

Այս դեպքից հետո Մեսրոպը մի ուրիշ տեղ է ընտրում իր դասերը սովորե-
լու համար: Բայց այստեղ էլ մի ուրիշ վտանգավոր պատահար է գալիս, որ
այսպես է պատմում ինքը Մեսրոպը: «Քնած էի, զարթնեցա և ի՞նչ տեսնեմ:
Ղուրանի հավերժահարսների դրախտումն եմ: Մարդարի ամբողջ հարեմը շրջա-
պատել էր ինձ: Առաջին նվագ ապշեցի և սարսափեցի: Բայց կանանց մեջ
ավագագույնի՝ Հաջի-Խանումի ակնարկով բոլոր մարդասեր վերաբերմունք
ցույց տվին դեպի ինձ, և ես ազատվեցա ամեն մի երկյուղից: Մոտեցան ինձ,
վերցրին ճարտասանության գիրքս, բաց արին գտան նրա մեջ մեր լեզվի մե-
ծանուն հեղինակների՝ պատկերը և հարցրին, թե ինչ է այդ: Ապա հարցրին՝
թղթատված եմ, Ղուրան գիտե՞մ, Մուհամմեդ մարգարեին ընդունո՞ւմ եմ:
Պատասխանեցի. «Ո՛չ»: Նրանք բամբաշա խփեցին գլխիս: Ապա հարցրին,
ինչո՞ւ ես սևեր հագել, հայրդ նո՞ր է մեռել: Ուրիշ այսպիսի անտեղի բաներ էլ
հարցրին: Իսկ Հաջի-խանումը մի ոսկի փող բաշխեց ինձ և գնաց»: Այս պա-
տահարը, բարեբախտաբար, սարդարին չհասավ և անախորժություններ չպատ-
ճառեց Պողոս վարդապետին, ոչ էլ իր աշակերտին...

Բայց վարդապետն այստեղից այլևս էջմիածին չվերադարձավ, այլ թույլ-
տվություն ստացավ գնալու իր հայրենի Մուժաբար գյուղը (Ղարաղաղ) ազգա-
կաններին տեսնելու համար: Այս անգամ Մեսրոպն արդեն պիտի բաժանվեր
նրանից: Արտասուք էր թափում Մեսրոպը, մինչդեռ վարդապետը ձի հեծնելիս
օրհնեց նրան, խրատեց և հանձնեց նրան Աստուծո խնամքին: «Զհետ շոգայ
համբուրելի հետաց գարշապարաց ձիոյ նորա, — գրում է Մեսրոպը: — Բազմու-

թյունն մի առ յի դարձաւ վարժապետն սուրբ հեռացաւ, մեկնեցաւ յաշաց, և
ևս զեռ ընդարմացեալ կացի: Տասն անգամ սկսայ իմ ձախ ձայնիւ. «Գնա՛ս
բա... գնա՛ս բա...», այլ հեկեկանք ոչ թողին կատարել զբանն օրինակ զայս՝

Գնա բարեաւ, վարժապետ հանրասփիւռ գիտութեանց,
Գնա՛ս բարեաւ, ուսուցիչ հաստո գերազանց:
Գնա՛ս բարեաւ, այլ կաթիլիք իմ անմեղ արտասուց
կիցին քեզ փոխանակ քոց անմահ երախտեաց:

Թաղիադյանը տալիս է և այդ «անմահ երախտիքների» ամբողջ բովան-
դակությունը: Չորս տարվա ընթացքում նա սովորել է ամբողջ քերականու-
թյունը և ճարտասանության նախակրթությունը: Այս էր այն ամբողջ պաշարը,
որ տվել էր նրան հռչակված վարժապետ վարդապետը:

Մեսրոպը էջմիածին վերադարձավ ս. Հակոբի ուխտավորների հետ: Կա-
րո՞ղ էր նա ասել, թե վերջացրել է ուսումը նույնիսկ այն ժամանակվա հաս-
կացողությանը: Ո՛չ, թեև այլևս լավ ուսուցիչ չկար էջմիածնում, բայց նա
դարձյալ ուսման որոնող մնաց: Եվ կրթ Բարսեղ կախկոպոս Կեսարացու հետ
գնացել էր հին Արագածոտն գավառը (Մուղնի, Սաղմոսավանք և այլն), գնում
է Փակահնոց գյուղը, ուր աշխատում էր նրա խորթ հայր Պետրոս էլիփրզյանցը,
արհեստով դարբին: Մնալով նրա մոտ մի քանի օր, նա աղաչում է նրան հա-
նել իրան էջմիածնից, որովհետև թերի է մնացել իր ուսումը: Բայց դարբին
Պետրոսը, շունենալով ոչինչ հասկացողություն ուսման մասին, հորդորում է
նրան վերադառնալ էջմիածին և այնտեղից շահանալ: «Զէ՛ որ դու մատաղ ես
արվել Լուսավորչին, ինչպես ասում էր քո մայրը», ասում է նա: Մեսրոպն
ստիպված է լինում գնալ էջմիածին, ուր և դառնում է գրագիր:

էջմիածնում էր առժամանակ և Խաչատուր Աբովյանը, դարձյալ ուսման
համար էջմիածին եկած, էջմիածնին մատաղ բերված, բայց դարձյալ թերատ
ուսման միայն տիրացած և ամբողջական, մեծ ուսման ծարավ, որոնող: Երկու
որոնողների ճանապարհները սակայն զուգընթաց չէին: Ուրիշ ուղղությամբ
գնաց Աբովյանը, ուրիշ՝ Թաղիադյանը: Երկուսը մի հարազատ միջավայրի, մի
վանական միջոցով պտուղներ էին, բայց տարբեր ձևով, տարբեր գաղափար-
ներով տարան իրանց կոչումը, որ բխում էր երկուսի ջերմ, արարատյան հայ-
րենասիրությունից:

Հետաքրքրական հանգամանք է, որ Թաղիադյանը գրեց իր ճանապարհոր-
դությունը Արագածոտն գավառում: Այս անշուշտ իր առաջին գրական վաս-
տակն էր, որև առաջին անգամ էլ զգալ տվեց նրան, թե որքան դառն է այդ
աշխատանքը: Մեսրոպը դեմքեր էր նկարագրել իր այդ գրվածքի մեջ և գրան-
ցից մեկն էր Մարտիրոս Տաթևացին, որի մասին միայն մի խոսք էր գրել նա՝
«անհարմար»: Գրվածքը կարդաց Մեսրոպի մտերիմ Հովհաննես սարկավազը,
բայց ծածուկ չպահեց, և Մարտիրոս կախկոպոսին հայտնի դարձավ, թե ինչ է
գրել իր մասին վեհարանի գրագիրը: Նա գանգատվեց, անձամբ դատախազ
հանդիսացավ և Մեսրոպը ենթարկվեց բարբարոսական տանջանքի:

¹ Պողոս վարդապետ Ղարաղաղու մանկավարժական հմտությունը գնահատեց և ներսես
Աշտարակեցին, հրավիրելով նրան 1820-ական թվականներին Քիֆլիս, ուր արդեն բաց էր արել
մի դպրոց: Այստեղ Պողոս վարդապետին աշակերտեցին Խաչատուր Աբովյանն ու Ստեփանոս
Նազարյանը: Վերջինս Թաղիադյանի նման հիացած չէ իր վարժապետի վրա, ասում է, թե աշ-
կերտները սրանից ավելի ծեծ էին ստանում, քան ուսում: (Տե՛ս իմ «Ստեփանոս Նազարյանց»,
հատ. Ա. Քիֆլիս 1902, էր. 48):

¹ Սահակի և Մեսրոպի

Նրա ուսններն այնքան ծեծեցին, որ արյուն սկսեց գալ պճեղներէից: Բայց հետո Մարտիրոս եպիսկոպոսը, տեղեկանալով, որ Մեսրոպը միամտաբար է գործածել ասնհարմար՝ բառը իր վերաբերմամբ, ոչ միայն ներեց նրան, այլև հետո նրան բարեբար հանդիսացավ:

Իսկ Հովհաննես սարկավազի արարքը շնորհաբար Մեսրոպը և նրանից վրեժ հանեց դաժան եղանակով, ինքն էլ լինելով իր ժամանակի մի դաժակը: Մութի մեջ քարե սանդուխքների վրա ընկույզներ շարեց նա և սարկավազը, ոտը դնելով նրանց վրա, սայթաքվեց գլորվեց: Երկու ամիս հիվանդ պառկեց, առողջանալուց հետո էլ մնաց միշտ կոր մեջքով:

Այս միջոցին էջմիածին եկավ իր գիտնականութեամբ հռչակված Ջաքարե վարդապետ Գուլասպյանը (Թիֆլիսցի): Քանի որ անգործ էր նա, հավաքեց մի քանի աշակերտներ: Մեսրոպն էլ ամեն հնար գործ դրեց, մինչև կարողացավ Եփրեմ կաթողիկոսի հրամանով մտնել գիտնական վարդապետի աշակերտների շարքը և սովորել ճարտասանություն: Բայց այս անգամ էլ նրան վիճակվում էր մի կտոր միայն ստանալ այդ գիտությունից: Հինգ ամիս հազիվ անցած՝ Գուլասպյանը նշանակվում է նվիրակ և նրա աշակերտները ցրվում են:

3. ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ. Այնուհետև թափառիկ կյանքի լայն ասպարեզ է բացվում Մեսրոպի համար, որի մեջ, սակայն, երբեք չէր մարում այն գիտակցությունը, թե թերատ է իր ուսումը և դեռ շատ բան կա սովորելու:

Դանիել եպիսկոպոսը նշանակվում է (1819 թ.) Սյունաց վիճակի նվիրակ: Նա ուժեղ մարդ էր, բայց համարյա անգրագետ: Հարկավոր էր մեկը, որ քաջ ծանոթ լիներ եկեղեցական կարգերին և լավ էլ գրող: Երկու պահանջներին համապատասխանում էր Թաղիադյանը, բացի միայն այն բանից, որ նա եկեղեցում երգել չէր կարող, քանի որ շատ անհաջող ձայն ուներ: Դանիել եպիսկոպոսը նրան վերցնում է իր հետ և սկսում է իր երկար շրջագայությունը:

Նվիրակությունն այն ժամանակները շատ կարևոր մի հաստատություն էր, որ իրականացնում էր էջմիածնի աթոռի ընդհանրականությունը, կապելով բոլոր տեղերի հայերին իրենց Մայր Աթոռի հետ: Այդ կապերի նյութական կերպարանքն այն էր, որ Ամենայն Հայոց կաթողիկոսն ուղարկում էր միտոն իր ժողովրդին և ստանում էր նրանից մի շարք կամավոր և պարտադիր տուրքեր, որոնք հատկացված էին Մայր Աթոռին: Թաղիադյանը հակառակ հանվան հիշատակում է 12 այդպիսի օրինականացված տուրքեր, որոնք երևան են հանում այս սխտեմը, որ հայ եկեղեցականությունը մշակել էր դարերի ընթացքում՝ իր հօտից որքան կարելի է շատ հյուսիս մղելու համար: Բացի ընդհանրական աթոռին հատկացրած տուրքերից ու նվերներից ժողովուրդը մի շարք այդպիսի տուրքեր պիտի տար և իր տեղական առաջնորդին, ինչպես նաև ծխական քահանային: Առաջնորդները նույնիսկ ծախում էին ծխերը քահանաներին... «Քրիստոսի արչամբ գնված հոտը» համարվում էր սեփականություն մինչև նրանց մահը, փոխարենն ստանալով նրանցից դրամ: Դա մի տեսակ հոգևոր ճորտատիրություն էր. մի քահանայի ծախված ծուխն իրավունք չունեիր չձանաչել այդ քահանային և մի ուրիշին դիմել:

էջմիածնի նվիրակին ընդունում էին ամեն տեղ մեծ պատիվներով: Նրան դիմավորում էին եկեղեցական թափոններով, մեծարում էին առաջավոր հարուստ տներում, շնորհակալով, իհարկե, քաղցրացնել նրա տրամադրությունը պատշաճավոր «աջահամբույրով»: Գյուղից գյուղ, քաղաքից քաղաք շրջելով, Թաղիադյանը նվիրակի հետ այցելեց բոլոր փոքր ի շատև աչքի ընկնող հայաբնակ վայրերը Երևանի խանության արևելյան մասում, նախիջևանի ամբողջ խանության մեջ և համարյա ամբողջ Սյունիքում: Իբրև ուշիմ և զարգացած

սյուտանի՝ նա դիտում էր տեղային կյանքը և վերին աստիճանի հետաքրքրական տեղեկություններով էր զարգարում իր ճանապարհորդական օրագրությունը: Այսպես, նա պատմում է, թե ինչ միջոցներով էր Երևանի Հյուսիսին նաև սարդարը կեղևում ժողովուրդը: «Նա շատ և այն էր՝ դի դեղեկալ, յայտցանէ գանիւք ծնուցանէր իւր ոսկին, և ի տանջանաց տառապելոցն հաւաքէր արիւն յարրումն իւր. զաշխարհն համօրէն կեղեքանօքն մաշէր և քրտամբք նոցա կերտէր իւր դաստակերտս ի Ղազարին և ճոխացուցանէր զգանձն»¹

Այս սակավաթիվ տղերի մեջ յուրացրած նոր իրականությունն է, որը ողբալու համար նախատուր Արուսյանը գրել է մի ամբողջ հատոր:

Գանիել եպիսկոպոսի նվիրակությունը քսան ամիս տևեց: Նա վերջանում էր Տաթևի վանքում, և Մեսրոպը պիտի վերադառնար էջմիածին, եթե այդ միջոցին չծագեր մի նոր և խոշոր քաղաքական հարց:

1816 թվականին Կովկասի կառավարչապետ նշանակվեց գեներալ Երմուլովը, որ նախքան Թիֆլիսում հաստատվելը՝ դեռ լիազոր գեսպանի պաշտոնով պիտի գնար Պարսկաստան՝ Շահի կառավարության հետ բանակցելու համար: Հաղորդելով այս մասին Եփրեմ կաթողիկոսին, Հովակիմ կազարյանը գրում էր (Պետերբուրգից). «Ջարդիս ուրախ եմ ամենայնիւ և ամենայն ոք ի մերազն խղճալեաց ուրախանալ պարտ է առ ընդհանուր հաստատեալ խաղաղութիւն աշխարհի և մանաւանդ այդր կողմանց, որով սուրբ Աթոռդ և ազգն մեր հանգրստանալ և վայելչանալ կարէ ենթ խնամողական հովանեաւ քաղցրութեան Աթոռոյ կայսերն հոգոստափառի ամենայն Ըոռուսաց, յորմէ գալոց և հասանելոց էառ քեզ ի կանուխ ժամանակի այսմիկ արի, արդարադատ և բարեկամ ազգի մարդկան ղեներալ Ալէքսէյ Պետրովիչ պարոն Երմուլովն, ընդ որում և առաքելոց եմ մատուցանել առ Սրբութիւն ձեր յատուկ զգիր»: Հետեյալ նամակում, 1816 թ. օգոստ. 6-ից, նա գրում էր. «Այդմիկ կողման նորոգ կացուցեալ բարձրապատիւ կուսակալ ղեներալ և զանազան նշանաց ասպետ Ալէքսէյ Պետրովիչ պարոն Երմուլովն մինչ գալր ի կողմանս ձեր և հաճեցաւ ունել յինչն առ Ձեռդ Սրբութիւն զգիր, որ թէ ի բարեյաջող ժամանելն իւր այդք, ըստ որպիսութեան վայրացդ կամ ըստ քաղաքական այսինքն պոլիտիկական դրութեանց, ի օգուտ և ի կատարեալ այցելութիւն Աթոռոյն սրբոյ էջմիածնի և մերոյ իսկ ազգի, ունիցի ինչ խոսել ընդ ձեզ և ձերով գործակցութեամբն բարի ինչ սակս կողմանցդ և աղգի մերոյ՝ օգտիւ առաջացուցանել, յամենայնում Սրբութիւն ձեր՝ լինիցէ նմա համակամ և խորհրդակից»²:

կազարյանը հույս ուներ, որ Երմուլովը, այդպիսի վերաբերմունք տեսնելով ամենայն հայոց Մայր Աթոռի կողմից, բարերայնություն կաներ հայերին: Իսկ այդպիսի բարերայնության կարոտ էին մանավանդ Ղարաբաղի երբեմնի անկախ հայ տերերի գծբախտ մնացորդները: Նա որոնում էր մի պաշտոնյա, որ «բարեխօս և օգնական կարէ լինել առաջի նորոգ բարձրապատիւ կուսակալին ողորմելեաց այտի մերազնէից, մանաւանդ վասն խղճալի մնացորդաց մեկիքաց Ղարաբաղու և Սղնաղու, որք զամենայն ստացուածս իւրյանց կորուսեալ՝ իբր զտառապեալ մութացեալսս ի Տիֆլիս քաղաքի և այլուրեք աստանդական շրջին, չգտանելով զապրուստ իմն կամ զելս կեցութեան, որոց միայն ձեզ է թողեալ, զօրէն ձեռնտու հովուապետի և օգնականի առաջնորդ լինելով զայցելութիւն ի կուսակալէն և նորա ի դրան ողորմածագունել կայսերն հայցելոյ, դի բաւ է լինելոց նոցա, թէ դարձուցեն ողորմելեացն այնոցիկ գոնէ մասն ինչ ի գեղօ-

¹ Եր. 227.
² Ձեռագիր:

բէից նոցա և ի հողոց, որով կարացեն ապրել և անցուցանել զկանս իւրյանց»¹

Եփրեմ կաթողիկոսը մեծ հանդեսով ընդունեց Երմոլովին Էջմիածնում, շնայած որ շրջապատված էր պարսից լրտեսներով: Ամեն աշակցութիւն հայ հոգևորականութիւնը և մանաւանդ ներսեսը ցույց էին տալիս նրան: Քայց և աշնայես, Երմոլովն էր, որ վերջին հարվածը տվեց Ղարաբաղի հայ մելիքներին և միայն շատ ուշ, տարիներ անցնելուց հետո էր, որ նույն Հովակիմի որդի Խայատուր Լազարյանը գրում էր ներսեսին. «Կուսակալն ձեր Երմոլովն իւր գրութեամբ և առաջադրութեամբ, նմանապէս զանազան գաղտնի ներգործութեամբ շանայ առ ի վնաս և ի տարաբխտութիւն մեզ հայոցս և վրաց ազգին»:

Հայ ժողովուրդը, սակայն, շարունակում էր նախկին մեծ հավատով և անկեղծ անձնվիրութեամբ վերաբերվել Ռուսաստանին, որովհետև նրա առջև ուրիշ ընտրութիւն չկար: Այդ փաստն էր հաստատում Եփրեմ կաթողիկոսը 1821 թ. սեպտեմբեր ամսին, երբ թողնելով, Էջմիածինը, գնաց նախիջևան և այնտեղից անցավ ուսաց երկիրը, Ղարաբաղ: Ծերունի կաթողիկոսն այլևս անկարող եղավ տանելու այն հարստահարութիւնները, որոնց առարկան էր դարձել նրա աթոռը Երևանի սարդարի և նրա պաշտոնյաների ձեռքին: Ահա ինչու էր փախչում նա Էջմիածնից:

Սովորական դարձած բռնութիւնները արհամարհանքը, ճնշումները վաղուց էին դարձել անմեղ բաներ և Էջմիածնի միաբանները դրանցից չէին նեղվում: Այսպես, Երևանի խաներն ու բեկերը սովորութիւն էին դարձրել հաճախ գնալ Էջմիածին, հարկադրել կաթողիկոսին և միաբաններին զգեստավորվել և արարողութիւններ կատարել իրենց «թամաշայի», իրանց հաճելի ժամանցի համար: Ավանդութիւնը պատմում էր, թե ինչ հնարքներ էին գործադրում հայ հոգևորականները խաների կամքը կատարած լինելու համար: Մի օր մի խան Էջմիածնում, ճաշի վրա, պահանջեց մի շարական երգել, որի մեջ «խան» անունը լիներ: Եվ մի եպիսկոպոս երգեց մի կտոր, որի մեջ կար «իշխան» բառը, որի երկրորդ կեսի վրա առանձնապես շեշտելով, խաբեցին խանին: Մի ուրիշ խան պահանջեց, որ երգված շարականի մեջ Ալի անունը լինի. և երգվեց, դարձյալ նույն շեշտվորութեամբ, մի կտոր, որի մեջ կար «իմանալի» բառը, որ խանն ընդունեց «իմամ Ալի» բառերի տեղ: Եվ այսպես բազմաթիվ դեպքեր², ծավն այս չէր: Յավն այն էլ չէր, որ Երևանի խանի պաշտոնյաները Էջմիածնի տաճարում պահանջում էին աթոռներ և նրանց վրա նստում էին ժամասացութեան ժամանակ³:

Մի բողոքագրի մեջ, որ ներսես Աշտարակեցին ուղղել է պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզային, մանրամասն բացատրված է թե դրամական ինչ կեղեքումների էր ենթարկվում Մայր Աթոռը: «Եղբայր նազի խանի,— գրում էր նա,— բազմութեամբ իւրոց զինուորելոց յարձակեալ ի վերայ հոգևորականաց Աթոռոյ Էջմիածնի՝ պահանջելով ի նոցունց զվառութարկուան ի տուն իւրյանց՝ արար զայնպիսի նեղութիւն, զոր և ոչ մին իւրաքանչիւր ժամանակի խանից Երևանու շեր համարձակյալ առնել երբեք. և ի լինիլ բողոքանաց առ Հասան խանն... նա փոխանակ վրէժխնդիր լինելոյ եղբոր նազի խանին, ինքն ևս նախ կարեալ զգլուխն վառութարկուացն, թագուցանէր զայնս և ապա զաւուրս 16

արգելեալ զիս ի միում սենեկի պալատան իւրոց սպաննայր դնել ի զօմբարայ. և զմի ի վարդապետաց և զեքեուս ի ծառայից Աթոռոյ մատնեալ տանջանաց և բանտի վնասապարտից, ոչ արձակեաց՝ մինչև ոչ է առ 400 թուման ինքն և 50 թուման այլ պաշտոնեայք իւր⁴:

Վանքը տալիս էր շարունակ այսպիսի գումարներ: Մյուս կողմից էլ Եփրեմ կաթողիկոսը, կատարելով հին կարգը, փողով հետ էր գնում հայ գերիներ, որոնք մեծ քանակութեամբ բերված էին Քուրքիայից, իբրև պատերազմական ավար: Այսպիսով ահագին պարտք դիզվեց Էջմիածնի վրա՝ 33684 թուման: Պարտատերերը մեծագույն մասամբ թուրքեր էին և նրանք էլ մյուս կողմից էին կեղեքում վանքը իրանց տոկոսներով: Եփրեմը դիմումներ էր անում Երևանի սարդարին և պարսից կառավարութեան, բայց ոչինչ թեթևութիւն չէր զգում այդ դիմումներից: Եվ նա գնաց իր ժողովրդից փող խնդրելու: Այդ միջոցին իրանց խոշոր հարստութեամբ հայտնի էին Քառումյան եղբայրները, որոնք բնակվում էին Շուշում: Երևանի սարդարը թույլ տվեց կաթողիկոսին գնալ Շուշի, այդ հարուստների մոտ: Նախիջևանում կաթողիկոսը գտավ Քաղիադյանին, որ վերադարձել էր Մյունիքից և նրան էլ վերցնում է իր հետ:

Ճանապարհորդութիւնը տեղի ունեւ ձմեռ ժամանակ և խեղճ ծերունին մեծամեծ տանջանքներ էր կրում: Բայց կար մի հանգամանք, որ ավելի էր նեղում նրան: Երմոլովը, իբր թե քաղաքական բարդութիւններ առաջ չբերելու համար, պահանջում էր, որ կաթողիկոսը կամ վերադառնա Էջմիածին, կամ, եթե ուզում է մնալ ուսաց սահմաններում, հրաժարական տա կաթողիկոսութիւնից: Այս աստիճանին էր ահա հասնում այդ գովված «մարդասերի» բարչացական վերաբերմունքը դեպի հայերը: Տկար և վաստակաբեկ ծերունին հայտարարում էր, թե չէ կարող վերադառնալ իր աթոռը, նորից ենթարկվել անտանելի հարստահարութիւնների, իսկ անողոք սատրապը, զլանալով մի մեծ պետութեան ասպնջականութիւնը այն հոգևորականին, որ իր ամբողջ կյանքը նվիրված էր ուսական շահերին, դեռ հանդըգնութիւն ուներ հրաժարական պահանջել նրանից, լավ իմանալով, որ հայ եկեղեցու պետը անփոփոխելի է մինչև իր մահը...

Շուշում Եփրեմը մնաց ամբողջ ձմեռը և նրան հաջորդած զարնան մեծ մասը, այնպես որ Քաղիադյանը բավական ժամանակ ուներ այդ քաղաքին մոտիկուց ծանոթանալու և իր ճանապարհորդական օրագրի մեջ նրան մի շարք շատ հետաքրքրական էջեր նվիրելու համար: Ամենայն հայոց Աթոռին օգնութեան հասավ Մարկոս Քառումյանը, մուրհակով տալով նրան 4000 ոսկի: Դա մի խոշոր վաճառական էր և դրամատեր, որ միաժամանակ գործադրում էր և լայն հասարակական բարեգործութիւն: Այսպես, Քաղիադյանը հավատացնում է, թե յուրաքանչիւր օր Քառումյանների տունը աղքատներին բաժանում էր 500 ուրլի ողորմութիւն: Քառումյան երկու եղբայրները՝ Մարկոս և Չոհրար, Ղազանչի գյուղից էին, նախ հաստատվել էին Երևան քաղաքում, բայց այդտեղ ենթարկվելով սարդարի հալածանքներին, փախել գնացել էին Շուշի, ուր հիմնել էին շատ խոշոր առևտրական տուն: Քաղիադյանին շատ սիրով են ընդունում այս մեծ տանը, որովհետև հայտնվում է, որ նրա տատը երեք օր իր տանը մի արկղի մեջ թաղցրած պահել է Մարկոս Քառումյանին, երբ սարդարի մարդիկ որոնում էին նրան՝ ձերբակալելու համար:

Հարուստ մեծատան համարումը միայն այդ հանգամանքից չէր բխում:

¹ Չոտագիր:

² Չոտագիր:

³ Գար. քահ. Պատկանյան, «Մաղկարաղ ի լիակատար կենսագրութենէ սրբազան հայրապետի ներսեսի Ե.», Զմյուռնիա, 1876, էր. 17—19:

⁴ «Записки генерала Ермолова», т. II, м. 1868, с. 198.

¹ «Համառոտութիւն անդից Քրիստոնակերտ Մայր Աթոռ Հայոց սրբո Էջմիածնի», Քիֆ-լիս, 1853, էր. 13:

Մերոսը ներկայանում էր իբրև մի երիտասարդ մտավորական, իբրև էջմիածնի սարկավազ: Մի օր հարուստ աղան առաջարկում է նրան մի տաղ առնել «Ձայն շունիմ», պատասխանում է Մերոսը: Այս հանգամանքը պիտի գցեր երիտասարդ սարկավազի ամբողջ նշանակությունը, բայց նման կաթողիկոսը պատվիրեց նրան գրել մի քարոզ ավետարանական անիրավ դատավորի վրա և կարգալեկեղեցում: Քարոզը շատ լավ տպավորություն թողեց և այս՝ մանավանդ Քառուսյանի վրա, այնպես որ Մերոսը գրանով վերականգնեց իր տիրացուական համարումը, որ պիտի ոչնչանար երգել շիմանալու պատճառով:

Շուշում կար և Քառուսյաններից ավելի հարուստ առևտրական տուն՝ եղբարք Հախումյաններին: Սրանց կարգությունը միխոնի էր հասնում, բայց բարեգործության և առհասարակ հանրային գործունեության հետ գործ չունեին այդ մեծատունները: Եվ կաթողիկոսը էջմիածնից նրա հետ եկած բարձրաստիճան հոգևորականները ավելի Քառուսյանների տան շրջանում էին ապրում և գործում: Այսանդ Մերոսը գտավ այն, ինչ որոնում էր շարունակ՝ ուսում ստանալու հնարավորություն: Շուշում էր գտնվում նրա սիրելի ուսուցիչը, Պողոս վարդապետ Ղարազաղյին: Բայց այս անգամ նա երկրորդական նշանակություն էր ստանում, որովհետև Շուշի էր եկել և նրա ուսուցիչը՝ Հովսեփ վարդապետ Արցախեցին, որ հայտնի էր «իմաստասեր», «գիտնական» տիրույններով: Եվ իրավ այս մարդը իր ժամանակի նշանավոր հոգևորականներից մեկն էր, որ, սակայն, մնաց վարդապետի համեստ աստիճանում, ապրում էր Գանձասարի կամ Ս. Հակոբի վանքերում և շատ կարեւոր դեր էր կատարում Ղարաբաղի կրթական գործում, հանդիսանալով թե ուսուցիչ և թե մատենագիր: Շուշու ունեորները հրավիրել էին նրան իրանց տղաներին և աղջիկներին ուսում տալու համար: Թաղիադյանը մեծ փափազ ուներ դասեր անելու Հովսեփ վարդապետից, որի կազմած «տրամարանությունը» շատ հարգի էր այն ժամանակները: «Իմաստասեր» վարդապետը շմերժեց նրա խնդիրը և տրամարանության գասերի հետ հաճախ տալիս էր նրան և գործնական խրատներ, որոնք պարուրված էին առականների մեջ:

Այս միջոցին էլ Մերոսյան առաջին անգամ զգաց, թե ինչ է սեր: Որքան կարելի է հասկանալ նրա խոսքերից, որոնք այստեղ այնքան էլ պարզ չեն, նա գրգռել էր հենց նույն Քառուսյանների տան աղջիկներից մեկի սերը և ինքն էլ փոխադարձաբար բռնվել էր նրա սիրով: Նա հիշատակում է իրանց առաջին հանդիպումը, իրար նամակներ գրելը, «անմեղ կաթողությունը, աղի արտասուցները, իրար տված ուխտն ու երդումը» և շարունակում է. «փոքր մի ևս, և ահա փոխեր բովանդակ վիճակ կենաց իմոց այլ իմն եղանակ»: Բայց այդ միջոցին նրան պետք եղավ առ ժամանակ հեռանալ Շուշուց, իսկ այս բանը բավական եղավ, որ մոռացվի այդ առաջին սերը:

Եվ նրան կաթողիկոսի փայտուտը հետզհետե բարդ հարցի կերպարանք էր ընդունում ուս ըլուրդերատիայի համար. մի ժամանակ, ինչպես տեսանք, ուսաց զորքը արշավում էր նրան հայոց կաթողիկոսին ազատելու պատրվակով: Այժմ Երմուզյանը հավատացնում էր, թե պարսից կառավարությունը կարող է պատերազմ հայտարարել Ռուսաստանին, որ ապաստան է տվել Եվրոպային: Եվ որովհետև պետք էր խուսափել ընդհարման ամեն մի պատճառից, քանի որ ուս կառավարությունը պատերազմ չէր ցանկանում, ուստի Կովկասի կուսակալը շարունակ կրկնում էր իր պահանջը, կամ վերադառնալ, կամ հրաժար-

¹ Այսօր էլ Ղարաբաղում ապրում է այդ զվարճախոս մարդու հիշատակը: Նրա գրավոր վաստակներից հիշատակելի է հայերեն բառարանը, որ տպված է Շուշում 1832-ին:

վել: Այս անողոր պահանջը տագնապեցնում էր 72-ամյա ծերունուն: Եվ ահա ինչ էր նա գրում Երմուզյանին.

«Չգիտեմ թե, հակառակ իմ հույսին ու սպասածին, ինչու է առաջանում ձեր ինձ արած այդպիսի առաջարկությունը: Այդ, իհարկե, ավելացնում է իմ դժբախտությունը և նույնը պետք է համարվի Արարատյան աթոռի համար: Եթե ձեզ կամ ձեր պաշտոնակատարին իմ ուղևորությանս մասին կանխապես շժանուցանելովս այնքան մեղանշեցի, որ ոչ միայն չպիտի կարողանամ ձեռք բերել ձեր ողորմածությունը, այլ և ձեր ծաղրի առարկա դառնամ աշխարհիս մեջ, այն ժամանակ հասկանալի է, որ, ինչպես դուք որել եք, կասկածավոր (պարսից) տերությունից անկարող լինելով ուղիղ ճանապարհով թույլտվություն ստանալու գալուս մասին, վտանգավոր համարեցինք մեկը նաև այնտեղից կանխապես ձեզ շժանուցանելը: Ապա եթե այսպես չլիներ, կարելի՞ բան է, որ ձեզ չհաղորդեինք: Վասն որո խնդրում եմ ողորմածաբար հայել մեր վշտալի դրություն վրա և խնայել մեզ՝ ետին թշվառության մեջ բռնվողներին, զի գրած է՝ «մի թողուք քեզ հուսացողներին»: Մենք դիմեցինք, որպես հետին ապաստանի, Ն. Կ. Մ. գահոյքի ողորմածասիրության մեծ հույսով արդարություն ստանալու նրա շնորհներից, նման շատերին, որոնք դանազան տերություն և երկիրների ձեռքում ճնշված և նեղացած լինելով, ստանում են այնտեղ (Ռուսաստանում) պատշաճավոր հարգանք և հովանավորություն: Վասն որո մի թողուք, որ ունայն անցնի մեր հույսը, որով այս իմ ետխանասնամյա ծերության հասակում, այսպիսի ձմեռվա ժամանակ, ամեն կողմից հարկից ստիպված և բազմաթիվ նեղություններ կրելով, սարեր ու ձորեր անցած, ենթարկեցի ինձ Ն. Կ. Մ. պաշտպանությանը, վասն զի ո՞ր ավելի պատշաճ էր մեզ դիմելու և կամ թե ո՞ր տերության վրա հույս դնելու»¹:

Սակայն այսպիսի բացատրությունները օգուտ չէին բերում: Դրությունը զժվարանում էր մանավանդ այն պատճառով, որ կաթողիկոսին չէին թույլ տալիս Շուշուց առաջ գնալ և անձամբ խոսել Երմուզյանի կամ նրա օգնականների հետ: Մի հատ ճար ու ապաստան ուներ կաթողիկոսը՝ Ներսես Աշտարակեցին, ուստի և շարունակ կանչում էր նրան Շուշի, որպեսզի միասին խորհրդակցեն, թե ինչ անեն: Սակայն Ներսեսը չէր կարողանում կատարել կաթողիկոսի առաջարկությունը: Ռուստի Եվրոպայում ստիպված եղավ 1822-ի դարնան սկզբին մի կախկոպուս և մի վարդապետ ուղարկել Քիֆլիս, որ համոզեն Ներսեսին և բերեն Շուշի: Եվ իր հետ վերցրեց Թաղիադյանին: «Ես նրա տիրացուն էի, գրագիրը, սպասավորը, ձեռասյանը և անվարձ բռնաբարձը», ասում է Թաղիադյանն այդ առիթով:

Ճանապարհը Շուշուց մինչև Գանձակ անցնում էր լեռնային հայ գյուղերով և այդտեղ Թաղիադյանը տեսավ երկու մելիքական տուն: Միրանաբար գյուղում ապրում էր Մելիք Վանին, հռչակված իր հերոսություններով, իսկ Գյուլըստան գյուղում գտնվում էր Մելիք Բեգլարյան Մելիք Փրեյդունի տունը, ուր դեռ պահվում էին հին մելիքական ավանդությունները: Օրեկան, ասում է Թաղիադյանը, մորթվում էին երկու եղ և շորս կամ հինգ ոչխար, անցորդներին հյուրասիրելու համար: Մելիք Փրեյդունի որդիներից մեկը, Դավիթ անունով, զնացել էր Հնդկաստան և մնացել այնտեղ: Մայրը շարունակ նրա կարոտն էր քաշում և տալիս էր նրա անունը: Մերոսյան պառավ մելիքակիներ շատ սիրեց, գտնելով, որ նա շատ նման է իր Դավիթին, նույնիսկ ուղում էր նրան պահել իր

¹ Ա. Երեցյան, «Եվրոպայի կաթողիկոս Զորագեղցի», «Արձագանք» թերթ, 1893, № 96:

մտտ, բայց եպիսկոպոսը չհամաձայնվեց բաժանվել իր անվարձ սպասավոր ձիապանից:

Այս ճանապարհորդությունն առիթ տվեց Քաղիադյանին տեսնել Գանձակի ու Քիֆլիսը և իր սուր դիտողության ուժով մի շարք բնորոշ գծեր հաղորդել նրանց կյանքից, ականջ դնելով մասնավորապես ժողովրդական խոսք ու երգերն: Այսպես, Գանձակի կանանց գեղեցկությունը բնորոշելու համար նա բերում է թուրքերեն ասացվածքը:

Գյուրջիստան գյուղելի
Գանջա մարալի:

Ավելի գեղեցիկ է Քիֆլիսի հայերի մի երգը, որ մնացել է Քաղիադյանի շնորհիվ¹:

Ու էիր և տիկ դարձար,
Տկահան շարշարվեցար,
Հավարի դարի դուսին,
Տվինք մշակի ուսին.
Ո՛վ, ո՛վ սուրբ տեճուր,
Լուրդ բաց մեզ ողորմեա:

Մայիսին Ներսեսը ճանապարհվեց Շուշի և Քաղիադյանն էլ նրա խմբի մեջ: Ղարաբաղի մայրաքաղաքը խանդավառ ընդունելություն ցույց տվեց Քիֆլիսի առաջնորդին, որի աղագասիրության հռչակը տարածված էր ամեն տեղ: Նա եղավ Քառուձյանների տանը: Եվ այդ իսկ ժամանակ մեռնում էր Մարկոս Քառուձյանը: Մահից առաջ նա բերել տվեց էջմիածնի մուրճակը, որով 4000 ոսկի էր տվել Աթոռին, այլ շատ մասնավոր մուրհակներ և երկու մեծ պարկ ոսկի: Ապա դնելով իր ուսած ոտը այդ բոլորի վրա ասաց. «Անպիտան դիրդ, եթե կարող ես՝ բժշկիր, ով աշխարհի մուրումնային շաստված: Ոչ, ոչ, այս դուրս է քո մտացածին կարողությունից և միայն իմ Աստծու կամքն է օրհնյալ, նա կարող է հարվածել ինձ և բժշկել»: Այս ուշացած փիլիսոփայության մեծատունը ընկերացնում է բարեգործություններ: էջմիածնի մուրճակը մատուցարանի վրա ուղարկում է կաթողիկոսին, վերադարձնում է և մասնավոր անձանց շատ մուրհակներ: Իսկ երկու պարկ ոսկին, որոնք չկարողացան բժշկել իրան, հրամայեց բաժանել աղքատներին: Աղայի թաղումը կատարվեց շտեմնված շքեղությամբ: Նույնիսկ զորքերն էլ էին մասնակցում հուղարկավորության: Կարծես Արտաշեսն էր մեռել, ավելացնում է իր նկարագրությունը Քաղիադյանը, ակնարկելով հայոց մեծ թագավորին:

Ներսեսն էլ համաձայն էր, որ Եփրեմ կաթողիկոսը չէ կարող վերագրանալ էջմիածին: Բայց միևնույն ժամանակ Ալեքսանդր կայսրն էլ միանում էր Երմուլովի կարծիքին: Ուրիշ բան չէր մնում անել, բայց միայն հրաժարական տալ: Եվ Եփրեմն ուղարկեց իր հրաժարականը կայսրին: Ներսեսն այնուհետև աշխատում էր, որ հրաժարականը մնա ձևականություն և որ նոր կաթողիկոսական ընտրություն չկատարվի, մինչև որ կփոխվին քաղաքական հանգամանքները: Նրան հաջողվեց այդ բանը: Երմուլովը բավականացավ այդ ձևականությունով: Նա հայտարարեց, որ Եփրեմն այլ էս մի պարզ վարդապետ է ուսաց

¹ Եստ երգարանների մեջ այս երգը ցույց է տրվում իբրև Քաղիադյանի հեղինակություն, որ միանգամայն սխալ է:

կառավարության համար, արդենց նրան որևէ ժողովարարություն անել հօգուտ էջմիածնի: Երևա արգելվում էր նաև, որ հայ ժողովուրդն այսուհետև պատվե նրան իբրև կաթողիկոսի:

Եփրեմը Շուշուց հեռացավ 1822-ի ամառը: Մի բանի ժամանակ անցկացրեց Գանձասարի վանքում, ուր ներսեսի հանձնարարությամբ Քաղիադյանն արտագրեց այդ հռչակավոր վանքի արձանագրությունները: Շարունակելով իր ճանապարհը դեպի Գանձակ, հրաժարված կաթողիկոսը հյուրասիրություն գտավ Մելիք Վանու մոտ և Մելիք Փրեյզունի տանը: Չկամենալով բնակություն հաստատել ֆաղաքներում, Եփրեմը թույլտվություն խնդրեց բնակվելու Հաղբատի վանքում: Այդտեղ էլ նրան վիճակված էր մնալ մինչև 1828 թվականը, երբ էջմիածնին անցավ ռուսներին:

Արդեն ձմեռնահաս էր, որ կաթողիկոսն իր հետևորդներով բնակություն գրեց Հաղբատում: Սկսվեց տխուր միայնություն և նախկին վանական կյանքը: Ոչ ոք իրավունք չունեի այցելելու կաթողիկոսին: «Մտացաք գրեաթև դաշխարճ ամենայն», ասում է Քաղիադյանը: Ներսեսը Քիֆլիս վերադառնալիս, ուզում էր իր հետ տանել և Մեսրոպին, «որպես զեշ ի հարսանիս... ի՛հարկե, ձրի գրել վասն յուր», ասում է նա, արգարացնելով իր մերժումը: Բայց ով գիտե, եթե գնացած լինեք Մեսրոպը, անշուշտ նա էլ կընկերանար Արմվյանին, Մտեփանոս Նաղարյանին: Այս այսպես չեղավ, ճակատագիրը Քաղիադյանին այլ ճանապարհ էր պատրաստում, ավելի հետաքրքրական և ավելի դժվար, քան այն, որ պիտի անցնեին Արմվյանն ու Նաղարյանը:

Վանահան կյանքի միանմանության մեջ Քաղիադյանի համար շատ հաճելի մի դեպք էր, որ մի բանի սարկավազներ թույլտվություն ստացան իրանց տները գնալու և ծնողներին տեսնելու: Մեսրոպն էլ նրանց հետ գնաց Երևան, տեսավ իր մորը՝ Չարդարին, որին շատ սիրում էր, ապա նորից վերադարձավ Հաղբատ: Այստեղ նրա մեջ հետզհետե դարգանում է այն գիտակցությունը, թե ինքը իսկապես ոչինչ չգիտե, թե պետք է շարունակել ուսում առնել: Նույն այդ ժամանակները Հաղբատ են գալիս երկու մարդ, որոնք մեծ ազդեցություն են անում նրա կյանքի վրա: Գրանցից մեկը, մի վարդապետ, Հնդկաստանից էր գալիս, ուր երկար պատել էր էջմիածնի նվիրակի հետ: Նրա պատմությունները այդ հեռավոր ճոխ երկրի մասին, ուր զանազան քաղաքներում հաստատված կալին հարուստ հայ վաճառականական գաղութներ, սաստիկ գրավիչ էին Քաղիադյանի համար:

Մյուս ճանապարհորդը Պարսկաստանի այն ժամանակվա նշանավոր հայերից մեկն էր, Դավիթ խան Մատուրյանը: Սա Գեղարբունու Մելիք Շահնազարյանների տոհմից էր և հետո սկսեց կոչվել Մելիք Շահնազարյան դե Շափուր: Պարսկաստանում բարձր աստիճանների հասավ, թագաժառանգ Աբբաս Միրզայի ձեռքի տակ եղած պաշտոնակալներից մեկն էր և 1816-ին պարսից կառավարության կողմից դեսպան էր ուղարկվել Ֆրանսիա՝ Հաղբատում բնակության ուրիշ հարմար սենյակ չլինելով, Դավիթ-խանն իջավ գրագրատանը, ուր Քաղիադյանն էր ապրում: Այստեղ աշխարհատես հյուրի և վանքի տիրացուի

¹ Այդ ժամանակ էլ նա Պարսկաստանի հրատարակեց մի գրքույկ պարսկերեն, ֆրանսերեն և հայերեն լեզուներով Պարսկաստանի մասին («Notices sur l'état actuel de la Perse» par Mir Davoud Zadour Khan de Melik Schahnazar, Paris, 1817), Դավիթ-խանը Աբբաս-Միրզայի մոտ ծառայելիս մշտական նամակագրություն ուներ Ներսեսի հետ մինչև 1826—1827 թ. ուսուցարանական պատերազմը, երբ նա անցավ Ռուսաստան և բնակվեց իր հայրենի Գեղարբունի գավառում:

մեջ մի մտերմութիւն է սկսվում: Պարսից նախկին դեսպանը «քաղցր և խիստ» նավայելուչ բարքի տեր էր», ինչպես վկայում է Քաղիադյանը: Նա պատմութիւններ է անում իր կարգացածից ու լսածից, սա լսում էր հափշտակված: Աշխարհներ են եղել դրսում, լույս ու գիտութիւն կա: Դարձիթ-խանը պատմում է միամիտ տիրացուն Ռոբինսոն Կրուզոյի պատմութիւնը, պատմում է Պարսից մայրաքաղաքի շքեղութիւնները, լույսը, գիտութիւն հրաշակերտները: Եվ կերպարանափոխված է հայ տիրացուն, սրբազան կրակ է վառվում նրա որոնող սրտի մեջ և նա ձգտում է դեպի այդ լուսավոր ու պայծառ հորիզոնները, դեպի իսկական, մեծ գիտութիւնը: «Մանուկ անյուր այնպիսիաց, — գրում է նա, — այնքան սաստիկ հարայ ի սէր երթալու անդր և վտանգաց ի վտանգս անկանելո՞ մինչև աղբոսի ի վերա աղերսանաց գրչալ մատուցի ամեներան հայրապետին Եփրեմա, թողուլ զիս ազատ ի շուրջ աշխարհի»:

Հայրենի իրականութիւնը, ինչպես և պետք էր սպասել, խոչընդոտ էր կանգնում այդ վառ ձգտման դեմ: Տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոսը ոտով գլխով հակառակ էր, որ տիրացուն արձակվի. ամեն տեսակի միջոցներ է գործադրում՝ խրատ թե սպառնալիք, նույնիսկ հաշիվ էր բռնում, թե ինն տարի ապրել է նա էջմիածնում, տարեկան 12 թումանի հաց է կերել, պետք է վճարել, հետո խնդրել, որ ազատեն: Եփրեմ կաթողիկոսն ավելի մեղմ միջոցներով է փորձում ներգործել: «Միշտ այսպես չի մնա ժամանակը, — ասում է նա, — կգա ուրիշ ժամանակ, երբ ես ինքս կասեմ քեզ՝ գնա, բայց այժմ անկարելի է»: Այն ժամանակ Քաղիադյանը վճռականապես հայտնում է, որ, եթե իրան շարձակեն, ինքը կիմանա ինչ անել, և այն ժամանակ, ասում է, իմ հոգուն և մարմնին պարտական կմնա ձեր տերութիւնը: Քաղիադյանը մտադրվել էր՝ կամ փախչել կամ թե այնպիսի վատութիւն անել, որ իրան հալածեն, փախցնեն: Եփրեմը համաձայնութիւն է տալիս: Սարկավազը ոչինչ չունի ճանապարհորդելու համար: Կաթողիկոսը նրան ուղարկում է հինգ ուրբի: Զայրացած Քաղիադյանը տալիս է այդ ընծան վանքի հորթարածին, բաժանում է իր բոլոր իրերը, ինքը միայն վերցնում է իր պայուսակի մեջ իր մօր տված Աստվածաշունչը և ոտով ճանապարհ է ընկնում Հաղբատից: Առաջին պատահած հայ գյուղում ժողովուրդը լավ է վերաբերվում նրան, ձի է վարձում նրա համար: Այսպես ճանապարհորդելով, նա հասնում է Գանձակ: Այդտեղ ապրում էր նրա հորաքույր Մարգարիտը, որից փող ստանալով՝ գնաց Շուշի իր վաղածանոթ Քառումյանների մոտ: Զոհրապ Քառումյանն ընդունեց նրան սիրով, բայց եվրոպա գնալու մտքին հավանութիւն չտվեց: Խորհուրդ էր տալիս վերադառնալ կաթողիկոսի մոտ, իսկ եթե չէ ուզում հոգևորական դառնալ, Զոհրապ աղան պատրաստ էր նույնիսկ պսակել նրան: «Իմ պսակն ուսումն է», վճռականապես հայտարարեց Մեսրոպը: Եվ Զոհրապը տալով նրան հինգ հարյուր ոսկի, ճանապարհ դրեց:

Տաթևի վանահայր Մարտիրոս Եպիսկոպոսն էլ երկար համոզում էր Քաղիադյանին մնալ իր մոտ: Խոստանում էր երկու տարվա ընթացքում հավաքել 500 աշակերտ: Կարելի է Մեծ Անապատ անունով վանքը դպրոց դարձնել և միշտ նվիրվել այդ գործին: Սակայն Մեսրոպը այժմ համոզված էր, թե ինքը դեռ ոչինչ չգիտե, ինչպես ուրեմն կարող էր ուսուցանել ուրիշներին:

Այստեղ էլ հայտնի դարձավ մի իրողութիւն, որ կտրում էր եվրոպա տանող ճանապարհը: Այդ ժամանակ Աբբաս Միրզան և Երևանի Հասան Խանը

կռիվ էին մղում Ալաշկերտի հովտում քրդերի դեմ: Քարավանների երթևեկութիւնը այդ պատճառով կտրվել էր և չէր կարելի գնալ Կ. Պոլիս, որի միակ ճանապարհը տանում էր Ալաշկերտի վրայով դեպի Հրզրում և Տրապիզոն:

Այս անհաղթելի արգելքը ուրիշ ուղղութիւն է տալիս Քաղիադյանի մտքին: Նա այլևս եվրոպա չէ գնում, այլ Պարսկաստանի վրայով՝ Հնդկաստան, որի սքանչելիքների մասին շատ բան էր լսել Հաղբատում Հնդկաստանից եկած վարդապետից:

Եվ նա բռնում է երկար ճանապարհը ամբողջ Պարսկաստանի վրայով՝ դեպի Գանգեսի ափերը:

Տարաբախտաբար հենց այստեղ էլ վերջանում է Քաղիադյանի ճանապարհորդութիւնն առաջին հատորը և մենք այլևս հնարավորութիւն չունինք հետևելու նրան քայլ առ քայլ, ինչպես անում էինք մինչև այստեղ:

Այսքան լավ, մանրամասնորեն մեղ ծանոթ է Քաղիադյանի կյանքի առաջին շրջանը, այն, որ սկսվեց Զանգուի ափին և վերջացավ այն թոպեին, երբ նա անցավ Արաքսը: Նախապատրաստական շրջանն էր դա, որ լցված էր, ինչպես տեսանք, թափառումներով և որոնումներով: Աշխարհ տեսնել և աշխարհը սուր, խորթափանց հայացքով դիտել՝ այս բանի մեջ նա ուղղակի կոչում էր արտահայտում: Կարծես այդ թափառիկ ճակատագիրը տված էր նրան իր մշտավառ որոնումը — ուսման, մտավոր կատարելագործման որոնումը արդյունավորելու համար: Եթե հայկական իրականութիւնը կարողանա նույնիսկ ավելի համեստ շափերով իրականացնել նրա տենչը, այն ժամանակ, թվում է, կարիք էլ չէր լինի, որ նրա մեջ այնքան զարգանար հակումը դեպի թափառումներ:

Քաղիադյանն առաջին հայն էր Անդրկովկասից, որ բաց էր անում ճանապարհը դեպի արտասահման՝ օտար բարեկարգ ուսում, եվրոպական ուսում ստանալու համար: Բայց այդ ճանապարհն սկսելու թոպեին նա արդեն կազմակերպված էր իբրև ուսանող: Ի՞նչ էր նա տանում իր հետ օտար աստղերի տակ: Էջմիածնի սարկավազի տիտղոսը և գերազանցորեն վանական դաստիարակութեամբ տոգորված մի միտք:

Մնում է տեսնել, թե ի՞նչ էր և ի՞նչ կարող էր տալ այն միջավայրը, որ նա գնում էր ուսման լույս որոնելու:

Գլուխ երկրորդ

ՀՆԴԿԱՆՍՑ ԳԱՂՈՒԹՐ

1. ՀԱՅԸ ԻԲՐԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՐԵՎՈՒՅԹ: Հայոց պատմութիւնն ամենանշանավոր հատկութիւնը, որ միայն նեղ ազգային տեսակետից չէ ուսանելի և հետաքրքրական, այն է, որ նա գերազանցորեն պայծառ եղանակով է ներկայացնում մարդուն իբրև իր միջավայրի արտադրութիւն: Համաշխարհային է այս օրենքը, բայց եթե նրան դիտելու համար հարկավոր են վավերագրեր, որոնք ապացուցում են, թե մարդու ճակատագիրն է լինել այն, ինչ նրան կարող են դարձնել նրա ոտի տակ հաստատված հողը և նրա գլխավերևը տարածված երկինքը, այդ վավերագրերից մեկը հենց Հայոց պատմութիւնն է: Նա պատմում է անդու, որ դարերի սկզբից հայ հայրենիքի տեղագրական և բնագրական հանգամանքները դարբնել են հայ ժողովրդի համար մի ազգային հոգեբանութիւն, որի թանձրացած արտահայտութիւնն է հայը իբրև ազգագրական-կուլտուրական տիպ իր հայրենիքի զանազան մասերում: Այլ երևույթ

1 եր. 357.

է նա Վանի լճի գեղածիճաղ ափերում, այլ երևույթ՝ Մուշի բարեբեր դաշտում, այլ երևույթ՝ Մասիսի ջերմոտ և անպաշտպան ստորոտներում, այլ՝ Ղարաբաղի մշուշապատ լեռնաշին բավիղում և այլ՝ ջրերի մի անհուն շտեմարան ներկայացնող Բարձր Հայքի սարահարթերում:

Բնությունն է, մարդուն ապրեցնողը, այսպիսի տարբերություն մշակում մի ընդհանուր լեզու, մի ընդհանուր պատմական ճակատագիր ունեցող ժողովրդի մեջ: Եվ եթե մոտիկուց ուշիուշով քննենք, թե ինչ ճանապարհներով, ինչ եղանակներով է բնությունը գործադրում իր այս համաշխարհային երկաթե օրենքը, մենք բազմաթիվ ուրիշ երևույթների և հետևանքների շարքում կտեսնենք և մի՛ առանձնապես ուժեղ շեշտվող ազգագրական փաստ՝ զա օտար տարրերի ձուլումն է մի ժողովրդի մեջ: Չկա պատմական դարգացման աստիճաններ անցած ազգություն, որ բացարձակապես միատարր լինի: Ամեն մի ազգություն հաշվում է, թե քանի այլատոհմ, օտար, նույնիսկ իրար թշնամի տարրերից է ինքը կազմվել: Այս կողմից խայտարեկտ է մանավանդ հայ ժողովուրդը: Գա մի՛ կարելի է ասել՝ չափազանց բազմատարր ազգագրական դանդաղ է և նրա մեջ յուրաքանչյուր բաղկացուցիչ մաս պահպանել է, որոշ չափով իհարկե, իր ցեղային առանձնահատկությունը, չնայած որ վաղուց արդեն հաչացված է, վաղուց կորցրել է հիշողությունն իր առաջին ցեղային ծագման մասին:

Այսպես է Հայաստանի բնությունը շաղախել ու կռել-կոփել այն ազգաբնակությունը, որ դարերից ի վեր ապրում էր նրա բարձրաբերձ լեռներում, խոր ձորերի մեջ, սարահարթերի վրա և լայնարձակ հովիտներում: Ինքը հայր շատ լավ գիտե իր բնության կատարած գործը և այդ պատճառով, եթե կան նրա համար անհերքելի ճշմարտություններ, առաջիններից մեկն այն է, թե հայերը անմիաբան ժողովուրդ են: Այս նշանակում է պարզապես, թե Հայաստանը լեռներով, կիրճերով սաստիկ կտրատված մի երկիր է: Ավելին: Այս նշանակում է, թե Հայաստանը ցեղային տարբերությունների, ազգագրական առանձնացումների մի ամբողջ խառնարան է: Դժվար թե Թարթառ գետի ձորում ապրող հայր կարողանար շատ սերտ միաբանական կապեր հաստատել հայկական Տավրոսի լանջերին հայացած ասորու հետ: Հայաստանի լեռնային բնությունը եթե թույլ էր տալիս օտար տարրերի միաձուլում, այդ՝ միայն հայտնի վերապահումներով: Տեղայնությունը խիստ է նրա մեջ նրա լեռնային բնության հետևանքով: Եվ նույն տեղայնության գլխավոր առանձնահատկությունը հենց ցեղական տարրեր ծագման հանգամանքն է: Այդ ուժեղ տեղայնությունն արտահայտվում է յուրաքանչյուր նահանգի, շրջանի, մինչև իսկ գավառի առանձնահատուկ երևույթներով...

Ահա մարդկային կյանքի այս օրենքներն է պայծառ գույներով ներկայացնում հայոց պատմությունը մինչև մեր օրերը: Բայց հայոց պատմությունը հայ ժողովուրդը ստեղծել է ոչ միայն Հայաստանի լեռնաշխարհում: Հայոց պատմությունը կատարել է մի խոշոր, գրեթե եզակի դեր, տարածելով հայությունը Հայաստանի սահմաններից դուրս, հողագնդի այլ և այլ տեղերը, առանց հաշվի առնելու հեռավորության հասկացողությունը: Գաղթական հայությունը մեծամեծ հոսանքներ է տարել Հայաստանից և ունի մի մեծ, զարմանալի պատմություն, որ, տարաբախտաբար զեռ բոլորովին անմշակ է մնացել, ինչպես անմշակ են հայոց պատմության համարյա բոլոր հարցերը: Բուն Հայաստանի կողքին դարերի ընթացքում զարգացավ և ընդարձակվեց գաղթական Հայաստանը՝ բաղկացած բազմաթիվ մասերից և մանավանդ մասնիկներից, որոնք ցրված էին օտար աստղերի տակ և որոնք ներկայացնում էին, ընդհա-

նուր առմամբ, այն իրականությունը, թե ինչպես մի ազգ կարող է կտրատվել մանր կտորների, որոնք կենտրոնախույս ուժերի ամբողջ թափով վտարվում են հայրենի հորիզոններից, ինչպես արմատից կարված ճյուղեր, թե ինչպես բախտի հանգամանքները մզում են նրանց դեպի զանազան կողմեր, դեպի զանազան միջավայրեր և այդտեղ՝ այդ միջավայրերում գաղթականական բեկորները ապրել են սկսում, ասպարեզ հրավիրելով այն բոլոր հոգեկան կարողությունները, որոնց միջոցով կարելի է հարմարվել օտար կյանքի պայմաններին՝ իրանց ազգային կերպարանքը պահպանելու համար: Ստացվում է իր բազմաբանգությունը համաշխարհային մի մեծ պատկեր: Յուրաքանչյուր գաղթականություն ընդունում է առանձնահատուկ կերպարանք, ինչպես թույլ են տալիս նոր հայրենիք դարձած երկրի բնական և ազգագրական հանգամանքները: Այս կողմից հաչ գաղթականությունների պատմությունը մարդկային ազգի ամենահետաքրքրական վավերագիրներից մեկն է՝ հավասարապես շահագրգռական և ոչ հայ ուսումնասիրողի համար:

Հայը Եգիպտոսում, Ռումինիայում, Կազանում, Քիֆլիսում, Քարսում, ներկայացնում է տեղական զանազան գունավորումներ: Ամերիկայի հայր տարբեր տիպ է, քան Պարիզում ապրող հայը: Վենետիկի Միսիթարյանը տարբերվում է Վիեննայի Միսիթարյանից, թեև երկուսն էլ միևնույն կազմակերպությունից են ծնված, միևնույն կոչման են նախընտրված, միևնույն միջոցներն են գործադրում: Ամեն տեղի հոգն ու օգը առանձնահատուկ կնիք են դրոշմում գաղթական հայության վրա. եթե ավելի ևս առաջ տանենք մեր դիտողությունները, մեր աչքին կներկայանա և ավելի հետաքրքրական իրողություն: Հայաստանից դուրս եկած գաղթականությունների մեջ այն տարրերն են աչքի ընկնում իրանց գործունեությամբ, որոնք աչքի ընկնող տեղային գեր կատարում էին և բուն երկրում, հաչ հողի վրա: Այսպես է, օրինակ, այն մեծ գաղթականությունը, որ միջին դարերում գնաց հասավ Վոլգա գետին, գաղութներ հիմնեց Կազան, Սարա և Աստրախան քաղաքներում, ապա գնաց Ղրիմի թերակղզին լցնելու, այնտեղից տարածվեց մինչև Գալիցիայի սիրտը, մտավ Տրանսիլվանիա, Մոլդավիա: Այդ մեծ հոսանքը մինչև այսօր էլ պահել է շատ պայծառ հիշողություն իր օրորոցի մասին, գիտե, թե որտեղից է ինքը դուրս եկել սկզբնաբար: Այդ տեղը, — գիտե նա, — Անի մայրաքաղաքն էր, կամ ավելի ընդարձակ մտքով՝ Շիրակ գավառը, այն պանծալի վայրը, որ հաչ կուլտուրականության ամենաբարձր արտահայտությունն էր: Բնականաբար, այդպիսի շրջանից դուրս եկած մի ժողովուրդ չէր կարող կորածի մեկը լինել օտար երկրների տակ: Եվ ճիշտ որ շիրակեցի ժողովուրդը հեռավոր Լեհաստանի, Ունգարիայի դաշտերում էլ իրան ցույց տվեց այնպես, ինչպես կազմակերպվել էր Շիրակի դաշտերում:

Այսօր էլ նույնիսկ, թեև ժամանակը հազար ու հազարավոր հիշատակաբաններ է ջնջել, Շիրակի փոքրիկ գավառը ներկայացնում է այցելուին իբրև բոլորովին ինքնուրույն ու առանձնահատուկ տեղայնություն: Նայելով պատմական կյանքից մնացած խղճուկ փշրանքներին, դուք զգում եք, որ այս դաշտում մի ժամանակ բոլորովին այլ աշխարհ էր ծավալված: Նրա առանձնությունը լիակատար չափով շեշտելու համար այցելեցեք նրա հարևան գավառները, հենց մեր հին Արագածոտնը, որ մեր պատմական-կուլտուրական կյանքի մեծ օջախներից մեկն էր եղել: Պարզ համեմատությունը ձեզ ցույց կտա, որ Շիրակը մի բոլորովին ինքնուրույն, նմանը չունեցող կուլտուրական տիպ էր: Կարծես մի բոլորովին այլ ժողովուրդ էր ապրում այդտեղ, մեծագործ, տա-

դանդաժոր մի ժողովուրդ, որ կարողանում էր ստեղծագործական ահապին հոանդ առանձնացնել ոչ միայն Անիի մայր եկեղեցու նման փառահեղ շինությունների մեջ, այլ և այն միևնույնությամբ, մեկ կամ առ առավելն երկու մարդու համար շինված եկեղեցիների մեջ, որոնք դեռ այսօր էլ պահպանել են Ախուրյանի ձորում, կամուրջի մոտ և Հոռոմոսի վանքում: Խիզախ, սրանող, զարմանալի գեղագետ մի ժողովուրդ, որ միջնադարյան միսախք անուրջների մեջ գիտեր հասկանալ, թե հարստությունն է երկրի մեծ ուժը, և որս համեմատ էլ հարստություններ էր դիզում իր՝ ընդհանրապես աղքատ, ցորենի ցանքսերով միայն կենդանություն պահպանող դաշտում: Բոլորովին չպարզված մի գաղտնիք է դեռ, թե ինչպե՞ս էր այդ ժողովուրդը առևտրական հարաբերությունները այնքան զարգացնում, որ իր հոյակապ մայրաքաղաքը կարողանում էր զարգացնել խանութների (կուղպակ, փնդուկ) մի շատ բնորոշ գործունեություն: Այդ ետևն գործունեությունն էր անշուշտ, որ դիզում էր մեծամեծ հարստություններ և հնարավորություն էր տալիս ծածկել երկրի երեսը սքանչելի գեղարվեստական շինություններով և արվեստի այլ հուշարձաններով: Գերազանցորեն վաճառական ժողովուրդ, որ սակայն, երբ վտանգ էր զգում, կողպում էր իր խանութները և զենք էր վերցնում իր մայրաքաղաքի պարիսպները պաշտպանելու համար:

Այս ուժեղ տեղային անհատականությունը բաց է անում իր գաղտնիքներից մեկն ու զուցի գլխավորը նրանով, որ ցույց է տալիս, թե Շիրակն էլ մի հայացած գավառ էր: Ընդհատ է, Մովսես Խորենացու միամիտ ստուգաբանությունը մեզ բացատրում է, թե Շիրակ գավառը իր անունն ստացել է մեր հին առասպելական հերոսներից մեկից՝ իր շատակերությունը հերոսացած Շարալից, բայց հայտնի է, որ Շիրակը Հյուսիսային Կովկասում ապրող մի ցեղի անունն էր: Այդ ցեղից մի հատված գաղթեց Հայաստան և իր ցեղային անունը տվեց իր բնակած երկրին¹: Շիրակի հետ միացած Վանանդում էլ բուլղար գաղթականությունն էր հաստատվել, որ եկել էր դարձյալ հյուսիսային Կովկասից²: Եվ ահա այս աղգագրական ուրույնությունը այդքան զարմանալի գավառական երևույթ էր առաջացնում գավառական անհատականություններով այնքան հարուստ Հայաստանում:

Եվ երբ այս ուժեղ կուլտուրական անհատականությունը բռնի ուժի հարկադրանքով պոկվում է իր հողից ու գնում է թափառելու հեռավոր, անծանոթ հորիզոնների տակ, մենք նրան տեսնում ենք իր հին հայրենի ավանդությունների հետ՝ պատրաստ ստեղծագործելու ամեն տեղ, ուր կարող է հարմարություններ գտնել: Եվ շնորհալի թափառականին ընդունում են ամեն տեղ գրկաբաց, արտոնություններ են տալիս, որպեսզի նա իր խանութային կուլտուրայով կենդանացնե նույնիսկ լեհաստանի նման եվրոպական մի երկրի տնտեսությունը: Եվ նա ենթարկվում է տեղային պայմաններին, ամեն տեղ միջավայրին հարմարվելու առանձին ինքնատիպ աշխատանք է առաջ տանում: Այսպես, նույն այդ վաճառականական գաղթականների մի փոքրիկ մասնիկը հանգամանքների բերմունքով ընկնում է Կովկասյան լեռները շերքեզների երկիրը և այդտեղ յուրացնում է շերքեզական բարբերը մինչև այն աստիճան, որ միայն կրոնն էր տարբերություն ցույց տալիս հայերի և շերքեզների մեջ: Այսօրվա Արմավիրը նույն այդ շերքեզահայության կենտրոնն է, որ դեռ պահպանում է

¹ К. Патканов. «О месте занимаемом армянским языкомъ въ кругу Индо-европейскихъ», Тифлисъ, 1879 г., ст. 21.
² Մովսես Խորենացի. «Պատմություն Հայոց», Բ. 2.

շերքեզական խոր աղղկություն կյանքի և լեզվի վրա, թեև ինքը շերքեզ ժողովուրդը վաղուց է շրջել այդ կողմերից:

Անխական գաղթականության մյուս հատվածներն էլ իրանց հետաքրքրական պատմությունն ունին, կոած-կոսված Գալիցիայի, Պոդոլիայի, Ունգարիայի, Բուքովինայի, Ռումինիայի դաշտերում, Ղրիմի թերակղզում և Գոն գետի ափերին: Եվ այդ մեծ ու բազմակողմանի պատմությունը ամենից առաջ մի բան է ապացուցանում՝ այն, որ հավիտենապես ճիշտ են «լեհահայ», «ունգարահայ», «առամանահայ», «ռուսահայ», «չերքեզահայ» հորջորջումները, իրբե բառեր, որոնք լավագույն կերպով բնորոշում են յուրաքանչյուր գաղթականության էությունը, նկարում են ամեն մեկի դեմքը: Եթե մենք փորձենք Հայաստանի սահմաններից դուրս ցրված հայության համար մի ընդհանուր անուն գործածել, օրինակ, «գաղթական հայություն», սրանով դիմազուրկ կանեինք այդ հայությունը և այնուհետև պետք կլիներ դեռ երկար ու երկար բացատրել, որ հայը լեհաստանում լեհի նմանություն էր տալիս, Չերքեզիայում՝ շերքեզի և այլն:

Այս կերպով իր հատուկ և բնորոշիչ անունն ունի և հայ ամենանշանավոր գաղթականություններից մեկը՝ ՀՆԴԿԱՀԱՅՅԵՐԸ:

2. ՄԱԳՈՒՄԸ, Հայերը դեռ հին ժամանակներում էին ճանաչել փարթավ և վաճառաշահ Հնդկաստանի ճանապարհը: Միջին դարերում անեցի վաճառականներն էին երևում Հնդկաստանի առևտրական հրապարակներում. նրանք էին, որ իրանց մայր եկեղեցու համար գնեցին Հնդկաստանում մի բյուրեղյա ջահ, որ մի քանի միլիոն ֆրանկի արժեք ուներ: Սակայն, որքան կարելի է նկատել, այս՝ երթևեկ մի վաճառականություն էր, և գաղութներ դեռ չկային: XVI դարից սկսած է, որ հետզհետե առևտրական գաղութներ են երևան գալիս ծայրագույն արևելքում: Հայ վաճառականությունը զարգանում է, որքան Հայաստանում ընկնում է հին ավատական կարգը, որքան հայ ժողովուրդը կորցնելով իր անկախության վերջին նշույնները, դառնում էր ռայնա, որի առջև փակված էին պետական և հասարակական պաշտոնները: Միայն առևտուրն էր, որ չէր արգելված մահմեդական պետությունների ոչ իսլամ հպատակներին: Եվ հայ ժողովուրդը ահա այդ պարպմունքին է անձնատուր դառնում, դնելով նրա մեջ իր ձեռնարկող ոգու ամբողջ կարողությունը: Վաճառականական դասակարգի զարգանալն ու առաջանալը հենց այդ նոր երևույթն էր, որ բերում էր հայերին նոր Պատմությունը, մի երևույթ, որի միջոցով մեր կյանքը ենթարկվում էր պատմական էվոլյուցիայի օրենքներին: Պետական կյանքից զրկված հայության միայն վաճառականությունն էր տրված իր կյանքի հին պայմանները փոխելու և նոր ժամանակների տնտեսական և կուլտուրական շարժումներին մասնակցելու համար: Եվ այսպիսի խոշոր դեր կատարողը պիտի լիներ այն վաճառականությունը, որ գործում էր միջազգային առևտրի մեջ, որ հարաբերություններ ուներ քաղաքակիրթ ազգությունների հետ: Այսպիսի վաճառականություն կարող էր զարգանալ առևտրական գաղութների միջոցով: Վաճառականության շահը պահանջում էր, որ հայ առևտրականը հաստատ բնակություն վայրեր հիմնարկե հեռավոր երկրներում: Եվ մենք տեսնում ենք, որ շահը վաճառականին տանում է բնակվելու նույն իսկ Չինաստանում, այն էլ ոչ թե մենակ, այլ ընտանիքով: XIV դարի սկզբում մի հայ կին մի մեծ եկեղեցի է շինում Չինաստանում և կտակում է այնտեղ գործող կաթոլիկ միսիոներներին:

Իսկ Հնդկաստանում Աքբարապուտ կամ Ակրա մայրաքաղաքն է առաջին տեղը, ուր հաստատվում է հայ վաճառականների գաղութ: Այդտեղ էլ XVI

դարի առաջին կեսում կառուցվում է հայոց եկեղեցի: Թեև հայտնի չէ, թե Հայաստանի որ կողմերից էին հավաքվել այդ առաջին գաղթականները, բայց կարող էին ամենայն հավանականությամբ ենթադրել, որ նրանց մեջ իր նկրկայացուցիչներն ուներ հայ հայրենիքի մի նշանավոր վայրը, որին մի՞թե՞ստ էր դառնալ հնդկահայ գաղթականություն նախածնող: Այդ վայրն էր Զուղան մերթ քաղաք, մերթ գյուղաքաղաք անվանված մեր գրավոր հիշատակարաններին մեջ:

Արաքսի ձախ ափին՝ այնտեղ, ուր նրա մեջ է թափվում Երնջակ գետը, շոր ապառաժոտ, համարյա անմատչելի լանջի վրա կարողացել էր տեղափոխվել 10—12 հազար մի ազգաբնակչություն, որ միանգամայն անօրինակ մի երևույթ էր ներկայացնում հայկական իրականության մեջ: Մարդ այսօր էլ զարմանում է, թե ինչպես էին հները կարողացել բնակարաններ կառուցանել այդ անհյուսիս, վայրենի անկյունում և ինչպես էին բնակարանները հաղորդակցություն պահպանում իրար հետ: Իսկ տների թիվը քիչ չէր: Եվրոպացի ճանապարհորդները անվազն 2000 տուն են հաշվում և 7 եկեղեցի: Այսօր է, որ նույնիսկ ավերակներ չեն մնացել այդ երբեմնի հուշակավոր գյուղաքաղաքի տեղում:

Ջուղայի հուշակը սակայն Արաքսի այդ շոր ափից չէր բոխում, այլ այն հանգամանքից, որ ամբողջ գյուղաքաղաքը բաղկացած էր համարյա միմիայն վաճառականներից: Հայտնի է, որ Ջուղան սեփական վար ու վաստակ չունեի և իր ուտելիքը ստանում էր հարևան Նախիջևանից (ավելի ճիշտ Նախճվան): Չգիտենք, թե ինչ էր նրա անցյալը խոր հնության մեջ, բայց XV—XVI դարերից նա սկսում է փայլել հայ երկնակամարի վրա իրեն հայրենիք զարմանալի վաճառականների, որոնք ոչ միայն հետաքրքրական էջեր են մտցնում միջազգային առևտրի պատմության մեջ, այլև հանդիսանում են մի շատ խոշոր, նմանը չունեցող հասարակական-կուլտուրական տարր, որի կատարած դերը հայ կյանքի զարգացման մեջ անհունապես մեծ է:

Ինչպե՞ս ստեղծվեց այս բացառիկ երևույթը Արաքսի ափին: Դժբախտաբար, մենք նյութեր չենք ստացել անցյալից այս վերին աստիճանի հետաքրքրական հարցը պարզելու համար, և մեզ այս դեպքում չեն օգնում նույնիսկ և ենթադրությունները: Այսպես չենք կարող ասել. թե առևտրական ձևաներեցություն ջուղայեցիների մեջ զարգացրեց Արաքս գետը, իրեն հարմար ջրային հաղորդակցության միջոց, որովհետև Արաքսը նավարկելի գետ չէ մանավանդ Ջուղայից դեպի Կասպից ծովը, քանի որ Մեղրիի քարավազները բացասում են այդտեղ գետի վրայով գնալու ամեն մի հնարավորություն... Մնում է ուշադրություն դարձնել Ջուղան տնտեսապես նպաստավորող մի այլ հաղորդակցական հարմարության վրա: Այդ այն է, որ նա գտնվում է հին և մեծ այն ճանապարհի վրա, որ կապում է ամբողջ Ատրպատականը Անդրկովկասի հետ: Այս տնտեսական խոշոր վարկերակն անշուշտ կրթիչ նշանակություն ունեցել է ջուղայեցու համար, բայց որ իր վաճառականական տաղանդը Ջուղան ամբողջովին այդ ճանապարհից չէ ստացել, այս էլ պարզ է: Եթե ճանապարհը լիներ կազմակերպողը, այն ժոռամանակ մենք պիտի տեսնեինք ուրիշ Ջուղաներ էր նրա երկարության վրա: Բացի դրանից, ջուղայեցին իր համար ասպարեզ չէր ընտրում միմիայն այն առևտուրը, որ այդ մեծ ճանապարհով վարում էր Պարսկաստանի և Անդրկովկասյան երկիրների մեջ: Նա ավելի խոշոր երևույթ էր: Արաքսի ժայռոտ ափից նրա առջև բացվում էին միջազգային հարաբերությունների անհուն հորիզոններ: Գրավոր աղբյուրները մեզ ցույց են տալիս, որ XVI դարում ջուղայեցի վաճառականը առևտուր էր անում Հնդկաստանի շուկաներ-

ում՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ նա առևտրական գրասենյակներ բաց էր արել Վենեսիայում և Իտալիայի այլ կողմերում: Ջուղայեցու կարավանները միացնում էին Արևելքն ու Արևմուտքը և իր այս խիզախությամբ նա նույնիսկ եվրոպացի վաճառականների զարմանքն էր գրգռում: Իհարկե, ամեն մի ջուղայեցի խոշոր միջազգային վաճառական չէր: «Խոշոր» ու «մանր» հասկացողությունները գոյություն ունեին այստեղ էլ, ինչպես ամեն տեղ: Անկասկած, թիչ էին խոշորները՝ փոքրերի համեմատությամբ: Բայց ջուղայեցի մանր վաճառականն էլ թափառիկ և շարժալ մի տիպ էր: Դա մանրավաճառ էր, փերեզակ, որ ուներ իրան հատուկ առևտրական ձևերը, սովորությունները, ավանդությունները: Ջանաղան մանրուճք և ճոթ ու կտոր՝ բարձած էջերի վրա, նա սկսում էր Արևելքը զանազան ուղղություններով, փող էր աշխատում, կատարելով խոշոր վաճառականների համար գործակատարի դեր:

Եվ արտաքին ու ներքին առևտրական հրապարակներից հավաքված հարստությունները դիզվում էին Ջուղայում, դարձնելով Արաքսի այդ շոր ու անպատու ափը ամենքի համար նախանձելի մի տեղ: Մեր այն ժամանակվա գրողներից մեկը, Դավիթ Գառնեցի, մի ամբողջ գովք է հյուսել Ջուղայի վրա:

Ջուղա քաղաք աղնիվ շինած,
Քոչք և սարայք բարձրացուցած,
Եվ գույնզգույն ծաղկեցուցած,
Նա հիացումն էր տեսուցաց,
Եթե ժամանեղ էր հաստատած,
Եկեղեցիքն զարդարած.
Բուովարնին ոսկեջրած,
Մածկոցներն ոսկեթելած,
Ավետարանն և սուրբ խաչեր՝
Անգին քարամբ էր զարդարած.
Սեղաններն և սրբությունն՝
Ուրախություն էր նայողաց...²

Եթե վերցնենք XVI դարի այն ընդհանուր տեսարանը, որ ներկայացնում էր Հայաստանը, այս փառավոր վաճառականական գաղութը, կղզիացած հրաշքի պես մի բան կերևա մեզ: Ավերակների մի երկար զարաշրջան՝ սկսած թաթարական արշավանքներից, ամեն շափ ու սահման անցած Լենկ-Թեմուրի օրով, պահպանում էր իր սարսափները խաշնարած թուրքմենների (Կարաղոյունյու և Աք-գոյունյու ցեղեր) տիրապետության տակ: XVI դարի սկզբից նոր քաղաքական հուժկու կազմակերպությունների դասավորումն էր առաջ գալիս այս կողմերում՝ Պարսկաստանն ու օսմանյան պետությունը, բայց սրանք խաղաղություն ու հանգստություն չէին բերում դժբախտ, ավերված աշխարհին, այլ իրանց փոխադարձ ընդհարումներով սաստկացնում էին արյունի իրականությունը, որ առավելապես հայ ժողովրդի ճակատագիրն էր դարձրել:

Եվ ահա՛ այսպիսի ժամանակներում, այսպիսի պատմական միջավայրում էր ջուղայեցիների այդ հարուստ և գեղեցիկ անկյունը: Այս հրաշալի երևույթը մի վկայություն է, որ ջուղայեցին ոչ միայն առևտուր անելու տաղանդ ուներ, այլև այդ առևտրի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու շնորհք ուներ: Ասիական սանձարձակ բարբարոսությունների կրկեսում խաղաղ կուլտուրաշխատանքի իրավունքներ ձեռք բերել՝ այս ավելի խոշոր մեծագործություն էր, քան կարավաններով Հիմալայներից մինչև Եվրոպա շարժելը: Այս մեծ նվա-

¹ Ղ. Ալիշան, «Սյունիք կամ Սիսական», Վենետիկ, 1893 թ. եր. 411—413:

² Անդ...

ճումը ջուղայեցին անում էր ոչ թե, իհարկե, զենքի գորութեամբ, այլ խելքով, ճարպկութեամբ՝ հենված իր ամենամեծ ուժի՝ դրամի վրա: Եվ որովհետև այսպիսի անսովոր, ալիքուցիչ օրինակ միայն ջուղայեցին էր տալիս զարմանալի խոշոր շահերով և ոչ մի ուրիշ համայնք Հայաստանի որևէ կողմում, դիտողն ստիպված է լինում հարց տալ, թե ինչպե՞ս կարող էր այսպիսի մի համայնք կազմվել հայ հողի վրա, ի՞նչ ծագում ուներ ջուղայեցին:

Նկատենք, որ հատկապես Ջուղան և նրա հարևան գավառները — Նախիչևան և այլն — դարձյալ հայացած գավառներ էին: Հայ հին պատմական ավանդությունները հիշում են, որ Տիրգրան թագավորը, այդ տեղերում մարական գաղթականություններ բնակեցրեց¹: Բայց իրանք ջուղայեցիներն ունեին իրանց սեփական ավանդությունը, որ ասում էր, թե իրանք էլ գաղթել են Արաքսի ափը Անիից: Այս ավանդության կողմն են խոսում և մի շարք կողմնակի համագամանքներ: Ամենից առաջ այն, որ ջուղայեցիները մի բուրժուալիս առանձնացած ազգագրական խումբ էին կազմում իրանց առանձին բարբառով: Քիչ քան չէ ասում և այն հանգամանքը, որ Ջուղան իր վաճառականական հոշակը հին ժամանակներից չէր բերում, այլ միայն Անիի վերջնական կործանումից և անմարդաբնակ դառնալուց հետո (XIII—XIV դար): Վերջապես մի բան, որ ջուղայեցուն իրավունք է տալիս անեցու ժառանգ դառնալ, այդ նրա արվեստն է, որ դարձյալ հաղորդում է նրան կղզիացած տիպի կերպարանք Արաքսի այս ձորում: Այդ արվեստի հուշարձաններն են Ջուղայի խաչքարերը, որոնք ներկայացնում են զարդանկարի մի անհուն ճոխություն: Արվեստագիտական այսպիսի նուրբ ճաշակ, ստեղծագործող երևակայության այդպիսի թռիչքներ կարող էին առաջ գալ իբրև զարգացում այն արվեստի, որի հայրենիքը Շիրակն էր: Բայց ջուղայեցու արվեստի փառքն ու պարծանքը Արաքսի վրա շինված մեծ քարե կամուրջն էր, որ իր հուշակապությունը հիացնում էր ամենքին, նույնիսկ Լենկ-Թեմուրին և համարվում էր եղակի մի շինություն: Մեզ հասած մի քանի թուղթիկ մանրամասնություններ² թույլ են տալիս համեմատելու այդ զեղեցիկ շինությունը Շիրակի կամուրջների (Ձիփլուի և Անիի) հետ և գտնելու նմանություն հիշեցնող մի քանի գծեր:

Այսքան շատ հավանականություններ կան ընդունելու համար, թե ճիշտ որ ջուղայեցիները անեցիներից էին սերված: Եվ եթե այդ ճիշտ այսպես է, մենք չենք վարմանա Արաքսի ձորում փոխած այդ բացառիկ երևույթի վրա, քանի որ նույն մեծագույն շիրակեցիները այնքան բացառիկ երևույթ էին կազմում ոչ միայն Հայաստանում, այլև Ղրիմում, Լեհաստանում և ուրիշ շատ տեղերում³:

Մենք ունենք մի քանի նյութեր՝ հասկանալու համար, թե ինչ կարգով էին Ջուղայի գերազանց վաճառականները ասիական բարբարոսության մեջ իրանց գործի համար՝ հարմարություններ, նպաստավոր պայմաններ ստեղծում: Այդ կատարվում էր պարզապես գնման միջոցով: Ջուղայեցի վաճառականը փրկանք էր տալիս իր ազատության համար: Նա լիացնում էր բռնավորներին, այդպիսով դարձնում էր իր առևտուրն ու հարստությունը շատ հարկավոր և նրանց համար: Եվ բռնավորները հեռանում էին Ջուղայից լիքը գրպաններով, թույլ տալով նրան առևտուր անել և հարստանալ:

Բայց առատ փրկանքը երկայրի սուր է բարբարոսության մատնված

¹ Խորենացի, «Պատմ. Հայ.», Ա. 11

² Հ. Ալիշան, «Սյունիք», եր. 410:

³ Նշենք, որ շատ կողմերով աչքի ընկնող Ակն բազարի հայերն էլ իրենց համարում են Անիից դուրս եկած:

երկիրներում: 1604 թվականին Ջուղա մտավ Շահ Աբբաս երկրորդը՝ մի մեծ բռնավոր, միևնույն ժամանակ և հողով վաճառական: Ջուղան հանդես բերեց իր ամբողջ հարստությունը՝ իր թագավորին մեծագույն պատիվներով ընդունած լինելու համար: Արաքսի ափից մինչև Խոջա Խաչիկի փառավոր ապարանքը, ուր պիտի իջնեք Շահը, փռված էին գորգեր և զուսմաշ կտորներ, որոնց վրայով քայլում էր Շահը: Ոսկեթել հագուստներ էին փայլում դիմավորման մասնակցող ժողովրդի վրա: Խոջա Խաչիկը ոսկե մատուցարանի վրա ոսկու կույտեր մատուցեց Իրանի տիրոջը, և նրա օրինակին հետևեցին մյուս ջուղայեցի խոջաները: Մեծ բռնավորն ընդունում էր այդ ընծաները, խմում էր ոսկե թասերով մատուցվող աննման հոտավետ գինի և ծրագրում էր իր մեջ մի ձեռնարկություն՝ ավերել այս երկրի համար, բայց շատ ձեռնտու իր համար: Նա դեռ պատերազմ էր մղում օսմանցիների դեմ: Երբ ուղեց վերջ տալ պատերազմին, ետ քաշվելով Արաքսի աջ ափը, վճռեց ամայացնել ամբողջ Արաքստյան դաշտը, ըջելով նրա ամբողջ ազգաբնակչությունը: Պարսկաստանի խորքերը: Սկսվեցին սարսափներ, որոնցից սարսուկեց նույնիսկ՝ ամբողջովին արյունով գրված հայոց պատմությունը: Ջուղայի փողոցներում ման էր գալիս մոնետիկը և կանչում էր. «Հրաման է մեծ Շահ Աբբասից ձեզ, Ջուղայի բոլոր բնակիչներին, դուրս գալ ձեր բնակարաններից և գնալ պարսից աշխարհը: Երեք օր ժամանակ է տրվում ձեզ, որ դուրս գնաք. եթե երեք օրից հետո մեկն այստեղ մնա, պիտի սպանվի, իսկ նրա գույքը պիտի գրավվի: Իսկ եթե փախչող լինի, ով ցույց տա նրա տեղը, նրա ապրանքը ցույց տվողին կլինի, իսկ գլուխը՝ Շահին»: Տաքնապ, իրարանցում, թալան: Դարերով դիզվածը-կերտվածը ոչնչացավ երեք օրվա ընթացքում: Վաճառականական հոշակավոր գաղութը պոկվում էր իր ժայռերից, հավիտենական ամայություն էր մատնվում: Նա հարկավոր էր Շահ Աբբասին, որ տարավ ամենքին Սպահան, հիմնեց նրա մոտ մի նոր Ջուղա, որպեսզի այդտեղ բնակվելով, հայ վաճառականները թե իրանք հարստանան և թե հարստացնեն պարսիկ բռնակալներին:

Այսպես էլ եղավ: Վաճառական ժողովրդի համար այս աղետալի գերեզմարությունը դարձավ մի դարազրուխ, որից սկսվեց նրա զարգացման երկրորդ մեծ շրջանը: Համաշխարհային առևտրական հրապարակում հիմա գործում էր նորջուղայեցին, որ հինջուղայեցու զարգացումն էր: Շահ Աբբասն ստեղծեց նրա համար հովանավորող պայմաններ, և Ջուղան՝ Սպահանի մոտ շինված Ջուղան, մեծանում ու փարթամանում էր օրերով, ժամերով: Այժմ ավելի խիզախ ու ձեռնարկող է այդ վաճառականը: Այժմ ավելի ընդարձակ է նրա առջև բացված միջազգային հրապարակը. և նրա առևտրական գրասենյակները մի կողմից բազմանում էին Հնդկաստանում, մյուս կողմից բացվում են Ֆրանսիայի, Անգլիայի, Հոլանդիայի նավահանգիստներում: Առևտուրը մեծամեծ շահեր է բերում, և նոր-Ջուղան հարստանում է շատ արագ: Հազվագյուտ չեն այն դեպքերը, երբ երեկվա մտագործն այսօր միլիոն ֆրանկի հարստություն ունի: Եվ նոր Ջուղան զարգարվում է ավելի հարուստ ու հոշակապ ապարանքներով, որոնք ներսից ներկայացնում են զեղարվեստական նկարներով ծածկված փառավոր սենյակներ: Ուժեղ ու ազդեցիկ են այդ հարուստները: Պարսից արքունիքը նրանց հարգում է, և հայ ազգային գործերի մեջ առաջնակարգ դեր են նրանք կատարում: Մեծ համարում ունեն նվրոպացիների մեջ: Լինել Սպահանում ու շայցելել Ջուղան, չնկարագրել այն՝ անհնարին են համարում արեմըտյան բոլոր ճանապարհորդները: Դրանցից մեկը, գիտնական բուսաբան Տուրնբորդը, Ջուղայում չէ եղել, բայց Թուրքաց Հայաստանում հանդիպելով ջուղայեցի վաճառականների կարավանին, մեծ գովասանքներով է խոսում այդ

անխոնջ մարդկանց մասին, նկարագրում է, թե ինչքան շարժարանքներ են կրում նրանք ճանապարհին իրանց ապրանքները անփորձ տանելու համար: Գիտնական ֆրանսիացին ուղղակի խոշոր կալուտորական գործիչներ է համարում դրանց. կարավանների շարժումը ամբողջ մի երևույթ էր կազմում երկրի կյանքի մեջ: Ամբողջ օրերի ճանապարհ կարելով, գալիս էին մարդիկ կարավանը դիմավորելու, իրանց հարկավոր նյութերը գտնելու համար:

Այսպես էր նոր Զուղայի դիրքը գրեթե ամբողջ XVII դարի ընթացքում: Նրա կատարած դերը շատ մեծ տեղ պիտի բռնե հայ վաճառականության պատմության մեջ: Բայց մենք վաճառականության պատմություն չենք գրում, վերցնելով միայն այն, ինչ հարկավոր է իբրև լուսաբանական նյութ մեր ընթացած առարկայի համար, մենք պիտի բավական համարենք այսքանը՝ ջուղայեցու դիրքն ու նշանակությունը բնորոշելու համար: Զուղան և ջուղայեցին հայ ժողովրդի միայն իբրև վաճառականական երևույթ չէին ներկայացնում: Պատմական ահագին նշանակություն ունի այն հանգամանքը, որ այդ հարուստ գաղութը առատ օժտված էր հասարակական բնագոյներով և ազդում էր մեր մտավոր կյանքի վրա էլ: Իր անձնական շահերը փառավորապես կարգավորելիս՝ ջուղայեցին ժամանակ էր գտնում և ազգային գործերով զբաղվելու և իր հարստություններից բաժին էր հանում նաև հասարակաշահ գործերի համար: Այս կողմից հայկական ոչ մի համայնք՝ թե Հայաստանի մեջ և թե Հայաստանից դուրս՝ չէ կարող համեմատվել Զուղայի հետ: Գեո այս ժամանակներն էլ, երբ նա Արաքսի ափին էր գտնվում, հասարակական գաղափարը տեղ էր գրտնում նրա մեջ, և մենք տեսնում ենք ջուղայեցուն մեկենասի դերում էլ: Բայց այս երևույթը դեռ շատ սահմանափակ, մասնավոր բնավորություն ունի: Իր զարգացման երկրորդ շրջանում, նորջուղայեցիություն շրջանում, այս վաճառական դասակարգի հասարակական գործունեությունը ավելի հաճախ է հիշատակվում, ավելի լայն չափերով է երևան գալիս:

Առանձնապես աչքի է ընկնում մանավանդ ջուղայեցու գրասիրությունը: Նոր Զուղան հսկայական ջանքեր է անում, շնայած որ պարսկական խեղդված միջավայրում էր գտնվում, աչքի ընկնող մտավոր կենտրոն գառնալու համար: XVII դարում եթե մի նոր, լուսատու երևույթ կար, որ պետք էր նկատել իբրև ազգային վերակենդանության առաջնորդող աստղ, այդ հայերեն տպագրությունն էր՝ մի մեծ սկզբնավորություն, որ պետք էր պահպանել, զարգացնել: Այս բանը սակայն ահագին դժվարություն էր ներկայացնում: Հայաստանի քարուքանդ և շարունակ ավերվող հողի վրա չէր կարող հիմնավորվել և անարգել առաջ գնալ տպարանի նման մի կուլտուրական ձեռնարկություն: Ուստի հայ գործիչները տպարաններ բաց անելու և գրքեր տպելու համար գնում էին Եվրոպա, ուր նրանց սպասում էին հարյուր ու մի տանջանք, զրկողություն: Այստեղ ահա գլխավորապես ջուղայեցի վաճառականներն էին, որ օգնում էին հայ տպագրիչներին, նյութական միջոցներ տալով նրանց: Այդ մեկենասությունն էր պարտախան, որ հայ տպարանները բացառապես եկեղեցական գրքեր չէին տպագրում, այլ և այնպիսի գրքեր, որոնք հարկավոր էին փող տվող վաճառականներին: Այսպիսով հայ վաճառականությունը մի զորավոր պատճառ էր դառնում, որ գրականության մեջ մտցվի աշխարհական ուղղություն: Ոչ միայն այսքանը: Աշխարհական պետերին հատկացրված գրքերը պիտի հասկանալի լինեին և վաճառականներին, ուստի նրանցից շատերը հրատարակվում էին աշխարհաբար լեզվով: Այսպիսով էլ դրականությունը դրվում էր ժողովրդականացման ճանապարհի վրա:

XVII դարի վերջին քառորդում այնքան շատանում են այս գրական երև-

ույթները, որ արդեն շատ շոշափելի կերպով է զգացվում, թե հայ մտքի համար դարձա է մի բոլորովին նոր ժամանակ՝ հղի մեծամեծ շարժումներով, որոնք պիտի նոր ճանապարհներ բաց անեն մեզ համար դեպի նոր հորիզոններ: Գրական այդ բազմախորհուրդ երևույթները խկապես դեռ շատ համեստ ու մանր բաներ են: Այսպես է Ոսկան վարդապետի «Արհեստ համարողականը»՝ տպված Մարտիկայում 1675 թվին: Դա մի թվարանություն է՝ թարգմանված հատկապես վաճառականների համար ժամանակի պարզ աշխարհաբար լեզվով: Դարձյալ վաճառականների համար էր, որ Ամստերդամում 1695-ին թողմաս Վանանդեցին հրատարակեց առաջին մեծագիր հայերեն քարտեզը՝ գեղեցիկ փորագրությամբ: Զորս տարուց հետո, 1699-ին, միևնույն տեղը, միևնույն տպարանից լույս էր տեսնում մի փոքրիկ գրքույկ որ ավելի նշանավոր էր իր բովանդակությամբ: Կոչվում էր նա «Գանձ չափոյ՝ կշռոյ՝ թուոյ՝ և դրամից բոլոր աշխարհիս, որ է գիտութիւն ամենայն տեսակ կշռոց՝ չափոց և դրամից, որով բոլոր աշխարհի վաճառականութիւնն վարի»: Դա գործնական գիտելիքների մի ձեռնարկ էր վաճառականների համար՝ կազմված և տպագրված «Զուղայեցի եւ աշխարհի որդի Պարոն Պետրոսի ծախսով»: Գրված էր պարզ, Զուղայի բարբառին մոտիկ աշխարհաբարով: Ահա մի նմուշ:

«Եղբա՛յր Վաճառական. յայս գրքումս ինչ որ գրեցաւ վասն քաշից, դրամից, և դիմաթի՛ ժամանակաւ կու փոխվի, կամ կավելանայ՝ կամ կու պակասի վարա Ալիշիլէրիշի բանն Աստվածադիր կանոն չէ, որ անփոփոխ լինի, բայց փոփոխական է, և մարդդիր կանոն, և ժամանակաւոր: Յայտնապես միշտ և հանապաղ կու տեսնանք՝ քաշից՝ դրամից և ապրանաց դիմաթի փոփոխումն, ինչպես՝ ապրիշումին՝ մանածին բրդին՝ դրամդին՝ և այլ ապրանաց. էս պատճառէս՝ թէ ժամանակաւ մեր գրածին դարշու տեսնիք, չլարմանաք, և ոչ վատ ասէք մեզ՝ սաբար փոփոխումն ինչ որ մեք գրեցինք՝ ժամանակաւ ճշմարիտ էր՝ և ժամանակաւ բաղի բաներ կու փոխվի. ամա մեր գրածն բոլորովմբ սուտ չէ դառնալու, ո՛ղջ լեր և լեր բանասէր»:

Վաճառականի գիտելիքները շատ են: Պիտի իմանա նա ոչ միայն ինչ չափ ու կշիռ դոյութիւնն ունին ամեն մի երկրում, այլ և այն, թե որ երկիր ինչ է արդունաբերում: Եվ ահա մեր գրքույկն ուսուցանում է.

«Աֆրիկու ցամաքն ունի Մորայ երկիրն. ուստի՝ բրինձ, շաքար, խուրմա, խաթան, դահվա, խինա, ոսպ, ունտ և այլ բարիք կու գան: Արաբստան՝ ուստի նուշ, թուզ, դեյթուն, շամիչ, վուշ, լիմոն, նարինջ, խուրմա, սպիտակ մեղր, շաքար և այլ բարիք, ինչպես՝ ոսկի, արծաթ, պղինձ, որ ի Ֆես և ի Մառք գտանին:

Նուրիա՝ որ ունի ոսկի, մուշկ, սանդալ, արանաս և այլ ինչ: Գինեա՝ ուր առատություն շաքարի, բրնձի, ոսկո և այլ բարեաց: Հաբաշտան, որո մասունքն են՝ Լօանգ, Կոնգ, Անգոլա, Մօնամօ աօպմ, Մօնոմուգ, Քաֆրստան, Զանտեբար, Այան և այլն:

Հասարակորեն Հաբաշտան ունի առատություն դանջաֆիլի՝ շաքարի՝ մեղրի՝ քաթանի՝ ոսկվո՝ արծաթի՝ սղնձի՝ արճիճի՝ կլայեկի՝ երկաթի՝ քքուրդ և այլ բազում բժշկական սերմն՝ խոտ՝ արմատ՝ սպիտակ և կարմիր աղ՝ անթիմոն և այլ շատ բարիք:

Հաբաշի թագավորին նաղուշ ասեն. ինքն թագավորն է Քրիստոնյա, 6000 շաղիր ունի. յուր թիկնապահ զինվորքն են 12 հազար. յուր զիվանն՝ 120 Աղա ունի. յուր ձիավոր զինվորքն են՝ 40 հազար, հետեակ զորքն՝ 60 հազար:

Լօվանգ կոսապաշտ է:
Կօնգա-առատ ամենայն սերմամբք՝ պողովք՝ և տնկօք՝ ունի թամար հինդի

շարքը՝ ջովզ հնդի՝ պղինձ՝ երկաթ՝ արծաթ՝ լավ մարմառ՝ յաստիս քար՝ և այլ պատվական ջավահիր. դանադան և դարմանալի գազանք, են կեսակես Քրիստոնյայք:

Քաֆրստանու մարդն է դժնյա և մարդակեր. երկիրն դադանարնակա:

Այս բոլոր խեղճ ու կրակ տեղեկությունները կատարյալ նորություններ էին մեր գրականության համար: Կյանքի, իրական պահանջների, տեսլիզմի հզոր շեշտն էր բերում հայ վաճառականը իբրև տարրեր, որոնք պիտի վերակենդանացնեին հոգևորականության ձեռքին գտնվող և արդեն բոլորովին արհեստականացած, չորացած գրականությունը:

Նոր Զուղայի բարեբախտությունը հարատև չէր և լինել չէր կարող Պարսկաստանի պես մի երկրում, ուր քաղաքական կայուն կարգեր չկային, իսկ տիրողի կամայականությունը ոչնչացնում էր ամեն մի օրինական հասկացողություն: Արդեն XVII դարի երկրորդ կեսից սկսվում է պարսից թույլ ու մեղկ թագավորների շրջանը, և երկրում գլուխ էր բարձրացնում անիշխանականությունը: Արմատապես փոփոխվում է կառավարության վերաբերմունքը դեպի նոր-Զուղան: Այլևս նա չէ հովանավորվում, որպեսզի ծաղկած պահե վաճառականությունը և դրանով զարկ տա և երկրի տնտեսական առաջադիմության: Գնալով հայ գաղութը դառնում է մի կթան կով, շահերի և այլ տիրողների համար, որոնք բնակալական միջոցներով դուրս են քաշում վաճառականների հարստությունները: Զուղան կորցնում է իր փարթավորությունը, արագ դեպի անկումն է գնում: Բայց նրա բնակիչները այնպիսի անկարողներ չէին, որ նստեին իրանց տներում և պատրաստ լինեին կործանվել իրանց գաղթավայրի հետ: Արքան սպառնական էին դառնում ապագայի նշանները, վաճառականությունը նոր տեղեր էր իր համար հաստատում: Այդ նոր տեղերը Հնդկաստան տանող ճանապարհի վրա էին և Հնդկաստանի արևմտյան ափին. Զուղան ոչ միայն ազբատանում էր, այլ և դատարկվում:

Դրությունը ծանրացավ մանավանդ XVIII դարի առաջին քառորդից: Ավդանների արշավանքը առաջին մահացու հարվածն էր հասցնում Զուղային, որ կողոպտվեց, ծանր տուգանքի ենթարկվեց: Այնուհետև Պարսկաստանում հեղափոխությունները հետևում են հեղափոխություններին, կատարյալ անիշխանության երկարատև ժամանակամիջոցներ են ծանրանում երկրի վրա: Նոր Զուղան աստիճանաբար ու դանդաղ մեռնում է այդ տակնուվրայությունների միջոցին և վերածվում է մի խեղճ պարսկական ավանի, պահելով իր նախկին փայլից միմիայն ավերակներ: Դանդաղ մի հոսանք, որ աշխատում է աննկատելի մնալ պարսից կառավարության թթի տակ, տանում է հայ վաճառականներին դեպի հարավ, շարունակ դեպի Հնդկաստան: Հնությունից իր բնական հարստություններով կախարդիչ այդ երկրում էր, որ Արաքսի ափում սկզբնավորված վաճառականական համայնքը պիտի գտներ իր զարգացման երրորդ և վերջին ֆազիսը: Զուղայեցուց նա դարձավ նորջուղայեցի, որպեսզի դրանից հետո դառնա հնդկահայ, մի նոր ինքնուրույն կուլտուրական տիպ:

3. ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԾՐՋԱՆ: Տասնութերորդ դարի առաջին կեսում Հնդկաստանի մեծ թերակղզին սուր ճգնաժամի էր մատնված: Պետք է որոշվեր, թե ո՞ւմ պիտի պատկանե նա՝ իր բնիկների՝ ն, թե՞ եվրոպական մրցակից ազգերին, որոնցից երկուսը, անգլիացիներ և ֆրանսիացիներ, եռանդ էին թափում իրար ձեռքից խլելու անչափ չաղ պատար: Տեղի ուներ պայքար տեղացիների և անգլիացիների մեջ, որ սկսվել էր վաղուց՝ դեռ XVII դարից: Տեղի ուներ պայքար և անգլիացիների և ֆրանսիացիների մեջ: Սակայն վերջիվերջո արյուն-

նահեղ կռիվները վերջացան անգլիական հանձարի հաղթանակով: Հնդկաստանը դարձավ անգլիական գաղութ:

Մինչև որ չէր վերջացել այդ երկարատև, մանր ու համառ պայքարը տիրապետության համար, հայ վաճառականների դրությունը վերին աստիճանի նպաստավոր էր Հնդկաստանում: Տեղացի իշխողները, ուղաները, միայն հայերին էին վերաբերվում վստահությամբ և միայն նրանց էին թույլ տալիս ազատ առևտուր անել երկրի շուկաներում, այնպես որ նույնիսկ անգլիացիները ստիպված էին դիմել հայ վաճառականների միջնորդության՝ իրանց հարկավոր ապրանքները գնելու համար: Մանավանդ նշանավոր էր հայերի դերը հյուսիսարևելյան Հնդկաստանում: Կան անգլիական հաստատ տեղեկություններ, թե հայերն են հիմնել Գանդեսի բերանին Կալկաթա քաղաքը, որին վիճակված էր դառնալ Հնդկաստանի ամենախոշոր կենտրոններից առաջինը: Հայերի գործողություններն այս կողմերում մանրամասն նկարագրել է նորջուղայեցի Քովմաս Խոջամալյանը²: Խոսելով ջուղայեցի Աղա Պետրոս Տեր-Նիկողոսյանի մասին, նա գրում է. «Վաճառական անուանի յոյժ, որ վասն իւրոյ հաւատարմութեան, խոհեմութեան և ճշմարտութեանն սիրելի էր լեալ յաշս Ալավերտի խանին և բաղմաց. մինչև կինն Ալավերտի հանին զսա եղբայր ինքեան էր անուանեալ. և առանց փարտակի կամ հրամանի արձակօրեն ելաներ ի տեսութիւն բեռն իւրո. և իշխանքն ամենայն պաշտէին զնա որպէս զսուրբ վասն բարեպաշտութեանն»:

Այս բարեկամական վերաբերմունքը դեպի տեղացիները, ինչպես վկայում է նույն հայ հեղինակը, ծնեցրեց հայ վաճառականների մեջ մի հազվագեղ երևույթ՝ զինվորություն: Տեղական մի իշխողի բանակի հրամանատար է դառնում վաճառական Աղա Գրիգորը, որ այնուհետև կոչվում է Գորգինխան: Նա ուներ իր ձեռքի տակ ավելի փոքր զորաբաժինների հայ հրամանատարներ, հազարապետներ, որոնցից մի քանիսը ջուղայեցիներ էին, մնացածները՝ Պարսկաստանի ուրիշ կողմերից գնացած հայ վաճառականներ: Գոյություն ուներ այդ բանակի մեջ և առանձին հայկական զորամաս՝ բաղկացած դարձյալ վաճառականներից և այս զորամասն էլ մանավանդ, որ շատ քաջություններ ցույց տվեց անգլիացիների դեմ մղած պատերազմների մեջ:

Բայց վերջանում են պատերազմական խառնակ ժամանակները, անգլիական տիրապետությունը տարածվում է ամբողջ հարուստ թերակղզու վրա և բաց է անում խաղաղ շինարարական աշխատանքի բեղմնավոր ժամանակաշրջան: Ասիական երկիրը, ինչպես այս հատուկ է բրիտանական քաղաքականության՝ հպատակ երկրների վերաբերմամբ, իսկույն հաղորդակից է դառնում եվրոպական առաջավոր ազգի քաղաքակրթական բարիքներին: Հնդկաստանում հաստատվում է անգլիական լեզուն և սրա հետ՝ անգլիական ազատ ոգին: Ռաջաների հայրենիքը, դարերով սնված, բռնապետական լուծի տակ, եվրոպական մի ուժեղ ազգի գաղութ չէ միայն, այլև գերազանցորեն եվրոպական քաղաքակրթության գաղութ, ուր ազգերը կարող էին դաստիարակվել արդեն նոր, ազատ, շինարար և ուժեղացնող ոգով:

Ահա այս միջավայրում է, որ իր կազմավորման և զարգացման ամենագլխավոր շրջանն է սկսում հնդկահայ գաղթականությունը: Անգլո-սաքսոն քաղաքակրթությամբ շաղախված ասիականություն՝ ահա այդ միջավայրի բովան-

¹ Mesroby S. Seth. «History of the Armenians in India», London, 1903.

² Հրատարակել է Մեսրոպ Քաղիազյանը Կալկաթայում 1849 թվին՝ «Քովմասա Խոջամալյան Նոր-Զուղայեցի» Պատմություն Հնդկաց» վերնագրով:

դակութիւնը, որ նոր բովանդակութիւն է ապիս տարակալական բռնապետութեան առաջացրած նոր ջուղայեցիութեան: Ընդհատման մեջ այդ հայութիւնը միապաղաղ չէ, միասին հաճաքմած: Մանր կաթիլների պես նա ցրված է, վաճառականութեան պահանջներին համեմատ, զանազան տեղերում, որոնցից հիշատակելի անուններ են թողել Թումրա, Սուրաթ, Մադրաս, Կալկաթա, Չիչրա, Դաքքա, Բինանդ: Ընդհատմանից վաճառականական ժանր գաղութներ տարածվեցին դեպի արեւելք, այն է՝ Բիրման, Եալա կղզի (հատկապես՝ Բաթավիա քաղաքը), Սինգապուր և այլն: Այդ բոլոր գաղթականութիւնների մարդկանց պաշար հայթայթողը մնում էր գլխավորապես նոր Զուլաեմ¹: Վաճառականական բնատնիքները անդադար, մանր ու աննկատելի հոսանքներով գնում էին, շատ անգամ իբրև ծածուկ փախստականներ, մինչև Ընդհան օվկիանոսի ափը և այդտեղից ցրվում էին՝ ուր որ կամենում էր առևտրական պաշտամունքի քմահաճութիւնը: Զուլան այդ շարունակական արտագաղթից, իհարկե, չէր ամալանում: Նա շարունակում էր մի խղճուկ գոյութիւն, սերտ կապ պահպանելով հնդկահայ բազմաթիվ գաղութների հետ և ապրելով գլխավորապես նրանց հաշվին իբրև նրանց մայր-երկիրը:

Արտաքուստ հնդկահայ գաղթականութիւնը միևնույն պայմաններն էր ներկայացնում, ինչ ամեն մի հայ գաղթականութիւն աշխարհի զանազան կողմերում: Իր խանութով, գրասենյակով, իր շահերով տարված մի փոքրիկ համայնք, որ օտար կյանքի մեջ աշխատում էր կղզիանալ իբրև կրոնական մի խմբակցութիւն: Այդ պատճառով առաջ ու առաջ կառուցվում էր եկեղեցի, հրավիրվում էր քահանա: Համայնական գործերի կենտրոնն է այդ: Վաճառականութիւնը, ինչպես և ամեն մի ուրիշ դաղմունք, ներկայացնում է կամքի, ուժի, նյութական կարողութեան, մտաւոր անհատականութեան մի խառնուրդ: Կան հարուստներ, մեծեր, որոնք սեփական ապարանքների մեջ են ապրում, հեղինակութիւններ են, դասակարգային հրամանատարներ են, կան և փոքրեր ու զրկվածներ, անհաջողակներ, կարոտներ, որոնք պիտի հպատակվեն: Տիրոջ օրենքը շահն է: Դրամը՝ իբրև ուժ՝ մարդուն տանում է և դեպի ոճիրներ, որոնք, սակայն, մեղմվում և արդարացվում են իր շահերն էլ շատ լավ հասկացող կրոնի բացատրութիւններով և զանազան՝ ճարպիկ հերյուրված՝ պայմանականութիւններով:

Այսպես է ընդհանում կերպարանքը: Բայց ջուղայեցի վաճառականը չէ դավաճանում իր այն բնազդին, որ հայտնի էր դարձրել նրան դեռ Արաքսի ափին: Համայնական գործի բնազդն է այդ և նա ավելի խոշոր, ավելի լայն հանրային բնավորութիւն է ստանում, երբ կազմակերպվում է հնդկահայի տիպը: Վաճառականութիւնը Ընդհատմանում ահագին շահ էր տալիս: Անգլիայի վաճառականների ստացված շահը հասնում էր մինչև 200 տոկոսի: Հայերն, իհարկե, ոչ մի առիթ չունեին ավելի քշով բավականանալու: Նրանց մոտ դիզվում էին խոշոր հարստութիւններ, որոնցից մաս էր հանվում համայնական և ընդհանուր ազգային նպատակների համար: Այս, իհարկե, պարտադիր չէր յուրաքանչյուր հնդկահայ վաճառականի, յուրաքանչյուր ջուղայեցու համար: Հասարակական բարեգործութիւնը, ինչպես ամեն տեղ և ամեն ժամանակ, անհատական երևույթ է: Եվ այս դեպքում մենք կարող ենք ասել, որ հնդկա-

¹ Զէ կարելի, ի հարկե, ասել, թէ հնդկահայ գաղթականութիւնը ամբողջապես ջուղայեցիներից էր բաղկացած, Ընդհատման էին գնում և շատ վաճառականներ Պարսկաստանի և Հայաստանի այլ և այլ կողմերից: Բայց ահագին մեծամասնութիւնը ջուղայեցիներն էին կազմում, և ջուղայեցիութիւնն էր, որ մթնոլորտ, միջավայր էր ստեղծում:

հայ իրականութեան մեջ այնքան շատ անհատականութիւններ էին հայտնվում բարեգործական տրամադրութիւններով, որ նրանք մի տեսակ համայնական, ընդհանրական կերպարանք էին ընդունում:

Բարեգործութիւն հնդկահայերը անում էին կամ իրանց ձեռքով, իրանց կենդանութեան ժամանակ, կամ կտակներով: Տասնութերորդ դարում հայ կյանքի մեջ երևան եկած շատ լուսավոր երևույթներ անհնարին կլինեին առանց հնդկահայ հարուստի նվիրաբերութեան: Եթէ Սիմեոն կաթողիկոսը կարողանում էր շարունակական հարստահարութիւնների ենթարկված էջմիածնում բաց անել թղթի գործարան, այդ՝ միմիայն շնորհիվ այն գումարի, որ նա նվեր ստացավ Ընդհատմանից: Նույնպես և Հովսեփ արքեպիսկոպոս Արդությանը չէր կարող տպարան և դպրոց հիմնել նոր նախիջևանում, եթէ նրա գործակալները չծողովրդականացնեին նրա գործունեութիւնը Ընդհատմանում և շմտերմացնեին նրան հարուստ հնդկահայերի հետ: Վենետիկի Մխիթարյանները այսօր Ռափայելյան վարժարան չէին ունենա, եթէ այդ Ռափայելը մի հնդկահայ վաճառական չլինէր և փող չկտակեր այդ նպատակով: Այս միևնույն վաճառականի պատվերով և հատկացրած գումարով էր, որ նույն Մխիթարյանները թարգմանեցին և ոսկեկազմ հատորներով հրատարակեցին Ռուլետի 12 սովար հատորները, որոնք վերաբերվում էին ընդհանուր պատմութեան: Ամենախոշոր նվիրաբերութիւնը դպրոց հաստատելու համար արել է թեև ոչ ջուղահայ, բայց հնդկահայ Սամուել Մուրադը (մոտ 2 միլիոն ֆրանկ):

Մի ժամանակ այսպիսի գործերով հնդկահայերն այնպիսի հռչակ ստացան, որ հայ աշխարհի բոլոր կողմերից նրանց էին դիմում կարոտութիւն ունեցող և օգնութեան կարոտ հիմնարկութիւններն ու անհատները: Ընդհատմանը Ավետայց մի երկիր էր բազմակարոտ և խավար հայ իրականութեան համար:

3. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Բայց հնդկահայը սոսկ փող ավող չէր: Նա ինքն էլ էր գործում և հաճախ ստանձնում էր մեծամեծ պարտավորութիւններ տրամադրող, պատասխանատու համազգային գործեր: Ասպարեզն ամենից առաջ, իհարկե, այն անձուկ վայրն էր, ուր ապրում էր ինքը հայ վաճառականը: Այդտեղ համայնքն ուներ իր տեղական պահանջները, օրինակ, անոթների խնամատարութիւն, մատաղ սերնդի դաստիարակութիւն, լուսավորութիւն: Այս ձգտումները տանում են մեր վաճառականներին և դեպի բարձր ու լուրջ գրականութիւնը: Առաջին անգամից շատ է զարմացնում այս երևույթը: Նույնիսկ լավ գրավարժ էլ չէր հնդկահայ առևտրականը, իսկ նրա ստացած ուսումը կլինէր ամենաշատն այն, ինչ կարող էր տալ նոր Զուլան: Պարսկական մեծ մայրաքաղաքի (Սպահան) այս արվարձանը, ճիշտ է, հայտնի էր մի ժամանակ իբրև գրագիտութեան կենտրոն և իր, թեև, համեստ, տեղն ունի գրաված մեր գրականութեան պատմութեան մեջ: Բայց այդ շատ սահմանափակ և թույլ նշանակութիւն ունեցող մի գրականութիւն էր, հարազատ բեկոր Հայաստանի անկման դարերի գրականութեան, որ համարյա բացառապես կրոնական-սքոլաստիկ բովանդակութիւն ուներ: Ահա այսպիսի աշխարհում կրթութիւն ստացած վաճառականներն էին Ընդհատմանում գրական գործունեութեան մեջ մտնում: Ի՞նչ պիտի տային նրանք: Ըստ երևույթին՝ այն, ինչ կարող էին, ինչին սովոր էին:

Բայց այստեղ դիտողին զարմանք է պատում: Մեր գրականութեան պատմութեան մեջ եթէ կա մի գլուխ, որի վերնագիրը կարելի է դնել «Նոր գրականութիւն», այդ հենց այն գլուխը պիտի լինի, ուր առաջին անգամ հանգես է գալիս հնդկահայ վաճառականը: Այս մարդկանց էր վերապահված, շնայած

իրանց ամբողջ անձեռնհասութեան, արտասանել նոր խոսք, բաց անել հայ մտքի առջև իսկապես նոր հորիզոններ: Եվրոպական նոր միտքը առաջին անգամ հնդկահայերի միջոցով էր արձագանքում մեր հին, մտքով ու ձեռով հին, գրականութեան մեջ:

Այս երևույթի ամբողջ նշանակությունը պարզելու համար պետք է համեմատութեան դնել նրան՝ գրական այն մեծ շարժման հետ, որ նույն XVIII դարում սկսվում էր հայութեան մեջ, բայց բոլորովին այլ կերպարանքով: Այդ շարժումը Մխիթարյան միաբանությունն էր, որ հիմնվում էր վենետիկի Ս. Ղազար կղզում: Գերագանցորեն վանական, այն էլ կաթողիկոսական մի հիմնարկություն, այդ դպրոցը արագ մշակում էր իր համար մի գրական ուրույն կերպարանք: Իր մեջ նա կենտրոնացնում էր մի բարձր հայրենագիտություն, պատրաստում էր լեզվի և կրոնական գիտության տեսակետից լավագույն կերպով դաստիարակված գործիչներ: Աշխատասեր, արդյունավոր մի գրական համայնք այդ փոքրիկ կղզում, որի նպատակն էր լուսավորել հայ ազգությունը և որ ահագին հաջողություն ունեցավ այդ ուղղությամբ: Նրա նշանաբանն էր՝ հայութեան համար, բայց հավատարիմ զավակ Հոռոմի:

Այս գոռ և հաղթական դրոշակին հնդկահայ կիսագրագետ վաճառականությունը հակադրում էր իր նշանաբանը՝ հայութեան համար, բայց հավատարիմ զավակ եվրոպական լուսավոր մտքի: Այսպիսով Ազրիաթք ծովը և Հընդկական օվկիանոսը հայ մտքի ապարեզում առաջ էին բերում հակոտնյաներ, որոնք ընդհարվում էին իրար հետ իբրև անհաշտ սկզբունքներ: Մինչդեռ Մխիթարյանների վանքը առաջին նվազ կենդանացնում էր կաթողիկոսական միջնադարն իր Ալբերգի «Աստվածաբանությունը», իր թումա Կեմպացիներով և այլ սքոլաստիկ մեծահատոր հերյուրանքներով, հնդկահայ վաճառականները առաջնորդվում էին ժամանակի խոշոր պահանջներով և ձգտում էին հասարակություն կազմել հայերից, մի հասարակություն, որ զգար ինքն իրան, ճանաչեր իրան:

Հայութեան մեջ տեղի ունեցող ամենակարևոր երևույթն այդ ժամանակ այն ազատագրական կուռ շարժումն էր, որի թատերաբեմն էր Ղարաբաղի լեռնաստանը: Մեր պատմությունը ցույց է տալիս, որ այդ շարժումը շափաղանց կարևոր էր հայութեան համար, շափաղանց մեծ պատասխանատվությամբ էր վարվում, բայց և շափաղանց կղզիացած, մասնավոր մի երևույթ մնաց: Հայությունը ցուցադրում էր, որ շնայած ստրկության դարերին, նա չէ կորցրել իբրև ազատ ազգ ապրելու զգացմունքը և այդ զգացմունքի համար արյուն թափել, կյանք զոհել նա լավ գիտե: Բայց միևնույն ժամանակ նա ցույց էր տալիս և այն, որ այդպիսի վեհ և նվիրական իրավունքի համար նա չէ կարողանում մի ընդհանուր շարժում սկսել, չէ կարողանում զինել իր բոլոր ույժերը: Ազատագրական շարժումը, թեև արդեն կես դարի պատմություն ուներ, չէր դառնում համազգային, փակված էր մի մասնավոր լեռնաստանում, ուր թողնված էր իր սեփական, տեղային միջոցներին, և հենց այդ պատճառով էլ կամ հրդեհվում էր պայծառ լույսերով, կամ ընկնում էր, առկայծում մութիւնների մեջ:

Այս հանգամանքի մի բնորոշ պատճառն էլ այն էր, որ շարժումը, լինելով խորապես ժողովրդական, չէր առաջացրել քարոզչություն, պրոպագանդա: Գրականության մեջ նա շատ թույլ, հազիվ նկատելի հետքեր է թողել: Բնականաբար, ընդհանուր մեծ ժողովրդականություն, համազգային համակրանք չէր կարող ունենալ այդպիսի մի շարժում: Եվ այս խոշոր հանգամանքն, անշուշտ ամենից լավ նկատելի պիտի լիներ հենց այն երկրից, որ կոչվում էր մենակ, անհավասար ուժերով, այսինքն՝ հենց Ղարաբաղի լեռնաստանից: Այդտեղից

պիտի երևար, թե որքան խոր, մահանման էր հայ աշխարհը պատած քունը:

Եվ ահա այդ կովող Ղարաբաղից մի մարդ՝ Մովսես Բաղրամյան, գնում է Մադրաս քաղաքը, ուր ուսուցչի պաշտոնով մտնում է հարուստ ակնավաճառ Շամիր Սալթանամ Շահամիրյանի տունը՝ նրա Հակոբ որդուն դաստիարակելու համար: Զուգայեցի այս վաճառականը մի շատ նշանավոր դեմք է հնդկահայ գաղթականության մեջ իբրև մի շերտ հայրենասեր, որ առանձնապես ոգևորված էր հայ ազգի ազատության գաղափարով: Բաղրամյանն ավելի ևս վառում է նրա ազգասիրությունը և ցույց է տալիս, թե ինչ հանգամանքներ են ջլատում Ղարաբաղի ազատագրական շարժումը: Գլխավոր պատճառը հայ ժողովրդի անգիտակցությունն էր, որի դեմ պետք էր կռվել: Այս միևնույն բանն էր նկատել այդ ժամանակ Հնդկաստան վերագարձած Հովսեփ Էմինը, մի շատ նշանավոր գործիչ, դարձյալ ջուղայեցի, որ պտտել էր Հայաստանը, երկար ապրել էր Ղարաբաղի մելիքների մոտ, ամեն կերպ աշխատել էր ընդհանուր ապրտամբական մի շարժում առաջացնել հայերի մեջ, բայց ոչ մի տեղ հաջողություն չգտնելով, վերագարձել էր Հնդկաստան և մտել էր անգլիական ծառայության մեջ:

Այս բոլոր իրողությունների հետևանքով էր, որ Մովսես Բաղրամյանը գրեց «Նոր Տեսարակ, որ կոչի Հորդորակ» անունով աշխատությունը, որ տպվեց 1772-ին նույն վաճառական Շահամիրյանի բաց արած տպարանում: Գառաջին հայ տպարանն էր Հնդկաստանում, որ հենց սկզբից, առաջին իսկ քայլից, նոր խոսք էր հնչեցնում հայ ժողովրդի ականջին: Այս առաջին գործի ճակատին պարզ ասված էր, թե ինչ նպատակի պիտի ծառայե նա: «Շարադրեցեալ,— ասում է վերնագիրը,— սակս սթափելոյ երիտասարդացն և մանկանցն Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղգացեալ թմրութենէ քնոյ ծուլութեանն»: Ուրեմն, մի տեսակ կոչնակ, մի ահագանգ՝ աշխարհ արթնացնելու, ոտքի կանգնեցնելու համար: Այսպիսի ձգտումներով գիրք դեռ չէր հրատարակվել հայերեն լեզվով: Հայերեն լեզվով քաղաքական գրականության առաջին փորձը: Օրվա հրատապ հարցը վեր հանող, արժարժող հրապարակախոսություն, որ դեռ չէր տեսել հայ ընթերցողը: Մի ուրիշ մեծ նորություն, որ բերում էր այդ գիրքը, սուր, ծայրահեղ, հեղափոխական, «անաստված» մտքերն էին, որ Ղարաբաղի հեղինակը արժարժում էր շտեմնված համարձակությամբ: Քաջ իմանալով, որ անտարբերության թույնը ժողովրդին ամենից շատ կրոնի հեղինակությամբ է պատվաստվում, հեղինակը սկսում էր իր մերկացումները հենց այդտեղից:

Եղել են, ասում է նա, շատ շատերը, որոնք Ս. Գրքից դուրս են բերել միայն սաստիկ ատելություն դեպի աշխարհային գործերը, միայն հուսահատություն և հիասթափումն մարդու բնության ընդունակությունների վերաբերմամբ: Այստեղից առաջացել է վանական-ճգնավորական գաղափարը, որ վարակել է ամբողջ աշխարհը, սպանել է մարդու մեջ ինքնագործունեության ամեն մի միտք: Բայց եղան և այնպիսիները, որոնք բոլորովին ուրիշ գաղափարներ հանեցին նույն այդ Ս. Գրքից: Այս սակավաթիվներն էին, որ ազատության, հայրենասիրության, մտքի անկախության քարոզողներ դարձան, հիմնվելով նույն այդ գրքի վրա: Ազգային իրավունքները, քաղաքական ազատության անհրաժեշտությունը Բաղրամյանն ապացուցանում է Աստվածաշունչի տված օրինակներով:

Ս. Գրքից հետո հեղինակը դիմում էր հայոց պատմության, նրա վերլուծումն էր տալիս,— մի երևույթ, որ դարձյալ առաջին անգամն էր հայտնագործվում մեր մեջ: Օրինակներ տվողը, իհարկե Մովսես Խորենացին էր: Բաղ-

րամյանը ոգևորվում է հայ թագավորներով և հերոսներով, հավատացնում է որ հայոց ազգը ընտրյալ ազգ է, որ նրա հայրենիքը առաջին աշխարհն է երկրագնդի վրա: Այսպես էր դատում և հասկանում հայ ազգասիրությունը, որի առաջին գրական ներկայացուցիչներից մեկն էր մեր հեղինակը: Բայց ինչի՞ց կործանվեց այդ ընտրյալ ազգը: Մինչև այդ, դարից դար, կրոնական միասնացիղմի ձևակերպված այն միտքն էր տիրում, թե հայ ժողովրդի մեղքերի համար էր, որ երկիրը կործանում ուղարկեց նրան: Բաղրամյանը ուրիշ, գլխավոր պատճառներ էր ցույց տալիս: Մեղքն իր կարգին, բայց փաստն այն է, որ Հայաստանը արյունով լվացող բռնավորները ոչ միայն իրենց ուշժով էին տիրում, այլև այն պատճառով, որ հայերը ժամանակի ընթացքում անպիտանացան, ծուլացան, չէին հետևում իրանց փառավոր նախնիքների օրինակին, չէին պատերազմում, չէին միանում, մոռացել էին հայրենիքի շահերը: Կոտորողների դիմաց նրանք միայն մի միջոց գիտեին՝ փախչել, անհայտանալ քարերի ծերպերում: Ամեն մեկը կյանք փրկել էր աշխատում, բայց դա փրկություն չէր, էգերը՝ կանայք, աղջիկները միահամուռ խայտառակվում էին, պղծվում, իսկ արուները՝ տղամարդիկ, մեծից մինչև փոքրը, կոտորվում էին: Հայաստանը սուգի հայրենիք դարձավ, հայոց վարդերն ու մանուշակները չորացան, քաղցրահամ աղբյուրները արյունով լցվեցին: Երկար ողբում է Բաղրամյանը այս դժբախտ դրությունը, երկար կանչում է իր նախահայրերին, կանչում է հին Իսրայելի դժբախտությունները ողբացողներին, քրիստոնեության սրբերին: Թող ամենքը տեսնեն, թե ինչպես դադան տիրողները շեն բավականանում իրանց սահմանած հարկերն ու տուրքերն ստանալով, այլ խլում տանում են կույսերին, բռնաբարում են, անհուն վիշտ ու տանջանքներ պատճառելով ծնողներին:

Բայց ողբերով ու աղոթքներով ոչինչ չէ կարելի ստեղծել: Բաղրամյանը տեսնում է իր առջև գործ, հավատում է, թե կվերակենդանանա մի ազատ Հայաստան և ասում է իր աղքատ գրաբարով. «Հեռացավ գիշերվա այնքան խավարած և մառախլապատ աղջամուղջը և ահա մոտեցավ հասավ արևի ծագումը՝ մեր աշխարհը լուսավորելու համար, կորավ ու չքացավ ձմեռվա սաստկությունն ու դժնդակությունը և հասավ ծագիկներ ծնող ու մանուշակներ բերող գարունը՝ մեր երկիրը զվարճացնելու համար: Թող ցիրուցան հայությունը համաշխարհային պանդխտությունից վերադառնա տուն, իր ստացվածքի տերը դառնա»: Մահ հայրենիքի ազատության համար՝ ահա ինչից պիտի ծնվի այդ արևը, այդ գարունը: Երանի թե, — ասում է նա, — հայերը կարողացած լինեին նահատակվել իրանց հայրենիքի փրկության համար. նրանք կոտորվել են ահագին քանակությամբ, բայց ի՞նչ օգուտ: Պետք էր, որ ազգի մի մասը մյուսի համար զուլս դներ, մեռներ ապրեցնելու համար, քան թե թույլ տար, որ ամբողջ ազգը ծառա և ստրուկ դառնար օտարին: Մի ազգ, որ ազատությունը պահպանում է պատերազմներով, երբեք չէ նվազում: Ուրեմն, պետք է աշխատել, պետք է զենք ունենալ, վարժվել նրա գործածության մեջ: Ո՛չ որ չպիտի իրան անկարող համարե. ո՛չ որ չպիտի արդարացնե իրան, ասելով, թե գանձ և կարողություն չունի: Արիացե՛ք, — բացականչում է Ղարաբաղի զավակը Հնդկական օվկիանոսի ափից, — եկե՛ք մեջտեղից վերցնենք մեր ամոթն ու նախատինքը: Թող հայոց օրիորդները հայ կտրիճներից հետո ընտրեն և թող ասեն իրանց ընտրածներին. «Թշնամիներից վրեժ հանեցեք, մեկ համար հարուստ ավար բերեք, ավելի հարուստ՝ քան այն ավարը, որ նրանք մեզնից ստացել են. արդար հատուցում շուտ շուտ պահանջեցեք տոկոսներով: Իսկ ծերերն ու պառավները թող, ի սեր Քրիստոսի, նույնպես դառնան ազա-

տություն առիթ. թող շասեն, թե իրանց քիչ է մնում ապրել և ո՞վ կենդանի կլինի, որ տեսնե ազատությունը»:

Բայց ի՞նչ պետք էր անել, որ հայ ժողովուրդն ըմբռներ վերանորոգչական գաղափարը: Պետք էր ուսման յուրը տարածել հայերի մեջ: Բաղրամյանը անգազար «ուսում», «ուսում» է կանչում: «Եվրոպան ամենքիս գաղափարն է», ասում է նա: Պետք է օրինակ վերցնել եվրոպական ազգերից, որոնցից շատերը մեզ պես են եղել: Սա առաջին կոչն էր հայ ժողովրդին հանուն եվրոպայի, կոչ՝ յուրացնելու եվրոպականությունը իբրև սկզբունք բաղաբական ազատություն ձևեր բերելու համար:

Բայց պետք է գեռ ապացուցել, թե հայն իրավունք ունի՞ հեղափոխություն կատարելու, իր ազատությունը զենքով նվաճելու, թե՞ հայը, մտանալով մի ազատ երկիր իր ապրուստի, իր երջանկության համար, դրանով իր դարավոր պատմական իրավունքն էր իրագործում, միայն վերանորոգում էր այն, ինչ ուներ մի ժամանակ: Հայը իր երկիրն է ստանում, ուրիշինը չէ հափըշտակում: «Ո՛չ, — ասում է Բաղրամյանը, — մենք ուրիշ բան չենք ցանկանում, բայց միայն ստանալ մեր սեփական և հավաստի ժառանգությունը, որ կորցրել ենք մեր անկարգության և ծուլության պատճառով: Այն, ինչ կորցրել ենք և ազիտությունը, պարտավոր ենք ետ ստանալ իմաստությունը և արիությունը»: Եվ այդ բոլորը հաստատելու համար նա գիմում էր հայոց պատմության: Շատ լավ էր հասկացել Բաղրամյանը, որ ազգային ազատության գաղափարը կարող է հիմք գտնել միայն այնտեղ, ուր դարգացած է ազգային գիտակցությունը: Մի գերի ազգ կարող է զգալ իր դրության ամբողջ ամոթն ու սարսափը, երբ սկսե հասկանալ, թե ի՞նչ է ինքը, որտեղի՞ց է գալիս և ո՞ւր է գնում. երբ նա տեսնում է իր նախնիքներին, նրանց ձգտումների ժառանգորդն է դառնում:

Այստեղից սկսվում է «Նոր տետրակի» ամենաբնագրածակ մասը, որ նվիրված է հայոց պատմության, Հայաստանի աշխարհագրության: Շոշափվում էր թե հինը և թե ժամանակակիցը: Այսպես, Բաղրամյանը առանձին մի գլուխ նվիրում էր Ղարաբաղի մեղիքներին և նրանց ներկայացրած ազատագրական շարժման: Բերում էր վիճակագրական տեղեկություններ հայ ազգաբնակչության, նրա վճարած հարկերի և տուրքերի մասին և այլն: Անկատար է այս ձեռնարկությունը, նույնիսկ խեղճ՝ շատ կողմերով: Բայց մեր լիաբերան երախտագիտության է արժանի Բաղրամյանը, ինչպես մի հայ հեղինակ, որին պատկանում է մի ամբողջացրած հայոց պատմության առաջին փորձի պատիվը: Հնդկաստանի վաճառականության այս առաջին փորձից 12 տարի անցնելուց հետո էր, որ վենետիկում տպվեցին Չամչյանի հուշակալոր երեք հատորները: Բայց այս մեծ գործից հետո էլ Բաղրամյանի պատիվը չէր պակասում հենց այն պատճառով, որ Չամչյանը, իբրև կաթոլիկ հոգևորական, չկարողացավ և չէր կարող նորագույն եվրոպական մտքի հայեցակետերից քննել և վերլուծել հայ պատմության տված փաստերը: Այսպես, մինչդեռ Չամչյանը սուրբերի վկայաբանություններն էր մանրամասն պատմում և եկեղեցական վեճերին քաջ առ քաջ հետևում կաթոլիկ քարոզչի կողմնապահությամբ, Բաղրամյանը հետեցնում էր, որ եթե Հայաստանը թույլ և զժբախտ էր, դրա պատճառներից առաջինն այն էր, որ նրա կառավարության ձևը միահեծան բռնապետություն էր՝ առանց օրենքների, առանց ժողովրդի մասնակցության:

Եվ այսպիսով բոլորվում է մեր համեստ հեղինակի և առաջին բաղաբական հրատարակախոսի վերին աստիճանի համակրելի դեմքը, — ժամանակի

ամենալուսավոր դավանությունների երկրպագու, սահմանադրական, մինչև
իսկ հանրապետական:

Մեզ մնում է այս նկարագրությունն ամբողջացնել մի քանի գրական նկա-
տողություններով: Նախ եթե հարցնենք գրքից, հեղինակը կհամարիսանա ոչ թե
Մովսես Բաղրամյանը, այլ Շամիր Սալթանամ Շահամիրյանի փոքրիկ որդի
Հակոբը, որի ուսուցիչն էր Բաղրամյանը: Բայց այս հանգամանքը ժխտում է
ամենից առաջ գրքի լուրջ բովանդակությունը, որ չէ կարող լինել աշակերտ-
կան: Բաղրամյանը հիշատակվում է լուկ իբրև աշխատակից: Բայց այս հան-
գամանքն էլ գրում է Սիմեոն կաթողիկոսի մի նամակը, ուղղված Շահամիր-
յանին: «Նոր տետրակը», իբրև ազատ մամուլի առաջին պտուղ, մեծ տպավո-
րություն էր թողել ժամանակակիցների վրա իր համարձակ, հեղափոխիչ բո-
վանդակությամբ: Բայց ամենից շատ վրդովմունք պատճառել էր էջմիածնի
կաթողիկոսին, որ և հանդիմանում էր Շահամիրյանին այդպիսի մի գիրք տպե-
լու համար՝ առանց իր թույլտվության: Մեղավորը այդ հրատարակության
համար Շահամիրյանը չէր, որ միայն ենթարկվել էր Բաղրամյանի ներշնչում-
ներին և տպվել էր նրա վնասակար հեղինակությունը:

Բայց պետք է ընդունել, որ Շահամիրյանն, ընդհակառակն, Բաղրամյանի
կամակիցն ու համակարծիքն էր հայ ազգի ազատագրական հարցերի մեջ:
Այս շատ լավ երևում է մանվանդ այնտեղ, ուր Բաղրամյանը առաջարկում
էր միջոցներ, թե ինչպես պետք է իրականացնել Հայաստանի ազատությունը:
Գլխավոր դերն այդ գործի մեջ հատկացվում էր վրաց շերակլ թագավորին,
իսկ այս՝ Շահամիրյանի սիրած գաղափարն էր, որ և պաշտպանում էր այնու-
հետև էլ երկար ժամանակ, մինչև իր մահը: Եվ այսպես, իրականությունն այս
գեղեցիկ գրքի վերաբերմամբ կարելի է այսպես ձևակերպել՝ հեղինակ Մովսես
Բաղրամյանը Շահամիրյանի շրջանում, որ ներկայացնում էր եվրոպական
ազդեցության առաջ բերած միջավայրը հնդկահայ վաճառականության մեջ:

Նկատենք, որ Բաղրամյանն իբրև հեղինակ առանձին գրական արժանավո-
րություններ չէր ներկայացնում: Չնայած իր վառվառն բնավորության, քա-
րողական ավյունին և հայրենասիրական ջերմեռանդության, նրա ոճը հասա-
րակ է, աղքատ, անտաշ, մասամբ նույնիսկ և անգրագետ: Զարմանալի է, որ
այսպիսի մի գիրք նա գրում էր գրաբար լեզվով: Բայց հնդկահայ գաղթակա-
նությունը երկար ժամանակ, մինչև XIX դարի վերջերն անգամ, համառ գրա-
բարամուլ էր և գիրք ու լրագիր հրատարակում էր գրաբար լեզվով և այն ժա-
մանակ, երբ աշխարհաբարն էր տիրապետում ամեն տեղ: «Նոր տետրակի»
ընթերցանությունը ձանձրալի ու դժվար է մանավանդ այն պատճառով, որ
ամբողջ հորդորական մասը, 50 տպագրած երեսներ, որի մեջ արժարժվում
են հեղինակի մտքերն ու քարոզները՝ գրված է անտաշ ու անարվեստ ոտա-
նավորով:

Տաղանդավոր գրողներ չկին տրված հնդկահայ գաղթականության: Բայց
վաճառականական շրջանը կարողացավ իր առաջնակարգ գրականությունն
անել ոչ թե տաղանդով, այլ մտքով ու նորույթի հմայքով: 1773-ին, «Նոր
տետրակից» մի տարի միայն անցած, Շահամիրյանի տպարանը հրատարա-
կում էր մի ուրիշ, ավելի նշանավոր գիրք, որ ոչ միայն կրկնում ու լայնապես
բացատրում էր «Նոր տետրակի» ազատագրական գաղափարները, այլ և մի մեծ
քաղ էր անում դեպի առաջ, փորձելով որոշ ձևերի մեջ ձուլել ազգային մեծ
գաղափարը: Այս գրքի հեղինակը արդեն միայն Հակոբ Շահամիրյանն է ցույց
տված, որ նշանակում է, թե նրա հայրն էր իսկական հեղինակը: Բաղրամ-
յանի մասնակցությունը չէ նկատվում, և ցույց է տալիս այս հրատարակու-

թյան կատարյալ անգրագետ շարագրությունը: Շահամիրյանը նույնիսկ վարժ
չէր պարզ ուղղագրության մեջ: Շատ բնորոշ է նրա նշանագրողը, որ տպված
է գրքի վերջում և ներկայացնում է, թե ինչ էր այդ հեղինակը: Վերևում մկրատ
և ասեղներ, որոնք ցույց են տալիս, թե նա դերձակ էր մինչև հարստանալը,
ապա ակնավաճառի փոքրիկ կշիռը և նրա քարերը, որոնց հետ՝ թանաքաման
և գրիչ:

Հաղիվ գրագետ վաճառականի գրական այս վաստակը մի շարք տարօրի-
նակություններ է ներկայացնում ամենից առաջ հենց գրքի անունը. «Գիրք
անվանյալ որոգայթ փառաց»: Ոչինչ հասկացողություն բովանդակության մա-
տին նա չէ տալիս, թե և բացատրության համար այդ վերնագրին հետևում են
այսպիսի խոսքեր՝ «Վասն կալանատրելոյ ամենայն գործ անկարգութեան»: Միայն
գրքի բովանդակությունը ցույց է տալիս, որ այս տարօրինակ վերնա-
գիրը նշանակում է պարզապես օրենսդրություն: Շահամիրյանն այդ գրքի մեջ,
հոգոված առ հոգոված (ընդամենը 519), բացատրում էր, թե ինչ վարչական ձև
պիտի ստանա ազատված Հայաստանը: Ուրեմն, հայկական մի մեծ սահմանա-
գրություն, որի մեջ հնդկահայ վաճառականը, տուրք տալով թե՛ իր մայրենի
ասիական հասկացողություններին և թե՛ եվրոպական ամենաառաջագեմ գա-
ղափարներին, ծրագրում էր ռազմավարական հանրապետական մի ուժով՝ պառլա-
մենտական ներկայացուցչությունը, պատասխանատու մինիստրներով և այլն:

Երկար ու երկար նա բացատրում է, թե որքան վատ ձև է միապետություն-
ընդ և թե որքան արդար և բնական է ժողովրդապետությունը: Մեր շատ թագա-
վորներն ու իշխանները «ամբարիշտ ու անիրավ էին և վարում էին իրանց
իշխանությունը գոռոզությամբ և ինքնահավանությունով, զրկելով, կողպտե-
լով, լվկելով կամ անասնական բռնությամբ անց կացնելով իրանց կյանքը,
մինչև որ կորան իրանք և կորցրին մեր պատիվը, հայոց սերունդը մատնեցին
զերություն, իսկ մեր աշխարհը ուրիշների ժառանգություն դարձրին»: Զե հղել
և չէ կարող լինել արեգակի տակ և ոչ մի բան, որ շունենա օրենք. ամեն մի
գործ ավերվում է, ոչնչանում է, երբ հակառակ է օրենքին: Բռնապետությունը
հենց այդ պետական կարգն է, որ օրենքներ չունի: Այս դատողությունների
մեջ Մոնտեսքիեի հղոր միտքն է արտացոլում: Մի անհատ, — շարունակում է
Շահամիրյանը, — չէ կարող այնքան կատարյալ լինել, պակասություններից
ու արատներից այնքան զերծ, որ նրան կարելի լինի հանձնել անսահման իշ-
խանություն մի ամբողջ ազգի վրա: Թագավորի կարող է միայն Աստված.
մահկանացու մարդը չունի նրա անսխալականությունը: Մարդը երբեմն բար-
կանում է, երբեմն ծուլանում, երբեմն ուրախ է, երբեմն տխուր, երբեմն զայ-
րացկոտ, երբեմն զթած: Մարդիկ ծնվում են ազատ և հավասար, և նրանք
մեծից մինչև փոքր պիտի կազմեն մի հոտ, որի կառավարողը պիտի լինի ոչ
թե այս կամ այն անհատի կամքը, քմահաճությունը, այլ մի և ընդհանուր
օրենքը: Երկուդը, բռնապետության այս միակ հիմքը, չէ կարող արդարաց-
նել մարդուն, որ կամավ հրաժարվում է ազատությունից և մտնում բռնակալի
ձեռքի տակ: «Դու, — ասում է մեր հեղինակը, — մահվան երկուդի պատճա-
ռով թուլանում ես քո ազատությունից և հնազանդվում են անորեններին.
բայց ահա ամենափոքրիկ մի կարիճ կամ օձ և կամ մի անմարս սառը կերա-
կուր կարող է այդպիսի մահ բերել քո բնական կյանքին: Ասե՛լ է թե ամեն
թունավոր կենդանի կարող է քո թագավորը լինել: Ո՛չ: Մեզ հարկավոր է մեռ-
նել ազատ և պատրաստել մեզ համար հավիտենական կյանք: Անասուններն էլ
չունեն իրանց մեջ մեկին, որ ինքնակալ և ինքնակամ հրամայող լինի իրանց
վրա, ուրեմն որքան ամոթ է մեր բանականության համար՝ լինել հնազանդ

մի մարդու, որ մեր նմանութունն ու բնութիւնը ունի, որ ինքնակամ հրամայող է դառնում մեզ վրա»:

Եվ այսպես իշխանութիւնը պիտի պատկանէ ժողովրդին: Շահամիրյանը բացատրում է ժողովրդական ներկայացուցչութեան գաղափարը շատ հետաքրքրական ձևով: Միլիոնավոր մարդիկ ինչպե՞ս կառավարեն երկիրը: Հարկավոր է, որ այդ միլիոնները հավաքվեն միասին, վճեն կառավարութեան հարցերը: Մի կալում դիզված է ցորեն: Այդ ցորենի արժանավորութիւնն իմանալու համար բավական է նրանից վերցնել մի բուռ միայն: Այդպես էլ ժողովուրդը: Բավական է մի երկրում գտնվող յուրաքանչյուր տասը հազար տանից երկու-երկու ներկայացուցիչ ընտրել. դրանք կդառնան իրանց ընտրող բազմութեան փոխանորդ և կկատարեն նրա գործերը: Բոլոր պաշտոնյաները, վերակցած, ընտրովի են. նրանք վայելում են պատիվներ համեմատ իրենց աստիճանին, բայց իշխանավորներ չեն, այլ ժողովրդի սպասավորներ միայն:

Բացատրելով մի ուսմկավարական հանրապետութեան ընդհանուր սկզբունքները, Շահամիրյանը վստահ կերպով մի խոշոր քայլ էր անում, դիմելով գործնական միջոցին: Նա տալիս է օրենքների մի ծրագիր՝ ամենահետաքրքրական մասը այս գրքի մեջ: Այդտեղ կա մի հայկական հանրապետութեան սահմանադրութիւնը, թե քրեական և թե քաղաքացիական օրենքների մի ժողովածու: Շատ խեղճ է այդ օրենսդրութեան խմբագրական մասը: Որոշ սխտեմ չկա, ամեն ինչ թափված է խառն ի խառն: Երևում է, որ հեղինակն՝ ինչ գտել է կամ հիշել է, իսկույն գրել է, շատ անհամար կարգի և հետևողականութեան մասին: Երկու մարդ է նստած Շահամիրյանի մեջ՝ անգլիացի և պարսկաստանցի: Գերակշռողը անգլիացի է, բայց պարսկաստանցին էլ միանգամայն իրավատեր է շատ դեպքերում: Ռամկավարական խիստ լայն սկզբունքների հետ տեսնում ենք հողվածներ, որոնք շատ միամիտ են, հետադիմական, ասիական: Այսպես, թույլ է տրվում ծեծել աղջիկ աշակերտուհիներին, միայն զգուշութեամբ, խփելով փափուկ տեղերին:

Ավելորդ համարելով քայլ առ քայլ հետևել Շահամիրյանի օրենսդրութեան մանրամասնութիւններին, կասենք որ ինչ վերաբերմունք էլ ունենանք դեպի այդ գործը չենք կարող շքնդունել, որ հնդկաստանցի վաճառականը կատարել է մի խոշոր գործ, մանավանդ մի շատ գովարին գործ, որի նմանը մինչև այսօր էլ չունի մեր գրականութիւնը: Չէ կարելի ասել, թե այդ գործը ազգեցութեան թողեց մեր կյանքի մեջ: Նա ժողովրդական հրատարակութիւն չէր. մասնավոր շրջանների համար էր պատրաստված: «Իսմանէ,— գրում է Շահամիրյանը իր գրքի հիշատակարանում,— տպվեցաւ ծախիւք մերօք մին հարիւր և տասն յստ (հատ)»: Ավելացնենք և այն, որ նույնիսկ եմբողջապէս դեռ չէին ընդունված այդ աշխատութեան մեջ մշակված բոլոր սկզբունքները և սրանք մեր կյանքի վերաբերմամբ ներկայացնում էին իբրև ուտոպիա, երազ միայն: Բայց այս բոլոր հանգամանքները չեն պակասեցնում այս խոշոր երևույթի գրական նշանակութիւնը: Գաղափարները դանդաղ են տարածվում և մարմնանում կյանքի մեջ: Ինչ այնքան խորթ էր թվում 100—150 տարի առաջ, երբ աշխարհը ճնշված էր բռնապետութիւնների տակ, այսօր այնքան պարզ ու տարրական է... Հայոց գրականութիւնը այսօր կարող է պարծանքով հիշատակել քաղաքական հրապարակախոսութեան սկիզբը մեզանում, հայ վաճառականների ձեռքով հայացրած դեմոկրատիկ սկզբունքները: Պարծենալ կարող ենք նրանով, որ Լոքբի, Մոնտեսքիեռոյի, Դիդրոյի, Վոլտերի գաղափարները համարյա միաժամանակ էին հնչում եմբողջապէս և այն դժբախտ ազգի մեջ, որ տանջվում էր Արևմտյան Ասիայի ամենաբարբարոս բռնակալութիւնների ձեռքին:

«Նոր տեսրակից» և «Որոգայթ փառացից» հետո Շահամիրյանի տպարանը շարունակեց իր գործունեութիւնը, բայց այլևս շտապեց այս տեսակ հրատարակութիւններ: Պետք է արձանագրել և այն իրողութիւնը, որ Շահամիրյանը Միսիթարյաններից առաջ հասկացավ հայ պատմագիրների հրատարակութեան անհրաժեշտութիւնը: Նա հրավեր կարդաց, որ իրան ձեռագիրներ ուղարկեն տպագրելու համար, և հրատարակեց Մեսրոպ երեցի աշխատութիւնը (ներսես Մեծի կենսագրութիւնը):

Շահամիրյանի տպարանին Մադրասում հաջորդում է շիրազեցի Հարութիւն քահանա Շմավոնյանի տպարանը, որին վիճակված էր հոշակվել մեր մեջ նոր ժամանակների մի ուրիշ մեծ գրական գործով: Այս աշխատասեր, բայց սակավ գրագետ քահանան, դառնալով Մադրասի հայոց եկեղեցու քահանա, 1780-ական թվականներին իր սեփական միջոցներով և դառն աշխատանքով սկսում է տպագրութեան գործը, ուշադրութիւն դարձնելով իբրև քահանա գլխավորապէս կրօնական հրատարակութիւնների վրա: Բայց այսպես տանելով գործը Շմավոնյանը հաջողութիւն չէր կարող գտնել հնդկահայ գաղթականութեան մեջ: Ուստի ստիպված է լինում տպարանի պահպանութեան համար բավարարութիւն տալ այդ միջավայրում առաջացած մի պահանջի, այն է՝ ունենալ հայերեն լեզվով պարբերական հրատարակութիւն: 1794 թ. օգոստոսի 7-ին լույս է տեսնում մի տպագրած հայտարարութիւն՝ ուղղված «Բարեպաշտ պարոնաց և մաքրակենցաղ տիկնանց Մադրասի հայոց»: Այդտեղ Հարութիւն քահանան հայտնում էր, թե «դիտավորութիւն սնի ամեն ամսի վերջում իր տպարանից լույս հանել մի տեսրակ, որի անունը կլինի «Աղղարարող» և որից ընթերցողը կիմանա այն ամսվա անցքերը՝ քաղված թե՛ դանազան «կազմեցից», թե՛ դանազան քարտեզներից և դանազան գրքերից, նույնպես և հարկավոր ու քաղցրալուր բաներ: Տեսրակի վերջում կտպվեն հետևյալ ամսի օրացույցը, որի մեջ կլինեն սրբերի տոները, լուսնի ծննդյան և լրման օրերը»: Վերջում Շմավոնյանն ավելացնում էր, որ եթե այդ տեսրակին գրվողներ լինեն, հրատարակութիւնը կսկսվի շուտով: Երկու ամիս չանցած՝ 28 բաժանորդ կար, և Հարութիւն քահանան սկսում է հրատարակել իր ամսագիրը ոչ թե «Աղղարարող» այլ «Աղղարար» անունով:

Առաջին համարը դուրս եկավ 1794 թ. հոկտեմբերի 16-ին: Այդ մի պատմական օր էր, երբ հայ ազգը, կարելի է ասել, մտնում էր քաղաքակիրթ ազգերի ընտանիքի մեջ, մտնում էր, իհարկե, իբրև աղքատ և խեղճ արևելցի: Լրագրութիւնը եմբողջապէս ծնունդ էր առել դեռ XVII դարի սկզբում. ահա թե ինչ տարածութիւն էր գոյացել արևմուտքու և արևելքու մեջ: Բոլոր եմբողջական ազգերն ունեին մամուլ: Իսկ այն ժամանակ, երբ Շիրազի համեստ քահանան շարում էր Մադրասի տպարանում, հայերենից այնքան հեռու տարագրված, իր «Աղղարարը», արևմտյան մի քանի երկիրներում, մանավանդ Անգլիայում և Ֆրանսիայում, լրագրութիւնն արդեն հսկայական առաջադիմութիւն էր արել, դառնալով հասարակական մտքի ղեկավար և մեծ շարժիչ ուժ: Ֆրանսիայում մամուլը պատրաստել էր մեծ հեղափոխութիւնը և հրապարակախոսութիւնն այնպիսի ուժ էր ներկայացնում, որ նրանից վախենում էին և աշխարհի հզորները: Այն ժամանակ, երբ անգլիական լրագիրները տարածվում էին միլիոններով, մեր «Աղղարարը» Մադրասում ուներ 28 բաժանորդ: Մենք, իհարկե, չենք ասում թե կարող էր ուրիշ կերպ էլ լինել:

Հայ պարբերական հրատարակութեան միտքը ինքնըստինքյան հասկանալի է, որ ներշնչվում էր անգլիական օրինակներով: Շմավոնյանը իր ամսա-

գիրը գրեթե ճիշտ պատճեն էր դարձնում տեղային մի անգլիերեն հրատարակու-
թյան: Այսպես էլ նա հայտարարեց իր առաջին ծանուցման մեջ:

Տեր Հարությունը առաջին հայ խմբագիրն է. այս պատիվը նրա տեղո-
ղապետի սեփականությունն է մեր գրականության պատմության մեջ: Բայց
առաջին հայ ամսագիրը, «Ազդարարը», ամբողջովին Մադրասի հայ դաղթա-
կանության գործն է, գերազանցորեն վաճառականական մի ձեռնարկություն:
Խմբագիրը մենակ չէր գործում: Նա ուներ խմբագրություն՝ բազմապիսի տեղացի
մի քանի «ուրախակից երիտասարդներին», որոնց հատկացված էր «վերակա-
ցու» անունը: Դրանք այժմյան աշխատակիցներն են: Եվ ամսագրի խմբագրու-
թյունը այդ հավաքական մարմինն էր պատկանում: Եկեղեցու զանգակատան
տակ մի արկղ էր դրված, որի մեջ ամեն մեկը կարող էր գցել իր գրվածքը:
Մեկն ուղարկել էր մի թարգմանություն, և ահա ինչ էր նրան պատասխանում
խմբագիրը իր ամսագրի միջոցով: «Թարգմանությունդ մի մասը տեղա և հա-
վանեցի և ցույց տվի քո երիտասարդ ընկերակիցներին, որոնք միաբան ուրա-
խացան, և այս մասին շտապում եմ հայտնել քեզ... Որովհետև դեռ չէ ավարտ-
ված թարգմանությունդ, ուստի «Ազդարարի» վերակացուները կասկածում են,
պատճառ որ սկզբից կարգադրել են՝ չընդունել մի բան, մինչև որ շտեմեն
վերջը»: Բացի սրանից ուրիշ շատ հանգամանքներ էլ կան, որոնք նույն իրո-
ղությունն են հաստատում: «Ազդարարի» վրա առաջին իսկ քայլերից երևում
էր միջավայրի խիստ բնորոշ ազդեցությունը: Դա ամենից շուտ և ամենից շատ
մի վաճառականական հրատարակություն էր: Նրա բովանդակության մեջ բոլոր
այն մասերը, որոնք վերաբերում են օրվա ընթացիկ կյանքին, առևտրական են
ամենամեծ մասով: Շուկայի գների ընդարձակ ցուցակները, որոնք սկսեցին
տպագրվել «Ազդարարի» մեջ հենց առաջին համարից, պաշտոն ունեին առաջ-
նորդ հանդիսանալու տեղական և դրսի հայ վաճառականների համար: Թղթա-
կիցները վաճառականներ էին, որոնք Հնդկաստանի և Հնդկաչինաստանի դա-
նազան կողմերից տեղեկություններ էին հաղորդում առևտրական հրապարակի
գրության մասին: Հայտարարությունները բացառապես վաճառականական էին:
Առևտրի պատմությամբ հետաքրքրվողին մեր անդրանիկ խմբագիրը կարող է
շատ շահեկան տեղեկություններ տալ: Կան տեղեկություններ և հայ գաղութի
մասին. յուրաքանչյուր ամիս արձանագրվում էին ծնողների, մեռնողների,
ամուսնացողների մանրամասն ցուցակները: Երթևեկող նավերի և նրանց վրա
ճանապարհորդող հայ վաճառականների մասին տեղեկություններ միշտ տրա-
վում էին: Հեռավոր արևելքի զանազան անկյուններում առևտուր անողների
մահերի, հաջողության և անհաջողության լուրերը ամսագիրը պարտք էր հա-
մարում տպագրել հարկ եղած մանրամասնություններով:

«Ազդարարն» ուներ և քաղաքական բաժին: Եվրոպական և տեղական լրա-
գիրներից քաղած լուրերը քաղաքական աշխարհի ամենախոշոր զեպքերն էին
պատմում: Ֆրանսիական մեծ հեղափոխությունը հեռավոր, խուլ ու կցկտոր
արձագանքներ էր տալիս մեր անդրանիկ պարբերականի մեջ: Ազատական
Ֆրանսիայի դեմ դիմված Եվրոպայի իր անընդհատ պատերազմներով առաջաց-
րել էր համաշխարհային առևտրի մեջ սաստիկ կրիզիս, և մեր վաճառականները
Հնդկաստանում և ուրիշ տեղերում արտնջում էին, որ առևտրի մեջ օգուտ չէ
մնացել, որ առևտրականի արտաքինն է միայն շրջուցիլ, մեջտեղ իրապես
ոչինչ շահ չկա: Եվ «Ազդարարը», ինչպես վաճառականների բերան, մազթում
էր աշխարհին խաղաղություն, որ այնքան հարկավոր է մանավանդ ծովեր ու
ցամաքներ շափչիող վաճառականին:

Իբրև ազգային պարբերական հրատարակություն՝ «Ազդարարը» աշխա-

տում էր տեղեկություններ հաղորդել Հայաստանի և դրսի աշխարհների հայու-
թյան մասին: Չէր մոռացվում, իհարկե, և Պարսկաստանը, որ հնդկահայի մայր
հայրենիքն էր: Այսպես, մենք տեսնում ենք հայ վաճառականների միջոցով
հաղորդված լուրեր Աղա-Մահմեդ-խանի պարսկական արշավանքների մասին,
ինչպես և մի ամբողջ թղթակցություն, թե ինչպես այդ ներքինի շահը արշա-
վանք է սկսել դիպի Վրաստան: «Ազդարարն» ուներ և մի լրատու, որին կարող
ենք մշտական թղթակցի տիտղոս հատկացնել: Դա Ռուսաստանի հայոց առաջ-
նորդ Հովսեփ արքեպ. Արղունյանն էր: Ինչպես հայտնի է, այս նշանավոր և
վերին աստիճանի փառատեր գործիչն իր քաղաքական և կրթական նպատակ-
ներին համար սերտ հարաբերություններ ուներ հնդկահայերի հետ, որոնց գրա-
մական օգնությունը նրա ծրագրերի մեջ կենտրոնական տեղ էր բռնում:
Հնդկահայերին մոտիկ ծանոթացնելու համար իր գործունեության հետ՝ նա
գրում էր երկար կոնդակներ, որոնց մեջ մանրամասն պատմում էր, թե ինչ
չնորհներ է արժանանում ինքը Եկատերինա 2 կայսրուհուց: Այդ կոնդակները
տպվում էին «Ազդարարի» մեջ, ուր զետեղվում էին և Արղունյանի կնիքի և
նրա միջոցով Գրիգորիսպոլ քաղաքին շնորհված գինանշանի նկարները: Քա-
ղաքական անկախության համար աշխատող Արղունյանը այդ կոնդակների մեջ
չէր երևում. այդտեղ նա արքունիքի գզվանքներից սաստիկ շողորորթված մի
մարդ է, որ ամենայն մանրամասնությամբ նկարագրում է այն հանդեսները,
որոնց ինքը մասնակից է եղել, այն պատիվները, որոնց իրան արժանացրել է
ուսուսաց կայսրուհին: Իր մի կոնդակի մեջ Արղունյանը խոսում է Ֆրանսիական
հեղափոխության մասին. խոսում է, իհարկե, մի պալատականի և հոգևորա-
կանի լեզվով, ներկայացնելով Լուդովիկոս XVI-ի գլխատումն իբրև անաստ-
վածների, խոզվարար ամբարիշտների մի ավազակային դործ:

Իսկ ի՞նչ էր ներկայացնում «Ազդարարը» իր գրական բաժնով: Ամսագրի
լեզուն գրաբարն էր, թեև հայ վաճառականները հաճախ իրանց նամակներով
ու հայտարարություններով մտցնում էին նրա մեջ Զուղայի գավառաբարբառը:
Խմբագիր Եմավոնյանը մի շատ խղճուկ գրաբարագիտության տեր էր. նրանից
լավ չէին, թեև պակաս էլ չէին, նրա վաճառական աշխատակիցները: Այդ
պատճառով «Ազդարարը» կարող ենք համարել գրական տեսակետից նույնքան
խակ մի գործ, ինչպես էր Շահամիրյանի գիրքը: Լեզվային տգիտությունը եր-
բեմն այնքան աղավաղում է հոգվածները, որ նրանք դառնում են անհասկա-
նալի: Ոչ միայն բարձր, այլև փոքր ի շատև զարգացած ճաշակի մասին խոսք
անգամ չէ կարող լինել: Եվ արդյոք պե՞տք է, կարելի՞ է այդպիսի ճաշակ որո-
նել այն միջավայրում, ուր ծնվում էր «Ազդարարը»:

Գրական նյութերի երկու տեսակն էլ, ինքնուրույն և թարգմանական, տեղ
են բռնել մեր անդրանիկ ամսագրի մեջ, ինքնուրույնները բացառապես պատ-
մական են: «Ազդարարը»՝ շնայած իր փոքրիկ ծավալին, տպագրեց երկու ըն-
դարձակ աշխատություններ. Առաջինն է շուղայեցի հաշատուր վարդապետի
«Պատմություն Պարսիցը», ուր պատմական փաստերից ավելի հեղինակի եր-
կարարան հոգեշահ խորհրդածություններն են կուտակված: Մասնավորապես
այդ աշխատությունը գնահատելի է նոր Զուղայի պատմության համար, քանի
որ մանրամասն կերպով նկարագրում է այդ հուշակավոր գյուղաքաղաքի անկ-
ման և քայքայման շրջանները: Երկրորդն է «Պատմություն Հեյդարալի Խանի»,
հեղինակություն շուղայեցի Հակոբ Այուբյանցի: Հեյդարալին հնդիկ մի «նա-
վար» էր, Սրբնգաթան քաղաքի մեծ սպարապետը, որ հայտնի էր և իբրև շատ
ճարտար բանաստեղծ: Հնդկաստան գնացած հայր իր այդ նոր հայրենիքի
պատմության հարցերով էր զբաղվում: Մենք արդեն հիշատակեցինք մի ուրի-

շին էլ՝ թուվմաս խոջամալյան: նույն նյութով պիտի տարվեր և մեր Քաղիադ-
յանը: Բայց Այուբյանցի գործի մեջ ամենահետաքրքրականը առաջաբանն է,
ուր հեղինակը դնում է մեր հին պատմագիրների ամբողջական ցուցակը, մի
հանգամանք, որ ցույց է տալիս, թե որքան շատ պիտի ուսումնասիրած լինեք
նա մեր հին ձեռագրերը:

Այս երկու ստվար գործերից հետո «Ազդարարի» գրական բաժնում պետք
է հիշատակել ոտանավոր գրվածքները, որոնք բավական մեծ տեղ են բռնում:
Գրանք միայն մի բան են ցույց տալիս՝ որ հնդկահայ վաճառականները նույն
խեղճ լեզվագիտական և գրական պաշարը: Եվ ինչ գրական կեղծանուններ էին
ընտրում այդ գրողները. «Բարեկամ», «Հայ որդի հայի», «Անուն Գիվական»,
«Մատանի շատեր» և այլն: Գալով թարգմանական բաժնին, այդտեղ էլ աղքատ-
ություն է տիրում: Թարգմանված է անպիտաններից մի գրվածք, որի մասին
զաղափար տալու համար բավական ենք համարում դնել այստեղ վերնագիրը.
«Ջէկ. պատմություն մանկան միտ, զոր գտյալ եղև իբր երկօրեայ ի ծերէ միտ,
զարգացաւ կաթամբ Այծոյ, աշխատեցաւ անօգնական, և ի վախճանի եգիտ
զմխիթարութիւն կարողութեան օգնական լինել աղքատաց»:

Մնում է մեզ որոնել մի այլ պարբերական մամուլին հատուկ հանգա-
մանք և՛ հրապարակախոսություն: Կա՞ր այդ բանը «Ազդարարի» մեջ: Ինչպես
և բնական էր, այդ հյուրը բնավ զարգացած չէր մեր առաջին ամսագրում:
Բայց մենք տեսնում ենք նրա նախնական, սաղմնային վիճակը, այն, որ իսկա-
պես կարող էր սկիզբ դառնալ: Օրվա որոշ հարցերին որոշ հողվածներ չկան
նվիրված, բայց մենք տեսնում ենք բավական ուժեղ շեշտված Բաղրամյանի և
Շահամիրյանի հրապարակախոսական ձևը՝ դժգոհություն ընդհանուր ազգային
գրությունից: Հիշատակված է համայնական շարիքը, որ հանրային դժբախտու-
թյան պատճառ է: Այսպես, մի փոքրիկ տեսություն մեջ հայ ազգի գրությունը
ներկայացվում է մոայլ գույներով: Միայն վաճառականությունն էր, — ասում
է հողվածը, — որի մեջ հայն առաջադիմում էր, բայց եթե մենք մոտիկուց նա-
յենք վաճառականութեան, կտեսնենք միայն անուն, կտեսնենք մի գործ, զուրկ
եկամուտներից: Այնուհետև ի՞նչ է մնում: Ամբողջ ազգը թաղված է տգիտու-
թյան մեջ, տառապում է: Օտարները ծաղրի առարկա են դարձրել մեզ, իսկ
նրանց մեջ ուսումը փայլում է պայծառ ջահի պես: Փոխանակ հարստանալուց
հետո բարության ձգտելով՝ հայն անձնատուր է լինում աշխարհի ունայնու-
թյուններին: «Ով Հայկ՝ սկիզբ և հեղինակ ազգիս մերո հայկազանս, — բացա-
կանչում է հողվածի հեղինակը, — եթե հնար իցեր չառնելն քոյ յայսմիկ դարո
տեսանել հետևողաց քոց՝ հաւատամք քաջութիւնդ ամենայնի սպառազինյալ,
ոչ բաւեր ընդդիմանալդ տգիտութեան փոխանակ քաջին Բելայ, զոր տիրեալ
կայ մեզ»: Եվ անճար ողբացողը գտնում էր, որ մնում է միայն արտասուքներով
բողոքել Աստծուն այս դժբախտության դեմ:

Այս ազադակը խոսեցնել է տալիս մի ուրիշին, որ մի ընդարձակ հողվածի
մեջ օրինակներ է բերում Հոռմի պատմությունից և խիստ քննադատում է ազ-
գային ընդհանուր պակասությունները: Ամենագլխավորը՝ համայնական զգաց-
մունքի բացակայությունն է: Միասին հավաքել, ընդհանուր ուժերով գործել՝
հայր չգիտե: Չորս հարյուր տարի է, ինչ իջնում ենք մեր փառքից և այսքան
ժամանակ չեղավ մի այնպիսի միջոց, երբ այնքան արիանայինք, որ գոնե հե-
ռացնեինք քարերն այդ ճանապարհից, որպեսզի մեզ հետևողները հանգիստ
իջնեին: Ամեն մեկն իր համար է ապրում: Բայց մի ձեռքը ծափ չի տա. պետք

է այնպես լինի, որ անհատները մի մարմնի անդամներ կազմեն և ամեն մեկը
գործն ամենքի հետ և ամենքի համար: Այս համայնական գործակցությունը
մեր մեջ նախանձ կհարուցանե ուրիշ ազգերի հետ համեմատելու և մեզ կտա-
նե դեպի փառքի և ազատության ցանկություն: Իսկ անհատականության, ան-
միաբանության մատնված մի ժողովրդի ինչպես կարելի պիտի լինի քարոզել,
թե դարոցներ բացեք, կամ գնացեք ձեր երկիրը, ուր և սկսենք տիրել և կառա-
վարել: Այդ ոք չի հավատա, որովհետև ամեն մեկը միայն իրան է հավատում,
իրան է լսում: Հարկավոր է, որ ամեն մեկը քննե իր պակասությունները, իմա-
նա, թե ինչ հետևանքների է հասնում բարձրամտությունը: Հասարակական գա-
ղափարի արժարժումը հեղինակը պահանջում էր հայ երիտասարդությունից:
Ծերությունն անց է կացրել իր օրերը, պետք է, որ երիտասարդ սերունդը ոտքի
կանգնե և առաջնորդն ժողովուրդը: Բոլոր ազգերի մեջ վերածնությունը երի-
տասարդության շանքերով է առաջ տարվում:

Ահա որքան մեծ և լուսատու երևույթ էր XVIII դարի հայ մտավորականու-
թյան մեջ Մադրասի այս խեղճ, ներսից ու դրսից աղքատ ամսագիրը: Հրա-
պարակական խոսքը, թեև դեռ նախնական, դեռ ընդհանուր բառերով կերա-
կրվող, սկսում էր արթնացնել միտքը, անբավականություն, գանգատ հարու-
ցանել հասարակության մեջ տիրող անկարգությունների վերաբերմամբ: Վե-
րածնունդ... Ահա՛ ինչ էր պահանջվում ազգային փրկության համար: Այս գա-
ղափարի շուրջն են այնուհետև բոլորվում հայկական շարժումները:

Բայց նկատենք և այն, որ հրապարակախոսությունը դեռ չափազանց պա-
տահական երևույթ է պարբերական մամուլի մեջ: «Ազդարարը», չնայած այս
փայլուն կետերին, գերազանցորեն պահպանում էր պատահական նյութերի մի
ժողովածուի կերպարանքը: Այս կողմից նա համարյա հիսուն տարի մեր պար-
բերական հարատարակությունների նախատիպն է հանդիսանում: Մա մեր պար-
բերական մամուլի առաջին շրջանն էր, երբ մեզանում տիրում էր ժողովածու-
ների տիպը, որ բացասում է մի ուղղության սկզբունքը: Իսկական հրապարա-
կախոսությունը դեռ հետո պիտի հետևեր այս խրատական-խորհրդածական
աշխարհայացքին:

Նշանակենք այստեղ և մի այլ նշանավոր հանգամանք: Ղուկաս կաթողի-
կոսը, ստանալով Շահամիրյանի հանրապետական գաղափարները ներկայաց-
նող «Որոգայթ փառացը» և նրա առաջարկությունը, որ այդ ուղղությամբ էլ
վարվեն հայոց ազատագրական ջանքերը, պատասխանում էր նրան, որ եթե
նա, օրհնյալը, կարողանար գալ Հայաստան, տեսնել հայ ժողովրդի գրությունը,
պիտի ամենից առաջ ինքը թողներ իր մտքերը իբրև միանգամայն անգործա-
ղելի: Այս՝ հայ իրականության ուժեղ ձայնն էր: Բուն հայրենիքը, բուն հայ
ժողովուրդը այնպիսի գրության մեջ չէին, որ կարողանային կարգալ և հասկա-
նալ: Նրանց վրա ամեն տեղ բռնացած էր արյունարրու և գաղանային մի ու-
ժիմ: Բայց այս չէր նշանակում, թե դժբախտ, անասնական գրության հասցրած
ուայեայի համար չպետք է ոչինչ գրել, երբեք գրել: Նրա համար հարկավոր էր,
կյանքի և մահվան նշանակություն ունեցող փրկարար խոսքը: Եվ այդ խոսքը նրա
համար պիտի պողպատի տոկունությամբ դարբնվեր հեռավոր հայ գաղութնե-
րում: Ուրիշ միջոց չկար: Եվ մեր կյանքը՝ վերահասու եղած այդ ճակատագրին՝
ամենայն թափով դնում էր այդ ուղղությամբ: Մեռնում էր մտավոր կյանքը
մայր հայրենիքում, որպեսզի հետզհետե ավելի և ավելի ուժեղանար հայ գա-
ղութների գործունեությունն ու ղեկավարող դերը: Գաղութային հայ կուլտու-
րայի խոշոր օջախներից մեկը դառնում է Հնդկաստանը:

Մի քանի խոսք էլ ասենք մեր անդրանիկ ամսագրի արտաքին տեսքի մա-

սին: նա բավական աղքատ է: Տպարանական պայմանները առհասարակ խեղճ դրուժյան մեջ էին: Հնդկաստանում: Բայց և այնպես, Շմավոնյան քահանայան ուշինչ չէ խնայել իր տետրակները գեղեցկացնելու համար: Պատահում ենք տանաւորների, որոնք տպագրված են դունավոր թանաքով, բայց ավելի ուշագրավ են ամսագրի պատկերները, որոնք պատրաստվում էին հատուկ հանձնարարութեամբ, ինչպես ցույց են տալիս մի պատկերի անկյունում փորագրված «Վասն Ազգարարի» խոսքերը: Օղապարիկ գնդի մի շատ հաջող փորագրություն, արտանկարված Վենետիկի Մխիթարյանների հրատարակած մի գրքից, պատրաստել է պղնձի վրա աստրախանցի մի հայ՝ Կոստանդ Քաղեոս անունով:

«Ազգարարը» անընդհատ հրատարակվելով 18 ամիս, դադարեց 1796 թ. մարտին: Այնուհետև՝ XIX դարի սկզբում հրատարակվեցին Հնդկաստանում երկու պարբերականներ. մեկը Բումբայում՝ «Յճանասփոխան» անունով, մյուսը՝ Կալկաթայում՝ «Շտեմարան» անունով: Բայց այս հրատարակությունները միայն իրանց անուններն են թողել և իրանց բովանդակությամբ միանգամայն անծանոթ են: Հայտնի է միայն, որ նրանց կյանքը չափազանց կարճատև է եղել:

Նույն դարի առաջին տասնամյակում մեր ուշադրությունն է գրավում դարձյալ Մադրասում նույն Շմավոնյանի տպարանում տպված մի գիրք, որի անունն է «Բեկիսարիտոս», հեղինակություն ֆրանսիացի Մարմանտելի: Այս գործը հետաքրքրություն է գրավում երկու պատճառով: Նախ՝ որ նրա հրատարակիչն է Սամուել Մուրատը՝ հայտնի խոշոր բարեգործը: Նա գրել է մի փոքրիկ առաջաբան, որի մեջ ասում է, թե վաղուց աշխատում էր հայերի համար լավ գրքեր հրատարակել և հատկապես այդ նպատակով էլ սովորեց անգլիական լեզուն: Ընտրելով «Բեկիսարիտոսը» նա ինքը չթարգմանեց այդ աշխատությունը, այլ թարգմանել տվեց մի հայ կաթոլիկ վարդապետի և, որովհետև ինքը առևտրական գործերով զբույս էր Չինաստան, հանձնեց էդուարդ Ռափայելյանին, որ հետո իր աները դարձավ, հրատարակել այդ գիրքը ի հիշատակ իր ծնողների, եթե իրան վիճակված կլինի մեռնել այդ ճանապարհորդության միջոցին: Այս եզակի սերը դեպի հայ գիրքը բնորոշում է այն մարդուն, որ 2 միլիոն ֆրանկ կտակեց՝ նվիրապատելով հայ շքավոր երեխաների համար մի լավ դպրոց բաց անելու համար՝ մի գեղեցիկ միտք, որ, գծրախտաբար, գոսացավ կաթոլիկ կղերականության խեղդուկ շրջանում: Երկրորդ հանգամանքը, որ բնորոշ է XIX դարի հնդկահայ հրատարակությունների համար, այն է, որ այլևս անգրագիտություն չէ երևում նրա մեջ: Թարգմանությունը կատարված է հմուտ հայերենագետի ձեռքով:

Կարելի է ասել, որ այս հրատարակությամբ բացվում է երկրորդ շրջանը հնդկահայ գրականության մեջ: Առաջին սերունդը, որի տիպիկ ներկայացուցիչներն են Շահամիրյանն ու Շմավոնյանը, անհայտանում է: Հնդկահայ վաճառականությունը դպրոցական շարժում է առաջ բերում իր մեջ: Մտավոր կյանքի գլխավոր կենտրոնը տեղափոխվում է Կալկաթա: Այդտեղ Հովհաննես Գուլուցյան անունով մի բերիացի հայ, որ ուսում էր առել Հնդկաստանի մի անգլիական դպրոցում, XVIII դարի վերջերում բաց է անում իր սեփական դպրոցը, որ գոյություն է պահպանում ամբողջ 25 տարի և բազմաթիվ հայագետ աշակերտներ է պատրաստում: Իսկ 1821 թվականին Մնացական Վարդան վաճառականի առատ ձեռնավորությամբ բացվում է հնդկահայերի առաջին բարեկարգ ազգային դպրոցը, որ ստանում է «Մարդասիրական ճեմարան» անունը:

Այս կրթական հաստատությունը, որ նշանակված էր 120 հայ երեխաների

համար, հնդկահայերի առանձին համակրանքին է արժանանում և դրամական կողմից ապահովվում է տեղացի հայ հարուստների նվիրաբերություններով: Մարդասիրական ճեմարանը գոյություն ունի և այսօր: Իր կյանքի առաջին շրջանում նա կատարել է ազգային խոշոր գործունի գեր և ամենից առաջ արել է այն, որ իր շուրջն է կենտրոնացրել հնդկահայ գրականությունը: Գուլուցյանի ընդունակ աշակերտներից մեկը, Հովհաննես Ավդալյանը, հանդիսանում է իրեն աշխի ընկնող մատենագիր և հայկաբան վարժապետ և արդյունավորում է իր այս պաշտոնը, 1825-ից ուսուցիչ և տեսուչ կարգվելով Մարդասիրական ճեմարանում:

Այս ժամանակ էլ հնդկահայ հորիզոնում երևաց Մեսրոպ Թաղիադյանը:

Դյուխ ԵՐԵՎԱ

ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԸՅՄԱՐԱՆՈՒՄ: Հնդկաստան ճանապարհվելով, ինչպես տեսանք, 1823-ի գարնանը, Թաղիադյանը տանում էր իր հետ կաթոլիկոսական մի քանի հանձնարարություններ, որոնց կատարելու համար նա ճանապարհին կանգ էր առնում տեղական հոգևոր վարչությունների դյուխ կանոնադրության մոտ, տեղեկություններ էր հավաքում և հաղորդում էջմիածին: Գոնես այսպես է ցույց տալիս նրա մի երկար գրությունը, որի մեջ նա մանրամասն տեղեկություններ է տալիս Հնդկաստանում տեղի ունեցած մի ինչ-որ քահանայական ձեռնարկության մասին: Այդ տեղեկություններն սկսվում են նոր-Ջուղայից: Այդտեղից Թաղիադյանն անցնում է Բուշիս, Բումբա և ապա Կալկաթա: Ճանապարհորդությունը կապված էր մեծամեծ նեղությունների հետ:

Երկար կանգ չառնելով Կալկաթայում, Թաղիադյանը գնաց Դաքա, ուր գտնվում էր էջմիածնի նվիրակ Պողոս եպիսկոպոսը: Այնտեղ էր և Աբրահամ վարդապետ Բյուրականցին, որ Երուսաղեմի հայոց պատրիարքի կողմից էր նվիրակության պաշտոն կատարում: Թաղիադյանը առանձին մտերմությամբ կապվեց Աբրահամ վարդապետի հետ և նույնիսկ նրա սարկավազը դարձավ, թեև էջմիածնի միաբան էր: Երկու նվիրակները Դաքայում մնում էին այն պատճառով, որ այդտեղ վախճանված Հարություն Միքայելյանի կին Մարիամ Խաթունը չէր համաձայնվում կատարել իր ամուսնու կտակը, որ հետո կեղծ դուրս եկավ: Մինչդեռ նրանք սպասում էին այդ խնդրի լուծման: Դաքայի բրիտանական եկեղեցիներին այցելության գնաց Կալկաթայի անգլիական եպիսկոպոս Ռիչինալդ Հեբբը կամ Եբբը, մի լուսամիտ և բրիտանական բարձր գաղափարներով տոգորված կրոնավոր, որ Թաղիադյանի կյանքի վրա մեծ ազդեցություն պիտի գործեր: Երկու հայ հոգևորականների և նրա միջև սկսվեցին հարաբերություններ, որոնք գնալով սերտ բարեկամական կերպարանք ստացան: Առանձնապես Երուսաղեմի նվիրակ վարդապետն էր, որ մոտեցավ Ռիչինալդ Հեբբին:

1824 թվին Աբրահամ վարդապետը, կորցնելով իր հույսը Մարիամ Խաթունի հետ որևէ համաձայնություն կայացնելու մասին, տեղափոխվում է Կալկաթա՝ Թաղիադյանի հետ: Այստեղից վարդապետը նվիրակության պաշտոնով գնում է հնդկական ուրիշ հայաբնակ քաղաքներ, իսկ Թաղիադյանը ուսուցչության պաշտոն է ստանում տեղական հայոց Մարդասիրական ճեմարանում:

Այս դպրոցը, ինչպես հիշատակեցինք, բացված էր 1821 թվականին Կալ-

կաթայի հայ հասարակութեան համալսարանի օժանդակութեամբ: Պրամագլիսի հիմք դարձան դեռ XVIII դարի վերջում կտակներով թողնված երկու փոքրիկ գումարներ (11 հազար ուսի): Այս երկու կտակողներն էլ, Աստվածատուր Մուրատխանյան և Մնացական Վարդանյան, համարվեցին հիմնադիրներ: 1820 թվականից Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցին սկսեց տարեկան 1500 ուսի օժանդակություն տալ և այս միջոցներով էլ դպրոցը գոյություն էր պահպանում, սկզբում, իհարկե, համեստ չափերով, մինչև որ հետզհետե դպրոցական դրամագլուխը մեծացավ գանազան անհատների նվերներով, որոնց մեջ կային և խոշոր գումարներ (30—35 հազար ուսի): Այն ժամանակ, երբ Քաղիադանը ուսուցչություն հանձն առավ, Մարդասիրական ճեմարանն ընդարձակվեց, որովհետև նրան միացվեց Հարություն Գալուցյանի դպրոցը, որի մասին մենք խոսեցինք անցյալ գլխի վերջում:

Կրթական այս հաստատությունը, որ հնդկահայերը հիմնել էին իրանց ազգային դեմքը անգլա-հայկական այդ միջավայրում պահպանելու համար, ամենից շատ ուշադրություն դարձնում էր հայերենի վրա, և մենք տեսնում ենք նրա մեջ հայոց լեզվի երեք ուսուցիչ, այնուհետև գալիս էր անգլիերենը՝ երկու ուսուցչով: Ավանդվում էր և տեղական լեզուն, բենգալիերենը, որ ուներ մի ուսուցիչ: Չնայած իր համեստ դիրքին և աննպաստ շրջապատին, Մարդասիրական ճեմարանը շատ երախտիք ուներ Հնդկաստանի և մասնավորապես նոր Զուլայի հայերի վրա, քանի որ պատրաստել է շատ հայագետ աշակերտներ, որոնցից ոմանք նույնիսկ արդյունավոր են հանդիսացել գրականության մեջ: Ճեմարանը աշակերտներ դրավում էր մասնավորապես նոր Զուլայից և դա՛ շնորհիվ այն հանգամանքի, որ բարեկարգ և արդյունաշատ դպրոցի հոշակ էր ստացել նաև հեռավոր վայրերում: Իսկ այդ բարեկարգության գլխավոր հեղինակն էր ճեմարանի տեսուչ Հովհաննես Ավդալյանը, որ հնդկահայ միջավայրից տեղական միջոցներով առաջացած խոշորագույն դեմքն էր, մեկը մեր այն պատկառելի վաստակավորներից, որոնք մանկավարժի հմտությունը միացրել են գրողի ընդունակության հետ: Ավդալյանը, ինչպես տեսանք, Գալուցյանի աշակերտն էր, բայց ստացել էր և անգլիական դաստիարակություն: Մարդասիրական ճեմարանում նա ուսուցչություն արավ մոտ 40 տարի, միաժամանակ և պարապում էր գրականությամբ, մշակելով գլխավորապես թարգմանական ճյուղը: Այսպես, նա հայերենից անգլիերեն թարգմանեց Չամչյանի «Հայոց պատմությունը» իսկ անգլիերենից հայերենի վերածեց մի շարք գործեր (օր. «Անգլիացի անպետ», «Քրիստոսոստոյց», «Ատալա» Շատոբրիանի և այլն): Այս բոլոր աշխատությունները գրաբար լեզվով են և վկայում են, թե Ավդալյանը որքան բարձր հմտություն ուներ հայկական լեզվագիտության մեջ, մի երևույթ, որ Գալուցյանի դպրոցն էր հաստատել հնդկահայերի մեջ և որ առհասարակ հնդկահայ վաճառականության կյանքում շատ խոշոր դեր կատարեց, գոնե, XIX դարի առաջին կեսում: Հայերենագիտության այդ ծաղկած ատիճանին ենք պարտական այն հանգամանքը, որ Հնդկաստանում դաստիարակություն ստացած հայ վաճառականները շատ վարժ գրագետներ էին գրաբար լեզվով և մեր այս հին լեզուն պահպանեցին գրագրությունների մեջ մինչև համարյա մեր օրերը:

Այսպես էր այդ դպրոցական հաստատությունը, որ ուսուցչի պաշտոնով մտնում էր և Քաղիադանը, հայերենագիտության մեջ նույնպես լավ պատ-

¹ «Ազգասեր» շաբաթաթերթ, 1846, № 69:

րաստված մի ույժ, որ, անշուշտ, ավելի ևս պիտի բարձրացներ դպրոցի հայկաբանական համբավը: Բայց Քաղիադանին չէր վիճակված երկար մնալու իր այդ պաշտոնի մեջ: Բարեհաջող դեպքից օգուտ քաղելով, նա թողնում է ուսուցչությունը, որպեսզի նորից աշակերտ դառնա և լրացնե այդպիսով իր վաղեմի բաղձանքը գիտություն ստանալու, լուսավոր մարդկության հաղորդակից գտնալու բաղձանքը:

Այս բարեհաջող դեպքը Քաղիադանը մանրամասնորեն նկարագրել է «Պաղեստին» քերթվածի թարգմանության մեջ, որ նա կատարել է անգլիերենից և որ տպված է Կալկաթայում 1830-ին և մի՛ ղեռ անտիպ փոքրիկ ձեռագիր աշխատության մեջ, որի վերնագիրն է. «Պատմություն Ռիչինալդ Հեբբ սրբազան եպիսկոպոսի Անգլիացուց, ընդհանուր վերատեսչին Հնդկաստանեաց: Ուր և յաղագս ծանօթանալու նմա սրբազան Պողոս եպիսկոպոսին էջմիածնի և սրբազան Աբրահամ վարդապետ ծայրագույն նվիրակին սրբոսրուսաղեմի»: Այս ձեռագրի մեջ շատ հետաքրքրական հանգամանքներ կան, որոնք պակասում են տպագրի մեջ, ուստի և մենք աղբյուր կառնենք ձեռագիրը:

Աբրահամ վարդապետը, նվիրակությունից վերադառնալով Կալկաթա, հորդորում է Քաղիադանին, որ իր հետ գնա Երուսաղեմ՝ այնտեղի վանքում մնալու համար: Նա համաձայնություն է տալիս: Եվ էջմիածնի մոտ թե անշուշտ կերթար իր կյանքը Երուսաղեմի խուցերում թաղելու, եթե չլիներ Ռիչինալդ Հեբբ եպիսկոպոսը: Քաղիադանը մեծ ոգևորությամբ է նկարագրում այս հոգևորականին: Բայց եթե հեռացնենք այս նկարագրությունից բարերարվածի ղգացմունքը և թողնենք եպիսկոպոսի գործերը, կունենանք մեր առջև մի լայնախոհ անգլիացի, որ, հարազատ զավակը լինելով աշխարհը խելքով և իմաստությամբ կառավարող իր մեծ ազգի, աչքի էր ընկնում իր համեստ և սիրալիր բնավորությամբ, որ տոգորված էր օտարներին սիրով ու հարգանքով վերաբերվելու անխարդախ պատրաստականությամբ. նա այցելում է հայոց եկեղեցին ժամերգության միջոցին և մեծարվում է Աբրահամ վարդապետից: Իբրև փոխարինություն եպիսկոպոսը հրավիրում է հայ վարդապետին իր եկեղեցին, որ հանդիսավոր արարողությամբ քահանաներ էր ձեռնադրում: Այս արարողության ժամանակ Ռիչինալդ Հեբբը Աբրահամ վարդապետին նստեցնում է աթոռի վրա իր մոտ սեղանում, իսկ երբ գալիս է այն տեղը, ուր նա պիտի ձեռք դներ նորընծաների գլխին, հայ վարդապետին խնդրում է, որ նա էլ իր ձեռքը դնե և օրհնե քահանայացուներին: Այս եզակի երևույթը անհասկանալի է թողնում Կալկաթայի հայ գաղութի վրա: Քաղիադանը գրում է. «Ես երկրքին ի միասին եղեալ ձեռս՝ ըստ յուրաքանչիւր լեզվի մին հայ և միս անգլիերէն առանձին զաղթս զայս (ասեր). «Ես դնեմ զձեռս» և այլն, ընդ որ բոլոր աշխարհ զարմացավ, զոր բովանդակ Կալկաթու հայքն առհասարակ գրեն այսպես. «Յայտնի է յարգության ձեռում, որ յարգոյապատի եպիսկոպոսն Անգլիոս հրաւիրեալ զծայրագույն Աբրահամ վարդապետ սրբոյ Սաղիմա, պատմեալ զնա հրապարակաւ... անգր քան զակնկալութիւն մեր»: Եպիսկոպոսին փոխադարձաբար պատմելու համար, Աբրահամ վարդապետը հայ հասարակության խնդրանքով պատարագ է մատուցանում Ս. Նազարեթ եկեղեցում և հատկապես հրավիրված եպիսկոպոսի համար աթոռ է դնվում սեղանում, պատարագի մոտ, բայց նա չէ նստում, այլ ամբողջ ժամանակ շոքած աղոթում է և այսպիսով ավելի մեծ հիացմունք պատճառում հայերին:

¹ Այս ժամանակ Մարդասիրական ճեմարանի աշակերտ էր և Մկրտիչ Էմինը, որ հետո տեղափոխվեց Ռուսաստան և դարձավ հայտնի հայագետ:

Ահա այս անցուդարձը ներշնչում է Քաղիադյանին մի համարձակ միտք՝ խնդրել Ռիչինալդ Հեբբին, որ իրան ընդունե Կալիֆայի անդլիական բարձրագույն հոգևոր դպրոցում, որի անունն էր Եպիսկոպոսական ճեմարան (կոլեջ)։ Աբրահամ վարդապետը հաճությամբ հանձն է անունում խնդրելու իր բարեկամ սարկավազի համար և վերցնելով նրան, գնում է եպիսկոպոսի մոտ։ Այս պատմությունն անելով, Քաղիադյանը գրում է.

Կարի իմաստուն առած է նախնեաց,
Ին մարդո մարդով միայն լինի մարդ.
Բանդի և գոհար և մետաղ հանքաց,
Անփորձ ի մարդո ոչ շողան ի դարդ։

Եվ իրավ, դորձը շտկվում է, չնայած շատ դժվարություններով։ Աբրահամ վարդապետն ասում է, թե Երուսաղեմ ճանապարհորդներ շատ են գնում, մանավանդ անգլիացիներ. բայց նրանց ընդունելության ժամանակ հայոց վանքը շատ նեղություններ է կրում, որովհետև միաբանություն մեջ անդլիերեն իմացող չկա։ Այս պատճառով ահա նա խնդրում է, որ սարկավազ Քաղիադյանը ընդունվի Եպիսկոպոսական ճեմարանի մեջ՝ անգլիերեն սովորելու համար, որպեսզի այսպիսով Երուսաղեմի հայոց միաբանությունը ազատվի մի մեծ անհարմարությունից։ Հայ վարդապետն ավելացնում է և այն, թե ինքը պատրաստ է հոգալու սարկավազի բոլոր ծախսերը, որքան ժամանակ նա կմնա ճեմարանում։ Եպիսկոպոսը վերցնում է ճեմարանի կանոնադրությունը և երկար մտածելուց հետո հայտնում է վարդապետին, թե սարկավազի տարիները չեն թույլ տալիս, որ նա աշակերտ մտնե ճեմարան. բայց ինքը կընդունե նրան ոչ իբրև աշակերտ, այլ իբրև «գործ մտերիմ սիրելի», իսկ բոլոր ծախսերը կհոգա ինքը։ Վարդապետը ջերմապին շնորհակալություն է հայտնում, իսկ Քաղիադյանը, որ փոքր ինչ արդեն սովորել էր անգլիերեն, գրում էր մի թղթի վրա՝ ոչ, իհարկե, առանց սխալների, հետևյալը. «Տեր իմ, աղաչեմ դտերութիւն ձեր զի ընկալցի զխոնարհ շնորհակալութիւնս իմ հաղագս ընդունելո զիս ի ձեր մեծակառուցց Համալսարանն»։

Այնուհետև խոսակցության միջոցին բացվեց, որ անգլիացի լուսամիտ եպիսկոպոսը մտածում է և ուրիշ գործերով օգտակար լինել հայոց ազգին։ «Յաւել խոստանալ նորին սրբազնութիւնն,— գրում է Քաղիադյանը,— իբր թե ունի հայոց տպարան ածել այսր. և նվիրակն մեր խոստացաւ առաքել զբաղում հատորս հին գրչեայ գրչանց, զի տպեսցի աստ յօգուտ Ազգիս»։ Ռիչինալդ Հեբբը եպիսկոպոսի քաղաքականությունը, որ և ամբողջ Անգլիայի քաղաքականությունն էր իրան ենթարկված բոլոր օտար ազգերի վերաբերմամբ, Քաղիադյանը ճշտորեն բնորոշում է հետևյալ քառյակով.

Որով և ազգացս երկարանչիրոց՝ մի հոգի մի բան
Յոր ազբերանայր՝ ի պահել նոցա՝ սիրոյն պատուիրան,
Մ'չ անգլիանալ և ոչ հայանալ՝ ուր ոչն էր արժան,
Բայց ընտանանալ սիրով հաւատոյս աստուածազատութեան։

Այսպես էր, այո, անգլիական իրականության տրամաբանությունը։ Բայց ընտանեցումը հենց այն միջավայրն էր, ուր անգլիական կուլտուրան խնդրում էր իրանից ցած և թույլ աժեն մի կուլտուրա և կլանում էր նրան։ Այս ճանապարհով էր գնում և հնդկահայ գաղթականությունը։

Քաղիադյանը Մարգասիրական ճեմարանի վարչությանը թուղթ էր գրել,

որ իր ոռճիկն ավելացնեն, բայց պատասխան չէր ստանում։ Միայն այն ժամանակ, երբ հայտնի դարձավ ամենքին, թե նա ընդունված է եպիսկոպոսական ճեմարանում, հոգաբարձուները ժողով արին և ավելացրին նրա ոռճիկը, որպեսզի այդպիսով պահեն նրան ուսուցչական պաշտոնի մեջ։ Սակայն, գրում է Քաղիադյանը, «ինձ, որ փափագելի էին գանձք իմաստութեան, ի բաց թողչալ զայն, զհետ պնդեցայ այնձ, զոր սիրեաց անձն։ Կայայց և ոչ թողից զնա, մինչև ածից ի տուն մոր իմոյ և ի սենեակ յգացելոյն զիս, ի սուրբ էջմիածինն»։ Բարձր եվրոպական ուսում ստանալ և տանել այն ամենայն հայոց մտավոր կենտրոն էջմիածին — այս է ահա հայություն ժողովրդի դուրս եկած առաջին հայրենասեր որոնողի բաղձանքը։ Միևնույն վառ ցանկությունը նույն այդ միջոցին նստած էր և մի ուրիշ մեծ որոնողի, հաշատուր Աբովյանի սրտում։ Բայց նրան դեռ ուշ պիտի հաջողվեր մտնել եվրոպական լուսավորության գիրկը։ Իսկ Քաղիադյանը արձանագրել է իր կյանքի համար այն վերին աստիճանի կարևոր վայրկյանը, որ մտցնում էր նրան անգլիական հոգևոր դպրոցի հարկի տակ։ «Եւ եղև,— գրում է նա,— փոխադրումն իմ ի ճեմարանէն Հայոց, յորում դաստիարակէի, ի Համալսարանս, յորում դաստիարակիմս, 1826, փետրվարի 12, յաւուր կիրակելիս»։

Այս թվերը միայն Քաղիադյանի կենսագրության համար չեն կարևոր, այլ և նշանակելի երևույթներ պիտի համարվեն թե Հնդկաստանի հայ գաղութի պատմության և թե մասնավորապես նաև հայոց գրականության պատմության համար։ էջմիածնի տիրացուն բարձրանում էր մինչև անգլիական եկեղեցականության կրթարանի մեջ սովորողի աստիճանը։ Աշխարհահայացքի տեսակետից այն մի համարձակ թափը չէր. Քաղիադյանը Եպիսկոպոսական ճեմարանում էլ պիտի ստանար կրոնական կրթություն և այդ կրթությամբ էլ տոգորված պիտի դուրս գար կյանքի մեջ գործելու համար։ Բայց որ դրանով Քաղիադյանը բարձրանում էր էջմիածնական նեղ ու դժգույն հորիզոնից, կանգնում էր այնպիսի գիրքի վրա, որ նրան տալիս էր համաշխարհային մտքին հազորակից լինելու լայն հնարավորություններ՝ ահա այս էր անուրանալին, այս էր կարեվորը հայկական իրականության տեսակետից։ Անգլիական դպրոցում էջմիածնի մոնթը մնաց մոտ շորս տարի և բացի անգլիական լեզվից, սովորեց նաև լատին, հույն լեզուները, մասնավորապես և պարսկերենը։ Նշանակում է, թե նա այդպիսով մուտք է ստանում աշխարհի մեծագույն գրականություններից մի քանիսի մեջ։ Եվ որովհետև նրա մեջ արդեն խոսում էր գրական մարդու անկասկածելի տաղանդը, հասկանալի է ըստ ինքյան, թե որքան բարերար պիտի լիներ նրա համար հանրամարդկային մտքի այն մկրտարանը, որի մեջ նրան ընկղմել էին նրա կրակոտ որոնումները։ Եվրոպական դաստիարակությունը վերակազմում է խավար ասիականության զավակին, դարձնում է նրան կրթված, լավատեղյակ, ինտելիգենտ մարդ։

Քաղիադյանի ճեմարանական կյանքից մի քանի տեղեկություններ հաղորդում է միայն վերոհիշյալ ձեռագիր աղբյուրը, որից օգտվում ենք մենք։ Նրա բարերար Ռիչինալդ Հեբբը եպիսկոպոսը գնում է այցելելու Մադրասի և նրա գավառի եկեղեցիները, բայց այդտեղ վախճանվում է։ Լսելով այս տխուր լուրը, Քաղիադյանը, որին ինչպես ինքն է ասում, օտարությունը սովորեցրել էր գործնական լինել, դիմում է ճեմարանի տեսուչ «Սրբազան Տեր» Միլսին և հարց է դնում, որ և թե իր բարերար եպիսկոպոսի մահը պիտի որևէ փոփոխություն մտցնե իր վիճակի մեջ, այդ մասին վաղորոք հայտարարվի իրան։ Սակայն վախճանվածի հեղինակությունն ու հիշատակը չափազանց թանկ էր անգլիացիների մեջ, և Քաղիադյանը, իբրև նրա ինամքին արժանացած մեկը, որևէ

զրկանքի չէ ենթարկվում: Վերատեսուչ Միլսը բոլոր հանգամանքներն մասին գրում է Լոնդոն, Քենտըբրիի եպիսկոպոսին, որ անգլիական եկեղեցու գլխին էր: Սա կարգադրում է, որ կատարվեն Ռիչինալդ եպիսկոպոսի բոլոր մտադրությունները հայերի վերաբերմամբ, այսինքն՝ որ ոչ միայն Քաղիադյանը թողակ ստանա Կալկաթայի եպիսկոպոսական գանձարկղից, այլ որ այնուհետև էլ նրա նման երկու սարկավագ ընդունվեն ճեմարան՝ ձրի ուսում ստանալու համար: Բացի դրանից հանձնարարվում է բաց անել, համաձայն հանգուցյալի ցանկության, հայկական բաժին եպիսկոպոսական ճեմարանի տպարանում, և այս բանը հանձնվում է Քաղիադյանին, որ բանակցություններ է սկսում Վենետիկի Միսիթարյանների հետ թի ձեռն Բոննօֆի գաղիացի մեծանուն բարեկամին մերոյ՝ տառեր ստանալու մասին:

Իսկ գալով իր պարապմունքներին, Քաղիադյանը գրում էր հետևյալը. «Իսկ ի ներկայես ինքն ամենայն ուրախութեամբ և երջանկութեամբ կամ ի եպիսկոպոսական Համալսարանիս այսմիկ, և ուսանիմ Անգլիական և Լատին, շնորհօք Հոգւոյն Սրբոյ ահաւասիկ հինգ ամիս, յորմէ հետէ կկի ես աստ, բայց գրիչ իմ վստահ խաղայ ի թարգմանութիւնս Անգլիական լեզվի, ընդ որս և Լատինականին: Բայց սոյն Լատին, գոլով փոքր մի ծանր, յետս ձգեաց զիս մինչ ցարդ ի Հելլէն դպրութենէն, մանավանդ օղն տարծան ոչ ներէ ինձ արարատեան աշխատութեամբ վաստակիլ ի Հնդկաստան: Յույս ունիմ ի գալ ձմեռնամտին և յայն ևս ձեռն արկանել աղոթիւք ձերովք: Ընդ այսոցիկ գրաւորական մակացութեանց սկսեալ եմ ուսանիլ նաև զնոր իմն արհեստ, որ կոչի Litto-graphy, այսինքն լիտոգրաֆի, որ է եղանակ քիմիական տպագրութեան, առ օրին կարող եմ այնու աւել քան շորս հարիւր փոքրիկ կոնդակս տպել հանդերձ ծաղկօք և այլն և այլն: նաև զգիրք ուսուցիչ այսր արհեստի, կոչեցեալ History of Litto-graphy սկսյալ եմ թարգմանել ի հայ բարբառ և յուսամ տպագրութեամբ ի լույս ընծայեսցի աստ ի Համալսարանիս ընչ իմով իսկ վերահասութեամբ և սրբագրութեամբ:

Մեսրոպը Դաթեան, Սրբոյ էջմիածնի երբեմն միաբան:

Հունիս 18, 1826.

Bishopis College of Calcutta.

Ի եպիսկոպոսական Համալսարանին, Կալկաթա»:
Այս համառոտ, բայց թանկագին տեղեկությունների վրա մեղ կմնա ավելացնել, որ եպիսկոպոսական ճեմարանի տպարանում հայկական բաժին բացվեց շուտով, բայց ոչ թե Վենետիկից բերել տված տառերով: Կալկաթայի մեջ էլ մինչև այդ գոյություն ունեւր տպարան, որ ընծայել էր Պողոս Հորդանանյանը Օճանասիյուռյան ընկերության՝ լրագիր հրատարակելու համար: Այդ տպարանի տառերից էլ տպարան կազմվեց եպիսկոպոսական ճեմարանում, որ բավական խնամքով տպագրություններ էր անում: Քաղիադյանի գրական երկխայրիքը տպվեց այդ տպարանում 1829 թվականին: Բայց դա վիճաբանության պատմությունը չէր, ինչպես ինքն էր ասում վերև բերված տողերի մեջ, այլ մի թարգմանություն, որ կրում է հետևյալ վերնագիրը. «Հոգոնի Գրովտիոսի ձևաբանութիւն Քրիստոսական Հաւատոյ. ի Լատինէ ի Հայ ամ Մեսրոպը Դաթեան Քաղիադյանց Կարբեցի, Սարկավագ սրբոյ էջմիածնի»: Հետևյալ տարին այս տպարանում տպվեց նրա երկրորդ թարգմանությունը, այս անգամ կատարված անգլիերենից: Դա իր հանգուցյալ բարբարո եպիսկոպոսի մի ոտանավոր բերթվածն էր: Հայերեն տպագրությունն ունեւր այսպիսի վերնագիր. «Պաղեստին. պսակեալ քերթուած գեր. տ. Ռիչինալդա Երբեան եպիսկոպոսի Կալկաթայի Ի հայ ամ Մեսրոպը Դաթեան Քաղիադյանց, սարկավագ սրբոյ էջմիածնի: 1830»:

Այս երկրորդ աշխատությունից հետո Քաղիադյանը տալիս է միևնույն տարում արդեն ինքնուրույն մի գործ. «Իիցաբանութիւն. Արար Մեսրոպը Դաթեան Քաղիադյանց, սարկավագ սրբոյ էջմիածնի. տպագրեալ ի գործատան եպիսկոպոսական ճեմարանի Կալկաթայ, ի պարոն Յակոբայ Սայկսեան տպագրե, 1830»:

Այս աշխատությունները ցույց են տալիս, թե որպիսի բեղմնավոր թափով էր Քաղիադյանը սկսում իր գրական գործունեությունը: Իսկ «Իիցաբանութիւնը», որից հետո Քաղիադյանը համարյա միմիայն ինքնուրույն աշխատություններ էր տալիս, վկայում է, թե որքան բազմակողմանի զարգացում էր նա դուրս բերել եպիսկոպոսական ճեմարանից: Նա արդեն ոչ միայն լավ գիտե եվրոպական ազգերի զիցաբանությունը, այլև մանրամասն ուսումնասիրել է Հնդկաստանի ամբողջ զիցաբանական սիստեմը, որին խոստանում է նվիրել մի ամբողջ առանձին հատոր:

Սակայն մենք ունենք և մի այլ, ավելի զեղեցիկ հուշարձան, որ ցույց է տալիս, թե նույն եպիսկոպոսական ճեմարանը հաղորդել էր Քաղիադյանին լուսավոր մարդկության դաստիարակչական լավագույն գաղափարները: Դա այն նամակն էր, որ նա գրեց իր հայրենակիցներին, Երևան:

2. Երեւմ Անի ԱնՌԻՄԷ: Առիթը մի պատմական դեպք էր, որ ահագին նշանակություն ունեւր մանավանդ հայության համար:

1826 թվականի ամառը պատերազմ սկսվեց ռուսների և պարսիկների մեջ, որ շարունակվեց և հետևյալ տարին, երբ ռուսները կարողացան իրագործել իրանց վաղեմի նվաճողական բաղձանքը, մտցնելով իրանց զենքը Արաքսի հովիտը, Մասիսի ստորոտները: Այս մի մեծ բաղձանք էր և հայերի համար, որոնք, ինչպես տեսանք մեր այս գործի առաջին գլխում, վաղուց ակնկալում էին այն օրին, երբ Արարատյան երկիրը, հայ հայրենիքի սիրտը իր էջմիածնով, որ հայության ամենանվիրական կենտրոնն էր, նրա ազգային բախտը ներկայացնողը, ազատվի պարսկական լուծից և անցնե քրիստոնյա տիրապետության տակ, որի բարձր ներկայացուցիչն էր աշխարհի այս մասում ռուսական միապետությունը: Այս տիրապետությունը փութացնելու համար էր, որ ամենայն եռանդով աշխատում էր էջմիածնի ամբողջ միաբանությունը, նրա հետ և տեղական հայ ազգաբնակիցները: Ռուս-պարսկական պատերազմի սկզբից ներսես Աշտարակեցին, որ շարունակում էր վարել Քիֆլիսի առաջնորդությունը, զարգացրեց մի լայնածավալ, դարմանալի եռանդոտ գործունեություն հօգուտ ռուսական արշավանքի: Թե նա և թե բոլոր առհասարակ հայերը նկատում էին այդ արշավանքը իբրև մի բախտ, որ ուղարկվում էր երկնքից՝ դարավոր տանջանքներն ու արտասուքները մոռացնելու համար:

Եվ հայկական ակնկալությունները պսակվեցին կատարյալ հաջողությամբ: 1827 թվի հոկտեմբերի մեկին Երևանը, մի շատ թույլ դիմադրությունից հետո, անցավ ռուսների ձեռքը: Այս դեպքը խանդավառ ցնծության աղաղակ հանեց ամբողջ հայության կրծքից: Ազատված էր հայի հայրենիքը, ազատված էր նրա բախտը ներկայացնող գերագույն ազգային սրբությունը: Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին» ամեն մանրամասնություն սպառող կատարելությունը ցույց է տալիս, թե ինչ նշանակություն ունեւր Երևանի առումը նրա ժամանակակիցների համար: Եվ այս ազգային բացառիկ տոնախմբության մասնակցողները միմիայն Երևանին մոտ ապրող հայերը չէին:

Ներսեսը, որ շատ խոշոր գեր էր կատարել ռուսական այս հաղթանակի

մեջ, առանձին շրջաբերականներով, որոնց մեջ մանրամասն նկարագրված էր Երևանի առումը, ավետիս ուղարկեց հեռավոր հայերին, մասնավորապես նրանց, որոնք ապրում էին Հնդկաստանում: Ամեն կողմից շնորհակալություններ և ցնծագին խնդակցություն ցույցեր ստացվեցին իբրև պատասխան: Բայց առանձնապես նշանակելի են հնդկահայերի պատասխանները: Նրանք բաղմամբիվ ստորագրություններով ծածկված հանրագրերով էին արձագանք տալիս պատմական մեծ եղելություն, և, փառաբանելով վաղուց տենչացած ազատությունը, իբրև լուսավորված պետության հպատակներ, կոչ էին անում վերաշինել ավերված հայրենիքը, ծաղկեցնելով եվրոպական դաստիարակությունը, որի համար թախանձանքով խնդրում էին բաց անել դպրոցներ՝ խավար ու դժբախտ ժողովուրդը կրթելու համար՝...

Թաղիադյանն էլ, իր ջերմապես սիրած ծննդավայրի վրա ծագած նոր օրից ոգևորված, թե է առնում, որ թուշե այնտեղ, իր ուժերը նվիրե և ուղղում է երեվանցիներին մի ընդարձակ և վառված նամակ, որ մենք դնում ենք այստեղ ամբողջովին, նկատի առնելով, որ նրա գրած նամակներից հազիվ մի երկուսն են հասել մեզ, և բացի դրանից այս նամակը, իբրև բացառություն, գրված է աշխարհաբար լեզվով և շատ գեղեցիկ կերպով լուսավորում է թե այն ժամանակվա իրականությունը և թե հեղինակի մտավոր աշխարհը:

«Աստվածասիր և Ազդասեր Հասարակությունն Հայոց, Փրկյալ Քաղաքին Երևանա սրբակրոն քահանայից, բարեծնունդ Իշխանաց և համայն բարեպաշտոն ժողովրդոց

Որդիապարտ սիրո նվեր:

Աչքներդ հազար լույս որ մեր քաղցր Աշխարհն պարօից դառն շարշարանքիցն ազատվեց, քրիստոնի տերությունները ընկավ: Փառք բարեբարին Աստուծո, որ այսուհետև, ավել նեղություն չեք ունենալեց, ազատ քաղաքի քաղաքացի պիտի անվանիք, ձեր ազգասիրություն, իմաստասիրություն լուրն, և արվեստից հառաջադիմությունն բոլոր աշխարհ պիտի տարածվին:

Իմ լավ քաղաքացիք, էսպես երջանիկ բախտի որ դուք էք պատահել, կարծեմ զոր մեր նախնիքն ևս Արշակունի թագավորության ժամանակումն էլ չէին պատահել. զերա թեպետև թագավորությունն յուրյանցն էր, սակայն բարբարոսություն և զուլումն պակաս չէր: Ուրեմն աղաչեմ, նախ աղոթքս առնեք, որ աստված ամենատոկոսն ևս կայսեր նիկողայոսի աթոռն միշտ հաստատ պահի, սուրն կտրուկ, և ամեն թշնամյաց վրա հաղթող: Ապա աղաչեցեք, որ նույն աստվածն մեր ազգին սեր, միաբանություն տա, երկար կյանք և բարի հաջողություն, որ կարենան ճանաչել թե ի՞նչ է լավն, և հետևել նմին:

Մնաց, որ ևս ծառայա ձեր թիվն 1823-ումն, սրբազնակատար կաթողիկոսի հրամանավն Հաղպատիցն ելա, շատ շարշարանքով հասի Հնդկաստան, մին տարի պարապ դեռ ու դեն ընկա, երկրորդ տարում Կալկաթու հայոց վարժարանումն վարպետություն արի, հետո սուրբ Երուսաղեմի նվիրակ Աբրահամ վարդապետի շնորհովն ծանոթացա Ինգլիզի եպիսկոպոսին, որո անունն էր Ռիչինալդ Հիրբ. մին խիստ լավ և ողորմած կարգավոր, որ յուր խարջովն տվեց ինձ յուրյանց մեծ վարժատունն. և ևս ներկա աստծո ողորմությունս սովորում եմ լատինի, ինգլիզի, հունաց և պարսից լեզուն, և այլ զանազան արհեստանի: Վերջապես, երբ որ լսեցի ներկա մեր աշխարհի ազատությունն, սիրտս ուրախությամբ վառվեց, ֆրանկ ազգաց լուսավորությունն տեսնելով և մեր ազգի

¹ Մանրամասն տես իմ «Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի», Թիֆլիս, 1914, եր. 104—110:

անլուսավորությունն, նախանձ մեծ ընկավ հոգիս, և թեպետ ևս ո՛չ շատ փողատեր վարդապետ եմ, ո՛չ վաճառական, ո՛չ կարգ ունեմ ո՛չ աստիճան, սակայն աստված, որ միշտ տկարաց ձեռքովն մեծ-մեծ բաներ ա կատարել, վստահացնում ա ինձ, իմ կարյաց գյորա իմ ազգիս, իմ քաղաքիս և իմ ծնող Աշխարհիս պիտանի լինիմ ձեր շնորհքովն: Բայց այս իմ պիտանությունս ուրիշ կերպով չէ լինելեց, և թե ոչ վարժատուն հաստատեք և մեր երեխայից միտքն լուսավորեք:

Ես մին խնդիր գրեցի Վրաստանու ներսես արքեպիսկոպոսին թե որովհետև Ձորագեղի մոտի անապատն քաղաքի մեջ տեղն լինելով, այսինքն Շհարի, Կոնդի և Ձորագեղի միջումն, հեշտ կլինի մանկանց համար ամեն տեղաց հավաքվիլ անդ վասն կարգալու և որովհետև բերդն բազարին ու գետին մոտ ա, շատ հարմար եմ համարում, որ տեղն մին քաղաքական վարժատուն հաստատվի մեր ազգի լուսավորության համար, և Երևանա առաջնորդի աթոռն փոխվի Կոզեռի մոտ Ս. Զինվոր եկեղեցին: Նաև գրել եմ, որ եթե սրբազանն հաճենա շնորհիվ մեզ էն տեղն, ուրեմն գրի ինձ, որ ևս տեղիցս զանազան ազգի կարգալու գրքեր և տպարան, որքան իմ աղքատ զորությունն կիսոստանա, բերեմ և կամ անձամբ աշխատեմ վասն ձեր որդվոց և իմ եղբարց լուսավորությանն:

Արդ իմ ազնիվ քաղաքացիք, խնդրեմ որ գիրս ձեզ հասնելն ի բաց շնորհ առնեք շհարցիքդ, կոնդեցիքդ, կարեցիքդ և ձորագեղցիքդ հավաքվիլ նույն անապատումն, առաջ ս. քահանայիցն խնդրել, որ աղոթք անեն առ աստված վասն բարի հաջողության գործոյն. ապա իմ էս աղքատ գրությունս կարգացեք, խորհեցեք, եթե ձեզ ընդունելի լինի իմ առաջարկությունս, ուրեմն միաբանություն մեր կրկու արզի գրեցեք, մինն սրբազնակատար կաթողիկոսին և մյուս սրբազան ներսես արքեպիսկոպոսին Վրաստանու: Եվ խնդրեցեք, որ էդ տեղն ազգին ընծա շնորհեն ձեռագրով մոհրով և դապալայով: Եվ երբ աստված կատարի ձեր խնդիրն ի բարին, շուտ ինձ մին գիր գրեցեք և կաթողիկոսի և ներսես առաջնորդի թղթերի օրինակքն նորանում փակեցեք, ուղարկեցեք թավրիզու ինգլիզի դեսպան Մեկղոնալդ հաղարտպետի ձեռքն, նա շուտով Կալկաթա կհասցնի: Երբ ևս ձեր գիրն գտնեմ, կգամ աստուծով, և էնպես կգամ, որ ուրախանաք:

Իմ ազնիվ քաղաքացիք, գիտեմ որ մեր աշխարհի այսքան երկար ժամանակաց գերություն տակ մնալն գիտություն հարգն ոչ կարն ներկա լավապես ցուցանել ձեզ, բայց հուսամ, որ շուտով կարողանեք ճանաչել: Գիտությունն էն ազնիվ թագուհին ա, որ հախա աղքատ հագուստով բախտավորաց դառն կեցեցերի, ամմա թագավորաց թագին պարծանքն ու փառք ա: Տերություն չկա, որ էս անտեր Գիտությունս կանգնած և պահվում չլինի. Թուսաց էդ մեծ կայսրությունն, թե առաջ քան զսուրբ Պետրոս յուրյանց իմաստասեր թագավորն ի՞նչ էր և ներկա ի՞նչ ա, հայտ է ձեզ: Մին երեխա եթե կարգալ գրել գիտենա, էն արվեստանին, որ բազում շարշարանքով, որ վեց կամ յոթն տարումն ա սովորում, մին, երկու տարումն կարև հեշտ ու հանգիստ սովորած արվեստն հնարքով հեշտացնել, և նոր նոր արվեստանի ևս հնարել:

Իրավի արվեստից անունն հիշելով այնքան եմ ամաչում, որ կարող չեմ ասել. զերա, մեր խեղճ աշխարհքն ինչ մին լավ արվեստ ունի, ոչ ինչ: Էն արվեստանին, որ շորս հաղար տարով առաջ աշխարհումն կային, ներկա էլ էնդոնք են մեր Հայաստանու արվեստանին, և ինչպես կոպիտ սովորում են, էնպես էլ կոպիտ սովորեցնելով գնում են: Արվեստ պայծառացնել չեն գիտում, նոր արվեստներ գտնել չեն կարում, եթե լսում են, որ մին ազգիկ գրել կարգալ ա սովորում, զարմանում են. երբ ինգլիզ կամ ֆրանկ են տեսնում, կարծում

են, թե աստված է երկնից իջել ոտներն ամպաթաթախ: Եվ ի՞նչ է պատճառն աղաչեմ, եթե ոչ գիտությունից զուրկ մնալն: Կարծեմ ինձ վրա կծիծաղիք, եթե ասեմ, որ ինգլիզի և ֆրանկի կնանիք և դստերքն վեց յոթն լեզու կարգաւ գրել գիտեն. մեծ մեծ գրքեր են շարագրում, տպում, ասղարարություն, ձև, կար, վաճառականություն, լավ սաղ ածել, պար գալ և այլն: Բայց հուսամ երբ որ ազնվության հոգին կնորոգվի ձեր միջումն, և դառն գերություն քաջությունն կմոռանաք, էն վախտն կիմանաք թե ի՞նչ է իմ լացաւ Ա՛խ, իմ լավ քաղաքացիք, ա՛խ հոգիս հարայ ա կանչում, հին խմորն թողեք. նոր ազգի լուսավորության և պայծառության հետեցեք:

Ամոթ չի ձեր իշխանազուն որոց համար դատարկ քուշերուն ման գաղ, կամ մինակ անտաշ դարբնություն, խառատություն, կատեպանություն, և թթի դուշ բշել սովորել: Ամոթ չե ձեր խաթուն դստերաց համար մենակ տուն սրբիլ սովորիլ և մին գնձոտ մինթանա ձեկու համար դաղաքը կոնատակին դռն զուս ընկնիլ: Ո՞ւր է ձեր վեհ հոգին, ուր է ձեր աշխարհի ծանոթացած անունն, կորա՞ն արդյոք, ոչ: Աստծո հատուկ ողորմություն բացվել է ձեզ վրա, իմ ազնիվ քաղաքացիք. մի ասեք, թե ջանք անենք, փող ժողովենք, լավ ապրենք. մոխիր է մեր փողն, փուշ է մեր կյանքն, սնտոխ է մեր հույսն, եթե շենք ջանացել, որ մեր ազգի երեխայիցն էլ լուսավորության դուռն բանալ, որ վազն և մյուս օրն կարողանան մարդի միջում մարդ երևիլ:

Պարտ է ուրեմն Աստուծո ողորմությունն ոտնատակ շտալ, նոր ձեզ ալձած ազատությունն անմահ փրկություն համարել. ջանալ, որ ձեր խանդաղա որդիքն կարողանան իմաստությամբ թուր բռնել ընդդեմ թշնամյաց Աստուծո և բարերար կայսեր ձերո. և ձեր աղջկերքն գրիչ. նոքա քաջություն անեն, և սոքա նորանց քաջությունն գրեն. նոքա դառնան քաջ զորք ու զորաբանակ և սոքա քաջ իմաստուն և լավ տանտիկնայք. և եթե կարենա մեր աշխարհն մին անգամ իր որդիք և դստերքն էսպես կատարելությամբ ծաղկած տեսանել, չգիտեմ՝ որ մին ֆրանկի աշխարհիցն պակաս կմնա, թե՛ լուսավորությամբ, թե՛ արվեստով, թե՛ ազնվությամբ, և թե՛ երջանկությամբ և ոչ թե մինիցն: Ահա՛ էս ա իմ ցանկությունս իմ քաղցր աշխարհիս համար, եթե որ հաճելի կլինի վերն գրածիս համաձայնիլ և կատարել, ուրեմն հեշտ է, մենք հիմն կդնենք և աստված կշինի. և ես ուրախ կլինիմ ապրիլ ձեզ համար. և մեռնիլ ձեզ համար: Ապա թե ոչ, էլ ուրիշ չեմ ու չվի պատճառ շունեք, և եթե դանց կառնեք գլխիդ ըռադ անելու համար, առաջի ահեղ ատենին Քրիստոսի պարտականն դուք էք, և դուք պիտի լինեք: Ողջ լերուք:

«Ի Կալկաթա, նոյեմբեր 1, 1828. Մնամ ազնվության Ձերո խոնարհ Ինգլիզի եպեպկոպոսի ճեմարանում»: Ժառա Մեսրոպ Դավթյան

Քաղիադյանց¹
Այսպիսի կրակոտ, հեղաշրջիչ ոճ էր յուրացնում հայոց աշխարհի խեղճ տիրացուն, շփվելով եվրոպական կյանքի հետ: «Ա՛խ, իմ լավ քաղաքացիք, ա՛խ, հոգիս հարայ ա կանչում, հին խմորն թողեք, նոր ազգի լուսավորության և պայծառության հետեցեք»: Ծիշտ և ճիշտ այս լեզվով պիտի խոսեք և ետաշատուր Աբովյանը, նույնպես հայոց ազգի տիրացու, երբ նույն Չանգուի ափերից օտարություն կզնար՝ դարձյալ սովորելու, դարձյալ իր ազգի ծառայության պատրաստվելու համար...

3. ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ: Բայց հայ իրականությունը դեռ անպատրաստ էր այդպիսի կոչեր ըմբռնելու և իրագործելու համար: Եվ Քաղիադյանի առաջար-

կությունը ոչ մի ազդեցություն չարավ Երևանում: Քաղիադյանը շատ լավ էր ըմբռնել այդ անտարբերության պատճառը: Դա «դառն գերության քաջությունն էր», որ հայ ժողովուրդը դեռ պիտի մոռանար: Այս պատճառով էլ անտարտուշ շարունակեց իր ուսումը Եպիսկոպոսական ճեմարանում և վերջացնելուց հետո էլ միառժամանակ մնաց այդ հիմնարկության մեջ, մտադիր լինելով գնալ իր կարոտած հայրենիքը:

Բայց այդ միջոցին նոր Զուղայում պատրաստություններ էին տեսնվում մի նոր դպրոց հիմնելու: Մագրասում վախճանված նոր ջուղայեցի Գրիգոր Սամյան վաճառականը մի գումար էր կտակել այդ նպատակով, և ջուղայեցիները որոշել էին նույնիսկ չսպասել այդ գումարի ստացման, այլ փութացնել դպրոցի բացումը: Եվ ահա մեր Քաղիադյանն ստանում է Զուղայից այսպիսի մի գրություն.

«Յարգո պարոն Մեսրոպ Դավթյան Քաղիադյանց.

Եթէ մարդ ծնեալ վասն հայրենեաց պարտ է կեալ վասն հայրենեաց և ծառայել նմին, որքան առաել ևս եթէ կեցցէ որ ծառայել ո՛չ միայն հայրենի ուսմանց և բարեկարգութեանցն արաքնոց, այլ և ներքին կրօնից և աստվածապաշտութեան նոցա: Ապաքէն ի բազմաց հեռէ ցանկացեալ և ցարդ անկատար մնացեալ ի մեզ հաստատութիւն ճեմարանին ի Զուղա և հետզհետէ յանհրահանգութեանց իսպառ անհետացեալ ուսման ի մեջ հասարակութեանս բնակելոյ ի Զուղա, համարեա թէ գլխովին խոնարհեալ է պատիւ եկեղեցոյ և յարգ հայրենի աստուածատուր հաւատոյ մերոյ առ անուղղայս ոմանս ի մերազանց, որք սարսուցեալ ի ստենէ մօրն որ ծնան զնոսա, գնան ի գիրկս հովմէական դալոցն, որք ի զգեստ ոշխարաց մտեալ ի հօտն Քրիստոսի, խարդաւանեն զնոսա ի խոհերս մարդապաշտ մոլորութեան և յախտենական կորստեան հոգւոցն իւրյանց¹:

Յայս ամենայն հայեցեալ մեր ապաքէն՝ ազգովին խնդիր մատուցանեմք առաջի ազգասիրութեան ձերոյ զի թէպէտ զժվարին է վասն բազմամեան օտարութեան ձերո ի հայրենեացդ և կարոտութեանդ, սակայն դուք ևս որպէս վայել է ճշմարիտ գիտնոց և ճշմարիտ բարեպաշտից, զօգուտն հասարակաց յաւէտ բնտրելով քան զշահ անձին առանձինն՝ յանձն առչիք դաստիարակել զմանկունս մեր գոնեա տարեկան ժամանակաւ և եթ: Եւ առ այս՝ որպես աներկբայ եմք մեք Աստուծոյ ձեզ վարձատրութեան, նույնպէս և ազգային միաբերան շնորհակալութեանս մերոյ և օրհնութեանց հազարաց ի կյանս և ի զարգացումն կենացդ պատուկանաց: Ողջ լեր բազում ազգասիրությամբ ի պարծանս մեր:

Սրբոյ Ամենափրկչի Աթոռոյս հոգաբարձու յաջորդ Յակոբ վարդապետ²:

10 քահանայ (ստորագրություններ),
12 աշխարհական (ստորագրություններ):

Ընդունելով այս հրավերը, Քաղիադյանն ուղևորվում է 1831-ի մայիսին նոր-Զուղա: Այստեղ նա գտնում է առաջնորդարանի սնդուկը դատարկ, կտակած փողը դեռ չէր ստացված Մագրասից, և կարևոր ծախսերի համար նա ինքն ստիպված եղավ փող պարտք տալ առաջնորդարանին իր մոտ եղած փոքրիկ գումարից: Հուլիսին նա մեծ հանդեսով բաց է անում դպրոցը, անվանելով

¹ Այստեղ ակնակվում է այն հանգամանքը, որ կաթոլիկ միսիոնարները, դպրոց բաց անելով Զուղայում, գրավում էին հավատափոխության նպատակով ու կաթոլիկ հայերի երիտասարդ սերունդը, որ ձգտում էր դեպի կրթություն:
² «Ազգասեր», 1849, էր. 286:

¹ «Մասյաց աղավնի», Թեոդոսիա, 1863, էր. 172—174:

նրան Ամենափրկչյան ճեմարան և ինքն էլ ղեկավարում է այդ նոր հիմնարկութ-
յունը մինչև նոյեմբեր ամիսը: Բայց այս ժամանակ մեծ դժվարություններ են
սկսվում Ջուզայի ժողովրդի և առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի մեջ:
Վերջինս ստիպված է լինում թողնել քաղաքն ու հեռանալ: Եվ Քաղիադյանն էլ,
որ նրա կողմնակիցն էր, հեռու է նրա օրինակին:

Այստեղ պետք է մի քանի խոսք ասել Քաղիադյանի բնավորության մա-
սին, քանի որ տեսնում ենք նրան նոր մտած մի կյանքի մեջ, որին վիճակված
էր լինել բավական արկածալից:

Մենք արդեն առիթ ունեցանք ասելու, որ Քաղիադյանի կենսագրական
համառոտ և կցկտուր տեսությունը գրել է Կալկաթայի քահանա Հովհաննես
Խաչկյանը, որ, ինչ-որ անձնական հաշիվներ ունեցած լինելով Քաղիադյանի
հետ, դուրս է բերել նրան շատ անհրապույր բացասական հատկություններով:
Նրա ասելով, Քաղիադյանը և խոսվարար էր, և արբեցող, և անբարոյական,
այդ պատճառով էլ ոչ մի տեղ չէր կարողանում հաշտ ապրել մարդկանց հետ:
Սակայն Քաղիադյանի աշակերտներից մեկը, Հովհաննես Ծահնապար Սարգս-
յան, թե իր անձնական և թե մյուս աշակերտակիցների վկայություններով
ապացուցել է, որ Խաչկյանց քահանայի հերյուրանքները շարամիտ զրպարտու-
թյուններ են: Եվ, իրավ, շարքաշ ուսուցչի և բեղմնավոր ու տաղանդավոր հե-
ղինակի կյանքը, որքան էլ մանրակրկիտ բնութայն ենթարկելու լինենք, եղել
է գերազանցորեն անխոնջ և գաղափարական աշխատավորի կյանք, միանգա-
մայն արժանի այն բարձր համբավին, որ նա վաստակել է իր եռանդով և
ընդունակություններով: Չկա մարդկային կյանք, որ թերություններ չունենա, և
Մեսրոպ Քաղիադյանն էլ, բարեբախտաբար, բացառություն է: Նրա կազմում այս
համամարդկային օրենքից, քանի որ նա էլ մարդ էր: Նրան պատիվ բերողը
հենց այն հանգամանքն էր, որ նա ամենայն անկեղծությամբ և պարզությամբ
նկարագրում է իր «պակասությունները»: Այսպես, նրա վաղ մանկության և
պատանեկության նկարագրությունից մենք արդեն գիտենք, որ բնությունից նա
ստացել էր մի սուր համարձակախոսություն, որ իհարկե մեղք պիտի համարվեր
բոլոր տափակ բնավորությունների և պայմանական առաքինությունների տեսա-
կետից: Լինելով վաղվուց, գործունյա, շարքաշության մեջ կյանք եփած նա,
բնականաբար, չէր կարող հաշտվել կյանքի բոլոր պայմանների հետ և երևի
հենց այդ պատճառով էլ նա այնքան տրամադիր էր թափառիկ կեցության, որ
չէ կարող հատուկ չլինել որոնող հոգիներին:

Լինելով կրթություն ստացած, շատ լեղումներ իմացող մարդ, բայց, որ
առավել է, զգալով իր մեջ հեղինակական խոշոր կարողություն, Քաղիադյանը
բնականաբար պիտի արհամարհանքով նայեր դեպի իրան շրջապատող տգի-
տությունն ու հետամնացությունը, որ, ի լրումն ամենայնի, հրամայողի և տի-
րապետողի դիրքում էր գտնվում: Այստեղից է այն «հպարտությունը», «ամ-
բարտավանությունը», որոնց գոյությունն իր մեջ նա խոստովանում է ամենայն
պարզությամբ: Սակայն պետք է ասել, որ նրա անթիվ գրվածքների մեջ չկա և
մի տեղ, ուր նրա գոռոզությունն ու արհամարհանքը հանդես գային: Ընդհա-
կառակն, համեստ է նա, իրան շարունակ համարում է ազգի ծառա և իր արած-
ներով, իր ունեցած հոգեկան ձիրքերով շատ քիչ է պարծենում, երբեք անվայել
ձևերի չհասնելով: Բացասական հատկություն դուրս համարվի այն, որ նա
շողորթրթում էր ունևորներին: Բայց այդ նրա մեղքը չէր, այլ հայ իրականու-
թյան, մանավանդ այն ժամանակներում, երբ բոլորովին բացակայում էր հա-
վաքական գիտակցությունը և ամեն ինչ — դպրոց, գրականություն, նույնիսկ
նկեղեցի — ապրում էր ունևոր անհատների, «բարեբարների» օժանդակությամբ:

Իր բազմաթիվ աշխատությունները տպագրել տալու համար Քաղիադյանը դի-
մում էր «մեկենասների», և մենք չենք տեսնում, որ նրա հրատարակած գրքե-
րից ամենափոքրն անգամ, որի տպագրական ծախսերը շատ աննշան պիտի
լինեին, նվիրված չլիներ մի որևէ անհատի, հաճախ նաև փրուն ձոներով միա-
սին: Այս մի դաժան հարկ էր, որ հայ հեղինակն ստիպված էր տալ տխուր
անհրաժեշտությունը:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Քաղիադյանը հրեշտակ չէր, քանի որ
հրեշտակներ չկան էլ, ոչ ևս հրեշ, ինչպես ձգտում է նրան ներկայացնել բար-
քերի անկող զատավոր քահանան, որի մեղադրանքները, հաշված և ամենա-
գլխավորը՝ արբեցողությունը, ըստ ինքյան վերցրած, առանց կողմնակի վկա-
յությունների էլ, խղճուկ խժբժանքներ են:

Ջուզայից Քաղիադյանն իր քայլերն ուղղում է իր կարոտած հայրենիքը,
Էջմիածին, ուր այդ միջոցին նոր էր կաթողիկոսացել Հովհաննես Կարբեցին:
Վանքի շրջանում օտարությունից վերադարձած սարկավազը խորթ դավակ չէ
համարվում: Նա ուսումնական մարդ է, և այդ կոչումը կաթողիկոսը վարձա-
տրում է նրանով, որ տարի ու կեսից հետո կարգում է Քաղիադյանին վանական
դպրոցի կառավարիչ, միաժամանակ և վեհարանական քարտուղար, ստանա-
լով նրանից այսպիսի մի թուղթ:

«Յանուն ահաւորին Աստուծոյ կապակցիմ քնդ սրբազան սինհոդոսի կա-
տարել զպաշտօն վարձապետութեան արուեստից ազատականաց և զպաշտօն
խորհրդական գրագրութեան Կաթողիկոսի ամենայն հայոց և սրբազան սին-
հոդոսի, անարատ խորհրդապահութեամբ, սրբութեամբ և անկեղծ հաւատար-
մութեամբ՝ երեք տարի ժամանակաւ, տարին հարիւր և քսան թուման վարձու-
նւ այս առանց իրիք տրտնջանաց ցորչափ պաշտօնք իմ յառաջ գնան կանոնա-
ւոր խղճմտանօք և օրինաւոր կարգաւորութեամբ. արտաքոյ սոցա ոռճկի մա-
սամբ շունիմ ինչ պահանջելիք ի սրբազան կառավարութեանէ սրբոյ Էջմիածնի:

Յամի Տեառն 1833,

Հունիսի մուտն

ի սուրբ Էջմիածին:

Մ. Դ. Քաղիադյանց»:

Բայց այս պաշտոնում Քաղիադյանը, հակառակ իր տված ստորագրու-
թյան, մի տարուց ավել մնալ չէ կարողանում, որովհետև դարձյալ ջուզայեցի-
ները թախանձագին խնդրում են, որ նա գնա և բարեկարգել իրանց դպրոցը:
Ահա ինչ էին նրանք գրում Հովհաննես կաթողիկոսին:

«Ամենախոնարհաբար անկեալ առաջի ահեղահարաշ աթոռոյ ձերդ սրբազ-
նագույն մեծի տերութեան՝ քօղարկեալ դիմօք մատչիմք ի համբոյր սրբազնյալ
երկնաշու մաքուր դարչապարացն յատկազույն ձերումդ բազմախնամի:

Եւ մաժմամբ երկիր՝ յառաջարկեմք զաղաշանաց խնդիրս յաղագս խղճալ:
մերազանց կողմանցս եղելոց, որք զանազան տարաբախտութեամբ և ազգի—
ազգի փոխադարձութեամբ անկայուն աշխարհի անյաշող դիպուածոց՝ կացեալ
մնացեալ ցարդ ընդ խաւարամած տգիտութեամբ, վեր երեկն անվայելուշ ազգ
յաշս համակ տեսողացն:

Վասն որոյ՝ ազգասիրութեամբ ձերով զիջեալ ի հայեցուածս պաղատանաց
յեանեալ ծառայից ծառայի ձերոյ՝ շնորհել զշնորհաստն տիրացու Մեսրոպ
Դաւթյան Քաղիադեանց վարձապետն կողմանցս եղելոց մերտգանց առ ի
հրահանգել, կրթել և ուսուցանել զմանկունս հայոց ջերմեռանդագույն մեծի
տէրութեան ձերոյ լուսավորչածին ուղղափառ ժողովրդոյն: Ձոր կատարելով

ունի վեհափառութիւն ձեր միանգամայն մխիթարել զհամակ Ազգս Հայոց բնակելոց ի Պարս և ի Հնդկաստան, որք միանգամ ազգասէր և հայրենասէր կամօք ցանկան և փափագին:

1834 ամի Տեառն

մարտ ամսոյ 16

Ի վանս Ամենափրկչի որ ի Նոր Զուղա:

Չեող բարձրագույն վեհափառութեան ժամայից ծառայ Հովհաննէս եպիսկոպոս, յետին միաբան սրբոյ կաթողիկէ էջմիածնի Յաջորդ Յակոբոս վարդապետ:

Հովհաննէս կաթողիկոսը համաձայնվում է բաց թողնել Թաղիադյանին: Սա էլ, որ այդ միջոցին պաշտոնական հանձնարարությամբ ուղարկված էր Թիֆլիս կառավարչապետ բարոն Ռոզենի մոտ, նույնպես հաճությամբ համաձայնվեց նորից գնալ Զուղա: էջմիածնից նա առանձնապես գոհ լինելու ոչ մի առիթ չունեի: Հայ վարժապետի աննախանձելի վիճակն էր ծանրացած նրա վրա և դրա ապացույցը հենց այն ողորմելի պայմաններն էին, որ տրամադրել էր վանքը Թաղիադյանի ապրուստի համար: Մի ծաղրական ոտանավորի մեջ, որ, ինչպես երևում է, Թաղիադյանի առաջին շափական ինքնուրույն հեղինակութունն է, նկարագրված են այն կահարասիները, որ նա ստացել էր իր սենյակը զարդարելու համար: Այդ ոտանավորի վերնագիրն է «Ցուցակ ստացեալ աղխից տան իմոյ ի ծայրագույն կառավարչէն Սրբոյ Աթոռոյս»: Նրա մեջ փայլում է Թաղիադյանի զվարճախոսությունը և կծու հեգնանքի կարողությունը: Մի քանի կտորներ այդ իր տեսակի մեջ եզակի ոտանավորից ամենից լավ կարող են ներկայացնել այն ժամանակվա դրությունը և մանավանդ հայ վարժապետի վիճակը:

Երբ զիս վարժապետ կարգեցին

Արարատեան ճեմարանին

Տուին սենեկիս թախումըն²

Բոլորն էլ նորաձև իքմին:

Վարժապետին յաջողութեան,

Սիրասուն մանկունք թորգոմայ,

Ասացէք միաբերան

Տուողի տունն շեն կենայ:

Դռանս վերայ փակ շկէր,

Չըլչէն³ էլ իսպառ կոտրած էր.

Ութ օրէն ետ կղպակ տուին

Չըլչէն էլ հօր հոգւո թողին:

Վարժապետիս և այլն:

Երեք գազ օթախիս կէսըն

Մածկում է փրնթի խըսիրըն,

Իսկ միս կէսըն գազ ու կէս,

Մեռելոտի հին կապերտըն:

Վարժապետիս և այլն:

Տասն օրէն յետ խալի տուին

Յիմարաց իշխանին արծան,

Որ շէ թէ անտաշ էր և հին,

Այլ և ծուռ մանգաղի նման:

Վարժապետիս և այլն:

Տուին մին իբրուղ¹ մին լական²,
Մին էր ծակ, մինըն ժանգոտած,
էս աղտեղիքս երբ տեսայ ես,
Համար թէ զահլէս զնաց:

Վարժապետիս և այլն:

Անդ առաջին գիշերումըն,
Երբ սորանք եկան իմ տունըն
Եզր³ մեծ Քաղկեդոնին
Տեսայ իմ երագումըն:

Վարժապետիս և այլն:

«Որդի՛, ասաց, մի լուացուիր,
էդ ժանգոտած լականումըն.
Գրանք իմն են և շատ յիստակ,
Երբ ես ի իմ աթոռումըն:

Վարժապետիս և այլն:

«Բայց էջմիածնայ միաբանքըն
Սրբ մեռայ ես, անիծեցին
Ոչ միայն զիս և զիմ կյանքըն,
Այլ և բոլոր իմ կարասին»:

Վարժապետիս և այլն:

Առատուց երբ զարթնեցի
Կլէկչուն մին զիր գրեցի.
«Ուտա Աղա, քեզ մի լական
Գրաբերոյս զրկեցի:

Վարժապետիս և այլն:

«Համ անիծած, համ ժանգոտած,
Եզրը դօվրէն մին քունջ ընկած,
Երեկ տուին որ բանացնեմ,
Այլ կեղտիցն զահլէս զնաց:

Վարժապետիս և այլն:

«Թէ կարես ժանգն կլէկիր
Եւ անէծքի գիրն ջնջիր,
Մին աբասի քո կլէկին
Չորս արասի ժամոց գտիր»:

Վարժապետիս և այլն:

Կլէկչին երբ տես լագանըն
Եվ լսէց անէծքի բանըն,
Բարկանալով ինձ գիր գրեց
Դուս տուեց յետղջի յեամանն⁴:

Վարժապետիս և այլն:

«Տօ ես քո վարժապետին հէրըն
Տօ քո կարգողի մեռելըն,
Թումրէ թումր անեմ ամեն օր,
է՛ս ա իմ փեշակի խերըն:

Վարժապետիս և այլն:

«Որ սաբահից⁵ սըվթա⁶ շարած,
Անեծքըն զըրկես իմ տունըն,
«Դի՛ վեր կալ, տար», տղին ասաց,
«Ես չուզեցի էս դատումըն:

1 «Ազգասեր», 1850, եր. 336:
2 Հանդերձանք, կահ:
3 Շըջանակ:

1 Ջրաման (աֆիսաֆա):
2 Կոնք:
3 Եզր կաթողիկոս (յոթներորդ դարում), որին հայ եկեղեցական ավանդությունն անիծում է այն պատճառով, որ նա իբր թե ընդունել է Քաղկեդոնի ժողովը:
4 Բառացի՝ լավն ու վատըն Նշ. հայհոյել:
5 Առավոտ:
6 Առաջին գործ, առաջին առևտուր:

Վարժապետիս և այլն:
Քորա օղի, ևս տէրտեր եմ
Որ անէծքի գիրքն ջնջեմ.
էդ կարալ շեմ, ու թէ մեռնես
էս լականքդ էլ կըլէկել շեմս:
Վարժապետիս և այլն:

...Նրեր օր ծղան փէտ տուին,
Ներսիցն բերում էր տղէն,
Զորրորդումն տուին դնչին
Առանց ցախ գուրս արին խեղճին:

Վարժապետիս և այլն:
Քային արին՝ պիղծ իշղունին²,
Եվ նրա գարշելին հոտին.

Որ ամեն օր զլիտ ցաւից
Թաւ խեղճ Մեսրոպիս հոգին:

Վարժապետիս յաջողութեան
Սիրասուն մանկունք թորգումայ,
Ասացէք միաբերան.
Տուողի տունն շեն կենա՞:

Հովհաննէս կաթողիկոսը Զուղայի առաջնորդին պատասխանեց մի խրատասական կոնդակով, որի մեջ, ի միջի այլոց գրում էր. «Ահա ըստ խնդրանաց ձերոց, զայրն պիտանի մեզ ըստ ամենայնի, զպատուելի վարժապետն արուեստից և զխորհրդական գրագիր մեր՝ զՄեսրոպը Դաւթյան Քաղիաղայանց, սիրով արձակեալ առաքեցաք այդր, ըստ աստուածատուր իմաստից և մակացութեանց իւրոց, կրթել և հրահանգել զմանկունս ձեր յուսմունս պեսպես գիտութեանց, զոր և յորդոր լինիմք սիրով ընդունել, և ըստ ամենայնի շահեալ և մխիթար պահել՝ վասն ձերոյ բարութեան»:

Այս կոնդակի հետ Քաղիաղայանը ճանապարհվեց նոր Զուղա 1834 թվի ամառը: Այս անգամ ավելի երկար մնաց նա այստեղ, մոտ երկու տարի: Ինչպես ինքն է պատմում, բարեկարգեց դպրոցն այնպես, որ իր նախկին աշակերտներից 30 հոգի, որոնք կրթվում էին հայ կաթողիկեների վանքում, նորից մտան Ամենափրկչյան ճեմարանը: Այսքանը բավական չէ, նույնիսկ ամուսնացած մարդիկ էլ աշակերտեցին նրան: Բայց հայ վարժապետի ճակատագիրն այդտեղ էլ չթողեց Քաղիաղայանին: Դպրոցը դեռ չէր ստացել Գրիգոր Սամյանի կտակած գումարն ամբողջովին և չէր կարողանում վարձատրել իր վաստակավոր ուսուցչին: Այս հանգամանքի վրա ավելացան և ջուղայեցիների ինտրիգներն ու ոտնձգությունները: Օրվա հացի կարոտ մնալով, ինչպես գրում է ինքը Քաղիաղայանը, նա ստիպված եղավ դիմել Թեհրանի ուսաց դեսպանին և, նրա օգնությամբ տանելով իր դատը ջուղայեցիների դեմ, հեռացավ դպրոցից:

Այս հանգամանքները հաստատում է ջուղայեցի Հովհան Լարությունյանը, որ այդ ժամանակ Քաղիաղայանի աշակերտն է եղել Զուղայի դպրոցում և որ առհասարակ շատ հետաքրքրական հիշողություններ ուներ իր ուսուցչի մասին: Ահա ինչ է գրում այս ականատես վկան. «Ընթացս Պրն. Մեսրոպի վարժապետ լինելն ըրկօլն ցնծմանէր, յաւեր քան 150 աշակերտք կային, որոց յաւել պակաս 15 անձինք հասակաւոր Պարնայք քերականութիւն ուսանեն. վեց քահանայք, երկու վարդապետք ևս. վարժապետ Մեսրոպըն իւր լաւագոյն ջանքն գործ դնէր

վասն աշակերտաց յառաջանալոյ, և յառաջանին, բայց ջուղայեցիք արժէքն չիմացան, այդ աղագաւ վարժապետի սիրտն սառեց, հրաժարվեց իւր պաշտօնիցն, վերջն ջուղայեցիք գղջացին այդպիսի վարժապետ կորուսանելն:

Վարժապետի մեծ պակասութիւն այդ էր՝ Ինչպիսի պէս թունդ բնավորութեան տէր անձն էր, անկանոն բան չէր կարող տեսանել, զոր ինչ որ կայր կուգէր արդարացի լինել: Որովհետեւ ինքն ուսյալ անձն էր՝ չէր կարող ջուղայեցոց գոռոզ բնութիւն տեսանել, միշտ ցանկայր ուսեալ անձանց հետ ընկերակցութիւն պահել, այդ որ ջուղայեցիք յատուկ յարգանք ցույց շտվին վարժապետին. նա ևս հրաժարուեց իւր պաշտօնիցն:

Այդ անտեղի գրադարտութիւնք, որ ասեն միշտ հետեւէր իւր գրօսանաց, գինի խմէր, գավազանէր, երբէք չեմ տեսած կամ լսած...

Ասեն իրր աշակերտաց ծեծ կտայր, երբէք ոչ: Սաստիկ ոահմ ունէր, որ բոյոր աշակերտք կը դգային առանց ծեծ տալոյ: Պատահէր ով ոք անհնազանդ լինէր ծնողաց կամ սուտ խօսէր, կոչէր, Դելանչին կշալակէր, կրկու ոտան տայր. նորա որ անփոյթ կային ուսանելուց, ծաղրածու մի գլխարկ դնէր նոցա գլխին և ամանչելով միւս անգամ հետեւէին ուսմանցն:

Ես քեռոյս ներքոյ, Ամբարձին կարգացի. երբ գնացի վարժապետի մօտ, տարաւ այրութենի դասն գցեց. գրաբառից աշխարհաբառ սովորել տվեց. մինչ 2000 բառ սովորելիս ինձ շատ յառաջադէմ գտաւ, այդ աղագաւ գրքատուն, քաղաթ, և գրիչք յանձնեց ինձ որ կառավարեմ»:

Զուղայի մեջ Քաղիաղայանը եթէ կարողացավ շուրջ երկու տարի մնալ, պատճառներից մեկը և դուցե գլխավորն այս էր, որ այդտեղ նրա կյանքի մի նշանավոր դեպքը տեղի ունեցավ: Նա ամուսնացավ Մկրտիչ Սեթյանի աղջկա հետ, որի անունն էր Քանգիսթուն (կոչվում էր պարզապես և Քանգ կամ Քանկ, ինչպես նաև Քանգում): Քաղիաղայանը իր գրավոր վաստակների մեջ շատ հիշատակներ է թողել, որոնք վկայում են թէ նա ջերմապես սիրում էր այդ օրիորդին: Այսպես, «Զեփիւս» անունով գողտրիկ ոտանավորի մեջ նա երգում էր.

Ճեփիւս հեղիկ գորավար,
Մի՛ դու այդքան լուտանար
Թչ գնաս հպել Քանկայ
Եւ նովին անուշանալ:

Օրիորդին Սէթայ
Զինէն այս անուշակ լուր
Թէ փեսայն քո կաթոցնի
Զո՛նէ քեզ զկեանս իւր:
Եւ դու յորժամ կնտրկեալ
Վաղիւ անդուտ առ իս գալ
Ախորժիցիս, բոյր գանուշ
Զնորա ի քէն առեալ:

Անմահանամ ի մարմնի
Տիրիմ երկնից կամարի
Եւ յայնժամ քո ի շնորհ
Արշալուստ ողջոյն դօր:

Հեռանալով Զուղայից, Քաղիաղայանը իր Քանգիսթունի հետ գնում է 1836-ին Քավրիդ: Այստեղ նա անգլիական հյուպատոսի միջնորդությամբ կարգվեց անգլիերենի դասատու արքայազն Մելիք Ղասում Միրզայի մոտ: Քիչ

¹ «Դիտողագիր Յովհ. Շահնազար Սարգսյանի ի Բաղաթիա ի վերայ Կենսագրութեան Մեսրոպը Դ. Քաղիաղայանի», 4. Պոլիս, 1888, էր. 38—39:

¹ Ապոստոլին:

² Մոշի թիւերի ճյուղեր, շորացրած վառելիք:

³ «Ներգրութեան հօրհաս թանկայ Քաղիաղեանց», թիֆլիս, 1893, էր. 75—82:

անցած նա թողնում է այդ պաշտոնը և տեղացի մի քանի հայերի խնդրանքով ստանձնում է հայկաբանության ուսուցչի պաշտոնը Քավրիզի հայոց ուսումնասիրանում, տարեկան 60 թուման ուճիկով: Սակայն այս շնչին գուժարն էլ նա կանոնավոր կերպով չէ ստանում և աղքատության երեսից ստիպված է լինում թողնել և այդ դասերը: Այս եղելությունը պատճառ Գալուստ Շերմազանյանը գրում է. «Եթե Քաղիադյանցը ստացել էր ճշտություններ էս դուզնաքեայ ուճիկը, նա երկար միջոց կը սպասաւորէր իւր աղքի մանկտեացը. բայց աւաղելով սանձ, որ շատ անգամ ուճիկը յամեննալոյ համար, կպարտաւորու էր փոխ առնուլ իւր ծանոթներէն դրամ, օրական պարէն հայթայթելը»¹:

Բացի դրանից Քաղիադյանցին այդտեղ վիճակվեց մի մեծ դժբախտություն: Թանգխաթունը վախճանվեց որդեծնության ժամանակ (1837 թվին): Այս կորուստը մի շատ ծանր հարված էր նրա համար: Շերմազանյանցին նա ասում էր. «Սարսափելի մտայուղութիւն կը զգամ ուսումնարան յաճախելոյս ժամանակն, որովհետև պարտաւոր եմ իմ Թանգ Թանգումի գերեզմանի մօտովն անցանել»: Իր զգացմունքն արտահայտելու համար նա իր սիրածի շիրիմի վրա սև մարմարիոնից, որ միանգամայն հազվագյուտ էր Քավրիզում, հուշարձան կանգնեցրեց և գրեց նրա վրա.

Թանգ Մերովրայ Քաղիադեանց
Օտար յիրոց Հայրենեաց
Ի ծնանել մարդ յաշխարհ
Ինքն ծնաւ առ Աստուած:

Այս բոլորը չէր: Մեծ վիշտը տրամադրում է նրան առաջին ինքնուրույն քերթվածք, որ կրում է «Եղեբերգութիւն յօրհաս Թանկայ Քաղիադեանց» վերնագիրը²: Այս երկը, թեև կիսատ մնացած, պարունակում է իր մեջ շատ ներշնչված, իսկական բանաստեղծական ավյունով շերմացրած էջեր: Ժամանակի սովորության համեմատ՝ քերթվածը կեղծ կլասիկական ձևով է գրված: Նրա մեջ ելլադայի աստվածներն ու աստվածուհիներն են տնորինում ջուղայեցի օրիորդի սրտի գործերը: Թանգխաթունն այդտեղ մի ամբողջ պաշտամունք է քերթողի համար, շրջապատված լուսեղեն տեսիլներով սիրտ մեծ և վեհ տաճարի մեջ...

Թավրիզից Քաղիադյանն իր թափառումները շարունակում է դարձյալ մենակ: Նորից նա էջմիածնումն է, 1838-ին, բայց այս անգամ այստեղ մնալու տրամադրություն չէ ցույց տալիս: Ինչ-որ ընդհարում է ունենում և մի օր զայրացած գնում է վեհարան, բայց այդտեղ ոչ ոքին չէ հանդիպում: Տեսնում է այդտեղ դրած հնդկական մի հախճապակյա թանաքաման, որ թքաման էր դարձրած: Վերցնում է մի կտոր թուղթ ու գրում է նրա վրա.

Երբ թքաման՝ թանաքաման
Դարձյալ տեսեր յայս վեհարան
Զինչ այլ քեզ յոյս յաջողութեան
Կալնուս աստուար, Մերոպ Դաթեան:

Այդ թուղթը ուղղորդում է, կոխում ծակի մեջ և դուրս գալիս հեռանում էջմիածնից, գնում է... Կ. Պոլիս, ուր հասնում է մայիս ամսին (1838), ինչպես ինքն է ասում՝ ունենալով մի գրպոն, որ նման էր դպրոցական երեխաների

ձեռքով ավերված ճնճուկի բուլնին: Տխուր ու տրտում է նա նկարագրում իր տրամադրությունը: Անձրեային եղանակն էլ մյուս կողմից էր նպաստում այդ տրամադրություն: Նա իջնում է Սյունբյուլի-խան անունով պանդոկում և ամբողջ հինգ օր գտնվում է ճնշված ու մռայլ տրամադրության տակ: Միակ մխիթարությունն էր իր ոտանավորների փոքրիկ տետրակը, որին նա տվել էր «Թուֆակ Քաղիադյան»¹ անունը և որի մեջ նա իր զգացմունքներն էր արձանագրում:

Օր հուլի հինգերորդ,
Յոր ես պանդուխտ ի Պոլիս,
Սմբուլ ի վան անձանօթ,
Վաստակաբեկ կամ յուղիս:

Այսպես է նա սկսում իր մի մեծ ոտանավորը: Եվ մենակ ու օտար՝ դարձյալ սիրած կնոջ պատկերն է կանչում սովերների աշխարհից և փարում նրան իր սրտի ջերմ զեղմունքներով:

Մինչ ի խոհին յայս խորհուրդ
Միամ որպես լաստ յուղիս
Ամպ տեղային տարափ յորդ
Զկուրութիւն լալ բախտիս.
Պատկերացաւ հէզ մտաց
Թանգ Մերովրայ Քաղիադեանց
...Վեհ զվարթնոց էր տեսիլ,
Շգարջ դիւրեաւ նրբաթիւ.
Այլ ի մեղոյն աշացն՝ ա՛խ
Դեռ մարգարիտ անձրեկէր:

Սակայն քաղցածությունը դուրս է հանում նրան անուրջների աշխարհից, և նա գնում է պատրիարքի մոտ՝ նրանից օգնություն խնդրելու ժամանակի պատրիարքն էր Ստեփանոս Զաքարյանը, որ իր հեղուկյան համար ստացել էր Աղավնի անունը: Բայց նրան Քաղիադյանը պատրիարքարանում չէ գտնում: Այդ օրը համբարձման տոնն էր և պատրիարքը գնացել էր քաղաքից վեց մղոն հեռու գտնվող Ս. Փրկչի ազգային հիվանդանոցը, ուր ամեն տարի այդ օրը կատարվում էր տարեդարձի հանդես: Քաղիադյանցն ստիպված է լինում գնալ այդտեղ և, երբ հոգնած ու քաղցած տեղ է հասնում, տեսնում է, որ պատրիարքն ու ամիրաները նախաճաշի են նստած: Հյուրընկալ քահանան, որին նա հայտնել էր, թե պիտի տեսնե պատրիարքին, հրավիրում է նրան գնալ նախաճաշին մասնակցել, նա պատասխանում է. «Չէ, շնորհակալ եմ, ես միայն սրբազանի տեսության համար եկի տեղս»:

«Ասացի իրաւի,— շարունակում է Քաղիադյանն իր օրագրի մեջ,— բայց շատ փոշիմանեցայ, քանզի այնքան ճանապարհ անոթի գնալով այնքան ի քաղցել, որ աղինքս ծափին տալման: Յոյս ունէի մին անգամ ևս հրախրէր, ուստի և մտքումս դրի, որ սիրով ընդունիմ, բայց սղալեցայ. քանզի մին դարդարած սենյակ ցույց տալէն յետ՝ աներևոյթացաւ իմ սրբակրօն հիւրընկալն և ես մնացի Մեղասայ պես սովամահ ի մեջ այնքան առատութեան: Արժեք ինձ այս դիպուածն. քանզի օտար տեղ նազ ու դուզ անելոյս այս առաջինն չէր:

¹ «Մասիս» լրագիր, Կ. Պոլիս, 1875 թ. № 1759:

² Տպագրված է թիֆլիսում 1893 թվին:

¹ Տպագրված է Կալկաթայում 1847 թ.:

ինչևիցէ, գլուխ ուռած նստայ մին սիրուն կատաղատի (բանքի) վերայ, և եթէ տեղոյ վայելչութիւնն և հանդիսի նորութիւնն շարաւիին իմ ուշադրութիւնս՝ քաղցն պիտի ավելի ևս նեղէր դիսս:

Բայց ավելի հետաքրքրականն այն է, ինչ հետևում է այս դեպքին: Խոսքը տանք դարձյալ իրան՝ Քաղիադայանին:

«Երթևեկն շատ խիտ առ խիտ էր, — պատմում է նա, — հասարակաց զգեստն միաձև գուսականին կոստակ և մաշիկնին կարծիր. այս կերպ առարկայք շատ տեսնվեցան յորոց մինն, մին պատուական ծերունի, իմ սենեկի դուռն կիսաբաց աննելով դեպի ներս ծկլուկ արար: Ըրամայացիք, ասացի, նայր... Եկավ. միայն հասակին պատիւ տալով՝ կիսատ վեր կացայ կանգնեցայ և ձեռք տեղ նշանակելով՝ հրաւիրեցի որ նստի. որպէս թէ ես էի տան տէր: Հեղահոգին շնորհակալի պէս նշանց տալով իւրն՝ նստաւ: Մտքումս ասացի կարելի է որ սա սրբազան պատրիարքի Քասա վարդարամ, Բուշաբեգովարամ-ներիցն լինի, վասն որոյ փոխանակ տեղիք տալոյ հեղահոգոյն, որ ինքն սկսէր, ևս ինքնին առաջացայ: Լաւ էր, որ նա կուշտ էր և ես անօթի, ապա թէ ոչ՝ չգիտեմ ամպարտաւանութիւնս մինչև երկնից քանի՞ աստիճանն պիտի բարձրաներ:

- Այսօր մեծ տօն ա տեղս մեր ազգի համար, ասացի:
- Հրամներ ես, ասաց, սուրբ Փրկիչ հիւանդանոցին տարեգլուխ նաւակատիքն է:
- Հրամանքդ էջմիածին տեսն՞ր ես, հարցրի:
- Հրամներ ես, ասաց, ու հոն կեցեր եմ մին ժամանակ. ի՞նչպէս ա ծերունագարդ նիւրեմ հրաժարեալ հայրն:
- Ողջոյն և օրհնութիւն ունի, ասացի, բայց ներկայ շատ ա ընկել:

Այս ասութեանս ժամանակում այնպիսի մի տխուր երես շինեցի, որպէս մին օրիորդ իւր դեղ ըմպելու ժամանակումն կը շինի. և նա համարեց, որ իրաւ մեծ կապակցութիւն պիտի լիներ սրբազնասուրբ կաթողիկոսի և իմ մեջ: Ծոցիցն հանեց մին ոսկեջրած թուփունաման, չգիտեմ մեջն ևս նո՞յն էր, թե ոչ, և բերաւ ինձ մօտ՝ հրաւիրելով որ մին պտղունց թուփուն քաշեմ:

Թե սոսկ դիպուած կը համարես այս բանս, և թէ յատուկ դիտմամբ արարած, տված ա կամացդ. բայց արդարն այս է, որ ես երբ որ մատուցն եպիսկոպոսական մատանին տեսայ՝ ծոցն արիժամ մտած պարտիզպանի պէս տեղիցս վեր թռայ, կանգնեցի. միտքս սկսում էր մոլորիլ, ընկերական զրուցատրութենից լեզուս կապ կերաւ, քարէ պատկերի պէս մին փոքր անշարժ կացայ, բայց յետոյ ամեն խելք, եթէ որ ինչ և կէր, գլուխս հաւաքեցի և ասացի.

— Տէր, պանդուխտ մարդն որ կայ՝ կոյր ա, ևս եթէ մինչի կէտս հրամանոց շեմ ճանաչել, ներիր և արդարն խոստովանիր՝ դու ո՞վ ես:

Պատասխանեց հեղահոգին թե՛

— Հոս մարդուն պակաս ըլլալուն համար դիս պատրիարքը կը կոչեն:

Պատրիարք. որ ոք ամպի որոտմունք, թնդանօթաց արձակմունքն ու երկրաշարժական ճայթճայթմունք այսպէս ուժգին չէ թուացել ինձ՝ որպէս պատրիարք բառս:

Մարդ՝ որից որ ես ակնկալի որ ոք պաշտօնիւ դատարկ քսակս լցնել, այնքան խոնարհ, հեղ և ճշմարիտ հոգով աղքատ երևաց, մինչ ևս ափսոսացի, որ փող շունի հանեմ իւրն տամ: Այս բանումս թէ՛ նա թէ՛ ես հաւասար էինք. նա անընչասէր և հասարակաց օգնական գոլովն՝ կարծեմ մին սև փող չունէր, և ես դատարկ պատելով և ինչ ունի շոռայարար մսխելով, մին սև փող շունի: Յոյսն միայն էր մեր ունեցածն, յորմէ մին լերան շափ նա ինձ

շնորհեց և երկուքի շափ՝ ևս նրան, մինչև բաժանվեցանք, և մնաց ինձ սեպհահան իմ կամակոր անօթութիւնը՝:

Այս տեսակցութիւնից հետո է, որ Քաղիադայանն ստանում է ուսուցչության պաշտօն Սերվերչան Հովհաննես ամիրայի տանը: Բայց այս պաշտօնում կարողանում է մնալ հազիվ մի քանի ամիս: Այնուհետև մենք նրան տեսնում ենք ամերիկական միսիոնարների մոտ հասարակ գրածախի պաշտօնում: Այս նոր զբաղմունքը մի շատ վտանգավոր կացութիւն է ստեղծում Քաղիադայանի համար: Բողոքականութիւնը նոր էր սկսել հաստատուել թուրքահայերի մեջ, և Կ. Պոլսի հայոց հոգևոր իշխանութիւնը, հանձին պատրիարքարանի, կարծում էր կանգնեցնել այդ շարժումը հալածանքների միջոցով: Հալածանքների սկիզբ դնողը Հակօրոս պատրիարքն էր, որ հաջորդեց Ստեփանոս Աղալնի պատրիարքին 1839 թ. մարտին: Եվ ահա Քաղիադայանն էլ, իբրև միսիոնարների համար Աստվածաշունչ ծախող, համարվում էր բողոքական և նրան էլ ենթարկում էին բռնութիւններին:

Տարբախտաբար, մեր հեղինակի կյանքի այս հանգամանքն մանրամասն պարզելու ոչ մի հնարավորութիւն չկա: Միակ աղբյուրը Քաղիադայանի երկունամահներն են, որոնց մեջ դեպքերի նկարագրութիւնը կցկտուր է, շատ համառոտ: Մենք միայն խուլ ակնարկներ ունենք մի ինչ-որ դավադրութիւն մասին, որ Կ. Պոլսում սարքվեց Քաղիադայանի դեմ: Ահա այդ նամակներից մեկը, որ առաջին անգամ հրատարակել է Հովհ. քահ. Մկրտչանը Քաղիադայանի կենսագրութիւն մեջ:

«Գերազնիւ աղայ Անդրէաս Ուսպէլեանց Յարգելի եղբայր.

Յետ ճանապարհորդելոյ զձեզ ի ցանկալի աշխարհ հայրենեաց, վերադարձայ ի սենեակ անդր իմ ի փարթամ Փաշա խան և ննջեցայ զբուն հոգոց և տրամութեան միանգամայն: Ի մէջ թանձր թմրութեան իմոյ լուայ զբախտիւն դրան սենեկի իմոյ, բացի և ահա՛ Մարգար ժամհար պատրիարքի եմուտի ներքս և բանիւ փոխանորդին հրաւիրեաց զիս ի պատրիարքարանն Պոլսոյ:

Ժամ էր մետասաներորդ՝ այլևս հնազանդեցայ նմա իբրև իմ ազգի պատրիարքի և հօր. յարեայ ամենայն միամտութեամբ և շոքայ անդր: Իբրև յանդիման եղէ փոխանորդին, յարտաքին երեսս մեծ սէր և ընդունելութիւն կեղծաւորեալ՝ հրամայեաց ածել մեզ սուրճ. և յաւել ևս յասել. «Թէ յառաջիկայ աւուր հինգշաբթի ժողով լինի վարժապետաց յորոց և դու մի, խնդրանօք ազգին պարտիս ներկայ գտանիլ և ընդունիլ զբաւականութիւն քո»:

Առ այս շնորհակալ մեծ եղէ զնմանէ և համբուրեալ զաջն իջի յեկեղեցի Աստուածածնի և մատուցի Աստուծոյ զիմ ամենաջերմեանդ և զմիամիտ գոհութիւն: Այլ այն ինչ աղօթք ի բերանս էին, եկին ութն ժամակոչք և հրաւիրեցին զիս տեսնել զմի ոմն ի վարդապետաց, կեղծելով թէ ունիցի բանս ինչ խօսելոյ ընչ իս: Իբրև մերձ հասուցին ի դուռն խաւարային բանտին՝ բացեալ զայն ընկեցին զիս ի ներքս և աղիւսեցին զայն նզօք հզօրօք և կղբօք անլուծանալիօք, ուրան օր զգիշերն ողջոյն անցուցի անմուաղ և ցրտահար, մերձ ի մահ:

Ունենալով առձեռն պատրաստ կապարեայ գրիչ և թուղթ, ութն տոմսակս գրեցի զանազան լեզուօք առ զանազան կարծեցյալ բարեկամս: Այլ պահք պատրիարքին կալեալ զայն՝ զոր գիտացին ընթերցան, և զոր ոչն գիտա-

¹ «Ազգասեր», 1845, եր. 39:

ցին, առաքեցին կոչեցին զմարդիկն առ որ և գրեալքն էին և ի նոցանէ իմացան զմիտս գրելոցն ամենեցուն, որ էր. թե ո՛վ ոք բնթեոնուցու՝ զիւանի դեսպանութեան ամենաողորմած կայսեր մերոյ ազգ արասցէ թէ Մեսրոփ բանտարկեալ իցէ ի պատրիարքէ Հայոց:

Ընդ լուսանալ առաւօտուն, հանին զիս ի բանտէ անտի և մեծաւ աղերսանօք ի բաց արձակեցին զիս:

Անցազիր տէրութեան կայսերական կնքով էր ի ձեռին իմում, ի ժամ բանտարկութեան իմոյ, և հնար էր տանել զայն և արկանել ի դիւան անդր, սաստիկս բողոքելով զպատրիարքէն, այլ ազայք Քերոփ, Մկրտիչ և Գէորգ մեր կարի և կարի խնդրանօք աղաչեցին զիս ներողամիտ լինել զի մի՛ ազգն տուժեսցէ և անուն պատրիարքին չարիս ինչ յինքեան կրեսցե: Լուայ և սոցա:

Վրէժխնդիր չեղէ, այլ և զգիրս Ամերիկացոց վաճառելն արգելայ. և ի պնդել նոցա զիս առ այն, միանգամայն թողեալ զգործ նոցա, և զանուն, և Կոնստանտինուպոլիս միանգամայն, յերէկ իջի ի Տրապիզոն և գտեալ զի Իսմայիլ բեկ շափար գայր յանկարծ այդր, զայս թուղթ ծանօթութեան հապճեպով գրեցի առ ձեզ:

Յուսուցեալ առ ի ձէնչ մխիթարական ինչ պատասխանուց, զոր լուսամ գտանել ի ժամանել իմում չէրզրում:

Աստղաբաշխութիւն սկսաւ տպագրիլ:

Խոնարհ ծառայ

Մ. Գ. Թաղիաղեանց:

Ի Տրապիզոն, 1839 մայիսի 16»:

Այս նամակի մեջ նկարագրված դեպքը վերին աստիճանի հետաքրքրական է հայոց ընդհանուր հասարակական մտքի պատմության տեսակետից: Հայ էյանքից դուրս եկած, հայության լավագույն իղեալներով տոգորված շատ երիտասարդներ, շփվելով եվրոպական գաղափարների հետ, կյանքի նոր դեկավարող առաքյալներ հանդիսանալով, հայկական ավանդապահության կողմից նկատվում էին իբրև ազգության հիմքերը փորոզ վնասակար աղանդավորներ, որոնց պետք էր հալածել անխնա: Այս վիճակին ենթարկվեցին, Թաղիաղյանի հետ միասին, և Խաչատուր Աբովյանը, սրանցից հետո Ստեփանոս Նազարյանը, Պետրոս Շանշյանը և բազմաթիվ այլ գաղափարական երիտասարդներ: Նրանց բոլորին միատեսակ հանցագործություն էր վերագրվում, լյութերականություն, բողոքականություն: Հայ կղերը ցույց տվեց մի հալածասիրական եռանդ: Հակոբոս պատրիարքը միակ օրինակը չէր: Նրանից ավելի մոլեռանդ և անհաշտ էր Մատթեոս Չուխաճյանը, որ Կ. Պոլսում իբրև պատրիարք և էջմիածնում իբրև կաթողիկոս՝ միջնադարյան հավատաքննական անհաշտություն ծավալեց հայ երիտասարդության դեմ, զիմելով ամենից շատ ամոթալի միջոցներին անգամ:

Բնորոշ է այս հալածանքների մեջ և այն հանգամանքը, որ հալածվողները ստիպված էին լինում զիմել ուսաց կառավարության օգնության, թեև այս նեցուկն էլ այնքան ապահով չէր, որովհետև միապետական կառավարությունը չէր կարող շոյել ժողովրդապետական գաղափարներով տոգորված երիտասարդներին:

Թաղիաղյանը թեև ազատվեց պատրիարքական բանտից ուսական դեսպանության ազգած երկյուղի շնորհիվ, բայց և այնպես, մնալ Կ. Պոլսում այլևս չէր կարող: Իր երկար նամակի մեջ նա նույն Ուսպելյանին գրում էր. «Եթե տեղեակ լինէիք տարապարտ հալածանացն իմոց ի Պոլիս—Յովհաննու

ճարտարապետի անմահ դժտութեան, երկու հարիւր քսակաց կաշառոյն, և դաւաճանութեան զի լռելեայն կալեալ զիս առաքեցին ի Սիբիր, իբրև զմահապարտ»: Նամակի վերջում էլ ավելացնում էր. «Բարեկամք մեր ի Պոլիս տակաւին անտեղեակք են կենդանութեան իմոյ, ոմանք համարին ի մահ և ոմանք ի Սիբիրիա վարեալ զիս. ուստի և վասն Աստղաբաշխութեան իմոյ լուր շու՛նիմ»: Թե ինչ են նշանակում այս ակնարկները մի ինչ-որ սուկայի զավաղութեան մասին, որի ղոհը պիտի գտնար Թաղիաղյանը՝ հայտնի չէ: Գիտենք միայն, որ նա փախչում է Տրապիզոնի վրայով էրզրում, բայց ոչ թե կովկաս վերադառնալու համար: Դարձյալ Հնդկաստանի ճանապարհն է բռնում նա, ուղևորվելով էրզրումից Միջագետք և այնտեղից դեպի Պարսից ծոցը:

Այս դժվար ճանապարհորդության մանրամասնություններն էլ հայտնի չեն մեզ: Նույն նամակի մեջ եղած մի քանի ակնարկները վկայում են, որ այդ ճանապարհորդությունը արկածների մի շարան էր: Անիշխանություն էր տիրում ամեն տեղ: Թաղիաղյանը հիշատակում է օսմանյան զորքերի պարտությունը Բերեջիկի մոտ: Այս այն պարտությունն է, որ օսմանյան բանակը կրեց Եգիպտոսի Իբրահիմ-փաշայից և որ բաց էր անում հաղթողի առջև ճանապարհը Փոքր Ասիայի վրայով մինչև Կ. Պոլիս: Այսպիսի մի վտանգավոր ժամանակ, իհարկե, անկարելի էր, որ Թաղիաղյանը մենակ ճանապարհորդելու վտանգին ենթարկեր իրան: Եվ իրավ, մի փոքրիկ հատվածից, որ տպված է «Ազգասերի» մեջ (1846, էր. 6), մենք իմանում ենք, որ նա դեպի Մոսուլ և Բաղդատ գնում էր մի կարավանի հետ, որի մեջ էր անգլիական հազարակա Ռըսսելը և որի պաշտպանության համար քրդերի մի խումբ էլ կար Յուսուֆ-աղայի զխալթորությամբ: Բայց և այնպես, նա վտանգից միանգամայն ազատ չմնաց և նրա վերոհիշյալ նամակի մեջ տեսնում ենք հիշատակություն, որ նա գերի է ընկել արաբների ձեռքը Սրվիլի անապատում:

Բայց վերջապես, ազատվելով բոլոր վտանգներից, նա հասնում է Կալեպթա և առաջին նվազ ապաստան է գտնում Եպիսկոպոսական ճեմարանում: Այստեղից նա առանձին եռանդով նվիրվում է մատենագրական գործունեության: Գրողի կոչումը չէր խլանում նրա մեջ կյանքի նույնիսկ դժնդակ պայմաններում: Արդեն տեսանք, որ Կ. Պոլսի հալածանքների ժամանակ անգամ նրա մտահոգության առարկան իր կազմած «Աստղաբաշխությունն» էր, որ տպագրվում էր, թե պիտի տպագրվեր: Հասնելով Հնդկաստան, նա ամեն ջանք գործ է դնում հրատարակչական գործունեություն սկսելու համար: Այդ միջոցին էլ նա գրում է Հին Հնդկաստանի պատմությունը, որ տպվեց 1841 թ. Եպիսկոպոսական ճեմարանի տպարանում: Բայց նա միայն իր աշխատությունների մասին չէր մտածում, այլ ուզում էր կազմակերպել մի հրատարակչական-տպագրական գործ, ուստի և դիմում էր այն անձանց, որոնք կարող էին ունենալ տպագրելու գրքեր և հայտնում էր, թե ինչ գներով ինքը հանձն էր առնում տպագրել ամեն տեսակ աշխատություններ: Ինչպես մի ժամանակ Շահամիրյանն էր Մադրասում սկսել հին մատենագրության վերարերյալ հիշատակարաններ տպագրել, այնպես էլ այժմ Թաղիաղյանն էր, որ ուզում էր նույնպես սկսած լինել այդպիսի մի գործ: Այսպես, 1840 թ. դեկտեմբերին Թավրիզ, Անդրեաս Ուսպելյանին և Ստեփանոս Ներսիսյանին գրած իր նամակում նա խնդրում էր «գտանել հնագոյն և անծանօթ մատենագրութիւնս զսրբոց մերոց նախնեաց, և առաքել այսր ի հրատարակումն նոցա յազգի

¹ Պատմութիւն Հին Հնդկաստանի, յանհիշատակ դարուց անտի ցարձակումըն Մահմեդականաց ըստ արանդելոց մատենագրաց այլ և այլ ազգաց: Նուիրեաց ի պատիւ Հայոց ազգին Մեսրոփ Դաւթեան Թաղիաղեանց, սարկաւազ սրբոյ էջմիածնի»:

մերում»: Երկու ամսից հետո նույն պարոններին գրում էր նա իր աշխատու-
թյունների մասին:

«Նուազութին ազգի մերոյ ի Հնդկաստան,— ասում էր նա,— պարտա-
ւոր առնէ զիս ապաստան անկանիլ ի շնորհս հեռաւոր բարեկամաց: Վասն որոյ
համարձակիմ պահպանել ի սմին զօրինակ շրջաբերականի իմում յաղագս
տպագրութեան պատմութեան Հին Հնդկաստանի, զորոյ նմանն չիք բնաւ յազ-
գի մերում... Տասնեութ հատոր գրեանք՝ միայն լինէն շարադրեալք պատրաս-
տի կայ վասն տպագրութեան, և կարօտի օժանդակութեան ազգասիրաց մերոց
ընդ ամենայն տեղիս: Եթէ շնորհ արասցիք գոնեա դուզնաքէիւք օգնել ինձ,
ուրեմն նուիրեալ զկեանս իմ բովանդակ աղգային օգտի, պարապեցայց ի
սմին, առանց ակնկալութեան աշխարհիկ շահուց:»

Սկսեալ ի 1827-էն մինչև 1840 մեծահոշակ աթոռն Հայաստանեայց ս.
էջմիածին, իւր հինգ հարիւրաւոր միաբանիքն և համօրին ազգիս եկամտովն
չտպեաց այնքան գրեան, որքան նուաստս միայնակ: Գրեանքն զորս նորա
տպեն, շեն այլ ինչ, քան ժամագիրք և Շարական, զորս ինքեանք ոչ շարադրե-
ցին. բայց իմայինքն բոլորք են նոր և առաւել ևս պիտանիք: Արդ եթէ նորա
ձերոց ողորմութեանցն կարօտին, և գան և առատապէս վարձատրին, ընդե՞ր
ոչ և նուաստս, որ քան գամենեսին զնոսա առավել վաստակեցի:

Ոչ շատ խօսեցայց. աղաչեմ յընդունել ձերում զայս, առանց ժամանակ
կորուսանելոյ՝ շնորհ արասցիք նախ՝ զանձինս օրինակ կացուցանել ստորագրու-
թեամբ անուանց ձերոց, և ապա զայլս ի նոյն յորդորելով, հաւաքել զգումարն
և հանդերձ անուամբք ազգասէր օժանդակացն, փութով հասուցանել աստ առ
իս անգղիացի կամ հաստատուն պարսիկ փոխանորդագրով զի տպագրեցից
ընդ տրոց՝ և զանուանս նոցա ի գրի այդմիկ, առ յափտենական և յանջնջնիլ
յիշատակ նոցա, քան զոր չիք բարի, հաստատուն և անասան յաշխարհի»:

Անդրեաս Ուոպելյանի հետ մտերմություն էր ունեցել Քաղիադյանը Քալի-
բիզում և ապա Կ. Պոլսում: Ուոպելյանը մի ժամացույց էր ընծայել նրան
«ազգի օգտին գործադրած նրա թանկագին ժամանակը շափելու համար»: Այժմ Քաղիադյանը հաղորդում էր նրան, թե այդ ժամացույցը նա կորցրել է
իր արկածալից փախուստի ժամանակ և ավելացնում էր. «Ահա ժամանակ
եհաս, սիրելիս, ահա տպարան մի ի ներքոյ, և գրիչ սուր ի ձեռիս հռչակել
զառաքինութիւն իմոց սիրելեաց: Մի՛ գանդաղիր, մի՛ վհատիր ի հեռաւորու-
թենէն իմմէ. զի սիրտ իմ միշտ մտտ է ձեզ և երիկամունք իմ դողան առ ան-
ձուկ կարօտանացս վասն ձեր: Զանա՛ սերմանել յերկրի արգաւանդ. և քա-
ղեսցես անտի քեզ զհունձ բազում»...

Հին Հնդկաստանի պատմությունը, որի համար այսպիսի եռանդուն կոչեր
էր անում բազմամաստակ հեղինակը, տպագրվեց: Բայց երազ մնաց Քաղիադ-
յանի գլխավոր տենչանքը՝ ամբողջապես նվիրվել հայ գրականության, ամբող-
ջապես թաղվել իր հատորների մեջ, հեռանալով աշխարհի շահերից: Այսպիսի
հնարավորություն հայ կյանքը չէր տվել ոչ ոքի և չէր կարող տալ: Եվ Քա-
ղիադյանը հարկադրված եղավ ուրիշ գործի կաշնել՝ ապրելու համար: Այդ մի-
ջոցին նա ամուսնացել էր Հովնան Խաչատուր անունով զվարճախոս հայի աղ-
ջիկներից մեկի հետ, որի անունն էր Շուշան: Ստանալով մի շատ փոքրիկ
օժիտ (2 հազար ռուբլի), նա մտածում է առևտրի մեջ մտնել և գնելով քիչ
մանրունք, գնում է երկրի ներսերը իբրև փերեզակ ման գալու: Բայց վաճա-
ռականություն չէր տված նրան: Անփորձ ու անճարակ լինելով այդ արհեստի
մեջ, նա վեց ամսվա ընթացքում կորցնում է իր ողորմելի դրամագլխի կեսը:
Բայց հայ գրականության համար այդ ձախորդ մանրավաճառության մեջ մի

գեղեցիկ խորհուրդ կար ծածկված: Ճակատագիրը, կարծես, այդպես էր տնո-
րինել, որ հայ հեղինակը Հնդկաստանի խորքերը մտնել փերեզակի աստանդա-
կան կացութեամբ և իր թափառումների ժամանակ, հնդկական անծանոթ գյու-
ղերում և քաղաքներում ստեղծագործել լավագույնն իր բանաստեղծական խո-
շոր գործերից: Եթե դարերի թափառիկ հայության ճակատագրի մեջ շատ ու
շատ կան զարմանալի երևույթներ, դրանց մեջ առաջին տեղերից մեկը պիտի
բռնե այս հանգամանքը: Հեռավոր Հնդկաստանի անծանոթ խորշերում հայի
առևտրական տաղանդը չէր միայն փայլում: Փերեզակի կապոցների մեջ Կալ-
կաթա էր գնում և մի գեղեցիկ գրական գործ:

Քաղիադյանը Խաչկյան քահանայի մոտ է գնում և ասում է նրան.

— Բիճ մի բերած եմ իմ հետ երկրամիջին. կը մկրտե՞ս զայն և կը դրոշ-
մե՞ս արդյոք:

Քահանան պատասխանում է.

— Ընդոծիններու (բիճերու) համար մկրտութեան արգելք չկա. նոցա
հանցանքը իրեանց ծնողաց կը վերաբերի:

Այն ժամանակ Մեսրոպը ծոցից հանում է մի նեղ ու երկար տետրակ ճիշտ
այն ձևի, ինչպես լինում են մանրավաճառների օրահաշիվները և, զննելով քա-
հանայի առջև, ասում է.

— Ահա ստիկ իմ բիճս, առ և օձէ զայն, դա բաւական է, որ դու այլևս
գանգատներ չանես, թէ ես մոռացել եմ գրականութիւնը:

Դա «Սօս և Սօնդիպի» քերթվածն էր, Քաղիադյանի բանաստեղծական
դուլի գործոցը և նրա գրական հռչակի հզոր պատվանդանը:

4. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: Այս զարմանալի «բիճը» առիթ է դառ-
նում, որ կազմակերպվի մի գրական հիմնարկություն, ուր Քաղիադյանը պիտի
շատ գործոն դեր ստանձներ: «Սօս և Սօնդիպին», Խաչկյան քահանայի խոր-
հրդով, Քաղիադյանը տանում է տեղացի վաճառական Մանուկ Զորաբյանի
մոտ, որ ինտելիգենտ մարդ էր, քաջ գրավարժ հայերենի մեջ: Նա և Քաղեոս
Ավետումյանը, նույնպես գրող, այդ երկասիրության շնորհիվ դառնում են Քա-
ղիադյանի բարեկամները, իսկ այդ բարեկամությունից ծնվում է «Արարատ-
յան» ընկերությունը, որի կանոնադրությունն ստորագրվեց 1845 թ. հուլիսի
17-ին:

Այսպես էր այդ դաշնագիրը, որ գրել է Քաղիադյանը.

«Յայտնի լիցի ամենեցուն զի մեք ներքոյ ձեռնադրեալքս ազգասիրական
ոգով միաբանեալ հաստատեմք ընկերութիւն մի գրաւոր և ուսումնական,
ունելով մեր նպատակ զօգուտն՝ զյառաջագիմութիւն և զբարին Ազգիս Հայոց,
և այսու դիտմամբ հաստատեմք զՏպարան մի առ ի նովաւ նպաստամտոց
լինել լուսաւորութեան և յառաջագիմութեան Ազգիս, տպագրութեամբք պիտա-
նեաց: Եւ վասն հաստատութեան՝ յառաջատուութեան և բարւոք կառավարու-
թեան Ընկերութեանս այսորիկ և Տպարանիս՝ կարգեալ զնեմք այսու զհետա-
գայ դաշինս, կարգս և կանոնս, ընթանալ համեմատ նոցին և պահել զայնո-
սիկ: Այսինքն. Ընկերութիւնս այս կոչեսցի Արարատեան Ընկերութիւն:

Պարոնայք Պետրոս Յ. Սարգսեանց, Յովսէփ Ա. Ազարէզեան, Քաղեոս
Խ. Աւետումեան, Աւետիք Գալստեան, Մանուկ Զորաբեան և Մեսրոպ Գ. Քա-
ղիադեանց գուրով հիմնադիրք և հաստատիչք Ընկերութեանս՝ են կոչեսցին Ըն-
կերք կամ Անդամք Արարատեան Ընկերութեան:

Նպատակ և Դիտումն Ընկերութեանս է և լիցի միշտ ձեռնաւոր և նպաստա-
ւոր լինել յառաջագիմութեան, լուսաւորութեան, օգտի և բարւոյ Ազգիս յա-
մենայն կարևոր և պիտանի կրթութիւնս ի ձեռն տպագրութեանց պիտանի և

բարեկնօն գրեանց և լրաթղթոյ և տարածեալ սփռել զայնոսիկ ընդ ամենայն տեղիս ի մեջ Ազգիս երժանագոյն գնովք, և ըստ պահանջման հարկին՝ ձրիապէս ևս. զի առհասարակ դիրահասանելի լիցի ամենեցուն ռուսմն և գիտութիւն կարեւորաց:

Իւրաքանչիւր ոք յընկերացս ունիցի հաւասար քուէ յամենայն իրս և ի գործանութիւնս Ընկերութեանս. այլ միշտ ի բանացին հայելով, և ի պատահիլ անհամեմատութեան կարծեաց, մեծագոյն թուով՝ քուէի Ընկերութեանցն վերջաւորելի է խնդիրս:

...Գործածութիւն և վարումն Տպարանիս լիցի տպագրութիւն շաբաթական Լրաթուղթոյ միայ Հայերեն և պէսպէս պիտանի և բարոյական գրեաց թե Հայերէն և թե Անգլիերէն. նաև զանազան թերթից և գործոց, ի նպաստ միայն տպարանիս:

Յիշեալ Լրաթուղթս կոչեսցի Ազգասէր, դիրահասականալի ոճով, պարապեալ գլխովին յառարկայս և ի նիւթս բարոյական, քաղաքական, պատմական, վաճառականական և այլ այնպիսի ազգայօգուտ բանից, զորս Տպագիրն պարտ է կանխիկ հաւանութեամբ Քննչացն տպագրել:

Մի՛ բառ երբէք տպեսցի կամ թոյլ տացի տպել ի այն Լրաթղթի բան ինչ թշնամական, նախատական, խոցողական և բամբասանաց կամ պարսաւանաց դումեքէ առանձնակի՝ եղելոյ թէ աստ և թէ այլ ուրեք, ո՛չ պարզ և ո՛չ քողարկեալ ձևով. բայց հնար է ազգասիրական ոգով և յորդորական եղանակաւ, ցաւակցական բանի՝ խօսել և ճառել զպակասութեանց և զթերութեանց Ազգիս հասարակօրեն և ընդհանրապէս. և ոչ թէ՛ առանձնակի և յստակօրէն, դիտմամբ ուղղելոյ զպակասութիւնսն զազգայինս, և վասն այսպիսեաց բանից զգուշութիւն մեծ պիտի ի կողմանէ քննչացն թէ՛ ի վերայ իսկական գրութեանց իւրեանց, թէ՛ ի վերայ գրութեանց Տպագրին, և թէ՛ ի վերայ գրութեանց Բանագիրաց արտաքնոց՝ որք հաճեսցին առաքել զբանասիրութիւնս ի տպագրութիւն:

Տպարանն մի՛ երբէք թողցի պարապ, այլ միշտ պատաղեալ լիցի տպագրութեամբ Լրաթղթոյն, մատենից և թերթից, զուգապէս և յաջորդաբար շարունակութեամբ:

Ծաղք Տպարանին տնօրինելի և կարգադրելի է յընկերացս միաբան հաւանութեամբ, և հատուցանելի յեկամտից և յարդեանց տպագրութեանցն՝ համեստօրէն շափաւորելով: Իսկ ի սկզբան գործոյս յայտնի շինելով ապագայ եկամուտ նորին ի ստորագրութեանց և յայլ պէսպէս տպագրութեանց և յաղբերականց, վասն որոյ առայժմ և մինչև յամիսս վեց զամենայն ժախս Տպարանիս յանձն առեալ վճարեսցին հաւասարապէս անզամբ Ընկերութեանս. վերստանելի ապա յեկամտից և յարդեանց Տպարանին:

Ամենայն գրեանք տպեալ ի տպարանիս լիցին և համարեսցին ստացուածք Ընկերութեանս՝ վասն օգտի ազգիս Հայոց. և զայն ամենայն պարտ է վաճառել թէ աստ և թէ առաքմամբ յայլ և այլ երկիրս երժանագոյն գնիւք. յորոց և առաքեսցին վասն դպրոցաց Հայոց եղելոց ընդ ամենայն տեղիս առ ի բաշխել և տալ ձրիապէս այնպիսեաց աշակերտացն՝ որք շունիցին զկարիս գնելոյ. և այս պարտի յայնժամ լինել, երբ վաճառեալքն վճարեսցեն նախ զժախս տպագրութեան նոցին:

Բովանդակ արդիւնք Տպարանին յառաջացեալ ի ստորագրութեանց և ի տպագրութեանց և ի վաճառմանց տպեալ մատենիցն ազատ յամենայն հարկաւոր և շափաւորեալ ծախուց Տպարանին, լիցին և համարեսցին ստացուածք Ընկերութեանս անբաժանելի. զոր նոյնպէս պարտ է պահել վասն ազգային օգտի Ընկերութեանս ի վերայ Տերութեան մուրհակաց, կամ ի վերայ այլ իմ

շահաւէտ գործոյ, ըստ միաբան հաւանութեան և տնօրէնութեան ընկերացս, և զամենայն արդիւնս յառաջացեալս անտի՝ նոյնպէս վարել ի պէտս նպատակի Ընկերութեանս յօգուտ Ազգիս միայն:

Ոչ ոք չընկերացս կարասցէ տալ տպագրել գրեանս վասն առանձին օգտի և շահի իրոյ՝ ծախիւք Ընկերութեանս, սակայն կարող է առնել զայն վճարմամբ հաստատեալ ծախուցն:

...Յամենայն մատենից և ի գրեանց տպագրելոց ծախիւք Ընկերութեանս՝ տացցի իւրաքանչիւր անզամոյ Ընկերութեանս օրինակս վեց, իրրե պարգև հեղինակութեան, թէ իցէ հեղինակ:

Եթէ ոք յարտաքնոց ազգասիրական ոգով պարգևեսցէ Ընկերութեանս զգումար ինչ որամոյ իրրե օգնականութիւն և նպաստաւորութիւն յառաջառութեան նպատակի Ընկերութեանս, համարեսցի և լիցի դումարն այն անբաժանելի ստացուածք Ընկերութեան՝ վասն Ազգային օգտի:

Եթե ոք յընկերացս կամիցի հրաժարիլ և ելանել յընկերութենէս, ազատ և արձակ լինիցի. բայց ոչ կարասցէ առնուլ յետս զհանդանակութիւն իւր. և ո՛չ իսկ պահանջել զբաժին ինչ կամ արդիւնս Ընկերութեանս. զի այն ամենայն պարտ է մնալ անբաժանելի և պահպանելի յընկերութեանս վասն օգտի Ազգիս Հայոց:

Եթէ ի բերմանց ժամանակի, պատահմանց, հանդամանաց կամ հարկի, դեպ լինիցի խափանիլ Ընկերութեանս, յայնժամ բովանդակ ստացուածք վերաբերելիք ընկերութեանս և տպարանիս այսմիկ՝ լիցի վասն ազգային օգտի, տնօրինելի և առաջադրելի յայնժամ միաբան հաւանութեամբ ընկերացս:

Որ կամիցի նոր ընկեր լինել՝ պարտի տալ 500 կումբանոյ Ռուսիսա՛:

Այս դաշնագրութեան զորութեամբ իսկույն բացվում է հայերեն տպարան և 1845 թ. օգոստոսի 16-ին լույս է տեսնում դաշնագրութեան մեջ նախատեսված շաբաթաթերթը, որ կրում էր այսպիսի վերնագիր: «Ազգասէր, օրագիր Արարատեան Ընկերութեան քաղաքական, տնտեսական, բնական և բարոյական գիտելեաց»: Հրատարակվում էր շաբաթը մի անգամ, խառն լեզվով: Գլխավորապես Ջուղայի բարբառին մտնեցող մի աշխարհաբար էր գործ ածվում, բայց պատահում էին և զբարբար հողվածներ: Շաբաթաթերթի ձևկատին դրվում էր Արարատյան Ընկերութեան խորհրդանշանը՝ Մասիս սարը, վրան՝ նոյի տապանը, ստորոտում՝ բացված դիրք: Այս ամբողջը ճաճանչներ է արձակում: Խորհրդանշանի տակ տպվում էր՝ «Ուսումն անէ զմարդ երջանիկ»: Յուրաքանչյուր համարը բաղկացած էր ութ միջադիր երկիջեան երեսներով: Ստորագրութեանն էր. «Մ. Գ. Թաղիաղյանց վերատեսուչ», այսինքն խմբագիր: Իսկապես ամբողջ ընկերութեան հոգին Թաղիաղյանն էր: Նա էր և տպարանի կառավարիչը, և տպագրվող գրքերի հսկիչը, և ընկերութեան գրադարանի տնօրենը:

Շաբաթաթերթի առաջին համարում խմբագրությունը դիմում էր «առ պատուելի հասարակութիւն ազգիս» մի հողվածով, որի մեջ առաջ էր բերում Արարատյան ընկերութեան՝ մեզ արդեն հայտնի պայմանները և հորդորում էր ամենքին աշակցել այդ գործին: Ապա մի առանձին հողված նվիրում էր «Ազգասէր» շաբաթաթերթին, ուր Աստվածաշունչից օրինակ բերելով Մովսես մարգարեի ազգասիրական արարքները եզրապատում, հրեական ազգի դուրս հանվելը եզրապատուց նրա ձևըով, որ ղեկավարում էր Եհովան, պատվիրելով Մովսեսին՝ «Խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի և շուեսցին» խմբագիրն ասում էր.

Նախ քան ազգի մէջ երևելու, ազգասէր անուամբ պատուեցար, շատ լաւ Աստուած շնորհաւոր անէ: Բայց ջանաս որ քո ազգասիրութիւն Մովսեսի նման

¹ «Ազգասէր», 1846, եր. 58—60:

ճշմարիտ և ազգագրուտ լինի: Տես թէ ի՞նչպես նա իւր մին ազգակիցն անգութեզիպտացու ձեռից ազատելոյ համար Փարաւոնի տան փառքն ուրացաւ և մին հասարակ հովիւ դարձաւ: Դու ևս փառք անունն, որ մի փուք աւելի չէ, երբէք մտքում մի բերիր. այլ ջանա վայելչական միջոցօք Աստուծոյ փառքն քո Հայրենեաց ցոյց տալ. և քո սիրելի Ազգիդ փառքն համատարած աշխարհի: Ազգիդ անցեալ մեծ փառասիրութիւնն և ներկայ ցանուցիւր և տառապեալ կացութիւնն այնպէս համարեա որ մի կողմից ծով և մյուս կողմից փարաւոն պալարեայ պատեալ են զնա. մի աղաղակ բառնար կեղծաւորաց նման ի տես մարդկան՝ որ վարձ չունենաս. այլ ճշմարիտ ազգասէր Մովսիսի նման քո հոգոյ միջիցն գոչի՛ր. անխափան Աստուած կլսի քեզ: Մովն՝ այսինքն գծվարութիւն կպարտուի քո առաջին, կալուկապի միջովն քեզ հեշտ ճանապարհ կբանայ:

Մի՛ վախիր, մանուկ Ազգասէր, քանզի այն ազգն որ դու աւետել ես սիրել, Աստուծոյ Ազգ և սեպհական ժողովուրդ է, որպէս յետոյ պատմելոց եմ քեզ: Որքան դու նորան սիրես, այնքան ևս Աստուած քեզ կսիրի. այո և իւր սիրելի ազգի և սեպհական ժողովուրդի սիրտն՝ որ թաքուն իմաստութեամբ իւր ձեռումն ունի իբրև թաս կամ ըմպանակ անուշից՝ ողորմութեամբ կշրջի քեզ վերայ. այնուհետև Ազգասէր յընդհանուր յԱզգէն կսիրվես, կփայփայվիս, կզրկվիս. և մոռանալով քո տարապարտ և աստանդական վիճակդ՝ կմտանես քո սիրելու այգին. և պարարտութեամբ պտղուց լիացեալ՝ փառք և գոհութիւն կտաս Աստուծոյ, որ քեզ իւր սեպհական Ազգին շնորհեց և սեպհական Ազգն քեզ՝ Վասն որոյ բարեաւ զնաս, և շնորհք Տեառն ցողեսցի քե ի վերայ բոլոր Ազգիս Հայոց»:

«Ազգասէրը» հնդկահայ պարբերական հրատարակութեաններէ մեջ ամենից երկարակցացն էր: Նա ընդհանրապես հավատարիմ մնաց իր անվան, հասկանալով այդ անունն այն մտքով, որ, ինչպես տեսանք մեր այս գործի առաջին գլխում, միակ հասկանալին և տարածվածն էր այն ժամանակներում: Թերթը նմանապես հավատարիմ մնաց այս ծրագրին և ուղղութեանը, որ նախորդված էր, ինչպես տեսանք վերևում, ընկերութեան պայմանագրութեան մեջ: Հետո մնալով խիստ լեզվից, անձնական տրամադրութեաններից, լրագիրը խոսում էր ծանր խրատական ակադեմիական ոճով և այս կողմից բոլորովին նմանվում էր Վենետիկի «Բազմավեպին», որից, ի դեպ ասենք, արտատպութեաններ էլ էր անում: Այս սառն ու զգուշավոր ուղղութեանը չէ կարելի պատճառ համարել այն հանգամանքի, որ ընկերական պայմանագրութեամբ որոշված քննիչներ կային, որոնց հրահանգում էր ամենայն խստութեամբ վերաբերվել տպագրվելիք նյութերին: Թաղիադյանը, ինչպես կտեսնենք, մի քանի տարի էլ «Ազգասէրը» բոլորովին մենակ ու անկախ տարալ, բայց սակայն, երբեք չզավաճանեց այն անարյուն ակադեմիականութեանը, որ ընդգրկել էր սկզբից և որ, ավելացնենք ասել, սեփական էր այն ժամանակների հայոց պարբերական մամուլին:

Սակայն, բարեմասնութեանները, բովանդակութեանը, գրական տաղանդը բավական չէին մի պարբերական հրատարակութեան բախտը որոշելու համար: Որպեսզի կարողանանք կշռադատել Թաղիադյանի ձեռնարկութեան հետ կապված աննպատակ հանգամանքները, պիտի ամենից առաջ նկատի առնենք ժամանակը, այն է՝ անցեալ դարի քառասնական թվականները, երբ հասարակական կյանք հայերի մեջ դեռ չկար և պարբերական մամուլը դեռ գտնվում էր իր սաղմնային դրութեան մեջ: Զկար ընթերցող հասարակութեան, և լրագիր կամ ամսագիր հրատարակելը մի անհուսալի գործ էր, սակավօրյա, երերուն, անապահով: Այս ընդհանուր դրութեան վրա ավելանում էր այն մասնավոր հանգամանքը, որ եթե այն ժամանակվա ամբողջ պարբերական մամուլը, ինչ-

պես և այսօր, դադարեցան էր, Հնդկաստանի հայ գաղութը, որ պիտի միջադաշն դառնար «Ազգասէրի» համար, արդեն այլևս այն չէր ինչ եղել էր առաջ, օրինակ XVIII դարում և XIX առաջին քառորդում:

Այս հանգամանքի վրա առանձնապես ուշադրութեան էր դարձնում «Ազգասէրը» իր 18-րդ համարի մեջ: Հնդկահայ գաղթականութեանը ավերվում, մանրանում էր բնական ճանապարհով, ինչպես վիճակված կարող էր լինել աղքատական այն մանր հատվածներին, որոնք ենթարկված էին անգլիական մեծ քաղաքակրթութեանը: Կալիպթան, ուր հրատարակվում էր Արարատյան ընկերութեան օրգանը, հաղիվ մի 60 տուն հայ ազգաբնակչութեան ունեւր: Այս աստիճան անձուկ միջավայրում հրատարակվող պարբերականը բնականաբար սակավարյուն պիտի լիներ: Պակաս տխուր չէր Հնդկաստանի մյուս քաղաքներում եղած հայ գաղութների դրութեանը: Ծառերն աղքատացել էին, բոլորովին սակավամարդացել: Իսկ ամենազլխավորն այն էր, որ Հնդկահայ գաղթականը արագ դադարում էր հայախոս լինելուց: Հայ բնտանիքների մեջ անգլիերենն էր հաստատվում իբրև գործնական լեզու: Եվ այս հանգամանքը կերպարանք էր ընդունում նաև հայոց Մարդասիրական ճեմարանի մեջ: Այս բանն էլ շեշտում էր այդ դպրոցի բազմամյա վաստակավոր տեսուչ Հովհաննես Ավդալյանը իր մի ճառի մեջ:

«Սէր հայկական գրագիտութեան,— ասում էր նա,— նուազելով նուազեցաւ ի միջի մերում յայսմ քաղաքի: Սկսան անպիտան, անշահ և անպետ համարել զգիտութիւն լեզուին Հայոց, վասն զի՝ ասացին՝ քահանայ և վարդապետ ոչ ունին դառնալ մանկունք մեր: Անգլիական լեզուն գերի վերոյ ամբարձեալ: Անգլիականն լոկ պիտանի, շահաւետ և հարկաւոր երեւալ: Անգլիականն միայն զհաց և զպարուստ հայթայթեալ: Անգլիագարութիւնն (anglomania) իբրև մղձաւանջ տիրեալ է ի վերայ սրտից ամենեցուն: Անգլիագարութիւնն իսպառ ցամաքեցուցեալ է զաղբիւրս գրոց մայրենի լեզվագիտութեան և հայկական գրագիտութեան: Անգլիագարութիւնն գրեթէ դատարկացոյց թափուր կացոյց զձեմարանն մեր յաշակերտաց, և հասոցց իջոյց զայն մինչև ցլետին անշքութիւն: Պիտանաւորութիւն անգլիական լեզվին յայնմ աշխարհի՝ ուր անգլիացուց է տէրութիւն և անգլիացուց է նոյնգունակ ամենայն քաղաքական գործառնութիւն քաջահայտ է ամենեցուն: Բայց մինչ սիրեն և պատուեն զանգլիարէնն, ոչ պարտին ատել և անարգել զհայերէնն: Զանգլիականն ուսցեն իբրև զհարկաւոր լեզու, ուսցեն և զհայկականն իբրև զմայրենի լեզու: Լոկ գիտութիւն առաջնոյն ոչ առնէ զնայն անգլիացի. լոկ գիտութիւն վերջնոյն ոչ առնէ զնա պիտանի քաղաքացի... Զարթի՛ր քերթողահայրդ մեր Մովսէս, զարթի՛ր և ողբա՛ զայս ազգասէր բարս հնդկահայոց, զի զանց զմայրենի լեզուուն արարեալ իբրև զանպիտանաւ և զանարգաւ՝ զհետ լինին այլազգականին: Ողբա՛ զտարագէտ հանգամանս ժամանակին, զի զիւրեանցն անարգեն և զօտարին յարգեն: Տես դու զայս ամենայն և ողբա զողբալի վիճակ մեր, որպէս յառաջնումն ողբացիր զաղէտս հայոց ազգին»¹:

Գրեթե այս միևնույն կերպարանքով էր հնդկահայ իրականութեանը ներկայանում և «Ազգասէր» շաբաթաթերթին: Եվ այդ դրութեան լավագույն ապացույցն այն էր, որ նա առաջին տարին ունեցալ ընդամենը վաթսուն բաժանորդ: Ընկերութեանն այլ ևս չպիտի կարողանար շարունակել շաբաթաթերթի հրատարակութեանը, եթե մի հաջող միտք չհղանար: Իր տպարանում նա բաց է

¹ «Ճառ, զոր ասաց վարժապետ պարոն Յովհաննէս Աւդալեանց ի ժողովի անգամոց Հայկական Մարդասիրական ճեմարանին որ ի Կալիպթան»։ Վենետիկ, 1858:

անում անգլիերենի բաժին, և ահա այնքան գործ է կատարում այդ լեզվով, որ իր աշխատածով կարողանում է ծածկել լրագրի վնասները: Իրականութունը, անկասկած, մոռալ էր: Բայց ընկերության ղեկավարները և մանավանդ Թաղիադյանը լավ գիտեին, որ եթե կա այդ դրությունը փոփոխելու, հայոց լեզվի իրավունքները վերականգնելու հնար և միջոց, այդ միայն տպարանն էր՝ միացած դպրոցի հետ: Առաջին անգամ Թաղիադյանի «Ազգասերն» էր բացորոշ ձևակերպում մեծ ճշմարտությունը, որ դպրոցն առանց տպարանի և տպարանն առանց դպրոցի ոչինչ են, այսինքն որ գրականությունն ու գրագիտությունը իրար լրացնում, իրար ուժեղացնում են:

Մի բուն գաղթական հայությունն, չպիտի կարողանար ինքնագլուխ դիմադրել ամենակուլ անգլիականությանը: Այդ փոքրիկ համայնքը իր մեջ պիտի ույժ գտնե իր ազգային գոյությունը պահպանելու համար: Իսկ դրա համար նա պիտի հենվի իր բուն հայրենիքի վրա, մոտիկ կապերով կապվի նրա հետ: «Մեք տեղս արմատական ծառեր չեմք», — գրում էր «Ազգասերը» — մեր արմատն մեր հայրենիքն ա և եթե չջանամք մի կամ մյուս եղանակով մեր հայրենյաց երջանկությունն հաստատել, կարելի չէ, որ մենք երջանիկ ապրեմք»: Բայց բանն այն էր, որ հայրենիք ասելով, հնդկահայը հասկանում էր սոսկ նոր-Ջուղան, որ դարձյալ մի գաղթավայր էր, այն էլ շատ հեռու, շատ հիմնավորապես կտրված բուն մայր հայրենիքից: Ջուղան իր գաղթականության հետ բավական սերտ կապերով էր կապված: Երթևեկություն կար: Ջուղայեցին գնում էր Հնդկաստան բախտ որոնելու, մասնավորապես ուսում ստանալու: Բայց այդ բավական չէր: «Ազգասերը» շատ իրավացի կերպով գտնում էր, որ Ջուղան Հնդկաստանին իրապես մոտեցնողը կարող է լինել տպարանը:

Այսպիսով, Արարատյան ընկերության մամուլը իր վրա մեծ պարտավորություններ էր վերցնում: Եվ պետք է ասել ի պատիվ նրա, որ շնայած իր սահմանափակ միջոցներին, նա գործեց մի հազվագյուտ եռանդով: Մոտ երեք տարվա ընթացքում նա Կալիֆան դարձրեց մի գրական գաղութ, որ փոքր չափերով հիշեցնում էր Վենետիկը կամ Վիեննան: Նա ուներ իր սեփական հրատարակությունները, որոնցից հարյուրավոր օրինակներ ձրի բաժանում էր կարոտներին և աշակերտներին թե Հնդկաստանում և թե Ջուղայում: Ձեռագրեր էր հավաքում գրագրան կազմելու համար, նույնիսկ մի ժամանակ ձեռնարկեց նյութեր հավաքելու մի գիտական բառարանի համար, որ պիտի ընդգրկեր բուսաբանությունը, կենդանաբանությունը, արհեստները և այլն:

Բայց Արարատյան ընկերության շրջանը (1845—1848) բեղմնավոր եղավ մանավանդ Թաղիադյանի աշխատությունների հրատարակության տեսակետից: Այդ երեք տարիների ընթացքում էր, որ իրար ետևից հրատարակվեցին նրա ութ գրվածքները, որոնց մեջ և ամենազիջավորները, նրանք, որոնք գրական փառք են ստեղծել նրա համար: «Ազգասերի» էջերից Թաղիադյանն օգտվում էր՝ հասարակության իմաց տալու համար թե պատրաստ ունի այնպիսի մի աշխատություն, որի հրատարակության համար հարկավոր է հասարակության նյութական ձեռնատվությունը: Այսպես, օրինակ, 1845 թ. դեկտեմբերի 6-ի համարում կարդում ենք.

Գրավորական հայտարարություն

«Մերովք Դավթեան Թաղիադյանց խոնարհարար յայտնում ա Պատուելի Ազգին իւրոյ ընդհանրապէս, որ ինքն այսառջադրել ա ստորագրութեամբ տպել Պատմութիւն Վարդգիսի Տեառն Տուհաց, որոյ մասին խորենացին մեր ունի».

«Հատուած գնացեալ Վարդգէս մանուկ ի Տուհաց գաւառեն... եկեալ նստեալ զՇրէզ բլրով, զԱրտեմեէզ քաղաքաւ, կոել կոփել զդուռն Երուանդայ արքայի».
Խոր. ԿՆ 297.

Իսկ այժմ տպագրվում է այս մերձ 250 երես: Ուստի ակն ունի, որ Ազգի հնութեանց պարծանք սիրողին գտնեա շեն խնայելոց իւրեանց բարերար օգնականութիւնն՝ վասն այսպիսի մին ազգայոյս և օգտակար գործոյ, հանգանակել առ օրինակն Կոմպանոյ ռուսիս 8 կամ օսմանյան զուրուշ՝ 80»:

Այսպիսով տպագրվեցին Թաղիադյանի հետևյալ աշխատությունները. «Պատմութիւն Պարսից», «Առակք Պարսից», «Վէպ Վարդգիսի Տեառն Տուհաց», «Վէպ Վարսենկան Սկայուհույ Աղուանից», «Մերովքեան առաջնորդ մանկանց», «Սօս և Սօնգիսի», «Ճառ դաստիարակութեան օրիորդաց», «Թութակ Թաղիադեանց», «Վկայութիւն Սրբուհույն Սանգիստոյ», «Ճանապարհորդութիւնս ի Հայաստան»: Այս աշխատությունների հրատարակելը Արարատյան ընկերությունը չէր, այլ զանազան անձինք, մի երկուսն էլ տպվել են բաժանորդագրությամբ հանգանակված փողով:

«Ազգասերը» Արարատյան ընկերության հրատարակությամբ չկարողացավ բուրեղ երեք լրիվ տարի: Եռամյա շրջանին համարյա թե երկու ամիս մնացած՝ ընկերությունը զաղարեց գոյություն ունենալուց: Գլխավոր պատճառն այն էր, որ ընկերության հրատարակությունները (մասամբ արտատպություններ «Ազգասերից») մնում էին անվաճառ և ուրիշ աղբյուր չկար վնասները ծածկելու համար: Այդ հանգամանքի վրա ավելանում էր ընկերության ամենագործույթանդամ Մանուկ Զորբայանի մահը: Մյուս անդամներից շատերը վնասված էին առևտրի մեջ և չկարողացան օգնություն անել ընկերության: Այս բոլորի մասին Թաղիադյանը հայտարարում էր 1848 թ. հունիսի 24-ի համարում: Ընկերության փակվելու հետ փակվում էր և «Ազգասեր» շաբաթաթերթը, որ տպվել էր ընդամենն 141 համար, միշտ պահպանելով միևնույն կերպարանքը, միևնույն տեսակի բովանդակությունը: Միակ աչքի ընկնող փոփոխությունն այն էր, որ երկրորդ տարվա սկզբից շաբաթաթերթը հրատեղատվեց իր գրաբարախառն աշխարհաբարին և ընդգրկեց զուտ գրաբար լեզուն:

5. ԴՊՐՈՅ «ԱԶԳԱՍԵՐ ԱՐԱՐԱՏՅԱՆ»: «Ազգասեր» շաբաթաթերթի հրատարակումից մի քանի ամիս հետո Թաղիադյանը ձեռնարկեց մի շատ կարևոր գործի, որ հնդկահայ գաղութի մեջ ազգային ոգու և մայրենի լեզվի զարգացման մեծ զարկ պիտի տար: Գաղութը տղաների դաստիարակության համար ջանքեր գործ էր դնում, բայց աղջիկների կրթության համար ոչինչ չէր արել, մինչդեռ բնտանիքի կատարյալ օտարացումը փութացնողը հենց այն հանգամանքն էր, որ հայախոս մայրերը զնալով ավելի և ավելի հազվագյուտ էին դառնում: Այս մեծ պակասությունը վերացնելու ջանքը Թաղիադյանին էր պատկանում: Սկզբնավորությունը շատ համեստ էր: 1846 թ. հունվարի 31-ին «Ազգասերի» մեջ տպվեց հետևյալ ծանուցումը.

«Տիկին Մերովք Գալթեան Թաղիադեանց յարգանք ծանուցանէ Պատուելի Հասարակութեան մերազնէից, զի պատրաստ է յօժարութեամբ առնուլ ի տուն իւր զմանրիկ օրիորդս մերազանց ի դաստիարակութիւն, որ առ այժմ ունի լինել կարգալոյ և գրելոյ Հայերէն լեզուիս, կարից, նշանագրութեանց և ձևոց և որ ինչ հարկաւոր համարեցի մատաղ հասակի նոցա»:

Ձշափ վարձու վասն դաստիարակութեան թողու ի կամս իւրաքանչիւր ծնողաց. զի նշանաւորեցեն և հատուցեն ըստ հաճութեան և կարեաց իւրաքանչիւրոյ ամսոյ 5:

Այլև յայտ առնէ, զի եթէ ընդունելի լիցի մերազնեայ Պատուելիաց այս

առաջադրութիւն իւր և արժանացի քաջալերութեան նոցա՝ յայնժամ ըստ հանգամանաց թուոյ մանկանցն և վարձուն՝ ունի հոգեայ և վասն շափաւոր դաստիարակութեան Անգղիական լեզուի, թուաբանութեան, նկարչութեան, երաժշտութեան, պարուց և այլ հարկաւոր ուսմանց:

Տիկին Մ. Գ. Թ. ունի շնորհակալու սրտին ընդունել զձեռնտուութիւն Պատուելի Մերազնէից վասն յառաջ վարելոյ զայս ազգօգուտ յառաջադրութիւն իւր:

Բանի դպրոցն Աստուծով ի 15 առաջիկայ ֆէվրէր ամսոյ անուանի Սուրբ Աանդուխտ, յանուն ետիահաստ օրիորդին Հայաստանեայց Դստեր Սանատրուկ Արքայի մերոյ և Քրոջ Թոռան Արքարու մեծի, որ աշակերտեալ Քաղէոսի Առաքելոյ՝ հարսնացաւ Քրիստոսիս:

Համեստ ձեռնարկութիւնը, որ Քաղիադջանը սկսում էր իր կնոջ Շուշանի անունով և որի հոգին ինքն էր, հաջողութիւն է գտնում և դպրոցը կամաց կամաց հասարակութեան վստահութիւնն է գրավում, բարեկարգվում է և շուտով դառնում է երկսեռ, դպրոցական մի տիպ, որ եզակի էր հայերի մեջ: 1847 թվականի ապրիլին դպրոցում սովորող աշակերտուհիների և աշակերտների ծնողների ու պաշտպանների ժողովն ընդունում և վավերացնում է մի շարք կանոններ, որոնցից իմանում ենք, որ աշակերտներ ընդունում են 12 տարեկանից ոչ վեր, իսկ աղջիկները մինչև տասն տարեկան: Ավանդվող առարկաներն էին. «Մի օր հայերէն, տառագիտութիւն, բառագիտութիւն, ստուգաբանութիւն, գրութիւն, թվաբանութիւն, առաջնորդ մանկանց, պատմութիւն սուրբ գրոց և նույնիսկ սուրբ գիրք, օրական թարգմանութիւնք Տ Հայէ յԱնգլ. և յԱնգլ. ի Հայ և մի օր՝ Անգլիերէն լեզու, գրեթէ վերոյ գրեալ նիւթովք»¹:

Պետք է նկատի առնել, որ Կալկաթայում 1840-ական թվականներին գոյութիւն ունէր մի այլ մասնավոր հայկական դպրոց, այնպես որ այդ քաղաքում ապրող հայերի համար երեք դպրոց կային (հաշվելով և Մարդասիրական ճեմարանը): Սուրբ Աանդուխտի դպրոցից դուրս եկան բավական թվով լավ պատրաստված և հատկապես հմուտ հայերենագետ աշակերտներ: Այս առաջադիմութեան հուշարձանն է 1850-ի տպված մի տետրակ, որի վերնագիրն է «Երախայրիք Սուրբ Աանդուխտ Դպրոցի թարգմանեալ և շարադրեալ յաշակերտաց նորին ի պատիւ Ազգիս Հայոց»: Այդտեղից իմանում ենք, որ դպրոցի աշակերտներից կազմվել էր «Միբնիկաց» անունով մի ընկերութիւն՝ հատկապես գրականութեամբ զբաղվելու համար: Եվ ահա հենց այդ աշակերտների գրական գործերի նմուշներն էր տալիս այդ տետրակը: Նմուշները թարգմանական են, բայց կան և ինքնուրույն շարադրութիւններ: Հետաքրքրական են վերջում զետեղված տեղեկութիւնները աշխատակցած աշակերտների մասին: Ոմանք իրանց սկսած գրական գործերը կիսատ էին թողել ու դուրս գնացել դպրոցից, բայց կային և այնպիսիները, որոնք վերջացրել էին իրանց սկսած աշխատութիւնները, որոնց և կարելի էր տպագրութեան հանձնել: Օրինակ, «Կենդանաբանութիւն», և առավել քան զայն՝ Ռոպինսոն Համառոտ ի խաչկայ Թ. Աւերումեանց՝ պատրաստի տպագրել հասարակաց հանգանակութեամբ: Յունաց պատմութիւն ի Սիմոնէ Բիշան աւարտեալ է: Գո՛րծ արժանաւոր: Պատմութիւն Մեծին Բրիտանիոյ ի Գասպարոյ Յ. Մարգսեանց լրանոց յետ մի կամ երկուց ամսոց: Համառոտ աշխարհագրութիւն Յովհաննեսի Ղ. Մկրտչեանց մերձ յաւարտն եղև. յոյժ պիտանի դպրոցաց»: Այս աշակերտական խմբի մեջ է և մեր շատ անգամ հիշատակած Հովհաննես Շահնազար Սարգսյանը, որ դուրս

եկաւ առանձին բրոշուրով («Դիտողագիր») պաշտպանելու իր ուսուցիչ Քաղիադջանի հիշատակը խաչկայն քահանայի զրպարտութիւնների դեմ: Նշանակելի է, որ այդ աշակերտական աշխատութիւնների մեջ բացակայում է հայագիտութիւնը և որ աշխատողները միայն տղաներն են:

Բայց ս. Սանդուխտ դպրոցն էլ Քաղիադջանը պահում էր ազգասիրարար, առանց վաստակ ունենալու, նույնիսկ պարտքերի մեջ էլ ընկնելով: «Ազգասերի» զաղարուժը մեծ ցավ պատճառեց ոչ միայն նրան, այլև տեղացի հայերից շատերին: Իր շարադրութիւններով Քաղիադջանն արդեն վաստակել էր պատկառելի անուն, և նրան հարգողներից շատերը նրա դատնութիւնն ամոքելու համար գնեցին մի տպարան (երևի հենց նույն Արարատյան ընկերութեան տպարանը) և ընծայեցին նրան: Այդ բավական էր, որ Քաղիադջանն իսկույն վաւով իրան հատուկ եռանդով և շտապե վերանորոգել «Ազգասերի» հրատարակութիւնը մենակ, իր սեփական հայեցողութեամբ և պատասխանատվութեամբ: Այս անգամ, սակայն, շաբաթաթերթ չէ այդ հրատարակութիւնը, այլ լույս է տեսնում 10 օրը մի անգամ: Անունն էլ քիչ ընդարձակված է: «Ազգասերը» միացել է փակված ընկերութեան անվան հետ և դարձել է «Ազգասեր Արարատեան»: Քաղիադջանը նկատում է նրան իբրև բոլորովին առանձին հրատարակութիւն: Համարների թիվը սկսում է մեկից, հատորը շորտորդ չէ, ինչպես պիտի լինէր, եթե «Ազգասերի» շարունակութիւնը նկատվէր, այլ առաջինը: Փոխված է և «Ուսումն անէ զմարդ նրջանիկ» մակագրութիւնը՝ Արարատյան ընկերութեան խորհրդանշանի տակ: Այդ խորհրդանշանը այժմ էլ պահվում է, բայց նրա շուրջը այս նոր շրջանի առաջին տարում գրվում է «Մաքուր խղճմտանքն անէ զմարդ նրջանիկ» մակագրութիւնը: 1849 թվականի սկզբից վերնագիրն արդեն ներկայացնում է մի ամբողջ մեծ նկար, բազկացած դրոշներից, նիզակներից, նետերից, զինվորական փողերից:

Նոր շրջանի առաջին համարը հրատարակվեց 1848 թ. սեպտեմբերի 16-ին: Ամբողջովին կորովով, հուսով և ոգևորութեամբ լցված Քաղիադջանը մի ընդարձակ առաջնորդող հոդվածում բացատրում է, թե ինչպես պիտի տոնեն իր այս նոր գործը, նոր փոփոխված պայմանների մեջ: Միայն տպարանն ընծայելը թե էր տալիս նրան: «Ոչ ապայոյս մնացաք ի նեղութեան, — գրում էր նա, — զի շնորհք երկնից շարժեցին զնմանս ի սիրելի բարեկամաց մեցոց ի Կալկաթա և ալլուր՝ ինքնաջօժար կամօք՝ և առանց մեր բնաւ բերան իսկ բանալոյ առաջի, գալ միաբանել, և գնել և ընծաւել մեզ զտպարան մի: Ո՛վ սիրելի գալ և միաբանել, — տացէ մեզ Աստուած միշտ զայսպիսիքս պատմել աշխարհի և միշտ ի այնպիսիս յորդորել զազգ մեր, որ ոչ իմիք այնքան կարօտի՝ որբան զալոյ և միաբանելոյ ի կանգնումն և ի կազդոյր գրագիտութեան իւրոյ»: Գալով այն լեզվին, որով պիտի խմբագրվէր թերթը, Քաղիադջանը հայտարարում էր, թե այդ լեզուն պիտի լինի գրաբարը և արգարացնում էր այդ բանը ճիշտ այնպես, ինչպես անում էին այն ժամանակվա բոլոր գրաբարամուտները: Գրաբարն ընդհանուր ազգային լեզու է, մինչդեռ ուսմանը զավառական լեզու է, որ անհասկանալի է մյուս գավառում: «Որ ուսմանը գրէ, վասն մասնաւոր տեղոյ աշխատի, իսկ որ գրաբար գրէ՝ վասն ամենայն ազգին և ընդհանրօք աշխատի»: Եվ այսպիսի անհեթեթութիւն Քաղիադջանը պաշտպանում էր այնպիսի մի ժամանակ, երբ նույնիսկ Վենետիկի և Վիեննայի Միսիթարյանները իրանց «Բազմավեպն» ու «Ներոպան» մաքուր աշխարհաբարով էին խմբագրում, երբ աշխարհաբար էին Ջմյուռնիայի «Շտեմարանն» ու «Արշալույս Արարատեանց» և ուրիշ հրատարակութիւններ: Մոռացվում էր, որ գրաբար գրելը ոչ թե չէր նշանակում խոսել ընդհանուր ազգին, այլ այդ ազգի մի

¹ «Ազգասեր», 1847 թ., եր. 114:

շատ սահմանափակ շրջանին հասկանալի լեզվով: Եվ այս շէ՞ր արդյոք պատ-
ճառներին մեկը, որ Քաղիադյանի հրատարակախոսությունն էլ սահմանափակ
շրջանների մեջ էր մնում: Թեև նա այս անգամ ավելի եռանդուն միջոցների էր
գիմել՝ իր թերթը տարածելու համար, նշանակելով զանազան տեղերում գոր-
ծակալներ, բայց սրանով էլ մի առանձին մեծ բան չէր ավելացնում նա: Բա-
ժանորդներին չէր գրավում և այն հանգամանքը, որ նրանց անունները տպա-
գրվում էին «Ազգասէր Արարատեանի» մեջ:

Այս պատճառով է, որ երկրորդ տարուց թերթը հրատարակվում է այլևս ոչ
թե ամիսը երեք անգամ, այլ միայն երկու անգամ: Փոխվում է և խորհրդանշանի
լոգոնդը. այժմ արդեն գրվում է՝ «Աստուած և աշխատանք»:

Թեև այսքան կրճատվել էր թերթի դուրս գալու հաճախությունը, բայց
Քաղիադյանը գանգատվում էր հրատարակարի դրություն վրա: «Այլ՝ որ չանձն
առնու հրատարակարի նստել,— գրում է նա,— մնաս բարեալ առ գրեթէ
ամենայն մտաւոր և մարմնական հեշտութեանց: Եթե հաւատարմութեամբ կա-
տարիցէ զպաշտօն իւր՝ պարտի զաշս անդադար յածել յոր ինչ միանգամ անցք
անցանիցեն յաշխարհի, և բովանդակ մտադրութիւնն պարաւանդել յական թօ-
թափել յառ ու փորձ և գիր ամենայն պատահարաց: Յուս բարձեալ զայս օրի-
նակ գրականութիւն՝ չունի ժամանակ մտաւորական հեշտութեանց, չունի օր
ժախելոյ ի հասարակաց գրատունս կամ երազածոյ և կամ յօդուածոյ նրբա-
քննութեանց նորանոր գրոց: Զիք գոնէ ամիս մի որոճալոյ նորուն յայս նիւթ
կամ յայն. դինչ և առնէ, պարտի գոլ իսկույն, առանց ժամանակ կորուսանելոյ
և այսպէս միտք նորա բովանդակ գրաւեալ է միշտ ի մտաւոր կարիս վաղանցիկ
ժամուց աշխարհի»¹: Այս խոսքերով, որոնք վերցված էին անգլիական մի աղ-
բյուրից, Քաղիադյանը գուցե ուզում էր արդարացնել այն հանգամանքը, որ
ինքն իր լրագրի այս երկրորդ շրջանում համարյա ոչինչ մատենագրական գործ
չկատարեց, եթե չհաշվենք նրա մի հրատարակությունը, որ լույս տեսավ
1849-ին Քովմասս հոջամալյանց նոր ջուղայեցոյ «Պատմութիւն Հնդկաց»
վերնագրով:

Եվ վերոհիշյալ խոսքերն ամենեին չէին ցույց տալիս, թե Քաղիադյանը
ցած էր գնահատում իր հրատարակախոսական գործը: Դեռ 1850-ին էլ նա մեծ
ոգևորութեամբ էր հիշում իր Արարատյան ընկերությունը և անվանում էր նրան
«չնաշխարհիկ»: Ահա ինչ էր գրում նա հենց վերոհիշյալ տողերից մի 15 օր
առաջ. «Գոհութիւն ի խորոց սրտի առ Բարձրեալն Բարեբար, որ արժանի արար
զանտուն և զանտէրունչ տկարութիւնս մեր յանհուն օտարութեան այսմիկ, միւս
անգամ պսակել զամն աշխատութեան և երանութեան մերոյ: Կատարեալ եր-
ջանկութիւնն յաշխատասիրութեանն կայանալ գիտեմք, յազցաւոր և ի ցաւա-
կից աշխարհիս այսմիկ: Ուստի և որքան վաստակիմքս՝ վսեմանամք ի խոր-
հուրդս»²:

Աշխատանքի այս հոյակապ մեծացումը տեսնում էին մարդիկ և չգնա-
հատել չէին կարող: Քաղիադյանն արդեն պատկառելի անուն ուներ, և նրան
հարգում էին շատ շատերը: Հասարակական այս մեծարանքի հավաստիքը նա
ստացավ իր համար մի դժբախտ պատահարի առիթով: 1849 թվին մայիսի
կեսից մինչև հուլիսի սկիզբը «Ազգասէր Արար.» չհրատարակվեց: Պատճառը
խմբագրի շատ ծանր հիվանդությունն էր: Այս բանը նա նկարագրել է մի հոդ-
վածում, որի վերնագիրը միայն բավական է ցույց տալու, թե որքան վտանգա-

վոր ընթացք էր ստացել հիվանդությունը. այն է՝ «վախճան և վերակենցա-
ղումն վերատեսչի Ազգասիրեն»: Հասարակությունը, իմանալով, որ իր սիրելի
գրողը մահվան տագնապի է մատնված, համակրանքի և ուշադրության գեղե-
ցիկ ցույցեր է անում: Ահա ինչ է գրում Քաղիադյանը. «Այլ եկ դու աղէ, և ընդ
չնաշխարհիկ գթութիւնս մարդասիրութեան պատուելի հասարակութեանս զար-
մացիր, յորոց բազումք ոչ միայն ավելի քան զակնկալութիւն և զարժանաւո-
րութիւն նորա (իմ) ստէպ յայց ելանէին, այլ և շորս-շորս, կամ հինգ-հինգ ի
նոցանէ զանուշակ գտուն և զբուն յաշաց հատեալ, հսկէին շուրջ զմահճօք
նորա՝ իբրև զպահապան հրեշտակս յամենայնի ի կարիս գեղոց և զարմանացն
ինքնայօժար բերելով: Մահ առնթեր կացեալ ամաչէր ի մարդասիրութենէ
յայսմանէ հուպ մատչել ի նա: Գո՞րս սարսէին ի սիրոյ նոցա բանալ նմա
զդրունս յախտեանից. դի որ գտեսութիւն հիւանդաց իւրով տեսութեամբ վար-
ձատրեաց, քանիօն առաւել վարձս հասանէր այնպիսեաց՝ որք մտադիր հատին
զբուն յաշաց և զհանգիստ յիրանաց վասն անտէրունչ և անօգնական վաստա-
կաւորի ուրուք»¹:

Այս համակրական ցույցերը ոգևորում էին Քաղիադյանին մանավանդ այն
պատճառով, որ ցույց էին տալիս, թե նրա մահից հետո նրա «Ազգասէրը» չի
դադարի: Բայց այս մի ցնորք էր, որ շուտով օդը ցնդեց: «Ազգասէր Արարա-
տեանը» իր գոյությունը երրորդ տարին մտալ հոգեվարք դրություն մեջ: 1851 թ.
փետրվարի 15-ին Քաղիադյանը հրատարակում էր իր կիսամսեա թերթի հա-
մարը, որպեսզի հայտարարե, թե այլևս չէ կարող շարունակել իր այս գործը:
Այդտեղ էլ նա ներկայացնում էր մի ազդեցուցիչ հաշիվ: Բաժանորդագին նա
ստացել էր ընդամենը 334 փոսի, մի գումար, որ հազիվ բավական էր գրա-
շարներին տալու համար: Մնացած բոլոր ծախսերը մնում էին պարտք խմբա-
գրի վրա: «Ընդ ամենայն,— գրում էր նա,— տասնեկին և կես ազգասէր և
ուսումնասէր անձինք հատուցին մեզ որ զտարեկանս և որ զվեց ամսականս...
Ի մեջ այսքան ճգնաց և աշխատանաց շարունակել զմեծածախ լրագիր մի
վասն ութից կամ տասանց և եթ՝ ոչ միայն թէ աւելորդ՝ այլ նաև խենթութիւն է»:
Սրտառու էր հրաժեշտի այն ողջունը, որ տալիս էր Քաղիադյանն իր թերթին:
«Ազգասէր Արարատեան»,— ասում էր նա,— վերստին մեռանի զմահ զԱղբա-
տին Ղազարոսի. և յուսայ հանդիպել փարթամ փափուկ մեծատանց ազգին ի
գոգն Աբրահամու: Իսկ հոգվածի վերջում ասում էր. «Գնա, «Ազգասէր», մե-
ռիր՝ որպես և ամենայն նախորդք քո, եթէ միայն քո պարժանաց աշխատասեր
և ոչ ընդհանուր ազգիդ: Զի զոր ազգդ ոչ ունիցի կամ ունի ոչ կամիցի, և քեզ
ինքեան աւելորդ այն և անպիտան է: Մեռի՛ր, այլ երանի էր քեզ՝ եթե զմահ
Մերունույն Սիմէոնի մեռանէիր՝ ասելով. «Արդ արձակեա զժառայս քո ի խա-
ղաղութեան, դի տեսին աչք իմ զփրկութիւն քո»: Համարի վերջում խոշոր տա-
ռերով տպված էր «Հանգիստ»:

Այս մահը, սակայն, շարժում առաջ բերեց: Նրան ողբաց Սինգափորում
հրատարակվող «Ոսումնասէր» թերթը, նրա մասին ամսական խոսք արտա-
սանեց Զմյուռնիայի «Արշալոյս Արարատեանը»: Եվ ահա նորից Քաղիադյանին
օգնություն հասան: Օգնողներն այս անգամ ավելի շուտ Հնդկական կղզիներից
էին, մանավանդ Բաթավիայից: 1851 թ. Քաղիադյանը մի նամակ տպագրեց
«Արշալոյս Արարատեանի» մեջ՝ «Ազգասէր Արարատեան այս երրորդ անգամ»
վերնագրով: Այդտեղ նա հայտնում էր, թե իրեն օգնություն են ուղարկում շատ

¹ «Ազգ. Արար.», 1850, էր. 341:
² «Ազգ. Արար.», 1850, էր. 454:

¹ «Ազգ. Արար.», 1849, էր. 202:

տեղեկաց, խնդրելով նորից շարունակել գործը: Ուշագրավ էր մանավանդ
 Կ. Մարիամ Հարսիսյանի և օր. Քաղազի Մանուկյանի, «մարց արդի գրա-
 գիտութեան ազգիս ի Բաթախա», նամակը, որի հետ ուղարկելով 400 ռուբլի,
 գրում էին. «Եթե հնար իցէ այսու դրոյն գումարիւ ձեզ քաջալերս ատենել, զի
 կրկին սկսանելով ի լոյս ածչիք զԱզգասէր ձեր՝ մեր հոգևոյ ուրախ լիցուք,
 քանզի կարի ցաւ է մեզ ընդ կորուստ այնպիսի պատուական լրագրի յաղագս
 մեր ի Հնդկաստ»:

Քաղիադրանք, Իհարկն, ուրախութեամբ արձագանք է տալիս այդ ցանկա-
 թյանը և 1851 թ. սեպտեմբերի 15-ին նորից լոյս է սկսում տեսնել «Ազգասէր
 Արարատեանը» դարձյալ իբրև՝ կիսամյա թերթ: Սակայն այդ կենդանութունն
 էլ ժամանակավոր էր: 1852 թ. սկզբին Քաղիադրանք, անշուշտ խնայողութեան
 նկատմամբով, տեղափոխվում է Կալկաթայից 23 մղոն հեռու գտնվող Չիչրա
 քաղաքը, տանելով իր հետ իր տպարանն ու դարոցը: Այդտեղ Քաղիադրանքի
 կյանքն առհասարակ տնտեսության քողով է ծածկվում, և մենք շատ քիչ բան
 գիտենք նրա մասին: 1852 թվի հուլիսի 15-ին իսպառ դադարում է «Ազգասէր
 Արարատեանը»: Բայց, ինչպես երևում է, Չիչրայում Քաղիադրանք կարողանում
 է բավական կարգավորել իր գործերը և իր համար հանգիստ և անարկաս
 ապրուստ ստեղծել:

6. ՎԵՐՉԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ. ՄԱՀԷ: Չիչրայի կյանքից հայտնի է մեզ միայն,
 այն, որ ընտանեկան մի նոր դժբախտություն գալիս է հարվածելու Քաղիադ-
 րանին: Նրա ամուսին Շուշանը 1855 թ. հիվանդանում է թորախտով, և, երբ
 նրա դրությունը շատ ծանրանում է, Մեսրոպը գրում է իր բենակալ Ղազար
 Սիմոնին, որ գնում է Չիչրա և առանձին մակոյկով փոխադրում է հիվանդին
 Կալկաթա: Ինքը չէ կարողանում գնալ կնոջ հետ, ուստի նամակ է գրում Հով-
 հաննես քահանա Խաչկյանին, խնդրելով որ նա շինայի իր վերջին միսթարու-
 թյունը հիվանդին: Ահա՛ մի կտոր այդ նամակից. «Պատուական մասն անձին
 իմոյ՝ թոշնեալ նուաղեալ Շուշանիս ասեմ, յախտենական հրաժեշտի համբու-
 րի՝ առաքեմ ան քեզ ի լրութիւն մնացուածոյն, զոր հոս անբաւական ի վճար:
 Ընկալեալ սորա երկի ղվերջին թոշակ. զա ժողովուրդ քո է՝ կարօտ և վերջին
 ազօթից քոց»: Նամակի տակ նա ստորագրում է՝ «Քոյդ կիսամահ Մեսրոպ»: Հիվանդը
 շուտով վախճանվում է: Վշտահար ամուսինն շտապում է Կալկաթա
 և ներկա լինում թաղման, որ տեղի է ունենում նաղարեթ եկեղեցու բակում:
 Թաղումից հետո էլ Մեսրոպը լացի ու հառաչանքների մեջ էր: Երկու տարուց
 հետո Խաչկյան քահանան, Մեսրոպի հանձնարարութեամբ, հուշարձան է դնում
 տիկին Շուշանի գերեզմանի վրա հետևյալ մակագրութեամբ.

«Հանգիստ Տիկին Շուշանայ Մեսրոպ Դ. Քաղիադրան, հիմնադրի և առա-
 ջին վարժապետի Հայոց դպրոցի Սրբոյն Սանդխտոյ, որ ի տիսն 43 հանգեա
 առ Տէր, ի Կալկաթա. յամի Տեառն 1855 մայիսի 7: Սրբէ սգով զայս տապան
 վշտայից այր իւր»:

Մնալով մենակ, Քաղիադրանն այլևս չէ ուզում մնալ Հնդկաստանում: Նրա
 առողջությունը քայքայվել էր, ծերություն ծանրությունն էլ զգալ էր տալիս
 իրան: Որոշում է տեղափոխվել Նոր Զուղա և իր կյանքի վերջին տարիներն
 այնտեղ նվիրել ազգի դաստիարակության: Տեղացի անգլիացիները նրան առա-
 ջարկում են պաշտոն իրենց դպրոցներում, բայց նա մերժում է: Իր տան կահ-
 կարասիքը տալիս է Շուշան տիկնոջ որդեգրած տղային, որի անունն էր Յակոբ:

Մնացին տպարանն ու Արարատյան ընկերության և իր հրատարակած գրքերը:
 Տպարանը նա ծախեց հենց նույն Խաչկյան քահանային, իսկ գրքերը պնդացրեց
 արկղներում՝ Զուղա փոխադրելու համար: «Մ՛յ կրքերը,— գրում էր նա Խաչկ-
 յան քահանային,— սովամահ մեռաւ ի նոր Զուղա, զի ես հոգացայց ինչ ղկե-
 նաց իմոց՝ երբ անդր հասանիցեմ: Աստուած որ կերակրէ զձագս ազնաւոց
 կարդացողաց առ ինքն՝ կարէ որպէս կամի ողորմութեամբ խնդրով ապահովել
 և ինձ ապրուստ ինչ ի ծերութեան: Ես եթէ վասն ապրուստի իմոյ հոգայի ինչ,
 զիմս այլոց ոչ տայի, և բաւական էր: Եթե զպարագութիւն և զհանգիստ սիրէի՝
 ահաւասիկ զերկոսին ևս ունիմ ի մեզկ և ի թուլամորթ քաղաքի այսմիկ: Բայց
 չէ, կամիմ եթէ կեամ, պիտանի լինել Ազգի իմում և եթէ մեռանիմ, ի մեջ Ազ-
 գիս մեռանել: Ապա թէ ոչ, այլևս ոչ հարստանալու ակն ունիմ, և ոչ ևս պէտք:
 Ամենայնի՛ որոց ներկայ կարօտիմս՝ է թէ որպէս հասից անդր»:

1857 թվի ամառը, վերջացնելով իր բոլոր գործերը Կալկաթայում, Քա-
 ղիադրանը նավով ճանապարհվում է Բամբայ, բայց ճանապարհին հիվանդա-
 նում է, այնպես որ ստիպված է լինում մնալ այդ քաղաքում երեք ամիս: Այս-
 տեղ նա գրում է կտակ և, կտակակատար նշանակելով իր մտերիմ Քաղեոս Ավե-
 տումյանին, հանձնարարում է նրան, որ իր մահից հետո ուղարկե մի քանի
 հազար ռուբլի Երևան, իր եղբոր աղջիկ Սուփիային:

Մեսրոպին վիճակված չէր հասնել իր փափագած նպատակին, այսինքն
 գնալ Նոր Զուղա: Նա մեռավ ճանապարհին, Շիրազ քաղաքում, 1858 թ. հու-
 նիսի 10-ին, 56 տարեկան հասակում: Նրան թաղեցին հասարակաց հանգստա-
 բանում, որ կոչվում է «Բարաքոհ»: Եվ այսպես, պարսկական մեծ բանաստեղծ-
 ներ Սաադիի և Հաֆիզի հայրենիքն ամփոփում էր իր մեջ հայ ականավոր
 գրողի, նույնպես բանաստեղծի, ճշմարտութունների որոնողի և իր ազգի սիրով
 վառված մեծ վտարանդիի աճյունը:

Նրա գրքերն ու թղթերն ուղարկվեցին Զուղա, իսկ Քաղեոս Ավետումբ
 շինել է տալիս Կալկաթայում մարմարեոն հուշարձան և ուղարկում է Շիրազ,
 ուր նա գետեղվում է հայոց եկեղեցու արևմտյան դռան որմի մեջ: Արձանա-
 գիրն է.

Մեսրոպ Դավթեան Քաղիադրան
Պերճ վարդապետ մեծ գիտնական
Վսեմ քերթող մատենագիր
Հանգիստ առնու յայս թուխ դամբան:
Ջրեղ Հայոց գիտնոց կաճառ
Պատուասիրէ միշտ սիրավառ
Եւ նոր Զուղա և Կալկաթա
Ոչ մոռացին զքեզ իսպառ:

10 լուսնի 1858.

Հայրենի հորիզոններից հեռու, օտար երկնակամարի տակ, պարսկական
 խուլ անկյունի գերեզմանոցում է կորած այն տաղանդը, որ հայկական Պան-
 թեոնի պարծանքներից մեկը պիտի կազմեր:

Գերեզմանն կորած, հողումը թաղում,
 Այրից հեռացած, մաքից մոռացած,
 Երանք անլիզու, աշխարհս անիրաւ,
 ...Ոչ մատուռ նրանց զի ին կանգնեցաւ,

1 «Ազգ. Արար.», 1851 թ., եր. 398.
 2 Յ. Շ. Սարգսյան, «Գիտողագիր», եր. 29—30:
 818

Մշ արձան նշանց անունը թողնից,
Մշ ազգի միջուկն յիշատակն լուսնից:

Շատ գեղեցիկ է ասել թաղիադասների մեծ հալոսնակիցը ետաշատուր Արով-
յանը, ինքն էլ մի անգեղեցիկ ման հակա...

Գլուխ շորորդ

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐ: Իբրև գրական մարդու՝ Մեսրոպ Թաղիադասին բնորոշում է նախ և առաջ նրա գրչի բեղմնավորությունը: Այնուհետև աչքի է ընկնում այն հանգամանքը, որ այդ բեղմնավոր գրչի միաժամանակ և հարուստ է բազմակողմանիություններ: Թաղիադասին մենք տեսնում ենք թե՛ արձակ ու շափական բանաստեղծության ասպարեզում, թե՛ հրապարակախոսության և թե՛ պատմագիտության մեջ: Բացի այս բոլորից՝ նա մանկավարժ է, և նրա գրչը նաև դպրոցական կարիքներին է ծառայում, կաղծելով դասագրքեր: Այս բոլոր ճյուղերում նա երևան է գալիս իրրև լավ պատրաստված, տեղյակ մի գրիչ: Անկասկած թաղիադասն իր ժամանակի վարպետ և առաջավոր հայերից մեկն էր: Այս հանգամանքը բխում է նրա բոլոր գրվածքներից: Եվ, անշուշտ, իր այս գիրքով, որ հայություն մեջ շատ հազվագյուտ էր տասնիններորդ դարի սկզբում, թաղիադասը պարտական էր անգլիական դաստիարակության, որ նա ստացավ Կալկաթայի Եպիսկոպոսական ճեմարանում: Առանձնապես լավ ուսումնասիրել էր նա, ինչպես երևում է, հին պատմությունը, զանազան ազգերի դիցաբանությունը և դասական բանաստեղծության տարրերը: Ավելացնենք այս բոլորին և այն, որ թաղիադասը իսկական գրող է, այսինքն՝ կոշտ մով և խառնվածքով գրող, ուստի և ներկայանում է իբրև վերին աստիճանի ինքնուրույն և հետաքրքրական անհատականություն, իբրև մի անկախ գեմբ, որին տված էին տիպիկ, բնորոշ և նույնիսկ բավական խոշոր գծեր: Նրա լեզուն, արտահայտության ձևը, տրամաբանության եղանակը միայն նրան էին արված:

Այսպիսի մի գրական բնավորություն, անկասկած, ավելի մեծ ինքնուրույնություն և բեղմնավորություն ցույց տված կլինեն, եթե ճակատագիրը նպաստավոր պայմանների մեջ դրած լիներ նրա մտքի ու սրտի գործը:

Մենք, որ արդեն մանրամասնորեն ծանոթացանք այդ անխոնջ և ընդունակ աշխատավորի կյանքին ու ժամանակին, պիտի գանք այն եզրակացություն, որ նրան վիճակված «յարմարութիւնների» մեջ, այն էլ, ինչ նա արել է, շատ մեծ բան է: Իբրև մի մարդ, որի համար գրիչը եղել է ամեն ինչ կյանքի մեջ, թաղիադասն իմացել է աշխատել, գրել, ստեղծագործել և ամենադժվար պայմանների մեջ: Մենք տեսանք, որ նա իր ամենալավ բանաստեղծական գործը գրել է այն ժամանակ, երբ իբրև մանրավաճառ փերեղակ թափառում էր Հրնդկաստանի խորքերում: Մի խոշոր ապացույց է այս, որ Մեսրոպ Թաղիադասի մեջ միշտ վառ էր «աստուածային կայծը»: Իր տաղանդի շնորհիվ էր, որ այդ անհայտ մարդը, էջմիածնին մատուղ բերած մի տիրացու, համբավ հանեց հայության մեջ, շնայած որ աշխատում էր հեռավոր Հնդկաստանում՝ մի փոքրաթիվ գաղութի մեջ: Գեո կենդանության ժամանակ թաղիադասին ճանաչում և հարգում էին ոչ միայն Կալկաթայում, այլև նրանից շատ հեռու գտնվող տեղերի հայության գրասեր շրջաններում: Այսպես, թաղիադասի ջերմ կրկր-

պագուններից մեկն էր Միքայել Նալբանդյանը, որ բնորոշում է նրան «ուսումնական ազգասեր»՝ անունով, մի բնորոշում, որ գերազանցորեն ճիշտ է. իր գրական հոշակը թաղիադասն ամենից շատ պարտական էր այն հանգամանքին, որ նա վաղուց և ազգասեր էր, լավ դաստիարակություն ստացած. իսկ այսպիսի ազգասիրությունը, ինչպես տեսանք¹, այն ժամանակների հասարակական բարձր իդեալն էր կազմում:

Յուրաքանչյուր գրողի կատարած գերի և գործագրած ազդեցության լավագույն վկաները նրա ժամանակակիցներն են: Շատ քիչ գրողների է վիճակվում դարեր ապրել և հավասարապես պաշտել լինել մի շարք սերունդների համար: Թաղիադասը այդպիսիներից չէր, և նրա վաղեմած հոշակը ներկա սերնդի համար բոլորովին անհասկանալի կլիներ, եթե մենք նրան դատենք ու գնահատենք մեր ժամանակակից գաղափարների և ըմբռնումների շափով: Յուրաքանչյուր սերունդ պարտավոր է արդարագատ լինել իր նախորդների վերաբերմամբ: Իսկ այս հնարավոր կլինի այն ժամանակ միայն, երբ անցյալի գործերը մենք լուսաբանենք ժամանակի և միջավայրի շրջանակներում, ուրիշ խոսքով, երբ մեր ուսումնասիրությունը պատմական ուղղությամբ առաջ կտանենք: Ընդունելով այս արդարացի վերաբերմունքը, մենք կարող կլինենք ճշտությամբ որոշել այն ազդեցությունները, որոնք ներգործություն են ունեցել թաղիադասի գրական գործունեության մեջ, տալով նրան գաղափարներ, ուղղություն, աշխարհայացքի գունավորումներ:

Արդ՝ թաղիադասի ժամանակի ամենախոշոր, առաջնակարգ նշանակություն ունեցող առանձնահատկությունն այն է, որ Մխիթարյանների դարը միակ տիրապետող մտավոր ույժն էր մեր իրականության մեջ: Իսկ այդ դարի պաշտամունքները հայտնի են. վերածնություն հայ լեզվի և գրականության եվրոպական գիտության լույսով: Այս ընդհանուր սկզբունքը, որ առաջացել էր հայ վերածնությունը տասնութերորդ դարից, Մխիթարյանները պայմանավորում էին այսպիսի նշանաբաններով. վերածնվող պիտի լինի հայոց հին լեզուն, գրաբարը, եվրոպական գիտությունը պիտի լինի այն շափով, ինչ ընդունելի կարող է համարվել մի կաթոլիկ վանքի կողմից, առաջնակարգ տեղը կրոնին և աստվածապաշտությանն է պատկանում: Եվ այս նշանաբանները Մխիթարյան դարը զարգացնում էր մեծ հետևողականությամբ: Մանավանդ մեծ և անմոռանալի են Մխիթարյան գործիչների ծառայությունները լեզվի անպարեզում: Գրաբար լեզուն անկման և վայրենացման մի շարք դարերում հասել էր անասելի աղքատության և բարբարոսության: Մխիթարյանների մեծամեծ ջանքերով է, որ այդ մեռած լեզուն սկսեց մաքրվել, գտվել, նորից հարստանալ, գնալ դեպի բարգաւաճում: Միաբանության երկու ճյուղերը, Վենետիկի և Վիեննայի, իրար հետ մրցում էին ոսկեդարի կամ հինգերորդ դարի լեզուն վերստին կենդանացնելու և գրականության նվիրական լեզու դարձնելու համար: Եվ այդ բանը նրանց կարծես հաջողվում էր: Զարգացավ ու փարթամացավ մի մեծ ու հարուստ գրաբար գրականություն:

Բայց այս մեծ շարժումը չէր նշանակում, թե աշխարհաբար լեզուն, գործածականը, ժողովրդականը, կարելի է միանգամայն դեն գցել, մոռացության տալ: Այսպիսի մի բան անել չէր հաջողվել և անցյալ, նախամխիթարյան դարերին: Գրաբարն այն ժամանակներն էլ չէր կարողացել դառնալ ընդհանուր գործածական լեզու: Նա եղել էր մի դասակարգի սեփականությունը և բարձր

¹ «Միքայել Նալբանդյանի կրկր», հատ. Ա. Ռուսով, 1906, եր. 75:
² Տ. Գ. Ա. 1:

գրականութեան միակ տեսն էր դարձել: Բայց ժողովուրդը իր սննդանիւն լեզուով էր մտածում ու զգում, և նրա կենդանի խոսքը, աշխարհաբարը, հարկաւոր էր իբրև գրականութեան լեզու ոչ միայն այն ժամանակ, երբ նա ինքն էր հեղինակողը, ստեղծագործողը, այլ երբ բարձր գրականութեան տեր դարձած հոգևորական դասակարգը կարիք էր զգում նրան՝ այդ ժողովրդին, դիմելու, նրա հետ խոսելու:

Այս կարիքը Մխիթարյաններին էլ ստիպում էր ճանաչել աշխարհաբարի իրավունքները, բայց մասնավոր շափերով: Եվ մենք տեսնում ենք, որ թե՛ Վենետիկի և թե՛ Վիեննայի Մխիթարյան մամուլները տալիս են բազմաթիւ աշխարհաբար գրքեր, գլխավորապես դասագրքեր և ժողովրդական ընթերցանութեան գրքեր: Հատկապես մեծ էր այս գործում «Արշարունայաց» ընկերութեան ազդեցութիւնը, մի ընկերութեան, որ, ինչպես տեսանք, հիմնվել էր 1812 թվականին և զուտ գրական էր: Նրա համար հրատարակութիւններ անում էին Վենետիկի Մխիթարյանները աշխարհաբար լեզուով: Վերին աստիճանի ամբշակ էր այդ լեզուն: Դա Կ. Պոլսի բարբառն էր, որ գրականութեան լեզու էր դառնում շնորհիւ այն հանգամանքի, որ Մխիթարյան միաբանութեան անգամների մեծագույն մասը Կ. Պոլսի հայ կաթողիկ համայնքից էր: 1845 թվին Վիեննայում հաստատված «Արամյան» հրատարակչական ընկերութիւնն էլ նույնպես զարկ էր տալիս աշխարհաբար գրականութեան, որովհետև նրա միջոցով Վիեննայի Մխիթարյաններն էլ նպատակ ունեին դպրոցական և ընթերցանութեան գրքեր տալ ժողովրդին:

Սակայն շատ քիչ էր կարծել, թե Մխիթարյանների դարը երկու լեզուներն էլ հավասարաշափ կարևոր էր համարում հայութեան համար: Աշխարհաբարը ժամանակավորապես համբերելի մի ծանր անհրաժեշտութիւն էր ընդունվում: Այսպես, Մխիթարյան մեծ գրական դեմքերից մեկը, Հ. Ինճիճյանը, որ XIX դարի առաջին քաղորդում ամենից շատ աշխարհաբար գրքեր էր գրել և Արշարունայաց գրական ընկերութեան հոգին էր, իր աշխարհաբար գրութիւններից մեկի մեջ գրում էր, թե գրականութիւնը հայերի մեջ չէ զարգանում այն պատճառով, որ գրաբար լեզուն անմատչելի է անագին մեծամասնութեան: Այս իրողութիւնից, կարծենք, պետք էր հետևանք, թե պետք է, որքան, գրել աշխարհաբար լեզուով: Բայց Ինճիճյանը, իբրև Մխիթարյան, այդպիսի բան ասել չէր կարող: Գրականութեան լեզուն պիտի լինի գրաբարը, այս անհրաժեշտութիւն էր և նրա համար, ուստի նա հորդորում էր, որ ամենքը սովորեն գրաբար, որպեսզի գրականութիւնը ժողովրդականանա: Ծիշտ այդպես էր և Մխիթարյան մյուս նշանավոր հեղինակ Հ. Մկրտիչ-Ավգերյանի կարծիքը: Ահա ինչ էր գրում նա իր «Դեղ կենաց» գրքի մեջ, որ լույս տեսավ 1842 թ.:

«Անանկ է նէ՛ մեր ազգին մեջն, որ կուզենք Աստուծով ծաղկեցնել զներքին և զարտաքին գիտութիւնն, էն առաջ պիտ որ ջանանք գրագիտութեան դուռը բանալ. դուռը գոց է նէ, ինչով կը բացուի, յայտ է, թե բալլիքով. գրոց գիտութեան բալլիքը ո՞րն է. յայտ է, թե գրոց լեզուն, որ է ասել գրաբառ կամ գրաբարբառ... Եվ սակայն ցաւալի փորձը՝ ցաւին կեօրէ՛ դեղ տալը հարկաւոր տեսնելով՝ հարկաւորեց մեզ, որ շատ բան չէ թէ միայն պարզ և դիւրիմաց գրաբառ ըսենք, հապա նաև աշխարհաբառ գրքեր ալ հանենք... Աղեկ, ամ մա ինչուան ե՞րբ ազգերնիս անգրագետ մնայ ու մեղ ասանկ բանի պարտաւոր է և չի թողու, որ ավելի առաջ երթայ ամեն գիտութիւն և իմաստութիւն ազգին մեջ»:

Բանից դուրս էր գալիս, որ գիտութեան և իմաստութեան պակասութիւնը

միայն այն պատճառից է, որ գրաբար գրել չէ թույլ տալիս ազգի անզարգացած գրութիւնը:

Բերենք, վերջապես, մի օրինակ էլ: Ավգերյանը գեռ Կ. Պոլսի բարբառի շափ միայն գիտեր աշխարհաբար: Բայց ահա Հ. Գաբրիել Ավագովսկին 1843 թվականից սկսում է խմբագրել Վենետիկում «Բազմապեպ» կես ամսագիրը: Նա գրում է աշխարհաբար, և նրա աշխարհաբարը կոկված և մշակված է, ներկայացնում է թուրքահայերի գրական լեզուն իր կլասիկ պարզութեամբ: Թվում է, թե զոնե նա աշխարհաբարին կտա իրավունք զարգանալու անկասորեն և ինքնուրույնաբար: Բայց ահա ինչ էր նա ասում իր թերթի յոթներորդ թվի մեջ:

«Մեր միտքը ոչ միայն գրաբառ լեզունիս ետ ձգել կամ աշխարհաբարը գրոց լեզու դարձնել չէ, հապա ընդհակառակն՝ գրաբարը գիրաւ ծաղկեցնելուն հնարք որոնել ու սովորեցնելն է... Ռամիկներու և տղոց համար պետք եղած գրքերեն զատ՝ ուրիշ ամեն գիրք մեր բուն հայերենի ազնիւ և պատուական լեզուովը շարադրել, որ է գրաբարը»:

Այսպես էր Մխիթարյանների մեծ մոլորութիւնը: Եվ որովհետև նրանք ամենաուժեղներն էին, դարը նրանց էր պատկանում, ուստի նրանց մոլորութիւնը մեծ մոլորութիւն էր և շատերի համար, որոնք Մխիթարյան չէին, բայց ենթարկված էին Մխիթարյան մամուլի ազդեցութեան: Սակայն, չնայած այս հզոր ազդեցութեան, կազմվում էր և մի այլ հոսանք, որ խոսում էր հանուն նույն գիտութեան, բայց հօգուտ աշխարհաբար լեզվի: Այսպես, 1839-ին Ձմյուռնիայում բողոքական միսիոնարներն սկսում էին «Շտեմարան պիտանի գիտելաց» ամսագիրն այսպիսի մի առաջաբանով:

«Մեր Շտեմարանը աշխարհաբառ լեզուաւ պիտի ըլլայ: Գրաբառ լեզուին գերազանց ճոխութեանը և գեղեցկութեանը վրա մենք տգետ շենք: Քանի որ ան ազնիւ լեզուն ազգի մեծ մասը չի հասկընար, և քանի որ ճշմարիտ մարդասիրութիւնը միշտ շատերուն օգուտին կը նայի՝ քան թե քիչերուն բաղձանքը կատարելու, արժան դատեցինք, որ մեր Շտեմարանը ռամկորեն ըլլայ: Ատելի է մեզի գիտութիւնը կղպարի տակ դնել, որ աղքատը և տգետը չի կարայ առնել անոր համար: Ասիկա ջուրք ու օղը անոնցմէ արգելել է»:

Այս աշխարհահայացքն էր, որ տանում էր աշխարհաբարի, իբրև ժողովրդական գրականութեան լեզվի, հաղթանակը, որ և պիտի վերջ դնէր Մխիթարյան դարի համատարած տիրապետութեան:

Մերոպ Թաղիադյանին անմատչելի մնաց այն պարզ ճշմարտութիւնը, որ ըմբռնել էին Ձմյուռնիայում գործող ամերիկացի միսիոնարները: Նա գրաբարյան էր հոգով ու մարմնով և մնաց մինչև վերջը մխիթարյան աշխարհայացքին հարած: Ինչպես տեսանք, իր «Աղգասերը» նա առաջին տարին հրատարակեց Ձուղայի բարբառով, բայց հետո անցավ էլի գրաբար լեզվին: Եվ այս մոլորութեան նա զոհեց իր տաղանդը: Անշուշտ ավելի մեծ ժողովրդականութիւն ստացած կլինէր նա, ավելի մեծ նշանակութիւն կունենային նրա երկերը, գուցե և բոլորովին տարբեր բովանդակութիւն, եթե նա կարողանար իր գրութիւնների լեզուն դարձնել իր հայրենի Երևանի բարբառը, ինչպես նրա հայրենակից հաշատուր Աբովյանը գործածական դարձրեց Քանաքեռի բարբառը: Թաղիադյանն էլ բանաստեղծական բնավորութիւն էր, տոգորված արարատյան հայրենասիրութեամբ, և եթե Աբովյանն է, որ հմայք է դարձել սերունդների զգացմունքների մեջ, դրա գլխավոր պատճառներից մեկն էլ այն էր, որ ժողովրդական լեզուով էր նա խոսում ժողովրդի ցավերի մասին, մինչդեռ Թաղիադյանը խորթ մնաց ժողովրդին, քանի որ իր վառվառ սրտի զգացմունքների համար գործիք էր ընտրել մեռած, խրթին, մեծամասնութեան անմատչելի գրաբարը:

Մենք տեսանք նրա մի երկար աշխարհաբար ոտանավորը¹ և այդ օրինակով կարող ենք դատել, թե որքան նա մտածում էր Արտվանին՝ երգիծանք արտահայտելու մեջ: Անշուշտ, նա կարող էր նույնպիսի աջողությունք տալ և խտրապես հուզիչ դրամատիկական պատկերներ, եթե չթողներ հայրենի գաղափարը:

Մխիթարյան դարի մի առանձնահատկությունն էր այն հայրենասիրությունը, որ զարգացավ XVII դարի երկրորդ կեսից և դարձավ հետզհետե համազգային մի պաշտամունք:

Այս հայրենասիրությունը գալիս էր Չամչյանի «Հայոց պատմությունից», որ տպվեց 1783 թվին: Նրա մեջ առաջին անգամ մի ամբողջական սխտեմի էին վերածվում Աստվածաշնչի ավանդությունները դրախտի և ջրհեղեղի մասին. դրանց վրա հիմնվելով, ապացուցվում էր, որ Հայաստանը և հայ ժողովուրդը Աստծու առանձին հովանավորության տակ են գտնվել աշխարհի սկզբից: Այն հանգամանքը, որ դրախտի գետեր են անվանված Եփրատը, Տիգրիսը, Փիսոնը, Իրավոնը էր տալիս ընդունելու, թե մարկության այդ երանական օրրանը Աստված տնկել էր Հայաստանում: Այստեղից հետևանք. Արամը հայ էր և Աստված նրա հետ խոսում էր հայերեն լեզվով, որ և այդպիսով դառնում էր նախաստեղծ լեզու, Աստվածախոս և դրախտային լեզու: Այս սկզբունքն իբրև անուրանալի բնորոշելուց հետո՝ արամաբանություն գալիս էին և մի շարք այլ եզրակացություններ. Հայաստանը մարդկության օրրանն էր, բոլոր ազգերն այդտեղ կազմվեցին և ցրվեցին աշխարհի զանազան կողմերը, բոլոր լեզուների մայրը հայոց լեզուն է: Այս հանգամանքի վրա նույն Աստվածաշունչն ավելացնում էր մի ուրիշ մեծ սնապարծություն: Բանից դուրս էր գալիս, որ հայոց աշխարհը մարդկության օրրան դարձավ և երկրորդ անգամ, երբ Աստված ջնջեց մարդկությունը և նույն միայն պահեց՝ նոր մարդկություն առաջացնելու համար: Նույն տապանը, ասում էր Աստվածաշունչը, կանգ է առել Արարատ լեռան վրա: Իսկ Հայաստանում էլ կար Արարատ նահանգ և նրա մեջ՝ մի բարձր սար, Մասիս անունով: Այս Մասիսն էլ ընդունվեց իբրև բիբլիական Արարատ և, ուրեմն, մարդկության նոր բազմացումը և նոր տարածումը տեղի ունեցավ Մասիսի ստորոտներում:

Այսպիսով հայերը ազգային պարծենկոտության և սնափառության կողմից գնում հասնում էին հրեաներին, որոնք ինչպես հայտնի է, ընտրյալ ազգ էին համարում իրանց, բոլոր ազգերից զերազանց, որովհետև երկնքում մի Եհովե (Եհովա) ունեին, որ շարունակ իրանց մասին է մտածում: Հայերը նույնիսկ խլում էին հրեաների առաջնությունը. նրանք ընտրյալ ազգ էին սկզբից և եթե, դրախտային ժամանակներից, երբ հրեաներ, ինչպես նրանք էին ասում, շիալին և միայն մի ազգ ու լեզու կար՝ հայն ու հայերենը:

Այս բացառիկ ազգային սնափառությունը միայն կրոնական հանգամանքներով չէր սնվում: Մովսես Խորենացու գրած հայոց պատմությունը գալիս էր նրա մեջ խառնելու և մեծ շափերով բաղաբական պարծենկոտություն: Ազգային մեծ հերոսները՝ Հայկ, Արամ, Տիգրան, Արտաշես, Տրդատ պատերազմական փառքի և պետական մեծության ներկայացուցիչներ էին: Եվ այս բոլորը հաղորդում էր հայ ինքնագոհ ազգասիրության մի բարձրավիզ ինքնապաշտության կերպարանք, որ համազգային պաշտամունք մնաց երկար ժամանակ, քանի չէր զարգացած ինքնաքննության զգացմունքը, քանի միամիտ հավատը և կրոնական ոգևորությունն էր տիրում մեր մեջ:

¹ Տ. Նախընթաց գլուխը:

Ամենքն էին ենթարկված այս ազգասիրության, և բոլորովին զարմանալի չէ, որ բացառություն չէր կազմում և Մեսրոպ Թաղիադյանը: Նրա ազգասիրությունը շատ դեպքերում իսկապես ազգամոլության էր հասնում: Բավական է հիշատակել այստեղ շատերից մի օրինակ: Իր «Ընանապարհորդությունն ի Հայաստանում» մեջ Թաղիադյանը մեծ ոգևորությամբ, ինչպես Ղազար Փարպեցին հինգերորդ դարում, նկարագրում է Արարատյան նահանգը: Հայրենի բնությունը, հոշակավոր դաշտի պտղաբերությունը ներշնչում են նրան մի տրամադրություն, որ պատրաստ է գերազանց, անմասն համարելու ամեն ինչ, որ վերաբերվում է հայրենի երկրին: Այս շրջանակի մեջ միանման չափազանցությունների մակերևույթի վրա է դրվում և մարդը, հատկապես, իհարկե, հայ մարդը: Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը (XVII դար) պատմում է, որ Արևելքում պարսկական արյունը համարվում էր վատ, փշացած, ուստի նրան ազնվացնելու համար խառնում էին վրաց և մինգրելիների արյունների հետ, որոնք ազնվագույնն էին համարվում Արևելքի բոլոր կողմերում: Թաղիադյանը, հիշատակելով այս վկայությունը, ազգասիրական պարտք է կատարում, ավելացնելով, «Բայց ես հաւանեալս եմ վարկանել թէ Հայք էին յաւես՝ որ ազնուացուցին զարին մերձակայ ազգացն՝ վրաց և Եգիպտոց»:

Ապացուցանում էր նա այս բանը ի միջի այլոց և այն իրողությամբ, որ Մովսես Խորենացին իր ողբի մեջ հայոց ազգն անվանում է «հանուրց հիւսիսականաց վեհագոյն»:

Անարդարություն կլինի, եթե մենք մի յուպե անգամ թույլ տանք, թե ինքնագոհ ազգամոլությունն ամենից շատ զարգացած էր Թաղիադյանի մեջ: Ո՛չ, այս հատկությունը պատկանում էր Մխիթարյան ամբողջ դարին և նույնիսկ գուռ հայկական մի երևույթ չէր, այլ նկատվում էր ամեն տեղ, նույնիսկ եվրոպական ազգերի մեջ, ուր ազգայնական շարժումները մեծամեծ հեղաշրջումների դարազրույթն էին պատրաստում: Հայ լավագույն գործիչներից շատ շատերը շին կարողացել զերծ մնալ Թաղիադյանի ազգասիրությունից: Արտվանը, Ալիշանը, Պատկանյանը և մի շարք ուրիշ գործիչներ ու գրողներ միևնույն դավանանքին էին պատկանում: Անշուշտ այս ուղղությունը հայերի մեջ, ինչպես և այլ ազգերի մեջ, հարկավոր էր իբրև նախապատրաստական մի շրջան, որ տանում էր դեպի ավելի առողջ և ստեղծագործող ազգային գիտակցություն:

2. ԲԱՆԱՍՏԵՂՍՈՒԹՅՈՒՆ: Մխիթարյան գրական դարը, իհարկե, մի անփոփոխ և միանման երևույթ չէր սկզբից մինչև վերջ, այլ, ինչպես ամեն մի մարդկային գործ, անցավ աստիճանական զարգացման ձևերը:

Այս իրողությունը մանավանդ լավ նկատելի է Մխիթարյան բանաստեղծության մեջ: Տասնութերորդ դարի երկրորդ կեսում բանաստեղծությունը Ս. Ղազարի կղզում դեռ ամենայն հաջողականությամբ հին ձևի մեջ էր ամփոփված: Ոտանավոր հյուսելը մի արհեստական բան էր, բանաստեղծության նյութ դարձնել կարելի էր ամեն մի առարկա, թեկուզ հենց, օրինակ, մի վայրի աշխարհագրական նկարագրությունը: Այսպես էր անում, օրինակ, Մխիթարյան նշանավոր հեղինակներից մեկը, Հ. Ղուկաս Ինճիճյանը: 1794-ին լույս տեսավ նրա «Ամարանոց Բիւզանդեան» գործը, որ Կ. Պոլսի շրջականների նկարագրությունն էր, գրված մեծագույն մասամբ ոտանավորով: Այս Մխիթարյան բանաստեղծության նախնական շրջանն էր: Նրա մեջ դեռ տիրում էր միջին դարերում մեր յուրացրած արաբական ձևը, այն է՝ միալար նույնահանգությունը, որ ձանձրալի միանմանություն էր տալիս ոտանավորին: Հ. Ինճիճյանի ոտա-

¹ Երես 92:

նավորն այս երկի մեջ մտտ երեք հազար տող ունեք և բոլոր տողերը, սկզբից մինչև վերջ, վերջանում էին «ին» հանգով: Ահա մի նմուշ առաջին պատահած երեսից:

Ի կարգի բազկաց Ռումելի մասին
ՁՏէՖՔէրտար-պունին՝ տեսի առաջին
Նախ տուն տէՖէրտար՝ համարակալին,
Ապա փոխադրեալ՝ չարքայախանին:

Միամիտ ու անարվեստ էր նաև մյուս նշանավոր հեղինակի՝ Հ. Մկրտիչ Ավգերյանի ոտանավորը մի կրոնական-խրատական բանաստեղծության մեջ, որ լույս տեսավ 1810-ին գրաբար և աշխարհաբար լեզուներով: Աշխարհաբարի վերնագիրն է «Բանաստեղծութիւն շորս ետքերնուս վրայ»: Նշանավոր հայագետը իբրև կրոնավոր, կամենալով դաստիարակել ժողովուրդը, տալիս է նրան միջնադարյան ոգով տողորված պատկերներ, օրինակ՝ թե ինչ են անում և ինչպես են խոսում դժոխքում: Ահա Սադանլի խոսքերից մի նմուշ.

Ձեզ տեսնեմ՝ իմ զրոթւան՝ պայապան,
Հին մարդիկ՝ պատուաւորք՝ իմ սուֆրան,
Խմեցեք՝ բարկ գինի՝ ձեզ արժան,
Գինովցե՛ք, խենդեցե՛ք յաւիտյան:

Ձեր կերած՝ ապուրին՝ ձեր խելքին,
Չարաշար՝ ձեզ խոցէ մեղք՝ թիքնն.
Նոյն փուշեր՝ բոց սրտի՝ ձեզ վառեն,
Քիւ լճանիս՝ կրակն ալ շի մարեն:

Վերջապես մի երրորդ նշանավոր Մխիթարյան հեղինակ, Հ. Մինաս Բժշըկկյան, 1815-ին հրատարակում է «Ճեմարան գիտելեաց» անունով մի հատոր, գրված ամբողջովին ոտանավորով (ընդամենը 4000 տող), որի մեջ պատմվում են գիտության բոլոր ճյուղերը: Օրինակ՝

Ձի՛նչ է հանգարանութիւն
Հանքաբանութիւն՝ ուսումն է հանքաց,
Քրննէ զլատկութիւն՝ զորակ մետաղաց.
Ճառէ զգոյութեանց՝ աղային նիւթոց,
Այլ և ըզհողոյ՝ զպատուական ականց:

կամ՝

Ձի՛նչ է հայելարանութիւն
է գիտութիւն ինչ՝ պեօպես հայելեաց,
Քննէ շառաւիղս՝ երևեալ իրաց
Իբր ի հայելեաց՝ բեկեալ շառաւիղք,
Անդրադարձ ցումամբ՝ տեսանին ալաց:

Բայց միաժամանակ Մխիթարյանների շրջանում սկսում է զարգանալ ճաշակն ու արվեստի հասկացողությունը եվրոպական մտքով: Առաջ է գալիս բանաստեղծների մի սերունդ, որի գլխավոր ներկայացուցիչներն էին Հ. Արսեն Բագրատունի, Հ. Մանուել Զախչախյան, Հ. Նդիա Քոմանճյան, Հ. Նդուրադ Հյուրմյուզյան: Մխիթարյան բանաստեղծությունը սրանց միջոցով մտնում է իր զարգացման բարձր շրջանը, որ կարելի է անվանել դասական (կլասիկ): Բանաստեղծները եվրոպական օրինակներով են ոգևորված, աշխատում են նրանց նմանվել, նրանց ներկայացնել հարազատությամբ, և գրաբար լեզուն,

մնալով այդ նոր արվեստի նվիրական լեզու, ստանում է առանձին, մինչև այդ շտանված շուք և պերճություն: Այլևս ծանրատաղտուկ անարվեստություն չէ, որ բռնացած է մի ժամանակ ներսես Շնորհալիներ ունեցած հայ բանաստեղծության վրա: Այժմ հայերենով կերտվում են գեղեցիկ կտորներ: Օրինակ՝

Շանթք և ամպրոպք որոտընդոսս,
Հողմ զմայրիս տատաներ,
Օղ մրրկեալ ի խիստ շառաշ
Նուագս ահեղ յօրիներ:
Ահարեկեալ ի թաւ մայրիս,
Գառն ի հօտեն իւր մոլար,
Յայս կոյս և յայն փութայր ճեպեր
Անքոյթ խնդրեալ իւր զաղար:

կամ՝

Տրտունչ կալաւ սիրամարգ
Առ դիցուհին իւր Հերա,
Զի ձայն խրոպոտ և անարգ
Փըժոխաւոր ետ նրմաւ
«Եւ ի՛բր, աւէ, լուսինեակն՝
Այն լըքոտի հեզ հաւիկ՝
Չայն ընկալաւ ներդաշնակ
Լինել զարնան երգեցիկ»:

Գեղեցկություն, ճաշակի նրբություն միայն թարգմանությունների մեջ չէին նկատվում: Մխիթարյան բանաստեղծները շատ ինքնուրույն գործեր էլ տվին, և մանավանդ այստեղ է, որ աչքի է ընկնում մի շատ ուսանելի ինքնուրույնություն: Բովանդակության և ձևի վրա սաստիկ ազդում էր միջավայրը: Դա մի վանք էր՝ մի շատ փոքրիկ կղզու վրա: Մեկուսացման ավելի միջոց հագիվ կարողանար գտնել ճգնավորական մտածողությունը: Շատ քիչ է դրսի աշխարհիկ կյանքն իր ալիքների աղմուկը մտցնում վանական շրջապատից ներս: Եվ ահա այս հանդամանքից էլ ծնվում է վանական կյանքի ամբողջ կենցաղական կարգը: Նեղ հորիզոն, տեղական մանր հետաքրքրություն, մանր զգացմունքներ, կյանքի միանմանություն: Սիրտն ազատ չէ, միստիկական զգացմունքը ստեղծել է պայմանականություններ: Ահա այսպիսի անձուկ միջավայրում պիտի ստեղծագործե վանական բանաստեղծը: Նրան արգելված է մարմնական սիրո մասին մտածել անգամ: Այսօր էլ դեռ կանայք իրավունք չունեն բարձրանալ Ս. Ղազարի վանական շինության երկրորդ հարկը, ուր վարդապետների խցերն են: Եվ այսպիսով վանական բանաստեղծությունը, ընդհանուր առմամբ, ցուրտ է, մատնված արհեստականության, առանց մեծ հնչյունների, առանց բուռն, տարերային արտահայտությունների: Եվ մենք տեսնում ենք, որ Մխիթարյան բանաստեղծությունները գլխավորապես նվիրված են վանական մանր զնայքերին, օրինակ՝ նորընծաների ձեռնադրության, ամարանոց գնացող ընկերին, այս կամ այն հանդեսին, տոնակատարության և այլն:

Միջավայրի այս առանձնահատուկ պայմանները հաղորդում են Մխիթարյան բանաստեղծությանը շատ արհեստականություն, և միայն իսկական ձիբքը, բանաստեղծի իսկական կոչումը կարող էին այսպիսի պայմանների մեջ ընդգծել իսկական բանաստեղծներին իրանց շրջապատող գրական ընտանիքի մեջ: Ստեղծագործական հորիզոնների խիստ անձկությունն էր պատճառը, Ս. Ղազարի կղզում գեղարվեստական բանահայտությունը դարձնում էր լուկ արտաքին ձև, լուկ լեզվական մարզանքներ, առանց խոր ու կենդանի բովանդակության: Հայտնի է, որ այդ մարզանքները կազմում էին աշուղական արվեստի համարյա

ամբողջ բովանդակությունը: Այդ արվեստի մեջ մեծ նշանակություն ունի մրցութունը, երկու արվեստակիցների իրար հետ պայքարելը բանաստեղծական դարձվածքներով և հատկապես այս մրցութունների համար ստեղծված ձևերով: Այսպես էին և Ս. Ղազարի բանաստեղծները: Աշուղների պես նրանք ընդունում էին մի-մի կեղծանուն¹ և իրար հետ մրցում էին ոտանավորի գանազան ձևերով, որոնք կոչվում էին բոնահանգ, նոյնահանգ, բոնակարգ և այլն:

Ս. Ղազարի Պառնասը առանձնապես կենդանանում է, սակեղարը սկսում 1840-ական թվականներից: Յաղկում է բանաստեղծության մեծ տեսակը, դուրս գալիս գրական քերթվածք: Սկզբում նա բացառապես թարգմանական է: Այդ նոր շրջանը բացում է Հ. Քոմաճյանը Հոմերոսի Ոդիսականի և Եղիականի թարգմանություններով, որոնք հրատարակվում են 1843 թվականին, ապա 1845-ին, Հյուսիսային տալիս է Վիրգիլիոսի Ենեականի թարգմանությունը, հետո Բագրատունին տպագրում է նույն Վիրգիլիոսի Մշակականը հին հայկական շափով: Նույն այդ թվականներին աստղարեզ է գալիս մի իսկական բանաստեղծական խառնվածք ևս՝ հ. Ղևոնդ Ալիշանը, որ տալիս է բազմաթիվ գրաբար ոտանավորներ՝ գուտ Մխիթարյան դպրոցի ոգով: Վանական տաղաչափության մեջ ավելի ևս ծավալվում է հայրենիքի պաշտամունքը, և պատմական Հայաստանը իր նշանավոր վայրերով և իր ավանդական հերոսներով լցնում է Ս. Ղազարի Պառնասը ոտանավորի վերացականությամբ:

Եթե շմոռանանք Մխիթարյան գրական դարի մեծ ազդեցությունը ամբողջ հայության վրա, միանգամայն բնական կդառնա մեզ համար, որ Ս. Ղազարի միաբանությունն իր բանաստեղծական սովորություններով և ձևերով մի ընդհանուր մթնոլորտ էր ստեղծում համարյա ամեն տեղ: Նույն ճառագան, ուղերձային բնավորությունը, նույն կրոնական եռանդը, նույն արհեստականությունը, որ ոտանավորի ուժը ավելի բառերն է դարձնում, քան ներշնչումը, նույն ազգասիրական պաշտամունքը և սերը դեպի ստվար, մեծահատոր քերթվածները Հոմերոսի կամ Վիրգիլիոսի ձևերով մենք նկատում ենք շատ տեղեր և մանավանդ արևմտյան հայության մեջ: Այսպես, 1830-ական թվականներին Զմյուռնիայի Հովհաննես քահանա Վանանդեցին տպագրում է երկու խոշոր հատոր՝ «Արփիական Հայաստանի» և «Ոսկեդար Հայաստանի» անուններով. պոլսեցի Գրիգոր վարժապետ Փեշտիմալճյանը գրում է «Դիմանությունն ի շարձարանս Քրիստոսի» հատորը, ոտանավոր, իսկ վանեցի Մկրտիչ Խրիմյանը (հետո կաթողիկոս) Բագրատունու ազդեցության տակ հայկական շափով է գրում իր «Հրախրակ Երկրին Արարատյան» քերթվածք, որ տպվեց 1850-ին:

Բայց որքան և ուժեղ ու համատարած լինե՞ր Մխիթարյան Պառնասի ազդեցությունը, կյանքն այնուամենայնիվ իր պահանջներն էր առաջ տանում և իր իրավունքն էր գործադրում: Մխիթարյանների երկու աշակերտներ՝ Մկրտիչ Պեշտիմալճյան և Սրապիոն Հեքիմյան այս իրողության լավագույն ավացուցցուներն են: Այս երկու բանաստեղծների սկզբնական գրվածքները կատարելապես մխիթարյան են թե լեզվով (գրաբար), թե ձևով ու բովանդակությամբ: Բայց հենց որ նրանք հեռանում են վանական միջավայրից, նրանց ներշնչումն էլ ընդունում է ազատ ստեղծագործության թափը և կնոջական սերն ու գեղեցկությունը գալիս են հեթանոսական հրապույր հաղորդելու նրանց քնարին ի մեծ դժգոհություն նրանց կուսակրոն ուսուցիչներին:

¹ Այսպես՝ Բագրատունին կոչվում էր Առան Սիսակյան, Հյուսիսային՝ Վրույր, Քոմաճյանը՝ Անտիգիոս Սիրացի, Զախախյանը՝ Վահրամ Ռուբինյան:

Մյուս կողմից հայ նոր բանաստեղծական արվեստի մեջ կյանքը ներս է խուժում ժողովրդական երգի միջոցով: Այս երևույթը ավելի պարզ ներկայանում է մեզ արևելյան հայության մեջ, որ XIX դարի սկզբից սկսում է կոչվել և ուսաստանություն: Այստեղ դարի սկզբից տեսնում ենք, որ ժողովուրդը, գոնե մի քանի վայրերում, ուրախությունների և խնջույքների ժամերում երգում է Աերովրե վարժապետ Պատկանյանի¹ երգերը, որոնք թե կրոնական բովանդակություն ունեն և թե արտահայտում են ժամանակակից քաղաքական դեպքերը (օրինակ, Աղա-Մահմեդ-խանի արշավանքը, Ցիցիանովի հաղթությունները և այլն): Այս երգերի ժողովրդականությունը² կարելի է միայն նրանով բացատրել, որ Պատկանյանը, թեև բավական անարվեստ մի երգիչ, գրում էր հասկանալի ոճով և առողջ գրիչ ունեւր:

Նրանից անհամեմատ ավելի տաղանդավոր էր Հարություն քահանա (հետո վարդապետ) Ալամդարյանը: Կրոնավորական սքեմը չկարողացավ խեղդել այս մարդու սիրտը, զգայուն բանաստեղծական սիրտը նա սիրեց, երգեց այդ սերը, և նրա երգն էլ անցավ ժողովրդի բերանը: Ում չէ հայտնի նրա անկեղծ ու լիարուծ խանդավառությամբ տաքացրած հարսանեկան նկարագրությունը:

Յերկու ձեռն երկու մոմ
Ինձ ընդ առաջ էլ չիւր տան.
Մի հարցանեք ով էր նա,
Հրեշտակ թե կոյս լուսազեղ:
Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար.
Այն զինչ օր էր և զի՞նչ ժամ,
Յորում տեսի ես կեանք նոր:
Լիաճրագ յայնմիկ տան
Ի մարդաշատ բազմության
Ի մեջ աղճկանց և հարսանց
Յոտին կայր ոմն անդյանկեան:
Այն օրիորդն էր պարկեշտ
Ինձ պատահյալ առ զբոսմար տան,
Զոգիս գրաւեաց չիւր ի սեր
Ի նմա տեսի ես կեանք նոր:

Այսպիսի ճիշտ ստեղծագործություններ անկարելի է, որ խորթ մնան ժողովրդի սրտին այն պատճառով միայն, որ ժողովրդական լեզվով չեն գրված: Բայց ժողովուրդն իր սեփական բանաստեղծությունն էլ ունեւր: Մեսրոպ Թաղիադյանը Թիֆլիսի նկարագրության մեջ զարմանքով նկատում է, որ այդ տեղի հայերը գինեխմության ժամանակ փոխանակ շարականներ կամ հոգևոր տաղեր երգելու՝ իրանց հորինած երգերն են երգում: Օրինակ.

Ուլ էիր և տիկ դարձար,
Տկահան շարշարուեցար
Հալվարրի դարի դուսին,
Տուինք մշակի ուսին.
Ո՛վ, ո՛վ սուրբ աճկոր,
Լուեզ բա՛ց մեզ ուղարմիա՞:

¹ Պատկանյան նշանավոր գրական ընտանիքի (Գաբրիել, Ռաֆայել, Քերովրե, Միքայել) նախահայրը, պոլսեցի, տեղափոխված Ռուսաստան:

² «Սերովրե վարժապետ Պատկանյան Երգք», Մոսկվա, 1857, էր. 8:

³ «Ճանապարհորդություն ի Հայաստան», էր. 317:

Բայց չէ կարելի ասել, թե Մխիթարյան բանաստեղծությունը միանգամայն խորթ մնաց ռուսահայերին: Այստեղ նույնիսկ Մխիթարյաններից առաջ էր (1834-ին), որ Սարգիս Տիգրանյանը (նոր նախնիզեանցի, Մոսկվայի համալսարանի լեզվագիտական բաժնին ավարտած) թարգմանեց ֆրանսերենից մասինի «Գոթոգիան» գրաբար ոտանավորով. նույնպես և 1840-ական թվականներին Հ. Համազասպյանը տպագրեց «Թարգմանութիւնք արձակ և ոտանաւոր ի ռուսաց լեզու» (Պուշկինից, Լերմոնտովից, Ժուկովսկուց, իսկ սարկավագ Կեոքչեյանցը՝ «Ծաղկաբաղ յառակացն Քոխլովի, Տմիթրիէի և Եմմնիցերի»): Հրատարակվեց նույնիսկ և ինքնուրույն գործ՝ «Նղերերգութիւնք»¹ Հ. Հարխյանի, թատերական գրվածքները գրաբար ոտանավորով: Բայց այս գործերը պատահական, ոչ տեական երևույթի կերպարանք ունեցան ռուսահայերի մեջ:

Ժողովրդի համար գրելու, ժողովրդական լեզվով գրելու մեծ խորհուրդը, որ հայ վերածնության նշանաբանը պիտի դառնար, պատռում է նույնիսկ Մխիթարյան կղզիացման պատվարները և մտնում է Ս. Ղազարի կղզին այն ժամանակ, երբ գրաբարխոս Հոմերոսի, Վիրգիլիոսի, Կիկերոնի դարն էր: 1847 թվականը նշանակելի է հայոց նորագույն գրականության պատմության մեջ: Այդ ժամանակ է հ. Ալիշանը «Բազմավեպի» մեջ տպագրում իր աշխարհաբար երգերը «Նահապետ» կեղծ անունով: Այստեղ էլ Ալիշանը, ինչպես իր գրաբար շատ երգերի մեջ, հայրենիքն էր երգում, Հայաստանը: Բայց ինչպե՞ս: Մեկի (գրաբարի) մեջ նա բարձրասլաց էր, բառերի ճայթմունքներով ազդու, իսկ մյուսի (աշխարհաբարի) մեջ՝ անուշիկ, խաղաղ ու պարզ մրմունջ, սրտի իսկական թարգման:

Գրաբարով նա գրում էր.

Հայկեան փանդոանց որոտընդոտ
Կունչին բարբառք մարտագոտ,
Դառնակոտոչ անդրաձայնէ
Պարսիկ կերկեր ի շեփոր.
Շարժեն հրեշտակք թևա լուսափողփողս,
Ճիւղք ճահաղաց կայառքն ի դժոխս.
Շոխնդն շանթառք զեթերօք փարի.
Սարսափեն սանդառք ի խօլ խաւարի:

Իսկ աշխարհաբարով՝

Կես գիշերն առել էր գիշերավայր
Լուսնակն յամպի տակ բացխրփիկ խաղայր.
Մինչ հովին շրջկոտ ձախ թևքն յանտառ
Օգոց և ծառոց հանգիստ կու կարդայր:
Ջուարայրի մութն ու կանաչ ծոցիկ
Մայրի ծայր ճրղքեր Տղմուտն հանդարտիկ,
Մետաքսանման անձայն խուտուտիկ,
Թաւակցնելով հազար բխր ալիք:

Բայց ժողովրդական երգը ուրիշ մեծ հաղթանակներ էլ ուներ: 1852 թվին Մոսկվայում տպվեցին ժողովրդական աննման աշուղ Մայթ-Նովայի երգերը՝ Գեորգ Հախվերդյանի հմուտ առաջաբանով ու ծանոթություններով, իսկ Վենետիկում հ. Ալիշանը հրատարակում էր «Հայոց երգք Բամակականք» գրքույկը, որի մեջ կային անցյալ դարերում հյուսած մի քանի ժողովրդական երգեր, անանուն և անհայտ երգիչների գործեր, որոնց թվում էր և մեր հռչակավոր

¹ Բոլոր այս գրքերը տպագրվել են Մոսկվայում:

«Գոթունկ, ուստի՞ կու գաօր»: Իսկ մի երեք-չորս տարի անցած՝ Պետերբուրգում լույս էին տեսնում երկու տետրակ «Գամառ-Քաթիպայի արձակ և շափաբերական շարադրությունները» վերնագրով: «Թիֆլիսի քեֆ»՝ ոտանավորն էր, որ տպվում էր առաջին տետրակի մեջ, իսկ սրա բովանդակությունը՝ ներկայացնում էին երկու տետրակների շապիկների վրա տպված պատկերները՝ դուռնա, խորոված, դինի, դահիրայով պարող կին: Այդ նկարները վկայություն էին, որ եկել է նոր ժամանակը՝ հայ բանաստեղծության բովանդակությունը հարստացնելու համար, որ կյանքը կենսունակ հյութեր է մտցնում նրա մեջ, այնպես որ Ս. Ղազարի բանաստեղծական միջավայրի սառցնող պայմանականությունն այլևս չէ կարող հարվածել հայ արվեստի սիրտը:

Այսքան բազմազան և կենսունակ են այն շարժումները, որոնց միջավայրն էր հայ նոր բանաստեղծությունը և որոնք տարան նրան բնական զարգացման ճանապարհով: Ի՞նչ տեղ ուներ այդ շարժումների մեջ Մեսրոպ Թաղիադյանը:

Իր գրական հռչակը Թաղիադյանը պարտական է առավելապես իր բանաստեղծական տաղանդին: Եվ սակայն նրա տաղաշափական մանր գրվածքների մեջ հազիվ գտնենք մի քանի հատ, որոնք արժանի լինին ուշադրության: Ընդհանրապես բնորոշելով Թաղիադյանի նշանակությունը մեր բանաստեղծական գրականության մեջ, մենք պետք է առենք, որ դա Մխիթարյան դպրոցին պատկանող մի դեմք է այնքան, որքան մի Պեշիկթաշյան կամ մի Հեքիմյան, բայց խիստ ինքնուրույն, առանձնահատուկ գծերով: Թաղիադյանն էլ սիրում էր կեղծ կլասիկական ձևերը, ինչպես սիրում էին Առան Սիսակյանը, Վրույրը Ս. Ղազարի վանքում, բայց այս վերջիններից անհամեմատ ավելի նպաստավոր պայմանների մեջ էր գրված հենց այն կողմից, որ կաշկանդված չէր ճգնավորական պայմանականություններով և կարող էր ազատ զգալ իրան սիրային քնարերգության մեջ:

Առանձին ինքնուրույնություն նրա քնարին տալիս էր նրա իրահատուկ արտահայտության ձևը, բայց մանավանդ միջավայրից ստացած ազդեցությունը: Հնդկահայ գաղթականությունը XIX դարի ընթացքում ունեցավ մի գրականություն, որ շատ բաներով էր տարբերվում XVIII դարի նրա գրականությունից: XVIII դարում հնդկահայը դեռ քիչ էր զգում իր, իբրև առանձնական համայնքի, անջատ գրությունը: Նա դեռ Ջուղայի մի մասն էր, ապրում էր նրա շահերով և նրա միջոցով՝ նաև մայր-հայրենիքի, Հայաստանի շահերով: Գրականությունը ճաշակավոր չէր, բայց չղուտ, աչքի ընկնող իբրև խոշոր ու անկախ մի երևույթ: XIX դարում գրականությունն ավելի ճաշակավոր է դառնում, բայց ավելի թույլ, ավելի ենթակա հայ աշխարհում տիրող գրական ազդեցություններին: Այն ժամանակ էլ ավելի խորանում է հնդկահայերի մեջ տեղայնությունը: Նրանք կազմում են մի ինքնամփոփ գաղթականություն, որ մշակում է ինքնուրույն հոգեբանություն, ունի իր տեղային ավանդությունները, իր տեղային երգն ու գաղափարը:

Գրական տեսակետով այդ հնդկական տեղայնությունը ներկայացնող մի շատ թանկագին և հազվագյուտ հիշատակարան ունինք մենք. մի «Տաղարան», որի մեջ հավաքված են հնդկահայերի մեջ գործածված երգերը: Այս ժողովածուն հրատարակել է Կալկաթայում Ս. Ջ. Ավետյանը¹, որ փոքրիկ մի առաջաբանի մեջ ասում է, թե հնդկահայերի մեջ գոյություն ունեին շատ ձևազարդ

¹ Մեր ունեցած օրինակը՝ տարաբախտաբար, պակասավոր է և մենք չգիտենք, թե որ թվականին է տպվել այս ժողովածուն: Հավանական է թվում, որ նա լույս տեսած լինի 1840-ական թվականներին:

տաղարաններ, ինքը հավաքեց և կաղմեց մի հատը, որպեսզի հարմարութիւն լինի բոլոր գործածական երգերը միանգամից ունենալու: Տաղարանի մեջ հավաքված հայերեն երգերի թիվը հասնում է 70-ի: Եվ, ինչպես երևում է, նրանք բոլորը տեղական ծագում ունեին: Գոնե մեզ չհաջողվեց գտնել մեկը, որ լիներ արտաստություն այն ժամանակ գոյություն ունեցած այնպիսի երգի, որ հյուսված լիներ Հնդկաստանից դուրս: Եթե այս այսպես է, մենք, ուրեմն, ունենք մեր աչքի առջև հնդկահայերի բանաստեղծական գործերը, առանց, սակայն, ունենալու նրանց հեղինակների անունները: Դրանք մեծագույն մասամբ սիրո և զվարճության երգեր են: Գերակշռում են, իհարկե, գրաբար լեզվով գրվածները: Մենք արդեն ասել ենք, որ գրաբար գործածությունը ամենայն համառությամբ պահվեց Հնդկաստանի հայերի մեջ: Կարելի է համարձակ ենթադրել, որ երգերի հեղինակ հանդիսանում էին տեղացի վաճառականները, որոնք և ցույց էին տալիս բավական կիրթ ճաշակ և բանահյուսական շնորհալի տրամադրություն:

Ահա օրինակ, բաժակի մի երգ.

Սկայք եղբարք անումք ճաշակ,
Սիրոյ մերոյ վայելութեամբ.
Ասեք զգինին լըցեք զբաժակ
Եւ ըմպեցեք ախորժութեամբ:
Զի ոչ գիտեմք վաղեան ատուր,
Զինչ ցաւ ունի մեզ բերելոյ.
Վասն որոյ մինչ հաւաքեալ կամք,
Ջանամք յաւետ մեզ բերկրելոյ:
Բարձրացուցեք բաժակ լցեալ,
Եւ սիրտ սրտիս երկրորդեցեք,
Բանս ի զորսէ երթամք իշելի,
Ապա սիրով ճաշակեցեք:
Նորոգութիւն տանն Հայոց,
Աններկոյ մեր բարեկամաց,
Պարծանք ազգիս ներկայ Տիկնանց,
Եւ այս խմբեալ միակամաց:

Սիրերգները բազմաթիվ են և շատ դեպքերում ներշնչման վառ կնիք են կրում.

Սիրահարեալ եմ քոյ սիրով,
Սիրտս կիզեալ ուժգին բոցով
Ես սիրոյ քո մնամ լալով,
Մի՛ մոռանար իմ Սիրելի:

Կամ՝

Հայեա՛ց սիրով, հայեա՛ց սեր իմ,
Եւ քաղցրութեամբ լուր ինձ ազելի,
Զի ի սորոյդ վիրեալ կոճիմ,
Վասն այն սիրտ քո տո՛ւր ինձ, աղչիկ:

Երգելով սեր, գինի, բնություն, հնդկաստանցի հայը շէր մոռանում, որ ինքը անգլիահայատակ է և պարտավորություններ ունի դեպի նորին բրիտանական մեծությունը: Եվ նա էլ հորինել էր օրհներգ:

Տեր կեցցո՛ւ Ջոշ արթայն,
Վսեմ կեա՛լ ընդ երկայն.
Կեցո՛ւ զարթայն.

Յզեա՛ նմա յաղթութիւն,
Փառք և երջանկութիւն,
Կատարել զպետութիւն,
Երկար առ մեօք,
Ով Տեր մեր Տե՛ր ծագեա,
Թշնամիս զիւր ցրուեա՛,
Եւ գորեա՛:

Հետաքրքրական են և աշխարհաբար երգերը: Նրանք Ջուղայի բարբառով են գրված և պատկանում են ժողովրդական երգիչներին կամ, պարզապես, աշուղներին, որոնք զնուր էին Հնդկաստան այնտեղի հայ աղաներին իրանք երգերով զվարճացնելու համար: Երգերի այս տեսակը շատ տարածված էր, մանավանդ այն ժամանակները Հայաստանի զանազան կողմերում՝ և ուներ մի ընդհանուր ոգի, արտահայտության մի եղանակ: Գանգեսի ափին էլ հայ երգասաց գուսանը հոգեկից էր Արաքսի կամ Կուրի ափերին երգողներին: Ահա մի նմուշ.

Գովեմ սրտի ուրախական
Թիֆլիս քաղաքն պատուական.
Յոյժ գեղեցիկ և սիրական
Վրաստանայ գօզալներն,
Այ Վրաստանայ գօզալներն,
Շեն Թիֆլիզու խաթուններն:

Ուշագրավ են նաև ժողովրդական «Եսալայի» կամ «Ջանիման» երգերի փոփոխականները նոր-Ջուղայի լեզվով.

Ես՛ լալի, հայ ջանիման ջանիման,
Ես՛ լալի, ջախ տարարին ջանիման:
Ես՛ լալի, պատկերդ ա աննըման,
Ես՛ լալի զեմք քո պայծառ փայլման:

Բայց մեր Տաղարանը ցույց է տալիս և մի ուրիշ շատ նշանավոր հանգամանք: Հայտնի է, թե հայը ինչքան մեծ շափով ենթարկվում էր այն ազգերի ազդեցության, որոնց հետ ապրում էր նա, լինի այդ նրա բուն հայրենիքում, թե հեռավոր գաղութներում: Այս հանգամանքի շնորհիվ է, որ հայ ժողովրդական լեզուն կամ խճողվել է օտար բառերով, կամ թե իսպառ տեղի է տվել օտար լեզուներին: Հայը քրդախոս, թաթարախոս, շերքեղախոս, վրացախոս, թրքախոս... Այս բոլորը պատմական կենսակցության և հայրենի տկարացման հետևանքներն են: Հնդկաստանում հայը միայն անգլիական բարձր կուլտուրայի ազդեցության շէր ենթարկվում, այլև տեղական ժողովրդի, այսինքն հնդիկների ազդեցության: Եվ այս՝ մինչև այն աստիճան, որ յուրացնում էր հնդիկ ժողովրդի երգերը, երգում էր նրանց իբրև իր սեփական երգեր: Այս հանգամանքի մեջ, իհարկե, ոչինչ, արտակարգ և անբնական բան չկար: Չէ՞ որ նույն հայը թուրքախոս թուրքերեն էր երգում, Պարսկաստանում՝ պարսկերեն, Ֆրանսիայում՝ ֆրանսերեն և այլն: Մեր երգարանն ունի բազմաթիվ հնդիկերեն երգեր՝ հայերեն տառերով գրած: Նմուշի համար բերում ենք մի փոքրիկ կտոր.

Պոստահայերի մեջ հայտնի էին մի շարք անուններ Սեյեդ, Եիրին, Միսկին-Բուրջի, Թուրինջ, Ազրար Ազամ և այլն: Այս տեսակի ոտանավորները հրատարակված են Մոսկվայում 1850-ական թվականներում «Նոր Քնար Հայաստանի» վերնագիրը կրող տետրակներում:

Արամ կը՛սա դիւ ջօզրէս
Չըէր օնկէ պալէ.
Մտֆրինկօ խօզայ էջղրկէ
Յընդլմէ նը դը՛հալէ:

Եվ այսպէս, Մեծորոպ Թաղիադյանը միակ բանաստեղծը չէր Հնդկաստանում, ինչպէս կարելի էր ինքնին հետեցնել, եթէ մենք շունենայինք այսպիսի կարևոր մի հիշատակարան: Հայ բանաստեղծությունն ունեցել է, գուցե նույնիսկ շատ առաջ, քան Թաղիադյանի գալը Հնդկաստան, իր հողն ու մթնոլորտը, և գաղութի ընթերցասեր անդամները, որքան և վաճառականության նվիրված, ունեին հասկանալու և գնահատելու շատ կոլաններ: Եվ Թաղիադյանն էլ, ինչպէս կտեսնենք, համակվեց գաղութային հոգեբանությունը, ենթարկվեց այն ընդհանուր օրենքին, որ մարդու բոլոր գործերի վերաբերմամբ ներկայացնում է միջավայրը:

Թաղիադյանի մանր բանաստեղծությունների լիակատար ժողովածուն չէ հրատարակված: Ինքը Թաղիադյանը ոչ միայն հոգ չէ տարել այդ մասին, այլ և ցույց է տվել մի անփութություն, որ հատուկ է շատ բանաստեղծների: Իր ոտանավորները նա սովորաբար տպում էր «Ազգասէրի» մեջ իր ստորագրությամբ, բայց կան և այնպիսիները, որոնք ստորագրություն չեն կրում կամ նույնիսկ ուրիշ ստորագրություն ունին: Այսպէս է, օրինակ, «Տէ՛ր, կեցո դու զՀայս» ոտանավորը, որ Թաղիադյանի բոլոր գործերից ավելի է հռչակել նրա անունը և դեռ այսօր էլ հնչում է իբրև ազգային օրհներգ, բայց որ տպվել է «Ազգասերի» մեջ Հ. Կ. ստորագրությամբ¹:

Տէ՛ր կեցո՞ դու զՀայս
Եւ արա՞ զնոսա պայծառս,
Կեցո՞ զՀայս:
Ձողորմութիւնդ վերին
Հաճեա՛ց ձօնել նոցին,
Զի նովիմք մարթասցին
Ապրել յաստիս:
Ո՞վ Տէր մեր, Տէր փութա՛,
Զազգ մեր համայն փրկեա՛
Ի թշնամեաց:
Կափո՞ գաշս նոցուն
Հատ զարմատսըն զրուն,
Եւ զազգ մեր պարտասուն
Արա՞ հոոր:
Աչովդ համատարած
Զազգ մեր արտահալած
Փոյթ գումարեա՛:
Յաշխարհ Արարտայան
Ի վայր մեր ծննդան,
Որ այժմ է սեպհական
Օտարազգեաց:
Ի քո իջեալ տեղի
Զաթոռ Հայրապետի
Մեր հաստատեա՛:
Զերկարութիւն կենաց՝
Հօր մեր Աստուածազգեաց՝
Շնորհեա Պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ:

Առաքեա՛ ի բարձանց,
Համակցութիւն կամաց
Ի մերազնեայս:
Զոմն ի մէնջ յարո՞,
Արքայ ազգի մերոյ,
Տուր նմա ցուպ հուժկու,
Հովուել զմեզ:

Այս մաղթանքը մեծ տպավորություն է գործել իր ժամանակին իբրև հայ ազգի դրություն լավագույն կերպով նկարված պատկեր և իբրև նրա քաղաքական տենչերի ճիշտ արտահայտություն: Հայ գիտակցությունն այն ժամանակ չէր թաքցնում, որ իր ցանկությունն է՝ տեսնել Արարատյան աշխարհում վերանորոգված հայ թագավորություն: Այս է նշանակում վերջին տան մեջ «Զոմն ի մէնջ յարո», արքայ՝ ազգի մերոյ» դարձվածքը: Թե որքան մեծ էր այս երգի տպավորությունը ժամանակակիցների վրա, ցույց է տալիս Միքայել Նալբանդյանի «Մեռելահարցուկ» վեպի հետևյալ կտորը. «Ցանկարժ, այս միջոցին, Կոմս էմմանուէլի ականջին հասաւ մի ֆորտոպիանօի ձայն... Ուշադրութեամբ ականջ զնկելով հասկացաւ որ ածում էին «Տէր կեցո դու զՀայս» երգի եղանակը: Տիրացուն նկատեց որ այս ձայնը տպավորութիւն գործեց Կոմսի վերայ, վասն որոյ և ասաց. «Ես իմանում եմ թէ ով է դորա ածողը. ահա, այն սպիտակ տանիցն է լուում... Մահտեսի Թովմասի տանից, նորա դուստրն է ածողը»: Արդարև մի վայրկյանից հետո լավեցաւ մի քնքուշ և թարմ կանացի ձայն»: Նա երգում էր երգի այս կտորը, ուր հայցվում էր, որ աստված հավաքե հայերին Արարատյան աշխարհը»: Այս առիթով հեղինակը գրում էր տողի տակ մի երկար ծանոթություն, որ սկսվում էր այսպէս. «Այս երգը առաջին անգամ երևեցաւ Կալկաթայի «Ազգասեր» անունով օրագրի մեջ, որ հրատարակում էր հավիտենական հիշատակի արժանավոր Մեծորոպ Թաղիադյանը՝ ուսումնական ազգասերը: Այս երգը թե յուր բովանդակությամբ, թե յուր բանաստեղծական վառվռուն հորինվածքի և թե հայոց ներկա վիճակի ճշգրիտ պատկերը հանդիսացնելու և դորա բարձրելու համար հարկավոր եղած հնարքները խնդրելու մասին արժանի է ազգի մասնավոր ուշադրությանը: Եթե հնար ունենայի ես, ամենասուրբ պարտականություն կդնեի ամեն մի հայի վրա անգիր ուսանել այս երգը: Մինչև այսօր իմ կյանքի մեջ չեմ տեսած կամ լսած մի այսպիսի երգ, ահա բուն ազգային երգ: Խեղճ Թաղիադյանց, խաղաղություն քո հոգուն. շարշարվեցար ազգի լուսավորության համար, բայց չհաջողվեցաւ քեզ, որպէս և շատերին, տեսանել քո մարգարեական ազգու քարոզության պտղաբերությունը մեր ազգի մեջ»:

Առհասարակ, Թաղիադյանին ավելի շատ հայրենասիրական հույզերն էին բանաստեղծական ոգևորությամբ ներշնչում, քան, օրինակ, սիրային հույզերը, որոնք թույլ ու դժգույն արտահայտություն ունեն նրա մի քանի ոտանավորների մեջ, և այս կողմից Թաղիադյանի բանաստեղծությունը սովորական մի միջակություն է: Անցյալ գլխի մեջ մենք տեսանք, որ նրան վատ չէր հաջողվում և երգիծանքը, ինչպէս ցույց է տալիս էջմիածնում նրան հատկացրած սենյակի ծաղրական նկարագրությունը աշխարհաբար ոտանավորով, բայց շափական արվեստի այս ճյուղը Թաղիադյանը չէ զարգացրել և «Յուցակ ստացեալ ազխիցը» մնում է լավագույն օրինակը: Երգիծանքի օրինակ տալիս է և հետևյալ ոտանավորը.

¹ Ռուսաստանում տպված երգարանների մեջ այս «արքայ» բառը հասկանալի պատճառով, փոխադրված է «Հովիւ» բառով:

Գու որ մարմնով միայն մարդ,
Կե՛ր, ա՛րբ, ուրախ ի կենաւ արդ.
Հոգի շունչս որ վախենս
Թե համար տալ կա՛յ ընդ անդ:
Հեռոցնա գաշխարհ՝ տեխնայ
Զիարդ կարես փող կտուեա,
Մի՛ վախեր, զի օգնական
է քո աստուած Մամոնայ:

Մենք ասացինք, որ Թաղիադյանն էլ, իբրև բանաստեղծ, նեթարկված էր գաղթականի հօգեբանություն: Այդ այն հոգեկան դրությունն է, որ հեռավոր օտարության երկնքի տակ հայրենի տեսիլներ է ստեղծում՝ իրան մաշեցնող կարոտն ամոքելու համար: Ապրելով գաղթականական իրականության մեջ, Թաղիադյանը ազդվում էր այդ միջավայրից, հարմարվում էր նրա առանձնահատուկ պայմաններին: Բայց բարոյական նեցուկներ որոնել նա կարող էր հեռավոր հայրենիքը օտար գաղթավայրին գոնև երևակայությամբ մոտեցնելու մեջ: Մեր բոլոր հին երգարաններում տպվում էր մի երգ, որ հյուսված է Հնդկաստանում և որ վերագրվում է Մեսրոպ Թաղիադյանին¹:

Այդ՝ մի գլուղական աղջկա բավական սրտառու է երգն է.

Գլուղական աղջիկ եմ ես զամբիւղաշեն
Յկեալ աստ զամբիւղօք ի Հայոց երկրէն,
Յուսամ զի հայ տիկնայք և պարոնայք Հնդկաց
Բարձր զին տայցեն իմ սիրուն զամբիւղաց.
Առ զամբիւղս զօտար աղջկանէս:
ԶԱրարատ, զԵփրատ և զՏիգրիս թողի
Միայնակ շրջիմ աստ յեղերս Գանդեսի,
Պանդուխտ եմ, օգնեցեք անտերունչ անձիւս,
Զի ծնողք ձեր յառաջ աստ պանդուխտ էին:
Զամբիւղք իմ են յարմար ասղնագործութեան,
Պահել անդ զմատնոց. զթել, զաղաման,
Իմ ձեռօք եմ գործել ես զամենեւեան,
Երբ խաշինք և գառինք իմ զինև խայտան:
Գանձք բազումք, ցաւք բազումք կան յայմ աշխարհի,
Պետք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երկրի.
Զայգի մի ունեի՝ զամբիւղ գործէի,
Լոկ կաթամբ և պտղով երջանիկ էի:
Աստ սերկեիլ, ծիրան և խաղող չի կայ,
Բայց միայն աղայ, բիւս ու բիւս:
Ախ, ե՞րբ իցէ, զի արժանի եղեց վերստին
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին:
Ապա դուք լալ տիկնայք՝ զամբիւղս իմ առեք,
Գիւղական աղջկանս սիրով օգնեցեք.
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝
Զերախտիս ձեր առեալ՝ գովեցից բազմօք²:

Հայաստանցի մի աղջիկ շգիտև նույնիսկ, թե կա Հնդկաստան, ուր կարելի է գնալ, օվկիանոս կոխ տալով, զամբիւղներ ծախելու և վերադառնալու համար: Բայց այս պատկերը հարկավոր է եղել մեր բանաստեղծին իր հոգեկան

ապրումները ցոլացնելու համար. մեղմագին, թախծալից կարոտ, որ հեռավոր հայրենիքը վառել էր նրա սրտի մեջ:

Մանր ոտանավորներից անցնելով մեծերին, մենք տեսնում ենք, որ այստեղ էլ Մեսրոպ Թաղիադյանն իր դարի հարազատ զավակն է: Կեղծ դասականության դարն է այդ, մեծ քերթվածների դարը, երբ օրինակ են Հոմերոսն ու Վիրգիլիոսը: Նրանց նմանվում են, կարելի է ասել, կուրսերեն, ձևի կողմից, նյութի դասավորության կողմից անգամ: Քերթվածը, սովորաբար դուրսագրեգական, բաժանվում է երգերի: Յուրաքանչյուր երգի համառոտ բովանդակությունը դրվում է առջևում, արձակ ձևով և կոչվում է նախադրություն: Հոմերոսի և Վիրգիլիոսի մոտ հեթանոս աստվածներն են գործում, և ահա XIX դարի նրանց հետևողներն էլ դիցաբանության սահմաններում են մարդանման կատարում, գործողության կանչելով հազարամյա գերեզմաններում հանգչող հերոսներին ու աստվածներին: Արվեստի այս ձևը համարվում էր այն ժամանակ ամենաբարձրը, և առաջնակարգ բանաստեղծ լինելու համար պետք էր կամ գրել կամ անվազն թարգմանել այդպիսի մի խոշոր քերթված: Այս ճյուղը, որ կոչվում էր և վեպ կամ, ավելի ճիշտ, դյուցազներգակ ֆեթված, ունեւ իր ուրույն ստեղծագործական կանոնները, որ մի առ մի բացատրում էր ժամանակի մեծագույն բանաստեղծներից մեկը, Ն. Սդուարդ Հյուրմյուզյանը իր «Առձեռն բանաստեղծութիւն» աշխատության մեջ (Վենետիկ, 1839):

«Զի՞նչ է,— հարցնում է նա,— դիւցազնական քերթութիւն»: Եվ պատասխանում է.

«Դեպք ինչ մեծագործ քերթողաբար վիպագրեալ, առ ի սեր և զարմացումն առաքինութեան ձգելոյ զընթերցողս: Վեհագոյն քան զամենայն աղգս քերթութեանց է սա, այլ դժուարին յոյժ ի կատարումն. քանզի հզորագոյն ճգանց քերթողական հանճարոյն պետք են առ ի յօրինել վեպս քերթողականս զուարճալի ու խորժալուր ամենեցուն, ի ներքս ածելով դէպս պատշաճաւորս և նկարագրութիւնս կենդանաախպս բնութեան և բարուց, հանդերձ պերճութեամբ և վսեմութեամբ իմաստից և ասացուածոց, որ դիւցազնականին ի դեպ գան առաւել քան այլ ամենայն քերթութեանց և որովք զանազանի առ ի պատմութենէ»¹:

Պահանջվում էր, բացի այդ բոլորից, որ նյութը լինի հին, «քանզի նորք և արդիք,— շարունակում է Հյուրմյուզյանը,— դուզնաքեայք թուին, իսկ հնութիւն որպես ստուարաւ քօղարկեալ՝ վեհ երևեցուցանէ զամենայն և տայ համարձակութիւն քերթողին՝ պաճուճել զայն պատշաճ կեղծեօք»: Խորհուրդ էր տրվում նյութը վերցնել աղգային կյանքից: Գործողությունը պիտի կատարվի զանազան դժվարությունների և արգելքների մեջ: Որքան սրանք բարդ ու մանվածապատ լինին, այնքան մեծ է արժեքը:

Թաղիադյանը այս տեսակ բանաստեղծության մեջ մեծ հաջողություն է ունեցել իր ժամանակակիցների աչքում: Բայց նրա առաջին փորձը շատ անհաջող էր: Իր կին Թանգունի մահվան տպավորության տակ նա սկսում է գրել մի «Եղբերբզութիւն» կեղծ կլասիկ ոճով: Կան արտաքին տեխնիկական բոլոր պայմանները, որոնց, սա յայն, չէ համապատասխանում ներքին բովանդակությունը: Մոռացել էր Թաղիադյանը, որ ժամանակակից, մանավանդ անձնական կյանքից չէ կարելի դյուցազներգություն հյուսել: Ուստի նրա «Եղբերբզութիւն

բերված են Կերմանիայից: Այս երգի հիմնական գաղափարն էլ դարձել է մեր զամբիւղաշեն աղջկա երգի զրդիչը: Գրել է մեր երգը անշուշտ մի Արարատցի և նրա արժանավորությունը շատ բարձր է հնդկական նախատիպից:

¹ Եր. 116:

¹ Տե՛ս, օրինակ, «Քնար Հայկական», Մ. Միանսարյանի, Պետ. 1868, եր. 212:

² Այս երգը տպված է և Կավկասյի վերոհիշյալ Տաղարանում, բայց առանց ստորագրության: Հետաքրքրական հանգամանք է, որ նրա հետ տպված է և մի ուրիշ երգ, որ կարելի է մեր այս երգի նախատիպը համարել. ինչպես երևում է, Հնդկաստանում գոյություն է ունեցել աղբատ մի աղջկա երգ, որի մեջ նա առաջարկում է տիկիներին գնել իր ավելները, որոնք

յօրհաս Քանկայ Քաղիադեանց» քերթվածը ոչ մի տպավորութիւն չէ թողնում և մնում է արհեստական, կեղծ պաթոսի արդյունք: Կեղծութիւնը ցույց տալու համար կարելի է բավականանալ մի համառոտ կտորով, որ մենք վերցնում ենք նախադրութիւնից. «Տխուր ներածութիւն: Աստղիկ զ Քաղիադեան ի հեշտութիւն հրաւիրէ: Նա ընդ Պալլասայ ընտրէ գնալ դառ ի վեր. ընդ որ մախացեալ Աստղիկան՝ գնալ ի Սանդարամետս: Գրգռէ ընդդեմ նորա զգև Յիմարութեան, Զրկանաց և Խաբէութեան: Աթենաս զինէ զորդի իւր դիմանալ հարուածոցն»: Անշուշտ, Քաղիադեանը խորունկ վիշտ ունեցավ իր սիրած կնոջ մահով: Բայց այդ վիշտը նա ուղեց շափազանց մեծացնել և կատարյալ պարտութիւն կրեց: Եղբերգութիւնը շափազանց ձգձգված է և չէ էլ վերջացած:

Այսպես չէր նրա «Սօս և Սօնդիպի» քերթվածը, որի պատմութիւնն արդեն հայտնի է մեզ և որ տպագրվեց Կալկաթայում 1847 թվին: Այստեղ արդեն քերթվածը համապատասխանում է արվեստի պահանջներին: Նա վերցրած է հին ազգային կյանքից, բայց և ունի իր գաղթականական ինքնուրույնութիւնը: Քերթվածի հերոսը Վանյանն է, որ, սակայն, գործում է Հնդկաստանում: Ուրեմն, գործում է այն հոգեբանութիւնը, որ մանրամասն բացատրեցինք վերևում, դամբլուղաշեն ազգկա երգի առիթով:

Հեթանոսական Հայաստանի մեծ տոնախմբութիւններին մեկում, Տարոնի մեջ, Վահագնի տաճարի մոտ, Սոսը, հայ նախարարական տոհմից, ողբում էր իր Սոնդիպի սիրուհու գերեզմանի վրա: Աստղիկը հետաքրքրվում է նրանով և նրա վշտի պատմութիւնն է հարցնում: Սոսը պատմում է հինգ երգի մեջ, թե ով էր իր սիրո առարկան: Հայաստանից նա բանակով գնում է Հնդկաստան, ուր մնում է գիշերելու մի քաղաքից դուրս: Այդ քաղաքի պարսպից մի արկղ են իջեցնում, որի մեջ Սոսը տեսնում է մի չքնաղ աղջիկ, կիսամեռ, վիրավոր: Դա տեղական ռաջայի կամ թագավորի աղջիկն էր, Սոնդիպի անուհու: Սոսը տանում է նրան իր մոտ, խնամում ու բժշկում է, սիրահարվում է նրա վրա: Բայց քերթվածական արվեստը պահանջում է, որ բանաստեղծն արժարժե առաքինութեան դասեր և դժվարութիւններ ստեղծե սիրահարված երիտասարդի և աղջկա մեջ: Թե մեկը և թե մյուսը կատարում է Քաղիադեանը ոչ բավարար հաջողութեամբ: Նրա բարոյական բարոյները շափազանց միամիտ են և առօրյա, իսկ դժվարութիւններ ստեղծելու մեջ նրա երեակայութիւնը բավականաչափ հարուստ չէ եղել: Սոսը, ինչպես որ հարկավոր էր, հաղթահարում է դժվարութիւնները: Մնում է, որ Սոնդիպիին բոլորովին նվաճելու համար ցույց տանրան, թե արդյոք հայոց աշխարհն ա՛յնքան գեղեցիկ ու պանծալի է իր անցյալով ու ներկայով, որ հնդիկ օրիորդը սիրե նրան իր հայրենիքի շափ: Ի՞նչ ասել կուզի, որ Մեսրոպ Քաղիադեանի վառ հայրենասիրութիւնը ընդունակ պիտի լիներ այդպիսի մի քանի օրիորդների հափշտակելու: Իր Սոսի բերանով նա նորից ու նորից Հայաստանի գովքն է անում: Հսկաների աշխարհ, ընտրյալ ժողովրդի հայրենիք: Մխիթարյանների հայրենասիրութեան բոլոր գունավորումներն ունի ընդգրկած Քաղիադեանը: Եվ Սոնդիպին, ինչ խոսք, գերված, հափշտակված է և ասում է.

Սօս Վանի հերիք,
Զի քաղես ոգիք.
Ազգ քո Ազգ իմ է,
Երկիր՝ հայրենիք:

Ու նրանք երկուսով գնում են Հայաստան: Բայց Սոնդիպիի հայրը գնում է նրանց ետևից և հայոց երկրում իր ձեռքով սպանում է իր աղջկան:

Ինչպես տեսնում եք, հղացվածը շատ փայլուն չէ և բանաստեղծական մեծ խոշանքներ չէ ներկայացնում: Բայց և այնպես, «Սօս և Սօնդիպին» շատ յուրատեսակ և ինքնուրույն մի կերտվածի տպավորութիւն է թողնում: Շատ են նրա մեջ այնպիսի տեղեր, ուր բանաստեղծը իսկական ոգևորութեան մեջ է, ցույց է տալիս բուն թափ, հյուսում է արտահայտութեան գեղեցիկ ձևեր: Քերթվածին գրեթե բացառիկ, եզակի դիրք է տալիս նրա ոտանավորի հինգուսնյան կաղամբ: Այդքան կարճ ոտները, ըստ երևույթին, պիտի թուլացնեին ստեղծագործական ուժը, դարձնեին պատմվածքը սակավ արտահայտիչ: Բայց Քաղիադեանն իր այս գործի մեջ կարողացել է տպավորիչ դարձնել իր հանդերձ հենց այսպիսի կարճ տողերի միջոցով: Օրինակ.

Իմ Հնդիկ Հուրի
Քանի՞ մի քանի՞
Տիզոք աչաց քոց
Շամփրես դիմ հոգի.
Ի՞մ պիտի լինիս,
Ասա՛ իսկապես.
Թէ ոչ՝ է՞ր այսքան
Տրորես դու դիս:

Բայց պետք է խոստովանել, որ ոտների կարճութիւնը շատ դեպքերում էլ մթնացնում է միտքը: Քաղիադեանն առհասարակ սիրում էր խրթնութիւն, լեզվական խճողում: «Սօս և Սօնդիպի» մեջ նա բացի դրանից արհեստակարգութիւններ է ստեղծել՝ բառեր կրճատելով իր հինգ հանգյան ոտանավորի համար: Այսպես, սովորական «քերթուած» բառը դարձրել է պարզապես «քեր», «անծան» բառը եկել է փոխարինելու «անծանոթ» բառը և այլն:

Ընդհանուր առմամբ, «Սօս և Սօնդիպին» պետք է հատկացնել պատվաւոր տեղ մեր դասական քերթվածների շարքում: Այդ պատիվը նա ստանում է թե իր ինքնուրույնութեամբ և թե իր բանաստեղծական խառնվածքով: Եթե այս տեսակ դյուցազններգութիւնների թագավորը Բագրատունու «Հայկ Դիցազն» է, որ տպվեց 1858 թվին, այն ժամանակ Մեսրոպ Քաղիադեանն իր «Սօս և Սօնդիպիով» պիտի գրավե երկրորդ տեղը: Իսկ դյուցազններգական արվեստի սահմաններից դուրս Քաղիադեանի բանաստեղծական արժեքը շատ սահմանափակ է: Այս դիրքը չեն կարող խախտել Քաղիադեանի երկու մեծ ոտանավորները, որոնք մտել են նրա «Թութակ Քաղիադեան» անուհով տետրակի մեջ, տպված 1847-ին: Այս ոտանավորներից մեկը, «Սեր վրիպեալ», նույնպես մի քերթված է, աստվածների մասնակցութեամբ, նույնպես վերամբարձ և ուռուցիկ, ինչպես էր այն ժամանակի արվեստն առհասարակ: Հետաքրքրական, իհարկե, այս չէ, այլ այն, որ Քաղիադեանը խորհուրդ է տալիս, որ հայ օրիորդները հարուստների հետ շամուսնանան, քանի որ ոսկին չէ կարող ծածկել տգիտութիւնը, այլ գիտնական մարդկանց հետ: Արդյոք նա իրա՞ն շունքներ աչքի առաջ: «Թութակ Քաղիադեան» տետրակը նա գրել է իր առաջին կնոջ մահից հետո անմիջապես: Քաղիադեանն իրան արժանավոր փեսացու էր համարում հենց այն պատճառով, որ գիտութիւն ունէր:

Ահա ինչ էր գրում նա Սիրվարդ անուհու մի կնոջ, որին միջնորդ էր ընտրել իր առաջին ամուսին Քանդիաթունի նշանադրութիւնից առաջ.

Թէ որ ինքը Քանգ ա, ես էլ չեմ էժան.
...Ասա՛, անտոս որ կարգալ շես գիտում,
Սիրածիդ գրածն սրտում չես գրում.
Քեզ համար պատրաստ է ազնի գիտութիւն,
Եթե շուտ կամենաս իրար գտանելը:

ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Տասնյոթերորդ դարին էր վերապահված պարզեւել հա-
յության մի ամբողջ մեծ գրական հարստութիւն՝ վիպագրութիւնը եվրոպական
արվեստի մտքով: Գրավոր արվեստի այս ճյուղը մեր գրականութեան մեջ չկար
մինչև այս դարը: Եվ Մեսրոպ Թաղիադյանին հայ ինքնուրույն վիպագրութեան
պատմութեան մեջ պատկանում է ուսման թաղանթի և նախանձեղի պատիվը:
Նա գրել է երկու, իրավ է թույլ ու անկատար վեպեր, որոնք սակայն նվիրական
նշանակութիւն ունին մեր գրականութեան համար հենց այն պատճառով, որ
առաջինը նրանք դուրս եկան տպագրական մամուլի տակից և ներկայացան
ընթերցող հասարակութեանը իբրև հայ ազգային կյանքից վերցրած վիպական
գրվածքներ:

Սկսած այն ժամանակից, երբ հայութիւնը ավելի սերտ շփումների մեջ
էր մտնում եվրոպական մտքի և գրականութեան հետ, այսինքն՝ XVIII դարից,
վեպի անհրաժեշտութիւնը մեղանում զգացվում է ավելի և ավելի ուժեղ կեր-
պով: Վեպը գրավիչ էր իբրև ընթերցանութեան նյութ և ուժեղ՝ իբրև խրատա-
կան, հրահանգիչ դաստիարակութեան միջոց: Առաջին խոշոր փորձը, որ ար-
վում էր մեր մեջ այդ տեսակ գրականութեան ճաշակ ստեղծելու համար, Ֆենե-
լունի հուշակալոր «Տելեմաքի» թարգմանութիւնն էր, որ կատարվեց XVIII դարի
վերջերում և տպագրվեց Նոր Նախիջևանում: XIX դարի սկզբներում այդ փոր-
ձերն ավելի հաճախանում են: 1818-ին մենք ունենք «Ռոբինզոն Կրուզոյի»
պատմութիւնը (համառոտածը, երեսաների համար), 1826-ին նորից թարգ-
մանվում է և տպագրվում Վենետիկում «Տելեմաքը»: Նույն թվին Կալկաթայում
տպագրվում է Շատրերիանի «Ատալայի» թարգմանութիւնը: Այնուհետև, քա-
նական և երեսնական թվականներին հրատարակվում են Միլտոնի «Գրախտ
Կորուսւյալը», Կաների «Ի մահն Արելի», որոնք թեև իսկապես վեպեր չեն, այլ
քերթվածներ, բայց թարգմանվում են արձակով և վեպի կերպարանք էլ են
ներկայացնում: Բարոյական դաստիարակութեան հատկացված փոքրիկ պատ-
մութիւններ կամ վեպիկներ հրատարակում է 1841 թվին Կ. Պոլսի Հայոց
ուսումնական ընկերութիւնը: Վերջապես, նույն 1840-ական թվականներին
առաջին կեսում Վենետիկում հրատարակվում է Բեննարդեն դը Սեն-Պիեռի
«Պող և Վիրգինե» վեպի աշխարհարար թարգմանութիւնը:

Այս փաստերը պերճախոս ապացույց են, որ հայ միտքը մինչև 1840-ական
թվականների սկիզբը չկարողացավ ինքնուրույն աշխատանք սկսել վիպագրու-
թեան ասպարեզում: Այս անկարողութեան մեջ կաշկանդված են նույնիսկ և
Մխիթարյանները, չնայած որ նրանք ունեին Բագրատունու, Հյուրմուրզյանի,
Թումաճանի և Ալիշանի պես բանաստեղծներ: Վեպը շարունակում էր ծառայել
մանր, առօրյա նպատակների: Զմյուռնիայում հաստատված միսիոնարները
նույն 1840-ական թվականներին կրօնական քարոզչական նպատակներով հրա-
տարակում էին թարգմանական վեպիկներ, որոնց կարելի է եկեղեցական գրա-
կանութեան մեջ զետեղել: Ահա ինչպես էր բացատրում Կ. Պոլսի Ուսումնական
ընկերութիւնն իր հրատարակած վեպիկների նպատակը. «Որովհետև տղայք
բնական հակամիտութիւն մը ունենին իրենց հետաքրքրութիւնը գրգռող և
երևակայութիւննին զբոսացնող շինծու պատմութիւններ լսելու, հարկ կըլլա
խրատը հազվեցնել պատմութեան զգեստներով, որ խաբէ անոնց ձանձրու-
թիւնը»:

Վեպն ինքնամփոփ և անկախ մի արվեստ չէր հայ հասկացողութեան մեջ,
այլ ուներ ծառայական, ենթարկված նշանակութիւն:

Քառասնական թվականների սկզբից է, որ հայ ինքնուրույն ստեղծագոր-
ծութիւնը հանդես է գալիս վիպագրութեան մեջ: Հավանական են համարում:

որ նաշատուր Աբովյանը 1840—1841 թվականներին գրած լինի իր «Վերք
Հայաստանի» վեպը: Զգիտենք՝ երբ է նրա հայրենակից Թաղիադյանը գրել իր
«Վեպ Վարդգիսի Տեանն Տուհաց» վեպը, բայց հաստատապես հայտնի է, որ
այդ գրվածքը 1845 թվականի երկրորդ կեսում տպվում էր Կալկաթայի Արա-
րատյան ընկերութեան տպարանում և լույս տեսաւ 1846-ին: Եթե «Վերք Հա-
յաստանին» Թաղիադյանի վեպից առաջ է գրված, այս դեռ չէ խլում Թաղիադ-
յանից առաջնութեան պատիվը, որովհետև Աբովյանի վեպը դժբախտ աստղի
տակ ծնվեց, թեև այնքան գեղեցիկ էր իբրև հղացում և ծնունդ: Նրան վիճակ-
ված էր 17—18 տարի ձեռագիր մնալ և տպագրութեան արժանանալ միայն
1858-ին, երբ հեղինակի անհայտ գերեզմանի վրայով արդեն անցել էին տասը
տարիներ... Եվ երբ 1846-ին լույս էր տեսնում Թաղիադյանի առաջին վեպը,
ընթերցող հասարակութիւնը դեռ բոլորովին չէր ճանաչում Աբովյանին և չգի-
տեր, թե նա գրած ունի մի գեղարվեստական երկ, որ երբ տպագրվեր, պիտի
անասելի խոր տպավորութիւն գործեր հայերի վրա և առաջացնէր ամբողջ մի
շարժում հայ վիպագրութեան մեջ:

Մեսրոպ Թաղիադյանի վեպը տպավորութիւն չթողեց և ոչ մի շարժում էլ
չառաջացրեց: Բայց և այնպես, փաստորեն դա առաջին տպագրված ինքնու-
րույն վեպն էր: Ահա այս բացառիկ պատիվն ամբողջովին պատկանում է
Թաղիադյանին: Առհասարակ սրտատուչ հանգամանք է, որ երկու հայրենակից-
ներ, երկուսն էլ Զանգու գետի ափերին մեծացած, երկուսն էլ ժամանակակից
և միատեսակ ճակատագրի ենթարկված, միասին հիմնեցին հայ վիպագրու-
թիւնը, գուցե հենց միաժամանակ էլ հեղինակելով մեր անդրանիկ երկու վե-
պերը, մեկը՝ աշխարհարար լեզվով, մեծատաղանդ, իսկ մյուսը՝ դժվարամատ-
չելի գրաբարով և շատ շափավոր ընդունակութեամբ:

Հետաքրքրական է և այն, որ երկու վեպերն էլ պատմական էին, այն
տարբերութեամբ միայն, որ Աբովյանը վերցնում է նյութը ընդամենը մի քսան
տարի առաջ տեղի ունեցած անցքերից, որոնց ինքն էլ ականատես էր եղել,
մինչդեռ Թաղիադյանը բաժանված էր իր նյութի ժամանակից հաղարավոր
տարիների անհայտութեամբ: Ինչպես հայտնի է, Մովսես Խորենացին, պատմե-
լով Վաղարշապատի շինութեան հանգամանքները, բերում է վիպասանական
երգերից մի կտոր այսպիսի բովանդակութեամբ. «Հատուած գնացեալ Վարդգէս
Մանուկն ի Տուհաց գաւառէն, կեկալ նստեալ զՇրէղ բլրով, զԱրտեմեդ քաղա-
քով, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի»: Ահա այս
նյութից էլ Թաղիադյանը հյուսել է իր առաջին վեպը, գործողութեան գլխավոր
տեղ ընտրելով Արմավիր հին մայրաքաղաքը:

Իբրև վիպագրող, Թաղիադյանը ամենից առաջ հանդիսանում է իր ժամա-
նակի հասկացողութեան արտահայտիչ: Օրինակներ նա, ինչպես երևում է,
վերցրել է եվրոպական այն վեպերից, ուր գործողութիւնների անակնկալներն
են ամենից շատ լարում և գրավում ընթերցողի ուշադրութիւնը: Այս կողմից
բավական բեղմնավոր է նրա երևակայութիւնը: Նրա հերոս Վարդգեսը ինչ-որ
մի ինտրիգայի պատճառով փախստական է դառնում իր հայրենի գավառից ու
գնում Արմավիր, քաղցած ու անհոգ թափառում է փողոցներում և ընկնում է
ինչ-որ մարդասպան սրիկաների ձեռքը, որոնք դարձնում են նրան իրանց եղ-
բայրակից և արհեստակից: Այս հասարակութեան մեջ Վարդգեսը կրում է Արե-
ղեն անունը: Նա իր արարքներով սարսափ է տարածում քաղաքացիների վրա,
ահաբեկում է նույնիսկ Երվանդ թագավորին, որից պահանջում է նրա քույր
Հայկանդուխտի ձեռքը: Ամեն տեսակ միջոցներ են ձեռք անում Արեղենին
ձերբակալելու համար: Բայց այդ չէ հաջողվում թագավորին և նրա զորքին:

Արմավիրի համար մի տեսակ փրկություն է, որ այնտեղ է գնում Աղվանից
Զարան իշխանը: Նա հաջողակությամբ կոչում է Արեղենի դեմ: Եվ ահա նա
ներկայանում է ամառաների մեծ ժողովին, որպեսզի ցույց տա ձեռքադրված
սրիկային: Եվ ի մեծ զարմանս հանդիսականների դուրս է գալիս, որ սրիկա
Արեղենը հենց ինքը բարերար հերոս Զարանն է: Հեղինակը բացատրում է, թե
ինչպես էր կատարվել այդ զարմանահարալ կերպարանափոխությունը: Ետև
տարի, — ասում է նա, — Արեղենը աշակերտել էր դյուֆական արհեստին հայոց
հեթանոսական մի քրմատան մեջ և աստացու դայն արուեստ կերպարանա-
փոխություն, որով մերթ երևեր հսկայ վիթխարի և մերթ հրեշտակ ի մարմնի.
մերթ երիտասարդ կորովի, և մերթ ծնկնայ ծերունի, մերթ ազատ ուտանի և
մերթ մշակ ի դաշտի, մերթ պառու պարկեշտասուն և մերթ քուրմ արբակրուն:

Այսպես թե այնպես, նա ամուսնանում է Հայկանդուխտի հետ:
Հայ առաջին ինքնուրույն վեպի այս միամիտ բովանդակության հետ, իբրև
իրական վիպական հանգամանքներ, պիտի ցույց տանք, գեղեցիկ մի քանի
նկարագրությունները և առհասարակ աշխույժ ու ազդու լեզուն: Հայոց լեզուն
այս առաջին փորձի մեջ ցույց էր տալիս, որ վեպի արտահայտիչ նրբություն-
ների մեծ կարողություն ունի իր մեջ: Նկարագրական մի հանգամանք գրավում
է ընթերցողի ուշադրությունը: Արմավիրի մոտով, ինչպես հայտնի է, անցնում
է Արաքսը: Այդ գետի տակով իբրև թե ական էր փորված, ստորերկրյա ճանա-
պարհ տարված: Այստեղ, Քաղիադյանն անշուշտ ազդված է հղել կոնգոնի
նեքենուզի օրինակից, որ ինչպես հայտնի է, փորված է Քեմզա գետի տակ:

Քաղիադյանի երկրորդ վեպն էլ պատմական է և վերցված է Աղվանից
աշխարհի կյանքից: Կոչվում է նա «Վէպ Վարսենկան Սկայուհուդ Աղուանից»
և տպվել է 1847 թվականին: Նա կիսատ է մնացել, տպագրվածը միայն առա-
ջին մասն է, բայց և այնպես կարելի է մի ընդհանուր հասկացողություն կազ-
մել, թե ինչու է Քաղիադյանը գրել այդ վեպը և ինչ է ուղեցել ասել նրանով:

Այս տեսակետից հետաքրքրական է գրքի փոքրիկ առաջաբանը: Այստեղ
հեղինակը բացատրում է, թե ինչ է վեպը: Եվ մենք տեսնում ենք, որ նրա հա-
յացքը ոչնչով չէ տարբերվում այն դիտողություններից, որոնք տրված են
Կ. Պոլսում տպագրված «Բարոյական պատմությունների» սկզբում և որտեղից
մի փոքրիկ կտոր մենք բերինք վերևում: Քաղիադյանն էլ կրկնում էր իր ժա-
մանակ ընդհանրացած այն միտքը, թե վեպի միջոցով է, որ կարելի է տպա-
վորել ընթերցողների սրտի մեջ բարոյական սկզբունքները: Եվ իրավ, «Վար-
սենիկը» նախորդից ավելի թույլ արվեստի տեսակետից, նվիրված է գերազան-
ցորեն բարոյական խրատներին: Հեղինակը վկայում է, որ հայերեն գրքերը չեն
կարգացվում, և երբ հարց է տրվում այդ մասին ընթերցողին, նա արդարանում
է այն հանգամանքով, որ հայերեն գիրքը լուրջ է և գիտական, մինչդեռ ընթեր-
ցողների կողմից որոնվողը զվարճալի և հեշտալուր ընթերցանությունն է: Այս
պահանջին բավարարություն տալու համար էլ Քաղիադյանը գրում է այս
վեպը:

Աղվանից Վաչագան թագավորը մի գիշեր իր Պարտավ մայրաքաղաքում
ծպտած ման գալիս՝ մի պանդուկում լսում է երեք աղքատ ու խեղճ մարդկանց
խոսակցությունը: Երեքն էլ իրանց սրտի ցանկություններն են հայտնում: Մեկի
փափագն էր, որ թագավորը նրան իր խորհրդականը դարձնե, մյուսն ուզում է
դառնալ զորքերի սպարապետ, իսկ երրորդը, Գուրգենը, տենչում է ստանալ
Վաչագանից նրա աղչված գեղանի Վարսենիկի ձեռքը: Այնքան մեծ է նրա սերը,
որ նույնիսկ պատրաստ էր՝ Վարսենիկին ստանալուց հետո՝ հալածական գառ-

նալ Աղվանից աշխարհից, որովհետև աչք դրած ունի միայն օրիորդի վրա և
նրա հարստություններից ոչ մի բան չէ ուզում:

Վաչագանը վերադառնում է իր պալատը, ուղղակի մտնում է Վարսենիկի
սենյակը, զարթեցնում է նրան: Տեսնում է, որ աղջիկը մարմնի վրա հագած
ունի մադի կոպիտ զգեստ: Հարցնում է պատճառը և ստանում է պատասխան,
թե թագավորի աղջիկն անգամ պիտի իր անձը սովորեցնե ամեն տեսակ զըր-
կանքների, որովհետև կյանքը լիքն է զանազան տեսակ փորձանքներով: Այս
հանգամանքն ավելի ևս հաստատում է Վաչագանին իր արդեն ընդունած վճռի
մեջ: Եվ հետևյալ օրը մեծ հանդես սարքելով իր պալատում, բերել է տալիս
երեկվա երեք անձանոթ շքեմուկներին և հայտնում է նրանց, թե ինքը լսել է
նրանց ամբողջ խոսակցությունը և ահա կատարում է նրանց ցանկությունները:
Մեկին նշանակում է իր խորհրդական, մյուսին՝ սպարապետ: Այս կանչելով
Վարսենիկին՝ անակնկալ կերպով, առանց նույնիսկ իր կնոջ հետ խոսելու,
տալիս է նրան Գուրգենին և կարգադրում, որ երկուսը իսկույն հեռանան երկ-
րից մեն մենակ, առանց որևէ միջոցի: Վարսենիկը ուրախությամբ հնազանդ-
վում է այդ հրամանին, որովհետև հնազանդությունը ծնողներին նա համարում
է աստժո գրած օրենքը:

Այնուհետև, թողնելով Աղվանից երկիրը, հեղինակն իր ընթերցողներին տա-
նում է երկու վտարանդիների ետևից, նկարագրում է սրանց աստանդական
կյանքը, երկար ճանաչարհորդությունը, որ սակայն կատարյալ իդիլիայի է
նման, որովհետև երկուսը գիտեն իրար հարգել ու սիրել, կատարել իրենց
փոխադարձ պարտականությունները: Այսպես նրանք հասնում են Մարաստանի
կողմերը, Միանդուար քաղաքը: Երկու ամուսինները վարում են համեստ կյանք,
երկուսն էլ աշխատում են և այդ աշխատանքով իրանց ապրուստը հայթայթում:
Վարսենիկը գիտե ձեռագործ, Գուրգենը հասարակ բանվորի աշխատանք է
հանձն առնում օրավարձով: Տեղային թագավորն է Վալեթը, որի ապարանքում
Վարսենիկը մեծ համակրանք և պատիվ է վաստակում իր հոյակապ ձեռա-
գործների շնորհիվ:

Այսպես երկար կշարունակվեք աստվածավախ և առաջինի ամուսինների
իդիլիան, եթե մի շար արկածի զոհ չդառնար Գուրգենը: Մի օր նա քաղաքից
դուրս է գնում և, հրապուրվելով դժբախտ ձեռքով մի կնոջ օգնելու մտքով,
ընկնում է մի խորհրդավոր շինություն մեջ, որ, ինչպես երևում է, նվիրված էր
մի ինչ-որ արշունոտ և բարբարոս պաշտամունքի: Այդ խորհրդավոր և դար-
հուրելի տաճարն անվանվում էր Ատրնուշ, բայց Քաղիադյանը նրան հաճախ
զիվանոց է անվանում և նկարագրում է նրան իբրև մի կատարյալ դժոխք երկրի
տակ, ուր մարդիկ զոհ են բերվում ամենաբարբարոս կերպով և ուր զիջված
են անհուն հարստություններ: Գուրգենը և այդ դժոխքում սակայն զուրիս չէ
կորցնում և մաքառում է քաջորեն նրա սարսափների դեմ:

Մինչ այս մինչ այն՝ Հաստ անունով երեխան, որ Գուրգենի հետ էր գործի
գնում, պատմում է Վարսենիկին, թե ինչպես Գուրգենին խաբելով տարան
խորհրդավոր շինությունը, որ ահավոր համբավ ուներ հասարակ ժողովրդի
մեջ: Վարսենիկը գնում է Վալեթի մոտ և նրա օգնությունը հայցում... Եվ թա-
գավորը չէ մերժում այդ խնդրքը, հավաքում է իր զորքերը և հարձակվում
Ատրնուշի վրա: Զորքերի հետ է և Վարսենիկը, որ մտնում է զիվանոցը, ազա-
տում է Գուրգենին: Մարդասպան պաշտամունքի բոլոր պաշտոնյաները կոտոր-
վում են, զիվանոցը քանդվում է: Եվ այնուհետև, ինչպես կարգ է հին միամիտ
բարոյագիտության համար, գալիս է երկու առաջինի ամուսինների վարձա-
տրության ժամը: Նրանք Ատրնուշի տերն են դառնում, հիանալի ապարանքներ

են շինում, ուր բնակություն են հաստատում իշխանաբար: Դրվանոցի անհուն հարստություններն էլ հին բարոյախոսությունը տալիս է ի սեփականություն նույն առաքինի ամուսինների, բայց այն պայմանով, որ նրանք այդ հարստություններից բարեգործություն անեն, ազգատներ և օտարականներ խնամելով և այլն:

Մարդկային կատարյալ երջանկությունը այնպես, ինչպես երևակայում էր վաղեմի մտածումը, դեռ այսքանով վերջ չէ առնում: Դեռ կա վարձատրության մի բարձրագույն չափ էլ... Դրան հասնելու համար Գուրգենը պիտի ցույց տար մի առաքինություն ևս, որ կրոնը նվիրագործել է՝ «ծառայք, հնազանդ լեռուք տերանց ձերոց» հրամանի մեջ: Գուրգենը, հասնելով իշխանական մեծ փառքի, շնորհաբար, որ պարտավոր է հավատարիմ մնալ իր թագավորի՝ Վալեթի վերաբերմամբ և դրա ապացույցն է տալիս: Եվ ահա վիպի առաջին մասը վերջանում է մի մութ ակնարկով, որ հասկացնում է, թե Վարսենիկն ու Գուրգենը պիտի ժառանգեն Վալեթին Միանդուարի գահի վրա:

Դեռ էլ ինչ բարոյական տեսություններ պիտի ծավալեր Քաղիադյանը «Վարսենիկ» վեպի երկրորդ մասում, մենք այդ շփոթենք: Բայց այն, ինչ նա գրել է մեր առջև այս տպված մասի մեջ, հերթաթային մի պատմվածք է, խճողված բարոյական խրատներով: Նյութը, անշուշտ, վերցված է ժողովրդական առասպելներից, որոնք տարածված են բոլոր ազգերի մեջ: Քաղիադյանը տվել է նրան մի շատ նախնական (պրիմիտիվ), անկատար մշակություն, և գեղարվեստական տեսակետից «Վարսենիկը» անհամեմատ ստոր է նույնիսկ «Վարդգեսից»¹: Իր քարոզած բարոյական սկզբունքները նա ցուցադրում է ամեն տեղ և՛ գլուխների վերնագրի մեջ, և՛ նրանց տակ դրած ոտանավոր հատվածներում, և՛ բնագրի մեջ: Օրինակ՝

Վերնագրեր.

Ըստ կրօնիցն և կիրք շահաւորինս
Կարեկցութիւն կրօնից ծնունդ է:
Աստուածածանօթութիւն է առաջին
վարդապետ վարուց:
Պատիժ մեղաց մահ է...

Ենթավերնագրեր.

Եթե կրօն չիցէ վարոց
Դեպ առ բարին ուղեցոյց,
Ձուր ճգնին Բաղդ և Բնութիւն
Ջոկել ըզմարդ յանասնոց:

Ահա և երկու առաքինի ամուսինները: Գուրգենը թեև անտուն թափառական է, բայց ինչպես ասում են, յոթը վարդապետի չափ կրոնագետ ու աստվածարան է: Ահա մի պատկեր.

«Իբրև դարձան դահիճքն՝ արտաբոյ սահմանացն Աղուանից հանեալ զղոյգն երջանիկ, սկսավ յայնժամ Գուրգէն ըստ նախահօրն ի Դրախտին փափկութեան՝ ունել զաջոյ շքնաղին, և յայսպէս առարկել զնա.

¹ Առն Մանուկյանի «Ռուսահայ գրականության պատմություն» աշխատության մեջ Քաղիադյանի այս վեպի վերաբերմամբ շոշափված են այնպիսի գովասանքներ, որոնք ակամա կասկածելի են դարձնում, թե արդյոք հեղինակը ծայր ծայր կարդացել է այդ գործը: Այս կասկածն ավելացնում են այն կոպիտ աղավաղումները, որոնք սպրդել են վեպի բովանդակությունը պատմելու մեջ:

— Եւ այսպես՝ թողօ՞ւն զամենայն, Սէր իմ, հաղորդիլ խոնարհ վիճակին կացութեան իմում:

Վարսենիկ. Մի այլ ևս ինչ յայդցանէ, Սիրելիդ իմ, յորժամ Աստուած և Արքայ Հայր իմ այսպէս կամեցան, և ինձ հաճ և հաւանելի է:

Գուրգ. Բարէ՞ գթած ես Վարսենիկ, գթած և ես փառս տամ ամենափառատրին Աստուծո՞ւ որ շնորհեաց ինձ դքեզ:

Մի ուրիշ տեղ Գուրգենն ասում է.

«Մեք շնորհօք յորդիս Աստուծոյ համարիմք զմեզ՝ Պարոն, և կարգամք զԱբարիշն «Հայր մեր» և ոչ թէ Հօրեղբայր մեր: Վասն որոյ և իբրև որդիք հարազատք ամենակալ շնորհաց՝ զոր խօսիմքս և զոր ունիմք, ջանամք զամենայն ի փառս նորա բովանդակել»:

Բայց այսքան բարեպաշտական խոհերով խճողված այս վեպը վերին աստիճանի անհամակրելի է հենց գաղափարական տեսակետից: Նա ամբողջովին նվիրագործում է ծնողական բռնակալության: Հին ընտանիքի բարոյական հիմքը կազմող այն հասկացողությունը, որ որդիները անպայման հնազանդվեն իրանց ծնողների կամքին, անխոս ստրկուհու դրություն էր ստեղծում կնոջ համար: Քաղիադյանն իր այս վեպով հանդես էր գալիս իբրև այդ դժբախտ հասկացողության գաղափարախոս և փաստաբան: Վաշագանք պատահաբար մի խոսակցություն է լսում, պատահական քմահաճույքի ենթակա է դառնում և, բռնելով իր սիրելի զավակի ձեռքից, տալիս է մի պատահական մարդու, հեռացնում է նրան իր տնից: Եվ վեպը մեզ ասում է, թե այս միանգամայն արդարացի է և շատ բարոյական: Մեծի բռնակալությունը իրավունք է, և նրան պաշտպանողն ինքն աստված է, մի հասկացողություն, որ մարդն ստեղծել էր ամենից առաջ բռնակալության սկզբունքը պաշտելու և ամեն տեսակ բռնակալական արարքներ արդարացնելու ու սրբագործելու համար: Քաղիադյանը իր վեպի հիմք դնում էր այն միտքը, որ ծնողական բռնակալությունը, եթե իր հանդես ունի որդիական հլու հնազանդությունը, ոչ միայն տանելի է, այլ ուղղակի երջանկության լավագույն և բարձրագույն աղբյուրն է: Այս է ցույց տալիս Վարսենիկը:

Եվ այս վեպը մեր առջև դնում է մի ուրիշ հետաքրքրական հարց՝ Քաղիադյանի վերաբերմունքը դեպի կանանց հարցը: Իսկապես, եթե նկատի առնելու լինենք բոլոր հանգամանքները, Քաղիադյանը մեղանում հանդիսանում է իբրև մեկը առաջին հայ ֆեմինիստներից, եթե իհարկե ներքի կլինի այսպիսի մի անուն գործածել այն ժամանակների վերաբերմամբ: Ասում ենք առաջիններից մեկը և ոչ թե առաջինը, որովհետև Քաղիադյանից առաջ հայ կնոջ դաստիարակության և իրավունքների մասին խոսել է նույն Հնդկաստանում Հակոբ Շահամիրյանի և նրա հետ աշխատողների «Որոգայթ Փառացը», որ, ինչպես գիտենք, մանրամասն օրենսդրական կարգեր էր ստեղծում հայկական հանրապետության համար:

Այս օրենսդրությունը մի շատ կարևոր վավերագիր է և այն կողմից, որ ցույց է տալիս, թե ինչպես հին և նոր հասկացողությունները խառնում էին եվրոպական լուսավորության հաղորդակից դարձած հայերի մեջ: Կանանց վերաբերմամբ հայ հանրապետական օրենսդրությունը տնօրինում էր մի շարք արտոնություններ: Անզավակ կինը իր ամուսնու մահից հետո ստանում էր նրա կալքի կեսը, մինչդեռ զավակ ունեցողը միայն մի նորորդական մասն էր ստանում: Ամուսնացած զինվորը իր ուճկի կեսը պիտի տար իր կնոջը: Պատերազմի ժամանակ կնոջը գերի վերցնել չէր կարելի: Ամուսնանալուց առաջ հարսն ու փեսան կնքում են իրենց մեջ քաղաքացիական դաշնադրություն, որով փեսան

պատրաստվում էր իր ունեցվածքից մի մասը հանել իր կնոջը և այդ մասը անձեռնմխելի պիտի մնար ամեն տեսակ դեպքում, եթե ամուսինը նույնիսկ վնասի, ձախորդության մեջ ընկնի, կնոջ սենյակը նվիրական է և ոչ ոք չէր կարող մտնել այնտեղ, բացի միայն այն դեպքից, երբ դատարանական վճռով պետք է ձերբակալել քրեական հանցանք գործած նրա ամուսնուն:

Որպեսզի հասկանալի լինի, թե որքան մեծ հեղաշրջում էին ներկայացնում այն սկզբունքները հայ հասկացողության մեջ XVIII դարում, պետք է համեմատել այս գրքի հետ հենց «Եօթն Իմաստասիրաց պատմութիւնը», որ այն ժամանակները ահագին հեղինակություն ուներ ժողովրդի մեջ և որը ներկայացնում էր կնոջը բոլոր շարիքների պատճառ, նենգավոր, շարագործ մի էակ: «Որոգայթ Փառացի» հեղինակները հեռու էին այս միջնադարյան խավար հասկացողություններից, որոնք մասնավանդ արևելքում էին դարգացած: Նրանք, անշուշտ, եվրոպական նոր միտքն էին ներկայացնում տգետ ու խավար հայ ժողովրդի մեջ: Բայց միևնույն ժամանակ դիտեցեք հայ ազատ հանրապետության օրենսգրքի հետևյալ հրահանգներին: Ամեն մի կին, որ սրբությունը պահել է իր կուսությունը և ընծայել է նրան իր ամուսնուն, ունի պատիվ դաշտ դուրս գալ գրոսնելու, մտնել հանդեսները, սեղան նստել, պարել, պատվավոր տիկինների հետ: Այս պատիվներից զրկվում է այն կինը, որ կորցրել է կուսությունը մինչև պակվելը, նույնիսկ եթե կուսություն խախտողը եղել է այն տղամարդը, որ հետո ամուսնացել է նրա հետ:

Ահա այսպիսի հին ու նոր հասկացողությունների խառնուրդ ներկայացնում է և Մեսրոպ Թաղիադյանը: Դեռ 1828-ին նա, ինչպես տեսանք անցյալ գլխում, գրում էր իր հայրենակից երևանցիներին, որ պետք է ամեն կերպ հոգ տանել կանանց դաստիարակության մասին և հավատացնում էր, որ եթե անգլիացիներն ու ֆրանսիացիներն ուժեղ են և լուսավոր, պատճառն այն է, որ նրանց կանայք լուսավորված են և ազատ, գրում-կարդում են, հեղինակներ են, ուսումնականներ են և այլն: Կանանց դաստիարակությանը նա նվիրեց մի ամբողջ տետրակ, որ լույս տեսավ 1847 թվին «Ճառ դաստիարակութեան օրիորդաց» վերնագրով: Այստեղ էլ Թաղիադյանը ապացուցանում էր, որ կանանց դաստիարակությունը անհրաժեշտ է ազգային և հասարակական շատ նկատարումներով: Էականը հենց այդ պատճառաբանություններն են: Կինը Թաղիադյանի համար մի անկախ և ինքնուրույն երևույթ չէ, այլ միշտ կաղմում է մարդու և մասնավորապես տղամարդու երջանկության մի լրացուցիչ մասը: Կինը դաստիարակություն պիտի ստանա, որովհետև այդպես են պահանջում ընտանիքի, համայնքի, ազգի շահերը: Իսկ թե ինչ է պահանջում ինքը՝ կինը, իբրև մարդ, իբրև համայնքի անդամ, իբրև ընկերական գործոն, այս մասին Թաղիադյանը չէր մտածում, կամ ավելի ճիշտ՝ մտածել չէր կարող, կաշկանդված լինելով կրոնի, հետևաբար և ավանդության պայմանավորումներով: Կնոջ իսկական ազատության հարցը չէր, որ դնում էր մեր հեղինակը: Ընտանիքի, հասարակական կազմի խոր և համոզված ավանդապահ՝ նա միայն կարող էր հաշտեցնել նոր եվրոպական միտքը հայրենի հնապաշտության հետ, որքան այդ իհարկ հնարավոր էր:

Այսպես էր հայ ֆեմինիզմի ռահվիրան: Եվ ուրիշ կերպ նա չէր էլ կարող լինել: Կնոջ ազատագրման գաղափարը պիտի սկսվեր ամենահամեստ ակնկալություններից, որպեսզի բռներ ամեն մի մարդկային երևույթին հատուկ էվոլյուցիայի ճանապարհը:

Ահա այս տեսակ լուսաբանությունը, որ միակ հնարավորն ու արդարն է, եթե չէ արդարացնում, գեթ հասկանալի է դարձնում Վարսենիկը, հերոսուհի ու

գաղափարական կատարելատիպ դարձրած լուրջ այն պատճառով, որ նա կուրորեն հնազանդվում է իր հոր քմահաճ բռնակալության:

4. ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ: Հնդկաստանը, դառնալով հայ պարբերական մամուլի օրրան, երկար ժամանակ փորձեր արավ իր սկսած մեծ գործը հարատև դարձնելու համար: Այդ ջանքերի մեջ առանձին նախանձելի դիրք վիճակված էր Մեսրոպ Թաղիադյանին: Նրա հիմնած «Ազգասերը» գոյություն պահպանեց համարյա ամբողջ յոթը տարի, իսկ այս մի բացառիկ բախտ էր ոչ միայն հնդկահայ միջավայրում, այլև առհասարակ այն ժամանակվա հայություն մեջ:

Եթե ուղենանք իմանալ այս երկարակեցություն պատճառները, պիտի գանք այն եզրակացություն, որ միայն մի գլխավոր պատճառ կար, և այդ՝ Մեսրոպ Թաղիադյանի անսպառ եռանդն էր, որով կարողանում էր պահպանել թերթի գոյությունը, առանց հաճախակի ընդհատումների: «Ազգասերի» պատմությունը մենք արդեն տեսանք անցյալ գլխում: Այստեղ Թաղիադյանին իբրև հրապարակախոս բնորոշելու համար պիտի ավելացնենք, որ նրա «Ազգասերը» հայ պարբերական մամուլի պատմության մեջ աչքի չէ ընկնում ինչպես մի նորություն: Թաղիադյանը չկարողացավ հանել իր թերթն այն դրությունից, որ նվիրագործել էր Շամալոնյան քահանայի «Ազդարարը»: Տեղեկություններ գլխավորապես տեղական կյանքից, շատ թույլ զարգացած քաղաքական բաժին, անկապ ու պատահական հոդվածներ և պատմություններ, կցկտուր հիշատակարաններ ազգային պատմությունից, և հարյուրից մի անգամ խմբագրական մի կարճ կամ երկար հոդված դեպքերի և երևույթների առիթով. այս էր «Ազգասերի» բովանդակությունը յոթը տարվա ընթացքում, մի բովանդակություն, որի ամենատիպիկ ներկայացուցիչն էր այն ժամանակ Վենետիկի «Բազմավեպը» և որ, ընդհանուր առմամբ, հատուկ էր և մյուս բոլոր պարբերական հրատարակություններին, լինեին նրանք թերթեր թե ամսագրեր: Հրապարակախոսությունը «Ազգասերի» մեջ էլ նույն սաղմնային դրությունն էր ներկայացնում, որ մենք տեսանք «Ազդարարի» մեջ: Մենք արդեն ճանաչեցինք Թաղիադյանի հայացքներն ու դավանությունները, ուստի կարող ենք վճռաբար ասել, որ այդպիսի խառնվածքով մարդը և գրողը չէր էլ կարող կոչված լինել հասարակական հեղափոխիչ դեր կատարելու համար: Վերլուծել կյանքը, քննադատել, նոր իդեալներ քարոզել և միտք ղեկավարել, այսպիսի հրապարակախոսություն դեռ չկար էլ նույն ժամանակ: Բայց պահանջը կար, և պետք էր, որ դուրս գար մեկը իբրև այդ պահանջը մարմնացնող: Այդպիսի մի մարդ երևան եկավ նույն Հնդկաստանում, բայց արդեն Մադրաս քաղաքում: Դա Ս. Պ. Հովհաննեսն էր, որ 1848 թ. սկսեց հրատարակել «Բանասեր» անունով վիմատիպ տասնօրյա թերթը, որին վիճակված էր հայ պարբերական մամուլի մեջ նույնքան պատվավոր և նախանձելի դեր, որքան վիճակված էր մեր առաջին պարբերական հրատարակության, այսինքն՝ «Ազդարարին»:

Եթե Շամալոնյան քահանայի բախտն էր առհասարակ պարբերական մամուլի գաղափարն իրագործելը հայերի մեջ, Ս. Պ. Հովհաննեսի բախտն այն էր, որ նա հաղորդում էր մամուլին նրա իսկական բովանդակությունը, նրա իսկական ուժը՝ հրապարակախոսությունը: Նա էր, որ տպագրական խոսքը դարձրեց ուժեղ և համարձակ քննադատության գործիք, որ կյանքին չէր հարմարվում, այլ մտցնում էր նրա մեջ շարժում, պայթյուն: Նրա դեմ զինվում էր հասարակական անշարժությունը: Առաջին հայ խմբագիրն էր, որ դառնում էր տպագրական ազնիվ և անկաշառ խոսքից խայթվածների հալածանքի առարկա:

Մեսրոպ Թաղիադյանը հին տիպի, ասենք՝ Շմաժոնյան տիպի՝ խմբագիր մնաց, և նրա «Ազգասերը» ոչ մի հետաքրքրություն չէ ներկայացնում հրապարակախոսության տեսակետից: Այսօր էլ այդ բերթը վկայում է իր խմբագրի եռանդի մասին, մի եռանդ, սակայն, որ ավելի լրագրական միջակ բանվորի պատկերն է տալիս, քան մի անկախ ու լայնահայաց մտածողի: «Ազգասերը» մեջ եթե կան որոնելի նյութեր, դրանք այն պատմական հողավածներն են, որոնց հեղինակը ինքը Թաղիադյանն է, ինչպես նաև պատմական վավերագրերը, որոնք գլխավորապես Ջուղային են վերաբերվում: Թերթի լրատուական բաժինը պահպանում է իր մեջ բավական մանրամասնություններ հնդկահայերի հասարակական և ազգային կյանքից:

Հետաքրքրական կլինեն պարզել, թե որքան գործ էր կատարում «Ազգասերը» մեջ դրսի աշխատակցությունը: Բայց այս հարցն էլ համարյա անլուծելի է մնացել: Թաղիադյանը, ինչպես և իր ժամանակի մյուս խմբագիրներից շատերը, սովորություն չէր արել դնել հոդվածների տակ ստորագրություններ, այս պատճառով էլ անկարելի է լինում որոշել, թե ինչ աշխատանք են կատարել կողմնակի մարդիկ... Այսպես, «Ազգասերը» մեջ առաջին տարուց սկսեց տպվել «Արամայիս» անունով մի գրվածք, որ վեպի նմանություն բերող խրատական պատմվածքների մի ժողովածու է: Հեղինակն անհայտ էր: Եվ միայն երբ այդ գործը արտատպվեց առանձին գրքով, այն ժամանակ նրա վրա երևան եկավ մի այսպիսի վերնագիր. «Արամայիս. բարոյական ստեղծաբանություն. յօրինուած Թաղէոսի Խաչիկ Աւետումեանց»:

«Ազգասերը» պատմությունից մենք արդեն գիտենք, որ ժամանակակից հայ հասարակությունը իր շատ համեստ պահանջների տեսակետից շատ բարձր գնահատեց Թաղիադյանի անխոնջ աշխատանքը պարբերական մամուլի ասպարեզում և մի քանի անգամ համակրական ցույցերով վարձատրեց նրան: Այսպիսի վերաբերմունք նրա նկատմամբ պիտի յուրացնեն և հայ հրապարակախոսության պատմությունը: Արդարն այն կլինի, որ մենք ճանաչենք Թաղիադյանի անվիճելի իրավունքը, այն՝ որ նա ազնիվ մշակ է եղել հասարակական զարգացման անդաստանում:

5. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Ավելի ընդարձակ է Թաղիադյանի հմտությունն ու հեղինակային կարողությունը պատմագրության մեջ: Նա շատ սիրում էր պատմությունը և համարձակորեն կարող է համարվել իր ժամանակի ամենալավատեղյակ և զարգացած հայ պատմագետներից մեկը: Անգլերենի և պարսկերենի միջոցով նա շատ է ընդարձակել այն հորիզոնը, որ կարող էր նրա առջև բաց անել հայ՝ ընդհանրապես դեռ շատ աղքատ գիտությունը: Առանձին սիրով և ոգևորությամբ նա ուսումնասիրել է պատմությունը, ապա նաև Հնդկաստանի, իր երկրորդ հայրենիքի, ինչպես և Պարսկաստանի պատմությունը: Հայոց պատմությանը նա լավ ծանոթ էր ոչ միայն այն աղբյուրներով, որոնք տպված էին այն ժամանակ, այլև դեռ անտիպ մնացած ձեռագիրներով:

Ուրիշ հարց է, իհարկե, թե ինչպես էր Թաղիադյանը լուսաբանում իր հարուստ ծանոթությունները: Այդ կողմից նա հարազատ զավակ էր այն ժամանակվա հայագիտության և մեկը սովորական հայ գիտնականներից, զուցե միայն այն առավելություններ, որ ավելի աշխույժ երևակայություն և հերյուրելու կարողություն ուներ:

Այն ժամանակները պատմական «ճշմարտություններ» ստացվում էին մեծագույն մասամբ հին ստուգաբանական մարզանքների միջոցով, որոնց կլասիկական նմուշներից մեկն է, օրինակ, կատու՝ կա ի տուն: Այնուհետև, հայ պատմագետի համար պարտադիր էր անպայման և՛ անվերապահ հավատ, և՛

վստահություն դեպի հայ ավանդությունները, դեպի այն ամենը, ինչ գալիս էր հնությունից և ամրապնդված եկեղեցու և կրոնի հեղինակությամբ: Այս շրջանակում կարելի էր ամեն մի նվիրական նյութ և՛ ընդարձակել, և՛ պահուստազարդել, բայց ոչ երբևէ հերքել, մերժել զորավոր քննադատության միջոցով:

Այս դունավորումով է ներկայանում և Թաղիադյանի աշխատանքը պատմագրության մեջ: Ստուգաբանությունների մեջ նա երբեմն հասնում է ծիծաղելի կարկատանքների: Օրինակ, Երևանի «ասկյարի» խաղողը, նրա ասկյով, իր անունն ստացել է... «այս կերի» բառերից: Շատ վնասել է նրան և այն սնապարծ ազգասիրությունը, որ այն ժամանակները համատարած երևույթ էր, բայց որ մասնավորապես Թաղիադյանի մեջ էր բորբոքված: Շատերից մի օրինակ: Նույնիսկ Թաղիադյանի ժամանակների գիտության էլ դրականապես հայտնի էր, որ աստղաբաշխությունը ծնվել է Քաղդեայում և Եգիպտոսում: Բայց ահա մեր ազգասեր գիտնականը «Ճառ դաստիարակութեան օրիորդաց» գրվածքի մեջ ամենազրական կերպով ասում է, որ աստղաբաշխությունը առաջին անգամ գտնվել է Հայաստանում և նրա մշակողներն ու զարգացնողները եղել են մասնավորապես հայ կանայք: Այս բանի ապացույց Թաղիադյանը համարում է հայոց հին ամիսների և օրվա 24 ժամերի անունները: Եվ այսպիսի մի ապացույց նա վերջացնում է հետևյալ հաղթական եզրակացությամբ: «Չիք ազգ յաշխարհի որ կարիցէ յառաջ բերել այսքան հին և այսքան հզօր ապացույցս ի հաստատութիւն գիտիս այսորիկ»:

Բայց Թաղիադյանը հատուկ տեսություններ և ուսումնասիրություններ չէ էլ հրատարակել հայոց պատմության վերաբերությամբ: Եվ նրա լույս հանած պատմական աշխատությունները, թվով երկու հատ, Հայաստանին չեն վերաբերվում, այլ Հնդկաստանին և Պարսկաստանին: 1841 թվականին Եգիպտոսական ճեմարանի տպարանից լույս հանվեց նրա հետևյալ աշխատությունը. «Պատմութիւն Հին Հնդկաստանի յանյիշատակ դարուց անտի ցյարձակումն մահմեդականաց, ըստ աւանդելո մատենագրաց—այլ և այլ ազգաց: Նուիրեաց ի պատիւ Հայոց Ազգին Մեսրոպը Գաթեան Թաղիադեանց, սարկաւագ սրբոյ էջմիածնի»: Այս գործը նշանակություն ունի իբրև հայերեն գիրք, որ իր տեսակի մեջ առաջինն է և համարյա եզակին, պարունակելով իր մեջ Արևելքի ամենահռչակավոր քաղաքակրթություններից մեկի հին, գլխավորապես առասպելական պատմությունը: Թաղիադյանն այս գործի մեջ, իհարկե, իր սեփական ուժերին չէր թողնված. առարկան այն ժամանակ էլ ուներ իր ընդարձակ գրականությունը եվրոպական լեզուներով: Բայց և այդպես, Թաղիադյանը կարողացել է իր հայերեն աշխատությանը տալ մի այնպիսի բովանդակություն, որ աչքի էր ընկնում եղած ոչ հայերեն հրատարակությունների մեջ:

Համարյա միևնույն հատկություններով օժտված է նաև նրա երկրորդ պատմական աշխատությունը, որ հրատարակվեց 1846-ին հետևյալ վերնագրով. «Պատմութիւն Պարսից, յօրագրէ Մեսրոպայ Պ. Թաղիադեանց Վ. Ա. սարկավագի ս. էջմիածնի»: Այս աշխատության շարժառիթն ինքնըստինքյան հասկանալի է, եթե նկատի առնենք, թե որքան սերտ առնչություն են ունեցել հայերն ու պարսիկները իրենց ամբողջ պատմության ընթացքում: Այս անձուկ կապակցությունը, որ բերում էր իր հետ նույնիսկ և կրոնական եղբայրակցություն, շեշտում է Թաղիադյանը և առաջինը հայերից՝ պարզում է պարսից պատմությանը ծանոթանալու անհրաժեշտությունը:

Սկսվում է այդ պատմությունը առասպելական ժամանակներից: Եվ առհասարակ Թաղիադյանը ղեկավարվել է անգլիացի Մաքհոլդի գրած պարսից

պատմութիւնից, որ լավագոյնն է համարվում մինչև այսօր իսկ: Բայց Քաղիագրանն ունի իր գեփական աշխատութիւնն էլ՝ պատմութիւնը նա հասցնում է իր օրերին և, որ մանավանդ, կարեւոր է մեզ համար, տալիս է շատ տեղեկութիւններ Պարսկաստանի հայերի կյանքից:

Քաղիագրանի պատմական աշխատութիւնների մեջ մենք դնում ենք և նրա «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատութիւնը, որի բովանդակութեան հետ մենք արդէն ծանօթ ենք այս աշխատութեան առաջին գլխից: Պատմական բովանդակութիւն, իհարկէ մասամբ, այս աշխատութեան տալիս է մանավանդ այն հանգամանքը, որ ճանապարհորդը բազմաթիւ պատմական տեղեկութիւններ է տալիս իր տեսած տեղերի մասին, և այստեղ է գլխավորապես, որ նա հաճախեցնում է իր ստուգարանական և այլ բացատրական մարզանքները:

Բայց «Ճանապարհորդութիւնը» պատմական գիրք է մանավանդ հեղինակի ժամանակների վերաբերմամբ: Քաղիագրանը, ինչպէս ասել ենք մի անգամ շատ ուշագիտ, դիտելու ընդունակ ուղեոր է և թողել է իր այս աշխատութեան մեջ մեծ քանակութեամբ փաստեր, որոնք այսօր մեզ համար ունեն պատմական թանկագին նյութերի արժեք: «Ճանապարհորդութիւնը» մենք համարում ենք Քաղիագրանի լավագոյն գործը:

Նկատենք և մի հանգամանք, պատմական այս երեք երկերի վրա էլ նշանակված է «հատոր առաջին», և Քաղիագրանի առաջաբաններինց երևում է, որ դրանցից յուրաքանչյուրն ունի երկրորդ հատորն էլ. եթէ այս ճիշտ է, այն ժամանակ մենք պետք է համարենք այդ անտիպ մնացած աշխատութիւնները կորած, մի հանգամանք, որ իհարկէ չի կարելի շանվանել չափազանց ցավալի:

6. ԴԱՍԱԳՐՔԵՐ. Իրրև ուսուցիչ, Քաղիագրանը չէր կարող իհարկէ հեռու մնալ դպրոցի ամենամեծ պահանջից, այն է՝ լավ դասագրքեր ունենալուց: Այս մեծ պետքին բավարարութիւն տալու համար Քաղիագրանը մեծ աշխատանք չէ գործադրել: Հրատարակել է մի այբբենարան, որ, սակայն, աչքի ընկնող արժանավորութիւններ չունի: Դա մի տեսակ բոզոք էր «Աղանուրջան կարգ Ուսմանց», (տպված Կալկաթայում 1824-ին, հորինողն էր Յ. Յ. Աղանուրջանց): Այս այբբենարանը մի ամբողջ հատոր էր կազմում (256 էրես) հանրագիտական բովանդակութեամբ. գիտութեան բոլոր ճյուղերը, ընդհանուր և հայոց պատմութիւն (իհարկէ, համառոտ) մի խոսքով այբբենարան և ընթերցարան: Քաղիագրանն ուզում էր, և այս ամենայն իրավունքով, որ երեսխայի ձևով միմիայն այբբենարան տրվի գրավարժութիւն սովորելու համար, որովհետև, ասում էր, երեսխան ավելի խաղ է սիրում, քան ուսում և շպետք է ձանձրացնել և շարշարել նրան: Բայց նրա այբբենարանն էլ, թեև Աղանուրջանից անհամեմատ փոքր, կենդանութիւն չունեք իր մեջ և դարձյալ չէր հասնում նպատակին:

Մի ուրիշ փոքրիկ դասագիրք էլ, որը կազմել է Քաղիագրանը, տառացի նմանութիւն է եվրոպական դասագրքերին: Նա կոչվում է «Մեսրոփ Ծարագրիչ հայ և անգղիական լեզուաց» (տպ. 1840): Մի երեսը հայերեն, դիմացինը անգլերեն ու վարժութիւններ են գրութիւն սովորեցնելու համար: Սակայն հայերենը անգլերենի բառացի թարգմանութիւնը չէ:

Բայց ուշագրութեան արժանին Քաղիագրանի երրորդ դասագիրքն է՝ «Մեսրոփեան առաջնորդ Մանկանց» անունով, որ տպվեց 1847 թ. Սուրբ Սանդուխտ դպրոցի համար: Այս փոքրագիր 16⁰ հատորը (198 էրես) կար-

դացվում էր մեծ հետաքրքրութեամբ: Խմբագրված է նա հարցերի և պատասխանների ձևով, որ այն ժամանակները շատ ընդունված էր և պարունակում էր իր մեջ հարյուրավոր տեղեկութիւններ ուտելիքների և ըմպելիքների մասին: Եւ որ գլխավորն է, այդ տեղեկութիւնները շին սահմանափակվում Հընդկաստանի մեջ, այլ ընդհանրացվում են յուրաքանչյուր դեպքում, տարածելով աշխարհի բոլոր կողմերի վրա: Հայ կյանքի վերաբերմամբ այս գրքույկը շատ թանկագին մի հիշատակարան է, ուր հավաքված են տնային և գյուղական տընտեսութեան շատ գիտելիքներ, որ մեր ժողովուրդը մշակել է իր գոյութեան ընթացքում: Քաղիագրանը, որ այնքան ճանապարհորդել էր, այնքան գեղեցիկ կերպով ուսումնասիրել էր հայոց առտնին կյանքն էլ, այսօր լավագոյն առաջնորդն է հանդիսանում այն մարդկանց համար, որոնք կկամենային ուսումնասիրել, թե ինչ ուտելիքներ, ինչ պաշարեղեններ և ըմպելիքներ էր պատրաստում հայ ժողովուրդը մի քանի տասնյակ տարիներ սրանից առաջ: Առատ ու հետաքրքրական են տեղեկութիւնները բույսերի և մրգերի մասին: Եւ որ տարօրինակ չէ, քանի որ արդէն ճանաչում ենք Քաղիագրանին, այստեղ էլ՝ կերակուրների, բույսերի հարցում էլ, ազգասիրական պարծանքն է դուրս ցայտում ամեն մի տողի մեջ:

Չենք կարող այստեղ մի քանի նմուշներ չբերել այս հազվագյուտ և հետաքրքրական գրքի հետ ավելի ընդարձակորեն ծանոթացնելու համար:

2. Զի՞նչ է խարշած ձաւարն:

Պ. Մի և նոյն ցորեան, զոր նախ թեփահան արարեալ խարշեն, և լինի հատիկ. ապա շորացուցեալ ազան և զանազան նօսր և նուրբ մազօք մաղեն և ամանեն ի պէտս կերակրոց փոխանակ փղունջի:

2. Այլազգիք ծանօթ են սմին:

Պ. Որքան մեք շրջեցաք և տեսաք, բաց յԱզգէս և յաշխարհէ Հայոց ուրեք երբէք ոչ տեսաք ձաւար. ուստի և այս գիւտ միայն Ազգիս պատկանի:

2. Զի՞նչ է գաթայ:

Պ. Կոշի և նազուկ, զի նազուկեաց կերակուր է...

2. Զի՞նչ է կաթնունցն:

Պ. Տեսակ նազուկի կաթնով ունցեալ. խմոր շողելոյն ունցել ասեմք մեք:

2. Զի՞նչ է կոզին կամ կարագն:

Պ. Պարարտութիւն կաթին՝ մակարդելո ի մածուն, զոր լցեալի խնոցին հարեն, և զիւն որ յերես գայ՝ հավքեն և կոշեն կոզի:

2. Ապա զմնացեալ անի՞տ նիւթն:

Պ. Կոշեն թան, յորմէ գործեն ապուր, կամ շորացուցեալ պահեն առ ի պէտս ձմրան և կոշեն շորաթան:

2. Դու երբէք շորաթան կերա՞ր:

Պ. Հնդիկք թան շորացուցանել ոչ գիտեն. բայց վասն մեր գայ ամ ըստ ամէ ի նոր Զուղայոյ, զոր շրջակայ գյուղականք Հայոց բերեն աստ ի վաճառ, և անտի բարեկամք մեր բաժին հանեն մեզ:

2. Թուի թէ այն ևս յատուկ իցէ մեր ազգին:

Պ. Հարկիւ. զի օտար ազինք ոչ ունին, և թէ ունիցինն՝ ի մէնջ ուսան. որպէս և մեր շորաթան եփելոյ կերպն իսպառ անծանօթ է նոցա:

2. Ո՞րպէս եփեմք մեք զշորաթանն:

Պ. Թրմեալ զշորութեանն ի թաղարի զի կակղացի, առնումք և այնքան հարհարեմք զնա ջրով ընդ կողս թաղարին՝ մինչև լուծանի. ապա առեալ միս գէր և պորինջան թարմ, արկանեմք ի նա. եփեմք, և իւղ եռացեալ զեղեալ ի վերա՝ ուտեմք. բայց ոչ յաճախ, զի ծանր է:

2. Է՞նք և մինչև կերպ:
- Պ. Այո, և կոչի ապուր, սպաս կամ լոկ թան եռացեալ ընդ ակնակալի և ընդ թերոյ: Սա թեթե է և սննդարար:
2. Զի՞նչ է սերն:
- Պ. Պարարտ թեթեազոյն մասն կաթին, որ գայ յերես նորա, և հաւաքի ի կերակուր:
2. Յոյնք և Հոսմայեցիք գիտե՞ն զկողի կամ զիւղն:
- Պ. Ոչ, այլ սովորական կերակուր նոցա էր ձէթ յունաց:
2. Ո՞ր գաղնիս կողին կազմեն:
- Պ. Ի Հայս. ուր այնքան ազնիւ կողի կազմեն յԱրարատեան նահանգի մերում մերձ յերասխ և ի Տուրուբերան նահանգի՝ մինչև շորացուցանեն և յերկրէ յերկիր տանին:
- Թէ՛յի կամ շայի մասին երկար տեղեկութիւններ տալուց հետոյ Թաղիադեանը մտցնում է այսպիսի մի կտոր.
2. Ո՞ր նախ ի գործ առին զՀայն արտաքոյ Զինաց:
- Պ. Հաւանականաբար ի Հայաստան. զերկրքին մեծամեծ նախարարութիւնքն Մամիկոնեան և Օրբելեան հատուած գալով ի Զինաց ի Հայս՝ հարկիւ և ձեռս բերէին զսովորական ըմպելիս երկրի իւրեանց և ի կիր արկանէին գունեա որպես զգեղ:
2. Քանի՞ տեսակ խաղող կա: ի Հայս:
- Պ. Աւելի քան զյիսուն տեսակ:
2. Կարե՞ս անուանել ինձ զոմանս:
- Պ. Ոչ. քանզի որքան առաւել բերէ երկիր մեր զտեսակս խաղողոյ, և որքան առաջինն հանդիսանայ ի գիւտն գինւոյ՝ այնքան և թերի գտանի բարբառ մեր յանտուանց տեսակաց նորա:
2. Ընդէ՞ր:
- Պ. Նախ զի գրեանք տնկաբանութեան նախնեաց մերոց ոչ հասին ի ձեռս մեր. և երկրորդ՝ զի ընդ գերությամբ անկեալ ազգաց օտարաց՝ նոցին բանիւք վարեցաք յաւես քան թե մերայնովք:
2. Զի՞նչ է խնձոր:
- Պ. Պտուղ գեղեցիկ, հասարակօրէն բոլորքի, դեղնաշուրթ կարմիր կամ կանաչախառն կարմիր, անուշահոտ, անուշահամ որպէս թէ խնդութիւն ծորող:
2. Ո՞ր լինի ընտիրն:
- Պ. Ի Հայաստան, ուր և Ադամայ դրախտն էր:
2. Ո՞ր տանձն է միմիայն յաշխարհի:
- Պ. Մալաչին Երեանայ և Պահունին Գողթնեաց:
2. Զի՞նչ է մալաչին:
- Պ. Տեսակ ինչ տանձի այնքան մեծ, յորոց շորս կշռէ զմի լիտր հազար դրամոյ. այնքան պարապ և փափուկ, մինչ ճանկ եղէզնայ յօրինեալ և միջի բամբակ սփռեալ ի ներքո դնեն նորա, և ոլոր տալով քաղեն՝ զի մի յերկիր հոսեալ բլխիցի:
7. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Մենք արդեն գիտենք, որ Թաղիադեանը թարգմանել է իր Ռիչնալդ Հիբ կալիսկոպոսի «Պաղեստին» անունով քերթվածը: Այս թարգմանությունը, որ կատարված է ոտանավորով անգլիական բնագրի հետ միասին հրատարակվեց առանձին բրոշյուրով 1830 թվին:
- Մի ուրիշ թարգմանություն էլ ունի Թաղիադեանը, որ նույնպես հիշա-

տակել ենք իր տեղում՝ «Հոգոնի Գրովտիոսի ճշմարտութիւն Քրիստոնական հավատոյ», տպված 1829-ին:

Ավելի նշանակելի է «Առակք Պարսից» թարգմանությունը, որ տպագրվել է 1846 թվին: Բայց այս աշխատության հետ մենք, տարաբախտաբար, ծանոթություն չունենք:

Իր գրական գործունեությունը Թաղիադեանը տպել է 1827-ին մի հրատարակութեամբ, որի վերնագիրն է. «Աստուածամանութիւն, յօրինեալ Երանելոյն Պետրոսի Եպիսկոպոսի Նախշուանցոյ ու աստուածաբան վարդապետին Հայաստանեայց իսկ այժմ ի լոյս ընծայեալ վերստին աշխատութեամբ Մեսրոպայ Դաւթեան Թաղիադեանց Կարբեցոյ, որ ի միաբանութիւնիէն սրբոյ էջմիածնի»:

Բայց կարևորը նրա մի այլ հրատարակությունն էր: Գրելով Հնդկաստանի պատմությունը, երկու հատորով, որոնցից մեկն էր հրատարակվում, Թաղիադեանը այդ աշխատության երկրորդն հատոր դարձրեց իր ձեռքն ընկած մի ձեռագիր աշխատություն, որ գրել էր Զուղայեցի կոջամազյանը և հրատարակեց այս գործը հետևյալ վերտառութեամբ. «Թովմասայ կօջամազեան նոր Զուղայեցոյ Պատմութիւն Հնդկաց, մասն երկրորդ, մասնաւոր սրբագրութեամբ և ջանք ի լոյս ընծայէ Մ. Գ. Թաղիադեանց, Վ. Ն., Կալկաթա, 1849»:

Այս գործը շատ հետաքրքրական է և հնդկահայ գաղթականութեան պատմութեան համար մի շափազանց կարևոր աղբյուր, որովհետև պատմում է, թե ինչպես հայերը հաստատվեցին Հնդկաստանում և տեղացի թագավորների մոտ նույնիսկ գինվորական ուժ կազմեցին և կովեցին անգլիացիների դեմ:

Այս գիրքը Թաղիադեանի հրատարակություններից վերջինն է (բացի «Ազգասերից»):

Տասնիններորդ դարի առաջին կեսը փոխանցման մի նշանավոր շրջան է, երբ գրված էր հնի և նորի, հարցը: Մեսրոպ Թաղիադեանն այդ շրջանի խոշոր գրական գործիչներից մեկն էր: Նա ներկայացնում էր արևելյան հայությունը, որ տարբերվում է արևմտյան հայությունից նրանով, որ մինչդեռ արևմտյանը խոսում է բացառապես գաղութային լեզվով, արևելյանը գրականության մեջ էր բերում երկիրը, հայրենի հողը, մի հայրենասիրություն, որ միայն Հայկի և Արամի լեզվով չէին խոսում, այլ և հայկական շորաթանի, փոխինդի լեզվով: Այդ ուժեղ երկրայնության հզոր մի ներկայացուցիչ էր և Խաչատուր Աբովյանը: Պայքարի մեջ հաղթողը պիտի երկրայնությունը լիներ: Շուտով արևելյան ուսահայությունը միացավ և արևելյան թուրքահայությունը, և Վանի գրականությունը եկավ իր հարստություններով ամբապնդելու այն, ինչ նվաճում էր հայրենասիրությունը Արարատի շուրջը:

Այս հաղթանակն էլ նոր ուղղություն է տալիս մեր գրականությանը:

Սույն հատորում ղեկավարված «Ստեփանոս Նազարյան» և «Գրիգոր Արծրունի» աշխատությունները, Լեոն գրել է XX դարի սկզբին, այն շրջանում, երբ նա հրապարակախոսական գործունեության հետ մեկտեղ արդեն սկսել էր զբաղվել նաև հայ ժողովրդի պատմության հարցերի ուսումնասիրությամբ: Նշված գործերից առաջինը լույս է տեսել 1902 թ. ևրկու հատորով, երկրորդը՝ 1902—1905 թթ. ևրեք հատորով: Երկու ուսումնասիրություններն էլ հրատարակվել են Քրիլիսիում, ուր այդ տարիներին ապրում ու աշխատում էր զարմանալի աշխատասիրությամբ օժտված և արդեն լայն ճանաչում դուրս մեր մշակույթի անվանի գործիչը: Հատորում ընդգրկված երրորդ աշխատությունը՝ նվիրված Մեսրոպ Քաղիազյանին, գրվել է ավելի ուշ տարիներին և լույս է տեսել Բաքվում հրատարակվող «Գործ» հանգեսի 1917 թ. մի քանի համարներում:

1.

XIX դարի 40—70-ական թթ. հայ լուսավորական շարժման ակնաւոր ներկայացուցիչներից մեկի՝ Ստեփանոս Նազարյանի (1812—1879) կյանքին ու գործունեությանը նվիրված Լեոնի աշխատությունը կարևոր տեղ է զբաղում նրա գրական ժառանգության մեջ: Հեղինակը հանգամանորեն պատկերել է նշանավոր գործչի հարուստ կյանքը և հասարակական գործունեությունը: Փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է արված այն անձնվեր պայքարը, որ ծավալել է Նազարյանն իր ժամանակի հայ կղերաֆեոդալական տարրերի դեմ, հանուն լուսավորության, գիտության, նոր գրական լեզվի ու գրականության, նոր դպրոցների ու դաստիարակության, կանանց ազատության ու իրավահավասարության, հանուն երկրի տնտեսական ու հասարակական զարգացման:

Լեոն ճիշտ է նշել այն հանգամանքը, որ Ստ. Նազարյանի գործունեության ամենափայլուն բնագավառը հրապարակախոսությունն էր, մասնավորապես այն հրապարակախոսությունը, որ նա ծավալեց նշանավոր «Հյուսիսափայլ» ամսագրի էջերում, որպես նրա հմուտ և անընդմեջ խմբագիր: Իր շուրջը համախմբելով ժամանակի առաջավոր գաղափարներով տոգորված հայ երիտասարդությանը, Նազարյանը անխնա մերկացնում էր հետադեմ հողատիրականությունը, ապազգայնացած հայ վերնախավին, ևկեղեցական հին դոգմաները սրբաբնույթ և միջնադարյան սխոլաստիկային հավատարիմ մնացած ու ազգային սնապարծությունից զրբերից հանդես եկող Մարյանին, Չերքեզյանին, Արարատյանին, Ալվաղովսկուն, Մանգիլյանին, Տերունին և ուրիշներին: Հայ հեղափոխական դեմոկրատ Մ. Նալբանդյանի աշխատակցությունը նոր փայլ տվեց նշանավոր պարբերականին:

Հյուսիսափայլի առաջին համարներում արդեն Նազարյանը համարձակորեն ազդարարում էր. «Այսուհետև ոչինչ եղիպտոսյան խորամանկ քուրմեր, որ կամենին լինել գիտության միայնակ

պահապանքը, այսուհետև ոչինչ չինեական պարիսպ, որ պիտո է փակեր լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի Բարեշուքյան գերությունից»: Ավելի կոնկրետացնելով իր այս միտքը Նազարյանը գրում էր. «Արեղաններին գործ չկա այսուհետև ազգային խնդիրների մեջ: Ժողովուրդը կարտա է այժմ այլ ուսուցիչներ, քան թե կարող էր առ նորան խուցերի մեջ փակված, մարդկութենից ամենեկին օտարացած մի հասարակություն»:

Խավարամտներն ընդունեցին մարտահրավերը: Սկսվեց ծավալուն դրոճ «Հյուսիսափայլի» և նրա խմբագրի դեմ: Նազարյանը հայտարարվեց լյութերական, իր ժողովրդից օտարացած մարդ, հայկական սրբությունների թշնամի, հայոց անցած փառքը ու արագիցիաները ոտնահարող հերետիկոս և այլն: Ենազարյանը, — գրում էր Լեոն, կծու քննադատություններ էր անում, մերկացնում էր ազգի պակասությունները, իսկ նրա հակառակորդները ինքնազոճ ազգասերներ էին, որոնք հաճելի կերպով շոյում էին հայի ինքնասիրությունը, զովում էին նրա բարեմասնությունները և ոչինչ պակասություն չէին տեսնում նրա մեջ»: Երբ, օրինակ, Նազարյանը հենվելով գիտության ավելների վրա գրում էր, թե Հայկի ու Բելի, ինչպես նաև Նոյի պատմություններն առասպելներ են, ապա հետագեւ տարրերը նրան մեղադրում էին հակազգային միտումի մեջ: Իայց Նազարյանը հաջողությամբ հանդես էր գալիս թշնամիների դեմ, ցույց տալով նրանց սգիտությունը և ազգային սնապարծությունը:

Փողազերծ անելով հայ ապազգայնացած հարուստներին, Նազարյանը մեծ հարգանքով էր խոսում հասարակ ժողովրդի մասին, նրան համարելով ազգի հիմքը և հույսը: «Հյուսիսափայլում» տայազրված իր հողվածներից մեկում նա գրում էր. «Մի ազգի զլխավոր ուժը և զորությունը հասարակի մեջ է, որովհետև հասարակի բազմությունը հարյուր հազարավոր, իսկ մեծատունների թիվը տասն ու քսան է. բացի գորանից, աշխարհիս բոլոր ակնաւոր գործերը իմաստության և ճարտարության մեջ հառաչացած են ժողովրդի միջակ ու շքավոր դասակարգերից. աշխարհաշեն գյուտերը և հայտնագործությունը արած են ժողովրդական կարգի մարդերի ձեռքերով, որովհետև դոցա մեջ են ամփոփված մի ազգի էրեւիլի քանքարը և շնորհները»:

Նազարյանը դանտություններ ու խորը կակիծով էր խոսում արևմտահայ հասարակ ժողովրդի անօրինակ ծանր վիճակի մասին, ընդգծելով այն հանգամանքը, որ նա դանդում է ահավոր թշվառության ու հուսահատության մեջ: Լացի դեպքում նրա աչքերից արտասուքի փոխարեն արյուն է հոսում, և շնայած դրան վամպիրները սշեն կշտանում անմեղ զոհի՝ խեղճ ժողովրդի արյունը ծծելուց»:

«Հյուսիսափայլի» անվանի խմբագիրը ուներ ռուսական օրինեսացիա, որը միանգամայն պատճառաբանված էր ու օրինաչափ: Հայաստանի ու ամբողջ Անդրկովկասի միացումը, ինչպես հայանի է, միանգամայն առաջադիմական էր: Ըիշտ էր նկատում Լեոն, երբ գրում էր. «Ռուսաց զենքը ոչ միայն բերում էր խաղաղություն և հանգստություն, այլև կապում էր մի կամուրջ այնքան զժբախտություններ տեսած մեր երկրի և եվրոպական քաղաքակրթության մեջ»: Նազարյանը քանիցս նշել է այն հանգամանքը, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ազատագրեց երկիրը «ստրկության լծից» և որ ռուսական տիրապետությունը արևելահայերին բերեց «մի նոր բարեկարգ քաղաքական կեցություն», նրանց համար ստեղծեց «ամենայն նյութական և իմացական բարությունների աղբյուրը»:

Ստ. Նազարյանի և նրա հակառակորդների միջև ծավալված գաղափարական ճակատամարտը վերջացավ Նազարյանի և նրա համախոհների հաղթանակով: «Հյուսիսափայլի» սկզբըրունքները լայն արձագանք գտան Ռուսաստանի հայ հասարակության և մասնավորապես նրա երիտասարդ սերնդի ու զեմոկրատական մտավորականության մեջ: Բայց ոչ միայն Ռուսաստանում: «Հյուսիսափայլը» և նրա անօրենք ջերմ ընդունելություն գտան նաև արևմտահայ ազատամիտների շարքերում: Կ. Պոլսի զեմոկրատների օրգան «Մեղուն» բարձր գնահատական էր տալիս Նազարյանի գործունեությանը: Թերթը գրում էր. թե Նազարյանը հայ ազգի հազվագյուտ անդամներից մեկն է, որ աչքի է ընկնում իր հմտությամբ, տաղանդով, ճշմարտախոսությամբ ու հայրենասիրությամբ: Թեև նա եմբարկվեց հայածանքի ու կրեց շատ տառապանք, շարունակում էր «Մեղուն», այնուամենայնիվ հրապարակախոսը չի ընկճվել և զգարձյալ կնվիրել իր ծառայությունը ազգին աննկուն և անհողողոդ արիությամբ»:

Իր երկհատոր աշխատության մեջ Լեոն քննարկել է Ստեփանոս Նազարյանի լեզվազրական ու բանասիրական տարրեր հարցերի նվիրված հողվածներն ու հայագիտական ուսումնասիրությունները, ցույց տվել նրանց ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: Այդտեղ հանգամանորեն խօսվում է նաև այն ծրագրերի մասին, որ կազմել էր Նազարյանը նոր դպրոցներ ու ընկե-

բություններ ստեղծելու, մանուկների ու երիտասարդության դաստիարակության նոր մեթոդները, հայկական թատերական գործը զարգացնելու և նման այլ հարցերի մասին:

Բարձր գնահատելով Ստեփանոս Նազարյանի լուսավորական, իր ժամանակի համար միանգամայն առաջագիմ գործունեությունը, ևեռն միաժամանակ կանգ է առնում Նազարյանի լիբերալ ու պահպանողական հայացքների վրա: Հասարակական կյանքի զարգացման մասին մեր լուսավորիչը պաշտպանում էր ուսու և եվրոպական լիբերալ-բուրժուական ազատամիտների այն տեսակետը, որ ժողովուրդների հասարակական զարգացման բնթացքը պետք է տեղի ունենա ոչ թե հեղափոխական շարժումների միջոցով, այլ վերևից եկող ուժերով: Խաղաղ, աստիճանական զարգացման շնորհիվ: Նազարյանը, օրինակ, բացասական վերաբերմունք ուներ XVIII դարի ֆրանսիական հեղափոխության նկատմամբ, խիստ ատելությամբ էր խոսում Վոլտերի և ֆրանսիական մյուս հռչակավոր էնցիկլոպեդիստների մասին: Ենթադրյալ առաջինը: Իրավունքի և արդարության նկատմամբ է ևեռն, — երևան է դալիս հավատացող քրիստոնյա Նազարյանցը, որին վրդովում է տասնութերորդ դարի փիլիսոփայության անհավատությունը: Ծիշտ է, Նազարյանը երբեմն արգարացրել է ժողովրդի ցանումը ուղղված բանաստեղծների դեմ, գրել է թե «բաշար առանց սրի սկար է և չի կարող ազդաշինության պատճառ լինել», բայց այնուամենայնիվ նրա պատմա-փիլիսոփայական հիմնական տեսակետը եղել է այն, որ հասարակական կյանքի զարգացումը պետք է տեղի ունենա խաղաղ վերանորոգումների միջոցով: Հրատարակիչները այս տեսության համոզված պաշտպանը դարձավ մասնավորապես 1861 թ. սկսած, երբ Ռուսաստանում իրագործվեցին ազրարային-գյուղացիական օրենքները:

Լեռնի աշխարհը չէր վրիպում այն հանգամանքը, որ «Հյուսիսային» էջերում ուղին շտպագրվեց հայ ազատագրական շարժման փայլուն էջերից մեկի՝ զեյթունցիների 1862 թ. հերոսական ապստամբության մասին: Նազարյանը, գրում էր պատմաբանը, մեծ սիրով թարգմանում էր Կիկերոնի ճառերը, Ներսես Լամբրոնացու ատենաբանությունը, համոզված թե հայ ընթերցողի համար դրանք են երկնային մասնանի, և միևնույն ժամանակ տարօրինակ լուսություն էր պահպանում Զեյթունի անցքերի նկատմամբ:

Մի այլ կապակցությամբ ևեռն գրել է, որ Նազարյանցը «հաստատ ու տոկուն բնավորություն ուներ», բայց շատ չէր սիրում «գուրս գալ իր առանձնասենյակից, նա ավելի լիբերալ էր, ընդհանուր սկզբունքների մարդ էր, բան կյանքի մեջ նեղվող զինվոր»:

Լեռնի գործը, որ գրված է մոտ ինը տասնամյակ առաջ, իհարկե, զերծ չէ թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը:

Աշխատության մի շարք էջերում տեղ են գտել ազգային նիհիլիզմի արամագրությունները: «Մեր ազգը, — գրում է պատմաբանը, — համաշխարհային հեղինակներ ու գործիչներ երբեք չի տվել: Մենք միշտ մի շանասեր ընդօրինակողներ ենք եղել, մենք կարողացել ենք մոտենալ լուսավոր ազգերին, վերցնել մեր ուժերին ու ընդունակություններին համապատասխանող բնօտար երկրում պատրաստված ծաղկահյուսերից և պատրաստել մեզր ու մոմ մեր սեփական փոքրիկ, խավար տան համար»: Սխալն ակնհայտ է: Իրականությունն այն է, որ, ինչպես Նշել են մի շարք օտար անվանի հեղինակներ, հայ գրականության ու մշակույթի շատ ներկայացուցիչներ իրենց պատվավոր տեղն են գրավում համաշխարհային մշակույթի գանձարանում:

Մտայլ գույներով է նկարագրված հայ հասարակական ու մշակութային կյանքը 1850—1870-ական թթ.: Մինչդեռ հայտնի է, որ այդ տարիները ազգային զարթոնքի ու կոնստիտուցիայի, նոր գրականության ու աշխարհաբար գրական լեզվի, մշակույթի մի շարք ճյուղերի ձևավորման ու զարգացման շրջան էր և՛ արևելահայերի, և՛ արևմտահայերի համար, մի շրջան, երբ հանդես եկան ու գործեցին հայ ազգային ազատագրական գաղափարներով սողողված ոչ քիչ գրողներ ու հրատարակիչներ:

Մի կարելի համաձայնել այն մտքի հետ, թե «գերմանացիները մեզանում ոչ միայն քաղաքների կենդանի աշխարհաբարի անհրաժեշտությունը, այլև իրանք եղան առաջինը, որ իրականացրին այդ միտքը»: Այստեղ պարզապես անտեսվել են հանրահայտ փաստերը:

Աշխատության այն էջերում, ուր խոսվում է Ստեփանոս Նազարյանի, Խաչատուր Աբովյանի և Միքայիլ Նալբանդյանի մասին, ստացվում է այն ապավորությունը, թե այդ գործիչները կանգնած էին գաղափարական-քաղաքական նույն դիրքերում և հավասար տեղ են գրավում մեր ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում: Չեն նշված հայացքների սկզբունքային այն տարբերությունները, որոնք առկա են եղել դեմոկրատ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի, հեղափոխական գեմոկրատ Միքայիլ Նալբանդյանի ու լիբերալ ազատամիտ Ստեփանոս Նազարյանի միջև:

Պատմաբանը հետևողական չէր Միքայիլ Նալբանդյանի գրական ժառանգության գնահատության մեջ: Հեղինակը մի տեղ նկատում է, թե Նալբանդյանը իր ժամանակի «գրական աստղն էր, ամենատաղանդավորը հայ գրողների մեջ», իսկ մի այլ տեղ գտնում էր, որ Միքայիլ Նալբանդյանի «Մինին խոսք, մյուսին հարս» և «Մեծաշահարցուկը» արձակ գործերը (վեպերը) գուրի են զեղարվեստական արժանիքներից: Ի դեպ, պատմաբանը նման սխալներ որոշ շահով թույլ է տվել նաև ևս. Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպի ու Պ. Պողոսյանի ստեղծագործությունների նկատմամբ:

Կան նաև այլ կարգի սխալներ ու անճշտություններ: Այսպես, ցար Ալեքսանդր II-ի մասին գրքում ասված է, թե նա «առողջված էր մարդասիր, լուսամիտ գաղափարներով», որը իհարկե ճիշտ չէ, խոսելով Արևմտյան Հայաստանի մասին, ցույց չի տրված Բ. Գուան հարստահարությունների քաղաքականությունը հայերի նկատմամբ: Լուրջ չէ այն պնդումը, թե հայության մեջ տարածված է եղել արժաբեմաբանությունը:

Իր բոլոր թերություններով հանդերձ Ստեփանոս Նազարյանին նվիրված Լեռնի երկհատորյակը, անկասկած, հիմնավոր և շատ կողմերից արժեքավոր գործ է: Այնտեղ լուսաբանվում են ոչ միայն ականավոր լուսավորչի տառապանքներով ու անդիջում պայքարով հագեցված կյանքը, այլև իր ժամանակի հասարակական-քաղաքական իրադրությունը, ժողովրդի վիճակը, մշակույթի զարգացման աստիճանը և արլն:

Լեռնի այս աշխատությունը առայժմ միակ կուպիտալ գործն է Ստ. Նազարյանի մասին նկատենք ասկայն, որ մեր օրերում՝ 1950—1970-ական թթ. լույս են տեսել մի շարք աշխատություններ նվիրված «Հյուսիսային» և նրա խմբագրին (Մ. Միլիթարյան, «Հյուսիսային» ամսագիրը, Երևան, 1958, Ռուզան Նանումյան, «Ստեփանոս Նազարյանց, կյանքը և գործունեությունը», Երևան, 1978 և արլն): 1969 թ. լույս տեսավ Ստ. Նազարյանի նամակների ծավալուն ժողովածուն (Նամակներ), որ կազմել է Ռ. Նանումյանը: Ստեփանոս Նազարյանի մասին հանգամանորեն խոսվում է Աշ. Հովհաննիսյանի «Միքայիլ Նալբանդյանը և նրա ժամանակը» արժեքավոր աշխատության մեջ (հրատ. 1, Երևան, 1955):

2.

Գրիգոր Երեմիայի Արծրունին (1845—1892) խոր հետքեր է թողել XIX դարի հայ հասարակական-քաղաքական կյանքում, մեր հրատարակիչության, մշակույթի ու ազատագրական շարժման պատմության մեջ: Իր գործունեության առաջին շրջանում՝ 1860-ական և 1870-ական թթ. սկզբներին, Արծրունին հետևելով Ստ. Նազարյանին, որին համարում էր իր ուսուցիչը, պայքար ծավալեց խավարամիտների, հետադեմ բոլոր ուժերի դեմ հանուն առաջադիմության, գիտության ու լուսավորության: Բայց անգամ այդ շրջանում Արծրունին պայքարում էր ավելի հետևողականորեն, ավելի լայն ճակատով ու արմատական հարցադրումներով: Ծիշտ էր ևեռն, երբ գրել է. «Եթե Նազարյանցը հայկական ճահճային անշարժությունը վրդովում էր հետավոր Մոսկովայից, Արծրունուն վիճակված էր գործել հենց այդ ճահճների մեջ, ճակատ առ ճակատ ընդհարվել այն խավար, հետադեմ ուժերի հետ, որոնց հալածանքը, կատաղությունը այնքան զգալի շահով թունավորում էին Նազարյանցին հեռվից: Պատերազմը այստեղ, հայկական իրականության սրտում, իհարկե, ավելի կատաղի, ավելի անողորմ պիտի լիներ, մանավանդ որ Գրիգոր Արծրունին Նազարյանց չէր: «Հյուսիսային» խմբագիրը մի մեզմ ու հեղ, կրոնասեր, խազաղություն ու ընդհանուր համաձայնություն երազող քարոզիչ էր: Մինչդեռ Արծրունին մի կրակոտ բնավորություն էր, մի ըմբոստ ուժ, ազնիվ կրքերով լի մի մարդ, որ կովի մեջ ցույց էր տալիս անհուն եռանդ, չէր վախենում ուժերի անհավասարությունից»:

Շարունակելով գրել լեզվի, զարգացական ուժերի մեջ, մշակույթի տարբեր բնագավառների խնդիրները մասին, Արծրունին միաժամանակ մեծ ուշադրություն էր դարձնում ժողովրդի տնտեսական կյանքի հարցերի վրա: Գաղափարական հարցերից ու տեսական վեճերից պետք է անցնել գործնական աշխատանքի: Մեր դարը, ասում էր նա, առաքյալների ու մարգարեների դար չէ, այժօր մեզ հարկավոր են աշխատողներ, գործնական մարդիկ, ոչ թե կրավորական, այլ ներգործող անձինք, որոնք ուսումնասիրեն բնական գիտությունները, տեխնիկան, որ գրադվեն երկրի հետամնաց տնտեսական կյանքի զարգացման հարցերով: Անհրաժեշտ է, շարունակում էր հրատարակիչսրը, ստեղծել արդյունազորություն—արդյունաբերություն, առանց որի չի կարելի օգտագործել երկրի բնական հարստությունները և ապահովել նրա առաջընթացը: Բնորոշ է, որ

Անդրկովկասում իր ժամանակ հիմնված առաջին գործարաններն ու արդյունաբերական ձեռնարկություններն Արծրունին անվանում էր «առաջին ծաղիկներ»։ Պետք է կատարել երկաթի, լոբաթուխի քարերի գյուղատնտեսությունը, որը գտնվում է խիստ հետամնաց վիճակում։

Մանր է գյուղացու վիճակը, գրում էր Արծրունին։ Հողատիրությանը, երկրագործական նահապետական գործիքները, վաշխառուների շահատակությունները, բնական զանազան պատահարները և այլն, գյուղացիներին հասցրել են ծայր աղքատության, որի հետևանքով նրանք գաղթում են քաղաքները, զրկվելով հայրենի հողից ու տնից։ Ստեղծված վիճակից որոշ լավագույն դարձրած համար հարկավոր է գյուղում ստեղծել փոխատու և խնայողական ընկերություններ։ Բանվորներին օգնելու համար, որոնց վիճակը նույնպես անմխիթար է, պետք է ստեղծվեն ընկերություններ ու կոոպերատիվ կազմակերպություններ։

Արծրունին 1872 թ. Քրիլիսիում հիմնադրեց իր հայտնի «Մշակ» լրագիրը, որի մշտական խմբագիրը մնաց նա մինչև իր մահը՝ 1892 թ.։ Քերթը ուներ հարուստ բովանդակություն, արժանապատիվ էր հայությանը հուզող գրեթե բոլոր հարցերին, պրոպագանդում էր իր ժամանակի առաջատար հայացքները։ Նա դարձավ հայ պարբերական մամուլի նշանավոր օջախներից մեկը։ Առաջին տարիներին «Մշակ» հրատարակությունը մասնակցում էին Գարրիել Ասեղյանը, Բաճիկ, Պերճ Պառլյանը, անվանի գերասան Գևորգ Չմշկյանը և ուրիշներ։ «Մշակ» հաճախ հանդես էր գալիս մասնավորապես նույն Քրիլիսի քաղաքում լույս տեսնող հետադիմական «Մեղու հանդես» դեմ։ Մամուլից սուր պայքար նրանց միջև, որի հետևանքով կազմավորվեցին երկու հասանքներ՝ «մշակականներ» և «մեղուականներ»։ Լեռնի սույն աշխատության մեջ արված է այդ պայքարի մանրամասն պատմությունը։

Հիշատակության արժանի է այն հանգամանքը, որ Արծրունին եղել է կովկասյան ժողովուրդների բարեկամության համոզված ջատագույն։ Վրաց անվանի գրող Գեորգի Մերեթելու վկայությամբ Արծրունին իրեն միշտ ասել է, թե պետք է «քարոզենք ու զարթեցենք վրացիներին ու հայերին մեջ սեր և կարգություն, որովհետև մենք անկարող ենք առանց փոխադարձ բարեկամության հասնել մեր կատարելությունը։ Հո գիտեք կորսյալներ, որ միությունը ուժ է, իսկ բաժանությունը՝ թուլություն»։ «Մշակը» տարիներ շարունակ բարեկամական կապեր է հաստատել վրացական «Գրոնրա» և ադրբեջանական «Արիստի» պարբերականների հետ։ Այս հարցերի մասին, ինչպես գրում է Լեռն, Արծրունին ուներ հետևյալ համոզմունքը. «Կովկասը պետք է դառնա գա իր նահապետական դրությունից, նա ահապին ջանքեր պիտի անի մի բարեկիրթ, կուլտուրապես զարգացած երկիր դառնալու համար... Եվ այս մեծ գործի մեջ հարկավոր է բոլոր ազգությունների միաբան, ազնիվ աշխատակցությունը։ Յուրաքանչյուր ազգ պիտի մտցնի իր բաժինը, ոչ մի ազգ, աշխատելով առանձին, անջատված, չէ կարող միայն իր սեփական միջոցներով գլուխ բերել այն ահապին գործը, որ պիտի կատարե ամբողջ երկիրը։ Եվ առաջադիմության գործը մեզանում հաստատ և տեղական չի լինի, եթե մի ազգ առաջ զեն, մյուսը մնա անշարժ, մեկը դեպի առաջ քաշե սայլը, մյուսը դեպի ետ։ Հարկավոր է միաբան, ընդհանուր գործակցություն»։ Այս հիմքի վրա էլ բխում է ժողովուրդների բարեկամություն և համերաշխության անհրաժեշտությունը։ Այսպիսին էին Գրիգոր Արծրունու խորհրդածությունները ավյալ հարցի վերաբերյալ։

Որպես ժողովուրդների բարեկամության համոզված կողմնակից Արծրունին հանդես էր գալիս ինչպես մեծապետական տենդենցների դեմ ազգային հարցում, այնպես էլ ազգային սահմանափակության ու սնապարծության դեմ։ Բանավիճակով «Кавказ» և «Голос» թերթերի թղթակիցների հետ, որոնք կարծում էին, թե փոքր ժողովուրդների լեզուները ապագա շունեն և նրանք անխուսափելիորեն պետք է վերանան, Արծրունին գրում էր, որ ազգության անհրաժեշտ նախապայմանը լեզուն է, և որ առանց նրա չի կարող լինել ազգությունը։ «Յուրաքանչյուր ազգ, նկատում էր նա, մարդկության մի կարևոր մասն է կազմում։ Մարդկության բոլոր մասերը, բոլոր անդամները պիտի առաջադիմեն՝ զարգացնելով իրենց առանձնահատուկ ընդունակությունները։ Բայց ինչպես կարող է մի ազգ ինքնուրույնաբար առաջ գնալ, եթե կորցնի իր լեզուն, կամ ուրիշ խոսքերով՝ կուպան իրան... Մի ազգ մոռանալով իր մայրենի լեզուն կորցնում է իր բնական միջոցներից մեկը, որեմն կպակասի, կնվազի նրա բնական զարգացման, նորա անհատական հատկությունների, նորա ինքնուրույնության, որեմն նորա՝ հասարակաց օգտի համար արդյունաբերության ուժը»։

«Մշակ» խմբագիրը լավ հասկանում էր մեծ ժողովուրդների լեզուների նշանակությունը մարդկային ընդհանուր զարգացման համար։ Խոսելով աուսերեն լեզվի կարևորության մասին նա գտնում էր անհրաժեշտ, որ աուսական կայսրության մեջ ընդգրկված բոլոր ժողովուրդները, մասնավորապես նրանց մտավորականությունը պետք է իմանան աուսերեն։

Արծրունին միաժամանակ խոսում էր ազգային սնապարծության վնասակարության մասին։ Ինչ կատարվի, ասում էր նա, եթե երկրան ծնողից միշտ լսի այն մասին, թե նրա նախորդներն եղել են երևելի մարդիկ, ունեցել են մեծ փառք, թե անցյալը եղել է փառուն ու անթերի։ Կատարվի այն, որ երեխան կիրթվի, կհարտանա, սկորած անցյալի ցնորքների ետեվից ընկնելով, նա միշտ չի ունենա ներկան բնակչու, նա չի նկատի իր ներկայի պակասությունները ու իր դրուժյան ընկալությունը, նա կմեծանա սարսփելի ինքնահավանության մեջ։ Հետևանքը կլինի մտավոր ու բարոյական անշարժություն։ Հարկավոր է, կորակացնում էր Արծրունին, բնական (բնագրատական) մոտեցում ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի նկատմամբ։

Գրիգոր Արծրունու հրատարակատեսական գործունեությունը ավելի խորացավ 1870-ական թթ. վերջերին։ Այդ ժամանակաշրջանում, ինչպես հայտնի է, լայն ծավալ ստացավ ազգային-ազատագրական շարժումը օսմանյան կայսրության մեջ։ 1875 թ. արսաստանություն սկսվեց Բուսնիայում ու Հերցեգովինայում, 1876 թ.՝ Բուլղարիայում, այդ նույն ժամանակ սկսվեց սերբ-թուրքական պատերազմը, 1877—1878 թթ. տեղի ունեցավ առաջին թուրքական պատերազմը, խիստ սրվեց Արևելյան հարցը, Սան-Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի պայմանագրերով ձևավորվեց Հայկական հարցը։ Ըմբռնելով ժամանակի պահանջները, Արծրունին համարձակորեն առաջ քաշեց բազմաշարժար արևմտահայերի հարցը, կոչ անելով նրանց հետևել սլավոնական ժողովուրդների օրինակին և ազատագրվել սուլթանական բռնապետության ծանր լծից։ Դեռևս 1876 թ. «Մշակը» «Միթե այժմ հայերի հերթը չէ» առաջնորդող հոդվածում, խոսելով բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի մասին, ասում էր թե արևմտահայերը նույնպես պետք է դենքի գիմեն։ Հաջորդ տարին ևս Արծրունին գրում էր, թե մենք այն համոզման ենք մնում, որ «Թուրքաց տերության պես վայրենի, բարբարոս տերությունից մարդկային իրավունքներ պահանջելու համար ուրիշ ճանապարհ չկա, եթե ոչ զենքը ձեռքին արյուն թափելով»։

Կողմնակից լինելով ազատամարտական գործելակերպին Արծրունին խիստ հարձակումներ էր գործում բոլոր նրանց դեմ, ովքեր դեմ էին հայ ազատագրական շարժմանը և քարոզում էին հավատարիմ մնալ սուլթանական կառավարությանը։ Այդ ոգով նա հանդես եկավ արևմտահայ կղերականության, արևմտահայ և արևելյան հետադիմ մամուլի, այդ թվում Քրիլիսիում հրատարակվող «Մեղու» և «Փոքր» հանդեսների դեմ։ Քննադատելով Կ. Պոլսի հայ լիբերալ բուրժուական հոսանքի ներկայացուցիչներին, որոնք իրենց ամբողջ հույսը կապում էին արևմտահայ այսպես կոչված «սահմանադրության» հետ, Արծրունին գրում էր, թե այդ «սահմանադրությունը» օգային մի ամբողջ է, որ նա ժամանակ է պաշտպանել հայերին տերության կամալականության և բարբարոսության դեմ, անզոր է պաշտպանել թուրքարենակ հայի ամենաանհրաժեշտ, անբռնարարելի մարդկային իրավունքը։

Ինչ սպասելիքներ ուներ Արծրունին նա կարծում էր, որ ստեղծվել են բարենպաստ պայմաններ, որպեսզի Արևմտյան Հայաստանը բալկանյան երկրների նման ազատագրվի օսմանյան տիրապետությունից և դառնա անկախ պետություն։ Դա, իհարկե, կլինեք հարցի լուծման լավագույն ելքը։ Սակայն, շարունակում էր նա, եթե այդ չհաջողվի, ապա պետք է ձգտել նրան, որ Արևմտյան Հայաստանը միացվի Ռուսաստանին, կամ թե ստանա ինքնավարություն նրա հովանու տակ։

«Մշակ» խմբագիրը լավ գիտեր, որ Արևմտյան Եվրոպան և մասնավորապես Անգլիան պաշտպանում են թուրքական պետությանը, ուստի ամբողջ հույսը պետք է դնել Ռուսաստանի վրա։ «Արևմտյան Եվրոպան, գրում էր Արծրունին, սկսած խաչակիր պատերազմներից, միշտ ծառայեցրել է իր օգուտներին արևելյան ազգերը... Այժմ, երբ որ հայերը կարող են Եվրոպայի օգնությունը, ոչ մի եվրոպական պետություն չի օգնի նրանց։ Միակ պետությունը, որի վրա հայերը կարող են հույս դնել — այդ Ռուսաստանն է»։

Բաճիկ, Ռ. Պատկանյանի հետ միասին, Արծրունին 1870-ական թթ. լայնորեն տարածել է ազգային-ազատագրական շարժման գաղափարները հայ իրականության մեջ։ Նա մեծ հեղինակություն և համբավ ձեռք բերեց հատկապես հայրենասեր երիտասարդության շրջանում։

Արծրունու հրատարակատեսական գործունեության մեջ, սակայն, զգալի բեկում կատարվեց 1880-ական թթ. սկզբներին, բեկում, որ կապված էր Հայկական հարցի շուրջը ստեղծված միջազգային նոր իրադրության հետ։ Այդ տարիներին արդեն միանգամայն ակնհայտ դարձավ այն փաստը, որ Բեռլինի կոնգրեսին մասնակցած Եվրոպական պետություններից ոչ մեկը նպատակ չունի գործնական բալլեր կատարել Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ իրագործելու ուղղությամբ։ Ցարական կառավարությունը, որի արտաքին քաղաքականությունը մեջ տեղի

ունեցան շուրջ փոփոխություններ, պատահիլ դիրք ըսնեց Հաջկական հարցում և գաղարեց հո- վանավորել արևմտահայ աղատագրական շարժումը: Օգտվելով մեծ տերությունների միջև եղած հակասություններից օսմանյան կառավարությունը անտեսեց Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդ- վածը և շարունակեց իր հայահալած քաղաքականությունը:

Այս բոլորը, իհարկե, չէր կարող հուսալքություն ալիք շառաջացնել հայության լայն խավերում և իր ազդեցությունը շունենայ նաև Գրիգոր Արծրունու վրա, մանավանդ, որ 1881 թ. մարտից հետո ցարիզմի սեփական քաղաքականությունը ուժեղացավ Ռուսաստանի նաև ներքին կյանքում: Եթե 1870-ական թթ. վերջերին անվանի հրապարակախոսը համարձակորեն գրում էր Հայկական հարցի մասին, կոչ էր անում արևմտահայությանը դիմել ինքնապաշտպանական կոիվների, առաջ էր քաշում քաղաքական շուրջ արմատական խնդիրներ, ապա այժմ, 1882— 1883 թթ. սկսած նա իր գրիչը նորից նվիրեց հասարակական խաղաղ զարգացման, Հայաս- տանի ու Անդրկովկասի տնտեսական ու մշակութային զարգացման, զանազան բարեգործական և կրթական առիթներով ընկերություններ ստեղծելու, եկեղեցական, կանանց դաստիարակություն, դպրո- ցական և նման կարգի խնդիրներին: Ընդհատ է, մի քանի անգամ «Մշակի» խմբագիրն անգրա- դարձավ Արևմտյան Հայաստանին, բայց այժմ արդեն խոսվում էր այնտեղ տիրող սովի, հայ դուրսացիության դաղթի, Կ. Պոլսի հայ մտավորականության և նման կարգի այլ հարցերի մա- սին: Արծրունու գործունեության այս նոր տեղեկեցը, շարունակվեց նաև հետագայում, մինչև հրապարակախոսի վերջին օրերը: Ակհայտ էր, որ Արծրունին արմատական, բուրժուադեմո- կրատական դիրքերից, որոնց վրա նա կանգնած էր 1870-ական թթ., սահեց բուրժուական լիբերալների դիրքերը: Սակայն մի բան մնաց անփոփոխ՝ «Մշակի» խմբագիրը այս ժամանա- կաշրջանում ևս անխնա թողադրած էր անում ազգազայնացած հայ մեծատուններին, խավա- բամիտ և թուրքոֆիլ բոլոր տարրերին:

Իր ժամալուծն աշխատության մեջ Լեոն իրավամբ նշում է այն իրողությունը, որ Գրիգոր Արծրունին լայն ժողովրդականություն էր վայելում ոչ միայն իր հայրենակիցների (արևելա- հայերի ու արևմտահայերի), այլև Անդրկովկասի բազմազգ եղբայրական ժողովուրդների մեջ: Որպես ականատես նկարագրելով Արծրունու թաղման հանդեսը, որը տեղի ունեցավ Քրիլի- սիում 1892 թ. դեկտեմբերի 27-ին, պատմաբանը ընդգծում է, որ ռախոսանքը, վշտակցու- թյունը, երկրպագությունը ընդհանուր էր, առանց դավանության, լեզվի և ազգության խտրու- թյան: Պատգամավոր էր եկել Երևանի թուրք (աղբրեջանական) հասարակության կողմից: Քուլայիսի հայոց եկեղեցում կատարված հոգեհանգստին ներկա էին վրաց ինտելիգենցիայի և ազնվականության ներկայացուցիչները, իսկ Քիֆիսի վրաց մամուլը հատուկ պատգամավորներ ունեն թաղման ժամանակ: Հուղարկավորությանը մասնակցել է 40—50 հազար մարդ, այդ թվում Քրիլիսիում ընակվող հասարակ ժողովուրդը՝ հայերը, վրացիները, աղբրեջանցիները, ռուսները և այլք: Այսպիսի բան, նկատում է Լեոն, երբեք չէր եղել վրաց մայրաքաղաքի պատ- մության մեջ: Հետաքրքիր է նկատել, որ ամբողջ թաղման հանդեսի ժամանակ Արծրունու դագաղը իրենց ձեռքերի վրա էին տանում արևմտահայ մշակները: Ավելի բան 400 հեռագրեր են ստացվել Կ. Պոլսից, Ռուսաստանից և արտասահմանից: Խոր վիշտ արտահայտեցին և բարձր գնահատական տվեցին Արծրունու հասարակական գործունեությանը տարբեր քաղաքներում և տարբեր լեզուներով լույս տեսնող ռազմաթիվ լրագրեր ու հանդեսներ: «Մահը, գրել է Լեոն, կյանքի բոլոր խավերի միջից հանեց, մի տեղ հավաքեց և հրապարակ բերեց այն ահագին ժո- ղովրդականությունը, այն մեծ հուշակր, որ Գրիգոր Արծրունին քսան տարիների ընթացքում նվաճել էր քայլ առ քայլ, դառն մրցությունների, անհողողող կամքի և խոր, պողպատե համոզ- մանի միջոցով»:

Գրիգոր Արծրունուն նվիրված Լեոնի եռահատոր աշխատության մեջ հանգամանորեն լու- սարանված են «Մշակի» հաշակավոր խմբագրի կյանքը, հրապարակախոսական եռանդուն գոր- ծունեությունը, լուսարանված են, ընդհանուր առմամբ հաջող ու ճիշտ դիրքերից: Սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ կարելի է համաձայնվել անվանի պատմաբանի եզրահանգումների ու խորհրդածությունների հետ: Ուշադիր ընթերցողը, օրինակ, չի կարող չտեսնել, որ գրքի հեղինակը իդեալականացնում է Արծրունուն, երբեմն տալով նրան ոչ ճիշտ գնահատականներ: Արծրունին, իրոր իր ժամանակի ականավոր հայ դործիչներից մեկն էր, որ ղգալի շարժով օժանդակեց հայու- թյան ազգային կոնստիտուցիային, ազգային դարձնեցին, հայ հասարակական-քաղաքական կյան- քի, մարի ու մշակութի զարգացմանը: Բայց ասել, թե «Գրիգոր Արծրունին առաջին մեծությունն է հայկական հրապարակախոսության ասպարեղում սկզբից մինչև այսօր», և որ նա ժամալուծն է ճիշտ արտահայտել է այն ամենը, ինչ այժմ կամ այսուհետև համարվում է և պիտի համարվի իրեն ճշմարիտ ճանապարհ դեպի քաղաքական և սոցիալական երջանկություն, իհարկե՝ ճիշտ չէ:

Լեոն մտածում է այնպիսի փայլուն դեմքերին, ինչպիսիք էին Միքայել Նալբանդյանը, Ստեփանոս Լազարյանը, գրողներ-հրապարակախոսներ Ռաֆայել Պատկանյանը, Ռաֆֆին, որոնց մասին, ի դեպ խոր հարգանքով է խոսում ինքը՝ Արծրունին: Նկատենք նաև, որ պատմաբանը որոշ դեպքերում կարծեք թե խուսափում է խոսել իր ուսուցչի՝ «Մշակի» անվանի խմբագրի սխալ տեսակետների մասին:

Արծրունին մի շարք հոգիվածներում արտահայտել է խիստ բացասական տեսակետներ իր ժամանակի հայ հասարակության վերաբերյալ: Երբեմն նա իր հայրենակիցներին առանց վերա- պահումների որակում է ստրուկներ, բթամիտ տգետներ, անհոգ ու անտարբեր մարդիկ, եսա- մոլներ, նյութապաշտներ, ազգի թշնամիներ և այլն և այլն: Ինչով բացատրել այս հանգ- մանքը: Լեոն գրում է. «Մենք շարունակ տեսնում ենք Արծրունուն հարձակվելիս, մտրակելիս, տեսնում ենք, որ նա իր շուրջը վատություն, ապականություն է միայն գտնում... Բայց կար- դալով Արծրունու ամենախիտա, անողորմ, նույնիսկ շահազանցության էլ հասցրած հարձա- կումները, յուրաքանչյուր ազնիվ մարդ կըմբռնե, որ այդ շանթահարող տողերի միջից երևում է սիրող սիրտը, մի մարդ, որ ուզում է իր ազգի բարեբախտությունը, բայց կրակոտ է, ան- համբեր է, միշտ անքաղաքան և ուզում է միանգամից կերպարանափոխվի այդ ազգը, հսկա- լական քայլերով առաջ դնալ»:

Լեոն, իհարկե, ճիշտ էր: Պատահական չէ, որ Արծրունին հարկ եղած ժամանակ պաշտ- պանության տակ էր առնում իր ժողովուրդը օտարերկրյա հեղինակների անհարկի հարձակում- ներից: Սակայն, ավելորդ չենք համարում նկատել, որ ինքը Լեոն, խոսելով արևմտահայերի մասին, թույլ էր տալիս նույն կարգի սխալ, որակելով նրանց որպես բթացած, անզգայացած ժողովուրդ: Այն ժամանակ, երբ Բաղկաններում բռնկվել էին հակասութանական շարժումներ, արևմտահայերը սլուռ ու մոռն չուսած էին իրենց տեղերում,— գրում էր մեր պատմաբանը.

Մեղադրանքն, իհարկե, անարդարացի էր: Ինչպես կարելի է անտեսել, օրինակ, զեյթուն- ցիների 1862 թ. հերոսական պայտամբությունը, Մուշ և Զար Սանչակ գավառների հայ գյու- ղացիական ելույթները 1863 և 1865 թթ., վանում գործող «Միություն և փրկություն» գաղտնի կազմակերպության գործունեությունը, հայերի մասնակցությունը ռուս-թուրքական պատերազ- մին, զեյթունցիների նոր զինված ելույթը 1878 թ. և այլն:

Իր աշխատության առաջին հատորում Լեոն վկայակոչելով Արծրունու հիշողությունները, ի միջի այլոց պատմում է, որ քսանամյա Արծրունին մի անգամ հանդիպում է ունեցել ծանր հիվանդ, իր կյանքի վերջին ամիսները ապրող Միքայել Նալբանդյանի հետ, և խոսակցության ժամանակ հայտնել է, թե ինքը պատվորություն ունի զբաղվել հրապարակախոսությամբ: Նալ- բանդյանը հավանություն է տվել այդ մտադրությանը և այնուհետև իր թե բացատրելով իր գլուխն եկած փորձանքների պատճառը, Նալբանդյանը խորհուրդ է տալիս Արծրունուն գործել բացարձակ, «օրինական ճանապարհի վրա, հեռու մնալ ռուս հեղափոխական գործիչներից»: Հայ մեծ հեղափոխական զեմախրատի փայլուն կյանքն ու գործունեությունը, նրա սկզբունքա- նությունը, հերոսական, անձնվիր պայքարը ցարական բռնապետության դեմ վճռականորեն հեր- քում են ուշ ժամանակներում հայ լիբերալների խոհանոցում ստեղծված այդ կեղծ, սնամեջ հեքիաթը:

Լեոնի աշխատության թերություններից մեկը պետք է համարել այն, որ նրանում ըստ հարկին չեն քննարկված Գրիգոր Արծրունու թվով ոչ քիչ գրաքննադատական հոգիվածները, որոնցում արտահայտված են հեղինակի դեմոկրատական, պրոգրեսիվ հայացքները գրականու- թյան և արվեստի դերի մասին հասարակության առաջընթացի գործում: Ընդհանուր առմամբ Արծրունին պաշտպանում էր գրականության ահալիստական ուղղությունը և ջերմությամբ էր խոսում ռուսական գասական գրողների մասին:

Բարձր գնահատելով Ռաֆայել Պատկանյանի հայրենասիրական պոեզիան, Լեոն գրել է. «Գամառ-Քաթիպան Արծրունուց հետո առաջինն էր, որ ռուսահայերի մեջ սկսեց ձայն բարձրաց- նել թուրքաց Հայաստանի ժողովրդի մասին»: Զի կարելի համաձայնել այս մտքի հետ: Պատ- կանյանը արևմտահայերի ծանր վիճակի և նրանց աղատագրական շարժման անհրաժեշտության մասին գրել է Արծրունուց առաջ, դեռևս 1850-ական թթ. վերջերին և 1860-ական թթ. սկզբ- ներին:

Ինչպես Արծրունին իր ժամանակ, այնպես էլ Լեոն ներկա աշխատության մեջ խոսելով Հայկական հարցի մասին, մի քանի անգամ հիշատակում է անգլիական հայտնի պետական գործիչ Վադստոնին, համարելով նրան անվանի մարդասեր, «ճնշված ժողովուրդների բարեկամ» և այլն: Անգլիական լիբերալ կուսակցության այդ ղեկավարը, ճիշտ է, հանդես է եկել շարդա-

րար սուլթան Աբդուլ Համիդի դեմ, որն էլ ի պաշտպանութուն բուլղարներին ու հայերին, քննադատել է անգլիական կառավարության թուրքոֆիլ քաղաքականությունը, քայքայ քննող է, որ երբ նա անցավ իշխանություն գլուխ, «մոռացավ» իր մարդասիրական կոչերը և գուրս չեկավ բուրժուական երկերեանի դիվանագիտության սահմաններին:

Մի շարք առիթներով Լեոն շարագրում է Գրիգոր Արծրունու անսովորական քրիստոնեական կրոնի սկզբունքներին, նրա դերին ու նշանակության մասին: Բայց հեղինակը առանց քննադատության է թողնում այդ անսովորականը, որոնք իրենց վրա կրելով գերմանական իդեալիստական փիլիսոփայության որոշակի ազդեցությունը, սխալ են:

Իր աշխատության մեջ Լեոն բերում է Լոնդոնի «Թայմս» լրագրի հաջորդումը սուլթան Աբդուլ Համիդի և արևմտահայության պատրիարք Ներսես Վարժապետյանի հանդիպման մասին, որը տեղի է ունեցել 1877 թ. օգոստոսի 22-ին սուլթանի Կ. Պոլսի պալատում: Անգլիական թերթի թղթակիցը գործը պատկերացնում է այնպես, որ իբր Աբդուլ Համիդը հավատացրել է պատրիարքին, թե ինքը հայ ժողովրդի ամենազեմ պաշտպանն ու բարեխոսն է: Մեր պատմաբանը հարկ չի համարել մերկայցնել ո՛չ «Թայմսի» թուրքոֆիլ թղթակցին, և ո՛չ էլ դաժան ու արյունարբու սուլթանին, որի խարդախությունը և ստախոսությունը չէր անաչում ոչ մի սահման: Մինչդեռ հարկ էր ընդգծել արև հանդամանը, որ զաշանաբար ու խարդախ սուլթանը առերես ցավակցում էր հայերին, բայց իրականում կազմակերպում էր հայության մասսայական կոտորածներ:

Գրիգոր Արծրունուն նվիրված եռահատոր գործի մեջ խոսվում է ոչ միայն անվանի հրապարակախոսի կյանքի ու գործունեության, այլև 1860—1880-ական թթ. շատ հայ հասարակական գործիչներին, մշակույթի բնագավառում աշխատող նշանավոր գեներալներին, որոնց գնահատման հարցում ոչ բոլոր դեպքերում է, որ կարելի է համաձայնել Լեոնի հետ: Նույնը պետք է ասել նաև տվյալ ժամանակաշրջանի հայ հասարակական մշակութային կյանքի վերաբերյալ հեղինակի ունեցած մի շարք անսակնաների ու խորհրդածությունների մասին:

3.

Մերոպ Թաղիադյանը (1803—1858), ինչպես հայտնի է, ունեցել է բեղմնավոր գրիչ: XIX դարի առաջին կեսի հայ լուսավորական շարժման այդ նշանավոր գործիչը գրել է բանաստեղծություններ, գեղարվեստական արձակ երկեր, հրապարակախոսական հոդվածներ, պատմություն, դիցաբանություն և հայ ժողովրդական բանահյուսության հարցերին նվիրված ուսումնասիրություններ, հուշագրություններ, դասագրքեր, կատարել է թարգմանություններ և այլն: Մովսիս է հասարակական-քաղաքական լայն գործունեություն, նպատակ ունենալով տարածել իր ժամանակի հայության մեջ լուսավորական ու հայրենասիրական գաղափարներ, նպատակ հայ ժողովրդի ազգային դարձնելն ու միաբանությունը, նրա սոցիալական ու մշակութային կյանքի առաջադիմության գործին:

Թաղիադյանին նվիրված իր այս աշխատության մեջ Լեոն հանգամանորեն պատկերում է անվանի գրողի ու հրապարակախոսի դանձություններով լի ծանր կյանքը, նրա թափառումները Անդրկովկասում, Պարսկաստանում, Կ. Պոլսում, Հնդկաստանի տարբեր քաղաքներում, նրա գործունեությունը տարբեր բնագավառներում, հաջողություններն ու անհաջողությունները այն պայքարում, որ նա վարում էր հետադեմ, կղերկան ուժերի դեմ: Այնուհետև լուսաբանվում և արժեքավորվում են Թաղիադյանի գրեթե բոլոր աշխատություններն ու ստեղծագործությունները, նշվում նրանց ուժեղ և թույլ կողմերը, ընդ որում տրվում են ընդհանուր ամամբ ճիշտ գնահատականներ: Որպես գրող, նկատում է Լեոն, Թաղիադյանը ներկայացրել է «վերին աստիճանի ինքնուրույն և հետաքրքրական անհատականություն, իրրե մի անկախ գեմբ, որին տրված էին տիպիկ, բնորոշ և նույնիսկ բավական խոշոր գծեր: Նրա լեզուն, արտահայտության ձևը, տրամաբանության եղանակը միայն նրան էին տրված»:

Թաղիադյանի կյանքը, գործունեությունը և ստեղծագործությունը Լեոն պատկերել է պատմական անցքերի լայն ֆոնի վրա: Նա, օրինակ, բալամթիվ էջեր է նվիրել XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման հարցերին, որոնք զգալի շափով իրենց ազդեցություն են թողել Թաղիադյանի հարուստ ու բազմաբովանդակ ստեղծագործության վրա:

Լեոն իրավացիորեն գրում էր, թե XVIII դարում «հայության մեջ տեղի ունեցող ամենակարևոր երևույթը այն ազատագրական կուռ շարժումն էր, որի թատերաբեմն էր Գարաբաղի

(եռնաստան)»... Այդ շարժումը շափազանց կարևոր էր հայության համար, շափազանց մեծ պատասխանատվությամբ էր վարվում, բայց և շափազանց կղերկացած, մասնավոր մի երևույթ մնաց, Հայությանը ցուցադրում էր, որ շնայած ստրկության դարերին նա չի կորցրել իրրև ազատ աչք սայրելու զգացմունքը և այդ զգացմունքի համար արյուն թափել, կյանք զոհել նա լավ դիտել: Բայց միևնույն ժամանակ նա ցույց էր տալիս և այն, որ այդպիսի վեհ և նվիրական իրավունքի համար նա չի կարողանում մի ընդհանուր շարժում սկսել, չի կարողանում գինել իր բոլոր ուժերը: Ազատագրական շարժումը, թեև արդեն կես դարի պատմություն ուներ, չէր դառնում համազգային, փակված էր մի մասնավոր լեռնաստանում, ուր թողնված էր իր սեփական, ահաբալեն միջոցներին և այդ պատճառով էլ կամ հրդեհվում էր պայծառ լույսերով, կամ բնկնում էր, առկայծում մոխրների մեջ»:

Պատմաբանը խոսում է նաև հնդկահայ գաղութի (Մադրաս—Կալիկաթ) հայ հայրենասերների հասարակական-քաղաքական գործունեության մասին, ընդգծելով այն ճշմարտությունը, որ հենց այդ միջավայրում է, որ 1760—1780-ական թթ. արևմտյան երկրներում ծավալված լուսավորական շարժման ազդեցության տակ ձևավորվեց բուրժուադեմոկրատական լուսավորական գաղափարախոսությունը հայ իրականության մեջ: Վերլուծելով Մովսես Բաղրամյանի և Շահամիր Շահամիրյանի աշխատություններին (սեփա անտրակ, որ կոչի հորդորակ և «Ռոդոզաթ փաստ») արմատական գաղափարներն ուղղված ավատական կարգերի, բռնապետության և ստրկամտություն բարոզող կղերականության դեմ, Լեոն նկատում է, թե հենց այդ մարդկանց կողմից ստեղծված գրականությունն է, որ միանգամայն նոր կտապ բացեց մեր հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ: Մենք կարող ենք պարծենալ նրանով, որում էր պատմաբանը, որ հայ վաճառականների ձեռքով հայացան նվրոպական դեմոկրատական սկզբունքները ու կորթի, Մոսկովյանի, Գերմանի, Վոլտերի գաղափարները համարյա միաժամանակ էին հնչում նվրոպայում և այն դժբախտ ազգի մեջ, որ տանջվում էր Արևմտյան Ասիայի ամենաբարբարոս բռնակալությունների ձեռքին: Ի դեպ, ավելորդ չենք համարում նշել, որ Լեոն հարկ էլ զած շափով չի խոսում հայ ազատագրական շարժման ակննավոր գործիչ և դեմոկրատական գաղափարների համոզված ներկայացուցիչ Լուսինի էմինի մասին, որը հակառակ ազդեցություն է ունեցել ինչպես Մովսես Բաղրամյանի, այնպես էլ Շահամիր Շահամիրյանի և մյուսների վրա:

Լեոն ցույց է տվել Թաղիադյանի առաջավոր, լուսավորական հայացքները, նրա դերն ու նշանակությունը ազգային-հայրենասիրական նոր գրականություն, մամուլ ու նոր գրքոցներ ստեղծելու գործում, պայքարը ավատական կարգերի ու կղերական զոգմաների դեմ: Չի մոռացված նաև այն հանդամանը, որ անվանի գրողն ու հրապարակախոսը բարոզել է մտքեր, որոնց նպատակն է եղել պարսկական խաների լծից ազատագրված Հայաստանում իրագործել հայ ժողովրդի ազգային համախմբումը, առաջ մղել հայրենիքի անտեսական ու հասարակական կյանքի զարգացման պրոցեսը: Թաղիադյանը չեմոտրեն ողջունել է Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Իր պատմագիտական, մասնավորապես արևելագիտական, աշխատություններում նվիրված Արևելյան Հայաստանին, Պարսկաստանին և Հնդկաստանին, Թաղիադյանը հաջողությամբ նկարագրում է այդ երկրների աշխատավորության խիստ ծանր վիճակը և արևելյան բռնապետությունների անձարձակ ճնշումներն ու հարստահարությունները:

Այս բոլորի հետ մեկտեղ աշխատության հեղինակը իրավացիորեն նշել է նաև Թաղիադյանի գործունեության ու գաղափարների սահմանափակությունը, նրա ստեղծագործությունների թույլ կողմերը: Բնորոշ է, օրինակ, որ ինչպես ճիշտ կերպով գրել է Լեոն, Թաղիադյանը մինչև վերջ մեծազգաբար կողմնակից, չմբռնեց աշխարհաբար գրական լեզվի ստեղծման հակառակ նշանակությունը հայ գրականության և մշակույթի զարգացման գործում, չկարողացավ ամբողջությամբ ազատագրվել իդեալիստական սխալաստիկական գաղափարներից, որոշ դեպքերում նաև ազգային սնայարժույթայնը տուրք տվող մտքերից: Պատահական չէ, որ նրա ուսումնասիրություններից ոչ բոլորը ունեն գիտական արժեք, իսկ գեղարվեստական ստեղծագործությունների մի զգալի մասը պարզապես թույլ է, անկատար: Այս հանդամանքը, նկատում է Լեոն, պետք է բացատրել նրանով, որ հնդկահայերի միջավայրը, որ աշխատում ու ստեղծագործում էր Թաղիադյանը, որտեղ իշխում էր անգլիական «պահպանողական ազատամտությունը», իր վրա կրում էր հետամնացության կնիքը և չէր կարող նպատակ ավելի արմատական ու դեմոկրատական լուսավորության գաղափարների ստեղծմանը:

Լեոնի ներկա գործի արժանիքներից մեկը պետք է համարել այն, որ աշխատությունը գրված է հարուստ ու բազմաանուակ աղբյուրների հիման վրա: Հարկ է նշել, որ մի շարք արժեքավոր ձեռագրեր, որ իր ժամանակ օգտագործել է Լեոն, այսօր անծանոթ են մնում մեր օրերի հետազոտողների համար:

Մի քանի դիտողություններ հասելով Անդրկովկասում XIX դարի առաջին երեք տասնամյակներում հաստատված քաղաքական իրադարձությունների մասին, լեռն երբեմն գործ է ածում «Անդրկովկասյան նվաճումը» երբեմն էլ՝ «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին» արտահայտությունները: Ծիշար, իհարկե, վերջինն է:

Լեռն անշուշտ թույլ է տալիս կոպիտ սխալ, եթե գրում է թե Մեծ Թրիտանյան հաստատվելով իր տիրապետությունը Հնդկաստանում, այնտեղ «բաց է անում խաղաղ շինարարական աշխատանքի բեղմնավոր շրջան», որ իբր ուշաների հայրենիքը գերազանցորեն դաժնում է սեփրոպական քաղաքակրթության գաղութ, ուր ազգերը կարող էին գաստիարակվել արդեն նոր, ազատ, շինարար և ուժեղացնող ոգով: Հեղինակը, որ մի շարք առիթներով նորից խոսում է անգլիացիների նման քարեմասնություններով մասին, դարմանալիորին մոռանում է այն հանգամանքը, որ Անգլիան, իրականացնելով իր գաղութարարական, թաղանջիական քաղաքակրթությունը, երկար տարիներ շարունակ կողոպտում էր երկիրը, ժայթ բուստեման աղքատության հասցնելով հնդիկ և մյուս ժողովուրդներին: Հայտնի է, թե քանի-քանի անգամ այստեղ բռնկվել են անգլիական դաժան տիրապետության դեմ: Հետարքրի է նշել, որ ինքը, Մեսրոպ Թաղիադյանը, որին վիճակվեց երկար տարիներ անցկացնել Հնդկաստանում, ակառատեսի աչքերով պատկերել է անգլիացի գաղութարարների ճնշումները և հարաբերությունները, որոնց մասին նա, օրինակ, մի քանի անգամ հանգես է եկել «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան թերթերում»:

Ինչպես իր մի շարք այլ աշխատություններում, այնպես էլ այստեղ, Թաղիադյանին նմիրված ներկա գործում, լեռն գերազանցատում է աշխարհագրական ֆակտորի դերը: Ուսումնասիրության այն հատվածում, որ հեղինակը խորհրդածություններ է անում «հայր իբրև միջավայրի երևույթ» հարցի մասին, ասվում է, օրինակ, թե «մարդու հակասողին է լինել այն, ինչ նրան կարող են զարմանել նրա ոտի տակ հաստատված հողը և նրա գլխովը տարածված երկիրը», որ հայր օրպես ազգագրական-կուլտուրական տիպ այլ երևույթ է «Էլանի լճի գեղածիճաղ ասիերում, այլ երևույթ՝ Մուշի բարեբեր դաշտում, այլ երևույթ՝ Մասիսի շերժոտ և անպաշտպան ոտորտներում, այլ՝ Ղարաբաղի մշուշապատ լեռնալիք բավիղում և այլ՝ ջրերի մի անհուն շտեմարան ներկայացնող Բարձր Հայքի սարահարթներում»: Եթե հայերն անմիաբան ժողովուրդ են, ապա պատճառն այն է, որ «Հայաստանը լեռներով, կիրճերով օսատիկ կտրտված մի երկիր է»: Ինչպես տեսնում ենք լեռն այստեղ չի նկատել արտադրողական օժիրի ու արտադրական հարաբերությունների վճռական դերը ժողովուրդների զարգացման, էթնիկական ձևավորման ու ընդհանրապես նրանց այդպես ասված «ճակատագրի» դործում:

Թաղիադյանը ինչպես իր խմբագրած «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականներում, այնպես էլ մի շարք աշխատություններում ծավալել է հրապարակախոսական գործունեությունը: Լեռն, իհարկե, խոսում է նաև այդ մասին: Սակայն մեզ թվում է, որ նա ըստ արժանավայրի չի գնահատել գրողի վաստակն այդ քննադատումը: Պատմաբանը խոսելով, օրինակ, «Ազգասերի» մասին, որը լույս է տեսել Թաղիադյանի խմբագրությամբ չոթ տարի շարունակ (1845—1852 թթ.), գրել է թե այն անցել է աղքատ բովանդակություն) «Հատ թույլ քաղաքական բաժին, անկապ ու պատահական հոդվածներ և պատմություններ, կցկտուր հիշատակարաններ ազգային պատմությունից» և այլն) և որ նա «ոչ մի հետաքրքրություն չի ներկայացնում հրապարակախոսության տեսակետից»: Կարծում ենք, որ պատմաբանը այստեղ անարդարացի է: «Ազգասերում», զանազան նյութերի հետ միասին, հրապարակվել են նաև հայրենասիրական-ազգասիրական հոդվածներ, որոնցում կոչ է արվել պայքարել «հայրենյաց երջանկության», ազգային միաբանության, գիտության ու լուսավորության զարգացման համար: Պարբերականում տպագրվել են նաև հոդվածներ մանկավարժության հարցերի, երիտասարդության դաստիարակության, կնոջ ազատագրության, եկեղեցական ռեֆորմի մասին, թարգմանություններ Բայրոնից, Ֆիրդուսիից և այլ հեղինակներից: Ի դեպ, «Ազգասերում» անգլերենից թարգմանված է մի բանաստեղծություն, որը գրել է գեկարրիտներից մեկը բանտում եղած ժամանակ: Ամսագրում լույս են տեսել հոդվածներ ու ակնարկներ միապետական ընդհանրատուությունների, ավատական կարգերի, աշխատավորական խավերի անօրինակ հարստահարությունների, կղերականության, տգիտության ու սնտիապաշտության դեմ: Վերջապես չպետք է մոռանալ, որ Թաղիադյանը գրել է նաև Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս պետությունների գաղութային դաժան քաղաքականության մասին Հնդկաստանում, Ալժիրում, անգլիական ու ամերիկյան միսիոներների քայքայիչ, հակահայկական գործունեության վերաբերյալ Արևմտյան Հայաստանում և այլն:

«Ազգասեր» հանդեսն իր խնդիրն էր համարում հասկանալի լեզվով խոսել բարոյական, քաղաքական, պատմական, տնտեսական (վաճառականական) և «նման ազգագուտ գործերի

մասին», որը հոդվածներ ազգասիրական ոգով, ցույց տալ ազգի պակասություններն ու թերությունները: Եվ Թաղիադյանը աշխատում էր իրագործել այդ խնդիրները, որքան թույլ էին տալիս իր ուժերը և տեղի ու ժամանակի հնարավորությունները: «Ազգասերը» զգալի գեր է խաղացել XIX դարի հայ պարբերական մամուլի զարգացման մեջ: Պատահական չէ, որ Թաղիադյանի հասարակական գործունեությունը և գրական-մշակութային վաստակը բարձր է գնահատել Միքայիլ Նալբանդյանը, նշանավոր գրողին անվանելով «ուսումնական ազգասեր»:

Պատմաբանի աշխատության մեջ ասված է, որ Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» նշանավոր աշխատությունը, որտեղ զարգացված են հակաֆեոդալական, բուրժուազոմոկրատական առաջավոր գաղափարներ, լույս է տեսել, ինչպես նշված է գրքի վրա, 1773 թ.: Հետագայում կատարված ուսումնասիրությունները, օակայն, պարզեցին, որ այն հրապարակվել է 1870-ական թվականների կեսերին:

Կանց լուսնելով աշխատության երկրորդական կարգի մի շարք նման անհշտությունների և հետաքրքիր տարակարծություններ առաջացնող որոշ դրույթների վրա, մենք կցանկանայինք վերջում նշել այն հանգամանքը, որ Մեսրոպ Թաղիադյանին նվիրված լեռնի այս արժեքավոր ուսումնասիրությունը, որ տպագրվեց «Գործ» ամսագրում, բայց լույս չտեսավ առանձին գրքով, զարմանալի կերպով դուրս է մնացել մեր օրերում Թաղիադյանի մասին գրող հեղինակների տեսադաշտից:

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հատոր առաջին

Գլուխ առաջին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I

Նոր պատմական շրջան կովկասում: Ի՞նչ էր բերում նա. Ալեքսանդր I-ի հրովարտակը: Անցյալի ժառանգությունը: Հայերի և վրացիների մտավոր զրույթունը: Հայոց դպրոցները: Հայ հոգևորականությունը 7—10

II

Կրթության կարիք: Մուս կառավարության ձեռք առած միջոցները: Ազնվականների դպրոց Քիֆլիսում: Կովկասցի առաջին համալսարանականները: Ներսես Աշտարակեցիի Քիֆլիսում: Կրթական հոգսեր: Մխիթարյան միաբանության օրինակը: Հաղարյան դպրոց Մոսկվայում: Ներսիսյան դպրոց Քիֆլիսում: Այդ դպրոցների նպատակը և ուղղությունը 10—19

Գլուխ երկրորդ

ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ
(1812—1841)

I

Խոյեցի Տեր-Եսային: Ստեփանոսի բնավորությունը: Ընտանիք և ընտանեկան կրթությունը: Նազարյանցը Ներսիսյան դպրոցում: Խաչատուր Աբովյանցի հետ մտերմանալը: Ի՞նչ ավեց դպրոցը: Պրոֆեսոր Պարրոտ: Աբովյանցը ճանապարհ է բաց անում Ղեպի գերմանական համալսարան: Նազարյանցը՝ Ներսիսյան դպրոցից ղուրս գալուց հետո: Դեպի Դոբոլատ 19—27

II

«Նոր իմացական մկրտության ավազանը»: Առաջին կրթարանը— գերմանական ընտանիք: Աբովյանցը իբրև նոր, կուլտուրական մարդ: Նազարյանցը համալսարանում: Գերմանական համալսարանը. նրա ազդեցությունը Ռուսաստանի վրա: Գրական և հասարակական բուռն հոսանքներ Գերմանիայում: Փիլիսոփայության կանոնի դատը: Ինչպե՞ս մտնել կյանքի մեջ: Պատրաստություններ Պետերբուրգում: Աբովյանցը և Նազարյանցը տեղ չունին հայկական իրականության մեջ 27—30

Գլուխ երրորդ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ
(1843—1858)

I

Ի՞նչ էր սպասում ուսում առած երիտասարդներին: Աբովյանցի իղձերը. նրա նամակը Հովհաննես կաթողիկոսին: Ինչպե՞ս ընդունեցին նրան հայրենիքում. խա-

վարամիտ ֆանատիկոսություն: Նազարյանցը Պետերբուրգում. նա տեղ չէ գտնում: Արևելյան լեզուների ուսումնասիրություն: Պաշտոն Կազանի համալսարանում: Ցանկություն գործելու հայերի մեջ. դիմումն ներսես կաթողիկոսին: Առաջին մատենադրական փորձեր

40—47

II

Հայոց գրականության պատմության երկրորդ մասը. Այդ աշխատության արժանավորությունները: Նազարյանցի քննադատությունը. անցյալը, Մխիթարյաններ, ներկան: Նոր ժամանակի պահանջները: Նոր լեզվի անհրաժեշտությունը: Ի՞նչ պիտի լինի գրականությունը հայերի համար: Մազիստրոսի աստիճան: Գրքի թողած տպավորությունը

47—60

III

Նոր դիվերտացիա: Ֆիրդուսի և պարսկական բանաստեղծության ուսումնասիրությունը: Պրոֆեսորական պաշտոն Հազարյան ճեմարանում: Մոսկովյան հոգեբանություն: «Վարդապետարան կրոնի»: «Առաջին հոգեգծի կերակուր»: «Հանդես նոր հայախոսության»: «Գլուխտան»: «Պավլոս և Վիրգինիա»

60—79

Հատուկ երկրորդ

Գլուխ չորրորդ

Պատկերներ

80

«ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻ» ԵՐԱՆԸ

(1858—1865)

I

Վաթուհական թվականների շրջանը: Մտավոր գործունեություն ուսանողի մեջ: Հայ երիտասարդություն. Նազարյանցը այդ երիտասարդության ներկայացուցիչ: Հայերեն ամսագրի պահանջ. «Հիսուսափայլ»: Առաջին հայտարարություն: Հասարակության վերաբերմունքը դեպի նոր ամսագիրը: Թիֆլիս. թշնամություն Նազարյանցի դեմ. «Մեղու Հայաստանի»: Դժվար դրություն. դիմումն Կովկասյան փոխարքային «Հյուսիսափայլը» իբրև նոր սերունդի բերան: Ի՞նչ էր նա բերում: Աշխատակիցներ. հակառակորդներ

81—87

II

«Հյուսիսափայլի» հրատարակատեղությունը: Սրա հատկությունները: Կյանքը և «Հիսուսափայլը»: Նազարյանցի վերաբերմունքը ժամանակակից դեպքերին: Դատարակական ձգտումը մոռացնել է տալիս չափը: Հրատարակական հարցեր: Հրատարակատեղական կրիտիկա: Կոմս Էմմանուել: Նրա «Հիշատակարանները»: Դրանց նշանակությունը «Հյուսիսափայլի» համար: Առաջին տարի

88—102

III

Երկրորդ տարվա հաջողությունները: Խոչընդոտներ: «Հայերի կոշտը մարդկության մեջ»: Կրոն և ազգություն: Էջմիածնի դերը: Հայկական թատրոն: Հասարակական կյանք ըկա: Հայ վաճառականի տիպը: Մատթեոս կաթողիկոսի հաստատությունը և ճանապարհորդությունը: «Մտածող հայերի հուշերը»: Մատթեոսի բնավորությունը: Բողոքականությունը Շամախում: 1860-ի առաջին հոգեվածը. փոփոխված հայացք: Արշավանք կղերականության դեմ: «Հյուսիսափայլի» երրորդ տարին: Լայն ծրագիր. Նազարյանցը օգնություն է խնդրում: Աշխատակիցներ. Հակոբ Մելիք Հակոբյան: Նորից հայոց պատմության փորձ և «Թարգմանիչների դարը»

102—113

IV

Խոսվություններ Կ. Պոլսում մի բողոքական հայի պատճառով: «Հյուսիսափայլի» 10-րդ տետրակը: Թեֆլիսում հայոց եկեղեցու համար: Թշնամությունը բորբոքվում է: Նազարյանցի հակառակորդները: Հովսեփ Զերբեղյան: Մտեր հակառակորդի տիպ: Զերբեղյանի դիմումը հայոց կաթողիկոսին: Նազարյանցի պատասխանը: Մատթեոսի

վերաբերումները: Միևուրի վճիռը: Նազարյանցին պաշտպանում է զրաբնական աստվածը: Պետերբուրգի հայերի բողոքը: Պատասխան «Կառնկին»: Նալբանդյանցի բացատրությունը: Նոր էսանդ և Նազարյանցի պահանջը հասարակությունից: Բարբաբոսական շեպր Շամախում

113—130

V

Կյանքի փորձը: Չկա գրականությունն առանց դպրոցների: Նազարյանցի մասնավոր գիտնական և գործնական դպրոցը: Հրավեր հայ ծնողներին, բայց անպատու: Զերբեղյանի նոր ստորությունը: Նազարյանցի բաց նամակը: Երկու տիպեր մամուլի գործիչների մեջ: Անբարեխղճությունը արհամարհված: Դիմում հասարակական դատաստանին: Չկա այդ դատարանը: «Հյուսիսափայլի» դրությունը: Պահանջներ հասարակությանից, դարձյալ ապարդյուն: Բարեգործական ընկերության ծրագիր: Հասարակական գործակցության գաղափարը: «Հյուսիսափայլի» առաջարկության անմիջական հետևանքները: Ընկերություններ Բաքվում և Նոր Նախիջևանում

130—141

VI

Անհաջողության տարի մեր մամուլի համար: Նազարյանցի հայտարարությունը «Հյուսիսափայլի» դողարեցման մասին: Դադարման պատճառները: Դրանք միայն արհեստական չեն: Մյուս պարբերական հրատարակությունների վիճակը: Նազարյանցի վերջին ցանկությունները: «Հյուսիսափայլի» վերակենդանանալը: Կ. Պոլսի «Մեղու» հոդվածը: Թիֆլիսի «Մեղուն»: Պահպանողական նոր սերունդը հաշտված Նազարյանցի հետ

141—146

VII

Վերջին տարին. Անհատական ձեռնարկություն և ժողովրդական ընդհանուր գործակցության գաղափար: «Հյուսիսափայլի» ուղղությունը: «Ազգային մտածությունը»: Դարձյալ լեզվի, կրթության, դպրոցական կազմակերպության հարցեր: Դրական կտակ: «Ազգային թշվառություն»: Կ. Պոլսը, սահմանադրությունը, արդարությունը: Երկրորդ կիսամյակ, մահվան նշաններ: Երկրի «Կասանդրան» իբրև «Հյուսիսափայլի» վերջարան: Վերջին հառաչանք: Աշխատակիցներ հրատարակատեղական բաժնում: Հակոբ Մելիք-Հակոբյան. «Աղթամար կղզին»: Միբայել Միանսարյան. դպրոցական սահմանադրություն, ժողովրդական կրթություն, մանկավարժական հարցեր

146—155

VIII

«Հյուսիսափայլը» իբրև գրական ամսագիր: 1. Թարգմանական գրականություն: Նազարյանցի մասնակցությունը. տարօրինակություններ ընտրության մեջ: Կիկերոն, ներսես Լամբրոնացի, Բոզլի, Եվրոպական գլուխգործոցներ. Երկրի, Շատոբրիան, Քաղերոն, Ալֆիերի: Թարգմանիչ աշխատակիցներ. Նալբանդյանց, Համախյուռ, Ռաֆայել Պատկանյան, Գեորգ Բարխուդարյան, Մանուկ Սաղաթյան: 2. Ինքնուրույն գրականություն: Վեպ. «Մեռելահարցուկ» Նալբանդյանցի, «Տեր Սարգիս Գ. Տեր-Հովհաննիսյանցի» Թատերագրություն. «Հայոց ազգի լուսավորիչը», Ա. Սուլթան-Շահի: Բանաստեղծություն, Նալբանդյանց, Բեստեն, Սմբատ Շահազիզ, Գ. Բարխուդարյան: Եղբակցություններ

156—172

Գլուխ հինգերորդ

«ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻ» ՀԵՏՈ

(1865—1879)

I

Հրածեղ գրականության Գործունեության նոր ասպարեզ: Չլարացիների նամակը: Նազարյանցի ցանկությունները: Ծանապարհորդություն դեպի Թիֆլիս: Գեորգ կաթողիկոսը Մոսկովյում: Ընտանեկան դժբախտություն: «Լապտեր Հայաստանի»: Նազարյանցը Թիֆլիսում: Թիֆլիսը իբրև հայաբնակ քաղաք: Ներսիսյան դպրոց: Բարեկարգություններ և հիասթափումներ: Վերադարձ Մոսկովա

172—183

Տեսչական պաշտոն ներսխյան դպրոցում: Քիֆիսը, նրա թողած ապավորու-
թյունը: Նազարյանցը չէ կարողանում գործել: Ի՞նչ էր նրա տեսչությունը դպրոցի
համար: 1869-ի դպրոցական հանդեսը: Գծագրություններ: Նազարյանցի կազմած դա-
սադիրքը: Հրատեղի Քիֆիսին, վերադարձ Մոսկվա: Գրական ծրագիր: Վերջին գր-
վածք: Ընդհանուր հարցում ղեկի նվրոպա: Գերմանիայի թողած ապավորությու-
նաբաններ: Նազարյանցի հիշատակը մեր գրականության մեջ: Վերջին խոսք 197—204

Գծեր Նազարյանցի բնավորությունից: Գնահատություն մասին հետո: Հոգե-
հանգիստներ: Գրիգոր Արծրունու հոգվածը: Երիցյանը նազարյանցը մասին: Պա-
տասխաններ: Նազարյանցի հիշատակը մեր գրականության մեջ: Վերջին խոսք 197—240

Հատոր առաջին

Գրիգոր Արծրունու անմահ հիշատակին 207

Գլուխ առաջին

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՎՄԸ

Գեորգ աղա Արծրունի Քիֆիս գաղթելու պատճառները: Վաղի իրականու-
թյունից: Տոհմադրություն: Գեորգ աղա և ներսխ Աշտարակեցի: Ընդհանուր հարցու-
թյուն: Նվրոպայում: Ամստերդամի տպարանը: Հակո՛՛ Շահան-Ջրպետ: Ներսեհի աք-
սորը, Արծրունու գործունեությունը: Երևույթուններ Քիֆիսում: Գեորգ աղայի բնա-
վորությունը: Գրասիրություն: Մահ 208—225

Երևմտյա Արծրունի: Հայրական կտակ, մայրական ժառանգություն: Յուզակ ծա-
ռայություն: Մոսկվայում բնակություն հաստատելը: Ընտանիք: Գրիգորի ծնունդը:
Կալվածական գործեր: Կարավանսարայի հրդեհ: Վերադարձ Քիֆիս: Երևարարա-
կան մեծ ձեռնարկություններ: գալիսերևա: Գառնատանական գործեր: Հասարակա-
կան գործունեություն: Ներսխյան դպրոց, Քիֆիսի քաղաքագլուխ: Երկաթուղի մինչև
Հնդկաստան: Երևմտյան բնավորությունը: Ընտանեկան կյանք: Երեխաների կրթու-
թյունը: Գրիգոր և Անդրեաս Արծրունիներ: Նրանց ուսումը Քիֆիսում 226—238

Գլուխ երկրորդ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ

(1864—1871)

Ժամանակը: Հայ ուսանողությունը Մոսկվայում և Պետերբուրգում: Գրիգոր
Արծրունու առաջին հոգվածները: Տեսակցություն Միքայել Նալբանդյանցի հետ: Հի-
վանդություն և ուղեորություն արտասահման: Նիցցա, շվեյցարական համալսարան-
ներ: Ինքնաձանաչություն: «Իմ խոստովանությունը»: Մի ուրիշ խոստովանու-
թյուն, կորած սեր, «Էվելինա»: Ինչպես էր Գրիգորը հասկանում հայ ուսանողի պար-
տավորությունները 238—252

Ս. Նազարյանցի նամակից: Գեղեցիկ սկսված, լուկ առաջաբան, Եարուկակոչը:
Հայ մամուլը Կովկասում. «Մեղու»: Երկու տեսակ կրթություն. համալսարանական
և Մխիթարյանների: Մուրադյան վարժարան: Մարկոս Աղաբեկյան և նրա «Կոունկը»:
Ազգայնամուլ ուղղություն: Ներսխյան դպրոց: Վերանորոգված «Մեղու»: Նոր խըմ-

բազրույթյան անկարողությունը: Նմուշներ: Հետադիմականի պատկերը, նկարված
«Մեղուի» ձեռքով: Ս. Ստեփանն և «Հայկական աշխարհ»: Ջանքեր և հետևանքներ:
Գավանանքներ, արժանավորություններ, պակասություններ: Թեֆլիսի ուղղադրության
մեջ: Այդ բեֆորմի անցյալը: «Վաճառական» լրագիր և «Գարուն» ամսագիր 252—280

Գրիգոր Արծրունու աշխատակցությունը «Մեղուին» և «Հայկական աշխար-
հին»: Հաստատ ուղղություն, ինչ, գրությունն և: Հայերեն լիզու: Անդրանիկ հոգված.
դաստիարակություն, կանանց հարց: Ստեփանեի վերաբերմունքը իր նոր աշխա-
տակցին: «Գեորգաստանի ազդեցություն և համալսարան»: «Բացված մարզ» հասկա-
ցողությունը: Ի՞նչ է դարգացումը: Խառն ուսումնարանների հարց: Ազատությունը
գարգացման հիմք: Գրական-հասարակական ցավեր: «Երկուսից ո՞րն է լավը»:
Գեղարվեստի նշանակությունը: «Գրականություն չկա»: Օգուտ, ժողովրդի դատը,
մտածող սեպուխտ: Մի հակաճառություն: Արծրունի և Պիսարև: Հասարակական կա-
ծիքի որոնումն. «Եարուկակե՛նք թե ոչ»: Տեսեսական հարցեր և կրթական ըն-
կերություն 280—323

Համակրական ցույցեր: Համալսարանական երիտասարդների ընթերց Քիֆ-
իսում: Վեցցեն Արծրունի եղբայրները: Գրական հակառակորդների հարցը: Բա-
րոյականությունը ո՞ւմ արտեսությունն է: Օր. Շուշանիկի նամակը: Ինչո՞ւ չկա հայ-
կական թատրոնը: Անհատների դերը: Հելյոթերգը՝ Աթենք: Փիլիսոփայության դոկ-
տորը: Արծրունին Փարիզում և Վիեննայում: Հայերենի դասեր: Վիեննայի Մխիթար-
յան վանքը: Ֆրանսիացու բնավորությունը: Հին և նոր սերունդ: Վենեցիայում:
Ս. Ղազար: Մերացած ազգ: Հ. Ալիշան: Կարելի՞ է սիրել հայ ժողովուրդը: «Մըա-
քեր հայտնելու իրավունքը»: Մեր երկրի հարստությունները: Հասարակական կրթու-
թյան գլխավոր գործոնը: Մամուլի պակասությունները: Քրիստոնեություն և մահմե-
դականություն, «Պուր ամ բոն բուլ» 323—351

Արծրունին Քիֆիսում: Տպավորություններ: Գործունեություն: Հոգվածներ
«Հայկական աշխարհում»: Արծրունու գերմանասիրությունը: Նապոլեոնի Ֆրանսիան
և հանրապետական Ֆրանսիան: «Աշխարհաբարի նորաձևությունների հասարակական
նշանակությունը»: Սառնություն Ստեփանեի և Արծրունու միջև: Արծրունին «Մե-
ղուի» աշխատակից: Հինգ հոգված: «Գիտական անսխալականություն»: «Ընթերցո-
ղը և գրողը»՝ միմյանց չմեղադրենք: Սունդուկյանցի «Պեպոն»: Հայի հատկանիշ-
ները: Առաջին թշնամություն Արծրունու դեմ: Եզրակացություններ Արծրունու գրա-
կան գործունեության առաջին շրջանի մասին 352—372

Հատոր երկրորդ

Գլուխ առաջին

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐ

«Նախապատրաստություններ» հմբագրություն եվրոպական մտքով. ժողովներ:
Գրիգոր Արծրունու հիշողություններից: Հակոբ Մելիք-Հակոբյան: Գրական երեկոներ.
գիպլոմավորներ և «ձկնորսներ»: Բաֆֆիի հիշողություններից: «Մշակի» առաջին
հայտարարությունը: Ի՞նչ է մշակը: Աշխատանքի փառաբանություն 373—380

Հայոց մամուլը 1871-ին. «Մեղու», «Արարատ»: «Մեղուի» օրհասը. նրա խոս-
տովանությունը, հառաչանքները: «Մշակը» դարագլուխ մեր մամուլի պատմության
մեջ: Միջավայր: Նազարյանց և Արծրունի. մի փոքրիկ համեմատություն: Ապահով-
ված խմբագիր: Երևմտյա Արծրունու վերաբերմունքը իր որդու գործին. «Հայերեն
գազեթ»: Լրագրի նյութական ապահովության հարցը: Աշխատանքի բաժանում. թըղ-
թակցություններ: հմբագրի veto-ն 381—391

Առաջին համարները: Առաջնորդող հոդված, շերեկ, այսօր և հըուց: Կոիվ հայ ինտելիգենցիայի դեմ: Անխնա քննադատութիւն. ո՞րն է մեր իդեալը: Անընդունակութեան հերոսներ: Պետք է մտրակել: Արշալանք հին սերունդի դեմ: Ո՞վ մնաց.— ժողովուրդը: Հարձակողական ուղղութեան առաջին պտուղները.— գտում «Մշակի» խմբագրական կազմի մեջ: «Մեղուի» վերակենդանութիւնը: Առաջին պոլեմիկա: Ներսիսյան դպրոց, հոգաբարձական ընտրութիւն: Կուսակցական պայքար և հաղթութիւն: Արտասահմանի և Ռուսաստանի ուսանողներ: «Մեղուի» հարձակումները. «Կոսմոպոլիտներ»

392—427

Ոչ միայն քանդել, այլ և շինել: Ի՞նչ է խմբագիրը: Հետազոտութիւն և ոչ քարոզ: Ներգործական լրագիր: Մայրենի լեզուի հարցեր: Մի ուսնորեն բրոշյուր մեծ և փոքր ազգերի մասին: Արժուանք պատասխանը: Բանակոիվ որս լրագիրների դեմ: Հայի թշնամին: Ինքնաքննութեան մեծ սկզբունքը: Հայ կինը: Անհատի զարգացման օրենքը: Քատրոն: Ինքնուրույն գրականութեան պահանջ: Կյուսիկական և ռեալական ուսում: «Մեր տնտեսական ապագայ»: Հայերի վաճառականական դերը: Փոխադարձ ինքնօգնութեան սկզբունքը: Գյուղացին, վաշխառութիւն, սպառողական ընկերութիւններ, փոխատու-խնայողական զանձարաններ: «Ներքին տեսութիւն» բաժինը: Վաճառականութեան, գործարանական կյանք, մանր արդյունաբերութիւն, պրոլետարիատ, օտար զրամապոլսներ, մրցութեան ուժը:

427—456

Հայերը և նրանց հարեան ազգերը: Հայ-վրացական հարաբերութիւններ: Գիտոգի մերթնիլի ճառը: «Մշակ» և «Դրոներ»: Արտաքին տեսութիւն: Թուրքահայեր, գաղափար և Կ. Պոլիսը. կրթական պահասութիւն: Պարսկաստան. Բաքոյի նամակները: Թղթակցութիւններ Գեղամահայից. Անդրեաս Արծրունի: Գրական բաժին: Մեր վեպիկներն ու պատմվածքները: Մելիքզադեի առաջին փորձերը: Եզրակացութիւններ «Մշակի» առաջին տարվա մասին: Հրաշք և աշխատանք

456—468

Երկրորդ և հետևյալ տարիները: Բաժանորդագրութիւն առանց գործակալների: Մի նոր ուժ «Մշակի» մեջ՝ Ասիացի իր ֆելիետոններով: Քաղաքային տրեստեսութեան հարցեր. զինակցութիւն «Դրոներ» և «Тифлисский Вестник»-ի հետ: Գյուղատնտեսական լրագիր ժողովրդի համար: Արժուանք և թուրքերը. «Աքիւնի» լրագիրը: Գաղափարական մամուլ. Եկեղեցի և հոգեբանականութիւն: Վերադարձ զեպի նախնական եկեղեցին: Միսիոնարութիւն: Կրօն և ազգութիւն: «Արարատը» և «Մեղուն» «Մշակի» դեմ: Տեսչական հարց ներսիսյան դպրոցում: Անդրեաս Արծրունու ընտրութիւնը: Կղերական կամայականութիւններ: Պայքարը տեղափոխվում է Կ. Պոլիս: Գասախոսութիւններ Թիֆլիսում: Առաջին գրական դատ: Արծրունի և Երիցյան: «Кавказ»: Արժուանք առաջին դասախոսութիւնը: Կտակներ: Աշխարհական արեղայութիւն: Նոր աշխատակիցներ: «Գաղթենք», միշտ գաղթենք»

468—503

Գլուխ երկրորդ
ՆՇԱՆԱՎՈՐ ՇՐՋԱՆ

Հասարակական շարժում Ռուսաստանում: Սլավոնական երկրներ և ազատարար հոսանք: Նոր շրջան մեր կյանքի մեջ: Բաբկանյան դեպքերը: Արժուանք թուրքահայ-

չերի գրութեան մասին: Ամենքը հարձակվում են Արծրունու վրա: Պատմական տեսութիւն. գաղափարների ձգտումը զեպի Ռուսաստան: Պատրիարքարանի և ազգային ժողովի գործերը: Արժուանք նշանաբանը՝ լույս միայն Ռուսաստանի վրա: «Մեղուի» հակառակութիւնը: «Փարձ» հանդեսի գատողութիւնները: Ի՞նչ է կղերականութիւնը: Կ. Պոլիսի մամուլը Արժուանք դեմ: Գաղթականութեան հարց. «Մենք էլ հրեաներ ենք»: Ներսես պատրիարքի շրջաբերականը, Արծրունու առաջին հարձակումը Ներսեսի դեմ: Կ. Պոլիսում սարքված առասպել Կովկասի մասին: «Մասիսի» հոդվածը: «Այժմ կամ երբեք» «Восточный вопрос» բրոշյուրը: Թիֆլիսի հայերի ազգերը: Գեոպանածողով: «Ազգասիրական խարեբայութիւն»: Վանի հրդեհը: Հայի հոգեբանութիւնը

504—540

Շաբաթի երկու անգամ հրատարակելու նշանակութիւնը: Նոր աշխատակիցներ: Թուրքահայ գրողներ «Մշակում»: Ընդհանուր հարցեր. «Ամեն ինչ փողի համար», սարսկներ ենք, հասարակական սիրո բացակայութիւն, հայ ընտանիք, կենդանի լեզու: Արեւելյան հարցը: Վանի հրկիզյալների համար: Երկրորդ հարձակում Ներսես պատրիարքի դեմ: Ռուս-թուրքական պատերազմ. Ի՞նչ է պատերազմի խորհուրդը: Ասիացու ֆելիետոնից: Հայաստանի ապագան՝ կախված Ռուսաստանից: Անգլիական խարդախ քաղաքականութիւն: Պատերազմը երևան է հանում հայ ազգի հանձարը: Արժուանք և մեր ազգային պահասութիւնները: Պետք է հայերին ծանոթացնել օտարների հետ: Այալկերտի գաղթականութիւնը: Բարեգործական ընկերութեան միտք: Թիֆլիսի մասնաժողովը: Դեպքեր Կ. Պոլիսում: Ներսեսը սուլթան Համիդի մտտ: Թուրքական պարտութիւններ. բրիտանական զինվորներ հավաքելու հարցը: Հայերի գիմադրութիւնը: էֆենդիներ և ժողովուրդ: Ռուսաստանական սաստիկ շարժում Կ. Պոլիսի հայերի մեջ: Ներսեսի տատանումները, փոխվելը: Արժուանք մտքի հաղթանակը

540—562

Հատոր երրորդ

Գլուխ առաջին

«ՄՇԱԿ» — ԱՄԵՆՈՐՅԱ
(1878—1884)

Պահանջ, միջոցները հարց: Գեներալ Արծրունու մահը: Նրա մի գրութիւնը: Կտակ: Որքան հարուստ էին Արծրունի եղբայրները: Նոր պարտքեր: Ամենօրյա «Մշակը»: Պրեմիաներ: Կրագրի ապահովութիւնը նրա խմբագրի ունկրութիւնն է

563—574

Երկու եղբայրները՝ ուղղութեան մասին: Մեծ հարցը. որս-թուրքական պատերազմի վերջը: Ներսես պատրիարքը Սան-Ստեֆանոյի մեջ: Նրա ճառը: «Մշակի» եռանգոտ գործունեութիւնը: Արժուանք և ներսես պատրիարքի վերանորոգութիւնների մասին: Իրական Հայաստան և Սահմանագրութիւն: Անգլիայի դերը. կոնգրեսի պատրաստութիւններ: Մշակական վեպ. «Ջալալեղդին»: Բաքոյի ահազին հաշտութիւնը: Գաղթականութեան հարցը Թուրքիայում: Բեռլինի կոնգրես և Արժուանք վերաբերմունքը զեպի Ներսես պատրիարքը

574—589

Կրթական և կուլտուրական նպատակները թուրքաց Հայաստանում: Մերձեցում ռուսահայերի և թուրքահայերի մեջ: «Արարատյան ընկերութիւն». Մ. Փորթուգալյան և Ա. Արփիարյան: Նվիրատվութիւններ: Ուրիշ կրթական-բարեսիրական ընկերութիւններ և Արժուանք վերաբերմունքը զեպի նրանց: Արժուանք ազգեցութիւնը Կ. Պոլիսում

589—599

IV

Հայոց հարցի առաջին քայլերը: Խոսքի ազատությունը Կ. Պոլսում: Գաղա-
ների ուսումնասիրություն: Գասախոսություններ Քիֆլիսում: Վերադարձ հայերի
անտեսական դրությունը: Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքը դեպի հա-
լերը, ռուսասիրական ցույցեր: Բողոքներ Անգլիայի դեմ: Քրդական շարժման կազ-
մակերպություն 599—608

V

1880-ի սովը: Ցնցող տեղեկություններ: «Սովից հանձնաժողով» և «Մշակի»
հավաքած նվիրատվությունները: Արժույթը «Սովը Հայաստանի մեջ»: Գլազգոսի
ազատամիտ միեկստրությունը: Արժույթին փոխում է իր վերաբերմունքը դեպի Անգ-
լիան: Ռեֆորմների ամառային ծրագրերը: Մեծ հարց հայերի թվի մասին: «Կրո-
նական բանակոխի»: Քրդական և ասորա-հայկական շարժումներ: Կուլտուրական
նվաճման հարց: Շնյի Ուրեյդուլլահի արշավանքը: Հույներ և հիասթափում: Հա-
վատ դեպի գործը: Թուրքական խստություններ 608—627

VI

Մշակականությունը Կ. Պոլսում: Տեսական բարգաձայնման խնդիր թուրքաց
Հայաստանի համար: Ներսեսի հրատարականները: Փոխված դրություն. ռեակցիան
Կ. Պոլսում: Փոփոխություններ ռուսաց քաղաքականության մեջ. «Մշակը» այլևս
անկարող է նախկին դերը կատարել: «Journal d'Orient»: Գերմանական մի լրա-
գրի հոգվածը Արժույթը մասին: Պոլսական բարբերի մերկացումներ: 1882—1883
թվականների թույլ գործունեությունը 628—636

VII

Թատրոնական գործը: Արժույթը թատրոնը և բանակոխի թատրոնական կոմի-
տեի հետ: Կ. Պոլսից եկած դերասաններ: Արժույթը վերաբերմունքը դեպի նրանց:
Ռումանիկ և ռեալական ուղղություններ: Ի՞նչ է հարկավոր ժողովրդական թատրոնի
համար: Երեք տարվա գումարներ: «Մեղուի» ամենօրյա դառնալը: «Հրատարակա-
կան ընկերություն»: «Հայոց բարեգործական ընկերություն Կովկասում»: «Հայուհ-
յաց բարեգործական ընկեր.» Քիֆլիսում: Առաջին ուսուցչական ժողով: Արժույթը
ռեֆերատը՝ «Մայրենի լեզուն և նրա նշանակությունը դպրոցում»: Գևորգ կաթո-
ղիկոսի մահը 636—654

VIII

Տասնամյակ: Հասարակական ցույցեր: Մշակականությունը իբրև դպրոց: Աշ-
խատակիցներ. հեռացողների տեղ նորեր. Գասպար Յաղուբյան, Ա. Թոխմախյան,
Ս. Բեգնազարյան, Ս. Գաղյան, Կրոտ, Ա. Արասխանյան: Ա. Սարոխանյան: Գա-
ղափարական կուսակցություն. «Մեղուի» հորեղանք 654—661

IX

Կաթողիկոսական հարց: «Մշակի» ճգնաժամը. Արժույթը ակամա լուսությունը:
Անկանոն հրատարակություն: 1884-ի սկզբում Արժույթը դառն գանգատները: Մե-
ղուականությունն ուժեղանում է Քիֆլիսում, իսկ մշակականությունը՝ Կ. Պոլսում:
Կաթողիկոսական պայքար: Արժույթը կալվածները աճուրդի են նշանակվում: «Ուր»
է հայ ինքնաձանաշությունը: Ուղևորություն Շվեյցարիա 661—667

Գլուխ երկրորդ
ՆՈՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

I

Արժույթը կյանքը Շվեյցարիայում: Նրա նամակը Խորեն Վ. Ստեփանեհին:
Ներսես պատրիարքի մահը: Արժույթը վերադարձը Քիֆլիս և «Մշակի» վերակու-

մը: Նոր պայմաններ նրա գործունեության համար: «Հայաստանի» փոխարենը:
Բաֆֆիի հեռանալը: Խ. Մալումյան 667—673

II

Հրատարակատվության դժվարությունները նոր պայմաններում: Ընդհանուր
հետադիմության պատկեր: Բայց խմբագրից հրաշքներ են պահանջում: Ներքին առ-
օրյա հարցեր: Բանակոխի վերջին շրջան: Աղմուկ Կ. Պոլսի հայ լրագրողների մեջ: Տա-
ռազարձության հարց: Բաֆֆիի մահը: Կղերական կաստայականություն և ժողովրդա-
կան Եկեղեցու սկզբունքներ: Հոգաբարձական իրավունքների հարց ներսեսյան դըպ-
րոցում: «Սուրճ» ամսագրի վերաբերմունքը դեպի Գ. Արժույթին: Բանակոխի վերջին
նշանակությունը. կուսակցություններ: Արժույթին Փարիզի համաշխարհային ցուցա-
հանգստում 674—683

III

Քսանեհինգամյա հոգեբույան: Հակառակորդների վերաբերմունքը: «Տարազի»
հորեղանական համարը: «Մշակ-ազա»: Մայիսի 6-ի տոնախմբությունը: Պատ-
գամավորություններ և ուղերձներ: Արժույթը ճար: Թատրոնական ներկայացում:
Երեսուսարդության ճաշը մայիսի 10-ին: Ճանապարհորդություն Երևանյան նահան-
գում: «Համակրության բլե» 683—692

Գլուխ երրորդ
ՎԵՐՁԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐ
(1891—1892)

I

Մակար կաթողիկոսի մահը: Կուսակցական կոնգրեսը Հրատարակչական ընկերու-
թյան շուրջը: Տեղակալական հարցը: Արժույթին կնոջ ազդեցության մասին: «Էվե-
լինա» 693—696

II

«Բաց նամակ Քիֆլիսի թեմի ընտրողներին»: Հունվարի 6-ի աղետը Քիֆլի-
սում: «Ձեռնարկությունը մեղքեց ոգին» առաջնորդը: Կաթողիկոսական ընտրե-
լիներ: «Կենդանագիրներ»: Մարտի 8-ի պատգամավորական ժողովը: Մշակականնե-
րի բողոքը: Գրիգոր Արժույթին թեմական պատգամավոր: Ընտրական պայքար-
ներ էջմիածնում: Մեծ ակնտացիայի վերջը: Խոլերա: Ռաֆայել Պատկանյանի մահը:
«Աստառ» 697—711

III

Վերջին հաշվետվություն: Արժույթը հիվանդությունը: Վերջին շաբաթը: Դեկ-
տեմբերի 19-ը: «Մշակի» երրորդ շրջանի վերջը: Աշխատակիցներ 711—717

IV

Մայիսյան արած տպավորությունը: Քիֆլիսի քաղաքապետի ճառը: Արժույթը
շաբաթը: Հեռագրեր, պատգամավորություններ, պատկերներ: Ռուս և հայ մամուլի
կարծիքները: Դեկտեմբերի 27-ի օրը: Վանքի մայր եկեղեցում: Քիֆլիսի փողոցնե-
րում: Խոջիվանքի գերեզմանատանը: Վերջին հիշատակներ: Եզրակացություն: Գևորգ
Արժույթը տոհմի սպառումը 717—726

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱՂՅԱՆ

Գլուխ առաջին
ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ժամանակը Գաստիարականություն: Թափառումներ: 729—755

Գլուխ երկրորդ
ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՆ

Հայր իբրև միջավայրի երևույթ: Մագուժը, Կազմավորման շրջան: Վաճառականների գրակա-
նությունը:— 755—783

Գլուխ երրորդ
ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Եպիսկոպոսական ճեմարանում: Երևանի առումը: Քափառումներ: Արարատյան ընկերություն:
Գրավորական հայտարարություն: Գպրոց «Ազգասեր արարատյան»: Վերջին տարիները:
Մահը:— 783—820

Գլուխ չորրորդ
ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր գծեր: Բանաստեղծություն: Վիպագրություն: Հրապարակախոսություն: Պատմագրու-
թյուն: Դասագրքեր: Քարգմանություններ, հրատարակություններ:— 820—853

Խմբագրի կողմից:— 854—864

Լեռ.

Լ 380 Երկերի ժողովածու: 10 հատորով.— Եր.: Հայաստան, 1987, հ. 6, կազմ.
Ս. Թովչյան և ուրիշ., Խմբ.՝ Մ. Ներսիսյան.— 876 էջ:

Հատորն ընդգրկում է Լեռի՝ Ս. Նազարյանցի, Գ. Արծրունու, Մ. Թաղիադյանի մասին
գրած աշխատությունները:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

0505040000
Լ 701 (01)—87—87

ԳՄԴ 8427

ԼԵՈ

Յրկերի ժողովածու տասը հատորով

Հատոր VI

ЛЕО

Собрание сочинений

В десяти томах
Том VI

(На армянском языке)
Ереван «Айастан» 1987

Հրատ. խմբագիր՝ Ռ. Հ. Մուրադյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Մ. Բլբուլյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ս. Դեռզյան

Հանձնված է շարվածքի՝ 5. 01. 1987 թ.: Ստորագրված է տպագրության՝ 23. 11. 1987 թ.:

ՎՋ 00736, Ֆորմատ՝ 70×108^{1/16}, Քուղթ տպագրական № 2: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր, 77 պայմ. տպագր. մամ., 78,4 պայմ. ներկ. թերթ, 67,18 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 30000: Պատվեր՝ 354: Գինը՝ 5 ս. 80 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան 28:
Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегاپарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.

ԼԵՌ

Երկերի ժողովածու տասը հատորով

Հատոր VI

ЛЕО

Собрание сочинений

В десяти томах
Том VI

(На армянском языке)
Ереван «Айастан» 1987

Հրատ. խմբագիր՝ Ռ. Հ. Մուրադյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Մ. Բլրոյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ս. Գևորգյան

Հանձնված է շարվածքի՝ 5. 01. 1987 թ.: Ստորագրված է տպագրության՝ 23. 11. 1987 թ.:

ՎՖ 00736: Ֆորմատ՝ 70×108^{1/16}: Քուղթ տպադրական № 2: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր, 77 պայմ. տպագր. մամ., 78,4 պայմ. ներկ. թերթ, 67,18 հրատ. մամ.: Տպարանակ՝ 30000: Պատվեր՝ 354: Գինը՝ 5 ո. 80 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Ա. Թաճակյան 28:
Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղակարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան-9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегاپарта Госкомитета по делам издательства, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.